# Մորմոնի Գրքի

## ձեռնարկ սեմինարիայի ուսուցչի համար

# Մորմոնի Գրքի

## ձեռնարկ սեմինարիայի ուսուցչի համար

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Ընդունվում են դիտողություններ և ուղղումներ։ Խնդրում ենք ուղարկել դրանք, ներառյալ սխալները նույնպես, հետևյալ հասցեով.

Seminaries and Institutes of Religion Curriculum Services
50 E. North Temple St., Floor 8
Salt Lake City, Utah 84150-0008
USA
Է-փոստ. ces-manuals@ldschurch.org

Խնդրում ենք նշել ձեր անունը, հասցեն, ծուխը և ցիցը։
Չմոռանաք նշել ձեռնարկի վերնագիրը։ Ապա առաջարկեք ձեր դիտողությունները։

© 2012 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են
Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Անգլերենի հաստատումը. 10/09
Թարգմանության հաստատումը. 10/09
*Book of Mormon Seminary Teacher Manual*-ի թարգմանությունը
Armenian
09411 201

# Բովանդակություն


*Մորմոնի Գրքի ձեռնարկ սեմինարիայի ուսուցչի համար* - Նախաբան . . . . . VI
Մեր նպատակը . . . . . VI
Դասի նախապատրաստություն . . . . . VI
Ուսուցչի ամենօրյա ձեռնարկն օգտագործելը . . . . . VII
Ամենօրյա սեմինարիայի ծրագիր (ազատ գրաֆիկ և վաղ առավոտ) . . . . . IX
Տնային ուսումնասիրության դասերն օգտագործելը . . . XI
Սեմինարիայի տնային ուսումնասիրության ծրագիր . . . . . XII
Այլ ռեսուրսներ . . . . . XIII

Ամենօրյա և տնային ուսումնասիրության դասեր
Դաս 1 Ուսանողի դերը . . . . . 1
Դաս 2 Սուրբ գրություններն ուսումնասիրելը . . . . . 5
Դաս 3 Փրկության ծրագիրը . . . . . 9
Դաս 4 Տիտղոսաթերթ, նախաբան և վկաների վկայությունները . . . . . 13
Դաս 5 Մորմոնի Գրքի ակնարկ . . . . . 17
*Տնային ուսումնասիրության դաս Սուրբ գրությունների ուսումնասիրություն– Մորմոնի Գրքի ակնարկ (Մաս 1)* . . . . . 21

Նեփիի առաջին գրքի նախաբանը . . . . . 24
Դաս 6 1 Նեփի 1 . . . . . 26
Դաս 7 1 Նեփի 2 . . . . . 30
Դաս 8 1 Նեփի 3–4 . . . . . 34
Դաս 9 1 Նեփի 5 . . . . . 38
Դաս 10 1 Նեփի 6 և 9 . . . . . 42
*Տնային ուսումնասիրության դաս 1 Նեփի 1-6, 9 (Մաս 2)* . . . . . 46

Դաս 11 1 Նեփի 7 . . . . . 49
Դաս 12 1 Նեփի 8 . . . . . 53
Դաս 13 1 Նեփի 10-11 . . . . . 57
Դաս 14 1 Նեփի 12-13 . . . . . 61
Դաս 15 1 Նեփի 14 . . . . . 65
*Տնային ուսումնասիրության դաս 1 Նեփի 7-14 (Մաս 3)* . . . . . 69

Դաս 16 1 Նեփի 15 . . . . . 72
Դաս 17 1 Նեփի 16 . . . . . 76
Դաս 18 1 Նեփի 17 . . . . . 80
Դաս 19 1 Նեփի 18 . . . . . 84
Դաս 20 1 Նեփի 19 . . . . . 88
*Տնային ուսումնասիրության դաս 1 Նեփի 15-19 (Մաս 4)* . . . . . 92

Դաս 21 1 Նեփի 20-22 . . . . . 94
Նեփիի երկրորդ գրքի նախաբանը . . . . . 98
Դաս 22 2 Նեփի 1 . . . . . 99
Դաս 23 2 Նեփի 2 (Մաս 1) . . . . . 102
Դաս 24 2 Նեփի 2 (Մաս 2) . . . . . 106
Դաս 25 2 Նեփի 3 . . . . . 110
*Տնային ուսումնասիրության դաս 1 Նեփի 20 - 2 Նեփի 3 (Մաս 5)* . . . . . 114

Դաս 26 2 Նեփի 4 . . . . . 116
Դաս 27 2 Նեփի 5 . . . . . 120
Դաս 28 2 Նեփի 6-8 . . . . . 124
Դաս 29 2 Նեփի 9.1-26 . . . . . 128
Դաս 30 2 Նեփի 9.27-54 և 2 Նեփի 10 . . . . . 133
*Տնային ուսումնասիրության դաս 2 Նեփի 4-10 (Մաս 6)* . . . . . 136

Դաս 31 2 Նեփի 11 և 16 . . . . . 139
Դաս 32 2 Նեփի 12-15 . . . . . 143
Դաս 33 2 Նեփի 17-20 . . . . . 147
Դաս 34 2 Նեփի 21-24 . . . . . 151
Դաս 35 2 Նեփի 25 . . . . . 154
*Տնային ուսումնասիրության դաս 2 Նեփի 11-25 (Մաս 7)* . . . . . 158

Դաս 36 2 Նեփի 26 . . . . . 160
Դաս 37 2 Նեփի 27 . . . . . 164
Դաս 38 2 Նեփի 28 . . . . . 168
Դաս 39 2 Նեփի 29-30 . . . . . 172
Դաս 40 2 Նեփի 31 . . . . . 176
*Տնային ուսումնասիրության դաս 2 Նեփի 26-31 (Մաս 8)* . . . . . 180

Դաս 41 2 Նեփի 32 . . . . . 183
Դաս 42 2 Նեփի 33 . . . . . 187
Հակոբի գրքի նախաբանը . . . . . 190
Դաս 43 Հակոբ 1-2.11 . . . . . 191
Դաս 44 Հակոբ 2.12-35 . . . . . 195
Դաս 45 Հակոբ 3-4 . . . . . 199
*Տնային ուսումնասիրության դաս 2 Նեփի 32-Հակոբ 4 (Մաս 9)* . . . . . 203

Դաս 46 Հակոբ 5.1-51 . . . . . 206
Դաս 47 Հակոբ 5.52–77, Հակոբ 6 . . . . . 210
Դաս 48 Հակոբ 7 . . . . . 214
Ենովսի գրքի նախաբանը . . . . . 218
Դաս 49 Ենովս . . . . . 219
Հարոմի գրքի նախաբանը . . . . . 223
Օմնիի գրքի նախաբանը . . . . . 224
Դաս 50 Հարոմ և Օմնի . . . . . 225
*Տնային ուսումնասիրության դաս Հակոբ 5-Օմնի (Մաս 10)* . . . . . 229

Մորմոնի Խոսքերի նախաբանը . . . . . 232
Մոսիայի գրքի նախաբանը . . . . . 233
Դաս 51 Մորմոնի Խոսքերը-Մոսիա 1 . . . . . 235
Դաս 52 Մոսիա 2 . . . . . 239
Դաս 53 Մոսիա 3 . . . . . 243
Դաս 54 Մոսիա 4 . . . . . 247
Դաս 55 Մոսիա 5-6 . . . . . 251

*Տնային ուսումնասիրության դաս*
*Մորմոնի Խոսքերը-Մոսիա 6 (Մաս 11)* . . . . . 255

Դաս 56 Մոսիա 7-8 . . . . . 258
Դաս 57 Մոսիա 9-10 . . . . . 262
Դաս 58 Մոսիա 11-12.17 . . . . . 266
Դաս 59 Մոսիա 12.18-14.12 . . . . . 269
Դաս 60 Մոսիա 15-17 . . . . . 273
*Տնային ուսումնասիրության դաս*
*Մոսիա 7-17 (Մաս 12)* . . . . . 277

Դաս 61 Մոսիա 18 . . . . . 279
Դաս 62 Մոսիա 19-20 . . . . . 283
Դաս 63 Մոսիա 21-22 . . . . . 287
Դաս 64 Մոսիա 23-24 . . . . . 291
Դաս 65 Մոսիա 25 . . . . . 295
*Տնային ուսումնասիրության դաս*
*Մոսիա 18-25 (Մաս 13)* . . . . . 298

Դաս 66 Մոսիա 26 . . . . . 301
Դաս 67 Մոսիա 27 . . . . . 305
Դաս 68 Մոսիա 28-29 . . . . . 309
Ալմայի գրքի նախաբանը . . . . . 313
Դաս 69 Ալմա 1-2 . . . . . 315
Դաս 70 Ալմա 3-4 . . . . . 319
*Տնային ուսումնասիրության դաս*
*Մոսիա 26-Ալմա 4 (Մաս 14)* . . . . . 323

Դաս 71 Ալմա 5.1–36 . . . . . 326
Դաս 72 Ալմա 5.37–62 . . . . . 330
Դաս 73 Ալմա 6-7 . . . . . 334
Դաս 74 Ալմա 8 . . . . . 338
Դաս 75 Ալմա 9-10 . . . . . 342
*Տնային ուսումնասիրության դաս*
*Ալմա 5-10 (Մաս 15)* . . . . . 346

Դաս 76 Ալմա 11 . . . . . 349
Դաս 77 Ալմա 12 . . . . . 353
Դաս 78 Ալմա 13 . . . . . 357
Դաս 79 Ալմա 14 . . . . . 361
Դաս 80 Ալմա 15-16 . . . . . 364
*Տնային ուսումնասիրության դաս*
*Ալմա 11-16 (Մաս 16)* . . . . . 368

Դաս 81 Ալմա 17 . . . . . 370
Դաս 82 Ալմա 18 . . . . . 374
Դաս 83 Ալմա 19-20 . . . . . 378
Դաս 84 Ալմա 21-22 . . . . . 382
Դաս 85 Ալմա 23-24 . . . . . 386
*Տնային ուսումնասիրության դաս*
*Ալմա 17-24 (Մաս 17)* . . . . . 390

Դաս 86 Ալմա 25-26 . . . . . 392
Դաս 87 Ալմա 27-29 . . . . . 395
Դաս 88 Ալմա 30 . . . . . 399
Դաս 89 Ալմա 31 . . . . . 403
Դաս 90 Ալմա 32 . . . . . 407
*Տնային ուսումնասիրության դաս*
*Ալմա 25-32 (Մաս 18)* . . . . . 411

Դաս 91 Ալմա 33 . . . . . 413
Դաս 92 Ալմա 34-35 . . . . . 417
Դաս 93 Ալմա 36 . . . . . 421
Դաս 94 Ալմա 37 . . . . . 425
Դաս 95 Ալմա 38 . . . . . 429
*Տնային ուսումնասիրության դաս*
*Ալմա 33-38 (Մաս 19)* . . . . . 433

Դաս 96 Ալմա 39 . . . . . 435
Դաս 97 Ալմա 40 . . . . . 439
Դաս 98 Ալմա 41 . . . . . 443
Դաս 99 Ալմա 42 . . . . . 447
Դաս 100 Ալմա 43-44 . . . . . 451
*Տնային ուսումնասիրության դաս*
*Ալմա 39-44 (Մաս 20)* . . . . . 455

Դաս 101 Ալմա 45-48 . . . . . 458
Դաս 102 Ալմա 49-51 . . . . . 462
Դաս 103 Ալմա 52-55 . . . . . 466
Դաս 104 Ալմա 56-58 . . . . . 470
Դաս 105 Ալմա 59-63 . . . . . 474
*Տնային ուսումնասիրության դաս*
*Ալմա 45-63 (Մաս 21)* . . . . . 478

Հելամանի գրքի նախաբանը . . . . . 480
Դաս 106 Հելաման 1-2 . . . . . 482
Դաս 107 Հելաման 3-4 . . . . . 486
Դաս 108 Հելաման 5 . . . . . 490
Դաս 109 Հելաման 6-7 . . . . . 494
Դաս 110 Հելաման 8-9 . . . . . 498
*Տնային ուսումնասիրության դաս*
*Հելաման 1-9 (Մաս 22)* . . . . . 501

Դաս 111 Հելաման 10 . . . . . 503
Դաս 112 Հելաման 11-12 . . . . . 507
Դաս 113 Հելաման 13 . . . . . 511
Դաս 114 Հելաման 14 . . . . . 515
Դաս 115 Հելաման 15-16 . . . . . 519
*Տնային ուսումնասիրության դաս*
*Հելաման 10-16 (Մաս 23)* . . . . . 523

Երրորդ Նեփիի գրքի նախաբանը . . . . . 526
Դաս 116 3 Նեփի 1 . . . . . 528
Դաս 117 3 Նեփի 2-5 . . . . . 532
Դաս 118 3 Նեփի 6-7 . . . . . 536
Դաս 119 3 Նեփի 8-10 . . . . . 540
Դաս 120 3 Նեփի 11.1-17 . . . . . 544
*Տնային ուսումնասիրության դաս*
*3 Նեփի 1-11.17 (Մաս 24)* . . . . . 548

Դաս 121 3 Նեփի 11.18-41 . . . . . 551
Դաս 122 3 Նեփի 12 . . . . . 555
Դաս 123 3 Նեփի 13 . . . . . 559
Դաս 124 3 Նեփի 14 . . . . . 563
Դաս 125 3 Նեփի 15-16 . . . . . 567
*Տնային ուսումնասիրության դաս*
*3 Նեփի 11.18-16.20 (Մաս 25)* . . . . . 571

Դաս 126 3 Նեփի 17 . . . . . 574
Դաս 127 3 Նեփի 18 . . . . . 577

Դաս 128 3 Նեփի 19 . . . . . 581
Դաս 129 3 Նեփի 20 . . . . . 585
Դաս 130 3 Նեփի 21-22 . . . . . 589
*Տնային ուսումնասիրության դաս*
*3 Նեփի 17-22 (Մաս 26)* . . . . . 593

Դաս 131 3 Նեփի 23 . . . . . 596
Դաս 132 3 Նեփի 24-26 . . . . . 600
Դաս 133 3 Նեփի 27 . . . . . 604
Դաս 134 3 Նեփի 28 . . . . . 608
Դաս 135 3 Նեփի 29-30 . . . . . 612
*Տնային ուսումնասիրության դաս*
*3 Նեփի 23-30 (Մաս 27)* . . . . . 616

Չորրորդ Նեփիի նախաբանը. Նեփիի գիրքը. . . . . 619
Դաս 136 4 Նեփի . . . . . 620
Մորմոնի գրքի նախաբանը . . . . . 624
Դաս 137 Մորմոն 1-2 . . . . . 626
Դաս 138 Մորմոն 3-4 . . . . . 630
Դաս 139 Մորմոն 5-6 . . . . . 634
Դաս 140 Մորմոն 7-8.11 . . . . . 638
*Տնային ուսումնասիրության դաս*
*4 Նեփի 1-Մորմոն 8.11 (Մաս 28)* . . . . . 642

Դաս 141 Մորմոն 8.12-41 . . . . . 644
Դաս 142 Մորմոն 9. . . . . 648
Եթերի գրքի նախաբանը . . . . . 652
Դաս 143 Եթեր 1 . . . . . 654
Դաս 144 Եթեր 2 . . . . . 658
Դաս 145 Եթեր 3 . . . . . 662
*Տնային ուսումնասիրության դաս*
*Մորմոն 8.12-Եթեր 3 (Մաս 29)* . . . . . 666

Դաս 146 Եթեր 4-5 . . . . . 668
Դաս 147 Եթեր 6 . . . . . 672
Դաս 148 Եթեր 7-11 . . . . . 676
Դաս 149 Եթեր 12.1-22 . . . . . 680
Դաս 150 Եթեր 12.23-41 . . . . . 684
*Տնային ուսումնասիրության դաս*
*Եթեր 4-12 (Մաս 30)* . . . . . 688

Դաս 151 Եթեր 13-15. . . . . 690
Մորոնիի գրքի նախաբանը . . . . . 694
Դաս 152 Մորոնի 1-3 . . . . . 696
Դաս 153 Մորոնի 4-5 . . . . . 700
Դաս 154 Մորոնի 6. . . . . 704
Դաս 155 Մորոնի 7.1-19 . . . . . 708
*Տնային ուսումնասիրության դաս*
*Եթեր 13-Մորոնի 7.19 (Մաս 31)* . . . . . 712

Դաս 156 Մորոնի 7.20-48 . . . . . 715
Դաս 157 Մորոնի 8. . . . . 719
Դաս 158 Մորոնի 9. . . . . 723
Դաս 159 Մորոնի 10.1-7, 27-29. . . . . 727
Դաս 160 Մորոնի 10.8-26, 30-34. . . . . 731
*Տնային ուսումնասիրության դաս*
*Մորոնի 7.20-10.34 (Մաս 32)*. . . . . 735

Հավելված . . . . . 737
Սուրբ գրությունների ընթերցանության
աղյուսակներ . . . . . 737

Ուղեցույց ամենօրյա ուսուցիչների համար . . . . . 738
Առաջարկներ հարմարվող օրերի համար . . . . . 740
Ուղեցույց տնային ուսումնասիրության
ուսուցիչների համար. . . . . 741
Սերտման սուրբ գրությունների նախաբանը . . . . . 742
Սուրբ գրությունները սերտելու վարժություններ . . . . . 743
100 սերտման սուրբ գրությունների հատվածներ . . . . 749
Հիմնական վարդապետությունների նախաբանը . . . . 750
Հիմնական վարդապետություններ . . . . . 751
Թիթեղները և դրանց կապը հրատարակված
Մորմոնի Գրքի հետ. . . . . 757
Մոսիա 7-24 ճամփորդությունների ամփոփում . . . . . 758
Մորմոնի Գրքի հնարավոր վայրեր
(փոխկապակցված). . . . . 759

# *Մորմոնի Գրքի ձեռնարկ սեմինարիայի ուսուցչի համար* - Նախաբան

## Մեր նպատակը

Սեմինարիաների և կրոնի ինստիտուտների նպատակը.

«Մեր նպատակն է օգնել երիտասարդներին և երիտասարդ չափահասներին հասկանալ Հիսուս Քրիստոսի ուսմունքները և Քավությունը և ապավինել դրանց, արժանի լինել տաճարի օրհնություններին և պատրաստել իրենց, իրենց ընտանիքներին և մյուսներին՝ իրենց Երկնային Հոր հետ հավերժական կյանքին»:

Մենք ուսուցանում ենք ուսանողներին ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, ինչպես դրանք տրված են սուրբ գրություններում և մարգարեների խոսքերում: Այդ վարդապետությունները և սկզբունքները ուսուցանվում են այնպիսի եղանակով, որը տանում է դեպի ըմբռնում և շենացում: Մենք օգնում ենք ուսանողներին իրականացնել իրենց դերը ուսումնական գործընթացում և պատրաստվել ուսուցանել ավետարանը մյուսներին:

Այս նպատակներն իրականացնելում օգնելու համար ձեզ և այն ուսանողներին, որոնց դուք ուսուցանում ենք, խրախուսվում է ներառել հետևյալ Ավետարանը ուսուցանելու և սովորելու հիմունքները.

- Ուսուցանեն և սովորեն Հոգու միջոցով:
- Ջարգացնեն ուսանելու (սովորելու) սիրո, հարգանքի և նպատակի մթնոլորտ:
- Ուսումնասիրեն սուրբ գրություններն ամեն օր և կարդան դասընթացի տեքստը: (Սուրբ գրությունների ընթերցանությանը հետևելու աղյուսակներ կարող եք գտնել այս ձեռնարկի վերջում գտնվող հավելվածում:)
- Հասկանան սուրբ գրությունների և մարգարեների խոսքերի ենթատեքստը և բովանդակությունը:
- Գտնեն, հասկանան, զգան ավետարանի վարդապետությունների ու սկզբունքների ճշմարտությունը ու կարևորությունը և կիրառեն դրանք:
- Բացատրեն ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, կիսվեն դրանցով և վկայեն դրանց մասին:
- Սերտեն սուրբ գրությունների կարևոր հատվածները և հիմնական վարդապետությունները:

Ուսուցչի այս ձեռնարկը նախատեսված է ձեզ օհնելու համար, որ լինեք հաջողակ այս նպատակներն իրականացնելիս:

## Դասի նախապատրաստություն

Իր ավետարանը ուսուցանողներին Տերը պատվիրել է «ուսուցանել իմ ավետարանի սկզբունքները, որոնք Աստվածաշնչի մեջ են, և Մորմոնի Գրքի, որը պարունակում է ավետարանի լրիվությունը» (ՎևՈՒ 42.12): Նա հետո հրահանգել է, որ այս ճշմարտությունները պետք է ուսուցանվեն ինչպես «ցույց կտրվի Հոգու կողմից», որը «կտրվի . . . հավատքի աղոթքով» (ՎևՈՒ 42.13–14): Յուրաքանչյուր դասը նախապատրաստելիս աղոթքով փնտրեք Հոգու առաջնորդությունը, որ օգնի ձեզ հասկանալ սուրբ գրությունները և դրանց պարունակած վարդապետությունները և սկզբունքները: Նմանապես, հետևեք Հոգու հուշումներին, երբ ծրագրեք, թե ինչպես օգնեք ձեր ուսանողներին հասկանալ սուրբ գրությունները, ուսուցանվել Սուրբ Հոգու կողմից և ցանկություն ունենալ կիրառելու այն, ինչ իրենք սովորում են:

Այս դասընթացում դուք հիմնականում օգտվելու եք Մորմոնի Գրքից, երբ դուք նախապատրաստվեք և ուսուցանեք: Աղոթքով ուսումնասիրեք գլուխները կամ հատվածները, որոնք դուք ուսուցանելու եք: Ձգտեք հասկանալ սուրբ գրության մասի ենթատեքստը և բովանդակությունը՝ ներառյալ պատմության ընթացքը, մարդկանց, վայրերը և իրադարձությունները: Երբ դուք ծանոթանաք յուրաքանչյուր սուրբ գրության մասի ենթատեքստին և բովանդակությանը, փորձեք գտնել այնտեղ պարունակվող վարդապետությունները և սկզբունքները, և որոշեք, թե այս ճշմարտություններից որոնք են ամենակարևորը ձեր ուսանողների համար, որ հասկանան և կիրառեն: Որոշելուց հետո, թե ինչի վրա պետք է կենտրոնանաք, դուք կարող եք ընտրել, թե ինչ մեթոդներ, առաջարկներ և վարժություններ կարող են լավագույն ձևով օգնել ձեր ուսանողներին սովորել և կիրառել սուրբ գրություններում գտնվող սուրբ ճշմարտությունները:

Այս ձեռնարկը նախատեսված է այս գործընթացում ձեզ աջակցելու համար: Ուշադրի վերանայեք սուրբ գրության մասին համապատասխանող դասանյութը, որը դուք պետք է ուսուցանեք: Դուք կարող եք ընտրել օգտագործել սուրբ գրության մասի համար նախատեսված բոլոր առաջարկները կամ դրանցից մի քանիսը, կամ կարող եք հարմարեցնել առաջարկված մտքերը այն ուսանողների կարիքներին և պայմաններին, որոնց դուք ուսուցանում եք: Երբ դուք խորհեք, թե ինչպես հարմարեցնեք դասանյութերը, համոզվեք, որ հետևում եք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսի այս խորհրդին.

«Ես հաճախ եմ լսել, որ Նախագահ Փաքերն ուսուցանել է, որ մենք նախ ընդունում ենք, հետո մենք հարմարեցնում ենք: Եթե մենք ամբողջությամբ խորասուզված ենք նշանակված դասի մեջ, որը մենք պետք է ուսուցանենք, ապա մենք կարող ենք հետևել Հոգուն, որ հարմարեցնենք այն» (“A Panel Discussion with Elder Dallin H. Oaks” [Seminaries and Institutes of Religion Satellite Broadcast, Aug. 7, 2012], 6, si.lds.org):

Երբ դուք նախապատրաստվում եք ուսուցանելու համար, հիշեք այն ուսանողներին, ովքեր ունեն հատուկ կարիքներ: Հարմարեցրեք վարժությունները և ակնկալիքներն այնպես, որ օգնեք նրանց հաջողություններ ունենալ: Ծնողների և ղեկավարների հետ շփվելը կօգնի ձեզ տեղեկանալ ուսանողների կարիքներին և կօգնի ձեզ հաջողություն ունենալ նրանց իմաստալի և շենացնող փորձառություն տալու համար:



# Նեփիի Առաջին

ԳՐՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ

**Ինչո՞ւ ուսումնասիրել այս գիրքը:**
Երբ ուսանողները ուսումնասիրեն 1 Նեփին, նրանք կհայտնաբերեն, որ «Տիրոջ գորովագութ ողորմությունները բոլոր նրանց վրա են, ում նա ընտրել է, նրանց հավատքի շնորհիվ, դարձնելու նրանց հզոր՝ մինչև իսկ ի զորությունն [illegible]ելու» (1 Նեփի 1.20): Նրանք [illegible] որ Աստված ուզում [illegible] անգամ հնազանդորեն Երուսաղեմ վերադարձավ իր եղբայրների հետ, առաջին անգամ արույրե թիթեղները ձեռք բերելու համար և ավելի ուշ, որպեսզի համոզեր Իսմայելի ընտանիքին միանալ Լեքիի ընտանիքին անապատում: Տիրոջ օգնությամբ Նեփին նավ կառուցեց, որը տարավ նրա ընտանիքին և [illegible] օվկիանոսի մյուս կողմում [illegible] երկիրը: Երբ Լեքին [illegible]

- Տերը պատվիրում է Լեքիին իր ընտանիքի հետ միասին հեռանալ անապատ (տես 1 Նեփի 2.1–2):
- Տերը պատվիրում է Լեքիին իր տղաներին հետ ուղարկել Երուսաղեմ արույրե թիթեղների բերելու (տես 1 Նեփի 3.2–4):
- Հրեշտակը միջամտում է, երբ Լաբան [illegible] Նեփուն են Նեփիին [illegible]



ԴԱՍ 144

# Եթեր 2

**Նախաբան**

Բաբելոնյան աշտարակից մեկնելուց հետո Հարեդը, նրա եղբայրը և նրանց ընտանիքներն ու ընկերները անապատում առաջնորդվեցին Տիրոջ կողմից: Տերը հրահանգներ տվեց Հարեդի եղբորը, որպեսզի կառուցի ութ բեռնանավ իրենց մարդկանց ծովի վրայով խոստումի երկիր հասցնելու համար: Քանի որ Հարեդի եղբայրը և նրա մարդիկ հավատքով հնազանդվեցին Տիրոջը, Տերը նրանց տվեց ապահով ճամփորդության համար անհրաժեշտ առաջնորդություն ու ուղղություն:

## Ուսուցանման առաջարկներ

**Եթեր 2.1–12**

*Հարեդացիները սկսեցին իրենց ճամփորդությունը դեպի խոստումի երկիր*

Որպեսզի օգնենք ուսանողներին հասկանալ, թե Աստծուց ստացված հրահանգներին հետևելը ինչպես կարող է մեզ նախապատրաստել ստանալու հետագա առաջնորդություն և հրահանգներ Նրանից՝ վարեք հետևյալ վարժությունը.

Դասից առաջ միանույն սենյակում թաքցրեք մի առարկա, որը ներկայացնում է զանձ: Նախապատրաստեք երեք կամ չորս հուշումներ, որոնք տանում են դեպի զանձը: Տվեք առաջին հուշումը: Այդ հուշումը կտանի հաջորդ հուշմանը և այդպես շարունակ, քանի դեռ ուսանողները չեն գտել զանձը: Այն բանից հետո, երբ նրանք գտնեն զանձը, հարցրեք՝

- Ի՞նչ կպատահեր, եթե անտեսեիք առաջին հուշումը: (Նրանք չեին գտնի հաջորդ հուշումը:)

Ուսանողներին հանձնարարեք մտքում վերընթերցել Եթեր 1.41–42 , ուշադրություն դարձնելով Տիրոջ առաջին հրահանգներին, որոնք առաջնորդում են Հարեդացիներին դեպի խոստումի երկիր:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչպես Հարեդացիները արձագանքեցին այս հրահանգներին, հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Եթեր 2.1–3:

- Ինչպե՞ս Հարեդացիները արձագանքեցին Տիրոջ առաջին հրահանգներին:

Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Եթեր 2.4–6: Դասարանին հանձնարարեք հետևել, ուշադրություն դարձնելով այն օրհնություններին, որոնք Հարեդացիները ստացան առաջին հրահանգներին հետևելուց հետո:

- Ի՞նչ պատահեց այն բանից հետո, երբ Հարեդացիները հետևեցին առաջին հրահանգներին: (Տերը Հարեդի եղբոր միջոցով նրանց տվեց լրացուցիչ հրահանգներ:)
- Ի՞նչ ենք սովորում այս պատմությունից այն մասին, թե ինչպես ստանալ առաջնորդություն Տիրոջից: (Հնարավոր է ուսանողները օգտագործեն տարբեր բառեր, բայց նրանց պատասխանները պետք է արտահայտեն հետևյալ սկզբունքը. **Եթե մենք հավատքով արձագանքենք Տիրոջ տված հրահանգներին, մենք կարող են ստանալ ապագա առաջնորդություն Նրանից:** Կարող եք առաջարկել, որպեսզի նրանք իրենց սուրբ գրություններում Եթեր 2.6–ի կողքին գրեն այդ ճշմարտությունը:)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ և կիրառել այս սկզբունքը, հանձնարարեք նրանց մտածել Տիրոջից վերջերս ստացված մի զգացողության կամ հուշման մասին: Այնուհետև կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ արտահայտությունը այն մասին, թե ինչպես ենք մենք հաճախ ստանում հայտնություն.



«Այն կտրվի ամեն անգամ մի կտորով, փոքրիկ փաթեթներով, որպեսզի դուք աճեք կարողությամբ: Երբ ամեն կտորին հավատքով հետևեք, ձեզ

***Ստեղծել հետաքրքրություն և կենտրոնացում***
Օրագրեք այնպիսի վարժություններ, որոնք կստեղծեն հետաքրքրասիրություն և կօգնեն սովորողներին իրենց ուշադրությունը դարձնել դասին վերաբերող սուրբ գրություններին: Այդ վարժությունները առավել արդյունավետ են, երբ կարճ են և սովորողներին կենտրոնացնում են դասի հիմնական սկզբունքների վրա:

656

## Ուսուցչի ամենօրյա ձեռնարկն օգտագործելը

### Գրքի նախաբանը

Գրքի նախաբանները ընդհանուր գաղափար են տալիս Մորմոնի Գրքի յուրաքանչյուր գրքի վերաբերյալ: Այլ բաների հետ մեկտեղ, դրանք բացատրում են, թե ով է գրել յուրաքանչյուր գիրքը, դրանք նկարագրում են գրելիս հեղինակի ունեցած նպատակները, և դրանք տալիս են յուրաքանչյուր գրքի բովանդակության ամփոփումը:

### Սուրբ գրության հատվածի նախաբանը

Սուրբ գրության հատվածի նախաբանները տալիս են հակիրճ գաղափար սուրբ գրության մասի ենթատեքստի և բովանդակության մասին յուրաքանչյուր դասի համար:

### Հատվածների խմբավորում և ենթատեքստային ամփոփում

Սուրբ գրության մասերը հաճախ բաժանված են ավելի փոքր մասերի կամ հատվածների խմբերի, որտեղ առաջ է գալիս թեմայի կամ գործողության փոփոխություն: Յուրաքանչյուր հատվածների խմբի հղմանը հաջորդում է այդ հատվածների խմբի իրադարձությունների կամ ուսմունքների հակիրճ ամփոփումը:

### Ուսուցանման միջոցներ

Ուսուցանման միջոցները բացատրում են ավետարանի ուսուցանման սկզբունքները և մեթոդները: Դրանք կարող են աջակցել ձեզ որպես ուսուցիչ կատարելագործվելու ձեր ջանքերում:

### Դասի կառուցվածքը

Դասի կառուցվածքը պարունակում է առաջնորդություն ձեզ համար, երբ դուք ուսումնասիրում և սովորեցնում եք: Այն առաջարկում է ուսուցանման գաղափարներ, ներառյալ հարցեր, վարժություններ, մեջբերումներ, գծագրեր և աղյուսակներ:

### Վարդապետություններ և սկզբունքներ

Քանի որ վարդապետությունների և սկզբունքների սովորաբար հանդիպում ենք սուրբ գրությունների տեքստի ուսումնասիրության ժամանակ, դրանք ընդգծված են, որպեսզի օգնեն ձեզ ներկայացնել և շեշտել դրանք ուսանողների հետ ձեր քննարկումներում:

## Նկարներ

Եկեղեցու ղեկավարների և սուրբ գրությունների իրադարձությունների նկարները, որոնք զննական պարագաներ են, դուք կարող եք ցուցադրել, եթե դա հնարավոր է, մինչ դուք ուսուցանում եք:

## Սերտման սուրբ գրություն

Մորմոնի Գրքում գտնվող 25 սերտման սուրբ գրությունների հատվածներ ընդգծված են այն դասերի ենթատեքստերում, որոնցում դրանց հանդիպում ենք: Այս դասերից յուրաքանչյուրը նաև պարունակում է ուսուցանման գաղափար այս հատվածներից յուրաքանչյուրի համար: Որպեսզի օգնենք ձեզ հետևողական լինել սերտման սուրբ գրություն ուսուցանելիս, ձեռնարկով մեկ տարածված են Սերտման սուրբ գրությունների կրկնության վարժություններ: Սերտման սուրբ գրության ուսուցանման լրացուցիչ գաղափարների համար տես այս ձեռնարկի վերջում գտնվող հավելվածը:

## Ազատ սյունակ

Ազատ սյունակը կարող է օգտագործվել դասերի նախապատրաստման համար, ներառյալ նշումներ, փորձառություններ կամ այլ մտքեր գրելու համար, երբ դուք հուշում կզգաք Սուրբ Հոգու կողմից:

## Բացատրական և պատմական տեղեկություն

Որոշ դասերի վերջում տրված են լրացուցիչ մեջբերումներ և բացատրություններ, որպեսզի ձեզ լրացուցիչ հասկացողություն տան որոշակի գաղափարների կամ սուրբ գրության հատվածների վերաբերյալ: Այս բաժնի տեղեկություններն օգտագործեք, որպեսզի նախապատրաստվեք ուսուցանելիս հարցերին պատասխանելու կամ լրացուցիչ մտքեր տալու համար:

## Ուսուցանման լրացուցիչ գաղափարներ

Ուսուցանման լրացուցիչ գաղափարների հանդիպում ենք որոշ դասերի վերջում: Դրանք առաջարկներ են վարդապետություններ և սկզբունքներ ուսուցանելու համար, որոնք միգուցե չեն ներկայացվել կամ նշվել դասի կառուցվածքում: Դրանք նաև կարող են առաջարկներ ունենալ տեսալսողական նյութերի օգտագործման համար, ինչպիսին են տեսասկավառակների ելույթները:



• Ի՞նչ ենք սովորում այս պատմությունից այն մասին, թե ինչպես ստանալ առաջնորդություն Տիրոջից: (Հնարավոր է ուսանողները օգտագործեն տարբեր բառեր, բայց նրանց պատասխանները պետք է արտահայտեն հետևյալ սկզբունքը. **Եթե մենք հավատքով արձագանքենք Տիրոջ տված հրահանգներին, մենք կարող են ստանալ ապագա առաջնորդություն Նրանից:** Կարող եք առաջարկել, որպեսզի նրանք իրենց սուրբ գրություններում եթեր 2.6–ի կողքին գրեն այդ ճշմարտությունը:)

Որպեսզի օգնենք ուսանողներին ավելի լավ հասկանալ և կիրառել այս սկզբունքը, հանձնարարեք նրանց մտածել Տիրոջից վերջերս ստացված մի զգացողության կամ հուշման մասին: Այնուհետև կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ արտահայտությունը այն մասին, թե ինչպես ենք մենք հաճախ ստանում հայտնություն.

«Այն կտրվի ամեն անգամ մի կտորով, փոքրիկ փաթեթներով, որպեսզի դուք աճեք կարողությամբ: Երբ ամեն կտորին հավատքով հետևեք, ձեզ

656



ՄՈՐՄՈՆ 7-8.11

### Սերտման սուրբ գրության կրկնություն

Գրատախտակին գրեք *հորդորել*: Բացատրեք, որ *հորդորել* նշանակում է խստորեն կոչ անել գործել որոշակի ձևով: Բացատրեք, որ Մորմոնի վերջին խոսքերը Մորմոն 7-ում հորդորելու լավ օրինակ են: Ուսանողներին թղթեր բաժանեք և ասացեք, որ իրենք պետք է մի հորդորանք գրեն, հիմնվելով Մորմոնի Գրքի սուրբ գրությունների սերտման իրենց սիրված հատվածի վրա: Թղթի վերին մասում նրանց խնդրեք գրել. «Ես մի բան կասեմ վերջին օրերի երիտասարդներին»: Խնդրեք յուրաքանչյուր ուսանողի ընտրել սուրբ գրությունների սերտման սիրված հատվածը և հորդորանք գրել վերջին օրերի երիտասարդների համար, հիմնվելով իրենց ընտրած հատվածի վրա: Նրանց հորդորը կարող է ներառել հիմնական ճշմարտությունների ամփոփումը, որոնք գտնվում են այդ հատվածում, բացատրությունը, թե ինչու են այդ ճշմարտությունները կարևոր երիտասարդների համար այսօր, և ըստ այդ ճշմարտությունների գործելու հրավեր: Հորդորները պետք է ավարտվեն խոստումով, ինչպես օրինակ Մորմոն 7.7 կամ Մորմոն 7.10-ում: Կարող եք խնդրել մի քանի ուսանողի կիսվել իրենց ավարտված հորդորներով դասարանի հետ: Կարող եք նաև հավաքել այդ հորդորները և օգտագործել որպես հուշումներ սուրբ գրությունների սերտման ապագա վարժությունների համար կամ կարող եք ցուցադրել դրանք դասասենյակում:

*Նշում.* Դուք կարող եք օգտագործել այս վարժությունը դասի ընթացքում ցանկացած պահի: Օրինակ, կարող եք օգտագործել այն դասի վերջում, կամ Մորմոն 7-ը քննարկելուց հետո:

### Բացատրական և պատմական տեղեկություն

**Մորոնի 7: Քրիստոսին հավատալու Մորմոնի վերջին խնդրանքը**

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը բացատրել է Քրիստոսին հավատալու Մորմոնի վերջին խնդրանքը, որը նա ուղղել է մեր օրերի մարդկանց՝ իր ամբողջ ազգի կործանման ականատեսը լինելուց հետո.

«Մահվան մենախոսության մեջ Մորմոնը ժամանակի և տարածության միջով հասավ բոլորին, հատկապես «Իսրայելի տան մնացորդին», ովքեր մի օր պետք է կարդային նրա հրաշալի գրվածքները: Այլ ժամանակի մեջ և այլ վայրում գտնվողները պետք է իմանային, թե ինչ էին մոռացել նրանք, ովքեր պառկած էին նրա առաջ, որ բոլորը պետք է «հավատային Հիսուս Քրիստոսին, որ նա Աստծո Որդին է», որ խաչելությունից հետո Երուսաղեմում «Հոր զորությամբ նա կրկին հարություն է առել, որով նա հաղթանակ է ձեռք բերել գերեզմանի վրա. և նաև նրանում է մահվան խայթոցը կուլ գնացել:

Եվ նա իրականացնում է մեռելների հարությունը, . . . [և] աշխարհի փրկագնումը»: Իսկ փրկագնվածները կարող են Քրիստոսի շնորհիվ վայելել «երջանկության մի վիճակը, որը վերջ չունի»: [Մորմոն 7.2, 5–7:] . . .

«Հավատալ Քրիստոսին», հատկապես չափված նման ողբերգական, սակայն խուսափելի հեռանկարներով, Մորմոնի վերջին աղերսան էր և նրա միակ հույսը: Դա ամբողջ գրքի գերագույն նպատակն էր, որը պետք է հայտնվեր վերջին օրերի աշխարհին, կրելով նրա անունը» (*Christ and the New Covenant: The Messianic Message of the Book of Mormon* [1997], 321–22):

### Ուսուցանման լրացուցիչ միտք

**Մորմոն 7.8–9: Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը**

Ցուցադրեք Մորմոնի Գիրքը «այս» պիտակով: Այնուհետև ցուցադրեք «այդ» պիտակով Աստվածաշունչը: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մորմոն 7.8–9, փնտրելով, թե ինչ Մորմոնն ասաց «այս» (Մորմոնի Գիրքը) և «այդ» (Աստվածաշունչը) գրքերի միջև եղած կապի մասին:

• Մորմոնի Գրքի ձեր ուսումնասիրությունն ինչպե՞ս է ամրացրել Աստվածաշնչյան ճշմարտությունների մասին ձեր վկայությունը: Աստվածաշնչի ձեր ուսումնասիրությունն ինչպե՞ս է ամրացրել Մորմոնի Գրքի մասին ձեր վկայությունը:

639

# Ամենօրյա սեմինարիայի ծրագիր (ազատ գրաֆիկ և վաղ առավոտ)

Այս ձեռնարկը պարունակում է հետևյալ տարրերը ամենօրյա սեմինարիայի ուսուցիչների համար. 160 ուսուցչի ամենօրյա դասեր, ուսուցմանը օժանդակող նյութեր և սերտման սուրբ գրությունները և Հիմնական Վարդապետություններն ուսուցանելու համար նյութեր:

## Ուսուցչի ամենօրյա դասեր

*Դասի ձևաչափ*

Այս ձեռնարկի յուրաքանչյուր դասը կենտրոնանում է սուրբ գրության մասի վրա, և ոչ թե որոշակի գաղափարի, վարդապետության կամ սկզբունքի վրա: Այս ձևաչափը կօգնի ձեզ և ձեր ուսանողներին ուսումնասիրել սուրբ գրությունները հաջորդականությամբ և քննարկել վարդապետությունները և սկզբունքները, երբ դրանք բնականաբար առաջ գան սուրբ գրության տեքստում: Երբ ուսանողները ծանոթանան ենթատեքստին, որտեղ կա վարդապետություն կամ սկզբունք, այդ ճշմարտության մասին նրանց հասկացողությունը կարող է խորանալ: Բացի դրանից, ուսանողները ավելի լավ կկարողանան տեսնել և հասկանալ ուղերձների ողջ էությունը, որ ոգեշնչված սուրբ գրությունների հեղինակները միտված են եղել տալ: Այս եղանակով սուրբ գրություններն ուսուցանելը նաև կօգնի ուսանողներին սովորել, թե ինչպես բացահայտել և կիրառել հավերժական ճշմարտություններն իրենց սուրբ գրությունների անձնական ուսումնասիրության ժամանակ:

Յուրաքանչյուր դասում սուրբ գրության մասի ոչ բոլոր հատվածներն են նշված: Որոշ հատվածներ ավելի քիչ ուշադրության են արժանանում, քանի որ դրանք ավելի քիչ կարևոր են ոգեշնչված գրողի ընդհանուր ուղերձի համար կամ քանի որ դրանք ավելի քիչ կիրառելի են երիտասարդների համար: Դուք պարտավորություն ունեք հարմարեցնել այս նյութերը համաձայն այն ուսանողների կարիքների և հետաքրքրությունների, որոնց դուք ուսուցանում եք: Դուք կարող եք հարմարեցնել այս ձեռնարկի դասի գաղափարները, ընտրելով ավելի մեծ ուշադրություն դարձնել որոշակի վարդապետության կամ սկզբունքի վրա, քան դրա վրա ուշադրություն է դարձված դասանյութում, կամ ընտրելով ավելի քիչ ուշադրություն դարձնել սուրբ գրության մասի հատվածի վրա, որը խորությամբ զարգացված է ձեռնարկում: Փնտրեք Սուրբ Հոգու առաջնորդությունը, որ օգնի ձեզ կատարել այս հարմարեցումները, երբ դուք նախապատրաստվում և ուսուցանում եք:

*Վարդապետություններ և սկզբունքներ*

Յուրաքանչյուր դասի կառուցվածքում դուք կգտնեք, որ մի քանի կարևոր վարդապետություններ և սկզբունքներ են ընդգծված: Այս վարդապետությունները և սկզբունքները ներկայացված են ուսումնական ծրագրում, քանի որ (1) դրանք արտահայտում են սուրբ գրության մասի հիմնական ուղերձը, (2) դրանք հատկապես հարմար են ուսանողների կարիքներին և պայմաններին, կամ (3) դրանք կարևոր ճշմարտություններ են, որոնք կարող են օգնել ուսանողներին խորացնել իրենց հարաբերությունները Տիրոջ հետ: Իմացեք, որ Մորմոնի Գիրքը ուսուցանում է ավելի շատ ճշմարտություններ, քան ներկայացված են ուսումնական ծրագրում: Նախագահ Բոյդ Ք. Փաքերն ուսուցանել է, որ սուրբ գրությունները պարունակում են «ճշմարտությունների անթիվ համակցություններ, որ կհամապատասխանեն յուրաքանչյուր անհատի՝ յուրաքանչյուր պայմանում» (“The Great Plan of Happiness” [CES Symposium on the Doctrine and Covenants/Church History, Aug. 10, 1993], 2, si.lds.org):

Ուսուցանելիս շարունակ ուսանողներին հնարավորություններ տվեք, որ ներկայացնեն սուրբ գրությունների վարդապետությունները և սկզբունքները: Երբ ուսանողները արտահայտեն իրենց գտած ճշմարտությունները, նրանք հաճախ կարող են օգտագործել բառեր, որոնք տարբեր կլինեն այս ձեռնարկում նշված վարդապետության կամ սկզբունքի ձևից: Նրանք նաև կարող են գտնել ճշմարտություններ, որոնք նշված չեն դասում: Զգուշացեք, որ չառաջարկեք, որ ուսանողների պատասխանները սխալ են պարզապես այն պատճառով, որ այն արտահայտելու համար նրանց օգտագործած բառերը տարբերվում են այն բառերից, որոնք օգտագործվել են ձեռնարկում, կամ քանի որ դրանք ներկայացնում են մի ճշմարտություն, որը նշված չէ ուսումնական ծրագրում: Ինչևիցե, եթե ուսանողի մեջբերումը վարդապետորեն սխալ է, ձեր պարտականությունն է մեղմությամբ օգնել ուսանողին ուղղել իր մեջբերումը՝ պահպանելով սիրո և վստահության մթնոլորտ: Սա անելը կարող է ապահովել սովորելու կարևոր փորձառություն ձեր դասարանի ուսանողների համար:

*Տեմպ*

Այս ձեռնարկը պարունակում է 160 սեմինարիայի ամենօրյա դասեր, որտեղ հաշվի են առնվում ուսանողների դպրոցական արձակուրդները և համայնքի օրակարգերը, և նաև մի քանի ազատ օրեր են նախատեսում սուրբ գրության բովանդակությունը կրկնելու կամ սերտման սուրբ գրության վրա աշխատելու համար: Դուք կարող եք հարմարեցնել դասերը և տեմպը ըստ այս դասընթացն ուսուցանելու համար նախատեսված ժամանակի: (Տես տեմպի ուղեցույցի օրինակ այս ձեռնարկի վերջում գտնվող հավելվածում:)

*Ստեղծագործական աշխատանք*

*Սեմինարիայի ուսանողների տնային ուսումնասիրության համար նախատեսված Մորմոնի Գրքի ուսումնասիրության ձեռնարկը* կարող է օգտագործվել սեմինարիայի ամենօրյա ծրագրերում որպես միջոց՝ ուսանողներին ստեղծագործական աշխատանք տալու համար: Ուսանողների տնային ուսումնասիրության ուղեցույցի դասերը համապատասխանում են այն դասերին, որոնք ներկայացված են այս ձեռնարկում: Այն ուսանողներին, ովքեր ունեն շատ բացակայություններ, կարող են հանձնարարել կատարել ուսումնասիրության ուղեցույցի այն հանձնարարությունները, որոնք համապատասխանում են այն դասի բովանդակությանը, որը նրանք բաց են թողել: Հանձնարարությունները կարող են տպվել ՍևԻ վեբկայքից, ուստի, դուք կարիք չունեք տալու ողջ ձեռնարկը այն ուսանողներին, ովքեր պետք է կատարեն ստեղծագործական աշխատանք: *Սեմինարիայի ուսանողների տնային ուսումնասիրության համար նախատեսված Մորմոնի Գրքի ուսումնասիրության ձեռնարկի* վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ են տրված «Սեմինարիայի տնային ուսումնասիրության ծրագիր» վերնագրով բաժնում:

## Ուսուցանման օգնություն

Ուսուցանման օգնություն հանդիպում ենք այս ձեռնարկի լուսանցքներում: Ուսուցանման օգնությունը բացատրում և լուսաբանում է, թե ինչպես դուք և այն ուսանողները, ում ուսուցանում եք, կարող են կիրառել Ավետարանի ուսուցանման և ուսումնասիրության հիմունքները Մորմոնի Գրքի ձեր ուսումնասիրության ժամանակ: Դրանք նաև առաջարկություններ ունեն, թե ինչպես արդյունավետորեն օգտագործել բազմազան ուսուցանման մեթոդները, հմտությունները և միջոցները: Երբ դուք սկսեք հասկանալ ուսուցանման օգնությունում գտնվող սկզբունքները, փնտրեք ուղիներ, թե ինչպես մշտապես փորձարկեք և կիրառեք դրանք, երբ ուսուցանում եք:

## Սերտման սուրբ գրություն և հիմնական վարդապետություններ

Ուսանողներին օգնելու համար, որ բարձր գնահատեն հավերժական ճշմարտությունները և մեծացնեն իրենց վստահությունը սուրբ գրությունները սովորելիս և ուսուցանելիս, Սեմինարիաները և Կրոնի Ինստիտուտները (ՍևԻ) ընտրել են մի շարք սուրբ գրությունների հատվածներ, որ ուսանողները սերտեն յուրաքանչյուր ուսման դասընթացի ընթացքում: Բացի դրանից, Հիմնական վարդապետությունների ցանկ է ներառված, որպեսզի ընդգծեն հիմնական վարդապետությունները, որոնք ուսանողները պետք է հասկանան, հավատան դրանց և ապրեն դրանց համաձայն սեմինարիայի չորս տարիների ընթացքում և իրենց կյանքի մնացած ողջ տարիներիի ընթացքում: Յուրաքանչյուր դասընթացի ձեռնարկ նախատեսված է Հիմնական վարդապետություններն ընդգծելու համար, մինչ դրանք հայտնվում են, երբ ուսանողները հերթականությամբ ուսումնասիրում են սուրբ գրությունները: Սերտման սուրբ գրության հատվածներից շատերն ընտրված են ի նկատի ունենալով Հիմնական վարդապետություններ, որպեսզի երբ դուք ուսանողներին ուսուցանեք սերտման սուրբ գրության հատվածները, դուք նաև ուսուցանեք Հիմնական Վարդապետություններ:

Երբ անհատները հավերժական ճշմարտություններ են գանձում իրենց մտքերում և սրտերում, Սուրբ Հոգին կհիշեցնի նրանց այս ճշմարտությունները անհրաժեշտության դեպքում և նրանց քաջություն կտա հավատքով գործել (տես Հովհաննես ԺԴ.26): Նախագահ Հովարդ Վ. Հանթերը ուսուցանել է.

«Ես խստությամբ քաջալերում եմ ձեզ օգտագործել սուրբ գրությունները ձեր ուսուցանելու ժամանակ և անել ամեն հնարավոր բան ուսանողներին օգնելու համար, որ օգտագործեն դրանք և հարմարվեն դրանց: Ես կցանկանայի, որ մեր երիտասարդները վստահությամբ մոտենային սուրբ գրություններին: . . .

. . . Մենք ցանկանում ենք, որ ուսանողները հավատան սուրբ գրությունների ուժին և ճշմարտացիությանը, վստահ լինեն, որ իրենց Երկնային Հայրը իրոք խոսում է նրանց հետ սուրբ գրությունների միջոցով, և վստահություն, որ նրանք կարող են դառնալ դեպի սուրբ գրությունները և գտնել պատասխաններ իրենց խնդիրներին և իրենց աղոթքներին: . . .

. . . Մենք հուսով ենք, որ ձեր ուսանողներից և ոչ մեկը դուրս չի գա դասարանից վախեցած կամ ամոթով, որ նրանք չեն կարող գտնել իրենց անհրաժեշտ օգնությունը, քանի որ նրանք բավականաչափ լավ չգիտեն սուրբ գրությունները անհրաժեշտ հատվածները գտնելու համար» (“Eternal Investments,” [address to CES religious educators, Feb. 10, 1989], 2, si.lds.org):

Սերտման սուրբ գրության և Հիմնական վարդապետության մասին ավելի շատ տեղեկությունների համար տես այս ձեռնարկի վերջում գտնվող հավելվածը:

# Տնային ուսումնասիրության դաս

Մորմոնի Խոսքերը–Մոսիա 6 (Մաս 11)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Մորմոնի Խոսքերից մինչև Մոսիա 6 (մաս 11) ուսանողների սովորած վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը նախատեսված չէ ուսուցանել որպես ձեր դասի մի մաս: Ձեր ուսուցանած դասը կենտրոնանում է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, երբ դուք խորհեք ուսանողների կարիքների մասին:

### Օր 1 (Մորմոնի Խոսքերը–Մոսիա 2)

Ուսումնասիրելով Հոգուն հետևելու և իր հիշատակարանում Նեփիի փոքր թիթեղներն ընդգրկելու Մորմոնի փորձառությունը՝ ուսանողները սովորեցին, որ Տերը գիտի բոլոր բաները: Բենիամին թագավորն ուսուցանել է, որ եթե նեփիացիները չունենային սուրբ գրությունները, նրանք կթափառեին անհավատության մեջ և որ սուրբ գրություններն ուսումնասիրելը մեզ օգնում է իմանալ և պահել պատվիրանները: Նա ուսուցանեց իր ժողովրդին կարևոր սկզբունքներ, ինչպիսիք են. Երբ մենք ծառայում ենք ուրիշներին, մենք ծառայում ենք Աստծուն: Երբ մենք պարտական ենք զգում Աստծուն, մենք ցանկանում ենք ծառայել ուրիշներին և մեր երախտագիտությունը մեծանում է: Եթե մենք պահում ենք պատվիրանները, մենք կօրհնվենք նյութապես և հոգեպես:

### Օր 2 (Մոսիա 3)

Բենիամին թագավորը հայտնեց հրեշտակի խոսքերը, ով բերեց «մեծ ուրախության ավետիք» մահկանացու կյանք Տիրոջ գալու մասին: Ուսանողները սովորեցին, որ դա մարգարեացվել էր հարյուրավոր տարիներ առաջ այն իրադարձություններից, երբ Հիսուս Քրիստոսը կտառապեր, որպեսզի մենք կարողանայինք փրկվել մեր մեղքերից: Մենք կարող ենք փրկվել մեր մեղքերից, երբ մենք հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը և ապաշխարենք: Եթե մենք ենթարկվենք Սուրբ Հոգու հրահանգներին, մենք կարող ենք հաղթել բնական մարդուն [illegible] Քրիստոսի Քավության շնորհ[illegible]

### Օր 3 (Մոսիա 4)

Բենիամին թագավորի ուղերձը լցրեց իր ժողովրդին Տիրոջ Հոգով: Ուսանողները սովորեցին, որ երբ մենք հավատք ենք գործադրում առ Հիսուս Քրիստոսը և անկեղծորեն ապաշխարում ենք, մենք ներում ենք ստանում մեր մեղքերին: Բենիամին թագավորն ուսուցանել է իր ժողովրդին, որ եթե մենք խոնարհեցնենք մեր անձերն Աստծո առաջ և ձգտենք զարգացնել քրիստոսանման հատկանիշներ, մենք կարող ենք պահել մեր մեղքերի թողությունը:

### Օր 4 (Մոսիա 5–6)

Երբ նրանք կարդում են փոփոխության մասին, որը եկավ Բենիամին թագավորի ժողովրդի վրա, ուսանողները սովորեցին, որ երբ մենք հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը և ստանանք Սուրբ Հոգին, մենք կարող ենք ունենալ սրտի զորեղ փոփոխություն: Բենիամին թագավորի մարդիկ ուխտեցին կատարել Տիրոջ կամքը և պահել Նրա պատվիրանները, ցուցադրելով, որ մենք մեզ վրա ենք վերցնում Հիսուս Քրիստոսի անունը, երբ մենք կապում և պահում ենք սուրբ ուխտերը:

### Նախաբան

Այս դասը կօգնի ուսանողներին հասկանալ իր մահից երեք տարի առաջ իր որդիներին և իր ժողովրդին ուղղված Բենիամին թագավորի ուսմունքները: Բենիամին թագավորը սովորեցրեց իր ժողովրդին, թե ինչպես ստանալ և պահել իրենց մեղքերի թողությունը՝ հավատք գործադրելով առ Հիսուս Քրիստոսը:

### Ուսուցանման առաջարկներ

#### Մորմոնի Խոսքերը

***Նեփին և Մորմոնը արտահայտում են իրենց վստահությունն առ Աստված***

Հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ 1 Նեփի 9.2–3, որ հիշեցնեք ուսանողներին, որ Նեփիին պատվիրվել էր պատրաստել երկու տեսակի թիթեղներ: Օգնեք նրանց հասկանալ, որ այս հատվածում «այս թիթեղները» արտահայտությունը վերաբերվում է 1 Նեփիի փոքր թիթեղներին, որը հիմնականում պա[illegible] գրությունները [illegible] Նեփին

[illegible] Քրիստոսի Քավության [illegible]

[illegible] ցանկացող [illegible] խոսել ժողովրդի հա[illegible] գանում էր հայտարարել, որ Մոսիան լինելու էր հաջորդ թագավորը և անունն տալ ժողովրդին:)

#### Մոսիա 2–6

***Բենիամին թագավորը սովորեցնում է իր ժողովրդին Փրկչի Քավության մասին***

Ուսանողներին ցուցադրեք Բենիամին թագավորը դիմում է իր ժողովրդին նկարը (62298; *Gospel Art Book* [2009], no. 74): Դասարանի համար կարդացեք Մոսիա 2.12–19: Հրավիրեք ուսանողներին բարձրացնել իրենց ձեռքերը, երբ նրանք նկատեն արտահայտություններ, որոնք ցույց են տալիս Բենիամին թագավորի բնավորությունը: Երբ ուսանողները ձեռք բարձրացնեն, դադարեցրեք կարդալը և խնդրեք նրանց բացատրել, թե ինչ են նրանք գտել և ինչպես է այն բացահայտում Բենիամին թագավորի բնավորությունը:

Դուք կարող եք հարցնել ուսանողներին, թե ինչ են նրանք սովորել ծառայության մասին Մոսիա 2.17–ում: (Ուսանողների պատասխանները պետք է արտացոլեն այնպիսի հասկացողություն, որ **երբ մենք ծառայում ենք ուրիշներին, մենք ծառայում ենք Աստծուն:**) Դուք կարող եք նաև խնդրել դասարանին կրկնել Մոսիա 2.17-ը՝ սերտման սուրբ գրությունը, որը նրանք անգիր գիտեն: Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչպես են նրանք վերջերս ուրիշների ծառայելով ծառայել Աստծուն:

Գրատախտակին կամ թերթիկի վրա գրեք հետևյալ սուրբ գրությունների հատվածները: Փակագծերի պատասխանները մի ներառեք: Հանձնարարեք յուրաքանչյուր ուսանողի քննել սուրբ գրությունների հատվածներից մեկը: Հիշեցնեք նրանց, որ Բենիամին թագավորի քարոզը կենտրոնացած էր այս թեմայի վրա. «Փրկություն կարող է գալ մարդկանց զավակներին միայն Քրիստոսի՝ Ամենակարող Տիրոջ անունով և միջոցով» (Մոսիա 3.17): Սուրբ գրությունների հատվածներից յուրաքանչյուրն ուսուցանում է այս թեմայի շուրջ:

1. Մոսիա 2.20–25, 34: (Երբ մենք հասկանում ենք մեր պարտականությունը Աստծո առաջ, մեր երախտագիտությունը մեծանում է:)
2. Մոսիա 3.7–11, 17–18: (Հիսուս Քրիստոսը տառապեց, որպեսզի մենք կարողանանք փրկվել մեր մեղքերից: Եթե մենք հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը ապաշխարության միջոցով, մենք կարող ենք փրկվել մեր մեղքերից:)

[illegible] 20. (Եթե մենք [illegible] Աստծո առաջ և ձգտենք զարգ[illegible] քրիստոսանման հատկանիշներ, մենք կարող ենք պահել մեր մեղքերի թողությունը:)

Ուսանողներին բավականաչափ ժամանակ տալուց հետո, նրանց թույլ տվեք դասարանին կամ փոքր խմբերին զեկուցել այն, ինչ իրենք սովորել են: Ապա խնդրեք մի քանի ուսանողների ընտրել սկզբունքներից մեկը և բացատրել, թե ինչպես նրանք կարող են կիրառել այն իրենց կյանքում:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 4.1–3: Խնդրեք դասարանին հետևել, փնտրելով, թե ինչպես ժողովուրդն արձագանքեց Բենիամին թագավորի խոսքերին: Ապա հրավիրեք մեկ այլ ուսանողի բարձրաձայն կարդալ Մոսիա 5.1–2, 5–8: Խնդրեք դասարանին փնտրել, թե ինչպես ենք մենք մեզ վրա վերցնում Տիրոջ անունը: Հաստատվեք, որ ուսանողները հասկանում են այս սկզբունքը. **Մենք մեզ վրա ենք վերցնում Հիսուս Քրիստոսի անունը, երբ մենք կապում և պահում ենք սրբազան ուխտերը:** Դուք կարող եք հիշեցնել ուսանողներին, որ պատճառներից մեկը, որ Բենիամին թագավորը հավաքեց ժողովրդին, այն էր, որ սովորեցներ նրանց ուխտեր կապելու մասին: Նա նաև օծեց իր որդի Մոսիային որպես ժողովրդի թագավոր (տես Մոսիա 6.3):

Վերջում հարցրեք ուսանողներին, թե արդյոք նրանցից որևէ մեկը կցանկանար կիսվել, թե ինչ են նրանք զգում այն բանի արդյունքում, որ մկրտվելիս վերցրել են իրենց վրա Հիսուս Քրիստոսի անունը: Խնդրեք նրանց խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Ինչպե՞ս դուք կարող եք անձամբ կիրառել Բենիամին թագավորի ելույթի սկզբունքները:
- Ի՞նչ է նշանակում ձեզ համար Հիսուս Քրիստոսի անունը վերցնել ձեզ վրա:

Դուք կարող եք նաև վկայել ուրախության մասին, որը գալիս է Հիսուս Քրիստոսին հավատալու և Նրա Քավությունը վստահելու միջոցով:

#### Հաջորդ Մասը (Մոսիա 7–17)

Հարցրեք ուսանողներին. Դուք կդավանե՞ք Հիսուս Քրիստոսին, եթե նույնիսկ դա անելը նշանակի, որ դուք մահվան կդատապարտվեք: Տեղեկացրեք ուսանողներին, որ հաջորդ շաբաթ նրանք կուսումնասիրեն Աբինադի մարգարեի ուսմունքները: Խրախուսեք նրանց փնտրել ուղերձը, որն Աբինադին ցանկանում էր տալ նեփիացիներին, չնայած, որ նա գիտեր, որ իրեն մահվան կդատապարտեին:

## Տնային ուսումնասիրության դասերն օգտագործելը

### Ուսանողների դասերի ամփոփումը

Ամփոփումը կօգնի ձեզ ծանոթանալ ենթատեքստի և վարդապետությունների ու սկզբունքների հետ, որոնք ուսանողները ուսումնասիրել են շաբաթվա ընթացքում ուսանողների ուսումնասիրության ուղեցույցում:

### Դասի նախաբանը

Դասի նախաբանը կօգնի ձեզ իմանալ, թե սուրբ գրության մասի որ հատվածները կշեշտվեն դասի ժամանակ:

### Դասի կառուցվածքը

Դասի կառուցվածքը ուղեցույց է հանդիսանում ձեզ համար, երբ դուք ուսումնասիրում և ուսուցանում եք: Այն առաջարկում է ուսուցանման գաղափարներ, ներառյալ հարցեր, վարժություններ, մեջբերումներ, գծագրեր և աղյուսակներ:

### Հատվածների խմբավորում և ենթատեքստի ամփոփում

Հատվածները խմբավորվում են համաձայն սուրբ գրությունների մասերի ենթատեքստի կամ բովանդակության փոփոխությունների: Յուրաքանչյուր հատվածների խմբի հողումներին հաջորդում է այդ հատվածների խմբի իրադարձությունների կամ ուսմունքների հակիրճ ամփոփումը:

### Վարդապետություններ և սկզբունքներ

Երբ վարդապետությունները և սկզբունքները բնականորեն առաջ են գալիս սուրբ գրության տեքստի ուսումնասիրության ժամանակ, դրանք ընդգծվում են, որպեսզի օգնեն ձեզ ներկայացնել և նշել դրանք ուսանողների հետ ձեր քննարկումներում:

### Հաջորդ միավորի նախաբանը

Յուրաքանչյուր դասի վերջին պարբերությունը տալիս է հաջորդ միավորի վերաբերյալ ակնարկներ: Կիսվեք այս պարբերությամբ ձեր ուսանողների հետ յուրաքանչյուր դասի վերջում, որպեսզի օգնեք նրանց ուսումնասիրել սուրբ գրությունները եկող շաբաթվա ընթացքում:

# Սեմինարիայի տնային ուսումնասիրության ծրագիր

Տնային ուսումնասիրության ծրագիրը թույլ է տալիս ուսանողներին սեմինարիայում միավորներ ստանալ՝ շաբաթվա ընթացքում դասերին հաճախելու փոխարեն տանն անհատական դասեր լրացնելով: Այս դասերը գտնվում են առանձին ձեռնարկում, որը կոչվում է *Մորմոնի Գրքի ուղեցույց սեմինարիայի ուսանողների տնային ուսումնասիրության համար:* Շաբաթական մեկ անգամ ուսանողները հանդիպում են ունենում սեմինարիայի ուսուցչի հետ, որպեսզի ներկայացնեն իրենց աշխատանքը և դասարանի հետ մասնակցեն դասին: Ուսանողների ուսումնասիրության ուղեցույցը և շաբաթական դասարանային դասերը բացատրված են ստորև:

## Ուսումնասիրության ուղեցույց ուսանողների տնային ուսումնասիրության համար

*Մորմոնի Գրքի ուսումնասիրության ուղեցույց սեմինարիայի ուսանողների տնային ուսումնասիրության համար* ձեռնարկը նախատեսված է տանն ուսումնասիրող ուսանողին օգնելու համար, որ Մորմոնի Գրքի ուսումնասիրության ժամանակ ստանա այնպիսի փորձառություն, ինչպիսին սեմինարիայի ուսանողը, ով հաճախում է աշխատանքային օրերին տեղի ունեցող դասերին: Ուստի, ուսանողի ուսումնասիրության ուղեցույցի տեմպը, ինչպես նաև այնտեղ ընդգծված վարդապետությունները և սկզբունքները համապատասխանում են այս ձեռնարկի նյութին: Ուսանողի ուսումնասիրության ուղեցույցը նաև ներառում է սերտման սուրբ գրության ուսուցում: Սերտման սուրբ գրությունների հատվածները տրված են ենթատեքստում այնպես, ինչպես դրանք տրված են սուրբ գրության տեքստում: Լրացուցիչ վարժություններ են տրված այն դասերի վերջում, որտեղ կան հատվածներ:

Ամեն շաբաթ տնային ուսումնասիրության սեմինարիայի ուսանողները պետք է ուսումնասիրեն չորս դասեր ուսանողների ուսումնասիրության ուղեցույցից և մասնակցեն ամենշաբաթյա դասի, որը անց կկացվի նրանց սեմինարիայի ուսուցչի կողմից: Ուսանողները կատարում են ուսումնասիրության ուղեցույցում գտնվող վարժությունները իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: Ուսանողները պետք է ունենան սուրբ գրությունների ուսումնասիրության երկու օրագրեր, որպեսզի նրանք կարողանան մեկը թողնել իրենց ուսուցչի մոտ և շարունակեն աշխատել մյուսում: Երբ ուսանողները ամեն շաբաթ հանդիպում են իրենց ուսուցչի հետ, մի օրագիրը հանձնվում է տնային ուսումնասիրության ուսուցչին և մյուսը ետ է տրվում ուսանողին, որ օգտագործի հաջորդ շաբաթվա դասերի համար: (Օրինակ, մի շաբաթվա ընթացքում ուսանողը կատարում է վարժությունները օրագիր 1-ում: Ապա ուսանողը բերում է այս օրագիրը դասարան և տալիս է այն ուսուցչին: Հաջորդ շաբաթվա ընթացքում ուսանողը վարժությունները կատարում է օրագիր 2-ում: Երբ ուսանողը հանձնում է օրագիր 2-ը, ուսուցիչը կվերադարձնի օրագիր 1-ը: Ապա ուսանողն օգտագործում է օրագիր 1-ը, որպեսզի կատարի հաջորդ շաբաթվա հանձնարարությունները:)

Բոլոր սեմինարիայի ուսանողներին խրախուսվում է ամեն օր ուսումնասիրել սուրբ գրությունները և կարդալ դասընթացի տեքստը, սակայն տնային ուսումնասիրության ուսանողները պետք է հասկանան, որ նրանցից ակնկալվում է յուրաքանչյուր միավորի յուրաքանչյուր չորս տնային ուսումնասիրության դասի վրա ծախսել 30-ից 40 լրացուցիչ րոպեներ և հաճախել շաբաթական տնային ուսումնասիրության դասին:

## Ուսուցչի շաբաթական տնային ուսումնասիրության դասեր

*Մորմոնի Գրքի ուսումնասիրության ուղեցույց սեմինարիայի ուսանողների տնային ուսումնասիրության համար* գրքի յուրաքանչյուր մասը համապատասխանում է ուսուցչի ամենօրյա ձեռնարկի հինգ դասերին: Տնային ուսումնասիրության դասերը կօգնեն ուսանողներին կրկնել, կիրառել վարդապետությունները և սկզբունքները և խորացնել դրանց վերաբերյալ իրենց հասկացողությունը, որոնք նրանք սովորել են շաբաթվա ընթացքում ուսանողի ուսումնասիրության ուղեցույցի դասերը կատարելիս: Այս դասերում կարող են նաև քննարկվել լրացուցիչ ճշմարտություններ, որոնք չեն ամփոփված ուսանողների ուսումնասիրության ձեռնարկում: (Ձեր դասի ժամանակացույցը կազմելիս օգնության համար տես տեմպի ուղեցույցը տնային ուսումնասիրության ուսուցիչների համար այս ձեռնարկի վերջում գտնվող հավելվածում:)

Որպես տնային ուսումնասիրության ուսուցիչ դուք պետք է լիակատար հասկացողություն ունենաք այն մասին, թե ինչ են ձեր ուսանողները ուսումնասիրում տանը ամեն շաբաթ, որպեսզի դուք կարողանաք պատասխանել հարցերի և բովանդակալից քննարկումներ անց կացնեք, երբ հանդիպեք նրանց հետ: Խնդրեք ուսանողներին իրենց ամենշաբաթյա դասերին բերել իրենց սուրբ գրությունները, սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերը և ուսանողների ուսումնասիրության ուղեցույցները, որպեսզի նրանք կարողանան անդրադառնալ դրանց դասի ընթացքում: Հարմարեցրեք դասերը ըստ այն ուսանողների կարիքների, ում դուք ուսուցանում եք և ըստ Սուրբ Հոգու առաջնորդության: Դուք կարող եք նաև անդրադառնալ այս ձեռնարկի ուսուցիչների ամենօրյա դասերին, երբ դուք պատրաստվեք և ուսուցանեք: Ուսուցանման օգնության ուսումնասիրությունը և ամենօրյա դասերում օգտագործված մեթոդները կարող են օգնել հարստացնել ձեր շաբաթական ուսուցումը: Պատրաստակամորեն մոտեցեք ձեր ուսանողների ցանկացած հատուկ կարիքին: Օրինակ, եթե ուսանողը խնդիրներ ունի գրելու հետ կապված, թույլ տվեք նրան օգտագործել ձայնագրիչ կամ թելադրել իր մտքերը ընտանիքի անդամին կամ ընկերոջը, ով կարող է գրի առնել նրանց պատասխանները:

Յուրաքանչյուր շաբաթական դասի վերջում հավաքեք ուսանողների սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերը և խրախուսեք նրանց շարունակել իրենց ուսումնասիրությունները: Տվեք նրանց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագիր՝ հաջորդ շաբաթվա հանձնարարությունները կատարելու համար: Ժամանակի սղության հետ կապված կարիք չկա, որ դուք ձեր շաբաթական դասերի ժամանակ լրացուցիչ ուշադրություն դարձնեք սերտման սուրբ գրության վրա: Մինչ դուք կարդաք կատարված առաջադրանքները ուսանողների սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում, պարբերաբար արձագանքեք նրանց աշխատանքներին՝ գրելով մի փոքր երկտող կամ հաջորդ անգամ նրանց տեսնելիս գովաբանելով: Դուք կարող եք նաև փնտրել այլ ուղիներ, որպեսզի աջակցություն և իմաստալի արձագանք տաք: Սա կօգնի ուսանողներին իմանալ, որ ձեզ հետաքրքրում է նրանց աշխատանքը և կօգնի ոգևորել նրանց լիակատար պատասխաններ տալու համար:

## Այլ ռեսուրսներ

Դասերը նախապատրաստելու և ուսուցանման լրացուցիչ գաղափարներ ստանալու համար ուսուցիչները կարող են այցելել Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների վեբ կայք (si.lds.org): Հետևյալ ռեսուրսները մատչելի են համացանցում, ձեր ղեկավարի միջոցով, Եկեղեցու տեղի բաշխման կենտրոնների միջոցով և Եկեղեցու առցանց հիշողության միջոցով (store.lds.org):

Սեմինարիայի զննական միջոցների տեսասկավառակներ

*Ավետարանի արվեստի գիրք*

Սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրեր

Սեմինարիայի էջանշաններ (որոնք ներառում են ժամկետները և սերտման սուրբ գրությունների հղումների ցանկերը և կարևոր բառերը)

Սերտման սուրբ գրությունների քարտեր

*Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում*

*Երիտասարդներին զորացնելու համար*

Ժամկետների պաստառներ

ԴԱՍ 1

# Ուսանողի դերը

## Նախաբան

Այս դասի նպատակն է օգնել ուսանողներին կատարելու ավետարանը սովորելու իրենց դերը: Երբեմն ուսանողները մտածում են, որ սովորելու իրենց պատասխանատվությունը միայն ուսուցչի վրա է: Նախագահ Հենրի Բ. Այրինգը՝ Առաջին Նախագահությունից, խոսել է Սուրբ Հոգու առաջնորդությունը փնտրելու մասին, որի կարիքն ունի ինչպես ուսուցիչը, այնպես էլ ուսանողը:

«Այն խնդիրները և գայթակղությունները, որոնց մեր ուսանողները բախվել են ընդամենը հինգ տարի առաջ դժգույն են դառնում նրա համեմատ, ինչ տեսնում ենք հիմա, իսկ առջևում՝ առավել դժվար ժամանակներ են: Ես զգացել եմ . . . որ այն, ինչ մենք արել և անում ենք, բավարար չի լինի: Մեզ ավելի մեծ զորություն է պետք, որպեսզի հասցնենք ավետարանը մեր ուսանողների սրտերին, որպեսզի այն դառնա նրանց կյանքի մասը: . . .

Զորությամբ ուսուցանելու համար դուք պետք է ունենաք Հոգու մշտական ուղեկցությունը, և ձեր ուսանողները հոգևորապես չեն գոյատևի, եթե չունենան Հոգու ընկերակցությունը» (“The Spirit Must Be Our Constant Companion” [address to CES religious educators, Feb. 7, 2003], 1, si.lds.org):

Սուրբ Հոգու զորությամբ ուսուցանելով և օգնելով աշակերտներին սովորել այդ նույն զորությամբ, դուք կարող եք օգնել նրանց իրապես դարձի գալ դեպի Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը: Պարբերաբար վերադարձեք այս դասի մեջ ուսուցանվող սկզբունքներին, որպեսզի հիշեցնեք ուսանողներին դասարանում ունեցած իրենց պարտականությունների մասին:

## Ուսուցանման առաջարկներ

### Ուսումնասիրմամբ և հավատքով սովորելու անձնական պատասխանատվությունը

Հրավիրեք ուսանողներից մեկին կանգնել դասարանի առջև: Բացատրեք, որ դուք ցանկանում եք օգնել այդ ուսանողին, որ նա ֆիզիկապես ուժեղանա: Ապա մեկ այլ ուսանողի խնդրեք առաջ գալ և գետնից հրում անել հինգ անգամ:

Երբ երկրորդ ուսանողն ավարտի գետնից հրում անելը, հարցրեք առաջին ուսանողին.

- Այս գետնից հրումները քեզ ուժեղացրեցի՞ն:

Հարցրեք դասարանին.

- Ինչպե՞ս է ֆիզիկական վարժության այս օրինակը վերաբերում ավետարանը սովորելու ձեր պատասխանատվությանը: Ո՞վ է կրում ավետարանն ուսումնասիրելու ձեր պատասխանատվությունը:

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 88.118 հատվածը:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում. «ուսում փնտրել . . . ուսումնասիրմամբ և նաև հավատքով»: (Հնարավոր է ձեզ պետք լինի նշել, որ **ուսումնասիրմամբ և հավատքով սովորելը անհատական ջանքեր է պահանջում:**)

Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, խոսել է այն մասին, թե ինչ է նշանակում սովորել հավատքով: Խրախուսեք ուսանողներին գրել այս հայտարարությունը ինչ-որ տեղ (թերևս, իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության հուշատետրում կամ աշխատանքային տետրում), որպեսզի սեմինարիայի ողջ տարվա ընթացքում հաճախակի կարդան այն:

«Հավատքով ուսումնասիրելը պահանջում է ոչ թե գիտելիքների պասիվ ընդունում, այլ հոգևոր, մտավոր և ֆիզիկական ջանք:. . . Ուսանողը պետք է հավատք գործադրի և գործողություն կատարի, որպեսզի գիտելիք ձեռք բերի իր համար» (“Seek Learning by Faith” [address to CES religious educators, Feb. 3, 2006], 3, si.lds.org):

***Սուրբ գրությունների ուսումնասիրության հուշատետր կամ դասարանային աշխատանքների տետր***

Որպես սուրբ գրությունների ուսումնասիրության հուշատետր կամ դասարանային աշխատանքների տետր կարող են ծառայել կազմված տետրը, նոթատետրը կամ արագակարի էջերը: Սուրբ գրությունների ուսումնասիրության հուշատետրում աշակերտները կարող են գրել դասի ժամանակ, անհատական ուսուցմնասիրման ժամանակ և Եկեղեցական ժողովների ժամանակ ստացած տպավորությունները: Գրելով և կազմակերպելով իրենց մտքերն ու տպավորությունները, նրանք պատրաստ կլինեն մասնակցել դասին, բարելավել ավետարանի իրենց ըմբռնումը և անձնական հայտնություն ստանալ:

## Սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրություն

Բացատրեք, որ սուրբ գրությունների ամենօրյա անձնական ուսումնասիրությունը ուսումնասիրմամբ և հավատքով ուսում փնտրելու կարևոր մասն է:

Ուսանողներից մեկին խնդրեք բարցրաձայն կարդալ Հելաման 3.29–30 հատվածները:

- Ի՞նչ եք կարծում, ինչ տարբերություն կա սուրբ գրությունները ժամանակ առ ժամանակ կարդալու և «Աստծո խոսքին կառչած մնալու» միջև:
- Համաձայն հենց նոր կարդացած մեր հատվածների՝ ինչպիսի՞ օրհնություններ են գալիս «Աստծո խոսքին կառչած մնալու» արդյունքում:
- Ուրիշ ի՞նչ օրհնություններ են գալիս սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրությունից:
- Ե՞րբ է եղել, որ սուրբ գրությունների ամենօրյա անձնական ուսումնասիրությունից օրհնություններ եք ստացել:

Երբ ուսանողները պատասխանում են այս հարցերին, հավաստիացեք, որ նրանք հասկանում են, որ **սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրությունն ամրացնում է մեր վկայությունները, հրավիրում է Սուրբ Հոգին մեր կյանք և օգնում է մեզ սովորել ավետարանը:**

Հրավիրեք ուսանողներին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության հուշատետրում պատասխանել հետևյալ հարցերից մեկին.

- Ինչպե՞ս կարող եք բարելավել Մորմոնի Գրքի այս տարվա ձեր ուսումնասիրությունը:
- Ի՞նչ ձևերով է Մորմոնի Գիրքը կարդալն ազդել Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր զգացմունքների վրա:

Հրավիրեք ուսանողներին նպատակ սահմանել՝ ուսումնասիրելու Մորմոնի Գիրքն այս տարի: Հրավիրեք նրանց նաև նպատակ դնել սեմինարիայի տարվա ընթացքում կարդալ Մորմոնի Գիրքն ամբողջությամբ: Դուք կարող եք առաջարկել, որ նրանք գրեն այդ նպատակներն սուրբ գրությունների ուսումնասիրության իրենց հուշատետրում: Հիշեցրեք նրանց, որ այդ նպատակները կարող են օգնել նրանց Պարտականություն Աստծո հանդեպ և Անձնական Զարգացում ծրագրերի պահանջները բավարարելիս:

## Հոգով սովորել

Գրատախտակին արտագրեք հետևյալ տրամագիրը: Տրամագրի վանդակները մի լրացրեք: Դուք կլրացնեք դրանք դասի զարգացմանը զուգահեռ:




Ուսանողներից մեկին հրավիրեք բարցրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 50.17–18 հատվածները:

- Ըստ այդ հատվածների, ի՞նչ է պահանջում Տերը ավետարանի ուսուցչից: (Ուսուցանել ճշմարտությունը՝ Հոգու զորությամբ:)

Ինչպես ցույց է տրված վերևում, տրամագրի վրա գրեք *Սուրբ Հոգի* և Ուսուցիչ բառերը: Կիսեք ձեր մտքերը ուսուցման ժամանակ Սուրբ Հոգու առաջնորդությունը փնտրելու մասին: Օգնեք ուսանողներին գիտակցել, որ ձեր նախապատրաստման և ուսուցման ընթացքում, դուք անկեղծ ջանքեր եք գործադրում, որպեսզի Հոգով առաջնորդվեք:

Ուսանողներին խնդրեք էջանշան դնել Վարդապետություն և Ուխտեր 50բաժնի էջում (քանի որ քիչ անց վերադառնալու եք այդ բաժնին): Ուսանողներից մեկին խնդրեք բարցրաձայն կարդալ 2 Նեփի 33.1 հատվածը:

- Երբ ուսուցանվում է ավետարանը, ի՞նչ է անում Սուրբ Հոգին ուսանողի համար:

Բացատրեք, որ ավետարանը Տիրոջ ձևով սովորելիս մենք պետք է ընդունենք Սուրբ Հոգով սովորելու պատասխանատվությունը: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 50.19–21հատվածները:

- Եռանկյունու ներքևի աջ մասում ի՞նչ պետք է մենք գրենք: (Գրեք՝ *Ուսանող*:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում Հոգով ընդունել ճշմարտությունը:

Հնարավոր է, դուք ցանկանաք սովորեցնել մի քանի սկզբունքներ, թե ինչպես կարող ենք ճանաչել Սուրբ Հոգու ազդեցությունը: Ուսանողներին օգնեք հասկանալ, որ Հոգին, սովորաբար, մեզ հետ հաղորդակցվում է հանգիստ ձևով՝ մեր զգացմունքների միջոցով և մեր մտքում (տես 1 Նեփի 17.45, ՎևՈւ 8.2–3): Սուրբ Հոգին նաև մեզ բերում է սիրո, ուրախության, համբերության, հեզության, բարության, հավատքի և հույսի զգացումներ (տես Գաղատացիս 5.22–23, ՎևՈւ 11.12):

- Ի՞նչ կարող եք դուք անել սեմինարիայում, որպեսզի ձեզ նախապատրաստեք Հոգով սովորելուն:

Որպես այս քննարկման մաս, օգնեք աշակերտներին հասկանալ, որ Հոգով սովորելու կարևոր ձևերից մեկը պատրաստակամությունն է՝ կիսվել մեր վկայություններով միմյանց հետ: Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ՝ Երեց Ռիչարդ Գ. Սքոտի հետևյալ հայտարարությունը.

«Երբ ուսանողները կիսվում են ճշմարտություններով, [այդ ճշմարտությունները] հաստատվում են նրանց հոգում և ամրապնդում են նրանց վկայությունը» (“To Understand and Live Truth” [address to CES religious educators, Feb. 4, 2005], 3, si.lds.org):

Հիշեցրեք ուսանողներին, որ Պարտականություն Աստծո հանդեպ և Անձնական Զարգացում ծրագրերը ներառում են առաջարկություններ՝ կիսվել ավետարանի ճշմարտություններով ուրիշների հետ: Խրախուսեք նրանց կիսվել իրենց փորձառություններով սեմինարիայի դասերին, քվորումի կամ դասարանի ժողովներին և իրենց ընտանիքի անդամների և ընկերների հետ զրուցելիս: Շեշտեք, որ եթե նրանք ջանքեր գործադրեն բացատրելու, կիսվելու և վկայելու ավետարանի ճշմարտությունների մասին, Աստված կմեծացնի ուրիշների հետ ավետարանի քննարկելու նրանց կարողությունը:

Կրկին անդրադարձեք գրատախտակի տրամագրին: Ուսանողներից մեկին խնդրեք բարցրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 50.14, 22 հատվածները:

- Ինչպե՞ս են այս հատվածներն ամփոփում Սուրբ Հոգու, ուսուցչի և ուսանողի դերերը ավետարանն ուսանելիս: (Հնարավոր է պետք լինի բացատրել, որ Սուրբ Հոգին, որն այս հատվածում անվանվում է Հոգի և Մխիթարիչ, ուսուցանում է ճշմարտությունը: Ուսուցիչը պետք է ուսուցանի Հոգու զորությամբ և ուսանողը պետք է սովորի նույն զորությամբ:)
- Ի՞նչ է տեղի ունենում, երբ ուսանողը սովորում է Հոգու կողմից, իսկ ուսուցիչը՝ դասավանդում Հոգու կողմից: (Հնարավոր է, ձեզ պետք լինի բացատրել, որ *շենացնել* նշանակում է վեհացնել, ամրապնդել, լուսավորել կամ կատարելագործել:)

Մորմոնի Գրքում Ենովսը և Ալման Հոգու կողմից սովորող մարդկանց օրինակներ են: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ենովս 1.4–10 և Ալմա 5.45–47 հատվածները: (Հնարավոր է, ցանկանաք հղումները գրել գրատախտակի վրա:) Ապա հարցրեք.

- Ի՞նչ էր անում Ենովսը (կամ Ալման), որպեսզի սովորեր Հոգու կողմից:
- Ի՞նչ էր Հոգին անում Ենովսի (կամ Ալմայի) հետ:

Հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ Երեց Բեդնարի հետևյալ հայտարարությունը.

«Մենք պետք է միշտ հիշենք, որ Սուրբ Հոգին է այն ուսուցիչը, որը պատշաճ հրավերով կարող է թափանցել սովորողի սիրտը» (“Seek Learning by Faith,” 4):

- Ինչպե՞ս է մինչև այժմ սովորածը վերաբերում ձեր անհատական պատասխանատվությանը որպես դասարանի անդամ: (Ուսանողների պատասխանելու ընթացքում համոզվեք, որ նրանք հասկանում են, որ, **երբ մենք բացում ենք մեր սիրտը և հավատքով հարցնում Աստծուն, Սուրբ Հոգին մեզ օգնում է հասկանալ ավետարանի ճշմարտությունները:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին մտածել այն մասին, թե ինչպես կարող են նրանք միմյանց օգնել Հոգով սովորելիս, հարցրեք.

### *Սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրություն*

Երեց Դալին Հ. Օուքսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանել է. «Սուրբ գրությունների ընթերցումը մեզ համահունչ է դարձնում Տիրոջ Հոգու հետ:. . . Քանի որ մենք հավատում ենք, որ սուրբ գրությունների ընթերցումը կարող է օգնել մեզ հայտնություն ստանալ, մենք խրախուսվում ենք կարդալ սուրբ գրությունները կրկին և կրկին: Այդ ճանապարհով մենք կարողանում ենք իմանալ, թե ինչ է մեր Երկնային Հայրը ցանկանում, որ մենք իմանանք մեր անձնական կյանքում այսօր: Դա է պատճառներից մեկը, թե ինչու են Վերջին Օրերի Սրբերը հավատում *ամեն օր* սուրբ գրություններն ուսումնասիրելուն» (“Scripture Reading and Revelation,” *Ensign,* Jan. 1995, 8):

- Ի՞նչ միջոցներ կարող ենք ձեռնարկել, որոնք կօգնեն հրավիրել Հոգին մեր լսարան: (Պատասխանները կարող են ներառել՝ բացման օրհներգ երգելը, սուրբ գրությունները դասարան բերելը և ամեն օր օգտագործելը, հարցերին պատասխանելու պատրաստակամ լինելը և փորձով կիսվելը, միմյանց համար աղոթելը և Սուրբ Հոգու առաջնորդությունը խնդրելը:)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, որ բացասական գործողությունները նույնպես կարող են ազդել դասարանի մյուս անդամների վրա, հարցրեք.

- Ի՞նչ տեսակի վերաբերմունք կամ պահվածք կարող է հեռացնել Հոգին սեմինարիայի դասերից:

Հրավիրեք ուսանողներին մտածել Սուրբ Հոգին որպես իրենց ուսուցիչ ունենալու արժեքի մասին:

- Ե՞րբ եք զգացել, որ Հոգին կատարում է Իր դերը՝ որպես ուսուցիչ:

Եզրափակեք, հրավիրելով ուսանողներին սովորել ուսումնասիրմամբ և հավատքով, մինչ նրանք այս տարի կուսումնասիրեն Մորմոնի Գիրքը սեմինարիայում: Դուք կարող եք շարունակել քաջալերել ուսանողներին ողջ տարվա ընթացքում չդադարեցնել այդ ջանքերը:

## Մեկնաբանություններ և նախնական տեղեկություններ

### 2 Նեփի 33.1: Մեր սրտերը Սուրբ Հոգու համար բացելը

Որպես 2 Նեփի 33.1 հատվածի ձեր քննարկման մաս, կարող եք կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից՝ երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ հայտարարությունը.

«Նեփին մեզ ուսուցանում է, որ « երբ մարդ խոսում է Սուրբ Հոգու զորությամբ, Սուրբ Հոգու զորությունը տանում է այն, մինչև մարդկանց զավակների սրտերը» (2 Նեփի 33.1): Խնդրում եմ, նկատեք, թե ինչպես է Սուրբ Հոգու զորությունը տանում պատգամը *մինչև* մարդու սիրտը, որն անխտիր չի նշանակում՝ սրտի *մեջ* հասցնել: Ուսուցիչը կարող է բացատրել, ցույց տալ, համոզել և վկայել, և այդ ամենն անել հոգևոր մեծ ուժով և արդյունավետությամբ: Ի վերջո, սակայն, պատգամի բովանդակությունը և Սուրբ Հոգու վկայությունը ներթափանցում են սրտի մեջ միայն, եթե ստացողը թույլ է տալիս, որ այն մուտք գործի:. . .

Ուսանողն է, որ ազատ կամքն օգտագործելով և ճիշտ սկզբունքների համաձայն գործելով, բացում է իր սիրտը Սուրբ Հոգու առաջ և ներս հրավիրում Նրա ուսմունքները, վկայության ուժը և հաստատող հայտնությունը» («Seek Learning by Faith» [address to CES Religious Educators, Feb. 3, 2006], 1, 3, si.lds.org):

ԴԱՍ 2

# Սուրբ գրություններն ուսումնասիրելը

## Նախաբան

Այս դասը կօգնի ուսանողներին խորացնել իրենց հասկացողությունը սուրբ գրությունների նպատակների վերաբերյալ: Այն նրանց կօգնի նաև ավելի իմաստալի ձևով ուսումնասիրել սուրբ գրությունները: Այն ներառում է ուսուցողական միջոցառումներ կապված սուրբ գրությունների պատմության և միջավայրի հետ, վարդապետություններն ու սկզբունքները ճանաչելու և հասկանալու և վարդապետությունները և սկզբունքները մեր կյանքում կիրառելու հետ: Երբ ուսանողները բարելավեն սուրբ գրություններն ուսումնասիրելու իրենց ունակությունը, նրանց սերը սուրբ գրությունների հանդեպ կմեծանա, ինչպես նաև կխորանա ավետարանի նրանց հասկացողությունը: Մտածեք ուղիներ՝ վերանայելու այս դասի նյութերը տարվա ընթացքում:

## Ուսուցանման առաջարկներ

### Ինչպե՞ս պետք է սկսենք սեմինարիայում սուրբ գրությունների ուսումնասիրությունը:

Նախքան դասը սկսելը գրեքՆախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հետևյալ միտքը գրատախտակին: (Այդ միտքը գտնվում է 1970 թվականի Համաժողովի զեկույցի 107 էջում):

*«Ավետարանի ուսուցման նպատակը . . . դասարանի անդամների մտքերը «տեղեկությամբ լցնելը չէ:. . . Նպատակը մարդկանց ոգեշնչելն է մտածել, զգալ և ապա անել ինչ որ բան՝ ավետարանի սկզբունքներով ապրելու համար» (Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն):*

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այդ միտքը:

- Այս մտքի վրա հիմնվելով, ի՞նչը պետք է լինի իմ նպատակը որպես ձեր սեմինարիայի ուսուցիչ: Ի՞նչը պետք է լինի ձեր նպատակը որպես սեմինարիայի ուսանողներ:

Ասեք ուսանողներին, որ այս դասում նրանք կհետազոտեն ուղիներ «մտածելու, զգալու և ապա անելու ինչ որ բաներ ավետարանի սկզբունքներով ապրելու համար», որոնք ուսուցանվում են սուրբ գրություններում:

### Հասկանալ սուրբ գրությունների պատմությունն ու միջավայրը:

Բացատրեք, որ մի բան, որը կարող են ուսանողներն անել բարելավելու համար սուրբ գրությունների իրենց ուսումնասիրությունը, սուրբ գրություններում գտնվող պատմությունների և հայտնությունների պատմության ու միջավայրի մասին սովորելն է: Պատմությունն ու միջավայրը հաճախ կոչվում է ենթատեքստ:

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հետևյալ խոհուրդը.

«Ծանոթացեք դասերի հետ, որոնք ուսուցանում են սուրբ գրությունները: Սովորեք Վարդապետի առակների և մարգարեների հորդորների պատմությունը և միջավայրը(“Be Your Best Self,” *Ensign* կամ *Liahona*, May 2009, 68):

Շեշտեք, որ պատմությունն ու միջավայրը հասկանալը կարող է օգնել մեզ հասկանալ սուրբ գրությունների ուսմունքները: Այն տալիս է տեղեկություն, որը պարզաբանում է և սուրբգրքյան տեքստի պատմությունների, վարդապետությունների և սկզբունքների ըմբռնման խորություն բերում:

Գրատախտակի վրա գրեք հետևյալ հարցերը.

*Ո՞վ է խոսում այս հատվածներում:*

*Ո՞ւմ հետ է նա խոսում:*

*Ի՞նչ է կատարվում այս պատմությունում:*

Բացատրեք, որ այս հարցերը կարող են օգնել մեզ հասկանալ որևէ ուսմունքի ենթատեքստը կամ սուրբ գրությունների պատմությունը:

Խնդրեք աշակերտներին պատմել, թե ինչ են իրենք արել սուրբ գրության հատվածների և պատմության ու միջավայրի ավելի լավ ըմբռնում ձեռք բերելու համար:

Աշակերտները կարող են նշել , օրինակ, դժվար կամ անծանոթ բառերի իմաստի ստուգում, շրջապատող տեքստի ուսումնասիրություն, գլուխների սկզբում գլխի բովանդակության ընթերցում, կամ տողատակի ծանոթագրությունների հետազոտում՝ բացատրությունների և խաչաձև հղումների համար: Զմոռանաք նշել այս հմտությունները, եթե աշակերտները դրանք չհիշատակեն:

Սուրբ գրությունների ենթատեքստը հասկանալու մեթոդ մոդելավորելու համար հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 17.1–10: Խնդրեք, որ դասարանը հետևի, որոնելով պատասխաններ հարցերին, որոնք դուք գրել եք գրատախտակին: Դուք կարող եք նաև խրախուսել նրանց նայել գլխի բովանդակությանը՝ գլուխն արագ վերանայելու համար:

- Ո՞վ է պատմում այս պատմվածքը 1, 5–6, և 9–10 հատվածներում: (Մորմոն)
- Ո՞վ է խոսում պատմվածքում: Ո՞վ է ստանում ուղերձը:
- Ի՞նչ պատահեց նախքան այս պատմության իրադարձությունները: (Տես գլխի բովանդակությունները 3 Նեփի 8– 16-ի համար): Ինչպե՞ս է ձեր գիտելիքը այս պատմության վերաբերյալ ազդում ձեր հակացողության վրա, թե ինչու էր ժողովուրդը ցանկանում, որ Փրկիչն ավելի երկար մնար (տես 3 Նեփի 17.5– 6 ): Ի՞նչ հրաշքներ տեղի ունեցան, երբ Նա ասաց, որ կմնար (տես 3 Նեփի 17.7–10):

## Ճանաչել և հասկանալ վարդապետություններն ու սկզբունքները

Շեշտեք, որ երբ ուսանողները հասկանան սուրբգրքյան պատմվածքի պատմությունն ու միջավայրը, նրանք ավելի լավ կնախապատրաստվեն ճանաչելու և հասկանալու այն պարունակող վարդապետություններն ու սկզբունքները: Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ ավետարանի սկզբունքների հետևյալ նկարագրությունը Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Ռոմնիի կողմից.

«Սկզբունքներն ամփոփ ճշմարտություններ են, որոնք փաթեթավորված են՝ բազմատեսակ հանգամանքներում կիրառման համար» (“Acquiring Spiritual Knowledge,” *Ensign*, Nov. 1993, 86):

Բացատրեք, որ վարդապետություններն ու սկզբունքները հավերժական են՝ Հիսուս Քրիստոսի ավետարանի անփոփոխ ճշմարտություններ, որոնք ուղղություն են տալիս մեր կյանքին: Դրանք այն դասերն են, որոնք հնադարյան մարգարեները նախատեսել են մեր ուսման համար իրադարձություններից, պատմվածքներից և քարոզներից, որոնք նրանք գրի են առել սուրբ գրքերում: Ընդգծեք, որ որոշ գրողներ սուրբ գրություններում օգտագործել են այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «այսպիսով մենք տեսնում ենք» (տես Հելաման 3.27–29) կամ խոսքեր, ինչպես օրինակ՝ *հետևաբար* (տես Ալմա 32.16) մատնանշելու ուղղակիորեն վարդապետություններն ու սկզբունքները: Այնուամենայնիվ շատ վարդապետություններ և սկզբունքներ այդքան էլ ուղղակիորեն չեն նշվում սուրբ գրություններում: Ընդհակառակը, այս ճշմարտությունները պարունակվում են և լուսաբանվում նրանց կյանքերի միջոցով, ովքեր սուրբ գրություններում են:

Ուսանողներին օգնելու համար ճանաչել վարդապետությունները, որոնք ուղղակիորեն չեն ասվում, առաջարկեք, որ կարդալիս իրենք իրենց տան հետևյալ հարցերը. Ո՞րն է այս պատմվածքի ուղերձը: Ի՞նչ է ի նկատի ունեցել գրողը, որ մենք սովորենք այս պատմվածքից: Ի՞նչ ճշմարտություններ են ուսուցանվում սուրբ գրության այս հատվածում: Դուք կարող եք գրի առնել այս հարցերը գրատախտակին:

Ուսանողներին օգնելու համար վարժվել վարդապետությունները ու սկզբունքները ճանաչելու մեջ, հանձնարարեք նրանց վերադառնալ 3 Նեփի 17.1–10-ին: Հարցրեք.

- 3 Նեփի 17.2–3 հատվածի Փրկչի ուսմունքներից ի՞նչ կարող ենք սովորել Նրա խոսքը հասկանալու մասին:
- Ի՞նչ ճշմարտություններ կարող ենք սովորել Փրկչի մասին 3 Նեփի 17.5–7 հատվածից:
- Ի պատասխան մարդկանց մեծ հավատքի, Փրկիչն առաջարկեց բժշկել նրանց: 3 Նեփի 17.8–9 հատվածներում ի՞նչ սկզբունքներ եք տեսնում Տիրոջից

օրհնություններ որոնելու մասին։ (Մեկ սկզբունք, որը նրանք կարող են նշել, այն է, որ Տերն արձագանքում է Իրեն ավելի մոտենալու մեր անկեղծ ցանկությանը։)

Եթե ժամանակ է լինում ուսանողների հետ վարդապետությունները և սկզբունքները ճանաչելու ավելի շատ վարժություններ կատարել, հրավիրեք նրանց գտնել իրենց սիրելի սուրբգրքյան պատմվածքները։ Խնդրեք նրանց որոշել սկզբունքները, որոնք նրանք սովորել են այս պատմվածքներից։ Ապա հրավիրեք նրանց կիսվել իրենց պատմություններով և այն սկզբունքներով, որոնք նրանք սովորեցին։

## Վարդապետությունների և սկզբունքների կիրառումը

Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ Բոյդ Կ. Փաքերն ասել է.

«Ճշմարիտ վարդապետությունը, երբ ընկալվում է, փոխում է վերաբերմունքը և վարքը։ Ավետարանի վարդապետությունների ուսումնասիրությունը ավելի արագ կլավացնի վարքը, քան վարքի ուսումնասիրությունը։ . . . Այդ պատճառով մենք այդքան ուժգնորեն ենք շեշտում ավետարանի վարդապետությունների ուսումնասիրությունը» (“Little Children,” *Ensign*, Nov. 1986, 17)։

Բացատրեք, որ երբ մենք հասկանում ենք որևէ վարդապետություն կամ սկզբունք, մենք իմանում ենք ավելին, քան սահմանման բառերն են արտահայտում։ Մենք իմանում ենք, թե ինչ է վարդապետությունը կամ սկզբունքը նշանակում մեր կյանքում։ Երբ մենք ճանաչում ենք վարդապետությունը կամ սկզբունքը և սկսում ենք հասկանալ այն, մենք կարողանում ենք կիրառել այն մեր կյանքում։ Բացատրեք, որ կիրառումը տեղի է ունենում, երբ մենք ինչ որ բան ենք անում այն սկզբունքների հետ, որոնք մենք սովորել ենք։ Ուսանողները, ովքեր գործում են ըստ այն սկզբունքների, որոնք նրանք սովորում են, ավելի մեծ հնարավորություն կունենան զգալ Սուրբ Հոգու հաստատումը այդ սկզբունքների ճշմարտացիության մասին (տես 2 Նեփի 32.5, Մորոնի 10.5)։ Սա է գիտելիքի այն իսկական արժեքը, որը մենք ձեռք ենք բերում սուրբ գրքերի ուսումնասիրությունից։ Օգնեք ուսանողներին տեսնել, որ երբ նրանք ուսումնասիրում են սուրբ գրությունները, լինի դա տանը, եկեղեցում, սեմինարիայում, Անձնական Զարգացում կամ Պարտականություն Աստծո հանդեպ ծրագրերի վրա աշխատելիս, կամ որևէ այլ միջավայրում, նրանց հիմնական նպատակներից մեկը պետք է լինի բարելավել ավետարանով ապրելու իրենց ջանքերը և ավելի մոտենալ Աստծուն։

Օգնելու համար ուսանողներին հասկանալ և կիրառել սուրբ գրություններում գտած սկզբունքները, խրախուսեք նրանց աղոթել իրենց անձնական ուսումնասիրության ընթացքում Սուրբ Հոգու օգնության համար։ Խրախուսեք նրանց ուսումնասիրության ընթացքում նաև հարցեր, ինչպես օրինակ՝ Ի՞նչ է Տերն ուզում, որ ես անեմ այս գիտելիքի հետ; Ի՞նչ փոփոխություն կարող է սա առաջացնել իմ կյանքում; Ի՞նչ կարող եմ սկսել կամ դադարել անել այժմ՝ ավելի լավ ապրելու համար իմ կյանքը; Ինչպե՞ս կյանքս ավելի կլավանա, եթե ես անեմ այս։ (Դուք կարող եք գրել այս հարցերից մի քանիսը կամ բոլորը գրատախտակին։ Դուք կարող եք նաև առաջարկել, որ ուսանողները գրեն այս հարցերը իրենց սուրբ գրությունների ուսումասիրության օրագրերում, որպեսզի նրանք դրանց հաճախ անդրադառնան։)

Եզրափակելով, բաժանեք ուսանողներին զույգերի։ Խնդրեք, որ կիսվեն միմյանց հետ այն սկզբունքներով, որոնք սովորել են այսօր 3 Նեփի 17.1–10 հատվածներից։ Խրախուսեք նրանց, որ խոսեն այն մասին, թե ինչ են իրենք արել զարգացնելու համար այս սկզբունքների վերաբերյալ իրենց հասկացողությունը, և թե ինչ են անելու՝ կիրառելու համար այն, ինչ սովորել են ու զգացել։ Խնդրեք նրանց խոսել այն մասին, թե ինչպես այս սկզբունքների կիրառումը կարող է տարբերություն մտցնել իրենց կյանքում։

## Ուսուցանման լրացուցիչ գաղափարներ

### Սուրբ գրությունների ուսումնասիրության հմտություններ և մեթոդներ

Հետևյալ հմտությունները կօգնեն ուսանողներին սուրբ գրությունների իրենց ուսումնասիրության ընթացքում: Դրանք ներառված են որպես հիշեցումներ ողջ այս ձեռնարկում:

**Բառի սահմանումներ.** Որոշ բառեր, որոնք օգտագործել են մարգարեները ծանոթ չեն մեզ: Աստվածաշնչի բառարանը, սուրբ գրությունների ծանոթագրությունները և սովորական բառարանը կարող են օգնել մեզ սովորել բառերի սահմանումները և ճանաչել այդ բառերի հոմանիշները: Օրինակ՝՝ *Մեսիա* բառը 1 Նեփի 10.4–17-ում:

**Անունների փոխարինում.** Ձեր կյանքում սուրբ գրությունները կիրառելու համար փոխարինեք սուրբ գրության անունը ձեր անվամբ: Օրինակ. 1 Նեփի 1.1:

**Խաչաձև հղումներ.** Միմյանց կապեք սուրբ գրությունների հատվածները՝ պարզաբանելու և բացելու համար իմաստը: Օրինակ. 3 Նեփի 12.28 հատվածի լուսանցքում դուք կարող եք կատարել մի գրառում՝ տես Վարդապետություն և Ուխտեր 42.23:

**Պատճառ և հետևանք.** Փնտրեք եթե-ապա և որովհետև-ուստի փոխկապակցություններ: Օրինակ. 2 Նեփի 1.9:

**Խոսք բանալիներ.** Խոսքեր և արտահայտություններ, ինչպես օրինակ՝ *ահա, ուստի, որովհետև, այնուամենայնիվ,* կամ *այսպիսով, մենք տեսնում ենք,* հրավերներ են կանգ առնելու և որոնելու հատուկ ուղերձներ: Օրինակ. Հելաման 6.35–36:

**Սուրբգրքյան ցուցակներ.** Մարգարեները հաճախ տալիս են նախազգուշացման և մարտահրավերների ցուցակներ: Երբ դուք ցուցակներ եք գտնում, մտածեք յուրաքանչյուր տարրը թվարկելու մասին: Օրինակ. Ալմա 26.22:

**Միջավայր.** Սուրբգրքյան պատմություններում որոշեք, թե ով է խոսում՝ մեկ, թե մի քանի հոգի, տղամարդ, թե կին, ինչի մասին է խոսում և երբ ու որտեղ է իրադարձությունը տեղի ունենում: Օրինակ՝ Ալմա 32.21–43-ի միջավայրը գտնվում է Ալմա 31.1, 6–11 և 32.1–6 հատվածներում:

**Հակադրություններ.** Մարգարեների գրվածքները հաճախ ցույց են տալիս հակադրություններ գաղափարների, իրադարձությունների և մարդկանց մեջ: Այս հակադրությունները շեշտում են ավետարանի սկզբունքները: Որոնեք հակադրություններ առանձին հատվածներում, գլուխներում և գրքերում: Օրինակ. 2 Նեփի 2.27, Ալմա 48.1–17:

**Պատկերացում.** Որոնեք նկարագրական մանրամասներ, որոնք կարող են օգնել ձեզ ստեղծել մտավոր պատկեր, երբ կարդաք: Պատկերացրեք, որ ներկա եք որոշակի իրադարձությունների: Օրինակ՝ Ենովս 1.1–8:

**Խորհրդանիշներ.** Խոսքեր, ինչպես օինակ. *նմանապես, ինչպես* կամ *վերագրել,* օգնում են ճանաչել խորհրդանիշները: Նայեք խորհրդանիշներից այն կողմ, հետազոտելով դրանց բնույթը և մտածելով դրանց հատկանիշների մասին: Ծանոթագրությունները, Աստվածաշնչի բառարանը և Սուրբ Գրքերի Ուղեցույցը կարող են օգնել մեկնաբանել որոշ խորհրդանիշներ: Օրինակ. Հելաման 8.14–15, ներառյալ այդ հատվածների ծանոթագրությունները:

**Խորհրդածել.** Խորհրդածելը ներառում է մտածելը, հարցեր տալը և ձեր իմացածը և սովորածը գնահատելը: Խորհրդածելը հաճախ օգնում է մեզ հասկանալ, թե մենք ինչ պետք է անենք կիրառելու համար ավետարանի սկզբունքները:

ԴԱՍ 3

# Փրկության ծրագիրը

## Նախաբան

Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Կ. Փաքերը ուսուցանել է սեմինարիայի ուսուցիչներին ներկայացնել մի համառոտ ակնարկ փրկության ծրագրի վերաբերյալ ամեն ուսումնական տարվա սկզբում:

«Երջանկության ծրագրի» համառոտ ակնակը,. . .եթե տրվի հենց սկզբում և վերանայվի ժամանակ առ ժամանակ, կլինի խիստ արժեքավոր ձեր ուսանողների համար: . . .

Երիտասարդները զարմանում են, թե «ինչո՞ւ» ենք մենք պատվիրվում *անել* որոշ բաներ և ինչո՞ւ ենք պատվիրվում *չանել* այլ բաներ: Երջանկության ծրագրի գիտելիքը, նույնիսկ ուրվագծի ձևով, կարող է երիտասարդ մտքին տալ պատասխան «ինչու» հարցին: . . .

. . .Տվեք հիմնական զգացում ողջ ծրագրի վերաբերյալ, միայն մի քանի մանրամասներով:. . . Թույլ տվեք, որ նրանք իմանան, թե ինչի մասին է այդ բոլորը,և այդ ժամանակ նրանք կունենան «ինչու» հարցի պատասխանը:

. . . Եթե դուք փորձում եք նրանց տալ «ինչու» հարցի պատասխանը, հետևեք [այս] օրինակին. «Աստված նրանց տվեց պատվիրաններ *հետո, երբ* նրանց հայտնի դարձրեց փրկագնման ծրագիրը» [Ալմա 12.32, շեղագիրն ավելացված է]» (“The Great Plan of Happiness” [CES Symposium on the Doctrine and Covenants/Church History, Aug. 10, 1993], 2–3, si.lds.org):

Ի պատասխան Նախագահ Փաքերի խորհրդի, այս դասը տալիս է համառոտ ակնարկ փրկության ծրագրի վերաբերյալ, ինչպես այն ուսուցանվում է սուրբ գրություններում: Դասը կենտրոնացած է Հիսուս Քրիստոսի Քավության վրա, որը «կենտրոնական փաստն է, կարևոր հիմքը և հավերժական մեծ ծրագրի գլխավոր վարդապետությունը» (Jeffrey R. Holland, “Missionary Work and the Atonement,” *Ensign,* Mar. 2001, 8): Երբ ուսանողները սկսեն հասկանալ փրկության ծրագիրը, նրանց հավատքը Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ կմեծանա: Նրանք կաճեն պատվիրանները պահելու իրենց վճռականության մեջ, կստանան փրկության արարողությունները և հավատարիմ կլինեն իրենց ուխտերին:

## Ուսուցանման առաջարկներ

### Փրկության ծրագիրը Մորմոնի Գրքում

Բացատրեք, որ նախաերկրային հոգևոր աշխարհում մենք սովորել ենք մեր փրկության համար մեր Երկնային Հոր ծրագրի մասին (տես Մովսես 4.1–2, Աբրահամ 3.22–28): Այս ծրագրի միջոցով մենք կկարողանանք նմանվել Նրան և հավերժ բնակվել Նրա ներկայության մեջ:

Գրատախտակին գրեք *Փրկության ծրագիրն ընդգրում . . . .*

Խնդրեք ուսանողներին լրացնել այս միտքը իրենց սուրբ գրքերի ուսումնասիրության օրագրերում կամ տետրերում:

Ուսանողներին գրելու ժամանակ տրամադրելուց հետո, կիսվեք փրկության ծրագրի հետևյալ սահմանմամբ: Դուք կարող եք գրել այն գրատախտակին կամ պաստառին նախքան դասի սկսվելը:

Փրկության ծրագիրը «Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունն է, որի նպատակն է առաջ բերել մարդու անմահությունը և հավերժական կյանքը: Այն ներառում է Արարումը, Անկումը, և Քավությունը, բոլոր Աստծո տված օրենքների, արարողությունների և վարդապետությունների հետ միասին: Այս ծրագիրը հնարավոր է դարձնում բոլոր մարդկանց համար վեհացումը և Աստծո հետ հավերժ ապրելը» (Guide to the Scriptures, “Plan of Redemption,” scriptures.lds.org):

Խնդրեք ուսանողներին բարձրացնել իրենց ձեռքերը, եթե բառերը, որ նրանք գրել են, որևէ ձևով համապատասխանում են այս սահմանմանը: Այնուհետև տվեք հետևյալ հարցերը ձեռքը բարձրացրած մի քանի ուսանողի.

- Ի՞նչ ընդհանուր կողմեր կան ձեր և այս սահմանումների մեջ: Ինչո՞ւ ներառեցիք այս կետը ձեր սահմանման մեջ:

***Համառոտ ակնարկ***

Երբ Նախագահ Փաքերը խորհուրդ տվեց ուսուցիչներին դաս տալ փրկության ծրագրի վերաբերյալ, նա նրանց տվեց նաև մի անհատական հանձնարարություն՝ «պատրաստել երջանկության ծրագրի կարճ համառոտագրություն կամ ակնարկ» որպես իրենց սուրբգրքյան ուսումնասիրության մաս: Նա խորհուրդ տվեց. «Ծրագրեք այն որպես կմախք, որի վրա ձեր ուսանողները կարող են կառուցել ճշմարտությունները, որոնցով դուք կկիսվեք նրանց հետ» (“The Great Plan of Happiness” [CES Symposium on the Doctrine and Covenants/ Church History, Aug. 10, 1993], 3, si.lds.org): Օգտագործեք այդ խորհուրդը որպես ուղեցույց, երբ պատրաստվեք ուսուցանել այս դասը: Դուք չպետք է փորձեք ուսուցանել յուրաքանչյուր ավետարանական ճշմարտություն, չնայած ողջ ճշմարտությունը ներառված է ծրագրում:

Հանձնարարեք ուսանողներին աշխատել զույգերով: Խնդրեք յուրաքանչյուր զույգի մեկ ուսանողի կարդալ Ալմա 22.12–14, իսկ մյուսին՝ կարդալ 2 Նեփի 2.25–28: (Դուք կարող եք գրել այս հղումները գրատախտակին): Խնդրեք ուսանողներին որոնել փրկության ծրագրի նշված մասերը իրենց հանձնարարված հատվածներում: Ուսանողներին կարդալու համար ժամանակ տրամադրելուց հետո խնդրեք ընկերակիցներին հերթով կիսվել նրանով, ինչ իրենք գտել են:

Գրեք հետևյալ սուրբ գրությունների հղումները գրատախտակին. *2 Նեփի 9.6, 2 Նեփի 11.5, Ալմա 12.25, Ալմա 24.14, Ալմա 42.8, Ալմա 42.15:* (Դուք կարող եք դրանք գրել գրատախտակին դասից առաջ:)

Բացատրեք, որ Մորմոնի Գրքում մարգարեները օգտագործում են Երկնային Հոր ծրագրի տարբեր անվանումներ: Հրավիրեք ուսանողներին բացել 2 Նեփի 9.6, և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ հատվածը:

- Այս հատվածում, ո՞ր արտահայտությունն է վերաբերում Աստծո ծրագրին: (Մեծ Արարչի ողորմած ծրագրին: Գրեք սա գրատախտակին 2 Նեփի 9.6 հատվածի կողքին):

Խնդրեք ուսանողներին լուռ կարդալ մյուս սուրբ գրությունները, որոնք գրի են առված գրատախտակին, որոնելով արտահայտությունները, որոնք վերաբերում են Երկնային Հոր ծրագրին: Երբ որևէ ուսանող գտնի մի արտահայտություն, որը վերաբերում է Երկնային Հոր ծրագրին, հրավիրեք նրան այն գրել գրատախտակին համապատասխան սուրբ գրության հղման կողքին: Լրացված ցուցակը գրատախտակի վրա պետք է ունենա մոտավորապես այսպիսի տեսք.

*2 Նեփի 9.6—Մեծ Արարչի ողորմած ծրագիրը*

*2 Նեփի 11.5—Մահից ազատման մեծ և հավերժական ծրագիրը*

*Ալմա 12.25—Փրկագնման ծրագիրը*

*Ալմա 24.14—Փրկության ծրագիրը*

*Ալմա 42.8—Երջանկության մեծ ծրագիրը*

*Ալմա 42.15—Ողորմության ծրագիրը*

(Որպեսզի օգնեք ուսանողներին խորացնել իրենց երախտագիտությունը Մորմոնի Գրքի ուսմունքների համար, կարող եք նշել, որ «փրկության ծրագիր», «երջանկության ծրագիր» և «փրկագնման ծրագիր» արտահայտությունները մի քանի անգամ նշվում են Մորմոնի Գրքում, բայց ոչ Աստվածաշնչում:)

- Ի՞նչ են շեշտում այս անվանումները Երկնային Հոր ծրագրի մասին: (Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են, որ **Երկնային Հոր ծրագիրը նախատեսված է բերելու Իր զավակներին հավերժական փրկություն և երջանկություն:**)

Վկայեք, որ մենք չենք կարող վերադառնալ Աստծո ներկայությունը և ստանալ հավերժական փրկություն առանց աստվածային օգնության: Հրավիրեք ուսանողներին կարդալ Մոսիա 3.17, անհատապես որոնելով փրկության ծրագրում կենտրոնական դեմքին: Նրանից հետո, երբ նրանք տեղեկացնեն, թե ինչ են գտել, հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 2.8: Շեշտեք, որ **փրկության ծրագրի կենտրոնական դեմքը Հիսուս Քրիստոսն է, իսկ Նրա Քավությունը ուժի մեջ է դնում այդ ծրագիրը Աստծո բոլոր զավակների համար:** Խնդրեք որևէ ուսանողի կարդալ Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետևյալ միտքը.

«Մեր կրոնի հիմնական սկզբունքներն են Առաքյալների և Մարգարեների վկայությունը Հիսուս Քրիստոսի մասին, որ Նա մահացավ, թաղվեց և բարձրացավ երրորդ օրը և համբարձվեց երկինք, իսկ բոլոր մյուս բաները, որոնք կապված են մեր կրոնի հետ, միայն դրա հավելումներն են» (*Teachings of Presidents of the Church: Joseph Smith* [2007], 49):

Դուք կարող եք բացատրել, որ *հավելումներ*բառը վերաբերում է մի առարկայի կամ հասկացողության, որը կապված է ինչ որ բանի հետ, որն ավելի մեծ կարևորություն ունի, ինչպես օրինակ ճյուղը, որը ծառի մասն է կազմում: Ծառը կարող է ապրել առանց ճյուղերի, բայց ճյուղը չի կարող ապրել, եթե այն առանձնացված է արմատներից և ծառի բնից: Նախագահ Բոյդ Կ. Փաքերը՝Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանել է, որ Հիսուս Քրիստոսի Քավության

վարդապետությունը «քրիստոնեական վարդապետության հենց արմատն է: Դուք շատ բան կարող է իմանաք ավետարանի մասին, քանի որ այն ճյուղավորվում է այնտեղից, բայց եթե դուք գիտեք միայն ճյուղերը և այդ ճյուղերը կապված չեն այդ արմատի հետ, եթե դրանք կտրված են այդ ճշմարտությունից, չի լինի ոչ կյանք, ոչ էլ նյութ, ոչ էլ փրկագնում դրանցում» (“The Mediator,” *Ensign,* May 1977, 56):

Բացատրեք, որ Երկանային Հոր ծրագիրը հաճախ կոչվում է փրկության ծրագիր, որովհետև այն ներառում է մեզ փրկելը: Որպես մեկը, ով հնարավոր դարձրեց մեր փրկությունը Քավության միջոցով, Հիսուս Քրիստոսը կոչվում է Փրկիչ:

Գրատախտակին գրեք *Մենք պետք է փրկվենք . . .*

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 9.6–10 Ապա խնդրեք մեկ ուրիշ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 9.21–22: Հրավիրեք մնացած ուսանողներին հետևել, ուղիներ որոնելով լրացնել գրատախտակի վրայի միտքը: Դուք կարող եք առաջարկել, որ նրանք նշեն իրենց գտածը իրենց սուրբ գրություններում:

Խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով և գրեք նրանց պատասխանները գրատախտակին: Հավաստիացեք, որ նրանք հասկանում են, որ Հիսուս Քրիստոսի Քավությամբ բոլոր մարդիկ կփրկվեն ֆիզիկական մահից: Հստակեցրեք նաև, որ Քավության միջոցով մենք կարող ենք փրկվել մեր մեղքերից, ինչը, այլ կերպ ասած, հնարավոր կդարձնի մեզ համար բնակվել Աստծո ներկայության մեջ:

Կարդացեք հետևյալ խոսքերը մարգարե Հակոբից. «Օհ, որքան մեծ է բարությունը մեր Աստծո» (2 Նեփի 9.10): «Օհ, որքան մեծ է մեր Աստծո ծրագիրը» (2 Նեփի 9.13):

- Ինչպե՞ս են Հակոբի խոսքերը 2 Նեփի 9.6–10հատվածում օգնում մեզ հասկանալ, թե ինչու էր նա անում այս բացականչությունները:
- Համաձայն 2 Նեփի 9.7, 9-ի, ի՞նչ կպատահեր, եթե չլիներ Քավությունը: (Մեր մարմինները կմահանային և էլ երբեք չէին բարձրանա, և մեր հոգիները ենթակա կդառնային դևին):

Քննարկեք փրկության ծրագրի վերջին սահմանումը, որով դուք ավելի վաղ կիսվեցիք այս դասում. «Այս ծրագիրը հնարավոր է դարձնում բոլոր մարդկանց վեհանալ և ապրել հավերժ Աստծո հետ»:

- Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ ծրագիրը մեր վեհացումը դարձնում է *հնարավոր, բայց ոչ հաստատ:* (Երբ ուսանողները պատասխանեն այս հարցին, հետևեք, որ նրանք հասկանան, որ մենք ազատ կամք ունենք՝ ունակություն ինքնուրույն ընտրելու և գործելու: Մեր վեհացումը կախված է մասամբ նրանից, թե ինչպես ենք մենք պատասխանում այն օրհնություններին, որ Աստված առաջարկում է մեզ:)

Գրատախտակին գրեք հետևյալ սուրբ գրությունների հղումները. *2 Նեփի 2.25–28, 2 Նեփի 31.17–20, Ալմա 34.15–16:* Խնդրեք ուսանողներին լուռ ուսումնասիրել այս հատվածները և գրի առնել իրենց ուսումնական տետրերում այն բաները, որ ըստ այդ սուրբ գրությունների մենք պետք է անենք՝ ստանալու համար այն ամենը, ինչ Աստված առաջարկում է մեզ Իր փրկության ծրագրի միջոցով:

Երբ ուսանողները բավականաչափ ժամանակ ունենան հանձնարարությունը կատարելու համար, հրավիրեք նրանց կիսվել իրենց պատասխաններով միմյանց հետ: Երբ նրանք այդ անեն, նշեք հնազանդության օրինակները «Աստծո տված օրենքներին, արարողություններին և վարդապետություններին», որոնք նշվում են սահմանման մեջ, որով ավելի վաղ կիսվեցիք: (Այս հատվածների օրինակները ներառում են հավատքի գործադրումը ի ապաշխարություն, մկրտություն և Սուրբ Հոգու ստացում): Ուսանողների զեկույցներից հետո մտածեք հետևյալ հարցերը տալու մասին.

- Ինչպե՞ս են մեր գործողություններն ազդում Քավության օրհնությունները ստանալու մեր ունակության վրա: (Երբ ուսանողները պատասխանեն, որոնեք հնարավորություններ վկայելու, որ, **երբ մենք ընտրում ենք ապրել Հիսուս Քրիստոսի ավետարանով և հետևում Աստծո ծրագրին, մենք պատրաստվում ենք ստանալ հավերժական կյանք Փրկչի Քավության միջոցով:)**
- Ինչպե՞ս կարող է փրկության ծրագիրը հասկանալն օգնել մեզ պահել պատվիրանները:

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 2.25 հատվածը:

- Ի՞նչ ուղիներով է փրկության ծրագրին հետևելը ուրախություն բերել ձեզ:

Դասն ամփոփելով բացատրեք, որ երբ ուսանողներն ուսումնասիրեն Մորմոնի Գիրքը, նրանք ավելի շատ վարդապետություններ կսովորեն փրկության ծրագրի

հետ կապված։ Այս դասը ներկայացնում է միայն մի համառոտ ակնարկ։ Խրախուսեք ուսանողներին ուսումնասիրելիս ուշադրություն դարձնել այն ամենին, ինչ Աստված արել է իրենց համար որպես Իր փրկության ծրագրի մաս, և հետևել այն ամենին, ինչ իրենք պետք է անեն ստանալու համար լրիվ օրհնությունները, որ Աստված ծրագրել է իրենց համար։ Բերեք ձեր վկայությունը այն ճշմարտությունների մասին, որոնք քննարկվեցին այս դասում։

ԴԱՍ 4

# Տիտղոսաթերթ, նախաբան և վկաների վկայությունները

## Նախաբան

Երբ դուք ուսուցանեք Մորմոնի Գիրքը, դուք կօգնեք ուսանողներին հայտնաբերել ճշմարտություններ, որոնք նրանց ավելի կմոտեցնեն Աստծուն: Գրքի սկզբից պարզ է որ Մորմոնի Գրքի գրողները մտադրված էին վկայել, որ Հիսուսը Քրիստոսն է: Գիրքը նաև վերահաստատում է Աստծո ուխտերը Իսրայելի տան հետ և ցույց տալիս Աստծո բոլոր զավակների համար ուխտեր կապելու և պահելու անհրաժեշտությունը: Երբ ուսանողները աղոթքով լցված ուսումնասիրեն Մորմոնի Գիրքը, նրանք ձեռք կբերեն ավելի մեծ վկայություն Հիսուս Քրիստոսի ավետարանի և վերջին օրերին Նրա Եկեղեցու Վերականգման մասին: Նրանք նաև կսովորեն գործադրել ավելի մեծ հավատք Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ:

## Ուսուցանման առաջարկներ

Այս դասն ուսուցանելու առաջարկները կարող են ավելի երկար ժամանակ խլել ուսուցանելու համար, քան այն ժամանակը, որը հատկացված է ձեր դասի համար: Աղոթքով մտածեք, թե որ մասերն են ձեր դասարանի համար ամենաանհրաժեշտը:

### Տիտղոսաթերթ

Հրավիրեք ուսանողներին բացել Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը: Այս էջը սկսվում է հետևյալ խոսքերով. «Մորմոնի Գիրքը, պատմություն գրված Մորմոնի ձեռքով թիթեղների վրա՝վերցված Նեփիի թիթեղներից»: Մարգարե Ջոզեֆ Սմիթը բացատրել է տիտղոսաթերթի ծագումը.

«Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը տառացի թարգմանություն է, որը վերցված է թիթեղների գրքի ամենավերջին թիթեղի ձախ կողմից, որը պարունակում էր հիշատակարանը, որը թարգմանվել է, . . .և. . .նշված տիտղոսաթերթը ոչ մի դեպքում ժամանակակից հորինվածք չէ, լինի իմ, թե որևէ այլ մարդու կողմից, ով ապրել է կամ ապրում է այս սերնդում» (in *History of the Church,* 1:71):

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը: Խնդրեք նրանց որոնել արտահայտություններ, որոնք արտահայտում են Մորմոնի Գրքի նպատակները: (Դուք կարող եք ուսանողներին մի հուշում տալ, որ այս նպատակները արտահայտվում են որպես բաներ, որոնք Մորմոնի Գիրքը ցույց «կտա նրանց», ովքեր կկարդան այն): Հրավիրեք մի քանի ուսանողների գրել իրենց գտածը գրատախտակին: Երբ նրանք ավարտեն, խնդրեք ուսանողներին վերընթերցել երկրորդ պարբերությունը իրենց մտքում, մտցնելով իրենց սեփական անունները «Իսրայելի Տան մնացորդի» տեղում:

- Երբ դուք կարդացիք Մորմոնի Գիրքը, դրա նպատակներից որո՞նք են կատարվել ձեր կյանքում: Ինչպե՞ս:
- Ինչպե՞ս է օգնում ձեզ իմանալը, որ նրանք, ովքեր ուխտեր են կապում Տիրոջ հետ, չեն «վտարվի» հավիտյան:

Ասեք ուսանողներին, որ կարող են լինել ժամանակներ, երբ նրանք իրենց կզգան միայնակ կամ «վտարված»:

- Ինչո՞ւ է կարևոր իմանալ այս ժամանակներում, որ դուք «վտարված չեք հավիտյան»
- Ինչպե՞ս է այս խոստումը Աստծո սիրո արտահայտություն հանդիսանում ձեզ համար:

Օգնելու համար ուսանողներին գնահատել Մորմոնի Գրքի հիմնական նպատակը խնդրեք որևէ ուսանողի կարդալ Էզրա Թաֆթ Բենսոնի հետևյալ միտքը.

***Անվան փոխարինում***

Հրավիրելով ուսանողներին փոխարինել իրենց սեփական անուններով սուրբ գրության հատվածում նշվող անունը, օգնում է սուրբգրքյան ուսմունքներն ավելի անձնական դարձնել: Երբ ուսանողները կարդում են իրենց սեփական անունները որպես սուրբ գրության մաս, նրանք ավելի հեշտ են կարողանում հասկանալ, թե ինչպես է հատվածի վարդապետությունը կամ սկզբունքը վերաբերվում իրենց:

«Մորմոնի Գրքի գլխավոր առաքելությունը, ինչպես որ արձանագրված է դրա տիտղոսաթերթի վրա, կայանում է նրանում, «որպեսզի համոզի հրեային և հեթանոսին, որ Հիսուսը Քրիստոսն է՝ հավերժական Աստվածը, որն իրեն հայտնում է բոլոր ազգերին»:

Ճշմարտության ազնիվ որոնողը կարող է ձեռք բերել վկայություն, որ Հիսուսը Քրիստոսն է, երբ աղոթքով խորհի Մորմոնի Գրքի ոգեշնչված խոսքերի մասին:

Մորմոնի Գրքի բոլոր հատվածների կեսից ավելին վերաբերում է մեր Տիրոջը: Քրիստոսի անունը տարբեր ձևով ավելի հաճախ է նշվում Մորմոնի Գրքի յուրաքանչյուր հատվածում, քան նույնիսկ Նոր Կտակարանում:

Նրան տրվել է հարյուրից ավելի տարբեր անուններ Մորմոնի Գրքում: Այդ անուններն առանձնահատուկ նշանակություն ունեն Նրա աստվածային էությունը նկարագրելու համար» (“Come unto Christ,” *Ensign,* Nov. 1987, 83):

Կիսվեք ձեր վկայությամբ, որ **Մորմոնի Գիրքը վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին:**

## Մորմոնի Գրքի Նախաբանը

Գրատախտակին նկարեք մի կամար (տես կից նկարը) կամ պատրաստեք փայտյա կամ այլ նյութերից կամարի մի մոդել:




Խնդրեք որևէ ուսանողի կարդալ բարձրաձայն Ջոզեֆ Սմիթի միտքը Մորմոնի Գրքի նախաբանում (վեցերորդ պարբերություն): Դուք կարող եք նաև առաջարկել, որ ուսանողները նշեն միտքը իրենց սուրբ գրություններում:

- Ի՞նչ նպատակի է ծառայում պորտաքարը

Բացատրեք, որ պորտաքարը կամարի գագաթի կենտրոնական քարն է: Երբ կամարը կառուցվում է երկու կողմերը կառուցվում են դեպի վեր և պահվում նեցուկների օգնությամբ: Կամարի գագաթի տարածությունը խնամքով չափվում է և պորտաքարը կտրվում է ճշգրտորեն համապատասխանելու համար: Երբ պորտաքարը դրվում է այդ տեղում, կամարը կարող է կանգուն մնալ առանց նեցուկների:

- Ի՞նչ է պատահում կամարի հետ, եթե պորտաքարը հեռացվում է: (Եթե դուք մոդել եք օգտագործում, ցուցադրեք դա, հեռացնելով պորտաքարը:)
- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը գործում որպես պորտաքար վերականգված ավետարանի համար:

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ բարձրաձայն Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնի հետևյալ միտքը: (Դուք կարող եք պատրաստել այդ միտքը որպես թեմատիկ տեղեկություն ուսանողների համար իրենց սուրբ գրություններում մտցնելու համար: Այլընտրանքային մի տարբերակ է նաև հրավիրելը ուսանողներին գրել Նախագահ Բենսոնի միտքը իրենց սուրբ գրություններում՝ նախաբանի առաջին էջի վերևի կամ ներքևի մասում):

Կան երեք ուղիներ, որոնցով Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարն է: Այն Քրիստոսի մասին մեր վկայության պորտաքարն է: Այն մեր վարդապետության պորտաքարն է: Այն մեր վկայության պորտաքարն է» (“The Book of Mormon—Keystone of Our Religion,” *Ensign,* Nov. 1986, 5):

Ուսանողներին օգնելու համար հասկանալ, թե ինչպես է Մորմոնի Գիրքը վկայության պորտաքար հանդիսանում, հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Նախագահ Բենսոնի հետևյալ խոսքերը.

«Մորմոնի Գիրքը վկայության պորտաքարն է: Ճիշտ ինչպես կամարն է քանդվում, եթե պորտաքարը հեռացվում է, այնպես էլ ողջ Եկեղեցին է կանգնում կամ ընկնում Մորմոնի Գրքի ճշմարտացիությամբ: . . . Եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է,. . . ուրեմն մարդ պետք է ընդունի Վերկանգման պնդումները և բոլորն, ինչ ուղեկցում է դրան» (“The Book of Mormon—Keystone of Our Religion,” 6):

- Ինչպե՞ս է Մորմոնի Գրքի մասին ձեր վկայությունն ազդել ավետարանի վարդապետությունների և սկզբունքների մասին ձեր վկայության վրա:
- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը ձեզ ավելի մոտեցրել Աստծուն:

Դուք կարող եք պատմել այն մասին, թե ինչպես է Մորմոնի Գրքի ձեր ուսումնասիրությունը ուժեղացրել ձեր վկայությունը և բերել ձեզ ավելի մոտԱստծուն:

Հրավիրեք ուսանողներին մասնակցել դերակատարմանը: Խնդրեք նրանց պատկերացնել, որ Մորմոնի Գրքի մի օրինակ են տալիս ինչ որ մեկին, ով Եկեղեցու անդամ չէ: Օգնեք նրանց պատրաստվել դերակատարման համար, բաժանելով նրանց երկու խմբերի: Խնդրեք առաջին խմբին կարդալ Մորմոնի Գրքի Նախաբանի 2–4 պարբերությունները: Խնդրեք երկրորդ խմբին կարդալ 5–8 պարբերությունները: Հանձնարարեք երկու խմբերին որոնել տեղեկություններ, որոնցով, ըստ նրանց, կարևոր կլինի կիսվել, երբ ուսուցանեն Մորմոնի Գրքի մասին:

Ուսանողներին ուսումնասիրելու և պատրաստվելու ժամանակ տալուց հետո, հրավիրեք որևէ ուսանողի գալ դասարանի առջև կատարելու մի մարդու դերը, ով Եկեղեցու անդամ չէ: Խնդրեք նաև որևէ ուսանողի յուրաքանչյուր երկու խմբից գալ դասարանի առջև: Բացատրեք, որ այս երկու ուսանողները կխաղան երկու ընկերակից միսիոներների դերերը:Նրանք կօգտագործեն նյութը, որն իրենց խմբերը հայտնաբերել են Նախաբանում՝ ուսուցանելու համար առաջին ուսանողին Մորմոնի Գրքի մասին:

Երբ ուսանողներն ավարտեն դերակատարումը, դուք կարող եք հարցնել դասարանի մնացած անդամներին, թե կան արդյոք լրացուցիչ հարցեր նախաբանից, որոնցով նրանք կկիսվեին, եթե ընտրվեին ուսուցանելու համար:

Դուք կարող եք շեշտել, որ Մորմոնի Գիրքը չի պնդում, որ տալիս է բոլոր ժողովուրդների պատմությունը, ովքեր հին դարերում ապրել են Արևմտյան կիսագնդի մայրցամաքում: Այն հանդիսանում է միայն Լեքիի (Նեփիացիների և Լամանացիների) և Հարեդի ժողովրդի պատմությունը: Հավանական է, եղել են այլ մարդիկ, ովքեր բնակվել են Արևմտյան կիսագնդի մայրցամաքներում Մորմոնի Գրքում արձանագրված իրադարձություններից առաջ, այդ ընթացքում կամ հետո:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մորոնի 10.3–5 հատվածները:

- Ըստ Մորոնիի, ինչպե՞ս կարող ենք իմանալ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է:

Հրավիրեք ուսանողներին կարդալ 8–9 պարբերությունները Մորմոնի Գրքի նախաբանում: Խնդրեք նրանց նշել երեք լրացուցիչ ճշմարտություններ, որոնց մասին նրանք ձեռք կբերեն վկայություն, եթե ընդունեն Մորոնիի մարտահրավերը:

Վկայեք ուսանողներին, որ **երբ կարդանք, խորհենք և աղոթենք Մորմոնի Գրքի մասին, Սուրբ Հոգին կվկայի, որ այն ճշմարիտ է, որ Հիսուսը Քրիստոսն է, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն էր, և որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Տիրոջ թագավորությունն է երկրի վրա:**

### *Դերակատարում*

Դերակատարումը օգնում է ուսանողներին գործածել ավետարանական լուծումների կիրառումը իրական կյանքի իրավիճակներում: Դերակատարումն ավելի հաջող կլինի, եթե դուք մասնակիցներին տաք բավականաչափ տեղեկություն և ժամանակ պատրաստվելու համար: Երբ ուսանողները դերեր կատարեն, նրանք, հավանաբար, սխալներ կգործեն: Եղեք զգայուն նրանց զգացմունքների և վերաբերմունքի հանդեպ և աշխատեք չքննադատել նրանց սխալների համար: Դերակատարման վերջում օգտակար կարող է լինել հարցնելը դիտորդներին, թե կան արդյոք այլ գաղափարներ, որոնք նրանք կառաջարկեին, եթե նրանք մասնակից լինեին:

## Երեք վկաների և ութ վկաների վկայությունները

Խնդրեք ուսանողներին պատկերացնել, թե իրենք ականատես են եղել, երբ ինչ որ մեկը մի արժեքավոր իր է վերցրել իրենց հարևանի տնից:

- Երբ հանցագործությունը քննության է ենթարկվում, ինչո՞ւ է կարևոր ունենալ վկա:
- Ինչո՞ւ է օգտակար ունենալ մեկից ավելի վկաներ:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ «Երեք վկաների վկայությունը»: Հրավիրեք նրանց որոնել այն արտահայտությունները, որոնք հատկապես իմաստալի են իրենց համար: Դուք կարող եք առաջարկել, որ նրանք նշեն այդ արտահայտությունները:

- Ո՞ր արտահայտությունները դուք նշեցիք: Ինչո՞ւ են դրանք իմաստալի ձեզ համար: (Դուք կարող եք շեշտել, որ Աստծո ձայնը հայտարարեց Երեք վկաներին, որ թիթեղները թարգմանվեցին Աստծո պարգևով և զորությամբ):

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ «Ութ վկաների վկայությունը»: Հրավիրեք դասարանի մնացած մասին լսել Երեք վկաների և Ութ վկաների վկայությունների միջև գոյություն ունեցող տարբերությունների մասին:

- Ի՞նչ տարբերություններ դուք նկատեցիք:

Հրավիրեք ուսանողներին գրել իրենց սեփական վկայությունները կամ զգացումները Մորմոնի Գրքի մասին: Նրանք կարող են գրել դրանք իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության տետրի կամ իրենց սուրբ գրքերի դատարկ էջերից մեկի վրա: Որոշ ուսանողներ կարող է զգան, որ իրենք դեռ չգիտեն, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է:

***Օգնել ուսանողներին վկայություն ձեռք բերել***

Ուսանողներին վկայություն ձեռք բերելու հարցում օգնելու ուղիներից մեկը նրանց խրախուսելն է ավետարանի մասին իրենց զգացումներով դասարանից դուրս ուրիշների հետ կիսվել, ներառյալ ընտանիքի անդամների և ընկերների: Նախագահ Բոյդ Կ. Փաքերը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանել է.«Օհ, եթե ես կարողանայի ուսուցանել ձեզ այս մեկ սկզբունքը: Վկայությունը պիտի*գտնել* դրանով *կիսվելու ժամանակ*: . . . Մեկ բան է ստանալ վկայություն նրանից, ինչ կարդացել եք կամ որևէ մեկ ուրիշի ասածից, և դա անհրաժեշտ սկիզբ է: Մեկ այլ բան է, երբ Հոգին հաստատում է ձեզ ձեր կրծքավանդակում, որ այն, ինչի մասին *դուք* վկայեցիք, ճշմարիտ է» (“The Candle of the Lord,” *Ensign,* Jan. 1983, 54–55):

ԴԱՍ 5

# Մորմոնի Գրքի ակնարկ

## Նախաբան

Այս դասը ներկայացնում է Մորմոնի Գրքի մի ակնարկ: Ուսանողները կուսումնասիրեն Ջոզեֆ Սմիթի վկայությունը Մորմոնի Գրքի ի հայտ գալու վերաբերյալ: Նրանք նաև կսովորեն, թե ինչպես է գիրքը ստեղծվել և կրճատվել երկնային ղեկավարության ներքո: Մորմոնի Գրքի գրողները տեսել են վերջին օրերը և նրանք ներառել են պատմություններ և ուսմունքներ, որոնք, գիտեին, որ մեծապես օգտակար կլինեին մեզ համար:

## Ուսուցանման առաջարկներ

### Մարգարե Ջոզեֆ Սմիթի վկայությունը

Դասարանի առջև դրեք Մորմոնի Գիրքը մի արկղում և փաթեթավորեք այն նվերի տեսքով: Ցուցադրեք նվերը սեղանի վրա դասարանի առջև և պատմեք ուսանողներին, որ այն արժեքավոր նվեր է:

- Որո՞նք են ամենաարժեքավոր նվերները, որ դուք ստացել եք:
- Ի՞նչն է դարձնում նվերն արժեքավոր:
- Ինչպե՞ս եք զգում, երբ նվեր եք տալիս, որը դուք արժեքավոր եք համարում, և երբ ստացողն ընդունում է այն ուրախությամբ:

Հրավիրեք ուսանողին բացել նվերը և ցույց տալ մյուս ուսանողներին, թե այն ինչ է պարունակում:

- Ո՞վ է տվել մեզ նվերը:
- Ինչո՞ւ եք զգում, որ այս նվերն արժեքավոր է:

Ցուցադրեք «Մորոնին հայտնվում է Ջոզեֆ Սմիթին իր սենյակում» նկարը (62492; *Gospel Art Book* [2009], no. 91):

- Ի՞նչ իրադարձություն է պատկերված այս նկարում:
- Ինչպե՞ս է այս իրադարձությունը նպաստել ավետարանի Վերականգմանը:

Բացատրեք ուսանողներին, որ նրանք այժմ կկարդան Մարգարե Ջոզեֆ Սմիթի սեփական խոսքերը Մորմոնի Գրքի ի հայտ գալու վերաբերյալ: Ասացեք նրանց, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթի վկայությունը, որը գտնվում է Մորմոնի Գրքի սկզբում, վերցված է Թանկագին Մարգարիտում գտնվող Ջոզեֆ Սմիթ—Պատմությունից:

Հանձնարարեք ուսանողներին աշխատել զույգերով: Հրավիրեք յուրաքանչյուր զույգից մեկ ուսանողի կարդալ Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.30, 32–35, 42 մտքում: Խնդրեք յուրաքանչյուր զույգի մյուս ուսանողին մտքում կարդալ Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.51–54, 59–60: Բացատրեք, որ երբ նրանք վերջացնեն կարդալը, յուրաքանչյուր զուգընկերը պետք է ուսուցանի մյուսին, այն մասին, ինչ կարդացել է:

Երբ ուսանողները բավականաչափ ժամանակ են ունեցել կարդալու և քննարկելու համար, հարցրեք.

- Ի՞նչ եք կարծում, ինչպես կարող էր օգնել Ջոզեֆ Սմիթին չորս տարի սպասելը նախքան նա կկարողանար իր հետ տուն տանել ոսկյա թիթեղները: (Այդ ժամանակաընթացքում Ջոզեֆն ուսուցանվում էր Մորոնիի կողմից, և նա հասունանում էր շատ ուղիներով: Տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.54:)
- Ջոզեֆ Սմիթի պատմության մեջ ի՞նչ փաստ եք տեսնում, որն ապացուցում է, որ **Տերը պահպանել էր Մորմոնի Գիրքը՝ ի հայտ գալու վերջին օրերում:**
- Ջոզեֆ Սմիթի պատմության մեջ ի՞նչ փաստ եք տեսնում, որ **Մորմոնի Գիրքը ի հայտ եկավ Աստծո զորությամբ:**

### *Ակնարկներ ներկայացնելը*

Նախագահ Բոյդ Կ. Փաքերը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ասել է. «Մեծ կարևորություն ունի *համառոտ,* բայց խնամքով կազմված ակնարկ ներկայացնելը հենց դասընթացի սկզբում: . . .
. . . [Ուսանողներն] ավելի շատ բան են հիշողության մեջ պահում, երբ նրանք իմանում են, թե ինչպես են բոլոր մասերը միմյանց համապատասխանում և գիտության լույսն ավելի պայծառ է շողում: Նախագծումը ձևավորում է կմախքը և անշուշտ արժե ժամանակ և աշխատանք ներդնել դրա մեջ» (“The Great Plan of Happiness” [CES symposium on the Doctrine and Covenants/Church History, Aug. 10, 1993], 2, si.lds.org):

## Համառոտ բացատրություն Մորմոնի Գրքի մասին

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչպես է Մորմոնի Գիրքը կազմվել, հանձնարարեք նրանց կարդալ Մորմոնի Գրքի ներածական էջերում «Համառոտ բացատրություն Մորմոնի Գրքի մասին» հատվածը: Հրավիրեք չորս ուսանողի հերթով բարձրաձայն կարդալ 1–4 կետերը: Երբ կարդան, դասարանի մնացած մասին հանձնարարեք լսել, թե ինչպես է թիթեղների յուրաքանչյուր խումբը կարևոր Մորմոնի Գրքի համար: Այս ձեռնարկի հավելվածում կա «Թիթեղները և դրանց կապը հրատարակված Մորմոնի Գրքի հետ» վերնագրով մի նկար: Այս նկարը կարող է օգնել ուսանողներին պատկերացնել թիթեղները, որոնց մասին քննարկվում է « Համառոտ բացատրություն Մորմոնի Գրքի մասին» հատվածում: (Եթե զգում եք, որ այն օգտակար կլիներ որպես այս քննարկման մաս, նշեք համառոտ բացատրության վերջին պարբերության մասին, սկսած «Այս հրատարակության մասին» արտահայտությունը: Բացատրեք, որ Մորմոնի Գրքի յուրաքանչյուր հրատարակություն պարունակում է ուղղագրական և տողաշարային սխալների փոքր ուղղումներ:)

Ցուցադրեք «Մորմոնը կրճատում է թիթեղները» նկարը (62520; *Gospel Art Book,* no. 73): Բացատրեք, որ շատ մարդիկ պահպանել են հիշատակարանները, որոնք վերջում դարձան Մորմոնի Գիրքը: Գրեք հետևյալ սուրբգրքյան հղումները գրատախտակին: Խնդրեք ուսանողներին լուռ ընթերցել դրանք, որոնելով սկզբունքներից մի քանիսը, որոնք օգնեցին Մորմոնի Գրքի գրողներին որոշել, թե ինչ ներառել իրենց հիշատակարաններում: Հրավիրեք ուսանողներին կիսվել նրանով, ինչ իրենք գտել են: (Դուք կարող եք գրել նրանց պատասխանները գրատախտակին:)

| | |
|---|---|
| *1 Նեփի 1.20* | *2 Նեփի 29.11–13* |
| *1 Նեփի 6.4–6* | *Մորմոնի խոսքերը 1.4–8* |
| *2 Նեփի 4.15* | *3 Նեփի 16.4* |
| *2 Նեփի 25.23, 26:* | *Մորոնի 1.4* |

- Ինչպե՞ս կարող է այս առաջնորդող սկզբունքները հասկանալը օգնել ձեզ, երբ դուք ուսումնասիրեք Մորմոնի Գիրքը:

Կիսվեք ձեր վկայությամբ այն մասին, որ **Մորմոնի Գիրքը գրողները տեսել են մեր օրը և գրել այն, ինչը մեծագույն օգնություն կլիներ մեզ համար:** Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալՄորմոն 8.35–38-ը:

- Ի՞նչ խնդիրներ էր Մորոնին տեսնում մեր օրերի մարդկանց մեջ:
- Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ Մորոնին և Մորմոնի Գրքի մյուս գրողները տեղյակ էին այն խնդիրներին, որոնց մենք հանդիպելու էինք:

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Էզրա Թաֆթ Բենսոնի հետևյալ խոսքերն այն մասին, թե ինչպես պետք է ուսումնասիրել Մորմոնի Գիրքը.

«Եթե նրանք տեսել են մեր օրը, և ընտրել այն բաները, որոնք մեզ համար կլինեին մեծագույն օգուտը, մի՞թե դա չէ այն ուղին, որով մենք պետք է ուսումնասիրենք Մորմոնի Գիրքը: Մենք անընդհատ պետք է հարց տանք մեզ. «Ինչո՞ւ է Տերը ոգեշնչել Մորմոնին (կամ Մորոնիին, կամ Ալմային) ներառել այն իր հիշատակարանում: Ի՞նչ դաս կարող եմ սովորել դրանից, որը կօգնի ինձ ապրել այս օրերում և այս դարում» (“The Book of Mormon—Keystone of Our Religion,” *Ensign,* Nov. 1986, 6):

Ասեք ուսանողներին, որ մարդիկ, որոնց մասին գրված է Մորմոնի Գրքում, դիմակայում էին խնդիրների, որոնք շատ նման էին մեր սեփական խնդիրներին: Չնայած Մորմոնի Գիրքը հնադարյան փաստաթուղթ է, դրա վարդապետությունները, պատմությունները և պատմվածքները մեծ արժեք ունեն այսօր:

Խնդրեք ուսանողներին բարձրաձայն կարդալ Էզրա Թաֆթ Բենսոնի հետևյալ միտքը: (Դուք կարող եք յուրաքանչյուր ուսանողի տալ այդ տպված մտքի մի օրինակ): Հանձնարարեք դասարանին լսել այն օրհնությունները, որոնք Նախագահ Բենսոնը խոստացել է նրանց, ովքեր սկսում են Մորմոնի Գքրի լուրջ ուսումնասիրություն:

«Բանը ուղղակի նրանում չէ, որ Մորմոնի Գիրքը մեզ ճշմարտությունն է ուսուցանում, թեև այն իսկապես ուսուցանում է դա: Բանը ուղղակի նրանում չէ, որՄորմոնի Գիրքը վկայություն է բերում Քրիստոսի մասին, թեև իսկապես բերում է: Կա ինչ որ մի բան, որն ավելին է: Գրքի մեջ մի զորություն կա, որը սկսում է ներթափանցել ձեր կյանք

այն պահից, երբ դուք սկսում եք այդ գրքի լուրջ ուսումնասիրությունը: Դուք կգտնեք ավելի մեծ զորություն՝ գայթակղությանը դիմակայելու համար: Դուք կգտնեք ավելի մեծ զորություն՝ խաբեությունից խուսափելու համար: Դուք կգտնեք ավելի մեծ զորություն՝ ուղիղ և նեղ արահետի վրա մնալու համար: Սուրբ գրությունները կոչվում են «կյանքի խոսքեր» (տես ՎԿՈ 84.85), և դա առավել ճշմարիտ է Մորմոնի Գրքի մասին: Երբ դուք սկսում եք քաղց և ծարավ զգալ այդ խոսքերի համար, դուք կյանք կգտնեք ավելի ու ավելի մեծ առատությամբ» (“The Book of Mormon—Keystone of Our Religion,” 7):

- Ե՞րբ եք զգացել օրհնություններ Մորմոնի Գիրքը ուսումնասիրելուց:

Կիսվեք ձեր վկայությամբ, որ **Մորմոնի Գիրքը տալիս է մեզ ավելի մեծ ուժ դիմադրելու գայթակղությանը, խուսափելու խաբեությունից և մնալու նեղ և անձուկ արահետի վրա:** Պատմեք ուսանողներին մի ժամանակի մասին, երբ դուք ստացել եք այս օրհնությունները Մորմոնի Գիրքն ուսումնասիրելու արդյունքում:

Նախքան դասը սկսելը գրատախտակին գրեք հետևյալ հարցերի ցուցակը և սուրբ գրությունները.

*Կա՞ արդյոք Աստված: (Տես Ալմա 30.37–44:) Կարո՞ղ եմ ես ճանաչել Աստծուն: (Տես Ալմա 22.18:) Արդյոք Աստված հոգ տանու՞մ է իմ մասին: (Տես 3 Նեփի 13.26–32:)*

*Ինչպե՞ս կարող եմ դիմադրել գայթակղությանն ու մեղքին: (Տես Հելաման 5.12:)*

*Ո՞րն է կյանքի իմաստը: (Տես Ալմա 34.32–34:)*

*Կա՞ արդյոք կյանք մահից հետո: (Տես Ալմա 40.11–12, 21–23:)*

*Ինչպե՞ս կարող եմ զտնել խաղաղություն և երջանիկ լինել: (Տես Մոսիա 2.41, 4.2–3, Ալմա 41.10:)*

*Ինչպե՞ս կարող է իմ ընտանիքն ավելի երջանիկ և ավելի միավորված լինել: (Տես Մոսիա 4.14–15:)*

*Ինչպե՞ս կարող եմ դատել ճշտի և սխալի միջև: (Տես Մորոնի 7.16–17:)*

*Ինչո՞ւ է Աստված թույլ տալիս, որ չարություն և տառապանք պատահի: (Տես 2 Նեփի 2.1–2, 11–16, 22–27, Ալմա 14.9–11, 60.13:)*

Բացատրեք, որ բացի արդեն նշված օրհնություններից, **Մորմոնի Գիրքը պարունակում է պատասխաններ կյանքի ամենահիմաստալի հարցերին:** Հրավիրեք ուսանողներին անձնապես ընտրել մեկ կամ երկու հարց և որոնել կցված սուրբ գրությունների հատվածները պատասխանների համար: Նրանց մի քանի րոպե տվեք՝ պատասխանները գտնելու համար: Դուք կարող եք քայլել դասարանով, օգնություն ցույց տալով անհրաժեշտության դեպքում:

- Ինչպե՞ս է պատասխանում Մորմոնի Գիրքը ձեր ընտրած հարցերին:

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ Բոյդ Կ. Փաքերի հետևյալ միտքը: Երբ նա արտահայտեց այս միտքը, նա խոսում էր սեմինարիայի և ինստիտուտի ուսուցիչների հետ՝ կյանքի ամենահիմաստալի հարցերին պատասխանելու սուրբ գրությունների ուժի մասին:

«Եթե ձեր ուսանողները ծանոթ են հայտնությունների հետ, հարց չի լինի՝ անձնական, սոցիալական, քաղաքական կամ մասնագիտական, որ մնա անպատասխան: Դրանք պարունակվում են հավիտենական ավետարանի լրիվության մեջ: Դրանցում մենք գտնում ենք ճշմարտության սկզբունքներ, որոնք կլուծեն ամեն խառնաշփոթ և ամեն խնդիր ու ամեն երկընտրանք, որը կհանդիպի մարդկության ընտանիքին կամ որևէ անհատի» (“Teach the Scriptures” [address to CES religious educators, Oct. 14, 1977], 3–4, si.lds.org):

Կիսվեք, թե ինչպես է Մորմոնի Գիրքն օրհնել ձեր կյանքը: Հիշեցրեք ուսանողներին ՄորմոնիԳրքի ամենօրյա ընթերցանության իրենց նպատակի մասին և այս տարի ողջ Մորմոնի Գիրքը առնվազն մեկ անգամ կարդալու մասին:

***Նախքան դասը սկսելը***

Եթե հնարավոր է, ժամանակ հատկացրեք դասարանը նախապատրաստելու համար նախքան դասը սկսելը: Գրեք սուրբ գրությունների հղումները, հարցերը և այլ վարժություններ գրատախտակի վրա դասը սկսելուց առաջ: Սա կօգնի ձեզ խնայել ուսուցման համար թանկ ժամանակը և կվերացնի շեղումները, որոնք կարող են խանգարել ուսուցման և յուրացման գործընթացին:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Համառոտ բացատրություն Մորմոնի Գրքի մասին: «Այս հրատարակության մասին»

Կան Մորմոնի գրքի երկու ձեռագրեր՝ ձեռագրի բնօրինակը և տպագրողի ձեռագիրը: 1830 թվականի հրատարակության տողաշարի մի փոքր մասը հիմնված էր բնօրինակ ձեռագրի վրա, իսկ մնացածը՝ հրատարակչի ձեռագրի վրա, որը բնօրինակ ձեռագրի մի օրինակ էր: Երբ Ջոզեֆ Սմիթը պատրաստեց Մորմոնի Գիրքը 1840 թվականի հրատարակության համար, նա օգտագործեց ձեռագրի բնօրինակը՝ ուղղելով պատահական սխալները և ջնջումները, որոնք տեղի էին ունեցել 1830 թվականի հրատարակությունում: 1981 թվականի հարատարակության ժամանակ ձեռագրի բնօրինակը կրկին վերանայվեց, որպեսզի վերականգվեր սկզբնական բառերով մոտավորապես 20 տեղերում: Մորմոնի Գրքում որևէ սխալ մարդկանց սխալ է և փոփոխությունները պարզապես արվում են Մորմոնի Գիրքը իր բնագրային իմաստով և միտումով վերականգնելու համար» (տես *Book of Mormon Reference Companion,* ed. Dennis Largey [2003], 124–25):

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը գրել է.

«Գտնվել են մի քանի տպագրական սխալներ [Մորմոնի Գրքի]առաջին հրատարակությունում և գուցե մեկ կամ երկու բառի բացթողում:Նրանք, ովքեր հրատարակել են գրքեր ամենաուշադիր և նպաստավոր հանգամանքներում, ահաբեկված, գտել են սխալներ՝ տպագրական և մեխանիկական, որոնցից մի քանիսը տեղի են ունեցել սրբագրական վերջին ստուգումը կատարելուց հետո:

. . . Փոփոխությունների ցուցակի մանրազննին ստուգումը. . . ցույց է տալիս, որ չկա մի փոփոխություն կամ ավելացում, որը լիակատար ներդաշնակության մեջ չլինի տեքստի բնօրինակի հետ: Փոփոխություններ կատարվել են կետադրության և մի քանի այլ մանր հարցերում, որոնք ուղղման կարիք են ունեցել, բայց երբեք որևէ փոփոխություն կամ ավելացում չի փոխել ոչ մի սկզբնական միտք: Ինչպես մեզ է երևում, փոփոխությունները . . . այնպիսին են, որ դարձնում են տեքստն ավելի հստակ և ցույց են տալիս, որ դրանք բացթողումներ են: Ես համոզված եմ, որ սխալները կամ բացթողումներն առաջին հրատարակության մեջ մեծամասամբ գրաշարի կամ տպագրիչի մեղքով են տեղի ունեցել: *Այդ սխալներից շատերը, որոնք առաջին սրբագրություններում էին, հայտնաբերվել են անձամբ Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից և նա է կատարել ուղղումները*» (*Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. [1957–66], 2:199–200; italics in original):

# Տնային ուսումնասիրության դաս

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն– Մորմոնի Գրքի ակնարկ (Մաս 1)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Հետևյալը իրադարձությունների, վարդապետությունների, և սկզբունքների մի ամփոփագիր է, որն ուսանողները սովորեցին, կատարելով ուսանողների տնային ուսումնասիրության չորս դասերը Մաս 1-ի համար: Իմանալը, թե ուսանողներն ինչ են ուսումնասիրել, ձեզ կօգնի պատրաստվել ձեր դասին: Ամփոփագիրը դասի մասը չի կազմում և նախատեսված չէ ուսանողների հետ կիսվելու համար: Քանի որ դասը, որը դուք ուսուցանում եք Մաս 1-ի համար, կենտրոնացած է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա, դուք երբեմն կզգաք կարիք վերանայելու կամ քննարկելու այլ բաներ՝ համաձայն Հոգու հուշումների և ձեր ուսանողների կարիքների:

#### Օր 1 (Սուրբ գրությունների ուսումնասիրություն)

Ուսանողները սովորեցին հմտություններ, որոնք կօգնեն իրենց հասկանալ սուրբ գրությունների պատմությունն ու միջավայրը, ինչպես ուսումնասիրել և ճանաչել ավետարանի ճշմարտությունները և ինչպես կիրառել ավետարանի վարդապետություններն ու սկզբունքները իրենց կյանքում:

#### Օր 2 (Փրկության ծրագիրը)

Այս դասը փրկության ծրագրի համառոտ ակնարկն էր: Մորմոնի Գիրքն ուսուցանում է, որ Երկնային Հոր ծրագիրը նախատեսված է բերելու Իր զավակներին հավերժական փրկություն և երջանկություն: Հիսուս Քրիստոսը փրկության ծրագրի կենտրոնական դեմքն է, իսկ Նրա Քավությունը այն է, ինչ աշխատեցնում է ծրագիրը Աստծո բոլոր զավակների համար: Երբ մենք ընտրում ենք հետևել Աստծո ծրագրին, մենք պատրաստվում ենք ստանալ հավերժական կյանք:

#### Օր 3 (Տիտղոսաթերթ, նախաբան և վկաների վկայությունները)

Մորմոնի Գրքի ներածական նյութերն օգնում են հաստատել գրքի նպատակները և բացատրում են դրա ճշմարտացիությունը և աստվածային ծագումը: Տիտղոսաթերթն ուսուցանում է, որ Մորմոնի Գիրքը վկա է, որ Հիսուսը Քրիստոսն է: Երբ մենք կարդում ենք, խորհում և աղոթում Մորմոնի Գրքի մասին, Սուրբ Հոգին վկայում է, որ այն ճշմարիտ է, որ Հիսուսը Քրիստոսն է, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն էր և որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Տիրոջ թագավորությունն է երկրի վրա::

#### Օր 4 (Մորմոնի Գրքի ակնարկ)

Մարգարե Ջոզեֆ Սմիթի վկայությունն օգնեց ուսանողներին զորացնել իրենց վկայությունն այն մասին, որ Մորմոնի Գիրքն ի հայտ է եկել Աստծո պարգևով և զորությամբ: Տերը պահպանել էր Մորմոնի Գիրքը ի հայտ գալու վերջին օրերին: Մորմոնի Գրքի գրողները տեսել են մեր օրը և գրել այն, ինչն ամենամեծ օգնությունը կլիներ մեզ համար: Ուսանողները խրախուսվել են մտածել իրենց ունեցած հարցերի շուրջ և որոնել պատասխանները Մորմոնի Գիրքն ուսումնասիրելիս:

### Նախաբան

Այս շաբաթվա դասը կարևորում է ավետարանը սովորելու յուրաքանչյուր ուսանողի պարտականությունը : Այն նաև շեշտում է Մորմոնի Գրքի կենտրոնական դերը ուսանողներին օգնելիս Հիսուս Քրիստոսի և Նրա Եկեղեցու վերաբերյալ վկայություն կառուցելու գործում: Երբ ուսուցանեք, օգնեք ուսանողներին հասկանալ այս սրբազան սուրբ գիրքը ջանասիրաբար ուսումնասիրելու կարևորությունը և օրհնությունները, որոնք կլցնեն իրենց կյանքը, երբ նրանք անեն դա:

## Ուսուցանման առաջարկներ

### Ուսումնասիրել սուրբ գրությունները

Դուք կարող եք սկսել, տալով ուսանողներին հետևյալ հարցերը.

- Ո՞րնէ տարբերությունը մեկի միջև, ով կարդում է Մորմոնի Գիրքը և ձեռք բերում վկայություն, և մեկի, ով կարդում է և ձեռք չի բերում վկայություն: (Ոմանք պարզապես կարդում են խոսքերը, մյուսները կարդում են հավատքով, իսկական միտումով և իրենց սրտերը բաց Սուրբ Հոգու հանդեպ:)

- Ինչպե՞ս է որևէ մեկը սովորում հոգևոր ճշմարտություններ: (Մտածեք ուսանողների պատասխանները գրատախտակին գրելու մասին: Ետ վերադարձեք այս ցուցակին Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի միտքը ստորև կարդալուց հետո:)

Գրեք հետևյալ միտքը գրատախտակին, բաց թողնելով ընդգծված խոսքերը. *«Ուսում փնտրեք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաևհավատքով»:*

Վերանայեք այն, ինչ ուսանողները սովորեցին այս շաբաթ՝ նրանց հրավիրելով լրացնել բաց թողած տեղերը: Եթե նրանք օգնության կարիք ունենան, կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 88.118: Հարցրեք նրանց, թե ինչ է նշանակում փնտրել ուսում, ուսումնասիրելով և հավատքով: Երբ սա քննարկեք, հավաստիացեք, որ նրանք հասկացել են, որ **ուսումնասիրելով և հավատքով սովորելը պահանջում է անհատական ջանքեր:**

Օգնելու համար ուսանողներին հասկանալ, թե ինչու է ջանք և աշխատանք պահանջվում ավետարանը սովորելու համար, հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ բացատրությունը: Հրավիրեք ուսանողներին լսել, թե ինչ է տեղի ունենում, երբ մենք ջանք ենք գործադրում, հոգևոր ուսումնասիրություն կատարելով:

«Սովորողը, գործադրելով ազատ կամքը՝ համաձայն ճիշտ սկզբունքների, բացում է իր սիրտը Սուրբ Հոգու հանդեպ և հրավիրում Նրա ուսուցումը, վկայող ուժը և հաստատող վկայությունը: Հավատքով սովորելը պահանջում է հոգևոր, մտավոր, և ֆիզիկական լարում և ոչ թե ուղղակի անտարբեր ընդունում» (“Seek Learning by Faith,” *Ensign,* Sept. 2007, 64):

Հարցրեք ուսանողներին. Ի՞նչ է ասել Երեց Բեդնարը, որ տեղի կունանա սովորողի հետ, որը ջանք է գործադրում հոգևոր գիտելիքի համար:

Հրավիրեք ուսանողներին կիսվել փորձառություններով, որ իրենք ունեցել են, երբ հատուկ ջանք են գործադրել հոգեպես և արդյունքում զգացել Սուրբ Հոգու ընկերակցության ուժեղացում: Դուք կարող եք ավելացնել ձեր վկայությունը, որ ավետարանը աղոթքով ուսումնասիրելու **մեր ջանքերը Սուրբ Հոգուն կհրավիրեն սովորելու գործընթացին:**

Հարցրեք ուսանողներին. Որո՞նք են այն որոշակի բաները, որոնք դուք կարող եք անել այս տարի, «ուսում փնտրելով՝. . . ուսումնասիրելով և նաև հավատքով»:

## Փրկության Ծրագիրը

Վերանայեք փրկության ծրագրի տարբեր անվանումները՝ խնդրելով ուսանողներին գրել գրատախտակին այն անվանումն երը, որոնք նրանք գրի են առել իրենց ուսուցողական տետրերում 2-րդ օրվա դասի հանձնարարություն 1-ի համար: Եթե նրանք օգնության կարիք ունենան, հանձնարարեք նրանց դիմել իրենց ուսումնական ուղեցույցի համապատասխան էջին:

Դուք կարող եք հարցնել. Ի՞նչ են ուսուցանում ձեզ այս անունները փրկության ծրագրի նպատակի մասին: (Երկնային Հոր ծրագիրը նախատեսված է բերելու Իր զավակներին հավերժական փրկություն և երջանկություն:)

Բացատրեք, որ տարվա ընթացքում կլինեն շատ հնարավորություններ սովորելու, թե ինչպես են ճշմարտությունները, որ մենք սովորում ենք Մորմոնի Գրքից, համապատասխանում Երկնային Հոր երջանկության Ծրագրին:Կարող եք խնդրել ուսանողներին փնտրել և նշել իրենց սուրբ գրություններում սկզբունքները, որոնք կապված են փրկության ծրագրի հետ, երբ նրանք ուսումասիրեն այս տարի: Կարող եք մի քանի օրինակներ բերել այն սկզբունքների, որոնք նրանք կարող են գտնել ուսումնասիրելիս: Ուսանողներին խրախուսեք տարվա ընթացքում իրենց զգացումներով կիսվել դասարանի հետ:

## Տիտղոսաթերթ, նախաբան և վկաների վկայությունները

Հրավիրեք ուսանողներին մասնակցել մի դերակատարման՝ պատկերացնելով, որ իրենք Մորմոնի Գրքի օրինակ են տալիս ինչ որ մեկին, ով Եկեղեցու անդամ չէ:

Բաժանեք դասարանը երկու ծմբի և հանձնարարեք յուրաքանչյուր խմբին պատրաստվել դերակատարման՝ քննարկելով հարցերը, որոնք տրված են իրենց խմբին: Կարող է օգտակար լինել գրել հարցերը գրատախտակին նախքան դասի սկսելը կամ յուրաքանչյուր ուսանողի տալ հարցերի մեկական օրինակ: Խրախուսեք ուսանողներին փնտրել և նշել տեղեկությունը, որով, ըստ իրենց, օգտակար կլինի կիսվել, երբ ուսուցանեն Մորմոնի Գրքի մասին:

**Հարցեր խումբ 1-ի համար.**

1. Ի՞նչ է Մորմոնի Գիրքը: (Տես նախաբան, պարբերություն 1–3:)
2. Ո՞րն է Մորմոնի Գրքի նպատակը: (Տես տիտղոսաթերթ, պարբերություն 2:)
3. Ի՞նչ օրհնություններ են գալիս Մորմոնի Գրքի ուսուցանած տեսություններով կամ սկզբունքներով ապրելու արդյունքում: (Տես նախաբան, պարբերություն 6:)

**Հարցեր խումբ 2-ի համար.**

1. Ինչպե՞ս ի հայտ եկավ Մորմոնի Գիրքը (Տես նախաբան, պարբերություն 4–5:)
2. Ինչպե՞ս կարող ենք գալ այն իմացության, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է (Տես նախաբան,պարբերություն 8:)
3. Էլ ի՞նչ կարող ենք իմանալ Սուրբ Հոգու զորությամբ: (Տես նախաբանի վերջին պարբերությունը:)

Ուսանողներին նախապատրաստվելու համար ժամանակ հատկացնելոց հետո, ընտրեք որևէ ուսանողի, որը կներկայացնի մի անձնավորության, որը Եկեղեցու անդամ չէ: Խնդրեք յուրաքանչյուր խմբից մեկական կամավորիՄորմոնի Գրքի մեկ օրինակ նվիրել այդ անձնավորությանը: Խրախուսեք ուսանողներին օգտագործել իրենց խմբի ուսումնասիրած հարցերի պատասխանները՝ ուսուցանելու համար առաջին ուսանողին Մորմոնի Գրքի մասին:

Երբ նրանք վերջացնեն դերակատարումը, դասարանի մնացած մասին կարող եք հարցնել, թե ինչ լրացուցիչ տեղեկությունով իրենք կարող էին կիսվել, եթելինեին այն անձնավորությունը, որը պետք է նվիրեր Մորմոնի Գրքի օրինակը: Դուք կարող եք նաև հարցնել. Ի՞նչ սովորեցիք կամ հիշեցիք Մորմոնի Գրքի մասին այս միջոցառման ժամանակ:

Երբ ուսանողները պատասխանեն, հավաստիացեք, որ **Մորմոնի Գիրքը վկա է, որ Հիսուսը Քրիստոսն է:** Շեշտեք ուշադրություն դարձնելու կարևորությունը նրա վրա, թե ինչպես է Մորմոնի Գիրքը վկայում Հիսուս Քրիստոսի մասին: Բացի այդ, բացատրեք, որ Մորմոնի Գիրքն ուսումնասիրելը կօգնի նրանց հասկանալ Հիսուս Քրիստոսի ավետարանի վարդապետություններն ու սկզբունքները և կզորացնի նրանց վկայությունը Նրա Եկեղեցու մասին:

Ուսանողներին հիշեցրեք, որ **Մորմոնի Գրքի գրողները տեսել են մեր օրը և գրել այն, ինչն ամենաօգտակարը կարող էր լինել մեզ համար** (տես Մորմոն 8.35):

Հարցրեք ուսանողներին. Ի՞նչ սովորեցիք այս շաբաթ, որը կազդի Մորմոնի Գրքի ձեր ուսումնասիրության եղանակի վրա:

Հրավիրեք մի քանի ուսանողների պատմել, թե ինչպես են իրենք պատրաստվում կատարել ուսումնական տարվա ընթացքում Մորմոնի Գիրքը կարդալու իրենց պարտականությունը: Եզրափակեք, կիսվելով Մորմոնի Գրքի մասին ձեր զգացմունքներով և վկայությամբ, ինչպես նաև նրանով, թե ինչպես է դրա ուսումնասիրությունը ազդել ձեր կյանքի վրա:

## Հաջորդ մասը (1 Նեփի 1–6, 9)

Հարցրեք ուսանողներին, թե նրանք երբևէ իմացել են, որ ինչ որ բան ճիշտ էր, բայց դա անելը դժվար է թվացել կամ նույնիսկ անհնարին: Բացատրեք, որ եկող շաբաթ նրանք կհայտնաբերեն, որ Նեփին այդպիսի մարտահրավերի դեմ կանգնեց, և նրանք կիմանան, թե ինչպես նա ապավինեց Աստծուն՝ իրականացնելու համար այն, ինչն անհնարին էր թվում:

# Նեփիի Առաջին

## ԳՐՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ

### Ինչո՞ւ ուսումնասիրել այս գիրքը:

Երբ ուսանողները ուսումնասիրեն 1 Նեփին, նրանք կհայտնաբերեն, որ «Տիրոջ գորովագութ ողորմությունները բոլոր նրանց վրա են, ում նա ընտրել է, նրանց հավատքի շնորհիվ, դարձնելու նրանց հզոր՝ մինչև իսկ ի զորությունն ազատվելու» (1 Նեփի 1.20)։ Նրանք նաև կսովորեն, որ Աստված ուզում է օրհնել Իր զավակներին։ Լեքին և նրա ժողովուրդը ճաշակեցին Աստծո ողորմությունը և օրհնությունները, մինչ նրանք հետևում էին Նրա պատվիրաններին։ Լեքին ու Նեփին փնտրեցին Աստծո առաջնորդությունը և ստացան այն երազների, տեսիլքների, Լիահոնայի և Սուրբ Հոգու առաջնորդության միջոցով։ Նեփին ստացավ և արձանագրեց աշխարհի պատմության պատկերավոր տեսիլքը, որը ցույց տվեց նրան Աստծո գործերը՝ Հիսուս Քրիստոսի մկրտությունը, ծառայությունը և խաչելությունը, նեփիացիների կործանումը և վերջին օրերը։ Աստված օգնեց Նեփիին ու նրա եղբայրներին ձեռք բերել արույրե թիթեղները, որպեսզի նրանք կարողանային ունենալ սուրբ գրությունները։ Նա նաև փրկեց Լեքիին ու նրա ժողովրդին սովից անապատում և կործանումից օվկիանոսում՝ ապահով հասցնելով նրանց խոստումի երկիր։ Մինչ ուսանողները ուսումնասիրեն այս գրքի Նեփիի ու Լեքիի փորձառությունները, նրանք կարող են սովորել, թե ինչպես փնտրել և ստանալ երկնքի օրհնությունները։

### Ո՞վ է գրել այս գիրքը:

Լեքիի որդի Նեփին գրել է այս գիրքը ի պատասխան Տիրոջ պատվիրանի, որ նա պահի իր ժողովրդի հիշատակարանը։ Նեփին հավանաբար ծնվել է Երուսաղեմում կամ դրա մոտակայքում։ Նա այնտեղ ապրել է մարգարե Երեմիայի ծառայության և թագավոր Սեդեկիայի թագավորության ընթացքում։ Նեփին փնտրեց իր անձնական վկայությունը Երուսաղեմի կործանման և իրենց ընտանիքի մեկնելու կարիքի անհրաժեշտության հետ կապված իր հոր խոսքերի վերաբերյալ։ Մինչ նա շարունակեց փնտրել Տիրոջ խորհուրդը և հետևել դրան, Նեփին գործիք դարձավ Աստծո ձեռքում։ Նա երկու անգամ հնազանդորեն Երուսաղեմ վերադարձավ իր եղբայրների հետ, առաջին անգամ արույրե թիթեղները ձեռք բերելու համար և ավելի ուշ, որպեսզի համոզեր Իսմայելի ընտանիքին միանալ Լեքիի ընտանիքին անապատում։ Տիրոջ օգնությամբ Նեփին նավ կառուցեց, որը տարավ նրա ընտանիքին և այլոց օվկիանոսի մյուս կողմում գտնվող խոստումի երկիրը։ Երբ Լեքին մահացավ, Տերն ընտրեց Նեփիին նրա ժողովրդի ղեկավարը լինելու համար։

### Ու՞մ համար է գրված այս գիրքը և ինչու՞:

Նեփին գրում էր, իր մտքում ունենալով երեք խումբ ունկնդիրներ՝ իր հոր ժառանգներին, Տիրոջ ուխտյալ ժողովրդին վերջին օրերում և աշխարհի բոլոր մարդկանց (տես 2 Նեփի 33.3, 13)։ Նա գրել է, որ համոզի բոլորին գալ դեպի Հիսուս Քրիստոսը և փրկվել (տես 1 Նեփի 6.4)։

### Ե՞րբ և որտե՞ղ է այն գրվել:

Նեփին գրեց այս արձանագրությունը, որը դարձավ 1 Նեփին, մոտավորապես 570 տարի Ք.ա, իր և իր ընտանիքի կողմից Երուսաղեմը թողնելուց 30 տարի անց (տես 2 Նեփի 5.30)։ Նա գրեց այն, երբ Նեփիի երկրում էր։

### Որո՞նք են այս գրքին բնորոշ որոշ առանձնահատկությունները:

1 Նեփին պարունակում է մի շարք արձանագրություններ երկնային հայտնությունների մասին, որոնք տեղի են ունեցել երազներում, տեսիլքներում և ուղղակի հայտնություններ են եղել։ Այս հայտնությունները ցույց են տալիս, որ Աստված ուղղություն է տալիս, առաջնորդում է և պաշտպանում նրանց, ովքեր փնտրում են Իրեն.

- Երբ Լեքին աղոթում է, կրակի մի սյուն է հայտնվում, և նա տեսնում և լսում է շատ բաներ, որ ստիպում են նրան դողալ (տես 1 Նեփի 1.6–7)։
- Լեքին տեսիլք է ստանում, որում նա տեսնում է Աստծուն և կարդում է մի գրքից, որը մարգարեանում է Երուսաղեմի կործանման և դրա բնակչության գերեվարման վերաբերյալ (տես 1 Նեփի 1.8–14)։
- Տերը պատվիրում է Լեքիին իր ընտանիքի հետ միասին հեռանալ անապատ (տես 1 Նեփի 2.1–2)։
- Տերը պատվիրում է Լեքիին իր տղաներին հետ ուղարկել Երուսաղեմ արույրե թիթեղների բերելու (տես 1 Նեփի 3.2–4)։
- Հրեշտակը միջամտում է, երբ Լամանը և Լեմուելը ծեծում են Նեփիին և Սամին (տես 1 Նեփի 3.29)։
- Տերը պատվիրում է, որ Նեփին և նրա եղբայրները վերադառնան Երուսաղեմ Իսմայելին և նրա ընտանիքին բերելու համար (տես 1 Նեփի 7.1–2)։
- Լեքին ու Նեփին տեսիլքներ են տեսնում, որոնք ներառում են կյանքի ծառը, Հիսուս Քրիստոսի ծնունդը, ծառայությունը և Քավությունը, խոստումի երկրի պատմությունը, ավետարանի վերականգնումը և դևի ու Աստծո Գառի եկեղեցու ուժերի միջև եղած հակամարտությունը (տես 1 Նեփի 8, 11–14)։
- Նեփիին ցույց է տրվում, թե ինչպես նավ կառուցել, որ իր ժողովրդին տանի խոստումի երկիր (տես 1 Նեփի 18.1)։

1 Նեփին պարունակում է այն մարդկանց անմիջական արձանագրությունը, ովքեր ճանապարհորդեցին դեպի խոստումի երկիրը։ Մորմոնի Գրքում այնուհետև նշվում են երկու այլ խմբեր, ովքեր ճանապարհվել են դեպի խոստումի երկիր՝ Մուղեկի ժողովուրդը (տես Օմնի 1.14–17) և Հարեդացիները (տես Եթեր 6.4–12)։

1 Նեփիի գիրքը նաև ներկայացնում է երկու նշանակալի առարկաներ՝ Լաբանի սուրը և կողմնացույցը, կամ ուղեցույցը, որը կոչվում է Լիահոնա (տես 1 Նեփի 18.12, Ալմա 37.38)։ Լիահոնայի միջոցով Տերն առաջնորդեց Լեքիի ընտանիքին անապատի միջով և օվկիանոսով։ Լաբանի սուրը սերնդեսերունդ փոխանցվեց մինչև նեփիացիների քաղաքակրթության վերջը։ Լիահոնան և Լաբանի սուրը երկուսն էլ թաղվել էին ոսկե թիթեղների հետ և դրանք ցույց էին տրվել Ջոզեֆ Սմիթին և Երեք Վկաներին (տես ՎԱՈՒ 17.1–2)։

## Համառոտ շարադրանք

**1 Նեփի 1–7** Լեքին առաջնորդում է իր ժողովրդին դեպի անապատ: Նրա որդիները ականջ են դնում Երուսաղեմ վերադառնալու Տիրոջ պատվիրաններին և ձեռք են բերում արույրե թիթեղները և նորից վերադառնում են՝ համոզելու համար Իսմայելին ու նրա ընտանիքին, որ միանան իրենց անապատում:

**1 Նեփի 8–15** Լեքին և Նեփին, յուրաքանչյուրն էլ տեսան կենաց ծառի տեսիլքը: Նեփին շարադրում է իր տեսիլքը Փրկչի ծառայության և պատմական իրադարձությունների վերաբերյալ, որ առաջնորդում են դեպի ավետարանի Վերականգնումը վերջին օրերում:

**1 Նեփի 16–18** Տերն առաջնորդում է Լեքիին և նրա ընտանիքին դեպի խոստումի երկիր անապատում իրենց ճամփորդության և օվկիանոսը անցնելու ընթացքում:

**1 Նեփի 19–22** Նեփին մարգարեանում է Հիսուս Քրիստոսի և Իսրայելի ցրման ու հավաքման վերաբերյալ:

ԴԱՍ 6

# 1 Նեփի 1

## Նախաբան

Մորմոնի Գիրքը սկսվում է Լեքիի կողմից մարգարեի իր դերը հավատարմորեն կատարելով: Ինչպես Լեքին, այնպես էլ «շատ մարգարեներ եկան՝ մարգարեանալով ժողովրդին, որ նրանք պետք է ապաշխարեն» (1 Նեփի 1.4): Երբ նա մարգարեացավ Երուսաղեմի կործանման մասին և վկայեց Մեսիայի միջոցով փրկության մասին, շատ մարդիկ ծաղրեցին նրան և ցանկացան սպանել նրան: Այնուամենայնիվ, Լեքին ուրախանում էր Տիրոջ գթությամբ և ազատելու զորությամբ: Մինչ ուսանողները սովորեն Լեքիի ծառայության մասին, նրանց հասկացողությունը այսօրվա մարգարեների վերաբերյալ կարող է աճել: Մինչ նրանք փնտրեն Աստծո գթության ապացույց իրենց կյանքում, նրանց հարաբերությունը Նրա հետ կխորանա:

***Սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրություն***

Դուք կարող եք օգնել ուսանողներին կատարել իրենց դերը ուսուցման գործընթացում՝ խրախուսելով նրանց ուսումնասիրել Մորմոնի Գիրքը ամեն օր: Տարվա ընթացքում աղոթքով մտածեք, թե ինչ ճանապարհով կարող եք օգնել նրանց զարգացնել ամեն օր սուրբ գրությունները կարդալու սովորություն: Ժամանակ առ ժամանակ դուք կարող եք կիսել ձեր վկայությունը Մորմոնի Գրքի ամենօրյա ուսումնասիրության օրհնությունների վերաբերյալ:

## Ուսուցանման առաջարկներ

### 1 Նեփի 1.1–3

*Նեփին սկսում է իր հիշատակարանը*

Հրավիրեք ուսանողներին լուռ կարդալ 1 Նեփի 1.1–3: Խնդրեք նրանց ներկայացնել, թե ինչու Նեփին գրեց իր հիշատակարանը:

- Ի՞նչ պատճառներ բերեց Նեփին իր հիշատակարանը կազմելու վերաբերյալ:
- Ձեր կարծիքով, ինչու՞ էր Նեփին զգում, որ նա «մեծապես հովանավորված [էր] Տիրոջ կողմից», չնայած որ նա ունենում էր «շատ չարչարանքներ»:

### 1 Նեփի 1.4–20

*Լեքին տեսիլք է տեսնում և նախազգուշացնում է ժողովրդին, որ Երուսաղեմը կործանվելու է*

Հրավիրեք ուսանողներին մտածել մի այնպիսի ժամանակի մասին, երբ նրանց ծնողները նախազգուշացրել են իրենց վտանգի մասին:

- Ինչու՞ են ձեր ծնողները նախազգուշացնում ձեզ վտանգի մասին:
- Ի՞նչ եղանակներով է Երկնային Հայրը նախազգուշացնում Իր զավակներին:

Բացատրեք, որ Մորմոնի Գրքի առաջին պատմությունը սկսվում է այն ժամանակ, երբ շատ մարդիկ Երուսաղեմում չար էին: Հրավիրեք մի ուսանողի կարդալ 1 Նեփի 1.4: Խնդրեք դասարանին փնտրել, թե ինչ եղանակով Տերը նախազգուշացրեց Երուսաղեմի մարդկանց:

Բացատրեք, որ Նեփիի հայրը՝ Լեքին, միացավ «շատ մարգարեներին», որոնք նշված են այս հատվածում: Նա նախազգուշացրեց մարդկանց, որ նրանք պետք է ապաշխարեն: Որպեսզի օգնեք ուսանողներին բացահայտել Լեքիի նախազգուշացումները և ուսուցանումները, ուսանողներին բաժանեք զույգերի և թող յուրաքանչյուր զույգը կարդա 1 Նեփի 1.5–13: Խնդրեք նրանց ներկայացնել, թե ինչ տեսավ Լեքին տեսիլքում՝ իրենց սուրբ գրություններում նշումներ կատարելով կամ թղթի վրա ցուցակ կազմելով: Զույգերին տվեք մի քանի րոպե, որպեսզի քննարկեն հետևյալ հարցը: (Դուք կարող եք հարցը գրել գրատախտակին:)

- Ինչպե՞ս դուք ձեզ կզգաք, եթե տեսիլքում տեսնեք, որ ձեր քաղաքը կործանվելու է:

Վարժությունից հետո հրավիրեք ուսանողներին լուռ ընթերցել 1 Նեփի 1.15՝ ուշադրություն դարձնելով Լեքիի զգացմունքներին այս տեսիլքից հետո:

- Ինչպե՞ս արձագանքեց Լեքին այն բաներին, որոնք տեսավ:

Հրավիրեք ուսանողներին բարձրաձայն կարդալ 1 Նեփի 1.14–15: Օգնեք դասարանին գտնել պատճառները, թե ինչու էր Լեքին ուրախանում: (Անհրաժեշտության դեպքում դուք պետք է բացատրեք, որ չնայած Լեքին իմացավ, որ Երուսաղեմը

կործանվելու էր, նա նաև տեսավ, որ նրանք, ովքեր վստահում էին Աստծուն, չեն կործանվի:)

- Ե՞րբ եք դուք կարողացել փառաբանել Աստծուն նույնիսկ ձեր կյանքի դժվարագույն պահերին:
- Որո՞նք են դժվար պահին Տիրոջ «բարությունը և ողորմությունը» հասկանալու որոշ օրինությունները:

Թող ուսանողներից մեկը բարձրաձայն կարդա հետևյալ հայտարարությունը.

«Ինչպես հին ժամանակների մարգարեները, այնպես էլ այսօրվա մարգարեները վկայում են Հիսուս Քրիստոսի մասին և ուսուցանում են Նրա ավետարանը: Նրանք հայտնի են դարձնում Աստծո կամքը և իրական էությունը: Նրանք խոսում են համարձակորեն և պարզ՝ դատապարտելով մեղքը և նախազգուշացնելով դրանց հետևանքների մասին: Երբեմն նրանք կարող են ոգեշնչվել, որ մարգարեական ապագա իրադարձությունների մասին մեր օգտի համար» (*True to the Faith: A Gospel Reference* [2004], 129):

Շեշտեք, որ Լեքին օրինակ է այն ճշմարտության, որ **մարգարեները նախազգուշացնում են մեղքի մասին և ուսուցանում են փրկություն Հիսուս Քրիստոսի միջոցով:** (Դուք կարող եք այս ճշմարտությունը գրել գրատախտակին:)

Հրավիրեք ուսանողներին կարդալ 1 Նեփի 1.19–20:

- Ի՞նչ էր ուսուցանում Լեքին:
- Ինչպե՞ս էին մարդիկ արձագանքում Լեքիի ուսմունքներին:
- Ինչու՞ են որոշ մարդիկ մեր օրերում մերժում Տիրոջ մարգարեների ուղերձները:
- Ե՞րբ եք դուք օրինվել կամ ձեզ պաշտպանված զգացել այն պատճառով, որ հետևել եք մարգարեին:

## 1 Նեփի 1.20

### *Նեփին վկայում է Տիրոջ գորովագութ ողորմությունների մասին*

Նշեք, որ 1 Նեփի 1.20-ի երկրորդ նախադասության մեջ Նեփին ընդհատում է իր պատմությունը, որպեսզի իր ուղերձով կիսվեր նրանց հետ, ովքեր կարդում են իր խոսքերը: Թող ուսանողները անձամբ կարդան 1 Նեփի 1.20, փնտրելով ուղերձը, որը Նեփին ուզում է, որ մենք տեսնենք: Անհրաժեշտության դեպքում ուղղեք նրանց ուշադրությունը այն արտահայտության վրա, որը Նեփին օգտագործում է ուղերձը ներկայացնելու համար («Ես՝ Նեփիս, ցույց կտամ ձեզ . . .»):

- Ինչպե՞ս կարող է այսպիսի արտահայտություններին ավելի շատ ուշադրություն դարձնելը օգնել ձեզ Մորմոնի Գրքի ձեր անձնական ուսումնասիրության ժամանակ:
- Ի՞նչ էր Նեփին ուզում մեզ ցույց տալ:

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ 1 Նեփի 1.20: Հրավիրեք մեկ այլ ուսանողի կարդալ Մորոնի 10.3: Խնդրեք ուսանողներին փնտրել նմանատիպ իմաստներ այս երկու հատվածներում:

- Ի՞նչ նմանատիպ գաղափարներ են Նեփին ու Մորոնին ցանկացել, որ նկատեն Մորմոնի Գրքի ընթերցողները:

Օգնեք ուսանողներին ներկայացնել այս սկզբունքը. **Տիրոջ գորովագութ ողորմությունները տարածվում են նրանց վրա, ովքեր հավատում են Նրան:** (Դուք կարող եք սկզբունքը գրել գրատախտակին:)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե որոնք են Տիրոջ գորովագութ ողորմությունները և ինչպես կարելի է ճանաչել դրանք կյանքում, կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ մտքով.

«Տիրոջ գորովագութ ողորմությունները շատ անձնական և առանձնահատուկ օրինություններ, ուժ, պաշտպանություն, հավաստիացումներ, առաջնորդություն, սիրալիրություն, մխիթարություն, աջակցություն և հոգևոր պարգևներ են, որոնք մենք ստանում ենք Տեր Հիսուս Քրիստոսից, Նրա շնորհիվ և Նրա միջոցով: . . .

. . . Տիրոջ գորովագութ ողորմությունները չեն հայտնվում պատահականորեն կամ պարզապես զուգադիպության արդյունքում: Հավատարմությունը և

***Փնտրեք գլխավոր արտահայտությունները***

Եղանակներից մեկը, որով կարող ենք օգնել ուսանողներին ավելի լավ փորձառություն ունենալ ամեն օր իրենց սուրբ գրությունները կարդալու հետ կապված այն է, որ սովորեցնենք նրանց փնտրել գլխավոր արտահայտությունները: Մորմոնի Գրքի հեղինակները հաճախ օգտագործել են գլխավոր արտահայտություններ, որպեսզի շեշտեն դասերը, որոնք նրանք փորձել են տալ, կամ ամփոփել սկզբունքները, որոնք նրանք ուսուցանել են, ինչպես օրինակ՝ «Ես ցույց կտամ ձեզ», «Այսպիսով մենք տեսնում ենք» և «Ես խոսում եմ ձեզ հետ»: Խրախուսեք ուսանողներին ուշադրություն դարձնել դասերին, որտեղ կան նման արտահայտություններ:

հնազանդությունը մեզ հնարավորություն են տալիս ստանալ այս կարևոր պարգևները, և հաճախ Տերը ճիշտ ժամանակին օգնում է մեզ տեսնել դրանք։

Մենք չպետք է թերագնահատենք կամ անտեսենք Տիրոջ գորովագութ ողորմությունների զորությունը» («Տիրոջ գորովագութ ողորմությունները», *Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2005, 99–100)։

- Ինչպե՞ս էր Երեց Բեդնարը բացատրում «Տիրոջ գորովագութ ողորմություններ» արտահայտությունը։
- Տիրոջ գորովագութ ողորմությունների ի՞նչ օրինակներ եք դուք տեսել, որ ուղղված լինեն ձեզ կամ մեկին, ում դուք գիտեք։

Այս հարցին պատասխանելու համար ուսանողներին բավականաչափ ժամանակ տալուց հետո հրավիրեք նրանց մտածել, թե ինչպես կարող են նրանք իրենց կյանքում ավելի լավ գնահատել Տիրոջ գորովագութ ողորմությունները։ Խրախուսեք նրանց ավելի մեծ ուշադրություն դարձնել գորովագութ ողորմություններին, որոնք Տերը տալիս է իրենց։ Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք գրի առնեն գորովագութ ողորմությունների փորձառությունները իրենց անձնական օրագրերում։ Նրանց ժամանակ տվեք, որ իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրում կամ դասարանային նոթատետրերում գրեն մեկ կամ երկու եղանակներ, որոնցով Տերը վերջերս ուղղել է իրենց Իր գորովագութ ողորմությունները։

Վերջում կրկնեք Տիրոջ գորովագութ ողորմությունների վերաբերյալ 1 Նեփի 1.20-ում Նեփիի վկայությունը։ Կիսվեք ձեր վկայությամբ Տիրոջ առանձնահատուկ օրհնությունների ու հոգատարության վերաբերյալ։ Խրախուսեք ուսանողներին փնտրել Տիրոջ գորովագութ ողորմությունների օրինակներ իրենց կյանքում և Մորմոնի Գրքում։

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 1 Նեփի 1.2: «Եգիպտացիների լեզու»

Նեփին ասաց, որ նա իր հիշատակարանը գրել էր «Եգիպտաղիների լեզվով» (1 Նեփի 1.2)։ Մոտավորապես 470 տարի անց Բենիամին թագավորը սովորեցնում է իր զավակներին «Եգիպտացիների լեզուն» (Մոսիա 1.1–4)։ «Փոխված եգիպտերեն» տերմինը հայտնվում է Մորմոն 9.32։ Մորոնին նշել է, որ մինչ իր օրերը՝ Լեքիի և Նեփիի ժամանակներից մոտավորապես 1000 տարի անց, մարդիկ վերափոխել էին այն եգիպտերենը և եբրայերենը, որը օգտագործել էին Լեքին և Նեփին։

### 1 Նեփի 1.4: «Շատ մարգարեներ»

Նեփին ասել է, որ «շատ մարգարեներ» եկան Երուսաղեմի մարդկանց մեջ։ Մենք գիտենք, որ Երեմիան, Աբդիան, Նաումը, Ամբակումը և Սոփանիան բոլորն էլ եղել են նույն ժամանակաշրջանում ապրող մարգարեներ, ովքեր վկայում էին Հուդայի թագավորությունում։ Երեմիա ԼԵ.15 պարունակում է նմանատիպ մեկնաբանություն այն բանի վերաբերյալ, որ Տերը բազմաթիվ մարգարեներ առաջ ուղարկեց, որ նախազգուշացնեին ժողովրդին (տես նաև Բ Մնացորդաց ԼԶ.15–16)։

Երեմիան զորեղ մարգարե էր Լեքիի ու Նեփիի օրերում և նշվում է 1 Նեփի 5.13 և 7.14-ում։ Նա ծառայել է հրեաներին սկսած մ.թ.ա. 626 -ից մինչև 586 -ը։ Ի տարբերություն Լեքիի, Երեմիան մնաց Երուսաղեմում և շարունակեց ժողովրդին ապաշխարության կանչել (տես Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Երեմիա»)։ Լեքիի Երուսաղեմը թողնելուց հետո Երեմիան բանտ էր գցվել։ Բանտում եղած ժամանակ նա գրել է «Ողբերը» գիրքը, որտեղ նա ողբացել է Երուսաղեմի կործանումը և այն փաստը, որ մարդիկ չէին ապաշխարում։

## Ուսուցանման լրացուցիչ գաղափարներ

### 1 Նեփի 1.2–3, 20: Գրի առնել մեր կյանքի գորովագութ ողորմությունները

- Ի՞նչ կարևորություն ունի ձեր փորձառությունները օրագրում գրի առնելը:

Նեփին վկայում է իր կյանքում Տիրոջ գորովագութ ողորմությունների վերաբերյալ: Նա ուսուցանել է, որ բոլոր նրանք, ովքեր հավատք ունեն առ Հիսուս Քրիստոս, կարող են նման օրհնությունների փորձառություն ունենալ: Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգը նկարագրել է մի ժամանակահատված, երբ նա հուշում է ստացել գրի առնել իր ընտանիքի հանդեպ Աստծո բարության արտահայտումները.

«Ես Եկեղեցու հանձնարարությունից ուշ տուն վերադարձա: Արդեն մութ էր: Աներս, որ մեր հրևանությամբ էր ապրում, զարմացրեց ինձ, երբ ես մեր տան դռանն էի մոտենում: Նա մի քանի խողովակ ուսին արագ քայլում էր, և աշխատանքային շորերով էր: Ես գիտեի, որ նա պոմպ էր պատրաստում, որով պետք է ջուրը բարձրանար ներքևից հոսող գետից դեպի մեր շինությունը:

Նա ժպտաց, մեղմորեն խոսեց և արագ անցավ կողքովս՝ մթության մեջ՝ շարունակելու իր գործը: Ես մի քանի քայլ արեցի դեպի տուն, մտածելով, թե ինչ է անում նա մեզ համար և դռանը հասնելով, մտքումս, ոչ իմ ձայնով, լսեցի այս խոսքերը. «Ես այս փորձառությունները չեմ տալիս միայն քեզ համար: Գրի առ դրանք»:

Ես ներս մտա: Ես չգնացի քնելու: Թեպետ հոգնած էի, ես վերցրեցի թուղթ և սկսեցի գրել: Եվ այդ ընթացքում ես հասկացա իմ մտքում հնչած խոսքերը: Ես պետք է գրառումներ անեի իմ երեխաների համար, որ նրանք հետագայում մի օր կարդային, թե ինչպես եմ տեսել Աստծո ձեռքը՝ մեր ընտանիքն օրհնելիս: . . .

Մի քանի տարի ես ամեն օր մի քանի տող գրում էի: Ես ոչ մի օր բաց չեմ թողել, անկախ նրանից, թե որքան հոգնած եմ եղել կամ որքան վաղ պետք է արթնանայի հաջորդ օրը: Նախքան գրելը ես մտածում էի՝ «Արդյո՞ք տեսել եմ Աստծո ձեռքը մեկնված դիպչելու մեզ կամ մեր երեխաներին կամ մեր ընտանիքին այսօր»: Շարունակելով դա, ինչ-որ բան սկսեց պատահել: Երբ ետ էի նայում այդ օրվան, տեսնում էի, թե ինչ էր Աստված արել մեզանից որևէ մեկի համար, ինչը չէի նկատել օրվա զբաղված պահերին» («Օ~, հիշիր, հիշիր», *Ensign* կամ *Լիահոնա*, նոյեմբեր 2007, 66–67):

### 1 Նեփի 1.4–20: Զուգահեռներ Լեքիի և Ջոզեֆ Սմիթի միջև

Հրավիրեք ուսանողներին կարդալ 1 Նեփի 1.4–20, հատուկ ուշադրություն դարձնելով Լեքիի կյանքի այս ժամանակահատվածի կարևոր իրադարձություններին: Այնուհետև խնդրեք նրանց վերանայել Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.1–35, հատուկ ուշադրություն դարձնելով Մարգարե Ջոզեֆ Սմիթի կյանքի կարևոր իրադարձություններին: Խնդրեք ուսանողներին զուգահեռներ գտնել Լեքիի կյանքի և Ջոզեֆ Սմիթի կյանքի միջև: (Կարող են տրվել հետևյալ պատասխանները, որ երկուսն էլ Աստծուն էին փնտրում անկեղծ աղոթքի միջոցով, տեսան Հորը և Որդուն, պատմեցին ուրիշներին իրենց տեսիլքների մասին, մերժվեցին շատ մարդկանց կողմից, իրենց կյանքերը վտանգի տակ դրեցին, պահանջվեց, որ նոր վայրեր տեղափոխվեն և Աստծուն վեր դասեցին աշխարհիկ ունեցվածքից և աշխարհի փառքից:)

ԴԱՍ 7

# 1 Նեփի 2

## Նախաբան

1 Նեփի 2 ցույց է տալիս Տիրոջ պատվիրանների հանդեպ տարբեր արձագանքներ: Լեքին հնազանդվում է Տիրոջ պատվիրանին և իր ժողովրդին առաջնորդում է դեպի անապատ: Այս պատվիրանի հետ կապված դժվարության հանդիպելիս Լամանը և Լեմուելը ընդդիմանում են: Ի հակադրություն դրա, Նեփին փնտրում է հաստատող վկայություն:

## Ուսուցանման առաջարկներ

### 1 Նեփի 2.1–7

*Աստված պատվիրում է Լեքիին հեռանալ անապատ*

Խնդրեք ուսանողներին պատկերացնել, որ իրենց ծնողները ասել են իրենց, որ նրանց ընտանիքները վաղը պետք է հեռանան իրենց տներից, թողնելով գրեթե ողջ իրենց ունեցվածքը: Նրանք քայլելու են անապատով, վերցնելով միայն այն պաշարները, որոնք նրանց անհրաժեշտ են կենդանի մնալու համար:

- Ինչպե՞ս կարող եք դուք արձագանքել:
- Ինչպե՞ս կփոխվեր ձեր պատասխանը, եթե դուք իմանայիք, որ անապատ տեղափոխվելու պատվիրանը գալիս էր Տիրոջ կողմից:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 2.1–6: Խնդրեք դասարանին գտնել պատճառները, թե ինչու Լեքին առաջնորդեց իր ընտանիքին դեպի անապատ:

- Ի՞նչ պատվիրան ստացավ Լեքին Տիրոջից: (Տես 1 Նեփի 2.2:)
- Ի՞նչ կարող եք դուք սովորել Լեքիի որոշումներից, թե ինչ պետք է վերցնել և ինչ թողնել:

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 2.7:

- Լեքին գոհություն է հայտնում Տիրոջը իր տունն ու ունեցվածքը թողնելուց անմիջապես հետո: Ի՞նչ ենք մենք սովորում դրանից:
- Ինչի՞ համար էր Լեքին գոհություն հայտնում:

Գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունը. *Եթե մենք հավատարիմ լինենք և հնազանդ, Տերը կօգնի մեզ փորձության պահերին:*

- Ե՞րբ եք դուք զգացել Տիրոջ օգնությունը փորձության պահին: (Խրախուսեք ուսանողներին այս հարցին պատասխանելիս փնտրել Հոգու առաջնորդությունը: Օգնեք նրանց հասկանալ, որ կարիք չկա, որ նրանք կիսվեն խիստ անձնական կամ գաղտնի փորձառություններով:)

### 1 Նեփի 2.8–15

*Լամանը և Լեմուելը տրտնջում են իրենց Հոր դեմ*

Խնդրեք ուսանողներին լուռ խորհել այն հարցի շուրջ, թե արդյոք նրանք երբևէ տրտնջացել են, լինի դա բարձրաձայն, թե՝ լուռ, Տիրոջ պատվիրանի առնչությամբ կամ ծնողի կամ Եկեղեցու ղեկավարի խնդրանքի առնչությամբ: Նրանց ժամանակ տվեք իրենց փորձառություններին անդրադառնալու համար:

- Ինչու՞ ենք մենք երբեմն տրտնջում, երբ մեզ ուղղություն է տրվում:

Գրատախտակին գրեք *Գետ* և *Հովիտ*: Ուսանողներին հրավիրեք բարձրաձայն կարդալ 1 Նեփի 2.8–10:

- Լեքին ինչո՞վ էր ուզում, որ Լամանը նման լիներ գետի: Ինչո՞վ էր նա ուզում, որ Լեմուելը նման լիներ հովտի: (Դուք կարող եք խնդրել ուսանողներին իրենց պատասխանները գրել գրատախտակին *Գետ* և *Հովիտ* բառերի կողքին:)

- Ի՞նչ էր Լեքին փորձում սովորեցնել Լամանին և Լեմուելին:

Թող ուսանողները լուռ կարդան 1 Նեփի 2.11–14:

- Որո՞նք են որոշ պատճառները, ինչի համար Լամանը և Լեմուելը տրտնջացին իրենց Հոր դեմ:
- 1 Նեփի 2.11-ում *խստապարանոց* բառը վերաբերվում է հպարտությանը կամ համառությանը: Ինչո՞ւ են հպարտության զգացումները երբեմն մարդկանց ստիպում տրտնջալ:
- Ձեր կարծիքով, ինչու՞ է տրտնջալը երբեմն կապված նրա հետ, որ մարդիկ չեն հասկանում Աստծո գործերը:

Բացատրեք, որ պատճառներից մեկը, որ Սատանան ուզում է մենք տրտնջանք, այն է, որ այն խոչընդոտ է հանդիսանում մեզ համար, որ մենք հետևենք ապրող մարգարեներին, ոգեշնչված մյուս ղեկավարներին և ծնողներին: Որպես ձեր զրույցի մաս դուք կարող եք կիսվել Յոթանասունից Երեց Հ. Ռոս Վորքմենի խոսքերի վրա հիմնված հետևյալ մտքով.

«Տրտնջալը բաղկացած է երեք քայլից, որոնցից յուրաքանչյուրը առաջնորդում է անհնազանդության դեպի վար տանող արահետի հաջորդ քայլին»: Առաջինը, մարդիկ սկսում են կասկածել: Նրանք կասկածում են «առաջինը իրենց իսկ մտքում», և հետո նրանք կասկածներ են սերմանում «ուրիշների մտքերում»: Երկրորդը, նրանք, ովքեր տրտնջում են, սկսում են «պատճառաբանել և իրենք իրենց ազատել պարտականությունից անելու այն, ինչ իրենց հրահանգված է անել: . . . Այսպիսով, նրանք պատճառներ են գտնում չհնազանդվելու համար»: Նրանց պատճառաբանությունները տանում են դեպի երրորդ քայլը. «Ուսուցչի պատվիրաններին հետևելիս դրանք հարմարեցնում են իրենց: . . .

Ես հրավիրում եմ ձեզ կենտրոնանալ ապրող մարգարեների այն պատվիրանի վրա, որը ձեզ ամենաշատն է անհանգստացնում: Դուք կասկած ունե՞ք այն բանի հետ կապված, թե արդյոք պատվիրանը կիրառելի է ձեր համար, թե ոչ: Դուք գտնո՞ւմ եք պատրաստի պատճառներ, թե ինչու չեք կարող այժմ ենթարկվել պատվիրանին: Դուք զգու՞մ եք զայրույթ կամ ձեզ ցավ են պատճառում նրանք, ովքեր ձեզ հիշեցնում են պատվիրանի մասին: Այն պահելիս դուք հարմարեցնու՞մ եք ձեզ: Զգուշացեք հակառակորդի ստերից: Զգուշացեք տրտնջալուց» (“Beware of Murmuring,” *Ensign,* Nov. 2001, 85–86):

Հրավիրեք ուսանողներին պատասխանել հետևյալ հարցին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրում կամ դասարանի նոթատետրում.

- Ի՞նչ կարող եք դուք անել, երբ գտնում եք ինքներդ ձեզ Տիրոջ մարգարեների և պատվիրանների դեմ տրտնջալիս:

## 1 Նեփի 2.16–19

### *Նեփին հասկացողություն է փնտրում Տիրոջից*

Թող ուսանողները լուռ կարդան և խորհեն 1 Նեփի 2.16, 19:

- Ինչպե՞ս Նեփին արձագանքեց իր հոր ուղերձին:
- Ե՞րբ եք դուք կանչել առ Աստված և զգացել, որ ձեր սիրտը փափկել է:

Ուսանողներին հնարավորություն տվեք պատմելու այն պահերի մասին, երբ Տերը փափկացրել է նրանց սրտերը (սակայն հիշեցրեք նրանց, որ նրանք չպետք է իրենց պարտավորված զգան կիսվելու փորձառություններով, որոնք չափից ավելի անձնական են կամ գաղտնի): Բացի դրանից, դուք կարող եք պատմել այն պահերի մասին, երբ Տերը փափկացրել է ձեր սիրտը: Հավաստիացրեք ուսանողներին, որ **երբ մենք կանչում ենք առ Աստված, Նա կարող է փափկացնել մեր սրտերը, որ հավատանք Նրա խոսքերին:**

Բարձրաձայն կարդացեք 1 Նեփի 2.19: Թող ուսանողները իրենց սեփական բառերով բացատրեն «ջանասիրաբար» և «սրտի խոնարհությամբ» տերմինների իմաստը: Խրախուսեք նրանց փնտրել Տիրոջը ինչպես Նեփին :

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 2.17–18:

- Ի՞նչ սկզբունքներ մենք կարող ենք սովորելՆեփիի, Սամի, Լամանի և Լեմուելի տարբեր պատասխաններից:

***Հարցեր, որ ոգեշնչում են հրավիրում***

Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգը ուսուցանել է, որ որոշ հարցեր ոգեշնչում են հրավիրում: Նա խորհուրդ է տվել ուսուցիչներին տալ հարցեր, «որոնք անհատներին կիրավիրեն իրենց հիշողության մեջ զգացմունքներ փնտրել»: Հարցեր տալ, որոնք ուսանողներին թույլ կտան անդրադառնալ անցյալում ունեցած իրենց փորձառություններին՝ պարզապես տեղեկություններ տալու փոխարեն, և որոնք կարող են նախապատրաստել նրանց Հոգով ուսուցանվելու համար: Նախագահ Այրինգն ասել է. «Իմաստորեն սպասեք մի որպե նախքան որևէ մեկին կիրավիրեք պատասխանել: Նույնիսկ նրանք, ովքեր չեն խոսում, կմտածեն հոգևոր փորձառությունների մասին: Դա կիրավիրի Սուրբ Հոգին» (“The Lord Will Multiply the Harvest” [address to CES religious educators, Feb. 6, 1998], 6, si.lds.org):

- Ե՞րբ են ընտանիքի անդամի կամ ընկերոջ խոսքերը ամրացրել ձեր հավատքը այնպես, ինչպես Նեփիի խոսքերը ամրացրեցին Սամի հավատքը:

## 1 Նեփի 2.20–24

### *Նրանք, ովքեր պահում են պատվիրանները, կբարգավաճեն*

Թող ուսանողները կարդան 1 Նեփի 2.20–21: Հրավիրեք նրանց ներկայացնել կամ նշել խոստումը, որ «որքան որ դուք կպահեք իմ պատվիրանները, դուք կբարգավաճեք»: Բացատրեք, որ մինչ նրանք ուսումնասիրեն Մորմոնի Գիրքը, նրանք կկարդան շատ օրինակներ, որտեղ այս խոստումը իրականանում է:

Խորհեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրյուս Ռ. Մակքոնքիի հետևյալ ուղերձով կիսվելու մասին.

«Հնազանդությունը երկնքի առաջին օրենքն է: Ողջ զարգացումը, ողջ կատարելությունը, ողջ փրկությունը, ողջ աստվածայնությունը, այն ամենը, ինչ ազնիվ է, արդար ու ճիշտ, բոլոր լավ բաները հասանելի են նրանց, ովքեր ապրում են Նրա օրենքներով, ով Հավերժ է: Ողջ հավերժության մեջ չկա ավելի կարևոր բան, քան Աստծո պատվիրանները պահելը» (*The Promised Messiah: The First Coming of Christ* [1978], 126):

Կիսվեք ձեր վկայությամբ, որ **Աստված օրհնում է նրանց, ովքեր հնազանդ են և հավատարիմ:** Ինչպես Նեփիին, ուսանողները կարող են Տիրոջից ուղղություն ստանալու վստահություն զարգացնել: Խրախուսեք նրանց ձգտել դառնալ ավելի հնազանդ և հետևել Սուրբ Հոգու կողմից ստացած առաջնորդությանը:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 1 Նեփի 2.2–6: Հնարավոր ուղին, որով գնաց Լեքիի ընտանիքը

Միգուցե Լեքին իր ընտանիքին առաջնորդել էր դեպի Կարմիր ծով, Ագաբայի ծոցի մոտակայքը, Երուսաղեմից մոտավորապես 180 մղոն (290 կիլոմետր) հեռավորության վրա: Սա պահանջում էր ճամփորդել շոգ ու անբերրի երկրի միջով, որը հայտնի էր ավազակներով, ովքեր սպասում էին, որ կողոպտեին անպատրաստ ճամփորդներին: Կարմիր ծովին հասնելուց հետո ընտանիքը ճամփորդեց ևս երեք օր, մինչև հասավ գետի հովտին: Երուսաղեմից մինչև գետահովիտ ճամփորդությունը միգուցե տևել էր 14 օր: Դուք կարող եք հիշեցնել ուսանողներին այս հեռավորությունների և ժամանակների մասին, երբ նրանք կարդան Նեփիի և նրա եղբայրների Երուսաղեմ ետ վերադառնալու ճամփորդության մասին:

### 1 Նեփի 2.7: Երախտագիտություն ցուցաբերել Տիրոջ հանդեպ

Լեքիի երախտագիտությունը Տիրոջ առաջնորդության և պաշտպանության համար ներկայացված է 1 Նեփի 2.7-ում. «Նա կառուցեց մի զոհասեղան քարերից, և ընծա մատուցեց Տիրոջը, և գոհություն հայտնեց Տիրոջը՝ մեր Աստծուն»: Սա Մորմոնի Գրքի բազմաթիվ դեպքերից առաջինն է, երբ Քրիստոսի հավատարիմ հետևորդները մատուցում էին զոհեր և ողջակեզներ՝ Աստծուն իրենց երախտագիտությունը հայտնելու համար (տես, օրինակ 1 Նեփի 7.22, Մոսիա 2.3–4): Երախտագիտության անկեղծ արտահայտումը և հնազանդությունը առ Երկնային Հայրը անհրաժեշտ են Իր բոլոր զավակներին, եթե նրանք ցանկանում են հաճելի լինել Նրան (տես ՎԱՈՒ 59.21):

## Ուսուցանման լրացուցիչ գաղափարներ

### 1 Նեփի 2.1–3, 16–19: Փափուկ սրտեր և հայտնություն

Հիշեցրեք ուսանողներին, որ 1 Նեփի 1-ում Նեփին նկարագրում է հայտնությունը, որը Լեքին ստացել էր, մինչ «ուժասպառ էր եղել Հոգուց» (1 Նեփի 1.7): Այդ հայտնության մեջ Լեքին կարդում է հայտնություններ պարունակող գրքից և «լցվում Հոգով» (1 Նեփի 1.12): 1 Նեփի 2 հայտնության թեման շարունակվում է, մինչ Նեփին պատմում է, թե ինչպես է երազում իր հայրը նախազգուշացում ստանում Տիրոջից (տես 1 Նեփի 2.1–3): Նեփին նաև պատմում է իր սեփական փորձառությունը հայտնություն ստանալու և Տիրոջ ձայնին հետևելու վերաբերյալ:

Ցուցադրեք երկու առարկաներ, մեկը փափուկ և կլանող (ինչպես օրինակ կտոր կամ սպունգ) և մյուսը կարծր (ինչպես օրինակ՝ քար): Այնուհետև խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 2.16–19:

- Ինչո՞վ էին Լեքիի, Նեփիի և Սամի սրտերը նման այս փափուկ առարկային:
- Ինչո՞վ էին Լամանի և Լեմուելի սրտերը նման այս կարծր առարկային:
- Ինչպե՞ս է մեր սրտերի հոգևոր վիճակը ազդում հայտնություն ստանալու մեր կարողության վրա:

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ **Տերը տալիս է մեզ գիտելիք, երբ մենք ջանասիրաբար փնտրում ենք Նրան:** Որպես այս քննարկման մի մաս դուք կարող եք ուսանողներին բաժանել զույգերի և խնդրել նրանց ամբողջությամբ կարդալ Սուրբ Գրքերի Ուղեցույցի «Հայտնություն» բաժինը:

- Ի՞նչ կարող ենք մենք անել, որպեսզի պատրաստենք ինքներս մեզ Տիրոջից հայտնություն ստանալու համար:

ԴԱՍ 8

# 1 Նեփի 3–4

## Նախաբան

Տերը պատվիրեց Լեքիին հետ ուղարկել իր որդիներին Երուսաղեմ, որպեսզի Լաբանից ձեռք բերեին արույրե թիթեղները: Լամանը և Լեմուելը չէին պատկերացնում, թե ինչպես կարող էին նրանք կատարել այդ պատվիրանը, սակայն Նեփին հավատում էր, որ Տերը ճանապարհ կպատրաստեր նրանց համար, որպեսզի նրանք իրականացնեն այն, ինչ Նա պահանջում էր: Չնայած, որ անընդհատ բախվում էր դժվարությունների, Նեփին հավատարմորեն շարունակում էր անել այն, ինչ Տերը ուզում էր, որ նա աներ: Դրա արդյունքում նա առաջնորդվեց Սուրբ Հոգով և հաջողությամբ ձեռք բերեց թիթեղները:

## Ուսուցանման առաջարկներ

### 1 Նեփի 3.1–9, 19–20

*Լեքիի որդիները վերադառնում են Երուսաղեմ արույրե թիթեղները ձեռք բերելու համար*

Հետևյալ նախադասությունները գրեք գրատախտակին նախքան դասի սկսվելը: Խնդրեք ուսանողներին ընտրել այն նախադասությունը, որը լավագույնս նկարագրում է, թե ըստ իրենց, ինչպես է Տերը օգնում մեզ, երբ Նա պատվիրում է մեզ անել դժվար բաներ:

*Երբ դուք աշխատում եք կատարել մի պատվիրան կամ դժվար առաջադրանք, որը տրված է Տիրոջ կողմից, Նա.*

*ա. Կփոխի պատվիրանը, որպեսզի այն հեշտ ու հասարակ լինի ձեզ համար, որ կատարեք:*

*բ. Կօրհնի ձեր ջանքերը՝ պատրաստելով ճանապարհ, որ դուք կատարեք պատվիրանը, չնայած որ այն կարող է շարունակել դժվար լինել:*

*գ. Կմիջամտի և կանի ողջ աշխատանքը ձեր փոխարեն:*

*դ. Կպահանջի, որ դուք ամբողջությամբ այն անեք ինքնուրույն՝ առանց որևէ օգնության:*

Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց ընտրած պատասխանով և պատճառաբանել, թե ինչու են դա ընտրել:

Բացատրեք, որ կան շատ ճանապարհներ, որոնցով Տերը կարող է օրհնել նրանց, ովքեր ձգտում են կատարել Իր պատվիրանները: Երբ ուսանողները ուսումնասիրեն 1 Նեփի 3–4 Նեփիի արձանագրությունները, հրավիրեք նրանց փնտրել այս սկզբունքի օրինակներ: Նաև քաջալերեք ուսանողներին նշել, թե ինչպես Նեփին ու նրա եղբայրները տարբեր ձևով արձագանքեցին դժվարություններին:

Խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 1 Նեփի 3.1–9: Դասարանին հրավիրեք լսել և գտնել պատճառները, թե ինչու էր Նեփին կամենում անել այն, ինչ խնդրում էր նրա հայրը:

Լամանը և Լեմուելը զգացին, որ արույրե թիթեղների համար Երուսաղեմ վերադառնալը, «ինչ պահանջում է նրանցից [Լեքին], դժվար բան է» (1 Նեփի 3.5): Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ որոշ պատճառները, թե ինչու էին Լամանը և Լեմուելը այդպես զգում, դուք կարող եք նրանց հիշեցնել, որ նրանք արդեն իսկ երկար ճանապարհ էին անցել Երուսաղեմից:

- Ձեր կարծիքով, ինչու՞ էր Նեփին պատրաստ առանց տրտնջալու անել այն, ինչ իր հայրը պատվիրում էր:

Հրավիրեք ուսանողներին ներկայացնել 1 Նեփի 3.7 հատվածի սկզբունքը «եթե-ապա» նախադասության տեսքով: Օրինակ, ուսանողները կարող են ասել, որ, **եթե մենք փնտրենք անել այն, ինչ Տերն է պատվիրում, ապա Նա ճանապարհ կպատրաստի մեզ համար, որ մենք կատարենք դա:** Նշեք, որ 1 Նեփի 3.7-ը

**1 Նեփի 3.7**-ը սերտելու համար նախատեսված սուրբ գրության հատված է: Անդրադարձեք այս դասի վերջում տրված սուրբ գրություն սերտելու ուսուցանման գաղափարին, որպեսզի օգնեք ուսանողներին սերտել այս հատվածը:

սերտելու համար նախատեսված սուրբ գրություն է: Բացատրեք, որ ուսանողները տարվա ընթացքում պետք է կենտրոնանան սերտելու համար նախատեսված 25 սուրբ գրությունների հատվածների վրա (լրացուցիչ տեղեկությունների համար տես այս ձեռնարկի ցուցիչը): Սերտելու համար նախատեսված 25 սուրբ գրությունների հատվածները նշված են սեմինարիայի էջանշանի հակառակ կողմում: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին այնպես նշել սերտելու համար նախատեսված սուրբ գրությունների հատվածները, որ նրանք կարողանան հեշտությամբ գտնել հատվածների տեղը:

- Ե՞րբ եք դուք զգացել, որ Տերը «ուղի է պատրաստել» ձեր համար Իր պատվիրաններից մեկը պահելու համար:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 3.3, 19–20: Խնդրեք դասարանին ուշադրություն դարձնել այն արտահայտությունների վրա, որոնք ասում են, թե ինչու էին արույրե թիթեղները այդքան արժեքավոր Լեքիի ընտանիքի և նրանց սերունդների համար: (Դուք կարող եք ուսանողներին խորհուրդ տալ, որ իրենց սուրբ գրություններում նշեն այս արտահայտությունները:) Այն բանից հետո, երբ ուսանողները կկիսվեն նրանով, ինչ իրենք գտել են, բացատրեք, որ արույրե թիթեղները արժեքավոր հնադարյան սուրբ գրություններ էին, որոնք պարունակում էին Հին Կտակարանի նույն գրություններից ու տեղեկություններից շատերը:

- Ձեր կարծիքով, ինչու՞ էր արույրե թիթեղների բովանդակությունն այնքան կարևոր, որ այն ձեռք բերելու համար Նեփին ու նրա եղբայրները պետք է վերադառնային Երուսաղեմ:
- Ի՞նչ են պարունակում սուրբ գրություններն այսօր, որ արժեքավոր է ձեր համար: Ինչու՞ է այն արժեքավոր ձեր համար:

## 1 Նեփի 3.10–31

### *Լաբանը գողանում է Լեքիի ունեցվածքը և փորձում է սպանել Նեփիին ու նրա եղբայրներին*

Հրավիրեք դասարանի կեսին ուսումնասիրել արույրե թիթեղները ձեռք բերելու Նեփիի և նրա եղբայրների առաջին փորձը (տես 1 Նեփի 3.10–18): Հրավիրեք մյուս կեսին ուսումնասիրել երկրորդ փորձը (տես 1 Նեփի 3.21–31): Թող յուրաքանչյուր ուսանող ինքնուրույն աշխատի և պատասխանի հետևյալ հարցերին: Դուք կարող եք նրանց հանձնարարել, որ ավարտեն այս հանձնարարությունը իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային նոթատետրերում: Հարցերը գրեք գրատախտակին կամ յուրաքանչյուր ուսանողի համար պատրաստեք առանձին թերթիկներ այդ հարցերով:

1. Ովքե՞ր գնացին:
2. Ի՞նչ արեցին նրանք:
3. Ի՞նչ նրանք արեցին, երբ փորձը ձախողվեց:
4. Առաջին փորձը ուսումնասիրողների համար. Նեփին ու իր եղբայրները սկսեցին «չափազանց վշտանալ» այն բանից հետո, երբ նրանց չհաջողվեց ձեռք բերել արույրե թիթեղները (տես 1 Նեփի 3.14): Ինչպե՞ս էր Նեփիի արձագանքը այս ձախողմանը տարբեր իր եղբայրների արձագանքից: (Տես 1 Նեփի 3.15–16:)

   Երկրորդ փորձը ուսումնասիրողների համար. Լամանը և Լեմուելը բարկացած էին Նեփիի վրա այն բանից հետո, երբ նրանց երկրորդ փորձը ձախողվեց: Նրանք ծեծեցին նրան և կոպիտ խոսքեր ասացին նրան: Նույնիսկ այն բանից հետո, երբ հրեշտակը խոստացավ նրանց, որ Տերը Լաբանին կհանձներ նրանց ձեռքը, նրանք շարունակեցին տրտնջալ և կասկածել, որ կկարողանային հաջողության հասնել: Ինչպե՞ս կարող էր Լամանի և Լեմուելի բարկությունը ազդել հրեշտակի խոստումին հավատալու նրանց կարողության վրա: Ինչպե՞ս են բարկությունը, վիճաբանությունը, տրտնջալը և անհավատությունը խոչընդոտ հանդիսանում մեզ համար՝ Աստծո ուղերձները հասկանալու հարցում: (Տես 1 Նեփի 3.28–31, 3 Նեփի 11.29:)
5. Ի՞նչ տպավորություններ դուք ստացաք ձեր ուսումնասիրած հատվածներից:

Պատասխանելու համար ուսանողներին բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք մի քանիսին կիսվել իրենց պատասխաններով:

## 1 Նեփի 4.1–38

### *Նեփին ձեռք է բերում արույրե թիթեղները*

Խնդրեք ուսանողներին ներկայացնել հարցերը, որոնք Լամանը և Լեմուելը տվեցին 1 Նեփի 3.31 հատվածում:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 4.1–3: Խնդրեք դասարանին ուշադրություն դարձնել, թե Նեփին ինչպես է պատասխանում իր եղբայրների հարցերին:

- Ի՞նչ առնչություն ուներ Մովսեսի պատմությունը Լամանի և Լեմուելի հարցերի հետ:

Եթե ուսանողներին օգնություն է անհրաժեշտ այս հարցին պատասխանելու համար, բացատրեք, որ Մովսեսը հանդիպեց նմանատիպ դժվարությունների, երբ նրան պատվիրվեց Եգիպտոսից դուրս բերել Իսրայելի զավակներին: Չնայած Մովսեսը շարունակ փորձում էր, նա չէր կարողանում համոզել Փարավոնին ազատել ժողովրդին ստրկությունից: Այնուամենայնիվ, Մովսեսը շարունակում էր անել այն, ինչ Տերը պատվիրել էր նրան, և Տերը ճանապարհ պատրաստեց նրա համար, որ ազատեր Իսրայելի զավակներին: Նեփին կիրառեց Մովսեսի օրինակը իր ընտանիքի պայմաններում: Նա վստահ էր, որ Աստված նաև ճանապարհ կպատրաստեր նրանց համար:

- Ի՞նչ սկզբունք եք դուք սովորել իր եղբայրներին տված Նեփիի պատասխանից:

Չնայած ուսանողները կարող են մի փոքր այլ կերպ ձևակերպել իրենց պատասխանները, նրանք պետք է արտահայտեն, որ **եթե մենք հավատարմորեն շարունակենք անել այն, ինչ Տերն է պահանջում, չնայած դժվարություններին, Նա ճանապարհ կպատրաստի մեր համար, որ կատարենք այն, ինչ Նա պատվիրում է:** (Դուք կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակի վրա:)

Անդրադարձեք այն նախադասություններին, որոնք դուք գրել էիք գրատախտակին դասի սկզբում:

- Այժմ, երբ դուք ուսումնասիրել եք Նեփիի օրինակը, ո՞ր նախադասությունն է ձեր կարծիքով ամենալավը ամփոփում այն սկզբունքը, որը դուք նոր ներկայացրեցիք:

Մինչ ուսանողները ուսումնասիրեն Նեփիի հիշատակարանի մնացած մասը, խրախուսեք նրանց փնտրել այս սկզբունքի հաստատումը Նեփիի հաստատակամության արդյունքներում:

Թող մի ուսանող բարձրաձայն կարդա 1 Նեփի 4.4–6: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները նշեն 1 Նեփի 4.6 իրենց սուրբ գրություններում:

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ Տերը կարող է ոգեշնչել մեզ անել մի բան առանց անմիջապես հայտնելու, թե ինչպես, երբ կամ ինչու մենք պետք է դա անենք: Նեփին իմացավ ինչպես, երբ և ինչու Տերը կօգներ իրեն միայն այն բանից *հետո*, երբ նա թույլ տվեց Սուրբ Հոգուն առաջնորդել իրեն, և այն բանից *հետո*, երբ նա որոշեց առաջ գնալ հավատքով:

Ասեք ուսանողներին, որ Նախագահ Հարոլդ Բ. Լին նկատել է, որ մենք հաճախ ցանկանում ենք տեսնել «վերջը սկզբից», կամ արդյունքը, նախքան մենք կհետևենք Տիրոջ նշած ուղուն: Նա խորհուրդ է տվել.

«Դուք պետք է սովորեք քայլել մի փոքր լույսի ներքո, և գուցե մի քանի քայլ անեք խավարի մեջ [անիմանալին], և դուք կտեսնեք, որ լույսը կհայտնվի և կառաջնորդի ձեզ վերևից» (in Lucile C. Tate, *Boyd K. Packer: A Watchman on the Tower* [1995], 137–38):

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 4.7:

- 1 Նեփի 4.7 հատվածում ի՞նչն է կարևոր «այնուամենայնիվ, ես առաջ գնացի» արտահայտությունում:
- Ի՞նչ է ուսուցանում Նեփիի օրինակը «գնալ և անել» մեր պատրաստակամ լինելու և Տիրոջ կողմից առաջնորդվելու մեր կարողության կապի վերաբերյալ:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 1 Նեփի 4.8–18:

- Ի՞նչ պատճառներ բերեց Հոգին Նեփիին Լաբանին սպանելու Տիրոջ պատվիրանի հետ կապված:

***Կարդալ սուրբ գրությունները դասարանում***

Սուրբ գրությունները դասարանում կարդալը կարող է օգնել ուսանողներին ավելի լավ հասկանալ հատվածները, որոնք նրանք ուսումնասիրում են: Դա կարող է նաև օգնել նրանց ավելի վստահ լինել սուրբ գրությունները ինքնուրույն կարդալու իրենց կարողության վրա: Ինչևիցե, ուսուցիչը երբեք չպետք է ամաչեցնի ուսանողներին, ստիպելով նրանց բարձրաձայն կարդալ, եթե նրանք ամաչում են դա անել: Դասարանում սուրբ գրությունները միասին կարդալու եղանակներից ոմանք ներառում են.

1. Ուսանողները հերթով բարձրաձայն կարդում են:
2. Ուսուցիչը բարձրաձայն կարդում է, մինչ ուսանողները իրենց սուրբ գրություններում հետևում են նրան:
3. Խնդրել մի քանի ուսանողների կարդալ, երբ մի քանի անձինք են խոսում սուրբ գրության հատվածում:
4. Ուսանողները բարձրաձայն կարդում են իրար համար փոքր խմբերով կամ զույգերով:

Ամփոփեք թիթեղները հաջողությամբ ձեռք բերելու Նեփիի պատմության մնացած մասը (տես 1 Նեփի 4.19–38), կամ հրավիրեք մի ուսանողի, ով ծանոթ է պատմության մնացած մասին, անել դա: Խնդրեք ուսանողներին ներկայացնել սկզբունքները, որոնք նրանք տեսնում են թիթեղները ձեռք բերելու այս վերջին ջանքերում: Այն բանից հետո, երբ նրանք կկիսվեն իրենց մտքերով, ավելացրեք ձեր վկայությունը, որ, **երբ մենք հավատք ենք ցուցաբերում առ Աստված և փնտրում ենք անել այն, ինչ Նա պատվիրում է, նույնիսկ երբ մենք չենք կարողանում ելք տեսնել, Նա կառաջնորդի մեզ Սուրբ Հոգու ազդեցությամբ:**

Որպեսզի օգնենք խորացնել ուսանողների վկայությունը այս սկզբունքի վերաբերյալ, հրավիրեք նրանց կիսվել փորձառություններով, երբ նրանք գործել են հավատքով, առանց նախապես իմանալու, թե ինչպես և երբ է Աստված օգնելու իրենց:

Հրավիրեք ուսանողներին խորհել մի իրավիճակի մասին, որում նրանք գտնվում են այժմ, որտեղ Տիրոջ պահանջները դժվար են իրենց համար: Խնդրեք նրանց իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրել, թե ինչ կանեն նրանք, որ ցույց տան Տիրոջը իրենց պատրաստակամությունը «գնալ և անել» այն, ինչ Նա պատվիրել է: Երբ նրանք ավարտեն գրելը, արտահայտեք ձեր վստահությունը, որ երբ մենք ցուցադրենք մեր հավատքը, Տերը կօրհնի մեզ կատարել այն, ինչ Նա պատվիրել է մեզ:

## Սուրբ գրություններից սերտեք 1 Նեփի 3.7

Գրատախտակին գրեք *հնազանդություն, հավատք,* և *վստահություն:* Հարցրեք.

- Նեփիի հնազանդության, հավատքի և վստահության ի՞նչ ապացույցներ եք տեսնում 1 Նեփի 3:
- Ինչպե՞ս կարող են այս արժեքները օգնել մեկին, ով կանչված է միսիա ծառայելու:

Հրավիրեք յուրաքանչյուր ուսանողի նամակ գրել մի միսիոների, հարցնելով, թե ինչպե՞ս է նա տեսնում 1 Նեփի 3.7 գործի մեջ: Խրախուսեք ուսանողներին կիսվել իրենց նամակների ցանկացած պատասխանով:

*Նշում.* Յուրաքանչյուր դասի վերջում, որը պարունակում է սերտելու համար նախատեսված սուրբ գրություն, դուք կգտնեք լրացուցիչ վարժություն, որը նախատեսված է ուսանողներին օգնելու սերտելու հատվածը: Դուք կարող եք օգտագործել այս վարժությունները ցանկացած ժամանակ (լրացուցիչ տեղեկությունների համար տեսեք ցուցիչը և *Ավետարանի ուսուցում և ուսումնասիրություն* ձեռնարկը):

ԴԱՍ 9

# 1 Նեփի 5

## Նախաբան

Մինչ Լեքիի կինը՝ Սարիան, սպասում էր Երուսաղեմից իր որդիների վերադարձին, նա վախեցավ, որ նրանք կարող էին կործանված լինել արույրե թիթեղները ձեռք բերելու համար ջանքեր գործադրելիս: Երբ նրանք ապահով վերադարձան՝ թիթեղները բերելով, նա ավելի ամուր վկայություն ձեռք բերեց, որ Աստված առաջնորդում և պահպանում էր իր ընտանիքին: Լեքին ուսումնասիրեց արույրե թիթեղները և գտավ, որ դրանք մեծ արժեք ունեին իր ընտանիքի համար: Մինչ նա կարդաց այն, նա լցվեց Սուրբ Հոգով և մարգարեացավ, որ այնտեղ պարունակվող սուրբ գրությունները կպահպանվեին իր սերունդների համար:

## Ուսուցանման առաջարկներ

### 1 Նեփի 5.1–9

*Լեքիի որդիները ապահովությամբ վերադառնում են իրենց ընտանիքի մոտ անապատ*

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 5.1–3: Խնդրեք դասարանին փնտրել պատճառները, թե ինչու Սարիան սկսեց բողոքել:

- Ի՞նչ բողոքներ ուներ Սարիան: (Պատասխանները կարող են ներառել, որ Լեքին տեսիլատես մարդ էր, որ նա ընտանիքին հեռու էր տարել իրենց ժառանգության երկրից, և որ նա որոշումներ էր ընդունել, որոնք կարող էին տանել իրենց որդիների կորստին և որ կարող էին տանել իրենց իսկ մահվանը անապատում:)

Խնդրեք ուսանողներին մտածել մի ժամանակահատվածի մասին, երբ նրանք բողոքել են մի իրադրության վերաբերյալ, չնայած որ նրանք չեն ունեցել այդ իրադրության վերաբերյալ լիարժեք տեղեկություններ:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ 1 Նեփի 5.4–6: Խնդրեք դասարանին ուշադրություն դարձնել, թե ինչպես Լեքին արձագանքեց Սարիայի բողոքներին:

- Ի՞նչն է ձեզ վրա տպավորություն թողնում Սարիայի բողոքներին տված Լեքիի արձագանքի հետ կապված: (Դուք կարող եք նշել, որ Լեքին արձագանքեց վկայությամբ և վստահությամբ առ Տերը, այլ ոչ թե վախով կամ կասկածով: Նա չարձագանքեց բարկությամբ կամ անհամբերությամբ:)
- Ի՞նչ կարող ենք մենք սովորել Սարիային տրված Լեքիի պատասխանից:

Թող մի ուսանող բարձրաձայն կարդա 1 Նեփի 5.7–9:

- Ի՞նչ ստացավ Սարիան այս փորձառությունից:

### 1 Նեփի 5.10–22

*Լեքին ուսումնասիրում է արույրե թիթեղները*

Խնդրեք ուսանողներին մտածել, թե կա արդյոք որևէ բան, ինչը ձեռք բերելու կամ պահպանելու համար նրանք կմտածեն իրենց կյանքը զոհաբերելու մասին:

Հրավիրեք մի ուսանողի ամփոփել 1 Նեփի 3–4 և պատմել զոհաբերությունների մասին, որ Լեքիի ընտանիքը կատարեց արույրե թիթեղները ձեռք բերելու համար: (Նեփին և նրա եղբայրները վտանգեցին իրենց կյանքը, զոհաբերեցին իրենց հարստությունը և երկար ճանապարհ կտրեցին:)

- Ձեր կարծիքով, ինչու՞ էր անհրաժեշտ նման զոհաբերությունը:

Բացատրեք, որ այն բանից հետո, երբ ընտանիքը զոհ մատուցեց և գոհություն հայտնեց Տիրոջը, Լեքին անմիջապես սկսեց կարդալ թիթեղների բովանդակությունը: Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 1 Նեփի 5.11–16: Խնդրեք դասարանին ուշադրություն դարձնել նրան, թե ինչ բացահայտեց

Լեքին արույրե թիթեղներում: Դուք կարող եք գրատախտակին համառոտ գրել նրանց պատասխանները:

Հրավիրեք ուսանողներին լուռ կարդալ 1 Նեփի 5.10: Խնդրեք նրանց գտնել այն բառը, որը նկարագրում է Լեքիին սուրբ գրությունները կարդալիս: (Նա «ուսումնասիրեց դրանք»:) Հրավիրեք ուսանողներին զույգերի բաժանվել, որ քննարկեն հետևյալ հարցը:

- Ի՞նչ տարբերություն կա սուրբ գրությունները ուսումնասիրելու և պարզապես կարդալու միջև: (Դուք կարող եք խրախուսել ուսանողներին պատմել այնպիսի ժամանակների մասին, երբ նրանք ուսումնասիրել են սուրբ գրությունները:)

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը.

«Երբ ես ասում եմ «ուսումնասիրել», ես ի նկատի ունեմ ավելին, քան կարդալը: Լավ է երբեմն կարդալ սուրբ գրության մի գիրք որոշակի ժամանակահատվածում դրա ընդհանուր ուղերձը հասկանալու համար, սակայն դարձի գալու համար դուք պետք է ավելի շատ մտահոգվեք սուրբ գրությունների հետ ձեր անցկացրած ժամանակահատվածի համար, և ոչ թե այդ ժամանակահատվածում կարդացածի ծավալի համար: Ես տեսնում եմ ձեզ երբեմն մի քանի հատվածներ կարդալիս, հետո դուք կանգ եք առնում, որ խորհեք դրանց մասին, կրկին ուշադիր կարդում եք հատվածները, և երբ դուք մտածում եք դրանց նշանակության մասին, աղոթելով հասկացողության համար, ձեր մտքում հարցեր տալով, սպասելով հոգևոր տպավորությունների, և գրում եք ոգեշնչումներն ու մտքերը, որ գալիս են, որպեսզի դուք կարողանաք հիշել և սովորել ավելին: Այս ձևով ուսումնասիրելիս դուք, միգուցե, շատ գլուխներ կամ հատվածներ չկարդաք կես ժամում, սակայն դուք ձեր սրտում տեղ կհատկացնեք Աստծո խոսքին, և Նա կխոսի ձեր հետ: Հիշեք Ալմայի նկարագրությունը, թե ինչ զգացողություն է դա. «Այն սկսում է մեծացնել իմ հոգին. այո, այն սկսում է լուսավորել իմ հասկացողությունը, այո, այն սկսում է հրաշալի լինել ինձ համար» [Ալմա 32.28]» (“When Thou Art Converted,” *Ensign* or *Liahona,* May 2004, 11–12):

Ուսանողներին ժամանակ տվեք, որ անդրադառնան սուրբ գրությունների իրենց ուսումնասիրությանը: Խնդրեք նրանց գրել իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային նոթատետրերում սուրբ գրությունները իմաստալից եղանակներով ուսումնասիրելու մասին: Գրելուց հետո հրավիրեք նրանց խորհել, թե ինչպես կարող են զարգացնել սուրբ գրությունների իրենց ուսումնասիրությունը: Խնդրեք նրանց ընտրել մի եղանակ, որով նրանք կարող են զարգացնել սուրբ գրությունների իրենց անձնական ուսումնասիրությունը: Խրախուսեք նրանց գրել այս նպատակը իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները կիսվեն նպատակով ինչ-որ մեկի հետ (օրինակ, ձեզ հետ, ծնողի հետ կամ մեկ այլ ուսանողի հետ), ով կհիշեցնի իրենց նպատակի մասին և կխրախուսի իրագործել այն:

Բացատրեք, որ Տերն օրհնեց Լեքիին սուրբ գրությունները ուսումնասիրելու համար: Որպեսզի օգնեք ուսանողներին բացահայտել այս օրհնությունները, հրավիրեք նրանց լուռ կարդալ 1 Նեփի 5.16–20:

- Ի՞նչ ազդեցություն գործեց Լեքիի վրա արույրե թիթեղների ուսումնասիրությունը:

Նշեք, որ երբ Լեքին ուսումնասիրում էր սուրբ գրությունները, նա լցվեց Սուրբ Հոգով և հայտնություն ստացավ «իր սերնդի վերաբերյալ»: Վստահեցրեք ուսանողներին, որ **երբ մենք ուսումնասիրում ենք սուրբ գրությունները, մենք կարող ենք լցվել Սուրբ Հոգով և ստանալ հայտնություն:** Նմանապես, երբ մենք զոհաբերում ենք մեր ժամանակն ու էներգիան սուրբ գրությունները Լեքիի պես ուսումնասիրելու համար, մենք կարող ենք ուժ ստանալ Աստծո պատվիրանները պահելու համար:

- Ինչպե՞ս եք դուք օրհնվել սուրբ գրությունները ուսումնասիրելու արդյունքում:
- Ե՞րբ եք դուք զգացել Սուրբ Հոգին, երբ ուսումնասիրել եք սուրբ գրությունները:

Հրավիրեք ուսանողներին կարդալ հետևյալ մեջբերումը, որտեղ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը վկայում է սուրբ գրությունները ուսումնասիրելու օրհնության վերաբերյալ.

«Երբ մենք ուզում ենք խոսել Աստծո հետ, մենք աղոթում ենք: Եվ երբ մենք ուզում ենք, որ Նա խոսի մեզ հետ, մենք ուսումնասիրում ենք սուրբ գրությունները, քանզի Նրա խոսքերը ասվել են Նրա մարգարեների միջոցով: Նա այնուհետև կուսուցանի մեզ, մինչ մենք լսենք Սուրբ Հոգու հուշումներին:

Եթե դուք վերջին ժամանակներում չեք լսել ձեզ հետ խոսող Նրա ձայնը, վերադարձեք սուրբ գրություններին նոր աչքերով և նոր ականջներով: Նրանք մեր հոգևոր հենարանն են» (“Holy Scriptures: The Power of God unto Our Salvation,” *Ensign* կամ *Liahona,* Nov. 2006, 26–27):

Բարձրաձայն կարդացեք 1 Նեփի 5.21–22, խնդրելով ուսանողներին հետևել իրենց սուրբ գրություններում: Մինչ դուք կարդում եք, շեշտեք այս բառերը. «Տիրոջ իմաստությամբ էր, որ մենք պետք է տանեինք դրանք մեզ հետ, երբ ճամփորդում էինք անապատով դեպի խոստումի երկիր»:

- Ինչու՞ է մեզ համար իմաստուն տանել մեզ հետ սուրբ գրությունները մեր ճամփորդության ժամանակ:
- Ի՞նչ ձևերով մենք կարող ենք տանել սուրբ գրությունները մեզ հետ:

Նշեք, որ Լեքին ու իր ընտանիքը ձեռք բերեցին արույրե թիթեղները մեծ զոհաբերության շնորհիվ: Առանց սուրբ գրությունների Լեքին ու իր ընտանիքը հաջողության չէին հասնի իրենց ճամփորդության ընթացքում: Խրախուսեք ուսանողներին պահել սուրբ գրությունները իրենց մոտ, մինչ նրանք ճամփորդում են մահկանացու կյանքում:

Հրավիրեք ուսանողներին անդրադառնալ իրենց անձնական սուրբ գրությունների ուսումնասիրությանը: Հրավիրեք մի ուսանողի, ով կանոնավոր կերպով կարդում է սուրբ գրությունները, խրախուսել և վկայել իր հասակակիցներին: Քաջալերեք ուսանողներին սուրբ գրությունները ամեն օր ուսումնասիրելու համար ժամանակ տրամադրելու սովորություն ձեռք բերել:

*Նշում.* Այս դասի տևողությունը կարող է թույլ տալ ժամանակ տրամադրել նախորդ դասի սերտման սուրբ գրության համար:

## Ուսուցանման լրացուցիչ գաղափարներ

### 1 Նեփի 5.21: Ուսումնասիրել սուրբ գրությունները

Թող դասարանը երգի կամ կարդա «Երբ կարդում եմ սուրբ գրքերը» օրհներգի բառերը (*Օրհներգեր,* հ. 277): Հրավիրեք ուսանողներին ուշադրություն դարձնել օրհներգի այն տողերին, որոնք նկարագրում են օրհնությունները, որոնք գալիս են սուրբ գրությունները ուսումնասիրելիս: Խնդրեք ուսանողներին ներկայացնել այն արտահայտությունները, որոնք կարևոր նշանակություն ունեն նրանց համար, և ասել, թե ինչու են նրանք սիրում այդ արտահայտությունները:

Դուք կարող եք կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Մարիոն Գ. Ռոմնիի խոսքերը.

«Ես համոզված եմ, որ եթե մեր տներում ծնողները աղոթքով ու կանոնավոր կերպով կարդան Մորմոնի Գիրքը անհատապես և իրենց երեխաների հետ, այդ հրաշալի գրքի ոգին կգա ամրացնելու մեր տները և բոլոր նրանց, ովքեր ապրում են այդտեղ: Հայտնության հոգին կմեծանա, փոխադարձ հարգանքը և հոգատարությունը միմյանց հանդեպ կաճի: Հակառակության հոգին կհեռանա: Ծնողները ավելի մեծ սիրով ու իմաստությամբ խորհուրդներ կտան իրենց երեխաներին: Երեխաները ավելի արձագանքող ու հպատակվող կլինեն այդ խորհրդի հանդեպ: Արդարությունը կշատանա: Հավատը, հույսը և գթությունը՝ Քրիստոսի մաքուր սերը, կշատանա մեր տներում ու կյանքում, բերելով նրանց հետ խաղաղություն, երջանկություն և ուրախություն» (in Conference Report, Apr. 1960, 112–13; quoted by Ezra Taft Benson, “Cleansing the Inner Vessel,” *Ensign,* May 1986, 6):

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 1 Նեփի 5.10–22: Սուրբ գրությունների արժեքը

Մեզ սովորեցնելու համար, թե ինչպես կարող ենք առաջնորդություն ստանալ սուրբ գրությունները ուսումնասիրելու ընթացքում, Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը կիսվել է արույրե թիթեղները ուսումնասիրելու Լեքիի օրինակով.

«Երբ Նեփին և նրա եղբայրները վերադարձան [Երուսաղեմից արույրե թիթեղներով], Լեքին՝ նրանց հայրը, ուրախացավ: Նա սկսեց ուսումնասիրել սուրբ գրությունները «սկզբից» և «գտավ, որ դրանք բաղձալի էին. այո, նույնիսկ շատ մեծ արժեքի, այնպես որ [Լեքին ու նրա սերունդները] կկարողանային պահպանել Տիրոջ պատվիրանները [իրենց] զավակների համար»:

Իսկապես, արույրե թիթեղները Լեքիի հայրերի հիշատակարաններն էին, ներառյալ նրանց լեզուն, տոհմաբանությունը և, ամենակարևորը, Աստծո սուրբ մարգարեների ուսուցանած ավետարանը: Երբ Լեքին ուսումնասիրում էր թիթեղները, նա սովորեց այն, ինչ մենք բոլորս սովորում ենք սուրբ գրություններն ուսումնասիրելիս.

• Ով ենք մենք:

• Ինչ կարող ենք մենք դառնալ:

• Հայտնություններ մեր և մեր սերունդների համար:

• Պատվիրանները, օրենքները, արարողությունները և ուխտերը, որոնցով մենք պետք է ապրենք, որպեսզի ունենանք հավերժական կյանք:

• Եվ ինչպես մենք պետք է ապրենք, որպեսզի տոկանք մինչև վերջ և պատվով վերադառնանք մեր Երկնային Հոր մոտ:

Այս ճշմարտությունները այնքան կարևոր են, որ Երկնային Հայրը Լեքիին ու Նեփիին տվեց տեսիլքներ, որտեղ Աստծո խոսքը ներկայացվում էր որպես երկաթե ձող: Հայրը և Որդին՝ երկուսն էլ սովորեցին, որ այս ամուր, ուղիղ, մեծապես վստահելի ուղեցույցը *միակ* միջոցն է այդ նեղ ու անձուկ ճանապարհին մնալու համար, որը տանում է դեպի մեր Փրկիչը» (“Holy Scriptures: The Power of God unto Our Salvation,” *Ensign* կամ *Liahona*, Nov. 2006, 25):

### 1 Նեփի 5.18–19: Արույրե թիթեղներ

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին վկայել է Լեքիի ընտանիքի կողմից արույրե թիթեղները ձեռք բերելու կարևորության մասին.

«Նեփիացիների համար Արույրե Թիթեղների արժեքը գերագնահատել հնարավոր չէ: Դրա միջոցով նրանք կարողացան պահպանել լեզուն (1 Նեփի 3.19), քաղաքակրթության մեծամասնությունը և կրոնական գիտելիքը այն ժողովրդի, որից իրենք առաջացել էին (1 Նեփի 22:30): Ի հակադրություն դրան, Մուղեկացիները, ովքեր դուրս էին բերվել Երուսաղեմից Լեքիի հեռանալուց մոտ 11 տարի անց, և ովքեր չունեին Արույրե Թիթեղներին համարժեք հիշատակարան, շուտով ուխտադրժության և անհավատության մեջ ընկան և կորցրեցին իրենց լեզուն, քաղաքակրթությունը և կրոնը (Օմնի 14–18):

Մարգարեից մարգարե և սերնդից սերունդ Արույրե Թիթեղները փոխանցվեցին և պահպանվեցին Նեփիացիների կողմից (Մոսիա 1.16, 28.20, 3 Նեփի 1.2): Տերը խոստացավ հետագայում առաջ բերել դրանք, առանց ժամանակից խամրելու և պահպանած իրենց պայծառությունը և դրանցում արձանագրված սուրբ գրությունների հիշատակարանները պետք է «հայտնի դառնան ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի» (Ալմա 37.3–5, 1 Նեփի 5.18–19)» (*Mormon Doctrine,* 2nd ed. [1966], 103):

ԴԱՍ 10

# 1 Նեփի 6 և 9

## Նախաբան

Նեփին հայտարարել է. «Իմ ողջ նպատակն է, որ ես կարողանամ համոզել մարդկանց՝ գալ դեպի Աբրահամի Աստվածը և Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը, և փրկվել» (1 Նեփի 6.4): Նա պահել է երկու տեսակի հիշատակարաններ՝ Նեփիի փոքր թիթեղները և Նեփիի մեծ թիթեղները: Տերը պատվիրեց նրան փոքր թիթեղներում գրել Լեքիի պատմության կրճատումները (տես 2 Նեփի 5.28–31): Հետագայում Մորմոնը ոգեշնչվեց ներառել փոքր թիթեղները Մորմոնի Գրքի իր կրճատման մեջ (տես Մորմոնի Խոսքերը 1.6–7): Ոչ Նեփին, ոչ էլ Մորմոնը չգիտեին, թե ինչու, սակայն երկուսն էլ հետևեցին Տիրոջ առաջնորդությանը:

## Ուսուցանման առաջարկներ

### 1 Նեփի 6

*Նեփին գրում է, որ համոզի բոլորին գալ դեպի Հիսուս Քրիստոս*

Ցուցադրեք մի քանի լավ գրքեր կամ ֆիլմեր, որոնք հայտնի են այսօր երիտասարդությանը: Հարցրեք ուսանողներին, թե, իրենց կարծիքով, որն է գրքերից կամ ֆիլմերից յուրաքանչյուրի հեղինակի նպատակը: Ցուցադրեք Մորմոնի Գրքի մի օրինակ: Ասեք ուսանողներին, որ 1 Նեփի 6-ում Նեփին բացատրում է իր հիշատակարանը գրելու իր նպատակը, որն, ի վերջո, դարձավ Մորմոնի Գրքի մի մասը:

Թող ուսանողները կարդան 1 Նեփի 6.3–6 և փնտրեն բառեր և արտահայտություններ, որոնք արտահայտում են Նեփիի մտադրությունը իր հիշատակարանը պահելու կապակցությամբ: (Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները ընդգծեն այս բառերը:)

- Ինչու՞ է կարևոր, որ Նեփին գրեր բաներ, «որոնք հաճելի են Աստծուն», և ոչ թե բաներ, «որոնք հաճելի են աշխարհին»:
- Ինչպե՞ս կնկարագրեք Նեփիի մտադրությունը ձեր սեփական բառերով: (Կարող է օգտակար լինել բացատրելը, որ «Աբրահամի Աստվածը և Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը» արտահայտությունը վերաբերվում է Հիսուս Քրիստոսին: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին իրենց սուրբ գրություններում 1 Նեփի 6.4 կողքին գրել *Հիսուս Քրիստոս*: Դուք նաև կարող եք բացատրել, որ Եհովա բառը նույնպես վերաբերվում է Հիսուս Քրիստոսին: [Տես 1 Նեփի 19.10, 2 Նեփի 11.4, 6–7, տես նաև Սուրբ գրությունների Ուղեցույց, «Քրիստոս», «Քրիստոս, անունները»:])

Որպեսզի օգնեք ուսանողներին երախտապարտ լինել նրա համար, որ Մորմոնի Գիրքը ևս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին, հրավիրեք նրանց անդրադառնալ ցուցիչին և աչքի անցկացնել Հիսուս Քրիստոսի հետ կապված բոլոր վերնագրերը: Խնդրեք նրանց ներկայացնել եղանակներից մի քանիսը, որոնցով Մորմոնի Գիրքը ուսուցանում է Փրկչի առաքելության վերաբերյալ:

Հրավիրեք մի ուսանողի գրատախտակին գրել հետևյալ ճշմարտությունը. *Մորմոնի Գրքի նպատակներից մեկն է համոզել բոլոր մարդկանց գալ դեպի Հիսուս Քրիստոսը:*

- Ինչպե՞ս կարող է Նեփիի գրելու նպատակը հասկանալը ազդել այս տարի Մորմոնի Գիրքը ուսումնասիրելու ձեր պլանավորման եղանակի վրա:

Կիսվեք նրանով, թե ինչպես է Մորմոնի Գիրքը ձեզ օգնել ավելի մոտենալ Երկնային Հորը և Փրկչին: Հրավիրեք ուսանողներին կիսվել նրանով, թե ինչ ազդեցություն է թողել իրենց կյանքում Մորմոնի Գիրքը և ինչպես է այն իրենց մոտեցրել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին: Խրախուսեք նրանց կիսվել Մորմոնի Գրքի վերաբերյալ իրենց զգացմունքներով և Հիսուս Քրիստոսի մասին իրենց վկայությամբ ընկերոջ կամ ընտանիքի անդամի հետ հաջորդ մի քանի օրերի ընթացքում:

## 1 Նեփի 9

### *Նեփին պահում է երկու տեսակի թիթեղներ*

Դասարանին ցույց տվեք պատմության մի գիրք և նշեք ժամանակաշրջանը, որի մասին խոսվում է գրքում: Այնուհետև դասարանին ցույց տվեք անձնական պատմություն, օրագիր կամ մատյան, որն ընդգրկում է նույն ժամանակաշրջանի որոշ հատված: (Եթե հարմար է, օրագրից կարդացեք հոգևոր որևէ փորձառություն:)

- Ինչո՞վ են տարբերվում երկու տեքստերը պատմությունը արձանագրելու իրենց մոտեցումներով:
- Մի տեքստը մյուսից ավելի արժեքավո՞ր է: Ինչո՞վ: (Յուրաքանչյուրն էլ արժեքավոր է տարբեր պատճառներով:)
- Ինչո՞վ են այս տեքստերը նման Մորմոնի Գրքին:

Բացատրեք, որ 1 Նեփի 9.1–5-ում Նեփին պատմում է երկու տարբեր թիթեղների վրա հիշատակարաններ պահելու իր ջանքերի մասին:

Թիթեղներից մեկի վրա, որոնք այժմ հայտնի են որպես Նեփիի մեծ թիթեղներ, նա արձանագրել է «[իր] ժողովրդի պատմությունը» (1 Նեփի 9.2): Այս պատմությունը ներառել է «թագավորների թագավորության պատմությունը և [իր] ժողովրդի պատերազմներն ու հակառակությունները» (1 Նեփի 9.4): Դա Նեփիի կազմած առաջին հիշատակարանն էր, սակայն այն ներառված չէ այնտեղ, ինչը մենք այժմ ունենք որպես Մորմոնի Գիրք:

Մյուս թիթեղների վրա, որոնք այժմ հայտնի են որպես Նեփիի փոքր թիթեղներ, նա արձանագրել է «[իր] ժողովրդի ծառայության պատմությունը» (1 Նեփի 9.3): Դուք կարող եք բացատրել, որ *ծառայություն* բառը վերաբերվում է կրոնական ուսուցումներին և միջոցառումներին: Նեփիի փոքր թիթեղների արձանագրությունները այժմ գտնվում են 1 Նեփի և 2 Նեփի գրքերում:

Որպեսզի օգնեք ուսանողներին տարբերել փոքր թիթեղները մեծ թիթեղներից, մինչ նրանք կարդան 1 Նեփի 9 գրատախտակին գրեք հետևյալը. *«այս թիթեղները» = փոքր թիթեղները* և *«մյուս թիթեղները» = մեծ թիթեղները:* (Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները գրեն այս բառերը իրենց սուրբ գրությունների համապատասխան հատվածների կողքին:) 1 Նեփի 9-ում «այս թիթեղները» արտահայտությունը միշտ վերաբերվում է փոքր թիթեղներին: «Մյուս թիթեղները» արտահայտությունը վերաբերվում է մեծ թիթեղներին:

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 9.3, 5–6:

- Ի՞նչ պատճառներ բերեց Նեփին մեծ թիթեղներին փոքր թիթեղները ավելացնելու համար: Ինչպե՞ս են այս բացատրությունները ցույց տալիս Նեփիի հավատքը առ Տերը:

Բացատրեք, որ մոտ 1000 տարի անց Մորմոն մարգարեն կրճատում կատարեց կամ ավելի հակիրճ ձևով գրեց բոլոր հիշատակարանները, որոնք գրվել էին իր ժողովրդի կողմից: Սա դարձավ այն, ինչը մենք այսօր գիտենք որպես Մորմոնի Գիրք: Երբ նա անում էր այս կրճատումները, նա գտավ Նեփիի փոքր թիթեղները և ներառեց դրանք իր հիշատակարանում:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Մորմոնի Խոսքերը 1.3–7: Բացատրեք, որ Մորմոնը գրել է այս խոսքերը մոտավորապես մ.թ. 385թ., նեփիացիների և լամանացիների միջև վերջին ճակատամարտի ժամանակ: Երբ ուսանողները կարդան այս հատվածները, թող փնտրեն Մորմոնի նշած պատճառները, որոնցով նա ընդգրկել էր Նեփիի փոքր թիթեղները իր կրճատման մեջ:

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մարվին Ջ. Էշթոնի հետևյալ խոսքերը.

«Երբեմն, երբ մեզ պատվիրվում է հնազանդ լինել, մենք չգիտենք, թե ինչու, բացի այն բանից, որ Տերն է պատվիրել: . . . Նեփին հետևեց հրահանգներին, չնայած որ նա լիարժեք ձևով չէր հասկանում իմաստուն նպատակը: Նրա հնազանդության արդյունքում աշխարհի բոլոր մարդիկ օրհնվեցին» (“Who Will Forfeit the Harvest?” *Ensign,* Nov. 1978, 51):

Նշեք, որ Նեփիի և Մորմոնի օրինակներից մենք սովորում ենք, որ **մենք պետք է հնազանդվենք Աստծո պատվիրաններին և հետևենք Հոգու հուշումներին**

***Բացատրեք, կիսվեք կամ վկայեք դասարանից դուրս***

Երբ ուսանողները դասարանից դուրս կիսվեն իրենց վկայություններով, դասարանում սովորած ճշմարտությունների վերաբերյալ նրանց հասկացողությունը կխորանա: Խրախուսեք նրանց ավետարանի ճշմարտությունները սովորեցնելու և դրանց մասին վկայելու հնարավորություններ փնտրել, մինչ նրանք շփվում են ընտանիքի անդամների և ընկերների հետ:

**նույնիսկ այն ժամանակ, երբ մենք լիովին չենք հասկանում դրա պատճառները:**

- Ինչու՞ է կարևոր հնազանդվել Աստծո պատվիրաններին և հետևել Հոգու հուշումներին նույնիսկ այն ժամանակ, երբ մենք լիովին չենք հասկանում դրա պատճառները:
- Ե՞րբ եք դուք հնազանդվել Տիրոջը կամ հետևել որոշակի հուշումների առանց պատճառները լիովին հասկանալու:
- Ինչպե՞ս մենք կարող ենք զարգացնել ավելի մեծ վստահություն և քաջություն Աստծո առաջնորդությանը հավատարիմ լինելու համար:

Վկայեք, որ երբ մենք հնազանդվում ենք Աստծո պատվիրաններին և Սուրբ Հոգու հուշումներին, դրանց նպատակների մեր հասկացողությունը խորանում է և Տերն օրհնում է մեզ մեր հնազանդության համար:

Թող մի ուսանող բարձրաձայն կարդա հետևյալ բացատրությունը: (Դուք կարող եք յուրաքանչյուր ուսանողի տալ փոքրիկ կրկնօրինակը, որպեսզի նրանք կարողանան հետևել և զետեղել այն իրենց սուրբ գրություններում հետագայում անդրադառնալու համար:)

Նեփիի կողմից երկու տեսակի հիշատակարաններ պահելու Տիրոջ «իմաստուն նպատակի» (1 Նեփի 9.5, Մորմոնի Խոսքերը 1.7) գոնե մի մասը ակնհայտ դարձավ այն ժամանակ, երբ Ջոզեֆ Սմիթը թարգմանեց Մորմոնի Գիրքը: Ջոզեֆը սկզբում թարգմանեց Նեփիի մեծ թիթեղների Մորմոնի կրճատումը: Մարտին Հարրիսը, ով օգնում էր Ջոզեֆին, ուզում էր թարգմանությունը ցույց տալ իր կնոջն ու ընտանիքին: Մարգարեն դժկամորեն թույլ տվեց, որ Մարտինը վերցներ 116 ձեռագիր էջերը, որոնք թարգմանվել էին մինչ այդ պահը: 116 էջերը գողացան Մարտինի մոտից և, որպես արդյունք, թիթեղները, Ուրիմն ու Թումիմը և թարգմանելու պարգևը ժամանակավորապես վերցվեցին Ջոզեֆ Սմիթից (տես ՎևՈՒ 3.14):

Այն բանից հետո, երբ Ջոզեֆ Սմիթն ապաշխարեց (տես ՎևՈՒ 3.10), Տերն ասաց նրան, որ նա կրկին չպետք է թարգմաներ կորած մասը (տես ՎևՈՒ 10.30): Դրա փոխարեն Նա պատվիրեց նրան թարգմանել Նեփիի փոքր թիթեղները (տես ՎևՈՒ 10.41), որտեղ նկարագրվում էր նույն ժամանակաշրջանը: Նա տեղեկացրեց Ջոզեֆին, որ նրանք, ովքեր վերցրել էին 116 էջերը, փոփոխել էին դրանք և ծրագրել էին օգտագործել դրանք աշխատանքը կործանելու համար (տես ՎևՈՒ 10.10–19): Տերը կանխատեսել էր այս իրադարձությունները հարյուրավոր տարիներ առաջ և նախապատրաստել էր երկրորդ հիշատակարանը Սատանայի ծրագիրը խափանելու համար: (Տես *History of the Church,* 1:20–23, ՎևՈՒ 10.38–46:)

Հրավիրեք ուսանողներին անձամբ կարդալ 1 Նեփի 9.6: Խնդրեք նրանց ներկայացնել վարդապետությունը, որը Նեփին ուսուցանում է այս հատվածում: Թող ուսանողներից մեկը հետևյալ սկզբունքը գրի գրատախտակին. *Աստված ամեն բան գիտի և ուղի է պատրաստում իր բոլոր գործերը կատարելու համար:*

- Ինչու՞ է օգտակար իմանալը, որ «Տերը գիտի բոլոր բաները՝ ի սկզբանե» (1 Նեփի 9.6, տես նաև 2 Նեփի 9.20, Մորմոնի Խոսքերը 1.7):
- Ինչպե՞ս կարող է այս վարդապետությունը ազդել ձեր ապրելակերպի վրա: (Երբ ուսանողները պատասխանեն այս հարցին, դուք կարող եք կիսվել ձեր մտքերով այն բանի մասին, թե ինչպես է այս վարդապետությունը մեծացրել ձեր հավատքը, հույսը և վստահությունը Աստծո հանդեպ:)
- Ինչպե՞ս կարող է այս վարդապետությունը օգնել ձեզ, երբ դուք հանդիպում եք դժվարությունների: (Հնարավոր պատասխան կարող է լինել այն, որ մենք կարող ենք հանգստություն գտնել, երբ համոզված ենք, որ Աստված կարող է տեսնել մեր փորձությունների և դժվարությունների ելքը, նույնիսկ այն ժամանակ, երբ մենք չենք կարող տեսնել: Եվ Սուրբ Հոգու միջոցով Նա կարող է մեզ տալ ուժ, մխիթարություն և ուղղություն կյանքի դժվարությունները հաղթահարելու կամ տանելու համար:)

Արտահայտեք ձեր վստահությունը այն բանի վերաբերյալ, որ Աստված գիտի ամեն բան, ներառյալ այն, թե ինչն է լավագույնը Իր յուրաքանչյուր զավակի համար: Օգնեք ուսանողներին տեսնել, որ իրենց կյանքի ընթացքում նրանք կհանդիպեն պատվիրանների և Աստծուց ոգեշնչումներ կստանան, որոնք նրանք սկզբում չեն կարողանա ամբողջությամբ հասկանալ: Տիրոջ պատվիրաններին և Սուրբ Հոգու հուշումներին հնազանդվելը կօրհնի իրենց իսկ կյանքը և ուրիշների կյանքը:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 1 Նեփի 6.4: «Աբրահամի Աստվածը, և Իսահակի Աստվածը, և Հակոբի Աստվածը»

Նախագահ Էզրա Թավտ Բենսոնը բացատրել է, որ երբ սուրբ գրություններում խոսվում է Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստծո մասին, դա վերաբերվում է Հիսուս Քրիստոսին. «Մենք պետք է հիշենք, թե ով էր Հիսուսը նախքան Նրա ծնվելը: Նա ամեն բանի Արարիչն էր, մեծ Եհովան, մորթված Գառը՝ նախքան աշխարհի հիմնադրումը, Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածը: Նա էր և է Իսրայելի Սուրբը» (“Five Marks of the Divinity of Jesus Christ,” *Ensign,* Dec. 2001, 10):

### 1 Նեփի 9.6: Աստված գիտի ամեն բան ի սկզբանե

Մենք կարող ենք վստահ լինել, որ Աստված գիտի ամեն բան: «Առանց ամեն բան իմանալու Աստված չէր կարող փրկել իր ստեղծածներից և ոչ մեկին, քանզի գիտելիքի արդյունքում է, որ նա ունի ամեն բանի վերաբերյալ, սկզբից մինչև վերջ, որ հնարավորություն է տալիս նրան տալ այդ հասկացողությունը իր ստեղծածներին, որի միջոցով նրանք դառնում են հավերժական կյանքի մասնակիցներ, և եթե չլիներ այն գաղափարը, որ կա մարդկանց մտքերում, որ Աստված ունի բոլոր հասկացողությունը, անհնարին կլիներ նրանց համար հավատք ունենալ նրա հանդեպ» (*Lectures on Faith* [1985], 51–52):

# Տնային ուսումնասիրության դաս

## 1 Նեփի 1–6, 9 (Մաս 2)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Այն վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը, որոնք ուսանողները սովորել են 1 Նեփի 1–6, 9-ում (Մաս 2) ուսումնասիրելիս, նախատեսված չէ ուսուցանելու համար որպես ձեր դասի մաս: Ձեր ուսուցանած դասը կենտրոնանում է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, մինչ դուք խորհում եք ուսանողների կարիքների շուրջ:

#### Օր 1 (1 Նեփի 1)

Երբ ուսանողները ուսումնասիրեցին, որ Լեքին մարգարեացել է ժողովրդին և նախազգուշացրել նրանց, որ ապաշխարեն, նրանք սովորեցին, որ մարգարեները նախազգուշացնում են մեղք գործելու մասին և սովորեցնում են Հիսուս Քրիստոսի միջոցով փրկություն ունենալու մասին: Նրանք նաև սովորեցին, որ Տիրոջ գորովագութ ողորմությունները տրվում են նրանց, ովքեր հավատում են Նրան:

#### Օր 2 (1 Նեփի 2)

Լեքին արձագանքեց Երուսաղեմից հեռանալու Տիրոջ պատվիրանին: Նա օրինակ հանդիսացավ այն սկզբունքի, որ եթե մենք հավատարիմ ենք, Տերը կօգնի մեզ փորձության ժամանակ: Նեփին ցուցաբերեց հնազանդ հոգի և սովորեց, որ երբ մենք կանչում ենք առ Աստված, Նա կարող է փափկացնել մեր սրտերը, որ հավատանք Իր խոսքերին: Ուսանողները սովորեցին, որ Աստված օրհնում է նրանց, ովքեր հնազանդ են և հավատարիմ:

#### Օր 3 (1 Նեփի 3–4)

Երբ Լեքին ասաց Նեփիին և նրա եղբայրներին Աստծո պատվիրանի մասին, ըստ որի նրանք պետք է վերադառնային Երուսաղեմ և ձեռք բերեին արույրե թիթեղները, Նեփին արձագանքեց, վկայելով, որ եթե մենք անենք այն, ինչ Տերը պատվիրում է, ապա Նա ուղի կպատրաստի մեզ համար, որ իրագործենք այն: Նեփին և նրա եղբայրները զգացին, որ դժվար էր իրագործել Տիրոջ պատվիրանը: Երուսաղեմ վերադառնալու Նեփիի վճռականությունը օգնեց ուսանողներին տեսնել, որ երբ մենք հավատք ենք դրսևորում առ Աստված և փնտրում ենք անել այն, ինչ Նա պատվիրում է, նույնիսկ այն ժամանակ, երբ մենք չենք կարողանում տեսնել հետևանքները, Նա մեզ կառաջնորդի Սուրբ Հոգով:

#### Օր 4 (1 Նեփի 5–6, 9)

Մինչ ուսանողները ծանոթացան Լեքիի փորձառությանը արույրե թիթեղները ուսումնասիրելու վերաբերյալ, նրանք հայտնաբերեցին հետևյալ սկզբունքը. երբ մենք ուսումնասիրում ենք սուրբ գրությունները, մենք կարողանում ենք լցվել Սուրբ Հոգով և հայտնություն ստանալ: Սովորելով իր հիշատակարանը գրելու Նեփիի նպատակի մասին, ուսանողները նաև իմացան, որ Մորմոնի Գրքի նպատակն է համոզել բոլոր մարդկանց գալ դեպի Հիսուս Քրիստոսը:

### Նախաբան

Այս շաբաթվա դասը ուսանողներին հնարավորություն կտա կրկնել և քննարկել, թե ինչ նրանք սովորեցին Լեքիի ընտանիքի օրինակից և նրանց հավատքի գործերից: Մինչ դուք ուսուցանեք դասը, ընդգծեք Նեփիի հավատարիմ հնազանդությունը Տիրոջ պատվիրանների հանդեպ և նրա ջանասիրությունը, երբ նա փնտրում էր իմանալ ճշմարտությունը «բոլոր այն խոսքերի, որոնք ասվել էին [նրա հոր] կողմից» (1 Նեփի 2.16): Մինչ ուսանողները հետևեն Նեփիի հնազանդության օրինակին, նրանք կզորացնեն իրենց իսկ վկայությունը ավետարանի վերաբերյալ:

Ուսուցանելիս հետևեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի խրատին.

«Մենք պետք է բարելավենք հիանալի ուսուցումը Եկեղեցում՝ տանը, ամբիոնից, մեր ղեկավարների ժողովներում և, իհարկե, դասարանում: Ոգեշնչված ուսուցումը չպետք է երբևիցե Եկեղեցում դառնա կորած արվեստ, և մենք պետք է վստահ լինենք, որ ուսուցման մեր որոնումները չեն դառնա կորած ավանդույթ: . . .

. . . Թող որ մենք վեհացնենք ուսուցանելու փորձառությունը տանը և Եկեղեցում, և բարելավենք շենացնելու և ուսուցանելու մեր յուրաքանչյուր ջանքը» (“A Teacher Come from God,” *Ensign,* May 1998, 25, 27):

### Ուսուցանման առաջարկներ

#### 1 Նեփի 1

*Տերը տալիս է Իր գորովագութ ողորմությունները հավատարիմներին*

Գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. ***Տիրոջ գորովագութ ողորմությունները տրվում են նրանց, ովքեր հավատք են գործադրում Նրա հանդեպ:*** Հրավիրեք ուսանողներին աչքի անցկացնել 1 Նեփի 1 և ներկայացնել այն հատվածը, որում ուսուցանվում է այս ճշմարտությունը (հատված 20):

Տվեք հետևյալ հարցը, որ օգնեք ուսանողներին վերհիշել և ամփոփել այն, ինչ նրանք սովորել են, մինչ նրանք շաբաթվա ընթացքում ուսումնասիրել են 1 Նեփի 1–6, 9:

- Ելնելով այն ամենից, ինչ դուք սովորել եք այս շաբաթ ուսումնասիրած գլուխներից, ինչպե՞ս էր Տերը տալիս Իր գորովագութ ողորմությունները Լեքիին ու իր ընտանիքին:
- Հնազանդության և հավատքի ի՞նչ օրինակներ ցույց տրվեցին Լեքիի և նրա ընտանիքի կողմից:
- Ե՞րբ եք դուք տեսել, որ Տերը Իր գորովագութ ողորմությունները տա ձեզ կամ մեկին, ում դուք գիտեք:

Դուք կարող եք պատմել այն ժամանակների մասին, երբ Տերը ողորմած է եղել ձեր և ձեր ընտանիքի հանդեպ, մինչ դուք գործել եք հավատքով, կամ կիսվել փորձառությամբ, որը դուք գտել եք Եկեղեցու ամսագրերում: Խրախուսեք ուսանողներին փնտրել օրինակներ, որտեղ Տերը ողորմած է հավատարիմների հանդեպ, մինչ նրանք տարվա ընթացքում կուսումնասիրեն Մորմոնի Գիրքը:

## 1 Նեփի 2

*Տերը կարող է փափկացնել մեր սրտերը, որ հավատանք Իր խոսքերին*

Հիշեցրեք ուսանողներին, որ այն բանից հետո, երբ Լեքիին պատվիրվեց հեռանալ Երուսաղեմից իր ընտանիքի հետ միասին, նրա որդի Նեփին ջանաց անձամբ իմանալ և հասկանալ իր Հոր հայտնությունների ճշմարտացիությունը: Հրավիրք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 2.16, 19:

Հարցրեք ուսանողներին. Չնայած, որ Նեփին չէր տրտնջում, ի՞նչ հիմքեր կան 1 Նեփի 2.16, որ Երուսաղեմից հեռանալը դժվար էր նրա համար: (Նեփին գրեց, որ նա աղոթեց հասկացողության համար և Տերը փափկացրեց նրա սիրտը: Սա հուշում է, որ Երուսաղեմից հեռանալը հեշտ չէր նրա համար, ուստի Տերը օգնեց նրան ընդունել այդ:)

Հարցրեք. Ի՞նչ փաստեր եք դուք տեսնում, որ չնայած Լեքին և իր ընտանիքը հնազանդ էին Տիրոջը, կյանքը հեշտ չէր նրանց համար (Տես 1 Նեփի 2.4, 11:)

Խնդրեք ուսանողներին կիսվել մտքերով, որոնք նրանք ունեցել են Նեփիի ցանկությունների վերաբերյալ և այն մասին, թե ինչ արեց նա, որը առաջնորդեց նրան ընդունելու իր հոր միջոցով տրված Տիրոջ պատվիրանները:

Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչ են նրանք գրել իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում՝ օր 2, հանձնարարություն 4: Կիսվեք օրինակով այն ժամանակի վերաբերյալ, երբ Նեփիի պես դուք կանչել եք առ Երկնային Հայրը և ձեր սրտերը փափկանալու փորձառություն եք ունեցել Հոգու միջոցով, կամ մի պահի մասին, երբ դուք ստացել եք վկայություն մի բանի վերաբերյալ, որ ասել էր Տերը:

Կիսվեք ձեր իսկ վկայությամբ, որ **երբ մենք կանչում ենք առ Աստված, Նա կարող է փափկացնել մեր սրտերը, որ հավատանք Նրա խոսքերին:**

Խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչ կարող են նրանք անել, որ ամրացնեն իրենց վկայությունները և ձեռք բերել անձնական համոզվածություն, ինչպես Նեփին արեց:

Հնարավորություն տվեք նրանց կիսվել իրենց մտքերով, եթե նրանք կցանկանան: Խրախուսեք նրանց գործել համաձայն իրենց մտքերի և տպավորությունների:

## 1 Նեփի 3–4

*Տերը կպատրաստի ճանապարհը, մինչ մենք հավատարմորեն հնազանդվենք Նրա պատվիրաններին*

Հանձնարարեք յուրաքանչյուր ուսանողի աշխատել զուգընկերոջ հետ: Գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հատվածները. *1 Նեփի 3.6–7* և *1 Նեփի 4.6–13:* Հրավիրեք ուսանողներին կարդալ հատվածները և քննարկել հետևյալ հարցերը իրենց զուգընկերոջ հետ.

- Ձեր կարծիքով, ի՞նչն է կարևոր Նեփիի հետևյալ հայտարարությունում. «Այնուամենայնիվ, ես առաջ գնացի» (1 Նեփի 4.7):
- Ինչպե՞ս Նեփիի հավատքը հնարավոր դարձրեց, որ նա ձեռք բերեր արույրե թիթեղները:

Այն բանից հետո, երբ ուսանողները կքննարկեն իրենց մտքերը իրենց զուգընկերների հետ, բացատրեք, որ Տերը կարող է մեզ պատվիրել անել մի բան, ինչպես Նա արեց Նեփիի և նրա եղբայրների հետ, առանց անմիջապես հայտնելու, թե ինչու, երբ կամ ինչպես մենք պետք է անենք այդ: Նեփին իմացավ, թե ինչու, երբ և ինչպես Տերը կօգներ իրեն միայն այն բանից *հետո,* երբ նա թույլ տվեց Հոգուն առաջնորդել իրեն, և այն բանից *հետո,* երբ նա որոշեց առաջ գնալ հավատքով: Կիսվեք ձեր վկայությամբ, որ **երբ մենք հավատք ենք գործադրում առ Աստված և փնտրում ենք անել այն, ինչ Նա պատվիրում է, նույնիսկ երբ մենք չենք կարող տեսնել արդյունքը, Նա կառաջնորդի մեզ Սուրբ Հոգու ազդեցությամբ:**

Եթե ժամանակը թույլ տա, դուք կարող եք հարցնել ուսանողներին, արդյոք նրանք հարցեր ունեն կամ ցանկանում են կիսվել մտքերով իրենց ուսումնասիրությունից օր 4 1 Նեփի 5–6, 9-ի վերաբերյալ: Օրինակ, դուք կարող եք հրավիրել նրանց կիսվել, թե ինչպես են նրանք արձագանքել հանձնարարություն 4-ին, որում նրանցից խնդրվում էր գրել մի ժամանակի մասին, երբ նրանք ուսումնասիրել են սուրբ գրությունները և զգացել են Տիրոջ Հոգին:

Վերջում խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ (կամ անգիր ասել) սերտելու համար նախատեսված սուրբ գրության հատվածը՝՝ 1 Նեփի 3.7: Այնուհետև տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ սկզբունք է ուսուցանում 1 Նեփի 3.7 Տիրոջ պատվիրաններին հնազանդ լինելու վերաբերյալ: (Ուսանողները պետք է կարողանան արտահայտել այն սկզբունքը, որ **եթե մենք փնտրենք կատարել այն, ինչ Տերը պատվիրում է, Նա ուղի կպատրաստի մեզ համար, որ իրագործենք այն**:)
- Համաձայն այն ամենի, ինչ դուք կարդացիք 1 Նեփի 1–6 և 9, որո՞նք էին Լեքիի և Նեփիի կողմից Աստծո պատվիրաններին հնազանդվելու արդյունքները:
- Ե՞րբ է Տերը ուղի նախապատրաստել, որպեսզի օգներ ձեզ հնազանդվել ինչ-որ պատվիրանի:

Հրավիրեք ուսանողներին խորհել մի ասպարեզի վերաբերյալ, որում նրանք կարող են լիարժեք ձևով ներկայացնել

իրենց հնազանդությունն առ Աստված: Դուք կարող եք ավարտել դասը վկայելով այն օրհնությունների մասին, որոնք եղել են ձեր կյանքում Տիրոջ պատվիրաններին հնազանդվելու ձեր ջանքերի միջոցով:

## Հաջորդ Մասը (1 Նեփի 7–14)

Հաջորդ մասում ուսանողները կուսումնասիրեն Լեքիի և Նեփիի տեսիլքները: Լեքիի և Նեփիի տեսիլքները կենաց ծառի վերաբերյալ այսօր կիրառելի են մեր կյանքում: Նեփիի գրառումները իր տեսիլքի վերաբերյալ ներառում են Հիսուս Քրիստոսի Ծննդյան, Ծառայության և Քավության նկարագրությունները, Հեթանոսների կողմից Ամերիկայի հայտնագործումը և գաղութացումը, և Աստվածաշնչից կարևոր ճշմարտությունների կորուստը և դրանց վերականգնումը Մորմոնի Գրքի միջոցով: Նեփիի հիշատակարանը նրա տեսիլքի վերաբերյալ ավարտվում է ավետարանի Վերականգնման նկարագրությամբ:

ԴԱՍ 11

# 1 Նեփի 7

## Նախաբան

1 Նեփի 7 ներառում է օրինակներ այն բանի վերաբերյալ, որ Նեփին նվիրված էր Աստծուն: Նեփին հնազանդվեց, երբ Տերը պատվիրեց նրան և նրա եղբայրներին վերադառնալ և խնդրել Իսմայելին և նրա ընտանիքին միանալ իրենց անապատում, որպեսզի նրանք կարողանային ամուսնանալ և երեխաներ մեծացնել: Նույնիսկ, երբ Լամանը և Լեմուելը ապստամբեցին Նեփիի դեմ և փորձեցին սպանել նրան, նա մնաց հավատարիմ և փորձեց օգնել նրանց նույնպես հավատարիմ լինել:

## Ուսուցանման առաջարկներ

### 1 Նեփի 7.1–5

*Տերը պատվիրում է Նեփիին վերադառնալ Երուսաղեմ՝ Իսմայելին և նրա ընտանիքին բերելու*

Ցուցադրեք ամուսնացած զույգի և նրանց երեխաների մի նկար: (Դուք կարող եք օգտագործել ձեր իսկ ընտանիքի նկարը:)

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 7.1–2:

- Ի՞նչ պատվիրեց Տերը Լեքիի որդիներին անել: Ի՞նչ ճշմարտություն մենք կարող ենք սովորել այս պատվիրանից: (Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ **Տերը պատվիրում է մեզ ամուսնանալ և զավակներ մեծացնել Նրա համար:)**

Հիշեցրեք ուսանողներին, որ մի քանի օրերի դժվար ճամփորդություն էր պահանջվում անապատում, որպեսզի Նեփին ու իր եղբայրները վերադառնային Երուսաղեմ:

- Ինչու՞ էր ամուսնությունը և ընտանիքը բավականաչափ կարևոր Նեփիի և նրա եղբայրների համար, որպեսզի հետ վերադառնային Երուսաղեմ, որ հանդիպեին Իսմայելի և նրա ընտանիքի հետ:

Նախքան շարունակելը դուք կարող եք յուրաքանչյուր ուսանողի տալ «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» ուղերձի օրինակը կամ թող նրանք անդրադառնան հայտարարության օրինակին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին» ուղերձի հետևյալ մասը: Հրավիրեք ուսանողներին ուշադիր լսել և ներկայացնել, թե ինչ են վերջին օրերի մարգարեները հայտարարել ամուսնության կարևորության վերաբերյալ:

«Մենք՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը, պաշտոնապես հայտարարում ենք, որ տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից և, որ ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում՝ Իր զավակների հավերժական ճակատագրի համար» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյեմբեր 2010, 129):

Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչ են նրանք սովորում այս հայտարարությունից: Համոզվեք, որ նրանք հասկանում են, որ ընտանիքը ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում մեր հավերժական ճակատագրի համար: Շեշտեք, որ սա էր պատճառը, որ Տերը պատվիրեց Նեփիին և նրա եղբայրներին հրավիրել Իսմայելի ընտանիքին գնալ իրենց հետ: Նաև բացատրեք, որ ամուսնության ամենակարևոր պատճառներից մեկը երեխաներ լույս աշխարհ բերելն է:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում սերունդ աճեցնել «Տիրոջ համար» (1 Նեփի 7.1):

Այն բանից հետո, երբ ուսանողները պատասխանեն այս հարցին, խրախուսեք նրանց լսել այլ մտքեր, մինչ դուք կկարդաք ընտանիքի վերաբերյալ հայտարարության հետևյալ մասը: Եթե նրանք ունեն հայտարարության իրենց օրինակները,

***Ընտանիքի վերաբերյալ հայտարարությունը օգտագործելը***

Քույր Ջուլի Բ. Բեքը՝ Սփոփող Միության գերագույն նախագահը, խրախուսել է սեմինարիայի և ինստիտուտի ուսուցիչներին սովորեցնել ընտանիքների կարևորության մասին և օգտագործել ընտանիքի վերաբերյալ հայտարարությունը իրենց դասերի ժամանակ. «Եկեղեցու հիմնական մտահոգությունն է սովորեցնել . . . ընտանիքին վերաբերող սկզբունքներ, սկզբունքներ, որ կսովորեցնեն [ուսանողներին] կազմել ընտանիք, ուսուցանել այդ ընտանիքին և նախապատրաստել այդ ընտանիքին արարողությունների և ուխտերի համար: . . . . . Երբ դուք սովորեցնում եք նրանց, դուք ուսուցումները կարող եք կապել կարևորագույն հայտարարությունների և արտահայտությունների հետ, որոնք գտնվում են ընտանիքի վերաբերյալ հայտարարության մեջ: Հայտարարությունը առանձին դաս չէ» (“Teaching the Doctrine of the Family” [Seminaries and Institutes of Religion satellite broadcast, Aug. 4, 2009], 5, si.lds.org):

դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք նշեն իրենց համար կարևոր բառերն ու արտահայտությունները:

«Մենք հայտարարում ենք, որ դեռևս ուժի մեջ է Իր զավակներին տված շատանալու և երկիրը լցնելու վերաբերյալ Աստծո պատվիրանը: . . .

. . .Ծնողների սուրբ պարտականությունն է՝ դաստիարակել երեխաներին սիրո և առաքինության մթնոլորտում, ապահովել նրանց նյութական և հոգևոր կարիքները, ուսուցանել նրանց սիրել և ծառայել մեկը մյուսին, պահել Աստծո պատվիրանները և օրինապաշտ քաղաքացիներ լինել, որտեղ էլ, որ ապրեն» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», 129):

Հրավիրեք ուսանողներին բարձրաձայն կարդալ 1 Նեփի 7.3–5:

- Ինչպե՞ս են 1 Նեփի 7.3–5 հատվածները օրինակ հանդիսանում 1 Նեփի 3.7 հատվածի ճշմարտության վերաբերյալ: (Օգնեք ուսանողներին տեսնել, որ Տերը ուղի պատրաստեց Նեփիի և նրա եղբայրների համար, որ հնազանդվեն ամուսնանալու և երեխաներ ունենալու պատվիրանին:)
- Ինչպե՞ս կարող են երիտասարդները պատրաստվել այժմ, որ ամուսնանան և երեխաներ «մեծացնեն» ավետարանում:

## 1 Նեփի 7.6–15

### *Հանդիպելով Լամանի և Լեմուելի ապստամբությանը, Նեփին վկայում է դեպի խոստումի երկիր առաջնորդելու Տիրոջ զորության վերաբերյալ*

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 7.6–7:

- Ինչու՞ Լամանը, Լեմուելը և Իսմայելի զավակներից մի քանիսը ապստամբեցին անապատում իրենց ճամփորդության ընթացքում:

Խրախուսեք ուսանողներին մտածել այն մասին, թե ի՞նչ կարող էին նրանք ասել Լամանին, Լեմուելին և Իսմայելի ապստամբ որդիներին ու դուստրերին, որ համոզեին նրանց շարունակել իրենց ճամփորդությունը դեպի խոստումի երկիր: Ապա խնդրեք նրանց լուռ կարդալ 1 Նեփի 7.8–12 և ներկայացնել հարցերը, որոնք Նեփին տվեց Լամանին և Լեմուելին:

- Ի՞նչ ճշմարտություններ կիսեց Նեփին, մինչ նա տալիս էր այս հարցերը: (Նա հիշեցրեց իր եղբայրներին օրհնությունների մասին, որոնք նրանք արդեն իսկ ստացել էին Տիրոջից և այն մասին, որ Տերը կարող էր շարունակել օրհնել նրանց համաձայն իրենց հավատքի:)
- Ինչու՞ է կարևոր մեզ համար հիշել այս ճշմարտությունները:

Հրավիրեք ուսանողներին կարդալ 1 Նեփի 7.13–15 և ներկայացնել հետևանքները, եթե Լամանը, Լեմուելը և Իսմայելի ապստամբ որդիներն ու դուստրերը վերադառնային Երուսաղեմ:

## 1 Նեփի 7.16–22

### *Նեփին ազատվում է Տիրոջ միջոցով*

Բացատրեք, որ այն բանից հետո, երբ Նեփին հիշեցրեց Լամանին և Լեմուելին կործանման վերաբերյալ, որը կգար Երուսաղեմում ապրողների վրա, նրանք բարկացան նրա վրա:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ 1 Նեփի 7.16: Դասարանին խնդրեք պատկերացնել, թե իրենք Նեփիի իրավիճակում են:

- Ինչպե՞ս ձեզ կզգայիք, եթե դուք լինեիք Նեփիի իրավիճակում: Ի՞նչ կանեիք դուք:

Նշեք, որ Նեփին արձագանքեց այս իրադրությանը օգնության համար աղոթելով: Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 7.17–18-ում Նեփիի աղոթքը:

- Ինչի՞ համար էր Նեփին աղոթում: Նրա աղոթքում, ձեր կարծիքով, ի՞նչ նշանակալի բան կա:

Մինչ ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, համոզվեք, որ նրանք հասկանում են, որ Նեփին խնդրեց ազատվել «համաձայն [իր] հավատքի»: Նաև նշեք, որ մինչ նա խնդրում էր ազատվել իր եղբայրներից, նա խնդրեց Աստծուն այնքան ուժ տալ իրեն, որ նա կարողանար լուծել խնդիրը: Բացատրեք, որ հավատքով աղոթելը

նշանակում է, որ մենք աղոթում ենք Տիրոջ հանդեպ վստահությամբ և գործելու ցանկությամբ: Հրավիրեք մի ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը.

«Նեփին օրինակ է մեկի, ով գիտեր և հասկանում էր և հույսը դնում էր Փրկչի հնարավորություն տվող զորության վրա:. . . Խնդրում եմ, ուշադրություն դարձրեք 17 հատվածում Նեփիի աղոթքի վրա. «Ո~վ Տեր, համաձայն իմ հավատքի, որը քո հանդեպ է, ազատիր ինձ իմ եղբայրների ձեռքից. այո, *տուր ինձ այնքան ուժ, որ կարողանամ կտրել այս կապերը,* որոնցով ես կապված եմ» (նշումներն ավելացված են):

. . . Ինձ համար հատկապես հետաքրքրական է այն, որ Նեփին չաղոթեց,. . . որ իր պայմանները փոխվեին: Դրա փոխարեն նա աղոթեց ուժ ստանալու համար, որ փոխեր իր պայմանները: Եվ թույլ տվեք ինձ հուշել, որ նա աղոթեց այս ձևով անշուշտ այն պատճառով, որ գիտեր և հասկանում էր և փորձառություն ուներ Փրկչի Քավության հնարավորություն տվող զորության հետ կապված» (“In the Strength of the Lord” [Brigham Young University devotional address, Oct. 23, 2001], 4, speeches.byu.edu):

Կիսվեք ձեր վկայությամբ, որ **Աստված պատասխանում է մեր աղոթքներին մեր հավատքի համաձայն:** Նշեք, որ այս իրավիճակում Աստված պատասխանեց Նեփիի աղոթքին գրեթե անմիջապես: Այնուամենայնիվ, աղոթքները միշտ չէ, որ պատասխանվում են այս կերպ: Երկնային Հայրը աղոթքներին պատասխանում է Իր իսկ ժամանակին, Իր իսկ ձևով և Իր կամքի համաձայն: Ուսանողներին հնարավորություն տվեք վկայել աղոթքի զորության վերաբերյալ՝ տալով նրանց հետևյալ հարցը.

- Ե՞րբ եք դուք հավատքով աղոթել և ստացել ուժ կամ օգնություն Տիրոջից՝ անմիջապես կամ որոշ ժամանակ անց: (Դուք կարող եք կիսվել փորձառությամբ, որն ունեցել այս սկզբունքի հետ կապված:)

Ասեք ուսանողներին, որ իր կապերից ազատվելուց հետո Նեփիի եղբայրները կրկին փորձեցին վնասել նրան: Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 7.19–20:

- Ո՞վ համոզեց Լամանին և Լեմուելին դադարեցնել Նեփիին սպանելու փորձ կատարելը:

Նշեք, որ մեր աղոթքները հաճախ պատասխանվում են և մեր կարիքների համար հոգ է տարվում ուրիշների հավատարիմ գործերի միջոցով: Մինչ դասարանը ուսումնասիրի 1 Նեփի 7-ի մնացած հատվածները, հրավիրեք ուսանողներին ուշադրություն դարձնել, թե ինչպես Նեփին արձագանքեց իր եղբայրներին, նույնիսկ այն ամենից հետո, ինչ նրանք արել էին նրա հանդեպ: Խնդրեք նրանց մտածել հետևյալ հարցի շուրջ՝ առանց բարձրաձայն պատասխանելու.

- Ինչպե՞ս եք դուք պատասխանել, երբ ուրիշները փորձել են վնասել ձեզ:

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 7.21: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները նշեն ներողամտության վերաբերյալ Նեփիի խոսքերը:

- Ի՞նչ է նշանակում անկեղծորեն ներել: (Եթե ուսանողները վստահ չեն, բացատրեք, որ *անկեղծորեն* նշանակում է իսկապես և ազնվորեն:)
- Ինչ՞ հորդորեց Նեփին, որ իր եղբայրները անեն: Ինչու՞ էր այս խորհուրդը կարևոր:

Վկայեք, որ **ներողամտություն փնտրելը և ուրիշներին ներելը բերում է միություն և խաղաղություն:** Հրավիրեք ուսանողներին մտածել իրենց ընտանիքներում եղած իրավիճակների մասին, որոնք ներողամտություն են պահանջել:

- Ինչու՞ է ներողամտությունը հատկապես կարևոր մեր ընտանիքներում:
- Մտածեք այն պահերի մասին, երբ դուք ներել եք ընտանիքի անդամի կամ երբ ընտանիքի անդամը ներել է ձեզ: Ինչպե՞ս է դա ազդել ձեր հարաբերությունների և ձեր տանը տիրող հոգու վրա:

Եզրափակեք դասը, հիշեցնելով ուսանողներին, որ Տերը պատվիրեց Նեփիին և նրա եղբայրներին ամուսնանալ և ունենալ ընտանիքներ, և որ Տերը նույնը պահանջում է այսօր: Նաև վկայեք, որ Տերը պատասխանում է մեր աղոթքներին և տալիս է մեզ ուժ հաղթահարելու մեր դժվարությունները համաձայն Նրա հանդեպ ունեցած մեր հավատքի: Հրավիրեք նրանց խորհել, թե ինչպես նրանք կարող են կիրառել այսօրվա դասի սկզբունքներից մեկը, որ օգնեն իրենց ընտանիքներին:

## Սերտման սուրբ գրության կրկնություն

*Նշում.* Այս ձեռնարկում կան սերտման շատ սուրբ գրությունների կրկնություններ: Դրանք ներկայացնում են բազմաթիվ մեթոդներ, որոնք դուք կարող եք օգտագործել, որ օգնեք ուսանողներին հաճախակի կրկնել սերտելու համար նախատեսված սուրբ գրությունները:

Այս դասի ծավալը կարող է հնարավորություն տալ ժամանակ տրամադրել ստուգելու սերտելու համար նախատեսված սուրբ գրության կրկնության վարժությանը: Դուք կարող եք վարել վարժությունը դասի սկզբում, որպես ընդմիջում դասի մասերի միջև կամ դասի վերջում: Հակիրճ ձևով այն կատարեք, որ ժամանակ լինի դասի համար: Այլ կրկնության վարժությունների համար տեսեք ցուցիչը:

Երբ ուսանողները կարողանում են հեշտությամբ գտնել սերտելու համար նախատեսված սուրբ գրությունները և հասկանում են դրանց նշանակությունը, բովանդակությունը և կիրառումը, նրանք ավելի վստահ են լինում իրենց անձնական ուսումնասիրությունների ժամանակ, ավետարանի սկզբունքները կիրառելու իրենց ունակության վրա և սուրբ գրություններից ուսուցանելու իրենց հնարավորությունների վրա: Խորհեք Նախագահ Հովարդ Վ. Հանթերի հետևյալ հայտարարության շուրջ. «Մենք հուսով ենք, որ ձեր ուսանողներից ոչ մեկը չի հեռանա ձեր դասարանից վախեցած կամ շփոթված կամ ամոթի զգացումով, որ նրանք չեն կարող գտնել իրենց անհրաժեշտ օգնությունը, քանի որ նրանք բավականաչափ լավ չգիտեն սուրբ գրությունները, որպեսզի գտնեն համապատասխան հատվածները» (“Eternal Investments” [address to CES religious educators, Feb. 10, 1989], 2, si.lds.org):

Որպեսզի օգնեք ուսանողներին ծանոթանալ այն տեղերի հետ, որտեղ գտնվում են սերտման սուրբ գրությունները, հրավիրեք նրանց անդրադառնալ սերտման սուրբ գրությունների էջանշանին, գտնել սերտման առաջին հինգ հատվածները և կարդալ դրանք: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին ընդգծել սերտման սուրբ գրության հատվածները այնպես, որ նրանք կարողանան հեշտությամբ գտնել հատվածները:

ԴԱՍ 12

# 1 Նեփի 8

## Նախաբան

1 Նեփի 8 Լեքին պատմում է կենաց ծառի մասին իր տեսիլքը: Տեսիլքում Լեքին ճաշակում է ծառի պտուղը, որը ներկայացնում է Աստծո սերը և օրհնությունները, որոնք մենք կարող ենք ստանալ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Լեքիին ցույց են տրվում մի քանի խումբ մարդիկ: Որոշները կորչում են և չեն հասնում ծառին: Մյուսները ամաչում են այն բանից հետո, երբ ճաշակում են ծառի պտղից, և նրանք ընկնում են արգելված ուղիների վրա և կորչում: Ուրիշներն էլ ամուր բռնում են երկաթյա ձողից, ճաշակում են պտղից և մնում են ազնիվ ու հավատարիմ: Մեկ այլ խումբ ընտրում է ընդհանրապես չփնտրել կենաց ծառի ուղին:

## Ուսուցանման առաջարկներ

### 1 Նեփի 8.1–18

*Լեքին տեսիլք է տեսնում, որտեղ նա ճաշակում է կենաց ծառի պտղից և հրավիրում է իր ընտանիքին նույնն անել*

Հրավիրեք ուսանողներին մտածել ժամանակների մասին, երբ նրանք զգացել են Երկնային Հոր սերը իրենց հանդեպ: Խնդրեք նրանց լուռ խորհել, թե ինչպես են իրենց կատարած ընտրությունները ազդում Աստծուն մոտ լինելու և Նրա սերը զգալու կարողության վրա: Մտածելու համար նրանց ժամանակ տալուց հետո կիսվեք ձեր վկայությամբ, որ Երկնային Հայրը սիրում է նրանցից յուրաքանչյուրին: Մինչ դասարանն ուսումնասիրում է 1 Նեփի 8, խրախուսեք ուսանողներին ուշադրություն դարձնել այն բաների վրա, որոնք նրանք կարող են անել, և այն բաների վրա, որոնցից նրանք պետք է խուսափեն, եթե ուզում են ավելի մոտենալ Աստծուն և զգալ Նրա սերը ավելի առատորեն իրենց կյանքում: (Որպեսզի օգնեք ուսանողներին նախապատրաստվել այս դասին, դուք կարող եք հրավիրել նրանց դասի սկզբում երգել «Երկաթե ձողը» [*Օրհներգեր,* հ. 274]:)

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 8.2: Խնդրեք դասարանին ներկայացնել, թե ինչ փորձառություն ունեցավ Լեքին արույրե թիթեղների հետ՝ Երուսաղեմից իր որդիների վերադարձից կարճ ժամանակ անց: Թող մի քանի ուսանողներ հերթով բարձրաձայն կարդան 1 Նեփի 8.5–12:

- Ո՞ր առարկաներն էին գտնվում Լեքիի տեսիլքի կենտրոնում: (Կենաց ծառը և դրա պտուղը:)
- Ի՞նչ բառեր և արտահայտություններ օգտագործեց Լեքին պտուղը նկարագրելու համար: (Տես 1 Նեփի 8.10–11; դուք կարող եք նաև խնդրել ուսանողներին կարդալ 1 Նեփի 11.8–9 տեսնելու համար, թե ինչպես էր Նեփին նկարագրում ծառը:)

Բացատրեք, որ Տերը հաճախ օգտագործում է ծանոթ առարկաները որպես խորհրդանիշներ, որպեսզի օգնի մեզ հասկանալ հավերժական ճշմարտությունները: Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչ են ներկայացնում Լեքիի երազի ծառն ու պտուղը, հրավիրեք մի ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելի հետևյալ խոսքերը: Խնդրեք դասարանին ուշադիր լսել և ներկայացնել, թե ինչ են խորհրդանշում ծառը և պտուղը:

«Կենաց ծառը . . . Աստծո սերն է (տես 1 Նեփի 11.25): Իր զավակների հանդեպ Աստծո սերը ամենահիմնավոր ձևով արտահայտվել է Հիսուսին որպես մեզ Փրկիչ Նրա պարգևի շնորհիվ. «Աստուած այնպէս սիրեց աշխարհքը որ իր միածին Որդին տուաւ» (Հովհաննես Գ.16): Աստծո սերը ճաշակելը նշանակում է ճաշակել Քրիստոսի Քավությունից և իրավահավասարությունից ու երջանկությունից, որն այն կարող է բերել» (“Lessons from Laman and Lemuel,” *Ensign,* Nov. 1999, 8):

- Համաձայն Երեց Մաքսվելի, կենաց ծառը ներկայացնում է մեր հանդեպ ցուցաբերած Աստծո սերը հատկապես ո՞ր պարգևի միջոցով: (Օգնեք ուսանողներին

հասկանալ, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը Իր զավակների հանդեպ Աստծո սիրո ամենամեծ արտահայտումն է: Երբ մարդիկ Լեքիի տեսիլքում ճաշակեցին կենաց ծառի պտղից, դա նշանակում էր, որ նրանք ճաշակում էին Քավության օրհնություններից):

- *Իրավահավասարություն* նշանակում է ազատագրում կամ ազատություն: Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի Քավությունը ազատում մեզ գերությունից և ուրախություն բերում մեզ:

Որպեսզի օգնեք ուսանողներին ներկայացնել 1 Նեփի 8.10–12 լուսաբանված սկզբունքներից մեկը, խնդրեք նրանց ներկայացնել 1 Նեփի 8.11 բառերը, որոնք նկարագրում են, թե ինչ արեց Լեքին («Ես առաջ գնացի և ճաշակեցի պտղից»): Այնուհետև թող նրանք փնտրեն նրա արարքի արդյունքները 1 Նեփի 8.12 («այն լցրեց իմ հոգին չափազանց մեծ ուրախությամբ»): Դուք կարող եք նաև ցույց տալ ուսանողներին, որ 1 Նեփի 8.10 Լեքին նկարագրում էր պտուղը որպես «բաղձալի՝ մարդուն երջանիկ դարձնելու համար»: (Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները նշեն այս արտահայտությունները իրենց սուրբ գրություններում:)

- Ի՞նչ զգացմունքներ ունեցավ Լեքին պտուղը ճաշակելուց հետո:
- Ինչպե՞ս մենք կարող ենք «ճաշակել» Քավությունից: (Ապաշխարության միջոցով:)
- Ինչու՞ է Քավությունից ճաշակելը լցնում մեր հոգիները «չափազանց մեծ ուրախությամբ»:

Կիսվեք ձեր վկայությամբ, որ **Հիսուս Քրիստոսի մոտ գալը և Քավությունից ճաշակելը բերում է ուրախություն և երջանկություն:** (Դուք կարող եք այս սկզբունքները գրել գրատախտակին:)

- Ե՞րբ է Փրկչի Քավությունը ուրախություն և երջանկություն բերել ձեր կյանքում: (Հիշեցրեք ուսանողներին, որ նրանք կարիք չունեն կիսվել փորձառություններով, որոնք շատ անձնական կամ գաղտնի են:)

## 1 Նեփի 8.19–35

### *Իր տեսիլքում Լեքին տեսնում է մի քանի խումբ մարդկանց և կենաց ծառին հասնելու նրանց հաջողությունը կամ անհաջողությունը*

Ցուցադրեք Լեքիի երազը նկարը (62620; *Gospel Art Book* [2009], no. 69) և ցույց տվեք խորհրդանիշները, որոնք դասարանը արդեն իսկ քննարկել է՝՝ ծառը և պտուղը: Բացատրեք, որ այս տեսիլքում Տերը օգտագործել է նաև այլ խորհրդանիշներ, որ սովորեցնի Լեքիին, թե ինչպես գալ դեպի Հիսուս Քրիստոսը և ճաշակել Նրա Քավությունից: Հարցրեք ուսանողներին, թե ինչ այլ խորհրդանիշներ են նրանք տեսնում նկարում: (Պատասխանները կարող են ներառել՝ գետը, երկաթյա ձողը, խավարի մեգը և մեծ ու ընդարձակ շենքը:)

Հիշեցրեք ուսանողներին, որ Տերը ցույց տվեց Նեփիին նույն տեսիլքը: Նեփիին ավելի ուշ գրի առավ տեսիլքի մի շարք խորհրդանիշների և պատկերների իմաստները (տես 1 Նեփի 11, 12 և 15):

Հետևյալ ցուցակը նախապատրաստեք բաժանելու համար կամ գրեք այն գրատախտակին նախքան դասի սկսվելը: (Աջ կողմը ազատ թողեք՝ բացառությամբ սուրբ գրությունների հղումներից:) Հրավիրեք ուսանողներին օգտագործել նախապատրաստած հղումները՝ Լեքիի տեսիլքի յուրաքանչյուր տարրը ներկայացնելու համար: Դասարանի հետ միասին կրկնեք առաջին խորհրդանիշը՝ սպիտակ պտղով ծառը: Ուսանողներին տվեք մի քանի րոպե, որ անձամբ ներկայացնեն մնացած չորս խորհրդանիշների իմաստները: (Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք իրենց պատասխանները գրեն իրենց սուրբ գրություններում 1 Նեփի 8 համապատասխան հատվածների կողքին:)

| Լեքիի տեսիլքի խորհրդանիշը | Նեփիի տված մեկնաբանությունը |
|---|---|
| 1 Նեփի 8.10–12. Սպիտակ պտղով ծառը | 1 Նեփի 11.21–25 (Աստծո սերը; Հիսուս Քրիստոսի Քավության օրհնությունները) |
| 1 Նեփի 8.13. Պղտոր ջրերով գետը | 1 Նեփի 12.16, 15.26–29 (Պղտորություն; դժոխքի խորքերը) |

### *Ընդգծել և նշումներ կատարել սուրբ գրություններում*

Ուսանողների համար կարող է օգտակար լինել հղումներ, խորհրդանիշների բացատրություններ և այլ տեղեկություններ իրենց սուրբ գրությունների լուսանցքներում գրելը: Նրանց համար կարող է նաև օգտակար լինել տողատակի ծանոթագրությունների հղումները ընդգծելը: Այսպիսի նշումները կարող են ծառայել որպես հիշեցում, որ օգնեն նրանց հետագայում հասկանալ և սովորեցնել սուրբ գրություններից: Այս նշումները կարող են ավելի մատչելի և տևական լինել, քան այն տեղեկությունները, որոնք գրվում են օրագրերում կամ առանձին թերթիկների վրա: Այնուամենայնիվ, դուք միշտ պետք է հարգեք ուսանողների ընտրությունը և երբեք չպահանջեք, որ նրանք գրեն իրենց սուրբ գրություններում: Դրա փոխարեն խորհուրդներ տվեք և թույլ տվեք ուսանողներին որոշել, թե որն է նպատակահարմար:

| | |
|---|---|
| 1 Նեփի 8.19. Երկաթյա ձողը | 1 Նեփի 11.25 (Աստծո խոսքը) |
| 1 Նեփի 8.23. Խավարի մեգը | 1 Նեփի 12.17 (Դևի գայթակղությունները) |
| 1 Նեփի 8.26. Մեծ և ընդարձակ շենքը | 1 Նեփի 11.35–36, 12.18 (Աշխարհի հպարտությունը և սին երևակայությունները) |

Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց բացահայտած բացատրություններով: Որպեսզի օգնեք նրանց տեսնել 1 Նեփի 8 առնչությունը իրենց կյանքում, խնդրեք մի ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բոյդ Ք. Փաքերի հետևյալ խոսքերը: Հրավիրեք դասարանին ուշադրություն դարձնել այն բանի վրա, թե ինչու է կարևոր նրանց համար ուսումնասիրել Լեքիի տեսիլքը.

«Դուք միգուցե կարծեք, որ Լեքիի երազը կամ տեսիլքը ձեր համար առանձնահատուկ նշանակություն չունի, սակայն դա այդպես չէ: Դուք կաք այնտեղ. մենք բոլորս էլ այնտեղ ենք: . . .

Լեքիի երազը կամ տեսիլքը . . . իր մեջ պարունակում է ամեն ինչ, որ Վերջին Օրերի Սուրբը պետք է հասկանա կյանքի փորձաշրջանում» (“Finding Ourselves in Lehi’s Dream,” *Ensign,* Aug. 2010, 22):

Մինչ ուսանողները ուսումնասիրեն տեսիլքի մնացած մասը, խրախուսեք նրանց տեսիլքում գտնել այն մարդկանց, ովքեր կարող են ներկայացնել իրենց: Վստահեցրեք նրանց, որ անկախ այն բանից, թե տեսիլքում նրանք իրենց որտեղ են տեսնում, նրանցից յուրաքանչյուրը զորություն և կարողություն ունի ընտրելու Քավության օրհնությունները ստանալու իրավունքը:

Ուսանողներին բաժանեք երկու խմբի: Բացատրեք, որ յուրաքանչյուր խումբ փնտրելու է տարբեր բաներ, մինչ դասարանը միասին կկարդա 1 Նեփի 8.21–33:

Առաջին խմբին խնդրեք փնտրել հետևյալ հարցերի պատասխանները: (Նախքան դասը այս հարցերը գրեք գրատախտակին կամ առանձին թերթիկների վրա և բաժանեք:)

- Ի՞նչ դժվարությունների հանդիպեցին մարդիկ Լեքիի տեսիլքում:
- Ի՞նչ են ներկայացնում այդ դժվարությունները:
- Ի՞նչ տեսքով են հանդես գալիս այդ դժվարությունները այսօր:
- Ի՞նչ սկզբունքներ եք դուք տեսնում այս հատվածներում:

Հրավիրեք երկրորդ խմբին փնտրել հետևյալ հարցերի պատասխանները: (Նախքան դասը սկսելը հարցերը գրեք գրատախտակին կամ թերթիկների վրա և բաժանեք:)

- Ի՞նչը օգնեց մարդկանց հասնել ծառին և ճաշակել պտուղը:
- Ինչո՞վ է երկաթյա ձողը նման Աստծո խոսքին:
- Ինչպե՞ս է Աստծո խոսքը օգնում մեզ հաղթահարել հավերժական կյանքի ճանապարհին եղած դժվարությունները:
- Ի՞նչ սկզբունքներ եք դուք տեսնում այս հատվածներում:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 1 Նեփի 8.21–33: Այնուհետև հրավիրեք առաջին խմբի ուսանողներին կիսվել իրենց հանձնարարված հարցերի իրենց պատասխաններով: Նաև խնդրեք նրանց կիսվել սկզբունքներով, որոնք նրանք տեսնում են այս հատվածներում: Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ **հպարտությունը, աշխարհիկ լինելը և գայթակղություններին տեղի տալը կարող է մեզ հեռացնել Քավության օրհնությունները ստանալուց:** Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչպես կարող են այս դժվարությունները խոչընդոտել իրենց հոգևոր զարգացմանը:

Թող երկրորդ խմբի ուսանողները կիսվեն իրենց հանձնարարված հարցերի իրենց պատասխաններով: Նրանց մտքերի քննարկումից հետո հրավիրեք նրանց կիսվել սկզբունքներով, որոնք նրանք տեսնում են 1 Նեփի 8.21–33: Նրանց ներկայացրած սկզբունքները կարող են ներառել հետևյալը.

**Եթե մենք ամուր բռնենք Աստծո խոսքից, դա կօգնի մեզ հաղթահարել փորձությունը և աշխարհի ազդեցությունները:**

**Աստծո խոսքից ամուր բռնելը օգնում է մեզ ավելի մոտենալ Տիրոջը և ստանալ Քավության օրհնությունները:**

- 1 Նեփի 8.24 և 30-ում ո՞ր բառերն են նկարագրում երկաթյա ձողից կառչելու և ծառին հասնելու մարդկանց ջանքերը:
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «առաջ մղվել»:
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում կառչել և անընդհատ ամուր բռնել Աստծո խոսքից: (Դուք կարող եք բացատրել, որ 1 Նեփի 8.30 -*ում ամուր* նշանակում է պինդ կպած:)
- Ինչու՞ մենք պետք է ուսումնասիրենք սուրբ գրությունները ամեն օր:

Այս հարցերը քննարկելուց հետո դուք կարող եք նշել, որ տեսիլքում որոշ մարդիկ, ինչպես օրինակ Լամանը և Լեմուելը, չճաշակեցին պտղից (տես 1 Նեփի 8.22–23, 35–38): Սա ներկայացնում էր նրանց մերժումը, որ ապաշխարեին և ճաշակեին Հիսուս Քրիստոսի Քավության օրհնությունները: Որոշ մարդիկ հեռացան նույնիսկ պտուղը ճաշակելուց հետո (տես 1 Նեփի 8.25, 28): Սա հիշեցնում է մեզ, որ այն բանից հետո, երբ մենք սկսում ենք ստանալ Քավության օրհնությունները, մենք պետք է ջանասեր լինենք և հավատարիմ, ապաշխարենք մեր մեղքերից և ձգտենք պահել մեր ուխտերը: Խրախուսեք ուսանողներին հետևել այն մարդկանց օրինակին, ովքեր ճաշակեցին պտղից և մնացին ծառին մոտ (տես 1 Նեփի 8.33):

Որպեսզի օգնեք ուսանողներին տեսնել, թե ինչպես են Լեքիի տեսիլքի սկզբունքները օրհնել նրանց կյանքը, հրավիրեք նրանց պատասխանել հետևյալ հարցերից մեկին իրենց դասարանային նոթատետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:

- Ե՞րբ է Աստծո խոսքը առաջնորդել ձեզ կամ օգնել ձեզ հաղթահարել փորձությունը, հպարտությունը կամ աշխարհիկ լինելը:
- Ե՞րբ եք դուք զգացել Աստծո սերը ձեր հանդեպ, մինչ կարդացել կամ լսել եք Նրա խոսքը:

Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց պատասխանով դասարանի հետ:

Խրախուսեք ուսանողներին գործել համաձայն այն ամենի, ինչ նրանք սովորեցին և զգացին, մինչ ուսումնասիրում էին 1 Նեփի 8, իրատեսական նպատակ դնելով սկսել կամ շարունակել սուրբ գրությունները ամեն օր անձամբ ուսումնասիրելու սովորություն զարգացնելը: Ուսանողների հետ կիսվեք օրհնություններով, որոնք եկել են ձեր կյանք ամեն օր սուրբ գրությունները անձամբ կարդալու արդյունքում:

***Խրախուսեք ամեն օր ուսումնասիրել սուրբ գրությունները***

Մի քանի բաներ ավելի երկարատև ազդեցություն ունեն , քան ուսանողներին օգնելը, որ զարգացնեն ամեն օր սուրբ գրությունների անձնական ուսումնասիրություն ունենալու սովորությունը: Խրախուսեք ուսանողներին ամեն օր ժամանակ հատկացնել սուրբ գրությունները ուսումնասիրելուն: Նաև ուսանողներին մշտապես հնարավորություն տվեք դասի ժամանակ կիսվել նրանով, ինչ նրանք սովորում և զգում են սուրբ գրությունների անձնական ուսումնասիրության ժամանակ:

ԴԱՍ 13

# 1 Նեփի 10–11

## Նախաբան

Իր հոր Լեքիի պատմությունը իր տեսիլքի վերաբերյալ լսելուց հետո Նեփին նույնպես փափագեց տեսնել, լսել և իմանալ բաները, որ Լեքին տեսել ու լսել էր (տես 1 Նեփի 10.17)։ Մինչդեռ նա խորհում էր իր հոր ուսմունքների շուրջ, Նեփին «Տիրոջ Հոգով տարվեց հեռու» (1 Նեփի 11.1) և ինքն էլ տեսիլք տեսավ։ Այս տեսիլքը տրված է 1 Նեփի 11–14-ում։

1 Նեփի 11-ում մենք կարդում ենք կենաց ծառի, երկաթյա ձողի և մեծ ու ընդարձակ շենքի մասին, ինչպես նաև Փրկչի ծննդի, մկրտության, ծառայության և խաչելության մասին։ Մինչ Նեփին վկայում էր այս բաների վերաբերյալ, նա հասկացավ սերը, որ Աստված ունի Իր զավակների հանդեպ։

## Ուսուցանման առաջարկներ

### 1 Նեփի 10.1–16

*Լեքին մարգարեանում է Մեսիայի մասին*

Հակիրճ ձևով ամփոփեք 1 Նեփի 10.1–16, ասելով ուսանողներին, որ կենաց ծառի իր տեսիլքից հետո Լեքին նաև տվեց մի շարք մարգարեություններ։ Սա ներառում էր մանրամասներ այն մասին, թե երբ պիտի աշխարհ գար Հիսուս Քրիստոսը (տես 1 Նեփի 10.4), Նրա մկրտությունը Հովհաննես Մկրտչի կողմից (տես 1 Նեփի 10.7–10), Նրա խաչելությունը և հարությունը (տես 1 Նեփի 10.11) և Իսրայելին սպառնացող ցրումն ու հավաքումը (տես 1 Նեփի 10.12–14)։

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 10.4–6։ (Դուք կարող եք բացատրել, որ *Մեսիան* «արամեական և եբրայերեն բառաձև է, որը նշանակում է «օծյալ»։ Նոր Կտակարանում Հիսուսին անվանում էին Քրիստոս, որը *Մեսիա* բառի հունարեն համարժեքն է։ Այն նշանակում է օծյալ Մարգարե, Քահանա, Թագավոր և Ազատիչ, որի գալստին անհամբեր սպասում էին հրեաները» [Guide to the Scriptures, "Messiah," scriptures.lds.org; տես նաև Սուրբ Գրությունների Ուղեցույց, «Մեսիա»])։

- Համաձայն Լեքիի մարգարեության, ե՞րբ պետք է Փրկիչը գար։ (Տես 1 Նեփի 10.4։)
- Ի՞նչ կպատահեր մարդկության հետ, եթե նրանք չապավինեին Փրկչին (տես 1 Նեփի 10.6)։

### 1 Նեփի 10.17–22. 11.1–6

*Նեփին ձգտում է տեսնել, լսել և իմանալ իր հոր ուսուցանած ճշմարտությունները*

Խնդրեք ուսանողներին խորհել հետևյալ օրինակի շուրջ. Երեք երիտասարդ տղամարդիկ այցելում են Եկեղեցու նույն ժողովին։ Տուն վերադառնալուց հետո երիտասարդ տղամարդկանցից մեկը կարծում է, որ ժողովը ձանձրալի էր և իր ժամանակը անտեղի անցավ։ Մյուսը մտածում է, որ հաճելի ժողով էր, սակայն այն ոչինչ չի փոխում նրա մեջ։ Երրորդը տուն է վերադառնում Սուրբ Հոգով լցված և ստանում է ոգեշնչում և առաջնորդություն իր կյանքի համար, նույնիսկ այն ամենից ավելի, ինչ ուսուցանվել էր ժողովի ժամանակ։

- Ինչպե՞ս է հնարավոր, որ երեք երիտասարդ տղամարդիկ հաճախեին նույն ժողովին, սակայն ունենային այսպիսի տարբեր փորձառություններ։

Բացատրեք, որ այս օրինակը նման է Լամանի, Լեմուելի և Նեփիի փորձառությանը, երբ նրանք լսեցին իրենց հոր մարգարեությունները և նրա տեսիլքի պատմությունը։ Լամանը և Լեմուելը չհասկացան իրենց հոր խոսքերը և վիճաբանեցին իրենց լսածի շուրջ (տես 1 Նեփի 15.2)։ Մյուս կողմից Նեփին դարձավ դեպի Տերը հասկացողության համար։ Նա հրաշալի օրինակ հանդիսացավ այն բանի, թե ինչպես փնտրել և ստանալ հայտնություն։

### *Մնանուն կիսվել*

Դուք կարող եք խնդրել ուսանողներին անանուն գրավոր ձևով ներկայացնել, թե ինչ փորձառություն են նրանք ունենում իրենց անձնական ամենօրյա սուրբ գրությունների ուսումնասիրության ժամանակ։ Հավաքեք նրանց պատասխանները և մի քանիսը կարդացեք դասարանի համար։ Դասընկերների վկայությունը լսելը կարող է խթանիչ ուժ հանդիսանալ մյուս ուսանողների համար իրենց անձնական ուսումնասիրությունների ժամանակ։ Որոշ ուսանողներ վարանում են ազատ կիսվել վկայություններով և հոգևոր փորձառություններով, քանի որ նրանք չեն ուզում պարծենկոտ երևալ կամ նրանք վախենում են ուրիշները կքննադատեն իրենց կամ լուրջ չեն վերաբերվի իրենց փորձառություններին։

Ասեք ուսանողներին, որ երբ նրանք ուսումնասիրեն Նեփիի փորձառությունը, նրանք կգտնեն սկզբունքներ, որոնք կօգնեն նրանց փնտրել և ստանալ անձնական հայտնություն: Խրախուսեք նրանց ուշադրություն դարձնել Նեփիի այն արարքին, որը հնարավորություն տվեց նրան ստանալ հայտնություն, որը նման էր այն հայտնությանը, որը ստացել էր Լեքին:

Դասարանը երեք խմբի բաժանեք: Յուրաքանչյուր խմբին հանձնարարեք թեմաներից մեկը և հետևյալ ցուցակների խմբից մեկը: (Դուք կարող եք ցուցակները գրել գրատախտակին նախքան դասը սկսվելը:) Հրավիրեք ուսանողներին լուռ կարդալ 1 Նեփի 10.17 և 11.1–6 և պատրաստել դրանց համար նախատեսված հարցերի պատասխանները:

| | |
|---|---|
| Ցանկություն | Ի՞նչ էր ցանկանում Նեփին տեսնել, լսել և իմանալ:<br>Ինչպե՞ս են մեր ցանկությունները ազդում հայտնություն ստանալու մեր կարողության վրա:<br>Ի՞նչ եմ ես ցանկանում իմանալ Տիրոջից: |
| Հավատք | Ի՞նչ հավատք էր ցուցաբերում Նեփին, երբ հայտնություն էր փնտրում:<br>Ինչպե՞ս կարող է այս հավատքը ազդել հայտնություն ստանալու մեր կարողության վրա:<br>Ինչպե՞ս ես կարող եմ զարգացնել իմ վկայությունը և հավատքը առ Հիսուս Քրիստոսը: |
| Խորհել | Ի՞նչ պատահեց, երբ Նեփին նստեց, որ խորհեր:<br>Ինչու՞ է խորհելը առաջնորդում դեպի հայտնություն:<br>Ի՞նչ կարող եմ ես անել, որ ավելի ջանասիրաբար խորհեմ մարգարեների խոսքերի շուրջ: |

Հրավիրեք յուրաքանչյուր խմբից մի քանի ուսանողների կիսվել իրենց հանձնարարված հարցերից առաջին երկուսի պատասխաններով: (Դուք կարող եք նաև հրավիրել ուսանողներին պատասխանել երրորդ հարցին, սակայն վստահեցրեք նրանց, որ նրանք կարիք չունեն կիսվելու պատասխաններով, որ շատ անձնական են կամ գաղտնի:)

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 10.19:

- Ո՞վ կարող է իմանալ Աստծո խորհուրդները:
- Ի՞նչ զորությունով են հայտնվում Աստծո խորհուրդները:
- Ի՞նչ պետք է մենք անենք, որ հայտնություն ստանանք Սուրբ Հոգու միջոցով:
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում ջանասիրաբար փնտրել:
- Ի՞նչ էր անում Նեփին, որը ցույց էր տալիս, որ նա ջանասիրաբար փնտրում էր տեսնել, լսել և իմանալ բաները, որ սովորեցնում էր իր հայրը:

Գրատախտակի վրա գրեք հետևյալ նախադասությունը.

*Աստված հայտնում է ճշմարտությունը . . .*

Ուսանողներին խնդրեք ամփոփել, թե ինչ են նրանք սովորել Նեփիի փորձառությունից՝ լրացնելով գրատախտակին գրված նախադասությունը: Մինչդեռ ուսանողները կարող են ընտրել տարբեր բառեր, նրանց պատասխանները պետք է նշեն, որ **Աստված հայտնում է ճշմարտությունը բոլոր նրանց, ովքեր ջանասիրաբար փնտրում են Իրեն:** (Դուք կարող եք այս սկզբունքը գրել գրատախտակին:)

Խրախուսեք ուսանողներին մտածել այն պահերի մասին, երբ ջանասիրաբար Աստծուն փնտրելը օգնել է իրենց զգալ Նրա Հոգին և ստանալ հայտնություն: (Կարող է օգտակար լինել նշելը, որ հայտնությունը կարող է ներառել առաջնորդություն ստանալը, երբ որոշում եք կայացնում, հասկացողության մեծացում ձեռք բերելը, մխիթարություն ստանալը կամ վստահություն ձեռք բերելը, որ ինչ-որ բան ճիշտ է:) Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց փորձառություններով դասարանի հետ: Դուք նաև կարող եք վկայել, թե ինչ փորձառություն եք ունեցել ջանասիրաբար Տիրոջը փնտրելիս:

## 1 Նեփի 11.7–36

### *Նեփին վկայում է Աստծո ներողամտության մասին*

Բացատրեք ուսանողներին, որ Նեփին շարունակեց խորհել և աստվածային առաջնորդություն փնտրել իր տեսիլքի ընթացքում: Երբ Նեփին խնդրեց իմանալ իր և իր հոր տեսած ծառի մեկնաբանությունը, մի հրեշտակ հայտնվեց նրան օգնելու համար: Հրեշտակը հարցրեց. «Իմացա՞ր իմաստը ծառի, որ հայրդ տեսել էր» (1 Նեփի 11.21): Ծառի իմաստը կրկնելու համար թող մի քանի ուսանողներ հերթով բարձրաձայն կարդան 1 Նեփի 11.18–23:

- Ըստ Նեփիի, ո՞րն էր ծառի իմաստը: (Ուսանողների պատասխաններից հետո դուք կարող եք նշել, որ Նեփին տեսավ Մարիամին մանուկ Հիսուսին գրկած, և հրեշտակը ներկայացրեց մանկանը որպես «Հավերժական Հոր Որդի»: Այնուհետև հրեշտակը հարցրեց ծառի իմաստը, որ օգներ նրան հասկանալ, որ այն ներկայացնում էր Հիսուս Քրիստոսին: Երբ Նեփին պատասխաներց, որ այն ներկայացնում էր «Աստծո սերը», նա նկատի ուներ, որ Աստծո սերը արտահայտվում էր Իր Որդու միջոցով: Մենք զգում ենք Աստծո սերը՝ ճաշակելով Հիսուս Քրիստոսի Քավության օրհնությունները:)
- Ինչպե՞ս էին Նեփին և հրեշտակը նկարագրում Աստծո սերը:

Խնդրեք մի ուսանողի կարդալ 1 Նեփի 11.16: (Բացատրեք, որ *բարեհաճություն* բառը նշանակում է կամավոր տրված՝ ելնելով գնահատանքից կամ արժանապատվությունից: Դուք կարող եք հրավիրել ուսանողներին գրի առնել այս բացատրությունը իրենց սուրբ գրություններում՝ 1 Նեփի 11.16 հատվածի կողքին:)

Թող ուսանողները ներկայացնեն հրեշտակի հարցին տրված Նեփիի պատասխանը՝ բարձրաձայն կարդալով 1 Նեփի 11.17:

- Ի՞նչ գիտեր Նեփին:
- Ի՞նչ նա չգիտեր:

Նեփիի պատասխանից հետո հրեշտակը նրան ցույց տվեց Աստծո բարեհաճության մի քանի օրինակներ, որ օգներ խորացնել նրա հասկացողությունը Աստծո սիրո վերաբերյալ: Բացատրեք ուսանողներին, որ «Աստծո բարեհաճությունը» վերաբերվում է Հայր Աստծուն և Հիսուս Քրիստոսին:

Կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրյուս Ռ. Մակքոնկիի հետևյալ մտքերով, ով բացատրում էր Աստծո՝ մեր Երկնային Հոր բարեհաճությունը.

«Աստծո բարեհաճության հիմքն այն է, որ նա՝ վեհացված մի Անձնավորություն, վայր է իջնում իր հավերժական գահից՝ դառնալու մահկանացի Որդու Հայրը» (*The Mortal Messiah* [1979], 1:314):

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչպես է «Աստծո բարեհաճությունը» վերաբերվում նաև Հիսուս Քրիստոսին, ցուցադրեք Հիսուսի Ծնունդը նկարը (62116; *Gospel Art Book* [2009], no. 30): Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 11.13–21: Հրավիրեք մեկ այլ ուսանողի ներկայացնել, թե ինչ կապ ունեն այս հատվածները նկարի հետ: Թող մի ուսանող կարդա նախկին Յոթանասունական Երեց Ջեռալդ Ն. Լանդի խոսքերը: Հրավիրեք դասարանին ուշադիր լսել, թե ինչ ուղիներով է Տերը սեր ցուցաբերում մեր հանդեպ:

«Ահա Հիսուսը՝ Աստվածագլխի անդամը, Հոր Միածինը, Արարիչը, Հին Կտակարանի Եհովան, որ այժմ թողնում էր իր աստվածային կայանը, զրկելով Իրեն այդ ամբողջ փառքից և վեհությունից և մտնելով այդ փոքրիկ նորածնի մարմնի մեջ, ամբողջությամբ կախման մեջ լինելով Իր մորից և երկրային հորից: Այն, որ Նա չպիտի զար աշխարհի լավագույն վայրերից մեկը և . . . ողողված լիներ թանկարժեք գոհարներով, այլ պիտի զար ցածրաստիճան մի ախոռ, ապշեցուցիչ է: Մի փոքր խորհեք այն մասին, որ հրեշտակը կարող էր ասել Նեփիին. «Ահա Աստծո բարեհաճությունը»» (*Jesus Christ, Key to the Plan of Salvation* [1991], 16):

- Ինչպե՞ս է Փրկչի ծնունդը ցույց տալիս Նրա սերը մեր հանդեպ:

Համոզվեք, որ ակնհայտ է այն, որ մահկանացու կյանքով ապրելու Փրկչի պատրաստակամությունը ցույց է տալիս Նրա սերը մեր հանդեպ:

Ցուցադրեք Հիսուսը հարություն է տալիս Հայրոսի աղջկան (62231; *Gospel Art Book,* no. 41) և Քրիստոսը բժշկում է անդամալույծին Բեթհեզդայի մոտ (*Gospel Art Book,* no. 42) նկարները: Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 11.28 և

31: Խրախուսեք դասարանին ներկայացնել, թե ինչ ընդհանրություն կա նկարների և հատվածների միջև:

- Ու՞մ տեսավ Նեփիին, որ Փրկիչը ծառայում և բժշկում էր:
- Ինչպե՞ս են Քրիստոսի գործողությունները ցույց տալիս Նրա սերը:

Թող մի ուսանող բարձրաձայն կարդա 1 Նեփի 11.32–33: Հրավիրեք ուսանողներին ուշադրություն դարձնել Փրկչի սիրո ամենամեծ օրինակի վրա:

Այն բանից հետո, երբ ուսանողները կկիսվեն իրենց նկատառումներով, ցուցադրեք Խաչելությունը նկարը (62505; *Gospel Art Book,* no. 57):

Վկայեք, որ **Հիսուս Քրիստոսի բարեհաճությունը ցուցադրում է Աստծո սերը մեր հանդեպ:** Փրկիչը բարեհաճեց ապրել մահկանացու կյանքով, ծառայել և բժշկել հիվանդներին և տառապյալներին և մահանալ մեր բոլոր մեղքերի համար, որպեսզի մենք կարողանանք վերադառնալ տուն՝ Երկնային Հոր ներկայություն:

- Փրկչի բարեհաճության և սիրո մասին իմանալը ինչպե՞ս է ազդում Նրա հանդեպ ձեր զգացմունքների վրա:

Եզրափակեք՝ հրավիրելով ուսանողներին կիսվել, թե ինչպես է Աստծո սերը «ամենաբաղձալին» և «ամենաբերկրալին» նրանց համար (տես 1 Նեփի 11.22–23): Վկայեք, որ երբ մենք հետևենք Նեփիի օրինակին և ջանասիրաբար փնտրենք Աստծուն, մենք կզգանք Նրա սերը և կունենանք Քրիստոսի Քավության շնորհիվ հնարավոր դարձած օրհնությունները ճաշակելու փորձառության ուրախությունը:

Հրավիրեք ուսանողներին հայտնություն փնտրելու իրենց ջանքերում հետևել Նեփիի օրինակին: Հիշեցրեք նրանց սեմինարիայի դասերին որպես սովորողներ իրենց դերի մասին և որ հավատքը և ջանքերը, որ նրանք ներդնում են իրենց ամենօրյա սուրբ գրությունների ուսումնասիրության և դասին մասնակցելու ժամանակ, ազդեցություն են թողնում Հոգով սովորելու վրա:

ԴԱՍ 14

# 1 Նեփի 12–13

## Նախաբան

Այն բանից հետո, երբ Նեփին տեսիլքում տեսավ Փրկչի ծառայությունը մահկանացու կյանքում և Քավությունը, նա տեսավ, որ արդարության մեջ չորս սերունդներ անցկացնելուց հետո նրա սերունդը կդառնա հպարտ և որ նրանք չէին դիմադրի դևի գայթակղությունների դեմ և կկործանվեին: Նրան նաև ցույց տրվեց նրանց անօրինությունները, ովքեր հետևում են Սատանային մեծ և պիղծ եկեղեցուն: Նա տեսավ, որ նրանք կհեռացնեն Աստվածաշնչից պարզ և թանկարժեք ճշմարտությունները, պատճառ դառնալով, որ շատերը հոգևորապես սայթաքեն: Բացի այս շփոթեցնող պահերից, Նեփիի տեսիլքը նաև նրան մեծ հույսեր տվեց: Նա տեսավ, որ Աստված ուղի պիտի պատրաստեր ավետարանի Վերականգնման համար վերջին օրերում: Նա նաև տեսավ, որ իր ժողովրդի հիշատակարանը (Մորմոնի Գիրքը) առաջ պիտի գար վերջին օրերում, որ վերականգներ պարզ ու արժեքավոր ճշմարտությունները, որոնք կորած էին աշխարհի համար:

*Նշում.* Դուք, հավանաբար, բավականաչափ ժամանակ չունենաք այս դասի ընթացքում ամբողջ նյութը սպառելու համար: Ձեր նախապատրաստության ընթացքում փնտրեք Սուրբ Հոգու առաջնորդությունը, որ իմանաք, թե դասի որ մասն է ամենակարևորը և ամենից շատ կիրառելին ձեր ուսանողների համար: Միգուցե կարիք կլինի, որ դուք ամփոփեք դասի որոշ մասեր, որպեսզի բավականաչափ ժամանակ տրամադրեք ամենակարևոր վարդապետությունները և սկզբունքները արդյունավետ կերպով ուսուցանելուն:

## Ուսուցանման առաջարկներ

### 1 Նեփի 12

*Նեփին տեսնում է նեփիացի և լամանացի ազգերի ապագան*

Ամփոփեք 1 Նեփի 12՝ բացատրելով, որ այս գլուխը Նեփիի տեսիլքի շարունակությունն է: Այդտեղ հրեշտակը ցույց է տալիս Նեփիին, թե կենաց ծառի տեսիլքի խորհրդանիշները ինչպես կանդրադառնան նրա սերնդի վրա: Նրան ցույց է տրվում, որ նրա հետնորդներից ոմանք կստանան Քավության բոլոր օրհնությունները: Ինչևիցե, Նեփին նաև տեսավ, որ իր հետնորդները, ի վերջո, պետք է կործանվեին իր եղբոր սերնդի (լամանացիների) կողմից: Հրավիրեք ուսանողներին կարդալ 1 Նեփի 12.16–19: Թող նրանք փնտրեն նեփիացիների կործանման պատճառները (տես 1 Նեփի 12.19): Հիշեցրեք ուսանողներին, որ եթե նրանք հավատք ցուցաբերեն Հիսուս Քրիստոսի հանդեպ, նրանք կարող են հաղթահարել հպարտությունը և գայթակղությունը:

### 1 Նեփի 13.1–9

*Նեփին տեսնում է մեծ ու պիղծ եկեղեցին*

Խնդրեք ուսանողներին ձեռք բարձրացնել, եթե նրանք զբաղվում են որևէ սպորտաձևով: Խնդրեք նրանցից մի քանիսին կիսվել, թե ինչ սպորտաձևով են նրանք զբաղվում: Բացատրեք, որ սպորտում խմբերը հաճախ պատրաստվում են խաղերին, ուսումնասիրելով հակառակորդի նախկին խաղերը և մեթոդները:

- Ինչպե՞ս կարող է թիմի համար օգտակար լինել նախքան իրենց մրցումները հակառակորդի մեթոդները ուսումնասիրելը:

Բացատրեք, որ Նեփին տեսիլքում տեսավ նրանց ցանկությունները և մեթոդները, ովքեր դեմ կգնային Հիսուս Քրիստոսի Եկեղեցուն վերջին օրերում: Խրախուսեք ուսանողներին փնտրել այդ մեթոդները, մինչ նրանք կուսումնասիրեն այս գլուխը, որպեսզի նրանք կարողանան պատրաստ լինել ճանաչել դրանք և դրանց պատճառով մոլորության մեջ չընկնեն:

Հրավիրեք մի քանի ուսանողների բարձրաձայն կարդալ 1 Նեփի 13.1–4, 6: Խնդրեք մի ուսանողի ներկայացնել խմբին, որին տեսավ Նեփին, որը ձևավորվում էր վերջին օրերի հեթանոսների մեջ:

***Ամփոփեք***

Դուք ժամանակ չեք ունենա հավասարապես ուսուցանելու սուրբ գրության հատվածը ամբողջությամբ: Ժամանակ առ ժամանակ կարիք կլինի, որ դուք ամփոփեք պատմության հիմնական մասը, որպեսզի ավելի շատ ժամանակ տրամադրեք ավելի կարևոր բովանդակությանը, վարդապետություններին կամ սկզբունքներին հատվածի մեկ այլ մասում: Սուրբ գրության հատվածի մասերը բաց թողնելու փոխարեն ամփոփելը օգնում է ուսանողներին ավելի լավ հասկանալ հատվածի ընդհանուր պատմությունը և ուղերձը:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այս հատվածների բովանդակությունը, կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրյուս Ռ. Մակքոնկիի հետևյալ մեկնաբանությամբ: Խնդրեք ուսանողներին ուշադիր լսել և ներկայացնել մեծ և պիղծ եկեղեցու էությունը:

«*Դևի եկեղեցի* և *մեծ ու պիղծ եկեղեցի* անունները օգտագործվում են, որ ներկայացնեն բոլոր . . . կազմակերպությունները, անկախ դրանց անվանումից կամ էությունից, լինեն դրանք դա քաղաքական, փիլիսոփայական, կրթական, սոցիալական, եղբայրական, քաղաքական, թե կրոնական, որոնք ձևավորվել են, նպատակ ունենալով մարդկանց դնելու մի ուղու վրա, որը հեռացնում է Աստծուց և նրա օրենքներից և, այդպիսով, Աստծո թագավորությունում փրկություն ունենալուց» (*Mormon Doctrine,* 2nd ed. [1966], 137–38):

Պարզաբանեք, որ «մեծ և պիղծ եկեղեցի» արտահայտությունը չի վերաբերվում որոշակի հավատքի կամ եկեղեցու: Այն վերաբերվում է ցանկացած և բոլոր կազմակերպություններին, որոնք ձևավորվել են՝ մարդկանց Աստծուց և Նրա օրենքներից հեռացնելու համար:

Դուք կարող եք խրախուսել ուսանողներին *բոլոր կազմակերպությունները, որոնք ձևավորվել են մարդկանց Աստծուց և Նրա օրենքներից հեռացնելու համար* արտահայտությունը գրել 1 Նեփի 13.6 հատվածի կողքի լուսանցքում:

- Ձեր կարծիքով, ինչու՞ է կարևոր իմանալը, որ Սատանան միավորում է իր ուժերը, որ մեզ հեռացնի Աստծուց և Նրա օրենքներից:

Բացատրեք, որ Նեփին նկարագրեց մեծ ու պիղծ եկեղեցին: Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 13.5–9:

- Ի՞նչ են ցանկանում նրանք, ովքեր այդ մեծ և պիղծ եկեղեցում են: (Տես 1 Նեփի 13.7–8:)
- Համաձայն 1 Նեփի 13.5, 9-ի, ի՞նչ են ցանկանում անել նրանք, ովքեր մեծ և պիղծ եկեղեցում են: Ինչո՞ւ: (Դուք կարող եք գրատախտակին գրել հետևյալ ճշմարտությունը. **Սատանան և նրա հետևորդները ցանկանում են կործանել Աստծո Սրբերին և գերության բերել նրանց:)**
- Ինչպե՞ս կարող է Սատանայի և նրա հետևորդների ցանկություններն ու մտադրությունները իմանալը օգնել մեզ պայքարել նրանց դեմ:

Տեղեկացրեք ուսանողներին, որ ավելի ուշ այս գլխում նրանք կսովորեն ուղիներից մեկի մասին, որով մեծ ու պիղծ եկեղեցին փորձեց կործանել նրանց, ովքեր փնտրում էին Աստծուն:

## 1 Նեփի 13.10–19

### *Նեփին տեսնում է Աստծո ձեռքը ազատ երկիր հաստատելուգործում, որտեղ կվերականգնվեր ավետարանը*

Վկայեք, որ Տերը վստահեցրել է, որ Իր աշխատանքը առաջ կգնա՝ անկախ մեծ ու պիղծ եկեղեցու ջանքերի, որը փորձում է դրդել մարդկանց գայթել հոգևորապես: Նա արեց սա՝ ուղի պատրաստելով Իր ավետարանի վերականգնման համար:

Հետևյալ նախադասությունները ամփոփում են կարևոր միջադեպերը, որ Նեփին տեսավ իր տեսիլքում: Թող ուսանողները կարդան 1 Նեփի 13.10–19 և ներքևում տրված յուրաքանչյուր սուրբ գրության հղումը համընկեցնեն այն նկարագրող միջադեպի հետ: (Դուք կարող եք գրատախտակին գրել այս սուրբ գրությունների հղումները և նախադասությունները նախքան դասի սկսվելը: Կամ դուք կարող եք պատրաստել թերթիկներ, որոնք պարունակում են սուրբ գրությունների հղումները և նախադասությունները: Նեքևում սուրբ գրությունների հղումները ճիշտ ձևով համընկեցրած են նախադասությունների հետ: Որպեսզի այս վարժությունը բարեհաջող անց կացվի, դուք պետք է փոխեք նախադասությունների տեղերը, երբ գրեք դրանք գրատախտակի վրա կամ ավելացնեք դրանք թերթիկների վրա:)

*1 Նեփի 13.12 Կոլումբոսը նավարկում է դեպի Ամերիկաներ*

*1 Նեփի 13.13 Առաջին անգլիացիները նավարկում են Ամերիկաներ՝ փնտրելով կրոնական ազատություն*

*1 Նեփի 13.14 Տեղաբնակ ամերիկացիները վտարվում են իրենց հողերից*

*1 Նեփի 13.15 Հեթանոսները բարգավաճում են Ամերիկաներում*

*1 Նեփի 13.16–19 Չնայած բազմաթիվ լինելուն, ամերիկյան հեղափոխական բանակները հաղթական են*

Մինչ ուսանողները կկիսվեն իրենց պատասխաններով, դուք կարող եք խրախուսել նրանց իրենց սուրբ գրություններում գրել կարևոր բառ կամ արտահայտություն յուրաքանչյուր հատվածի կողքին: Օրինակ, նրանք կարող են գրել *Կոլումբոս* 1 Նեփի 13.12 կողքին:

- Համաձայն 1 Նեփի 13.12, ինչո՞ւ Կոլումբոսը նավարկեց Ամերիկաներ:
- Համաձայն 1 Նեփի 13.13, ինչո՞ւ առաջին անգլիացիները նավարկեցին Ամերիկա:
- Համաձայն 1 Նեփի 13.15–19, ինչո՞ւ հեթանոսները բարգավաճեցին և ազատվեցին «բոլոր մյուս ազգերի ձեռքից»:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի հետևյալ խոսքերը.

«Այս մեծ ամերիկյան ազգը Ամենազորը բարձրացրեց իր ամենակարող ձեռքով, որ հնարավոր լիներ վերջին օրերում Աստծո արքայության հաստատումը երկրի վրա: Եթե Տերը ուղի չպատրաստեր այս փառահեղ ազգի հիմքերը դնելով, ապա անհնարին կլիներ (աշխարհի միապետական կառավարությունների խստագույն օրենքների և մոլեռանդության ներքո) դնել իր հրաշալի թագավորության հիմքերը: Տերն է սա արել» (*Gospel Doctrine,* 5th ed. [1939], 409):

Վկայեք, որ **Տերը ուղի էր պատրաստել Վերականգնման համար** , հաստատելով ազատ կրոն ունեցող մի երկիր, որտեղ Նա կարող էր վերականգնել Իր Եկեղեցին: Վկայեք, որ Տերը պատրաստել էր և կշարունակի պատրաստել ուղի, որ Իր վերականգնված ավետարանը մուտք գործի յուրաքանչյուր երկիր:

Եթե դուք ուսուցանում եք այս դասը Ամերիկայի Միացյալ Նահանգներից դուրս գտնվող երկրում, հարցրեք.

- Ինչպե՞ս է Տերը ուղի պատրաստել վերականգնված ավետարանի քարոզման համար մեր երկրում:

## 1 Նեփի 13.20–42

### *Նեփին տեսնում է ապագա հեթանոսներին Աստվածաշնչով, Մորմոնի Գրքով և վերջին օրերի սուրբ գրություններով*

Հրավիրեք մի ուսանողի կարդալ 1 Նեփի 13.20–24: Խնդրեք նրան ներկայացնել այն առարկան, որ Նեփին տեսավ վաղ ամերիկյան գաղթականներին «իրենց հետ [կրելիս]»: Ցուցադրեք Աստվածաշնչի մի օրինակ և բացատրեք, որ այն Նեփիի տեսիլքի գիրքն է: Դուք կարող եք հրավիրել ուսանողներին գրել *Աստվածաշունչ* 1 Նեփի 13.20 հատվածի կողքի լուսանցքում:

Բացատրեք, որ հրեշտակը ուսուցանեց Նեփիին, որ Աստվածաշունչը «մեծ արժեք ունեցող» հիշատակարան է (1 Նեփի 13.23): Երբ հայտնությունները սկզբնապես գրվեցին Աստվածաշնչում, այն «պարունակում էր Տիրոջ ավետարանի լրիվությունը» (1 Նեփի 13.24): Թող մի ուսանող բարձրաձայն կարդա 1 Նեփի 13.26–27:

- Ի՞նչ էր Աստվածաշնչից հանել մեծ և պիղծ եկեղեցին: Ինչո՞ւ էին այդ բաները հանվել:

Թող մեկ այլ ուսանող բարձրաձայն կարդա 1 Նեփի 13.29:

- Ի՞նչ պատահեց այն ամենի արդյունքում, երբ պարզ և արժեքավոր բաները և Տիրոջ շատ ուխտեր հանվեցին Աստվածաշնչից:

Թող չորս ուսանողներ հերթով բարձրաձայն կարդան 1 Նեփի 13.34–36, 39: Խնդրեք դասարանին փնտրել, թե ինչ է անում Տերը, որ օգնի մարդկանց հաղթահարել մեծ և պիղծ եկեղեցու ջանքերը:

- Համաձայն 1 Նեփի 13.34, ի՞նչ առաջ կբերեր Տերը Իր ողորմության համաձայն:
- Համաձայն 1 Նեփի 13.35–36, ինչե՞ր «կթաքցվեն»՝ հեթանոսներին ի հայտ գալու համար: (Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները 1 Նեփի 13.35 կողքին գրեն, որ «այս բաները» վերաբերվում է Մորմոնի Գրքին:)
- Համաձայն 1 Նեփի 13.39, էլ ի՞նչ Տերը առաջ կբերեր վերջին օրերում՝ ի լրացումն Մորմոնի Գրքի: Ի՞նչ «ուրիշ գրքեր» առաջ բերեց Տերը որպես Վերականգնման մի

մաս: (Վրդապետություն և Ուխտերը, Թանկագին Մարգարիտը և Ջոզեֆ Սմիթի Աստվածաշնչի Թարգմանությունը:)

Հրավիրեք ուսանողներին կարդալ 1 Նեփի 13.40–41: Թող նրանք փնտրեն նկարագրությունը այն բանի, թե Վերականգնման սուրբ գրությունները ինչ հայտնի կդարձնեն բոլոր մարդկանց: Այն բանից հետո, երբ ուսանողները կկիսվեն այն ամենով, ինչ նրանք կգտնեն, ցուցադրեք Աստվածաշնչի մի օրինակ և կիսվեք ձեր վկայությամբ դրա ճշմարտացիության վերաբերյալ: Ցուցադրեք Մորմոնի Գրքի մի օրինակ և դրեք այն Աստվածաշնչի հետ միասին: Վկայեք, որ **Մորմոնի Գիրքը և վերջին օրերի սուրբ գրությունները վերականգնում են պարզ ու արժեքավոր ճշմարտությունները, որոնք օգնում են մեզ իմանալ, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, նաև օգնում են մեզ իմանալ, թե ինչպես գալ Նրա մոտ:**

Խնդրեք ուսանողներին 1 Նեփի 13.41-ի վերջում գտնել մի արտահայտություն, որը նկարագրում է, թե ինչ Տերը կանի Հրեաների հիշատակարանի հետ (Մորմոնի Գիրքը): Վկայեք, որ այս հիշատակարանները «կհաստատվեն՝ որպես մեկ» (1 Նեփի 13.41) և «պիտի սերտաճեն» (2 Նեփի 3.12), որ օգնեն մեզ պարզ իմանալ, թե ինչպես գալ Փրկչի մոտ:

Որպեսզի օգնեք ուսանողներին գնահատել այն, թե ինչպե է պարզ ու արժեքավոր ճշմարտությունների վերականգնումը ազդում իրենց կյանքի վրա, հրավիրեք նրանց խորհել հետևյալ հարցի շուրջ.

- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը ազդել Հիսուս Քրիստոսի վերաբերյալ ձեր վկայության վրա և օգնել ձեզ ավելի մոտենալ Նրան:

Խորհելու համար ուսանողներին ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք նրանցից մի քանիսին կիսվել իրենց պատասխաններով: Դուք նաև կարող եք կիսվել Մորմոնի Գրքի վերաբերյալ ձեր իսկ վկայությամբ և թե ինչպես է այն ամրացրել Հիսուս Քրիստոսի վերաբերյալ ձեր վկայությունը և օգնել ձեզ իմանալ, թե ինչպես գալ Նրա մոտ: Դասի ավարտին հորդորեք ուսանողներին ջանասիրաբար ուսումնասիրել Մորմոնի Գիրքը ողջ տարվա ընթացքում, փնտրելով ուսմունքներ և վկայություններ, որոնք կամրացնեն իրենց վկայությունը Հիսուս Քրիստոսի վերաբերյալ և կուսուցանեն նրանց, թե ինչպես գալ Նրա մոտ:

ԴԱՍ 15

# 1 Նեփի 14

## Նախաբան

1 Նեփի 14-ը եզրափակում է Նեփիի տեսիլքը: Տեսիլքի այս մասում Նեփիին ասվեց օրհնությունների մասին, որոնք խոստացված են նրանց, ովքեր ապաշխարում և ականջ են դնում Տիրոջը, և անեծքի մասին, որ կգա չարերի վրա, ովքեր կարծրացնում են իրենց սրտերը Տիրոջ դեմ: Նեփիին նաև ցույց տրվեց, որ Տերը կօգնի և կպաշտպանի նրանց, ովքեր արդար են ապրում և պահում են իրենց ուխտերը և որ Նա կկործանի դևի մեծ ու պիղծ եկեղեցին:

## Ուսուցանման առաջարկներ

### 1 Նեփի 14.1–7

*Նեփին տեսավ Տիրոջը հնազանդվելու կամ չհնազանդվելու հետևանքները հետագա սերունդների համար*

Հրավիրեք ուսանողներին բացել իրենց սուրբ գրությունները 1 Նեփի 14 հատվածի վրա: Բացատրեք, որ այսօր նրանք շարունակելու են ուսումնասիրել Նեփիի տեսիլքը: Խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչպես նրանք կավարտեն հետևյալ նախադասությունները.

Եթե ես հետևեմ Տիրոջը, ապա . . .

Եթե ես մերժեմ Տիրոջը հետևել, ապա . . .

Երբ ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, նշեք, որ *եթե* բառը ընտրություն է ենթադրում: Կախված այն բանից, թե ինչ ենք մենք ընտրում, մենք ունենում ենք տարբեր արդյունքներ: Բացատրեք, որ Նեփին տեսավ հետագա սերունդներին և նկատեց, որ եթե նրանք լինեն արդար, նրանք կլինեն օրհնված, կամ եթե նրանք ընտրեն ամբարշտություն, նրանք կանիծվեն: Հրավիրեք դասարանին դասի ընթացքում խորհել, թե Տիրոջը հնազանդ լինելու ընտրությունը ինչպես նրանց օրհնություններ բերեց:

Գրատախտակին գծեք հետևյալ գծապատկերը.

Եթե ⟶ ապա

Թող մի ուսանող բարձրաձայն կարդա 1 Նեփի 14.1–2: Խնդրեք դասարանին ներկայացնել (1) ընտրությունը, որը Նեփին նշեց, որ հեթանոսները կարող էին կատարել և (2) օրհնությունները, որ Նեփին տեսավ, որոնք կարող էին գալ Հեթանոսներին, եթե նրանք կատարեին այդ ընտրությունը: Երբ ուսանողները կիսվեն նրանով, ինչ կգտնեն, լրացրեք գրատախտակին եղած բացթողումները, որպեսզի այն ունենա մոտավորապես հետևյալ տեսքը.

| | |
|---|---|
| Եթե ⟶ նրանք ականջ դնեն Աստծո Գառին և չկարծրացնեն իրենց սրտերը, | ապա ⟶ նրանք . . . Կհամարվեն Իսրայելի տան թվում Օրհնված ժողովուրդ կլինեն հավիտյան Չեն տարվի գերության |

Դուք կարող եք բացատրել, որ սուրբ գրություններում «գայթակղության քարեր» (1 Նեփի 14.1) արտահայտությունը հաճախ վերաբերվում է գայթակղություններին, որոնք մարդկանց հեռու են պահում Տիրոջը հետևելուց: «Համարվել Իսրայելի տան թվում» (1 Նեփի 14.2) նշանակում է համարվել Տիրոջ ուխտյալ ժողովրդի թվում:

- Ինչո՞ւ է կարևոր լինել Տիրոջ ուխտյալ ժողովրդի թվում: (Աբրահամի ուխտի [տես ՎևՈՒ 132.30–31] օրհնությունները ստանալու համար):
- Ի՞նչ է նշանակում «ականջ դնել Աստծո Գառին»:
- Գրատախտակին գրված հնազանդության համար տրվող պարգևներից որո՞նք են ամենակարևորը ձեր համար: Ինչո՞ւ:

***Դիդակտիկ միջոցներ***

Ուսանողների մեծամասնությունը ավելի լավ կսովորի և ավելի երկար կհիշի, երբ դուք օգտագործեք դիդակտիկ միջոցներ գաղափարներ ներկայացնելիս: Պարզ գծապատկերները, ինչպիսին է այս դասի ուսուցանման գաղափարում ցուցադրվածը, հեշտ է նկարել գրատախտակի վրա: Նման գծապատկերները կարող են օգնել ուսանողներին կենտրոնանալ սուրբ գրությունների հիմնական գաղափարների վրա:

- Ե՞րբ եք դուք ականջ դրել Տիրոջը և տեսել Նրա օրհնությունները ձեր կյանքում: (Հիշեցրեք ուսանողներին, որ կարիք չկա, որ նրանք կիսվեն փորձառություններով, որոնք շատ անձնական են կամ գաղտնի:)

Գրատախտակի մեկ այլ մասում գծեք հետևյալ գծագիրը.




Թող մի ուսանող բարձրաձայն կարդա 1 Նեփի 14.5–7: Դասարանին խնդրեք փնտրել (1) օրհնությունները, որոնք տրվում են նրանց, ովքեր ապաշխարում են, և (2) բացասական հետևանքները, որոնց հանգում են նրանք, ովքեր կարծրացնում են իրենց սրտերը: Լրացրեք գծագիրը, ինչպես դուք արեցիք նախորդ վարժությունում: (Եթե մարդիկ ապաշխարեն, «դա նրանց համար լավ կլինի» [1 Նեփի 14.5] և նրանք կստանան «խաղաղություն և հավերժական կյանք» [1 Նեփի 14.7]: Եթե մարդիկ կարծրացնեն իրենց սրտերը, նրանք «կկորչեն» [1 Նեփի 14.5] և «գերության կտարվեն» և «կկործանվեն» [1 Նեփի 14.7]:)

Մինչ ուսանողները պատասխանում են, դուք կարող եք բացատրել, որ 1 Նեփի 14.7-ում նշված «մեծ ու զարմանալի գործը» վերաբերվում է քահանայության, ավետարանի և Տիրոջ Եկեղեցու վերականգնմանը վերջին օրերում:

- Ինչո՞վ է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին «մեծ ու զարմանալի» ձեզ համար: Ինչպե՞ս է այն ձեզ խաղաղություն բերում: Ինչպե՞ս է այն ձեզ հույս բերում հավերժական կյանքի համար:

Ուսանողներին ժամանակ տրամադրեք, որ խորհեն, թե գրատախտակին պատկերված որ ուղուն են նրանք ներկայումս հետևում: Վկայեք, որ **Տիրոջը հնազանդվելը և մեր մեղքերից ապաշխարելը առաջնորդում է դեպի մեծ օրհնություններ:** Դուք նաև կարող եք վկայել, որ մեր սրտերը Տիրոջ և Նրա Եկեղեցու դեմ կարծրացնելը առաջնորդում է դեպի հոգևոր գերություն և կործանում:

## 1 Նեփի 14.8–17

### *Նեփին տեսնում է Աստծո Գառի Եկեղեցու և մեծ ու պիղծ եկեղեցու միջև տեղի ունեցող պատերազմը*

Հրավիրեք ուսանողներին պատկերացնել, որ իրենք հենց նոր զորակոչվել են պատերազմում կռվելու համար:

- Ի՞նչ կանեք դուք ճակատամարտին պատրաստվելու համար:

Բացատրեք, որ հրեշտակը սովորեցրեց Նեփիին մեծ ճակատամարտի մասին, որը տեղի էր ունենալու վերջին օրերում:

Հրավիրեք երեք ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 1 Նեփի 14.9–11: Խնդրեք դասարանի մյուս անդամներին ներկայացնել պատերազմող երկու խմբերին: (Դուք կարող եք հիշեցնել ուսանողներին, որ մեծ ու պիղծ եկեղեցին ներկայացնում է ցանկացած անհատի կամ խմբի, որ մարդկանց առաջնորդում է Աստծուց և Նրա օրենքներից հեռու:)

- Ի՞նչ բառեր և արտահայտություններ են օգտագործվել «մեծ ու պիղծ եկեղեցին» նկարագրելու համար:
- Համաձայն Նեփիի տեսիլքի, որտե՞ղ պիտի գտնվեր «մեծ ու պիղծ եկեղեցին» վերջին օրերում:

Խնդրեք ևս երեք ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 1 Նեփի 14.12–14: Հրավիրեք դասարանին փնտրել պատճառները, թե ինչու մենք կարող ենք հույս ունենալ ապագայի հետ կապված:

- Համաձայն 1 Նեփի 14.12-ի, ո՞ր եկեղեցին ավելի շատ մարդիկ կունենա:
- Ինչո՞ւ Գառի Եկեղեցին ավելի քիչ մարդիկ կունենա, քան մեծ ու պիղծ եկեղեցին:
- Համաձայն 1 Նեփի 14.13-ի, ի՞նչ նպատակով մեծ ու պիղծ եկեղեցին բազմություններ կհավաքի:

Վկայեք, որ մենք ներգրավված ենք այն պատերազմում, որը Նեփին նկարագրում է որպես վերջին օրերի հոգևոր պատերազմ չարի դեմ: Որպես Գառի Եկեղեցու անդամներ մեք գերազանցում ենք, և մենք օգնության կարիք ունենք, եթե մենք ուզում ենք հաղթանակ տանել չարի ուժերի դեմ:

- Ի՞նչ եք դուք կարդում 1 Նեփի 14.14-ում, որ ձեզ հույս է տալիս:

Նշեք, որ այս սուրբ գրություններում տրված խոստումները հատուկ վերաբերվում են նրանց, ովքեր Տիրոջ հետ կապում և պահում են ուխտեր: Հիշեցրեք ուսանողներին, որ նրանք Տիրոջ հետ ուխտի մեջ են մտել մկրտվելիս: Ուսանողների ուշադրությունը հրավիրեք 1 Նեփի 14.14-ում «զինված էին արդարությամբ և Աստծո զորության մեծ փառքով» արտահայտության վրա:

- Ի՞նչ նշանակություն ունի «զինված էին արդարությամբ և Աստծո զորության մեծ փառքով» արտահայտությունը ձեզ համար:
- Ինչպե՞ս կարող է «արդարությամբ և Աստծո զորության մեծ փառքով» զինված լինելը նման լինել սպառազինություն և զենքեր ունենալուն չարի դեմ մեր պայքարում:
- Ե՞րբ եք դուք զգացել, որ զինված եք «արդարությամբ և Աստծո զորության մեծ փառքով»: Ի՞նչ զգացողություն է այն ձեզ տվել:

Հարցրեք ուսանողներին, թե նրանք ինչպես ամփոփ կներկայացնեն 1 Նեփի 14.1–14-ի ուղերձը: Համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **եթե մենք արդար ապրենք և պահենք մեր ուխտերը, Աստծո զորությունը կօգնի մեզ հաղթանակ տանել չարի դեմ:**

Հրավիրեք ուսանողներին գնահատել իրենց կյանքը և խորհել, թե ինչ կարող են նրանք անել արդարությամբ ավելի լավ զինված լինելու համար: Հորդորեք նրանց գործել համաձայն ցանկացած հուշման, որ նրանք կստանան: Վստահեցրեք նրանց, որ եթե նրանք հավատարիմ մնան, նրանք հնարավորություն կունենան մտնել սուրբ տաճարներ և լրացուցիչ ուխտեր կապել Տիրոջ հետ: Խոստումները և ուխտերը, որ նրանք այնտեղ կկապեն, մեծ զորություն և պաշտպանություն կբերեն իրենց կյանքում:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 14.3–4: Խնդրեք մեկ այլ ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 14.15–17:

- Ի՞նչ կպատահի մեծ ու պիղծ եկեղեցու հետ:
- Ինչպիսի՞ն կլինի Գառի Եկեղեցու (Աստծո թագավորության) և դևի ուժերի միջև պատերազմի վերջնական արդյունքը:
- Ինչպե՞ս կարող է այս պայքարի արդյունքն իմանալը օգնել ձեզ:

Դասարանի համար կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բոյդ Ք. Փաքերի հետևյալ խոսքերը.

«Մենք [Եկեղեցու անդամներս] փոքրիկ մասնիկ ենք, երբ համեմատվում ենք աշխարհի միլիարդավոր մարդկանց հետ: Սակայն մենք գիտենք, թե ով ենք մենք, և մենք գիտենք այն, ինչ մենք գիտենք, և մենք պետք է առաջ գնանք և քարոզենք ավետարանը:

Մորմոնի Գիրքը պարզաբանում է, որ մենք երբեք չենք գերակշռի մեր քանակով: Սակայն մենք ունենք քահանայության զորությունը [տես 1 Նեփի 14.14]: . . .

Մենք կարող ենք, և իր ժամանակին, հաստատ կազդենք բոլոր մարդկության վրա: Կիմացվի, թե ով ենք մենք և ինչու մենք կանք: Սա կարող է անհույս թվալ, դա չափազանց դժվար է, սակայն սա ոչ միայն հնարավոր է, այլ հաստատ է, որ մենք պետք է հաղթենք Սատանայի դեմ կռվում» (“The Power of the Priesthood,” *Ensign* կամ *Լիահոնա,* Մայիս 2010, 7):

Վստահեցրեք ուսանողներին, որ **Աստծո թագավորությունը մեծ հաղթանակ կտանի վերջին օրերում:** Վստահություն հայտնեք, որ նրանք կարող են վստահել Աստծուն և որ Նրա զորությունը կարող է հաղթել ողջ չարին: Խրախուսեք նրանց գործել ի բարին ուրիշների վրա ազդելիս:

## 1 Նեփի 14.18–27

### *Նեփին տեսնում է Հովհաննես Հայտնիչին*

Գրատախտակի վրա գրեք հետևյալ հարցերը.

*Փոկչի Տասներկու Առաքյալներից որի՞ն Նեփին տեսավ տեսիլքում:*

*Ինչի՞ մասին էր գրում այս Առաքյալը:*

*Ինչո՞ւ Նեփիին պատվիրվեց գրի չառնել իր տեսիլքի մնացած մասը:*

Ուսանողներին հրավիրեք լուռ կարդալ 1 Նեփի 14.18–27: Այնուհետև հակիրճ քննարկեք գրատախտակին գրված հարցերի պատասխանները:

Բացատրեք, որ այս հատվածներից ոմանք վերաբերվում են Հովհաննեսի Հայտնության գրքի գրածներին: Այդ գրքի մեծամասնությունը այն մասին է, որ Աստված կհաղթի դևի ուժերին: Ինչպես Հովհաննեսը, այնպես էլ Նեփին, տեսավ աշխարհի վերջին վերաբերվող տեսիլք, սակայն Նեփիին պատվիրվեց գրի չառնել այն, որովհետև Հովհաննեսին էր տրված դա անելու պարտականությունը: Եթե ժամանակը թույլ տա, դուք կարող եք ավարտել դասը կարճ քննարկումով այն մասին, թե ինչպես Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը, միասին աշխատելով, «կհաստատեն ճշմարտացիությունը» իրար վերաբերյալ և «մեկ» կլինեն (1 Նեփի 13.40–41):

# Տնային ուսումնասիրության դաս

## 1 Նեփի 7–14 (Մաս 3)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը, որը ուսանողները սովորեցին, երբ ուսումնասիրեցին 1 Նեփի 7–14 (Մաս 3), նախատեսված չէ ուսուցանելու որպես ձեր դասի մի մաս: Ձեր ուսուցանած դասը կենտրոնանում է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա:

#### Օր 1 (1 Նեփի 7)

Երբ ուսանողները սովորեցին, թե ինչպես Լեքիի որդիները վերադարձան Երուսաղեմ, որ Իսմայելի ընտանիքին բերեն իրենց հետ խոստումի երկիր, նրանք սովորեցին, որ Տերը պատվիրում է մեզ ամուսնանալ և երեխաներ մեծացնել Իր համար և որ Աստված պատասխանում է աղոթքներին համաձայն մեր հավատքի:

#### Օր 2 (1 Նեփի 8)

Ուսանողները ուսումնասիրեցին կենաց ծառի Լեքիի տեսիլքը: Նրանք սովորեցին, որ Հիսուս Քրիստոսի մոտ գալը և Նրա Քավությունից ճաշակելը բերում է երջանկություն և ուրախություն: Կարդալով երազի մի քանի խումբ մարդկանց և նրանց հաջողությունների և անհաջողությունների մասին դեպի կենաց ծառը գնալիս և պտուղը ճաշակելիս, նրանք նաև սովորեցին հետևյալ սկզբունքները. Հպարտությունը, աշխարհիկ լինելը և գայթակղություններին տեղի տալը կարող է մեզ հեռու պահել Քավության օրհնությունները ստանալուց: Եթե մենք ամուր բռնենք Աստծո խոսքից, այն կօգնի մեզ հաղթահարել փորձությունները և աշխարհիկ ազդեցությունները: Աստծո խոսքից ամուր բռնելը օգնում է մեզ ավելի մոտենալ Տիրոջը և ստանալ Քավության օրհնությունները:

#### Օր 3 (1 Նեփի 10–11)

Ուսանողները իմացան, թե ինչ պատահեց, երբ Նեփին նույնպես փափագեց «տեսնել և լսել, և իմանալ» (1 Նեփի 10.17) այն բաները, որ տեսել էր իր հայրը: Նեփիի օրինակի միջոցով նրանք տեսան, որ Աստված հայտնում է ճշմարտություններ նրանց, ովքեր ջանասիրաբար փնտրում են Իրեն: Նեփին տեսիլք տեսավ, որը սովորեցնում էր մեր հանդեպ Աստծո սիրո մասին, որն արտահայտվեց Նրա Որդու պարգևի միջոցով: Ուսանողները հնարավորություն ունեցան գրի առնելու, թե ինչ է սա նշանակում իրենց համար:

#### Օր 4 (1 Նեփի 12–14)

Իր տեսիլքի մնացած մասում Նեփին տեսավ, թե ինչպես Տերը ուղի պատրաստեց Վերականգնման համար: Նա իմացավ, որ պարզ և արժեքավոր ճշմարտությունները կհեռացվեն Աստվածաշնչից, սակայն Մորմոնի Գիրքը և վերջին օրերի սուրբ գրությունները կվերականգնեն պարզ և արժեքավոր ճշմարտությունները, որոնք օգնում են մեզ իմանալ, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է և օգնում են մեզ գալ Նրա մոտ: Նեփին նաև տեսավ վերջին օրերը: Ուսանողները խորհել են այն սկզբունքի վերաբերյալ, որ եթե մենք արդար ենք ապրում և պահում ենք սուրբ ուխտերը, Աստծո զորությունը կօգնի մեզ հաղթել չարին:

### Նախաբան

Այս շաբաթվա դասի առանցքը 1 Նեփի 8 Լեքիի տեսիլքն է: Երբ դուք ուսուցանեք այս դասը, շեշտեք ուրախությունը, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը կարող է բերել մեր կյանք և ինչպես մենք կարող ենք ունենալ Քավության օրհնությունները Աստծո խոսքով ապրելով: Ուսանողները այս դասի ընթացքում կօգտագործեն իրենց սուրբ գրությունները, ուսանողների համար նախատեսված ուսուցման ուղեցույցերը և սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերը:

### Ուսուցանման առաջարկներ

#### 1 Նեփի 7

***Տերը պատվիրում է Լեքիի որդիներին վերադառնալ Երուսաղեմ՝ Իսմայելին և նրա ընտանիքին բերելու***

Ցուցադրեք ամուսնացած զույգի և նրանց երեխաների մի նկար, հավանաբար ձեր իսկ ընտանիքի նկարը կամ այն ուսանողի, ում դուք հրավիրեք էիք բերել այն:

Հարցրեք ուսանողներին. Ինչո՞ւ են ընտանիքները կարևոր Աստծո Ծրագրում մեր փրկության համար:

Հրավիրեք ուսանողներին վերանայել և ամփոփել 1 Նեփի 7.1–5: Հարցրեք, թե ինչ սկզբունքներ են նրանք սովորել այս հատվածներից: (Ուսանողները կարող են կիսվել մի քանի սկզբունքներով: Ուսանողների ձեռնարկում նշված սկզբունքն այն էր, որ **Տերը պատվիրում է մեզ ամուսնանալ և երեխաներ մեծացնել Նրա համար**:)

Առաջին օրվա իրենց դասում ուսանողներին հանձնարարվել էր խնդրել Ծնողի, Եկեղեցու ղեկավարի կամ ուսուցչի առաջարկել երեք ուղիներ, որոնցով երիտասարդ մարդիկ այսօր կարող են նախապատրաստվել ամուսնանալուն և երեխաներ մեծացնելուն «Տիրոջ համար»: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչ են իրենք սովորել:

## 1 Նեփի 8

*Լեքին տեսնում է կենաց ծառի տեսիլքը*

Հիշեցրեք ուսանողներին, որ այն բանից հետո, երբ Նեփին ու իր եղբայրները բերեցին Իսմայելին ու նրա ընտանիքին անապատ, Լեքին երազ տեսավ: Մինչ մի ուսանող բարձրաձայն կկարդա 1 Նեփի 8.10–13, թող մեկ այլ ուսանող գրատախտակի կամ թղթի վրա նկարի այն, ինչ նկարագրում են հատվածները: Եթե կարծում եք, որ ձեր դասարանի համար ավելի նպատակահարմար կլինի, դուք կարող եք ցուցադրել Լեքիի Երազը նկարը (62620; *Gospel Art Book* [2009], no. 69) և թող ուսանողները ցույց տան հատվածներում նկարագրված զանազան կերպարներին:

Հարցրեք ուսանողներին. Լեքիի նկարագրածից ի՞նչն է ծառի պտուղը ձեր համար դարձնում հրապուրիչ:

Հիշեցրեք նրանց, որ ծառի պտուղը խորհրդանշում է «ամենամեծը Աստծո բոլոր պարգևներից» (1 Նեփի 15.36)՝ Հիսուս Քրիստոսի Քավության օրհնությունները: Եթե դուք ունեիք ուսանող, ով նկարել էր նկար, դուք կարող եք պիտակ կպցնել, ցույց տալով, թե ինչ է նկարում ներկայացնում պտուղը:

Հարցրեք ուսանողներին. Ի՞նչ կարող ենք մենք սովորել 1 Նեփի 8.10–13-ում Քավության օրհնությունները ստանալու վերաբերյալ: (Չնայած ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր այն նկարագրելու համար, համոզվեք, որ հետևյալ սկզբունքը պարզ է. **Հիսուս Քրիստոսի մոտ գալը և Նրա Քավությունը ճաշակելը բերում է երջանկություն և ուրախություն:** Դուք կարող եք այս սկզբունքը գրել գրատախտակին:)

Երկրորդ օրվա դասում ուսանողներին խնդրել էիք պատասխանել «Ե՞րբ է Փրկչի Քավությունը երջանկություն և ուրախություն բերել ձեր կյանքում» հարցին: Հրավիրեք ուսանողներին անդրադառնալ իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերին և մտքում կարդալ իրենց պատասխանները:

Որպեսզի օգնեք ուսանողներին իրար հետ կիսվել իմաստալից ճշմարտություններով և վկայություններով, խրախուսեք նրանցից մի քանիսին կարդալ կամ խոսել այն մասին, թե ինչ էին իրենք գրել: Դուք կարող եք նաև պատմել այն ժամանակների մասին, երբ Քավությունը երջանկություն և ուրախություն է բերել իրենց կյանքում:

Բացատրեք, որ Լեքիի տեսիլքը ոչ միայն սովորեցնում է, որ Քավությունը բերում է մեծ ուրախություն, այլ նաև թե մենք ինչ պետք է անենք, որ ստանանք Քավության օրհնությունները: Հրավիրեք ուսանողներին վերանայել 1 Նեփի 8.19–26 և նկարել Լեքիի տեսիլքի մյուս խորհրդանիշները, կամ թող նրանք ներկայացնեն Լեքիի Երազը նկարի մյուս խորհրդանիշները: Մինչ նրանք նկարեն կամ ներկայացնեն խորհրդանիշները, հրավիրեք նրանց բացատրել, թե տարբեր խորհրդանիշներ ինչ նշանակություն ունեն: (Եթե նրանք օգնության կարիք ունեն, խրախուսեք նրանց օգտագործել ցանկը, որը նրանք լրացրել են ուսանողների ուսուցման ուղեցույցում:)

Թող մի ուսանող բարձրաձայն կարդա 1 Նեփի 8.30: Այնուհետև տվեք հետևյալ հարցերը.

- Ո՞րն էր երկաթյա ձողի՝ Աստծո խոսքի դերը Լեքիի տեսիլքում:
- Երբ դուք ուսումնասիրում էիք 1 Նեփի 8, ի՞նչ սովորեցիք Աստծո խոսքի կարևորության մասին:
- 1 Նեփի 8.30 ո՞ր արտահայտությունն է նշում, թե մենք ինչ պետք է անենք, որ ստանանք Քավության օրհնությունները:
- Ձեր կարծիքով ի՞նչ է նշանակում «առաջ մղվել [ձեր] ճանապարհով, անընդհատ ամուր բռնած երկաթյա ձողից»:

Գրատախտակին գրեք երկու այլ ավետարանի սկզբունքներ, որոնք նրանք ուսումնասիրել են ուսանողների ուսուցման ուղեցույցից. ***Եթե մենք ամուր բռնենք Աստծո խոսքից, դա կօգնի մեզ հաղթահարել փորձությունը և աշխարհիկ ազդեցությունները: Աստծո խոսքից ամուր բռնելը օգնում է մեզ ավելի մոտենալ Տիրոջը և ստանալ Քավության օրհնությունները:***

Խնդրեք ուսանողներին պատկերացնել, որ իրենք միսիոներներ են և հնարավորություն ունեն վկայելու Աստծո խոսքը կարդալու և դրա սկզբունքներով ապրելու կարևորության մասին: Թող նրանք կիսվեն, թե ինչ կասեին՝ իրենց իսկ փորձից ելնելով: Խորհեք ձեր զգացմունքները կիսելու մասին սուրբ գրությունների և մարգարեների խոսքերի զորության վերաբերյալ, երբ դրանք օգնում են ձեզ ավելի մոտենալ Փրկչին:

## 1 Նեփի 10–14

*Իր հավատքի ու ջանասիրության շնորհիվ Նեփին ստանում է անձնական հայտնություն իր հոր սովորեցրածի և շատ այլ բաների վերաբերյալ*

Թող մի ուսանող բարձրաձայն կարդա 1 Նեփի 10.17, 19: Թող դասարանը ներկայացնեի օրհնությունները, որոնք գալիս են, երբ մենք ջանասիրաբար փնտրում ենք Տիրոջ առաջնորդությունը: Թող մեկ կամ երկու ուսանողներ կիսվեն, թե, իրենց կարծիքով, ինչ է նշանակում «ջանասիրաբար փնտրել»: (Օր 3 դասում նրանց խնդրել էին գրել, թե ինչ է սա նշանակում իրենց սուրբ գրությունների ուսուցման ուղեցույցում:)

Ամփոփեք 1 Նեփի 11–14՝ նշելով, որ Նեփին անձնական հայտնություն ստացավ, քանի որ նա ջանասիրաբար փնտրում էր Տիրոջը: Նա տեսավ Հիսուս Քրիստոսի ծառայությունը և Քավությունը (1 Նեփի 11), իր ժողովրդի հետագա կործանումը իրենց հպարտության և ամբարշտության պատճառով (1 Նեփի 12), խոստումի երկրի վաղ շրջանի հեթանոս գաղթականներին և պարզ ու արժեքավոր ճշմարտությունների վերականգնումը (1 Նեփի 13), և արդար մարդկանց պայքարը մեծ ու պիղծ եկեղեցու գործերի դեմ վերջին օրերում (1 Նեփի 14):

*Նշում.* Հետևյալ վարժությունը նախապատրաստելու համար դուք կարող եք վերանայել այս ձեռնարկի համապատասխան դասերը և ուսանողների ուսուցման ուղեցույցի այս բաժնի օր 4-ի նյութերը:

Ուսանողներին խնդրեք ընտրել 1 Նեփի 11–14 գլուխներից մեկը և անել հետևյալը: (Նրանք սա կարող են անել գրատախտակի կամ թերթիկների վրա:)

- Գրեք ընտրված գլխի ամփոփումը:
- Գրեք այդ գլխում ուսուցանված ավետարանի սկզբունք-ներից մեկը: (Նրանք կարող են օգտագործել ուսուցման ուղեցույցում նշված սկզբունքը կամ ներկայացնել իրենց իսկ ընտրածը:)
- Գրեք, թե ինչպես է այդ սկզբունքը վերաբերվում մեզ այսօր:

Այն բանից հետո, երբ նրանց բավականաչափ ժամանակ կտրամադրվի նախապատրաստվելու համար, հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչ են նրանք գրել: Հրավիրեք մեկ կամ երկու ուսանողի կիսվել իրենց վկայություններով այն սկզբունքների վերաբերյալ, որոնք նրանք սովորել են մինչ ուսումնասիրել են 1 Նեփի 7–14 այս շաբաթ:

Նախքան դասն ավարտելը հիշեցրեք հավաքել իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերը և կատարել հանձնարարություններին:

## Հաջորդ Մաս (1 Նեփի 15–19)

Հաջորդ մասում ուսանողները ավելի շատ կսովորեն Լեքիի ու նրա ժողովրդի փորձությունների մասին, մինչ նրանք շարունակում են իրենց ճամփորդությունը անապատում և նավարկում դեպի խոստումի երկիր: Պատկերացրեք նրանց զարմանքը, երբ նրանք արթնացան մի առավոտ և հայտ-նաբերեցին «զարմանալի վարպետության մի կլոր գունդ»՝ Լիահոնան: Ինչպե՞ս էր աշխատում Լիահոնան և ինչպե՞ս էր այն առաջնորդում նրանց: Ինչո՞ւ Նեփին հանդիմանեց իր եղբայրներին նավի վրա: Ինչպե՞ս Նեփին նկարագրեց խոստումի երկիրը:

ԴԱՍ 16

# 1 Նեփի 15

## Նախաբան

Այն բանից հետո, երբ Նեփին տեսիլք է տեսնում իր հոր տեսած տեսիլքի նմանությամբ, նա վերադառնում է իր հոր վրանը: Այնտեղ նա գտնում է իր եղբայրներին վիճելիս Լեքիի սովորեցրածի շուրջ: Նեփին հանդիմանում է իր եղբայրներին իրենց սրտերի կարծրության համար և հիշեցնում է նրանց, թե ինչպես ստանալ անձնական հայտնություն: Նա այնուհետև մեկնաբանեց Լեքիի սովորեցրածներից որոշ բաներ ձիթենու բնական ճյուղերի մասին և Լեքիի տեսիլքի կենաց ծառի իմաստը: 1 Նեփի 15 հակադրում է ճշմարտությունը փնտրելու Նեփիի ջանքերը իր եղբայրների անլուրջ վերաբերմունքի հետ (տես 1 Նեփի 15.9–11):

## Ուսուցանման առաջարկներ

### 1 Նեփի 15.1–11

*Նեփիի եղբայրները տրտնջում են, որ իրենք չեն կարողանում հասկանալ Լեքիի տեսիլքը*

Խնդրեք ուսանողներին թվարկել մի քանի բաներ, որ պահանջում են ջանքեր մեր կողմից, նախքան մենք կկարողանանք վայելել արդյունքները: Դուք կարող եք նրանց պատասխանները գրել գրատախտակին: (Պատասխանները կարող են ներառել տնային աշխատանքները կատարելը, այգում աշխատելը, երաժշտական գործիք նվագելը, սպորտով զբաղվելը և ֆիզիկապես մարզվելը: Հրավիրեք ուսանողներին մտածել օրինակների մասին, որոնց հետ կապված նրանք փորձառություն են ունեցել:)

- Ձեր մտածած օրինակներում ի՞նչ կապ եք տեսնում ձեր գործադրած ջանքերի և դրանց հետևող արդյունքների միջև:

Այն բանից հետո, երբ ուսանողները կպատասխանեն այս հարցին, խրախուսեք նրանց փնտրել նմանատիպ օրինաչափություն այս դասի ընթացքում, մինչ նրանք կուսումնասիրեն 1 Նեփի 15:

Ասեք ուսանողներին, որ 1 Նեփի 15 սկզբում Նեփին վերադառնում է իր հոր վրանը այն բանից հետո, երբ տեսիլք է տեսնում Լեքիի տեսիլքի նմանությամբ: Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 15.1–2, 7: Խնդրեք դասարանին փնտրել այն, ինչ Նեփին պատմեց, երբ վերադարձավ իր հոր վրանը:

- Ի՞նչ գտավ Նեփին, երբ վերադարձավ իր հոր վրանը:
- Ինչի՞ վերաբերյալ էին Նեփիի եղբայրները վիճաբանում: Ինչո՞ւ:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 15.3: Խնդրեք դասարանին ներկայացնել պատճառը, թե ինչու էին Նեփիի եղբայրները դժվարանում հասկանալ բաները, որոնք Լեքին սովորեցրել էր նրանց:

- Համաձայն 1 Նեփի 15.3-ի, ինչո՞ւ էին Նեփիի եղբայրները դժվարանում հասկանալ բաները, որոնք Լեքին ուսուցանել էր նրանց:
- Ի՞նչ էր անում Նեփին հոգևոր ճշմարտություններ սովորելու համար: (Որպեսզի օգնեք ուսանողներին պատասխանել այս հարցին, կարող եք նրանց հրավիրել կարդալ 1 Նեփի 10.17:)

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 15.8:

- Նկատի ունենալով, որ Նեփին հենց նոր էր երկնային տեսիլքներ ստացել ի պատասխան իր հարցերին (տես 1 Նեփի 11–14), ինչո՞ւ էր բնական նրա համար հարցնել իր եղբայրներին, թե արդյոք նրանք հարցրել էին Տիրոջը:

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 15.9: Այնուհետև խնդրեք մեկ այլ ուսանողի գրատախտակին գրել Նեփիի եղբայրների պատասխանը.

*Ոչ, չենք հարցրել, քանի որ Տերն այդպիսի բան մեզ հայտնի չի դարձնում:*

***Փնտրելու համար նախատեսված հարցեր***

Փնտրելու համար արդյունավետ հարցերը հրավիրում են ուսանողներին մանրամասներ փնտրել սուրբ գրություններում պատմությունների վերաբերյալ և ընդհանուր պատկերացում են տալիս սուրբ գրության հատվածի վերաբերյալ: Այս հարցերը հաճախ ներառում են այնպիսի բառեր, ինչպիսին են՝ *ով, ինչ, ինչպես, որտեղ* և ինչու: Քանի որ նման հարցերը պահանջում են, որ ուսանողները տեղեկություն փնտրեն սուրբ գրություններում, ավելի հարմար է նրանց նմանատիպ հարցեր տալ նախքան ուսանողները կկարդան հատվածները, որոնցում գտնվում են պատասխանները: Սա կենտրոնացնում է ուսանողների ուշադրությունը պատասխանները գտնելու վրա սուրբ գրությունների այն հատվածներում, որոնք որ կարդում են:

Գրատախտակի վրա ընդգծեք «Ոչ, չենք հարցրել» արտահայտությունը։

- Ի՞նչ չէին արել Նեփիի եղբայրները։

Գրատախտակի վրա գրված պատասխան նախադասությունը լրացրեք *(խորհուրդ անել Տիրոջ հետ, աղոթել* կամ *հարցնել Տիրոջը)*, որպեսզի այժմ կարդացվի.

*Ոչ, չենք հարցրել Տիրոջը, քանի որ Տերն այդպիսի բան մեզ հայտնի չի դարձնում։*

(Այլ կերպ ասած. «Մենք չենք հարցրել, քանի որ Տերը չի խոսում մեր հետ»։)

- Ի՞նչ խնդիր կար Լամանի և Լեմուելի մտածելակերպի մեջ։

Համոզվեք, որ ուսանողները գիտակցում են Նեփիի եղբայրների մտածելակերպում եղած թերությունը։ Հրավիրեք նրանց վերափոխել կամ այլ կերպ ձևակերպել գրատախտակին գրված նախադասությունը, որպեսզի այն նկարագրի, թե ինչու Նեփիի եղբայրները չէին ստանում Տիրոջ օգնությունը Լեքիի սովորեցրածը հասկանալու համար։ Հնարավոր պատասխանները կարող են ներառել. «Տերը այդպիսի բան մեզ հայտնի չի դարձնում, քանի որ մենք չենք հարցնում Նրան» և «Քանի որ մենք չենք հարցրել Տիրոջը, Նա այդպիսի բաներ մեզ հայտնի չի դարձրել»։

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 15.10–11։ Թող դասարանը փնտրի ճշմարտությունները, որոնք Նեփին սովորեցրեց իր եղբայրներին, որ օգնի նրանց սովորել, թե ինչպես պատասխաններ ստանալ Աստծուց։

- Ի՞նչ խորհուրդ տվեց Նեփին իր եղբայրներին՝ օգնելու համար նրանց հասկանալ իրենց հոր խոսքերը և պատասխաններ ստանալ Աստծուց։ (Նեփին խորհուրդ տվեց իր եղբայրներին չկարծրացնել իրենց սրտերը, հարցնել հավատքով, հավատալ, որ իրենք կստանան պատասխան և ջանասեր լինել պատվիրանները պահելիս։ Օգնեք ուսանողներին տեսնել, որ Նեփին գիտեր այս սկզբունքների արժեքը, քանի որ նա անձամբ հետևել էր դրանց և որպես արդյունք ստացել էր հայտնություն։)

Որպեսզի օգնեք ուսանողներին ներկայացնել սկզբունքներ այս հատվածներից, գրատախտակին գրեք հետևյալը.

*Եթե . . . , ապա . . .*

- Հիմնվելով այն բաների վրա, որոնք մենք կարդում ենք 1 Նեփի 15.10–11-ում, ինչպե՞ս մենք կարող ենք լրացնել այս նախադասությունը։

Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, սակայն նրանք պետք է ցույց տան, որ հասկանում են, որ, **եթե մենք հարցնենք Տիրոջը հավատքով և հնազանդվենք նրա պատվիրաններին, ապա մենք պատրաստ կլինենք Նրանից հայտնություն և առաջնորդություն ստանալ։** (Դուք կարող եք գրատախտակին գրել այս սկզբունքը։)

Պատրաստեք հետևյալ հարցերը նախքան դասը սկսելը՝ գրատախտակի կամ թերթիկների վրա.

1. Ինչպե՞ս դուք կարող եք բացատրել այս սկզբունքը, որ օգնեք ինչ-որ մեկին հասկանալ, թե ինչպես ուսուցանվել Տիրոջ կողմից և հասկանալ հոգևոր ճշմարտություններ։
2. Ինչպե՞ս են ձեր անձնական ջանքերը ազդել Տիրոջ առաջնորդությունը ստանալու և ավետարանը հասկանալու ձեր կարողության վրա։

Ուսանողներին բաժանեք զույգերի։ Յուրաքանչյուր զույգի մի զուգընկերը թող խորհի առաջին հարցի շուրջ, իսկ մյուս զուգընկերը՝ երկրորդ հարցի շուրջ։ Թող նրանք իրար հետ կիսվեն իրենց պատասխաններով։ Իրենց հարցերը քննարկելու համար ուսանողներին պատշաճ ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք մի քանիսին կիսվել իրենց մտքերով դասարանի հետ։ Նշեք, որ Հոգու առաջնորդությունը փնտրելու մեր ջանքերն ու ցանկությունը կարող են մեծ ազդեցություն թողնել մեր վկայությունների և Տիրոջը մեզ մոտ լինելու վրա։

## 1 Նեփի 15.12–20

### *Նեփին բացատրում է Իսրայելի ցրման և հավքման մասին*

Հակիրճ ձևով ամփոփեք 1 Նեփի 15.12–20։ Բացատրեք, որ օգնելու համար իր եղբայրներին դադարեցնել իրենց վիճաբանությունները, Նեփին սովորեցրեց նրանց Լեքիի մարգարեության նշանակությունը «ձիթենու բնական ճյուղերի» և

հեթանոսների վերաբերյալ (տես 1 Նեփի 10.12–14, 15.7)։ Նա բացատրեց, որ ձիթենին ներկայացնում էր Իսրայելի տունը։ Քանի որ Լեքիի ընտանիքը հեռացել էր Երուսաղեմից և բաժանվել էր մնացած Իսրայելի տնից, այն նման էր մի ճյուղի, որը պոկվել էր ձիթենուց (տես 1 Նեփի 15.12)։ Հետո նա բացատրեց, որ վերջին օրերում, շատ տարիներ անց այն բանից հետո, երբ Լեքիի հետնորդները «ընկած կլինեն անհավատության մեջ» (1 Նեփի 15.13), Ավետարանի լրիվությունը կտրվի Հեթանոսներին։ Հեթանոսները այնուհետև կբերեն ավետարանը Լեքիի սերունդներին, վերականգնելով նրանց իրենց Քավիչի իմացությանը և իրենց հայրերի ուխտերի օրհնություններին։ Սա նման կլինի իրենց ճյուղը ձիթենուն հետ հավաքելուն և պատվաստելուն (տես 1 Նեփի 15.13–17)։ Այս վերականգնումը տեղի կունենա ոչ միայն Լեքիի հետնորդների հետ, այլ նաև Իսրայելի ողջ տան հետ (տես 1 Նեփի 15.18–20, տես նաև 1 Նեփի 10.12–14)։

Վկայեք, որ Տերը պահում է Իր խոստումները և հիշում է Իր զավակների հետ կապած Իր ուխտերը։ Նա ցանկանում է, որ բոլորը ստանան ավետարանի օրհնությունները։

## 1 Նեփի 15.21–36

### *Նեփին պատասխանում է Լեքիի տեսիլքի վերաբերյալ իր եղբայրների հարցերին*

Բացատրեք, որ 1 Նեփի 15-ի մնացած մասում մենք կարդում ենք Նեփիի պատասխանները իր եղբայրների հարցերին Լեքիի տեսիլքի վերաբերյալ։ Նեփին օգտագործեց այն, ինչ նա սովորել էր իր իսկ տեսիլքում, որ սովորեցներ նրանց։

Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ մտքերը գրեք գրատախտակին կամ թերթիկների վրա։ Հրավիրեք ուսանողներին կռահել բառը կամ արտահայտությունը, որը պետք է զետեղվի յուրաքանչյուր նախադասության մեջ։

1. «. . . . մենք կարող ենք զորություն գտնել փորձությանը դիմակայելու համար»։
2. «. . . . զորություն ունի ամրացնելու Սրբերին և զինելու նրանց Հոգով»։
3. «Նրա _____ ամենաարժեքավոր պարգևներից մեկն է, որը Նա տվել է մեզ»։

Երբ մի քանի ուսանող կիսվեն իրենց մտքերով, խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 15.23–24։ Հրավիրեք ուսանողներին փնտրել արտահայտություն այս հատվածում, որը կօգնի նրանց ճշգրտորեն լրացնել Նախագահ Բենսոնի մտքերը։ Հատվածները կարդալուց հետո խնդրեք ուսանողներին նորից գուշակել բառը կամ արտահայտությունը, որը լրացնում է նախադասություններից յուրաքանչյուրը։ Դասարանի հետ վերանայեք ճիշտ պատասխանները։ (Պատասխաններ. 1-Աստծո խոսքում, 2-Աստծո խոսքը, 3-խոսքը։ [Տես “The Power of the Word,” *Ensign,* May 1986, 80, 82]։)

Թող ուսանողները լուռ ուսումնասիրեն 1 Նեփի 15.24–25։ Հրավիրեք ուսանողների կեսին այս հատվածներից ներկայացնել Աստծո խոսքին հետևելու որոշ օրհնություններ։ Խնդրեք դասարանի մյուս կեսին ներկայացնել բառերը կամ արտահայտությունները, որոնք խորհուրդ են տալիս, թե մենք ինչպես պետք է հետևենք Աստծո խոսքին, որպեսզի ստանանք այդ օրհնությունները։ Թող յուրաքանչյուր խումբը կիսվի նրանով, ինչ գտել է։

- Ի՞նչ պետք է մենք անենք, որ «ականջ դնենք», «ամուր բռնենք» և «ուշք դարձնենք» Աստծո խոսքին։ (Պատասխանները կարող են ներառել ամենօրյա սուրբ գրությունների ուսումնասիրությունը, Եկեղեցու ոգեշնչված ղեկավարների խորհուրդը լսելն ու դրանց վրա ուշք դրձնելը, և աղոթքի միջոցով անձնական հայտնություն փնտրելն ու դրան հետևելը։)

Հրավիրեք ուսանողներին իրենց բառերով ներկայացնել սկզբունքը, որն ամփոփում է, թե ինչ են ուսուցանում այս հատվածները սուրբ գրությունները ուսուցանելու և օրհնությունների մասին, որոնք այն բերում է մեր կյանք։ Հնարավոր պատասխաններից մեկն այն է, որ **Աստծո խոսքը ամեն օր ուսումնասիրելը և դրան հետևելը ամրացնում է մեզ Սատանայի գայթակղությունների դեմ պայքարելու համար:** Որպեսզի ուսանողներին հնարավորություն տաք վկայել այս սկզբունքի վերաբերյալ, հարցրեք.

- Ե՞րբ է ամենօրյա սուրբ գրությունների անձնական ուսումնասիրությունը ամրացրել ձեզ գայթակղություններին դիմակայելու համար։ (Հիշեցրեք ուսանողներին,

որ նրանք կարիք չունեն կիսվելու փորձառություններով, որոնք շատ անձնական են կամ գաղտնի։)

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ խոսքերը.

«Այնքան կարևոր են այս ճշմարտությունները, որ Երկնային Հայրը տվեց Լեքիին ու Նեփիին տեսիլքներով, որ մանրամասնորեն ներկայացնում էին Աստծո խոսքը որպես երկաթյա ձող։ Հայրը և որդին՝ երկուսն էլ սովորեցին, որ այս ամուր, անհողդողդ, կատարելապես հուսալի առաջնորդությունից բռնվելը *միակ* ճանապարհն է այդ նեղ ու անձուկ արահետին մնալու համար, որը տանում է դեպի մեր Փրկիչը» (“Holy Scriptures: The Power of God unto Our Salvation,” *Ensign* կամ *Liahona,* Nov. 2006, 25)։

Հիշեցրեք ուսանողներին, որ Լեքիի տեսիլքում նրանք, ովքեր ամուր բռնել էին երկաթյա ձողից, ապահով առաջնորդվեցին խավարի մեգի միջով, որը ներկայացնում էր դևի գայթակղությունները (տես 1 Նեփի 12.17)։

Հակիրճ ձևով ամփոփեք 1 Նեփի 15.26–29։ Ասեք ուսանողներին, որ Նեփիի եղբայրները խնդրեցին իրեն բացատրել գետի նշանակությունը, որը տեսել էր իրենց հայրը տեսիլքում։ Նա բացատրեց, որ այն ներկայացնում էր ամբարիշտների համար պատրաստված ահավոր դժոխքը, որ բաժանում էր նրանց Աստծուց և Նրա ժողովրդից։

- Ի՞նչ նկատեց Նեփին գետի ջրի վերաբերյալ, որն իր հայրը չէր նկատել։ (Որ ջուրը կեղտոտ էր։)

Բացատրեք, որ 1 Նեփի 15.33–36-ում Նեփին ուսուցանում է Աստծո արդարադատության մասին և թե ինչու ամբարիշտները կառանձնացվեն արդարներից։ Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով կարդալ 1 Նեփի 15.33–36։

- Ինչո՞ւ ամբարիշտները կառանձնացվեն արդարներից։
- Ինչպե՞ս կարող էր օգնել Լամանին և Լեմուելին իմանալը, որ ոչ մի անմաքուր անձնավորություն չի կարող մտնել Աստծո արքայությունը ։

Խրախուսեք ուսանողներին մտածել 1 Նեփի 15-ում սովորած սկզբունքների մասին՝ լուռ խորհելով հետևյալ հարցերի շուրջ.

- Ինչպե՞ս են Լեքիի և Նեփիի տեսիլքները ցույց տալիս, որ Աստված հոգում է Լամանի և Լեմուելի մասին։ Ինչպե՞ս են դրանք ցույց տալիս, որ Աստված հոգ է տանում ձեր մասին։
- Ի՞նչ կարող եք դուք անել, որպեսզի կիրառեք սկզբունքները, որոնք դուք սովորել եք այս գլուխը ուսումնասիրելիս։ (Դուք կարող եք հրավիրել ուսանողներին գրել այս հարցերի պատասխանները իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային նոթատետրերում։)

Դասի ավարտին դասարանի համար կրկին կարդացեք 1 Նեփի 15.25։ Կիսվեք ձեր վկայությամբ օրհնությունների վերաբերյալ, որոնք գալիս են, երբ մենք լսում ենք Աստծո խոսքը և պահում ենք նրա պատվիրանները։ Վստահեցրեք նրանց, որ Աստված մեծ սեր ունի նրանց հանդեպ և որ Նա կօրհնի նրանց իրենց արդար ջանքերում։

ԴԱՍ 17

# 1 Նեփի 16

## Նախաբան

Այն բանից հետո, երբ Նեփիի խոսքերը խոցեցին իրենց սրտերը, Լամանն ու Լեմուելը խոնարհեցրեցին իրենց Տիրոջ առաջ: Ընտանիքը շարունակեց իր ճամփորդությունը անապատում, և Տերը օրհնեց նրանց Լիահոնայով, որի միջոցով Նա առաջնորդեց նրանց իրենց ճամփորդության ժամանակ: Ճամփորդելիս նրանք ունեցան դժվարություններ, ներառյալ Նեփիի աղեղի կորուստը, որը նրանց ուտելիք հայթայթելու լավագույն միջոցն էր: Ընտանիքի մեծամասնությունը՝ նույնիսկ Լեքին, սկսեցին տրտնջալ Տիրոջ դեմ: Նեփին հանդիմանեց իր եղբայրներին դժգոհելու համար, պատրաստեց նոր աղեղ և հորից խորհուրդ հարցրեց, թե որտեղ գնար որսի:

## Ուսուցանման առաջարկներ

### 1 Նեփի 16.1–6

*Նեփին պատասխանում է իր եղբայրների տրտունջներին*

Խնդրեք ուսանողներին մտածել մի ժամանակահատվածի մասին, երբ նրանք հանդիմանվել են ինչ-որ սխալ բան անելու համար և թե ինչպես են նրանք պատասխանել: Այնուհետև խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 16.1: Նախքան նրա կարդալը դասարանին հրավիրեք ուշադրություն դարձնել, թե ինչպես էր Լամանը արձագանքում Նեփիի ուսմունքներին: Հիշեցրեք ուսանողներին, որ Նեփին ուսուցանում էր, որ ամբարիշտները կառանձնացվեին արդարներից և կվտարվեին Աստծո ներկայությունից (տես 1 Նեփի 15.33–36):

Հրավիրեք ուսանողներին լուռ կարդալ 1 Նեփի 16.2: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք նշեն Նեփիի օգտագործած արտահայտությունը, որը նկարագրում է, թե ինչպես են որոշ մարդիկ արձագանքում ճշմարտությունը լսելուն, երբ չեն ապրում դրան համաձայն:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում՝ «մեղավորները կարծում են՝ ճշմարտությունը խիստ է»: Ձեր կարծիքով, ո՞րն է «այն խոցում է նրանց հենց կենտրոնից» արտահայտության իմաստը:
- Ի՞նչ եղանակներով մենք կարող ենք արձագանքել, երբ դժվար ենք տանում ճշմարտությունը:

Հրավիրեք ուսանողներին լուռ կարդալ 1 Նեփի 16.3–4: Դուք կարող եք նրանց խորհուրդ տալ նշել երրորդ հատվածի *եթե* և *այդ դեպքում* բառերը: Խրախուսեք նրանց փնտրել խորհուրդը, որը Նեփին տվեց իր եղբայրներին այն բանի վերաբերյալ, թե ինչպես նրանք պետք է արձագանքեն «խիստ բաներին», որոնք նա ասել էր: Հրավիրեք մի ուսանողի իր իսկ բառերով բացատրել, թե ինչ ուսուցանեց Նեփին իր եղբայրներին:

- Համաձայն 1 Նեփի 16.5-ի, ինչպե՞ս արձագանքեցին Նեփիի եղբայրները նրա ցուցումներին:
- Ի՞նչ է խորհուրդ տրվում 1 Նեփի 16.5-ում այն բանի վերաբերյալ, թե ինչպես մենք պետք է արձագանքենք, երբ ճշմարտությունը «խոցում է [մեզ] հենց կենտրոնից»:

### 1 Նեփի 16.7–33

*Տերն առաջնորդում է Լեքիի ընտանիքին Լիահոնայի միջոցով*

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 16.9–10: Ցուցադրեք Լիահոնա նկարը (62041; *Gospel Art Book* [2009], no. 68): Նշեք, թե ինչպես է հեղինակը ներկայացնում Լիահոնան:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարող էր նման պարգևը օգտակար լինել Լեքիին և նրա ընտանիքին նրանց պայմաններում:

Հրավիրեք մի քանի ուսանողների բարձրաձայն կարդալ 1 Նեփի 16.16–19։

- Ինչպե՞ս է Լիահոնան օգնել Լեքիի ընտանիքին։
- Այն բանից հետո, երբ Լեքիի ընտանիքը ստացավ Լիահոնան, նրանց ճամփորդությունը հե՞շտ էր, թե՝ դժվար։ Ի՞նչ է Նեփին պատմում 1 Նեփի 16.17–19-ում, որը կօգնի ձեզ պատասխանել։
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ Լեքիի և Նեփիի նման արդար մարդիկ երբեմն պետք է հանդիպեն դժվարությունների։ (Դուք կարող եք բացատրել, որ շատ դժվարություններ, որոնց մենք հանդիպում ենք, միշտ չէ, որ լինում են սխալ ընտրությունների հետևանք։ Դրանք հնարավորություններ են սովորելու և աճելու համար՝ որպես մեր մահկանացու ճամփորդության մի մաս։)

Հրավիրեք դասարանի կեսին լուռ ուսումնասիրել 1 Նեփի 16.20–22, փնտրելով, թե Լեքիի ընտանիքի որոշ անդամներ ինչպես արձագանքեցին Նեփիի կոտրված աղեղի հետ կապված փորձությանը։ Հրավիրեք դասարանի մյուս կեսին ուսումնասիրել 1 Նեփի 16.23–25, 30–32 հատվածները, փնտրելով Նեփիի արձագանքը այս փորձությանը և թե ինչպես նրա պատասխանը ազդեց նրա ընտանիքի վրա։ Այն բանից հետո, երբ յուրաքանչյուր խումբ կզեկուցի այն, ինչ գտել է, հարցրեք.

- Ի՞նչ կարող ենք մենք սովորել՝ համեմատելով նույն փորձության հետ կապված այս երկու արձագանքները։
- Ի՞նչ կարևոր նշանակություն ունի այն, որ Նեփին գնաց իր հոր մոտ՝ ուղղություն ստանալու համար, չնայած որ Լեքին տրտնջացել էր։ Ի՞նչ սկզբունքներ մենք կարող ենք սովորել սրանից, որ կիրառենք մեր կյանքում։ (Դուք կարող եք բացատրել, որ ուղղություն ստանալու համար Լեքիի մոտ գնալով Նեփին հարգանք ցուցաբերեց նրա հանդեպ և օգնեց հիշեցնել իրեն դառնալ դեպի Տերը։ Ծնողներից և քահանայության ղեկավարներից խորհուրդ փնտրելը, անկախ նրանց թերացումներից, նրանց հարգելու և Տիրոջ հանդեպ հավատք գործադրելու եղանակ է։)
- Ի՞նչ լրացուցիչ սկզբունքներ կարող ենք մենք սովորել Նեփիի արձագանքից նրա ընտանիքի դժվարություններին։ (Երբ ուսանողները կիսվեն իրենց մտքերով, անպայման նշեք, որ, **եթե մենք անենք այն ամենը, ինչ կարող ենք և նաև փնտրենք Տիրոջ առաջնորդությունը, Նա կօգնի մեզ մեր դժվարությունների ընթացքում։)**

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 16.26–29։ Հրավիրեք դասարանին փնտրել մանրամասներ այն մասին, թե ինչպես Տերը օգտագործեց Լիահոնան Լեքիի ընտանիքին առաջնորդելու համար։ Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ և կիրառել այն, ինչ այս հատվածները ուսուցանում են Տիրոջ առաջնորդությունը ստանալու վերաբերյալ, տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ տարբերություն կա Տիրոջ առաջնորդությանը մակերեսորեն հետևելու և Տիրոջ առաջնորդությանը հավատքով ու ջանասիրությամբ հետևելու միջև։

Հրավիրեք ուսանողներին լուռ կարդալ 1 Նեփի 16.29, Ալմա 37.6–7 և Ալմա 37.38–41 հատվածները, փնտրելով մի սկզբունք, որն ուսուցանվում է բոլոր երեք հատվածներում։

- Ի՞նչ սկզբունք է ուսուցանված այս երեք հատվածներում։ (Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ **փոքր միջոցներով Տերը կարող է առաջ բերել մեծ բաներ։** Դուք կարող եք այս սկզբունքը գրել գրատախտակին։)
- Համաձայն այս հատվածների, ի՞նչ «փոքր միջոցներ» է պատրաստել Տերը մեզ առաջնորդելու համար։

Գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունները, բացատրելով, որ յուրաքանչյուր հարցում բացակայում է մի բառ կամ արտահայտություն։ (Դուք կարող եք սա անել նախքան դասը։)

1. *Որո՞նք են երկու կամ երեք բաները, որով . . . նման են Լիահոնային։*
2. *Որո՞նք են որոշ բաները, որ կարող են պատճառ դառնալ, որ մենք բաց թողնենք կարևոր ուղերձներ . . .։*
3. *Ե՞րբ եք դուք օրհնվել, հետևելով . . . առաջնորդությանը։*

Դասարանը բաժանեք երեք խմբի՝ յուրաքանչյուր խմբում ղեկավարի առկայությամբ։ Յուրաքանչյուր ղեկավարի տվեք հետևյալ հանձնարարության մի օրինակ, որում իրենց խումբը կուսումնասիրի «փոքր միջոցները», որոնք Տերն օգտագործում է

մեզ առաջնորդելու համար: (Եթե ձեր դասարանը մեծ է, դուք կարող եք դասարանը բաժանել երեքից ավելի խմբերի՝ խումբը փոքրացնելու համար: Այդ դեպքում դուք պետք է մեկ կամ ավելի խմբերի տաք նույն հանձնարարությունը:)

**Խումբ 1. Հայրապետական օրհնություն**

Խմբի համար կարդացեք Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հետևյալ խոսքերը.

«Նույն Տերը, ով Լեքիին տվեց Լիահոնան, տալիս է ձեզ և ինձ այսօր բացառիկ և արժեքավոր պարգև, որ ուղղություն տա մեր կյանքին, որ նշի վտանգները՝ մեր ապահովության համար, և գծագրի ուղին, նույնիսկ ապահով անցումը, ոչ թե դեպի խոստումի երկիր, այլ դեպի մեր երկնային տուն: Պարգևը, որի մասին ես խոսում եմ, հայտնի է որպես ձեր հայրապետական օրհնություն: . . .

. . . Ձեր օրհնությունը չպետք է ծալել և պահել: Այն չպետք է շրջանակի մեջ առած աչքի ընկնող տեղում դնել կամ հրապարակել: Դա պետք է կարդալ: Դա պետք է սիրել: Դրան պետք է հետևել: Ձեր հայրապետական օրհնությունը կառաջնորդի ձեզ մութ գիշերով: Այն կուղեկցի ձեզ կյանքի դժվարությունների ժամանակ: . . . Ձեր հայրապետական օրհնությունը ձեզ համար անձնական Լիահոնա է՝ ձեր ուղղությունը նշելու և ձեզ առաջնորդելու համար» (“Your Patriarchal Blessing: A Liahona of Light,” *Ensign,* Nov. 1986, 65–66):

Հարմարեցրեք գրատախտակին գրված նախադասությունները, որ դրանք վերաբերվեն հայրապետական օրհնություններին: Խմբով քննարկեք այդ հարցերը: Հանձնարարեք ձեր խմբից մեկին, որ դասարանի մյուս անդամների հետ կիսվի, թե ինչ է սովորել ձեր խումբը: Նաև ձեր խմբից հրավիրեք մեկին կիսվել երրորդ հարցի հետ կապված իր փորձառությամբ:

**Խումբ 2. Սուրբ գրությունները և Վերջին Օրերի Մարգարեների Խոսքերը**

Խմբի համար կարդացեք Յոթանասունից Երեց Վ. Ռոլֆ Քերի հետևյալ խոսքերը.

«Քրիստոսի խոսքերը կարող են լինել անձնական Լիահոնա մեզանից յուրաքանչյուրի համար, որ ցույց կտան մեզ ուղին: Եկեք չլինենք ծույլ միջոցի հեշտության պատճառով: Եկեք հավատքով ընդունենք Քրստոսի խոսքերը մեր մտքում և մեր սրտում, ինչպես դրանք գրված են սուրբ գրություններում և ինչպես դրանք տրվում են ապրող մարգարեների, տեսանողների և հայտնողների միջոցով: Եկեք հավատքով և ջանասիրությամբ սնվենք Քրիստոսի խոսքերով, քանզի Քրիստոսի խոսքերը կլինեն մեր հոգևոր Լիահոնան, ասելով մեզ բոլոր բաները, որ մենք պետք է անենք» (“The Words of Christ—Our Spiritual Liahona,” *Ensign* կամ *Liahona,* May 2004, 37):

Հարմարեցրեք գրատախտակին գրված հարցերը, որ դրանք վերաբերվեն սուրբ գրություններին և վերջին օրերի մարգարեների խոսքերին: Խմբով քննարկեք այդ հարցերը: Հանձնարարեք ձեր խմբից մեկին, որ դասարանի մյուս անդամների հետ կիսի այն, ինչ ձեր խումբը սովորել է: Նաև հրավիրեք ձեր խմբից մեկին, որ կիսվի երրորդ հարցի հետ կապված իր փորձառությամբ:

**Խումբ 3. Սուրբ Հոգի**

Խմբի համար կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը.

«Մինչ մենք ձգտում ենք ունենալ արդար վերաբերմունք և գործեր, ապա Սուրբ Հոգին մեր համար այսօր դառնում է այն, ինչ Լիահոնան էր Լեքիի և իր ընտանիքի համար իրենց օրերում: Հենց այն գործոնները, որոնց համաձայն աշխատում էր Լիահոնան Լեքիի համար, նմանապես կիրավիրեն Սուրբ Հոգին մեր կյանք: Եվ հենց այն գործոնները, որոնց համաձայն Լիահոնան չէր աշխատում նախկինում, նմանապես պատճառ կհանդիսանան, որ մենք մեզ հեռացնենք Սուրբ Հոգուց այսօր» (“That We May Always Have His Spirit to Be with Us,” *Ensign* կամ *Liahona,* May 2006, 30):

Հարմարեցրեք գրատախտակին գրված նախադասությունները, որ դրանք վերաբերվեն Սուրբ Հոգուն: Խմբով քննարկեք այդ հարցերը: Հանձնարարեք ձեր խմբից մեկին կիսել դասարանի մյուս անդամների հետ այն, ինչ ձեր խումբը սովորել է: Նաև հրավիրեք մեկին ձեր խմբից կիսվել երրորդ հարցի հետ կապված իր փորձառությամբ:

*Նշում ուսուցչի համար.* Մոտավորապես վեց կամ ութ րոպե անց խնդրեք յուրաքանչյուր խմբին սովորեցնել դասարանին այն, ինչ իրենք են սովորել իրենց քննարկման ժամանակ: Դուք կարող եք նաև հրավիրել ուսանողներին գրել իրենց սուրբ

գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային նոթատետրերում այն ժամանակների մասին, երբ Տերը առաջնորդել է նրանց փոքր միջոցների օգնությամբ: Կարող եք պատմել այն ժամանակների մասին, երբ առաջնորդվել եք Տիրոջ կողմից փոքր միջոցներով:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 1 Նեփի 16.10: Անձնական Լիահոնա

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը նմանեցրել է մեր խիղճը Լիահոնային.

«Դուք պետք է գիտակցեք, որ դուք ունեք կողմնացույցի նման մի բան, Լիահոնայի նման, ձեր իսկ համակարգում: Յուրաքանչյուր երեխայի տրված է դա: Երբ նա ութ տարեկան է, նա տարբերում է բարին չարից, եթե նրա ծնողները նրան լավ են սովորեցրել: Եթե նա ուշադրություն չի դարձնում իր ներքին Լիահոնային, նա ի վերջո կզրկվի դրա հուշումներից: Սակայն եթե մենք հիշենք, որ մեզանից յուրաքանչյուրն ունի այն բանը, որ կառաջնորդի իրեն ճիշտ ուղով, մեր նավը չի ընթանա սխալ ուղղությամբ, և մենք չենք տառապի, և աղեղները չեն կոտրվի, և ընտանիքները լաց չեն լինի ուտելիքի համար, եթե մենք լսենք մեր իսկ Լիահոնայի կարգադրություններին, որը մենք անվանում ենք խիղճ» (“Our Own Liahona,” *Ensign,* Nov. 1976, 79):

ԴԱՍ 18

# 1 Նեփի 17

## Նախաբան

Անապատում ութ տարի ճամփորդելուց հետո Լեքիի ընտանիքը ժամանեց ծովեզրյա մի տարածք, որը նրանք անվանեցին Լիառատ: Այն բանից հետո, երբ նրանք հաստատվեցին Լիառատում, Տերը պատվիրեց Նեփիին նավ կառուցել: Երբ նրա եղբայրները իմացան, թե նա ինչ էր փորձում անել, նրանք ծաղրեցին նրան, ապա դժգոհեցին և հրաժարվեցին օգնել: Նեփին սովորեցրեց իր եղբայրներին, որ չնայած Տերը փնտրել է խոսել նրանց հետ Հոգու մեղմ, հանդարտ ձայնով, նրանց անօրինությունը խանգարել է, որ նրանք զգան Նրա խոսքերը: Նա հանդիմանեց նրանց իրենց ամբարշտության համար և հորդորեց նրանց ապաշխարել:

## Ուսուցանման առաջարկներ

### 1 Նեփի 17.1–51

*Լեքիի ընտանիքի ճամփորդությունները դեպի Լիառատ երկիր, որտեղ Նեփիին պատվիրվում է նավ կառուցել*

Գրատախտակին նկարեք հետևյալ գծապատկերը:

Հեշտ ⟵⟶ Դժվար

Խնդրեք ուսանողներին խորհել, թե արդյոք նրանք ներկայումս կնկարագրեն իրենց կյանքը որպես հեշտ, թե դժվար, և ինչու: (Դուք կարող եք խորհուրդ տալ ուսանողներին քննարկել իրենց պատասխանները զուգընկերոջ հետ: Կամ հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց մտքերով ամբողջ դասարանի հետ: Հիշեցրեք նրանց, որ կարիք չկա կիսվելու որևէ բանով, որը շատ անձնական է կամ գաղտնի:)

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 17.1, 4, 6: Մինչ նա կարդում է, թող դասարանը փնտրի բառեր և արտահայտություններ, որոնք նշում են, թե ժամանակը, որ Նեփին և նրա ընտանիքը անցկացրեցին անապատում, հեշտ էր, թե դժվար:

- Անապատում անցկացրած ժամանակը Նեփին բնորոշում էր որպես հեշտ, թե՞ դժվար: Ո՞ր բառերն են ակնարկում, որ այն դժվար էր:

Բացատրեք, որ Նեփին և նրա ընտանիքը նաև առատորեն օրհնվեցին այս ժամանակահատվածում: Հրավիրեք ուսանողներին ընթերցել 1 Նեփի 17.2, 5, 12–13 և գտնել, թե ինչով էին օրհնված Նեփին ու իր ընտանիքը իրենց ճամփորդության ընթացքում: Խնդրեք մի քանի ուսանողների բացատրել այն, ինչ իրենք գտել են:

Ասեք ուսանողներին, որ Նեփին ուսուցանեց մի սկզբունք, որը բացատրեց, թե ինչու իր ընտանիքը կարող էր օրհնված լինել այս դժվար ժամանակահատվածում: Հրավիրեք ուսանողներին լուռ կարդալ 1 Նեփի 17.3 և ներկայացնել սկզբունքը, որ սկսվում է *եթե* բառով: Հակիրճ բացատրեք, որ սուրբ գրություններում սկզբունքները երբեմն ներկայացվում են «եթե-ապա» ձևով: *Եթե* բառը ներկայացնում է գործողություն, և *ապա* բառը ներկայացնում է հետևանքը (դրական կամ բացասական), որը մենք կունենանք որպես այդ գործողության արդյունք:

Չնայած 1 Նեփի 17.3-ը չի պարունակում *ապա* բառը, այն նկարագրում է գործողություն, ներառյալ մի քանի օրհնություններ, որոնք կլինեն արդյունքում: Խնդրեք ուսանողներին նշել իրենց ներկայացրած սկզբունքի «եթե-ապա» բաղադրիչները: Նրանք պետք է ասեն նմանատիպ մի բան. **Եթե մենք պահենք պատվիրանները, ապա Տերը կուժեղացնի մեզ և միջոցներ կապահովի մեր համար, որ իրագործենք այն, ինչ նա պատվիրել է:** (Դուք կարող եք գրատախտակին գրել այս սկզբունքը:) Հրավիրեք ուսանողներին փնտրել այս սկզբունքի վերաբերյալ վկայություն, մինչ նրանք ուսումնասիրում են Նեփիի փորձառությունը և մինչ նրանք անդրադառնում են իրենց իսկ կյանքին:

***Օգնեք ուսանողներին սովորել, թե ինչպես ներկայացնել վարդապետություններն ու սկզբունքները***

Երբ դուք օգնեք ուսանողներին սովորել, թե ինչպես ներկայացնել սուրբ գրությունների վարդապետություններն ու սկզբունքները, նրանք կկարողանան ինքնուրույն ուսումնասիրել սուրբ գրությունները ավելի արդյունավետ կերպով: Սովորեցրեք ուսանողներին փնտրել այնպիսի արտահայտություններ, ինչպես օրինակ *«այսպիսով մենք տեսնում ենք»*, *«հետևաբար»*, *«ուստի»*, *«ահա»* կամ *«եթե . . ., ապա . . .»*, որոնք հաճախ ներկայացնում են սկզբունքներ կամ վարդապետություններ:

Բաժանեք թերթիկներ, որոնք պարունակում են հետևյալ հարցերը (կամ գրեք հարցերը գրատախտակին նախքան դասը).

1. Ի՞նչ պատվիրեց Տերը, որ Նեփին աներ: (1 Նեփի 17.7–8) Ինչպե՞ս արձագանքեց Նեփին: (1 Նեփի 17.9–11, 15–16) Ինչպե՞ս արձագանքեցին նրա եղբայրները: (1 Նեփի 17.17–21)
2. Ինչպե՞ս էր օգնել Տերը Մովսեսին իրագործել այն, ինչ պատվիրվել էր նրան անել: (1 Նեփի 17.23–29)
3. Ինչո՞վ էին Նեփիի եղբայրները նման Իսրայելի զավակներին: (1 Նեփի 17.30, 42)
4. Ի՞նչ է պատվիրել Տերը, որ կարող է դժվար լինել ինձ համար:
5. Ինչպե՞ս ես կարող եմ արձագանքել Նեփիի և Մովսեսի պես: Ինչպե՞ս ես կարող եմ խուսափել սխալներից, որ կատարեցին Նեփիի եղբայրները և Իսրայելի զավակները:

Ներկայացրեք վերևում տրված հարցերը, բացատրելով, որ դրանք կօգնեն ուսանողներին տեսնել, թե ինչպես Նեփին շարունակեց ապրել 1 Նեփի 17.3 սկզբունքի համաձայն Լիահատ ժամանելուց հետո: Հարցերը նաև կօգնեն ուսանողներին կիրառել սկզբունքը իրենց իսկ կյանքում: Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 17.7–8: Խնդրեք դասարանի մյուս անդամներին ներկայացնել, թե ինչ էր պատվիրվել Նեփիին անել: Թող ուսանողները պատասխանը գրեն թերթիկի առաջին հարցի տակ կամ իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:

- Ինչո՞վ կարող էր այս պատվիրանը դժվար լինել Նեփիի համար:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 17.9–11 և մեկ այլ ուսանողի կարդալ 1 Նեփի 17.15–16: Նախքան նրանց կարդալը խնդրեք դասարանին ուշադիր լսել, թե ինչպես Նեփին արձագանքեց նավ կառուցելու պատվիրանին:

- Ի՞նչն է ձեզ վրա տպավորություն թողնում Նեփիի պատասխանի մեջ:

Թող ուսանողները թերթիկների վրա կամ իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում ամփոփ ձևով գրեն Նեփիի պատասխանը առաջին հարցի տակ:

Խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 1 Նեփի 17.17–21: Թող դասարանը փնտրի բառեր կամ արտահայտություններ, որոնք հայտնում են Լամանի և Լեմուելի վերաբերմունքը: Թող ուսանողները համառոտ ձևով գրի առնեն Լամանի և Լեմուելի արձագանքը ի պատասխան նավ կառուցելու պատվիրանին: Հրավիրեք մեկ կամ երկու ուսանողների դասարանի հետ կիսվել իրենց գրառումներով:

Բացատրեք, որ Նեփին արձագանքեց իր եղբայրների դժգոհություններին, հիշեցնելով նրանց, որ Տերը օգնել էր Մովսեսին իրագործել Իսրայելի զավակներին գերությունից ազատելու դժվարին հանձնարարությունը: Նեփին նաև համեմատեց իր եղբայրների կարծրասրտությունը Իսրայելի զավակների կարծրասրտության հետ: Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել սուրբ գրությունների հատվածները և գրի առնել իրենց պատասխանները երկրորդ և երրորդ հարցերի վերաբերյալ: Ելնելով ձեր ուսանողների կարիքներից, դուք կրող եք հրավիրել նրանց անել դա անհատապես կամ զուգընկերոջ հետ:

Նրանից հետո, երբ ուսանողները կլրացնեն 2-րդ և 3-րդ հարցերը, հարցրեք.

- Ինչպե՞ս էր օգնում Տերը Մովսեսին իրագործել այն, ինչ պատվիրված էր նրան անել:
- Ձեր կարծիքով, Մովսեսի օրինակը ինչպե՞ս էր օգնում Նեփիին:
- Ինչո՞վ էին Նեփիի եղբայրները նման Իսրայելի զավակներին:

Նշեք, որ երբ Տերը մեզ տալիս է դժվարին առաջադրանքներ կամ պատվիրաններ, մենք կարող ենք ընտրել արձագանքել Նեփիի պես, կամ մենք կարող ենք արձագանքել ինչպես Լամանը և Լեմուելը: Բացատրեք, որ չնայած Աստված մեզ չի պատվիրել կատարել այնպիսի առաջադրանքներ, ինչպիսին է նավ կառուցելը կամ Կարմիր ծովը բաժանելը, Նա տվել է պատվիրաններ և պատվիրել է մեզ իրագործել բաներ, որոնք որոշ մարդիկ դժվար են կարծում: Օրինակ, նա պատվիրել է մեզ ունենալ առաքինի մտքեր և Հանգստյան օրը սուրբ պահել: Նա ակնկալում է, որ մենք կկատարենք Եկեղեցու կոչումները (օրինակ որպես քվորումի կամ դասարանի նախագահ) և ծառայել ուրիշներին: Նա նաև ակնկալում է, որ մենք պահենք մեր ուխտերը և ակտիվ մնանք Եկեղեցում, նույնիսկ դժվարությունների հանդիպելիս:

***Ուսուցանելիս հաշվի առեք ձեր ուսանողների կարիքները***

Խելացի կլինի հարմարեցնել ուսուցման մեթոդները, օգնելով ուսանողներին հաջողությամբ իրականացնել որպես սովորողներ իրենց դերը: Օրինակ, եթե ուսանողները հոգնած տեսք ունեն, կարող եք խնդրել, որ նրանք աշխատեն զուգընկերների հետ, որպեսզի ներգրավված լինեն ուսուցման մեջ: Եթե ուսանողները եռանդով լի են, դուք կարող եք խնդրել նրանց անհատապես ուսումնասիրել, որ օգնեք նրանց կենտրոնացած մնալ:

Ուսանողներին ժամանակ տվեք 4-րդ և 5-րդ հարցերի պատասխանները գրի առնելու համար: Խրախուսեք նրանց 4-րդ հարցին պատասխանելիս գրել որևէ բանի մասին, որ Տերը պատվիրել է և որը դժվար է նրանց համար:

Այն բանից հետո, երբ ուսանողները բավականաչափ ժամանակ կունենան գրելու համար, բարձրաձայն կարդացեք Նեփիի հավատքի արտահայտությունը 1 Նեփի 17.50-ում: Ապա ուսանողներին խնդրեք լուռ կարդալ 1 Նեփի 17.51 և խորհել, թե ինչպես է դա վերաբերվում իրենց կյանքին: Խրախուսեք նրանց ավելացնել իրենց անունը *ինձ* բառից հետո և *նավ կառուցել* արտահայտությունը փոխարինել առաջադրանքով կամ պատվիրանով, որը նրանք դժվար են համարում: Խորհեք այն բանի վերաբերյալ, որ հրավիրեք այն ուսանողներին, ովքեր հարմար կգտնեն դա անել, բարձրաձայն կարդալ 1 Նեփի 17.51 իրենց կատարած փոփոխություններով: Կրկին անդրադարձեք գրատախտակին գրված սկզբունքին:

- Ի՞նչ փորձառություն էր Նեփին արդեն իսկ ունեցել այս սկզբունքի հետ կապված, որ տալիս էր նրան վստահություն, որ Տերը կօգներ իրեն կատարել ցանկացած պատվիրան:
- Ի՞նչ փորձառություն եք ունեցել դուք, որը ձեզ վստահություն է տալիս, որ Աստված կօգնի ձեզ իրագործել ցանկացած բան, ինչ Նա կպահանջի ձեզանից:

Կիսվեք ձեր վկայությամբ, որ երբ մենք պահում ենք պատվիրանները, Տերը ուժեղացնում է մեզ և ճանապարհներ է պատրաստում մեր համար իրագործելու այն ամենը, ինչն Ինքը պատվիրում է:

## 1 Նեփի 17.45–55

### *Նեփին հանդիմանում է Լամանին և Լեմուելին իրենց ամբարշտության համար*

Ցուցադրեք Նեփին հնազանդեցնում է իր ըմբոստ եղբայրներին (62044; *Gospel Art Book* [2009], no. 70) նկարը: Հրավիրեք ուսանողներին ամփոփել այն, ինչը տեղի ունենում նկարում: Եթե ուսանողները պատասխան չունեն, հրավիրեք նրանց գտնել պատասխանը 1 Նեփի 17.48, 53–54-ում:

- Համաձայն 1 Նեփի 17.53-ի, ինչո՞ւ Տերը ցնցեց Նեփիի եղբայրներին: (Դուք կարող եք ուսանողների ուշադրությունը հրավիրել 53 *ա* տողատակի ծանոթագրության վրա, որ օգնեք նրանց հասկանալ, որ *ցնցել* բառը այս ենթատեքստում նշանակում է «այնպես անել, որ ցնցվեն կամ դողան»:)

Բացատրեք, որ ցնցումը, որ Տերը տվեց Լամանին և Լեմուելին, բազմաթիվ ճանապարհներից մեկն է, որոնցով Տերը հաղորդակցվել է նրանց հետ: Հրավիրեք ուսանողներին կարդալ 1 Նեփի 17.45 և ներկայացնել մի քանի ճանապարհներ, որոնցով Տերը հաղորդակցվել է Լամանի և Լեմուելի հետ անցյալում:

- Ի՞նչ ճանապարհներով է Տերը հաղորդակցվել Լամանի և Լեմուելի հետ: Դրանցից ո՞րն է այն ճանապարհը, որով Տերը ամենաշատն է փնտրում հաղորդակցվել մեզ հետ:

Դուք կարող եք առաջարկել ուսանողներին նշել 1 Նեփի 17.45-ի հետևյալ մասը. «Նա խոսել է ձեզ հետ՝ մեղմ, հանդարտ ձայնով»: Խնդրեք ուսանողներին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ խոսքերը.

«Սուրբ Հոգին խոսում է այնպիսի ձայնով, որ դուք ավելի շատ *զգում եք*, քան *լսում:* Այն նկարագրվում է որպես «մեղմ, հանդարտ ձայն» [ՎԿՈՒ 85.6]: Եվ մինչ մենք խոսում ենք Հոգու հուշումներին «լսելու» մասին, ավելի հաճախ մարդիկ նկարագրում են հոգևոր հուշումը՝ ասելով. «Ես *զգացողություն* եմ ունեցել . . .» (“Personal Revelation: The Gift, the Test, and the Promise,” *Ensign*, Nov. 1994, 60):

Դուք կարող եք հրավիրել ուսանողներին գրել հետևյալ ճշմարտությունը իրենց սուրբ գրություններում 1 Նեփի 17.45 հատվածի կողքին. **Սուրբ Հոգին խոսում է մեղմ, հանդարտ ձայնով, որը մենք ավելի շատ զգում ենք, քան լսում:** (Այս սկզբունքը շեշտելու համար դուք կարող եք խնդրել ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 8.2–3:)

- Ե՞րբ եք դուք զգացել, որ Սուրբ Հոգին խոսել է ձեզ հետ մեղմ, հանդարտ ձայնով:
- Ի՞նչ եք դուք անում, որն օգնում է ձեզ զգալ և ճանաչել Սուրբ Հոգու մեղմ, հանդարտ ձայնը:

Այն բանից հետո, երբ ուսանողները պատասխանեն, դուք կարող եք խրախուսել նրանց ընդգծել 1 Նեփի 17.45-ի հետևյալ արտահայտությունը. «Բայց դուք անզգայացած էիք, որպեսզի կարողանայիք զգալ նրա խոսքերը»: Թող ուսանողները կարդան 1 Նեփի 17.45 հատվածի առաջին նախադասությունը և ներկայացնեն, թե ինչու էին Լամանը և Լեմուելը դարձել «անզգայացած»: Հրավիրեք նրանց ներկայացնել իրենց գտածը:

- Ինչո՞ւ «անօրինություն գործելիս սրընթաց լինելը» կարող էր պատճառ դառնալ, որ Լամանը և Լեմուելը դառնային «անզգայացած»:
- Ինչպե՞ս կարող են մեր մեղքերը ազդել Սուրբ Հոգու ազդեցությունը զգալու մեր կարողության վրա:

Ուսանողների պատասխաններից հետո կարդացեք Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստի հետևյալ մտքերը, ով ծառայել է որպես Առաջին Նախագահության անդամ.

«Մեր օրերում հաղորդակցվելու համար հիմնականում օգտագործում են բջջային հեռախոսներ: Երբեմն, ինչևիցե, մենք գտնվում ենք այնպիսի վայրերում, որտեղ բջջային հեռախոսի ազդանշանը չի գործում: Սա կարող է պատահել, երբ բջջային հեռախոս օգտագործողը գտնվում է թունելում կամ կիրճում կամ երբ կան այլ խանգարող ռադիոազդանշաններ:

Այդպես է նաև աստվածային հաղորդակցության դեպքում: . . . Մենք հաճախ դնում ենք ինքներս մեզ հոգևոր առումով անհասանելի տեղերում՝ վայրեր և իրադրություններ, որոնք սահմանափակում են աստվածային ուղերձները: Այս անհասանելի տեղերից են բարկությունը, պոռնոգրաֆիան, հանցանքը, եսասիրությունը և այլ իրավիճակներ, որոնք վիրավորում են Հոգուն» (“Did You Get the Right Message?” *Ensign* կամ *Liahona,* May 2004, 67):

Որպես վերջաբան հրավիրեք ուսանողներին խորհել ուղերձների մասին, որոնք Տերը հաղորդել է նրանց վերջերս: Խրախուսեք նրանց խորհել, թե արդյոք նրանք գտնվում են որևէ «հոգևորապես անհասանելի վայրում», որ կարող է խանգարել նրանց նման հաղորդակցություն ստանալ: (Դուք կարող եք հրավիրել ուսանողներին գրել այդ մասին իրենց սուրբ գրությունների օրագրերում:) Վկայեք, որ Սուրբ Հոգին խոսում է մեղմ, հանդարտ ձայնով, որը մենք ավելի շատ զգում ենք, քան լսում: Նաև վկայեք, որ մենք կարող ենք ունենալ այս հաղորդակցության փորձառությունը, եթե ձգտենք լինել արժանի այս նուրբ հուշումներին:

ԴԱՍ 19

# 1 Նեփի 18

## Նախաբան

Տիրոջ հրահանգներին հետևելով Նեփին և այլոք ավարտեցին նավը կառուցելը և ճանապարհ ընկան դեպի խոստումի երկիր: Իրենց ուղևորության ընթացքում Լամանը և Լեմուելը և Իսմայելի որդիները և նրանց կանայք ապստամբեցին Տիրոջ դեմ: Երբ Նեփին խրատեց նրանց, Լամանը և Լեմուելը կապեցին նրան պարաններով: Դրա արդյունքում Լիահոնան դադարեց աշխատել և նրանք չէին կարողանում որոշել, թե որ ուղղությամբ վարեին նավը: Երբ մեծ փոթորիկը սպառնում էր նավում եղողներից յուրաքանչյուրի կյանքին, նրանք ապաշխարեցին և ազատեցին Նեփիին: Նեփին աղոթեց փոթորիկը հանդարտեցնելու համար, և Տերը կրկին առաջնորդեց նրանց ճամփորդելու դեպի խոստումի երկիր:

## Ուսուցանման առաջարկներ

### 1 Նեփի 18.1–8

*Լեքիի ընտանիքը նախապատրաստվում է դեպի խոստումի երկիր նավարկելուն*

Գրատախտակին գրեք *Տիրոջ զորությունը* և *իմ ջանքերը*: Խնդրեք ուսանողներին մտածել մի խնդրի մասին, որը նրանք ունեն այժմ: Հրավիրեք նրանց ընտրել, թե որը *(Տիրոջ զորությունը* կամ *իմ ջանքերը)* կարող է ավելի արդյունավետ լինել խնդիրը լուծելու համար, և խնդրեք նրանց բացատրել, թե ինչու: Կարճ քննարկումից հետո հրավիրեք ուսանողներին ուղիներ փնտրել 1 Նեփի 18 հատվածում Նեփիի օրինակում, որոնք կօգնեն նրանց հաղթահարել խնդիրները, որոնց նրանք հանդիպել են:

Ցուցադրեք Լեքին և նրա ժողովուրդը ոտք են դնում խոստացված երկիր (62045; *Gospel Art Book* [2009], no. 71) նկարը:

Հրավիրեք ուսանողներին լուռ կարդալ 1 Նեփի 18.1–8: Խնդրեք նրանց փնտրել, թե (1) ինչ արեցին Նեփին ու իր ընտանիքը, որ պատրաստվեին դեպի խոստումի երկիր իրենց ճամփորդությանը և (2) ինչ արեց Տերը նրանց աջակցելու համար:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր կարևոր այն, որ Նեփին «ժամանակ առ ժամանակ» հայտնություններ էր ստանում:
- 1 Նեփի 18.2–3-ում ի՞նչ կապ եք դուք տեսնում Նեփիի գործերի և օգնության միջև, որը նա ստանում էր Տիրոջից:
- Ինչպե՞ս էին Տիրոջ առաջնորդությունը և Նեփիի սեփական ջանքերը՝ երկուսն էլ կարևոր նավը ավարտին հասցնելու և դեպի խոստումի երկիր ճամփորդությունը իրականացնելու համար:

Խնդրեք ուսանողներին ամփոփել մի քանի սկզբունքներ, որոնք մենք կարող ենք սովորել Նեփիի օրինակից: Ուսանողներին իրենց սովորած ճշմարտությունները ներկայացնելու հնարավորություն տալուց հետո գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. **Որպեսզի իրագործենք այն, ինչ պատվիրում է Տերը, մենք պետք է փնտրենք Նրա օգնությունը և մեր սեփական ջանքերը գործադրենք:**

- Ե՞րբ եք դուք ստացել առաջնորդություն կամ ուղղություն Տիրոջից և կարիք եք ունեցել գործադրելու ձեր սեփական ջանքերը, որպեսզի պահեք Նրա պատվիրաններից մեկը:

Հրավիրեք ուսանողներին գրի առնել մեկը մյուսի պատասխանները վերևում տրված հարցին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային նոթատետրերում:

Նշեք, որ մենք բոլորս էլ ունենք Աստծո օգնության կարիքը Իր պատվիրաններին հնազանդվելու և ավետարանի չափանիշներին հետևելու համար, որոնք տրված են *Երիտասարդներին Զորացնելու համար գրքույկում:* (Դուք կարող եք ձեռք բերել և վերանայել *Երիտասարդներին Զորացնելու համար* գրքույկը նախքան դասը:)

Խրախուսեք ուսանողներին ներկայացնել մի պատվիրան կամ ավետարանի չափանիշ, որին հնազանդվելու համար նրանք հատկապես ունեն Աստծո օգնության կարիքը: Ժամանակ տվեք նրանց իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրել այն մասին, թե (1) ինչ կարող են անել նրանք, որ փնտրեն Տիրոջ օգնությունը դրան հնազանդվելու համար և (2) ինչ սեփական ջանքեր պետք է նրանք գործադրեն դրան հնազանդվելու համար:

## 1 Նեփի 18.9–25

### *Լամանը և Լեմուելը ապստամբություն են կազմակերպում, որը խոչընդոտում է դեպի խոստումի երկիր ճամփորդությունը*

Տվեք հետևյալ հարցը.

- Ձեր կարծիքով, որո՞նք են որոշ պատճառները, որ մենք դժվարություններ ենք ունենում:

Որոշակի քննարկումից հետո հրավիրեք մի ուսանողի կարդալ Յոթանասունից Երեց Լ. Ուիթնի Քլեյթոնի հետևյալ խոսքերը: Խնդրեք դասարանին ուշադրություն դարձնել երեք պատճառների վրա, որոնք տալիս է Երեց Քլեյթոնը մեր նեղություններ ունենալու հետ կապված.

«Ընդհանուր իմաստով ասած՝ մեր բեռները գալիս են երեք աղբյուրներից: [1 ]Բեռներից մի քանիսը մեր աշխարհի ստեղծած պայմանների բնական արդյունքն են: Ժամանակ առ ժամանակ հիվանդությունները, ֆիզիկական տկարությունը, փոթորիկներն ու երկրաշարժերը տեղի են ունենում մեզանից անկախ: . . .

[2] Բեռների մյուս մասը մեզ վրա են դրվում ուրիշների սխալների պատճառով: Բռնությունը, վատ հակումները կարող են մեր տները դարձնել ցանկացած վայր, բայց ոչ երկնքի կտոր երկրի վրա ընտանիքի անմեղ անդամների համար: Մեղքը, թյուր ավանդությունները, անարգանքը և հանցանքը ծանրության զոհեր են սփռում կյանքի ճանապարհին: . . .

[3] Մեր անձնական սխալներն ու թերություններն առաջացնում են շատ խնդիրներ և կարող են ծանր բեռներ դնել մեր ուսերին: Ամենածանր բեռը, որ մենք դնում ենք մեզ վրա, մեղքի բեռն է» («Որ ձեր բեռները թեթև լինեն», *Ensign* կամ *Լիահոնա,* Նոյեմբեր 2009, 12–13):

Գրատախտակին գրեք (1) *աշխարհի ստեղծած պայմանները,* (2) *ուրիշների սխալները,* և (3) *մեր անձնական սխալներն ու թերությունները:*

Բացատրեք, որ այն բանից հետո, երբ Լեքիի ընտանիքը նավ նստեց օվկիանոսով ճամփորդելու համար, Լամանը, Լեմուելը և մյուսները կատարեցին վատ ընտրություններ, որոնց արդյունքում նավի վրա գտնվող յուրաքանչյուր անձնավորություն նեղություն կրեց: Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 18.9: Խրախուսեք ուսանողներին ձեռք բարձրացնել, երբ նրանք լսեն սխալ ընտրություն կատարելու որևէ մեկի օրինակը:

- Ի՞նչ սխալ ընտրություն կատարեցին Լամանը, Լեմուելը, Իսմայելի որդիները և նրանց կանայք: Ինչո՞ւ էր դա սխալ:

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ պարելը, երաժշտություն լսելը կամ ուրախանալը սխալ չէ, սակայն այս հատվածը նշում է, որ Լամանը, Լեմուելը և մյուսները անում էին այս բաները «շատ գռեհկորեն» (1 Նեփի 18.9): Բացատրեք, որ այս ենթատեքստում *գռեհկորեն* բառը վերաբերվում է անպարկեշտ կամ կոպիտ լինելուն: Հակառակորդը կարող է օգտագործել պարելը, երաժշտությունը և մեր խոսելաձևը մեր սրտերը և մտքերը այլասերելու համար և պատճառ դառնա, որ մենք կորցնենք Սուրբ Հոգու ընկերակցությունը:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 18.10:

- Համաձայն 1 Նեփի 18.10-ի, ի՞նչ էր Նեփին վախենում, որ կպատահեր, եթե նրանք, ովքեր խռովություն էին առաջացնում, չապաշխարեին:
- Ի՞նչ արեց Նեփին, որ փորձեր օգնել նրանց: (Ուսանողների համար կարող է օգտակար լինել իմանալը, որ *լրջորեն* բառը նշանակում է մտահոգված:)

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչպես նրանք կարձագանքեին, եթե ընտանիքի անդամը կամ Եկեղեցու ղեկավարը խնդրեր նրանց փոխել երաժշտությունը,

որը նրանք լսում են, իրենց պարելու ձևը կամ իրենց խոսելու ձևը: Խրախուսեք նրանց խորհել, թե արդյոք նրանք կկամենան լսել և փոխվել:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 18.11:

- Համաձայն 1 Նեփի 18.10–11-ի, ինչպե՞ս արձագանքեցին Լամանը և Լեմուելը Նեփիի խորհրդին:
- Ինչո՞ւ Տերը թույլ տվեց, որ Լամանը և Լեմուելը կապեին Նեփիին:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 1 Նեփի 18.12–14, 17–19: Խնդրեք ուսանողներին փնտրել բառեր և արտահայտություններ, որոնք ցույց են տալիս Լամանի և Լեմուելի վարքագծի հետևանքները: Հրավիրեք ուսանողներին ներկայացնել ավետարանի սկզբունքները, որոնք նրանք կարող են սովորել այս պատմությունից: Մի պատասխանը կարող է լինել այն, որ **մեղքը մեզ տանում է դեպի մեր սեփական, և երբեմն, ուրիշների տառապանքը:** Որպեսզի օգնեք ուսանողներին կիրառել այս սկզբունքը, դուք կարող եք տալ նմանատիպ հարցեր.

- Ինչպե՞ս մի քանի հոգու խռովարար վարքը ազդեց ամբողջ խմբի վրա:
- Ինչպե՞ս կարող են ոչ խելամիտ կամ խռովարար ընտրությունները խոչընդոտ հանդիսանալ հայտնություն ստանալու մեր կարողության համար:

Որպես այս դասի մի մաս, կարող եք կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ խոսքերը.

«Մենք Եկեղեցում տեսել ենք ակնածանքի և ոչ հարգալից վերաբերմունքի օրինաչափություններ: Թեև շատերն են գովասանքի արժանի, այնուամենայնիվ մենք կաղում ենք: Մենք խորապես մտահոգվելու պատճառ ունենք:

Աշխարհը դառնում է չափազանց աղմկոտ: Հագուստը, արտաքին տեսքը և վարքը դառնում են ավելի վատը, անփույթ և ավելի խճճված: Խռպոտ երաժշտությունը . . ., անպարկեշտ բառերով, պայթում է ձայնի ուժեղացուցիչների միջոցով: Այս բաների տարատեսակները մեծ ընդունելություն են ստանում և ազդեցություն են ունենում մեր երիտասարդների վրա: . . .

Այս հակումը դեպի ավելի շատ աղմուկը, ավելի շատ ոգևորությունը, ավելի շատ հակառակությունը, ավելի քիչ ինքնազսպվածությունը, ավելի քիչ արժանապատվությունը, ավելի քիչ անկեղծությունը՝ ոչ զուգադիպություն է, ոչ՝ պատահականություն, ոչ էլ՝ անվնաս:

Զինվորական արշավանքի գնացող հրամանատարի առաջին հիմնահարցն է խափանելը նրանց կապի միջոցները, ում նա մտադրվել է հաղթել:

Անարգանքը ծառայում է հակառակորդի նպատակներին՝ խափանելով հայտնության նուրբ ուղիները մտքում և հոգում» (“Reverence Invites Revelation,” *Ensign*, Nov. 1991, 22):

- Եթե դուք դարձել եք ըմբոստ և անհնազանդ, ինչպե՞ս դա կարող է ազդել ձեր ընտանիքի վրա: Ինչպե՞ս կարող է դա ազդել ձեր ընկերների վրա: Ինչպե՞ս դա կարող է ազդել ձեր դասարանի կամ քվորումի վրա:

Կրկին անդրադարձեք գրատախտակին գրված նեղությունների երեք աղբյուրներին: Բացատրեք, որ այս գլխի մնացած մասը կարող է օգնել մեզ սովորել, թե ինչպես մենք պետք է արձագանքենք դժվարություններին, անկախ այն բանից, թե արդյոք դրանք գալիս են մեր ընտրությունների, թե ուրիշների ընտրությունների արդյունքում: Հրավիրեք ուսանողներին անհատապես կարդալ 1 Նեփի 18.15–16, 20–23: Խրախուսեք նրանց փնտրել ճշմարտություններ, որոնք կարող են վերաբերվել իրենց իրավիճակին: Թող նրանք կիսվեն իրենց իսկ բառերով, թե ինչ են սովորել: Նրանց պատասխանները կարող են ներառել հետևյալը.

> **Մենք կարող ենք նայել Աստծուն և հավատարիմ մնալ մեր փորձությունների ընթացքում:**
>
> **Աղոթքը կարող է օգնել մեզ խաղաղություն գտնել մեր փորձությունների ընթացքում:**

Երբ ուսանողները կիսվեն իրենց մտքերով, չմոռանաք նշել Նեփիի արդար օրինակը իր փորձության ընթացքում: Հրավիրեք մի ուսանողի կարդալ Երեց Լ. Վիթնի Քլեյթոնի հետևյալ վկայությունը: Թող դասարանը ներկայացնի, թե ինչ խորհուրդ տվեց անել մեզ Երեց Քլեյթոնը փորձությունների հանդիպելիս.

«Անկախ նրանից, թե մեր կրած բեռներն առաջացել են բնական պայմաններից, ուրիշների սխալներից, թե մեր անձնական թերություններից ու թուլություններից, բոլորս Երկնային Հոր սիրված զավակներն ենք, որը մեզ ուղարկել է երկիր որպես Իր հավերժական ծրագրի մաս՝ մեր աճի ու զարգացման համար։ Մեր եզակի անհատական փորձառությունները կարող են օգնել մեզ նախապատրաստվել Նրա մոտ վերադառնալուն։ . . . Մենք պետք է ամեն բան անենք, որ կարողանանք «լավ» տանել մեր բեռները [տես ՎԱՈՒ 121.7–8]։ . . .

. . . Ես գիտեմ, որ երբ պահում ենք պատվիրանները և Աստծո հետ կապած մեր ուխտերը, Նա թեթևացնում է մեր ուսերի բեռները։ Նա ուժ է տալիս մեզ։ Երբ ապաշխարում ենք, Նա ներում է մեր մեղքերը և մեզ օրհնում է խղճի խաղաղությամբ և ուրախությամբ» («Որ ձեր բեռները թեթև լինեն», 13-14)։

Հրավիրեք ուսանողներին մտածել այս դասի ժամանակ սովորած ճշմարտություններից մեկի մասին։

- Ե՞րբ եք դուք տեսել այս ճշմարտությունը ձեր կյանքում կամ մեկի կյանքում, ում դուք ճանաչում եք։

Դուք կարող եք ավելացնել ձեր վկայությունը, որ Աստված կարող է օգնել մեզ մեր փորձությունների ժամանակ, եթե մենք լինենք հավատարիմ և եթե մենք ապաշխարենք և վերադառնանք Նրա մոտ։

Վերջում հիշեցրեք ուսանողներին, որ չնայած նեղություններին, որոնց հանդիպեցին Նեփին և նրա ընտանիքը, նրանք ի վերջո հասան խոստումի երկիր։ Վկայեք, որ եթե մենք փնտրենք Տիրոջ առաջնորդությունը և ջանասիրաբար աշխատենք հետևել դրան, մենք նույնպես կարող ենք հաջողությամբ ավարտել ճանապարհորդությունը, որի փորձառությունը ունենալու համար Տերը մեզ ուղարկել է աշխարհ։

ԴԱՍ 20

# 1 Նեփի 19

## Նախաբան

Այս գլխում Նեփին բացատրել է, որ որոշ մարդիկ ակնածանք չեն ունենա Իսրայելի Աստծո՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ: Փոխաբերական իմաստով՝ նրանք ոտնակոխ կանեն Հիսուս Քրիստոսին, համարելով Նրան ոչինչ և հրաժարվելով լսել Նրա խորհուրդը: Նեփին նաև պատմեց հին օրերի մարգարեների ուսմունքների մասին, ովքեր մարգարեացել էին այն մասին, որ նրանք, ովքեր պատասխանատու կլինեն Փրկչին պատժելու և խաչելու համար, ինչպես նաև նրանց սերունդները, կցրվեն և կչարչարվեն, մինչև որ նրանք դարձնեն իրենց սրտերը դեպի Տերը: Այդ ժամանակ Տերը «կհիշի այն ուխտերը, որոնք նա արել էր նրանց հայրերին» (տես 1 Նեփի 19.15): Նեփին բացատրել է, որ նա գրել է այս բաները, որ համոզի իր ժողովրդին հիշել Տիրոջը և հավատալ Նրան: Նա նաև սովորեցրեց իր ժողովրդին նմանեցնել սուրբ գրությունները իրենց, որը կօգնի նրանց հավատալ Տիրոջը:

## Ուսուցանման առաջարկներ

### 1 Նեփի 19.1–19

*Նեփին արձանագրում է Հիսուս Քրիստոսի վերաբերյալ մարգարեությունները, որ օգնի մարդկանց հիշել իրենց Փրկչին*

Ցույց տվեք Մորմոնի Գրքի մի օրինակ: Ամփոփեք 1 Նեփի 19.1–4, բացատրելով, որ Նեփիին պատվիրվել էր պատրաստել երկու տեսակի թիթեղներ, մեկը սուրբ (հոգևոր) պատմություն արձանագրելու համար և մյուսը իր ժողովրդի աշխարհիկ պատմության համար: Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 19.3, 5–6: Խնդրեք դասարանի մնացած ուսանողներին փնտրել, թե ինչ է Նեփին ասում «սուրբ» բաների վարաբերյալ:

- Ի՞նչ պատճառներ բերեց Նեփին սուրբ բաների վերաբերյալ հիշատակարան պահելու համար:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 19.7: Նախքան նրա կարդալը բացատրեք, որ այս հատվածում «Իսրայելի Աստվածը» արտահայտությունը վերաբերվում է Հիսուս Քրիստոսին: Հատվածն ընդգրկում է նաև *ոչինչ* բառը, որը նշանակում է «դատարկ բան»: Որևէ մեկին ոչինչ համարել նշանակում է վերաբերվել այդ անձնավորությանը այնպես, ասես թե նա անարժան մեկն է:

- Այն բանից հետո, երբ նա ասաց, որ գրելու է միայն սուրբ բաների վերաբերյալ, ինչի՞ մասին սկսեց գրել Նեփին:
- Համաձայն 1 Նեփի 19.7-ի, ինչպե՞ս են որոշ մարդիկ Փրկչին ոտնակոխ անում կամ «ոչինչ համարում»:
- Ինչպե՞ս է Տիրոջ խորհրդին չլսելը նման Նրան ոչինչ համարելուն կամ Նրան ոտնակոխ անելուն:

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 19.8–10: Խնդրեք դասարանին փնտրել, թե ինչպես մարդիկ Փրկչին կվերաբերվեն որպես ոչինչ մի բանի Իր մահկանացու ծառայության ընթացքում: (Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները նշեն իրենց գտած բառերն ու արտահայտությունները:)

- Ի՞նչ ուղիներով մարդիկ կվերաբերվեին Փրկչին որպես ոչինչ մի բանի Իր մահկանացու ծառայության ընթացքում:
- Այս հատվածների ո՞ր մանրամասներն են ցույց տալիս, որ Փրկիչը մեզ չի համարում որպես «ոչ պիտանի մի բան»: (Ուսանողները պետք է հասկանան, որ Փրկիչը տանում է այն ամենը, ինչ Նա տարավ «մարդկանց զավակների հանդեպ իր ողորմության և երկայնամտության պատճառով»:)
- Երբ դուք մտածում եք այս հատվածների շուրջ, ի՞նչ եք զգում Փրկչի հանդեպ:

Հրավիրեք մի ուսանողի կարդալ 1 Նեփի 19.13–14, և թող դասարանը փնտրի, թե ինչ է ասել մարգարե Զենոսը այն մասին, թե ինչու նրանք, ովքեր կխաչեն Փրկչին (և նրանց սերունդները) «կխարազանվեն բոլոր ժողովուրդների կողմից»:

- Ըստ մարգարե Զենոսի, ինչո՞ւ նրանք, ովքեր խաչել էին Փրկչին (և նրանց սերունդները) «կխարազանվեն բոլոր ժողովուրդների կողմից»:

Գրատախտակի վրա գրեք հետևյալ նախադասությունը. *Նրանք կխոտորեն իրենց սրտերը:*

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում՝ մեկի սիրտը խոտորում է Տիրոջից:

Ուսանողների պատասխանները լսելուց հետո ասեք դասարանին, որ դուք կցանկանայիք, որ մի քանի ուսանողներ օգնեն ձեզ ներկայացնել, թե ինչպես է այս արտահայտությունը մեզ վերաբերվում այսօր: Հրավիրեք մի քանի ուսանողների գալ գրատախտակի մոտ: Նրանցից յուրաքանչյուրին խնդրեք գրել մի արարքի օրինակ, որը կարող է ցույց տալ, որ անձը խոտորել է իր սիրտը Տիրոջից: Այնուհետև խնդրեք նրանց բացատրել, թե ինչ հետևանքներ կարող են լինել, եթե մեկը խոտորի իր սիրտը այնպես, ինչպես նրանք են նշել: (Օրինակ, ուսանողը կարող է գրել *դադարել ուսումնասիրել սուրբ գրությունները* և հետո բացատրել, որ սրա հետևանքներից մեկը կարող է լինել հայտնություն ստանալու ունակության կորուստը:)

Այն բանից հետո, երբ մի քանի ուսանողներ կբացատրեն իրենց օրինակները, ասեք դասարանին, որ անկախ այն բանից, թե ինչու մենք կխոտորենք մեր սրտերը Տիրոջից, մենք կարող ենք ընտրել ետ դարձնել մեր սրտերը դեպի Տերը: Հրավիրեք ուսանողներին լուռ կարդալ 1 Նեփի 19.14–17, փնտրելով Տիրոջ խոստումները նրանց, ովքեր ետ կդարձնեն իրենց սրտերը դեպի Նա:

- Ե՞րբ է Տերը ցրում Իսրայելին: (Երբ նրանք խոտորում են իրենց սրտերը Նրանից:)
- Ե՞րբ է Տերը հավաքում Իսրայելին: (Երբ նրանք իրենց սրտերը դարձնում են դեպի Նա:)
- Ի՞նչ է ասել Տերը, որ Նա կանի նրանց համար, ովքեր այլևս չեն խոտորի իրենց սիրտը ընդդեմ Նրան:
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում, որ Տերը կհիշի այս մարդկանց և ուխտերը, որ Նա կապել է նրանց հայրերի հետ:

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ Տերը չի մոռացել այս մարդկանց: Նրանք այնպես են ապրել, որ Նա չի կարողացել տալ նրանց ավետարանի բոլոր օրհնությունները: Երբ նրանց սերունդները դարձնում են իրենց սրտերը դեպի Նա, Տերը խոստանում է հիշել նրանց, հավաքել նրանց Իր Եկեղեցում և տալ նրանց ավետարանի բոլոր օրհնությունները:

- Ձեր կարծիքով, ի՞նչ նշանակություն ունեն 15-17 հատվածների խոստումները մեզ համար: (Մի միտք, որին կարելի է հանգել այս քննարկման արդյունքում, այն է, որ **երբ մենք դարձնենք մեր սրտերը դեպի Տերը, Նա կպահի ուխտերը, որոնք մենք կապել ենք Նրա հետ:)**

Խնդրեք ուսանողներին խորհել հետևյալ հարցերի շուրջ և գրել պատասխանները իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային նոթատետրերում: (Դուք կարող եք հարցերը գրել գրատախտակին:)

- Ո՞ր արարքներն են ցույց տալիս, որ դուք և ձեր ընտանիքը դարձրել եք ձեր սրտերը դեպի Տերը:
- Ե՞րբ են նման արարքները օգնել ձեզ կամ ձեր ընտանիքին ստանալ Տիրոջ օրհնությունները:

Խորհեք այն մասին, որ հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց պատասխաններով դասարանի հետ:

Հակիրճ ձևով բացատրեք, որ Նեփին նախատեսել էր իր հիշատակարանը Իսրայելի ողջ տան համար՝ ներառյալ մեզ: Հրավիրեք մի ուսանողի կարդալ 1 Նեփի 19.18–19, և խնդրեք դասարանին ներկայացնել, թե ինչ էր ուզում մեզ համոզել Նեփին անել: Վկայեք, որ եթե մենք հիշենք Տիրոջը և մեր սրտերը դարձնենք դեպի Նա, Նա կտա մեզ Իր ավետարանի օրհնությունները:

## 1 Նեփի 19.20–24

### *Նեփին բացատրում է, թե ինչու է նա օգտագործել հին ժամանակների սուրբ գրությունները*

Կիսվեք Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ խոսքերով, որոնք վերցված են Եկեղեցու Կրթական Համակարգի կրոնի ուսուցիչներին հղած ելույթից.

«Ես ձեզ կտամ այս խոստումը Մորմոնի Գիրքը կարդալու վերաբերյալ. այն կգրավի ձեր ուշադրությունը, երբ դուք հասկանաք, որ Տերը այն լցրել է ձեզ ուղղված Իր ուղերձներով: Նեփին, Մորմոնը և Մորոնին գիտեին դա, և նրանք, ովքեր կազմեցին այն, ուղերձներ հղեցին ձեզ: Ես հուսով եմ, որ դուք համոզված եք, որ գիրքը գրված է ձեր ուսանողների համար: Այնտեղ կան պարզ, հենց նրանց ուղղված ուղերձներ, որոնք կասեն նրանց, թե ինչպես փոխվել: Գիրքը հենց սրա մասին է: Այն վկայություն է Տեր Հիսուս Քրիստոսի և Քավության մասին և թե ինչպես այն կարող է գործել իրենց կյանքում: Այս տարի դուք փորձառություն կունենաք փոփոխություն զգալու հետ կապված, որը գալիս է Քվության զորությամբ այս գիրքը ուսումնասիրելու արդյունքում» (“Á Book of Mormon Will Change Your Life,” *Ensign,* Feb. 2004, 11):

- Երբ դուք ուսումնասիրում եք Մորմոնի Գիրքը, ինչպե՞ս է ձեզ օգնում իմանալը, որ Նեփին, Մորմոնը և Մորոնին ներառել են ուղերձներ ձեզ համար:

Կիսվեք Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ խոսքերով.

«Մորմոնի Գիրքը գրվել է մեզ համար, մեր օրերի համար: Աստված գրքի հեղինակն է: Այն ընկած մի ազգի հիշատակարան է, կազմված ոգեշնչված մարդկանց կողմից՝ մեր օրհնության համար: Այդ մարդիկ երբեք չեն ունեցել այս գիրքը, այն նախատեսված էր մեզ համար: Մորմոնը՝ հնադարյան մարգարեն, ում անունով կոչվել է գիրքը, կրճատել է դարերի հիշատակարանները: Աստված, ով գիտի վերջն ի սկզբանե, ասել է նրան, թե ինչ ներառի իր կրճատման մեջ, ինչի կարիքը մենք կունենանք մեր օրերում» (“The Book of Mormon Is the Word of God,” *Ensign,* Jan. 1988, 3):

«Եթե նրանք տեսել են մեր օրը և ընտրել այն, ինչն առավել մեծ արժեք կունենար մեզ համար, ապա ինչպե՞ս մենք պետք է ուսումնասիրենք Մորմոնի Գիրքը: Մենք պետք է շարունակ հարցնենք ինքներս մեզ. «Ինչո՞ւ Տերը ոգեշնչեց Մորմոնին (կամ Մորոնիին, կամ Ալմային) ընդգրկել այս կամ այն հատվածը իր գրառումների մեջ: Ի՞նչ դաս կարող եմ ես սովորել դրանից, որը կօգնի ինձ ապրել այս օրը և այս տարիքում» (“The Book of Mormon—Keystone of Our Religion,” *Ensign*, Nov. 1986, 6):

Հրավիրեք դասարանին լուռ կարդալ 1 Նեփի 19.22–23, փնտրելով Նեփիի տված նկարագրությունը այն մասին, թե ինչպես նա օգնեց իր եղբայրներին սուրբ գրություններում գտնել իրենց ուղղված ուղերձներ:

- Ի՞նչ ակնկալիքներ ուներ Նեփին, երբ նմանեցնում էր սուրբ գրությունները իրեն և իր եղբայրներին:
- Ի՞նչ է նշանակում *օգուտ* բառը: (Շահ, առավելություն,արժեքավոր ձեռքբերում:)

Պատրաստեք հետևյալ ցուցակը ուսանողներին բաժանելու համար կամ գրեք այն գրատախտակին և թող ուսանողները գրեն այն իրենց սուրբ գրությունների օրագրերում:

| Նմանեցնել սուրբ գրությունները մեզ | | Կիրառել սուրբ գրությունների ճշմարտությունները | |
|---|---|---|---|
| Ի՞նչ իրադրություն կամ հան գամանք է նկարագրվում սուրբ գրության հատվածում: | Ինչպե՞ս է սա նման իմ կյանքի իրավիճակին կամ իմ շուրջը եղած աշխարհին: | Ի՞նչ ճշմրտություն կամ ուղերձ է ուսուցանվում սուրբ գրության այս հատվածում: | Ինչպե՞ս ես կարող եմ կիրառել այս ճշմարտությունը կամ ուղերձը իմ իրավիճակում: |
| | | | |

Ներկայացրեք ցուցակը, բացատրելով, որ *նմանեցնել* նշանակում է համեմատել: Նմանեցնել սուրբ գրությունները մեզ նշանակում է, որ մենք համեմատում ենք սուրբ գրության իրադրությունը մեր իսկ կյանքի իրավիճակի հետ կամ աշխարհում մեր շուրջն առկա իրավիճակի հետ: Սուրբ գրությունների իրավիճակների և մեր իսկ կյանքի իրավիճակների միջև նմանությունները տեսնելը նախապատրաստում է մեզ գտնել և կիրառել սուրբ գրությունների ճշմրտությունները: Միևնույն ճշմարտությունները, որոնք կիրառելի են եղել այն մարդկանց կյանքում, ում մասին մենք կարդում ենք սուրբ գրություններում, կարող են կիրառելի լինել մեզ համար, երբ մենք գտնվում ենք նմանատիպ իրավիճակներում:

***Նմանեցնել սուրբ գրությունները մեզ***

Ավետարանի ուսուցչի կարևոր նպատակներից է օգնել ուսանողներին սովորել նմանեցնել սուրբ գրությունները իրենց: Ուսուցիչները կարող են օգնել ուսանողներին սա անել, տալով նրանց այնպիսի հարցեր, ինչպիսին տրված են ցուցակում և դասի մեջ: Երբ դուք ուսուցանում եք, հնարավորություններ փնտրեք, որ օգնեք ուսանողներին սովորել նմանեցնել սուրբ գրություններն իրենց:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչպես է նմանեցնելը տանում դեպի կիրառում, հրավիրեք նրանց լրացնել իրենց ցուցակները, երբ դուք նրանց հետ միասին կվերանայեք առաջին Մորմոնի Գրքի սերտելու համար նախատեսված հատվածը՝ 1 Նեփի 3.7: Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 3.7:

- Ի՞նչ իրավիճակների էր արձագանքում Նեփին, երբ նա ասաց այս խոսքերը: (Նրան խնդրել էր մարգարեն՝ նրա հայր Լեքին, վերադառնալ Երուսաղեմ, որ վերցներ արույրե թիթեղները: Նրա եղբայրները բողոքել էին հանձնարարության դժվարության պտճառով:)
- Ինչպե՞ս է Նեփիի իրավիճակը նման ձեր կյանքի իրավիճակին: Ե՞րբ է Տերը ակնկալել, որ դուք անեք ինչ-որ դժվար բան:
- Ի՞նչ ճշմարտություն օգնեց Նեփիին իր իրավիճակում: (Նեփին գիտեր, որ երբ Տերը պատվիրան է տալիս Իր զավակներին, Նա ուղի է պատրաստում նրանց համար այն իրագործելու համար:)
- Ի՞նչ կարող եք դուք անել, որ ձեր իրավիճակում գործեք համաձայն այս ճշմարտության:

Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչպես են նրանք նմանեցրել 1 Նեփի 3.7 հատվածն իրենց և ինչպես կարող են նրանք կիրառել այն իրենց կյանքում: (Հիշեցրեք նրանց, որ նրանք չպետք է կիսեն խիստ անձնական կամ գաղտնի տեղեկություններ:)

Որպես վերջաբան, կրկին ցուցադրեք Մորմոնի Գրքի մի օրինակ: Հիշեցրեք ուսանողներին, որ Նեփին Փրկչի վերաբերյալ իր գրառումները համարում էր սուրբ և մեծ արժեք ունեցող իր և ուրիշների համար: Խրախուսեք ուսանողներին ուսումնասիրել սուրբ գրությունները և փնտրել ուղերձներ, որ Տերը և Նրա մարգարեները ներառել են այնտեղ մեզ համար: Վկայեք, որ **երբ մենք նմանեցնում ենք սուրբ գրությունները մեզ, մենք սովորում ենք և օգուտ քաղում դրանցից:**

Խրախուսեք ուսանողներին ինքնուրույն ուսումնասիրել սուրբ գրությունները և գտնել հատվածներ, որոնք նրանք կարող են նմանեցնել իրենց: Նրանք կարող են փորձել տեղադրել իրենց անունները որոշ հատվածներում և կարդալ հատվածները այնպես, կարծես Տերը կամ նրա մարգարեն ուղղակի խոսում են իրենց հետ: Օրինակ, նրանք կարող են կարդալ 2 Նեփի 31.20 առաջին մասը այսպես. «Ուստի, դուք [տեղադրեք անուն] պետք է առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ»:

Դուք կարող եք ուսանողների համար նախապատրաստել հարցացուցակի չլրացված օրինակներ՝ տանը օգտագործելու համար: Հրավիրեք նրանց պատրաստված գալ հաջորդ դասին, որ կիսվեն, թե ինչպես են նրանք սուրբ գրությունները նմանեցրել իրենց և ինչպես է այդ փորձառությունը օգտակար եղել նրանց համար:

# Տնային ուսումնասիրության դաս

## 1 Նեփի 15–19 (Մաս 4)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

1 Նեփի 15–19 (Մաս 4) ուսումնասիրելիս ուսանողների սովորած վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը նախատեսված չէ ուսուցանելու որպես ձեր դասի մի մաս: Ձեր ուսուցանած դասը կենտրոնանում է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, երբ դուք խորհեք ուսանողների կարիքների մասին:

#### Օր 1 (1 Նեփի 15)

Նեփին և իր եղբայրները տարբեր ձևերով արձագանքեցին Նեփիի մարգարեություններին: Ուսումնասիրելով Նեփիի գործողությունները, ուսանողները հայտնաբերեցին, որ եթե մենք հավատքով խորհուրդ հարցնենք Տիրոջից և հնազանդվենք նրա պատվիրաններին, մենք նախապատրաստված կլինենք Նրանից ստանալու հայտնություն և առաջնորդություն: Նեփին բացատրեց երկաթյա ձողի իմաստը, ցույց տալով, որ ամեն օր Աստծո խոսքը ուսումնասիրելը և դրան հետևելը ուժեղացնում է մեզ Սատանայի գայթակղությունները հաղթահարելու համար:

#### Օր 2 (1 Նեփի 16)

Նեփիի ուսմունքների հանդեպ Լամանի և Լեմուելի վերաբերմունքից ուսանողները տեսան, որ «մեղավորները կարծում են՝ ճշմարտությունը խիստ է» (1 Նեփի 16.2): Երբ Նեփին կոտրեց իր աղեղը, նա ցույց տվեց, որ եթե մենք անում ենք այն ամենը, ինչ կարող ենք և փնտրում ենք առաջնորդություն, Տերն օգնում է մեզ հաղթահարել մեր դժվարությունները: Ուսումնասիրելով, թե ինչպես Լիահոնան առաջնորդեց Լեքիի ընտանիքին, ուսանողները սովորեցին, որ «փոքր միջոցներով Տերը կարող է առաջ բերել մեծ բաներ» (1 Նեփի 16.29):

#### Օր 3 (1 Նեփի 17)

Նեփին պատմում է անապատում իր ընտանիքի ճամփորդությունների և Լիառատ երկիր հասնելու մասին: Երբ նրան պատվիրվում է նավ կառուցել, նա ցույց է տալիս, որ եթե մենք պահում ենք պատվիրանները, ապա Տերը կուժեղացնի մեզ և միջոցներ կպատրաստի մեզ համար, որ մենք իրագործենք այն, ինչ Նա պատվիրել էր: Տերը Նեփիի եղբայրներին մի քանի ձևերով ապաշխարության կանչեց: Ուսանողները սովորեցին, որ Սուրբ Հոգին սովորաբար խոսում է մեղմ, հանդարտ ձայնով, որը մենք ավելի շատ զգում ենք, քան լսում: Նրանք կազմել են իրավիճակների և վայրերի ցուցակ, որոնք կխոչընդոտեն մեղմ, հանդարտ ձայնը լսելուն:

#### Օր 4 (1 Նեփի 18–19)

Նավ կառուցելու Նեփիի օրինակը ուսանողներին ցույց տվեց, որ որպեսզի իրագործենք այն, ինչ Տերը պատվիրել է, մենք պետք է փնտրենք Նրա օգնությունը և ինքներս ջանք գործադրենք: Դեպի խոստումի երկիր Լեքիի ընտանիքի ճամփորդությունը ուսումնասիրելով սովորեցինք, որ մեղքը տառապանք է պատճառում մեզ և երբեմն ուրիշներին: Նեփիի օրինակը, երբ նա հալածվում էր իր եղբայրների կողմից, ուսուցանեց, որ մենք կարող ենք փնտրել Աստծուն և հավատքով մնալ մեր փորձության ընթացքում, իսկ աղոթքը կարող է օգնել մեզ խաղաղություն գտնել փորձության ընթացքում:

### Նախաբան

Այս շաբաթ ուսանողները ուսումնասիրեցին կարևոր իրադարձություններ, որոնք տեղի ունեցան, մինչ Լեքիի ընտանիքը ճամփորդում էր անապատում և անցնում էր օվկիանոսով խոստումի երկիր հասնելու համար: Այս դասը կօգնի ուսանողներին վերանայել այդ իրադարձությունները և քննարկել ու վկայել իրենց սովորած սկզբունքների մասին: Օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչպես Նեփին հավատարիմ մնաց դժվար իրավիճակներում: Խրախուսեք նրանց հետևել դժվար պահերին հնազանդվելու և Տիրոջը վստահելու նրա օրինակին:

### Ուսուցանման առաջարկներ

#### 1 Նեփի 15-18

***Նեփին փրոձության պահին հնազանդության և Տիրոջը վստահելու օրինակ է ծառայում***

Եթե հետևյալ նկարները մատչելի են, նախապատրաստեք, որ ցուցադրեք դրանք.

- Լիահոնա (62041; *Gospel Art Book* [2009], no. 68)
- Նեփին հանդիմանում է իր ամբարիշտ եղբայրներին (62044; *Gospel Art Book,* no. 70)
- Լեքին և նրա ժողովուրդը հասնում են խոստումի երկիր (62045; *Gospel Art Book,* no. 71)

Որպեսզի օգնեք ուսանողներին վերանայել և հասկանալ այս շաբաթ ուսումնասիրած նյութի մանրամասները, նկարները խառը դրեք գրատախտակին և թող ուսանողները դնեն դրանք ժամանակագրական կարգով: Հրավիրեք նրանց պատկերացնել, որ իրենք նորություններ խմբագրողներ են և պետք է գրեն երեքից վեց բառանոց վերնագիր յուրաքանչյուր նկարի համար: Հերթով ցույց տվեք նկարները և խնդրեք դասարանին վերնագրել դրանք: Դուք կարող եք բարձրաձայն կարդալ 1 Նեփի 15–18 գլուխների համառոտ շարադրանքները՝ նրանց որոշ մտքեր տալու համար:

Որպեսզի օգնեք ուսանողներին քննարկել 1 Նեփի 15 հատվածը, խնդրեք նրանց պատմել մի գործունեության մասին,

որին նրանք մասնակցում են և որը նրանցից ջանքեր է պահանջում, մինչև նրանք կկարողանան վայելել արդյունքները: Սա կարող է ներառել այնպիսի գործունեություն, ինչպիսին է տնային աշխատանքներ կատարելը, երաժշտական գործիքի վրա նվագելը կամ սպորտով զբաղվելը:

Գրատախտակին գրեք *1 Նեփի 15.2–3, 7–11*, և ժամանակ տվեք ուսանողներին այս հատվածները կարդալու համար: Հարցրեք նրանց, թե ինչու Նեփիի եղբայրները Լեքիի հայտնությունների հետ կապված չստացան նույն հասկացողությունը, ինչ Նեփին ստացավ:

Նրանց պատասխանները լսելուց հետո օգնեք նրանց ուշադրություն դարձնել նրա վրա, որ **Տիրոջից հայտնություն և առաջնորդություն ստանալը առաջին հերթին պահանջում է արդար ապրելակերպ, ջանքեր և հավատք մեր կողմից:** Դուք կարող եք կարևորել այս սկզբունքը, գրելով այն գրատախտակին:

Ուսանողներին խնդրեք խորհել հետևյալ հարցի շուրջ և պատասխանել դրան. Ի՞նչ փորձառություններ եք դուք ունեցել, որոնք օգնել են ձեզ իմանալ, որ այս սկզբունքը ճիշտ է:

Գրատախտակին գրեք *անխախտ*: Հարցրեք ուսանողներին, թե ինչ է նշանակում լինել անխախտ: Նրանց պատասխաններից հետո գրատախտակին գրեք. *ուժեղ լինել և չհուսահատվել դժվարության պահին կամ ճնշումների ժամանակ:*

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչպես է *անխախտ* բառը վերաբերվում Նեփիին, յուրաքանչյուր ուսանողի հանձնարարեք հետևյալ գլուխներից մեկը. 1 Նեփի 16, 17, կամ 18: Եթե դուք ունեք մեծ դասարան, կարող է ավելի օգտակար լինել, եթե դուք ուսանողներին բաժանեք խմբերի և հանձնարարեք, որ նրանք միասին աշխատեն տվյալ գլխի վրա:

Գրատախտակի վրա գրեք հետևյալ նախադասությունները: Խրախուսեք ուսանողներին հարցերին պատասխանելու համար օգտագործել իրենց հանձնարարված գլուխը և դրա հետ կապված նյութը ուսուցման ձեռնարկում:

- *Ի՞նչ փորձությունների հանդիպեց Նեփին ձեր վերանայած գլխում:*
- *Ինչպե՞ս Նեփին հավատք գործադրեց այդ իրավիճակում: Ո՞ր հատվածները կամ արտահայտություններն են ցույց տալիս, որ Նեփին ուներ անխախտ հավատք:*
- *Ավետարանի ո՞ր սկզբունքներն են տրված այս գլխում: Ի՞նչ փորձառություններ եք դուք ունեցել այս սկզբունքների հետ կապված, որ մեծացրել են ձեր վկայությունը:*

Ուսանողներին տրամադրեք բավականաչափ ժամանակ այս վարժության համար: Այնուհետև խնդրեք յուրաքանչյուր խմբից գոնե մեկական ուսանողի կիսվել իր պատասխաններով: (Եթե ունեք բավականաչափ ուսանողներ, կարող եք խնդրել, որ յուրաքանչյուր գլխի յուրաքանչյուր հարցին պատասխանեն տարբեր ուսանողներ:)

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը.

«Ինչո՞ւ է մեզ հարկավոր այդպիսի անխախտ հավատք: Որովհետև ապագայում սպասվում են դժվարին ժամանակներ: Ապագայում հեշտ չի լինի Վերջին Օրերի Սուրբ լինել, ոչ էլ նրանք ընդունված կլինեն: Մեզանից յուրաքանչյուրը կստուգվի:. . . Հալածանքը կարող է կամ ջախջախել ձեզ՝ հասցնելով լուռ թուլության կամ դրդելով ձեզ դեպի ավելի լավ օրինակը և դարձնելով խիզախ ամենօրյա կյանքում:

Այն, թե *ինչպես* եք վարվում կյանքի փորձությունների հետ, ձեր հավատքի զարգացման մասն է կազմում: Ուժը գալիս է, երբ դուք հիշում եք, որ Աստվածային էություն և անսահման արժեքավոր ժառանգություն ունեք» («Հավատքով դեմ առ դեմ կանգնեք ապագային» *Ensign* կամ *Լիահոնա,* Մայիս 2011, 35–36):

Հրավիրեք ուսանողներին կիսել մտքեր, թե ինչպես նրանք կարող են դիմավորել կյանքի դժվարությունները և անձնական փորձությունները Նեփիի նման:

## 1 Նեփի 19

***Նեփին արձանագրում է մարգարեություններ Հիսուս Քրիստոսի վերաբերյալ, որ համոզի մեզ հիշել Նրան***

Եթե ժամանակը թույլ է տալիս, խնդրեք ուսանողներին վերանայել այն, ինչ իրենք գրել են իրենց սուրբ գրությունների օրագրերում օր 4-ի հանձնարարություն 5-ում: Հարցրեք, եթե նրանցից որևէ մեկը կցանկանա կիսվել, թե ինչ է գրել Փրկչի հանդեպ իր սիրո մասին: Այնուհետև կիսվեք Փրկչի վերաբերյալ ձեր զգացմունքներով:

Նեփին սիրում էր Փրկչին և հիշում էր Նրան իր փորձությունների ժամանակ: Վկայեք, որ եթե մենք սիրենք ու հիշենք Փրկչին, Նա կօգնի և կաջակցի մեզ մեր փորձությունների ժամանակ:

## Հաջորդ Մաս (1 Նեփի 20–2 Նեփի 3)

Հաջորդ մասում ուսանողները կուսումնասիրեն նախքան իր մահանալը իր ընտանիքին ուղղված Լեքիի վերջին խոսքերից որոշները: Նրանք նաև կկարդան շատ վաղուց տրված մարգարեություն՝ Քրիստոսից շատ առաջ, Մարգարե Ջոզեֆ Սմիթի վերաբերյալ:

ԴԱՍ 21

# 1 Նեփի 20–22

## Նախաբան

Մինչ Նեփին սովորեցնում էր իր ընտանիքի անդամներին, նա կարդում էր արույրե թիթեղներից, կենտրոնանալով Իսրայելի ցրման և հավաքման Եսայիայի մարգարեությունների վրա: Այնուհետև նա պատասխանեց այդ մարգարեությունների շուրջ իր եղբայրների հարցերին: Նա բացատրեց, որ մարգարեությունները անմիջապես վերաբերվում էին իրենց ընտանիքին: Արձագանքելով Եսայիայի խոսքերին՝ Նեփին վկայեց, որ Տերը կհավաքեր իր ուխտյալ ժողովրդին, որ նույնիսկ երբ մարդիկ չեն ապրում իրենց ուխտերի համաձայն, Տերը սիրում է նրանց և հրավիրում է նրանց ապաշխարել և վերադառնալ Իր մոտ:

## Ուսուցանման առաջարկներ

### 1 Նեփի 20

*Տերը խրատում է Իր ժողովրդին և հրավիրում է նրանց վերադառնալ Իր մոտ*

Ուսանողներին ցույց տվեք Եսայիան գրում է Քրիստոսի ծննդյան մասին (62339; *Gospel Art Book* [2009], no. 22) նկարը: Բացատրեք, որ այս նկարը ներկայացնում է Եսայիա մարգարեին Հիսուս Քրիստոսի ծննդյան վերաբերյալ մարգարեություն գրելիս: Հարցրեք, թե նրանցից քանիսն են լսել Եսայիայի մասին:

Բացատրեք, որ Եսայիան մարգարե էր, ով ապրում էր Երուսաղեմում և մարգարեանում էր մարդկանց Ք. Ա. 740թ. և Ք.ա. 701.թ ընթացքում, Լեքիի և իր ընտանիքի դեպի խոստացված երկիր գնալուց ոչ շատ առաջ: Նեփին հրճվում էր Եսայիայի խոսքերով և օգտագործում էր Եսայիայի մարգարեությունները իր ընտանիքին ուսուցանելու համար (տես 1 Նեփի 19.23, 2 Նեփի 25.5): Քանի որ Եսայիայի խոսքերը բանաստեղծական են և լցված են խորհրդանիշներով, մարդիկ երբեմն նրա ուսմունքները դժվար հասկանալի են համարում: Այնուամենայնիվ, մենք կարող ենք օրհնություններ ստանալ, երբ ուսումնասիրում ենք նրա խոսքերը և փնտրում ենք հասկանալ դրանք:

Բացատրեք, որ երբ Նեփին ուսուցանում էր իր ընտանիքին, նա կարդաց Եսայիայի որոշ խոսքերը, որոնք ներառված էին արույրե թիթեղների մեջ: Նա արեց սա, որ կարողանար «ավելի լիովին համոզել նրանց՝ հավատալու Տիրոջը՝ իրենց Քավչին» (1 Նեփի 19.23, տես նաև հատված 24):

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 20.1–2: Նախքան նրա կարդալը բացատրեք, որ այս հատվածում Եսայիան խոսում է մկրտված անձնավորությունների հետ, ովքեր հավատարիմ չեն իրենց ուխտերին: Դուք կարող եք բացատրել «Իսրայելի տուն» արտահայտությունը՝ պատմելով հետևյալը. Հին Կտակարանը պարունակում է Հակոբի պատմությունը, ով Իսահակի և Աբրահամի թոռն է: Տերը Հակոբին տվեց Իսրայել անունը (տես Ծննդոց ԼԲ.28): «Իսրայելի տուն» տերմինը վերաբերվում է Հակոբի սերունդներին և Տիրոջ ուխտյալ ժողովրդին (տես Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Իսրայել» և «Իսրայել, թագավորություն»):

Հրավիրեք ուսանողներին լուռ կարդալ 1 Նեփի 20.3–4, 8: Խնդրեք նրանց փնտրել բառեր և արտահայտություններ, որոնք ցույց են տալիս, որ Իսրայելի տունը հավատարիմ չի եղել Տիրոջը: Խրախուսեք ուսանողներին կիսվել իրենց գտածով:

Ցուցադրեք մետաղի մի կտոր, որը դժվար է ծալել: Հարցրեք ուսանողներին, թե, իրենց կարծիքով, ի՞նչ է նշանակում այն, որ մեկի պարանոցը «երկաթե ջլերից է» (1 Նեփի 20.4): Բացատրեք, թե ինչ է ջիլը: Ճիշտ ինչպես երկաթը հեշտ չի ծալվում, հպարտ անձնավորությունը չի խոնարհի իր պարանոցը համեստության մեջ: «Երկաթե ջլեր» արտահայտությունը նշում է, որ Իսրայելի տան շատ մարդիկ լի էին հպարտությամբ:

Թող մի ուսանող բարձրաձայն կարդա 1 Նեփի 20.22:

- Ձեր կարծիքով ինչո՞ւ ամբարիշտները խաղաղություն չունեն:

Հիշեցրեք ուսանողներին, որ երբ Նեփին կիսվեց Եսայիայի հայտնություններով, նա հորդորեց իր եղբայրներին՝ «դրանք ձեզ նմանեցրեք» (1 Նեփի 19.24)։

- Ինչպե՞ս էին Նեփիի ընտանիքի որոշ անդամներ նման այն մարդկանց, ում Եսայիան ապաշխարության էր կանչում։

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 20.14, 16, 20։

- Ի՞նչ էր Տերը ցանկանում, որ Իր ուխտյալ ժողովուրդը աներ և ասեր։ (Դուք կարող եք բացատրել, որ Բաբելոնից և Քաղդեացիների երկրից դուրս գալը խորհրդանշում է աշխարհիկ լինելը ետևում թողնելը և առ Տերը գալը։)

Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց տեսած օրինակներով, երբ մարդիկ գալիս են առ Տերը և աշխարհիկությունը թողնում են ետևում։ Թող ուսանողները ուսումնասիրեն 1 Նեփի 20.18 հատվածը, փնտրելով օրհնությունները, որոնք Տերը տալիս է նրանց, ովքեր գալիս են Նրա մոտ և ականջ են դնում Նրա պատվիրաններին։

- Ինչպե՞ս կարող է խաղաղությունը նման լինել գետի։ Ինչպե՞ս կարող է արդարությունը նման լինել ծովի ալիքներին։

Հրավիրեք մի քանի ուսանողների ամփոփել ճշմարտությունները, որոնք նրանք սովորել են 1 Նեփի 20։ Չնայած նրանք կարող են օգտագործել տարբեր բառեր, համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **Տերը հրավիրում է նրանց, ովքեր անհնազանդ են եղել, ապաշխարել և վերադառնալ Իր մոտ։**

Թող մի ուսանող կարդա Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի հետևյալ խոսքերը։ Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչ առնչություն ունի այն 1 Նեփի 20 հետ։

«Սատանան . . . ուզում է, որ մենք զգանք, որ մենք ներում չունենք (տես Հայտնություն ԺԲ.10)։ Սատանան ցանկանում է, որ մենք մտածենք, որ երբ մեղք ենք գործում, մենք անցնում ենք «կետը, որից ետադարձ ուղի չկա», այսինքն, որ շատ ուշ է փոխել մեր ուղղությունը։ . . .

. . . Հիսուս Քրիստոսի Քավությունը Իր զավակներին Աստծո պարգևն է, որը հնարավորություն է տալիս ուղղել կամ հաղթահարել մեղքի հետևանքները։ Աստված սիրում է Իր բոլոր զավակներին, և Նա երբեք չի դադարի սիրել մեզ և հուսալ մեր համար։ . . .

Քրիստոսն եկավ մեզ փրկելու։ Եթե մենք սխալ ուղի ենք բռնում, Հիսուս Քրիստոսի Քավությունը մեզ հավաստիացնում է տալիս, որ մեղքը անդառնալի կետ *չէ*։ Ապահով վերադարձը հնարավոր է, եթե մենք հետևենք մեր փրկության համար տրված Աստծո ծրագրին։ . . .

. . . *Ապահով* վերադարձը միշտ էլ հնարավոր է, միշտ էլ հույս կա» (“Point of Safe Return,” *Ensign* կամ *Liahona,* May 2007, 99, 101)։

- Ինչո՞վ է Նախագահ Ուխդորֆի ելույթը նման Եսայիայի ուղերձին։

Վկայեք, որ **Տերը հրավիրում է նրանց, ովքեր անհնազանդ են եղել, ապաշխարել և վերադառնալ Իր մոտ։** Վստահեցրեք ուսանողներին, որ Տերը սիրում է մեզանից յուրաքանչյուրին և միշտ հրավիրում է մեզ գալ Իր մոտ։ Հրավիրեք նրանց խորհել, թե ինչ կհրավիրի նրանց Տերը թողնել ետևում, որպեսզի նրանք կարողանան գալ Նրա մոտ ավելի լիարժեքորեն։

## 1 Նեփի 21.1–17

### *Եսայիան մարգարեանում է, որ Հիսուս Քրիստոսը չի մոռանա Իր ուխտյալ ժողովրդին*

Հակիրճ ձևով ամփոփեք 1 Նեփի 21.1–13՝ ուսանողների ուշադրությունը կենտրոնացնելով այս գլխի ամփոփման առաջին երկու նախադասությունների վրա. «Մեսիան լույս կլինի հեթանոսների համար և կազատի բանտարկյալներին» և «Իսրայելը զորությամբ կհավաքվի վերջին օրերում»։ Բացատրեք, որ 1-13 հատվածների Տիրոջ խոսքերը հայտնում են Նրա սերը Իր ժողովրդի հանդեպ, նույնիսկ նրանց հանդեպ, ովքեր շեղվել են ճանապարհից և մոռացել են Նրան։

Գրատախտակին գրեք *Տերը սիրում է մեզ և Նա երբեք մեզ չի մոռանա։* Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 21.14։

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են մարդիկ երբեմն մտածում, որ Տերը մոռացել է իրենց։

***Ուսանողներին մտածելու ժամանակ տվեք***

Երբ դուք հարցեր եք տալիս, ուսանողներին ժամանակ տվեք մտածելու իրենց պատասխանների շուրջ: Արդյունավետ հարցերը հաճախ մտորելու և խորհրդածելու առիթ են հանդիսանում, և ուսանողներին ժամանակ պետք կլինի իրենց սուրբ գրություններում պատասխանները գտնելու կամ իմաստալից պատասխաններ ձևակերպելու համար: Եթե նույնիսկ ուսանողների պատասխանները կատարյալ չեն, ուսանողները կսովորեն կարևոր դասեր, երբ խորհեն ավետարանի ճշմարտությունների շուրջ և կիսվեն իրենց մտքերով:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 21.15–16: Ապա մի քանիսին կամ բոլորին տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ էր ուսուցանում Եսայիան՝ համեմատելով Փրկչին նորածնի մոր հետ:
- Ի՞նչ է հուշում *փորագրել* բառը: (Դուք կարող եք նշել, որ մենք սովորաբար մտածում ենք քարի կամ մետաղի վրա փորագրելու մասին այնպես, որ հարատև լինի:)
- Ձեր համար ի՞նչ է նշանակում փորագրված լինել «[Փրկչի] ձեռքերի ափերի վրա»:
- Ի՞նչ փորձառություններ են ձեզ օգնել իմանալ, որ Տերը ձեզ չի մոռացել:

Երբ ուսանողները մտածեն այս հարցերի շուրջ և լսեն միմյանց պատասխանները, նրանք պատրաստված կլինեն զգալու Սուրբ Հոգու բերած վկայությունը Փրկչի վերաբերյալ: Կիսվեք Փրկչի սիրո վերաբերյալ ձեր վկայությամբ: Հիշեցրեք ուսանողներին, որ Նեփին կիսվեց Եսայիայի մարգարեություններով, որ համոզեր մեզ հավատալ Քավչին և որ օգներ մեզ հույս ունենալ:

## 1 Նեփի 21.18–26, 22.1–22

### *Նեփին բացատրում է Իսրայելի ցրման և հավաքման վերաբերյալ Եսայիայի մարգարեությունը*

Մեղանի կամ աթոռի վրա միասին դրեք մի քանի առարկաներ (ինչպես օրինակ բաժակներ): Ուսանողներին տեղեկացրեք, որ այս առարկաները ներկայացնում են մարդկանց խմբեր: Բացատրեք, որ Նեփին ուսուցանեց, որ Իսրայելը կցրվեր բոլոր ազգերի մեջ, քանի որ նրանք կարծրացրել էին իրենց սրտերը Փրկչի դեմ (տես 1 Նեփի 22.1–5): Մինչ դուք խոսում եք, առարկաները տեղափոխեք սենյակի տարբեր մասերը: Նրա ընտանիքը ցրման մի մասն էր: Նրանք ցրվել էին Երուսաղեմից՝ իրենց մայր հողից, այդ տարածքում ապրող մարդկանց ամբարշտության պատճառով:

Հրավիրեք ուսանողներին լուռ կարդալ 1 Նեփի 21.22–23 և 22.6–8: Նախքան նրանց կարդալը բացատրեք, որ 1 Նեփի 21-ը ներառում է Եսայիայի մարգարեությունը Իսրայելի հավաքման վերաբերյալ և որ 1 Նեփի 22-ը ներառում է Նեփիի ուսուցումները Եսայիայի մարգարեության վերաբերյալ:

- Ո՞րն է 1 Նեփի 22.7–8-ում նշված զարմանալի գործը: (Ավետարանի Վերականգնումը:)
- Ինչպե՞ս կարող է ավետարանով կիսվելը նման լինել ուրիշներին մեր ձեռքերի կամ ուսերի վրա տանելուն:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ Իսրայելի ցրվելն ու հավաքվելը, դուք կարող եք կարդալ Տասներկու առաքյալների Քվորումից Երեց Բրյուս Ռ. Մակքոնկիի հետևյալ խոսքերը.

«Ինչո՞ւ ցրվեց Իսրայելը: Պատասխանը պարզ է. այն հասարակ է. դրա վերաբերյալ կասկած չկա: Մեր իսրայելացի նախնիները ցրվեցին, քանի որ նրանք մերժեցին ավետարանը, պղծեցին քահանայությունը, լքեցին եկեղեցին և հեռացան թագավորությունից: . . .

Ապա, ի՞նչ է ներառված Իսրայելի հավաքման մեջ: Իսրայելի հավաքումը բաղկացած է հավատալուց և ընդունելուց և ներդաշնակության մեջ ապրելուց այն ամենի հետ, ինչ Տերը մի անգամ առաջարկել էր իր հին ընտրյալ ժողովրդին: . . . Այն բաղկացած է ավետարանին հավատալուց, Եկեղեցուն միանալուց և դեպի թագավորություն գալուց:. . . Այն կարող է նաև բաղկացած լինել նշված վայրում կամ երկրում երկրպագության համար հավաքվելուց» (*A New Witness for the Articles of Faith* [1985], 515):

Կարդացեք 1 Նեփի 22.9–12: Բացատրեք, որ երբ սուրբ գրություններում նշվում է այն մասին, որ Տերը «կմերկացնի իր բազուկը», դա վերաբերվում է այն բանին, որ Տերը ցույց կտա Իր զորությունը:

- 1 Նեփի 22.11-ում ի՞նչ է Նեփին ասում այն մասին, որ Տերը կանի վերջին օրերում Իր զորությունը ցույց տալու համար:
- Ինչպե՞ս է մարդկանց Եկեղեցում հավաքելը նրանց դուրս բերում գերությունից և խավարից:

Խնդրեք ուսանողներին սենյակի տարբեր կողմերից հավաքել առարկաները և բոլորը միասին դնել մի տեղ: Բացատրեք, որ հավաքումը կարող է լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր: Երբ մենք կիսվում ենք ավետարանով ուրիշների հետ և նրանք մկրտվում են և ստանում Սուրբ Հոգու պարգևը, նրանք հոգևորապես հավաքվում են Տիրոջ Եկեղեցում: Եկեղեցու վաղ շրջանում նորադարձներին խնդրում էին ֆիզիկապես հավաքվել մի վայրում (օրինակ՝ Կիրթլանդ՝ Օհայո, Նավու՝ Իլլինոյս և Սոլթ Լեյք Սիթի՝ Յուտա): Այսօր նորադարձներին խրախուսվում է կառուցել Եկեղեցին որտեղ որ իրենք են և հավաքվել իրենց տարածքի ճյուղերում, ծխերում և ցցերում:

- Համաձայն 1 Նեփի 22.25-ի, ի՞նչ օրհնություններ են գալիս նրանց, ովքեր հավաքվում են Տիրոջ կողմից: Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «լինել մեկ հոտ»: (Դուք կարող եք բացատրել, որ հոտով հավաքված լինելով ոչխարները պաշտպանված են:) Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «արոտ գտնել»:

Մեր օրերում Աստված պատվիրել է, որ Եկեղեցու բոլոր անդամները աջակցեն «իր զավակներին աշխարհի չորս կողմերից» (1 Նեփի 22.25) հավաքելում: Վկայեք, որ **Տերը խոստացել էր վերջին օրերում վերականգնել ավետարանը և հավաքել Իսայելը:**

- Ձեր կարծիքով, ի՞նչ կզգան նրանք, ովքեր հավաքված են (նորադարձները) նրանց հանդեպ, ովքեր հավաքել են իրենց (նրանց ,ովքեր կիսվել են ավետարանով իրենց հետ):
- Ի՞նչ կարող եք դուք անել, որ կիսվեք Հիսուս Քրիստոսի ավետարանով ուրիշների հետ:

Հիշեցրեք ուսանողներին, որ Նեփին մեջբերում էր Եսայիայից, որ օգներ իր ընտանիքի անդամներին ունենալ ավելի մեծ հավատք և հույս Հիսուս Քրիստոսում: Եսայիայի մարգարեությունները և Նեփիի Վկայությունը կարող են նույն ձևով օգնել մեզ: Վկայեք, որ Հիսուս Քրիստոսը չի մոռանա մեզ և որ Նա ակտիվորեն փնտրում է հավաքել մեզ:

## 1 Նեփիի վերանայում

Որոշ ժամանակ տրամադրեք 1 Նեփին վերանայելու համար՝ խնդրելով ուսանողներին հիշել այն, ինչ իրենք սովորել են մինչ այժմ այս տարի սեմինարիայում և իրենց անձնական ուսումնասիրության ժամանակ: Դուք կարող եք խրախուսել նրանց վերանայել 1 Նեփիի գլուխների ամփոփումները: Խնդրեք նրանց նախապատրաստվել կիսվել 1 Նեփիի գրքից մի բանով, որը ոգեշնչել է նրանց կամ ամրացրել է իրենց հավատքն առ Հիսուս Քրիստոսը: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո մի քանի ուսանողների խնդրեք կիսվել իրենց մտքերով և զգացմունքներով: Խորհեք ձեր իսկ փորձառություններից մեկով կիսվելու մասին, թե ինչպես է 1 Նեփին ուսուցանելը օրհնել ձեր կյանքը:

### *Վկայություն բերել*

Դուք պետք է վկայություն բերեք որոշակի վարդապետությունների վերաբերյալ, որոնք դուք ուսուցանում եք յուրաքանչյուր դասի ժամանակ, ոչ թե զուտ ընդհանուր առմամբ ավետարանի ճշմարտության վերաբերյալ: Երբ դուք վկայում եք, հիշեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի այս խորհուրդը. «Բերեք ձեր վկայությունը ձեր հոգու խորքից: Դա կլինի ամենակարևոր բանը, որ դուք կասեք ողջ ժամվա ընթացքում: . . . Եթե մենք վկայենք ճշմարտությունների մասին, որոնք ուսուցանել ենք, Աստված կհաստատի մեր սրտերում և մեր ուսանողների սրտերում Հիսուս Քրիստոսի Ավետարանի ուղերձը» (“Teaching and Learning in the Church,” *Ensign*, June 2007, 104–5):

# Նեփիի Երկրորդ

## ԳՐՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ

### Ինչո՞ւ ուսումնասիրել այս գիրքը:

2 Նեփիի գիրքը ուսանողներին կօգնի հասկանալ ավետարանի հիմնական վարդապետությունները, ինչպես օրինակ Ադամի և Եվայի Անկումը, Հիսուս Քրիստոսի Քավությունը և ընտրությունը: Բացի դրանից, այս գիրքը լի է Նեփիի, Հակոբի և Եսայիայի մարգարեություններով, ովքեր Փրկչի հատուկ վկաներն են եղել: Նրանք մարգարեացան վերջին օրերում ավետարանի Վերականգնման, Աստծո ուխտյալ ժողովրդի ցրման ու հավաքման, Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստյան, Մորմոնի Գրքի առաջ գալու և Հազարամյակի մասին: 2 Նեփիի գիրքը նաև ընդգրկում է Քրիստոսի վարդապետության վերաբերյալ Նեփիի մեկնաբանությունը և ավարտվում է Փրկչի վերաբերյալ Նեփիի վկայությամբ:

### Ո՞վ է գրել այս գիրքը:

Այս գիրքը գրել է Լեքիի որդի Նեփին: Նեփին մարգարե էր և Նեփիացի ժողովրդի առաջին մեծ առաջնորդը այն բանից հետո, երբ նրանք առանձնացան լամանացիներից: Նրա գրառումները հայտնում են, որ նա Տիրոջ փրկարար զորության հետ կապված փորձառություն է ունեցել (տես 2 Նեփի 4.15–35, 33.6) և իր ողջ հոգով ցանկացել է փրկություն բերել իր Ժողովրդին (տես 2 Նեփի 33.3–4): Այս նպատակն իրագործելու համար, նա ուսուցանեց իր ժողովրդին հավատալ Հիսուս Քրիստոսին և տաճար հիմնեց:

### Ո՞ւմ համար է գրված այս գիրքը և ինչո՞ւ:

Նեփին գրել է մտքում ունենալով ուսկնդիրների երեք խումբ՝ իր հոր հետնորդները, Տիրոջ ուխտյալ ժողովուրդը վերջին օրերում և աշխարհի բոլոր մարդիկ (տես 2 Նեփի 33.3, 13): 2 Նեփիի գիրքը գրվել է Նեփիի փոքր թիթեղների վրա, որոնք նշանակվել էին Տիրոջ կողմից լինելու Նեփիի և նրա ժողովրդի «Ծառայության և մարգարեությունների» հիշատակարանը (1 Նեփի 19.3–5): Այս թիթեղների վրա Նեփին գրել է «[իր] հոգու բաները և սուրբ գրություններից շատերը, որոնք փորագրված [էին] արույրե թիթեղների վրա»: Նա մեկնաբանել է, որ գրել է «[իր] զավակների ուսման և օգտի համար» (2 Նեփի 4.15): Նա հայտարարել է. «Մենք խոսում ենք Քրիստոսի մասին, մենք հրճվում ենք Քրիստոսով, մենք քարոզում ենք Քրիստոսի մասին, մենք մարգարեանում ենք Քրստոսի մասին, և մենք գրում ենք մեր մարգարեությունների համաձայն, որ մեր զավակները կարողանան իմանալ, թե ինչ աղբյուրի նրանք կարող են ապավինել իրենց մեղքերի թողության համար» (2 Նեփի 25.26): Նա ավարտել է իր հիշատակարանը հրավիրելով բոլոր մարդկանց «լսել [նրա] խոսքերը և հավատալ Քրիստոսին» (2 Նեփի 33.10):

### Ե՞րբ և որտե՞ղ է այն գրվել:

Նեփին սկսել է գրել այս հիշատակարանը, որը դարձավ 2 Նեփի, մոտավորապես Ք. ա. 570թ., իր և իր ընտանիքի կողմից Երուսաղեմը թողնելուց 30 տարի անց: Նա գրեց այն, երբ նա Նեփիի երկրում էր (տես 2 Նեփի 5.8, 28–34):

### Որո՞նք են այս գրքի հատկանշական առանձնահատկությունները:

Չնայած, որ Նեփին 2 Նեփիի հեղինակն է, գիրքը մի շարք աղբյուրների ուսմունքների բանաքաղություն է: Ինչպես ցույց է տրված հետևյալ ցուցակում, գրքի շատ գլուխներ ներառում են մեջբերումներ այլ մարգարեներից: Քանի որ Լեքին, Հակոբը և Եսայիան տեսել էին Հիսուս Քրիստոսին և Նրա վկաներն էին, Նեփին ներառեց որոշ նրանց ուսմունքները այն նպատակով, որ համոզեր կարդացողներին հավատալ Հիսուս Քրիստոսին: Լեքին և Հակոբը իրենց քարոզներում նույնպես մեջբերումներ էին անում այլ մարգարեներից:

- Լեքիի ուսմունքները գրառված են 2 Նեփի 1–4: 2 Նեփի 3.6–21 Լեքին մեջբերում է Եգիպտոս տարված Հովսեփի խոսքերը:
- Նեփիի ուսմունքները գրառված են 2 Նեփի 4–5 և 2 Նեփի 11–33 : Նեփին շատ մեջբերումներ է կատարում Եսայիայից 2 Նեփի 12–24 և 2 Նեփի 27:
- Հակոբի ուսմունքները գրառված են 2 Նեփի 6–10: 2 Նեփի 6.6–7 և 2 Նեփի 7–8 Հակոբը մեջբերումներ է կատարում Եսայիայից:

2 Նեփիի գրքում նաև նշվում է Լեքիի մահվան (տես 2 Նեփի 4.12) և Լեքիի սերունդների երկու ժողովուրդների՝ լամանացիների և նեփիացիների բաժանվելու մասին (տես 2 Նեփի 5):

### Համառոտ շարադրանք

**2 Նեփի 1–4** Իր մահից կարճ ժամանակ առաջ Լեքին խրատում է և օրհնում իր ժառանգներին:

**2 Նեփի 4–8** Նեփին հրճվում է Աստծով: Նա առաջնորդում է իր հետևորդներին մի երկիր, որը նրանք կոչում են Նեփի: Նա գրառում է Իսրայելի ցրման և հավաքման վերաբերյալ Հակոբի ուսմունքները:

**2 Նեփի 9–10** Հակոբը ուսուցանում է Հիսուս Քրիստոսի Քավության վերաբերյալ: Նա նաև մարգարեանում է Հրեաների կողմից Հիսուս Քրիստոսի մերժվելու և խոստումի երկրում Հրեաների և Հեթանոսների հետագա հավաքման մասին:

**2 Նեփի 11–24** Նեփին արտահայտում է իր բերկրանքը Հիսուս Քրիստոսի մասին վկայելու վերաբերյալ: Նա մեջբերում է Եսայիայի մարգարեությունը Իսրայելի ցրման և հավաքման, նախքան Երկրորդ Գալուստը հպարտների և ամբարիշտների խոնարհվելու և Մեսիայի ծնվելու, առաքելության և հազարամյակի ժամանակ թագավորելու վերաբերյալ:

**2 Նեփի 25–27** Նեփին մարգարեանում է Փրկչի Խաչելության, Հարության և նեփիացիներին այցելելու մասին, Հրեաների ցրվելու և հավաքվելու մասին, նեփիացիների կործանման մասին, Ուխտադրժության մասին, Մորմոնի Գրքի առաջ գալու մասին և Վերականգնման մասին:

**2 Նեփի 28–30** Նեփին նախազգուշացնում է վերջին օրերի ամբարշտության մասին, մեկնաբանություններ է անում Մորմոնի Գրքի հետագա դերի մասին և մարգարեանում է ուխտի մեջ հոգիների հավաքման մասին:

**2 Նեփի 31–33** Նեփին հորդորում է մեզ հետևել Քրիստոսին, սնվել Նրա խոսքերով և տոկալ մինչև վերջ: Նա վկայում է, որ նա գրել է Քրիստոսի խոսքերը:

ԴԱՍ 22

# 2 Նեփի 1

## Նախաբան

2 Նեփի 1 ճշմարտությունները ասվել են սիրող հոր և առաջնորդի կողմից, ով կանգնած էր մահվան շեմին: Լեքին խնդրում էր իր որդիներին, Իսմայելի որդիներին և Զորամին հնազանդվել Աստծո պատվիրաններին: Նա խոստացավ նրանց, որ եթե նրանք պահեին Աստծո պատվիրանները, նրանք կբարգավաճեին երկրում: Նա նաև հորդորում է նրանց հետևել Նեփիի մարգարեական ղեկավարությանը:

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 1.1–23

*Լեքին հորդորում է իր ժողովրդին արդար ապրել*

Ուսանողներին խնդրեք պատկերացնել, որ իրենք պետք է անսպասելիորեն թողնեն իրենց ընտանիքի անդամներին և կարող է երբեք այլևս չտեսնեն նրանց:

- Եթե դուք խրատի վերջին խոսքեր թողնելու լինեիք ձեր ընտանիքին, ի՞նչ կասեիք դուք: Ինչո՞ւ:

Մի քանի ուսանողների լսելուց հետո բացատրեք, որ 2 Նեփիի 1-4 գլուխները ներառում են Նեփիի գրառումները իր հոր վերջին խրատի վերաբերյալ: Այս դասը կենտրոնանում է 2 Նեփի 1 վրա, որը ներառում է խրատը, որ Լեքին կիսեց իր որդիների, Իսմայելի որդիների և Զորամի հետ:

- Ինչո՞ւ ծնողների կամ մարգարեի վերջին խրատը կարող է հատկապես նշանակալից լինել:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 1.1–5: Խնդրեք դասարանին ներկայացնել, թե ինչ «մեծ բաներ էր արել Տերը» Լեքիի ընտանիքի համար:

- Ինչպե՞ս են այս մեծ բաները ցույց տալիս Տիրոջ ողորմությունը:
- Օրինակ ի՞նչ մեծ բան է արել Տերը ձեր կամ ձեր ընտանիքի համար:
- Ի՞նչ զգացողություններ եք ունենում, երբ դուք մտածում եք ձեր և ձեր ընտանիքի հանդեպ Աստծո ողորմածության մասին:

Գրատախտակի մի կողմում գրեք *Գործողություններ:* Գրատախտակի մյուս կողմում գրեք *Հետևանքներ:* Դասարանը երկու խմբի բաժանեք: Առաջին խմբին հրավիրեք կարդալ 2 Նեփի 1.6–9, իսկ երկրորդ խմբին կարդալ 2 Նեփի 1.10–12: Խնդրեք երկու խմբերին էլ գտնել գործողություններ, որոնք Լեքին ասաց, որ իր սերունդները կարող է կատարեն: Նաև խնդրեք նրանց փնտրել այդ գործողությունների արդյունքները: Օրինակ, Լեքին ասաց, որ եթե մարդիկ ծառայեն Տիրոջը համաձայն Իր պատվիրանների, երկիրը նրանց համար կլինի ազատության երկիր (տես 2 Նեփի 1.7): Մինչ ուսանողները կկիսվեն իրենց պատասխաններով, թող մի ուսանող դրանք գրի գրատախտակի վրա:

- Երբ դուք քննարկեք գրատախտակին գրված պատասխանները, ինչպե՞ս կամփոփեք Լեքիի ուղերձը ուղղված իր ընտանիքին: (Ուսանողները կարող են պատասխանել տարբեր բառերով, սակայն համոզվեք, որ հետևյալ ուղերձը պարզ է. **Տերը օրհնում է մեզ, երբ մենք պահում ենք նրա պատվիրանները, և Նա չի տալիս օրհնություններ, երբ մենք չենք պահում Նրա պատվիրանները:**)
- 2 Նեփի 1.9 «այս երկիրը» արտահայտությունը վերաբերվում է Ամերիկաներին: Ի՞նչ է Տերը խոստացել հնազանդներին, ովքեր կապրեն «այս երկրում»:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ փոխաբերությունների իմաստը, որոնք Լեքին օգտագործեց իր որդիներին քաջալերելու համար, որ պահեն Տիրոջ պատվիրանները, ցուցադրեք մի զարթուցիչ, աթոռ և փոշոտ մի բան (համոզվեք, որ ընդգծում եք փոշին, ոչ թե առարկան):

***Կենտրոնացեք ուսանողների վրա***

Տասներկու առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթը բացատրել է, որ դասի ծրագրում եղած ամբողջ նյութը մատուցելուց ավելի կարևոր է օգնել ուսանողներին հասկացողություն ձեռք բերել. «Հիշեք, որ ձեր համար ամենակարևորը ամբողջ նյութը մատուցելը չէ, եթե դա նշանակում է, որ այն չի կարող պատշաճ ձևով ընկալվել: Արեք այն, ինչ դուք կարող եք անել հասկանալով: . . . Եթե կարևոր սկզբունքը հասկացվել է [և] ընկալվել, . . . ապա ամենակարևոր նպատակը իրագործվել է» (“To Understand and Live Truth” [address to CES religious educators, Feb. 4, 2005], 2–3, si.lds.org):

***Փոխաբերությունները սուրբ գրություններում***

Փոխաբերությունը խոսքի մի ձև է, որտեղ բառը կամ արտահայտությունը նկարագրում է մի առարկա կամ գործողություն՝ առանց այդ առարկայի կամ գործողության հետ անմիջական կապ ունենալու: Օրինակ, Լեքիի որդիները ամբողջությամբ չէին պատվել փոշով, երբ Լեքին ասաց նրանց «բարձրացեք փոշուց» (2 Նեփի 1.14): Տերը և Իր մարգարեները իրենց ուսուցման մեջ հաճախ օգտագործել են փոխաբերություններ, որ օգնեն մեզ կապել դրանք ավետարանի սկզբունքների հետ: Այս փոխաբերությունները կարող են ծառայել որպես զորավոր հիշեցումներ: Մինչ դուք քննարկեք փոխաբերությունները, օգնեք ուսանողներին կենտրոնանալ բառերի փոխանցած հոգևոր իմաստի վրա:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 1.13–14, փնտրելով բառեր և արտահայտություններ, որոնք վերաբերվում են այս երեք առարկաներին: Նրանց կարդալուց հետո բարձրացրեք յուրաքանչյուր առարկան և խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտած բառերով և արտահայտություններով: (Պատասխանները կարող են ներառել «արթնանաք», «դժոխքի քնից», «թոթափեք ահավոր շղթաները», «այն շղթաներն են, որ կապում են» և «բարձրացեք փոշուց»): Հարցրեք ուսանողներին, թե ինչ կարող է նշանակել՝ «խորը քնած» լինել, կապված լինել «ահավոր շղթաներով» կամ կարիքը զգալ «փոշուց բարձրանալու»:

- Երբ Լեքին օգտագործում էր այս բառերն ու արտահայտությունները, ի՞նչ էր նա հորդորում իր որդիներին անել: (Ապաշխարել, փոխել իրենց ճանապարհները:)
- Լեքիի նախազգուշացմամբ ի՞նչ կպատահեր, եթե իր որդիները չհամաձայնվեին «թոթափել [իրենց] շղթաները»: (Տես 2 Նեփի 1.13:)

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 1.14–18: Բացատրեք, որ Լեքին այս խրատը տվեց բարությամբ և սիրով և մեծ հոգատարությամբ («անհանգստություն») իր զավակների բարօրության համար: Խնդրեք ուսանողներին փնտրել պատճառները, թե ինչու էր Լեքին ցանկանում, որ իր ընտանիքը պահեր Տիրոջ պատվիրանները:

- Ինչո՞ւ էր Լեքին մտահոգված իր ժառանգների համար: (Նա մտահոգված էր հետևանքների համար, որոնք նրանք կկրեին իրենց արարքների պատճառով, և նա ցանկանում էր, որ նրանք զգային Աստծո սերը, ինչպես ինքն էր զգացել):

Թող ուսանողները անձամբ կրկին կարդան 2 Նեփի 1.15:

- Ի՞նչ օրհնություններ էր ստացել Լեքին իր հավատարմության շնորհիվ:
- Ե՞րբ եք դուք Աստծո սիրո բազուկների մեջ օղակված լինելու զգացողություն ունեցել:

Դասարանը բաժանեք զույգերի: Յուրաքանչյուր զույգի մի ուսանողի խնդրեք 2 Նեփի 1.19–22 փնտրել խոստումները, որոնք կարող էին ոգեշնչել Լեքիի որդիներին ապաշխարել: Յուրաքանչյուր զույգի մյուս ուսանողին խնդրեք նույն հատվածներում փնտրել հետևանքները, որոնք Լեքին ասաց, որ կգան, եթե նրա որդիները ընտրեն մերժել նրա խրատը: (Դուք կարող եք այս առաջադրանքը գրել գրատախտակին:) Ուսանողներին տվեք երեք կամ չորս րոպե, որ կատարեն ըառաջադրանքը և իրար հետ կիսվեն իրենց գտածով: Դուք կարող եք շրջել դասարանում մինչ նրանք կիսվում են իրենց մտքերով, որպեսզի կարողանաք օգնել նրանց վարել իրենց քննարկումները:

Ուսանողների համար բարձրաձայն կարդացեք Լեքիի կոչը՝ 2 Նեփի 1.23-ում: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին ընդգծել այս հատվածը: Դուք կարող եք նաև խրախուսել նրանց գրել իրենց սուրբ գրությունների օրագրերում կամ դասարանային տետրերում մի բանի մասին, ինչ նրանք պետք է անեն, որ «արթնանան» կամ «թոթափեն շղթաները» կամ «բարձրանան փոշուց», որպեսզի նրանք կարողանան ստանալ օրհնությունները, որոնց մասին խոսեց Լեքին:

- Ըստ ձեզ ի՞նչ է նշանակում «հագնել արդարության զենքերը»: (Տես նաև ՎԼՈՒ 27.15–18:)

## 2 Նեփի 1.24–32

### *Լեքին հորդորում է իր որդիներին հետևել Նեփիի մարգարեական ղեկավարությանը*

Բացատրեք, որ Լեքին ուսուցանեց ուժի և ոգեշնչման աղբյուրի մասին, որը Տերը պատրաստել էր իր ընտանիքի համար: Հրավիրեք ուսանողներին գտնել այդ աղբյուրը 2 Նեփի 1.24-ում: (Այդ աղբյուրը Նեփին էր, ով կծառայեր որպես նրանց մարգարե Լեքիի մահից հետո:)

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 1.25–28: Խնդրեք դասարանին փնտրել Լեքիի տված պատճառները, ըստ որոնց ժողովուրդը պետք է հետևեր Նեփիին:

- Ի՞նչ որակներ էր Լեքին նշում, երբ նա խոսում էր Նեփիի ղեկավարության մասին: Ինչո՞ւ դուք պետք է վստահեք այդ որակներն ունեցող ղեկավարին:
- Ե՞րբ եք դուք տեսել, որ Եկեղեցու ղեկավարը մարմնավորի այդ որակները:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 1.30–32: Խնդրեք նրանց փնտրել խոստումները, որոնք Լեքին տվեց Զորամին:

- Ի՞նչ խոստումներ դուք գտաք:
- Ինչպե՞ս կարող են այս խոստումները վերաբերվել մեզ ու մեր ընտանիքներին, եթե մենք հետևենք մարգարեին:

Այս քննարկումից հետո համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ **եթե մենք հետևենք նրանց, ում Աստված կանչել է ղեկավարել մեզ, մենք օրհնված կլինենք հոգևոր բարեկեցությամբ և ապահովությամբ:** Այս սկզբունքին աջակցելու համար կիսվեք ձեր վկայությամբ այն օրհնությունների վերաբերյալ, որոնք գալիս են, երբ մենք հետևում ենք Եկեղեցու ղեկավարներին:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 2 Նեփի 1.22: «Հավերժական կործանում»

2 Նեփի 1.22 Լեքին խոսում է «երկուստեք՝ հոգու և մարմնի հավերժական կործանման» մասին: Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի հետևյալ խոսքերը կարող են օգնել ձեզ մեկնաբանել Լեքիի խոսքերը.

«Կործանում չի նշանակում ոչնչացում: Մենք գիտենք, քանի որ մեզ ուսուցանվել է Տիրոջ հայտնություններում, որ հոգին չի կրող ոչնչացվել:

«Յուրաքանչյուր հոգի, որ ծնվել է այս աշխարհում, հարություն և անմահություն կստանա, և հավերժ գոյություն կունենա: Այդպիսով, կործանում չի նշանակում ոչնչացում: Երբ Տերն ասում է, որ նրանք պիտի կործանվեն, նա նկատի ունի, որ նրանք պետք է վտարվեն իր ներկայությունից, որ նրանք պետք է կտրվեն լույսի ու ճշմարտության ներկայությունից, և արտոնություն չեն ունենա ստանալ այս վեհացումը. և դա է կործանումը» (*Doctrines of Salvation,* comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 2:227–28):

### 2 Նեփի 1.28: «Եթե դուք ականջ դնեք Նեփիի ձայնին, դուք չեք կորչի»

Լեքին խոստացավ, որ նրանք, ովքեր «ականջ դնեն Նեփիի ձայնին», կօրհնվեն (տես 2 Նեփի 1.28): Որպեսզի կարդաք խոստումների մասին, որոնք Տերը տվել է նրանց, ովքեր հետևում են ապրող մարգարեներին մեր օրերում, տես Վարդապետություն և Ուխտեր 21.5–6:

Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆն ասել է. «Ես հուսով եմ, որ մենք բոլորս կկարողանանք հետևել ուղուն, որը Տիրոջ ծառաները սահմանել են մեր համար, քանզի եթե մենք անենք սա, ես գիտեմ, որ մենք ապահով կլինենք այս աշխարհում, և երջանկություն և վեհացում կապահովենք գալիք աշխարհում: Եթե մենք հավատարիմ ենք, նրանք կառաջնորդեն մեզ կյանքի ուղով, և որքանով մենք կհավատանք նրանց ցուցումներին, նրանց միջոցով Սուրբ Հոգու ուսուցանածին, մենք միշտ կլինենք ապահով ուղու վրա և վստահ կլինենք մեր պարգևին» (*Teachings of Presidents of the Church: Wilford Woodruff* [2004], 199):

ԴԱՍ 23

# 2 Նեփի 2 (Մաս 1)

## Նախաբան

2 Նեփի 2 պարունակում է Լեքիի ուսմունքների շարունակությունը նրա մահից անմիջապես առաջ: Իր որդի Հակոբի հետ խոսելիս Լեքին վկայեց Տիրոջ կարողության մասին՝ սրբագործելու մեր չարչարանքները մեր օգտի համար: Խոսելով իր բոլոր որդիների հետ, նա ուսուցանեց Ադամի Անկման մասին՝ ինչու էր այն անհրաժեշտ և ինչ ազդեցություն ունի այն մարդկության վրա, և Հիսուս Քրիստոսի Քավության կարիքի մասին: (Լեքին նաև ուսուցանեց ազատության վարդապետության մասին: Այս վարդապետությանը կանդրադառնանք հաջորդ դասին:)

***Օգնեք ուսանողներին հասկանալ, որ սուրբ գրությունները վերաբերվում են իրենց***

Ամենաարդյունավետ եղանակներից մեկը, որով կարող եք օգնել ուսանողներին նախապատրաստվել սովորելուն, նրանց խնդրելն է, որ խորհեն մի հարցի կամ իրավիճակի շուրջ, որը վերաբերվում է իրենց, և որի մասին խոսվում է սուրբ գրություններում, որից դուք ուսուցանում եք: Սա կօգնի ուսանողներին նպատակասլաց ուսումնասիրել սուրբ գրությունները:

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 2.1-4

*Լեքին խոսում է Հակոբի հետ փորձությունների և օրհնությունների մասին*

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, որ 2 Նեփի 2 -ը վերաբերվում է իրենց կյանքին, խնդրեք նրանց մտածել իրենց ծանոթ մարդու մասին, ով հանդիպել է որոշակի դժվարությունների կամ չարչարանքների: Հրավիրեք նրանց խորհել, թե ինչ կարող են նրանք ասել այդ անձնավորությանը քաջալերելու համար: Խնդրեք նրանց պատրաստվել կիսվել իրենց մտքերով դասարանի հետ:

Բացատրեք, որ 2 Նեփի 2 պարունակում է Լեքիի հիշատակարանը, որտեղ նա խոսում է իր որդու հետ, ով դժվարություններ ուներ: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 2.1: Խնդրեք նրանց ներկայացնել, թե որ որդուն է Լեքին ուսուցանել (Հակոբ) և ինչն է պատճառ դարձել այս որդու չարչարանքների համար (իր եղբայրների կոպտությունը): Այնուհետև թող ուսանողները մտքում կարդան 2 Նեփի 2.2–3: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք ընդգծեն բառերը կամ արտահայտությունները, որոնք նկարագրում են, թե ինչ կանի Տերը Հակոբի համար:

Խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտած արտահայտություններով: Այնուհետև տվեք հետևյալ հարցերը, որ օգնեք նրանց հասկանալ, որ **Տերը կարող է նվիրագործել մեր չարչարանքները մեր օգտի համար.**

- Ի՞նչ նշանակություն ունի «կնվիրագործի քո չարչարանքները քո օգտի համար» արտահայտությունը ձեր համար: (Դուք կարող եք բացատրել, որ *նվիրագործել* նշանակում է օծել կամ սուրբ դարձնել:)
- Ե՞րբ եք դուք տեսել, որ Տերը կարող է նվիրագործել մեր չարչարանքները մեր օգտի համար:

### 2 Նեփի 2.5-25

*Լեքին ուսուցանում է իր որդիներին Անկման մասին և Հիսուս Քրիստոսի Քավության մասին*

Բացատրեք, որ Լեքին ուսուցանեց Հակոբին և իր մյուս որդիներին Ադամի և Եվայի Անկման մասին: Դուք կարող եք բացատրել, որ «Անկում» արտահայտությունը վերաբերվում է պայմաններին, որում հայտնվեցին Ադամն ու Եվան և նրանց սերունդները այն պատճառով, որ Ադամն ու Եվան ընտրեցին Եդեմի պարտեզում ճաշակել արգելված պտղից:

- Ի՞նչ ընտրություն տվեց Տերը Ադամին ու Եվային Եդեմի պարտեզում: (Նա թույլ տվեց նրանց ընտրել ուտել կամ չուտել արգելված պտուղը:)
- Համաձայն 2 Նեփի 2.15, ինչո՞ւ Տերը տվեց նրանց այս ընտրության հնարավորությունը: («Իր հավերժական նպատակներն իրագործելու համար, մինչև մարդու վախճանը»: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին ընդգծել այս արտահայտությունը:)

- Որո՞նք են մեր հետ կապված Աստծո հավերժական նպատակները: (Տալ մեզ հնարավորություն ստանալ հավերժական կյանք և դառնալ Նրա նման: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին սրա վերաբերյալ նշումներ անել իրենց սուրբ գրություններում «հավերժական նպատակներ» արտահայտության կողքին: Դուք կարող եք նաև խնդրել նրանց կարդալ Մովսես 1.39:)

Գրատախտակի վրա պատկերեք հետևյալ աղյուսակը՝ ներքևի երկու վանդակները դատարկ թողնելով:) (Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները գծեն այս աղյուսակը իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային տետրերում:)

| Առանց Անկման | Անկման պատճառով |
|---|---|
| Բոլոր բաները պետք է մնացած լինեին նույն վիճակում, որում եղել էին արարվելուց հետո (տես 2 Նեփի 2.22):<br>Ադամն ու Եվան երեխաներ չէին ունենա (տես 2 Նեփի 2.23):<br>Ադամն ու Եվան մնացած կլինեին անմեղության վիճակում, չկարողանալով ունենալ ուրախություն կամ թշվառություն, բարիք կամ մեղք (տես 2 Նեփի 2.23): | Ադամն ու Եվան դուրս քշվեցին Եդեմի պարտեզից՝ մշակելու հողը (տես 2 Նեփի 2.19):<br>Ադամն ու Եվան բերեցին երեխաներ՝ ողջ երկրագնդի ընտանիքը (տես 2 Նեփի 2.20):<br>Ադամն ու Եվան և նրանց սերունդները կունենային մահկանացու կյանքի փորձառությունը, ներառյալ թշվառությունը, ուրախությունը և բարիք ու մեղք գործելու ունակությունը (տես 2 Նեփի 2.23, 25):<br>Մենք ենթակա ենք ֆիզիկական և հոգևոր մահվան (տես 2 Նեփի 9.6, Հելաման 14.16): |

Հրավիրեք մի ուսանողի մոտենալ գրատախտակին և դասարանի կողմից գրառումներ կատարել: Խնդրեք ուսանողներին լուռ ուսումնասիրել 2 Նեփի 2.19–25, պարզելով (1) հետևանքները, որոնք կլինեին, եթե Ադամն ու Եվան չուտեին արգելված պտղից և անկում չապրեին, և (2) հետևանքները, որ եղան Անկման արդյունքում: Խնդրեք ուսանողին պատասխանները գրել աղյուսակում: Պատասխանները պետք է ներառեն վերևում թվարկվածները (բացի ֆիզիկական և հոգևոր մահվան վերաբերյալ տեղեկությունից, որը կավելացվի ավելի ուշ):

Հրավիրեք ուսանողներին վերանայել «Առանց Անկման» վերնագրի ներքո գրված իրենց պատասխանները:

- Եդեմի պարտեզի պայմանները ինչպե՞ս կխոչընդոտեին Երկնային Հոր փրկության ծրագրում Ադամի և Եվայի զարգացմանը: (Տես 2 Նեփի 2.22–23:)

Հրավիրեք ուսանողներին վերանայել «Անկման պատճառով» վերնագրի ներքո եղած ցուցակը: Համոզվեք, որ նրանք հասկանում են, որ քանի որ մենք Ադամի և Եվայի սերունդներն ենք, մենք ենթակա ենք այն պայմաններին, որոնցում հայտնվեցին նրանք Անկումից հետո (տես 2 Նեփի 2.21):

- «Մշակել հողը» արտահայտությունը նշանակում է, որ այն բանից հետո, երբ Ադամն ու Եվան դուրս քշվեցին Եդեմի պարտեզից, նրանք պետք է աշխատեին, որպեսզի ուտելիք ձեռք բերեին: Ձեր կարծիքով, աշխատանքը ինչպե՞ս է մեզ օգնում զարգանալ Երկնային Հոր ծրագրի համաձայն:
- Երեխաներ ունենալը ինչպե՞ս կօգներ Ադամին ու Եվային ավելի շատ նմանվել Երկնային Հորը: Երկնային Հոր ծրագրում ընտանիքներն ինչո՞ւ են կարևոր:
- Ուրախություն և թշվառություն ունենալու հնարավորությունը ինչպե՞ս կարող է օգնել մեզ զարգանալ Երկնային Հոր ծրագրի համաձայն:

Այս հարցերը քննարկելուց հետո նշեք, որ **Ադամի ու Եվայի Անկումը Երկնային Հոր երջանկության ծրագրի առանցքային մասն է**:

Նշեք, որ 2 Նեփի 2.25 սերտելու համար նախատեսված սուրբ գրության հատված է: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին ընդգծել այն: Քանի որ այն կարճ է, դուք կարող եք ժամանակ տրամադրել և օգնել ուսանողներին այն անգիր սովորել:

Բացատրեք, որ չնայած Անկումը ուղի բացեց մեր զարգացման համար, այն նաև աշխարհ բերեց ցավ, չարչարանք, մեղք և մահ: Որպեսզի օգնեք ուսանողներին ներկայացնել իրենց հասկացողությունը այս ճշմարտության վերաբերյալ, խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 9.6: Ապա խնդրեք մեկ այլ ուսանողի

**2 Նեփի 2.25**
Անդրադարձեք դասի վերջում գտնվող սուրբ գրությունները սերտել սովորեցնող մտքերին, որպեսզի օգնեք ուսանողներին սերտել այս հատվածները:

բարձրաձայն կարդալ Հելաման 14.15–17: Դասարանին խնդրեք փնտրել այս հատվածներում նկարագրված Անկման հետևանքները:

- Ի՞նչ են ուսուցանում այս հատվածները Անկման վերաբերյալ: (Այն բերեց ֆիզիկական մահ, որը մարմնի մահն է, և հոգևոր մահ, որը Աստծո ներկայությունից վտարված լինելու վիճակն է: Գրատախտակի վրա «Անկման պատճառով» արտահայտության տակ գրեք *Մենք ենթակա ենք ֆիզիկական և հոգևոր մահվան:*)

Որպեսզի օգնեք ուսանողներին մտածել այն մասին, թե ինչպես են նրանք փորձառություն ունեցել գրատախտակին նշված Անկման հետևանքների հետ, խրախուսեք նրանց լուռ խորհել հետևյալ հարցերի շուրջ: (Դանդաղ կարդացեք հարցերը և ընդմիջում տվեք դրանց միջև, որպեսզի ուսանողներին բավականաչափ ժամանակ տաք մտածելու համար:)

- Որո՞նք են այս կյանքի տառապանքների որոշ պատճառները:
- Ինչո՞ւ է մահը փրկության ծրագրի անհրաժեշտ մասը:
- Ինչպե՞ս կարող են դժվարությունները և վիշտը օգնել մեզ սովորել և զարգանալ:

Բացատրեք, որ երբ մենք հասկանանք, թե Անկումը ինչ ազդեցություն ունի մեր վրա, մենք կհասկանանք, որ մենք ունենք Հիսուս Քրիստոսի Քավության կարիքը: Կարդացեք Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ միտքը.

«Ճիշտ ինչպես մարդը ուտելու ցանկություն իսկապես չի ունենում նախքան սովածանալը, այդպես էլ նա չի փափագում Քրիստոսի փրկությունը, մինչև նա չի իմանում, թե ինչու նա ունի Քրիստոսի կարիքը:

Ոչ ոք բավականաչափ և պատշաճորեն չգիտի, թե ինչու նա ունի Քրիստոսի կարիքը, մինչև որ նա չի հասկանում և ընդունում Անկման վարդապետությունը և դրա ազդեցությունը ողջ մարդկության վրա: Եվ աշխարհում ոչ մի ուրիշ գիրք այդքան լավ չի բացատրում այս կարևոր վարդապետությունը, ինչպես Մորմոնի Գիրքը» (“The Book of Mormon and the Doctrine and Covenants,” *Ensign,* May 1987, 85):

Այն բանից հետո, երբ ուսանողները բավականաչափ ժամանակ կունենան այս հարցերի շուրջ խորհելու համար, ցուցադրեք Փրկչի հետևյալ նկարը: Կիսվեք ձեր վկայությամբ, որ **Քավության միջոցով Հիսուս Քրիստոսը ազատում է մեզ Անկման ազդեցություններից և առաջարկում է ազատում մեր մեղքերից:**

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 2 Նեփի 2.5–10, 21 և Ալմա 7.11–13: Դասարանին խնդրեք ներկայացնել այս հատվածների այն արտահայտությունները, որոնք ցույց են տալիս, թե ինչ է արել Փրկիչը, որ ազատի մեզ Անկման ազդեցություններից և մեր անձնական մեղքերից: (Հատված 9-ի հետ կապված դուք կարող եք բացատրել, որ «կբարեխոսի» արտահայտությունը նշանակում է խնդրել մեկ այլ անձնավորության համար կամ գործել մեկ այլ անձնավորության փոխարեն:) Որպեսզի օգնեք ուսանողներին վերլուծել իրենց ներկայացրած արտահայտությունները, հարցրեք.

- Այս հատվածների ո՞ր արտահայտություններն են նշում, որ Քավության շնորհիվ Փրկիչը կազատի մեզ ֆիզիկական մահից:
- Ո՞ր արտահայտություններն են նշում, որ Փրկիչը կազատի մեզ հոգևոր մահից (Աստծո ներկայությունից վտարված լինել):
- Ո՞ր արտահայտություններն են նշում, որ Փրկիչը կարող է ազատել մեզ մեր մեղքերից:
- Ո՞ր արտահայտություններն են նշում, որ Փրկիչը կարող է օգնել մեզ հաղթահարել այնպիսի փորձություններ, ինչպիսին են հիվանդություններն ու ցավը:

Համաձայն 2 Նեփի 2.7–9, 21, ի՞նչ պետք է մենք անենք, որ ստանանք բոլոր օրհնությունները, որոնք հնարավոր են դարձել Քավության միջոցով: (Հատված 7-ի հետ կապված դուք կարող եք բացատրել, որ անձնավորությունը, ով ունի «կոտրված սիրտ և փշրված հոգի» խոնարհ է և պատրաստ հետևելու Աստծո կամքին: Այդպիսի անձնավորությունը խորը ցավ է զգում մեղքի համար և անկեղծորեն ցանկանում է ապաշխարել:)

Այս հարցերը քննարկելուց հետո թող ուսանողները լուռ քննեն հանձնարարված հատվածները, փնտրելով արտահայտություններ, որոնք հատկապես մեծ նշանակություն ունեն իրենց համար: Ուսանողներին խնդրեք բաժանվել զույգերի և իրար

հետ կիսվել իրենց ընտրած արտահայտություններով։ Հրավիրեք նրանց կիսվել, թե ինչու են այս արտահայտությունները նշանակալից նրանց համար։

Հրավիրեք մեկ կամ երկու ուսանողների դասարանի համար ամփոփել, թե ինչու է Անկումը հանդիսանում Երկնային Հոր փրկության ծրագրի առանցքային մասը։ Այնուհետև խնդրեք նրանց կիսվել իրենց զգացմունքներով, թե ինչպես է Հիսուս Քրիստոսի Քավությունը ազատում մեզ Անկումից։

## Սերտելու համար նախատեսված սուրբ գրություն՝ 2 Նեփի 2.25

*Նշում.* Խորհեք հետևյալ վարժությունը օգտագործելու մասին, որ օգնեք ուսանողներին օգտագործել 2 Նեփի 2.25, երբ նրանք ուսուցանեն ավետարանը։ Ելնելով այսօրվա դասի էությունից և երկարությունից, դուք կարող եք օգտագործել այս վարժությունը մեկ այլ օր, երբ դուք ավելի շատ ժամանակ կունենաք։

Հրավիրեք ուսանողներին դաս պատրաստել Անկման վարդապետության վերաբերյալ՝ օգտագործելով 2 Նեփի 2.25։ Նրանք կարող են սովորեցնել այս դասը ընտանեկան երեկոյի կամ այլ միջոցառման ժամանակ։ Հարցրեք մի քանի ուսանողների, թե արդյոք նրանք կկամենան սովորեցնելուց հետո կիսվել իրենց փորձառություններով։ Թույլ տվեք ուսանողներին սկսել իրենց նախապատրաստությունները դասի ընթացքում, որքան որ ժամանակը թույլ կտա։

ԴԱՍ 24

# 2 Նեփի 2 (Մաս 2)

## Նախաբան

2 Նեփի 2 վերաբերյալ նախորդ դասը կենտրոնացած էր Ադամի ու Եվայի Անկման և Հիսուս Քրիստոսի Քավության վրա: Այս դասը կենտրոնանում է ազատ ընտրության վարդապետության վերաբերյալ Լեքիի ուսմունքների վրա, ներառյալ ճշմարտությունը, որ մենք ազատ ենք ընտրելու ազատություն և հավերժական կյանք՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

Այս դասի ընթացքում ուսանողները հնարավորություն կունենան ուսուցանելու մեկը մյուսին: Նախքան դասը նախապատրաստեք թերթիկներ, որոնք պարունակում են այս դասի առաջադրանքները: Ծանոթացեք յուրաքանչյուր առաջադրանքին, որպեսզի դուք կարողանաք օգնել ուսանողներին, մինչ նրանք կպատրաստվեն ուսուցանելու համար:

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 2.11–18, 25–30

*Լեքին ուսուցանում է ազատ ընտրության և մեր ընտրությունների հետևանքների մասին*

Հակիրճ ձևով հիշեցրեք ուսանողներին, որ նախորդ դասի ընթացքում նրանք ուսումնասիրել են 2 Նեփի 2 Լեքիի ուսմունքները Ադամի ու Եվայի Անկման և Հիսուս Քրիստոսի Քավության օրհնությունների վերաբերյալ: Ադամի ու Եվայի ընտրությունը մեզ թույլ տվեց գալ աշխարհ (տես 2 Նեփի 2.25), որտեղ մենք ունենում ենք վիշտ, ցավ և մահ: **Քավության շնորհիվ Հիսուս Քրիստոսը ազատում է մեզ Անկումից և փրկություն է առաջարկում մեր մեղքերից** (տես 2 Նեփի 2.26): Քավության շնորհիվ **մենք ազատ ենք ընտրելու ազատություն և հավերժական կյանք կամ գերություն և մահ** (տես 2 Նեփի 2.27):

**2 Նեփի 2.27**
սերտման սուրբ գրություն է: Անդրադարձեք դասի վերջում գտնվող սերտելու համար նախատեսված սուրբ գրության ուսուցման մտքերին, որ օգնեք ուսանողներին սերտել այս հատվածը:

Բացատրեք, որ մինչ ուսանողները շարունակեն ուսումնասիրել 2 Նեփի 2 այս դասի ընթացքում, նրանք հնարավորություն կունենան մեկը մյուսին սովորեցնել ազատ ընտրության սկզբունքները, որոնք Լեքին ուսուցանեց իր որդի Հակոբին: Ուսանողներին բաժանեք չորս խմբի: Յուրաքանչյուր խմբի տվեք հետևյալ առաջադրանքներից մեկը, որ օգնեք նրանց ուսուցանել (նախքան դասը պատրաստեք թերթիկներ, որոնք պարունակում են այս առաջադրանքները): Եթե դասարանում կան չորսից քիչ աշակերտներ, յուրաքանչյուր ուսանողի տվեք մեկական առաջադրանք և մնացած առաջադրանքներում պարունակվող նյութը ինքներդ ուսուցանեք:

Յուրաքանչյուր առաջադրանք բաղկացած է հինգ կետերից: Խրախուսեք բոլոր ուսանողներին մասնակցել՝ համոզվելով, որ յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր անձնավորություն առաջադրանք է ստանում: Հինգից ավելի ուսանող ունեցող խմբերում ուսանողները կարող են կիսվել հանձնարարությամբ: Հինգից քիչ ուսանող ունեցող խմբերում որոշ անհատներ պետք է կատարեն մեկից ավելի հանձնարարություններ: Տեղեկացրեք ուսանողներին, որ պատրաստվելու համար նրանք կունենան մոտավորապես երեք րոպե և որ յուրաքանչյուր խումբ ուսուցանելու համար կունենա մոտավորապես հինգ րոպե:

**Խումբ 1. Աստված ստեղծել է մեզ, որ գործենք**

Ա. Դասարանին մի քար ցուցադրեք: Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 2.14: Նախքան նրա կարդալը դասարանին խնդրեք փնտրել Լեքիի նկարագրությունը երկու տեսակի բաների վերաբերյալ, որոնք Աստված ստեղծել է երկինքներում և երկրի վրա: («Բաներ՝ գործելու, և բաներ՝ ներգործվելու»:) Հարցրեք. Ի՞նչ առնչություն ունի այս հատվածը մեր և քարի հետ: (Մենք ստեղծվել ենք գործելու համար, մինչդեռ քարը ստեղծված է, որ ներգործվի: Քարը, ինչպես այլ բազմաթիվ ստեղծագործություններ, չեն կարող ինքնուրույն գործել:)

Բ. Խնդրեք մի ուսանողի կարդալ 2 Նեփի 2.16 առաջին նախադասությունը: Դասարանին հարցրեք. Երկնային Հոր փրկության ծրագրում, ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր, որ մենք ինքնուրույն գործենք: Ուսանողների պատասխանները լսելուց

հետո հարցրեք. Ինչպե՞ս ենք մենք երբեմն սպասում, որ ներգործվենք ինքնուրույն գործելու փոխարեն։

Գ. Գրատախտակին գրեք *ՎԱՈՒ 58.26–28*։ Հրավիրեք դասարանին անդրադառնալ այս հատվածին։ Առաջնորդեք նրանց այն միասին բարձրաձայն կարդալիս։

Դ. Հարցրեք. Ի՞նչ կարող ենք մենք սովորել Վարդապետություն և Ուխտեր 58.26–28 ինքնուրույն գործելու մասին։ Ինչպե՞ս մենք կարող ենք ձգտել լինել ջերմեռանդորեն ներգրավված բազում արդար գործեր կատարելու մեջ։ Ե՞րբ եք դուք տեսել, որ ձեր ջանասիրությունը առաջ բերի շատ արդարություն։ (Մեկ կամ երկու ուսանողների պատասխանելուց հետո դուք նույնպես կարող եք կիսվել փորձառությամբ։)

Ե. Կիսվեք ձեր վկայությամբ ինքնուրույն գործելու և բազում արդար գործեր կատարելու ձգտում ունենալու կարևորության վերաբերյալ։

**Խումբ 2. Բարի հրապուրանք և չար հրապուրանք**

Ա. Հրավիրեք մի ուսանողի կարդալ 2 Նեփի 2.16 երկրորդ նախադասությունը։ Հարցրեք դասարանին. Ի՞նչ է նշանակում *հրապուրել* բառը։ (Հրավիրել, համոզել կամ գրավել։)

Բ. Հարցրեք դասարանին. Ի՞նչ եղանակներով է Երկնային Հայրը հրապուրում մեզ անել բարին։ (Ուսանողները կարող են նշել Սուրբ Հոգու հուշումները, պատվիրաններին հնազանդվելու համար տրված խոստումները և վերջին օրերի մարգարեների ուսմունքները։)

Գ. Բարձրաձայն կարդացեք 2 Նեփի 2.17–18, և հրավիրեք ուսանողներին հետևել իրենց սուրբ գրություններում։ Խնդրեք նրանց ներկայացնել, թե ինչ է դևը փնտրում մեզ բոլորիս համար։ (Նա ցանկանում է, որ մենք լինենք թշվառ։)

Դ. Հարցրեք. Ինչպե՞ս կարող եք դուք իմանալ, թե որ հրապուրանքներն են գալիս Աստծուց և որոնք են գալիս դևից։ (Որպես այս քննարկման մի մաս, դուք կարող եք անդրադառնալ Մորոնի 7.16–17։) Դասարանի պատասխանները լսելուց հետո հարցրեք. Ի՞նչ օրինակներ կարող եք բերել բաների վերաբերյալ, որոնք հրապուրում են մարդկանց չարիք գործել և առաջնորդում են դեպի թշվառություն։

Ե. Կիսվեք ձեր վկայությամբ Աստծո հրապուրանքների մասին, որոնք տանում են դեպի բարին ու երջանկությունը և դևի հրապուրանքների մասին, որոնք տանում են դեպի չարն ու թշվառություն։ Որպես ձեր վկայության մի մաս, դուք կարող եք կիսվել փորձառությամբ, որպեսզի ցույց տաք, թե ինչպես դուք գիտեք, որ սա ճիշտ է։

**Խումբ 3. Մենք պատասխանատու ենք մեր ընտրությունների համար**

Ա. Հետևյալ մեջբերումը կարդացեք դասարանի համար.

«Դուք ազատ եք ընտրելու և գործելու մեջ, սակայն դուք ազատ չեք ընտրելու ձեր արարքների հետևանքները։ Հետևանքները կարող են անմիջապես չգալ, սակայն դրանք միշտ կհետևեն արարքներին» (*True to the Faith: A Gospel Reference* [2004], 12)։

Հարցրեք. Որո՞նք են հետևանքների որոշ օրինակները, որոնք միգուցե անմիջապես չգան, սակայն կարող են գալ։ (Հնարավոր պատասխաններից է քաղցկեղը՝ որպես ծխելու արդյունք։)

Բ. Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 2.26–27, փնտրելով բառեր և արտահայտություններ, որոնք ցույց են տալիս հետագա հետևանքներն այն ընտրությունների, որոնք մենք կատարում ենք այժմ։ Խնդրեք ուսանողներին զեկուցել, թե ինչ են իրենք գտել։ (Պատասխանները կարող են ներառել «օրենքի պատժով՝ այն մեծ և վերջին օրը», «ազատություն», «հավերժական կյանք», «գերություն», «մահ» և «թշվառ»։) Պատասխանները գրեք գրատախտակին։

Գ. Հարցրեք. Ձեր կարծիքով ինչո՞ւ է կարևոր, որ մենք հասկանանք մեր ընտրությունների հետևանքները այս կյանքում։ Ուսանողների պատասխանները լսելուց հետո հարցրեք. Ինչպե՞ս կարող է այս հետևանքներն իմանալը դրդել մեզ կատարելու արդար ընտրություններ։

Դ. Նշեք, որ 2 Նեփի 2.27 Լեքին ասում է, որ մենք «ազատ ենք ընտրելու ազատություն»։ Հարցրեք. Ձեր փորձից ելնելով՝ ինչպե՞ս են արդար ընտրությունները օգնում մեզ ազատ մնալ, որ ընտրենք։ Կարո՞ղ եք առաջարկել սրա վերաբերյալ օրինակներ։ (Պատրաստ եղեք կիսվելու ձեր սեփական օրինակով։)

Ե. Կիսվեք ձեր վկայությամբ, որ մենք պատասխանատու ենք Աստծո առաջ մեր ընտրությունների համար և որ հետևանքները միշտ հետևում են մեր ընտրություններին:

**Խումբ 4. Ընտրել բարի բաժինը**

Ա. Թող մի ուսանող բարձրաձայն կարդա 2 Նեփի 2.28: Խնդրեք դասարանին փնտրել չորս բաներ, որ Լեքին ցանկանում էր իր որդիների համար: Հատվածը կարդալուց հետո հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչ նրանք գտան:

Բ. Հարցրեք. Ի՞նչ եղանակներով մենք կարող ենք նայել մեծ Միջնորդին՝ Հիսուս Քրիստոսին, որը կօգնի մեզ կատարել արդար ընտրություններ:

Գ. Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 2.29: Դասարանին հարցրեք. Ինչպե՞ս կարող են մեր ընտրությունները դևին զորություն տալ մեզ գերի վերցնելու համար: Որպես այս քննարկման մի մաս նշեք, որ Սատանայի շատ գայթակղությունների թիրախ են դառնում «մարմնի կամքը» կամ մեր ֆիզիկական ցանկությունները: Երբ մարդիկ տեղի են տալիս այս գայթակղություններին, նրանք կարող են կախվածություն ձեռք բերել վնասակար բաներից և սովորություններից: Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը.

«Առաջին փորձին, չնայած, որ այն կարող է աննշան լինել, կարող է հետևել կատաղի ոլորապտույտը: Փորձարկումից առաջ է գալիս սովորությունը: Սովորությունից առաջ է գալիս կախվածություն: Կախվածությունից առաջ է գալիս հակվածություն: Այն շատ դանդաղ ամուր կառչում է մեզանից: Սովորության ստրկացնող շղթաները չափազանց փոքր են զգալու համար, մինչև որ դրանք չափազանց ամուր են դառնում կոտրելու համար: . . . Հակվածությունը զրկում է մեզ ընտրելու հետագա ազատությունից» (“Addiction or Freedom,” *Ensign*, Nov. 1988, 6–7):

Կիսվեք ձեր վկայությամբ, որ արդարությունը տանում է դեպի ազատություն վնասակար սովորություններից և հակումներից:

Դ. Դասարանի համար կարդացեք 2 Նեփի 2.30: Մինչ նրանք հետևում են, հրավիրեք նրանց կենտրոնանալ այս բառերի վրա. «Ես ընտրեցի բարի բաժինը»: Հարցրեք. Ի՞նչ է այս նախադասությունը սովորեցնում Լեքիի մասին:

Ե. Ուսանողներին խնդրեք խորհել հետևյալ հարցերի շուրջ. Ո՞ւմ գիտեք դուք, որ Լեքիի նման «ընտրել է բարի բաժինը»: Ի՞նչ եղանակներով դուք կցանկանաք հետևել այս անձնավորության օրինակին: Ուսանողներին խորհելու համար բավականաչափ ժամանակ տալուց հետո խնդրեք մեկին կամ երկուսին կիսվել իրենց մտքերով: Այնուհետև կիսվեք ձեր սեփական մտքերով:

*Նշում ուսուցչի համար.* Որպես վերջաբան հրավիրեք ուսանողներին խորհել, թե նրանց ընտրությունները տանում են իրենց դեպի ազատություն և հավերժական կյանք, թե դեպի գերություն, հոգևոր մահ և թշվառություն: Վստահեցրեք ուսանողներին, որ ցանկացած վատ ընտրություն, որը նրանք արդեն իսկ կատարել են, կարող է հաղթահարվել Հիսուս Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքով և ապաշխարությամբ: Վկայեք Փրկչի, Նրա Քավության և մեզ ամրացնելու Նրա կարողության մասին, երբ մենք ջանում ենք կատարել ընտրություններ, որոնք կտանեն դեպի երջանկություն և հավերժական կյանք:

## Սերտման սուրբ գրություն. 2 Նեփի 2.27

Որպեսզի օգնեք ուսանողներին անգիր սովորել 2 Նեփի 2.27, գրատախտակին գրեք յուրաքանչյուր բառի առաջին տառը հետևյալ կերպ. *Ո, մ ա է՝ ը մ. և բ բ, ո ա է մ, ո ե և: Ե ն ա է՝ ը ա և հ կ, բ մ մ Մ մ, կ ը գ և մ, ը ղ գ և գ. ք ն ջ է, ո բ մ լ թ, ի ի:* (Դուք կարող եք նաև քաջալերել ուսանողներին ընդգծել այս հատվածը առանձնակի ձևով, որպեսզի նրանք կարողանան արագ գտնել այն):

Թող ուսանողները միասին անգիր ասեն 2 Նեփի 2.27 (անհրաժեշտության դեպքում օգտվելով իրենց սուրբ գրություններից), մինչև որ նրանք կկարողանան անգիր ասել ամբողջ հատվածը՝ որպես օգնություն օգտագործելով միայն առաջին տառերը: Այնուհետև ջնջեք տառերից մի քանիսը և թող նրանք նորից միասին կրկնեն սուրբ գրությունը: Շարունակեք այս գործընթացն այնքան ժամանակ, մինչև բոլոր տառերը կջնջվեն և դասարանը կկարողանա անգիր ասել ամբողջ հատվածը:

Որպես այս վարժության մի մաս դուք կարող եք կիսվել Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ մտքով. «Մտապահված սուրբ գրությունը դառնում է հավերժական ընկեր, որի զորությունը չի պակասում ժամանակի ընթացքում» («Սուրբ գրության զորությունը», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2011, 6):

*Նշում.* Դուք կարող եք ժամանակ ունենալ օգտագործելու այս վարժությունը այս դասի որոշակի ժամանակահատվածում: Եթե դուք ժամանակ չունեք, խորհեք մեկ այլ դասի ժամանակ այն օգտագործելու մասին:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 2 Նեփի 2.29: «Մարմնի կամքի ու չարության, որը նրանում է»

Այս հատվածը չի նշանակում, որ մեր մարմինները չար են: Այլ այն նկարագրում է մեր ընկած վիճակին բնորոշ մի գիծ: *Հավատքին հավատրիմ* գրքույկում կա այս բացատրությունը. «Այս ընկած իրավիճակում մենք հակամարտության ենք հանդիպում ինքներս մեր մեջ: Մենք Աստծո հոգևոր զավակներն ենք՝ ունենալով ներուժ լինելու «հաղորդակից աստվածային բնությանը» (Բ Պետրոս Ա.4): Այնուամենայնիվ, «մենք [Աստծո] առաջ անարժան ենք. անկման պատճառով մեր էությունները շարունակ չար են դարձել» (Եթեր 3.2): Մենք պետք է շարունակաբար ձգտենք հաղթահարել անարդար հետաքրքրությունները ու ցանկությունները» (*True to the Faith: A Gospel Reference* [2004], 57):

ԴԱՍ 25

# 2 Նեփի 3

## Նախաբան

2 Նեփի 3 պարունակում է Լեքիի խոսքերը ուղղված իր կրտսեր որդուն՝ Հովսեփին: Լեքին շարադրում է Եգիպտոսի Հովսեփի մարգարեությունը Մարգարե Ջոզեֆ Սմիթի դերի վերաբերյալ, Մորմոնի Գրքի առաջ գալը և ավետարանի Վերականգնվելը:

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 3.1–25

*Լեքին շարադրում է Եգիպտոսի Հովսեփի մարգարեությունը Մարգարե Ջոզեֆ Սմիթի վերաբերյալ*

Նախքան դասը գրատախտակի վրա գծեք հետևյալ գծապատկերը:




Որպեսզի նախապատրաստեք ուսանողներին հասկանալ 2 Նեփի 3 ուսմունքները, տեղեկացրեք նրանց, որ այս գլուխը ներառում է տեղեկություն նույն անունն ունեցող չորս մարդկանց մասին: Հրավիրեք ուսանողներին արագ ուսումնասիրել գրատախտակի վրա յուրաքանչյուր կերպարի տակ գրված սուրբ գրության հատվածը, որպեսզի պարզեն, թե ով է ներկայացված յուրաքանչյուր պատկերում: Երբ ուսանողը գտնի պատասխանը, թող նա այն գրի գրատախտակի վրա: (Առաջին պատկերը ներկայացնում է Լեքիի որդի Հովսեփին: Երկրորդը ներկայացնում է մարգարե Հովսեփին, ով վաճառվել էր Եգիպտոս մոտավորապես 1700 տարի առաջ նախքան Հիսուս Քրիստոսի ծնվելը: Երրորդը ներկայացնում է Մարգարե Ջոզեֆ Սմիթին: Չորրորդը ներկայացնում է Ջոզեֆ Սմիթ Ավագին:)

Ցուցադրեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի նկարը, ինչպես օրինակ՝ Եղբայր Ջոզեֆը (62161; *Gospel Art Book* [2009], no. 87): Տեղեկացրեք ուսանողներին, որ 2 Նեփի 3 մեծ մասը կենտրոնանում է Մարգարե Ջոզեֆ Սմիթի վերաբերյալ Եգիպտոսի Հովսեփի վկայության վրա:

Հրավիրեք երեք ուսանողների հերթով կարդալ 2 Նեփի 3.6–8: Խնդրեք դասարանին ներկայացնել բառեր և արտահայտություններ, որ օգտագործել է Եգիպտոսի Հովսեփը Ջոզեֆ Սմիթին և նրա կողմից կատարվելիք աշխատանքը նկարագրելու համար: (Դուք կարող եք բացատրել, որ երբ Եգիպտոսի Հովսեփն օգտագործում էր «իմ երանքի պտուղը» արտահայտությունը, նա ի նկատի ուներ իր ժառանգներին:) Գրատախտակի վրա, այն պատկերի ներքո, որը ներկայացնում է Ջոզեֆ Սմիթին, գրառեք ուսանողների գտած բառերն ու արտահայտությունները: Նրանք պետք է ներկայացնեն այնպիսի արտահայտություններ, ինչպես օրինակ «մի ընտրյալ տեսանող՝ իմ երանքի պտղի համար», «բարձր կգնահատվի», «բերելով նրանց ուխտերի իմացությանը» և «ես կդարձնեմ նրան մեծ իմ աչքում»:

- Մինչ մենք ուսումնասիրեցինք 2 Նեփի 3.6–8, դուք ի՞նչ սովորեցիք Մարգարե Ջոզեֆ Սմիթի վերաբերյալ: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ **Տերը**

**բարձրացրեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին, որ օգներ առաջ բերել ավետարանի վերականգնումը):**

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 3.11–15: Խնդրեք նրանց փնտրել լրացուցիչ արտահայտություններ այն բանի վերաբերյալ, թե ինչ պետք է Աստված իրականացներ Մարգարե Ջոզեֆ Սմիթի վերաբերյալ: Այս հատվածներն ուսումնասիրելու համար նրանց բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո հարցրեք, թե ինչ են նրանք գտել: Նրանց պատասխաններն ավելացրեք գրատախտակին այն պատկերի տակ, որը ներկայացնում է Մարգարե Ջոզեֆ Սմիթին: (Պատասխանները կարող են ներառել «առաջ բերելու իմ խոսքը», «տկարությունից նա կդարձվի ուժեղ», «նրանք, ովքեր կփնտրեն կործանել նրան, կկործանվեն» և «կկոչվի . . . իր հոր անվամբ» արտահայտությունները:)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի շատ հասկանալ և խորհել ավետարանի Վերականգնման գործում Մարգանե Ջոզեֆ Սմիթի դերի մասին, բարձրաձայն կարդացեք 2 Նեփի 3.11, առանձնակիորեն ընդգծելով «զորություն՝ առաջ բերելու իմ խոսքը» արտահայտությունը:

- Որո՞նք են Աստծո խոսքի որոշ օրինակները, որոնք առաջ բերեց Ջոզեֆ Սմիթը: (Պատասխանները կարող են ներառել Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը, Թանկագին Մարգարիտը, Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը և Մարգարեի քարոզները:)

Այս քննարկման ընթացքում անպայման նշեք, որ Եգիպտոսի Հովսեփը մարգարեացել է, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթը առաջ կբերեր Մորմոնի Գիրքը: Դուք կարող եք բացատրել, որ 2 Նեփի 3.12 նշում է երկու գրքերի մասին՝ Եգիպտոսի Հովսեփի սերունդների կողմից գրվածը Մորմոնի Գիրքն է, Հուդայի սերունդների կողմից գրվածը Աստվածաշունչն է: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները այս բացատրությունները գրեն իրենց սուրբ գրություններում:

Հրավիրեք ուսանողներին 2 Նեփի 3.12 փնտրել արտահայտություններ, որոնք նկարագրում են ազդեցությունը, որ Մորմոնի Գիրքը և Աստվածաշունչը կունենան աշխարհի վրա, երբ դրանք «սերտաճեն»: (Օրինակ, ուսանողները կարող են նշել «ի հերքումն կեղծ վարդապետությունների», «դադարեցնելով հակառակությունները» և «հաստատելով խաղաղություն» արտահայտությունները:)

Որպեսզի օգնեք ուսանողներին անդրադառնալ այն բանին, թե ինչ ազդեցություն է թողնում Մորմոնի Գիրքը իրենց կյանքի վրա, հարցրեք.

- Երբ եք դուք ձեր կյանքում զգացել Մորմոնի Գրքի զորությունը կամ տեսել դրա ազդեցությունը ընկերների կամ ընտանիքի անդամների կյանքում:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 3.15: Խնդրեք դասարանին հատուկ ուշադրություն դարձնել «կբերի իմ ժողովրդին փրկության» արտահայտության վրա:

- Ի՞նչ եղանակներով է օգնում Մորմոնի Գիրքը մարդկանց բերել դեպի փրկություն:
- Ի՞նչ փոփոխություն է մտցրել ձեր կյանքում Մորմոնի Գիրքը:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ և գնահատել Մարգարե Ջոզեֆ Սմիթի նախասահմանված առաքելությունը, խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Մարգարե Բրիգամ Յանգի հետևյալ խոսքերը.

«Դա որոշված էր հավերժության խորհրդում, նախքան երկրի հիմքերը դնելը շատ ժամանակ առաջ, որ նա՝ Ջոզեֆ Սմիթը, պետք է լինի այս աշխարհի վերջին տնտեսության այն մարդը, ով առաջ կբերի Աստծո խոսքը մարդկանց մեջ և կստանա Աստծո Որդու Քահանայության բոլոր բանալիները և զորությունը: Տերը պահում էր իր աչքը նրա վրա և նրա հոր վրա, և նրա հոր հոր վրա, և նրանց նախնիների վրա՝ նույնիսկ մինչև . . . Ադամը: Նա հսկել է այդ ընտանիքին և այդ արյանը, մինչ այն շրջապտույտ է գործել իր սկզբնաղբյուրից մինչև այդ մարդու ծնունդը: Նա նախապես կարգվել էր հավերժության մեջ, որպեսզի նախագահեր այս վերջին տնտեսության վրա» (*Discourses of Brigham Young,* sel. John A. Widtsoe [1954], 108):

Ամփոփեք 2 Նեփի 3.16–24, բացատրելով, որ Եգիպտոսի Հովսեփը համեմատել է Ջոզեֆ Սմիթին Մովսեսի հետ: Թող ուսանողները փնտրեն բառեր և արտահայտություններ, որոնք նկարագրում են Մարգարե Ջոզեֆ Սմիթին 2 Նեփի 3.24 հատվածում: Մինչ նրանք կիսվեն իրենց գտած բառերով և արտահայտություններով, ավելացրեք նրանց պատասխանները գրատախտակի վրա:

Կարդացեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հետևյալ խոսքերը: Խնդրեք ուսանողներին ուշադրություն դարձնել Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով հայտնի դարձված ճշմարտությունների վրա.

«Թույլ տվեք ինձ նշել բազմաթիվ վարդապետություններից և սահմանված կարգերից մի քանիսը, որոնց միջոցով մենք տարբերվում ենք մնացած բոլոր եկեղեցիներից, և որոնցից յուրաքանչյուրը եկել է պատանի Մարգարե [Ջոզեֆ Սմիթին] տրված մարգարեության միջոցով: . . .

Աստվածության վերաբերյալ գիտելիքը: . . .

Մորմոնի Գիրքը: . . .

. . . Վերականգնված քահանայությունը: . . .

. . . Ընտանիքի հավերժական կյանքի վերաբերյալ ծրագիրը: . . .

Փոքր երեխաների անմեղությունը: . . .

. . . Մահացածների փրկության վերաբերյալ հրաշալի վարդապետությունը: . . .

Մարդու հավերժական էությունը: . . .

. . . Ժամանակակից հայտնության սկզբունքը: . . .

. . . Իր կյանքի 38 ու կես կարճ տարիների ընթացքում նրա միջոցով առաջ եկան անհամեմատելի նշանակության գիտելիքներ, պարգևներ և վարդապետություն» (“The Great Things Which God Has Revealed,” *Ensign* or *Liahona*, May 2005, 80–83):

Հրավիրեք մի ուսանողի ավելացնել Նախագահ Հինքլիի ցուցակը գրատախտակին գրված ցուցակին:

Թող մի ուսանող բարձրաձայն կարդա Վարդապետություն և Ուխտեր 135.3: Բացատրեք, որ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջոն Թեյլորը, ով ավելի ուշ դարձավ Եկեղեցու երրորդ Նախագահը, այս խոսքերը գրել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի մահից անմիջապես հետո: Խնդրեք ուսանողներին այս հատվածում գտնել բաներ, որ նրանք կարող են ավելացնել գրատախտակին գրված ցանկին: Ցանկում ավելացրեք նրանց պատասխանները:

Ուսանողներին ժամանակ տվեք գրատախտակին գրված ցանկը վերանայելու համար: Հրավիրեք նրանց խորհել, թե ինչ իրենք սովորեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթի դերի վերաբերյալ: Հրավիրեք նրանց անդրադառնալ այն բաներին, ինչ նրանք գիտեն և զգում են Մարգարեի մասին, գրելով հետևյալ հարցերից մեկի պատասխանը իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային տետրերում.

- Ի՞նչ եք դուք սովորել կամ զգացել այսօր, որ ամրացրել է ձեր վկայությունը Մարգարե Ջոզեֆ Սմիթի վերաբերյալ:
- Ի՞նչ է արել, ուսուցանել կամ վերականգնել Ջոզեֆ Սմիթը, որ դուք զգացել եք, որ ձեր համար «մեծ արժեք» ունի (2 Նեփի 3.7):

Ուսանողներին զույգերի բաժանեք: Խրախուսեք նրանց միմյանց հետ կիսվել իրենց վկայություններով Մարգարե Ջոզեֆ Սմիթի վերաբերյալ: Եթե դուք ժամանակ ունեք, դուք կարող եք խրախուսել մի քանի ուսանողների կիսվել ողջ դասարանի հետ: Կիսվեք ձեր վկայությամբ, որ Աստված բարձրացրեց Ջոզեֆ Սմիթին, որ առաջ բերեր Վերականգնումը: Հրավիրեք ձեր ուսանողներին աղոթքով փնտրել եղանակներ, որ կարողանան կիսվել իրենց վկայություններով Մարգարե Ջոզեֆ Սմիթի և Մորմոնի Գրքի վերաբերյալ ուրիշների հետ, հատկապես իրենց ընկերների և ընտանիքի հետ:

***Հարցեր զգացմունքների վերաբերյալ***

Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգը խորհուրդ է տվել ուսուցիչներին տալ հարցեր, որոնք «հրավիրում են անհատներին իրենց հիշողություններում փնտրել զգացմունքներ»: Նա ասել է. «Հարց տալուց հետո մենք պետք է իմաստորեն սպասենք մի պահ, նախքան կհրավիրենք որևէ մեկին պատասխանել: Նույնիսկ նրանք, ովքեր չեն խոսի, կմտածեն հոգևոր փորձառությունների մասին: Դա կհրավիրի Սուրբ Հոգուն» (“The Lord Will Multiply the Harvest” [address to CES religious educators, Feb. 6, 1998], 6, si.lds.org):

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 2 Նեփի 3.12: Ինչպես «կսերտաճեն» Մորմոնի Գիրքը և Աստվածաշունչը

Թագավոր Հակոբոսի Աստվածաշնչի Վերջին Օրերի Սրբերի հրատարակության տպագրումից կարճ ժամանակ անց, որը ներառում էր Սուրբ Գրությունների Ուղեցույցը և դրա տողատակերի հղումները կատարված բոլոր կանոնիկ գրքերին, Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերը բացատրեց. «Հին Կտակարանը և Նոր Կտակարանը . . . և . . . Մորմոնի Գիրքը . . . այժմ միահյուսվել են իրար հետ այնպես, որ երբ դուք խորհում եք մեկի շուրջ, այն ձեզ տանում է դեպի մյուսը, մինչ դուք սովորում եք մեկից, դուք լուսավորվում եք մյուսով: Դրանք, իրոք, մեկ են մեր ձեռքում» (“Scriptures,” *Ensign,* Nov. 1982, 53):

### 2 Նեփի 3.18: Ո՞վ է խոսողը:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին մեկնաբանություններ է կատարել այն մարդկանց վերաբերյալ, ում մասին խոսվում է 2 Նեփի 3.18-ում: Փակագծերի մեջ առնված բառերը Երեց Մակքոնկիին են պատկանում: Նա ասել է. «Ուշադրություն դարձրեք Տիրոջ այս խոսքերին. «Եվ ես, ահա, կտամ նրան [Մորմոնին], որ նա գրի քո երանքի պտղի [նեփիացիների] գրվածքները՝ քո երանքի պտղի [լամանացիների] համար. և խոսողը՝ քո երանքի [Ջոզեֆ Սմիթը], կհայտարարի դա»: Դա նշանակում է, որ Մորմոնը գրել է Մորմոնի Գիրքը, սակայն այն, ինչ նա գրել է, վերցված է նեփիացի մարգարեների գրվածքներից. և այս գրվածքները՝ հավաքված մի գրքի մեջ, թարգմանվել են Ջոզեֆ Սմիթի կողմից և նրա միջոցով ուղարկվել լամանացիներին» (*A New Witness for the Articles of Faith* [1985], 426):

# Տնային ուսումնասիրության դաս

## 1 Նեփի 20–2 Նեփի 3 (Մաս 5)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը, որը ուսանողները սովորեցին մինչ նրանք ուսումնասիրում էին 1 Նեփի 20 մինչև 2 Նեփի 3 (մաս 5), չի նախատեսված ուսուցանել որպես ձեր դասի մաս: Դասը, որը դուք ուսուցանում եք մաս 5-ում, կենտրոնանում է այս վարդապետություններից ու սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, մինչ դուք խորհում եք ձեր ուսանողների կարիքների շուրջ:

### Օր 1 (1 Նեփի 20–22)

Երբ Նեփին իր եղբայրների համար մեջբերում էր Եսայիայի մարգարեություններից, ուսանողները սովորեցին, որ Տերը հրավիրում է նրանց, ովքեր անհնազանդ են եղել, ապաշխարել և վերադառնալ Իր մոտ: Սա մեզ ցույց է տալիս, որ Տերը սիրում է մեզ և երբեք մեզ չի մոռանա: Ուսանողները նաև սովորեցին, որ չնայած Իսրայելը կցրվեր նրանց անհնազանդության պատճառով, Տերը խոստացավ վերականգնել ավետարանը և հավաքել Իսրայելը վերջին օրերում:

### Օր 2 (2 Նեփի 1)

Ուսանողները ուսումնասիրեցին Լեքիի վերջին ուսմունքները ուղղված իր ընտանիքին՝ իր մահից առաջ: Լեքին նշում է, որ Տերը օրհնում է մեզ, երբ մենք պահում ենք Նրա պատվիրանները, և Նա հետ է պահում օրհնությունները, երբ մենք չենք պահում Նրա պատվիրանները: Երբ Լեքին գիտեր, որ նա շուտով մահանալու էր, նա հորդորեց իր ընտանիքին հետևել Նեփիին: Ուսանողները տեսան, որ երբ մենք հետևում ենք նրանց, ում Աստված կանչել է առաջնորդել մեզ, մենք օրհնվում ենք հոգևոր բարեկեցությամբ և ապահովությամբ:

### Օր 3 (2 Նեփի 2)

Լեքին բացատրեց իր որդի Հակոբին երկու հիմնական ճշմարտություններ. (1) որ Ադամի ու Եվայի Անկումը Երկնային Հոր երջանկության Ծրագրի կարևոր մաս է և (2) որ Քավության միջոցով Հիսուս Քրիստոսը ազատում է մեզ Անկման հետևանքներից և առաջարկում է փրկություն մեր մեղքերից: Լեքին բացատրեց, որ անկման և Քավության արդյունքում մենք ազատ ենք ընտրելու ազատություն և հավերժական կյանք կամ գերություն և մահ (տես 2 Նեփի 2.27):

### Օր 4 (2 Նեփի 3)

Խոսելով իր որդի Հովսեփի հետ, Լեքին մեջբերեց Եգիպտոսի Հովսեփի մարգարեությունը, որը գտնվում էր արույրե թիթեղներում: Այս մարգարեությունը կանխատեսում էր, որ Տերը բարձրացնելու էր Մարգարե Ջոզեֆ Սմիթին, որ օգներ առաջ բերել ավետարանի Վերականգնումը: Ուսանողներին խնդրել էին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրել, թե ինչպես են Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից կատարված աջակցությունները մեծ արժեք ունեցել իրենց համար:

## Նախաբան

Այս դասը նախատեսված է ուսանողներին օգնելու համար, որ հասկանան Աստծո հավերժական նպատակները: Լեքին գիտեր, որ իր ժառանգները կարող էին կատարել ընտրություններ, որոնք կառաջնորդեին նրանց դեպի ուրախություն, ազատություն և հավերժական կյանք միայն այն ժամանակ, երբ նրանք հասկանան կարևոր վարդապետությունները և հավատան դրանց, ինչպես օրինակ՝ Անկումը, Հիսուս Քրիստոսի Քավությունը, ազատ ընտրությունը և հնազանդությունը (տես 2 Նեփի 2.25, 27): Քաջալերեք ուսանողներին ընտրել հավերժական կյանքը, որպեսզի նրանք կարողանան ի վերջո «հավերժորեն օղակվել [Աստծո] սիրո բազուկների մեջ» (2 Նեփի 1.15), ինչպես Լեքին:

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 1-2

***Նախքան մահանալը, Լեքին հորդորում է իր զավակներին պահել Աստծո պատվիրանները և սովորեցնում է նրանց փրկության ծրագրի հիմնական վարդապետությունները***

Սկսեք՝ խնդրելով ուսանողներին կարդալ 2 Նեփի 3.25 վերջին նախադասությունը («Հիշիր քո մեռնող հոր խոսքերը»): Հարցրեք նրանց, թե ինչպես կարող է փոխվել նրանց ուշադրությունը ընտանիքի անդամի խորհրդի վերաբերյալ, եթե նրանք գիտեն, որ այդ անձնավորությունը մոտ է մեռնելուն:

Հետևյալ վարժությունը կարող է օգնել ուսանողներին ավելի լավ հասկանալ ճշմարտությունները, որ Լեքին ներկայացրեց իր ընտանիքին ուղղված իր վերջին խոսքերում: Սա նաև թույլ կտա նրանց կիսվել միմյանց հետ, թե ինչպես կարող են այս ճշմարտությունները օգնել նրանց հետևել իրենց փրկության համար նախատեսված Երկնային Հոր Ծրագրին:

1. Հետևյալ սուրբ գրությունների հատվածները հանձնարարեք յուրաքանչյուր ուսանողի կամ զույգի. 2 Նեփի 1.16–20, 2 Նեփի 2.6–10, 2 Նեփի 2.19–20, 22–25 և 2 Նեփի 2.11–13, 27–29: (Եթե դուք ունեք չորսից քիչ ուսանողներ, դուք կարող

եք հարմարեցնել այս վարժությունը, հանձնարարելով ուսանողներին մեկից ավելի սուրբ գրության հատված կամ քննարկման համար ընտրելով ավելի քիչ հատվածներ:)

2. Երբ ուսանողները ուսումնասիրեն այս հատվածները, թող նրանք պատասխանեն հետևյալ հարցերին իրենց սուրբ գրությունների օրագրերում: (Դուք կարող եք հարցերը գրել գրատախտակին:)
   ա. Ի՞նչ կարևոր ճշմարտություններ ուսուցանեց Լեքին:
   բ. Ինչո՞ւ են այս ճշմարտությունները կարևոր մեր մշտական բարեկեցության համար:
3. Իրենց հանձնարարությունը կատարելու համար ուսանողներին ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք յուրաքանչյուր ուսանողի կամ զույգի զեկուցել, թե ինչ են իրենք հայտնաբերել: Քաջալերեք որքան հնարավոր է շատ ուսանողների կիսվել, թե ինչ են իրենք գտել և ինչու է այն կարևոր նրանց համար:

Վարժությունն ավարտելուց հետո գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. ***Ադամի ու Եվայի անկումը Երկնային Հոր երջանկության ծրագրի կարևոր մասն է:***

Կիսվեք Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի հետևյալ խոսքերով.

«Ադամն ընդամենն արեց այն, ինչ նա պետք է աներ: Նա ճաշակեց այդ պտղից մի լավ պատճառով, և դա այն էր, որ բացեր ձեզ և ինձ և մնացածներին այս աշխարհ բերելու դուռը: . . .

Եթե չլիներ Ադամի այդ ընտրությունը, ես այստեղ չէի լինի. դուք այստեղ չէիք լինի. մենք որպես հոգիներ դեռ կսպասեինք երկնքում» (in Conference Report, Oct. 1967, 121–22):

Ուսանողներին տվեք հետևյալ հարցերը.

- Որո՞նք են Անկման որոշ հետևանքները, որ Լեքին նկարագրում է 2 Նեփի 2.21–24:
- Ինչպե՞ս են այս հետևանքները մեր համար հնարավոր դարձնում, որ զարգանանք համաձայն մեր փրկության համար նախատեսված Երկնային Հոր ծրագրի:

Գրատախտակին ավելացրեք հետևյալ ճշմարտությունը. ***Քավության շնորհիվ Հիսուս Քրիստոսը փրկում է մեզ Անկումից և առաջարկում է փրկություն մեր մեղքերից:***

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այս ճշմարտությունը, թող մի ուսանող բարձրաձայն կարդա Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինի հետևյալ խոսքերը.

«Հիսուս Քրիստոսի Քավությունը՝ մաքուր սիրո այդ դրսևորումը, հաղթահարեց Անկման ազդեցությունները և ճանապարհ պատրաստեց ամբողջ մարդկության համար, որ վերադառնան Աստծո ներկայություն: Որպես Քավության մի մաս, Փրկիչը հաղթահարել էր ֆիզիկական մահը և Հարության միջոցով անմահություն ապահովել Աստծո զավակներից յուրաքանչյուրի համար: Նա նաև հաղթեց հոգևոր մահին և հնարավորություն տվեց հավերժական կյանք ունենալու համար, կյանք, որով Աստված է ապրում և Աստծո բոլոր պարգևներից ամենամեծն է» (“Christians in Belief and Action,” *Ensign*, Nov. 1996, 71):

Հարցրեք ուսանողներին. Որո՞նք են Քավության որոշ օրհնությունները:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ ազատ ընտրության կարևորությունը Երկնային Հոր ծրագրում, կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելի հետևյալ խոսքերը.

«Առանց ընտրությունների գոյության, առանց մեր ընտրելու ազատության և առանց հակադրության չի լինի իրական գոյություն: . . . Փաստորեն մենք չենք կարող զարգանալ հոգևորապես կամ դրա շնորհիվ լինել իսկապես երջանիկ, մինչև մենք իմաստուն ձևով չօգտագործենք մեր բարոյական ազատությունը» (*One More Strain of Praise* [1999], 80):

Գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. ***Մենք ազատ ենք ընտրելու ազատություն և հավերժական կյանք կամ գերություն և մահ:***

Թող ուսանողները անդրադառնան իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերի օր 3-ի հանձնարարություն 4-ին: Հրավիրեք նրանցից մի քանիսին բացատրել, թե ինչ են իրենք սովորել ազատ ընտրության վերաբերյալ 2 Նեփի 2.26–29:

Բարձրաձայն կարդացեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետևյալ խոսքերը.

«Փրկություն ստանալու համար մենք չպետք է միայն որոշ բաներ անենք, այլ ամեն բան, որ պատվիրել է Աստված» (*Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 161):

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ հնազանդության կարևորությունը, դուք կարող եք տալ հետևյալ հարցերը.

- Ձեր կարծիքով ինչո՞ւ Լեքին նախքան մահանալը իր ընտնիքին ուղղված վերջին խորհուրդները տալիս շեշտեց հնազանդությունը:
- Ի՞նչ փորձառություններ եք դուք ունեցել, որ օգնել են ձեզ իմանալ, որ **Տերը օրհնում է մեզ, երբ մենք պահում ենք Նրա պատվիրանները, և Նա հետ է պահում օրհնությունները, երբ մենք չենք պահում Նրա պատվիրանները:** (Ավելացրեք այս ճշմարտությունը գրատախտակի վրա գրված ցանկին:)

Դասի վերջում կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ՝ Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ խոսքերը.

«Հնազանդությունը հզոր հոգևոր դեղամիջոց է: Այն մոտ է բոլոր խնդիրների լուծում լինելուն» (“Balm of Gilead,” *Ensign*, Nov. 1987, 18):

Կիսվեք ձեր վկայությամբ, որ Աստված սիրում է ձեր ուսանողներին և ցանկանում է օգնել նրանց հաղթահարել Անկման ազդեցությունները և ստանալ հավերժական կյանք:

## Հաջորդ մաս (2 Նեփի 4–10)

Լեքիի մահից հետո Լամանը և Լեմուելը կրկին փնտրում էին զրկել Նեփիին կյանքից: Ի՞նչ նախազգուշացում տվեց Տերը, որը փրկեց Նեփիի կյանքը: Նաև, ինչ կպատահեր մեր մարմինների և հոգիների հետ, եթե չլիներ Քավությունը: Ուսանողները այս հարցի շուրջ պատասխաններ կգտնեն 2 Նեփի 9.7–9:

ԴԱՍ 26

# 2 Նեփի 4

## Նախաբան

Լեքիի մահից հետո Լամանը և Լեմուելը բարկացան Նեփիի վրա, «Տիրոջ խրատների պատճառով», որոնց վերաբերյալ Նեփին խոսել էր նրանց հետ (տես 2 Նեփի 4.13–14): Իր եղբայրների վերաբերմունքի և իր սեփական թուլությունների ու մեղքերի պատճառով անհանգստացած՝ Նեփին արձանագրում է իր զգացմունքները արտահայտիչ ու բանաստեղծական լեզվով: Նա նկարագրում է սուրբ գրությունների հանդեպ իր սերը և իր երախտագիտությունը օրհնությունների համար և ուժը, որ նա ստացել էր Տիրոջից (տես 2 Նեփի 4.15–35):

### *Գրատախտակին գրել*

Մտքեր հարուցող հարցը կամ գրատախտակին գրված հարցը կարող է օգնել ուսանողներին հետաքրքրվել դասով և պահպանել նրանց ուշադրությունը: Կարող է օգտակար լինել նաև գրատախտակի վրա դասին վերաբերվող նյութերը դնելը, ինչպես օրինակ սուրբ գրության հատվածները, գծագրերը և գծապատկերները: Կախված նյութի ծավալից և կիրառումից, դուք կարող եք նշել այն գրատախտակի վրա նախքան դասի սկսվելը: Սա կարող է օգնել ձեզ ժամանակ խնայել դասի ընթացքում և խուսափել անտեղի ընդհատումներից:

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 4.1–11

*Լեքին խորհուրդներ է տալիս և օրհնում է իր ընտանիքին*

Նախքան դասի սկսվելը հետևյալ հարցերը գրեք գրատախտակին.

*Պատկերացրեք, որ դուք հավատարիմ պապիկ կամ տատիկ եք և ձեր երեխաները չեն ապրում ավետարանի չափանիշներով, ի՞նչ խորհուրդ դուք կտաք ձեր թոռնիկներին:*

Դասը սկսեք՝ հրավիրելով ուսանողներին պատասխանել գրատախտակին գրված հարցին: Ուսանողների պատասխաններից հետո հարցրեք.

- Ի՞նչ պարտականություններ ունեն ծնողները, պապիկներն ու տատիկները իրենց երեխաներին և թոռնիկներին ուսուցանելու և խորհուրդներ տալու հետ կապված:

Որպես այս զրույցի մի մաս դուք կարող եք կարդալ կամ խնդրել մի ուսանողի կարդալ հետևյալ մեջբերումը.

«Ծնողների սուրբ պարտականությունն է՝ դաստիարակել երեխաներին սիրո և առաքինության մթնոլորտում, ապահովել նրանց նյութական և հոգևոր կարիքները, ուսուցանել նրանց սիրել և ծառայել մեկը մյուսին, պահել Աստծո պատվիրանները և օրինապաշտ քաղաքացիներ լինել, որտեղ էլ, որ ապրեն: Ամուսիններն ու կանայք՝ մայրերն ու հայրերը հաշվետու կլինեն Աստծո առջև այս պարտականությունների իրականացման համար: . . . Անհրաժեշտության դեպքում ընտանիքները կարող են ապավինել նաև մերձավորների օգնությանը» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129):

Ներկայացրեք 2 Նեփի 4, բացատրելով, որ նախքան մահանալը Լեքին խորհուրդ տվեց իր ժառանգներին պահել պատվիրանները: Հրավիրեք ուսանողներին կարդալ 2 Նեփի 4.3–11, ուշադրություն դարձնելով մարդկանց վրա, ում Լեքին ուսուցանում էր և խորհրդի վրա, որը նա տալիս էր նրանց:

- Ո՞ւմ էր ուսուցանում Լեքին: (Տես 2 Նեփի 4.3, 8, 10–11:)
- Ի՞նչ խոստում տվեց Լեքին Լամանի և Լեմուելի զավակներին: (Տես 2 Նեփի 4.7, 9:)
- Հիմնվելով 2 Նեփի 4.5-ի վրա, ձեր կարծիքով ո՞րն է պարտականությունը, որ Տերը տվել է ծնողներին: (Այս հարցին պատասխանելու համար ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, սակայն համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **ծնողները Աստծո կողմից տրված պարտականություն ունեն ուսուցանել ավետարանը իրենց զավակներին:**)
- Ի՞նչ ճշմարտություններ եք դուք սովորել ձեր ծնողներից կամ տատիկներից ու պապիկներից:

Խրախուսեք ուսանողներին դառնալ ամուր օղակ իրենց ընտանիքների շղթաներում՝ ապրելով ավետարանով և պատրաստվելով լինել արդարակյաց ծնողներ: Դուք կարող եք ցուցադրել «Լինել ամուր օղակ» վերնագրով ազդագիրը (տես http://lds.org/liahona/2003/09/poster?lang=eng):

## 2 Նեփի 4.12–35

### *Նեփին ընդունում է իր թուլությունները և արտահայտում է իր վստահությունը առ Տերը*

Գրատախտակին գրեք *Հոգիս հրճվում է. . .*

Խնդրեք ուսանողներին գրել այս արտահայտությունը իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային տետրերում և ավարտել նախադասությունը, գրելով բաներ, որոնցով հրճվում է իրենց հոգին:

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 4.15–16, որ իմանան, թե ինչպես է Նեփին ավարտել այս արտահայտությունը:

- Ի՞նչ որոշ բաներ մենք կարող ենք անել, եթե մեր հոգիները հրճվում են սուրբ գրություններով:
- Ի՞նչ է նշանակում ձեր համար հրճվել Տիրոջ բաներով:
- Նեփին ասել է, որ իր սիրտը խորհում էր այն բաների շուրջ, որոնք նա տեսել էր ու լսել: Ի՞նչ է սա նշանակում ձեզ համար:

Նշեք, որ Նեփին մեծ ուրախություն ճաշակեց իր կյանքում: Այնուամենայնիվ, նա նաև հանդիպում էր դժվարությունների: Թող ուսանողները մտքում կարդան 2 Նեփի 4.12–13, որպեսզի տեսնեն որոշ դժվարություններ, որոնց Նեփին հանդիպում է իր կյանքի այս ժամանակաշրջանում: (Լեքիի մահը և Լամանի, Լեմուելի և Իսմայելի որդիների բարկությունը:)

Նեփիի փորձություններից շատերը առաջ էին գալիս իր ավագ եղբայրների արարքներից և վերաբերմունքից: Սակայն Նեփին նաև վշտանում է իր սեփական թուլությունների պատճառով: Գրատախտակին գրեք *Միրտս վշտանում է . . . պատճառով:*

Հրավիրեք ուսանողներին կարդալ 2 Նեփի 4.17–18 և գտնել Նեփիի վշտանալու պատճառները:

Այս հատվածները կարդալու համար ժամանակ տրամադրելուց հետո հարցրեք նրանց, թե ինչ են գտել: Նրանց ուշադրությունը հրավիրեք այս հատվածների *թշվառ, մարմին* և *նեղել* բառերի վրա: Բացատրեք, որ *թշվառ* բառը նշանակում է դժբախտ կամ ցածրորակ: Սուրբ գրություններում *մարմին* բառը հաճախ վերաբերվում է թուլությանը, որը մենք ունենք, քանի որ ապրում ենք ընկած վիճակում: *Նեղել* բառը նշանակում է շրջապատել կամ սեղմել բոլոր կողմերից:

- Ի՞նչ դժվարություններ կարող են նեղել մեզ: (Պատասխանները կարող են ներառել տանը եղած խնդիրները, հասակակիցների ազդեցությունը, դժվար տնային աշխատանքը և գայթակղությունները:)

Թող մի ուսանող կարդա 2 Նեփի 4.19: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին ընդգծել «Այնուամենայնիվ, ես գիտեմ՝ ում եմ ապավինել» նախադասությունը: Նշեք, որ 2 Նեփի 4.19-ում Նեփիի խոսքերը տխրությունից փոխվում են հույսի:

- Ձեր կարծիքով, ի՞նչ ի նկատի ուներ Նեփին, երբ նա ասաց. «Ես գիտեմ՝ ում եմ ապավինել»:
- Ինչպե՞ս կարող է Տիրոջը և Նրա բարությունը հիշելը օգնել մեզ հուսահատության պահերին:

Բարձրաձայն կարդացեք 2 Նեփի 4.20–25: Ուսանողներին խնդրեք հետևել իրենց սուրբ գրություններում: Հրավիրեք նրանց փնտրել բառեր և արտահայտություններ, որոնք ցույց են տալիս, որ **Աստված աջակցում է նրանց, ովքեր իրենց հույսը դնում են Նրա վրա:**

- 2 Նեփի 4.20–25-ում ո՞ր բառերը կամ արտահայտություններն են իմաստալից ձեզ համար: Ինչո՞ւ:
- Վերհիշեք այնպիսի պահեր, երբ Տերը աջակցել է ձեզ կամ օգնել դժվարության պահին: Ինչպե՞ս է Նա օգնել ձեզ: Ի՞նչ ազդեցություն է ունեցել այդ փորձառությունը ձեզ վրա:

Նմանատիպ փորձառությունների մասին մտածելու համար ուսանողներին ժամանակ տրամադրելը և իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում դրանք գրի առնելը կարող է օգտակար լինել: Ուսանողների համար նաև կարող է օգտակար լինել, եթե դուք պատմեք այն պահերի մասին, երբ Աստված օգնել և աջակցել է ձեզ:

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ Նեփիի ունակությունը՝ հիշել և երախտապարտ լինել այն ամենի համար, ինչ Տերն արել է իր համար անցյալում, տվեց նրան

***Բարձրաձայն կարդալ սուրբ գրությունները***

Ժամանակ առ ժամանակ ձեր ուսանողների համար բարձրաձայն կարդացեք սուրբ գրությունների հատվածներ: Սա հնարավորություն է տալիս նրանց լսել և զգալ ձեր սերը սուրբ գրությունների հանդեպ, և դա կարող է ոգևորել նրանց, որ նրանք էլ կարդան սուրբ գրությունները: Դա կարող է նաև հնարավորություններ տալ համոզվելու, որ հատուկ ուշադրություն է դարձված որոշակի մտքի, ճշմարտության կամ կիրառման վրա: Ուսանողների համար նաև օգտակար կլինի, երբ նրանք բարձրաձայն կարդան սուրբ գրությունները միմյանց համար և նույնիսկ իրենց անհատական ուսումնասիրությունների ժամանակ:

հույս և քաջալերեց նրան դառնալ ավելի լավը: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 4.26–30, փնտրելով, թե ինչպես Նեփիի փորձառությունները ազդեցին արդարակյաց լինելու իր ցանկության վրա: Խնդրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց գտածով:

Խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 2 Նեփի 4.30–35: Դասարանով հանդերձ ներկայացրեք Տիրոջը տված Նեփիի խոստումները և նրա հայցած օրհնությունները:

- Ի՞նչ կարող ենք մենք սովորել այս աղոթքից, որը կարող է օգնել մեզ մեր անձնական աղոթքներում: (Ուսանողները կարող են տարբեր բառեր օգտագործել այս հարցին պատասխանելու համար, սակայն համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **անկեղծ աղոթքը կարող է զորացնել մեղքը և հուսահատությունը հաղթահարելու մեր պարտավորությունը:**)

Հրավիրեք ուսանողներին հիշել մի ժամանակաշրջան, երբ աղոթքը օգնել է նրանց հաղթահարել մեղքը կամ հուսահատությունը: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք կիսվեն իրենց փորձառություններով կամ գրառեն դրանք իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:

Ուսանողներին տվեք մի պահ, որ 2 Նեփի 4–ում փնտրեն մի հատված, որը արտահայտում է իրենց ունեցած ցանկությունը: Բավականաչափ ժամանակ անց կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը, թե ինչպես կարող է աղոթքը նպաստել հոգևոր աճին.

«Մեր բնավորության, մեր պահվածքի կամ հոգևոր աճի մեջ կան պահեր, որոնց մասին մենք պետք է խորհրդակցենք Երկնային Հոր հետ առավոտյան աղոթքում: Օրհնությունների համար պատշաճ շնորհակալություն հայտնելուց հետո, մենք աղերսում ենք, որ ստանանք հասկացողություն, առաջնորդություն և օգնություն այն բաներն անելիս, որոնք չենք կարող անել միայն մեր ուժով: Օրինակ, երբ աղոթում ենք, մենք կարող ենք.

• Հիշատակել այն առիթները, երբ մենք կոպիտ կամ անպատշաճ ձևով ենք խոսել նրանց հետ, ում ամենից շատ ենք սիրում:

• Ընդունել, որ մենք ավելի շատ գիտենք, սակայն միշտ չէ, որ գործում ենք ըստ մեր իմացածի:

• Զղջալ մեր թերությունների համար և նրա համար, որ ավելի մեծ ջանքեր չենք գործադրում բնական մարդուն հանելու համար:

• Որոշել ավելի լիովին ապրել Փրկչի նման:

• Աղերսել ավելի մեծ ուժ՝ գործելու և ավելի լավը դառնալու համար» («Միշտ աղոթեք», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2008, 41):

Վերջում անդրադարձեք դասի ընթացքում գրատախտակին գրված արտահայտություններին («Հոգիս հրճվում է . . .» և «Միրտս վշտանում է . . . պատճառով»): Արտահայտեք ձեր վստահությունը, որ երբ նույնիսկ մենք հանդիպում ենք դժվար իրավիճակների, մենք կարող ենք ունենալ երջանկություն և խաղաղություն, երբ փնտրում ենք Տիրոջ օգնությունը:

## Սերտման սուրբ գրության կրկնություն

*Նշում.* Այս դասի ծավալը կարող է ժամանակ հատկացնել հետևյալ սուրբ գրության սերտման կրկնության վարժության համար: Դուք կարող եք վարժությունը կատարել դասի սկզբում, որպես ընդմիջում դասի մասերի միջև կամ դասի վերջում: Այն պետք է կատարվի հակիրճ ձևով, որպեսզի ժամանակ տրամադրվի դասին: Կրկնության այլ վարժությունների համար տես այս ձեռնարկի վերջում գտնվող ցուցիչը:

Հարցաշարերը կարող են օգնել ուսանողներին հիշել այն, ինչ իրենք սովորել են և ստուգել իրենց սովորածը: Ընտրեք մի քանի նոր սերտման սուրբ գրությունների հատվածներ, և հրավիրեք ուսանողներին կարդալ և նշել դրանք իրենց սուրբ գրություններում: Այնուհետև նրանց հարցեր տվեք այդ հատվածների և այլ սերտման սուրբ գրությունների հատվածների վերաբերյալ, որոնք նրանք արդեն սովորել են: Կարդացեք յուրաքանչյուր հատվածի գլխավոր բառը կամ արտահայտությունը սեմինարիայի էջանիշից: Այնուհետև խնդրեք ուսանողներին իրենց սուրբ գրություններում գտնել ճիշտ հատվածը:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 2 Նեփի 4.16-35: Հաղթահարել մեր մեղքերը և թուլությունները

Երբ մենք ուսումնասիրում ենք Նեփիի սրտառուչ աղերսանքն առ Տերը, որ օգնի իրեն հաղթահարել իր մեղքերը և թուլությունները, մենք հասկանում ենք, որ մենք կարող ենք դիմել Տիրոջը այդ նույն օգնության համար: Նեփիի խոսքերը արձագանք են գտել վերջին օրերի մարգարեների խոսքերում:

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է.

«Որքան մարդը մոտենում է կատարելությանը, այնքան պարզ է լինում նրա տեսադաշտը, և ավելի մեծ նրա բավականությունը, մինչև նա հաղթահարում է իր կյանքում տեղ գտած չարիքները և կորցնում մեղք գործելու ամեն ցանկություն» (*Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 210–11):

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթը վկայել է օրհնությունների մասին, որոնք մենք ստանում ենք, երբ ապաշխարում ենք.

«Ինչո՞ւ են մեր Հայրը և Նրա Որդին պատվիրել մեզ ապաշխարել: Քանի որ նրանք սիրում են մեզ: Նրանք գիտեն, որ մենք բոլորս էլ կխախտենք հավերժական օրենքները: Լինեն դրանք փոքր կամ մեծ, արդարադատությունը պահանջում է, որ յուրաքանչյուր խախտված օրենք բավարարվի, պահպանելով այս կյանքի ուրախության խոստումը և Երկնային Հոր մոտ վերադառնալու արտոնությունը: Եթե չբավարարվի, Դատաստանի օրը արդարադատությունը կպահանջի, որ մենք դուրս գցվենք Աստծո ներկայությունից՝ լինելու Սատանայի ենթակայության տակ [տես 2 Նեփի 9.8–10, 2 Նեփի 2.5]:

Մեր Ուսուցիչը և Նրա փրկող գործն է, որ հնարավոր են դարձնում, որ մենք խուսափենք նման մեղադրանքից: Դա կատարվում է առ Հիսուս Քրիստոս հավատքի, Նրա պատվիրաններին հնազանդվելու և մինչև վերջ արդարությամբ համբերելու միջոցով:

Դուք ձեր կյանքում լիարժեք ձևով օգտվո՞ւմ եք ապաշխարության փրկող զորությունից, որպեսզի կարողանաք ունենալ ավելի մեծ խաղաղություն և ուրախություն: Անկարգության և ճնշվածության զգացմունքները հաճախ ազդարարում են ապաշխարելու կարիքի մասին: Նաև հոգևոր առաջնորդության բացակայությունը, որը դուք փնտրում եք ձեր կյանքում, կարող է լինել օրինազանցությունների արդյունք: Անհրաժեշտության դեպքում լիարժեք ապաշխարությունը ամեն բան կշտկի ձեր կյանքում: Այն լուծում կտա բոլոր հոգևոր ցավերին, որ առաջ են գալիս օրինազանցությունից: Սակայն այս կյանքում այն չի կարող դարման հանդիսանալ որոշ ֆիզիկական հետևանքների համար, որոնք կարող են առաջ գալ լուրջ մեղքի արդյունքում: Եղեք իմաստուն և շարունակաբար ապրեք Տիրոջ կողմից սահմանված արդարկեցության սահմաններում (“The Path to Peace and Joy,” *Ensign*, Nov. 2000, 25):

ԴԱՍ 27

# 2 Նեփի 5

## Նախաբան

Ականջ դնելով Տիրոջ նախազգուշացմանը՝ Նեփին և նրա հետևորդները առանձնացան Լամանից, Լեմուելից և Իսմայելի որդիներից: Նրանք ապրեցին արդար ու երջանիկ, մինչ Լամանի և Լեմուելի հետևորդները հեռացրեցին իրենց Տիրոջից:

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 5.1–8

*Տերը առանձնացնում է Նեփիի հետևորդներին Լամանի և Լեմուելի հետևորդներից*

Հրավիրեք ուսանողներին խորհել իրենց հանդիպած որոշ դժվարին խնդիրների և որոշումների մասին: Խրախուսեք նրանց իրենց մտքում պահել այս անձնական խնդիրները, մինչ նրանք կուսումնասիրեն, թե ինչպես Նեփին արձագանքեց դժվարություններին: Հիշեցրեք նրանց, որ երբ Լեքին մահացավ, Նեփին մնաց որպես ընտանիքի հոգևոր առաջնորդ: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 5.1–4, որ տեսնեն դժվարությունը, որին հանդիպեց Նեփին:

- Համաձայն 2 Նեփի 5.1, ի՞նչ արեց Նեփին, որ օգներ լուծում տալ իր խնդրին:
- Նույնիսկ այն բանից հետո, երբ Նեփին աղոթել էր օգնության համար, ի՞նչ էին փնտրում անել Լամանը և Լեմուելը:

Երբ ուսանողները պատասխանեն, դուք կարող եք նշել, որ մեր աղոթքները կարող են ոչ միշտ անհապաղ կամ մեր ցանկացած ձևով պատասխանվել:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 5.5–8: Դասարանին խնդրեք հետևել, փնտրելով, թե ինչ արեց Տերը Նեփիին և նրա հետևորդներին օգնելու համար:

Խնդրեք ուսանողներին ամփոփել, թե ինչ են նրանք սովորել 2 Նեփի 5.1–8 հատվածներից: Մի ճշմարտություն, որը դուք կարող եք նշել այն է, որ **Տերը առաջնորդում է նրանց, ովքեր հավատարմորեն փնտրում են Նրան աղոթքով:** Այս հատվածների հետ կապված տվեք հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ է կարևոր շարունակել հավատարիմ լինել, երբ մեր աղոթքները անմիջապես կամ մեր ուզած ձևով չեն պատասխանվում:
- Ի՞նչ եղանակներով կարող է Տերը մեզ նախազգուշացումներ տալ:

Երբ ուսանողները պատասխանեն այս հարցին, կարող եք կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բոյդ Ք. Փաքերի հետևյալ խոսքերը.

«Մենք չենք կարող ընտրել սխալ ուղղություն, առանց նախօրոք նախազգուշացումն անտեսելու» (quoted in Kenneth Johnson, “Yielding to the Enticings of the Holy Spirit,” *Ensign,* Nov. 2002, 90):

- Ինչպե՞ս մենք կարող ենք հետևել Նեփիի օրինակին, երբ մենք հանդիպում ենք դժվարությունների:

Որպես ուսանողների կողմից 2 Նեփի 5.1–8 քննարկման մի մաս նշեք, որ նեփիացիների առանձնացումը լամանացիներից Նեփիի հանդեպ Լամանի և Լեմուելի ատելության արդյունքն էր: Այս բաժանումը շարունակվեց դարերով՝ մինչ Լամանի և Լեմուելի սերունդները ուսուցանում էին իրենց զավակներին ատել Նեփիի սերունդներին (տես Մոսիա 10.12–17):

***Ուսանողներին դիմեք անունով***

Երբ դուք խնդրում եք ուսանողին կարդալ կամ մասնակցել քննարկմանը, դիմեք նրան անունով: Սա կօգնի սովորելու համար ստեղծել սիրո և հարգանքի մթնոլորտ:

## 2 Նեփի 5.9–18, 26–27

### *Նեփիացիները ապրեցին երջանիկ*

Ուսանողներին առաջնորդեք 2 Նեփի 5.27 միասին կարդալիս: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները նշեն այդ հատվածները: Գրատախտակին գրեք *երջանիկ* բառը:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում ապրել «երջանիկ»:

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Յոթանասունից Երեց Մարլին Կ. Ջենսենի հետևյալ խոսքերը.

«Որոշակի անփոփոխ սկզբունքներ և ճշմարտություններ երջանկություն են բերում մեր կյանք: Այս թեման երկար տարիներ հետաքրքրական է եղել ինձ համար, քանի որ չնայած ես մեծապես օրհնված եմ և ունեմ յուրաքանչյուր պատճառը երջանիկ լինելու համար, ես երբեմն պայքարի մեջ եմ լինում և միշտ չէ, որ ունենում եմ բնական հակում երջանկության նկատմամբ և ուրախ բնավորություն, որ որոշ մարդիկ թվում է վայելում են:

Այդ իսկ պատճառով, մի քանի տարի առաջ Մորմոնի Գրքի մի հատված գրավեց իմ ուշադրությունը: . . . Նեփին հիմնեց ավետարանի ճշմարտությունների վրա հիմնված հասարակություն. և այդ հասարակության մասին նա ասում է. «Եվ եղավ այնպես, որ մենք ապրեցինք երջանիկ» (2 Նե. 5.27): Հատվածը խորապես տպավորվեց ինձ մեջ: . . . Ես մտածեցի . . . որոնք կարող են լինել իսկապես երջանիկ հասարակության և կյանքի առանձնահատուկ տարրերը, և ես սկսեցի ուսումնասիրել Նեփիի գրառումները հուշող գաղափարներ գտնելու համար: Ես . . . հրավիրում եմ ձեզ կատարել ձեր սեփական ուսումնասիրությունը: Այն կարող է լինել ամբողջ կյանքում տևող և կարևոր որոնում: . . .

. . . Ամենօրյա կյանքի օրինաչափությունները և տարրերը, որոնք հնարավորություն տվեցին Նեփիին և նրա ժողովրդին երջանիկ լինել Քրիստոսից 560 տարի առաջ, նույն հաջողությամբ գործում են այսօր» (“Living after the Manner of Happiness,” *Ensign,* Dec. 2002, 56, 61):

Քաջալերեք ուսանողներին ընդունել Երեց Ջենսենի հրավերը: Խնդրեք նրանց մտքում կարդալ 2 Նեփի 5.6, 10–18, 26–27, փնտրելով «իսկապես երջանիկ հասարակության և կյանքի տարրերը»: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք նշեն սկզբունքները, որ նպաստում էին նեփիացիների երջանկությանը: Մի քանի րոպե հետո հրավիրեք մի քանի ուսանողների գրատախտակին գրել այն, ինչ իրենք գտել են: (Պատասխանները կարող են ներառել, որ Նեփին և նրա հետնորդները գնացին իրենց ընտանիքների հետ [տես հատված 6]. հնազանդվեցին Տիրոջը [տես հատված 10]. ջանասիրաբար աշխատեցին իրենց ապահովելու համար [տես հատվածներ 11, 15-17]. իրենց հետ տարան սուրբ գրությունները [տես հատված 12]. Տաճար կառուցեցին [ տես հատված 16] և հետևեցին արդար առաջնորդներին [տես հատվածներ 18, 26]:)

Հրավիրեք ուսանողներին ընտրել գրատախտակին գրված սկզբունքներից մեկը կամ երկուսը և կիսվել, թե ինչպես են այս սկզբունքներն օգնել նրանց «երջանիկ» ապրել:

Կախված այն բանից, թե ինչ կնշեն ուսանողները, դուք կարող եք տալ մի քանի նմանատիպ հարցեր.

- Համաձայն 2 Նեփի 5.10–11, 16, ի՞նչ օրհնություններ ստացան մարդիկ Տիրոջ պատվիրանները պահելու արդյունքում: Ե՞րբ եք դուք զգացել, որ Տերը ձեզ հետ է: Ինչպե՞ս է Տիրոջ ազդեցությունը ձեր կյանքի վրա նպաստել ձեր երջանկությանը:
- Ինչպե՞ս կարող էր տաճարը օգնել մարդկանց «երջանիկ» ապրել: Ինչպե՞ս է տաճարը ավելի մեծ երջանկություն բերել ձեզ կամ մեկին, ում դուք ճանաչում եք:
- Ի՞նչ եղանակներով է ջանասիրությունը նպաստում երջանկությանը:

Հրավիրեք ուսանողներին ամփոփել, թե ինչ են իրենք սովորել այն բանի վերաբերյալ, թե ինչպես դառնան ավելի երջանիկ: Չնայած ուսանողները կարող են կիսվել տարբեր սկզբունքներով, սակայն համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **երբ Հիսուս Քրիստոսի ավետարանը դառնում է մեր կյանքի ապրելակերպը, մենք ավելի երջանիկ ենք դառնում:** Դուք կարող եք գրատախտակին գրել այս սկզբունքը:

Հրավիրեք ուսանողներին քննել իրենց կյանքը և որոշել մի բան, որ նրանք պետք է անեն, որպեսզի նրանք ավելի լիարժեք ձևով ապրեն «երջանիկ»: Խրախուսեք նրանց

***Կիսվել մտքերով և զգացմունքներով***

Երբ պատանիները արտահայտում են իրենց մտքերը և զգացմունքները ավետարանի սկզբունքների մասին, նրանք հրավիրում են Սուրբ Հոգուն խորացնել իրենց հասկացողությունը և ամրացնել իրենց վկայությունները: Դուք կարող եք օգնել, որ դա տեղի ունենա դասարանում, խրախուսելով ուսանողներին, որ բացատրեն ավետարանի սկզբունքներն իրենց սեփական բառերով: Դուք կարող եք նաև հրավիրել ուսանողներին կիսվել պատշաճ և համապատասխան փորձառություններով և վկայել, թե այս փորձառությունների արդյունքում ինչ գիտելիք են ձեռք բերել:

գրել այդ գործողությունը իրենց սուրբ գրությունների օրագրերում կամ դասարանային տետրերում: Կիսվեք ձեր վկայությամբ սկզբունքների և փորձառությունների վերաբերյալ, որոնք երջանկություն են բերել ձեր կյանքում:

## 2 Նեփի 5.19–25

### *Լամանացիները անիծվել են իրենց անհնազանդության պատճառով*

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 5.19–24, փնտրելով տարբերություններ լամանացիների ապրելակերպի և նեփիացիների ապրելակերպի միջև:

- Համաձայն 2 Նեփի 5.20, ի՞նչ հետևանք ունեցավ լամանացիների անհնազանդությունը:

Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ այս գլխում նշված անեծքը Աստծուց հեռանալն էր: Նրանց մաշկի փոփոխությունը անեծքի լոկ նշանն էր: Որպեսզի սա ավելի պարզ դարձնեք, թող մի ուսանող կարդա Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի հետևյալ հայտարարությունը.

«Լամանացիների մաշկը մուգ դարձվեց, որպեսզի նրանք կարողանային տարբերվել նեփիացիներից և որպեսզի երկու ժողովուրդները չխառնվեին իրար: Մուգ մաշկը անեծքի նշանն էր: Անեծքը Տիրոջ Հոգու հեռանալն էր: . . .

Նրանց մուգ մաշկը, ովքեր եկել են Եկեղեցի, չպետք է այլևս համարվի անեծքի նշան: Այս նորադարձներից շատերը հիանալի մարդիկ են և ունեն Տիրոջ Հոգին» (*Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. [1957–66], 3:122–23):

- Ինչպե՞ս է 2 Նեփի 5.21 օգնում ձեզ հասկանալ, թե ինչու էին լամանացիները հեռացել Տիրոջից: (Դուք կարող եք բացատրել, որ կայծքարը ամուր քար է: Ասելով, որ լամանացիները «դարձել էին կայծքարի պես», Նեփին նշում է լամանացիների սրտերի կարծրությունը:)
- Ի՞նչ նախազգուշացում տվեց Տերը նեփիացիների ամուսնանալու վերաբերյալ լամանացիների հետ, ովքեր մերժել էին ավետարանը: (Տես 2 Նեփի 5.23:)
- Ինչո՞ւ է կարևոր խուսափել ժամադրվել և ամուսնանալ նրանց հետ, ովքեր չեն լսում Տիրոջը: Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարող են ավետարանով ապրելու ձեր ջանքերի վրա ազդել նրանք, ում հետ դուք հանդիպում եք և ի վերջո կամուսնանաք: (Կարող է օգտակար լինել ուսանողներին հիշեցնելը, որ Առաջին Նախագահությունը խորհուրդ է տվել «Ժամադրվեք միայն նրանց հետ, ովքեր ունեն բարձր չափանիշներ, և ում ընկերակցությամբ դուք կարող եք պահպանել ձեր չափանիշները» [*Երիտասարդներին զորացնելու համար* (գրքույկ, 2011), 24] :)
- Ի՞նչ սկզբունքներ մենք կարող ենք սովորել 2 Նեփի 5.20–24: (Երբ ուսանողները կիսվեն սկզբունքներով, համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **երբ մարդիկ կարծրացնում են իրենց սրտերը Տիրոջ դեմ, նրանք իրենց բաժանում են Նրանից:**)

Նշեք, որ 2 Նեփի 5 ներկայացնում է մեծ տարբերություն նեփիացիների և լամանացիների միջև: Մենք կարող ենք ընտրել, թե որ օրինակին մենք կհետևենք: Խրախուսեք ուսանողներին հիշել, թե ինչ են նրանք որոշել անել, որ ավելի լիարժեք ձևով «երջանիկ» ապրեն: Հայտնեք ձեր վստահությունը, որ նրանք կարող են հետևել նեփիացիների օրինակին և լինել իսկապես երջանիկ:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 2 Նեփի 5.16: «Ես՝ Նեփիս, տաճար կառուցեցի»

Յոթանասունից Երեց Մարլին Կ. Ջենսենը բացատրել է, թե ինչպես է տաճար հաճախելը առաջնորդում դեպի երջանկություն.

«Նեփին գրում է. «Եվ ես՝ Նեփիս, տաճար կառուցեցի» (2 Նե. 5.16): Նեփիի տաճարը միգուցե ինչ-որ ձևով տարբերվում էր մեր վերջին օրերի տաճարներից, սակայն դրա հիմնական նպատակը նույնն էր՝ ուսուցանել և հրահանգներ տալ Աստծո զավակներին Նրա ծրագրի մասին՝ նրանց իսկ երջանկության համար, և կատարել արարողությունները և ուխտերը, որոնք կարևոր են այդ երջանկությանը հասնելու համար:

Այս լավ աշխարհում հինգ տասնամյակից ավելի ապրելուց հետո ես կարող եմ անկեղծորեն ասել, որ իմ իմացած հոգևորապես ամենահասուն և ամենաերջանիկ մարդիկ ջերմեռանդորեն տաճար գնացողներն են: Դրա համար լավ պատճառ կա: Տաճարում է, որ մեզ համար նախատեսված Աստծո ծրագիրն ամբողջությամբ ասվում և կրկնվում է, ամեն անգամ բերելով ավելի մեծ հասկացողություն և պարտավորություն կյանքը Նրա նշած ուղով ապրելու համար: . . .

Որպեսզի ստուգենք, թե որքանով է մեզ հաջողվում գալ դեպի Քրիստոսը, մենք պետք է քննենք, թե ինչ ենք զգում տաճարի և այնտեղ ունեցած փորձառությունների հանդեպ: *Տաճարը* կարող է հոմանիշ հանդիսանալ *երջանկություն* և *ուրախություն բառերի համար:* Դա այդպես էր Նեփիի և նրա ժողովրդի համար» (“Living after the Manner of Happiness,” *Ensign,* Dec. 2002, 60):

ԴԱՍ 28

# 2 Նեփի 6–8

## Նախաբան

Երբ Նեփին արձանագրում էր իր ժողովրդի ծառայությունը, նա ներառեց իր կրտսեր եղբոր՝ Հակոբի երկու օրվա քարոզը: Քարոզը գտնվում է 2 Նեփի 6–10-ում, և սա դրա վերաբերյալ երեք դասերից առաջինն է: Քարոզի սկզբում Հակոբը կարդում է Եսայիայի մարգարեությունը Իսրայելի ցրման և հավաքման մասին, ցույց տալով, որ «Տեր Աստված կիրագործի իր ուխտերը, որոնք նա արել է իր զավակների հետ» (2 Նեփի 6.12):

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 6

*Հակոբը վկայում է, որ Տերը կհիշի Իր ուխտի ժողովրդին*

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, որ Հակոբի ուսմունքները կապ ունեն իրենց կյանքի հետ, խնդրեք նրանց խորհել, թե ինչպես նրանք կարձագանքեին, եթե ընկերը կամ ընտանիքի անդամը վատ վերաբերմունք ցուցաբերեր նրանց հանդեպ, հրաժարվեր հավատալ նրանց ասածին, կամ իր վարվելակերպով կամ վերաբերմունքով ցույց տար, որ իր համար նրանց հարաբերություններն այլևս կարևոր չէին:

Ուսանողներին խնդրեք լուռ խորհել հետևյալ հարցի շուրջ.

- Դուք երբևիցե դրսևորե՞լ եք նմանատիպ վարվելակերպ կամ վերաբերմունք Տիրոջ հանդեպ:

Բացատրեք, որ 2 Նեփի 6–8-ում մենք տեսնում ենք, թե ինչպես է Տերը արձագանքում նրանց, ովքեր հեռանում են Նրանից: Այս գլուխները պարունակում են Նեփիի արձանագրությունները, որտեղ նա ներկայացնում է իր եղբոր՝ Հակոբի քարոզի մի մասը: Հակոբի քարոզի մնացած մասը արձանագրված է 2 Նեփի 9–10–ում: Այս գլուխներին կանդրադառնանք հաջորդ երկու դասերի ժամանակ:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 6.3–4 և 9.1, 3: Խնդրեք դասարանին ներկայացնել պատճառները, թե ինչու Հակոբը տվեց այս քարոզը:

Հրավիրեք մի ուսանողի դպիրի դեր խաղալ: Խնդրեք նրան գրատախտակին գրել *Հակոբի քարոզի նպատակները* վերնագիրը: Այնուհետև խնդրեք ուսանողներին կիսվել, թե ինչ իրենք սովորեցին հենց նոր կարդացված հատվածներից: Թող դպիրը վերնագրի տակ գրի նրանց պատասխանները: Օգնեք ուսանողներին հասկանալ, որ Հակոբը ուսուցանում էր իր ժողովրդին «[նրանց] հոգիների բարօրության» համար (2 Նեփի 6.3): Նա ուզում էր օգնել նրանց «փառաբանել [իրենց] Աստծո անունը» (2 Նեփի 6.4), «իմանալ Տիրոջ ուխտերի մասին» (2 Նեփի 9.1), «ուրախանալ և բարձրացնել [իրենց] գլուխները հավիտյան» (2 Նեփի 9.3): Համոզվեք, որ այս նպատակները ներառված են ուսանողների ցուցակում: Առաջարկեք, որ երբ ուսանողները ուսումնասիրեն Հակոբի քարոզը, նրանք կարող են փնտրել ուսմունքներ, որոնք օգնում են իրագործել այս նպատակները:




Գրատախտակին գծեք հետևյալ գծապատկերը: (Դուք կարող եք այն գծել նախքան դասի սկսվելը:) Հրավիրեք մի ուսանողի կարդալ 2 Նեփի 6.4: Նշեք, որ Հակոբը սկսեց իր քարոզն ասելով, որ նա խոսելու էր պայմանների մասին, որոնք առկա էին իր օրերում և որոնք գոյություն էին ունենալու ապագայում («բաների վերաբերյալ, որոնք կան, և որոնք պիտի գան»):

Գծապատկերի վրա ցույց տվեք համար 1-ը։

- 2 Նեփի 6.8-ում ի՞նչ է ասում Հակոբն այն առթիվ, թե ինչ պատահեց հրեաներին Երուսաղեմում, քանի որ նրանք հեռացել էին Տիրոջից։ (Ոմանք սպանվել էին և ոմանք էլ գերի էին տարվել։ Դուք կարող եք հիշեցնել ուսանողներին, որ Լեքին, Երեմիան և այլ մարգարեներ մարգարեանում էին, որ այս բաները կկատարվեն։ Նրանց մարգարեությունները կատարվեցին Ք.ա. մոտավորապես 587թ., երբ բաբելոնացիները նվաճեցին Երուսաղեմը և շատ հրեաների գերի տարան Բաբելոն։ Տես այս և մյուս տարեթվերի Սուրբ Գրությունների Ուղեցույցի «Ժամանակագրական ցանկը»։)

Ցույց տվեք համար 2-ը։

- Համաձայն 2 Նեփի 6.9–ի առաջին նախադասության, ի վերջո ի՞նչ կպատահի հրեաների սերունդների հետ, ովքեր գերի էին տարվել Բաբելոն։ (Նրանք կվերադառնան Երուսաղեմ։ Այս մարգարեությունը իրականացավ Ք.ծ.ա. 537թ., երբ Կյուրոս թագավորը թույլ տվեց հրեաներին վերադառնալ իրենց մայր երկիրը։)

Ցույց տվեք համար 3-ը և բացատրեք, որ Հակոբը մարգարեացավ, որ Փրկիչը ապրելու էր Իր մահկանացու կյանքը հրեաների մեջ։

- 2 Նեփի 6.9–10-ում ո՞ր արտահայտություններն են նկարագրում, թե ինչպես որոշ հրեաներ կվերաբերվեն և ինչ կզգան Փրկչի հանդեպ Նրա մահկանացու ծառայության ժամանակ։ (Պատասխանները կարող են ներառել «կխարազանեն նրան», «կխաչեն նրան» և «իրենց սրտերը կկարծրացնեն և պարանոցները կխստացնեն» Նրա դեմ արտահայտությունները։)
- Համաձայն 2 Նեփի 6.10–11, ի՞նչ կպատահի հրեաների հետ, ովքեր կմերժեն Մեսիային։ (Նրանք կչարչարվեն իրենց մարմնում, կցրվեն, կծեծվեն և ատված կլինեն։)

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 6.6–7, 11–12, 14, 17։ Դուք կարող եք բացատրել, որ 6-7 հատվածներում Հակոբը կարդում է Եսայիայի մարգարեությունը ավետարանի վերականգնման և Իսրայելի տան հավաքման մասին։ Խնդրեք ուսանողներին ներկայացնել արտահայտությունները, որոնք նկարագրում են, թե ինչպես Տերը կարձագանքի Իսրայելի տանը՝ Տիրոջ ուխտի ժողովրդին, չնայած որ նրանք կմերժեն Նրան։ Խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտած արտահայտություններով։ Օգնեք նրանց հասկանալ այս արտահայտություններից մի քանիսի իմաստը՝ տալով հետևյալ հարցերը.

- 2 Նեփի 6.7-ում, ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «սպասել» Տիրոջը։
- Հակոբը խոստացավ, որ «Տերը ողորմած [կլիներ] Իսրայելի հանդեպ (2 Նեփի 6.11)։ Ձեր ներկայացրած արտահայտություններից մի քանիսը ինչպե՞ս են վերաբերվում Տիրոջ ողորմությանը։
- Հակոբը նաև խոստացավ, որ Տերը «դարձի կբերի» Իսրայելին (2 Նեփի 6.14)։ Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում Փրկչի համար դարձի բերել ինչ-որ մեկին։
- Համաձայն 2 Նեփի 6.11–12, 14, ի՞նչ պետք է մենք անենք, որ ստանանք Տիրոջ ողորմությունը։

Երբ ուսանողները կիսվեն իրենց մտքերով, համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **Տերը ողորմած է նրանց հանդեպ, ովքեր վերադառնում են Իր մոտ։**

Նշեք, որ 2 Նեփի 6-ում Հակոբը պատմում է, որ Տերը ողորմած է գտնվում Իր ուխտի ժողովրդի հանդեպ նույնիսկ այն բանից հետո, երբ նրանք շատ ամբարիշտ են եղել։ Վստահեցրեք ուսանողներին, որ եթե Տերը ողորմած կլինի այս մարդկանց հանդեպ, Նա անշուշտ ողորմած կլինի մեզանից յուրաքանչյուրի հանդեպ, երբ մենք գանք առ Նա և պահենք Նրա հետ կապած մեր ուխտերը։ Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչ եղանակներով է Տերը ողորմած եղել իրենց հանդեպ։ Խնդրեք նրանց հետևյալ արտահայտությունը գրել իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային տետրերում. *Ես գիտեմ, որ Տերը ողորմած է, քանի որ։ . . .* Այնուհետև թող գրեն իրենց մտքերը և զգացմունքները նախադասությունն ավարտելու համար։ Գրելու համար նրանց բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո դուք կարող եք հրավիրել նրանցից մի քանիսին կիսվել իրենց գրածով։

***Գրելը բարելավում է կիսվելը***

Երբ դուք հրավիրում եք ուսանողներին գրավոր ձևով պատասխանել հարցին նախքան դասարանի հետ իրենց մտքերով կիսվելը, դուք նրանց ժամանակ եք տալիս ձևակերպել իրենց մտքերը և ոգեշնչում ստանալ Սուրբ Հոգուց։ Ուսանողները ավելի հակված կլինեն կիսվել իրենց մտքերով, երբ նրանք նախ գրեն դրանք, և այն, ինչով նրանք կկիսվեն, հաճախ ավելի իմաստալից կլինի։

## 2 Նեփի 7–8

### *Հակոբը կիսվում է Եսայիայի մարգարեությամբ՝ Իր ուխտի ժողովրդին փրկելու Փրկչի կարողության մասին*

Բացատրեք, որ 2 Նեփի 7 և 8 գլուխներում Հակոբը կարդում է մարգարեություն Եսայիայի գրվածքներից: Գլուխ 7-ը պարունակում է Տիրոջ խոսքն ուղղված Իսրայելի տանը, ովքեր ցրվել էին և գերության մեջ էին իրենց մեղքերի պատճառով: Խնդրեք մի ուսանողի կարդալ 2 Նեփի 7.1: Դուք կարող եք հրավիրել դասարանին ընդգծել Տիրոջ տված հարցերը:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ 1-ին հատվածի հարցերը, բացատրեք, որ «արձակել քեզ», «ձեր մոր ապահարզանի թուղթը» և «ծախել ձեզ» արտահայտությունները վերաբերվում են ուխտը դրժելուն: Օգնեք ուսանողներին հասկանալ, որ Տիրոջ հարցերը կարող էին ձևակերպվել հետևյալ կերպ. «Ես հեռացե՞լ եմ ձեզանից»: Արդյո՞ք ես մի կողմ եմ դրել մեր կապած ուխտը»:

- Ո՞րն է այս հարցերի պատասխանը: (Պատասխանն է՝ ոչ: Տերը երբեք չի հեռանա մեզանից կամ մոռանա Իր կապած ուխտերը:)
- Համաձայն 2 Նեփի 7.1 վերջի, ինչո՞ւ էին այս մարդիկ բաժանվել Տիրոջից և տառապում գերության մեջ: (Քանի որ նրանք մեղքեր էին գործել և հեռացել էին Տիրոջից:)

Նշեք, որ 2 Նեփի 7.2-ում Տերը տալիս է մեկ այլ հարց, որը կարող է օգնել մեզ, որ տեսնենք, որ Նա ցանկանում է օգնել մեզ, և որ Նա զորություն ունի դա անելու համար: Հրավիրեք ուսանողներին գտնել և ընդգծել այդ հարցը: («Մի՞թե իմ ձեռքը խիստ կարճացել է, որ այն չի կարող փրկագնել կամ մի՞թե ես զորություն չունեմ՝ ազատելու»:)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այս հարցը, հարցրեք նրանց, թե ինչպես նրանք կարտահայտեին այս հարցը իրենց իսկ բառերով: (Եթե նրանք դժվարանում են հասկանալ «իմ ձեռքը կարճացել է» արտահայտությունը, հրավիրեք մի ուսանողի մեկնել իր ձեռքը մեկ այլ ուսանողի, կարծես թե օգնություն է առաջարկում: Այնուհետև խնդրեք առաջին ուսանողին «կարճացնել» իր ձեռքը, ցուցադրելով օգնությունը հեռացնելու կամ հետ պահելու միտքը:) Ուսանողները կարող են Տիրոջ հարցը ձևակերպել նմանատիպ մի բան ասելով. «Մի՞թե ես հետ եմ պահում իմ ձեռքը կամ չեմ հասնում ձեզ՝ փրկելու համար: Դուք հավատո՞ւմ եք, որ ես զորություն ունեմ ձեզ փրկելու համար»:

Ասեք ուսանողներին, որ ի պատասխան այս հարցին 2 Նեփի 7 և 8 հատվածների մնացած մասը պարունակում է մի շարք օրինակներ, որոնք ցույց են տալիս Իր ուխտյալ ժողովրդին ազատելու Փրկչի ցանկությունը և օրինակներ, որոնք ցույց են տալիս, որ Նա զորություն ունի դա անելու համար:

Որպեսզի օգնեք ուսանողներին բացահայտել այն փաստը, որ **Փրկիչը ցանկանում է փրկել Իր ուխտյալ ժողովրդին և զորություն ունի դա անելու համար,** 2 Նեփի 8 սուրբ գրության հետևյալ վեց հատվածները բաժանեք ուսանողների խմբերի միջև. հատվածներ 1–3, 4–6, 7–8, 10–11, 12–13 և 14–16: (Եթե ձեր դասարանում ունեք 12 կամ ավելի ուսանող, հանձնարարեք հատվածները զույգերի կամ այլ փոքր խմբերի: Եթե դուք ունեք 12-ից պակաս ուսանող, որոշ խմբերի հանձնարարեք մեկից ավելի հատվածներ:) Խնդրեք յուրաքանչյուր խմբին գտնել հատված իրենց հանձնարարված հատվածում կամ հատվածներում, որոնք ցույց են տալիս մեզ փրկելու Տիրոջ ցանկությունը և Նրա զորությունը դա անելու համար: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք յուրաքանչյուր խմբին դասարանի համար կարդալ իրենց ընտրած արտահայտությունը: Խնդրեք նրանց կիսվել, թե ինչ են նրանք սովորել այդ հատվածից: Դուք կարող եք հրավիրել ուսանողներին ընդգծել արտահայտությունները, որոնք նրանց համադասարանցիները կիսում են:

Վերջում անդրադարձեք գրատախտակին գրված Հակոբի նպատակների ցուցակին: Հրավիրեք ուսանողներին մտածել այն ուխտերի մասին, որոնք նրանք կապել են Տիրոջ հետ և օրհնությունների մասին, որոնք Նա խոստացել է նրանց, եթե նրանք պահեն այդ ուխտերը: Կիսվեք մեր և մեր հետ կապած Նրա ուխտերի հանդեպ Տիրոջ հավատարմության վերաբերյալ ձեր վկայությամբ, և վկայեք ողորմության և փրկության մասին, որ մենք կարող ենք ստանալ, եթե հավատարիմ լինենք Նրա հետ կապած մեր ուխտերին:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 2 Նեփի 6.2: Ի՞նչ քահանայություն էին կրում Լեքին, Նեփին և Հակոբը:

Հակոբն ասաց, որ նա կանչված էր «Աստծուց և կարգված, ըստ նրա սուրբ կարգի» և որ նա «նվիրաբերված [էր իր] եղբայր Նեփիի կողմից» (2 Նեփի 6.2): Երբ նա խոսում էր այս «սուրբ կարգի» մասին, նա նկատի ուներ Մելքիսեդեկյան Քահանայությունը: Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը գրել է, որ «նեփիացիները պաշտոնավարել են Մելքիսեդեկյան Քահանայության առաքինությամբ սկսած Լեքիի օրերից մինչև նրանց մեջ Փրկչի հայտնվելու օրերը» (*Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. [1957–66], 1:124):

### 2 Նեփի 8: Վերջին օրերի հավաքումը

2 Նեփի 8-ում մեջբերված Եսայիայի մարգարեությունում խոսվում է վերջին օրերում Իսրայելի հավաքման մասին: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին ուսուցանել է այս հավաքման հոգևոր բնույթի մասին.

«Ապա ի՞նչ է ներգրավվում Իսրայելի հավաքման մեջ: Իսրայելի հավաքումը բաղկացած է հավատալուց և ընդունելուց և ներդաշնակության մեջ ապրելուց այն ամենի հետ, որ Տերը մի անգամ առաջարկել է իր ընտրյալ ժողովրդին վաղ ժամանակներում: Այն բաղկացած է Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք ունենալուց, ապաշխարելուց, մկրտվելուց և Սուրբ Հոգու պարգևը ստանալուց և Աստծո պատվիրանները պահելուց: Այն բաղկացած է ավետարանին հավատալուց, Եկեղեցուն միանալուց և դեպի թագավորություն գալուց: Այն բաղկացած է սուրբ քահանայությունը ստանալուց, սուրբ վայրերում վերից տրված զորությամբ օժտվելուց և Աբրահամի, Իսահակի և Հակոբի բոլոր օրհնությունները ստանալուց՝ սելեստիալ ամուսնության արարողության միջոցով» (*A New Witness for the Articles of Faith* [1985], 515):

ԴԱՍ 29

# 2 Նեփի 9.1–26

## Նախաբան

Նեփիացիներին տրված առակում Հակոբը սկսեց Եսայիայի մարգարեություններից որոշները մեջբերելով, որոնք այն մասին էին, թե ինչպես է Տերը փրկում Իր ուխտյալ ժողովրդին: Հակոբի քարոզի այս մասը գտնվում է 2 Նեփի 6–8-ում (տես այս ձեռնարկի 28 դասը): Այս երկու օրվա քարոզի շարունակությունը գտնվում է 2 Նեփի 9–10-ում: Եսայիայից մեջբերում անելուց հետո Հակոբը կիսվեց իր իսկ վկայությամբ Հիսուս Քրիստոսի Քավության, Անկման ազդեցություններից և մեր մեղքերի հետևանքներից մեզ ազատելու Փրկչի զորության մասին: Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ուսուցանել է, որ 2 Նեփի 9 պարունակում է «քավության վերաբերյալ երբևէ տրված ամենալուսավորող ճառերից մեկը»: Նա ասել է. «Այն պետք է ուշադիր կարդա յուրաքանչյուր անձնավորություն, ով փնտրում է փրկություն» (*Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. [1957–66], 4:57):

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 9.1–9

*Հակոբը բացատրում է Անկման ազդեցությունները*

Նախքան դասի սկսվելը գրատախտակի կենտրոնում գրեք *սարսափելի հրեշ*:

Սկսեք դասը՝ բացատրելով, որ 2 Նեփի 9 պարունակում է քարոզի շարունակությունը, որն ուսանողները սկսեցին ուսումնասիրել նախորդ դասին: Հիշեցրեք ուսանողներին, որ քարոզի առաջին մասում, որը գտնվում է 2 Նեփի 6–8–ում, Հակոբը մեջբերեց Եսայիայի խոսքերը, որ ուսուցանի Փրկչի ողորմության և Իր ուխտի ժողովրդին իրենց կորած ու ցրված վիճակից ազատելու Նրա զորության մասին: Մինչ Հակոբը շարունակեց իր քարոզը, նա ուսուցանեց, թե ինչպես է Փրկիչն ազատում մեզ մեր ընկած և մեղքերով լի վիճակից:

Ուսանողների ուշադրությունը հրավիրեք արտահայտության վրա, որը դուք գրել եք գրատախտակին:

- Ի՞նչ եք պատկերացնում, երբ մտածում եք սարսափելի հրեշի մասին:

Այս հարցին ի պատասխան ուսանողները կարող են նշել երևակայական էակների: Եթե նրանք անեն դա, բացատրեք, որ որոշ բաներ, որոնք իրական են, կարող են ավելի սարսափելի լինել, քան երևակայական էակները, քանի որ նրանք ի վիճակի են առաջ բերել երկարատև վնասներ: Տեղեկացրեք ուսանողներին, որ Հակոբն

Սարսափելի հրեշ

մահ
«մահը մարմնի»

դժոխք
«մահը հոգու»

օգտագործում էր «սարսափելի հրեշ» արտահայտությունը, որ նկարագրեր պայմանները, որոնց մենք բոլորս էլ հանդիպում ենք, և հավերժական վնասը, որ կարող է առաջ գալ դրա արդյունքում: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 9.10, փնտրելով հրեշի երկու տարրերը, որոնք նկարագրել է Հակոբը: Երբ ուսանողները կիսվեն իրենց գտածով, պատասխաններն ավելացրեք գրատախտակի վրա ինչպես ցուցադրված է ներքևում.

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ Հակոբի կողմից *մահ* և *դժոխք,* տերմինների օգտագործումը, բացատրեք, որ երկու տերմիններն էլ վերաբերվում են բաժանման մի տեսակի: Երբ Հակոբն այս քարոզում օգտագործեց *մահ* բառը, նա նկատի ուներ «մահը մարմնի», որը ֆիզիկական մարմնի բաժանումն է հոգուց: Երբ նա օգտագործեց *դժոխք* բառը, նա նկատի ուներ «մահը հոգու», որը անձի բաժանումն է

Աստծո ներկայությունից: Սուրբ գրություններում այս բաժանումը հաճախ նկարագրվում է որպես «հոգևոր մահ»:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 9.6: Խնդրեք նրանց փնտրել ֆիզիկական մահվան և հոգևոր մահվան պատճառները:

- Ո՞ր իրադարձությունը ֆիզիկական մահ և հոգևոր մահ բերեց մեզ բոլորիս: (Դուք կարող եք բացատրել, որ որպես Անկման արդյունք, բոլոր մարդիկ կտրված են Աստծո ներկայությունից և բոլոր մարդիկ էլ ի վերջո պետք է ֆիզիկապես մահանան:)

Բացատրեք, որ 2 Նեփի 9.7–9-ում Հակոբն ուսուցանում է, թե ինչ կպատահեր մեզ հետ, եթե չլիներ Քավությունը և Անկման հետևանքները հավերժ մնային: Որպեսզի նախապատրաստեք ուսանողներին ուսումնասիրել այս հատվածները, դուք կարող եք տալ 7–րդ հատվածի որոշ տերմինների սահմանումները: Երբ Հակոբը խոսում էր «առաջին դատաստանի [վերաբերյալ], որը եկավ մարդու վրա», նա նկատի ուներ Ադամի և Եվայի Անկման հետևանքները: Երբ նա խոսում էր «ապականության» մասին, նա նկատի ուներ մեր մահկանացու մարմինները, որոնք կմահանան: Երբ նա խոսում էր «անապականության» մասին, նա նկատի ուներ մեր հարություն առած մարմինները, որոնք հավերժ կապրեն:

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 9.7–9: Հրավիրեք դասարանին փնտրել արտահայտություններ, որոնք նկարագրում են, թե ինչ կպատահեր մեր մարմինների և հոգիների հետ, եթե ֆիզիկական և հոգևոր մահը հավերժ մնար:

- Եթե չլիներ Քավությունը, ի՞նչ կպատահեր մեր մարմինների հետ:
- Եթե չլիներ Քավությունը, ի՞նչ կպատահեր մեր հոգիների հետ:

Որպեսզի շեշտեք, թե ինչպիսին կլիներ մեր հավատքն առանց Հիսուս Քրիստոսի Քավության, խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը:

«Եթե Աստծուց բաժանվելը և մեր ֆիզիկական մահը հարատև լիներ, բարոյական ազատությունը ոչ մի իմաստ չէր ունենա: Այո, մենք ազատ կլինեինք կատարելու ընտրություններ, սակայն ո՞ր կլիներ դրա նպատակը: Վերջնական արդյունքը միշտ էլ նույնը կլիներ՝ անկախ մեր գործերից՝ մահ առանց հարության հույսի և ոչ մի հույս երկնքի համար: Որքան լավ կամ որքան վատ էլ մենք ընտրեինք լինել, մենք բոլորս էլ ի վերջո կդառնայինք «դևի համար հրեշտակներ»: [2 Նեփի 9.9]» (“Moral Agency,” *Ensign,* June 2009, 50):

## 2 Նեփի 9.10–26

### *Հակոբն ուսուցանում է, որ Քավության շնորհիվ Փրկիչն ազատում է մեզ Անկման հետևանքներից և առաջարկում է մեզ ներում մեր մեղքերից*

Խնդրեք մի ուսանողի կարդալ 2 Նեփի 9.10:

- Համաձայն այս հատվածի, ի՞նչ է Աստված պատրաստել մեզ համար:

Նշեք, որ այս քարոզում Հակոբի հիմնական ուղերձն այն է, որ Աստված «մեր փախուստի համար ուղի է պատրաստում . . . մահի ու դժոխքի» ճանկից: Անկման բերած ֆիզիկական և հոգևոր մահից փախուստը հնարավոր է դարձվում Հիսուս Քրիստոսի փրկող զոհաբերության շնորհիվ:

Երեխաներին երկու խմբի բաժանեք: Հրավիրեք առաջին խմբին մտքում կարդալ 2 Նեփի 9.5, 19–21, փնտրելով մեզ համար կատարած Փրկչի զոհաբերության նկարագրությունները: Հրավիրեք երկրորդ խմբին մտքում կարդալ 2 Նեփի 9.11–12, 15, 22, փնտրելով արտահայտություններ, որտեղ նկարագրվում է, որ Հիսուս Քրիստոսը փրկում է մեզ ֆիզիկական մահից: (Այս արտահայտությունները գրատախտակին գրելը կարող է օգտակար լինել:)

Կարդալու համար ուսանողներին ժամանակ տրամադրելուց հետո առաջին խմբին տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ էր պատրաստ զոհաբերել Փրկիչը, որ Նա կարողանար ազատել մեզ ֆիզիկական և հոգևոր մահից: Ի՞նչ նկարագրություններ դուք գտաք, որոնք իմաստալից են ձեզ համար:

- Հակոբը նշում է, որ Հիսուս Քրիստոսը կրեց բոլոր մարդկանց ցավերը: Ի՞նչ է սա նշանակում ձեզ համար: Ինչպե՞ս է այս գիտելիքն ազդում Փրկչի հանդեպ ունեցած ձեր զգացմունքների վրա: (Որպեսզի օգնեք ուսանողներին խորհել Փրկչի զոհաբերության կարևորության վերաբերյալ, դուք կարող եք դադարեցնել քննարկումը և նշել, որ Փրկիչը կրեց բոլորի ցավերը, ովքեր ապրել են և դեռ կապրեն աշխարհում: Որպեսզի օգնեք ուսանողներին խորհել Փրկչի զոհաբերության էության վերաբերյալ, հրավիրեք նրանց գրել իրենց անունները 2 Նեփի 9.21–ի կողքի լուսանցքում որպես հիշեցում, որ Փրկիչը կրեց նրանց ցավերը:)

Երկրորդ խմբին տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ արտահայտություններ դուք գտաք այն բանի վերաբերյալ, որ Հիսուս Քրիստոսը փրկել է մեզ ֆիզիկական մահից:
- Համաձայն 2 Նեփի 9.22-ի, ո՞վ հարություն կառնի և ետ կբերվի Աստծո ներկայություն:

Կրկին անդրադարձեք գրատախտակին գրված «սարսափելի հրեշ» արտահայտությանը: Հրավիրեք ուսանողներին իրենց սեփական բառերով ասել, թե ինչ է Հակոբն ուսուցանել այն բանի վերաբերյալ, թե ինչպես մենք կարող ենք փրկվել այս «հրեշից»: Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ **Քավության շնորհիվ Հիսուս Քրիստոսը ազատում է ողջ մարդկությանը ֆիզիկական և հոգևոր մահից, որ բերել էր Անկումը:** Հրավիրեք մի ուսանողի գրատախտակին գրել այս ճշմարտությունը:

Հիշեցրեք ուսանողներին, որ Անկման պատճառով առաջ եկած ֆիզիկական և հոգևոր մահից բոլոր մարդկանց ազատելուց բացի Հիսուս Քրիստոսը կարող է ազատել մեզ հոգևոր մահից, որն առաջ է գալիս մեր սեփական մեղքերի պատճառով:

Բացատրեք, որ Հակոբը նկարագրել է այն մարդկանց վիճակը, ովքեր հայտնվում են Աստծո առաջ իրենց մեղքերում: Հրավիրեք ուսանողներին փնտրել այդ նկարագրությունները, մինչ մի ուսանող բարձրաձայն կարդում է 2 Նեփի 9.15–16, 27:

- Ինչպե՞ս էր Հակոբը նկարագրում այն մարդկանց վիճակը, ովքեր կհայտնվեն Աստծո առաջ իրենց մեղքերում:

Բացատրեք, որ Հակոբը նաև նկարագրում է այն մարդկանց վիճակը, ովքեր հայտնվում են Աստծո առաջ մաքուր վիճակում: Հրավիրեք ուսանողներին փնտրել այդ նկարագրությունները, մինչ մի ուսանող բարձրաձայն կարդում է 2 Նեփի 9.14, 18:

- Ինչպե՞ս էր Հակոբը նկարագրում այն մարդկանց վիճակը, ովքեր մաքուր կհայտնվեն Աստծո առաջ:

Նշեք, որ մինչդեռ Անկումից ազատվելը բոլոր մարդկանց պարգևն է, մեր մեղքերի հետևանքներից ազատվելը մասամբ կախված է մեր ցանկություններից և արարքներից: Գրատախտակին գրեք հետևյալը. *Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք կարող ենք հաղթահարել մեր մեղքերի հետևանքները, եթե մենք . . .*

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 9.21, 23–24: Խնդրեք դասարանին փնտրել արտահայտություններ, որ լրացնեն գրատախտակին գրված նախադասությունը:

- Համաձայն այս հատվածների, դուք ինչպե՞ս կլրացնեիք այս նախադասությունը: (Ուսանողների պատասխանները պետք է արտացոլեն նախադասության հետևյալ լրացումը. **Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք կարող ենք հաղթահարել մեր մեղքերի հետևանքները, եթե մենք հավատանք Հիսուս Քրիստոսին, ապաշխարենք, մկրտվենք և համբերենք մինչև վերջ:** Երբ նրանք կիսվեն իրենց պատասխաններով, լրացրեք գրատախտակին գրված նախադասությունը:)

Այս դասն ավարտեք ընտրելով հետևյալ վարժություններից մեկը: Երկու վարժություններն էլ օգնում են ուսնողներին անդրադառնալ այն բանին, թե ինչ նշանակություն ունի իրենց համար Փրկչի Քավությունը և կիսվել Նրա հանդեպ իրենց զգացմունքներով:

1. Խնդրեք ուսանողներին աչքի անցկացնել 2 Նեփի 9.1–22 և գտնել բոլոր հատվածները, որոնք սկսվում են *Օհ* բառով: Հրավիրեք ուսանողներին բարձրաձայն կարդալ այդ հատվածների առաջին նախադասությունները:

   Հրավիրեք ուսանողներին գրել նմանատիպ նախադասություններ իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային տետրերում՝

նկարագրելով Փրկչի և իրենց համար Նրա կատարած զոհաբերության հանդեպ երախտագիտության իրենց անձնական զգացմունքները: Խնդրեք նրանց հետևել Հակոբի օրինակին, յուրաքանչյուր նախադասությունը սկսելով *Oh* բառով և երկարացման նշանով: Խնդրեք մի քանի ուսանողների հարմարության դեպքում կիսվել իրենց նախադասություններով: Համոզվեք, որ նրանք հասկանում են, որ իրենք պարտավոր չեն կիսվել զգացմունքներով կամ փորձառություններով, որոնք խիստ անձնական են կամ գաղտնի:

2. Ամբողջ դասարանով երգեք կամ կարդացեք «Ես մնում եմ զարմացած» (*Օրհներգեր,* հ. 193) օրհներգի կամ մեկ այլ օրհներգի բառերը Հիսուս Քրիստոսի Քավության վերաբերյալ: Հրավիրեք ուսանողներին օրհներգից ընտրել տողեր, որոնք արտացոլում են իրենց զգացմունքները Փրկչի և Նրա քավիչ զոհաբերության վերաբերյալ: Նրանց թույլ տվեք դասարանի հետ կիսվել իրենց ընտրած տողերով և բացատրել, թե ինչու են նրանք երախտապարտ այդ տողերի համար:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 2 Նեփի 9.7: Ի՞նչ հետևանքներ կունենար Անկումը առանց Քավության:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը բացատրել է, թե ինչպիսին կլիներ մեր ճակատագիրը առանց Հիսուս Քրիստոսի Քավության.

«Ճիշտ ինչպես մահը կկործաներ մեզ և կդարձներ մեր ազատ ընտրությունն անիմաստ, եթե Քրիստոսը չազատեր մեզ, նմանապես, առանց Նրա շնորհի մեր մեղքերը և վատ ընտրությունները մեզ հավերժ կորած կթողնեին: Չէր լինի ոչ մի ուղի մեր սխալներից լիովին ազատվելու համար, և լինելով անմաքուր, մենք երբեք չէինք կարողանա ապրել [Աստծո] ներկայության մեջ:

Մեզ հարկավոր է Փրկիչ, Միջնորդ, ով կարող է հաղթահարել մեր մեղքերի և սխալների հետևանքները, որպեսզի դրանք ճակատագրական չլինեն: Քրիստոսի Քավության շնորհիվ է, որ մենք կարող ենք ազատվել վատ ընտրություններից և արդարացվել օրենքի ներքո, կարծես թե մենք չէինք էլ մեղանչել» (“Moral Agency,” *Ensign,* June 2009, 50):

ԴԱՍ 30

# 2 Նեփի 9.27–54 և 2 Նեփի 10

## Նախաբան

Հակոբն ավարտեց իր քարոզն այն բանից հետո, երբ վկայեց, որ Հիսուս Քրիստոսն ազատեց ողջ մարդկությանը Անկման հետևանքներից և առաջարկում է մեզ ներում մեր մեղքերից: Նա նախազգուշացրեց վերաբերմունքների և արարքների դեմ, որոնք բաժանում են Տիրոջից, և նա վկայեց վերաբերմունքների և արարքների մասին, որոնք թույլ են տալիս մարդկանց գալ դեպի Քրիստոս և փրկվել: Հաջորդ օրը Հակոբը կրկին անգամ ասաց, որ չնայած Իսրայելի տունը կցրվեր մեղքի պատճառով, Տերը կհիշեր Իր ուխտերը նրանց հետ և կհավաքեր նրանց, երբ նրանք ապաշխարեին և ետ դառնային Նրա մոտ: Հակոբը մարգարեացավ Հիսուս Քրիստոսի Խաչելության մասին: Նա նաև մարգարեացավ, որ իր ժողովրդին խոստացված երկիրը կլինի ազատության վայր, ուժեղ կանգնած բոլոր ազգերի առաջ և ազատ թագավորների թագավորումից: Հակոբը հորդորեց իր ժողովրդին հաշտվել Աստծո կամքի հետ և հիշել, որ նրանք կարող էին փրկվել միայն Աստծո շնորհի միջոցով:

***Ուսուցանեք Հոգով***

Որպես ավետարանի ուսուցիչ, դուք պետք է նախապատրաստվելիս և ուսուցանելիս փնտրեք Սուրբ Հոգու առաջնորդությունը: «Եվ Հոգին կտրվի ձեզ հավատքի աղոթքով. և եթե դուք չստանաք Հոգին, դուք չպետք է ուսուցանեք» (ՎԱՈՒ 42.14):

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 9.27–54

*Հակոբը հրավիրում է բոլորին գալ դեպի Քրիստոս և նախազգուշացնում է վերաբերմունքների և արարքների մասին, որոնք բաժանում են մեզ Տիրոջից:*

Գրատախտակին գրեք *ինչու ես կարիք ունեմ օգնության* և *ինչ պետք է ես անեմ արտահայտությունները:* Թող դասարանը պատկերացնի մի անձնավորության, ով ունի սարսափելի հիվանդություն:

- Ինչո՞ւ է կարևոր, որ այս անձնավորությունը հասկանա օգնություն փնտրելու կարևորությունը:
- Ինչո՞ւ է կարևոր, որ անձնավորությունը նաև հասկանա, թե ինչ անել օգնություն ստանալու համար:
- Ի՞նչ կպատահի, եթե անձնավորությունը հասկանում է, որ կարիք ունի օգնություն ստանալու համար, սակայն չի հասկանում, թե ինչ անել այն ստանալու համար:

Հիշեցրեք ուսանողներին, որ նախորդ դասի ժամանակ նրանք ուսումնասիրել են Անկման ազդեցությունները և մեր մեղքերի հետևանքները, սովորելով, թե ինչու մենք Փրկչի կարիք ունենք: Վկայեք, որ Նա ուզում է օգնել մեզ և ազատել մեզ մեր մեղքերից: Խնդրեք ուսանողներին մտածել, թե արդյոք նրանք գիտեն, թե ինչ պետք է իրենք անեն Քավության բոլոր օրհնությունները ստանալու համար:

Բացատրեք, որ Հակոբն ուզում էր օգնել իր ժողովրդին ընտրել «հավերժական կյանքի ճանապարհը» (2 Նեփի 10.23): Նա օգնեց նրանց հասկանալ, որ նրանք կստանան հավերժական կյանք միայն այն ժամանակ, եթե նրանք գան «դեպի Տերը» (2 Նեփի 9.41): Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 9.41: Դասարանին խնդրեք փնտրել «ճանապարհի» վերաբերյալ Հակոբի նկարագրությունը, որին մենք պետք է հետևենք:

- Ի՞նչ է նշանակում գալ դեպի Տերը: (Դուք կարող եք խրախուսել ուսանողներին պատկերացնել իրենց կյանքը որպես ճանապարհ: Թող նրանք խորհեն, թե ուր է տանում իրենց ճանապարհը: Կա՞ն այնտեղ ընտրություններ, որ ավելի են մոտեցնում նրանց Փրկչին:)
- Ի՞նչ բառեր էր օգտագործում Հակոբը «ճանապարհը» նկարագրելու համար: Ի՞նչ են ուսուցանում *նեղ* և *ուղիղ* բառերը այն բանի վերաբերյալ, թե մենք ինչպես պետք է ապրենք մեր կյանքը:

Նշեք, որ նեղ և ուղիղ ճանապարհի հետ մեկտեղ Հակոբն օգտագործում է դռան պատկերը: Նա Փրկչին անվանում է այդ դռան պահապան: Կիսվեք ձեր վկայությամբ, որ մեր մեղքերը կարող են ներվել և կարող ենք ստանալ հավերժական կյանք միայն Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության միջոցով: Ամեն ինչ, որ մենք

անում ենք, որ տանում է դեպի հավերժական կյանք, ներառյալ արարողությունները, որոնք մենք ստանում ենք, աղոթքները, որ մենք ասում ենք, վկայությունները, որոնցով կիսվում ենք և մեր ապրելակերպը, պետք է արվի Հիսուս Քրիստոսի անունով:

- Ինչու է ձեզ համար կարևոր, որ այնտեղ Փրկիչը «չի պահում ոչ մի ծառա»: (Դուք կարող եք նշել, որ Տերը կանչում է ծառաներ, ինչպես օրինակ եպիսկոպոսներ և ցցի նախագահներ, որ գործեն Իր փոխարեն որպես ժողովրդի դատավորներ: Այնուամենայնիվ, Նա կլինի մեր վերջին Դատավորը և կտա վերջնական որոշումը համաձայն մեր ապրած կյանքի:)
- Ինչպե՞ս կարող է գիտելիքը, որ Տերը «չի կարող խաբվել» ազդել Նրա մոտ գալու մեր ջանքերի վրա:

Բացատրեք, որ 2 Նեփի 9–ի մնացած մասի Հակոբի ուսմունքներն օգնում են մեզ հասկանալ, թե ինչպես են մեր վերաբերմունքն ու գործերը ազդում Փրկչի մոտ գալու մեր ունակության վրա: Որոշակի վրաբերմունքն ու գործերը օգնում են մեզ գալ դեպի Քրիստոսը, մինչդեռ այլ բաները խոչընդոտ են հանդիսանում Նրա մոտ գնալու համար:

Որպեսզի օգնեք ուսանողներին բացահայտել այս վերաբերմունքից և արարքներից ոմանք, ուղղահայաց մի գիծ գծեք գրատախտակի կենտրոնում: Գծի մի կողմում գրեք *Մեզ Աստծուց հեռացնում են:* Դրա տակ գրեք.

*1. 2 Նեփի 9.27–33*

*2. 2 Նեփի 9.34–39*

Գծի մյուս կողմում գրեք *Գալ դեպի Քրիստոսը:* Դրա տակ գրեք.

*3. 2 Նեփի 9.23, 39, 42, 45–46*

*4. 2 Նեփի 9.49–52*

Յուրաքանչյուր ուսանողի հանձնարարեք 1-ից 4 թվերից մեկը: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ իրենց հանձնարարված թվի հետ կապված հատվածները: Խնդրեք ուսանողներին, ում հանձնարարված է խումբ 1-ը և 2-ը, ներկայացնել վերաբերմունքն ու արարքները, որոնք կարող են հեռացնել մեզ Փրկչից: Խնդրեք ուսանողներին, ում հանձնարարված է խումբ 3-ը և 4-ը, ներկայացնել վերաբերմունքն ու արարքները, որոնք օգնում են մեզ գալ դեպի Փրկիչը և ստանալ Նրա Քավության օրհնությունները: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին իրենց գտածները նշել իրենց սուրբ գրություններում:

Մի քանի րոպե հետո 1-ին և 2-րդ խմբերից հրավիրեք մի քանի կամավորների գալ գրատախտակի մոտ և գրել վերաբերմունքներ և արարքներ, որոնք նրանք ներկայացրել են, որ հեռացնում են մեզ Փրկչից: Քննարկեք որոշ մտքեր Հակոբի գրառումներից՝ տալով հետևյալ հարցերից որոշները կամ բոլորը.

- Հակոբը նշել է ուսման և փողի մասին, որոնցից յուրաքանչյուրն էլ կարող են լավ բան լինել: Ինչպե՞ս կարող են ուսման և փողի հետ կապված մեր ընտրությունները մեզ հեռու պահել Տիրոջ մոտ գալուց: (Նշեք, որ 2 Նեփի 9.28–29 սերտման սուրբ գրության հատված է: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին նշել այս հատվածը:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում լինել հոգով խուլ կամ կույր: (Տես 2 Նեփի 9.31–32:)
- «Սրտով չթլփատվածներ» (2 Նեփի 9.33) արտահայտությունը վերաբերվում է նրանց, ում սրտերը բաց չեն Աստծո առաջ և ովքեր չեն կամենում ուխտեր պահել Նրա հետ: Ինչպե՞ս է այս իրավիճակը մեզ հեռու պահում Քավության ողջ օրհնությունները ստանալուց:
- Որո՞նք են մեր օրերի որոշ կռապաշտությունները: (Տես 2 Նեփի 9.37:)

Հրավիրեք ուսանողների 3-րդ և 4-րդ խմբերից գալ գրատախտակի մոտ և գրել վերաբերմունքներ և արարքներ, որոնք նրանք գտել են, որ մեզ կբերեն Փրկչի մոտ և կօգնեն մեզ ստանալ Քավության օրհնությունները: Որպեսզի օգնեք ուսանողներին վերլուծել այն, ինչ իրենք բացահայտել են, տվեք հետևյալ հարցերից մի քանիսը կամ բոլորը.

- 2 Նեփի 9.23-ում Հակոբը հիշեցնում է մեզ ապաշխարելու և մկրտվելու Տիրոջ պատվիրանի մասին: Ինչպե՞ս է հաղորդության միջոցով մկրտության

***Գրատախտակին հանձնարարություններ գրել***

Երբ ուսանողներին հանձնարարվում է կարդալ մի քանի խումբ հատվածներ, հղումները գրատախտակին գրելը կարող է օգտակար լինել: Սա օգնում է ուսանողներին հիշել, թե ինչ են նրանց խնդրել անել և օգնում է խուսափել հանձնարարության հետ կապված շփոթմունքներ ունենալուց:

**2 Նեփի 9.28–29**-ը սերտման սուրբ գրության հատված է: Անդրադարձեք դասի վերջում գտնվող մտքին, որ օգնեք ուսանողներին սերտել այս հատվածը:

ուխտերը վերանորոգելը օգնում մեզ գալ դեպի Տերը և ստանալ Նրա Քավության օրհնությունները:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում լինել «հոգևոր մտածելակերպով»: 2 Նեփի 9.39: Ի՞նչը կարող է մեզ օգնել լինել հոգևոր մտածելակերպով:
- Ի՞նչ է նշանակում «ետ դառնալ ձեր մեղքերից»: (2 Նեփի 9.45):
- Ձեր կարծիքով, ի՞նչ ի նկատի ուներ Հակոբը խմել, ուտել և «զվարճանալ պարարտությունով» ասելով: (Տես 2 Նեփի 9.50–51: Դուք կարող եք բացատրել, որ այս հատվածները վերաբերվում են հոգևոր սնուցմանը:)

Վկայեք, որ **երբ մենք գալիս ենք Տիրոջ մոտ և ապրում ենք համաձայն Նրա կամքի, մենք կստանանք Քավության բոլոր օրհնությունները:** Այս սկզբունքը գրեք գրատախտակին՝ ուսանողների կազմած ցանկի վերևում:

Խրախուսեք ուսանողներին խորհել միջադեպի մասին, երբ նրանք տեսել են այս սկզբունքը իրենց կյանքում: Հրավիրեք նրանց գրել իրենց սուրբ գրությունների օրագրերում կամ դասարանային տետրերում, թե ինչպես են իրենք ավելի մոտեցել Փրկչին գրատախտակի երկրորդ ցանկի մեկ կամ ավելի վերաբերմունքների և արարքների միջոցով: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց գրածով (սակայն օգնեք նրանց հասկանալ, որ նրանք չպետք է պարտավորված զգան կիսվել փորձառություններով, որոնք խիստ անձնական են կամ գաղտնի):

## 2 Նեփի 10

### *Հակոբը քաջալերում է իր ժողովրդին ուրախանալ և գալ դեպի Տերը*

Հարցրեք ուսանողներին, թե արդյոք նրանք երբևէ ստացել են մի նվեր, որը հատկապես նշանակալից է եղել, քանի որ ինչ-որ մեկը մեծ ջանքեր է գործադրել կամ զոհաբերություն է կատարել նվերը տալու համար: Հրավիրեք մեկ կամ երկու ուսանողների կիսվել իրենց փորձառություններով:

- Ինչպե՞ս կարող ենք մենք արտահայտել մեր երախտագիտությունը նման նվերների համար:
- Ինչպե՞ս մենք կարող ենք երախտագիտություն հայտնել Փրկչի Քավության պարգևի համար:

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսի Քավության վերաբերյալ քարոզից մեկ օր հետո Հակոբը կրկին վկայեց, որ Տերը կազատի մեզ մեղքի հետևանքներից: Նա ուսուցանեց իր ժողովրդին, թե ինչպես պետք է նրանք արձագանքեն Քավության պարգևին:

Ամփոփեք 2 Նեփի 10.1–19, բացատրելով, որ Հակոբը կրկին ու կրկին ասում էր, որ չնայած Իսրայելի տունը կցրվեր մեղքի պատճառով, Տերը կհիշեր նրանց հետ կապած Իր ուխտերը և կհավաքեր նրանց, երբ նրանք ապաշխարեին և ետ դառնային Նրա մոտ: Դուք կարող եք նշել, որ 2 Նեփի 10.3-ը Մորմոնի Գրքի առաջին հատվածն է, որտեղ Փրկչի մասին խոսելիս օգտագործվում է *Քրիստոս* տիտղոսը:

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 10.20, 23–25: Հրավիրեք դասարանին ներկայացնել, թե ինչ է մեզ հորդորում անել Հակոբը ի պատասխան Քավության պարգևի: Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այն, ինչ իրենք կգտնեն այս հատվածներում: Հրավիրեք նրանց կիսվել, թե ինչ են իրենք գտել:

Նախապատրաստեք տպված թերթիկներ հետևյալ հարցերով (կամ նախքան դասի սկսվելը հարցերը գրեք գրատախտակին): Հրավիրեք ուսանողներին ընտրել մեկ հարց և կիսվել այդ հարցի վերաբերյալ իրենց մտքերով և զգացմունքներով զուգընկերոջ հետ:

- Նկատի ունենալով այն, ինչ մենք սովորեցինք Փրկչի մասին, ի՞նչ եք դուք ուզում միշտ հիշել Նրա մասին:
- Ինչո՞ւ է ապաշխարությունը կարևոր միջոց մեր երախտագիտությունը արտահայտելու համար առ այն, ինչ Տերն է արել մեզ համար:
- Ի՞նչ եք դուք սովորել Փրկչի մասին, որ օգնում է ձեզ հույս ունենալ:

Վերջում բացատրեք, որ 2 Նեփի 10.24-ում *հաշտվել* բառը նշանակում է մարդկանց կամ իրերը բերել ներդաշնակության կամ համաձայնության իրար հետ: Օրինակ, երկու ընկերներ անհամաձայնությունից հետո պետք է հաշտվեն իրար հետ:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում հաշտվել Աստծո կամքի հետ:

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչ են իրենք սովորել և զգացել, մինչ նրանք ուսումնասիրել և քննարկել են 2 Նեփի 9–10: Հրավիրեք նրանց առաջնորդություն փնտրել Սուրբ Հոգուց, որ օգնի նրանց որոշել, թե ինչ պետք է անեն, որ հաշտվեն Աստծո կամքի հետ և ավելի լիարժեք ձևով ճաշակեն Քավության օրհնությունները: Օրինակ, ուսանողը կարող է պարտավորություն վերցնել ականջ դնել Աստծո որոշակի խորհրդին (տես 2 Նեփի 9.29), թողնել որոշակի մեղք (տես 2 Նեփի 9.45) կամ որոշակի եղանակով յուրաքանչյուր օրվա ընթացքում ավելի հաճախ հիշել Փրկչին (տես 2 Նեփի 10.20): Խրախուսեք ուսանողներին անել ամեն անհրաժեշտ բան, որ «[հաշտվեն] Աստծո կամքի հետ» (2 Նեփի 10.24): Վկայեք սա անելու օրհնությունների մասին:

## Սերտման սուրբ գրություն՝ 2 Նեփի 9.28–29

*Նշում.* Հետևյալ վարժությունը նախատեսված է ուսանողներին օգնելու համար սերտել 2 Նեփի 9.28–29: Կապված այսօրվա դասի երկարության հետ, դուք կարող եք վարժությունը օգտագործել մեկ այլ օր, երբ դուք կունենաք ավելի շատ ժամանակ:

Դասարանին առաջնորդեք 2 Նեփի 9.28–29 միասին բարձրաձայն կարդալիս:

- Ի՞նչ ծուղակների կարող ենք հանդիպել ուսում փնտրելիս, որոնք մեզ կարող են որոգայթը գցել: Ինչպե՞ս կարող ենք մենք փնտրել ուսում, սակայն խուսափենք այս ծուղակներից:
- Ի՞նչը կարող է մեզ օգնել «ականջ դնել Աստծո խորհուրդներին», երբ մենք ուսում ենք փնտրում:

Խրախուսեք ուսանողներին շարունակել մասնակցել սեմինարիային այժմ և ծրագրել հաճախել ինստիտուտ սեմինարիան ավարտելուց հետո:

# Տնային ուսումնասիրության դաս

## 2 Նեփի 4–10 (Մաս 6)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

2 Նեփի 4–10 (մաս 6) ուսումնասիրելու ժամանակ սովորած վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը նախատեսված չէ ուսուցանել որպես ձեր դասի մաս: Դասը, որը դուք սովորեցնում եք, կենտրոնանում է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, երբ դուք խորհեք ձեր ուսանողների կարիքների շուրջ:

#### Օր 1 (2 Նեփի 4–5)

Մինչ ուսանողները ուսումնասիրեցին 2 Նեփի 4, նրանք կենտրոնացան այն սկզբունքի վրա, որ Աստված աջակցում է նրանց, ովքեր իրենց վստահությունը դնում են Նրա վրա (տես 2 Նեփի 4.12–35) և գրեցին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրում մի եղանակի մասին, որով նրանք ցանկանում էին մեծացնել իրենց վստահությունն առ Աստված: 2 Նեփի 5-ում նրանք տեսան հետևյալ ճշմարտությունների օրինակները. Ապահովությունը գալիս է Աստծո հայտնություններին հնազանդվելուց (տես 2 Նեփի 5.1–8): Երբ Հիսուս Քրիստոսի ավետարանը դառնում է մեր կյանքի ուղին, մենք ավելի երջանիկ ենք դառնում (տես 2 Նեփի 5.9–18, 26–27): Ուսանողները քննել են իրենց կյանքը և որոշել են մի բան, որ իրենք պետք է անեն, որպեսզի ավելի «երջանիկ ապրեն»:

#### Օր 2 (2 Նեփի 6–8)

Այս դասի ժամանակ ուսանողները սովորեցին, որ Տերը ողորմած է նրանց հանդեպ, ովքեր վերադառնում են Իր մոտ (տես 2 Նեփի 6): Նրանք խորհել են, թե ինչպես է Տերը ողորմած եղել իրենց հանդեպ: Նրանք նաև սովորեցին, որ Փրկիչը ցանկանում է փրկել Իր ուխտյալ ժողովրդին և ունի ողջ զորությունը դա անելու համար (տես 2 Նեփի 7–8):

#### Օր 3 (2 Նեփի 9)

Երբ ուսանողները սկսեցին 2 Նեփի 9 իրենց ուսումնասիրությունը, նրանք սովորեցին, թե ինչ կպատահեր, եթե չլիներ Քավությունը: Նրանք նաև սովորեցին հետևյալ ճշմարտությունները. Հիսուս Քրիստոսի Քավությունը բոլոր մարդկանց ազատում է ֆիզիկական և հոգևոր մահից, որն առաջ էր եկել Անկման արդյունքում (տես 2 Նեփի 9.1–22): Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մենք կարող ենք հաղթահարել մեր մեղքերի հետևանքները, եթե մենք հավատանք Հիսուս Քրիստոսին, ապաշխարենք, մկրտվենք և համբերենք մինչև վերջ (տես 2 Նեփի 9.14–27): Ուսանողները որոշակի գրառումներ կատարեցին, արտահայտելով իրենց զգացմունքները Փրկչի զոհաբերության մասին, որ արվել էր իրենց համար:

#### Օր 4 (2 Նեփի 9–10)

Ուսումնասիրելով 2 Նեփի 9-ի մնացած մասը և 2 Նեփի 10, ուսանողները խորհեցին այն մասին, թե իրենց որ ընտրությունները կարող են բաժանել իրենց Տիրոջից և թե որոնք են օգնում ավելի մոտենալ Իրեն: Նրանք սովորեցին, որ ընտրելով Տիրոջը մոտենալը և Նրա կամքով ապրելը, մենք կստանանք Քավության լրիվ օրհնությունները:

### Նախաբան

Կարևոր շատ ճշմարտությունների հետ մեկտեղ, որ ուսանողները սովորեցին այս շաբաթ, շեշտեք Հիսուս Քրիստոսի Քավության կարևորությունը: Աղոթեք առաջնորդության համար, որպեսզի կարողանաք լավագույնս օգնել նրանց հասկանալ Քավությունը և ապավինել դրան: Ուսումնասիրելիս, խրախուսեք ուսանողներին խորհել այն մասին, թե ինչ պետք է անեն Փրկչի Քավության օրհնությունները ստանալու համար:

*Նշում.* Երբ աղոթքով պատրաստում եք ձեր դասը, հաշվի առեք ձեր ուսանողների կարիքները, հատկապես նրանց, ովքեր դժվարանում են: Երբ աղոթեք առանձին ուսանողների համար՝ սուրբ գրությունների վարդապետությունները և սկզբունքները նրանց լավագույնս ուսուցանելու համար, Սուրբ Հոգին կոգեշնչի ձեզ և դուք կիմանաք, ինչպես ուսուցանել ըստ նրանց կարիքների:

# Ուսուցանման առաջարկներ

## 2 Նեփի 4–5

*Նեփին արտահայտում է Իր վստահությունը Տիրոջ հանդեպ, Տերը բաժանում է Նեփիացիներին Լամանացիներից, Նեփիացիները ապրում են երջանիկ:*

Գրեք հետևյալ գծանկարի տեղեկությունը գրատախտակին, կամ պատրաստեք տպագիր թերթիկներ:

| 2 Նեփի 4 | 2 Նեփի 5 |
|---|---|
| 1. Կարդացեք գլխի վերնագիրը և պատրաստվեք ամփոփել գլուխը ձեր խոսքերով:<br>2. Կարդացեք 2 Նեփի 4.19 և բացատրեք, թե ինչ է նշանակում՝ «ես գիտեմ ում եմ ապավինել»:<br>3. Կարդացեք ձեր սուրբ գրությունների օրագրի գրառումները օր 1-ի համար, առաջադրանք 4, և պատրաստվեք կիսվել մի եղանակով, որով կցանկանաք մեծացնել Տիրոջ հանդեպ ձեր վստահությունը: | 1. Կարդացեք գլխի վերնագիրը և պատրաստվեք ամփոփել գլուխը ձեր խոսքերով:<br>2. Կարդացեք 2 Նեփի 5.27 և բացատրեք, թե ինչ է նշանակում ապրել «երջանիկ»:<br>3. Կարդացեք ձեր սուրբ գրությունների օրագրի գրառումները օր 1-ի համար, առաջադրանք 6: Պատրաստվեք կիսվել Նեփիացիների գործողություններից կամ մոտեցումներից որևէ մեկով և պատմել, թե ինչպես է նույն գործողությունը կամ նույն մոտեցումը ազդել ձեր երջանկության վրա: |

Դասարանը բաժանեք երկու մասի: Ուսանողների մի կեսին խնդրեք պատրաստվել ուսուցանել 2 Նեփի 4-ի նյութը, իսկ մյուսին՝ պատրաստվել ուսուցանել 2 Նեփի 5-ի նյութը:

Յուրաքանչյուր ուսանողի, որին հանձնարարված էր 2 Նեփի 4-ը, խնդրեք թիմ կազմել մեկ ուսանողի հետ, որին հանձնարարված էր 2 Նեփի 5: Ուսանողներին հրավիրեք կիսվել իրենց զուգընկերների հետ իրենց պատրաստած նյութով:

## 2 Նեփի 6–8

*Հակոբը մարգարեանում է Իսրայելի ցրման և հավաքման մասին և մեջբերում է Եսայիայի մարգարեությունները ուխտի ժողովրդի հանդեպ Փրկչի հավատարմության մասին:*

Հիշեցրեք ուսանողներին, որ 2 Նեփի 6–9-ը ներկայացնում է իր ժողովրդին տված Հակոբի քարոզի առաջին օրը: Նրա ուսմունքի երկրորդ օրը շարունակվում է 2 Նեփի 10-ում: 2 Նեփի 6-ում Հակոբը մարգարեանում է այն մասին, որ հրեաները պետք է մերժեին Տիրոջը և ցրվեին: Ուսանողներին խնդրեք կարդալ 2 Նեփի 7.1–2, և հրավիրեք նրանց վերաձևակերպել դրա նշանակությունը իրենց խոսքերով:

## 2 Նեփի 9

*Հակոբը ուսուցանում է, թե ինչպես է Փրկչի Քավությունը ազատում մեզ Անկման ազդեցությունից և մեղքի հետևանքներից:*

Կիսվեք Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ խոսքերով.

«Ինչպես մարդը չի ցանկանում ուտել, քանի դեռ քաղցած չէ, այնպես էլ նա չի ցանկանում Քրիստոսի փրկությունը, քանի դեռ չգիտի, թե ինչու ունի Քրիստոսի կարիքը:

«Ոչ ոք պատշաճ և ճշգրիտ չգիտի, թե ինչու ունի Քրիստոսի կարիքը, քանի դեռ չի հասկանում և ընդունում Անկման վարդապետությունը և դրա ազդեցությունը ողջ մարդկության վրա: Եվ աշխարհում ոչ մի գիրք չի բացատրում այս կենսական վարդապետությունը այնքան լավ, որքան Մորմոնի Գիրքը» (“The Book of Mormon and the Doctrine and Covenants,” *Ensign,* May 1987, 85):

Խնդրեք ուսանողներին պատկերացնել, որ իրենց ընկերը հարցնում է. «Ինչո՞ւ է մեզ հարկավոր Փրկիչը»: Խնդրեք դասարանին պատրաստել այդ հարցի պատասխանը, հիմնվելով իրենց սովորածի վրա 2 Նեփի 9-ից: Նրանց խնդրեք պատասխանի համար վերանայել 2 Նեփի 9.7–10, 19–22: Ուսանողներին խնդրեք կիսվել իրենց պատասխաններով:

Օգնելու համար ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե ինչպես Հիսուս Քրիստոսը կարող է փրկել մեզ Անկման հետևանքներից, կարդացեք Նախագահ Ֆիլդինգ Սմիթի բերված անալոգիան 2 Նեփի 9.10–27 դասի նյութում, Մաս 6. Օր 3, ուսանողի ձեռնարկ: Կարող եք հրավիրել ուսանողներին գրատախտակին կամ թղթի վրա նկարել Նախագահ Սմիթի նկարագրածը: Դա անելու դեպքում, կարող եք հրավիրել ուսանողին նաև բացատրել իր նկարածը:

Ուսանողներին հրավիրեք մտածել, թե ինչ զգացմունքներ կունենային իրենց ընտրությունների պատճառով խորը հորի մեջ ընկած լինելու և Աստծուց բաժանված լինելու դեպքում: Բացատրեք, որ չլիներ Հիսուս Քրիստոսի Քավությունը, չէր լինի ապաշխարության հնարավորություն, չէր լինի հույս, և ոչ ոք չէր ազատվի մեղքի հետևանքներից:

Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ 2 Նեփի 9.21–23, և խնդրեք մի քանի ուսանողի բացատրել դա իրենց բառերով: Թեև նրանք կարող են տարբեր ձևով ասել, հետևեք, որ հետևյալ ճշմարտությունը հստակ լինի. **Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մենք կարող ենք հաղթահարել մեր մեղքերի հետևանքները:**

Բացատրեք, որ խմբով հավաքվելու մեծ առավելություններից է զգացմունքներով և վկայություններով կիսվելու հնարավորությունը: Խնդրեք ուսանողներին կիսվել իրենց զգացմունքներով և վկայություններով Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության վերաբերյալ: Եթե նրանք դժվարանում են կիսվել, խնդրեք նրանց կարդալ իրենց օրագրի գրառումները օր 3-ի համար, առաջադրանք 4: Կարող եք ավելացնել ձեր վկայությունը:

Դասարանին խնդրեք պատկերացնել, որ ինչ-որ մեկը հիվանդ է սաստիկ հիվանդությամբ: Ապա քննարկեք հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ է կարևոր, որ անձը հասկանա օգնություն հայցելու կարիքը:
- Ինչո՞ւ է կարևոր, որ անձը նաև հասկանա, թե ինչ է պետք անել օգնություն ստանալու համար:
- Ի՞նչ կլինի, եթե անձը հասկանա օգնության կարիքը, սակայն չիմանա, թե ինչպես կարող է ստանալ այն:

Հարցրեք ուսանողներին, թե արդյոք իրենք գիտեն, թե ինչ պետք է անեն Քավության օրհնութունները ստանալու համար: Հիշեցրեք նրանց, որ իրենք ուսումնասիրել են 2 Նեփի 9.23, 42–52 և գտել են այն գործողությունները և մոտեցումները, որոնք օգնում են մեզ գալ դեպի Քրիստոսը և հրավիրել Նրա քավող զոհաբերության զորությունը մեր կյանք: Խնդրեք նրանց վերանայել իրենց նշած սուրբ գրությունները և այն գործողությունների ցուցակը, որը կազմել են իրենց օրագրերում, որոնք տանում են մեզ դեպի Փրկիչը (օր 4, առաջադրանք 1): Հրավիրեք ուսանողներին պատմել, թե ինչպես են այդ գործողություններից և մոտեցումներից մեկը կամ մի քանիսը մոտեցրել իրենց Փրկչին: Կիսվեք ձեր վկայությամբ այն մասին, որ այդ տողերում ուսուցանված սկզբունքներին հետևելը կօգնեն մեզ ստանալ Քավության լրիվ օրհնությունները:

## 2 Նեփի 10

*Հակոբը խրախուսում է իր ժողովրդին ուրախանալ և գալ դեպի Տերը*

Ուսանողների հետ կարդացեք 2 Նեփի 10.23–24: Հիշեցրեք ուսանողներին, որ օր 3, առաջադրանք 6-ում իրենց խնդրվել էր որոշել կատարել որևէ բան, որը իրենց կհաշտեցներ Աստծո կամքի հետ: Խրախուսեք նրանց հետևել այդ հրավերին:

Խնդրեք ուսանողներին կիսվել լրացուցիչ ներշնչումներով, որոնք ունեցել են այս շաբաթվա գլուխները ուսումնասիրելիս: Եթե ժամանակը թույլ է տալիս, ավարտեք այս շաբաթվա դասը, երգելով «Ես մնում եմ զարմացած» կամ կարդալով միասին այդ օրհներգի բառերը (*Hymns,* no. 193), կամ մեկ այլ օրհներգ Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Կիսվեք Փրկչի մոտ գալու կարևորության և Քավության օրհնությունների իրականության մասին ձեր վկայությամբ:

## Հաջորդ Մաս (2 Նեփի 11–25)

Մինչ ուսանողները հաջորդ շաբաթ ուսումնասիրեն 2 Նեփի 11–25, նրանք կհասկանան Եսայիայի որոշ խոսքերը և թե ինչպես է նա տեսնում մեր օրը և նախազգուշացնում մեզ ըստ իր տեսածի: Նրա նախազգուշացումներից շատերը վերաբերում են մեր լրատվամիջոցներին, մեր հագուստին, մեր ապրելու ոճի և մեր վերաբերմունքներին: Խրախուսեք ուսանողներին կարդալ 2 Նեփի 11–25 և տեսնել ինչ կարող են ընկալել, եթե անգամ չեն հասկանում ամեն մի բառը:

ԴԱՍ 31

# 2 Նեփի 11 և 16

## Նախաբան

2 Նեփի 11-ում Նեփին արտահայտում է իր սերը Եսայիայի խոսքերի հանդեպ: Նա նաև վկայեց, որ Հակոբը և Եսայիան տեսել են «Քավիչին, ճիշտ ինչպես ես եմ տեսել նրան» (2 Նեփի 11.2): 2 Նեփի 16-ը պարունակում է Եսայիայի պատմությունը մեղքերից մաքրվելու և որպես մարգարե կանչվելու մասին, երբ նա «տեսավ . . . Տիրոջը՝ նստած գահի վրա» (տես 2 Նեփի 16.1, 5–8): Եվ Նեփին, և Հակոբը ուսուցանում էին Եսայիայի գրվածքները մեզ վերագրելու արժեքի մասին (տես 1 Նեփի 19.23; 2 Նեփի 6.5; 11.2), իսկ Տերը հայտարարել է՝ «Եսայիայի մեծ խոսքերը» (3 Նեփի 23.1): 2 Նեփի 11 պարունակում է Նեփիի բացատրությունը, թե ինչու է նա ընդգրկել Եսայիայի մարգարեությունները իր գրառումներում, և այդ բացատրությունը ներածություն է ծառայում Եսայիայի խոսքերի համար 2 Նեփի 12–24-ում: 2 Նեփի 25 ծառայում է որպես եզրափակում այս գլուխների համար, որոնք պարունակում են Նեփիի խորհուրդն այն մասին, թե ինչպես պետք է հասկանալ Եսայիայի խոսքերը (տես այս ձեռնարկի դաս 35):

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 11

*Նեփին արտահայտում է իր հիացմունքը, վկայելով, որ փրկությունը գալիս է Հիսուս Քրիստոսի միջոցով:*

Հրավիրեք երեք ուսանողի լուռ գրել մեկական նախադասություն այն մասին, թե ինչ է տեղի ունեցել անցած դասին: Թույլ մի տվեք նրանց համեմատել կամ քննարկել այն, ինչ գրում են: Մեկից ավելի վկա ունենալու առավելությունը ցուցադրելու համար խնդրեք երեք ուսանողների բարձրաձայն կարդալ իրենց նախադասությունները: Նրանից հետո, երբ առաջին ուսանողը կարդում է իր նախադասությունը, հարցրեք դասարանին, թե արդյոք դա լիարժեք ներկայացումն է նրա, ինչ տեղի է ունեցել անցած դասին: Այնուհետև խնդրեք երկրորդ ուսանողին կարդալ իր նախադասությունը, և հարցրեք, թե արդյոք դա լիարժեք ներկայացումն է նրա, ինչ տեղի է ունեցել անցած դասին: Երրորդ ուսանողի կարդալուց հետո, տվեք նույն հարցը:

- Ի՞նչ առավելություններ է տալիս մի քանի վկաներ ունենալը:

Բացատրեք, որ Տերը կանչում է մարգարեների՝ աշխարհի առաջ Իր վկաները լինելու համար: Խրախուսեք ուսանողներին մտածել, թե ինչ նշանակություն է ունեցել իրենց համար Հիսուս Քրիստոսի մասին մարգարեների վկայությունը լսելը:

Գրեք հետևյալ նախադասությունը գրատախտակին. ***Ուսումնասիրելով Հիսուս Քրիստոսի մասին մարգարեների վկայությունները, մենք կարող ենք ամրացնել Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատքը և ուրախանալ Նրանում:***

Հրավիրեք ուսանողներին կարդալ 2 Նեփի 11.2–3:

- Ըստ այդ հատվածների, ի՞նչ փորձառություն ունեցան Նեփին, Եսայիան և Հակոբը, որ թույլ տվեց նրանց լինել Հիսուս Քրիստոսի հատուկ վկաները:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր ունենալ Հիսուս Քրիստոսի մասին վկայություն տարբեր մարդկանցից: (Տես նաև Մոսիա 13.33–35:)

Հրավիրեք ուսանողներին արագ աչքի անցկացնել 2 Նեփի 11.4–6-ի յուրաքանչյուր հատվածի առաջին տողը, փնտրելով արտահայտություն, որը Նեփին կրկնում է յուրաքանչյուր հատվածում:

- Ի՞նչ է նշանակում «հրճվել» մի բանով: (Կարող եք բացատրել, որ *հրճվել* բառը նշանակում է ունենալ զգացում, որն ավելի խորն է, քան դուր գալը կամ հետաքրքրվելը: Այն նշանակում է ուրախություն կամ բավարարվածություն զգալ:)

Ուսանողներին խնդրեք մտքում կարդալ 2 Նեփի 11.4–7, առանձնացնելով այն, ինչով հրճվում էր Նեփին: Ապա բաժանեք դասարանը զույգերի: Ուսանողներին խնդրեք

***Եսայիան հասկանալը***

Ուսուցիչների և ուսանողների համար կարող է դժվար լինել հասկանալ Եսայիայի խոսքերը Մորմոնի Գրքում: Նախագահ Բոյդ Կ. Փաքերը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ընդունում է, որ Մորմոնի Գիրքն ուսումնասիրելիս այդ գլուխները կարող են խոչընդոտ թվալ: Բայց նա ասում է. «Մի դադարեք կարդալը: Առաջ գնացեք այդ դժվար հասկանալի գլուխների միջով, . . . եթե անգամ շատ քիչ եք հասկանում: Առաջ գնացեք, եթե անգամ միայն աչքի եք անցկացնում և պարզապես պատկերացում կազմում այս կամ այն հատվածից» (“The Things of My Soul,” *Ensign,* May 1986, 61):

կիսվել այն արտահայտություններով, որոնք առավել մեծ տպավորություն են գործել իրենց վրա, և բացատրել, թե ինչու: Նաև հրավիրեք նրանց պատմել, թե ինչ է իրենց հրճվանք պատճառում կամ ուրախացնում Հիսուս Քրիստոսի մասին:

Բարձրաձայն կարդացեք 2 Նեփի 11.8 և խնդրեք ուսանողներին գտնել պատճառը, որով Նեփին ներառել է Եսայիայի գրառումները իր հիշատակարանում:

- Ի՞նչ Նեփին հույս ուներ, որ իր ժողովուրդը և Մորմոնի Գրքի ապագա ընթերցողները կզգային, երբ կարդային Եսայիայի խոսքերը:

Հետևյալ ցանկը տալիս է մի քանի օրինակ, թե ինչու է Նեփին ներառել Եսայիայի գրվածքները իր հիշատակարանում.

1. Եսայիան տեսել էր Փրկչին, ինչպես Նեփին և Հակոբը (տես 2 Նեփի 11.2–3; տես նաև 2 Նեփի 16.1–5, որը ներառում է Փրկչի իր տեսիլքի Եսայիայի նկարագրությունը):
2. Նեփին հրճվում էր Քրիստոսի մասին վկայելով, իսկ Եսայիան նույնպես վկայել է Քրիստոսի մասին (տես 2 Նեփի 11.4, 6; տես նաև 2 Նեփի 17.14 և 19.6–7, Փրկչի մասին Եսայիայի մարգարեությունների երկու օրինակ):
3. Նեփին հրճվում էր Տիրոջ ուխտերով (տես 2 Նեփի 11.5): Եսայիայի մարգարեությունները վերաբերում են Տիրոջ հետ ուխտերին: Օրինակ, նա մարգարեացել է վերջին օրերի տաճարային աշխատանքի մասին (տես 2 Նեփի 12.1–3):

Բացատրեք, որ այս և հաջորդ երեք դասերում ուսանողները կուսումնասիրեն և կքննարկեն Եսայիայի խոսքերը 2 Նեփի 12–24-ում: Խրախուսեք նրանց գտնել այդ գլուխներում ճշմարտություններ, որոնք կամրացնեն իրենց վկայությունները Փրկչի մասին և կօգնեն հրճվել Նրանով: Խրախուսեք ուսանողներին կիսվել այս գլուխներից իրենց սիրված հատվածներով ընտանիքի անդամների և ընկերների հետ:

## 2 Նեփի 16

### *Եսայիան կանչվել է ծառայելու որպես մարգարե*

Բացատրեք, որ հաջորդ ուսումնասիրությունը կլինի 2 Նեփի 16, որովհետև այն պարունակում է Եսայիայի պատմությունը տեսիլքի մասին, որում նա կանչվել է լինելու մարգարե: Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այս տեսիլքը, բացատրեք, որ Եսայիայի գրվածքները խորհրդանշական լեզու են պարունակում: Սուրբ գրությունները հարուստ են խորհրդանիշներով, կերպարներով և փոխաբերական դարձվածքներով: Նշեք, որ նախորդ հատվածներից մեկում Նեփին ասաց. «Բոլոր բաները, որոնք աշխարհի սկզբից ի վեր, Աստծո կողմից, տրված են մարդուն, խորհրդանշումն են [Հիսուս Քրիստոսին]» (2 Նեփի 11.4): Խորհրդանիշների և կերպարների օգտագործումը մի եղանակ է, որով սուրբ գրությունները ուսուցանում են մեզ Տիրոջ փրկող առաքելության մասին:

Գրեք հետևյալ խոսքերը և արտահայտությունները գրատախտակին. *քղանցք, սերովբեներ (հրեշտակներ)՝ ամենքը վեց թևով, ծուխ, աստուխ:*

Ուսանողներին հարցրեք, թե ինչ մտքեր են իրենք ունենում, երբ տեսնում կամ լսում են այս խոսքերը: Կարճ քննարկումից հետո բացատրեք, որ Եսայիան օգտագործել է այս խոսքերը Աստծո մարգարե լինելու իր կոչման մասին իր պատմության մեջ: (Փորձեք օգնել ուսանողներին հասկանալ, թե ինչ ի նկատի ուներ Եսայիան: Ուշադիր եղեք, որպեսզի խորհրդանշական լեզվի իմաստները չափից դուրս չվերլուծեք: Փոխարենը, օգնեք ուսանողներին տեսնել, թե ինչպես է Եսայիայի ուղերձը կիրառվում իրենց կյանքում:)

Խնդրեք մի ուսանողի կարդալ 2 Նեփի 16.1: (Եթե ուսանողները հնարավորություն ունեն կարդալու Աստվածաշնչի Հակոբոս Թագավորի տարբերակի Վերջին Օրերի Սրբերի հրատարակությունը, խնդրեք նրանց կարդալ Եսայիա 6, որը պարունակում է էջատակի ծանուցումներ և ուսումնական օգնություն՝ այս դասի սուրբ գրությունների հատվածները ավելի լավ հասկանալու համար:)

Բացատրեք, որ այս հատվածում *քղանցք* բառը նշանակում է զգեստի կամ թիկնոցի փեշեր:

Մի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 16.2–3: Բացատրեք, որ «սերովբեները» հրեշտակներ են, որոնք բնակվում են Աստծո ներկայության մեջ (տես Bible Dictionary, “Seraphim”):

- Ի՞նչ կարող են ներկայացնել սերովբեի վեց թևերը։ (Կարող եք առաջարկել ուսանողներին հուշման համար կարդալ Վարդապետություն և Ուխտեր 77.4։ Թևերը խորհրդանշում են շարժվելու և գործելու զորությունը։)
- Ո՞ր խոսքերն են ցույց տալիս սերովբեի վերաբերմունքը Տիրոջ հանդեպ։
- Ե՞րբ եք դուք նման զգացում ունեցել Աստծո հանդեպ։

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 16.4 և Հայտնություն 15.8։ Դասարանին խնդրեք գտնել «լցվեց ծխով» արտահայտության նշանակությունը։ (Կարող եք օգնել ուսանողներին հասկանալ, որ ծուխը ներկայացնում է Տիրոջ ներկայությունը, զորությունը և փառքը։) Կարող եք առաջարկել ուսանողներին գրել Հայտնություն 15.8 իրենց սուրբ գրությունների լուսանցքում՝ 2 Նեփի 16.4-ի կողքին։

Մի ուսանողի հրավիրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 16.5։ Դասարանին խնդրեք գտնել արտահայտություններ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես էր Եսայիան զգում իրեն Տիրոջ ներկայության մեջ։ (Եթե առկա է Աստվածաշնչի Հակոբոս Թագավորի տարբերակի Վերջին Օրերի Սրբերի հրատարակությունը, խնդրեք ուսանողներին կարդալ Եսայիա 6.5, էջատակի ծանուցումներ *ա* և *բ*։

- Ձեր կարծիքով, ի՞նչ ի նկատի ուներ Եսայիան, ասելով. «Ես կործանված եմ. որովհետև ես անմաքուր շրթունքներով մի մարդ եմ»։ (Կարող եք բացատրել, որ Եսայիա 6.5-ում *կործանված* բառը թարգմանված է եբրայերեն բառից, որը նշանակում է «կտրված», իսկ *անմաքուր շրթունքներով* նշանակում է իր և մյուս մարդկանց մեղքերի Եսայիայի գիտակցումը։ Եսայիան փորձում էր ասել, որ անարժան է համարում իրեն լինելու Տիրոջ ներկայության մեջ։)

Ուսանողներին մի որպես տվեք մտածելու համար, թե ինչու էր Եսայիան այդպես զգում իրեն։ Բացատրեք, որ մի քանի մարգարե արտահայտվել են, թե ինչու են իրենց անհամապատասխան զգում, երբ ստանում են իրենց կոչումները։ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը պատմել է հեռախոսային զրույցի մասին, որի ժամանակ Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսերը՝ Առաջին Նախագահությունից, տեղեկացրեց իրեն, որ նա կանչվել է Տասներկուսի Քվորում.

«Օ, Եղբայր Քլարք։ Ոչ ե՞ս։ Դուք ի նկատի չունե՞ք ինձ։ Երևի սխալ է տեղի ունեցել։ Ես ձեզ, անշուշտ, ճիշտ չլսեցի»։ Աթոռին նստելու փոխարեն ընկա հատակին։ . . .

«Օ, Եղբայր Քլարկ։ Դա անհնարին է թվում։ Ես այնքան թույլ և փոքր, սահմանափակ և անընդունակ եմ» (Edward L. Kimball and Andrew E. Kimball Jr., *Spencer W. Kimball: Twelfth President of The Church of Jesus Christ of Latter-day Saints* [1977], 189)։

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ Եսայիան, արդար մի մարդ, զգում էր իրեն «կործանված» և «անմաքուր» Տիրոջ ներկայության մեջ։ Մեզանից ո՞վ իրեն անարժան չէր զգա Աստծա առաջ կանգնելով։

Գրեք հետևյալ ճշմարտությունը գրատախտակին. ***Մենք կարող ենք մաքրվել մեր անարժանությունից Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով։***

Եթե հնարավոր է, ցույց տվեք ուսանողներին ածխի կամ վառված փայտի մի կտոր։ Հարցրեք նրանց, թե ինչպիսին այն կլիներ, եթե հենց նոր հանվեր կրակի միջից։

- Ի՞նչ կպատահի, եթե դիպչենք թեժ ածխին։

Բարձրաձայն կարդացեք 2 Նեփի 16.6–7։ Խնդրեք ուսանողներին ձեզ հետ միասին մտքում կարդալ, ուշադրություն դարձելով վառվող ածխի հետ Եսայիայի փորձառությանը։

- Համաձայն 2 Նեփի 16.7-ի, ի՞նչ է նշանակում, երբ հրեշտակը խորհրդանշորեն դիպչում է Եսայիայի շուրթերին բոցավառվող ածխով։ (Կարող եք բացատրել, որ վառվող ածուխը մաքրման խորհրդանիշ է։ Երբ հրեշտակը Եսայիայի տեսլիքում դիպչում է նրա շուրթերին վառվող ածխով, դա նշանակում է, որ Տերը մաքրում է Եսայիային նրա անարժանությունից և ներում է նրա մեղքերը։)

Ուսանողներին մի քանի որպես տրամարդեք մտածելու համար այն պահերի մասին, երբ զգացել են Հիսուս Քրիստոսի Քավության մաքրող զորությունը։

Ուսանողներին հրավիրեք մտքում կարդալ 2 Նեփի 16.8–13։ Մի ուսանողի հրավիրեք ամփոփել այն, ինչ Տերն ասաց մարդկանց մեջ Եսայիայի ծառայության մասին։ (Կարող եք բացատրել, որ Տերը խորհուրդ տվեց Եսայիային, որ թեև նրա քարոզումը ըմբոստ իսրայելցիների կողմից չի ընդունվի, նա պետք է շարունակի քարոզել մինչև «երկիրը լիովին ամայի լինի»։ Այլ խոսքերով, Տերը մեծահոգաբար կշարունակի փրկության Իր առաքելությունը Իր ծառաների միջոցով «քանի դեռ ժամանակը

կտևի, կամ երկիրը կանգուն կլինի, կամ նրա երեսին մեկ մարդ կլինի փրկվելու» [Մորոնի 7.36]:)

Բացատրեք, որ Եսայիան դարձավ Տեր Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի զորեղ վկան: Վկայեք, որ Փրկիչը իրական է և կարող է ներել մեր մեղքերը, և որ Քավության զորությունը մեր կյանքում զգալու շնորհիվ մենք նույնպես կարող ենք լինել Փրկչի վկաները:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 2 Նեփի 16.2–3: Ունե՞ն հրեշտակները թևեր:

«Աստծո հրեշտակը երբեք թևեր չունի» (Joseph Smith, in History of the Church, 3:392): Այդ դեպքում, ինչո՞ւ է Եսայիան նկարագրում հրեշտակներին թևերով: Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին բացատրել է, որ նկարագրությունը խորհրդանշական է. «Այն փաստը, որ այդ սուրբ էակները ցույց են տրվել նրան թևերով, պարզապես խորհրդանշում է «շարժվելու, գործելու նրանց զորությունը», ինչպես տեսիլքներում, որ ուրիշներն են ունեցել» (ՎևՈւ 77.4): (*Mormon Doctrine,* 2nd ed. [1966], 703).

ԴԱՍ 32

# 2 Նեփի 12–15

## Նախաբան

Եսայիան դատապարտում էր իր օրերի մարդկանց ամբարշտությունը, ինչպես նաև շատերի ամբարշտությունը վերջին օրերին: Նա նախազգուշացնում էր չարը բարի անվանելու և բարին չար անվանելու դեմ: Նա նաև շեշտում էր վերջին օրերին ավետարանի Վերականգնումը, ներառյալ՝ տաճարի նշանակությունը և աշխարհի մեղքերից մաքուր լինելու կարևորությունը: Եսայիայի մասին լրացուցիչ տեղեկության համար տես այս ձեռնարկի դաս 21-ը:

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 12-15

*Եսայիան տարբերակում է մտցնում ամբարիշտ և արդար իսրայելցիների միջև*

Օգնելու համար ուսանողներին հասկանալ այսօրվա դասի ենթատեքստը, սկսեք դասը, հիշեցնելով նրանց, որ նախորդ դասին նրանք սովորեցին մարգարե լինելու Եսայիայի կոչի մասին: Այսօր նրանք կսովորեն այն մարդկանց մասին, որ նա ուսուցանում էր:

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ երբ Եսայիան նկարագրում էր Տիրոջ ուխտյալ ժողովրդի գործերը իր օրերում, նա նկարագրում էր նաև մեր օրերի մարդկանց: Երեց Դալլին Հ. Օուքսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է. «Եսայիայի գիրքը պարունակում է բազմաթիվ մարգարեություններ, որոնք, կարծես, բազմակի իրականացումներ ունեն: . . . Այն փաստը, որ այդ մարգարեություններից շատերը կարող են տարբեր նշանակություններ ունենալ, շեշտում է նրա կարևորությունը, որ մենք պետք է փնտրենք Սուրբ Հոգու հայտնությունը՝ դրանք մեկնաբանելու համար» (“Scripture Reading and Revelation,” *Ensign,* Jan. 1995, 8):

Դասից առաջ արտանկարեք հետևյալ աղյուսակը գրատախտակին կամ պատրաստեք այն որպես աշխատանքային թերթիկներ: Յուրաքանչյուր սյունակում գրելու բավարար տեղ թողեք ուսանողների համար:

| | 2 Նեփի 12.5–12, 17–19; 13.8–9 | 2 Նեփի 13.16–26 |
|---|---|---|
| Ի՞նչ վարվելաձև և սովորույթներ են արտահայտում այդ մարդկանց մեղքերը: | | |
| Ի՞նչ կպատահի այդ մարդկանց իրենց մեղքերի արդյունքում: | | |

Բացատրեք, որ այս աղյուսակը կօգնի դասարանին քննել մարդկանց գործողությունների հետևանքները, ովքեր ապրել են իրենց ուխտերին հակառակ:

Դասարանը բաժանեք երկու մասի: Ուսանողների մեկ խմբին խնդրեք ուսումնասիրել 2 Նեփի 12.5–12, 17–19; 13.8–9: Մյուս խմբին խնդրեք ուսումնասիրել 2 Նեփի 13.16–26: Ուսանողներին խնդրեք կարդալ իրենց հանձնարարված տողերը և գտնել աղյուսակի ձախ սյունակի երկու հարցերի պատասխանները: Եթե աղյուսակը գրատախտակի վրա է, յուրաքանչյուր խմբից մեկական ուսանողի խնդրեք գրել իրենց պատասխանները համապատասխան սյունակում: Եթե աղյուսակը պատկերված է թերթիկների վրա, խնդրեք ուսանողներին գրել իրենց պատասխանները իրենց թերթիկների վրա:

Երկրորդ խմբին բացատրեք, որ Եսայիան կանխատեսել է իր օրերի և ապագայի աշխարհիկ կանանց արտասովոր հագուստների և պահելաձևի հետևանքները:

***Պահել ուսանողների ուշադրությունը***

Հետևյալ առաջարկությունները կարող են օգնել ձեզ պահել ուսանողների ուշադրությունը դասարանում. (1) Օգնեք ուսանողներին տեսնել, թե ինչպես է դասը կիրառվում իրենց կյանքում: (2) Փոփոխեք ձեր ձայնի տոնայնությունը ուսուցանելու ընթացքում: (3) Նայեք ուսանողների աչքերի մեջ: (4) Եթե հնարավոր է, ուսուցանելիս շրջեք դասասենյակով:

2 Նեփի 13.16–26 նկարագրում է նրա տեսածը: Թեև Եսայիան հատուկ խոսում էր «Սիոնի դուստրերի» մասին, նրա խոսքերը վերաբերում են նաև տղամարդկանց: (Կարող եք նշել, որ 2 Նեփի 14.1-ի մարգարեությունը բազմամուսնության մասին չէ: Այն պատերազմում զոհվող տղամարդկանց մասին է, որը նկարագրվում է 2 Նեփի 13.25–26-ում, որի հետևանքով շատ կանայք այրիանում էին:)

Երբ ուսանողները բավական ժամանակ ունեցան պատասխանելու աղյուսակի հարցերին, հարցրեք.

- Ի՞նչ մեղքեր էին կատարել այդ մարդիկ: (Հնարավոր պատասխաններ. Հպարտություն, կռապաշտություն, աշխարհիկություն և վատնում:) Ի՞նչ արտահայտություններ են նշում, որ մարդիկ գործել են այդ մեղքերը: Որո՞նք են այդ մեղքերի հետևանքները:
- Եսայիան խոսում էր երկրի մասին, որը «լի էր կուռքերով» (2 Նեփի 12.8): Որո՞նք են կռապաշտության ձևերն այսօր:

Այս քննարկման կազմում կարդացեք հետևյալ խորհուրդը Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալից.

«Ժամանակակից կուռքերը կամ կեղծ աստվածները կարող են այնպիսի տեսք ընդունել, ինչպիսին են՝ հագուստը, տները, բիզնեսները, մեքենաները, սարքերը, զվարճության նավերը և բազմաթիվ այլ նյութական արժեքներ, որոնք շեղում են աստվածային ուղուց: . . . Շատ երիտասարդ տղամարդիկ որոշում են հաճախել քոլեջ, երբ պետք է ծառայեն միսիայում: Աստիճանը, հարստությունը և ապահովությունը, որը գալիս է դրա արդյունքում, կարծես, այնքան ցանկալի է, որ միսիան հայտնվում է երկրորդ տեղում: . . . Շատերը երկրպագում են որսորդությունը, ձկնորսությունը, արձակուրդը, հանգստյան օրերի ճաշկերույթները և բնության գրկում զվարճանալը: Մյուսները որպես կուռքեր են ընտրում սպորտային խաղերը, բեյսբոլը, ֆուտբոլը, գլամարտը կամ գոլֆը: . . . Երկրպագության մեկ այլ ձև է տղամարդկանց համար ուժը և համբավը» (*The Miracle of Forgiveness* [1969], 40–41):

- Եսայիան մարգարեանում էր մարդկանց մասին, որոնք արտահայտում են իրենց հպարտությունը և աշխարհիկությունը իրենց հագնվելու ձևով: Ինչպե՞ս մենք կարող ենք զերծ մնալ աշխարհիկ վարվելաձևից և միտումներից:

Գրատախտակին գրեք *Վայ:* Բացատրեք, որ *վայ* բառը արտահայտում է վիշտ և տառապանք: Հնադարյան մարգարեները երբեմն օգտագործում էին այս խոսքը՝ շեշտելու համար մեղքի հետևանքները: (Ուսանողները, հավանաբար, կհիշեն այդ բառը, որը մի քանի անգամ կրկնվել է 2 Նեփի 9.27–38-ում:) Խնդրեք ուսանողներին լսել, իսկ դուք բարձրաձայն կարդացեք 2 Նեփի 15.18–23 : (Կարող եք խրախուսել ուսանողներին նշել *վայ* բառը և արտահայտությունները, որոնք նկարագրում են վիշտ և տառապանք առաջացնող գործողությունները և պահվածքը: Կարող եք նաև առաջարկել, որ նրանք գրեն *վայ* բառի սահմանումը այդ տողերի դիմաց՝լուսանցքում:)

- Ի՞նչ է ձեզ համար նշանակում 2 Նեփի 15.20:
- Ինչպե՞ս եք տեսնում, որ մարդիկ կոչում են չարը բարի, իսկ բարին չար՝ մեր օրերում:

Ասացեք ուսանողներին, որ այժմ նրանք կկարդան մի խումբ մարդկանց մասին, որոնք պահում էին իրենց ուխտերը: Մի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 14.2–4: Դասարանի մնացած մասին խնդրեք գտնել մարդկանց այս խմբի Եսայիայի նկարագրությունը:

- Ի՞նչ խոսքեր կամ արտահայտություններ են ցույց տալիս, որ մարդկանց այս խումբը տարբերվում է այն խմբերից, որոնք մենք ուսումնասիրել ենք: (Կարող եք գրել ուսանողների պատասխանները գրատախտակին:)

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 14.5–6 և գտնել, թե ինչ երեք տեղեր են, ըստ Եսայիայի, տալիս հոգևոր պաշտպանություն: Հետևեք, որ ուսանողները գտնեն և հասկանան *բնակատեղ* (տուն), *ժողովներ* (հավաքման տեղեր, օրինակ՝ ճյուղեր, ծխեր կամ ցցեր), և *տաղավար* (տաճար) բառերը: Բացատրեք, որ «ամպ և մեգ ցերեկով, և բոցավառ կրակի փայլ գիշերով» նշանակում է պաշտպանություն և առաջնորդություն, որը Մովսեսը և նրա ժողովուրդը ստացան Տիրոջից անապատում (տես Ելից 13.21–22): Այս խոսքերը մեզ հիշեցնում են այն պաշտպանության և առաջնորդության մասին, որը մենք կարող ենք ստանալ Տիրոջից: Նաև նշեք, որ Եսայիան նմանեցնում էր տաճարը պաշտպանող հովանու՝ շոգից, և ապաստարանի և ծածկի՝ մրրիկից և անձրևից:



- Ե՞րբ եք զգացել Տիրոջ պաշտպանությունը կամ առաջնորդությունը ձեր տանը կամ եկեղեցում:
- Ե՞րբ եք գտել հոգևոր հանգստություն կամ պաշտպանություն տաճարում:
- Ի՞նչ տեսակի մարդիկ կբնակվեն տներում և կերկրպագեն եկեղեցիներում և տաճարներում, որ նկարագրված են հատվածներ 5–6-ում:
- Ի՞նչ մենք կարող ենք անել մեր տները և ճյուղերը կամ ծխերը աշխարհից պաշտպանող վայրեր դարձնելու համար:

Ամփոփեք 12–15 գլուխները, բացատրելով, որ այս գլուխներում մենք սովորում ենք, որ **պատվիրաններ պահելը հոգևոր պաշտպանության օրհնություններ է բերում, մինչ ուխտերը խախտելը զրկում է մեզ Տիրոջ պաշտպանությունից:** Հավաստիացրեք ուսանողներին, որ իրենք կարող են իրենց կյանքում ստեղծել այնպիսի միջավայր, ինչպիսին նկարագրվում է 2 Նեփի 14.5–6-ում:

## 2 Նեփի 12.1–5; 15.26

*Եսայիան մարգարեանում է տաճարների և Տիրոջ Եկեղեցու մասին, որոնք պետք է հիմնվեին վերջին օրերին:*

Նկարեք գրատախտակին սար և տաճար պատկերող հետևյալ սխեման.

- Ինչո՞վ են նման սարը և տաճարը: (Հնարավոր պատասխաններ. Երկուսն էլ ազնվազարմ և հրաշագեղ են, և ոգեշնչում են մեզ նայել դեպի երկինք:)

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 12.2–5, ուշադրություն դարձնելով նրա վրա, թե ինչ Աստված խոստացավ հիմնել վերջին օրերին և ինչպես դա պետք է օրհնի մարդկանց կյանքերը:

- Ի՞նչ է նշանակում «Տիրոջ սար» արտահայտությունը: (Դա վերաբերում է Սոլթ Լեյքի Տաճարին, սակայն կարող է վերաբերել ցանկացած այլ տաճարի, որը Տերը հիմնել է վերջին օրերին:)
- Ի՞նչ օրհնություններ են գալիս «Տիրոջ տնից» վերջին օրերին: (Ուսանողները կարող են գտնել սկզբունքներից մեկը՝ **Աստված հիմնում է տաճարներ՝ մեզ Իր ճանապարհները ուսուցանելու և օգնելու համար քայլել Իր շավիղներով** [տես 2 Նեփի 12.3]:)
- Ինչպե՞ս են տաճարները օգնում մեզ քայլել Տիրոջ շավիղներով:

Կարդացեք հետևյալ հայտարարությունը, որտեղ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին խոսում է տաճարների նշանակության մասին.

«Այս յուրահատուկ և սքանչելի շենքերը, և այնտեղ կատարվող արարողությունները ներկայացնում են մեր երկրպագության գագաթնակետը: Այդ արարողությունները դառնում են մեր կրոնաբանության առավել խոր արտահայտումները: Ես հորդորում եմ մեր մարդկանց ամենուրեք, ողջ համոզվածությամբ, որին ընդունակ եմ, ապրել արժանի կրելու տաճարային երաշխավորագիր, պահպանել այն և համարել արժեքավոր ունեցվածք, և էլ ավելի մեծ ջանք գործադրել գնալու Տիրոջ տուն և ճաշակելու այնտեղի հոգին և օրհնությունները» (“Of Missions, Temples, and Stewardship,” *Ensign,* Nov. 1995, 53):

- Ինչպե՞ս կարող են տաճարները օգնել մեզ խուսափել2 Նեփի 12–15-ում նկարագրված ամբարշտության հետևանքներից: (Հնարավոր պատասխաններ. Տաճարային ուխտեր կապելը և պահելը ամրացնում է մեզ և մեր ընտանիքներին և պաշտպանում ամբարշտությունից: Կանոնավոր տաճարային երկրպագությունը հիշեցնում է մեզ Փրկչի, Նրա քավող զոհաբերության և մեր կապած ուխտերի մասին: Եթե մենք արժանի ենք ապրում տաճարային երաշխավորագիր կրելու

համար, մենք հավերժական կյանքի օրհնությունների հույս ենք ունենում: Այդ հույսը խրախուսում է մեզ արդար ապրել:)

- Ինչպե՞ս է տաճարը ոգեշնչել և օրհնել ձեզ:

Մի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 15.26: Դասարանին խնդրեք գտնել արտահայտությունը, որը նշում է, որ Տերը «դրոշակ կբարձրացնի» վերջին օրերին մարդկանց հավաքելու համար: Բացատրեք, որ *դրոշակ* բառը նշանակում է նշան, դրոշ կամ ցուցանակ, որն ազդարարում է եզրագծի ավարտը և ծառայում է նշան հավաքվելու համար, հատկապես ճակատամարտի ժամանակ:

- Ի՞նչ է «ազգերի դրոշակը», որի մասին մարգարեանում է Եսայիան:

Կարդացեք Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի հետևյալ խոսքերը.

«Այդ դրոշակը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին է, որը բարձրացվել է վերջին անգամ, որ այլևս երբեք չկործանվի կամ տրվի այլ մարդկանց: Դա ամենամեծ իրադարձությունն է այն օրից ի վեր, երբ Քավիչը բարձրացվեց խաչի վրա և իրականացրեց անսահման և հավերժական քավությունը: Այն ավելի մեծ նշանակություն ունի մարդկության համար, քան որևէ այլ իրադարձություն, որ կատարվել է այդ օրից ի վեր» (*Doctrines of Salvation,* 3 vols. [1954–56], 3:254–55):

- Ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին «դրոշակ ազգերի» համար:
- Ի՞նչ օրհնություններ են գալիս ձեր կյանք Եկեղեցում ձեր անդամության արդյունքում:
- Մտածեք բոլոր օրհնությունների մասին, որոնք դուք ստացել եք, և ճշմարտությունների մասին, որոնք սովորել եք որպես Եկեղեցու անդամ: Ի՞նչ ճշմարտություն դուք կարող եք կիսել մյուսների համար, որը կօգնի նրանց հավաքվել «ազգերի դրոշակի» ներքո:

Վկայեք, որ Տերը օրհնում է մեզ մեծ օգնությամբ, որ հաջողակ ապրենք վերջին օրերին: Նա կօրհնի և կսրբագործի նրանց, ովքեր ընտրել են գալ Իր մոտ: Եթե մենք կապենք և պատվենք Նրա հետ ուխտերը, Նա կօգնի մեզ քայլել Իր ուղիներով:

ԴԱՍ 33

# 2 Նեփի 17–20

## Նախաբան

2 Նեփի 17–20-ում Նեփի գրում է Եսայիայի մասին, որը փորձում է համոզել Հուդայի թագավորին և նրա ժողովրդին ապավինել Տիրոջը, ոչ թե աշխարհիկ խմբակցություններին: Կերպարներ և ստվերներ օգտագործելով, Եսայիան մարգարեացավ իր օրերի իրադարձությունների, Հիսուս Քրիստոսի ծննդի և Տիրոջ Երկրորդ Գալստի ժամանակ ամբարիշտների կործանման մասին:

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 17–18; 19.1–7

*Հուդայի թագավորության ժողովուրդը չէին ապավինում Հիսուս Քրիստոսին:*

Սկսեք դասը, խնդրելով ուսանողներին թվարկել Հիսուս Քրիստոսի տարբեր նկարագրական տիտղոսները: Պատասխանները գրեք գրատախտակին: Ապա հրավիրեք նրանց կարդալ 2 Նեփի 17.14: Ավելացրեք *Էմմանուել* տիտղոսը գրատախտակի ցանկին, կամ շրջանի մեջ այն առեք, եթե արդեն գրված է: Խնդրեք ուսանողներին գտնել այդ անվան իմաստը Մատթեոս 1.23-ում կամ Աստվածաշնչի Բառարանում:

- Ի՞նչ է նշանակում *Էմմանուել* տիտղոսը («Աստված մեզ հետ է»):

Շեշտեք, որ Էմմանուելի մասին Եսայիայի մարգարեության ամենակարևոր իմաստը գտնվում է Մատթեոս 1.18–25-ում: Մի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ այդ հատվածը:

- Ինչպե՞ս իրականացավ Եսայիայի մարգարեությունը Էմմանուելի մասին:
- Ե՞րբ եք ձեր կյանքում տեսել որպես Էմմանուել՝ Տիրոջ իրականությունը, կամ «Աստված մեզ հետ է» արտահայտության իրականությունը:

Բացատրեք, որ 2 Նեփի 19.6–7-ը Փրկչի մասին առավել հայտնի մարգարեություններից մեկն է: Բարձրաձայն կարդացեք հատվածը: Նշեք, որ այս հատվածը պարունակում է Հիսուս Քրիստոսի մի քանի տիտղոսներ: (Եթե դրանք գրված չեն գրատախտակին, ավելացրեք ցանկին:)

- Այդ տիտղոսներից որո՞նք են լավագույն ձևով նկարագրում այն, ինչ դուք զգում եք Փրկչի հանդեպ: Ինչո՞ւ:

Դասի մնացած մասը ուսուցանելուց առաջ ուսանողներին ծանոթացրեք 2 Նեփի 17–18-ի պատմական միջավայրին: Բացատրեք, որ այս գլուխները հաճախ հղում են կատարում երեք փոքր ազգերին՝ Հուդային, Իսրայելին և Ասորիքին, ինչպես նաև Ասորեստանին, որը տենչում էր զավթել երեք ազգերին: Եթե ուսանողները ունեն հնարավորություն ուսումնասիրելու Աստվածաշնչի Վերջին Օրերի հրատարակությունը, կարող եք խնդրել նրանց ուսումնասիրել 1, 3 և 5 քարտեզները, որոնք ցույց են տալիս այս գլուխներում նշված աշխարհագրական տարածքները: Կարող եք նաև օգնել ուսանողներին հասկանալ այդ գլուխների ենթատեքստը, ցույց տալով հետևյալ սխեման (վերցված է՝ Victor L. Ludlow, *Isaiah: Prophet, Seer, and Poet* [1982], 140): Դասի ընթացքում անհրաժեշտության դեպքում օգտվեք դրանից:

| **Երկիր** | Հուդա | Ասորիք | Իսրայել |
|---|---|---|---|
| **Մայրաքաղաք** | Երուսաղեմ | Դամասկոս | Սամարիա |
| **Տարածք կամ հիմնական ցեղ** | Հուդա | Արամ | Եփրեմ |
| **Առաջնորդ** | Աքազ (թագավոր), Դավթի տնից | Ռասին (թագավոր) | Փակեե (թագավոր), Ռովմելայի որդի |

Գրատախտակին գրեք *դաշնակցություն*։

- Ի՞նչ է դաշնակցությունը։ (Հնարավոր պատասխաններ. միասնություն, միություն, դաշինք կամ համաձայնություն։)
- Ի՞նչ պատճառներով կարող է մեկ ազգը դաշնակցություն փնտրել այլ ազգերի հետ։

Բացատրեք, որ Եսայիա մարգարեի ծառայության ժամանակ Հուդայի թագավորությունում, Իսրայելի և Ասորիքի թագավորները ուզում էին, որ Հուդայի թագավոր Աքազը դաշնակցության մեջ մտնի իրենց հետ՝ հզոր Ասորեստանի դեմ։ Երբ Աքազ թագավորը հրաժարվեց, Իսրայելը և Ասորիքը հարձակվեցին Հուդայի վրա, փորձ անելով ճնշում գործադրել այդ դաշինքի վրա և մեկ այլ թագավոր դնել Հուդայի գահին (տես 2 Նեփի 17.1, 6)։ 2 Նեփի 17–18 նկարագրում է խորհուրդը, որը տվեց Եսայիա մարգարեն Աքազ թագավորին, երբ թագավորը մտածում էր, թե ինչպես պաշտպաներ Հուդան Իսրայելի, Ասորիքի և Ասորեստանի հարձակումներից։

Մի ուսանողի խնդրեք կարդալ 2 Նեփի 17.1–2։

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում՝ Աքազի «սիրտը դողաց և նրա ժողովրդի սիրտը, ինչպես անտառի ծառերը դողում են քամուց»։ (Աքազը և նրա ժողովուրդը վախեցած էին և չգիտեին ինչ անեին Իսրայելի և Ասորիքի հարձակումից հետո։)

Բացատրեք, որ քանի որ Աքազը վախենում էր Իսրայելից և Ասորիքից, նա որոշեց դաշնակցության մեջ մտնել Ասորեստանի հետ՝ իր թագավորությունը պաշտպանելու համար (տես Դ Թագավորաց 16.7)։ Եսայիան ասաց Աքազին, որ եթե (Աքազը) հավատք գործադրեր Տիրոջ հանդեպ՝ քաղաքական դաշնակցություններ կազմելու փոխարեն, Տերը կպաշտպաներ Հուդայի թագավորությունը։

Մի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 17.3–8։ Բացատրեք, որ *ծխացող խանձողներ* արտահայտությունը նշանակում է վառված և հանգած ճրագներ։ Տերը, փաստորեն, ասում էր. «Տագնապի մի մատնվեք հարձակումից։ Այդ երկու թագավորների մոտ քիչ կրակ է մնացել»։ Իսրայելը և Ասորիքը սպառել էին իրենց ուժերը։ Նրանք շուտով պետք է կործանվեին Ասորեստանի կողմից և այլևս վտանգ չէին ներկայացնում Հուդայի համար։)

Մի քանի ուսանողների խնդրեք բարձրաձայն հերթով կարդալ 2 Նեփի 17.9, 17–25-ից։ Մինչ նրանք կարդան, խնդրեք դասարանին գտնել, թե ինչ Տերը հայտնեց, որ պետք է պատահեր Հուդայի ժողովրդի հետ, եթե նրանք Տիրոջն ապավինելու փոխարեն ապավինեին քաղաքական դաշնակցություններին։

- Համաձայն այդ տողերի, ի՞նչ կպատահեր, եթե Աքազը չապավիներ Տիրոջը։ (Հուդան կկործանվեր։)

Մի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 17.10–12։ (Կարող եք բացատրել, որ երբ Եսայիան խորհուրդ տվեց Աքազին նշան խնդրել, նա, փաստորեն, կոչ էր անում Աքազին փնտրել Տիրոջ խորհուրդը այդ խնդրի լուծման համար։ Երբ Աքազը հրաժարվեց, ասաց, որ ինքն Աստծո օգնության կարիքը չուներ և պատրաստվում էր ապավինել իր դատողությանը։)

Մի ուսանողի խնդրեք կարդալ 2 Նեփի 17.13–14։ Խնդրեք ուսանողներին կրկին ուշադրություն դարձնել *Էմմանուել* բառի վրա 2 Նեփի 17.14-ում և դրա՝ «Աստված մեզ հետ է» իմաստի վրա։

- Ինչո՞ւ էր կարևոր Աքազի համար, որ նա ցանկանար, որ Աստված իր հետ լիներ իր ազգի ճգնաժամի ժամանակ։
- Ինչո՞ւ է կարևոր, որ մենք շրջվենք դեպի Տերը, ոչ թե ապավինենք միայն մեր իմաստությանը։

Ուսանողների համար բարձրաձայն կարդացեք 2 Նեփի 18.5–8։ Երբ կարդաք հատված 6-ը, բացատրեք, որ *Միլովա* բառը երբեմն վերաբերում է Հիսուս Քրիստոսին։ Երբ կարդաք հատված 8-ը, բացատրեք «կհասնի նույնիսկ մինչև նրա պարանոցը» արտահայտությունը, նշելով, որ Հուդայի գլուխը՝ մայրաքաղաքը, Երուսաղեմն էր։ Եսայիան մարգարեացավ, որ Ասորեստանը պետք է հասներ մինչև Երուսաղեմի պատերը, կամ այլ խոսքերով, քաղաքի պարանոցին։ Այդ մարգարեությունը իրականացավ, երբ 185000 ասորի զինվորներ հարձակում գործեցին Երուսաղեմի վրա, կանգ առնելով քաղաքի պատերի մոտ։ Տերը պաշտպանեց Իր ժողովրդին, ուղարկելով հրեշտակ՝ հարձակվող բանակին ոչնչացնելու համար։ (տես Դ Թագավորաց 19.32–35։)

Ուսանողներին խնդրեք մտքում կարդալ 2 Նեփի 18.9–10, փնտրելով Տիրոջ նախազգուշացումը նրանց, ովքեր միասին կռվելու էին Հուդայի դեմ:

- Ինչպիսի՞ն կլինեին հետևանքները նրանց համար, ովքեր կկռվեին Հուդայի դեմ:
- Համաձայն 2 Նեփի 18.10, ինչո՞ւ այդ ազգերը պետք է ոչնչացվեն:

Հիշեցրեք ուսանողներին, որ Աքազ Թագավորը վախենալով Իսրայելից և Ասորիքից, մտածում էր միացնել իր ուժերը Ասորեստանի հետ: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 18.11–13:

- Ի՞նչ ասաց Տերը այն մասին, թե արդյոք պետք է Հուդան միավորվեր Ասորեստանի հետ:
- Ըստ Եսայիայի խոսքերի, ո՞ւմ պետք է ապավինեին մարդիկ:

Օգնելու համար ուսանողներին կիրառել այդ գլուխները իրենց կյանքում, հարցրեք.

- Որո՞նք են վտանգները, որ գալիս են մեր վստահությունը ոչ թե Տիրոջ, այլ աշխարհիկ ուժերի և ազդեցությունների վրա դնելու արդյունքում: (Խրախուսեք ուսանողներին մտածել իրավիճակների մասին, որոնք կարող են գայթակղել նրանց որոշումներ կայացնել վախից ելնելով:)
- Ե՞րբ եք դուք դիմել Աստծո զորությանը նրանից հետո, երբ սկզբում գայթակղվել եք դիմել այլ աղբյուրներին: Ինչպե՞ս է Աստված օգնել ձեզ: Ի՞նչ եք դուք սովորել ձեր փորձառությունից:

Վկայեք, որ **Աստված կլինի մեզ հետ, եթե մենք ապավինենք Իրեն, անգամ դժվար և վախեցած պահերին:** (Կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին:)

## 2 Նեփի 19.8–21; 20.1–22

### *Եսայիան նկարագրում է ամբարիշտների կործանումը Երկրորդ Գալստի ժամանակ*

Ամփոփեք 2 Նեփի 19–20-ի պատմական ենթատեքստը, բացատրելով, որ Աքազը մերժեց Եսայիայի խորհուրդը և ընտրեց դաշնակցությունը Ասորեստանի հետ (տես Դ Թագավորաց 16.7–20): Հուդան դարձավ ենթակա երկիր, ընդունելով Ասորեստանի զորությունը Ասորիքի և Իսրայելի դեմ պաշտպանության հարցում: Ինչպես մարգարեացել էր Եսայիան, Ասորեստանը, ի վերջո, զավթեց այդ փոքր թագավորությունները՝ Դամասկոսը (Ասորիք) Ք.ա. 732թ. և Սամարիան (Իսրայել) Ք.ա. 722թ.: Ասորեստանը նաև կառավարում էր ամբողջ Հուդային, բացի Երուսաղեմը, մինչև Ք.ա. 701թ.:

Բացատրեք, որ երբ Ասորեստանը զավթեց Ասորիքին և Իսրայելին և շրջափակեց Հուդայի մայրաքաղաք Երուսաղեմը, Աքազը այլևս Հուդայի թագավորը չէր: Այդ ժամանակ գահին էր արդար թագավոր Հեզեկիան: Քանի որ նա ապավինել էր Տիրոջը, Տերը պաշտպանեց Երուսաղեմ քաղաքը Ասորեստանի բանակից: Գիշերը Տիրոջ հրեշտակը ոչնչացրեց Ասորեստանցիների ճամբարը: Առավոտյան Ասորեստանցիների 185000 զինվոր սպանված էին (տես Բ Թագավորաց 19.34–35; Բ Թվոց 32.21; Եսայիա 37.36):

Եսայիայի մարգարեությունները 2 Նեփի 19–20-ում կենտրոնանում են պատիժների վրա, որոնք գալիս են Իսրայելի և Հուդայի վրա Ասորեստանի ձեռքով: Եսայիան նախազգուշացնում է Իսրայելին, որ շուտով կործանում և գերություն կլինի, և կանխատեսում է հետագա հարձակումը Հուդայի վրա: Մեսիայի մարգարեությունները 2 Նեփի 17–18-ում շարունակվում են զարգանալ 2 Նեփի 19–20-ում: Էմմանուելի մարգարեությունը 2 Նեփի 19-ում ուժեղանում է, երբ Եսայիան խոստանում է նոր լույս և նոր ղեկավար. Հեզեկիան՝ պատմականորեն, և Մեսիան՝ մարգարեորեն: Սա մարգարեության կրկնակի իրականացման օրինակ է: Այն նաև օրինակ է նրա, թե ինչպես է մեկ իրադարձության իմաստը մարգարեություն հանդիսանում ապագա մեկ այլ իրադարձության համար: 2 Նեփի 20-ում Ասորեստանի կործանման Եսայիայի մարգարեությունը նման է Երկրորդ Գալստի ժամանակ ամբարիշտների կործանմանը:

Գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները. *2 Նեփի 19.12, 17, 21; 20.4:* Ուսանողներին խնդրեք գտնել այդ հատվածներում կրկնվող արտահայտությունը: Գրեք այդ արտահայտությունը գրատախտակին: (*«Այս բոլորի*

***Ամփոփում***

Երբեմն դուք չեք կարողանա ուսուցանել սուրբ գրությունների բոլոր հատվածները, որոնք նախատեսված են տվյալ օրվա համար: Մի հուսահատվեք: Երբ կարիք կա ուսուցանելու մի քանի գլուխներ, դուք կարող եք ամփոփել իրադարձությունները, պատմության ուղերձը և, երբեմն, վարդապետությունը: Գլուխների վերնագրերը, դասագրքի նյութերը և ձեր անձնական ուսումնասիրությունից ներշնչումները կօգնեն ձեզ արդյունավետ ամփոփել նյութը:

*պատճառով նրա բարկությունը մեկդի չի դարձվել, բայց նրա ձեռքը դեռևս մեկնված է»։*) Բացատրեք, որ այդ տողերը այն հետևանքների մասին են, որոնք առաջանում են այն մարդկանց մոտ, ովքեր ըմբոստանում են Տիրոջ դեմ և հրաժարվում են ապաշխարել։ Դրանք արտահայտում են Տիրոջ դժգոհությունը նրանց հանդեպ, ովքեր շարունակում են մեղք գործել։

Բացատրեք, որ սուրբ գրությունների այլ հատվածներում նման բառեր են օգտագործվում՝ արտահայտելու Տիրոջ ողորմությունը նրանց հանդեպ, ովքեր ապաշխարում են։ Թեև Նա արդարության Աստված է, Նա նաև անսահման ողորմած է նրանց հանդեպ, ովքեր կգան դեպի Իրեն։ Մի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 28.32։ Այնուհետև կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը.

«Բոլոր նրանց համար, ովքեր մտածում են, թե կորած են կամ առանցի հույսի են, կամ արել են չափից մեծ սխալ չափից երկար ժամանակ, ձեզանից յուրաքանչյուրի համար, ով մտահոգվում է, որ միայնակ է մնացել կյանքի ցրտաշունչ հովիտներում և ճանապարհին կոտրել է իր անվասայլակը, այս համաժողովը կանչում է Եհովայի հաստատուն հավաստիացումը. «[Իմ] ձեռքը դեռ մեկնած է» [տես Եսայիա 5.25; 9.17, 21]։ «Ես կերկարացնեմ իմ բազուկը նրանց, - ասել է Նա, - [Եվ եթե անգամ նրանք] կուրանան ինձ. Այնուամենայնիվ, ես ողորմած կլինեմ նրանց հանդեպ, . . . եթե նրանք չապաշխարեն և գան ինձ մոտ. քանզի իմ բազուկը երկարացված է ողջ օրվա ընթացքում, ասում է Զորաց Տեր Աստվածը» [2 Նեփի 28.32]։ Նրա ողորմությունը հավերժ է տևում, և Նրա ձեռքը դեռ մեկնած է։ Նրանն է Քրիստոսի մաքուր սերը, նրա գթությունը երբեք չի խափանվում, կարեկցանքը կենդանի է, անգամ եթե բոլոր այլ ուժերը անհետանում են [տես Մորոնի 7.46–47]» (“Prophets in the Land Again,” *Ensign,* Nov. 2006, 106–7)։

Հրավիրեք ուսանողներին իրենց խոսքերով արտահայտել այն ճշմարտությունը, որը սովորեցին այս տողերից։ (Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են, որ **Հիսուս Քրիստոսը դատաստանի և ողորմածության Աստված է։ Նրա ողորմությունը հասանելի է նրանց, ովքեր ապաշխարում են և պահում Նրա պատվիրանները։**)

- Ինչպե՞ս դուք կկիրառեիք այս սկզբունքը ձեր կյանքում։

Եսայիան կանխատեսել էր, որ վերջին օրերին Տիրոջ ժողովուրդը պետք է վերադառնար Նրա մոտ և դադարեր անաստվածային միություններ կապել անվտանգության և խաղաղության համար։ Եթե ուսանողները հնարավորություն ունեն կարդալու Աստվածաշնչի Հակոբոս Թագավորի տարբերակի Վերջին Օրերի Սրբերի հրատարակությունը, խնդրեք նրանց կարդալ Եսայիա 10.20, էջատակի ծանուցում *գ,* և բացատրեք *մնալ* բառի իմաստը։ Կարող եք բացատրել, որ այս ենթատեքստում *մնալ* նշանակում է հենվել, վստահել, ապավինել որևէ բանի կամ որևէ մեկի։ Հավաստիացրեք ուսանողներին, որ երբ մենք մեր վստահությունը դնում ենք Տիրոջ վրա, մենք կարիք չունենք վախենալու դատաստաններից, որոնք տեղի կունենան երկրագնդի մարդկանց հետ Երկրորդ Գալստից առաջ։

ԴԱՍ 34

# 2 Նեփի 21–24

## Նախաբան

Մորմոնի Գրքում Եսայիայի մարգարեություններից շատերը վերջին օրերի մասին են: Նա մարգարեացել է ավետարանի Վերականգնման, Մարգարե Ջոզեֆ Սմիթի, Երկրորդ Գալստի և ամբարիշտների կործանման մասին: Նա կանխատեսել էր, որ Տերը «դրոշ կբարձրացնի ազգերի համար»՝ հավաքելու Իր ժողովրդին վերջին օրերին (տես 2 Նեփի 21.11–12): Եսայիան նաև վկայում էր, որ Տերը հաղթանակ կտանի Սատանայի դեմ և կտիրի Հազարամյակի ժամանակ՝ խաղաղության և ուրախության դարաշրջանում:

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 21.1–5, 10–12

*Եսայիան կանխատեսում է վերջին օրերին Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնումը:*

Ցուցադրեք Մորոնին հայտնվում է Ջոզեֆ Սմիթին նրա սենյակում նկարը (62492; *Ավետարանի արվեստի հավաքածու* [2009], h. 91): Բացատրեք, որ երբ Մորոնին առաջին անգամ հայտնվեց Ջոզեֆ Սմիթին, նա մեջբերեց տասնմեկերորդ գլուխը Եսայիայից, ասելով, որ այն մոտ է իրականացման» (Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.40): Եսայիա 11-ի մարգարեությունը գտնվում է նաև 2 Նեփի 21-ում:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 21.1: Նրանց ուշադրությունը ուղղեք «մի շառավիղ պիտի դուրս գա Հեսսեի ցողունից» արտահայտության վրա: Ապա խնդրեք նրանց մտքում կարդալ 2 Նեփի 21.10: Նրանց ուշադրությունը ուղղեք «Հեսսեի մի արմատ» արտահայտության վրա: Կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այդ արտահայտությունները: Բացատրեք, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտնություն է ստացել այդ արտահայտությունների մասին: Ուսանողներին խնդրեք հերթով կարդալ Վարդապետություն և Ուխտեր 113.1–6: Բարձրաձայն կարդացեք այդ հատվածը: Կարդալուց առաջ խնդրեք ուսանողներին կարդալ ձեզ հետ և գտնել այդ արտահայտությունների իմաստները: Կարող եք գրել այս իմաստները գրատախտակին, ինչպես ցույց է տրված ստորև. Կարող եք խրախուսել ուսանողներին գրել այս իմաստները իրենց սուրբ գրություններում:

*Հեսսեի ցողունը՝ Հիսուս Քրիստոսը*

*Շառավիղ՝ Քրիստոսի ծառա, «որի վրա մեծ զորություն է դրվել»*

*Հեսսեի արմատը՝ անձ, որը վերջին օրերում կկրի քահանայություն և «արքայության բանալիները»:*

Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրյուս Ռ. Մակ-Քոնկիի հետևյալ հայտարարությունը: Դասարանին խնդրեք ուշադրություն դարձնել «շառավիղ» և «Հեսսեի արմատ» բառերին:

«Արդյո՞ք մենք կսխալվենք, եթե ասենք, որ մարգարեն ի նկատի ուներ Ջոզեֆ Սմիթին, որին տրվեց քահանայությունը, ով ստացավ արքայության բանալիները և ով դրոշ բարձրացրեց՝ հավաքելու Տիրոջ մարդկանց մեր տնտեսությունում: Եվ արդյո՞ք նա չէ «մի ծառա Քրիստոսի ձեռքում, որը մասամբ Հեսսեի հետնորդ է, ինչպես նաև Եփրեմի, կամ Հովսեփի տան, որի վրա մեծ զորություն է դրվել» (*The Millennial Messiah: The Second Coming of the Son of Man* [1982], 339–40):

Մի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 21.10, 12: Դասարանին խնդրեք գտնել այն բառերը և արտահայտությունները, որոնք վերաբերում է Ջոզեֆ Սմիթին, ավետարանի Վերականգնմանը և Տիրոջ Եկեղեցուն: Մինչև ուսանողի կարդալը դուք կարող եք հիշեցնել նրանց, որ *դրոշ* բառը նշանակում է նշան, դրոշակ կամ ցուցանակ, որն ազդարարում է եզրագծի ավարտը և ծառայում է նշան հավաքվելու համար (տես դաս 32):

### Վկայություն բերելը

Վկայությունը հավատքի պարզ, ուղղակի հայտարարություն է: Պատրաստվելով ուսուցանել յուրաքանչյուր դասը, աղոթեք, որ Հոգին օգնի ձեզ իմանալ, թե երբ վկայել ճշմարտությունների մասին, որոնք դուք քննարկում եք: Դուք, հնարավոր է, հուշում ստանաք բերելու ձեր վկայությունը մի քանի անգամ դասի ժամանակ, ոչ միայն ավարտելիս:

- Ինչպե՞ս Ջոզեֆ Սմիթի աշխատանքը իրականացրեց Հեսսեի արմատի մասին մարգարեությունը:
- Ինչպե՞ս ենք մենք հավաքվում այսօր՝ որպես Եկեղեցու անդամներ: Ինչպե՞ս ենք մենք դրոշ բարձրացնում, օգնելով ուրիշներին իմանալ, թե որտեղ հավաքվել:

Վկայեք, որ **Տերը վերականգնել է Իր ավետարանը և Իր Եկեղեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով և այժմ հավաքում է Իր ժողովրդին վերջին օրերում:**

## 2 Նեփի 21.6–9; 22

### *Եսայիան նկարագրում է Հազարամյակը*

Խնդրեք ուսանողներին պատկերացնել, թե իրենց ընկերը, որը մեկ այլ եկեղեցու անդամ է, հարցրել է իրենց, թե ինչ է Հազարամյակը: Խնդրեք նրանց մտքում ուսումնասիրել 2 Նեփի 21.6–9 և 22.1–6, փնտրելով ճշմարտություններ, որոնք կարելի է օգտագործել նման զրույցի ժամանակ: Նրանց խնդրեք գրել իրենց մտքերը սուրբ գրությունների ուսումնասիրության իրենց օրագրերում կամ դասարանային տետրերում: Որպեսզի օգնեք նրանց քննարկել այն, ինչ գտել են, տվեք ոմանց կամ բոլորին հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս են նկարագրվում 2 Նեփի 21.6–8-ում երկրի պայմանները Հազարամյակի ժամանակ:
- Համաձայն 2 Նեփի 21.9-ի ինչո՞ւ է երկիրը խաղաղության վայր լինելու Հազարամյակի ժամանակ: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ **Հազարամյակի ժամանակ երկիրը խաղաղության վայր կլինի, որովհետև լցված կլինի Տիրոջ մասին գիտելիքով:**)
- Ինչպե՞ս կարող է Տիրոջ մասին գիտելիքն օգնել մեզ ավելի խաղաղ ապրել այժմ:
- 2 Նեփի 22.1–6-ում Եսայիան նկարագրում է երկրպագության ոգին, որ մարդիկ կունենան Հազարամյակի ժամանակ: Ինչպե՞ս մենք կարող ենք նույն վերաբերմունքը զարգացնել այսօր:
- Հազարամյակի ո՞ր կողմերը կցանկանայիք ունենալ ձեր կյանքում այժմ: (Խրախուսեք ուսանողներին մտածել, թե ինչ իրենք կարող են անել՝ իրենց կյանքում այդ օրհնությունները ստանալու համար:)

## 2 Նեփի 23–24

### *Եսայիան ուսուցանում է, որ ամբարիշտները կոչնչանան, իսկ Տերը ողորմած կլինի Իր ժողովրդի վրա:*

Բացատրեք, որ 2 Նեփի 23-ում Եսայիան մարգարեանում է Բաբելոնի կործանման մասին և համեմատում է այն ամբարիշտներին կործանման հետ Փրկչի Երկրորդ Գալստի ժամանակ: Խնդրեք ուսանողներին կարդալ Բաբելոնի մասին Աստվածաշնչի Բառարանում: Բացատրեք, որ սուրբ գրությունների որոշ հատվածներում *Բաբելոն* բառը վերաբերում է սովորաբար աշխարհի ամբարիշտներին: Եսայիան մարգարեացել է, որ մեծ կործանում կլինի ամբարիշտների մեջ Բաբելոնում և վերջին օրերին:

Օգնելու համար ուսանողներին հասկանալ վերջին օրերում ամբարիշտների հետևանքները, խնդրեք նրանց մտքում կարդալ 2 Նեփի 23.1, 5–9, 11, 15, 19, և 22:

Բացատրեք, որ Եսայիան խոսում է Լյուցիֆերի, կամ Սատանայի, անկման մասին որպես մեկ այլ ցուցադրում, թե ինչպես կկործանվեն ամբարիշտները: Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ 2 Նեփի 24.12–16:

- Ի՞նչ արտահայտություններ են այս հատվածներում ցույց տալիս Սատանայի մեծամտությունը:
- Ինչպե՞ս է 2 Նեփի 24.16 նկարագրում այն, թե ինչպես մենք մեզ կզգայինք, եթե տեսնեինք Սատանային այնպիսին, ինչպիսին նա կա:

Մի ուսանողի խնդրեք կարդալ Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ խոսքերը.

«Նախաերկրային խորհրդում հպարտությունն էր, որ տապալեց Լյուցիֆերին՝ «արշալույսի որդուն» (2 Նեփի 24.12–15; տես նաև ՎևՈւ 76.25–27; Մովսես 4.3): . . . Նախաերկրային խորհրդում Լյուցիֆերը առաջ քաշեց իր առաջարկը, մրցելով Հոր ծրագրի հետ, որը պաշտպանում էր Հիսուս Քրիստոսը: (տես Մովսես 4.1–3): Նա

ցանկանում էր պատվելի լինել բոլորից առավել (տես 2 Նեփի 24.13)։ Կարճ ասած, նրա հպարտ ցանկությունն էր զրկել Աստծուն գահից (տես ՎԿՈ 29.36; 76.28)» (“Beware of Pride,” *Ensign,* May 1989, 4–5)։

Ուսանողների ուշադրությունը գրավեք Տիրոջ խոսքի վրա 2 Նեփի 23.22-ի վերջում. «Ես ողորմած կլինեմ իմ ժողովրդի հանդեպ, բայց ամբարիշտները կկորչեն»։ Կարող եք խրախուսել ուսանողներին նշել այս հայտարարությունը իրենց սուրբ գրություններում։ (Նշեք, որ այս հատվածի վերջին նախադասությունը բացակայում է Եսայիայի Գրքի համապատասխան հատվածում Աստվածաշնչի Հակոբոս Թագավորի տարբերակում։ Սա նշանակում է, որ արույրե թիթեղները պարունակում են այնպիսի տեղեկություն, որը չկա Աստվածաշնչում։)

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում լինել Տիրոջ ժողովրդի մեջ։

Մի քանի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 24.1–7, 24–27, հերթով կարդալով մեկ կամ երկու հատված։ Դասարանին խնդրեք գտնել Տիրոջ խոստումները Իր ժողովրդին։ Խրախուսեք նրանց կիսվել միմյանց հետ իրենցդիտարկումներով։ Կարող եք խնդրել ուսանողներից մեկին գրել այդ դիտարկումները գրատախտակին։

- Ի՞նչ ուղերձներ են այդ հատվածները հաղորդում նրանց, ովքեր տառապում են այլ մարդկանց ամբարշտությունից։
- Հույսի և երջանկության ի՞նչ ապացույց եք դուք տեսնում այս հատվածներում։

Հավատսիացեք, որ ուսանողները հասկանում են, որ **Տերը ողորմած կլինի Իր ժողովրդի վրա, սակայն ամբարիշտները կկործանվեն։** Օգնեք ուսանողներին հասկանալ, որ Եսայիայի մարգարեությունները 2 Նեփի 21–24-ում արտահայտում են Մորմոնի Գրքի հիմնական ուղերձներից մեկը՝ հնազանդը կբարգավաճի, իսկ անհնազանդը կկործանվի։ Վկայեք, որ մենք կարող ենք արդարակյաց ապրել և բարգավաճել այսօր, սպասելով Հազարամյակին։

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 2 Նեփի 21.1: «Եվ մի ընձյուղ պիտի աճի նրա արմատներից»

Երեց Բրյուս Ռ. Մակ-Քոնկին՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է, թե ով է այն ճյուղը, որի մասին խոսվում է 2 Նեփի 21.1-ում.

««Սիա օրեր են գալիս, ասում է Տէրը, որ Դաւիթի համար վեր կկացնեմ արդարութեան Շառաւիղ եւ իբր թագաւոր կթագաւորէ ու իմաստութեամբ կվարուի. . .» (Երեմիա 23.3–6)։ Այսինքն, Թագավորը, որը անձամբ կկառավարի երկիրը Հազարմյակի ժամանակ, կլինի այն ճյուղը, որը աճել է Դավթի տնից։ Նա կդատի և արդարադատություն կանի ողջ երկրի վրա, որովհետև նա Տեր Եհովան է, ում մենք կոչում ենք Քրիստոս։ Այն, որ Դավթի ճյուղը Քրիստոսն է, լիովին հստակ է։ Այժմ մենք պետք է տեսնենք, որ նա նաև կոչվում է Դավիթ, որ նա նոր Դավիթն է, Հավիտենական Դավիթը, որը հավերժ կկառավարի իր հնադարյան նախնու գահին [տես Երեմիա 30.8–9]» (*The Promised Messiah: The First Coming of Christ* [1978], 193)։

## Ուսուցանման լրացուցիչ միտք

### 2 Նեփի 21.9: «Երկիրը Տիրոջ գիտությունով լցված կլինի»

Մի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 21.9։ Կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսի հետևյալ խոսքերով.

Մեր օրերում մենք հանդիպում ենք աշխարհի և մարդկանց մասին գիտելիքի պոռթկմանը։ Բայց աշխարհի մարդիկ չունեն նմանաչափ խորացված գիտելիք Աստծո և Իր զավակների համար Նրա ծրագրի մասին։ Այդ առումով, աշխարհը ոչ այդքան ունի կրթության և տեխնոլոգիաների, որքան արդարակեցության և հայտնության կարիք։ Ես սպասում եմ այն օրվան, որի մասին Եսայիան մարգարեացել է, երբ «երկիրը Տիրոջ գիտությունով լցված կլինի» (Եսայիա 11.9; 2 Նեփի 21.9)» (“Alternate Voices,” *Ensign,* May 1989, 30)։

- Ըստ Երեց Օուքսի, ինչի՞ կարիք ունի աշխարհը։
- Ինչպե՞ս մենք կարող ենք օգնել Եսայիայի մարգարեության իրականացմանը։

ԴԱՍ 35

# 2 Նեփի 25

## Նախաբան

Շարունակելով շեշտել Եսայիայի մարգարեությունների կարևությունը, Նեփին բացատրում է, որ յուրաքանչյուրը, ով ունի մարգարեության ոգին, կարող է հասկանալ և գնահատել Եսայիայի խոսքերը: Նա կիսվեց իր գրությունների նպատակով՝ «համոզելու մեր զավակներին, և նաև մեր եղբայրներին, հավատալու Քրիստոսին և հաշտվելու Աստծո հետ» (2 Նեփի 25.23): Նա հրավիրեց բոլորին հավատալ Հիսուս Քրիստոսին և «երկրպագել նրան [իրենց] ողջ զորությամբ, մտքով, և ուժով, և ողջ [իրենց] հոգով» (2 Նեփի 25.29):

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 25.1-8:

*Նեփին ուսուցանում է, որ մենք կարող ենք հասկանալ Եսայիայի խոսքերը, եթե ունենք մարգարեության ոգի:*

Ցուցադրեք կողպեք, որը հնարավոր չէ բացել առանց բանալու (կամ նկարեք գրատախտակին կողպեք և բանալի): Նշեք, որ երբ մարդիկ ցանկանում են արժեքավոր իրերը ապահով պահել, նրանք հաճախ կողպում են դրանք: Նրանք կարող են պահել կողպեքը բացող միայն մեկ բանալի, կամ կարող են բանալու մեկ օրինակ տալ վստահված ընկերոջ կամ ընտանիքի անդամի:



Բացատրեք, որ Նեփին գիտեր, որ Եսայիայի մարգարեությունները «մեծ արժեք» ունեին (2 Նեփի 25.8): Սակայն նա չպահեց դա գաղտնի: Նա ուսուցանեց բանալին բոլորին, ովքեր կցանկանային բացել Եսայիայի խոսքերի գաղտնիքը: Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ 2 Նեփի 25.4-ի առաջին նախադասությունը: Դասարանին խնդրեք գտնել Եսայիայի խոսքերը հասկանալու բանալին:

- Ի՞նչ բանալի դուք գտաք: («Մարգարեության ոգին»:)

Օգնելու համար ուսանողներին հասկանալ, թե ինչ է նշանակում «մարգարեության ոգին», կարդացեք հետևյալ բացատրությունը սուրբ գրությունների ուղեցույցից.

«Մարգարեությունը բաղկացած է աստվածայնորեն ոգեշնչված խոսքերից կամ գրվածքներից, որը մարդը ստանում է Սուրբ Հոգուց հայտնության միջոցով: Հիսուսի մասին վկայությունը մարգարերության ոգին է (Հայտնություն 19.10): Մարգարեությունը կարող է վերաբերել անցյալին, ներկային կամ ապագային: Երբ անձը մարգարեանում է, նա խոսում կամ գրում է այն, ինչ Աստված ցանկանում է, որ նա իմանա, իր անձնական կամ ուրիշների բարօրության համար: Անհատները կարող են ստանալ մարգարեություն կամ հայտնություն իրենց անձնական կյանքի վերաբերյալ» (Guide to the Scriptures, “Prophecy, Prophesy,” scriptures.lds.org):

Օգնեք ուսանողներին տեսնել, որ Եսայիայի խոսքերի իրենց հասկացողությունը կխորանա, եթե նրանք (1) փնտրեն Սուրբ Հոգու առաջնորդությունը, և (2) ունենան վկայություն Հիսուս Քրիստոսի մասին և Նրա մասին սովորելու ցանկություն: Եթե նրանք մոտենան Եսայիայի խոսքերին այդ ձևով, միշտ աշխատելով տեսնել, թե ինչպես են նրա մարգարեությունները վկայում Փրկչի մասին, նրանք կկարողանան սովորել, թե ինչ է Աստված ցանկանում, որ իրենք իմանան իրենց և մյուսների բարօրության համար:

Նշեք, որ Նեփին կիսվել է այլ մտքերով, որոնք կարող են խորացնել Եսայիայի խոսքերի մեր հասկացողությունը: Ուսանողներին խնդրեք մտքում կարդալ 2 Նեփի 25.1, և գտնել պատճառը, թե ինչու էին Նեփիի ժողովրդից շատերը դժվարությամբ հասկանում Եսայիայի մարգարեությունները:

- Ի՞նչ դուք գտաք: (Նրանք չգիտեին «մարգարեանալու ձևի մասին հրեաների մեջ»:)
- Հիմնվելով Եսայիայի խոսքերից ձեր կարդացածի վրա, որո՞նք են հին օրերի հրեաների մարգարեությունների որոշ հատկանիշները: (Հնարավոր պատասխաններ. Եսայիան և այլ մարգարեներ օգտագործում էին լեզվի խորհրդանշական և բանաստեղծական ոճը:)
- Երբ կարդում եք Եսայիայի խոսքերը, ինչո՞ւ է օգտակար տեղյակ լինել մարգարեության այս ոճից:

Բացատրեք, որ մեկ այլ օգտակար միտք կարելի է գտնել 2 Նեփի 25.5–6-ում: Հրավիրեք մի ուսանողի կարդալ այդ տողերը բարձրաձայն: Դասարանին խնդրեք գտնել Նեփիի այն փորձառությունները, որոնք օգնել են իրեն հասկանալ Եսայիայի խոսքերը:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ դա օգնեց Նեփիին ապրել Երուսաղեմում: Հիմնվելով ձեր կարդացած Եսայիայի խոսքերի վրա, ինչո՞ւ էր առավելություն Նեփիի համար «հրեաների արածները» տեսնելը և Երուսաղեմի «մոտակա շրջանների մասին» իմանալը:
- Ի՞նչ կարող ենք մենք անել այդ բաների մասին որոշ գիտելիք ձեռք բերելու համար: (Մենք կարող ենք ուսումնասիրել հնադարյան Իսրայելի մշակույթը, պատմությունը և աշխարհագրությունը:)

Ուսանողների համար կարդացեք 2 Նեփի 25.7–8: Կարդալիս նշեք, որ Եսայիայի մարգարեությունները մեծ արժեք կունենան մեզ համար, երբ մենք տեսնենք, թե ինչպես են դրանք իրականացվում: Այս ճշմարտությունը լուսաբանելու համար հարցրեք.

- Վերջին մի քանի օրերին մեր սովորած մարգարեություններից որո՞նք են արդեն կատարվել: (Ուսանողները կարող են հիշել մարգարեությունները Սոլթ Լեյքի Տաճարի մասին [տես 2 Նեփի 12.2–3], Հիսուս Քրիստոսի ծննդի մասին [տես 2 Նեփի 19.6], և Ջոզեֆ Սմիթի մասին [տես 2 Նեփի 21.1, 10]:) Ի՞նչ եղանակներով են այս մարգարեությունները դառնում ավելի իմաստավորված, երբ տեսնում եք, որ դրանք իրականանում են:

Դասի այս մասն ավարտելու համար, արտահայտեք ձեր վստահությունը, որ Եսայիայի խոսքերը հասկանալու ուսանողների ունակությունը կարող է աճել, եթե նրանք փնտրեն մարգարեության ոգին: Նշեք, որ նրանք կարող են խորացնել իրենց հասկացողությունը՝ հնադարյան հրեաների մարգարեության ոճը և հին օրերի Իսրայելի մշակույթը, պատմությունը և աշխարհագրությունը ուսումնասիրելու միջոցով:

## 2 Նեփի 25.9–19

### *Նեփին մարգարեանում է հրեաների ցրման և հավաքման մասին*

Ամփոփեք 2 Նեփի 25.9–19, ասելով, որ Նեփին մարգարեացել էր հրեաների, Երուսաղեմի իրենց հայրենիքի և շրջակա տարածքների մասին: Նա ասաց, որ հրեաները, ովքեր գերի են վերցվել Բաբելոն Երուսաղեմի կործանումից հետո, կվերադառնան «իրենց ժառանգության երկիր» (տես 2 Նեփի 25.9–11): Հիսուս Քրիստոսը՝ Մեսիան, կապրի նրանց մեջ, բայց շատերը կմերժեն Նրան և Նրան կխաչեն (տես 2 Նեփի 25.12–13): Փրկչի մահից և Հարությունից հետո, Երուսաղեմը կրկին կկործանվի, և հրեաները կցրվեն և կհալածվեն այլ ազգերի կողմից (տես 2 Նեփի 25.14–15): Նրանք, ի վերջո, կհավատան Հիսուս Քրիստոսին և Նրա Քավությանը, և Տերը կվերականգնի նրանց «իրենց կորած և ընկած վիճակից» (տես 2 Նեփի 25.16–19):

## 2 Նեփի 25.20, 30

### *Նեփին վկայում է Հիսուս Քրիստոսի մասին*

Խնդրեք ուսանողներին մտածել, թե ինչպես կարող են պատասխանել ինչ-որ մեկին, ով հայտարարում է, որ Վերջին Օրերի Սրբերը չեն հավատում Հիսուս Քրիստոսին: Կարող եք խնդրել մեկ կամ երկու ուսանողի համառոտ պատմել իրենց

փորձառությունների մասին, երբ այլ մարդիկ հարցականի տակ են դրել Հիսուս Քրիստոսի հանդեպ իրենց հավատքը: Երբ ուսանողները կարդում և քննարկում են 2 Նեփի 25.20–30, խնդրեք նրանց գտնել հատվածներ, որոնք կօգնեն իրենց նման իրավիճակներում:

Խնդրեք ուսանողներին գտնել «ճիշտ ճանապարհը» արտահայտությունը 2 Նեփի 25.28–29-ում: Նրանից հետո, երբ նրանք հայտնաբերեն, որ «ճիշտ ճանապարհը Քրիստոսին հավատալն է և նրան չուրանալը», գրեք գրատախտակին. *Ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսին հավատալը ճիշտ ճանապարհը հանդիսանում:* Ապա խնդրեք ուսանողներին ուսումնասիրել 2 Նեփի 25.20, 23–26, փնտրելով պատճառներ, թե ինչու է Հիսուս Քրիստոսին հավատալը ճիշտ ուղի: Հրավիրեք նրանց գրել իրենց պատասխանները գրատախտակին՝ ձեր գրած վերնագրի տակ: Պատասխանները կարող են ընդգրկել.

**Փրկությունը գալիս է միայն Հիսուս Քրիստոսի միջոցով:**

**Հիսուս Քրիստոսի միջոցով մենք կարող ենք փրկվել շնորհով նրանից հետո, երբ արել ենք այն, ինչ կարող էինք անել:**

**Փրկչի Քավության միջոցով մենք կարող են ստանալ մեր մեղքերի թողությունը:**

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 25.23 և 2 Նեփի 10.24: Նշեք, որ այս հատվածներում հանդիպում է *հաշտվել* բառը, որը նշանակում է բերել մարդկանց, կամ առարկաները, ներդաշնակության կամ համաձայնության միմյանց հետ:

- Այս երկու հատվածներում մարգարեները խրախուսում են մեզ հաշտվել Աստծո հետ: Ձեր կարծիքով, ի՞նչ է դա նշանակում:

Բացատրեք, որ երկու հատվածներն էլ ներառում են *շնորհ*բառը: Շնորհը պարգև է Երկնային Հոր կողմից՝ տրված Իր Որդի Հիսուս Քրիստոսի միջոցով: *Շնորհ* բառը, ինչպես այն օգտագործվում է սուրբ գրություններում, հիմնականում, նշանակում է զորություն և հոգևոր բժշկում, որն առաջարկվում է Հիսուս Քրիստոսի ողորմածության և սիրո միջոցով:

- Ի՞նչ է ուսուցանվում 2 Նեփի 10.24 և 25.23-ում շնորհի և մեր ջանքերի միջև կապի մասին:

Խնդրեք ուսանողներին կիրառել իրենց սովորածը՝ գրելով հետևյալ հարցի պատասխանը սուրբ գրությունների ուսումնասիրության իրենց օրագրերում կամ դասարանային տետրերում: Կարող եք գրել հարցը գրատախտակին:

- Ի՞նչ է նշանակում փրկվել շնորհով:

Օգնելու համար ուսանողներին հասկանալ Նեփիի հայտարարությունը 2 Նեփի 25.24–25-ում, որ օրենքը դարձել է մեռած իր ժողովրդի համար, բացատրեք, որ նա ի նկատի ուներ Մովսեսի օրենքը: Օրենքը՝ արարողությունների, ծեսերի, խորհրդանիշերի և պատվիրանների հետ մեկտեղ, ներառյալ կենդանիների զոհաբերությունները, դեռ կիրառվում էր Նեփիի ժամանակ: Նեփին և մյուսները գիտեին, որ օրենքը պետք է իրականացվեր Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Քավությունից հետո Փրկչի աշակերտները այլևս պարտավոր չէին պահել Մովսեսի օրենքը: Սակայն հավատարիմ Նեփիացիները շարունակում էին պահել օրենքը այդ ժամանակ, անգամ իմանալով, որ ներկա օրենքը մի օր փոխարինվելու է մեկ ուրիշով:

Երբ Նեփին ասում էր, որ օրենքը դարձել է մեռած իր և մյուսների համար, նա ի նկատի ուներ, որ օրենքը չէր փրկի նրանց: Նրանք պահում էին օրենքը, որովհետև ցանկանում էին հնազանդ լինել, և որովհետև գիտեին, որ օրենքն ուղղում էր իրենց դեպի Հիսուս Քրիստոսը, ով իրենց փրկություն պետք է բերեր:

- Ի՞նչ մենք կարող ենք սովորել 2 Նեփի 25.23–26-ից այն պատճառների մասին, թե ինչու մենք պետք է պահենք պատվիրանները:
- Ի՞նչ դուք կանեք, որպեսզի «խոսեք Քրիստոսի մասին» և «հրճվեք Քրիստոսով»: 2 Նեփի 25.26: Ի՞նչ կանեք դուք օգնելու համար ուրիշներին հավատալ Քրիստոսին:

Խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտած հատվածներով, որոնք կարող են օգնել իրենց պատասխանել այն պնդումներին, որ Վերջին Օրերի Սրբերը չեն հավատում Հիսուս Քրիստոսին: Խնդրեք նրանց պատմել, թե ինչու են իրենք սիրում այդ հատվածները:

**2 Նեփի 25.23, 26** սուրբ գրությունների սերտման հատված է: Կարող եք խրախուսել ուսանողներին նշումներ կատարել իրենց սուրբ գրքերում: Անդրադարձեք դասի վերջում ուսուցանման մտքին՝ օգնելու համար ուսանողներին սերտել այս հատվածը:

Բերեք ձեր վկայությունը այսօր քննարկված ճշմարտությունների մասին: Կարող եք նաև ուսանողներին հնարավորություն տալ կիսվելու այդ ճշմարտությունների մասին իրենց վկայություններով:

## Սուրբ գրությունների սերտում—2 Նեփի 25.23, 26

*Նշում.* Կարող եք օգտագործել ուսուցանման հետևյալ միտքը այս դասի եզրափակիչ մասում: Եթե ժամանակ չունեք այս միտքը այս դասին օգտագործելու համար, կարող եք այն օգտագործել մեկ այլ դասի ընթացքում՝ որպես կրկնություն:

Օգնելու համար ուսանողներին անգիր սովորել 2 Նեփի 25.26՝ սուրբ գրությունների սերտման հատվածներից մեկը, գրեք հետևյալը գրատախտակին.

*Խոսել*

*Հրճվել*

*Քարոզել*

*Մարգարեանալ*

*Գրել*

*Որ մեր զավակները. . .*

*Ինչ աղբյուրի . . .*

*. . . թողության համար*

Հրավիրեք ուսանողներին, օգտվելով գրատախտակին գրված բանալի բառերից, անգիր արտասանել 2 Նեփի 25.26-ը: Այս հատվածը մի քանի անգամ կրկնելուց հետո, հարցրեք, թե արդյոք որևէ մեկը դասարանում ցանկանում է փորձել անգիր արտասանել այդ հատվածը: Ապա հրավիրեք մնացած ուսանողներին միասին արտասանել հատվածը՝ առանց նայելու գրատախտակին: Եզրափակելով, կարող եք ասել, որ ուշադիր լսելու մեջ մեծ արժեք կա, երբ ծնողները, ղեկավարները և ուսուցիչները աշխատում են համոզել մեզ նայել Փրկչին:

Թուղթ տվեք յուրաքանչյուր ուսանողի: Խնդրեք ուսանողներին նամակ գրել իրենց ապագա երեխաներին, խրախուսելով նրանց կենտրոնացնել իրենց կյանքը Հիսուս Քրիստոսի շուրջ: Ուսանողները կարող են դնել իրենց նամակները իրենց սուրբ գրությունների մեջ, որ պահպանեն դրանք դրանք ապագայի համար:

***Խրախուսել ուսանողներին կիսվել վկայություններով***

Երբ ուսանողները լսում են միմյանց վկայությունները ավետարանի ճշմարտությունների մասին, ավետարանի սկզբունքների մասին նրանց հասկացողությունը խորանում է և այդ սկզբունքները իրենց կյանքում կիրառելու ցանկությունը աճում է: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին դասարանում կիսվել իրենց վկայություններով, տալով հարցեր, որոնք սկսվում են այսպես. «Ինչպե՞ս եք դուք ստացել ձեր վկայությունը . . .», կամ «Ե՞րբ դուք առաջին անգամ իմացաք, որ . . .», կամ «Ինչպե՞ս դուք կբացատրեք կամ կվկայեիք . . .»: Երբ ուսանողներից մեկը բերի իր վկայությունը, այնուհետև դուք կարող եք հարցնել. «Էլ ո՞վ կարող է վկայել այդ ճշմարտության մասին»:

# Տնային ուսումնասիրության դաս

## 2 Նեփի 11–25 (Մաս 7)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

2 Նեփի 11–25 (մաս 7)-ի ուսումնասիրության ժամանակ ուսանողների սովորած վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը նախատեսված չէ ուսուցանել որպես ձեր դասի մի մաս: Ձեր ուսուցանած դասը կենտրոնանում է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու ոգեշնչումներին, երբ դուք խորհեք ձեր ուսանողների կարիքների շուրջ:

#### Օր 1 (2 Նեփի 11–16)

Եսայիան նկարագրել է հին Իսրայելի հպարտությունը և ամբարշտությունը և սպասվող դատաստանները: Նա նաև մարգարեացել է տաճարի մասին, որը պետք է կառուցվեր վերջին օրերում, և ուսուցանել է, որ Աստված հիմնում է տաճարներ՝ ուսուցանելու մեզ Իր ուղիների մասին և օգնելու մեզ քայլել Նրա ուղիներով: Եսայիան տեսել էր Տիրոջը և մաքրվել մեղքից: Եսայիայի փորձառությունից ուսանողները սովորեցին, որ մենք կարող ենք մաքրվել մեր անարժանություններից Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:

#### Օր 2 (2 Նեփի 17–20)

Եսայիան նախատեց Հուդայի թագավորությունը չապավինելու համար Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին: Ուսանողները սովորեցին, որ Աստված կլինի մեզ հետ, եթե մենք ապավինենք Նրան, անգամ դժվար և վախերով լի ժամանակներում: Եսայիան նկարագրեց ամբարիշտների կործանումը Երկրորդ Գալստի ժամանակ և ուսուցանեց, որ Հիսուս Քրիստոսը դատաստանի և ողորմածության Աստված է, իսկ Նրա ողորմությունը տարածվում է բոլոր նրանց վրա, ովքեր ապաշխարում են և պահում Նրա պատվիրանները:

#### Օր 3 (2 Նեփի 21–24)

Այս դասից ուսանողները սովորեցին, որ Հիսուս Քրիստոսը կդատի արդարարությամբ և, ի վերջո, Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով Տերը կվերականգնի Իր Եկեղեցին՝ հավաքելու Իր ժողովրդին վերջին օրերին: Նեփին նաև ուրախ էր Եսայիայի մարգարեությամբ այն մասին, որ Հազարամյակի ժամանակ խաղաղությունը և Տիրոջ գիտելիքը կլցնեն երկիրը: Ուսանողները խրախուսվեցին մտածելու այս ճշմարտության մասին, և թե ինչպես իրենք կարող են ավելի լավ պատրաստվել այդ ժամանակի համար:

#### Օր 4 (2 Նեփի 25)

Ամփոփելով Եսայիայի գրվածքների հիմնական ուղերձները, Նեփին կրկնեց պարզ ճշմարտությունները մարդկանց զավակների մեջ Աստծո աշխատանքի վերաբերյալ. Հիսուս Քրիստոսը միակ անունն է երկնքի տակ, որով մարդ կարող է փրկվել (տես 2 Նեփի 25.20), և Հիսուս Քրիստոսը միակ աղբյուրն է, որին մենք կարող ենք դիմել մեր մեղքերի թողության համար: Նեփին ցանկանում էր, որ բոլորն իմանային, որ եթե մենք անենք այն ամենը, ինչ կարող ենք, Հիսուս Քրիստոսը կօրհնի մեզ շնորհով՝ աստվածային օգնությամբ և ուժով (տես 2 Նեփի 25.23):

### Նախաբան

Այս շաբաթ ուսանողները ուսումնասիրեցին ընտրված հատվածներ Եսայիայից, որոնք Նեփին ընդգրկել էր իր գրվածքների մեջ: Նախագահ Բոյդ Ք. Փաքերը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ասել է Եսայիայի այս գլուխների մասին. «Մի դադարեք կարդալ: Առաջ գնացեք Հին Կտակարանի այդ դժվար հասկանալի գլուխների միջով, եթե անգամ շատ քիչ եք հասկանում: Առաջ գնացեք, եթե անգամ միայն աչքի եք անցկացնում և պարզապես պատկերացում կազմում այս կամ այն հատվածից» (“The Things of My Soul,” *Ensign,* May 1986, 61):

Այս շաբաթ ուսանողների հետ հանդիպելիս, խրախուսեք նրանց համբերատար լինել Եսայիայի խոսքերը ուսումնասիրելիս: Կարող եք նաև հրավիրել նրանց կիսվել նրանով, թե ինչպես են Եսայիայի գրվածքները օգնել իրենց «բարձրացնել իրենց սրտերը և ուրախանալ» Աստծո բարությամբ (2 Նեփի 11.8):

### Ուսուցանման առաջարկներ

#### 2 Նեփի 11-25

***Նեփին մեջբերում է Եսայիայի մարգարեությունները Հիսուս Քրիստոսի մասին***

Ցույց տվեք խոշորացույց կամ նկարեք այն գրատախտակին: Մի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 25.13: Խնդրեք դասարանին գտնել, թե ինչ է «մեծարում» Նեփին: Բացատրեք, որ Եսայիայի խոսքերը գրառելու Նեփիի պատճառներից մեկը, որը գտնվում է 2 Նեփի 11–25-ում, Հիսուս Քրիստոսի անունը, ծառայությունը և քավությունը մեծարելն էր նրանց կյանքում, ովքեր կկարդային Նեփիի խոսքերը:

Մի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 11.4–8: Դասարանին խնդրեք գտնել արտահայտությունները, որոնք նշում են Եսայիայի խոսքերը մեջբերելու Նեփիի պատճառները:

Տնային ուսումնասիրության ժամանակ ուսանողներին խնդրվել է նշել «Քրիստոս» անունը ամեն անգամ, երբ այն

հանդիպում է 2 Նեփի 25.20–30-ում: Խնդրեք նրանց բացել 2 Նեփի 25.28–29 և գտնել այդ հատվածներում կրկնվող արտահայտությունը: (Ճիշտ ճանապարհը Քրիստոսին հավատալն է և նրան չուրանալը»:)

Ուսանողներին հարցրեք. Ձեր կյանքում ի՞նչ փորձառություններ եք ունեցել, որոնք սովորեցրել են ձեզ հավատալ, որ Հիսուս Քրիստոսը ապրելու ճիշտ ճանապարհն է, և հետևել դրան:

Հետևյալ ցանկը պարունակում է ճշմարտություններ, վարդապետություններ և սկզբունքներ, որոնք ուսանողները սովորել են 2 Նեփի 11–25-ից այս շաբաթ: Գրեք գրատախտակին հետևյալ ինը նախադասությունները կամ գրեք դրանք յուրաքանչյուր ուսանողի համար պատրաստած տպագիր թերթիկի վրա: Խնդրեք ուսանողներին կարդալ ցանկը և գտնել այս ճշմարտությունները, վարդապետությունները և սկզբունքները մեջբերված հատվածներում:

**Եսայիայի ուսմունքները հասկանալը մեր օրերում**

1. Աստված հիմնել է տաճարներ՝ ուսուցանելու մեզ Իր ճանապարհների մասին և օգնելու մեզ քայլել Իր ճանապարհներով (տես 2 Նեփի 12.2–3):
2. Մենք կարող ենք մաքրվել մեր անարժանավորությունից Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով (տես 2 Նեփի 16.5–7):
3. Աստված կլինի մեզ հետ, եթե մենք վստահենք Նրան անգամ դժվարության և վախերի ժամանակներում (տես2 Նեփի 17.4, 7, 14):
4. Հիսուս Քրիստոսը դատաստանի և ողորմածության Աստված է: Նրա ողորմությունը տարածվում է նրանց վրա, ովքեր կապաշխարեն և կպահեն Նրա պատվիրանները (տես 2 Նեփի 19.12, 17, 21; 20.4):
5. Տերը վերականգնեց Իր ավետարանը և Իր Եկեղեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով, և այժմ՝ վերջին օրերում հավաքում է Իր ժողովրդին (տես 2 Նեփի 21.10, 12):
6. Հազարամյակի ժամանակ երկիրը կլինի խաղաղության վայր, որովհետև այն լցված կլինի Տիրոջ գիտելիքով (տես 2 Նեփի 21.6–9):
7. Տերը ողորմած կլինի Իր ժողովրդի հանդեպ, սակայն ամբարիշտները կկորչեն (տես 2 Նեփի 23.22):

**Նեփիի ուսմունքները**

8. Հիսուս Քրիստոսի շնորհիվ մենք կարող ենք փրկվել շնորհով այն ամենից հետո, ինչ կարող էինք անել (տես 2 Նեփի 25.23):
9. Փրկչի Քավության միջոցով մենք կարող ենք ստանալ մեր մեղքերի թողությունը (տես 2 Նեփի 25.26):

Բավարար ժամանակ տրամադրելուց հետո, տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ թեմաներ եք դուք տեսնում Եսայիայի և Նեփիի այս ուսմունքներում: (Հնարավոր թեմաներ. Երկնային Հայրն ուղարկեց Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, Իր զավակներին փրկություն և խաղաղություն բերելու համար: Մենք կարող ենք վստահել Աստծուն ամեն իրավիճակում: Տաճարները ուսուցանում են մեզ Աստծո մասին:)
- Այս ինը հայտարարություններից ո՞ր մեկն է առավել իմաստալից ձեզ համար: Ինչո՞ւ:

Յուրաքանչյուր ուսանողի հանձնարարեք մեկ վարդապետություն կամ սկզբունք վերևում տրված ցանկից և խնդրեք ուսանողներին անել հետևյալը.

1. Կարդացեք սուրբ գրությունների հատվածը, որից վերցված է վարդապետությունը կամ սկզբունքը:
2. Պատասխանեք այս հարցին. Ինչպե՞ս կարող է այս վարդապետությունը կամ սկզբունքը օգնել ձեզ «հրճվել» Տիրոջով: (Տես 2 Նեփի 11.4–6):
3. Մտածեք այն իրավիճակների մասին, երբ այս վարդապետության կամ սկզբունքի մասին գիտելիքը կարող է ձեզ հույս և ուժ պարգևել:

Ուսանողներին խնդրեք կիսվել իրենց մտքերով: Այդ ընթացքում կարող եք հարցնել. «Էլ ո՞վ վկայություն կամ ներշնչում ունի նրա վերաբերյալ, ինչ հենց նոր ուսուցանվեց»: Երբ թույլ եք տալիս նրանց կիսվել իրենց մտքերով և վկայություններով, ճշմարտությունները կհաստատվեն նրանց սրտերում: Շնորհակալություն հայտնեք նրանց մասնակցելու համար:

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 25.13: Դասարանին խնդրեք հետևել, գտնելով այն պատճառները, որոնցով Նեփին հրճվում էր, մեծարելով Տիրոջ անունը: Ուսանողներին խնդրեք ասել, թե ինչ են գտել:

Մի ուսանողի խնդրեք կարդալ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հետևյալ վկայությունը.

«Ես համոզված եմ, որ մեզանից ոչ մեկը չի կարող լիարժեք ընկալել նրա կարևորությունը, ինչ Քրիստոսն արեց մեզ համար Գեթսեմանիում, սակայն իմ կյանքի յուրաքանչյուր օրը ես շնորհակալ եմ Նրա քավող զոհաբերության համար:

Վերջին պահին Նա կարող է հրաժարվել: Սակայն Նա դա չարեց: Նա իջավ բոլոր բաներից ներքև, որպեսզի կարողանար փրկել բոլոր բաները: Դա անելով, Նա մեզ պարգևեց կյանք այս մահկանացու գոյությունից հետո: Նա փրկագնեց մեզ Ադամի Անկումից:

Իմ հոգու խորքից ես շնորհակալ եմ Նրան: Նա մեզ սովորեցրեց, ինչպես պետք է ապրել: Նա մեզ սովորեցրեց, ինչպես պետք է մահանալ: Նա ապահովեց մեր փրկությունը» (“At Parting,” *Ensign,* May 2011, 114):

Հարցրեք. Ի՞նչ նմանություններ եք տեսնում 2 Նեփի 25.13-ի Նեփիի խոսքերի և Նախագահ Մոնսոնի խոսքերի միջև:

Ավարտեք այսօրվա դասը, խնդրելով ուսանողներին նկարագրել, թե ինչ եղանակներով կարող են Վերջին Օրերի Սրբերը մեծարել Տիրոջ անունը: Նրանից հետո, երբ ուսանողները կպատասխանեն, խրախուսեք նրանց մեծարել Տիրոջ անունը ամեն օր:

## Հաջորդ բաժին (2 Նեփի 26–31)

Հաջորդ բաժնում ուսանողները կուսումնասիրեն վերջին օրերի մասին Նեփիի մի քանի մարգարեություններ: Նեփին տեսավ, որ կեղծ եկեղեցիները և գաղտնի խմբակցությունները կբազմանան: Նա նաև տեսավ, որ Տերը «զարմանալիք և զարմանք» կգործի (2 Նեփի 27.26) և որ շատերը կմերժեն Մորմոնի Գիրքը, որովհետև արդեն ունեն Աստվածաշունչը: Բացի դա, Նեփին բացատրեց Քրիստոսի վարդապետությունը:

ԴԱՍ 36

# 2 Նեփի 26

## Նախաբան

Նեփին մարգարեանում է, որ իր հետնորդներին մի օր կայցելի հարություն առած Հիսուս Քրիստոսը և այդ փորձառությունից հետո նրանց երեք սերունդների ընթացքում կապրեն արդարակեցության մեջ: Ինչևէ, Նեփին վշտացած էր, որ իր հետնորդների չորրորդ սերնդում ոմանք կդադարեն արդարակյաց լինել, կմերժեն Մեսիային և, ի վերջո, կկործանվեն: Նեփին վերջին օրերում ապրողներին նախազգուշացնում էր հպարտության, գաղտնի խմբակցությունների և քահանայանենգության դեմ: Նա ուսուցանում էր, որ Տերը սիրում է բոլոր մարդկանց և հրավիրում է նրանց գալ դեպի Ինքը:

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 26.1–13

*Նեփին մարգարեանում է, որ իր ժողովուրդը կկործանվի՝ Հիսուս Քրիստոսին մերժելու արդյունքում:*

Գրատախտակին գրեք *Աստծո դատաստանները:*

- Երբ դուք տեսնում կամ լսում եք այդ արտահայտությունը, ի՞նչ մտքեր եք ունենում:

Բացատրեք, որ թեև շատ մարդիկ բացասական մտքեր են ունենում, երբ տեսնում են այդ խոսքերը, Աստծո դատաստանները իրականում օրհնություններ կբերեն շատ մարդկանց: 2 Նեփի 26-ում մենք կարդում ենք արդարադատության հետևանքների մասին ամբարիշտների և արդարների համար:

2 Նեփի 26-ի հիմնական ուղերձի ենթատեքստը հասկանալու համար, բացատրեք, որ ըստ Նեփիի, շատ նշաններ պետք է ուղեկցեին Հիսուս Քրիստոսի ծննդյանը, մահվանը և Հարությանը: Նա մարգարեացավ, որ շատ մարդիկ պետք է կործանվեին Փրկչի մահից անմիջապես հետո, որովհետև մարդիկ վտարելու էին իրենց մեջ ապրող մարգարեներին և Հիսուս Քրիստոսի հավատարիմ հետևորդներին: Նա նաև մարգարեացել է, որ անգամ հարություն առած Փրկչի այցից հետո, այդ հետնորդներից շատերը պետք է ընտրեին «ավելի շուտ խավարի գործերը, քան լույսը» և կկործանվեին (տես 2 Նեփի 26.1–11):

Մի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 26.7: Խնդրեք դասարանին գտնել Նեփիի արձագանքը՝ ի պատասխան ժողովրդի կործանման տեսիլքին: Հրավիրեք ուսանողներին կիսվել նրանով, ինչ գտել են: Կարող եք առաջարկել, որ նրանք նշեն Նեփիի հայտարարությունը հատվածի վերջում՝ «Քո ճանապարհներն արդար են»:

- Ի՞նչ է ձեզ համար նշանակում «Քո ճանապարհներն արդար են» արտահայտությունը: (Կարող եք բացատրել, որ նա, ով արդար է, միշտ արդար կվարվի մարդկանց հետ:)

Երբ օգնեք ուսանողներին հասկանալ, որ Աստծո արդարությունը պահանջում է, որ ամբարիշտները պատժվեն իրենց արարքների համար, բացատրեք, որ Աստծո արդարությունը պահանջում է նաև, որ արդարները հատուցվեն իրենց արարքների համար: Այս բացատրության ընթացքում կարող եք հրավիրել ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 130.20–21: Ուսանողներին խնդրեք կարդալ 2 Նեփի 26.8–9, 13, փնտրելով օրհնությունները, որոնք, ըստ Նեփիի, տրվելու էին նրա արդար սերունդներին:

- 8 և 13 հատվածներում ո՞ր արտահայտությունն է նկարագրում արդարների գործերը:
- Ե՞րբ եք առիթ ունեցել տեսնելու հատված 13-ում նշված օրհնությունները: Ի՞նչ այլ ճանապարհներով է Տերը հայտնում Իրեն մեզ:

Գրեք հետևյալ սկզբունքները գրատախտակին. ***Երբ մենք հավատք ենք գործադրում Հիսուս Քրիստոսի հանդեպ, Նա հայտնում է Իրեն մեզ Սուրբ Հոգու զորությամբ:***

- Ինչպե՞ս կարող է այս ճշմարտության մասին գիտելիքը մեծացնել ձեր հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ:

## 2 Նեփի 26.14–33

*Նեփին մարգարեանում է վերջին օրերի մասին և հրավիրում բոլորին գալ դեպի Քրիստոսը:*

Ամփոփեք 2 Նեփի 26.14–19, բացատրելով, որ Նեփին մարգարեանում է, որ Մորմոնի Գիրքը աշխարհ կգա վերջին օրերին՝ այն ժամանակ, երբ շատ մարդիկ հպարտ և անհավատ կլինեն:

Ուսանողներին խնդրեք մտածել այն ժամանակի մասին, երբ խոչընդոտի առաջ են կանգնած եղել (կամ կարող եք խնդրել նրանց պատկերացնել, թե ինչ-որ բան խանգարում է իրենց առաջ գնալ խավարի մեջ): Հրավիրեք նրանց մտքում ուսումնասիրել 2 Նեփի 26.20–21, փնտրելով խոչընդոտներ, որոնք կարող են խանգարել մարդկանց վերջին օրերին:

- Համաձայն 2 Նեփի 26.20–21-ի, ի՞նչ խոչընդոտներ էր Նեփին տեսնում հեթանոսների մոտ:
- Խոչընդոտների ի՞նչ այլ օրինակներ կան, որոնք Սատանան օգտագործում է մարդկանց վայր գցելու համար:

Բացատրեք, որ մեր ճանապարհին «գայթակղության քարեր» դնելուց բացի, ինչը շեղում է մեզ Աստծո ճանապարհից, Սատանան նաև ցանկանում է կապանքների մեջ գցել մեզ: Պահեք թելի մի կտոր և խնդրեք ուսանողներին աչքի անցկացնել 2 Նեփի 26.22, գտնելով, թե ինչ էր Նեփին գրում այդ նույն հարցի շուրջ: Մի ուսանողի խնդրեք առաջ գալ: Կապեք ուսանողի ձեռքերը՝ թույլ, միայն մեկ թելով: Խնդրեք նրան քաշել և կտրել թելը: Կրկնեք, այս անգամ կապելով թելը՝ մի քանի անգամ պտտելով այն ձեռքերի շուրջը: Շարունակեք, մինչև ուսանողը չկարողանա կտրել թելը, զգուշացնելով նրան, որ ուշադիր լինի և չվնասի իրեն: (Եթե թել ձեռքի տակ չունեք, կարող եք խնդրել ուսանողներին պատկերացնել այդ ամենը:) Խնդրեք ուսանողներին ուսումնասիրել 2 Նեփի 26.22, տեսնելով, թե ինչպես է այդ հատվածը առնչվում կատարած վարժությանը:

- 2 Նեփի 26.22-ում ի՞նչն է նշանակալից «մինչև նա կապում է նրանց» արտահայտության մեջ: Ի՞նչ է այդ հատվածը ուսուցանում ձեզ Սատանայի գործերի մասին:
- Ինչպե՞ս եք տեսել, որ Սատանան տանել է մարդկանց «ամուր պարաններով»: (Ամուր պարանները պատրաստվում են վուշից:)
- Այդ մեղքերից (վուշե պարաններից) որո՞նք են, ձեր կարծիքով, առավել վտանգավոր ձեր տարիքի մարդկանց համար:

Հիշեցրեք ուսանողներին, որ Սատանան հրապուրում է մեզ անել խավարի գործեր, որպեսզի նա կարողանա կապել մեզ և հեռացնել արդարակեցության ուղուց: Բացատրեք, որ 2 Նեփի 26-ի վերջին հատվածները ցույց են տալիս տարբերությունը Սատանայի և Աստծո ուղիների միջև: Ուսանողներին խնդրեք մտքում կարդալ 2 Նեփի 26.23–24:

- Համաձայն այս հատվածների, ինչպե՞ս է գործում Տերը: Ո՞րն է Տիրոջ բոլոր գործերի նպատակը: (Կարող եք առաջարկել ուսանողներին նշել 2 Նեփի 26.24-ի այս մասը, որն ուսուցանում է, որ **Տերն անում է ամեն ինչ աշխարհի օգտի համար:**)

Ուսանողներին խնդրեք մի պահ մտածել այն ժամանակի մասին, երբ իրենց զգացել են հուսահատված կամ հեռացած Տիրոջից: Օգնելու համար ուսանողներին զգալ, որ Տիրոջ սիրո մասին Նեփիի ուղերձը վերաբերում է իրենց կյանքին, խնդրեք նրանց ուսումնասիրել 2 Նեփի 26.24–28, 33: Կարող եք առաջարկել նրանց նշել *բոլորին* և *ոչ մեկին* (բացի *ոչ մեկը* բառը, որը առաջին անգամ հանդիպում է հատված 33-ում): Մի քանի ռոպե տրամադրել ուսանողներին կրկին կարդալու նախադասությունները, որոնք պարունակում են այդ խոսքերը:

Խնդրեք յուրաքանչյուր ուսանողի շրջվել դեպի դասարանի մեկ այլ անդամը և հակիրճ քննարկել, թե ինչ ենք հասկանում այդ հատվածներից: Երբ ուսանողները միմյանց հետ կկիսվեն իրենց մտքերով, կարող եք հրավիրել մի քանի ուսանողի կիսվել իրենց քննարկումների հիմնական մտքերով: Այդ քննարկումների հիմնական մտքերից մեկը պետք է լինի այն, որ **Տերը սիրում է բոլոր մարդկանց և հրավիրում է բոլորին գալ դեպի Իրեն և ճաշակել Իր փրկությունից:** Դուք կարող

**Հրավիրել ուսանողներին գործել**

Արդյունավետ ուսուցանումը, սովորաբար, ներառում է գործելու հրավեր՝ ուսուցանված սկզբունքների հիման վրա: Եթե ավետարանի սկզբունքը սովորում, սակայն չեն օգտագործում, ուսումը լիարժեք չէ: Գործելու հրավերները կարող են գալ ուսուցչի կողմից, իսկ ավելի զորեղ են, երբ գալիս են Սուրբ Հոգու կողմից:

եք գրել այդ նախադասությունը գրատախտակին: Կարող եք նաև հրավիրել ուսանողներին գրել հետևյալ հարցերի պատասխանները իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային տետրերում.

- Ե՞րբ եք դուք զգացել Տիրոջ բարությունը ձեր կյանքում:
- Ինչպե՞ս ձեզ կօգնի գիտելիքը, որ Տերը սիրում է բոլոր մարդկանց և հրավիրում է բոլորին գալ դեպի Իրեն:

Ավարտելու համար հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 26.25, 33: Նրա կարդալուց առաջ առաջարկեք, որ ուսանողները նշեն այն արտահայտությունները, որոնք քաջալերում են իրենց: Օգնելու համար ուսանողներին տեսնել այդ հատվածներում լրացուցիչ կիրառում, կարդացեք Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի հայտարարությունը.

«Ես հույս ունեմ, որ մենք կողջունենք և կսիրենք Աստծո բոլոր զավակներին, ներառյալ նրանց, ովքեր այլ կերպ են հագնվում, տարբերվում են իրենց արտաքին տեսքով, այլ ձևով են խոսում կամ գործում: Լավ չէ ցույց տալ մյուսներին, որ իրենք թերի են: Եկեք բարձրացնենք մեր շուրջը գտնվողներին: Եկեք մեկնենք ողջույնի ձեռք: Եկեք պարգևենք Եկեղեցու մեր եղբայրներին և քույրերին մարդասիրության, կարեկցանքի և գթության հատուկ բաժին, որպեսզի նրանք զգան, որ գտել են վերջապես իրենց տունը: . . .

Ճիշտ և պատշաճ է միայն, երբ մենք ուրիշներին տալիս ենք այն, ինչ մեծապես ցանկանում ենք ինքներս մեզ համար:

Ես չեմ առաջարկում, որ մենք ընդունենք մեղքը կամ անտեսենք չարը՝ մեր անձնական կյանքում կամ աշխարհում: Սակայն, մեր եռանդի մեջ, մենք երբեմն շփոթում ենք մեղքը մեղավորի հետ, և այնքան արագ ենք դատապարտում և այնքան քիչ կարեկցանք ցուցաբերում: . . .

. . . Թող մեր սրտերը և ձեռքերը կարեկցանքով մեկնված լինեն դեպի մյուսները, քանզի յուրաքանչյուրը անցնում է իր ուրույն դժվարին ճանապարհով» (“You Are My Hands,” *Ensign,* May 2010, 68–69):

- Ի՞նչ ճանապարհներով մենք կարող ենք կիրառել 2 Նեփի 26.33-ի և Նախագահ Ուխդորֆի ուսմունքները:

Խնդրեք ուսանողներին մտածել, թե ինչպես կարող են հասնել կարիքավորներին և օգնել նրանց զգալ Տիրոջ սերը:

## Ուսուցանման լրացուցիչ միտք

### 2 Նեփի 26.29–31: Նեփին նախազգուշացնում է քահանայանենգության մեղքի դեմ

Գրեք հետևյալ անունները գրատախտակին. *Շերեմ, Նեհոր, Կորիհոր:* Հարցրեք ուսանողներին, թե ինչ գիտեն այդ մարդկանց մասին: Եթե ուսանողները դժվարանում են պատասխանել, համառոտ բացատրեք, որ այդ մարդիկ փորձում էին հեռացնել մարդկանց Հիսուս Քրիստոսի հավատքից: Նրանք քահանայանենգության մեղքի տակ էին:

Նեփին զգուշացնում էր իր ժողովրդին և մեզ՝ վերջին օրերին ապրողներիս, քահանայանենգության դեմ: Մի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 26.29–31: Խնդրեք դասարանին լսել քահանայանենգության սահմանումը:

- Ո՞րն է քահանայանենգության մեջ ներգրավված մարդկանց նպատակը:

Երեց Մ. Ռասսել Բալլարդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, զգուշացրել է, որ քահանայանենգությունը կարող է առաջանալ Եկեղեցում: Մի ուսանողի խնդրեք կարդալ նրա խորհուրդը.

«Եկեք տեղյակ լինենք կեղծ մարգարեներից և կեղծ ուսուցիչներից՝ տղամարդ, թե կին, ովքեր ինքնակոչ հայտարարում են Եկեղեցու վարդապետությունների մասին և ձգտում տարածել իրենց կեղծ ավետարանը և գրավել հետևորդներ, հովանավորելով քննարկումներ, գրքեր և ամսագրեր, որոնց բովանդակությունը կասկածի տակ է դնում Եկեղեցու վարդապետությունները: Տեղյակ եղեք նրանցից, ովքեր խոսում և հրատարակում են ընդդեմ Աստծո ճշմարիտ մարգարեների, ովքեր ակտիվորեն քարոզում են մյուսներին՝ անհոգությամբ անտեսելով նրանց բարօրությունը, ում խաբեության մեջ են գցում: Մորմոնի Գրքից Նեհորի և Կորիհորի նման նրանք ապավինում են ուրիշներին խաբելու և իրենց տեսակետների կողմնակիցները դարձնելու խորամանկ ուղիներին: Նրանք «իրենց բարձր են դնում՝ իբրև մի լույս աշխարհի համար, որ կարողանան շահ և գովասանք ստանալ աշխարհից. սակայն նրանք չեն փնտրում Սիոնի բարօրությունը» (2 Նեփի 26.29)» (“Beware of False Prophets and False Teachers,” *Ensign*, Nov. 1999, 63):

- Ինչպե՞ս կարող են Եկեղեցու անդամները ընկնել քահանայանենգության ծուղակը:
- Համաձայն 2 Նեփի 26.30-ի, ի՞նչը կարող է կանխել քահանայանենգությունը: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ մենք կարող ենք խուսափել քահանայանենգության մեղքից, եթե գթություն ունենանք բոլոր մարդկանց հանդեպ:)

ԴԱՍ 37

# 2 Նեփի 27

## Նախաբան

Հաճախ հղում կատարելով Եսայիայի խոսքերին, Նեփին մարգարեանում էր, որ Տերը վերջին օրերին կանի «զարմանալիք և զարմանք»: Այդ զարմանալի գործը կլինի Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնումը: Նեփիի մարգարեության առանցքը Մորմոնի Գրքի աշխարհ գալն է: Նեփին կանխատեսում էր, որ վկաները կտեսնեն Մորմոնի Գիրքը և կվկայեն դրա ճշմարտացիության մասին: Նա նաև մարգարեացավ Մորմոնի Գրքի հիմնարար դերի մասին վերջին օրերին Տիրոջ աշխատանքում, որ դա զարմանալի պարգև է լինելու աշխարհին: (*Նշում.* 2 Նեփի 27 սերտորեն զուգահեռ է գնում Եսայիա 29-ին: Աստվածաշնչի Վերջին Օրերի Սրբերի հրատարակման մեջ Եսայիա 29-ի էջատակի ծանուցումները օգտակար մտքեր են տրամադրում երկու այդ գլուխներն ուսումնասիրելու համար:)

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 27.1–5

*Նեփին մարգարեանում է, որ վերջին օրերին երկիրը կլցվի ամբարշտությամբ:*

Ցուցադրեք հետևյալ առարկաները. Օծանելիքի անոթ, ատամի մածուկ և օճառ: Բացատրեք, որ յուրաքանչյուր առարկան ծառայում է որպես մի խնդրի լուծում: Խնդրեք ուսանողներին գտնել խնդիրը, որի լուծման համար նախատեսված է յուրաքանչյուր առարկան: (Կարող եք ընտրել այլ առարկաներ, որոնք լուծումներ կհանդիսանան որոշակի խնդիրների համար:)

Բացատրեք, որ Նեփիի մարգարեությունը 2 Նեփի 27-ում այն խնդիրների մասին է, որոնք գոյություն կունենան մեր օրերում: Նա ուսուցանում էր, որ մարդիկ կսայթակեն հոգեպես իրենց ամբարշտության պատճառով, որ նրանք կտառապեն հոգևոր կուրությունից, և որ նրանք կմերժեն մարգարեներին: Նեփին նաև մարգարեացավ այն մասին, թե ինչ կանի Աստված՝ այդ խնդիրները լուծելու համար:

Մի քանի ուսանողի խնդրեք հերթով բարձրաձայն կարդալ 2 Նեփի 27.1–5: Դասարանին խնդրեք գտնել խոսքերը և արտահայտությունները, որոնք նկարագրում են վերջին օրերի որոշ խնդիրները: Մի քանի ուսանողի խնդրեք կիսվել իրենց գտած արտահայտություններով: Օգնելու համար ուսանողներին վերլուծել այդ արտահայտությունները, կարող եք տալ հետևյալ հարցերը.

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում լինել «հարբած անօրինությամբ»:
- 2 Նեփի 27.3-ում վերջին օրերի որոշ մարդիկ նմանեցվում են սոված մարդու, որը երազում է ուտելու մասին, կամ ծարավ մարդու, որը երազում է խմելու մասին, սակայն արթնանում է և տեսնում, որ իր հոգին դատարկ է: Ի՞նչ մենք կարող ենք սովորել սրանից: (Երազում ուտելը կամ խմելը չի տալիս տևական բավարարվածություն և ոչինչ չի տալիս, քանի որ քաղցը կամ ծարավը մնում են երազից հետո: Նմանապես, նրանք, ովքեր «կռվում են Սիոնի դեմ» չեն ունենա տևական բավարարվածություն, ոչ էլ կհասնեն որևէ իմաստալից բանի:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «դուք փակել եք ձեր աչքերը» արտահայտությունը:

Օգնելու համար ուսանողներին գտնել ավետարանի ճշմարտությունները 2 Նեփի 27.1–5-ում, խնդրեք նրանց անփոփել այն, ինչ իրենք սովորեցին այդ հատվածներից: Նրանց պատասխանները գրեք գրատախտակին: Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ **վերջին օրերին շատ մարդիկ լցված կլինեն ամբարշտությամբ և կմերժեն մարգարեներին:**

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր իմանալ այդ մարգարեության և դրա իրականացման մասին:

***Հարցեր, որոնք տանում են վերլուծության***

Վերլուծություն պահանջող հարցերի օգնությամբ դուք կարող եք խրախուսել ուսանողներին մտածել այն հատվածների իմաստների մասին, որոնք իրենք ուսումնասիրում են: Դուք, սովորաբար, պետք է տաք այդ հարցերը նրանից հետո, երբ ուսանողները ծանոթանում են այդ հատվածների հետ: Վերլուծական հարցերը հաճախ սկսվում են այսպիսի արտահայտություններով. «Ի՞նչ եք մտածում» կամ «ինչո՞ւ եք մտածում»: Օրինակ, դուք կարող եք հարցնել. «Ի՞նչ եք մտածում այս (արտահայտության կամ խոսքի) իմաստի մասին»:

## 2 Նեփի 27.6–23

### *Նեփին մարգարեանում է Մորմոնի Գրքի աշխարհ գալու մասին*

Ուսանողներին խնդրեք մտքում կարդալ 2 Նեփի 27.6–7: Խնդրեք նրանց գտնել, թե ինչ է Տերը տալու որպես օգնություն մարդկանց՝ վերջին օրերին հոգևոր խնդիրները լուծելու համար:

- Ի՞նչ է տալու Տերը:
- Ի՞նչ է պարունակելու գիրքը:
- Ձեր կարծիքով, ո՞ր գիրքն է նկարագրվում այս տողերում: (Օգնելու համար ուսանողներին պատասխանել այս հարցին, կարող եք առաջարկել, որ նրանք օգտվեն սուրբ գրությունների հղումներից 2 Նեփի 27.6-ում, էջատակի ծանուցում *բ:* Կարող եք նաև բացատրել, որ «նրանց, որոնք ննջել են» արտահայտությունը վերաբերում է մահացած մարգարեներին, ովքեր վարում էին հիշատակարանները, որոնք հետագայում դարձան Մորմոնի Գիրքը:)

Ցույց տվեք Մորմոնի Գիրքը: Բացատրեք, որ Տերը աշխարհին տալիս է այդ գիրքը՝ օգնելու համար շտկել վերջին օրերի խնդիրները և լույս պարգևել խավարած աշխարհին: Տերը հնադարյան մարդկանց հայտնել է Մորմոնի Գրքի աշխարհ գալու մանրամասները: Նեփին գրի է առել այդ մանրամասները 2 Նեփի 27-ում: Բացատրեք, որ նմանատիպ մարգարեություն կարելի է գտնել Եսայիա 29-ում: (Կարող եք բացատրել, որ որոշ մարդիկ հարցականի տակ էին դնում Մորմոնի Գիրքը, հարցնելով, թե ինչու Աստվածաշնչում այն չի նշվում: Նշեք, որ Եսայիա 29-ի մարգարեությունը ցույց է տալիս, որ Աստվածաշունչը իրականում վկայում է Մորմոնի Գրքի մասին:)

Մի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 27.12–14: Դասարանին խնդրեք գտնել, թե ում թույլ կտրվեր տեսնել գիրքը, ըստ Նեփիի խոսքերի:

- Ովքե՞ր էին երեք վկաները, որոնց թույլ տրվեց տեսնել Մորմոնի Գիրքը՝ «Աստծո զորությամբ»: (Օլիվեր Քաուդերի, Դեյվիդ Վիթմեր և Մարտին Հարիս: Տես «Երեք վկաների վկայությունը», Մորմոնի Գիրք:)

Նշեք, որ Նեփին հիշատակում է «մի քանի» այլոց, որոնց նույնպես թույլ տրվեց տեսնել գիրքը:

- Ձեր կարծիքով, ովքե՞ր էին այդ մյուս վկաները: (Կարող եք հիշեցնել ուսանողներին Մորմոնի Գրքի ութ լրացուցիչ վկաների մասին: Տես «Ութ վկաների վկայությունը», Մորմոնի Գիրք:)

Նշեք, որ 2 Նեփի 27.14 նշում է, որ Տերը «կհաստատի իր խոսքն այնքան շատ վկաների բերանով, որքան նրան բարի կթվա»:

- Ձեր կարծիքով, ի՞նչ ի նկատի ուներ Նեփին, ասելով, որ վկաները կհաստատեն Աստծո խոսքը: (Նրանք, ովքեր ստանում և ընդունում են Աստծո խոսքը Մորմոնի Գրքի միջոցով, կկիսվեն մյուսների հետ և կվկայեն դրա ճշմարտացիության մասին:)
- Ովքե՞ր կարող են լինել այդ վկաները:
- Օգնելու համար ուսանողներին հասկանալ, որ իրենց նույնպես կարող են լինել Մորմոնի Գրքի ճշմարտացիության վկաները, կարող եք նրանց հրավիրել գրել իրենց անունները 2 Նեփի 27.14-ի կողքին՝ լուսանցքում: Ինչպե՞ս կարող է Եկեղեցու յուրաքանչյուր անդամ, դուք այդ թվում, օգնել հաստատել Մորմոնի Գրքի մասին ճշմարտությունը:
- Ե՞րբ եք կիսվել Մորմոնի Գրքի մասին ձեր վկայությամբ ուրիշների հետ:

Նախորդ դասերից մեկում, դուք, հնարավոր է, խրախուսել եք ուսանողներին կիսվել որևէ մեկի հետ Մորմոնի Գրքի մասին վկայությամբ: Եթե այդպես է, ապա ստուգեք, թե ինչպես է կատարվել այդ հանձնարարությունը, հրավիրելով մի քանի ուսանողի կիսվել իրենց կատարած գործերով: Խրախուսեք ուսանողներին շարունակել փնտրել հնարավորություններ Մորմոնի Գրքի մասին ուրիշների հետ իրենց վկայություններով կիսվելու համար, ներառյալ նրանց հետ, ովքեր այլ հավատքների են պատկանում:

Հետևյալ աղյուսակը արտագրեք գրատախտակին: (Ժամանակ խնայելու համար կարող եք անել դա դասը սկսելուց առաջ:)

***Հետևեք կատարմանը***

Ժամանակ առ ժամանակ խնդրեք ուսանողներին զեկուցել անցած հրավերների և հանձնարարությունների կատարման մասին: Սա թույլ է տալիս ուսանողներին կիսվել իրենց դրական փորձառություններով, նաև խրախուսում է որոշ ուսանողների հետևողական լինել ձեր տված առաջադրանքների կատարման հարցում: Դա նույնպես թույլ է տալիս ձեզ հատուկ ուշադրություն դարձնել այն լավ բաներին, որոնք կատարվում են ուսանողների հետ, երբ նրանք կատարում են հրավերները և հանձնարարությունները:

| | Նեփիի մարգարեությունը այն մասին, թե ինչ կանի մարդը | Մարդու անունը | Մարգարեության իրականացումը Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.63–65 |
|---|---|---|---|
| 1-ին մարդ («չսովորեց»)<br>2 Նեփի 27.9, 15, 19 | | | |
| 2-րդ մարդ («այլ»)<br>2 Նեփի 27.15, 17 | | | |
| 3-րդ մարդ («սովորեց»)<br>2 Նեփի 27.15–18 | | | |

Բաժանեք ուսանողներին զույգերի: Բացատրեք, որ յուրաքանչյուր զույգ կուսումնասիրի մի մարգարեություն Մորմոնի Գրքի աշխարհ գալու, ինչպես նաև այդ մարգարեության իրականացման մասին: Խնդրեք ուսանողներին արտագրել աղյուսակը իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերի մեջ կամ դասարանային տետրերի մեջ, և գրեք պատասխանները, օգտվելով տրված սուրբ գրությունների հղումներով: (Կարող եք բացատրել, որ *գրեր* բառը Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.63–65-ում, վերաբերում է գրառումներին, որոնք փորագրվել էին ոսկե թիթեղների վրա, որոնցից թարգմանվել է Մորմոնի Գիրքը:) Երբ ուսանողները ավարտեն, խնդրեք նրանց կիսվել իրենց պատասխաններով դասարանի հետ:

- Համաձայն 2 Նեփի 27.15-ի և Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.64-ի, ո՞վ է կրթված մարդը, ում Մարտին Հարիսը տարավ գրքի խոսքերը: (Չարլզ Էնթոն)
- Ինչպե՞ս կարող է մեկն առանց կանոնավոր կրթության, ինչպես Ջոզեֆ Սմիթն էր, ավելի լավ համապատասխաներ Մորմոնի Գրքի թարգմանության համար, քան Չարլզ Էշթոնի նման գիտակ մի մարդ:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 27.20–21, փնտրելով ամեն տողում կրկնվող արտահայտությունը: («Ես ի վիճակի եմ անելու իմ սեփական գործը»:)

- Ի՞նչ է նշանակում «Ես ի վիճակի եմ անելու իմ սեփական գործը» արտահայտությունը ձեզ համար:
- Ինչպե՞ս է ավետարանի Վերականգնումը և Մորմոնի Գրքի աշխարհ գալը հավաստիացում ծառայում, որ Աստված ունակ է անելու Իր աշխատանքը:
- Ի՞նչ սկզբունքներ են ուսուցանվում այդ տողերում: (Երբ ուսանողները կիսվեն իրենց մտքերով, շեշտեք, որ **Մորմոնի Գրքի աշխարհ գալը մի եղանակ է, որով Աստված կկատարի Իր աշխատանքը վերջին օրերին:**)
- Ինչպե՞ս է այդ մարգարեության իրականացումը ամրացնում ձեր վկայությունը Մորմոնի Գրքի և դրա դերի մասին Տիրոջ Եկեղեցու Վերականգնման մեջ:

## 2 Նեփի 27.24–35

### *Նեփին մարգարեանում է Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի և Մորմոնի Գրքի դրական ազդեցության մասին*

Բարձրաձայն կարդացեք 2 Նեփի 27.24–26, մինչ ուսանողները կհետևեն իրենց սուրբ գրություններում:

- Դուք լսե՞լ եք այս խոսքերը նախկինում: Եթե այո, որտե՞ղ: (Եթե ուսանողները դժվարանում են պատասխանել, բացատրեք, որ Տերը նմանատիպ խոսքեր է օգտագործել, երբ խոսել է Ջոզեֆ Սմիթի հետ Սուրբ Պուրակում; տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.19:)

Պահեք այն իրերից մեկը, որը ցուցադրել եք այս դասի սկզբին, և հիշեցրեք ուսանողներին, որ այն ստեղծվել է որոշակի խնդիր լուծելու համար:

- 2 Նեփի 27.25-ում, ըստ Տիրոջ, ի՞նչ խնդիրներ գոյություն կունենան մարդկանց մեջ վերջին օրերին: (Կարող եք գրել ուսանողների պատասխանները գրատախտակին:)

Հիշեցրեք ուսանողներին վերջին օրերի հոգևոր այլ խնդիրների մասին, որոնք նշված են 2 Նեփի 27.5-ում: (Կարող եք ավելացնել գրատախտակի ցանկին *ամբարշտություն, հոգևոր կուրություն* և *մարգարեներին մերժելը*:)

- Ինչպե՞ս են օգնել Մորմոնի Գիրքը և Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնումը լուծել այդ խնդիրները:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 27.29–30, 34–35, գտնելով, թե ինչ է Տերն ասել այն մասին, թե ինչպես վերականգնված ավետարանը և Մորմոնի Գիրքը կօրհնեն մարդկանց վերջին օրերին: Մի ուսանողի խնդրեք գրել այդ օրհնությունները գրատախտակին:

- Համաձայն 2 Նեփի 27.29-ի Մորմոնի Գիրքը կօգնի, որ «կույրերի աչքերը տեսնեն մթությունից և խավարից»: Ձեր կարծիքով, ի՞նչ է սա նշանակում:

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ **Մորմոնի Գիրքը և Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը ուրախություն և հասկացողություն են բերում նրանց, ովքեր կուսումնասիրեն և կընդունեն դրանք:** Ուսանողներին խրախուսեք գտնել իրենց խնդիրների լուծումները Մորմոնի Գրքում և կիսվել Մորմոնի Գրքի մասին իրենց վկայություններով մյուսների հետ:

ԴԱՍ 38

# 2 Նեփի 28

## Նախաբան

Նեփին մարգարեացավ վերջին օրերի որոշ դժվարին պայմանների մասին, ներառյալ կեղծ ուսմունքների և շատ եկեղեցիների հպարտության մասին, որոնք կառուցվելու էին: Նա ուսուցանեց, թե ինչպես զանազանել կեղծ վարդապետությունները և աշխարհիկ մոտեցումները, և նա նախազգուշացրեց ուղիների մասին, որոնցով Սատանան կփորձի շեղել մեզ արդարությունից:

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 28.1–19

*Նեփին նկարագրում է մեր օրերի կեղծ եկեղեցիները և կեղծ գաղափարները*

Գրատախտակի վրա նկարեք նախազգուշացնող նշաններ, որոնք ընդունված են ձեր մշակույթում: Օրինակ, դուք կարող եք նկարել ճանապարհային նշան կամ խորհրդանիշ, որը ցույց է տալիս, որ տվյալ նյութը վտանգավոր է կամ թունավոր:

- Ո՞րն է այս նշանների նպատակը:

Բացատրեք, որ Մորմոնի Գիրքը կարող է օգնել մեզ տեսնել հոգևորապես վտանգավոր ազդեցությունների նախազգուշացնող նշանները: Նախագահ Էզրա Թավտ Բենսոնը բացատրել է, որ Մորմոնի Գրքի նպատակներից մեկն է բացահայտել, թե ինչպես հակառակորդը և Եկեղեցու այլ թշնամիները կաշխատեն վերջին օրերում: Հրավիրեք մի ուսանողի կարդալ Նախագահ Բենսոնի հետևյալ խոսքերը.

«Մորմոնի Գիրքը բացահայտում է Քրիստոսի թշնամիներին: Այն բացահայտում է կեղծ վարդապետությունները: . . . Այն ամրացնում է Քրիստոսի խոնարհ հետևորդներին մեր օրերում դևի չար ծրագրերի, մեթոդների և վարդապետությունների դեմ պայքարում: Մորմոնի Գրքի ուրացողները նման են մեր օրերի ուրացողներին» (“The Book of Mormon Is the Word of God,” *Ensign*, Jan. 1988, 3):

- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը բացահայտում Քրիստոսի թշնամիներին: (Այն ներառում է արձանագրություններ այն մարդկանց վերաբերյալ, ովքեր փորձել են ուրիշներին հեռացնել Քրիստոսին հավատալուց: Այն մեզ թույլ է տալիս տեսնել նրանց սխալները և կեղծ գաղափարները:)
- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը ամրացնում մեզ հակառակորդի դեմ պայքարում:

Վկայեք, որ **Մորմոնի Գիրքը բացահայտում է դևի կեղծ գաղափարները և ամրացնում է մեզ նրա չար ծրագրերի դեմ պայքարում:** Բացատրեք, որ 2 Նեփի 28–ում ուսանողները կտեսնեն սրա օրինակը: Այս գլուխը պարունակում է վերջին օրերի վերաբերյալ Նեփիի մարգարեություններից մեկը: Այս մարգարեությունում Նեփին նախազգուշացրեց կեղծ ուսմունքների մասին, որոնք լայն տարածում կգտնեն մեր օրերում:

**2 Նեփի 28.7–9**
սերտման սուրբ գրություն է: Դասի վերջում անդրադարձեք ուսուցանված գաղափարին, որ օգնեք ուսանողներին սերտել այս հատվածները:

Հրավիրեք ուսանողներին մտքում քննել 2 Նեփի 28.3–9-ը, փնտրելով Նեփիի նախազգուշացումները կեղծ ուսմունքների վերաբերյալ: Նշեք, որ 2 Նեփի 28.7–9-ը սերտման համար նախատեսված հատված է: Դուք պետք է խրախուսեք ուսանողներին նշել այս հատվածը առանձնակի ձևով, որպեսզի նրանք կարողանան այն հեշտությամբ գտնել: Հատվածն ուսումնասիրելու համար ուսանողներին բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո մի քանի ուսանողների հրավիրեք գրատախտակի մոտ: Խնդրեք նրանցից յուրաքանչյուրին այս հատվածներից գրել մեկ կեղծ ուսմունք կամ գաղափար, ներառյալ հատվածը, որտեղ այն գտնվում է: Ապա հարցրեք մնացած ուսանողներին, թե արդյոք նրանք նկատել են այլ կեղծ ուսմունքներ կամ գաղափարներ այս հատվածներում: Եթե այո, հրավիրեք նրանց ավելացնել այն գրատախտակին գրվածներին:

Որպեսզի օգնեք ուսանողներին քննարկել այս կեղծ վարդապետություններից և գաղափարներից մի քանիսը, տվեք հետևյալ հարցերը.

- Որո՞նք են այս կեղծ գաղափարների մեր ժամանակների օրինակները: (Այնպես արեք, որ չնշվեն առանձին եկեղեցիների անուններ, երբ նրանք պատասխանեն այս հարցին:)
- Ինչպե՞ս է այս կեղծ գաղափարը խոչընդոտում, որ մարդիկ հետևեն մեր Երկնային Հոր ծրագրին:

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 28.12–14: Հրավիրեք դասարանին փնտրել Նեփիի նախազգուշացումներն այն բանի վերաբերյալ, թե ինչ կպատահի շատ եկեղեցիների և մարդկանց հետ վերջին օրերում հպարտության և կեղծ վարդապետությունների պատճառով:

- Ի՞նչ ազդեցություն են ունենում մարդկանց վրա հպարտությունը և կեղծ ուսմունքները:
- Ինչո՞ւ «Քրիստոսի խոնարհ հետևորդները» չեն շեղվում հպարտության և ամբարշտության պատճառով: Ինչպե՞ս մենք կրող ենք խուսափել «մարդկանց ցուցումների» պատճառով մոլորվելուց: (Դուք կարող եք բացատրել, որ «մարդկանց ցուցումներ» արտահայտությունը վերաբերվում է մարդկանց ուսմունքներին՝ ի տարբերություն Տիրոջ ուսմունքների:)

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 28.15–16, 19՝ փնտրելով կեղծ ուսմունքների հետևանքները:

- Ի՞նչ բառեր կամ արտահայտություններ եք դուք տեսնում այս հատվածներում, որոնք նկարագրում են հպարտության և կեղծ ուսմունքների հետևանքները:

## 2 Նեփի 28.20–32

### *Նեփին նախազգուշացնում է այն մասին, թե ինչպես է Սատանան փորձում մոլորեցնել մեզ*

Ուսանողների հետ կիսվեք հետևյալ պատմությամբ.

Որոշակի հանձնարարությամբ Աֆրիկայում գտնվելու ժամանակ Նախագահ Բոյդ Ք. Փաքերը գնացել էր արգելանոց կենդանիներ տեսնելու: Նա նկատել էր, որ կենդանիները ջրարբի ծանծաղների մոտ անհանգիստ էին: Երբ նա հարցրել էր էքսկուրսավարին, թե ինչու կենդանիները ջուր չէին խմում, էքսկուրսավարն ասել էր, որ դրա պատճառը կոկորդիլոսներն էին: Նախագահ Փաքերը հիշում է.

«Ես կարծեցի, թե նա կատակ էր անում և լրջորեն հարցրեցի նրան. «Ո՞րն է խնդիրը»: Նա կրկին պատասխանեց. «Կոկորդիլոսները»: . . .

Նրա համար ակնհայտ էր, որ ես չհավատացի իրեն և իմ կարծիքով որոշեց ինձ դաս տալ: Մենք գնացինք մեկ այլ վայր, որտեղ մեքենան կանգնեց մի ցեխոտ փոսի վերևում, որտեղից մենք կարող էինք ցած նայել: «Ահա»,- ասաց նա: «Ինքներդ տեսեք»:

Բացի ցեխից, մի քիչ ջրից և անհանգիստ կենդանիներից ես ուրիշ ոչինչ չէի տեսնում: Ապա հանկարծ ես տեսա դրան՝մի մեծ կոկորդիլոս, որ տեղավորվել էր ցեխի մեջ, սպասելով, որ մի կենդանի այնքան կծարավի, որ կգա ջուր խմելու:

Ես հանկարծ սկսեցի հասկանալ: Երբ նա տեսավ, որ ես կամենում էի լսել, նա շարունակեց իր դասը: «Կոկորդիլոսներ արգելոցում ամենուր կան,- ասաց նա,-ոչ միայն գետերում: Մենք չունենք ոչ մի ջրափոս, որ մոտակայքում կոկորդիլոս չլինի, և դուք լավ կանեք, որ հաշվի առնեք դա»: . . .

Աֆրիկա կատարած մեկ այլ ճամփորդության ժամանակ ես քննարկեցի այս փորձառությունը մեկ այլ արգելոցի աշխատողի հետ: . . .

Նա այնուհետև ցույց տվեց ինձ մի վայր, որտեղ ողբերգություն էր պատահել: Անգլիայից մի երիտասարդ աշխատում էր հյուրանոցում: Չնայած մշտական և կրկնվող նախազգուշացումներին, նա անցավ արգելափակող ցանկապատից, որ ինչ որ բան ստուգեր դիմացի ծանծաղուտում, ուր ջուրը չէր ծածկում նրա թենիսի կոշիկները:

«Նա չէր հասցրել երկու քայլ անել,- ասաց աշխատողը,- երբ կոկորդիլոսը բռնեց նրան, և մենք ոչինչ չկարողացանք անել նրան փրկելու համար»» (“Spiritual Crocodiles,” *Ensign*, May 1976, 30–31):

***Պատմությունների օգտագործումը***

Պատմությունը կարող է օգնել քաջալերել ուսանողներին հետաքրքրություն առաջացնելով և օգնելով նրանց մասնակցել սովորելու ընթացքին ուրիշների փորձառությունները լսելու միջոցով: Պատմությունները կարող են նաև օգնել ուսանողներին տեսնել, թե ինչպես են ավետարանի սկզբունքները կիրառվում մարդկանց կյանքում:

- Ի՞նչը պատճառ դարձավ, որ այս երիտասարդ տղան դառնար կոկորդիլոսի զոհը: Ինչպե՞ս նա կարող էր խուսափել այդ ողբերգությունից: (Հնազանդվելով իրեն տրված նախազգուշացումներին:)

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Նախագահ Փաքերի հետևյալ խորհուրդը.

«Կյանքում ձեզանից առաջ ապրածները մի փոքր փորձ ունեն ջրափոսերի հետ կապված և նախազգուշացնում են կոկորդիլոսների մասին: Ոչ միայն մեծ, մոխրագույն մողեսները, որ կարող են ձեզ մասնատել, այլ *հոգևոր կոկորդիլոսները* նույնիսկ շատ ավելի վտանգավոր են և ավելի խաբուսիկ ու ավելի քիչ տեսանելի, քան այն լավ քողարկված կոկորդիլոսներն Աֆրիկայում:

Այս հոգևոր կոկորդիլոսները կարող են սպանել կամ խեղել ձեր հոգիները: Դրանք կարող են զրկել ձեզ ձեր հոգու խաղաղությունից և նրանց հոգու խաղաղությունից, ովքեր սիրում են ձեզ: Դա այն բաներն են, ինչից պետք է նախազգուշանալ, և այժմ դժվար թե լինի մի ջրափոս ողջ մահկանացու կյանքում, որ լի չլինի դրանցով» (“Spiritual Crocodiles,” 31):

- Նախագահ Փաքերի պատմության կոկորդիլոսները ինչո՞վ են նման Սատանայի գայթակղություններին և մարտավարություններին: Ի՞նչ նախազգուշացումներ ենք մենք ստանում, որ օգնում են մեզ խուսափել հոգևոր վտանգից:

Բարձրաձայն կարդացեք 2 Նեփի 28.19, մինչ ուսանողները հետևում են ձեզ: Ապա գրատախտակին գրեք *Սատանան փնտրում է հափշտակել մեզ իր զորության մեջ . . .*

Բացատրեք, որ երբ Նեփին շարունակեց իր մարգարեությունը, նա խոսեց մարտահրավերների մասին, որ Սատանան կօգտագործի մեր դեմ վերջին օրերում: Ուսանողներին զույգերի բաժանեք: Հրավիրեք յուրաքանչյուր զույգին կարդալ 2 Նեփի 28.20–29, փնտրելով եղանակներ, որ ավարտեն գրատախտակին գրված նախադասությունը:

Մի քանի րոպե հետո հրավիրեք զույգերին, որ զեկուցեն, թե ինչպես են նրանք լրացրել գրատախտակին գրված նախադասությունը: Որպես այս քննարկման մի մաս, համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ **Սատանան օգտագործում է շատ մարտահրավերներ, փորձելով հաղթել մեզ, օրինակ՝ մեզ բարկության դրդելով, խաղաղեցնելով մեզ և հանդարտեցնելով մեզ, և մեզ շողոքորթելով:**

- Որո՞նք են որոշ օրինակներն այն բանի, որ Սատանան փորձում է «դրդել [մարդկանց] բարկության ընդդեմ նրա, ինչը բարի է»: Ինչպե՞ս է բարկությունը շփոթեցնում մարդկանց, թե որն է բարին և որն է չարը:
- Ձեր կարծիքով ինչո՞ւ է վտանգավոր մարդկանց համար «անհոգ լինել Սիոնում», կարծելով, որ ոչ մի առաջխաղացման կարիք չկա: Ձեր կարծիքով, ինչո՞ւ Սատանան կարող է նման մարդկանց առաջնորդել «զգուշորեն վար՝ դեպի դժոխք»:
- Ի՞նչ է նշանակում մեկին շողոքորթել: (Կեղծ ձևով գովաբանել և հաճոյախոսություն անել:) Ձեր կարծիքով, ինչո՞ւ շողոքորթելը կարող է որոշ մարդկանց հեռացնել Տիրոջից:
- Ինչո՞ւ է Սատանան փորձում մարդկանց համոզել, որ նա գոյություն չունի:
- Ի՞նչ կարող ենք մենք անել բարկությունից պաշտպանվելու համար: Ինչպե՞ս մենք կարող ենք պաշտպանվել այն զգացողությունից, որ ամեն ինչ լավ է: Ինչպե՞ս մենք կարող ենք պաշտպանվել շողոքորթությունից:

Դասի վերջում տեղեկացրեք ուսանողներին, որ 2 Նեփի 28-ի վերջաբանը պարունակում է վերջնական նախազգուշացում և հավաստիացում Տիրոջ կողմից: Ուսանողներին հրավիրեք մտքում կարդալ 2 Նեփի 28.30–32:

- Տերը հարգում է մեր ընտրելու իրավունքը և Նրանից սովորելու մեր ջանքերը: Համաձայն 2 Նեփի 28.30-ի, Նա սովորեցնում է մեզ «տող առ տող, ցուցում առ ցուցում»: Ի՞նչ է դա նշանակում ձեր համար: Համաձայն այս հատվածի, ի՞նչ է պատահում նրանց հետ, ովքեր ասում են. «Մենք բավականաչափ ունենք»:
- 2 Նեփի 28.32-ում Տերն Իր խոսքն ուղղում է այն մարդկանց, ովքեր ուրացել են Նրան: Այս հատվածում ձեր կարծիքով ի՞նչ ի նկատի ունի նա, երբ ասում է. «Ես կերկարացնեմ իմ բազուկը դեպի նրանց օր օրի»: (Այս հատվածում Տերը հայտնում է Իր ողորմածությունը և Իր ցանկությունը ամեն օր մեզ օգնելու համար,

երբ մենք փնտրենք հետևել Նրա կամքին, եթե մենք նույնիսկ Նրան մերժել ենք անցյալում: Օգնեք ուսանողներին հասկանալ, որ **Տերը ողորմած կլինի բոլոր մարդկանց հանդեպ, ովքեր կապաշխարեն և կգան Իր մոտ:**)

Գրատախտակին գրեք հետևյալը. *Այսօրվա սովորածի արդյունքում ես կ. . .*: Հրավիրեք ուսանողներին ավարտին հասցնել նախադասությունը իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային տետրերում, նկարագրելով, թե նրանք ինչ կանեն որպես 2 Նեփի 28 –ում տրված Նեփիի մարգարեության ուսումնասիրության արդյունք: Դուք կարող եք հրավիրել մի քանի ուսանողների կիսվել դասարանի հետ իրենց գրածով: Այնուամենայնիվ, համոզվեք, որ նրանք հասկանում են, որ իրենք չպետք է պարտավորված զգան մտքերով կամ փորձառություններով կիսվել, որոնք չափազանց անհատական են կամ գաղտնի:

Վկայեք, որ Տիրոջ կողմից առաջնորդություն և ուժ ստանալու շնորհիվ մենք կարող ենք հաղթահարել փորձությունը: Եվ նույնիսկ երբ մենք մեղք ենք գործում, Տերը ողորմած կլինի մեր հանդեպ, եթե մենք անկեղծորեն ապաշխարենք:

## Սերտման սուրբ գրություն. 2 Նեփի 28.7–9

Բացատրեք, որ մարդիկ երբեմն պատճառաբանում են իրենց մեղքը՝ իրենք իրենց ասելով, որ բոլորն էլ անում են դա կամ որ նրանք կարող են հետո ապաշխարել: Դասարանը բաժանեք փոքր խմբերի: Հրավիրեք խմբերին միասին կարդալ 2 Նեփի 28.7–9-ը, փնտրելով բառեր և արտահայտություններ, որ վերաբերվում են այս կեղծ գաղափարներին: Հրավիրեք ուսանողներին քննարկել հետևյալ հարցերը իրենց խմբերում (դուք կարող եք նախքան դասի սկսվելը հարցերը գրել գրատախտակին).

- Ո՞րն է «փոքր մեղք» գործելու վտանգը:
- Աստված կարդարացնի՞ մեր աննշան կամ ոչ հաճախակի կատարվող մեղքերը: (Լրացուցիչ մտքերի համար խնդրեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 1.31:)
- Ինչպե՞ս կարող է մարդը «օգուտ քաղել մեկից իր խոսքերի պատճառով»: Ինչպե՞ս մենք կարող ենք երբեմն «փոս փորել [մեր] հարևանի համար»:

Հրավիրեք յուրաքանչյուր խմբին ձևափոխած գրել հատվածները, օգտագործելով այն խոսելաձևը, որը մարդիկ կարող են օգտագործել այսօր՝ համոզելու երիտասարդներին հետևել այս անմիտ վարդապետություններին:

Խնդրեք ուսանողներին մտածել ժամանակների մասին, երբ նրանք պահպանել են իրենց հոգևոր ամրությունը անկախ դպրոցի, լրատվամիջոցների կամ ընկերների կեղծ գաղափարների: Հրավիրեք նրանց գրել այս փորձառությունների մասին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային տետրերում: Խնդրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց գրածով:

*Նշում.* Դուք կարող եք օգտագործել այս գաղափարը դասի ընթացքում, երբ ներկայացնեք սերտման սուրբ գրության հատվածը, կամ դուք կարող եք օգտագործել այն դասի վերջում:

ԴԱՍ 39

# 2 Նեփի 29–30

## Նախաբան

Նեփին մարգարեանում է վերջին օրերում Ավետարանի վերականգնման մասին, որը Տերն ասում է, որ լինելու է «մի զարմանալի գործ» (2 Նեփի 29.1): Նեփին վկայում է, որ վերջին օրերում բոլոր սուրբ գրությունները միասին կգործեն, որ ցույց տան, որ Աստված հիշում է Իր զավակներին: Նա մարգարեանում է, որ շատերը կմերժեն Մորմոնի Գիրքը, բայց ովքեր հավատան, կհավաքվեն Եկեղեցում: Նա նաև սովորեցրեց, որ Աստծո ուխտյալ ժողովուրդը նրանք են, ովքեր ապաշխարում են և հավատում Աստծո Որդուն:

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 29

*Նեփին մարգարեանում է, որ վերջին օրերում շատերը կմերժեն Մորմոնի Գիրքը*

Հրավիրեք ուսանողներին պատկերացնել, որ դպրոցում մի ընկեր անկեղծորեն հարցնում է. «Ինչո՞ւ մորմոններն ունեն մեկ այլ Աստվածաշունչ»: Դուք կարող եք խնդրել ուսանողներին ձեռք բարձրացնել, եթե նրանց տվել են նմանատիպ հարց: Ապա հրավիրեք մի քանիսին կիսվել, թե ինչպես են նրանք պատասխանել հարցին:

Բացատրեք, որ Նեփին որոշ պատասխաններ է տալիս այս հարցին, արձանագրելով Տիրոջ խոսքերը Մորմոնի Գրքի դերի վերաբերյալ վերջին օրերում ավետարանի Վերականգնման գործում, որը Տերը անվանում է «մի զարմանալի գործ»: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 29.1–2 և ներկայացնել, թե ինչ կանեն Տիրոջ խոսքերը վերջին օրերում: (Նրանք «առաջ կգնան» Նեփիի սերունդների կամ հետնորդների մեջ, և նրանք նաև «առաջ կսլանան մինչև աշխարհի ծայրերը»:) Նախագահ Էզրա Թավտ Բենսոնը բացատրել է, որ «մենք՝ Եկեղեցու անդամներս, և հատկապես միսիոներները, պետք է լինենք մինչև աշխարհի ծայրերը «առաջ սլացողները» կամ Մորմոնի Գրքի մասին պատմողները և վկայողները» (“The Book of Mormon Is the Word of God,” *Ensign*, May 1975, 65):

Բացատրեք, որ *դրոշ* բառը 2 Նեփի 29.2 –ում վերաբերվում է մի առարկայի, որն օգտագործվում է մարդկանց հավաքելու և միավորելու համար: Դրոշը համապատասխան նշանակություն ունի: (Տես *դրոշ* բառի բացատրությունը դաս 32-ում:)

- Համաձայն 2 Նեփի 29.2, ի՞նչն է «դրոշը», որ առաջ կգնա «մինչև աշխարհի ծայրերը», որ հավաքի Տիրոջ ժողովրդին: (Մորմոնի Գիրքը՝ Նեփիի սերնդի կամ հետնորդների խոսքերը:)
- Համաձայն 2 Նեփի 29.1–2, ի՞նչ նպատակով է Տերը պատրաստել լրացուցիչ սուրբ գրություն, որն է՝ Մորմոնի Գիրքը: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ **Տերը տալիս է սուրբ գրությունները որպես երկրորդ վկա և Իր ուխտում ժողովրդին հավաքելու համար:**)

Գրատախտակին գրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը (from *Christ and the New Covenant: The Messianic Message of the Book of Mormon* [1997], 4.):

> *«Մորմոնի Գիրքը այստեղ երկրի վրա Աստծո ուխտի և իր զավակների հանդեպ իր սիրո նշանավոր հայտարարություն է»: (Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ)*

Բացատրեք, որ 2 Նեփի 29-ում *Հեթանոսներ* բառը վերաբերվում է մարդկանց, ովքեր Իսրայելի տնից չեն: *Հրեաներ* բառը վերաբերվում է մարդկանց, ովքեր Իսրայելի տնից են, ներառյալ Լեքիի ընտանիքը և ժառանգները: Թող ուսանողները մտքում կարդան 2 Նեփի 29.3–6, փնտրելով, թե ինչպես կարձագանքեն որոշ հեթանոսներ լրացուցիչ սուրբ գրությունների հանդեպ:

- Ինչպե՞ս ոմանք կարձագանքեն լրացուցիչ սուրբ գրություններին:

- Ի՞նչ է Տերն ասել այն մարդկանց մասին, ովքեր կարձագանքեն այս ձևով:

Բացատրեք, որ Նեփին մարգարեացել է Մորմոնի Գրքի հանդեպ մարդկանց արձագանքները նկարագրելիս: Մարդիկ այսօր հաճախ կասկածներ են արտահայտում Մորմոնի Գրքի հանդեպ, քանի որ նրանք արդեն իսկ ունեն Աստվածաշունչը:

Հանձնարարեք ուսանողներին զույգերով ուսումնասիրել 2 Նեփի 29.7–11: Հրավիրեք նրանց գտնել Տիրոջ նպատակները, բացի Աստվածաշնչից, լրացուցիչ սուրբ գրություն տալու համար: Մի քանի րոպե հետո խնդրեք նրանց կիսվել, թե ինչ են նրանք գտել: Հնարավոր պատասխանները ներառում են, որ (1) Տերը հիշում է բոլոր մարդկանց և ուղարկում է Իր խոսքը բոլոր ազգերին (տես հատված 7). (2) Տերը բոլոր ազգերին հայտնում է նույն ուղերձը, և Մորմոնի Գիրքը Աստվածաշնչի ճշմարտությունների երկրորդ վկան է (տես հատված 8). (3) Տերը միշտ նույնն է, և Նա խոսում է Իր սեփական կամքով (տես հատված 9). (4) Աստծո գործը ավարտված չէ, և Նա կշարունակի խոսել, որ իրականացնի Իր գործը (տես հատված 9). (5) մարդիկ չպետք է ենթադրեն, որ Աստվածաշունչը պարունակում է Տիրոջ բոլոր խոսքերը, կամ որ Տերը գրել չի տվել ավելին (տես հատված 10). և (6) Տերը պատվիրում է բոլոր ազգերի մարդկանց գրի առնել Իր խոսքերը (տես հատված 11): Որպեսզի օգնեք ուսանողներին ամփոփել և կիրառել դասի այս մասում իրենց սովորածը, տվեք այս հարցերից մի քանիսը կամ բոլորը.

- Ինչպե՞ս կարող ենք օգտագործել 2 Նեփի 29-ը որպես լրացուցիչ սուրբ գրություն Մորմոնի Գրքի հետ կապված մտահոգությունները լուծելու համար:
- Ինչպե՞ս են այս հատվածները մեծացրել ձեր երախտագիտությունը Մորմոնի Գրքի հանդեպ:

Ուսանողներին կրկին բաժանեք զույգերի: Խնդրեք նրանց փորձել պատասխանել՝ «Ինչո՞ւ մորմոններն ունեն մեկ այլ Աստվածաշունչ» հարցին: Հրավիրեք մեկին տալ հարցը և մյուսը թող պատասխանի հարցին: Այնուհետև խնդրեք նրանց փոխվել դերերով և կրկնել զրույցը: Այս վարժության վերջում դուք կարող եք խրախուսել ուսանողներին մտածել իրենց ճանաչած մարդկանց մասին, ում համար կարող է օգտակար լինել այս սկզբունքների շուրջ զրուցելը և առաջնորդություն փնտրել Սուրբ Հոգու կողմից, թե ինչպես խոսեն այդ մարդկանց հետ:

Երբ դուք ավարտեք դասի այս մասը, համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ **Տերը հիշում է բոլոր մարդկանց և նրանց կուղարկի Իր խոսքերը:**

***Ուսանողների փորձերը***

Երբ դուք խնդրում եք ուսանողներին փորձել բացատրել ավետարանական ճշմարտություններ, դուք նրանց հնարավորություն եք տալիս ձեռք բերել ավելի խորը հասկացողություն այս ճշմարտությունների վերաբերյալ և նախապատրաստվել ուրիշներին ավետարանը ուսուցանելուն: (Հիշեք, որ այս ուսուցման մեթոդը չափավոր կերպով օգտագործեք: Ուսուցիչները չպետք է անտեսեն իրենց դերը և թույլ տան, որ ուսանողները ուսուցանեն դասը:)

## 2 Նեփի 30.1–8

### *Նեփին մարգարեանում է վերջին օրերում Մորմոնի Գրքի դերի վերաբերյալ*

Բացատրեք, որ ուսուցանելուց հետո, որ Աստված կհիշի Իսրայելի տանը, Նեփին զգուշացրեց իր ժողովրդին չմտածել, որ իրենք ավելի արդարակյաց էին, քան Հեթանոսները կլինեն: Նա նաև հիշեցրեց նրանց, որ բոլոր մարդիկ կարող են դառնալ Աստծո ուխտյալ ժողովուրդ: Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 30.2, և հրավիրեք դասարանին փնտրել երկու բան, որ մենք պետք է անենք Աստծո ուխտյալ ժողովրդի մասը կազմելու համար: Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով: Համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **մենք դառնում ենք Աստծո ուխտյալ ժողովրդի մի մասը, երբ մենք ապաշխարում ենք և հավատում Հիսուս Քրիստոսին:**

Բացատրեք, որ 2 Նեփի 30.3 –ում Նեփին նկարագրում է մի ուղի, որով Տերը ուխտի մեջ հավաքում է իր ժողովրդին վերջին օրերում: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 30.3 և ներկայացնել այս գործընթացը: (Տերն առաջ է ուղարկում Մորմոնի Գիրքը: Շատերը հավատում են դրան և կիսվում են դրանով ուրիշների հետ:) Դուք կարող եք նշել, որ Նեփին առանձնակի ձևով նշել է, որ Մորմոնի Գրքի բառերը առաջ կտարվեն դեպի «մեր սերնդի մնացորդը», նկատի ունենալով Լեքիի սերունդներին:

Խրախուսեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 30.4–8, փնտրելով արտահայտություններ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես մարդիկ կօրհնվեն, երբ նրանք ստանան Մորմոնի Գիրքը:

- Ի՞նչ եղանակներով կօրհնվեն Լեքիի սերունդները, երբ նրանք իմանան իրենց նախնիների մասին:

- Ի՞նչ են այս հատվածները սովորեցնում այն ազդեցության մասին, որ Մորմոնի Գիրքը կարող է ունենալ բոլոր մարդկանց վրա։

Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ **Մորմոնի Գիրքը կարող է օգնել բոլոր մարդկանց ճանաչել Հիսուս Քրիստոսին և ապրել Նրա ավետարանով:** Այս նախադասությունը դուք կարող եք գրել գրատախտակին։

- Ի՞նչ կարող ենք մենք անել, որ օգնենք ուրիշներին ճանաչել Հիսուս Քրիստոսին Մորմոնի Գրքի միջոցով։
- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքն օգնել ձեզ, որ ճանաչեք Փրկչին։

Հրավիրեք ուսանողներին պատմել Մորմոնի Գրքով կիսվելու իրենց ունեցած փորձառության մասին։ Խրախուսեք ուսանողներին աղոթել ուրիշների հետ Մորմոնի Գրքով կիսվելու հնարավորությունների համար։

## 2 Նեփի 30.9–18

### *Նեփին մարգարեանում է Հազարամյակի ժամանակ աշխարհի իրավիճակի մասին*

Բացատրեք, որ Նեփին նաև մարգարեացել է Հազարամյակի՝ Փրկչի Երկրորդ Գալստին հաջորդող 1000 տարիների մասին։

Ամփոփեք 2 Նեփի 30.9–10, բացատրելով, որ Տիրոջ Երկրորդ Գալստյան ժամանակ ամբարիշտները կկործանվեն։ Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 30.12–18, փնտրելով Հազարամյակի ընթացքում կյանքի նկարագրություններ։ Հրավիրեք ուսանողներին պատկերացնել, որ իրենք նորություններ են գրում Հազարամյակի վերաբերյալ, նկարագրելով իրավիճակը, որը իրենք են գտել։ Խնդրեք նրանց գրել վերնագրեր հոդվածի համար և կիսվել իրենց վերնագրերով միմյանց հետ։

- 2 Նեփիում Հազարամյակին վերաբերվող ձեր սովորած պայմաններից որի՞ն եք դուք ամենաշատը սպասում։ Ինչո՞ւ։

Ուսանողների ուշադրությունը հրավիրեք 2 Նեփի 30.18–ի հետևյալ նախադասության վրա. «Սատանան այլևս զորություն չի ունենա մարդկանց զավակների սրտերի վրա երկար ժամանակի ընթացքում»։ Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողներն ընդգծեն այս նախադասությունը իրենց սուրբ գրություններում։

- Ինչպե՞ս է մեզ օգնում այն գիտելիքը, որ արդարությունը վերջապես կհաղթի ամբարշտությանը։

Ուսանողների պատասխաններից հետո վկայեք, որ **և Հազարամյակի ընթացքում Սատանա զորություն չի ունենա մարդկանց զավակների սրտերի վրա, և արդարություն ու խաղաղություն կտիրի:** Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Ջորջ Ք. Քեննոնի հետևյալ խոսքերը։ Դասարանին խնդրեք ուշադրություն դարձնել պատճառների վրա, թե ինչու Սատանան Հազարամյակի ընթացքում զորություն չի ունենա։

«Մենք խոսում ենք Սատանայի կապված լինելու մասին։ Սատանան կկապվի Աստծո զորությամբ. սակայն նա նաև կապված կլինի նրան չլսելու, նրա կողմից չկառավարվելու Աստծո ժողովրդի վճռականությամբ։ Տերը չի կապի նրան և վերցնի նրա զորությունը երկրի վրայից, եթե դեռևս կան տղամարդիկ և կանայք, ովքեր կամենում են կառավարվել նրա կողմից։ Դա հակառակ է փրկության ծրագրին։ Մարդկանց իրենց ազատությունից զրկելը հակառակ է մեր Աստծո նպատակներին։ Այս աշխարհամասում եղել է մի ժամանակ, որի մասին մենք հիշատակարան ունենք, երբ մարդիկ եղել են այնքան արդարակյաց, որ Սատանան զորություն չի ունեցել նրանց մեջ։ Մոտավորապես չորսը սերունդներ անցել են արդարության մեջ։ Նրանք ապրել են մաքուր կյանքով և մահացել առանց մեղքի։ Դա եղել է Սատանային տեղի չտալու նրանց որոշման արդյունքում։ Չկա այնպիսի արձանագրություն, որ Սատանան զորություն չի ունեցել աշխարհի այլ մասերում այդ ժամանակահատվածի ընթացքում։ Մեր ունեցած ողջ պատմության համաձայն՝ Սատանան նույն զորությունն է ունեցել մարդկանց վրա, ովքեր կամեցել են լսել իրեն։ Բայց այս երկրում նա զորություն չի ունեցել, և նա բառիս բուն իմաստով կապված է եղել։ Ես հավատում եմ, որ հազարամյակի ժամանակ էլ այդպես կլինի. և ես հենվում եմ դրա վրա այնպես, ինչպես այն երջանիկ վիճակի վրա, որը նկարագրվում է այն հիշատակարանում, որի մասին ես խոսեցի։ Ես ենթադրում եմ, որ նախքան Սատանայի ամբողջությամբ կապվելը ամբարիշտները կկործանվեն» (in Conference Report, Oct. 1897, 65)։

- Ինչպե՞ս Սատանան կկապվի Հազարամյակի ընթացքում:

Խրախուսեք ուսանողներին արդար ապրել, որպեսզի հակառակորդը զորություն չունենա նրանց վրա:

## Ուսուցանման լրացուցիչ գաղափար

### 2 Նեփի 29.12–14: Որո՞նք են լրացուցիչ սուրբ գրության հիշատակարանների օրհնությունները:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 29.12–14, ուշադրություն դարձնելով, թե վերջին օրերին ինչ կպատահի բոլոր խոսքերի հետ, որ Աստված պատվիրել է գրվեն ողջ աշխարհով մեկ:

- Ձեր կարծիքով, ի՞նչ օգուտ կքաղեն երկրի տարբեր վայրերում ապրող մարդիկ միմյանց հիշատակարաններն ունենալով:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելն ուսուցանել է, որ այլ հիշատակարաններն առաջ կգան Հիսուս Քրիստոսի մասին վկայելու համար.

«Կորած գրքեր կան գանձերի մեջ, որոնք դեռևս պետք է առաջ գան: Սրանցից քսանից ավելին նշված են ներկայիս սուրբ գրություններում: Հավանաբար ամենազարմանալի և ամենածավալուն հիշատակարանները լինելու են Իսրայելի կորած ցեղերինը (տես 2 Նեփի 29.13): Մենք չէինք էլ իմանա Քրիստոսի մոտալուտ երրորդ վկայության մասին, եթե չլիներ թանկագին Մորմոնի Գիրքը՝ Քրիստոսի երկրորդ վկան: Սուրբ հիշատակարանների այս երրորդ մասը այսպիսով կլրացնի այս ճշմարտությունը: Ապա, ճիշտ ինչպես Կատարյալ Հովիվն է ասել. «Իմ խոսքը նույնպես մեկտեղ կհավաքվի» (հ. 14): Կլինի «մեկ հոտ և մեկ հովիվ» (1 Նեփի 22.25) մարդկության պատմության բոլոր քրիստոնեական տնտեսությունների այս փոխկապակցման ժամանակ (տես ՎԱՈՒ 128.18)» (“God Will Yet Reveal,” *Ensign*, Nov. 1986, 52):

ԴԱՍ 40

# 2 Նեփի 31

## Նախաբան

Հիսուս Քրիստոսի ծննդից շատ տարիներ առաջ Նեփին հայտնություն ստացավ Փրկչի մկրտության մասին: Երբ Նեփին իր ժողովրդին պատմեց այս հայտնության մասին, նա ուսուցանեց այն, ինչը կոչեց «Քրիստոսի վարդապետություն», որ հավերժական կյանք ստանալու համար, մենք պետք է հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը, ապաշխարենք մեր մեղքերի համար, մկրտվենք, ստանանք Սուրբ Հոգին և տոկանք մինչև վերջ:

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 31.1–13

*Նեփին ուսուցանում է, որ երբ մենք մկրտվում ենք, մենք հետևում ենք Փրկչի օրինակին*

Դասը սկսեք ուսանողներին տալով հետևյալ հարցերը.

- Ի՞նչ եք դուք հիշում ձեր մկրտությունից: Ի՞նչ զգացողություն դուք ունեիք, երբ մկրտվում էիք:

Բացատրեք, որ երբ ուսանողները մկրտվել են, նրանք հետևել են մի օրինակի, որը միշտ եղել է Հիսուս Քրիստոսի ավետարանի մասը: Նեփին այս օրինակի մասին խոսելիս օգտագործել է որոշակի արտահայտություն: Հրավիրեք ուսանողներին փնտրել արտահայտությունը, որ գտնվում է 2 Նեփի 31.2 և 2 Նեփի 31.21-ում: Երբ նրանք կգտնեն «Քրիստոսի վարդապետություն» արտահայտությունը, հարցրեք.

- 2 Նեփի 31.2, 21-ում որ բառերը կամ արտահայտություններն են հուշում «Քրիստոսի վարդապետության» կարևորության մասին: (Պատասխանները կարող են ներառել «ես պետք է խոսեմ», «չկա ոչ մի այլ ճանապարհ» և «միակ և ճշմարիտ վարդապետություն» արտահայտությունները:)

Ցուցադրեք Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին նկարը (62133; *Gospel Art Book* [2009], no. 35): Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 31.5–9, փնտրելով արտահայտություններ, որոնք ներկայացնում են, թե ինչու է Հիսուս Քրիստոսը մկրտվել: (Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք նշեն այս հատվածները:) Մի քանի րոպե հետո խնդրեք ուսանողներին կարդալ իրենց գտած արտահայտությունները:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «կատարել ամեն արդարություն»: (Ուսանողների պատասխանից հետո դուք կարող եք բացատրել, որ դա նշանակում է պահել պատվիրանները: Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ասել է. որ «կատարել ամեն արդարություն» նշանակում է «կատարել ամեն օրենք» [in Conference Report, Apr. 1912, 9]:)

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 31.10–12:

- Ինչպե՞ս են այս հատվածները բացատրում մկրտության կարևորությունը: (Նեփին ուսուցանում է, որ մկրտությունը պատվիրան է Երկնային Հոր կողմից, որ այն պահանջվում է Սուրբ Հոգու պարգևը ստանալու համար, և որ այն անհրաժեշտ է Հիսուս Քրիստոսին հետևելու մեր ջանքերում:)

Խնդրեք ուսանողներին ամփոփել 2 Նեփի 31.5–12-ից սովորած վարդապետություններն ու սկզբունքները: Երբ նրանք կիսվեն իրենց մտքերով, համոզվեք, որ նրանք հասկանում են հետևյալ սկզբունքները.

**Հիսուս Քրիստոսը հնազանդության կատարյալ օրինակ տվեց մեզ, որին պետք է հետևենք:**

**Մենք պետք է հետևենք Հիսուս Քրիստոսին, մկրտվենք և ստանանք Սուրբ Հոգին:**

**Հիսուս Քրիստոսը, լինելով անմեղ, մկրտվեց՝ կատարելու ամեն արդարություն:**

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ 2 Նեփի 31.13: Ուսանողների ուշադրությունը հրավիրեք «սրտի ողջ նվիրվածությամբ», «չգործելով ոչ կեղծավորություն, ոչ էլ խաբեություն Աստծո առաջ» և «իսկական վճռականությամբ» արտահայտությունների վրա: Դուք կարող եք առաջարկել, որ նրանք ընդգծեն այս արտահայտությունները:

- Ի՞նչ նշանակություն ունեն այս արտահայտությունները ձեզ համար: (Դուք կարող եք նշել, որ այս բոլոր երեք արտահայտություններն էլ վերաբերվում են Փրկչի հանդեպ հավատք գործադրելու, մեր մեղքերի համար ապաշխարելու և Փրկչի օրինակին հետևելու մեր ջանքերում անկեղծ լինելու անհրաժեշտությանը:)

Որպեսզի օգնեք ուսանողներին խորացնել իրենց հասկացողությունը, թե ինչպես հետևել Փրկչի օրինակին տարբեր իրավիճակներում, տվեք նմանատիպ հարցեր.

- Ինչպե՞ս կարող են այս արտահայտությունները վերաբերվել այնպիսի գործողություններին, ինչպիսին են՝ ամենօրյա սուրբ գրությունների ընթերցանությունը և Եկեղեցի հաճախելը:



- Ի՞նչ տարբերություն կա «աղոթք ասելու» և «սրտի ողջ նվիրվածությամբ» աղոթելու միջև:
- Ի՞նչ տարբերություն կա հաղորդության հացն ուտելու և հաղորդության հացից «անկեղծ միտումով» ճաշակելու միջև:
- Ի՞նչ տարբերություն կա ասելու միջև, որ դուք ցավում եք ինչ-որ բանի համար, որ արել եք, և «սրտի ողջ նվիրվածությամբ» ապաշխարելու միջև:

***Նկարներ***

Գրատախտակի նկարները կարող են օգնել ուսանողներին հասկանալ վերացական գաղափարները: Երբ դուք նկարեք գրատախտակին, հիշեք, որ պարզ նկարները սովորաբար ավելի լավ են, քան բարդերը: Սովորաբար լավ միտք է մի քանի անգամ նկարելու փորձեր կատարելը նախքան ուսանողների դասարան գալը: Եթե դուք լավ չէք նկարում գրատախտակին, խնդրեք մի ուսանողի նկարել ձեր փոխարեն:

## 2 Նեփի 31.14–21

### *Նեփին ուսուցանում է, որ մկրտվելուց հետո մենք պետք է ստանանք Սուրբ Հոգին և շարունակենք հետևել Փրկչի օրինակին*

Բացատրեք, որ Նեփին խոսում էր դռան մասին, որ բացվում էր դեպի արահետը: Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 31.17–18: Երբ ուսանողը կարդալն ավարտի, գրատախտակին նկարեք ահա այսպիսի մի պատկեր.

- Ըստ 2 Նեփի 31.17-ի ո՞րն է դուռը: (Ապաշխարություն և մկրտություն: Դուռ բառի տակ գրեք *Ապաշխարություն և Մկրտություն*:) Ինչո՞վ են ապաշխարությունը և մկրտությունը նման դռան:
- Համաձայն 2 Նեփի 31.18, ո՞ւր է տանում արահետը: (Հավերժական կյանք: Արահետի վերջում գրեք *Հավերժական կյանք*: Դուք կարող եք բացատրել, որ «հավերժական կյանք» արտահայտությունը վերաբերվում է սելեստիալ արքայությունում վեհացվելուն:)
- Նեփին ուսուցանեց, որ մկրտությունից հետո մենք ստանում ենք Սուրբ Հոգու պարգևը (տես 2 Նեփի 31.13–14): Համաձայն 2 Նեփի 31.17–18, ի՞նչ է Սուրբ Հոգին անում մեզ համար: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ **Սուրբ Հոգին վկայում է Հոր և Որդու մասին, և բերում է մեղքերի թողություն:**)
- Ինչո՞ւ է կարևոր, որ մենք վկայություն ստանանք Հոր և Որդու մասին Սուրբ Հոգու միջոցով:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ Սուրբ Հոգու դերը մեղքերի թողության հարցում, դուք կարող եք բացատրել «կրակով և Սուրբ Հոգով մկրտությունը» արտահայտության իմաստը (2 Նեփի 31.13–14, տես նաև հատված 17): Հրավիրեք մի ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի

հետևյալ խոսքերը: Դասարանին խնդրեք ուշադրություն դարձնել, թե ինչ է նշանակում մկրտվել կրակով և Սուրբ Հոգով:

«Մկրտության դարպասը տանում է դեպի անձուկ ու նեղ ճանապարհը: . . .

Մեզ պատվիրված է ապրել այնպես, որպեսզի մեր ընկած էությունը փոխվի Սուրբ Հոգու մաքրող զորությամբ: Նախագահ Մերիոն Գ. Ռոմնին սովորեցրել է, որ Սուրբ Հոգու միջոցով կրակով մկրտվելը «մեզ աշխարհիկից փոխում է դեպի հոգևորը: Այն մաքրում է, բուժում և սրբում հոգին: . . . Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը, ապաշխարությունը և ջրով մկրտությունը նախադրյալներն ու պահանջներն են դրա համար, բայց վերջնակետը [կրակով մկրտվելն] է: [Կրակով մկրտվելու] համար մարդու հանդերձները պետք է լվացվեն Հիսուս Քրիստոսի քավող արյունով» (*Learning for the Eternities,* comp. George J. Romney [1977], 133; տես նաև 3 Նեփի 27.19–20):

Այսպիսով, երբ մենք ծնվում ենք կրկին և աշխատում Նրա Հոգին միշտ մեզ հետ ունենալ, Սուրբ Հոգին մաքրագործում և սրբագործում է մեր հոգիները կրակով (տես 2 Նեփի 31.13–14, 17): Ի վերջո, մենք պետք է անբիծ կանգնենք Աստծո առաջ» («Սուրբ ձեռքեր և անարատ սիրտ», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2007, 81):

- Ըստ Երեց Բեդնարի և Նախագահ Ռոմնիի, ի՞նչ նշանակություն ունի մեզ համար «կրակով մկրտվելը»:
- Ի՞նչ լրացուցիչ օրհնություններ մենք կարող ենք ստանալ Սուրբ Հոգու ազդեցության շնորհիվ:
- Ինչպե՞ս եք դուք «աշխատում Նրա Հոգին միշտ» ձեզ հետ ունենալ:
- Ե՞րբ եք դուք զգացել, որ Սուրբ Հոգին գործում է ձեր կյանքում:

Բացատրեք, որ 2 Նեփի 31.18-ում *նեղ* բառը նշանակում է անձուկ, ճշգրիտ, մեծ ջանք ու հմտություն պահանջող և ոչ մի շեղում թույլ չտվող: Նեփին օգտագործել է այս բառը, որ նկարագրի արահետը, որով մենք պետք է գնանք մկրտվելուց հետո՝ հավերժական կյանք ստանալու համար: Խնդրեք ուսանողներին լուռ մտածել հետևյալ հարցի շուրջ.

- Ի՞նչ պետք է մենք անենք մկրտվելուց հետո, որպեսզի մնանք դեպի հավերժական կյանք տանող արահետի վրա:

Մինչ ուսանողները խորհում են այս հարցի շուրջ, հրավիրեք նրանց պատասխաններ փնտրել 2 Նեփի 31.15–16, 19–21-ում: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք ընդգծեն բառեր կամ արտահայտություններ, որոնք բացատրում են, թե ինչ պետք է մենք անենքհավերժական կյանք ստանալու համար: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչ են նրանք ընդգծել: Երբ նրանք պատասխանեն, գրեք նրանց պատասխանները գրատախտակին: Ձեր նկարը պետք է նմանատիպ տեսք ունենա.




Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ **եթե մենք ապրում ենք համաձայն Քրիստոսի վարդապետության, մենք կստանանք հավերժական կյանք:**

Դասի վերջում խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 31.20-ը: Նշեք, որ 2 Նեփի 31.19–20-ը սերտման սուրբ գրության հատված է: Դուք կարող եք ուսանողներին խրախուսել նշել այս հատվածը առանձնակի ձևով, որպեսզի նրանք կարողանան այն հեշտությամբ գտնել: Հրավիրեք նրանց պատասխանել հետևյալ հարցերից մեկին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային տետրերում.

- Այս դասին սովորածի հիման վրա ի՞նչն է ձեզ հույս տալիս, որ դուք կարող եք ստանալ հավերժական կյանք:

**2 Նեփի 31.19–20**-ը սերտման սուրբ գրության հատված է: Անդրադարձեք դասի վերջի ուսուցանման գաղափարին, որ օգնեք ուսանողներին սերտել այս հատվածը:

- Ի՞նչ ազդեցություն է ունեցել ձեր կյանքի վրա մկրտության ժամանակ կապած ուխտը։

## Սերտման սուրբ գրություն. 2 Նեփի 31.19–20

Կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ խոսքերով.

«Մեծ զորություն է պարունակվում սուրբ գրությունները մտապահելու մեջ։ Մտապահել սուրբ գրությունը նման է նոր ընկերություն ստեղծելուն։ Այն նման է նոր անձի հայտնաբերելուն, որը կարող է օգնել կարիքի ժամանակ, ոգեշնչում և սփոփանք պարգևել և լինել անհրաժեշտ փոփոխության համար լիցքի աղբյուր» («Սուրբ գրության զորությունը», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2011, 6)։

Պաստառի (կամ թղթի մի կտորի) վրա գրեք *Ես անգիր եմ սովորել 2 Նեփի 31.19–20-ը:* Պաստառը դրեք այնպիսի մի տեղ, որ ուսանողները տեսնեն այն։ Հանձնարարեք ուսանողներին սերտել այս հատվածն ինքնուրույն կամ իրենց ընտանիքների հետ։ Հրավիրեք նրանց ստորագրել պաստառի վրա գալիք օրերին, երբ նրանք անգիր սովորեն հատվածը։ Եթե նրանք աշխատեն իրենց ընտանիքների հետ այն սերտելու համար, նրանք կարող են պաստառի վրա գրել նաև իրենց ընտանիքի անդամների անունները։ Հիշեք, որ հարմարեցնեք այս հանձնարարությունը անհատի ընդունակությունների և պայմանների հետ, որպեսզի յուրաքանչյուր ուսանող հաջողության հասնի։

Կիսվեք ձեր վկայությամբ սուրբ գրությունները սերտելու կարևորության մասին, ինչպես օրինակ 2 Նեփի 31.19–20, որը պարունակում է հույսի խոսքեր։

*Նշում.* Այսօրվա դասի էության և երկարության պատճառով դուք կարող եք օգտագործել այս վարժությունը մեկ այլ օր, երբ ավելի շատ ժամանակ կունենաք։

# Տնային ուսումնասիրության դաս

## 2 Նեփի 26–31 (Մաս 8)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

2 Նեփի 26–31 (մաս 8)-ի ուսումնասիրության ժամանակ ուսանողների սովորած վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը նախատեսված չէ ուսուցանել որպես ձեր դասի մի մաս: Ձեր ուսուցանած դասը կենտրոնանում է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու ոգեշնչումներին, երբ դուք խորհեք ձեր ուսանողների կարիքների շուրջ:

### Օր 1 (2 Նեփի 26–27)

Ուսանողները ուսումնասիրել են վերջին օրերի վերաբերյալ Նեփիի մարգարեությունները: Նրանք սովորել են, որ ամեն բան, ինչ Տերն անում է, աշխարհի օգտի համար է, և որ Տերը սիրում է բոլոր մարդկանց և հրավիրում է բոլորին գալ Իր մոտ և ճաշակել Իր փրկությունից: Ուսանողները նաև բացահայտեցին այն ճշմարտությունը, որ Մորմոնի Գրքի առաջ գալը ուղիներից մեկն է, որով Աստված իրականացնում է Իր գործը վերջին օրերում: Նրանք նաև սովորեցին, որ Մորմոնի Գիրքը և վերականգնված ավետարանը ուրախություն և հասկացողություն կբերեն նրանց, ովքեր ուսումնասիրում և ընդունում են դրանք:

### Օր 2 (2 Նեփի 28)

Վերջին օրերում լայն տարածում գտած կեղծ ուսմունքների վերաբերյալ Նեփիի նախազգուշացումները ուսումնասիրելիս ուսանողները սովորեցին, որ Մորմոնի Գիրքը բացահայտում է դևի կեղծ գաղափարները և ամրացնում է մեզ նրա չար ծրագրերին դիմակայելու համար: Նրանք նաև սովորեցին, թե ինչպես է Սատանան օգտագործում շատ մարտավարություններ, փորձելով տիրել մեզ, ինչպես օրինակ մեզ բարկության դրդելով, խաղաղեցնելով, հանդարտեցնելով և շողոքորթելով մեզ:

### Օր 3 (2 Նեփի 29–30)

Ուսանողները սովորել են, որ Տերը տալիս է սուրբ գրություններ, որ հավաքի մարդկանց Իր ուխտում և որ Մորմոնի Գիրքը կարող է օգնել բոլոր մարդկանց ճանաչել Հիսուս Քրիստոսին և ապրել Նրա ավետարանի համաձայն: Տերը ցույց էր տվել Նեփիին, որ շատ մարդիկ վերջին օրերում կմերժեն Մորմոնի Գիրքը: Ուսանողները հնարավորություն են ունեցել խորհելու իրենց սեփական կյանքի մասին և թե ինչպես իրենց համայնքը տարբեր կլինի Հազարամյակի ընթացքում, քանի որ Սատանան զորություն չի ունենա մարդկանց սրտերի վրա, և արդարություն ու խաղաղություն կտիրի:

### Օր 4 (2 Նեփի 31)

Հատուկ ուշադրություն է դարձվել Քրիստոսի վարդապետության և Փրկչի օրինակի վերաբերյալ հետևյալ ճշմարտությունների վրա. Հիսուս Քրիստոսը կատարեց ամեն արդարություն հնազանդվելով Հոր բոլոր պատվիրաններին, և մենք պետք է հետևենք Հիսուս Քրիստոսի հնազանդության օրինակին մկրտվելու և Սուրբ Հոգին ստանալու միջոցով: Սուրբ Հոգին վկայում է Հոր և Որդու մասին և բերում է մեղքերի թողություն: Եթե մենք ապրում ենք Քրիստոսի վարդապետության համաձայն, մենք կստանանք հավերժական կյանք:

## Նախաբան

Այս դասը շեշտում է, որ ամեն բան, ինչ Երկնային Հայրն անում է, աշխարհի օգտի համար է, և այն հիմնավորվում է Իր զավակների հանդեպ սիրով: Այս դասը նաև վերաբերվում է այն բանին, թե ինչպես է Մորմոնի Գիրքը բացահայտում Սատանայի կեղծ ուսմունքները, որոնք լայնորեն տարածված են մեր օրերում, և թե ինչպես է հավերժական կյանք տրվում նրանց, ովքեր հետևում են Քրիստոսի վարդապետությանը:

## Ուսուցանման առաջարկներ

Հարցրեք ուսանողներին, եթե նրանք ունեն որևէ մտքեր կամ գաղափարներ իրենց սուրբ գրությունների ուսումնասիրությունից, որ կկամենային կիսել դասարանի հետ նախքան դուք կսկսեք դասը: Խրախուսեք ուսանողներին տալ ցանկացած հարց, որ նրանք ունեն իրենց ուսումնասիրածի վերաբերյալ: Հրավիրեք նրանց գրի առնել հոգևոր տպավորությունները, որ նրանք ստանում են, երբ կարդում և խորհում են սուրբ գրությունները և իրենց հանձնարարությունները: Սա իրենց կյանք կհրավիրի հայտնության հոգին:

Խնդրեք ուսանողներին օգնել ձեզ գրատախտակի կամ մի թերթիկի վրա գրել հետևյալ հարցի որոշ պատասխանները. Եթե դու իմանաք, որ ձեր ժամանակը երկրի վրա մոտենում է ավարտին, և որ դուք կարող եք մի նամակ գրել, որ ձեր սերունդները և մնացած աշխարհը կարդան, ինչ թեմաներ դուք կընտրեք ձեր ուղերձի մեջ ներառելու համար:

Հրավիրեք ուսանողներին արագ աչքի անցկացնել 2 Նեփի 26–31-ը և իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերը, որ տեսնեն, թե ինչ թեմաների անդրադարձավ Նեփին, երբ նա մոտենում էր իր կյանքի մայրամուտին: Համեմատեք նրանց գտածը գրատախտակին գրած իրենց պատասխանների հետ: Նեփիի վերջին խորհուրդը գրվել է նրանց համար, ովքեր ապրում են վերջին օրերում և պարունակում է գաղափարներ, որ օգնում են մեզ հասկանալ ճշմարտությունը, շրջանցել Սատանայի խոչընդոտները, և հետևել Հիսուս Քրիստոսի վարդապետությանը:

## 2 Նեփի 26

*Իր ժողովրդի կործանման մասին մարգարեանալուց հետո նա մարգարեանում է վերջին օրերի մասին և հրավիրում է բոլորին գալ դեպի Քրիստոս*

Հրավիրեք ուսանողներին կարդալ 2 Նեփի 26.29–31 և փնտրել Սատանայի մարտահրավերներից մեկը, որի մասին Նեփին մեզ նախազգուշացրել է: Մի քանի ուսանողների պատասխանները իրենց գտածի վերաբերյալ լսելուց հետո տվեք հետևյալ հարցը.

- Համաձայն 2 Նեփի 26.29-ի, ի՞նչ է քահանայանենգությունը:
- Ի՞նչն է պատճառ հանդիսանում, որ ոմանք քահանայանենգություն կատարեն:
- Երբ մենք աշխատում ենք Եկեղեցում, ըստ Տիրոջ ակնկալիքների, ի՞նչ դրդապատճառներ պետք է մենք ունենանք: Ո՞ւմ գիտեք դուք, որ այս հարցում կարող է լավ օրինակ հանդիսանալ:

Վերանայեք 2 Նեփի 26.23–28, 33 և օր 1, հանձնարարություն 3: Հարցրեք. Իր աշխատանքում ի՞նչ դրդապատճառներ ունի Տերը:

Մի քանի ուսանողների պատասխանները լսելուց հետո թող դասարանը պատասխանի հետևյալ հարցերին.

- 2 Նե փի 26.23–28, 33-ում ո՞ր արտահայտություններն են մեզ սովորեցնում, որ **Տերը սիրում է բոլոր մարդկանց և հրավիրում է բոլորին գալ Իր մոտ և ճաշակել Իր փրկությունից** և որ **ամեն բան Տերն անում է ի օգուտ աշխարհի**:
- Ինչո՞ւ է մեզ համար կարևոր սովորել մղվել ուրիշների հանդեպ սիրուց, և ոչ թե ագահությունից կամ ուրիշների գովեստին արժանանալու ցանկությունից:

## 2 Նեփի 28

*Նեփին նախազգուշացնում է Սատանայի խաբեությունների մասին*

Ասեք ուսանողներին, որ 2 Նեփի 28-ում Նեփին շարունակեց բացահայտել դևի կողմից ուսուցանված կեղծ գաղափարները: Վերանայեք 2 Նեփի 28.3–9–ում նկարագրված «կեղծ, սին և հիմար վարդապետությունները», և ուսանողներին տվեք հետևյալ հարցերը: Դրանք կարող են ներառել պատասխաններ, որոնք նրանք գրել էին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում նախորդ շաբաթվա ընթացքում:

- Ի՞նչ է նշանակում «օգուտ քաղել մեկից իր խոսքերի պատճառով»: (2 Նեփի 28.8): (Օրինակները կարող են ներառել ուրիշներին ծաղրելը և ուրիշների ասածները սխալ մեջբերելը կամ ուռճացնելը:)
- Ի՞նչ եղանակներով կարող են մարդիկ այսօր «փոս փորել» (2 Նեփի 28.8) իրենց հարևանի համար:
- Ի՞նչ վտանգ կա Տիրոջից մեղքերը թաքցնելու կամ մեր գործերը խավարում պահելու մեր փորձերի մեջ: (Տես 2 Նեփի 28.9:)
- 2 Նեփի 28.3–9-ի ո՞ր կեղծ ուսմունքներն են, ձեր կարծիքով, այսօր ամենավտանգավորը երիտասարդների համար: Ինչո՞ւ եք կարծում, որ դա կործանարար է: Ինչպե՞ս են երիտասարդները գայթակղվում այդ կեղծ ուսմունքներով: (Տես օր 2, հանձնարարություն 1:)

Վերանայեք 2 Նեփի 28.20–23-ը և Նախագահ Բոյդ Ք. Փաքերի պատմությունը հոգևոր կոկորդիլոսների վերաբերյալ օր 2-ի դասից: Հրավիրեք ուսանողներին դասարանի հետ կիսվել նախազգուշացնող նշաններով, որոնք նրանք նկարել են իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում (օր 2, հանձնարարություն 5), որոնք ներկայացնում են հոգևոր վտանգներ, որոնց մասին իրենց կարծիքով այսօրվա երիտասարդներին պետք է նախազգուշացնել:

Հարցրեք. Բոլոր այն բաներից, ինչ Նեփին կարող էր գրել իր հիշատակարանն ավարտելիս, ձեր կարծիքով, ինչո՞ւ է նա գրել Սատանայի խաբեությունների և մարտահրավերների մասին: (Դուք կարող եք վկայել օգնության և ուժի մասին, որ մենք ստանում ենք Սատանայի մարտահրավերներին դիմակայելու համար, երբ մենք ուշադրությամբ ուսումնասիրում ենք Մորմոնի Գիրքը:)

## 2 Նեփի 31

*Նեփին ուսուցանում է, թե ինչպես է Փրկիչը կատարյալ օրինակ ծառայել մեզ համար*

Պատկերեք մի պարզ նկար, որտեղ արահետը անցնում է դարպասի միջով: Հրավիրեք ուսանողներին կարդալ 2 Նեփի 31.17–18 և փնտրել, թե ինչպես Նեփին օգտագործեց արահետի և դռան այս պատկերը, որ ցույց տա Հիսուս Քրիստոսի մոտ գալու միակ ճանապարհը: Այնուհետև տվեք հետևյալ հարցերը.

- Համաձայն այս հատվածների, ի՞նչ են ներկայացնում դուռն ու արահետը: (Դուռը ներկայացնում է ապաշխարությունը, մկրտությունը և Սուրբ Հոգին ընդունելը:)
- Ըստ 2 Նեփի 31-ի ձեր անձնական ուսումնասիրության ժամանակ սովորածի, ինչո՞ւ է Սուրբ Հոգին ընդունելը համեմատվում «կրակով մկրտության» հետ: (Տես 2 Նեփի 31.13, տես նաև հատված 17:)

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 31.19–21: Խնդրեք ուսանողներին փնտրել, թե ինչ է մեզանից պահանջվում այն բանից հետո, երբ մենք ներս ենք մտնում «դռնով»: Իրենց գտածի վերաբերյալ ուսանողների պատասխանը լսելուց հետո տվեք հետևյալ հարցերը.

- Ձեր կարծիքով, ի՞նչ ի նկատի ուներ Նեփին, երբ նա գրեց. «Սա է Քրիստոսի վարդապետությունը»: (2 Նեփի 31.21):
- Խորհելով ձեր այսօրվա սովորածի շուրջ, ձեր կարծիքով, ի՞նչ է Երկնային Հայրն ուզում, որ դուք անեք, որը կօգնի ձեզ կատարելագործվել նեղ ու անձուկ արահետում: (Դուք կարող եք խրախուսել ուսանողներին նպատակ դնել այս հարցի պատասխանի հետ կապված:)

## Հաջորդ մաս (2 Նեփի 32–Հակոբ 4)

Դուք սիրո՞ւմ եք ուտել: Հաջորդ մասում ուսանողները կսովորեն, թե ինչ է նշանակում «սնվել Քրիստոսի խոսքերով» (2 Նեփի 32.3): Ինչպե՞ս պետք է մարգարեն ուղղի մարդկանց, ովքեր սկսում են ներգործվել հարստությունների հանդեպ սիրով կամ մարդկանց կողմից, ովքեր չեն պահում մաքրաբարոյության օրենքը: Նշեք, թե ինչպես Հակոբն անդրադարձավ այս խնդիրներին:

ԴԱՍ 41

# 2 Նեփի 32

## Նախաբան

«Նեղ և անձուկ արահետի [մասին], որը տանում է դեպի հավերժական կյանք» (2 Նեփի 31.18) ուսուցանելուց հետո Նեփին հասկացավ, որ իր ժողովուրդը խորհում էր, թե ինչ պետք է անեին այդ արահետի վրա քայլել սկսելուց հետո: Նա պատասխանեց նրանց հարցերին խրախուսելով նրանց՝ «սնվել Քրիստոսի խոսքերով» և «միշտ աղոթել» (2 Նեփի 32.3, 9): Նա հավաստիացրեց նրանց, որ եթե նրանք անեն այս բաները, Սուրբ Հոգին կօգնի նրանց իմանալ, թե ինչ պետք է անել:

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 32.1–7

*Նեփին խորհուրդ է տալիս մեզ փնտրել աստվածային առաջնորդություն Հիսուս Քրիստոսի բառերի և Սուրբ Հոգու ոգեշնչումների միջոցով*

Հրավիրեք ուսանողներին մտածել այնպիսի մի ժամանակի մասին, երբ նրանք բացատրել են, թե ինչպես մի տեղից մյուս տեղը հասնել: Խնդրեք նրանց բացատրել, թե ինչու է այդ ցուցումները տալը եղել հեշտ կամ դժվար:

Հիշեցրեք ուսանողներին, որ նախորդ դասի ժամանակ նրանք ուսումնասիրել են ցուցումներ, որոնք Նեփին տվել էր իր ժողովրդին: Այս ցուցումներով կիսվելուց հետո նա ասաց. «Սա է ճանապարհը» (2 Նեփի 31.21): Որպեսզի օգնեք ուսանողներին վերանայել իրենց սովորածը, տվեք հետևյալ հարցերը.

- Եթե մենք հետևենք Նեփիի ցուցումներին, ո՞ւր կառաջնորդեն դրանք մեզ: (Դեպի հավերժական կյանք. տես 2 Նեփի 31.20:)
- Համաձայն 2 Նեփի 31.17–18-ի, ինչպե՞ս ենք մենք սկսում այն արահետով քայլել, որն առաջնորդում է դեպի հավերժական կյանք:

Բացատրեք, որ 2 Նեփի 32-ը 2 Նեփի 31-ի Նեփիի ուսուցանումների շարունակությունն է: Խնդրեք ուսանողներին 2 Նեփի 32.1-ում փնտրել այն հարցը, որ Նեփիի ժողովուրդն ուներ նրա ուսուցանածի վերաբերյալ: Հրավիրեք մի քանի ուսանողների արտահայտել այս հարցը իրենց սեփական բառերով: (Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ մարդիկ խորհում էին, թե ինչ պետք է իրենք անեն այն բանից հետո, երբ գտնվում էին դեպի հավերժական կյանք տանող արահետի վրա:)

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 32.2–3: Խնդրեք դասարանին փնտրել ժողովրդի հարցին տրված Նեփիի պատասխանը: Նշեք, որ 2 Նեփի 32.3-ը սերտման սուրբ գրության հատված է: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին առանձնակի ձևով ընդգծել այն, որպեսզի նրանք կարողանան հեշտությամբ գտնել այն:

- 2 Նեփի 32.3-ի ո՞ր բառերն են նկարագրում, թե մենք ինչպես պետք է ստանանք Քրիստոսի խոսքերը: Ինչպե՞ս է սնվելը տարբերվում մի փոքր բան ուտելուց:
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում սնվել Քրիստոսի խոսքերով:
- Ի՞նչ է Նեփին ասել Քրիստոսի խոսքերով սնվելու հետևանքների մասին:
- Որտե՞ղ մենք կարող ենք գտնել Հիսուս Քրիստոսի խոսքերը: (Պատասխանները կարող են ներառել սուրբ գրությունները, ժամանակակից մարգարեների խոսքերը և Սուրբ Հոգուց ոգեշնչումը:)

Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ **երբ մենք սնվում ենք Քրիստոսի խոսքերով, Քրիստոսի խոսքերը կասեն մեզ բոլոր բաները, որ մենք պետք է անենք**:

Որպեսզի օգնենք ուսանողներին մտածել, թե որքան լավ են նրանք սնվում Հիսուս Քրիստոսի խոսքերով, կարդացեք հետևյալ ցուցակը՝ յուրաքանչյուր արտահայտությունից հետո դադար առնելով: Խնդրեք ուսանողներին գրել ցուցակը իրենց սուրբ

**2 Նեփի 32.3**-ը սերտման սուրբ գրության հատված է: Անդրադարձեք դասի վերջի ուսուցանման գաղափարին, որ օգնեք ուսանողներին սերտել այս հատվածը:

գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային տետրերում կամ մի թերթիկի վրա։

1. Սուրբ գրությունների անձնական ուսումնասիրություն
2. Հաղորդության ժողով
3. Գերագույն համաժողով
4. Սուրբ գրությունների ընտանեկան ուսումնասիրություն
5. Սեմինարիա
6. Ընտանեկան երեկո
7. Ահարոնյան Քահանայության քվորումի ժողով կամ Երիտասարդ Կանանց դասարան
8. Անձնական աղոթք

Հրավիրեք ուսանողներին մտածել, թե որքանով են նրանք ջանասիրաբար փնտրում Հիսուս Քրիստոսի խոսքերը այս կետերից յուրաքանչյուրում։ Յուրաքանչյուր կետի համար թող նրանք գրեն *սնվել, հապճեպ ուտել* կամ *քաղցի մատնվել։* Օրինակ, ուսանողը կարող է սնվել սուրբ գրությունների անձնական ուսումնասիրության հարցում, սակայն գերագույն համաժողովի հարցում միայն հապճեպ ուտել։ Ուսանողը, ով ուշադրություն չի դարձնում հաղորդության ժողովի վրա, կարող է այդ կետի կողքին գրել *քաղցի մատնվել*։

Խնդրեք ուսանողներին ընտրել կետերից մեկը, որում նրանք այժմ «հապճեպ ուտում են» կամ «քաղցի են մատնված», և հրավիրեք նրանց նպատակներ դնել, որոնք կօգնեն նրանց այդ կետում «սնվել Քրիստոսի խոսքերով»։ (Դուք կարող եք խրախուսել նրանց մտածել իրենց Աստծո առաջ պարտականության կամ Անձնական Զարգացման նպատակները միավորել այս նպատակների հետ)։

Որպեսզի ամրացնեք Սուրբ Հոգուց անձնական առաջնորդություն փնտրելու իրենց պարտականության հասկացողությունը, թող նրանք մտքում կարդան 2 Նեփի 32.4–7։ Ապա խնդրեք նրանց քննարկել հետևյալ հարցերը իրենց զուգընկերոջ հետ։ (Դուք կարող եք այս հարցերը պատրաստել տպված թերթիկների վրա կամ գրել դրանք գրատախտակին նախքան դասի սկսվելը։)

- Հատված 4-ում ձեր կարծիքով ի՞նչ է նշանակում «խնդրել» կամ «թակել»։ Ըստ Նեփիի, ի՞նչ հետևանքների կհանգեն նրանք, ովքեր չեն խնդրի կամ չեն թակի։
- Ի՞նչ օրհնություններ է Նեփին խոստանում, որ մենք կարող ենք ունենալ, երբ մենք ստանանք Սուրբ Հոգին։
- Ինչո՞ւ է Նեփին ողբում իր ժողովրդի համար։

Արտահայտեք ձեր վստահությունը, որ երբ մարդիկ սնվեն Հիսուս Քրիստոսի խոսքերով, Սուրբ Հոգին կօգնի նրանց հետևել հավերժական կյանքի արահետին։

## 2 Նեփի 32.8–9

### *Նեփին մեզ խորհուրդ է տալիս միշտ աղոթել*

Բացատրեք, որ Նեփին հաջորդը կենտրոնանում է մի բանի վրա, որ մենք կարող ենք անել Հիսուս Քրիստոսի խոսքերը ստանալու համար։ Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 32.8, փնտրելով, թե ինչ ասաց Նեփին, որ մենք պետք է անենք։ Այն բանից հետո, երբ նրանք կներկայացնեն պատասխանը, տվեք հետևյալ հարցերը, որ օգնեք նրանց խորհել աղոթքի կարևորության մասին.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Սուրբ Հոգին ուզում, որ մենք աղոթենք։
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ Սատանան չի ուզում, որ մենք աղոթենք։ Ինչպե՞ս կարող է Սատանան համոզել մարդկանց, որ չաղոթեն։

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 32.9։ Նշեք, որ 2 Նեփի 32.8–9-ը սերտման սուրբ գրության հատված է։ Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները առանձնակի ձևով նշեն այն, որպեսզի նրանք կարողանան հեշտությամբ գտնել այն։

- Որքա՞ն հաճախ մենք պետք է աղոթենք։ Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «միշտ աղոթել»։

**2 Նեփի 32.8–9**-ը սերտման սուրբ գրության հատված է։ Անդրադարձեք դասի վերջում գտնվող ուսուցանման գաղափարին, որ օգնեք ուսանողներին սերտել այս հատվածը։

Կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերով: (Եթե հնարավոր է, բազմացրեք այս մեջբերումը, որպեսզի ուսանողները կարողանան զուգահեռ կարդալ և կենտրոնանալ Երեց Բեդնարի խոսքերի վրա: Եթե դուք օրինակներ բազմացնեք, հաշվի առեք, որ մեջբերումը դասի ժամանակ շարունակվում է կարճ քննարկումից հետո: Մեջբերման այդ մասը նույնպես ներառեք:) Հրավիրեք ուսանողներին լսել Երեց Բեդնարի խորհուրդը, թե ինչպես «միշտ աղոթել»:

«Մեր բնավորության, մեր պահվածքի կամ հոգևոր աճի մեջ կան պահեր, որոնց մասին մենք պետք է խորհրդակցենք Երկնային Հոր հետ առավոտյան աղոթքում: . . .

Օրվա ընթացքում մենք աղոթքը պահում ենք մեր սրտում շարունակ աջակցություն և ուղղություն ստանալու համար: . . .

Այդ օրը մենք նկատում ենք, որ այն առիթների ժամանակ, երբ մենք սովորաբար միտում ունենք կոպիտ խոսելու, մենք այդպես չենք խոսում. կամ, եթե կարող էինք բռնկվել զայրույթով, չենք բռնկվում: Մենք տեսնում ենք երկնային օգնությունը և ուժը, և խոնարհաբար ընկալում ենք մեր աղոթքի պատասխանները: Անգամ ընկալելու այդ պահին, մենք երախտագիտության լուռ աղոթք ենք ասում» («Միշտ աղոթեք», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2008, 41–42):

Որպեսզի օգնեք ուսանողներին խորհել այս խորհրդի շուրջ, հարցրեք.

- Կարո՞ղ եք մտածել պահերի մասին այսօրվա ընթացքում կամ վերջին օրերին, երբ դուք հետևել եք Երեց Բեդնարի այս խորհրդին: (Դուք կարող եք խնդրել ուսանողներին լուռ խորհել այս հարցի շուրջ բարձրաձայն պատասխանելու փոխարեն:)

Շարունակեք կարդալ Երեց Բեդնարի խորհուրդը.

«Մեր օրվա վերջում մենք կրկին ծնկի ենք իջնում և հաշվետվություն տալիս մեր Հորը: Մենք վերանայում ենք օրվա իրադարձությունները և սրտանց շնորհակալություն հայտնում մեր ստացած օրհնությունների և օգնության համար: Մենք ապաշխարում ենք, և Տիրոջ Հոգու օժանդակությամբ գտնում այն ճանապարհները, որոնցով մենք կարող ենք գործել և վաղը ավելի լավը դառնալ: Այսպիսով, մեր երեկոյան աղոթքը կառուցվում է առավոտյան աղոթքի վրա և դառնում դրա շարունակությունը: Եվ մեր երեկոյան աղոթքը նաև նախապատրաստություն է իմաստալից առավոտյան աղոթքի համար:

Առավոտյան և երեկոյան աղոթքները, և դրանց միջև ընկած բոլոր աղոթքները առանձին, իրար հետ կապ չունեցող իրադարձություններ չեն, ընդհակառակը, դրանք կապված են իրար հետ ամեն օր, և օրերի, շաբաթների, ամիսների և, անգամ, տարիների ընթացքում: Սա մասամբ վերաբերում է «միշտ աղոթելու» սուրբ գրությունների խրատը կատարելուն (Ղուկաս ԻԱ.36, 3 Նեփի 18.15, 18, ՎԵՈՒ 31.12): Այսպիսի իմաստալից աղոթքները գործիք են հանդիսանում այն բարձրագույն օրհնությունները ստանալու համար, որոնք Աստված պահել է Իր հավատարիմ զավակների համար» («Միշտ աղոթեք», 42):

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ 2 Նեփի 32.9-ի վերջին մասը, բացատրեք, որ *նվիրագործել* բառը նշանակում է «սրբագործել, սուրբ դարձնել կամ դառնալ արդար» (Guide to the Scriptures, “Consecrate, Law of Consecration,” scriptures.lds.org):

- Ինչո՞ւ մենք պետք է աղոթենք, երբ «կատարենք որևէ բան Տիրոջ համար»:
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում Տիրոջ համար նվիրագործել մեր կատարումը մեր հոգիների բարօրության համար:
- Ինչպե՞ս կարող է Երեց Բեդնարի խորհուրդն օգնել մեզ ապրել ավելի նվիրագործված կյանքով:

Վկայեք, որ **եթե մենք միշտ աղոթենք, մենք կկարողանանք անել այն ամենը, ինչ Տերը կկամենա, որ մենք անենք, մեր հոգիների բարօրության համար:**

Որպեսզի ամփոփեք այն, ինչ ուսանողները քննարկել են այս դասին, կիսվեք Յոթանասունից Երեց Սպենսեր Ջ. Քոնդիի հետևյալ խոսքերով.

«Դուք միգուցե կանգնած եք միսիայի, ձեր ապագա կարիերայի և, ի վերջո, ամուսնության վերաբերյալ որոշում կայացնելու խնդրի առաջ: Երբ դուք կարդում եք սուրբ գրությունները և աղոթում առաջնորդության համար, դուք միգուցե պատասխանը չտեսնեք էջի վրա տպագրված բառերի տեսքով, սակայն մինչ դուք կարդում եք, դուք կստանաք որոշակի տպավորություններ և հուշումներ, և ինչպես խոստացված է,

Սուրբ Հոգին «ձեզ ցույց կտա բոլոր բաները, որ դուք պետք է անեք»: [2 Նեփի 32.5:]» (“Becoming a Great Benefit to Our Fellow Beings,” *Ensign*, May 2002, 45):

### Սերտման սուրբ գրություն. 2 Նեփի 32.3

Հարցրեք ուսանողներին, թե նրանց կարծիքով որքան ժամանակ կպահանջվի նրանցից 2 Նեփի 32.3-ը սերտելու համար, եթե նրանք արտասանեն այն ամեն անգամ, երբ հաց են ուտում: Հանձնարարեք նրանց կրկնել այս սուրբ գրությունը՝ սնվելով Քրիստոսի խոսքերով, ամեն անգամ, երբ նրանք հաց կուտեն հաջորդ մի քանի օրերի ընթացքում: Հատվածը անգիր սովորելուց հետո հրավիրեք նրանց զեկուցել, թե քանի ճաշ պահանջվեց նրանցից:

### Սերտման սուրբ գրություն՝ 2 Նեփի 32.8–9

Հարցրեք ուսանողներին, թե արդյոք նրանք երբևէ փորձել են աղոթել իրենց սրտում ողջ օրվա կամ ողջ շաբաթվա ընթացքում: Հրավիրեք նրանց կիսվել իրենց փորձառություններով: Հրավիրեք դասարանին խորհել այն եղանակների մասին, որոնց միջոցով նրանք կարող են «միշտ աղոթել» հաջորդ 24 ժամվա ընթացքում: Հանձնարարեք նրանց անել դա և զեկուցել իրենց փորձառության մասին հաջորդ դասի սկզբում:

*Նշում.* Եթե դուք ժամանակ չունեք օգտագործելու այս ուսուցանման գաղափարները այս դասի ժամանակ, խորհեք որպես կրկնություն հետագա դասերի ժամանակ դրանք օգտագործելու մասին:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 2 Նեփի 32.2: Ի՞նչ է նշանակում հրեշտակների լեզվով խոսել:

Ոմանք կարող են զարմանալ, թե ինչ է նշանակում «խոսել հրեշտակների լեզվով»: Նախագահ Բոյդ Ք. Փաքերն ուսուցանել է, որ հրեշտակների լեզվով խոսելը «պարզապես նշանակում է, որ դուք կարող եք խոսել Սուրբ Հոգու զորությամբ» (“The Gift of the Holy Ghost: What Every Member Should Know,” *Ensign*, Aug. 2006, 50):

ԴԱՍ 42

# 2 Նեփի 33

## Նախաբան

Նեփին ավարտում է իր հիշատակարանը հայտարարելով, որ իր գրած բառերը վկայում են Հիսուս Քրիստոսի մասին և համոզում են մարդկանց բարիք անել և համբերել մինչև վերջ: Նա ասել է, որ չնայած նա գրել է «տկարության մեջ», նրա խոսքերը եղել են «մեծ արժեքի» և «ուժեղ կդարձվեն» նրանց համար, ովքեր կկարդան դրանք (տես 2 Նեփի 33.3–4): Նա վկայել է, որ իր գրածները «Քրիստոսի խոսքերն» էին և որ մարդիկ պատասխանատու կլինեն Աստծո առաջ դրանց հանդեպ իրենց արձագանքի համար (տես 2 Նեփի 33.10–15):

## Ուսուցանման առաջարկներ

### 2 Նեփի 33.1–2

*Նեփին ուսուցանում է ճշմարտությունը մեր սրտերին հասցնելու Սուրբ Հոգու զորության մասին*

Գրատախտակին նկարեք հետևյալ նկարը.




- Ի՞նչ տարբերություն կա, երբ ուղերձը հասնում է *մինչև* մեկի սիրտը և երբ ուղերձը մտնում է մեկի սրտի *մեջ*:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 33.1: Ապա խնդրեք ուսանողներին մտքում խորհել հետևյալ հարցի շուրջ:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր, որ Սուրբ Հոգին ճշմարտությունը հասցնի *մինչև* մեր սրտերը, սակայն ոչ մեր սրտերի *մեջ*:

Մինչ ուսանողները խորհում են այս հարցի շուրջ, բարձրաձայն կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը: Բացատրեք, որ այս մեջբերման մեջ Երեց Բեդնարը խոսում է 2 Նեփի 33.1-ի մասին:

«Խնդրում եմ, ուշադրություն դարձրեք, թե ինչպես է Հոգու զորությունը ուղերձը հասցնում *մինչև* սիրտը, սակայն ոչ սրտի *մեջ*: Ուսուցիչը կարող է բացատրել, ցուցադրել, համոզել և վկայել, և անել այս ամենը հոգևոր մեծ ուժով ու արդյունավետությամբ: Այնուամենայնիվ, ի վերջո ուղերձի բովանդակությունը և Սուրբ Հոգու վկայությունը ներթափանցում է սրտի մեջ միայն այն ժամանակ, երբ ստացողը թույլ է տալիս նրան ներս մտնել» (“Seek Learning by Faith” [address to CES religious educators, Feb. 3, 2006], 1, si.lds.org):

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Յոթանասունից Երեց Ջերալդ Ն. Լանդի հետևյալ խոսքերը.

«Ինչո՞ւ ուղղակի *մինչև* սիրտը: Անձնական կամքն այնքան սրբազան է, որ Երկնային Հայրը, չնայած Իր անսահման զորությանը, երբեք չի ստիպի մարդկային սրտին: . . . Աստված թույլ է տալիս մեզ լինել մեր սեփական սրտի պահապանները կամ դռնապանները: Մենք պետք է մեր իսկ ազատ կամքով բացենք մեր սրտերը Հոգու առջև» («Բացելով մեր սրտերը», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2008, 33):

- Ինչո՞վ է որոշվում արդյոք ուղերձը անհատի սրտի մեջ մտավ:
- Ե՞րբ եք դուք զգացել, որ ավետարանի ուղերձը ներթափանցել է ձեր սիրտ: Ի՞նչ է սա ձեզ ասում ձեր սրտի մասին այդ պահին:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 33.2, ուշադրություն դարձնելով այն եղանակին, որով մարդիկ արձագանքում են Սուրբ Հոգուն, երբ նրանք կարծրացնում են իրենց սրտերը: Դուք կարող եք բացատրել, որ «դատարկ բաներ» արտահայտությունը նշանակում է «ոչինչ»: «[Գրված խոսքերը ] որպես դատարկ բաներ» համարելը նշանակում է մտածել, որ դրանք արժեք չունեն:

- Ի՞նչ վարքագիծ և վերաբերմունք են ունենում կարծրացած սիրտ ունեցող մարդիկ:
- Ձեր համար ո՞րն է 2 Նեփի 33.2–ի ուղերձը: (Ուսանողները կարող են պատասխանել, որ մենք ընտրում ենք բացել կամ փակել մեր սրտերը Սուրբ Հոգու ոգեշնչումների առաջ: Համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **երբ մենք բացում ենք մեր սրտերը, Սուրբ Հոգու ուղերձները կարող են ներթափանցել մեր սրտերը:**)

Նախքան դասը շարունակելը ուսանողներին որոշակի ժամանակ տրամադրեք, որ լուռ խորհեն իրենց սրտի վիճակի մասին և որոշեն, թե արդյոք նրանք թույլ են տալիս ճշմարտության ուղերձներին ներթափանցել իրենց սրտերը:

## 2 Նեփի 33.3–15

### *Նեփին բացատրում է իր հիշատակարանի նպատակը և հույս է հայտնվում, որ իր ընթերցողները կհավատան Քրիստոսին*

Գրատախտակի վրա գրեք հետևյալ նախադասությունները.

*2 Նեփի 33.3—Ես մշտապես աղոթում եմ . . .*

*2 Նեփի 33.4—Ես գիտեմ . . .*

*2 Նեփի 33.6—Ես փառաբանում եմ . . .*

*2 Նեփի 33.7—Ես ունեմ . . .*

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 33.3–7, փնտրելով Նեփիի հույսերը նրանց համար, ովքեր կկարդան նրա խոսքերը: Հրավիրեք մի քանի ուսանողների գալ գրատախտակի մոտ և լրացնել նախադասությունները, օգտագործելով իրենց սեփական բառերը կամ Նեփիի խոսքերը: (Գրատախտակին գրված արտահայտություններից մի քանիսը ունեն մեկից ավելի պատասխաններ:)

- Ինչպե՞ս մենք կարող ենք ամրացնել Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության մասին մեր անձնական վկայությունները:

Թող հինգ ուսանողներ հերթով բարձրաձայն կարդան 2 Նեփի 33.10–14: Խնդրեք դասարանին հետևել, Նեփիի հրաժեշտի խոսքում փնտրելով արտահայտություններ, որոնք կարևոր են նրանց համար: Դուք կարող եք խորհուրդ տալ ուսանողներին նշել այս արտահայտությունները:

- Ո՞ր արտահայտություններն են կարևոր ձեզ համար: Ինչո՞ւ:
- Եթե մարդիկ հավատում են Քրիստոսին, ի՞նչ կզգան նրանք Մորմոնի Գրքի հանդեպ: (Տես 2 Նեփի 33.10:)
- Ըստ Նեփիի նախազգուշացումների ի՞նչ կպատահեր նրանց հետ, ովքեր կմերժեին իր խոսքերը: (Երբ ուսանողները պատասխանեն այս հարցին, դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք նաև մտածեն, թե ինչպես իրենց կզգան Տիրոջ ներկայության մեջ, եթե հավատացել և հետևել են Նեփիի և այլ մարգարեների խոսքերին:)

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 33.15 և խորհել Նեփիի վերջին խոսքերի շուրջ. «Ես պետք է հնազանդվեմ»: Ապա նրանց տվեք մի քանի րոպե, որ վերանայեն 1 և 2 Նեփիի գրքերը, որպեսզի գտնեն Նեփիի հնազանդության օրինակները: Մի քանի րոպե հետո խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով: Պատասխանները կարող են լինել՝ Երուսաղեմը թողնելը, արույրե թիթեղները բերելու համար Երուսաղեմ վերադառնալը, կրկին Երուսաղեմ վերադառնալը, որ խնդրեն Իսմայելի ընտանիքին միանալ իրենց, երկու տեսակի թիթեղներ պահելը, Լիահոնայի առաջնորդությանը հետևելը, նավ կառուցելը, խոստումի երկիր ճամփորդելը, Լամանից ու Լեմուելից բաժանվելը և իր ժողովրդին արդարությամբ առաջնորդելը: Երբ ուսանողները օրինակներ բերեն, դուք կարող եք դրանք գրել գրատախտակին:

Գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունը. *Ես պետք է . . .*

Հրավիրեք ուսանողներին լրացնել այս նախադասությունը իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային տետրերում: Արտահայտեք ձեր վստահությունը, որ նրանք կարող են ընտրել հնազանդ լինել: Կիսվեք ձեր մտքերով, թե ինչպես կարող են Նեփիի խոսքերն օգնել նրանց ամրացնել իրենց հավատքն առ Հիսուս Քրիստոս և մեծացնել բարիք գործելու նրանց ունակությունը:

## 2 Նեփիի կրկնություն

Որոշ ժամանակ տրամադրեք, որ օգնեք ուսանողներին կրկնել 2 Նեփիին: Խնդրեք նրանց մտածել, թե ինչ են սովորել այս գրքից սեմինարիայի և իրենց սուրբ գրությունների անձնական ուսումնասիրության ժամանակ: Անհրաժեշտության դեպքում խրախուսեք նրանց աչքի անցկացնել 2 Նեփիին, որ օգնեք նրանց հիշել: Խնդրեք նրանց նախապատրաստվել կիսել ինչ-որ բան 2 Նեփիից, որ ոգեշնչել է նրանց բարիք գործել և հավատք ունենալ առ Հիսուս Քրիստոս, ինչպես ասել է Նեփին (տես 2 Նեփի 33.4): Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո խնդրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց մտքերով և զգացմունքներով:

Կիսվեք Մորմոնի Գիրքը կարդալու մեր պարտականության և օրհնությունների մասին հետևյալ մեջբերումներով, որոնք գալիս են մեր կյանք, երբ մենք իրականացնում ենք այս պարտականությունը.

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է. «Ինձ թվում է, որ այս Եկեղեցու յուրաքանչյուր անդամ երբեք չի բավարարվի, եթե ժամանակ առ ժամանակ կրկին չկարդա Մորմոնի Գիրքը և խորապես չխորհի դրա մասին, որպեսզի կարողանա վկայել, որ այն իսկապես գրված է Ամենազորի ներշնչմամբ, և որ դրա պատմությունը ճշմարիտ է» (in Conference Report, Oct. 1961, 18):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ուսուցանել է, որ եթե Եկեղեցու անդամները կարդան Մորմոնի Գիրքը «[նրանց] կյանքում և [նրանց] տներում կավելանա Տիրոջ Հոգին, կամրանա Նրա պատվիրաններին հնազանդ քայլելու վճռականությունը և ավելի ամուր վկայություն կլինի Աստծո Որդու կենդանի իրականության վերաբերյալ» (“A Testimony Vibrant and True,” *Ensign*, Aug. 2005, 6):

Դասի վերջում դուք կարող եք կիսվել անձնական փորձառությամբ որպես վկայություն, որ այս գլխի Նեփիի խոսքերը իրականացել են ձեր կյանքում:

### *Խրախուսեք ուսանողներին խոսել ճշմարտությունների մասին*

Ուսանողների համար շատ օգտակար է իրենց մտքերով և զգացմունքներով հաճախակի կիսվելու հնարավորություններ ունենալը, ավետարանի սկզբունքները բացատրելը և ճշմարտության համար վկայելը: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթը նկատել է. «Երբ ուսանողները խոսում են ճշմարտությունների մասին, նրանք հաստատվում են իրենց հոգում և ամրացնում են իրենց անձնական վկայությունները» (“To Understand and Live Truth” [address to CES religious educators, Feb. 4, 2005], 3, si.lds.org): Այնուամենայնիվ, մինչդեռ կարևոր է ուսանողներին կիսվելու հնարավորություն տալ, նրանք չպետք է ճնշում զգան դա անելու համար:

# Հակոբի
## ԳՐՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ

### Ինչո՞ւ ուսումնասիրել այս գիրքը:

Ուսումնասիրելով Հակոբի գիրքը, ուսանողները կարող են սովորել կարևոր դասեր մի մարդուց, ով ուներ անսասան հավատք առ Հիսուս Քրիստոսը: Հակոբը շարունակաբար վկայել է Փրկչի մասին և ապաշխարության է հրավիրել իր ժողովրդին և նրանց, ովքեր կկարդան իր խոսքերը: Նա ուսուցանել է և ցույց տվել, թե որքան կարևոր է ջանասիրաբար իրականացնել Տիրոջից ստացած կոչումները: Նա նախազգուշացրել է իր ժողովրդին հպարտության, հարստությունների և անբարոյականության վտանգների մասին: Հակոբը նաև մեջբերել և մեկնաբանել է Զենոսի այլաբանությունը ձիթենիների մասին, որը ցույց է տալիս Փրկչի անխոնջ ջանքերը Աստծո բոլոր զավակներին փրկություն բերելու համար և պատկերացում է տալիս Իսրայելի տան հետ Աստծո գործերի մասին: Սերեմի՝ հակաքրիստոսի հետ իր հանդիպման ժամանակ Հակոբը ցույց է տալիս, թե ինչպես պետք է արդարացիորեն պատասխանել նրանց, ովքեր կասկածում կամ քննադատում են մեր հավատքը:

### Ո՞վ է գրել այս գիրքը:

Այս գիրքը գրել է Հակոբը՝ Սարայի և Լեքիի հինգերորդ որդին: Նա ծնվել է անապատում՝ դեպի խոստումի երկիր իր ընտանիքի ճամփորդության ընթացքում: Իր պատանեկության տարիներին Հակոբը «տարել է չարչարանքներ և շատ վիշտ՝ [իր] եղբայրների կոպտության պատճառով» (2 Նեփի 2.1): Այնուամենայնիվ, Լեքին խոստացավ Հակոբին, որ Աստված «կնվիրագործի [իր] չարչարանքները [իր] օգտի համար» և որ նա իր օրերը կանցկացնի «[իր] Աստծո ծառայության մեջ» (2 Նեփի 2.2–3): Իր պատանեկության տարիներին Հակոբը տեսավ Փրկչի փառքը (տես 2 Նեփի 2.3–4): Նեփին նվիրաբերեց Հակոբին՝ լինելու քահանա և ուսուցիչ նեփիացիների համար (տես 2 Նեփի 5.26), իսկ ավելի ուշ նրան հանձնեց Նեփիի փոքր թիթեղները (տես Հակոբ 1.1–4): Որպես հավատարիմ քահանայության ղեկավար և ուսուցիչ Հակոբը ջանասիրաբար աշխատում էր, որ համոզեր իր ժողովրդին հավատալ Քրիստոսին (տես Հակոբ 1.7): Նա ստացավ հայտնություններ Փրկչի վերաբերյալ, փորձառություն ունեցավ հրեշտակների ծառայության հետ կապված, լսեց Տիրոջ ձայնը (տես Հակոբ 7.5) և տեսավ իր Քավչին (տես 2 Նեփի 11.2–3): Հակոբը Ենովսի հայրն էր, և նա հանձնեց թիթեղները Ենովսին իր մահից առաջ:

### Ո՞ւմ համար է գրված այս գիրքը և ինչո՞ւ:

Նեփին հանձնարարեց Հակոբին գրի առնել սրբազան ուսմունքներ, հայտնություններ և մարգարեություններ «ի սեր Քրիստոսի և ի սեր մեր ժողովրդի» (Հակոբ 1.4): Հակոբը հնազանդվեց այս հրահանգին և պահպանեց գրությունները, որոնք նա «համարում էր ամենաարժեքավորը» (Հակոբ 1.2): Նա գրել է. «Մենք տքնում ենք ջանասիրաբար, փորագրելով այս խոսքերը թիթեղների վրա, հուսալով, որ մեր սիրելի եղբայրները և մեր զավակները կստանան դրանք երախտապարտ սրտով: . . . Քանզի, այս միտումով ենք մենք գրել այս բաները, որպեսզի նրանք կարողանան իմանալ, որ մենք գիտեինք Քրիստոսի մասին, և մենք ունեինք նրա փառքի մի հույս՝ նրա գալստից շատ հարյուրավոր տարիներ առաջ» (Հակոբ 4.3–4): Հակոբը մեկնաբանել է իր գրառումների առանցքային թեման, երբ ակնարկել է. «Ինչո՞ւ չխոսել Քրիստոսի Քավության մասին և չհասնել նրա մասին կատարյալ գիտության. . .» (Հակոբ 4.12):

### Ե՞րբ և որտե՞ղ է այն գրվել:

Հակոբի գիրքը սկսվում է մոտավորապես Ք. Ծ. ա. 544թ., երբ Նեփին Հակոբին հանձնեց փոքր թիթեղները: Այն ավարտվում է մոտավորապես Հակոբի կյանքի վերջին մոտ, երբ նա փոխանցեց թիթեղները իր որդի Ենովսին: Հակոբը գրեց այս հիշատակարանը, մինչ ապրում էր Նեփիի երկրում:

### Որո՞նք են այս գրքի առանձնահատկությունները:

Հակոբի գիրքը տեղեկություն է տալիս Նեփիի մահից հետո նեփիացիների կառավարման մասին: Նեփին օծեց մի մարդու, որ փոխարիներ իրեն որպես ժողովրդի թագավոր և ղեկավար, մինչ Հակոբը և նրա եղբայր Հովսեփը շարունակեցին լինել նեփիացիների հոգևոր ղեկավարները: Այս գրքի մեկ այլ առանձնահատուկ գծերից մեկը չթույլատրված բազմակնության կիրառումը Հակոբի կողմից դատապարտելն է: Մորմոնի Գրքում այս թեմայի շուրջ միակ հղմանը հանդիպում ենք Հակոբ 2 –ում: Հակոբի գիրքը նաև ներառում է Մորմոնի Գրքի ամենաերկար գլուխը՝ Հակոբ 5, որը պարունակում է ձիթենիների վերաբերյալ Զենոսի այլաբանությունը: Բացի դրանից Հակոբի գրքում է հիշատակված, որ Մորմոնի Գրքի մարգարեն առաջին անգամ ուղղակիորեն նախազգուշացնում է նեփիացիներին հպարտության վերաբերյալ՝ մեղք, որը պատճառ կդառնա նրանց վերջնական կործանմանը (տես Հակոբ 2.12–22, Մորոնի 8.27): Այնտեղ նաև հիշատակվում է նեփիացիների մեջ առաջին հակաքրիստոսի ի հայտ գալու մասին:

### Համառոտ շարադրանք

**Հակոբ 1** Հակոբը հնազանդվում է սուրբ հիշատակարան պահելու Նեփիի պատվերին: Հակոբը և Հովսեփը ծառայում են ժողովրդին՝ ուսուցանելով նրանց Աստծո խոսքը:

**Հակոբ 2–3** Խոսելով տաճարում Հակոբը նախազգուշացնում է նեփիացիներին հպարտության, հարստություններ սիրելու և անբարոյականության մասին:

**Հակոբ 4–6** Հակոբը վկայում է Քրիստոսի մասին և մեջբերում է Զենոսի այլաբանությունը ձիթենիների վերաբերյալ: Նա խրախուսում է իր ժողովրդին ապաշխարել, ստանալ Տիրոջ ողորմությունը և նախապատրաստվել դատաստանին:

**Հակոբ 7** Տիրոջ օգնությամբ Հակոբը ապշեցնում է Սերեմին՝ հակաքրիստոսին: Նա նշում է նեփիացիների և լամանացիների միջև եղած հակամարտությունների մասին և փոքր թիթեղները փոխանցում է Ենովսին:

ԴԱՍ 43

# Հակոբ 1–Հակոբ 2.11

## Նախաբան

Նեփիի մահից հետո նեփիացիները նոր թագավորի թագավորության ներքո «իրենց թույլ տվեցին որոշ չափով ամբարիշտ արարքներ» (Հակոբ 1.15)։ Հակոբը և նրա եղբայր Հովսեփը նվիրաբերվել էին Նեփիի կողմից որպես ժողովրդի քահանաներ և ուսուցիչներ, և նրանք ջանասիրաբար աշխատում էին հորդորել ժողովրդին ապաշխարել և գալ Քրիստոսի մոտ։ Հակոբը հնազանդվում է փոքր թիթեղների վրա սրբազան ուսմունքներ, հայտնություններ և մարգարեություններ արձանագրելու պատվիրանին։

## Ուսուցանման առաջարկներ

### Հակոբ 1.1–8

*Հակոբը արձանագրում է սրբազան ճշմարտություններ և աշխատում է օգնել ուրիշներին գալ դեպի Հիսուս Քրիստոսը*

Խնդրեք ուսանողներին բերել տարբեր քահանայության ղեկավարների կոչումների օրինակներ։ (Պատասխանները կարող են ներառել՝ մարգարեներ և առաքյալներ, Բարձրագույն Իշխանություններ, ցցի նախագահներ, եպիսկոպոսներ և քվորումների նախագահներ։) Հրավիրեք մի քանի ուսանողների հակիրճ ձևով կիսվել որոշ եղանակներով, որոնցով քահանայության ղեկավարները օրհնել են իրենց կյանքը քահանայության ծառայության միջոցով։

Բացատրեք, որ Նեփին նվիրաբերել էր իր կրտսեր եղբայրներին՝ Հակոբին և Հովսեփին որպես ժողովրդի քահանաներ և ուսուցիչներ (տես 2 Նեփի 5.26, Հակոբ 1.18)։ Երբ Նեփին մոտենում էր իր կյանքի մայրամուտին, նա Հակոբին հանձնեց թիթեղները, որոնք պարունակում էին իրենց ժողովրդի պատմությունը։

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հակոբ 1.1–4։ Խնդրեք նրանց ներկայացնել, թե ինչ պատվիրեց Նեփին Հակոբին գրի առնել թիթեղների վրա և ինչու։ (Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները նշեն Հակոբին ուղղված Նեփիի ցուցումները)։ Կարդալու համար ուսանողներին բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք նրանցից մի քանիսին պատմել դասարանին, թե ինչ են նրանք գտել։

Եթե ուսանողները դա չեն նշում, ուշադրություն հրավիրեք Հակոբ 1.4–ի վերջին արտահայտության վրա՝ «ի սեր մեր ժողովրդի»։

- Ի՞նչ է նշանակում «ի սեր մեր ժողովրդի» արտահայտությունը։ (Նրանց օգտի համար։)

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Հակոբ 1.5–6։ Խնդրեք դասարանին ներկայացնել, թե ինչ հայտնեց Տերը Հակոբին և Հովսեփին, ինչը կօգներ նրանց ուսուցանել իրենց ժողովրդին։ (Դուք կարող եք բացատրել, որ «մեծ անհանգստություն» արտահայտությունը վերաբերվում է ժողովրդի համար իրենց մեծ մտահոգությանը։)

- Ի՞նչ էր Տերը հայտնել Հակոբին և Հովսեփին։ (Նա ցույց էր տվել նրանց, թե ինչ էր պատահելու նեփիացիների հետ ապագայում և Նա հայտնել էր մանրամասներ Քրիստոսի գալստի վերաբերյալ։)
- Ինչպե՞ս կարող էր այս բաներն իմանալն օգնել Հակոբին և Հովսեփին իրենց ժողովրդին ուսուցանելիս։

Գրատախտակին գրեք *համոզել* բառը։ Ուսանողներին խնդրեք մտքում կարդալ Հակոբ 1.7–8, փնտրելով, թե ինչ էին ուզում Հակոբը և Հովսեփը համոզել մարդկանց անել։ (Դուք կարող եք խորհուրդ տալ ուսանողներին նշել իրենց գտածը։) Հրավիրեք մի քանի ուսանողների գրատախտակին գրել իրենց հայտնաբերածից մեկական բան։

Հրավիրեք ուսանողներին գրատախտակի ցանկից նշել մեկ կամ երկու արտահայտություն, որ նրանք կցանկանային ավելի լավ հասկանալ: Երբ ուսանողները նշեն այս արտահայտությունները, հարցրեք, թե ուսանողներից ով կարող է օգնել բացատրել դրանք: Այս զրույցի ընթացքում հետևյալ սահմանումները կարող են օգտակար լինել.

«Նրանք իր հանգիստը չեն մտնի». Տիրոջ հանգիստը մտնելը նշանակում է վայելել խաղաղություն այս կյանքում և ստանալ «լիությունը [Աստծո] փառքի» հաջորդ կյանքում (ՎԱՈՒ 84.24):

«Ըմբռնեին [Քրիստոսի] մահը». *Ըմբռնելու* սահմանումներից մեկը ուշադիր նայելը կամ քննելն է: Երբ Հակոբը գրում էր, որ ուզում էր համոզել մարդկանց, որ «հավատային Քրիստոսին և ըմբռնեին նրա մահը», նա, միգուցե, նկատի ուներ, որ նա ցանկանում էր, որ նրանք ուշադիր քննեին Հիսուս Քրիստոսի Քավությունը, գիտակցեին դրա կարևորությունը և ձեռք բերեին անձնական վկայություն դրա վերաբերյալ:

«Կրեին նրա խաչը». Այս արտահայտությունը վերաբերվում է անաստվածություններից և աշխարհիկ հեշտասիրությունից մեր անձերն ուրանալու և Տիրոջ պատվիրանները պահելու մեր ցանկությանը (տես Ջոզեֆ Սմիթի թարգմանությունը, Մատթեոս ԺԶ.26 [Մատթեոս ԺԶ.24, տողատակի գրառում *դ*], Ղուկաս Թ.23, 2 Նեփի 9.18):

«Տանեին աշխարհի ծաղրը». Այս արտահայտությունը նշանակում է պահել պատվիրանները անկախ աշխարհիկ ճնշումից, նվաստացումից և ընդդիմությունից, որոնց հաճախ հանդիպում են Հիսուս Քրիստոսի աշակերտները:

Խնդրեք ուսանողներին ամփոփել այն, ինչ իրենք սովորել են Հակոբ 1.1–8-ում քահանայության ղեկավարների պարտականությունների մասին: Երբ ուսանողները կիսվեն իրենց մտքերով, նշեք, որ **քահանայության ղեկավարները ջանասիրաբար աշխատում են, որ օգնեն մեզ գալ Քրիստոսի մոտ:** (Դուք կարող եք գրատախտակին գրել այս սկզբունքը:)

- Ինչպե՞ս են աշխատում մեր քահանայության ղեկավարները, որ օգնեն մեզ գալ Քրիստոսի մոտ:

Ուսանողներին տվեք մի քանի րոպե, որ իրենց սուրբ գրությունների ուսումնասիրման օրագրերում գրեն այն միջոցների մասին, որոնց օգնությամբ մարգարեները կամ այլ քահանայության ղեկավարները օգնել են նրանց այն ոլորտներից մեկում կամ երկուսում, որոնք նրանք նշել են Հակոբ 1.7–8-ում: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց գրածով: (Հիշեցրեք նրանց, որ նրանք չպետք է կիսվեն խիստ անձնական կամ գաղտնի բաներով:)

***Սահմանել բարդ բառերը և արտահայտությունները***

Երբ դուք օգնում եք ուսանողներին հասկանալ սուրբ գրությունների բարդ բառերը և արտահայտությունները, նրանք ավելի լավ կկարողանան կիրառել դրանք իրենց կյանքում: Երբ փորձում եք սահմանել բարդ բառը կամ արտահայտությունը, կարող է օգտակար լինել բառարան օգտագործելը կամ ուսումնասիրելը բառը կամ արտահայտությունը, երբ այն հանդիպում եք մեկ այլ սուրբ գրությունում:

## Հակոբ 1.9–2.11

### *Հակոբը նախազգուշացնում է մարդկանց իրենց ամբարշտության մասին*

Խրախուսեք ուսանողներին դասի ընթացքում խորհել հետևյալ հարցի շուրջ.

- Ինչո՞ւ են Եկեղեցու ղեկավարները նախազգուշացնում մեզ մեղքի վերաբերյալ:

Հակոբն արձանագրել է, որ իր եղբոր՝ Նեփիի մահից հետո մարդիկ սկսեցին իրենց թույլ տալ որոշ չափով ամբարիշտ արարքներ: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հակոբ 1.15–16: Խնդրեք նրանց ներկայացնել երեք ոլորտներ, որոնք անհանգստացնում էին Հակոբին: (Ուսանողների պատասխանները լսելուց հետո դուք կարող եք գրատախտակին գրել *անբարոյականություն, աշխարհիկություն* և *հպարտություն* բառերը:)

Թող ուսանողները մտքում կարդան Հակոբ 1.17–19, փնտրելով, թե ինչ արեցին Հակոբը և Հովսեփը, որ օգնեն իրենց ժողովրդին: Խնդրեք նրանց զեկուցել, թե ինչ իրենք գտան: Հրավիրեք մի ուսանողի գրատախտակին գրել նրանց պատասխանները:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում ստանալ «հանձնարարություն Տիրոջից» (Հակոբ 1.17): (Իմանալ, թե ինչ է Տերն ուզում, որ մենք անենք:)

Հրավիրեք մի ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը: Խնդրեք դասարանին ուշադրություն դարձնել, թե ինչ եղանակներով են Եկեղեցու ղեկավարները հանձնարարություն փնտրում Տիրոջից, երբ նրանք պատրաստվում են ուսուցանել զերագույն համաժողովի ժամանակ.

«Հավանաբար, դուք արդեն գիտեք (եթե չգիտեք, ապա պետք է իմանաք), որ հազվադեպ բացառությամբ է, որ [գերագույն համաժողովին] ելույթ ունեցող տղամարդուն կամ կնոջը թեմա է հանձնարարվում: Յուրաքանչյուրը պետք է ծոմ պահի և աղոթի, ուսումնասիրի և փնտրի, սկսի և դադար տա, և կրկին սկսի, մինչև որ ինքը վստահ կլինի, որ այս համաժողովի համար, ներկայիս համար, անկախ անձնական ցանկություններից կամ մասնավոր նախապատվություններից, նրա թեման հենց այն է, ինչ Տերը ցանկանում է, որ նա խոսի: . . . Յուրաքանչյուրն արտասուք է թափել, մտահոգվել և եռանդուն խնդրել է, որ Տերն ուղղի իր մտքերն ու խոսքերը» («Դրոշակ ազգերի համար», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2011, 111):

- Ի՞նչ են անում գերագույն համաժողովի խոսնակները, որ հանձնարարություն ստանան Տիրոջից:
- Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ Եկեղեցու ղեկավարները փնտրում են մեզ սովորեցնել այն, ինչ Տերն է կամենում, որ մենք իմանանք: Ինչպե՞ս կարող է սա մտքում պահելն ազդել մեր վերաբերմունքի վրա, երբ մենք լսում ենք նրանց սովորեցնելիս:
- Համաձայն Հակոբ 1.19-ի, որո՞նք էին Հակոբի և Հովսեփի պարտականությունները: (Երբ ուսանողները պատասխանեն, համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **քահանայության ղեկավարներն ունեն Աստծուց տրված պարտականություն՝ ուսուցանել Աստծո խոսքը և նախազգուշացնել մեղքի դեմ:** Դուք կարող եք գրատախտակին գրել այս ճշմարտությունը:)
- Ինչո՞ւ է օրհնություն համարվում այնպիսի ծնողներ և Եկեղեցու ղեկավարներ ունենալը, ովքեր նախազգուշացնում են մեզ մեղսալի վերաբերմունքի և վարքագծի մասին:
- Ի՞նչ բառեր է Հակոբն օգտագործել, որ նկարագրի, թե ինչպես պետք է նրանք ուսուցանեն: Ի՞նչ հետևանքներ կլինեին, եթե նրանք չկատարեին իրենց պարտականությունները:

Խնդրեք ուսանողներին մտածել, թե ինչպես իրենց կզգային, եթե Հակոբի պես լինեին ղեկավար դիրքում և ոգեշնչված լինեին ապաշխարության կանչել ժողովրդին անբարոյականության, աշխարհիկության և հպարտության համար: Դասարանին բաժանեք զույգերի: Հրավիրեք զույգերին հերթով իրար համար կարդալ Հակոբ 2.1–3, 6–7, 10–11: Խնդրեք նրանց ներկայացնել արտահայտություններ, որոնք նշում են Հակոբի զգացմունքները ժողովրդին ապաշխարության կանչելու իր հանձնարարության վերաբերյալ: Բավարար ժամանակ անց հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով դասարանի հետ:

- Ի՞նչ են նշում այս արտահայտությունները իր ժողովրդին ապաշխարության կանչելու Հակոբի զգացմունքների մասին: (Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ չնայած Հակոբն այս պարտականությունը դժվարին էր համարում, նա կատարեց այն, քանի որ մտահոգվում էր ժողովրդի համար և ցանկանում հնազանդվել Աստծո պատվիրաններին:)

Վերջում թող ուսանողները գրեն իրենց սուրբ գրությունների ուսումնասիրման օրագրերում այն մասին, թե (1) ինչ են վերջերս նրանց ուսուցանել Եկեղեցու ղեկավարները և ինչպես կարող են նրանք կիրառել այն իրենց կյանքում, կամ (2) ինչպես կարող են նրանք կիրառել այն, ինչ սովորեցին այսօր, դասարանի իրենց կոչումներում կամ քվորումի նախագահություններում, որպես տնային ուսուցիչներ իրենց պարտականություններում, կամ այլ ղեկավարման հնարավորություններ ունենալիս: (Դուք կարող եք այս հրահանգները գրել գրատախտակին:) Խրախուսեք ուսանողներին հետևել իրենց քահանայության ղեկավարների խորհրդին: Վերջում բերեք ձեր վկայությունը այս դասին ուսուցանված սկզբունքների վերաբերյալ:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Հակոբ 1.19: «Մենք մեծարեցինք մեր պաշտոնը Տիրոջ համար»

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը բացատրել է, թե ինչ է նշանակում մեծարել պաշտոնը.

«Ի՞նչ է նշանակում մեծարել պաշտոնը: Դա նշանակում է կատարել այն արժանապատվորեն և կարևորել այն, դարձնել այն պատվավոր և գովելի բոլոր մարդկանց աչքում, ընդլայնել և ամրացնել այն, թույլ տալ, որ երկնային լույսը շողա դրա մեջ այլ մարդկանց տեսադաշտում:

Եվ ինչպե՞ս է մեկը մեծարում կոչումը: Պարզապես կատարելով ծառայությունը, որը վերաբերվում է դրան: Երեցը մեծարում է երեցի կարգված կոչումը, սովորելով, թե որոնք են նրա պարտականությունները որպես երեց և հետո դրանք կատարելով: Ինչպես երեցի դեպքում է, այնպես էլ սարկավագի, ուսուցչի, քահանայի, եպիսկոպոսի և յուրաքանչյուրի, ով կրում է քահանայության պաշտոն» («Ծառայության սուրբ կոչումը», *Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2005, 54):

### Հակոբ 1.19, 2.2: «Մարդկանց մեղքերը մեր գլխին դրվեն»

Նրանք, ովքեր Եկեղեցում ունեն ղեկավարման պարտականություններ, կրում են լուրջ պատասխանատվություն: Հակոբը սովորեցրել է, որ երբ ղեկավարները զլանում են ուսուցանել Աստծո խոսքը նրանց, ում նրանք կանչված են առաջնորդելու, նրանք մասամբ պատասխանատու են դառնում մարդկանց մեղքերի համար: Քահանայության եղբայրների հետ խոսելիս, Նախագահ Ջոն Թեյլորը մանրամասնել է Հակոբի նկարագրած պարտականությունը.

«Եթե դուք չեք մեծարում ձեր կոչումները, Աստված ձեզ պատասխանատվության կկանչի նրանց համար, ում դուք միգուցե կարողանայիք փրկել, եթե կատարեիք ձեր պարտականությունը» (*Teachings of Presidents of the Church: John Taylor* [2001], 164):

Առաջին Նախագահությունից Նախագահ Հ. Բ. Բրաունը ավելի ուշ մեկնաբանել է Նախագահ Թեյլորի ասածը.

«Սրանք պարտավորեցնող խոսքեր են: Եթե ես մեղքերի պատճառով՝ կամա, թե ակամա, կորցնեմ այն, ինչ կարող եմ անել այսուհետև, ես ինքս պետք է տառապեմ և, անկասկած, իմ սիրելիներն էլ ինձ հետ միասին: Սակայն եթե ես չկատարեմ իմ հանձնարարությունը որպես եպիսկոպոս, ցցի նախագահ, միսիայի նախագահ կամ որպես Եկեղեցու գերագույն իշխանավորներից մեկը, եթե մեզանից մեկը թերանում է սովորեցնելու, ղեկավարելու, առաջնորդելու, նրանց օգնելու մեջ, ովքեր գտնվում են մեր առանորդության և մեր արդարադատության ներքո, ապա Տերը մեզ պատասխանատվության կենթարկի, եթե նրանք կորչեն մեր թերացման արդյունքում» (in Conference Report, Oct. 1962, 84):

### Հակոբ 2.8: «Աստծո խոսքը . . . ամոքում է վիրավոր հոգին»

Երբ նոր տեղեկությունը շփոթեցնող կամ անհանգստացնող է ավետարանը ուսումնասիրողների համար, ավելի լավ կլինի, որ նրանք պատասխաններ փնտրեն Աստծուց, ով գիտի բոլոր բաները, ոչ թե կատարեն ընդհանուր որոնումներ համացանցում կամ դիմեն հակամորմոնական նյութերի օգնությանը: Պատասխանների համար անմիջապես Աստծուն դիմելը ցույց է տալիս մեր հավատքը Նրա հանդեպ և մեզ թույլ է տալիս պատասխաններ ստանալ Սուրբ Հոգու միջոցով: Մենք պետք է նաև դիմենք սուրբ գրությունների և վերջին օրերի մարգարեների և առաքյալների խոսքերի օգնությանը, որոնք կարող են պատասխանել բարդ հարցերի և ամոքել վերքերը: Հետևյալ սուրբ գրություններն ուսուցանում են մեզ, թե ինչպիսի օգնության մենք պետք է դիմենք և ինչ պետք է անենք, երբ ունենք դժվարին հարցեր կամ մտահոգություններ.

Հակոբ 2.8. «Աստծո խոսքը . . . ամոքում է վիրավոր հոգին»

Հակոբոս Ա.5–6. «Եթէ մէկը ձեզանից իմաստութեան պակասութիւն ունի թող խնդրէ Աստուածանից, եւ . . . կտրուի նորան: Միայն թէ թող հաւատքով խնդրէ»:

Մորոնի 10.5. «Եվ Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ»:

ԴԱՍ 44

# Հակոբ 2.12–35

## Նախաբան

Հավատարիմ լինելով իր պարտականությանը որպես քահանայության ղեկավար՝ Հակոբը ապաշխարության կանչեց իր ժողովրդին, նախազգուշացնելով նրանց հպարտության և սեռական անմաքրության մեղքերի մասին: Նա ուսուցանեց նրանց այս երկու գերակշռող մեղքերի վտանգների և հետևանքների մասին:

## Ուսուցանման առաջարկներ

### Հակոբ 2.12–21

*Հակոբը նախատում է իր ժողովրդին հպարտության համար*

Գրատախտակին գրեք հետևյալը. *փող, ընդունակություն, ընկերներ, տաղանդներ, ավետարանի իմացություն:* Հրավիրեք ուսանողներին մտածել օրհնությունների մասին, որոնք Տերը տվել է նրանց այս ոլորտներում: Խրախուսեք նրանց խորհել, թե ինչ են նրանք զգում այս օրհնությունների մասին, երբ ուսումնասիրում են Հակոբ 2-ը:

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Հակոբ 2.12–13: Հրավիրեք դասարանի մնացած անդամներին հետևել նրան, ներկայացնելով, թե նեփիացիներից շատերը ինչ էին փնտրում:

Ուսանողների պատասխաններից հետո նշեք, որ Հակոբն ասում էր իր ժողովրդին, որ նրանք հարստություններ էին ձեռք բերել «նախախնամության ձեռքի» միջոցով: Դուք կարող եք բացատրել, որ *նախախնամություն* բառը վերաբերվում է Աստծուն:

- Ինչո՞ւ է կարևոր, որ մենք հիշենք, որ մեր բոլոր օրհնությունները գալիս են մեր Երկնային Հորից:
- Համաձայն Հակոբ 2.13-ի, ինչո՞ւ էին շատ նեփիացիներ բարձրամտացել հպարտությունից:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի հետևյալ խոսքերը: Խնդրեք դասարանին ուշադրություն դարձնել մտքերին այն մասին, թե ինչ է նշանակում բարձրամտացած լինել հպարտությունից.

«Իր էությամբ հպարտությունը համեմատվելու մեղք է, քանի որ չնայած սկսվում է «Տես որքան հրաշալի եմ ես և որքան մեծ բաներ եմ ես արել» անմեղ արտահայտությամբ , կարծես, միշտ ավարտվում է «Հետևաբար, ես ավելի լավն եմ, քան դու» մեղսավոր մտքով: . . .

. . . Այս մեղքն ասում է՝ «Փառք Աստծուն, որ ես ավելի յուրահատուկ եմ, քան դու»: Իր էությամբ այն ցանկանում է, որ իրենով հիանան կամ իրեն նախանձեն: Սա սեփական անձը փառավորելու մեղքն է» («Հպարտությունը և Քահանայությունը», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2010, 56):

Խրախուսեք ուսանողներին լուռ խորհել, թե արդյոք իրենք երբևէ մեղանչել են, մտածելով, որ իրենք ավելի լավն են, քան մեկ ուրիշը:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Հակոբ 2.14–16: Խնդրեք դասարանին փնտրել արտահայտություններ, որոնք ցույց են տալիս հպարտության հետևանքները: Խնդրեք նրանց զեկուցել իրենց գտածի մասին:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ հպարտությունը զորություն ունի «կործանելու [մեր հոգիները]» (Հակոբ 2.16):

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հակոբ 2.17–21: Խնդրեք նրանց փնտրել արտահայտություններ, որոնք ուսուցանում են, թե ինչպես մենք կարող ենք հաղթահարել հպարտությունը և նյութական հարստության հանդեպ անպատշաճ վերաբերմունքը: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք նշեն իրենց գտած արտահայտությունները: Այս հատվածներն ուսումնասիրելուց հետո հրավիրեք նրանց ընտրել իրենց գտած

արտահայտություններից մեկը: Մի քանի ուսանողների հնարավորություն տվեք բացատրել, թե ինչպես կարող են իրենց ընտրած արտահայտությունները օգնել մեզ հաղթահարել հպարտությունը կամ նյութական հարստությունների հանդեպ անպատշաճ վերաբերմունքը: (Որպես այս վարժության մի մաս, դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները կարդան սուրբ գրությունների հետևյալ հատվածները. Գ Թագավորաց Գ. 11–13, Մարկոս Ժ.17–27, ներառյալ Ջոզեֆ Սմիթի թարգմանությունը՝ տողատակի գրառում 27*ա*, 2 Նեփի 26.31, Ալմա 39.14, ՎևՈՒ 6.7:)

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում փնտրել Աստծո արքայությունը: Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում հավատք ձեռք բերել Քրիստոսում:
- Ինչպե՞ս կարող են Աստծո արքայությունը փնտրելը և Քրիստոսում հավատք ձեռք բերելը ազդել հարստության և նյութական ունեցվածքների հանդեպ մեր վերաբերմունքի վրա:

Խնդրեք ուսանողներին պատկերացնել, թե ինչպես նրանք կամփոփեին Հակոբ 2.12–21–ի հիմնական գաղափարը մի ուսանողի համար, ով այսօր դասարանում չէ: Երկու կամ երեք ուսանողի հնարավորություն տվեք կիսվելու, թե ինչ նրանք կասեին: Ուսանողները կարող են նշել մի քանի ճշմարիտ սկզբունքներ: Համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **մենք ամեն բանից առավել պետք է փնտրենք Աստծո արքայությունը:** Ուսանողներին ժամանակ տվեք, որ իրենց սուրբ գրությունների օրագրերում կամ դասարանային նոթատետրերում գրեն մի եղանակ, որի միջոցով նրանք կարող են օգտագործել օրհնությունները և հնարավորությունները, որոնք տվել է Աստված, որ կառուցեն Աստծո արքայությունը և օրհնեն ուրիշների կյանքը:

## Հակոբ 2.22–35

### *Հակոբը հանդիմանում է մարդկանց, ովքեր խախտել են մաքրաբարոյության օրենքը*

Գրատախտակին գրեք Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ խոսքերը.

*«Այս սերնդի անհանգստացնող մեղքը . . .»*

Հրավիրեք ուսանողներին մտածել, թե ինչպես կարող էր Նախագահ Բենսոնն ավարտել այս նախադասությունը: Ապա կարդացեք հետևյալ խոսքերը.

«Այս սերնդի անհանգստացնող մեղքը սեռական անմաքրությունն է: Սա, ասել է Մարգարե Ջոզեֆը, կլինի ավելի շատ գայթակղությունների, ավելի շատ հարվածների և ավելի շատ դժվարությունների աղբյուր Իսրայելի երեցների համար, քան մեկ ուրիշ բան» (*The Teachings of Ezra Taft Benson* [1988], 277):

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հակոբ 2.22–23, 28, ներկայացնելով բառեր և արտահայտություններ, որոնք Հակոբն օգտագործել է սեռական մեղքի լրջությունը նկարագրելու համար: (Դուք կարող եք բացատրել, որ *պառնկություններ* բառը վերաբերվում է սեռական մեղքին:) Խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտած բառերով և արտահայտություններով:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ մաքրաբարոյության օրենքը, կարդացեք հետևյալ մեջբերումը *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկից: Խնդրեք ուսանողներին ուշադրություն դարձնել այն արարքներին, որոնցից նրանք պետք է խուսափեն:

«Սեռական մաքրության վերաբերյալ Տիրոջ չափանիշը պարզ է և անփոփոխ: Նախքան ամուսնանալը սեռական հարաբերություններ մի ունեցեք, իսկ ամուսնանալուց հետո միշտ հավատարիմ եղեք ձեր ամուսնուն: . . .

Երբեք մի կատարեք որևէ արարք, որը կտանի դեպի սեռական զանցանք: Ուրիշներին հարգանքով վերաբերվեք, և ոչ թե որպես առարկայի, որը կարող է օգտագործվել ձեր հեշտասեր և եսասիրական ցանկությունները բավարարելու համար: Նախքան ամուսնանալը մի համբուրվեք կրքոտ ձևով, մի պառկեք այլ անձի վրա, կամ դիպչեք նրա մարմնի ինտիմ սրբազան մասերին՝ հագուստով կամ առանց հագուստի: Մի արեք որևէ այլ բան, որն առաջ է բերում սեռական զգացմունքներ: Մի առաջացրեք այդպիսի զգացմունքներ ձեր մարմնում» (*Երիտասարդներին զորացնելու համար* [գրքույկ, 2011], 35–36):

Նշեք, որ համաձայն Հակոբ 2.23–24-ի, որոշ մարդիկ Հակոբի օրերում փորձում էին արդարացնել իրենց սեռական մեղքերը:

***Մաքրաբարոյության օրենքի մասին ուսուցանելը***

Մաքրաբարոյության օրենքի մասին ուսուցանելիս ձեր հրահանգներում եղեք հարգալից, վստահ և պարզ: Եթե դուք հետևեք դասանյութին և Սուրբ Հոգու առաջնորդությանը, դուք հնարավորություն կունենաք օգնելու ուսանողներին հասկանալ, թե ինչ պետք է իրենք անեն, որ պահեն մաքրաբարոյության օրենքը:

- Ինչպե՞ս են մարդիկ երբեմն ցանկանում արդարացնել սեռական անմաքրությունն այսօր:
- Ի՞նչ կարող են անել երիտասարդները, որ խուսափեն սեռական գայթակղություններին տրվելուց: (Պատասխանները կարող են ներառել զորանալու համար աղոթելը, լավ ընկերների հետ շփվելը, լավ ժամանցներ ընտրելը և այնպիսի իրավիճակներից խուսափելը, որտեղ գայթակղությունների հնարավորությունն ավելի շատ է:)

Դուք կարող եք նշել, որ նեփիացիների մեղքերից մեկը անօրինական բազմակնություն կիրառելն էր: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հակոբ 2.27–30: Նախքան կարդալը դուք կարող եք բացատրել, որ *հարճը* այն կինն է, ով օրենքով ամուսնացած էր տղամարդու հետ, սակայն ավելի ցածր դիրք ուներ, քան կինը:

- Համաձայն Հակոբ 2.27-ի, ի՞նչ էր «Աստծո խոսքն» ասում մեկից ավելի կին ունենալու մասին: (Համոզվեք, որ պարզ հասկանալի է, այն, որ ի սկզբանե Տերը պատվիրել է, որ մարդը պետք է ամուսնանա մեկ կնոջ հետ: Տես նաև ՎԿՈՒ 49.15–16:)

Բացատրեք, որ անօրինական բազմակնությունը պոռնկության կամ սեռական մեղքի օրինակ է: Աստծո աչքում սեռական մեղքերը շատ լուրջ են:

- Համաձայն Հակոբ 2.30-ի, ե՞րբ է Տիրոջ ժողովրդին պաշտոնապես թույլատրվում կիրառել բազմակնություն: (Երբ Տերն է դա պատվիրում:)

Նշեք, որ աշխարհի պատմության ընթացքում որոշակի ժամանակներում Տերը պատվիրել է Իր ժողովրդին կիրառել բազմակնություն: Օրինակ, Հին Կտակարանում բազմակնություն է կիրառվել Աբրահամի և Սարայի ժամանակ (տես Ծննդոց ԺԶ.1–3, ՎԿՈՒ 132.34–35, 37), և նրանց թոռան՝ Հակոբի ժամանակ (տես ՎԿՈՒ 132.37), և այն որոշ ժամանակով կիրառվել է վերականգնված Եկեղեցու վաղ շրջանում՝ սկսելով Ջոզեֆ Սմիթից (տես ՎԿՈՒ 132.32–33, 53):

Շեշտելու համար, որ սեռական անմաքրությունը կործանարար ազդեցություն ունի ընտանիքների վրա, բարձրաձայն կարդացեք Հակոբ 2.31–35 հատվածը: Խնդրեք ուսանողներին հետևել ձեզ՝ փնտրելով անբարոյականության որոշ հետևանքներ: Նշեք, որ չնայած Հակոբը խոսում է միայն տղամարդկանց հետ, մաքրաբարոյության օրենքը հավասարապես կարևոր է նաև կանանց համար:

- Համաձայն Հակոբի, ի՞նչ ազդեցություններ են կրում ընտանիքները, երբ ընտանիքի անդամը խախտում է մաքրաբարոյության օրենքը: Ինչպե՞ս է սա օգնում բացատրել, թե ինչու է մաքրաբարոյության օրենքի խախտումը համարվում այսպիսի լուրջ մեղք:
- Որոշ երիտասարդներ պատճառաբանում են, որ իրենք կարող են չպահել մաքրաբարոյության օրենքը, քանի որ նրանց գործողությունները չեն վնասում այլ մարդկանց: Ինչպե՞ս կարող է անհատի անբարոյականությունը ազդել այլ մարդկանց վրա:

Սեռական մեղքերի վերաբերյալ այս քննարկումն ավարտելու համար կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ խոսքերը: Հրավիրեք ուսանողներին ուշադրություն դարձնել սեռական անմաքրության հետևանքներին:

«Այդ ինտիմ արարքները արգելված են Տիրոջ կողմից ամուսնության հարատև միությունից դուրս, քանի որ դրանք խափանում են Նրա նպատակները: Ամուսնության սրբազան ուխտի սահմաններում այսպիսի հարաբերությունները համապատասխանում են Նրա կամքին: Դրանք պատճառում են էմոցիոնալ և հոգևոր լուրջ վնաս: Չնայած մասնակիցները չեն գիտակցում, որ դա պատահում է այժմ, նրանք կհասկանան ավելի ուշ: Սեռական անմաքրությունը պատնեշ է ստեղծում Սուրբ Հոգու ազդեցության համար՝ դրա ողջ վեհացնող, լուսավորող և զորացնող հնարավորություններով: Այն պատճառ է դառնում հզոր ֆիզիկական և էմոցիոնալ գրգռման: Երբեմն դա ստեղծում է անհազուրդ ցանկություն, որ մղում է օրինազանցին շատ ավելի մեծ մեղքի: Այն առաջացնում է եսասիրություն և կարող է առաջ բերել հարձակողական գործողություններ, ինչպիսին են դաժան վերաբերմունքը, վիժեցումը, սեռական ոտնձգությունը և կործանարար հանցագործությունը: Նման հետաքրքրությունը կարող է տանել դեպի համասեռամոլության արարքների և դրանք չար են և միանգամայն սխալ» (“Making the Right Choices,” *Ensign*, Nov. 1994, 38):

Հրավիրեք ուսանողներին վերանայել Հակոբ 2.28-ի սկիզբը և ներկայացնել, թե ինչով է հիանում Տերը: (Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները

նշեն իրենց գտածը: Համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **Տերը հիանում է մաքրաբարոյությամբ:**)

- Հիմնվելով այն բանի վրա, ինչ մենք քննարկել ենք այսօր, ձեր կարծիքով, ինչո՞ւ է Տերը հիանում մաքրաբարոյությամբ:

Կարող եք ցուցադրել ձեր ընտանիքի լուսանկարը: Վկայեք օրհնությունների մասին, որոնք դուք և ձեր ընտանիքը ստացել եք, ապրելով Տիրոջ մաքրաբարոյության օրենքին համաձայն: Շեշտեք, որ երեխաներ ունենալու զորությունը հիանալի պարգև է մեր Երկնային Հոր կողմից, եթե այն օգտագործվում է Նրա սահմանած կարգով: Խրախուսեք ուսանողներին լինել մաքուր և անբիծ, որպեսզի Տերը կարողանա «հիանալ [իրենց] մաքրաբարոյությամբ» (Հակոբ 2.28):

Որպեսզի օգնեք ուսանողներին կիսվել իրենց վկայություններով մաքրաբարոյության օրենքով ապրելու վերաբերյալ, կարող եք տալ հետևյալ հարցը.

- Ի՞նչ կարող եք դուք ասել մեկին, ով պնդում է, որ մաքրաբարոյության օրենքը հնացած է և ավելորդ: (Երբ ուսանողները պատասխանեն այս հարցին, հուշեք նրանց վկայել մաքրաբարոյության օրենքով ապրելու օրհնությունների մասին, և ոչ միայն դրան չհնազանդվելու վտանգների մասին:)

Ասեք ուսանողներին, որ դուք վստահ եք, որ նրանք կարող են լինել բարոյապես մաքուր: Շեշտեք, որ եթե նրանք մեղանչել են մաքրաբարոյության օրենքի դեմ, նրանք պետք է օգնություն փնտրեն իրենց եպիսկոպոսից կամ ճյուղի նախագահից, ովքեր կարող են օգնել նրանց ապաշխարել և մաքրվել Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ:

ԴԱՍ 45

# Հակոբ 3-4

## Նախաբան

Հակոբ 3-ում մենք կարդում ենք իր ժողովրդին տված Հակոբի քարոզի վերջաբանը: Հակոբը սրտով մաքուրներին հակիրճ ձևով տալիս է մխիթարության խոսքեր և խոստում: Նա նաև հանդիմանում է իր ժողովրդի մեջ եղած հպարտներին և անմաքուրներին, նախազգուշացնելով նրանց հետևանքների մասին, որոնք կգան, եթե նրանք չապաշխարեն: Հակոբ 4-ը պարունակում է խոսքեր, որոնք Հակոբը ոգեշնչվեց գրի առնել այն մարդկանց համար, ովքեր մի օր կկարդային նրա հիշատակարանը: Նա վկայեց Հիսուս Քրիստոսի Քավության մասին և հորդորեց իր խոսքերը կարդացողներին հաշտվել Հայր Աստծո հետ Քավության միջոցով: Նախազգուշացնող ձայնով նա պատմեց հրեաների մասին, ովքեր կմերժեին Հիսուս Քրիստոսին և Նրա ավետարանի պարզության մասին:

## Ուսուցանման առաջարկներ

### Հակոբ 3

*Հակոբը մխիթարում և խորհուրդներ է տալիս սրտով մաքուրներին և մնացածին հորդորում է ապաշխարել*

Հրավիրեք ուսանողներին մտածել, թե ինչ խորհուրդ կտան մարդկանց հետևյալ իրավիճակներում.

1. Երիտասարդ կինը ձգտում է արդար ապրել, սակայն տառապում է, քանի որ իր հայրը կախվածություն ունի ալկոհոլից:
2. Երիտասարդ տղան անում է լավագույնը ավետարանով ապրելու համար, սակայն դժվարությունների է հանդիպում իր ծնողների բաժանության պատճառով:
3. Երիտասարդ կինը ջանասիրաբար փորձում է սիրել իր ընտանիքին, սակայն դժվարությունների է հանդիպում իր քրոջ եսասիրության և քամահրող վարքի պատճառով:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հակոբ 3.1–ի առաջին նախադասությունը: Խնդրեք նրանց ներկայացնել, թե առաջինը ում է դիմում Հակոբը այս գլխում:

Բացատրեք, որ Հակոբը խոսում էր հենց այն մարդկանց հետ, ովքեր մեղավոր էին հպարտության և սեռական մեղքերի առումով: Ապա նա փոխեց իր ուշադրությունը արդար մարդկանց վրա, ովքեր դժվարությունների էին հանդիպում ուրիշների ամբարշտության պատճառով: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հակոբ 3.1–2: Խնդրեք նրանց փնտրել չորս բաներ, որոնք Հակոբը խնդրեց, որ սրտով մաքուրներն անեն:

- Ի՞նչ չորս բաներ Հակոբը խնդրեց սրտով մաքուրներին անել: («Նայեք առ Աստված մտքի կայունությամբ, . . . աղոթեք նրան խիստ մեծ հավատքով, . . . բարձրացրեք ձեր գլուխները և ընդունեք Աստծո հաճելի խոսքը և վայելեք նրա սերը»:) Ի՞նչ խոստացավ Հակոբը սրտով մաքուրներին, եթե նրանք հավատարիմ մնան: (Ափոփանք չարչարանքների մեջ և պաշտպանություն թշնամիներից:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ կարող ենք մենք անել Աստծո խոսքը ստանալու համար:

Սրտով մաքուրներին տրված Հակոբի խոստումների վերաբերյալ հարցի հետ կապված համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ **Աստված կսփոփի սրտով մաքուրներին իրենց չարչարանքների մեջ:** Դուք կարող եք բացատրել, որ *սփոփել* բառը նշանակում է մխիթարել որևէ մեկին, ով տխուր կամ անհանգիստ է: Որպեսզի օգնեք ուսանողներին խորհել և կիրառել այս ճշմարտությունը, հարցրեք.

- Ինչպե՞ս է Տերը սփոփել ձեզ:
- Ինչպե՞ս է հավատքով աղոթելն օգնել ձեզ փորձության պահին:
- Ե՞րբ է Աստծո խոսքն օգնել ձեզ զգալ Նրա սերը:

Բացատրեք, որ սրտով մաքուրների հետ խոսելուց հետո, Հակոբը կրկին խոսեց նրանց հետ, ովքեր սրտով մաքուր չէին։

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Հակոբ 3.3–4։ Խնդրեք դասարանին ներկայացնել, թե ինչ հորդորեց Հակոբն անմաքուրներին անել։

- Ի՞նչ կպատահեր, եթե Հակոբի ժողովուրդը չապաշխարեր։

Նշեք, որ Հակոբը հայտարարեց, որ լամանացիներն ավելի արդար էին, քան որոշ նեփիացիներ այս ժամանակահատվածում։ Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Հակոբ 3.5–7, փնտրելով բաներ, որոնցում լամանացիներն ավելի արդար էին, քան որոշ նեփիացիները։

- Ինչո՞վ էին լամանացիներն ավելի արդար, քան որոշ նեփիացիները։
- Ի՞նչ սկզբունքներ եք սովորում Հակոբ 3.7–ում ընտանեկան հարաբերությունների մասին։ (**Ամուսիններն ու կանայք պետք է սիրեն միմյանց, և ծնողները պետք է սիրեն իրենց երեխաներին։**)
- Ի՞նչ հետևանքներ կարող են առաջ գալ, երբ ընտանիքի անդամները չեն սիրում իրար և չեն կատարում իրենց ընտանեկան պարտականությունները։

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Հակոբ 3.10, փնտրելով նախազգուշացումը, որը Հակոբը առանձնակիորեն տվեց նեփիացի հայրերին։

- Ի՞նչ նախազգուշացրեց Հակոբը նեփիացի հայրերին։
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր, որ ընտանիքի անդամները լավ օրինակ ծառայեն մեկը մյուսի համար։

Ուսանողների համար բարձրաձայն կարդացեք Հակոբ 3.11–12։ Դուք կարող եք բացատրել, որ հատված 11-ում «արթնացրեք ձեր հոգիների ունակությունները» արտահայտությունը վերաբերվում է հոգևորապես արթնանալու կարիքին։ Հակոբ 3.12-ում «պոռնկություն և հեշտասիրություն» արտահայտությունը վերաբերվում է սեռական մեղքերին։ Երբ դուք կարդաք այս հատվածները, նշեք սեռական մեղքերի «սոսկալի հետևանքները»։ Ուսանողներին նաև հիշեցրեք սրտով մաքուրներին տրված Հակոբի խոստումները (տես Հակոբ 3.1–2)։ Օգնեք ուսանողներին հասկանալ, որ այդ խոստացված օրհնությունները ստանալու լավագույն միջոցը միշտ սրտով մաքուր լինելն է։ Այնուամենայնիվ, մարդիկ, ովքեր գործել են սեռական մեղքեր, կարող են օգնություն ստանալ իրենց եպիսկոպոսից կամ ճյուղի նախագահից, ովքեր կօգնեն նրանց ապաշխարել, մաքրվել Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով և ստանալ սրտով մաքուրներին խոստացված օրհնությունները։

## Հակոբ 4

### *Հակոբը վկայում է, որ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք կարող ենք հաշտվել Աստծո հետ*

Նախքան դասի սկսվելը գրատախտակի կենտրոնում տեղադրեք Հիսուս Քրիստոսի նկարը։ Նկարի շուրջը գրեք մի քանի բառեր, որոնք ներկայացնում են բաներ, որոնք կարող են շեղել մարդկանց Փրկչից և Նրա ավետարանից։ Օրինակ, դուք կարող եք ներառել որոշ լավ բաներ, ինչպես կրթությունը, սպորտաձևերը և ընկերները, որոնք կարևոր են, սակայն չպետք է դառնան մեր կյանքի հիմնական կենտրոնը։ Դուք կարող եք նաև նշել այլ բաներ, ինչպես օրինակ՝ պոռնոգրաֆիան, ոչ պատշաճ երաժշտությունը և թմրադեղերը, որոնք վնասակար են մեր հոգու համար և մեզ հեռացնում են Փրկչից։

Խնդրեք ուսանողներին անդրադառնալ Հակոբ 4.14–ին։ Բացատրեք, որ այս հատվածը ներառում է «նշանակետից այն կողմ նայելուց» արտահայտությունը։ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելն ուսուցանել է, որ այս հատվածում «նշանակետը Քրիստոսն է» (“Jesus of Nazareth, Savior and King,” *Ensign*, Dec. 2007, 45)։ Դուք կարող եք խրախուսել ուսանողներին գրել այս նախադասությունը իրենց սուրբ գրություններում Հակոբ 4.14–ի կողքին։

Այս բացատրությամբ կիսվելուց հետո հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Հակոբ 4.14–15։

- Ձեր կարծիքով, ի՞նչ կարող է նշանակել նշանակետից այն կողմ նայելը։ (Կենտրոնացնել մեր կյանքը բացի Փրկչից և Նրա ավետարանից ցանկացած այլ բանի վրա։)

- Համաձայն Հակոբի, ո՞ր մոտեցումները և արարքներն արգելք հանդիսացան հրեաների համար, որ ընդունեին Հիսուս Քրիստոսին։

Բացատրեք, որ մինչ Հակոբը անդրադառնում էր որոշ հրեաների որոշակի մեղքերի, Հակոբ 4.14–15-ի որոշ հատվածները կարող են վերաբերվել մեզ նույնպես և կարող են մեզ համար ծառայել որպես նախազգուշացում։ Որպեսզի օգնեք ուսանողներին տեսնել այս կապը, տվեք հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ են մարդիկ երբեմն մերժում «պարզության խոսքերը» և դրա փոխարեն փնտրում բաներ, որոնք նրանք չեն կարող հասկանալ։ Որո՞նք են ավետարանի պարզ ճշմարտություններից այն կողմ նայելու որոշ վտանգները։
- Ի՞նչ կարող ենք ավելացնել գրատախտակին որպես Փրկչից և Նրա ավետարանից ուշադրությունը շեղելու այլ օրինակներ։ (Ավելացրեք ուսանողների պատասխանները այն բառերին, որոնք դուք արդեն գրել եք գրատախտակին։)

Ձնջեք գրատախտակին ձեր գրած բառերը և գրեք հետևյալ հարցը. *Ի՞նչ կարող ենք մենք անել, որ չնայենք նշանակետից այն կողմ, այլ կենտրոնացած մնանք Հիսուս Քրիստոսի վրա։*

Գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները. *Հակոբ 4.4–5, Հակոբ 4.6–7, Հակոբ 4.8–9, Հակոբ 4.10, Հակոբ 4.11–13։* Բացատրեք, որ Հակոբ 4-ում Հակոբը կիսվում է սկզբունքներով, որոնք կարող են օգնել մեզ կենտրոնացած մնալ Հիսուս Քրիստոսի վրա։ Հանձնարարեք ուսանողներին աշխատել զույգերով և փնտրել այս սկզբունքները գրատախտակին նշված սուրբ գրությունների հղումներից մեկում։ (Կախված ձեր դասարանի ուսանողների քանակից, դուք կարող եք հանձնարարել յուրաքանչյուր հղումը ավելի քան ուսանողների մեկ զույգի։ Կամ՝ դուք կարող եք խնդրել ուսանողների մի զույգին կարդալ ավելի քան մեկ հղում։)

Մի քանի րոպե անց հրավիրեք ուսանողներին զեկուցել իրենց պատասխանները։ Երբ նրանք անեն դա, դուք կարող եք հարցեր տալ, որպեսզի օգնեք նրանց ավելի խորությամբ մտածել այն մասին, թե ինչ են սովորել այդ հատվածներից։ Այս քննարկումը վարելու հարցում ձեզ օգնելու նպատակով հանձնարարված հատվածներին համապատասխան կազմված են հետևյալ հարցերը.

- Հակոբ 4.4-5։ Մարգարեների վկայություններն ինչպե՞ս են ձեզ օգնել կենտրոնանալ Հիսուս Քրիստոսի վրա։ Ինչպե՞ս են ձեզ ամրացրել Փրկչի վերաաբերյալ ուրիշների վկայությունները։ Հակոբն ասել է, որ իր ժողովրդի հնազանդությունը Մովսեսի օրենքին արդյունավետ է եղել, քանի որ այն «ուղղում է [նրանց] հոգիները դեպի» Տերը։ Ինչպե՞ս կարող են քահանայության արարողությունները ստանալու և պատվիրանները պահելու ջանքերն ուղղել մեր հոգիները դեպի Տերը։
- Հակոբ 4.6–7։ Ինչպե՞ս է մարգարեներին տրված հայտնությունն օգնում մեզ հույս և հավատք ձեռք բերել առ Հիսուս Քրիստոսը։ Ինչպե՞ս են անձնական հայտնությունը կամ ձեր ստացած հոգևոր վկայությունները ամրացրել ձեր հավատքը։ Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր հիշել, որ միայն Տիրոջ շնորհի միջոցով է, որ մենք կարող ենք անել Նրա աշխատանքը։
- Հակոբ 4.8–9։ Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր գիտակցելը, որ Տիրոջ գործերը «մեծ ու զարմանալի են»։ Որպես Երկրի Արարիչ Փրկչի աշխատանքը ինչպե՞ս է ազդում Նրա վերաբերյալ ձեր վկայության վրա։ Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «մի արհամարհեք Աստծո հայտնությունները»։ Ինչպե՞ս կարող ենք ցույց տալ Աստծուն, որ մենք գնահատում ենք Նրա տված հայտնությունները։
- Հակոբ 4.10։ Ի՞նչ օրինակներ կան այն բանի վերաբերյալ, թե ինչպես մարդը կարող է չփնտրել «խորհուրդ տալ Տիրոջը, այլ խորհուրդ վերցնել նրա ձեռքից»։
- Հակոբ 4.11–13։ Ինչպես նշվել է դաս 35-ում, *հաշտվել* բառը նշանակում է ներդաշնակության բերել։ Ինչպե՞ս է Քավությունն օգնում մեզ ներդաշնակ լինել մեր Երկնային Հոր հետ։ Հակոբը մեզ հիշեցնում է Քավության մասին սովորեցնելու կարևորության մասին, հարցնելով. «Ինչո՞ւ չխոսել Քրիստոսի Քավության մասին . . .»։ Ինչպե՞ս մենք կարող ենք հետևել այս սկզբունքին, երբ կիսվում ենք մեր վկայություններով ուրիշների հետ և երբ ունենք ավետարանը սովորեցնելու այլ հնարավորություններ։ Երբ մենք կիսվում ենք մեր վկայություններով, ինչո՞ւ է կարևոր դա այնպես անել, որ մարդիկ կարողանան հասկանալ։ Ինչպե՞ս է Հոգին օգնում մեզ իրականացնել դա։

Որպես այս քննարկման արդյունք, համոզվեք, որ հետևյալ ճշմարտությունը պարզաբանված է. **Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք կարող ենք լցվել հույսով և հաշտվել Աստծո հետ:**

Կիսվեք ձեր երախտագիտության զգացմունքներով Փրկչի և Նրա Քավության համար: Վկայեք, որ Հիսուս Քրիստոսը այն «նշանակետն է», որի վրա մենք պետք է կենտրոնացնենք մեր կյանքը: Դասի վերջում խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչ կանեն նրանք, որ կենտրոնանան Փրկչի վրա հաջորդ մի քանի օրերի ընթացքում: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք իրենց ծրագրերը գրեն իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: Կարող եք նրանցից մի քանիսին հրավիրել ասել դասարանին, թե իրենք ինչ են ծրագրում անել:

## Սերտման սուրբ գրության կրկնություն

Կրկնողությունն օգնում է ուսանողներին հիշել սերտման սուրբ գրության հատվածի տեղը: Կրկնողությանը նպաստելու եղանակներից մեկը սերտման սուրբ գրությունների քարտերի օգտագործումն է (նյութի համարը՝ 10459; նաև մատչելի է PDF ձևաչափով si.lds.org կայքով): Եթե քարտերը ձեզ մատչելի չեն, օգնեք ուսանողներին պատրաստել իրենց սեփական քարտերը, յուրաքանչյուր քարտի մի կողմում գրելով հատվածի հիմնական բառը և մյուս կողմի վրա՝ հղումը: Ուսանողներին բաժանեք զույգերի: Մի քանի րոպե թող նրանք իրար հարցեր տան քարտերի օգնությամբ: Օրինակ, ուսանողներից մեկը կարող է կարդալ գլխավոր բառերը, մինչ մյուս ուսանողը կկռահի սուրբ գրության հղումը: Հրավիրեք ուսանողներին հաճախակի օգտագործել այս քարտերը իրենք իրենց և միմյանց հարցեր տալու համար:

*Նշում.* Այս դասի ծավալը կարող է թույլ տալ, որ ժամանակ տրամադրեք այս սուրբ գրության սերտման կրկնության վարժությանը: Դուք կարող եք վարժությունն անց կացնել դասի սկզբում, որպես ընդմիջում դասի մասերի միջև, կամ դասի վերջում: Վարժությունն անց կացրեք հակիրճ ձևով, որ ժամանակ մնա դասի համար: Կրկնության այլ վարժությունների համար տես այս ձեռնարկի ցուցիչը:

# Տնային ուսումնասիրության դաս

## 2 Նեփի 32–Հակոբ 4 (Մաս 9)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

2 Նեփի 32–Հակոբ 4 ուսումնասիրելու ժամանակ ուսանողների սովորած վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը նախատեսված չէ ուսուցանելու որպես ձեր դասի մի մաս: Ձեր ուսուցանած դասը կենտրոնանում է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, երբ դուք խորհում եք ձեր ուսանողների կարիքների մասին:

#### Օր 1 (2 Նեփի 32)

Երբ ուսանողներն ուսումնասիրեցին 2 Նեփի 32, նրանք սովորեցին, որ եթե մենք սնվում ենք Քրիստոսի խոսքերով, Քրիստոսի խոսքերը մեզ կասեն բոլոր բաները, որ մենք պետք է անենք: Նրանք նաև սովորեցին, որ եթե մենք միշտ աղոթենք, մենք կկարողանանք անել այն ամենը, ինչ Տերը կկամենա, որ մենք անենք՝ մեր իսկ հոգու բարօրության համար: Դասը հրավիրեց ուսանողներին մտածել, թե ինչպես կարող են իրենք միշտ աղոթել 24 ժամվա ընթացքում:

#### Օր 2 (2 Նեփի 33)

Նեփիի վերջին վկայության մասին այս դասի ժամանակ ուսանողները սովորեցին, որ մենք ընտրում ենք՝ բացել կամ չբացել մեր սրտերը Սուրբ Հոգու ոգեշնչման համար: Նրանք նաև կրկնեցին 1 Նեփիին և 2 Նեփիին, ընտրելով սուրբ գրության այն հատվածը, որը ոգեշնչել է նրանց բարիք գործել կամ հավատալ Քրիստոսին:

#### Օր 3 (Հակոբ 1–2)

Հակոբ 1–2-ի վերաբերյալ իրենց դասում ուսանողները սովորեցին, որ քահանայության ղեկավարները ջանասիրաբար աշխատում են, որ օգնեն մեզ գալ Քրիստոսի մոտ և որ նրանք Աստծուց տրված պարտականություն ունեն՝ ուսուցանելու Աստծո խոսքը և նախազգուշացնելու մեղքի մասին: Ուսումնասիրելով իր ժողովրդին ուղղված Հակոբի քարոզը, ուսանողները սովորեցին, որ մենք նախ պետք է փնտրենք Աստծո արքայությունը: Իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում նրանք գրեցին մի եղանակ, որով կարող են օգտագործել օրհնությունները և հնարավորությունները, որոնք Տերը տվել է իրենց, որ կառուցեն Աստծո արքայությունը և օրհնեն ուրիշների կյանքը: Նրանք նաև կենտրոնացան այն ճշմարտության վրա, որ Տերը հիանում է բոլոր մարդկանց մաքրաբարոյությամբ՝ թե տղամարդկանց, և թե՝ կանանց: Նրանք հրավիրվել էին խորհելու այն մասին, թե ինչպես է մաքրաբարոյության օրենքով ապրելն օրհնում ընտանիքներին և հաճելի լինում Տիրոջը:

#### Օր 4 (Հակոբ 3–4)

Մինչ ուսանողները շարունակեցին ուսումնասիրել Հակոբի քարոզը, նրանք սովորեցին, որ Աստված կսփոփի սրտով մաքուրներին իրենց չարչարանքներում: Դասը կենտրոնացած էր այս վարդապետության վրա. Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք կարող ենք լցվել հույսով և հաշտվել Աստծո հետ: Ուսանողները գրեցին իրենց անձնական պատճառների մասին, թե ինչու էին ցանկանում վկայել Հիսուս Քրիստոսի և Քավության մասին:

### Նախաբան

Այս դասը կօգնի ուսանողներին հասկանալ, որ Նեփին վկայել է Հիսուս Քրիստոսի առաքելության մասին: Ուսանողները կիսվելու հնարավորություն կունենան, թե ինչպես կարող են Հակոբի խոսքերն օգնել իրենց հաղթահարել հպարտությունը և օգտագործել Աստծուց եկող իրենց օրհնությունները, որ կառուցեն Նրա արքայությունը: Նրանք հնարավորություն կունենան օգտագործել սկզբունքները և վարդապետությունները, որոնք սովորել են Հակոբ 2-ում, որպեսզի քննարկեն Տիրոջ մաքրաբարոյության օրենքին հնազանդվելու կարևորությունը: Նրանք կքննարկեն ուղիներ, թե ինչպես հնարավորություններ փնտրեն Հիսուս Քրիստոսի և Քավության մասին խոսելու համար:

### Ուսուցանման առաջարկներ

#### 2 Նեփի 32-33

***Նեփին մեզ խորհուրդ է տալիս փնտրել աստվածային առաջնորդություն Հիսուս Քրիստոսի խոսքերի միջոցով***

Սկսեք այս դասը՝ տալով հետևյալ հարցերը.

- Ո՞րն է ձեր սիրած սպորտաձևերից կամ միջոցառումներից մեկը:
- Ի՞նչ հիմնական հմտություններ դուք պետք է հաճախ վարժեցնեք, որպեսզի գերազանցեք այդ սպորտաձևում կամ միջոցառման մեջ:
- Ի՞նչ է պատահում, երբ մարդն անտեսում է այս հիմնական հմտությունները զարգացնելը:

Ասեք դասարանին, որ կան հիմնական գործողություններ, որոնք հրավիրում են Սուրբ Հոգին, որ մեզ առաջնորդություն տա մեր Երկնային Հորից: Հետևյալ ցանկը գրեք գրատախտակին կամ պատրաստեք այն թերթիկների ձևով:

| Աղոթք | Առաջնորդություն ստանալը Սուրբ Հոգուց | Սուրբ գրություններ ուսումնասիրում |
|---|---|---|
| 2 Նեփի 32.8–9 | 2 Նեփի 32.5, 33.1–2 | 2 Նեփի 32.3, 33.4 |

Խնդրեք յուրաքանչյուր ուսանողի ցանկից ընտրել մեկական գործողություն և կարդալ սուրբ գրությունների համապատասխան հատվածները: Դասարանը բաժանեք զույգերի կամ փոքր խմբերի: Խնդրեք ուսանողներին հերթով կիսվել, թե ինչպես է աղոթքը, Սուրբ Հոգուց առաջնորդություն ստանալը և սուրբ գրությունների ուսումնասիրությունը օգնել իրենց առաջնորդություն ստանալ Աստծուց:

Դուք կարող եք խնդրել ուսանողներին զեկուցել, թե ինչպես են Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի միշտ աղոթելու պատվիրանի վերաբերյալ հրահանգներն օգնել իրենց: Դուք կարող եք նաև հարցնել նրանց, թե ինչպես են իրենց աղոթքները զարգացել 24 ժամվա ընթացքում միշտ աղոթելու վերաբերյալ իրենց գիտելիքները կիրառելու հանձնարարության կատարման արդյունքում: (Օր 1-ի առաջադրանքներից:)

## Հակոբ 1–2

***Հակոբը պախարակում է իր ժողովրդին դեպի հարստությունները, հպարտությունը և սեռական անմաքրությունը տածած սիրո համար***

Գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունը. *Քանի որ որոշ մարդիկ ունեն ավելի շատ, . . . քան ուրիշները, նրանք կարող են կարծել, որ իրենք ավելի լավն են, քան ուրիշները:*

Հրավիրեք ուսանողներին առաջարկել մի քանի բառեր, որոնք կարող են լրացնել այս նախադասությունը: Հնարավոր պատասխանները ներառում են փողը, հարստությունները, երաժշտական ունակությունը, մարմնամարզական հմտությունները, տաղանդները, կրթությունը, ընդունակությունները, զարգանալու հնարավորությունները, ավետարանի գիտելիքը և նյութական բարիքները: Հրավիրեք ուսանողներին մտքում խորհել, թե արդյոք այս նախադասությունը՝ իրենց առաջարկած բառերից որևէ մեկի համադրությամբ, երբևէ ճիշտ է եղել իրենց վերաբերյալ:

Հիշեցրեք ուսանողներին, որ քանզի Հակոբը սիրում էր իր ժողովրդին և հնազանդ էր Տիրոջ պատվիրաններին, նա նախազգուշացրեց իր ժողովրդին իրենց ամբարշտության և մեղքերի մասին: Հրավիրեք ուսանողներին կարդալ Հակոբ 2.12–13 և առաջարկել եղանակներ, որոնցով կարող են լրացնել գրատախտակի նախադասությունը, որպեսզի այն նկարագրի որոշ նեփիացիների՝ Հակոբի ծառայության ընթացքում:

Հրավիրեք ուսանողներին կարդալ Հակոբ 2.17–21-ը և գտնել խորհուրդ, որը կարող է օգնել նրանց հաղթահարել հպարտությունը: (Նրանք, հնարավոր է, նշել են այս խորհրդի բառերը իրենց անձնական ուսումնասիրության ժամանակ:) Հրավիրեք ուսանողներին կիսվել խորհրդի որոշ բառերով, որոնք նրանք նշել են, և բացատրել, թե ինչպես այս խորհուրդը կարող է օգնել իրենց հաղթահարել հպարտությունը:

Բացատրեք, որ այս հատվածները ուսուցանում են հետևյալ ճշմարտությունը. **Մենք նախ պետք է փնտրենք Աստծո արքայությունը:** Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել մի եղանակով, որով նրանք կարող են օգտագործել օրհնությունները և հնարավորությունները, որոնք Տերը տվել է իրենց, որ կառուցեն Աստծո արքայությունը և օրհնեն ուրիշներին:

Որպեսզի նախապատրաստեք ուսանողներին կրկնել Հակոբի ուսմունքները սեռական մաքրության վերաբերյալ, հրավիրեք նրանց պատկերացնել, որ մեկը իրենց հարցրել է, թե ինչու են իրենք հավատում մաքրաբարոյության օրենքով ապրելուն: Խնդրեք ուսանողներին կարդալ Հակոբ 2.28–35 այս հարցին պատասխանելուն օգնելու համար: Կարող է օգտակար լինել նրանց հիշեցնելը, որ իրենք սովորել են հետևյալ ճշմարտությունը որպես իրենց անձնական ուսումնասիրության մի մաս. **Տերը հիանում է մաքրաբարոյությամբ:** Նրանք նաև ուսումնասիրել են այս հատվածներում նկարագրված սեռական անմաքրության հետևանքները: Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչպես նրանք կարող են բացատրել, հենվելով Հակոբ 2.28–35–ի վրա, թե ինչպես իրենք կպատասխանեն այս հարցին:

Հարցրեք. Համաձայն Հակոբ 2.27-ի, ո՞րն է «Տիրոջ խոսքը» մեկից ավելի կանայք ունենալու վերաբերյալ: (Համոզվեք, որ պարզ է այն միտքը, որ Տերը պատվիրել է, որ տղամարդը պետք է ամուսնանա միայն մեկ կնոջ հետ:)

Նշեք, որ աշխարհի պատմության որոշակի ժամանակաշրջաններում Տերը պատվիրել է Իր ժողովրդին կիրառել բազմակնություն: Օրինակ, բազմակնությունն է կիրառվել Հին Կտակարանի ժամանակներում Աբրահամի և Սարայի կողմից (տես Ծննդոց ԺԶ.1–3, ՎևՈՒ 132.34–35, 37) և նրանց որդու՝ Իսահակի և թոռան՝ Հակոբի կողմից (տես ՎևՈՒ 132.37), և այն նաև որոշակի ժամանակ կիրառվել է վերականգնված Եկեղեցու վաղ շրջանում՝ սկսելով Մարգարե Ջոզեֆ Սմիթից (տես ՎևՈՒ 132.32–33, 53): Այնուամենայնիվ, 1890թ. Աստված պատվիրեց Իր մարգարե Վիլֆորդ Վուդրուֆին վերջ դնել բազմակնության կիրառմանը (տես ՎևՈՒ, Պաշտոնական Հայտարարություն 1):

Ուսանողներին ժամանակ տրամադրեք մտածելու, թե առաքինի և մաքուր լինելու նրանց կատարած ընտրություններն ինչպես կհիացնեն Տիրոջը և ուրիշներին: Հրավիրեք նրանց բացատրել, թե ինչպես մաքրաբարոյության օրենքն այժմ պահելը կօրհնի իրենց և իրենց ընտանիքներին այժմ և ապագայում: Բացատրեք, թե ինչպես է մաքրաբարոյության օրենքը պահելը օրհնել ձեզ և ձեր ընտանիքին:

## Հակոբ 3-4

***Հակոբը խրախուսում է իր ժողովրդին ապաշխարել և հույս ձեռք բերել, որ իրենք կարող են վերադառնալ Աստծո ներկայության մեջ***

Գրատախտակի կենտրոնում, պաստառի վրա կամ թղթի մի կտորի վրա ամրացրեք Հիսուս Քրիստոսի մի փոքրիկ նկար: Նկարի շուրջը գրեք մի քանի բառեր, որոնք ներկայացնում են բաներ, որ կարող են շեղել մարդկանց Փրկչից և Նրա ավետարանից: Խնդրեք ուսանողներին անդրադառնալ Հակոբ 4.14-ին: Բացատրեք, որ այս հատվածը ներառում է «նշանակետից այն կողմ» արտահայտությունը: Հարցրեք նրանց, թե ինչ նշանակություն ունի «նշանակետ» բառը այս հատվածում: (Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց

Նիլ Ա. Մաքսվելն ուսուցանել է, որ «նշանակետը Քրիստոսն է» [“Jesus of Nazareth, Savior and King,” *Ensign*, Dec. 2007, 45]:) Այս բացատրությամբ կիսվելուց հետո հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Հակոբ 4.14–15:

Հարցրեք. Ձեր կարծիքով, ի՞նչ է նշնակում նայել նշանակետից այն կողմ: (Կենտրոնացնել մեր կյանքը բացի Փրկչից և Նրա ավետարանից որևէ այլ բանի վրա:)

Հրավիրեք ուսանողներին կարդալ Հակոբ 4.4–12 և ներկայացնել մի քանի պատճառներ, թե ինչու էր Հակոբը հավատում Հիսուս Քրիստոսին, և ինչու էր նա զգում, որ կարևոր էր ուրիշներին տեղեկացնել Քավության մասին: Որպես այս քննարկման արդյունք համոզվեք, որ հետևյալ ճշմարտությունը պարզ է հասկացվել. **Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մենք կարող ենք լցվել հույսով և հաշտվել Աստծո հետ:**

Կիսվեք Փրկչի և Նրա Քավության համար ձեր երախտագիտության զգացումով: Վկայեք, որ Հիսուս Քրիստոսը «նշանակետն է», որի վրա մենք պետք է կենտրոնացնենք մեր կյանքերը: Դասի վերջում խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչ պետք է իրենք անեն, որ կենտրոնացնեն իրենց ուշադրությունը Փրկչի վրա հաջորդ մի քանի օրերի ընթացքում:

## Հաջորդ Մաս (Հակոբ 5Օմնի)

Հարցրեք ուսանողներին. Ի՞նչ է հակաքրիստոսը: Ի՞նչ կասեիք դուք հակաքրիստոսին: Երբ դուք կարդաք սուրբ գրությունները հաջորդ մասում, ուշադրություն դարձրեք, թե ինչ ասաց և արեց Հակոբը, երբ հանդիպեց Սերեմին՝ հակաքրիստոսին: Նաև փնտրեք օրհնությունները, որոնք Ենովսը ստացավ, քանի որ նա փնտրեց Աստծուն իր ողջ սրտով՝ աղոթելով ողջ օրվա ընթացքում և գիշերով: Փնտրեք պատճառները, թե ինչու նեփիացիները թողեցին իրենց առաջին ժառանգության երկիրը և միացան Մուղեկացիներին:

ԴԱՍ 46

# Հակոբ 5.1–51

## Նախաբան

Իր ժողովրդին ուսուցանելիս Հակոբը մեջբերեց ընտանի և վայրի ձիթենիների այլաբանությունը, որը սկզբնապես տրվել էր Զենոս անունով մարգարեի կողմից և ընդգրկվել էր արույրե թիթեղների մեջ: Հակոբն օգտագործեց այս այլաբանությունը, որ ուսուցաներ, որ Տերը կցանկանար փրկության բերել ողջ մարդկությանը, Իր ուխտյալ ժողովրդի թվում նույնիսկ նրանց, ովքեր հեռացել էին Իրենից: Հակոբ 5-ի երկարությունից ելնելով, այն բաժանված է երկու դասերի:

## Ուսուցանման առաջարկներ

### Հակոբ 5.1–14

*Հակոբը մեջբերում է Զենոսին, ով Իսրայելի տունը նմանեցրել է ընտանի ծառին*

Սկսեք այս դասը երիտասարդների հետևյալ օրինակները կարդալով, ովքեր վստահ չեն, որ Տերը ցանկանում է ներել իրենց մեղքերը.

- Երիտասարդ քահանայություն կրողի մոտ ձևավորվում է մեղսալի սովորություն: Նա հավատում է, որ ուրիշները կարող են ներվել, սակայն չի կարողանում հավատալ, որ Տերը կընդունի իր ապաշխարությունը:
- Երիտասարդ կինը խախտում է պատվիրանը: Նա մեղավորություն է զգում, իրեն շատ վատ է զգում իր արածի համար և կասկածում է, թե արդյոք Տերը դեռ սիրում է իրեն:

Հրավիրեք ուսանողներին խորհել հետևյալ հարցի շուրջ՝ առանց բարձրաձայն պատասխանելու.

- Դուք երբևէ խորհե՞լ եք ձեր մեղքերը ներելու Տիրոջ ցանկության մասին:

Բացատրեք, որ Հակոբը մարգարեացել է, որ Հրեաները կմերժեն Հիսուս Քրիստոսին (տես Հակոբ 4.15): Նա նաև ուսուցանել է, որ Հիսուս Քրիստոսը կշարունակի աշխատել Իր ժողովրդի փրկության համար նույնիսկ այն բանից հետո, երբ նրանք կմերժեն Իրեն (տես Հակոբ 4.17–18): Այս ճշմարտությունը լուսաբանելու համար Հակոբը մեջբերեց Զենոս անունով մարգարեի կողմից տրված այլաբանությունը: Այլաբանությունն օգտագործում է խորհրդանշական կերպարներ, առարկաներ և գործողություններ ճշմարտություններ ուսուցանելու համար: Երբ ուսանողներն ուսումնասիրեն այս այլաբանությունը, նրանք կարող են սովորել կարևոր դասեր Հիսուս Քրիստոսի ցանկության մասին, օգնելու նրանց, ովքեր հեռացել էին Իրենից:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Հակոբ 5.1–2, և թող դասարանը փնտրի, թե ում հետ էր խոսում Զենոսը (Իսրայելի տան հետ): Դուք կարող եք բացատրել, որ երբ Հին Կտակարանի մարգարե Հակոբը ուխտեր կապեց Տիրոջ հետ, Տերը փոխեց նրա անունը Իսրայել: «Իսրայելի տուն» արտահայտությունը վերաբերվում է Հակոբի սերունդներին և բոլոր մարդկանց, ովքեր մկրտվել են և ուխտեր են կապել Տիրոջ հետ:

- Այս դասարանում ո՞վ է Իսրայելի տան անդամ: (Դուք կարող եք բացատրել, որ Եկեղեցու բոլոր մկրտված անդամները Իսրայելի տան մի մասն են: Նրանք Հակոբ 5–ի այլաբանության մի մասն են:)

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Հակոբ 5.3: Խնդրեք դասարանին փնտրել, թե ինչ էր օգտագործել Զենոսն իր այլաբանության մեջ Իսրայելի տունը ներկայացնելու համար: Այն բանից հետո, երբ ուսանողները կզեկուցեն իրենց գտածը, բացատրեք, որ ձիթենիները շատ արժեքավոր էին հին Իսրայելում, որտեղ ապրում էր Զենոսը: Ձիթապտուղներն օգտագործում էին որպես ուտելիք, և ձիթապտղի յուղն օգտագործվում էր խոհարարության և բժշկության մեջ, և որպես վառելանյութ լամպերի համար: Ձիթենիները շատ խնամք և աշխատանք էին պահանջում, որ օգնեին դրանց տալ լավ բերք: Նշեք, որ այս այլաբանությունում ընտանի ձիթենիներն աճում էին այգում, որը ներկայացնում էր աշխարհը:

- Համաձայն Հակոբ 5.3-ի, ի՞նչ սկսեց պատահել ընտանի ձիթենու հետ: Ի՞նչ է խորհրդանշում ծառի փտումը: (Խրախուսեք ուսանողներին օգտագործել *3ղ* տոդատակի գրառումը այս հարցին պատասխանելու համար:)
- Ի՞նչ է ուրացությունը: (Հեռանալ Տիրոջից և Նրա ավետարանից:)

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հակոբ 5.4–6: Խնդրեք նրանց մտածել այն մասին, թե ով է այգու տերը և ինչ կարող են ներկայացնել նրա էտելու, փորելու և սնուցելու գործողությունները: Այնուհետև թող նրանք բացատրեն, թե, իրենց կարծիքով, ինչ են ներկայացնում այս խորհրդանիշերը: (Դուք կարող եք օգնել նրանց հասկանալ, որ այգու տերը ներկայացնում է Հիսուս Քրիստոսին: Էտելը, փորելը և սնուցելը ներկայացնում են Տիրոջ ջանքերը, որ օգնում են մեզ ստանալ Իր Քավության օրհնությունները, և մարգարեների ջանքերը, որ սովորեցնում և կանչում են մարդկանց ապաշխարության:)

Հրավիրեք մի ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը.

«Այս այլաբանությունը, ինչպես շարադրել է Հակոբը, ի սկզբանե նախատեսված էր լինելու Քրիստոսի մասին: . . . Չնայած այգու Տերը և նրա աշխատողները ջանում են սատարել, էտել, մաքրագործել և այլ կերպով դրա ծառերը դարձնել պտղաբեր, որի միջոցով մի գլխում տրվում է Իսրայելի ցրման և հավաքման պատմական համառոտ ակնարկը, Քավության ավելի խոր իմաստ կա նրանց ջանքերում» (*Christ and the New Covenant: The Messianic Message of the Book of Mormon* [1997], 165):

Որպեսզի օգնեք ուսանողներին տեսնել, թե ինչպես է այս այլաբանությունը լուսաբանում նրանց հանդեպ Տիրոջ մտահոգությունը, սովորեցրեք նրանց, որ նրանք կարող են իրենց անունները դնել ձիթենիների փոխարեն: Դուք սա կարող եք ցուցադրել՝ տալով Հակոբ 5.7–ի հետևյալ օրինակը. «Ինձ վշտացնում է, որ ես պետք է կորցնեմ [ձեր անունը]»: Բացատրեք, որ երբ մենք զետեղենք մեր անունները Հակոբ 5-ի այն տեղերում, որոնք նշանակալից են և պատշաճ, մենք կարող ենք ավելին սովորել մեր հանդեպ Տիրոջ մտահոգության վերաբերյալ:

Ցուցադրեք հետևյալ ցանկը: Բացատրեք, որ այն թվում է Զենոսի այլաբանության խորհրդանիշների իմաստները: (Դուք կարող եք բազմացնել այս ցանկը և բաժանել ուսանողներին կամ թող ուսանողները ցանկը արտագրեն իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:)

| **Հակոբ 5. Ընտանի և վայրի ձիթենիների այլաբանությունը** | |
|---|---|
| **Խորհրդանիշ** | **Հնարավոր նշանակությունը** |
| Ընտանի ձիթենի | Իսրայելի տուն, Աստծո ուխտյալ ժողովուրդ |
| Այգի | Աշխարհ |
| Փտել | Մեղք և ուրացություն |
| Այգու Տեր | Հիսուս Քրիստոս |
| Էտել, փորել և սնուցել | Տիրոջ ջանքերը, որ ուղղված են օգնելու մարդկանց ստանալ Իր Քավության օրհնությունները |
| Այգու տիրոջ ծառան | Տիրոջ մարգարեները |
| Ճյուղեր | Մարդկանց խմբեր |
| Վայրի ձիթենի | Հեթանոսներ. նրանք, ովքեր ուխտեր չեն կապել Տիրոջ հետ: Այլաբանության ընթացքում բնական ձիթենիները դառնում են վայրի, ներկայացնելով Իսրայելի տան մի մասին, ովքեր ընկնում են ուրացության մեջ: |
| Ճյուղերի պատվաստում և տնկում | Տիրոջ ուխտյալ ժողովրդի ցրում և հավաքում: Բացի դրանից, վայրի ճյուղերի պատվաստումը բնական ձիթենուն ներկայացնում է նրանց դարձի գալը, ովքեր դառնում են Տիրոջ ուխտյալ ժողովրդի մի մասը: |

| Հակոբ 5. Ընտանի և վայրի ձիթենիների այլաբանությունը | |
|---|---|
| **Խորհրդանիշ** | **Հնարավոր նշանակությունը** |
| Վառվող ճյուղեր | Աստծո դատաստանը ամբարիշտների վրա |
| Բերք | Մարդկանց կյանքերը կամ գործերը |

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Հակոբ 5.7, 9–10, և թող դասարանը փնտրի, թե այնուհետև ինչ արեց այգու տերը, որ փրկեր բնական ձիթենին: Ուսանողները թող զեկուցեն իրենց գտածը: (Դուք կարող եք բացատրել, որ պատվաստել նշանակում է մի ծառի ճյուղը ամրացնել մեկ այլ ծառին: Այս հատվածներում պատվաստելը ներկայացնում է Տիրոջ ջանքերը, որ ուղղված են օգնելու հեթանոսներին դառնալ Իր ուխտյալ ժողովրդի մի մասը մկրտության և դարձի գալու միջոցով: Որոշ ճյուղեր այրելը ներկայացնում է Տիրոջ դատաստանը Իսրայելի տան ամբարիշտ անդամներից շատերի վրա:)

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Հակոբ 5.11: Դասարանին խնդրեք փնտրել տիրոջ մտահոգության ապացույցը բնական ձիթենու արմատների հանդեպ: Ուսանողները թող զեկուցեն իրենց գտածը:

Հիշեցրեք ուսանողներին, որ Հակոբ 5.6–ում նշվում է, որ ընտանի ձիթենին սկսել էր արձակել փոքր ու մատղաշ ճյուղեր: Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Հակոբ 5.8, 13–14: Դասարանին խնդրեք ներկայացնել, թե ինչ արեց տերը այդ ճյուղերի հետ: Դուք կարող եք նաև խնդրել նրանց մտածել այն մասին, թե ինչպես է Լեքիի ընտանիքի ճամփորդությունը Հակոբ 5.8, 13–14-ում տիրոջ կատարած գործողության օրինակ հանդիսանում:

## Հակոբ 5.15–40

### *Այգու տերը և իր ծառաները աշխատում ենայգուն, որպեսզի այն առաջ բերի լավ բերք*

Դասարանը բաժանեք երկու խմբի: Առաջին խմբին հանձնարարեք ուսումնասիրել Հակոբ 5.15–28, իսկ երկրորդ խմբին՝ ուսումնասիրել Հակոբ 5.29–40: Ուսանողներին խնդրեք ուսումնասիրելիս անել հետևյալը (դուք կարող եք գրատախտակին գրել հետևյալ հրահանգները).

1. Ամփոփեք, թե ինչ պատահեց այգում և ինչ կարող է դա ներկայացնել:
2. Գտեք այն արտահայտությունները, որոնք ցույց են տալիս այգու տիրոջ ջանքերը ընտանի (կամ բնական) ձիթենին և դրա ճյուղերը փրկելու համար:

Իրենց հանձնարարված հատվածներն ուսումնասիրելու համար ուսանողներին բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո խնդրեք նրանց ամփոփել, թե ինչ պատահեց այգում, և բացատրել, թե ինչ կարող է դա ներկայացնել: Սկսեք այն ուսանողներից, ովքեր ուսումնասիրել են Հակոբ 5.15–28: Ստորև բերված են ամփոփումների և մեկնաբանությունների օրինակներ:

Հակոբ 5.15–28: Ի՞նչ պատահեց. Բոլոր ճյուղերը, որոնք պատվաստվել էին, առաջ բերեցին բարի պտուղ: Այնուամենայնիվ, մի ճյուղ, անկախ այն բանից, որ տնկվել էր այգու լավ մասում, առաջ բերեց և ընտանի, և վայրի պտուղ: Ի՞նչ կարող է սա ներկայացնել. Այգու մեծ մասով մեկ առաջ եկած բարի կամ ընտանի պտուղը ներկայացնում է արդարությունը երկրի վրա Քրիստոսի և Իր աշակերտների ժամանակ: Ճյուղը, որ առաջ էր բերել որոշ բարի պտուղ և որոշ վայրի պտուղ, ներկայացնում է Լեքիի արդար և ամբարիշտ սերունդներին:

Հակոբ 5.29–40. Ի՞նչ պատահեց. Այգու ամբողջ բերքը ապականվել էր: Ի՞նչ կարող է սա ներկայացնել. Ամբողջ բերքի ապականվելը ներկայացնում է Մեծ Ուրացությունը, որի ընթացքում Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը վերցվել էր երկրի վրայից, ինչը հաջորդեց Քրիստոսի Առաքյալների ծառայությանը:

Այն բանից հետո, երբ երկու խմբերն էլ կկիսվեն այս ամփոփումներով, հարցրեք.

- Ո՞ր արտահայտություններն են ցույց տալիս ընտանի ձիթենին և դրա ճյուղերը պահպանելու տիրոջ ջանքերը: Ի՞նչ է սա լուսաբանում իր ուխտի ժողովրդի հանդեպ Տիրոջ ունեցած զգացմունքների վերաբերյալ:

- Այս այլաբանությունը քննարկելու ընթացքում ի՞նչ եք դուք սովորել Հիսուս Քրիստոսի՝ այգու տիրոջ մասին: (Այս հատվածներում ուսուցանված բազմաթիվ ճշմարտությունների հետ մեկտեղ ուսանողները պետք է հասկանան, որ **Տերը սիրում է մեզ և ջանասիրաբար աշխատում է մեր փրկության համար:**)
- Ի՞նչ առնչություն ունի այս այլաբանությունը դասի սկզբում տրված երկու երիտասարդների օրինակների հետ, ովքեր խորհում էին իրենց մեղքերը ներելու Տիրոջ ցանկության մասին:

## Հակոբ 5.41–51

### *Տերը վշտանում է իր այգու համար*

Հրավիրեք մի քանի ուսանողների բարձրաձայն կարդալ Հակոբ 5.41–42, 46–50: (Դուք կարող եք նշել, որ Հակոբ 5.48–ի «այգու ամբարտավանությունը» արտահայտությունը կարող է վերաբերվել հպարտությանը:) Խնդրեք դասարանին փնտրել արտահայտություններ, որոնք ցույց են տալիս տիրոջ սերը և մտահոգությունը իր այգու հանդեպ, երբ ծառերը առաջ չեն բերում բարի պտուղ: Հրավիրեք ուսանողներին կիսվել այս հատվածներից արտահայտություններով, որոնք շատ կարևոր են իրենց համար, և բացատրել, թե ինչու են արտահայտությունները կարևոր: Ուսանողների կիսվելուց հետո հարցրեք դասարանին.

- Ինչպե՞ս է տիրոջ մտահոգությունն իր այգու համար ներկայացնում Տիրոջ սերը մեր հանդեպ:
- Ի՞նչ օրինակներ կան սուրբ գրություններում կամ ձեր կյանքում, որոնք ապացուցում են, որ Տերը շարունակում է սիրել և հոգալ մարդկանց համար նույնիսկ այն բանից հետո, երբ նրանք հեռանում են Իրենից:

Վերջում հիշեցրեք ուսանողներին, որ տերը որոշեց կտրել բոլոր ծառերը, քանի որ դրանց բոլորի վրա բերքը դարձել էր անպետք՝ անկախ այն ամենից, ինչ նա արեց (տես Հակոբ 5.49):

- Ձեր կարծիքով, տերը իր հույսը կկտրե՞ր իր այգուց: Ինչո՞ւ, կամ ինչո՞ւ ոչ:

Այն բանից հետո, երբ ուսանողները կկիսվեն իրենց պատասխաններով, դասարանի համար կարդացեք Հակոբ 5.51: Վկայեք, որ Տերը սիրում է մեզ և ցուցաբերում է մեծ ողորմություն և համբերություն, մինչ աշխատում է օգնել մեզ գալ Իր մոտ և առաջ բերել արդար գործեր: Բացատրեք, որ հաջորդ դասը կներառի քննարկում իր այգին փրկելու համար տիրոջ վերջին ջանքերի մասին:

ԴԱՍ 47

# Հակոբ 5.52–77, Հակոբ 6

## Նախաբան

Նախորդ դասի ժամանակ ուսանողները սկսեցին ուսումնասիրել Զենոսի այլաբանությունը ընտանի և վայրի ձիթենիների վերաբերյալ: Այս դասի ժամանակ նրանք կուսումնասիրեն այլաբանության վերջին հատվածը, որտեղ այգու տերը աշխատում է իր ծառաների հետ միասին վերջին անգամ, որ օգնի ծառերին բարի պտուղ տալ: Նրանք նաև կուսումնասիրեն Հակոբ 6–ը, որտեղ Հակոբը մեկնաբանում է այլաբանությունը և խրատում է իր ժողովրդին ապաշխարել:

## Ուսուցանման առաջարկներ

### Հակոբ 5.52–60

*Ընտանի և վայրի ձիթենիների այլաբանությունում այգու տերը փրկում է ծառերը և օգնում է դրանց տալ բարի բերք*

Նախքան դասը սկսելը գրատախտակին նկարեք երեք ծառ:



Հիշեցրեք ուսանողներին, որ նախորդ դասի ժամանակ նրանք սկսել են ուսումնասիրել Զենոսի այլաբանությունը ընտանի և վայրի ձիթենիների վերաբերյալ Հակոբ 5–ում: Այդ դասի վերջում այգու բոլոր ծառերն առաջ էին բերում վայրի պտուղ (տես Հակոբ 5.30–42): Սա ներկայացնում էր Մեծ Ուրացությունը:

Նախորդ դասը կրկնելու համար դասարանը բաժանեք զույգերի: Յուրաքանչյուր զույգ թող քննարկի հետևյալ կիսատ նախադասությունների իրենց պատասխանները (դուք կարող եք այս նախադասությունները գրել գրատախտակին).

1. Այգու տերը ներկայացնում է . . .
2. Այգու տիրոջ ջանքերն իր ծառերը փրկելու համար ներկայացնում են . . .
3. Մի բան, որ ես սովորեցի Հիսուս Քրիստոսի վերաբերյալ այգու տիրոջ խոսքերից և գործերից այն է, որ . . .
4. Այն բանից հետո, երբ այգու բոլոր ծառերը և բերքը դարձան անպետք, տերը որոշեց . . .

Այն բանից հետո, երբ ուսանողները զույգերով քննարկեն այս նախադասությունները, դասարանով հակիրճ վերանայեք նրանց պատասխանները: Երբ ուսանողները զեկուցեն առաջին երկու հարցերի իրենց պատասխանները, համոզվեք, որ պարզ է այն փաստը, որ այգու տերը ներկայացնում է Հիսուս Քրիստոսին, և որ իր ծառերը փրկելու նրա ջանքերը ներկայացնում են Փրկչի ջանքերը, որ օգնեն Իր ժողովրդին վերադառնալ Իր մոտ: Ուսանողները կարող են կիսվել մի շարք արժեքավոր դասերով, երբ նրանք լրացնեն երրորդ նախադասությունը: Ուսանողները թող ստուգեն չորրորդ նախադասության իրենց պատասխանները, նայելով Հակոբ 5.51–ին, որտեղ ասվում է, որ տերը որոշեց խնայել այգին «մի քիչ էլ»:

Բացատրեք, որ այսօրվա դասը այլաբանության վերջին մասին է վերաբերվում, որտեղ ներկայացվում են վերջին օրերը՝ ներառյալ ավետարանի Վերականգնումը:

Նշեք, որ այգու տերը որոշեց փրկել այգին՝ պատվաստելով ավելի շատ ճյուղեր: Մի քանի ուսանողներ թող հերթով կարդան Հակոբ 5.52–58–ը: Հրավիրեք դասարանին փնտրել, թե ինչ արեց տերը, որ ամրացներ ճյուղերը և արմատները: (Օգնեք ուսանողներին տեսնել, որ այգու տերը պատվաստեց բնական ծառերից վերցրած

***Հանձնարարեք ուսանողներին աշխատել զույգերով***

Զույգերով աշխատելը կարող է ուսանողներին հնարավորություն տալ «միմյանց ուսուցանել արքայության վարդապետությունը» (ՎևՈՒ 88.77): Մտածված կերպով որոշեք, թե որ ուսանողներին եք հանձնարարում միասին աշխատել. որոշ ուսանողների կարող է օգտակար լինել, մյուսներին կարող է խանգարել, եթե նրանք իրար հետ զույգ կազմեն:

ճյուղերը նորից իրենց սկզբնական ծառին, և ծառը ներկայացնում էր Իսրայելի տունը: Ապա նա պատվաստեց այդ ծառի ճյուղերը այլ բնական ծառերին: Նա նաև ամենադառը ճյուղերը նետեց կրակը: Դուք կարող եք օգտագործել գրատախտակի ծառերը, որ լուսաբանեք այս բացատրությունը: Օրինակ, դուք կարող եք ջնջել մի ծառի ճյուղը և նոր ճյուղ նկարեք մյուսի վրա:)

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Հակոբ 5.59: Խնդրեք դասարանին ուշադրություն դարձնել, թե ինչ էր ակնկալում տերը ծառերի արմատների հետ այդ գործողությունները կատարելու արդյունքում:

- Ի՞նչ էր ակնկալում տերը, որ կպատահեր արմատներին: (Նա ցանկանում էր, որ դրանք «վերցնեն ուժ»:)

Հիշեցրեք ուսանողներին, որ այդ ժամանակ բոլոր ծառերն առաջ էին բերում վատ պտուղ, ներկայացնելով ողջ աշխարհի ուխտադուրժ վիճակը: Բացատրեք, որ երբ արմատները ուժ վերցնեին, ճյուղերը ողջ այգով մեկ կփոխվեին, որ «բարին կարողանա հաղթել չարին» (Հակոբ 5.59):

Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ այս հատվածները սովորեցնում են, որ **ավետարանի ուխտերի ազդեցությունը թույլ է տալիս Երկնային Հոր զավակներին հաղթահարել մեղքը և առաջ բերել արդարություն:**

- Ի՞նչ եղանակներով կարող են ավետարանի ուխտերն ամրացնել մեզ: Ինչպե՞ս են ձեր ուխտերն ազդել ձեր կյանքի վրա: (Դուք կարող եք կիսվել ձեր սեփական զգացմունքներով և վկայությամբ այս սկզբունքների վերաբերյալ:)

## Հակոբ 5.61–77

### *Այգու տերն աշխատում է այգում իր ծառաների հետ*

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հակոբ 5.61–62, փնտրելով, թե ինչ կարգադրեց այգու տերն իր ծառաներին անել, և ինչու նա խնդրեց այդ անել:

- Ծառան այլաբանության սկզբում ներկայացնում է Տիրոջ մարգարեներին: Ո՞ւմ կարող էին ներկայացնել Հակոբ 5.61–ի բազմաթիվ ծառաները: (Օգնեք ուսանողներին տեսնել, որ այս ծառաները կարող են ներկայացնել Եկեղեցու բոլոր անդամներին՝ մարգարեներին և առաքյալներին, գերագույն և տեղական Եկեղեցու ղեկավարներին, միսիոներներին, տնային ուսուցիչներին, այցելող ուսուցիչներին և ցանկացածին, ով մասնակցում է Տիրոջ աշխատանքին:)
- Ի՞նչ նշանակալից բան կա Հակոբ 5.61–62–ի՝ *մենք, մեր* և *մեզ* բառերի մեջ: (Տերն աշխատում է մեզ հետ: Մենք մենակ չենք թողնված կատարելու Իր աշխատանքը:)
- Համաձայն Հակոբ 5.62-ի, ի՞նչ առանձնահատուկ բան կա այն ժամանակահատվածում, որում այս ծառաները կանչված էին աշխատելու: (Դա «վերջին անգամն էր», որ տերը պիտի էտեր այգին: Մարգարեները այս «վերջին անգամին» անվանում են «ժամանակների լրության տնտեսություն»: Օրինակ, տես Եփեսացիս Ա.10 և ՎԿՈՒ 128.20:)

Որպեսզի օգնեք ուսանողներին տեսնել, թե այլաբանության այս մասն ինչ առնչություն ունի իրենց հետ, թող մի ուսանող կարդա Յոթանասունից Երեց Դին Լ. Լարսենի հետևյալ խոսքերը.

«[Այժմ] այն ժամանակահատվածն է, որի ընթացքում Տերը և Իր ծառաները կգործադրեն իրենց վերջին մեծ ջանքերը, որ ճշմարտության ուղերձը տանեն աշխարհի բոլոր մարդկանց և ետ վերադարձնեն հին Իսրայելի բոլոր սերունդներին, ովքեր կորցրել են իրենց իսկական ինքնությունը: . . .

Դուք աշխարհ եք եկել, երբ դրվել է այս մեծ աշխատանքի հիմքը: Ավետարանը վերականգնվել է վերջին անգամ: Եկեղեցին հաստատվել է գրեթե աշխարհի բոլոր մասերում: Բեմահարթակը պատրաստ է վերջին հուզիչ տեսարանը խաղալու համար: Դուք լինելու եք հիմնական խաղացողները: Դուք այգու վերջին աշխատողների մեջ եք: . . . Սա այն ծառայությունն է, որի համար դուք ընտրված եք» (“A Royal Generation,” *Ensign*, May 1983, 33):

- Ի՞նչ ազդեցություն է գործում ձեզ վրա իմանալը, որ դուք կանչված եք ծառայելու Տիրոջ հետ այս վերջին աշխատանքների ընթացքում:
- Ե՞րբ եք դուք զգացել, որ Տերն աշխատել է ձեզ հետ, երբ դուք մասնակցել եք Իր աշխատանքին:

- Ի՞նչ հնարավորություններ դուք ունեք Տիրոջը ծառայելու և ուրիշներին օգնելու առաջ բերել «բարի պտուղ»: (Ուսանողները կարող են նշել իրենց Եկեղեցու կոչումները և հանձնարարությունները. ընտանիքի անդամների, ընկերների և ուրիշների հանդեպ իրենց պարտականությունը՝ օգնելու ավելի մոտենալ Փրկչին, ինչպես նաև որպես լիաժամկետ միսիոներներ Տիրոջը ծառայելու հնարավորությունը, որը նրանք կունենան:)

Գրատախտակին գրեք *Հակոբ 5.70–75*: Ներկայացրեք այս հատվածները, բացատրելով, որ դրանք սովորեցնում են Իր ծառաների հետ Տիրոջ ունեցած հարաբերության մասին: Այնտեղ նաև նկարագրվում է, թե ինչ կարող են Տերը և Իր ծառաներն իրականացնել իրենց միասնական աշխատանքի շնորհիվ: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ այս հատվածները և ընտրել մի հատված, որը տալիս է իրենց սիրած նկարագրությունը Իր ծառաների հետ Տիրոջ ունեցած հարաբերության մասին: Կարդալու համար ուսանողներին ժամանակ տրամադրելուց հետո, հրավիրեք նրանցից մի քանիսին ասել, թե որ հատվածն են իրենք ընտրել, ինչու է այն իրենց դուր գալիս և ինչպես կարող է այն օգնել իրենց, երբ իրենք ծառայում են Տիրոջը:

Խնդրեք ուսանողներին մասնակցել այս վարժությանը, համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **Տերը խոստանում է մեզ երջանկություն, երբ մենք աշխատում ենք Նրա հետ Իր աշխատանքն իրականացնելու համար:** Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի խորությամբ հասկանալ Հակոբ 5.70–75-ը, կարող եք տալ հետևյալ հարցերից մի քանիսը.

- Ի՞նչ էր այգու տերը խոստանում նրանց, ովքեր աշխատում էին իր հետ: (Տես Հակոբ 5.71, 75:) Ե՞րբ եք դուք ուրախություն զգացել Տիրոջ աշխատանքում:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր, որ ծառաներն աշխատեն «իրենց զորությամբ» և «ամենայն փութաջանությամբ» (տես Հակոբ 5.72, 74:) Ի՞նչ դաս դուք կարող եք քաղել այս արտահայտություններից, երբ դուք ծառայում եք Տիրոջը:

Ավարտեք դասի այս մասը՝ խնդրելով ուսանողներին պատասխանել հետևյալ հարցին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային նոթատետրերում (դուք կարող եք այն գրել գրատախտակին).

- Երբ դուք խորհում եք Տիրոջը ծառայելու ձեր հնարավորությունների մասին, ինչպե՞ս դուք կկիրառեք այն ճշմարտությունները, որոնք մենք քննարկել ենք Հակոբ 5–ում:

Գրելու համար ուսանողներին բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, դուք կարող եք խնդրել նրանցից մեկին կամ երկուսին դասարանի համար կարդալ իրենց պատասխանները:

## Հակոբ 6

### *Հակոբն ուսուցանում է Տիրոջ ողորմության և արդարության մասին, և հրավիրում է իր ժողովրդին ապաշխարել*

Հակիրճ ներկայացրեք Հակոբ 6-ը, բացատրելով, որ այն պարունակում է Հակոբի ամփոփումն ընտանի և վայրի ձիթենիների այլաբանության կարևոր ճշմարտությունների վերաբերյալ:

Հրավիրեք մի ուսանողի կարդալ Հակոբ 6.4–6: Դասարանի կեսին խնդրեք փնտրել, թե ինչ էր Հակոբն ուզում, որ իր ժողովուրդը սովորեր Տիրոջ մասին: (Որ Նա հիշում է Իր ժողովրդին, որ Նա «հարում է [իրենց]» և որ Նրա «ողորմության բազուկը մեկնված է դեպի [իրենց]»: Դուք կարող եք բացատրել, որ այս հատվածում *հարել* բառը նշանակում է ավելի մոտ կանգնել ինչ որ բանի կամ մեկին:) Դասարանի մյուս կեսին խնդրեք փնտրել, թե ինչ խրախուսեց Հակոբն անել իր ժողովրդին որպես այս գիտելիքի արդյունք: (Չխստացնել իրենց սրտերը, ապաշխարել, գալ դեպի Տերը «սրտի ողջ նվիրվածությամբ» և «հարել Աստծուն, ինչպես նա է հարում [իրենց]»:) Այն բանից հետո, երբ ուսանողները կասեն դասարանին, թե ինչ են իրենք սովորել, հարցրեք.

- Ինչպե՞ս է Հակոբը նկարագրել Տիրոջը: Ձեզ համար ի՞նչ նշանակություն ունի այն, որ Տիրոջ «ողորմության բազուկը մեկնված է դեպի ձեզ»:
- Ի՞նչ եք դուք սովորել Տիրոջ մասին ձիթենիների այլաբանությունից, որ լուսաբանում է, թե ինչպես է Նա հարում ձեզ: Ի՞նչ կարող եք դուք անել, որ ցույց տաք, որ հարում եք Տիրոջը:

Ամփոփեք Հակոբ 6.7–10-ը, բացատրելով, որ «Աստծո բարի խոսքով սնվելուց հետո» մենք չպետք է առաջ բերենք չար պտուղ: Մենք պետք է հետևենք մարգարեների խոսքերին: Եթե մենք չապաշխարենք, Հակոբը նախազգուշացրել է, որ մենք պատասխանատու կլինենք մեր մեղքերի համար Տիրոջ դատարանի առջև: Խրախուսեք ուսանողներին մտքում կարդալ Հակոբ 6.11–13 և փնտրել Հակոբի վերջին խորհուրդը: Այն բանից հետո, երբ նրանք կկիսվեն իրենց գտածով, հարցրեք.

- Ինչո՞ւ է իմաստուն, որ ընտրենք ապաշխարել և այժմ պատրաստվել, որ կանգնենք Տիրոջ առաջ և դատվենք Նրա կողմից:

Հաստատեք, որ **մենք իմաստուն կլինենք, եթե այժմ պատրաստվենք դատաստանին՝ ապաշխարելով և Տիրոջ ողորմությունը ստանալով:**

Դասի վերջում նշեք, որ ապաշխարելը մեզ պատրաստում է ոչ միայն վերջին դատաստանի համար, այլ նաև, որ կարողանանք ծառայել Տիրոջն այժմ: Վկայեք ուսանողներին, որ Տերն ուզում է, որ նրանք ծառայեն Իր հետ և ուրախություն գտնեն Իր հետ, և որ նրանք կարող են արժանի լինել դա անելու համար, եթե հնազանդվեն Նրա պատվիրաններին, ապաշխարեն և ստանան Նրա ողորմությունը:

## Ուսուցանման լրացուցիչ մտքեր

### Հակոբ 5: Տեսագրության ցուցադրում

Երբ դուք սովորեցնեք դաս 47-ը, դուք կարող եք ցուցադրել «Ձիթենու այլաբանությունը» տեսագրության վերջին մասը, որը գտնվում է *Մորմոնի Գրքի տեսագրություններ 1–19* վերնագրով տեսասկավառակի վրա: Դուք կարող եք ցույց տալ այս մասը դասի երկրորդ բաժնում՝ Երեց Դին Լ. Լարսենի խոսքերից հետո:

ԴԱՍ 48

# Հակոբ 7

## Նախաբան

Հակոբը հույսը դրեց Տիրոջ և իր անսասան վկայության վրա, որ հաղթահարեր Սերեմի՝ հակաքրիստոսի կեղծ գաղափարներն ու փաստարկները: Նա հատկապես ուժ ստացավ անցյալի փորձառություններից, որոնք ամրացրել էին նրա հավատքն առ Հիսուս Քրիստոսը: Նա նաև հույսը դրեց Սուրբ Հոգու առաջնորդության վրա, սուրբ գրությունների իր գիտելիքների վրա և մարգարեների խոսքերի վրա, և Հիսուս Քրիստոսի վերաբերյալ իր վկայության վրա: Երբ Սերեմը նշան պահանջեց, որը կհաստատեր Հակոբի խոսքերը, նա հարվածվեց Աստծո կողմից: Հակոբն ավարտեց իր հիշատակարանը, նկարագրելով, թե ինչպես էին նեփիացիները հույսը դնում Տիրոջ վրա, երբ նրանք գոտեպնդվում էին լամանացիների դեմ պայքարելու համար: Նախքան մահանալը Հակոբը փոքր թիթեղները հանձնեց Ենովսին:

## Ուսուցանման առաջարկներ

### Հակոբ 7.1–14

*Հակոբը հույսը դնում է Տիրոջ վրա, երբ նա հանդիպում է Սերեմին՝ հակաքրիստոսին*

Նախքան դասը սկսելը գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունը Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի ելույթից (մեջբերում «Քրիստոնեական քաջություն՝ աշակերտ լինելու գինը» ելույթից, *Ensign* կամ *Լիահոնա*, նոյեմբեր 2008, 72).

*«Մահկանացու կյանքի մեծ փորձություններից մեկը մեր հավատամքը հարցականի տակ դնելը կամ քննադատելն է» (Երեց Ռոբերտ Դ. Հեյլս):*

Խնդրեք ուսանողներին մտածել մի ժամանակահատվածի մասին, երբ ինչ-որ մեկը հարցականի տակ է դրել կամ քննադատել է իրենց հավատքը: Հրավիրեք նրանցից մի քանիսին կիսվել, թե ինչ են նրանք զգացել այդ պահին: Դուք կարող եք նաև հակիրճ կիսվել ձեր կյանքի փորձառությամբ:

Բացատրեք, որ Հակոբ 7–ը պատմում է Սերեմի՝ հակաքրիստոսի հետ Հակոբի փորձառության մասին: (Դուք կարող եք բացատրել, որ հակաքրիստոս է «ամեն ոք կամ բան, որը կեղծում է ավետարանը կամ փրկության ծրագիրը, և բացահայտորեն կամ ծածուկ ընդդիմանում է Քրիստոսին» [Սուրբ գրքերի ուղեցույց, «Հակաքրիստոս»]:) Սերեմը փորձում էր ամեն կերպ Հակոբին ստիպել կասկածի տակ դնել իր հավատքը:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հակոբ 7.1–5: Խնդրեք նրանց ներկայացնել, (1) թե ինչ էր ուզում անել Սերեմը և (2) ինչպես էր նա ուզում իրականացնել իր նպատակները: Այն բանից հետո, երբ ուսանողներն ավարտեն կարդալը, խնդրեք նրանց նկարագրել, թե ինչ սովորեցին Սերեմի մասին: Դուք կարող եք տալ հետևյալ հարցերից մի քանիսը՝ քննարկումն ավելի ծավալուն դարձնելու համար.

- Ի՞նչ ազդեցություն ուներ Սերեմը մարդկանց վրա:
- Ի՞նչ եք տեսնում Հակոբ 7.1–5–ում, որ հիշեցնում է ձեզ այն պահերը, երբ ուրիշները հարցականի տակ են դրել կամ քննադատել ձեր հավատքը: (Երբ դուք քննարկեք այս հարցը, դուք կարող եք օգնել ուսանողներին հասկանալ, որ ոչ բոլոր մարդիկ, ովքեր հարցականի տակ են դնում կամ քննադատում են մեր հավատքը, ունեն Սերեմի նույն դրդապատճառները: Մինչ որոշ մարդիկ Սերեմի պես դիտմամբ փորձում են կործանել հավատքը, ուրիշները կարող են հարցականի տակ դնել մեր հավատքը, քանի որ այն հետաքրքրում է իրենց կամ քանի որ նրանք սխալ տեղեկություններ են ստացել մեր համոզմունքների վերաբերյալ:)
- Ինչո՞ւ է երբեմն դժվար պաշտպանել մեր հավատքը Սերեմի նման մարդկանցից:

***Հրավիրեք ուսանողներին կիսվել փորձառություններով***

Երբ ուսանողները կիսվում են ոգեշնչված փորձառություններով, դա դասարան է հրավիրում Տիրոջ Հոգին: Երբ ուսանողները լսում են իրենց հասակակիցների փորձառությունները և վկայությունները, նրանց վկայություններն ամրանում են և նրանք սովորում են նոր ուղիներ՝ իրենց կյանքում ավետարանի սկզբունքները կիրառելու համար: Սովորաբար բավարար է լինում, որ մեկից երեք ուսանողներ կիսվեն փորձառություններով: Խուսափեք նույն ուսանողներին ամեն օր կանչելուց. փորձեք ներգրավել յուրաքանչյուրին:

Գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները և նախադասությունները: (Ժամանակ խնայելու համար դուք կարող եք գրել այն գրատախտակին նախքան դասը սկսելը: Դուք կարող եք նաև գրել այն թերթիկների վրա:)

| | |
|---|---|
| *1. Հակոբ 7.5* | *ա. Վկայեց սուրբ գրությունների և մարգարեների խոսքերի մասին:* |
| *2. Հակոբ 7.8* | *բ. Հետևանքները վստահեց Աստծո ձեռքերի մեջ:* |
| *3. Հակոբ 7.10–11* | *գ. Հույսը դրեց Սուրբ Հոգու առաջնորդության և զորության վրա:* |
| *4. Հակոբ 7.12* | *դ. Հիշեց անցած փորձառությունները, որոնք ամրացրել էին իր հավատքը:* |
| *5. Հակոբ 7.13–14* | *ե. Կիսվեց վկայությամբ, որը նա ստացել էր Սուրբ Հոգուց:* |

Բացատրեք, որ այս ցանկի հղումները նկարագրում են Հակոբի պատասխանները, երբ Սերեմը քննադատում էր նրա համոզմունքները: Աջ կողմի նախադասությունները ներկայացնում են Հակոբի պատասխանները, սակայն դրանք խառն են գրված և պետք է համընկեցվեն իրենց համապատասխան հատվածներին: Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Հակոբ 7.5–14: Երբ նրանք կարդան, թող կանգ առնեն գրատախտակին նշված ամեն հատվածից հետո: Խնդրեք ուսանողներին համընկեցնել յուրաքանչյուր հղումն իր համապատասխան նախադասության հետ: Դուք կարող եք մի ուսանողի հրավիրել գալ գրատախտակի մոտ և գծերով իրար միացնել համընկնող հղումն ու նախադասությունը: (Պատասխաններ. 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-բ:)

Երբ ուսանողներն ավարտեն համընկումների վարժությունը, հարցրեք.

- Ի՞նչ սկզբունքներ են ուսուցանվում այն հատվածներում, որոնք մենք նոր կարդացինք:

Եթե ոչ ոք այն չի առաջարկում, համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ **երբ մենք մեր հույսը դնում ենք Տիրոջ վրա, մենք կարող ենք հաղթահարել մեր հավատքի առաջ ծառացած դժվարությունները:** (Դուք կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին:)

Բացատրեք, որ Սերեմին տրված Հակոբի պատասխանները օրինակ են ծառայում մեզ համար, որին կարող ենք հետևել, երբ մենք պատասխանում ենք նրանց, ովքեր հարցականի տակ են դնում կամ քննադատում մեր հավատքը:

Ստորև տրված հետևողական հարցերը նախատեսված են ուսանողներին օգնելու համար ավելի խորությամբ մտածել, թե ինչ արեց Հակոբը, որ հույսը դներ Տիրոջ վրա: Այս հարցերին պատասխանելը ուսանողներին հնարավորություն կտա լուսաբանել և վկայել, թե ինչպես են նմանատիպ արարքներն օգնում, երբ ուրիշները կասկածի տակ են առնում իրենց հավատքը: Դա նաև կօգնի նրանց սովորել, թե ինչպես պատշաճ պատասխան տալ իրենց հավատքի հետ կապված հետագա դժվարություններին: Քանի որ ստորև տրված են ավելի շատ հարցեր, քան դուք ժամանակ կունենաք օգտագործել, ընտրեք միայն մի քանի հարց ձեր քննարկման ժամանակ օգտագործելու համար: Երբ դուք անեք սա, փնտրեք Սուրբ Հոգու առաջնորդությունը, և մտքում պահեք փորձառությունները, որոնք ուսանողները կիսել են դասի սկզբում: Դուք նաև կարող եք հարցնել ուսանողներին, թե Հակոբի արարքներից որը կցանկանան հաջորդը քննարկել:

- Ի՞նչ էր անցյալում պատահել Հակոբին, օգնելով նրա հավատքը դարձնել անսասան (տես Հակոբ 7.5):
- Ի՞նչ փորձառություններ կան, որ ամրացրել են ձեր հավատքը: (Դուք կարող եք ժամանակ տրամադրել ուսանողներին այս հարցի շուրջ մտածելու համար՝ նախքան կխնդրեք նրանց պատասխանել: Վստահեցրեք նրանց, որ կարիք չկա կիսվել փորձառություններով, որոնք խիստ անձնական են կամ գաղտնի:) Ինչպե՞ս կարող է այս փորձառությունները հիշելը օգնել ձեզ, երբ մեկը հարցականի տակ է դնում կամ քննադատում ձեր հավատքը:
- Ե՞րբ է Սուրբ Հոգին օգնել ձեզ պատասխանել ձեր հավատքի վերաբերյալ հարցերի կամ քննադատությունների (տես Հակոբ 7.8):

***Տվեք հետևողական հարցեր***

Երբ դուք տալիս եք հետևողական հարցեր, դա ուսանողներին հնարավորություն է տալիս արտահայտել, թե ինչ են իրենք սովորել, խորացնել իրենց հասկացողությունը և մտածել, թե ավետարանի ճշմարտություններն ինչպես են կապված իրենց կյանքի հետ: Կարիք չկա արագ անցնել հետևողական հարցերի երկար ցուցակով: Սովորաբար ավելի լավ է տալ մի քանի հարց և ուսանողներին ժամանակ տալ մտածված պատասխանելու համար:

- Ինչպե՞ս կարող է ամեն օր սուրբ գրությունները և վերջին օրերի մարգարեների խոսքերը կարդալու սովորությունն օգնել ձեզ, երբ ուրիշները հարցականի տակ են դնում կամ քննադատում ձեր հավատքը (տես Հակոբ 7.10–11)։
- Ե՞րբ եք դուք կիսել ձեր վկայությունը մեկի հետ, ով հարցականի տակ է դրել կամ քննադատել է ձեր հավատքը (տես Հակոբ 7.12)։ Ի՞նչ արդյունք է այն ունեցել։
- Երբ Սերեմը նշան պահանջեց, ինչո՞ւ էր իմաստուն արարք Հակոբի կողմից՝ հանձնել այն Տիրոջ ձեռքը, քան փորձել անձամբ ապացուցել իր վկայության ճշմարտությունը (տես Հակոբ 7.14)։ Ինչպե՞ս է ձեզ օգնում իմանալը, որ անհրաժեշտ չէ, որ դուք ապացուցեք ձեր վկայության ճշմարտացիությունը նրանց, ովքեր կասկածի տակ են առնում ձեր հավատքը։

## Հակոբ 7.15–27

*Այն բանից հետո, երբ Սերեմն անշարժ ընկնում է, նա խոստովանում է իր մեղքերը, վկայում է ճշմարտության մասին և հետո մահանում, առաջնորդելով նեփիացիներին կրկին դառնալ դեպի Տերը*

Կարդացեք Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ խոսքերը.

«Տարիների ընթացքում մենք սովորում ենք, որ մեր հավատքի դեմ մարտակոչերը նոր չեն, և դրանք, հավանաբար, շուտով չեն անհետանա։ Սակայն *Քրիստոսի ճշմարիտ աշակերտները հակառակության մեջ տեսնում են հնարավորություն։ . . .*

. . . Բարեբախտաբար, Տերը գիտի մեզ մեղադրողների սիրտը և թե ինչպես մենք կարող ենք առավել արդյունավետ ձևով պատասխանել նրանց։ *Երբ ճշմարիտ աշակերտներն առաջնորդություն են փնտրում Հոգուց, նրանք յուրաքանչյուր դեպքի համար համապատասխան ոգեշնչում են ստանում։* Եվ յուրաքանչյուր դեպքում *ճշմարիտ աշակերտները պատասխանում են այնպես, որ հրավիրում են Տիրոջ Հոգին*» («Քրիստոնեական քաջություն՝ աշակերտ լինելու գինը», 72–73, շեղագրերը բնագրից են)։

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «հակառակության մեջ տեսնում են հնարավորություն» արտահայտությունը։ (Երբ ուսանողները պատասխանեն այս հարցին, օգնեք նրանց հասկանալ, որ դրական արդյունք կարող է լինել, երբ մենք պատասխանենք մեր հավատի դեմ մարտակոչերին այնպես, որ հրավիրենք Տիրոջ Հոգին։)

Ուսանողներին բաժանեք զույգերի։ Յուրաքանչյուր զույգ թող կարդա Հակոբ 7.15–23, փնտրելով ցանկացած լավ բան, որը Սերեմի հետ Հակոբի հանդիպման արդյունքն է։ Այն բանից հետո, երբ ուսանողները կավարտեն կարդալը, հրավիրեք նրանցից մի քանիսին բացատրել, թե ինչ են իրենք գտել։ Խորհք հետևյալ հարցերից մի քանիսը օգտագործելու վերաբերյալ, որ օգնեք ուսանողներին վերլուծել այս հատվածները.

- Ի՞նչ փաստեր եք դուք տեսնում, որոնք վկայում են այն մասին, որ Հակոբը հույս ուներ, որ իր հանդիպումը Սերեմի հետ կօգներ ուրիշներին (տես Հակոբ 7.22։ Օգնեք ուսանողներին տեսնել, որ Հակոբը աղոթեց նեփիացիների համար, ովքեր վկա էին Սերեմի խոստովանությանը և մահվանը։)
- Համաձայն Հակոբ 7.23-ի, ինչպե՞ս է Հակոբի հանդիպումը Սերեմի հետ լավագույնս ազդել ժողովրդի վրա։
- Ի՞նչ ճշմարտություններ մենք կարող ենք սովորել Սերեմի հետ Հակոբի հանդիպման արդյունքներից։ (Ուսանողները կարող են այս հարցին ներկայացնել բազմաթիվ պատասխաններ։ Ոմանք կարող են առաջարկել ստորև նշված սկզբունքները։)

**Բոլոր մարգարեները վկայում են Հիսուս Քրիստոսի մասին։**

**Երբ մենք պատասխանում ենք մեր հավատքի վերաբերյալ հարցերին կամ քննադատություններին այն եղանակներով, որոնք հրավիրում են Հոգին, մենք կարող ենք օգնել ուրիշներին դառնալ դեպի Տերը։**

**Մարգարեներն օգնում են մեզ ճանաչել և հաղթահարել Սատանայի խաբեությունները։**

**Նրանք, ովքեր ապստամբում են Աստծո դեմ և ակտիվորեն քարոզում են ճշմարտության դեմ, կհանդիպեն ծանր հետևանքների, որոնք կգան Աստծուց:**

**Սուրբ գրություններն ուսումնասիրելը կօգնի մեզ խուսափել մոլորության մեջ ընկնելուց:**

Երբ ուսանողները ներկայացնեն այնպիսի սկզբունքներ, ինչպիսին վերևում թվարկվածներն են, խորհեք ամփոփիչ հարցեր տալու մասին, որ օգնեք նրանց կիրառել սկզբունքներն իրենց կյանքում:

- Ինչպե՞ս կարող է այս սկզբունքի համաձայն ապրելն օգնել ձեզ:
- Ինչպե՞ս կարող է այս սկզբունքն իմանալն օգնել ձեզ օգնել ուրիշներին:
- Ինչպե՞ս դուք կարող եք փնտրել կիրառել այս սկզբունքը ձեր կյանքում:

Հրավիրեք ուսանողներին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում պատասխանել հետևյալ հարցին.

- Ի՞նչ դուք կսկսեք անել (կամ կշարունակեք անել), որը կօգնի ձեզ նախապատրաստվել այն պահին, երբ ինչ-որ մեկը հանդես կգա ձեր հավատքի դեմ մարտակոչով:

Կիսվեք ձեր վկայությամբ, որ մենք կարող ենք հաջողությամբ հաղթահարել մեր հավատքի դեմ մարտակոչերը, եթե մենք հետևենք Հակոբի օրինակին՝ հույսը դնելով Տիրոջ վրա:

## Հակոբի կրկնություն

Որոշ ժամանակ տրամադրեք, որ օգնեք ուսանողներին կրկնել Հակոբի գիրքը: Խնդրեք նրանց մտածել, թե ինչ են սովորել այս գրքից սեմինարիայում և սուրբ գրությունների իրենց անձնական ուսումնասիրության ժամանակ: Անհրաժեշտության դեպքում հրավիրեք նրանց արագ աչքի անցկացնել Հակոբի յոթ գլուխները, որ օգնեք նրանց հիշել: Խնդրեք նրանց նախապատրաստվել, որ կիսվեն ինչ-որ բանով Հակոբի կամ նրա գրածների վերաբերյալ, ինչը տպավորվել է նրանց մեջ: Դուք կարող եք նրանց հիշեցնել, որ Հակոբը ծնվել էր անապատում՝ Լիառատ երկրում (Կարմիր ծովի մոտ) և մահացել է Նեփիի երկրում: Նա նույնպես օրհնվել էր Լեքիի կողմից (տես 2 Նեփի 2.1–4), և տեսել էր Փրկչին (տես 2 Նեփի 11.3): Նրա ավագ եղբայր Նեփին ներառեց իր որոշ քարոզները փոքր թիթեղների մեջ (տես 2 Նեփի 6–10): Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց մտքերով և զգացմունքներով: Կիսվեք ձեր վկայությամբ, թե ինչպես են Հակոբի օրինակը և ուսմունքներն օրհնել ձեր կյանքը:

# Ենովսի
## ԳՐՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ

### Ինչո՞ւ ուսումնասիրել այս գիրքը:

Ենովսի գիրքը լուսաբանում է Հիսուս Քրիստոսի Քավության զորությունը, որ մաքրում է մարդկանց մեղքից և դարձնում առողջ: Ենովսը գոտեմարտ է ունենում Աստծո առաջ հզոր աղոթքով, մինչև մեղքերի թողություն ստանալը: Նա այնուհետև աղոթում է նեփիացիների և լամանացիների հոգևոր բարօրության համար, և նա անցկացրեց իր կյանքի մնացած մասը, աշխատելով նրանց փրկության համար: Երբ ուսանողներն ուսումնասիրեն Ենովսի գիրքը, նրանք կարող են բացահայտել կարևոր դասեր աղոթքի, ապաշխարության և հայտնության մասին: Նրանք կարող են նաև սովորել, որ երբ անհատները ստանան Քավության օրհնությունները, նրանք կցանկանան կիսել այդ օրհնություններն ուրիշների հետ:

### Ո՞վ է գրել այս գիրքը:

Այս գիրքը գրել է Ենովսը՝ Հակոբի որդին և Լեքիի և Սարիայի թոռը: Ենովսն արձանագրել է, որ իր հայրն ուսուցանել է իրեն «Տիրոջ խրատով և ուսմունքով» (Ենովս 1.1): Իր կյանքի վերջում Ենովսը գրել է, որ նա հայտարարել է «ճշմարտությունը, որը Քրիստոսում է»՝ իր ողջ օրերի ընթացքում (Ենովս 1.26): Նախքան մահանալը Ենովսը Նեփիի փոքր թիթեղները փոխանցեց իր որդի Հարոմին (տես Հարոմ 1.1): Ենովսն ավարտում է իր հիշատակարանը, ասելով, որ ինքը հրճվում է այն օրով, երբ կկանգնի իր Քավչի առաջ: Նա հայտարարել է. «Այն ժամանակ կտեսնեմ ես նրա երեսը հաճույքով, և նա կասի ինձ. Արի ինձ մոտ, դու, օրհնված, քեզ համար իմ Հոր ապարանքներում տեղ կա պատրաստված» (Ենովս 1.27):

### Ո՞ւմ համար է գրվել այս գիրքը և ինչո՞ւ:

Երբ Ենովսը ստացավ փոքր թիթեղները իր հոր կողմից, նա խոստացավ փորագրել միայն այն գրությունները, որոնք նա համարում էր ամենաարժեքավորը, որոնք ներառում էին սրբազան ուսմունքներ, հայտնություն և մարգարեություն (տես Հակոբ 1.1–4, 7.27): Ենովսը գիտեր, որ իր ժողովուրդը՝ նեփիացիները, ի վերջո, պետք է կործանվեին: Նա աղոթեց, որ Տերը պահպաներ նեփիացիների մի հիշատակարան, «որ մի օր, ապագայում, այն ի հայտ բերվեր Լամանացիների համար, որ գուցե նրանք կարողանային բերվել փրկության» (Ենովս 1.13):

### Ե՞րբ և որտեղ է այն գրվել:

Ենովսն ավարտեց իր հիշատակարանը, հայտարարելով, որ 179 տարի է անցել այն ժամանակվանից, որ Լեքին թողեց Երուսաղեմը (տես Ենովս 1.25): Այսինքն, նա գրել էր մոտավորապես Ք.ա. 544թ. (երբ Հակոբն ավարտեց իր հիշատակարանը) և Ք.ա. 421թ. միջև: Ենովսը գրեց այս հիշատակարանը, մինչ ապրում էր Նեփիի երկրում:

### Որո՞նք են այս գրքի բնորոշ գծերը:

Ենովսի գիրքը ներկայացնում է մի օրինակ, որը ցույց է տալիս, թե ինչպես կարող են անհատները ստանալ Հիսուս Քրիստոսի Քավության օրհնությունները և կիսել այդ օրհնություններն ուրիշների հետ: Առաջինը, Ենովսին ուսուցանվեց Հիսուս Քրիստոսի ավետարանը (տես Ենովս 1.1, 3): Հաջորդը, նա գիտակցեց, որ ուներ Փրկչի կարիքը և աղոթեց ներման համար (տես Ենովս 1.2–4): Ապա, իր մեղքերին թողություն ստանալուց հետո, նա աղոթեց և ջանասիրաբար աշխատեց, որ ուրիշներին բերեր դեպի փրկություն (տես Ենովս 1.5–27): Այս օրինակին հանդիպում ենք ողջ Մորմոնի Գրքով մեկ: Օրինակները ներառում են Ալմային (տես Մոսիա 17.1–2, 18.1–2), Ալմա Կրտսերին և Մոսիայի որդիներին (տես Մոսիա 27–28) և Լամոնիին ու իր ժողովրդին (տես Ալմա 18–19):

Ենովսի գիրքը նաև առաջինն է, որ մանրամասն նկարագրում է Լամանի և Լեմուելի սերունդների ուխտադուրժ վիճակը (տես Ենովս 1.20): Նաև նշվում է, որ եղել են «չափազանց շատ մարգարեներ» նեփիացիների մեջ, չնայած, որ նեփիացիների մեծամասնությունը եղել են «խստապարանոց ժողովուրդ», ում պետք է շարունակ սթափեցնել «Տիրոջ երկյուղի մեջ նրանց պահելու համար» (Ենովս 1.22–23):

### Համառոտ շարադրանք

**Ենովս 1.1–8** Ենովսն աղոթում է իր մեղքերի թողության համար և ներում է ստանում առ Հիսուս Քրիստոսն իր հավատքի շնորհիվ:

**Ենովս 1.9–18** Ենովսն աղոթում է նեփիացիների և լամանացիների համար և խնդրում է Տիրոջը պահպանել նեփիացիների հիշատակարանը:

**Ենովս 1.19–24** Ենովսը նկարագրում է լամանացիների ամբարշտությունը և նեփիացիների խստապարանոցությունը: Նա և այլ մարգարեներ շարունակաբար աշխատում էին նրանց փրկության համար:

**Ենովս 1.25–27** Ենովսն ավարտում է իր հիշատակարանը և գրում հավերժական կյանքում համոզված լինելու մասին, որը նա ստացել էր իր Քավչի միջոցով:

ԴԱՍ 49

# Ենովս

## Նախաբան

Իր հոր խոսքերին անդրադառնալուց հետո Ենովսը աղոթեց և ներում ստացավ իր մեղքերից: Նա այնուհետև աղոթեց նեփիացիների և լամանացիների հոգևոր բարօրության համար և իր կյանքն անցկացրեց նրանց փրկության համար աշխատելով:

## Ուսուցանման առաջարկներ

### Ենովս 1.1–8

*Իր հոր խոսքերին անդրադառնալուց հետո Ենովսն աղոթում է և ներում է ստանում իր մեղքերից*

Գրատախտակին գրեք *Իմ հոգին քաղցում էր* բառերը: Հրավիրեք ուսանողներին մտածել մի ժամանակի մասին, երբ իրենք շատ քաղցած էին:

- Որո՞նք են այն բառերը, որոնք դուք կօգտագործեք, որ նկարագրեք, թե ինչ եք զգում, երբ քաղցած եք: (Ուսանողները կարող են քաղցի զգացումը նկարագրել որպես դատարկություն, ցավ, թուլություն և ուտելու ցանկություն:)
- Ի՞նչ կարող է մարդ ի նկատի ունենալ «իմ հոգին քաղցում էր» արտահայտությամբ: (Հոգևոր դատարկության, ցավի կամ թուլության զգացողություն կամ հոգևորապես լցվելու ցանկություն:)

Հրավիրեք ուսանողներին մտածել այն ժամանակի մասին, երբ նրանց հոգիները քաղցում էին: Բացատրեք, որ այսօր նրանք կուսումնասիրեն մի մարդու փորձառությունը, ում հոգին քաղցում էր: Ցուցադրեք Ենովսն աղոթում է նկարը (62604; *Gospel Art Book* [2009], no. 72):

- Դուք ի՞նչ գիտեք նկարի վրա պատկերված մարդու մասին: (Եթե ուսանողները վստահ չեն, բացատրեք, որ սա Ենովսի նկարն է, ով Լեքիի և Սարիայի թոռն է և Հակոբի որդին: Նրան հանձնվեցին փոքր թիթեղները իր հոր մահից կարճ ժամանակ անց [տես Հակոբ 7.27]:)

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Ենովս 1.1, 3: Դասարանին խնդրեք փնտրել, թե ինչ ազդեցություն է ունեցել Հակոբը Ենովսի վրա: Հրավիրեք մի քանի ուսանողների ասել դասարանին, թե ինչ են գտել:

Գրատախտակին գրեք հետևյալ ցանկը: (Ժամանակ խնայելու համար դուք կարող եք նախքան դասը սկսելը ցանկը գրել գրատախտակին:) Ցանկը նախատեսված է ուսանողների խմբերին օգնելու համար կենտրոնանալ Ենովսի փորձառության տարբեր մանրամասների վրա, երբ նրանք ուսումնասիրեն Ենովս 1.2–8:

| Ի՞նչ էր ցանկանում Ենովսը | Ի՞նչ արեց Ենովսը | Ենովսի գործողությունների արդյունքները |
|---|---|---|
| Ենովս 1.2<br>Ենովս 1.3 | Ենովս 1.2<br>Ենովս 1.4<br>Ենովս 1.8 | Ենովս 1.5<br>Ենովս 1.6<br>Ենովս 1.8 |

Բացատրեք, որ երբ Ենովսը սովորեցրեց իր հոր ուսմունքների մասին, նա ունեցավ հոգևոր զգացողություններ, որ առաջնորդեցին նրան անել որոշակի բաներ, որոնք իրենց հերթին առաջ բերեցին որոշակի արդյունքներ իր կյանքում:

Դասարանը բաժանեք երեք խմբի: Բարձրաձայն կարդացեք Ենովս 1.2–8: Մինչ դուք կարդաք, թող առաջին խումբը փնտրի արտահայտություններ, որոնք ցույց են տալիս Ենովսի ցանկությունները: Հրավիրեք երկրորդ խմբին փնտրել, թե ինչ արեց Ենովսը: Խնդրեք երրորդ խմբին փնտրել Ենովսի ցանկությունների և արարքների

***Մանրամասներ գտնել սուրբ գրությունների երկար հատվածներում***

Որոշ ուսանողներ ճնշում են զգում, երբ նրանց խնդրում են գտնել մի քանի մանրամասներ երկար սուրբ գրության հատվածում: Այս ուսանողներին օգնելու համար դասարանը բաժանեք մի քանի խմբերի: Հանձնարարեք յուրաքանչյուր խմբի երկար հատվածում փնտրել տարբեր մանրամասներ: Սա կարող է օգնել ուսանողներին կենտրոնանալ կարևոր մտքերի վրա, երբ նրանք կարդան: Դա նաև հնարավորություն է տալիս նրանց ուսուցանել մեկը մյուսին կարևոր մանրամասները, որոնք նրանք գտել են սուրբ գրություններում:

արդյունքները: (Նշեք, որ ցուցակում գտնվող հատվածները պարունակում են յուրաքանչյուր խմբի հանձնարարությունների վերաբերյալ տեղեկություններ:)

Ենովս 1.2–8-ը կարդալուց հետո հրավիրեք առաջին խմբի ուսանողներին զեկուցել արտահայտությունները, որոնք նրանք գտել են Ենովսի ցանկությունների վերաբերյալ: Երբ ուսանողները նշեն այս արտահայտությունները, թող նրանք գրատախտակին գրեն դրանք: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին նշել այս արտահայտություններն իրենց սուրբ գրություններում: Ուսանողները կարող են նշել արտահայտություններ, ինչպիսին են՝ «իմ մեղքերի թողությունը», «հավերժական կյանք» և «սրբերի ուրախությունը»:

Առաջին սյունակը լրացնելուց հետո հրավիրեք դասարանին աչքի անցկացնել Ենովս 1.4-ի սկիզբը: Թող նրանք ներկայացնեն, թե ինչ զգաց Ենովսը իր հոր հետևյալ խոսքերի շուրջ՝ «հավերժական կյանքի և սրբերի ուրախության մասին, խորը ընկղմվել էին [իր] սրտում» (Ենովս 1.3): Ուսանողները պետք է նշեն «և իմ հոգին քաղցում էր» արտահայտությունը: (Դուք կարող եք խրախուսել ուսանողներին սուրբ գրություններում նշել այս արտահայտությունը:)

- Ինչպե՞ս կարող է հավերժական կյանքի և Սրբերի ուրախության վերաբերյալ մարգարեի ուսմունքներին անդրադառնալը դրդել մարդկանց քաղցել: (Դա կարող է օգնել անհատին ցանկանալ արժանի լինել Տիրոջ հետ լինելուն և ցանկանալ երջանկություն, որն առաջ է գալիս ավետարանով ապրելուց:)

Նշեք, որ Ենովսը նույնպես ցանկանում էր թողություն իր մեղքերին: Բացատրեք, որ «իմ հոգին քաղցում էր» արտահայտությունը կարող է լինել հոգու դատարկության զգացում, որը մեղքի հետևանք է: Դա նաև կարող է ցույց տալ Տիրոջը մոտ լինելու և Նրանից սովորելու անհատի փափագը:

- Ինչո՞ւ է մեղքը դրդում, որ մենք մեզ զգանք հոգեպես դատարկ: (Մեղքի պատճառով Սուրբ Հոգին հեռանում է մեզանից և մենք մեզ Տիրոջից հեռու ենք զգում:)

Որպեսզի օգնեք ուսանողներին Ենովսի փորձառությունը կապել իրենց հետ, խնդրեք նրանց լուռ խորհել, թե արդյոք իրենք ունեցել են հոգևոր քաղցի որոշ նմանատիպ զգացողություններ, որոնք նկարագրել է Ենովսը:

Որպեսզի օգնեք դասարանին տեսնել, թե ինչ արեց Ենովսը իր հոգու քաղցը բավարարելու համար, հրավիրեք երկրորդ խմբի ուսանողներին զեկուցել իրենց գտածը և գրառել իրենց պատասխանները գրատախտակի վրա: Պատասխանները պետք է ներառեն հետևյալը. «գոտեմարտ . . . Աստծո առաջ», «աղաղակեցի առ նա՝ զորեղ աղոթքով» և «Քրիստոսի հանդեպ հավատք [գործադրել]»:

- Ինչպե՞ս կարող է «գոտեմարտ . . . Աստծո առաջ» արտահայտությունը նկարագրել մեղքերի թողություն ստանալու անհատի ջանքերը : (Նշեք, որ Ենովսը չի գոտեմարտել Աստծո *հետ*, այլ Աստծո *առաջ*՝ աղոթքով: Այս գոտեմարտը ցույց է տալիս Ենովսի ջանքերը, որ ցույց տա Երկնային Հորը իր անկեղծ ցանկությունները և ապաշխարելու ցանկությունը՝ կատարելով անհրաժեշտ փոփոխություններ իր կյանքում:) Ինչո՞ւ է *գոտեմարտելը* լավ բառ ապաշխարելու մեր ջանքերը նկարագրելու համար:
- Ենովս 1.4-ում ի՞նչ փաստարկ եք դուք տեսնում, որ Ենովսն անկեղծ էր, երբ նա փնտրում էր թողություն իր մեղքերից: (Դուք կարող եք օգնել ուսանողներին հասկանալ, որ *աղաչանք* նշանակում է խոնարհաբար և մեծ ցանկությամբ խնդրել:)
- Ինչպե՞ս մենք կարող ենք ցույց տալ մեր անկեղծությունը, երբ փնտրում ենք Տիրոջ ներողամտությունը: (Դուք կարող եք նշել, որ մեր աղոթքները կարիք չունեն լինելու այնքան երկար, որքան Ենովսինն էին, սակայն դրանք պետք է լինեն անկեղծ:)

Որպեսզի օգնեք դասարանին տեսնել Ենովսի արարքների արդյունքները, հրավիրեք երրորդ խմբի ուսանողներին զեկուցել իրենց գտածները և գրել իրենց պատասխանները գրատախտակին: Պատասխանները պետք է ներառեն «քո մեղքերը ներված են քեզ», «իմ հանցանքը սրբվեց» և «քո հավատքը քեզ ողջ դարձրեց» արտահայտությունները: (Դուք կարող եք բացատրել, որ ողջ դարձվել նշանակում է բժշկվել կամ մաքրվել մեղքից:)

- Համաձայն Ենովս 1.7–8-ի, ի՞նչը հնարավորություն տվեց Ենովսին ներվել և ողջ դարձվել: (Հիսուս Քրիստոսի հանդեպ նրա հավատքը:)
- Ի՞նչ դասեր մենք կարող ենք քաղել Ենովսից մեր մեղքերին թողություն ստանալու գործընթացի մասին: (Ուսանողների նշած ճշմարտություններին ի լրացում

համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **երբ մենք հավատք ենք գործադրում առ Հիսուս Քրիստոսը, մեր մեղքերը կարող են ներվել և մենք կարող են ողջ դարձվել:**) Ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք գործադրելը կարևոր մեզ համար, որ ստանանք այս օրհնությունները: (Հիսուս Քրիստոսը քավեց մեր մեղքերը: Միայն Նրա Քավության շնորհիվ է, որ մենք կարող ենք ողջ դարձվել:)

- Համաձայն Ենովս 1.5–6, ինչպե՞ս Ենովսն իմացավ, որ ներվել էր: (Դուք կարող եք նշել, որ Ենովս 1.5-ում նշված ձայնը եկել էր Ենովսի մտքի մեջ [տես Ենովս 1.10]:)
- Ինչպե՞ս դուք կարող եք իմանալ, որ ձեր մեղքերը ներվել են ձեզ:

Որպես վերևում տրված վերջին հարցի քննարկման մաս, կարդացեք Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի հետևյալ խոսքերը.

«Երբ մենք անկեղծորեն ապաշխարենք, Քրիստոսը կվերցնի մեր մեղքերի համար զգացած մեղավորության ծանրությունը: Մենք ինքներս կիմանանք, որ մենք ներվել ենք և մաքրվել: Սուրբ Հոգին կհաստատի սա մեզ: Նա է Մաքրագործողը: Ներման ոչ մի այլ վկայություն չի կարող ավելի մեծ լինել» (”Point of Safe Return,” *Ensign* կամ *Liahona,* May 2007, 101):

- Ինչո՞ւ է օգտակար իմանալը, որ Քրիստոսը կվերցնի մեր մեղքերի բեռը այն բանից հետո, երբ մենք անկեղծորեն ապաշխարենք:

Խնդրեք ուսանողներին լուռ մտածել հետևյալ հարցերի շուրջ.

- Ե՞րբ եք դուք զգացել, որ Տերը ներել է ձեր մեղքերը:
- Ինչպե՞ս եք դուք հավատք գործադրել առ Հիսուս Քրիստոսի Քավությունը:
- Ինչպե՞ս եք դուք իմացել, որ դուք ներված եք:
- Դուք վերջերս զգացե՞լ եք Տիրոջ ներողամտությունը:

Վկայեք, որ մենք կներվենք, երբ հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը և անկեղծորեն ապաշխարենք մեր մեղքերից: Փրկչի շնորհիվ մեր մեղքի զգացումը կարող է մաքրվել և մենք կարող ենք ողջ դառնալ:

## Ենովս 1.9–27

### *Ենովսն աղոթում է նեփիացիների և լամանացիների հոգևոր բարօրության համար, և նա ջանասիրաբար աշխատում է նրանց փրկության համար*

Գրատախտակին գծեք հետևյալ գծապատկերը: Բացատրեք, որ իր համար աղոթելուց հետո Ենովսը ընդլայնեց իր աղոթքը՝ ներառելով խնդրանքներ ուրիշների բարօրության համար: Հանձնարարեք ուսանողներին աշխատել զույգերով: Հրավիրեք յուրաքանչյուր զույգ ուսանողներին հերթով բարձրաձայն կարդալ Ենովս 1.9–14: Խնդրեք նրանց ներկայացնել երկու խումբ մարդկանց, ում համար Ենովսն աղոթեց և յուրաքանչյուր դեպքում՝ ինչի համար աղոթեց: Երբ ուսանողները զեկուցեն իրենց




սովորածը, գծապատկերի հարցական նշանների փոխարեն գրեք *Նեփիացիներ* և *Լամանացիներ* բառերը:

- Համաձայն Ենովս 1.14-ի, ինչպե՞ս էին լամանացիները տրամադրված նեփիացիների հանդեպ:
- Ի՞նչ ենք մենք սովորում Ենովսի մասին լամանացիների համար նրա աղոթքից:

Կարդացեք Նախագահ Հովարդ Վ. Հանթերի հետևյալ խոսքերը: Խնդրեք ուսանողներին լսել, թե ինչ առնչություն այն ունի Ենովսի փորձառության հետ.

«Ցանկացած պահի, երբ մենք մեր կյանքում զգում ենք Քավության օրհնությունները, մենք չենք կարող զսպել մեր մտահոգությունը մեր եղբայրների բարօրության համար: . . .

Մարդու դարձի գալու մեծ վկա է հանդիսանում ավետարանով ուրիշների հետ կիսվելու նրա ցանկությունը» (*The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams [1997], 248–49):

- Ի՞նչ առնչություն ունի սա Ենովսի փորձառության հետ: (Ենովսը ցույց է տալիս, որ **երբ մենք փորձառություն ունենանք Հիսուս Քրիստոսի Քավության հետ կապված, մենք ցանկություն կզգանք օգնելու ուրիշներին ստանալ փրկություն:** Դուք կարող եք խրախուսել ուսանողներին գրել այս սկզբունքները իրենց սուրբ գրություններում:)

Խնդրեք ուսանողներին լուռ ուսումնասիրել Ենովս 1.12, 15–20, փնտրելով, թե ինչ ցուցադրեց Ենովսը աղոթքի, հավատքի և ջանասիրության միջև եղած կապի մասին:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում հավատքով աղոթելը:
- Համաձայն Ենովս 1.12, 19–20-ի, ինչպե՞ս էր Ենովսը ջանասիրություն ցուցաբերում իր աղոթքի ընթացքում և աղոթքից հետո:
- Ի՞նչ կարող ենք մենք սովորել աղոթքի մասին Ենովսի օրինակից: (Ուսանողները պետք է կարողանան տեսնել, որ **Տերը պատասխանում է մեր աղոթքներին համաձայն մեր հավատքի և ջանասիրության:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին խորհել այն ուղիների մասին, որոնցով նրանք կարող են հետևել Ենովսի օրինակին, գրեք հետևյալ նախադասությունները գրատախտակին կամ թերթիկների վրա և բաժանեք: Հրավիրեք ուսանողներին ընտրել մեկ նախադասություն և պատասխանել դրան իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:

1. *Ինչպես Ենովսը, ես ցանկանում եմ ներում ստանալ իմ մեղքերի համար: Ես ցույց կտամ Տիրոջը, որ այս իմ ցանկությունն անկեղծ է, . . .*
2. *Ինչպես Ենովսը, ես ցանկանում եմ օգնել իմ ընտանիքի անդամներին և ընկերներին զալ Քրիստոսի մոտ: Մեկը, ում ես կփորձեմ օգնել, . . . է: Ես կփորձեմ օգնել այս անձնավորությանը . . .*
3. *Ենովսն աղոթեց լամանացիների համար, ովքեր համարվում էին նրա թշնամիները: Ինչպես Ենովսը, ես ցանկանում եմ ցուցաբերել Տիրոջ սերը նրանց հանդեպ, ովքեր լավ չեն վերաբերվում ինձ: Եղանակներից մեկը, որով ես կանեմ դա, . . .*

Այն բանից հետո, երբ ուսանողներն ավարտեն գրելը, խնդրեք մի ուսանողի կարդալ Ենովս 1.26–27: Հրավիրեք դասարանին փնտրել ուրախության նշաններ, որոնք Ենովսն ունեցավ իր ջանքերի շնորհիվ: Այն բանից հետո, երբ ուսանողները զեկուցեն իրենց գտածը, խրախուսեք նրանց իրականացնել այն, ինչ իրենք գրել են իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: Վկայեք, որ երբ մենք հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը, մենք կարող ենք ներման և ուրախության փորձառություն ունենալ, և կմեծանան ուրիշներին դեպի Քրիստոս բերելու մեր ցանկությունները:

# Հարոմի

## ԳՐՔԻ ՆԱԽԱԲԱՆ

### Ինչո՞ւ ուսումնասիրել այս գիրքը:

Երբ ուսանողներն ուսումնասիրեն Հարոմի գիրքը, նրանք կտեսնեն, որ Աստված պահում է Իր խոստումը և օրհնում է նրանց, ովքեր հնազանդվում են Իր պատվիրաններին: Նրանք նաև կտեղեկանան Հարոմի ժամանակների նեփիացի թագավորների, մարգարեների, ուսուցիչների և քահանաների ջանքերի մասին, որոնք օգնում էին ժողովրդին ապաշխարել և խուսափել կործանումից:

### Ո՞վ է գրել այս գիրքը:

Այս գիրքը գրել է Ենովսի որդին՝ Հարոմը: Իր հոր և իր պապու՝ Հակոբի և իր ապուպապու՝ Լեքիի պես, Հարոմն ուներ մարգարեության և հայտնության հոգին (տես Հարոմ 1.2): Երբ նա ավարտեց իր արձանագրությունը, նա փոխանցեց թիթեղները իր որդի Օմնիին:

### Ո՞ւմ համար է գրված այս գիրքը և ինչո՞ւ:

Հարոմն ասել է, որ ինքը գրել է «[իր] հոր՝ Ենովսի պատվիրանների համաձայն, որպեսզի [իրենց] տոհմաբանությունը պահպանվի» (Հարոմ 1.1): Նա նաև նշել է, որ իր հիշատակարանը «[գրվել է] ի շահ [իր] եղբայրների՝ Լամանացիների» (Հարոմ 1.2, տես նաև Ենովս 1.13–18): Հարոմը չի արձանագրել իր սեփական մարգարեությունները և հայտնությունները, քանի որ նա հավատում էր, որ իր հայրերի արձանագրությունները բավականաչափ «բացահայտել [են] փրկության Ծրագիրը» (Հարոմ 1.2): Դրա փոխարեն նա նկարագրել է նեփիացի առաջնորդների գործերն իր ծառայության ընթացքում: Այս առաջնորդները «զորեղ մարդիկ էին՝ Տիրոջ հավատքում» (Հարոմ 1.7), ովքեր շարունակ հորդորում էին մարդկանց ապաշխարել և հնազանդվել պատվիրաններին (տես Հարոմ 1.3–5, 10–12): Հարոմը նշում էր, որ երբ մարդիկ ընտրում էին հետևել իրենց արդար առաջնորդների խորհրդին, նրանք բարգավաճում էին և կարողանում էին պաշտպանվել լամանացիներից: Նա վկայել է. «Տիրոջ խոսքը հաստատվեց, որը նա հայտնել էր մեր հայրերին՝ ասելով, որ. Որքան որ դուք կպահեք իմ պատվիրանները, դուք կբարգավաճեք երկրում» (Հարոմ 1.9, տես նաև 1 Նեփի 2.19–20):

### Ե՞րբ և որտե՞ղ է այն գրվել:

Հարոմի գրքում ամփոփված են մոտավորապես 59 տարիներ՝ մոտավորապես մ.թ.ա. 420-մ.թ.ա. 361թթ. (տես Ենովս 1.25, Հարոմ 1.13): Այն գրվել է Նեփիի երկրում:

### Որո՞նք են այս գրքին բնորոշ որոշ առանձնահատկությունները:

Հարոմի գիրքը Մորմոնի Գրքի ամենակարճ գիրքն է: Այն մանրամասներ է տալիս նեփիացիների քաղաքակրթության զարգացման մասին, նշելով, որ նրանք «շատ բազմացան և տարածվեցին երկրի երեսին» (Հարոմ 1.8): Նրանք նաև ձեռք էին բերել բազմաթիվ բնական հարստություններ և հմտացել էին փայտագործության և մետաղագործության, շենքեր կառուցելու, սարքավորումներ ստեղծելու և գործիքներ ու զենքեր պատրաստելու մեջ (տես Հարոմ 1.8):

### Համառոտ շարադրանք

**Հարոմ 1.1–2** Հարոմը ստանում է թիթեղները և բացատրում է իր գրելու նպատակը:

**Հարոմ 1.3–12** Հարոմն արձանագրում է Տիրոջ խոստման իրագործումը, համաձայն որի նեփիացիները կօրհնվեին և կբարգավաճեին, եթե նրանք պահեին Նրա պատվիրանները: Նա վկայել է նույնիսկ նախքան Փրկչի մահկանացու ծառայությունը՝ մարդկանց մեղքից փրկելու Նրա զորության մասին, հնարավորություն տալով մարդկանց «հավատալու [նրան] . . . այնպես, կարծես թե նա արդեն եկել էր» (Հարոմ 1.11):

**Հարոմ 1.13–15** Հարոմը նշում է, որ նեփիացիների և լամանացիների միջև եղած պատերազմների մասին արձանագրություն է պահվում Նեփիի մեծ թիթեղների վրա: Նա փոխանցում է փոքր թիթեղները իր որդի Օմնիին:

# Օմնիի

## ԳՐՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ

### Ինչո՞ւ ուսումնասիրել այս գիրքը:

Օմնիի գրքի ուսումնասիրության միջոցով ուսանողները կսովորեն, որ Տերը պահպանել է արդար նեփիացիներին և առաջնորդել է նրանց Զարահեմլայի երկիր (տես Օմնի 1.7, 12–13): Նրանք նաև կիմանան այլ խմբերի՝ մուղեկացիների (կամ Զարահեմլայի ժողովրդի) և Հարեդացիների մասին, ում Տերն առաջնորդել էր խոստումի երկիր:

### Ո՞վ է գրել այս գիրքը:

Օմնիի գիրքը գրվել է հինգ տարբեր մարդկանց կողմից՝ Օմնիի, Ամորանի, Քեմիսի, Աբինադոմի և Ամաղեկիի: Օմնին Հարոմի որդին էր և Լեքիի և Սարիայի կոռը: Նա ինքն իրեն նկարագրում է որպես «ամբարիշտ մարդ», ով չի «պահել Տիրոջ . . . պատվիրանները» (Օմնի 1.2): Ամարոնը (Օմնիի որդին), Քեմիսը (Ամարոնի եղբայրը) և Աբինադոմը (Քեմիսի որդին), յուրաքանչյուրն ավելացրել են մի փոքր բան: Աբինադոմի որդի Ամաղեկին գրել է Օմնիի գրքի մեծամասնությունը և վերջին մարդն է եղել, ով գրել է Նեփիի փոքր թիթեղների վրա: Նա թիթեղները հանձնել է Բենիամին թագավորին:

### Ո՞ւմ համար է գրված այս գիրքը և ինչո՞ւ:

Օմնին նշել է, որ իրեն «պատվիրված [էր իր] հոր՝ Հարոմի կողմից, որ [նա պետք է գրեր]՝ . . . պահպանելու համար [իրենց] տոհմաբանությունը» (Օմնի 1.1): Այս հայտարարությունը հուշում է, որ Օմնին գրել է իր սերունդների օգտի համար: Օմնիի գրքի հաջորդ երեք հեղինակները չեն դիմում որևէ հատուկ լսարանի կամ նշում իրենց գրելու նպատակը: Սակայն Ամաղեկիի հրավերն ուղղված բոլոր մարդկանց՝ «գալ Քրիստոսի մոտ . . . և ճաշակել նրա փրկությունից» (Օմնի 1.26), նշում է, որ նա մտահոգված էր նրանց փրկության համար, ովքեր կկարդային իր խոսքերը:

### Ե՞րբ և որտե՞ղ է այն գրվել:

Օմնիի գրքի մի շարք հեղինակները գրել են մոտավորապես մ.թ.ա. 361-մ.թ.ա. 130թթ. ընթացքում: Առաջին չորս հեղինակները գրել են Նեփիի երկրում: Ամաղեկին իր արձանագրությունը կատարել է Զարահեմլայի երկրում:

### Որո՞նք են այս գրքին բնորոշ որոշ առանձնահատկությունները:

Օմնիի գիրքը Նեփիի փոքր թիթեղների վերջին գիրքն է: Օմնին ընդգրկում է ավելի երկար ժամանակաշրջան, քան փոքր թիթեղների ցանկացած այլ գիրք: Ամբողջ Մորմոնի Գրքում միայն 4 Նեփիի և Եթերի գրքերն են, որ ավելի երկար ժամանակաշրջան են ընդգրկում, քան ընդգրկված է Օմնիի գրքում:

Օմնիի գիրքը նաև մանրամասներ է տալիս առաջին Մոսիա թագավորի թագավորման մասին, ով Բենիամին թագավորի հայրն էր և երկրորդ Մոսիա թագավորի պապը: Առաջին Մոսիա թագավորը արդար նեփիացիներին հանեց Նեփիի երկրից և միավորեց նրանց Զարահեմլայի ժողովրդի հետ (տես Օմնի 1.12–23): Օմնիի գիրքը պատմում է, որ Տերն առաջնորդել էր Զարահեմլայի ժողովրդին (նաև հայտնի են որպես մուղեկացիներ) Երուսաղեմից դեպի խոստումի երկիր՝ Լեքիի և իր ընտանիքի կողմից Երուսաղեմը թողնելուց ոչ շատ ժամանակ անց (տես Օմնի 1.15):

Օմնին Մորմոնի Գրքի առաջին գիրքն է, որտեղ նշվում է հարեդացիների մասին: Այն նաև նշում է, որ որոշ նեփիացիներ թողեցին Զարահեմլան, որ վերադառնան Նեփիի երկիր՝ նախանշան հանդիսանալով Մոսիա 7–24–ում արձանագրված իրադարձությունների համար: Ի վերջո, Օմնիի գիրքը ներկայացնում է Բենիամին թագավորին և բացատրում է, թե ինչու Ամաղեկին վստահեց նրան սուրբ գրությունները (տես Օմնի 1.25):

### Համառոտ շարադրանք

**Օմնի 1.1–3** Օմնին նկարագրում է նեփիացիների և լամանացիների միջև եղած խաղաղության և պատերազմի ժամանակաշրջանները:

**Օմնի 1.4–11** Ամարոնը, Քեմիսը և Աբինադոմը գրում են Նեփիի փոքր թիթեղների վրա: Այդ ժամանակ նեփիացիները ուխտադրուժ վիճակում էին:

**Օմնի 1.12–30** Ամաղեկին գրում է գլխավոր իրադարձությունների մասին, որոնք տեղի էին ունենում Մոսիա թագավորի և Բենիամին թագավորի թագավորման ընթացքում: Նա հրավիրում է բոլորին գալ դեպի Քրիստոսը:



ԴԱՍ 50

# Հարոմ և Օմնի

## Նախաբան

Հարոմի և Օմնիի գրքերը պարունակում են Նեփիի փոքր թիթեղների վերջին գրառումները: Հարոմը թիթեղները ստացել էր իր հորից՝ Ենովսից, և արձանագրել էր նեփիացիների պատերազմները և օրհնությունները մոտավորապես 60 տարիների ընթացքում: Նա այնուհետև փոխանցել էր թիթեղներն իր որդի Օմնիին: Օմնիի գիրքը պարունակում է հինգ տարբեր նեփիացիների արձանագրությունները և ընդգրկում է մոտավորապես 230 տարիներ: Ամաղեկին՝ Օմնիի գրքի վերջին հեղինակը, ավարտում է իր հիշատակարանը հետևյալ հրավերով. «[Եկեք] Քրիստոսի մոտ . . . և մատուցեք ձեր ողջ հոգիները նրան՝ որպես ընծա» (Օմնի 1.26):

## Ուսուցանման առաջարկներ

### Հարոմ 1.1–15

*Հարոմը նկարագրում է, թե ինչպես նեփիացիները բարգավաճեցին, երբ նրանք պահեցին Տիրոջ պատվիրանները*

Կարդացեք Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի հետևյալ խոսքերը: Եթե հնարավոր է, կարդալիս ցուցադրեք Նախագահ Ուխդորֆի նկարը.

«Ես հիշում եմ, երբ պատրաստվում էի կործանիչ ինքնաթիռի օդաչուական իմ դասընթացին: Մեր զինվորական նախապատրաստական դասերի հիմնական ժամանակը տրամադրվում էր ֆիզիկական վարժություններին: Ես մինչ այժմ համոզված չեմ, թե ինչու էին անվերջ վազքի պարապմունքները համարվում օդաչու դառնալու համար հիմնական նախապատրաստական մասը: Այնուամենայնիվ, մենք վազում ու վազում էինք, և էլի էինք վազում:

Վազելիս ես սկսեցի նկատել մի բան, որ, ճիշտն ասեմ, անհանգստացրեց ինձ: Կրկին ու կրկին ինձանից առաջ էին անցնում մարդիկ, ովքեր ծխում էին, խմում և անում այնպիսի բաներ, որոնք դեմ էին ավետարանին, և հատկապես Իմաստության Խոսքին:

Ես հիշում եմ, որ մտածում էի. «Սպասիր մի րոպե, արդյո՞ք ես չպետք է վազեի և չհոգնեի»: Սակայն ես հոգնում *էի*, և ինձանից անցնում էին մարդիկ, ովքեր հաստատ չէին հետևում Իմաստության Խոսքին: Ես խոստովանում եմ, այդ ժամանակ այդ փաստն անհանգստացրեց ինձ: Ես ինքս ինձ հարց տվեցի՝ այդ խոստումը ճի՞շտ էր, թե՝ ոչ» («Համբերությամբ շարունակենք», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2010, 56):

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե արդյոք նրանք երբևէ զգացել են նման անհանգստություն, մտածելով, թե ինչպես Տերը կկատարի Իր պատվիրանները պահելու համար նրանց օրհնելու Իր խոստումը:

Գրատախտակին գրեք *հաստատել* բառը, և խնդրեք ուսանողներին բացատրել, թե ինչ է այն նշանակում (վավերացնել կամ ապացուցել որևէ բանի ճշմարտացիությունը): Բացատրեք, որ Հարոմը, ով Ենովսի որդին էր, օգտագործել է *հաստատվել* բառը, երբ նա գրել է իր նախնիներին տրված խոստման մասին: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Հարոմ 1.9, փնտրելով Տիրոջ խոստումը, որը հաստատվել էր: (Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները այս խոստումը նշեն իրենց սուրբ գրություններում): Համոզվեք, որ ուսանողները նշել են՝ «Որքան որ դուք կպահեք իմ պատվիրանները, դուք կբարգավաճեք երկրում» նախադասությունը:

Գրատախտակի վրա գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները և հարցերը: (Ժամանակ չկորցնելու համար դուք կարող եք գրել դրանք գրատախտակին նախքան դասի սկսվելը:)

| | |
|---|---|
| Հարոմ 1.4–5, 8 | Ի՞նչ օրինակներ կան այն բանի վերաբերյալ, թե ինչպես էին նեփիացիները հնազանդվում և ինչպես էին նրանք օրհնվում: |

***Ցուցադրեք Եկեղեցու ղեկավարների նկարները***

Եկեղեցու ղեկավարների խոսքերն ուսուցանելու ժամանակ նրանց նկարները ցուցադրելը կօգնի ուսանողներին ծանոթանալ նրանց հետ, ում Տերը կանչել է որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ: Դա նաև կմեծացնի ուսանողների հետաքրքրությունը նրանց խոսքերի հանդեպ: Եթե դուք նախատեսում եք օգտագործել մի հատված գերագույն համաժողովի ելույթներից, կարող եք ներկայացնել այն օգտագործելով տեսագրությունը կամ ձայնագրությունը, որը հնարավոր է գտնել LDS.org–ում:

| | |
|---|---|
| Հարում 1.7, 10–12 | Ինչպե՞ս էին առաջնորդները և մարգարեները օգնում նեփիացիներին հնազանդվել և բարգավաճել: |
| Օմնի 1.5–7 | Ինչպե՞ս հետագայում հաստատվեց Աստծո խոստումը մեկ այլ ճանապարհով: |

Ուսանողներին բաժանեք երեք խմբերի: Գրատախտակի սուրբ գրությունների հղումներից յուրաքանչյուրը հանձնարարեք յուրաքանչյուր խմբից մեկ հոգու: Թող ուսանողները մտքում կարդան իրենց հանձնարարված սուրբ գրության հատվածները՝ փնտրելով համապատասխան հարցերի պատասխանները: Այնուհետև խմբի յուրաքանչյուր անդամին տվեք մեկ կամ երկու բոպե, որ ամփոփեն, թե ինչ են իրենք կարդացել և պատասխանեն հանձնարարված հարցին: Հրավիրեք մեկ կամ երկու ուսանողների դասարանի համար ամփոփել մի ճշմարտություն, որն իրենք սովորել են այս սուրբ գրություններն ուսումնասիրելու և քննարկելու արդյունքում: Երբ ուսանողները տան իրենց պատասխանները, համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **երբ մենք հնազանդվենք Աստծո պատվիրաններին, մենք կբարգավաճենք:**

- Ելնելով այն ամենից, ինչ դուք սովորեցիք նեփիացիների փորձառությունից, ի՞նչ եղանակներով Աստված կօրհնի նրանց, ովքեր հնազանդվում են Իր պատվիրաններին:

Այս սկզբունքն ակնառու դարձնելու համար ուսանողներին հիշեցրեք Նախագահ Ուխդորֆի փորձառությունը, երբ նա խորհեց, թե արդյոք Վարդապետություն և Ուխտերում տրված Տիրոջ խոստումը կհաստատվեր: Ապա կարդացեք նրա ելույթի շարունակությունը.

«Պատասխանը չեկավ անմիջապես: Սակայն ի վերջո, ես սովորեցի, որ Աստծո խոստումները չեն կատարվում այնքան արագ կամ այնպես, որ մենք ենք ակնկալում. դրանք գալիս են Իր ժամանակին և Իր ձևով: Տարիներ անց, ես պարզորոշ տեսա ապացույցն այն աշխարհիկ օրհնությունների, որոնք գալիս էին նրանց, ովքեր հնազանդվում էին Իմաստության Խոսքին՝ ի լրումն հոգևոր օրհնություններին, որոնք գալիս են անմիջապես Աստծո օրենքներից որևէ մեկին հնազանդվելուց: Ետ նայելով, ես գիտեմ հաստատ, որ Տիրոջ խոստումները, եթե գուցե միշտ չէ, որ արագ են կատարվում, սակայն անտարակուսելի են» («Համբերությամբ շարունակենք», 56):




Հրավիրեք ուսանողներին խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Ե՞րբ է Տերն օրհնել ձեզ կամ երբ եք դուք բարգավաճել Նրա պատվիրանները պահելու արդյունքում: Ելնելով ձեր փորձառությունից՝ ի՞նչ վկայություն դուք կարող եք կիսել Տիրոջ և Նրա խոստումների մասին:

## Օմնի 1.1–30

### *Հիշատակարանները պահողները շարադրում են նեփիացիների պատմությունը*

Հակիրճ ձևով ներկայացրեք Օմնիի գիրքը, բացատրելով, որ այն գրվել է Հարոմի սերունդների կողմից և որ այն ընդգրկում է մոտավորապես 230 տարի: Հրավիրեք ուսանողներին աչքի անցկացնել Օմնիի գիրքը, որ գտնեն այն մարդկանց անունները, ովքեր Հարոմից հետո պահել են փոքր թիթեղները: Որպեսզի օգնեք ուսանողներին անուններն արագ գտնել, խորհեք հետևյալ սուրբ գրությունների հղումները տալու մասին. Օմնի 1.1, 4, 8, 10, 12, 25:

Բացատրեք, որ Օմնիի գիրքը նկարագրում է Մորմոնի Գրքի մարդկանց պատմության մի շարք կարևոր իրադարձություններ: Այն հիշատակում է Զարահեմլայի ժողովրդի (նաև հայտնի որպես մուղեկացիներ) և Կորիանթումրի (վերջին հարեդացին) մասին, և այն նաև հակիրճ ձևով պատմում է, թե ինչպես են նեփիացիները տեղափոխվել Զարահեմլա և միավորվել մուղեկացիների հետ: Դուք կարող եք խորհուրդ տալ ուսանողներին անդրադառնալ Մորմոնի Գրքի էջանշի ժամանակագրությանը (item number 10458) և օգնել նրանց գտնել, թե երբ են նեփիացիները և

մուղեկացիները միաձուլվել։ Նաև ուսանողները թող էջանշի վրա գտնեն Կորիանթումր անունը «Հարեդացիներ» վերնագրի տակ։

Գրատախտակին գծեք այս էջում ցուցադրված քարտեզը, սակայն սլաքները մի ընդգրկեք։ Խրախուսեք ուսանողներին գծել քարտեզը իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային նոթատետրերում։

Հիշեցրեք ուսանողներին, որ Նեփիի օրոք նեփիացիները առանձնացան լամանացիներից և հաստատվեցին մի վայրում, որը կոչեցին Նեփիի երկիր։ Քարտեզի վրա առաջին ժառանգության երկրից սլաք գծեք դեպի Նեփիի երկիրը։ Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Օմնի 1.12–13 և ներկայացնել, թե ինչպես նեփիացիները եկան ապրելու Զարահեմլայի երկրում։ Երբ ուսանողները կիսվեն իրենց գտածով, մի սլաք գծեք Նեփիի երկրից դեպի Զարահեմլայի երկիրը։ Նշեք, որ Օմնի 1.12–13 ուսուցանում է, որ **Տերն առաջնորդում է արդարներին։**

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Օմնի 1.14–19։ Խնդրեք դասարանին փնտրել նմանություններ և տարբերություններ նեփիացիների և այն ժողովրդի միջև, որ նրանք գտան Զարահեմլայի երկրում։ Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչ են իրենք սովորել։

Ամփոփեք Օմնի 1.20–22, բացատրելով, որ Զարահեմլայի մարդիկ հայտնաբերել էին Կորիանթումրին, ով Հարեդի ժողովրդի վերջին երկու փրկվածներից մեկն էր (մյուսը մարգարե Եթերն էր)։ Քարտեզի վրա ցույց տվեք Ավերակների երկիրը և բացատրեք, որ սա հյուսիսում գտնվող մի վայր է, որտեղ հարեդացի ժողովրդի «ոսկորներն ընկած են ցաքուցրիվ», այն բանից հետո, երբ նրանք կործանվեցին (Օմնի 1.22)։ Ասեք ուսանողներին, որ նրանք կսովորեն հարեդացիների մասին, երբ նրանք կուսումնասիրեն Եթերի գիրքը։ Դուք կարող եք խրախուսել ուսանողներին գրել *հարեդացիներ* իրենց սուրբ գրություններում Օմնի 1.20–22–ի կողքին։

Գծեք մի սլաք, որը ձգվում է Զարահեմլայի երկրից դեպի Նեփիի երկիրը, ապա ետ է շրջվում դեպի Զարահեմլա։ Գծեք մեկ այլ սլաք, որը սկիզբ է առնում Զարահեմլայի երկրից և մի ուղղությամբ ձգվում է դեպի Նեփիի երկիր։ Հարցրեք ուսանողներին, թե արդյոք նրանք կարող են բացատրել, թե ինչ են ներկայացնում այս երկու սլաքները։ Եթե նրանք օգնության կարիք ունեն, ամփոփեք Օմնի 1.27–30, բացատրելով, որ երկու խմբերն էլ դուրս գալով Զարահեմլայից, փորձում էին վերադառնալ Նեփիի երկիր։ Առաջին խմբին դա չհաջողվեց և նրանք վերադարձան Զարահեմլա։ Երբ Ամաղեկին ավարտեց իր հիշատակարանը, նա նշեց, որ նա չգիտեր երկրորդ խմբի ճակատագրի մասին։ Ասեք ուսանողներին, որ նրանք կիմանան այս խմբի՝ Զենիֆի ժողովրդի մասին, երբ նրանք ուսումնասիրեն Մոսիայի գիրքը։ Դուք կարող եք խրախուսել ուսանողներին գրել *Զենիֆի ժողովուրդ* իրենց սուրբ գրություններում Օմնի 1.29–30–ի կողքին։

Բացատրեք, որ Մորմոնի Գիրքը չի պնդում, թե այն հանդիսանում է բոլոր ժողովուրդների հիշատակարանը, ովքեր բնակվել են հին Ամերիկաներում։ Բացի հարեդացիներից, մուղեկացիներից և Լեքիի խմբից, հավանաբար եղել են մարդկանց այլ խմբեր, ովքեր եկել են Ամերիկյան աշխարհամաս։

Բացատրեք, որ երբ Ամուղեկը ավարտեց իր հիշատակարանը, նա գրեց մի կարևոր հրավեր նրանց, ովքեր կկարդան իր խոսքերը։ Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ամուղեկի հրավերը Օմնի 1.25–26–ում, փնտրելով մի գաղափար, որը նա կրկնեց երեք անգամ։ (Դուք կարող եք խրախուսել ուսանողներին նշել այն, ինչ իրենք կգտնեն։)

- Ձեր կարծիքով ի՞նչ է նշանակում գալ դեպի Քրիստոսը։

Նշեք, որ որպես Քրիստոսի մոտ գալու Ամաղեկիի հրավերի մի մաս, նա խորհուրդ է տվել մեզ անել որոշակի բաներ։ Գրատախտակին գրեք հետևյալը.

*Եկեք Քրիստոսի մոտ և . . .*

Թող ուսանողները կրկին անդրադառնան Օմնի 1.25–26-ին։ Հրավիրեք նրանցից մի քանիսին լրացնել գրատախտակի նախադասությունը՝ օգտագործելով արտահայտություններ այս հատվածներից։

- Համաձայն Օմնի 1.26-ի, ինչպե՞ս մենք կօրհնվենք այս բաներն անելու համար։ (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ **եթե մենք գանք Քրիստոսի մոտ և համբերենք մինչև վերջ, մենք կփրկվենք։** Դուք կարող եք գրատախտակին գրել այս սկզբունքը։)

***Կենտրոնանալ վարդապետությունների և սկզբունքների վրա***

Մինչդեռ պատմության և աշխարհագրության վերաբերյալ փաստերը կարող են կարևոր լինել ձեր ուսուցանած սուրբ գրությունների ենթատեքստը հիմնելու համար, դասերը պետք է կենտրոնանան ուսանողներին օգնելու վրա, որ ներկայացնեն, հասկանան և կիրառեն ավետարանի վարդապետությունները և սկզբունքները։ Հոգ տարեք, որ չանտեսեք Օմնիում ուսուցանված վարդապետությունը՝ չափից ավելի ժամանակ տրամադրելով պատմությանը և աշխարհագրությանը։

Խնդրեք ուսանողներին ընտրել գրատախտակին գրված արտահայտություններից մեկը: Հրավիրեք նրանց իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրել կամ համառոտագրել մի հակիրճ ելույթ, որը նրանք կարող են ունենալ հաղորդության ժողովի ժամանակ: Այն կարող է լինել նրա մասին, թե ինչպես նրանք կարող են գալ Քրիստոսի մոտ այդ ճանապարհով: Խորհուրդ տվեք, որ նրանց ելույթները կարող են ընդգրկել. (1) Օմնի 1.25–26 կարդալը և իրենց ընտրած արտահայտություններն իրենց խոսքերով բացատրելը, (2) լրացուցիչ սուրբ գրություններ կարդալը, որոնք պարզաբանում են կամ իմաստավորում են արտահայտությունը, (3) դրա հետ կապված փորձառությամբ կիսվելն իրենց կյանքից կամ իրենց ճանաչած մարդկանց կյանքից, կամ (4) իրենց մտքերով, զգացմունքներով և վկայությամբ կիսվելը: (Այս խորհուրդները դուք կարող եք գրել գրատախտակին, գրել դրանք տպված թերթիկների վրա և բաժանել, կամ բարձրաձայն կարդալ դրանք, որպեսզի ուսանողները կարողանան գրել դրանք իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:)

Ուսանողներին տվեք վեցից յոթ րոպե՝ իրենց ելույթը պատրաստելու համար: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց ելույթով դասարանի առաջ: (Եթե դրա համար ժամանակ չկա, ոմանց խնդրեք կիսվել իրենց ելույթով հաջորդ դասի սկզբում կամ որպես դասարանային հավաքների մի մաս հետագայում: Դուք կարող եք նաև խրախուսել նրանց կիսվել իրենց ելույթով ընտանեկան երեկոյի ժամանակ կամ ընտանիքի անդամների կամ ընկերների հետ զրույցների ժամանակ:) Վերջում կիսվեք ձեր վկայությամբ, որ եթե մենք գանք Քրիստոսի մոտ և համբերենք մինչև վերջ, մենք կփրկվենք:

## Սերտման սուրբ գրության կրկնություն

Ուսանողներին ներկայացրեք մի քանի սերտման նոր հատվածներ: Դրա համար գրատախտակին գրեք մի քանի հղումներ և խնդրեք ուսանողներին իրենց սուրբ գրություններում գտնել և կարդալ հատվածները: Դուք կարող եք նաև խրախուսել ուսանողներին նշել դրանք առանձնակի ձևով, որպեսզի նրանք կարողանան հեշտությամբ գտնել դրանք: Որպեսզի օգնեք ուսանողներին հիշել հղումները և հատվածների գլխավոր բառերը, կիրառեք այս ձեռնարկի վերջում գտնվող ցուցչի «Նպատակային վարժանք» վարժությունը:

*Նշում.* Դուք կարող եք այս վարժությունը կիրառել մեկ այլ օր, երբ դուք ավելի շատ ժամանակ կունենաք:

# Տնային ուսումնասիրության դաս

## Հակոբ 5–Օմնի (Մաս 10)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Հակոբ 5–Օմնի (մաս 10) ուսանողների սովորած վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը չի նախատեսվում ուսուցանել որպես ձեր դասի մի մաս: Ձեր սովորեցրած դասը կենտրոնանում է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Ուսանողների կարիքների մասին խորհելիս հետևեք Սուրբ Հոգու հուշումներին:

#### Օր 1 (Հակոբ 5–6)

Հակոբ 5-ում ձիթենիների այլաբանության մասին իրենց դասում ուսանողները կենտրոնացել էին այն սկզբունքի վրա, որ Տերը սիրում է մեզ և ջանասիրաբար աշխատում է մեր փրկության համար: Ուսանողները գրի են առել այն, ինչն իրենք սովորել են Հակոբ 5-ից՝ իրենց հանդեպ Տիրոջ սիրո մասին: Հակոբ 6-ում ուսանողները սովորեցին, որ մենք իմաստուն կլինենք, եթե հիմա նախապատրաստվենք դատաստանին՝ ապաշխարելով և Տիրոջ ողորմությունը ստանալով:

#### Օր 2 (Հակոբ 7)

Ուսանողներն ուսումնասիրեցին Հակոբի և Սերեմի՝ հակաքրիստոսի վիճաբանությունը: Նրանք սովորեցին, որ երբ մենք մեր հույսը դնում ենք Տիրոջ վրա, մենք կարող ենք հաղթահարել մեր հավատքի առաջ ծառացած դժվարությունները: Հակոբի օրինակից նրանք նաև սովորեցին, որ մենք չենք կարող տատանվել մեր հավատքում, եթե մեր վկայությունները հիմնված են հայտնության և ճշմարիտ հոգևոր փորձառությունների վրա: Բացի դրանից, ուսանողները տեսան այն սկզբունքի լուսաբանող օրինակը, որ երբ մենք պատասխանում ենք մեր հավատքին վերաբերվող հարցերին կամ քննադատություններին այն եղանակներով, որոնք հրավիրում է Հոգին, մենք կարող ենք օգնել ուրիշներին դառնալ դեպի Տերը: Ուսանողները գրել են այն մասին, թե ինչպես կկիրառեն սկզբունքը, որը նրանք գտել են Հակոբ 7.15–23–ում:

#### Օր 3 (Ենովս)

Ենովսի օրինակից ուսանողները սովորեցին, որ երբ մենք հավատք ենք գործադրում առ Հիսուս Քրիստոսը, մեր մեղքերը կարող են ներվել և մենք կարող ենք ողջ դարձվել: Նրանք նաև սովորեցին, որ երբ մենք ստանանք Հիսուս Քրիստոսի Քավության օրհնությունները, մենք կձգտենք օգնել ուրիշներին ստանալ փրկություն: Ուսանողները գրեցին մի եղանակ, որով նրանք կարող են կիրառել այս սկզբունքները:

#### Օր 4 (Հարոմ և Օմնի)

Հարոմի և Օմնիի իրենց ուսումնասիրություններում ուսանողները սովորեցին հետևյալ ճշմարտությունը. Երբ մենք հնազանդվենք Աստծո պատվիրաններին, մենք կբարգավաճենք: Նրանք գրի առան, թե ինչպես է Տերն օրհնել իրենց Նրա պատվիրանները պահելու համար: Ուսանողները նաև հակիրճ ձևով ուսումնասիրեցին Նեփիացիների գաղթը դեպի Զարահեմլայի երկիր և տեղեկացան Զարահեմլայի ժողովրդի՝ հարեդացիների մասին և Նեփիացիների խմբի մասին (Զենիֆի մարդիկ), ովքեր վերադարձան Նեփիի երկիրը: Ուսանողները սովորեցին հետևյալ սկզբունքը. Եթե մենք գանք Քրիստոսի մոտ և համբերենք մինչև վերջ, մենք կփրկվենք: Նրանք ավարտեցին այս դասը, գրելով մեկ կամ երկու րոպեանոց ելույթ այն եղանակներից մեկի մասին, որով Ամաղեկին քաջալերում է մեզ գալ Քրիստոսի մոտ:

### Նախաբան

Այս դասի ժամանակ ուսանողները հնարավորություն կունենան խորհելու իրենց հանդեպ Տիրոջ սիրո մասին, ինչպես ցույց է տրված Հակոբ 5–ում: Եթե ժամանակը թույլ է տալիս, դուք կարող եք նաև ցանկանալ սովորեցնել նրանց Հակոբ 5-ից՝ որպես Տիրոջ Ծառաներ իրենց դերի մասին: Ուսանողները կկարողանան քննարկել ճշմարտություններ Հակոբ 7-ից, որոնք կարող են օգնել նրանց, երբ ուրիշները հարցականի տակ առնեն կամ քննադատեն իրենց համոզմունքները: Նրանք նաև հնարավորություն կունենան դասարանին պատմել այն մասին, թե ինչպես են իրենք կիրառել այն, ինչ սովորել են Ենովսի գրքից: Բացի դրանից, ուսանողները կարող են կիսվել իրենց պատրաստած ելույթներով, թե ինչպես մենք կարող ենք ականջ դնել Քրիստոսի մոտ գալու հրավերին, որը տրված է Օմնիում: Եթե ուզում եք, որ նրանք դա անեն, կարող է օգտակար լինել, որ դուք նախօրոք կապվեք ուսանողներից մի քանիսի հետ և հրավիրել նրանց պատրաստվել, որ կիսեն իրենց ելույթները դասարանի հետ:

### Ուսուցանման առաջարկներ

#### Հակոբ 5–6

***Հակոբը մեջբերում է ձիթենու այլաբանությունը, որ ցույց տա, որ Տերը ջանասիրաբար աշխատում է մեր փրկության համար***

Հիշեցրեք ուսանողներին, որ ձիթենիների այլաբանությունում ընտանի ձիթենու ճյուղերը ցրվում են այգով մեկ: Սա ներկայացնում է Աստծո ուխտյալ ժողովրդի՝Իսրայելի տան անդամների ցրումն աշխարհով մեկ: Ի վերջո, այնուամենայնիվ, այգու բոլոր ծառերը դարձել էին ոչ պիտանի (տես Հակոբ 5.46): Բացատրեք, որ սա ներկայացնում է Մեծ Ուխտադրժության ժամանակաշրջանը:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հակոբ 5.61–62, փնտրելով, թե ինչ հրահանգեց Տերն Իր Ծառային (Իր մարգարեին) անել, որպեսզի օգներ Ծառերին ևս մեկ անգամ առաջ բերել բարի պտուղ: Այնուհետև տվեք հետևյալ հարցերը.

- Ձեր կարծիքով, ովքե՞ր կարող են լինել այս «Ծառաները»: (Եկեղեցու ղեկավարները, միսիոներները և Եկեղեցու բոլոր անդամները:)
- Ի՞նչ յուրահատկություն ունի այն ժամանակաշրջանը, որում այս Ծառաները կանչված են աշխատելու:

Հակիրճ ձևով բացատրեք, որ այս ջանքերը ներկայացնում են Իսրայելի հավաքումը: Որպեսզի օգնեք ուսանողներին տեսնել, որ նրանք մի մասն են Ծառաների խմբի, ովքեր կանչված են աշխատելու Տիրոջ այգում, կարդացեք Յոթանասունից Երեց Դին Լ. Լարսենի հետևյալ խոսքերը: Խնդրեք ուսանողներին ուշադրություն դարձնել, թե ում է նա ներկայացնում որպես «այգու վերջին աշխատողներ»:

«[Այժմ] այն ժամանակաշրջանն է, որի ընթացքում Տերը և իր Ծառաները կգործադրեն իրենց վերջին մեծ ջանքը, որ ճշմարտության ուղերձը տանեն երկրի բոլոր մարդկանց և հետ վերադարձնեն հին Իսրայելի սերունդներին, ովքեր կորցրել են իրենց ճշմարիտ իսկությունը: . . .

Դուք աշխարհ եք եկել, երբ դրվել է այս մեծ աշխատանքի հիմքը: Ավետարանը վերականգնվել է վերջին անգամ: Եկեղեցին հաստատվել է գրեթե աշխարհի բոլոր մասերում: Բեմահարթակը պատրաստ է վերջին հուզիչ տեսարանը խաղալու համար: Դուք կլինեք հիմնական խաղացողները: Դուք այգու վերջին աշխատողների թվում եք: Սա այն Ծառայությունն է, որի համար դուք ընտրված եք» (“A Royal Generation,” *Ensign*, May 1983, 33):

Տվեք հետևյալ հարցերը.

- Ըստ Երեց Լարսենի, ովքե՞ր էին Ծառաները կամ «վերջին աշխատողները», ովքեր կանչված էին աշխատելու այգում:
- Ի՞նչ հնարավորություններ դուք ունեք Տիրոջը Ծառայելու և ուրիշներին օգնելու համար, որ «բարի պտուղ» առաջ բերեն:

Դասարանով բարձրաձայն կարդացեք Հակոբ 5.71-ը: Հրավիրեք ուսանողներին ներկայացնել, թե ինչ է Տերը խոստանում նրանց, ովքեր աշխատում են Իր հետ: Հարցրեք ուսանողներին, թե երբ են իրենք օրհնված զգացել Տիրոջը Ծառայելու իրենց ջանքերի համար:

## Հակոբ 7

*Հակոբը հույսը դնում է Տիրոջ վրա, երբ նա հանդիպում է Սերեմին և առաջնորդում է նեփիացիների բազմությանը դառնալ դեպի Տերը*

*Նշում.* Հակոբ 7-ում ուսանողները սովորեցին, թե ինչպես Հակոբը հաղթահարեց առ Հիսուս Քրիստոս իր հավատքին ուղղված հակառակությունը Սերեմ անունով մարդու՝ հակաքրիստոսի կողմից: Մինչդեռ այս դասը չի կենտրոնանում Սերեմի հետ ունեցած Հակոբի փորձառության վրա, դուք կարող եք հրավիրել ուսանողներին ամփոփել իրադարձությունները և ներկայացնել մի ճշմարտություն, որը նրանք սովորել են Հակոբի օրինակից: Դուք հատկապես կարող եք նշել այն ճշմարտությունը, որ **մեր հավատքը չի տատանվի, եթե մեր վկայությունները հիմնված են հայտնության և հոգևոր ճշմարիտ փորձառությունների վրա:**

## Ենովս

*Իր մեղքերին ներում ստանալուց հետո Ենովսն աղոթում է ուրիշների համար և աշխատում է նրանց փրկության համար*




Գծեք այս գծապատկերը գրատախտակին կամ մի թերթիկի վրա: Խնդրեք ուսանողներին բացատրել, թե ինչ առնչություն ունի այն Ենովսի փորձառության հետ:

Ուսանողներին բաժանեք երեք խմբի: (Եթե դուք ունեք փոքր դասարան, խումբը կարող է բաղկացած լինել մեկ անձից:) Խնդրեք առաջին խմբին կարդալ Ենովս 1.4–6–ը և նախապատրաստվել, որ բացատրեն մի ճշմարտություն, որ մենք կարող ենք սովորել իր անձի համար ասված Ենովսի աղոթքից: Խնդրեք երկրորդ խմբին կարդալ Ենովս 1.9–10–ը և նախապատրաստվել, որ բացատրեն մի ճշմարտություն, որը մենք կարող ենք սովորել Ենովսի աղոթքի այդ մասից: Երրորդ խմբի ուսանողները թող կարդան Ենովս 1.11–14–ը և նախապատրաստվեն, որ բացատրեն մի ճշմարտություն, որը մենք կարող ենք սովորել Ենովսի աղոթքի այդ մասից: Ապա խնդրեք յուրաքանչյուր խմբի մի անդամի կիսվել, թե ինչ են իրենք նախապատրաստել: Խնդրեք ուսանողներին կրկնել օր 3-ը, իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերի հանձնարարություն 9-ը և հրավիրեք մի քանիսին կիսվել, թե ինչպես են նրանք ընտրել կիրառել Ենովսի գրքի ճշմարտությունները:

## Հարում և Օմնի

*Հիշատակարանները պահողները պատմում են նեփիացիների դժվարությունների և օրհնությունների մասին*

Եթե ուսանողները հարցեր ունեն Արևմտյան կիսագնդում մի շարք մարդկանց վերաբնակեցման հետ կապված, դուք կարող եք նրանց հետ քննարկել Օմնի 1.1–30–ի մասին ուսանողների ձեռնարկի նյութը, ներառյալ Առաջին Նախագահությունից Նախագահ Էնթոնի Վ. Իվինսի խոսքերը:

Հրավիրեք ուսանողներին կրկնել ելույթները, որոնք նրանք նախապատրաստել էին դեպի Քրիստոս գալու մասին (օր 4, հանձնարարություն 4): Եթե ժամանակը թույլ է տալիս, դուք կարող եք խնդրել մի քանի ուսանողների դասարանին ներկայացնել իրենց ելույթները: Եթե դուք նախօրոք խնդրել եք ուսանողներին ելույթ ունենալ, համոզվեք, որ բավականաչափ ժամանակ եք թողնում նրանց համար:

Մի մոռացեք շնորհակալություն հայտնել ուսանողներին իրենց մասնակցության համար: Վկայություն բերեք ձեր

ուսանողներից յուրաքանչյուրի հանդեպ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի սիրո մասին, և վստահեցրեք նրանց, որ եթե նրանք գան Քրիստոսի մոտ իրենց ողջ հոգով, նրանք կփրկվեն Նրա թագավորությունում:

## Հաջորդ Մասը (Մորմոնի Խոսքերը–Մոսիա 6)

Հաջորդ մասում ուսանողները կկարդան Բենիամին թագավորին հայտնված Աստծո հրեշտակի մասին, ով հրահանգներ է տվել նրան և ասել, թե ինչ ասի իր ժողովրդին (տես Մոսիա 3): Բենիամին թագավորն այս խոսքերը հաղորդեց իր ժողովրդին, ովքեր մեծ փոփոխություն զգացին իրենց սրտերում:

# Մորմոնի Խոսքերի

## ՆԱԽԱԲԱՆԸ

### Ինչո՞ւ ուսումնասիրել այս գիրքը:

Մորմոնի Խոսքերի ուսումնասիրության միջոցով ուսանողները կարող են մեծացնել իրենց հավատքը, որ «Տերը գիտի բոլոր բաները» (Մորմոնի Խոսքերը 1.7) և որ Նա առաջնորդում է Իր ծառաներին Իր նպատակներն իրականացնելու համար: Լինելով պատմական հաշվետվություն՝ գիրքը ծառայում է որպես կամուրջ Նեփիի փոքր թիթեղների (1 Նեփի–Օմնի) և Նեփիի մեծ թիթեղների (Մոսիա–4 Նեփի) Մորմոնի կրճատման միջև: Այն կարող է օգնել ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե որ հիշատակարաններն է Մորմոնը կրճատել, երբ նա կազմել է Մորմոնի Գիրքը: Այն նաև ներկայացնում է ուսանողներին Բենիամին թագավորի հավատքը և նվաճումները:

### Ո՞վ է գրել այս գիրքը:

Այս գիրքը գրել է Մորմոնը: Նա մարգարե էր, հիշատակարաններ պահող և կրճատող և Մորմոնի Գրքի կազմող: Նա նաև արդար հայր էր և բանակի առաջնորդ նեփիացիների մեջ: Մարգարե Մորոնին նրա որդին էր:

### Ո՞ւմ համար է գրված այս գիրքը և ինչո՞ւ:

Մորմոնը դիմում է հետագա ունկնդիրներին, հուսալով, որ իր գրածները և իր որդու՝ Մորոնիի գրածները «օգտակար [կլինեն] նրանց» (Մորմոնի Խոսքերը 1.2): Նա հատկապես գրել է լամանացիների օգտի համար: Նրանց վերաբերյալ նա ասել է. «Իմ աղոթքն առ Աստված վերաբերվում է իմ եղբայրներին, որպեսզի նրանք կարողանան դարձյալ գալ Աստծո իմացությանը, այո, Քրիստոսի փրկագնմանը. որ նրանք կարողանան դարձյալ լինել մի հրաշալի ժողովուրդ» (Մորմոնի Խոսքերը 1.8):

### Ե՞րբ և որտե՞ղ է այն գրվել:

Մորմոնն այս գիրքը գրել է մոտավորապես մ.թ. 385թ ., այն բանից հետո, երբ նա «վկա [եղավ իր] ժողովրդի՝ Նեփիացիների համարյա լիակատար կործանմանը» (Մորմոնի Խոսքերը 1.1): Մորմոնը չի գրել, թե որտեղ էր, երբ գրում էր այս գիրքը:

### Որո՞նք են այս գրքին բնորոշ որոշ առանձնահատկությունները:

Այս կարճ գիրքն ընդհատում է գրքերի Ժամանակագրական կարգը Մորմոնի Գրքի սկզբում: Մորմոնն այն գրել է Օմնիի գիրքն Ամաղեկիի կողմից ավարտելուց հետո ավելի քան 500 տարի անց: Այս գրքում Մորմոնը հակիրճ ձևով բացատրում է իր ժողովրդի հիշատակարանի բանաքաղումը և կրճատումը: Նրա բացատրությունը հասկանալու համար կարող է օգնել հիշելը, որ Տերը պատվիրել էր Նեփիին պատրաստել թիթեղների երկու հավաքածուներ՝ «հատուկ» և «իմաստուն» նպատակով (տես 1 Նեփի 9.3, 5): Թիթեղների մի հավաքածուն, որը հաճախ կոչվում էր մեծ թիթեղներ, պարունակում էր նեփիացիների աշխարհիկ պատմությունը, մինչդեռ մյուս հավաքածուն, որ հաճախ կոչվում էր փոքր թիթեղներ, պարունակում էր նեփիացիների քարոզչությունը, հայտնությունները և մարգարեությունները (տես 1 Նեփի 9.2–4, Հակոբ 1.3–4):

Մորմոնը հայտնաբերում է Նեփիի փոքր թիթեղներն այն բանից հետո, երբ նա արդեն կրճատել էր մեծ թիթեղների մի մասը (տես Մորմոնի Խոսքերը 1.3): Առաջնորդվելով Տիրոջ Հոգով՝ Նեփին ներառել է փոքր թիթեղները մեծ թիթեղների կրճատման հետ: Նա արել է սա «իմաստուն նպատակի համար», համաձայն Տիրոջ կամքի (տես Մորմոնի Խոսքերը 1.4–7):

Շատ տարիներ անց, այս ոգեշնչման պատճառներից մեկն ակնհայտ դարձավ: Երբ Ջոզեֆ Սմիթը սկսեց թարգմանել Մորմոնի Գիրքը, նա սկսեց Նեփիի մեծ թիթեղների Մորմոնի կրճատումից՝ աշխարհիկ պատմությունից: Մարտին Հարրիսը, ով Մարգարեի դպիրն էր թարգմանության այս մասում, կորցրեց ձեռագրերի 116 էջերը: Տերը հայտնեց Ջոզեֆ Սմիթին, որ ամբարիշտ մարդիկ ձեռք էին բերել այդ էջերը և փոխել բառերը (տես ՎևՈՒ 10.8–10): Եթե Ջոզեֆը կրկին թարգմաներ նույն նյութը, այդ մարդիկ կհայտարարեին, որ նա մարգարե չէր, քանի որ նա չէր կարողացել երկրորդ անգամ նույն ձևով թարգմանել գիրքը (տես ՎևՈՒ 10.11–19): Տերն ասաց Ջոզեֆին, որ կրկին չթարգմաներ այդ մասը, այլ թարգմաներ Նեփիի փոքր թիթեղները, որոնք Մորմոնը ներառել էր մեծ թիթեղների իր կրճատման մեջ (տես ՎևՈՒ 10.30–45): Այսպիսով, Մորմոնի Խոսքերն օգնում են մեզ տեսնել, թե ինչպես էր Տերն ուղի պատրաստել ամբարիշտ մարդկանց ծրագրերը խափանելու և սուրբ գրությունները ներառելու համար, որոնք ոչ միայն ամփոփում են նույն ժամանակաշրջանը, որը և կորած ձեռագրերը, այլ «ավելի մեծ հայացք են գցում [Տիրոջ] ավետարանի վրա» (ՎևՈՒ 10.45): Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ուսուցանել է. «Իհարկե, հրաշալի կլիներ, եթե մեկը մի օր գտներ Մորմոնի Գրքի կորած 116 էջերի ձեռագրերի բնօրինակը: Սակայն ինչ էլ որ այդ էջերը պարունակեն, չի կարող ավելի կարևոր կամ ավելի էական լինել Մորմոնի Գրքի նպատակի համար, քան ուսմունքները, որոնք արձանագրված են փոքր թիթեղների վրա» (*Christ and the New Covenant: The Messianic Message of the Book of Mormon* [1997], 35–36):

Իր ժողովրդի սրբազան հիշատակարանների բանաքաղի վերաբերյալ մտքերով կիսվելուց բացի Մորմոնը տալիս է Բենիամին թագավորի ծառայության հակիրճ նկարագրությունը (տես Մորմոնի Խոսքերը 1.10–18): Այս նկարագրությունն օգնում է միացնել Նեփիի փոքր թիթեղները մեծ թիթեղների Մորմոնի կրճատման հետ: Բենիամին թագավորի մասին հիշատակվում է Օմնիի գրքի վերջաբանում, որը փոքր թիթեղների վերջին գիրքն է (տես Օմնի 1.23–25): Մոսիայի գիրքը՝ առաջին գիրքը, որը մենք ունենք մեծ թիթեղների Մորմոնի կրճատումից, սկսվում է Բենիամին թագավորի թագավորման և ծառայության ավարտով (տես Մոսիա 1.1, 9):

### Համառոտ շարադրանք

**Մորմոնի Խոսքերը 1.1** Մորմոնը գտնում է Նեփիի փոքր թիթեղները և դրանք ընդգրկում է մեծ թիթեղների իր կրճատման հետ:

**Մորմոնի Խոսքերը 1.10–18** Մորմոնն ամփոփում է Բենիամին թագավորի թագավորումը:

# Մոսիայի

## ԳԻՐՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ

### Ինչո՞ւ ուսումնասիրել այս գիրքը:

Մոսիայի գիրքն ուսումնասիրելիս ուսանողները կկարդան հզոր վկայություններ Հիսուս Քրիստոսի առաքելության մասին: Նրանք նաև կիմանան մարդկանց մասին, ում Տերն ազատել է մեղքի կապանքներից կամ ֆիզիկական ճնշումներից: Բացի այդ, ուսանողները կիմանան, թե ինչպես են Բենիամին թագավորի, Աբիդադիի և Ալմայի նման անհատների արդար ջանքերը հրաշալի օրինություններ բերել ուրիշներին: Եվ ընդհակառակը, ուսանողները կտեսնեն, թե ինչպես են Զենիֆի և նրա որդու՝ Նոյ թագավորի նման անհատների վատ ընտրությունները վնասակար հետևանքներ բերել իրենց և իրենց ժողովրդի վրա:

### Ո՞վ է գրել այս գիրքը:

Մոսիայի գիրքը կազմելու համար Մորմոնը բանաքաղել և կրճատել է մի շարք այլ գրողների հիշատակարանները: Գիրքը կոչվել է Մոսիայի անունով, ով Բենիամին թագավորի որդին էր: Մոսիան մարգարե էր, տեսանող, հայտնող և թագավոր, ով թագավորում էր Զարահեմլայում մոտաորապես մ.թ.ա. 124-մ. թ.ա 91թթ.: Նրան կոչել էին իր Մոսիա պապի անունով, ով նույնպես Զարահեմլայի թագավոր էր (տես Օմնի 1.12–13, 19):

Մոսիայի գիրքը կազմելիս Մորմոնն օգտվել է մի շարք հիշատակարաններից: Նա կրճատել և մեջբերումներ է կատարել Նեփիի մեծ թիթեղներում Մոսիայի պահած հիշատակարաններից, որոնք մանրամասնել են նեփիացիների պատմությունը Զարահեմլայի երկրում (տես Մոսիա 1–7, 25–29): Նա նաև օգտվել է Զենիֆի հիշատակարանից, որտեղ տրվում է Զենիֆի ժողովրդի պատմությունն այն ժամանակվանից, երբ նրանք հեռացան Զարահեմլայից, մինչև նրանց վերադարձը (տես Մոսիա 7–22): Բացի դրանից, Մորմոնը մեջբերել և կրճատել է հատվածներ Ալմայի գրածներից, ով պահպանել էր Աբինադիի խոսքերը և պահել էր իր իսկ ժողովրդի հիշատակարանը (տես Մոսիա 17.4, 18, 23–24):

### Ո՞ւմ համար է գրված այս գիրքը և ինչո՞ւ:

Մորմոնը Մոսիայի գիրքը չի ուղղել որևէ հատուկ լսարանի կամ նշել, թե ինչու է նա գրել այս գիրքը: Այնուամենայնիվ, Մոսիայի գիրքը հատկապես նվիրված է Մորմոնի Գրքի մեծագույն նպատակին՝ վկայելուն, որ Հիսուսը Քրիստոսն է և Տիրոջ ուխտերը հայտնի դարձնելուն (տես Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը): Մոսիայի գիրքը ներառում է երկու գլխավոր զեկույցներ Հիսուս Քրիստոսի առաքելության վերաբերյալ՝ Բենիամին թագավորի խոսքերը Մոսիա 2–5–ում և Աբինադիի խոսքերը Մոսիա 12–16–ում: Բացի դրանից, Մոսիայի գիրքն անընդհատ ներկայացնում է Տիրոջ հետ ուխտեր կապելու և պահելու կարևորությունը (տես Մոսիա 5.5–9, 18.5–10, 21.31–32, 24.13–15, 25.16–18, 26.20):

### Ե՞րբ և որտե՞ղ է այն գրվել:

Մոսիայի գրքի համար որպես աղբյուր օգտագործված հիշատակարանների բնօրինակները հավանաբար գրվել էին մ. թ. ա 200 և մ. թ. ա. 91թթ. ընթացքում: Մորմոնը կրճատել է այդ հիշատակարանները մոտավորապես մ. թ. 345 և մ. թ. 385թթ. ընթացքում: Մորմոնը չի արձանագրել, թե որտեղ էր նա, երբ կազմեց այս գիրքը:

### Որո՞նք են այս գրքին բնորոշ որոշ առանձնահատկությունները:

Մոսիան առաջին գիրքն է Մորմոնի Գրքում, որը վերցված է Նեփիի մեծ թիթեղների կրճատումից: Այն ուսուցանում է տեսանողի կարողությունների վերաբերյալ (տես Մոսիա 8.13–18, 28.10–17): Բացի դրանից, Մոսիայի գիրքն առանձնահատուկ է նեփիացիների առանձին խմբերի փորձառությունների և ճամփորդությունների մասին իր մեկնաբանություններով, նրանց, ովքեր Զարահեմլայի երկրում էին, նրանց, ովքեր կառավարվում էին Զենիֆի, Նոյի և Լիմքիի կողմից Նեփիի երկրում, և նրանց, ովքեր Ալմայի հետ փախան Նեփիի երկրից: Այս խմբերի մասին ավելին իմանալու համար դուք կարող եք անդրադառնալ Մոսիա 7–24 –ի ճամփորդությունների վերաբերյալ ընդհանուր գաղափարներին, որը կարելի է գտնել այս ձեռնարկի վերջում գտնվող ցուցիչում:

Մոսիայի գիրքը նկարագրում է ժողովուրդների միավորումը, ովքեր առաջնորդվում էին Լիմքիի և Ալմայի կողմից Զարահեմլայի երկրում գտնվող նեփիացիների հետ (տես Մոսիա 25.1–13): Այն նաև մանրամասներ է տալիս Զարահեմլայի երկրով մեկ Հիսուս Քրիստոսի Եկեղեցու ծառայության մասին (տես Մոսիա 25.14–24, 26): Ի վերջո, Մոսիայի գիրքը ներկայացնում է դատավորների կառավարումը (տես Մոսիա 29):

### Համառոտ շարադրանք

**Մոսիա 1–5** Բենիամին թագավորն իր որդի Մոսիային նշանակում է որպես իրեն հաջորդող և տալիս է իր թագավորման հաշվետվությունը: Բենիամինը սովորեցնում է Հիսուս Քրիստոսի մասին և հրավիրում է իր ժողովրդին ուխտի մեջ մտնել Աստծո հետ:

**Մոսիա 6–8** Մոսիան սկսում է թագավորել: Ամմոնը և 15 այլ մարդիկ փնտրում են Զենիֆի հետնորդներին Նեփիի երկրում: Ամմոնը հանդիպում է Լիմքի թագավորին՝ Զենիֆի թոռանը, և տեղեկանում է, թե ինչպես են մարդիկ ճորտության բերվել:

**Մոսիա 9–17** Տրվում է Զենիֆի ժողովրդի պատմությունը: Զենիֆի մահից հետո նրա որդի Նոյը թագավորում է ամբարշտությամբ: Աբինադին վկայում է Հիսուս Քրիստոսի մասին և հորդորում է Նոյ թագավորին և նրա ժողովրդին ապաշխարել: Աբինադին մահապատժի է ենթարկվում կրակի միջոցով:

**Մոսիա 18–20** Ալման՝ Նոյ թագավորի քահանաներից մեկը, ապաշխարում է: Նա ուսուցանում է ավետարանը և իր հետևորդների հետ փախչում է անապատ: Նեփիացիները Նեփիի երկրում հարձակման են ենթարկվում լամանացիների կողմից և գերի են դառնում: Նոյը սպանվում է իր ժողովրդի կողմից և նրան հաջորդում է նրա որդի Լիմքին:

**Մոսիա 21–22** Լիմքին և իր ժողովուրդը ապաշխարում են: Տերն ազատում է նրանց գերությունից, և Ամմոնն առաջնորդում է նրանց Զարահեմլայի երկիր:

**Մոսիա 23–24** Ալման և նրա հետևորդները հիմնում են Էլամ քաղաքը: Նրանք գերի են դառնում լամանացիներին և հալածվում են Ամուղոնի և նրա եղբայրների՝ Նոյ թագավորի նախկին քահանաների կողմից: Տերն ազատում է Ալմային և նրա ժողովրդին և առաջնորդում է նրանց դեպի Զարահեմլայի երկիրը:

**Մոսիա 25–29** Նեփիացիները միավորվում են Մոսիայի թագավորության ներքո, և Ալման կառավարում է Եկեղեցին: Ալմայի որդի Ալման (հաճախ կոչվում է Ալմա Կրտսեր) և Մոսիայի որդիները դարձի են գալիս: Իր մահից առաջ Մոսիան հիմնում է դատավորների կառավարումը:

ԴԱՍ 51

# Մորմոնի Խոսքերը–Մոսիա 1

## Նախաբան

Մորմոնի Խոսքեր վերնագրված գիրքը որպես կամուրջ է ծառայում Նեփիի փոքր թիթեղների և Նեփիի մեծ թիթեղների Մորմոնի կրճատման միջև: Այս գրքում, որը Մորմոնը գրել է Հիսուս Քրիստոսի ծնունդից մոտավորապես 400 տարի հետո, Մորմոնը բացատրել է, որ նա առաջնորդություն է փնտրել Աստծուց և առաջնորդվել է Սուրբ Հոգու կողմից, թե ինչ ներառի իր հիշատակարանում:

Նա նաև նշել է Բենիամին թագավորին և տվել է արժեքավոր մտքեր, թե ինչու է Բենիամին թագավորը նման մեծ ազդեցություն ունեցել իր ժողովրդի վրա: Մոսիա 1-ը պարունակում է իր որդիներին ուղղված Բենիամին թագավորի որոշ ուսմունքները: Նա ուսուցանել է նրանց, որ սուրբ գրություններն օգնում են մեզ հիշել Աստծուն և պահել Նրա պատվիրանները:

## Ուսուցանման առաջարկներ

### Մորմոնի Խոսքերը 1.1–11

*Մորմոնը վկայում է, որ Աստված պահպանել է մի շարք հիշատակարաններ իմաստուն նպատակի համար*

Խնդրեք ուսանողներին մտածել մի ժամանակահատվածի մասին, երբ Հոգին հուշել է իրենց ինչ-որ բան անել: Դուք կարող եք առաջարկել, որ նրանք գրեն այս փորձառության մասին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային նոթատետրերում: Որպեսզի օգնեք նրանց մտածել իրենց փորձառությունների մասին, դուք կարող եք հակիրճ կիսվել ձեր սեփական փորձառությամբ: Ուսանողները թող իմանան, որ դասի ընթացքում դուք կխնդրեք նրանցից մի քանիսին դասարանի հետ կիսվել իրենց փորձառություններով:

Բացատրեք ուսանողներին, որ այսօր նրանք կուսումնասիրեն մեկի օրինակը, ով հետևել է հուշմանը, չնայած, որ նա չի հասկացել բոլոր պատճառները, թե ինչու նա պետք է աներ դա:

Ուսանողները թող անդրադառնան Մորմոնի Խոսքերին և գտնեն (էջի ներքևում կամ գլխի ամփոփման մեջ) մոտավոր տարեթիվը, երբ Մորմոնը գրել է գիրքը: Խնդրեք նրանց համեմատել այդ տարեթիվը Օմնիի և Մոսիայի գրքերի տարեթվերի հետ:

- Ի՞նչ ենք մենք իմանում այս տարեթվերից Մորմոնի Խոսքերի մասին:

Ցուցադրեք Մորմոնը կրճատում է թիթեղները նկարը (62520; *Gospel Art Book* [2009], no. 73): Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մորմոնի Խոսքերը 1.1–2-ը: Օգնեք ուսանողներին հասկանալ, որ Մորմոնը գրել է Մորմոնի Խոսքերը վերնագրով գիրքը Մորմոնի Գրքի իրադարձություններից մեծամասնության տեղի ունենալուց հետո: Բացատրեք, որ Մորմոնի Խոսքերն օգնում են մեզ հասկանալ, որ Մորմոնի Գիրքը կազմվել է մի շարք հիշատակարաններից: Այն նաև ցույց է տալիս, որ հայտնությունն է առաջնորդել այս գործընթացը:

Որպեսզի օգնեք ուսանողներին պատկերացնել, թե ինչպես են Մորմոնի Խոսքերը, Նեփիի փոքր թիթեղները և Նեփիի մեծ թիթեղների Մորմոնի կրճատումները միասին տեղավորվում Մորմոնի Գրքում, կարող եք այս ձեռնարկի վերջում՝ ցուցիչում զետեղված «Թիթեղները և դրանց կապը տպագրված Մորմոնի Գրքի հետ» վերնագրով գծապատկերը նրանց ցույց տալ: Կարող եք նաև նախքան դասը պատրաստել հետևյալ ցուցադրական նյութը.

Հավաքեք երկու գիրք և մի թղթի կտոր: Մի գիրքը պետք է մոտավորապես երկու անգամ հաստ լինի մյուսից: Ավելի բարակ գրքի կռնակին ամրացրեք թղթի մի նեղ շերտ, որի վրա գրված է *Նեփիի փոքր թիթեղներ:* Ավելի հաստ գրքի կռնակին ամրացրեք մի նեղ շերտ, որի վրա գրված է *Նեփիի մեծ թիթեղների Մորմոնի կրճատումը:* Թղթի վրա գրեք *Մորմոնի Խոսքերը:*

Դասարանում այս ցուցադրական նյութն օգտագործելու համար բարձրացրեք այն գիրքը, որը ներկայացնում է Նեփիի մեծ թիթեղների Մորմոնի կրճատումը: Բացատրեք, որ Նեփիի մեծ թիթեղների արձանագրությունները հիմնական աղբյուր են հանդիսացել Մորմոնի Գրքի համար: Այս հիշատակարանի Մորմոնի կրճատումից Ջոզեֆ Սմիթը թարգմանել է Մոսիայի, Ալմայի, Հելամանի, 3 Նեփիի և 4 Նեփիի գրքերը:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մորմոնի Խոսքերը 1.3: Խնդրեք նրանց փնտրել, թե ինչ հայտնաբերեց Մորմոնը Նեփիի մեծ թիթեղներից մի մաս կրճատելուց հետո: Երբ ուսանողները զեկուցեն իրենց գտածը, օգնեք նրանց հասկանալ, որ «այս թիթեղները» արտահայտությունը վերաբերվում է Նեփիի փոքր թիթեղներին: Բարձրացրեք Նեփիի փոքր թիթեղները ներկայացնող գիրքը: Բացատրեք, որ այս հիշատակարանից Ջոզեֆ Սմիթը թարգմանել է 1 Նեփիից մինչև Օմնի եղած գրքերը ներառյալ:

Ուսանողները թող կարդան Մորմոնի Խոսքերը 1.4–6-ը, որ իմանան, թե ինչ էր Մորմոնը զգում Նեփիի փոքր թիթեղների վերաբերյալ:

- Ի՞նչ հաճելի բան գտավ Մորմոնը Նեփիի փոքր թիթեղներում:
- Ի՞նչ արեց Մորմոնը Նեփիի փոքր թիթեղները:

Որպեսզի ցույց տաք, որ Մորմոնն ընդգրկեց Նեփիի փոքր թիթեղները Նեփիի մեծ թիթեղների իր կրճատման հետ, դրեք ավելի բարակ գիրքը ավելի հաստ գրքի վրա:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մորմոնի Խոսքերը 1.7: Խնդրեք դասարանին փնտրել, թե ինչու Մորմոնը ընդգրկեց Նեփիի փոքր թիթեղները Նեփիի մեծ թիթեղների Մորմոնի կրճատման հետ:

- Ինչո՞ւ Մորմոնն ընդգրկեց փոքր թիթեղները մեծ թիթեղների իր կրճատման հետ: (Նա հետևեց Հոգու հուշմանը:) Նա հասկանո՞ւմ էր բոլոր պատճառները, թե ինչու պետք է սա աներ:

Օգնեք ուսանողներին տեսնել, որ Մորմոնը հասկանում էր որոշ պատճառներ, թե ինչու փոքր թիթեղները կարող էին կարևոր լինել: Նա զգում էր դրանց հոգևոր մեծ արժեքը և հաճելի էին նրա համար Հիսուս Քրիստոսի մասին դրանց պարունակած մարգարեությունները (տես Մորմոնի Խոսքերը 1.4–6): Այնուամենայնիվ, նա չգիտեր բոլոր պատճառները, թե ինչու նա պետք է ներառեր դրանք ի լրացում մեծ թիթեղների այն մասի, որը ընդգրկում էր պատմական նույն ժամանակաշրջանը: (Որպեսզի կարդաք մեկ պատճառ, որի մասին այդ ժամանակ Մորմոնը չգիտեր, տես այս ձեռնարկի Մորմոնի Խոսքերի նախաբանը:)

Ուսանողները թող լուռ վերանայեն Մորմոնի Խոսքերը 1.7, փնտրելով վարդապետություններ, որ Մորմոնն ուսուցանել է Տիրոջ վերաբերյալ: Համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **Տերը գիտի բոլոր բաները** և որ **Տերը կարող է աշխատել մեր միջոցով՝ Իր կամքը կատարելու համար:**

- Ինչպե՞ս կարող էին այս վարդապետություններն օգնել Մորմոնին գործել համաձայն իր ստացած ոգեշնչման:
- Ինչպե՞ս կարող են այս ճշմարտություններն օգնել ձեզ, երբ դուք հուշումներ եք ստանում Հոգուց:

Խրախուսեք ուսանողներին վերանայել իրավիճակը, որի մասին նրանք գրել էին կամ մտածել էին դասի սկզբում: Հրավիրեք նրանցից մի քանիսին պատմել իրենց ունեցած ոգեշնչումների մասին, թե ինչպես են նրանք գործել համաձայն այդ հուշումների և ինչ է պատահել արդյունքում: (Համոզվեք, որ նրանք հասկանում են, որ կարիք չկա, որ իրենք պարտավորված զգան կիսվելու փորձառություններով, որոնք չափից ավելի անձնական են կամ գաղտնի:) Երբ ուսանողները կիսվեն իրենց փորձառություններով, դուք կարող եք տալ հետևյալ հարցերից մի քանիսը.

- Դուք գիտեի՞ք, թե ինչպես ամեն բան կդասավորվեր, եթե դուք հետևեիք այս հուշմանը:
- Ի՞նչը ձեզ վճռականություն և հավատք տվեց, որ գործեիք հուշմանը համաձայն:

Բարձրացրեք մեծ թիթեղների Մորմոնի կրճատումը ներկայացնող գիրքը, որի վերևում դրված է Նեփիի փոքր թիթեղները ներկայացնող գիրքը: Ապա բարձրացրեք թղթի թերթիկը, որը ներկայացնում է Մորմոնի Խոսքերը:

- Որտե՞ղ պետք է լինեն Մորմոնի Խոսքերը այս մյուս հիշատակարանների կողքին:

Երբ ուսանողները պատասխանեն, Մորմոնի Խոսքերը ներկայացնող թերթիկը դրեք երկու գրքերի արանքում: Բացատրեք, որ Մորմոնի Խոսքերը ծառայում են որպես կամուրջ, որը միացնում է Նեփիի փոքր թիթեղների պատմության գիծը Նեփիի մեծ թիթեղների Մորմոնի կրճատման հետ:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մորմոնի Խոսքերը 1.8: Խնդրեք դասարանին փնտրել, թե Մորմոնի կարծիքով ինչ արդյունք կունենար ոգեշնչմանը լսելը, որ ներառեր Նեփիի փոքր թիթեղները հիշատակարանի իր կազմի մեջ:

Նշեք, որ այս տարի մինչ այժմ ուսանողների ուսումնասիրած Մորմոնի Գրքի բոլոր գրվածքները (1 Նեփի-Օմնի) հասանելի են իրենց, քանի որ Մորմոնը հետևեց փոքր թիթեղներն ընդգրկելու հոգևոր ոգեշնչմանը:

- Ինչպե՞ս է Սուրբ Հոգու հուշումներին լսելու Մորմոնի հնազանդությունն օրհնել ձեր կյանքը:
- Ի՞նչ որոշակի ուսմունքներ կան 1 Նեփիից մինչև Օմնիի գրքերը, որոնք ունենալու համար դուք երախտապարտ եք: Ինչո՞ւ եք դուք երախտապարտ այդ ուսմունքների համար:
- Մտածեք հոգևոր ոգեշնչումներին հետևելու Մորմոնի ցանկության մասին: Ինչպե՞ս կարող է հոգևոր հուշումներին հետևելու մեր ցանկությունը ներգործել մեր կյանքի վրա: Ինչպե՞ս կարող է այս ցանկությունը ներգործել ուրիշների կյանքի վրա: (Բացատրեք, որ Տերը կարող է օրհնել ուրիշներին մեր միջոցով, երբ մենք հետևենք Սուրբ Հոգու հուշումներին:)

Վկայեք, որ երբ մենք հավատարիմ ենք Սուրբ Հոգու հուշումներին, Տերը ներգործում է «[մեր] մեջ անել ըստ իր կամքի» (Մորմոնի Խոսքերը 1.7):

## Մորմոնի Խոսքերը 1.12–18

### *Բենիամին թագավորը խաղաղություն է հաստատում երկրում*

Գրատախտակին գրեք *հակառակությունից խաղաղություն*: Բացատրեք, որ Մորմոնի Խոսքերը 1.12–18-ը ներկայացնում է Բենիամին թագավորի կառավարումը: Այս արդար մարդը հանդիպեց շատ խոչընդոտների որպես մարգարե և ժողովրդի թագավոր իր ծառայության ընթացքում: Ուսանողները թող զույգերի բաժանվեն և իրենց զուգընկերոջ հետ կարդան Մորմոնի Խոսքերը 1.12–18: Խնդրեք նրանց ներկայացնել, թե ինչ արեցին Բենիամին թագավորը և այլ մարգարեները, որպեսզի խաղաղություն հաստատեն երկրի վրա:

Կարդալու համար ուսանողներին ժամանակ տրամադրելուց հետո խնդրեք յուրաքանչյուր ուսանողի իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրել մի նախադասություն, որն ամփոփում է, թե ինչ արեցին Բենիամին թագավորը և նրա ժողովուրդը, որ հակառակություններից դառնային խաղաղության: Հրավիրեք մի քանի ուսանողների գրել իրենց նախադասությունները գրատախտակին: Ուսանողների ամփոփումները կարող են լինել նմանատիպ նախադասություններ.

**Երբ մենք հետևում ենք մարգարեների ոգեշնչված ղեկավարությանը, մենք կարող ենք խաղաղություն հաստատել:**

**Տիրոջ ուժով մենք կարող ենք հաղթահարել դժվարությունները:**

**Խաղաղություն հաստատելու համար մենք կանչված ենք աշխատելու մեր ողջ զորությամբ:**

Ուսանողների ուշադրությունը հրավիրեք Մորմոնի Խոսքերը 1.17-ի վրա, որտեղ Մորմոնն ասում է, որ Բենիամին թագավորը և «շատ սուրբ մարդիկ . . . խոսում էին Աստծո խոսքը զորությամբ և իշխանությամբ»: Բացատրեք, որ հաջորդ մի քանի դասերի ընթացքում ուսանողները կուսումնասիրեն Բենիամին թագավորի քարոզը, որը նրա ուսուցանման զորության և իշխանության օրինակ է հանդիսանում:

***Ուսանողներին թույլ տվեք օգտագործել իրենց սեփական բառերը***

Երբ ուսանողներն արտահայտեն սուրբ գրություններում իրենց գտած վարդապետությունները և սկզբունքները, մի ենթադրեք, որ նրանց պատասխանները սխալ են պարզապես այն պատճառով, որ դրանք տարբերվում են այս ձեռնարկում օգտագործված բառերից: Այնուամենայնիվ, եթե ուսանողի միտքը վարդապետորեն սխալ է, ձեր պարտականությունն է զգուշորեն օգնել նրան ուղղել միտքը: Դա անելը կարող է տալ սովորելու կարևոր փորձառություն՝ պահպանելով սիրո և վստահության մթնոլորտ:

## Մոսիա 1.1–18

*Բենիամին թագավորն ուսուցանում է իր որդիներին սուրբ գրությունների կարևորության մասին*

Խնդրեք ուսանողներին պատկերացնել, որ նրանք երբեք որևէ բան չեն իմացել սուրբ գրությունների մասին

- Ինչպիսի՞ն կլիներ ձեր կյանքը, եթե դուք երբեք չունենայիք սուրբ գրությունները:
- Ձեզ համար ամենադժվարը առանց ո՞ր ճշմարտությունների ապրելը կլիներ:

Հակիրճ ձևով ներկայացրեք Մոսիայի գիրքը: Բացատրեք, որ այս գրքի սկիզբը ցույց է տալիս Բենիամին թագավորի ցանկությունը, որ իր որդիները շարունակեն սովորել սուրբ գրություններից (տես Մոսիա 1.2): Երբ Բենիամին թագավորն ուսուցանում էր իր որդիներին, նա բացատրեց, թե ինչպես իրենց կյանքը տարբեր կլիներ, եթե նրանք երբեք ստացած չլինեին սուրբ գրությունները:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մոսիա 1.3–8: Խնդրեք դասարանին ուշադրություն դարձնել, թե ինչ եղանակներով էին նեփիացիներն օրհնվել սուրբ գրություններն ունենալու շնորհիվ: Խնդրեք ուսանողներին զեկուցել, թե ինչ են իրենք սովորել:

- Բենիամին թագավորի կարծիքով, սուրբ գրություններն ինչպե՞ս կարող էին օգնել իր որդիներին:
- Ըստ Բենիամին թագավորի, ի՞նչ կապ կար սուրբ գրություններն ուսումնասիրելու և Աստծո պատվիրանները պահելու միջև: (Չնայած, որ ուսանողները պատասխանելիս կարող են օգտագործել տարբեր բառեր, նրանք պետք է ներկայացնեն հետևյալ ճշմարտությունը. **Սուրբ գրություններն ուսումնասիրելն օգնում է մեզ իմանալ և պահել պատվիրանները:** Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները գրեն այս ճշմարտությունն իրենց սուրբ գրություններում Մոսիա 1.3–8 հատվածների կողքին:)
- Ե՞րբ է սուրբ գրություններն ուսումնասիրելն օգնել ձեզ պահել պատվիրանները:

Կիսվեք ձեր վկայությամբ, որ սուրբ գրությունները ճշմարիտ են և որ դրանք օգնում են մեզ պահել պատվիրանները:

Գրատախտակի վրա գրեք հետևյալ նախադասությունները: (Դուք կարող եք դրանք գրել նախքան դասի սկսվելը:)

*Ի՞նչ էր պատրաստվում հայտարարել Բենիամին թագավորն իր որդի Մոսիայի մասին:*

*Ի՞նչ ասաց Բենիամին թագավորը ժողովրդին «մի անուն» տալու մասին, որ կարողանան տարբերվել:*

*Ինչո՞ւ նեփիացիները չէին կործանվել լամանացիների կողմից:*

*Բենիամին թագավորը Մոսիային ի՞նչ հարցեր խնդրեց լուծել:*

Խնդրեք ուսանողներին տեսնել, թե մեկ րոպեում այս հարցերից քանիսի պատասխանները նրանք կարող են գտնել Մոսիա 1.10–18-ում:

Այն բանից հետո, երբ ուսանողները հակիրճորեն կպատասխանեն այս հարցերին, նշեք, որ հաջորդ մի քանի դասերի ընթացքում նրանք կուսումնասիրեն քարոզը, որի ժամանակ Բենիամին թագավորը իր ժողովրդին տվեց «մի անուն, որը երբեք [չէր] ջնջվի, բացի դա լինի օրինազանցության միջոցով» (Մոսիա 1.12):

ԴԱՍ 52

# Մոսիա 2

## Նախաբան

Երբ Բենիամին թագավորը մոտեցավ իր կյանքի մայրամուտին, նա ցանկացավ մի վերջին քարոզ հղել իր ժողովրդին: Նրա քարոզը, որը գրված է Մոսիա 2–5–ում, այս դասի և 53-55 դասերի թեման է: Քարոզի սկզբում նա պատմեց ժողովրդի մեջ իր ծառայության մասին, նշելով, որ երբ մենք ծառայում ենք ուրիշներին, մենք ծառայում ենք Աստծուն: Նա նաև վկայեց նրանց երջանիկ վիճակի մասին, ովքեր պահում են Աստծո պատվիրանները:

## Ուսուցանման առաջարկներ

*Նշում.* Հետևյալ ամփոփումը կարող է օգտակար լինել, եթե դուք ընտրեք տալ Բենիամին թագավորի քարոզի ընդհանուր պատկերացումն այս դասի սկզբում:

Իր կյանքի մայրամուտին Բենիամին թագավորը Զարահեմլայի տաճարի մոտակայքում դիմեց իր թագավորության մարդկանց: Նա ժողովրդին մատուցած ծառայության և Աստծո առաջ իր մաքուր խղճմտանքի հաշվետվությունը տվեց, և նա ներկայացրեց իր որդի Մոսիային որպես մարդկանց նոր թագավոր: Այս վերջին քարոզի ժամանակ, որը գտնվում է Մոսիա 2–5-ում, Բենիամին թագավորը կիսվեց մի շարք թեմաների, այդ թվում ուրիշներին ծառայելու կարևորության, առ մեր Երկնային Հայրը մեր հավերժական պարտականության, Հիսուս Քրիստոսի մահկանացու ծառայության և Քավության, բնական մարդուն հանելու անհրաժեշտության, փրկության համար Աստծուն հավատալու, աղքատներին օգնելու նպատակով ունեցվածքից բաժին հանելու, մեղքերի թողության, հավատքի և շարունակ բարի գործերի շնորհիվ Քրիստոսի որդիներ և դուստրեր դառնալու մասին ուղերձներով: Հատկապես նշենք, որ Մոսիա 3-ը պարունակում է ուղերձ, որը Բենիամին թագավորը ստացել էր հրեշտակից:

### Մոսիա 2.1–9

*Ընտանիքները հավաքվում և պատրաստվում են, որ ստանան Բենիամին թագավորի խոսքերը*

Գրատախտակի վերևում գրեք հետևյալ հարցերը. *Ո՞վ, որտե՞ղ, ի՞նչ, ինչո՞ւ:*

Խնդրեք ուսանողներին լուռ ուսումնասիրել Մոսիա 2.1–6, փնտրելով մանրամասներ, որոնք կպատասխանեն գրատախտակի հարցերին: Նրանց կարդալուց հետո հրավիրեք մի քանի ուսանողների, որ գրատախտակին յուրաքանչյուր հարցի տակ գրեն որքան մանրամասներ, որ կարող են: (Դուք կարող եք բացատրել, որ մարդիկ պատրաստվել էին լսելու Բենիամին թագավորի ուղերձը՝ Մովսեսի օրենքի հետ կապված զոհաբերություններ մատուցելով: Այս զոհաբերություններն անելիս մարդիկ երախտագիտություն էին հայտնել Աստծուն և իրենց նվիրաբերել էին Նրան:)

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 2.9, փնտրելով բառեր և արտահայտություններ, որոնք նշում են, թե ինչ էր Բենիամին թագավորն ուզում, որ մարդիկ անեին, երբ նրանք լսում էին նրա խոսքերը:

- Ըստ ձեր գտած բառերի և արտահայտությունների, ձեր կարծիքով, Բենիամին թագավորն ի՞նչ զգացողություններ ուներ իր ուղերձի հետ կապված:
- Համաձայն Մոսիա 2.9–ի վերջին մասի, Բենիամին թագավորի կարծիքով ի՞նչ կպատահեր, եթե մարդիկ բացեին իրենց ականջները և իրենց սրտերը իր ուղերձի համար:
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում բացել մեր ականջները և սրտերը նրանց համար, ովքեր կանչված են սովորեցնելու:

Խրախուսեք ուսանողներին մտքում պահել Բենիամին թագավորի հրավերը, երբ նրանք ուսումնասիրեն նրա ուղերձը և երբ նրանք լսեն վերջին օրերի մարգարեների խոսքերը:

***Ընդհանուր պատկերացում տալ երկար քարոզների մասին***

Դասերի այս ձեռնարկում հատուկ ուշադրություն է դարձվում մարգարեական երկար քարոզների վրա, ինչպիսին է Մոսիա 2–5: Այս քարոզները սովորաբար ընդգրկվում են ավելի քան մեկ դասի մեջ: Այս քարոզների մասին ընդհանուր պատկերացում տալը կարող է օգտակար լինել: Այսօրվա դասի համար ընդհանուր պատկերացում տալը կարող է օգնել ուսանողներին ավելի խորությամբ հասկանալ Բենիամին թագավորի քարոզի նպատակը և «զորեղ փոփոխությունը», որ մարդիկ զգացին իրենց սրտերում, երբ լսեցին այն (տես Մոսիա 5.2):

## Մոսիա 2.10–28

*Բենիամին թագավորն ուսուցանում է Աստծուն և միմյանց ծառայելու կարևորության մասին և Աստծուն հավերժորեն պարտական լինելու մասին*

Ուսանողներին ցույց տվեք Բենիամին թագավորը դիմում է իր ժողովրդին նկարը (62298; *Gospel Art Book* [2009], no. 74)։ Հիշեցրեք ուսանողներին, որ Բենիամին թագավորը կանչել էր իր ժողովրդին, որ հայտարարեր, որ իր որդի Մոսիան կգրավեր իր տեղը որպես թագավոր և որ նրանց տար «մի անուն, որ դրանով նրանք կարողանան տարբերվել բոլոր այն ժողովուրդներից, որոնց Տեր Աստված դուրս է բերել Երուսաղեմի հողից» (see Մոսիա 1.9–12)։

Դասարանի համար բարձրաձայն կարդացեք Մոսիա 2.10–15։ Ուսանողներին խնդրեք ներկայացնել այն արտահայտությունները, որոնք ցույց են տալիս Բենիամին թագավորի անհանգստությունը ոչ թե իր սեփական դիրքի կամ ճանաչման, այլ մարդկանց ծառայելու համար։ Հրավիրեք նրանց բարձրացնել իրենց ձեռքերը, երբ նրանք լսեն այս արտահայտություններից մեկը։ Երբ նրանք բարձրացնեն իրենց ձեռքերը, դադարեցրեք կարդալը և խնդրեք նրանց բացատրել, թե ինչ են իրենք գտել և ինչ է դա հայտնում Բենիամին թագավորի մասին։

Որպես այս քննարկման մի մաս, կիսվեք Նախագահ Հովարդ Վ. Հանթերի հետևյալ խոսքերով.

«Չափից շատ մի անհանգստացեք հասարակական դիրքի համար։ . . . Կարևոր է գնահատվելը։ Մակայն մեր ուշադրությունը պետք է լինի ոչ թե ճանաչվելու, այլ արդարության վրա, ոչ թե դիրքի, այլ ծառայության վրա,» (“To the Women of the Church,” *Ensign*, Nov. 1992, 96)։

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 2.16–17–ը և ներկայացնել, թե ինչ էր ուզում Բենիամին թագավորը, որ իր ժողովուրդը սովորեր։ Օգնեք նրանց տեսնել, որ **երբ մենք ծառայում ենք ուրիշներին, մենք ծառայում ենք Աստծուն:** Այս նախադասությունը գրեք գրատախտակին։ Նշեք, որ Մոսիա 2.17-ը սերտման սուրբ գրության հատված է։ Դուք կարող եք խրախուսել ուսանողներին առանձնակի ձևով նշել այս հատվածը, որպեսզի նրանք կարողանան հեշտությամբ գտնել այն։

**Մոսիա 2.17**-ը սերտման սուրբ գրության հատված է։ Անդրադարձեք դասի վերջում գտնվող ուսուցանման գաղափարին, որ օգնեք ուսանողներին սերտել այս հատվածը։

Հրավիրեք ուսանողներին մտածել այնպիսի ժամանակների մասին, երբ նրանք ծառայել են այլ մարդկանց։

- Երբ դուք այս ծառայությունը մատուցում էիք ուրիշներին, ինչպե՞ս էիք դուք նաև ծառայում Աստծուն։
- Ե՞րբ են ուրիշներն օրհնել ձեր կյանքը ծառայության միջոցով։ Երբ նրանք ծառայել են ձեզ, ինչպե՞ս են նրանք նաև ծառայել Աստծուն։

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մոսիա 2.18–24, 34-ը։

- Ինչո՞ւ էր Բենիամին թագավորը իրեն և իր ժողովրդին կոչում «անպիտան ծառաներ»։ (Դուք կարող եք բացատրել, որ մարդիկ օգուտ են քաղում, երբ նրանք ստանում են ավելին, քան տալիս են։ Մենք անպիտան ծառաներ ենք մեր Երկնային Հոր համար, քանի որ Նրա կողմից մեզ տրված օրհնությունների արժեքը միշտ էլ մեծապես կգերազանցի մեր կողմից Նրան տրված ծառայության արժեքին։)
- Ի՞նչ օրհնություններ եք դուք ստացել, որոնց համար դուք Աստծուն պարտական եք զգում։
- Ինչո՞ւ է կարևոր գիտակցելը, որ մենք «հավերժ պարտական» ենք Աստծուն։ (Պատասխանները կարող են ներառել, որ երբ մենք գիտակցում ենք, որ մենք պարտական ենք Աստծուն, մեր երախտագիտությունը մեծանում է, մենք ցանկանում ենք պահել պատվիրանները, և մենք ավելի շատ ենք ուզում ծառայել ուրիշներին։)

Բացատրեք, որ Մոսիա 2.34-ում *մատուցել* բառը նշանակում է տալ կամ ներկայացնել։ Հրավիրեք ուսանողներին անդրադառնալ այն բանին, թե ինչպես նրանք կարող են «մատուցել [Երկնային Հորը] բոլորը, ինչ [նրանք ունեն և են]»։ Վկայեք, որ երբ մենք պահում ենք Աստծո պատվիրանները և ձգտում ենք անկեղծորեն ծառայել, Նա օրհնում է մեզ։

## Մոսիա 2.29–41

*Բենիամին թագավորը հորդորում է իր ժողովրդին հնազանդվել Աստծուն*

Գրատախտակին գրեք *ԶԳՈՒՇԱՑԵՔ*: Խնդրեք ուսանողներին պատմել ժամանակների մասին, երբ նրանք տեսել են մի նշան, որտեղ օգտագործվել է այս բառը կամ հաղորդվել է այս իմաստը: Նշեք, որ այսպիսի նախազգուշացումները կարող են պաշտպանել մեզ կամ փրկել մեր կյանքը:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 2.32–33, 36–38, փնտրելով, թե Բենիամին թագավորն ինչ էր նախազգուշացնում իր ժողովրդին: Դուք կարող եք բացատրել, որ Մոսիա 2.33-ում *վայ* բառը վերաբերվում է վշտին և թշվառությանը:

- Ի՞նչ նախազգուշացումներ տվեց Բենիամին թագավորն իր ժողովրդին:
- Ինչպե՞ս մենք կարող ենք իմանալ, երբ սկսում ենք հետևել սխալ հոգուն: Ինչո՞ւ է կարևոր սա վաղ հասկանալը:
- Համաձայն Մոսիա 2.38-ի, ի՞նչ հետևանքների են հանդիպում նրանք, ովքեր մահանում են իրենց մեղքերի մեջ:

Դուք կարող եք նշել Մոսիա 2.36-ի ուսմունքը, որ անհատն իր սեփական վարքով կարող է հեռանալ Տիրոջ Հոգուց: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը կարևորել է Հոգուց մեր հեռանալը նկատելը.

«Մենք պետք է . . . ջանք գործադրենք, որ նկատենք, երբ մենք «[ինքներս մեզ] ետ կքաշենք Տիրոջ Հոգուց, այնպես որ այն չի կարող տեղ ունենալ [մեզանում]՝ առաջնորդելու [մեզ] իմաստության ուղիներով, որ [մենք] կարողանանք լինել օրհնված, բարգավաճ և պահպանված» (Մոսիա 2.36):. . .

. . . Եթե մի բան, որը մենք մտածում, նայում, լսում կամ անում ենք, հեռացնում է մեզ Սուրբ Հոգուց, ապա մենք պետք է դադարենք մտածել, նայել, լսել կամ այդ բանն անել: Եթե այն, ինչը նախատեսված է, օրինակ, զվարճացնելու համար, հեռացնում է մեզ Սուրբ Հոգուց, ապա հաստատ այդ տեսակ զվարճանքը մեզ համար չէ: Քանի որ Հոգին չի կարող տանել այն, ինչը գռեհիկ է, կոպիտ կամ անպարկեշտ, ապա նման բաները հաստատ մեզ համար չեն: Քանի որ մենք հեռացնում ենք Տիրոջ Հոգին, երբ մենք մասնակցում ենք միջոցառումների, որոնցից գիտենք, որ պետք է խուսափենք, ապա նման բաները հաստատ մեզ համար չեն» (“That We May Always Have His Spirit to Be with Us,” *Ensign* or *Liahona*, May 2006, 30):

- Ըստ Երեց Բեդնարի, ի՞նչը մեզ կհեռացնի Սուրբ Հոգուց:
- Ինչպե՞ս մենք կարող ենք իմանալ, թե երբ ենք մենք հեռացրել մեզ Սուրբ Հոգուց:

Գրեք *ՀԻՇԵՔ* և *ԽՈՐՀԵՔ* գրատախտակին *ԶԳՈՒՇԱՑԵՔ* բառի կողքին:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 2.40–41: Խնդրեք դասարանին ներկայացնել, թե ինչ էր Բենիամին թագավորը ցանկանում, որ իր ժողովուրդը խորհեր և ինչ էր նա ցանկանում, որ նրանք հիշեին: Երբ ուսանողները պատասխանեն, դուք կարող եք ընդգծել Բենիամին թագավորի ուսմունքը՝ գրատախտակին գրելով հետևյալ ճշմարտությունը. ***Եթե մենք պահենք պատվիրանները, մենք կօրհնվենք ֆիզիկապես և հոգեպես:***

- Ե՞րբ եք դուք ականատես եղել կամ ունեցել երջանկություն, որը գալիս է Տիրոջ պատվիրաններին հնազանդ լինելուց:

Վկայեք այն բաների ճշմարտացիության մասին, որոնք ուսանողներն այսօր քննարկել են: Վերջում խրախուսեք ուսանողներին հատուկ նպատակներ դնել, որ լինեն ավելի հնազանդ այն հարցերում, որոնք դժվար են նրանց համար կամ ձգտեն կատարելագործվել մի ոլորտում, որը նշված է Անձնական Զարգացում (երիտասարդ կանանց համար) կամ Պարտականություն Աստծո առաջ (երիտասարդ տղամարդկանց համար) գրքույկներում:

## Սերտման սուրբ գրություն Մոսիա 2.17

Հրավիրեք ուսանողներին կարդալ Մոսիա 2.17, Մատթեոս ԻԲ.36–40 և Մատթեոս ԻԵ.40: Մատթեոսի հատվածները օգնում են բացատրել վարդապետությունը, բացել հասկացողությունը և պարզաբանել Մոսիա 2.17–ի իմաստը: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին կազմել սուրբ գրությունների շղթա՝ գրելով *Մատթեոս ԻԲ.36–40* Մոսիա 2.17-ի կողքին, *Մատթեոս ԻԵ.40* Մատթեոս ԻԲ.36–40-ի կողքին և *Մոսիա 2.17* Մատթեոս ԻԵ.40-ի կողքին:

Խնդրեք մի քանի ուսանողների պատմել այնպիսի ժամանակների մասին, երբ նրանք զգացել են, որ իրենք ծառայում են Աստծուն՝ ծառայելով ուրիշներին:

Հրավիրեք ուսանողներին նախքան սեմինարիայի հաջորդ դասը ծառայել որևէ մեկին: Խորհուրդ տվեք, որ նրանք պատրաստվեն կիսվել այս հանձնարարության հետ կապված իրենց փորձառություններով (սակայն համոզվեք, որ նրանք հասկանում են, որ իրենք չպետք է պարտավորված զգան կիսվել փորձառություններով, որոնք խիստ անձնական են կամ գաղտնի):

Դուք կարող եք նաև հանձնարարել ուսանողներին անգիր սովորել Մոսիա 2.17-ը նախքան որպես դասարան կրկին հանդիպելը:

Վկայեք, որ երբ մենք անկեղծորեն ծառայում ենք ուրիշներին, մենք ծառայում ենք Տիրոջը:

*Նշում.* Ելնելով այս դասի բնույթից և երկարությունից՝ դուք կարող եք այս վարժությունն օգտագործել մեկ այլ օր, երբ դուք կունենաք լրացուցիչ ժամանակ:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Մոսիա 2.33, 38–39: «Հավիտենական պատիժ», «անմար կրակ» և «երբեք չվերջացող տանջանք»

Աստծո դեմ պատերազմելու հետևանքների մասին նախազգուշացնելիս Բենիամին թագավորն օգտագործել է «հավիտենական պատիժ» (Մոսիա 2.33), «անմար կրակ» (Մոսիա 2.38) և «երբեք չվերջացող տանջանք» (Մոսիա 2.39) արտահայտությունները: Այս տերմիններն ավելի լավ հասկանալու համար տես Վարդապետություն և Ուխտեր 19.6–12-ի Տիրոջ խոսքերը:

ԴԱՍ 53

# Մոսիա 3

## Նախաբան

Շարունակելով իր ժողովրդին ուղղված ելույթը՝ Բենիամին թագավորը հաղորդեց հրեշտակի խոսքերը, որոնք ասվել էին իրեն Հիսուս Քրիստոսի ծառայության մասին: Բենիամին թագավորը վկայեց, որ առ Հիսուս Քրիստոսը հավատքի և ապաշխարության միջոցով, նրանք, ովքեր մեղք են գործել, կարող են փրկություն ստանալ: Նա նաև ուսուցանեց, որ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով, անհատը, ով ենթարկվում է Սուրբ Հոգու հորդորներին, «հանում է բնական մարդուն և դառնում սուրբ» (Մոսիա 3.19):

## Ուսուցանման առաջարկներ

*Նշում.* Եթե նախորդ դասին դուք խրախուսել էիք ուսանողներին անգիր սովորել և կիրառել Մոսիա 2.17-ը, խորհեք նրանց հնարավորություն տալու մասին, որ նրանք այսօր ինչ-որ պահի կիսվեն իրենց փորձառություններով: Զգուշացեք, որ շատ ժամանակ չծախսեք այս վերստուգման վրա: Բավականաչափ ժամանակ թողեք, որ քննարկեք Մոսիա 3–ի վարդապետությունները և սկզբունքները:

### Մոսիա 3.1–10

*Բենիամին թագավորը փոխանցում է Հիսուս Քրիստոսի Քավության մասին հրեշտակի խոսքերը*

Ցուցադրեք դատարկ բաժակ և ջրով լի տարա: Հրավիրեք ուսանողներից մեկին ցուցադրել, թե որքան ջուր նա կլցնի բաժակի մեջ մեկի համար, ով ուզում է միայն փորձել ջրի համը: Ապա թող ուսանողը ցուցադրի, թե որքան նա կլցնի մեկի համար, ով ուզում է հագենալ: Խնդրեք ուսանողներին խորհել հետևյալ հարցի շուրջ.

- Եթե ջուրը ներկայացնում է ուրախությունը, որքա՞ն ջուր կցանկանաք ունենալ ձեր բաժակում:

Բացատրեք ուսանողներին, որ Մոսիա 3–ի ուսմունքները կօգնեն իրենց տեսնել, թե ինչպես նրանք կարող են լցվել ուրախությամբ:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 3.2–5: Խնդրեք դասարանին ներկայացնել Բենիամին թագավորի ուղերձի աղբյուրը Մոսիա 3–ում:

Նշեք, որ Մոսիա 3-ը պարունակում է «մեծ ուրախության ավետիք»-ի հրեշտակի հայտարարությունը (Մոսիա 3.3): Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մոսիա 3.5–10: Խնդրեք դասարանին փնտրել բառեր կամ արտահայտություններ, որոնք օգնում են նրանց ավելի շատ գնահատել Հիսուս Քրիստոսի առաքելությունը: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք նշեն այս խոսքերը և արտահայտությունները: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց գտած բառերով և արտահայտություններով:

- Ինչպե՞ս է Մոսիա 3.7 օգնում ձեզ հասկանալ Փրկչի առաքելությունը:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ հրեշտակն ասաց, որ այս ուղերձը կբերի մեծ ուրախություն:

Հրավիրեք ուսանողներին մեկ նախադասությամբ ամփոփել Մոսիա 3.5–10-ը և այն գրի առնել իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային նոթատետրերում: Գրելու համար նրանց բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք նրանցից մի քանիսին կիսվել, թե ինչ են իրենք գրել: Ուսանողների ամփոփումները պետք է ցույց տան, որ նրանք հասկանում են հրեշտակի ուսուցանածը, որ **Հիսուս Քրիստոսը տառապեց, որպեսզի մենք կարողանանք փրկվել մեր մեղքերից:**

Դուք կարող եք ստուգել ուսանողների պատասխանները հետևյալ հարցերով.

- Ի՞նչ եք զգում, երբ մտածում եք այն մասին, թե ինչ է Փրկիչն արել ձեզ համար:

***Տվեք հարցեր, որոնք հրավիրում են ուսանողներին կիսվել զգացմունքներով և վկայությամբ***

Որպեսզի օգնեք ուսանողներին նախապատրաստվել իրենց զգացմունքներով և վկայություններով կիսվելուն, խորհեք այնպիսի հարցեր տալու մասին, որոնք կօգնեն նրանց անդրադառնալ քննարկվող սկզբունքին կամ վարդապետության իրենց ունեցած փորձառություններին: Դուք կարող եք ասել. «Ինչպե՞ս եք դուք իմացել, որ . . .» կամ «Ե՞րբ եք դուք զգացել . . .»: Այնուհետև հրավիրեք նրանց կիսվել իրենց փորձառություններով և զգացմունքներով: Նրանց կողմից այս հրավերն ընդունելը թույլ կտա Սուրբ Հոգուն վկայել ճշմարտության մասին նրանց և նրանց դասարանցիների համար:

Որպեսզի օգնեք ուսանողներին խորացնել իրենց հասկացողությունը Փրկչի տառապանքների մասին, կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեյմս Ի. Թալմեյջի հետևյալ մտքերով.

«Քրիստոսի չարչարանքը պարտեզում անիմանալի է սահմանափակ մտքի համար՝ դրա թե ուժգնությունը և թե նպատակը: . . . Նա տառապեց և հառաչեց այնպիսի մի բեռի տակ, որը ոչ մի այլ արարած, ով ապրել է երկրի վրա, չէր կարող երբևէ հնարավոր համարել: Դա զուտ ֆիզիկական ցավ կամ մտավոր տառապանք չէր, որը ստիպեց Նրան տանել նման տանջանք, որի հետևանքով արյուն հոսեց յուրաքանչյուր ծակոտիից, այլ հոգու այնպիսի հոգևոր տառապանք, որը միայն Աստված կարող էր տանել: . . . Տառապանքի այդ ժամին Քրիստոսը հանդիպեց և հաղթահարեց բոլոր սարսափները, որոնք Սատանան՝ «այս աշխարհի իշխանը», կարող էր պատճառել: . . . Ինչ որ ձևով՝ իսկական և ահավոր կերպով իրական՝ չնայած մարդու համար անհասկանալի, Փրկիչն Իր վրա վերցրեց մարդկության մեղքերի բեռը՝ սկսած Ադամից մինչև աշխարհի վերջը» (*Jesus the Christ,* 3rd ed. [1916], 613):

## Մոսիա 3.11–27

### *Բենիամին թագավորը վկայում է, որ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք կարող ենք հանել բնական մարդուն և դառնալ սրբեր*

Ասեք ուսանողներին, որ Բենիամին թագավորը կիսվեց հրեշտակի տարբեր խմբերի մարդկանց նկարագրությամբ և թե ինչպես է Հիսուս Քրիստոսի Քավությունը վերաբերվում յուրաքանչյուր խմբին: Գրատախտակին գրեք հետևյալ հարցերը: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 3.11–13, 16՝ փնտրելով հետևյալ հարցերի պատասխանները.

*Ինչպե՞ս է Քավությունն ազդում.*

*նրանց վրա, ովքեր մահանում են առանց ավետարանի իմացության:*

*նրանց վրա, ովքեր ապաստամբում են Աստծո դեմ և դիտավորյալ մեղք են գործում:*

*երեխաների վրա, ովքեր մահանում են նախքան պատասխանատվության տարիքին հասնելը:*

Բավականաչափ ժամանակ անց խնդրեք ուսանողներին կիսվել այս հարցերի իրենց պատասխաններով: (Որպեսզի օգնեք նրանց պատասխանել առաջին հարցին, դուք կարող եք հրավիրել նրանց կարդալ Վարդապետություն և Ուխտեր 137.7–10: Որպեսզի օգնեք պատասխանել երրորդ հարցին, դուք կարող եք հրավիրել նրանց կարդալ Մորոնի 8.8, 17 և Վարդապետություն և Ուխտեր 29.46–47:)

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսի հետևյալ ելույթը՝ Երկնային Հոր բոլոր զավակների վրա Քավության ազդեցության մասին.

«Մենք . . . կարդում ենք, որ «նրա արյունը քավում է նրանց մեղքերը, ովքեր մահացել են՝ չիմանալով Աստծո կամքն իրենց վերաբերյալ, կամ ովքեր անգիտակցորեն են մեղք գործել» (Մոսիա 3.11): Նմանապես, «Քրիստոսի արյունը քավում է [փոքր երեխաների] մեղքերը» (Մոսիա 3.16): Այս ուսմունքները, որ Քավության հարություն տվող և մաքրող զորությունը բոլորի համար է, հերքում են այն հիմնավորումը, որ Աստծո ողորմությունը փրկում է միայն մի քանի ընտրյալների: Նրա ողորմությունը բոլորի համար է: Մորմոնի Գրքի այս ուսմունքները մեծացնում են մեր խորաթափանցությունը և հասկացողությունը բոլորին ընդգրկող Աստծո սիրո և ամենուր գտնվող բոլոր մարդկանց վրա Նրա Քավության համընդհանուր ազդեցության մասին» (“All Men Everywhere,” *Ensign* or *Liahona*, May 2006, 77):

- Ի՞նչ սկզբունք ենք մենք սովորում Մոսիա 3.12-ից այն մասին, թե ինչ ազդեցություն ունի մեզ վրա Քավությունը: (**Մենք կփրկվենք մեր մեղքերից, երբ մենք հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը և ապաշխարենք:**)
- Համաձայն այս հատվածի, ի՞նչ կպատահի նրանց հետ, ովքեր չեն ընտրում հավատք գործադրել առ Հիսուս Քրիստոսը և չեն ապաշխարում:

Նշեք, որ Մոսիա 3.19-ը սերտման սուրբ գրություն է: Դուք կարող եք քաջալերել ուսանողներին նշել այս հատվածը առանձնահատուկ ձևով, որպեսզի նրանք կարողանան հեշտությամբ գտնել այն: Նաև ուշադրություն հրավիրեք Մոսիա 3.19-ում հրեշտակի օգտագործած «բնական մարդ» տերմինի վրա: Որպեսզի օգնեք

**Մոսիա 3.19**-ը սերտման սուրբ գրության հատված է: Այս հատվածը սերտելիս ուսանողներին օգնելու համար անդրադարձեք դասի վերջում գտնվող ուսուցանման գաղափարին:

ուսանողներին հասկանալ այս արտահայտությունը, Սուրբ Գրքերի Ուղեցույցում կարդացեք հետևյալ բացատրությունը.

Բնական մարդը «անձնավորություն է, որը նախընտրում է ղեկավարվել զգացումներով, ցանկություններով, հակումներով և մարմնական կրքերով, քան Սուրբ Հոգու հուշումներով: Այդպիսի անձնավորությունը կարող է ըմբռնել ֆիզիկական բաները, բայց ոչ հոգևոր բաները: Ադամի և Եվայի անկման հետևանքով բոլոր մարդիկ մարմնական կամ մահկանացու են: Յուրաքանչյուր մարդ պետք է վերստին ծնվի, Հիսուս Քրիստոսի քավության միջոցով:» (Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Բնական մարդ», scriptures.lds.org):

Գրատախտակին գրեք հետևյալ հարցերը: Ուսանողները թող փնտրեն հարցերի պատասխանները, մինչ նրանք լուռ կուսումնասիրեն Մոսիա 3.19-ը:

*Ինչպե՞ս էր հրեշտակը նկարագրում բնական մարդու հարաբերությունն Աստծո հետ:*

*Համաձայն այս հատվածի, ինչպե՞ս մենք կարող ենք հանել բնական մարդուն:*

Նշեք, որ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մարդն անում է ավելին, քան լոկ դադարելը «բնական մարդ» լինելը: Նա «դառնում է սուրբ»: Բացի մեր մեղքերից մեզ փրկելը, Փրկիչը փոխում է մեզ և դարձնում ավելի լավ մարդ, քան մենք երբևէ կարող էինք ինքնուրույն դառնալ: Նա օգնում է մեզ ավելի նմանվել Իրեն: Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այս վարդապետությունը, կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ ելույթը.

«Տիրոջ սարը վեր ելնելու և Նրա սրբության տեղում կանգնելու համար պահանջվում են մաքուր ձեռքեր և անարատ սիրտ» [տես Սաղմոս ԻԴ.3–4]:

«Թույլ տվեք առաջարկել ձեռքերը մաքրել, հանելով բնական մարդուն և հաղթահարելով մեղքը և մեր կյանքի չար ազդեցությունները Փրկչի Քավության միջոցով: Սրտերը մաքրվում են, երբ մենք ստանում ենք Նրա ամրացնող զորությունը բարին անելու և ավելի լավը դառնալու համար: Մեր բոլոր արժանի ցանկությունները և բարի գործերը, որքան էլ անհրաժեշտ լինեն, երբեք մեզ չեն ապահովի մաքուր ձեռքերով և սրտով: Հիսուս Քրիստոսի Քավությունն է, որ ապահովում է և *մաքրող ու քավող զորությունը* մեղքը հաղթահարելու համար, և *սրբազործող ու ամրացնող զորությունը* ավելի լավը դառնալու համար, ինչին չենք կարող հասնել, եթե ապավինենք միայն մեր սեփական ուժին: Մեղանչողի և սրբի համար անսահման Քավությունը մեզանից յուրաքանչյուրի մեջ է» («Սուրբ ձեռքեր և անարատ սիրտ», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2007, 80):

Որպեսզի օգնեք ուսանողներին ամփոփել վարդապետությունները, որոնք նրանք սովորել են Մոսիա 3.19-ից, հարցրեք.

- Ավետարանի ի՞նչ ճշմարտություններ եք դուք գտել Մոսիա 3.19–ում:

Ուսանողները կարող են թվարկել մի քանի վարդապետություններ այս հատվածից, ներառյալ հետևյալը.

**Բնական մարդն Աստծո մի թշնամի է:**

**Երբ մենք ենթարկվում ենք Սուրբ Հոգու հորդորներին, մենք հանում ենք բնական մարդուն:**

**Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մենք կարող ենք հանել բնական մարդուն և սուրբ դառնալ:**

Հրավիրեք ուսանողներին պատասխանել հետևյալ հարցերից մեկին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: (Դուք կարող եք այս հարցերը գրել գրատախտակին նախքան դասը, պատրաստել հարցաթերթիկներ, կամ դանդաղ կարդալ հարցերը, որպեսզի ուսանողները կարողանան գրել դրանք իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:)

- Ի՞նչ կարող եք դուք անել, որ ավելի լիարժեք ձևով ենթարկվեք «Սուրբ Հոգու հորդորներին»: Հաջորդ շաբաթվա ընթացքում ի՞նչ կանեք դուք, որ կատարելագործեք ձեր կյանքի այս ոլորտը:
- Մոսիա 3.19-ում թվարկված երեխայի ո՞ր հատկանիշը դուք պետք է զարգացնեք: Հաջորդ շաբաթվա ընթացքում ի՞նչ կանեք դուք, որը կօգնի ձեզ զարգացնել այդ հատկանիշը:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի մեծ երախտագիտություն զգալ Փրկչի Քավության համար, նրանց համար կարդացեք Մոսիա 3.23–26: Բացատրեք, որ հատված 26-ում «Աստծո ցասման գավաթ» արտահայտությունը վերաբերվում է նրանց վերջնական տառապանքին, ովքեր կամավոր կերպով մեղանչում են և չեն ապաշխարում: Ապա խնդրեք ուսանողներից մեկին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 19.16–19: Խնդրեք ուսանողներին լսել *բաժակ* բառը հատված 18–ում:

- Ի՞նչ է արել Հիսուս Քրիստոսը, որպեսզի մենք ստիպված չլինենք խմել «Աստծո ցասման գավաթից»: (Նա Ինքն է խմել այդ գավաթը, Իր վրա վերցնելով մեր մեղքերի պատիժը: Եթե մենք իսկապես ապաշխարենք, մենք կարիք չենք ունենա կրել այդ պատիժը:)

Վերջում կիսվեք այս դասին քննարկված ճշմարտությունների վերաբերյալ ձեր վկայությամբ:

## Սերտման սուրբ գրություն Մոսիա 3.19

Որպեսզի օգնեք ուսանողներին անգիր սովորել Մոսիա 3.19–ը, նրանց զույգերի բաժանեք: Խնդրեք նրանց բարձրաձայն կարդալ Մոսիա 3.19, բառ առ բառ, իրար փոխարինելով մեկական բառ կարդալով: Խնդրեք նրանց մի քանի անգամ կրկնել այս վարժությունը: Դուք կարող եք զանազանություն մտցնել այս վարժության մեջ՝առաջարկելով, որ յուաքանչյուր զուգընկերն ամեն անգամ կարդա երկու կամ երեք բառ:

Այս վարժության կրկնությունը կօգնի ուսանողներին ծանոթանալ հատվածի բովանդակությանը և նրանց համար կհեշտացնի ամբողջ հատվածն անգիր սովորելը: Հանձնարարեք նրանց ինքնուրույն ավարտին հասցնել Մոսիա 3.19–ը անգիր սովորելը:

*Նշում.* Ելնելով այս դասի էությունից և երկարությունից, դուք կարող եք օգտագործել սուրբ գրության սերտման այս վարժությունը մեկ այլ օր, երբ դուք լրացուցիչ ժամանակ կունենաք:

ԴԱՍ 54

# Մոսիա 4

## Նախաբան

Տպավորված լինելով Բենիամին թագավորի ուսուցանածից՝ մարդիկ ապաշխարեցին և նեռում ստացան իրենց մեղքերին: Նրանք «լցվեցին ուրախությամբ» և ունեցան «խղճմտանքի խաղաղություն» (Մոսիա 4.3): Բենիամին թագավորը շարունակեց սովորեցնել նրանց, օգնելով նրանց հասկանալ, թե ինչ պետք է անեն, որ «պահպանեն [իրենց] մեղքերին թողություն» (Մոսիա 4.12): Սա անելով նա համեմատեց նրանց մուրացկանների հետ, ովքեր կախման մեջ են գտնվում Աստծուց փրկության համար: Նա նաև նախազգուշացրեց նրանց իրենց մտքերին, խոսքերին և գործերին չհետևելու վտանգի մասին:

## Ուսուցանման առաջարկներ

### Մոսիա 4.1–8

*Բենիամին թագավորի մարդիկ ներում են ստանում իրենց մեղքերին և լցվում են ուրախությամբ և խաղաղությամբ*

Խնդրեք ուսանողներին խորհել հետևյալ հարցի շուրջ.

- Ինչպե՞ս կարող ենք մենք իմանալ, որ մեր մեղքերը ներված են:

Կարդացեք Նախագահ Հարոլդ Բ. Լիի հետևյալ խոսքերը.

«Երբ գալիս է ժամանակը, երբ դուք ձեր մեղքերից ապաշխարելու համար արել եք այն ամենը, որ դուք կարող եք, ով էլ դուք լինեք, որտեղ էլ դուք լինեք, և ձեր հնարավորության սահմաններում փոխհատուցել եք դրանց դիմաց, եթե դա մի այնպիսի բան է, որը կարող է ազդել ձեր Եկեղեցու անդամ մնալու վրա, և դուք գնացել եք համապատասխան իշխանավորների մոտ, ապա դուք կցանկանաք այդ հաստատող պատասխանը, թե արդյոք Տերն ընդունում է ձեզ, թե ոչ: Ձեր հոգու պրպտումներում, եթե դուք փնտրեք և գտնեք այդ խղճմտանքի խաղաղությունը, այդ խորհրդանիշի շնորհիվ դուք կարող եք իմանալ, որ Տերն ընդունել է ձեր ապաշխարությունը» (“Stand Ye in Holy Places,” *Ensign*, July 1973, 122):

Հիշեցրեք ուսանողներին, որ Բենիամին թագավորը կիսվել էր հրեշտակի խոսքերով, այն մասին, թե ինչպես ստանալ մեղքերի թողություն: Դուք կարող եք հիշեցնել նրանց հատկապես հրեշտակի խոսքերն այն մասին, որ բնական մարդը Աստծո մի թշնամի է և հետևանքների մասին, որոնք սպասում են նրանց, ովքեր մահանում են առանց իրենց մեղքերի համար ապաշխարելու (տես Մոսիա 3.19, 23–27):

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 4.1–2, փնտրելով արտահայտություններ, որոնք նշում են, թե ինչպես են Բենիամին թագավորի ժողովուրդը արձագանքում հրեշտակի խոսքերին: Մի քանի ուսանողներ թող կիսվեն իրենց գտած պատասխաններով: Եթե ուսանողները օգնության կարիք ունեն «մարմնական վիճակում» արտահայտությունը հասկանալու համար, բացատրեք, որ *մարմնական* բառը *հոգևորի* հականիշն է: Այն վերաբերվում է մեր ֆիզիկական ցանկություններին, և ոչ թե Տիրոջը մոտենալու համար մեր հոգևոր ցանկություններին: Դուք կարող եք խնդրել ուսանողներին կարդալ Ալմա 41.11 և այնուհետև իրենց սեփական բառերով բացատրել «մարմնական վիճակում» արտահայտությունը: Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ «ավելի չնչին, քան հողի փոշին» արտահայտությունը, հրավիրեք նրանց կարդալ Հելաման 12.4–8: Ապա խնդրեք նրանց իրենց սեփական բառերով բացատրել, թե ինչպես մեկը, ով մերժում է հետևել Տիրոջ խորհրդին, կարող է նկարագրվել որպես ավելի չնչին, քան հողի փոշին: Համոզվեք, որ նրանք հասկանում են, որ Երկնային Հայրը Իր զավակներին չի համարում, որ նրանք ավելի ցածր են, քան հողի փոշին:

Նշեք, որ երբ մարդիկ ընդունում են իրենց մեղավորությունը, նրանք ապաշխարում են՝ արտահայտելով իրենց հավատքն առ Հիսուս Քրիստոսը և Նրա Քավությունը:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 4.3: Դասարանին խնդրեք ուշադրություն դարձնել, թե ինչպես մարդիկ գիտեին, որ իրենց մեղքերը ներվել էին:

- Համաձայն Մոսիա 4.3, ի՞նչ զգացմունքներ են ունենում նրանք, ովքեր ներում են ստանում Տիրոջից:
- Մարդիկ ներում ստացան իրենց մեղքերին «այն արտասովոր հավատքի շնորհիվ, որ նրանք ունեին Հիսուս Քրիստոսում»: Ո՞ր արարքներն էին ներկայացնում նրանց հավատքը: (Տես Մոսիա 4.1–2.)
- Ձեր սեփական բառերով ասած, ի՞նչ կարող ենք մենք սովորել Մոսիա 4.1–3–ից մեր մեղքերին թողություն ստանալու մասին: (Հնարավոր պատասխաններից մեկն այն է, որ **երբ մենք հավատք ենք գործադրում առ Հիսուս Քրիստոսը և անկեղծորեն ապաշխարում ենք, մենք ներում ենք ստանում մեր մեղքերին:** Դուք կարող եք հրավիրել ուսանողներին նշել Մոսիա 4.1–3-ի գլխավոր բառերը և արտահայտությունները, որոնք ներկայացնում են այս սկզբունքը:)

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ ելույթը, ամփոփելով, թե ինչ պետք է մենք անենք, որ մեղքերի թողություն ստանանք.

«Երբ մենք ազնվորեն խոստովանում ենք մեր մեղքերը, ուղղում, ինչ կարող ենք, և թողնում ենք մեր մեղքերը, պահելով պատվիրանները, ապա մենք գտնվում ենք ներում ստանալու ընթացքում: Ժամանակի հետ մենք կզգանք, ինչպես է մեր ցավը մարում, վերցնելով «հանցանքը մեր սրտերից» (Ալմա 24.10) և պարգևելով «խղճմտանքի խաղաղություն» (Մոսիա 4.3):

Նրանց, ովքեր իսկապես ապաշխարում են, սակայն չեն կարողանում հանգստություն զգալ, ես ասում եմ՝ շարունակեք պահել պատվիրանները: Ես խոստանում եմ ձեզ, հանգստությունը կգա ըստ Տիրոջ ժամանակի: Բուժումը նույնպես ժամանակ է պահանջում» («Ապաշխարեք, . . . որպեսզի ես կարողանամ բուժել ձեզ», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2009, 40):

Հրավիրեք ուսանողներին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային նոթատետրերում գրել, թե ինչ սովորեցին ապաշխարության մասին, երբ նրանք քննարկեցին Մոսիա 4.1–3: Նաև խնդրեք նրանց գրել այն մասին, թե ինչպես կարող են հավատք գործադրել առ Հիսուս Քրիստոսը, երբ նրանք ներում փնտրեն իրենց մեղքերից:

Բացատրեք, որ ժողովրդի ապաշխարող վերաբերմունքին ականատես լինելուց հետո, Բենիամին թագավորը հիշեցրեց նրանց Տիրոջից ունեցած կախման մասին: Խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մոսիա 4.4–8: Խնդրեք դասարանին փնտրել, թե ինչ էր ուզում Բենիամին թագավորը, որ իր ժողովուրդը հասկանար այն բանից հետո, երբ նրանք ստացան մեղքերի թողություն:

- Համաձայն այս հատվածների, որո՞նք են այն միակ «պայմանները, որոնցով [մենք] կկարողանանք փրկվել»:

Այն բանից հետո, երբ ուսանողները կպատասխանեն այս հարցին, հրավիրեք նրանց լուռ վերանայել Մոսիա 4.4–8, փնտրելով արտահայտություններ, որոնք նկարագրում են մարդկանց, ովքեր փրկություն են ստանում: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք նշեն այս արտահայտությունները: Խորհեք հետևյալ հարցերը տալու շուրջ.

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «ջանասեր [լինել Տիրոջ] պատվիրանները պահելիս»:
- Որո՞նք են այն արարքները, որ ցույց են տալիս, որ մարդը «կդնի իր վստահությունը Տիրոջ վրա»:
- Ի՞նչ ճանապարհներով եք դուք տեսել «Աստծո բարությունը» և Նրա «անզուգական զորությունը»:

Նշեք, որ ապաշխարությունը և հնազանդությունը մեզանից պահանջում են շատ աշխատանք և ջանքեր: Այնուամենայնիվ, անկախ այն բանից, թե որքան ջանասիրաբար ենք մենք աշխատում, մենք երբեք չէինք կարողանա ստանալ մեղքերի թողություն և փրկության պարգև՝ առանց Հիսուս Քրիստոսի Քավության:

## Մոսիա 4.9-30

### *Բենիամին թագավորը սովորեցնում է, թե ինչպես պահել մեղքերի թողություն*

Գրատախտակին գրեք *պահել մեր մեղքերի թողությունը*: Տեղեկացրեք ուսանողներին, որ այն բանից հետո, երբ մարդիկ թողություն ստացան իրենց մեղքերից, Բենիամին թագավորը սովորեցրեց նրանց, թե ինչպես պահել կամ պահպանել այդ մաքուր և անարատ վիճակը:

- Ինչո՞ւ է կարևոր, որ մեզանից յուրաքանչյուրը իմանա սա:

Հրավիրեք ուսանողներին լուռ ուսումնասիրել Մոսիա 4.9–11, փնտրելով, թե ինչ պետք է մենք անենք, որ պահենք մեր մեղքերի թողությունը: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո թող ուսանողները կիսվեն, թե ինչ են գտել: Նրանց պատասխանները գրեք գրատախտակին: Պատասխանները կարող են ներառել, որ մենք պետք է հիշենք Աստծո մեծությունը, խոնարհեցնենք մեզ, ամեն օր աղոթենք և անսասան կանգնենք հավատքում:

Խորհեք հետևյալ հարցերը տալու մասին, որպեսզի օգնեք ուսանողներին խորացնել իրենց հասկացողությունը և կիրառեն իրենց կարդացածը.

- Բենիամին թագավորը սովորեցրել է, որ մենք պատք է «հավատանք Աստծուն» (Մոսիա 4.9): Նա նաև խոսել է Աստծո սիրուց ճաշակելու և «Աստծո մեծությունը» (Մոսիա 4.11) միշտ հիշելու մասին: Ի՞նչ փորձառություններ եք դուք ունեցել, որոնք օգնել են ձեզ հասկանալ, որ Աստված իսկապես կա և զորեղ է և որ Նա սիրում է ձեզ:
- Ինչպե՞ս է Աստծո զորությունը, բարությունը և սերը հիշելն ազդում Նրան հնազանդվելու մեր ցանկության վրա:

Ուսանողների համար բարձրաձայն կարդացեք Մոսիա 4.12: Խնդրեք նրանց այս հատվածներում գտնել օրհնությունները, որոնք տրվում են նրանց, ովքեր անում են այն, ինչ ուսուցանվել է Մոսիա 4.5–11–ում:

Բացատրեք, որ Մոսիա 4.13–16-ը պարունակում է Բենիամին թագավորի նկարագրությունն այն մարդկանց մասին, ովքեր պահում են իրենց մեղքերի թողությունը: Դասարանը բաժանեք երեք խմբերի: Խնդրեք առաջին խմբին ուսումնասիրել Մոսիա 4.13–ը, երկրորդ խմբին ուսումնասիրել Մոսիա 4.14–15–ը, և երրորդ խմբին ուսումնասիրել Մոսիա 4.16–ը: Յուրաքանչյուր ուսանող թող անձամբ կարդա իրենց հանձնարարված հատվածը կամ հատվածները և ներկայացնի վերաբերմունքը և որակները, որոնք Բենիամին թագավորը նկարագրում է նրանց մեջ, ովքեր ձգտում են պահել իրենց մեղքերի թողությունը:

Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, հրավիրեք ուսանողներին զեկուցել, թե ինչ են իրենք գտել: Երբ նրանք անեն դա, նշեք այն ճշմարտությունը, որ **եթե մենք խոնարհեցնենք մեզ Աստծո առաջ և փորձենք զարգացնել քրիստոսանման հատկանիշներ, մենք կարող ենք պահել մեր մեղքերի թողությունը:** Օգնեք ուսանողներին կիրառել այն, ինչ իրենք սովորում են, տալով նրանց հետևյալ մեկ կամ երկու հարցերն էլ, ինչպես որ յուրաքանչյուր հատկանիշը կամ չափանիշը նշված է.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է այս հատկանիշը (կամ չափանիշը) օգտակար մեր մեղքերի թողությունը պահելու համար:
- Ե՞րբ եք դուք տեսել այս հատկանիշի (կամ չափանիշի) օրինակներ:

Բենիամին թագավորն օգտագործեց զորեղ այլաբանություն, որը կարող է օգնել ուսանողներին գնահատել օրհնությունները, որ նրանք ստացել են Տիրոջից և մղել նրանց զարգացնել այն հատկանիշները, որ նրանք սովորել են Մոսիա 4.13–16–ում: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 4.16–23:

- Համաձայն Բենիամին թագավորի, ինչպե՞ս ենք մենք բոլորս մուրացկաններ:
- Ինչպե՞ս կարող է այս հասկացողությունն օգնել մեզ լինել ավելի կարեկցող ուրիշների նկատմամբ:
- Նրանց, ովքեր հնարավորություն չունեն մուրացկաններին որևէ բան տալ, կամ նրանց, ովքեր քիչ կարող են տալ, ի՞նչ խորհուրդ է տալիս Բենիամին թագավորը Մոսիա 4.24–26–ում:
- Այսօր Եկեղեցում ծոմապահության նվիրատվություններ տալը ինչպե՞ս է մեզ օգնում հետևել Մոսիա 4.26–ի խորհրդին: Ինչպե՞ս կարող են պատանիները

մասնակցել ծոմապահության նվիրատվություններին: (Պատասխանները կարող են ներառել, որ նրանք կարող են ծոմ պահել, ոմանք կարող են ծոմի նվիրատվություններ տալ, և Ահարոնյան Քահանայություն կրողները աշխարհի որոշ մասերում հավաքում են ծոմի նվիրատվություններ ծխի կամ ճյուղի անդամներից:)

Նշեք, որ բոլոր լավ բաները, որոնք մեզ խնդրել են անել, երբեմն կարող են դժվարությամբ գտնել իրենց ուրույն տեղը մեր կյանքում: Ուսանողներից մեկը թող բարձրաձայն կարդա Մոսիա 4.27:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում բոլոր բաներն անել «իմաստությամբ և կարգով»:
- Ինչպե՞ս կարող է այս խորհուրդն օգնել ձեզ:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 4.29–30: Նշեք, որ Մոսիա 4.30–ը սերտման սուրբ գրության հատված է: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին առանձնակի ձևով ընդգծել այդ հատվածը, որ կարողանան հեշտությամբ այն գտնել:

- Ի՞նչ կապ կա մեր մտքերի, խոսքերի և արարքների միջև: Ի՞նչ կարող ենք մենք անել, որ հետևենք ինքներս մեզ: Ինչպե՞ս մենք կարող ենք օգնել միմյանց:

Խորհեք ուսանողներին մի քանի րոպե տալու մասին, որ իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրեն այն մասին, թե ինչպես կարող են Մոսիա 4.9–30–ի սկզբունքներն օգնել իրենց, երբ նրանք ձգտեն պահել իրենց մեղքերի թողությունը: Վկայեք նրանցից յուրաքանչյուրի հանդեպ Տիրոջ սիրո մասին և Նրա ցանկության մասին, որ նրանք ապաշխարեն և պահեն իրենց մեղքերի թողությունը:

**Մոսիա 4.30**-ը սերտման սուրբ գրության հատված է: Որպեսզի օգնեք ուսանողներին սերտել սուրբ գրության այս հատվածը, անդրադարձեք դասի վերջում գտնվող ուսուցանման գաղափարին:

***Գրելու ոգեշնչումներ***

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթը խրախուսել է ուսանողներին գրի առնել իրենց ստացած ոգեշնչումները. «Զարգացրեք սովորելու հմտություն՝ ձեր տեսածի և հատկապես Սուրբ Հոգու ոգեշնչումը զգալու հիման վրա: Ապահով տեղում գրեք կարևոր բաները, որ դուք սովորում եք Հոգուց: Դուք կտեսնեք, որ երբ դուք գրի առնեք թանկագին ոգեշնչումները, հաճախ ավելին կգա» (“To Acquire Knowledge and the Strength to Use It Wisely,” *Ensign*, June 2002, 32):

## Սերտման սուրբ գրություն. Մոսիա 4.30

Որպեսզի օգնեք ուսանողներին տեսնել մտքերի, խոսքերի և արարքների միջև եղած կապը, ինչպես արտահայտված է Մոսիա 4.30-ում, կարդացեք Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ խոսքերը.

«Ունեցեք մաքուր մտքեր: Նրանք, ովքեր ունեն մաքուր մտքեր, չեն անում կեղտոտ բաներ: Աստծո առաջ դուք ոչ միայն պատասխանատու եք ձեր արարքների համար, այլ նաև ձեր մտքերը կառավարելու համար: Այնպես ապրեք, որ դուք ամոթից չկարմրեք, եթե ձեր մտքերը և արարքները հնարավոր լիներ լուսարձակել էկրանի վրա ձեր եկեղեցում: Հայտնի հնագույն ասույթը շարունակում է ճշմարիտ մնալ, որ դուք ցանում եք մտքեր և հնձում եք արարքներ, դուք ցանում եք արարքներ և հնձում եք սովորություններ, դուք ցանում եք սովորություններ և հնձում եք բնավորություն, և ձեր բնավորությունն է որոշում ձեր հավերժական ճակատագիրը: «Ինչպես մարդը մտածում է, նա հենց այդպիսին է»» (in Conference Report, Oct. 1964, 60; quoting Proverbs 23:7):

Բացատրեք, որ լույսը և խավարը չեն կարող միաժամանակ լցնել նույն տարածությունը: Լույսը ցրում է խավարը: Օրինակ, պատշաճ երաժշտությունը, բարձր տրամադրություն ստեղծող պատկերները, օգտակար միջոցառումները և մաքուր մտքերը և խոսքերը մեր կյանք կհրավիրեն Հոգին և դուրս կհրեն անարժան մտքերը մեր գլխից: Օգնեք ուսանողներին հասկանալ, որ նրանք կարող են կասեցնել խավարը՝ լցնելով իրենց կյանքը լույսով:

- Ի՞նչ կարող ենք մենք անել, որ մաքուր պահենք մեր մտքերը, խոսքերը և արարքները:

Խրախուսեք ուսանողներին հատուկ ծրագրեր կազմել, որ իրենց կյանքը լցնեն լույսով: Դուք կարող եք ասել նրանց, որ գրեն իրենց ծրագրերը իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:

ԴԱՍ 55

# Մոսիա 5–6

## Նախաբան

Մոսիա 5-ը պարունակում է իր ժողովրդին ուղղված Բենիամին թագավորի ելույթի վերջաբանը, որի արձանագրությունը սկսվում է Մոսիա 2–ից: Որպես Բենիամին թագավորի խոսքերին հավատալու արդյունք, մարդիկ զորեղ փոփոխություն զգացին իրենց սրտերում: Նրանք ուխտի մեջ մտան Աստծո հետ և իրենց վրա վերցրեցին Հիսուս Քրիստոսի անունը: Ինչպես արձանագրված է Մոսիա 6–ում, Բենիամին թագավորը փոխանցեց իր թագավորությունն իր որդի Մոսիային, ով ղեկավարեց համաձայն իր հոր օրինակի:

## Ուսուցանման առաջարկներ

### Մոսիա 5.1–4

*Բենիամին թագավորի ժողովուրդը նկարագրում են զորեղ փոփոխություն, որը նրանք զգացել են Հոգու միջոցով*

Նախքան դասը գրատախտակին գրեք հետևյալ հարցերը.

*Դուք երբևէ զգացե՞լ եք, որ դուք պետք է հոգևորապես փոխվեք:*

*Ի՞նչ եք դուք արել դրա համար:*

*Եթե դուք զգացել եք փոփոխություն, դուք պահպանե՞լ եք այդ փոփոխությունը մինչ այս օրը:*

Խնդրեք ուսանողներին պատասխանել այս հարցերին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: Ապա կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ ելույթը.

«Հիսուս Քրիստոսի ավետարանի էությունը պահանջում է հիմնավոր և մշտական փոփոխություն մեր իսկ էության մեջ, որը հնարավոր է, եթե մենք վստահում ենք «Սուրբ Մեսիայի արժանիքներին, ողորմածությանը և շնորհին» (2 Նեփի 2.8): Երբ մենք որոշում ենք հետևել Վարդապետին, մենք որոշում ենք փոխվել՝ հոգեպես վերածնվել» («Դուք պետք է վերստին ծնվեք», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2007, 20):

Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները հետևյալ մեջբերումը գրեն իրենց սուրբ գրություններում Մոսիա 5.2–ի կողքին կամ իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում. *«Երբ մենք որոշում ենք հետևել Վարդապետին, մենք որոշում ենք փոխվել՝ հոգեպես վերածնվել» (Երեց Դեյվիդ Ա. Բեդնար):*

- Ի՞նչ եղանակներով ենք մենք որոշում փոխվել, երբ մենք որոշում ենք հետևել Հիսուս Քրիստոսին:

Ուսանողներին տվեք մի քանի րոպե, որ վերանայեն Մոսիա 2–4–ը: Դուք կարող եք խորհուրդ տալ, որպեսզի նրանք կարդան գլուխների ամփոփումները: Հարցրեք նրանց, թե ինչ են նրանք հիշում այս հատվածների բովանդակությունների մասին: Ապա հրավիրեք նրանց մտքում կարդալ Մոսիա 5.1–ը:

- Ի՞նչ կամեցավ իր ժողովրդից իմանալ Բենիամին թագավորը:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 5.2–5, փնտրելով Բենիամին թագավորի հարցին տրված ժողովրդի պատասխանը: Նախքան ուսանողների կարդալը դուք կարող եք բացատրել, որ հատված 2-ում *հակված* բառը վերաբերվում է անհատի էությանը՝ նրա ցանկություններին և բնավորությանը: Նրանց կարդալուց հետո տվեք հետևյալ հարցերը, որ օգնեք նրանց վերլուծել հատվածները.

- Ի՞նչ էին ժողովուրդն ասում իրենց հակվածությունների մասին:
- Ի՞նչը բերեց այսպիսի փոփոխություն նրանց հակվածություններում: (Նրանք հավատացին Հիսուս Քրիստոսի և Քավության մասին Բենիամին թագավորի ուսմունքներին, և Հոգին փոխեց նրանց սրտերը:)

Նշեք, որ սրտի փոփոխությունն ավելին է, քան լոկ վարքագծի փոփոխությունը: Երբ մենք սրտի փոփոխություն ենք ունենում, մենք դառնում ենք նոր մարդ, փոխված՝ Փրկչի Քավության միջոցով: Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այս ճշմարտությունը, հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ ելույթը.

«Հիսուս Քրիստոսի ավետարանը պարփակում է ավելին, քան մեղքերից և մեր կյանքի վատ ազդեցություններից խուսափելը, դրանք հաղթահարելը և դրանցից մաքրվելը. այն նաև հիմնականում պահանջում է անել լավը, լինել լավը և դառնալ ավելի լավը: . . . Այս զորեղ փոփոխությունը պարզապես ավելի շատ աշխատելու կամ անձնական ավելի խիստ կարգապահություն ձևավորելու արդյունք չէ: Դա մեր ցանկությունների, մեր միտումների և մեր էության հիմնովին փոխվելու հետևանք է, որը հնարավոր է դառնում Տեր Քրիստոսի Քավության շնորհիվ: Մեր հոգևոր նպատակն է հաղթահարել և մեղքը, և մեղքի ցանկությունը, և մեղքի ապականությունն ու իշխանությունը» («Մաքուր ձեռքեր և անարատ սիրտ», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2007, 81–82):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ մենք ունենք Հիսուս Քրիստոսի Քավության կարիքը, որպեսզի իսկապես փոխվենք:

Ողջեք ուսանողների ուշադրությունը Մոսիա 5.2–ի «Ամենակարող Տիրոջ Հոգու շնորհիվ» արտահայտության վրա: Դուք կարող եք սահմանել *ամենակարող* բառը, որը նշանակում է շատ զորեղ:

- Ի՞նչ կարող ենք մենք սովորել Մոսիա 5.2–4-ից այն մասին, թե ինչպես մենք կարող ենք ունենալ զորեղ փոփոխություն մեր կյանքում:

Երբ ուսանողները քննարկեն այս հարցը, համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **երբ մենք հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը և ստանանք Սուրբ Հոգին, մենք կարող ենք ունենալ սրտի զորեղ փոփոխություն:**

Բացատրեք, որ սրտի զորեղ փոփոխություն ունենալը մի գործընթաց է, որը տեղի է ունենում մեր ողջ կյանքի ընթացքում, և ոչ թե եզակի իրադարձություն: Կիսվեք Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ ելույթով.

«Քրիստոսանման դառնալը ողջ կյանքի ընթացքում տևող գործընթաց է և շատ հաճախ ներառում է աճ և փոփոխություն, որը դանդաղ է տեղի ունենում, գրեթե աննկատ: . . .

Ճշմարիտ ապաշխարությունը ներառում է սրտի փոփոխություն և ոչ միայն վարքի փոփոխություն: Հիմնականում ապաշխարությունը չի ներառում զգայացունց կամ հուզիչ փոփոխություններ, այլ այն քայլ առ քայլ, շարունակական և հետևողական շարժ է դեպի աստվածայնությունը» (“A Mighty Change of Heart,” *Ensign*, Oct. 1989, 5):

Որպեսզի օգնեք ուսանողներին կիրառել այս սկզբունքը և գնահատել իրենց զարգացումը իրենց սրտերում զորեղ փոփոխություն զգալու հետ կապված, խնդրեք նրանց պատասխանել հետևյալ հարցերին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: (Դուք կարող եք նախքան դասը գրատախտակին գրել այս հարցերը, պատրաստել դրանք տպված թերթիկների ձևով կամ դանդաղ կարդալ հարցերը, որպեսզի ուսանողները կարողանան գրել դրանք իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:)

- Ինչպե՞ս է փոխվել ձեր հակվածությունը, երբ դուք հետևել եք Փրկչին:
- Ի՞նչ պետք է դուք անեք, որպեսզի Տերը շարունակի օգնել ձեզ զգալ այս փոփոխությունը:

Մեկ կամ երկու ուսանողների հնարավորություն տվեք կիսվել այս հարցերի իրենց պատասխաններով: Համոզվեք, որ նրանք հասկանում են, որ իրենք չպետք է պարտավորված զգան կիսվել փորձառություններով կամ մտքերով, որոնք խիստ անձնական են կամ գաղտնի:

## Մոսիա 5.5–15

### *Բենիամին թագավորի ժողովուրդը ուխտի մեջ է մտնում Աստծո հետ և ստանում է նոր անուն*

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 5.5: Խնդրեք դասարանին փնտրել, թե ինչ էին ցանկանում Բենիամին թագավորի ժողովուրդն անել այն բանի շնորհիվ, որ իրենց սրտերը փոխվել էին:

- Ի՞նչ էին ցանկանում անել մարդիկ այժմ, երբ նրանց հակվածությունները փոխվել էին Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ:

Որպեսզի օգնեք ուսանողներին զարգացնել ուխտերի իրենց հասկացողությունը, տվեք նրանց մի քանի րոպե նյութն ինքնուրույն ուսումնասիրելու համար: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք ուսումնասիրեն նյութը Սուրբ Գրքերի Ուղեցույցում կամ *Հավատքին Հավատարիմ* գրքույկում, կամ որ նրանք փնտրեն սուրբ գրություններ այդ նյութի վերաբերյալ Մորմոնի Գրքի կամ եռյակի ցուցիչում: Բավականաչափ ժամանակ անց, թող ուսանողները բաժանվեն զույգերի և իրար բացատրեն ուխտերը իրենց սեփական բառերով:

- Մոսիա 5.5-ի ո՞ր բառերը կամ արտահայտություններն են ցույց տալիս Աստծո հետ ուխտ կապելու և պահելու ժողովրդի անկեղծ ցանկությունը: (Պատասխանները կարող են ներառել «կատարել նրա կամքը», «բոլոր բաներում» և «մնացած մեր բոլոր օրերում» արտահայտությունները:)
- Մոսիա 5.5-ի ո՞ր բառերը կամ արտահայտություններն են հիշեցնում ձեզ խոստումները, որոնք մենք ամեն անգամ վերհիշում ենք, երբ ճաշակում ենք հաղորդությունը:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս են ուխտեր կապելը և պահելն օգնում մեզ շարունակել սրտի փոփոխություն ունենալու գործընթացը:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 1.11: Խնդրեք նրանց փնտրել մի պատճառ, որի համար Բենիամին թագավորը մեկտեղ հավաքեց ժողովրդին: (Նրանց անուն տալու համար:) Բացատրեք, որ Մոսիա 5.7–15–ում արձանագրված է Բենիամին թագավորի բացատրությունն անվան վերաբերյալ, որը նա խոստացավ տալ իր ժողովրդին: Ուսանողներին տվեք մի քանի րոպե Մոսիա 5.7–14 աչքի անցկացնելու համար, փնտրելով *անուն* և *կոչվել* բառերը: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները նշեն այս բառերն ամեն անգամ դրանց հանդիպելիս:

Հրավիրեք մի քանի ուսանողների ասել, թե ինչու էին նրանց անուններ տրվել: Օրինակ, դուք կարող եք խնդրել նրանց պատմել այն մասին, թե ինչպես են իրենց ծնողները որոշել անվանել իրենց, կամ դուք կարող եք հարցնել, թե արդյոք իրենց անուններն ունեն որևէ հատուկ իմաստ: Ապա հարցրեք դասարանին.

- Ո՞րն է անվան յուրահատկությունը: (Գրատախտակի վրա ամփոփ ձևով գրեք այս հարցին տրված ուսանողների պատասխանները: Պատասխանները կարող են ներառել, որ անունով ենք մենք ճանաչվում, այն կապված է մեր ինքնության հետ, այն եղանակներից մեկն է, որով մենք տարբերվում ենք ուրիշներից, և այն հաճախ իր հետ կրում է համբավ և ակնկալիքներ, քանի որ ընտանիքը կապված է դրա հետ:)

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 5.7–8: Խնդրեք դասարանին փնտրել անունը, որը Բենիամին թագավորը տվեց իր ժողովրդին: Նաև խնդրեք նրանց փնտրել բառեր և արտահայտություններ, որոնք նշում են այդ անվան կարևորությունը: Դուք կարող եք խրախուսել նրանց նշել այդ բառերը և արտահայտությունները:

- Բենիամին թագավորն ի՞նչ անուն տվեց իր ժողովրդին:
- Ի՞նչ բառեր և արտահայտություններ դուք նկատեցիք: Ի՞նչ են այդ բառերը և արտահայտությունները սովորեցնում ձեզ Քրիստոսի անվան մասին:
- Ե՞րբ ենք մենք մեր վրա վերցնում Հիսուս Քրիստոսի անունը: (Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ **մենք մեր վրա ենք վերցնում Հիսուս Քրիստոսի անունը, երբ մենք կապում և պահում ենք սուրբ ուխտերը:**)

Երբ ուսանողները քննարկեն այս հատվածները, նրանք օգնության կարիք կունենան, որ հասկանան այն վարդապետությունը, որ մենք կարող ենք դառնալ «Քրիստոսի զավակներ» (Մոսիա 5.7): Դուք կարող եք նշել, որ հայրը կյանք է տալիս երեխային: Մենք Երկնային Հոր հոգևոր զավակներն ենք: Մենք նաև մեր երկրային հայրերի զավակներն ենք, ովքեր, մեր մայրերի հետ միասին հնարավորություն են ընձեռնում մեզ ապրել երկրի վրա մեր ֆիզիկական մարմիններում: Անդրադառնալով Մոսիա 5.7-ին, Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ուսուցանել է, որ Հիսուս Քրիստոսը նույնպես «դառնում է մեր Հայրը», քանի որ Նա «մեզ կյանք է առաջարկում, հավերժական կյանք, քավության շնորհիվ, որը նա կատարեց մեզ համար»: Նախագահ Սմիթը բացատրել է. «Մենք դառնում ենք Հիսուս Քրիստոսի երեխաները՝

***Թող ուսանողները բացատրեն***

Ժամանակ առ ժամանակ խնդրեք ուսանողներին իրար բացատրել վարդապետություններ և սկզբունքներ: Սա անելով դուք կօգնեք ուսանողներին ամրացնել իրենց հավատքը և մեծացնել Հիսուս Քրիստոսի ավետարանի իրենց հասկացողությունը: Դուք նաև կօգնեք նրանց սովորել, թե ինչպես կիսվել ավետարանի ճշմարտություններով ուրիշների հետ:

որդիները և դուստրերը, նրան տրված մեր հնազանդության ուխտերի շնորհիվ» (*Doctrines of Salvation,* comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 1:29)։

Ուսանողների ուշադրությունը հրավիրեք գրատախտակին գրված բառերի վրա, որոնք նկարագրում են անվան առանձնահատկությունները։

- Ինչպե՞ս կարող են գրատախտակին գրված բառերն օգնել մեզ հասկանալ Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա վերցնելու կարևորությունը։

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 5.9–13, փնտրելով ավելի շատ խորհուրդներ Բենիամին թագավորից մեզ վրա Հիսուս Քրիստոսի անունը վերցնելու մասին։ Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները կարդան այս հատվածներն այնպես, ասես Բենիամին թագավորը խոսում էր անձամբ նրանց հետ։ Ուսանողներին բաժանեք զույգերի, և խնդրեք նրանց քննարկել հետևյալ հարցերը՝ հենվելով իրենց կարդացածի վրա։ (Դուք կարող եք գրել այս հարցերը գրատախտակին կամ տպված թերթիկների վրա։)

- Մտածեք Քրիստոսի անունը մեզ վրա վերցնելու կարևորության մասին։ Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում Քրիստոսի անունն ունենալ ձեր սրտերի վրա գրված։ Ի՞նչ օրհնություններ են ստանում նրանք, ովքեր ունեն Քրիստոսի անունը գրված իրենց սրտերի վրա։
- Մտածեք ձեր իմացած այն մարդկանց մասին, ովքեր պատվում են Քրիստոսի անունը։ Ի՞նչ են անում այս մարդիկ, որ ակնածանք և սեր ցուցաբերեն Քրիստոսի անվան հանդեպ։

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Մոսիա 5.15։ Հրավիրեք դասարանին փնտրել արարքներ, որոնք ներկայացնում են նրանց, ովքեր պահում են իրենց ուխտերը։

- Ի՞նչ հարցեր կարող ենք մենք մեզ տալ, որպեսզի գնահատենք, թե որքան լավ ենք մենք մեզ վրա վերցրել Քրիստոսի անունը։

Կիսեք ձեր զգացմունքներն այն մասին, թե ինչ է նշանակում Հիսուս Քրիստոսի անունը վերցնել ձեզ վրա։ Վկայեք ձեր կյանքում դրա կարևորության մասին։

## Մոսիա 6.1–7

### *Մոսիան սկսում է կառավարել որպես թագավոր*

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 6.1–3, ներկայացնելով, թե ինչ արեց Բենիամին թագավորը նախքան ժողովրդին արձակելը։

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր կարևոր արձանագրել բոլոր մարդկանց անունները, ովքեր ուխտի մեջ էին մտել։ Ինչո՞ւ Բենիամին թագավորը քահանաներ նշանակեց ժողովրդի մեջ։

Բացատրեք, որ ժողովրդի հետ խոսելուց հետո Բենիամին թագավորը իր որդի Մոսիային հանձնեց թագավորությունը։ Երեք տարի անց Բենիամին թագավորը մահացավ։ Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 6.6–7։ Խնդրեք դասարանին փնտրել բառեր և արտահայտություններ, որոնք ցույց են տալիս, որ Մոսիան հետևեց իր հոր օրինակին և օգնեց իր ժողովրդին շարունակել իրենց սրտերում զորեղ փոփոխություն ունենալ։

# Տնային ուսումնասիրության դաս

## Մորմոնի Խոսքերը–Մոսիա 6 (Մաս 11)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Մորմոնի Խոսքերից մինչև Մոսիա 6 (մաս 11) ուսանողների սովորած վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը նախատեսված չէ ուսուցանել որպես ձեր դասի մի մաս: Ձեր ուսուցանած դասը կենտրոնանում է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, երբ դուք խորհեք ուսանողների կարիքների մասին:

#### Օր 1 (Մորմոնի Խոսքերը–Մոսիա 2)

Ուսումնասիրելով Հոգուն հետևելու և իր հիշատակարանում Նեփիի փոքր թիթեղներն ընդգրկելու Մորմոնի փորձառությունը՝ ուսանողները սովորեցին, որ Տերը գիտի բոլոր բաները: Բենիամին թագավորն ուսուցանել է, որ եթե նեփիացիները չունենային սուրբ գրությունները, նրանք կթափառեին անհավատության մեջ և որ սուրբ գրություններն ուսումնասիրելը մեզ օգնում է իմանալ և պահել պատվիրանները: Նա ուսուցանեց իր ժողովրդին կարևոր սկզբունքներ, ինչպիսիք են. Երբ մենք ծառայում ենք ուրիշներին, մենք ծառայում ենք Աստծուն: Երբ մենք պարտական ենք զգում Աստծուն, մենք ցանկանում ենք ծառայել ուրիշներին և մեր երախտագիտությունը մեծանում է: Եթե մենք պահում ենք պատվիրանները, մենք կօրհնվենք նյութապես և հոգեպես:

#### Օր 2 (Մոսիա 3)

Բենիամին թագավորը հայտնեց հրեշտակի խոսքերը, ով բերեց «մեծ ուրախության ավետիք» մահկանացու կյանք Տիրոջ գալու մասին: Ուսանողները սովորեցին, որ դա մարգարեացվել էր հարյուրավոր տարիներ առաջ այն իրադարձություններից, երբ Հիսուս Քրիստոսը կտառապեր, որպեսզի մենք կարողանայինք փրկվել մեր մեղքերից: Մենք կարող ենք փրկվել մեր մեղքերից, երբ մենք հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը և ապաշխարենք: Եթե մենք ենթարկվենք Սուրբ Հոգու հորդորներին, մենք կարող ենք հաղթել բնական մարդուն Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ:

#### Օր 3 (Մոսիա 4)

Բենիամին թագավորի ուղերձը լցրեց իր ժողովրդին Տիրոջ Հոգով: Ուսանողները սովորեցին, որ երբ մենք հավատք ենք գործադրում առ Հիսուս Քրիստոսը և անկեղծորեն ապաշխարում ենք, մենք ներում ենք ստանում մեր մեղքերին: Բենիամին թագավորն ուսուցանել է իր ժողովրդին, որ եթե մենք խոնարհեցնենք մեր անձերն Աստծո առաջ և ձգտենք զարգացնել քրիստոսանման հատկանիշներ, մենք կարող ենք պահել մեր մեղքերի թողությունը:

#### Օր 4 (Մոսիա 5–6)

Երբ նրանք կարդում են փոփոխության մասին, որը եկավ Բենիամին թագավորի ժողովրդի վրա, ուսանողները սովորեցին, որ երբ մենք հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը և ստանանք Սուրբ Հոգին, մենք կարող ենք ունենալ սրտի զորեղ փոփոխություն: Բենիամին թագավորի մարդիկ ուխտեցին կատարել Տիրոջ կամքը և պահել Նրա պատվիրանները, ցուցադրելով, որ մենք մեզ վրա ենք վերցնում Հիսուս Քրիստոսի անունը, երբ մենք կապում և պահում ենք սուրբ ուխտերը:

### Նախաբան

Այս դասը կօգնի ուսանողներին հասկանալ իր մահից երեք տարի առաջ իր որդիներին և իր ժողովրդին ուղղված Բենիամին թագավորի ուսմունքները: Բենիամին թագավորը սովորեցրեց իր ժողովրդին, թե ինչպես ստանալ և պահել իրենց մեղքերի թողությունը՝ հավատք գործադրելով առ Հիսուս Քրիստոսը:

### Ուսուցանման առաջարկներ

#### Մորմոնի Խոսքերը

***Նեփին և Մորմոնը արտահայտում են իրենց վստահությունն առ Աստված***

Հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ 1 Նեփի 9.2–3, որ հիշեցնեք ուսանողներին, որ Նեփիին պատվիրվել էր պատրաստել երկու տեսակի թիթեղներ: Օգնեք նրանց հասկանալ, որ այս հատվածում «այս թիթեղները» արտահայտությունը վերաբերվում է Նեփիի փոքր թիթեղներին, որը հիմնականում պարունակում էր արձանագրություններ սուրբ բաների մասին: Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ 1 Նեփի 9.4: Խնդրեք դասարանին փնտրել մեծ թիթեղների նպատակը (թագավորների թագավորության պատմությունը և ժողովրդի պատերազմները):

Հիշեցրեք ուսանողներին, որ երբ Մորմոնը կրճատում էր Նեփիի մեծ թիթեղները, նա մյուս հիշատակարանների մեջ հայտնաբերեց փոքր թիթեղները: Նա ոգեշնչվեց Սուրբ Հոգու կողմից ներառել փոքր թիթեղներում իր գտածը իր կրճատման հետ, չնայած, որ նա չգիտեր, թե ինչու (տես Մորմոնի Խոսքերը 1.7):

Հրավիրեք դասարանի կեսին ուսումնասիրել 1 Նեփի 9.5–6, թե ինչու էր Նեփիին պատվիրվել պատրաստել փոքր թիթեղները: Դասարանի մյուս մասը թող ուսումնասիրի Մորմոնի Խոսքերը 1.6–7, թե ինչու Մորմոնը որոշեց ներառել փոքր թիթեղները իր կրճատման հետ: Դասարանի անդամների զեկույցներից հետո հարցրեք նրանց, թե ինչ են Նեփիի և Մորմոնի այս հատվածները սովորեցնում նրանց Տիրոջ մասին: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, սակայն համոզվեք, որ նրանք արտահայտում են այն հասկացողությունը, որ **Տերը գիտի բոլոր բաները:**)

- Ո՞րն էր ապագայի «իմաստուն նպատակը», որին անդրադառնում էին Նեփին և Մորմոնը: (Տերը գիտեր, որ 1828թ. փոքր թիթեղները կգրավեին Մորմոնի Գրքի ձեռագիր 116 կորած էջերի տեղը: Տես մաս 6, օր 1-ը ուսանողների ուսումնասիրության ուղեցույցում:)
- Ինչպե՞ս կարող է ձեր հասկացողությունը, որ Տերը գիտի ապագայի բոլոր բաները, տալ ձեզ հավատք, որ հնազանդվեք ձեր ստացած հոգևոր ոգեշնչումներին:

Եթե դուք կարիք զգաք ավելի շատ ժամանակ տրամադրել դասի այս մասին, հարցրեք ուսանողներին, եթե նրանք կարող են կիսվել փորձառություններով, երբ նրանք ոգեշնչում են զգացել Հոգուց անել ինչ-որ բան և ոգեշնչումների նպատակները հասկացել են ավելի ուշ:

## Մոսիա 1

*Բենիամին թագավորը կանչում է ժողովրդին ի մի հավաքվել*

Բացատրեք, որ Նեփիի փոքր թիթեղները ընդգրկում են նեփիացիների պատմությունը՝ սկսած Լեքիի ծառայությունից մինչև այն ժամանակները, երբ Մոսիա թագավորը միավորեց Նեփիի և Զարահեմլայի մարդկանց և երբ Մոսիայի որդի Բենիամինը թագավորեց արդարությամբ: Բենիամին թագավորին հանձնվեցին սուրբ հիշատակարանները: (Տես Օմնի 1.23, 25:)

Իր կյանքի մայրամուտին Բենիամին թագավորը խնդրեց իր որդուն՝ Մոսիային, ի մի հավաքել ժողովրդին: Հրավիրեք ուսանողներին կարդալ Մոսիա 1.10–11 և փնտրել պատճառները, թե ինչու Բենիամին թագավորը ցանկացավ խոսել ժողովրդի հետ: (Նա ցանկանում էր հայտարարել, որ Մոսիան լինելու էր հաջորդ թագավորը և անուն տալ ժողովրդին:)

## Մոսիա 2–6

*Բենիամին թագավորը սովորեցնում է իր ժողովրդին Փրկչի Քավության մասին*

Ուսանողներին ցուցադրեք Բենիամին թագավորը դիմում է իր ժողովրդին նկարը (62298; *Gospel Art Book* [2009], no. 74): Դասարանի համար կարդացեք Մոսիա 2.12–19: Հրավիրեք ուսանողներին բարձրացնել իրենց ձեռքերը, երբ նրանք նկատեն արտահայտություններ, որոնք ցույց են տալիս Բենիամին թագավորի բնավորությունը: Երբ ուսանողները ձեռք բարձրացնեն, դադարեցրեք կարդալը և խնդրեք նրանց բացատրել, թե ինչ են նրանք գտել և ինչպես է այն բացահայտում Բենիամին թագավորի բնավորությունը:

Դուք կարող եք հարցնել ուսանողներին, թե ինչ են նրանք սովորել ծառայության մասին Մոսիա 2.17–ում: (Ուսանողների պատասխանները պետք է արտացոլեն այնպիսի հասկացողություն, որ **երբ մենք ծառայում ենք ուրիշներին, մենք ծառայում ենք Աստծուն:**) Դուք կարող եք նաև խնդրել դասարանին կրկնել Մոսիա 2.17-ը՝ սերտման սուրբ գրությունը, որը նրանք անգիր գիտեն: Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչպես են նրանք վերջերս ուրիշներին ծառայելով ծառայել Աստծուն:

Գրատախտակին կամ թերթիկի վրա գրեք հետևյալ սուրբ գրությունների հատվածները: Փակագծերի պատասխանները մի ներառեք: Հանձնարարեք յուրաքանչյուր ուսանողի քննել սուրբ գրությունների հատվածներից մեկը: Հիշեցրեք նրանց, որ Բենիամին թագավորի քարոզը կենտրոնացած էր այս թեմայի վրա. «Փրկություն կարող է գալ մարդկանց զավակներին միայն Քրիստոսի՝ Ամենակարող Տիրոջ անունով և միջոցով» (Մոսիա 3.17): Սուրբ գրությունների հատվածներից յուրաքանչյուրն ուսուցանում է այս թեմայի շուրջ:

1. Մոսիա 2.20–25, 34: (Երբ մենք հասկանում ենք մեր պարտականությունը Աստծո առաջ, մեր երախտագիտությունը մեծանում է:)
2. Մոսիա 3.7–11, 17–18: (Հիսուս Քրիստոսը տառապեց, որպեսզի մենք կարողանանք փրկվել մեր մեղքերից: Եթե մենք հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը ապաշխարության միջոցով, մենք կարող ենք փրկվել մեր մեղքերից:)
3. Մոսիա 3.12–16, 19–21: (Եթե մենք ենթարկվենք Սուրբ Հոգու հորդորներին, Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մենք կարող ենք հաղթել բնական մարդուն և դառնալ սուրբ:)
4. Մոսիա 4.5–8, 19–21, 26: (Եթե մենք խոնարհեցնենք ինքներս մեզ Աստծո առաջ և ձգտենք զարգացնել քրիստոսանման հատկանիշներ, մենք կարող ենք պահել մեր մեղքերի թողությունը:)

Ուսանողներին բավականաչափ ժամանակ տալուց հետո, նրանց թույլ տվեք դասարանին կամ փոքր խմբերին զեկուցել այն, ինչ իրենք սովորել են: Ապա խնդրեք մի քանի ուսանողների ընտրել սկզբունքներից մեկը և բացատրել, թե ինչպես նրանք կարող են կիրառել այն իրենց կյանքում:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 4.1–3: Խնդրեք դասարանին հետևել, փնտրելով, թե ինչպես ժողովուրդն արձագանքեց Բենիամին թագավորի խոսքերին: Ապա հրավիրեք մեկ այլ ուսանողի բարձրաձայն կարդալ Մոսիա 5.1–2, 5–8: Խնդրեք դասարանին փնտրել, թե ինչպես ենք մենք մեզ վրա վերցնում Տիրոջ անունը: Համոզվեք, որ ուսանողները հասկանում են այս սկզբունքը. **Մենք մեզ վրա ենք վերցնում Հիսուս Քրիստոսի անունը, երբ մենք կապում և պահում ենք սրբազան ուխտերը:** Դուք կարող եք հիշեցնել ուսանողներին, որ պատճառներից մեկը, որ Բենիամին թագավորը հավաքեց ժողովրդին, այն էր, որ սովորեցներ նրանց ուխտեր կապելու

մասին: Նա նաև օծեց իր որդի Մոսիային որպես ժողովրդի թագավոր (տես Մոսիա 6.3):

Վերջում հարցրեք ուսանողներին, թե արդյոք նրանցից որևէ մեկը կցանկանար կիսվել, թե ինչ են նրանք զգում այն բանի արդյունքում, որ մկրտվելիս վերցրել են իրենց վրա Հիսուս Քրիստոսի անունը: Խնդրեք նրանց խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Ինչպե՞ս դուք կարող եք անձամբ կիրառել Բենիամին թագավորի ելույթի սկզբունքները:
- Ի՞նչ է նշանակում ձեզ համար Հիսուս Քրիստոսի անունը վերցնել ձեզ վրա:

Դուք կարող եք նաև վկայել ուրախության մասին, որը գալիս է Հիսուս Քրիստոսին հավատալու և Նրա Քավությանը վստահելու միջոցով:

## Հաջորդ Մասը (Մոսիա 7–17)

Հարցրեք ուսանողներին. Դուք կդավանե՞ք Հիսուս Քրիստոսին, եթե նույնիսկ դա անելը նշանակի, որ դուք մահվան կդատապարտվեք: Տեղեկացրեք ուսանողներին, որ հաջորդ շաբաթ նրանք կուսումնասիրեն Աբինադի մարգարեի ուսմունքները: Խրախուսեք նրանց փնտրել ուղերձը, որն Աբինադին ցանկանում էր տալ նեփիացիներին, չնայած, որ նա գիտեր, որ իրեն մահվան կդատապարտեին:

ԴԱՍ 56

# Մոսիա 7-8

## Նախաբան

Բենիամին թագավորի որդու՝ Մոսիայի թագավոր դառնալուց մոտավորապես 80 տարի առաջ, Զենիֆ անունով մի մարդ մի խումբ նեփիացիների առաջնորդել էր Զարահեմլայի երկրից դուրս՝ Նեփիի երկրում ապրելու համար, որը նրանք համարում էին «իրենց ժառանգության հողը» (տես Օմնի 1.27–30): Մոսիա թագավորը թույլատրեց Ամմոն անունով մի մարդու մի փոքրիկ խումբ առաջնորդել դեպի Նեփիի երկիրը, որպեսզի տեղեկանան Զենիֆի խմբի ճակատագրի մասին: Ամմոնը և իր ընկերները գտան Զենիֆի խմբի հետնորդներին, ովքեր ճորտության էին բերվել լամանացիների կողմից: Զենիֆի թոռը՝ Լիմքին, նրանց թագավորն էր: Ամմոնի գալը հույս տվեց Լիմքիին և նրա ժողովրդին: Լիմքին հարցրեց Ամմոնին, թե արդյոք նա կարող էր թարգմանել իր ժողովրդի գտած 24 ոսկյա թիթեղների վրայի փորագրությունները: Ամմոնը բացատրեց, որ Զարահեմլայի թագավորը՝ Մոսիա թագավորը, տեսանող էր, ով կարող էր թարգմանել այդ հնադարյան հիշատակարանները:

## Ուսուցանման առաջարկներ

### Մոսիա 7

*Ամմոնը գտնում է Լեքի-Նեփիի երկիրը և տեղեկանում է, թե ինչպես են Լիմքի թագավորի մարդիկ ճորտության բերվել*

Գրատախտակին գրեք հետևյալը. *սգալ՝ցավ կամ տխրություն զգալ*

- Ի՞նչ պատճառներ կան, որոնց համար մարդիկ կարող են սգալ:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 7.24, և խնդրեք դասարանին հետևել նրան: Նշեք «այս բոլորը՝ անօրինության պատճառով» արտահայտությունը: Բացատրեք, որ այս հատվածը վերաբերվում է հանգամանքներին, որոնք առաջ եկան մի խումբ մարդկանց անարդար ընտրությունների արդյունքում: Հրավիրեք ուսանողներին խորհել, թե արդյոք նրանք երբևէ սգացել են մի իրավիճակի համար, որն առաջ է եկել «անօրինության պատճառով»: Բացատրեք, որ այսօր նրանք կուսումնասիրեն Մոսիա 7–8-ը և կտեղեկանան Լիմքի անունով թագավորի և նրա ժողովրդի տառապանքի մասին: Հրավիրեք ուսանողներին փնտրել, թե ինչ խրախուսեց իր ժողովրդին անել Լիմքի թագավորը, որ հաղթահարեն իրենց տխրությունը:

**Մոսիա 7–24 ճամփորդությունների ամփոփում**

Հրավիրեք ուսանողներին բարձրաձայն կարդալ Մոսիա 7.1: Խնդրեք դասարանին ներկայացնել այս հատվածում նշված երկու վայրերը: Գրատախտակին պատկերեք այս դասի առաջին գծապատկերը և հրավիրեք ուսանողներին նույնն անել իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային նոթատետրերում: Երբ դուք օգտագործեք այս գծապատկերը, բացատրեք, որ Եկեղեցին չունի պաշտոնական դիրքորոշում Մորմոնի Գրքի աշխարհագրության վերաբերյալ, բացի այն բանից, որ իրադարձությունները տեղի են ունեցել Ամերիկաներում:

*Նշում.* Մոսիայի գիրքն ուսումնասիրելու ընթացքում ուսանողները ավելի շատ տվյալներ կավելացնեն իրենց գծապատկերին: Համոզվելու համար, որ նրանք բավականաչափ տեղ ունեն այս մանրամասնություններն ավելացնելու համար, այնպես պատկերեք գծապատկերը գրատախտակին, ինչպես ցուցադրված է: Նշեք լրացուցիչ տեղի մասին՝ նախքան

ուսանողները կսկսեն գծելը: (Վերջնական գծապատկերը գտնվում է այս ձեռնարկի վերջում գտնվող ցուցիչում:)

Բացատրեք, որ երբ Լեքիի ընտանիքը հասավ խոստացված երկիր, նրանք հաստատվեցին Նեփիի երկրում (երբեմն նշվում է որպես Լեքի-Նեփիի երկիր կամ առաջին ժառանգության երկիր): Լեքիի մահից կարճ ժամանակ անց Տերը պատվիրեց Նեփիին փախչել անապատ, վերցնելով բոլոր նրանց, ովքեր կգնային իր հետ: Նեփիի մարդիկ շարունակեցին ապրել Նեփիի երկրում, սակայն բաժանվեցին նրանցից, ովքեր հետևեցին Լամանին և Լեմուելին: Շատ տարիներ անց Տերը պատվիրեց մի խումբ նեփիացիների հեռանալ Նեփիի երկրից: Այս խումբը ի վերջո հաստատվեց Զարահեմլա կոչվող մի երկրում, որը գտնվում էր Նեփիի երկրից հյուսիս:

**Մոսիա 7–24 ճամփորդությունների ամփոփում**




Մի քանի սերունդ հետո Զենիֆ անունով մի մարդ առաջնորդեց մի խումբ նեփիացիների դեպի Նեփիի երկիր, որ «տիրեր իրենց ժառանգության հողին» (տես Օմնի 1.27–30): Զենիֆը եղել է մեկ այլ խմբի մի մասը, որին չէր հաջողվել պաշտպանել երկիրը այդ մասում (տես Մոսիա 9.1–2): Հրավիրեք ուսանողներին մի սլաք գծել Զարահեմլայից դեպի Նեփիի երկիրը և անվանել այն «Զենիֆի կողմից առաջնորդվող նեփիացիների խումբ»: Այս խումբը հեռացավ Զարահեմլայից Մոսիայի թագավոր դառնալուց մոտավորապես 80 տարի առաջ:

Հրավիրեք ուսանողներին կրկին աչքի անցկացնել Մոսիա 7.1, փնտրելով, թե ինչ էր Մոսիան ուզում իմանալ: Նրանց զեկույցներից հետո, հրավիրեք նրանց կարդալ Մոսիա 7.2–3, որ պարզեն, թե ինչ արեց Մոսիան իր հարցի պատասխանը ստանալու համար: Խնդրեք ուսանողներին գծել Զարահեմլայից դեպի Նեփիի երկիր ձգվող երկրորդ սլաքը, ներկայացնելով Ամմոնի կողմից առաջնորդվող փնտրող խումբը, և համապատասխան ձևով էլ այն կոչել:

Ամփոփեք Մոսիա 7.4–11, բացատրելով, որ Ամմոնը գտավ քաղաքը, որտեղ Զենիֆի ժողովրդի հետնորդները ապրում էին Զենիֆի թոռ Լիմքիի թագավորության ներքո: Լիմքին տեսավ Ամմոնի խմբին քաղաքի պատերից դուրս: Մտածելով, որ նրանք իր մահացած հոր՝ Նոյի ամբարիշտ քահանաներից են, նա կարգացրեց իր պահակախմբին բռնել նրանց և բանտ գցել (տես Մոսիա 21.23): Երկու օր անց նա հարցաքննեց նրանց: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 7.12–15, փնտրելով, թե ինչպես արձագանքեց Լիմքին, երբ նա իմացավ, թե ով էր Ամմոնը և որտեղից էր նա:

- Ինչո՞ւ էր Լիմքին շատ ուրախ իմանալու, որ Ամմոնը Զարահեմլայի երկրից էր:

Կրկին անդրադարձեք գրատախտակին գրված *ազալ* բառին: Ամփոփեք Մոսիա 7.16–19, բացատրելով, որ Լիմքի թագավորը ի մի հավաքեց իր ժողովրդին, որ նրանց ներկայացներ Ամմոնին, որ խոսեր նրանց հետ իրենց տխրության և ցավերի մասին, և որ օգներ նրանց իմանալ, թե ինչին ապավինել ազատման համար:

Գրատախտակին գրեք *պատճառներ* բառը *ազալ* բառի սահմանման տակ: Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մոսիա 7.20–28: Խնդրեք դասարանին գտնել արարքներ, որ ներկայացնում է Լիմքին որպես իր ժողովրդի դժվարությունների և տառապանքի պատճառ: (Կարող է օգտակար լինել, եթե տեղեկացնեք ուսանողներին, որ Մոսիա 7.26–ում նշվող մարգարեն Աբինադին է, ով մահապատժի էր ենթարկվել կրակի միջոցով Լիմքիի հոր՝ Նոյի թագավորության ժամանակ:) Հատվածների ընթերցումից հետո հրավիրեք մի քանի ուսանողների գրատախտակի վրա *պատճառներ* բառի տակ հերթով գրել, թե ինչ են իրենք գտել:

- Ի՞նչն է եղել այս ժողովրդի տառապանքի հիմնական պատճառը: (Անօրինությունը կամ մեղքը:)

Ուսանողներին խնդրեք մտքում կարդալ Մոսիա 7.29–32: Հրավիրեք նրանց ընտրել մի արտահայտություն, որը ցույց է տալիս Լիմքիի հասկացողությունն այն կապի մասին, որ կա մարդկանց մեղքերի և մարդկանց տառապանքի միջև: (Դուք կարող եք բացատրել, որ *մղեղ* բառը վերաբերվում է այն ոչ պիտանի մնացորդին, որը

մնում է հատիկը ցորենի հասկից առանձնացնելուց հետո: Մոսիա 7.30-ում «կինձի դրա մղեղը» նշանակում է ձեռք բերել որևէ անօգուտ բան:) Հրավիրեք մի քանի ուսանողների կարդալ և բացատրել իրենց ընտրած արտահայտությունները:

- Ինչպե՞ս կարող է մեր մեղքերի հետևանքները գիտակցելն օգտակար լինել մեզ համար:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 7.33: Խնդրեք դասարանին փնտրել, թե Լիմքին ինչ հորդորեց իր ժողովրդին անել:

- Ի՞նչ սկզբունքներ մենք կարող ենք սովորել Լիմքիից և նրա ժողովրդից մեր մեղքերն ընդունելու և դրանց համար զղջալու ազդեցության մասին: (Երբ ուսանողները ներկայացնեն ճշմարտություններ այս գլխից, օգնեք նրանց տեսնել, որ **մեր մեղքերն ընդունելը և դրանց համար զղջալը կարող է առաջնորդել մեզ դառնալ դեպի Տերն ի ազատում:** Դուք կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին:)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այս սկզբունքը, խնդրեք նրանց պատկերացնել, որ նրանք ունեն սիրած անձնավորություն, ով խղճի խայթ է զգում իր մեղքերի համար և ով ցանկանում է ապաշխարել և դառնալ դեպի Տերը, սակայն վստահ չէ, թե ինչպես դա անել: Վկայեք, որ իր ժողովրդին ուղղված Լիմքիի խորհուրդը Մոսիա 7.33-ում պարունակում է կարևոր խորհուրդներ, թե ինչպես հաղթահարել վիշտն ու ցավը, որ ուղեկցում են մեղքին: Հրավիրեք ուսանողներին լուռ ուսումնասիրել Մոսիա 7.33, փնտրելով արտահայտություններ, որոնք կօգնեն ինչ-որ մեկին իմանալ, թե ինչպես «դառնալ դեպի Տերը»: (Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք նշեն այս արտահայտությունները:)

**Մոսիա 7–24 ճամփորդությունների ամփոփում**




Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել արտահայտություններով, որոնք կարևոր են նրանց համար: Յուրաքանչյուր ուսանող թող բացատրի իր ընտրած արտահայտության իմաստը (1) արտահայտելով այն իր բառերով կամ (2) տալով մեկի արարքների կամ վերաբերմունքի օրինակներ, ով ձգտում է կիրառել արտահայտության սկզբունքը:

Ուսանողներին խնդրեք խորհել, թե արդյոք նրանք ունեն մեղքեր, որոնց համար նրանք չեն ապաշխարել, որոնք կարող են նրանց և իրենց սիրելիների համար պատճառ դառնալ վիշտ ու ցավ զգալու համար: Հրավիրեք ուսանողներին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրել հետևյալ հարցի պատասխանը.

- Ինչպե՞ս կարող եք այսօր ձեր կյանքում կիրառել Մոսիա 7.33:

Կիսվեք ձեր վկայությամբ, որ երբ մենք դառնանք դեպի Տերը մեր ողջ սրտով և մտքով, Նա կազատի մեզ սգալուց, որ առաջ է գալիս մեր մեղքերից:

## Մոսիա 8

### *Ամմոնը տեղեկանում է 24 ոսկյա թիթեղների մասին և ասում է Լիմքիին տեսանողի մասին, ով կարող է թարգմանել դրանց պարունակած փորագրությունները*

Խնդրեք երկու ուսանողների կանգնել դասարանի առջև: Կապեք ուսանողներից մեկի աչքերը և ապա հատակին դրեք գրքեր, թերթիկներ կամ այլ անվտանգ առարկաներ դասարանով մեկ: Խնդրեք երկրորդ ուսանողին հրահանգներ տալ, որ օգնի առաջին ուսանողին անցնել դասարանով մեկ առանց հատակին գտնվող որևէ առարկայի դիպչելու: Ապա թող երկրորդ ուսանողը կապի իր աչքերը: Փոխեք հատակին գտնվող առարկաների տեղերը, և թող առջին ուսանողը տա հրահանգներ: Այս անգամ, սակայն, աչքերը փակ ուսանողը թող միտումնավոր կերպով անուշադրության մատնի հրահանգները: (Նախքան դասը գաղտնի խոսեք այդ ուսանողի հետ, և խնդրեք նրան ուշադրություն չդարձնել հրահանգներին:)

- Ինչո՞վ է օգտակար մեկին լսելը, ով կարող է տեսնել բաներ, որոնք մենք չենք կարող տեսնել։

Ամփոփեք Մոսիա 8.5–12, բացատրելով, որ Լիմքին Ամմոնի գալուց որոշ ժամանակ առաջ արշավախումբ էր ուղարկել, որ օգնություն ստանար Զարահեմլայից։ Խումբը թափառել էր անապատում և Զարահեմլան գտնելու փոխարեն նրանք գտել էին կործանված քաղաքակրթության մնացորդները։ Այնտեղ նրանք բացահայտեցին 24 ոսկյա թիթեղներ, որոնց վրա փորագրություններ կային։ (Դուք կարող եք բացատրել, որ Լիմքիի ժողովրդի կողմից հայտնաբերված ավերակներն այն ամենն էին, ինչ մնացել էր հարեդացիների քաղաքակրթությունից։Հարեդացիների հիշատակարանը, վերցված 24 ոսկյա թիթեղներից, ներառված է Մորմոնի Գրքում որպես Եթերի գիրք։) Ավելացրեք այս ճամփորդությունը գրատախտակի գծապատկերին, ինչպես ցույց է տրված այս էջի նկարում։ Ուսանողները նույնպես թող ավելացնեն այն իրենց գծապատկերների վրա։ Բացատրեք, որ Լիմքի թագավորը ցանկանում էր հասկանալ գրությունները, որ փորագրված էին 24 թիթեղների վրա։ Նա հարցրեց Ամմոնին, թե արդյոք նա գիտեր որևէ մեկին, ով կարող էր թարգմանել դրանք։

Հրավիրեք ուսանողներից մեկին Մոսիա 8.13–15–ում կարդալ Ամմոնի պատասխանը։ Խնդրեք դասարանին փնտրել անվանումը, որը Ամմոնն օգտագործեց այն անձին մատնանշելու համար, ով զորություն ունի թարգմանելու նման հիշատակարաններ։ Խնդրեք ուսանողներին լուռ ուսումնասիրել Մոսիա 8.16–19, փնտրելով տեսանողի լրացուցիչ հատկանիշները։ Հարցրեք մի քանի ուսանողների, թե ինչ են նրանք գտել։

Գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունը. ***Տերը տալիս է մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ մարդկությանն օգնելու համար։***

- Քանի՞ տեսանող մենք ունենք երկրի վրա այսօր։ (Տասնհինգ. Առաջին Նախագահության անդամները և Տասներկու Առաքյալների Քվորումը։)
- Որո՞նք են այն բաները, որ մարգարեները, տեսանողները և հայտնողները մեզ հայտնի են դարձնում։ (Եթե ուսանողները դժվարանում են պատասխանել, հարցրեք, թե որ տեսանողներն են հայտնել այնպիսի թեմաների մասին, ինչպես ամուսնությունը և ընտանիքը, կրթությունը, զվարճանքն ու լրատվամիջոցները կամ սեռական մաքրությունը։)
- Ինչպե՞ս է ձեր կյանքն օրհնվել վերջին օրերի մարգարեների, տեսանողների և հայտնողների միջոցով։

Դուք կարող եք պատմել այն մասին, թե ինչպես են մարգարեները, տեսանողները և հայտնողներն օրհնել ձեր կյանքը։ Հրավիրեք ուսանողներին կարդալ և ինքնուրույն խորհել վերջին համաժողովի մի ելույթի շուրջ, որը տրվել է Առաջին Նախագահության կամ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամի կողմից և հետևել այդ ելույթում տրված խորհրդին։

ԴԱՍ 57

# Մոսիա 9–10

## Նախաբան

Բենիամին թագավորի կառավարման ընթացքում Զենիֆը մի խումբ նեփիացիների առաջնորդեց Զարահեմլայից դուրս, որ հաստատվեին լամանացիների մեջ Նեփիի երկրում: Մոսիա 9–22-ը պարունակում է այս ժողովրդի փորձառությունների պատմությունը: Լամանացիների թագավորը թույլ տվեց Զենիֆի մարդկանց հաստատվել իրենց մեջ, քանի որ նա գաղտնի կերպով ծրագրել էր ճորտության բերել նրանց: Լամանացիների կեղծ ավանդույթները և նեփիացիների ատելությունն ի վերջո տարան պատերազմի: Զենիֆի ժողովուրդը ուժ ստանալու համար իրենց հույսը դրեցին Տիրոջ վրա, և նրանք կարողացան լամանացիներին դուրս հանել իրենց երկրից:

## Ուսուցանման առաջարկներ

### Մոսիա 9.1–13

*Զենիֆն առաջնորդում է մի խումբ նեփիացիների, որ վերադառնան Նեփիի երկիրը*

Խնդրեք ուսանողներին մտածել, թե երբ են նրանք ինչ-որ բան շատ ցանկացել: Հրավիրեք նրանցից մի քանիսին պատմել այս փորձառությունների մասին: Բացատրեք, որ այսօր նրանք կիմանան մի մարդու մասին, ով այնքան շատ էր մի բան ցանկանում, որ նա չկարողացավ տեսնել իր ցանկությունների հետևանքները:

Հրավիրեք ուսանողներին նայել ճամփորդությունների գծապատկերին, որը նրանք սկսել էին գծել նախորդ դասի ժամանակ: Հիշեցրեք նրանց, որ Ամմոն անունով մի մարդ առաջնորդեց մի խումբ, որը ճամփորդեց Զարահեմլայից և գտավ Լիմքիին և նրա ժողովրդին Նեփիի երկրում: (Դուք կարող եք բացատրել, որ Մորմոնի Գիրքը պատմում է երկու Ամմոն անունով մարդկանց մասին: Մեկն այն մարդն էր, ում մասին ուսանողներն այսօր են սովորում: Մյուսը Մոսիայի որդին էր, ով դարձավ մեծ միսիոներ լամանացիների համար: Ուսանողները կսկսեն կարդալ նրա մասին Մոսիա 27–ում:) Ուսանողները թող բացեն Մոսիա 7–8-ը և նայեն ամսաթվին, որը գրված է կամ էջի ներքևի մասում կամ գլխի ամփոփման մեջ (մոտ մ.թ.ա 121թ.): Թող նրանք համեմատեն այդ ամսաթիվը Մոսիա 9–ի ամսաթվի հետ (մոտ մ. թ.ա.200թ., մոտ 80 տարի ավելի շուտ): Հարցրեք, թե արդյոք կարող է որևէ մեկը բացատրել տարեթվերի հանկարծակի փոփոխությունը:

Բացատրեք, որ Մոսիա 8-ից Մոսիա 9–ում պատմությունը 80 տարով հետ է գնում, որպեսզի պատմի Լիմքի թագավորի պապի՝ Զենիֆի մասին: Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 9–ի սկզբում Զենիֆի հիշատակարանի Մորմոնի նախաբանը: Ապա խնդրեք մեկ այլ ուսանողի բարձրաձայն կարդալ Մոսիա 9.1–2:

Թող ուսանողներն իրենց գծապատկերի վրա ավելացնեն մի սլաք, որը կներկայացնի առաջին խմբի կողմից կատարած ճամփորդությունը, ովքեր գնացին Զարահեմլայի երկրից դեպի Նեփիի երկիր: Նշեք, որ Զենիֆը գտնվում էր այս խմբում: Ինչպես պատկերված է այս էջի գծապատկերում, սլաքը պետք է ցույց տա, որ նաև խումբ վերադարձավ Զարահեմլա: Պիտակի վրա պետք է կարդանք «Որոշ նեփիացիներ ձգտում են վերադառնալ Նեփիի երկիր»: (Վերջնական գծապատկերը տես այս ձեռնարկի վերջում գտնվող ցուցիչում:)

Խնդրեք մեկ այլ ուսանողի կարդալ Մոսիա 9.3–4: Հրավիրեք դասարանի մնացած մասին հետևել, փնտրելով, թե (1) ինչ էր Զենիֆն այդքան շատ ցանկանում ձեռք բերել և (2) ինչն էր նա դանդաղ հիշում:

- Ի՞նչ է նշանակում լինել չափից ավելի գերեռանդ: (Չափազանց փափագել կամ չափից դուրս շատ հետաքրքրվել ինչ-որ բանի որոնումներով:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում դանդաղ լինել Տիրոջը հիշելիս:

***Տողատակերի և գլխի ամփոփումների ամսաթվերը***

Ցույց տվեք ուսանողներին, որ մոտավոր ամսաթվեր են հայտնվում Մորմոնի Գրքի յուրաքանչյուր էջի ներքևում (կամ գլուխների ամփոփումներում), որ օգնեն հաստատել այդ էջերի իրադարձությունների պատմական ենթատեքստը: Երբ ուսանողները ծանոթանան այս ամսաթվերին, նրանք կտեսնեն, թե ինչպես են Մորմոնի Գրքում նկարագրված իրադարձությունները կապված իրար և պատմության այլ իրադարձությունների հետ:

Բացատրեք, որ քանի որ Զենիֆը չափից ավելի գերեռանդ էր և դանդաղ՝ Տիրոջը հիշելիս, նա սխալ թույլ տվեց: Ուսանողները թող կարդան Մոսիա 9.5–7, 10, փնտրելով այդ սխալը:

- Ի՞նչ չնկատեց Զենիֆը Նեփիի երկիրը ձեռք բերելու իր չափից ավելի մեծ ցանկության պատճառով:
- Ի՞նչ վտանգ կա մեծ փափագ ունենալու մեջ, երբ որոշումներ եք կայացնում:
- Ի՞նչ վտանգ կա առանց Տիրոջ հետ խորհուրդ անելու որոշումներ կայացնելու մեջ:

Ամփոփեք Մոսիա 9.11–13, ասելով ուսանողներին, որ 12 տարի հետո Զենիֆի ժողովուրդը այնքան բարգավաճեցին, որ լամանացիների թագավորն անհանգստացավ, որ նա չէր կարողանա ճորտության բերել նրանց, ուստի նա «սկսեց դրդել իր ժողովրդին, որ նրանք կռվեին [Զենիֆի] ժողովրդի հետ» (Մոսիա 9.13):

**Մոսիա 7–24 ճամփորդությունների ամփոփում**




## Մոսիա 9.14–10.22

### *Լամանացիները փորձում են ստրկության բերել Զենիֆի մարդկանց*

Գրատախտակին գրեք հետևյալ բառերը և արտահայտությունները. *դասարանային աշխատանք, դիմանալ փորձությանը, խնդիրներ ընկերների հետ, ղեկավարություն, աշխատանք, անհամաձայնություն ընտանիքի անդամների հետ, մարգաձևեր:* (Ելնելով ուսանողների կարիքներից և հետաքրքրություններից, դուք կարող եք այլ կետեր ավելացնել այս ցուցակին:)

Հրավիրեք ուսանողներից մեկին կանգնել դասարանի առաջ և ձեռքերը առաջ պարզել: Ուսանողի ձեռքում դրեք փոքր առարկաներ, ինչպես օրինակ գրքեր կամ քարեր, և խնդրեք նրան բարձրացնել դրանք: Բացատրեք, որ առարկաները ներկայացնում են գրատախտակին գրված դժվարությունները: Հարցրեք դասարանին.

- Այս ոլորտներից որո՞ւմ դուք կցանկանայիք ունենալ ավելի շատ ուժ և աջակցություն:

Ուսանողի յուրաքանչյուր ձեռքի վրա ավելացրեք մեկ կամ երկու այլ առարկա.

- Դուք երբևէ զգացե՞լ եք, որ տանում եք չափից ավելին և ցանկացել եք ունենալ ավելի շատ կարողություն կամ ուժ՝ ձեր դժվարությունները տանելու համար:

Հրավիրեք երկու ուսանողների առաջ գալ և աջակցել առարկաները բռնող ուսանողին: Բացատրեք, որ այսօրվա դասի մնացած մասը մի խումբ ժողովրդի մասին է, ովքեր ավելի շատ ուժ ունենալու կարիքն ունեն: Խորհուրդ տվեք, որ այս դասի ընթացքում ուսանողները փնտրեն ուղիներ, թե ինչպես նրանք կարող են ավելի շատ ուժ ստանալ իրենց կյանքում: (Դասարանի առջև կանգնած ուսանողներին հրավիրեք վերադառնալ իրենց տեղերը:)

Բացատրեք, որ Մոսիա 9 և 10-ում երկու անգամ պատմվում է այն մասին, որ լամանացիները եկան պատերազմելու Զենիֆի և իր ժողովրդի դեմ: Գրատախտակին գրեք հետևյալ ցանկը, սակայն մի ընդգրկեք փակագծերի պատասխանները: Ասեք ուսանողներին, որ նրանք կուսումնասիրեն ցանկում եղած սուրբ գրությունների հատվածները, փնտրելով հարցերի պատասխանները՝ սկսած առաջին հարցից: Հրավիրեք դասարանի կեսին օգտագործել առաջին շարքի հատվածները, որ գտնեն Զենիֆին և Իր ժողովրդին վերաբերվող հարցերի պատասխանները: Հրավիրեք դասարանի մյուս կեսին ուսումնասիրել երկրորդ շարքի հատվածները՝ լամանացիների վերաբերյալ հարցերին պատասխանելու համար: Թող ամեն խմբից մի ուսանող գրատախտակին գրի իրենց պատասխանները, երբ նրանք գտնեն դրանք:

| | Ի՞նչ արեցին մարդիկ պատրաստվելու համար: | Ի՞նչ արեցին նրանք իրենց վստահությունը Տիրոջ վրա դնելու համար: | Ինչպիսի՞ն եղավ հետևանքը: |
|---|---|---|---|
| Զենիֆը և իր ժողովուրդը | Մոսիա 9.14–16, 10.1–2, 7, 9–10 (Նրանք զինվեցին և գնացին պատերազմելու:) | Մոսիա 9.17, 10.19 (Նրանք աղոթեցին և հիշեցին, որ Տերն ազատել էր իրենց նախնիներին:) | Մոսիա 9.18, 10.20 (Տերն ուժեղացրեց նրանց, և նրանք հաջողությամբ դուրս հանեցին լամանացիներին իրենց երկրից:) |
| Լամանացիները | Մոսիա 10.6–8 (Նրանք զինվեցին և գնացին պատերազմելու:) | Մոսիա 10.11 (Ոչինչ: Նրանք հույսը դրեցին իրենց սեփական ուժի վրա:) | Մոսիա 10.19–20 (Լամանացիները դուրս քշվեցին երկրից մեծ կոտորածով:) |

Այն բանից հետո, երբ ուսանողները կլրացնեն ցուցակը, հարցրեք.

- Ի՞նչ նմանություններ և տարբերություններ եք դուք տեսնում այն բանում, թե ինչպես էին Զենիֆի ժողովուրդը և լամանացիները պատրաստվում իրենց ճակատամարտերին:
- Ի՞նչ ճշմարտություններ մենք կարող ենք սովորել այս համեմատությունից:

Գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. ***Տերը կուժեղացնի մեզ, երբ մենք անենք այն ամենը, ինչ կարող ենք և դնենք մեր վստահությունը նրա վրա:***

Կրկին անդրադարձեք գրատախտակին գրված դժվարություններին, և հիշեցրեք ուսանողներին առարկայական դասի մասին:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարող է այս սկզբունքը կիրառվել այս դժվարություններից մի քանիսի դեպքում:

Խորհեք հետևյալ օրինակներն օգտագործելու մասին, որ օգնեք ուսանողներին մտածել, թե ինչպես կարող են նրանք անել իրենց մասը և վստահել Տիրոջը, երբ նրանք ամրություն փնտրեն.

1. Դպրոցում ձեզ սպասվում է կարևոր քննություն, և դուք կցանկանայիք ուժ ստանալ այն լավ հանձնելու համար:
2. Դուք դժվարանում եք հրաժարվել վատ սովորությունից, և դուք չեք զգում, որ բավականաչափ ուժեղ եք դա միայնակ անելու համար:
3. Դուք դժվարություններ եք ունենում ձեր ընտանիքում, և դուք չեք զգում, որ կարող եք հաղթահարել ուժեղ զգացմունքներն առանց որևէ օգնության:

Խնդրեք ուսանողներին վերանայել Մոսիա 9.18–ի առաջին երեք տողերը: (Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք իրենց սուրբ գրություններում ընդգծեն այս տողերը:)

- Ե՞րբ եք դուք զգացել այս տողերում արտահայտված ճշմարտությունը:

Դուք կարող եք կիսվել ձեր սեփական փորձառությամբ, որը ցույց է տալիս մեզ ամրացնելու Տիրոջ ցանկությունը, երբ մենք անում ենք այն ամենը, ինչ կարող ենք, և մեր վստահությունը դնում ենք Նրա վրա:

Բացատրեք, որ նախքան Զենիֆը և իր ժողովուրդը գնացին ճակատամարտելու երկրորդ անգամ, Զենիֆը բացատրեց իր ժողովրդին, թե ինչու էին լամանացիներն ատելությամբ լցված նեփիացիների հանդեմ: Գրատախտակին գրեք *զայրանալ* և *անարդար վարվել* բառերը, և հարցրեք ուսանողներին, թե արդյոք նրանք կարող են բացատրել այս բառերի նշանակությունը: (Զայրանալ նշանակում է սաստիկ բարկանալ, անարդար վարվել նշանակում է վիրավորել կամ ոչ ճիշտ կամ անարդար ձևով վարվել:)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, որ **օրինազանցություն գործելը, բարկանալը և չներելը կարող է ազդեցություն թողնել սերունդների վրա,** բաժանեք նրանց զույգերի և թող յուրաքանչյուր զույգ կարդա Մոսիա 10.12–18: Խնդրեք նրանց փնտրել պատճառները, թե ինչու էին Լամանի և Լեմուելի սերունդները շարունակում ատել Նեփիի սերունդներին:

Այն բանից հետո, երբ զույգերը միասին կկարդան հատվածները, թող նրանք քննարկեն հետևյալ հարցերի պատասխանները։ (Մինչ ուսանողները կկարդան հանձնարարված հատվածները, հարցերը գրեք գրատախտակին, կամ յուրաքանչյուր զույգի համար գրեք հարցերը թերթիկների վրա։)

- Ինչո՞ւ էին լամանացիներն այդքան շատ ատում նեփիացիներին։
- Ինչո՞ւ ենք ցավ զգում, երբ բարկացած ենք կամ չենք ցանկանում ներել։
- Ինչպե՞ս կարող է անհատի բարկությունն ազդել նրա ընտանիքի վրա այժմ և ապագայում։

Կարդացեք Յոթանասունից Երեց Դոնալդ Լ. Հոլսթրոմի հետևյալ խոսքերը։ Խնդրեք ուսանողներին ուշադրություն դարձնել, թե ինչ կարող ենք մենք անել, երբ մենք վիրավորվում ենք կամ բարկանում ենք մեկի վրա։

«Եթե զգում եք, որ ճիշտ վերաբերմունքի չեք արժանացել ինչ-որ մեկի կողմից (կլինի ընտանիքի անդամ, ընկեր, Եկեղեցու անդամ, Եկեղեցու ղեկավար, թե գործընկեր), կամ սխալ բան է տեղի ունեցել (լինի դա սիրելիի մահ, առողջական խնդիրներ, ֆինանսական խնդիրներ, բռնություն, թե հակումներ), խնդրին նայեք ուղիղ և ձեր ողջ ուժով։ . . . Եվ առանց հապաղելու դարձեք դեպի Տերը։ Գործադրեք Նրա հանդեպ ձեր ողջ հավատքը։ Թույլ տվեք, որ Նա կրի ձեր բեռը։ Թույլ տվեք, որ Նրա շնորհը թեթևացնի ձեր բեռը։ . . . Երբեք թույլ մի տվեք աշխարհի հանգամանքները ձեզ հոգևոր վնաս պատճառեն» («Դարձեք դեպի Տերը», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2010, 80)։

Խնդրեք ուսանողներին խորհել հետևյալ հարցերից յուրաքանչյուրի մասին։ (Դուք կարող եք խրախուսել նրանց գրել իրենց պատասխանները իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային նոթատետրերում։)

- Դուք ունե՞ք սխալ վերաբերմունքի արժանացած լինելու կամ մեկի հանդեպ զայրույթ ունենալու որևէ զգացողություններ։
- Ո՞ւմ մոտ կարող եք դուք գնալ, որ օգնի ձեզ ներելու համար ձեր ջանքերում։ Ինչպե՞ս դուք կարող եք ապագայում խուսափել վիրավորված լինելու կամ բարկանալու զգացողություններից։

Խնդրեք ուսանողներին մտածել մի ժամանակահատվածի մասին, երբ նրանք ներել են ինչ-որ մեկին։ Հրավիրեք նրանցից մի քանիսին կիսվել, թե ինչ զգացողություն են ունեցել ներելիս կամ երբ թույլ են տվել, որ վիրավորվածությունը կամ զայրույթը հեռանան։ Կիսվեք ձեր իսկ վկայությամբ՝ ուրիշներին ներելու համար Տիրոջ օգնությունը փնտրելու մասին։

ԴԱՍ 58

# Մոսիա 11–12.17

## Նախաբան

Քանի որ Նոյ թագավորի հպարտ և վայրագ ապրելակերպը տարավ իր ժողովրդից շատերին ամբարշտության, Տերն ուղարկեց Աբինադի մարգարեին, որ նախազգուշացներ Նոյին և իր ժողովրդին: Աբինադին նախազգուշացրեց նրանց, որ նրանք ճորտության կտարվեին, եթե չապաշխարեին: Ժողովուրդն ընտրեց ականջ չդնել նախազգուշացումներին, և Նոյ թագավորը պատվիրեց, որ Աբինադին բանտ նետվեր:

***Հարմարեցնել դասերը ուսանողների կարիքներին***

Դասերի մեծամասնությունը պարունակում են ավելի շատ սուրբ գրքային ճշմարտություններ, քան դուք կարող եք մատուցել ձեզ տրված ժամանակում: Երբ դուք ուսումնասիրեք սուրբ գրությունները և ուսումնական ծրագիրը, փնտրեք Սուրբ Հոգու առաջնորդությունը, որ իմանաք, թե որ վարդապետությունները և սկզբունքներն են ամենակարևորը, որ ձեր ուսանողներն ուսումնասիրեն և քննարկեն դասի ժամանակ: Սուրբ Հոգին կօգնի հարմարեցնել յուրաքանչյուր դասը ուսանողների կարիքներին:

## Ուսուցանման առաջարկներ

### Մոսիա 11.1–19

*Նոյ թագավորն իր ժողովրդին տանում է դեպի ամբարշտություն*

Նախքան դասը գրատախտակին գրեք հետևյալ հարցերը.

*Ինչպե՞ս դուք կարձագանքեիք, եթե ձեր ծնողները հուշեին, որ ձեր որոշ ընկերներ վատ ազդեցություն էին ունենում ձեզ վրա:*

*Ինչպե՞ս դուք կարձագանքեիք, եթե Եկեղեցու մի ղեկավար ասեր, որ ձեր սիրած միջոցառումներից մեկը խոչընդոտում էր ձեր հոգևոր զարգացմանը:*

*Ինչպե՞ս դուք կարձագանքեիք, եթե մարգարեն դեմ խոսեր որոշակի մի ուրախ ժամանցի, որը դուք վայելում էիք:*

Հրավիրեք ուսանողներին մտքում խորհել այս հարցերի շուրջ: Ապա հարցրեք.

- Ինչո՞ւ են այս իրավիճակները դժվարին:
- Ի՞նչ կարող եք դուք անել, որ նման իրավիճակներում հետևեք ձեր ծնողների կամ ղեկավարների խորհրդին:
- Ինչո՞ւ են արդար մարդիկ հոժար հետևել խորհրդին նույնիսկ այն ժամանակ, երբ այն պահանջում է դժվար փոփոխություն իրենց կյանքում:

Բացատրեք, որ այս դասի ժամանակ ուսանողները կիմանան մի խումբ մարդկանց մասին, ովքեր չկամեցան հետևել մարգարեի խորհրդին:

Դասի ենթատեքստը տալու համար, հիշեցրեք ուսանողներին, որ Զենիֆն առաջնորդեց մի խումբ մարդկանց դեպի Նեփիի երկիրը, որտեղ նրանք ճորտության բերվեցին լամանացիների կողմից: Չնայած Զենիֆը չափից ավելի զերեռանդ լինելու պատճառով խաբվեց լամանացիների կողմից, նա լավ մարդ էր և նա սովորեցրեց իր ժողովրդին իրենց հույսը դնել Տիրոջ վրա: Նախքան մահանալը Զենիֆը իր որդուն՝ Նոյին, հաստատեց որպես թագավոր: (Տես Մոսիա 9-10:)

Բացատրեք, որ Նոյը ամբարիշտ մարդ էր: Որպեսզի ցույց տաք, թե ինչպես նրա ամբարշտությունն ազդեց իր ժողովրդի վրա, բաժանեք դասարանին երկու խմբի: Խնդրեք առաջին խմբին կարդալ Մոսիա 11.1–2, 5–7, և խնդրեք երկրորդ խմբին կարդալ Մոսիա 11.14–19: Հրավիրեք երկու խմբերին էլ փնտրել մանրամասներ, թե ինչպես Նոյ թագավորի ամբարշտությունն ազդեց ժողովրդի վրա: Օգնեք ուսանողներին վերլուծել այս հատվածները՝ տալով նմանատիպ հարցեր.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր ժողովուրդը հոժար աջակցել Նոյին իր ամբարշտությունում:
- Ինչո՞ւ «սին ու շողոքորթ խոսքերը» ժողովրդին մոլորության մեջ գցեցին: (Երբ ուսանողները քննարկեն այս հարցը, դուք կարող եք նշել, որ շողոքորթումը կեղծ գովասանքն է, որը սովորաբար տրվում է գովաբանվող անձին հմտորեն բանեցնելու համար:)
- Նոյի ժողովրդի այս պատմությունից ի՞նչ կարող ենք մենք սովորել այն մասին, թե ինչպես մենք պետք է արձագանքենք սին ու շողոքորթ խոսքերին: (Երբ մենք

հավատում ենք ուրիշների սին և շողոքորթ խոսքերին, մենք թույլ ենք տալիս, որ մեզ շեղեն։)

- Ի՞նչ կարող ենք մենք անել, երբ մեր շուրջը գտնվող բոլոր մարդիկ մեղսավոր կյանքով են ապրում։

## Մոսիա 11.20–12.17

### *Աբինադին նախազգուշացնում է ժողովրդին, որ նրանք ճորտության կբերվեն, եթե չապաշխարեն*

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 11.20։

- Ի՞նչ արեց Տերը Նեփիի ժողովրդին օգնելու համար։ (Նա մարգարե ուղարկեց, որ ապաշխարության կանչեր նրանց։)

Գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. ***Աստված ուղարկում է մարգարեներ, որ օգնի մեզ ապաշխարել և խուսափել թշվառությունից:*** Բացատրեք, որ Տերը երկու անգամ ուղարկեց Աբինադիին, որ նախազգուշացնի ժողովրդին։

Գրատախտակին գրեք հետևյալ ցանկը։ Յուրաքանչյուր սուրբ գրության հղման տակ թողեք բավականաչափ տեղ, որ գրեք դրա ամփոփումը։

| | Աբինադիի ուղերձը | Մարդկանց վերաբերմունքը |
|---|---|---|
| Առաջին նախազգուշացումը | Մոսիա 11.20–25 | Մոսիա 11.26–29 |
| Երկրորդ նախազգուշացումը | Մոսիա 12.1–8 | Մոսիա 12.9–17 |

Որպեսզի օգնեք հասկանալ Աբինադիի ուղերձը, խնդրեք ուսանողների կեսին կարդալ Մոսիա 11.20–25, որը պատմում է Աբինադիի առաջին նախազգուշացման մասին, և խնդրեք մյուս կեսին կարդալ Մոսիա 12.1–8, որը պատմում է նրա երկրորդ նախազգուշացման մասին։ Հրավիրեք յուրաքանչյուր խմբի ուսանողներին ամփոփել Աբինադիի ուղերձը, մինչ ուսանողներից մեկը գրի կառնի նրանց ամփոփումները գրատախտակին՝ համապատասխան հղումների տակ։

- Ի՞նչ տարբերություն եք դուք տեսնում Աբինադիի երկու նախազգուշացումների միջև։

Որպեսզի օգնեք ուսանողներին տեսնել այս տարբերությունները, նրանց ուշադրությունը հրավիրեք Մոսիա 11.20–25 հատվածների վրա և «եթե նրանք չապաշխարեն» և «եթե այս ժողովուրդը չապաշխարի» կրկնվող արտահայտությունների վրա։ Դուք կառող եք խրախուսել նրանց նշել այս արտահայտությունները։ Ապա խրախուսեք նրանց գտնել այս արտահայտությունների ձևակերպան և Մոսիա 12.1–8-ի ձևակերպման միջև եղած տարբերությունը։ Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները հատուկ ուշադրություն դարձնեն *ապառնի ժամանակով* օգտագործված բառերին։ (Օգնեք ուսանողներին տեսնել, որ ժողովուրդը կարող էր խուսափել այս հետևանքներից, եթե նրանք ապաշխարեին առաջին նախազգուշացումից հետո։ Քանի որ ժողովուրդը հրաժարվեց ապաշխարել, հետևանքները դարձան հաստատուն և ավելի խիստ Աբինադիի երկրորդ նախազգուշացման մեջ։)

- Ի՞նչ են ձեզ սովորեցնում այս տարբերությունները մարգարեի նախազգուշացմանը ականջ չդնելու հետևանքների մասին։
- Ի՞նչ վտանգ կա մեր մեղքերը շարունակելու և չապաշխարելու մեջ։

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ ժողովրդի արձագանքն առ Աբինադիի ուղերձները, խնդրեք ուսանողների կեսին կարդալ Մոսիա 11.26–29, նշելով ժողովրդի և նրանց թագավորի արձագանքն առ Աբինադիի առաջին ուղերձը։ Խնդրեք ուսանողների մյուս կեսին կարդալ Մոսիա 12.9–17, նշելով Աբինադիի երկրորդ

***Ուսանողներին հրավիրեք գրատախտակին գրել***

Երբ ուսանողները գրում են գրատախտակին, դուք կարող եք նայել դասարանին և շարունակեք հեշտացնել քննարկումը։ Սա ուսանողների ուշադրությունը գրավում է գրատախտակին և խթանում է մասնակցությունը։ Հիշեցրեք ուսանողներին, որ հարկավոր չէ գրի առնել բոլոր պատասխանները, այլ միայն մարդկանց մեկնաբանությունների գլխավոր բառերը։ Մասնակցությունը մեծացնելու համար, դուք կարող եք հրավիրել ուսանողներից մեկին գրել մի քանի րոպե և հետո մեկ այլ ուսանողի գրելու հնարավորություն տաք։

ուղերձին տրված արձագանքը: Խնդրեք յուրաքանչյուր խմբի ուսանողներին ամփոփել արձագանքները, մինչ ուսանողներից մեկը գրի է առնում ամփոփումները ցանկում:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ ժողովուրդը բարկությամբ արձագանքեց Աբինադիին, ով փորձում էր օգնել իրենց: Ձեր կարծիքով, ինչո՞ւ նրանք պաշտպանեցին Նոյ թագավորին, ով առաջնորդում էր նրանց դեպի թշվառություն:
- Մոսիա 11.29-ում մենք կարդում ենք, որ «ժողովրդի աչքերը կուրացված էին»: Ինչպե՞ս էր այդ ժողովուրդը կուրացել և չէին տեսնում ճշմարտությունը:

Երբ ուսանողները քննարկեն այս հարցերը, օգնեք նրանց հասկանալ հետևյալ սկզբունքը. **Մեղքը կարող է կուրացնել մեզ, որ չհասկանանք մարգարեի խոսքերի ճշմարտությունը:** Բացատրեք, որ իրենց կուրության մեջ մարդիկ մտածեցին, որ Նոյն իրենց ընկերն էր և Աբինադին իրենց թշնամին էր, երբ հակառակն էր ճշմարիտ: Խնդրեք ուսանողներին լուռ խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Դուք երբևէ բարկացե՞լ եք կամ փորձել արդարացնել ձեր սխալները, երբ որևէ մեկը ուղղել է ձեզ, չնայած, որ դուք հասկացել եք, որ նրանք ճիշտ էին:
- Ի՞նչ կարող եք դուք անել, որ ընդունեք ընտանիքի անդամի, տեղային Եկեղեցու ղեկավարների և մարգարեների խորհուրդը, երբ նրանք ձեզ խորհուրդ են տալիս, թե ինչպես հետևել Աստծո խոսքին:

Նշեք, որ շատ մարդիկ խրախուսում են մեզ ապրել համաձայն Աստծո խոսքի: Որպեսզի օգնեք ուսանողներին մտածել, թե ինչպես հետագայում պատշաճ ձևով արձագանքել նրանց, ովքեր մեզ խորհուրդ են տալիս փոխվել կամ ապաշխարել, կրկին անդրադարձեք այն երեք հարցերին, որոնք մինչև դասի սկսվելը գրել էիք գրատախտակին: Խնդրեք ուսանողներին պատասխանել հարցերից մեկին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային նոթատետրերում: Երբ նրանք բավականաչափ ժամանակ ունենան գրելու համար, հրավիրեք նրանցից մի քանիսին պատմել մի ժամանակահատվածի մասին, երբ նրանք օրհնվել են, քանի որ նրանք հետևել են ծնողների կամ ղեկավարների խորհուրդին: Խրախուսեք նրանց փնտրել և հետևել ծնողների, տեղային Եկեղեցու ղեկավարների և մարգարեների խորհուրդին:

## Սերտման սուրբ գրության կրկնություն

Ուսանողները ավելի լավ կհասկանան սուրբ գրությունների հատվածները, երբ նրանք իրենց սեփական հարցերը մտածեն հատվածների վերաբերյալ: Հրավիրեք ուսանողներին միասին աշխատել դասարանի հետ կամ փոքր խմբերով, գրելով մտքեր, որոնք ուղղված են հատուկ սերտման սուրբ գրության հատվածներին: (Դուք կարող եք ընտրել մի խումբ հատվածներ, որոնք կցանկանայիք, որ ուսանողները սովորեին և վերանայեին:) Ապա թող նրանք ձեզ համար կարդան իրենց մտքերը: Դուք միավորներ կվաստակեք, եթե ճիշտ կռահեք սերտման սուրբ գրության հատվածը: Դասարանը միավորներ կվաստակի, եթե դուք չկարողանաք ճիշտ կռահել:

*Նշում.* Եթե դուք ժամանակ չունեք, որ օգտագործեք այս վարժությունը որպես այս դասի մաս, դուք կարող եք օգտագործել այն մեկ այլ օր: Կրկնության այլ վարժություններ կարող եք գտնել այս ձեռնարկի վերջում:

ԴԱՍ 59

# Մոսիա 12.18–14.12

## Նախաբան

Երբ Նոյ թագավորը և նրա քահանաները հարցեր տվեցին Աբինադիին, մարգարեն հանդիմանեց նրանց պատվիրանները չուսուցանելու կամ չպահելու համար: Նոյ թագավորը պատվիրեց իր քահանաներին սպանել Աբինադիին, սակայն Աստված պաշտպանեց Աբինադիին և զորություն տվեց նրան, որ շարունակեր իր ուղերձը: Մեջբերելով Եսայիային, Աբինադին վկայեց Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության մասին:

## Ուսուցանման առաջարկ

### Մոսիա 12.18–13.26

*Աբինադին հանդիմանեց Նոյ թագավորին և նրա քահանաներին պատվիրանները չպահելու և չուսուցանելու համար*

Դասը սկսելու համար գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունները.

*Ես ԳԻՏԵՄ, թե ինչ է նշանակում ապրել համաձայն Հիսուս Քրիստոսի ավետարանի:*

*Ես ԱՊՐՈՒՄ ԵՄ Հիսուս Քրիստոսի ավետարանի համաձայն:*

Խնդրեք ուսանողներին լուռ խորհել, թե որքանով են նախադասությունները նկարագրում իրենց՝ օգտագործելով 1-10 միավորները (որտեղ 10-ը ներկայացնում է, որ նախադասությունը շատ լավ է իրենց նկարագրում):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր կարողանալ անկեղծորեն իրագործել այս երկու նախադասությունները:

Բացատրեք, որ երբ ուսանողները քննարկեն Աբինադիի խոսքերը, նրանք ավելի շատ բան կսովորեն ավետարանն իմանալու և ապրելու կարևորության մասին: Հիշեցրեք նրանց, որ նախորդ դասի ժամանակ նրանք քննարկել են Նոյ թագավորի և նրա քահանաների պատմությունը, թե ինչպես նրանք բանտ գցեցին Աբինադիին՝ իրենց դեմ արված մարգարեությունների պատճառով (տես Մոսիա 12.1–17): Ամփոփեք Մոսիա 12.18–24, բացատրելով, որ Աբինադին ավելի ուշ բերվեց Նոյ թագավորի և նրա քահանաների առջև: Քահանաները հարցեր տվեցին նրան, փորձելով շփոթեցնել նրան ասելու մի բան, որը նրանք կկարողանային օգտագործել իր դեմ: Ապա նրանցից մեկը խնդրեց նրան բացատրել մի սուրբ գրության հատված:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 12.25–30, փնտրելով Աբինադիի դրդապատճառները Նոյին և նրա քահանաներին հանդիմանելու համար: Այն բանից հետո, երբ ուսանողները կզեկուցեն իրենց գտածը, հարցրեք.

- Աբինադին ասաց, որ Նոյը և նրա քահանաները խեղաթյուրել են Տիրոջ ուղիները (տես Մոսիա 12.26): Այլ կերպ ասած, նրանք ապականել են սուրբ բաները և շեղվել են ճիշտ ապրելու ուղուց: Ինչպե՞ս էին Նոյը և քահանաները խեղաթյուրել Տիրոջ ուղիները:

Որպեսզի օգնեք ուսանողներին պատասխանել այս հարցին, դուք կարող եք նշել, որ քահանաները հայտարարում էին, որ փրկությունը գալիս էր Մովսեսի օրենքի միջոցով (տես Մոսիա 12.32): Այնուամենայնիվ, նրանք չէին պահում Տասը Պատվիրանները, որոնք այդ օրենքի մի մասն էին, և նրանք չէին սովորեցնում ժողովրդին պահել պատվիրանները (տես Մոսիա 11.1–15, 12.27–29, 37, 13.25–26):

Ցույց տվեք գրատախտակին գրված նախադասությունները:

- Գնահատելով 1-10 միավորներով, ձեր կարծիքով որքա՞ն լավ էին նախադասություններից յուրաքանչյուրը նկարագրում Նոյին և նրա քահանաներին:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 12.31-33: Խնդրեք դասարանին ներկայացնել սկզբունքը, որն Աբինադին սովորեցրեց Նոյին և նրա

քահանաներին: (Նա սովորեցրեց, որ **եթե մենք պահենք Աստծո պատվիրանները, մենք կփրկվենք:**)

Կիսվեք Յոթանասունից Երեց Ֆ. Մելվին Համմոնդի տված հետևյալ օրինակով: Խրախուսեք ուսանողներին լսել պատվիրանները իմանալու և պահելու կարևորության մասին:

«Շատ տարիներ առաջ մի վերադարձած միսիոներ կանգնած էր հաղորդության ժողովին և բարձրաձայն հայտարարում էր, որ նա գիտեր սուրբ գրությունների ուսումնասիրություններից, որ ավետարանը ճիշտ է և որ նա կտա իր կյանքը Տիրոջ և Նրա Եկեղեցու համար: Երկու շաբաթ անց նա կանգնել էր իր ուսանողական ծխի եպիսկոպոսի առաջ, խոնարհված և վախեցած, երբ նա խոստովանեց, որ թուլության պահին նա կորցրել էր իր առաքինությունը: Ինչ-որ կերպ նրա հայտարարած նվիրվածությունը առ Փրկիչը մոռացվել էր բուռն զգացմունքների շրջապտույտում: Չնայած լինելով Աստծո խոսքն ուսումնասիրող, նա չէր կապել իր սովորածը ամենօրյա, աշխարհիկ, քրիստոսանման ապրելակերպի պրակտիկ կիրառման հետ:

Մի գեղեցիկ աղջիկ աշխատում էր բավարարել բոլոր պահանջները, որ ստանար Երիտասարդ Կանանց Արժևորումը: Նրա անձնական նպատակները մտածված գրի էին առնված և զգուշությամբ դրված էին նրա նոթատետրում: Անհողդողդ լինելով, նա գրել էր, որ նա կժամադրվեր միայն արժանավոր երիտասարդ տղաների հետ և կգտներ այն հատուկ մեկին, ով իրեն տաճար կտաներ: Երբ նա տասնութ տարեկան էր, նրա նպատակները մոռացվեցին: Նա փախավ մի երիտասարդ տղայի հետ, ով եկեղեցու անդամ չէր: Շատ արցունքներ հոսեցին նրանց աչքերից, ովքեր ամենաշատն էին սիրում նրան՝ նրա ծնողները, ուսուցիչները և ընկերները: Նա գլորվել էր օրենքի պահանջների և ճշմարիտ աշակերտության իրականության միջև եղած սարսափելի անդունդը» (“Eliminating the Void between Information and Application,” CES satellite training broadcast, Aug. 2003, 17, si.lds.org):

- Ինչո՞ւ պատվիրաններն իմանալը բավական չէ փրկությանը արժանանալու համար:

Ցուցադրեք Աբինադին Նոյ թագավորի առջև նկարը (62042; *Gospel Art Book* [2009], no. 75): Խնդրեք ուսանողներին նկարագրել, թե ինչ է տեղի ունենում նկարում: (Թագավորը պատվիրել էր, որ Աբինադին սպանվեր: Տերը պաշտպանում է Աբինադիին:) Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այս պատմությունը, թող երեք ուսանող կանգնեն և ներկայացնեն տպավորիչ ընթերցանություն: Ուսանողներից մեկը կլինի հեղինակը: Երկրորդ ուսանողը կկարդա Նոյ թագավորի խոսքերը: Երրորդ ուսանողը կկարդա Աբինադիի խոսքերը: Առաջինը, խնդրեք հեղինակին և Նոյի դերը խաղացողին կարդալ իրենց մասերը Մոսիա 13.1–2–ում: Ապա թող Աբինադիի դերը խաղացող ուսանողն ի պատասխան կարդա Մոսիա 13.3–4-ը: Ապա հեղինակը կկարդա Մոսիա 13.5–6–ը: Ապա Աբինադիի դերը խաղացող ուսանողը կավարտի Մոսիա 13.7–11–ի խոսքերով:

***Տպավորիչ ընթերցանություն***

Սուրբ գրությունների տպավորիչ ընթերցանությունը կարող է օգնել ուսանողներին պատկերացնել սուրբ գրությունների մարդկանց և իրադարձությունները: Խրախուսեք ուսանողներին դարձնել փորձառությունը հետաքրքիր և հաճելի՝ առանց սուրբ գրությունների սրբությունը նսեմացնելու:

Ուսանողների ուշադրությունը հրավիրեք Մոսիա 13.11–ի վրա:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում պատվիրանները գրված ունենալ ձեր սրտի վրա: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ պատվիրանները մեր սրտի վրա գրված ունենալու համար, մենք պետք է իմանանք *և* ապրենք ավետարանով:)

Նշեք, որ նախքան Նոյը կհրամայեր սպանել Աբինադիին, Աբինադին սկսել էր անգիր ասել մի սուրբ գրության հատված, որը հավանաբար ծանոթ էր թագավորին և նրա քահանաներին և որը վկայում էր նրանց ամբարշտության մասին: Դասարանը թող մտքում կարդա Մոսիա 12.34–36, որ տեսնի, թե արդյոք այն սուրբ գրությունը, որն Աբինադին կարդաց Նոյ թագավորի և նրա քահանաների համար, ծանոթ է թվում: Օգնեք նրանց հասկանալ, որ Աբինադին սկսել էր անգիր ասել Տասը Պատվիրանները:

Գրատախտակին նկարեք երկու մեծ, դատարկ քարե տախտակներ: Հրավիրեք ուսանողներից մեկին գրել Տասը Պատվիրաններից մեկն այս տախտակներից մեկի վրա: Ուսանողը թող կավիճը փոխանցի մեկ այլ ուսանողի, որպեսզի նա գրի Տասը Պատվիրաններից ևս մեկը: Կրկնեք այս գործընթացը, մինչև ուսանողները կգրեն այն բոլոր պատվիրները, որոնք կարող են հիշել: Հրավիրեք նրանց ստուգել իրենց պատասխանները Մոսիա 12.34–36 և 13.12–24–ում: Դուք կարող եք խրախուսել նրանց ընդգծել Տասը Պատվիրաններն այս հատվածներում և Ելից 20.3–17-ում (սերտման սուրբ գրության հատված):



Կիսվեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հետևյալ խոսքերով.

«Տասը Պատվիրանները գրվել են Եհովայի մատով քարե տախտակների վրա փրկության և ապահովության համար, Իսրայելի զավակների ապահովության և երջանկության համար, և բոլոր սերունդների համար, որոնք պիտի գային նրանցից հետո» (“Our Solemn Responsibilities,” *Ensign*, Nov. 1991, 51)։

Խրախուսեք ուսանողներին վերանայել Տասը Պատվիրանները և լուռ խորհել դրանք պահելու իրենց անձնական ջանքերի շուրջ։

## Մոսիա 13.27–14.12

### *Աբինադին սովորեցնում է փրկության մասին Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով*

Գրատախտակին գրեք հետևյալը (դուք կարող եք գրել այն նախքան դասի սկսվելը)։ Խնդրեք ուսանողներին մտածել, թե ինչ կարելի է գրել դատարկ մասում։

> *«Մեր ողջ հնազանդությունից և բարի գործերից հետո, մենք չենք կարող փրկվել մահից կամ մեր անձնական մեղքերի ազդեցություններից առանց . . .»*

Բարձրաձայն կարդացեք Երեց Դալլին Հ. Օքսի հետևյալ խոսքերը.

«Մեր ողջ հնազանդությունից և բարի գործերից հետո, մենք չենք կարող փրկվել մահից կամ մեր անձնական մեղքերի ազդեցություններից առանց շնորհի, որ տրվում է Հիսուս Քրիստոսի քավությամբ։ Մորմոնի Գիրքը սա շատ պարզ է դարձնում։ Այն սովորեցնում է, որ «փրկությունը չի գալիս միայն օրենքով» (Մոսիա 13.28)։ Այլ կերպ ասած, փրկությունը չի գալիս պարզապես պատվիրանները պահելով։ . . . Նույնիսկ նրանք, ովքեր փորձում են հնազանդվել և ծառայել Աստծուն իրենց ողջ սրտով, զորությամբ, մտքով և ուժով, «անպիտան ծառաներ» են (Մոսիա 2.21)։ Մարդը չի կարող վաստակել իր սեփական փրկությունը» (“Another Testament of Jesus Christ,” *Ensign*, Mar. 1994, 67)։

Լրացրեք գրատախտակի նախադասությունը, գրելով *Հիսուս Քրիստոսի քավության շնորհով։* Ապա խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մոսիա 13.28, 32–35։ Խնդրեք դասարանին փնտրել բառեր և արտահայտություններ, որոնք առնչվում են Երեց Օքսի ելույթի հետ։ Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչ են իրենք գտել։ (Հնարավոր պատասխանները ներառում են «քավություն», «Աստծո քավության», «Մեսիայի գալստյան» արտահայտությունները և խոստումը, որ «Աստված ինքը պիտի [գար] ներքև՝ մարդկանց զավակների մեջ»։)

Բացատրեք, որ Մոսիա 13.28 և 32-ում Աբինադիի նշած «օրենքը» վերաբերվում է Մովսեսի օրենքին, որը ներառում էր հստակ պատվիրաններ զոհաբերությունների, տոների և այլ միջոցառումների մասին։ Օրենքը տրվել էր, որ օգներ իսրայելացիներին հիշել Աստծուն և սպասել Հիսուս Քրիստոսի Քավությանը։ Ժամանակի ընթացքում շատ իսրայելացիներ սկսեցին չհասկանալ Հիսուս Քրիստոսի դերը որպես իրենց Փրկիչ, մտածելով, որ իրենք կարող էին փրկվել պարզապես Մովսեսի օրենքին հնազանդվելու միջոցով։

- Աբինադին վկայեց, որ **որևէ մարդ չի կարող փրկվել, մինչև դա չլինի Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով** (տես Մոսիա 13.28, 32)։ Ինչո՞ւ է մեզ համար կարևոր հասկանալ այս ճշմարտությունը։

Բացատրեք, որ երբ Աբինադին խոսեց Նոյի և քահանաների հետ, նա մեջբերեց Եսայիայի որոշ մարգարեությունները Հիսուս Քրիստոսի մասին։ Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 14.3–12։ Խնդրեք նրանց փնտրել բառեր կամ արտահայտություններ, որոնք նկարագրում են, թե ինչ է արել Փրկիչը նրանց փրկություն բերելու համար։

Այս հատվածների ուսումնասիրությանը մի քանի րոպե տրամադրելուց հետո խնդրեք նրանց կիսվել, թե ինչ են իրենք գտել։ Դուք կարող եք նրանց պատասխանները գրել գրատախտակին։ Որպեսզի օգնեք ուսանողներին մտածել ցավի ու վշտի մասին, որոնք Փրկիչը տարավ նրանց փոխարեն և որպեսզի օգնեք նրանց մտածել իրենց մեղքերի համար Նրա տարած չարչարանքների մասին, նրանց համար կարդացեք հետևյալ նախադասությունները։ Հրավիրեք նրանց իրենց մտքում լրացնել այս նախադասությունները.

Հիսուս Քրիստոսը տարել է իմ տառապանքները, ինչպիսին են . . .

Հիսուս Քրիստոսը վիրավորվեց և հարվածվեց իմ օրինազանցությունների համար, ինչպիսին են . . .

Հարցրեք ուսանողներին, թե իրենց համար ինչ նշանակություն ունի հետևյալ նախադասությունը. «Նրա վերքերով ենք մենք բժշկված» (Մոսիա 14.5)։ Դուք կարող եք բացատրել, որ *վերքեր* բառը հատկապես վերաբերվում է այն վերքերին, որոնք մնացին Փրկչի մարմնի վրա, երբ նրան պատժեցին կամ մտրակեցին (տես Հովհաննես ԺԹ.1)։ Ընդհանուր առմամբ, բառը վերաբերվում է Նրա բոլոր տառապանքներին։

Այն բանից հետո, երբ ուսանողները կկիսեն իրենց զգացմունքներն այս նախադասության մասին, վկայեք, որ Փրկչի տառապանքների և պատվիրանները պահելու համար մեր սեփական ջանքերի միջոցով մենք կարող ենք խաղաղություն և ներում ստանալ այս կյանքում և փրկություն գալիք կյանքում (տես ՎԵՈՒ 59.23, Հավատո Հանգանակ 1.3)։ Հրավիրեք ուսանողներին ցուցադրել իրենց սերը և երախտագիտությունը Փրկչի հանդեպ պատվիրանները պահելու միջոցով։

ԴԱՍ 60

# Մոսիա 15-17

## Նախաբան

Երբ Աբինադին շարունակեց քարոզել Նոյ թագավորին և նրա քահանաներին, նա վկայեց որպես Քավիչ Հիսուս Քրիստոսի դերի մասին: Նոյի քահանաներից մեկը՝ Ալման, հավատաց Աբինադիին: Նոյ թագավորը դուրս հանեց Ալմային իր արքունիքից և պատվիրեց իր ծառաներին սպանել նրան, սակայն Ալման փախավ և գրի առավ այն ուսմունքները, որոնք լսել էր Աբինադիից: Այն բանից հետո, երբ Աբինադին հայտնեց այն ուղերձը, որը Տերն ուղարկել էր իրեն կիսելու, Նոյ թագավորը և նրա քահանաները սպառնացին սպանել նրան, եթե նա հետ չվերցներ իր ասածները: Մերժելով հրաժարվել իր վկայությունից նա ընկավ՝ «տանելով մահ կրակով» և «կնքելով իր խոսքերի ճշմարտացիությունն իր մահով» (Մոսիա 17.20):

## Ուսուցանման առաջարկներ

### Մոսիա 15–16

*Աբինադին սովորեցնում է Հիսուս Քրիստոսի դերի մասին՝ որպես Քավիչ*

Ուսանողներին տվեք երկու բոպե, որ գտնեն *փրկագնել, փրկագնում է, փրկագնել է* և *փրկագնում* բառերը Մոսիա 15–16–ում: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք ընդգծեն այս բառերը: Բացատրեք, որ երբ նույն բառը տարբեր ձևերով կրկնվում է սուրբ գրության հատվածում, դա կարող է ազդանշան լինել, որ բառը կարևոր դեր ունի գրողի ուղերձում: Խրախուսեք ուսանողներին այս դասի ընթացքում ուշադրություն դարձնել փրկագնված լինելու մասին Աբինադիի ուսմունքներին:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ Հիսուս Քրիստոսի դերը որպես Քավիչ, գրատախտակին գծեք հետևյալ գծապատկերը.

Տուգանքներ

Պատիժ

Օրինազանց

Ցույց տվեք «Օրինազանց» անունը կրող պատկերը և խնդրեք ուսանողներին պատկերացնել, որ նրանք հանցանք են գործել: Նրանք որպես պատիժ դատապարտվել են վճարել մեծ տուգանքներ, և չկա օրինական և ազնիվ ճանապարհ, որ նրանք կարողանան խուսափել ինքնուրույն տուգանք վճարելուց: Հարցրեք ուսանողներին, թե ինչպես իրենց կզգան նման պատժի առջև կանգնելիս: Ապա խնդրեք նրանց պատկերացնել, որ ընտանիքի մի անդամ կամ ընկեր առաջարկում է նրանց փոխարեն վճարել տուգանքը:

- Ի՞նչ կզգաք այս մարդու հանդեպ:

Բացատրեք, որ տուգանքը վճարելով ընտանիքի անդամը կամ ընկերը կփրկագնի նրանց իրենց պատժից: *Փրկագնել* բառը նշանակում է ազատել պարտքից կամ ազատել փրկագին վճարելով: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին գրել այս սահմանումները Մոսիա 15–ի հատվածներից մեկի կողքին, որը պարունակում է *փրկագնել* բառի որևէ ձև:

Գրեք *Մեզ Օրինազանց* բառի տակ: Գրեք *Արդարադատություն Պատիժ* բառի տակ: Բացատրեք, որ քանզի մենք մեղանչել ենք և չենք պահել Աստծո օրենքները, մենք պետք է պատժվենք: Այլ կերպ ասած, մենք պետք է բավարարենք արդարադատության պահանջները: Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ խոսքերը: Խնդրեք ուսանողներին ուշադրություն դարձնել Աստծո օրենքները չպահելու որոշ հետևանքների վրա.

«Արդարադատությունը . . . պահանջում է, որ յուրաքանչյուր չպահված օրենք բավարարվի: Երբ դուք հնազանդվում եք Աստծո օրենքներին, դուք օրհնվում եք, սակայն չկա վաստակված լրացուցիչ երաշխիք, որը կարող է պահվել ձեր օրինազանցությունները բավարարելու համար: Եթե խնդիրը չի լուծվում, օրինազանցությունները կարող են պատճառ դառնալ, որ ձեր կյանքը դառնա թշվառ և ձեզ հեռու կպահի Աստծո մոտ վերադառնալուց» (“The Atonement Can Secure Your Peace and Happiness,” *Ensign* or *Liahona*, Nov. 2006, 42):

- Համաձայն Երեց Սքոթի, որո՞նք են Աստծո օրենքները չպահելու որոշ հետևանքները:

Երբ ուսանողները ներկայացնեն Աստծո օրենքները չպահելու հետևանքները, գրատախտակից ջնջեք *Տուգանքներ* բառը: Դրա փոխարեն գրեք *Թշվառություն* և *Դուրս հանել Աստծո ներկայությունից*: Ուսանողները թող մտքում կարդան Մոսիա 15.1, 8–9: Դուք կարող եք տալ հետևյալ հարցերը, որ օգնեք նրանց հասկանալ այդ հատվածների որոշ վարդապետությունը.

- *Բարեխոս* բառը վերաբերվում է այն անձին, ով կանգնում է երկու մարդկանց կամ խմբերի միջև, որ օգնի նրանց համաձայնության գալ, այլ կերպ ասած՝ ներդաշնակություն հաստատել միմյանց միջև: Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում, որ Հիսուս Քրիստոսը եկել է «բարեխոսելու» մեզ համար:
- *Միջև* բառը նշանակում է մեջտեղում: Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում, որ Փրկիչը կանգնում է «[մեր] և արդարադատության միջև»: Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում բավարարել «արդարադատության պահանջները»:

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ արդարադատությունը պահանջում է, որ մենք պատժվենք մեր մեղքերի համար: Փրկիչը չի ջնջում արդարադատության պահանջները. Նա կանգնում է մեր և արդարադատության միջև, որ բավարարի արդարադատության պահանջները՝ մեր փոխարեն պատիժը կրելով: Նա վճարել է գինը՝ մեզ փրկելու համար, մեզ պատժից ազատելու համար: Գրատախտակին դրեք Փրկչի նկարը (ինչպիսին է Տեր Հիսուս Քրիստոսը [64001] վերնագրով նկարը) օրինազանցության և պատժի միջև:

Օրինազանցություն
Մեզ



Պատիժ
Արդարադատություն
Թշվառություն
Հեռացնել Աստծո ներկայությունից

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 15.5–7, մտածելով այն գնի մասին, որը Հիսուս Քրիստոսը վճարեց նրանց փրկելու համար՝ կանգնելու նրանց և արդարադատության պահանջների միջև:

Գրատախտակի վրա գրեք հետևյալ նախադասությունները.

| *Նրանք, ովքեր ընտրում են փրկությունը* | *Նրանք, ովքեր մերժում են փրկությունը* |
|---|---|
| Մոսիա 15.11–12 | Մոսիա 16.2–5, 12 |

Դասարանը բաժանեք հավասար մասերի: Խնդրեք ուսանողների կեսին ուսումնասիրել Մոսիա 15.11–12, փնտրելով այն մարդկանց բնորոշ գծերը, ովքեր ընտրել են փրկությունը: Խնդրեք դասարանի մյուս կեսին ուսումնասիրել Մոսիա 16.2–5, 12, փնտրելով այն մարդկանց բնորոշ գծերը, ովքեր մերժում են փրկությունը: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո խնդրեք առաջին խմբին կիսվել, թե ինչ են իրենք գտել:

- Համաձայն Մոսիա 15.11–12, ովքե՞ր կփրկվեն իրենց մեղքերից: (Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ **Հիսուս Քրիստոսը բավարարում է արդարադատության պահանջները նրանց համար, ովքեր ականջ են դնում մարգարեների խոսքերին, հավատում են Իր փրկագնող զորությանը և ապաշխարում են իրենց մեղքերից:**)

Բացատրեք, որ գինը, որը Փրկիչը վճարեց, անձնական պարգև է յուրաքանչյուրի համար, ով կընտրի որակավորվել փրկության համար՝ ապաշխարելով և ձգտելով պահել պատվիրանները և Տիրոջ հետ կապած ուխտերը:

Քավության անձնական էությունը նշելու համար, հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 15.10: Ապա ուսանողների ուշադրությունը հրավիրեք այդ հատվածի «նա պիտի տեսնի իր սերունդը» արտահայտության վրա: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք ընդգծեն այս արտահայտությունը: Բացատրեք, որ այս հատվածում *սերմ* բառը վերաբերվում է երեխաներին:

- Ե՞րբ ենք մենք սովորել «Քրիստոսի զավակները» դառնալու մասին: (Հիշեցրեք ուսանողներին այս թեմայի շուրջ ասած Բենիամին թագավորի խոսքերը, որոնք գտնվում են Մոսիա 5–ում: Տես նաև դաս 55:)

Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները անհատականացնեն Մոսիա 15.10-ը՝ ՝ իրենց անունը գրելով «իր սերունդը» արտահայտության տեղում: Հրավիրեք նրանց մի պահ խորհել, թե ինչ է սա նշանակում նրանց համար:

- Ինչպե՞ս է այս ուսմունքն ազդում Քավության ձեր հասկացողության վրա:

Խնդրեք ուսանողներին, ովքեր կարդացել են Մոսիա 16.2–5, 12, կիսվել, թե ինչ են նրանք գտել նրանց մասին, ովքեր հրաժարվում են փրկվել: Որպեսզի ընդգծեք փրկությունը մերժելու լրջությունը, խնդրեք բոլոր ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 16.5:

- Ի՞նչ է պատահում գրատախտակի գծապատկերում, եթե օրինազանցը շարունակում է մնալ մեղքերի մեջ և հրաժարվում է ապաշխարել: (Երբ ուսանողները պատասխանեն, գծապատկերից հեռացրեք Հիսուս Քրիստոսի նկարը: Դուք կարող եք նշել, որ այդպիսի անձնավորության համար «կարծես ոչ մի փրկագնում չէր արվել»:)

Հրավիրեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 19.16–17, որպեսզի բացահայտեն, թե ինչ կպատահի նրանց հետ, ովքեր հրաժարվում են ապաշխարել և ընդունել Փրկչի փրկագնումը: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին գրել *ՎԱՈՒ 19.16–17* իրենց սուրբ գրություններում Մոսիա 16.5-ի կողքին:

Փրկչի նկարը հետ դրեք իր տեղը գրատախտակի վրա:

- Ի՞նչ ճշմարտություններ դուք սովորեցիք այսօր ձեր Քավչի մասին:

Այն բանից հետո, երբ ուսանողները կպատասխանեն այս հարցին, բացատրեք, որ ի լրացում այն ուսմունքի, որ Փրկիչն առաջարկում է փրկել մեզ մեր մեղքերի պատժից, Աբինադին ուսուցանեց, որ Փրկիչը փրկում է մեզ մահից: Խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մոսիա 16.6–11: Կիսվեք ձեր վկայությամբ, որ **Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ բոլոր մարդիկ հարություն կառնեն:** Դուք կարող եք նաև նշել, որ արդարները հարություն կառնեն երջանիկ մի վիճակում:

Հրավիրեք ուսանողներին գրել իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային օրագրերում իրենց զգացմունքների մասին առ իրենց Քավիչը և թե ինչ կանեն նրանք, որպեսզի կարողանան ստանալ Նրա առաջարկած փրկագնումը:

## Մոսիա 17

### *Ալման հավատում է Աբինադիին և դուրս է գցվում. Աբինադին այրվում է*

Հարցրեք ուսանողներին.

- Դուք երբևէ տեսե՞լ եք, որ որևէ մեկը պայքարի ճշմարտության համար, երբ դա դժվար է եղել նրանց համար անել: Ի՞նչ է պատահել:

Ցուցադրեք Աբինադին Նոյ թագավորի առջև նկարը (62042; *Gospel Art Book* [2009], no. 75): Ամփոփեք Մոսիա 17.1–6, բացատրելով, որ երբ Աբինադին ավարտեց իր ուղերձը, Ալմա անունով մի քահանա փորձեց համոզել թագավորին, որ Աբինադին ճիշտ էր ասում և պետք է ազատվեր: Թագավորը դուրս գցեց Ալմային և ծառաներ ուղարկեց, որ սպանեն նրան: Ալման թաքնվեց և գրի առավ Աբինադիի խոսքերը: Երեք օր անց թագավորը և իր քահանաները Աբինադիին մահվան դատապարտեցին:

Ուսանողներին զույգերի բաժանեք: Խնդրեք նրանց ուսումնասիրել հետևյալ սուրբ գրությունների հատվածներն իրենց զույգերի հետ. Մոսիա 17.7–10, որն Աբինադիի ընտրությունների մասին է, և Մոսիա 17.11–12, որը թագավոր Նոյի ընտրությունների մասին է: Խնդրեք նրանց համեմատել Աբինադիի ընտրությունները Նոյ թագավորի ընտրությունների հետ: Նաև խնդրեք նրանց քննարկել հետևյալ հարցերը: (Դուք կարող եք այս հարցերը գրել գրատախտակին:)

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ Աբինադիի խոսքերն այդպիսի ազդեցություն թողեցին Նոյ թագավորի վրա: (Տես Մոսիա 17.11:) Ինչպե՞ս էին Նոյ թագավորի քահանաներն ազդում նրա վրա: (Տես Մոսիա 17.12–13:)
- Ի՞նչ դաս մենք կարող ենք քաղել Աբինադիի օրինակից: (Ուսանողների տված պատասխաններից մեկը կարող է լինել հետևյալը. **մենք կարող ենք հավատարիմ լինել Աստծուն ամեն պայմաններում:**)

Եթե հնարավոր է, տվեք ուսանողներին Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հետևյալ խոսքերի օրինակը.

«*Ուժեղ եղեք հանուն ճշտի պայքարում:* Մենք ապրում ենք փոխզիջման դարաշրջանում: . . . Ամեն օր հանդիպող իրավիճակներում մենք գիտենք, թե որն է ճիշտը: . . . Մենք պետք է ուժեղ լինենք մեր համոզմունքներին հետևելու համար» (“Building Your Tabernacle,” *Ensign*, Nov. 1992, 52):

Դուք կարող եք հրավիրել ուսանողներին գրել *Ես հավատարիմ կլինեմ Աստծուն ամեն պայմաններում* իրենց սուրբ գրություններում Մոսիա 17.9–12–ի կողքին: Ուսանողների ուշադրությունը հրավիրեք Աբինադիի վերջին խոսքերի վրա, որոնք գտնվում են Մոսիա 17.19-ում. «Ո՜վ Աստված, ընդունիր իմ հոգին»: Ապա խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 17.20:

- Ի՞նչ տպավորություն են թողնում ձեզ վրա Աբինադիի վերջին խոսքերը:

Խնդրեք ուսանողներին գրել հետևյալ հարցերի պատասխաններն իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում.

- Ի՞նչ կանեք դուք, որ հավատարիմ լինեք Աստծուն ամեն պայմաններում:

Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց գրածով: Նաև հարցրեք, թե արդյոք որևէ ուսանող կցանկանա կիսվել, թե ինչ նշանակություն ունի ավետարանը նրանց համար և ինչ են իրենք արել անցյալում դժվարին պահերին Տիրոջը հավատարիմ լինելու համար: Ավարտեք ձեր վկայությամբ:

# Տնային ուսումնասիրության դաս

## Մոսիա 7–17 (Մաս 12)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Մոսիա 7–17–ում (մաս 12) ուսանողների սովորած վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը չի նախատեսված ուսուցանել որպես ձեր դասի մի մաս: Ձեր ուսուցանած դասը կենտրոնանում է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, երբ դուք խորհեք ուսանողների կարիքների մասին:

#### Օր 1 (Մոսիա 7–8)

Երբ ուսանողներն ուսումնասիրեցին Մոսիա 7–8, նրանք կենտրոնացան անօրինության և գրության միջև եղած կապի վրա: Լիմքի թագավորի խոսքերից նրանք նաև սովորեցին, որ մեր անօրինություններն ընդունելը և դրանց համար զղջալը կարող է առաջնորդել մեզ, որ դառնանք դեպի Տերը ազատման համար: Ամմոնը վստահեցրեց Լիմքիին, որ Տերը տալիս է մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ մարդկությանն օգնելու համար:

#### Օր 2 (Մոսիա 9–10)

Ուսանողները ավելի շատ բան սովորեցին այն մասին, թե ինչպես նեփիացիների մի խումբ, որ կոչվում էր Զենիֆի ժողովուրդ, հաստատվեց լամանացիների մեջ: Ընդգծվեց հետևյալ ճշմարտությունը, երբ Զենիֆը և նրա ժողովուրդը գնացին ճակատամարտելու անհաշտ լամանացիների դեմ. Տերը կուժեղացնի մեզ, եթե մենք անենք այն ամենը, ինչ կարող ենք և մեր հույսը դնենք Նրա վրա:

#### Օր 3 (Մոսիա 11–14)

Նոյ թագավորը առաջնորդեց իր ժողովրդին կատարելու պղծություններ և ամբարշտություններ: Ուսանողները բացահայտեցին, որ Աստված ուղարկում է մարգարեների, որ օգնի մեզ ապաշխարել, խուսափել թշվառությունից և ձեռք բերել փրկություն: Աբինադի մարգարեի ուսմունքների միջոցով ուսանողները սովորեցին, որ եթե մենք պահում ենք Աստծո պատվիրանները, մենք կփրկվենք: Նրանք նաև սովորեցին, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը փրկության աղբյուր է:

#### Օր 4 (Մոսիա 15–17)

Նախքան իր նահատակությունը Աբինադին արիաբար հայտարարեց, որ Հիսուս Քրիստոսի Ավետարանը բավարարում է արդարադատության պահանջները բոլոր նրանց համար, ովքեր հավատում են Փրկչի փրկող զորությանը, ապաշխարում են իրենց մեղքերից և պահում են պատվիրանները: Աբինադին նաև ուսուցանեց, որ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ բոլոր մարդիկ հարություն կառնեն: Այս վարդապետությունների ուսումնասիրության միջոցով ուսանողները անդրադարձան Փրկչի վրա հույսը դնելու և ամեն պայմաններում Աստծուն հավատարիմ լինելու կարևորության վրա:

## Նախաբան

Մոսիա 7-17-ում նկարագրվում են մի շարք անհատների և մարդկանց խմբերի ճամփորդությունները և փորձառությունները: Լամանացիների մեջ հաստատվելու համար մի խումբ նեփիացիների առաջնորդելու Զենիֆի ընտրությունը երկու ազգերի վրա էլ հետևանքներ թողեց: Օրինակ, Զենիֆի ժողովուրդը և նրանց սերունդները տեսան դժվարություններ, ուխտադրժություն, գերություն, հոգևոր վերածնունդ և ազատում: Այս դասի առաջին մասը ուսանողներին հնարավորություն կտա վերհիշել անունները, վայրերը և իրադարձությունները, որոնք նրանք ուսումնասիրել են այս շաբաթ: Դասի երկրորդ մասը կօգնի ուսանողներին հասկանալ մարդկանց ուղղված Աբինադի մարգարեի ուղերձի հիմնական իմաստը, որը վերաբերվում է Հիսուս Քրիստոսին և Նրա Քավությանը: Դա մի ուղերձ էր, որի համար Աբինադին հոժար էր մահանալ:

## Ուսուցանման առաջարկներ

### Մոսիա 7-17

***Քննել պատմական ժամանակաշրջանը և վարդապետությունը***

Որպեսզի օգնենք ձեզ բացատրել այս դասի իրադարձությունները, ուսանողների ուսումնասիրության ուղեցույցում վերանայեք «Ընդհանուր գաղափար Մոսիա 7–24» մաս 12, օր 1-ը: Հրավիրեք ուսանողներին կարդալ Մոսիա 7.1–2, և թող նրանք ներկայացնեն երկու երկրները, որոնք նշված են: Խնդրեք նրանց բացատրել, թե ինչու էին նեփիացիների մի շարք խմբեր ցանկանում ճամփորդել մի երկրից մյուսը:

Երկու երկրների անունները գրեք գրատախտակի (կամ թերթիկի) հակառակ ծայրերում.

| | |
|---|---|
| Զարահեմլայի երկիր | Նեփիի երկիր (Լեքի-Նեփի) |

Հետևյալ հարցերը կարող են օգտակար լինել, երբ դուք և ուսանողները վերանայեք իրադարձությունները: Գրատախտակին գրեք քննարկվող անհատների անունները: Դուք կարող եք օգտագործել այս բոլոր հարցերը կամ դրանց մի մասը, կախված ուսանողների մեկնաբանություններից.

- Ինչո՞ւ էր Զենիֆը ցանկանում հեռանալ Զարահեմլայի երկրից: (Տես Մոսիա 9.1–3:)
- Ի՞նչ կապ կա Զենիֆի, Նոյի և Լիմքիի միջև: (Տես Մոսիա 7.9:)
- Ինչպիսի՞ թագավոր էր Նոյը: (Տես Մոսիա 11.1–5, 11:)
- Ի՞նչ արեց Աստված, որ համոզեր Նոյին և իր մարդկանց ետ դառնալ իրենց ծայրաստիճան ամբարշտությունից և պղծություններից: (Նա ուղարկեց Իր մարգարե Աբինադիին, որ նրանց ապաշխարության կանչեր:)
- Ի՞նչ կարող եք դուք ասել մեզ Ալմայի մասին: (Պատասխանները կարող են ներառել, որ նա եղել է Նոյ թագավորի քահանաներից մեկը, որ նա հավատաց Աբինադիի խոսքերին և գրի առավ դրանք, և որ նա խուսափեց սպանվելուց:)

- Ինչո՞ւ էին Մովսեսը և Եսայիան կարևոր այս գլուխներում, չնայած որ նրանք ապրել էին Աբինադիից շատ ժամանակ առաջ և աշխարհի մեկ այլ մասում:
- Ինչո՞ւ Լիմքին 43 մարդ ուղարկեց անապատ: (Լիմքին և նրա ժողովուրդը ճորտության էին բերվել լամանացիների կողմից և փորձում էին օգնություն ստանալ Զարահեմլայի ժողովրդից:) Ի՞նչ գտան նրանք Զարահեմլայի փոխարեն: (Նրանք գտան կործանված քաղաքակրթություն և 24 փորագրված ոսկյա թիթեղներ:)
- Ի՞նչ արեցին Ամմոնը և 15 այլ մարդիկ: (Նրանք ուղարկվել էին Մոսիայի կողմից, որ պարզեին, թե ինչ էր պատահել Զենիֆի ժողովրդի հետ: Նրանք գտան այդ ժողովրդի սերունդներին ճորտության մեջ: Զենիֆի թոռ Լիմքին նրանց թագավորն էր:)
- Ո՞վ էր ծառայում որպես թագավոր Զարահեմլայում և որպես մարգարե, տեսանող և հայտնող: (Մոսիան:) Ինչո՞ւ էր որպես տեսանող նրա դերը կարևոր Լիմքիի համար: (Լիմքին իմացավ, որ Մոսիան կարող էր թարգմանել 24 ոսկյա թիթեղների արձանագրությունները:)

Նշեք, որ մոտավորապես 80 տարի էր անցել Զենիֆի և իր ժողովրդի Զարահեմլան թողնելուց հետո, երբ Ամմոնը և իր զուգընկերները եկան Նեփիի երկիր:

Այն բանից հետո, երբ դուք կօգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ պատմական իրադարձությունները, հիշեցրեք նրանց, որ կա մեկ այլ անձնավորություն, ում մասին նրանք սովորել են այս շաբաթ, ում անունը դեռևս գրված չէ գրատախտակին:

Խնդրեք յուրաքանչյուր ուսանողի կարդալ Մոսիա 16.6–8 և ներկայացնել այս անձնավորության անունը: Ասեք ուսանողներին, որ չնայած Մորմոնի Գրքի այս մասը պարունակում է շատ պատմական մաս, այն նաև ընդգծում է Հիսուս Քրիստոսի միջոցով փրկության Ծրագիրը:

Որպեսզի ընդգծեք Հիսուս Քրիստոսի միջոցով փրկության կարևորությունը, գրատախտակին գրեք հետևյալ ցանկը կամ պատրաստեք այն տպված թերթիկների վրա: Հրավիրեք ուսանողներին աշխատել զույգերով, որ ուսումնասիրեն ցանկում եղած սուրբ գրությունների հատվածները և քննարկեն, թե ինչ են իրենք գտել: Քանի որ որոշ հարցեր շատ անձնական բնույթ ունեն, ուսանողները կարող են որոշել, թե արդյոք միմյանց բարձրաձայն պատասխանեն, գրեն իրենց պատասխաններն իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում, թե լուռ խորհեն դրանց պատասխանների շուրջ:

Որպեսզի օգնեք ուսանողներին անդրադառնալ, թե ինչ են իրենք սովորել այս սուրբ գրության վարժությունից և իրենց շաբաթվա դասերից, հարցրեք. Ինչպե՞ս են այս շաբաթ ուսումնասիրած սկզբունքները և վարդապետություններն օգնում ձեզ ակնկալել թողություն ձեր մեղքերին:

Ուսանողներին հնարավորություն տվեք վկայել Հիսուս Քրիստոսի մասին:

Այսօրվա դասը ավարտելու համար դուք կարող եք կարդալ Մոսիա 16.13–15 և կիսվել Փրկչի կարիքն ունենալու մասին ձեր վկայությամբ: Կամ էլ դուք կարող եք շեշտել երկու վարդապետություններ կամ սկզբունքներ, որոնք ուսանողները սովորել են այս շաբաթ. որ **Հիսուս Քրիստոսի Քավությունը փրկության աղբյուր է** և որ **Հիսուս Քրիստոսը բավարարում է արդարադատության պահանջները բոլոր նրանց համար, ովքեր կապաշխարեն:**

## Հաջորդ Մասը (Մոսիա 18–25)

Մոսիա 18–25 հայտնում է, թե ինչպես են երկու խմբեր փախել իրենց թշնամիների գերությունից և ապահով վերադարձել Զարահեմլա: Դուք կիմանաք, թե ինչպես է Աստված առաջնորդել յուրաքանչյուր խմբին, որ փախչեն: Մի խումբը հետևում է պահակախմբին հարբեցնելու Գեդեոնի Ծրագրին, և մյուս խումբը փախչում է հետևելով Ալմային, մինչ լամանացիները քնած էին: Ո՞վ էր քուն բերել լամանացիների վրա:

| *Սուրբ գրություն* | *Ինչ փնտրել* | *Հարցեր* |
|---|---|---|
| Մոսիա 7.33 | Ինչպես ենք մենք ազատված հոգևոր և ֆիզիկական գերությունից: | Լիմքիի նշած երեք կետերից ո՞ր մեկի վրա դուք պետք է աշխատեք, որ ուժեղացնեք այն այս պահին: |
| Մոսիա 13.11 | Ինչո՞ւ Նոյ թագավորը և նրա մարդիկ չէին հասկանում Հիսուս Քրիստոսի առաքելությունը: | Ի՞նչ փաստեր կան ձեր կյանքում, որ պատվիրանները գրված են ձեր սրտի վրա: Ինչպե՞ս դուք կարող եք սովորել և սովորեցնել արդարություն: |
| Մոսիա 14.3–7 | Իմաստալից բառեր և արտահայտություններ Փրկչի տառապանքների և մերժման մասին: | Ինչպե՞ս են մարդիկ այսօր արհամարհում և մերժում Փրկչին: Ինչպե՞ս է մեկը թաքցնում իր դեմքը Նրանից: Ինչպե՞ս կարող է մեկը հակառակն անել: |
| Մոսիա 15.6–9, 11 | Ինչ «ջարդեց» Հիսուս Քրիստոսը և ինչ Նա «ձեռք բերեց». նաև, ինչ ենք մենք ձեռք բերում Փրկչի զոհաբերության շնորհիվ: | Ի՞նչ եղանակներով է Տերը վերջերս միջնորդել ձեզ համար: Ինչպե՞ս է Նա կանգնել ձեր և արդարադատության պահանջների միջև: |

ԴԱՍ 61

# Մոսիա 18

## Նախաբան

Աբինադիի մահից հետո, Ալման ժողովրդի մեջ գաղտնի ուսուցանեց Աբինադիի խոսքերը: Նրանք, ովքեր հավատացին նրան, հավաքվեցին Մորմոնի Ջրերի մոտ, որ ավելին սովորեն: Ալման քարոզեց «ապաշխարություն և փրկագնում և հավատք առ Տերը» (Մոսիա 18.7): Նրանք, ովքեր ընդունեցին նրա ուսմունքները և ապաշխարեցին իրենց մեղքերից, մտան մկրտության ուխտի մեջ: Մարդիկ հավատարիմ էին այս ուխտին, և նրանք օգնեցին միմյանց նյութապես և հոգեպես:

## Ուսուցանման առաջարկներ

### Մոսիա 18.1–16

*Ալման ուսուցանում և մկրտում է մարդկանց*

Ցուցադրեք Աբինադին Նոյ թագավորի առջև նկարը (62042; *Gospel Art Book* [2009], no. 75): Մատնանշեք նկարի հետին պլանում պատկերված քահանաներին: Բացատրեք, որ Մոսիա 18-ը պատմում է Ալմայի փորձառության մասին, ով Նոյ թագավորի քահանաներից մեկն էր:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 18.1, 3–6: Խնդրեք ուսանողներին փնտրել, թե ինչ արեց Ալման Աբինադիի վկայությունը լսելուց հետո: Այն բանից հետո, երբ ուսանողները կզեկուցեն իրենց սովորածը, հրավիրեք նրանց անդրադառնալ իրենց գծապատկերին, որը ընդհանուր գաղափար է տալիս Մոսիա 7–24–ի ճամփորդությունների մասին: Ցուցումներ տվեք նրանց, որ պատշաճ տեղում նկարեն Մորմոնի Ջրերը: (Ամբողջական գծապատկերը կարող եք տեսնել այս ձեռնարկի վերջում գտնվող ցուցիչում:)

**Մոսիա 7–24 ճամփորդությունների ամփոփում**




Բացատրեք, որ Ալման ծրագրել էր իր ուսմունքները, որ նախապատրաստեր մարդկանց մկրտության համար: Խնդրեք ուսանողներին մի պահ մտածել իրենց մկրտությունների մասին: Որպեսզի օգնեք նրանց խորհել, թե ինչ նշանակություն ունեն նրանց համար իրենց մկրտությունները, դուք կարող եք տալ հետևյալ հարցերի նման հարցեր.

- Ի՞նչ մանրամասներ դուք կարող եք հիշել ձեր փորձառությունից:
- Ինչպե՞ս են ձեր ծնողները, ուսուցիչները և ղեկավարներն օգնել ձեզ նախապատրաստվել մկրտությանը:
- Մկրտության հետ կապված ինչի՞ համար եք դուք այժմ ավելի երախտապարտ, քան այն ժամանակ, երբ դուք մկրտվեցիք:

Բացատրեք, որ Մորմոնի ջրերի մոտ սովորեցնելու և մկրտելու Ալմայի պատմությունը կարող է օգնել մեզ ձեռք բերել ավելի խորը հասկացողություն մկրտության ուխտի մասին:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 18.2, 7, փնտրելով, թե ինչ ուսուցանեց Ալման ժողովրդին, երբ նա նախապատրաստեց նրանց մկրտության համար:

- Համաձայն այս հատվածների, ո՞ր վարդապետությունները և սկզբունքներն Ալման շեշտեց:
- Ձեր կարծիքով, այս ճշմարտությունները հասկանալը ինչպե՞ս կարող է օգնել ինչ-որ մեկին նախապատրաստվել մկրտությանը:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչ կարող են նրանք անել մկրտության ուխտը պահելու համար, և որպեսզի օգնեք նրանց երախտապարտ լինել օրհնությունների համար, որոնք նրանք կստանան արդյունքում, գրատախտակին գրեք հետևյալ ցանկը: Մի ներառեք ցանկի ներքևում գտնվող նախադասությունները կամ սուրբ գրությունների հղումները:

| Ես հոժար եմ . . . | Աստված խոստանում է . . . |
|---|---|
| Օգնել կրել ուրիշների բեռը, որ դրանք թեթև լինեն (տես Մոսիա 18.8):<br>Սգալ նրանց հետ, ովքեր սգում են (տես Մոսիա 18.9):<br>Մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության (տես Մոսիա 18.9):<br>Կանգնել որպես Աստծո վկա բոլոր ժամանակներում, բոլոր բաներում և բոլոր տեղերում (տես Մոսիա 18.9):<br>Ծառայել Աստծուն և պահել Նրա պատվիրանները (տես Մոսիա 18.10): | Որպեսզի ես կարողանամ փրկագնվել Աստծո կողմից (տես Մոսիա 18.9):<br>Որպեսզի ես կարողանամ բաժին ունենալ առաջին հարության մեջ (տես Մոսիա 18.9):<br>Որպեսզի ես կարողանամ հավերժական կյանք ունենալ (տես Մոսիա 18.9):<br>Նա դուրս կթափի Իր Հոգին ինձ վրա (տես Մոսիա 18.10): |

Բացատրեք, որ նախքան մարդկանց մկրտվելու հրավիրելը, Ալման խոսեց նրանց հետ հատկանիշների և արարքների մասին, որոնք ցույց կտային, որ նրանք պատրաստ էին Տիրոջ հետ կապել և պահել այս ուխտը: (Դուք կարող եք հիշեցնել ուսանողներին, որ ուխտը Աստծո և մարդու միջև համաձայնություն է, որի մեջ սակայն Աստված և մարդը «չեն գործում որպես հավասարներ: Աստված տալիս է ուխտի պայմանները, և մարդիկ համաձայնվում են անել այն, ինչ նա խնդրում է անել: Այնուհետև, Աստված մարդկանց որոշակի օրհնություններ է խոստանում նրանց հնազանդության համար» [Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Ուխտ», scriptures.lds.org]: Մկրտվելու համար ներկայացվող պահանջների վերջին օրերի բացատրությունները տես Վարդապետություն և Ուխտեր 20.37:)

Դասարանը կիսեք երկու մասի: Հրավիրեք դասարանի մի կեսին ուսումնասիրել Մոսիա 18.8–11, թե ինչ ուսուցանեց Ալման, որ մենք պետք է հոժար լինենք անելու, երբ մենք մկրտվենք: Հրավիրեք դասարանի մյուս մասին ուսումնասիրել նույն հատվածը և ներկայացնել, թե ինչպես է Տերը խոստանում օրհնել մեզ, եթե մենք պահենք մեր ուխտը: Հատվածներն ուսումնասիրելու համար ժամանակ տրամադրելուց հետո խնդրեք մի քանի ուսանողների մոտենալ գրատախտակին և համապատասխան սյունակներում գրել, թե ինչ են իրենք բացահայտել:

Որպեսզի օգնեք ուսանողներին երախտապարտ լինել իրենց մկրտության ուխտի համար, հարցրեք.

- Ի՞նչ նշանակություն ունեն ձեզ համար առաջին սյունակի արարքները և հատկանիշները:
- Ինչո՞ւ են երկրորդ սյունակում գրված խոստումները կարևոր ձեզ համար:

Խնդրեք ուսանողներին լուռ ուսումնասիրել Մոսիա 18.12–16, փնտրելով ուղիներ, որոնցով Ալման և իր ժողովուրդը օրհնվեցին, երբ նրանք ուխտեցին ծառայել Տիրոջը: Հրավիրեք ուսանողներին զեկուցել իրենց գտածը: Դուք կարող եք նշել, որ Ալման լցված էր Տիրոջ Հոգով, երբ նա պատրաստվում էր մկրտել Հելամին և որ Ալման և Հելամը լցվել էին Հոգով, երբ մկրտությունը կատարվեց, որը ցույց էր տալիս, որ Տերն արդեն իսկ սկսել էր իրագործել Իր ուխտը և դուրս թափել Իր Հոգին ժողովրդի վրա:

Կիսվեք ձեր վկայությամբ, որ **մենք ստանում ենք Տիրոջ Հոգին և հավերժական կյանքի խոստումը՝ կապելով և պահելով մկրտության ուխտը:**

## Մոսիա 18.17–30

### *Ալման ժողովրդի մեջ հաստատեց Հիսուս Քրիստոսի Եկեղեցին*

Կարդացեք Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ խոսքերը.

«Սկսած մկրտության օրվանից մեր կյանքի հոգևոր ուղենիշների միջոցով մենք խոստումներ ենք տալիս Աստծուն և Նա խոստումներ է տալիս մեզ: Նա միշտ պահում է

Իր խոստումները, որոնք տրվում են Նրա արտոնյալ ծառաների միջոցով, սակայն սա է մեր կյանքի վճռական քննությունը, որ տեսնենք, թե արդյոք մենք կկապենք և կպահենք մեր ուխտերը Նրա հետ» (“Witnesses for God,” *Ensign*, Nov. 1996, 30)։

Ուսանողների ուշադրությունը հրավիրեք գրատախտակի ցանկի վրա։ Բացատրեք, որ նրանք այժմ կսովորեն այն մասին, թե ինչպես էին Ալմայի մարդիկ ապրում համաձայն մկրտության ուխտի և ինչպես էին նրանք օրհնվում սա անելու համար։ Ուսանողներին բաժանեք երկու խմբի։ Խնդրեք մի խմբին ուսումնասիրել Մոսիա 18.17–23 և մյուս խմբին ուսումնասիրել Մոսիա 18.24–30։ Երբ նրանք կարդան, երկու խմբերին էլ հրավիրեք փնտրել որոշ ուղիներ, որոնցով մարդիկ պետք է ապրեին ըստ Ալմայի ուսուցանածի, որ պահեին մկրտության ուխտը։ Յուրաքանչյուր խմբից խնդրեք մեկական ուսանողի զեկուցել մյուս խմբից ընտրած զուգընկերոջը, թե ինչ են իրենք գտել։ Կամ թող յուրաքանչյուր խմբից մի ներկայացուցիչ զեկուցի ողջ դասարանին, թե ինչ է ինքը սովորել։

- Ինչպե՞ս է ձեր մկրտության ուխտն ազդում ձեր ամենօրյա ապրելակերպի վրա։ (Հրավիրեք ուսանողներին պատասխանել այս հարցին, խոսելով այն մասին, թե ինչպես է իրենց մկրտության ուխտն ազդում այն բանի վրա, թե ինչպես են նրանք վերաբերվում ընտանիքի անդամներին, ինչպիսի ուրախ ժամանց են իրենք ընտրում կամ ինչպես են նրանք հաղորդակցվում հասակակիցների հետ։)

Հրավիրեք ուսանողներին վերանայել Մոսիա 18.17, 22, 29, որ գտնեք բառեր և արտահայտություններ, որոնք նշում են, թե ինչպես էին մարդիկ օրհնվել իրենց ուխտերը պահելու համար։ Գրատախտակին գրեք այս օրհնությունները մկրտության ուխտի ցանկի ներքևում։ (Դուք կարող եք հիշեցնել ուսանողներին, որ «Աստծո զավակներ» [Մոսիա 18.22] արտահայտությունը վերաբերվում է Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով հավերժական կյանքի ժառանգներ մեր դառնալու մասին [տես Մոսիա 5.6–8, 15]։)

Որպեսզի օգնեք ուսանողներին տեսնել, որ **մեծ օրհնություններ են տրվում նրանց, ովքեր պահում են մկրտության ուխտը,** ուսանողների ուշադրությունը հրավիրեք գրատախտակի ցանկի վրա և հարցրեք.

- Ի՞նչ եղանակներով եք դուք տեսել, որ ձեր ընկերները, ընտանիքի անդամները կամ ծխի անդամները օրհնվեն իրենց ուխտերը պահելու համար։
- Ինչպե՞ս է Տերն օրհնել ձեզ մկրտության ուխտերը պահելու համար։

Բերեք ձեր վկայությունը, թե ինչպես է ուխտերը պահելը օրհնություններ բերել ձեր կյանքում։

## Մոսիա 18.31–35

### *Նրանք, ովքեր պատկանում էին Եկեղեցուն, փախան Նոյ թագավորի հալածանքներից*

Ամփոփեք Մոսիա 18.31–33, բացատրելով, որ մի օր, երբ Ալման և նրա ժողովուրդը հավաքվել էին լսելու Տիրոջ խոսքը, նրանք հայտնաբերվեցին Նոյ թագավորի ծառաների կողմից։ Այդ ժամանակ թագավորն ուղարկեց իր զորքը՝ կործանելու նրանց։

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 18.34։ Նշեք, որ տողատակի *ա* ծանոթագրությունը կարդացողների ուշադրությունը հրավիրում է Մոսիա 23.1-ի վրա։ (Դուք կարող եք հրավիրել ուսանողներին նշել այս տողատակի ծանոթագրությունը։) Բացատրեք, որ Մոսիա 18.34-ի պատմությունը շարունակվում է Մոսիա 23.1-ում, այն բանից հետո, երբ 19-22 գլուխներում արձանագրվում են Լիմքիի ժողովրդի փորձառությունները։ Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 23.1–2։

- Ինչպե՞ս Ալման «տեղեկացվեց» իր ժողովրդին սպասվող վտանգի մասին։

Գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. ***Տերը կարող է նախազգուշացնել արդարներին իրենց սպասվող վտանգի մասին։*** (Դուք կարող եք հրավիրել ուսանողներին գրել այս սկզբունքը Մոսիա 18.34–ի կողքի լուսանցքում։) Այս ճշմարտությունը լուսաբանելու համար կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի պատմած հետևյալ պատմությունը.

«Աշխատելով որպես հետաքննությունների ֆեդերալ բյուրոյի հատուկ գործակալ, իմ ընկերը հետաքննում էր կազմակերպված հանցագործ խմբերի, որոնք անօրինական ձևով թմրադեղեր էին տեղափոխում Միացյալ Նահանգներ։

Մի առիթով նա և մեկ այլ գործակալ մոտեցան մի բնակարանի, որտեղ նրանց կարծիքով հայտնի թմրադեղերի վաճառող կոկաին էր բաժանում: Իմ ընկերը նկարագրում է, թե ինչ պատահեց.

«Մենք թակեցինք թմրադեղ վաճառողի դուռը: Կասկածյալը բացեց դուռը, և մեզ տեսնելուն պես փորձեց փակել մեր տեսադաշտը: Սակայն արդեն շատ ուշ էր, մենք տեսել էինք նրա սեղանին դրված կոկաինը:

Սեղանի մոտ նստած տղամարդը և կինն անմիջապես սկսեցին տեղափոխել կոկաինը: Մենք պետք է կանխեինք նրանց, որ չոչնչացնեին փաստերը, ուստի ես արագ մի կողմ հրեցի թմրադեղերի կասկածյալին, ով արգելափակել էր դուռը: Երբ ես հրեցի նրան, իմ հայացքը հանդիպեց նրա հայացքին: Տարօրինակ էր այն, որ նա ոչ բարկացած էր թվում և ոչ էլ վախեցած: Նա ժպտում էր ինձ:

Նրա աչքերը և զայրույթը մեղմող ժպիտն այնպիսի տպավորություն թողեցին ինձ վրա, որ նա վտանգավոր չէր, ուստի ես հապճեպ թողեցի նրան և սկսեցի շարժվել դեպի սեղանը: Կասկածյալն այժմ գտնվում էր իմ ետևում: Այդ պահին մի հստակ, զորեղ տպավորություն ունեցա իմ մտքում. «Զգուշացիր ժպտացող աչքերի ետևում թաքնված չարից»:

Ես անմիջապես ետ շրջվեցի դեպի կասկածյալը: Նրա ձեռքն առջևի մեծ գրպանում էր: Ես մեխանիկորեն բռնեցի նրա ձեռքը և այն դուրս քաշեցի նրա գրպանից: Միայն այդ պահին ես նկատեցի նրա ձեռքում ամուր բռնած կիսաավտոմատ ատրճանակը, որը պատրաստ էր կրակել: Լարված պայքարի արդյունքում ինձ հաջողվեց զինաթափել նրան»: . . .

. . . Սուրբ Հոգին նախազգուշացրեց իմ ընկերոջը ֆիզիկական վտանգի մասին. Սուրբ Հոգին նաև կնախազգուշացնի ձեզ հոգևոր վտանգի մասին» (“Beware of the Evil behind the Smiling Eyes,” *Ensign* or *Liahona*, May 2005, 46–47):

Հաստատեք, որ Տերը հաճախ նախազգուշացնում է արդարներին վերահաս վտանգի մասին, սակայն մենք չպետք է ենթադրենք, որ մենք արդար չենք, եթե մենք չենք զգում նախազգուշացում Սուրբ Հոգուց ամեն անգամ, երբ մենք հայտնվում ենք վտանգավոր իրավիճակներում:

- Ե՞րբ եք դուք զգացել, որ Տերը նախազգուշացնում է ձեզ ֆիզիկական կամ հոգևոր վտանգի մասին: (Այն բանից հետո, երբ ուսանողները կկիսվեն իրենց փորձառություններով, դուք կարող եք կիսվել ձեր փորձառություններից մեկով:)

ԴԱՍ 62

# Մոսիա 19–20

## Նախաբան

Այն բանից հետո, երբ Ալման և իր ժողովուրդը փախան Նոյ թագավորի զորքից, Նոյ թագավորը և իր ժողովուրդը սկսեցին կրել իրենց անօրինությունների հետևանքները, ինչպես մարգարեացել էր Աբինադին, նրանց վրա հարձակվեցին և ճորտության բերեցին լամանացիները, և Նոյ թագավորը մահ տարավ կրակի միջոցով: Նոյի որդին՝ Լիմքին, Նոյի մահից հետո դարձավ թագավոր: Երբ Նոյի նախկին քահանաները առևանգեցին լամանացիների մի խումբ դուստրերին, լամանացիները մեղադրեցին Լիմքիի ժողովրդին և պատրաստվեցին հարձկվել նրանց վրա: Լիմքիի ժողովուրդը արիաբար կռվեց, և նրանք վիրավորեցին և գերի վերցրեցին լամանացիների թագավորին: Լիմքին հանդարտեցրեց լամանացիների թագավորին, ով այնուհետև համոզեց իր ժողովրդին խաղաղությամբ վերադառնալ իրենց երկիրը:

## Ուսուցանման առաջարկներ

### Մոսիա 19–20

*Լեքի-Նեփիի երկրի նեփիացիները տեսան Աբինադիի մարգարեությունների իրականանալը*

Հրավիրեք ուսանողներին մտածել մի այնպիսի ժամանակաշրջանի մասին, երբ ինչ-որ մեկը նախազգուշացրել է իրենց վտանգի մասին, որը նրանք չէին կարող կանխատեսել: Խնդրեք նրանց պատմել այն մասին, թե ինչպես են նրանք օրհնվել, քանի որ հետևել են նախազգուշացմանը: Օգնեք ուսանողներին քննարկել նախազգուշացումների նպատակը՝ տալով հետևյալ հարցերը.

- Ո՞րն է նախազգուշացման նպատակը: Ո՞վ է ձեզ նախազգուշացնում բաների մասին, որոնցից դուք պետք է խուսափեք կամ բաների մասին, որոնք կարող են վնասակար լինել ձեզ համար:
- Ո՞ւմ է Աստված հայտնում հոգևոր նախազգուշացումներն Իր Եկեղեցու համար:

Հիշեցրեք ուսանողներին, որ Տերն ուղարկեց Աբինադիին, որ նախազգուշացնի նեփիացիներին իրենց մեղքերի հետևանքների մասին: Որպեսզի օգնեք ուսանողներին վերանայել Լեքի-Նեփիի երկրում նեփիացիներին ուղղված Աբինադիի մարգարեությունները, գրատախտակին գրեք հետևյալ ցանկը: Համոզվեք, որ բավականաչափ տեղ եք թողնում ուսանողների համար, որ գրեն յուրաքանչյուր սուրբ գրության հղումների տակ:

| | |
|---|---|
| Մարգարեություն Նոյ թագավորի ժողովրդի մասին (Մոսիա 12.1–2, 17.17) | Իրականացում (Մոսիա 19.10, 14–15, 20.20, 21.2–4) |
| Մարգարեություն Նոյ թագավորի մասին (Մոսիա 12.3, 17.18) | Իրականացում (Մոսիա 19.18–20) |

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 12.1–2: Խնդրեք դասարանին ներկայացնել, թե ըստ Աբինադիի մարգարեության ինչ պիտի պատահեր Նոյ թագավորի մարդկանց հետ, քանի որ նրանք չէին ապաշխարել: Հրավիրեք ուսանողներից մեկին գրել այս հետևանքները գրատախտակին՝ աղյուսակի ձախ մասի ամենավերևի վանդակի մեջ: Մեկ այլ ուսանող թող բարձրաձայն կարդա Մոսիա 12.3: Խնդրեք դասարանին ներկայացնել, թե ըստ Աբինադիի մարգարեության ինչ պետք է պատահեր Նոյ թագավորի հետ: Մի ուսանող թող աղյուսակում գրի այս հետևանքը:

Որպեսզի օգնեք ուսանողներին մտածել ստացվող հոգևոր նախազգուշացումների կարևորության մասին, որոնք մենք ստանում ենք մարգարեների միջոցով, կիսվեք Յոթանասունից Երեց Դեյվիդ Ռ. Սթոնի հետևյալ պատմությամբ.

«Մի կիրակի առավոտ, ավելի քան մեկ տարի առաջ, մենք արթնացանք մի գեղեցիկ օր Սանտո Դոմինգոյում, որը գտնվում է Դոմինիկյան Հանրապետությունում: Կարիբյան արևը շողշողում էր, և երկինքը պարզ էր: Փչում էր մեղմ քամին, հազիվ թե անհանգստացնելով ծառերի վրայի տերևներին. տաք էր, խաղաղ և հանգիստ: Սակայն, ծովի խորքերից, մեր ֆիզիկական զգայարանների համար այդ օրն անհասանելի, մահաբեր կործանում էր գալիս մեր ուղղությամբ՝ անողոք և անհաղթահարելի: Փոթորիկների Կենտրոնը, մեծ պատասխանատվությամբ էր հետևում Ջորջիս Փոթորկի ուղուն, և պարբերաբար իր կանխատեսումներն էր տեղադրում համացանցում: Այդ առավոտվա խաղաղ, անվրդով լռության մեջ, շնորհիվ երկնքի տեսնող աչքերի, ես տեսա սպասվող փոթորկի ուղին, որը նախատեսում էր նիզակի պես հարվածել Սանտո Դոմինգոյի սրտին:

48 ժամվա ընթացքում փոթորիկը ուժգին հարված հասցրեց կղզուն . . . իր ճանապարհին թողնելով ավերում, ամայություն և մահ: . . .

Որքան էլ մեծ լինի այս սարսուռ պատճառող ֆիզիկական երևույթի վնասը և ավերածությունը և մահը, շատ ավելի մեծ ամայացում է տեղի ունենում մարդկանց կյանքում հոգևոր փոթորիկների պատճառով: Այս մոլեգնած ուժերը հաճախ շատ ավելի մեծ կործանարար վնաս են պատճառում, քան ֆիզիկական պտտահողմերը, քանի որ դրանք կործանում են մեր հոգիները և գողանում են մեզանից մեր հավերժական հեռանկարն ու խոստումը:. . .

Սակայն մենք նաև ունենք մեր հոգևոր փոթորիկների պահապանները, նրանք, ում կոչումն է հետևել և նախազգուշացնել՝ օգնելով մեզ խուսափել հոգևոր վնասից, ավերածությունից և նույնիսկ մահից: Աշտարակի պահապանները հայտնի են մեզ որպես առաքյալներ և մարգարեներ: Նրանք մեր հոգևոր աչքերն են երկնքում, և նրանք գիտեն, ոգեշնչման, խորաթափանցության և մաքուր մտքի շնորհիվ, ուղղությունը, որն այս փոթորիկները կարող են ունենալ: Նրանք շարունակում են բարձրացնել իրենց նախազգուշացնող ձայները, որ ասեն մեզ Տիրոջ պատվիրանները քմահաճորեն և անմտորեն խախտելու ողբերգական հետևանքները: Միտումնավոր կերպով նրանց նախազգուշացումներն անտեսելը դատապարտում է թշվառության, տառապանքի և ավերման: Հետևել նրանց նշանակում է հետևելով Տիրոջ ընտրյալ ծառաներին հասնել խաղաղ ու լի հոգևոր արոտավայրեր» (“Spiritual Hurricanes,” Ensign, Nov. 1999, 31–32):

- Ի՞նչ առնչություն ունի այս պատմությունը Աբինադիի դերի հետ Նոյ թագավորի ժողովրդի մեջ:

Ասեք ուսանողներին, որ հետևյալ վարժությունը կօգնի իրենց ավելի լավ ծանոթանալ Մոսիա 19–20–ի պատմության հետ և այս գլուխներում տեսնել Աբինադիի մարգարեությունների իրականացումը: Այս վարժությունից հետո ուսանողները կլրացնեն գրատախտակի ցուցակի աջ սյունակը:

Նախքան դասը գրատախտակին գրեք հետևյալ 11 նախադասությունները կամ պատրաստեք դրանք տպված թերթիկների տեսքով յուրաքանչյուր ուսանողի համար: Հրավիրեք ուսանողներին արագ աչքի անցկացնել Մոսիա 19–20: Երբ նրանք կարդան, թող հաջորդականությամբ համարակալեն ցուցակի իրադարձությունները: Դուք կարող եք ասել ուսանողներին, որ գլուխների ամփոփումները տալիս են օգտակար գաղափարներ:

_____ *Գեդեոնը ջանում է սպանել Նոյ թագավորին:*

_____ *Նեփիացի կանայք և երեխաները աղերսում են լամանացիներին չսպանել իրենց:*

_____ *Նոյ թագավորը կրակով մահվան է ենթարկվում:*

_____ *Լամանացիների բանակը գալիս է Շեմլոնի սահմանի մոտ:*

_____ *Նոյի քահանաներն առևանգում են լամանացիների 24 դուստրերի:*

_____ *Լամանացիների թագավորը խնդրում է իր զորքին խնայել Լիմքիի ժողովրդին:*

_____ *Նոյը և իր մարդկանցից ոմանք փախչում են լամանացիներից՝ ետևում թողնելով իրենց կանանց և երեխաներին:*

_____ *Լիմքին հրամայում է իր ժողովրդին չսպանել լամանացիների թագավորին:*

_____ *Երկու տարի խաղաղություն է տիրում նեփիացիների և լամանացիների միջև:*

_____ *Լիմքին խոստանում է, որ իր ժողովուրդը կվճարի իրենց ունեցվածքի կեսը լամանացիներին:*

_____ *Նեփիացիները ետ են մղում լամանացիների զորքերին և գերի են վերցնում լամանացիների թագավորին:*

Այս վարժությունը կատարելու համար ուսանողներին տվեք 5-10 րոպե: Ապա օգտագործեք ցանկը Մոսիա 19–20–ի պատմությունը վերանայելու համար: (Իրադարձությունների ճիշտ հերթականությունը, սկսած ցուցակի վերևից, հետևյալն է. 1, 4, 5, 2, 8, 11, 3, 10, 7, 6, 9:)

Ուսանողների ուշադրությունը կրկին հրավիրեք գրատախտակի ցուցակի վրա: Դասարանը բաժանեք երկու խմբի: Մի խմբին խնդրեք ուսումնասիրել Մոսիա 19.10, 14–15, 20.20, 21.2–4, որ տեսնեն, թե ինչպես են իրականանում Նոյ թագավորի ժողովրդի մասին արված Աբինադիի մարգարեությունները: Խնդրեք երկրորդ խմբին ուսումնասիրել Մոսիա 19.18–20, որ տեսնեն, թե ինչպես է իրականանում Նոյ թագավորի մասին արված Աբինադիի մարգարեությունը: Հրավիրեք մեկական ուսանող յուրաքանչյուր խմբից, որ ամփոփի, թե ինչպես իրականացվեցին Աբինադիի մարգարեությունները: Հրավիրեք մեկ այլ ուսանողի ցուցակում գրել նրանց պատասխանները:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 20.21:

- Ըստ Գեդեոնի ասածի, ո՞րն էր մարդկանց տառապանքի պատճառը:

Խնդրեք ուսանողներին իրենց բառերով բացատրել, թե ինչ էր ուզում Գեդեոնը, որ մարդիկ հասկանային: Մինչդեռ նրանք կարող են օգտագործել տարբեր բառեր, սակայն ուսանողները պետք է ցուցաբերեն հասկացողություն, որ **Տիրոջ ծառաների խոսքերը մերժելը բերում է տառապանք և վիշտ:** (Դուք կարող եք գրատախտակին գրել այս սկզբունքը:)

Ասեք ուսանողներին, որ Տերը տվել է նման նախազգուշացում այս վերջին օրերում նրանց, ովքեր ականջ չեն դնում Իր ձայնին: Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 133.70–72: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները գրեն այս հղումը իրենց սուրբ գրությունների լուսանցքում Մոսիա 20.21–ի կողքին:

- Ի՞նչ որոշ բաներ են մարգարեները և առաքյալները սովորեցնում մեր օրերում, որ կօգնեն մեզ խուսափել տառապանքից և վշտից: Ի՞նչ են նրանք սովորեցնում, որը կօգնի խաղաղություն և երջանկություն բերել մեզ և կօգնեն մեզ վերադառնալ Աստծո ներկայություն: (Դուք կարող եք ուսանողներին ցույց տալ գերագույն համաժողովի *Ensign*–ի վերջին համարներից մեկը և նշել մարգարեների կողմից տրված ելույթների վերնագրերից մի քանիսը:)

Հրավիրեք ուսանողներին պատմել այնպիսի պահերի մասին, երբ նրանք օրհնվել են, քանի որ հետևել են Եկեղեցու ղեկավարների խորհրդին:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, որ մարգարեների խոսքերին ականջ դնելը կարող է խաղաղություն բերել մեզ և օգնել մեզ վերադառնալ Աստծո ներկայություն, կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ խոսքերով.

«Մեր հոգևոր ապահովությունը կախված է մեր ապրող մարգարեի պարզ ձայնին ուշադրություն դարձնելուց: Եթե մենք լսենք նրա ձայնը և հնազանդվենք նրա խորհրդին, մենք կկարողանանք ապրել այնպես, ինչպես Քրիստոսը կուզեր որ մենք ապրեինք և համբերեինք մինչև վերջ, որպեսզի մի օր մենք մեր ընտանիքների հետ միասին ետ վերադառնանք մեր Երկնային Հոր և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի ներկայություն» (“Hear the Prophet’s Voice and Obey,” *Ensign*, May 1995, 17):

Դասի վերջում վկայեք խաղաղության և հոգևոր ապահովության մասին, որ գալիս են Տիրոջ ծառաների խորհրդին հետևելուց:

## Սերտման սուրբ գրություն

Եթե ժամանակը թույլ է տալիս, դուք կարող եք վերանայել այս տարի մինչ այժմ ձեր ուսուցանած սերտման սուրբ գրության հատվածները, որ օգնեք ուսանողներին հիշել յուրաքանչյուր հատվածի գլխավոր բառերը։

Ուսանողներին տվեք մի քանի րոպե, որ կրկնեն սերտման սուրբ գրությունների հատվածները, որոնք նրանք այս ուսումնական տարվա ընթացքում մինչ այժմ սովորել են։ Հրավիրեք ուսանողներից մեկին իր սուրբ գրություններով գալ դասարանի առաջ։ Խնդրեք ուսանողին բացել սերտման սուրբ գրություններից մեկը՝ առանց որևէ մեկին այն ցույց տալու։ (Եթե ձեռքի տակ ունեք սերտման սուրբ գրությունների քարտեր, դուք կարող եք թույլ տալ ուսանողին օգտագործել դրանք։) Թող ուսանողը գրատախտակին գրի սերտման սուրբ գրության հատվածից մեկ բառ։ (Խրախուսեք ուսանողին հատվածից ընտրել գլխավոր բառերը, և ոչ թե քիչ տարբերվող բառեր, ինչպիսին են *և* կամ *որ*։) Հրավիրեք դասարանի մնացած մասին փնտրել իրենց սուրբ գրություններում այն սերտման սուրբ գրության հատվածը, որին, ըստ նրանց, պատկանում է այդ բառը։ Եթե ոչ ոք չի կարող գտնել ճիշտ հատվածը օգտագործելով մեկ բառը, թող ուսանողը գրատախտակին գրի մեկ այլ բառ սերտման սուրբ գրության հատվածից։ Կրկնեք այս գործընթացն այնքան ժամանակ, մինչև որ գոնե մեկ ուսանող գտնի ճիշտ հատվածը։ Հրավիրեք դասարանի մնացած մասին բացել հատվածը, և թող ուսանողները միասին այն անգիր ասեն։ Ապա կրկնեք վարժությունը մեկ այլ ուսանողի մասնակցությամբ՝ սերտման սուրբ գրության այլ հատված օգտագործելով։

ԴԱՍ 63

# Մոսիա 21–22

## Նախաբան

Երեք անգամ փորձելով ազատվել լամանացիների ճորտությունից, և ամեն անգամ ձախողվելուց հետո Լիմքիի ժողովուրդն ի վերջո դարձավ դեպի Տերը, որ Նա ազատեր իրենց: Հետագայում Ամմոնը և նրա եղբայրները եկան Լեքի-Նեփիի երկիրը: Տիրոջը ծառայելու ուխտ կապելուց հետո Լիմքիի ժողովուրդը փախավ լամանացիների ճորտությունից, և Ամմոնը առաջնորդեց նրանց Զարահեմլա:

## Ուսուցանման առաջարկներ

### Մոսիա 21.1–22

*Այն բանից հետո, երբ Լիմքիի ժողովուրդը երեք անգամ ապստամբեց լամանացիների դեմ և զարկվեց, նրանք խոնարհեցրեցին իրենց Տիրոջ առջև և սկսեցին բարգավաճել*

Գրատախտակին գրեք *գերություն* և *ազատում* բառերը:

- Ի՞նչ կերպարներ են գալիս ձեր միտք, երբ դուք մտածում եք այս բառերի մասին:
- Ձեր կարծիքով, ի՞նչ զգացողություններ են կապված այս բառերի հետ:
- Ի՞նչ առնչություն ունեն այս բառերը փրկության ծրագրի հետ:

Բացատրեք, որ Մոսիա 21–24–ը պարունակում է երկու խումբ մարդկանց պատմությունը, ովքեր գերեվարվել էին լամանացիների կողմից և ի վերջո ազատվել էին Տիրոջ կողմից: Մոսիա 21–22-ում մենք կարդում ենք Լիմքիի և նրա ժողովրդի մասին, ովքեր գերի դարձան իրենց անօրինությունների արդյունքում: Նրանց ֆիզիկական գերությունը արտացոլում էր հոգևոր գերությունը, որը նրանք ունեցան իրենց մեղքերի պատճառով: Երկրորդ խմբի պատմությունը Մոսիա 23–24-ում կմեկնաբանվի հաջորդ դասի ժամանակ: Այն պատմում է Ալմայի ժողովրդի մասին, ովքեր տարան գերություն և չարչարանքներ իրենց մկրտությունից հետո: Երկու պատմություններն էլ սովորեցնում են կարևոր ճշմարտություններ մեղքից և չարչարանքներից մեզ ազատելու Տիրոջ զորության մասին: Խրախուսեք ուսանողներին մտածել մեղքից մեզ ազատելու Տիրոջ զորության մասին, երբ նրանք կուսումնասիրեն մարդկանց գերությունը և ազատումը Մոսիա 21–22–ում:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 21.2–6-ը: Խնդրեք նրանց ներկայացնել բառեր և արտահայտություններ, որոնք նկարագրում են, թե ինչ փորձառություն էին ունենում Լիմքին և իր ժողովուրդը և ինչ էին նրանք զգում դրա վերաբերյալ: Որպեսզի շեշտեք դժվարությունը, որին հանդիպեցին Լիմքիի ժողովուրդը, դուք կարող եք խրախուսել ուսանողներին նշել «չկար ոչ մի միջոց, որ նրանք կարողանային ազատվել» արտահայտությունը Մոսիա 21.5–ում:

- Մոսիա 21.6-ի ո՞ր մանրամասներն են հուշում, որ մարդիկ դեռևս չեն խոնարհեցրել իրենց և դարձել դեպի Տերը:
- Ի՞նչ լուծում առաջարկեցին Լիմքիի ժողովուրդը իրենց չարչարանքներից ազատվելու համար:

Ամփոփեք Մոսիա 21.7–12-ը, պատմելով ուսանողներին, որ Լիմքիի ժողովուրդը երեք անգամ զնացին ճակատամարտելու, որ ազատվեն լամանացիներից, սակայն նրանք պարտություն կրեցին և մեծ կորուստներ ունեցան ամեն անգամ:

- Ինչպե՞ս կարող էին արձագանքել մարդիկ իրենց ազատելու համար երրորդ անհաջող փորձից հետո:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մոսիա 21.13–16, որ իմանան, թե ինչպես ժողովուրդն արձագանքեց: Կարող եք տալ հետևյալ բոլոր հարցերը կամ դրանցից մի քանիսը.

- Ինչպե՞ս ժողովուրդը փոխվեց իրենց երրորդ պարտությունից հետո:

- Համաձայն Մոսիա 21.15-ի, ինչո՞ւ էր Տերը դանդաղ իրենց աղոթքները լսելիս։
- Մոսիա 11.23–25-ում ի՞նչ ասաց Աբինադին մարդկանց, որ նրանք պետք է անեին, նախքան Տերը կլսեր իրենց աղոթքներն ազատման համար։
- Չնայած մարդիկ անմիջապես չազատվեցին գերությունից, սակայն ինչպե՞ս Տերն օրհնեց նրանց, երբ նրանք սկսեցին ապաշխարել։ (Երբ ուսանողները պատասխանեն, խորհեք քաջալերել նրանց նշել Մոսիա 21.16–ի «աստիճանաբար բարգավաճել» արտահայտությունը։)
- Ի՞նչ է սա սովորեցնում այն մասին, թե ինչ կանի Տերը, երբ մարդիկ խոնարհեցնեն իրենց, սկսեն ապաշխարել և կանչեն առ Նա օգնության համար։

Ամփոփեք Մոսիա 21.16–22-ը, բացատրելով, որ մնացած ժամանակահատվածում, երբ Լիմքիի ժողովուրդը գտնվում էր ճորտության մեջ, Տերը բարգավաճեցրեց նրանց, որպեսզի նրանք սոված չմնային։ Նաև «այլևս որևէ խռովություն չկար լամանացիների և Լիմքիի ժողովրդի միջև» (Մոսիա 21.22)։

Հրավիրեք ուսանողներին շարադրել այն սկզբունքները, որոնք նրանք սովորել են Լիմքի ժողովրդի պատմությունից։ Չնայած ուսանողները կարող են կիսվել տարբեր սկզբունքներով, համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **երբ մենք խոնարհեցնում ենք մեզ, կանչում ենք առ Տերը և ապաշխարում ենք մեր մեղքերից, Նա կլսի մեր աղոթքները և կթեթևացնի մեր մեղքերի բեռը Իր իսկ ժամանակին:** (Դուք կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին։ Դուք կարող եք նաև հրավիրել ուսանողներին գրել այն իրենց սուրբ գրություններում Մոսիա 21.15–16–ի կողքին կամ իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային նոթատետրերում։)

- Ձեր կարծիքով, ի՞նչ օգուտ մենք կարող ենք քաղել սպասելուց, որ Տերն ազատի մեզ մեր մեղքերի բեռից։

Որպեսզի օգնեք ուսանողներին կիրառել իրենց սովորածը, տվեք նրանց մի քանի րոպե, որ խորհեն հետևյալ հարցերի շուրջ և գրեն պատասխաններն իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում։ (Դուք կարող եք գրել հարցերը գրատախտակին։)

- Ի՞նչ եք դուք անում, որ փնտրեք ձեր մեղքերից ազատող Տիրոջ զորությունը։
- Ի՞նչ եղանակներով եք դուք «աստիճանաբար բարգավաճել», երբ դուք փնտրել եք Տիրոջ օգնությունը։

## Մոսիա 21.23–22.16

### *Լիմքին, Ամմոնը և Գեդեոնը աշխատում են միասին, որ օգնեն ժողովրդին փախչել ճորտությունից և վերադառնալ Զարահեմլա*

*Նշում.* Դուք կարող եք հիշեցնել ուսանողներին, որ Մոսիա 7 և 8-ը ներառում են Ամմոնի և նրա եղբայրների պատմությունը, ովքեր գտնում են Լիմքի թագավորին և նրա ժողովրդին։ Հաջորդ 14 գլուխները՝ Մոսիա 9–22, տալիս են Լիմքիի ժողովրդի պատմությունը, որը սկսվում է Ամմոնի նրանց գտնելուց մոտավորապես 80 տարի առաջ։ Այս պատմությունն ավարտվում է վերապատմելով որոշ իրադարձություններ, որոնք տրված էին նախորդ գլուխներում։ Այդ իսկ պատճառով Մոսիա 21.23–30–ի բովանդակության մեծ մասն ամփոփվել էր Մոսիա 7–8 և Մոսիա 18 դասերում։ Որպեսզի օգնեք ուսանողներին հիշել Մոսիա 21.23–30–ի իրադարձությունները, կարող է օգտակար լինել հակիրճ ձևով վերանայել Մոսիա 7–24–ի ճամփորդությունների ընդհանուր գաղափարները, որոնք գտնվում են այս ձեռնարկի վերջում գտնվող ցուցիչում։

Հիշեցրեք ուսանողներին, որ Լիմքիի ժողովուրդը գիտակցեց, որ իրենց չարչարանքները եկել էին, քանի որ նրանք մերժել էին ապաշխարելու Տիրոջ հրավերը (տես Մոսիա 12.1–2, 20.21)։ Իրենց մեղքերն ընդունելով Լիմքիի ժողովուրդը սկսեց ապաշխարության և դարձի գալու գործընթացը։ Կիսվեք ապաշխարության հետևյալ սահմանումով.

«[Ապաշխարությունը] կարևոր է ձեր երջանկության համար այս կյանքում և ողջ հավերժության մեջ։ Ապաշխարությունն ավելին է, քան միայն գործած սխալների գիտակցումը։ Այն մտքի և սրտի փոփոխություն է։ . . . Այն ներառում է մեղքից հեռանալը և ներման համար դեպի Աստված դառնալը։ Այն թելադրվում է Աստծո հանդեպ ունեցած սիրուց և Նրա պատվիրաններին հնազանդվելու անկեղծ ցանկությունից»

(*Հավատքին Հավատարիմ. Ավետարանական Վկայակոչում* [2004], 24):

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 21.32–35: Թող նրանք ներկայացնեն բառեր և արտահայտություններ, որոնք ցույց են տալիս, որ Լիմքին և նրա ժողովուրդն ապաշխարել էին և իրենց սրտերը դարձրել էին առ Աստված: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք նշեն այս բառերը և արտահայտությունները: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց գտածով: (Նրանց պատասխանները պետք է ներառեն, որ Լիմքին և նրա մարդկանցից շատերը մտել էին ուխտի մեջ, որ ծառայեն Աստծուն և պահեն Նրա պատվիրանները, որ նրանք ցանկացան մկրտվել և որ նրանք հոժար էին ծառայել Աստծուն իրենց ողջ սրտով:)

Հետևյալ վարժությունը կօգնի ուսանողներին տեսնել, որ Տերն օգնեց Լիմքիի ժողովրդին փախչել ճորտությունից, երբ նրանք պատվեցին Նրան ծառայելու և Նրա պատվիրանները պահելու իրենց ուխտը: Նախքան դասը՝ գրատախտակին գրեք հետևյալ հարցերը և սուրբ գրությունների հղումները.

**Մոսիա 7–24 ճամփորդությունների ամփոփում**




*Ինչպե՞ս էր Ամմոնի և նրա եղբայրների գալուստը հանդիսանում Լիմքիի ժողովրդի աղոթքների պատասխան: (Տես Մոսիա 7.14–15, 18–20, 21.14–15, 22–24:)*

*Բացի աղոթքի միջոցով Տիրոջ օգնությունը փնտրելուց, ի՞նչ արեցին Լիմքիի ժողովուրդն ազատվելու համար: (Տես Մոսիա 21.36, 22.1–10:)*

*Այս հատվածներում ո՞ր մանրամասներն են նշում, որ Տերն օգնեց Լիմքիի ժողովրդին ապահով փախչել: (Տես Մոսիա 22.11–16, 25.15–16:)*

Բաժանեք ուսանողներին երեք խմբի: Թող յուրաքանչյուր խումբը պատրաստվի, որ պատասխանի գրատախտակի հարցերից մեկին՝ ուսումնասիրելով դրանց ուղեկցող սուրբ գրությունների հատվածները: Մի քանի րոպե անց յուրաքանչյուր խմբից հրավիրեք մեկական ուսանողի զեկուցել իրենց նախապատրաստած պատասխանները: Սա նաև հարմար պահ կլինի, որ ուսանողներն ավելացնեն «Լիմքիի ժողովուրդը փախչում են» արտահայտությունը Մոսիա 7–24–ի ճամփորդությունների մասին ընդհանուր գաղափարի իրենց գծապատկերի վրա: (Ամբողջական գծապատկերը կարող եք տեսնել այս ձեռնարկի վերջում գտնվող ցուցիչում:) Դուք կարող եք նաև ցանկանալ, որ ուսանողներն անդրադառնան Մորմոնի Գրքի էջանշանին, որպեսզի ներկայացնեն, թե ի վերջո ինչ էր պատահելու Լիմքիի ժողովրդի հետ (տես Մոսիա 22.13–14):

Նշեք, որ գուցե մենք Լիմքիի ժողովրդի պես ֆիզիկական գերությունից ազատվելու կարիքը չունենանք, սակայն բոլորս էլ կարիք ունենք ազատվելու մեղքից:

- Ի՞նչ եք դուք սովորել Մոսիա 21–22-ից, որը կխրախուսեր ցանկացած մարդու, ով կարիք կունենար զգալու մեզ մեղքից ազատելու Տիրոջ զորությունը:

Վերջում բերեք ձեր վկայությունը մեզ մեղքից ազատելու Տիրոջ զորության մասին: Նշեք, որ երբ մենք խոնարհեցնենք մեզ, կանչենք առ Տերը և ապաշխարենք մեր մեղքերից, Նա կլսի մեր աղոթքները և կթեթևացնի մեր մեղքի բեռը Իր ժամանակին:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Մոսիա 21.15, 29–30: Մեղքից եկող տառապանքը կարող է նպատակի ծառայել

Երբ մենք մեղք ենք գործում և հրաժարվում ենք ապաշխարել, ինչպես Լիմքի թագավորի ժողովուրդը, մենք լրացուցիչ ցավ ենք բերում մեզ վրա՝ երբեմն ֆիզիկական և միշտ հոգևոր: Յոթանասունից Երեց Քենթ Ֆ. Ռիչարդսը բացատրել է, թե ինչպես կարող է ցավը լինել մեր հոգևոր ապաքինման և աճի անհրաժեշտ մասը.

«Ցավը ապաքինման գործընթացի չափանիշ է: Այն հաճախ մեզ սովորեցնում է համբերել: . . .

Երեց Օրսոն Ֆ. Ուիթնին գրել է. «Ոչ մի ցավ, որը մենք տանում ենք, ոչ մի փորձություն, որին մենք դիմանում ենք, իզուր չի անցնում: Այն ծառայում է մեր կրթությանը, այնպիսի հատկանիշների զարգացմանը, ինչպիսիք են՝ համբերությունը, հավատքը, տոկունությունը և համեստությունը: . . . Դա վշտի և տառապանքի, չարչարանքի և դժբախտության միջոցով գիտելիք ձեռք բերելու համար է, որ մենք գալիս ենք այստեղ»:

Նմանապես Երեց Ռոբերտ Դ. Հեյլսն է ասել.

«Ցավը բերում է ձեզ խոհեմության, որը թույլ է տալիս ձեզ խորհրդածել: Դա փորձառություն է, և ես երախտապարտ եմ, որ տոկացել եմ: . . .

Ես հասկացա, որ ֆիզիկական ցավը և մարմնի ապաքինումը . . . մեծապես նման են հոգևոր ցավին և հոգու ապաքինմանը՝ ապաշխարության գործընթացի ժամանակ»» («Քավությունը ծածկում է բոլոր ցավերը», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2011, 15):

### Մոսիա 21.15–16: Ի՞նչ վերաբերմունք եք ցուցաբերում չարչարանքների ժամանակ:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ուսուցանել է վերաբերմունքի մասին, որից մենք պետք է փորձենք խուսափել և վերաբերմունքի մասին, որը մենք պետք է փորձենք զարգացնել մեր չարչարանքների ժամանակ.

«Տերն աստվածային զորությամբ կթեթևացնի ձեզ, երբ ազատում փնտրեք համեստությամբ և *առ Հիսուս Քրիստոս հավատքով:*

Մի ասեք. «Ոչ ոք ինձ չի հասկանում: Ես չեմ կարող լուծել այս խնդիրը, կամ ստանալ ինձ անհրաժեշտ օգնությունը»: Այդ մեկնաբանությունները անձի պարտությունն են: Ոչ ոք չի կարող ձեզ օգնել՝ առանց ձեր հավատքի և անձնական ջանքերի: Ձեր անձնական զարգացումն է դա պահանջում: Մի փնտրեք ըստ էության անհանգստությունից, ցավից, ճնշումից, դժվարությունից կամ վշտից զերծ կյանք, քանի որ դրանք այն գործիքներն են, որոնք սիրող Հայրն օգտագործում է մեր անձնական զարգացումը և հասկացողությունը խթանելու համար: Ինչպես շարունակաբար հաստատում են սուրբ գրությունները, դուք օգնություն կստանաք, երբ *հավատք գործադրեք առ Հիսուս Քրիստոսը:* . . . Հավատքն առ Քրիստոս նշանակում է, որ մենք վստահում ենք Նրան. մենք վստահում ենք Նրա ուսմունքներին: Դա տանում է դեպի հույս, իսկ հույսը բերում է գթասրտություն, որը Քրիստոսի մաքուր սերն է, և այդ խաղաղ զգացողությունը գալիս է, երբ զգում ենք Նրա մտահոգությունը, Նրա սերը և մեզ բուժելու Նրա կարողությունը կամ Իր բուժող զորությամբ մեր բեռները թեթևացնելը» (“To Be Healed,” *Ensign*, May 1994, 8):

ԴԱՍ 64

# Մոսիա 23–24

## Նախաբան

Այն բանից հետո, երբ Ալման և իր ժողովուրդը փախան Նոյ թագավորի զորքից, նրանք հիմնեցին արդար քաղաք: Չնայած, որ նրանք դարձի եկան առ ավետարանը, նրանք ունեցան տառապանքներ և դժվարություններ: Լամանացիները նրանց ճորտության բերեցին: Երբ Ալման և նրա ժողովուրդը գործադրեցին հավատք և համբերություն, Տերը թեթևացրեց նրանց բեռները և ի վերջո ազատեց նրանց ճորտությունից: (Նշեք, որ Մոսիա 23–24–ը ընդգրկում է մոտավորապես Մոսիա 19–22–ի նույն ժամանակահատվածը:)

## Ուսուցանման առաջարկներ

### Մոսիա 23.1–20

*Տերն օգնում է Ալմային և նրա ժողովրդին փախչել Նոյ թագավորի զորքերից և հիմնել արդար քաղաք*

Ուսանողներին ցույց տվեք Ալման մկրտում է Մորմոնի ջրերում նկարը (62332; *Gospel Art Book* [2009], no. 76): Հրավիրեք ուսանողներից մեկին պատմել դասարանին, թե ինչ նա գիտի այն մարդու մասին, ով նկարում մկրտում է ուրիշներին: (Եթե ուսանողները դժվարանան պատասխանել, դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք կարդան Մոսիա 18 գլխի ամփոփումը, որ հիշեցնեք նրանց Ալմայի և իր ժողովրդի պատմությունը Մորմոնի ջրերի մոտ:)

Ուսանողներին զույգերի բաժանեք: Հրավիրեք յուրաքանչյուր զույգին հերթով միմյանց համար կարդալ Մոսիա 23.1–5, 19: Խնդրեք նրանց փնտրել արտահայտություններ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես է Տերն օգնում Ալմային և նրա ժողովրդին, երբ նրանք ապաշխարում են և ընտրում արդար ապրել: (Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք նշեն այս արտահայտությունները:) Խնդրեք ուսանողներին զեկուցել, թե ինչ են իրենք գտել:

Հրավիրեք ուսանողներին նայել իրենց գծապատկերներին, որոնք ցույց են տալիս Մոսիա 7–24-ի ճամփորդությունների ընդհանուր պատկերը: Հանձնարարեք նրանց իրենց գծապատկերի վրա համապատասխան տեղում նկարել Հելամի երկիրը: Նաև թող նրանք սլաք գծեն Մորմոնի ջրերից դեպի Հելամի երկիրը, և թող այս սլաքին տրվի «Ալման և իր ժողովուրդը հեռանում են» անունը: (Վերջնական գծապատկերը կարող եք տեսնել այս ձեռնարկի վերջում գտնվող ցուցիչում:)

**Մոսիա 7–24 ճամփորդությունների ամփոփում**




Հակիրճ ձևով բացատրեք, որ Մոսիա 23.6–14-ում մենք կարդում ենք, որ Ալման մերժեց նրանց թագավորը դառնալու ժողովրդի առաջարկը: Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 23.9–10, 12: Խնդրեք դասարանին փնտրել Ալմայի նկարագրությունը, թե ինչ ազդեցություն էր գործել Նոյ թագավորն իր և նրա ժողովրդի վրա: Խնդրեք ուսանողներին զեկուցել, թե ինչ են իրենք գտել:

- Ի՞նչ են սովորեցնում «ծուղակն ընկել» և «կապված էիք անօրինության կապանքներով» արտահայտությունները մեղքի ազդեցությունների մասին:
- Ինչո՞ւ է մեզ համար օգտակար գիտակցել ազդեցությունները, որոնք մեզ անցյալում տարել են մեղսագործության:

- Ապաշխարելուց հետո ինչո՞ւ է կարևոր հիշելը, թե որքան «դառը» այն կարող է լինել:

Խնդրեք ուսանողներին բարձրաձայն կարդալ Մոսիա 23.13: Նշեք «հաստատուն կանգնեք այս ազատության մեջ, որով դուք ազատ եք դարձվել» Ալմայի խորհուրդը:

- Ի՞նչ առնչություն ունի այս խորհուրդը ապաշխարության գործընթացի հետ: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ երբ Տերն ազատում է մեզ մեղքից և մենք ճաշակում ենք ներման ազատությունը, մենք պետք է արդար ընտրություններ կատարենք, որ պահենք այդ ազատությունը:)

Հրավիրեք ուսանողներին լուռ ուսումնասիրել Մոսիա 23.14–18, փնտրելով որոշ բաներ, որոնք Ալման սովորեցրեց ժողովրդին անել, որ պահեն իրենց ազատությունը: Խնդրեք մի քանի ուսանողների զեկուցել, թե ինչ են իրենք գտել:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 23.19–20: Խնդրեք դասարանին ներկայացնել այն արտահայտությունը, որը նշում է, որ Տերը օրհնեց ժողովրդին, երբ նրանք ընտրեցին արդար ապրել («չափազանց բարգավաճել»):

- Ինչպե՞ս դուք կամփոփեք այն, ինչ սովորել եք Ալմայի և նրա ժողովրդի փորձառությունից: (Այլ ճշմարտությունների հետ միասին ուսանողները պետք է ասեն, որ **երբ մենք ապաշխարում ենք և ընտրում արդար ապրել, Տերը կօրհնի մեզ և կազատի անօրինության կապանքներից:**)
- Ե՞րբ եք դուք տեսել, որ այս սկզբունքն իրագործվի ձեր կյանքում կամ մի ընկերոջ կամ ընտանիքի անդամի կյանքում: (Հիշեցրեք ուսանողներին, որ նրանք չպետք է կիսվեն փորձառություններով, որոնք խիստ անձնական են կամ գաղտնի:)

## Մոսիա 23.21–29

### *Լամանացիների բանակը և Նոյի ամբարիշտ քահանաները ճորտության են բերում Ալմային և նրա ժողովրդին*

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, որ նրանք, ովքեր արդար են, պետք է այնուամենայնիվ դժվարություններ ունենան, խնդրեք ուսանողներին մտածել իրենց կյանքի այն պահերի մասին, երբ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ միտքը կարող է վերաբերվել իրենց.

«Փորձելն . . . անհրաժեշտ է, նույնիսկ այն ժամանակ, երբ դուք ապրում եք արժանի, արդար կյանքով և հնազանդ եք [Աստծո] պատվիրաններին: Երբ կարծես ամեն բան լավ է ընթանում, դժվարությունները հաճախ գալիս են բազմակողմանիորեն և միաժամանակ» (“Trust in the Lord,” *Ensign*, Nov. 1995, 16):

Խնդրեք ուսանողներին ուսումնասիրել Մոսիա 23.21–22-ը, որպեսզի բացահայտեն, թե ինչու է Տերը թույլ տալիս, որ նրանք, ովքեր ընտրում են արդար ապրել, ունենան դժվարություններ և անհաջողություններ: Երբ ուսանողները զեկուցեն իրենց գտածը, օգնեք նրանց հասկանալ, որ **Տերը կփորձի մեր համբերությունը և հավատքը, որ օգնի մեզ մեծացնել Նրա հանդեպ մեր վստահությունը:**

Հրավիրեք ուսանողներին գրել հետևյալ հարցերն իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային նոթատետրերում: Խնդրեք նրանց խորհել այս հարցերի շուրջ, երբ նրանք ուսումնասիրեն Մոսիա 23–ի մնացած մասը: Նրանք չպետք է գրեն իրենց պատասխանները, մինչև որ դուք հուշեք նրանց անել դա ավելի ուշ դասի ընթացքում:

- Ի՞նչ դժվարությունների առաջ եք դուք այժմ կանգնած:
- Ինչպե՞ս դուք կարող եք հավատք և վստահություն գործադրել առ Աստված ձեր դժվարությունների պահին:

Ուսանողներին խնդրեք կարդալ Մոսիա 23.23–29: Հրավիրեք նրանց գտնել, թե ինչպես էին Ալման և իր ժողովուրդը փորձվել, և ինչ էին նրանք արել, որ ցույց տային իրենց վստահությունն առ Աստված:

- Ինչպես կարող են աղոթելը և մարգարեի խորհրդին հետևելն օգնել մեզ փորձության պահին: (Դրանք կարող են օգնել մեզ մեծացնել մեր համբերությունը և հավատքը: Դրանք կարող են նաև օգնել մեզ ստանալ ուժ, անձնական հայտնություն,

խաղաղություն և վստահություն, որպեսզի մենք կարողանանք տանել մեր փորձությունները կամ ազատում գտնենք դրանցից։)

## Մոսիա 23.30–24.25

### *Ալման և նրա ժողովուրդը հալածանքներ են տանում, սակայն Տերը թեթևացնում է նրանց բեռները և հրաշքով ազատում է նրանց*

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչ կապ ունեին լամանացիները և նրանց թագավորը Ամուղոնի հետ, ամփոփեք Մոսիա 23.30–39 և 24.1–7-ը։ Բացատրեք, որ Ամուղոնը Նոյ թագավորի ամբարիշտ քահանաների առաջնորդն էր, ով Ալմային դուրս էր գցել Աբինադիին աջակցելու համար։ Ամուղոնը միացել էր լամանացիներին՝ մյուս ամբարիշտ քահանաների և նրանց լամանացի կանանց հետ միասին։ Ամուղոնը ձեռք էր բերել լամանացի թագավորի հավանությունը, ով այդ ժամանակ նշանակեց նրան, որ կառավարեր Հելամի երկրի բոլոր լամանացիներին՝ ներառյալ Ալմայի ժողովրդին։

Հրավիրեք ուսանողներից մեկին կանգնել դասարանի առջև, և խնդրեք նրան կրել դատարկ ուսապարկ։ (Ուսանողին պետք կգան նրա սուրբ գրությունները։) Հարցրեք ուսանողին, թե որքան հեշտ կլինի կրել դատարկ ուսապարկը օրվա մնացած ժամերին։ Հրավիրեք այս ուսանողին բարձրաձայն կարդալ Մոսիա 24.8–11։ Ամեն անգամ, երբ ուսանողը կարդա որևէ բանի մասին, որը փորձություն էր Ալմայի և նրա ժողովրդի համար, ուսապարկի մեջ քար դրեք կամ որևէ այլ ծանր առարկա։ Երբ ուսանողը ավարտի կարդալը, հարցրեք նրան, թե որքան հեշտ կլինի կրել բեռնավորված ուսապարկը օրվա մնացած ժամերի ընթացքում։ (Ուսանողը պիտի մնա դասարանի առջև կանգնած և կրի ծանր ուսապարկն այնքան ժամանակ, մինչև ասվի նրան, որ նստի։) Հարցրեք դասարանին.

- Ի՞նչ կարող են ներկայացնել ուսապարկի քարերը կամ ծանր առարկաները մեր կյանքում։
- Ինչպե՞ս են այդպիսի բեռներն ազդում մեզ վրա։

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 24.10-12։ Հրավիրեք դասարանին փնտրել, թե ինչ արեցին Ալմայի մարդիկ, որ օգնություն ստանան իրենց բեռների հետ կապված։ Հրավիրեք ուսանողներին բացատրել, թե ինչ են գտել։

- Ինչպե՞ս կարող է աղոթքն օգնել մեզ, երբ մենք դժվար բեռներ ունենք։
- Փորձությունների ժամանակ ինչո՞ւ է սփոփում այն գիտելիքը, որ Աստված գիտի «մտքերը [մեր] սրտերի»։

Հրավիրեք ուսանողներին կարդալ Մոսիա 24.13–15, որպեսզի պարզեն, թե ինչ պատահեց Ալմայի ժողովրդի հետ, երբ նրանք շարունակեցին աղոթել օգնության համար։

- Ի՞նչ խոստացավ Տերն անել Ալմայի ժողովրդի համար։ (Երբ ուսանողները պատասխանեն, դուք կարող եք խնդրել մեկ այլ ուսանողի կամ երկու ուսանողների տակից բարձրացնել ուսապարկը, որպեսզի թեթևացնեն այն ուսանողի բեռը, ով կրում է այն, որը կխորհրդանշի, թե ինչպես Տերը կարող է թեթևացնել մեր բեռները։) Ինչպե՞ս է այս խոստումը կապված այն ուխտի հետ, որը նրանք կապել են Մորմոնի ջրերում։ (Տես Մոսիա 18.8-10։)
- Ինչո՞ւ է օգտակար իմանալը, որ Տերը միշտ չէ, որ անմիջապես հեռացնում է մեր բեռները կամ մեր դժվարությունները։
- Ի՞նչ կարող ենք մենք սովորել այն բանից, թե ինչպես Ալման և նրա ժողովուրդը արձագանքեցին իրենց դժվարություններին։
- Ե՞րբ եք դուք զգացել, որ Տերը ձեզ ուժ է տվել համբերելու դժվարությանը կամ տանելու բեռը։

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 24.16–17, 21։ Խնդրեք նրանց գտնել բառեր և արտահայտություններ, որոնք շարունակում են նկարագրել, թե ինչպես ժողովուրդն արձագանքեց իր դժվարություններին և ինչպես Տերն օգնեց նրանց։ Հրավիրեք մեկ կամ երկու ուսանողների բացատրել իրեց սեփական բառերով ցանկացած կապ, որ նրանք տեսնում են մարդկանց գործողությունների և Տիրոջ գործողությունների միջև։ Գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. ***Երբ մենք համբերությամբ ենթարկվենք Տիրոջ կամքին, Նա կուժեղացնի մեզ և կազատի մեզ մեր փորձություններից Իր ժամանակին։***

***Ուսանողի մասնակցությունը***

Երբ հրավիրում եք ուսանողներին մասնակցել վարժություններին դասարանի առջև, դա օգնում է բոլոր ուսանողներին ավելի ներգրավված զգալ սովորելում, քանի որ իրենց հասակակիցն օգնում է ուսուցանել։ Երբ դուք հրավիրում եք ուսանողներին մասնակցել և նրանք պետք է երկար ժամանակ անցկացնեն դասարանի առջև, խնդրեք նրանց իրենց հետ բերել իրենց սուրբ գրությունները, որպեսզի նրանք կարողանան շարունակել մասնակցել սուրբ գրությունները կարդալուն և քննարկելուն մյուսների հետ։

Հրավիրեք դասարանի առաջ կանգնած ուսանողին հեռացնել ուսապարկը: Խնդրեք նրան նկարագրել, թե ինչ զգացողություններ ունի բեռից ազատվելուց հետո: Հրավիրեք նույն ուսանողին կարդալ Մոսիա 24.21–22: Դուք կարող եք խնդրել ուսանողին կիսվել, թե ինչպես նա կարող է հասկանալ այն, ինչ մարդիկ արեցին այս հատվածներում:

Ամփոփեք Մոսիա 24.18–25, բացատրելով, որ Ալման և իր մարդիկ կարողացան փախչել, քանի որ Տերը խորը քուն բերեց լամանացիների վրա: Տերն այնուհետև առաջնորդեց Ալմային Զարահեմլա, որտեղ Մոսիա թագավորը ուրախությամբ ողջունեց նրանց: Ալման և նրա ժողովուրդը «դուրս թափեցին իրենց զորությունն առ Աստված», իմանալով, որ «ոչ ոք չէր կարող ազատել իրենց, բացի Տիրոջից՝ իրենց Աստծուց» (Մոսիա 24.21, տես նաև Մոսիա 25.16):

Իրենց գծապատկերներում, որոնք ներկայացնում են Մոսիա 7–24–ի ճամփորդությունների ընդհանուր պատկերը, ուսանողները թող սլաք գծեն Հելամի երկրից դեպի Զարահեմլայի երկիրը: Հրահանգեք նրանց այս ճամփորդությանը տալ «Ալմայի մարդիկ փախչում են» անունը:

**Մոսիա 7–24 ճամփորդությունների մասին**




Վերջում հրավիրեք ուսանողներին գրել երկու հարցերի պատասխանները, որոնք նրանք դասի սկզբում գրել էին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: Խնդրեք նրանց անդրադառնալ իրենց դժվարություններին և թե ինչպես նրանք կարող են հավատք և վստահություն գործադրել առ Աստված, որը կօգնի նրանց համբերել: Կիսվեք ձեր վկայությամբ, որ եթե մենք համբերությամբ ենթարկվենք Տիրոջ կամքին, Նա կուժեղացնի մեզ և կազատի մեզ մեր փորձություններից Իր ժամանակին: Դուք կարող եք նաև հրավիրել ուսանողներին կիսվել օրինակներով, թե ինչպես է Տերն ուժեղացրել նրանց իրենց փորձությունների մեջ:

ԴԱՍ 65

# Մոսիա 25

## Նախաբան

Մոսիա 25-ը տալիս է Զենիֆի ժողովրդի (տես Մոսիա 7–24) պատմության վերջաբանը: Լիմքիի ժողովուրդը և Ալմային հետևողները վերադարձան Զարահեմլա և ապահով կերպով միացան Մոսիա թագավորի կառավարման ներքո: Այս խմբերի ժամանումից հետո Լիմքին և իր ժողովուրդը մկրտվեցին: Մոսիա թագավորը Ալմային իշխանություն տվեց երկրով մեկ եկեղեցիներ հաստատելու և Նեփիի ժողովրդի մեջ Աստծո Եկեղեցու գործերը կարգավորելու համար:

## Ուսուցանման առաջարկներ

### Մոսիա 25.1–13

*Զարահեմլայի երկրում հավաքվածները միավորվում են և հայտնի են դառնում որպես Նեփիացիներ*

Հրավիրեք ուսանողներին մտածել իրենց կարդացած կամ լսած այն պատմությունների մասին, որոնք լուսաբանում են, թե ինչպես է Տերն օգնել ինչ-որ մեկին, տալով առաջնորդություն, ուժ, պաշտպանություն կամ ազատում: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք մտածեն սուրբ գրությունների, Եկեղեցու պատմության կամ ընտանիքի անդամների կամ ընկերների կյանքի պատմությունների մասին: Օրինակ, կիսվեք հետևյալ պատմությամբ, որը պատմել է մի երիտասարդ կին, ով հետ էր մնացել իր խմբից և քայլում էր բլուրն ի վար ծխի բացօթյա մի միջոցառման ժամանակ.

«Նախազգուշացնող ձայնը՝ հաստատուն, սակայն մեղմ, ասաց. «Ետ դարձիր»: Ես գրեթե ուշադրություն չդարձրեցի, սակայն այն նորից եկավ: Այս անգամ ես լսեցի և վերադարձա խմբի մոտ: Երբ մենք սկսեցինք ցած իջնել, մենք տեսանք երկու արագ քայլող և կատաղած բլուրը բարձրացող հսկայական սև ցլեր: Ամենամեծը սկսեց թաթով հարվածել գետնին, երբ աչքերը հառեց մեզ վրա: Մեր քահանայության ղեկավարը փորձեց շեղել նրա ուշադրությունը և մենք կարողացանք ապահով անցնել ցանկապատի մյուս կողմը:

Երբ մենք կրկին մտանք ճամբար, ես հասկացա, որ եթե չլսեի Հոգու նախազգուշացումը, ես կարող էի շատ ծանր վիրավորվել կամ նույնիսկ սպանվել: Ես գիտեի, որ Երկնային Հայրը հոգում էր անձամբ ինձ համար և ապահովության մեջ պահեց ինձ: Ես անչափ շնորհակալ եմ Տիրոջն այդ նախազգուշացման համար: Այս փորձառությունն ամրացրեց իմ վկայությունը և ավելի մեծ սեր տվեց առ Տերը» (“Turn Back,” *New Era*, Nov. 2010, 47):

Հրավիրեք մեկ կամ երկու ուսանողների կիսվել իրենց մտածած պատմությամբ, որը լուսաբանում է Աստծո բարությունը և զորությունը մեկ ուրիշի կյանքում: Հարցրեք դասարանին.

- Ինչպե՞ս է ձեզ օգնում ուրշների կյանքում Աստծո բարության և զորության մասին լսելը:

Ամփոփեք Մոսիա 25.1–6, բացատրելով, որ այն բանից հետո, երբ Լիմքիի ժողովուրդը և Ալմայի ժողովուրդը (ովքեր բոլորը Զենիֆի ժողովրդի սերունդներն էին) փախան ստրկությունից և միավորվեցին Զարահեմլայում ապրող մարդկանց հետ, Մոսիա թագավորը կարդաց նրանց հիշատակարանները բոլոր մարդկանց համար: Ուսանողները թող մտքում կարդան Մոսիա 25.7, փնտրելով ժողովրդի ընդհանուր արձագանքը Զենիֆի ժողովրդի հետ Աստծո գործերի պատմության մասին: Հրավիրեք ուսանողներից մեկին կիսվել իր գտածով:

Գրատախտակին գծեք հետևյալ աղյուսակը: Բացատրեք, որ Մոսիա 25.8–11-ում մենք ավելի շատ բան ենք սովորում այն մասին, թե ինչպես ժողովուրդն արձագանքեց Զենիֆի և Ալմայի մարդկանց հիշատակարաններին: Խնդրեք ուսանողներին սուրբ գրությունների հղումներում փնտրել, թե ինչ լսեցին մարդիկ և ինչ զգացին

դրանց հետ կապված: Առաջին հղման պատասխանները, որպես օրինակ, տրված են փակագծերում:

| | Ինչ լսեց ժողովուրդը | Ինչ զգաց ժողովուրդը |
|---|---|---|
| Մոսիա 25.8 | (Նրանք լսեցին, թե ինչպես էր Լիմքիի ժողովուրդն ազատվել ճորտությունից:) | (Այն լցրեց նրանց մեծ ուրախությամբ:) |
| Մոսիա 25.9 | | |
| Մոսիա 25.10 | | |
| Մոսիա 25.11 | | |

Սուրբ գրությունների հղումներն ուսումնասիրելու համար բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք ուսանողներից մի քանիսին գրել գրատախտակին, թե ինչ են իրենք գտել: Խնդրեք ուսանողներին ամփոփել, թե ինչ են իրենք սովորել Մոսիա 25.8–11-ից, շարադրելով սկզբունքներ այս հատվածից, որը նրանք կարող են իրենց վերագրել: Երբ ուսանողները պատասխանեն, օգնեք նրանց հասկանալ, որ **ուսումնասիրելով ուրիշների կյանքում Աստծո գործերի հիշատակարանները, մենք կարող ենք ուրախություն և երախտագիտություն զգալ Աստծո բարության համար:** (Երբ ուսանողները կարդան այս հատվածները, նրանք կարող են նաև նկատել մեղքի հետևանքով առաջացած տխրությունը և կորուստը:)

- Ի՞նչ աղբյուրների մենք կարող ենք անդրադառնալ, որպեսզի իմանանք Աստծո բարության վերաբերյալ ուրիշների փորձառությունների մասին: (Ուսանողների պատասխանները գրեք գրատախտակին: Դրանք կարող են ներառել սուրբ գրությունները, գերագույն համաժողովի ելույթները, Եկեղեցու ամսագրերը, Եկեղեցու ղեկավարների և այլոց կենսագրությունները և ընտանեկան պատմությունները:)

Հրավիրեք ուսանողներին մտածել, թե երբ են իրենք սովորել ուրիշների հանդեպ Աստծո բարության մասին գրատախտակին նշված աղբյուրներից:

- Ինչպե՞ս է ձեզ համար օգտակար եղել այս աղբյուրներից մեկից ուրիշների հանդեպ Աստծո բարության մասին սովորելը:
- Ձեր կարծիքով, ի՞նչ տևական ազդեցություն կարող է մեկի վրա թողնել ուրիշների կյանքում Աստծո բարության մասին շարունակաբար սովորելը:

Խրախուսեք ուսանողներին ժամանակ տրամադրել և ինքնուրույն ընտրել գրատախտակին նշված աղբյուրներից մեկը և փնտրել Աստծո բարության վերաբերյալ ոգեշնչող պատմություններ:

## Մոսիա 25.14–24

### *Ալման հիմնում է Աստծո Եկեղեցին նեփիացիների ողջ երկրով մեկ*

Որպեսզի նախապատրաստեք ուսանողներին ուսումնասիրել նեփիացիների մեջ Եկեղեցու կազմակերպումը և ուսմունքները, հարցրեք.

- Ե՞րբ եք դուք հաճախել Վերջին Օրերի Սրբերի մեկ այլ ծուխ կամ ճյուղ, բացի ձեր ծխից կամ ճյուղից: Ի՞նչ նմանություններ եք դուք նկատել ձեր ծխի կամ ճյուղի և ձեր այցելածի միջև:
- Ինչպե՞ս է օգտակար լինում տեսնելը, որ Եկեղեցու կառուցվածքը և ուսմունքները նույնն են Եկեղեցու յուրաքանչյուր ծխում կամ ճյուղում:

Ամփոփեք Մոսիա 25.14–17, բացատրելով, որ մարդկանց հետ խոսելուց և նրանց համար կարդալուց հետո, Մոսիան հրավիրեց Ալմային ուսուցանել նրանց: Ապա Լիմքի թագավորը և նրա ժողովուրդը խնդրեցին մկրտվել: Ալման մկրտեց նրանց և սկսեց կազմակերպել Եկեղեցին երկրով մեկ:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մոսիա 25.18–22: Խնդրեք դասարանին ուշադրություն դարձնել, թե ինչպես էր Եկեղեցին կազմակերպված և ինչպես էր այն ղեկավարվում նեփիացիների մեջ Ալմայի օրերում: Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, որ **Եկեղեցու կազմակերպությունը**

**հետևում է, որ բոլոր անդամները կարողանան ստանալ ճշմարտությունը** , տվեք նմանատիպ հարցեր.

- Ինչպե՞ս է նեփիացիների ժամանակների Եկեղեցին նման այսօրվա Եկեղեցուն: (Մենք ունենք ծխեր և ճյուղեր, որոնք նման են Մոսիա 25.21–ում նշված «տարբեր խմբերին»: Ճյուղի նախագահները, եպիսկոպոսները և ցցի նախագահները նման են քահանաներին և ուսուցիչներին, ովքեր ղեկավարում էին Եկեղեցին Ալմայի օրերում:)
- Համաձայն Մոսիա 25.15–16, 22, որ ճշմարտությունների վրա էին հատուկ ուշադրություն դարձնում Մոսիայի օրերի Եկեղեցու քահանաները և ուսուցիչները: (Դուք կարող եք նշել, որ Տերը տվել է նմանատիպ հրահանգ ծնողներին, Եկեղեցու ղեկավարներին և միսիոներներին վերջին օրերում: [Տես ՎԵՈՒ 15.6, 19.31, 68.25:])
- Ինչո՞ւ է կարևոր շարունակ ուսուցանել ապաշխարություն և հավատք առ Աստված:

Խնդրեք ուսանողներին կարդալ Մոսիա 25.23–24, փնտրելով արտահայտություններ, որոնք նկարագրում են օրհնությունները, որոնք ստացել են Աստծո Եկեղեցուն միացողները:

- Ինչպե՞ս էին մարդիկ օրհնվել մկրտվելու և Աստծո Եկեղեցուն միանալու արդյունքում:
- Ի՞նչ եղանակներով է Տերն օրհնել ձեզ Եկեղեցու անդամության միջոցով:

Գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. ***Երբ մենք մեր վրա ենք վերցնում Հիսուս Քրիստոսի անունը և ապրում համապատասխան ձևով, Տերը դուրս կթափի Իր Հոգին մեզ վրա:***

Վկայեք ուսանողներին, որ օրհնությունները, որոնք նրանք ունեցել են որպես Եկեղեցու անդամներ, կարող են շատանալ, երբ նրանք պահեն իրենց ուխտերը և ստանան Հոգին:

***Վկայեք խոստացված օրհնությունների մասին***

Եղբայր Ռասսել Տ. Օսգութորփը՝ Կիրակնօրյա Դպրոցի գերագույն նախագահը, կիսվեց արդյունավետ ուսուցանման մի հասարակ օրինաչափությամբ. (1) ուսուցանեք կարևոր վարդապետությունները, (2) հրավիրեք սովորողներին գործել և (3) վկայեք խոստացված օրհնությունների մասին (տես «Ուսուցումն օգնում է կյանքեր փրկել», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2009, 15): Երբ դուք վկայեք սուրբ գրություններում և վերջին օրերի մարգարեների խոսքերում գտնվող խոստումների մասին, ուսանողները կարող են ավելի մեծ մղում զգալ իրենց սովորածը կիրառելու համար:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Մոսիա 25.17–22:Քահանայության իշխանությունը նեփիացիների մեջ

Մորմոնի Գիրքը հատուկ մանրամասներ չի տալիս նեփիացիների և լամանացիների մեջ մարգարեների և այլ եղբայրների կողմից քահանայություն կրելու մասին: Այնուամենայնիվ, արարողությունների և Եկեղեցու ղեկավարման ձևի մասին հղումները տալիս են բավականաչափ փաստեր, որ նրանք կրել են Մելքիսեդեկյան Քահանայություն: Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ուսուցանել է, որ «քահանայությունը, որը կրում էին [նեփիացիները] և որի ներքո նրանք պաշտոնավարում էին, Քահանայություն էր ըստ *սուրբ կարգի*՝ Աստծո Որդու կարգի [տես Ալմա 13.1–20]: Այս բարձրագույն քահանայությունը կարող է պաշտոնավարել ավետարանի յուրաքանչյուր արարողությունում» (*Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 3:87):

Մորմոնի Գրքում քահանայության իշխանության մասին լրացուցիչ տեղեկությունների համար տես Մոսիա 18–ի բացատրական և պատմական տեղեկությունները:

# Տնային ուսումնասիրության դաս

## Մոսիա 18–25 (Մաս 13)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Մոսիա 18–25 (մաս 13)-ում ուսանողների ուսումնասիրած վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը չի նախատեսվում ուսուցանել որպես ձեր դասի մի մաս: Ձեր ուսուցանած դասը կենտրոնանում է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, երբ դուք խորհեք ուսանողների կարիքների մասին:

#### Օր 1 (Մոսիա 18)

Աբինադիի մահից հետո Ալման ապաշխարեց և ուրիշներին ուսուցանեց Հիսուս Քրիստոսի ավետարանը Մորմոնի ջրերի մոտ: Ուսումնասիրելով այս փորձառությունը ուսանողները սովորեցին, որ մենք ստանում ենք Տիրոջ Հոգին և հավերժական կյանքի խոստումը կապելով և պահելով մկրտության ուխտը և որ մեծ օրհնություններ են տրվում նրանց, ովքեր պահում են մկրտության ուխտը:

#### Օր 2 (Մոսիա 19–20)

Այն բանից հետո, երբ Նոյ թագավորը և նրա մարդիկ մերժեցին Աբինադիի ուսմունքները և փորձեցին կործանել Ալմային և նրա հետևորդներին, լամանացիները հարձակվեցին նրանց վրա: Նոյը սպանվեց իր ժողովրդի կողմից և նրա որդի Լիմքին դարձավ թագավոր: Երբ ուսանողները կարդացին, թե ինչպես են Լիմքիի ժողովուրդը ճորտության բերվել լամանացիների կողմից, նրանք սովորեցին, որ Տիրոջ ծառաների խոսքերը մերժելը բերում է տառապանք և վիշտ: Նրանց խրախուսվեց մտածել այնպիսի պահի մասին, երբ նրանք ունեցել են խաղաղություն և հոգևոր ապահովություն՝ հետևելով Տիրոջ ծառաների խորհրդին:

#### Օր 3 (Մոսիա 21–24)

Ուսանողները սովորեցին, որ Ալման և նրա ժողովուրդը, չնայած արդար էին, նույնպես ճորտության բերվեցին լամանացիների կողմից: Ուսանողներն իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում աղյուսակ կազմեցին, որը համեմատում էր Լիմքիի և նրա ժողովրդի ճորտությունը և ազատումը Ալմայի և նրա ժողովրդի ճորտության և ազատման հետ: Լիմքիի ժողովրդի պատմությունը սովորեցնում է, որ եթե մենք ցանկանում ենք ուխտեր կապել և պահել, Տերն ուղի կպատրաստի մեր ազատման համար: Ալմայի խմբից ուսանողները սովորեցին, որ երբ մենք համբերատարությամբ երթարկվում ենք Տիրոջ կամքին, Նա կուժեղացնի մեզ և կազատի մեզ մեր փորձություններից Իր ժամանակին:

#### Օր 4 (Մոսիա 25)

Երբ Լիմքիի ժողովուրդը և Ալմայի ժողովուրդը ապահովությամբ վերամիավորվեցին Զարահեմլայում Մոսիա թագավորի կառավարման ներքո, նրանց հիշատակարանները կարդացին բոլոր ժողովրդի համար: Ուսանողները սովորեցին, որ ուսումնասիրելով Աստծո գործերի վերաբերյալ ուրիշների հիշատակարանները, մենք կարող ենք ուրախություն և երախտագիտություն զգալ Աստծո բարության համար: Երբ ուսանողները զննեցին, թե ինչով էր Նեփիի օրերի Եկեղեցու անդամությունը նման այսօրվա Եկեղեցու անդամությանը, նրանք սովորեցին, որ երբ մենք մեզ վրա ենք վերցնում Հիսուս Քրիստոսի անունը և ապրում ենք դրան համապատասխան, Տերը կօրհնի մեզ Իր Հոգով: Ուսանողները գրեցին այն մասին, թե ինչպես է Հիսուս Քրիստոսի անունը հոժարաբար իրենց վրա վերցնելը փոխում իրենց կյանքը:

### Նախաբան

Ալմայի ժողովրդի և Լիմքիի ժողովրդի փորձառությունները համեմատելը և հակադրելը կարող է օգնել ուսանողներին բացահայտել արժեքավոր սկզբունքներ մեր փորձությունների աղբյուրների վերաբերյալ և թե ինչպես մենք կարող ենք ազատվել փորձություններից առ Հիսուս Քրիստոսը մեր հավատքի միջոցով: Օգնեք ուսանողներին իմանալ, որ երբ նրանք կապեն և պահեն սրբազան ուխտեր, վստահեն Տիրոջը և խոնարհաբար կանչեն առ Նա օգնության համար, Նա կուժեղացնի նրանց և կազատի իրենց փորձություններից Իր իսկ ճանապարհով և Իր իսկ ժամանակին:

### Ուսուցանման առաջարկներ

#### Մոսիա 18

***Ալման քարոզում է ավետարանը Նոյ թագավորի ժողովրդին, և շատերը ապաշխարում են և ցանկանում են մկրտվել***

Խնդրեք ուսանողներին մտածել իրենց մկրտության մասին: Հրավիրեք նրանց կիսել որոշ հիշարժան մանրամասներ իրենց փորձառության մասին: Ապա, հնարավորության դեպքում ցույց տվեք Ալման մկրտում է Մորմոնի ջրերում նկարը (62332; *Gospel Art Book* [2009], no. 76), և խնդրեք նրանց վերհիշել Մոսիա 18.8–11–ում նկարագրված իրադարձությունները: Հարցրեք ուսանողներին, թե ինչ իրենք հասկացան մկրտության նպատակի և մկրտության ուխտի մասին, երբ մկրտվեցին:

Մոսիա 18-ի պատմությունը քննարկելուց հետո ուսանողները թող անդրադառնան օր 1, հանձնարարություն 1-ին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում, որտեղ նրանք գծապատկերել են, թե ինչ է Ալման ուսուցանել մկրտության ուխտի մասին, ինչպես բացատրվել է Մոսիա 18.8–11–ում: Հրավիրեք ուսանողներից մեկին գրատախտակին գծել իրենց գծապատկերը կամ կիսել այն

դասարանի հետ, և հարցրեք մնացած ուսանողներին, թե արդյոք նրանք որևէ բան ունեն ավելացնելու «Ես խոստանում եմ» և «Աստված խոստանում է» սյունակներում: Ապա գրատախտակին կամ թերթիկի վրա գրեք հետևյալ սկզբունքը. ***Մենք ստանում ենք Տիրոջ Հոգին և հավերժական կյանքի խոստումը՝ կապելով և պահելով մկրտության ուխտը:*** Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները գրեն այս սկզբունքն իրենց սուրբ գրություններում Մոսիա 18.8–11–ի կողքին:

Հարցրեք. Մկրտության ուխտը հասկանալն ինչպե՞ս է ազդել այս ուխտը պահելու ձեր ցանկության վրա:

## Մոսիա 19–24

*Լիմքիի ժողովուրդը և Ալմային հետևորդներն ազատվում են լամանացիների ճորտությունից*

Խնդրեք ուսանողներից մեկին կարդալ ուսանողների ուսումնասիրության ուղեցույցի այս մասի օր 3-ի Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի ելույթի առաջին նախադասությունը: Հարցրեք ուսանողներին, թե ըստ Երեց Սքոթի որոնք են այն երկու տեսակի փորձությունները, որոնց մենք հանդիպում ենք կյանքում: (Նրանք պետք է, որ ընդգծած լինեն դրանք իրենց ձեռնարկներում:) Գրատախտակին գրեք *Փորձություններ, որ առաջ են գալիս օրինազանցությունից* և *Կատարելագործում, որ առաջ է գալիս փորձելուց*:

Խնդրեք ուսանողներին վերանայել օր 3, հանձնարարություն 1-ի իրեց պատասխանները՝ իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: Այնուհետև գրեք *Լիմքիի ժողովուրդ* «Փորձություններ, որ առաջ են գալիս օրինազանցությունից» (տես Մոսիա 19.10, 25–28, 20.20–21) արտահայտության տակ և *Ալմայի ժողովուրդ* «Կատարելագործում, որ առաջ է գալիս փորձելուց» (տես Մոսիա 23.18–21) արտահայտության տակ: Հրավիրեք ուսանողներին գրել գրատախտակին որոշ օրինակներ, թե ինչպես մարդիկ այսօր կարող են ունենալ այսպիսի դժվարություններ:

Երբ դուք ձեր ուսանողների հետ վերանայեք հետևյալ սկզբունքները, գրեք դրանք գրատախտակին:

Հրավիրեք ուսանողներին զույգերով կարդալ Մոսիա 21.13–16: Խնդրեք նրանց ներկայացնել բառեր և արտահայտություններ, որոնք սովորեցնում են, որ ***երբ մենք խոնարհեցնում ենք մեզ, կանչում առ Տերը և ապաշխարում մեր մեղքերից, Աստված կլսի մեր աղոթքները և կթեթևացնի մեր մեղքերի բեռը Իր ժամանակին:*** Խնդրեք ուսանողներին կիսվել, թե իրենց կարծիքով ինչպես կարող է մեկը կիրառել այս սկզբունքը, եթե նա ունենում է գրատախտակին գրված դժվարություններից մեկը:

Հրավիրեք ուսանողներին կարդալ Մոսիա 21.31–32, 35 և ամփոփել Լիմքիի ժողովրդի փախուստը Մոսիա 22-ում, որպեսզի ցույց տաք, որ ***երբ մենք ուխտում ենք ծառայել Աստծուն և պահել Նրա պատվիրանները, Տերը ուղի կպատրաստի մեր ազատման համար:*** Դուք կարող եք խրախուսել ուսանողներին գրել այս սկզբունքը Մոսիա 21.31–35–ի կողքին:

Որպեսզի կրկնեք այն սկզբունքը, որն ուսանողները սովորել էին Ալմայի ժողովրդի մասին սովորելուց, խնդրեք ուսանողներից մեկին ամփոփել այն պատմությունը, թե ինչպես Ալմայի ժողովուրդը ճորտության բերվեց լամանացիների կողմից (տես Մոսիա 23.25–24.11): Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մոսիա 24.12–17: Խնդրեք նրանց նշել բառեր կամ արտահայտություններ, որոնք սովորեցնում են, որ ***երբ մենք համբերատարությամբ ենթարկվենք Տիրոջ կամքին, Նա կուժեղացնի մեզ և կազատի մեզ մեր փորձություններից Իր ժամանակին:*** Դուք կարող եք խրախուսել ուսանողներին նշել այս հատվածների կարևոր բառերը կամ արտահայտությունները:

Գրեք հետևյալ օրինակները գրատախտակին կամ պատրաստեք դրանք տպված թերթիկների վրա: Խնդրեք ուսանողներին բացատրել, թե ինչպես նրանք կարող են օգտագործել ճշմարտությունները, որ նրանք սովորել են Լիմքիի և Ալմայի ժողովրդի մասին ուսումնասիրելուց, որ օգնեն մարդուն յուրաքանչյուր օրինակում:

1. Ընկերներից մեկը գիտակցել է ապաշխարելու կարիքը և ունեցել է անարժանության և հիասթափության սաստիկ զգացողություններ, խորհելով, թե արդյոք երբևէ հնարավոր կլինի հաղթահարել գայթակղությունները և մեղքի զգացումները: Ինչպե՞ս դուք կարող եք օգտագործել Լիմքիի ժողովրդի պատմությունը, որպեսզի ձեր ընկերոջը քաջալերեք և հուսադրեք, որ ապաշխարի: (Դուք կարող եք խրախուսել ուսանողներին ներկայացնել հատուկ հատվածներ Մոսիա 21-ում, որ նրանք կարողանան կիսել այս ընկերոջ հետ: Հրավիրեք ուսանողներին բացատրել, թե ինչու են նրանք մտածում, որ իրեց ընտրած հատվածները կարող են օգնել ընկերոջը:)
2. Ընկերներից մեկը շատ շփվող է և փորձում է ապրել ավետարանի չափանիշներով: Որոշ մարդիկ չեն ուզում շփվել այս անձնավորության հետ, ասելով, որ նա պարզապես «չափից ավելի լավն է» նրանց համար: Ինչպե՞ս դուք կարող եք օգտագործել Ալմայի ժողովրդի պատմությունը, որ օգնեք ձեր ընկերոջը վստահել Տիրոջը և ուժ և մխիթարություն գտնել այս փորձության ընթացքում: (Դուք կարող եք խրախուսել ուսանողներին ներկայացնել յուրահատուկ հատվածներ Մոսիա 24-ում, որ նրանք կարողանան կիսվել իրենց ընկերոջ հետ: Հրավիրեք նրանց բացատրել, թե ինչու են նրանք մտածում, որ իրենց ընտրած հատվածները կօգնեն:)

Հրավիրեք ուսանողներին պատմել այնպիսի պահերի մասին, երբ նրանք կամ մարդիկ, որոնց իրենք գիտեն, իրենց կյանքում տեսել են Տիրոջ ազատման զորությունը: (Զգույշ եղեք, որ չխրախուսեք կամ թույլ չտաք ուսանողներին դասարանում կիսվել նախկինում գործած օրինազանցությունների ոչ պատշաճ մանրամասներով:) Խրախուսեք ուսանողներին պահել իրենց ուխտերը, կանչել առ Տերը օգնության համար և վստահել Նրա ազատման զորությանը իրենց կյանքում հանդիպած ցանկացած փորձության ժամանակ: Ավարտեք դասը, բերելով ձեր վկայությունը խնդիրներից և դժվարություններից մեզ ազատելու Տիրոջ զորության մասին, որոնք առաջ են գալիս կամ մեր սեփական օրինազանցություններից կամ փորձելուց, որի նպատակն է կատարելագործել մեզ:

## Հաջորդ Մասը (Մոսիա 26–Ալմա 4)

Հաջորդ շաբաթ ուսանողները կսովորեն հրեշտակի մասին, ով ուղարկվեց, որ կանգնեցներ Ալմա Կրտսերին Եկեղեցին կործանելուց: Նրանք կսովորեն, թե ինչ պատահեց Ալմայի հետ այս փորձառությունից հետո և կարդալ սուրբ գրություններում ամենակարևոր ուսմունքներից որոշները հոգևոր վերածննդի մասին: Երբ Մոսիա թագավորը մահացավ, Ալման ընտրվեց լինելու նեփիացիների ղեկավարը: Ամղիկին՝ մի ամբարիշտ մարդ, փորձում է տապալել նրան: Խրախուսեք ուսանողներին ուշադրություն դարձնել, թե ինչ արեց Ալման, որ հրավիրեր Տիրոջ ազատող զորությունն այս իրավիճակում:

ԴԱՍ 66

# Մոսիա 26

## Նախաբան

Մոսիայի թագավորության ընթացքում աճող սերնդից շատերը, ովքեր փոքր երեխաներ էին Բենիամին թագավորի վերջին ելույթի ժամանակ, չէին հավատում Եկեղեցու ուսմունքներին և հրաժարվեցին կանչել առ Տերը: Այս անհավատ երիտասարդները ազդեցին Եկեղեցու այլ անդամների վրա, որ գործեին լուրջ մեղքեր: Այս օրինազանցներից շատերը բերվեցին Ալմայի՝ Եկեղեցու ղեկավարի առաջ: Ալման սկզբում չգիտեր, թե ինչ աներ, սակայն նա ի վերջո խնդրեց Տիրոջը առաջնորդության համար, թե ինչպես դատել անհնազանդ անդամներին: Տերը հայտնեց գործընթացը, որին Ալման պետք է հետևեր՝ Եկեղեցու անդամներին պատասխանատվության կանչելով իրենց մեղքերի համար: Ալման նաև իմացավ Աստծո ողորմության և ցանկության մասին, ներելու նրանց, ովքեր ապաշխարում են: Ալման հետևեց Տիրոջ խորհրդին և կարգուկանոն հաստատեց Եկեղեցում:

## Ուսուցանման առաջարկներ

### Մոսիա 26.1–6

*Աճող սերնդից շատերը չեն հավատում ավետարանին և առաջնորդում են ուրիշներին մեղք գործել*

Նախքան դասը գրատախտակին գրեք հետևյալ հարցերը.

*Ինչպե՞ս դուք այսօր կնկարագրեք ձեր վկայությունը:*

*Ի՞նչ առումներով դուք կցանկանայիք, որ ձեր վկայությունն աճեր:*

Խնդրեք ուսանողներին պատասխանել այս հարցերին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ դասարանային նոթատետրերում: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո բացատրեք, որ Մոսիա 26-ը պարունակում է մի խումբ ժողովրդի հիշատակարան, ովքեր չէին անում այն, ինչ պետք է անեին իրեց վկայությունները խնամելու համար: Արդյունքում նրանց հավատքն առ Աստված երբեք չզարգացավ, և նրանք շատ Եկեղեցու անդամների առաջնորդեցին դեպի մեղք և մոլորություն: Խորհուրդ տվեք, որ այս հիշատակարանն ուսումնասիրելիս ուսանողները խորհեն, թե ինչ է այն ուսուցանում իրենց վկայությունները զարգացնելու և ամրացնելու մասին:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 26.1–3: Ապա հարցրեք դասարանին.

- Ի՞նչ ընտրություն կատարեցին աճող սերնդից շատերը: (Նրանք ընտրեցին չհավատալ իրենց ծնողների ավանդությանը:)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է մարդկանց անհավատությունը խանգարում, որ նրանք կարողանան «հասկանալ Աստծո խոսքը» (Մոսիա 26.3):

Բացատրեք, որ հավատալը (կամ նույնիսկ հավատալու ցանկությունը) տանում է արարքների, որոնք ամրացնում են մեր վկայությունները: Մյուս կողմից, երբ մարդիկ ընտրում են չհավատալ, նրանք նաև ընտրում են չանել որոշակի բաներ, որոնք կօգնեին նրանց զարգացնել ամուր վկայություններ: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 26.3–4, 6: Դասարանի կեսին խնդրեք փնտրել, թե ինչ չի անի աճող սերունդը իրենց անհավատության պատճառով: Խնդրեք դասարանի մյուս մասին փնտրել այս անհավատության արդյունքները:

- Ի՞նչ մերժեց անել աճող սերունդը իրենց անհավատության պատճառով:
- Որո՞նք էին նրանց անհավատության ազդեցությունները:

Այն բանից հետո, երբ ուսանողները կքննարկեն այս հարցերը, գրատախտակին գրեք հետևյալը. *Վկայություն զարգացնելու և պահելու համար մենք պետք է . . .*

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ խոսքերը: Խնդրեք դասարանին

***Ուսուցանել երիտասարդներին***

Առաջին Նախագահությունից Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսերն ուսուցանել է.

«Եկեղեցու երիտասարդները Հոգու բաների քաղցն ունեն. նրանք փափագում են սովորել ավետարանը, և նրանք դա ուզում են անկեղծորեն, կատարյալ ձևով: . . .

. . . Դուք չպետք է քողարկեք կրոնական ճշմարտությունները աշխարհիկ բաների ծածկով. դուք կարող եք բերել այս ճշմարտությունները [նրանց] մոտ բացեիբաց» (*The Charted Course of the Church in Education,* rev. ed. [pamphlet, 1994], 3, 9):

ուշադրություն դարձնել, թե ինչ եղանակներով կարող են լրացնել գրատախտակի նախադասությունը:

«Վկայությունը պահանջում է, որ սնուցումը լինի հավատքի աղոթքով, Աստծո խոսքի հանդեպ քաղցով և մեր ստացած ճշմարտությանը հնազանդվելով: Վտանգ կա աղոթքն անտեսելու մեջ: Վտանգ է սպառնում մեր վկայությանը, եթե սուրբ գրությունները միայն անկանոն ենք կարդում և ուսումնասիրում: Դրանք մեր վկայության անհրաժեշտ սնուցիչներն են: . . .

Աստծո խոսքով սնուցվելը, սրտանց աղոթելը և Տիրոջ պատվիրաններին հնազանդվելը պետք է հավասարաչափ և մշտապես կիրառվի ձեր վկայության աճի և բարգավաճման համար» («Կենդանի վկայություն», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2011, 125):

- Ի՞նչ կիրառումներ էր ներկայացնում Նախագահ Այրինգը, որ կօգնեն մեզ սնուցել մեր վկայությունները: (Երբ ուսանողները ներկայացնեն այս սկզբունքները, զետեղեք դրանք գրատախտակի նախադասության մեջ. ***Վկայություն զարգացնելու և պահելու համար մենք պետք է սնվենք Աստծո խոսքով, աղոթենք հավատքով և հնազանդվենք Տիրոջ պատվիրաններին:***)
- Ինչպե՞ս են այս կիրառումներն ազդել ձեր վկայության վրա:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 26.5–6, փնտրելով, թե ինչպես էին անհավատ երիտասարդներն ազդել Եկեղեցու որոշ անդամների վրա:

- Խորհեք հետևյալ նախադասության շուրջ. «Անհրաժեշտ դարձավ, որ նրանք, ովքեր մեղք էին գործում, ովքեր եկեղեցում էին, պետք է խրատվեին եկեղեցու կողմից» (Մոսիա 26.6): Ձեր կարծիքով, ի՞նչ է սա նշանակում: (Անհրաժեշտ էր, որ Եկեղեցու անդամները, ովքեր մեղք էին գործել, դատվեին և պատասխանատվության կանչվեին:)

## Մոսիա 26.7–14

### *Ալման առաջնորդություն է խնդրում Տիրոջից, թե ինչպես դատի նրանց, ովքեր մեղք են գործում*

Ուսանողները թող պատկերացնեն, թե ինչ է նշանակում լինել մի ծխի եպիսկոպոս, որի անդամները լուրջ մեղքեր են գործել և չեն ապաշխարում: Խնդրեք ուսանողներին լուռ խորհել, թե ինչ կանեին նրանք այս իրավիճակում: Ինչպե՞ս նրանք կկատարեին իրենց պարտականությունը, որ պատասխանատվության կանչեին անդամներին իրենց մեղքերի համար և օգնեին նրանց ապաշխարել: Բացատրեք, որ Ալման՝ Եկեղեցու ղեկավարը, հանդիպել էր նմանատիպ խնդրի:

Ամփոփեք Մոսիա 26.7–12, բացատրելով, որ նրանք, ովքեր մեղք էին գործել, բերվեցին Ալմայի առաջ: Նախկինում նման բան Եկեղեցում չէր պատահել, և Ալման չգիտեր, թե ինչ անել: Նա որոշեց օրինազանցներին ուղարկել, որ Մոսիա թագավորը նրանց դատեր: Մոսիա թագավորը վերադարձրեց նրանց Ալմայի մոտ, ով իշխանություն էր կրում Աստծուց դատելու Եկեղեցու անդամներին, ովքեր մեղք էին գործել:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 26.13–14: Խնդրեք դասարանին ուշադրություն դարձնել, թե ինչ էր Ալման զգում իր պարտականության մասին, դատելու նրանց, ովքեր մեղք էին գործել:

- Երբ Ալման անհանգստություն զգաց օրինազանցներին դատելու իր պարտականության մասին, ի՞նչ արեց նա:
- Ինչո՞ւ է կարևոր իմանալը, որ եպիսկոպոսները և ճյուղի նախագահները փնտրում և ստանում են Տիրոջ առաջնորդությունը, երբ օգնում են նրանց, ովքեր մեղք են գործել:

## Մոսիա 26.15–32

### *Տերը հայտնում է Ալմային, թե ինչպես պատասխանատվության կանչել Եկեղեցու անդամներին իրենց մեղքերի համար և հաստատում է ապաշխարության պայմանները*

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ Մոսիա 26.15–32-ի ենթատեքստը, նշեք, որ այս հատվածները պարունակում են Ալմայի հարցին տրված Տիրոջ

պատասխանն այն բանի վերաբերյալ, թե ինչ պետք է նա անի օրինազանցների հետ կապված: Երբ ուսանողներն ուսումնասիրեն Տիրոջ պատասխանը, խրախուսեք նրանց փնտրել սկզբունքներ և վարդապետություններ, որոնք օգնում են նրանց ավելի լավ հասկանալ քահանայության դատավորների՝ եպիսկոպոսների և ճյուղի նախագահների (և Մելքիսեդեկյան Քահանայություն կրողների, ցցի, շրջանի և միսիայի նախագահների) դերը: Նաև խնդրեք նրանց փնտրել սկզբունքներ և վարդապետություններ ներում փնտրելու վերաբերյալ:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 26.17–28, ամեն անգամ ուշադրություն դարձնելով, երբ Տերն օգտագործում է *իմ* կամ *ես* բառերը: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները նշեն այս բառերն ամեն անգամ, երբ դրանք հայտնվում են: Ապա հարցրեք դասարանին.

- Մոսիա 26.17–28-ում ի՞նչ են հուշում *ես* և *իմ* բառերը ապաշխարության գործընթացում Տիրոջ դերի մասին: (Դուք կարող եք հրավիրել ուսանողներին կիսվել առանձնահատուկ արտահայտություններով կամ հատվածներով, որոնք հիմնավորում են իրենց պատասխանները:)
- Ի՞նչ ճշմարտություններ մենք կարող ենք սովորել Մոսիա 26.20–21-ից ապաշխարության գործընթացում Տիրոջ ծառաների դերի մասին: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ **քահանայության ղեկավարները ներկայացնում են Տիրոջը** և որ **լուրջ մեղքի դեպքում եպիսկոպոսները և ճյուղի նախագահները կարող են օգնել մեզ ապաշխարել և ներում ստանալ:**)
- Ի՞նչ եղանակներով կարող է եպիսկոպոսը կամ ճյուղի նախագահն օգնել նրանց, ովքեր պայքարում են մեղքի և գայթակղությունների դեմ:

Բացատրեք, որ Տերը ուսուցանեց Ալմային այն մասին, թե ինչ պետք է անեն նրանք, ովքեր ներում են փնտրում, որ ապաշխարեն: Հրավիրեք ուսանողներին զույգերով ուսումնասիրել Մոսիա 26.29–32-ը և ներկայացնել սկզբունքներ, որոնք օգնում են նրանց հասկանալ, թե ինչ է Տերը պահանջում մեզանից, երբ մենք ապաշխարում ենք:

Այս հատվածներն ուսումնասիրելու համար բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք մի քանի ուսանողների գրել գրատախտակին, օգտագործելով իրենց սեփական բառերը, իրենց բացահայտած սկզբունքները: Նրանց պատասխանները կարող են ներառել հետևյալը.

**Մեղքերի խոստովանությունը տանում է ներման:**

**Տերը կների նրանց, ովքեր ապաշխարում են իրենց սրտերի անկեղծությամբ:**

**Մենք պետք է ներենք ուրիշներին, որ ներում ստանանք Տիրոջից:**

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այս սկզբունքները, տվեք այս բոլոր հարցերը կամ դրանցից մի քանիսը.

- Մոսիա 26.29-ում ո՞րն է «խոստովանի իր մեղքերն իմ և քո առաջ» արտահայտության իմաստը: (Դուք պետք է նշեք, որ այս հատվածում *քո* բառը վերաբերվում է Ալմային:)
- Երբ մեկը լուրջ մեղք է գործում, ձեր կարծիքով, ինչո՞ւ է անհատից պահանջվում խոստովանել Տիրոջը և Եկեղեցու համապատասխան ղեկավարին: (Լուրջ օրինազանցությունները, ինչպես օրինակ մաքրաբարոյության օրենքի խախտումները, կարող են վտանգել անհատի Եկեղեցու անդամությունը: Ուստի, նման դեպքերում անհատը պետք է խոստովանի մեղքը և Տիրոջը, և Եկեղեցում Նրա ներկայացուցչին: Եպիսկոպոսները և ճյուղի նախագահները կրում են քահանայության բանալիներ, որ օգնեն նրանց, ովքեր մեղք են գործել և փնտրում են ներում: Մինչդեռ միայն Տերը կարող է մեղքեր ներել, քահանայության ղեկավարները աջակցող դեր են խաղում, որ օգնեն մարդկանց ստանալ այդ ներումը: Նրանք բոլոր խոստովանությունները գաղտնի են պահում և օգնում են նրանց, ովքեր խոստովանում են, ապաշխարության գործընթացի ընթացքում:)
- Ձեր կարծիքով, ինչ է նշանակում, որ մեկը ապաշխարում է «իր սրտի անկեղծությամբ» (Մոսիա 26.29):
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Տերը պահանջում մեզանից, որ մենք ներենք ուրիշներին: Ինչպե՞ս են ապաշխարելը և ուրիշներին ներելը կապված իրար հետ: (Տես 3 Նեփի 13.14–15, ՎԵՈՒ 64.8–11:)

- Այս հատվածների ո՞ր արտահայտությունները կարող են համարձակություն կամ մխիթարություն տալ մեկին, ով ցանկանում է ապաշխարել, սակայն չի զգում, որ ինքը կարող է ներվել:

## Մոսիա 26.33–39

### *Ալման հնազանդվում է Տիրոջ խորհրդին, դատելով նրանց, ովքեր մեղք են գործել և Եկեղեցում կարգ ու կանոն է հաստատում*

Բացատրեք, որ Մոսիա 26.33–37-ում շարադրվում է, թե ինչպես Ալման հետևեց Տիրոջ հրահանգներին, դատեց Եկեղեցու անդամներին, ովքեր մեղք էին գործել, և կարգ ու կանոն հաստատեց Եկեղեցում: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 26.34–37-ը, ուսումնասիրելով Տիրոջ խորհրդին հետևելու Ալմայի ջանքերի արդյունքները: Կիսվեք ձեր վկայությամբ, որ երբ մենք ապաշխարենք և արդար ապրենք, մենք կարող ենք խաղաղություն ունենալ մեր սրտերում և բարգավաճել հոգևորապես:

ԴԱՍ 67

# Մոսիա 27

## Նախաբան

Ալմա Կրտսերը և Մոսիա թագավորի որդիները ապստամբեցին իրենց հայրերի և Տիրոջ դեմ և փորձեցին կործանել Աստծո Եկեղեցին: Նրանց ջանքերին վերջ դրվեց, երբ մի հրեշտակ, ուղարկված լինելով արդարների աղոթքներին ի պատասխան, կանչեց նրանց ապաշխարության: Որպես այս հրաշք փորձառության արդյունք, նրանք վերածնվեցին Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ, և նրանք շրջեցին Զարահեմլայի երկրով մեկ, որ քարոզեին ավետարանը և հատուցեին վնասները, որ իրենք հասցրել էին:

## Ուսուցանման առաջարկներ

### Մոսիա 27.1–22

*Հրեշտակը ապաշխարության է կանչում Ալմա Կրտսերին և Մոսիայի որդիներին*

Այս դասին ենթատեքստ ապահովելու համար ամփոփեք Մոսիա 27.1–7, բացատրելով, որ Զարահեմլայում անհավատներից շատերը սկսեցին հալածել նրանց, ովքեր պատկանում էին Եկեղեցուն: Այն բանից հետո, երբ Մոսիա թագավորը մի հրովարտակ ուղարկեց, որը արգելում էր նման արարքները, մարդկանց մեծամասնությունը հնազանդվեցին և խաղաղությունը վերականգնվեց: Այնուամենայնիվ, որոշ մարդիկ շարունակեցին փորձել կործանել Եկեղեցին: Այդ մարդկանցից հինգը Ալմայի որդի Ալման էր և Մոսիայի որդիներ Ամմոնը, Ահարոնը, Օմները և Հիմնին: Ալմայի որդի Ալմային հաճախ կոչում են Ալմա Կրտսեր:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 27.8–10: Խնդրեք դասարանին ներկայացնել բառեր և արտահայտություններ, որոնք նկարագրում են Ալմա Կրտսերին և Մոսիայի որդիներին:

- Ալմայի և Մոսիայի որդիների նկարագրության ո՞ր մասն է ամենաշատը տպավորվել ձեր մեջ: Ինչո՞ւ: (Գրատախտակին իրար տակ գրեք բառեր և արտահայտություններ, մինչ ուսանողները ներկայացնում են դրանք: Գրատախտակին տեղ թողեք, որպեսզի ավելի ուշ դասի ընթացքում կազմեք երկրորդ սյունակը:)

Խնդրեք ուսանողներին լուռ խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Եթե դուք այդ ժամանակ ապրեիք Զարահեմլայում, ձեր կարծիքով, դուք ինչպե՞ս կարձագանքեիք Ալմայի և Մոսիա թագավորի որդիների արարքներին:

Ցուցադրեք Ալմա Կրտսերի դարձի գալը նկարը (*Gospel Art Book* [2009], no. 77): Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 27.11–13, որն այս նկարում ներկայացված պատմությունն է: Ապա հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 27.14: Խնդրեք դասարանին փնտրել պատճառները, որոնք տվեց հրեշտակը, Ալմայի և Մոսիայի որդիների մոտ գալու համար:

- Ի՞նչ է սովորեցնում այս հատվածն այն մասին, թե ինչպես մենք կարող ենք օգնել ուրիշներին, ովքեր դժվարություններ են ունենում: (Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ **Տերը պատասխանում է ուրիշների համար ասված մեր հավատարիմ աղոթքներին:** Դուք կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին և խորհուրդ տալ, որ ուսանողները գրեն այն իրենց սուրբ գրություններում Մոսիա 27.14–ի կողքին: Դուք կարող եք նաև խորհուրդ տալ, որ նրանք ավելացնեն մի հղում՝ Հակոբոս Ե.16: Նշեք, որ Տերը պատասխանում է մեր աղոթքներին ոչ միայն նրանց համար, ովքեր հոգևոր դժվարությունների են հանդիպում, այլ նաև նրանց համար, ովքեր ունեն այլ դժվարություններ և կարիքներ:)
- Ե՞րբ են մեկ ուրիշի աղոթքները փոխել ձեր կյանքը:
- Ե՞րբ եք դուք զգացել, որ ձեր աղոթքները փոխել են մեկ ուրիշի կյանքը:

***Ուսուցանել Սուրբ Հոգով***

Տերն ասել է, որ մենք պետք է «[քարոզենք Նրա] ավետարանը Հոգով, այսինքն՝ Մխիթարիչով, որն առաջ է ուղարկվել՝ ճշմարտությունն ուսուցանելու» (ՎևՈՒ 50.14): Ուսուցանելիս փնտրեք Հոգու առաջնորդությունը, որը օգնի ձեզ հարմարեցնել դասը ձեր ուսանողների կարիքներին:



Խրախուսեք ուսանողներին շարունակել աղոթել ուրիշների համար: Վկայեք, որ Ալմա Կրտսերի և Մոսիայի որդիների պատմությունը ապացուցում է, որ Տերը լսում է ուրիշների համար հղված մեր աղոթքները: Նա չի անտեսի նրանց ազատ ընտրությունը, ում համար մենք աղոթում ենք, սակայն Նա կլսի մեր աղոթքները և Նա կպատասխանի Իր ճանապարհով և Իր ժամանակին:

Հրավիրեք ուսանողներից մեկին կանգնել դասարանի առաջ և բարձրաձայն կարդալ Մոսիա 27.15–16: Բացատրեք, որ սրանք Ալմային և Մոսիայի որդիներին ուղղված հրեշտակի խոսքերն են: Նշեք, որ հրեշտակը խոսեց «որոտի ձայնով, որից գետինը ցնցվեց» (Մոսիա 27.11):

- Հրեշտակի արածներից և ասածներից ի՞նչն է տպավորություն գործում ձեզ վրա: Ինչո՞ւ է դա տպավորություն գործում ձեզ վրա:

Ամփոփեք Մոսիա 27.19–22, բացատրելով, որ այն բանից հետո, երբ հրեշտակը կիսվեց իր ուղերձով, Ալման պապանձվեց, թուլացավ և անօգնական տարվեց իր հոր մոտ (տես Մոսիա 27.19): Երբ Ալմայի հայրը լսեց, թե ինչ էր պատահել, նա «ուրախացավ, քանզի նա գիտեր, որ դա Աստծո զորությունն էր» (Մոսիա 27.20): Նա ի մի հավաքեց մարդկանց, «որ նրանք կարողանային վկա լինել, ինչ որ Տերն արել էր իր որդու համար» (Մոսիա 27.21): Նա նաև ի մի հավաքեց քահանաներին, և նրանք ծոմ պահեցին ու աղոթեցին, որ նրա որդին կարողանար ստանալ իր ուժը և կարողանար խոսել (տես Մոսիա 27.22):

## Մոսիա 27.23–31

### *Ալմա Կրտսերն ապաշխարում է և վերստին ծնվում*

Վերադարձեք Ալմային և Մոսիայի որդիներին բնութագրող ցանկին, որը դուք գրել էիք գրատախտակին: Այդ ցուցակն անվանեք *Առաջ:* Գրատախտակի մյուս կողմում գրեք *Հետո*: Հրավիրեք ուսանողներին կարդալ Մոսիա 27.23–24, 28–29, փնտրելով բառեր և արտահայտություններ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես է Ալման փոխվել: Մի քանի ուսանողների հնարավորություն տվեք գրել այս բառերը և արտահայտությունները գրատախտակին:

- Համաձայն Մոսիա 27.24 և 28-ի, ի՞նչ արեց Ալման, որը հանգեցրեց այս փոփոխությանը: Ի՞նչ արեց Տերը: Երբ մենք ձգտում ենք փոխվել և հետևել Փրկչին, ինչո՞ւ է կարևոր հասկանալ, թե ինչ պետք է մենք անենք: Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, թե ինչ կանի մեզ համար Տերը:
- Ինչպե՞ս կարող է Ալմայի փորձառության մասին սովորելն օգնել ինչ-որ մեկին, ով կարծում է, որ ինքը չի կարող ներվել:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 27.25–26: Խնդրեք դասարանին ներկայացնել վարդապետությունը, որը Տերը սովորեցրեց Ալմային: (Չնայած ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **մեզանից յուրաքանչյուրը պետք է վերածնվի Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:** Դուք կարող եք այս ճշմարտությունը գրել գրատախտակին:)

Բացատրեք, որ վերածնվել նշանակում է, որ Տիրոջ Հոգին մի զորեղ փոփոխություն է առաջացրել մարդու սրտում, այնպես որ մարդը այլևս ցանկություն չունի չարիք գործելու, այլ ցանկանում է փնտրել Աստծո բաները (տես Մոսիա 5.2):

Դուք կարող եք նաև բացատրել, որ չնայած սրտի զորեղ փոփոխությունը ըստ երևույթին արագ տեղի ունեցավ Ալմայի և Մոսիայի որդիների համար, մեզանից շատերը Քավության միջոցով փոխվում են ավելի դանդաղ: Դա ավելի շուտ գործընթաց է, քան իրադարձություն: Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այս վարդապետությունը, հրավիրեք նրանցից մեկին կարդալ Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ ելույթը.

«Մենք պետք է զգույշ լինենք, երբ մենք ձգտում ենք դառնալ ավելի ու ավելի աստվածանման, որ մենք չհուսահատվենք և չկորցնենք մեր հույսը: Քրիստոսանման դառնալը ողջ կյանքի ընթացքում շարունակվող ձգտում է և շատ հաճախ ներառում է աճ և փոփոխություն, որը դանդաղ, գրեթե աննկատ է տեղի ունենում: Սուրբ գրություններում արձանագրված են նշանակալից պատմություններ մարդկանց մասին, որոնց կյանքը փոխվեց տպավորիչ ձևով, ակնթարթորեն, ինչպես օրինակ Ալմա Կրտսերը, Պողոսը Դամասկոսի ճանապահին, Ենովսը մինչև գիշեր աղոթելիս, Լամոնի

***Կիսվել մարգարեական հայտարարություններով***

Երբ հարցը երկար է, կարող է շատ օգտակար լինել ներկայացնել այն ուսանողներին տպված թերթիկների վրա կամ գրել այն գրատախտակին: Առանց նմանատիպ օգնության, ուսանողները կարող են շեղվել կամ դժվարությամբ հասկանալ:

թագավորը: Նման ապշեցուցիչ օրինակները, երբ նույնիսկ նրանք, ովքեր ընկղմված են մեղքի մեջ, կարող են փոխվել զորությամբ, վստահություն է տալիս, որ Քավությունը կարող է հասնել նույնիսկ նրանց, ովքեր խորը հուսահատության մեջ են:

Սակայն մենք պետք է զգույշ լինենք, երբ քննարկում ենք այս նշանակալից օրինակները: Չնայած դրանք իրական են և զորեղ, դրանք ավելի շատ բացառություն են, քան օրենք: Ամեն Պողոսի, ամեն Ենովսի և ամեն Լամոնի թագավորի համեմատությամբ կան հարյուր հազարավոր մարդիկ, ում համար ապաշխարության գործընթացը շատ ավելի աննկատ է տեղի ունենում, շատ ավելի աննշմարելի: Օր օրի նրանք ավելի են մոտենում Տիրոջը, մի փոքր ավելին հասկանալով նրանք կառուցում են աստվածանման կյանք: Նրանք ապրում են բարության, ծառայության և նվիրվածության հանդարտ կյանք» (“A Mighty Change of Heart,” *Ensign*, Oct. 1989, 5):

Այն բանից հետո, երբ ուսանողները կկիսվեն, թե ինչ են իրենք սովորել այս հայտարարությունից, հրավիրեք նրանց մի քանի րոպե տրամադրել, որ պատասխանեն հետևյալ հարցերից մեկին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: (Դուք կարող եք այս հարցերը գրել գրատախտակին նախքան դասի սկսվելը, պատրաստել հարցերը տպված թերթիկների վրա կամ հարցերը դանդաղ կարդալ, որպեսզի ուսանողները կարողանան գրել դրանք իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:)

- Ինչպե՞ս եք դուք փոխվել Քավության միջոցով, երբ դուք ապաշխարել եք և արել եք լավագույնը Փրկչին հետևելու համար:
- Ի՞նչ կարող եք դուք անել, որ ավելի լիովին գաք Տիրոջ մոտ, որպեսզի դուք կարողանաք փոխվել Քավության միջոցով:

Հրավիրեք մի քանի ուսանողների, որ կիսվեն, թե ինչ են իրենք գրել և ասել փոփոխության մասին, որը կարող է պատահել մեր մեջ, երբ մենք ապաշխարենք և հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը և Քավությունը: (Հիշեցրեք ուսանողներին, որ կարիք չկա կիսվել որևէ բանով, որը խիստ անձնական է կամ գաղտնի: Համոզվեք, որ նրանք հասկանում են, որ չպետք է խոսեն իրենց նախկին մեղքերի մասին:)

## Մոսիա 27.32-37

### *Ալմա Կրտսերը և Մոսիայի որդիները շրջում են ողջ երկրով մեկ, ձգտելով փոխհատուցել վնասը, որ հասցրել են և ամրացնել Եկեղեցին*

Բացատրեք, որ ճշմարիտ ապաշխարությունը սրտի փոփոխությունն է, ոչ թե պարզապես որևէ սխալ բան անելը դադարեցնելու ցուցադրումը: Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 27.32–37: Խնդրեք դասարանին ներկայացնել, թե ինչ արեցին Ալման և Մոսիայի որդիները, որն ավելին էր, քան պարզապես դադարելն անել մի բան, ինչը նրանք սխալ էին անում:

- Ի՞նչ փաստեր եք դուք տեսնում, որ Ալման և Մոսիայի որդիները իսկապես փոխվել էին:
- Ի՞նչ կարող ենք մենք սովորել այս օրինակից:

Ուսանողների պատասխանները կարող են ներառել հետևյալը.

**Նույնիսկ նրանք, ովքեր ապստամբել են Տիրոջ և Նրա ուսմունքների դեմ, կարող են ներվել:**

**Իսկապես ապաշխարելու համար մարդը պետք է անի ամեն հնարավոր բան, որ փոխհատուցի վնասը, որը նա հասցրել է:** (Դուք կարող եք բացատրել, որ մենք երբեմն օգտագործում ենք *հատուցել* բառը, նկատի ունենալով վնասը փոխհատուցելը, որը հասցվել էր և մեր ոչ խելամիտ ընտրությունները ուղղելը:)

**Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մենք կարող ենք փոխվել արդար մի վիճակի:**

Վերջում վկայեք, որ Ալմայի և Մոսիայի որդիների պատմությունը մի օրինակ է, որ Հիսուս Քրիստոսի Քավության զորությունը կարող է մեզ փոխել: Վկայեք Փրկչի ցանկության մասին ներելու բոլորին, ովքեր այս երիտասարդ տղամարդկանց նման հավատք կգործադրեն առ Նա և կձգտեն հետևել Իրեն:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Մոսիա 27.25: Վերստին ծնվել

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը նկարագրել է վերստին ծնվելու գործընթացը.

«Վերստին ծնվելու ընթացքը մենք սկսում ենք նրանից, որ հավատք ենք գործադրում առ Քրիստոս, ապաշխարում ենք մեր մեղքերից և մկրտվում ենք ընկղմամբ մեր մեղքերի թողության համար քահանայության իշխանություն ունեցողի կողմից:

. . . Երբ մենք դուրս ենք գալիս մկրտության ջրերից, մեր հոգիները պետք է շարունակ ընկղմվեն և հագեցվեն Փրկչի ավետարանի ճշմարտությամբ և լույսով: Քրիստոսի վարդապետության հատուկենտ և մակերեսային ուսումնասիրությունը և Նրա վերականգնված Եկեղեցում մասնակի մասնակցությունը չի կարող այնպիսի հոգևոր փոփոխություն բերել, որը մեզ հնարավորություն կտա քայլել կյանքի նորոգության մեջ: Իսկ եթե մենք ուզում ենք ստանալ հավերժության օրհնությունները, ապա պետք է հավատարիմ լինենք ուխտերին, հետևողական նվիրվածության մեջ և մեր ողջ հոգին Աստծուն նվիրաբերենք: . . .

Ամբողջովին ընկղմումը և հագեցումը Փրկչի ավետարանում կարևոր քայլերն են վերստին ծնվելու գործընթացում» («Դուք պետք է վերստին ծնվեք», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2007, 19):

Երեց Բրյուս Ռ. Մկքոնքին, նույնպես Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է.

«Մենք վերստին ծնվում ենք, երբ մենք մահանում ենք որպես անարդարություն ճաշակողներ և ապրում ենք որպես Հոգու բաները ճաշակողներ: Սակայն դա տեղի չի ունենում մի ակնթարթում, հանկարծակի: Դա . . . գործընթաց է: Վերստին ծնվելը աստիճանաբար կատարվող բան է, բացի մի քանի առանձնակի դեպքերի, որոնք այնքան հրաշալի են, որ գրի են առնվում սուրբ գրություններում: Ինչ վերաբերվում է Եկեղեցու անդամների մեծամասնությանը, մենք վերստին ծնվում ենք աստիճանաբար, և մենք վերստին ծնվում ենք ավելացող լույսի, ավելացող գիտելիքի և արդարության ավելացող ցանկության շնորհիվ, երբ մենք պահում ենք պատվիրանները: . . .

Որպես Եկեղեցու անդամներ, եթե մենք բռնում ենք դեպի հավերժական կյանք տանող ուղին, եթե մենք սկսում ենք հոգևոր վերածննդի գործընթացը և գնում ենք ճիշտ ուղղությամբ, եթե մենք բռնում ենք մեր հոգիների սրբագործման ուղին և քայլ առ քայլ գնում ենք այդ ուղղությամբ, եթե մենք բռնում ենք կատարյալ դառնալու ուղին, և քայլ առ քայլ և փուլ առ փուլ կատարելագործում ենք մեր հոգիները՝ հաղթելով աշխարհին, ապա մենք միանշանակ ունենք խոստում, և անկասկած մենք կստանանք հավերժական կյանք: Չնայած, որ մեր հոգևոր վերածնունդը դեռևս առջևում է, կատարելությունը դեռ առջևում է, լիարժեք սրբագործումը դեռ առջևում է, եթե մենք բռնենք ուղին և հետևենք դրան այս կյանքում մեր կարողության լավագույն չափով, ապա, երբ մենք հեռանանք այս կյանքից, մենք կշարունակենք հենց այդ նույն ուղին» (“Jesus Christ and Him Crucified,” *Brigham Young University 1976 Speeches,* Sept. 5, 1976, 5–6, speeches.byu.edu):

ԴԱՍ 68

# Մոսիա 28–29

## Նախաբան

Դարձի գալուց հետո Մոսիա թագավորի որդիները մեծ ցանկություն զգացին քարոզելու ավետարանը լամանացիներին: Տիրոջ հետ խորհուրդ անելուց և հավաստիացում ստանալուց հետո, որ նրանք կօրհնվեին հաջողությամբ և պաշտպանությամբ, Մոսիան նրանց թույլ տվեց գնալ: Այս նույն ժամանակ Մոսիան աշխատում էր հոգ տանել այն սուրբ հիշատակարանների համար, որոնք հանձնվել էին իրեն: Նա թարգմանեց հարեդացիների հիշատակարանները և այնուհետև բոլոր հիշատակարանները տվեց Ալմա Կրտսերին: Քանի որ նրա որդիները հրաժարվել էին թագավոր լինելու հնարավորությունից, նա հիմնեց դատավորների համակարգ, որպես երկրում նոր կառավարման ձև:

## Ուսուցանման առաջարկներ

### Մոսիա 28.1–9

*Մոսիայի որդիները ցանկանում են քարոզել լամանացիներին*

Նախքան դասը գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունները.

*1. Ես անկեղծորեն ցանկանում եմ ուրիշների հավերժական երջանկությունը:*

*2. Ես հոժար եմ զոհաբերել, որ օգնեմ ուրիշներին:*

*3. Ես ցանկանում եմ ուրիշների հետ կիսվել ավետարանով:*

Դասը սկսելու համար խնդրեք ուսանողներին օգտագործել գրատախտակին գրված նախադասությունները, որ մտքում գնահատեն իրենք իրենց: Թող նրանք օգտագործեն 1-10 միավորների համակարգը, որտեղ 1-ը ցույց կտա, որ նախադասությունը իրենց լավ չի նկարագրում և 10-ը ցույց կտա, որ նախադասությունը իրենց շատ լավ է նկարագրում:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 27.8–10:

- Ինչպե՞ս Ալման և Մոսիայի որդիները իրենց կյանքի այս պահին նույն գնահատականը կստանան:

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 28.1–4:

- Ինչպե՞ս Մոսիայի որդիները նույն գնահատականին կարժանանան իրենց դարձի գալուց հետո: Մոսիա 28.1–4-ի ո՞ր արտահայտություններն են ցույց տալիս, թե որքան են նրանք փոխվել:
- Ինչո՞ւ փոխվեցին Մոսիա թագավորի որդիների ցանկությունները: (Նրանք հավատք գործադրեցին առ Հիսուս Քրիստոսը, ապաշխարեցին իրենց բոլոր մեղքերից և դարձի եկան. տես Մոսիա 27.34–36: Դուք կարող եք նաև անդրադառնալ Մոսիա 28.4, որ ցույց տաք, թե ինչպես Տիրոջ Հոգին ազդեց նրանց վրա:)
- Ելնելով այն ամենից, ինչ դուք իմացաք լամանացիների մասին իրենց պատմության այս շրջանում, ի՞նչ դժվարությունների կարող են հանդիպել միսիոներները նրանց մեջ:
- Համաձայն Մոսիա 28.2, Մոսիայի որդիների կարծիքով ի՞նչ փոփոխություն կարող էր տեղի ունենալ լամանացիների կյանքում նրանց քարոզների միջոցով:
- Մոսիայի որդիների դարձի գալն ինչպե՞ս ազդեց ավետարանով կիսվելու նրանց ցանկության վրա: Ի՞նչ սկզբունքներ մենք կարող ենք սովորել նրանց փորձառությունից: (Ամփոփեք ուսանողների պատասխանները՝ գրատախտակին գրելով հետևյալ նախադասությունը. ***Երբ մեր դարձի գալը խորանում է, ավետարանը քարոզելու մեր ցանկությունը մեծանում է:***)

Խնդրեք ուսանողներից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսի հետևյալ ելույթը: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին գրել այն իրենց սուրբ գրությունների լուսանցքում Մոսիա 28.1–4–ի կողքին:

«Ավետարանով կիսվելու մեր ցանկության մեծությունը մեր անձնական դարձի գալու աստիճանը որոշելու հրաշալի ցուցիչ է» (“Sharing the Gospel,” *Ensign*, Nov. 2001, 7):

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչպես է ուրիշների հետ ավետարանով կիսվելու նրանց ցանկությունը մեծացել, երբ նրանք ավելի են մոտեցել Տիրոջը:

- Ձեր կյանքի ո՞ր փորձառություններն են մղել ձեզ ցանկանալ կիսվել ավետարանով ուրիշների հետ:

Խնդրեք ուսանողներին պատկերացնել, որ նրանք գիտեն մի երիտասարդ տղամարդու, ով Եկեղեցու անդամ է, սակայն քիչ ցանկություն ունի ծառայելու լիաժամկետ միսիա:

- Ի՞նչ կարող է անել այս երիտասարդ տղամարդը, որ մեծացնի ավետարանով կիսվելու իր ցանկությունը: (Երբ ուսանողները կիսվեն իրենց մտքերով, խրախուսեք նրանց վերհիշել, թե ինչն է նրանց խորապես դարձի բերել առ Հիսուս Քրիստոսի ավետարանը և հիմնվելով իրենց փորձառությունների վրա, ինչ խորհուրդներ կարող են տալ այդ երիտասարդ տղամարդուն: Օգնեք նրանց տեսնել, որ լրջորեն դարձի գալը մեծացնում է ուրիշների հետ ավետարանով կիսվելու մեր ցանկությունը:)

Դուք կարող եք բացատրել, թե ինչպես եք դուք ցանկություն ստացել ուսուցանելու ավետարանը ուրիշներին: Երբ դուք անեք դա, խորհեք ձեր վկայությամբ կիսվելու մասին, որ երբ մենք մոտենանք Տիրոջը և զգանք Նրա Հոգին, ուրիշների հետ ավետարանով կիսվելու մեր ցանկությունը կմեծանա:

Ուսանողները թող կարդան Մոսիա 28.5–8 և ներկայացնեն, թե ինչու Մոսիան թույլ տվեց իր որդիներին կատարել այսպիսի վտանգավոր առաքելություն:

- Ի պատասխան Մոսիայի աղոթքների, ի՞նչ օրհնություններ Տերը խոստացավ Մոսիայի որդիներին:

***Իրավիճակներ իրական կյանքում***

Ավետարանի սկզբունքը իրական կյանքի իրավիճակում դիտարկելը կօգնի ուսանողներին վերլուծել սկզբունքը և հասկանալ դրա դերը իրենց կյանքում: Դուք կարող եք խորհուրդ տալ ուսանողներին, որ որքան անկեղծորեն նրանք արձագանքեն նման օրինակին, այնքան ավելի արդյունավետ այն կլինի իրենց սովորելու գործընթացում:

## Մոսիա 28.10–20

*Մոսիան թարգմանում է Հարեդական թիթեղները և սուրբ հիշատակարանները տալիս է Ալմային*

Գրատախտակին նկարեք հետևյալը.





Ցույց տվեք թագի նկարը և թող ուսանողներից մեկը կարդա Մոսիա 28.10: Խնդրեք դասարանին փնտրել խնդիրը, որը թագավորն ունեցավ, երբ նրա որդիները գնացին միսիայի: (Նա պետք է գտներ մեկին, ով կգրավեր իր տեղը որպես թագավոր:)

Ամփոփեք Մոսիա 28.11–19, բացատրելով, որ Մոսիան ծերանում էր և նա իր ուշադրությունը դարձրեց սուրբ հիշատակարանների վրա, որոնք վստահվել էին իրեն. հիշատակարանները, որոնք իր հայրը տվել էր իրեն և ասել էր, որ պահեր, և հիշատակարանները, որոնք Լիմքի թագավորն էր տվել իրեն: Որպես տեսանող իր ունակությամբ նա թարգմանեց հարեդացիների հիշատակարանը, որը գտել էին այն խումբը, որին Լիմքի թագավորն ուղարկել էր գտնելու Զարահեմլայի երկիրը (տես Մոսիա 8.7–9): Ուսանողների ուշադրությունը հրավիրեք գրատախտակին նկարված ոսկյա թիթեղների վրա:

Բացատրեք, որ բացի թագավորության համար ղեկավար ընտրելուց, Մոսիան նաև պետք է ընտրեր պահապան թիթեղների համար: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 28.20:

- Ո՞վ ստացավ սուրբ հիշատակարանները:
- Ինչո՞ւ էր Ալմային ընտրելը լավագույնը այս հիշտակարանների համար հոգ տանելու հարցում:

## Մոսիա 29

*Մարդիկ հետևում են Մոսիայի խորհրդին և հիմնում են դատավորների համակարգը որպես իրենց կառավարման ձև*

Թող ուսանողները ձեռք բարձրացնեն, եթե նրանք կցանկանային լինել թագավոր կամ թագուհի: Ընտրեք այդ ուսանողներից մեկին առաջ գալ և կանգնել գրատախտակին նկարված թագի մոտ (կամ թղթե մի թագ դրեք նրա գլխին): Թող ուսանողները նկարագրեն, թե ինչ օգտակար փորձառություն նրանք կարող են ունենալ թագավոր կամ թագուհի լինելու դեպքում:

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 29.1–3:

- Ո՞ւմ էին ուզում մարդիկ, որ լիներ իրենց թագավորը:
- Ինչի՞ց հրաժարվեցին Մոսիայի որդիները, որպեսզի նրանք կարողանային քարոզել լամանացիներին:
- Ի՞նչ հնարավորություններ են երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք զոհաբերում կամ հետաձգում այսօր, որպեսզի նրանք կարողանան միսիա ծառայել:

Ամփոփեք Մոսիա 29.4–10, բացատրելով, որ Մոսիա թագավորը մտահոգված էր, որ նոր թագավոր ընտրելը կարող էր հակառակություն առաջ բերել, և նույնիսկ պատերազմ: Նա նաև նշեց այլ խնդիրներ, որոնք կարող էին առաջ գալ, եթե անարդար թագավոր լիներ: Ուսանողները թող կարդան Մոսիա 29.16–18 և ներկայացնեն այդ խնդիրները:

Բացատրեք, որ Մոսիա թագավորը առաջարկեց, որ նեփիացիների կառավարությունը այլևս չկատարվի թագավորի միջոցով: Այլ նա խորհուրդ տվեց դատավորների համակարգը, որտեղ դատավորները կընտրվեին ժողովրդի ձայնով:

Ուսանողները թող մտքում կարդան Մոսիա 29.11, 25, փնտրելով, թե ինչպես պետք է դատավորները դատեին ժողովրդին: («Աստծո պատվիրանների համաձայն» և «այն օրենքների համաձայն, որոնք տրվել են ձեզ մեր հայրերի կողմից»:)

Գրատախտակին գրեք *Մոսիա 29.26–27, 30, 33–34, 37–38*: Դասարանը բաժանեք զույգերի: Ուսանողները թող ուսումնասիրեն այս հատվածները և ներկայացնեն մարդկանց պարտականությունները Մոսիա թագավորի առաջարկած կառավարությունում: Ապա թող յուրաքանչյուր զույգը քննարկի հետևյալ հարցերը: (Դուք կարող եք նաև գրել այս հարցերը գրատախտակին կամ պատրաստել դրանք տպված թերթիկների վրա:)

- Համաձայն Մոսիա թագավորի, ի՞նչ օգուտ կգար ժողովրդի ձայնի միջոցով որոշումներ կայացնելուց: (Նա ասաց, որ ժողովրդի ձայնը հիմնականում չի ցանկանում բաներ «հակառակ նրա, ինչը ճշմարիտ է»: Նա նաև խոսեց այն կարիքի մասին, որ բոլոր քաղաքացիները կիսեն իրենց կառավարության բեռը և ունենան «հավասար հնարավորություն»:)
- Ի՞նչ հետևանքներ առաջ կգային, եթե ժողովրդի ձայնն ընտրեր անօրինություն: (Աստծո դատաստանները կգան նրանց վրա և նրանք կկործանվեն:)
- Մոսիա 29.34-ում, ձեր կարծիքով, ո՞րն է «որ ամեն մարդ կարողանա կրել իր բաժինը» արտահայտության իմաստը: Ինչպե՞ս կարող է այս արտահայտությունը վերաբերվել քաղաքացիների պարտականություններին՝ մասնակցելու իրենց տարածքային և ազգային կառավարություններին:

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելի հետևյալ խոսքերը.

«Մշակութային անկման համար իրականում պատասխանատու են և ղեկավարները, և հետևորդները: . . . Հեշտ է քննադատել վատ ղեկավարներին, սակայն մենք չպետք է հետևորդներին ազատենք պատասխանատվությունից» (“Repent of [Our] Selfishness,” *Ensign*, May 1999, 24):

- Ինչո՞ւ է կարևոր, որ թե ղեկավարները և թե հետևորդները պատասխանատու լինեն իրենց արարքների համար:
- Ի՞նչ կարող եք դուք անել, որ աջակցեք արդար օրենքներին և ղեկավարներին: (Դուք կարող եք ուսանողների ուշադրությունը հրավիրել Հավատո Հանգանակ 1.12–ի վրա:)

Հայտնեք ձեր համոզվածությունը, որ չնայած աշխարհի ոչ բոլոր երկրներն ունեն իրենց ղեկավարներին ընտրելու հնարավորություն, Տերը միշտ կօգնի նրանց, ովքեր վստահում են Իրեն, անկախ այն բանից, թե որտեղ են նրանք ապրում։

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 29.41–43։

- Ո՞ւմ ընտրեց ժողովուրդը լինել առաջին գլխավոր դատավորը։ Նա ապրո՞ւմ էր իր պարտականության համաձայն, որ լիներ արդար և առաքինի։ Ի՞նչ հետևանքների հանգեցրեց նրա ղեկավարությունը։

Խնդրեք ուսանողներին բացատրել իրենց սեփական բառերով, թե ինչ նրանք սովորեցին Մոսիա 29–ից։ Նրանք կարող են ներկայացնել հետևյալ ճշմարտություններից մի քանիսը.

**Անարդար ղեկավարությունը կարող է հակառակություն և մեղք առաջ բերել։**

**Ընդունված չէ, որ ժողովրդի ձայնը ընտրի մի բան, որը ճիշտ չէ։**

**Եթե մարդիկ ընտրեն անօրինություն, Աստծո դատաստանները կգան նրանց վրա։**

**Յուրաքանչյուր անձ պարտավորություն ունի աջակցելու արդար օրենքներին և ղեկավարներին։**

Վերջում բերեք ձեր վկայությունը այսօրվա դասի սկզբունքների վերաբերյալ։

## Մոսիայի կրկնությունը

Որոշ ժամանակ տրամադրեք, որ օգնեք ուսանողներին կրկնել Մոսիայի գիրքը։ Խնդրեք նրանց մտածել, թե ինչ են սովորել այս գրքից սեմինարիայի և իրենց անձնական սուրբ գրությունների ուսումնասիրության ժամանակ։ Անհրաժեշտության դեպքում հրավիրեք նրանց արագ աչքի անցկացնել գիրքը, որ օգնեք նրանց հիշել։ Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց մտքերով և զգացմունքներով գրքից որևէ բանի մասին, ինչը տպավորություն է թողել իրենց վրա։

# Ալմայի

## ԳՐՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ

### Ինչո՞ւ ուսումնասիրել այս գիրքը:

Ուսումնասիրելով Ալմայի գիրքը, ուսանողները կսովորեն Հիսուս Քրիստոսի մասին և փրկության Ծրագրում՝ Նրա Քավության ու Հարության անհրաժեշտության մասին: Նրանք նաև կսովորեն Աստծո խոսքի զորության մասին, որպեսզի հաղթահարեն քահանանենգությունը, կեղծ վարդապետությունը, մեղքը, ատելությունը և ուրացությունը, և որը անհատներին կտանի դեպի սրտի մեծ փոփոխության: Ուսանողները կարող են հրահանգվել և ոգեշնչվել, կարդալով Ալմայի, Ամուղեկի և Մոսիայի որդիների միսիոներական ջանքերի, ինչպես նաև Անթի-Նեփի-Լեքիի (Ամոնիայի ժողովրդի) դարձի և հավատարմության մասին: Երբ նրանք ուսումնասիրեն Նեփիացիների և Լամանացիների պատերազմները մեկնաբանող գլուխները, նրանք կսովորեն սկզբունքներ, որոնք կառաջնորդեն նրանց կյանքի խառը պահերին և կօգնեն հաղթել չարի դեմ իրենց անձնական ճակատամարտերում:

### Ո՞վ է գրել այս գիրքը:

Մորմոնը Նեփիի մեծ թիթեղներից կազմել և կրճատել է գրառումները, ստեղծելով Ալմայի գիրքը: Գիրքը կոչվել է Ալմայի անունով, ով Ալմայի որդին էր և հաճախ կոչվում էր Ալմա Կրտսեր: Երբ թագավոր Մոսիան Նեփիացիների մեջ հաստատեց դատավորների պաշտոնը, Ալմա Կրտսերը դարձավ առաջին գլխավոր դատավորը և իր հոր կողմից նշանակվեց Եկեղեցու քահանայապետը (տե՛ս Մոսիա 29.42): Նա վերջնականապես հանձնեց գլխավոր դատավորի իր պաշտոնը և սահմանափակվեց «սուրբ կարգի բարձրագույն քահանայությամբ» և «հաղորդեց Աստծո խոսքը ժողովրդին» Նեփիացիների ողջ երկրով մեկ (Ալմա 4.20; 5.1): Մորմոնն օգտագործել է Ալմայի կառավարման արձանագրությունները (տե՛ս Ալմա 1–44) և Ալմայի որդիներ՝ Հելամանի (տե՛ս Ալմա 45–62) և Սիբլոնի (տե՛ս Ալմա 63) գրառումները, որպեսզի կազմի Ալմայի գիրքը:

### Ո՞ւմ և ինչո՞ւ համար է գրվել այս գիրքը:

Մորմոնը Ալմայի գիրքը չեր գրել որոշակի լսարանի համար կամ նշել, թե ինչու է այն գրել: Սակայն Հիսուս Քրիստոսի քավող առաքելության մասին գրքի բազմաթիվ ուսմունքները նպաստում են Մորմոնի Գրքի կենտրոնական նպատակին, որն է՝ վկայելը, «որ Հիսուսը Քրիստոսն է՝ հավերժական Աստվածը» (Մորմոնի Գրքի տիտղոսաթերթ; տես նաև Ալմա 5; 7; 13; 32–34; 36; 39–42):

### Ե՞րբ և որտե՞ղ է այն գրվել:

Որպես Ալմայի գրքի համար օգտագործվող աղբյուրներ, բնօրինակ արձանագրությունները, հավանաբար, գրվել են մ.թ.ա. 91թ. և մ.թ.ա. 52թ.: Մորմոնը կրճատել է այս գրառումները մ.թ. 345 և մ.թ. 385թթ- միջև: Մորմոնը չի նշել, թե այս գիրքը գրելու ժամանակ որտեղ էր նա գտնվում:

### Որո՞նք են այս գրքի որոշ առանձնահատկությունները:

Չնայած Ալմայի գիրքը ամենածավալունն է Մորմոնի Գրքում, այն ընդգրկում է միայն 39 տարվա ժամակաշրջան՝ մոտավորապես մ.թ.ա. 91-ից մինչև մ.թ.ա. 52թթ.: Գիրքը պատմում է Լամանացիների մեջ առաջին հաջողված միսիոներական աշխատանքի մասին: Այն նաև ընդգծում է դարձի եկած Լամանացիների հավատարմությունը իրենց ուխտերը պահելիս (տե՛ս Ալմա 23.6–7; 24): Բացի այդ, Ալմայի գիրքը պարունակում է ուսմունքներ նախասահմանվածության և Մելքիսեդեկյան ծառայության վարդապետության մասին (տե՛ս Ալմա 13), Աստծո խոսքի զորության մասին (տե՛ս Ալմա 31), առ Հիսուս Քրիստոս հավատք զարգացնելու մասին (տե՛ս Ալմա 32–34), մաքրաբարոյության օրենքի խախտման խստության մասին (տե՛ս Ալմա 39), մահից հետո մեր հոգիների վիճակի մասին (տե՛ս Ալմա 40), հարության և վերականգնման վարդապետությունների մասին (տե՛ս Ալմա 40–41), Երկնային Հոր փրկագնման Ծրագրում արդարադատության և ողորմության դերի մասին (տե՛ս Ալմա 42): Այս գիրքը նաև պարունակում է Տիրոջ հրահանգները՝ ինքնապաշտպանության և պատերազմի հիմնավորման վերաբերյալ (տես՝ Ալմա 43.45–47):

### Համառոտ շարադրանք

**Ալմա 1–3** Նեորը Նեփիացիների նկատմամբ քահանանենգություն է անում: Ալման ինքնապաշտպանության համար առաջնորդում է արդարակյաց Նեփիացիներին Ամղիկիի և նրա հետնորդների դեմ, ովքեր միավորվել էին Լամանացիների բանակի հետ: Եկեղեցին քանդելու և թագավոր դառնալու Ամղիկիի փորձը խափանելուց հետո Նեփիացիները հաղթում են Լամանացիների ևս մեկ բանակի:

**Ալմա 4–16** Ալման հանձնում է դատավորի աթոռը: Նա ճամփորդում է Նեփիացիների երկրով մեկ, պայքարելով հպարտության և ամբարշտության դեմ, քարոզելով Աստծո խոսքը: Ամուղեկը միանում է Ալմային և նրանք ուսուցանում են Հիսուս Քրիստոսի Քավության, հարության, և Տիրոջ հանդեպ հավատքի ու ապաշխարության մասին: Զիզրոմը մկրտվում է և դարձի գալիս:

**Ալմա 17–28Մոսիայի** որդիներն ու ուրիշները Նեփիի երկրում Լամանացիներին քարոզում են Աստծո խոսքը: Հազարավոր մարդիկ դարձի են գալիս դեպի Տերը: Նորադարձները հրաժարվում են իրենց զենքերից և գնում բնակվելու Նեփիացիների մեջ: Շատերը մահանում են Լամանացիների և Նեփիացիների միջև տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ:

**Ալմա 29–42** Ալման ցանկանում է հոգիներ բերել դեպի ապաշխարություն: Նա շփոթեցնում է Կորիհորին՝ հակաքրիստոսին: Նեփիացիներից առանձնացած Զորամացիներին քարոզելու ժամանակ Ալման Աստծո խոսքը համեմատում է սերմի հետ, որը պետք է սնուցվի հավատքով: Ամուղեկը վկայում է քավության մասին և Զորամացիներին սովորեցնում

է գործադրել հավատք ի ապաշխարություն: Ալման վկայում է և իր խորհուրդն է հղում իր որդիներ Հելամանին, Սիբլոնին և Կորիանթոնին: Ալման սրբազան հիշատակարանը վստահում է Հելամանին: Նա ուսուցանում է հետ մահկանացու հոգևոր աշխարհի, հարության և Աստծո ծրագրում արդարադատության ու ողորմության դերի մասին:

**Ալմա 43–45** Դրդված լինելով բարկությամբ Նեփիացի պառակտիչների կողմից, Լամանացիները պատերազմով գալիս են Նեփիացիների դեմ: Մորոնիի առաջնորդությամբ Նեփիացիները հաղթանակ են տանում Զերահեմնայի բանակի նկատմամբ: Ալման խոսում և օրհնում է Հելամանին, մարգարեանում է Նեփիացիների կործանման մասին և հեռանում երկրից:

**Ալմա 46–63** Մորոնին, Լեքին, Թեանկումը, Հելամանը և Պաորանը առաջնորդում են Նեփիացիներին ընդդեմ Լամանացիների բանակի, որը ղեկավարվում էր Ամաղիկիայի և Ամմորոնի կողմից: Մորոնին և Պաորանը նույնպես ճնշում են Նեփիացի պառակտիչների ապստամբությունը, ովքեր հայտնի են որպես թագավորասերներ: Սիբլոնը ստանում է Նեփիացիների հիշատակարանները , իսկ հետո փոխանցում այն Հելամանի որդի Հելամանին: Մորոնիայի բանակը մեկ այլ ճակատամարտում պարտության է մատնում Լամանացիներին:

ԴԱՍ 69

# Ալմա 1–2

## Նախաբան

Ալմայի գլխավոր դատավոր դառնալուց կարճ ժամանակ անց Նեռոր անունով մի մարդ ժողովրդի մեջ իրեն հայտարարեց քարոզիչ: Նա խոսում էր Եկեղեցու և նրա վարդապետություններին դեմ, և նա համոզեց շատերին հավատալ իրեն և փող տալ: Երբ Նեռորը սպանեց Գեդեոնին, ով Եկեղեցու հավատարիմ անդամ էր, նա բերվեց Ալմայի առաջ: Մեղավոր ճանաչելով Նեռորին քահանանենգության մեջ և քահանանենգությունը սրի միջոցով հարկադրելու մեջ, Ալման Նեռորին դատապարտում է մահվան: Եկեղեցին բարգավաճեց, առաջնորդված լինելով ջանասեր և խոնարհ քահանաների կողմից, բայց քահանանենգությունը շարունակվեց: Ամոնիկին, մի խորամանկ մարդ Նեռորի կարգի, մարդկանց մեջ շատ համախոհներ հավաքեց և փորձեց անհաջող կերպով դառնալ Նեփիացիների թագավոր: Նա և նրա հետևորդները ըմբոստացան, եկան պատերազմելու Նեփիացիների դեմ, և ի վերջո միավորեցին իրենց ուժերը Լամանացիների հետ: Զորացված լինելով Տիրոջ կողմից Նեփիացիները շատ կորուստներ կրեցին, բայց հաղթահարեցին այդ բանակի հարձակումները:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 1

*Չնայած քահանանենգությանը և հալածանքին, շատերը կայուն մնացին հավատքում*

Գրատախտակին գրեք *հանրաճանաչ* բառը:

- Որո՞նք են հանրաճանաչություն փնտրելու վտանգները: Որո՞նք են հանրաճանաչ մարդկանց հետևելու վտանգները:

Բացատրեք, որ Նեռոր անունով մի մարդ Զարահեմլայում դարձավ հանրաճանաչ: Ուսանողներին հրավիրեք մտքում կարդալ Ալմա 1.2–6, փնտրելով, թե Նեռորն ինչ սովորեցրեց և թե ինչպես մարդիկ դրան արձագանքեցին: Ուսանողների պատասխանից հետո, տվեք հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ է Ալմա 1.4 –ում Նեռորի ուսմունքները վտանգավոր: (Եթե ուսանողները դժվարանում են պատասխանել այս հարցին, նշեք, որ Նեռորն ուսուցանում էր, որ «բոլոր մարդիկ պետք է ունենան հավերժական կյանք», անկախ նրանից, թե ինչ են նրանք անում: Այս ուսմունքները անտեսում են ապաշխարության, արարողությունների և Աստծո պատվիրանները պահելու անհրաժեշտությունը: Տես նաև Ալմա 15.15 :)
- Ինչպիսի՞ հետևանքներ կարող է ունենալ այն մարդը, ով հավատում է այս վարդապետությանը:
- Ինչպե՞ս Նեռորի հաջողությունը ներգործեց իր վրա: (Տե՛ս Ալմա 1.6–:)

Ամփոփեք Ալմա 1.7–15, բացատրելով, որ մի օր Նեռորը պետք է գնար քարոզելու իր հետևորդներին, երբ նա հանդիպեց Գեդեոնին, ով օգնեց Լիմքիի ժողովրդին ազատվել ճորտությունից և ով Եկեղեցում ծառայում էր որպես ուսուցիչ: Նեռորը «սկսեց սաստիկ վիճել [Գեդեոնի] հետ, որպեսզի կարողանար եկեղեցու ժողովրդին մոլորեցնել. բայց [Գեդեոնը] ընդդիմացավ նրան՝ խրատելով նրան Աստծո խոսքերով» (Ալմա 1.7): Նեռորը բարկությունից դրդված քաշեց իր սուրը և սպանեց Գեդեոնին: Եկեղեցու մարդիկ Նեռորին տարան Ալմայի մոտ, ով գլխավոր դատավորն էր, որպեսզի դատվեր իր արած հանցագործության համար: Ալման Նեռորին մահվան դատապարտեց և Նեռորը «խայտառակ մահ տարավ» (Ալմա 1.15): Դուք կարող եք բացատրել, որ *խայտառակ* նշանակում է արատավոր, ամոթալի կամ անպատիվ:

Հրավիրեք ուսանողներին Ալմա 1.12 –ի առաջին մի քանի տողերում որոնել Ալմայի խոսքը, որն օգտագործվել էր նկարագրելու համար այն, ինչն առաջին անգամ Նեռորը ներկայացրեց այս ժողովրդին: Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել

***Օգտագործել Եկեղեցու ձեռնարկները և հարմարեցնել դասերը***

Եկեղեցու ձեռնարկները պատրաստված են զգուշությամբ, որպեսզի ապահովեն Եկեղեցու վարդապետությունների անաղարատությունը: Ուշադիր վերանայեք այս ձեռնարկի ուսուցանման առաջարկները, որոնք կօգնեն ձեզ ճիշտ հասկանալ մարգարեների մտադրությունները, ովքեր գրել են այս սուրբ գրությունները:

տողատակի ծանոթագրություններ1 2*ա*.: Թող դիմեն 2 Նեփի 26.29 –ում նշված առաջին հղմանը: Խնդրեք նրանց ցածրաձայն կարդալ այդ հատվածը:

- Ձեր բառերով, ի՞նչ է քահանանենգությունը: Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում մարդկանց համար «իրենք իրենց բարձր են դնում՝ իբրև մի լույս աշխարհի համար» արտահայտությունը: Ինչո՞ւ է դա վտանգավոր:
- Ինչպո՞ւ է Նեռրի քարոզը հանդիսանում քահանանենգության օրինակ:
- Ըստ Ալմայի, ի՞նչ կպատահի ժողովրդի հետ, եթե քահանանենգությունը հարկադրվի նրանց մեջ:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է մարդկանց համար գայթակղիչ ուսուցանելը այնպես, որ ուրիշները նրանց գովաբանեն:

Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 1.16: Խնդրեք դասարանին բացահայտել, թե ինչպես և ինչու քահանանենգությունը տարածվեց, նույնիսկ Նեռրի մահից հետո: Ուսանողների պատասխաններից հետո հարցրեք.

- Համաձայն Ալմա 1.16–ի, ո՞րն էր քահանանենգություն կիրառող մարդկանց նպատակը: (Նրանք անում էին դա «հանուն հարստությունների ու փառքի», այլ խոսքերով՝ ստանալու համար փող և հանրաճանաչություն:)

Բացատրեք, որ քահանանենգությունը և դրա հետևանքները անհանգստություն պատճառեցին Նեփիացիներին երկար տարիներ (տե՛ս Ալմա 2; 15.15; 24.28): Նշեք, որ մեր օրերում մենք պետք է խուսափենք քահանանենգությունից՝ ինչպես Եկեղեցում, այնպես էլ Եկեղեցուց դուրս: Մենք չպետք է թույլ տանք, որ մեզ խաբեն քահանանենգությամբ զբաղվող մարդիկ: Մենք նաև ավետարանի ուսուցանման մեր ջանքերում պետք է պաշտպանվենք քահանանենգ գործողություններից և վերաբերմունքից:

- Ավետարանն ուսուցանելու ի՞նչ հնարավորություններ դուք ունեք: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ նրանք ունեն բազմաթիվ հնարավորություններ ուսուցանելու համար ավետարանը: Նրանք ուսուցանում են մեկը մյուսին, երբ մասնակցում են սեմինարիայի դասերին և իրենց քվորումների ու դասերի ժամանակ: Նրանք կարող են ուսուցանել իրենց ընտանիքներին ընտանեկան երեկոների ժամանակ: Երիտասարդ տղամարդիկ ծառայում են որպես տնային ուսուցիչներ: Երիտասարդ տղամարդկանց և կանանց կարող են խնդրել ելույթ ունենալ հաղորդության ժողովին: Այժմ նրանք կարող են ուրիշների հետ կիսվել ավետարանով և կարող են պատրաստվել ծառայելու լիաժամկետ միսիայում:)

Հանձնարարեք կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը.

«Այն ամենը, ինչ դուք և ես անում ենք որպես հրահանգիչներ, գիտակցաբար կամ միտումնավոր կերպով ուշադրություն գրավելու համար՝— մեր ներկայացրած ուղերձներում, մեր օգտագործած եղանակներով, կամ մեր անձնական վարքագծով, — քահանանենգության տեսակ է, որն արգելակում է Սուրբ Հոգու ուսուցողական արդյունավետությունը» (“Seek Learning by Faith,” *Ensign*, Sept. 2007, 66–67):

Ընդգծեք, որ եթե ավետարանի ուսումնասիրման ժամանակ մենք գիտակցաբար ուշադրություն ենք գրավում մեզ վրա, մենք կասեցնում ենք Սուրբ Հոգու ուսուցողական արդյունավետությունը:

Կարդացեք հետևյալ դրդապատճառների ցանկը, որոնցով մարդիկ կարող են ուղղորդվել ուսուցանման ժամանակ: Հրավիրեք ուսանողներին քննարկել, թե որ դրդապատճառները կարող են լինել քահանանենգության օրինակներ և ինչու:

Առաջնորդել մյուսներին դեպի Փրկիչը:

Ցույց տալ, թե որքան զվարճալի են իրենք:

Օգնել մյուսներին զգալ Հոգին:

Ցուցադրել իրենց խելացիությունը:

Օգնել ուրիշներին կիրառել ավետարանի ճշմարտությունները իրենց կյանքում:

Հանձնարարեք բարձրաձայն ընթերցել Ալմա 1.26–27: Հարցրեք դասարանին բացահայտել այն եղանակները, թե ինչպես էին Աստծո քահանաները տարբերվում Նեռրից:

- Ինչպե՞ս կարող է Նեփիացի քահանաների օրինակը օգնել մեզ խուսափել քահանանենգությունից։
- Ինչպե՞ս այս քահանաները ցույց տվեցին իրենց նվիրվածությունը Աստծուն։

Բացատրեք, որ քահանանենգությունը Նեփիացիների շրջանում հանգեցրեց հակառակության ու հալածանքի։ Որպեսզի օգնեք ուսանողներին նախապատրաստվել Ալմա 1.19–33–ի ուսումնասիրությանը, տվեք հետևյալ հարցերը.

- Ե՞րբ եք տեսել, որ մարդիկ նվաստեցնում, ծաղրում կամ հալածում են նրանց, ովքեր պահում են Աստծո պատվիրանները։
- Դուք երբևէ զգացե՞լ եք ձեզ նվաստացած, ծաղրի ենթարկված կամ հալածված՝ պատվիրանները պահելու համար։ Եթե այո, ապա ինչպե՞ս եք դուք արձագանքել։

Խնդրեք ուսանողներին մտքում ընթերցել Ալմա 1.19–20, փնտրելով օրինակներ, որտեղ Եկեղեցու անդամները հալածվում են։ Ուսանողների պատասխաններից հետո, գրեք հետևյալ հարցերը գրատախտակի վրա և խնդրեք ուսանողներին արտագրել դրանք իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում։ Նրանց ժամանակ տվեք լուռ ընթերցել սուրբ գրությունների հատվածները և ինքնուրույն պատասխանել հարցերին։

*Ըստ Ալմա 1.21–24–ի , ինչպե՞ս արձագանքեցին որոշ անդամներ հալածանքին։ Ո՞րն էր նրանց արարքների հետևանքը։*

*Ըստ Ալմա 1.25–31–ի, ինչպե՞ս ապրեցին Եկեղեցու մյուս անդամները հալածանքների պայմաններում։ Ի՞նչ օրհնություններ են նրանք ստացել։*

Երբ ուսանողները ունենան բավարար ժամանակ այս հատվածները ուսումնասիրելու համար, հարցրեք նրանց, թե ինչ կարող ենք մենք սովորել այս հատվածներից։ Ուսանողները, հնարավոր է, նշեն այս սկզբունքները՝ ամբողջությամբ կամ մասամբ.

**Նույնիսկ, երբ մարդիկ մեր շրջապատում անհնազանդ են, մենք կարող ենք լինել անսասան և անխախտ պատվիրանները պահելիս։**

**Երբ մենք ապրում ենք ավետարանով, մենք կարող ենք ունենալ խաղաղություն մեր կյանքում, նույնիսկ, երբ մենք հալածվում ենք։**

- Ե՞րբ եք համոզվել այս սկզբունքների ճշմարտացիության մեջ։

## Ալմա 2

*Ամոնիկին և այլոք ապստամբում են և, ի վերջո, միանում Լամանացիներին, որպեսզի պատերազմեն Նեփիացիների հետ։*

Բացատրեք, որ Նեռի մահից շուրջ չորս տարի անց Նեփիացիները հանդիպեցին մեկ այլ ամբարիշտ մարդու, ով կարողացել էր ստանալ հանրության աջակցությունը։ Ուսանողներին բաժանեք զույգերի։ Յուրաքանչյուր զույգից մեկ հոգի թող ընթերցի Ալմա 2.1–7, իսկ մյուսը՝ Ալմա 2.8–18։ Ուսանողներին հրահանգավորեք իրենց հանձնարարված հատվածներից պատրաստել լուրերի հոդվածի վերնագրեր, նկարագրելով, թե ինչ արեցին արդարակյաց մարդիկ ամբարիշտների դեմ դիմակայելու համար։ Չորս-հինգ րոպե հետո խնդրեք ուսանողներին իրենց վերնագրերով կիսվել իրենց զուգընկերոջ հետ։ Կարող եք մի քանի ուսանողի խնդրել իրենց վերնագրերով կիսվել դասարանի հետ։

Համոզվելու համար, որ ուսանողները հասկացել են իրենց ուսումնասիրած հատվածները, տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ էր ցանկանում Ամոնիկին անել։
- Ըստ Ալմա 2.18–ի, ինչո՞ւ կարողացան Նեփիացիները կանգնեցնել Ամոնիկիի թագավոր դառնալու փորձերը։ («Տերը զորացրեց Նեփիացիների ձեռքը։» Կարող եք քաջալերել ուսանողներին նշել այս նախադասությունը իրենց սուրբ գրություններում։)

Դասարանին խնդրեք գրի առնել այն ամբարշտության այն օրինակները, որոնց այսօր հանդիպում է երիտասարդությունը։ Հնարավոր է, նրանք նշեն գայթակղությունները և այն փորձությունները, որոնց նրանք հանդիպում են ուրիշների ամբարշտության պատճառով։ Շարունակելով ուսումնասիրել Ալմա 2-ը, հրավիրեք նրանց խորհել ուղիների մասին, որոնցով նրանք կարող են ստանալ Տիրոջ օգնությունը իրենց հանդիպած գայթակղությունները և մարտահրավերները հաղթահարելու համար։

Բացատրեք, որ Նեփիացի ռազմիկները հաղթեցին Ամղիկիացիներից շատերին, բայց նրանք ապշեցին, տեսնելով, որ մնացած Ամղիկիացիները միավորվեցին Լամանացիների բանակի հետ (տե՛ս Ալմա 2.19–25)։ Նախքան Նեփիացիները կկարողանային վերադառնալ իրենց քաղաք, միավորված բանակը հարձակվեց նրանց վրա։ Խնդրեք ուսանողներին Ալմա 2.27–ում փնտրել Լամանացիների և Ամղիկիացիների միավորված բանակի քանակը նկարագրող արտահայտությունը։

Ուսանողներին խնդրեք մի պահ դադար առնել և պատկերացնել, թե իրենք ինչ կմտածեին և ինչպես կզգային, եթե լինեին Նեփիացիների բանակում։ Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 2.28–31, 36-ը և դասարանին խնդրեք ուշադրություն դարձնել, թե ինչպես է պատերազմը ավարտվում։ Ուսանողների պատասխաններից հետո կարող եք առաջարկել , որ նրանք այս հատվածներում նշեն *զորեղացրեց* և *զորեղացված* բառերը։

- Ըստ Ալմա 2.28–ի, ինչո՞ւ Տերը զորեղացրեց Նեփիացիներին։ (Ուսանողները կարող են կիսվել այս հարցի տարբեր պատասխաններով։ Օգնեք նրանց բացահայտել հետևյալ սկզբունքը. **Եթե մենք խնդրում ենք Աստծուն օգնել մեզ դիմակայել ամբարշտությանը, Նա կզորացնի մեզ։**)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր ամբարշտությանը դիմակայելու համար ստանալ զորություն Աստծուց, և ոչ թե ամբարիշտ ներգործությունները ամբողջովին հեռացնել մեր կյանքից։
- Ամբարշտությանը դիմակայելու ժամանակ, ինչպե՞ս կարող եք հետևել Ալմայի օրինակին։

Ուսանողներին խնդրեք գրել այս հարցերից որևէ մեկի պատասխանները.

- Ինչպե՞ս է Տերը զորացրել ձեզ, երբ դուք ամբարշտության եք հանդիպել։
- Մեր օրերում, ո՞րն է ամբարշտությանը դիմակայելու եղանակներից մեկը։

Գրելուց հետո, հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց պատասխաններով։ Դուք նաև կարող եք կիսվել ձեր պատասխանով։ Հորդորեք ուսանողներին հետևել Նեփիացիների օրինակին՝— աղոթել Տիրոջ օգնության համար և լինել արժանի իրենց ջանքերում զորացվելու Տիրոջ կողմից։ Եզրափակեք ձեր վկայությամբ, որ Աստված կզորացնի մեզ ամբարշտությանը դիմակայելու ժամանակ։

ԴԱՍ 70

# Ալմա 3–4

## Նախաբան

Լամանացիների բանակին միանալուց հետո Ամոնիկիացիները առանձնացան Նեփիացիներից՝ իրենց ճակատներին կարմիր նշան անելով: Ամոնիկիացիները և Լամանացիները պատերազմեցին Նեփիացիների դեմ և «հազարավոր ու տասնյակ հազարավոր»-ներ մահացան այդ պատերազմի ժամանակ (տե՛ս Ալմա 3.26): Այս ճակատամարտից հետո շատ Նեփիացիներ խոնարհեցրին իրենց և «զարթնեցվեցին ի հիշողություն իրենց պարտականությունների» (Ալմա 4.3): Շուրջ 3500 հոգի մկրտվեցին և միացան Եկեղեցուն: Այնուամենայնիվ, հաջորդ տարի Եկեղեցու շատ անդամներ հպարտացան և սկսեցին հալածել մյուսներին: Այս ամբարշտություններից մտահոգված, Ալման թողնում է գլխավոր դատավորի աթոռը և շարունակում է ծառայել որպես Եկեղեցու քահանայապետ: Այս պաշտոնում նա ծրագրում է ճանապարհորդել ողջ երկրով մեկ՝ բերելով պարզ վկայություն և ապաշխարության կոչ անելով մարդկանց:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 3.1–19

*Նեփիացիները վիճում են Ամոնիկիացիների և Լամանացիների հետ*

Դասարանը բաժանեք երկու խմբի: Յուրաքանչյուր խմբին տվեք մեկական թուղթ հետևյալ բառերով՝ *հագուստ, սանրվածք, ականջօղեր և ոսկեղեն, դաջվածքներ:* Հարցրեք խմբերին, թե այս առարկաների միջոցով մարդիկ ինչ կարող են արտահայտել, լինի դա միտումնավոր, թե՝ ոչ միտումնավոր:

Հիշեցրեք ուսանողներին, որ Ամոնիկիացիներն առանձնացան Նեփիացիներից և միացան Լամանացիներին (տե՛ս Ալմա 2): Հրավիրեք ուսանողներին կարդալ Ալմա 3.4-ը և բացահայտել, թե ինչպես Ամոնիկիացիները փոխեցին իրենց արտաքին տեսքը:

- Ումի՞ց էին Ամոնիկիացիները ցանկանում «տարբերվել»:
- Ինչպե՞ս կարող են մեր օրերում որոշ մարդիկ տարբերվել արդարներից իրենց արտաքին տեսքով: (Մինչ ուսանողները պատասխանում են, համոզվեք, որ հասկանալի է, որ որոշ մարդիկ միտումնավոր կերպով փոխում են իրենց արտաքին տեսքը, որպեսզի առանձնացնեն իրենց արդարներից կամ ապստամբեն Եկեղեցու չափանիշների դեմ: Մյուսները հետևում են աշխարհիկ միտումներին, առանց գիտակցելու, որ դրանով ուղերձ են փոխանցում իրենց մասին:)

Բացատրեք, որ երբ Ամոնիկիացիները նշան արեցին իրենց ճակատներին, որպեսզի առանձնանային Նեփիացիներից, նրանք դրանով ցույց տվեցին, որ Լամանացիների անեծքը բերել են իրենց վրա: Մի քանի ուսանողի հրավիրեք բարձրաձայն կարդալ Ալմա 3.14–19: Օգնեք դասարանին վերլուծել այս հատվածները՝ տալով այս բոլոր կամ որոշ հարցերը.

- Ո՞ր արտահայտությունն է Ալմա 3.18-ում նկարագրում Ամոնիկիացիների գործողությունները կամ վերաբերմունքը Աստծո դեմ: («Բացահայտ ապստամբության ընդդեմ Աստծո»:)
- Ինչպե՞ս էին Ամոնիկիացիները անեծքը բերել «իրենց վրա» (Ալմա 3.19):
- Որո՞նք են այն մի քանի ճշմարտությունները, որոնք մենք սովորում ենք այս հատվածներից: (Պատասխանները կարող են լինել, որ **նրանք, ովքեր դուրս են գալիս Աստծո դեմ բացահայտ ապստամբության, բերում են բացասական հետևանքներ իրենց վրա**, կամ՝ **եթե մենք առանձնացված ենք Աստծուց, ապա դա նրանից է, որ մենք ենք մեզ առանձնացրել Նրանից:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչպես տարբերակել իրենց ճիշտ ձևով, տվեք հետևյալ հարցերը.

- Որո՞նք են այն մի քանի ձևերը, որոնցով մենք կարող ենք մեր հագուստի և արտաքին տեսքի միջոցով ցույց տալ, որ մենք Հիսուս Քրիստոսի աշակերտներն

ենք: (Եթե ուսանողները դժվարանան պատասխանել այս հարցին, դուք կարող եք նրանց հանձնարարել *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկում կարդալ «հագուստ և արտաքին տեսք» բաժինը [2011], էջ 6–8: Շեշտեք, որ ավետարանի մասին մեր ներքին վկայությունը պետք է ներազդի հագուստի և արտաքին տեսքի վրա:)

Հորդորեք ուսանողներին իրենց ամենօրյա ընտրություններով, այդ թվում՝ իրենց հագուստի և արտաքին տեսքի ընտրությամբ, ցույց տալ, որ հետևում են Տիրոջը: Շեշտեք, որ **մեր հագուստի և արտաքին տեսքի միջոցով մենք կարող ենք մեզ տարբերակել որպես Հիսուս Քրիստոսի աշակերտներ:**

## Ալմա 3.20–27

### *Նեփիացիներից, Լամանացիներից և Ամոնիկիացիներից շատերը սպանվեցին պատերազմի ժամանակ*

Ամփոփեք Ալմա 3.20–25-ը, նշելով, որ Նեփիացիները ետ մղեցին Լամանացիներին, բայց երկու կողմերն էլ ունեցան հազարավոր զոհեր: Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 3.26–27: Հանձնարարեք դասարանին սովորել այն դասը, որը Մորմոնը ուզում էր, որ մենք հասկանայինք:

- Համաձայն այդ հատվածների, ինչպիսի՞ վարձք են ստանում նրանք, ովքեր հնազանդվում են Տիրոջը:
- Ինչպիսի՞ հետևանքներ են ունենում նրանք, ովքեր չեն հնազանդվում Տիրոջը:

Որպես ամփոփում, կարող եք գրել հետևյալ սկզբունքը գրատախտակին. **Մենք ստանում ենք ուրախություն կամ թշվառություն կախված նրանից, թե ում ենք կամենում հնազանդվել:**

Հրավիրեք ուսանողներին մտածել այն օրհնությունների մասին, որոնք գալիս են Տիրոջը հետևելու որոշումից:

- Ինչպիսի՞ օրհնություն եք ստացել, երբ ընտրել եք հետևել Նրան:

## Ալմա 4.1–14

### *Եկեղեցու աճի ժամանակաշրջանից հետո Եկեղեցու անդամները սկսեցին հպարտանալ և հակառակվել մեկը մյուսի դեմ:*

Գրեք *խոնարհ* և *հպարտ* բառերը գրատախտակին:

- Ի՞նչ է նշանակում լինել խոնարհ: ( Լինել խոնարհ նշանակում է լինել ընկալունակ և երախտագիտությամբ ընդունել մեր կախվածությունը Տիրոջից՝ հասկանալով, որ մենք անընդհատ Նրա աջակցության կարիքն ունենք:)

Մի քանի ուսանողի հրավիրեք բարձրաձայն կարդալ Ալմա 4.1–5: Դասարանին հանձնարարեք գտնել Նեփիացիների խոնարհ դառնալու փաստը: Երբ ուսանողները պարզաբանեն, թե ինչ են նրանք գտել, կարող եք շեշտել, որ մենք կարիք չունենք վերապրելու դժբախտություն, որպեսզի դառնանք խոնարհ. մենք կարող ենք ընտրել խոնարհ լինելը:

Շեշտեք, որ Նեփիացիների նկարագրությունը Ալմա 4.6-ում շատ տարբեր է Ալմա 4.3–5-ի նկարագրությունից: Ցույց տվեք գրատախտակին գրված *հպարտ* բառը:

- Ի՞նչ է նշանակում լինել հպարտ: (Հպարտությունը խոնարհության հականիշն է: Մարդիկ, ովքեր հպարտ են, ընդդիմանում են ուրիշներին և Աստծուն: Նրանք իրենց վեր են դասում շրջապատից և Աստծո ցանկություններին հետևելու փոխարեն հետևում են իրենց ցանկություններին:)

Դասարանի կեսին հանձնարարեք մտքում կարդալ Ալմա 4.6–8, իսկ մյուս կեսին՝ Ալմա 4.9–12: Երկու խմբին էլ հանձնարարեք գտնել որոշ Նեփիացիների հպարտ արարքները, և թե ինչպիսի ազդեցություն ունեցան այս արարքները մյուսների վրա: Բավարար ժամանակ տրամադրելուց հետո, թող երկու խումբն էլ ասեն, թե ինչ են բացահայտել:

- Ի՞նչ են այս հատվածները սովորեցնում այն մասին, թե ինչպե՞ս է հպարտությունը ազդում ուրիշների հանդեպ մեր վերաբերմունքի վրա:

- Ի՞նչ զգուշացում եք դուք տեսնում Ալմա 4.10-ում: (Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ, **եթե մենք ոչ ճիշտ օրինակ ենք ցույց տալիս, մեր արարքները կարող են խանգարել ուրիշներին ընդունել ավետարանը:** )

Հանձնարարեք բարձրաձայն կարդալ Ալմա 4.13–14: Դասարանին հանձնարարեք գտնել օրինակներ, որտեղ մի քանի Նեփիացիներ խոնարհ էին, երբ մյուսները հպարտ էին:

- Ի՞նչ են այս հատվածները սովորեցնում այն մասին, թե ինչպե՞ս է խոնարհությունը ազդում ուրիշների հանդեպ մեր վերաբերմունքի վրա:

Ընդգծեք, որ **խոնարհ կամ հպարտ լինելու մեր որոշումներն ազդում են ինչպես մեզ, այնպես էլ ուրիշների վրա:** Ժամանակ տվեք ուսանողներին իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրելու այս սկզբունքի ճշմարտացիությունն ապացուցող փորձառությունների մասին:

## Ալմա 4.15–20

*Ալման հրաժարական է տալիս գլխավոր դատավորի պաշտոնից, որպեսզի կարողանա իր ժամանակը նվիրաբերել մարդկանց ապաշխարության հրավիրելու գործին:*

Ուսանողներին հանձնարարեք պատկերացնել իրենց Ալմայի դերում: Նրանք գլխավոր դատավորն են, և շատ մարդիկ դարձել էին հպարտ և հալածում էին նրանց, ովքեր մնացել էին խոնարհ:

- Ի՞նչ կանեիք դուք, որպեսզի օգնեիք մարդկանց փոխվել:

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 4.15–19: Հանձնարարեք դասարանին գտնել, թե ինչ ընտրեց անել Ալման:

- Ի՞նչ որոշեց անել Ալման: (Նա որոշեց թողնել գլխավոր դատավորի իր պաշտոնը, որպեսզի կարողանար նվիրել իր ժամանակը ժողովրդին ուսուցանելու գործին:)
- Ի՞նչ է ասում «պարզ վկայությամբ» արտահայտությունն այն մասին, թե ինչպես Ալման պետք է ուսուցաներ (Ալմա 4.19):
- Երբ եք լսել, երբ մարդիկ բերել են «պարզ վկայություն»: Ինչպե՞սի ազդեցություն է դա ունեցել ձեզ վրա:
- Ալմա 4.19-ում ի՞նչ ճշմարտություն մենք կարող ենք սովորել Ալմայի օրինակից:

Ուսանողների պատասխանները կարող են պարունակել հետևյալը.

**Մեր հոգևոր պարտականությունները կատարելիս կարող է պահանջվել զոհաբերություն:**

**«Պարզ վկայություն» բերելն օգնում է ուրիշներին ավելի մոտենալ Աստծուն:**

Հրավիրեք ուսանողներին փնտրել Ալմայի պարզ վկայությունը, երբ նրանք իրենց անձնական ուսումնասիրության ժամանակ կարան Ալմա 5–16, որպեսզի հետագա դասերի ժամանակ քննարկեն այս գլուխները: Նրանց ուշադրությունը հրավիրեք այն բանի վրա, թե ինչ ազդեցություն ունեցավ Ալմայի վկայությունը մարդկանց վրա:

***Հրավիրեք ուսանողներին հետագա բացահայտումների***

Ժամանակ առ ժամանակ ավարտեք դասը, տալով ուսանողներին հանձնարարություն սուրբ գրություններից: Այդ հանձնարարությունները կարող են օգնել նրանց կենտրոնացում ունենալ իրենց անձնական ուսումնասիրության ընթացքում և կարող են օգնել նրանց ավելի լավ հասկանալ, թե ինչպես է մի գլուխը կապված մյուսի կամ մի քանի գլուխների հետ:

## Սուրբ գրությունների սերտման կրկնություն

Ծանոթացրեք ուսանողներին սուրբ գրությունների սերտման մի քանի նոր հատվածների հետ, կամ վերանայեք նրանց իմացած մի քանի հատվածներ: Պատրաստեք հարցեր, որոնք կօգնեն նրանց բացահայտել այդ հատվածների մեջ եղած սկզբունքները: Հանձնարարեք նրանց, իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրել մի նպատակ նրա մասին, թե ինչ կանեն նրանք, որպեսզի ավելի լավ ապրեն այդ սկզբունքներով: Տվեք նրանց որոշակի ժամանակ, որպեսզի նրանք կատարեն իրենց նպատակը և երբ նրանք ավարտեն, խնդրեք նրանց նախապատրաստել զեկույց դասարանի անդամի կամ ողջ դասարանի համար:

*Նշում.* Եթե դուք չունեք ժամանակ, որպեսզի կիրառեք այս վարժությունը դասի ժամանակ, արեք դա մյուս անգամ: Այլ վերանայման վարժությունների համար օգտագործեք այս ձեռնարկի վերջում եղած հավելվածը:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Ալմա 3.6–17: Նշան և անեծք

Երբ ուսանողները ուսումնասիրեն Ալմա 3, հնարավոր է, նրանք հարցեր ունենան Լամանացիների վրա դրված նշանի և անեծքի վերաբերյալ: Դուք կարող եք բացատրել, որ կա տարբերություն նշանի և անեծքի միջև: Նշանը, որ դրվել էր Լամանացիների վրա, մուգ մաշկն էր (տե՛ս Ալմա 3.6): Այս նշանի նպատակն էր Լամանացիներին տարբերակել ու առանձնացնել Նեփիացիներից (տես՝ Ալմա 3.8): Անեծքը, որն ավելի լուրջ էր, մի վիճակ էր, որում նրանք «կտրված կլինեն Տիրոջ ներկայությունից» (2 Նեփի 5.20): Լամանացիները և Ամղիկիացիները իրենց վրա էին բերել այս անեծքը Աստծո դեմ ապստամբելու պատճառով (տե՛ս 2 Նեփի 5.20; Ալմա 3.18–19): Չնայած մուգ մաշկը այս դեպքում ծառայել է որպես Լամանացիների վրա դրված անեծքի նշան, Մորմոնի Գիրքն ուսուցանում է, որ Տերը «չի մերժում ոչ մեկին, որ գալիս են դեպի իրեն, սև թե սպիտակ, ստրուկ թե ազատ, այր թե կին . . . բոլորը նույնն են Աստծո համար» (2 Նեփի 26:33): Հիսուս Քրիստոսի ավետարանը բոլորի համար է: Եկեղեցին միանշանակորեն դատապարտում է ռասիզմը, այդ թվում Եկեղեցու ներսում և դրսում անհատների ցուցաբերած բոլոր նախորդ ռասիզմի արտահայտումները: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է.

«Ոչ մի մարդ, ով վիարավորական նկատողություն է անում ուրիշ ռասայի ներկայացուցչի հասցեին, չի կարող իրեն համարել Քրիստոսի ճշմարիտ հետևորդ: Ոչ էլ նա կարող է հավակնել, որ ապրում է Եկեղեցու ուսմունքներին համահունչ: . . .

Մենք բոլորս պետք է ընդունենք, որ մեզանից յուրաքանչյուրը որդին կամ դուստրն է մեր Երկնային Հոր, ով սիրում է Իր բոլոր զավակներին» (“The Need for Greater Kindness,” *Ensign* կամ *Liahona,* մայիս 2006, 58): Այս նյութի վերաբերյալ լրացուցիչ տեղեկության համար տես դաս 27-ը:

# Տնային ուսումնասիրության դաս

## Մոսիա 26–Ալմա 4 (Մաս 14)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը ուսանողները սովորեցին, երբ ուսումնասիրեցին Մոսիա 26–Ալմա 4 (մաս 14), որը նախատեսված չէ ուսուցանելու որպես ձեր դասի մի մաս: Դասը, որը դուք ուսուցանում եք, կենտրոնանում է այս վարդապետությունների և սկզբունքների միայն մի մասի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, երբ մտածում եք ուսանողների կարիքների մասին:

#### Օր 1 (Մոսիա 26)

Ուսումնասիրելով Նեփիացիների մի սերնդի մասին, ովքեր չեն զարգացրել ավետարանի հանդեպ վկայություն, ուսանողները բացահայտեցին, որ վկայություն զարգացնելու և պահպանելու համար մենք պետք է սնվեք Աստծո խոսքով, հավատքով աղոթենք և հնազանդվենք Տիրոջ պատվիրաններին: Ուրիշներին ապաշխարության բերելու Ալմայի ջանքերի օրինակից ուսանողները սովորեցին, որ Աստված կների նրանց, ովքեր կապաշխարեն իրենց սրտի անկեղծությամբ:

#### Օր 2 (Մոսիա 27)

Երբ ուսանողները ուսումնասիրեցին Ալմա կրտսերի և Մոսիայի որդիների դարձի գալու պատմությունները, նրանք սովորեցին ավետարանի հետևյալ երեք ճշմարտությունները. Տերը պատասխանում է ուրիշների համար մեր անկեղծ աղոթքներին՝ թողնելով նրանց իրենց կամքի ազատությունը; մեզանից յուրաքանչյուրը պետք է վերստին ծնվի Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով; և որպեսի մարդը իսկապես ապաշխարի, նա պետք է անի ամեն հնարավորը, որպեսզի վերականգնի այն վնասը, որը հասցրել է: Ուսանողները իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրում գրել են, թե քՔվության շնորհիվ ինչպես են իրենք փոխվել:

#### Օր 3 (Մոսիա 28–29)

Երբ ուսանողները ուսումնասիրեցին ավետարանը Լամանացիներին քարոզելու Մոսիա որդիների ցանկության մասին, նրանք սովորեցին, որ որքան մեր հավատքը մեծանում է, ավետարանով կիսվելու մեր ցանկությունը նույնքան մեծանում է: Նրանք նույնպես գրեցին իրենց փորձառությունների մասին, որոնք օգնել են իրենց կիսվել ավետարանով: Ուսանողները կարդացին Նեփիացիների ղեկավարների փոփոխության մասին և սովորեցին, որ քաղաքացիները պարտավոր են հետևել արդար օրենքներին և ղեկավարներին:

#### Օր 4 (Ալմա 1–4)

Ուսումնասիրելով խոնարհ Նեփիացիների օրինակը, ուսանողները սովորեցին, որ երբ մենք ապրում ենք ավետարանով, մենք ունենում ենք խաղաղություն մեր կյանքում, նույնիսկ, այն ժամանակ, երբ մեզ հալածում են: Կարդալով Ամղիկիացիների ապստամբության մասին, նրանք բացահայտեցին, որ մեր երջանկությունը կամ տխրությունը կախված է նրանից, թե մենք ում ենք ընտրում հնազանդվել: Ալման օրինակն էր այն մարդու, ով ընտրեց հնազանդվել Տիրոջը: Հպարտ Նեփիացիներին դեպի ապաշխարություն կոչ անելու նրա անսասան նվիրվածությունն օգնեց ուսանողներին տեսնել, որ Տիրոջ ծառաները բերում են վկայություն և մեղավորներին կանչում ապաշխարության:

### Նախաբան

Այս դասը թույլ է տալիս ուսանողներին կրկնել ապաշխարության սկզբունքները և խորհել Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մեզ փոխվելու անհրաժեշտության մասին,— ինչպես արեցին Ալմա կրտսերը և Մոսիայի որդիները: Աղոթեք առաջնորդության համար, որպեսզի իմանաք, թե ինչպես կարող եք լավագույնս օգնել ուսանողներին փնտրել այդ փոփոխությունը իրենց կյանքում:

### Ուսուցանման առաջարկներ

#### Մոսիա 26

***Ալման ոգենշնչում ստացավ, թե ինչպես դատել նրանց, ովքեր մեծ մեղք էին գործել***

Այս դասը սկսելու համար հանձնարարեք ուսանողներին կարդալ գլխի վերնագիրը Մոսիա 26–ի սկզբում: Դասարանի համար կարդացեք հետևյալ իրավիճակները: Հանձնարարեք ուսանողներին մտածել, թե յուրաքանչյուր իրավիճակում ինչ կանեին նրանք, որպեսզի օգնեին այդ մարդուն:

1. Երիտասարդ կինը մեծ մեղք է գործել, բայց վախենում է խոսել իր եպիսկոպոսի հետ:
2. Երիտասարդ տղամարդը ցանկանում է ապաշխարել, բայց չգիտի, թե ինչպես:
3. Երիտասարդ կինը կրկնում է նախկինում կատարած մեղքը, և նա անհանգստանում է, որ Տերը այլևս չի ների նրան:
4. Երիտասարդ տղամարդը ցանկանում է ապաշխարել, բայց չի ցանկանում ներել իրեն նեղացնողին:

Հետևյալ հատվածները գրեք գրատախտակին. *Մոսիա 26.21–23, 29–31:* Պարզաբանեք ուսանողներին, որ այս հատվածները ցույց են տալիս Տիրոջ հայտնությունը Ալմային՝ այն մարդկանց վերաբերյալ, ովքեր մեծ մեղք էին գործել: Հանձնարարեք ուսանողներին կարդալ այդ

հատվածները և գտնել առնվազն մեկ սկզբունք, որը կօգներ վերը նշված մարդկանցից որևէ մեկին: Խնդրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց պատասխաններով դասարանի հետ: Կարող եք կիսվել Մոսիա 26–ում նշված ապաշխարության սկզբունքի մասին ձեր վկայությամբ:

Հիշեցրեք ուսանողներին, որ նրանք նպատակ են դրել կիրառելու Մոսիա 26-ից իրենց սովորած սկզբունքներից որևէ մեկը՝ ապաշխարելու իրենց անձնական փորձերում: Խրախուսեք նրանց հետևել իրենց նպատակներին:

## Մոսիա 27–28

*Ալմա Կրտսերը և Մոսիայի որդիները ապաշխարում են և վերստին ծնվում*

Որպեսզի ուսանողներին բերեք որևէ մեկի օրինակը, ով վերապրել է սրտի մեծ փոփոխություն, հրավիրեք նրանցից մի քանիսին հերթով և բարձրաձայն կարդալ հետևյալ փորձառությունը, որով կիսվել է Յոթանասունական Երեց Քեյթ Կ. Հիլբիգը.

«[Մի երիտասարդ երեց, ով ծառայում էր Արևելյան Եվրոպայում] և իր զուգընկերը գտնում և ուսուցանում են միջին հասակի մի մարդու, որի անունն էր Իվան:. . . Այդ հետաքրքրվողը դժվար կյանք էր ունեցել, դա արտացոլվում էր նրա մաշված հագուստի, անխնամ մորուքի և անվճռական վարքագծի մեջ: Կյանքը դժվար և անբարյացակամ էր գտնվել նրա հանդեպ:

Չունենալով ոչ մի նախնական կրոնական ուսուցում, Իվանը պետք է շատ բան հաղթահարեր: Այն գործելակերպերը որոնք համահունչ չէին վերականգնված ավետարանին, պետք է մի կողմ դրվեին: Պետք էր ընդունել և կիրառել նոր սկզբունքներ: Իվանը ցանկանում էր սովորել և նա ջանասիրաբար պատրաստվում էր իր մկրտությանը և հաստատմանը: Նրա հագուստը մնում էր մաշված և նրա մորուքը մնում էր անխնամ, բայց նա անում էր առաջին քայլերը: Իվանի մկրտությունից շատ չանցած միսիոները տեղափոխվեց: Նա հույս ուներ, որ Իվանի հետ իրենց ճանապարհները դեռ կխաչվեին:

Վեց ամիս անց միսիայի նախագահը կրկին ուղարկեց երիտասարդ երեցին իր նախկին ճյուղ: Զարմացած, սակայն ուրախ վերադառնալու համար, երեցը իր նոր զուգընկերոջ հետ ճյուղում գտնվելու իր առաջին կիրակի օրը շուտ եկավ հաղորդության ժողովին: . . .

Երեցն այդ փոքրիկ ճյուղում ճանաչեց համարյա բոլորին: Սակայն նա չէր կարողանում գտնել այդ մարդկանց մեջ այն մարդուն, ում ինքը և իր զուգընկերը ուսուցանել և մկրտել էին վեց ամիս առաջ: Երեցի մոտ առաջացավ հիասթափության և տխրության զգացում: . . .

Երեցի մտավախություններն ու մտածմունքներն անհետացան, երբ մի անծանոթ արագ առաջ եկավ դեպի միսիոներները, որ գրկախառնվի նրանց հետ: Մաքուր սափրված մարդը ուներ վստահ ժպիտ և նրա դեմքը ամբողջովին փայլում էր: Սպիտակ վերնաշապիկով և խնամքով կապած փողկապով այդ կիրակնօրյա առավոտը նա պետք է պատրաստեր հաղորդությունը իր փոքր ճյուղի համար: Միայն նրա խոսքից երեցը ճանաչեց նրան: Դա նոր Իվանն էր, ոչ այն հին Իվանը, ում նրանք ուսուցանել և մկրտել էին: Իր ընկերոջ մեջ երեցը տեսավ հավատքի, ապաշխարության և ներման հրաշքը. նա տեսավ Քավության իրականությունը:

. . . [ [Իվանը] զգացել էր «սրտի մի փոփոխություն» (Ալմա 5.26)՝ այն աստիճան, որ մկրտվեր և առաջ շարժվեր դարձի գալու այդ շարունակական գործընթացում» (“Experiencing a Change of Heart,” *Ensign,* հունիս 2008, 29–31):

Հարցրեք. Պատմության մեջ ի՞նչն է ցույց տալիս, թե Իվանը ինչպես է փոխվում: (Դա ակնհայտ է, որ Իվանի արտաքուստ փոփոխությունները ցուցանիշն են նրա ներսի խորը փոփոխությունների:)

Հիշեցրեք ուսանողներին, որ Մոսիա 27-ը նկարագրում է մեկ ուրիշ դեպք, որը տեղի է ունեցել Քավության միջոցով: Հանձնարարեք մեկ ուսանողի կանգնել դասարանի առջև և ամփոփելՄոսիա 27: Եթե հնարավոր է, ուսանողը կարող է նաև ցույց տալ Ալմա Կրտսերի դարձի գալու նկարը (*Gospel Art Book* [2009], no. 77): Մեկ այլ ուսանողի խնդրեք ընթերցել Մոսիա 2.24–26: Այնուհետև դասարանին հանձնարարեք բացահայտել, թե ով պետք է փոխվի Քավության միջոցով կամ «ծնվի Աստծուց»: Ուսանողի պատասխանը պետք է արտահայտի հետևյալ ճշմարտությունը. **Մեզանից յուրաքանչյուրը պետք է կրկին ծնվի Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:**

Հարցրեք. Ինչպե՞ս եք տեսել որևէ մեկի դեպի լավը փոփոխությունը՝ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ:

Հրավիրեք ուսանողներին մտածել այն հարցի շուրջ, որն այդ պատմության միսիոները տվեց ինքն իրեն Իվանի հետ հանդիպելուց հետո. «Որքա՞ն եմ *ես* զգացել «սրտի մի փոփոխություն» այս վերջին վեց ամիսների ընթացքում: Արդյո՞ք *ես* «վերստին ծնվել եմ»» (մեջբերումները՝ Keith K. Hilbig, “Experiencing a Change of Heart,” 31):

Ուսանողներին հանձնարարեք կարդալ Մոսիա 27.24, 28, փնտրելով այն, թե ինչ արեց Ալման և թե ինչ արեց Տերը, որը բերեց Ալմայի վերափոխմանը: Խնդրեք նրանց բացատրել, թե ինչու են նրանք հավատում, որ երկուստեք, թե՛ անհատը, և թե՛ Տերը, պետք է մասնակցեն սրտի հզոր փոփոխությանը:

Հիշեցրեք ուսանողներին, որ նրանք լրացնեն աղյուսակը նախադասություններով, որտեղ ցույց է տրվում նախկին Ալմայի և սրտի փոփոխություն ապրած Ալմայի տարբերությունը (օր 2-ի դաս): Օր 2-ի 2-րդ հանձնարարության մեջ ուսանողները իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրում գրել են մեկ արտահայտություն «Հետո» սյունակից սկսած, որ նրանք հույս ունեին կբնութագրեր նրանց ողջ կյանքի ընթացքում և կպարզաբաներ պատճառը: Մի քանի ուսանողների հրավիրեք կիսվելու իրենց գրառումներով: Վկայեք, որ սրտի զորեղ փոփոխությունը մեզ համար հնարավոր է Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:

Խնդրեք ուսանողներին խորհել այն մասին, թե ինչպես են իրենք փոխվել Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Հրավիրեք նրանց, ցանկության դեպքում, կիսվել իրենց մտքերով: Դուք նույնպես կարող եք պատմել, թե ինչպես եք փոխվել Քավության միջոցով:

Խրախուսեք ուսանողներին աշխատել սրտի փոփոխության ուղղությամբ, որպեսզի ավելի մոտենան Տիրոջը և թույլ տան, որ Քավությունը փոխի իրենց կյանքը:

Արտագրեք հետևյալ աղյուսակը գրատախտակին կամ պատճենեք մեկական օրինակ յուրաքանչյուր ուսանողի համար.

| Մոսիա 27.32–37 | Մոսիա 28.1–4 |
|---|---|
| Ինչպե՞ս փոխվեցին Ալման և Մոսիայի որդիները:<br>Ի՞նչ սկզբունք դուք սովորեցիք այս հատվածներից:<br>Ձեր կարծիքով, ինչո՞ւ է հատուցումը կազմում ապաշխարության կարևոր մասը: | Ինչպե՞ս Մոսիայի որդիները փոխվեցին:<br>Ի՞նչ սկզբունք դուք սովորեցիք այս հատվածներից:<br>Ձեր կյանքում ի՞նչ փորձառություններ են ձեզ մոտ ուրիշների հետ ավետարանով կիսվելու ցանկություն առաջացրել: |

Դասարանի մի կեսին հանձնարարեք պատասխանել աղյուսակի առաջին սյունակի հարցերին, իսկ մյուս կեսին՝ երկրորդ սյունակի հարցերին: Թող յուրաքանչյուր ուսանող աշխատի առանձին: Յուրաքանչյուր խմբից հրավիրեք մի քանի ուսանողների կիսվելու իրենց պատասխաններով:

Հանձնարարեք ուսանողներին խորհել այն մասին, թե ինչպե՞ս նրանք կարող են հատուցել իրենց մեղքերի և մեծացնել իրենց ցանկությունը կիսվելու ավետարանով ուրիշների հետ:

## Մոսիա 29–Ալմա 4

*Աստված օրհնում է այն Նեփիացիներին, ովքեր հալածանքների ընթացքում մնում են արդարակյաց:*

Հիշեցրեք ուսանողներին, որ Ալմայի առաջին գլուխները նկարագրում են արդարակյաց Նեփիացիների դժվարությունները և հալածանքները: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 1.25, 27: Հանձնարարեք պարզել, թե այդ Նեփիացիները ինչ արեցին հալածանքների ժամանակ:

Նշեք, որ Տերը օրհնեց արդարակյաց Նեփիացիներին այնպես, որ նրանք բարգավաճեցին ավելի շատ, քան ամբարիշտները (տես՝ Ալմա 1.29–32): Ուսանողներին խնդրեք ձգտել հետևել այս հավատարիմ Նեփիացիների օրինակին, երբ նրանք իրենց կյանքում կանգնում են դժվարությունների առաջ:

## Հաջորդ Մաս (Ալմա 5–10)

Ինչպե՞ս եք իմանում, որ վերստին ծնվել եք: Ի՞նչ է նշանակում վերստին ծնվել: Երբ ուսանողները ուսումնասիրեն Ալմա 5–10, նրանք կգտնեն մի քանի հարցեր, որոնք կարող են տալ իրենց՝ որոշելու համար, թե արդյոք նրանք վերստին ծնվել են և ունեցել սրտի զորեղ փոփոխություն: Բացի այդ, նրանք ձեռք կբերեն ավելի մեծ պատկերացում Քավության խորության և զորության մասին:

ԴԱՍ 71

# Ալմա 5.1–36

## Նախաբան

Երբ Եկեղեցուն սպառնում էին ներքին հակառակությունները և ամբարշտությունները (տես՝ Ալմա 4.9–11), Ալման թողեց դատավորների աթոռը, որպեսզի կարողանար իր ջանքերը կենտրոնացնել Եկեղեցին ամրապնդելու գործի վրա: Նա սկսեց իր առաքելությունը, որպեսզի հայտարարեր Նեփիի ժողովրդին «պարզ վկայությամբ հակադրվելով ընդդեմ նրանց» (Ալմա 4.19): Ալման սկսեց իր առաքելությունը, հիշեցնելով Զարահեմլայի ժողովրդին, որ Տերը նրանց նախնիներին ազատել էր ֆիզիկական և հոգևոր ճորտությունից: Նա խրախուսեց նրանց պատրաստվել դատաստանի վերջին օրվան, հավատալով Աստծո խոսքին և գնահատելով իրենց սրտերի հոգևոր վիճակը:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 5.1–14

*Ալման պատմում է իր հոր և նրա հետևորդների դարձի մասին:*

Գրատախտակին գրեք *փոփոխություն* բառը: Ուսանողներին խնդրեք կիսվել օրինակներով, երբ մարդիկ կարող են փոխել իրենց արտաքինը կամ բնավորությունը: Խնդրեք նրանց բացատրել, թե ինչը կարող է հանգեցնել կամ բերել մարդկանց մեջ այդ փոփոխությունները:

Հիշեցրեք ուսանողներին, որ Ալման մտահոգված էր ամբարշտությամբ, որը մեծանում էր Նեփիացիների մեջ: Նա տեսնում էր, որ եթե նրանք չփոխվեին, նրանք կորցնեին իրենց կապած ուխտերի խոստացված օրհնությունները: Նա թողեց դատավորի աթոռը և նվիրվեց մարդկանց ծառայելու և նրանց ապաշխարության կանչելու գործին: Նա սկսեց իր քարոզը Զարահեմլայի ժողովրդից:

Մի քանի ուսանողների հրավիրեք հերթով կարդալ Ալմա 5.3–6: Դասարանին հանձնարարեք հետևել նրանց, ուշադրություն դարձնելով այն իրադարձություններին, որոնք Ալման մեջբերեց նախքան ժողովրդին ուսուցանել սկսելը:

- Ինչպե՞ս կարող էր ճորտության, ազատման և Ալմայի հոր ու նրա հետևորդների դարձի գալու պատմությունը օգնել Ալմայի ժողովրդին:
- Նայեք Ալմա 5.7: Համաձայն այս հատվածի, ինչպի՞սի փոփոխություն տեղի ունեցավ Ալմայի հոր և նրա ժողովրդի կյանքում:

Գրատախտակին ավելացրեք *սրտի* հետո *փոփոխություն,* որպեսզի այն կարդացվի՝ *սրտի փոփոխություն*:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում զգալ «սրտի փոփոխություն»: (Օգնելու համար ուսանողներին պատասխանել այս հարցին, ասացեք նրանց, որ Յոթանասունական Երեց Ժեռալդ Ն. Լանդն ուսուցանել է, որ սուրբ գրություններում *սիրտ* բառը հաճախ վերաբերվում է «իրական ներամփոփ մարդուն» [“Understanding Scriptural Symbols,” *Ensign,* հոկ. 1986, 25]):
- Ո՞րն է տարբերությունը սրտի փոփոխության և այն փոփոխությունների այն տեսակների միջև, որ մենք քննարկեցինք դասի սկզբում:

Բացատրեք, որ Ալմա 5.7–9, 14 –ում Ալման օգտագործում է տարբեր արտահայտություններ, որոնք նկարագրում են, թե ինչ է սրտի փոփոխությունը: Լրացրեք գրատախտակի արտահայտությունն այնպես, որ այն կարդացվի՝ *Սրտի փոոխությունը նման է . . .*

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 5.7–9, 14, ուշադրություն դարձնելով Ալմայի նկարագրություններին, թե ինչ է սրտի փոփոխությունը: Հրավիրեք նրանց կիսվել իրենց սովորածով: Երբ ուսանողները կիսվում են, ավելացրեք արտահայտությունները գրատախտակին: (Ձեր ցուցակը կունենա հետևյալ տեսքը. *Սրտի փոփոխությունը նման է զարթնեցնելուն նրանց խորը քնից, լուսավորելուն լույսով,*

*արձակելուն կապանքներից, հոգիները բացվելուն, զովերգելուն քավիչ սեր, ծնվելուն Աստծուց, ընդունելուն Տիրոջ պատկերը ձեր դեմքին:)*

- Ինչպե՞ս է սրտի փոփոխությունը նման գրատախտակին թվարկված նկարագրություններին:
- Ինչպե՞ս կարող է սրտի փոփոխությունը երևալ անձի արարքներում: Ինչպե՞ս է երբեմն սրտի փոփոխությունը նկատելի մարդու դեմքին: (Կարող եք ուսանողներին հարցնել, որպեսզի նրանք բնութագրեն իրենց որևէ ծանոթի տեսքը կամ վարքը, ով, իրենց կարծիքով, «ընդունել է [Տիրոջ] պատկերը [իր] դեմքին»:)

Խնդրեք ուսանողներին բարձրաձայն կարդալ Ալմա 5.10 , իսկ դասարանին՝ պարզաբանել երեք հարցերը, որոնք Ալման տվեց մարդկանց: (Կարող եք ուսանողներին առաջարկել նշել այս հարցերը:) Այս հարցերը կարդալը կօգնի ուսանողներին հաջորդ հատվածներում բացահայտել այն գործոնները, որոնք Ալմային և նրա ժողովրդին բերեցին սրտի զորեղ փոփոխություն:

Հանձնարարեք ուսանողներին բարձրաձայն կարդալ Ալմա 5.11–13, և հարցրեք դասարանին, թե ինչը բերեց Ալմային ու նրա հետևորդներին սրտի զորեղ փոփոխություն: (Նրանց հավատքը Աստծու խոսքին, ավելի պարզ՝ նրանց հավատքը և վստահությունը Աստծո նկատմամբ: Նաև կարող եք նշել Աստծո խոսքի ազդեցությունը Ալմա 5.5, 7-ում):

- Ի՞նչ կապ եք տեսնում Աստծո խոսքին հավատալու և սրտի փոփոխության միջև: (Օգնեք ուսանողներին հասկանալ հետևյալ սկզբունքը. **Երբ մենք հավատում ենք Աստծո խոսքին և կիրառում հավատք առ Հիսուս Քրիստոս, մենք զգում ենք սրտի զորեղ փոփոխություն:** Ընգծեք, որ Աստծո խոսքերը, որոնք հաղորդվել էին Աբինադիի և Ալմայի կողմից, կենտրոնացած են փրկագնման վրա, որը գալիս է Հիսուս Քրիստոսի միջոցով [տես՝ Մոսիա 16.4–9; 18.1–2]):

Բացատրեք, որ սրտի զորեղ փոփոխությունը նկարագրելու մեկ այլ ձև է վերստին ծնվել արտահայտությունը: Օգնեք ուսանողներին հասկանալ, որ «ծնվել Աստծուց» արտահայտությունը վերաբերվում է այն փոփոխությանը, որը մարդ ունենում է, երբ ընդունում է Հիսուս Քրիստոսին և սկսում նոր կյանք որպես Նրա աշակերտ: Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, որ սրտի զորեղ փոփոխություն ունենալը կամ վերստին ծնվելը շատ հաճախ աստիճանական գործընթաց է, կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը.

«Կարող եք հարցնել. «Ինչո՞ւ այդ փոփոխությունն ավելի արագ չի կատարվում ինձ հետ». . . Շատերիս համար փոփոխություններն ավելի շուտ աստիճանական են և տեղի են ունենում ժամանակի ընթացքում: Վերստին ծնվելը . . . ավելի շուտ ընթացք է, քան իրադարձություն: Եվ այդ գործընթացի մեջ մտնելը մահկանացու կյանքի առանցքային նպատակն է» («Վերստին ծնված», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2008, 78):

- Ե՞րբ եք զգացել փոփոխություն ձեր սրտում, ձգտելով ապրել Աստծո խոսքին համաձայն:
- Ինչպե՞ս կնկարագրեք զգացումները և արարքները, որոնք տեղի են ունեցել սրտի փոփոխության ժամանակ:
- Ինչպե՞ս է փոխվել ձեր սիրտը, երբ դուք այս տարի սեմինարիայի ժամանակ ուսումնասիրել եք Մորմոնի Գիրքը:

Մի քանի րոպե տրամադրեք ուսանողներին իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրի առնելու համար մեկ կամ երկու բան, որոնք նրանք կանեն, որպեսզի ավելի եռանդով ապրեն Աստծո խոսքին համաձայն:

## Ալմա 5.15–36

### *Ալման ուսուցանում է, որ երկնային արքայություն մտնելու համար անհրաժեշտ է ունենալ սրտի զորեղ փոփոխություն:*

Յուրաքանչյուր ուսանողի բաժանեք հետևյալ գծագիրը կամ գծեք այն գրատախտակին և խնդրեք ուսանողներին արտագրել:

| Հոգևոր սրտագիր | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ալմա 5.15 | | Ալմա 5.16: | Ալմա 5.19 | | Ալմա 5.26 | Ալմա 5.27: | | | Ալմա 5.28 |
| Միշտ | | | | | | | | | | |
| Համարյա միշտ | | | | | | | | | | |
| Սովորաբար | | | | | | | | | | |
| Երբեմն | | | | | | | | | | |
| Հազվադեպ, եթե երբևիցե | | | | | | | | | | |

Բացատրեք ուսանողներին, որ սրտագիրը դա մի գծագիր է, որ բժիշկները երբեմն օգտագործում են գնահատելու կամ վերահսկելու մեր ֆիզիկական սիրտը: Դա նրանց օգնում է հասկանալ խնդիրները կամ իրավիճակները, որոնք բուժում են պահանջում:

Պատմեք ուսանողներին, որ այն բանից հետո, երբ Ալման ուսուցանեց, որ Աստծո խոսքի շնորհիվ իր հայրը և ուրիշները զգացել են սրտի զորեղ փոփոխություն, նա ժողովրդին տվեց հարցեր, որոնք կօգնեին նրանց գնահատել իրենց սրտերի կարգավիճակը: Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Ալմա 5.14, ուշադրություն դարձնելով այն երեք հարցերին, որոնք Ալման տվեց ժողովրդին: (Կարող եք ուսանողներին առաջարկել, որ նրանք նշեն այդ հարցերը:)

Պարզաբանեք, որ Ալման տվեց ևս մի քանի հարց, որպեսզի օգներ իր ժողովրդին որոշել իրենց սրտերի վիճակը: Հանձնարարեք ուսանողներին մի քանի րոպե ուսումնասիրել և խորհել սուրբ գրությունների այն հատվածների վրա, որոնք գրված են հոգևոր սրտագրի վերևում: Խրախուսեք նրանց գծագրում նշել այն վանդակները, որոնք լավագույնս նկարագրում են, թե որքանով են իրենք գործում յուրաքանչյուր հատվածին վերաբերող հարցերին համաձայն: (Ուշադրություն դարձրեք, որ մի քանի հատվածներ պարունակում են մի քանի հարցեր:) Քանի որ այս վարժությունը անհատական բնույթ է կրում, ուսանողները չպետք է դասարանի հետ կիսվեն իրենց պատասխաններով:

Երբ ուսանողները ավարտեն իրենց սրտագրերը, հրավիրեք նրանց մտքում կարդալ Ալմա 5.29–31, ուշադրություն դարձնելով ևս մի քանի հարցերի, որոնք Ալման տվեց, որպեսզի օգներ իր ժողովրդին գնահատել իրենց սրտերը: (Առաջարկեք ուսանողներին փոքր ինչ վերաձևակերպել հարցադրումները, վերագրելով դրանք իրենց. Արդյո՞ք ես զերծ եմ նախանձությունից: Արդո՞ք ես ծաղրում եմ ուրիշներին: Արդյո՞ք ես հալածում եմ ուրիշներին:)

Մի քանի ուսանողների հանձնարարեք հերթով կարդալ Ալմա 5.17–18, 20–25: Դասարանին հանձնարարեք փնտրել այն պատճառները, թե ինչու մեր սրտերը պետք է փոխվեն դատաստանի օրվան նախապատրաստվելու համար: Ուսանողներին տվեք հետևյալ հարցերը, որպեսզի հասկանան, որ, **ունենալով սրտի փոփոխություն, մենք պատրաստվում ենք ստանալ տեղ երկնային արքայությունում.**

- Ի՞նչ բառեր և արտահայտություններ Ալման օգտագործեց, նկարագրելով այն վիճակը, որում դուք կուզենայիք լինել, երբ կանգնեիք Աստծո առջև, որպեսզի դատվեք: (Մինչ ուսանողները կպատասխանեն այս հարցին, նրանց ուշադրությունը հրավիրեք Ալմա 5.16, 19–ի վրա:)

***Ուսանողներին խորհելու ժամանակ տվեք***

Խորհելու համար ուսանողներին ժամանակ տրամադրելը ևս մեկ միջոց է նրանց օգնելու սովորել Հոգու միջոցով: Այդ ընթացքում խուսափեք լրացուցիչ հարցադրումներից, հրահանգներ տալուց կամ զրույցներ վարելուց, որոնք կշեղեն նրանց:

- Ինչպե՞ս կարող է այժմ կատարվող սրտի փոփոխությունը նախապատրաստել ձեզ ստանալ տեղ երկնային արքայությունում:

Գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունները. (Կարող եք գրել դրանք նախքան դասը սկսելը:)

*Ի՞նչ է Տերը հրավիրում մեզ անել:*

*Որո՞ն ք են այդ հրավերը ընդունելու կամ մերժելու հետևանքները:*

*Ի՞նչ են այս հատվածները ուսուցանում Փրկչի մասին:*

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 5.33–36, մինչ մյուսները փնտրում են գրատախտակի վրայի հարցերի պատասխանները: Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գտած պատասխաններով:

Ամփոփեք, տրամադրելով ուսանողներին մի քանի րոպե գրելու համար: Հանձնարարեք նրանց Ալմա 5.1–36–ից ընտրել հատված կամ արտահայտություն: Հրավիրեք նրանց գրել այն մասին, թե ինչ է այդ հատվածը կամ արտահայտությունը նշանակում իրենց համար և ինչպես նրանք կարող են անել այն, ինչ պետք է, քանի դեռ ձգտում են ունենալ սրտի փոփոխություն Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Վկայեք, որ եթե մենք շարունակաբար ունենանք սրտի փոփոխություն և առաջ բերենք բարի գործեր, մենք պատրաստ կլինենք մտնելու Աստծո արքայություն:

ԴԱՍ 72

# Ալմա 5.37–62

## Նախաբան

Ալման շարունակում էր քարոզել Զարահեմլայում, նա զգուշացնում էր մարդկանց, որ իր խոսքերին հետևելը կամ մերժելը կարող են բերել ծանր հետևանքներ: Ալման նաև Հիսուս Քրիստոսին համեմատում է բարի հովվի հետ, ով կանչում է նրանց և ցանկանում նրանց ետ բերել իր փարախը: Նա կոչ է անում մարդկանց ապաշխարել և հեռու մնալ աշխարհի անմաքուր բաներից, որպեսզի նրանք ժառանգեն երկնային արքայությունը:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 5.37–42, 53–62

*Ալման զգուշացնում է ամբարիշտներին և կոչ է անում նրանց ականջ դնել բարի հովվի ձայնին:*

Ցուցադրեք Հիսուսը հոգ է տանում կորած ոչխարների համար նկարը (*Gospel Art Book* [2009], no. 64):

- Ինչպե՞ս է Փրկիչը հանդիսանում բարի հովիվ:

Երբ մի քանի ուսանողներ պատասխանեն, կարդացեք Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ հայտարարությունը.

«Հիսուսի ժամանակ պաղեստինյան հովիվը հայտնի էր իր ոչխարների պաշտպանությամբ: Ի տարբերություն մեր օրերի հովիվների, այդ ժամանակ հովիվը միշտ քայլում էր իր հոտի առջևից: Նա առաջնորդում էր նրանց: Հովիվը ճանաչում էր յուրաքանչյուր ոչխարին և, սովորաբար, ուներ անուններ նրանց համար: Ոչխարները ճանաչում էին նրա ձայնը ու վստահում էին նրան և չէին հետևի անծանոթին: Այնպես որ, երբ կանչեր, ոչխարները կմոտենային իրեն (տես՝ Հովհաննեսի 10.14, 16): . . .

Հիսուսն իր օրերում օգտվում է այս օրինակից ու հայտարարում, որ Ինքն էր Բարի Հովիվը՝ Ճշմարիտ Հովիվը: Իր քույրերի ու եղբայրների հանդեպ Իր ունեցած սիրո շնորհիվ Նա պատրաստակամորեն և կամավոր տվեց Իր կյանքը նրանց համար» (“A Call to the Priesthood: ‘Feed My Sheep,’” *Ensign,* մայիս 1983, 43; տես նաև John R. Lasater, “Shepherds of Israel,” *Ensign,* մայիս 1988, 74–75):

Հիշեցրեք ուսանողներին Ալմա 5 -ի բովանդակությունը, բացատրելով, որ Ալման գնաց քարոզելու Զարահեմլայի ժողովրդին, ովքեր կարծես «հովիվ չունեցող ոչխարներ» էին (Ալմա 5.37): Խնդրեք ուսանողներին հիշել դժվարությունները, որոնց Զարահեմլայի ժողովուրդը հանդիպել էր, և թե ինչ Ալման խրախուսեց նրանց անել: Նախորդ դասերից կարող եք համառոտ վերանայել մի քանի հիմնական հատվածներ, ինչպիսին է օրինակ՝ Ալմա 5.14–20, որպեսզի օգնեք ուսանողներին հիշել պատմությունը: Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ Զարահեմլայի ժողովուրդը այն սոսկալի իրավիճակի մեջ էր իրենց ամբարշտության պատճառով (տես՝ Ալմա 7.3):

Երկու կամ երեք ուսանողի հրավիրեք հերթով կարդալ Ալմա 5.37–42: Դասարանին հանձնարարեք փնտրել եղանակներ, որոնցով անձը կարող է ասել, թե արդյո՞ք ինքը Փրկչի ոչխարներից մեկն է: Երբ ուսանողները կկիսվեն իրենց սովորածով, տվեք հետևյալ հարցերը.

- Մարդիկ ինչպե՞ս կարող են ոչխարների նման հովվի կարիք ունենալ:
- Ըստ Ալմա 5.37–38-ի, ինչպե՞ս է բարի հովիվը ցույց տալիս Իր սերը և մտահոգությունը ոչխարների նկատմամբ: (Նա շարունակում է կանչել նրանց Իր անունով:)
- Ըստ Ալմա 5.41–ի, ինչպե՞ս մենք կարող ենք ասել, որ ականջ ենք դնում բարի հովվի ձայնին:

- Որո՞նք են այն մի քանի գործերը, որոնք ցույց են տալիս, որ անձը հետևում է բարի հովվին։

Ուսանողների պատասխաններից հետո խնդրեք մի ուսանողի կարդալ Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ հայտարարությունը, որը նկարագրում է տղամարդկանց և կանանց, ովքեր հանձն են առել հետևել Հիսուս Քրիստոսին։ (Այս նյութից կարող եք մեկական պատճեն նախապատրաստել յուրաքանչյուր ուսանողի համար։)

«Երբ դուք ընտրում եք հետևել Քրիստոսին, դուք ընտրում եք փոխվելը։ . . .

Տղամարդիկ [և կանայք], ովքեր փոխվել են Քրիստոսի համար, կառաջնորդվեն Քրիստոսի կողմից։ . . .

Նրանց կամքը կուլ է գնացած Նրա կամքին (տես՝ Հովհաննես 5.30)։

Նրանք միշտ Տիրոջը հաճելի բաներ են անում (տես Հովհաննես 8.29)։

Նրանք ոչ միայն կմեռնեն Տիրոջ համար, բայց ամենակարևորը՝ նրանք ցանկանում են ապրել Նրա համար։

Նրանց տները, պատերի նկարները, դարակների գրքերը, երաժշտությունը, նրանց խոսքերը և գործերը կապացուցեն նրանց քրիստոնյա լինելը։

Նրանք կանգնում են որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում (տես Մոսիա 18.9)։

Նրանք Քրիստոսին պահում են իրենց մտքում, նայելով Նրան իրենց բոլոր մտորումներում (տես ՎևՈւ 6.36)։

Նրանք Քրիստոսին պահում են իրենց սրտերում, դնելով իրենց գորովանքը Նրա վրա հավիտյան (տես Ալմա 37.36)։

Գրեթե ամեն շաբաթ նրանք ընդունում են հաղորդությունը և վկայում իրենց Երկնային Հորը, որ հոժար են իրենց վրա վերցնել անունը Նրա Որդու և միշտ հիշել Նրան և պահել Նրա պատվիրանները (տես՝ Մորոնի 4.3)» (“Born of God,” *Ensign,* նոյ. 1985, 5, 6–7)։

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 5.53–56, փնտրելով վերաբերմունք և գործողություններ, որոնք դժվարացնում են Փրկչի ձայնին ականջ դնելը։ Մի քանի րոպե անց հանձնարարեք մի քանի ուսանողների գրել գրատախտակին իրենց պատասխանները։ Թող իրենց պատասխանները լրացնեն այնպես, որ հնարավորինս ծածկեն գրատախտակը։ Հանձնարարեք ավելացնել ցանկացած այլ վերաբերմունք կամ գործողություն, որը տեսել են իրենց շրջապատում, որը դժվարեցնում է ականջ դնելը Փրկչի ձայնին։ (Ուսանողների պատասխանները կարող են ներառել՝ Աստծո ուսմունքները մի կողմ դնելը [անտեսելը], հպարտությունը, ունայնությունը, մեր սրտերը հարստությունների ու աշխարհիկ բաների վրա դնելը, մտածելը, որ մենք ավելի լավն ենք, քան մյուսները, արդարներին հալածելը կամ մեջքը դարձնելը դեպի աղքատը ու կարիքավորը։ Ուսանողների ուշադրությունը հրավիրեք *շարունակել* բառի վրա, որն Ալման անընդհատ կրկնում է, ընդգծելով, որ Զարահեմլայի ժողովուրդը շարունակում էր այս մեղավոր վարքագիծը և մոտեցումները։)

Գրելու համար գրատախտակի մեջտեղում տեղ բացեք, ջնջելով ուսանողների որոշ պատասխաններ։ Այդ տեղում գրեք՝ *Հետևեք բարի հովվի ձայնին։*

Մի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ Ալմա 5.57։ Դասարանին հանձնարարեք բացահայտել արտահայտությունները, որոնք ուսուցանում են, թե ինչպես մենք պետք է արձագանքենք չարի ազդեցություններին։ («Դո՛ւրս եկեք ամբարիշտների միջից» և «զա՛տ եղեք», և «մի՛ դիպչեք նրանց անմաքուր բաներին»։) Կարող եք առաջարկել ուսանողներին ընդգծել այդ արտահայտությունները իրենց սուրբ գրություններում։ Նշեք, որ այդ արտահայտություններն ընդծում են մեզ հոգեպես չվնասելու կամ չվարակելու անհրաժեշտությունը։ Օգնելու համար ուսանողներին քննարկել, թե ինչպես նրանք կարող են հեռու մնալ հակառակություններից, խուսափել չարի ազդեցությունից և հետևել բարի հովվի ձայնին, տվեք հետևյալ հարցերին նման հարցեր.

- Ի՞նչ կարող են անել Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու երիտասարդները, որպեսզի լինեն ամբարիշտներից զատ։ (Ուսանողների պատասխանները ամրապնդելու համար կիսվեք դրական օրինակով, որը տեսել եք ձեր դասարանի ուսանողներից մեկի մեջ։ Հրավիրեք ուսանողներին կիսվել բարի օրինակներով, որոնք իրենք տեսել են միմյանց մեջ։)

- Ըստ Ալմա 5.56–57–ի, որո՞նք են ամբարշտության մեջ շարունակելու հետևանքները: (**Եթե մենք շարունակենք մնալ ամբարշտության մեջ, մենք չենք կարող լսել բարի հովվի ձայնը և չենք կարող համարվել արդարների թվում:**)

Եթե ժամանակ բավականացնում է, ուսանողներին տրամադրեք մի քանի րոպե, որպեսզի խորհեն հետյալ հարցի շուրջ: Նրանք կարող են իրենց պատասխանը գրել իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:

- Ի՞նչ է Տերը ուզում, որ դուք անեք, որպեսզի ավելի լավ ընդունեք Նրա մոտ գալու Իր հրավերքը: (Կարող եք նրանց առաջարկել, որ պատասխանները լինեն այն, ինչ նրանք կարող են ավելի լավ անել, կամ ինչ-որ բան, որ նրանք պետք է դադարեցնեն անել:)

Ուսանողներին հանձնարարեք ցածրաձայն ընթերցել Ալմա 5.58–62-ը, փնտրելով այն օրհնությունները, որոնք խոստացված են նրանց, ովքեր կհավաքվեն Տիրոջ և Նրա ժողովրդի շուրջը: (Առաջարկեք ուսանողներին նշել այդ օրհնությունները իրենց սուրբ գրություններում:)

- Ինչպե՞ս կամփոփեք Տիրոջ օրհնությունները նրանց համար, ովքեր ականջ են դնում Նրա ձայնին: (Թեև ուսանողները կարող են առաջարկել այլ սկզբունքներ, համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **եթե մենք հետևենք Տիրոջ [Բարի Հովվի] ձայնին, մենք կհավաքվենք Նրա արքայությունում:** Կարող եք այս սկզբունքը գրել գրատախտակին:)
- Ի՞նչ սովորույթներ եք զարգացրել, որոնք օգնել են ձեզ ականջ դնել Բարի Հովվի ձայնին:
- Ինչպե՞ս են այս սովորույթները օգնել ձեզ անտեսել չարի որոշ ազդեցություններ, որոնք թվարկված են գրատախտակին:

Վկայեք, որ եթե մենք ականջ դնենք Փրկչի խոսքերին, մենք կլինենք այն արդարների թվում, ովքեր կհավաքվեն Տիրոջ արքայությունում:

## Ալմա 5.43–52

### *Ալման կատարում է ապաշխարություն քարոզելու իր պարտականությունը*

Ուսանողներին հանձնարարեք թվել հինգ ֆիզիկական զգայարաններ (տեսողություն, լսողություն, շոշափում, հոտառություն ու համ): Բերեք մի քանի առարկաներ, որոնք կօգնեն ուսանողներին օգտագործել այս զգայարանները:

- Ի՞նչ եք սովորել ձեր այս հինգ զգայարաններից:
- Կա արդյո՞ք որևէ եղանակ սովորելու ինչ-որ բան առանց օգտագործելու ձեր հինգ զգայարանները:

Հանձնարարեք մի քանի ուսանողների հերթով կարդալ Ալմա 5.44–48: Դասարանին հարցրեք, թե ըստ Ալմայի, ի՞նչ նա գիտեր և թե որտեղից նա գիտեր դա:

- Ըստ Ալմա 5.48–ի, ի՞նչ գիտեր Ալման:
- Ըստ Ալմայի, ո՞րն էր նրա վկայության աղբյուրը:
- Ի՞նչ էր Ալման արել, որպեսզի ստանար այդ վկայությունը Սուրբ Հոգուց:
- Ինչպե՞ս կարողենք աղոթքը և ծոմապահությունը օգնել մեզ ամրապնդել ավետարանի մասին մեր վկայությունը:
- Ե՞րբ եք զգացել, որ ձեր վկայությունը ամրապնդվել է աղոթքի և ծոմի միջոցով:

Վկայեք, որ **մենք Սուրբ Հոգու միջոցով կարող ենք իմանալ, որ Հիսուս Քրիստոսը մարդկության Քավիչն է:** Ընգծելու համար անհրաժեշտությունը փնտրելու և ստանալու անձնական վկայություն այն մասին, որ Հիսուս Քրիստոսը մարդկության Քավիչն է, կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Երեց Մ. Ռասսել Բալլարդի հետևյալ հայտարարությունը.

«Ավետարանի ճշմարտությունների՝ մասնավորապես Տեր Հիսուս Քրիստոսի աստվածային կյանքի և առաքելության մասին անձնական վկայությունը շատ կարևոր է մեր հավերժական կյանքի համար:. . . Այլ կերպ ասած, հավերժական կյանքը հիմնվում է մեր Երկնային Հոր և Նրա Սուրբ Որդու մասին մեր անհատական, անձնական գիտելիքի վրա: Նրանց պարզապես ճանաչելը բավական չէ: Մենք պետք է ունենանք անձնական հոգևոր փորձառություն, որպեսզի ամրապնդենք մեզ: Այդ

ամենը գալիս է նրանց ինտենսիվ, նպատակասլաց ձևով փնտրելու արդյունքում, ինչպես քաղցած մարդն է ուտելիք փնտրում» (“Feasting at the Lord’s Table,” *Ensign,* մայիս 1996, 80)։

Ուսանողներին ժամանակ տրամադրեք հետևյալ հարցերի մասին իրենց պատասխանները գրելու համար։ Նաև խրախուսեք նրանց գրի առնել, թե ինչ իրենք կանեն, որպեսզի ձեռք բերեն կամ ամրապնդեն Հիսուս Քրիստոսի հանդեպ իրենց վկայությունները։ Խրախուսեք նրանց իրականացնել իրենց նպատակները, նույնիսկ, եթե դա պահանջում է «շատ օրեր» (Ալմա 5.46)։

- Ե՞րբ եք զգացել, որ Սուրբ Հոգին հուշել է ձեզ, որ Հիսուս Քրիստոսը աշխարհի Քավիչն է։

Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Ալմա 5.49–52, ուշադրություն դարձնելով, թե ինչ ասաց Ալման ժողովրդին, որ նրանք պետք է անեին, որպեսզի ժառանգեին երկնային արքայությունը։

- Ինչո՞ւ է ապաշխարությունը կարևոր Աստծո արքայություն մտնելու համար։

Որպեսզի օգնեք ուսանողներին կիրառել Աստծո արքայություն մտնելու մասին Ալմայի ուսմունքները, ուսանողներին հանձնարարեք կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Երեց Դալլին Հ. Օուքսի հետևյալ հայտարարությունը.

«Իսկ ի՞նչ կլիներ, եթե Նրա գալստյան օրը լիներ վաղը։ Եթե մենք իմանայինք, որ մենք վաղը կհանդիպենք Տիրոջը՝ —մեր վաղաժամ մահվան կամ Նրա անսպասելի հայտնվելու պատճառով, —ի՞նչ մենք կանեինք այսօր։ Ինչպիսի՞ խոստովանություններ մենք կանեինք։ Ի՞նչ արարքներ մենք կդադարեցնեինք անել։ Ո՞ւմ մենք կներեինք։ Ինչպիսի՞ վկայություններ մենք կբերեինք։

Եթե այդ դեպքում մենք կանեինք այդ բաները, ապա ինչո՞ւ ոչ հիմա։ Ինչո՞ւ չունենալ խաղաղություն, քանի դեռ այն հասանելի է» (“Preparation for the Second Coming,” *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2004, 9)։

Ամփոփեք, ուսանողներին ժամանակ տալով մտածելու համար, թե ինչն իրենք կփոխեին իրենց կյանքում, որպեսզի պատրաստվեին հանդիպելու Փրկչին և մտնելու Նրա արքայությունը։ Հանձնարարեք նրանց գրի առնել իրենց մտքերը և զգացմունքները, որպեսզի հետագայում կրկին անգամ կարողանային կարդալ իրենց մտքերը և հիշել, որ պետք է հետևեն այն հուշումներին, որոնք ստացել են։

***Խրախուսեք կիրառել***

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «[Ավետարանի ուսուցման] նպատակը մարդկանց ոգեշնչելն է, որ զգան, իսկ հետո ապրեն ավետարանի սկզբունքներով» (in Conference Report, Oct. 1970, 107)։ Երբ ավետարանի սկզբունքներն ուսուցանեք ուսանողներին, հրավիրեք նրանց հետևել Սուրբ Հոգու հուշումներին, ուղիներ ընտրելով բարելավվելու իրենց վարքագիծը և ամրապնդելու Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը։

ԴԱՍ 73

# Ալմա 6–7

## Նախաբան

Զարահեմլայի Եկեղեցին կարգավորելուց հետո Ալման գնաց Գեդեոն քաղաքը: Նա տեսավ, որ այնտեղի ժողովուրդն ավելի հավատքով էր, քան Զարահեմլայի ժողովուրդը: Հետևաբար, Գեդեոնում նրա ուղերձը տարբեր էր Զարահեմլայի ուղերձից: Նա հորդորեց ժողովրդին մշտապես ապավինել Տիրոջը և ձգտել կիրառել Նրա Քավությունը իրենց կյանքում: Նա վկայեց, որ Փրկիչն իր վրա կվերցնի մահը և մեր մեղքերը, ինչպես նաև մեր ցավերը, չարչարանքները, հիվանդությունները, թուլությունները, որպեսզի իմանա, թե ինչպես օգնի մեզ:

***Ուսուցանեք սուրբ գրություններից***

Պատրաստվելու իրենց ջանքերում ավետարանի ուսուցիչներն երբեմն հիմնվում են սուրբ գրություններից դուրս այլ աղբյուրների վրա: Բայց որոշ լրացուցիչ նյութեր, ինչպես օրինակ այս ձեռնարկը, կարող է օգտակար լինել ուսուցանումն անմիջապես Մորմոնի Գրքի տեքստերի վրա կենտրոնացնելու համար: Դա թույլ կտա Սուրբ Հոգուն վկայել ձեր ուսանողներին սուրբ գրությունների ճշմարտացիության և դրանք ուսումնասիրելու արժեքի մասին:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 6

*Ալման կարգի է բերում Զարահեմլայի եկեղեցին և գնում քարոզելու Գեդեոնում*

Նախքան այս դասը սկսելը խնդրեք մեկ ուսանողի դասարանի հետ համառոտ կիսվել այն մի քանի ուղիներով, որոնք նրան օգնել են եկեղեցի հաճախելու նրա ջանքերում: Դասը սկսեք, խնդրելով այդ ուսանողին դասարանի առջև կանգնել և կիսվել իր պատրաստած մտքերով: Դուք նույնպես կարող եք պատմել, թե որքան եք օրհնվել Եկեղեցի հաճախելու արդյունքում:

Ներկայացրեք Ալմա 6 –ը, բացատրելով, որ այս գլուխն ուսուցանում է, թե ինչպես են Ալման և քահանայություն այլ կրողներ ամրապնդում Զարահեմլայի Եկեղեցին:

Հանձնարարեք մեկ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 6.4–6: Դասարանին հանձնարարեք հետևել, ուշադրություն դարձնելով, թե ինչ արեցին Զարահեմլայի Եկեղեցու անդամները նրանց համար, ովքեր չէին ճանաչում Աստծուն: Ուսանողներին հրավիրեք կիսվել իրենց սովորածով:

Հետևյալ ճշմարտությունը գրեք գրատախտակին. ***Եկեղեցին հիմնադրված է բոլոր մարդկանց բարօրության համար:*** Որպեսզի ուսանողները մտածեն, թե ինչպես կարող է այս ճշմարտությունը ազդել իրենց վրա, տվեք հետևյալ հարցը.

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարող է Եկեղեցին մեր օրերում օրհնել այն մարդկանց կյանքը, ովքեր չգիտեն Աստծուն:

Հորդորեք ուսանողներին մտածել ինչ-որ մեկի մասին, ով կարիք ունի ավելի շատ իմանալու Աստծո մասին: Այդ մարդը կարող է լինել Եկեղեցու անդամ կամ այլ հավատքի ներկայացուցիչ: Վկայեք այն օրհնությունների մասին, որոնք մենք ստանում ենք Եկեղեցու անդամ լինելու դիմաց և հորդորեք ուսանողներին հրավիրել ուրիշներին կիսվել այդ օրհնություններով:

### Ալմա 7.1–13

*Ալման մարգարեանում է Հիսուս Քրիստոսի ծննդի մասին*

Դասարանը բաժանեք զույգերի: Յուրաքանչյուր զույգի հանձնարարեք քննարկել իրենց պատասխանները հետևյալ հարցերի վերաբերյալ.

- Որո՞նք են այն ապագա իրադարձությունները, որոնց դուք սպասում եք:

Այն բանից հետո, երբ այս զույգերը կքննարկեն այս հարցերի վերաբերյալ իրենց պատասխանները, խնդրեք մի քանի ուսանողների ամբողջ դասարանի հետ կիսվել իրենց պատասխաններով: Այնուհետև բացատրեք, որ Ալման Զարահեմլայի Եկեղեցին կարգավորելուց հետո գնաց Գեդեոն քաղաքը: Նա այնտեղի մարդկանց պատմեց ապագա բաների մասին, որոնցից մեկն «ավելի մեծ կարևորության է, քան մնացած բոլորը» (Ալմա 7.7): Նա ուսուցանեց սկզբունքներ, որոնք կօգնեին ժողովրդին նախապատրաստվել այն օրհնություններին, որոնք կգային այս ապագա իրադարձություններից:

Հանձնարարեք մեկ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 7.3–6: Դասարանին հանձնարարեք ուշադրություն դարձնել Գեդեոնի ժողովրդի վերաբերյալ Ալմայի ունեցած հույսերին: Այնուհետև մեկ այլ ուսանողի խնդրեք Բարձրաձայն կարդալ Ալմա 7.18–19: Խնդրեք ուսանողներին նկարագրել, թե ինչ ոգեշնչումներ ունեցավ Ալման Գեդեոնի ժողովրդի վերաբերյալ:

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 7.7, 9–10, ուշադրություն դարձնելով այն իրադարձությանը, որն Ալման կարևոր էր համարում, որ ժողովուրդն իմանար:

- Ըստ Ալմայի, ո՞րն էր այն «մի բանը, որն ավելի մեծ կարևորության [էր]», քան մնացած բոլորը, որ պետք է տեղի ունենային: Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Փրկչի ծնունդն ամենակարևոր իրադարձությունը բոլոր ժամանակների համար:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր Ալման ապաշխարություն աղաղակում այն մարդկանց, ովքեր արդեն հավատում էին և ունեին ուժեղ հավատք:

Բացատրեք, որ այնուհետև Ալման ուսուցանեց, թե ինչու էր Հիսուս Քրիստոսի ծնունդն ամենակարևոր իրադարձությունը ողջ մարդկության պատմության մեջ: Խնդրոք մի քանի ուսանողների հերթով կարդալ Ալմա 7.11–13: Մնացածները թող հետևեն և բացահայտեն, թե Փրկիչն ինչ վերցրեց իր վրա: (Կարող եք բացատրել, որ *սատարել* նշանակում է թեթևություն պարգևել կամ օգնել ինչ-որ մեկին:)

**Ալմա 7.11–13** –ը սուրբ գրությունների սերտման հատված է: Հղում արեք դասի վերջում եղած դասավանդման առաջարկությանը, որպեսզի օգնեք ուսանողներին վարժ տիրապետել այս նյութը:

Նշեք, որ Ալմա 7.11–13 –ը սուրբ գրությունների սերտման հատված է: Կարող եք ուսանողներին առաջարկել տարբերակիչ ձևով ընդգծել այդ հատվածը, որպեսզի նրանք կարողանան հեշտությամբ գտնել այն:

Ուսանողների պատասխանները վերնագրերի տեսքով թվարկեք գրատախտակի վերևում: Պատասխանները կարող են ներառել՝ *ցավեր, չարչարանքներ, փորձություններ, հիվանդություններ, մահ, թուլություններ (թուլություններ կամ անկարողություն)* և *մեղքեր:*

Կարող եք ուսանողներին առաջարկել ընդգծել «ամեն տեսակի» բառակապակցությունը Ալմա 7.11-ի մեջ: Խնդրեք նրանց թվարկել օրինակներ գրատախտակին գրված յուրաքանչյուր դեպքի համար: Ուսանողների բերված օրինակները գրեք համապատասխան վերնագրերի տակ: (Օրինակ՝ *քաղցկեղը* կարող է գրվել *հիվանդությունների* տակ, իսկ *ֆիզիկական անկարողությունը՝ թուլությունների տակ:*)

Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ Յոթանասունական Երեց Բրյուս Ս. Հեյֆենի հետևյալ հայտարարությունը.

«Քավությունը միայն մեղավորների համար չէ» (“Beauty for Ashes: The Atonement of Jesus Christ,” *Ensign,* ապրիլ 1990, 7): Կարող եք այս հայտարարությունը գրել գրատախտակին և առաջարկել ուսանողներին, որ այն գրեն իրենց սուրբ գրություններում՝ Ալմա 7.11–13–ի հատվածի կողքին:

- Հիմնվելով Ալմա 7.11–13-ում ձեր կարդացածի վրա, հայտնեք ձեր կարծիքն այն մասին, թե ի՞նչ նկատի ուներ Երեց Հեյֆենն, ասելով. «Քավությունը միայն մեղավորների համար չէ»:

Հետևյալ ճշմարտությունը գրեք գրատախտակին. ***Հիսուս Քրիստոսը տանջվեց, որպեսզի փրկի մեզ մեղքից ու մահից և օգնի մեզ մահկանացու կյանքի դժվարությունների ժամանակ:***

Որպեսզի օգնեք ուսանողներին հետագայում ավելի շատ ապավինել Փրկչի Քավությանը, կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ հայտարարությունը.

«Արդյո՞ք դուք պայքարում եք կախվածության դևի՝ ծխախոտի, թմրամոլության, խաղամոլության կամ ժամանակակից վնասակար պոռնոգրաֆիայի ժանտախտի դեմ: . . . Արդյո՞ք ձեզ շփոթեցնում է գենդերային նույնականացումները կամ ուզո՞ւմ եք ինքնահաստատվել: Արդյո՞ք դուք— կամ ձեր սիրած էակը— հիվանդության, մահի կամ դեպրեսիայի զոհ եք դարձել: Ինչպիսին էլ որ լինեն այս խնդիրները լուծելու հետագա քայլերը, *առաջին* հերթին եկեք դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը: Վստահեք երկնային խոստումներին: . . .

Աստծո բարեգութ բնավորությանը վստահելը Քրիստոսի ուսուցանած ավետարանի առանցքում է գտնվում: Ես վկայում եմ, որ Փրկչի Քավությունը ոչ միայն ազատում է մեզ մեր մեղքերի բեռից, այլ նաև՝ մեր հիասթափությունների և տխրությունների,

մեր տառապանքների և հուսահատությունների բեռից: [Տես Ալմա 7.11–12:] Ի սկզբանե, ապավինումը այդպիսի օգնությանը միտված էր մեզ տալու և՛ պատճառ, և՛ ուղի, որ կատարելագործվենք, ցած դնենք մեր մեղքերը և մեզ վրա վերցնենք մեր փրկությունը» (“Broken Things to Mend,” *Ensign* կամ *Liahona,* մայիս 2006, 70–71):

- Ինչպե՞ս կարող է Ալմա 7.11–13 –ի ըմբռնումը օգնել մեզ դժվարությունների ժամանակ:

Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով օգնություն և ուժ ստանալու մի քանի եղանակներ ցուցադրելու համար, կարդացեք հետևյալ իրավիճակները: Ամեն մեկը կարդալուց հետո, խնդրեք ուսանողներին բացատրել, թե ինչպես Հիսուս Քրիստոսը Իր Քավության միջոցով կարող է օգնել մարդուն նման դժվարության մեջ:

1. Ավտովթարի արդյունքում երիտասարդ կնոջ ոտքերը կաթվածահար են եղել:
2. Երիտասարդ տղամարդն ամաչում է իր վատ արարքներից: Նա իրեն ճնշված ու անարժան է համարում:
3. Երիտասարդ տղայի հայրը վերջերս մահացել է, և նա իր երիտասարդը մոր հետ տեղափոխվել է նոր քաղաք: Նա տխուր ու միայնակ է զգում իրեն և չի պատկերացնում, թե ինչպես կրկին ամեն բան լավ կլինի:

Կիսվեք ձեր վկայությամբ Քավության զորության և դրա լայնածավալ կիրառության մասին: Այնուհետև ուսանողներին ժամանակ տվեք իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրել հետևյալ հարցերի պատասխանները: (Այս հարցերը կարող եք գրել գրատախտակին, հարցաթերթիկներ պատրաստել կամ ուղղակի թելադրել, որպեսզի ուսանողները հասցնեն գրի առնել դրանք:)

- Ե՞րբ է Քավությունն օգնել ձեզ կամ ձեր որևէ ծանոթին Ալմա 7.11–13–ում նշված եղանակներից որևիցե մեկով:
- Ի՞նչ կանեք դուք դժվարությունների ժամանակ, որպեսզի ապավինեք Քավությանը:

Մի քանի ուսանողների հրավիրեք կիսվել իրենց գրածով: (Հիշեցրեք նրանց, որ նրանք կարիք չունեն կիսվելու ինչ-որ բանով, որը չափազանց անձնական է կամ գաղտնի:)

## Ալմա 7.14–27

### *Ալման հորդորում է ժողովրդին շարունակել մնալ Աստծո արքայություն տանող շավիղի վրա*

Հիշեցնելու համար ուսանողներին, թե ինչպես Ալման նկարագրեց Գեդեոն քաղաքի ժողովրդի հոգևոր վիճակը, հրավիրեք նրանց բարձրաձայն կարդալ Ալմա 7.19: Ընդգծեք, որ ժողովուրդն «այն շավիղում [էր], որը տանում է դեպի Աստծո արքայություն»: Բացատրեք, որ Ալման ցանկանում էր, որ նրանք մնային այդ շավիղի վրա:

Որպեսզի օգնեք ուսանողներին տեսնել, որ **ավետարանի սկզբունքներով ապրելով, մենք հետևում ենք Աստծո արքայություն տանող շավիղին,** գծեք շավիղը գրատախտակին: Շավիղի սկզբում գրեք *մահկանացու կյանք:* Շավիղի վերջում գրեք *Աստծո արքայություն:* Դասարանը բաժանեք երկու խմբի: Մի խմբին հանձնարարեք ուսումնասիրել Ալմա 7.14–16, իսկ մյուսին՝ Ալմա 7.22–24: Խմբերի ուշադրությունը հրավիրեք նրա վրա, թե ինչ մենք պետք է *անենք* և ինչպիսին մենք պետք է *լինենք*, որպեսզի հետևենք Աստծո արքայություն տանող շավիղին:

Երբ ուսանողները ընթերցեն, նրանցից մի քանիսին հրավիրեք դուրս գալ գրատախտակի մոտ: Խնդրեք նրանց այդ շավիղի երկայնքով գրել իրենց կարդացած այն գործողություններն ու հատկանիշները, որոնք տանում են դեպի Աստծո արքայություն: Կարող եք նրանց հարցնել, թե որոնք են այն մի քանի գործողությունները կամ հատկանիշները, որոնք կարևոր են նրանց համար: Կարող եք նաև խնդրել, որ նրանք մտածեն, թե ինչպես կարող են հետևել այս շավիղին: Վկայեք, որ եթե մենք արդար ենք ապրում, ապա «այն շավիղում եք, որը տանում է դեպի Աստծո արքայություն» (Ալմա 7.19):

## Սուրբ գրությունների սերտում— Ալմա 7.11–13

Քանի որ Ալմա 7.11–13 -ը սուրբ գրությունների սերտման երկար հատված է, ուսանողներին դժվար կլինի այն հիշել: Այնուհանդերձ Ալմայի խոսքը պարունակում է որոշակի բառեր, որոնք կօգնեն ուսանողներին իրենց ամբողջ կյանքում հիշել Քավության զորությունը ու նրա կիրառության շրջանակը: Որպեսզի նրանց օգնեք հիշել այդ հիմնական բառերը, գրեք Ալմա 7.11–13 –ի տեքստը գրատախտակին, փոխարինելով դատարկ տարածություններ այն հիմնարար բառերով, որոնց հանդիպում եք ընթերցելիս. *ցավեր, չարչարանքներ, փորձություններ, հիվանդություններ, մահ, թուլություններ, մեղք, օրինազանցություններ:* (Օրինակ՝ Ալմա 7.11-ի համար ձեր գրածը կլինի սրա նման. *«Եվ նա պիտի գնա առաջ՝ տանելով . . . և . . ., և . . . ամեն տեսակի»:*)

Երբ դասարանի հետ միասին կարդաք Ալմա 7.11–13, թուլ տվեք ուսանողներին լրացնել բաց թողնված բառերը: Մի քանի անգամ դա անելուց հետո, հարցրեք ուսանողներին, թե արդյոք նրանք կարող են գրել առանձին թղթի վրա այն բառերը, որոնք ցույց են տալիս, թե Տերը ինչ վերցրեց Իր վրա նրանց համար: Հորդորեք ուսանողներին ընդմիշտ հիշել, թե Հիսուս Քրիստոսն ինչ արեց նրանց համար, որի շնորհիվ դժվարությունների ժամանակ նրանք կարող են ունենալ մեծ հավատք «իր ազատման զորության» հանդեպ:

*Նշում.* Հաջորդ դասի սկզբում մի քանի րոպե տրամադրեք համոզվելու համար, որ ուսանողները հիշում են այդ հիմնական բառերը Փրկչի անսահման Քավության մասին:

ԴԱՍ 74

# Ալմա 8

## Նախաբան

Այն բանից հետո, երբ շատերն ընդունեցին Ալմայի ուղերձը Զարահեմլայում, Գեդեոնում և Մելեքում, Ամմոնիայի ժողովուրդը մերժեց Ալմային և վտարեց նրան իրենց քաղաքից: Երբ Ալման սգում էր ժողովրդի ամբարշտության պատճառով, այն նույն հրեշտակը, որ հայտնվել էր իրեն և Մոսիայի որդիներին, կրկին հայտնվեց իրեն: Հրեշտակը պատվիրեց Ալմային վերադառնալ Ամմոնիա: Ալման հնազանդորեն ենթարկվեց Տիրոջ պատվիրանին և Տերը Ամուղեկին կանչեց օգնելու նրան իր ծառայության մեջ: Ալման ու Ամուղեկը հավատարմորեն ուսուցանեցին Ամմոնիայի ժողովրդին, լցված լինելով Սուրբ Հոգով և Տիրոջ գործը կատարելու զորությամբ:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 8.1–6

*Շատերը Մելեքում ընդունում են Ալմայի ուղերձը և մկրտվում*

Խնդրեք ուսանողներին բարձրացնել ձեռքերը, եթե նրանց բարեկամը կամ ընկերը Եկեղեցու համար ծառայել է միսիայում: Երկու կամ երեք ուսանողի հրավիրեք կիսվելու փորձով, որն իրենց ընկերը կամ բարեկամն ունեցել է, և որը ցույց է տալիս, թե ինչպես է զգում իրեն միսիոները, երբ նրա պատգամը ընդունվում է: (Կարող եք նաև հորդորել ուսանողներին պատմել այն պահերի մասին, երբ ինչ-որ մեկը ընկալունակ է եղել ավետարանը կիսվելու իրենց ջանքերին: Կարող եք նաև կիսվել ձեր անձնական փորձով:)

Ուսանողներին հանձնարարեք ցածրաձայն կարդալ Ալմա 8.1–5: Թույլ տվեք նրանց գտնել այն երեք քաղաքները, որտեղ Ալման քարոզել էր ավետարանը: Այս երեք քաղաքների անունները գրեք գրատախտակին: (*Զարահեմլա, Գեդեոն, և Մելեք:*)

- Որո՞նք էին այս երեք քաղաքներում Ալմայի քարոզների արդյունքները: (Կարող եք նաև առաջարկել ուսանողներին անդրադառնալ Ալմա 6–8 գլուխների վերնագրերին, որպեսզի հեշտությամբ պատասխանեն այդ հարցին:)

Շեշտեք, որ թեև այս քաղաքների մարդիկ ընդունեցին Ալմայի ուղերձը, նրա միսիոներական ծառայությունը չանցավ առանց դժվարությունների:

### Ալմա 8.7–32

*Ամմոնիայում մերժվելուց հետո, Տերը պատվիրեց նրան վերադառնալ:*

Հարցրեք, թե արդյոք ուսանողների բարեկամները կամ ընկերները, ովքեր ծառայել են լիաժամկետ միսիայում, երբևէ հանդիպել են մարդկանց, ովքեր մերժել են ավետարանի ուղերձը: Մի քանի ուսանողների հրավիրեք պատմել, թե ինչպես են իրենց բարեկամները կամ ընկերները վարվել այս դեպքերում:

Հանձնարարեք ուսանողներին բարձրաձայն և հերթականությամբ կարդալ Ալմա 8.7–14: Դասարանին հորդորեք մտածել, թե ինչպես էր Ալման զգում, երբ փորձում էր ավետարանն ուսուցանել Ամմոնիայի ժողովրդին: Այս հատվածները կարդալու ընթացքում երբեմն դադար տվեք, որպեսզի նրանք պատասխանեն հետևյալ հարցերին.

- Ի՞նչ են ուսուցանում այս հատվածները Ալմայի բնավորության մասին (տե՛ս Ալմա 8.8–10):
- Ինչպե՞ս կարձագանքեիք Ալմային ցույց տրված վերաբերմունքին (տե՛ս Ալմա 8.11–13):
- Ինչո՞վ է նման Ալմայի պատասխանը նման իրավիճակում գտնվելիս ձեր պատասխանին կամ տարբեր դրանից: (Տե՛ս Ալմա 8.14: Կարող եք նաև ասել, որ

Ահարոն քաղաքում Տիրոջ աշխատանքը շարունակելու Ալմայի որոշումը ցույց էր տալիս, որ նա վստահում է Տիրոջը և չէր հանձնվում:)

Շեշտեք, որ չնայած Ալմայի աղոթքները Ամմոնիայի ժողովրդի համար անկեղծ էին (տե՛ս Ալմա 8.10), նրա խնդրանքն անմիջապես չիրականացվեց: (Ամմոնիայի որոշ մարդիկ ապաշխարեցին հետագայում: Տե՛ս Ալմա 14.1:)

Կարդացեք հետևյալ պատմությունը, որը գրվել է Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Երեց Ռասսել Մ. Նելսոնի կողմից.

«Ես գիտակցում եմ, որ երբեմն մեր ամենաջերմեռանդ աղոթքներից ոմանք, թվում է, մնում են անպատասխան: Մտածում ենք. «Ինչո՞ւ»: Ինձ ծանոթ է այդ զգացումը: Ինձ ծանոթ են այդ պահի մտավախությունները ու կասկածները: Բայց նաև գիտեմ, որ մեր աղոթքները երբեք չեն անտեսվում: Մեր հավատքը երբեք չի մնում չգնահատված: Ես գիտեմ, որ ամենահմաստուն Երկնային Հոր տեսակետները ավելի լայն են, քան մերը: Մինչ մենք գիտենք մեր մահկանացու կյանքի խնդիրներն ու ցավերը, Նա գիտի մեր անմահ առաջընթացի ու ներուժի մասին» (“Jesus Christ—the Master Healer,” *Ensign* կամ *Liahona,* նոյ. 2005, 86):

- Ի՞նչ ուսուցանեց Երեց Նելսոնը, որը կարող է օգնել մեզ ունենալ հավատք, նույնիսկ երբ մեր արդար աղոթքները չեն պատասխանվում անմիջապես կամ այն ձևով, ինչպես մենք են ցանկանում կամ սպասում:

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 8.14–17: Դասարանին խնդրեք հետևել, ուշադրություն դարձնելով հրեշտակի մխիթարիչ խոսքերին և պատվիրաններին, որոնց Ալմային դժվար կլիներ հնազանդվել:

- Ինչպե՞ս կարող էին հրեշտակի խոսքերը Ալմա 8.15-ում մխիթարիչ լինել Ալմայի համար: Ինչպե՞ս կարող են հրեշտակի խոսքերը մխիթարիչ լինել ձեզ համար:
- Ինչո՞ւ էր Ալմայի համար դժվար հնազանդ լինելը նման իրավիճակում:

Թող ուսանողները կարդան Ալմա 8.18, փնտրելով այն բառը, որը նկարագրում է, թե ինչպես Ալման արձագանքեց Ամմոնիա քաղաք վերադառնալու Տիրոջ պատվիրանին: (Կարող եք առաջարկել ուսանողներին նշել *շտապ* բառը:)

- Ի՞նչ կարող ենք սովորել Ալմայի մասին այն փաստից, որ նա Ամմոնիա վերադարձավ շտապ կերպով:

Կարդացեք Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ հայտարարությունը: Հրավիրեք ուսանողներին լսել, թե ինչպես Տիրոջը արագ հնազանդվելով մենք կարող ենք շահել.

«Որքան էլ որ մեր այսօրվա հավատքը ուժեղ լինի, որպեսզի հնազանդվենք Աստծուն, մենք պետք է մշտապես ամրապնդենք այն և մշտապես թարմացնենք այն: Մենք կարող ենք անել դա որոշելով լինել ավելի արագ հնազանդվելու մեջ և ավելի վճռական տոկալու մեջ: Վաղ սկսելու և կայուն մնալու սովորույթը հոգևոր նախապատրաստվածության բանալիներն են: . . .

Սիրող Երկնային Հայրը և Նրա Սիրելի Որդին տվել են մեզ բոլորիս այն հնարավոր օգնությունը, որը կարող էին տալ, որպեսզի մենք հաղթահարենք մեր առջև դրված կյանքի քննությունը: Սակայն մենք պետք է որոշենք հնազանդվել, իսկ հետո կատարել: Մենք ամրապնդում ենք հավատքը, որպեսզի հաղթահարենք հնազանդության փորձությունը ժամանակի և մեր ամենօրյա որոշումների ընթացքում: Մենք կարող ենք այժմ որոշում կայացնել արագ անելու այն, ինչ Աստված պատվիրել է մեզ: Եվ մենք կարող ենք որոշում կայացնել մնալու կայուն հնազանդության այն փոքր փորձություններում, որոնք ամրապնդում են մեր հավատքը, որն ի վիճակի է տանել մեզ մեծ փորձությունների միջով, որոնք անկասկած կգան» (“Spiritual Preparedness: Start Early and Be Steady,” *Ensign,* նոյ. 2005, 38, 40):

- Ըստ Նախագահ Այրինգի, ի՞նչ է պատահում մեր հավատքի հետ, երբ մենք ընտրում ենք արագ հնազանդվել Տիրոջը:
- Ե՞րբ եք զգացել, որ ձեր հավատքը Տիրոջ հանդեպ ամրապնդվել է՝ ձեր արագ և կայուն հնազանդության շնորհիվ:

Հետևյալ յուրաքանչյուր իրավիճակի համար, ուսանողներին հարցրեք, թե ինչպես արագ հնազանդվելը կարող է օրհնել նրանց.

1. Երբ երիտասարդ աղջիկը գնում է դպրոց, նրա մայրը խնդրում է նրան հագնել ավելի համեստ զգեստ։
2. Իր եպիսկոպոսի հետ հարցազրույցի ժամանակ նոր քահանային կոչ է արվում վաստակել Պարտականություն Աստծո առաջ մրցանակը։
3. Երկու միսիոներներ իրենց ամենօրյա պլանավորման ընթացքում զգում են ոգեշնչված այցելելու ոչ ակտիվ ընտանիքի, որտեղ մայրը Եկեղեցու անդամ չէ։

***Բացատրեք, որ Տերն օրհնեց Ալմային արագ հնազանդվելու համար։ Երեք ուսանողների հրավիրեք դասարանի առջև կատարել Ալմա 8.19–26-ում տեղի ունեցած Ալմայի և Ամուղեկի հանդիպման Թատերական ընթերցանություն***

Ուսանողները կարող են ձեռք բերել ավետարանի սկզբունքների մասին ավելի մեծ պատկերացում, բեմականացնելով սուրբ գրությունների պատմությունները։ Խրախուսեք ուսանողներին այն դարձնել ավելի հետաքրքիր և ուրախ, առանց շեղվելու սուրբ գրություններում ներկայացրած իրադարձություններից։բեմականացումը։ Ուսանողներից մեկը թող կարդա Ալմայի խոսքերը, երկրորդ ուսանողը՝ Ամուղեկի խոսքերը, իսկ երրորդ ուսանողը՝ պատմողի խոսքերը։ Հորդորեք ուսանողներին իրենց հատվածները կարդալ այնպիսի զգացմունքներով, որոնք, իրենց կարծիքով, ունեցել են Ալման և Ամուղեկը։

Բեմականացումից հետո հարցրեք.

- Ինչպե՞ս Տերը հնազանդության համար օրհնեց Ալմային։
- Ինչպե՞ս Ալման և Ամուղեկը զգացին, որ Տերը լսեց և պատասխանեց Ալմայի աղոթքներին (տես Ալմա 8.10)։
- Ի՞նչ սկզբունքներ մենք կարող ենք սովորել Ալմայի փորձից։ (Ուսանողները կառաջարկեն տարբեր սկզբունքներ։ Հնարավոր պատասխաններից է՝ **Երբ մենք արագ ենք արձագանքում Տիրոջ խոսքին, Նա օգնում է մեզ հնազանդվել Իր պատվիրաններին։** )

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 8.27–32, փնտրելով լրացուցիչ ապացույց, որ եթե մենք հավատարիմ ենք ու ջանասեր, Տերն օգնում է մեզ հնազանդվել Իր պատվիրաններին։

- Ի՞նչ դժվարությունների Ալման ու Ամուղեկը հանդիպեցին, երբ նրանք գնացին քարոզելու մարդկանց։ (Տե՛ս Ալմա 8.28–29։ Մարդիկ դարձան ավելի չար, և Տերը Ալմային ու Ամուղեկին պատվիրեց կանչել նրանց ապաշխարության։)
- Ինչպե՞ս Տերն օգնեց Ալմային և Ամուղեկին։ (Տե՛ս Ալմա 8.30–31։ Նրանք լցվեցին Սուրբ Հոգով և ստացան աստվածային զորություն, որպեսզի պաշտպանված լինեին։ Կարող եք ուսանողներին առաջարկել իրենց սուրբ գրություններում նշել այս օրհնությունների նկարագրությունը։)
- Ե՞րբ եք զգացել, որ Տերն օգնել է ձեզ, երբ դուք եղել եք հավատարիմ ու ջանասեր։

Հրավիրեք ուսանողներին գրել Նախագահ Հովարդ Վ. Հանթերի հետևյալ հայտարարությունը իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում.

«Անշու՛շտ, Տերը սիրում է, ավելի քան որևէ այլ բան, իր խորհրդին հնազանդվելու անսասան վճռականությունը» (“Commitment to God,” *Ensign,* նոյ. 1982, 58)։

Այնուհետև նրանց մի քանի րոպե ժամանակ տվեք գրելու համար հետևյալ հարցերի պատասխանները.

- Ի՞նչ դուք կարող եք անել այսօր ցույց տալու համար Երկնային Հորը, որ դուք արագ կհնազանդվեք Նրա խորհուրդին և կծառայեք Նրան հավատարմորեն ու ջանասիրաբար։

Վկայեք այն օրհնությունների մասին, որ մենք ստանում ենք, երբ հավատարմորեն հետևում ենք Տիրոջ խորհրդին։ Կարող եք նաև ուսանողներին հնարավորություն տալ իրենց վկայությունը բերել այս ճշմարտության մասին։

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Ալմա 8.10: «Հզոր աղոթք»

«Հզոր աղոթք» բառակապակցությունը նշանակում է զորեղ, հավատքով լեցուն հաղորդակցություն Աստծո հետ: Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին առաջարկել է մի քանի եղանակներ, որոնցով մենք կարող ենք գնահատել և ձգտել բարելավվել մեր աղոթքների ուժը.

«Կարո՞ղ եմ այսօր ձեզ խնդրել, որ դուք մտածեք ձեր աղոթքների արդյունավետության մասին: Որքա՞ն մոտ եք դուք զգում ձեր Երկնային Հորը: Արդյո՞ք զգում եք, որ ձեր աղոթքները պատասխանվում են: Արդյո՞ք զգում եք, որ այն ժամանակը, որ ծախսում եք աղոթքների վրա, հարստացնում և վեհացնում է ձեր հոգին: Արդյո՞ք այն ունի բարելավման կարիք:

«Կան շատ պատճառներ մեր աղոթքների թույլ լինելու համար: Երբեմն նրանք դառնում են սովորական: Մեր աղոթքները դառնում են սին, երբ մենք նմանատիպ ձևով օգտագործում ենք նույն բառերը կրկին ու կրկին, այնքան հաճախ, որ խոսքերը ավելի շատ դառնում են շարադրանք, քան հաղորդակցություն: Դա այն է, ինչ Փրկիչը նկարագրել է, որպես «շատախոս» (Մատթեոս 6.7): Նա ասել է, որ այսպիսի աղոթքները լսելի չեն լինի: . . .

Արդյո՞ք ձեր աղոթքները երբեմն հնչում կամ զգացվում են նույն կերպ: Արդյո՞ք երբևէ աղոթք ասել եք մեխանիկորեն, որտեղ բառերն արտահայտվում են ինքնաբերաբար: Արդյո՞ք երբեմն ձանձրանում եք աղոթելիս:

Աղոթքները, որոնք շատ բան չեն պահանջում ձեր մտքից, հազիվ թե արժանանան մեծ ուշադրության մեր Երկնային Հոր կողմից: Երբ դուք զգում եք, որ ձեր աղոթքները դարձել են միատեսակ, կանգ առեք և մտածեք: Մտորեք մի պահ այն բաների մասին, որոնց համար դուք երախտապարտ եք» (“Improving Our Prayers,” [Brigham Young University devotional address, Jan. 21, 2003], 2, speeches.byu.edu):

ԴԱՍ 75

# Ալմա 9–10

## Նախաբան

Ալման ու Ամուղեկը Ամմոնիայի ժողովրդին քարոզելիս ունեցան քիչ հաջողություն, որովհետև Սատանան «մեծ ազդեցություն էր ձեռք բերել ժողովրդի սրտերի վրա» (տե՛ս Ալմա 8.9)։ Նրանցից շատերը կարծրացրել էին իրենց սրտերը ավետարանի հանդեպ, և նրանք մերժեցին ապաշխարելու Ալմայի ու Ամուղեկի կոչը։ Այնուամենայնիվ, Ալման և Ամուղեկը հավատարմորեն կանչում էին նրանց ապաշխարության, վկայելով, որ քանի որ նրանց ուսուցանվել էր ճշմարտությունը և նրանք զգացել էին Աստծո զորությունը, Տերը նրանցից ակնկալում էր լինել ավելի արդարակյաց, քան Լամանացիները, որոնց ճշմարտությունը չէր ուսուցանվել։ Ալման և Ամուղեկը ուսուցանում էին, որ եթե Ամմոնիայի ժողովուրդը չապաշխարեր, նրանք կկործանվեին։ Նրանք նաև մարդկանց ուսուցանում էին, որ փրկագնումը հնարավոր էր միայն Հիսուս Քրիստոսի միջոցով։

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 9

*Ալման զգուշացնում է Ամմոնիայի ժողովրդին, որպեսզի ապաշխարեն և պատրաստվեն Հիսուս Քրիստոսի գալստին։*

Ներկայացրեք հետևյալ սցենարը. Երկու ուսանող գալիս են դպրոց և ուսուցիչը հայտարարում է, որ նրանք պետք է հանձնեն անակնկալ քննություն։ Առաջին աշակերտը հաճախել է բոլոր դասերին, իսկ երկրորդ աշակերտը բացակայել է երկու շաբաթ՝ հիվանդության պատճառով։

- Ձեր կարծիքով, ո՞ր ուսանողը լավ կհանձնի քննությունը։

Հանձնարարեք ուսանողներին արագ աչքի անցկացնել Ալմա 9.1–7, փնտրելով այն բառերն ու արտահայտությունները, որոնք ցույց են տալիս, թե որքան լավ էր Ամմոնիայի ժողովուրդը հասկանում ավետարանը և Աստծո զորությունը։ Խնդրեք նրանց կիսվել իրենց սովորածով։

Մի քանի ուսանողի հանձնարարեք բարձրաձայն կարդալ Ալմա 9.8–13։ Դասարանին հանձնարարեք գտնել բառեր կամ արտահայտություններ, որոնք ցույց են տալիս, թե արդյոք այդ մարդկանց ուսուցանվել էր ավետարանը կամ արդյոք նրանք ունեն Աստծո զորության մասին գիտելիք։ (Պատասխանները պետք է լինեն՝ «դուք մոռացաք» և «չե՞ք հիշում դուք»։)

- Արդյո՞ք Ամմոնիայի ժողովուրդը երբևէ սովորել է ավետարանը կամ ուսուցանվել Աստծո զորության մասին։
- Որո՞նք են այն մի քանի պատճառները, որոնցով ավետարանը ուսուցանված մարդիկ մոռացել այն, ինչ սովորել են, կամ չեն հասկանում այն, ինչ իրենց ուսուցանվել է։

Հանձնարարեք ուսանողներին աչքի անցկացնել Ալմա 8.9, 11; 9.5, 30 և 12.10–11 հատվածները, ուշադրություն դարձնելով այն բառերի կամ արտահայտությունների վրա, որոնք պարզաբանում են, թե ինչու է Ամմոնիայի ժողովուրդը մոռացել կամ չի հասկացել այն բաները, որոնք ուսուցանվել են։ («Սատանան մեծ ազդեցություն էր ձեռք բերել [նրանց] սրտերի վրա», «նրանք կարծրացրեցին իրենց սրտերը», «նրանք մի կարծրասիրտ ու խստապարանոց ժողովուրդ էին», «[նրանց] սրտերը ծայրաստիճան կարծրացած են Աստծո խոսքի հանդեպ»։)

Արտագրեք հետևյալ աղյուսակը գրատախտակին և խնդրեք ուսանողներին արտագրել այն իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում։ (Համոզվեք, որ մեծ տարածք եք թողել գրելու համար։)

| | Ժողովրդի հոգևոր անցյալը | Ինչ էր Տերը սպասում ժողովրդից և ինչ էր Տերը խոստացել ժողովրդին |
|---|---|---|
| Լամանացիներ (Ալմա 9.14–17) | | |
| Ամմոնիայի ժողովուրդը (Ալմա 9.18–24) | | |

Ուսանողներին բաժանեք զույգերի: Յուրաքանչյուր զույգին հանձնարարեք լրացնել աղյուսակը, օգտագործելով սուրբ գրությունների հղումները: Աղյուսակը լրացնելուց հետո խնդրեք ուսանողներին իրենց աղյուսակի ներքևում մի նախադասությամբ ամփոփել իրենց սովորածը: Նրանցից մի քանիսին հրավիրեք կիսվել իրենց գրածով: Ուսանողները կօգտագործեն տարբեր բառեր, սակայն նրանց պատասխանը պետք է պարունակի հետևյալ ճշմարտությունը. **Տերն ակնկալում է մեծ հնազանդություն այն մարդկանցից, ովքեր ստացել են ավետարանի մասին գիտելիքներ և օրհնություններ:** Տվեք հետևյալ հարցերը, որպեսզի ուսանողներին օգնեք կիրառել այս սկզբունքները իրենց կյանքում.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ Տերը ուներ մեծ սպասելիքներ Ամմոնիայի ժողովրդից:
- Ինչո՞ւ էր արդարացի Տիրոջ համար ունենալը մեծ սպասելիքներ նրանցից, ովքեր ստացել էին ավետարանի մասին գիտելիքներ և օրհնություններ:

Շեշտեք «Տիրոջ մեծապես արտոնյալ ժողովուրդ» արտահայտությունը Ալմա 9.20–ում: (Կարող եք առաջարկել ուսանողներին նշել այդ արտահայտությունը:)

- Ինչպե՞ս են Եկեղեցու այժմյան անդամները «Տիրոջ մեծապես արտոնյալ ժողովուրդ»-ը հանդիսանում:
- Ըստ Ալմա 9.19–23–ի, ինչ պարգևներ և օրհնություններ Նեփիացիները (այդ թվում՝ Ամմոնիայի ժողովուրդը) ունեցան, լինելով Տիրոջ ուխտյալ ժողովուրդը:
- Ինչպիսի՞ պարգևներ ու օրհնություններ եք դուք ունեցել լինելով Տիրոջ Եկեղեցու անդամը:
- Որո՞նք են այն մի քանի բաները, որոնք Տերը մեզանից ակնկալում է՝ Իրենից պարգևներ ու օրհնություններ ստանալու դիմաց:

Դասարանի կեսին հանձնարարեք առանձին ուսումնասիրել Ալմա 9.24–27, իսկ մյուս կեսին՝ առանձին ուսումնասիրել Ալմա 9.28–30: Խնդրեք ուսանողներին իրենց իսկ բառերով ամփոփել իրենց հանձնարարված հատվածները: Հետևյալ հարցերը գրեք գրատախտակին, մինչ նրանք պատրաստում են իրենց ամփոփումները.

*Այս հատվածներում ի՞նչ ապացույց եք դուք տեսնում այն մասին, որ Տերն ակնկալում է ավելի մեծ հնազանդություն այն մարդկանցից, ովքեր ունեն ավետարանի մասին ավելի շատ գիտելիք:*

*Ըստ Ալմայի հիշեցման, ի՞նչ օրհնություններ մարդիկ կարող էին ստանալ:*

*Ըստ Ալմայի խոսքերի, ի՞նչ պետք է մարդիկ անեին, որպեսզի ստանային այդ օրհնությունները:*

Կարդալու համար տրամադրված բավարար ժամանակից հետո դասարանի յուրաքանչյուր կեսից կանչեք մեկ ուսանողի, որպեսզի նա ամփոփի հանձնարարված հատվածները: Այնուհետև հարցրեք դասարանին.

- Որո՞նք են այն մի քանի ուղիները, որոնց օգնությամբ մենք կարող ենք մնալ հավատարիմ այն լույսին և գիտելիքին, որը մենք ստացել ենք: (Ուսանողների առաջարկները կարող են լինել՝ սուրբ գրությունների ուսումնասիրությունը, Աստծուն ստացված օրհնությունների համար մեր երախտագիտությունը հայտնելը, մեր վկայությունները հաճախ բերելը, ամեն շաբաթ Եկեղեցու ժողովներին հաճախելը, օրագրում գրառումներ կատարելը և այլն:)

***Ուսանողներին հրավիրեք ամփոփել***

Երբ դուք ուսանողներին հրավիրում եք ամփոփել հատվածների խմբերը, դուք նրանց հրավիրում եք սուրբ գրություններնը ավելի ուշադիր վերլուծել: Եթե զգում եք, որ ուսանողը կարևոր մանրամասներ է բաց թողել իր ամփոփման մեջ, դուք կարող եք հարցնել մյուս ուսանողներին, թե արդյոք նրանք ունեն կարևոր բան ավելացնելու:

## Ալմա 10.1–12

*Ամուղեկը լսում է Տիրոջ կանչը և հաստատում Ալմայի աստվածային կոչումը*

Բացատրեք, որ երբ Ալման խոսեց ժողովրդի հետ, մարդիկ բարկացան և ցանկացան նրան բանտ գցել: Ամուղեկը արիաբար խոսեց ժողովրդի հետ և ավելացրեց իր վկայությունը Ալմայի վկայությանը: (Տե՛ս Ալմա 9.31–34:) Ամփոփեք Ալմա 10.1–4, բացատրելով, որ Ամուղեկը Նեփիի հետնորդն էր: Նա աշխատասեր մարդ էր, ով ստեղծել էր մեծ կարողություն: Նա նաև հայտնի և «ոչ փոքր համբավով» մարդ էր իր ընտանիքի անդամների ու ընկերների շրջապատում (տե՛ս Ալմա 10.4): Սակայն նա չէր ապրում իրեն ուսուցանված ավետարանի ճշմարտություններով:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ Ալմային ուղեկցելն օգտակար կլիներ Ամուղեկին, ով հայտնի մարդ էր իր շրջապատում, ուղեկցել Ալմային:

Ուսանողներին հարցրեք, թե ինչպես են իրենք այս առավոտյան արթնացել: (Արդյո՞ք նրանք արթնացել են զարթուցիչի ձայնից, կամ որևը ընտանիքի անդամ արթնացրե՞լ է իրենց: Կարող եք ցույց տալ զարթուցիչ կամ դրա նկարը:) Հարցրեք ուսանողներին, թե նրանցից քանիսն են մեկից ավելի «կանչելուց» հետո արթնացել անկողնուց:

Հանձնարարեք բարձրաձայն կարդալ Ալմա 10.5–6: Դասարանի ուշադրությունը հրավիրեք Ամուղեկի հոգևոր «արթնացնող կանչի» արձագանքին, որը նա ստացավ Տիրոջից:

- Ձեր կարծիքով, ի՞նչ ի նկատի ուներ Ամուղեկը, ասելով. «Ես չեմ կամեցել լսել» և «Ես չէի կամենում իմանալ»:
- Ի՞նչ ձևով է Տերը մեզ կանչել: (Հնարավոր տարբերակները կարող են լինել՝ Սուրբ Հոգու միջոցով, ծնողների և Եկեղեցու ղեկավարների հրահանգների և Եկեղեցու կոչումների միջոցով:)

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 10.7–10, փնտրելով իր ժողովրդին Ամուղեկի բացիչ վկայության առանցքային կետերը:

- Ինչպե՞ս էին Ամուղեկի փորձառությունները պատրաստել նրան լինելու Ալմայի պատգամի երկրորդ վկան Ամմոնիայի ժողովրդի առաջ:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս Ամոնուղեկի հնազանդվելու որոշումը փոխեց նրա կյանքը:

Հանձնարարեք ուսանողներին բարձրաձայն կարդալ Ալմա 10.11–12, և դասարանին խնդրեք գտնել, թե ինչպե՞ս մյուսները օրհնվեցին Տիրոջ կանչը լսելու Ամուղեկի որոշման շնորհիվ: Խնդրեք նրանց կիսվել պատասխաններով:

Հետևյալ սկզբունքը գրեք գրատախտակին. ***Եթե մենք լսում ու հնազանդվում ենք Տիրոջ կանչին, օրհնությունները գալիս են մեզ և մյուսներին:*** (Կարող եք առաջարկել ուսանողներին, որ նրանք այս սկզբունքը նշեն իրենց սուրբ գրություններում Ալմա 10.11–12-ի կողքին:) Որպեսզի օգնեք ուսանողներին զգալ այս սկզբունքի կարևորությունը և ճշմարտացիությունը, հարցրեք.

- Ե՞րբ եք զգացել, որ օրհնվել եք Տիրոջ կանչին հնազանդվելու շնորհիվ:
- Ինչպե՞ս են ուրիշներին օրհնություններ ստացել, երբ դուք կամ որևէ մեկն արձագանքել է Տիրոջ կանչին:
- Ինչպե՞ս են այս փորձառություններն ազդել Տիրոջը լսելու և Նրա կանչերին հնազանդվելու ձեր ցանկության վրա:

## Ալմա 10.13–32

*Ամուղեկը պատասխանում է նրանց, ովքեր դեմ են նրան, և հորդորում է մարդկանց ապաշխարել:*

Գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունները.

*1. Զայրանալ և դառնալ պաշտպանողական*

*2. Կասկածել խորհրդի կարևորությանը*

*3. Քննադատել այն անձին, ով խորհուրդ է տալիս*

*4. Հարցականի տակ դնել կամ վիճարկել խորհուրդը*

*5. Խոնարհաբար լսել և հետևել*

Խնդրեք ուսանողներին լուռ խորհել այն մասին, թե գրատախտակի վրա գրված որ նախադասությունն է ավելի շատ նման իրենց արձագանքին, երբ ծնողները կամ Եկեղեցու ղեկավարը ուղղում են նրանց կամ խնդրում փոխել այն, ինչ իրենք անում են:

- Որո՞նք են այն պատճառները, որոնցով մարդիկ փոփոխություններին արձագանքում են այդ ճանապարհով:

Գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները գրատախտակին. *Ալմա 9.2–3; Ալմա 9.4–5; Ալմա 10.13, 16–17; Ալմա 10.24, 28–30*:

Ուսանողներին հրավիրեք ընտրել գրատախտակին նշված հատվածներից մեկը անհատական ուսումնասիրության համար: Խնդրեք նրանց գտնել, թե այդ հատվածները ինչպես են նկարագրում Ամմոնիայի ժողովրդի արձագանքը Ալմայի և Ամուղեկի պատգամին: Նաև խնդրեք նրանց ընտրել գրատախտակին նշված նախադասություններից որևէ մեկը, որն ավելի մոտ է արտահայտում այդ ժողովրդի արձագանքի բնույթը: Բավարար ժամանակ տրամադրելուց հետո, խնդրեք ուսանողներին պարզաբանել, թե գրատախտակի այս հինգ պատասխաններից, որն է լավագույնս համապատասխանում այն հատվածին, որը նրանք ուսումնասիրեցին:

- Ինչո՞ւ են գրատախտակին գրված չորս պատասխանները հոգեպես վտանգավոր:

Մի քանի ուսանողների հանձնարարեք հերթով կարդալ Ալմա 10.19–23: Հորդորեք նրանց ուշադրություն դարձնել նրան, թե ինչ Ամուղեկն ուսուցանեց մեղքի հետևանքների և արդարներին դուրս գցելու վերաբերյալ:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ մեր մեղքերից չապաշխարելու ավերիչ հետևանքները, կարդացեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հետևյալ հայտարարությունը.

«Շրջապատում այնքան շատ չարիք կա: Գայթակղությունները, իրենց գերող ազդեցություններով, մեր շուրջբոլորն են: Դժբախտաբար մենք կորուստներ ենք տալիս այդ քայքայիչ ուժերի պատճառով: Մենք վշտանում ենք յուրաքանչյուրի համար, ով պարտվում է: Մենք հասնում ենք նրանց, որպեսզի օգնենք, որպեսզի պաշտպանենք նրանց, բայց շատ դեպքերում մեր խնդրանքները մերժվում են: Ողբերգական է այն ուղին, որ նրանք հետևում են: Դա ճանապարհ է, որը տանում է դեպի կործանում» (“My Testimony,” *Ensign,* May 2000, 69):

- Որո՞նք են կործանիչ հետևանքները, որ մարդիկ կամ խմբերն ունենում են, երբ չեն հնազանդվում Աստծո պատվիրաններին:

Եթե ժամանակ մնա, հրավիրեք ուսանողներին պատասխանել հետևյալ հարցերին.

- Ինչպե՞ս կարող են այսօրվա դասին սովորած ճշմարտությունները օգնել ձեզ:

# Տնային ուսումնասիրության դաս

## Ալմա 5–10 (Մաս 15)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը ուսանողները սովորեցին, երբ ուսումնասիրեցին Ալմա 5–10 (Մաս 15), որը նախատեսված չէ ուսուցանվելու որպես ձեր դասի մի մաս: Դասը, որը դուք ուսուցանում եք, կենտրոնանում է այդ վարդապետությունների և սկզբունքների միայն մի մասի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, որպեսզի հաշվի առնեք ուսանողների կարիքները:

#### Օր 1 (Ալմա 5.1–36)

Երբ ուսանողները ուսումնասիրեցին Ալմայի քարոզը Զարահեմլայի ժողովրդին, նրանք իմացան, որ երբ մենք հավատում ենք Աստծո խոսքին և օգտագործում մեր հավատքն առ Հիսուս Քրիստոս, մենք կարողանում ենք զգալ սրտի զորեղ փոփոխություն: Երբ ուսանողները պատասխանեցին Ալմայի հարցերին, նրանք նաև սովորեցին, որ երբ մենք ունենում ենք սրտի փոփոխություն, մենք պատրաստվում ենք ստանալ տեղ երկնային արքայությունում:

#### Օր 2 (Ալմա 5.37–62)

Ուսումնասիրելով Ալմա 5-ի երկրորդ մասը, ուսանողները սովորեցին հետևյալ սկզբունքները. Եթե մենք հետևենք Տիրոջ (արի Հովվի) ձայնին, մենք կհավաքվենք Նրա արքայությունում: Սուրբ Հոգու միջոցով մենք կիմանանք, որ Հիսուս Քրիստոսը մարդկության Քավիչն է:

#### Օր 3 (Ալմա 6–7)

Ուսումնասիրելով Ալմա 6, ուսանողներն իմացան, որ Նեփիացիների օրոք և մեր օրոք Եկեղեցին հիմնվել է ի բարօրություն բոլոր մարդկանց: Ալմայի քարոզից մինչև Գեդեոնի ժողովուրդը, ուսանողները սովորեցին, որ Հիսուս Քրիստոսը տառապեց մեզ մեղքից ու մահից փրկելու, և մահկանացու փորձությունների ժամանակ մեզ օգնելու համար: Նրանք նաև սովորեցին, որ ավետարանի սկզբունքներով ապրելով, մենք հետևում ենք Աստծո արքայություն տանող ուղուն:

#### Օր 4 (Ալմա 8–10)

Ուսումնասիրելով Ամմոնիայի ժողովրդի մոտ վերադառնալու Ալմայի ցանկության մասին՝ այդ նույն ժողովրդի կողմից մերժվելուց հետո, ուսանողներն իմացան, որ երբ մենք արագ ենք արձագանքում Տիրոջ խոսքին, Նա օգնում է մեզ հնազանդվել Իր պատվիրաններին: Ալման ժողովրդին ապաշխարություն աղաղակեց և ուսուցանեց Փրկչի գալստյանը նախապատրաստվելու անհրաժեշտության մասին: Հրեշտակի ու Ամուղեկի հանդիպումից ուսանողները իմացան, որ երբ մենք ականջ ենք դնում և հնազանդվում Տիրոջ կանչին, մենք և մյուսները ևս օրհնվում ենք:

### Նախաբան

Այս դասի ժամանակ ձգտեք ուսանողների ուշադրությունը կենտրոնացնել այն սկզբունքների վրա, որոնք բերում են սրտի փոփոխություն: Եղանակներ գտեք օգնելու համար նրանց ապավինել Աստծո խոսքին և ամրապնդել Փրկչի հանդեպ իրենց վկայությունները:

### Ուսուցանման առաջարկներ

#### Ալմա 5.1–36

***Ալման ուսուցանում է, որ երկնային արքայություն մտնելու համար մեզանից պահանջվում է սրտի զորեղ փոփոխություն:***

Գրեք *փոփոխություն* բառը գրատախտակին կամ թղթի վրա: Ուսանողներին խնդրեք կիսվել այն ճանապարհներով, որոնցով մարդիկ կարող են փոխվել, ինչպես օրինակ՝ արտաքինով, վարքագծով կամ վերաբերմունքով: Թույլ տվեք նրանց բացատրել, թե ինչն է մարդկանց ստիպում կատարել այդ փոփոխությունները:

Խնդրեք ուսանողներին կարդալ Ալմա 5.14 և գտնել այն երեք հարցերը, որոնք Ալման ուղղեց Զարահեմլայի ժողովրդին: Մի քանի ուսանողների խնդրեք նկարագրել, թե ինչ է նշանակում «հզոր փոփոխությունը ձեր սրտերում»:

Խնդրեք ուսանողներին կարդալ Ալմա 5.3–7 և տեսնել, թե ինչ Ալման ասաց Զարահեմլայի ժողովրդին, օգնելով նրանց սրտերը նախապատրաստել փոփոխությանը:

Ալման Զարահեմլայի ժողովրդին պատմեց իր հոր և մյուս մարդկանց դարձի գալու, նաև գերությունից նրանց ազատվելու մասին: Հարցրեք. «Ձեր կարծիքով, այս փորձառությունների մասին սովորելը ինչպե՞ս է օգնում մարդկանց նախապատրաստվել սրտի փոփոխությանը: (Կարող եք ուսանողներին հիշեցնել, որ իրենք գրել են այս հարցի պատասխանը օր 1-ի դասում՝ իրենց ուսանողի ուսումնասիրության ուղեցույցներում:)

Հարցրեք, թե արդյոք ուսանողներից որևէ մեկը կկիսվի այն փորձառությամբ, որը նրան բերել է սրտի փոփոխություն: Դուք կարող եք ձեր անձնական վկայությամբ կիսվել: Կարող եք նաև ուսանողներին հիշեցնել Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի արած հայտարարությունը ( օր 1-ի դասի ուսանողի ուսումնասիրության ուղեցույցում): Բացատրեք, որ շատ մարդկանց համար սրտի հզոր փոփոխությունը աստիճանաբար է կատարվում, երբ մենք սովորում և աճում ենք ավետարանի մեջ:

Հանձնարարեք ուսանողներին նայել «Ալմա 5 Հոգևոր սրտագիր» աղյուսակին՝ ուսանողների ուսումնասիրության ուղեցույցի օր 1-ի դասի մեջ: Նրանց հանձնարարեք վերանայել մի քանի հատվածներ Ալմա 5–ից, որոնք ընդգրկված են աղյուսակի մեջ են: Այնուհետև տվեք հետյալ հարցերը.

- Ալմայի հարցերից, որո՞նք են հատկապես նշանակալից ձեզ համար:
- Ինչպե՞ս կարող են այս հարցերը օգնել ինչ-որ մեկին զգալ սրտի փոփոխություն:

Բացատրեք ուսանողներին, որ Փրկիչը շատ էր ցանկանում, որ բոլոր մարդիկ գան դեպի Իրեն և ունենան սրտի զորեղ փոփոխություն, որպեսզի նրանք ստանան հավերժական կյանք: Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 5.33–36: Հարցրեք.

- Ի՞նչ հրավեր է Տերը ուղարկում մեզ:
- Որո՞նք են Նրա հրավերը ընդունելու պարգևները:

## Ալմա 5.43–52

*Ալման պատմում է, թե ինչպես է ստացել վկայություն և ուսուցանում է քավության մասին:*

Բացատրեք, որ Զարահեմլայի ժողովրդին խրախուսելու համար, որպեսզի ձգտեն սրտի փոփոխության, Ալման բերեց իր վկայությունը և պարզաբանեց, թե ինչպես է այն ստացել: Նրա խորհրդի միջոցով մենք կարող ենք իմանալ, թե ինչպես ստանալ կամ ամրապնդել մեր վկայությունները: Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Ալմա 5.45–48: Խնդրեք նրանց գտնել Ալմայի խոսքերն այն մասին, թե ինչ նա գիտեր: Նաև նրանց հանձնարարեք բացատրել Ալմայի պատասխանները այս հարցին. «Եվ, ի՞նչ եք դուք կարծում, ի՞նչպես ես գիտեմ դրանց հավաստիության մասին»:

Ուսանողներին խնդրեք կիսվել իրենց պատասխաններով և գրել այդ պատասխանները գրատախտակին: Նաև գրեք այս սկզբունքը. ***Մենք կարող ենք իմանալ Սուրբ Հոգու միջոցով, որ Հիսուս Քրիստոսը մարդկության Քավիչն է:***

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ մի օր նրանց վկայությունները կարող են փորձվել ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի կողմից: Դա, միգուցե, արդեն պատահել է: Ալմայի խորհուրդը մեզ ուղի է առաջարկում ամուր և հաստատուն կանգնելու՝ անկախ մեր վկայությունների դժվարություններից: Կարող եք պատմել ձեր վկայությունները ձեռք բերելու դժվարությունների և դրանք հաղթահարելու մասին, կամ մեկ ուրիշին բաժին ընկած այդպիսի դժվարությունների մասին: Կարող եք նաև կիսվել գերագույն համաժողովից կամ Եկեղեցու ամսագրերից վերցված փորձառություններով: Նաև կարող եք մի ուսանողի խնդրել կիսվել այդպիսի փորձառությամբ:

Բացատրեք, որ Ալման գնաց ժողովրդին ապաշխարություն ուսուցանելու: Կարող եք խնդրել մի ուսանողի կարդալ Ալմա 5.50 և Երեց Դալլին Հ. Օուքսի հայտարարությունը, որը կարող եք գտնել դաս 15-ում, օր 2-ի ուսանողի ուսումնասիրության ուղեցույցում: Խնդրեք ուսանողներին կիսվել իրենց մտքերով այն մասին, թե ինչու մենք պետք է յուրաքանչյուր օրն ապրենք այնպես, կարծես, մենք պատրաստվում ենք հանդիպել Տիրոջը:

## Ալմա 7–10

*Ալման քարոզում է Գեդեոնում և Ամմոնիայում*

Ուսանողներին ներկայացրեք հետևյալ իրավիճակը և խնդրեք հիշել այն, երբ վերանայեն Ալմայի ուսմունքները Գեդեոնի ժողովրդին.

1. Երիտասարդ կինը հասկանում է, որ Քավությունը կարող է օգնել նրան հաղթահարել մեղքը, բայց իր մոտ ախտորոշվել է ծանր հիվանդություն, և նա չի կարծում, որ Քավությունը կարող է օգնել:
2. Երիտասարդ տղամարդը տանջվում է իր ծնողների ամուսնալուծությունից, բայց նա չի փնտրում Փրկչի օգնությունը:
3. Երիտասարդ կինը դժվարանում է վերահսկել իր բարկությունը: Նա չի իմանում, թե ինչպես կարող է Քավությունը օգնել իրեն:

Հանձնարարեք ուսանողներին կարդալ Ալմա 7.11–13 և վերանայել այն բաները, որ Փրկիչը ցանկանում է «վեր առնի» Իր վրա մեր իսկ օգտի համար: Մի քանի ուսանողների խնդրեք ամփոփել, թե ինչ են այս հատվածներն ուսուցանում Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Նաև հորդորեք ուսանողներին նայել աղյուսակին, որը ցույց է տալիս այն մի քանի բաները, որոնցով մենք տառապում ենք մահկանացու կյանքում (ուսանողի ուսումնասիրության ուղեցույցի օր 3-ի դասի մեջ):

Ուսանողներին բացատրեք, որ Քավության զորության միջոցով կյանքի տառապանքների ցավը և դառնությունները կարող են մեզանից հեռացվել: Համոզվեք, որ ուսանողները հասկանում են այդ սկզբունքը. **Հիսուս Քրիստոսը տառապել է, որպեսզի փրկագնի մեզ մեղքից և մահից, և օգնի մեզ մահկանացու կյանքի դժվարությունների միջով անցնելիս:**

Ուսանողներին խնդրեք կիսվել նրանով, թե ինչ նրանք կասեին երիտասարդ տղամարդուն ու կնոջը այդ երեք ներկայացված իրավիճակների դեպքում: Հարցրեք, թե ինչպե՞ս կարող են Քավության մասին Ալմայի ուսմունքները կիրառվել այդ իրավիճակներում:

Հիշեցրեք ուսանողներին երեք նկարների և Ամմոնիայում Ալմայի մասին սուրբ գրության հատվածների մասին (ուսանողների ուսումնասիրության ողեցույցի 4-րդ օրվա դասի

մեջ), որոնց մասին նրանք սովորել են և նշումներ արել: Մի քանի ուսանողների կարող եք խնդրել կիսվել Ալմայի և հրեշտակի հանդիպման նշումներով: Խնդրեք ուսանողներին կիսվել իրենց զգացումներով, թե ինչպես է այս պատմությունը վերաբերվում հետևյալ սկզբունքին. **Երբ մենք արագ ենք արձագանքում Տիրոջ խոսքին, Նա օգնում է մեզ հնազանդվել Իր պատվիրաններին:**

## Հաջորդ Մաս (Ալմա 11–16)

Ուսանողներին հանձնարարեք մտածել հետևյալ հարցերի շուրջ, մինչ նրանք պատրաստվում են սովորել հաջորդ շաբաթվա հանձնարարությունը. Ինչպե՞ս կզգայիք դուք, եթե ձեզ ստիպեին նայել, թե ինչպես են անմեղ մարդկանց սպանում Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հանդեպ հավատքի պատճառով: Ձեր կարծիքով, ի՞նչ էին Ալման ու Ամուղեկը զգում այս տեսարանը դիտելով: Ի՞նչ ասացին նրանք միմյանց, երբ տեսան այդ ամենը: Ի՞նչպես վարվեցին նրանք:

ԴԱՍ 76

# Ալմա 11

## Նախաբան

Մինչ Ալման ու Ամուղեկը շարունակում են ուսուցանել Ամմոնիայի ժողովրդին, Զիզրոմ անունով մի իրավաբան Ամուղեկին գումար է առաջարկում, որպեսզի նա ժխտի Աստծո գոյությունը: Զիզրոմը նաև ցանկանում է աղավաղել Ամուղեկի խոսքերը և վարկաբեկել Հիսուս Քրիստոսի մասին նրա ուսմունքները: Ամուղեկը պաշտպանում է իրեն թակարդը գցելու Զիզրոմի փորձերից և վկայում է, որ մեղքերից փրկությունը հնարավոր է միայն Հիսուս Քրիստոսի միջոցով: Ամուղեկը նաև վկայում է, որ ողջ մարդկությունը հարություն կառնի և կբերվի «ու դատի ներկայացվի Քրիստոս Որդու, Հայր Աստծո, և Սուրբ Հոգու դատարանի առաջ» (Ալմա 11.44):

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 11.1–25

*Ամուղեկը չի ենթարկվում Աստծո գոյությունը ժխտելու Զիզրոմի գայթակղությանը:*

Ուսանողներին խնդրեք մտածել իրենց ունեցած ինչ-որ արժեքավոր բանի մասին, որը նրանք չէին վաճառի: Մի քանի ուսանողների հրավիրեք կիսվել իրենց մտքերով այդ մասին և թե ինչու են այդ բաները արժեքավոր իրենց համար:

Բացատրեք, որ Ալմա 11-ը շարունակում է Ամմոնիայի ժողովրդին Ալմայի ու Ամուղեկի ուսմունքների պատմությունը: Ամուղեկի ուսուցանելու ընթացքում, նա ընդհարվում է Զիզրոմ անունով մի մարդու հետ, ով նրան գումար էր առաջարկել մի բանի դիմաց, որը շատ արժեքավոր էր Ամուղեկի համար:

Ուսանողներին հանձնարարեք ռուսումնասիրել Ալմա 11.21–22 , որպեսզի գտնեն, թե որքան գումար էր Զիզրոմն առաջարկել Ամուղեկին, և թե ինչի համար: Թող ուսանողները կիսվեն իրենց սովորածով:

Նշեք, որ Մորմոնի բացատրությունը Նեփիացիների դրամային համակարգի վերաբերյալ Ալմա 11.4–19 –ում օգնում է մեզ հասկանալ Զիզրոմի առաջարկած կաշառքի չափը: Օգնեք ուսանողներին հասկանալ, որ *օնթին* մեծագույն արժեք ունեցող ասրծաթի կտոր էր (տե՛ս Ալմա 11.6, 11–13): Մեկ օնթին համարյա հավասար էր դատավորի մեկ շաբաթվա աշխատավարձին (տե՛ս Ալմա 11.3, 11–13), որը նշանակում էր, որ օնթին հավասար էր դատավորի վեց շափաթվա աշխատավարձին:

- Ինչո՞ւ կարող էր Զիզրոմի առաջարկը գայթակղիչ լինել որոշ մարդկանց համար:

Հանձնարարեք մեկ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 11.23–25:

- Ամուղեկի պատասխանը ի՞նչ է խոսում նրա մասին:
- Ըստ Ալմա 11.25–ի, ի՞նչ էր Զիզրոմը ծրագրել անել, եթե Ամուղեկը ընդուներ նրա առաջարկը: Ինչպե՞ս է դա նման նրան, թե ինչ է անում Սատանան, երբ մարդիկ ենթարկվում են նրա գայթակղություններին:

Օգնելու համար ուսանողներին բացահայտել, թե ինչպես Ամուղեկը կարողացավ դիմակայել Զիզրոմի առաջարկությանը, գրեք հետևյալը գրատախտակին. *Ես չեմ . . . ոչինչ, ինչը Տիրոջ Հոգուն հակառակ է:*

Հանձնարարեք մեկ ուսանողի կարդալ Ալմա 11.22: Դասարանին խնդրեք փնտրել այն բառը, որն Ամուղեկն օգտագործեց այս նախադասությունն ավարտելու համար:

- Ի՞նչ այլ բառեր մենք կարող ենք դնել բաց թողնված, որոնք մեզ կօգնեն ապավինել Սուրբ Հոգուն՝ գայթակղությանը դիմակայելիս («անել», «մտածել», «նայել»:)

Ուսանողներին խնդրեք, հիմնվելով Ալմա 11.22-ի վրա, շարադրել այն սկզբունքը, որը կարող է օգնել նրանց հիշել, թե ինչպես նրանք կարող են հաղթահարել գայթակղությունները: Ուսանողների պատասխանները կարող են տարբեր լինել, բայց նրանք պետք է արտացոլեն հետևյալ սկզբունքը. **Երբ մենք ապավինում ենք**

***Հրավիրեք Սուրբ Հոգին***

Հորդորեք ուսանողներին հրավիրել Սուրբ Հոգու ներկայությունը, մինչ միասին ուսումնասիրում են սուրբ գրությունները: Որոշ գործողություններ, որոնք հրավիրում են Հոգին, հանդիսանում են անկեղծ աղոթքը, սուրբ գրություններից ուսուցանումը, վկայություն բերելը, Աստծո և ուրիշների հանդեպ սիրո արտահայտումը և հոգևոր փորձառություններով կիսվելը: Երբեմն դուք կարիք կզգաք դասերի ժամանակ օգնելու ուսանողներին զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը:

**Սուրբ Հոգուն, մենք կարող ենք հաղթահարել գայթակղությունները:** (Կարող եք առաջարկել, որպեսզի ուսանողները գրեն սկզբունքը իրենց սուրբ գրություններում Ալմա 11.22–ի կողքին:)

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարող է Սուրբ Հոգու հուշումներին զգայուն լինելը օգնել մեզ հաղթահարել գայթակղությունները:

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ խորհուրդը.

«Եթե դուք սայթաքում եք, ընկնելով բաների մեջ, որոնց մեջ դուք չպիտի հայտնվեիք, կամ ընկերակցում մարդկանց, ովքեր տանում են ձեզ սխալ ուղղությամբ, ապա ժամանակն է օգտագործել ձեր անկախությունը, ձեր ազատ կամքը: Լսեք Հոգու ձայնը և չեք մոլորեցվի:

. . . Որպես Տիրոջ ծառա, ես խոստանում եմ, որ դուք կպաշտպանվեք և կպատսպարվեք հակառակորդի հարձակումներից, *եթե* կամենաք ուշադրություն դարձնել հուշումներին, որոնք գալիս են Սուրբ Հոգուց» («Խորհուրդ երիտասարդությանը», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ., 2011, 18):

Օգնելու համար ուսանողներին հասկանալ և զգալ Սուրբ Հոգու հետևյալ հուշումների կարևորությունը, տվեք հետևյալ հարցերը.

- Որո՞նք են այն իրավիճակները, որոնց ժամանակ երիտասարդությունը կարող է գայթակղվել՝ գործելու իր վկայություններին հակառակ:
- Ի՞նչ եք դուք անում Սուրբ Հոգուն ապավինելու համար: Ինչպե՞ս է այն օգնում ձեզ:
- Ե՞րբ է Սուրբ Հոգին օգնել ձեզ հաղթահարել գայթակղությունները:

Հորդորեք ուսանողներին կիրառել այն, ինչ սովորել են Ամուղեկի օրինակից, եթե հաջորդ անգամ իրենց հավատքը մի կողմ դնելու գայթակղության առաջ կանգնեն: Վկայեք, որ եթե արժանի ապրեն Սուրբ Հոգու ընկերակցությանը, կարող են ավելի մեծ վստահությամբ պաշտպանեն ճշմարտությունը և հաղթահարեն գայթակղությունը:

***Խրախուսել կիրառել սովորածը***

Քանի սովորած ավետարանի սկզբունքը չի կիրառվում, ուսուցումն ավարտված չէ: Կիրառությունը այն ժամանակ է տեղի ունենում, երբ անձն ընդունում է ճշմարտությունը իր սրտում և մտքում, իսկ հետո գործում է ըստ այդ ճշմարտության: Խրախուսեք ուսանողներին գործել ըստ հոգևոր հուշումների, որոնք նրանք ստանում են, որպեսզի կիրառեն իրենց սովորած ավետարանի ճշմարտությունները:

## Ալմա 11.26–40

*Ամուղեկը վկայում էԱստծո Որդու մասին և դիմադրում է իր խոսքերը վարկաբեկելու Զիզրոմի փորձերին:*

Հարցրեք ուսանողներին, թե արդյոք որևէ մեկը փորձել է վիճաբանության կամ ստի միջոցով հարցականի տակ դնել կամ հակադրվել նրանց հավատքին: Հրավիրեք մեկ-երկու ուսանողի կիսվել իրենց փորձառություններով:

Բացատրեք, որ այն բանից հետո, երբ Զիզրոմին չհաջողվեց դրդել Ամուղեկին ժխտել Աստծո գոյությունը, նա փոխեց իր մարտավարությունը և սկսեց հարձակվել Հիսուս Քրիստոսի հանդեպ Ամուղեկի հավատքի վրա:

Մի քանի ուսանողների հանձնարարեք բարձրաձայն կարդալ Ալմա 11.26–35: Դասարանին խնդրեք փնտրել այն եղանակները, որոնցով Զիզրոմը փորձեց աղավաղել Ամուղեկի խոսքերը: Թող ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով: Այնուհետև հանձնարարեք բարձրաձայն կարդալ Ալմա 11.36–37: Ուսանողների ուշադրությունը հրավիրեք այն բանի վրա, թե ինչպես է Ամուղեկն ուղղում Զիզրոմի կեղծ ուսուցանումը: Ուսանողներին հանձնարարեք նայել տողատակի 34*ա.* ծանոթագրություններին: (Կարող եք առաջարկել, որպեսզի ուսանողները իրենց սուրբ գրություններում նշեն տողատակի ծանոթագրություն 34*ա*:) Հանձնարարեք մեկ ուսանողի բարձրաձայն կարդալ Հելաման 5.10–11:

- Ինչո՞ւ է անհնար փրկվելը մեր մեղքերի մեջ: Ո՞րն է տարբերությունը մեր մեղքերի մեջ փրկվելու և մեր մեղքերից փրկվելու միջև:

Հանձնարարեք մեկ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 11:40: Բացատրեք, որ այս հատվածը պարունակում է սկզբունք, որին մենք պետք է հետևենք, որպեսզի փրկվենք մեր մեղքերից: Գրեք հետևյալ սկզբունքը գրատախտակին. ***Երբ մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսին, մենք կարող ենք փրկագնվել մեր մեղքերից:***

- Ձեր համար ի՞նչ է նշանակում հավատալ Հիսուս Քրիստոսին:
- Ինչո՞ւ մենք պետք է հավատանք Հիսուս Քրիստոսին, որպեսզի փրկվենք մեր մեղքերից:

Օգնելու համար ուսանողներին հասկանալ, թե ինչպես է ապաշխարության միջոցով Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը տանում դեպի փրկագնում, կարդացեք Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի հետևյալ հայտարարությունը.

«Մենք առ Քրիստոս անսասան հավատքի կարիք ունենք, որպեսզի կարողանանք ապաշխարել: Մեր հավատքը պետք է «ճիշտ ներկայացնի Աստծո բնավորությունը, կատարյալ արժանիքներն ու հատկանիշները» (*Lectures on Faith* [1985], 38): Եթե հավատանք, որ Աստված գիտի բոլոր բաները, սիրող և ողորմած է, մենք կկարողանանք անվարան վստահել Նրան մեր փրկության համար: Քրիստոսի հանդեպ հավատքը կփոխի մեր այն մտքերը, համոզմունքները և բնավորությունը, որոնք համահունչ չեն Աստծո կամքին»(«Ապահով վերադարձի կետ» *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2007, 100):

Ուսանողներին բաժանեք զույգերի: Յուրաքանչյուր զույգի խնդրեք հերթականությամբ միմյանց բացատրել, թե ինչպես իրենք կպատասխանեին, եթե իրենցից ավելի երիտասարդ մարդ հարցներ հետևյալը. (Կարող եք գրել այս հարցերը գրատախտակին:)

- Ինչո՞ւ ես պետք է հավատամ Հիսուս Քրիստոսին, որպեսզի ապաշխարեմ և փրկվեմ իմ մեղքերից:
- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը օգնել ձեզ ապաշխարել:

Վկայեք, որ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի շնորհիվ մենք կարող ենք ապաշխարել, փրկվել մեր մեղքերից և ստանալ հավերժական կյանք:

## Ալմա 11.41–46

*Ամուղեկն ուսուցանում է ողջ մարդկության հարության և դատաստանի մասին:*

Օգնելու համար ուսանողներին խորհել, թե ինչու է կարևոր իմանալը, որ մենք, ի վերջո, հարություն կառնենք և կդատվենք, հարցրեք.

- Ինչպե՞ս որևէ մեկը կապրեր իր կյանքն այլ կերպ, եթե հավատար, որ մահից հետո կյանք չկա:

Գրատախտակին գրեք *Հարություն* և *Դատաստան* բառերը: Ուսանողներին հանձնարարեք մտքում ուսումնասիրել Ալմա 11.41–45, փնտրելով որքան հնարավոր է շատ տեղեկություն հարության ու դատաստանի վերաբերյալ: Երբ ուսանողները պատասխանեն, գրեք այդ պատասխանները գրատախտակին: Համոզվեք, որ գրատախտակին գրված արտահայտություններից մեկը արտահայտում է այն ճշմարտությունը, որ երկրի վրա ապրող բոլոր մարդիկ, ի վերջո, հարություն կառնեն: Մատնանշեք Ալմա 11. 45–ում տրված հարության պարզ սահմանումը. «Նրանք այլևս չեն կարող մեռնել. ոգին միավորվելով մարմնի հետ, որ երբեք չբաժանվի»: (Կարող եք հորդորել ուսանողներին նշել այդ արտահայտությունը:) Ուսանողների պատասխաններից հետո կարող եք առաջարկել, որ նրանք գրեն հետևյալ ճշմարտությունը իրենց սուրբ գրությունների էջի վերևում. **Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով, բոլորը հարություն կառնեն և կդատվեն համաձայն իրենց գործերի:**

- Գրատախտակին գրված ո՞ր ճշմարտություններն են խրախուսում ձեզ պատրաստվել հանդիպելու Աստծուն:
- Ինչո՞ւ է հարության մասին ճշմարտությունը արդարներին տալիս խաղաղություն և հույս:

Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Ալմա 11.46, փնտրելով Ամուղեկի ուսմունքների ազդեցությունը Զիզրոմի վրա:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է ինչ-որ մեկն այդ կերպ արձագանքում Ամուղեկի ուսմունքներին:
- Ձեր կարծիքով, Ալմա 11.41–45 –ի ո՞ր ուսմունքները կարող էին անհանգստացնել Զիզրոմին: Ինչո՞ւ:

Վկայեք, որ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ *բոլոր* մարդիկ հարություն կառնեն և կկանգնեն Աստծո առաջ՝ «դատվելու համաձայն իրենց գործերի» (Ալմա 11.44): Ուսանողներին ժամանակ տվեք խորհելու, թե ինչ նրանք այսօր սովորեցին և ինչպես է այն վերաբերվում իրենց: Այնուհետև թույլ տվեք նրանց գրել հետևյալ

հարցերի պատասխանները տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: (Կարող եք այս հարցերը գրել գրատախտակին:)

- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ մտածում եք, որ հարություն եք առել և դատվել:
- Ի՞նչ պետք է դուք անեք, որպեսզի նախապատրաստվեք Աստծո առաջ կանգնելուն:
- Ինչպե՞ս է ձեր հավատքն առ այն, որ դուք հարություն կառնեք և կդատվեք, ազդում այն որոշման վրա, թե ինչպես դուք կապրեք յուրաքանչյուր օր:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Ալմա 11.38–39. Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսը Հավերժական Հայրը:

Եթե ուսանողները կարիք ունեն հասկանալու, թե ինչպես Հիսուս Քրիստոսը կարող է լինել և՛ Աստծո Որդին և՛ Հավերժական Հայրը, դուք կարող եք ուսուցանել կամ վերանայել 60-րդ դասի Մոսիա 15.1–9 –ի ուսուցանման լրացուցիչ մտքերը:

ԴԱՍ 77

# Ալմա 12

## Նախաբան

Այն բանից հետո, երբ Ամուղեկի խոսքերից Զիզրոմը սկսեց «դողալ իր մեղքի գիտակցությունից» (Ալմա 12.1), Ալման կանգնեց և սկսեց բացատրել այն, ինչ Ամուղեկն էր ուսուցանել: Ալման կենտրոնացավ այն ճշմարտությունների վրա, որոնք կօգնեին Ամմոնիայի ժողովրդին ապաշխարել իրենց սրտերի կարծրությունից և այլ մեղքերից: Նա խոսել է Սատանայի նենգ ծուղակի, ամբարիշտներին սպասվող դատաստանի և փրկագնման ծրագրի մասին, որը հնարավորություն է տալիս ապաշխարողներին ներվել իրենց մեղքերից:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 12.1–7

*Ալման Ամմոնիայի ժողովրդին բացահայտում է Զիզրոմի ծրագիրը —և հակառակորդի ծրագիրը—:*

Հետևեք ցուցադրվող նկարին, որպեսզի մի կտոր պարանով կամ լարով կապեք թակարդ կամ ծուղակ: Ցույց տվեք, թե ծուղակն ինչպես է աշխատում՝ հանգույցի առջև սեղանի վրա կոնֆետ կամ ուտելիք պահելով: Թող որևէ ուսանող ուտելիքի համար ձեռքը հասցնի ծուղակին: Երբ նա անի դա, քաշեք ծուղակը: (Զգույշ եղեք ուսանողին չվնասելու համար:)



Հանձնարարեք որևէ մեկ ուսանողի դասարանի համա կարդալ, թե ինչպես Զիզրոմը փորձեց գցել Ալմային ծուղակ (տե՛ս Ալմա 11.21–25): Բացատրեք, որ, երբ Ամուղեկը հասկացավ Զիզրոմի մտադրությունը և պատասխանեց նրան, Ալման նույնպես պատասխանեց Զիզրոմին և ներկաներին (տե՛ս Ալմա 12.1–2): Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 12.3–6, փնտրելով այնպիսի բառեր կամ արտահայտություններ, որոնք Ալման օգտագործեց Զիզրոմի վարքագիծը նկարագրելու համար: (Կարող եք ուսանողներին հորդորել նշել այս բառերը և արտահայտությունները:) Թույլ տվեք նրանց կիսվել նրանով, ինչ գտել են:

- Ո՞ւմ ծրագրին էր Զիզրոմը հետևում:
- Ըստ Ալմայի խոսքերի, որո՞նք էին դևի մտադրությունները:
- Ի՞նչը օգնեց Ալմային հասկանալ այդ ծրագիրը:

Ուսանողներին հանձնարարեք շարադրել այն սկզբունքները, որոնք ամփոփում են Ալմա 12.3 –ի նրանց սովորածն այն մասին, թե ինչպես նրանք կարող են բացահայտել հակառակորդի խաբեությունը: Թեև ուսանողները կօգտագործեն զանազան բառեր, նրանք պետք է նշեն հետևյալ սկզբունքը. **Սուրբ Հոգին կարող է մեզ օգնել բացահայտել հակառակորդի խաբեությունը:** Կարող եք ուսանողներին հիշեցնել, որ նախորդ դասում նրանք սովորել են, որ երբ մենք ապավինում ենք Սուրբ Հոգուն, մենք կարող ենք հաղթահարել գայթակղությունները: Բացատրեք, որ գայթակղությունը կամ խաբեությունը հաղթահարելու համար, առաջին հերթին, մենք պետք է ճանաչենք դրանք և դրանց առաջացրած վնասը: Այնուհետև մենք պետք է անենք ամեն ինչ, որպեսզի խուսափենք դրանցից:

- Ե՞րբ է Սուրբ Հոգին օգնել ձեզ ճանաչել և խուսափել գայթակղությունից: (Ուսանողների պատասխաններից հետո, կիսվեք ձեր անձնական փորձառությամբ:)

Ուսանողներին ժամանակ տվեք, որպեսզի իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրեն այն մասին, թե ինչպես կարող են

բարելավել իրենց զգայունությունը Սուրբ Հոգու հուշումների հանդեպ այնպես, որ ճանաչեն հակառակորդի ծուղակները և խուսափեն դրանցից:

## Ալմա 12.8–18

*Ալման ուսուցանում է ողջ մարդկության վերջին դատաստանի մասին:*

Ուսանողներին խնդրեք մտածել իրենց հետաքրքրող կարիերայի մասին: Մի քանի-սին հրավիրեք խոսել իրենց հետաքրքրող կարիերայի մասին: Հարցրեք, թե որքան նրանք կվճարեին ուսման վարձավճար իրենց քոլեջի, համալսարանի կամ առևտրի համալսարանում համար, որպեսզի ստանային այն գիտելիքներն ու հմտություն-ները, որոնք անհրաժեշտ են իրենց կարիերայում հաջության հասնելու համար: Հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Քվորումի Առաքյալների անդամ Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ հայտարարությունը: Ուսանողներին հրավիրեք ուշադրություն դարձնել այն «ուսման վարձավճարին», որը մենք պետք է վճարենք, որպեսզի ստանանք հոգևոր գիտելիքներ, ասել է Երեց Բեդնարը:

«Հոգևոր հասկացողությունը. . .պարզապես չի կարող [մեզ] տրվել: Ջանասիրության և ուսումնասիրությամբ ու հավատքով ուսման վարձավճար պետք է վճարվի, որպեսզի ստանանք և անձնապես «տիրանանք» այդպիսի գիտելիքի: Միայն այս ձևով կարող է մտքի եղածը զգացվել սրտում» (“Watching with All Perseverance,” *Ensign* կամ *Liahona,* մայիս 2010, 43):

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 12.7–8: Դասարա-նին հրահանգեք հետևել, փնտրելով նրա ապացույցը, որ Զիզրոմը սկսում էր վճարել հոգևոր «վարձավճարը», որն անհաժեշտ էր հոգևոր գիտելիք ձեռք բերելու համար: Խնդրեք ուսանողներին բացատրել, թե այս հատվածներում ինչն է ցույց տալիս Զիզրոմի սրտի փոփոխության սկիզբը:

Շեշտեք, որ Զիզրոմը Ալմային հարց տվեց հարության մասին: Այդ հարցին անմիջա-պես պատասխանելու փոխարեն, Ալման նրան ուսուցանեց հոգևոր գիտելիք ձեռք բերելու մասին: Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 12.9–11: Դասարանին հանձնարարեք փնտրել այն, ինչ Ալման Զիզրոմին ուսուցանել էր հո-գևոր գիտելիք ձեռք բերելու մասին: Բացատրեք, որ «Աստծո խորհուրդները հոգևոր ճշմարտություններ են, որոնք տրվում են միայն հայտնությամբ: . . . նրանց, ովքեր հնազանդ են ավետարանին» (Սուրբ գրքերի ուղեցույց «Աստծո խորհուրդները», scriptures.lds.org): (Կարող եք այս նախադասությունը գրեք գրատախտակին: Կարող եք նաև առաջարկել, որ ուսանողները իրենց սուրբ գրություններում Ալմա 12.9–ի կողքին գրեն այն):

Ուսանողներին խնդրեք իրենց խոսքերով արտահայտել այն, ինչ Ալմա 12.9–ում Ալման ուսուցանում է նրա մասին, թե ինչ մենք պետք է անենք, որպեսզի ստանանք հոգևոր ճշմարտություն: (Ուսանողները կարող են տարբեր բառեր օգտագործել, սակայն նրանց պատասխանը պետք է արտահայտի **Տերը հայտնի է դարձնում մեզ հոգևոր ճշմարտությունները, համաձայն այն ուշադրության և ջանա-սիրության, որը մենք դարձնում ենք Նրա խոսքերի նկատմամբ:** Կարող եք ուսանողներին հորդորել գրել այս սկզբունքը իրենց սուրբ գրություններում Ալմա 12.9–ի կողքին:)

- Ո՞րն է մեր սրտի վիճակի և հոգևոր ճշմարտություն ստանալու մեր ունակության միջև կապը:

Ալմա 12.10–11-ում մատնանշեք տարբեր հետևանքները նրանց համար, ովքեր չեն կարծրացրել իրենց սրտերը ճշմարտության հանդեպ, և նրանց՝ ովքեր արել են դա:

- Այս հետևանքների մասին գիտելիքն ինչպե՞ս է ազդում ավելի շատ հոգևոր գիտե-լիքի ձգտելու ձեր ցանկության վրա:

Բացատրեք, որ երբ Ալման ուսուցանեց, թե ինչպես մենք կարող ենք իմանալ հոգևոր ճշմարտությունը, նա պատասխանեց Զիզրոմի նախկին հարցին: Ուսանող-ներին հանձնարարեք վերաշարադրել Ալմա 12.8–ում նշված Զիզրոմի հարցը իրենց սեփական բառերով: Հանձնարարեք նրանց մտքում կարդալ Ալմա 12.12–15, ուշադ-րություն դարձնելով, թե Ալման Զիզրոմին ինչ ուսուցանեց հարության ու դատաս-տանի մասին: Մինչ ուսանողները կարդում են, գրեք հետևալը գրատախտակին. *Մենք Աստծո առաջ հաշվետու կլինենք մեր . . . , . . . , և . . . համար:*

Երբ ուսանողներն ավարտեն կարդալը, խնդրեք նրանց ավարտել գրատախտակին գրված նախադասությունը. ***Աստծո առաջ մենք հաշվետու կլինենք մեր մտքերի, խոսքերի և արարքների համար:***

- Ձեր կարծիքով, այս ճշմարտությունը ինչպե՞ս ազդեց Զիզրոմի վրա: (Թող ուսանողները պատասխանը փնտրեն Ալմա 14.6 և 15.3-ում:) Ձեր կարծիքով, ինչո՞ւ այս ճշմարտությունը այսքան ուժեղ ազդեցություն ունեցավ Զիզրոմի վրա: (Կարող եք նշել, որ Զիզրոմը միայն իր համար չէր մտահոգված: Նա մտահոգված էր այն մարդկանց համար, ում նա մոլորեցրել էր:)
- Ինչպիսի՞ մտքերով, խոսքերով և արարքներով են մարդիկ պայքարում նրա դեմ, ինչը կարող է նրանց դատապարտել, եթե նրանք չապաշխարեն: (Որպեսզի օգնեք ուսանողներին խորհել և քննարկել, թե ինչպես նրանց ժամանցի ընտրությունը և լրատվամիջոցները կարող են ազդել նրանց մտքերի, խոսքերի և արարքների վրա, դուք կարող եք օգտվել *Երիտասարդներին զորացնելու համար* , ժամանց և տեսալսողական նյութեր բաժնի խորհրդին:)
- Ի՞նչ տարբերություն կլինի ձեր ամենօրյա ընտրությունների մեջ, եթե դուք հիշեք գրատախտակին գրված ճշմարտությունը:

Նշեք Ալմա 12.14-ի տողատակի ծանոթագրության մասին, որտեղ խաչաձև հղում է արված Մոսիա 4.30-ին, 14 *ա,* և ուսանողներին հանձնարարեք բարձրաձայն կարդալ Մոսիա 4.30: (Կարող եք առաջարկել ուսանողներին նշել այդ հղումը:) Եթե բավարար ժամանակ լինի, թող ուսանողներն անդրադառնան նրան, ինչ գրել են Սուրբ Հոգու հուշումների դեմ իրենց զգայունությունը մեծացնելու մասին: Հրավիրեք նրանց կիսվել որոշ մտքերով, թե ինչպես է Աստծո առաջ իրենց անձնական պատասխանատվության ըմբռնումն ազդում զայթակղությունը ճանաչելու և դրանից խուսափելու իրենց ցանկության վրա:

## Ալմա 12.19–37

### *Ալման բացատրում է, թե ինչպես է փրկության ծրագիրն օգնում մեզ հաղթահարել Անկման ազդեցությունը:*

Ուսանողներին ցույց տվեք Ադամը և Եվան ծնկի են եկել զոհասեղանի առաջ նկարը ((*Ավետարանի նկարների գիրք* [2009], համար 4): Բացատրեք, որ մի մարդ Անթիոնա անունով, ով Ամմոնիայի գլխավոր կառավարիչներից մեկն էր, հարցեր տվեց հարության մասին Ալմայի և Ամուղեկի ուսուցանած բաների մասին: Նա Ալմային հարցրեց, թե ինչպես կարող է մարդկությունը դառնալ անմահ: (Տե՛ս Ալմա 12.20–21:)

Ուսանողներին հարցրեք, թե որքան վստահ կզգան Եկեղեցու ոչ անդամին բացատրելիս, թե ինչպես մենք կարող ենք փրկվել Անկումից: Օգնելու համար նրանց նախապատրաստվել այս ճշմարտությունը որևէ մեկին ուսուցանելուն, թույլ տվեք, որ նրանք փնտրեն հատվածներ այս աղյուսակի մեջ և գրեն իրենց սովորածը համապատասխան սյունակների մեջ: (Մինչ դասի սկիզբը կարող եք նկարել այս աղյուսակը գրատախտակին: Ուսանողներին հանձնարարեք գրել այն իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:)

| Անկման հետևանքները (Ալմա 12.22, 24) | Ի՞նչ էր Աստված արել փրկագնման ծրագիրն իրագործելու համար(Ալմա 12.24–25, 28–33) | Ի՞նչ պետք է մենք անենք, որպեսզի փրկվենք (Ալմա 12.24, 30, 34, 37) |
|---|---|---|
| | | |

Աղյուսակը լրացնելու ընթացքում ուսանողներից ոմանք ձեր օգնության կարիքը կունենան: (Ուսանոնողներին սուրբ գրությունները հասկանալու եղանակներից մեկը նրանց տողատակի ծանոթագրությունների հետ աշխատել սովորեցնելն է: Օրինակ, սուրբ գրության հղումը, որը նշված է 22*գ* –ում, կարող է ուսանողներին օգնել հասկանալ, թե մարդկության համար ինչ է նշանակում լինել կորած և ընկած:) Երբ ուսանողները լրացնեն աղյուսակը, տվեք հետևյալ հարցերը: (Կարող եք գրել այս հարցերը գրատախտակին, որպեսզի ուսանողները մտածեն դրանց պատասխանների մասին, մինչ լրացնում են աղյուսակը:)

***Ուսանողներին անհատապես օգնելը***

Դասարանին տրված հանձնարարության ընթացքում լուռ շրջեք դասարանով, որպեսզի օգնեք ուսանողներին իրենց հանձնարարություններում և օգնեք նրանց չշեղվել վարժությունից: Այդ անելով, դուք հնարավորություն կունենաք ամրապնդել ձեր հարաբերությունները յուրաքանչյուր ուսանողի հետ և լավագույնս հասկանալ նրանց կարիքները:

- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի Քավությունն օգնում մեզ հաղթահարել Անկման հետևանքները: (Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք բոլորս կհաղթահարենք ֆիզիկական մահը հարության միջոցով: Եվ Փրկչի Քավության ու մեր ապաշխարության միջոցով, մենք կարող ենք վերադառնալ Աստծո մոտ մեր «կորած ու ընկած» վիճակից:)
- Ըստ Ալմա 12.24–ի, ի՞նչ ուսուցանեց Ալման կյանքի նպատակի մասին: (Նա ասաց, որ **այս կյանքը դարձավ մի ժամանակ՝ պատրաստվելու համար հանդիպելու Աստծուն:** Կարող եք առաջարկել, որպեսզի ուսանողները Ալմա 12.24–ում նշեն այն արտահայտությունները, որոնք ուսուցանում են այս ճշմարտությունը:)

Որպեսզի օգնեք ուսանողներին կիրառել այն ամենն, ինչ սովորել են, տվեք նմանատիպ հարցեր.

- Ինչպե՞ս է կյանքի նպատակի իմացությունը առաջնորդում ձեզ:
- Ինչպե՞ս է Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը նախապատրաստել ձեզ հանդիպելու Նրանց:

Ամփոփեք ձեր վկայությամբ, որ այժմ ժամանակն է նախապատրաստվել հանդիպելու Աստծուն:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Ալմա 12.24. «Փորձնական վիճակ»

Բոլոր սուրբ գրություններում «փորձնական վիճակ» կամ «փորձնական ժամանակ» արտահայտությունները հանդիպում են միայն Ալմայի գրքում (տե՛ս Ալմա 12.24; 42.4, 10, 13): Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Երեց Լ. Թոմ Փերին նկարագրում է այս փորձնական ժամանակը.

«Երկրային կյանքի հիմնական նպատակն է հնարավորություն տալը մեր հոգիներին, որոնք գոյատևել են մինչև Երկրի ստեղծումը, միավորվել մեր մարմինների հետ մահկանացու կյանքում: Այս երկուսի միավորումը մեզ հնարավորություն է տալիս աճել, զարգանալ և հասունանալ, որը միայն հնարավոր է հոգու և մարմնի միավորման դեպքում: Մեր մարմնով մենք անցնում ենք որոշակի քանակի փորձությունների միջով, որոնցով և պայմանավորված է մեր գոյության փորձնական ժամանակը: Սա փորձվելու և սովորելու ժամանակ է, որպեսզի ապացուցենք, որ արժանի ենք հավերժական հնարավորություններին: Դրանք բոլորը Աստվածային ծրագրի մասն են, որը մեր Հայրը պատրաստել է Իր զավակների համար» (“Proclaim My Gospel from Land to Land,” *Ensign,* May 1989, 14):

ԴԱՍ 78

# Ալմա 13

## Նախաբան

Երբ Ալման առաջին անգամ ուսուցանեց Ամմոնիայի ապստամբ ժողովրդին, նրանք վիճեցին նրա հետ, ասելով. «Ո՞վ ես դու», և կասկածի տակ դրեցին նրա հեղինակությունը (տե՛ս Ալմա 9.1–6): Նրանք ուրացության վիճակում էին, և հարում էին Նեորի կարգին՝— քահանանենգությունը դրած լինելով որպես անձնական շահի նպատակ (տե՛ս Ալմա 1.2–15; 15.15; 16.11): Նեորի ուսմունքներին հակառակ Ալման նրանց ուսուցանում էր «Աստծո սուրբ կարգի բարձրագույն քահանայություն», նպատակ ունենալով օգնել մյուսներին ապաշխարել և մտնել Տիրոջ հանգիստը (տե՛ս Ալմա 13.6): Նա վկայակոչեց Մելքիսեդեկի օրինակը, ով հավատք ու ապաշխարություն էր ուսուցանում և պահում իր ժողովրդին խաղաղության մեջ: Ալման նաև ուսուցանեց նախամահկանացու կյանքի նախասահմանվածության մասին: Նա իր քարոզն ավարտեց, մարդկանց հրավիրելով ականջ դնել իր խոսքերին, որպեսզի նրանք կարողանային նախապատրաստվել մտնել Տիրոջ հանգիստը:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 13.1–12

*Ալման ուսուցանում է Ամմոնիայի ժողովրդին բարձրագույն քահանայության կոչման մասին:*

Բացատրեք, որ Ալմա 13-ը պարունակում էԱլմայի ուսմունքները մի խումբ մարդկանց մասին, ովքեր մեծ արժեք ունեն Եկեղեցու համար: Ի դեպ, Եկեղեցու բոլոր անդամներն օրհնվել են այդ մարդկանց ծառայությունից:

Ուսանողներին ասացեք, որ իրենք ճանաչում են այդ խմբի մարդկանցից ոմանց: Այնուհետև խնդրեք, որպեսզի ուսանողները մտքում կարդան Ալմա 13.1 և գտնեն, թե ովքեր են այդ մարդիկ: Այդ հատվածը կարդալուց հետո, առաջարկեք, որ նրանք նաև կարդան Ալմա 13.10, 14 և Վարդապետություն և Ուխտեր 107.1–3: Կարող եք առաջարկել, որ նրանք գրեն այդ հղումները Ալմա 13.1–ի կողքին:

Նշեք, որ Ալման խոսեց Աստծո սուրբ կարգի քահանայության մասին, որը Մելքիսեդեկյան քահանայությունն է: Այլ կերպ ասած, նա խոսեց մի մարդու մասին, ով Մելքիսեդեկյան քահանայությունում ուներ բարձրագույն քահանայի կոչում: Ուսանողներին հանձնարարեք կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Երեց Բրյուս Ռ. Մակքոնքիի հետևյալ հայտարարությունը.

«Այդ Նեփիացիները, որոնք հավատարիմ ու ճշմարիտ էին Մովսեսի օրենքներին, ունեին Մելքիսեդեկյան քահանայություն, որը նշանակում է, որ նրանք նույնպես ունեին ավետարանի լրիվությունը: . . . Մելքիսեդեկյան քահանայության մասին մեր լավագույն տեղեկություններից մեկը գտնվում է Ալմա 13-ում» (*The Promised Messiah* [1978], 421):

- Ձեր կյանքում ինչպիսի՞ օրհնություններ եք ստացել Մելքիսեդեկյան քահանայության շնորհիվ: (Ուսանողները կարող են նշել Սուրբ Հոգու պարգևը, հայրապետական օրհնությունը, այլ քահանայության օրհնություններ, Գերագույն Իշխանավորների առաջնորդությունը, տեղական ղեկավարների՝ եպիսկոպոսների և ճյուղի նախագահների առաջնորդությունը, և տաճարում իրենց ծնողների կապած ուխտերի հետևանքով ստացած օրհնությունները: Նրանք նաև կարող են նշել մկրտությունը և հաղորդությունը, որն իրականացվում է Ահարոնյան քահանայության իշխանությամբ, սակայն Մելքիսեդեկյան քահանայության ղեկավարների ցուցումների ներքո:)

Հետևյալ հարցերը գրեք գրատախտակին կամ թղթերի վրա, որոնք կբաժանեք ուսանողներին: Ժամանակ տվեք ուսանողներին կարդալ Ալմա 13.2–10 և գտնել հարցերի պատասխանները:

*Ե՞րբ են առաջին անգամ Մելքիսեդեկյան քահանայություն կրողները կանչվել ու պատրաստվել (տե՛ս Ալմա 13.3–5):*

***Ուսուցանեք ուսանողներին, ոչ թե դասի նյութը***

Ձեր մեծագույն պատասխանատվությունն է օգնել ուսանողներին հասկանալ ավետարանի ճշմարտությունները և կիրառել այդ ճշմարտություններն իրենց կյանքում: Խուսափեք դասերն արագ անցնելու գայթակղությունից, որպեսզի հասցնեք վերջացնել ամբողջ նյութը: Հիշեք, որ դուք ուսուցանում եք ուսանողներին, ոչ թե դասի նյութը:

*Ի՞նչ պարտականություններ ունեն Մելքիսեդեկյան քահանայություն կրողները (տե՛ս Ալմա 13.6)։*

*Ալմա 13.7-ում ո՞ր նախադասություններն են նկարագրում Մելքիսեդեկյան քահանայությունը։*

*Որո՞նք են այն մի քանի հատկանիշները, որոնք անհրաժեշտ են Մելքիսեդեկյան քահանայությանը կարգվելու համար (տես Ալմա 13.10)։*

Պատասխանները գտնելուց հետո, խնդրեք ուսանողներին կիսվել իրենց պատասխաններով։ Կարող եք նրանց հարցերը գրել գրատախտակին։

Օգնելու համար ուսանողներին հետազայում ավելի լավ հասկանալ ու քննարկել իրենց կարդացածը, տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ ձևով էր քահանայություն կրողների ծառայությունն օգնում մեզ իմանալ, թե ինչպես նայել Հիսուս Քրիստոսին փրկագնման համար։ (Տե՛ս Ալմա 13.2, 8, 16։ Իրենց օրինակով, ուսմունքներով և արարողություններով, որ կատարում են, նրանք մատնանշում են մեզ Փրկչի կողմը։)
- Ի՞նչ նկատի ուներ Ալման, երբ ասաց, որ բարձրագույն քահանաները «կանչված ու պատրաստված աշխարհի հիմնադրումից ի վեր»։ (Ալմա 13.3)։ (Նա նկատի ուներ, որ որոշ մարդիկ նախասահմանված էին ստանալու որոշակի քահանայության կոչումներ։)

Օգնելու համար ուսանողներին հասկանալ նախասահմանվածությունը և թե ինչպես է այն կիրառվում մեր կյանքում, կարող եք խնդրել ուսանողներին կարդալ հետևյալ հայտարարությունները։

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է. «Յուրաքանչյուր մարդ, ով ունի կոչում ծառայելու երկրի բնակչությանը, կարգվել է այդ նպատակին մինչ այս աշխարհի ստեղծումը տեղի ունեցած երկնքի մեծ խորհրդի ժամանակ» (*Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 511)։

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է. «Մինչև այս աշխարհը գալը հավատարիմ կանանց տրվել էր որոշակի հանձնարարություն, մինչդեռ հավատարիմ տղամարդկանց նախասահմանվել էին որոշակի քահանայության առաջադրանքներ։ Թեև մենք այժմ չենք հիշում մանրամասները, դա չի փոխում այն փառահեղ իրականությունը, որը մենք ընդունել ենք» ( *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Սպենսեր Վ. Քիմբալ* [2006], 215–16)։

- Ըստ Ալմա 13.3 -ի, ի՞նչ մենք պետք է անենք, որպեսզի կատարենք մեր նախասահմանված առաքելությունները։
- Երբ մարդը կարգվում է քահանայության կոչման, ի՞նչ պետք է այդ կարգումը նշանակի նրա համար։ (Տե՛ս Ալմա 13.8։ Ուշադրություն դարձրեք, որ այս հարցին կարող են պատասխանել ինչպես երիտասարդ կանայք, այնպես էլ երիտասարդ տղամարդիկ։)

Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Ալմա 13.11–12, փնտրելով այն փոփոխությունը, որն ըստ Ալմայի, տեղի ունեցավ Մելքիսեդեկյան քահանայություն կրողների մոտ՝ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով։

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում որևէ մեկի համար «հանդերձները լվացվեցին ճերմակ՝ Գառան արյան միջոցով» արտահայտությունը։
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ պետք է Մելքիսեդեկյան քահանայություն կրողները փոխվեն Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով։ Ինչպե՞ս մենք կարող ենք հետևել նրանց օրինակին։

Ուսանողներին հիշեցրեք, որ Ալման այդ ճշմարտությունները ուսուցանեց Ամմոնիայի ժողովրդին։ Այդ մարդկանցից շատերը «Նեռրի դավանանքից էին» (Ալմա 14.18; 15.15), այսինքն՝ նրանք հարում էին Նեռրի ուսմունքներին։ Նեռրը մի մարդ էր, ով ստեղծել էր կեղծ կարգ, որն Ալման անվանեց «քահանանենգություն» (տե՛ս Ալմա 1.12–15)։

- Ինչպե՞ս էին տարբերվում հավատարիմ Մելքիսեդեկյան քահանայություն կրողները նրանցից, ովքեր հետևեցին Նեռրի ուսմունքներին։ (Կարող եք հանձնարարել ուսանողներին կրկնել Ալմա 1.2–6, փնտրելով Նեռրի քահանանենգության և Մելքիսեդեկյան քահանայության տարբերությունները։)
- Ամմոնիայի ժողովուրդը նախկինում ուսուցանվել էր Մելքիսեդեկյան քահանայության մասին և ստացել օրհնություններ Մելքիսեդեկյան քահանայության միջոցով

(տե՛ս Ալմա 9.21; 13.1)։ Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր կարևոր Ամմոնիայի ժողովրդի համար, որ նրանք հիշեին նախկինում Մելքիսեդեկյան քահանայության մասին իրենց գիտելիքի մասին։

- Մինչև այս պահը, ի՞նչ եք սովորել քահանայության մասին։ (Մինչ ուսանողները կառաջարկեն բազմաթիվ ճշմարտություններ, նրանց պատասխանները պետք է արտահայտեն, որ **քահանայության արարողությունները և քահանայություն կրողների ծառայությունը օգնում են մեզ իմանալ, թե ինչպես նայել Հիսուս Քրիստոսին փրկագնման համար։** )

Կարող եք առաջարկել, որ ուսանողները գրեն իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում այդ սկզբունքը և մյուս սկզբունքները, որոնք գտել են։ Եթե ժամանակը թույլ տա, խնդրեք նրանց գրել, թե ինչպես են այդ սկզբունքներն ազդել քահանայության օրհնությունների և զորության մասին իրենց տեսակետների վրա։

## Ալմա 13.13–20

*Ալման ուսուցանում էՄելքիսեդեկի՝ հայտնի քահանայապետի մասին, ով հաստատեց խաղաղություն իր ժողովրդի մեջ։*

Հետևյալ բառերն ու արտահայտությունները գրեք գրատախտակին. *քահանայապետ, թագավոր, կիրառեց զորեղ հավատք, քարոզեց ապաշխարություն, հաստատեց խաղաղություն, խաղաղության իշխան, թագավորեց իր հոր ներքո։* Յուրաքանչյուր բառը գրելիս դադար տվեք, որպեսզի թույլ տաք ուսանողներին գուշակել, առանց սուրբ գրություններին նայելու, թե ում էր Ալման այդ բառերով և արտահայտություններով նկարագրում։ (Նա նկարագրում էր Մելքիսեդեկին։) Եթե ուսանողները ճիշտ չեն գուշակել ձեր բոլոր բառերը և արտահայտությունները գրատախտակին գրելուց հետո, թող նրանք կարդան Ալմա 13.14։

Եթե որոշ ուսանողներ մտածեն, որ Ալման խոսում է Հիսուս Քրիստոսի մասին, հարցրեք նրանց, թե ինչու է արդար քահանայապետի նկարագրությունը նրանց հիշեցնում Հիսուս Քրիստոսին։ Օգնեք նրանց հասկանալ, որ Մելքիսեդեկյան քահանայություն կրողները «ըստ Որդու կարգի՝ Հոր Միածնի» են (Ալմա 13.9; տե՛ս նաև ՎԵՈՒ 107.2–4)։ Նշեք, որ Մելքիսեդեկյան քահանայություն կրողները պետք է ձգտեն հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին՝ իրենց ծառայությունների ու ուսմունքների ընթացքում։ Նաև հիշեցրեք ուսանողներին, որ Մելքիսեդեկյան քահանայության իշխանությամբ կատարված արարողություններն օգնում են մեզ ավելի մոտենալ Փրկչին։

Հանձնարարեք մեկ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 13.14–19։ Դասարանին հորդորեք մտածել, թե ինչպես Ամմոնիայի ամբարիշտ ժողովուրդը կարող էր օգուտ ստանալ Մելքիսեդեկի մասին իմանալուց։

- Ալմա 13.17-ում ո՞ր բառերն են նկարագրում Մելքիսեդեկի ժողովրդին։ Ինչպիսի՞ ննմանություն ուներ այդ ժողովուրդը Ամմոնիայի ժողովրդի հետ։ (Տե՛ս Ալմա 8.9; 9.8։)
- Որպես ղեկավար ի՞նչ արեց Մելքիսեդեկը իր ժողովրդի համար։ Ինչպե՞ս նրա առաջնորդությունն ազդեց ժողովրդի վրա։ Ինչո՞վ էր այս ազդեցությունը տարբերվում Ամմոնիայի այն մարդկանց ազդեցությունից, ովքեր հետևեցին Նեոռին։ (Տե՛ս Ալմա 8.17; 10.27, 32։)

Ուսանողներին հանձնարարեք ամփոփել Ալմա 13.16–18, արտահայտելով այս հատվածների այն ճշմարտությունները, որոնք ուսուցանում են քահանայության ղեկավարների պարտականությունների մասին։ Երբ նրանք ներկայացնեն ամփոփումը, համոզվեք, որ նրանք արտահայտում են, որ **քահանայության ղեկավարներն օգնում են մեզ նայել Հիսուս Քրիստոսին, ապաշխարել և ապրել խաղաղությամբ։** (Կարող եք ուսանողներին հորդորել գրել իրենց ամփոփումները իրենց սուրբ գրություններում Ալմա 13.16–18–ի կողքին։) Նշեք, որ Եկեղեցու այլ ղեկավարներ, ինչպես օրինակ՝ Ստփոփող Միության և Երիտասարդ Կանանց ղեկավարները այդ ջանքերի հիմնական մասնակիցներն են։ Քահանայության ղեկավարների հետ ծառայելով, նրանք օգնում են առաջնորդել անհատներին և ընտանիքներին գալ դեպի Քրիստոսը։

- Ինչպե՞ս եք դուք օրհնվել Եկեղեցու ղեկավարների ծառայության միջոցով։

## Ալմա 13.21–31

*Ալման հրավիրում է ժողովրդին լսել Տիրոջ ձայնը և մտնել Նրա հանգիստը:*

Ուսանողներին հանձնարարեք գտնել այն միտքը, որը կրկնվում է Ալմա 13.12, 13, 16, 29–ում: Նրանք պետք է գտնեն *հանգիստ* բառը և «Տիրոջ հանգիստը»: Կարող եք նրանց հորդորել նշել այդ միտքը յուրաքանչյուր հատվածում: Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչ է նշանակում մտնել Տիրոջ հանգիստը այս կյանքում և մեր մահից հետո, կարդացեք հետևյալ հայտարարությունները.

«Հնագույն մարգարեները ասել են «մտնել Տիրոջ հանգիստը» [տե՛ս Ալմա 12.34; ՎևՈւ 84.23–24]: Ի՞նչ է դա նշանակում: Իմ կարծիքով, դա նշանակում է մտնել Աստծո իմացության ու սիրո մեջ, ունենալ հավատք Նրա ծրագրի և նպատակների հանդեպ այնքանով, որ մենք գիտենք դրա ճշմարտացիության մասին և մենք չենք հետապնդում որևէ այլ բան» (Joseph F. Smith, *Teachings of Presidents of the Church: Joseph F. Smith* [1998], 56):

«Ճշմարիտ Սրբերը մտնում են *Տիրոջ հանգիստը*, քանի դեռ այս կյանքում են, և հաստատուն մնալով ճշմարտությանը, նրանք շարունակում են մնալ այդ օրհնված վիճակում մինչև նրանք երկնքում հանգստանան Տիրոջ հետ: . . .Հավերժության մեջ Տիրոջ հանգիստը, դա հավերժական կյանքի ժառանգումն է, Տիրոջ փառքի լիությունը ձեռք բերելը» (Bruce R. McConkie, *Mormon Doctrine,* 2nd ed. [1966], 633):

Բացատրեք, որ Ալման հորդորում էր Ամմոնիայի ժողովրդին ապաշխարել և պատրաստվել Քրիստոսի գալստյանը (տե՛ս Ալմա 13.21–26: Այնուհետև նա կիսվեց սկզբունքով, որին նրանք պետք է հետևեին, որպեսզի մտնեին Տիրոջ հանգիստը:

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 13.27:

- Ալմա 13.27 -ում ո՞ր բառն է ցույց տալիս, թե ինչ էր Ալման զգում իր ժողովրդի հանդեպ և իր պատգամի մասին:

Մի քանի ուսանողների հանձնարարեք բարձրաձայն կարդալ Ալմա 13.27–29: Դասարանին խնդրեք գտնել այն սկզբունքը, որին, Ալման հույսով էր, ժողովուրդը կհետևեր: Այնուհետև խնդրեք ուսանողներին թվել այն սկզբունքները, որոնք իրենք գտել են: Օրինակ, նրանք կարող են ասել՝ **եթե մենք խոնարհաբար արձագանքենք ապաշխարելու հրավերին, Հոգին կառաջնորդի մեզ դեպի Տիրոջ հանգիստը:**

Ուսանողներին հանձնարարեք գրել նպատակներ, որոնք վերաբերվում են նրան, թե ինչպես նրանք կարող են հետևել Ալմա 13.27–29–ի խորհրդին: Վկայեք, որ մենք կարող են մտնել Տիրոջ հանգիստը այս կյանքում և հաջորդ կյանքում, հետևելով Ալմայի ուսուցանած սկզբունքներին:

ԴԱՍ 79

# Ալմա 14

## Նախաբան

Ալմայի և Ամուղեկի քարոզը լսելուց հետո, որոշ մարդիկ Ամմոնիայում հավատացին և ապաշխարեցին: Ժողովրդի մեծ մասը բարկացած էին և ձգտում էին կործանել Ալմային, Ամուղեկին և նրանց, ովքեր հավատացել էին նրանց խոսքերին: Ալման և Ամուղեկը ձերբակալվեցին, դատվեցին և, ի վերջո, բանտարկվեցին: Ամմոնիայի ամբարիշտ մարդիկ դուրս գցեցին տղամարդկանց, ովքեր հավատում էին, և այրեցին նրանց կանանց, երեխաներին և սուրբ գրությունները, մինչ Ալմային և Ամուղեկին ստիպում էին նայել: Շատ օրեր անց Տերն Ալմային և Ամուղեկին բանտից ազատեց և կործանեց Ամմոնիայի ամբարիշտ ղեկավարներին:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 14.1–13

*Ալման և Ամուղեկը բանտարկվում են, իսկ հավատացող Ամմոնիացիները դուրս են գցվում կամ այրվում են:*

Հրավիրեք ուսանողներին մտածել անցյալում ունեցած կամ ներկայիս մարտակոչերի մասին:Ապա հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ հետևյալ միտքը.

«Չախորդությունը գալիս է տարբեր աղբյուրներից: Երբեմն, դուք գուցե հանդիպեք փորձությունների, որոնք հանդիսանում են ձեր հպարտության և անհնազանդության արդյունքը: Այս փորձություններից կարելի է խուսափել արդարակյաց ապրելակերպով: Մյուս փորձություններն ուղղակի կյանքի բնական մասն են և կարող են գալ, երբ դուք արդարակյաց եք ապրում: Օրինակ՝ դուք գուցե դիմակայեք փորձությունների՝ կապված հիվանդության կամ անորոշության կամ էլ սիրելիների մահվան հետ: Չախորդությունը, գուցե, երբեմն գա մյուսների վատ ընտրությունների պատճառով և վիրավորական խոսքերի կամ գործողությունների հետևանքով:

Ձեր հաջողությունը և երջանկությունը, ինչպես այժմ, այնպես էլ՝ հավերժություններում, հիմնականում կախված են կյանքի դժվարություններին ձեր արձագանքելու ձևից» (*Հավատքին հավատարիմ. ավետարանական վկայակոչում,* [2004], 8–9):

Բացատրեք, որ այսօրվա դասի ժամանակ ուսանողները կքննարկեն մի ժողովրդի

| *Ալմա և Ամուղեկ* | *Զիզրոմ* | *Տղամարդ նորադարձներ* | *Կին նորադարձներ և երեխաներ* |
|---|---|---|---|

պատմություն, որը տարավ սոսկալի փորձություններ: Այդ փորձությունների մեծ մասը ուրիշների պատճառով էր առաջ եկել: Քաջալերեք ուսանողներին մտածել, թե ինչպես են այն ճշմարտությունները, որոնք նրանք քննարկում են այս դասում, վերաբերում իրենց՝ անկախ նրանից, թե ինչ փորձությունների նրանք կարող է դիմակայեն:

Գրատախտակին գրեք հետևյալը.

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 14.1–10 հատվածները: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել՝ որոնելով մարդկանց կողմից տարած տառապանքների օրինակներ, որոնք թվարկվում են գրատախտակին:

- Ինչի՞ց էին տառապում այդ մարդիկ: (Ուսանողների պատասխանները գրի առեք գրատախտակին):

Նշեք, որ երբ Ամուղեկը տեսավ կանանց և երեխաների տառապանքը, նա կամեցավ գործի դնել քահանայության զորությունը՝ նրանց փրկելու համար: Առաջարկեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 14.11 հատվածը և խնդրեք դասարանին փնտրել Ամուղեկի խնդրանքին Ալմայի պատասխանը:

- Ինչո՞ւ Տերը թույլ տվեց, որ այդ կանայք և երեխաներն այրվեին: (Գուցե կարիք լինի բացատրել, որ այս հատվածում, «հանդուրժում է» արտահայտությունը նշանակում է «թույլ է տալիս»: Տերը թույլ է տալիս, որ ժողովուրդը տառապի, որպեսզի նրանց մահը կանգնի որպես վկայություն այն մարդկանց դեմ, ովքեր սպանեցին նրանց: Տես նաև Ալմա 60.13:)
- Ըստ Ալմայի, ինչպե՞ս էին օրհնվելու կանայք և երեխաները՝ Տիրոջ հանդեպ իրենց վստահության համար:

Կարող եք շեշտել, որ այս առանձնահատուկ դեպքում Տիրոջ կամքն էր՝ թույլ տալը մարդկանց տառապել: Այնուամենայնիվ, միշտ չէ, որ դա այդպես է: Հավաստիացրեք ուսանողներին, որ Տերը սիրում է իրենց և ուզում է, որ նրանք երջանիկ լինեն և ունենան խաղաղություն իրենց կյանքում: Եթե նրանց ցավ են պատճառում կամ վիրավորում ինչ որ ձևով, նրանք պետք է օգնություն որոնեն ծնողից կամ Եկեղեցու ղեկավարից, որպեսզի կարողանան լուծել խնդիրը:

- Որո՞նք են որոշ այլ պատճառները, որոնցով Տերը կարող է թույլ տալ մեզ տառապել: (Պատասխանները կարող են ներառել, որ Նա կամենում է, որ մենք հասկանանք ոչ իմաստուն որոշումների հետևանքները, որ Նա կամենում է, որ մենք համբերատարություն զարգացնենք, որ Նա կամենում է, որ մենք տառապող մարդկանց վիճակի մեջ մտնելու կարողություն ձեռք բերենք, և որ Նա կամենում է, որ մենք հասկանանք, որ պետք է ապավինենք Իրեն:)

Գրեք հետևյալ ճշմարտությունը գրատախտակին. ***Երբ մենք վստահում ենք Տիրոջը, Նա զորացնում է մեզ մեր փորձությունների մեջ:*** Ապա խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 14.12–13 հատվածները:

- Ինչպե՞ս Ալմայի խոսքերը ցույց տվեցին նրա վստահությունն առ Տերը:

Խնդրեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ միտքը.

«Ալմայի և Ամուղեկի օրինակը լուսավորում է մեզ: Մինչ նրանք ձգտում էին բարիք անել Ամմոնիայի ժողովրդին, նրանց գերի վերցրեցին:Ամուղեկը վստահում էր իր ավելի փորձառու ընկերակից Ալմային, որը նրան առաջնորդում էր դեպի ավելի մեծ վստահություն Տիրոջ հանդեպ: Հարկադրված լինելով նայել կանանց և երեխաներին, ովքեր այրվում էին կրակի մեջ, Ամուղեկն ասաց. «Ահա, գուցե նրանք մեզ էլ այրեն»: Ալման պատասխանեց. *«Թող լինի համաձայն Տիրոջ կամքի»:* Դա մի կենսական սկզբունք է: «Բայց . . . մեր գործը չի ավարտվել, հետևաբար նրանք չեն այրի մեզ» [Ալմա 14.12–13, շեշտադրումն ավելացված է]» (“To Be Healed,” *Ensign,* May 1994, 8):

«Այս կյանքը խորը վստահության փորձառություն է՝ վստահություն առ Հիսուս Քրիստոս: . . . Վստահել նշանակում է հնազանդվել հոժարակամորեն, առանց իմանալու վերջը սկզբից ի վեր (տես Առակաց Գ.5–7): Արդյունք տալու համար Տիրոջ հանդեպ ձեր վստահությունը պետք է լինի ավելի զորեղ և տոկուն, քան ձեր անձնական զգացմունքների և փորձի հանդեպ վստահությունը» (“Trust in the Lord,” *Ensign,* Nov. 1995, 17):

Բացատրեք, որ Ալմա 14.14–29-ում ուսանողները կհանդիպեն Տիրոջն ապավինելու Ալմայի և Ամուղեկի ավելի շատ օրինակների: Նրանք նաև կտեսնեն, թե ինչպես Տերը զորացրեց նրանց, որպեսզի նրանք կարողանային կատարել Իր աշխատանքը:

## Ալմա 14.14–29

*Աստված ազատում է Ալմային և Ամուղեկին բանտից և կործանում Ամմոնիայի բազմաթիվ ամբարիշտ ղեկավարներին:*

Դասարանը բաժանեք երկու կեսի: Հանձնարարեք դասարանի կեսին հետազոտել Ալմա 14.4–19-ը, մինչ մյուս կեսը հետազոտում է Ալմա 14.20–25-ը: Խնդրեք երկու խմբերին գտնել, թե ինչ տարան Ալման ու Ամուղեկը Ամմոնիայի ամբարիշտ ղեկավարների ձեռքից, և խնդրեք նրանց կիսվել իրենց գտածով: Գրի առեք նրանց պատասխանները գրատախտակին «Ալմա և Ամուղեկ» վերնագրի ներքո:

- Այս փորձություններից ո՞րը ձեզ համար ամենադժվարը կլիներ: Ինչո՞ւ:

- Ե՞րբ եք տեսել, որ մարդիկ փորձություններից տառապեն, թեև ձգտում են արդարակյաց լինել:

Հրավիրեք ուսանողներին հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 14.25–29 հատվածները : Խնդրեք դասարանին հետևել, գտնելով, թե Տերն ինչ արեց՝ Ալմային և Ամուղեկին բանտից ազատելու համար: Ուսանողներին օգնելու համար գտնել և հասկանալ այդ հատվածների սկզբունքները, տվեք հետևյալ հարցերը՝ մի քանիսը, կամ բոլորը.

- Ինչո՞ւ էին Ալման և Ամուղեկը կարողանում զորություն և ուժ ստանալ Տիրոջից: (տես Ալմա 14.26, 28):
- Ի՞նչ սկզբունքներ կարող ենք մենք սովորել Ալմայի և Ամուղեկի բանտում ունեցած փորձառությունից: (Ուսանողների պատասխանները կարող են տարբերվել, բայց դրանք պետք է արտացոլեն այն ճշմարտությունը, որ **եթե մենք աղաղակենք առ Տերը հավատքով, Նա կզորացնի մեզ մեր չարչարանքներում և կազատի մեզ Իր ձևով և Իր իսկ ժամանակին:** Հանձնարարեք ուսանողներին նշել արտահայտություններըԱլմա 14.26, 28 հատվածներում, որոնք շեշտում են այս սկզբունքը:)
- Որո՞նք են ուղիներից մի քանիսը, որոնցով մարդիկ կարող են հավատք գործադրել առ Հիսուս Քրիստոս դժվար ժամանակ:

Հրավիրեք ուսանողներին կիսվել փորձառություններով, որոնք նրանք ունեցել են, երբ ականատես են եղել այն ուժին, որը կարող է գալ մեր կյանք, երբ մենք հավատք ենք գործադրում առ Հիսուս Քրիստոս և խոնարհաբար ծառայում Նրան:Նրանք կարող են կիսվել իրենց իսկ փորձառություններով կամ իրենց ծանոթ մարդկանց փորձառություններով: Դուք կարող եք նաև կիսվել փորձառությամբ ձեր կամ ինչ որ մեկի կյանքից, ում դուք գիտեք:

Եզրափակեք, վկայելով մեզ ուժ տալու և Իր իսկ ձևով և Իր իսկ ժամանակին փորձանքներից ազատելու Տիրոջ զորության մասին: Հավաստիացրեք ուսանողներին, որ երբ մենք վստահենք Տիրոջ կամքին, Նա կմեծացնի դժվարություններին դիմանալու մեր ուժն ու զորությունը:

***Անձնական փորձառություններ***

Ուսանողները կարող են օգուտ քաղել, լսելով միմյանց անձնական փորձառությունները: Քաջալերեք նրանց կիսվել փորձառություններով մի ձևով, որը կհրավիրի Սուրբ Հոգու ազդեցությունը և կառաջնորդի նրանց հետևել Փրկչին: Զգուշացրեք նրանց, որ չկիսվեն փորձառություններով, որոնք խիստ անձնական են կամ կարող են առաջացնել անհարմարության կամ սրտնեղության զգացում:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Ալմա 14.7–11: «Տերն ընդունում է նրանց վեր՝ իր մոտ»

Չնայած մենք սգում ենք արդարների մահը, մենք ուրախանում ենք, իմանալով հոգևոր աշխարհում նրանց պարգևների մասին (տես Ալմա 40.12) և նրանց վերջնական վիճակի մասին սելեստիալ արքայությունում (տեսՎԱՈՒ 76.50–70): Տերն ասել է. «Նրանք, ովքեր մահանում են ինձանում, մահ չեն ճաշակի, քանզի այն քաղցր կլինի նրանց համար» (ՎԱՈՒ 42.46): Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը բացատրել է.

«Ճիշտ է, որ բավականին թույլ եմ՝ արտասվելով ընկերներիս և ազգականներիս մահվան համար: Ես գուցե արտասուք թափեմ, երբ տեսնեմ ուրիշների վիշտը: Ես կարեկցանք ունեմ հոգումս մարդկանց զավակների հանդեպ: Ես կարող է արտասվեմ նրանց հետ, երբ նրանք արտասվում են, ես, կարող է, ուրախանամ նրանց հետ, երբ նրանք ուրախանում են, բայց ես պատճառ չունեմ սգալու կամ տրտում լինելու, որովհետև մահն աշխարհ է գալիս:. . . Այս մահվան ողջ վախը վերացվել է Վերջին Օրերի Սրբերից: Նրանք սոսկում չունեն ժամանակավոր մահից, որովհետև նրանք գիտեն, որ ինչպես որ մահը եկավ նրանց վրա Ադամի օրինազանցությամբ, այնպես էլ Հիսուս Քրիստոսի արդարությամբ կյանք կգա նրանց, և չնայած նրանք մահանում են, նրանք կրկին կապրեն: Այս գիտելիքն ունենալով, նրանք ուրախություն ունեն նույնիսկ մահվան մեջ, քանզի նրանք գիտեն, որ կրկին բարձրանալու են և հանդիպելու են նորից գերեզմանից այն կողմում» (in Conference Report, Oct. 1899, 70):

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին Տասներկու Առաքյալների Քվորումից ուսուցանել է.

«Երբեմն Տիրոջ ժողովուրդը հետապնդվում է և հալածվում: Երբեմն Նա դիտավորյալ թողնում է Իր հավատարիմ սրբերին վարանելու և տառապելու՝ ինչպես մարմնով, այնպես էլ՝ հոգով՝ ստուգելու նրանց բոլոր բաներում և տեսնելու, թե նրանք կմնան Իր ուխտի մեջ, նույնիսկ, մինչև մահ, որպեսզի նրանք կարողանան արժանի գտնվել հավերժական կյանքին: Եթե այդպիսին լինի մեզանից որևէ մեկի ճակատագիրը, թող լինի այդպես» (“The Dead Who Die in the Lord,” *Ensign,* Nov. 1976, 108):

ԴԱՍ 80

# Ալմա 15–16

## Նախաբան

Նրանից հետո, երբ Տերն ազատեց բանտից Ալմային և Ամուղեկին, նրանք գնացին քարոզելու Սիդոմ քաղաքի ժողովրդին: Այնտեղ նրանք գտան հավատացյալներին, ովքեր դուրս էին գցվել Ամմոնիայից, ներառյալ Զիզրոմին, որը տանջվում էր ֆիզիկապես և հոգեպես իր մեղքերի պատճառով: Երբ Զիզրոմը հայտարարեց առ Հիսուս Քրիստոս իր հավատքի մասին, Ալման բժշկեց նրան և մկրտեց: Ալման հիմնադրեց Եկեղեցի Սիդոմում, ապա Ամուղեկի հետ վերադարձավ Զարահեմլա: Ի իրականացումն Ալմայի մարգարեության՝ Լամանացիները կործանեցին Ամմոնիա քաղաքը մեկ օրում: Բացի այդ, Լամանացիները բռնեցին Նեփիացիներից մի քանիսին շրջակա երկրամասերից: Ընտրելով հետևել Ալմայի մարգարեական առաջնորդությանը Նեփիացիների զորքերը ազատեցին գերիներին և Լամանացիներին դուրս քշեցին երկրից: Խաղաղության մի ժամանակահատվածի ընթացքում Ալման, Ամուղեկը և շատ ուրիշներ ամրացրեցին Եկեղեցին Նեփիացիների ողջ երկրով մեկ:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 15

*Ալման բժշկում է Զիզրոմին, հիմնում Սիդոմում Եկեղեցին և վերադառնում Ամուղեկի հետ Զարահեմլա:*

Ուսանողներին օգնելու համար, որ հիշեն հիմնական մարդկանց և իրադարձությունները, որոնց մասին պատմում են Ալմա 11–14 հատվածները, գրեք հետևյալ խոսքերը գրատախտակին.

*Զիզրոմ*

*Օնթիներ*

*Կրակ*

*Ալմա*

*Ամուղեկ*

*Ամմոնիա*

Ուսանողներին տվեք մեկ րոպե փորձելու համար օգտագործել գրատախտակի վրա գրված բոլոր անուններն ու խոսքերը և ամփոփելու այն իրադարձությունները, որոնք նկարագրվում են Ալմա 11–14 գլուխներում: (Դուք կարող եք առաջարկել, որ որպես օգնություն նրանք դիմեն գլխի համառոտ շարադրանքներին): Մի քանի ուսանողների պատասխաններից հետո ջնջեք բոլոր խոսքերը, բացի *Զիզրոմ* բառից:

Բացատրեք, որ Ամմոնիան թողնելուց հետո, Ալման և Ամուղեկը եկան Սիդոմ, որտեղ նրանք գտան հավատացյալներին, ովքեր դուրս էին գցվել Ամմոնիայից, ներառյալ Զիզրոմին: Հրավիրեք ուսանողներին կարդալ Ալմա 15.3–5 հատվածները մտքում, որոնելով խոսքեր և արտահայտություններ, որոնք նկարագրում են Զիզրոմի վիճակը: Երբ ուսանողները հաղորդեն այն, ինչ գտել են, գրեք նրանց պատասխանները գրատախտակին՝ Զիզրոմի անվան ներքո:

- Ինչո՞ւ եք կարծում, որ Զիզրոմի հանցանքը ստիպեց նրան տառապել ինչպես հոգեպես, այնպես էլ ֆիզիկապես: Ի՞նչ պետք է անեն մարդիկ իրենց այդ վիճակը փոխելու համար:
- Ո՞ւմ օգնությունն էր փնտրում Զիզրոմը (տես Ալմա 15.4): Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ նա ուղարկեց Ալմայի ու Ամուղեկի ետևից: (Պատասխանները կարող են ներառել, որ նա վստահում էր նրանց և որ նա գիտեր, որ նրանք Աստծո մարդիկ էին և ունեին քահանայության իշխանություն):

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 15.6–10 հատվածները: Խնդրեք դասարանին փնտրել այն խոսքերը, որոնք ասվեցին Ալմայի

կողմից՝ օգնելու Զիզրոմին հավատք գործադրել առ Հիսուս Քրիստոսը և Նրա Քավությունը։

- Ինչո՞ւ եք կարծում, որ Զիզրոմը պետք է հավատք գործադրեր Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ նախքան կկարողանար բժշկվել։

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 15.11–12 հատվածները՝ պարզելու, թե ինչ պատահեց Զիզրոմի հետ։ Երբ նրանք բավականաչափ ժամանակ կարդան, գրատախտակից ջնջեք Զիզրոմի անվան ներքո բոլոր խոսքերը և արտահայտությունները։

- Ի՞նչ փաստեր եք տեսնում, որ Զիզրոմը ապաշխարեց և ստացավ Տիրոջ ողորմածությունը։ (Նա բժշկվեց առ Հիսուս Քրիստոս հավատքի միջոցով, նա մկրտվեց և սկսեց քարոզել ավետարանը։)

Գրեք հետևյալ սկզբունքը գրատախտակին. ***Մեր հավատքով առ Հիսուս Քրիստոս մենք կարող ենք բժշկվել և զորացվել։***

Նշեք, որ Ալման, որպես քահանայության ղեկավար, ուշադրությունը դեպի իրեն չհրավիրեց։ Զիզրոմի հետ այս խոսակցության նրա նպատակն էր օգնելը Զիզրոմին հավատք գործադրել առ Հիսուս Քրիստոս և ստանալ ողորմածություն Քավության միջոցով։ Ցույց տալու համար ուղիներից մեկը, որով քահանայության առաջնորդներն օգնում են մեզ ստանալ Քավության օրհնությունները, կարդացեք հետևյալ փորձառությունը, որով կիսվել է Երեց Ջեյ Ի. Ջենսոնը Յոթանասունից.

«Երբ ծառայում էի որպես եպիսկոպոս, ես ականատես եղա Քավության օրհնություններին Եկեղեցու անդամների կյանքում, ովքեր լուրջ օրինազանցություններ էին գործել։ . . .

Մեր ծխի մի երիտասարդ չափահաս ամուրի ժամադրվում էր մի երիտասարդ կնոջ հետ։ Նրանք թույլ էին տվել, որ իրենց սիրազեղումները վերահսկողությունից դուրս գային։ Նա եկավ ինձ մոտ խորհրդի և օգնության համար։ Հիմնվելով նրա վրա, ինչ խոստովանվեց, և Հոգու տպավորություններից ելնելով՝ այլ բաների շարքում նրան թույլ չտրվեց որոշ ժամանակով ճաշակել հաղորդությունից։ Մենք կանոնավորապես հանդիպում էինք՝ հավաստիանալու, որ ապաշխարությունը տեղի էր ունեցել և համապատասխան ժամանակ անց ես լիազորեցի նրան կրկին ճաշակել հաղորդությունից։

Երբ ես նստած էի ամբիոնում հաղորդության ժողովի ժամանակ, աչքերս ուղղված էին դեպի նա, մինչ նա արդեն արժանիորեն էր վերցնում հաղորդությունը։ Ես ականատես եղա նրա, թե ինչպես ողորմածության, սիրո և ապահովության բազուկները նրան օղակեցին, երբ Քավության բժշկությունը ջերմացրեց նրա հոգին և բարձրացրեց նրա բեռը, առաջ բերելով խոստացված ներումը, խաղաղությունը և երջանկությունը» (“Arms of Safety,” *Ensign* կամ *Liahona,* Nov. 2008, 49)։

Վկայեք, որ եպիսկոպոսները և քահանայության մյուս ղեկավարները կարող են օգնել մեզ ստանալ ողորմածություն և ուժ, որոնց կարիքը մենք ունենք Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով։

Ուսանողներին օգնելու համար տեսնել, որ Եկեղեցու առաջնորդները ծառայում են մարդկանց խմբերի և անհատների, նրանց հանձնարարեք ուսումնասիրել Ալմա 15.13–18 հատվածները։ Հանձնարարեք նրանց աշխատել զույգերով։ Խնդրեք զույգից յուրաքանչյուրին հետազոտել Ալմա 15.13–15, 17 հատվածները, փնտրելով ուղիներ, որոնցով Սիդոմի ժողովուրդն օրհնվեց Ալմայի ծառայության միջոցով։ Խնդրեք յուրաքանչյուր զույգի մյուս ուսանողին հետազոտել Ալմա 15.16, 18 հատվածները, փնտրելով ուղիներ, որոնցով Ամուղեկն օրհնվեց Ալմայի ծառայության միջոցով։ Նրանց բավականաչափ ժամանակ տալուց հետո, հրավիրեք բացատրել միմյանց, թե իրենք ինչ են գտել։

Հրավիրեք մասնակիցներին մտածել երեքից հինգ ուղիների մասին, որոնցով Եկեղեցու առաջնորդներն այսօր կարող են օգնել խմբերի և անհատների։ Քաջալերեք ուսանողներին մտածել իրենց սեփական պարտականությունների մասին որպես առաջնորդներ իրենց քահանայության քվորումներում և Երիտասարդ Կանանց դասարաններում։ Խնդրեք յուրաքանչյուր մասնակցի կիսվել դասարանի հետ իրենց գաղափարներից մեկով։

## Ալմա 16.1–12

*Լամանացիները կործանում են Ամմոնիան, բայց չեն կարողանում պարտության մատնել Նեփիացիներին, ովքեր հետևում են Ալմայի խորհրդին:*

Խնդրեք ուսանողներին մտածել մի ժամանակի մասին, երբ նրանք իրենց զգացին զարմացած կամ հանկարծակի վախեցած: Կարող եք խնդրել մեկ կամ երկու ուսանողի կիսվել իրենց փորձառություններով: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 16.1–3 հատվածները, փնտրելով թե ինչպես Նեփիացիները Ամմոնիայում զարմացան և ինչո՞ւ էին նրանցից ոմանք վախեցած երևում: Խնդրեք ուսանողներին հաղորդել, թե ինչ գտան: (Անհրաժեշտության դեպքում օգնեք նրանց տեսնել, որ Լամանացիները հանկարծ հարձակվեցին Ամմոնիա քաղաքի վրա և կործանեցին դրա բնակիչներին նախքան Նեփիացիները կկարողանային զորք հավաքել նրանց դեմ գնալու համար:)

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 16.4–6 և խնդրեք դասարանին նշել, թե որտեղից էին արդարակյաց Նեփիացիները առաջնորդություն սպասում: Խնդրեք մեկ ուրիշ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 16.7–8 հատվածները, մինչ դասարանի մնացած մասը որոնում է իրենց ստացած օգնության արդյունքը:

- Ինչպե՞ս Ալմայի մարգարեական առաջնորդությունն օգնեց Նեփիացիներին:
- Ի՞նչ սկզբունքներ կարող ենք մենք սովորել այս պատմությունից: (Ուսանողները կարող են նշել մի քանի սկզբունքներ: Հավաստիացեք, որ նրանք հասկանում են, որ ***երբ մենք ձգտում ենք և հետևում Տիրոջ մարգարեների առաջնորդությանը, Տերը զորացնում է և պաշտպանում մեզ:*** Գրեք այս սկզբունքը գրատախտակին:)
- Ինչպե՞ս է օրհնվում երիտասարդությունը, երբ հետևում է մարգարեական առաջնորդությանը:(Ուսանողներին օգնելու համար պատասխանել այս հարցին, կարող եք նրանց խնդրել դիմել *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկի երկու կամ երեք բաժինների: Հրավիրեք նրանց պատասխանել այս հարցին ձեր ընտրած յուրաքանչյուր բաժնի վերաբերյալ:)

Խնդրեք ուսանողներին մտածել այն փորձառությունների մասին, երբ մարգարեական առաջնորդությունն օգնել է նրանց կատարել ճիշտ ընտրություններ դժվարին իրավիճակներում: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց փորձառություններով դասարանի հետ: (Հավաստիացեք, որ նրանք հասկանում են, որ իրենք կարիք չունեն կիսվել այն փորձառություններով, որոնք խիստ անձնական են կամ գաղտնի): Դուք ևս կարող եք կիսվել ձեր սեփական փորձառությամբ: Ճշմարտությունն ամրացնելու համար, որ մարգարեների խոսքերը միշտ իրականանում են, դուք պետք է մատնանշեք Ալմա 16.9–11 հատվածները, որոնք ցույց են տալիս Ալմայի մարգարեության իրականացումը Ամմոնիայի ժողովրդի վերաբերյալ (տես Ալմա 9.12):

## Ալմա 16.13–21

*Ալման, Ամուղեկը և մյուսները Նեփիացիների համար կառուցեցին Եկեղեցին*

Երբ ուսանողները վերջացնեն ուսումնասիրելը Ալմա 16 գլուխը, քաջալերեք նրանց որոնել երկու սկզբունքների օրինակներ, որոնք գրել եք գրատախտակին: Ամփոփեք Ալմա 16.13–15 հատվածները, բացատրելով, որ Ալման և Ամուղեկը շարունակում էին քարոզել Աստծո խոսքը ողջ երկրում, ուրիշների օգնությամբ, «ովքեր ընտրվել էին աշխատանքի համար» (Ալմա 16.15): Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 16.16–21 հատվածները, որոնելով այս ջանքերի արդյունքները: Բավականաչափ ժամանակից հետո, խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով: Հարցրեք նրանց, թե ինչպես են այս օրինակները բացատրում գրատախտակին գրված մեկ կամ երկու սկզբունքները:

Եզրափակեք դասը՝ քաջալերելով ուսանողներին արտագրել այս սկզբունքներից մեկը տետրում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրում: Հրավիրեք նրանց գրել ամփոփագիր, թե ինչ են սովորել այսօր այդ սկզբունքի մասին: Խնդրեք նրանց նաև գրել այն մասին, թե ինչպես են ծրագրում կիրառել այն, ինչ սովորեցին:

## Սուրբ գրության սերտման կրկնություն

Այս դասը այս դասընթացը բաժանում է ուղիղ երկու կեսի: Ուսանողներին օգնելու համար ամրացնել սուրբ գրությունների սերտման հատվածների իրենց գիտելիքը, կարող եք նրանց գիտելիքների մի նախնական քննություն կամ ստուգարք անցկացնել, ստուգելով, թե որքանով են նրանք տիրապետում սուրբ գրության հատվածներին, որոնք դուք անցել եք դասարանում: Դուք կարող եք պատրաստել պարզ բանավոր կամ գրավոր ստուգարք, ինչպես օրինակ՝ տալով հուշում սեմինարիայի էջանիշից և հանձնարարելով ուսանողներին գրել ճիշտ հղումը, կամ կարող եք վերանայում անցկացնել որոշ հատվածների համար, որոնք ուսանողներն անգիր են սովորել: Դուք կարող եք նախօրոք ասել ուսանողներին նախնական քննության կամ ստուգարքի մասին:

*Նշում.* Եթե ժամանակ չունեք օգտագործելու այս միջոցառումը որպես այս դասի մաս, կարող եք դա անել մեկ այլ օր: Ստուգման միջոցառումների համար, տես հավելվածը այս ձեռնարկի վերջում:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Ալմա 15.3–5: Ֆիզիկական ցավ, որն առաջանում է հոգևոր խանգարումներից:

Մինչ Զիզրոմն ապաշխարում էր, նրա մեղքերը «տակնուվրա էին անում նրա միտքը, մինչև որ այն դարձավ չափազանց ցավագին» (Ալմա 15.3): Նախագահ Բոյդ Կ. Փաքերը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, խոսել է ֆիզիկական տառապանքի իրականության մասին, որը կարող է առաջանալ հոգևոր խանգարումներից.

«[Մի անգամ] ես հարցրեցի ընտանեկան բժշկին, թե որքան ժամանակ է հատկացվում ամբողջապես ֆիզիկական խանգարումներն ուղղելուն: Նա մեծ փորձ ուներ և խորը մտածելուց հետո նա պատասխանեց. «Ոչ ավելի քան 20 տոկոս: Մնացած ժամանակը, թվում ,է աշխատում եմ այն խնդիրների վրա, որոնք շատ են ազդում իմ հիվանդների ֆիզիկական առողջության վրա, սակայն սկիզբ չեն առնում մարմնում»:

«Այդ ֆիզիկական խանգարումները, - եզրափակեց բժիշկը, - ուղղակի այլ տեսակի խնդրի ախտանշաններ են»:

Վերջին սերունդներում մեկը մյուսի ետևից հիմնական հիվանդությունները վերահսկողության կամ բուժման են ենթարկվել: Որոշ շատ գլխավոր հիվանդություններ դեռ մնում են, բայց մենք այժմ, կարծես, թե դրանցից շատերի դեպքում կարողանում ենք ինչ որ բան անել:

Մեր մյուս մասը, անշոշափելի, բայց նույնքան իրական է, որքան մեր ֆիզիկական մարմինը: Մեր այս անշոշափելի մասը նկարագրվում է որպես միտք, հույզեր, բանականություն, խառնվածք և այլն: Շատ հազվադեպ է այն նկարագրվում որպես հոգևոր:

Բայց կա *հոգի*մարդու մեջ, և այն անտեսելը նշանակում է անտեսել իրականությունը: Կան նաև հոգևոր խանգարումներ և հոգեկան հիվանդություններ, որոնք կարող են առաջացնել ուժեղ տառապանքներ:

Մարդու մարմինը և հոգին կապված են միմյանց հետ» (“The Balm of Gilead,” *Ensign,* Nov. 1977, 59):

# Տնային ուսումնասիրության դաս

## Ալմա 11–16 (Մաս 16)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Վարդապետությունների և սկզբունքների հետևյալ համառոտ բովանդակությունը, որ ուսանողները սովորեցին, երբ ուսումնասիրում էին Ալմա 11–16 հատվածները (Մաս 16), նախատեսված չէ որպես ձեր դասի մաս: Դասը, որ դուք ուսուցանում եք, կենտրոնացած է միայն այս վարդապետություններից և սկզբունքներից մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, երբ մտածում եք ուսանողների կարիքների մասին:

### Դաս 1 (Ալմա 11)

Զիզրոմի հետ Ամուղեկի վիճաբանության օրինակի միջոցով ուսանողները սովորեցին, որ երբ մենք ապավինում ենք Սուրբ Հոգուն, մենք կարողանում ենք հաղթահարել գայթակղությունը: Ուսուցանելով Զիզրոմին և Ամմոնիայի ժողովրդին, Ամուղեկը շեշտում է հետևյալ վարդապետությունները Փրկչի դերի մասին. Ճշմարիտ հավատքն առ Հիսուս Քրիստոս մեր մեղքերից փրկագնման գործընթացի սկիզբն է; Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով բոլորը հարություն կառնեն և կդատվեն ըստ իրենց գործերի:

### Օր 2 (Ալմա 12)

Ամուղեկի նման Ալման ուսուցանեց Զիզրոմին և Ամմոնիայի ժողովրդին: Նա բացատրեց դևի մտադրությունները և հայտարարեց, որ Զիզրոմը դևի իշխանության ներքո էր գտնվում: Ալման և Ամուղեկը օրինակ են հանդիսանում, որ Սուրբ Հոգին կարող է օգնել մեզ ճանաչել հակառակորդի գայթակղությունները: Ալման օգնեց ժողովրդին հասկանալ, որ Տերը բացահայտում է հոգևոր ճշմարտությունները համաձայն այն ուշադրությանն ու ջնասիրությանը, որը մենք ցույց ենք տալիս Նրա խոսքերի հանդեպ: Նա նաև ուսուցանել է Վերջին Դատաստանի մասին, բացատրելով, որ մենք հաշիվ ենք տալու Աստծո առջև մեր խոսքերի, գործերի և մտքերի համար: Նա շեշտեց, որ մահկանացու կյանքը մեզ համար ժամանակ է՝ պատրաստվելու հանդիպելու Աստծուն:

### Օր 3 (Ալմա 13)

Ալման հիշեցրեց Զիզրոմին և ժողովրդին, որ Աստված աշխարհի հիմնադրումից ի վեր կարգեց քահանայություն կրողներ: Տղամարդիկ, ովքեր գործադրում են մեծ հավատք և ընտրում արդարակեցություն, ստանում են Մելքիսեդեկյան Քահանայություն ուրիշներին դեպի Աստված բերելու համար: Ուսանողները սովորեցին Մելքիսեդեկի և նրա ժողովրդի մասին և խորհրդածեցին այս ճշմարտության շուրջ: Երբ մենք խոնարհաբար ենք պատասխանում ապաշխարելու հրավերին, Սուրբ Հոգին առաջնորդում է մեզ՝ դեպի Տիրոջ հանգիստը:

### Օր 4 (Ալմա 14–16)

Ուսանողները կարդացին ամբարիշտ մարդկանց ձեռքից անմեղ կանանց և երեխաների մահվան մասին:Նրանք կարդացին մարգարեական հայտարարությունները, որոնք ուսուցանում են, որ Տերը թույլ է տալիս արդարակյացներին տառապել ամբարիշտների ձեռքից, որպեսզի Իր դատաստաններն արդար լինեն: Ուսանողները նկատեցին Ալմայի և Ամուղեկի կյանքից, որ երբ մենք վստահում ենք Տիրոջը, Նա զորացնում է մեզ մեր փորձություններում: Եթե մենք աղաղակում ենք առ Նա հավատքով, Նա զորացնում է մեզ մեր չարչարանքներում և ազատում մեզ Իր ուղով և Իր իսկ ժամանակին:

## Նախաբան

Երբ Ալման և Ամուղեկը սկսեցին ուսուցանել Ամմոնիայի ժողովրդին, նրանք դիմադրության հանդիպեցին: Երբ նրանք բացատրեցին մի քանի հավերժական ճշմարտություններ, շատ մարդիկ «սկսեցին ապաշխարել և ուսումնասիրել սուրբ գրությունները»(Ալմա 14.1): Ալմա 11–16 հատվածը ցույց է տալիս այն զոհաբերությունը, որ մարդիկ հոժար են կատարել ճշմարտության իրենց վկայության համար: Այս գլուխները նաև ապացուցում են, որ երբ ամբարիշտները «դուրս են գցում արդարներին», Տերը նրանց զարկում է «սովով, ժանտախտով և սրով» (Ալմա 10.23): Ալման և Ամուղեկը նախազգուշացրեցին Ամմոնիայի ժողովրդին, որ եթե նրանց չհաջողվեր ապաշխարել, Աստծո դատաստանները կգային նրանց վրա:Ապաշխարելու կոչը մերժելու արդյունքում Ամմոնիայի ժողովուրդը հետագայում կործանվեց Լամանացիների բանակի կողմից:

Այս դասը կկենտրոնանա Ալմա 14–15 գլուխների վրա: Բացի այդ դուք կարող եք ուսուցանել կամ վերանայել ճշմարտությունները մյուս գլուխներից, որոնք հանձնարարվել են այս շաբաթ:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 14–15

***Աստված օրհնում է նրանց, ովքեր վստահում են Իրեն իրենց չարչարանքներում:***

Կարող եք այսօրվա դասը սկսել նշելով ներկա պատահարներ, որոնցում անմեղ մարդիկ են տառապել ուրիշների ընտրությունների պատճառով: Կամ կարող եք խնդրել ուսանողներին կիսվել սուրբ գրությունների արդարակյաց մարդկանց օրինակներով, ովքեր հալածվել են ավետարանի իրենց վկայության համար: Մի քանի օրինակներ քննարկելուց հետո հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 14.7–11 և Ալմա 60.13:

Հարցրեք. Ի՞նչ պատճառներ են տրվում այս հատվածներում, թե ինչո՞ւ են արդարակյացներին երբեմն

թույլատրվում տառապել ամբարիշտների ձեռքից: (Մեկ ճշմարտություն, որ սովորեցին ուսանողները, երբ ուսումնասիրում էին Ալմա 14 գլխի այս մասը,այն է, որ **Տերը թույլ է տալիս արդարակյացին տառապել ամբարիշտների ձեռքից, որպեսզի Նրա դատաստաններն արդար լինեն:** )

Բացատրեք, որ Աստծո արդարադատությունը և ողորմածությունը տարածվում է մահից այն կողմ՝ հաշիվ պահանջելու նրանցից, ովքեր մեղանչել են, և տարածելու ողորմածություն արդարակյացներին: Ապա կիսվեք Առաջին Նախագահությունից Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստի հետևյալ հայտարարությամբ.

«Բոլոր այս տառապանքները կարող էին իսկապես անազնիվ լինել, եթե ամեն ինչ վերջանար մահով, բայց դա այդպես չէ: Կյանքը մեկ գործողությամբ բեմականացում չէ: Այն ունի երեք գործողություն: Մենք ունենք անցյալ գործողություն, երբ նախամահկանացու գոյության մեջ էինք, իսկ այժմ մենք ունենք ներկա գործողություն, որը մահկանացու կյանքն է, և մենք կունենանք ապագա գործողություն, երբ մենք վերադառնանք Աստծո մոտ:. . . Մենք ուղարկվել ենք մահկանացու կյանք՝ ստուգվելու և փորձվելու [տես Աբրահամ 3.25]: . . .

Մեր անցյալ և ներկա տառապանքները չեն կարող, ինչպես Պողոսն է ասում, «համեմատվել գալիք փառքի հետ, որ մեզանում պիտի հայտնվի» [Հռովմայեցիս Ը.18] հավերժություններում: «Քանզի շատ նեղությունից հետո գալիս են օրհնությունները: Ուստի գալիս է օրը, երբ դուք պիտի պսակվեք մեծ փառքով» [ՎևՈՒ 58.4]: Այսպիսով նեղությունը օգտակար է այն իմաստով, որ այն օգնում է մտնել սելեստիալ արքայություն: . . .

Այնքան էլ կարևոր չէ այն, թե ինչ է պատահում մեզ հետ, քան այն, թե ինչպես ենք մենք վերաբերվում այն ամենին, ինչ պատահում է մեզ հետ» (“Where Do I Make My Stand?” *Ensign* կամ *Liahona,* Nov. 2004, 19–20):

Բացատրեք, որ տառապանքը և նեղությունը կարող են օգնել մեզ ձեռք բերել վեհացում՝ մեր հավատքը ամրացնելով: Մեր փորձությունների և դժվարությունների ընթացքում հավատարիմ մնալը ցուց է տալիս բացարձակ վստահություն Աստծո և Նրա ծրագրի հանդեպ, այդպիսով զորացնելով մեր հավատքը և մինչև վերջ համբերելու մեր ունակությունը:

Տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս կարող է փրկության ծրագրի վերաբերյալ վկայությունը, ներառյալ նախամահկանացու և հետմահկանացու կյանքը, թեթևացնել տառապանքը, որը մենք տանում ենք մահկանացու կյանքում:
- Հաշվի առնելով այն, ինչ դուք ուսումնասիրեցիք այս շաբաթԱլմա 14–15-ում, ինչպե՞ս են օրհնվում արդարակյացները:
- Չարչարանքների ժամանակ, ինչպե՞ս կարող ենք ցույց տալ, որ մենք վստահում ենք Աստծուն:

Հանձնարարեք ուսանողներին համեմատել Ալմայի տված հարցը Ալմա 14.26-ում Ջոզեֆ Սմիթի հարցի հետ Վարդապետություն և Ուխտեր 121.3-ում: Այնուհետև հարցրեք. Համաձայն Ալմա 14.26-ի ինչպե՞ս էին Ալման և Ամուղեկը կարողանում հաղթահարել իրենց չարչարանքները:

Բացատրեք, որ երբ Մարգարե Ջոզեֆ Սմիթն անարդարորեն բանտարկվեց Միսսուրիում, նա տվեց մի հարց, որը գրի է առված Վարդապետություն և Ուխտեր 121.3 հատվածում: Ի տարբերություն Ալմայի և Ամուղեկի, նա անմիջապես չազատվեց բանտից: Ի՞նչ կարող ենք սովորել նրա աղոթքին տված Աստծո պատասխանից (տես ՎևՈՒ 121.7–9, 122.4–9): Հետևյալ ճշմարտությունը շեշտվեց այս շաբաթ ուսանողների անձնական ուսումնասիրության ժամանակ. **Եթե մենք աղաղակենք առ Տերը հավատքով, Նա կզորացնի մեզ մեր չարչարանքներում և կազատի մեզ Իր ուղով և Իր իսկ ժամանակին:**

Տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս է Տերն օգնել ձեզ, երբ դուք փորձություններ եք տարել:
- Ի՞նչն է օգնում ձեզ ենթարկվել Նրա կամքին և ընդունել Նրա ժամանակացույցը:

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ ինչպես Զիզրոմը, այնպես էլ՝ Ամուղեկը, վստահում էին Աստծուն իրենց չարչարանքներում, և նրանք վարձատրվեցին՝ Նրա կամքի և Նրա իսկ ժամանակի համաձայն:

Հրահանգեք դասարանի կեսին կարդալ Ալմա 15.5–12 և նշեք տեղեկությունը Զիզրոմի մասին, որը ցույց է տալիս Տիրոջ հանդեպ աճող նրա վստահությունը: Հրահանգեք մյուս կեսին ուսումնասիրել Ալմա 15.16, 18 հատվածները և գտնել տեղեկությունն այն մասին, թե ինչ զոհաբերեց Ամուղեկը Տիրոջը ծառայելու համար:

Քաջալերեք ուսանողներին վստահել Տիրոջը և ընդունել Նրա կամքը և ժամանակացույցը, երբ դժվարություններ և չարչարանքներ են գալիս նրանց վրա: Հավաստիացրեք նրանց, որ Աստված տարածում է Իր զորությունն ու ազդեցությունը տարբեր հրաշագործ և անձնական ուղիներով:

## Սուրբ գրությունների սերտման հատվածների կրկնություն

Այս դասը Մորմոնի Գրքի սեմինարիայի ուսումնասկան ծրագիրը բաժանում է ուղիղ երկու կեսի: Ուսանողներին օգնելու համար ամրացնել սուրբ գրությունների սերտման հատվածների իրենց գիտելիքը, կարող եք նրանց գիտելիքների մի նախնական քննություն կամ ստուգարք անցկացնել, ստուգելով, թե որքանով են նրանք տիրապետում սուրբ գրությունների 13 հատվածներին, որոնք դուք մինչ այժմ սովորել եք: Դուք կարող եք պատրաստել պարզ բանավոր կամ գրավոր ստուգարք, ինչպես օրինակ՝ տալով հուշում սեմինարիայի էջանիշից և հանձնարարելով ուսանողներին գրել ճիշտ հղումը, կամ կարող եք վերանայում անցկացնել որոշ հատվածների համար, որոնք ուսանողներն անգիր են սովորել: Դուք կարող եք նախօրոք ասել ուսանողներին նախնական քննության կամ ստուգարքի մասին:

## Հաջորդ Մաս (Ալմա 17–24)

Մոսիայի որդիները գնում են քարոզելու մի ամբարիշտ և կատաղի ժողովրդի: Սկզբում նրանք տանում են շատ չարչարանքներ, բայց երբ նրանք քարոզում են ավետարանը Լամանացիներին, հրաշքներ են տեղի ունենում: Նշեք, թե ինչպես Ամմոնի հավատարմությունը Աստծուն և թագավորին բերում է մեծ արդարակեցություն:

ԴԱՍ 81

# Ալմա 17

## Նախաբան

Նախապատրաստվելով քարոզելու ավետարանը Լամանացիներին, Մոսիայի որդիները ձգտում էին Տիրոջ առաջնորդությանը՝ ծոմապահության և աղոթքի միջոցով: Տերը հանգստացրեց նրանց և խոստացավ, որ նրանք լինելու էին գործիքներ Իր ձեռքում՝ «ի փրկություն բազում հոգիների» (Ալմա 17.11): Ավելի վաղ Նա խոստացել էր նրանց, իրենց հորը տված մի հայտնության մեջ, որ Նա «ազատելու էր [նրանց] Լամանացիների ձեռքից» (Մոսիա 28.7): Զորացված Տիրոջ խոստումներով և վստահելով, որ նրանք մի օր կրկին կհանդիպեն, նրանք առանձնացան՝ կիսվելու համար ավետարանով տարբեր տարածքներում: Ամմոնը գնաց Իսմայիլի երկիրը, որտեղ նա պատրաստվեց ուսուցանել ժողովրդին՝ ծառայելով նրանց թագավորին:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 17.1–16

*Մոսիայի որդիները հետազոտում են սուրբ գրությունները, աղոթում և ծոմ պահում, որպեսզի կարողանան իմանալ Աստծո խոսքը և ուսուցանեն զորությամբ:*

Նախքան դասը գրեք հետևյալ անավարտ միտքը գրատախտակին.*«Միակ ամենակարևոր բանը, որ դուք կարող եք անել [միսիա] ծառայելու կանչին նախապատրաստվելու համար, դա . . . է»*: (Դուք սրան կանդրադառնաք մի փոքր անց այս դասում:)

Հարցրեք ուսանողներին, թե նրանք արդյոք ներկա եղե՞լ են, երբ ազգականներն ու ընկերները տուն են վերադարձել միսիաներից՝ հավատարմորեն ծառայելուց հետո: Հրավիրեք մի քանի ուսանողների նկարագրել այդ միսիոներների Քրիստոսանման հատկանիշները:

- Ի՞նչ դրական փոփոխություններ եք տեսնում նրանց մեջ իրենց միսիաներից հետո: Ի՞նչ եք կարծում, ի՞նչն է այդ փոփոխությունների պատճառը:

Բացատրեք, որ ավետարանը 14 տարի քարոզելուց հետո Նեփիի երկրում Մոսիայի որդիները վերադարձան Զարահեմլա, երբ վերամիավորվեցին Ալմայի հետ: Եթե ուսանողները կարիք ունեն Ալմայի և Մոսիայի որդիների պատմության համառոտ կրկնողության, հարցրեք.

- Ինչպիսի՞ն էր հարաբերությունը Ալմայի և Մոսիայի որդիների միջև: (Եթե ուսանողները օգնության կարիք ունեն այս հարցին պատասխանելու համար, կարող եք խնդրել նրանց կարդալ Մոսիա 27 գլխի համառոտ բովանդակությունը: )

Բացատրեք, որ մինչ Ալման ապաշխարություն էր քարոզում և հաստատում Եկեղեցին Նեփիացիների մեջ Զարահեմլայի երկրում և մյուս երկրներում, Մոսիայի որդիները քարոզում էին ավետարանը Լամանացիներին Նեփիի երկրում:(Դուք կարող եք օգտագործել Մորմոնի Գրքի էջանիշը որպես այս բացատրության մաս:) Մոսիայի որդիների անուններն էին՝ Ահարոն, Օմներ և Հիմնի (տես Մոսիա 27.34): Ալմա 17–26 հատվածները պատմում են նրանց որոշ միսիոներական փորձառությունների մասին:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 17.1–2 հատվածները:

- Ի՞նչ զգաց Ալման, երբ նա կրկին տեսավ իր ընկերներին: Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր նա այդպես զգում:

Ուսանողների ուշադրությունն ուղղեք դեպի դասից առաջ գրատախտակի վրա ձեր գրած անավարտ միտքը: Հրավիրեք ուսանողներին առաջարկել ուղիներ՝ միտքն ավարտելու համար: Ապա կիսվեք նրանց հետ, թե ինչպես է Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը Տասներկու Առաքյալների Քվորումից ավարտել միտքը:«Միակ ամենակարևոր բանը, որ կարող եք անել [միսիոներ] ծառայելու կանչին պատրաստվելու համար,

***Ենթատեքստի կրկնություն***

Ենթատեքստային տեղեկության կրկնությունը կարող է ավելացնել խորություն դեպքի կամ սուրբ գրության ուսմունքի վերաբերյալ ուսանողների հասկացողությանը: Երբ դուք օգնում եք ուսանողներին վերանայել այդպիսի նյութը, տվեք նրանց հատուկ հղումներ՝ օգնելու նրանց գտնել այն տեղեկությունը, որի կարիքը նրանք ունեն:

դա ձեր միսիայի գնալուց շատ առաջ միսիոներ *դառնալն է»* («Դառնալ միսիոներ» *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2005, 45)։ Ավարտեք գրատախտակի վրա գրված միտքը։

Նշեք, որ ուղիներից մեկը, որով մենք կարող ենք իմանալ, թե ինչպես դառնալ միսիոներ սուրբ գրություններում հավատարիմ միսիոներների ծառայության մասին սովորելն է։ Հրավիրեք դասարանին մտքում կարդալ Ալմա 17. 2–4, որոնելով մարդկանց դեպի ճշմարտության գիտելիքը բերելու գործում Մոսիայի որդիների հաջողության պատճառները։

- Ի՞նչ արեցին Մոսիայի որդիները, որ օգնեց նրանց դառնալ հաջող միսիոներներ։ (Պատասխանները կարող են ներառել՝ նրանք ջանասիրաբար քննեցին սուրբ գրությունները, աղոթեցին և ծոմ պահեցին։)
- Ի՞նչ օրհնություններ նրանք ստացան իրենց ուսումնասիրության, ծոմի և աղոթքի շնորհիվ։ Երբ ուսանողները պատասխանեն այս հարցին, օգնեք նրանց գտնել հետևյալ սկզբունքը. **Երբ մենք քննում ենք սուրբ գրությունները, աղոթում և ծոմ պահում, մենք կարող ենք ստանալ Սուրբ Հոգին և ուսուցանել զորությամբ։**)

Խնդրեք որևէ ուսանողի կարդալ Երեց Բեդնարի հետևյալ միտքը, շեշտելով, թե մենք ինչ կարող ենք անել միսիոներներ դառնալու համար։

Դուք կարող եք մեծացնել Աստծուն ծառայելու ձեր ցանկությունը (տես ՎԿՈՒ 4.3), և դուք կարող եք սկսել մտածել միսիոներների նման, կարդալ այն, ինչ միսիոներներն են կարդում, աղոթել, ինչպես միսոներներն են աղոթում, և զգալ, ինչպես միսիոներներն են զգում։ Դուք կարող եք խուսափել աշխարհիկ ազդեցություններից, որոնք ստիպում են Սուրբ Հոգուն ետ քաշվել, և դուք կարող եք աճել վստահության մեջ՝ ճանաչելով և արձագանքելով հոգևոր հուշումներին։ Տող առ տող, ցուցում առ ցուցում, մի փոքր այստեղ և մի փոքր այնտեղ, դուք աստիճանաբար կարող եք դառնալ այն միսիոները, որը հույս ունեք լինելու, և այն միսիոները, որ Փրկիչն է ակնկալում, որ լինեք։ . . .

Նախապատրաստությունը, որ ես նկարագրում եմ, ուղղված չէ դեպի միայն ձեր միսիոներական ծառայությունը, երբ 19, 20 կամ 21 տարեկան եք։ . . . Միսիոներական աշխատանքի համար դուք պատրաստվում եք ողջ կյանքի ընթացքում։. . . Մենք միշտ էլ միսիոներներ ենք» (“Becoming a Missionary,” 46)։

Ուսանողներին օգնելու համար կիրառել Երեց Բեդնարի կողմից և Ալմա 17.2–4-ում ուսուցանված սկզբունքները, խնդրեք նրանց գրել տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնսիրության օրագրերում, թե ինչ իրենք կանեն միսիոներներ դառնալու համար նախքան ծառայելու կանչվելը։

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 17.9, նշելով, թե Մոսիայի որդիներն ու նրանց ընկերակիցները ինչի համար էին աղոթում։ Երբ ուսանողները կիսվեն իրենց գտածով, խնդրեք նրանց կարդալ Ալմա 17.10–12, որոնելով իրենց աղոթքների Տիրոջ պատասխանը։

- Ինչո՞ւ եք կարծում, որ նրանց սրտերը «քաջությամբ լցվեցին», երբ նրանք ստացան իրենց աղոթքների Տիրոջ պատասխանը։
- Ալմա 17.11 պարունակում է Տիրոջ խոստումը, որ Նա այդ միսիոներներից գործիքներ կպատրաստեր Իր ձեռքերում։ Ի՞նչ է սա նշանակում ձեզ համար։ Ինչպե՞ս կարող ենք մենք գործիքներ լինել Տիրոջ ձեռքերում։
- Տերը հրահանգեց այդ միսիոներներին «ցույց տալ լավ օրինակ» (Ալմա 17.11)։ Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էր լավ օրինակ լինելը կարևոր մաս նրանց միսիոներական աշխատանքում։ (Երբ ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, օգնեք նրանց ընդունել հետևյալ սկզբունքը. **Երբ մենք լավ օրինակ ենք հանդիսանում, Տերը կարող է դարձնել մեզ գործիքներ Իր ձեռքերում։** Դուք կարող եք գրել այս ճշմարտությունը գրատախտակին։)
- Որո՞նք են այն մի քանի բաները, որոնք մարդիկ կարող են սովորել ավետարանի մասին, երբ տեսնեն մեր լավ օրինակները։
- Ե՞րբ են ուրիշների լավ օրինակներն օգնել մեզ։

Վկայեք լավ օրինակ հանդիսանալու կարևորության մասին և քաջալերեք ուսանողներին լավ օրինակներ լինել իրենց շրջապատի համար։ Եթե կարող եք հատուկ դեպքեր հիշել, երբ ուսանողները լավ օրինակ են հանդիսացել, գովեք

ուսանողներին իրենց արածի համար։ Սակայն մի արեք ընդհանուր կամ անորոշ հաճոյախոսություններ, որոնք կարող են ոչ անկեղծ երևալ։

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 17.13–16, մտածելով այդ օրերում Լամանացիներին ուսուցանելու դժվարության մասին։

- Ինչո՞ւ էին Մոսիայի որդիները հոժար չարչարանքներ տանել և գնալ Լամանացիների մեջ։ (Տես Ալմա 17.16, տես նաև Մոսիա 28.1–3։)

## Ալմա 17.17–39

*Ամմոնը դառնում է թագավոր Լամոնիի ծառան և փրկում է թագավորի հոտերը։*

Ամփոփեք Ալմա 17.18–20 հատվածները՝ բացատրելով, որ նախքան այդ միսիոներները միմյանցից առանձնացան՝ տարբեր տարածքներում ավետարանը քարոզելու համար, Ամմոնը ուսուցանեց և օրհնեց նրանց։ Այնուհետև նա գնաց մի երկիր, որը կոչվում էր Իսմայիլ։ Երբ նա մտավ այդ երկիրը, նրան բռնեցին և տարան թագավորի մոտ։ Խնդրեք երկու ուսանողների հերթով բարձրաձայն կարդալԱլմա 17.21–25 հատվածները։

- Ի՞նչ եք կարծում, ի՞նչն է Ամմոնի մեջ նշանակալի, երբ նա ասաց թագավորին. «Ես կլինեմ քո ծառան» (Ալմա 17.25)։
- Ե՞րբ եք տեսել, որ ծառայությունը տանի ավետարանով կիսվելու հնարավորությունների։

Համառոտ ամփոփեք Ալմա 17.26–27 հատվածները, բացատրելով, որ մինչ Ամմոնը հետևում էր թագավորի հոտերին, Լամանացիների մի խումբ ցրեց հոտերը։

Բաժանեք դասարանը երեք ուսանողից բաղկացած խմբերի։ Գրեք հետևյալ սուրբ գրությունների հատվածների հղումները գրատախտակին. *Ալմա 17.28–32, Ալմա 17.33–35, Ալմա 17.36–39։* Խնդրեք ուսանողներին յուրաքանչյուր խմբում բաժանել այս հատվածները միմյանց միջև։ Հանձնարարեք ուսանողներին կարդալ իրենց հանձնարարված հատվածները մտքում, որոնելով պատասխաններ հետևյալ հարցերին։ (Դուք կարող եք գրել այդ հարցերը գրատախտակին։)

- Ի՞նչ պատահեց պատմության ձեր մասում։
- Ինչպե՞ս կարող էր սա օգնել ժողովրդին պատրաստել՝ ավետարանն ընդունելուն։
- Ի՞նչ հատկանիշներ դրսևորեց Ամմոնը։

Խմբերին ժամանակ տվեք քննարկելու համար իրենց պատասխանները։ Ապա հարցրեք.

- Ի՞նչ կարող ենք սովորել այս պատմությունից։ (Ուսանողները կարող են տարբեր պատասխաններ տալ։ Օրինակ, նրանք կարող են ասել, **որ ծառայության միջոցով մենք կարող ենք օգնել ուրիշներին ընդունել ավետարանը** կամ որ, **երբ մենք Տիրոջ ծառայության մեջ ենք, մենք կարող ենք ունենալ քաջություն և ուրախ լինել։** Դուք կարող եք քաջալերել ուսանողներին գրել այս սկզբունքներն իրենց սուրբ գրություններում։)

Հրավիրեք ուսանողներին գրել իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում, թե ինչ կարող են անել ավետարանով ապրելու լավ օրինակ ծառայելու համար։ Երիտասարդ կանանց համար այս նպատակը կարող է օգնել նրանց լրացնել լրացուցիչ արժեքի փորձառությունը՝ Անձնական Առաջընթացի «Բարի գործերի» համար։ Քահանաների համար այս նպատակը կարող է օգնել նրանց սովորել և կատարել իրենց պարտականությունները, ինչպես նշվում է Պարտականություն Աստծո հանդեպ գրքույկի «Քահանայության պարտականությունները» և «Հրավիրեք բոլորին գալ դեպի Քրիստոսը» բաժիններում։

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Ալմա 17: Լիաժանկետ միսիոներական ծառայություն երիտասարդ տղամարդկանց և երիտասարդ կանանց կողմից:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը տվել է հետևյալ խորհուրդը երիտասարդ տղամարդկանց և երիտասարդ կանանց լիաժամկետ միսիա ծառայելու պարտականության վերաբերյալ.

«Սհարոնյան Քահանայության երիտասարդ կրողներ և դուք՝ երիտասարդ տղամարդիկ, որ դառնում եք երեցներ, ձեզ համար ես կրկնում եմ այն, ինչ մարգարեները երկար ժամանակ ուսուցանել են, որ ամեն արժանի, ունակ երիտասարդ տղամարդ պետք է պատրաստվի միսիա ծառայելու: Միսիոներական ծառայությունը քահանայության պարտականություն է՝ պարտավորություն, որը Տերն ակնկալում է մեզանից, ում այնքան շատ բան է տրվել: Երիտասարդներ, ես հորդորում եմ ձեզ, պատրաստվեք ծառայելու որպես միսիոներ: Ձեզ պահեք մաքուր, անարատ և արժանի՝ ներկայացնելու Տիրոջը: Պահպանեք ձեր առողջությունը և ուժերը: Ուսումնասիրեք սուրբ գրությունները: Որտեղ հնարավոր է, հաճախեք սեմինարիա կամ ինստիտուտ: Ծանոթացեք *Քարոզիր իմ ավետարանը* միսիոներական ձեռնարկին:

Մի խոսք՝ ուղղված ձեզ՝ երիտասարդ քույրեր, չնայած դուք չունեք քահանայության նույն պարտականությունը, ինչպես երիտասարդ տղամարդիկ՝ ծառայելու որպես լիաժամկետ միսիոներներ, դուք ևս արժեքավոր ներդրում եք անում որպես լիաժամկետ միսիոներներ և մենք ողջունում ենք ձեր ծառայությունը» («Կրկին հանդիպելով», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2010, 5–6):

ԴԱՍ 82

# Ալմա 18

## Նախաբան

Թագավոր Լամոնին ապշեց Ամմոնի ուժից, որը վերջինս դրսևորեց, պաշտպանելով թագավորի հոտերը: Նա նույնիսկ սկսեց հավատալ, որ Ամմոնը Մեծ Հոգին էր: Ամմոնը զգաց թագավորի մտքերը Սուրբ Հոգու զորությամբ և սկսեց ուսուցանել նրան ավետարանը: Թագավոր Լամոնին հավատաց այն ամենին, ինչ ուսուցանեց Ամմոնը, ընդունեց Փրկչի կարիքը, աղաղակեց Տիրոջը ողորմածության համար և նրան այցելեց Հոգին:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 18.1–11

*Թագավոր Լամոնին ապշեց Ամմոնի հավատարմությունից*

Ալմա 17 գլխի վերջում պատմության արագ վերանայումը կօգնի ուսանողներին տեսնել ենթատեքստըԱլմա 18 գլխում: Այն նաև կօգնի նրանց հասկանալ Ալմա 18-ի ուղերձը: Ստուգելու համար Ալմա 17-ը, հարցրեք ուսանողներին, թե արդյոք հետևյալ մտքերը ճշմարիտ են: Կարող եք հանձնարարել նրանց գրել իրենց պատասխանները:

1. Քանի որ թագավոր Լամոնին գոհ էր Ամմոնից, նա առաջարկեց իր դուստրերից մեկին դառնալ Ամմոնի կինը: (Ճիշտ է: Տես Ալմա 17.24:)
2. Ամմոնն ասաց, որ նա կամենում էր լինել թագավորի ծառան: (Ճիշտ է: Տես Ալմա 17.25:)
3. Ամմոնը վախենում էր իր կյանքի համար, երբ մի խումբ Լամանացիներ ցրեցին թագավորի հոտերը (Կեղծ է: Տես Ալմա 17.28–30:)
4. Մեծ զորությամբ Ամմոնը կռվեց Լամանացիների դեմ և կտրեց նրանց բազուկները, ովքեր բարձրացրեցին իրենց մահակները նրա դեմ: (Ճիշտ է: Տես Ալմա 17.37–38:)

Այս վարժությունը կատարելուց հետո, հավաստիացեք, որ ուսանողները գիտեն ճիշտ պատասխանները:

Հարցրեք ուսանողներին, թե նրանք երբևէ վախեցե՞լ են կամ անհամապատասխան զգացել են, որ հանձնարարությունը կամ պարտականությունը խիստ դժվար էր եղել իրենց համար: Ասացեք նրանց, որ այսօրվա դասում նրանք կսովորեն սկզբունքներ, որոնք կօգնեն նրանց այդպիսի իրավիճակներում:

Բաժանեք դասարանը երկու մասի: Հանձնարարեք մեկ կեսին կարդալ Ալմա 18.1–4, իսկ մյուս կեսին՝ Ալմա 18.8–11: Երբ կարդան, նրանց հանձնարարեք մտածել, թե ինչպես Ամմոնի հավատարմությունը ուղի նախապատրաստեց Լամոնիին և նրա ժողովրդին ուսուցանելու համար: Երբ նրանց բավականաչափ ժամանակ տաք կարդալու համար, ուղղեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ էին մտածում թագավորը և նրա ծառաները Ամմոնի ինքնության մասին:
- Համաձայն Ալմա 18.2, 4 հատվածների, ի՞նչ էր մտածում Լամոնին Ամմոնի գալու նպատակի մասին: (Պատժել ժողովրդին իրենց սպանությունների համար և արգելել Լամոնիին իր ծառաներից ավելի շատերին սպանել:)
- Համաձայն Ալմա 18.10-ի, ի՞նչը տպավորեց Լամոնիին բացի հոտերը պաշտպանելիս Ամմոնի ցուցադրած ուժից: (Դուք կարող եք խրախուսել ուսանողներին նշել *հավատարմություն* և *հավատարիմ* բառերը:)

Գրեք հետևյալ անավարտ միտքը գրատախտակին. *Երբ մենք հավատարմորեն ծառայում ենք ուրիշներին, . . .*:

Խնդրեք ուսանողներին մտածել, թե ինչպես կլրացնեին այս նախադասությունը, շարունակելով Ալմա 18 -ի իրենց ուսումնասիրությունը :

## Ալմա 18.12–43

*Երբ Ամմոնը ուսուցանում է փրկագնման ծրագիրը, Լամոնին ընդունում է իր համար Փրկչի կարիքը:*

Ուսանողներին օգնելու համար հասկանալ Ամմոնի ուսուցանող ուժը և այն մեծ փոփոխությունը, որ թագավոր Լամոնին սկսեց զգալ, ներկայացրեք Ալմա 18.12–35 հատվածները որպես ընթերցողի թատրոն: Ընտրեք չորս ուսանողների և յուրաքանչյուրին հանձնարարեք մի մաս: Թող մեկը ծառայի որպես պատմող, իսկ մյուս երեքին հանձնարարեք կարդալ Ամմոնի, թագավոր Լամոնիի և թագավորի ծառաներից մեկի խոսքերը: Կարող եք օգնել ուսանողներին պատրաստվել, նրանց մասեր հանձնարարելով նախօրոք, գուցե դասից մեկ օր առաջ կամ հենց դասը սկսելուց առաջ:

Հանձնարարեք չորս ուսանողների կարդալ իրենց մասերը Ալմա 18.12–15-ից: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել տեքստին իրենց սուրբ գրություններում, փնտրելով Լամոնիի վրա գործած Ամմոնի ծառայության ազդեցությունը:Հատված 15-ը կարդալուց հետո, դադարեցրեք ընթերցողի թատրոնը և խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով:

- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էր Լամոնին լուռ Ամմոնի առաջ: (Անհրաժեշտության դեպքում, օգնեք ուսանողներին հիշել, որ Լամոնին վախով էր լցված իր կատարած սպանությունների համար և անհանգստացած էր՝ կարծելով, որ Ամմոնը Մեծ Հոգին էր և եկել էր իրեն պատժելու:)

Շարունակեք ընթերցողի թատրոնը, հրավիրելով մասնակիցներին կարդալ իրենց դերերը Ալմա 18.16–21-ից: Խրախուսեք դասարանին փնտրել ապացույց, որ Աստծո զորությունն Ամմոնի հետ էր:

- Ինչպե՞ս Աստծո Հոգին օգնեց Ամմոնին այս իրավիճակում:
- Ի՞նչ էր ուզում Լամոնին իմանալ Ամմոնից:
- Պատմության այս մասում ի՞նչ գիտեր Լամոնին Ամմոնի մասին: (Նա գիտեր, որ Ամմոնն աշխատում էր անսովոր ուժով և կարողանում էր իմանալ մյուս մարդկանց մտքերը:)

Ուսանողների ուշադրությունը հրավիրեք գրատախտակին գրված անավարտ մտքին.*Երբ մենք հավատարմորեն ծառայում ենք ուրիշներին, . . .*:

- Հիմնվելով այսօր Ալմա17–18-ից ձեր սովորածի վրա, ինչպե՞ս կլրացնեիք այս նախադասությունը: (Ուսանողները կարող են պատասխանել տարբեր ձևերով: Նրանց պատասխաններն ամփոփելով, ավարտեք գրատախտակի վրա գրված միտքը հետևյալ ձևով. ***Երբ մենք հավատարմորեն ծառայում ենք ուրիշներին, մենք կարող ենք օգնել նրանց պատրաստվել ընդունելու ավետարանի ճշմարտությունները:*** )

Հրավիրեք մասնակիցներին կարդալ իրենց մասերը Ալմա 18.22–32-ից: Խնդրեք դասարանին հետևել՝ փնտրելով հատուկ ճշմարտություններ, որոնք Ամմոնը սովորեցրեց Լամոնիին: Դուք կարող եք առաջարկել ուսանողներին նշել այդ ճշմարտություններն իրենց սուրբ գրություններում: Ապա խնդրեք նրանց հաղորդել ճշմարտությունները, որոնք նրանք նշել են: Պատասխանները գրեք գրատախտակին:

Հրավիրեք մասնակիցներին կարդալ իրենց մասերը Ալմա 18.33–35 հատվածներում: Խնդրեք դասարանին փնտրել, թե ինչպես Ամմոնը բացատրեց թագավորի մտքերն իմանալու իր ունակությունը և թագավորի հոտերը պաշտպանելու իր կարողությունը: Ընթերցողի թատրոնն ավարտելուց հետո, մասնակիցներին շնորհակալություն հայտնեք նրանց օգնության համար: Հրավիրեք ուսանողներին հայտնել իրենց գտածները: Ուսանողներին օգնելու համար տեսնել, թե ինչպես Աստված օրհնեց Ամմոնին՝ Լամոնիին և նրա ժողովրդին ծառայելու համար, հարցրեք.

- Որո՞նք են այն բաները, որոնք Ամմոնը կարողացավ անել, սակայն որոնք նրա բնական կարողությունից վեր էին:

Նշեք, որ երբ Ամմոնը ծառայում էր թագավոր Լամոնիին, նա նաև ծառայում էր Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին: Գրեք հետևյալը գրատախտակին. *Երբ մենք հավատարմորեն ծառայում ենք Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին, . . .*:

- Հիմնվելով նրա վրա, ինչ սովորեցիք Ամմոնի օրինակից, ինչպե՞ս կլրացնեիք այս միտքը: (Ուսանողները գուցե տարբեր ձևերով պատասխանեն: Նրանց

***Նախօրոք պատրաստեք ուսանողներին ընթերցողի թատրոնի համար***

Ընթերցողի թատրոնի մասնակիցները չեն խաղում իրենց դերերը: Սակայն նրանք պետք է պատրաստ լինեն կարդալու իրենց մասերը հստակ և իմաստալի ձևով: Հավաստիացեք, որ նրանք հասկանում են իրենց դերերը և ունեն բավականաչափ ժամանակ ուսումնասիրելու իրենց մասերը: Դուք կարող եք հանձնարարություններ տալ նախօրոք, որպեսզի նրանք ծանոթանան պատմության հետ և պարապեն իրենց մասերը:

պատասխաններն ամփոփելու համար, լրացրեք գրատախտակի վրա գրված միտքը հետևյալ ձևով. ***Երբ մենք հավատարմորեն ծառայում ենք Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին, Նրա աշխատանքը կատարելու մեր ունակությունն աճում է:*** )

- Ինչպե՞ս կարող է այս սկզբունքը վերաբերել մեկին, ով վախենում է կամ զգում է, թե հանձնարարությունը կամ պարտականությունը խիստ դժվար է:
- Ե՞րբ եք զգացել, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսն օգնել են ձեզ կատարել Իրենց աշխատանքը: (Դուք կարող եք պատմել այն մասին, թե ինչպես են Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը մեծացրել ձեր ունակություններն Իրենց ծառայության մեջ: Կամ դուք կարող եք կիսվել մեկ ուրիշի կյանքից օրինակով:)

Այս սկզբունքը կիրառելու հարցում ուսանողներին օգնելու համար գրեք հետևյալ հարցերը գրատախտակին: Խնդրեք ուսանողներին այս հարցերից մեկի համար գրել իրենց պատասխանները:

*Ինչպե՞ս կարող է այս սկզբունքն օգնել ձեզ ձեր ներկա և ապագա պարտականություններում:*

*Ինչպե՞ս կարող եք դուք ավելի հավատարիմ լինել, որպեսզի զգաք, որ Տերը մեծացնում է Իր աշխատանքը կատարելու ձեր ունակությունը:*

Բացատրեք, որ Լամոնիին ուսուցանելիս Ամմոնի մոտեցումը Ալմա 18.36–39-ում օրինակ է այսօր միսիոներների կողմից օգտագործելու համար: Նա ուսուցանեց փրկագնման ծրագրի, ներառյալ՝ Արարման, Ադամի և Եվայի Անկման, և Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Խնդրեք ուսանողներին խորհել հետևյալ հարցի շուրջ.

- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է կարևոր ուսուցանել Արարման և Անկման մասին, երբ ուսուցանում ենք Հիսուս Քրիստոսի Քավության մասին:

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ միտքը .

«Նախքան Քրիստոսի Քավությունը ըմբռնելը . . . մենք պետք է հասկանանք Ադամի Անկումը: Իսկ նախքան Ադամի Անկումը հասկանալը, մենք պետք է հասկանանք Արարումը: Փրկության ծրագրի այս երեք էական բաղադրիչները կապված են միմյանց հետ: . . .

. . . Քավության միջոցով հավերժական կյանքը հնարավոր դարձնելը Արարման գերագույն նպատակն է» (“The Atonement,” *Ensign,* Nov. 1996, 33, 35):

Եթե այս երեք վարդապետություններն արդեն գրատախտակին չեն, ավելացրեք դրանք այն ցուցակին, որ գրել եք ընթերցողների թատրոնի ժամանակ: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 18.36–39: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, փնտրելով Ամմոնի կողմից Լամոնիին ուսուցանած Արարման, Անկման և Քավության բաղադրիչները: Հանձնարարեք նրանց կիսվել իրենց գտածով:

- Ինչպե՞ս կարող էին Արարման, Անկման և Քավության վարդապետություններն օգնել Լամոնիին հասկանալ Փրկչի կարիքը:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 18.40–43 և գտնել, թե Լամոնին ինչի համար աղոթեց ի պատասխան Ամմոնի ուսուցման: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին նշել Լամոնիի աղերսանքը:

- Ի՞նչ ցույց տվեց Լամոնիի աղոթքն այն մասին, թե ինչ էր նա հասկացել իր և իր ժողովրդի վերաբերյալ: (Նա հասկացավ, որ նրանք մեղանչել էին և կարիք ունեին ներման:)
- Ի՞նչ կարող ենք սովորել Լամոնիից այն բանի վերաբերյալ, թե ինչ է պատահում, երբ մենք հասկանում ենք, որ Փրկչի կարիքն ունեք: (Երբ ուսանողները պատասխանեն այս հարցին, օգնեք նրանց նշել հետևյալ սկզբունքը. **Երբ մենք հասկանանք Փրկչի կարիքը մեզ համար, մենք կցանկանանք ապաշխարել:** Դուք կարող եք հրավիրել ուսանողներին գրել այս սկզբունքը իրենց սուրբ գրություններում Ալմա 18.40–41 հատվածներիկողքին: Նշեք, որ չնայած ապաշխարության հետ կապված մեր անձնական փորձառությունները տարբերվում են, մենք բոլորս կարող ենք հետևել թագավոր Լամոնիի օրինակին, երբ անկեղծորեն խնդրում ենք Աստծո ողորմածությունը:)

Հրավիրեք ուսանողներին գրել հետևյալ հարցի իրենց պատասխանները.

- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի հիշեք Փրկչի կարիքը:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Ալմա 18.36–39. Ուսուցանել փրկության ծրագիրը

Երբ Ամմոնն ուսուցանեց Լամոնիին, «նա սկսեց աշխարհի ստեղծումից», և ապա նա ուսուցանեց «մարդու անկման մասին» (Ալմա 18.36): Ի վերջո, նա «մեկնաբանեց նրանց համար փրկագնման ծրագիրը», հատկապես «Քրիստոսի գալստյան վերաբերյալ» (Ալմա 18.39): Նույն ձևով Ահարոնը ուսուցանեց այս վարդապետությունները Լամոնիի հորը (տես Ալմա 22.12–14):

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին՝ Տասներկու Առաքյալների Քվորումից անվանել այս հմնադրույթային վարդապետությունները՝ Արարումը, Անկումը և Քավությունը «հավերժության երեք սյուներ» և «մեծագույն իրադարձություններ, որոնք երբևէ տեղի են ունեցել ողջ հավերժության մեջ»: Նա բացատրել է.

«Եթե մենք կարողանանք ձեռք բերել հասկացողություն դրանց մասին, ապա հավերժության ողջ պատկերը կընկնի իր տեղը և մենք ի վիճակի կլինենք իրագործել մեր փրկությունը: . . .

. . . Այս երեքը հիմնադրույթներ են, որոնց վրա հենվում են բոլոր բաները: Առանց դրանցից որևէ մեկի բոլոր բաները կկորցնեին իրենց նպատակն ու իմաստը, և Աստվածության ծրագրերն ու նախագծերը կոչնչանային» (“The Three Pillars of Eternity” [Brigham Young University devotional address, Feb. 17, 1981], 1, speeches.byu.edu):

Երեց Ռասսել Մ. Բալլարդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից բացատրել է, թե ծրագրի յուրաքանչյուր բաղկացուցիչ մաս որքան կարևոր է.

«Ծրագիրը պահանջում էր Արարում, իսկ այն, իր հերթին, պահանջում էր ինչպես Անկում, այնպես էլ՝ Քավություն: Սրանք ծրագրի հիմնական բաղկացուցիչ մասերն են: Դրախտային մոլորակ ստեղծելու ծրագիրն եկել է Աստծուց: Մահկանացու կյանքը և մահը աշխարհ եկան Ադամի Անկումով: Անմահությունը և հավերժական կյանքի հնարավորությունը տրվել են Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Արարումը, Անկումը և Քավությունը ծրագրվել էին Արարման իրական աշխատանքը սկսվելուց շատ առաջ» (“The Creation,” *Ensign,* May 2000, 84):

Բացի այս նույն վարդապետություններն ուսուցանելուց, Ամմոնն ու Ահարոնը օգտագործեցին նմանատիպ մոտեցում իրենց ուսուցանման ժամանակ: Նրանք ուսուցանեցին պարզությամբ, մի ձևով, որ իրենց լսողները կարողանային հասկանալ(տես Ալմա18.24–30, 22.7–11): Նրանք ուսուցանեցին սուրբ գրություններից (տես Ալմա 18.36–39, 22.12–14): Նրանց ուսուցումները առաջնորդեցին մյուսներին աղոթել (տես Ալմա 18.40–41, 22.15–18):

ԴԱՍ 83

# Ալմա 19–20

## Նախաբան

Թագավոր Լամոնին զգաց սրտի փոփոխություն, որը առաջ բերեց իր կնոջ և իր ժողովրդից շատերի դարձը: Այնուհետև Ամմոնն ու թագավոր Լամոնին ճամփորդեցին դեպի Միդդոնի՝ ազատելու Ամմոնի բանտարկված եղբայրներին: Ճանապարհին նրանք հանդիպեցին Լամոնիի հորը՝ ողջ երկրի թագավորին: Թագավորն ապշեց Լամոնիի և Ամմոնի խոսքերից և Ամմոնի ուժից և Լամոնի հանդեպ Ամմոնի սիրուց: Նրա սիրտը փափկեց և նա հավաստիացրեց նրանց, որ Ամմոնի եղբայրները բանտից կարձակվեին: Նա ցանկություն հայտնեց սովորել այն խոսքերի մասին, որոնք նա լսել էր իր որդուց և Ամմոնից:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 19

*Թագավոր Լամոնին և նրա ժողովրդից շատերը ապաշխարեցին և մկրտվեցին:*

Հարցրեք ուսանողներին.

- Երբ դուք մի քար եք նետում ջրի ավազանի մեջ, ի՞նչ է պատահում ջրի հետ:

Երբ ուսանողները նկարագրում են ջրի մեջ ընկնող քարի ազդեցությունը, գծեք հետևյալ սխեման գրատախտակին, բաց թողնելով բառերը.




Գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունները.

*Կիսվելով մեր վկայություններով և ցույց տալով արդարակյաց օրինակներ, մենք կարող ենք . . .:*

Հրավիրեք ուսանողներին հիշել այս միտքը ողջ դասի ընթացքում և մտածել, թե ինչպես կարող են լրացնել այն:

- Ինչպե՞ս կարող է որևէ անձնավորության գործողությունները նման լինել քարի, որը ջուրն է գցվում: (Օգնեք ուսանողներին տեսնել, որ ալեծփանքի նման, որը տարածվում է քարի ճողփյունից, այլ մարդիկ կարող են ազդեցություն կրել մեր գործողություններից:)

Գրեք *Ամմոն* բառը գծապատկերի առաջին օղակում:

- Ո՞ւմ առաջինը ուսուցանեց Ամմոնը:(Եթե ուսանողները օգնության կարիք ունեն այս հարցին պատասխանելու համար, կարող եք առաջարկել, որ նրանք վերանայեն Ալմա 18-ի համառոտ բովանդակությունը: Գրեք *թագավոր Լամոնի* գծապատկերի երկրորդ օղակում:)

Ամփոփեք Ալմա 18.40–43 և 19.1–5 հատվածները, բացատրելով, որ երբ թագավոր Լամոնին լսեց Ամմոնին, նա ընդունեց իր իսկ մեղսավորությունը և Փրկչի կարիքն իր կյանքում: Նա աղաղակեց Տիրոջը ողորմածության համար, ապա ընկավ հատակին: Հավատալով, որ նա մահացած էր, նրա ծառաները տարան նրան իր կնոջ մոտ և պառկացրեցին մահճակալին: Երկու օր և գիշեր անց ծառաները պատրաստվում էին նրա մարմինը գերեզման դնել, երբ թագուհին ասաց, որ կամենում էր խոսել Ամմոնի հետ: Նա չէր կարծում, որ Լամոնին մահացել էր, նա կամենում էր, որ Ամմոնը գնար նրա մոտ:

Խնդրեք ուսանողներին կարդալ մտքում Ալմա 19.6, փնտրելով մի արտահայտություն, որն իրենց կարծիքով, հատկապեսն լավ է նկարագրում Լամոնիի փորձառությունը: Հարցրեք նրանց, թե ինչո՞ւ էին հատկապես ընտրել այդ արտահայտությունները:

Գրեք *թագուհի* գծապատկերի հաջորդ օղակում: Հանձնարարեք ուսանողներին ուսումնասիրել Ալմա 19.7–11 հատվածները և տեսնել, թե ինչպես այս փորձառությունն ազդեց թագուհու վրա:

- Ի՞նչ կարող ենք իմանալ թագուհու մասին այս հատվածներից: (Պատասխանները կարող են ներառել, որ նա սիրում էր իր ամուսնուն, որ նա վստահում էր Ամմոնին և որ նա ուներ մեծ հավատք:)

Խնդրեք ուսանողներին բարձրաձայն կարդալ Ալմա 19.12–14: Խնդրեք մյուսներին հետևել, հատուկ ուշադրություն դարձնելով Լամոնիի հավատքի դրսևորմանը:

- Ի՞նչ ճշմարտություններ Լամոնին սովորեց նախորդ երկու օրերի ընթացքում:
- Լամոնին, թագուհին և Ամմոնը «հաղթվել էին Հոգուց» և «հաղթվել ուրախությունից»: Ե՞րբ եք զգացել Հոգու ազդեցությունը հզոր ձևով: Ե՞րբ եք զգացել մեծ ուրախություն:

Գրեք *Լամոնիի ծառաները՝* գծապատկերի հաջորդ օղակում: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 19.15–16: Խնդրեք դասարանին փնտրել ապացույց, որ այս ծառաները դարձել էին դեպի Աստված:

- Ի՞նչ խոսքեր և արտահայտություններ էին ցույց տալիս, որ ծառաները դառնում էին դեպի Տերը:

Գրեք *Աբիս՝* հաջորդ օղակում: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 19.17: Հրավիրեք դասարանին փնտրել, թե ինչպես Աբիսն ազդվեց այդ դեպքերից:

- Ի՞նչ արեց Աբիսը: Ի՞նչ հույս նա ուներ, որ կպատահեր իր գործողությունների շնորհիվ:

Կարող եք ուսանողներին հնարավորություն տալ ամփոփելու Ալմա 19.18–28 հատվածները: Նրանց ժամանակ տվեք այս հատվածները մտքում կարդալու համար: Ապա խնդրեք որևէ կամավորի պատմությունը պատմել իր սեփական խոսքերով: Թույլ տվեք, որ մյուս ուսանողներն օգնեն: Անհրաժեշտության դեպքում օգնեք նրանց ներառել հետևյալ տեղեկությունը. Աբիսից նորությունները լսելուց հետո մարդիկ հավաքվեցին թագավորի տանը: Երբ նրանք տեսան Ամմոնին, թագավորին, թագուհուն և ծառաներին ուշաթափված, մեծ հակառակություն բարձրացավ նրանց մեջ: Մի մարդ փորձեց սպանել Ամմոնին, բայց ընկավ մեռած այդ փորձի ժամանակ: Ոմանք հայտարարեցին, որ Ամմոնը Մեծ Հոգին էր, իսկ մյուսներն ասացին, որ նա հրեշ էր: Երբ Աբիսը տեսավ ողջ հակառակությունը, որն առաջացել էր ժողովրդին միասին հավաքելուց, նա շատ տխրեց:

Հանձնարարեք ուսանողներին մտածել, թե ինչ իրենք կանեին Աբիսի իրավիճակում գտնվելով: Ապա խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 19.29:

- Ինչպե՞ս Աբիսի գործողությունը ցույց տվեց նրա վկայության ուժը: Ինչպե՞ս թագուհին ցույց տվեց, որ նա վկայություն էր ստացել:

Բարձրաձայն կարդացեք Ալմա 19.30–36 հատվածները: Խնդրեք ուսանողներին հետևել ընթացքում և մտածել ուրիշների վրա Ամմոնի վկայության ազդեցության և օրինակի մասին:

Գրեք*մյուս Լամոնացիներից շատերը* ՝ գծապատկերի վերջին օղակում:

Խնդրեք ուսանողներին լրացնել միտքը, որը դուք գրել եք գրատախատակին դասի սկզբում: Մեկ սկզբունք, որ նրանք կարող են արտահայտել ,այն է, որ **կիսվելով մեր վկայությամբ և արդար օրինակ հանդիսանալով, մենք կարող ենք օգնել ուրիշներին դառնալ դեպի Տերը:**

- Ե՞րբ է պատահել, որ ինչ որ մեկի օրինակը կամ վկայությունը լավ ազդեցություն է գործել ձեզ վրա:

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչպես իրենց վկայությունները և օրինակները կարող են ազդել իրենց ընտանիքների անդամների, ընկերների և համայնքի վրա: Խնդրեք նրանց գրել պատասխան հետևյալ հարցին հուշատետրում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:

- Ի՞նչ կարող եք անել դուք այսօր, որը կարող է լավ ազդեցություն ունենալ մարդկանց վրա ձեր շրջապատում:

Խրախուսեք ուսանողներին թույլ տալ, որ իրենց վկայություններն ու արդար օրինակներն ազդեն մյուսների վրա, ինչպես քարը կարող է կոհակներ առաջացնել ջրափոսում: Ասեք ուսանողներին, որ եկող դասին (դաս 85) կարող եք խնդրել նրանց հաղորդել իրենց ջանքերի մասին:

## Ալմա 20

*Թագավոր Լամոնիի հայրը ցանկանում է սովորել ավետարանի մասին և սկսում է զգալ սրտի փոփոխություն:*

Հրավիրեք ուսանողներին մտածել մի ժամանակի մասին, երբ նրանց վատ կամ անազնիվ էին վերաբերվել:

Բացատրեք, որ Ամմոնը և Լամոնին մի իրավիճակի մեջ ընկան, երբ նրանց վատ վերաբերվեցին: Նշեք, որ մենք կարող ենք սովորել կարևոր դասեր վատ վերաբերմունքին նրանց արձագանքներից:

Ուսանողներին օգնելու համար ծանոթանալ Ալմա 20 գլխի պատմության հետ, ամփոփեք Ալմա 20.1–7 հետևյալ ձևով. Լամոնին ցանկանում էր Ամմոնին տանել իր հոր հետ հանդիպման, որը ողջ երկրի թագավորն էր: Տերը հայտնեց Ամմոնին, որ նա չպետք է գնար, որովհետև Լամոնիի հայրը կփորձեր նրան սպանել: Տերը նաև հայտնեց, որ Ամմոնի եղբայր Ահարոնը և երկու ընկերակիցներ բանտում էին Միդոնի երկրում: Ամմոնը ցանկանում էր ազատել իր եղբայրներին: Լսելով, որ Ամմոնը իմացել էր այս բաները հայտնությամբ, Լամոնին գնաց օգնելու Ամմոնին ազատել իր եղբայրներին:

Դասից առաջ արտագրեք հետևյալ աղյուսակը գրատախտակի վրա կամ բաժանելու համար թերթիկներ պատրաստեք յուրաքանչյուր ուսանողի համար:

| | |
|---|---|
| 1. Ալմա 20.8–13 | Ի՞նչ զգացումներ կունենայիք դուք, եթե լինեիք Ամմոնի վիճակում և ինչ որ մեկը մեղադրեր ձեզ ստախոս և ավազակ լինելու մեջ: |
| 2. Ալմա 20.14–16 | Ի՞նչ դասեր կարող եք դուք սովորել իր հորը տված Լամոնիի պատասխանից: |
| 3. Ալմա 20.17–25 | Երբ Լամոոնիի հայրը տեսավ, որ Ամմոնը կարող էր սպանել իրեն, ի՞նչ առաջարկեց Ամմոնին: Ի՞նչ խնդրեց Ամմոնը փոխարենը: |
| 4. Ալմա 20.26–27 | Ինչպե՞ս Ամմոնի սերը Լամոնիի հանդեպ ազդեց Լամոնիի հոր վրա: Ինչպե՞ս Ամմոնի և Լամոնիի խոսքերն ազդեցին Լամոնիի հոր վրա: |

Հանձնարարեք ուսանողներին աշխատել զույգերով: Խնդրեք զույգերին կարդալ այն հատվածները, որոնք թվարկված են 1–2 տողերում և քննարկեք ուղեկցող հարցերի պատասխանները: Քաջալերեք նրանց պատրաստվել կիսվել իրենց պատասխաններով ողջ դասարանի հետ:

Նրանից հետո, երբ ուսանողները զույգերով քննարկեն 1-2 տողերը, խնդրեք մի քանիսին պատմել, թե ինչ են սովորել: Ապա հարցրեք.

- Ի՞նչ սկզբունքներ կարող ենք սովորել այս հատվածներից: (Ուսանողները կարող են կիսվել մի քանի պատասխաններով, բայց օգնեք նրանց ճանաչել հետևյալ սկզբունքները. **Մենք կարող ենք բերել մեր վկայությունները խոսքով և օրինակով, նույնիսկ, երբ ուրիշները փորձում են համոզել մեզ անել այն, ինչը սխալ է:** Դուք կարող եք առաջարկել, որ նրանք գրեն այս սկզբունքը Ալմա 20.15 հատվածի կողքին:)

Հրավիրեք մասնակիցներին ուսումնասիրել 3–4 տողերում գրված հատվածները և քննարկել ուղեկցող հարցերը: Խնդրեք նրանց կիսվել իրենց գտածով: Ապա հարցրեք.

- Ի՞նչ սկզբունքներ կարող ենք մենք սովորել այս հատվածներից: (Չնայած ուսանողները կարող են կիսվել տարբեր սկզբունքներով, հավաստիացեք, որ հետևյալը պարզ լինի նրանց. **Երբ մենք ցույց ենք տալիս սեր և ուսուցանում ճշմարտությունը, մենք կարող ենք օգնել ուրիշներին փափկացնել իրենց**

**սրտերը և դառնալ ընկալունակ ավետարանի հանդեպ:** Դուք կարող եք քաջալերել ուսանողներին գրել այս սկզբունքը Ալմա 20.26–27-ի դիմաց։)

Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց ունեցած այն փորձառություններով, երբ ցույց է տրվել սկզբունքներից որևէ մեկի ճշմարտությունը, որոնք նրանք գտել ենԱլմա 20-ում։ Կարող եք կիսվել ձեր փորձառությամբ ևս։

Եզրափակեք, խրախուսելով ուսանողներին փնտրել Հոգու առաջնորդությունը, թե ինչպես իրենք կարող են կիրառել այս երկու սկզբունքներն իրենց կյանքում։

ԴԱՍ 84

# Ալմա 21–22

## Նախաբան

Ամմոնի Եղբայր Ահարոնն ուսուցանեց Ամաղեկացիներին, բայց նրանք մերժեցին նրա ուղերձը Հիսուս Քրիստոսի Քավության վերաբերյալ: Ապա նա քարոզեց Միդդոնիում, որտեղ նա և նրա ընկերակիցներից մի քանիսը բանտարկվեցին: Նրանք հավատարիմ մնացին իրենց ձախորդության ժամանակ և շարունակեցին ավետարանով կիսվելու իրենց առաքելությունը, երբ Ամմոնը և թագավոր Լամոնին ապահովեցին նրանց ազատումը (Ալմա 22.15): Լամոնիի հայրն իմացավ, որ ապաշխարելով իր մեղքերից, նա կարող էր գալ Աստծո ճանաչմանը և, ի վերջո, ստանալ հավերժական կյանք:

***Օգնեք ուսանողներին կիրառել վարդապետություններն ու սկզբունքները***

Աղոթքով որոշեք, թե ինչպես օգնել ուսանողներին ճանաչել և կիրառել դասի վարդապետությունը և սկզբունքները համաձայն իրենց անձնական հանգամանքների:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 21

*Ահարոնը և նրա եղբայրները քարոզում են ավետարանը՝ չնայած փորձություններին և բանտարկությանը:*

Հարցրեք ուսանողներին, թե նրանք երբևէ զգացել են, որ իրենք անում են իրենց լավագույնը պատվիրանները պահելու համար և, այնուամենայնիվ, դժվարություններ ունենում կամ հուսահատված զգում: Հրավիրեք նրանց նշել որոշ իրավիճակներ, որոնցում մարդիկ կարող են այդպես զգալ:

Բացատրեք, որ չնայած Ամմոնը հաջողություն ունեցավ Թագավոր Լամոնիին և նրա ժողովրդին ուսուցանելիս, Ահարոնն ու նրա ընկերակիցները վիթխարի ձախորդության հանդիպեցին երկրի ուրիշ մասում: Երբ ուսանողները ուսումնասիրեն Ահարոնի և նրա ընկերակիցների օրինակը, խրախուսեք նրանց փնտրել դասերը, որոնք կարող են օգնել նրանց, երբ նրանք մարտակոչերի հանդիպեն կամ հուսահատված զգան:

Գրեք հետևյալ հղումները գրատախտակին. *Ալմա 21.1–4, Ալմա 21.5–8, Ալմա 21.9–11, Ալմա 21.12–15,* և *Ալմա 20.29–30.*Բաժանեք դասարանը հինգ խմբի: Հանձնարարեք յուրաքանչյուր խմբին գրատախտակին գրված հատվածներից մեկը: Խնդրեք ուսանողներին պատրաստվել տալու իրենց հանձնարարված հատվածների համառոտ բովանդակությունը և նկարագրել որևէ դժվարություն, որոնց դիմացան Ահարոնն ու նրա ընկերակիցները: Մի քանի րոպե հետո յուրաքանչյուր խմբի ուսանողներից հրավիրեք կիսվել նրանով, ինչ գտել են: :

- Ինչպե՞ս Ահարոնն ու նրա եղբայրները դիմացան իրենց փորձություններին:(Տես Ալմա 20.29, 21.9, 12, 15:)
- Փորձություններից մեկը, որին հանդիպեց Ահարոնը, երբ ուսուցանում էր Ամաղեկացիներին, ընդդիմությունն էր (տես Ալմա 21.5–10): Ի՞նչ կարելի է անել, երբ ինչ-որ մեկը ցանկանում է վիճաբարկել մեր կրոնը կամ մեր համոզմունքները:

Հիշեցրեք ուսանողներին այս դասի սկզբում գտնվող հարցը: Ահարոնն ու նրա եղբայրները տքնաջանորեն աշխատեցին անելու այնպես, ինչպես Տերն էր ուղղորդում նրանց, բայց և այնպես նրանք հանդիպեցին դժվարությունների: Խնդրեք ուսանողներին մտքում մտածել, թե ինչպես իրենք կզգային, եթե տանեին այն, ինչ Ահարոնն ու նրա ընկերակիցները տարան: Ի՞նչ կցանկանային անել հանուն ավետարանի՝ տնից հեռու տառապելուց և բանտարկվելուց հետո: Դուք կարող եք հարցնել նրանց, թե արդյոք կկամենայի՞ն տուն գնալ:

Գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. ***Եթե մենք հավատարմորեն դիմանանք փորձություններին, Տերը կօգնի մեզ անել Իր աշխատանքը:*** Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 21.16–17: Խնդրեք դասարանի մնացած մասին հետևել, նշելով, թե ինչպես Տերն օգնեց Ահարոնին և նրա եղբայրներին կատարել Իր աշխատանքը: Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով:

Ուսանողներին օգնելու համար կիրառել գրատախտակին գրված սկզբունքը, հարցրեք նրանց, թե ինչպիսի աշխատանքներ է Աստված այժմ պատրաստել նրանց

համար անելու, և ի՞նչ մարտակոչերի նրանք կարող են հանդիպել՝ փորձելով իրականացնել այս աշխատանքը։ (Դուք կարող եք նշել, որ բացի միսիոներական աշխատանքից, ուսանողները կարող են մասնակցել Աստծո աշխատանքին՝ հաճախելով Եկեղեցու ժողովներին, կատարելով կոչումներ և հանձնարարություններ, ծառայելով ուրիշներին, զորացնելով իրենց վկայությունները և դառնալով ավելի Քրիստոսանման։)

Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչպես են իմացել, որ այն սկզբունքը, որ դուք գրել եք գրատախտակին, ճշմարիտ է։ Դուք կարող եք կիսվել վկայությամբ, թե ինչպես է Տերն օգնում մեզ կատարել իր աշխատանքը, երբ մենք հավատարմորեն դիմանում ենք փորձություններին։ Խնդրեք ուսանողներին մտածել ապագա դեպքերի օրինակների մասին, երբ իրենց կարծիքով, գուցե, կարիք լինի դիմանալու փորձությունների, երբ կատարեն Տիրոջ աշխատանքը։

Ամփոփեք Ալմա 21.18–23 հատվածները, բացատրելով, որ Ահարոնին և նրա եղբայրներին բանտից ազատելուց հետո, Ամմոնը և Լամոնին վերադարձան Իսմայիլի երկիրը, որտեղ նրանք շարունակեցին քարոզել ավետարանը։ Լամոնին կրոնական ազատություն պարգևեց իր ժողովրդին։

## Ալմա 22

*Ահարոնը քարոզում է ավետարանը Լամոնիի հորը, ով հավատում է և ծնվում Աստծուց։*

Գրատախտակին գրեք հետևյալ հարցերը.

*Ինչո՞ւ եք կամենում ստանալ հավերժական կյանք։*

*Ի՞նչից կկամենայիք հրաժարվել, որպեսզի ստանայիք հավերժական կյանք։*

Բացատրեք, որ «հավերժական կյանքը կամ վեհացումը սելեստիալ արքայության բարձրագույն աստիճանում տեղ ժառանգելն է, որտեղ մենք կապրենք Աստծո ներկայության մեջ և կշարունակենք մնալ որպես ընտանիքներ (տես ՎԿՈՒ 131.1–4)։. . . Այս պարգևը հնարավոր է դարձվում Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով» (*Հավատքին հավատարիմ. ավետարանական վկայակոչում* [2004], 52)։ Համառոտ պատմեք ուսանողներին, թե ինչու եք կամենում ստանալ հավերժական կյանք։ Կարող եք ցույց տալ ձեր ընտանիքի լուսանկարը և Փրկչի որևէ նկար։ Ապա խնդրեք ուսանողներին խորհել գրատախտակի հարցերի շուրջ, երբ միասին ուսումնասիրեք Ալմա 22 գլուխը։

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 22.1։

- Ի՞նչ եք հիշում Լամոնիի հոր մասին նախորդ դասից։ (Դուք կարող եք հրավիրել որևէ ուսանողի ամփոփել Ալմա 20 գլուխը։)
- Համաձայն Ալմա 20.27 հատվածի, ինչ խնդրեց Լամոնիի հայրը Ամմոնին անել։ (Ուսուցանել իրեն։)

Ամփոփեք Ալմա 22.2–3 հատվածները, բացատրելով, որ չնայած Լամոնիի հայրը ցանկացավ տեսնել Ամմոնին և ուսուցանվել նրա կողմից, նա դեռևս ցանկանում էր սովորել, երբ, փոխարենը, Ահարոնը եկավ նրա մոտ։

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալԱլմա 22.5–6 հատվածները։ Խնդրեք դասարանին հետևել՝ փնտրելով, թե ինչ էր թագավոր Լամոնիի հայրն ուզում իմանալ։ Խնդրեք նրանց կիսվել իրենց գտածով։

Բաժանեք դասարանը փոքր խմբերի։ Հրավիրեք խմբերին միասին կարդալ Ալմա 22.7–14 և վարդապետությունների ցուցակ կազմեք, որոնք Ահարոնն ուսուցանեց Լամոնիի հորը։ (Օրինակ նրանք կարող են նշել, որ նա ուսուցանեց Արարման, Անկման և Քավության մասին։) Ցուցակները կազմելուց հետո, խնդրեք մի ուսանողի կիսվել դասարանի հետ իր խմբի վարդապետությունների ցուցակով։ Կարող եք գրել ցուցակը գրատախտակին։ Ապա հրավիրեք ուրիշ ուսանողների գրել որոշ լրացուցիչ վարդապետություններ, որոնք իրենց խմբերն են գրի առել։

- Ինչպե՞ս են այս վարդապետությունները պատասխանում թագավորի հարցին Ալմա 22.6-ում։

Հրավիրեք ուսանողներին լուռ հետազոտել Ալմա 22.15, փնտրելով, թե թագավոր Լամոնիի հայրը ինչից էր հոժար հրաժարվել, որպեսզի ստանար ուրախություն և հավերժական կյանք։

- Ի՞նչ մտքեր եք ունենում, երբ մտածում եք, թե թագավորն ինչից էր ուզում հրաժարվել։

Նշեք, որ չնայած թագավորը հոժար էր հրաժարվել բոլոր իր ունեցվածքից, Ահարոնն ուսուցանեց նրան մի ավելի մեծ զոհաբերության մասին, որ նա պետք է կատարեր։ Հրավիրեք դասարանին բարձրաձայն կարդալ Ալմա 22.16։ Խնդրեք դասարանին լսել, թե Ահարոնն ինչ ասաց թագավորին, որ նա պետք է աներ։

- Ի՞նչ ասաց Ահարոնը, որ թագավորը պետք է աներ։ (Ապաշխարեր իր մեղքերից և աղոթեր Աստծուն հավատքով։)

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 22.17–18։ Խնդրեք դասարանին ընթացքում հետևել՝ փնտրելով թագավորի պատասխանը Ահարոնի հրահանգներին։

- Ինչպե՞ս թագավորը ցույց տվեց հավերժական կյանք ստանալու իր ցանկությունը։
- Ի՞նչ է նշանակում, ձեր կարծիքով, «հրաժարվելը» մեր մեղքերից։ Ձեր կարծիքով, ինչո՞ւ է անհրաժեշտ ապաշխարել *բոլոր* մեր մեղքերից, ոչ միայն դրանցից *մի քանիսից*։ (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ մարդուց ժամանակ է պահանջվում բոլոր իր մեղքերից ապաշխարելու համար։)
- Ի՞նչ կարող ենք սովորել թագավոր Լամոնիի հորից՝ հավերժական կյանքի համար նախապատրաստվելու մասին։ (Չնայած ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, հավաստիացեք, որ նրանք հասկանան հետևյալ ճշմարտությունը. **Մենք պետք է հոժարակամ լինենք թողնելու բոլոր մեր մեղքերը, որպեսզի նախապատրաստվենք հավերժական կյանքին։** Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն «Ես կհրաժարվեմ բոլոր իմ մեղքերից՝ քեզ գիտենալու համար» արտահայտությունը Ալմա 22.18-ում։)

Խնդրեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսի հետևյալ միտքը.

«Հիսուս Քրիստոսի ավետարանը կոչ է անում մեզ փոխվել։ «Ապաշխարեք» բառը ամենահաճախ հանդիպող ուղերձն է, և ապաշխարելը նշանակում է հրաժարվել բոլոր մեր սովորություններից՝ անձնական, ընտանեկան, էթնիկ և ազգային, որոնք հակադիր են Աստծո պատվիրաններին (“Repentance and Change,” *Ensign* կամ *Liahona,* Nov. 2003, 37)։

Նշեք, որ որոշ մարդիկ կասկածում են, որ կարող են իսկապես ապաշխարել և փոխվել։ Մյուսներն էլ կասկածում են, որ Տերը կների իրենց։ Օգնելու համար այն ուսանողներին, ովքեր կարող են ունենալ նման մտահոգություններ, կարդացեք Երիտասարդ Կանանց գերագույն նախագահ Քույր Էլեյն Ս. Դալտոնի հետևյալ միտքը.

«Դուք ունե՞ք ինչ որ բան ձեր կյանքում, որը դուք պետք է փոխեք։ Դուք կարող եք դա անել։ Դուք կարող եք ապաշխարել ի շնորհիվ Փրկչի անսահման քավող զոհաբերության։ Նա հնարավոր է դարձրել դա ձեզ և ինձ համար՝ փոխվել, կրկին դառնալ անարատ և մաքուր և դառնալ Իր նման։ Եվ Նա խոստացել է, որ երբ մենք անենք դա, Նա այլևս չի հիշի մեր մեղքերն ու սխալները» («Այժմ է բարձրանալու և շողալու ժամանակը»*Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2012, 124)։

Բացատրեք, որ երբ մենք հավատք ենք գործի դնում և ապաշխարում մեր մեղքերից, մենք արժանի ենք դառնում ստանալու քահանայության արարողություններ և ուխտեր, որոնք օգնում են մեզ պատրաստվել հավերժական կյանքի համար։

Հրավիրեք ուսանողներին գրել տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում իրենց պատասխանները հետևյալ հարցերին։ (Դուք կարող եք գրել հարցը գրատախտակին կամ կարդալ այն դանդաղ, որպեսզի ուսանողները կարողանան գրել։)

- Ձեր սովորածի հիման վրա ասացեք, ի՞նչ է պահանջվում հավերժական կյանք ստանալու համար, ի՞նչ եք կարծում, Տերը կխնդրի ձեզ անել այսօր, որպեսզի դուք կարողանաք ավելի մոտենալ Իրեն։

Երբ ուսանողները բավականին ժամանակ ունենան և գրեն, հարցրեք.

- Ի՞նչ ապացույց եք տեսնում, որ թագավորը դարձի էր եկել դեպի Տերը։ (Հիշեցրեք, որ եթե նախկինում թագավորը պատրաստ էր սպանել իր սեփական որդուն, ապա այժմ նա պատրաստ էր հրաժարվել իր ողջ թագավորությունից և իր բոլոր մեղքերից, որպեսզի ծնվեր Աստծուց։)

ԱմփոփեքԱլմա 22.19–21 հատվածները, բացատրելով, երբ թագավորը հոգուց հաղթվեց, նրա ծառաները վազեցին և պատմեցին թագուհուն այն ամենը, ինչ պատահել էր: Նա բարկացավ և հրամայեց ծառաներին սպանել Ահարոնին և նրա եղբայրներին: Վախեցած Նեփիացի միսիոներների ուժից, ծառաները հրաժարվեցին: Թագուհին ևս վախեցավ, բայց վճռական էր Նեփիացիներին սպանել տալու հարցում: Նա հրամայեց ծառաներին գնալ և բերել մարդկանց՝ սպանելու Ահարոնին և նրա ընկերակիցներին:

Խնդրեք ուսանողներին լուռ կարդալԱլմա 22.22–26 , փնտրելով գործողություններ, որոնք Ահարոնն ու թագավորն արեցին, որպեսզի թագուհին և մյուսները կարողանային նույնպես դարձի գալ և զգալ ուրախություն: Եզրափակեք՝ կիսվելով ապաշխարության և Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով փոխված լինելու ձեր վկայությամբ:

## Սուրբ գրության սերտման հատվածների կրկնություն

Երիտասարդները կարող են սովորել սուրբ գրություններն օգտագործել ավետարանական ճշմարտություններ ուսուցանելու համար: Ուսանողներին զույգերի բաժանեք և հրավիրեք յուրաքանչյուր զույգին պատրաստել մեկ կամ երկու րոպեանոց ներկայացում, որում նրանք ուսուցանում են մի հիմնական վարդապետություն, որը դուք նրանց հանձնարարել եք: Խնդրեք նրանց օգտագործել սուրբ գրության սերտման առնվազն մեկ հատված՝ վարդապետությունն ուսուցանելու համար: Խնդրեք նրանց օգտագործել բացատրություններ, օրինակներ, փորձառություններ և վկայություններ իրենց ուսուցման մեջ: Յուրաքանչյուր զույգի երկու ուսանողն էլ պետք է մասնակցեն ներկայացմանը: Պատրաստվելուն բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, խնդրեք երկու կամ երեք զույգի ուսուցանել դասարանին: Կարող եք խնդրել մյուս զույգերին կատարել իրենց ներկայացումները գալիք հոգևոր երեկոների կամ որևէ այլ կարճ դասից հետո:

*Նշում.* Եթե դուք ժամանակ չունեք այս միջոցառման համար, որպես այս դասի մաս, կարող եք օգտագործել այն մեկ ուրիշ օր: Կրկնության այլ վարժությունների համար տես հավելվածը այս ձեռնարկի վերջում:

ԴԱՍ 85

# Ալմա 23–24

## Նախաբան

Իր դարձից հետո Լամանացիների թագավորը կրոնական ազատություն հայտարարեց իր ժողովրդի մեջ: Այս հայտարարությունը թույլ տվեց Ահարոնին և նրա եղբայրներին քարոզել ավետարանը և հաստատել եկեղեցիներ Լամանական քաղաքներում: Հազարավոր Լամանացիներ դարձի եկան և երբեք չուրացան: Դարձի եկած այս Լամանացիները ուխտ կապեցին՝ վար դնել իրենց պատերազմի զենքերը, և նրանք տարբերակեցին իրենց ուխտ չկապած Լամանացիներից՝ իրենց կոչելով Անթի Նեփի Լեքիներ: Երբ դարձի չեկած Լամանացիները հարձակվեցին նրանց վրա, որոշ Անթի Նեփի Լեքիներ զոհաբերեցին իրենց կյանքը՝ իրենց ուխտը պահելու համար:

*Նշում.* 83- րդ դասում, դուք, հնարավոր է, խրախուսել եք ուսանողներին թույլ տալ, որ իրենց վկայությունները և արդար օրինակները ազդեն ուրիշների վրա, ինչպես քարն է ճողոփյուն առաջացնում ջրափոսում: Եթե կատարել եք այդ վարժությունը, կարող եք սկսել այս դասը՝ ուսանողներին խնդրելով պատմել իրենց ջանքերի մասին:

***Հետևեք հանձնարարությունների կատարմանը***

Երբ ուսուցիչները հետևում են նախորդ դասերին տրված հրավերներին և հանձնարարություններին, ուսանողները սկսում են հասկանալ և զգալ աստվածային սկզբունքներով գործելու և դասարանից դուրս իրենց կյանքում դրանք կիրառելու կարևորությունը:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 23

*Հազարավոր Լամանացիներ դարձի են գալիս դեպի Տերը*

Գրատախտակին նկարեք երկու մարդկանց նկար (բավական է պարզ նկարել ուրվագծերը): Ապա կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ միտքը: Խնդրեք դասարանին լսել Երեց Ռիչարդ Սքոթի երկու տարբեր տեսակի մարդկանց նկարագրությունները:

«Մեզանից յուրաքանչյուրը նկատել է, թե ինչպես որոշ անձնավորություններ կյանքում հետևողականորեն ճիշտ գործեր են կատարում: Նրանք երջանիկ են երևում, նույնիսկ, կյանքով խանդավառված: Երբ դժվարին ընտրություններ պետք է արվեն, նրանք, թվում է, անպայմանորեն ճիշտն են ընտրում, չնայած առկա գայթակղիչ տարբերակների: Մենք գիտենք, որ նրանք ենթակա են գայթակղության, բայց նրանք, թվում է, անտեղյակ են դրանցից: Նմանապես մենք նկատում ենք, թե ինչպես ուրիշներն այնքան էլ քաջարի չեն այն որոշումներում, որոնք ընդունում են: Հզոր հոգևոր միջավայրում նրանք վճռում են ավելի լավ գործել, փոխել իրենց կյանքի ընթացքը, մի կողմ դնել վնասակար սովորույթները: Նրանք շատ անկեղծ են փոխվելու իրենց վճռականության մեջ, սակայն շուտով վերադառնում են դառնում այն բաները, որոնց վճռել էին վերջ տալ:

Ո՞րն է տարբերությունը այս երկու խմբերի միջև: Ինչպե՞ս կարող եք հետևողականորեն ճիշտ ընտրություններ կատարել: (“Full Conversion Brings Happiness,” *Ensign,* May 2002, 24):

Հարցրեք ուսանողներին, թե ինչպես նրանք կարող են անվանել գրատախտակի վրա նկարած երկու կերպարներին, հիմնվելով Երեց Սքոթի մեկնաբանությունների վրա: Պիտակավորեք գրատախտակի մեկ կերպարին որպես *Հավատարիմներ*, իսկ մյուսին՝ *Անհետևողականներ:* Հարցրեք ուսանողներին, թե ինչպես նրանք կպատասխանեին Երեց Սքոթի հարցերին.

- Ո՞րն է տարբերությունը այս երկու խմբերի միջև:
- Ինչպե՞ս կարող եք հետևողականորեն ճիշտ ընտրություններ կատարել:

Երբ դասարանը ուսումնասիրում է Ալմա 23–24, քաջալերեք ուսանողներին մտածել այն մասին, թե ինչն է դրդում Եկեղեցու շատ անդամների ճշմարիտ և հավատարիմ մնալ կյանքի ողջ ընթացքում:

Ամփոփեք Ալմա 23.1–5 հատվածները, բացատրելով, որ Լամանացիների թագավորը դարձի գալուց հետո մի հռչակագիր ուղարկեց ժողովրդին՝ հայտարարելով, որ

նրանք պետք է թույլ տան Ահարոնին և նրա եղբայրներին քարոզել Աստծո խոսքը ողջ երկրում՝ առանց խոչընդոտների և առանց նրանց վնաս պատճառելու:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 23.6 : Խնդրեք դասարանին ընթացքում հետևել՝ որոնելով երկու բաներ, որոնք առաջացրեցին Լամանացիների դարձը: Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր կարևոր, որ Ամմոնը և նրա եղբայրները ուսուցանեցին Լամանացիներին «համաձայն մարգարեության և հայտնության հոգու»:
- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում՝ «Աստծո զորությունը հրաշքներ գործեց» Լամանացիների մեջ արտահայտությունը:
- Ե՞րբ եք զգացել, որ Աստծո զորությունն օգնում է ձեզ դարձի գալ: Ե՞րբ եք տեսել, որ Աստծո զորությունն օգնի մեկ ուրիշին դարձի գալ:

Հրավիրեք ուսանողներին կրկին կարդալ Ալմա 23.6, գտնելով արտահայտություններ, որոնք նկարագրում են Լամանացիներին, ովքեր հավատացին Ամմոնի և նրա եղբայրների քարոզներից: (Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են, որ այդ Լամանացիները «դարձի էին եկել դեպի Տերը», ոչ թե՝ դեպի Եկեղեցին կամ միսիոներները, ովքեր ուսուցանում էին նրանց: Հավաստիացեք նաև, որ ուսանողները տեսնեն, որ այս մարդիկ «երբեք չուրացան»: Գրեք *Դարձի եկած առ Տերը* և *Երբեք չուրացան* արտահայտությունները գրատախտակին կերպարի տակ, որն անվանված է *Հավատարիմ:*)

- Երբ հանդիպում ենք դժվար հանգամանքների և ձախորդության, ինչո՞ւ է կարևոր, որ մենք դարձի եկած լինենք դեպի Տերը, ոչ թե՝ այլ մարդկանց կամ գաղափարները:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 23.7, 16–18, փնտրելով խոսքեր և արտահայտություններ, որոնք ապացույց են տալիս Լամանացիների դարձի մասին: Խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով: Դուք կարող եք այս խոսքերն ու արտահայտությունները գրել գրատախտակին *Հավատարիմ* անունով պատկերի ներքևում: Ուսանողներին օգնելու համար շարունակել այս հատվածները վերլուծելը, կարող եք ուղղել հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս էր նոր անվանը ձգտելու մարդկանց ցանկությունն ապացուցում, որ նրանք փոխվել էին:
- Ինչպե՞ս կարող են նրանք, ովքեր դարձի են եկել այսօր, «զանազանվել» մյուսներից:
- Համաձայն Ալմա 23.18-ի, դարձի եկած Լամանացիները դարձան աշխատասեր և բարեկամական տրամադրված Նեփիացիների հանդեպ: Երբ որևէ մարդ փորձում է ապաշխարել կամ փոխել իր կյանքը, ինչպե՞ս կարող է նրա համար օգտակար լինել դարձի եկած ուրիշ մարդկանց հետ հաղորդակցվելը:

Գրեք հետևյալ խոսքերը գրատախտակին. *Դարձի գալ նշանակում է՝ . . .*:

Հրավիրեք ուսանողներին ամփոփել այն, ինչ սովորել են Ալմա 23-ում, լրացնելով գրատախտակի վրայի միտքը: Ուսանողները, հնարավոր է, օգտագործեն տարբեր խոսքեր իրենց պատասխաններում, բայց նրանք պետք է արտահայտեն հետևյալ ճշմարտությունը. **Դարձը նշանակում է փոխվելը և նոր մարդ դառնալը Աստծո զորության միջոցով:** Լրացրեք միտքը գրատախտակի վրա:

Ուսանողների ուշադրությունը հրավիրեք գրատախտակի *Հավատարիմ* և *Անհետևողական* բառերի վրա: Խրախուսեք նրանց մտածել, թե որ տերմինն է լավագույնս նկարագրում նրանց դարձի աստիճանը:

## Ալմա 24

### *Անթի Նեփի Լեքիները ուխտ են կապում, որ երբեք կրկին պատերազմի զենքեր չվերցնեն:*

Հրավիրեք ուսանողներին մտքում մտածել, թե երբևէ որոշել են խուսափել որոշակի սխալ կամ մեղք կրկնելուց, բայց հետագայում կրկին գործել այդ սխալը կամ մեղքը: Բացատրեք, որ եթե նրանք զգացել են դա, նրանք պետք է շարունակեն փորձել բարեփոխվել: Երբ նրանք ուսումնասիրեն Ալմա 24, նրանք կսովորեն ճշմարտություններ, որոնք կօգնեն նրանց:

Ամփոփեք Ալմա 24.1–5 հատվածները, բացատրելով, որ Ամաղեկացիները և Ամուղոնացիները, ովքեր նախկինում Նեփիացիներ էին, շատ Լամանացիների զայրույթի դրդեցին իրենց թագավորի և մյուս Անթի Նեփի Լեքիների դեմ: Իրենց զայրույթի մեջ այս Լամանացիները պատրաստվեցին հարձակում գործել Անթի Նեփի Լեքիների վրա: Կռվի այդ պահին Անթի Նեփի Լեքիների թագավորը մահացավ: Թագավորությունն անցավ նրա որդիներից մեկին: Ամմոնը հավաքեց նոր թագավորին և Լամոնիին և մյուսներին՝ խորհրդակցելու միմյանց հետ և որոշելու, թե ինչպես պաշտպանվեն Լամանացիների դեմ:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 24.6, փնտրելով, թե Անթի Նեփի Լեքիները ինչ էին որոշել, որ չպետք է անեին: Երբ ուսանողները կիսվեն իրենք գտածով, մի քանի ուսանողների խնդրեք հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 24.7–10, 12–14 հատվածները: Հանձնարարեք դասարանին ընթացքում հետևել, լսելով, թե ինչ տարբեր եղանակներով էր Անթի Նեփի Լեքիների թագավորն արտահայտում իր երախտագիտությունը նրա համար, որ Աստված օրհնել էր իրենց:

- Համաձայն Ալմա 24.9-ի, ո՞րն էր Անթի Նեփի Լեքիների մեղքերից մեկը, որը նախկինում նրանք գործել էին:
- Համաձայն Ալմա 24.13-ի, ինչո՞ւ նրանք հրաժարվեցին ճակատամարտել:

Դասարանը երկու խմբի բաժանեք: Հրավիրեք առաջին խմբին կարդալԱլմա 24.11, 15, փնտրելով արտահայտություններ, որոնք արտահայտում են Անթի Նեփի Լեքիների ապաշխարելու ջանքերը: Խնդրեք երկրորդ խմբին կարդալ Ալմա 24.16–19, փնտրելով այն, ինչ Անթի Նեփի Լեքիները արեցին, որ իրենց մաքուր պահեին: Ուսանողներին կարդալու համար բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, հրավիրեք նրանց կիսվել իրենց գտածով: Դուք կարող եք օգտագործել հետևյալ հարցերը՝ լրացուցիչ գաղափարներ առաջ բերելու համար.

- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ ի նկատի ուներ թագավորը, ասելով. «Սա այն ամենն է, ինչ մենք կարող էինք անել . . . ապաշխարելու համար»(Ալմա 24.11): (Այս արտահայտությունը նկարագրում է իրենց մեղքերից ապաշխարելու Անթի Նեփի Լեքիների մեծ ջանքերն ու վճռականությունը:)
- *Վկայություն* բառը երեք անգամ հայտնվում է Ալմա 24.15–16, 18 հատվածներում: Ինչպե՞ս նրանց զենքերի թաղումը խորը փոսի մեջ ծառայեց որպես վկայություն: (Այն ցույց տվեց մյուս մարդկանց և Աստծուն, որ նրանք իսկապես թողել էին իրենց մեղքերը:)

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի հետևյալ միտքը.

«Թողնելով մեղքը մարդ չի կարող ցանկանալ ավելի լավ պայմաններ: . . . Նա պետք է համոզված լինի ոչ միայն, որ թողել է մեղքը, այլ որ նա փոխել է մեղքը շրջապատող իրավիճակը: Նա պետք է խուսափի այն վայրերից, վիճակներից ու հանգամանքներից, որտեղ տեղի է ունեցել մեղքը, որովհետև այն կարող է ամենայն հավանականությամբ նորից կրկնվել: Նա պետք է թողնի այն մարդկանց, ում հետ գործել է մեղքը: Նա գուցեև չատի ներգրավված մարդկանց, բայց նա պետք է խուսափի նրանցից և այն ամենից, ինչ կապված է մեղքի հետ» (*The Miracle of Forgiveness* [1969], 171–72):

- Ի՞նչ արեցին Անթի Նեփի Լեքիները խուսափելու համար այն պայմաններից և մարդկանցից, ովքեր կարող էին նրանց գայթակղել կրկնել նախկին մեղքերը:

Դուք կարող եք ուսանողներին մեկ րոպե ժամանակ տալ մտածելու, թե արդյոք կան որևէ հանգամանքներ նրանց կյանքում, որոնք նրանք պետք է փոխեն, որպեսզի ապաշխարեն և թողնեն մեղքը, որի դեմ նրանք պայքարում են:

Գրեք հետևյալը գրատախտակին. *Եթե մենք . . . , Աստված կ . . .*:

Խնդրեք ուսանողներին վերանայել Ալմա 24.10–18 հատվածները, որոնելով ուղիներ, որոնցով կկարողանան լրացնել գրատախտակի վրայի միտքը: (Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները գրեն իրենց սուրբ գրություններում հետևյալ նմանատիպ միտքը. **Եթե մենք անենք այն ամենը, ինչ կարող ենք՝ ապաշխարելու համար, Աստված կվերցնի մեր հանցանքը և կօգնի մեզ մաքուր մնալ:**)

Կրկին հղում կատարեք Ալմա 24.17-ին:

- Որո՞նք են ապստամբության զենքերի մի քանի օրինակները (տես Ալմա 23.7), որոնք մարդիկ կարող են վար դնել կամ թաղել, երբ նրանք դարձի են գալիս դեպի Տերը: (Օգնեք ուսանողներին տեսնել, որ ապստամբության այդ զենքերը

կարող են ներառել մեղսավոր վարվելակերպ կամ գործողություններ, որոնցից մարդիկ պետք է հրաժարվեն, որպեսզի դարձի գան դեպի Տերը։)

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ միտքը.

«Ապաշխարելը տևում է նույնքան, որքան ձեզանից պահանջվում է ասել. «Ես կփոխվեմ» և կանեմ դա։ Իհարկե, կլինեն խնդիրներ լուծելու և փոխհատուցումներ կատարելու։ Դուք կարող եք լավ անցկացնել, իրականում ավելի լավ կլինի անցկացնեք, ձեր կյանքի մնացած մասը՝ ապացուցելով ձեր ապաշխարությունը՝ իր մնայունությամբ» (“For Times of Trouble,” *New Era,* Oct. 1980, 11–12)։

Խնդրեք ուսանողներին բացատրել այն գործողությունները, որոնք որևէ երիտասարդ տղամարդ կամ երիտասարդ կին կարող է կատարել խուսափելու համար հետևյալ մեղքերից յուրաքանչյուրը կրկնելուց՝ Իմաստության խոսքը խախտելը, պոռնոգրաֆիա նայելը և անգութ լինելը քրոջ կամ եղբոր հանդեպ։

Հրավիրեք ուսանողներին պատկերացնել, թե ինչպես կարող էին զգալ Անթի Նեփի Լեքիները, երբ իրենց զենքերը թաղելուց հետո, նրանք իմացան, որ մի Լամանական բանակ գալիս էր հարձակվելու իրենց վրա։ Խնդրեք ուսանողներին մտածել այս իրավիճակի մասին, երբ նրանք մտքում կարդան Ալմա 24.20–22 ։

Գրեք հետևյալ ճշմարտությունը գրատախտակին. ***Երբ մենք պահում ենք մեր ուխտերը, մենք կարող ենք օգնել ուրիշներին դարձի գալ։*** Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 24.23–27 ։ Խնդրեք, որ դասարանը ընթացքում հետևի, որոնելով խոսքերն ու արտահայտությունները, որոնք ուսուցանում են գրատախտակի վրա գրված սկզբունքը։

- Ինչպե՞ս է այս պատմությունն ազդում ուխտերը պահելու ձեր ցանկության վրա։
- Ի՞նչ կարող ենք անել մենք՝ Տիրոջ հետ կապած ուխտերը պահելու մեր ցանկությունն ուժեղացնելու համար։

Հրավիրեք ուսանողներին կիսվել որոշ փորձառություններով, որ իրենք ունեցել են գրատախտակի վրա գրված սկզբունքի հետ կապված։ Եզրափակեք, կիսվելով այս դասում ուսուցանվող սկզբունքների մասին ձեր վկայությամբ։

# Տնային ուսումնասիրության դաս

## Ալմա 17–24 (Մաս 17)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Հետևյալ վարդապետությունների և սկզբունքների համառոտ շարադրանքը, որն ուսանողները սովորեցին Ալմա 17–24-ն ուսումնասիրելիս (Մաս 17), նախատեսված չէ ուսուցանվելու որպես ձեր դասի մաս: Դասը, որ դուք կուսուցանեք, կենտրոնանում է վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, երբ մտածեք ուսանողների կարիքների մասին:

### Օր 1 (Ալմա 17–18)

Լամանացիներին ուսուցանելու Ամմոնի և նրա եղբայրների օրինակից ուսանողները սովորեցին, որ սուրբ գրություններն ուսումնասիրելով, աղոթելով և ծոմ պահելով, մենք կարող ենք ստանալ Սուրբ Հոգին և զորությամբ ուսուցանել ուրիշներին: Թագավոր Լամոնիին Ամմոնի ծառայությունը նաև ուսուցանեց միսիոներական ծառայության մի կարևոր սկզբունք. երբ մենք լավ օրինակ ենք հանդիսանում, Տերը կարող է մեզ գործիք սարքել Իր ձեռքում: Ուսանողները կարողացան տեսնել, որ Լամոնիին մատուցած Ամմոնի ծառայությունը նախապատրաստեց Լամանացի կառավարչին և մյուսներին, որ ընդունեն ավետարանը: Թագավոր Լամոնիի դարձն ուսուցանում է, որ երբ մենք հասկանում ենք Փրկչի կարիքը մեզ համար, մենք ապաշխարելու ցանկություն ենք ունենում:

### Օր 2 (Ալմա 19–20)

Ուսանողները սովորեցին, որ Ամմոնի վկայությունը և արդար օրինակն օգնեցին Լամոնիի հորը շրջվել դեպի Տերը: Նրանք նաև սովորեցին, որ մեր սիրառատ գործերը կարող են օգնել մյուսներին փափկացնել իրենց սրտերը և ձգտել իմանալ ճշմարտությունը:

### Օր 3 (Ալմա 21–22)

Ահարոնի միսիոներական աշխատանքների պատմությունն օգնեց ուսանողներին տեսնել, որ եթե մենք հավատարմորեն դիմանանք մեր փորձություններին, Տերը կօգնի մեզ անել Իր աշխատանքը: Ահարոնն օգնեց թագավոր Լամոնիի հորը հասկանալ, որ նա կարող էր ստանալ փրկություն միայն Հիսուս Քրիստոսի արժանիքների միջոցով: Թագավորի նման մենք պետք է կամենանք թողնել բոլոր մեր մեղքերը, որպեսզի հոգեպես փոխվենք և ծնվենք Աստծուց:

### Օր 4 (Ալմա 23–24)

Հազարավոր Լամանացիներ, ովքեր ընդունեցին ավետարանը, ցույց տվեցին, որ դարձը հոգևոր փոփոխություն է, երբ մարդը դառնում է նոր անձնավորություն Աստծո զորության միջոցով: Լամանացիների օրինակի միջոցով, ովքեր դարձան Անթի Նեփի Լեքիներ, ուսանողները սովորեցին, որ եթե մենք անենք այն ամենը, ինչ կարող ենք ապաշխարելու համար, Աստված կվերացնի մեր հանցանքը և կօգնի մեզ մաքուր մնալ: Լամանացիների դարձը ցույց է տալիս, որ մենք կարող ենք օգնել ուրիշներին դարձի գալ, երբ մենք հավատարիմ ենք:

## Նախաբան

Թագավոր Մոսիայի չորս որդիներն որոշեցին հրաժարվել տանը տիրող հնարավորությունից և ճոխություններից, որպեսզի կարողանային քարոզել ավետարանը Լամանացիներին: Այս չորս միսիոներների պատմությունները ցույց են տալիս, թե ինչպես ուսանողները կարող են պատրաստվել արդյունավետորեն ուսուցանել Հիսուս Քրիստոսի ավետարանը մյուսներին:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 17–22

***Ամմոնը և նրա եղբայրներն ուսուցանում են երկու Լամանացի թագավորների:***

Դասից առաջ գրեք հետևյալ անավարտ մտքերը գրատախտակին կամ մի թղթի վրա. «*Միակ ամենակարևոր բանը, որ դուք կարող եք անել [միսիա] ծառայելու կոչմանը նախապատրաստվելու համար, դա. . . է. . .*»:

Հրավիրեք մի քանի ուսանողների պատմել, թե ինչ իրենք զգացին, երբ տեսան ընտանիքի անդամի կամ որևէ ընկերոջ վերադարձը լիաժամկետ միսիան հավատարմորեն ծառայելուց հետո: Ապա հարցրեք ուսանողներին. Ինչո՞վ էր այդ անձնավորությունը տարբեր իր միսիայից հետո: Ի՞նչ եք կարծում, ի՞նչն էր առաջացրել այդ փոփոխությունը:

Հարցրեք ուսանողներին, թե ինչպես կավարտեին գրատախտակի վրա գրված միտքը: Ուսանողների պատասխաններից հետո, կիսվեք նրանց հետ, թե ինչպես է լրացրել այդ միտքը Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը Տասներկու Առաքյալների Քվորումից. «Միակ ամենակարևոր բանը, որ դուք կարող եք անել [միսիա] Ծառայելու կոչմանը նախապատրաստվելու համար, դա միսիոներ *դառնալն է* միսիա *գնալուց* շատ առաջ» («Դառնալ Միսոներ» *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2005, 45):

Հարցրեք. Ի՞նչ ուղիներով կարող են երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք հետևել Երեց Բեդնարի խորհրդին և դառնալ միսիոներներ նախքան լիաժամկետ միսիա ծառայելը:

Կիսվեք Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հետևյալ մտքով.

«Երիտասարդներ, ես հորդորում եմ ձեզ, պատրաստվեք ծառայելու որպես միսիոներ: Ձեզ պահեք մաքուր, անարատ և արժանի ներկայացնելու Տիրոջը: Պահպանեք ձեր առողջությունը և ուժերը: Ուսումնասիրեք սուրբ գրությունները: Որտեղ հնարավոր է հաճախեք սեմինարիա կամ ինստիտուտ: Ծանոթացեք *Քարոզիր իմ ավետարանը* միսիոներական գրքույկին:

«Մի խոսք՝ ուղղված ձեզ երիտասարդ քույրեր, չնայած դուք չունեք որպես լիաժամկետ միսիոներներ ծառայելու քահանայության նույն պարտականությունը, ինչպես երիտասարդ տղամարդիկ, դուք ևս արժեքավոր ներդրում եք կատարում որպես միսիոներներ, և մենք ողջունում ենք ձեր ծառայությունը»(“As We Meet Together Again,” *Ensign* կամ *Liahona,* Nov. 2010, 6)

Գրեք հետևյալը գրատախտակին. *Տերը կօրհնի մեզ Սուրբ Հոգով և Իր խոսքն ուսուցանելու զորությամբ, եթե մենք . . .*:

Դասարանը բաժանեք չորս խմբերի: Յուրաքանչյուր խմբի հանձնարարեք հետևյալ սուրբ գրությունների հատվածներից մեկը. Ալմա 17.1–4, Ալմա 17.9–13, Ալմա 17.19–25, 18.1–9, Ալմա 17.26–30: (Հարմարեցրեք այս միջոցառումը, եթե փոքր դասարան ունեք:)

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ իրենց հանձնարարված հատվածը, փնտրելով այն, ինչ Մոսիայի որդիներն արեցին, որն օրհնեց նրանց Հոգով և զորությամբ, երբ նրանք ուսուցանեցին ավետարանը: Բացատրեք, որ երբ ուսանողները վերջացնեն, դուք կխնդրեք նրանց կիսվել նրանով, ինչ բացահայտեցին և թե ինչպես նրանք կավարտեին գրատախտակի վրայի նախադասությունը:

Բավականաչափ ժամանակից հետո, հրավիրեք որևէ անձնավորության յուրաքանչյուր խմբից բացատրել, թե ինչ արեցին Մոսիայի որդիները և թե ինչպես խմբի անդամները կավարտեին գրատախտակի վրայի սկզբունքը: Ուսանողների պատասխանները կարող են ներառել հետևյալը. հետազոտել սուրբ գրությունները, ծոմ պահել և աղոթել, համբերատար լինել, լավ օրինակ հանդիսանալ, վստահել Տիրոջը, անկեղծորեն ծառայել ուրիշներին և սիրել մյուսներին որպես եղբայրներ և քույրեր: Երբ ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, գրի առեք դրանք գրատախտակին: Խնդրեք ուսանողներին բացատրել, թե ինչպե՞ս յուրաքանչյուր գործողություն կամ հատկանիշ կարող է օգնել անձնավորությանը ավելի արդյունավետորեն կիսվել ավետարանով:

Եթե ձեր ուսանողներից որևէ մեկը դարձի է եկել դեպի ավետարանը լիաժամկետ միսիոներների կողմից ուսուցանվելուց հետո, դուք կարող եք խնդրել նրանց կիսվել, թե ինչպես էին զգում, երբ սովորում էին ավետարանը:

Հիշեցրեք ուսանողներին, որ երբ Ամմոնը փրկեց թագավորի հոտերը, թագավոր Լամոնին ապշեց Ամմոնի զորության և թագավորի հրամանները կատարելիս նրա հնազանդության և հավատարմության վրա (տես Ալմա 18.8–10): Լամոնին պատրաստված էր լսելու ուղերձը, որով Ամմոն եկել էր կիսվելու նրա հետ: Հրավիրեք ուսանողներին հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 18.24–29: Խնդրեք դասարանին փնտրել, թե ինչպես էր Ամմոնը կառուցում Լամոնիի հասկացողությունը Աստծո մասին, որպեսզի կարողանար պատրաստել Լամոնիին հասկանալ ճշմարիտ վարդապետությունը:

Տվեք ուսանողներին հետևյալ հարցերը.

- Եթե դուք այլ հավատքի որևէ ընկերոջ հետ զրույց ունենայիք Աստծո մասին, ինչպե՞ս կկարողանայիք օգտագործել հավատամքները, որոնք երկուսով էլ կիսում եք, ինչպես Ամմոնն արեց: Ինչպե՞ս կարող էր այս ջանքն օգնել ձեր ընկերոջը:
- Էլ ի՞նչ ավետարանական թեմաներ կշոշափեիք ձեր ընկերոջ հետ՝ հնարավորություններ բացելով ավետարանով նրա հետ կիսվելու համար:

Հիշեցրեք ուսանողներին, որ թագավոր Լամոնին ընկալուանկ դարձավ լսելու Հիսուս Քրիստոսի ավետարանը, ինչպես նրա հայրը: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 18.39–41-ը՝ —Լամոնիի արձագանքը Հիսուս Քրիստոսի մասին իմանալուց հետո: Խնդրեք մեկ այլ ուսանողի կարդալ Ալմա 22.14–18՝ —Լամոնիի հոր արձագանքը: Հրավիրեք դասարանին ընթացքում հետևել իրենց սուրբ գրություններում և փնտրել նմանություն այդ մարդկանց արձագանքների միջև:

Հարցրեք. Ի՞նչ ցանկացան անել երկու տղամարդիկ, երբ նրանք իմացան Հիսուս Քրիստոսի մասին:

Բացատրեք, որ Լամոնին և նրա հայրը զգացին Հոգին միսիոներների ուսուցումների միջոցով: Դրա արդյունքում նրանք կամեցան ունենալ ավետարանի օրհնությունները և հոժար էին վերջ տալ իրենց մեղքերին և ապաշխարել: Հիշեցրեք ուսանողներին այն ճշմարտության մասին, որ նրանք ուսումնասիրել էին այս շաբաթ. **Մենք պետք է հոժար լինենք թողնել բոլոր մեր մեղքերը, որպեսզի հոգեպես փոխվենք և ծնվենք Աստծուց:**

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Երեց Դալլին Հ. Օուքսի միտքը, որը գտնվում է նրանց ուսումնասիրության ուղեցույցում. «Հիսուս Քրիստոսի ավետարանը կոչ է անում մեզ փոխվել: «Ապաշխարեք» բառը ամենահաճախ հանդիպող ուղերձն է, և ապաշխարել նշանակում է վերջ տալ բոլոր մեր գործառույթներին՝ անձնական, ընտանեկան, էթնիկ և ազգային, որոնք հակառակ են Աստծո պատվիրաններին: Ավետարանի նպատակն է փոխակերպել սովորական արարածներին, դարձնելով նրանց սելեստիալ քաղաքացիներ, իսկ դա պահանջում է փոփոխություն» (“Repentance and Change,” *Ensign* կամ *Liahona,* Nov. 2003, 37):

Հրավիրեք ուսանողներին մտածել իրենց կյանքի մասին և մտածել, թե արդյոք նրանք պետք է թողնեն ինչ որ մեղքեր, որպեսզի հոգեպես փոխվեն, ինչպես Լամոնին և նրա հայրն արեցին: Եզրափակեք, կիսվելով ձեր խրախուսանքով և վկայությամբ, որ երբ մենք հրաժարվենք մեր մեղքերից, Տերը կօգնի մեզ փոխվել և աճել:

## Հաջորդ Մաս (Ալմա 25–32)

Խնդրեք ուսամողներին մտածել այս հարցի շուրջ. Ի՞նչ կասեիք ինչ որ մեկին, ով հակաՔրիստոս է: Մյուս մասում ուսանողները կիմանան, թե ինչպես Ալման լուծեց հարցերը և Կորիհորի ծաղրը, որը մի հակաՔրիստոս էր: Բացի այդ նրանք ավելի շատ բան կսովորեն հավատքի մասին, երբ կարդան այն մասին, թե ինչպես Ալման և մյուսները աշխատեցին ուսուցանել ուրացած Զորամացիներին, ովքեր խեղաթյուրում էին Տիրոջ ուղիները:

ԴԱՍ 86

# Ալմա 25–26

## Նախաբան

Ամմոնիա քաղաքը կործանելուց հետո Լամանացիներն ունեցան բազմաթիվ այլ ճակատամարտեր Նեփիացիների հետ և ետ մղվեցին: Մեծ կորուստներ տալով շատ Լամանացիներ վար դրեցին իրենց պատերազմի զենքերը, ապաշխարեցին և միացան Անթի Նեփի Լեքիներին: Երբ Մոսիայի որդիները և նրանց ընկերակիցները վերջացրեցին իրենց 14-ամյա միսիան Լամանացիների մեջ, Ամմոնը գովաբանեց Տիրոջը և հայտնեց երախտագիտություն՝ ավետարանը Լամանացիներին բերելիս Աստծո ձեռքում գործիք լինելու համար:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 25.1–12

*Աբինադիի և Ալմայի մարգարեությունները կատարվում են:*

Դասից առաջ արտագրեք հետևյալ աղյուսակը գրատախտակին.

| Մարգարեություն | Մարգարեության իրականացում |
|---|---|
| Ալմա 9.12: Ի՞նչ մարգարեացավ Ալման Ամմոնիայի ժողովրդին: | Ալմա 25.1–2 (տես նաև Ալմա 16.2–3, 9–11) |
| Մոսիա 17.14–19: Ի՞նչ մարգարեացավ Աբինադին, որ պատահելու էր թագավոր Նոյի հետնորդների և նրա քահանաների հետ: | Ալմա 25.4–9 |

Գրեք *վստահություն* բառը գրատախտակին: Խնդրեք ուսանողներին անվանել մի քանի մարդկանց, ում վրա մենք հաճախ հույս ենք դնում: (Հնարավոր պատասխաններ. Տերը, մարգարեները, ծնողները, ուսուցիչները և մարզիչները): Հարցրեք ուսանողներին.

- Ի՞նչու է ավելի հեշտ վստահությունը դնել որոշակի անձանց վրա:
- Այսօր աշխարհի բոլոր մարդկանցից ո՞ւմ վրա ամենահեշտը կդնեիք ձեր վստահությունը:

Ասացեք ուսանողներին, որ Ալմա 25-ը պարունակում է ապացույց, որ Իր մարգարեներին տրված Տիրոջ խոսքը միշտ կիրականանա: Բացատրեք, որ ուսանողները կօգտագործեն գրատախտակի աղյուսակը՝ սովորելու Մորմոնի Գրքի մարգարեների երկու մարգարեությունների և այդ մարգարեությունների իրականացման մասին: Խնդրեք ուսանողներին արտագրել այդ աղյուսակը տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: Առաջին սյունակում հանձնարարեք նրանց գրել հարցերի պատասխանները՝ օգտագործելով տրված սուրբ գրությունների հղումները: Երկրորդ սյունակում հանձնարարեք նրանց գրել մարգարեությունների իրականացման մասին: Հրավիրեք մի քանի ուսանողների հաղորդել իրենց գտածը:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 25.11–12: Խնդրեք դասարանի մնացած մասին ընթացքում հետևել՝ փնտրելով, թե, ըստ Մորմոնի, ինչ էր պատահել Աբինադիի խոսքերի հետ: Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն «այս խոսքերը հաստատվեցին» արտահայտությունը հատված 12- ում:

- Ի՞նչ է նշանակում «այս խոսքերը հաստատվեցին» արտահայտությունը:

Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները գրեն *ՎԱՈՒ 1.38* իրենց սուրբ գրություններում Ալմա 25.12 հատվածի կողքին: Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Վարդապետություն և Ուխտեր 1.38: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել՝ փնտրելով «այս խոսքերը հաստատվեցին» արտահայտության նման արտահայտություն: («Բոլորը պիտի կատարվի:»)

- Ի՞նչ ենք սովորումԱլմա 25.1–12 հատվածներում մարգարեների արած մարգարեությունների և խոստումների մասին: (Գրեք հետևյալ ճշմարտությունը գրատախտակին. ***Մարգարեների ոգեշնչված խոսքերը բոլորը պիտի կատարվեն:***)

Նշեք, որ աղյուսակի օրինակները ցույց են տալիս, որ անարդարներին ուղղված մարգարեների նախազգուշացումները միշտ կատարվում են: Մարգարեները նաև տալիս են խոստումներ նրանց, ովքեր կշրջվեն դեպի Տերը: Այս խոստումները նույնպես կկատարվեն: Ուսանողներին օգնելու համար տեսնել այս սկզբունքի կիրառումը իրենց կյանքում, կարդացեք Առաջին Նախագահության կողմից տրված հետևյալ միտքը *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկից: Խնդրեք ուսանողներին լսել նրանց տրված խոստումները, ովքեր պահում են գրքույկի չափանիշները:

«Այս գրքույկի չափանիշները կօգնեն ձեզ այժմ կարևոր որոշումներ ընդունելու և դեռ ապագայում կայացվող որոշումների ժամանակ: Մենք խոստանում ենք, որ երբ դուք պահեք ձեր կապած ուխտերը և այս չափանիշները, դուք կօրհնվեք Սուրբ Հոգու ընկերակցությամբ, ձեր հավատքն ու վկայությունը կուժեղանան և դուք կվայելեք աճող երջանկություն» (*Երիտասարդներին զորացնելու համար* [գրքույկ, 2011], ii):

- Ի՞նչ է խոստացել Առաջին Նախագահությունը:
- Ե՞րբ եք տեսել այս խոստումների իրականացումը:

## Ալմա 25.13–17

### *Շատ Լամանացիներ ապաշխարում են և միանում Անթի Նեփի Լեքիներին:*

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 25.13–14 հատվածները: Խնդրեք, որ դասարանը ընթացքում հետևի՝ փնտրելով, թե Լամանացիներից շատերն ինչ էին անում, մինչև որ հասկացան, որ իրենք չէին կարող պարտության մատնել Նեփիացիներին:

- Ի՞նչն է տպավորում ձեզ Լամանացիների գործողություններում:

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 25.17, փնտրելով Մոսիայի որդիների զգացմունքները այն հաջողության առթիվ, որ նրանք ունեցել էին Լամանացիների մեջ:

- Ինչո՞ւ էր Մոսիայի որդիների հաջողությունը օրինակ հանդիսանում Տիրոջ խոսքերի իրականացման ապացույցի համար: (Եթե ուսանողները կարիք ունեն պատասխանելու այս հարցին, նրանց հղեք դեպիՄոսիա 28.5–7 և Ալմա 17.11:)

## Ալմա 26

### *Ամմոնը ցնծում է իր և իր եղբայրների ու Լամանացիների հանդեպ Տիրոջ ողորմածությունների համար:*

Ցույց տվեք որոշ գործիքներ (ինչպես օրինակ՝ մուրճ, պտուտակիչ, պտուտակահան, գրիչ կամ մատիտ, վրձին, մկրատ, համակարգիչ և որևէ երաժշտական գործիք):

- Որո՞նք են այն որոշակի բաները, որոնք վարպետ արհեստավորը կամ նկարիչը կարող է անել ճիշտ գործիքով:
- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում որևէ մեկի համար գործիք լինելը Տիրոջ ձեռքում:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 26.1–5, 12: Խնդրեք դասարանին գտնել այն ուղիները, որոնցով Ամմոնը և նրա ընկեր միսիոներները գործիք էին Աստծո ձեռքում:

- Ի՞նչ իրականացրեց Տերը Ամմոնի և նրա ընկերակից միսիոներների միջոցով:
- Ինչպե՞ս կվերապատմեիք Ալմա 26.12: Ինչպե՞ս է Ամմոնի հայտարարությունը այս հատվածում կապված Աստծո ձեռքերում գործիք լինելու հետ:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 26.11, 13, 16 , ողջ ընթացքում փնտրելով *ուրախություն* և *ուրախանալ* բառերը: Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այս խոսքերը իրենց սուրբ գրություններում: Հրավիրեք որևէ

ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 26.13–16 և խնդրեք դասարանին որոնել, թե ինչ պատճառներ էր բերում Ամմոնը իր ուրախության համար:

- Ինչո՞ւ էր Ամմոնն ուրախանում
- Ի՞նչ սկզբունքներ կարող ենք սովորել այս հատվածներից: (Ուսանողները կարող են նշել շատ տարբեր սկզբունքներ: Հետևյալ սկզբունքը կարող է ծառայել որպես նրանց բացատրությունների համառոտ շարադրանք. **Մենք ուրախություն ենք զգում, երբ հավատարմորեն ծառայում ենք Տիրոջը և Նրա զավակներին:** Դուք կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին:)
- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ ենք ուրախություն զգում, երբ Տիրոջ ծառայության մեջ ենք լինում:

Գրեք հետևյալ սուրբ գրությունների հղումները և հարցերը գրատախտակին: (Մտածեք դրանք դասարանի առջև գրելու մասին:) Ուսանողներին բաժանեք զույգերի: Խնդրեք յուրաքանչյուր զույգի ընտրել և կարդալ հատվածներից մեկը և քննարկել ուղեկցող հարցերի պատասխանները:

*Ալմա 26.17–20: Ինչպիսի՞ մարդիկ էին Ամմոնը և նրա եղբայրները նախքան դարձի գալը:*

*Ալմա 26.23–25: Համաձայն նրա, ինչ Նեփիացիներն են պատմում Ամմոնի և նրա եղբայրների մասին, ինչպիսի՞ն էին Լամանացիները նախքան դարձի գալը:*

Ժամանակ հատկացրեք մի քանի ուսանողների համար՝ բացատրելու այս հարցերին նրանց պատասխանները: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 26.23–29 հատվածները , նշելով այն խոչընդոտները, որոնց հանդիպեցին Ամմոնը և նրա եղբայրները Տիրոջը և Լամանացիներին իրենց ծառայության ընթացքում:

- Ձեր կարծիքով, այս խոչընդոտներից որո՞նց կարող են հանդիպել միսիոներներն այսօր:
- Համաձայն Ալմա 26.27, 30-ի, ի՞նչն էր դրդում Ամմոնին և նրա ընկեր միսիոներներին շարունակել ծառայել: (Տիրոջ մխիթարությունն ու խոստումները և ցանկությունը՝ «լինել միջոցներ որոշ հոգիներ փրկելու համար:»)

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 26.31–34, փնտրելով Մոսիայի որդիների աշխատանքների արդյունքները: Երբ նրանք բավականաչափ ժամանակ ունենան կարդալու, խնդրեք նրանց կիսվել իրենց գտածով:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 26.35–37: Խնդրեք, որ դասարանը ընթացքում հետևի, խորհելով ուրախանալու պատճառների մասին, որ նրանք ունեն Աստծո բարության շնորհիվ:

- Ի՞նչ ուղերձներ եք տեսնում այս հատվածներում:

Նշեք, որ շատ ուղերձներից մեկը այս հատվածներում այն է, որ **Տերը ողորմած է բոլոր նրանց հանդեպ, ովքեր ապաշխարում են և հավատում Նրա անվանը:** Ուսանողներին օգնելու համար զգալ ճշմարտությունը և այս սկզբունքի կարևորությունը կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ միտքը.

«Նամակներ են գալիս նրանցից, ովքեր ողբերգական սխալներ են գործել. Նրանք հարցնում են. «Կարո՞ղ ենք *երբևէ* ներվել»:

Պատասխանն է՝ *այո:*

Ավետարանը սովորեցնում է մեզ, որ տանջանքից և հանցանքից հանգստություն կարելի է վաստակել ապաշխարության միջոցով: Բացի մի քանիսից, ովքեր նզովվում են լիությունն իմանալուց հետո, չկա սովորույթ, չկա հակվածություն, չկա ապստամբություն, չկա օրինազանցություն, չկա վիրավորանք, որի վրա չտարածվի լիակատար ներման խոստումը» (“The Brilliant Morning of Forgiveness,” *Ensign,* Nov. 1995, 19):

Վկայեք Քավության զորության մասին, որն հնարավորություն է տալիս ներում ստանալ մեծ, թե փոքր մեղքերից նրանց, ովքեր հավատք ունեն առ Հիսուս Քրիստոս և ապաշխարում են: Վկայեք նաև այն ուրախության մասին, որը գալիս է մեր կյանք, երբ մենք ծառայում ենք որպես գործիքներ Տիրոջ ձեռքերում:

ԴԱՍ 87

# Ալմա 27–29

## Նախաբան

Երբ Լամանացիները հաջողություն չունեցան Նեփիացիների վրա իրենց հարձակումներում, նրանք իրենց զայրույթը թափեցին Անթի Նեփի Լեքիների վրա: Անթի Նեփի Լեքիների ուխտի պատճառով, որ նրանք արել էին, որ էլ երբեք ուրիշների արյունը չհեղեն, նրանք հրաժարվեցին զենք վերցնել իրենց պաշտպանելու համար: Ամմոնը Անթի Նեփի Լեքիներին տարավ Զարահեմլա, որտեղ նրանք պաշտպանություն ստացան Նեփիացիներից և հայտնի դարձան որպես Ամմոնի ժողովուրդ: Երբ Նեփիացիները պաշտպանեցին Ամմոնի ժողովրդին Լամանացիներից, հազարավոր Նեփիացիներ և Լամանացիներ ոչնչացան ճակատամարտում: Չնայած Նեփիացիների վշտին, որ նրանք զգում էին իրենց սիրելիների մահվան պատճառով, շատերը հույս և ուրախություն գտան Տիրոջ խոստման մեջ, որ արդարները պիտի «բարձրացվեն՝ ապրելու Աստծո աջ կողմում, երբեք չվերջացող երջանկության մի վիճակում» (Ալմա 28.12):

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 27:

*Ամմոնը Անթի Նեփի Լեքիի ժողովրդին առաջնորդում է դեպի ապահովություն՝ Նեփիացիների հետ:*

Խնդրեք ուսանողներին ձեռք բարձրացնել, եթե նրանք երբևէ որևէ մեկին խոստում են տվել, իսկ հետո խախտել այդ խոստումը: Ապա խնդրեք նրանց բարձրացնել իրենց ձեռքերը, եթե նրանք խոստում են տվել ինչ որ մեկին և ապա պահել այն:

- Ինչպե՞ս եք զգում այն մարդկանց հանդեպ, ովքեր պահում են իրենց խոստումները: Ինչո՞ւ:
- Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս է Տերը զգում նրանց հանդեպ, ովքեր պահում են իրենց խոստումներն Իր հանդեպ:

Ներկայացրեք Ալմա 27 գլուխը՝ բացատրելով, որ Լամանացիները Նեփիացիներին կործանելու անհաջող փորձ կատարելուց հետո հարձակվեցին Անթի Նեփի Լեքիների վրա՝ այն Լամանացիների, ովքեր դարձի էին եկել Ամմոնի և նրա եղբայրների ծառայության միջոցով: Խնդրեք ուսանողներին վերհիշել, թե ինչ արեցին Անթի Նեփի Լեքիները ցույց տալու Տիրոջը, որ իրենք պահելու էին իրենց ուխտերը երբեք այլևս «զենքեր չէին օգտագործելու . . . մարդու արյուն թափելու համար» (Ալմա 24.18): (Նրանք թաղեցին իրենց պատերազմի զենքերը:) Պարզելու համար, թե ինչպես էին Անթի Նեփի Լեքիները վճռական իրենց խոստումը պահելիս, հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 27.2–3 : (Կարող եք առաջարկել նաև, որ ուսանողները կարդան Ալմա 24.18–19 և գրել այդ հղումը Ալմա 27.3 հատվածի լուսանցքի մոտ:)

- Եթե դուք լինեիք Անթի Նեփի Լեքիներից մեկը, որքա՞ն դժվար կլիներ ձեզ համար պահել ձեր ուխտը և չգնալ պատերազմելու պաշտպանելու ձեզ և ձեր սիրելիներին:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 27.4–10, որոնելով, թե Ամմոնն ինչ առաջարկեց անել պաշտապանելու համար Անթի Նեփի Լեքիներին և օգնելու նրանց պահել իրենց ուխտերը: Խնդրեք որևէ ուսանողի ամփոփել այս հատվածը:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 27.11–12, և խնդրեք դասարանին փնտրել այն հրահանգը, որն Ամմոնը ստացավ Տիրոջից: Բացատրեք որ Անթի Նեփի Լեքիները հետևեցին Ամմոնին, գնալով Զարահեմլա (տես Ալմա 27.13–15): (Դուք կարող եք նաև ամփոփել Ալմա 27.16–19, նշելով, որ այս հանգամանքների ներքո էր, որ Ամմոնը և Մոսիայի մյուս որդիները հանդիպեցին Ալմային, ինչպես պատմվում է Ալմա 17.1–4 հատվածներում:)

Բացատրեք, որ Նեփիացիների գլխավոր դատավորը հարցրեց ժողովրդին, թե նրանք կկամենային թույլ տալ Անթի Նեփի Լեքիներին ապրել իրենց մեջ: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 27.22–24, որոնելով գլխավոր դատավորի հայտարարությանը տրված Նեփիացիների պատասխանը:

- Ըստ Նեփիացիների, ինչպե՞ս էին նրանք օգնելու Անթի Նեփի Լեքիներին:
- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էին Նեփիացիները կամենում պաշտպանել իրենց նախկին թշնամիներին:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 27.26 պարզելու, թե ինչպես էին Նեփիացիները սկսել կոչել Անթի Նեփի Լեքիներին:

Խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 27.27–30: Հանձնարարեք դասարանին ընթացքում հետևել, որոնելով, թե Ամմոնի ժողովուրդն ինչով հայտնի դարձավ: Հրավիրեք ուսանողներին հաղորդել իրենց գտածը:

- Ի՞նչն է Ամմոնի ժողովրդի մեջ ձեզ վրա տպավորություն գործում: Ինչո՞ւ:
- Ի՞նչ են Ալմա 27.27–30 հատվածներն ուսուցանում դեպի Տերը դարձի եկած լինելու և պատվիրանները պահելու միջև փոխհարաբերության մասին: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, բայց նրանք պետք է ցույց տան, որ իրենք հասկանում են հետևյալ ճշմարտությունը.**Երբ մենք լիովին դարձի եկած ենք լինում դեպի Տերը, մենք պահում ենք ուխտերը, որ կապել ենք Նրա հետ:** Դուք կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին:)
- Ձեր կյանքում ո՞վ է այս սկզբունքի օրինակ հանդիսանում:

## Ալմա 28

### *Նեփիացիները պարտության են մատնում Լամանացիներին մի մեծ ճակատամարտում:*

Նշեք, որ չնայած շատ Նեփիացիներ հավատարիմ էին, նրանք, այնուամենայնիվ, դիմակայում էին դժվարին փորձությունների:

Բացատրեք, որ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը կիսվեց իր երիտասարդության ժամանակ ունեցած մի փորձառությամբ: Երկրորդ Համաշխարհային Պատերազմում իր ընկերոջ Արթուր Փաթնի մահվան մասին լսելուց հետո, երիտասարդ Թոմաս Մոնսոնը գնաց այցելելու Արթուրի մորը, որն Եկեղեցու անդամ չէր: Նա հետագայում վերհիշում էր.

«Տիկին Փաթընի կյանքում հանգչեց մի լույս: Նա խարխափում էր լիակատար խավարում և խորը հուսահատության մեջ:

Աղոթքը սրտումս ես մոտեցա Փաթընի տան ծանոթ արահետին, մտորելով, թե ինչ մխիթարության խոսքեր կարող էին գալ մի սովորական տղայի շուրթերից:

Դուռը բացվեց և Տիկին Փաթընը գրկեց ինձ ինչպես իր սեփական որդուն: Տունը դարձել էր աղոթատուն վշտահար մոր համար և, լինելով ավելի քան անհամապատասխան մի պատանի, ծնկի իջա աղոթելու:

Երբ ոտքի կանգնեցինք, Տիկին Փաթընը սևեռուն նայեց աչքերիս մեջ և խոսեց. «Թոմի, ես ոչ մի եկեղեցու չեմ պատկանում, բայց դու պատկանում ես: Ասա ինձ, արդյոք Արթուրը կրկին կապրի՞» (“Mrs. Patton—the Story Continues,” *Ensign* կամ *Liahona,* Nov. 2007, 22):

- Ինչպե՞ս կպատասխանեիք Տիկին Փաթընի հարցին:

Կարդացեք Նախագահ Մոնսոնի պատասխանը.

«Իմ ունակությունների լավագույնով ես վկայեցի նրան, որ Արթուրն իսկապես կրկին կապրի» (“Mrs. Patton—the Story Continues,” 22):

- Ինչպե՞ս է փրկության ծրագրի իմացությունը փոխում նրանց տեսադաշտը, ում սիրելիները մահանում են:

Խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 28.1–3: Խնդրեք դասարանին փնտրել այն գինը, որ Նեփիացիները վճարեցին՝ օգնելու Ամմոնի ժողովրդին պահել իրենց ուխտերը: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 28.4–6 հատվածները, փնտրելով, թե ինչպես մահը՝ այդպիսի քանակով, ազդեց Նեփիացիների վրա: Խնդրեք ուսանողներին հետազոտել Ալմա 28.11–12, գտնելով

պատճառները, թե ինչու որոշ մարդիկ կարող է զգան վախ, երբ սիրելիները մահանում են, մինչդեռ ուրիշները կարող է զգան հույս:

- Ինչո՞ւ որոշ մարդիկ կարող է վախ զգան, երբ սիրելիները մահանում են:
- Ինչո՞ւ որոշ մարդիկ կարողանում են հույս զգալ, երբ սիրելիները մահանում են: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, բայց նրանք պետք է արտահայտեն, որ **երբ մենք հավատք ունենք Հիսուս Քրիստոսի և Տիրոջ խոստումների հանդեպ, մենք կարող ենք ունենալ հույս և ուրախություն մահվան դեպքերում:** )

Գրեք հետևյալ անավարտ նախադասությունը գրատախտակին. *Եվ այսպիսով մենք տեսնում ենք . . .*

Հարցրեք ուսանողներին, թե ինչպես նրանք կավարտեին նախադասությունը, հիմնվելով նրա վրա, ինչ սովորեցին Ալմա 28 գլխում:

Ուսանողներին պատասխանելու համար ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք որևէ ուսանողի կարդալԱլմա 28.13–14 : Հանձնարարեք ուսանողներին համեմատել իրենց պատասխանները այն սկզբունքների հետ, որոնք ուսուցանվում են այս հատվածներում: (Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն «և այսպիսով մենք տեսնում ենք» արտահայտությունը, երբ ամեն անգամ այն հայտնվում է այս հատվածներում: Բացատրեք, որ Մորմոնը հաճախ օգտագործում է այս արտահայտությունը՝ ներկայացնելու այն կարևոր դասերը, որոնք մենք կարող ենք սովորել Մորմոնի Գրքի պատմություններից:)

- Ի՞նչ կարդացիք Ալմա 27–28-ում, որ օժանդակում են «և այսպիսով մենք տեսնում ենք» Մորմոնի դրույթներին:
- Ե՞րբ եք տեսել ինչ որ մեկին, ով Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի շնորհիվ հույսով է վերաբերվել իր կամ իր սիրելիի մահին:
- Ինչպե՞ս կարող եք բացատրել հարությունը, օգնելով ինչ որ մեկին հույս ունենալ իր սեփական կամ սիրելիներից մեկի մահվան դեպքում:

***Օգնեք ուսանողներին ճանաչել սկզբունքները, որոնք ուսուցանվում են սուրբ գրություններում:***

Որոշ դեպքերում ավետարանի սկզբունքներին, որոնք ուսուցանվում են սուրբ գրություններում, նախորդում է «և այսպիսով մենք տեսնում ենք» արտահայտությունը: Օրինակ, Ալմա 28.13–14-ում Մորմոնն օգտագործում է «և այսպիսով մենք տեսնում ենք» արտահայտությունը՝ մեր ուշադրությունը կենտրոնացնելու այն սկզբունքների վրա, որոնք մենք կարող ենք սովորել Ամմոնի և Անթի Նեփի Լեքիների փորձառություններից: Ուսուցանեք ուսանողներին, որ երբ նրանք ուսումնասիրում են և խորհում սուրբ գրությունների շուրջ, նրանք կարող են գտնել սկզբունքներ, ինքնուրույն իրենց հարց տալով. «Ի՞նչ են այս հատվածներն ուսուցանում ինձ»:

## Ալմա 29

*Ալման փառավորվում է, հոգիներ բերելով դեպի Աստված:*

Ասացեք ուսանողներին, որ Ալմա 29-ը պարունակում է Տիրոջ ձեռքերում գործիք լինելու Ալմայի արտահայտած ցանկությունը: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 29.1–3 հատվածները: Հանձնարարեք դասարանին փնտրել, թե ինչ Ալման կաներ, եթե նա կարողանար ունենալ «[իր] սրտի իղձը»: (Նա «ապաշխարություն կաղաղակեր ամեն ժողովրդի:)

- Համաձայն Ալմա 29.2 հատվածի, ինչո՞ւ Ալման ցանկացավ այդ:

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 29.4–5 , փնտրելով, թե Տերն ինչ է շնորհում նրանց, ովքեր ունեն արդար ցանկություններ: (Եթե ուսանողները կարիք ունեն օգնության այս հարցին պատասխանելու համար, դուք կարող եք նշել «Ես գիտեմ, որ նա մարդկանց շնորհում է ըստ իրենց ցանկության» արտահայտությունը: Բացատրեք որ, **եթե մենք ցանկանանք արդար բաներ, Տերը կօրհնի մեզ համաձայն այդ ցանկությունների:** Նշեք, որ եթե մեր բոլոր արդար ցանկությունները չեն իրականացվում այս կյանքում, ապա դրանք կիրականանան հավերժության մեջ:)

Խնդրեք ուսանողներին ինքնուրույն հետազոտել Ալմա 29.10, 14, 16, փնտրելով այն օրհնությունները, որոնք Ալման էր ստացել, երբ նա օգնեց մյուսներին գալ դեպի Քրիստոսը: Խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով:

- Ի՞նչ բառ օգտագործեց Ալման՝ նկարագրելու, թե ինչ էր զգում, երբ օգնում էր մարդկանց գալ դեպի Քրիստոսը: (Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն *ուրախություն* բառի յուրաքանչյուր օգտագործումը այս հատվածներում:)
- Ի՞նչ սկզբունք կարող ենք սովորել Ալմայի փորձառությունից՝ օգնելով ուրիշներին ապաշխարել և գալ դեպի Հիսուս Քրիստոսը: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, բայց նրանք պետք է ցույց տան, որ իրենք հասկանում են հետևյալ սկզբունքը. **Մենք կզգանք ուրախություն, երբ օգնենք ուրիշներին ապաշխարել և գալ դեպի Հիսուս Քրիստոսը:** )
- Ե՞րբ եք զգացել ուրախություն, երբ օգնել եք ուրիշներին գալ դեպի Քրիստոսը:

Խրախուսեք ուսանողներին որոնել հնարավորություններ՝ օգնելու ուրիշներին գալ դեպի Հիսուս Քրիստոսը: Կարող եք կիսվել ձեր սեփական միսիոներական փորձառությամբ:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Ալմա 28.11–12: Գտնել խաղաղություն, երբ տեղի է ունենում մահ:

Երեց Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, խոսել է այն մասին, թե ինչպես մեր գործողություններն այս կյանքում կարող են բերել մեզ խաղաղություն, երբ տեղի ունենա մահ.

«Եղբայրներ և քույրեր, մենք ապրում ենք մեռնելու համար և մենք մեռնում ենք ապրելու համար մեկ այլ աշխարհում: Եթե մենք լավ պատրաստված լինենք, մահը սարսափ չի ներշնչի: Հավերժական տեսանկյունից մահը անժամանակ է միայն նրանց համար, ովքեր պատրաստված չեն հանդիպելու Աստծուն:

Այժմ է պատրաստվելու ժամանակը: Ապա, երբ գալիս է մահը, մենք կարող ենք շարժվել դեպի սելեստիալ փառք, որը Երկնային Հայրն է պատրաստել Իր հավատարիմ զավակների համար: Միևնույն ժամանակ, սիրելիների համար սգալը ետևում թողնելը . . . թեթևացնում է մահվան խայթը՝ անսասան հավատքով առ Քրիստոս՝ հույսի կատարյալ պայծառությամբ, Աստծո և բոլոր մարդկանց հանդեպ սիրով և նրանց ծառայելու խորը ցանկությամբ» (“Now Is the Time to Prepare,” *Ensign* կամ *Liahona,* May 2005, 18):

Երեց Վիլֆորդ Վ. Անդերսենը՝ Յոթանասունից, պատմել է, թե ինչպես որոշ ընկերներ վերաբերվեցին իրենց հոր մահվանը.

«Վերջերս իմ սիրելի ընկերներից մեկը քաղցկեղից հեռացավ կյանքից: Նա և նրա ընտանիքը մեծ հավատքով մարդիկ են: Ոգեշնչող էր տեսնելը, թե ինչպես նրանց հավատքը տարավ նրանց այս դժվարին ժամանակաընթացքի միջով: Նրանք լցված էին ներքին խաղաղությամբ, որը հաստատում և զորացնում էր նրանց: Նրանց թույլտվությամբ ես կկամենայի կարդալ ընտանիքի անդամներից մեկի նամակից, որը գրվել է նրանց հոր մահանալուց հենց մի քանի օր առաջ.

«Վերջին մի քանի օրերը հատկապես դժվար էին: . . . Անցած գիշեր, երբ մենք հավաքված էինք հայրիկի մահճակալի կողքին, Տիրոջ Հոգին զգալի էր և իսկապես գործում էր, մխիթարելով մեզ: Մենք խաղաղության մեջ ենք: . . . Դա դժվարագույն բանն է, որ մեզանից որևէ մեկը երբևէ տարել է, բայց մենք խաղաղություն ենք զգում, գիտենալով, որ . . . մեր Հայրը Երկնքում խոստացել է, որ մենք կրկին միասին կապրենք որպես ընտանիք: Երբ բժիշկը հիվանդանոցում հայտնեց հայրիկին, որ այլևս ոչինչ չէր մնացել անելու, նա նայեց մեզ բոլորիս կատարյալ հավատքով և համարձակորեն հարցրեց. «Որևէ մեկն այս սենյակում խնդիր ունի՞ փրկության ծրագրի հետ»» («Մեր Քավչի վեմը», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2010, 17–18):

ԴԱՍ 88

# Ալմա 30

## Նախաբան

Նեփիացիների և Լամանացիների միջև մեծ ճակատամարտից հետո խաղաղություն տիրեց երկրում: Մոտ երկու տարի անց Կորիհոր անունով մի մարդ սկսեց քարոզել, որ գոյություն չունի Աստված, որ չի լինելու ոչ մի Քրիստոս և չկա ոչ մի մեղք: Նա անարգում էր Եկեղեցու առաջնորդներին, մեղադրելով նրանց նրանում, որ ուսուցանում էին կեղծ ավանդույթներ: Նրա կեղծ ուսմունքները շատ մարդկանց տարան լուրջ մեղքեր գործելու: Կորիհորը բերվեց Ալմայի առջև, ով վկայել էր Հիսուս Քրիստոսի մասին և ուսուցանել, որ բոլոր բաները վկայում են , որ կա մի Գերագույն Արարիչ: Ի վերջո, Աստծո զորությամբ Կորիհորը զարկվեց համրությամբ և համոզվեց ճշմարտության մեջ: Սակայն, երբ նա խնդրեց, որ իր ձայնը վերականգվեր, Ալման մերժեց նրա խնդրանքը, ասելով, որ նա նորից կեղծ ուսմունքեր կքարոզեր, եթե կրկին նրա ձայնը վերականգվեր: Կորիհորն իր կյանքի մնացած մասը անցկացրեց ուտելիք մուրալով, մինչև որ ոտնակոխ արվեց ի մահ մի խումբ Նեփիացիների կողմից, ովքեր առանձնացել էին իրենց կոչելով Զորամացիներ:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 30.1–18

*Կորիհորը, մի հակաքրիստոս,ծաղրում է Քրիստոսի վարդապետությունը*

Նախքան դասը սկսելը, մի փոքրիկ անցք բացեք կոկա կոլայի շշի ներքևում և թույլ տվեք, որ պարունակությունը դուրս հոսի: Ցույց տվեք շիշը դասարանին առանց հայտնելու, որ այն դատարկ է: Հարցրեք, թե ով է ուզում այն և որքան կվճարի դրա համար: Խնդրեք որևէ ուսանողի առաջ գալ, զննել շիշը և ասել դասարանին, թե ինչ կա նրանում: (Կոկա կոլայի փոխարեն դուք կարող եք օգտագործել որևէ դատարկ արկղ, տոպրակ կամ փաթեթածրար, որը սովորաբար պարունակում է ինչ որ բան, որն ուսանողները սիրում են:)

- Ինչպե՞ս են կեղծ ուսմունքները նման այս կոկա կոլայի շշին: (Դրանք հաճախ հրապուրիչ են դրսից, բայց դատարկ են ներսից:)

Բացատրեք, որ այսօրվա դասում ուսանողները կսովորեն մի մարդու մասին, որի անունը Կորիհոր է: Երբ նրանք ուսումնասիրեն Ալմա 30 գլուխը, խրախուսեք նրանց մտածել թե ինչպես Կորիհորի ուսմունքները հոգևորապես դատարկ դարձրեցին նրան և մյուսներին:

Ասացեք ուսանողներին, որ Լամանացիների դեմ պատերազմի ժամանակաշրջանից հետո Ամմոնի ժողովուրդը (Անթի Նեփի Լեքիները) մտան խաղաղության մի ժամանակաշրջան: Ապա Կորիհորն ընդհատեց նրանց խաղաղությունը: Խնդրեք ուսանողներին կարդալ Ալմա 30.6, 12, որոնելով մի բառ, որը նկարագրում է այդ մարդուն: (Այդ բառը *հակաքրիստոսն է:* Բացատրեք, որ այդ բառի սահմանումներից մեկն է՝ «ամեն ոք, ով բացահայտորեն կամ ծածուկ ընդդիմանում է Քրիստոսին, կամ այն ամենը, որ ավետարանի և փրկության ճշմարիտ ծրագրի կեղծ արտահայտումն է» [Սուրբ գրքերի ուղեցույց, «հակաքրիստոս», scriptures.lds.org]:)

Պատրաստեք հետևյալ վարժությունը թերթիկների վրա կամ գրեք գրատախտակին՝ դասը սկսելուց առաջ: Եթե դուք գրեք այն գրատախտակին, խնդրեք երեխաներին արտագրել այն տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: Այն կօգնի նրանց տեսնել, թե ինչպես է սատանան և նրանք, ովքեր ծառայում են նրան, օգտագործում կեղծ վարդապետություններ՝ հրապուրելու մեզ մեղք գործել:

**Կորիհոր հակաքրիստոսի կեղծ ուսմունքները**

| Կեղծ ուսմունք | Ուղերձ |
|---|---|
| 1. Ալմա 30.13–14 | ա. Դուք չեք կարող իմանալ, թե արդյոք ինչ որ բան ճշմարիտ է, մինչև այն չտեսնեք: Ուստի, դուք չեք կարող իմանալ, որ կլինի Քրիստոս: |
| 2. Ալմա 30.15 | բ. Չկա այնպիսի բան, ինչպիսին մեղքն է: Չկա համաշխարհային չափանիշ, թե ինչն է ճիշտ, և ինչը՝ սխալ: |
| 3. Ալմա 30.16 | գ. Մարդիկ բարգավաճում են իրենց իսկ ջանքերով միայն: Չկա այնպիսի բան, ինչպիսին քավությունն է: |
| 4. Ալմա 30.17 (սկսելով «ամեն մարդ ընթանում էր . . .») | դ. Անհնարին է իմանալ այն բաների մասին, որոնք տեղի են ունենալու ապագայում, այսպիսով՝ դուք չպետք է հավատաք Քրիստոսին կամ հետևեք մարդկանց խոսքերին, ովքեր ասում են, թե իրենք մարգարեներ են: |
| 5. Ալմա 30.17 (սկսելով «ինչ որ մարդ արել է . . .») | ե. Մեղքի ներումը խելագար միտք է, որը գալիս է կեղծ ավանդույթներից: |
| 6. Ալմա 30.18 | զ. Չկա կյանք մահից հետո, այսպիսով՝ կարիք չկա անհանգստանալ այս կյանքից հետո դատաստանի մասին: |

Ուսանողներին զույգերի բաժանեք: Խնդրեք նրանց միասին կարդալ Ալմա 30.12–18: Հրահանգեք նրանց համեմատել ուսմունքների ուղերձները, որոնք ձախ կողմում են, այն ուսմունքների ուղերձների հետ, որոնք աջ կողմում են: (Պատասխաններ. 1–դ, 2–ա, 3–ե, 4–գ, 5–բ, 6–զ:)

Ուսանողներին օգնելու վերլուծել Կորիհորի ուսմունքները և կիրառել իրենց սովորածը տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպիսի՞ ուսմունքների ազդեցության եք ենթարկվել, որոնք նման են Կորիհորի ուսմունքներին:
- Համաձայն Ալմա 30.18-ի, Կորիհորի ուսմունքները ի՞նչ էին մարդկանց առաջնորդում անել:
- Ինչո՞ւ եք կարծում, որ այս ուսմունքները տանում էին մարդկանց գայթակղությունների հանձնվելուն:
- Ի՞նչ կարող ենք սովորել այս հատվածներից կեղծ ուսմունքների վտանգների մասին: (Օգնեք ուսանողներին գտնել հետևյալ սկզբունքը. **Սատանան օգտագործում է կեղծ վարդապետություններ՝ գայթակղելու համար մեզ մեղք գործել:**)

Խնդրեք ուսանողներին պատկերացնել հետևյալ իրավիճակը.

Մի ընկեր հրավիրում է ձեզ տեսախաղ խաղալ: Երբ գալիս եք ձեր ընկերոջ տուն, հասկանում եք, որ դա մոլեխաղ է և որ այն հարուստ է անհամեստ հագնված կերպարներով: Երբ տատանվում եք խաղալ այդ խաղը, ձեր ընկերը խնդրում է բացատրել, թե ինչու դուք չեք կամենում խաղալ այն:

- Ի՞նչ կասեիք դուք: (Ուսանողները կարող են բացատրել, որ այդ խաղը խախտում է իրենց հավատքի չափանիշները:)
- Եթե ձեր ընկերը սկսում է քննադատել ձեզ կամ ձեր հավատալիքները, ասելով, որ այն սահմանափակում է ձեր ազատությունը, ի՞նչ կպատասխանեիք:

## Ալմա 30.19–60

*Կորիհորը նշան է պահանջում Ալմայից և Աստծո զորությամբ զարկվում է համրությամբ:*

Ամփոփեք Ալմա 30.19–30, բացատրելով, որ Կորիհորը ուսուցանեց կեղծ վարդապետություններ Նեփիական երեք տարբեր քաղաքներում: Ի վերջո, նա բերվեց երկրի գլխավոր դատավորի առջև և Ալմայի առջև, ով Եկեղեցու առաջնորդն էր: Դուք

կարող եք նշել, որ Կորիհորի ուժեղ փաստարկներից մեկն այն էր, որ Եկեղեցու առաջնորդները մարդկանց պահում էին գերության մեջ, որ նրանց կրոնը ժողովրդից վերցնում էր ազատությունը: Նա նաև մեղադրեց Եկեղեցու առաջնորդներին մարդկանց աշխատանքից անձնական շահ փնտրելու մեջ:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 30.31, փնտրելով Ալմայի և Եկեղեցու առաջնորդների դեմ Կորիհորի մեղադրանքները:

Հրավիրեք ուսանողներին կարդալ Ալմա 30.32–35 հատածները՝ բացահայտելու, թե ինչպես Ալման պատասխանեց Կորիհորին:

- Ինչպե՞ս եք տեսել Ալմայի պատասխանների ճշմարտացիությունը Եկեղեցու առաջնորդների կյանքում:

Հրավիրեք երկու ուսանողների գալ դասարանի առջև: Խնդրեք նրանց բարձրաձայն կարդալ Ալմա 30.37–45, ընդ որում մեկը թող կարդա Ալմայի խոսքերը, իսկ մյուսը՝ Կորիհորի խոսքերը: Հրավիրեք դասարանի մնացած մասին փնտրել, թե Ալման ինչ ներկայացրեց որպես Աստծո գոյության ապացույց:

- Ի՞նչ ապացույցներ բերեց Ալման Աստծո գոյության վերաբերյալ: (Երբ ուսանողները պատասխանեն, դուք կարող եք գրել նրանց պատասխանները գրատախտակին: Դուք կարող եք նաև խրախուսել ուսանողներին նշել դրանք իրենց սուրբ գրություններում: Որպես այս քննարկման մաս շեշտեք, որ **բոլոր բաները վկայում են Աստծո մասին:**
- Այն փաստարկներից, որոնք նշեց Ալման, որո՞նք են հատկապես զորեղ ձեզ համար: Ինչո՞ւ:

Տվեք ուսանողներին մի քանի րոպե գրելու համար: Խնդրեք նրանց գրել ապացույցները, որոնք նրանք տեսել են, որ «մատնանշում են, որ կա Աստված» (Ալմա 30.44): Հրավիրեք մի քանի ուսանողների իրենց ցուցակներով կիսվել դասարանի հետ:

- Ինչպե՞ս են այս ապացույցներն ազդում ձեզ վրա: Ի՞նչ ուղիներով դրանք կարող են զորացնել ձեր հավատքն ու վկայությունը:

Ամփոփեք Ալմա 30.46–50, բացատրելով, որ Կորիհորը դեռևս չընդունելով իրեն տրված նշանները, պահանջեց, որ Ալման ցույց տար Աստծո գոյության մի նշան: Ի պատասխան, Աստծո զորությամբ նա զարկվեց համրությամբ: Համոզվելով Աստծո զորության մեջ, Կորիհորը գրեց, թե ինչու էր նա քարոզում Հայր Աստծո և Հիսուս Քրիստոսի դեմ: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Կորիհորի բացատրությունը Ալմա 30.51–53 հատվածներում:

- Ի՞նչ եք կարծում, Կորիհորը ի՞նչ ի նկատի ուներ, երբ ասաց, որ ուսուցանում էր բաներ, որոնք «հաճելի էին մարմնական մտածողության համար»: (Դուք կարող եք բացատրել, որ Կորիհորի ուսմունքները գոհացնում էին ավելի շուտ մարդկանց անարդար ֆիզիկական ցանկությունները, քան նրանց արդար հոգևոր ցանկությունները:)

ԱմփոփեքԱլմա 30.54–59, բացատրելով, որ Կորիհորը խնդրեց Ալմային աղոթել, որպեսզի անեծքը վերանար իրենից: Ալման հրաժարվեց՝ ասելով, որ եթե Կորիհորը ստանար խոսելու ունակություն, նա նորից կուսուցաներ կեղծ վարդապետություն ժողովրդին: Կորիհորը դուրս գցվեց և տնից տուն էր գնում՝ ուտելիք մուրալով: Ի վերջո, նա գնաց Զորամացիների մոտ, ովքեր պառակտվել էին Նեփիացիներից և ոտնակոխ արվեց ի մահ:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 30.60, որոնելով այն սկզբունքը, որը Մորմոնն է ուսուցանում:

- Ի՞նչ սկզբունք է Մորմոնն ուսուցանում այս հատվածում:

Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են, որ **«դևը չի աջակցի իր զավակներին [իր հետևորդներին] վերջին օրը»:**

- Ինչպե՞ս է սա տարբերվում այն ձևից, թե ինչպես են Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը հոգ տանում մեզ համար: (Երբ ուսանողները քննարկում են այս հարցը, դուք կարող եք նրանց հանձնարարել կարդալ Ալմա 36.3:)

Վկայեք այն ճշմարտությունների մասին, որոնք ուսանողները և դուք քննարկեցիք այս դասին:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Ալմա 30.52: «Ես միշտ գիտեի, որ կա Աստված»

Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանել է նշանները ճանաչելու կարևորության մասին, որոնք մենք ստացել ենք ավետարանի ճշմարտացիության վերաբերյալ.

«Եթե մենք չենք ենթարկվում Սուրբ Հոգու նուրբ ազդեցությանը, մենք դառնում ենք Մորմոնի Գրքի Կորիհորի նման մի հակաքրիստոս: Ոչ միայն Կորիհորը չհավատաց Աստծուն, բայց նա նաև ծաղրեց Փրկչին, Քավությունը և մարգարեության ոգին, կեղծորեն ուսուցանելով, որ չկա Աստված և չկա Քրիստոս:

Կորիհորը չէր բավարարվում պարզապես մերժելով Աստծուն և խաղաղ գնալով իր իսկ ճանապարհով: Նա ծաղրում էր հավատացյալներին և պահանջում էր, որ Ալմա մարգարեն համոզեր իրեն Աստծո գոյության և զորության վերաբերյալ մի նշանով: Ալմայի պատասխանը նույնքան իմաստալի է այսօր, ինչպես դա այն ժամանակ էր. «Դու ունեցել ես բավականաչափ նշաններ, մի՞թե դու փորձում ես քո Աստծուն: Միթե՞ դու կասես՝ ցույց տուր ինձ մի նշան, երբ դու ունես վկայությունը բոլոր այս քո եղբայրների և նաև բոլոր սուրբ մարգարեների: Սուրբ գրքերը դրված են քո առջև, այո, և բոլոր բաները մատնանշում են, որ կա Աստված. Այո, նույնիսկ երկիրը և բոլոր բաները, որ նրա երեսին են, այո, և նրա շարժումը, այո, և բոլոր մոլորակները, որոնք շարժվում են իրենց կանոնավոր ձևով, վկայում են, որ կա մի Գերագույն Ստեղծող» [Ալմա 30.44]:

Վերջապես Կորիհորին տրվեց նշան: Նա զարկվեց համրությամբ: «Եվ Կորիհորն առաջ տարավ իր ձեռքը և գրեց՝ ասելով. . . .Ես գիտեմ, որ Աստծո զորությունից բացի ոչ մի բան չէր կարող բերել այս ինձ վրա. Այո, և ես միշտ գիտեի, որ կա Աստված» [Ալմա 30.52]:

Եղբայրներ և քույրեր, դուք երևի արդեն գիտեք ձեր հոգու խորքում, որ Աստված ապրում է: Դուք գուցե դեռ ամեն ինչ չգիտեք Նրա մասին և չեք հասկանում բոլոր Նրա ուղիները, բայց հավատքի լույսը ձեր ներսում է, սպասելով արթնացման և ուժեղացման Աստծո Հոգու և Քրիստոսի լույսի միջոցով, որով դուք ծնվել եք» (“Seeking to Know God, Our Heavenly Father, and His Son, Jesus Christ,” *Ensign* կամ *Liahona,* Nov. 2009, 31–32):

ԴԱՍ 89

# Ալմա 31

## Նախաբան

Ալման իմացավ, որ Նեփիացիների մի պառակտված խումբ, որոնք կոչում էին իրենց Զորամացիներ, հեռացել էր ավետարանի ճշմարտությունից և ընկել կեղծ գործառույթների մեջ: Տխրելով ամբարշտության մասին այս հաղորդումներից, Ալման վերցրեց մի խումբ միսիոներներ՝ ուսուցանելու Աստծո խոսքը Զորամացիներին: Ալման և նրա ընկերակիցները տեսան Զորամացիների ուխտադրուժ երկրպագությունը, նյութապաշտությունը և հպարտությունը: Ալման անկեղծորեն աղոթեց, որ Տերը հանգստացներ իրեն և իր ընկերակիցներին, երբ նրանք հանդիպեցին այդ մարտահրավերին, և որպեսզի նրանք հաջողություն ունենային Զորամացիներին դեպի Տերը ետ բերելիս:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 31.1–7

*Ալման և նրա ընկերակիցները մեկնում են Զարահեմլայից՝ քարոզելու Աստծո խոսքը ուխտադրուժ Զորամացիներին:*

Խնդրեք ուսանողներին մտածել այն մասին, թե ինչ իրենք կանեին, եթե մի ընկեր կամ ընտանիքի անդամ սկսեր հեռանալ ավետարանով ապրելուց:

- Ի՞նչ կանեիք օգնելու համար այդ ընկերոջը վերադառնալ Եկեղեցի: Ինչպե՞ս պատվիրանները պահելու ցանկություն կարթնացնեիք այդ մարդու մեջ: Ո՞ւմ կդիմեիք օգնության համար ձեր ընտանիքի անդամի կամ ընկերոջ հետ աշխատելիս:

Պատմեք ուսանողներին, որ այսօրվա դասը լուսաբանում է, թե ինչպես Ալման և մի քանի այլ մարդիկ փորձեցին օգնել մի խումբ մարդկանց, ովքեր հեռացել էին ավետարանից: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 31.1–4: Խնդրեք դասարանին որոնել այն մտահոգությունները, որոնք Ալման և մյուսներն ունեին Զորամացիների վերաբերյալ:

- Ինչպիսի՞ն էին Ալմայի զգացումները, երբ նա լսեց Զորամացիների անօրինության մասին:
- Ինչո՞ւ Նեփիացիները սկսեցին վախենալ Զորամացիների պատճառով:

Խնդրեք ուսանողներին պատկերացնել, որ իրենք հնարավորություն ունեն խորհուրդ տալու Ալմային, թե ինչպես լուծեն նրա մտահոգությունները Զորամացիների վերաբերյալ: Հարցրեք ուսանողներին, թե ինչ նրանք կառաջարկեին անել: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 31.5: Խնդրեք դասարանին գտնել այն, ինչ ըստ Ալմայի, Զորամացիներին օգնելու համար ամենաարդյունավետ ուղին էր:

- Ի՞նչ որոշեց Ալման անել Զորամացիներին օգնելու համար:
- Ջանալով մարդկանց օգնել փոխվել, ինչո՞ւ եք կարծում, որ Աստծո խոսքն ավելի հզոր է, քան հարկադրանքը կամ այլ միջոցներ:

Հիմնվելով Ալմա 31.5 հատվածի վրա, ի՞նչ կարող ենք սովորել մեր կյանքում Աստծո խոսքի զորության մասին: (Ուսանողները կարող են տարբեր խոսքեր օգտագործել, բայց հավաստիացեք, որ ճանաչեն հետևյալ ճշմարտությունը՝ **Եթե մենք ուսումնասիրենք Աստծո խոսքը, այն մեզ կառաջնորդի անելու այն, ինչը ճիշտ է:** Դուք կարող եք գրել այս ճշմարտությունը գրատախտակին:)

Ուսանողներին օգնելու համար ավելի լավ հասկանալ Աստծո խոսքի ուժը մեզ օգնելիս անելու այն, ինչը ճիշտ է, կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ մտքով: (Դուք կարող եք գրել այս միտքը գրատախտակին կամ պատրաստել այն թերթիկների վրա:)

«Ճշմարիտ վարդապետությունը, եթե հասկացվում է, փոխում է մտածելակերպը և վարքը:

Ավետարանի վարդապետությունների ուսումնասիրությունը ավելի արագ կբարելավի վարքը, քան վարքի ուսումնասիրությունը կփոխի

վարքը:. . . Այդ պատճառով մենք այսքան ուժգնորեն շեշտադրում ենք ավետարանի վարդապետությունների ուսումնասիրությունը» (“Little Children,” *Ensign,* Nov. 1986, 17):

Հրավիրեք ուսանողներին պատմել մի ժամանակի մասին, երբ նրանք կամ որևէ մեկը, ում նրանք գիտեն, ձեռք են բերել ավելի մեծ ցանկություն անելու այն, ինչը ճիշտ է՝ սուրբ գրությունների ուսմունքների կամ Եկեղեցու առաջնորդների ուսմունքների շնորհիվ:

Ամփոփեք Ալմա 31.6–7, պատմելով ուսանողներին, որ Աստծո խոսքի զորության հանդեպ Ալմայի վստահության շնորհիվ, նա և յոթ ուրիշ մարդիկ գնացին քարոզելու Զորամացիներին:

## Ալմա 31.8–23

### *Զորամացիներն աղոթում են և երկրպագում կեղծ ձևով:*

Ասացեք ուսանողներին, որ երբ Ալման և նրա ընկերակիցները գնացին Զորամացիների մեջ, նրանք տեսան որ ժողովուրդը մի ապշեցուցիչ ձևով էր երկրպագում Աստծուն:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 31.8–11 հատվածները, նշելով բառերն ու արտահայտությունները, որոնք նկարագրում են Զորամացիների երկրպագությունը: Նշեք, որ տողատակի ծանոթագրություն 10*ա*-ն առաջարկում է, որ «եկեղեցու ծիսակատարություններ» արտահայտությունը կապված է ինչպես արարողությունների, այնպես էլ «ամենօրյա Աստծուն ուղղված աղոթքի և աղաչանքի հետ»:

- Համաձայն 10 հատվածի, ի՞նչ էին Զորամացիներն անում, որը նրանց խոցելի էր դարձնում գայթակղությանը:
- Ի՞նչ կարող ենք սովորել «ամեն օր աղոթքով և աղաչանքով շարունակելու առ Աստված» սկզբունքի Զորամացիների տապալումից: (Ուսանողների պատասխանները կարող են տարբերվել, բայց դրանք պետք է արտահայտեն, որ **աղոթելու և պատվիրանները պահելու մեր ամենօրյա ջանքերն ամրացնում են մեզ՝ գայթակղության դեմ:** Դուք կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին: Դուք կարող եք նաև առաջարկել, որ ուսանողները գրեն այն իրենց սուրբ գրություններում Ալմա 31.9–11-ի կողքին:)
- Ե՞րբ եք տեսել, որ ամենօրյա աղոթքը կարողացել է օգնել մեզ գայթակղությանը դիմակայելիս:

Որպես այս հարցի քննարկման մաս կարդացեք Յոթանասունից Երեց Ռուլոն Գ. Քրեյվնի հետևյալ միտքը.

«Անցյալ տարիների ընթացքում ինձ երբեմն խնդրվել է Եղբայրների կողմից հանդիպել Եկեղեցու ապաշխարող անդամների և հարցազրույց անցկացնել նրանց հետ՝ նրանց տաճարային օրհնությունները վերականգնելու նպատակով: Սա միշտ էլ եղել է հոգևոր հուզումնալի փորձառություն՝ վերականգնել այն հիանալի մարդկանց օրհնությունները, ովքեր ապաշխարել են: Ես նրանցից մի քանիսին ուղղեցի հետևյալ հարցը. «Ի՞նչ պատահեց ձեր կյանքում, որն անդամակցության ձեր ժամանակավոր կորստի պատճառը դարձավ»: Արցունքով լցված աչքերով նրանք պատասխանեցին. «Ես չէի հնազանդվում ավետարանի հիմնական սկզբունքներին՝ աղոթքի, կանոնավորապես Եկեղեցի հաճախելու, Եկեղեցում ծառայելու և ավետարանն ուսումնասիրելու: Այնուհետև ես տեղի տվեցի գայթակղություններին և կորցրեցի Սուրբ Հոգու առաջնորդությունը» (“Temptation,” *Ensign,* May 1996, 76):

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 31.12–14 : Ապա հրավիրեք մեկ այլ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 31:15–18: Նախքան երկրորդ ուսանողի կարդալը խնդրեք դասարանին մտածել, թե ինչպես նրանք կպատասխանեին, եթե լսեին ինչ որ մեկին այդպես աղոթելիս:

- Ի՞նչ մտահոգություններ կունենայիք, եթե լսեիք որևէ մեկին այդպես աղոթելիս:
- Ի՞նչ կեղծ վարդապետություններ Զորամացիները արտասանեցին իրենց աղոթքում:
- Ինչպիսի՞ն էր Զորամացիների վերաբերմունքը մյուս մարդկանց հանդեպ: (Դուք կարող եք ուղղել ուսանողների ուշադրությունը *մենք* և *մեզ* բառերի հաճախակի օգտագործման վրա, որոնք հայտնվում են Զորամացիների աղոթքներում:)

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 31.19–23: Խնդրեք դասարանին հետևել ընթացքում և որոնել լրացուցիչ խնդիրներ Զորամացիների երկրպագության ձևի մեջ: Խնդրեք ուսանողներին հաղորդել իրենց գտածը:

- Ձեր կարծիքով, ի՞նչ փոփոխություններ պետք է կատարեին Զորամացիները, որպեսզի իրենց երկրպագությունն ակնածալի և հաճելի լիներ Տիրոջը:

Բացատրեք, որ մենք երկրպագում ենք Աստծուն, տալով Նրան մեր սերը, ակնածանքը և նվիրվածությունը: (Դուք կարող եք գրի առնել երկրպագության այս տարրերը գրատախտակին): Մենք պետք է երկրպագությամբ լցված լինենք ոչ միայն մեր վերաբերմունքով և գործողություններով, երբ աղոթում ենք, ծոմ պահում և հաճախում Եկեղեցի, այլ ամենօրյա մեր վերաբերմունքով և գործողություններով: Խրախուսեք ուսանողներին գնահատել իրենց երկրպագության կենտրոնացված ու անկեղծ լինելու փաստը:

Խնդրեք ուսանողներին որոշել տարբեր ուղիներ, որոնցով կարող են պատշաճորեն երկրպագել Աստծուն: Նրանց բավականաչափ ժամանակ տրամադրեք՝ իրենց գաղափարներով կիսվելու համար: Կարող եք խնդրել ուսանողներից մեկին գրել դրանք գրատախտակին:

- Ինչպիսի՞ վերաբերմունք պետք է ունենանք, երբ երկրպագում ենք: Ինչպե՞ս կարող ենք պահել այդ վերաբերմունքը յուրաքանչյուր օրվա ընթացքում:

Ուսանողներին օգնելու համար հասկանալ, թե ինչպես է մեր վերբերմունքն ազդում մեր երկրպագության վրա, հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսի հետևյալ միտքը.

«Երկրպագությունը հաճախ ներառում է գործողություններ, բայց ճշմարիտ երկրպագությունը միշտ ներառում է մտածելակերպ:

Երկրպագության մտածելակերպն առաջացնում է միաձուլման, հիացմունքի և երկյուղի ամենախորը զգացումներ: Երկրպագությունը միավորում է սեր և ակնածանք՝ նվիրվածության մի վիճակ, որը մեր հոգիներն ավելի է մոտեցնում Աստծուն (*Pure in Heart* [1988], 125):

Հրավիրեք ուսանողներին տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում համառոտ գնահատել իրենց անձնական երկրպագության ներկայիս եղանակները և իրենց վերաբերմունքը երկրպագությանը հետևյալ հարցերում՝ ամենօրյա անձնական աղոթք, սուրբ գրությունների ամենօրյա անձնական ուսումնասիրություն, հնազանդություն պատվիրաններին և հաճախելիություն Եկեղեցի, ամեն շաբաթ հաղորդության մասնակցություն: Խնդրեք ուսանողներին նպատակ դնել բարելավելու իրենց անձնական ամենօրյա երկրպագությունը:

***Խրախուսեք ուսանողներին նպատակներ դնել՝ կիրառելու այն, ինչ սովորում են:***

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանել է, թե որքան կարևոր է հրավիրել ուսանողներին գործել՝ դասարանում իրենց սովորածի վրա հիմնվելով. «Ավետարանի ուսուցանման նպատակը . . . դասարանի անդամների մտքերը «տեղեկություններով լցնելը» չէ:. . . *Նպատակը՝ անձնավորությանը ոգեշնչելն է մտածել, զգալ և ապա անել ինչ-որ բան՝ ավետարանի սկզբունքներով ապրելու համար:* . . .

Ես լսում եմ և մոռանում,

Ես տեսնում եմ և հիշում,

Ես անում եմ և սովորում» (in Conference Report, Oct. 1970, 107–8):

## Ալմա 31.24–38

### *Ալման աղոթում է Զորամացիներին դեպի Տերը ետ բերելու զորության և հաջողության համար:*

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 31.24–25, գտնելով այն մտածելակերպը և վերաբերմունքը, որոնք զուգորդվում էին Զորամացիների ուրացության հետ: Խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով:

Բացատրեք, որ երբ Ալման տեսավ Զորամացիների ամբարշտությունը, նա աղոթեց: Խնդրեք ուսանողներին զույգերի բաժանվել: Հանձնարարեք զույգերին ուսումնասիրել Ալմա 31.26–35 հատվածները և քննարկել հետևյալ հարցերը: (Դուք կարող եք տալ այս հարցերը թերթիկների վրա տպված կամ գրված, կամ կարող եք գրել դրանք գրատախտակին նախքան դասը սկսելը:)

- Ո՞րն էր Զորամացիների աղոթքի առանցքը: (Նրանք կենտրոնացած էին իրենց վրա:)
- Ո՞րն էր Ալմայի աղոթքի առանցքը: (Նա կենտրանացած էր ուրիշներին օգնելու վրա: Երբ նույնիսկ նա աղոթեց իր և իր ընկերակիցների համար, նա ուժ խնդրեց ծառայելու Զորամացիներին:)
- Ալմայի աղոթքի ո՞ր տարրերը կկամենայիք կիրառել ձեր անձնական աղոթքներում:

Գրատախտակի վրա գրեք.

*Եթե մենք աղոթենք և գործենք հավատքով, . . .*

Բացատրեք, երբ Ալման Զորամացիներին օգնության հասնելու համար աղոթեց, նա և նրա ընկերակիցները սկսեցին ծառայել՝ «առանց իրենց մասին մտածելու»(Ալմա 3.37)։ Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 31.36–38, որոնելով այն օրինությունները, որոնք եկան Ալմային և նրա ընկերակիցներին, երբ նրանք ստացան քահանայության օրհնությունները և քարոզեցին ավետարանը։ (Դուք կարող եք բացատրել, որ Ալմա 31.36-ում «դրեց իր ձեռքերը նրանց վրա» արտահայտությունը վերաբերում է ձեռնադրմանը։ Տես տողատակի ծանոթություն 36*բ*։)

- Ի՞նչ օրհնություններ եկան Ալմային և նրա ընկերակիցներին նրանց աղոթքների և գործողությունների շնորհիվ։

Հիմնվելով նրա վրա, ինչ սովորեցիք Ալմայի և նրա ընկերակիցների օրինակից, ինչպե՞ս կավարտեիք գրատախտակի վրա գրված միտքը։ (Ուսանողները կարող է տալ մի քանի տարբեր ճիշտ պատասխաններ։ Ամփոփեք նրանց պատասխանները, լրացնելով գրատախտակի վրա գրված միտքը։ ***Եթե մենք աղոթենք և հավատքով գործենք, Տերը կզորացնի մեզ մեր փորձությունների մեջ։***)

Բացատրեք, որ իր աղոթքից հետո Ալման և իր ընկերակիցները դրսևորեցին իրենց հավատքը՝ գնալով աշխատելու և ապավինելով Տիրոջը նրանում, որ Նա կապահովեր իրենց, մինչ նրանք կծառայեին Նրան։ Հրավիրեք ուսանողներին հետևել հավատքով աղոթելու Ալմայի օրինակին։

ԴԱՍ 90

# Ալմա 32

## Նախաբան

Զորամացիների ուխտադրուժ երկրպագությունը տեսնելուց հետո Ալման և նրա ընկերակիցները սկսեցին քարոզել Աստծո խոսքը Զորամացիներին: Նրանք սկսեցին որոշ հաջողություն ունենալ ժողովրդի մեջ, ովքեր աղքատ էին և ովքեր դուրս էին գցվել իրենց ժողովատներից: Համեմատելով Աստծո խոսքը սերմի հետ, Ալման ուսուցանեց ժողովրդին, թե ինչպես ընդունեն Աստծո խոսքը և մեծացնեն իրենց հավատքը:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 32.1–16

*Խոնարհ Զորամացիները ցույց են տալիս, որ իրենք պատրաստ են լսել Աստծո խոսքը:*

Հրավիրեք ուսանողներին պատկերացնել, որ դուք մի ընկեր եք, ով հարցնում է նրանց, թե ինչպես կարող է իմանալ, թե արդյոք Հիսուս Քրիստոսի ավետարանը ճշմարիտ է: Հարցրեք նրանց, թե ի՞նչ կասեին՝ օգնելու համար ձեզ ստանալ վկայություն:

Երբ ուսանողները կիսվեն իրենց մտքերով, գրատախտակին գրեք. *Ինչպե՞ս ստանալ և զորացնել վկայություն:* Ասացեք ուսանողներին, որ դասի ընթացքում դուք գրի կառնեք սկզբունքները և ներըմբռնումները, որոնք նրանք կբացահայտեն այն բանի վերաբերյալ, թե ինչպես ստանալ և զորացնել վկայություն:

Հիշեցրեք ուսանողներին, որ Ալման և նրա եղբայրները տեսել էին Զորամացիների՝ Նեփիացիների մի ուխտադրուժ խմբի կեղծ երկրպագությունը: Ժողովրդի ամբարշտության համար իր վշտի պատճառով նա աղոթեց մխիթարության և ուժի համար, որ կարողանար ուսուցանել նրանց: (Տես Ալմա 31:)

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 32.1–3: Խնդրեք դասարանին գտնել, թե Զորամացիների որ խումբն էր հետաքրքրություն ցույց տալիս միսիոներների ուղերձի հանդեպ: Խնդրեք նրանց հաղորդել իրենց գտածը:

- Համաձայն Ալմա 32.3-ի, այս ժողովուրդն ինչո՞ւ էր աղքատ: («Նրանք աղքատ էին, ինչ վերաբերում էր աշխարհի բաներին, և նաև նրանք աղքատ էին սրտով»:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում լինել «աղքատ սրտով»:

Ուսանողներին օգնելու համար պատասխանել այս հարցին, հրավիրեք նրանցից մի քանիսին հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 32.4–12: (Ուսանողները կարող են առաջարկել, որ սրտով աղքատ լինելը նշանակում է լինել խոնարհ, ապաշխարող և պատրաստ՝ լսելու Աստծո խոսքը:)

- Ինչպե՞ս է հարցը Ալմա 32.5-ում ցույց տալիս, որ Զորամացիները աղքատ էին սրտով:
- Ինչպե՞ս աղքատությունը Զորամացիների այս խմբի համար օրհնություններ բերեց:
- Այս հատվածներն ի՞նչ են ուսուցանում վկայություն ստանալու և զորացնելու մասին: (Երբ ուսանողները կիսվեն տարբեր սկզբունքներով, դրանք գրեք վերնագրի տակ գրատախտակի վրա: Հավաստիացեք, որ դրանք մատնանշեն հետևյալ սկզբունքը. **Համեստությունը նախապատրաստում է մեզ Աստծո խոսքն ընդունելուն:** )
- Ինչո՞ւ է համեստությունը կարևոր վկայություն ստանալու և զորացնելու գործընթացում:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 32.13–16-ից: Խնդրեք դասարանին որոնել երկու տարբեր ուղիներ, որոնք կարող են մարդկանց խոնարհ դարձնել: (Մարդիկ կարող են ընտրել խոնարհ լինել, այլապես նրանք կհարկադրվեն խոնարհ լինել:)

- Ի՞նչ կարող ենք սովորել այս հատվածներից համեստության մասին: (Օգնեք ուսանողներին գտնել հետևյալ սկզբունքը. **Մենք ավելի ենք օրհնվում, երբ ընտրում ենք խոնարհ լինել, քան երբ հարկադրվում ենք խոնարհ լինել:**) Ձեր կարծիքով, ինչո՞ւ է ավելի լավ ընտրել խոնարհ լինել:
- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում խոնարհեցնել ինքներս մեզ «խոսքի պատճառով (Ալմա 32. 14): Ինչպե՞ս կարող է սա առնչվել մեր վերաբերմունքին եկեղեցում, սեմինարիայում կամ ընտանեկան սուրբ գրությունների ուսումնասիրությանը:

## Ալմա 32.17–43

*Ալման ուսուցանում է Զորամացիներին, թե ինչպես մեծացնեն իրենց հավատքը:*

Բացատրեք, որ Ալման մատնանշեց մի կեղծ գաղափար, որով շատ մարդիկ տարված են՝ վկայություն ձեռք բերելու վերաբերյալ: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 32.17–18, իսկ դասարանը թող գտնի այդ կեղծ գաղափարը:

- Ի՞նչ կեղծ գաղափար ունեին շատ մարդիկ՝ վկայություն ձեռք բերելու մասին:
- Ինչո՞ւ է սխալ նախքան հավատալը նշան պահանջելու մեջ: (Դուք կարող եք հիշեցնել ուսանողներին Շերեմի օրինակը Հակոբ 7.13–16-ում և Կորիհորի օրինակը Ալմա 30.43–52-ում: Դուք կարող եք նաև հանձնարարել նրանց կարդալ Վարդապետություն և Ուխտեր 63.9՝ շեշտելու, որ նշանները հավատքի արդյունք են, ոչ թե մի բան, որը մենք պետք է պահանջենք նախքան հավատք ունենալը:)

**Ալմա 32.21**
սուրբ գրությունների սերտման հատված է: Օգտվեք դասի վերջում գտնվող ուսուցանման մտքից՝ օգնելու համար ուսանողներին սերտել այդ հատվածը:

Բացատրեք, որ Ալման ուսուցանեց ժողովրդին, թե ինչ է հավատքը: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 32.21 , որոնելով հավատքի Ալմայի սահմանումը: Նշեք, որ այս խոսքը սուրբ գրությունների սերտման հատված է հանդիսանում: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին ընդգծել այն տարբերակիչ ձևով, որպեսզի նրանք դա կարողանան հեշտորեն գտնել:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 32.22, որոնելով խորհուրդ, թե ինչպես ստանալ և զորացնել վկայությունը: Հրավիրեք նրանց հաղորդել, թե ինչ են հայտնաբերել:

Ավելացրեք *Հիշեք Աստծո ողորմածությունը* և *Հավատացեք Աստծո խոսքին* արտահայտությունները գրատախտակի վրա գրված ցանկին:

- Ինչո՞ւ են այս գործողությունները կարևոր մեր հավատքի զարգացման համար:

Բացատրեք, որ Զորամացիներին օգնելու համար հասկանալ, թե ինչպես հավատալ Աստծո խոսքին, Ալման առաջարկեց մի փորձ կատարել:

- Ինոչո՞ւ են մարդիկ գիտական փորձեր կատարում: (Պարզելու համար, թե արդյոք տվյալ տեսությունը կամ գաղափարը ճշմարիտ է:)

Խնդրեք ուսանողներին նկարագրել փորձերը, որոնք նրանք կատարել են գիտական դասերին կամ այլ տեղերում: Օգնեք նրանց հասկանալ, որ փորձերը պահանջում են գործողություն, ոչ թե՝ հետազոտողի կողմից ուղղակի ենթադրություններ: Վկայություն ստանալու կամ զորացնելու գործընթացը նույնպես պահանջում է գործողություն:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 32.27 հատվածները: Խնդրեք դասարանին որոնել այն փորձը, որն Ալման առաջարկեց Զորամացիներին կատարել:Ավելացրեք *Փորձարկում խոսքի վրա* արտահայտությունը գրատախտակի վրա գրված ցանկին:

- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ ի նկատի ուներ Ալման, ասելով՝ «փորձարկել [իր] խոսքերը»:
- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ ի նկատի ուներ Ալման, ասելով՝ «արթնացրեք և զարթեցրեք ձեր ունակությունները»: (Դուք, գուցե, պետք է բացատրեք, որ *ունակությունները* բառը վերաբերում է մտածելու և գործելու, գործերն ավարտի հասցնելու մեր կարողությանը: Ալման կոչ էր անում մարդկանց գործել, հիմնվելով իր խոսքերի վրա: Դուք կարող եք ավելացնել *Արթնացրեք և զարթեցրեք ձեր ունակությունները* արտահայտությունը գրտախատակի վրա գրված ցանկին:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «գործադրեք հավատքի մի մասնիկ»:

Ուսանողներին օգնելու համար բացահատել, թե ինչպես նրանք կարող են սկսել կատարել այս փորձարկումը իրենց կյանքում, հրավիրեք նրանց մտքում կարդալ Ալմա 32.28 :

- Ինչի՞ն էր Ալման նմանեցնում Աստծո խոսքը: (Սերմի:)
- Որո՞նք են Աստծո խոսքի որոշ աղբյուրները: (Պատասխանները կարող են ներառել՝ սուրբ գրությունները, վերջին օրերի մարգարեների ուսմունքները և Սուրբ Հոգուց անձնական հայտնությունը:)
- Ի՞նչ ասաց Ալման, որ մենք պետք է անենք այդ «սերմի» հետ:

Գրի առեք ուսանողների պատասխանները գրատախտակին: Դուք կարող եք գրել դրանք նախապես գրված *Փորձարկեք խոսքը* վերնագրի տակ: Ցուցակը կարող է ընդգրկել հետևյալ կետերը.

*1. Տեղ տվեք խոսքի (կամ սերմի) համար, որ այն սերմանվի ձեր սրտում:*

*2. Դուրս մի գցեք խոսքը ձեր անհավատությամբ:*

*3. Ճանաչեք խոսքի աճը ձեր ներսում:*

Ուսանողներին օգնելու համար հասկանալ այն, ինչ կարդացել են փորձարկման վերաբերյալ, ուղղեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս է Աստծո խոսքը նման սերմի, որը կարող է սերմանվել մեր սրտերում: (Պատասխանները կարող են ներառել, որ այն կարող է աճել, որ այն կարող է զորացնել մեզ և որ մենք պետք է խնամենք այն:)

Երբ ուսանողները քննարկեն Աստծո խոսքի համեմատությունը սերմի հետ, հրավիրեք նրանց մտքում կարդալ Ալմա 33.22–23 հատվածները: Նախքան կարդալը խնդրեք նրանց որոնել Ալմայի բացատրությունը «այս բառի» համար: Օգնեք նրանց հասկանալ, որ դա վերաբերում է Հիսուս Քրիստոսին և Նրա Քավությանը:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «տեղ տալ» խոսքին, որ այն սերմանվի մեր սրտերում (տես Ալմա 32.28): Պատասխանները կարող են ներառել, որ մենք պետք է բացենք մեր սրտերը և որ մենք պետք է հնարավորություն ստեղծենք մեր կյանքում սուրբ գրությունների ուսումնասիրության համար: )
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում զգալ, որ Աստծո խոսքը «ուռչում է» ձեր ներսում: Եթե Աստծո խոսքն ուռչում է ձեր ներսում, ապա ի՞նչ է տեղի ունենում ձեր վկայության և հավատքի հետ:
- Ե՞րբ է Աստծո խոսքը մեծացրել ձեր հոգին և լուսավորել ձեր հասկացողությունը:

Խնդրեք մի քանի ուսանողների հերթով կարդալ Ալմա 32.29–34 հատվածները:Հրավիրեք դասարանին հետևել ընթացքում, որոնելով խոսքերն ու արտահայտությունները, որոնք նկարագրում են, թե մենք ինչ ենք սովորում Աստծո խոսքի մասին: Ապա խնդրեք ուսանողներին կարդալ խոսքերն ու արտահայտությունները, որոնք նրանք գտել են, և բացատրեն, թե ինչու են նրանք ընտրել դրանք: Ցույց տվեք գրատախտակի վրայի նկարը և հարցրեք.

- Ինչո՞ւ մեր հավատքը դեռ կատարյալ չի լինի այս փորձարկումը կատարելուց հետո: Էլ ի՞նչ մենք պետք է անենք, ձեր կարծիքով, ավետարանի մասին հարատև վկայություն ստանալու համար:
- Ինչպե՞ս է ծառի աճին օգնելու գործընթացը նման վկայության զորացման գործընթացին:

Մի քանի ուսանողների հրավիրեք հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 32.35–40: Խնդրեք դասարանին որոնել Ալմայի խորհուրդը այն մասին, թե ինչպես ավարտել փորձարկումը:

- Համաձայն Ալմա 32.37–40-ի, ի՞նչ պետք է անենք մենք, որպեսզի մեր հավատքը Աստծո խոսքի հանդեպ շարունակի աճել: (Ավելացրեք *Սնուցեք խոսքը* գրատախտակի վրա գրված ցանկին:)
- Ի՞նչ կարող ենք անել խոսքը սնուցելու համար:(Պատասխանները կարող են ներառել՝ ուսումնասիրել սուրբ գրություններն ամեն օր, աղոթել առաջնորդության համար, երբ ուսումնասիրում ենք, որոնել ուղիներ սուրբ գրությունները և վերջին օրերի մարգարեների ուսմունքները մեր կյանքում կիրառելու համար, և կիսվել նրանով, ինչ մենք սովորում ենք:)
- Ի՞նչ է պատահում, երբ մենք անտեսում ենք կամ չենք սնուցում ծառը: Ի՞նչ է պատահում, երբ մենք անտեսում ենք Աստծո խոսքը, որը սերմանվել է մեր սրտերում:

Խնդրեք ուսանողներին գրել տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում, թե իրենք ինչ են սովորել Ալմա 32 հատվածից այն մասին, թե ինչպես ստանալ և զորացնել վկայությունը: Դուք նաև կարող եք առաջարկել,

որ նրանք գրեն այս ամփոփագրերը իրենց սուրբ գրություններում Ալմա 32.37–43 հատվածների կողքին։

Հրավիրեք ուսանողներին կիսվել նրանով, ինչ գրել են։ Երբ նրանք կիսվեն, հետևեք, որ նրանք արտահայտեն, **եթե մենք ջանասիրաբար սնուցենք Աստծո խոսքը մեր սրտերում, մեր հավատքն ու վկայությունը Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հանդեպ կաճի։**

Խնդրեք ուսանողներին կարդալ Ալմա 32.41–43, որոնելով ծառի և պտղի վերաբերյալ Ալմայի նկարագրությունը։

- Էլ որտե՞ղ է Մորմոնի Գիրքը պարունակում նկարագրություն ծառի պտղի մասին, որն «ամենաքաղցրն էր բոլորից ինչ քաղցր է»։ (Գուցե անհրաժեշտ լինի հիշեցնել ուսանողներին կենաց ծառի նկարագրության մասին 1 Նեփի 8.11–12 և 1 Նեփի 11.9–24 հատվածները։)
- Լեքիի և Նեփիի կենաց ծառի տեսիլքում ի՞նչ են ներկայացնում ծառը և պտուղը։ (Ծառը ներկայացնում է Փրկչի և Նրա Քավության միջոցով արտահայտված Աստծո սերը, իսկ պտուղները ներկայացնում են այն օրհնությունները, որոնք կարող ենք ստանալ Քավության միջոցով։ Տես դաս 12 այս գրքում։)
- Լեքիի և Նեփիի տեսիլքում ինչպե՞ս են մարդիկ հասնում ծառին։ (Հետևելով երկաթյա ձողին, որը ներկայացնում է Աստծո խոսքը։) Ինչպե՞ս է սա նման Աստծո խոսքի Ալմայի համեմատությանը սերմի հետ։

Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչպես են նրանք հետևել Ալմա 32 հատվածում նկարագրվող գործընթացին։ Հարցրեք նրանց, թե ինչպես է այդ գործընթացն ազդել իրենց կյանքի վրա։ Կարող եք կիսվել ձեր իսկ փորձառություններով, երբ զգացել եք Աստծո խոսքի զորությունը։

## Սուրբ գրության սերտում—Ալմա 32.21

Խնդրեք ուսանողներին օգտագործել Ալմա 32.21 հատվածը՝ որոշելու, թե ինչպես են մարդիկ հետևյալ իրավիճակներում գործադրում հավատք, կամ չեն գործադրում հավատք։

1. Մի երիտասարդ կին նախքան իր հավատալը կամենում է ունենալ ֆիզիկական ապացույց, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է։
2. Մի երիտասարդ տղամարդ լսում է, որ բոլոր արժանի երիտասարդ տղամարդիկ պետք է լիաժամկետ միսիա ծառայեն։ Չնայած նրա ընտանիքն աղքատ է, նա վճռել է ծառայել և նախապատրաստություններ տեսնել ծառայելու համար։
3. Մի երիտասարդ կին կամենում է մաքուր դառնալ իր մեղքերից Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով։ Նա գիտի, որ պետք է խոստովանի որոշ օրինազանցություններ իր եպիսկոպոսին, որպեսզի լիովին ապաշխարի։ Նա պայմանավորվածություն է ձեռք բերում տեսնելու իր եպիսկոպոսին։

*Հիշեցում.* Դուք կարող եք օգտագործել այս գաղափարը դասի ընթացքում, երբ ներկայացնեք սուրբ գրության սերտման հատվածը, կամ կարող եք օգտագործել այն դասի վերջում։

# Տնային ուսումնասիրության դաս

## Ալմա 25–32 (Մաս 18)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Հետևյալ վարդապետությունների և սկզբունքների համառոտ բովանդակությունը, որոնք ուսանողները սովորեցին, երբ նրանք ուսումնասիրում էին Ալմա 25–32գլուխները (մաս 18), չի նախատեսվում ուսուցանվել որպես ձեր դասի մաս: Դասը, որը դուք ուսուցանում եք, կենտրոնացած է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, որպեսզի հաշվի առնեք ուսանողների կարիքները:

### Օր 1 (Ալմա 25–29)

Ուսանողները սովորեցին հետևյալ սկզբունքները, երբ նրանք ուսումնասիրեցին այն ուրախության մասին, որ Ամմոնն ու նրա եղբայրները զգացին ավետարանը քարոզելիս ունեցած հաջողության համար. Երբ մենք խոնարհեցնում ենք մեզ, Տերը զորացնում է մեզ և օգտագործում մեզ որպես գործիք Իր ձեռքում, մենք ուրախություն ենք զգում, երբ մենք հավատարմորեն ծառայում ենք Տիրոջը և Նրա զավակներին: Երբ Լամանացիները դարձի եկան դեպի ավետարանը և հրաժարվեցին զենքեր վերցնել, ուսանողները սովորեցին, որ երբ մենք լիովին դարձի ենք գալիս դեպի Տերը, մենք պահում ենք ուխտերը, որոնք մենք արել ենք Նրա հետ: Ալմայի օրինակից ելնելով, ուսանողներն ընդունում են, որ մենք ուրախություն կզգանք, երբ մենք օգնենք ուրիշներին ապաշխարել և գալ դեպի Հիսուս Քրիստոս:

### Օր 2 (Ալմա 30)

Կարդալով Կորիհորի՝ հակաքրիստոսի ուսմունքների մասին, ուսանողները սովորեցին, որ սատանան օգտագործում է կեղծ վարդապետություններ՝ մեզ գայթակղելու մեղք գործել: Ալման պատասխանեց Կորիհորի ուսմունքներին, հայտարարելով, որ բոլոր բաները վկայում են, որ Աստծված Գերագույն Արարիչն է: Կարդալուց հետո, որ Կորիհորը ոտնակոխ արվեց ի մահ, ուսանողները հասկացան Մորմոնի արձանագրած սկզբունքը. «Եվ այսպես, մենք տեսնում ենք վերջը նրա, ով խեղաթյուրում է Տիրոջ ուղիները, և այսպես, մենք տեսնում ենք, որ դևը չի աջակցի իր զավակներին վերջին օրը» (Ալմա 30.60):

### Օր 3 (Ալմա 31)

Երբ ուսանողները կարդացին Զորամացիներին ուխտադրժությունից դարձի բերելու Ալմայի մտադրության մասին, նրանք սովորեցին հետևյալ սկզբունքները. Երբ մենք ուսումնասիրենք Աստծո խոսքը, այն մեզ կառաջնորդի անել այն, ինչը ճիշտ է: Աղոթելու և պատվիրանները պահելու ամենօրյա ջանքերն ամրացնում են մեզ գայթակղության դեմ: Եթե աղոթում ենք և գործում հավատքով, ապա մենք կստանանք աստվածային օգնություն մեր փորձություններում:

### Օր 4 (Ալմա 32)

Երբ ուսանողները կարդացին աղքատ Զորամացիների մեջ Ալմայի քարոզելու հաջողության մասին, նրանք սովորեցին, որ համեստությունը պատրաստում է մեզ ստանալ Աստծո խոսքը: Ալման համեմատեց հավատք գործադրելը սերմ ցանելու և այն սնուցելու հետ: Ուսանողները սովորեցին, որ երբ մենք ջանասիրաբար մեր սրտերում սնուցում ենք մեր հավատքը Աստծո խոսքի, Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հանդեպ, մեր հավատքը և մեր վկայությունը աճում են:

## Նախաբան

Սկսեք այս դասը մի միջոցառմամբ՝ օգնելու ուսանողներին ձգտել գործիքներ լինել Աստծո ձեռքում: Սակայն դասի մեծ մասը կկենտրոնանա կեղծ գաղափարների հավատալու և դրանց հիման վրա գործելու հատևանքների վրա՝ ի հակադրություն հավատալուն և Աստծո խոսքի հիման վրա գործելուն, ինչպես լուսաբանվում է Ալմա 30–32-ում:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 25–29

*Ամմոնը և Մոսիայի որդիները փառաբանում են Տիրոջը, երբ շատ Լամանացիներ դարձի են գալիս դեպի ավետարանը:*

Ինչպես գրված է Ալմա 26-ում, Ամմոնը և նրա եղբայրներն ուրախանում էին Աստծո աշխատանքում իրենց հաջողությամբ: Հանձնարարեք ուսանողներին կարդալ Ալմա 26.1–4, 11–13 և որոնել, թե Ամմոնը և նրա եղբայրները ի՞նչ իրականացրեցին և ինչպե՞ս կարողացան իրականացնել այն: Հիշեցրեք ուսանողներին, որ այս հատվածներն ուսուցանում են հետևյալ սկզբունքը. **Երբ մենք խոնարհեցնում ենք մեզ, Տերը զորացնում է մեզ և օգտագործում մեզ որպես գործիքներ Իր ձեռքերում:**

## Ալմա 30

*Կորիհորը ծաղրում է Քրիստոսի վարդապետությունը*

Դասարանին ցույց տվեք մի սերմ: Խնդրեք նրանց սերմից դուրս եկող այն բաների օրինակներ թվել, որոնք իրենք սիրում են: Ի հակադրություն որոշ բույսերի, մրգերի և բանջարեղենների, որոնք կարող է նշեն ուսանողները, մատնանշեք, որ հնարավոր է , որ որևէ սերմ աճի և դառնա բույս, որն առաջ կարող է բերել դառը կամ նույնիսկ թունավոր պտուղ, կամ որը կարող է խեղդել այլ լավ բույսերի:

Գրատախտակին գրեք *գաղափար* և *հավատք* բառերը և հարցրեք. Ինչպե՞ս կարող է որևէ գաղափար կամ հավատալիք նման լինել սերմի:

Բացատրեք, որ երբ այսօր դասարանում ուսանողներն ուսումնասիրեն և քննարկեն Ալմա 30–32 գլուխները, նրանք կհակադրեն կեղծ գաղափարներին հետևելու հետևանքները Աստծո խոսքին հետևելու հետևանքներին:

Հարցրեք ուսանողներին, թե ո՞վ էր Կորիհորը: Հրավիրեք նրանց կարդալ Ալմա 30.12–18, 23 և մատնանշեք այն կեղծ գաղափարները, որոնք ուսուցանում էր Կորիհորը: Կարդալու համար ժամանակ տրամադրելուց հետո, հրավիրեք նրանց գրի առնել գրատախտակին կամ մի կտոր թղթի վրա Կորիհորի կեղծ գաղափարներից երկուսը կամ երեքը, որոնք, նրանց կարծիքով, կարող են հատկապես վտանգավոր լինել ինչ որ մեկի կրոնական հավատալիքների համար: Ապա տվեք հետևյալ հարցերը.

- Որո՞նք են այն գործողությունները, որոնց կարող են տանել այս գաղափարները:(Երբ ուսանողները պատասխանեն, մատնանշեք, որ գաղափարը, որը տանում է դեպի գործողություն, նման է սերմի, որն աճում է, դառնալով բույս:)
- Համաձայն Ալմա 30.18-ի, ի՞նչ գործողությունների առաջնորդեցին մարդկանց Կորիհորի ուսմունքները: (Երբ ուսանողները պատասխանեն, շեշտեք, որ **սատանան օգտագործում է կեղծ գաղափարներ՝ հրապուրելու մեզ մեղք գործել:** )

Հրավիրեք որևէ ուսանողի ամփոփել, թե ինչ պատահեց Կորիհորի հետ: (Եթե ուսանողներն օգնության կարիք ունեն, հրավիրեք նրանց օգտագործել Ալմա 30-ի գլխի ենթավերնագիրը կամ կարդալ Ալմա 30.52–53, 59–60 հատվածները:)

## Ալմա 31

*Ալման առաջնորդում է միսիան՝ դարձի բերելու ուխտադրուժ Զորամացիներին:*

Հիշեցրեք ուսանողներին, որ Զորամացիները հավատում էին կեղծ գաղափարների և ընկել էին կեղծ կամ ուխտադրուժ գործերի մեջ: Մենք սովորում ենք Ալմա 31.5-ում, որ **երբ ուսումնասիրում ենք Աստծո խոսքը, այն առաջնորդում է մեզ անելու այն, ինչը ճիշտ է:**

## Ալմա 32

*Ալման ուսուցանում է Զորամացիների աղքատներին, թե ինչպես գործադրեն հավատք:*

Հիշեցրեք ուսանողներին, որ չնայած Զորամացիներից շատերը հրաժարվեցին ընդունել Աստծո խոսքը, Ալման սկսեց հաջողություն ունենալ աղքատների մեջ: Նա ուսուցանեց նրանց, թե ինչպես գործադրեին հավատք: Հանձնարարեք ուսանողներին վերանայել Ալմա 32.21, որը սուրբ գրության սերտման հատվածը է: Խնդրեք նրանց բացատրել, թե ինչ է այս հատվածն ուսուցանում հավատքի մասին:

Հիշեցրեք ուսանողներին, որ Ալման օգտագործեց սերմը ուսուցանելու համար հավատքի զարգացման գործընթացը: Ապա տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ արտահայտություններ են Ալմա 32.28 հատվածում ցույց տալիս, որ սերմը կամ՝ այս դեպքում Աստծո խոսքը, բարի է:
- Ի՞նչ ազդեցություն է ունենում Աստծո խոսքը մեզ վրա, երբ մենք թույլ ենք տալիս, որ այն սերմանվի մեր սրտերում:

Ասացեք ուսանողներին, որ Ալման հորդորում էր Զորամացիներին փորձարկել խոսքը, կամ սերմանել այն իրենց սրտերում՝ հավատալով դրան և դրա վրա հիմնվելով գործել: Հրավիրեք նրանց կարդալ Ալմա 33.22–23 , փնտրելով առանձնապես այն «խոսքը», որն Ալման էր ցանկանում, որպեսզի մարդիկ սերմանեին իրենց սրտերում: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին գրել այս հատվածները որպես խաչաձև հղում Ալմա 32.28 հատվածի կողքին:

Հանձնարարեք ուսանողներին կարդալ Ալմա 32.28–29, 31, 37, 41–43 հատվածները, որոնելով այն վարձքերը, որոնք մենք ստանում ենք հավատալուց և Աստծո խոսքի հիման վրա գործելուց: Երբ ուսանողները պատասխանեն, հատևեք, որ հետևյալ սկզբունքը պարզ լինի.**Եթե մենք ջանասիրաբար սնուցենք մեր հավատքը Աստծո խոսքի հանդեպ մեր սրտերում, մեր հավատքը և մեր վկայությունը Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հանդեպ կաճի:**

Այս դասը եզրափակելու համար հրավիրեք ուսանողներին կիսվել 4-րդ դասի 4-րդ հանձնարարության վերաբերյալ իրենց պատասխաններով իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում՝ այն արդյունքների մասին, երբ նրանք հետևել են Ալմայի փորձարկմանը, որն Ալման նկարագրել է Ալմա 32 գլխում:

## Հաջորդ Մաս (Ալմա 33–38)

Ո՞րն է ապաշխարությունը հետաձգելու վտանգը: Ամուլեկը պատասխանում է այս հարցին և տալիս նախազգուշացում: Ալման նաև խորհուրդ է տալիս իր որդիներից երկուսին, երբ նա մոտենում է իր կյանքի ավարտին: Նա տալիս է մանրամասներ իր դարձի մասին, երբ մի մարդուց, որը պայքարում էր Աստծո դեմ, դարձավ այն մարդը, որը պայքարում էր հանուն Աստծո, և իր զգացմունքների մասին, երբ ազատվեց իր մեղքերի համար հանցանքի ու ցավի զգացումից:

ԴԱՍ 91

# Ալմա 33

## Նախաբան

Մի խումբ զորամացիներ ցանկանում էին իմանալ, թե ինչպես հետևել Տիրոջ խոսքը իրենց սրտերում ցանելու և հավատք գործադրելու Ալմայի խորհրդին: Սուրբ գրություններն օգտագործելով՝ Ալման սովորեցրեց մարդկանց երկրպագության, աղոթքի և ողորմության մասին, որը մենք կարող ենք ստանալ Աստծուց՝ Քրիստոսի շնորհիվ: Նա քաջալերեց մարդկանց նայել Հիսուս Քրիստոսին և հավատալ Նրա Քավության զորությանը:

*Նշում.* 94-րդ դասը երեք ուսանողների ուսուցանելու հնարավորություն է տալիս: Դուք կարող եք այժմ ընտրել երեք ուսանողների և տալ նրանց 94-րդ դասի որոշված հատվածների օրինակները, որպեսզի նրանք կարողանան պատրաստվել: Խրախուսեք նրանց աղոթքով ուսումնասիրել դասի նյութը և փնտրել Սուրբ Հոգու առաջնորդությունը, որպեսզի նրանք իմանան, թե ինչպես հարմարեցնեն դասը իրենց դասարանցիների կարիքներին:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 33

*Ալման սովորեցնում է զորամացիներին սկսել հավատալ Հիսուս Քրիստոսին*

Գրատախտակին գրեք *գործադրել*:

- Ի՞նչ է նշանակում գործադրել ինչ-որ բան: (Երբ ուսանողները պատասխանեն այս հարցին, դուք կարող եք խնդրել մի ուսանողի ցուցադրել, թե ինչպես գործադրել իր ձեռքերը, միգուցե հրումներ կատարելու միջոցով, կամ իր ոտքերը, միգուցե տեղում վազելու միջոցով:)

Ուսանողները թող մտքում կարդան Ալմա 33.1, ներկայացնելով գործադրումը, որը զորամացիները ցանկանում էին հասկանալ: Այն բանից հետո, երբ ուսանողները կզեկուցեն այն, ինչ իրենք գտել են, գրատախտակին գրեք հետևյալ հարցը. *Ինչպե՞ս ենք մենք հավատք գործադրում:* Հրավիրեք ուսանողներին փնտրել այս հարցի ամենաքիչը երեք պատասխանները, երբ նրանք ուսումնասիրեն և քննարկեն Ալմա 33–ը:

Բացատրեք, որ երբ Ալման սկսեց պատասխանել զորամացիների այն հարցին, թե ինչպես հավատք գործադրել, նա ուղղեց երկրպագության մասին նրանց ունեցած սխալ գաղափարը: Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 33.2: Խնդրեք դասարանին ներկայացնել Աստծուն երկրպագելու վերաբերյալ զորամացիների սխալ գաղափարը:

- Ինչո՞ւ էին այս զորամացիները կարծում, որ իրենք չէին կարող երկրպագել Աստծուն: (Քանի որ նրանց թույլ չէին տալիս մտնել իրենց ժողովարանները:)

Խնդրեք ուսանողներին ամփոփել, թե ինչ էին իրենք սովորել Ալմա 31-ում զորամացիների երկրպագության ձևի մասին: (Տես Ալմա 31.22–23: Զորամացիները շաբաթը մեկ անգամ ժողովարանում նույն աղոթքն էին ասում, և նրանք այլևս չէին խոսում Աստծո մասին շաբաթվա մնացած օրերի ընթացքում:)

- Ինչո՞ւ է Եկեղեցի հաճախելը մեր երկրպագության կարևոր մասը հանդիսանում: Ի՞նչ այլ եղանակներով մենք կարող ենք երկրպագել Աստծուն՝ ի լրացումն Եկեղեցու մեր ամենշաբաթյա ժողովների:

Բացատրեք, որ Ալման մեջբերեց Զենոս անունով մարգարեի ուսմունքները, որպեսզի ուղղեր Աստծուն երկրպագելու վերաբերյալ զորամացիների սխալ կարծիքները: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 33.3, փնտրելով այն բառը, որն Ալման հավասարապես օգտագործում էր *երկրպագություն* բառի հետ: (Դա *աղոթք* բառն է:)

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 33.4–10, ներկայացնելով յուրաքանչյուր իրավիճակը, որում Զենոսն ասում էր, որ աղոթել է:

- Ե՞րբ և որտե՞ղ էր Զենոսն աղոթում:

- Ի՞նչ էր Ալման սովորեցնում երկրպագության մասին, երբ մեջբերում էր Զենոսի խոսքերը: (Օգնեք ուսանողներին ներկայացնել հետևյալ ճշմարտությունը. **Մենք կարող ենք միշտ երկրպագել Աստծուն աղոթքի միջոցով:**)

Անդրադարձեք գրատախտակին գրված հարցին. *Ինչպե՞ս ենք մենք հավատք գործադրում:* Այդ հարցի տակ գրեք *Միշտ աղոթել:*

- Ի՞նչ եղանակներով է աղոթքն առ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը հավատքի գործադրում հանդիսանում:
- Ե՞րբ եք դուք աղոթել այնպիսի իրավիճակներում, ինչպիսին նշել է Զենոսը: Ինչպե՞ս է պատասխանվել ձեր աղոթքը: (Հիշեցրեք ուսանողներին, որ նրանք չպետք է կիսվեն խիստ անձնական կամ գաղտնի փորձառություններով:)

Հրավիրեք ուսանողներին լուռ վերանայել Ալմա 33.4–5, 8–9: Խնդրեք նրանց փնտրել արտահայտություններ, որոնք նշում են Աստծո ողորմությունը (ինչպես օրինակ՝ «դու ողորմած ես» և «դու ողորմած էիր»:)

Որպեսզի օգնեք ուսանողներին տեսնել Հիսուս Քրիստոսի Քավության և Երկնային Հոր ողորմության միջև եղած կապը, հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 33.11–16: Խնդրեք դասարանին հետևել և փնտրել արտահայտություն, որը չորս անգամ հանդիպում է այս հատվածներում: (Դա՝ «քո որդու շնորհիվ էր» արտահայտությունն է: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին նշել այս արտահայտությունը:)

***Գտնել կրկնվող բառերը և արտահայտությունները***

Մարգարեները հաճախ ճշմարտությունները ներկայացնում են կրկնության միջոցով: Երբ ուսանողները գտնեն կրկնվող բառեր, արտահայտություններ և մտքեր, խնդրեք նրանց խորհել, թե ինչ ճշմարտություն է հեղինակը ուսուցանում, և թե ինչու է կարևոր այն հասկանալը:

- Զեր կարծիքով, ինչ ի նկատի ուներ Զենոսը, երբ նա ասաց. «Դու մեկդի ես դարձրել քո դատաստաններն ինձանից, քո Որդու շնորհիվ»: (Օգնեք ուսանողներին ներկայացնել հետևյալ ճշմարտությունը. **Մենք ստանում ենք Երկնային Հոր ողորմածությունը, ներառյալ մեր մեղքերի թողությունը, Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ:** Դուք կարող եք հրավիրել ուսանողներին գրել այս ճշմարտությունը իրենց սուրբ գրություններում Ալմա 33.11–16–ի կողքին:)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ ողորմածությունը, որը մենք կարող ենք ստանալ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ, կիսվեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի կողմից մեջբերած հետևյալ պատմությամբ.

«Ուսուցիչն ասաց. «Բարի առավոտ, տղաներ, մենք պետք է ղեկավարենք դպրոցը:» Նրանք աղաղակեցին և զվարճալի ձայներ արձակեցին: «Այժմ, ես ուզում եմ լավ դպրոց, սակայն խոստովանում եմ, որ չգիտեմ, թե ինչպես դրան հասնել առանց ձեր օգնության: Եկեք պատկերացնենք, որ մենք ունենք մի քանի օրենքներ: Դուք ասեք ինձ, և ես կգրեմ դրանք գրատախտակին»:

Պատանիներից մեկը բացականչեց. «Զգողանալ»: Մեկ ուրիշը բացականչեց. «Զուշանալ»: Ի վերջո, գրատախտակին հայտնվեցին տասը կանոններ:

«Այժմ,- ասաց ուսուցիչը,- օրենքն առանց պատժի ոչ մի ուժ չունի: Ի՞նչ պետք է մենք անենք այն անձի հետ, ով խախտում է կանոնները»:

«Տասը հարված հասցնել նրա մեջքին՝ առանց վերարկուի», - եղավ դասարանի պատասխանը:

«Դա բավականին խիստ է, տղաներ: Դուք վստա՞հ եք, որ պատրաստ եք տանել դա»: Մեկ ուրիշը բացականչեց. «Ես համամիտ եմ այս առաջարկի հետ», և ուսուցիչն ասաց. «Շատ լավ, մենք կկիրառենք դրանք: Դասարան, զգաստ»:

Մի քանի օր անց «Մեծ Թոմը» նկատեց, որ իր ուտելիքը գողացել են: Գողին գտել էին. մոտավորապես տասը տարեկան փոքրիկ, սոված մի պատանի: «Մենք գտել ենք գողին և նա պետք է պատժվի համաձայն ձեր օրենքի՝ տասը հարված մեջքին: Ջիմ, արի այստեղ», - ասաց ուսուցիչը:

Փոքրիկ տղան դողալով դանդաղ մոտեցավ՝ մինչև վերջ կոճկված մեծ վերարկուն հագին և աղերսեց. «Ուսուցիչ, դուք կարող եք խստագույնս պատժել ինձ, սակայն, խնդրում եմ, մի հանեք իմ վերարկուն»: [*Նշում.* Դուք պետք է բացատրեք, որ այս պատմության մեջ *պատժել* բառը նշանակում է հարվածել ինչ-որ մեկին:]

«Հանիր վերարկուդ»,- ասաց ուսուցիչը: «Դու օգնում էիր կանոնները սահմանելիս»:

«Օհ, ուսուցիչ, ինձ մի ստիպեք»: Նա սկսեց արձակել կոճակները, և ի՞նչ տեսավ ուսուցիչը: Տղայի հագին վերնաշապիկ չկար, և ի ցույց դրվեց նրա ոսկրոտ փոքրիկ հյուծված մարմինը:

«Ինչպե՞ս ես կարող եմ մտրակել այս երեխային», - մտածեց նա: «Սակայն ես պետք է դա անեմ, ես պետք է ինչ-որ բան անեմ, եթե ուզում եմ պահել այս դպրոցը»: Քար լռություն էր տիրում:

«Ինչո՞ւ ես առանց վերնաշապիկի, Ջիմ»:

Նա պատասխանեց. «Իմ հայրը մահացել է, իսկ մայրս շատ աղքատ է: Ես ունեմ միայն մեկ վերնաշապիկ և նա լվանում է այն այսօր, և ես կրում եմ իմ եղբոր մեծ վերարկուն, որ այն ինձ տաքացնի»:

Ուսուցիչը, ճիպոտը ձեռքին, վարանեց: Հենց այդ պահին «Մեծ Թոմը» ցատկեց նրա ոտքերի մոտ և ասաց. «Ուսուցիչ, եթե թույլ տաք, ես ինձ վրա կվերցնեմ Ջիմի պատիժը»:

«Շատ լավ, կա որոշակի օրենք, որ մեկը կարող է փոխարինել մյուսին: Դուք բոլորդ համաձա՞յն եք»:

Թոմը հանեց վերարկուն, և հինգ հարվածից հետո ճիպոտը կոտրվեց: Ուսուցիչը ձեռքերի մեջ առավ գլուխը և մտածեց. «Ինչպե՞ս ես կարող եմ ավարտին հասցնել այս սարսափելի առաջադրանքը»: Ապա նա լսեց դասարանի հեծկլտոցը, և ի՞նչ նա տեսավ: Փոքրիկ Ջիմը մոտեցել էր և երկու ձեռքով գրկել էր Թոմին. «Թոմ, կներես, որ գողացա քո կերակուրը, պարզապես ես շատ քաղցած էի: Թոմ, ես մինչև մահ կսիրեմ քեզ՝ իմ պատիժը քեզ վրա վերցնելու համար: Այո, ես միշտ կսիրեմ քեզ»: [Անհայտ հեղինակ:]

Այս պատմությունը մեջբերելուց հետո Նախագահ Հինքլին ասաց. «Այս պատմվածքից մի արտահայտություն ընդգծելով ասեմ, որ Հիսուսը՝ իմ Փրկիչը, «իմ փոխարեն կրեց իմ պատիժը» և ձերը՝ ձեր փոխարեն» (“The Wondrous and True Story of Christmas,” *Ensign,* Dec. 2000, 4):

- Ի՞նչ առնչություն ունի այս պատմվածքը Փրկչի Քավության վերաբերյալ Ալմայի ուսմունքների հետ: (Անհրաժեշտության դեպքում բացատրեք, որ կամավոր կերպով «Ջիմի պատիժը կրելու» Թոմի արարքը ներկայացնում է Քավությունը: Փրկիչն Իր վրա է վերցրել մեր մեղքերի պատիժը, որպեսզի մենք ստիպված չլինենք կրել այդ պատիժը, եթե ապաշխարենք:)

Բացատրեք, որ Զենոսի խոսքերը մեջբերելուց հետո, Ալման մեջբերեց Զենոքի՝ մեկ այլ մարգարեի խոսքերը: Ուսանողների համար բարձրաձայն կարդացեք Ալմա 33.15–16: Ընդգծեք Երկնային Հոր դժգոհությունը, երբ մարդիկ հրաժարվում են հասկանալ այն, ինչ Իր Որդին արել է նրանց համար:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 33.12–14, փնտրելով այն աղբյուրը, որն Ալման օգտագործել է, երբ նա կիսվել է այս ուսմունքներով:

- Ինչո՞ւ էր Ալման ծանոթ Զենոսի և Զենոքի խոսքերին: (Քանի որ խոսքերը սուրբ գրություններում էին: Դուք կարող եք նշել, որ Ալմայի խոսքերը 12 և 14 հատվածներում հուշում են, որ զորամացիները նույնպես ունեին այս սուրբ գրությունները: Նշեք, որ **սուրբ գրությունները վկայում են Հիսուս Քրիստոսի մասին:**)

Գրատախտակին գրված նախադասության ներքո գրեք *Ուսումնասիրեք և հավատացեք սուրբ գրություններին:*

Նշեք, որ Ալման անդրադարձավ մեկ այլ սուրբ գրության, որպեսզի օգներ զորամացիներին հավատալ Հիսուս Քրիստոսին: Ցուցադրեք Մովսեսը և պղնձե օձը նկարը (62202; *Gospel Art Book* [2009], no. 16): Ամփոփեք այս պատմությունը, բացատրելով, որ երբ Մովսեսն անապատում առջնորդում էր իսրայելացիներին, շատ մարդիկ սկսեցին ապստամբել նրա և Տիրոջ դեմ: Ի պատասխան այս անհնազանդությանը, Տերն ուղարկեց թունավոր օձերի, որոնք կծում էին մարդկանց: Մարդիկ գնացին Մովսեսի մոտ օգնության համար: Մովսեսն աղոթեց և հրահանգ ստացավ օձ պատրաստել ձողի վրա, որ մարդիկ նայեն դրան: Նա հնազանդվեց՝ պղնձից օձ պատրաստելով: (Տես Թվոց ԻԱ.4–9:) Ուսանողներից մեկը թող բարձրաձայն կարդա Ալմա 33.19–20: Հրավիրեք դասարանին ներկայացնել, թե ինչ պատահեց նրանց հետ, ովքեր նայեցին պղնձե օձին, և ինչ պատահեց նրանց հետ, ովքեր ընտրեցին չնայել:

- Համաձայն Ալմա 33.20-ի, ինչո՞ւ շատերն ընտրեցին չնայել:

Խնդրեք ուսանողներին խորհել, թե արդյոք իրենք կընտրեին նայել, եթե լինեին այդ իրավիճակում:

Ցուցադրեք Խաչելությունը նկարը (62505; *Gospel Art Book,* no. 57): Բացատրեք, որ պղնձե օձը ձողի վրա «նախատիպ» էր (Ալմա 33.19): Այլ կերպ ասած, դա ինչ-որ մի

բանի խորհրդանիշ էր, որը տեղի էր ունենալու ապագայում: Այն ներկայացնում էր Հիսուս Քրիստոսին խաչի վրա (տես Հովհաննես Գ.14):

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 33.21–23, փնտրելով, թե ինչպես Ալման նմանեցրեց այս պատմությունը զորամացիներին: Այն բանից հետո, երբ ուսանողները կզեկուցեն իրենց գտածը, կրկին անդրադարձեք գրատախտակի նախադասությանը. *Ինչպե՞ս մենք կարող ենք հավատք գործադրել:*

- Ի՞նչ կարող է ուսուցանել իսրայելացիների և պղնձե օձի պատմությունն այն մասին, թե ինչ պետք է մենք անենք, որպեսզի բժշկվենք հոգևորապես:
- Ինչպե՞ս է Ալմա 33.22–23–ը պատասխանում այս հարցին: (Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալ ճշմարտությունը. **Մենք հավատք ենք գործադրում, ընտրելով հավատալ Հիսուս Քրիստոսին և Նրա Քավությանը:**)

Գրատախտակին գրված հարցի ներքո գրեք *Հավատացեք Հիսուս Քրիստոսին և Նրա Քավությանը:*

- Ի՞նչ արարքներ կամ վերաբերմունք եք դուք նկատում այն մարդկանց մոտ, ովքեր հավատում են Փրկչի Քավությանը:

Ընդգծելու համար, որ հավատքն առ Հիսուս Քրիստոսը մեր կատարած ընտրությունն է, ուղղեք ուսանողների ուշադրությունը Ալմա 33.23–ի հետևյալ արտահայտության վրա. «Եվ, հիրավի, այս բոլորը դուք կարող եք անել, եթե կամենաք»: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին նշել այս արտահայտությունը:

Գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունը և խրախուսեք ուսանողներին գրել այն իրենց սուրբ գրություններում:(Նախադասությունը գտնվում է հետևյալ ելույթում. “Inquire of the Lord” [address to CES religious educators, Feb. 2, 2001], 1, si.lds.org:)

> *«Յուրաքանչյուր սերնդի յուրաքանչյուր զավակ ընտրում է հավատք կամ անհավատություն: Հավատքը ժառանգություն չէ. դա ընտրություն է» (Նախագահ Հենրի Բ. Այրինգ):*

Խնդրեք ուսանողներին պատասխանել հետևյալ հարցերից մեկին նոթատետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: (Դուք կարող եք այս նախադասությունները գրել գրատախտակին նախքան դասը, նախապատրաստել տպված թերթիկներ այդ հարցերով կամ դանդաղ կարդալ հարցերը, որպեսզի ուսանողները կարողանան գրել:)

- Փրկչին հավատալու ձեր ընտրությունն ինչպե՞ս է ազդել ձեր ամենօրյա կյանքի վրա:
- Ինչպե՞ս է սուրբ գրությունների անհատական ուսումնասիրությունն ամրացրել ձեր հավատքն առ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը:
- Ինչպե՞ս է ամենօրյա անձնական աղոթքը և երկրպագությունն ամրացրել ձեր հավատքն առ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը:
- Ձեր կարծիքով, Երկնային Հայրն ի՞նչ կկամենար, որ դուք անեք, որ գործադրեք ավելի մեծ հավատք:

Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց պատասխաններով: Վկայեք Փրկչին հավատալն ընտրելու կարևորության մասին:

ԴԱՍ 92

# Ալմա 34–35

## Նախաբան

Այն բանից հետո, երբ Ալման սովորեցրեց զորամացիներին հավատալ Աստծո Որդուն, Ամուղեկը հայտարարեց իր իսկ վկայությունը Հիսուս Քրիստոսի մասին՝ հանդիսանալով որպես երկրորդ վկա: Ամուղեկը՝ Ալմայի զուգընկերը, նշեց, որ Հիսուս Քրիստոսի Քավությունն անհրաժեշտ է բոլոր մարդկանց փրկության համար և որ անհատները կարող են ստանալ Քավության բոլոր օրհնությունները, երբ նրանք հավատք գործադրեն ապաշխարության համար: Շատ զորամացիներ ականջ դրեցին ապաշխարելու Ամուղեկի հրավերին: Երբ ապաշխարած զորամացիները դուրս գցվեցին երկրից իրենց ամբարիշտ ղեկավարների և քահանաների կողմից, Նեփիացիները և Ամմոնի ժողովուրդը նրանց ուտելիք, հագուստ և իրենց ժառանգության համար հողեր տվեցին: Արդյունքում լամանացիները և չապաշխարած զորամացիները սկսեցին պատերազմի պատրաստություններ տեսնել Նեփիացիների և Ամմոնի ժողովրդի դեմ:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 34.1–14

*Ամուղեկը զորամացիներին սովորեցնում է Հիսուս Քրիստոսի Քավության մասին*

Նախքան դասը սկսվելը հետևյալ նախադասությունները գրեք գրատախտակին: Խնդրեք ուսանողներին գրել նոթատետրերում կամ թերթիկների վրա, թե, իրենց կարծիքով, յուրաքանչյուր նախադասությունը ճիշտ է, թե՝ սխալ:

1. *Երբ Հիսուս Քրիստոսը քավեց մարդկության մեղքերը, Նա տառապեց միայն արդար մարդկանց համար:*
2. *Փրկվելու համար բոլոր մարդիկ ունեն Քավության կարիքը:*
3. *Ցանկացած մարդ կարող է քավել կամ վճարել մեկ ուրիշի մեղքերի համար:*

Իրենց պատասխանները գրելու համար ուսանողներին ժամանակ տրամադրելուց հետո հիշեցրեք նրանց, որ Ալման սովորեցրեց մի խումբ զորամացիների, թե ինչպես ստանալ Աստծո խոսքը և հավատք գործադրել առ Հիսուս Քրիստոս (տես Ալմա 32–33): Ամփոփեք Ալմա 34.1–7, բացատրելով, որ Ամուղեկը հետևեց Ալմային, կիսվելով Փրկչի մասին իր սեփական վկայությամբ: Խնդրեք ուսանողներին լուռ ուսումնասիրել Ամուղեկի ուսմունքները Ալմա 34.8–9, 11-ում, ուշադրություն դարձնելով այն արտահայտություններին, որոնք ցույց են տալիս, թե արդյոք գրատախտակի նախադասություններից յուրաքանչյուրը ճիշտ է, թե՝ սխալ: Ապա դասարանով վերանայեք նախադասությունները: Պատասխաններն են.

1. Սխալ. «Նա պիտի քավի աշխարհի մեղքերը» (Ալմա 34.8):
2. Ճիշտ. «Պետք է մի քավություն արվի, այլապես, ողջ մարդկությունն անխուսափելիորեն պիտի կորչի» (Ալմա 34.9):
3. Սխալ. «Չկա որևէ մարդ, որ կարողանա զոհաբերել իր սեփական արյունը, որը կքավի մեկ ուրիշի մեղքերը» (Ալմա 34.11):

Այն բանից հետո, երբ ուսանողները կքննարկեն 3-րդ նախադասության պատասխանը, հարցրեք.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսը միակը, ով կարող էր քավել աշխարհի մեղքերը:

Որպեսզի օգնեք ուսանողներին պատասխանել այս հարցին, հրավիրեք նրանց մտքում կարդալ Ալմա 34.10, 14: Ապա կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը.

«Նրա Քավությունն անսահման է՝ առանց վերջի: Այն անսահման է նրանում, որ ողջ մարդկությունը կարողանար փրկվել երբեք չավարտվող մահից: Այն անսահման էր Իր վիթխարի տառապանքի առումով: . . . Այն անսահման հնարավորություն էր. այն պետք է կատարվեր մեկ

***Ուսուցանեք Հոգով և վկայեք Հիսուս Քրիստոսի մասին***

Արեք ամեն բան, ինչ կարող եք, որ ստեղծեք այնպիսի մթնոլորտ, որում ուսանողները կկարողանան ուսուցանվել Սուրբ Հոգով: Նման մթնոլորտ ստեղծելու ամենահիմնական գործոններից են՝ ձեր օրինակները և քննարկումները Փրկչի վրա կենտրոնացնելը, Նրա մասին հաճախակի վկայելը և Նրա մասին վկայելու համար ուսանողներին հնարավորություններ տալը:

անգամ՝ բոլորի համար: Եվ Քավության ողոմությունը հասանելի էր ոչ միայն անսահման թվով մարդկանց, այլ նաև Նրա կողմից ստեղծված անսահման թվով աշխարհներին: Այն անսահման էր ցանկացած մարդկային չափման միավորից կամ մահկանացու հասկացողությունից առավել:

Հիսուսը միակն էր, ով կարող էր առաջարկել այսպիսի անսահման քավություն, քանի որ Նա ծնվել էր մահկանացու մորից և անմահ Հորից: Այդ եզակի իրավունքի շնորհիվ Հիսուսն անսահման Էակ էր» (“The Atonement,” *Ensign,* Nov. 1996, 35):

«Համաձայն հավիտենական օրենքի, այդ քավությունը պահանջում էր անձնական զոհաբերություն անմահ մի էակի կողմից, ով ենթակա չէր մահվան: Սակայն Նա պետք է մահանար և կրկին ետ վերցներ Իր իսկ մարմինը: Փրկիչը միակն էր, ով կարող էր իրագործել սա: Իր մորից Նա ժառանգել էր մահանալու զորությունը: Իր Հորից Նա զորություն էր ստացել մահվան վրա» (“Constancy amid Change,” *Ensign,* Nov. 1993, 34):

- Ինչպե՞ս են Ամուղեկի ուսմունքները և Երեց Նելսոնի խոսքերն օգնում մեզ հասկանալ, թե ինչու էր Հիսուս Քրիստոսը միակը, ով կարող էր քավել աշխարհի մեղքերը:
- Ինչպե՞ս դուք կամփոփեք Ալմա 34–ից Հիսուս Քրիստոսի Քավության մասին մինչ այժմ սովորածը: (Ուսանողները կարող են առաջարկել այլ ճշմարտություններ, սակայն համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **Հիսուս Քրիստոսի անսահման և հավիտենական Քավությունը փրկությունը հնարավոր է դարձնում ողջ մարդկության համար:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին հետագայում գնահատել Քավության անհրաժեշտությունը Երկնային Հոր փրկության ծրագրում, խորհեք հետևյալ վարժությունն օգտագործելու մասին: Դուք կարող եք հարմարեցնել այս վարժությունը, որպեսզի այն համապատասխանի այն ուսանողների կարիքներին և հետաքրքրություններին, ում դուք ուսուցանում եք:

Գրատախտակին գրեք հետևյալ արտահայտությունը. *Պատկերացրեք կյանքն առանց. . .*

Ցուցադրեք մի առարկա, որը շատ երիտասարդներ արժևորում են (ինչպես օրինակ՝ բջջային հեռախոս), և հարցրեք.

- Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն կլիներ կյանքն առանց այս առարկայի:

Հաջորդը, ցուցադրեք ջրով մի շիշ կամ բաժակ (կամ որևէ այլ բան, որը կենսական նշանակություն ունի կյանքում):

- Ինչպիսի՞ն կլիներ կյանքն առանց ջրի:

Այն բանից հետո, երբ ուսանողները կքննարկեն ջրի անհրաժեշտությունը, լրացրեք գրատախտակի նախադասությունն այնպես, որ այն կարդացվի հետևյալ կերպ. *Պատկերացրեք կյանքն առանց Հիսուս Քրիստոսի Քավության:*

- Ինչպիսի՞ն կլիներ կյանքն առանց Հիսուս Քրիստոսի Քավության: (Ուսանողներին ժամանակ տվեք այս հարցի շուրջ մտածելու նախքան կխնդրեք նրանց պատասխանել: Եթե ժամանակը թույլ է տալիս, դուք կարող եք հրավիրել նրանց գրի առնել այս հարցի պատասխանը:)

## Ալմա 34.15–41

*Ամուղեկը սովորեցնում է զորամացիներին, թե ինչպես հավատք գործադրել ի ապաշխարություն:*

Նշեք, որ չնայած Հիսուս Քրիստոսը Քավություն կատարեց բոլոր մարդկանց համար, մենք մեխանիկորեն չենք ստանում դրա բոլոր օրհնությունները: Ամուղեկն ուսուցանեց, թե ինչ պետք է մենք անենք, որ ստանանք բոլոր օրհնությունները, որ հնարավոր են դարձվել Քավության շնորհիվ: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 34.15–17 և ներկայացրեք այն արտահայտությունը, որն Ամուղեկն ասաց չորս անգամ: («Հավատք ի ապաշխարություն»:)

- Ի՞նչ կարող ենք մենք սովորել Ալմա 34.15–17-ից այն մասին, թե ինչ պետք է մենք անենք, որ ստանանք Քավության բոլոր օրհնությունները: (Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ **Քավության բոլոր օրհնությունները ստանալու համար, մենք պետք է հավատք գործադրենք ի ապաշխարություն:**)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում հավատք գործադրել ի ապաշխարություն:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչ է նշանակում հավատք գործադրել ի ապաշխարություն, կարդացեք Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի հետևյալ խոսքերը.

«Մենք առ Քրիստոս անսասան հավատքի կարիք ունենք, որպեսզի կարողանանք ապաշխարել: . . . Առ Քրիստոս հավատքը կփոխի մեր մտքերը, համոզմունքները և արարքները, որոնք ներդաշնակ չեն Աստծո կամքին: . . . Ապաշխարություն նշանակում է մտքի ու սրտի փոփոխություն՝ մենք դադարում ենք անել այն ամենը, ինչը սխալ է, և սկսում ենք անել այն, ինչը ճիշտ է» («Ապահով վերադարձի կետ», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2007, 100):

- Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ ապաշխարությունը պահանջում է, որ մենք ոչ միայն դադարենք անել այն, ինչը սխալ է, այլ սկսենք անել բաներ, որոնք ճիշտ են:
- Համաձայն Ալմա 34.16-ի, ի՞նչ արդյունքներ են լինում, երբ մենք հավատք ենք գործադրում ի ապաշխարություն:
- Ի՞նչ է պատահում, երբ մենք հավատք չենք գործադրում ի ապաշխարություն: (Դուք կարող եք բացատրել, որ «ենթակա է արդարադատության պահանջների ամբողջ օրենքին» արտահայտությունը նշանակում է տանել մեր մեղքերի բոլոր արդյունքները և զրկվել հավերժական կյանքի օրհնություններից:)
- Համաձայն Ալմա 34.17-ի, ո՞րն է այն բաներից մեկը, որ մենք կարող ենք անել, որ հավատք գործադրենք ի ապաշխարություն:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 34.17–28: Խնդրեք նրանց փնտրել, թե զորամացիներին ինչ ուսուցանեց Ամուղեկն աղոթքի մասին, ներառյալ այն, թե երբ և ինչի համար աղոթել:

- Ի՞նչ սովորեցրեց Ամուղեկը աղոթքի մասին, որ առնչվում է ձեր կյանքի հետ: Ձեր կարծիքով, ինչո՞ւ է աղոթքը կարևոր մաս հանդիսանում ի ապաշխարություն հավատք գործադրելու համար:
- Ամուղեկն ասաց, որ մեր աղոթքները զուր կլինեն կամ օգտակար չեն լինի, եթե մենք չենք օգնում մեր շուրջը գտնվողներին (տես Ալմա 34.28): Ձեր կարծիքով, ինչո՞ւ է սա ճիշտ:

Որպեսզի օգնեք ուսանողներին խորհել լրացուցիչ եղանակների մասին, որոնց միջոցով մենք կարող ենք հավատք գործադրել ի ապաշխարություն, խնդրեք նրանց պատասխաններ գտնել հետևյալ օրինակների համար.

1. Երիտասարդ տղան ոչ պատշաճ լեզվով խոսելու սովորություն է զարգացրել: Ի՞նչ եղանակներով նա կարող է հավատք ցուցաբերել ի ապաշխարություն, որպեսզի ազատվի այս սովորությունից: (Պատասխանները կարող են ներառել օգնության համար աղոթելը, ընտանիքի անդամներից և ընկերներից օգնություն խնդրելը, և այնպիսի միջոցառումների մասնակցելը, որոնք հրավիրում են Հոգին:)
2. Երիտասարդ կանայք և երիտասարդ տղամարդիկ ներգրավվել են ոչ պատշաճ հարաբերությունների մեջ: Նրանք զգացել են, որ Սուրբ Հոգին հուշել է իրենց անհապաղ դադարեցնել այս հարաբերությունը: Ինչպե՞ս կարող է այս հուշմանը հետևելը ներկայացնել հավատք ի ապաշխարություն: Ի՞նչ այլ քայլեր նրանք կարիք կունենան կատարելու, որպեսզի ապացուցեն, որ գտնվում են լիարժեք ապաշխարության ուղու վրա: (Պատասխանները կարող են ներառել՝ եպիսկոպոսից կամ ճյուղի նախագահից օգնություն փնտրելը և ուժի և ներման համար աղոթելը:)

- Ի՞նչ է նշանակում հետաձգել: Ի՞նչ պատճառներով են մարդիկ հետաձգում:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 34.33, փնտրելով, թե ինչ Ամուղեկը նախազգուշացրեց զորամացիներին չհետաձգել: Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով կարդալ Ալմա 34.32–35: Մինչ նրանք կարդում են, թող դասարանը փնտրի մեր ապաշխարությունը հետաձգելու հետևանքները: Երբ ուսանողները զեկուցեն իրենց սովորածը, գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. ***Այս կյանքն է մեզ համար Ժամանակը, որ պատրաստվենք հանդիպել Աստծուն:***

- Ինչպե՞ս դուք ինչ-որ մեկին կբացատրեք այս ճշմարտությունը:
- Պատկերացրեք, որ դուք ունեք մի ընկեր, ով գիտակցաբար չի հնազանդվում որոշ պատվիրանների, սակայն ծրագրում է ավելի ուշ ապաշխարել: Ի՞նչ կուսուցանեք դուք այս ընկերոջը, հիմնվելով այն ամենի վրա, ինչը դուք սովորել եք Ալմա 34.32–35–ից:

Բացատրեք, որ Ամուղեկը չի նախազգուշացրել միայն ապաշխարությունը հետաձգելու հետևանքների մասին. նա նաև ուսուցանել է այժմ ապաշխարելու ուղին ընտրելու օրհնությունների մասին: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 34.30–31 և ներկայացնել այս օրհնությունները:

- Ալմա 34.31-ում ի՞նչ հավաստիացում է տրվում նրանց, ովքեր այժմ են ապաշխարում: («Փրկագնման մեծ ծրագիրն անհապաղ պիտի իրագործվի ձեզ համար»:)

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ խոսքերը.

«Դուք կարիք չունեք իմանալու ամեն բան նախքան Քավության զորությունը կգործի ձեզ համար: Հավատք ունեցեք առ Քրիստոս. այն սկսում է գործել այն օրվանից, երբ դուք խնդրում եք» (“Washed Clean,” *Ensign,* May 1997, 10):

- Ինչպե՞ս է այս հավաստիացումը հասկանալն օգնում մեզ: Ի՞նչ եղանակներով եք դուք զգացել, որ Քավությունը սկսել է գործել ձեզ համար, երբ դուք սկսել եք ձեր հույսը դնել դրա վրա:

Կարդացեք Նախագահ Հարոլդ Բ. Լիի հետևյալ խոսքերը: Խնդրեք ուսանողներին ուշադրություն դարձնել, թե ինչն էր Նախագահ Լիին անվանում «ամենակարևոր պատվիրանը»:

«Այժմ, եթե դուք սխալներ եք գործել, այսօրը դարձրեք ձեր կյանքի փոփոխության սկիզբը: Հրաժարվեք այն բանից, ինչը դուք անում էիք, որ սխալ էր: Աստծո պատվիրաններից ամենակարևորն այն մեկն է, որն այսօր ամենադժվարն է ձեզ համար պահելը: Եթե դա անազնվությունն է, եթե դա անբարոյությունն է, եթե դա կեղծավորությունն է՝ ճշմարտությունը չասելը, այսօր է ձեզ համար այն օրը, որ աշխատեք դրա վրա, մինչև դուք կարողանաք հաղթահարել այդ թուլությունը: . . . Մի կողմ դրեք այն և ապա սկսեք աշխատել հաջորդի վրա, որը դժվար է ձեզ համար պահել» (*Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* [2000], 30):

- Համաձայն Նախագահ Լիի, ո՞րն է ամենակարևոր պատվիրանը: Ինչո՞ւ:

Գրատախտակին գրեք հետևյալ անավարտ նախադասությունները: Խնդրեք ուսանողներին լրացնել դրանք նոթատետրերում կամ սուրբ գրությունների օրագրերում:

*Այսօր ինձ համար ամենակարևոր պատվիրանն է՝ . . .*

*Ես այժմ կսկսեմ հավատք գործադրել ի ապաշխարություն . . .*

## Ալմա 35

### *Ապաշխարած զորամացիները գնում են բնակվելու արդարների մեջ:*

Ամփոփեք Ալմա 35, բացատրելով, որ շատ զորամացիներ ապաշխարեցին իրենց մեղքերից: Նրանք դուրս գցվեցին երկրից իրենց ամբարիշտ ղեկավարների և քահանաների կողմից և գնացին ապրելու Երսոնի երկրում՝ Ամմոնի ժողովրդի հետ: Ամմոնի ժողովուրդը նրանց հողեր տվեց, և նեփիացիներն ուղարկեցին իրենց բանակները՝ նրանց պաշտպանելու համար:

Վկայեք, որ մենք կարող ենք ստանալ Փրկչի Քավության օրհնությունները հենց այն պահից սկսած, երբ հավատք գործադրենք ի ապաշխարություն: Խրախուսեք ուսանողներին հետևել Ամմոնի ժողովրդի և նեփիացիների օրինակին, բարյացակամ լինելով և աջակցելով նրանց, ովքեր ապաշխարություն են փնտրում:

ԴԱՍ 93

# Ալմա 36

## Նախաբան

Զորամացիների մեջ իր առաքելությունն ավարտելուց հետո Ալման խորհուրդներ տվեց իր որդիներից յուրաքանչյուրին անհատապես: Իր որդի Հելամանին տված նրա խորհուրդը գտնվում է Ալմա 36 և 37–ում: Ալման վկայեց Հելամանին, որ Աստված կազատեր նրանց, ովքեր կվստահեին Իրեն: Այս ճշմարտությունը լուսաբանելու համար Ալման նկարագրեց տարիներ առաջ իր ունեցած փորձառությունը, երբ նա ազատվել էր իր մեղքերի ցավից՝ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ: Նա նաև պատմեց ուրիշներին Քրիստոսի մոտ բերելու իր ջանքերի և ապաշխարության ուրախության իրենց սեփական փորձառությունը ունենալու մասին:

*Նշում.* Դաս 94-ը երեք ուսանողների հնարավորություն է տալիս ուսուցանել: Եթե դուք դեռևս չեք արել դա, դուք կարող եք այժմ ընտրել երեք ուսանողների և տալ նրանց դաս 94-ի որոշված հատվածների օրինակները, որպեսզի նրանք կարողանան նախապատրաստվել: Խրախուսեք նրանց աղոթքով ուսումնասիրել դասանյութը և փնտրել Սուրբ Հոգու առաջնորդությունը, որպեսզի նրանք իմանան, թե ինչպես հարմարեցնեն դասը իրենց դասընկերների կարիքներին:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 36.1–5

*Ալման ուսուցանում է Հելամանին Աստծո ազատման զորության մասին*

Խնդրեք ուսանողներին մտածել դրական եղանակների մասին, որոնցով իրենց ծնողների վկայությունը կամ որոշակի ուսմունքը ներգործել է իրենց վրա: Հրավիրեք մեկ կամ երկու ուսանողների դասարանի հետ կիսվել իրենց մտքերով:

Բացատրեք, որ գլուխներ 36–42-ը Ալմայի գրքում պարունակում են Ալմայի խորհուրդներն իր որդիներին: Գլուխներ 36–37-ը ուղղված են Հելամանին, գլուխ 38-ը ուղղված է Սիբլոնին և գլուխներ 39–42-ը ուղղված են Կորիանթոնին:

Խրախուսեք ուսանողներին պատկերացնել իրենց Հելամանի փոխարեն, երբ նա լսում էր իր հոր վկայությունը Ալմա 36.1–5–ում: Ուսանողները թող լուռ կարդան այս հատվածները, փնտրելով, թե ինչն է տպավորիչ նրանց համար Ալմայի վկայության մեջ:

- Այս հատվածներում ի՞նչն է ամենաշատը տպավորություն թողնում ձեզ վրա: Ինչո՞ւ:

### Ալմա 36.6–22

*Ալման նկարագրում է իր ապստամբությունը և բացատրում է, թե ինչպես նա ներում ստացավ*

Բացատրեք, որ որպես հետագա վկայություն Աստծո զորության մասին՝ ազատելու նրանց, ովքեր դնում են իրենց վստահությունը Նրա վրա, Ալման կիսվեց իր մեղքերի ցավից ազատված լինելու իր փորձառությամբ: Խնդրեք ուսանողներին աչքի անցկացնել Ալմա 36.6–9 և ամփոփել, թե ինչ պատահեց Ալմայի հետ, երբ նա և Մոսիայի որդիները գնացին Եկեղեցին կործանելու:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 36.10: Խնդրեք դասարանին ներկայացնել, թե որքան երկար տառապեց Ալման իր մեղքերի համար: Բացատրեք, որ Ալմա 36.11–17-ում մենք շատ ավելի մանրամասն տեղեկություններ ենք ստանում այն մասին, թե ինչ փորձառություն ունեցավ Ալման իր տառապանքի երեք օրվա և երեք գիշերվա ընթացքում, քան նրա դարձի գալու վերաբերյալ այլ գրառումներում (տես Մոսիա 27 և Ալմա 38): Հանձնարարեք ուսանողներին աշխատել զույգերով: Հրավիրեք զույգերին ուսումնասիրել Ալմա 36.11–17, փնտրելով Ալմայի արտահայտած վախը կամ ցավը: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները նշեն իրենց գտածը: Թող ուսանողները զեկուցեն իրենց գտած բառերը և արտահայտությունները: (Դուք կարող եք գրել դրանք գրատախտակին:) Դուք կարող եք տալ

***Խրախուսեք ուսանողներին առաջադրանքներ կատարելիս աղոթել առաջնորդության համար:***

Երբ դուք ուսանողներին առաջադրանքներ եք տալիս, օրինակ՝ դասի մի հատված ուսուցանելը, խրախուսեք նրանց աղոթել առաջնորդության համար, երբ նրանք կատարում են իրենց առաջադրանքները: Ձեր խրախուսանքը կմեծացնի նրանց վստահությունը, որ նրանք կարող են լուսավորվել Հոգու միջոցով (տես ՎԱՈՒ 6.14–15):

հետևյալ հարցերը, որ խորացնեք ուսանողների հասկացողությունն իրենց զեկուցած բառերի և արտահայտությունների վերաբերյալ։

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում այդ արտահայտությունը (կամ բառը)։ Ինչո՞ւ էր Ալման այդպես զգում։

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ *պրկվել, տակնուվրա լինել* և *տանջվել* բառերը, կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բոյդ Ք. Փաքերի հետևյալ խոսքերը.

«*Պրկվել* նշանակում է «տանջվել»։ Նախկինում պրկման ժամանակ զոհին պառկեցնում էին՝ յուրաքանչյուր ոտքի կոճը և դաստակը պտուտակին կապած, որն այնուհետև կարող էին պտտեցնել՝ անտանելի ցավ պատճառելու համար։

Տակնուվրա լինել արտահայտության հիմքում ընկած է մի բառ, որը նշանակում է մի շրջանակ, որից ամրացված են սրածողեր։ Երբ այն քաշում են գետնի վրայով, այն պատռում և մխրճվում է հողի մեջ։ Սուրբ գրությունները հաճախ խոսում են հոգիների և մտքերի մասին, որոնք «տակնուվրա են լինում» մեղքի զգացումից։

*Տանջվել* նշանակում է «գալարվել», տանջելու միջոցներն այնքան մեծ ցավ են պատճառում, որ նույնիսկ անմեղները կխոստովանեն» (“The Touch of the Master’s Hand,” *Ensign,* May 2001, 23)։

- Ի՞նչ կարող է մեզ ուսուցանել Ալմայի փորձառությունը մեղքի արդյունքների մասին։ (Օգնեք ուսանողներին ներկայացնել հետևյալ ճշմարտությունը. **Մեղքն առաջ է բերում մեծ ցավ, տառապանք և վիշտ։**)
- Արդյո՞ք Ալման իր մեղքերի համար ցավ և վիշտ զգաց դրանք գործելուց անմիջապես հետո։ Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր գիտակցելը, որ մենք միգուցե անմիջապես չզգանք մեր մեղքերի արդյունքները։

Խնդրեք ուսանողներին խորհել այն փորձառությունների մասին, երբ նրանք ցավ կամ վիշտ են զգացել իրենց մեղքերի համար։ Ապա կարդացեք Նախագահ Փաքերի հետևյալ խոսքերը.

«Մեզանից յուրաքանչյուրն էլ զգացել է, թե ինչպես է խիղճը տանջում իրեն մեր սխալներից հետո։ . . .

Եթե դուք բեռնված եք մեղքի կամ հիասթափության, անհաջողության կամ ամոթի զգացումով, դրան լուծում կա» (“The Touch of the Master’s Hand,” 22)։

Նշեք, որ մինչ Ալման մեծ ցավ և խղճի խայթ էր զգում իր մեղքերի համար, նա հիշեց, որ իր ցավից ազատվելու միջոց կար։

- Համաձայն Ալմա 36.17-ի, նա ի՞նչ հիշեց։

Ուսանողներից մեկը թող բարձրաձայն կարդա Ալմա 36.18։ Հրավիրեք դասարանին փնտրել, թե ինչ արեց Ալման, որ գործեր համաձայն իր հոր ուսմունքների։ Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այս հատվածները, խնդրեք ուսանողներից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը.

«Ալմայի սրտին դիպչել էին իր հոր ուսմունքները, սակայն հատկապես կարևոր էր այն, որ մարգարեությունը, որը նա հիշել էր «մի Հիսուս Քրիստոսի, մի Աստծո Որդու գալստյան վերաբերյալ [էր]՝ քավելու համար աշխարհի մեղքերը» (Ալմա 36.17)։ Դա է անունը և դա է ուղերձը, որ յուրաքանչյուր անձ պետք է լսի։ . . . Որքան էլ տարբեր աղոթքներ մենք ասենք, որքան էլ տարբեր կարիքներ մենք ունենանք, այդ ամենն ինչ որ կերպ կախված է այդ աղերսանքից. «Օվ Հիսուս՝ Աստծո Որդի, ողորմա ինձ»։ Նա պատրաստ է տալու այդ ողորմությունը։ Նա վճարել է իր իսկ կյանքով, որպեսզի կարողանա տալ դա» (*However Long and Hard the Road* [1985], 85)։

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր մեզ համար ոչ միայն իմանալ Հիսուս Քրիստոսի մասին, այլ նաև խնդրել Նրա Քավության օրհնությունները։

Խրախուսեք ուսանողներին լուռ խորհել, թե արդյոք նրանք աղոթել են, որ ստանան Հիսուս Քրիստոսի Քավության օրհնությունները՝ ներառյալ ներման օրհնությունը։

Հրավիրեք ուսանողներին լուռ ուսումնասիրել Ալմա 36.19–22, փնտրելով բառեր և արտահայտություններ, որոնք նկարագրում են, թե ինչպես փոխվեցին Ալմայի զգացմունքներն այն բանից հետո, երբ նա աղոթեց ողորմության համար։

- Ի՞նչ բառեր կամ արտահայտություններ դուք գտաք, որ նկարագրում են, թե ինչպես փոխվեցին Ալմայի զգացմունքները։

Տվեք հետևյալ հարցը ուսանողների գտած յուրաքանչյուր բառի և արտահայտության մասին.

- Ի՞նչ է այդ արտահայտությունը (կամ բառը) սովորեցնում ձեզ Փրկչի Քավության զորության մասին: (Երբ ուսանողները պատասխանեն, օգնեք նրանց տեսնել, որ ոչ միայն Ալմայի ցավն անցավ, այլ նա նաև լցվեց ուրախությամբ:)

Գրատախտակին գրեք հետևյալ անավարտ նախադասությունը. *Եթե մենք հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը և Նրա Քավությունը, ապա Նա . . .*

- Ալմայի փորձառությունից ի՞նչ կարող ենք մենք սովորել այն մասին, թե ինչ է մեզ համար անում Տերը, երբ մենք անկեղծորեն ապաշխարում ենք: (Ուսանողները կարող են կիսվել տարբեր սկզբունքներով, սակայն հետևեք, որ նրանք արտահայտեն հետևյալ միտքը՝ **եթե մենք հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը և Նրա Քավությունը, ապա Նա կազատի մեզ մեր մեղքերի ցավից և կլցնի մեզ ուրախությամբ:** Դուք կարող եք լրացնել գրատախտակի նախադասությունը:)
- Ի՞նչ կարող ենք մենք անել, որ հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոս, որպեսզի կարողանանք ազատվել մեր մեղքերի պատճառած ցավի կամ խղճի խայթի զգացմունքներից:

Բարձրաձայն կարդացեք հետևյալ իրավիճակը և խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչպես նրանք կարձագանքեին.

Ձեր ընկերը, ով կարդում էր Մորմոնի Գիրքը, մտահոգություն է հայտնում Ալմա 36.19–ում գտնվող Ալմայի խոսքերի վերաբերյալ: Նա հարցնում է ձեզ. «Եթե ես կարողանում եմ հիշել իմ մեղքերը և դեռևս ցավում եմ դրանց համար, արդյո՞ք դա նշանակում է, որ ես չեմ ներվել»:

Խնդրեք ուսանողներին բացատրել, թե ինչ առնչություն ունեն այս իրավիճակի հետ Ալմայի փորձառությունները: Ուսանողների պատասխաններից հետո կարդացեք Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի հետևյալ խոսքերը.

«Սատանան կփորձի մեզ համոզել, որ մեր մեղքերը չեն ներվում, որովհետև *մենք* հիշում ենք դրանք: Սատանան ստում է, նա փորձում է աղավաղել մեր տեսադաշտը և հեռացնել մեզ ապաշխարության ու ներման ուղուց: Աստված չի խոստացել, որ *մենք* չենք հիշի մեր մեղքերը: Հիշելը կօգնի մեզ խուսափել նույն սխալը կրկնելուց: Սակայն, եթե մենք հավատարիմ ու նվիրված մնանք, ժամանակի հետ մեր մեղքերի հիշողությունը կթուլանա: Սա կլինի անհրաժեշտ ապաքինման և սրբագործման գործընթացի մի մասը: Ալման վկայել է, որ երբ նա աղաղակեց Հիսուսին ողորմածության համար, նա դեռևս հիշում էր իր մեղքերը, սակայն իր մեղքերի հիշողությունը այլևս չէր ճնշում ու կեղեքում իրեն, որովհետև նա գիտեր, որ ներվել էր (տես Ալմա 36.17–19):

Մեր պատասխանատվությունն է՝ խուսափել այն ամենից, ինչը մեզ հին մեղսավոր մտքերին է ետ բերում: Երբ շարունակում ենք ունենալ «կոտրված սիրտ ու փշրված հոգի» (3 Նեփի 12.19), մենք կարող ենք վստահել, որ Աստված այլևս «չի հիշի մեր մեղքերը»» («Ապահով վերադարձի կետ», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2007, 101):

- Հիմնվելով Նախագահ Ուխդորֆի ելույթի վրա, ինչպե՞ս դուք կբացատրեք, թե ինչ է նշանակում «այլևս տակնուվրա [չլինել մեր] մեղքերի հիշողությունից» (Ալմա 36.19):

Վկայեք, որ եթե մենք հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը և Նրա Քավությունը, Նա կազատի մեզ մեր մեղքերի ցավից և կլցնի մեզ ուրախությամբ: Խրախուսեք ուսանողներին մտածել այն մասին, թե ինչպես նրանք կարող են կիրառել այն, ինչ սովորել են Ալմայի փորձառությունից: Եթե ժամանակը թույլ է տալիս, թող դասարանը երգի «Որտե՞ղ խաղաղություն գտնեմ» (*Hymns,* no. 129) օրհներգը:

## Ալմա 36.23–30

### *Ալման բացատրում է, թե ինչու է նա շարունակ աշխատում, որ ուրիշներին բերի ապաշխարության*

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչու էր Ալման աշխատում ուրիշներին ապաշխարության բերելու համար, կարող եք կատարել հետևյալ վարժությունը: (Եթե հնարավոր չէ հյուրասիրություն պատրաստել ձեր դասարանի համար, դուք կարող եք դրա փոխարեն նկարագրել վարժությունը:)

Ցուցադրեք հյուրասիրությունը (ինչպես օրինակ՝ թխվածքաբլիթ կամ կոնֆետ) և հարցրեք, թե ով է դասարանում սիրում այսպիսի հյուրասիրություն: Ճաշակեք մի փոքր կտոր և արտահայտեք, թե որքան համեղ է այն: Ասեք դասարանին, որ հյուրասիրությունն այնքան համեղ է, որ դուք կցանկանայիք կիսել այն ողջ դասարանի հետ: Ցույց նույն հյուրասիրությունից ավելի շատ և հարցրեք, թե ով կցանկանա ճաշակել դրանից: Կիսվեք հյուրասիրությամբ յուրաքանչյուրի հետ, ով կցանկանա ճաշակել:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 36.23-24: Խնդրեք դասարանին հետևել, փնտրելով, թե ինչպես է ճաշակելու վարժությունը առնչվում դարձի գալուց հետո Ալմայի փորձառության հետ:

- Ինչո՞վ էին Ալմայի գործողությունները նման ճաշակելու վարժությանը: Ի՞նչ էր ուզում Ալման, որ այլ մարդիկ ճաշակեին:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 36.25-26: Խնդրեք դասարանին ներկայացնել, թե ինչ ազդեցություն ունեցան Ալմայի սովորեցնելու ջանքերն իր և ուրիշների վրա:

- Ի՞նչ ազդեցություն ունեցան Ալմայի ուսմունքներն իր և ուրիշների վրա:
- Ի՞նչ սկզբունքներ մենք կարող ենք սովորել այս հատվածներից: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, սակայն հետևեք, որ նրանք արտահայտեն այս միտքը՝ **մենք կարող ենք ստանալ մեծ ուրախություն, երբ փորձում ենք ուրիշներին բերել Քրիստոսի մոտ:**)

Ամփոփեք Ալմա 36.27–30, բացատրելով, որ Ալման կրկին վկայեց Հելամանին, որ Տերը կազատեր նրանց, ովքեր իրենց հույսը դնում են Իր վրա: Վկայեք ուրախության մասին, որ մենք կարող ենք ունենալ, երբ հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը և երբ ուրիշներին խրախուսենք դա անել: Որպեսզի օգնեք ուսանողներին կիրառել այն, ինչ նրանք սովորել են Ալմա 36-ից, հրավիրեք նրանց կատարել ներքևում տրված վարժություններից մեկը: (Դուք կարող եք գրել դրանք գրատախտակին:)

1. Խորհեք, թե արդյոք զգացել եք, որ Փրկիչն ազատել է ձեզ մեղքից և լցրել ուրախությամբ: Ձեր սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրում բացատրեք, թե ինչ կանեք դուք, որպեսզի կարողանաք ստանալ այս օրհնությունները:
2. Մտածեք մեկի մասին (ինչպես օրինակ՝ ընկերոջ, բարեկամի կամ ծխի անդամի), ում համար Փրկչի վերաբերյալ ձեր վկայությունը կարող է օգտակար լինել: Նամակ գրեք այս անձնավորությանը և ներառեք ձեր վկայությունը, թե ինչպես կարող է Հիսուս Քրիստոսն ազատել մեզ մեղքի ցավից և լցնել մեզ ուրախությամբ:

ԴԱՍ 94

# Ալմա 37

## Նախաբան

Ալման շարունակեց իր որդի Հելամանին խորհուրդներ տալ և նրան հանձնեց սուրբ հիշատակարանները: Նա հիշեցրեց Հելամանին, որ սուրբ գրությունները արդեն իսկ պատճառ են դարձել, որ հազարավոր լամանացիների բերեն առ Տերը, և նա խոստացավ, որ Տերն ապագայում մեծ նպատակներ ունի հիշատակարանների հետ կապված: Ալման ցուցումներ տվեց իր որդուն, թե ինչ սովորեցնել մարդկանց: Քրիստոսի խոսքերը համեմատելով Լիահոնայի հետ, նա համոզեց Հելամանին, որ կարևոր էր հիմնվել դրանց վրա առաջնորդության համար:

*Նշում.* Այս դասը երեք ուսանողների հնարավորություն է տալիս ուսուցանել դասը: Որպեսզի օգնեք այս ուսանողներին պատրաստվել ուսուցանելուն, յուրաքանչյուր ուսանողի մեկ կամ երկու օր առաջ տվեք այն բաժնի օրինակը, որը նա պատք է ուսուցանի: Կամ դուք կարող եք ընտրել ինքներդ ուսուցանել այս բաժինները:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 37

*Ալման հիշատակարանները հանձնում է Հելամանին, հորդորում է նրան պահել պատվիրանները և հիշեցնում է նրան, որ Լիահոնան աշխատում էր հավատքի միջոցով:*

Գրատախտակին գծեք հետևյալ գծապատկերը.

Փոքր և հասարակ բաներ ⟶ ՄԵԾ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

Խնդրեք ուսանողներին գրատախտակին գրել փոքր և հասարակ բաներ, որոնք իրենց կյանքում մեծ հետևանքներ են ունեցել: Դուք կարող եք խնդրել նրանց մեկնաբանել իրենց պատասխանները:

Բացատրեք, որ Ալմա 37-ը պարունակում է Ալմայի խորհուրդը, որով նա ցանկանում էր օգնել իր որդուն՝ Հելամանին, լինել սուրբ հիշատակարանների հաջորդ պահողը: Ալման ուսուցանեց նրան Տիրոջ աշխատանքում փոքր և հասարակ բաների դերը: Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 37.6–7:

Ի՞նչ ենք մենք սովորում այս հատվածներից «փոքր և հասարակ բաների» արժեքի մասին: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, սակայն նրանք պետք է արտահայտեն այն ճշմարտությունը, որ **Տերն աշխատում է փոքր և հասարակ միջոցներով, որ իրականացնի Իր հավերժական նպատակները:**)

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 37.1–5, փնտրելով փոքր և հասարակ բանի մի օրինակ, որ կարող է մեծ հետևանք ունենալ մարդկանց կյանքում (սուրբ հիշատակարանները կամ սուրբ գրությունները): Այն բանից հետո, երբ ուսանողները կզեկուցեն, թե ինչ են իրենք գտել, գրատախտակին գրեք *Սուրբ գրություններ* բառը *Փոքր և հասարակ բաներ*–ի տակ:

Ուսանողներին խնդրեք ուսումնասիրել Ալմա 37.8–10-ը և գտնել, թե ինչ եղանակներով էին սուրբ գրությունները ներգործում Մորմոնի Գրքի մարդկանց վրա: Երբ ուսանողները զեկուցեն իրենց գտածը, դուք կարող եք գրել նրանց պատասխանները *ՄԵԾ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ*–ի տակ:

- Ի՞նչ եղանակներով են սուրբ գրություններն ազդում ձեր կյանքի վրա:

Ամփոփեք Ալմա 37.11–32 հատվածները, բացատրելով, որ Ալման ուսուցանեց Հելամանին, որ Տերը ցույց կտար Իր զորությունը Մորմոնի Գիրքը մարդկանց տալով: Նա հանձնարարեց Հելամանին հետևել Տիրոջ պատվիրաններին և խնամքով պահել հիշատակարանները: Նա նաև հորդորեց Հելամանին օգտագործել հիշատակարանները ժողովրդին ուսուցանելու համար և խուսափել Հարեդացիների

ամբարշտությունների և դրանց հետևանքում կատարված ավերվածությունների մանրամասներն ամբողջությամբ հրապարակելուց:

Հրավիրեք ուսանողներին լուռ ուսումնասիրել Ալմա 37.13–16, փնտրելով սկզբունքներ, որոնք Ալման ուսուցանեց Հելամանին, երբ նա հանձնեց նրան հիշատակարանները: (Ուսանողները կարող են կիսվել մի շարք սկզբունքներով, սակայն համոզվեք, որ նրանց պատասխաններն արտահայտեն այն միտքը, որ **եթե մենք հնազանդվենք Տիրոջ պատվիրաններին, Նա կօգնի մեզ կատարել մեր պարտականությունները:** Դուք կարող եք հարցնել, թե ինչպես է այս սկզբունքը կապված այն գաղափարի հետ, որ փոքր և հասարակ բաները կարող են մեծ հետևանքներ ունենալ:)

Նախատեսված է, որ այս դասի մնացած մասն ուսուցանվի երեք ուսանողների կողմից: Եթե դասարանը մեծ է, խնդրեք ուսանող ուսուցիչներին տեղափոխվել սենյակի երեք տարբեր մասեր: Դասարանը բաժանեք երեք խմբի: Հրավիրեք յուրաքանչյուր խմբին վերցնել իրենց սուրբ գրությունները, նոթատետրերը կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերը , գրիչներ կամ մատիտներ և հավաքվել ուսանող ուսուցիչներից մեկի մոտ: Երբ ուսանող ուսուցիչներն ավարտեն իրենց դասը, խմբերը կփոխվեն տեղերով: Եթե դասարանը փոքր է, ուսանող ուսուցիչները կարող են հերթով ուսուցանել ամբողջ դասարանին: Յուրաքանչյուր դեպքում ուսանող ուսուցիչները պետք է մոտավորապես յոթ րոպեում ներկայացնեն իրենց դասը և քննարկումներ կատարեն:

### Ուսանող ուսուցիչ 1—Ալմա 37.33–34

Խնդրեք ձեր համադասարանցիներին մտածել Եկեղեցու մի տարածքային ղեկավարի կամ Բարձրագույն Իշխանավորի մասին, ով ուսուցանել է իրենց մի բան, որը փոխել է իրենց կյանքը: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչ է ուսուցանել այս ղեկավարը և թե ինչպես է այն ներգործել իրենց վրա: Դուք կարող եք կիսվել մի օրինակով ձեր կյանքից:

Հրավիրեք երկու ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 37.33–34: Խնդրեք մնացած ուսանողներին հետևել, փնտրելով, թե Ալման ինչ խորհուրդ տվեց Հելամանին ուսուցանել ժողովրդին: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք կարդալու ընթացքում նշեն «սովորեցրու նրանց» և «քարոզիր նրանց» արտահայտությունները: Գրատախտակին կամ թերթիկի վրա գրեք *Եկեղեցու ղեկավարների ուսմունքները*: Երբ ուսանողներն ավարտեն կարդալ հատվածները, խնդրեք նրանց հաղորդել իրենց գտածը: Գրեք նրանց պատասխանները *Եկեղեցու ղեկավարների ուսմունքները* վերնագրի տակ: Տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս կարող են այս ուսմունքներն օգտակար լինել մեզ հատկապես այսօր: Ինչո՞ւ:

Խնդրեք ձեր համադասարանցիներին ուշադրություն դարձնել Ալմա 37.34-ի վերջին արտահայտության վրա, որպեսզի տեսնեն, թե ինչ օրհնություն է գալիս Եկեղեցու ղեկավարների ուսմունքներին հետևելուց: Գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. ***Հետևելով Եկեղեցու ղեկավարների ուսմունքներին, հանգստություն կարող ենք գտնել մեր հոգիների համար:*** Հարցրեք նրանց, թե, իրենց կարծիքով, ինչ է նշանակում «հանգստություն գտնել իրենց հոգիների համար»: (Պատասխանները կարող են ներառել՝ մեղքի հետևանքներից ազատ լինելը, հոգուց խաղաղություն ստանալը և դժվարությունները տանելու և հաղթահարելու համար ուժով օրհնված լինելը:)

Կիսվեք ձեր վկայությամբ, թե ինչպես է այս սկզբունքը գործել ձեր կյանքում: Եթե դուք լրացուցիչ ժամանակ ունեք, հրավիրեք ուրիշներին կիսվել այս սկզբունքի մասին իրենց վկայությամբ:

### Ուսանող ուսուցիչ 2—Ալմա 37.35–37

Բացատրեք ձեր համադասարանցիներին, որ նրանք, ովքեր ծառեր են աճեցնում, սովորաբար կապում կամ ամրացնում են երիտասարդ ծառը մի ցցի և հետո հեռացնում այն, երբ ծառը մեծանում է: Հարցրեք նրանց, թե, իրենց կարծիքով, ինչու է դա արվում: Ապա կարդացեք հետևյալ պատմությունը մի ծառի մասին, որը Նախագահ Գորդոն Բ. Հինքլին տնկեց իր այգում.

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին իր ամուսնությունից անմիջապես հետո մի երիտասարդ ծառ տնկեց իր տան մոտ: Նա քիչ էր ուշադրություն դարձնում դրա վրա, մինչ տարիներ էին անցնում: Մի օր նա նկատեց, որ ծառը ծռվել էր և թեքվել դեպի արևմուտք: Նա փորձեց ուղղել այն

հրելով, սակայն ծառի բունը շատ հաստ էր: Նա փորձեց օգտագործել պարան և ճախարակ այն ուղղելու համար, սակայն այն չէր ուղղվում: Ի վերջո, նա վերցրեց իր սղոցը և կտրեց արևմտյան կողմի ծանր ճյուղը՝ տգեղ մի սպի թողնելով: Նա հետագայում ասել է այդ ծառի մասին.

«Կես դարից ավելի է անցել այն օրից, երբ ես տնկեցի այդ ծառը: . . . Անցյալ օրը ես կրկին նայեցի ծառին: Այն մեծ է: Այն լավ տեսք ունի: Այն հրաշալի տեսք է տալիս տանը: Սակայն որքան լուրջ էր դրա երիտասարդության տարիներին ստացած վնասվածքը և որքան դաժան այն միջոցը, որը ես օգտագործեցի այն ուղղելու համար:

Երբ այն նոր էր տնկվել, մի կտոր լարը կօգներ դրան պաշտպանվել քամուց: Ես կարող էի և ես պետք է օգտագործեի այդ լարը այնքան փոքր ջանք գործադրելով: Սակայն ես չարեցի դա և այն թեքվեց այն ուժերի ազդեցությունից, որ եկան դրա վրա» (“Bring Up a Child in the Way He Should Go,” *Ensign,* Nov. 1993, 59):

Ուսանողները թող կարդան Հելամանին տված Ալմայի խորհուրդը Ալմա 37.35–ում: Խնդրեք նրանց մտածել այն մասին, թե ինչ կապ կարող են այս հատվածներն ունենալ ծառի հետ կապված Նախագահ Հինքլիի փորձառության հետ:

Հրավիրեք ուսանողներին իրենց բառերով ամփոփել Ալմա 37.35: (Նրանց պատասխանները պետք է արտահայտեն այն միտքը, որ **մենք պետք է մեր երիտասարդության տարիներին սովորենք պահել Աստծո պատվիրանները:**) Նաև հրավիրեք նրանց գրել հետևյալ հարցերի պատասխանները: (Դուք կարող եք գրել հարցերը գրատախտակին կամ դանդաղ կարդալ դրանք, որպեսզի ուսանողները կարողանան գրի առնել դրանք:)

- Ձեր կարծիքով, ի՞նչ է փոխվում մարդու կյանքում, երբ նա սովորում է պահել Աստծո պատվիրանները դեռևս երիտասարդության տարիներին:
- Կարո՞ղ եք մտաբերել մարդկանց, ովքեր օրհնված են եղել իրենց կյանքի ընթացքում, քանի որ նրանք սովորել են հնազանդվել պատվիրաններին իրենց երիտասարդության տարիներին: Գրեք այն մասին, թե ինչպես են նրանք օրհնվել:

Հրավիրեք մի քանի ուսանողների զեկուցել, թե ինչ են իրենք գրել: Ապա հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 37.36–37: Խնդրեք ուսանողներին հետևել, փնտրելով առանձնահատուկ խորհուրդներ, որոնք կարող են օգնել նրանց պահել պատվիրանները՝ մինչ նրանք երիտասարդ են:

- Ինչպե՞ս կարող է այս խորհրդին ամեն օր հետևելն օգնել ձեզ պահել պատվիրանները:
- Ի՞նչ եղանակներով եք դուք փորձում Տիրոջը դնել առաջին տեղում ձեր մտքերում, խոսքերում և գործերում: (Խրախուսեք ուսանողներին խորհել, թե ինչպես նրանք կարող են առաջընթաց ունենալ:)

Կիսվեք ձեր զգացմունքներով, թե ինչպես է Տիրոջ հետ խորհուրդ անելն օգնել ձեզ պահել պատվիրանները: Խրախուսեք ձեր համադասարանցիներին խորհուրդ անել Տիրոջ հետ իրենց բոլոր գործերում:

**Ալմա 37.35**-ը սերտման սուրբ գրության հատված է: Դուք կարող եք օգնել ուսանողներին սերտել այս հատվածը՝ հրավիրելով նրանց կատարել այսօրվա դասի վերջում եղած հանձնարարությունը:

### Ուսանող ուսուցիչ 3—Ալմա 37.38–45

Ցուցադրեք Լիահոնա (62041; *Gospel Art Book* [2009], no. 68) նկարը: Հիշեցրեք ձեր համադասարանցիներին կողմնացույցի մասին, որը Տերն օգտագործում էր, որ օգներ Լեքիի ընտանիքին ճամփորդել դեպի խոստումի երկիրը: Ալմա 37.38-ում մենք սովորում ենք, որ կողմնացույցը կոչվում էր Լիահոնա: Բացատրեք, որ Ալման խոսում էր Լիահոնայի մասին, որ սովորեցներ Հելամանին կարևոր սկզբունք այն մասին, թե ինչպես է Տերն առաջնորդում Իր զավակներին:

Բացատրեք ձեր համադասարանցիներին, որ դուք պատրաստվում եք նրանց հարցեր տալ, ապա խնդրեք նրանց հերթով բարձրաձայն կարդալ մի քանի հատվածներ, մինչ բոլորը պատասխաններ են փնտրում: Խնդրեք նրանց պատասխանել յուրաքանչյուր հարցին համապատասխան սուրբ գրությունը կարդալուց հետո:

- Ինչպե՞ս էր աշխատում Լիահոնան: (Տես Ալմա 37.38–40:)
- Ինչո՞ւ էր Լիահոնան ժամանակ առ ժամանակ դադարում աշխատել: (Տես Ալմա 37.41–42:)
- Ինչպե՞ս մենք կարող ենք համեմատել Լիահոնան Քրիստոսի խոսքերի հետ: (Տես Ալմա 37.43–45:)

Դուք կարող եք բացատրել, որ այս հատվածներում *նմանություն* և *օրինակ* բառերը վերաբերվում են «անհատի, իրադարձության կամ ծեսի, որոնք նման են մեկ այլ ավելի կարևոր անհատի, իրադարձության կամ ծեսի, որ վերաբերվում է ապագային: . . . Ճշմարիտ օրինակները կունենան զգալի նմանություն, աստվածային վկայություն և կմարգարեանան ապագա իրադարձությունների մասին» (Joseph Fielding McConkie, *Gospel Symbolism* [1985], 274): Լիահոնայի ցուցումներին հետևելու կամ չհետևելու ընտրությունը նման է մեր ընտրությանը, թե ինչպես ենք մենք արձագանքում այն ցուցումներին, որոնք տրվում են Քրիստոսի խոսքերի միջոցով:

- Որտե՞ղ մենք կարող ենք գտնել Քրիստոսի խոսքերը: (Պատասխանները կարող են ներառել՝ սուրբ գրությունները, վերջին օրերի մարգարեների խոսքերը, հայրապետական օրհնությունները և Հոգու հուշումները:)

Հրավիրեք ձեր համադասարանցիներին ամփոփել Ալմա 37.38–45 Ալմայի խոսքերը, հատկապես՝ 44-45 հատվածները: Այս քննարկումը պետք է ներառի հետևյալ ճշմարտությունը. **Եթե մենք հետևենք Հիսուս Քրիստոսի խոսքերին, դրանք կառաջնորդեն մեզ ստանալու հավերժական կյանք:**

Կիսվեք, թե ինչ հոգևոր ազդեցություն են գործել ձեզ վրա Քրիստոսի խոսքերը և թե ինչպես են դրանք օգնում ձեզ առաջ ընթանալ դեպի հավերժական կյանք: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները խորհեն հայրապետական օրհնություն ստանալու մասին կամ, եթե նրանք արդեն ստացել են այն, հաճախակի և աղոթքով կարդան այն:

*Նշում ուսուցչի համար.* Երբ ուսանողներն ավարտեն դասի իրենց հատվածն ուսուցանելը, շնորհակալություն հայտնեք նրանց և, եթե ժամանակը թույլ է տալիս, հրավիրեք մի քանի ուսանողների վկայել այսօր սովորած սկզբունքներից մեկի մասին: Դուք կարող եք նաև կիսվել այս սկզբունքների մասին ձեր վկայությամբ: Դասի վերջում հրավիրեք դասարանին հետևել ձեզ, մինչ դուք բարձրաձայն կկարդաք Ալմա 37.46–47:

## Սերտման սուրբ գրություն. Ալմա 37.35

*Նշում.* Հետևյալ տար-տուն վարժությունը կնախապատրաստի ուսանողներին հաջորդ դասը սկսելու համար (Ալմա 38): Ժամանակ նախատեսեք, որ դասի ժամանակ ուսանողներին բացատրեք հանձնարարությունը և տեղեկացնեք նրանց, որ պատրաստվում եք հարցնել նրանց իրենց փորձառությունների մասին, երբ հաջորդ անգամ հանդիպեք:

Նշեք, որ Ալմա 37.35-ը սերտման սուրբ գրության հատված է: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին առանձնակի ձևով նշել այն, որպեսզի նրանք կարողանան հեշտությամբ գտնել այն: Հրավիրեք նրանց այսօր երեկոյան անգիր սովորել այդ հատվածը տանը և այն անգիր արտասանել ծնողներից մեկին կամ մեկ այլ վստահելի չափահասի: (Կամ նրանք կարող են կարդալ հատվածը չափահասի հետ:) Խրախուսեք նրանց չափահասին տալ հետևյալ հարցերը: (Դուք կարող եք առաջարկել ուսանողներին գրել այս հարցերը թերթիկի վրա և տուն տանել:)

Ինչպե՞ս է Աստծո պատվիրաններին հնազանդվելն օգնել ձեզ:

Ի՞նչ խորհուրդ կարող եք դուք ինձ տալ, որը կարող է օգնել ինձ ավելի իմաստուն լինել իմ երիտասարդության օրերին:

Տեղեկացրեք ուսանողներին, որ հաջորդ դասի ընթացքում դուք խնդրելու եք նրանց զեկուցել իրենց փորձառության մասին:

ԴԱՍ 95

# Ալմա 38

## Նախաբան

Սիբլոնը ծառայում էր իր հոր՝ Ալմայի հետ որպես միսիոներ զորամացիների մեջ (տես Ալմա 31.7)։ Այս առաքելությունից հետո Ալման իր ուրախությունն է արտահայտում հալածանքների ժամանակ Սիբլոնի ցուցաբերած կայունության և հավատարմության համար։ Ալման նաև վկայեց Սիբլոնին Փրկչի ազատող զորության համար և խորհուրդ տվեց Սիբլոնին շարունակել ջանք գործադրել ավետարանն ուսուցանելու համար։

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 38.1–3

*Ալման իր ուրախությունն է արտահայտում Սիբլոնի հավատարմության համար*

Եթե դուք նախորդ դասի վերջում հրավիրել էիք ուսանողներին տնային հանձնարարություն կատարել, հիշեցրեք նրանց այն երկու հարցերը, որոնք դուք հրավիրել էիք նրանց տալ իրենց ծնողներին կամ մեկ այլ վստահելի չափահասի.

- Ինչպե՞ս է Աստծո պատվիրաններին հնազանդվելն օգնել ձեզ։
- Ի՞նչ խորհուրդ կարող եք դուք ինձ տալ, որը կարող է օգնել ինձ ավելի իմաստուն լինել իմ երիտասարդության օրերին։

Խնդրեք ուսանողներին զեկուցել այս հանձնարարության հետ կապված իրենց փորձառության մասին։ Երբ ուսանողների կիսվեն, հարցրեք.

- Ինչպե՞ս է այս փորձառությունն ազդել Տիրոջ պատվիրանները պահելու ձեր ցանկության վրա։

Բացատրեք, որ Ալմա 38-ը պարունակում է Ալմայի խորհուրդը, որը նա տվեց իր որդի Սիբլոնին։ Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 38.1–3։ Խնդրեք դասարանին հետևել, փնտրելով արտահայտություններ, որոնք նկարագրում են, թե ինչ էր Ալման զգում Սիբլոնի հետ կապված, և ինչու։ Հրավիրեք ուսանողներին զեկուցել իրենց գտածի մասին։

- Ի՞նչ կարող ենք մենք սովորել Ալմա 38.2–3-ից այն ազդեցության մասին, որ արդար երեխաները կարող են ունենալ իրենց ծնողների վրա։ (Ուսանողները կարող են տարբեր պատասխաններ տալ։ Համոզվեք, որ նրանք ներկայացնեն այն ճշմարտությունը, որ **երբ երիտասարդները կայուն են և հավատարիմ պատվիրանները պահելու մեջ, նրանք կարող են մեծ ուրախություն բերել իրենց ծնողներին։**)
- Ե՞րբ են ձեր ծնողները ուրախություն զգացել ձեր կայացրած լավ ընտրության համար կամ ավետարանով ապրելու ձեր ջանքերի համար։
- Պատվիրանները պահելու ձեր ջանքերն ի՞նչ ազդեցություն են ունենում ձեր ծնողների հետ ձեր հարաբերությունների վրա։

Դուք կարող եք կիսվել օրինակով, թե ինչ ազդեցություն են ունեցել ձեր ընտանիքի վրա ընտանիքի երեխաների արդար ընտրությունները։

***Հանձնարարություններ տալուց հետո ստուգեք դրանք***

Երբ դուք ստուգում եք ավետարանի սկզբունքները կիրառելու հրավերի հետ կապված նախկինում ուսանողներին արված հրավերները, դուք նրանց հնարավորություններ եք տալիս վկայելու օրինությունների մասին, որոնք գալիս են ավետարանով ապրելու արդյունքում։ Երբ ուսանողները կիսվում են ավետարանի ճշմարտությունները կիրառելիս իրենց ունեցած փորձառությամբ, նրանք ամրացնում են իրենց վկայությունները և օգնում են ամրացնել ուրիշների վկայությունները։

### Ալմա 38.4–9

*Ալման վկայում է Փրկչի ազատման զորության մասին*

Բացատրեք, որ Ալման հիշեցրեց Սիբլոնին, որ նրանք երկուսն էլ զգացել էին Փրկչի ազատման զորությունը։ Հետևյալ ցանկը բաժանեք ուսանողներին տրված թերթիկների տեսքով կամ ցուցադրեք այն գրատախտակին և խնդրեք ուսանողներին արտագրել այն նոթատետրերում կամ սուրբ գրությունների օրագրերում։

| | Սիբլոն (Ալմա 38.4–5) | Ալմա (Ալմա 38.6–8) |
|---|---|---|
| Ինչի՞ց էր նա ազատվել: | | |
| Ինչո՞ւ նա ստացավ ազատման օրհնությունը: | | |
| Ի՞նչ կարող ենք մենք սովորել նրա փորձառությունից: | | |

Ողջ դասարանով լրացրեք ցանկը կամ հանձնարարեք ուսանողներին լրացնել այն զույգերով: Ուսանողները հարցերին պատասխանելիս թող անդրադառնան ցանկում նշված սուրբ գրությունների հատվածներին: Խրախուսեք նրանց ներառել այն, ինչ իրենք արդեն գիտեն այն մասին, թե ինչպես է Տերն ազատել Սիբլոնին (տես Ալմա 38.2–3) և Ալմային (տես Մոսիա 27, Ալմա 36): Երբ ուսանողները լրացնեն ցանկը, տվեք հետևյալ հարցերը, որ օգնեք նրանց քննարկել սկզբունքները, որոնք նրանք սովորել են.

- Ի՞նչ կարող ենք մենք սովորել Սիբլոնի փորձառությունից: (Ուսանողները կարող են ներկայացնել տարբեր սկզբունքներ: Համոզվեք, որ նրանք ներկայացնում են հետևյալ սկզբունքը. **Եթե մենք համբերությամբ տանում ենք ամեն բան և վստահում ենք Աստծուն, Նա կազատի մեզ փորձանքներից, խնդիրներից և տառապանքներից, և կբարձրացնի մեզ վերջին օրը:**)
- Ի՞նչ կարող ենք մենք սովորել Ալմայի փորձառությունից: (Չնայած, ուսանողները կարող են տարբեր պատասխաններ տալ, համոզվեք, որ նրանք արտահայտում են, որ **մեր մեղքերի համար ներում ստանալու և մեր հոգիներին խաղաղություն գտնելու համար, մենք պետք է հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը և փնտրենք Նրա ողորմածությունը:**)

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 38.9: Դասարանին խնդրեք հետևել, փնտրելով, թե ինչ էր Ալման ուզում, որ իր որդին սովորեր Փրկչի մասին:

- Ինչո՞ւ է մեզ համար կարևոր իմանալը, որ Հիսուս Քրիստոսը միակ «ճանապարհն է կամ միջոցը, որով [մենք] կարող ենք փրկվել»:
- Ի՞նչ եղանակներով եք դուք ունեցել ազատվելու փորձառություն Փրկչի զորության միջոցով: (Դուք կարող եք ուսանողներին ժամանակ տալ խորհելու այս հարցերի շուրջ, նախքան կխնդրեք նրանց պատասխանել:) Ի՞նչ եք արել դուք, որ փնտրեք այդ ազատումը:

Որոշակի ժամանակ տրամադրեք ուսանողներին, որ խորհեն, թե ինչպես կարող են փնտրել Տիրոջ օգնությունը՝ իրենց անձնական խնդրի հետ կապված:

## Ալմա 38.10–15

### *Ալման խորհուրդ է տալիս Սիբլոնին շարունակել սովորեցնել ավետարանը և զարգացնել արդար հատկանիշներ*

Բացատրեք, որ Ալման խրախուսեց Սիբլոնին զարգացնել որակներ, որոնք կօգնեին իրեն, երբ նա շարունակեր սովորեցնել ավետարանը և ծառայել ուրիշներին: Սիբլոնին տրված Ալմայի խորհուրդը կարող է վերաբերվել ցանկացած մարդու, ով ցանկանում է ծառայել, սովորեցնել կամ լավ ազդեցություն ունենալ ուրիշների վրա: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 38.10–15, փնտրելով խորհուրդ, որը մասնավորապես օգտակար կլինի նրանց համար: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները նշեն իրենց գտածը:

Այս դասի վերջում ուսանողներին տվեք ուսուցման ուղեցույցի մի օրինակ: Բացատրեք, որ երբ նրանք օգտագործեն ուղեցույցը, նրանք կտեսնեն, թե ինչպես են **արդար հատկանիշներ զարգացնելու մեր ջանքերը նախապատրաստում մեզ սովորեցնել և ծառայել ուրիշներին:** Հրավիրեք նրանց ընտրել ուղեցույցի ձախ սյունակում գտնվող Ալմայի խորհրդի մի մասը և լրացնել համապատասխան ուսուցման վարժությունը աջ սյունակում: (Եթե դուք չեք կարող պատրաստել ուսուցման ուղեցույցի օրինակներ, փոփոխեք վարժությունը, դասարանում

***Հարմարեցնել ուսուցողական վարժությունները***

Այս ձեռնարկում ներկայացված ուսուցման մեթոդները խորհուրդներ են: Իմաստուն կերպով հարմարեցրեք դրանք ձեր պայմաններին և առանձին ուսանողների և ամբողջ դասարանին կարիքներին: Աղոթքով փնտրեք Սուրբ Հոգու առջնորդությունը:

քննարկում կազմակերպելով և որպես նյութ օգտագործելով ուսուցման ուղեցույցի տեղեկությունները։)

Ուսուցման ուղեցույցի ուսուցողական վարժություններից մեկն ավարտելու համար ուսանողներին բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, խորհեք խնդրել նրանցից մի քանիսին կիսվել, թե ինչ սովորեցին այս վարժությունից և ինչպես են ծրագրում կիրառել այն։ Եթե դուք ուսանողներին տվել եք ուսուցման ուղեցույցի օրինակներ, խրախուսեք նրանց այն տուն տանել և ավելի շատ բան սովորել Միբլոնին տրված Ալմայի խորհրդի մասին։

**Ուսուցման ուղեցույց Ալմա 38.10–12–ի համար**

Ուսումնասիրեք ստորև տրված Ալմայի խորհրդի տարբեր մասերը և ընտրեք մեկը, որը դուք կցանկանայիք կատարելագործել ձեզ մոտ։ Լրացրեք համապատասխան ուսուցման վարժությունը, որը կօգնի ձեզ կիրառել այս խորհուրդը ձեր կյանքում։

| Ալմայի խորհուրդը | Ուսուցողական վարժություններ |
|---|---|
| «[Եղիր] ջանասեր և ժուժկալ բոլոր բաներում» (Ալմա 38.10): | Ջանասիրությունը մշտական, հոգատար և բարեխիղճ աշխատանք է։ Ժուժկալ լինել նշանակում է «ինքնազսպվածություն գործադրել բոլոր բաներում կամ գործի դնել ինքնավերահսկողություն» (Քենթ Դ. Վատսոն, «Ժուժկալ լինել բոլոր բաներում», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2009, 38)։ Ձեր սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրում գրեք, թե ինչու են այս երկու գծերն անհրաժեշտ, երբ մարդը սովորեցնում է ավետարանը և ծառայում է ուրիշներին։ Նաև գրեք ձեր կյանքի որևէ ոլորտի մասին, որում դուք կարող եք լինել ավելի ջանասեր կամ ժուժկալ, և թե ինչպես կարող է այդ ոլորտներում զարգանալն օգնել ձեզ ավելի արդյունավետ կերպով սովորեցնել և ծառայել ուրիշներին։ |
| «Տես որ դու չբարձրամտանաս մինչև հպարտություն. . . . չպարծենաս» (Ալմա 38.11): | Հպարտության հատկանիշներից մեկն է՝ ավելի շատ վստահելը ձեզ, քան Աստծուն։ Հպարտությունն ակնհայտ է դառնում նաև այն ժամանակ, երբ մարդը մտածում է, որ ինքն ամենալավն է կամ ավելի կարևոր, քան ուրիշները։ Սուրբ գրությունների ուսումնասիրության ձեր օրագրում գրեք, թե ինչ կարող է պատահել, երբ Եկեղեցու անդամը հպարտանում է իր կոչման մեջ։ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսն ուսուցանել է. «Ճշմարիտ աշակերտները խոսում են հանգիստ վստահությամբ, ոչ թե գոռոզամիտ հպարտությամբ» («Քրիստոնեական քաջություն՝ աշակերտ լինելու գինը», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2008, 73)։ Մտածեք մեկի մասին, ում դուք գիտեք, ով սովորեցնում է «հանգիստ վստահությամբ»։ Սուրբ գրության ձեր օրագրում գրեք այդ մարդու և այն ազդեցության մասին, որը նրա ուսուցումը թողել է ձեզ վրա։ Նաև գրեք մեկ կամ երկու եղանակներ, որոնց միջոցով դուք կփորձեք խուսափել հպարտությունից։ |
| «Գործածիր համարձակություն, բայց ոչ բռնադատություն» (Ալմա 38.12): | Կարդացեք Պողոս Առաքյալի խոսքերը Փիլիպպեցիս Ա.14-ում (Նոր Կտակարան), որ տեսնեք, թե ինչպես կարող են Աստծո ծառաները համարձակություն ցուցաբերել։ Առաջին Նախագահությունից Նախագահ Ջեյմս Է. Ֆաուստն ուսուցանել է, թե ինչպես մենք կարող ենք խուսափել բռնադատող լինելուց. «Ես չեմ կարծում, որ մենք պետք է լինենք . . . աղմկոտ, պնդերես կամ անզգա մեր [միսիոներական աշխատանքում]» (James P. Bell, *In the Strength of the Lord: The Life and Teachings of James E. Faust* [1999], 373)։ Սուրբ գրությունների ուսումնասիրության ձեր օրագրում գրեք, թե ինչպես կարող է մարդը լինել համարձակ՝ առանց բռնադատող լինելու։ Գրի առեք մի առանձնահատուկ եղանակ, որի օգնությամբ դուք կկիրառեք խորհուրդը՝ լինելու համարձակ, բայց ոչ՝ բռնադատող։ Նաև գրեք այն մասին, թե ինչպես կարող է այս խորհուրդն օգնել ձեզ հաջողությամբ ուսուցանել և ծառայել ուրիշներին։ |

| Ալմայի խորհուրդը | Ուսուցողական վարժություններ |
|---|---|
| «[Սանձիր] բոլոր քո կրքերը» (Ալմա 38.12): | Սանձել նշանակում է զսպել, կողմնորոշել կամ վերահսկել: Կիրքն իրենից ներկայացնում է ուժեղ ապրումներ: Խորհեք հետևյալ հարցերի շուրջ, և գրեք ձեր պատասխանները սուրբ գրությունների ուսումնասիրության ձեր օրագրում. Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր մեզ համար սանձել մեր կրքերը: Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարող է ձեր կրքերը սանձելն օգնել ձեզ լցված լինել սիրով: Ի՞նչ կանեք դուք, որ հետևեք Ալմայի խորհրդին և սանձեք բոլոր ձեր կրքերը: |
| «Ձերծ մնա անգործությունից» (Ալմա 38.12): | Վերանայեք սուրբ գրության այն հատվածները, որոնք նշված են եռամաս հատորի ցուցիչում «Անգործություն, անգործ, անգործ մարդ» վերնագրի տակ: Փնտրեք խորհուրդ այն մասին, թե ինչ է նշանակում անգործ լինել և անգործ լինելու հակառակ իմաստի մասին: Ընտրեք նշված հատվածներից երկուսը և ուսումնասիրեք դրանք: Ձեր սուրբ գրությունների օրագրում գրեք այն մասին, թե ինչ սովորեցիք ձեր ընտրած հատվածներից: Գրեք այն մասին, թե անգործությունից խուսափելու խորհուրդն ինչպես կօգնի ձեզ ավելի արդյունավետ կերպով ուսուցանել և ծառայել ուրիշներին: Ի վերջո, գրեք մի առանձնահատուկ եղանակ, որի օգնությամբ դուք կխուսափեք անգործությունից: |

# Տնային ուսումնասիրության դաս

## Ալմա 33–38 (Մաս 19)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Ալմա 33–38 (մաս 19)-ի ուսումնասիրության ժամանակ ուսանողների սովորած վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը նախատեսված չէ ուսուցանել որպես ձեր դասի մի մաս: Ձեր դասը կենտրոնանում է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, երբ խորհեք ուսանողների կարիքների մասին:

### Օր 1 (Ալմա 33–35)

Ալման սովորեցրեց զորամացիներին, որ մենք կարող ենք միշտ երկրպագել Աստծուն աղոթքի միջոցով: Ալման այնուհետև սովորեցրեց, որ մենք ստանում ենք Երկնային Հոր ողորմածությունը, ներառյալ մեր մեղքերի թողությունը, Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ: Ամուղեկը սովորեցրեց զորամացիներին, որ Հիսուս Քրիստոսի անսահման և հավերժական Քավությունը փրկություն է նախապատրաստում բոլոր մարդկանց համար: Ուսանողները նաև սովորեցին, որ Քավության բոլոր օրհնությունները ստանալու համար մենք պետք է հավատք գործադրենք ի ապաշխարություն:

### Օր 2 (Ալմա 36)

Իր դարձի գալու վերաբերյալ Ալմայի պատմությունից ուսանողները սովորեցին, որ մեղքը կարող է առաջ բերել մեծ ցավ ու վիշտ: Բացի դրանից, նրանք սովորեցին, որ եթե մենք հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսի Քավությունը, Նա կազատի մեզ մեր մեղքերի ցավից և կլցնի մեզ ուրախությամբ: Ալմայի պես մենք էլ կարող ենք մեծ ուրախություն ստանալ, երբ փորձենք ուրիշներին բերել Քրիստոսի մոտ:

### Օր 3 (Ալմա 37)

Ալման հանձնարարեց իր որդուն՝ Հելամանին, պահել և պահպանել սուրբ հիշատակարանները: Ուսումնասիրելով Ալմայի խոսքերը՝ ուսանողները սովորեցին, որ Իր հավերժական նպատակներն իրականացնելու համար Տերն աշխատում է փոքր և հասարակ բաներով: Նրանք նաև սովորեցին, որ եթե մենք հնազանդվենք Տիրոջ պատվիրաններին, մենք կբարգավաճենք: Ալման ուսուցանեց իր որդուն, որ մենք պետք է սովորենք մեր երիտասարդության օրերում պահել Աստծո պատվիրանները և որ, եթե մենք ականջ դնենք Հիսուս Քրիստոսի խոսքերին, դրանք կառաջնորդեն մեզ ստանալու հավերժական կյանք:

### Օր 4 (Ալմա 38)

Երբ ուսանողներն ուսումնասիրեցին Սիբլոնին ուղղված Ալմայի խորհուրդը, նրանք սովորեցին, որ երբ նրանք սկսում են իրենց երիտասարդության տարիներին հաստատուն և հավատարիմ լինել պատվիրանները պահելու հարցում, նրանք կարող են մեծ ուրախություն բերել իրենց ծնողներին: Ալման վկայեց իր որդիներին, որ Աստված ազատում է անհատներին դժվարություններից, փորձանքներից և տառապանքներից, երբ նրանք ամեն բան տանում են համբերությամբ և Նրան վստահելով: Ալման նաև վկայեց, որ որպեսզի ստանանք ներում մեր մեղքերին և խաղաղություն մեր հոգիներին, մենք պետք է կանչենք առ Աստված ողորմածության համար: Ի վերջո, ուսանողները սովորեցին, որ արդար հատկանիշներ զարգացնելը նախապատրաստում է մեզ սովորեցնել և ծառայել ուրիշներին:

## Նախաբան

Ամուղեկը սովորեցրեց զորամացիներին, որ Քավությունն «անսահման և հավերժական» է (Ալմա 34.10): Ուսանողները սովորեցին այս ճշմարտությունը շաբաթվա ընթացքում կատարած ուսումնասիրությունների ժամանակ, և այս դասը նրանց կտա ևս մեկ հնարավորություն, որ հասկանան և գնահատեն Հիսուս Քրիստոսի Քավությունը:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 33–35

***Ալման և Ամուղեկը սովորեցնում են զորամացիներին Հիսուս Քրիստոսի Քավության մասին:***

Հարցրեք. Ինչո՞ւ էր Հիսուս Քրիստոսը միակը, ով կարող էր քավել աշխարհի մեղքերը:

Հիշեցրեք ուսանողներին, որ որպես իրենց շաբաթական հանձնարարություններ, նրանք կարդացել էին Ալմա 34.10–14-ը և նշել էին արտահայտությունները, որոնք ներառում էին *անսահման* և *հավերժական* բառերը: Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ այս հատվածները, հետո խնդրեք ուսանողներին կիսվել արտահայտություններով, որոնք նրանք ընդգծել են:

Հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը, որ օգնեք նրանց հասկանալ, թե ինչու է Հիսուս Քրիստոսի Քավությունն անսահման և հավերժական.

«Նրա Քավությունն անսահման է՝ առանց վերջի: Այն նաև անսահման էր այն առումով, որ ողջ մարդկությունը կարող էր փրկվել անվերջանալի մահից: Այն անսահման էր Նրա ահռելի տառապանքի առումով: . . . Այն անսահման էր

գործունեության շրջանակով. այն պետք է կատարվեր մեկ անգամ՝ բոլորի համար: Եվ Քավության ողորմածությունը տարածվում է ոչ միայն անսահման քանակությամբ մարդկանց վրա, այլ նաև Նրա կողմից ստեղծված անսահման քանակությամբ աշխարհների վրա: Այն անսահման էր ցանկացած մարդկային չափման միավորից կամ մահկանացու ըմբռնողությունից:

Հիսուսը միակն էր, որ կարող էր առաջարկել այսպիսի անսահման քավություն, քանի որ Նա ծնվել էր մահկանացու մորից և անմահ Հորից: Այդ առանձնահատուկ ծնունդի շնորհիվ Հիսուսն անսահման Էակ էր» (“The Atonement,” *Ensign,* Nov. 1996, 35):

Հարցրեք. Ինչպե՞ս են Ամուղեկի ուսմունքները և Երեց Նելսոնի այս բացատրություններն օգնում մեզ հասկանալ, թե ինչու էր Հիսուս Քրիստոսը միակը, ով կարող էր քավել աշխարհի մեղքերը:

Ուսանողներին խնդրեք ամփոփել, թե ինչ են իրենք մինչ այժմ սովորել Ալմա 34-ից Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Բացատրեք, որ այս բաժնից մենք կարող ենք սովորել այն կարևոր սկզբունքը, որ **Հիսուս Քրիստոսի անսահման և հավերժական Քավությունը արվել է բոլոր մարդկանց համար:**

Գրեք հետևյալ արտահայտությունը գրատախտակին կամ թերթիկի վրա. *Պատկերացրեք կյանքն առանց . . .*

Ցուցադրեք մի առարկա, որը շատ երիտասարդներ արժևորում են (օրինակ՝ բջջային հեռախոս): Հարցրեք. Ինչպիսի՞ն կլիներ կյանքն առանց այս առարկայի:

Հաջորդը, ցուցադրեք ջրով մի շիշ կամ բաժակ (կամ մեկ ուրիշ բան, որը կենսական կարևոր նշանակություն ունի): Հարցրեք. Ինչպիսի՞ն կլիներ կյանքն առանց ջրի:

Երբ ուսանողները պատասխանեն այս հարցերին, լրացրեք գրատախտակի նախադասությունը. *Պատկերացրեք կյանքն առանց Հիսուս Քրիստոսի Քավության:*

Տվեք հետևյալ հարցերը.

- Ըստ ձեզ, ինչպե՞ս են մարդիկ նայում կյանքին, եթե նրանք չգիտեն Հիսուս Քրիստոսի մասին կամ եթե նրանք չեն հավատում, որ կա Աստված:
- Ըստ ձեզ, ի՞նչ կփոխվեր կյանքում ձեզ համար՝ առանց Հիսուս Քրիստոսի Քավության: (Նախքան պատասխաններ հարցնելը, ուսանողներին խորհելու համար ժամանակ տվեք:)

Բացատրեք, որ Ամուղեկը սովորեցրեց զորամացիներին, որ նրանք պետք է ապաշխարեին, որպեսզի իրենց կյանքում ունենային Քավության օրհնությունները (տես Ալմա 34.15–17): Հարցրեք ուսանողներին, թե արդյոք նրանք երբևէ հետաձգել են ապաշխարելը, քանի որ վախեցել են խոստովանել իրենց մեղքերը կամ վախեցել են, որ իրենք բավականաչափ ուժեղ չեն լինի փոխվելու համար: Ապա հարցրեք. Ինչո՞ւ է վտանգավոր հետաձգել ապաշխարությունը:

Հրավիրք ուսանողներին հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 34.30–35, փնտրելով, թե ինչ է Ամուղեկը սովորեցրել այն մասին, թե ինչու մենք չպետք է հետաձգենք ապաշխարելը: Քննարկեք այս հատվածները՝ տալով հետևյալ հարցերը.

- Աչքի անցկացրեք Ալմա 34.32: Ինչո՞ւ մենք պետք է այսօր ապաշխարենք: (Երբ ուսանողները պատասխանեն, օգնեք նրանց հասկանալ այս սկզբունքը. **Մեզ համար այս կյանքն է ժամանակը նախապատրաստվելու՝ հանդիպելու Աստծուն:**)
- Աչքի անցկացրեք Ալմա 34.33: Ո՞րն է այս կյանքի նպատակը: Ի՞նչ կպատահի նրանց, ովքեր կհետաձգեն ապաշխարելը:
- Աչքի անցկացրեք Ալմա 34.31: Ի՞նչ խոստում է տրվում նրանց, ովքեր այժմ են ապաշխարում:

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ խոսքերը.

«Դուք կարիք չունեք իմանալու ամեն բան, նախքան Քավության զորությունը կգործի ձեզ համար: Հավատք ունեցեք առ Քրիստոս. այն սկսում է գործել այն օրը, երբ դուք խնդրում եք» (“Washed Clean,” *Ensign,* May 1997, 10):

Հարցրեք. Ի՞նչ են ձեզ սովորեցնում Նախագահ Փաքերի այս խոսքերը: Ինչպե՞ս են դրանք ձեզ օգնում:

## Ալմա 36

*Ալման խորհուրդ է տալիս իր որդի Հելամանին*

Ձեր ուսանողներն ուսումնասիրել են Ալմայի խորհուրդը, որը նա տվել է իր որդի Հելամանին, որը գտնվում է Ալմա 36-ում, և իմացել են այն ուրախության մասին, որ Ալման զգացել է, երբ անկեղծորեն ապաշխարել է իր մեղքերից: Ուսանողներին հանձնարարվել էր կարդալ Ալմա 36.19–22-ը և հետո գրել իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում, թե ինչ են այս հատվածները սովորեցրել իրենց Քավության զորության մասին (օր 2, առաջադրանք 3): Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչ են իրենք գրել: Վերջում բերեք ձեր վկայությունը Հիսուս Քրիստոսի Քավության և երջանկության մասին, որ գալիս է ապաշխարությունից:

## Հաջորդ Մաս (Ալմա 39–44)

Խնդրեք ուսանողներին մտածել այն մասին, թե ինչպես կարող է հոգատար և սիրող ծնողը ուղղել որդուն կամ դստերը, ով գործել է լուրջ սեռական օրինազանցություններ: Ալման հայտնվել էր նման իրավիճակում և սովորեցրել կարևոր ճշմարտություններ իր որդի Կորիանթոնին, ով մեղանչել էր, մինչ ծառայում էր միսիայում:

ԴԱՍ 96

# Ալմա 39

## Նախաբան

Ալման պատվիրաններ է տալիս իր անվերահսկելի որդուն՝ Կորիանթոնին, ով թողել էր ծառայությունը և գործել էր սեռական մեղք: Ալման սովորեցրեց նրան իր արարքների լրջության մասին և հիասթափություն արտահայտեց, որ Կորիանթոնը գործել էր նման լուրջ մեղք: Ալման պատվիրեց իր որդուն դադարեցնել իր աչքերի տենչանքների ետևից գնալը և ապաշխարել: (Այլ առարկաների շուրջ Ալմայի խորհուրդն ուղղված Կորիանվոնին շարունակվում է 40–42 գլուխներում:)

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 39.1–8

*Ալման բացատրում է իր որդուն՝ Կորիանթոնին սեռական մեղքի լրջությունը:*

Գրատախտակին գրեք հետևյալ հարցը. *Ինչո՞ւ են որոշ մեղքեր ավելի լուրջ, քան մյուսները:*

Հրավիրեք ուսանողներին լուռ խորհել այս հարցի պատասխանների մասին: Նշեք, որ Ալմա 39–ում գտնվող Ալմայի խորհուրդը կարող է օգնել մեզ հասկանալ որոշակի մեղքերի լուրջ բնույթը:

Հրավիրեք ուսանողներին աչքի անցկացնել գլուխ 39-ի վերնագրից անմիջապես վերև գտնվող նշումը: Խնդրեք նրանց ներկայացնել, թե ով է խոսում այս գլխում և թե ում հետ է նա խոսում (Ալման խոսում է իր որդի Կորիանթոնի հետ): Բացատրեք, որ Կորիանթոնը իր եղբայր Սիբլոնի և Ալմայի հետ քարոզում էր ավետարանը զորամացիների մեջ, սակայն նա ընկել էր մեղքի մեջ: Նշեք, որ Կորիանթոնի կատարած սխալը հասկանալը կօգնի ուսանողներին ավելի լավ հասկանալ այս գլխում և հաջորդ երեք գլուխներում նրան տրված Ալմայի խորհուրդը:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 39.1–5: Խնդրեք դասարանին փնտրել, թե ինչ էր արել Կորիանթոնը, որը սխալ էր: (Դուք կարող եք բացատրել, որ *պոռնիկ* բառը հատված 3–ում վերաբերվում է անբարոյական մի կնոջ կամ մարմնավաճառի:)

- Ի՞նչ էր արել Կորիանթոնը, որը սխալ էր: Նրա մեղքերից ո՞րն էր ամենալուրջը: (Սեռական անբարոյությունը:)
- Զորամացիների մեջ Կորիանթոնը պարծեցել էր իր ուժով և իմաստությամբ (տես Ալմա 39.2): Ի՞նչ եղանակներով կարող է հպարտ կեցվածքը տանել դեպի այնպիսի լուրջ մեղքերի, ինչպիսին է սեռական անբարոյությունը: Որո՞նք են հպարտ կեցվածքի ժամանակակից օրինակները, որոնք մարդկանց տանում են դեպի սեռական մեղքեր: (Երբ ուսանողները քննարկեն այս հարցերը, նշեք, որ երբ մարդիկ հպարտ են, նրանք հաճախ գերագնահատում են իրենց սեփական ուժը, ներառյալ գայթակղությանը դիմանալու իրենց ունակությունը: Սրա ժամանակակից օրինակներից են վաղ տարիքում ժամադրությունները և մեկ անձնավորության հետ առանձին ժամադրությունը:)

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 39.5, փնտրելով, թե ինչպես Ալման բացատրեց սեռական մեղքի լրջությունը: (Կարող է օգտակար լինել բացատրելը, որ *պղծություն* բառը վերաբերվում է մի բանի, ինչը մեղսալի է, չարամիտ կամ չափազանց վատ:)

- Ինչպե՞ս է Տերը վերաբերվում սեռական մեղքին: (Երբ ուսանողները պատասխանեն, օգնեք նրանց ներկայացնել ճշմարտությունը, որ **սեռական մեղքը պղծություն է Տիրոջ աչքում:**)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են պոռնկությունը և շնությունը լրջության առումով դրվում սպանության կողքին:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ Տիրոջ չափանիշները և խոստումները կապված սեռական անարատության հետ, հրավիրեք նրանց մտքում կարդալ *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկի «Սեռական անարատություն» բաժնի առաջին երկու պարբերությունները: Խնդրեք նրանց փնտրել հետևյալ հարցի պատասխանները, երբ նրանք կարդան այն: (Դուք կարող եք հարցը գրել գրատախտակին: Դուք նաև կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները գրքույկում նշեն իրենց գտած պատասխանները:)

- Որո՞նք են սեռական անարատությունը պահպանելու օգուտները:

Երբ ուսանողները բավականաչափ ժամանակ ունենան, որ կարդան և զեկուցեն իրենց գտած պատասխանները, խնդրեք նրանց մտքում կարդալ «Սեռական անբարոյություն» բաժնի մնացած մասը՝ փնտրելով հետևյալ հարցի պատասխանները.

- Ի՞նչ չափանիշներ է Տերը հաստատել մեզ համար, որ պահպանենք սեռական անարատությունը:

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչ է Տերն ուզում, որ նրանք սովորեն այն ուղերձից, որը հենց նոր կարդացին: Վկայեք սեռական մեղքի լրջության և այն օրհնությունների մասին, որոնք գալիս են սեռական անարատությունից:

Նշեք, որ իր որդուն նուրբ հարցի շուրջ խորհուրդ տալով, Ալման իր ծնողական պարտքն էր կատարում: Խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչպես կարող են նրանք արձագանքել սեռական անարատության վերաբերյալ իրենց ծնողների կամ Եկեղեցու ղեկավարների խորհրդին: Հրավիրեք նրանց մտքում կարդալ Ալմա 39.7–8, փնտրելով սեռկան մեղքի լրջությունը Կորիանթոնին սովորեցնելու Ալմայի նպատակը:

- Ի՞նչ նպատակով էր Ալման սովորեցնում Կորիանթոնին իր մեղքի լրջության մասին: (Որ օգներ Կորիանթոնին ապաշխարել, որ նա մեղքի զգացումով չկանգներ Աստծո առաջ:)
- Ինչպե՞ս պետք է մենք արձագանքենք, երբ ինչ-որ մեկը հրավիրում է մեզ ապաշխարել:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչու են Ալմայի նման ծնողները հրավիրում իրենց երեխաներին ապաշխարել, կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը.

«Ապաշխարելու հրավերը սիրո արտահայտում է: . . . Եթե մենք չհրավիրենք ուրիշներին փոխվել կամ չպահանջենք ապաշխարություն ինքներս մեզանից, ապա մենք չենք կատարի մեր հիմնական պարտականությունը մեկս մյուսի և ինքներս մեր հանդեպ: Զիջող ծնողը, զվարճությանը տրվող ընկերը, վախ տածող Եկեղեցու ղեկավարը, իրականում ավելի մտահոգված են իրենց համար, քան նրանց բարեկեցության և երջանկության, ում կարող էին օգնել: Այո, ապաշխարության կոչը երբեմն կարող է անհանդուրժողական կամ վիրավորական թվալ, անգամ կարող է թշնամանք առաջացնել, սակայն եթե այն ուղեկցվի Հոգով, իրականում այս խորը հոգատարության դրսևորում է» («Ապաշխարության աստվածային պարգևը», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2011, 39):

## Ալմա 39.9–19

### *Ալման խրախուսում է Կորիանթոնին ապաշխարել:*

Որպեսզի ներկայացնեք խորհուրդը, որն Ալման տվեց իր որդուն, թե ինչպես ապաշխարել և դառնալ դեպի Տերը, գրատախտակին գրեք հետևյալը. *Ապաշխարությունը ներառում է . . .*

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 39.9–13: Յուրաքանչյուր հատվածից հետո դադար առեք, որ ուսանողներին տաք հետևյալ հարցերը.

**Ալմա 39.9**

- Ի՞նչ է նշանակում «թողնել քո մեղքերը»: (Այլևս չգործել դրանք:)
- Ի՞նչ կապ կա «այլևս չգնաս քո աչքերի տենչանքների ետևից» և «խաչ քաշիր բոլոր այդ բաների վրա» արտահայտությունների և մեղքը թողնելու միջև: (Դուք կարող եք բացատրել, որ մեր օրերում «քո աչքերի տենչանքները» արտահայտությունը կարող է վերաբերվել պատկերներին և ժամանցներին, որոնք ինչ-որ կերպով

**Ալմա 39.9**-ը սերտման սուրբ գրության հատված է: Որպեսզի օգնեք ուսանողներին սերտել այս հատվածը, անդրադարձեք դասի վերջում գտնվող ուսուցման մտքին:

պոռնոգրաֆիկ են։ Պոռնոգրաֆիայի վտանգը շեշտելու համար խորհեք խնդրել ուսանողներին, որ կարդան այս խնդրի շուրջ տրված խորհուրդը *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկի 12-րդ էջում։ Դուք կարող եք նաև բացատրել, որ «խաչ քաշել» նշանակում է վարժեցնել ինքնակառավարում կամ ինքնատիրապետում, տես տողատակի գրառումը՝ *9բ*։)

- Ի՞նչ եղանակներով կարող են երիտասարդ Վերջին Օրերի Սրբերը գործադրել ինքնակառավարում սեռական անարատության հետ կապված հարցերում և խուսափել իրենց աչքերի տենչանքների ետևից գնալուց։ (Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի մանրամասն քննարկել այս հարցը, դուք կարող եք նկարագրել որոշ իրադրություններ, որոնք ընդունված են ձեր ուսանողների մշակույթում և պայմաններում։ Օրինակ, դուք կարող եք ասել նմնատիպ մի բան. Վերջին Օրերի Սուրբ մի երիտասարդ կին որոշել է «խաչ քաշել» ամեն վատ բանի վրա, սակայն երիտասարդ տղամարդը, որն իրեն դուր է գալիս, հրավիրում է նրան ոչ պատշաճ մի երեկույթի։ Ի՞նչ պետք է նա պատասխանի։)

Նշեք, որ Ալմա 39.9-ը սերտման սուրբ գրության հատված է։ Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները նշեն այս հատվածն իրենց սուրբ գրություններում, որպեսզի կարողանան հեշտությամբ գտնել այն։

**Ալմա 39.10**

- Ի՞նչ եղանակներով կարող է ծնողներից, Եկեղեցու ղեկավարներից, քույրերից և եղբայրներից հոգևոր սնուցում փնտրելն օգնել մեզ ապաշխարել։

**Ալմա 39.11**

- Ի՞նչ է նշանակում «քեզ թույլ մի տուր տարվել» արտահայտությունը։ (Դուք կարող եք բացատրել, որ *թույլ տալ* բառը նշանակում է հնարավորություն տալ։)
- Ի՞նչ «ունայն կամ հիմար» բաներ եք դուք տեսնում, որոնցով մարդիկ տարվում են այսօր։

**Ալմա 39.12**

- Ի՞նչ է նշանակում ետ կանգնել անօրինությունից։ (Խուսափել մեղքից։)

**Ալմա 39.13**

Բացատրեք, որ ապաշխարություն նշանակում է «սիրտը և կամքը դարձնել դեպի Աստված » (տես թեմաների այբբենական ցանկը, «Ապաշխարություն»)։ Սուրբ գրություններում «դառնալ դեպի Տերը» արտահայտությունը սովորաբար նշանակում է ապաշխարություն։

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «դառնաս դեպի Տերը քո բոլոր մտքով, կարողությամբ և ուժով»։

Հիշեցրեք ուսանողներին, որ զորամացիների մեջ ծառայելու ընթացքում Կորիանթոնի վարքը տեսնելով, որոշ մարդիկ չհավատացին Ալմայի խոսքերին (տես Ալմա 39.11)։

- Երբ մեր մեղքերը ազդում են ուրիշների վրա, ի՞նչ պետք է մենք անենք որպես մեր ապաշխարության մի մաս։ (Ընդունել կամ խոստովանել մեր սխալները նրանց առջև, ում մենք ցավ ենք պատճառել, և փորձենք հատուցել դրա դիմաց։)

Գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. ***Ապաշխարությունը ներառում է մեր մեղքերն ընդունելը և թողնելը, և դեպի Տերը դառնալը մեր բոլոր մտքով, կարողությամբ և ուժով:*** Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները գրեն այս նախադասությունն իրենց սուրբ գրություններում Ալմա 39.13–ի կողքին։ Հրավիրեք ուսանողներին նոթատետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրել, թե, ըստ իրենց, ինչ կցանկանար Տերը, որ նրանք անեին, որ դարձնեին իրենց սրտերը և կամքը դեպի Տերը ավելի լիարժեք ձևով։

Ապաշխարության գործընթացում Փրկչի դերը շեշտելու համար խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 39.15–16, 19։ Խնդրեք դասարանին փնտրել բառը, որն այս հատվածներում կրկնվում է երեք անգամ։ (Այդ բառն է «ավետիքը», որը դուք կարող եք բացատրել, որ նշանակում է «լավ լուր»։)

- Ի՞նչ «ավետիք» էր Ալման սովորեցնում իր որդուն։ (Ուսանողների տված պատասխանների մեջ պետք է լինի այն ճշմարտությունը, որ **Հիսուս Քրիստոսը եկել էր, որ վեր առներ աշխարհի մեղքերը:** Դուք կարող եք սա գրել գրատախտակին։)

- Ինչո՞ւ էր Հիսուս Քրիստոսի գալուստը լավ լուր Կորիանթոնի համար: (Երբ ուսանողները պատասխանեն այս հարցին, դուք կարող եք ասել նրանց, որ հետագայում Կորիանթոնն ապաշխարեց իր մեղքերից և կրկին միսիոներ դարձավ [տես Ալմա 49.30]:)

Կիսվեք դասարանի հետ, թե ինչպես է Հիսուս Քրիստոսի Քավության ուղերձն «ավետիք» եղել ձեզ համար կամ նրանց համար, ում դուք ճանաչում եք: Ավելացրեք ձեր վկայությունն այն սկզբունքների վերաբերյալ, որոնք դասարանը քննարկել է Ալմա 39–ից: Խրախուսեք ուսանողներին հետևել դասի ժամանակ ստացած հուշումներին, որ պահպանեն իրենց անարատությունը և դառնան դեպի Տերը ապաշխարության միջոցով:

## Սերտման սուրբ գրություն. Ալմա 39.9

Դասարանը բաժանեք չորս կամ հինգ խմբի: Յուրաքանչյուր խմբին տվեք վեց կողմանի զառ և մատիտ: (Եթե ձեռքի տակ զառեր չունեք, կարող եք վարժությունը ձեր պայմաններին հարմարեցնել՝ ծրարի կամ այլ տուփի մեջ դնելով վեց թերթիկներ, որոնցից յուրաքանչյուրի վրա գրված կլինի 1-6 թվերից մեկը:) Յուրաքանչյուր ուսանողի նաև պետք կլինի մաքուր մի թերթիկ: Ուսանողների խմբերը թող իրար մոտ նստեն՝ սեղանի շուրջ կամ շրջանաձև: Հրավիրեք նրանց բացել իրենց սուրբ գրություններում Ալմա 39.9–ը:

Բացատրեք, որ վարժության նպատակն է խմբում լինել առաջինը, ով ամբողջությամբ կարտագրի Ալմա 39.9–ը: Սակայն, քանի որ յուրաքանչյուր խմբում կա միայն մեկ մատիտ, խմբում հերթով պետք է գրեն: Մատիտն օգտագործելու իրավունքը տրվում է նրան, ով զառը գլորում է 1 թվի վրա:

Յուրաքանչյուր խմբի անդամները թող հերթով գլորեն զառը (կամ վերցնեն թերթիկը և հետո վերադարձնեն այն): Երբ մեկը գլորում է (կամ ընտրում) 1թիվը, նա վերցնում է մատիտը և սկսում է գրել, բարձրաձայն ասելով յուրաքանչյուր բառը, մինչ գրում է դրանք: Այդ ընթացքում խմբի մյուս անդամները հերթով գլորում են զառը, որ կարողանան մատիտն օգտագործելու հնարավորություն ձեռք բերել: Երբ խմբի մեկ այլ ուսանող գլորում է 1 թիվը, նա վերցնում է մատիտը նախորդ գրողից և սկսում է գրել հատվածն իր թերթիկի վրա՝բառերն ասելով: Նախորդ գրողը միանում է խմբի մյուս անդամներին և գլորում զառը: Երբ ուսանողները մատիտն ունենալու հնարավորություն են ձեռք բերում և արդեն իսկ իրենց թերթիկների վրա գրած ունեն հատվածի մի մասը, նրանք պետք է բարձրաձայն կարդան իրենց գրած մասը, նախքան կշարունակեն գրել հատվածը: (Սա կրկնելու հնարավորություն է տալիս, որը կօգնի ուսանողներին անգիր սովորել հատվածը:) Վարժությունն ավարտվում է, երբ յուրաքանչյուր խմբից մեկական ուսանող ամբողջությամբ գրում է Ալմա 39.9-ը:

Խնդրեք դասարանին վարժությունը կատարելուց հետո միասին կրկնել հատվածը:

*Նշում.* Այս հատվածի բնույթից և երկարությունից ելնելով՝ դուք կարող եք օգտագործել այս վարժությունը մեկ այլ օր, երբ ունենաք լրացուցիչ ժամանակ:

ԴԱՍ 97

# Ալմա 40

## Նախաբան

Երբ Ալման նախազգուշացրեց իր որդի Կորիանթոնին մեղքի հետևանքների մասին, նա նաև սովորեցրեց մահից հետո կյանքի մասին: Նա բացատրեց, որ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ բոլոր մարդիկ հարություն կառնեն: Նա սովորեցրեց հոգևոր աշխարհի մասին, որտեղ մահացածները, կախված իրենց մահկանացու կյանքի ժամանակ կատարած ընտրություններից, սպասում են կամ դրախտում, կամ բանտում, մինչև հարությունը:

*Նշում.* Այս դասի ժամանակ ուսանողները հնարավորություն կունենան սովորեցնելու միմյանց: Նախքան դասը պատրաստեք տպված թերթիկներ, որոնք պարունակում են ուղեկցող հրահանգներ զույգերի համար: Ծանոթացեք յուրաքանչյուր հրահանգի հետ, որպեսզի դուք կարողանաք օգնել ուսանողներին, երբ նրանք նախապատրաստվեն սովորեցնելուն:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 40

*Ալման սովորեցնում է Կորիանթոնին հոգևոր աշխարհի և հարության մասին*

Նախքան դասը սկսելը գրատախտակին գրեք հետևյալ հարցերը.

1. *Ի՞նչն է հնարավոր դարձնում, որ մենք ապրենք մահից հետո: Ո՞վ հարություն կառնի:*
2. *Ո՞ւր կգնանք մենք, երբ մահանանք: Ինչպիսի՞ն է այդ աշխարհը:*
3. *Ի՞նչ է հարությունը: Ինչո՞վ կտարբերվեն մեր հարություն առած մարմինները մեր մահկանացու մարմիններից: Ի՞նչ ենք մենք անելու հարություն առնելուց հետո:*

Հրավիրեք ուսանողներին պատկերացնել, որ նրանք միսիոներներ են և որ նրանք հանդիպում ունեն մեկի հետ, ով փնտրում է գրատախտակին գրված հարցերի պատասխանները: Բացատրեք, որ Ալմա 40-ը իր որդի Կորիանթոնին ուղղված Ալմայի ուսմունքների շարունակությունն է և պարունակում է այդ հարցերի պատասխանները:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 40.1-ը: Խնդրեք ուսանողներին ներկայացնել, թե ինչու էր Ալման իր որդու հետ քննարկում հարությունը:

- Ինչո՞ւ էր Ալման սովորեցնում Կորիանթոնին հարության մասին:
- Կորիանթոնի ընտրություններից ելնելով, ինչո՞ւ էր նա անհանգստանում հարության մասին:

Դասարանը բաժանեք զույգերի: Յուրաքանչյուր խմբի տվեք մի համար՝ 1, 2, կամ 3: Հրավիրեք յուրաքանչյուր խմբի աշխատել այնպես, կարծես, նրանք միսիոներական զույգեր են, նախապատրաստվելով ուսուցանել կարճ մի դաս, որ պատասխանեն գրատախտակին գրված հարցերին, որոնք համապատասխանում են իրենց տրված համարին: Որպեսզի օգնեք նրանց նախապատրաստվել, տվեք նրանց ցուցումների օրինակը, որը համապատասխանում է իրենց համարին (տես ներքևում): Մինչ ուսանողներն աշխատում են, դուք կարող եք շրջել դասարանում, որպեսզի կարողանաք լսել և օգնել կարիքի դեպքում:

**Զույգ 1. Ալմա 40.1–5**

Հարցեր. *Ի՞նչն է հնարավոր դարձնում, որ մենք ապրենք մեր մահից հետո: Ովքե՞ր հարություն կառնեն:*

Նախապատրաստվեք օգտագործել Ալմա 40.1–5-ը և պատասխանել այս հարցերին: Նախապատրաստվելիս որոշեք, թե դասի որ մասերն են զույգերից յուրաքանչյուրը սովորեցնելու: Պատրաստ եղեք անելու հետևյալը.

***Օգնեք զույգերով կամ խմբերով աշխատող ուսանողներին***

Երբ ուսանողներն աշխատում են զույգերով կամ խմբերով, կարող եք սենյակով շրջել և լսել նրանց քննարկումները: Սա կարող է օգնել ձեզ իմանալ, թե որքան ժամանակ է նրանց անհրաժեշտ իրենց հանձնարարությունն ավարտելու համար: Դա կարող է նաև ձեզ թույլ տալ լսել ուսանողների կիսած մտքերը, որոնց դուք կարող եք ավելի ուշ անդրադառնալ դասի ընթացքում: Նկատի ունեցեք, որ ուսանողները հաճախ ավելի լավ կզգան իրենց, երբ դուք նրանց քննարկումները լսելու ժամանակ գովեք նրանց իրենց ջանքերի և մտքերի համար:

Որոշ պատմական տեղեկություններ տվեք այն մասի վերաբերյալ, որը հանձնարարված է ձեզ: (Երբ դուք սովորեցնում եք սուրբ գրություններից, բացատրեք, թե ով է խոսում, ում հետ է խոսում և ցանկացած այլ հանգամանք, որ կարող է օգնել սովորողներին հասկանալ հատվածը:)

Կարդացեք հատվածները, որոնք պատասխանում են հարցերին: Բացատրեք, թե այս հատվածների ճշմարտություններն ինչպես են օգնում պատասխանել հարցերին: Երբ դուք անեք դա, համոզվեք, որ բոլորը հասկանում են, որ **Հիսուս Քրիստոսի շնորհիվ բոլոր մարդիկ հարություն կառնեն:** Դուք կարող եք նաև խորհուրդ տալ, որ նրանք, ում դուք սովորեցնում եք, գրեն այս ճշմարտությունը իրենց սուրբ գրություններում Ալմա 40.1–5–ի կողքին:

Կիսվեք, թե ինչու է հարության խոստումը կարևոր ձեզ համար: Դուք կարող եք նաև հարցնել նրանց, ում դուք սովորեցնում եք, թե ինչու են նրանք երախտապարտ հարության խոստման համար:

Վկայեք ձեր սովորեցրած ճշմարտությունների մասին:

**Զույգ 2. Ալմա 40.6–14**

Հարցեր. *Որտե՞ղ մենք կգնանք, երբ մահանանք: Ինչպիսի՞ն է այդ աշխարհը:*

Նախապատրաստվեք օգտագործել Ալմա 40.6–7, 11–14–ը և պատասխանել այս հարցերին: Նախապատրաստվելիս որոշեք, թե յուրաքանչյուր զուգընկերը դասի որ մասերն է սովորեցնելու: Պատրաստ եղեք անելու հետևյալը.

Որոշակի պատմական տեղեկություններ տվեք այն մասի վերաբերյալ, որը ձեզ էր հանձնարարված: (Երբ դուք սովորեցնում եք սուրբ գրություններից, բացատրեք, թե ով է խոսում, ում հետ է խոսում և ցանկացած այլ հանգամանք, որ կարող է օգնել սովորողներին հասկանալ այդ հատվածը:)

Կարդացեք հատվածները, որոնք պատասխանում են հարցերին: Բացատրեք, թե ինչպես են այս հատվածների ճշմարտությունները պատասխանում հարցերին: (Կարող է օգտակար լինել նշելը, որ երբ Ալման օգտագործում էր «դրսի խավարը» արտահայտությունը, նա նկատի չուներ Սատանայի և նրանց վերջնական վիճակը, ովքեր դատապարտված են: Նա նկատի ուներ մահից հետո ամբարիշտների վիճակը և մինչև նրանց հարությունն ընկած ժամանակահավածում: Այսօր մենք, սովորաբար, անվանում ենք այս վիճակը հոգևոր բանտ:) Երբ դուք կարդաք այս հատվածները, համոզվեք, որ բոլորը հասկանում են, որ **մահվան և հարության միջև ընկած ժամանակահատվածում արդարների հոգիները բնակվում են դրախտում, իսկ ամբարիշտների հոգիները բնակվում են բանտում:** Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք, ում դուք սովորեցնում եք, գրեն այս ճշմարտությունն իրենց սուրբ գրություններում Ալմա 40.11–14–ի կողքին:

Կիսվեք, թե այս ճշմարտությունները հասկանալն ինչպես է ներգործում այս կյանքում ձեր կատարած ընտրությունների վրա: Դուք կարող եք նաև հարցնել նրանց, ում սովորեցնում եք, թե ինչպես է նրանց օգնել հասկանալը, որ մահից հետո կյանք կա:

Վկայեք ձեր սովորեցրած ճշմարտությունների մասին:

**Զույգ 3—Ալմա 40.21–26**

Հարցեր. *Ի՞նչ է հարությունը: Ինչո՞վ կտարբերվեն մեր հարություն առած մարմինները մեր մահկանացու մարմիններից: Ի՞նչ կանենք մենք մեր հարությունից հետո:*

Նախապատրաստվեք օգտագործել Ալմա 40.21–26-ը և պատասխանել այս հարցերին: Նախապատրաստվելիս որոշեք, թե յուրաքանչյուր զուգընկերը դասի որ մասերն է սովորեցնելու: Պատրաստ եղեք անելու հետևյալը.

Որոշակի պատմական տեղեկություններ տվեք այն մասի վերաբերյալ, որը ձեզ էր հանձնարարված: (Երբ դուք սովորեցնում եք սուրբ գրություններից, բացատրեք, թե ով է խոսում, ում հետ է խոսում և ցանկացած այլ հանգամանք, որ կարող է օգնել սովորողներին հասկանալ այդ հատվածը:)

Կարդացեք հատվածները, որոնք պատասխանում են հարցերին: Բացատրեք, թե ինչպես են այս հատվածների ճշմարտություններն օգնում պատասխանել հարցերին: (Երբ դուք պատրաստվեք սովորեցնելուն, կարող է օգտակար լինել հասկանալը, որ *հոգի* բառը այս հատվածներում վերաբերվում է մարդու հոգուն:) Համոզվեք, որ բոլորը հասկանում են, որ **հարությունը հոգու և մարմնի վերամիավորումն է՝ բոլոր բաները վերականգնված իրենց ճիշտ և կատարյալ**

**կառուցվածքով:** Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք, ում դուք սովորեցնում եք, գրեն այս ճշմարտությունն իրենց սուրբ գրություններում Ալմա 40.21–23–ի կողքին:

Կիսվեք, թե ինչու եք դուք երախտապարտ, իմանալով, որ ձեր մարմինը և հոգին մի օր կվերականգնվեն իրենց ճիշտ և կատարյալ կառուցվածքով: Դուք կարող եք նաև նկարագրել, թե ինչպես է ձեր ընտրությունների վրա ազդում այն գիտելիքը, որ մի օր դուք կկանգնեք Աստծո առաջ և կդատվեք: Խնդրեք նրանց, ում սովորեցնում եք, կիսվել իրենց զգացմունքներով հարության և վերջին դատաստանի վարդապետության վերաբերյալ:

Վկայեք ձեր սովորեցրած ճշմարտությունների մասին:

Երբ ուսանողները պատրաստ լինեն պատասխանել իրենց հանձնարարված հարցերին, նրանց բաժանեք փոքր խմբերի, որպեսզի նրանք կարողանան սովորեցնել միմյանց որպես միսիոներներ: Յուրաքանչյուր խումբ պետք է բաղկացած լինի երեք անդամից և յուրաքանչյուր խմբում զուգընկերները պետք է պատրաստված լինեն պատասխանելու տարբեր հարցերի: (Եթե դասարանը փոքր է, թող յուրաքանչյուր զույգը սովորեցնի ողջ դասը:) Խրախուսեք ուսանողներին դերակատարման ժամանակ սովորեցնելիս և ուրիշներից սովորելիս իրենց բնական ձևով պահել: Վստահեցրեք նրանց, որ Սուրբ Հոգին կարող է ոգեշնչել իրենց և նրանց, ում սովորեցնում են, եթե նրանք անկեղծ են իրենց ուսոցանման և պատասխանելու ընթացքում: Լսեք, թե ինչպես են նրանք սովորեցնում միմյանց, և մտքեր առաջարկեք, երբ դուք ոգեշնչված զգաք:

Խմբերում միմյանց սովորեցնելու համար ժամանակ տրամադրելուց հետո, դասարանին տվեք հետևյալ հարցերից մի քանիսը.

- Ի՞նչ դուք սովորեցիք, երբ պատրաստվում էիք պատասխանել ձեզ հանձնարարված հարցերին: Ի՞նչ դուք սովորեցիք, երբ ուսուցանվեցիք տարբեր զուգընկերների կողմից:
- Իմանալով, որ Կորիանթոնը դժվարություններ ունեցավ հնազանդվելու մաքրաբարոյության օրենքին, ձեր կարծիքով, մահից հետո կյանքի բնույթը հասկանալն ինչպե՞ս կարող էր օգնել նրան դիմակայել հետագա փորձություններին:
- Ինչո՞ւ են այսօր քննարկած ճշմարտությունները կարևոր ձեզ համար:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 40.25–26, տարբերություններ փնտրելով արդարների վերջնական վիճակի և ամբարիշտների վերջնական վիճակի միջև: Երբ նրանք նկարագրեն իրենց գտածը, խնդրեք նրանց կիսվել, թե ինչպես է այս հատվածը ներգործում ավետարանով ապրելու նրանց պարտավորության վրա: Դուք կարող եք կիսվել ձեր պատասխանով այս նույն հարցի վերաբերյալ: Վկայեք հարության օրհնությունները հնարավոր դարձնելու Հիսուս Քրիստոսի դերի մասին:

## Սերտման սուրբ գրության կրկնություն

Սուրբ գրության հատվածի վերաբերյալ ուսանողների հասկացողությունը ավելի կմեծանա, երբ նրանք անձամբ հատվածի վերաբերյալ հարցեր մտածեն: Հրավիրեք ուսանողներին միասին աշխատել դասարանով կամ փոքր խմբերով և գրել հուշող բառեր, որոնք կմատնանշեն որոշակի սերտման սուրբ գրության հատվածի: (Դուք կարող եք ընտրել մի խումբ հատվածներ, որոնք դուք ցանկանում եք, որ ուսանողները սովորեն կամ վերանայեն:) Ապա, թող նրանք ձեզ համար կարդան իրենց հուշող բառերը: Դուք միավոր կվաստակեք, եթե ճիշտ գուշակեք սերտման սուրգ գրության հատվածը: Եթե դուք չկարողանաք ճիշտ գուշակել, միավոր կվաստակի դասարանը:

*Նշում.* Այս դասի ծավալը կարող է ժամանակ տրամադրել այս սուրբ գրության սերտման վարժության համար: Այնուամենայնիվ, որպեսզի համոզվեք, որ ուսանողներն ունեն բավականաչափ ժամանակ դասին նախապատրաստվելու և մասնակցելու համար, դուք կարող եք օգտագործել այս վարժությունը դասի վերջում, եթե ժամանակը թույլ տա: Եթե դուք ժամանակ չունեք որպես այս դասի մի մաս այս վարժությունն օգտագործելու համար, դուք կարող եք այն օգտագործել մեկ այլ օր: Այլ կրկնության վարժությունների համար տես այս ձեռնարկի վերջում գտնվող ցուցիչը:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Ալմա 40.11: «Տարվում են տուն՝այն Աստծո մոտ, որը նրանց կյանք էր տվել»

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը բացատրել է, որ Ալմա 40.11–ի խոսքերը չեն սովորեցնում, որ մենք մահանալուց հետո անմիջապես կտարվենք Աստծո ներկայության մեջ.

«Ալմայի խոսքերը [Ալմա 40.11–14], ինչպես ես եմ դրանք հասկանում, նպատակ չունեն հաղորդելու այն միտքը, որ բոլոր հոգիները վերադառնում են Աստծո ներկայության մեջ հանձնարարություն կատարելու համար, խաղաղության մի վայր կամ պատժի մի վայր, և նրա առջև ստանում են իրենց անհատական դատավճիռը: «Ետ դարձել Աստուծոյ մոտ» [համեմատիր Ժողովող ԺԲ.7]պարզապես նշանակում է, որ նրանց մահկանացու գոյությունը մոտեցել է ավարտին, և նրանք վերադարձել են հոգիների աշխարհ, որտեղ նրանք պետք է լինեն արդարների հետ կամ անարդարների հետ՝ համաձայն իրենց գործերի, որտեղ կսպասեն հարությանը: «Ետ Աստծո մոտ» արտահայտությունը հավասարազոր է շատ այլ հայտնի վիճակների: Օրինակ, տղամարդը ինչ-որ օտար երկրում ավարտել է իր միսիայի սահմանված ժամանակը: Երբ նա ազատվում է կոչումից և վերադառնում Միացյալ Նահանգներ, նա կարող է ասել. «Հրաշալի բան է տուն վերադառնալը»: Սակայն նրա տունը կարող է լինել ինչ-որ տեղ Յուտայում կամ Այդահոյում կամ Արևմուտքի մեկ այլ մասում» (*Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. [1957–66], 2:85):

### Ալմա 40.11–15: Որտե՞ղ է հոգևոր աշխարհը:

Նախագահ Բրիգամ Յանգը սովորեցրել է.

«Որտե՞ղ է հոգևոր աշխարհը: Այն հենց այստեղ է: . . . Արդյո՞ք նրանք [նրանց հոգիները, ովքեր մահացել են] գնում են կազմավորված երկրի սահմաններից այն կողմ: Ոչ, նրանք չեն գնում: Նրանք առաջ են բերվել այս երկրի վրա» (*Discourses of Brigham Young,* sel. John A. Widtsoe [1954], 376):

### Ալմա 40.11–15: Ի՞նչ է պատահում հոգիների հետ հոգևոր աշխարհում:

«Երբ ֆիզիկական մարմինը մահանում է, հոգին շարունակում է ապրել: Հոգևոր աշխարհում արդարների հոգիները «ընդունվում են երջանկության մի վիճակի մեջ, որը կոչվում է դրախտ՝ հանգստության մի վիճակ, խաղաղության մի վիճակ, որտեղ նրանք պիտի հանգստանան բոլոր իրենց տագնապներից և բոլոր մտահոգություններից և վշտից» (Ալմա 40.12): Տեղը, որը կոչվում է հոգևոր բանտ, պահվում է «նրանց համար, ովքեր մահացել են իրենց մեղքերի մեջ, առանց ճշմարտության իմացության, կամ օրինազանցության մեջ, ժխտելով մարգարեներին» (ՎևՈՒ 138.32): Բանտում հոգիներին «սովորեցնում են հավատք առ Աստված, ապաշխարություն մեղքից, մահացածների համար մկրտություն՝ մեղքերի թողության համար, Սուրբ Հոգու պարգևը՝ ձեռնադրմամբ և ավետարանի բոլոր մյուս սկզբունքները, որոնք նրանց համար կարևոր են իմանալ (ՎևՈՒ 138.33–34): Եթե նրանք ընդունեն ավետարանի սկզբունքները, ապաշխարեն իրենց մեղքերից և ընդունեն արարողությունները, որոնք նրանց համար կատարվում են տաճարներում, նրանք կընդունվեն դրախտում» (*Հավատքին հավատարիմ. ավետարանական վկայակոչում* [2004], 131-132):

ԴԱՍ 98

# Ալմա 41

## Նախաբան

Շարունակելով խորհուրդներ տալ իր որդուն՝ Կորիանթոնին, Ալման սովորեցրեց, որ վերականգնման ծրագիրը ներառում է ոչ միայն ֆիզիկական հարություն, այլ նաև հոգևոր վերականգնում, որտեղ մեր հավերժական վիճակը արտացոլվում է մեր մահկանացու գործերում և ցանկություններում: Ալման շեշտում է, որ ամբարշտությունը երբեք չի կարող առաջնորդել երջանկության:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 41

*Ալման սովորեցնում է Կորիանթոնին վերականգնման ծրագրի մասին*

Խնդրեք դասարանին խորհել, թե ինչ ներգործության կարող են ենթարկվել մարդու գործողությունները, եթե նրանք հավատան հետևյալ հայտարարություններին (յուրաքանչյուր հայտարարությունից հետո կանգ առեք, որ թույլ տաք ուսանողներին պատասխանել).

Մահից հետո կյանք չկա:

Մեր մահից հետո մենք կատարյալ կդարձվենք, անկախ երկրի վրա մեր կատարած գործերից:

Վերջին Դատաստանի ժամանակ մենք մեծ վարձք կստանանք մեր լավ գործերի համար և կպատժվենք մեր վատ գործերի համար:

- Ինչո՞ւ է կարևոր ճիշտ հասկանալը, թե ինչ տեղի կունենա մեզ հետ մեր մահից հետո:

Հիշեցրեք ուսանողներին, որ Ալմա 40-ում նրանք սովորել են Կորիանթոնին ուղղված Ալմայի ուսմունքները հոգևոր աշխարհի, հարության և դատաստանի մասին: Բացատրեք, որ Ալմա 41-ում մենք իմանում ենք, որ Կորիանթոնը շփոթված էր այն բանի պատճառով, թե ինչ էին որոշ մարդիկ սովորեցնում հարության մասին: Նշեք Ալմա 41.1-ի «մոլորվել են» արտահայտությունը, և հրավիրեք ուսանողներին կարդալ այս հատվածը, փնտրելով, թե ինչու էին որոշ մարդիկ մոլորվում:

- Ինչո՞ւ էին որոշ մարդիկ մոլորվում: (Դուք կարող եք բացատրել, որ աղավաղել սուրբ գրությունները նշանակում է խեղաթյուրել, աղճատել կամ փոխել դրանց նշանակությունը:)
- Ի՞նչ էր Ալման պատրաստվում բացատրել Կորիանթոնին:

Երբ ուսանողները ներկայացնեն *վերականգնել* բառը, դուք կարող եք գրել այն գրատախտակին: Բացատրեք, որ *վերականգնել* նշանակում է՝ ետ բերել կամ ետ դնել նախկին վիճակում:

Բացատրեք, որ Ալման ցանկանում էր, որ Կորիանթոնը հասկանար, որ իր կոչած «վերականգնման ծրագիրը» ուներ ֆիզիկական կողմ և հոգևոր կողմ (Ալմա 41.2): Հրավիրեք ուսանողներին լուռ ուսումնասիրել Ալմա 41.2–5, փնտրելով բաներ, որոնք ֆիզիկապես կվերականգնվեն մեզ համար մահից հետո, և բաներ, որոնք հոգևորապես կվերականգնվեն: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները նշեն իրենց գտածները: Նախքան ուսանողների կարդալը դուք կարող եք բացատրել, որ *հարկավոր* նշանակում է՝ պահանջվող կամ անհրաժեշտ:

- Ո՞րն է Ալմա 41.2–ում հիշատակված վերականգնման ծրագրի ֆիզիկական կողմը: (Հարության ժամանակ հոգին կվերականգնվի մարմնի հետ և մարմնի բոլոր մասերը կվերականգնվեն:)
- Ո՞րն է Ալմա 41.3–5–ում նկարագրված վերականգնման ծրագրի հոգևոր կողմը: (Երբ ուսանողները պատասխանեն, գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. ***Մենք կվերականգնվենք կամ դեպի երջանկություն կամ***

***թշվառություն՝ համաձայն մահկանացության ժամանակ ունեցած մեր գործերի և ցանկությունների:***)

Հրավիրեք ուսանողներին պատկերացնել, որ նրանք սովորեցնում են այս հատվածները Երեխաների Միությունում:

- Ինչպե՞ս դուք կբացատրեիք հոգևոր վերականգնման վարդապետությունը, որպեսզի երեխաները կարողանան հասկանալ:

Հիշեցրեք ուսանողներին, որ Կորիանթոնը խախտել էր մաքրաբարոյության օրենքը և հրաժարվել էր իր միսիոներական պարտականություններից (տես Ալմա 39.2–4):

- Ինչպե՞ս կարող էր հոգևոր վերականգնման վարդապետությունը ճիշտ հասկանալն օգնել Կորիանթոնին կատարել ավելի լավ ընտրություններ: Ինչպե՞ս կարող է այս վարդապետությունը հասկանալը ներգործել մեր գործերի և ցանկությունների վրա:

Վկայեք այս վարդապետության ճշմարտացիության մասին, և կիսեք ձեր մտքերը Աստծո արդարադատության մասին, որ վերականգնում է մեզանից յուրաքանչյուրին դեպի բարին կամ չարը՝ համաձայն մեր ցանկությունների և մեր գործերի:

Գրատախտակին գրեք հետևյալ հարցը. *Ի՞նչ կլինի, եթե ես մեղք եմ գործել:*

- Համաձայն վերականգնման ծրագրի, ի՞նչ ենք մենք ստանում, եթե մենք մեղք ենք գործել:
- Կա՞ արդյոք որևէ ուղի, որով մենք վերականգնվենք ի բարին և երջանկությունը, երբ մենք սխալ ենք գործել:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 41.6–9: Խնդրեք դասարանին փնտրել, թե ինչ կարող ենք մենք անել, որ վերականգնվենք ի բարին և երջանկությունը, նույնիսկ եթե մենք մեղք ենք գործել: (Մենք պետք է ապաշխարենք և արդարություն ցանկանանք մեր ողջ կյանքում:)

- Ո՞ր բառերը կամ արտահայտություններն են Ալմա 41.6–7–ում հուշում, որ մենք պատասխանատու ենք այն բանի համար, թե ինչ ենք ստանում հարության ժամանակ: Ինչպե՞ս ենք մենք հանդիսանում մեր սեփական դատավորները: (Մահկանացության ժամանակ մեր կատարած ընտրություններով է որոշվում, թե ինչպես մենք կդատվենք, երբ կանգնենք Աստծո առաջ:)

Նշեք, որ որոշ մարդիկ մտածում են, որ իրենք կարող են վերադառնալ և ապրել Աստծո հետ, առանց իրենց գործողությունների համար անձնական պատասխանատվության: Նրանք հաճախ ասում են, որ իրենց մեղսալի ընտրությունները զվարճալի են: Երբեմն նրանք, ովքեր ներգրավված են մեղքի մեջ, կարող են նույնիսկ երջանիկ երևալ:

Հրավիրեք ուսանողներին կանգնել և բարձրաձայն կարդալ Ալմա 41.10–ը միասին: Նշեք, որ Ալմա 41.10 սերտման հատված է: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները նշեն այս հատվածը առանձնակի ձևով, որպեսզի նրանք կարողանան հեշտությամբ գտնել այն: (Քանի որ սա սերտման սուրբ գրություն է, դուք կարող եք խնդրել նրանց միասին կրկնել այն ավելի, քան մեկ անգամ: Դուք կարող եք հարցնել, թե ով կարող է դասարանում անգիր ասել այն:) Երբ նրանք վերջացնեն, խնդրեք դասարանին նստել: Գրատախտակին գրեք ***«Ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել»:***

- Ինչո՞ւ է ճշմարտացի այն, որ «ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել»:
- Ի՞նչ օրինակ կարող եք բերել, թե ինչպես է Սատանան մեզ համոզում չպահել որևէ պատվիրան և հավատալ, որ մենք, այնուամենայնիվ, կարող ենք երջանիկ լինել:

Որպեսզի օգնեք ուսանողներին գնահատել տարբերությունը վաղանցիկ աշխարհիկ հաճույքների և Տիրոջ առաջարկած երջանկության միջև, կարդացեք Յոթանասունից Երեց Գլին Լ. Փեյսի հետևյալ խոսքերը.

«Գործողությունները, որոնք միշտ արգելվել են Տիրոջ կողմից և շատ տարիներ հավանության չեն արժանացել հասարակության կողմից, այժմ ընդունվում և գովազդվում են այդ նույն հասարակության կողմից: Զանգվածային լրատվամիջոցներն այնպես են մատուցում այս գործողությունները, որ ներկայացնեն դրանք որպես շատ ցանկալի բաներ: . . .

. . . Մի շփոթեք թելեստիալ հաճույքը սելեստիալ երջանկության և ուրախության հետ: Մի շփոթեք ինքնատիրապետման պակասը ազատության հետ: Բացարձակ

***Միասին կարդալ***

Միասին կարդալը կարող է ավելի մեծ կարևորություն տալ սուրբ գրության հատվածին, ինչպես նաև նպաստել դասարանի միասնականությանը: Դա նաև դասի մեջ զանազանություն մտցնելու մի միջոց է: Օգտագործեք այս միտքը, երբ տեսնեք, որ ուսանողներին պետք է նոր լիցքեր հաղորդել: Խրախուսեք նրանց կարդալիս դանդաղ և միասին ասել բառերը:

ազատությունն առանց պատշաճ զսպվածության մեզ դարձնում է մեր ցանկությունների գերին: Մի ցանկացեք ավելի պակաս ու ցածր կյանք: . . .

. . . Պատվիրանները, որոնք դուք պահում եք, ձեզ չեն տրվել անգութ Աստծո կողմից, որ հեռու պահի ձեզ զվարճությունից, այլ սիրող Երկնային Հոր կողմից, ով ուզում է, որ դուք լինեք երջանիկ, մինչ դուք ապրում եք այս երկրի վրա, ինչպես նաև դրանից հետո էլ» (“They’re Not Really Happy,” *Ensign,* Nov. 1987, 39–40):

Գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունը: Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները գրեն այն իրենց սուրբ գրություններում Ալմա 41.10–ի կողքին: (“To ‘the Rising Generation,’” *New Era,* June 1986, 5:)

*«Դուք չեք կարող սխալ բան անել և լավ զգալ: Դա անհնար է» (Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոն):*

Ասացեք ուսանողներին, որ Ալմա 41.11-ում բացատրվում է, թե ինչու է անհնարին լինել իսկապես երջանիկ, երբ սխալ ընտրություններ ենք կատարում: Գրատախտակին գրեք հետևյալ ցանկը (դուք կարող եք անել սա նախքան դասի սկսվելը) կամ պատրաստեք դրանք տպված թերթիկների տեսքով յուրաքանչյուր ուսանողի համար: Ուսանողներին զույգերի բաժանեք, և հանձնարարեք նրանց համընկեցնել Ալմա 41.11-ի յուրաքանչյուր արտահայտությունն իր իմաստի հետ: Նաև հրավիրեք նրանց քննարկել կից հարցերը:

| Արտահայտություններ Ալմա 41.11–ում, որ նկարագրում են «բնական վիճակում» լինելը | Նշանակությունը |
|---|---|
| 1. «Բնական վիճակում» | ա.Սահմանափակված և բեռնված մեր մեղքերով |
| 2. «Դառը մաղձի և անօրինության կապանքների մեջ» | բ. Զուրկ լինել Աստծո օրհնություններից և առաջնորդությունից. կորցնել Սուրբ Հոգու ընկերակցությունը |
| 3. «Առանց Աստծո ես աշխարհում» | գ. Ղեկավարվել մարմնի ցանկությամբ |

Այս հատվածում մենք տեսնում ենք, որ «Աստծո էությունը» «երջանկության էությունն» է: Ի՞նչ է սա ձեզ ասում այն մասին, թե ինչու է մեղսավորությունը հակառակ երջանկության էությանը:

Ի՞նչ որոշ առանձնահատուկ օրինակներ կան, թե ինչու մարդիկ կարող են իրենց գտնել դժբախտ վիճակում:

*(Պատասխաններ. 1-գ, 2-ա, 3-բ)*

Որպեսզի օգնեք ուսանողներին տեսնել, թե ինչ կապ կա «բնական վիճակում» լինելու և վերականգնման վարդապետության միջև, հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ Ալմա 41.12: Հատվածը կարդալուց հետո խնդրեք ուսանողներին պատասխանել Ալմայի հարցին: Ապա ուսանողները թող կարդան իր իսկ հարցին տրված Ալմայի պատասխանը Ալմա 41.13–ում: (Դուք կարող եք առաջարկել, որ նրանք նշեն այն, ինչ Ալման ասաց, որ կվերադարձվի մեզ որպես վերականգնման ծրագրի մաս:)

Խնդրեք ուսանողներին պատկերացնել, որ իրենք ունեն ընկեր, ով ընտրում է գործել Աստծո պատվիրաններին հակառակ, սակայն ցանկանում է վերականգնվել արդարակեցության մեջ: Հրավիրեք ուսանողներին բացատրել վերականգնման վարդապետությունը իրենց զուգընկերոջը, պատկերացնելով, որ նա այդ ընկերն է, օգտագործելով Ալմա 41.12–13: (Ուսանողները կարող են օգտագործել իրենց սեփական բառերը կամ գրատախտակին գրված նախադասության բառերը. *«Մենք կվերականգնվենք կամ երջանկության կամ թշվառության մեջ՝ համաձայն մահկանացության մեջ մեր ունեցած գործերի և ցանկությունների»:* )

Ուսանողներին ցույց տվեք բումերանգ կամ նկարեք այն գրատախտակին:

Հարցրեք ուսանողներին, թե ինչ է անում բումերանգը, երբ ճիշտ եք այն նետում: (Այն վերադառնում է այն վայրը, որտեղից նետվել էր:) Խնդրեք նրանց մտքում կարդալ Ալմա 41.14–15, փնտրելով ուղիներ, որոնցով բումերանգը կարող է ներկայացնել

**Ալմա 41.10**-ը սերտման սուրբ գրություն է: Որպեսզի օգնեք ուսանողներին սերտել այս հատվածը, անդրադարձեք դասի վերջում գտնվող ուսուցանման մտքին:

***Հրավիրեք ուսանողներին բացատրել վարդապետություններ և սկզբունքներ***

Ուսանողներին հնարավորություն տվեք բացատրել ուրիշներին վարդապետությունները և սկզբունքները, որ նրանք սովորում են դասարանում: Երբ նրանք նախապատրաստվեն բացատրել ավետարանի ճշմարտությունները, նրանք կսովորեն խորհել սուրբ գրությունների հատվածներն ավելի խորությամբ և կազմակերպել իրենց մտքերը: Երբ նրանք բացատրեն այս ճշմարտություններն ուրիշներին, Սուրբ Հոգին կխորացնի նրանց հասկացողությունը և վկայությունը այն ճշմարտությունների վերաբերյալ, որ նրանք սովորեցնում են:

այս հատվածում ուսուցանված ճշմարտությունները: (Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այս հատվածները:) Հրավիրեք ուսանողներին բացատրել, թե ինչ են իրենք գտել:

- Ի՞նչ եք դուք ակնկալում ստանալ ուրիշներից և Տիրոջից այս և հաջորդ կյանքում: (Պատասխանները կարող են ներառել բարություն, ողորմածություն և սեր: Խորհեք ուսանողների պատասխանները գրատախտակին գրելու մասին:)
- Ե՞րբ եք դուք ուրիշներին տվել բարություն, ողորմածություն կամ սիրալիրություն և հետագայում այն ետ ստացել:

Խրախուսեք ուսանողներին նպատակ դնել գործել այնպես և զարգացնել այնպիսի հատկանիշներ, որոնք կանդրադառնան այն բանի վրա, ինչ իրենք ակնկալում են, որ կվերականգնվի իրենց այս և հաջորդկյանքում: Վկայեք երջանկության մասին, որը գալիս է, երբ մենք արդարություն ենք գործում:

## Սերտման սուրբ գրություն. Ալմա 41.10

*Նշում.* Ելնելով այս դասի բնույթից և ծավալից, հետևյալ վարժությունն ավելի լավ կլինի օգտագործել մեկ այլ օր, երբ դուք լրացուցիչ ժամանակ կունենաք:

Գրատախտակին գրեք հետևյալը. . . . *երջանկություն է:*

Հրավիրեք ուսանողներին ասել նախադասություններ Ալմա 41.10–ում ուսուցանված վարդապետության հակառակ իմաստով: (Հնարավոր պատասխաններից մեկն է «Արդարությունը երջանկություն է»:) Ապա հրավիրեք ուսանողներին թվարկել որոշակի արդար արարքներ, որոնցով կարելի է լրացնել նախադասությունը: (Օրինակ, «Ուրիշներին ծառայելը երջանկություն է»:) Հարցրեք ուսանողներին, թե արդյոք նրանք կարող են վկայել, որ այս արդար գործերից ցանկացածը տանում է դեպի երջանկություն: Երբ մի քանի ուսանողներ կիսվեն իրենց փորձառություններով և վկայություններով, հրավիրեք դասարանին գրպանում տեղավարվող քարտի կամ թերթիկի վրա գրել մեկ կամ երկու արդար գործեր, որ նրանք կարող են անել շաբաթվա ընթացքում, որ մեծացնեն իրենց երջանկությունը: Խրախուսեք նրանց միշտ իրենց մոտ ունենալ իրենց թերթիկները որպես հիշեցում և զեկուցել իրենց ջանքերի մասին հաջորդ օրերին:

ԴԱՍ 99

# Ալմա 42

## Նախաբան

Ալման ավարտեց իր որդի Կորիանթոնին ուղղված խորհուրդը, բացատրելով, որ Երկնային Հայրը ուղի է պատրաստել նրանց համար, ովքեր մեղանչում են, ձեռք բերել ողորմածություն: Նա սովորեցրեց, որ Աստծո արդարադատությունը պահանջում է, որ մեղավորները կտրվեն Աստծո ներկայությունից: Ապա Նա վկայեց, որ Հիսուս Քրիստոսը «կբավարարի արդարադատության պահանջները» (Ալմա 42.15), տառապելով բոլոր նրանց համար, ովքեր մեղանչել են, և ողորմածություն ապահովելով ապաշխարողի համար:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 42.1–14

*Ալման սովորեցնում է Կորիանթոնին Աստծո արդարադատության մասին*

Նախքան դասը, գրատախտակին նկարեք հասարակ մի կշեռք, ինչպես ցույց է տրված հետևյալ էջում: (Նկարին բառեր մի ավելացրեք, մինչև որ դասի ժամանակ ցուցումներ չտրվեն դրա համար: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին գծել այս պատկերը նոթատետրերում կամ սուրբ գրությունների օրագրերում:)

Կշեռքի վերևում գրեք հետևյալ նախադասությունը. *Ես ուզում եմ, որ Վերջին Դատաստանը արդար լինի:*

Հրավիրեք ուսանողներին ձեռք բարձրացնել, եթե նրանք համաձայն են գրատախտակին գրված նախադասության հետ:

- Ինչո՞ւ եք դուք ցանկանում, որ Վերջին Դատաստանը արդար լինի:
- Ի՞նչ է նշանակում *արդար* բառը:

Առաջարկեք, որ *արդար* կարող է նշանակել ստանալ այն, ինչին դուք արժանի եք: Արդարության գաղափարը կապված է սուրբ գրքային *արդարադատություն* տերմինի հետ: Գրատախտակին կշեռքի տակ գրեք *Արդարադատություն* բառը:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ արդարադատության գաղափարը, խնդրեք ուսանողներից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսի հետևյալ բացատրությունը.

«*Արդարադատությունը* ունի շատ իմաստներ: Դրանցից մեկը հավասարակշռությունն է: Արդարադատության հայտնի խորհրդանիշներից է հավասար նժարներով կշեռքը: Այսպիսով, երբ մարդկային օրենքները ոտնահարվում են, արդարադատությունը սովորաբար պահանջում է, որ պատիժ կիրառվի, տույժ, որը կվերականգնի [կշեռքի] հավասարակշռությունը: . . .

Աստծո օրենքները նմանապես առնչվում են արդարադատության հետ: Արդարադատության գաղափարը, որպես այն, ինչին մարդն արժանի է, հիմնական նախադրյալն է բոլոր սուրբ գրությունների, որ խոսում են այն մասին, որ մարդիկ դատվում են համաձայն իրենց գործերի» (“Sins, Crimes, and Atonement” [address to CES religious educators, Feb. 7, 1992], 1, si.lds.org):

Բացատրեք, որ Ալմայի որդի Կորիանթոնին անհանգստացնում էր Վերջին Դատաստանի արդար լինելը: Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 42.1, մինչ դասարանը կփնտրի, թե ըստ Կորիանթոնի ինչն անիրավացի կլներ կամ անարդար Վերջին Դատաստանի ժամանակ:

- Ըստ Կորիանթոնի, ի՞նչն էր անարդարություն: (Որ մեղսագործը պիտի մատնվեր թշվառության մի վիճակի:)
- Ինչո՞ւ էր Կորիանթոնը ցանկանում հավատալ, որ անարդարություն էր, որ նրանք, ովքեր մեղանչել էին, պատժվեին: (Եթե ուսանողները հիշեցման կարիք ունեն, որ Կորիանթոնը աշխատում էր ազատվել մի շարք մեղքերից, թող նրանք անդրադառնան Ալմա 39.2–3:)

- Եթե արդարադատությունը նշանակում է ստանալ այն, ինչին մենք արժանի ենք և պատժվեր մեր մեղքերի համար, ինչպե՞ս կարող է սա մտահոգիչ լինել նաև մեզ համար: (Մենք բոլորս էլ մեղանչում ենք և ենթակա ենք արդարադատության պահանջներին:)

Ամփոփեք Ալմա 42.2–11, բացատրելով, որ Ալման անդրադարձավ Կորիանթոնի մտահոգությանը: Նա սովորեցրեց, որ Ադամի Անկումը բոլոր մարդկանց բերեց ընկած մի վիճակի, որում նրանք պետք է տանեն ֆիզիկական մահ և հոգևոր մահ (տես Ալմա 42.9): Նա նաև բացատրեց, որ եթե մի միջոց չլիներ այս ընկած վիճակից բարձրանալու համար, բոլոր մարդկանց հոգիները կլինեին թշվառ և կտրված Աստծո ներկայությունից հավիտյան (տես Ալմա 42.11):

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 42.12: Բացատրեք, որ այս հատվածը շեշտում է, որ Անկումը և դրա հետևանքները, ներառյալ Աստծո ներկայությունից կտրված լինելը, առաջ էին բերվել Աստծո պատվիրաններին Ադամի անհնազանդությամբ: Օգնեք ուսանողներին հասկանալ, որ երբ մենք չենք հնազանդվում Աստծո պատվիրաններին, այսինքն երբ մենք մեղանչում ենք, մենք հոգևորապես հեռանում ենք Աստծուց և մեզ ենթակա ենք դարձնում արդարադատության պահանջներին: (Դուք կարող եք հրավիրել ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հավատո Հանգանակ 1.2-ը:) Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 42.14–ը, փնտրելով հետևանքները, որ արդարադատությունը պահանջում է անհնազանդության դիմաց:

- Ի՞նչ է նշանակում «կտրված լինել» Աստծո ներկայությունից: (Հեռացվել Աստծուց և չկարողանալ վերադառնալ Նրա ներկայության մեջ ապրելու համար: Դուք կարող եք նաև նշել, որ երբ մենք մեղք ենք գործում, մենք հեռացնում ենք մեզանից Սուրբ Հոգու ընկերակցությունը, ով Աստվածգլխի անդամ է:)

Գրատախտակին ավելացրեք *Անհնազանդություն կամ մեղք* և *Կտրված Աստծո ներկայությունից* արտահայտությունները, ինչպես ցույց է տրված ներքևում:




Ելնելով Ալմա 42.1–14-ից սովորածից, ինչպե՞ս դուք մեկ նախադասությամբ կամփոփեք, թե ինչ է պահանջում արդարադատության օրենքը, երբ մարդն անհնազանդ է: (Գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունը կշեռքի տակ. ***Մեր անհնազանդության պատճառով արդարադատության օրենքը պահանջում է, որ մենք կտրված լինենք Աստծո ներկայությունից:*** Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները գրեն այս ճշմարտությունն իրենց սուրբ գրություններում Ալմա 42.1–14–ի մոտ:)

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 42.18, փնտրելով մեղքի մեկ այլ հետևանք:

- Ի՞նչ է նշանակում ունենալ խղճի խայթ:

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե երբ են նրանք զգացել վիշտ և տառապանք կամ Սուրբ Հոգու բացակայությունը մեղք գործելու պատճառով: Խնդրեք նրանց պատկերացնել այդ զգացումը՝ բազմապատկված այն ամենով, ինչը նրանք երբևէ սխալ են արել: Ապա խնդրեք նրանց պատկերացնել, որ այդ զգացումը մնալու է իրենց հետ հավիտյան:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ և զգալ ողորմածության կարիքը, դուք կարող եք տալ հետևյալ հարցը.

- Ելնելով այն ամենից, ինչ սովորեցիք Ալմա 42.1–14, դուք ցանկանո՞ւմ եք, որ Վերջին Դատաստանը հիմնված լինի միայն արդարադատության վրա:

## Ալմա 42.15–31

*Ալման սովորեցնում է Կորիանթոնին ողորմածության ծրագրի մասին*

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, որ արդարադատության պահանջները պետք է բավարարվեն, գրատախտակի վրա մատնացույց արեք կշեռքի պատժի կողմը: Դուք կարող եք ձեր ձեռքում պահել մի ջնջոց, կարծես թե դուք պատրաստվում եք ջնջել արդարադատության պահանջները: Հարցրեք.

- Կա՞ որևէ միջոց, որ արդարադատության պահանջները ջնջվեն կամ հեռացվեն: (Ոչ: Երբ Աստծո օրենքները չեն պահվում, արդարադատությունը պատիժ է պահանջում: Արդարադատության պահանջներն ինչ-որ կերպ պետք է բավարարվեն:)

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ անարդարացի կլիներ ջնջել արդարադատության պահանջած հետևանքները: Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 42.25:

- Ըստ Ալմայի, ի՞նչ կպատահեր, եթե մեղքի հետևանքները հեռացվեին և արդարադատության պահանջները չբավարարվեին:

Խնդրեք ուսանողներին խորհել հետևյալ հարցի շուրջ, նախքան կասեք նրանց սուրբ գրության հատվածը, որտեղ կարող են գտնել պատասխանը.

- Եթե արդարադատության պահանջները չեն կարող ջնջվել, ապա ինչպես կարող են նրանք, ովքեր մեղանչել են (մեզանից յուրաքանչյուրը) երբևէ ունենալ հանգիստ խիղճ և վերականգնվել Աստծո ներկայության մեջ: (Խորհելու համար ուսանողներին ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ Ալմա 42.15: Կարող է օգտակար լինել բացատրելը, որ «բավարարելով արդարադատության պահանջները» արտահայտությունը նշանակում է վճարել գինը կամ տանել պատիժը, որ արդարադատությունը պահանջում է:)
- Համաձայն Ալմա 42.15, ինչպե՞ս է հնարավոր, որ ողորմածությունը երբևիցե կարողանա տարածվել մեզ վրա:

Ուսանողների պատասխանների հիման վրա գրատախտակից ջնջեք «Կտրված Աստծո ներկայությունից» արտահայտությունը և գրեք *Հիսուս Քրիստոսի Քավությունը* և *Ողորմածություն:* Կշեռքի տակ գրեք հետևյալ ճշմարտությունը. ***Հիսուս Քրիստոսի Քավությունը բավարարեց արդարադատության պահանջները, որպեսզի ողորմածությունը կարողանա տարածվել մեզ վրա:***




- Ի՞նչ է նշանակում ձեզ համար իմանալը, որ Փրկիչն իր հոժար կամքով տառապել է ձեր փոխարեն, որպեսզի ողորմածությունը կարողանա տարածվել ձեզ վրա:

Հրավիրեք ուսանողներին կարդալ Ալմա 42.22–24 և փնտրել, թե ինչ է պահանջվում, որպեսզի ողորմածությունը տարածվի մեզ վրա:

- Ի՞նչ է պահանջվում մեզանից, որ ձեռք բերենք ողորմածություն և խուսափենք արդարադատության բոլոր պահանջներից: (Երբ ուսանողները ներկայացնեն ապաշխարությունը որպես միջոց, որի շնորհիվ մենք ողորմածություն ենք ձեռք բերում, գրատախտակին կշեռքի տակ գրեք հետևյալ սկզբունքը. ***Եթե մենք ապաշխարենք, մենք ողորմածություն կստանանք Փրկչի Քավության միջոցով:*** Դուք նաև կարող եք առաջարկել, որ նրանք գրեն այն իրենց սուրբ գրություններում Ալմա 42.22–24–ի կողքին:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «անկեղծորեն զղջացող» արտահայտությունը: (Անկեղծորեն ապաշխարող:)

***Հրավիրեք ուսանողներին խորհել հարցի շուրջ***

Հարց տալը, որը պահանջում է ուսանողներից մտածել նախքան պատասխանելը, խթանում է պատասխանն իմանալու նրանց ցանկությունը և առիթ է հանդիսանում, որ նրանք ավելի խորությամբ նայեն սուրբ գրություններին կամ իրենց անձնական փորձառություններին՝ հասկացողության համար: Ուսանողներին ժամանակ տվեք, որ մտածեն հարցի շուրջ, նախքան նրանց ուշադրությունը կիրավիրեք սուրբ գրությունների վրա, որտեղ կարող են գտնել պատասխանները:

- Ինչո՞ւ է մեզ համար կարևոր հասկանալը, որ Փրկիչը մեր փոխարեն տարել է մեր մեղքերի պատիժները։

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը մեր Միջնորդն է։ Միջնորդը մեկն է, ով կանգնում է երկու կողմերի միջև, որ օգնի լուծել հակասությունը։ Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Քֆ. Փաքերի հետևյալ խոսքերը։ Հրավիրեք դասարանին լսել պատճառները, թե ինչու է երրորդ անձնավորությունն անհրաժեշտ, որ ողորմածությունը տարածվի մեղավորի վրա.

«Հավերժական օրենքով, ողորմածությունը չի կարող հասանելի լինել, եթե չլինի մեկը, ով կամենում է և կարող է վերցնել մեր պարտքը և վճարել գինը և սահմանել մեր փրկագնման համար պայմանները։

Եթե չլինի մի միջնորդ, եթե մենք չունենք մի ընկեր, արդարադատության ողջ ծանրությունը՝ անհավասարակշիռ, անկարեկից, պետք է, անշուշտ պետք է ընկնի մեզ վրա։ Ողջ փոխհատուցումը յուրաքանչյուր օրինազանցության համը, հորքան էլ մեծ կամ որքան էլ խորն այն լինի, կպահանջվի մեզանից մինչև վերջ։

Սակայն, իմացեք սա. Ճշմարտությունը, փառահեղ ճշմարտությունը հայտարարում է, որ կա նման Միջնորդ։ . . .

Նրա միջոցով ողորմածությունը կարող է լիովին հասանելի լինել մեզանից յուրքանչյուրին՝ առանց արդարադատության հավերժական օրենքն անարգելու։ . . .

Ողորմածության հասանելիությունը մեխանիկորեն չի լինի։ Այն կլինի Նրա հետ ուխտի միջոցով։ Այն կլինի Նրա սահմանած պայմաններով, Նրա առատաձեռն պայմաններով» (“The Mediator,” *Ensign,* May 1977, 55–56)։

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 42.29–31, փնտրելով, թե ինչ էր Ալման ցանկանում Կորիանթոնին։ (Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն իրենց գտածը։)

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում թույլ տալ արդարադատությունը և ողորմածությունը և Տիրոջ երկայնամտությունը «լիակատար ազդեցություն ունենա քո սրտում»։

Հրավիրեք ուսանողներին գրել հակիրճ դասի ծրագիր, որը ցույց է տալիս, թե նրանք ինչպես կարող են սովորեցնել ուրիշներին արդարադատություն և ողորմածություն հասկացողությունները։ Խրախուսեք նրանց սովորեցնել իրենց ընտանիքներին այն, ինչ իրենք սովորել են այսօր։

Հիշեցրեք ուսանողներին Աստծո արդարադատության վերաբերյալ Կորիանթոնի մտահոգության մասին։ Դուք կարող եք վկայել, որ Վերջին Դատաստանը արդար կլինի և որ մենք ի վերջո կստանանք այն, ինչին արժանի ենք՝ համաձայն Աստծո արդարադատության և ողորմածության։ Դուք նաև կարող եք նշել, որ Կորիանթոնը ապաշխարեց իր մեղքերից և դրական ազդեցություն ունեցավ Եկեղեցու աճի վրա (տես Ալմա 49.30)։ Խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչպես կարող են նրանք առաջընթաց ունենալ իրենց ապաշխարության գործընթացում։

Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց երախտագիտությամբ և վկայությամբ, որ Տերը կամեցավ քավել մեր մեղքերը և բավարարել արդարադատության պահանջները մեր փոխարեն։ Կիսվեք ձեր վկայությամբ ողորմածության և փրկագնման մասին, որ հնարավոր դարձան Փրկչի քավող զոհաբերության միջոցով։

ԴԱՍ 100

# Ալմա 43–44

## Նախաբան

Երբ Ալման և նրա որդիները շարունակեցին քարոզել ավետարանը, զորամացիները միացան լամանացիների բանակներին՝ նեփիացիների վրա հարձակվելու համար: Մորոնի զորապետը հավատք և իմաստություն է ցուցաբերում նեփիացիներին առջևորդելիս, որ պաշտպանեն իրենց լամանացիների զորքից: Չնայած նրանք թվով գերակշռում էին, նեփիացի զինվորների նախապատրաստությունները և հավատքն առ Հիսուս Քրիստոսը նրանց առավելություն տվեց ճակատամարտում: Երբ լամանացիները հանդիպեցին որոշակի ձախողման, նրանք խաղաղության ուխտ կապեցին և որոշ ժամանակով հեռացան երկրից:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 43

*Մորոնի զորապետի նախապատրաստությունները և ռազմավարությունը օգնում են խափանել լամանացիների բանակի ծրագրերը*

Հրավիրեք ուսանողներին գրել նոթատետրերում կամ սուրբ գրությունների օրագրերում իրենց ապագային վերաբերվող ծրագրերի, նպատակների և ցանկությունների մի ցուցակ: Մինչ նրանք գրում են, հիշեցրեք նրանց, որ մտածեն հոգևոր նպատակների և ցանկությունների մասին, ինչպես օրինակ միսիա ծառայելը, տաճարում կնքվելը և ընտանիք մեծացնելը: Նախքան դասը դուք կարող եք գրել ձեր իսկ ապագային վերաբերվող նպատակների և ցանկությունների այդպիսի մի ցուցակ: Դուք կարող եք որպես օրինակ կիսվել ձեր որոշ ծրագրերով և ցանկություններով, որպեսզի օգնեք ուսանողներին սկսել գրել:

Երբ ուսանողները կազմեն իրենց ցուցակները, հրավիրեք նրանց ներկայացնել ցանկությունները և նպատակները, որ ըստ իրենց Սատանան չէր ցանկանա դրանք իրականանան: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել այդ նպատակներով: Խնդրեք նրանց բացատրել, թե ինչու Սատանան չի ցանկանում, որ նրանք իրականացնեն այդ նպատակները: Առաջարկեք, որ Ալմա 43–44–ի ուսումնասիրությունը կարող է օգնել մեզ տեսնել, թե ինչպես կարող ենք իրականացնել մեր արդար նպատակները՝ չնայած հակառակորդի կործանարար ջանքերին:

Ամփոփեք Ալմա 43.1–4, բացատրելով, որ չնայած զորամացիներին Եկեղեցի ետ բերելու Ալմայի ջանքերին, նրանցից շատերը միացան լամանացիներին և նախապատրաստվեցին հարձակվել նեփիացիների վրա: Նրանց էին միացել նաև ամաղեկացիները, ովքեր, զորամացիների նման, մի ժամանակ նեփիացի էին, սակայն շեղվել էին ճշմարտությունից:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 43.5–8: Խնդրեք դասարանին հետևել՝ փնտրելով լամանացիների ղեկավար Զերահեմնայի պլանները կամ «ծրագրերը»:

Բացատրեք, որ երբ մենք Մորմոնի Գրքում ուսումնասիրում ենք ֆիզիկական պատերազմների պատմություններ, մենք կարող ենք նմանեցնել դրանք հոգևոր պատերազմներին, որոնց մենք հանդիպում ենք:

- Ինչպե՞ս կարող են նեփիացիների դեմ Զերահեմնայի ծրագրերը նմանվել մեր դեմ ունեցած Սատանայի ծրագրերին:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 43.9–12: Խնդրեք դասարանին ներկայացնել նեփիացիների ծրագրերը:

- Ի՞նչ ծրագրեր ունեին նեփիացիները:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 43.16–19: Հրավիրեք նրանց փնտրել, թե ինչ արեց Մորոնին՝ նեփիացիների գլխավոր զորապետը, որ նախապատրաստեր մարդկանց պաշտպանել իրենց երկիրը և ընտանիքներին:

- Ի՞նչ հատուկ բաներ արեցին նեփիացիները, որ նախապատրաստվեին լամանացիների հարձակմանը։

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 43.20–22, և խնդրեք դասարանին փնտրել լամանացիների արձագանքը նեփիացիների նախապատրաստություններին։

- Ինչո՞ւ լամանացիները հետաձգեցին իրենց հարձակումը, չնայած որ նրանք թվով գերազանցում էին նեփիացիներին։
- Ի՞նչ կարող ենք մենք սովորել այս իրադարձությունից Սատանայի ծրագրերից մեզ պաշտպանելու մասին։

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 43.23–24, որպեսզի պարզեն, թե ինչ արեց Մորոնին, երբ նա վստահ չէր, թե ինչպես էր իր թշնամին ծրագրում հաջորդ հարձակումը։

- Ինչո՞ւ Մորոնին սուրհանդակներ ուղարկեց, որ խոսեն Ալմայի հետ։
- Ի՞նչ կարող ենք սովորել Մորոնիի օրինակից այն մասին, թե ինչպես մենք կարող ենք հակառակորդի դեմ նախապատրաստվել հոգևորապես։ (Օգնեք ուսանողներին ներկայացնել հետևյալ սկզբունքը. **Եթե մենք փնտրում և հետևում ենք մարգարեական խորհրդին, մենք ավելի լավ կկարողանանք պաշտպանել մեզ հակառակորդից։**)

Հակիրճ ամփոփեք Ալմա 43.25–43, պատմելով, որ Մորոնին գործեց համաձայն մարգարեից ստացած գիտելիքի։ Նա բաժանեց իր բանակը երկու մասի։ Որոշ զինվորներ մնացին Երսոն քաղաքում, որ պաշտպանեն Ամմոնի ժողովրդին։ Բանակի մնացած մասը արշավեց դեպի Մանթիի երկիրը։ Մորոնին լրտեսներ ուղարկեց, որ պարզեր, թե որտեղ էին լամանացիները և նա մնացած զինվորներին թաքցրեց այն ճանապարհի եզերքով մեկ, որով շարժվելու էին լամանացիները։ Երբ լամանացիները հայտնվեցին, նեփիացի զինվորները շրջապատեցին նրանց։ Երբ լամանացիները տեսան, որ իրենք շրջապատված են, նրանք վայրագորեն կռվեցին։ Շատ նեփիացիներ մահացան, սակայն լամանացիները ավելի շատ զոհեր ունեցան։

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 43.43–54։ Խնդրեք դասարանին փնտրել լամանացիների դրդապատճառների և ուժի աղբյուրի ու նեփիացիների դրդապատճառների և ուժի աղբյուրի միջև եղած տարբերությունը։

- Ի՞նչ դուք նկատեցիք կռվելու համար լամանացիների ունեցած պատճառների վերաբերյալ։ Ի՞նչ դուք նկատեցիք կռվելու համար նեփիացիների ունեցած պատճառների վերաբերյալ։ (Անհրաժեշտության դեպքում նշեք, որ մինչդեռ լամանացիները կռվում էին իրենց ատելությունից և բարկությունից դրդված, նեփիացիները ոգեշնչված էին ավելի լավ պատճառներով [տես Ալմա 43.45–47]։ Նրանք աղաղակեցին առ Տերը օգնության համար, և Նա ուժ տվեց նրանց [տես Ալմա 43.49–50]։)
- Ի՞նչ կարող ենք մենք սովորել Մորոնիի և նրա բանակի օրինակներից, որ կօգնեն մեզ հակառակորդի դեմ մեր պատերազմում։

Հրավիրեք ուսանողներին գրել այս հարցի շուրջ իրենց պատասխանները։ Ապա խնդրեք նրանց կիսվել իրենց գրածով։ Նրանք կարող է նշեն հետևյալ սկզբունքներից մի քանիսը.

**Եթե մենք աղոթենք օգնության համար մեր արդար ծրագրենը և ցանկություններն իրականացնելիս, Աստված կօգնի մեզ իրականացնել դրանք։**

**Մենք ոգեշնչված ենք ավելի լավ նպատակով, քան նրանք, ովքեր մերժում են ճշմարտությունը։**

**Տերը կօգնի մեզ կատարել մեր պարտականությունը՝ պաշտպանելու մեր ընտանիքներին, մեր ազատությունը և մեր կրոնը։**

Հրավիրեք ուսանողներին պատմել այնպիսի պահերի մասին, երբ նրանք զգացել են Տիրոջ օգնությունը արդար նպատակներ իրագործելիս։ Խորհեք ձեր սեփական փորձառություններով կիսվելու մասին։ Վկայեք այն մասին, որ Տերը կարող է օգնել մեզ իրականացնել արդար ծրագրերը։ Հրավիրեք ուսանողներին արդար նպատակները դարձնել իրենց աղոթքների շարունակական մասը։

## Ալմա 44

### *Մորոնի զորապետը հրամայում է լամանացիներին խաղաղության ուխտ կապել*

Հրավիրեք մի երիտասարդ տղամարդու, ով ցանկանում է կարդալ, առաջ գալ իր սուրբ գրություններով: Հիշեցրեք դասարանին, որ երբ Մորոնի զորապետը տեսավ լամանացիների սարսափը, նա պատվիրեց իր մարդկանց դադարեցնել կռիվը (տես Ալմա 43.54): Երիտասարդ տղամարդը թող կարդա Ալմա 44.1–6 Մորոնիի խոսքերը: Խնդրեք դասարանին լսել նեփիացիների հաղթանակի Մորոնիի բացատրությունը:

- Ի՞նչ էր ուզում Մորոնին, որ Զերահեմնան հասկանար պատերազմում նեփիացիների ուժի աղբյուրի մասին: Ի՞նչ առաջարկեց նա լամանացիներին: (Նա ասաց, որ նեփիացիները այլևս չեն վնասի նրանց, եթե նրանք ցած դնեն իրենց զենքերը և մտնեն խաղաղության ուխտի մեջ:)
- Ի՞նչ ճշմարտություններ մենք կարող ենք սովորել Ալմա 44.4–6, որ կարող են օգնել մեզ մեր հոգևոր պատերազմում: (Ուսանողները կարող են կիսվել մի շարք սկզբունքներով, որոնցից մի քանիսն արդեն իսկ քննարկվել են այս դասին: Համոզվեք, որ նրանք ներառեն հետևյալ ճշմարտությունները. **Տերը կուժեղացնի և կպաշտպանի մեզ համաձայն առ Իրեն մեր հավատքի:** Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն բառեր այս հատվածներում, որոնք ուսուցանում են այս ճշմարտությունը:)

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ երիտասարդներին տրված հետևյալ խորհուրդը Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերի կողմից: Դուք կարող եք յուրաքանչյուր ուսանողի համար օրինակներ պատրաստել:

«Այսօր երիտասարդությունը մեծանում է անկում ապրող բարոյական չափանիշով թշնամու տարածքում: Բայց որպես Տիրոջ ծառա ես խոստանում եմ, որ դուք կպաշտպանվեք և կպատսպարվեք հակառակորդի հարձակումներից, *եթե* դուք կամենաք ուշադրություն դարձնել հուշումներին, որոնք գալիս են Սուրբ Հոգուց:

Համեստ հագնվեք, հարգալիր խոսեք, վեհացնող երաժշտություն լսեք: Խուսափեք ամեն անբարոյականությունից և անձապես այլասերող փորձառություններից: Ձեր ձեռքը վերցրեք ձեր կյանքը և ինքներդ ձեզ կարգադրեք հավատարիմ լինել: Որովհետև մենք մեծապես կախված ենք ձեզանից, դուք նշանակալիորեն կօրհնվեք: Դուք երբեք հեռու չեք ձեր սիրառատ Երկնային Հոր տեսողությունից» («Խորհուրդ երիտասարդությանը», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2011, 18):

- Նախագահ Փաքերի խոսքերից որո՞նք են ավելի տպավորիչ ձեզ համար: Ինչո՞ւ:

Ամփոփեք Ալմա 44.7–10, բացատրելով, որ Զերահեմնան հայտարարեց, որ նա և նրա ժողովուրդը չեն հավատում, որ նեփիացիները ուժեղացվել են Աստծո կողմից: Նա առաջարկեց, որ լամանացիները հանձնեին իրենց զենքերը, սակայն նա հրաժարվեց խաղաղության ուխտ կապել: Հրավիրեք ուսանողին, ով կարդացել էր Ալմա 44.1–6, բարձրաձայն կարդալ Զերահեմնային տված Մորոնիի պատասխանը, որը գտնվում է Ալմա 44.11: Հարցրեք դասարանին.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր Մորոնիի համար շատ կարևոր, որ լամանացիները խաղաղության ուխտ կապեին:

Ամփոփեք Ալմա 44.12–20, բացատրելով, որ մինչ լամանացիներից շատերը խաղաղության ուխտ կապեցին, Զերահեմնան համախմբեց իր մարդկանց մնացած մասին, որ կռվեին Մորոնիի բանակի հետ: Երբ նեփիացիները սկսեցին սպանել նրանց, Զերահեմնան տեսավ իրենց վերահաս կործանումը և խոստացավ մտնել խաղաղության ուխտի մեջ:

Վկայեք Տիրոջ պաշտպանող ձեռքի մասին նրանց կյանքում, ովքեր հավատարիմ են Նրան: Խրախուսեք ուսանողներին անվեհեր մարտնչել իրենց արդար նպատակների և ցանկությունների համար և վստահել Աստծո խոստմանը, որ «կաջակցի և կպահի ու կպահպանի մեզ այնքան ժամանակ, քանի դեռ մենք հավատարիմ ենք նրան» (Ալմա 44.4):

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Ալմա 43.3: Պատերազմը, որ մենք պատերազմում ենք, սկսել է մեր նախաերկրային կյանքում

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին խոսել է այն պատերազմի իրական լինելու մասին, որում մենք ներգրավված ենք եղել աշխարհի սկզբից առաջ.

«Կա [մի] պատերազմ, որը սկսվել է աշխարհի ստեղծումից առաջ և որը հավանաբար կշարունակվի դեռ երկար ժամանակ: . . .

Այդ պատերազմը . . . պատերազմ է ճշտի ու սխալի միջև, ազատ կամքի ու հարկադրանքի միջև, Քրիստոսի հետևորդների և նրանց միջև, ովքեր մերժել են Նրան: Նրա թշնամիներն օգտագործել են յուրաքանչյուր միջոց այդ կոնֆլիկտում: . . .

. . . Այն այնպիսին է, ինչպիսին եղել է սկզբում: . . . Զոհերը, ովքեր ընկնում են, նույնքան թանկագին են, որքան նրանք, ովքեր ընկել են անցյալում: Սա շարունակվող պայքար է:. . .

Պատերազմը շարունակվում է: . . . Այն սկսվել է մեր իսկ կյանքում, շարունակվում է ամեն օր, մեր տներում, մեր աշխատանքում, մեր դպրոցներում. այն առկա է սիրո և հարգանքի, հավատարմության և նվիրվածության, հնազանդության և ազնվության հարցերում: Մենք բոլորս էլ ներգրավված ենք դրանում: . . . Մենք հաղթում ենք, և ապագան երբեք ավելի պայծառ տեսք չի ունեցել» (“The War We Are Winning,” *Ensign,* Nov. 1986, 42, 44–45):

### Ալմա 43.9, 45: Պաշտպանեք և ամրացրեք ընտանիքը

Սփոփող Միության գերագույ նախագահությունից Քույր Վիրջինիա Ու. Ջենսենը անդրադարձել է ընտանիքի հայտարարության այն նախազգուշացմանը, «որ ընտանիքի քայքայումը անհատներին, համայնքներին և ազգերին կպատճառի այն դժբախտությունները, որոնց մասին կանխագուշակել էին հին ու նոր մարգարեները» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2010, 129): Քույր Ջենսենը նկատել է. «Եղբայրներ և քույրեր, հենց այս պահին մենք գտնվում ենք այդ իրականության մեջ: Մեր բոլորի պարտականությունն է պաշտպանել և ամրացնել ընտանիքը» (“Come, Listen to a Prophet’s Voice,” *Ensign,* Nov. 1998, 13–14):

# Տնային ուսումնասիրության դաս

## Ալմա 39–44 (Մաս 20)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Ալմա 39–44 (մաս 20) ուսումնասիրելիս ուսանողների սովորած վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը նախատեսված չէ ուսուցանել որպես ձեր դասի մի մաս: Ձեր ուսուցանած դասը կենտրոնանում է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, երբ դուք խորհեք ուսանողների կարիքների շուրջ:

#### Օր 1 (Ալմա 39)

Ճանապարհից շեղված իր որդուն՝ Կորիանթոնին, ուղղված Ալմայի խոսքերն ուսումնասիրելիս ուսանողները սովորեցին, որ սեռական մեղքը պղծություն է Տիրոջ աչքում: Ալման նաև սովորեցրեց իր որդուն, որ ապաշխարությունը ներառում է մեր մեղքերն ընդունելը և թողնելը, և մեր ողջ մտքով, զորությամբ և ուժով դեպի Տերը դառնալը: Ուսանողները կարդացել են Ալմայի վկայությունը, որ Հիսուս Քրիստոսը եկել էր աշխարհի մեղքերն իր վրա վերցնելու համար:

#### Օր 2 (Ալմա 40–41)

Կորիանթոնը մտահոգված էր հարության և Վերջին Դատաստանի մասին: Այս մտահոգություններին տրված Ալմայի պատասխաններից ուսանողները մի շարք վարդապետություններ սովորեցին հարության հետ կապված, ներառյալ ճշմարտությունը, որ մենք կվերականգնվենք կամ դեպի երջանկություն կամ թշվառություն՝ համաձայն մահկանացության ժամանակ մեր գործերի և ցանկությունների: Ալման նաև շեշտեց, որ «ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել» (Ալմա 41.10):

#### Օր 3 (Ալմա 42)

Ալման օգնեց Կորիանթոնին տեսնել, որ անհնազանդության պատճառով անհատները կտրվում են Աստծո ներկայությունից: Իր հերթին, ուսանողները նաև սովորեցին, թե ինչպես է ազատման ծրագիրը թույլ տալիս անհատներին հաղթահարել իրենց ընկած վիճակը: Ալմայի ուսմունքները հաստատում են, որ Հիսուս Քրիստոսի տառապանքները բավարարում են արդարադատության պահանջները, որպեսզի ողորմածությունը հասանելի լինի նրանց, ովքեր ապաշխարում են:

#### Օր 4 (Ալմա 43–44)

Ուսանողները սովորեցին լամանացիների և նեփիացիների միջև տեղի ունեցած պատերազմի մասին: Ալմա 43–44-ից սովորած դասերից մեկն այն է, որ եթե մենք փնտրենք և հետևենք մարգարեական խորհրդին, մենք ավելի լավ կկարողանանք պաշտպանվել հակառակորդից: Ուսանողները նաև բացահայտեցին, որ երբ մենք աղոթում ենք Տիրոջը մեր արդար ծրագրերի և ցանկությունների համար, Նա կաջակցի մեզ դրանք իրականացնելիս:

### Նախաբան

Ինչպես գրված է Ալմա 39–42–ում, Ալման օգնեց իր որդի Կորիանթոնին հասկանալ սեռական մեղքի լրջությունը, հարությանը և Վերջին Դատաստանին վերաբերվող վարդապետությունները և արդարադատության ու ողորմածության օրենքների հավերժական հետևանքները: Այս դասը ուսանողներին հնարավորություն կտա միմյանց ուսուցանել և բացատրել այս վարդապետությունները:

### Ուսուցանման առաջարկներ

Նախքան դասը պատրաստեք տպված թերթիկներ, որոնք կպարունակեն այս դասի վերաբերյալ ցուցումներ: Ծանոթացեք ցուցումներին, որպեսզի դուք կարողանաք օգնել ուսանողներին հաջողության հասնել միմյանց սովորեցնելու իրենց ջանքերում:

#### Ալմա 39–41

*Ալման սովորեցնում է, որ ապաշխարությունը երջանկություն է բերում*

Դասը սկսեք, հրավիրելով ուսանողներին միասին անգիր ասել Ալմա 39.9, սերտման սուրբ գրության հատված, որ նրանք խրախուսվել էին անգիր սովորել որպես այս շաբաթվա նրանց ուսումնասիրման մաս: Հարցրեք, թե ով կարող է հիշեցնել դասարանին, թե ինչու էր Ալման այս հատվածում խորհուրդ տալիս իր որդի Կորիանթոնին ապաշխարել և թողնել իր մեղքերը:

Հիշեցեք ուսանողներին, որ Ալմա 40–41-ում Ալման նաև անդրադարձավ մահացածների հարության և Վերջին Դատաստանի մասին Կորիանթոնի մտահոգություններին: Որպեսզի օգնեք ուսանողներին բացատրել այն, ինչ սովորել են և կիսվել իրենց զգացմունքներով և վկայությամբ Ալմա 39–41–ում գտնվող ճշմարտությունների մասին, նախքան դասի սկսվելը գրատախտակին գրեք հետևյալ հարցերը և սուրբ գրության հղումները.

1. *Ինչո՞ւ է կարևոր պահել մաքրաբարոյության օրենքը: (Տես Ալմա 39.1–9:)*
2. *Ի՞նչ է հարությունը: Ի՞նչ տարբերություն կա մահկանացու մարմինների և հարություն առած մարմինների միջև: Ի՞նչ է տեղի ունենալու մեր հարությունից հետո: (Տես Ալմա 40.21–26:)*
3. *Ինչպե՞ս ես կդատվեմ Վերջին Դատաստանին: (Տես Ալմա 41.1–7:)*
4. *Երբեմն թվում է, որ ոմանք, ովքեր չեն պահում պատվիրանները, երջանիկ են: Դա այդպե՞ս է: (Տես Ալմա 41.10–15:)*

Խնդրեք ուսանողներին պատկերացնել, որ իրենք միսիոներներ են և որ իրենք հանդիպում ունեն մեկի հետ, ով փնտրում է այս հարցերի պատասխանները: Տեղեկացրեք նրանց, որ իրենց մի փոքր ժամանակ կտրամադրվի նախապատրաստվելու համար, և այնուհետև նրանք հնարավորություն կունենան պատասխանելու այս հարցերից մի քանիսին, օգտագործելով այն, ինչ իրենք սովորեցին Ալմա 39–41:

Եթե ձեր դասարանի չափերը թույլ են տալիս, դասարանը բաժանեք զույգերի, որոնք ներկայացնում են միսիոներական զուգընկերներ: Յուրաքանչյուր զույգին հանձնարարեք գրատախտակի հարցերից մեկը: (Եթե ձեր դասարանը փոքր է, դուք կարող եք հանձնարարել հարցերը առանձին ուսանողներին:) Յուրաքանչյուր զույգին տվեք ստորև տրված հրահանգների օրինակը, և խնդրեք նրանց օգտագործել հատվածների հղումները, որոնք տրված են իրենց հանձնարարված հարցի վերջում, որ պատասխանեն իրենց լսողների հարցերին: Ուսանողներին ժամանակ տվեք, որ վերանայեն հատվածները և կարճ մի դաս պատրաստեն իրենց լսողի համար: Խրախուսեք զույգերին որոշել, թե նրանցից յուրաքանչյուրը հրահանգների որ մասն է պատասխանատու ուսուցանել:

Մինչ ուսանողները պատրաստվում են, դուք կարող եք շրջել ուսանողների մեջ, որպեսզի կարողանաք լսել և անհրաժեշտության դեպքում օգնել: Անհրաժեշտության դեպքում օգնեք ուսանողներին ներկայացնել վարդապետություններ Ալմա 39–41, որոնք օգնում են պատասխանել իրենց հանձնարարված հարցերին: Հետևյալ վարդապետություններն օգտագործեք որպես ուղեցույց.

**Սեռական մեղքը պղծություն է Տիրոջ աչքում** (տես Ալմա 39.1–9):

**Հարությունը հոգու և մարմնի վերամիավորումն է՝ բոլոր բաները վերականգնված իրենց ճիշտ և կատարյալ կառուցվածքով** (տես Ալմա 40.21–26):

**Մենք կվերականգնվենք երջանկության կամ թշվառության մի վիճակում՝ համաձայն մահկանացու կյանքում մեր գործերի և ցանկությունների** (տես Ալմա 41.1–7):

**Ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել** (տես Ալմա 41.10–15):

**Հրահանգներ**

Երբ սովորեցնեք, պատրաստ եղեք անելու հետևյալը.

1. Հատվածների մասին որոշ պատմական տեղեկություն տվեք (ինչպես օրինակ բացատրելով, թե ովքեր էին խոսում, ում հետ էին խոսում և ինչու):
2. Կարդացեք սուրբ գրության հատվածի նախատեսված մասերը, որոնք կօգնեն պատասխանել ձեզ հանձնարարված հարցին:
3. Գրի առեք ձեր ուսումնասիրած հատվածներում ուսուցանված մի վարդապետություն կամ սկզբունք, որը վերաբերվում է ձեզ հանձնարարված հարցին:
4. Բացատրեք, թե ինչպես է ձեր գրած վարդապետությունը կամ սկզբունքը օգնում պատասխանել ձեզ հանձնարարված հարցին: Դուք կարող եք առաջարկել, որ նրանք, ում ուսուցանում եք, գրեն այս վարդապետությունը կամ սկզբունքն իրենց սուրբ գրություններում:
5. Կիսվեք, թե ինչու է այս վարդապետությունը կամ սկզբունքը կարևոր ձեզ համար, և վկայեք ձեր ուսուցանած ճշմարտությունների մասին:

Երբ ուսանողները նախապատրաստվեն պատասխանել իրենց հանձնարարված հարցերին, բաժանեք նրանց փոքր խմբերի, որպեսզի կարողանան սովորեցնել միմյանց: (Եթե ձեր դասարանը փոքր է, թող յուրաքանչյուր ուսանող կամ զույգ ուսուցանի ողջ դասարանին:) Երբ ուսանողներն ավարտեն միմյանց սովորեցնել, տվեք դասարանին հետևյալ հարցերը.

- Երբ խորհում եք Կորիանթոնի մեղքերի մասին, ձեր կարծիքով, այս վարդապետությունները հասկանալն ինչո՞ւ օգտակար կլիներ նրա համար:
- Ինչո՞ւ է կարևոր, որ դուք կարողանաք բացատրել այս ճշմարտությունները նրանց, ում հետ դուք կշփվեք ձեր կյանքում:
- Ինչո՞ւ է կարևոր, որ դուք հասկանաք և ապրեք համաձայն այս ճշմարտությունների:

## Ալմա 42

*Ալման սովորեցնում է Կորիանթոնին արդարադատության և ողորմածության մասին*

Գրատախտակին նկարեք մի հասարակ կշեռք: Հրավիրեք ուսանողներից մեկին դասարանին սովորեցնել արդարադատության և ողորմածության գաղափարների մասին, օգտագործելով նկարը և այն, ինչ նա սովորել է Կորիանթոնին տրված Ալմայի ցուցումներից Ալմա 42–ում: Հրավիրեք ուսանողներին իրենց սուրբ գրություններում բացել Ալմա 42-ը և փնտրել արտահայտություններ և նախադասություններ արդարադատության և ողորմածության վերաբերյալ, որ նրանք նշել կամ ընդգծել են:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ պայմանները, որոնցով ողորմածությունը հնարավոր դարձավ, տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ պետք է աներ Հիսուս Քրիստոսը, որ ողորմածությունը հասանելի լիներ մեզ:
- Ի՞նչ պետք է անենք մենք, որ ստանանք ողորմածություն:

Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչո՞ւ են նրանք երախտապարտ Հիսուս Քրիստոսի Քավության համար:

## Ալմա 43–44

*Մարգարեների խորհուրդը լսելը պաշտպանում է մեզ հակառակորդից*

Եթե ժամանակ մնա, խնդրեք ուսանողներին վերանայել, թե ինչ իրենք սովորեցին Ալմա 43–44-ից, կիսվելով, թե ինչ են գրել իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում իրենց հոգևոր պատերազմները պատերազմելու մասին (օր 4, առաջադրանքներ 3 և 4):

## Հաջորդ Մասը (Ալմա 45–63)

Ինչո՞ւ էին նեփիացիներն այդքան հաջող կռվում իրենց թշնամիների դեմ: Ինչպե՞ս էին նրանք կարողանում կռվել Տիրոջ ուժով: Պատասխանները կարելի է գտնել Մորոնի զորապետի, Հելամանի և նրա պատանի զինվորների օրինակներն ուսումնասիրելով:

ԴԱՍ 101

# Ալմա 45–48

## Նախաբան

Իր որդի Հելամանին վերջին հրահանգները տալուց հետո Ալման հեռացավ նեփիի ժողովրդից և այլևս երբեք չլսեցին նրա մասին: Հելամանը դարձավ մեծ հոգևոր առաջնորդ և Մորոնի զորապետը դարձավ կարևոր ռազմական առաջնորդ՝ նեփիացիների համար դժվարին ժամանակներում: Ամաղիկիան՝ մի խումբ նեփիացի պառակտիչների ղեկավարը, մի նենգ ծրագիր առաջարկեց՝ նեփիացիների վրա զորություն ձեռք բերելու համար: Մորոնի զորապետը օգնեց նեփիացիներին պաշտպանվել իրենց թշնամիների հարձակումներից, որպեսզի նրանք կարողանային պահել իրենց ազատությունը և երկրպագելու իրավունքը:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 45

*Հելամանը հավատում է Ալմայի խոսքերին և սկսում է իր ծառայությունը*

Հրավիրեք ուսանողներին մտածել մի հարցազրույցի մասին, որ նրանք ունեցել են իրենց ծնողի կամ քահանայության ղեկավարի հետ:

- Ի՞նչ հարցեր են ծնողները կամ քահանայության ղեկավարները սովորաբար տալիս հարցազրույցների ժամանակ:

Կարճ քննարկումից հետո բացատրեք, որ նախքան Ալման իր որդի Հելամանին հանձնեց սուրբ հիշատակարանները և հեռացավ երկրից (տես Ալմա 45.18–19), նա Հելամանին մի շարք հարցեր տվեց: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 45.2–8, փնտրելով Ալմայի տված հարցերը և Հելամանի տված պատասխանները:

- Երբ Ալման և Հելամանը ունեցան այս զրույցը, նեփիացիները պատերազմում էին լամանացիների հետ: Ձեր կարծիքով, Հելամանի հավատքն ինչե՞ս էր օգնում իրեն պատերազմի ժամանակ և իր ծառայության ընթացքում:
- Ե՞րբ եք դուք ուժ ստացել առ Հիսուս Քրիստոսը ձեր հավատքից, մարգարեների խոսքերից և պատվիրանները պահելու ձեր պատասխանատվությունից:

Ամփոփեք Ալմա 45.9–19, ասելով ուսանողներին, որ երբ Ալման մարգարեացավ նեփիի ժողովրդի վերջնական կործանման մասին, նա հեռացավ երկրից և այլևս երբեք չլսեցին նրա մասին: Նախքան հեռանալը նա տվեց իր վերջին մարգարեությունը: Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 45.16:

- Ի՞նչ ճշմարտություններ մենք կարող ենք սովորել այս մարգարեությունից: (Ուսանողները կարող են նշել մի շարք սկզբունքներ, սակայն համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **Տերը չի կարող մեղքը նվազագույն իսկ աստիճանով թույլատրելի համարել:**)

Բացատրեք, որ Հելամանը սկսեց իր ծառայությունը երկրով մեկ Եկեղեցու վրա քահանաներ և ուսուցիչներ նշանակելով: Հրավիրեք ուսանողներին աչքի անցկացնել Ալմա 45.23–24, փնտրելով, թե ինչպես ժողովուրդն արձագանքեց եկեղեցու այս ղեկավարներին:

- Ինչպե՞ս ժողովուրդն արձագանքեց Եկեղեցու իրենց ղեկավարներին: Ինչո՞ւ որոշ մարդիկ հրաժարվեցին լսել Եկեղեցու ղեկավարներին:

### Ալմա 46

*Մորոնի զորապետը հավաքում է արդարներին, որ պաշտպանեն իրենց իրավունքները և իրենց կրոնը*

Ամփոփեք Ալմա 46.1–3, բացատրելով, որ նրանք, ովքեր չլսեցին Եկեղեցու ղեկավարներին, առաջնորդվեցին Ամաղիկիա անունով մի մարդու կողմից: Խնդրեք

ուսանողներին մտքում կարդալ Ալմա 46.4–5, փնտրելով, թե ինչ էին ցանկանում Ամաղիկիան և նրա հետևորդները: Հրավիրեք ուսանողներին բացատրել այն, ինչ իրենք բացահայտեցին:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 46.6–7, փնտրելով Ամաղիկիայի ազդեցության հետևանքները նրանց վրա, ովքեր հետևեցին նրան:

- Ի՞նչ պատահեց Ամաղիկիայի ազդեցության արդյունքում:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 46.8–10, փնտրելով դասերը, որոնք Մորմոնը ցանկանում էր, որ մենք սովորենք Ամաղիկիայի արարքներից: Դուք կարող եք նշել, որ այս խրատներից շատերը ներկայացվում են «Այսպիսով մենք տեսնում ենք» և «Մենք տեսնում ենք» բառերով: (Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այս խրատներն իրենց սուրբ գրություններում:) Ուսանողները կարող են գտնել հետևյալ խրատները.

Շատ մարդիկ արագ են մոռանում Տիրոջը և անօրինություն անում:

Մեկ ամբարիշտ մարդ կարող է առաջ բերել մեծ ամբարշտություն:

Ամաղիկիային Մորոնի զորապետի հետ հակադրելու համար խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 46.11–18 և Ալմա 48.11–13, 17: Հրավիրեք դասարանի կեսին փնտրել, թե ինչ էր ուզում Մորոնին: Հրավիրեք դասարանի մյուս կեսին փնտրել բառեր և արտահայտություններ, որոնք նկարագրում են, թե ինչպիսին էր Մորոնին: (Օգնեք ուսանողներին տեսնել Մորոնիի արդար դրդապատճառների և Ամաղիկիայի ամբարիշտ դրդապատճառների միջև եղած տարբերությունը: Մորոնին աջակցում էր ազատության և արդարության նպատակին, մինչդեռ Ամաղիկիան զորություն էր փափագում ձեռք բերել և ցանկանում էր գերության բերել նեփիացիներին:)

- Հիմնվելով ձեր կարդացածի վրա, դուք ինչպե՞ս կնկարագրեիք Մորոնի զորապետին: Ի՞նչ սկզբունքներ մենք կարող ենք սովորել այս հատվածներից: (Ուսանողները կարող են առաջարկել մի շարք տարբեր սկզբունքներ, ներառյալ այն ճշմարտությունը, որ **մեկ արդար մարդը կարող է առաջ բերել մեծ արդարություն:**)
- Համաձայն Ալմա 46.11–18, ինչի՞ համար էր Մորոնին աղոթում: (Որ ազատության օրհնությունները մնային նեփիացիների հետ և որ «Քրիստոնյաների գործը» հովանավորվեր Աստծո կողմից:)

Մորոնին աղոթեց «Քրիստոնյաների գործի» համար: Համաձայն Ալմա 46.12, ըստ Մորոնիի Քրիստոնյաներն ի՞նչ երեք գաղափարներ պատք է պաշտպանեին: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ **մեր պարտքն է պաշտպանել ընտանիքներին, մեր կրոնը և մեր ազատությունը:** Տես նաև Ալմա 43.45–48:)

- Ի՞նչ խնդիրներ կան այսօր կանգնած ընտանիքների, Քրիստոնյաների և ազատության դեմ: Ի՞նչ պատշաճ եղանակներով մենք կարող ենք պաշտպանել մեր ընտանիքներին, մեր կրոնը և մեր ազատությունը:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 46.18–22, փնտրելով, թե ինչ խնդրեց Մորոնին իր ժողովրդին անել: (Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները այս հատվածներում նշեն *ուխտ* բառը:)

- Ի՞նչ ուխտեցին ժողովուրդն անել: (Պաշտպանել իրենց իրավունքները և իրենց կրոնը, չթողնել Տիրոջը, չխախտել Աստծո պատվիրանները և չամաչել իրենց վրա վերցնել Քրիստոսի անունը:)
- Համաձայն Ալմա 46.22, ի՞նչ արեցին մարդիկ որպես իրենց կապած ուխտի խորհրդանիշ: (Նրանք պատռեցին իրենց հանդերձները և գցեցին Մորոնիի ոտքերի մոտ:)

Ցուցադրեք մի հագուստ և պատռեք այն մեջտեղից: Դուք կարող եք բացատրել, որ իրենց հանդերձները պատռելով մարդիկ ցույց էին տալիս իրենց նվիրվածությունն առ իրենց կապած ուխտը:

- Համաձայն Ալմա 46.21–22, ի՞նչ ասացին ժողովուրդը, որ պիտի պատահեր, եթե նրանք չպահեին իրենց ուխտը:
- Ինչպե՞ս է սա ձեզ օգնում հասկանալ ուխտերի էության կարևորությունը, որոնք մենք կապում ենք Աստծո հետ:

Հիշեցրեք ուսանողներին, որ Մորոնին և իր ժողովուրդը հանդիպում էին թշնամիներին, ովքեր ուզում էին կործանել նրանց։

- Համաձայն Ալմա 46.18, ի՞նչը կարող էր, ըստ Մորոնիի ասածի, կործանման բերել իր ժողովրդին։

Գրատախտակին գրեք հետևյալը. *Եթե մենք պահենք մեր ուխտերը, Աստված . . .*

Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչպես կարող են նրանք լրացնել նախադասությունը՝ հիմնվելով Ալմա 46.18–22–ից սովորածի վրա։ Նաև խնդրեք նրանց օրինակ բերել, թե ինչպես նրանք գիտեն, որ նախադասությունը ճիշտ է։ Պատասխանները կարող են բազմազան լինել։ Ամփոփեք պատասխանները, լրացնելով գրատախտակի արտահայտությունը հետևյալ կերպ. ***Եթե մենք պահենք մեր ուխտերը, Աստված կօրհնի մեզ:*** Խրախուսեք ուսանողներին Ալմայի մնացած գլուխներն ուսումնասիրելիս փնտրել մի իրադարձություն, որտեղ արտացոլված է այս սկզբունքը։ Դուք կարող եք պատմել մի ժամանակաշրջանի մասին, երբ Տերն օրհնել է ձեզ ձեր ուխտերը մեծարելու համար։

Ամփոփեք Ալմա 46.29–41։ Բացատրեք, որ Ամաղիկիան և իր հատևորդները տեսան, որ նրանք ավելի բազմաքանակ էին, ուստի իրենք գնացին Նեփիի երկիրը, փորձելով միանալ լամանացիներին։ Մորոնիի բանակը թույլ չտվեց, որ Ամաղիկիայի խմբի մեծամասնությունը հասներ Նեփիի երկրին։ Ամաղիկիայի հետևորդներից շատերը ուխտի մեջ մտան՝ ազատությանը աջակցելու համար։ Մի քանիսը, ովքեր հրաժարվեցին ուխտի մեջ մտնել, մահվան դատապարտվեցին։ Ամաղիկիան և նրա մարդկանցից ընդամենը մի քանիսը փախուստի դիմեցին և միացան լամանացիներին։

## Ալմա 47

### *Խարդավանքով Ամաղիկիան դառնում է լամանացիների թագավորը*

Հարցրեք ուսանողներին, թե ինչ կզգային իրենք, եթե մասնակցեին մրցակցային խաղի կամ մեկ այլ պայքարի, և ունենային մի գիրք, որը կպարունակեր մի ցուցակ, թե ինչ էր պատրաստում անել իրենց հակառակորդը պայքարում հաղթելու համար։ Ասեք ուսանողներին, որ Ալմա 47–ը մեզ նմանեցնելով, մենք կարող ենք որոշ կարևոր դասեր սովորել Սատանայի մարտավարության մասին, երբ փորձում է պարտության մատնել մեզ։

Ամփոփեք Ալմա 47.1–6, ասելով ուսանողներին, որ Ամաղիկիան չէր հրաժարվում նեփիացիներին իշխելու իր նպատակից։ Նա մշակեց մի խորամանկ ծրագիր, որ գահազրկեր լամանացիների թագավորին և դառնար նրանց թագավորը, որպեսզի նա կարողանար ի վերջո լամանացիներին տանել նեփիացիների դեմ պատերազմելու։ Երբ Ամաղիկիան միացավ լամանացիներին, նա ձեռք բերեց նրանց թագավորի բարեհաճությունը, ով նրան տվեց լամանացիների բանակի մի մասի հրամանատարությունը։ Ամաղիկիային և իր զորքին թագավորը հրամայեց հետապնդել լամանացիների բանակի անհնազանդ մասին, որն առաջնորդվում էր Լեքոնտի անունով մի մարդ։ Ամաղիկիային հրամայված էր ստիպել Լեքոնտիի զորքին գնալ նեփիացիների դեմ, սակայն Ամաղիկիան այլ ծրագրեր ուներ։

Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել Ալմա 47.7–19, պատկերացնելով, որ իրենք Լեքոնտին են և Ամաղիկիան Սատանան է։ Խնդրեք նրանց մտքում կարդալ Ալմա 47.7–10, փնտրելով, թե ուր գնաց Լեքոնտին իր զորքին պաշտպանելու համար և ինչ էր Ամաղիկիան փորձում համոզել Լեքոնտիին անել։

- Որտե՞ղ էր Լեքոնտին հավաքել իր զորքը ճակատամարտին պատրաստվելիս։ Ի՞նչ առավելություն ունի զորքը, երբ այն ավելի բարձր տարածքում է, քան իր թշնամին։
- Ի՞նչ էր Ամաղիկիան ուզում, որ Լեքոնտին աներ։ Ի՞նչ եղանակներով է Սատանան փորձում համոզել մեզ ցած իջնել բարձր տեղից։ (Հնարավոր պատասխանները ներառում են մեր չափանիշները ցածրացնելը և գայթակղելը մեզ գնալ վայրեր, որտեղ մենք հոգևորապես ապահով չենք։)

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 47.11–19։ Խնդրեք դասարանին հետևել, խորհելով այն մասին, թե ինչպես կարող են Ամաղիկիայի մարտավարությունը նմանեցվել մեզ կործանելու Սատանայի մարտավարությանը։

- Ինչո՞վ էր Ամաղիկիայի մարտավարությունը նման մեզ կործանելու համար Սատանայի մարտավարությանը: (Հնարավոր պատասխանները ներառում են, որ Սատանան համառ է, ստախոս, նենգ և անգութ:)
- Ի՞նչ եղանակներով է Սատանան փորձում մեզ «աստիճանաբար» թունավորել:

Ամփոփեք Ալմա 47.20–36, բացատրելով, որ Ամաղիկիան շարունակեց խաբել և սպանել, մինչև նա դարձավ լամանացիների թագավորը: Շեշտեք, որ Ամաղիկիայի նպատակները և մարտավարությունը շատ նման էին մեր հետ կպված Սատանայի ունեցած նպատակներին և մարտավարությանը: Հետևյալ սկզբունքը գրեք գրատախտակին. ***Սատանան փնտրում է կործանել մեզ և նա աստիճանաբար գայթակղում է մեզ ցածրացնել մեր չափանիշները:***

## Ալմա 48

### *Մորոնի զորապետը ոգեշնչում է նեփիացիներին լինել պատրաստ և հավատարիմ*

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 48.7–10, փնտրելով, թե ինչ էր անում Մորոնին, մինչ Ամաղիկիան ձգտում էր իշխանություն ձեռք բերել լամանացիների մեջ:

- Ի՞նչ էր անում Մորոնին, մինչ Ամաղիկիան ձգտում էր իշխանություն ձեռք բերել լամանացիների մեջ:
- Ի՞նչ արեց Մորոնին, որ զորացներ իր մարդկանց և ամրացներ նրանց քաղաքները հետագա հարձակումների դեմ: Հատկապես ո՞ր տարածքներին Մորոնին հատուկ ուշադրություն դարձրեց:

Ուսանողներին ժամանակ տվեք խորհել իրենց կյանքի թույլ կողմերի մասին, և թե ինչ կարող են նրանք անել, որ ամրացնեն այդ կողմերը: Խնդրեք նրանց գրել իրենց մտքերը:

- Համաձայն Ալմա 48.10, ինչո՞ւ էր Մորոնին ջանասիրաբար աշխատում ամրացնել իր ժողովրդին իրենց թշնամիների հարձակումների դեմ: (Շեշտեք, որ Մորոնին ցանկանում էր օգնել պաշտպանել նեփիացիների ազատությունը իրենց կրոնը ունենալու համար:)
- Ի՞նչ են այսօր մեզ սովորեցնում Եկեղեցու ղեկավարները, որ օգնեն ամրացնել մեր հոգևոր թուլությունները:
- Ինչո՞ւ են Եկեղեցու ղեկավարները ջանասիրաբար աշխատում, որ ամրացնեն մեզ հոգևորապես:

Վստահեցրեք ուսանողներին, որ **երբ մենք հետևենք Տիրոջ ծառաների խորհրդին, մենք կամրանանք գայթակղությունների դեմ:**

Խրախուսեք ուսանողներին Ալմայի մնացած գլուխներում ուշադրությամբ փնտրել սկզբունքներ՝ ուխտերը պահելու կարևորության և Սատանայի դեմ պայքարելու համար մեզ ամրացնելու կարևորության մասին:

ԴԱՍ 102

# Ալմա 49–51

## Նախաբան

Պաշտպանվելու համար Մորոնիի կատարած նախապատրաստությունները կարևոր դեր խաղացին իրենց թշնամիներից նեփիացիներին պաշտպանելու գործում: Նեփիացիները հաջողությամբ պաշտպանվում էին լամանացիներց այնքան ժամանակ, մինչև իրենց իսկ ժողովրդի մեջ եղած ապստամբությունը և թուլությունը թուլացրեց նրանց: Մորիանթոնը և թագավորի մարդիկ տարաձայնություն առաջ բերեցին և վիճաբանություն սկսվեց ժողովրդի մեջ: Մորոնին փորձեց վերացնել անհամաձայնությունը և վիճաբանությունը և խաղաղություն հաստատել:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 49, 50.1–24

*Նեփիացիները ամրություններ են կառուցում, բարգավաճում և պաշտպանում իրենց ազատությունը*

Դասարանի համար կարդացեք հետևյալ հնարավոր դեպքերը և տվեք դրանց ուղեկցող հարցերը (կամ ինքներդ առաջարկեք հնարավոր դեպքեր և հարցեր).

Երիտասարդ տղան շատ հոգնած էր, սակայն չէր ուզում քնել, ուստի նա սկսեց որոնումներ կատարել Ինտերնետում: Նա գայթակղվեց այցելելու այնպիսի էջեր, որոնք պարունակում էին պոռնկագրական պատկերներ:

- Ի՞նչ նախապատրաստություններ կարող էր տեսնել այս տղան, որպեսզի խուսափեր այս գայթակղությունից:
- Ի՞նչ կարող էր նա անել, որ խուսափեր ապագա գայթակղությունից:

Բացատրեք ուսանողներին, որ երբ նրանք ուսումնասիրեն Ալմա 49–51, նրանք կարող են ուշադրություն դարձնել, թե ինչպես կարող են Մորոնի զորապետի նախապատրաստությունները լամանացիների դեմ համեմատվել նախապատրաստությունների հետ, որոնք մենք պետք է կատարենք Սատանայի գայթակղությունների դեմ այսօր:

Բացատրեք, որ մինչ Ամաղիկիան դրդում էր լամանացիների բանակին գնալ ճակատամարտելու, Մորոնի զորապետը ամրացնում էր նեփիացիների քաղաքները: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 49.1, 6–7: Խնդրեք նրանց խորհել, թե լամանացիներին ընդդիմանալու Մորոնի զորապետի նախապատրաստություններն ինչպես կարող են նմանեցվել մեզ վրա գործված Սատանայի հարձակումներին նախապատրաստվելու կարիքին: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 49.2–4, 50.1–6, փնտրելով, թե ինչպես նախապատրաստվեցին նեփիացիները լամանացիների հետագա հարձակումներին:

- Եթե դուք լինեիք լամանացի զինվոր, ինչպե՞ս ձեզ կզգայիք, եթե առաջին անգամ տեսնեիք այս ամրությունները:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 49.8–12: Խնդրեք դասարանին հետևել, ուշադրություն դարձնելով, թե ինչպես լամանացիները արձագանքեցին նեփիացիների նախապատրաստություններին:

- Ի՞նչ արեցին լամանացիները, երբ տեսան, որ Ամմոնիան ամրացված էր: (Նրանք նահանջեցին:)

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Ջեյմս Է. Ֆաուստի հետևյալ խոսքերը.

«Սատանան մեր ամենամեծ թշնամին է և օր ու գիշեր աշխատում է կործանել մեզ: Սակայն մենք չպետք է Սատանայի զորությունից վախից կաթվածահար լինենք: Նա չի կարող մեզ վրա զորություն ունենալ, եթե մենք դա թույլ չտանք: Նա իրականում շատ վախկոտ է, և եթե մենք ամուր կանգնենք, նա կնահանջի» (“Be Not Afraid,” *Ensign,* Oct. 2002, 4):

***Հարմարեցնել հնարավոր դեպքերը***

Դուք ունեք լավագույն հնարավորությունը հասկանալու համար ձեր դասարանի ուսանողների վարքագիծը և բնավորության գծերը, ինչպես նաև գայթակղությունները, որոնց նրանք հանդիպում են: Ընտրեք հնարավոր դեպքեր, որոնք թույլ կտան ուսանողներին անդրադառնալ իրենց իրադրությանը նմանատիպ դեպքերի: Սա հնարավորություն կտա, որ Հոգին հուշումներ տա ուսանողներին իրենց կարիքների համապատասխան: Երբ դուք փնտրեք Երկնային Հոր առաջնորդությունը, Նա կօգնի ձեզ հարմարեցնել ձեռնարկի հնարավոր դեպքերը, որ ավելի լավ համապատասխանեն ձեր ուսանողների կյանքին:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 49.18–20, 23։ Խնդրեք դասարանին հետևել և խորհել, թե ինչպես մենք կարող ենք օգտագործել ճակատամարտի համար նեփիացիների նախապատրաստություններն որպես օրինակ, որ օգնեն մեզ նախապատրաստվել մեր հոգևոր պատերազմին Սատանայի դեմ։

- Մորոնի զորապետն աշխատում էր պաշտպանել նեփիացիներին լամանացիներից։ Ինչպե՞ս են մեր ղեկավարները աշխատում պաշտպանել մեզ հակառակորդից։
- Ի՞նչ կարող ենք մենք անել, որ կառուցենք բարձր հոգևոր պատեր Սատանայի գայթակղությունների դեմ։ (Պատասխանները կարող են ներառել ամենօրյա իմաստալի աղոթքները, սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրությունը, կանոնավոր կերպով Եկեղեցի հաճախելը, ուրիշներին ծառայելը և ծոմապահությունը։)

Հրավիրեք ուսանողներին պատասխանել հետևյալ հարցերին նոթատետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում։ (Դուք կարող եք այս հարցերը նախքան դասը գրել գրատախտակին։)

- Ինչպե՞ս դուք կնկարագրեք ձեր հոգևոր պաշտպանության պատերն ամրացնելու ձեր ամենօրյա ջանքերը։
- Ընտրեք մի բան, որ դուք անում եք ձեզ հոգևորապես ամրացնելու համար, կամ մի բան, որը դուք չեք անում։ Ի՞նչ կարող եք դուք անել, որ մեծացնեք ձեզ ամրացնող այդ գործողության արդյունավետությունը։

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 49.28–30։ Խնդրեք դասարանին ներկայացնել, թե բացի Մորոնիից ով էր աշխատում պաշտպանել նեփիացիներին լամանացիներից։ Շեշտեք, որ օգնելով նեփիացիներին արդար մնալ, Հելամանը և իր եղբայրները օգնում էին նրանց ստանալ Տիրոջ օրհնությունները և պաշտպանությունը։

Ուսանողներին ժամանակ տվեք Ալմա 50.10–12 ուսումնասիրելու համար։ Ապա թող նրանք դասարանի հետ քննարկեն հետևյալ հնարավոր դեպքերը։ (Եթե հնարավոր է, նախքան դասը պատրաստեք տպված թերթիկներ հնարավոր դեպքերով։ Եթե սա հնարավոր չէ, հերթով կարդացեք հնարավոր դեպքերը, բավականաչափ ժամանակ տրամադրելով յուրաքանչյուրի քննարկման համար։)

1. Մորոնին «վերացրեց լամանացիների բոլոր բերդերը»։ Ինչպե՞ս կարող է երիտասարդ կինը «վերացնել» բամբասանքը, երբ նա ընդմիջման ժամին հանդիպում է իր ընկերների հետ։
2. Մորոնին մի գիծ կամ սահման ամրացրեց նեփիացիների և լամանացիների միջև։ Ինչպե՞ս կարող են երիտասարդ տղամարդը և երիտասարդ կինը մաքրաբարոյության օրենքը պահելու և անբարոյականության սահմանն անցնելու գիծը ամրացնել։
3. Մորոնիի բանակը ամրություններ է կառուցում, որ պաշտպանի իր ժողովրդին իրենց թշնամիներից։ Երիտասարդ տղամարդը գիտակցում է, որ նա չափից ավելի շատ ժամանակ էր ծախսում հասարակական զանգվածային լրատվամիջոցների օգտագործման վրա (առցանց կամ հաղորդագրությունների միջոցով)։ Այս վարքագիծը կարծես թե պակասեցնում է իր ընտանիքի հանդեպ ունեցած մտահոգությունը, և նա անտեսում է տանը ունեցած իր պարտականությունները։ Ի՞նչ կարող է նա անել հարաբերություններն իր ընտանիքի հետ ամրացնելու և պաշտպանելու համար։

Հրավիրեք մի քանի ուսանողների ամփոփել, թե ինչ են իրենք սովորել Մորոնի զորապետի վարքագծից այն մասին, թե ինչպես մենք կարող ենք պաշտպանել մեզ հակառակորդի հարձակումներից։ Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ **եթե մենք նախապատրաստենք ինքներս մեզ, մենք կարող ենք դիմակայել հակառակորդի հարձակումներին (գայթակղություններին):** Դուք կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին։

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 50.1։ Հարցրեք դասարանին.

- Մորոնի զորապետի նախապատրաստությունների արդյունքում ստացված հաջողություններից բացի ի՞նչ լրացուցիչ գաղափարներ մենք կարող ենք սովորել այս հատվածից։ (Մորոնին «չդադարեց» նախապատրստություններ տեսնելը. նա

շարունակեց ամրացնել իր պաշտպանությունները նույնիսկ այն ժամանակ, երբ չկար մոտալուտ վտանգ։)

Որպեսզի օգնեք ուսանողներին գնահատել հոգևորը շարունակ ամրցնելու կարիքը, կարդացեք Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ խոսքերը.

«Մինչ մեր շուրջը եղող ուժերը սաստիկ մեծանում են, մի ժամանակ բավարար եղող հոգևոր ուժը այլևս չի կարող բավականացնել։ Եվ հոգևոր ուժի ինչ աճ էլ որ մի ժամանակ մենք կարծում էինք, որ հնարավոր էր, ավելի մեծ աճ հնարավոր կդարձվի մեզ համար։ Հոգևոր ուժի կարիքը և այն ձեռք բերելու հնարավորությունը կմեծանա, որը մենք թերագնահատում ենք մեր վտանգի պահին» (“Always,” *Ensign,* Oct. 1999, 9)։

Գրատախտակի վրա գրեք հետևյալ նախադասությունները.

*Ես կնախապատրաստվեմ դիմակայել գայթակղություններին . . .*

*Ես ամուր կկանգնեմ, երբ . . .*

Հրավիրեք ուսանողներին լրացնել այս նախադասությունները նոթատետրերում կամ սուրբ գրությունների օրագրերում։ Երբ ուսանողները վերջացնեն գրելը, կարդացեք Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ խոսքերը։ (Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները գրեն այս նախադասությունը իրենց սուրբ գրություններում Ալմա 50.10–12–ի կողքին։)

«Ավելի լավ է նախապատրաստվել և կանխել, քան փոխհատուցել և ապաշխարել» (*The Teachings of Ezra Taft Benson* [1988], 285)։

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է այս միտքը ճիշտ։ Ե՞րբ եք դուք տեսել այս նախադասության ուսուցանած սկզբունքի օրինակ։

Բացատրեք, որ նեփիացիների նախապատրաստվածությունը մի քանի տարվա մեծ բարգավաճում և խաղաղություն առաջ բերեց։ Նշեք, որ մինչ Ամաղիկիան անիծում էր Աստծուն, քանի որ նա պարտվել էր, նեփիացիները «գոհություն էին հայտնում Տիրոջը՝ իրենց Աստծուն» (Ալմա 49.28)։

Հրավիրեք ուսանողներին պատկերացնել, որ իրենք ունեն ընկեր, ով ապրում է մի տարածքում, որտեղ թեժ պատերազմ է։ Նա զգում է, որ անհնարին է գտնել խաղաղություն և երջանկություն՝ իր շուրջը եղող քաոսի պատճառով։ Գրատախտակին գրեք սուրբ գրության հետևյալ հղումը. *Ալմա 50.18–23։* Հրավիրեք ուսանողներին կարդալ այս հատվածը և գտնել մի պատասխան, որը նրանք կարող էին տալ իրենց ընկերոջը։ Խնդրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչ կասեին իրենք։ Իրենց պատասխաններում ներառած ճշմարտություններից մեկը կարող է լինել այն, որ **Աստծո հանդեպ հավատարմությունը երջանկություն է բերում նույնիսկ ամենավատ իրավիճակում։** (Դուք կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին։) Օգնեք ուսանողներին հասկանալ, որ այս ճշմարտությունը վերաբերվում է ոչ միայն պատերազմին, այլ նաև անձնական խնդիրներին, ինչպիսին են օրինակ ֆինանսական խոչընդոտները, աշխատանքը կորցնելը, սիրելիի մահը, ընտանիքի անդամների հետ վատ հարաբերությունները և բնական աղետները։

- Համաձայն Ալմա 50.18–23, ինչո՞ւ էր նեփիացիների մոտ երջանիկ ժամանակ։
- Ե՞րբ եք դուք զգացել, որ Տերը տարածել է ձեզ վրա Իր զորությունը և օրհնությունները հնազանդ լինելու և գայթակղությունների դեմ ձեզ ամրացնելու համար։
- Ե՞րբ է Տերն օրհնել ձեզ կամ մեկին, ում դուք գիտեք, բարգավաճել, խաղաղություն և երջանկություն ունենալ դժվարին պահերին։ (Ուսանողների պատասխանները լսելուց հետո կիսվեք ձեր կյանքից մի օրինակով։)

## Ալմա 50.25–40, 51

### *Նեփիացիների պաշտպանությունները թուլանում են և Մորոնին ապստամբության է հանդիպում իր ժողովրդի մեջ*

(*Նշում.* Դասի այս մասին հասնելուց հետո դուք կարող եք հակիրճ ձևով ամփոփել նյութի մնացած մասը։ Եթե դուք անեք դա, բացատրեք, որ Ալմա 50.25–40-ը պարունակում է Մորիանթոնի ապստամբության և մահվան պատմությունը և Պառանի նշանակումը որպես գլխավոր դատավոր։ Ալմա 51-ը պատմում է մի խմբի մասին,

որ կոչվում էին թագավորասերներ, ովքեր փորձում էին փոխել օրենքը և թույլ տալ, որ նեփիացիներին կառավարեր թագավորը: Նրանց փորձերը ձախողվեցին: Իրենց ձախողումից բարկացած՝ թագավորասերները հրաժարվեցին կռվել, երբ Ամաղիկիան և լամանացիները եկան պատերազմ սկսելու նեփիացիների դեմ: Օրենքի համաձայն Մորոնին պահանջեց նրանցից պաշտպանել իրենց երկիրը կամ պատժվել: Ամաղիկիայի բանակը գրավեց նեփիացիների բազմաթիվ քաղաքները և սպանեց շատ նեփիացիների: Երբ Ամաղիկիան փորձեց գրավել Լիառատ երկիրը, նա հանդիպեց Թեանկումին և նրա զորքին: Թեանկումը սպանեց Ամաղիկիային և կանխեց լամանացիների բանակի առաջընթացը:)

Գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունը. *Միասին մենք կանգուն ենք, բաժանված մենք ընկնում ենք:*

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 50.25–26, յուրաքանչյուր հատվածում փնտրելով բառ, որը նկարագրում է նեփիացիների մեջ եղած տարաձայնության պատճառը:

- Ի՞նչն է տարաձայնություն առաջ բերում մարդկանց մեջ:

Ամփոփեք Ալմա 50-ի մնացած մասը, բացատրելով, որ Մորիանթոնը և նրա մարդիկ փորձեցին հեռանալ նեփիացիներից և փախչել դեպի հյուսիսային երկիրը: Մորոնին վախենում էր, որ այս տարաձայնության հետևանքով նեփիացիները կկորցնեին ազատությունը: Նա զորք ուղարկեց, որն առաջնորդում էր Թեանկում անունով մի մարդ, որ կանխեր Մորիանթոնի մարդկանց հեռանալը: Թեանկումի զորքը թույլ չտվեց, որ Մորիանթոնի մարդիկ հասնեին իրենց նպատակին, և Մորիանթոնը սպանվեց: Նրա մարդկանց մնացած մասը «ուխտեցին պահել խաղաղությունը» (Ալմա 50.36): Մորիանթոնի ապստամբությունից կարճ ժամանակ անց Նեփիի ժողովրդի մեջ զարգացավ վտանգավոր քաղաքական տարաձայնություն: Նեփիացիներից ոմանք ցանկացան հեռացնել Պառանին դատավորական աթոռից և փոխարինել նրան թագավորով: Ժողովրդի մնացած մասը ցանկացավ պահել դատավորների կառավարման համակարգը:

Հրավիրեք ուսանողներին Ալմա 51.5–6–ում փնտրել այս երկու հակադիր խմբերի անունները (թագավորասերներ և ազատասերներ): Ուսանողներին մի պահ տրամադրեք, որ Ալմա 51.8–ում գտնեն թագավորասերների դրդապատճառները:

Գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. ***Տարաձայնությունը և վիճաբանությունը կործանում են մեր խաղաղությունը:***

- Ինչպե՞ս է այս սկզբունքը ցուցադրվում Ալմա 50 և 51–ում տրված տարաձայնության և վիճաբանության պատմության մեջ:
- Ի՞նչ կարող եք դուք անել ձեր ընտանիքում, ձեր ընկերների մեջ կամ ձեր համայնքում վիճաբանությունները հարթելու համար:
- Ե՞րբ եք դուք տեսել, որ միասնությունից եկող օրհնություններն ամրացնեն ընտանիքը, քվորումը կամ դասարանը:

Վկայեք այն ճշմարտությունների մասին, որոնք ոգեշնչմամբ շեշտել եք: Հիշեցրեք ուսանողներին, որ հաջորդ մի քանի դասերը նրանց ավելի շատ հնարավորություններ կտան ներկայացնել սկզբունքներ և սովորել դասեր նեփիացիների և լամանացիների միջև եղած պատերազմներից:

ԴԱՍ 103

# Ալմա 52–55

## Նախաբան

Լամանացիների հետ պատերազմի այս պահին նեփիացիները կորցրել էին շատ քաղաքներ իրենց մեջ եղած վիճաբանությունների պատճառով: Մորոնին, Թեանկումը և Լեքին գրավում են Մուղեկ քաղաքը և պարտության մատնում լամանացիների ամենամեծ զորքերից մեկը: Մորոնին մերժում է գերիներին փոխանակելու Ամմորոնի՝ լամանացի առաջնորդի առաջարկը և առանց արյունահեղության նեփիացի գերիներին ազատելու մի ծրագիր է մշակում: Մորոնին հաստատակամ է մնում և փոխզիջման չի գնում ամբարիշտ Ամմորոնի և նրա հետևորդների հետ:

*Նշում.* Այս դասը կենտրոնանում է Մորոնիի, Թեանկումի և Լեքիի կյանքի իրադարձությունների վրա: Հաջորդ դասում ուսանողները ավելի շատ բան կսովորեն Ալմա 53.16–23–ում հիշատակված Հելամանի 2000 դեռահաս զինվորների մասին:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 52–53

*Մորոնին, Թեանկումը և Լեքին միասին աշխատում են պարտության մատնել լամանացիներին*

Նախքան դասը գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունը.

*«Այսօր երիտասարդությունը մեծանում է թշնամու տարածքում» (Նախագահ Բոյդ Ք. Փաքեր):*

Դասի սկզբուն հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ այս նախադասությունը: Ապա հարցրեք.

- Ո՞վ է թշնամին: (Սատանան:)
- Սատանայի ազդեցության ի՞նչ ապացույց եք դուք տեսնում ձեր շուրջը եղող աշխարհում: (Ուսանողները կարող են նշել ոչ պատշաճ խոսելաձևը և հագուստը, անազնիվ և անբարո վարքագիծը և զանգվածային լրատվամիջոցների և տեխնոլոգիաների միջոցով հաճախ գովազդվող գայթակղությունները:)

Խրախուսեք ուսանողներին համեմատել իրենց կյանքում հանդիպող դժվարությունները Ալմա 52–55–ում նկարագրված իրադարձությունների և իրավիճակների հետ: Ապա կարդացեք Նախագահ Փաքերի ելույթի շարունակությունը.

«Այսօր երիտասարդությունը մեծանում է անկում ապրող բարոյական չափանիշով թշնամու տարածքում: Բայց որպես Տիրոջ ծառա, ես խոստանում եմ, որ դուք կպաշտպանվեք և կպատսպարվեք հակառակորդի հարձակումներից, *եթե* դուք կամենաք ուշադրություն դարձնել հուշումներին, որոնք գալիս են Սուրբ Հոգուց» («Խորհուրդ երիտասարդությանը», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2011, 18):

Խրախուսեք ուսանողներին փնտրել Սուրբ Հոգու առաջնորդությունը, որպեսզի նրանք կարողանան դիմակայել չարին:

Հիշեցրեք ուսանողներին, որ մինչ Մորոնին սաստում էր թագավորասերների ապստամբությունը, լամանացիները գրավեցին նեփիացիների ամրացված քաղաքներից շատերը (տես Ալմա 51.26): Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 52.14, փնտրելով այս պահին նեփիացիների իրավիճակի մասին Մորմոնի նկարագրությունը: Ապա խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 53.9: Խնդրեք դասարանին ներկայացնել, թե ինչու էին նեփիացիների պայմանները վտանգավոր:

- Ի՞նչ եղանակներ կան, որոնցով մարդիկ իրենց դնում են հոգևորապես վտանգավոր իրավիճակներում:

Գրատախտակին գրեք հետևյալ սուրբ գրության հղումը. *Ալմա 52.5–10, 16–19:* Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այս հատվածների ենթատեքստը և պատմական առանցքը, խնդրեք երկու ուսանողների բարձրաձայն կարդալ Ալմա

52 և 53 գլուխների ենթատեքստերը: Ապա հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել հատվածները, որոնք դուք գրել եք գրատախտակին, փնտրելով սկզբունքներ, որոնք կարող են օգնել նրանց խուսափել չարից կամ դիմակայել դրան: Բավականաչափ ժամանակ անց հարցրեք.

- Ի՞նչ սկզբունքներ մենք կարող ենք սովորել այս հատվածներից: (Այլ սկզբունքների հետ մեկտեղ ուսանողները կարող են ներկայացնել հետևյալ ճշմարտությունը. **Եթե մենք խուսափում ենք թշնամու հենարաններից, մենք ավելի շատ ենք կարողանում խուսափել և դիմակայել փորձությանը:**)

Հրավիրեք ուսանողներին անդրադառնալ ֆիզիկական վայրերի, հասարակական միջավայրերի կամ իրավիճակների վրա, որոնք ներառում են տեխնոլոգիայի օգտագործում (ինչպես օրինակ Ինտերնետ), որն իրենց կյանքում միգուցե կարող է հանգեցնել վտանգավոր հետևանքների:

Բացատրեք, որ Մորմոնը նկարագրեց լամանացիների դեմ Թեանկումի կանգնելը, օգտագործելով այնպիսի բառեր, ինչպիսին են *պաշտպանվել, ամրացնել, ապահովել, խարազանել* և *ուժեղացնել:* Խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչը պետք է «խարազանվի» կամ հեռացվի իրենց սեփական կյանքից, որ օգնի իրենց լինել հոգևորապես ավելի ապահով:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 52.19: Հարցրեք դասարանին.

- Ի՞նչ արեցին նեփիացի առաջնորդները ճակատամարտի գնալուց առաջ: (Նրանք ռազմական մի խորհուրդ անցկացրեցին:)
- Ինչո՞վ կարող է ընտանեկան խորհուրդը կամ Եկեղեցու խորհուրդը նմանվել «ռազմական խորհրդին»: Ինչպե՞ս կարող են այսպիսի խորհուրդները ուժեղացնել մեզ թշնամու դեմ մղվող պայքարում:

Ամփոփեք Ալմա 52.20–40 և Ալմա 53, բացատրելով, որ ռազմական խորհրդից հետո Մորոնի զորապետը և նրա զորքերը ետ վերցրեցին Մուղեկի քաղաքը, լամանացիներին դուրս հանելով իրենց բերդերից: Նեփիացիները վերցրեցին շատ լամանացի գերիներ և ուղարկեցին նրանց, որ աշխատեն Լիառատ քաղաքն ամրացնելու վրա: Այնուամենայնիվ, լամանացիները շարունակեցին հաջողություն ունենալ այլ տարածքներում՝ նեփիացիների մեջ եղած անհամաձայնությունների պատճառով:

***Օգնեք ուսանողներին ներկայացնել ակնարկվող սկզբունքները***

Շատ սկզբունքներ ուղղակիորեն չեն ասվում նրանց կողմից, ովքեր գրել են սուրբ գրությունները: Դրա փոխարեն, սկզբունքը կարող է քողարկված լինել մի պատմության, որոշակի իրադարձության կամ առակի մեջ: Այն կարող է լուսաբանվել սուրբ գրության մի ողջ գրքի, գլխի կամ մեկ հատվածի միջոցով: Ակնարկվող սկզբունքները հաճախ կարող են բացահայտվել սուրբ գրությունների անհատների կամ խմբերի գործողությունները և վերաբերմունքը վերլուծելու և հետո այդ գործողությունների և վերաբերմունքի հետևանքները ներկայացնելու միջոցով:

## Ալմա 54–55

### *Մորոնին մերժում է գերիներին փոխանակելու Ամմորոնի առաջարկները և ռազմական խորամանկության է դիմում նեփիացի գերիներին ազատելու համար*

Բացատրեք, որ Ալմա 54-ում արձանագրված են այն նամակները, որոնք Ամմորոնը (լամանացիների թագավորը) և Մորոնի զորապետը ուղարկել են իրար: Նախքան այդ լամանացիները և նեփիացիները պատերազմում շատ գերիներ էին վերցրել: Այս գլուխը պարունակում է լամանացիների և նեփիացիների գերիներին փոխանակելու մասին Ամմորոնի առաջարկներին տրված Մորոնիի պատասխանները:

Բացատրեք, որ Ալմա 54.9–12-ը պարունակում են Ամմորոնին ուղղված Մորոնիի խոսքերը: Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ այս հատվածները: Ապա խնդրեք մեկ այլ ուսանողի Ալմա 54.18–20–ում կարդալ Մորոնի զորապետին տված Ամմորոնի պատասխանը:

- Ինչո՞վ էին տարբերվում գերիներին փոխանակելու Մորոնիի դրդապատճառներն Ամմորոնի դրդապատճառներից: (Դուք կարող եք շեշտել, որ Մորոնին մտահոգվում էր ընտանիքների համար, մինչդեռ Ամմորոնը մտահոգվում էր միայն իր զինվորների համար, որովհետև նա ցանկանում էր կործանել նեփիացիներին:)
- Ինչպե՞ս են Ալմա 54.18–20-ի Ամմորոնի հայտարարություններն արտացոլում Սատանայի դրդապատճառները մեր դեմ մղվող նրա պատերազմում:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 55.1–2: Խնդրեք դասարանին փնտրել Ամմորոնի պահանջներին տրված Մորոնիի պատասխանը:

- Ինչո՞ւ Մորոնին չէր ցանկանում անել այն, ինչ ասում էր Ամմորոնը: (Նա գիտեր, որ Ամմորոնը ստում էր, և նա չէր ցանկանում շնորհել Ամմորոնին ավելի շատ ուժ, քան նա արդեն իսկ ուներ:)

- Ի՞նչ կարող ենք մենք սովորել Ամմորոնին տված Մորոնիի պատասխանից։ (Չնայած ուսանողները կարող են նշել մի շարք ճշմարտություններ, համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **երբ մենք հաստատակամ կանգնում ենք այն բանի համար, ինչը ճիշտ է, մենք կարող ենք կանխել, որ չար ազդեցությունները զորություն չունենան մեզ վրա։**)

Ջոզեֆ Սմիթի հետևյալ հայտարարությունները կարող են նպաստել այս հատվածների շուրջ ձեր քննարկմանը.

«Սատանան չի կարող գայթակղել մեզ իր հրապուրանքներով, մինչև որ մենք մեր սրտում չզիջենք և չենթարկվենք» (*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 227)։

«Դևը մեզ վրա զորություն չունի, եթե մենք թույլ չտանք» ( *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ,* 227)։

Գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները. *Ալմա 55.15–24, 28–31։*

Բացատրեք, որ Ալմա 55–ում մենք իմանում ենք, որ Մորոնի զորապետը ազատեց նեփիացի գերիներին Գեդ քաղաքում ռազմական խորամանկության միջոցով (պատերազմում օգտագործվող մեթոդ թշնամուն մոլորության մեջ գցելու կամ խորամանկությամբ գերազանցելու համար) ։ Ալմա 55.3–14-ում մենք իմանում ենք, որ Մորոնին կարողանում է օգտագործել Լաման անունով մի նեփիացի զինվորի, որ հարբեցնեն նեփիացի գերիներին հսկող լամանացի զինվորներին։ Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ այն հատվածները, որ դուք գրել եք գրատախտակին, փնտրելով, թե ինչ արեց Մորոնի զորապետը, երբ լամանացիները շրջափակման մեջ ընկան Գեդ քաղաքում։ Հիշեցրեք ուսանողներին սովորելու ընթացքում փնտրել սկզբունքներ։ Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո խնդրեք նրանց զեկուցել, թե ինչ են իրենք գտել։ Դուք կարող եք նաև հարցնել.

- Ի՞նչ են այս հատվածները սովորեցնում ձեզ Մորոնիի մասին։

Գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունը և հրավիրեք ուսանողներին լրացնել բացթողումները.

*Մենք չպետք է հրճվենք . . . . այլ մենք պետք է հրճվենք . . .*

- Ինչպե՞ս մենք կարող ենք կիրառել արյունահեղությամբ չհրճվելու Մորոնիի օրինակը։ Օրինակ, ինչպե՞ս մենք կարող ենք կիրառել Մորոնիի օրինակը մեր կարդացած կամ դիտած նյութերի վերաբերյալ կամ մեր խաղերում։

Հրավիրեք ուսանողներին խորհել հետևյալ հարցի շուրջ.

- Ձեր կարծիքով, ի՞նչ էր Մորոնին ուզում, որ դուք սովորեք այսօրվա դասից, որ կօգներ ձեզ հավատարիմ լինել, մինչ դուք կռվում եք թշնամու դեմ։

Ուսանողներին ժամանակ տրամադրեք, որ գրեն իրենց նոթատետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում, թե ինչ կանեն նրանք, որ խուսափեն Սատանայի տարածքը մտնելուց և հաստատակամ կանգնեն նրա հարձակումների դեմ։

Վերջում վկայեք այս դասի ժամանակ քննարկած ճշմարտությունների մասին։

## Ուսուցանման լրացուցիչ գաղափարներ

### Ալմա 53.20–21: Քայլել ուղիղ՝ Աստծո առաջ

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 53.20–21:

- Ի՞նչ է նշանակում ուղիղ քայլել Աստծո առաջ:

Խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչպես կարող են նրանք պատանի զինվորների նման «հավատարիմ [լինել] բոլոր դեպքերում, ինչ էլ որ նրանց [վստահվի]»: Կարդացեք հետևյալ մեջբերումը, որտեղ Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթը կիսվում է իր պապիկի՝ Ջորջ Ա. Սմիթի տված իմաստուն խորհուրդով.

«Իմ պապիկը սովորաբար ասում էր իր ընտանիքին. «Գոյություն ունի ճշգրիտ որոշված սահմանագիծ Տիրոջ տերիտորիայի և դևի տերիտորիայի միջև: Եթե դուք մնաք Տիրոջ սահմանագծի կողմում, դուք կլինեք Նրա ազդեցության ներքո, և չեք ունենա ցանկություն սխալ գործելու, բայց եթե դուք անցնեք սահմանագծի դևի կողմը մեկ մատնաչափ, դուք փորձիչի իշխանության տակ կլինեք և եթե նրան հաջողվի, դուք չեք կարողանա մտածել կամ նույնիսկ պատշաճորեն խորհրդածել, որովհետև դուք կորցրած կլինեք Տիրոջ Հոգին»:

Երբ որ ես գայթակղվում էի երբեմն ինչ-որ բան անել, ես հարցնում էի ինքս ինձ. «Սահմանագծի ո՞ր կողմում եմ ես»: Եթե ես որոշում էի լինել ապահով կողմում՝ Տիրոջ կողմում, ես անում էի ճիշտն ամեն անգամ: Այսպիսով, երբ գալիս է գայթակղությունը, աղոթքով մտածեք ձեր խնդրի մասին և Տիրոջ ազդեցությունը կօգնի ձեզ իմաստությամբ որոշելու: Մեզ համար ապահովություն կա միայն սահմանագծի Տիրոջ կողմում» (“A Faith Founded upon Truth,” *Deseret News,* June 17, 1944, Church section, 9):

Գրատախտակի կենտրոնում մի ուղղահայաց գիծ գծեք: Գրատախտակի մի կողմն անվանեք *Տիրոջ տերիտորիա* և գրատախտակի մյուս կողմը՝ *Դևի տերիտորիա:* Հարցրեք ուսանողներին.

- Ինչ վերաբերվում է երկու տերիտորիաները բաժանող սահմանագծին, ո՞րն է մեզ համար ամենաապահով վայրը: (Տիրոջ կողմը՝ որքան հնարավոր է սահմանագծից հեռու:)
- Ի՞նչ վտանգ կարող է լինել, երբ մենք փորձենք ապրել Տիրոջ կողմում, սակայն որքան հնարավոր է սահմանագծին մոտ:
- Ի՞նչն է օգնում ձեզ հեռու մնալ սահմանագծից:

ԴԱՍ 104

# Ալմա 56–58

## Նախաբան

Հելամանը և Մորոնի զորապետը կռվում էին լամանացիների դեմ երկրի տարբեր մասերում: Հելամանը նամակ ուղարկեց Մորոնիին, նկարագրելով իր զորքի ճակատամարտերը լամանացիների հետ և իր վստահությունն արտահայտելով 2060 պատանի զինվորների հավատքի հանդեպ, ովքեր միացել էին իր զորքին: Հելամանը նաև նկարագրում է, թե ինչ էր արել իր բանակը՝ ճակատամարտերում հաղթելու և իրենց դժվարին պահերին հույս և ուժ ստանալու համար:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 56

*Անթիփուսի և Հելամանի զորքերը հաղթում են լամանացիների ամենաուժեղ զորքերին*

Հարցրեք ուսանողներին, թե արդյոք նրանք երբևէ ստացել են մի նամակ կամ հաղորդագրություն, որն ուժեղացրել է նրանց, որ տանեն որոշակի դժվարություն: Բացատրեք, որ Ալմա 56–58-ը պարունակում է թղթի կամ նամակի բովանդակությունը, որը Հելամանը գրել էր Մորոնի զորապետին պատերազմի դժվարին պահին: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 59.1–2, որ տեսնեն, թե ինչպես Մորոնի զորապետն արձագանքեց նամակին: Խրախուսեք ուսանողներին, որ մինչ նրանք ուսումնասիրեն նամակը, փնտրեն պատճառները, թե ինչու Մորոնի զորապետը կարողացավ ուրախանալ՝ անկախ այն դժվար պայմաններից, որում նա գտնվում էր:

Ամփոփեք Ալմա 56.2–17, բացատրելով, որ Հելամանը ղեկավարում էր Անթի-Նեփի-Լեքիների կամ Ամմոնի ժողովրդի 2000 որդիներից բաղկացած մի փոքր զորք: Այս զինվորներին հաճախ անվանում են 2000 պատանի զինվորներ: (Դուք կարող եք բացատրել, որ *պատանի* բառը նշանակում է դեռահաս:) Այս դեռահաս տղաների ծնողները ուխտել էին երբեք կրկին զենք չվերցնել: Դեռահաս տղամարդիկ, ովքեր կապված չէին նույն ուխտով, առաջարկեցին պաշտպանել իրենց ծնողներին և մնացած նեփիացիներին, երբ նրանց սպառնում էր լամանացիների բանակը:

Բացատրեք, որ Հելամանը 2000 պատանի զինվորներին տարավ Հուդայի քաղաքը, որ աջակցեին Անթիփուսի կողմից առաջնորդվող նեփիացիների զորքին: Լամանացիները գրավել էին նեփիացիների մի շարք քաղաքները և մեծ վնասներ հասցրել Անթիփուսի զորքին: Անթիփուսն ուրախացավ, երբ Հելամանը և նրա զինվորներն օգնության հասան:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 53.17–21, փնտրելով բառեր և արտահայտություններ, որոնք նկարագրում են այն հոգևոր ուժը, որ այս դեռահաս տղամարդիկ բերեցին զորքին: Մինչ նրանք կարդան, գրատախտակին գծեք հետևյալ գծագիրը: Հրավիրեք մի քանի ուսանողների մոտենալ գրատախտակին և գրել իրենց գտած բառերը և արտահայտությունները «Նախքան ճակատամարտը» վերնագրի տակ:

Նախքան ճակատամարտը

ճակատամարտի ընթացքում

Պատանի զինվոր/Երիտասարդ Վերջին Օրերի Սուրբ

- Ձեր կարծիքով, ի՞նչ ի նկատի ուներ Հելամանը, երբ նա նկարագրում էր 2000 պատանի զինվորներին որպես «ճշմարտության և լրջմտության տղաներ»: (Դուք կարող եք բացատրել, որ *լրջմտություն* բառը նշանակում է լրջություն, հանգստություն և ինքնատիրապետում:)

- Ինչպե՞ս կարող են գրատախտակին գրված բնավորության գծերն օգնել մեզ հոգևոր պատերազմների և այլ դժվարությունների հանդիպելիս:

Հակիրճ ձևով ամփոփեք պատանի զինվորների առաջին ճակատամարտի սկիզբը Ալմա 56.29–43–ում: Անթիփուսն օգտագործում է Հելամանին և նրա 2000 զինվորներին որպես խայծ, որ Անթիփարա քաղաքից կարողանար դուրս հանել լամանացիների ամենաուժեղ զորքը: Լամանացիների զորքի մեծամասնությունը թողեց Անթիփարան, որ հետամուտ լինի Հելամանի զորքին, հնարավորություն տալով Անթիփուսի զորքին հետևել և հարձակվել նրանց վրա թիկունքից: Երբ Անթիփուսի զորքը հասավ լամանացիների զորքին, նրանք հարձակվեցին ըստ իրենց ծրագրի: Երբ լամանացիների զորքը դադարեց հետևել Հելամանի զորքին, Հելամանը չէր կարողանում ասել, թե արդյոք լամանացիների զորքը փորձում էր գայթակղել իր զինվորներին և ծուղակը գցել, թե Անթիփուսը ճակատամարտ էր սկսել լամանացիների հետ նրանց թիկունքից: Հելամանը և նրա պատանի զինվորները պետք է որոշեին շարունակել փախչել կամ հարձակվել լամանացիների վրա:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 56.44–48: Խնդրեք նրանց փնտրել բառեր և արտահայտություններ, որոնք փաստեր են առաջ բերում, թե ինչպես այս պատանիները հավատքով գործեցին: Հրավիրեք մի քանի ուսանողների գրատախտակին գրել իրենց գտածը «Ճակատամարտի ընթացքում» վերնագրի տակ:

- Ինչի՞ն չկասկածեցին այս պատանիները: (Որ Աստված կազատեր նրանց:)
- Ինչո՞ւ նրանք չկասկածեցին, որ Աստված կազատեր նրանց:
- Նախքան ճակատամարտը նրանց զարգացրած բնավորության գծերն ինչպե՞ս օգնեցին նրանց ճակատամարտի ընթացքում:

Գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. ***Երբ մենք հավատքով ենք գործում, մենք կարող ենք ուժ ստանալ Աստծուց:*** Հրավիրեք ուսանողներին փնտրել այս ճշմարտությանը վերաբերվող փաստեր, երբ նրանք ուսումնասիրեն Ալմա 56–ը:

Ամփոփեք Ալմա 56.49–53, բացատրելով, որ Հելամանի զորքը Անթիփուսի զորքին գտավ դժվար կացության մեջ: Անթիփուսը և զորքի այլ շատ ղեկավարներ զոհվել էին, և հոգնած ու շփոթված նեփիացիները մոտ էին պարտություն կրելուն:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 56.54-56: Խնդրեք դասարանին հետևել, ուշադրություն դարձնելով, թե ինչպես Աստված օրհնեց Հելամանի զինվորներին՝ իրենց հավատքի շնորհիվ:

- Ձեր կարծիքով, գրատախտակին գրված հոգևոր հատկանիշներն ինչպե՞ս են նպաստել Ալմա 56.56–ում արձանագրված իրադարձություններին:
- Ե՞րբ եք դուք կամ մեկը, ում դուք գիտեք, հավատքով գործել և ուժ ստացել Աստծուց դժվար իրավիճակում:

## Ալմա 57

### *Հելամանը և նրա պատանի զինվորները ետ են վերցնում Կումենիի քաղաքը և պահպանվում ճակատամարտում*

Բացատրեք, որ Ալմա 57-ը Մորոնի զորապետին գրված Հելամանի նամակի շարունակությունն է: Այն սկսվում է լամանացիներից երկու քաղաքներ նեփիացիների կողմից ետ վերցնելու պատմությամբ: Այդ ընթացքում Հելամանն իր զորքին զորացնելու համար Ամմորոնի մարդկանցից ստանում է 6000 մարդ՝ Ամմոնի մարդկանց ևս 60 որդիների հետ միասին: Լամանացիները նույնպես համալրվում էին և շարունակում էին ամրացնել իրենց գրաված քաղաքները:

Նշեք, որ ճակատամարտերից մեկում լամանացիները քիչ էր մնում հաղթեին նեփիացիներին (տես Ալմա 57.18): Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 57.19–22, փնտրելով, թե ինչը պատճառ դարձավ, որ նեփիացիները կարողացան հաղթել:

- Ինչո՞ւ նեփիացիները կարողացան հաղթանակ տանել լամանացիների դեմ:
- Հելամանն ասաց, որ իր զինվորները «հնազանդվում և ձգտում էին ճշգրիտ կատարել հրամանի ամեն մի բառը» (Ալմա 57.21): Ձեր կարծիքով, ի՞նչ է սա նշանակում: Ինչպե՞ս էր այս հնազանդությունն արտահայտում նրանց հավատքը:

Ի լրացում այս հարցին տրված ուսանողների պատասխանների, կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը.

«[Դուք] կհանդիպեք մարդկանց, որոնք ընտրում են, թե ինչ պատվիրան պահեն, որն անտեսեն, որը խախտեն: Ես կոչում եմ դա ճաշարանային մոտեցում հնազանդությանը: Զանազանելու և ընտրելու այս սովորույթը չի գործի: Այն կտանի դեպի թշվառություն: Աստծուն հանդիպելուն պատրաստվելու համար մարդ պահում է *բոլոր* Նրա պատվիրանները: Դրանց հնազանդվելու համար հավատք է պահանջվում, իսկ Նրա պատվիրանները պահելը կուժեղացնի այդ հավատքը» («Հավատքով դեմ առ դեմ կանգնենք ապագային», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2011, 34):

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 57.23-27: Խնդրեք դասարանին փնտրել, թե ինչպես Տերը պահպանեց Հելամանի պատանի զինվորներին և ինչու Նա պահպանեց նրանց: Որպեսզի օգնեք նրանց քննարկել իրենց գտածը, տվեք այս հարցերը.

- Իր զինվորների մասին Հելամանն ասել է. «Նրանց միտքն անսասան է»: Ձեր կարծիքով, ի՞նչ է սա նշանակում: Ինչո՞ւ մենք պետք է դժվարությունների հանդիպելիս մեր մտքերը անսասան պահենք:
- Ինչպե՞ս էին Հելամանի զինվորները ցույց տալիս, որ նրանք «շարունակ դնում են իրենց վստահությունը Աստծո վրա»:

Կարող է օգտակար լինել բացատրելը, որ որոշ դեպքերում արդարները կտառապեն կամ կմահանան, ճիշտ ինչպես պատանի զինվորները տառապեցին և ճիշտ ինչպես նեփիացիների բանակից ոմանք սպանվեցին: Այնուամենայնիվ, Աստված միշտ կպատվի նրանց, ովքեր կպատվեն Իրեն, և արդարները, ովքեր կմահանան, կօրհնվեն:

- Ի՞նչ նմանություն եք դուք տեսնում իրենց թշնամիների հետ պատանի զինվորների մղած պայքարի և հակառակորդի հետ մղած մեր պայքարի միջև:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդի հետևյալ խոսքերը.

«Այսօր մենք մղում ենք մի պայքար, որը շատ ավելի վտանգավոր է. . . քան նեփիացիների և լամանացիների միջև եղած պայքարը: Մեր թշնամին նենգ է և հնարամիտ: Մենք պայքարում ենք Լյուցիֆերի՝ բոլոր ստերի հոր, բոլոր լավ և ճիշտ և սուրբ բաների թշնամու դեմ: . . .

. . . Մենք, բառիս բուն իմաստով, պայքարում ենք մարդկային հոգիների համար: Թշնամին անգութ է և համառ: Նա հավերժորեն գերության է վերցնում վախեցնող արագությամբ: Եվ նա ցույց չի տալիս նահանջի ոչ մի նշան:

Մինչդեռ մենք խորապես երախտապարտ ենք Եկեղեցու շատ անդամների, ովքեր շատ բան են անում ճշմարտության համար մղվող պայքարում, ես պետք է անկեղծորեն ասեմ ձեզ, որ դա, այնուամենայնիվ, բավական չէ: Մեզ անհրաժեշտ է ավելի շատ օգնություն: . . . Մենք ունենք ձեր կարիքը: Հելամանի 2000 պատանի զինվորների նման,. . . դուք նույնպես կարող եք օժտվել զորությամբ՝ կառուցելու և պաշտպանելու Նրա թագավորությունը: Մեզ անհրաժեշտ է, որ դուք սուրբ ուխտեր կապեք, ճիշտ ինչպես նրանք արեցին: Մեզ անհրաժեշտ է, որ դուք լինեք բծախնդրորեն հնազանդ և հավատարիմ, ճիշտ ինչպես նրանք էին» (“The Greatest Generation of Missionaries,” *Ensign* or *Liahona,* Nov. 2002, 46–47):

Գրատախտակին գրեք հետևյալը. *Եթե մենք վստահենք Տիրոջը և հնազանդվենք Նրան ճշգրտորեն, . . .*

- Ելնելով այն ամենից, ինչ դուք կարդացել եք Հելամանի զինվորների մասին, ինչպե՞ս դուք կլրացնեք այս նախադասությունը: (Գրատախտակի նախադասությունը լրացրեք երեխաների առաջարկների համաձայն: Օրինակ, դուք կարող եք գրել հետևյալ ճշմարտությունը. ***Եթե մենք վստահենք Տիրոջը և հնազանդվենք Նրան ճշգրտորեն, նա կաջակցի մեզ մեր պայքարում:***)

Խնդրեք ուսանողներին խորհել այն ժամանակների մասին, երբ նրանք կամ մեկը, ում նրանք գիտեն, ճշգրտորեն հնազանդվել են, երբ դժվար իրավիճակում են հայտնվել դպրոցում, տանը կամ հասարակական միջավայրում: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց փորձառություններով: Հարցրեք նրանց, թե ինչպես է Տերն օգնել նրանց այդ իրավիճակում:

Ժամանակ տվեք ուսանողներին, որ նոթատետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրեն այն մասին, թե ինչ կանեն նրանք, որ հնազանդվեն Աստծո պատվիրաններին «ճշգրիտ» կերպով (Ալմա 57.21) և «շարունակ [դնեն] իրենց վստահությունը Աստծո վրա» (Ալմա 57.27)։

## Ալմա 58

### *Նեփիացի զինվորները վստահում են, որ Աստված կպահպանի նրանց իրենց կյանքի անբարենպաստ շրջանում*

Բացատրեք, որ Ալմա 58-ը պարունակում է Մորոնիին ուղղված Հելամանի նամակի վերջաբանը։ Հելամանը պատմում է, թե ինչպես նեփիացիների բանակը հանդիպեց դժվար իրավիճակների, որոնք բարդացրեցին անբարենպաստ պայմանները, որոնց նրանք արդեն իսկ հանդիպել էին։ Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 58.2, 6–9, և խնդրեք դասարանին ներկայացնել այդ դժվար իրավիճակները (ուտելիքի պաշարի պակաս, ուժերի պակաս, վախ, որ նրանք կկործանվեին իրենց թշնամիների կողմից)։

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 58.10–12, փնտրելով հետևյալ հարցերի պատասխանները։ (Նախքան դասի սկսվելը հարցերը գրեք գրատախտակին։ Դասարանի համար կարդացեք հարցերը նախքան նրանք կկարդան սուրբ գրության հատվածը, և հետո կրկնեք դրանք նրանց կարդալուց հետո։ Սա կօգնի ուսանողներին հատուկ ուշադրություն դարձնել, թե ինչպես Հելամանի բանակը արձագանքեց այս դժվարին իրավիճակում։)

*Ի՞նչ արեցին նեփիացիները, երբ հանդիպեցին այս դժվար իրավիճակին։*

*Ինչպե՞ս արձագանքեց Տերը նրանց անկեղծ աղերսանքներին և աղոթքներին։*

*Տիրոջ հավաստիացումներն ինչպե՞ս օգնեցին Հելամանին և նրա բանակին։*

Հրավիրեք ուսանողներին ամփոփել մի ճշմարտություն, որը նրանք սովորել են Ալմա 58.10–12–ից։ (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, սակայն համոզվեք, որ նրանք ներկայացնում են հետևյալ սկզբունքը. **Եթե դժվարին պահերին մենք դառնանք դեպի Աստված, մենք կարող ենք աստվածային հավաստիացում ստանալ, որը կարող է ամրացնել մեր հավատքը և հույս տալ մեզ։**)

- Ե՞րբ է Տերը ձեզ օրհնել խաղաղությամբ և հավաստիացմամբ դժվարին փորձառության ընթացքում։

Բացատրեք, որ Ալմա 58–ի մնացած մասը տալիս է նեփիացիների բանակի հաջողված ջանքերի պատմությունը, որ ետ վերցնեն այն քաղաքները, որոնք գրավվել էին լամանացիների կողմից (տես Ալմա 58.31)։ Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 58.39–40։

- Հելամանի պատանի զինվորներն ինչպե՞ս ցույց տվեցին իրենց հավատքն առ Աստված, անկախ իրենց ստացած «շատ վերքերի»։
- Երբ դուք կյանքում դժվարությունների եք հանդիպում, ինչպե՞ս կարող եք օգուտ քաղել Հելամանի որդիների օրինակին հետևելուց։

Վերջում կիսվեք այս դասի ժամանակ ուսուցանված սկզբունքների մասին ձեր վկայությամբ։

ԴԱՍ 105

# Ալմա 59–63

## Նախաբան

Մորոնի զորապետը ուրախանում է Հելամանի հաջողությամբ, որ նա ետ էր վերցրել Նեփիացիների որոշ քաղաքները, որոնք ընկել էին լամանացիների ձեռքը: Այնուամենայնիվ, երբ նա իմացավ, որ լամանացիները գրավել էին Նեփիայի քաղաքը, նա բարկանում է կառավարության վրա, որ անուշադրության էին մատնում համալրում ուղարկելը: Պաորանին՝ գլխավոր դատավորին ուղարկված նամակում նա գանգատվեց արդարների տառապանքների համար և հանդիմանեց Պաորանին ազատության գործին չաջակցելու համար:

Մորոնիին հայտնի չէր, որ Պաորանը փախել էր Գեդեոնի երկիրը՝ նեփիացի թագավորասերների ապստամբության պատճառով: Պաորանը չի փիրավորվում Մորոնիի հանդիմանություններից, այլ նա ուրախանում է ազատության համար Մորոնիի սիրով: Տերը ուժեղացնում է նեփիացիներին, և միասին, Մորոնին, Պաորանը և նրանց մարդիկ պարտության են մատնում թագավորասերներին և լամանացիներին: Պատերազմի մի շարք տարիներից հետո նեփիացիները կրկին խաղաղություն ունեցան, և Հելամանը վերականգնեց Եկեղեցին:

***Մի քանի գլուխներ ներառող դասեր***

Երբ դասը ներառում է սուրբ գրությունների մի շարք գլուխներ, կարիք չկա, որ դուք նույն շեշտը դնեք այդ գլուխներում ամեն ինչի վրա: Դուք կարող եք ամփոփել սուրբ գրության որոշ մասեր և հետո ավելի շատ ժամանակ տրամադրել որոշ հատվածների, որոնք ավելի նպատակահարմար են ձեր ուսանողների համար:

## Ուսուցանման առաջարկներ

### Ալմա 59

*Նեփիացիները կորցնում են ամրություններից մեկը, և Մորոնի զորապետը վշտանում է ժողովրդի ամբարշտության պատճառով*

Նախքան դասը գրատախտակին գրեք Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ հայտարարությունը (*The Teachings of Ezra Taft Benson* [1988], 285).

> *«Ավելի լավ է նախապատրաստվել և կանխել, քան փոխհատուցել և ապաշխարել» (Նախագահ Էզրա Թավտ Բենսոն):*

Եթե դուք մեջբերել էիք այս հայտարարությունը Ալմա 49–51–ի դասի ընթացքում, գրատախտակին այն գրելիս կարող եք որոշ բառեր բաց թողնել: Խնդրեք ուսանողներին լրացնել բացթողումները:

Հրավիրեք ուսանողներին պատմել իրենց կյանքի կամ իրենց ծանոթ մարդկանց կյանքի այն ժամանակահատվածի մասին, երբ նախապատրաստված լինելը օգնել է նրանց կանխել հիասթափությունը կամ տառապանքը:

Հիշեցրեք ուսանողներին, որ նախորդ դասերի ընթացքում նրանք ուսումնասիրել են գլուխներ նեփիացիների և լամանացիների միջև եղած պատերազմների մասին: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 59.5–11, խորհելով այն մասին, թե ինչ առնչություն ունի գրատախտակին գրված հայտարարությունը այս հատվածներում նկարագրված իրավիճակի հետ:

- Ի՞նչը հնարավորություն տվեց լամանացիներին գրավել Նեփիայի քաղաքը: (Նեփիայի ժողովրդի ամբարշտությունը:)
- Ի՞նչ գտաք դուք այս հատվածներում, որ վերաբերվում է գրատախտակին գրված հայտարարությանը:

Եթե ուսանողները չեն նշում Ալմա 59.9–ի հետևյալ հայտարարությունը, դուք ինքներդ մատնանշեք այն. «Ավելի հեշտ էր պաշտպանել քաղաքը՝ լամանացիների ձեռքն ընկնելուց, քան ետ վերցնել այն նրանցից»: Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այս հայտարարությունն իրենց սուրբ գրություններում: Որպեսզի օգնեք ուսանողներին մտածել, թե ինչպես է այս ճշմարտությունը վերաբերվում իրենց կյանքին, խնդրեք նրանց համեմատել այս պատմության քաղաքներն իրենց հետ և հոգևոր պատերազմների հետ, որոնց նրանք հանդիպում են: Այնուհետև տվեք հետևյալ հարցերից մեկը կամ մի քանիսը.

- Ինչպե՞ս է այս ճշմարտությունը վերաբերվում մեզ: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ **ավելի հեշտ ու ավելի լավ է հավատարիմ մնալ, քան վերադառնալ հավատքին՝ ճանապարհից շեղվելուց հետո:**)

- Ինչո՞ւ է Եկեղեցում հավատարիմ մնալը ավելի հեշտ, քան Եկեղեցի վերադառնալը որոշ ժամանակ քիչ ակտիվ լինելուց հետո:
- Ինչո՞ւ է ավելի հեշտ վկայությունը պահելը, քան հեռանալուց հետո կրկին վկայություն ձեռք բերելը:

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչ եղանակներով կարող է հակառակորդը և նրա հետևորդները հարձակվել նրանց վրա: Խրախուսեք նրանց գրել նոթատետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում, թե ինչ կանեն նրանք, որ պատրաստվեն հոգևոր պատերազմներին:

## Ալմա 60–62

### *Մորոնին սխալմամբ մեղադրում է Պառանին, ով արձագանքում է սիրով և հարգանքով*

Բարձրաձայն կարդացեք Ալմա 59.13: Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ Մորոնին բարկացել էր, քանի որ նա մտածում էր, որ կառավարությունը անտարբեր էր կամ անհոգ ժողովրդի ազատության համար: Իր բարկության պահին նա նամակ գրեց Պառանին՝ Զարահեմլայի գլխավոր դատավորին: Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 60.6–11:

- Ինչո՞ւմ էր Մորոնի զորապետը մեղադրում Պառանին:
- Ի՞նչ էմոցիաներ եք դուք զգում Մորոնիի մեղադրանքներում:

Գրատախտակին գրեք հետևյալ սուրբ գրության հղումը. *Ալմա 60.17–20, 23–24:* Հրավիրեք ուսանողներին լուռ կարդալ այս հատվածները: Խրախուսեք նրանց պատկերացնել, թե ինչպես կզգային իրենց Պառանի փոխարեն:

- Մորոնի զորապետի մեղադրանքներն ինչպե՞ս կարող էին ցավ պատճառել Պառանին:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կկարդալ Ալմա 60.33–36: Խնդրեք դասարանին հետևել, փնտրելով, թե ինչ էր պատրաստվում անել Մորոնի զորապետը, եթե Պառանը բարյացակամորեն չարձագանքեր իր պահանջին: Իրենց գտածը զեկուցելու համար ուսանողներին հնարավորություն տալուց հետո, խնդրեք նրանց ներկայացնել բառեր կամ արտահայտություններ այս հատվածներից, որոնք ակնարկում են, թե ինչ դրդապատճառներ ուներ Մորոնին իր պահանջները ներկայացնելու համար:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 61.1–5, որ բացահայտեն, թե ինչու Մորոնին համալրում չէր ստացել:

- Ի՞նչ տեղեկություն կիսեց Պառանը Մորոնիի հետ:
- Ի՞նչ եղանակներով են մարդիկ արձագանքում, երբ նրանք սխալմամբ մեղադրվում են ինչ-որ բանում:
- Ձեզ երբևիցե սխալմամբ մեղադրե՞լ են ինչ-որ բանում: Ի՞նչ եք դուք զգացել մեղադրանքների և մեղադրողի հանդեպ:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 61.9–10, 15–18, փնտրելով որևէ բան, որը հայտնի է դարձնում Պառանի հրաշալի բնավորությունը: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո խնդրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչ են իրենք գտել:

- Ի՞նչ դաս մենք կարող ենք սովորել Մորոնիի մեղադրանքներին տրված Պառանի պատասխանից: (Օգնեք ուսանողներին ներկայացնել հետևյալ սկզբունքը. **Մենք կարող ենք ընտրել չվիրավորվել ուրիշների խոսքերից և արարքներից:** Այլ ճշմարտությունները, որ ուսանողները կարող են ներկայացնել, ներառում են, որ **մենք պետք է խուսափենք ուրիշներին անբարյացակամորեն մեղադրելուց,** և որ **երբ մենք ուրիշների հետ միավորվում ենք հանուն արդարության, մենք ավելի ենք ուժեղանում չարի դեմ մեր պայքարում:** Դուք կարող եք այս ճշմարտությունները գրել գրատախտակին:)
- Ինչպե՞ս մենք կարող ենք ընտրել չվիրավորվել:

Հարցրեք ուսանողներին, թե արդյոք նրանք ցանկանում են կիսվել իրենց ունեցած որևէ փորձառությամբ, երբ ընտրել են չվիրավորվել, երբ մարդիկ ասել են անբարյացակամ կամ սուտ բաներ իրենց մասին: Դուք կարող եք խորհել նաև ձեր իսկ փորձառությունը պատմելու մասին: Վկայեք մեր դեմ իրենց խոսքերի կամ արարքների

համար ուրիշներին ներելու կարևորության մասին: Խրախուսեք ուսանողներին հետևել Պառրանի օրինակին:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 62.1: Խնդրեք դասարանին ներկայացնել, թե ինչ զգաց Մորոնին, երբ նա ստացավ Պառրանի պատասխանը:

Բացատրեք, որ չնայած Մորոնի զորապետը սխալ էր Պառրանին ուղղած իր մեղադրանքներում, նա սովորեցրեց ճիշտ սկզբունքներ, որոնք մենք կարող ենք կիրառել մեր կյանքում: Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 60.23: Շեշտեք, որ «անոթի ներսը» մաքրելու վերաբերյալ Մորոնիի խոսքերը կարող են վերաբերվել ցանկացած մարդու, ով պետք է ապաշխարի: Բացատրեք, որ անոթը մի տարա է, ինչպես բաժակը կամ ամանը: Բաժակի ներսից և դրսից ցեխ քսեք (հնարավորության դեպքում օգտագործեք թափանցիկ բաժակ): Հարցրեք ուսանողներին, թե արդյոք նրանք կցանկանան խմել այդ բաժակից: Մաքրեք բաժակի դրսի կողմը և հարցրեք, թե արդյոք ուսանողներն այժմ հարմար կգտնեն խմել դրանից:

- Եթե մենք համեմատենք մեզ անոթի հետ, ի՞նչ կարող է նշանակել անոթի ներսը մաքրելը:

Կարդացեք Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ հայտարարությունը.

«Մենք պետք է մաքրենք անոթի ներսը (տես Ալմա 60.23), սկսելով մաքրել մեզ, հետո մեր ընտանիքները և վերջում Եկեղեցին» (“Cleansing the Inner Vessel,” *Ensign,* May 1986, 4):

- Ինչո՞ւ է կարևոր, որ մենք մաքուր լինենք ինչպես ներսից (ինչը մարդիկ չեն կարող տեսնել), այնպես էլ դրսից (ինչը մարդիկ կարող են տեսնել):
- Ինչո՞ւ է կարևոր, որ մենք մաքրենք մեր կյանքի ներսի անոթը, նախքան մենք կկարողանանք ամբողջությամբ արդյունավետ լինել Տիրոջ թագավորությունում:

Ամփոփեք Ալմա 62.1–38, բացատրելով, որ Մորոնի զորապետը իր զորքի մի մասը բերեց, որ օգնի Պառրանին տապալել թագավորասերներին Զարահեմլայում: Ապա, միավորելով իրենց բանակները և օգնություն ստանալով նեփիացիների այլ ուժերից, Մորոնին և Պառրանը ետ վերցրեցին մնացած քաղաքները, որոնք անցել էին լամանացիների ձեռքը: Նրանք երկրից դուրս քշեցին լամանացիներին և խաղաղություն հաստատեցին ժողովրդի մեջ:

- Որո՞նք են այն դժվարությունները, որոնց անհատները կամ ընտանիքները կարող են հանդիպել պատերազմից հետո:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 62.39–41, որ տեսնեք, թե ինչ ազդեցություններ էին թողել պատերազմի դժվարությունները նեփիացիների վրա:

- Ի՞նչ սկզբունքներ մենք կարող ենք ներկայացնել Ալմա 62.40–41:

Երբ ուսանողները քննարկեն այս հարցը, նրանք կարող են տալ նմանատիպ պատասխաններ.

**Մեր արդար աղոթքները կարող են դրական ազդեցություն ունենալ մեր համայնքների վրա:**

**Կյանքի անբարենպաստ շրջանում որոշ մարդիկ խոնարհեցնում են իրենց Աստծո առաջ, մինչդեռ ուրիշները դառնում են կարծրացած:**

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են որոշ մարդիկ ավելի մոտենում Տիրոջը, երբ նրանք հանդիպում են դժվարությունների: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ անհաջողության պահերին մեր ընտրությունները կորոշեն, թե արդյոք մենք ավելի կմոտենանք Տիրոջը:)
- Երբ դուք կարդացիք պատերազմի վերաբերյալ Մորմոնի Գրքի գլուխները, ի՞նչ դրանք սովորեցրեցին ձեզ պատերազմի կամ վիճաբանության ժամանակ Հիսուս Քրիստոսի հետևորդը լինելու մասին:

## Ալմա 63

*Շատ նեփիացիներ ճանապարհորդում են դեպի հյուսիսային կողմի երկիրը*

Ամփոփեք այս գլխի Մորոնիի խոսքերը, բացատրելով, որ շատ նեփիացիներ սկսեցին գաղթել դեպի հյուսիսային կողմի երկիրը՝ ցամաքով և ծովով։ Միբլոնը Հելամանին հանձնեց սուրբ հիշատակարանները։ Մորոնի զորապետը մահանում է, և նրա որդի Մորոնիան առաջնորդում է մի բանակ, որը ետ է մղում լամանացիների մեկ այլ հարձակում։

Դուք կարող եք ավարտել այս դասը, պատմելով մեկի մասին, ով հանդիպել է դժվարությունների և տառապանքների և ընտրել է ունենալ փափուկ սիրտ և մեծ վստահություն առ Աստված։ Խորհեք անձնական փորձառությամբ կիսվելու մասին։

## Ալմայի կրկնություն

Որոշ ժամանակ տրամադրեք, որ օգնեք ուսանողներին կրկնել Ալմայի գիրքը։ Խնդրեք նրանց մտածել, թե ինչ սովորեցին այս գրքից սեմինարիայում և սուրբ գրությունների իրենց անձնական ուսումնասիրության ժամանակ։ Անհրաժեշտության դեպքում հրավիրեք նրանց կրկնել Ալմայի որոշ գլուխների ամփոփումները, որ օգնեք նրանց հիշել։ Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել գրքում ինչ-որ մի բանի վերաբերյալ իրենց մտքերով և զգացմունքներով, որը մեծ տպավորություն է թողել նրանց վրա։

# Տնային ուսումնասիրության դաս

## Ալմա 45–63 (Մաս 21)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Ալմա 45–63 (մաս 21)-ի ուսումնասիրության ժամանակ ուսանողների սովորած վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը նախատեսված չէ ուսուցանել որպես ձեր դասի մի մաս: Ձեր ուսուցանած դասը կենտրոնանում է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Ուսանողների կարիքների մասին խորհելիս հետևեք Սուրբ Հոգու հուշումներին:

### Օր 1 (Ալմա 45–49)

Ալման բացատրեց իր որդի Հելամանին, որ Տերը չի կարող մեղքը նվազագույն իսկ աստիճանով ընդունելի համարել: Նեփիացիների պատերազմներն իրենց իսկ պատերազմների հետ համեմատելով, ուսանողները սովորեցին հետևյալ ճշմարտությունները. Երբ մենք քաջաբար պահենք պատվիրանները, ինչպես արեց Մորոնի զորապետը, Աստված կուժեղացնի և կօրհնի մեզ: Սատանան փնտրում է կործանել մեզ և նա աստիճանաբար գայթակղում է մեզ ցածրացնել մեր չափանիշները:

### Օր 2 (Ալմա 50–52, 54–55)

Չնայած նեփիացիները Ամաղիկիայի նահանջելուց հետո որոշ ժամանակ բարգավաճեցին, Մորոնին շարունակեց նախապատրաստել ժողովրդին հետագա հարձակումներին: Դժվարին պայմաններում նեփիացիների ցուցաբերած օրինակն օգնեց ուսանողներին հասկանալ, որ Աստծո հանդեպ հավատարմությունն օրհնություններ է բերում, նույնիսկ իրարանցման մեջ, իսկ տարաձայնությունները և վիճաբանությունները կարող են կործանել մեր խաղաղությունը: Ուսանողները նաև սովորեցին, որ երբ մենք հաստատուն կանգնում ենք ճշտի համար, մենք կարող ենք խուսափել, որ չարի ազդեցությունները զորություն ձեռք չբերեն մեզ վրա:

### Օր 3 (Ալմա 53, 56–58)

Պատերազմի ամենադժվար պահերից մեկին Հելամանն առաջնորդեց երիտասարդ տղամարդկանց մի բանակի, ովքեր Ամմոնի մարդկանցից էին: Այս պատանի զինվորները ցույց տվեցին, որ երբ մենք գործում ենք հավատքով, մենք կարող ենք ուժ ստանալ Աստծուց: Այս քաջ զինվորների օրինակից ուսանողները սովորեցին, որ եթե մենք վստահենք Տիրոջը և հնազանդվենք Նրան ճշգրտորեն, Նա կաջակցի մեզ մեր պատերազմներում: Չնայած բազում վերքերի, որ նրանք ստացան և բազում դժվարությունների, որ նրանք տարան, նեփիացիների բանակը և պատանի զինվորները ցույց տվեցին, որ եթե մենք դժվարության պահերին դառնանք դեպի Աստված, մենք կարող ենք աստվածային հավաստիացում ստանալ, որը կարող է ուժեղացնել մեր հավատքը և տալ մեզ հույս:

### Օր 4 (Ալմա 59–63)

Ներքին ապստամբության պատճառով նեփիացիները կորցնում են մի շարք քաղաքներ. սա ցույց տվեց ուսանողներին, որ ավելի հեշտ ու ավելի լավ է հավատարիմ մնալ, քան վերադառնալ հավատքին ճանապարհից շեղվելուց հետո: Մորոնին վաղաժամ մեղադրեց գլխավոր դատավոր Պառանին իր պարտականություններում թերանալու համար, և ուսանողները Պառանի պատասխանից սովորեցին, որ մենք կարող ենք ընտրել չվիրավորվել ուրիշների խոսքերից և արարքներից: Բացի դրանից ուսանողները սովորեցին, որ երբ մենք ուրիշների հետ միանում ենք արդարությամբ, մենք ավելի ենք ուժեղանում չարի դեմ մեր պայքարում, ինչպես ցույց են տվել Մորոնին և Պառանը:

## Նախաբան

Քանի որ այս դասը ներառում է Ալմայի գրքի 19 գլուխներ, դուք չեք կարողանա սովորեցնել կամ ուշադրություն դարձնել ողջ պատմական ենթատեքստի և շաբաթվա ընթացքում ուսանողների սովորած բոլոր վարդապետությունների և սկզբունքների վրա: Հետևյալ ուսուցանման առաջարկները հնարավորություն են տալիս ուսանողներին կիրառել նեփիացիների պայքարն ուսումնասիրելու ժամանակ սովորած ճշմարտություններն իրենց իսկ կյանքի պայքարում: Աղոթքով ուսումնասիրեք այս դասի սուրբ գրությունները, որպեսզի դուք կարողանաք ոգեշնչվել ճշմարտությունները շեշտելու համար, որոնց վրա դասի ընթացքում ուսանողները կարիք ունեն կենտրոնանալու:

# Ուսուցանման առաջարկներ

## Ալմա 45–63

***Կստահելով Աստծուն և հետևելով ոգեշնչված ղեկավարներին՝ նեփիացիները կարողացան հաղթել լամանացիներին***

Նախքան դասը գրատախտակին գրեք Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ խոսքերը. *«Մորմոնի Գրքից մենք սովորում ենք, թե ինչպես են ապրում Քրիստոսի աշակերտները պատերազմի ժամանակներում»* (“The Book of Mormon—Keystone of Our Religion,” *Ensign,* Nov. 1986, 7):

Խնդրեք ուսանողներին թվել որոշ պատերազմներ, որոնք մղվել են այն երկրի կողմից, որտեղ նրանք ապրում են: Ապա խնդրեք նրանց թվարկել որոշ դժվարություններ, որոնց մարդիկ կարող են հանդիպել պատերազմի ընթացքում:

Հարցրեք. Ինչո՞ւ կարող է դժվար լինել Հիսուս Քրիստոսի աշակերտ լինելը պատերազմի ընթացքում:

Հրավիրեք ուսանողներին մտածել պատերազմների մասին, որոնք նրանք ուսումնասիրել են նախորդ շաբաթ, ինչպես տրված է Ալմա 45–63-ում: Դուք կարող եք խրախուսել նրանց արագ վերանայել Ալմա 45–63–ից որոշ գլուխների ամփոփումները: Հրավիրեք նրանց թվարկել որոշ դժվարություններ, որոնց նեփիացիները հանդիպեցին պատերազմների ընթացքում:

Հիշեցրեք ուսանողներին, որ եթե նույնիսկ մենք երբեք չկռվենք ֆիզիկական պատերազմում, մենք բոլորս էլ ներգրավված ենք հոգևոր պատերազմում: Հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ խոսքերը, ով նկարագրել է հոգևոր պատերազմը, որում մենք այժմ ներգրավված ենք: Դուք կարող եք օրինակներ տալ յուրաքանչյուր ուսանողի:

«Այս վերջին տնտեսությունում դուք ընդգրկված եք Տիրոջ բանակում: Սա խաղաղության ժամանակ չէ: Այդպես է եղել այն ժամանակից ի վեր, ինչ սատանան հավաքեց իր ուժերը մեր Երկնային Հոր ծրագրի դեմ նախագոյության ժամանակ: Մենք չգիտենք այդ ժամանակվա կռվի մանրամասները: Բայց մենք գիտենք մի հետևանքի մասին: Սատանան և նրա հետևորդները վար գցվեցին երկրի վրա: Եվ Ադամի ու Եվայի ստեղծումից սկսած հակասությունը շարունակվում է: Մենք տեսնում ենք, թե ինչպես է այն սաստկանում: Եվ սուրբ գրությունները հուշում են, որ պատերազմը կդառնա ավելի կատաղի և հոգևոր վիրավորները Տիրոջ կողմում կշատանան» («Մարդ վիրավորվեց», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2009, 63):

Ուսանողների ուշադրությունը հրավիրեք գրատախտակին գրված Նախագահ Բենսոնի հայտարարության վրա: Ասեք նրանց, որ թե ֆիզիկական պատերազմի, թե հոգևոր պատերազմի մասին խոսելիս, հայտարարությունը ճիշտ է: Բացատրեք, որ Մորմոնի Գրքի պատերազմների ընթացքում ապրած աշակերտների կյանքն ուսումնասիրելը կարող է օգնել մեզ զարգացնել որակներ, որոնք կարևոր կլինեն մեր սեփական հոգևոր պայքարում:

Գրատախտակին գրեք հետևյալ անունները և սուրբ գրությունների հղումները կամ պատրաստեք դրանք տպված թերթիկների տեսքով: Խնդրեք ուսանողներին ընտրել այս անձնավորություններից կամ խմբերից մեկին, որ ուսումնասիրեք: Փորձեք ունենալ գոնե մեկ ուսանող, որ ուսումնասիրի յուրաքանչյուր անձնավորությանը կամ խմբին:

1. *Մորոնի.Ալմա 46.11–21, 48.7–17*
2. *Հելաման.Ալմա 48.19–20, 56.2–9, 58.4–12, 32–37*
3. *2060 պատանի զինվորները.Ալմա 53.16–22, 56.47–56, 57.19–27*
4. *Պառան.Ալմա 50.39–40, 51.1–7, 61.1–21*

Ուսանողներին տվեք մի քանի րոպե, որ ուսումնասիրեն որքան հնարավոր է շատ սուրբ գրություններ իրենց ընտրած անձնավորության կամ խմբի մասին: Խնդրեք նրանց պատրաստ լինել սովորեցնելու դասարանին հետևյալ գաղափարները (դուք կարող եք գրել սրանք գրատախտակին կամ նաև տպագրված թերթիկներ պատրաստել).

- Այս անձնավորության կամ խմբի կյանքից մի իրադարձություն, որը ցույց է տալիս, որ մարդիկ Փրկչի ճշմարիտ աշակերտներն էին:
- Այս անձնավորության կամ խմբի մեկ կամ ավելի որակներ, որ օգնեցին նրանց քաջ մնալ լամանացիների դեմ մղվող պատերազմի ընթացքում:
- Ավետարանի մի սկզբունք, որ մենք կարող ենք սովորել այս անձնավորությունից կամ խմբից, որ կարող է ուժ հաղորդել մեզ այսօրվա մեր հոգևոր պատերազմում:

Հրավիրեք որքան հնարավոր է շատ ուսանողների կիսվել դասարանի հետ իրենց սովորածով: Դուք կարող եք խնդրել ուսանողներին գրել գրատախտակին իրենց սովորած ավետարանի սկզբունքը:

Խորհեք հետևյալ հարցը տալու մասին, որ օգնեք ուսանողներին կիրառել այն, ինչ իրենք սովորեցին Ալմա 45–63–ը ուսումնասիրելիս.

- Մտածեք Հիսուս Քրիստոսի աշակերտի որակների մասին, որ դուք տեսաք մարդկանց մեջ, ովքեր ապրել են լամանացիների հետ պատերազմի ընթացքում: Այս որակներից ո՞րը դուք ամենաշատը կցանկանաք զարգացնել ձեր կյանքում: Ինչո՞ւ:
- Ի՞նչ հոգևոր պատերազմների ենք մենք հանդիպում այսօր: Ինչպե՞ս կարող են Փրկչի այս աշակերտների օրինակներն օգնել ձեզ հավատք և քաջություն ունենալ, երբ դուք հանդիպեք այս պատերազմներին:

Դուք կարող եք կիսվել Ալմա 45–63-ից ձեր սիրած հատվածներից մեկով: Վկայեք, որ սկզբունքները, որոնք մենք սովորում ենք այս գլուխներից, կարող են օգնել մեզ լինել Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտները վերջին օրերի հոգևոր պատերազմների ընթացքում:

## Հաջորդ Մաս (Հելաման 1–9)

Ասացեք ուսանողներին, որ Հելամանի առաջին գլուխը արձանագրում է երեք գլխավոր դատավորների մահը: Ասեք նրանց, որ իրենք կգտնեն հետևյալ հարցերի պատասխանները. Ինչպե՞ս էին մահացել դատավորները: Ի՞նչ հրաշք պատահեց Նեփիի և Լեքիի հետ, երբ նրանք բանտում էին: Ո՞ւմ ձայնը նրանք լսեցին: Ասեք ուսանողներին, որ Նեփի մարգարեն կարողացավ բացահայտել սպանությունը մարգարեության զորության շնորհիվ:

# Հելամանի

## ԳՐՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ

### Ինչո՞ւ ուսումնասիրել այս գիրքը:

Հելամանի գրքի իրենց ուսումնասիրությունում ուսանողները կսովորեն մեծ մարդկանց օրինակներից և ուսմունքներից, ինչպիսին են Հելամանը, նրա որդիներ Նեփին ու Լեքին և Սամուել Լամանացին, ովքեր խիզախորեն հնազանդվեցին Տիրոջը և վկայեցին Նրա մասին: Այս մարդկանց ծառայությունները ցույց են տալիս, որ Աստված շնորհում է զորություն, որպեսզի օգնի Իր ծառաներին կատարել Իր կամքը, և որ արդար մարդկանց ջանքերը կարող են օրհնել հազարավորների: Ուսանողները նաև կսովորեն հպարտության, ամբարշտության և գաղտնի խմբակցությունների կործանարար հետևանքների մասին:

### Ո՞վ է գրել այս գիրքը:

Մորմոնը հավաքեց և կրճատեց հիշատակարանները Նեփիի մեծ թիթեղներից, որպեսզի ստեղծի Հելամանի գիրքը: Գիրքը կոչվում է Հելամանի անունով, ով Հելամանի որդին էր և Ալմա կրտսերի թոռը: Հելամանը ստացավ գրառումները Սիբլոնից՝ իր հորեղբորից, և Նեփիացիների համար ծառայեց որպես արդար գլխավոր դատավոր: Նա ուսուցանեց իր որդիներ Նեփիին ու Լեքիին պահել պատվիրանները, հիշել իրենց Քավիչին և դարձնել Նրան իրենց կյանքի հիմքը (տես Հելաման 5.9–14): Ոգեշնչված այս ուսմունքներից և վրդովված մարդկանց ամբարշտությունից՝ Նեփին ու Լեքին ապաշխարություն քարոզեցին Նեփիացիներին ու Լամանացիներին: Նեփին հրաժարվեց իր գլխավոր դատավորի պաշտոնից: Հազարավոր Լամանացիների դարձի գալուց հետո Սամուել անունով Լամանացի մի մարգարե ոգեշնչված էր քարոզել ապաշխարություն և մարգարեանալ Նեփիացիների մեջ: Հելամանի գիրքն առաջ է եկել Հելամանի իշխանության և ծառայության ընթացքում պահված հիշատակարաններից (Հելաման 1.3) և (Հելաման 4.16): Նեփիի հիշատակարաններն ընդգրկում են Սամուել Լամանացու մարգարեությունները և ուսմունքները:

### Ո՞ւմ համար է գրված այս գիրքը և ինչո՞ւ:

Մորմոնը գրել է Հելամանի գիրքը վերջին օրերի մարդկանց համար, ովքեր կստանային նրա հիշատակարանը: Նեփիի մեծ թիթեղներից նրա մյուս կրճատումների նման՝ Հելամանի գիրքը վկայում է Հիսուս Քրիստոսի աստվածայնության և քավող առաքելության մասին (տես Հելաման 3.27–30; 5.9–12; 8.13–23; 14.1–29; 16.4–5):

### Ե՞րբ և որտե՞ղ է այն գրվել:

Բնագիր հիշատակարանները, որ ծառայել են որպես աղբյուր Հելամանի գրքի համար, հավանական է, որ գրվել են Ք.ծ.ա. 52թ.-ի և Ք.ծ.ա. 1թ.-ի միջև: Մորմոնը կրճատեց այդ հիշատակարանները Ք.ծ.հ. 345թ.-ի և Ք.ծ.հ. 385թ.-ի միջև ընկած ժամանակահատվածում: Մորմոնը չի հիշատակել, թե որտեղ է եղել նա այս գիրքը կազմելիս:

### Որո՞նք են այս գրքի առանձնահատկությունները:

Հելամանի գիրքը նկարագրում է Նեփիացիներին արդարակեցության և չարության միջև առավել հաճախականությամբ տատանվելիս, քան իրենց պատմության մեջ որևէ այլ ժամանակահատվածում: Գիրքը պատմում է երկպառակության, պատերազմի, սպանության և գաղտնի խմբակցությունների բազում օրինակների մասին: Այն նաև ներկայացնում և նկարագրում է Գադիանթոնի ավազակների գործունեությունները, ում մութ գործերը, վերջիվերջո, հանգեցնում են Նեփիացիների կործանմանը (տես Հելաման 2.13–14): Հելամանի գիրքը նաև յուրահատուկ է նրանով, որ այն նկարագրում է մի ժամանակահատված, երբ Լամանացիների «մեծ մասը» դարձի եկան և «նրանց արդարությունը գերազանցում էր Նեփիացիներինը» (Հելաման 6.1): Ավելին, այն ցուցադրում է Աստծո տված զորությունն իր մարգարեներին, ինչպես երբ Նեփին բացահայտեց գլխավոր դատավորի սպանությունը և մարգարեացավ դատավորի եղբոր խոստովանության մասին (տես Հելաման 8.9), երբ Նեփին ստացավ կնքման զորությունը Տիրոջից, հետո գործադրեց այն սով առաջացնելիս և արձակելիս (տես Հելաման 10.11): Բացի այդ, պահպանելով Սամուելի խոսքերը, այս գիրքը պարունակում է Լամանացի մարգարեի քարոզի միակ հիշատակարանը՝ ուղղված Նեփիացիներին (տես Հելաման 13.15): Այս քարոզում Սամուելը մարգարեանում է Հիսուս Քրիստոսի ծննդյան և մահվան նշանների մասին:

### Համառոտ շարադրանք

**Հելաման 1–3** Երկու գլխավոր դատավորները՝ Պաորանը և Պակումենին, սպանվում են: Մորոնիան ետ է մղում Լամանացիների ներխուժումը, որն առաջնորդվում էր Կորիանթումրի կողմից: Հելամանին՝ նոր նշանակված գլխավոր դատավորին սպանելու փորձ անելիս Կիսկումենը սպանվում է: Չնայած Գադիանթոնը և իր ավազակները տարածում են գաղտնի խմբակցություններ՝ տաս հազարավոր մարդիկ մկրտվում են Եկեղեցում: Հելամանի մահից հետո Նեփին դառնում է գլխավոր դատավոր:

**Հելաման 4–6** Նեփիացիների մի բազմություն պառակտվում է, և Լամանացիները գրավում են Նեփիացիների ողջ հարավային հողերը՝ ներառյալ Զարահեմլան: Նեփիացիները թուլանում են իրենց ամբարշտության պատճառով: Նեփին դատավորական աթոռը հանձնում է Քեզորամին: Նեփին և Լեքին հիշում են իրենց հոր՝ Հելամանի խոսքերը և իրենց նվիրում են ավետարանը քարոզելուն: Շատ պառակտիչներ ապաշխարում և վերադառնում են Նեփիացիների մոտ: Նեփիին ու Լեքիին բանտում զարմանալիորեն Տիրոջ պաշտպանելուց հետո, Լամանացիների մեծ մասը

դարձի են գալիս և Նեփիացիներին են հանձնում այն հողերը, որ նրանք գրավել էին: Բարգավաճման ընթացքում Գադիանթոնի ավազակները շատանում են: Շատ Նեփիացիներ միանում են նրանց ամբարշտությանը՝ քայքայման հասցնելով Նեփիացիների կառավարությունը:

**Հելաման 7–12** Նեփին աղոթում է իր պարտեզի աշտարակի վրա և զգուշացնում է մարդկանց ապաշխարել: Նա մեջ է բերում շատերի վկայությունները, ովքեր մարգարեացել են Քրիստոսի մասին: Նա նաև բացահայտում է, որ Սեզորամը՝ գլխավոր դատավորը, սպանվել է իր եղբայր Սեանթումի կողմից: Նեփին ստանում է կնքելու զորությունը և շարունակում է քարոզել ապաշխարություն: Նա խնդրում է Տիրոջը, որ Նեփիացիների պատերազմի փոխարեն սով լինի, և նրա աղոթքներն անձրև են բերում, որպեսզի ժողովրդի ապաշխարելուց հետո վերջ տրվի սովին: Բարգավաճման և խաղաղության կարճ ժամանակաշրջանից հետո հակառակությունն ու ամբարշտությունը տարածվում են մարդկանց մեջ: Մորմոնը սգում է՝ մարդկանց անկայուն և հիմար գործերի պատճառով:

**Հելաման 13–16** Սամուել Լամանացին զգուշացնում է Նեփիացիներին ապաշխարել, մարգարեանում է նրանց հնարավոր կործանման մասին և կանխագուշակում է Հիսուս Քրիստոսի ծննդյան և մահվան նշանները: Նրա խոսքերին հավատացողները մկրտվում են: Այնուամենայնիվ, մարդկանց մեծամասնությունը մերժում են Սամուելին և բաց են թողնում տրված նշաններն ու հրաշքները:

ԴԱՍ 106

# Հելաման 1–2

## Նախաբան

Պաորանի մահից հետո հակառակություն բարձրացավ Նեփիացիների մեջ այն հարցի վերաբերյալ, թե ով է լինելու հաջորդ գլխավոր դատավորը: Նրա որդի Պաորանը նշանակվեց ժողովրդի ձայնով: Սակայն նոր գլխավոր դատավորը սպանվեց Կիսկումենի կողմից, ով գաղտնի խմբակցության մաս էր կազմում: Օգտվելով այս հակառակությունից և մասնատվածությունից՝ Լամանացիները նվաճեցին Զարահեմլայի մայրաքաղաքը: Նեփիացիները ետ վերցրեցին Զարահեմլան, իսկ Կիսկումենը սպանվեց՝ Հելամանին ( Հելամանի որդուն)՝ նոր գլխավոր դատավորին սպանելու փորձ անելիս:

## Ուսուցանման առաջարկներ

### Հելաման 1

*Հակառակությունը բաժանում է Նեփիացիներին և թույլ է տալիս Լամանացիներին ներխուժել Զարահեմլա*

Դասից առաջ գրատախտակին գրեք հետևյալը.

*Հելաման 1.1–4 Ի՞նչը դարձավ անօրինության և երկպառակության պատճառ Նեփիացի ժողովրդի մեջ:*

*Հելաման 1.5–8 Ո՞վ նշանակվեց որպես գլխավոր դատավոր, և ինչպե՞ս արձագանքեցին դրան նրա երկու եղբայրները:*

Դասը սկսելիս խնդրեք ուսանողներին նկարագրել այն տարբերությունները, որ կան հարցը *քննարկելու* և հարցի մասին *հակառակվելու* միջև: Եթե ուսանողներն այս տարբերություններն ընկալելու հարցում օգնության կարիք ունեն, խնդրեք նրանց մտածել հետևյալ իրադրությունների մասին և նշել, թե որոնք են հակառակության օրինակներ: (Նրանք պետք է նշեն երկրորդ և երրորդ իրադրությունները:)

1. Բացատրել ձեր դիրքորոշումը սիրալիր համոզչությամբ և փաստերով
2. Ցուցաբերել անհարգալից վերաբերմունք մեկի նկատմամբ, ում հայացքները տարբերվում են ձեր հայացքներից
3. Զգալ, որ բանավեճում հաղթող դուրս գալն ավելի կարևոր է, քան մյուս մարդու բարեկեցությունը

Հրավիրեք ուսանողներին փնտրել հակառակության վտանգները՝ մինչ նրանք կուսումնասիրեն Հելաման 1 գլուխը: Խրախուսեք նրանց առանձին մտածել իրավիճակների մասին, որտեղ հակառակությունն ակնհայտ է եղել իրենց կյանքում:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ սուրբ գրություններից այն հատվածները, որոնք դուք գրել եք գրատախտակին՝ փնտրելով պատասխաններ համապատասխան հարցերին: Հրավիրեք նրանց զեկուցել հայտնաբերածի մասին:

Գրատախտակին նկարեք ճանապարհ և այն պիտակեք *հակառակություն* բառով:




Բացատրեք, որ հակառակությունը կարող է նմանվել մի ճանապարհի, որը տանում է դեպի այլ մեղքեր և բացասական հետևանքներ: Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Հելաման 1.9 հատվածը:

Խնդրեք դասարանին նշել, թե Նեփիացիների միջև եղած հակառակությունը վերջիվերջո ինչի հասցրեց նրանց: (Սպանության:) Գրատախտակին՝ ձեր նկարած ճանապարհի վրա, գրեք *սպանություն*:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հելաման 1.10–12 հատվածները՝ պարզելով, թե Կիսկումենը և նրան ուղարկողներն ինչ արեցին, որպեսզի թաքցնեն նրա կատարած սպանությունը։

- Ինչու՞ էին Կիսկումենը և նրա հետևորդները ցանկանում գաղտնի պահել իրենց արարքները։
- Թվարկեք արդի որոշ օրինակներ, երբ մարդիկ փորձում են գաղտնի պահել իրենց անօրեն արարքները։ (Պատասխանները կարող են ներառել՝ ծնողներին կամ եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ հարցազրույցների ժամանակ խաբելը։)
- Ինչու՞ անխոհեմ կլիներ օգնել ինչ-որ մեկին թաքցնել իր մեղքերը։

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Հելաման 1.18–21 հատվածը։ Խնդրեք դասարանին հետևել և նշել Նեփիացիների հակառակությունից առաջացած այլ հետևանքներ։ Երբ ուսանողները ներկայացնեն ինչ որ գտել են, հրավիրեք նրանց գրել պատասխանները գրատախտակին նկարած ճանապարհի վրա։ Դուք կարող եք նաև խորհուրդ տալ նրանց գրել հակառակության այլ հետևանքներ, որ նրանք տեսել են։

Ամփոփեք Հելաման 1.22–30 հատվածները՝ բացատրելով, որ Լամանացիների Զարահեմլա ներխուժելուց հետո Նեփիական զորքերը պարտության մատնեցին նրանց կռվում, որտեղ շատերը սպանվեցին։

Հրավիրեք ուսանողներին ամփոփել հակառակությանը վերաբերող մի սկզբունք, որ նրանք սովորել են Հելաման 1–գլուխն ուսումնասիրելիս։ Սկզբունքներից մեկը, որ ուսանողները կարող են նշել, այն է, որ **հակառակությունը մեզ դարձնում է խոցելի հակառակորդի ազդեցության նկատմամբ։** Դուք կարող եք գրել սա գրատախտակին։

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այս սկզբունքը և կիրառել այն իրենց կյանքում, հիշեք տալ նրանց հետևյալ հարցերից մի քանիսը.

- Եթե մի երիտասարդ կին վիճում է ծնողների հետ իր ընկերների համար, ինչպե՞ս դա կարող է ազդել իր վերաբերմունքի վրա դեպի իր ծնողների խորհուրդը, որ առնչվում է իր կյանքի այլ ոլորտների հետ։
- Երբ քույրերն ու եղբայրները հակառակվող են լինում, ինչպե՞ս կարող է իրենց վերաբերմունքն ազդել իրենց երկարատև հարաբերության վրա։ Ինչպե՞ս դա կարող է ազդել ողջ ընտանիքի վրա։
- Ինչպե՞ս կարող է ծխում կամ ճյուղում եղած հակառակությունը Եկեղեցու անդամներին դարձնել ավելի խոցելի Սատանայի գրոհների նկատմամբ։
- Եթե մի երիտասարդ տղամարդ զայրացած է ինչ-որ մեկի վրա իր քահանայության քվորումում, ինչպե՞ս կարող են իր զգացմունքերն ազդել եկեղեցում իր գործողությունների վրա։ Ինչպե՞ս կարող են դրանք ազդել իր եկեղեցի հաճախելու վրա։
- Ինչպե՞ս կարող են հակառակության զգացումները թուլացնել մեզ, երբ մենք գայթակղության հետ դեմ առ դեմ կանգնենք։

Հրավիրեք ուսանողներին առաջարկել այլ իրավիճակներ, որտեղ հակառակությունը կարող է մեզ թուլացնել և խոցելի դարձնել հակառակորդի դիտավորությունների նկատմամբ։

Ուսանողներին ժամանակ տվեք խորհելու իրենց կյանքի այն ոլորտների մասին, որտեղ նրանք գուցե նպաստում են հակառակության զգացմունքներին։ Հրավիրեք նրանց առանձնացնել մեկ հատուկ գործողություն, որ կարող են կատարել հակառակվող վարքագծից խուսափելու համար։

## Հելաման 2

### *Հելամանը դառնում է գլխավոր դատավոր, և նրա ծառան խանգարում է Կիսկումենին խլել նրա կյանքը*

- Ինչու՞ է ավելի լավ հարթել անկարգությունը, քան թաքցնել այն։
- Ինչու՞ կարող է մարդ ցանկանա թաքցնել իր արարքը։

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հելաման 2.3–4 և ՎԵՌ 58.43 հատվածները։

- Համաձայն այս հատվածների՝ ո՞րն է տարբերությունն այն ճանապարհների միջև, թե ինչպես է Տերն ուզում, որ մենք վարվենք մեղքի հետ, և թե ինչպես վարվեցին մեղքի հետ Գադիանթոնի ավազակները:

Բացատրեք, որ Հելամանի 2-րդ գլխում մենք կարդում ենք Հելամանին՝ հաջորդ գլխավոր դատավորին, Կիսկումենի սպանելու փորձի մասին: Խնդրեք երիտասարդներին պատկերացնել, որ իրենք լրագրողներ են, ում հանձնարարված է զեկուցել գլխավոր դատավորին սպանելու փորձի մասին: Հրավիրեք նրանց դասընկերոջ հետ կարդալ Հելաման 2.2–9 հատվածները և գրել մի խորագիր՝ ամփոփելով կատարվածը: Խնդրեք մի քանի ուսանողների դասարանի համար կարդալ իրենց խորագրերը:

Հրավիրեք երիտասարդներին մտքում կարդալ Հելաման 2.10–11 հատվածները՝ փնտրելով այն միջոցները, որ Հելամանը կիրառեց Գադիանթոնի ավազակների դեմ: Ուսանողներից մեկին խնդրեք ամփոփել այս հատվածները:

Բացատրեք, որ Գադիանթոնի հրոսակախումբը գաղտնի խմբակցության օրինակ է: Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 2.12–14 հատվածները: Դասարանին խնդրեք պարզաբանել այն ազդեցությունները, որ գաղտնի խմբակցություններն ունեին Նեփիացիների վրա:

- Այս հատվածներից ի՞նչ կարող ենք սովորել գաղտնի խմբակցությունների վտանգի մասին: (Մինչ ուսանողները կպատասխանեն՝ համոզվեք, որ հետևյալ ճշմարտությունը պարզ է. **գաղտնի խմբակցությունները կարող են կործանման հասցնել հասարակությունները:** Դուք կարող եք բացատրել, որ Նեփիացիներին կործանման հասցնելուց բացի, գաղտնի խմբակցությունները նաև Հարեդացիներին հասցրեցին կործանման, ում մասին ուսանողները կկարդան Եթերի գրքում. տես Եթերի 8.20–21 հատվածները):

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդի հետևյալ խոսքերը: Խնդրեք ուսանողներին լսել այսօրվա գաղտնի խմբակցությունների օրինակների մասին.

«Մորմոնի Գիրքն ուսուցանում է, որ հանցագործության մեջ ներգրավված գաղտնի խմբակցությունները լուրջ մարտահրավեր են ներկայացնում ոչ միայն անհատների կամ ընտանիքների համար, այլ ողջ հասարակության համար: Այսօրվա գաղտնի խմբակցություններից են թաղային հանցախմբերը, թմրանյութերի կարտելները և հանցագործ տոհմակցությունները . . ..

Եթե մենք զգույշ չլինենք, ապա այսօրվա գաղտնի խմբակցությունները կարող են ուժ և ազդեցություն ձեռք բերել այնպես արագ և լիարժեք, ինչպես Մորմոնի Գրքի ժամանակներում»: . . .

«. . . [Դևն] օգտագործում է գաղտնի խմբակցությունները, ներառյալ թաղային հանցախմբերը, «սերնդե-սերունդ, որքանով որ ինքը կարողանում է ազդեցություն ձեռք բերել մարդկանց զավակների սրտերի վրա»: [Հելաման 6.30]: Նրա նպատակն է կործանել անհատներին, ընտանիքները, համայնքներն ու ազգերը: (Տես 2 Նեփի 31.19–21:) Որոշ աստիճանով, նա հաջողակ էր Մորմոնի Գրքի ժամանակներում: Եվ նա շատ ավելի հաջողակ է այսօր: Ահա թե ինչու այդքան կարևոր է մեզ համար. . .. . . ամուր կանգնել հանուն ճշմարտության և արդարության՝ անելով այն ամենը, ինչ կարող ենք, որպեսզի օգնենք ապահով պահել մեր համայնքները» («Կանգնել հանուն արդարության և ճշմարտության», *Ensign,* Նոյ. 1997, 38):

Հրավիրեք ուսանողներին խորհել Երեց Բալլարդի ուսմունքը կիրառելու ուղիների մասին: Հրավիրեք նրանց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրման օրագրերում գրել այն ամենի մասին, որ նրանք կանեն, որպեսզի խուսափեն որևէ ձևի գաղտնի խմբակցություններից, և ինչ կանեն, որպեսզի «ամուր կանգնեն հանուն արդարության և ճշմարտության» իրենց համայնքներում:

***Գտնել վարդապետություններն ու սկզբունքները***

Երբեմն ուսանողներն ասում են վարդապետություններ կամ սկզբունքներ՝ մինչ պատասխանում են հարցերին կամ ամփոփում են այն, ինչ սովորել են սուրբ գրության հատվածների շարքում: Քանի որ, երբեմն, նրանք չեն գիտակցում, որ ասում են հիմնարար ճշմարտություն, օգտակար կլինի գրել այն գրատախտակին կամ խրախուսել ուսանողներին գրել այն տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրման օրագրերում:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Հելաման 1.1–21: Հակառակությունը կործանարար է

Հելամանի գիրքը պատմում է Նեփիացիների մեջ մեծ ամբարշտության ժամանակաշրջանի մասին: Գադիանթոնի ավազակները բարգավաճում էին, իսկ մարդիկ ապրում էին ամբարշտության, ավերածության և ապաշխարության շրջան՝ միայն ամբարշտության վերադառնալու համար: Այս անհանգստություններից շատերն առաջացել են հակառակությունից, ինչպես նկարագրված է Հելամանի առաջին գլխում: Որոշ մարդիկ հակառակությունը փոքր մեղք են համարում: Այնուամենայնիվ, վերջին օրերի մարգարեների հետևյալ երկու հայտարարությունները շեշտում են այդ մեղքի լրջության մասին.

Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստն առաջին նախագահությունից զգուշացրել է. «Երբ կա հակառակություն, Տիրոջ Հոգին հեռանում է՝ անկախ նրանից, թե ով է մեղավոր» («What I Want My Son to Know before He Leaves on His Mission» *Ensign,* Մայիս 1996, 41):

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջոզեֆ Վիրթլինը զգուշացրել է. «Կաշառակերության, անազնվության, վիճաբանության, հակառակության և այս աշխարհի այլ չարիքների մեղքերը պատահաբար չեն այստեղ: Դրանք Սատանայի և նրա հետևորդների անողոք ջանքերի ապացույցն են: Նա օգտագործում է իրեն հասանելի ամեն գործիք և միջոց, որպեսզի խաբի, շփոթեցնի և մոլորեցնի» («Deep Roots» *Ensign,* Նոյ. 1994, 76):

Ի հակադրություն հակառակության կործանարար հարվածին՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգը՝ Առաջին Նախագահությունից, շեշտադրել է այն միասնությունը և խաղաղությունը, որը բերում է Տիրոջ Հոգին.

«Այնտեղ, որտեղ մարդիկ իրենց հետ ունեն այդ Հոգին, մենք կարող ենք ակնկալել ներդաշնակություն: Հոգին դնում է ճշմարտության մասին վկայությունը մեր սրտերում, որը միավորում է նրանց, ովքեր կիսում են այդ վկայությունը: Աստծո Հոգին երբեք չի ծնում հակառակություն (տես 3 Նեփի 11.29): Այն երբեք չի ծնում խտրության զգացումներ մարդկանց միջև, որը տանում է վիճաբանության (տես Ջոզեֆ Ֆ. Սմիթ, *Ավետարանի Վարդապետությունը,* 13-րդ հրատ. [1963], 131): Այն տանում է դեպի անձնական խաղաղություն և ուրիշների հետ միասնականության զգացում: Այն միավորում է հոգիները: Միավորված ընտանիքը, միավորված Եկեղեցին և խաղաղ աշխարհը կախված են միավորված հոգիներից» («Որպեսզի մենք լինենք մեկ», *Ensign,* Մայիս 1998, 67):

ԴԱՍ 107

# Հելաման 3–4

## Նախաբան

Մորմոնի Գրքում պատմության այս ժամանակահատվածում Նեփիացիները վայելում էին խաղաղության ժամանակաշրջան, բայց նաև ապրեցին հակառակության ժամանակներ: Տաս հազարավոր Նեփիացիներ խաղաղության ժամանակ միացան Եկեղեցուն: Հետևելով այս մեծ բարգավաճման ժամանակաշրջանին՝ հպարտությունը սկսեց մտնել մարդկանց սրտերը: Այնուամենայնիվ, Եկեղեցու ավելի խոնարհ անդամներն աճում էին իրենց հավատքի մեջ՝չնայած որ հալածվում էին հպարտների կողմից: Նեփիացիներից շատերի ամբարշտության պատճառով իրենք ողջ իրենց հարավային հողերը Լամանացիներին պարտվեցին:

## Ուսուցանման առաջարկներ

### Հելաման 3

*Շատ Նեփիացիներ գաղթում են դեպի հյուսիս՝ մինչ Եկեղեցին բարգավաճում է ամբարշտության և հալածանքների մեջ:*

Գրեք հետևյալ բառերը գրատախտակին (դուք կարող եք սա անել դասից առաջ).

*Մարդիկ. . . (ձեր երկրի անունը)*

*Մարդիկ. . . (ձեր բնակավայրի անունը)*

*Իմ ծխի կամ ճյուղի մարդիկ*

*Իմ ընտանիքի մարդիկ*

*Ես ինքս*

Ուսանողներին հարցրեք, թե գրատախտակին նշված բոլոր մարդկանցից ում կարող են ղեկավարել: Հետո խնդրեք նրանց ձեռք բարձրացնել, եթե երբևէ հուսահատվել են ուրիշների արարքների պատճառով: Թող ձեռքերը բարձր պահեն, եթե վերջերս հուսահատվել են ուրիշների անարդար արարքների պատճառով: Բացատրեք, որ երբ ուսումնասիրեն Հելաման 3 գլուխը, նրանք կհասկանան, թե ինչ կարող են անել, երբ նրանց շրջապատող մարդիկ չեն ապրում ըստ ավետարանի:

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Հելաման 3.1–2 հատվածները: Խնդրեք դասարանին հետևել՝ փնտրելով «հակառակություն չկար» արտահայտությունը: Հրավիրեք ուսանողներին լուռ կարդալ Հելաման 3.3, 19՝ նշելով այն բառերն ու արտահայտությունները, որոնք ցույց են տալիս, թե ինչպես ամեն ինչ փոխվեց Նեփիացիների մոտ:

- Ձեր կարծիքով ինչու՞ Նեփիացիներն այդքան արագ էին փոխվում ոչ հակառակությունից դեպի մեծ հակառակության ժամանակաշրջան:

Ամփոփեք Հելաման 3.3–16՝ բացատրելով, որ հակառակության այս ժամանակահատվածում շատ Նեփիացիներ գաղթեցին դեպի հյուսիս:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 3.20 հատվածը: Խնդրեք դասարանին նշել, թե ինչպես է նկարագրված Հելամանը հակառակության այս ժամանակաշրջանում:

- Հելամանի օրինակն այս հակառակության ժամանակներում ինչպիսի՞ տպավորություն է թողնում ձեզ վրա: (Մինչ ուսանողները կպատասխանեն՝ դուք կարող եք առաջարկել, որ Հելաման 3.20-ում նրանք ընդգծեն *շարունակ* բառը):

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հելաման 3.22–26 հատվածները և նշել, թե ինչպես իրավիճակը փոխվեց Նեփիացիների մոտ:

- Ո՞րն էր Եկեղեցու առաջնորդների ապշելու պատճառը:
- Ի՞նչ կարող ենք սովորել այս հատվածներից այն հնարավոր ազդեցության մասին, որ Եկեղեցին կարող է ունենալ մարդկանց վրա:

Հիշեցրեք ուսանողներին, որ երբ Մորմոնը պատրաստում էր Մորմոնի Գրքի հիշատակարանը, նա, երբեմն, նշում էր այն դասերը, որոնք ուզում էր, որ կարդացողները սովորեն որոշ պատմություններից: Հելաման 3-ի դեպքում նա իր դասերը ներկայացնելիս կիրառեց «այսպիսով, մենք կարող ենք տեսնել», «այսպիսով, մենք տեսնում ենք», «մենք տեսնում ենք» արտահայտությունները: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հելաման 3.27–30 և պարզաբանել, թե ինչ դասեր էր ուզում Մորմոնը, որ մենք սովորենք: Երբ ուսանողները հայտնեն այն, ինչ գտել են, հարցրեք.

- Ի՞նչ էր ուզում Մորմոնը, որ մենք իմանանք Աստծո խոսքի մասին:

Ուսանողներին մի քիչ ժամանակ տվեք մտածելու, թե ինչպես է իրենց սուրբ գրությունների ուսումնասիրությունը հնարավորություն տվել նրանց ստանալ այնպիսի օրհնություններ, ինչպիսիք խոստացվել են Հելաման 3.29 հատվածում: Կարող եք հրավիրել մի քանի ուսանողների կիսվել իրենց փորձառություններով:

Բացատրեք, որ Հելաման 3-րդ գլխի շարունակությունը պատմում է, թե ինչպես մեծ բարգավաճումից հետո հպարտությունը տարածվեց Նեփիացիների մեջ: Եկեղեցու շատ խոնարհ անդամներ հալածանի ենթարկվեցին Եկեղեցու այլ անդամների կողմից, ովքեր հպարտ էին իրենց սրտերով: Բարձրաձայն կարդացեք հետևյալ իրավիճակները: Խնդրեք ուսանողներին մտածել նման իրավիճակների մասին, որ նրանք տեսել են կամ իրենք են ապրել:

1. Մի աղջիկ ծաղրում է իր ծխի մի աղջկա:
2. Մի պատանի ծաղրում է իր քվորումի անդամներից մեկին դասարանում հարցերին պատասխանել շատ ցանկանալու համար կամ քահանայության պարտականություններն իրականացնելու ցանկություն հայտնելու համար:
3. Ծխի պատանիների մի խումբ եկեղեցուց դուրս իրենց զրույցներին և միջոցառումներին չեն ընդգրկում մեկ այլ պատանու:
4. Աղջիկների մի խումբ վիրավորական դիտողություններ է անում մեկ այլ խմբի աղջիկների հագած հագուստի վերաբերյալ:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 3.33–34հատվածները: Խնդրեք դասարանին նշել այն նմանությունները, որ կային Նեփիացիների իրավիճակի և վերևում նկարագրված իրավիճակների միջև: Ուսանողներին պատասխանելու համար ժամանակ հատկացնելուց հետո, տվեք հետևյալ հարցերը.

- Ինչու՞ եք կարծում, որ Եկեղեցու անդամների հալածանքը Եկեղեցու այլ անդամների կողմից համարվում էր «մեծ չարիք» Նեփիացիների մեջ:
- Ավետարանի ո՞ր սկզբունքներն ենք մենք խախտում, երբ վատ ենք վերաբերվում կամ բարի չենք Եկեղեցու այլ անդամների նկատմամբ: Ինչպե՞ս կարող ենք ամրացնել մեր սերը մեր մերձավոր Սրբերի նկատմամբ:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հելաման 3.35 և նշել, թե ինչպես արձագանքեցին հալածանքներին Նեփիացիների մեջ եղած խոնարհները:

- Հալածվող մարդկանց հավատքն աճե՞ց, նվազե՞ց, թե՞ նույնը մնաց:
- Հալածվող մարդիկ ինչպիսի՞ քայլեր ձեռնարկեցին, որը նպաստեց նրանց հավատքի աճին: (Նրանք հաճախ ծոմ պահեցին և աղոթեցին, փորձեցին խոնարհ լինել և իրենց սրտերը ենթարկեցին Աստծուն:)
- Հավատքի աճից բացի էլ ինչի՞ հանգեցրեցին խոնարհ Նեփիացիների գործողությունները: (Ուրախություն, սփոփանք և նրանց սրտերի մաքրում և սրբացում:)

Գրեք հետևյալը գրատախտակի վրա. *եթե մենք . . . , մեր հավատքն առ Հիսուս Քրիստոս կաճի՝ չնայած հալածանքներին և փորձություններին:* Խնդրեք ուսանողներին լրացնել այս հայտարարությունը՝ հիմնված Հելաման 3.33–35 հատվածներում իրենց սովորածի: Դուք կարող եք հրավիրել մի քանի ուսանողների կիսվել, թե ինչպես են լրացրել հայտարարությունը: Չնայած ուսանողների պատասխանները կարող են տարբեր լինել, համոզվեք, որ նրանք արտահայտում են հետևյալ ճշմարտությունը. **եթե փորձենք ապրել արդար, մեր հավատքն առ Հիսուս Քրիստոս կաճի՝ չնայած հալածանքներին ու փորձություններին:** Որպեսզի օգնեք ուսանողներին խորացնել այս հատվածների մասին իրենց հասկացողությունը, կարող եք տալ հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս են աղոթքն ու ծոմապահությունն օգնել ձեզ հալածանքի կամ փորձության ժամանակ:

***Պարզաբանենք «այսպիսով, մենք տեսնում ենք» խոսքերը***

Մորմոնի Գիրքը պատրաստելիս մարգարե Մորմոնը, երբեմն, կիրառում էր «այսպիսով, մենք տեսնում ենք» կամ նմանատիպ արտահայտություններ, որպեսզի առաջ քաշի այն ճշմարտությունները, որոնք ուզում էր ուսուցանել: Նշելով այս արտահայտությունները Հելաման 3-ում՝ կարող եք նախապատրաստել ուսանողներին բացահայտել Մորմոնի նախատեսած դասերը Մորմոնի Գրքի այլ հատվածներում:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում ձեր սիրտն Աստծուն ենթարկել։
- Ինչու՞ է սիրտն Աստծուն ենթարկելն անհրաժեշտ հալածանքի և փորձության ժամին հավատքն աճեցնելու համար։

Հարցրեք ուսանողներին, արդյոք նրանք երբևէ զգացել են հավատքի աճ, երբ արդար կերպով են արձագանքել հալածանքներին։ Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց փորձառություններով։ Դուք նույնպես կարող եք կիսվել ձեր անձնական փորձառությամբ։

Որպեսզի նախապատրաստեք ուսանողներին ուսումնասիրել Հելամանի 4 գլուխը, հրավիրեք նրանց մտքում կարդալ Հելաման 3.36 հատվածը։ Խնդրեք նրանց պարզաբանել Նեփիացիների ընդհանուր վիճակը։ (Նեփիացիներն աճում էին հպարտության մեջ՝ չնայած Քրիստոսին հետևողների խոնարհ օրինակին։)

## Հելաման 4:

### *Ամբարշտության պատճառով Տիրոջ Հոգին հեռանում է Նեփիացիներից, և Լամանացիները նվաճում են Նեփիացիների ողջ հարավային հողերը*

Բացատրեք, որ Հելաման 4.4–8 հատվածներում խոսվում է մի պատերազմի մասին, որտեղ Նեփիացիները կռվում էին ընդդեմ Լամանացիների և Նեփիացի պառակտիչների։ Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ այս հատվածները։ Խնդրեք դասարանին հետևել՝ պարզաբանելով, թե Նեփիացիների որ հողերը նվաճվեցինայդ ճակատամարտի ժամանակ։

Գրատախտակի վրա գրեք հետևյալ հրահանգները։ (Դուք կարող եք սա անել դասը սկսվելուց առաջ։) Հրավիրեք ուսանողներին արտագրել դրանք իրենց տետրերում կամ սուրբ գրությունների օրագրերում։

*Գրեք երեք արտահայտություն, որոնք ցույց են տալիս Նեփիացիների վերաբերմունքն ու գործողությունները։*

*Գրեք երեք արտահայտություն, որոնք ցույց են տալիս, թե ինչ տեղի ունեցավ այդ գործողությունների պատճառով։*

Ուսանողներին զույգերի բաժանեք։ Խնդրեք զույգերին միասին կարդալ Հելաման 4.11–13, 23–26 հատվածները՝ փնտրելով և դուրս գրելով գլխավոր արտահայտությունները՝ համաձայն գրատախտակի հրահանգների։

Հրավիրեք մի քանի զույգերի ասել իրենց պատասխանները։ Երբ ուսանողները կիսվեն իրենց գրածներով, դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք նշեն հետևյալ արտահայտություններն իրենց սուրբ գրություններում. «թողնվեցին իրենց սեփական ուժին» (Հելաման 4.13), «իրենք դարձել են թույլ» (Հելաման 4.24), և «այսպիսով, նրանք դարձել էին թույլ» (Հելաման 4.26)։

Հարցրեք ուսանողներին, թե ինչ սկզբունքներ կարող են նշել Հելաման 4-ի իրենց ուսումնասիրությունից։ Օգնեք նրանց նշել հետևյալ սկզբունքը. **Հպարտությունը և ամբարշտությունը մեզ բաժանում են Տիրոջ Հոգուց և թողնում են մեզ մեր սեփական ուժին։** Դուք կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին։ Դուք նաև կարող եք առաջարկել, որ ուսանողները գրեն այն իրենց սուրբ գրություններում՝ Հելաման 4.23–24-ի կողքին։

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այս սկզբունքը, հրավիրեք նրանցից մեկին առաջ գալ։ Խնդրեք ուսանողին պատկերացնել, որ նա զինվորագրված է պատերազմում միայնակ կռվելու Լամանացիների դեմ։ Հարցրեք ուսանողին, թե ինչպիսի հնարավորություն կունենար նա որոշակի մեծության բանակի դեմ։ Մեկ այլ ուսանողի խնդրեք գալ առաջ և կանգնել առաջին ուսանողի կողքին։ Հարցրեք առաջին ուսանողին, թե երկրորդ ուսանողի օգնությունը կբարձրացներ թշնամու զորքի դեմ իր հաղթանակի հնարավորությունները։ (Որոշակի մեծության բանակի դեմ երկրորդ ուսանողին ավելացնելը էականորեն չէր ավելացնի հաղթանակի հնարավորությունները։) Հետո գրատախտակի վրա գրեք *Տերը*։ Հարցրեք առաջին ուսանողին.

- Քո կարծիքով ինչպիսի՞ն կլինեին պատերազմում հաղթելու քո հնարավորությունները, եթե Տերը քո կողքին լիներ։

Ուսանողներին հարցրեք, թե ինչպես է այս գործողությունը վերաբերում Հելաման 4-ում նշված սկզբունքին։ Կարող եք տալ հետևյալ հարցը.

- Նեփիացիների դեպքում, իրենց սեփական ուժին թողնվելը նշանակում էր պարտվել կռվում և կորցնել հողեր: Ինչպիսի՞ «կռիվներում» մենք կպարտվենք, եթե Սուրբ Հոգին մեզ հետ չլինի:

Խնդրեք ուսանողներին մտածել մի բանի շուրջ, որ կարող են անել, որպեսզի իրենց կյանքում պահեն Սուրբ Հոգու ընկերակցությունը, և հրավիրեք նրանց անել դա: Կիսվեք ձեր կյանքում Սուրբ Հոգու կարևորության մասին ձեր վկայությամբ:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Հելաման 3.33–34, 36; 4.12: Հպարտության ազդեցությունը Եկեղեցու վրա

Մորմոնը նշել է, որ հպարտությունը Տիրոջ Եկեղեցու մաս չի կազմում, բայց մեծ հարստության պատճառով այն սկսեց մտնել Եկեղեցու որոշ անդամների սրտերը (տես Հելաման 3.33, 36):

Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ուսուցանել է.

«Մտածեք, թե անցյալում հպարտությունն ինչ արժեք է ունեցել մեզ համար և ինչ արժեք ունի հիմա մեր սեփական կյանքում, մեր ընտանիքներում և Եկեղեցում»:

«Մտածեք ապաշխարության մասին, որը կարող էր փոխել կյանքեր, պահպանել ամուսնություններ և ամրացնել ընտանիքներ, եթե հպարտությունը մեզ հետ չպահեր մեր մեղքերը խոստովանելուց և դրանք թողնելուց» (տես ՎևՈւ 58.43):

«Մտածեք շատերի մասին, ովքեր Եկեղեցու ավելի քիչ ակտիվ անդամներ են, որովհետև նրանք վիրավորվել են, և իրենց հպարտությունը թույլ չի տալիս իրենց ներել կամ լրիվ ճաշակել Տիրոջ սեղանից»:

«Մտածեք տաս հազարավոր երիտասարդ տղամարդկանց և զույգերի մասին, ովքեր կարող էին լինել միսիայում, եթե չլիներ հպարտությունը, որը հետ է պահում նրանց իրենց սրտերն Աստծուն տալուց» (տես Ալմա 10.6; Հելաման 3.34–35):

«Մտածեք, թե տաճարային աշխատանքը որքան կաճեր, եթե այս աստվածային ծառայության համար անցկացրած ժամանակն ավելի կարևոր լիներ, քան շատ ամբարտավան զբաղմունքներ, որոնք մրցում են մեր ժամանակի հետ» («Զգուշացեք հպարտությունից», *Ensign,* 1989, 6):

ԴԱՍ 108

# Հելաման 5

## Ներածություն

Նեփիացիները շարունակում էին ամբարշտությամբ, մինչև նրանցից շատերը նախընտրեցին ամբարշտությունն արդարակեցությունից: Նեփին ու Լեքին իրենց նվիրեցին Աստծո խոսքը քարոզելուն: Նրանց հայրը՝ Հելամանը, ուսուցանել էր նրանց հիշել իրենց Քավիչին և դարձնել Նրան իրենց կյանքի հիմքը: Նեփիացիներին ուսուցանելուց հետո, Նեփին ու Լեքին քարոզեցին Լամանացիներին, ովքեր բանտ նետեցին նրանց: Տերը հրաշքով ազատեց նրանց, և Լամանացիների մեծամասնությունն ապաշխարեց և դարձի եկավ դեպի ավետարանը:

***Ուսուցանեք Սուրբ Հոգով***

Երբ դուք պատրաստվում եք ուսուցանել, աղոթեք, որ Սուրբ Հոգին լինի ձեզ և ուսանողների հետ:

## Ուսուցանման առաջարկներ

### Հելաման 5.1–13

*Հելամանը խորհուրդ է տալիս իր որդիներին պահել Աստծո պատվիրանները, քարոզել ավետարանը և հիշել Հիսուս Քրիստոսի քավող զորությունը:*

Դասից առաջ պատրաստեք վեց թղթի շերտ ցուցադրելու համար: Առաջինի վրա պետք է ձեր անունը գրված լինի: Մյուս հինգը պետք է ներառեն հետևյալ բառերն ու արտահայտությունները. *Ծնողներ, Հիսուս Քրիստոսի Քավությունը, Մարգարեներ, Ապաշխարությունը տանում է դեպի փրկություն* և *Պահեք պատվիրանները:*

Յուրաքանչյուր ուսանողի տվեք թղթի մի կտոր: Բացատրեք, որ պատրաստվում եք հակիրճ ցույց տալ նրանց թղթի վեց շերտ, որոնց վրա կան գրված բառեր: Հետո նրանք հիշելով կգրեն այդ բառերը: Ուսանողներին հերթով ցույց տվեք թղթի շերտերը:

Խնդրեք նրանց գրել այն բառերը, որոնք հիշում են: Հետո կրկին ցույց տվեք թղթի վեց շերտերը: Հարցրեք.

- Հե՞շտ էր, թե դժվար հիշել այս բառերն ու արտահայտությունները:
- Ձեր կարծիքով ի՞նչ տարբերություն եղավ, երբ ձեզ նախապես ասվեց, որ պետք է հիշեիք այն, ինչ գրված էր թղթի շերտերի վրա:

Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի հետևյալ հայտարարությունը: Դասարանին հրավիրեք լսել այն, ինչ նա ասել է ավետարանի մեր ստացած ուսմունքները հիշելու կարևորության մասին.

«Երբ բառարանում փնտրում եք ամենակարևոր բառը, գիտե՞ք որն է դա: Դա կարող է լինել *հիշելը:* Քանի որ դուք բոլորդ ուխտ եք կապել, դուք գիտեք ինչ անել և գիտեք ինչպես անել դա—մեր ամենամեծ կարիքը հիշելն է» («Վեհացման շրջանները» [ուղղված է ԵԿՀ-ի կրոնի ուսուցիչներին, Հունիս 28, 1968], 5, si.lds.org):

Բացատրեք դասարանին, որ այսօր նրանք կսովորեն երկու մարդկանց մասին, ովքեր տարբերություն են մտցրել հազարավոր մարդկանց կյանքերում, որովհետև նրանք հիշել են և գործել են համաձայն որոշ ճշմարտությունների: Այսօրվա դասի ընթացքում խրախուսեք ուսանողներին մտածել, թե իրենց կարծիքով Տերն ինչ է ուզում, որպեսզի նրանք հիշեն:

Ամփոփեք Հելաման 5.1–4հատվածները: Բացատրեք, որ ամբարշտության պատճառով Նեփին հրաժարվեց գլխավոր դատավոր լինելուց, այսպիսով, նա և նրա եղբայր Լեքին կարողացան նվիրվել Աստծո խոսքը քարոզելուն:

Գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները: (Մի՛ ընդգրկեք փակագծերի մեջ գրված բառերը:)

*Հելաման 5.5–7 (Պահել պատվիրանները; հիշել նախնիների արդարացի օրինակները:)*

*Հելաման 5.9–11 (Հիշել Հիսուս Քրիստոսի Քավությունը; հիշել, որ մենք չենք կարող փրկվել մեր մեղքերով, բայց կարող ենք փրկվել մեր մեղքերից ապաշխարության և Քավության զորության միջոցով:)*

*Հելաման 5.12 (Հիշեք, որ Հիսուս Քրիստոսը պետք է լինի մեր հիմքը:)*

Հրավիրեք ուսանողներին ուշադիր կարդալ գրատախտակին գրված հատվածները՝ փնտրելով *հիշել* բառը: Դուք կարող եք առաջարկել, որ ամեն անգամ այդ բառին հանդիպելիս ընդգծեն այն: Հետո ուսանողներին մի քանի րոպե տվեք, որպեսզի մտքում կարդան այս հատվածները՝ փնտրելով, թե ինչ էր ուզում Հելամանը, որ իր որդիները հիշեին: Հրավիրեք ուսանողներին պատմել, թե ինչ են պարզել: Դուք կարող եք գրել նրանց պատասխանները գրատախտակի վրա՝ համապատասխան սուրբ գրության հղումի կողքին:

Որպեսզի օգնեք ուսանողներին վերլուծել և հասկանալ այս հատվածները, տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս կարող է ուրիշների արդարացի օրինակները հիշելն օգնել ձեզ ընտրել «անել այն, ինչը բարի է»:
- Ի՞նչ եք անում Հիսուս Քրիստոսի Քավությունը հիշելու համար:

Գրատախտակին գրեք հետևյալ հայտարարությունը. եթե մենք . . . , *Սատանան ոչ մի զորություն չի ունենա մեր վրա:*

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 5.12: Դասարանին խնդրեք հետևել՝ գրատախտակին գրված խոսքը լրացնելու եղանակ փնտրելով: Չնայած ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, հավաստիացեք, որ նրանք արտահայտում են այն, որ **եթե մենք կառուցենք մեր հիմքը Հիսուս Քրիստոսի վրա, Սատանան ոչ մի զորություն չի ունենա մեր վրա**: Կարող եք հրավիրել ուսանողներին նշել Հելաման 5.12-ի արտահայտությունները, որոնք արտահայտում են այս սկզբունքը: Նշեք, որ Հելաման 5.12 սուրբ գրությունների սերտման հատված է: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները նշեն այս հատվածը տարբերվող ձևով, այնպես, որ կարողանան հեշտորեն գտնել այն:

**Հելաման 5.12**
հատվածը սուրբ գրությունների սերտման հատված է: Դասի վերջում տեսեք ուսուցանման գաղափարը, որպեսզի օգնեք ուսանողներին այս հատվածը սերտելիս:

Որպեսզի ուսանողներին օգնեք հասկանալ այս հատվածում ուսուցանվող սկզբունքը, կառուցեք մի փոքրիկ աշտարակ կամ տուն (խորանարդներով կամ գրքերով) և տվեք նմանատիպ հարցեր.

- Ինչու՞ է անհրաժեշտ, որ կառույցն ունենա ամուր հիմք:
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում կառուցել մեր հիմքը Հիսուս Քրիստոսի վրա:
- Ի՞նչ խոստումներ են տրվում նրանց, ովքեր կառուցում են իրենց հիմքը «Քավիչի վեմի վրա»:
- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի կառուցենք մեր հիմքը Հիսուս Քրիստոսի վեմի վրա: (Դուք կարող եք հարցնել ուսանողներին, թե ինչպես են Հելաման 5.6–11 հատվածում ուսուցանված ճշմարտությունները օրինակ հանդիսանում, թե ինչ եղանակով կարող ենք կառուցել մեր հիմքը Հիսուս Քրիստոսի վրա:)

Դուք կարող եք նշել, որ Փրկչի հիմքի վրա կառուցելը չի կանխի Սատանայի հարձակումները, այլ մեզ ուժ կտա, որպեսզի հաղթահարենք դրանք:

- Ե՞րբ եք ի վիճակի եղել դիմադրել գայթակղությանը կամ տանել փորձությունները ձեր հիմքը Հիսուս Քրիստոսի հիմքի վրա կառուցած լինելու պատճառով:

Վկայեք այն ուժի մասին, որ դուք ստացել եք ձեր հիմքը Հիսուս Քրիստոսի վեմի վրա կառուցելու շնորհիվ: Ուսանողներին ժամանակ տվեք տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրման օրագրերում գրել մի եղանակի մասին, որի միջոցով ավելի ջանասիրաբար կձգտեն կառուցել իրենց հիմքն իրենց Փրկչի վեմի վրա:

## Հելաման 5.14–52

### *Տերը պաշտպանում է Նեփիին ու Լեքիին բանտում և շատ Լամանացիներ դարձի են գալիս:*

Ամփոփեք Հելաման 5.14–19 հատվածները՝ բացատրելով, որ Նեփին ու Լեքին մեծ զորությամբ քարոզում էին ավետարանը Նեփիացիների ու Լամանացիների մեջ: Որպես հետևանք, շատ Նեփիացի պառակտիչներ վերադարձան իրենց հավատքին: Զարահեմլայում և շրջակա տարածքում 8000 Լամանացիներ մկրտվեցին:

Արտագրեք հետևյալ աղյուսակը գրատախտակի վրա: Դասարանը բաժանեք զույգերի և յուրաքանչյուր զույգի խնդրեք արտագրել աղյուսակը թղթի մի կտորի վրա: Խնդրեք զույգերին միասին աշխատել, կարդալ աղյուսակի մեջ նշված սուրբ գրությունների հատվածները և հետո նկարել մի պարզ նկար կամ գրել հակիրճ ամփոփում այն մասին, թե ինչ է նկարագրում յուրաքանչյուր հատվածը: (Երբ ուսանողները կարտագրեն աղյուսակը, խրախուսեք նրանց յուրաքանչյուր սուրբ գրության հղման տակ բավարար տեղ թողնել իրենց նկարի կամ ամփոփման համար:)

| | | |
|---|---|---|
| Հելաման 5.20–21 | Հելաման 5.22–25 | Հելաման 5.26–28 |
| Հելաման 5.29–34 | Հելաման 5.35–41 | Հելաման 5.42–44 |

Բավականաչափ ժամանակ անցնելուց հետո հրավիրեք ուսանողներին հակիրճ ցույց տալ և բացատրել իրենց նկարները կամ ամփոփումները մյուս ուսանող զույգերին: Որպեսզի օգնեք ուսանողներին խորացնել այս հատվածների վերաբերյալ իրենց հասկացողությունը, տվեք հետևյալ հարցերը.

- Երբ Լամանացիները խավարի ամպի մեջ էին, ձայնն ի՞նչ հորդորեց նրանց անել: (Տես Հելաման 5.29, 32:)
- Ինչպե՞ս է Հելաման 5.30– հատվածում նկարագրվում ձայնը:
- Ե՞րբ եք զգացել կամ լսել «կատարյալ մեղմության հանդարտ ձայնի» շշուկները:
- Ամինադաբն ի՞նչ սովորեցրեց իր եղբայրներին անել, որպեսզի հեռացնեն խավարը: (Տես Հելաման 5.41:)
- Ի՞նչ տեղի ունեցավ, երբ Լամանացիները ենթարկվեցին Ամինադաբի խորհրդին և հավատք գործադրեցին առ Քրիստոս: (Տես Հելաման 5.43–44:)

Ուսանողներին հրավիրեք մտքում կարդալ Հելաման 5.44–47 հատվածները՝ փնտրելով այնպիսի բառեր, որոնք նկարագրում են ապաշխարության որոշ արդյունքներ:

- Այս հատվածներից ի՞նչ եք սովորում ապաշխարության մասին: (Օգնեք ուսանողներին ներկայացնել հետևյալ ճշմարտությունը. **երբ մենք հավատք ենք գործադրում առ Հիսուս Քրիստոս և ապաշխարում ենք մեր մեղքերից, Սուրբ Հոգին լցնում է մեր սրտերը խաղաղությամբ և ուրախությամբ**:)

Ամփոփեք Հելաման 5.48–52 հատվածները՝ բացատրելով, որ Լամանացիները և Նեփիացի պառակտիչները, ովքեր ականատես եղան այս հրաշքին, առաջ գնացին և սպասավորեցին ժողովրդին, և Լամանացիների մեծ մասը դարձի եկավ դեպի ավետարանը:

Խրախուսեք ուսանողներին խորհել, արդյոք նրանք ներկայումս իրենց կյանքում զգում են խաղաղություն և ուրախություն: Եթե չեն զգում, հրավիրեք նրանց մտածել ինչ կարող են անել, որպեսզի կառուցեն իրենց հիմքը Հիսուս Քրիստոսի վրա և ցրեն իրենց շրջապատող խավարի ամպը:

## Սերտման սուրբ գրություն —Հելաման 5.12

Հրավիրեք ուսանողներին կարդալ Հելաման 5.12 հատվածը: Որպեսզի օգնեք նրանց հիշել այս հատվածը, տվեք նրանց մաքուր թղթի մի թերթ: Թող որ գրեն այդ հատվածը թղթի վրա՝ օգտագործելով միայն նկարներ և տառեր: Այն բառերի համար, որոնք պատկերներ են ներկայացնում (ինչպես, օրինակ՝ *վեմ, հիմք, քամի, ևետ* և *պտուտահողմ*), թող նկարեն պարզ նկարներ: Այն բառերը, որոնք պատկերներ չեն ներկայացնում (ինչպես, օրինակ՝ *հիմա* և *իմ*), թող գրեն այդ բառերի առաջին տառերը: Նաև կարող եք հրավիրել նրանց միմյանց հետ փոխանակել թղթերը և ասել հատվածը՝ կիրառելով այն հուշումները, որ նրանց դասընկերները նկարել են և գրել: Խրախուսեք ուսանողներին տուն տանել իրենց թղթերը և դնել այնտեղ, որտեղ կտեսնեն այն հաճախ, այսպիսով՝ կկարողանան հիշել այդ հատվածը:

*Նշում.* Այսօրվա դասի ծավալի պատճառով, կարող եք իրականացնել այս գործողությունը մեկ ուրիշ օր, երբ ավելի շատ ժամանակ կունենաք:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Հելաման 5.12 Ինչպե՞ս կարող ենք դիմակայել հակառակորդի «զորեղ քամիներին»:

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ուսուցանել է, որ մենք պետք է կառչենք Հիսուս Քրիստոսի ավետարանից, երբ հակառակորդը սանձազերծում է իր ուժերը մեր դեմ.

«Մենք նույնպես կանգնում ենք հակառակորդի կողմից սանձազերծված հզոր, կործանիչ զորքերին դեմ առ դեմ: Մեղքի, ամբարշտության, անբարոյականության, նվաստացման, բռնակալության, խաբեբայության, դավադրության և անազնվության ալիքները սպառնում են մեզ բոլորիս: Դրանք գալիս են մեծ ուժով և արագությամբ, ու կկործանեն մեզ, եթե մենք զգոն չլինենք:

«Բայց մեզ համար նախազգուշացում է հնչում: Այն անհրաժեշտ է մեզ համար, որպեսզի արթուն լինենք և լսենք ու փախչենք չարից՝ հանուն մեր հավերժական կյանքի: Մենք առանց օգնության չենք կարողանա դիմադրել դրան: Մենք պետք է փախչենք դեպի ավելի բարձր տեղեր կամ ամուր կառչենք այն բանից, ինչը կարող է պաշտպանել մեզ ոչնչացումից: Այն, ինչից պետք է կառչենք ապահովության համար, Հիսուս Քրիստոսի ավետարանն է: Այն մեր պաշտպանությունն է չարի կուտակած ուժերի դեմ: Մորմոնի Գրքում մի ոգեշնչված մարգարե խորհուրդ է տվել իր ժողովրդին. «Հիշեք, որ դա մեր Քավչի վեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ դուք պիտի կառուցեք ձեր հիմքը. որ, երբ դևն առաջ ուղարկի իր զորեղ քամիները, այո, իր նետերը պտտահողմում, այո, երբ նրա ողջ կարկուտը և զորեղ փոթորիկը հարվածի ձեզ, այն զորություն չի ունենա ձեր վրա՝ քաշելու ձեզ վար՝ դեպի թշվառության ու անվերջ վայի անդունդը» (Հելաման 5.12) («Ամուր կառչեք երկաթե ձողից», *Ensign,* Նոյ. 1978, 6):

ԴԱՍ 109

# Հելաման 6–7

## Նախաբան

Նեփիի և Լեքիի միսիոներական ջանքերին հետևեց այն, որ Լամանացիներն աճեցին արդարությամբ: Այնուամենայնիվ, Նեփիացիներն ամբարիշտ դարձան և սկսեցին աջակցել Գադիանթոնի ավազակներին, իսկ Տիրոջ Հոգին ետ քաշվեց նրանցից:

Նեփին մարգարեացավ, որ եթե Նեփիացիները շարունակեին ամբարշտությամբ, նրանք կկործանվեին: Նա նաև մարգարեացավ, որ Լամանացիների արդարության շնորհիվ, Տերը գթասիրտ կլինի նրանց նկատմամբ և կպահպանի նրանց:

## Ուսուցանման առաջարկներ

### Հելաման 6

*Լամանացիները դառնում են արդար և պայքարում են Գադիանթոնի ավազակների դեմ՝ մինչ Նեփիացիներն աճում են ամբարշտության մեջ և աջակցում են Գադիանթոնի ավազակներին*

Գրատախտակի մեջտեղում նկարեք հետևյալ գծապատկերը.

⇧

Սուրբ Հոգու ազդեցությունը ձեր կյանքում

⇩

Հրավիրեք ուսանողներին նշել և մտածել այն վերաբերմունքների և գործողությունների մասին, որոնց արդյունքում իրենց կյանքում աճում է Սուրբ Հոգու ազդեցությունը, և ընդհակառակը, որոնց արդյունքում նվազում է Սուրբ Հոգու ազդեցությունը:

Բացատրեք, որ Մորմոնը հիշատակել է, որ Տերը ետ քաշեց Իր Հոգին Նեփիացիներից և սկսեց դուրս թափել Իր Հոգին Լամանացիների վրա (տես Հելաման 6.35–36): Հիշեցրեք ուսանողներին, որ Նեփիացիները «դարձել էին թույլ՝ իրենց օրինազանցության պատճառով» (Հելաման 4.26): «Տիրոջ Հոգին այլևս չէր պահպանում իրենց» (Հելաման 4.24), և նրանք «հասունանում էին կործանման համար» (Հելաման 5.2):

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 6.2 հատվածը: Դասարանին խնդրեք հետևել՝ փնտրելով այնպիսի գործողություններ, որոնք կուղեկցեն Նեփիացիներին շարունակել «հասունանալ հավիտենական կործանման համար» (Հելաման 6.40): Երբ ուսանողները հայտնեն այն, ինչ որ գտնեն, խնդրեք ուսանողներից մեկին գրել իրենց պատասխանները գրատախտակի ներքևի մասում կամ վարընթաց սլաքի կողքին կամ ներքևում: (Կարող եք բացատրել, որ *չապաշխարող* բառը նշանակում է ապաշխարել չցանկացող և չզղջացող:)

Հիշեցրեք ուսանողներին, որ Նեփիի և Լեքիի նախորդ տարվա միսիոներական ջանքերի շնորհիվ հազարավոր Լամանացիներ էին մկրտվել Զարահեմլայում, և Լամանացիների մեծամասնությունը դարձի էր եկել դեպի ավետարանը Նեփիի երկրում (տես Հելաման 5.19–20, 50–51): Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 6.1, 3–5: Հրավիրեք ուսանողներին հետևել՝ փնտրելով գործողություններ և վերաբերմունքներ, որոնք Լամանացիներին թույլ տվեցին վայելել Սուրբ Հոգու ավելացած ազդեցությունը: Երբ ուսանողները հայտնեն այն, ինչ գտել են, խնդրեք ուսանողներից մեկին գրել իրենց պատասխանները գրատախտակի վերևի մասում՝ վերընթաց սլաքի վերևում կամ կողքին:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում լինել ամուր և հաստատուն հավատքի մեջ: (Տես Հելաման 6.1:)
- Եկեղեցու մարդիկ ինչպե՞ս արձագանքեցին Լամանացիների դարձի գալուն: (Կարող եք նշել, որ ավետարանով կիսվելը և Սրբերի հետ ընկերակցություն անելը

կարող է բերել մեծ ուրախություն նույնիսկ այն ժամանակ, երբ մենք շրջապատված ենք ամբարշտությամբ։)

Ամփոփեք Հելաման 6.7–14 հատվածները՝ բացատրելով, որ մոտ երեք տարի Նեփիացիներն ու Լամանացիները վայելեցին խաղաղություն։ Երբ արդյունաբերությունը և առևտուրը նրանց միջև աճեց, երկու ժողովուրդն էլ բարգավաճեցին։ Հետո, դատավորների կառավարման 66-րդ տարում, երկու գլխավոր դատավոր սպանվեցին։ Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Հելաման 6.16–17 հատվածները։ Դասարանին խնդրեք հետևել՝ նշելով վերաբերմունքներ և գործողություններ, որոնց պատճառով Սուրբ Հոգին ետ քաշվեց Նեփիացիներից։ Երբ ուսանողները հայտնեն այն, ինչ գտել են, խնդրեք ուսանողներից մեկին գրել իրենց պատասխանները գրատախտակի ներքևի մասում՝ վարընթաց սլաքի ներքևում կամ կողքին։

Ձեր ուսանողների հետ կիսվեք հետևյալ փաստերով.

Միրտն անհրաժեշտ է մեր ֆիզիկական գոյատևման համար։ Այն մղում է արյուն մեր մարմնով մեկ, այնպես որ թթվածինը և այլ սնուցիչները կարող են հասնել մեր բոլոր բջիջներին։ Լինելով մոտավորապես բռունցքի չափ՝ չափահաս մարդու սիրտն օրական, միջին չափով, մղում է 2,000 գալոն (7,570 լիտր) արյուն։ Այն մեկ րոպեում խփում է մոտ 70 անգամ, կամ 100000 զարկ օրական։

- Գիտենալով ձեր ֆիզիկական սրտի կենսական բնույթը՝ ի՞նչ կկամենայիք անել, որպեսզի այն առողջ պահեիք։

Գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները. *Հելաման 6.17, 21, 26, 28–31*։ Նշեք, որ այս հղումի մեջ յուրաքանչյուր հատված օգտագործում է *սիրտ* կամ *սրտեր* բառը՝ ակնարկելով մեր հոգևոր սիրտը։ Ուսանողներին այս հատվածներն ուսումնասիրելու և հետևյալ հարցերին պատասխանելու համար մտածելու ժամանակ տվեք։ (Որպեսզի ժամանակ խնայեք, նախքան դասի սկսվելը գրատախտակի վրա գրեք այս հարցերը կամ թերթիկների վրա գրեք ու բաժանեք ուսանողներին, որպեսզի նրանք գրատախտակին գրված հատվածներն ուսումնասիրելիս քննարկեն դրանք։)

*Ձեր կարծիքով, ինչու՞ է Սատանան այդքան հետաքրքրված Աստծո զավակների սրտով։*

*Ի՞նչ արեցին Նեփիացիները, որը հնարավորություն տվեց Սատանային ազդեցություն ձեռք բերել նրանց սրտի վրա։ (Տես Հելաման 6.17։)*

*Ի՞նչ է տեղի ունենում մարդու հետ, ում սիրտը հայտնվում է Սատանայի ազդեցության կամ ղեկավարման տակ։ (Տես Հելաման 6.21, 28, 30–31։)*

Հրավիրեք մի քանի ուսանողների պատասխանել հետևյալ հարցերին։ Հետո խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ հայտարարությունը։ Դասարանին խնդրեք ուշադիր լսել և նշել ուղիներ, որոնց միջոցով Սատանան փորձում է գայթակղություններ սերմանել մեր սրտերում։

«Կարող են լինել կեղծ հայտնություններ, դևի կողմից հուշումներ, գայթակղություններ։ Այնքան ժամանակ, որքան ապրում եք, հակառակորդն այս կամ այն ճանապարհով կփորձի մոլորեցնել ձեզ . . ..

«Եթե երբևէ ստանաք ինչ-որ բան անելու հուշում, որի պատճառով անհարմար *կզգաք*, ինչ-որ բան, որ ձեր *մտքում* գիտեք, որ սխալ է և արդարության սկզբունքին հակառակ է, մի արձագանքեք դրան» (“Personal Revelation: The Gift, the Test, and the Promise,” *Ensign,* Nov. 1994, 61)։

Գրատախտակի ներքևի մասի ցուցակին ավելացրեք *լսել և տեղի տալ գայթակղությանը*։ Մի քանի ուսանողների հերթով հրավիրեք կարդալու Հելաման 6.20–21, 37–38 հատվածները։ Դասարանին խնդրեք հետևել՝ ուշադրություն դարձնելով Գադիանթոնի ավազակների ազդեցության նկատմամբ Լամանացիների և Նեփիացիների տարբեր արձագանքներին։

Ուսանողներին ասացեք, որ Նեփիացիների և Լամանացիների հետ տեղի ունեցածը հիշատակելուց հետո, Մորմոնը նշեց դասեր, որոնք կարող ենք սովորել նրանց փորձառությունից։ Գրատախտակի վրա գրեք հետևյալ անավարտ նախադասությունները.

*Նեփիացիները կորցրեցին Սուրբ Հոգին, որովհետև . . .*

*Տերն իր Հոգին թափեց Լամանացիների վրա, որովհետև . . .*

Ուսանողներին հրավիրեք կարդալ Հելաման 6.34–36 հատվածները՝ ուշադրություն դարձնելով այն տեղեկությանը, որը կօգնի նրանց լրացնել գրատախտակի վրա գրված հայտարարությունները:

- Համաձայն այն ամենի, ինչ կկարդաք այս հատվածներում, ինչպե՞ս կլրացնեք գրատախտակի վրա գրված հայտարարությունները: (Դուք կարող եք լրացնել գրատախտակի վրա գրված հայտարարությունները՝ օգտագործելով ուսանողների պատասխանները:)
- Այս հատվածներն ի՞նչ են ուսուցանում այն ամենի մասին, ինչ կարող ենք անել, որպեսզի Սուրբ Հոգին մեզ հետ լինի: (Չնայած ուսանողները կարող են տարբեր պատասխաններ տալ, հավաստիացեք, որ նրանք կարտահայտեն, որ **եթե մենք հավատանք և հնազանդվենք Տիրոջ խոսքերին, Նա կթափի Իր Հոգին մեզ վրա:** Ուսանողները նաև պետք է արտահայտեն, որ **երբ մենք թույլ ենք տալիս, որ Սատանան ազդեցություն ունենա մեր սրտերի վրա, Տիրոջ Հոգին կհեռանա մեզանից**:)

Հրավիրեք ուսանողների ուշադրությունը դեպի այն ցուցակները, որ նրանք գրել են գրատախտակի վրա՝ սլաքների վերևում և ներքևում: Նշեք, որ գրատախտակի վերին մասում գրված գործողություններն ու վերաբերմունքները ներկայացնում են Տիրոջ խոսքերին հավատալու և հնազանդվելու պատրաստակամություն, մինչ գրատախտակի ներքևում նշված գործողություններն ու վերաբերմունքները ներկայացնում են ամբարշտություն ու կարծրասրտություն:

- Ի՞նչ եք անում, որպեսզի ակտիվորեն հրավիրեք Սուրբ Հոգու ազդեցությունը դեպի ձեր կյանք և հեռու պահեք Սատանայի ազդեցությունը ձեր սրտից:
- Գրատախտակի վերին մասում գրված գործողություններն ինչպե՞ս են օգնել ձեզ հրավիրել Սուրբ Հոգին դեպի ձեր կյանք: (Դուք կարող եք նաև խնդրել ուսանողներին մտածել, արդյոք նրանք կատարել են գրատախտակի ներքևի մասում գրված որևէ գործողություն կամ ունեցել են նման վերաբերմունք, և խորհել, թե ինչպես է այն նպաստել իրենց կյանքում Սուրբ Հոգու ազդեցության նվազմանը:)

Խնդրեք ուսանողներին տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրման օրագրերում գրել մի բան, որ կանեն, որպեսզի հրավիրեն Տիրոջ Հոգին դեպի իրենց կյանք: Խրախուսեք նրանց հետամուտ լինել իրենց նպատակների իրականացմանը:

## Հելաման 7

### *Նեփին քարոզում է ամբարիշտ Նեփիացիներին և պատվիրում է նրանց ապաշխարել*

Հետևյալ յուրաքանչյուր հարցի համար հրավիրեք ուսանողներին օգտագործել իրենց սուրբ գրությունները, որպեսզի, որքան հնարավոր է արագ, գտնեն պատասխաններ: Հանձնարարեք նրանց կանգնել, երբ գտնեն պատասխանը: Յուրաքանչյուր հարցի համար առաջինը կանգնած անձնավորությանը թույլ տվեք պատասխանել: Հետո, նախքան երկրորդ հարցը կարդալը, խնդրեք ուսանողներին նստել:

- Համաձայն Հելաման 7.1հատվածի՝ ի՞նչ էր այն մարգարեի անունը, ով վերադարձավ հյուսիսային կողմի երկրից:
- Հելաման 7.2 հատվածում ո՞ր արտահայտությունն է նկարագրում, թե ինչ ուսուցանեց Նեփին հյուսիսային կողմի երկրի ժողովրդին:
- Համաձայն Հելաման 7.3 հատվածի՝ Նեփին ինչու՞ լքեց հյուսիսային կողմերի երկիրը:
- Համաձայն Հելաման 7.4 հատվածի՝ Նեփիի Զարահեմլա վերադառնալու ժամանակ ովքե՞ր էին զբաղեցրել դատավորական աթոռները:

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Հելաման 7.5 հատվածը և խնդրեք դասարանին նշել, թե ինչպես էին Գադիանթոնի ավազակները ղեկավարում երկիրը:

Ամփոփեք Հելաման 7.6–12 հատվածները՝ բացատրելով, որ երբ Նեփին տեսավ իր ժողովրդի վիճակը, «նրա սիրտը լցվեց վշտով» (Հելաման 7.6): Նա գնաց իր պարտեզի մի աշտարակի վրա իր ժողովրդի ամբարշտության համար աղոթելու և ողբալու: Երբ մարդիկ լսեցին նրան աղոթելիս և ողբալիս, մի բազմություն հավաքվեց

իմանալու համար, թե ինչու է նա այդքան տխուր: Նա օգտագործեց այդ հնարավորությունը, որպեսզի նրանց ուսուցանի:

Հրավիրեք ուսանողներին լուռ կարդալ Հելաման 7.15–16 հատվածները:

- Ինչու՞ Նեփին ասաց, որ մարդիկ «պարտավոր են զարմանալ»:
- Ի՞նչի է ձգտում Սատանան:

Հրավիրեք ուսանողներին կանգ առնել և մտածել այն պատկերների մասին, որ Նեփին կիրառեց: Մարդկանց սրտերի վրա ազդեցություն ունենալուց հետո, Սատանան հետո նետում է նրանց սրտերը ներքև՝ հավերժական թշվառության մեջ:

- Ձեր կարծիքով, Նեփին ինչու՞ զգուշացրեց մարդկանց Սատանայի մտադրությունների մասին: Ինչի՞ց էր ուզում Նեփին, որ նրանք խուսափեին:

Հրավիրեք ուսանողներին հերթով բարձրաձայն կարդալ Հելաման 7.17–22, 26–28հատվածները: Հրավիրեք երեխաների մի խմբին նշել Նեփիացիների մեղքերը, իսկ մյուս խմբին խնդրեք նշել Նեփիի զգուշացրած հետևանքները, որոնք առաջ կգային, եթե մարդիկ չապաշխարեին:

Երբ երեխաների առաջին խումբը հայտնի այն ամենը, ինչ բացահայտել է, նշեք այն նմանությունները, որոնք ունեն գրատախտակի ներքևի մասում գրվածի հետ: Երբ երեխաների երկրորդ խումբը հայտնի, տվեք հետևյալ հարցերը.

- Հելաման 7.22- հատվածում ո՞ր արտահայտությունն է ցույց տալիս ինչ-որ բան, որ Տերը վերցնում է նրանցից, ովքեր չեն կամենում ապաշխարել: (Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այդ արտահայտությունն իրենց սուրբ գրություններում:)
- Համաձայն Հելաման 7.28հատվածի՝ ինչպիսի՞ն է լինում արդյունքը, երբ մարդիկ մերժում են ապաշխարել: (Նրանք կկործանվեն: Դուք կարող եք բացատրել, որ Նեփիացիների դեպքում իրենց ապաշխարել չկամենալը նշանակում էր, որ նրանք կկործանվեին և՛ ֆիզիկապես, և՛ հոգեպես:)

Գրատախտակի վրա գրեք հետևյալ ճշմարտությունը. ***Եթե մենք չկամենանք ապաշխարել մեր մեղքերից, մենք կկորցնենք Տիրոջ պաշտպանությունը և հավերժական կյանքի օրհնությունները:***

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այս սկզբունքը, հրավիրեք նրանց բացատրել, թե ինչպիսի հետևանքներ կարող են առաջ գալ հետևյալ իրավիճակներում գտնվող մարդկանց մոտ. (1) մի պատանի չի կամենում ապաշխարել մերկագրություն դիտելու սովորությունից; (2) մի երիտասարդ աղջկա ամենաբարձր առաջնահերթությունը հայտնի և ճանաչված դառնալն է՝ չնայած իր ծնողների կողմից այլ կերպ ուսուցանված լինելուն; (3) մի պատանի, չնայած լսել է մարգարեների ուսմունքները սուրբ գրություններն ուսումնասիրելու և աղոթելու վերաբերյալ՝ նա չի կամենում անել դրանցից ոչ մեկը:

Հրավիրեք ուսանողներին խորհել ուղիների մասին, որ նրանք կարող են ապաշխարել: Խրախուսեք նրանց ապաշխարել, որպեսզի միշտ ունենան Տիրոջ ուժն ու պաշտպանությունն իրենց կյանքում:

ԴԱՍ 110

# Հելաման 8–9

## Նախաբան

Երբ Նեփին հայտարարեց, որ մարդիկ պետք է ապաշխարեն կամ կործանվեն, ապականված դատավորները շատ մարդկանց հրահրեցին նրա դեմ: Որոշ մարդիկ խիզախորեն պաշտպանում էին նրան: Նեփին ուսուցանեց, որ այն մարդիկ, ովքեր չընդունեցին նրա վկայությունը, չեն ընդունել նաև նրանից առաջ եկած բոլոր մարգարեների վկայությունները, ովքեր վկայել են Հիսուս Քրիստոսի մասին: Որպես վկայություն, որ նա մարգարե է, Նեփին բացահայտեց, որ գլխավոր դատավորը սպանվել է: Երբ Նեփիի խոսքերը հաստատվեցին, որոշ մարդիկ ընդունեցին նրան որպես մարգարե:

## Ուսուցանման առաջարկներ

### Հելաման 8.1–10

*Ապականված դատավորները փորձում են հրահրել ժողովրդին Նեփիի դեմ*

- Որոնք են այն որոշ ազդեցությունները, որ փորձում են համոզել ձեզ չհավատալ մարգարեների խոսքերին:

Երբ ուսանողները քննարկեն այս հարցը, խնդրեք ուսանողներից մեկին գրել իրենց պատասխանները գրատախտակի վրա: Հրավիրեք ուսանողներին փնտրել եղանակներ այն մասին, թե ինչ պետք է անեն, երբ այսօր հանդիպեն այնպիսի ազդեցությունների, որոնց մասին կկարդան Հելաման 8 գլխում:

Ուսանողներին հիշեցրեք, որ Նեփին խիզախորեն ապաշխարության ուղերձ էր հասցնում իր ժողովրդին (տես Հելաման 7): Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Հելաման 8.1–6 հատվածները: Խնդրեք դասարանին հետևել՝ նշելով, թե ինչպես արձագանքեցին դատավորները Նեփիի ուսուցանելուն: Դուք կարող եք նշել, որ որոշ դատավորներ Գադիանթոնի գաղտնի խմբակցության մաս էին կազմում:

- Ո՞րն էր դատավորի ուղերձը ժողովրդին: (Նրանք փորձում էին համոզել ժողովրդին բորբոքվել Նեփիի դեմ:)
- Համաձայն Հելաման 8.4հատվածի, դատավորներն ինչու՞ չէին պատժում Նեփիին:

Խնդրեք ուսանողներին մտածել, թե ինչ կանեին նրանք, եթե ինչ-որ մեկը փորձեր համոզել նրանց անուշադրության մատնել մարգարեների խոսքերը:

Տեղեկացրեք ուսանողներին, որ որոշ մարդիկ դատավարների գաղափարներին հակառակ խոսեցին: Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Հելաման 8.7–9 հատվածները: Նշեք, որ բազմության մեջ եղած որոշ մարդկանց նման, **մենք կարող ենք բարձրացնել մեր ձայները մարգարեին աջակցելու համար, նույնիսկ եթե դա ժողովրդի կողմից ընդունված չէ:**

- Եղե՞լ են ժամանակներ ձեր կյանքում, երբ դուք բարձրացրել եք ձեր ձայնը, որպեսզի աջակցեք կենդանի մարգարեին՝ չնայած որ նրա ուսմունքները հասարակության մեջ հանրաճանաչ չեն եղել: Ինչպե՞ս է սա տարբերություն մտցրել ձեր կյանքում: Ինչպե՞ս է այն ազդել մյուսների վրա:

Խնդրեք ուսանողներին լուռ կարդալ Հելաման 8.10հատվածը ՝ ուշադրություն դարձնելով, թե ինչ տարբերություն առաջացրեցին այդ մարդկանց խոսքերը:

- Ինչպիսի՞ տարբերություն տեղի ունեցավ, երբ որոշ մարդիկ աջակցեցին մարգարեին: Ձեր կարծիքով ինչու՞ է մեզ համար կարևոր աջակցել մարգարեին այսօր:

Հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդի հետևյալ հայտարարությունը.

«Մենք պետք է հիշենք Էդմունդ Բյուրկեի խոսքերը . «Միակ բանը, որն անհրաժեշտ է չարի հաղթանակի համար, դա արդար մարդկանց ոչինչ չանելն է» [Attributed in John Bartlett, comp., *Familiar Quotations,* 15th ed. (1980), ix.]: Մենք պետք է աշխարհով մեկ այլ մտահոգված քաղաքացիների հետ բարձրացնենք մեր ձայնն՝ ընդդեմ ներկայիս միտումների:

Մենք պետք է անարգություն պարունակող տեսաձայնանյութերի հովանավորներին ասենք՝ բավական է: Մենք պետք է աջակցենք այն ծրագրերն ու արտադրանքները, որոնք դրական են և վեհացնող: Միանալով մերձավորներին և ընկերներին, ովքեր կիսում են մեր մտահոգությունը՝ մենք կարող ենք հստակ ուղերձ հղել պատասխանատու անձանց» («Թող մեր ձայները լսվեն», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2003, 18):

- Ինչպե՞ս կարող ենք դիմադրել այն ազդեցություններին, որոնք փորձում են համոզել մեզ հակառակվել մարգարեների խոսքերին:
- Որո՞նք են չար ազդեցություններին հակառակ և մարգարեների խոսքերին հոգուտ բարձրաձայնելու որոշ պատշաճ ուղիները:

Հրավիրեք ուսանողներին պատմել որևէ դեպքի մասին, երբ իրենք, կամ ինչ-որ մեկն իրենց ծանոթներից պայքարել է նման ազդեցությունների դեմ:

## Հելաման 8.11–24

### *Հելամանն ուսուցանում է, որ բոլոր մարգարեները վկայում են Հիսուս Քրիստոսի մասին:*

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 8.13 հատվածը: Խնդրեք երեխաներին հետևել և նշել, թե ինչ ասաց Նեփին, որ ժողովուրդն ուրացել է: Ուսանողներին ցույց տվեք Մովսեսի և պղնձե օձի նկարը (62202; *Ավետարանի նկարների գիրք* [2009], թիվ. 16): Խնդրեք նրանց կարդալ Հելաման 8.14–15 հատվածները և նշել, թե ինչ է ուսուցանել Մովսեսը Փրկչի մասին:

- Թվարկեք մի քանի ուղիներ, որով մարդ կարող է «հավատքով նայել Աստծո Որդուն»:
- Ունենալ «ապաշխարող հոգի», ինչպես արտահայտված է Հելաման 8.15-ում, նշանակում է լինել խոնարհ, ապաշխարող և Աստծո կամքն ընդունող: Ինչու՞ է այս վերաբերմունքն անհրաժեշտ, երբ մենք նայում ենք Փրկչին:
- Ինչպե՞ս կարող է Փրկչի առաքելությունն իմանալն օգնել մեզ դիմակայել չարին:

Հրավիրեք ուսանողներին կրկին բացատրել Հելաման 8.15 հատվածը՝ օգտագործելով իրենց սեփական բառերը: Օրինակ՝ նրանք կարող են ասել, որ **եթե մենք կենտրոնանանք Հիսուս Քրիստոսի վրա և հավատք գործադրենք առ Նա, մենք կստանանք հավերժական կյանք:**

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 8.16 հատվածը: Հրավիրեք դասարանին հետևել կարդացածին, որպեսզի գտնեն, թե ուրիշ ովքեր են ուսուցանել Հելաման 8.15-ում արտահայտված ուղերձը: Հետո խնդրեք ուսանողներին Հելաման 8.17–22 հատվածներում արագ փնտրել այլ մարգարեների անունները, ովքեր վկայել են Քրիստոսի մասին: Հրավիրեք ուսանողներին զննել Հիսուս Քրիստոսի մասին այն բոլոր վկայությունները, որոնց մասին նրանք կարդացել կամ լսել են հին և վերջին օրերի մարգարեներից:

Բացատրեք, որ շատ մարդիկ չընդունեցին Նեփիին և նրա ուղերձը: Հրավիրեք ուսանողներին կարդալ Հելաման 8.24–26 հատվածները և նշել, թե ինչ հետևանքների առաջ կանգնեցին Նեփիացիները, մարգարեների ուղերձները չընդունելու պատճառով:

- Ձեր կարծիքով, ինչու՞ նրանք, ովքեր հետևողականորեն մերժում են ճշմարտությունը և ապստամբում Աստծո դեմ, կանգնում են նման լուրջ հետևանքների առջև:
- Ե՞րբ է մարգարեի ուղերձն օգնել ձեզ դառնալ դեպի Տերը:

Հրավիրեք ուսանողներին մտածել, թե ինչպես նրանք կարող են բարելավել դեպի Փրկիչը դառնալու իրենց ջանքերը: Խրախուսեք նրանց կենտրոնանալ մի եղանակի վրա, որ նրանք կբարելավեն հաջորդ շաբաթվա ընթացքում:

***Ուսանողներին խորհելու ժամանակ տվեք***

Տվեք զգուշորեն ձևակերպված հարցեր, որոնք խթանում են միտքը: Որոշ հարցեր կարող են ուսանողներից խորհելու ժամանակ պահանջել նախքան պատասխանելը: Նման դեպքերում կարող եք ասել. «Մի որպես մտածեք ձեր պատասխանի մասին և հետո ես կլսեմ պատասխանները»:

## Հելաման 8.25–9.41

### *Նեփին բացահայտում է, որ գլխավոր դատավորը սպանվել է:*

Ամփոփեք Հելաման 8.25–28՝ բացատրելով, որ, որպես ապացույց, որ մարդիկ մեղքի մեջ էին, և որ Նեփին խոսում էր Աստծո խոսքը, Նեփին բացահայտեց, որ գլխավոր դատավորը սպանվել է: Դասարանը բաժանեք զույգերի: Յուրաքանչյուր զույգ գործընկերների հրավիրեք պատկերացնել, որ նրանք հետաքննիչ են, և պետք է որոշեն, թե ով է սպանել գլխավոր դատավորին: Գրեք հետևյալ հարցերը գրատախտակի վրա կամ ներառեք դրանք թերթիկների վրա յուրաքանչյուրին զույգի համար:

***Հետաքննման առաջին օր.***

*1. Երբ հինգ մարդ հետազոտեցին Նեփիի հայցը, ի՞նչ պարզեցին նրանք: Ինչու՞ նրանք ընկան գետնին: (Տես Հելաման 9.1–5:)*

*2. Մարդկանց կարծիքով ովքե՞ր էին սպանողները: (Տես Հելաման 9.7–9:)*

***Հետաքննման երկրորդ օր.***

*3. Ովքե՞ր ազատվեցին: (Տես Հելաման 9.10–13, 18:)*

*4. Ովքե՞ր մեղադրվեցին: (Տես Հելաման 9.16–17, 19:)*

*5. Ի՞նչ լրացուցիչ տեղեկությամբ կիսվեց Նեփիին: (Տես Հելաման 9.25–36:)*

*6. Ո՞վ էր մարդասպանը: (Տես Հելաման 9.37–38:)*

Հրավիրեք գործընկերներին գտնել 1 և 2 հարցերի պատասխանները: Բավականաչափ ժամանակից հետո հարցրեք.

- Երբ հինգ մարդիկ բացահայտեցին սպանված դատավորին, ինչի՞ն հավատացին: Ինչի՞ց վախեցան: (Տես Հելաման 9.5:)

Հրավիրեք գործընկերներին պատասխանել մնացած հարցերին, որպեսզի ավարտեն իրենց հետազոտությունը: Հետո հարցրեք.

- Ըստ Նեփիի՝ ինչ էր ասելու Սեանթումն իր մեղքը խոստովանելուց հետո (Տես Հելաման 9.36:)
- Համաձայն Հելաման 9.39–41 հատվածների՝ ինչու՞ որոշ մարդիկ հավատացին Նեփիին:

Հրավիրեք ուսանողներին ամփոփել այն ամենը, ինչ սովորել են մարգարեների խոսքերի մասին Հելաման 9-րդ գլխում: Ուսանողները կարող են արտահայտել շատ տարբեր կարծիքներ, բայց հավաստիացեք, որ նրանք նշել են հետևյալ սկզբունքը. **մարգարեների խոսքերն իրականանում են**: Որպեսզի ամրացնեք այս ճշմարտությունը, կարող եք ուսանողներին խնդրել կարդալ Վարդապետություն և Ուխտեր 1.37–38 հատվածները:

- Ինչպիսի՞ փորձառություններ են ամրացրել ձեր վկայությունը, որ մենք այսօր երկրի վրա ունենք ճշմարիտ մարգարեներ:

Եզրափակեք ձեր վկայությամբ, որ մարգարեների խոսքերն իրականանալու են:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Հելաման 8.14–15: «Պղնձե օձը»

Երբ Նեփին խոսեց Մովսեսի մասին, ով բարձրացրել էր «պղնձե օձը», նա ակնարկում էր այն ժամանակները, երբ Իսրայելի զավակները «կիզող օձերով» պատուհասվեցին (տես Թվոց 21.6–9; նշեք, որ *պղնձե* բառը նշանակում է արյուրե): Իսրայելացիների անախորժությունները սկսվեց նրանից, որ նրանք չարախոսում էին Աստծո և Նրա մարգարեի մասին (տես Թվոց 21.5): Նրանք, ովքեր նայեցին պղնձե օձին, բուժվեցին, իսկ նրանք, ովքեր ընտրեցին չնայել դրան, կործանվեցին (տես Թվոց 21.9; 1 Նեփի 17.41):

Այդ Իսրայելացիների նման, Նեփիի օրերում շատ մարդիկ հակառակ խոսեցին Աստծո և Իր մարգարեի դեմ: Երբ Նեփին խոսեց պղնձե օձի պատմության մասին, նա շեշտեց, որ իր ժողովուրդը պետք է «հավատքով նայի Աստծո Որդուն» և ապրի (Հելաման 8.15; տես նաև Հովհաննեսի 3.14–15, որտեղ Հիսուս Քրիստոսն անձամբ հիշատակեց պղնձե օձը որպես իր գալիք Խաչելության խորհրդանիշ): Հետո Նեփին հիշեցրեց ժողովրդին, որ բոլոր մարգարեները վկայել են Քրիստոսի մասին (տես Հելաման 8.16–23):

## Ուսուցանման լրացուցիչ միտք

### Հելաման 7–9: Տեսահոլովակ

Դասի մեջ հետաքննության գործողությունը կատարելու փոխարեն կարող եք ցուցադրել «Հպարտության շղթա» վերնագրով տեսահոլովակը, որը Հելաման 7–9-ի և Հելաման 10-ի սկզբի մի քանի հատվածների պատմության նկարագրությունն է: Ներկայացումը հասանելի է *Մորմոնի Գրքի տեսահոլովակներ 1–19-ում* (54011) և LDS.org-ում:

# Տնային ուսումնասիրության դաս

## Հելաման 1–9 (Մաս 22)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Հելաման 1–9 (մաս 22) ուսումնասիրելու ժամանակ ուսանողների սովորած վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը նախատեսված չէ ուսուցանել որպես ձեր դասի մի մաս: Ձեր ուսուցանած դասը կենտրոնանում է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Ձեր ուսանողների կարիքների մասին խորհելիս հետևեք Սուրբ Հոգու հուշումներին:

#### Օր 1 (Հելաման 1–2)

Երբ ուսանողներն ուսումնասիրեցին քաղաքական տարաձայնություններն ու սպանությունները Նեփիացիների մեջ և Լամանացիների կողմից Զարահեմլա քաղաքի գրավումը, նրանք սովորեցին, որ անօրինությունը բաժանարար է և մեզ խոցելի է դարձնում հակառակորդի ազդեցության նկատմամբ: Նրանք նաև սովորեցին, որ գաղտնի խմբակցությունները կարող են տանել հասարակությանը կործանման:

#### Օր 2 (Հելաման 3–4)

Ուսումնասիրելով, թե ինչպես Փրկչին հետևող խոնարհ Նեփիացիները տարան շատ հալածանքներ, ուսանողները սովորեցին, որ, չնայած հալածանքներին ու փորձություններին, մեր հավատքն առ Հիսուս Քրիստոս կարող է աճել, եթե մենք խոնարհաբար կանչենք առ Աստված և մեր սրտերը ենթարկենք Նրան: Երբ ուսանողները սովորեցին, թե ինչպես Նեփիացիների աճող հպարտությունը թույլ տվեց Լամանացիներին ձեռք բերել Նեփիացիների երկրի կեսը, նրանք սովորեցին, որ հպարտությունը և ամբարշտությունը հեռացնում են մեզ Տիրոջ Հոգուց և թողնում են մեզ մեր սեփական ուժին:

#### Օր 3 (Հելաման 5)

Ուսումնասիրելով այն խորհուրդը, որ Հելամանը տվեց իր որդիներ Նեփիին ու Լեքիին, ուսանողները սովորեցին, որ եթե մենք կառուցենք մեր հիմքը Հիսուս Քրիստոսի վրա, Սատանան զորություն չի ունենա մեր վրա: Աստծո զորությամբ և Նեփիի ու Լեքիի հավատքի ու միսիոներական ջանքերի շնորհիվ շատ Լամանացիներ ապաշխարեցին: Ուսանողները սովորեցին, որ երբ մենք հավատք ենք գործադրում առ Հիսուս Քրիստոս և ապաշխարում ենք մեր մեղքերից, Սուրբ Հոգին մեր սրտերը լցնում է խաղաղությամբ և ուրախությամբ:

#### Օր 4 (Հելաման 6–9)

Ուսանողները սովորեցին, որ եթե մենք հավատանք և հնազանդվենք Տիրոջ խոսքերին, Նա Իր Հոգին կթափի մեր վրա: Նեփին զգուշացրեց ամբարիշտ Նեփիացիներին իրենց ամբարշտության հետևանքների մասին և շեշտեց, որ եթե մենք հրաժարվենք ապաշխարել մեր մեղքերից, մենք կկորցնենք Տիրոջ պաշտպանությունը և հավերժական կյանքի օրհնությունները: Նեփիի խոսքերը լսելուց հետո որոշ մարդիկ կանգնեցին նրա կողքին: Ուսանողները սովորեցին, որ եթե մենք դեմ կանգնենք չարին, մենք կարող ենք կանխել դրա առաջընթացը: Նեփին հիշեցրեց ժողովրդին, որ շատ մարգարեներ վկայել են Փրկչի մասին և ուսուցանել են, որ եթե մենք կենտրոնանանք Հիսուս Քրիստոսի վրա և հավատք գործադրենք առ Նա, մենք կստանանք հավերժական կյանք: Հելաման 7–9 գլուխներում արձանագրված Նեփիի ուսմունքներից ուսանողները սովորեցին, որ մարգարեների խոսքերն իրականանալու են:

### Նախաբան

Աճող հակառակության և ամբարշտության մեջ Նեփին ուսուցանում էր իր որդիներին, որ նրանց հավատքի հիմքը պետք է լինի Հիսուս Քրիստոսը: Ապաշխարության և Տիրոջ մարգարեների խոսքերը լսելու մասին Նեփիի ուսմունքները կարևոր էին մարդկանց երջանկության համար:

### Ուսուցանման առաջարկներ

#### Հելաման 1–5

***Նեփիացիները պարտություններ են կրում հակառակության և ամբարշտության պատճառով. շատ լամանացիներ դարձի են գալիս, երբ Նեփին ու Լեքին քարոզում են ավետարանը***

Խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչու որոշ շենքեր երկար ժամանակ ամուր են մնում, մինչդեռ մյուսները փլվում են: Հետո հարցրեք. ինչու՞ է կարևոր, որ շենքն ունենա ամուր հիմք:

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Հելաման 5.12 հատվածը: Քանի որ սա սուրբ գրությունների սերտման հատված է, հրավիրեք մի քանի ուսանողների փորձել անգիր ասել դա: Խրախուսեք նրանց փորձել՝ չնայած որ ամբողջովին գուցե չհիշեն: Հետո տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ է խոստացված այս հատվածում, եթե մենք կառուցենք մեր կյանքը Հիսուս Քրիստոսի հիմքի վրա: (Ուսանողների պատասխանները պետք է ներառեն այն, **որ, եթե մենք կառուցենք մեր հիմքը Հիսուս Քրիստոսի վրա, Սատանան զորություն չի ունենա մեր վրա**):
- Ի՞նչ եք արել, ձեր կյանքը Հիսուս Քրիստոսի հիմքի վրա կառուցելու համար:

Հրավիրեք ուսանողներին պատմել այնպիսի ժամանակների մասին, երբ նրանց վկայությունները Փրկչի մասին օգնել են իրենց դիմակայել գայթակղություններին կամ համբերությամբ տանել փորձությունները: Կիսվեք ձեր վկայությամբ այն հոգևոր ուժի մասին, որ դուք ստացել եք ձեր կյանքը Հիսուս Քրիստոսի հիմքի վրա կառուցելու շնորհիվ: Խրախուսեք ուսանողներին խորհել մեկ կամ ավելի եղանակների մասին, որով նրանք կփորձեն ավելի լավ կառուցել իրենց կյանքը Քրիստոսի վեմի վրա:

## Հելաման 6–7

***Լամանացիներն ավելի արդար են դառնում, մինչ Նեփիացիները դառնում են ավելի ամբարիշտ. Նեփին քարոզում է ամբարիշտ Նեփիացիներին և պատվիրում է նրանց ապաշխարել***

Հիշեցրեք ուսանողներին, որ մինչ շատ Լամանացիներ ապաշխարում էին և հզորանում էին ավետարանով, Նեփիացիներն ապրում էին ամբարշտության մեջ, և Սուրբ Հոգին ետ քաշվեց նրանցից: Խնդրեք ուսանողներին մտածել մի ժամանակահատվածի մասին իրենց կյանքում, երբ նրանք զգացել են, որ Հոգին ետ է քաշվել նրանցից իրենց ընտրությունների պատճառով:

Բացատրեք, որ երբ Նեփին տեսավ իր ժողովրդի վիճակը, «նրա սիրտը լցվեց վշտով» (Հելաման 7.6): Նա բարձրացավ իր պարտեզի աշտարակի վրա, որպեսզի աղոթի և ողբա իր ժողովրդի ամբարշտության համար: Նրա շուրջ մարդկանց բազմություն հավաքվեց, և Նեփին նրանց ուսուցանելու առիթն օգտագործեց:

Ուսանողներից մեկին հրավիրեք գալ դասարանի առջև և ներկայանալ որպես Նեփի իր աշտարակի վրա: Ուսանողին խնդրեք բարձրաձայն կարդալ Հելաման 7.15–22, 26–28՝ մինչ մյուսները կհետևեն նրան: Նախքան նրա կարդալը, երեխաներին բաժանեք երկու մասի: Մի մասին խնդրեք փնտրել, թե որոնք էին Նեփիացիների մեղքերն ըստ Նեփիի ուսուցանածի, իսկ մյուս մասին խնդրեք նշել Նեփիի վկայած հետևանքները, որոնք կգային, եթե Նեփիացիները հրաժարվեին ապաշխարել: Հետո ուսանողներին խնդրեք հայտնել իրենց եզրակացությունները:

Ուսանողների պատասխանելուց հետո հրավիրեք նրանց ասել այն սկզբունքները, որ մենք կարող ենք սովորել այս դեպքից: Ուսանողները կարող են կիսվել տարբեր սկզբունքներով, բայց նրանք պետք է արտահայտեն, որ, **եթե մենք հրաժարվենք ապաշխարել մեր մեղքերից, մենք կկորցնենք Տիրոջ պաշտպանությունը և հավերժական կյանքի օրհնությունները:**

Որպեսզի օգնեք երիտասարդներին հասկանալ այդ սկզբունքը, հրավիրեք նրանց բացատրել, թե ինչպիսի հետևանքներ կարող են առաջանալ մարդկանց մոտ հետևյալ իրավիճակներում. (1) Մի պատանի չի կամենում ապաշխարել մերկագրություն դիտելու սովորությունից: (2) Մի երիտասարդ աղջկա ամենաբարձր առաջնահերթությունը հայտնի և ճանաչված դառնալն է՝ չնայած իր ծնողների կողմից այլ կերպ ուսուցանված լինելուն: (3) Մի պատանի, չնայած լսել է մարգարեների ուսմունքները սուրբ գրություններն ուսումնասիրելու և աղոթելու վերաբերյալ՝ նա չի կամենում անել դրանցից ոչ մեկը:

Հրավիրեք ուսանողներին խորհել, արդյոք ինչ-որ բան կա, որի համար պետք է ապաշխարեն, որպեսզի ավելի լիարժեք զգան Տիրոջ զորությունն իրենց կյանքում:

## Հելաման 8

***Նեփին ուսուցանում է, որ բոլոր մարգարեները վկայում են Հիսուս Քրիստոսի մասին***

Գրատախտակի վրա գրեք *ընդունել* և *ուրանալ* բառերը: Խնդրեք ուսանողներին բացատրել այս երկու բառերի միջև եղած տարբերությունները: Ուսանողներից մեկին հրավիրեք կարդալ Հելաման 8.13 հատվածը, մինչ ուսանողները կնշեն, թե ժողովուրդն ինչ է ուրացել ըստ Նեփիի ասածի: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին նշել այն ամենը, ինչ կգտնեն:

Ուսանողներին ցույց տվեք «Մովսեսն ու պղնձե օձը» նկարը (62202; *Ավետարանի արվեստի գիրք* [2009], թիվ. 16): Հրավիրեք նրանց կարդալ Հելաման 8.14–15 հատվածները և նշել, թե ինչ սովորեցրեց Մովսեսը Փրկչի մասին: Հրավիրեք նրանց ասել այն, ինչ սովորեցին: Հետո հարցրեք.

- Որո՞նք են այն եղանակները, որ մարդը կարող է հավատքով նայել Փրկչին:
- Ի՞նչ է նշանակում «փշրված հոգի» ունենալ: (Լինել խոնարհ, ապաշխարող և Տիրոջ կամքն ընդունող:) Ինչու՞ է այս հատկանիշն անհրաժեշտ, երբ մենք նայում ենք Փրկչին:
- Ինչպե՞ս կարող է Փրկչի Քավության մասին իմացությունն օգնել մեզ դիմակայել չարին և ապաշխարել, երբ մեղանչում ենք:

Հրավիրեք ուսանողներին ասել մի սկզբունք, որ մենք կարող ենք սովորել այս հատվածներից: Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, բայց նրանք պետք է արտահայտեն, որ, **եթե մենք կենտրոնանանք Հիսուս Քրիստոսի վրա և հավատք գործադրենք Նրա նկատմամբ, մենք կստանանք հավերժական կյանք:**

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 8.16 հատվածը և խնդրեք դասարանին գտնել, թե ուրիշ ովքեր են ուսուցանել Փրկչի առաքելության մասին: Թող որ ուսանողները Հելաման 8.17–22 հատվածներում արագ փնտրեն այլ մարգարեների անուններ, ովքեր վկայել են Հիսուս Քրիստոսի մասին: Հրավիրեք ուսանողներին խորհել այն մասին, թե ինչպես են մարգարեները հին ժամանակներում, ինչպես նաև մեր օրերում, վկայել Փրկչի առաքելության և քավող զոհաբերության մասին:

Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց վկայություններով այն մասին, թե ինչ է Փրկչի Քավությունը նշանակում իրենց կյանքում: Դուք նույնպես կարող եք կիսվել ձեր վկայությամբ:

## Հաջորդ մաս (Հելաման 10–16)

Խնդրեք ուսանողներին պատկերացնել, որ Տերը նրանց խոստացել է անել ցանկացած բան, որ նրանք կխնդրեն Նրանից: Նեփին այնքան հավատարիմ էր, որ Տերը նրան տվեց այս խոստումը և կնքման զորությունը: Խրախուսեք ուսանողներին այս շաբաթ ուսումնասիրել Հելաման 10–11 գլուխները՝ ուշադրություն դարձնելով այն եղանակներին, որ Նեփին կիրառում էր Տիրոջ տված զորությունն իր ժողովրդին օգնելու համար: Նաև հրավիրեք նրանց ուշադրություն դարձնել, թե Հիսուս Քրիստոսի ծննդյան և մահվան քանի նշաններ կարող են նշել՝ մինչ կուսումնասիրեն Սամուել Լամանացու մարգարեությունը Հելաման 13–16 գլուխներում:

ԴԱՍ 111

# Հելաման 10

## Նախաբան

Գլխավոր դատավորի սպանության հանցագործին գտնելու դատավարությունն ավարտվեց, երբ սպանության վերաբերյալ Նեփիի հայտնությունը հաստատվեց: Իրեն ուղղված կեղծ մեղադրանքների պատժից ազատվելով՝ Նեփին սկսեց քայլել դեպի տուն: Նա խորհում էր այն մասին, թե Տերն ինչ էր ցույց տվել նրան՝ վհատված զգալով ժողովրդի ամբարշտության պատճառով: Մտորումների և տխրության այս պահին նա լսեց Տիրոջ ձայնը: Տերն օրհնեց նրան կնքող զորությամբ և պատվիրեց շարունակել մարդկանց ապաշխարություն քարոզել: Նեփին անմիջապես հնազանդվեց Տիրոջ պատվիրանին:

## Ուսուցանման առաջարկներ

### Հելաման 10.1–11

*Նեփին ստանում է կնքման զորությունը*

Ուսանողներին հիշեցրեք Հելաման 8–9 գլուխներում արձանագրված գլխավոր դատավորի սպանության վերաբերյալ Նեփիի հայտնության մասին: Հրավիրեք ուսանողներին Նեփիի փոխարեն իրենց պատկերացնել անմիջապես գլխավոր դատավորի սպանողին բացահայտելուց հետո:

- Ինչպե՞ս կզգայիք ձեզ: Ինչպիսի՞ արձագանք եք ակնկալում մյուսների կողմից:
- Ի՞նչ կուզենայիք ասել ժողովրդին:
- Ինչպե՞ս կզգայիք, եթե մարդիկ արհամարհեին ձեզ կամ մենակ թողնեին:

Բացատրեք, որ գլխավոր դատավորի սպանությունից անմեղ ճանաչվելուց հետո Նեփին տուն վերադարձավ: Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Հելաման 10.1–3 հատվածները, և խնդրեք դասարանին հետևել, թե ինչ արեց Նեփին, երբ քայլում էր դեպի տուն: Դուք կարող եք ուսանողներին առաջարկել ընդգծել *խորհել* բառը, որտեղ որ այն հանդիպի այս հատվածներում:

- Ինչու՞ էր Նեփին «ընկճված»:
- Ի՞նչ տեղի ունեցավ, երբ Նեփին խորհում էր: (Տիրոջ ձայնը եկավ նրան:) Ո՞րն է խորհելու և հայտնություն ստանալու միջև եղած կապը:

Մինչ ուսանողները կպատասխանեն, օգնեք նրանց հասկանալ հետևյալ սկզբունքը. **Տիրոջ բաների մասին խորհելը պատրաստում է մեզ ստանալ հայտնություն:** Դուք կարող եք այս սկզբունքը գրել գրատախտակի վրա:

Հարցրեք ուսանողներին, թե արդյոք կարող են սուրբ գրություններից կամ Եկեղեցու պատմությունից հիշել դեպքերի մասին, երբ մարդիկ ստացել են հայտնություն՝ որպես Տիրոջ բաների մասին խորհելու արդյունք: (Պատասխաններն ընդգրկում են Լեքիի որդի Նեփին, ով տեսիլք տեսավ իր հոր տեսած բաները տեսնել փափագելուց և «իր սրտում խորհելուց» հետո [տես 1 Նեփի 10.17; 11.1 ]; Ջոզեֆ Սմիթը, ում առաջին տեսիլքն եկավ Հակոբոսի 1.5 հատվածի մասին իր «նորից ու նորից. . . վերընթերցելուց» հետո [տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.11–17]; և Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը, ով Տիրոջ խոսքերի մասին խորհելուց և մտորելուց հետո տեսավ մահացածների փրկագնման մասին տեսիլքը [տես ՎԵՈ 138.1–6, 11]):

- Ե՞րբ է խորհելն օգնել ձեզ ստանալ անձնական հայտնություն: (Դուք կարող եք նշել, որ անձնական հայտնություն ստանալը սովորաբար այդքան տպավորիչ չի լինում, ինչպես որոշ օրինակներ սուրբ գրություններում: Սովորաբար հայտնության փորձառությունները հանկարծակի լուսավորման պահեր են, ինչպես օրինակ, երբ մենք հանկարծակի հասկանում ենք մի բան, որի համար նախկինում շատ ջանք ենք գործադրել:)
- Ո՞րոնք են այն ժամանակները կամ իրավիճակները, երբ Տիրոջ բաների մասին խորհելը, հատկապես տեղին կլինի: (Նման ժամանակների օրինակներն են՝

***Դասարանային միջավայր***

Ավետարանի ուսումնասիրման լավագույն միջավայրը զարգացնում է սիրո, հարգանքի, ակնածանքի և խաղաղության զգացումներ: Դա կարգ ու կանոնի վայր է, որը նպաստում է նպատակի զգացումին: Նախագահ Բոյդ Ք. Փաքերն ուսուցանել է, որ «ոգեշնչումն ավելի հեշտությամբ գալիս է խաղաղ միջավայրերում», և որ «ակնածանքը բերում է հայտնություն» («Ակնածանքը բերում է հայտնություն» *Ensign*, նոյ. 1991, 21, 22):

հաղորդության ժողովի ընթացքում և հետո, անձնական աղոթքներից և սուրբ գրությունների ուսումնասիրումից առաջ և հետո, գերագույն համաժողովը դիտելուց կամ լսելուց հետո, ծոմապահության ընթացքում, տաճարում ծառայություն կատարելիս և Հանգստի օրը Տիրոջը պատվելիս։)

Խրախուսեք ուսանողներին ժամանակ հատկացնել պարբերաբար խորհելու համար։ Առաջարկեք նրանց գրի առնել այն տպավորությունները, որ կստանան խորհելիս։

Որպեսզի նախապատրաստեք ուսանողներին շարունակել ուսումնասիրել Նեփիի փորձառությունները, հրավիրեք նրանց պատկերացնել, որ իրենց հարևանները որոշ ժամանակ բացակայելու են և ինչ-որ մեկի կարիքն ունեն, ով կհետևի իրենց տանը և ունեցվածքին։

- Ձեր կարծիքով ձեր հարևաններն ինչպիսի՞ անձնավորություն կուզենան, որ հոգ տանի իրենց տան մասին։
- Ինչպե՞ս կարող եք ցույց տալ ձեր հարևաններին, որ դուք պատրաստ եք վստահվելու նման պատասխանատվությամբ։

Խնդրեք ուսանողներին լուռ կարդալ Հելաման 10.4–5՝ ուշադրություն դարձնելով, թե ինչու Տերը վստահեց Նեփիին մեծ օրհնություններով և պատասխանատվությամբ։ (Դուք կարող եք բացատրել, որ *անխոնջություն* նշանակում է ջանասիրություն կամ աշխատասիրություն։) Հրավիրեք ուսանողներին հայտնել, թե ինչ են պարզել։

- Ինչպե՞ս է անխոնջ ծառայությունը ցույց տալիս, որ Տերը կարող է վստահել մեզ օրհնություններով և պատասխանատվություններով։
- Ինչպե՞ս կարող է մարդկանցից չվախենալու Նեփիի օրինակին հետևելն օգնել մեզ պատրաստվել Տիրոջ արքայությունում պատասխանատվության համար։
- Ի՞նչ է ձեզ համար նշանակում «դու. . . չես փնտրել քո սեփական կյանքը» արտահայտությունը։

Գրատախտակին գրեք հետևյալը. *Տերը վստահում է մեզ օրհնություններով և պատասխանատվություններով, երբ մենք . . .* Հարցրեք ուսանողներին, թե նրանք ինչպես կլրացնեին այս խոսքը՝ հիմնված այն ամենի վրա, ինչ սովորել են Նեփիի մասին Հելաման 10.4–5 հատվածներում։ Եղանակներից մեկը, որ ուսանողները կարող են լրացնել խոսքը, հետևյալն է. **Տերը վստահում է մեզ օրհնություններով և պատասխանատվություններով, երբ մենք դնում ենք Նրա կամքը մեր սեփական կամքից առաջ։** Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները գրեն այս ճշմարտությունն իրենց սուրբ գրություններում կամ տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրման օրագրերում։

Հրավիրեք ուսանողներին խորհել հետևյալ հարցերի մասին և պատասխանել դրանցից մեկին.

- Ի՞նչ եք արել վերջերս ձեր կյանքում, որպեսզի ցույց տաք Տիրոջը, որ Իր կամքն ավելի կարևոր է, քան ձեր սեփական կամքը։
- Ո՞րն է ձեր կյանքի ոլորտներից մեկը, որտեղ կարող էիք ավելի լավ փնտրել Աստծո կամքը։

Վկայեք մեզ ավելի ու ավելի մեծ օրհնություններով վստահելու Տիրոջ պատրաստակամության մասին, երբ մենք փնտրում ենք Նրա կամքը և պահում ենք Նրա պատվիրանները։

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հելաման 10.5–7 հատվածները՝ ուշադրություն դարձնելով այն օրհնություններին և պատասխանատվություններին, որ Տերը տվել էր Նեփիին։ Մինչ ուսանողները կկարդան, գրատախտակի վրա գրեք հետևյալը.

*Հատված 5*

*Հատված 6*

*Հատված 7*

Հրավիրեք մի քանի ուսանողների գրատախտակի վրա՝ համապատասխան հատվածի կողքին գրել այն օրհնությունները, որ Տերը տվեց Նեփիին։

Շեշտեք, որ օրհնություններից մեկը, որ Տերը տվեց Նեփիին, կնքման զորությունն էր։ Հետո գրատախտակի վրա գրեք հետևյալ ճշմարտությունը. ***կնքման զորությունը կապում և արձակում է երկրի վրա և երկնքում։*** Կարող եք խորհուրդ տալ

ուսանողներին գրել այս ճշմարտությունն իրենց սուրբ գրություններում՝ Հելաման 10.7 հատվածի կողքին։

Հարցրեք ուսանողներին, արդյոք Հելամանից բացի ուրիշներին ճանաչում են, ում տրվել է կնքման զորությունը։ Երբ ուսանողները պատասխանեն, դուք կարող եք հրավիրել նրանց կատարել խաչաձև հղում Հելաման 10.7 և հետևյալ սուրբ գրությունների միջև. Ա Թագավորաց 17.1 (Եղիա); Մատթեոս 16.15–19 (Պետրոս); Վարդապետություն և Ուխտեր 132.46 (Ջոզեֆ Սմիթ)։

Բացատրեք, որ այս նույն զորության բանալիները հիմա կրում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահը։ Նեփիի նման Եկեղեցու Նախագահներն անխոնջությամբ ծառայել են և ցույց են տվել, որ Տերը կարող է վստահել նրանց մեծ օրհնություններով և պատասխանատվություններով։ Կնքման զորությունը հիշատակելիս մենք ամենից հաճախ ակնարկում ենք ընտանիքների կնքումը տաճարային արարողությունների միջոցով։

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ կնքման զորությունը, հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ հայտարարությունը.

«Տաճարները, արարողությունները, ուխտերը, օժտումները և կնքումները վերականգնվել են, ճիշտ ինչպես մարգարեացվել է։ Տաճարային արարողությունները հաշտեցում են Տիրոջ հետ և կնքում են ընտանիքները հավերժ միասին։ Տաճարներում կապված սրբազան ուխտերի նկատմամբ հնազանդությունը երաշխավորում է մեզ հավերժական կյանք՝ Աստծո ամենամեծ պարգևը մարդուն» («Պատրաստվեք Տաճարային Օրհնություններին» *Ensign,* հոկտ. 2010, 42)։

- Ինչպե՞ս եք օրհնվել այն գիտելիքից, որ ընտանիքները կարող են հավերժորեն միասին լինել։
- Ապագայում ինչպե՞ս կարող եք փնտրել կնքման զորության օրհնությունները։ (Պատասխանները կարող են ներառել այն, որ ուսանողները կարող են նախապատրաստվել տաճարային ամուսնության, և որ հիմա նրանք կարող են կատարել տաճարային և ընտանեկան պատմության աշխատանք, որը թույլ կտա նրանց կնքվել իրենց մահացած նախնիների հետ։)

Կիսվեք կնքման զորության օրհնությունների և տաճարում կնքման արարողություններ ստանալու կարևորության մասին ձեր զգացումներով։

## Հելաման 10.12–19

### *Նեփին հնազանդվում է ժողովրդին ապաշխարություն քարոզելու Տիրոջ պատվիրանին*

Հարցրեք ուսանողներին, արդյոք նրանք երբևէ հապաղել են կատարել ինչ-որ բան, որ նրանցից խնդրվել է կատարել։ (Օրինակները կարող են ներառել հետաձգել ավարտին հասցնել տան գործը կամ դպրոցական կամ աշխատանքային հանձնարարությունը։)

- Ի՞նչ պատկերացում կկազմեն ուրիշները մեր մասին, եթե հապաղենք կատարել այն, ինչ խնդրում են մեզանից։

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 10.11–12 հատվածները։ Խնդրեք երեխաներին հետևել՝ ուշադրություն դարձնելով, թե ինչպես Նեփին արձագանքեց, երբ Տերը պատվիրեց նրան ապաշխարություն քարոզել ժողովրդին։

- Ի՞նչ ենք ցույց տալիս Տիրոջը, երբ մենք արագ արձագանքում ենք Նրա խորհրդին և պատվիրաններին։

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 10.13–14 հատվածները։ Այնուհետև մեկ այլ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ Հելաման 10.15–17 հատվածները։

- Նեփիի օրինակն այս հատվածներում ի՞նչ է ուսուցանում մեզ։
- Տերն ինչպե՞ս օգնեց Նեփիին։

Օգնեք ուսանողներին տեսնել, որ Նեփիի հավատարմության շնորհիվ Տերը պաշտպանեց նրան և օրհնեց նրանց մեծ զորությամբ։ Նեփին վճռական էր իրականացնել այն առաքելությունը, որ Տերը տվել էր իրեն։

- Ինչպե՞ս կարող եք ցույց տալ Տիրոջը ծառայելու ձեր վճռականությունը։

Խրախուսեք ուսանողներին Տիրոջ կամքն իրենց սեփական կամքից առաջ դնելու ուղիներ փնտրել և արագ հնազանդվել։ Վկայեք այն օրհնությունների մասին, որ գալիս են Տիրոջը հնազանդվելուց։

## Սերտման սուրբ գրության տեսություն

Այս դասի ծավալը կարող է թույլ տալ, որ ժամանակ տրամադրեք հետևյալ սերտման սուրբ գրության տեսության վարժությանը։

Յուրաքանչյուր ուսանողի հանձնարարեք մտքում կարդալ հետևյալ սերտման սուրբ գրության հատվածներից մեկը. 1 Նեփի 3.7; 2 Նեփի 2.27; 2 Նեփի 31.19–20; Մոսիա 2.17։ Խնդրեք ուսանողներին կարդալ իրենց հանձնարարված հատվածները և խորհել, թե ինչպես է դա վերաբերում Նեփիին և նրա ծառայությանն ինչպես գրառված է Հելաման 10 գլխում։ Բավականաչափ ժամանակից հետո հրավիրեք մի քանի ուսանողների պատասխանել։

ԴԱՍ 112

# Հելաման 11–12

## Նախաբան

Հելամանի գրքի 11 և 12 գլուխներն ընդգրկում են Նեփիացիների պատմության 14 տարիները, երբ ժողովուրդն անցնում էր արդարակեցության և ամբարշտության շրջանով: Այս պատմությունը ցույց է տալիս, թե որքան արագ մարդիկ կարող են մոռանալ Տիրոջը, և թե ինչպես է Նա խրատում նրանց, որպեսզի օգնի նրանց ապաշխարել և վերադառնալ Իր մոտ:

## Ուսուցանման առաջարկներ

### Հելաման 11

*Նեփիացիներն անցնում են արդարակեցության և ամբարշտության շրջանով*

Գրատախտակին արտագրեք հետևյալ գծապատկերը: Բացատրեք, որ այս գծապատկերը ներկայացնում է այն, ինչը հաճախ կոչվում է հպարտության շրջան:




Խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչ կգրեին նրանք շրջանի չորրորդ հատվածում: Թույլ տվեք, որ ուսանողները քննարկեն հնարավոր պատասխանները: Որոշ քննարկումներից հետո գծապատկերի թիվ 4-ի կողքին գրեք *Հնազանդություն և ապաշխարություն*: Բացատրեք, որ հետևյալ սուրբ գրությունների վարժությունը ցույց կտա, թե ինչպես էր Մորմոնի Գրքի ժողովուրդն անցնում այս շրջանի միջով: Նշեք, որ այս շրջանը հաճախ ակնհայտ է մեծ հասարակության մեջ, բայց այն նաև կարող է արտացոլել ընտանիքների և անհատների կյանքի օրինակները:

Հիշեցրեք ուսանողներին, որ նույնիսկ, երբ Նեփին ժողովրդին ասել էր իրենց գլխավոր դատավորի մահվան մասին, «նրանք կարծրացրեցին իրենց սրտերն ու ականջ չարեցին Տիրոջ խոսքերին» (Հելաման 10.13): Դատավորների թագավորության 71-րդ տարում մարդիկ «բաժանվեցին իրար դեմ և սկսեցին սրով միմյանց սպանել» (Հելաման 10.18):

- Ձեր կարծիքով այս ժամանակահատվածում Նեփիացիները հպարտության շրջանի ո՞ր հատվածում էին:

Դասից առաջ գրատախտակի վրա արտագրեք հետևյալ աղյուսակը: Երրորդ և չորրորդ սյունակների շղագիր պատասխանները բաց թողեք: Հնարավորության դեպքում աղյուսակի պատճենը հանեք և որպես հուշաթերթիկ բաժանեք յուրաքանչյուր ուսանողի: Եթե սա հնարավոր չէ անել, ապա խնդրեք նրանց արտագրել աղյուսակն իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրման օրագրերում:

Ցուցադրեք ինչպես լրացնել աղյուսակը՝ դասարանի հետ միասին աշխատելով առաջին տողի վրա: Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 11.1–2 հատվածները: Խնդրեք դասարանին համառոտ ներկայացնել մարդկանց վիճակը՝ ինչպես նկարագրված է այս հատվածներում: Պատասխանները գրեք աղյուսակում: Այնուհետև խնդրեք ուսանողներին նշել, թե մարդիկ շրջանի որ փուլում էին գտնվում: Պատասխանները գրեք աղյուսակում:

***Սուրբ գրությունների վարժությունների ցուցադրում***

Երբ դուք ակնկալում եք, որ ուսանողները կատարեն սուրբ գրության վարժությունը, ապա որոշեք վարժության դժվարության աստիճանը և ձեր ուսանողների ունակությունները: Որոշ դեպքերում դուք ինքներդ կարող եք ցուցադրել վարժության մի հատված, որպեսզի ուսանողները տեսնեն, թե ինչ պետք է անեն, երբ ինքնուրույն վերջացնեն հանձնարարությունը:

Երբ ուսանողները հասկանան ինչպես լրացնել աղյուսակը, ժամանակ տրամադրեք նրանց, որ նրանք լրացնեն այն: Կարող եք խնդրել նրանց աշխատել անհատապես, զույգերով, փոքր խմբերով կամ դասարանով միասին:

| Դատավորների կառավարման տարիներ | Հելաման 11 գլխի հատվածները | Մարդկանց վիճակի նկարագրում | Շրջանի փուլերը |
|---|---|---|---|
| 72–73 | 1–2 | *Հակառակությունն ու պատերազմները շատանում են, և ավազակների գաղտնի հրոսակախումբը շարունակում է կործանման աշխատանքը:* | *2, 3* |
| 73–75 | 3–6 | *Նեփիի Տիրոջը խնդրելու պատճառով պատերազմի փոխարեն սով է լինում, և հազարավոր մարդիկ սովից ոչնչանում են:* | *2, 3* |
| 75 | 7–11 | *Մարդիկ սկսում են հիշել Տիրոջը և խոնարհեցնում են իրենց և հեռու են քշում Գադիանթոնի հրոսակախմբին իրենց միջից:* | *3, 4* |
| 76 | 17–20 | *Ժողովուրդը հրճվում է և փառաբանում է Աստծուն: Նրանք արդար են և կրկին սկսում են բարգավաճել:* | *4, 1* |
| 77–79 | 21–23 | *Բարգավաճումն ու խաղաղությունը վերականգնվում են: Հակառակությունները փոքր են և դրանք ցրվում են հայտնության և ավետարանի ուսուցման միջոցով:* | *1* |
| 80 | 24–26 | *Մարդիկ կրկին դառնում են հպարտ, բարկացկոտ և ամբարիշտ: Ժողովրդի մեջ կրկին ձևավորվում է ավազակների մի ամբարիշտ հրոսակախումբ՝ իր սպանություններով և գաղտնի ծրագրերով:* | *2, 3* |
| 80–81 | 27–35 | *Ավազակները ստեղծում են խառնաշփոթ և կործանում, իսկ Նեփիացիների ու Լամանացիների զորքերը չեն կարողանում ոչնչացնել ամբարիշտ հրոսակախմբին: Ավազակները սպանում են շատ մարդկանց իսկ մյուսներին՝ ներառյալ կանանց և երեխաներին, գերի են տանում հեռու՝ անապատի խորքը: Փորձությունները ժողովրդին հիշեցնում են Տիրոջ մասին:* | *3, 4* |

Ուսանողներին աղյուսակը լրացնելու ժամանակ տրամադրելուց հետո խնդրեք հայտնել, թե ինչ սովորեցին վարժությունից: Հետո տվեք հետևյալ հարցերը.

- Համաձայն Հելաման 11.4 հատվածի, Նեփին ինչու՞ աղոթեց սովի համար: (Նա հույս ուներ, որ սովը մարդկանց կհիշեցնի Տիրոջ և ապաշխարության մասին:)
- Ի՞նչ կարող էին անել մարդիկ, որպեսզի խուսափեին շրջանի «տառապանքի և կործանման» փուլից:

Այս հարցի համար ուսանողները կարող են առաջարկել շատ լավ պատասխաններ: Հավաստիացեք, որ նրանք նշում են հետևյալ սկզբունքը. **հնազանդության և ապաշխարության միջոցով մենք կարող ենք խուսափել հպարտությունից և կործանումից:** Նշեք, որ Նեփիացիները կարող էին բաց թողնել շրջանի երկրորդ և երրորդ փուլերը: Նրանք միշտ կարող էին ապրել արդար և հնազանդ, ապաշխարել առանց հապաղելու, երբ մեղք գործեին: Եթե նրանք այսպես ապրեին, նրանք

կրկին կունենային որոշ փորձություններ, բայց կարիք չէր լինի, որ կրեին այն սարսափելի տառապանքն և կործանումը, որն իրենց ամբարշտության արդյունքն եղավ:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 11.36–37 հատվածները: Խնդրեք դասարանին հետևել՝ ուշադրություն դարձնելով այն փոփոխությանը, որը տեղի ունեցավ կարճ ժամանակահատվածում:

- Տիրոջը հիշելուց հետո որքա՞ն ժամանակ պահանջվեց Նեփիացիներից «հասունանալ կրկին կործանման համար»: (Չորս տարի:)
- Հպարտության ո՞ր շրջանն է նկարագրվում Հելաման 11 գլխի վերջում:

Խնդրեք ուսանողներին նշել և մտածել հատուկ ժամանակաշրջանի մասին, երբ այս շրջանը որոշ չափով նկատել են իրենց սեփական կյանքում կամ իրենց ծանոթ մարդկանց կյանքում: Հրավիրեք նրանց խորհել, թե ինչ կարող են անել, որպեսզի խուսափեն շրջանի երկրորդ և երրորդ փուլերից: Խրախուսեք նրանց գրել այն հատուկ մտքերը, որ կառաջանան խորհելիս:

## Հելաման 12

### *Մորմոնը բացատրում է, թե ինչու է Տերը խրատում մարդկանց:*

Գրատախտակին գրեք հետևյալը. *«Եվ այսպիսով, մենք կարող ենք տեսնել . . .»:* Բացատրեք, որ Մորմոնն օգտագործել է այս արտահայտությունը, որպեսզի ցույց տա այն խրատները, որ պետք է սովորենք իր արձանագրած հիշատակարաններից:

- Հիմնվելով Հելաման 11 գլխի վրա՝ ինչպե՞ս կլրացնեիք այս խոսքը:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 12.1, և խնդրեք երեխաներին հետևել, թե ինչպես Մորմոնը լրացրեց այդ խոսքը:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «անկայուն են մարդկանց զավակների սրտերը» արտահայտությունը:
- Ի՞նչն է օգնում, որ ձեր սրտերը հաստատուն մնան Տիրոջը նվիրվածության մեջ:

Խնդրեք ուսանողներին մտքում ուսումնասիրել Հելաման 12.2–3 հատվածները՝ ուշադրություն դարձնելով մյուս խրատներին, որ Մորմոնն ուզում էր, որպեսզի մենք սովորեինք Նեփիացիների այս պատմությունից: Հիշեցրեք ուսանողներին, որ Մորմոնը հաճախ օգտագործում էր «մենք կարող ենք տեսնել» (հատված 2) և «մենք տեսնում ենք» (հատված 3) արտահայտությունները, երբ նա կիսվում էր այն ճշմարտություններով, որ մենք կարող ենք սովորել սուրբ գրությունների հիշատակարաններից:

- Մեր սեփական բառերով ասած՝ ի՞նչ խրատներ էր ուզում մեզ տալ Մորմոնը: (Ուսանողները կարող են հետևյալ պատասխանները տալ. **եթե մենք ուշադիր չլինենք, մեր բարգավաճումը կարող է մեզ տանել դեպի Տիրոջ մոռացություն; Տերը խրատում է Իր Ժողովրդին, որպեսզի զարթնեցնի նրանց հիշելու Իրեն:**)
- Ձեր կարծիքով ինչու՞ բարեկեցիկ մարդիկ, երբեմն, մոռանում են Տիրոջը:
- Ձեր կարծիքով, ինչու՞ մարդիկ, երբեմն, պետք է խրատվեն, որպեսզի հիշեն Տիրոջը: (Դուք կարող եք բացատրել, որ *խրատել* բառը նշանակում է ուղղել ինչ-որ մեկին պատժի կամ որևէ զրկանքի միջոցով:)

Խնդրեք ուսանողներին խորհել հետևյալ հարցի մասին.

- Տերն ինչպե՞ս կարող է խրատել մեզ այսօր:

Որպեսզի օգնեք ուսանողներին պատասխանել այս հարցին, կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը.

«Աստվածային խրատն ունի առնվազն երեք նպատակ. (1) համոզել մեզ ապաշխարել, (2) կատարելագործել և սրբագործել մեզ, և (3) երբեմն փոխել մեր կայնքի ուղին, դարձնելով այն ավելի լավ ուղի՝ ըստ Աստծո իմաստության» («Ես որոնց որ սիրում եմ հանդիմանում և խրատում եմ», *Ensign* կամ *Լիահոնա,* Մայիս 2011, 97:)

- Ինչպե՞ս է Տիրոջ խրատը վկայում Նրա սիրո մասին:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 12.4–6: Խնդրեք դասարանին հետևել՝ ուշադրություն դարձնելով այն հատկանիշներին, որոնք դժվարեցնում են մարդկանց հիշել Աստծուն: Հրավիրեք ուսանողներին հայտնել այն, ինչ գտնում են:

Բացատրեք, որ այն մարդկանց, ովքեր հրաժարվում են, որ Տերը լինի իրենց առաջնորդը, Մորմոնը նկարագրում էր որպես «նույնիսկ ավելի չնչին, քան հողի փոշին» (Հելաման 12.7)։ Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 12.7–8 հատվածները։

- Ինչու՞ են նման մարդիկ համարվում «ավելի չնչին, քան հողի փոշին»։ (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ Մորմոնը չէր ուսուցանում, որ Երկնային Հոր համար մարդիկ ավելի չնչին արժեք ունեն, քան հողի փոշին։ Այլ նա ուշադրությունը հրավիրում էր այն փաստին, որ փոշին միշտ հնազանդվում է Տիրոջ պատվիրաններին, բայց մարդիկ հաճախ չեն հնազանդվում։)

Ամփոփեք Հելաման 12.9–22 հատվածները՝ նշելով, որ այս հատվածներում Մորմոնը մեզ հիշեցնում է Տիրոջ մեծ զորության մասին,—որ Տերը կարող է պատվիրել ֆիզիկական տարրերին շարժվել կամ փոխվել, և որ Նա կարող է մեղսագործ անձնավորությանը հեռացնել Իր ներկայությունից։ Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել Հելաման 12.23–26՝ փնտրելով փաստ, որը ցույց կտա, որ մենք ավելի մեծ արժեք ունենք, քան հողի փոշին։ Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն իրենց համար կարևոր բառերը կամ արտահայտությունները։

- Ինչպիսի՞ պարգև է մեզ սպասում, երբ մենք ապաշխարում ենք ու լսում ենք Տիրոջ ձայնը։
- Ինչպե՞ս է այդ փաստը ցույց տալիս մեր արժեքը Աստծո համար։

Գրատախտակի վրա գրեք հետևյալ անավարտ նախադասությունները. Հրավիրեք ուսանողներին գրել այսօրվա դասի ամփոփում՝ ավարտելով այս նախադասություններն իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրման օրագրերում։

*Եվ այսպիսով, Հելաման 11–12 գլուխներում ես տեսնում եմ, որ . . .*

*Հետևաբար, ես . . .*

Վկայեք, որ եթե մենք հիշենք Տիրոջը, լսենք Նրա ձայնը և ապաշխարենք, մենք կարտահայտենք մեր հնազանդությունը և հավատքն առ Նա։ Իր հերթին Նա պահում է մեզ օրհնելու և բարգավաճեցնելու Իր խոստումը՝ վերջիվերջո շնորհելով մեզ հավերժական կյանք։

ԴԱՍ 113

# Հելաման 13

## Նախաբան

Փրկչի ծննդից մի քանի տարի առաջ Տերը Սամուել անունով Լամանացի մի մարգարե ուղարկեց, որպեսզի Նեփիացիներին ապաշխարություն քարոզի: Նա Զարահեմլայում Նեփիացիներին հայտարարեց Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով փրկագնման ուրախ լուրը: Նա նաև նրանց հիշեցրեց մարգարեներին մերժելու և անօրինության մեջ երջանկություն փնտրելու իրենց հակվածության մասին: Նա զգուշացրեց նրանց այն կործանման մասին, որը կգար, եթե նրանք չապաշխարեին:

## Ուսուցանման առաջարկներ

### Հելաման 13

*Սամուելը զգուշացնում է Նեփիացիներին իրենց կործանման մասին, եթե չապաշխարեն*

Դասից առաջ պատրաստեք այս դասի վերջում ներկայացված հուշաթերթիկը: Կարող եք կտրել հուշաթերթիկը երեք մասի՝ յուրաքանչյուրի վրա նշելով մեկ խմբակային հանձնարարություն: Նաև դասից առաջ գրատախտակի վրա արտագրեք Հելաման 13-ի հետևյալ համառոտ շարադրանքը:

*Հելաման 13.1–4Տերը կանչում է Սամուել Լամանացուն, որպեսզի քարոզի Նեփիացիներին:*

*Հելաման 13.5–23 Սամուելը զգուշացնում է Նեփիացիներին կործանման մասին, որը կգա նրանց վրա, եթե նրանք չապաշխարեն:*

*Հելաման 13:24–39 Սամուելը զգուշացնում է մարդկանց մարգարեներին մերժելու և ապաշխարելուց հրաժարվելու հետևանքների մասին:*

Դասը սկսեք ցուցադրելով Սամուել Լամանացու նկարը պատի վրա (62370; *Ավետարանի արվեստի գիրք* [2009], համար 81): Հարցրեք ուսանողներին, արդյոք գիտեն, թե ինչու էին Նեփիացիներն ուզում սպանել Սամուելին: Ուսանողների պատասխանելուց հետո բացատրեք, որ Հելաման 13–16 գլուխները պարունակում է մարգարե Սամուել Լամանացու մասին պատմությունը: Այս պատմությունը եզակի է, որովհետև Մորմոնի Գրքում մենք միայն մեկ անգամ ենք տեսնում, որ Լամանացի մարգարեն Նեփիացիներին ապաշխարության է կանչում: Այս ժամանակահատվածում Լամանացիներն ավելի արդարակյաց էին, քան Նեփիացիները: Անդրադարձեք գրատախտակի վրա գրված համառոտ շարադրանքին, որպեսզի ուսանողներին տաք Հելաման 13 գլխի հակիրճ պատկերացում:

Դասարանը երեք խմբի բաժանեք: (Հնարավորության դեպքում թող որ յուրաքանչյուր խումբ ունենա հավասար թվով ուսանող:) Յուրաքանչյուր ուսանողի տվեք իր խմբի հանձնարարությունը (ներկայացված դասի վերջում:) Ասացեք ուսանողներին, որ նրանք որոշ հատվածներ կուսումնասիրեն Հելաման 13 գլխից և, այնուհետև, միմյանց կուսուցանեն այն, ինչ սովորել են: Խնդրեք յուրաքանչյուր ուսանողի իրեն հանձնարարված սուրբ գրության հատվածներից ուսուցանելու սկզբունքներ և ուղեկցող հարցերի պատասխաններ պատրաստել: Հնարավորություն տվեք ուսանողներին հարցերի պատասխանների տարբերակը գրի առնել (Այս վարժությունը թույլ կտա բոլոր ուսանողներին մասնակցել և կապահովի հուսալի միջավայր, որտեղ ուսանողները կարող են միմյանց հետ կիսվել զգացումներով, մտքերով և վկայություններով:)

Երբ ուսանողներն ունեցել են բավականաչափ ժամանակ անհատապես ուսումնասիրելու համար, հանձնարարեք նրանց աշխատել երեք հոգուց բաղկացած խմբերով: Հնարավորության դեպքում, լավ կլիներ, որ յուրաքանչյուր խումբ ընդգրկեր մեկ ուսանողի, ով ուսումնասիրել է Հելաման 13.1–7, 11 հատվածները, մյուսը, ով ուսումնասիրել է Հելաման 13.17–23 հատվածները, և երրորդը, ով ուսումնասիրել է Հելաման 13.24–33 հատվածները: Յուրաքանչյուր ուսանողի բավարար ժամանակ

***Թույլ տվեք, որ ուսանողներն արտահայտեն այն, ինչ սովորեցին միմյանցից***

Սուրբ Հոգու զորությամբ ուսանողների բառերը և արտահայտությունները կարող են նշանակալից ազդեցություն ունենալ իրենց ընկերների սրտերի ու մտքերի վրա: Երբ դուք խնդրում եք նրանց արտահայտել այն ճշմարտությունները, որ նրանք սովորեցին միմյանցից, դուք օգնում եք նրանց զարգացնել սիրո, հարգանքի և միասնության միջավայր:



տրամադրեք իր պատասխաններով խմբի մյուս անդամների հետ կիսվելու համար: Փոքր խմբերի քննարկման ժամանակ քայլեք դասարանով և վերահսկեք ուսանողների պատասխանները: Անհրաժեշտության դեպքում ձեր լսած քննարկումներին ավելացրեք ձեր կարծիքը:

Երբ ուսանողներն ավարտեն միմյանց ուսուցանել, նրանցից մի քանիսին հրավիրեք ողջ դասարանի հետ կիսվել ճշմարտությամբ կամ կարծիքով, որ նրանք վարժության ընթացքում սովորեցին մեկ այլ ուսանողից:

Ամփոփեք Հելաման 13.9–14՝ բացատրելով, որ Նեփիացիները կարող էին կործանվել 400 տարի անց (տես Հելաման 13.9–10) և միակ պատճառը, որ այդ ժամանակ չկործանվեցին, այն էր, որ դեռ նրանց մեջ արդար մարդիկ էին ապրում (տես Հելաման 13.13–14): Վկայեք, որ Սամուելն ուղարկվել էր Նեփիացիների մոտ Տիրոջ կողմից, և նա խոսում էր այն, ինչ Տերը դնում էր նրա սրտի մեջ, երբ նա հրավիրում էր Նեփիացիներին ապաշխարել և Տիրոջ մոտ վերադառնալ (տես Հելաման 13.11):

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 13.27–28 հատվածները: Խնդրեք, որ երեխաները հետևեն՝ ուշադրություն դարձնելով, թե Նեփիացիներն ինչպես արձագանքեցին կեղծ մարգարեներին:

- Ըստ Սամուելի՝ Նեփիացիներն ինչպե՞ս արձագանքեցին նրանց, ովքեր կեղծ բաներ էին ուսուցանում: Ձեր կարծիքով ինչու՞ ոմանք ընդունեցին նրա հորդորները, իսկ մյուսները մերժեցին այն:
- Ինչպե՞ս են Հելաման 13.27 հատվածում մեր կարդացած խոսքերը և վերաբերմունքներն ակնհայտ մեր օրերում:

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ խոսքերը.

«Թե ինչպես կարձագանքենք կենդանի մարգարեի խոսքերին, երբ նա մեզ ասում է այն, ինչ պետք է իմանանք, բայց նախընտրում ենք չլսել, հանդիսանում է մեր հավատարմության ստուգումը» («Մարգարեին հետևելու տասնչորս հիմունքներ» [ԲՅՀ հոգևոր ժամի ուղերձ, Փետր. 26, 1980], 3–4, speeches.byu.edu):

- Մարգարեների ո՞ր խորհրդին հետևելը կարող է որոշ մարդկանց համար դժվար լինել այսօր:
- Ո՞րն է մարգարեական ուղերձին հետևելու օրինակներից մեկը, որին դուք ընտրել եք հնազանդվել: Ինչպե՞ս եք օրհնվել այս խորհրդին հետևելու շնորհիվ:

Հրավիրեք ուսանողներին իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրման օրագրերում գրել կենդանի մարգարեների խորհրդին հետևելու մի եղանակի մասին, որը կարող են բարելավել:

Ուսանողներին գրելու համար բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 13.33–37 հատվածները: Խնդրեք երեխաներին հետևել՝ ուշադրություն դարձնելով, թե չապաշխարող Նեփիացիները վերջիվերջո ինչպիսի փորձառություն են ունենում և ինչ կասեն իրենք իրենց մասին: Այնուհետև հրավիրեք մեկ այլ ուսանողի բարձրաձայն կարդալ Հելաման 13.38 հատվածը: Խնդրեք երեխաներին ուշադրություն դարձնել այն տխուր ճշմարտությանը, որ Սամուելը հայտարարեց Նեփիացիների ապագա սերունդների վերաբերյալ:

- Ինչպիսի՞ տխուր ճշմարտություն հայտարարեց Սամուելը Նեփիացիների ապագա սերունդների մասին:
- Ձեր կարծիքով, Սամուելն ի՞նչ ի նկատի ուներ, երբ նա ասաց, որ նրանց «փորձության օրերն անցած են»: (Նեփիացիների ապագա սերունդները կձգձգեն իրենց ապաշխարությունը մինչև դա չափազանց ուշ կլինի նրանց համար ապաշխարել: Եվ քանի որ նրանք չեն ապաշխարում, նրանց մեղքերը նրանց կտանեն դեպի իրենց կործանում:)
- Ի՞նչ սխալ բան կա «անօրինություն անելու մեջ երջանկություն» փնտրելիս: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ **ճշմարիտ երջանկությունը գալիս է միայն այն ժամանակ, երբ մենք պահում ենք Աստծո պատվիրանները**:)
- Ո՞րոնք են այն եղանակները, որ մարդիկ երջանկություն են փնտրում անօրինություն անելու մեջ:

Հիշեցրեք ուսանողներին Մորմոնի Գրքի այլ պատմությունների մասին, որտեղ անհատները համառում էին խռովության և ամբարշտության մեջ, մինչև նրանց սրտերը

կարծրացան Սուրբ Հոգու ազդեցության նկատմամբ: (Օրինակներն ընդգրկում են Լամանին և Լեմուելին, ովքեր «անզգայացած» էին [1 Նեփի 17.45] և հրաժարվում էին լսել Աստծուն, և Նոյ թագավորին ու իր ժողովրդին, ովքեր հրաժարվեցին ապաշխարել՝ չնայած մարգարե Աբինադիի զգուշացումներին:) Սամուելը շեշտեց, որ Նեփիացիների հրաժարումն ապաշխարելուց կտաներ դեպի իրենց ապագա սերունդների կործանում:

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ անհատապես յուրաքանչյուր մարդու համար, ով կընտրի ապաշխարել, միշտ հույս կա: Ապաշխարության միջոցով մենք կարող ենք ստանալ Տիրոջ ներումը և թույլ չտալ, որ մեր սրտերը կարծրանան: Որպեսզի ուսանողներին օգնեք հասկանալ, որ ապաշխարության միջոցով մենք կարող ենք ուղղել մեր ընթացքը, կարդացեք Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի հետևյալ խոսքերը.

Օդաչու դառնալու համար իմ ուսուցման ժամանակ ես սովորեցի ինչպես վարել օդանավը երկար տարածությունների վրա: Ահռելի մեծության օվկիանոսների, լայն անապատների վրայով և մայրցամաքների միջև թռիչքները մանրակրկիտ պլանավորում էին պահանջում, որպեսզի հնարավոր լիներ ապահով հասնել նախատեսված վայրը: Առանց կանգառի այդ թռիչքները կարող էին, երբեմն, տևել մինչև 14 ժամ և անցնել ավելի քան 14000 կմ տարածություն:

Այդ երկարատև թռիչքների ժամանակ կա որոշիչ մի կարևոր կետ, որը կոչվում է *ապահով վերադարձի կետ:* Մինչև այդ կետն օդանավն ունի բավական վառելիք, որպեսզի շրջվի և ապահով վերադառնա թռիչքի ելման օդանավակայան:Ապահով վերադարձի այդ կետն անցնելուց հետո օդանավի հրամանատարը կորցնում է այդ հնարավորությունը և պետք է շարունակի թռիչքը:Այդ պատճառով է այդ կետը հաճախ կոչվում *կետ, որից ետադարձ չկա:*

Սատանան ցանկանում է մենք մտածենք, որ երբ մեղք ենք գործում, մենք անցնում ենք «կետը, որից ետադարձի ուղի չկա», այսինքն, որ շատ ուշ է փոխել մեր ուղղությունը . . ..

«. . . Որպեսզի մենք կորցնենք մեր հույսը, նրա պես թշվառ զգանք մեզ և հավատանք, որ մեզ համար այլևս ներում չկա, սատանան կարող է անգամ սխալ օգտագործել սուրբ գրությունների խոսքերը, որոնք ընդգծում են Աստծո արդարադատությունը, որպեսզի հասկացնի, որ ողորմածություն գոյություն չունի . . ..

Քրիստոսը եկավ մեզ փրկելու: Եթե մենք սխալ ուղի ենք բռնում, Հիսուս Քրիստոսի Քավությունը մեզ հավաստիացում է տալիս, որ մեղքն անդառնալի կետ *չէ:* «Ապահով վերադարձը հնարավոր է, եթե մենք հետևենք մեր փրկության համար նախատեսված Աստծո ծրագրին» («Ապահով վերադարձի կետ», *Ensign* կամ *Լիահոնա,* Մայիս 2007, 99):

- Ինչպե՞ս կարող են Նախագահ Ուխդորֆի նշումները հույս տալ ինչ-որ մեկին, ով մեղք է գործել:

Խրախուսեք ուսանողներին խորհել իրենց քննարկած ճշմարտությունների մասին: Խրախուսեք նրանց գործել համաձայն Սուրբ Հոգուց ստացած տպավորությունների: Վկայեք, որ երջանկությունը գալիս է նրանց, ովքեր հետևում են Տիրոջ ապաշխարելու հրավերին:

*Նշում.* դասի սկզբում նկարագրված երեք խմբերի համար պատրաստեք հետևյալ հուշաթերթիկները:

**1 խումբ —Հելաման 13.1–7, 11**

*Մարգարեները հայտնում են այն ուղերձները, որ Աստված դնում է իրենց սրտում:*

1. Ձեր կարծիքով, ո՞ր հատվածներն են ուսուցանում այս ճշմարտությունը:
2. Ի՞նչ ուղերձ էր Աստված դրել Սամուելի սրտում:
3. Ձեր կարծիքով, ինչու՞ Սամուելի համար այս ուղերձը հաղորդելը կարող էր դժվար լինել:
4. Սամուելն ինչպիսի՞ ազդեցություն էր ակնկալում, որ իր ուղերձը կունենար Նեփիացիների վրա:
5. Երբևէ՞ զգացել եք, որ ծնողը կամ Եկեղեցու առաջնորդը ոգեշնչված է եղել ձեզ ուղերձ հաղորդելու համար: Ինչպե՞ս է դա ներգործել ձեր վրա:
6. Ի՞նչ լրացուցիչ ճշմարտություններ կարող եք գտնել այս հատվածներում:

**2 խումբ —Հելաման 13.17–23**

*Երբ մենք չենք հիշում Տիրոջը, մենք ենթարկվում ենք հպարտությանն ու անօրինությանը:*

1. Ձեր կարծիքով, ո՞ր հատվածներն են ուսուցանում այս ճշմարտությունը:
2. Ըստ Սամուելի՝ ինչպիսի՞ անեծք կգար Նեփիացիների վրա, եթե նրանք համառեին անօրինության մեջ:
3. Նեփիացիների սերը հարստության նկատմամբ էլ ինչպիսի՞ մեղքերի տարավ նրանց:
4. Թվարկեք մի քանի բան, որոնց վրա իրենց սրտերը դնելու դեպքում երիտասարդները կգնան դեպի հպարտություն և մեղք:
5. Ձեր կարծիքով, ինչու՞ է կարևոր «հիշել Տիրոջը՝ ձեր Աստծուն, այն բաների համար, որոնցով նա օրհնել է ձեզ» ( Հելաման 13.22):
6. Ի՞նչ լրացուցիչ ճշմարտություններ կարող եք գտնել այս հատվածներում:

**3 խումբ—Հելաման 13.24–33**

*Եթե մենք մերժենք Տիրոջ մարգարեների խոսքերը, մենք կունենանք վիշտ ու թախիծ:*

1. Ձեր կարծիքով ո՞ր հատվածներն են ուսուցանում այս ճշմարտությունը:
2. Ըստ Սամուելի՝ ինչու՞ էին Նեփիացիները մերժում ճշմարիտ մարգարեներին:
3. Ձեր կարծիքով ինչու՞ որոշ մարդիկ ընդունում էին կեղծ մարգարեներին, ինչպես Սամուելն էր նկարագրում:
4. Ո՞րոնք են կենդանի մարգարեների և առաքյալների որոշ հատուկ ուսմունքները:
5. Ո՞րոնք են որոշ «հիմար և կույր առաջնորդները» (Հելաման 13.29), որոնցից կենդանի մարգարեները և առաքյալները զգուշացրել են մեզ խուսափել:
6. Ի՞նչ լրացուցիչ ճշմարտություններ կարող եք գտնել այս հատվածներում:

ԴԱՍ 114

# Հելաման 14

## Նախաբան

Շարունակելով քարոզել Նեփիացիներին Զարահեմլայում՝ Սամուել Լամանացին հայտարարեց այն նշանները, որոնք ցույց կտային Հիսուս Քրիստոսի ծնունդն ու մահը: Նա բացատրեց, որ մարգարեացել է այս նշանների մասին, որպեսզի օգնի մարդկանց հավատալ Հիսուս Քրիստոսին և համոզի նրանց ապաշխարել իրենց մեղքերից:

Նա ուսուցանեց, որ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով ողջ մարդկությունը ետ կբերվի Աստծո ներկայության մեջ: Կանչելով մարդկանց ապաշխարության՝ նա խոստացավ, որ ապաշխարողները կներվեն իրենց մեղքերից, բայց նրանք, ովքեր չկարողացան ապաշխարել, կրկին կհեռացվեն Աստծո ներկայությունից:

## Ուսուցանման առաջարկներ

### Հելաման 14.1–13

*Սամուելը մարգարեանում է Փրկչի ծննդյան հետ կապված նշանների մասին*

Դասից առաջ գրատախտակի վրա նկարեք երեք սլաք ինչպես հետևյալը: Երբ դասը ծավալվի, սլաքների շուրջ կտեղադրեք բառեր և արտահայտություններ:

→ → →

Հրավիրեք ուսանողներին վերհիշել այն ամենը, ինչ քննարկեցին անցած դասին Հելաման 13 գլխի մասին: Եթե հիշեցման կարիք ունեն, հիշեցրեք նրանց, որ սովորեցին Սամուել անունով մի մարգարեի մասին: Խնդրեք նրանց կիսվել մանրամասներով, որ հիշում են նրա մասին, ինչպես օրինակ՝ ով էր նա, ուր գնաց, ինչ ուսուցանեց և նրանց հոգևոր վիճակը, ում նա ուսուցանում էր: Խնդրեք ուսանողներին վերհիշել, թե ինչպես մարդիկ արձագանքեցին Սամուելի ուղերձին: Բացատրեք, որ Հելաման 14 գլուխը ներառում է Սամուելի ուսմունքների շարունակությունը:

Բացատրեք, որ Սամուելը մարգարեացավ այն դեպքերի մասին, որոնք տեղի էին ունենալու ապագայում, դրանցից մի քանիսը Զարահեմլայից հազարավոր մղոններ այն կողմ: Խնդրեք ուսանողներին արագ կարդալ Հելաման 14.1–2 և նշել մի դեպք, որի մասին Սամուելը մարգարեացավ (Հիսուս Քրիստոսի ծնունդը):

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 14.3–6 հատվածները՝ ուշադրություն դարձնելով այն նշաններին, որ Նեփիացիները Հելամանի տեսնելու էին Փրկչի ծննդի ժամանակ: Դուք կարող եք առաջարկել ուսանողներին իրենց սուրբ գրություններում նշել այդ նշանները: Դուք նաև կարող եք ուսանողների ուշադրությունը հրավիրել այս հատվածների տողատակի ծանոթագրություններին, որոնք վկայում են Սամուելի մարգարեությունների իրականացման մասին:

- Ի՞նչ նշանակություն ունի ձեզ համար Փրկչի ծնունդը:

Բարձրաձայն կարդացեք Հելաման 14.8–9 հատվածները: Շեշտեք Փրկչին հավատալու կարևորությունը հավերժական կյանք ստանալու համար: Գրատախտակի վրա պատկերված վերջին սլաքից հետո գրեք *հավիտենական կյանք*: Բացատրեք, որ «հավիտենական կյանք» և «հավերժական կյանք» արտահայտություններն ունեն նույն իմաստը: Դա նշանակում է ապրել այնպիսի կյանքով, ինչպես Աստված է ապրում, և մեր ընտանիքների հետ ընդմիշտ ապրել Նրա ներկայության մեջ: Սամուելը Զարահեմլայում ուսուցանեց Նեփիացիներին, թե ինչ պետք է անեին նրանք, որպեսզի ստանային հավիտենական կյանք:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հելաման 14.11–13 հատվածները՝ ուշադրություն դարձնելով, թե ինչ էր ուզում Սամուելը, որ մարդիկ իմանային և անեին: Դուք կարող եք առաջարկել ուսանողներին նշել այն բաները, որ Սամուելն ուզում էր մարդիկ իմանային ու անեին:

***Վկայություն բերեք***

Վկայությունը ճշմարտության պարզ, ուղղակի հայտարարումն է: Հաճախ բերեք ձեր վկայությունը Հիսուս Քրիստոսի և Նրա վերականգնված ավետարանի մասին: Սա կհրավիրի Սուրբ Հոգու ազդեցությունը, որը կամրացնի ուսանողներին սովորելու, հասկանալու և ավետարանով ապրելու իրենց ջանքերում:

***Ուշադրություն դարձրեք գրողի կամ խոսողի մտադրությանը***

Սուրբ գրությունները պատրաստելիս՝ հին մարգարեները ոգեշնչված էին ընդգրկել այն ուղերձները, որոնք այսօր կվերաբերվեին մեր կարիքներին: Երբ փորձեք հասկանալ գրողի կամ խոսողի մտադրությունը Մորմոնի Գրքում, ուշադիր եղեք չխորանալ ավելին, քան այն, ինչը պարզ ասվում է տեքստում: Հիշեք, որ մարգարեների հիմնական մտադրությունը միշտ եղել է վկայել Հիսուս Քրիստոսի մասին:

Գրատախտակի վրա պատկերված առաջին սլաքի ձախ կողմում գրեք *Գիտելիք*: Այնուհետև, հարցրեք ուսանողներին ինչ պարզեցին, որ Սամուելն ուզում էր մարդիկ իմանային: Խնդրեք մի քանի ուսանողների թվարկել այդ բաները գրատախտակի վրա՝ *Գիտելիք* բառի ներքևում: (Պատասխանները պետք է ներառեն, որ Սամուելն ուզում էր մարդիկ իմանային Աստծո դատաստանի մասին նրանց համար, ովքեր մեղանչում են, ապաշխարության պայմանների մասին, Հիսուս Քրիստոսի գալստյան և Նրա գալստյան հետ կապված նշանների մասին:)

- Ըստ Սամուելի հույսերի՝ դեպի ո՞ւր կառաջնորդեր այդ գիտելիքը մարդկանց: (Հավատալ Հիսուս Քրիստոսին և ապաշխարել իրենց մեղքերից:)

Խնդրեք ուսանողներին գրել մի սկզբունք՝ հիմնվելով Հելաման 14.13 հատվածի վրա: Այնուհետև, խնդրեք մի քանի ուսանողների բարձրաձայն կարդալ իրենց գրածը: (Հավանական պատասխաններից մեկը կարող է լինել այն, որ **հավատքն առ Հիսուս Քրիստոս տանում է դեպի ապաշխարություն և մեղքերի թողություն**:)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ «նրա արժանիքների միջոցով» արտահայտության նշանակությունը, բացատրեք, որ արժեքները դրանք որակներ կամ արարքներ են, որոնք մարդուն դարձնում են պարգևին արժանի: Որպեսզի մեղքերից թողություն ստանալու համար արժանի լինենք, մենք պետք է կատարենք որոշ բաներ, ինչպես օրինակ՝ ի սրտե ապաշխարենք, մկրտվենք ու հաստատվենք և պահենք պատվիրանները: Այնուամենայնիվ, ներման պարգևը մենք ստանում ենք ոչ թե մեր, այլ Փրկչի արժանիքների շնորհիվ: Դուք կարող եք ուսանողներին հիշեցնել 2 Նեփի 25.23-ի ՝ սուրբ գրությունների սերտման հատվածի մասին. «Շնորհի միջոցով է, որ մենք փրկվում ենք՝ այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել»: Դուք նաև կարող եք խորհուրդ տալ ուսանողներին կարդալ Ալմա 22.14 և Ալմա 24.10–11հատվածները:

Գրատախտակի վրա պատկերված գծապատկերը ավարտեք հետևյալ կերպ.

Գիտելիք → Հավատք առ Քրիստոս → Ապաշխարություն → Հավիտենական կյանք

- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի մասին գիտելիք ձեռք բերելը մեծացրել ձեր հավատքն առ Նա:
- Ինչպե՞ս է ձեր հավատքն առ Փրկիչ առաջնորդել ձեզ ապաշխարելու և ձգտելու լինել Նրա նման:

Վկայեք, որ միայն Հիսուս Քրիստոսի արժանիքների միջոցով մենք կարող ենք ստանալ մեղքերի թողություն և հավերժական կյանք:

## Հելաման 14.14–31

### *Սամուելը մարգարեանում է Փրկչի մահվանը վերաբերող նշանների մասին*

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 14.14 հատվածը: Այնուհետև, խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Հելաման 14.20–27 հատվածները՝ ուշադրություն դարձնելով այն նշաններին, որ Նեփիացիները տեսնելու էին Հիսուս Քրիստոսի մահվան ժամանակ: Դուք կարող եք խորհուրդ տալ նրանց ընդգծելել այդ նշանները: Կարդալու համար բավականաչափ ժամանակ ունենալուց հետո հրավիրեք նրանց ասել, թե ինչ են հասկացել: Ասացեք նրանց, որ այս նշանների իրականացումը հիշատակված է 3 Նեփիում (տես Հելաման 14.20, տողատակի ծանոթագրություն *ա*):

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 14.28–29 հատվածները: Խնդրեք երեխաներին հետևել՝ ուշադրություն դարձնելով այն պատճառներին, թե ինչու է Տերը ցույց տալիս նշաններ և հրաշքներ: Խնդրեք մի քանի ուսանողների իրենց սեփական բառերով արտահայտել այդ պատճառները: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, բայց հավաստիացեք, որ նրանք նշում են հետևյալ ճշմարտությունը. **Տերը ցույց է տալիս նշաններ և հրաշքներ, որպեսզի օգնի մարդկանց հավատալ Իրեն**:)

- Ի՞նչ կարող է մեզ ուսուցանել այս ճշմարտությունն այն նշանների մասին, որոնք կնախորդեն Փրկչի Երկրորդ Գալստին:

Խնդրեք ուսանողներին խորհել այն նշանների և ապացույցների մասին, որ Տերը տվել է նրանց, որպեսզի օգնի հավատալ Իրեն: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին կիսվել իրենց փորձառություններով (բայց հիշեցրեք նրանց, որ չպետք է կիսվեն խիստ անձնական կամ մասնավոր բաներով): Վկայեք, որ Տերը ցույց է տալիս նշաններ և ուղարկում է մարգարեներ, ինչպես Սամուելը, որպեսզի մեր օրերում համոզի մարդկանց հավատալ Իրեն:

*Նշում.* Քանի որ սուրբ գրություններում շատ հատվածներ զգուշացնում են մեզ չփնտրել նշաններ, ուսանողները կարող են շփոթված զգալ նշանների մասին այս քննարկումներից: Օգնեք նրանց հասկանալ, որ Աստծո սիրո նշանները ճանաչելու և եսասիրական նկատառումներով նշաններ փնտրելու միջև տարբերություն կա (տես Հակոբ 7.9–14; Ալմա 30.43–50; ՎԿՈ 46.9; 63.7–11): Երբ մարգարեները զգուշացնում են նշաններ փնտրելու դեմ, նրանք ակնարկում են այն մարդկանց, ովքեր հրաժարվում են հավատալ, մինչև որ նշաններ չտեսնեն, ոչ թե այն մարդկանց, ովքեր հավատք են գործադրում հրաշքներ որոնելիս՝ համաձայն Տիրոջ կամքի:

Բացատրեք, որ մինչ լավ է իմանալ Փրկչի մահվանը վերաբերող նշանների մասին, որ Նեփիացիները տեսնելու էին, ավելի կարևոր է հասկանալ Սամուելի ուսմունքները Հիսուս Քրիստոսի մահվան և հարության նշանակալիության մասին: Գրատախտակի վրա նկարեք հետևյալ գծապատկերը՝ բաց թողնելով համարակալված բացատրությունները: Ավելացրեք այդ բացատրությունները Հելաման 14.15–19 հատվածների քննարկման համապատասխան պահին: (Դուք կարող եք հրավիրել ուսանողներին արտագրել այս գծապակերը տետրում կամ սուրբ գրությունների ուսումնասիրման օրագրում:)




Բացատրեք, որ «հոգևոր մահ» արտահայտությունը վերաբերում է Աստծո ներկայությունից բաժանված լինելուն: Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 14.15–16:

- Ո՞րն է առաջին հոգևոր մահը, որի մասին խոսվում է Հելաման 14.16 հատվածում: (Դուք կարող եք բացատրել, որ Ադամի և Եվայի Անկման պատճառով մենք բաժանված ենք Աստծո ներկայությունից:)

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 14.17 հատվածը: Խնդրեք երեխաներին հետևել և խորհել, թե ինչպես կարող են հաղթահարել առաջին հոգևոր մահը: Գրատախտակի վրա գրեք հետևյալ ճշմարտությունը. ***Հիսուս Քրիստոսը փրկագնում է Անկումից ողջ մարդկությանը, այնպես որ մենք կարող ենք վերադառնալ Աստծո ներկայություն:*** Բացատրեք, որ ողջ մարդկությունը վերադառնալու է Աստծո ներկայություն՝ դատվելու համար (տես 2 Նեփի 2.10):

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 14.18–19 հատվածները:

- Ո՞րն է երկրորդ հոգևոր մահը, որի մասին խոսվում է Հելաման 14.18–19 հատվածներում: (Դուք կարող եք բացատրել, որ նրանք, ովքեր չեն ապաշխարում, կրկին կզրկվեն Հոր ներկայությունից:)
- Ի՞նչ կարող ենք անել երկրորդ մահից խուսափելու համար, որի մասին խոսեց Սամուելը: (Կարող եք ուսանողներին հրավիրել կարդալ Հելաման 14.13 և Մորմոն 7.7–8 հատվածները: Նշեք, որ **Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով նրանք, ովքեր ապաշխարում են, ընդմիշտ կապրեն Աստծո ներկայության մեջ**:)

Փրկչի Քավության օրհնությունները փնտրելիս ընտրության կարևորությունը շեշտադրելու համար հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հելաման 14.30–31 հատվածները: Խնդրեք նրանց ուշադրություն դարձնել իրենց ընտրությանը վերաբերող բառերին ու արտահայտություններին: Հրավիրեք նրանց կիսվել իրենց գտած բառերով և արտահայտություններով: Խնդրեք նրանց բացատրել, թե ինչպես են այս բառերն ու արտահայտություններն օգնում նրանց հասկանալ ամեն օր իրենց կատարած ընտրությունների կարևորությունը:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Հելաման 14.18–19. Ապաշխարության աստվածային պարգևը

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը վկայել է այն ուրախության մասին, որը գալիս է ապաշխարության միջոցով.

«Ես երախտագիտությամբ ընդունում և վկայում եմ, որ մեր Տիրոջ աննկարագրելի տառապանքները, մահը և Հարությունը «իրագործում է ապաշխարության պայմանը» (Հելաման 14.18): Ապաշխարության աստվածային պարգևը երջանկության բանալին է այստեղ և հետագայում: Փրկչի խոսքերով և խորին հնազանդությամբ և սիրով, ես հրավիրում եմ բոլորին «ապաշխարել, որովհետև մոտեցել է երկնքի թագավորությունը» (Մատթեոս 4.17): Ես գիտեմ, որ ընդունելով այս հրավերը, դուք ուրախություն կգտնեք այժմ և հավիտյան»: («Ապաշխարության աստվածային պարգևը», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2011, 38):

ԴԱՍ 115

# Հելաման 15–16

## Նախաբան

Սամուել Լամանացին զգուշացրեց Նեփիացիներին, որ եթե չապաշխարեն, նրանք կկործանվեն: Նա հայտարարեց, որ Տերը կերկարացնի այն Լամանացիների օրերը, ովքեր ավելի արդար էին դարձել, քան Նեփիացիները: Որոշ Նեփիացիներ հավատացին Սամուելի ուսմունքներին և մկրտվեցին Նեփիի կողմից: Նրանք, ովքեր չհավատացին Սամուելին, փորձեցին սպանել նրան: Բայց նա պաշտպանված էր Աստծո զորությամբ և վերադարձավ իր սեփական երկիրը:

## Ուսուցանման առաջարկներ

### Հելաման 15

*Սամուելը զգուշացնում է Նեփիացիներին և բացատրում, թե ինչպես են Լամանացիները դարձել խոստումի ժողովուրդ*

Բարձրաձայն կարդացեք հետևյալ նկարագրությունները.

Մի պատանի դաստիարակվել էր ծնողների կողմից, ովքեր Եկեղեցու անդամ չէին և չէին շեշտում Հիսուս Քրիստոսի ուսմունքները: Նրանք թույլ էին տալիս նրան խմել ալկոհոլ՝ սովորություն, որ նա շարունակեց քոլեջում: Այնուհետև, նա հանդիպեց Վերջին Օրերի Սուրբ միսիոներներին: Միսիոներների հետ մի քանի անգամ հանդիպելուց հետո նա խոստացավ հրաժարվել ալկոհոլից: Մի քանի օր անց նա ընկերների խմբի հետ էր: Նրանք առաջարկեցին նրան ալկոհոլային խմիչք:

Մեկ այլ երիտասարդ տղամարդ դաստիարակվել էր Վերջին Օրերի Սրբերի ընտանիքում: Նրա ծնողներն անցկացնում էին ընտանեկան երեկո և սուրբ գրությունների ընտանեկան ուսումնասիրություն: Նա զարգացրել էր ամենօրյա սուրբ գրությունների ուսումնասիրման և անձնական աղոթքի սովորություն: Նա հաճախել էր Երեխաների Միություն, ծառայել էր Ահարոնյան Քահանայության քվորումներում և ավարտել էր սեմինարիան՝ ձեռք բերելով գիտելիք Տիրոջ պատվիրանների և ուղիների մասին: Հաճախելով քոլեջ՝ նա ձեռք բերեց նոր ընկերություն: Մի երեկո ընկերներից մեկն առաջարկեց նրան խմել ալկոհոլային խմիչք:

- Ալկոհոլային խմիչքն ընդունելն ավելի լուրջ օրինազանցություն կլիներ առաջի՞ն, թե՞ երկրորդ երիտասարդ տղամարդու համար: Ինչո՞ւ կամ ինչո՞ւ ոչ:

Գրատախտակի վրա գրեք հետևյալ նախադասությունները.

*Նեփիացիների հոգևոր վիճակը—Հելաման 15.1–3, 17*

*Լամանացիների հոգևոր վիճակը—Հելաման 15.4–6*

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ գրատախտակի վրա նշված սուրբ գրությունների հատվածները: (Նախքան նրանց կարդալը, դուք կարող եք հրավիրել նրանց ուշադրությունը Հելաման 15.5-ի *զգուշորեն* բառի վրա: Զգուշորեն անել ինչ-որ բան, նշանակում է գործել մեծ ուշադրությամբ): Խնդրեք ուսանողներին գրել երկու նախադասություն՝ մեկն ամփոփելով Նեփիացիների հոգևոր վիճակը, իսկ մյուսն ամփոփելով Լամանացիների հոգևոր վիճակը: Բավականաչափ ժամանակ անց հարցրեք.

- Երիտասարդ տղամարդկանցից, որ մենք քննարկեցինք դասի սկզբում, ո՞րն է նման այս հատվածներում նկարագրված Նեփիացիներին: Ո՞րն է նման Լամանացիներին:
- Չնայած որ Լամանացիներն ամբարշտության երկար պատմություն ունեին, ինչո՞ւ նրանք կարողացան ստանալ այդքան շատ օրհնություններ:
- Ինչո՞ւ էին Նեփիացիները կործանման վտանգի մեջ:
- Ինչպե՞ս է Տիրոջ խրատը հանդիսանում Նրա սիրո նշան: (Դուք կարող եք բացատրել, որ *խրատել* բառը նշանակում է ուղղել ինչ-որ մեկին պատժի կամ որևէ զրկանքի միջոցով:)

Գրատախտակի վրա գրեք հետևյալ նախադասությունները.

*Երբ մարդիկ գիտեն ճշմարտությունը և հավատում են սուրբ գրություններին, նրանք առաջնորդվում են դեպի. . . և . . . , որը բերում է . . .*

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Հելաման 15.7 հատվածը՝ ուշադրություն դարձնելով, թե ինչպես կարող են լրացնել գրատախտակի վրա գրված նախադասությունը: Բավականաչափ ժամանակ անց հարցրեք մի քանի ուսանողների, թե ինչպես կլրացնեին նրանք նախադասությունը: (Օրինակ՝ ուսանողները կարող են ասել հետևյալ սկզբունքը. **երբ մարդիկ գիտեն ճշմարտությունը և հավատում են սուրբ գրություններին, նրանք առաջնորդվում են դեպի հավատք և ապաշխարություն, որը բերում է սրտի փոփոխություն:)**

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 15.8 հատվածը: Խնդրեք ուսանողներին հետևել՝ ուշադրություն դարձնելով Սամուելի նկարագրություններին Լամանացիների մասին, ովքեր սրտի փոփոխություն էին ունեցել: (Նրանք «կայուն ու հաստատուն էին հավատքում»:)

Ուսանողներին խորհելու ժամանակ տվեք, արդյոք սուրբ գրությունների ուսումնասիրությունն առաջնորդել է նրանց դեպի ավելի մեծ հավատք առ Տերը: Նաև խնդրեք նրանց խորհել, արդյոք սա առաջնորդել է նրանց դառնալ ավելի ամուր և հաստատուն հավատքի մեջ: Կարող եք հրավիրել մեկ կամ երկու ուսանողների բացատրել, թե ինչպես է սուրբ գրությունների ուսումնասիրությունը մեծացրել իրենց հավատքն առ Հիսուս Քրիստոս:

Հրավիրեք ուսանողների ուշադրությունը դեպի Հելաման 15.9–17 հատվածները: Բացատրեք, որ այս հատվածներում *դուք* բառը վերաբերում է Նեփիացիներին, իսկ *նրանք* և *իրենց* բառերը վերաբերում են Լամանացիներին: Բարձրաձայն կարդացեք այս հատվածները դասարանի համար՝ անհրաժեշտության դեպքում կանգ առնելով բացատրություն առաջարկելու կամ հարցերին պատասխանելու համար: Այնուհետև ուսանողներին ժամանակ տվեք, որպեսզի կրկին կարդան հատվածները և գրեն մի նախադասություն, որը կարտահայտի այս հատվածներում ուսուցանված ճշմարտությունն:

Հրավիրեք մի քանի ուսանողների կարդալ իրենց գրածները: Այլ ճշմարտությունների հետ մեկտեղ՝ ուսանողները կարող են գրել նման մի բան. **եթե մարդիկ ավետարանի լրիվությունը ստանալուց հետո դառնում են անհավատ, նրանք կստանան ավելի մեծ անեծք:** Դուք կարող եք խորհուրդ տալ ուսանողներին գրել այս ճշմարտությունն իրենց սուրբ գրություններում՝ Հելաման 15.9–17 հատվածների կողքին:

Մինչ ուսանողները կքննարկեն այս ճշմարտությունը, շեշտեք մեծ օրհնությունները, որոնք գալիս են ավետարանը ներկայումս հասկանալուց և դրանով ապրելուց: Սամուելի ուսմունքները չեն արդարացնում Եկեղեցու նոր անդամի մեղք գործելը: Ոչ էլ ենթադրում է, որ մենք կարող ենք փախչել պատասխանատվությունից և անեծքից՝ հրաժարվելով սովորել ավետարանի մասին: Մինչ ճշմարիտ է, որ ավետարանի մասին գիտելիք ունենալը տանում է դեպի մեծ պատասխանատվություն ինչ-որ սխալ անելու դեպքում, դա նաև ավելի մեծ ուժ է տալիս մեր ջանքերին, որպեսզի անենք այն, ինչ շիտակ է: Եվ երբ մենք հետևում ենք Աստծո կամքին և օգնում ենք մյուսներին անել նույնը, Նա մեզ օրհնում է խաղաղությամբ և երջանկությամբ, որ մենք չենք կարող ստանալ որևէ այլ կերպ:

## Հելաման 16

### *Նրանք, ովքեր հավատում են Սամուելին, ապաշխարում և մկրտվում են, մինչ մյուսները կարծրացնում են իրենց սրտերը*

Ցուցադրեք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ներկայիս Նախագահի նկարը: Խնդրեք ուսանողներին նկարագրել իրենց տեսած տարբեր ձևերը, որով մարդիկ (Եկեղեցու և՝ ներսում, և՝ դրսում) արձագանքել են մարգարեի ուղերձին:

Երեխաների մի մասին խնդրեք մտքում կարդալ Հելաման 16.1–5 հատվածները՝ ուշադրություն դարձնելով Սամուելի ուղերձին հավատացող մարդկանց գործողություններին: Մյուս մասին խնդրեք մտքում կարդալ Հելաման 16.2–3, 6–7 հատվածները՝ ուշադրություն դարձնելով Սամուելի ուղերձին չհավատացող մարդկանց գործողություններին: (Այս սուրբ գրությունների հղումները կարող եք գրել գրատախտակին:) Հրավիրեք մի քանի ուսանողների ասել, թե ինչ են սովորել:

- Ձեր կարծիքով ինչու՞ են մարդիկ այդքան տարբեր արձագանքում մարգարեներին և նրանց ուղերձներին:
- Ձեր կարծիքով ինչու՞ որոշ մարդիկ բարկանում են, երբ մարգարեները խորհուրդ են առաջարկում, ինչպես օրինակ *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկի խոսքերը:

Հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ խոսքերը.

«Երբ մարգարեն ցույց է տալիս աշխարհի մեղքերը, կենսասեր մարդիկ իրենց մեղքերից ապաշխարելու փոխարեն ցանկանում են կամ լռեցնել մարգարեին, կամ իրենց այնպես պահել, որ իբր մարգարեն գոյություն չունի: Ժողովրդականություն վայելելը երբեք ճշմարտության ցուցիչ չէ: Շատ մարգարեներ սպանվել են կամ հեռացվել: Քանի որ մենք ավելի ենք մոտենում Տիրոջ երկրորդ գալստին և աշխարհի մարդիկ ավելի ամբարիշտ են դառնում, կարող եք ակնկալել, որ մարգարեն ավելի քիչ կճանաչվի նրանց կողմից» (*The Teachings of Ezra Taft Benson* [1988], 133):

- Ո՞րոնք են մարգարեի խորհրդին հետևող որոշ մարդկանց օրինակները, նույնիսկ երբ մյուսները հրաժարվեցին այդ խորհրդից:

Խնդրեք ուսանողներին փակել իրենց սուրբ գրությունները: Խնդրեք ուսանողներից մեկին բացել իր սուրբ գրությունները և կարդալ Հելաման 16.13–14՝ մինչ մյուսները կլսեն: Հարցրեք դասարանին, թե իրենց կարծիքով անհավատներն ինչպե՞ս կարձագանքեին այդ նշաններին ու հայտնություններին:

Խնդրեք ուսանողներին բացել իրենց սուրբ գրությունները և հետևել ձեզ՝ մինչ նրանց համար կկարդաք Հելաման 16.15–16 հատվածները: Այնուհետև խնդրեք նրանց պատկերացնել, որ իրենց թույլ է տրվել խոսել Զարահեմլայում գտնվող մարդկանց հետ նշանները տրվելու ժամանակ: Հրավիրեք նրանց մտածել հարցերի մասին, որ նրանք կուզենային տալ հավատացյալին և անհավատին: Հարցերի մասին բավականաչափ ժամանակ ունենալուց հետո խնդրեք նրանցից մի քանիսին իրենց հարցերով կիսվել երեխաների հետ:

Հրավիրեք ուսանողներին խորհել հետևյալ հարցերի մասին՝ առանց բարձրաձայն պատասխանելու.

- Եթե դուք այդտեղ լինեիք և ականատես լինեիք այդ նշաններին ու հրաշքներին, ձեր կարծիքով ինչպե՞ս կարձագանքեիք:

Ուսանողներին մտածելու համար բավականաչափ ժամանակ տալուց հետո հարցրեք.

- Համաձայն Հելաման 16.16 հատվածի՝ ինչու՞ որոշ մարդիկ չընդունեցին մարգարեների մարգարեության իրականացումը, ներառյալ երկնքի նշանները:

Ուսանողներին մի քանի րոպե տվեք, որպեսզի լուռ կարդան Հելաման 16.17–21՝ ուշադրություն դարձնելով այն լրացուցիչ պատճառաբանություններին, որ անհավատներն էին անում Սամուելի մարգարեություններին չհավատալու համար: Հրավիրեք մի քանի ուսանողների ասել, թե ինչպիսի պատճառաբանություններ են գտել այդ հատվածներում:

- Ձեր կարծիքով մարգարեներին հակառակ այդ պատճառաբանություններից կամ վիճաբանություններից որո՞նք են տարածված մեր օրերում:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 16.22–23 հատվածները և խնդրեք երեխաներին ուշադրություն դարձնել, թե ինչ տեղի ունեցավ, երբ շատ մարդիկ շարունակեցին արհամարհել Սամուելի զգուշացումները: Հրավիրեք ուսանողներին հայտնել իրենց պարզաբանումները:

- Ի՞նչ տեղի կունենա մեզ հետ, եթե մենք չընդունենք Տիրոջ վերջին օրերի մարգարեներին:

Երբ ուսանողները պատասխանեն, շեշտադրեք հետևյալ սկզբունքը. **Երբ մենք չենք ընդունում Տիրոջ վկաներին, մենք թույլ ենք տալիս Սատանային ազդեցություն ունենալ մեր սրտերի վրա:** (Դուք կարող եք գրատախտակի վրա գրել այս արտահայտությունը:)

Ամփոփելով այսօրվա դասը՝ հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ խոսքերը: Խնդրեք մյուսներին լսել, թե մենք իսկապես ինչ ենք ընտրում, երբ չենք ընդունում Աստծո խորհուրդը, որի մեծ մասը գալիս է վերջին օրերի մարգարեների միջոցով.

«Երբ մենք մերժում ենք Աստծուց եկող խորհուրդը, մենք չենք ընտրում արտաքին ազդեցությունից ազատ լինելը: Մենք ընտրում ենք այլ ազդեցություն: Մենք հրաժարվում ենք կատարյալ սեր ունեցող, ամենահզոր, ամենագետ Երկնային Հոր պաշտպանությունից, ում, ողջ նպատակն է, ինչը նաև Իր Սիրելի Որդու նպատակն է, տալ մեզ հավերժական կյանք, տալ մեզ այն ամենը, ինչ Նա ունի, և ետ բերել մեզ տուն կրկին ընտանիքներով՝ Իր սիրո գիրկը: Հրաժարվելով Նրա խորհրդից՝ մենք ընտրում ենք մեկ այլ զորության ազդեցությունը, ում նպատակն է դարձնել մեզ թշվառ, և ում շարժառիթն ատելությունն է: Մենք ունեք բարոյական ընտրություն՝ որպես Աստծո պարգև: Մեր անօտարելի իրավունքը ոչ թե որևէ ազդեցությունից ազատ լինելու ընտրությունն է, այլ այն ընտրությունը, թե այս երկու զորություններից որ մեկի ազդեցության տակ ենք ընտրում լինել» («Գտնել ապահովություն խորհրդի մեջ» *Ensign,* մայիս 1997, 25):

- Համաձայն Նախագահ Այրինգի՝ ի՞նչ ենք մենք իսկապես ընտրում, եթե չենք ընդունում Աստծո և Նրա մարգարեների խորհուրդը:

Հրավիրեք ուսանողներին հանգիստ խորհել արդյոք նրանք ինչ-որ ձևով կարծրացրել են իրենց սրտերը մարգարեների և առաքյալների միջոցով Աստծո տված խորհրդի դեմ: Խրախուսեք նրանց ամուր և հաստատուն լինել ավետարանով ապրելու և Իր մարգարեների միջոցով Տիրոջ խորհրդին լսելու մեջ: Վկայեք այս դասին քննարկված ճշմարտությունների մասին:

## Հելամանի կրկնություն

Որոշ ժամանակ հատկացրեք ուսանողներին օգնելու համար կրկնել Հելամանի գիրքը: Խնդրեք նրանց մտածել այն մասին, թե ինչ են սովորել այս գրքից և՛ սեմինարիայի ժամանակ, և՛ իրենց սուրբ գրությունների անձնական ուսումնասիրման ժամանակ: Հրավիրեք նրանց հակիրճ ձևով կրկնել Հելամանի որոշ գլուխների ամփոփումներ, որոնք կօգնեն նրանց մտաբերել: Խնդրեք մի քանի ուսանողների կիսվել ինչ-որ բանով Հելամանից, որը նրանց համար ոգեշնչող է եղել կամ օգնել է նրանց ավելի մեծ հավատք ունենալ առ Հիսուս Քրիստոս: Խորհելու ժամանակ տալով՝ խնդրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց մտքերով և զգացումներով:

# Տնային ուսումնասիրության դաս

## Հելաման 10–16 (Մաս 23)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփագիրը, որ ուսանողները սովորեցին, երբ ուսումնասիրում էին Հելաման 10–16 (մաս 23), ծրագրված չէ ուսուցանվելու որպես ձեր դասը: Ձեր ուսուցանած դասը կենտրոնանում է այս վարդապետություններից ու սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, երբ խորհում եք ուսանողների կարիքների մասին:

### Օր 1 (Հելաման 10)

Հելաման 10 գլուխը ուսանողներին հնարավորություն տվեց ավելի շատ սովորել Նեփիի հոգևոր ուժի մասին: Նրա օրինակի միջոցով ուսանողները սովորեցին, որ Տիրոջ բաների մասին խորհելը նախապատրաստում է մեզ ստանալ հայտնություն: Նրանք նաև սովորեցին, որ Տերը մեզ վստահում է օրհնություններով և պատասխանատվություններով, երբ մենք դնում ենք Նրա կամքը մեր սեփական կամքից առաջ: Երբ Նեփին Տիրոջ կամքը դրեց իր կամքից առաջ, Տերը նրան շնորհեց կնքման զորությունը:

### Օր 2 (Հելաման 11–12)

Ուսումնասիրելով Նեփիացիների 14 տարվա պատմությունը՝ ուսանողները սովորեցին, որ հնազանդության և ապաշխարության միջոցով մենք կարող ենք խուսափել հպարտությունից և կործանումից: Եթե զգույշ չլինենք, մեր բարգավաճումը կարող է մեզ տանել դեպի Տիրոջ մոռացություն: Նեփին ուսուցանեց, որ մարդկանց այս սխալից խուսափել սովորեցնելու համար, Տերը խրատում է Իր ժողովրդին, որպեսզի զարթնեցնի նրանց հիշելու Իրեն:

### Օր 3 (Հելաման 13–14)

Սամուելը՝ մի Լամանացի մարգարե, ցույց տվեց, որ մարգարեներն ասում են այն ուղերձները, որ Աստված դնում է իրենց սրտերի մեջ: Ուսումնասիրելով նրա մարգարեական զգուշացումները՝ ուսանողները սովորեցին, որ եթե մենք չընդունենք Տիրոջ մարգարեների խոսքերը, մենք ափսոսանք և ցավ կզգանք: Սամուելը հորդորեց մարդկանց հավատալ Հիսուս Քրիստոսին և վկայեց, որ Տերը ցույց է տալիս նշաններ և հրաշքներ, որպեսզի օգնի մարդկանց հավատալ Իրեն:

### Օր 4 (Հելաման 15–16)

Քանի որ Տերն առատորեն օրհնել էր Նեփիացիներին, Սամուելը փորձում էր օգնել նրանց հասկանալ Աստծո դատաստանի մասին, որի առաջ կանգնելու էին նրանք, եթե չապաշխարեին: Դրանից ուսանողները սովորեցին, որ եթե մարդիկ ավետարանի լրիվությունը ստանալուց հետո դառնան անհավատ, նրանք ավելի մեծ անեծք կստանան: Սամուելին ուղղված Նեփիացիների արձագանքից ուսանողները սովորեցին, որ երբ մենք ընտրում ենք չընդունել Տիրոջ վկաներին, մենք թույլ ենք տալիս Սատանային ազդեցություն ունենալ մեր սրտերի վրա:

## Նախաբան

Հելաման 10–16 գլուխներում շեշտադրվում է մարգարեների դերն ապաշխարություն կանչելիս: Այս շաբաթվա ընթացքում ուսանողները հնարավորություն են ունեցել ուսումնասիրել Նեփի և Սամուել Լամանացի մարգարեների հավատարմության մասին: Նրանք երկուսն էլ ստացան հոգևոր հայտնություն և իշխանություն ունեին ծառայելու ինքնահաճ Նեփիացիների մեջ: Չնայած մարդկանց սրտերի կարծրությանը՝ երկուսն էլ քարոզեցին ապաշխարություն: Նրանք ուսուցանեցին, որ երջանկություն կարելի է գտնել՝ ապրելով Հիսուս Քրիստոսի սահմանած սկզբունքներով և ոչ թե անօրինություն անելու մեջ:

## Ուսուցանման առաջարկներ

### Հելաման 10–16

***Հելամանը և Սամուելը հավատարմորեն ծառայում են ժողովրդին***

Հարցրեք ուսանողներին, թե երբևէ նրանք եղել են այնպիսի իրավիճակում, որ *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկում ուսուցանված չափանիշների կողքին կանգնելն իրենց ընկերների համար ընդունելի չի եղել: Դուք կարող եք հրավիրել մի քանի ուսանողների կիսվել իրենց փորձառություններով և պատմել, թե ինչ են զգացել և սովորել:

Ասացեք ուսանողներին, որ Հելաման 10–16 ցույց է տալիս երկու տղամարդկանց օրինակներ, ովքեր պաշտպանեցին Տիրոջ սկզբունքները, նույնիսկ երբ այն չէր ընդունվում ժողովրդի կողմից: Հրավիրեք ուսանողներին մտածել, թե ինչ կարող են սովորել Նեփիի և Սամուել Լամանացու օրինակներից, որ կարող է օգնել նրանց նման իրավիճակներում:

Պատկերեք հետևյալ աղյուսակը գրատախտակի կամ թղթի կտորի վրա.

| Նեփիի և Սամուել Լամանացու միջև նմանությունները | | |
|---|---|---|
| Նեփի (Հելաման 10.1–5, 12, 15–16) | | Սամուել (Հելաման 13.1–6; 16.1–2) |

Խնդրեք ուսանողներին ուսումնասիրել աղյուսակի մեջ թվարկված հատվածները՝ ուշադրություն դարձնելով Նեփիի և Սամուելի միջև նմանություններին: Հրավիրեք մի քանի ուսանողների թվարկել այս նմանությունները աղյուսակի ազատ վանդակներում: Ցուցակը կարող է ընդգրկել հետևյալը. մերժվեցին մարդկանց կողմից. լսեցին Տիրոջ ձայնը. անմիջապես հետևեցին Տիրոջ ցուցումներին. խոսեցին այն, ինչ Տերը դրեց նրանց սրտում. զգուշացրեցին Նեփիացիներին, որ եթե նրանք չապաշխարեին, կկործանվեին; պաշտպանված էին Աստծո զորությամբ, այնպես որ կարող էին հայտնել Նրա ուղերձը:

Երբ ուսանողները թվարկեն իրենց բացահայտած նմանությունները, խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 10.4 հատվածը: Այնուհետև, տվեք հետևյալ հարցերը.

- Որո՞նք են Նեփիի անխոնջության որոշ հնարավոր պատճառները:
- Ինչպե՞ս Սամուելը նույնպես ցուցաբերեց անխոնջություն: Ինչպե՞ս կարող ենք զարգացնել նման անխոնջություն:

Խնդրեք ուսանողներից մեկին երեխաների համար կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելի հետևյալ խոսքերը, որտեղ նա ուսուցանում է մեզ ինչպես զարգացնել այդ որակը.

«Եթե մենք կենտրոնացած ենք Հիսուսի և Նրա աշխատանքի վրա, և՛ մեր ուրախությունը, և՛ մեր զորավիգ լինելու ընդունակությունն աճում է. . . Նեփին եսասիրաբար չէր փնտրում իր «սեփական կյանքը», այլ փնտրում էր անել Աստծո կամքը: Դա տվեց նրան հավելյալ և անբաժանելի էներգիա, որը նրա անխոնջ ջանասիրությամբ ձգտելը դարձրեց հնարավոր: Նեփին գիտեր, թե որ ուղղությամբ է կանգնած. դեպի Աստված» (*Եթե դու լավ համբերես* [1996], 116):

Հարցրեք.

- Համաձայն Երեց Մաքսվելի՝ ի՞նչ կարող ենք անել անխոնջ ջանասիրությամբ ծառայելու համար:
- Հելաման 10.4 հատվածի ո՞ր արտահայտություններն են ցույց տալիս, որ Նեփին «կանգնած է դեպի Աստված», կամ, այլ կերպ ասած, կենտրոնացած է կատարել Աստծո կամքը:
- Հելաման 13.3–5 հատվածների ո՞ր արտահայտություններն են ցույց տալիս, որ Սամուելը դրեց Աստծո կամքն իր սեփական կամքից առաջ:
- Նեփիի ու Սամուելի փորձառություններից ինչպիսի՞ ճշմարտություն կարող ենք սովորել: (Հնարավոր պատասխաններից մեկը կարող է արտացոլել այն ճշմարտությունը, որ այս շաբաթ ուսանողները սովորեցին իրենց անձնական ուսումնասիրության ընթացքում. **Տերը վստահում է մեզ օրհնություններ և պատասխանատվություններ, երբ մենք դնում ենք Նրա կամքը մեր սեփական կամքից առաջ**:)

Կարդացեք հետևյալ պատմությունը մի 12 տարեկան աղջնակի մասին, ով ընդունեց Աստծո կամքն իր սեփական կամքից առաջ, որի մասին պատմում է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսը.

«Մենք չենք կարող ունենալ ճշմարիտ հավատք առ Տերը՝ առանց կատարյալ վստահություն ունենալու Տիրոջ կամքի և Տիրոջ ժամանակի նկատմամբ ևս: Երբ մենք ունենք այդպիսի հավատք և վստահություն Տիրոջ նկատմամբ, մենք ունենք ճշմարիտ ապահովություն մեր կյանքում . . ..

«Ես կարդացի մի երիտասարդ աղջկա մասին, ով ցուցաբերել էր այդպիսի հավատք և վստահություն: Ամիսներ շարունակ նրա մայրը շատ հիվանդ էր: Վերջապես հավատարիմ հայրը կանչեց երեխաներին նրա մահճակալի մոտ և ասաց նրանց հրաժեշտ տալ իրենց մայրիկին, որովհետև նա մահանում էր: Տասներկու տարեկան դուստրն առարկեց.

«Հայրիկ, ես չեմ ուզում, որ մայրիկս մահանա: Ես նրա հետ էի հիվանդանոցում. . . վեց ամիս. ամեն անգամ. . . դու օրհնություն էիր տալիս նրան, և նա հանգստանում էր ցավից և հանգիստ քնում: Ես ուզում եմ, որ դու դնես ձեռքերդ մայրիկի վրա և բժշկես նրան»:

«Հայրը, ով Երեց Հեբեր Ջ. Գրանտն էր, ասաց երեխաներին, որ նա զգում էր իր սրտում, որ իրենց մայրիկի ժամանակը լրացել էր: Երեխաները դուրս եկան, իսկ նա ծնկի իջավ իր կնոջ մահճակալի կողքին: Ավելի ուշ նա մտաբերեց իր աղոթքը. «Ես ասացի Տիրոջը, որ ես ընդունում եմ նրա ձեռքը կյանքում [և] մահվան մեջ. . . Բայց ես ասացի Տիրոջը, որ ես անզոր եմ, եթե կինս մահանա և դա ազդի իմ փոքր երեխաների հավատքի վրա»: Նա աղաչեց Տիրոջը տալ իր դստերը «հասկացողություն, որ դա նրա ցանկությունն ու նրա կամքն է, որ նրա մայրը պետք է մահանա»:

«Մեկ ժամ անց մայրը մահացավ: Երբ Երեց Գրանտը ետ կանչեց երեխաներին նրա սենյակ և ասաց նրանց, նրա փոքր վեց տարեկան [Հեբեր անունով] տղան սկսեց դառնորեն լացել: Տասներկու տարեկան քույրը գրկեց նրան և ասաց. «Մի՛ արտասվիր, Հեբեր; ինչ մենք դուրս եկանք այս սենյակից, Տիրոջ ձայնը երկնքից ինձ ասաց՝ քո մայրիկի մահով Տիրոջ կամքն է կատարվելու» (Bryant S. Hinckley, *Heber J. Grant: Highlights in the Life of a Great Leader,* Salt Lake City: Deseret Book Co., 1951, pp. 243–44):

«Երբ մենք ունենանք նման հավատք և վստահություն, ինչպիսին ցույց տվեց այդ երիտասարդ աղջիկը, մենք կունենանք ուժ կանգուն պահել մեզ մեր կյանքի ցանկացած իրավիճակում» («Հավատք առ Հիսուս Քրիստոս», *Ensign,* Մայիս 1994, 100):

Հարցրեք.

- Ի՞նչն օգնեց Նախագահ Հեբեր Ջ. Գրանտին և նրա ընտանիքին դնել Աստծո կամքն իրենց սեփական կամքից առաջ:
- Երբևիցե ունեցե՞լ եք փորձառություն, երբ անհրաժեշտ է եղել դնել ձեր վստահությունն Աստծո վրա և դնել Նրա կամքը ձեր կամքից առաջ: (Կարող եք հրավիրել մի քանի ուսանողների երեխաների հետ կիսվել իրենց փորձառություններով: Հիշեցրեք նրանց, որ նրանք չպետք է կիսվեն խիստ անձնական կամ գաղտնի բաներով):

Հավաստիացրեք ուսանողներին, որ երբ մենք դնում ենք մեր վստահությունն Աստծո վրա և դնում ենք Նրա կամքը մեր կամքից առաջ, Նա մեզ կաջակցի մեր դժվարության պահերին:

Բացատրեք, որ Նեփիի ծառայության կարևոր մասն էր օգնել մարդկանց հիշել Աստծուն և ապաշխարել իրենց մեղքերից: Այնուամենայնիվ, նրանք շարունակում էին կարծրացնել իրենց սրտերը և չէին ուզում ուղղվել:

Դասարանը երկու խմբի բաժանեք: Խնդրեք մի խմբին կարդալ Հելաման 10.15–18; 11.3–10 հատվածները, իսկ մյուս խմբին կարդալ Հելաման 11.30–37; 12.1–3 հատվածները: (Դուք կարող եք գրել այդ հղումները գրատախտակի վրա:) Խնդրեք յուրաքանչյուր խմբին պատրաստվել քննարկելու այն պատճառները, թե ինչու է Տերը խրատում Իր ժողովրդին: Ուսանողները կարող են նշել մի քանի տարբեր պատճառներ, բայց հավաստիացեք, որ նրանք արտահայտում են այն, որ **Տերը խրատում է Իր ժողովրդին, որպեսզի զարթնեցնի նրանց հիշելու Իրեն:**

- Ինչպիսի՞ խրատ կիրառեց Տերը, որպեսզի գրավի ժողովրդի ուշադրությունը:
- Ըստ Հելաման 12.3 հատվածի՝ շատ մարդիկ չեն հիշում Տիրոջը, մինչև Նա չի խրատում նրանց: Ձեր կարծիքով, ինչո՞ւ է դա այդպես:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հելաման 15.3 հատվածը:

- Ինչպե՞ս է Տիրոջ խրատը հանդիսանում Նրա սիրո նշան:

Խնդրեք ուսանողներին 5-րդ հանձնարարության իրենց պատասխաններով կիսվել այս շաբաթվա 2-րդ օրը: Դուք կարող եք կրկնել, որ **հնազանդության և ապաշխարության միջոցով մենք կարող ենք խուսափել հպարտությունից և կործանումից**, և որ **եթե ուշադիր չլինենք, մեր բարգավաճումը կարող է մեզ տանել դեպի Տիրոջ մոռացություն:**

## Հաջորդ մաս (3 Նեփի 1–11)

Ուսանողների հաջորդ հանձնարարության ընթացքում նրանք կկարդան ողջ Նեփիական ազգի մասին, ովքեր հավաքվեցին, որպեսզի կռվեն Գադիանթոնի ավազակների հետ մեծ մարտում: Ինչպե՞ս կարողացան Նեփիացիները պարտության մատնել ամբարիշտ ավազակներին: Ուսանողները նաև կկարդան զանգվածային կործանման մասին, որը տեղի ունեցավ ամերիկյան մայրցամաքում՝ Հիսուս Քրիստոսի Երուսաղեմում մահանալու ժամանակ: Խավարի մեջ՝ մարդիկ լսեցին Հիսուս Քրիստոսի ձայնը: Այնուհետև, հարություն առած Փրկիչը եկավ անհատապես ծառայելու նրանց: Խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչպես կզգային նրանք, եթե այդտեղ լինեին:

# Նեփիի Երրորդ

## ԳՐՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ

### Ինչո՞ւ ուսումնասիրել այս գիրքը:

3 Նեփիի ուսումնասիրության ընթացքում ուսանողները կսովորեն Նեփիացիների մեջ Իր երեքօրյա ծառայության ժամանակ Փրկչի խոսքերի և գործողությունների մասին: Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ուսուցանել է.«3 Նեփին պարունակում է բոլոր սուրբ գրություններում ամենահուզիչ և ամենազորավոր հատվածներից մի քանիսը: Այն վկայում է Հիսուս Քրիստոսի, Նրա մարգարեների և փրկության վարդապետությունների մասին»: (“The Savior’s Visit to America,” *Ensign,* May 1987, 6): Երբ ուսանողները տեսնեն, թե ինչպես է Հիսուս Քրիստոսը «մեկ առ մեկ» ցույց տալիս իր կարեկցանքը մարդկանց հանդեպ, նրանք ավելի լավ կարող են գնահատել Նրա մտահոգությունը նրանց հանդեպ, որպես անձնավորություններ (տես 3 Նեփի 11.15, 17.21): Նրանք կարող են սովորել կարևոր դասեր նրանց արդարակյաց օրինակներից, ովքեր պատրաստվեցին հանդիպելու Փրկչին: Նրանք կարող են նաև սովորել անարդարակյացների օրինակից, ովքեր չպատրաստվեցին հանդիպելու Փրկիչին:

### Ո՞վ է գրել այս գիրքը:

Մորմոնը կրճատեց արձանագությունները Նեփիի մեծ թիթեղներից՝ ստեղծելու 3 Նեփիի գիրքը: Գիրքն անվանվեց Նեփիի անունով (Նեփիի որդու), որն ընդգրկում էր Փրկչի հայտնվելուց առաջ, այդ ընթացքում և հետագա ժամանակահատվածներում ժողովրդի գործերը: Մեծ ամբարշտության ժամանակաընթացքում, որը նախորդեց Հիսուս Քրիստոսի այցելություններին, Նեփին սպասավորեց «զորությամբ և մեծ իշխանությամբ» (3 Նեփի 7.17): Նրա ջանքերը նախաբան էին Հիսուս Քրիստոսի Ծառայության, որի խոսքերն ու գործերը կազմում են 3 Նեփիի կիզակետը: Կրճատելով Նեփիի հիշատակարանը՝ Մորմոնը նաև ներառեց իր իսկ մեկնաբանությունը և վկայությունը (տես 3 Նեփի 5.8–26, 26.6–12, 29–30):

### Ու՞մ համար է գրված այս գիրքը և ինչու՞:

Մորմոնը նախատեսել էր 3 Նեփիի գրվածքները երկու խմբի համար: Առաջինը, նա բացատրել է, որ դրանք գրել էր Լեքիի հետնորդների համար (տես3 Նեփի 26.8): Երկրորդը, Մորմոնը դիմում է Հեթանոսներին վերջին օրերին և արձանագրել է Տիրոջ հորդորը, որ նրանք գան դեպի Իրեն և դառնան Իր ուխտի ժողովրդի մի մասը (տես3 Նեփի 30): 3 Նեփիի գիրքը ընդգծում է այս հրավերը Հիսուս Քրիստոսի մասին իր հզոր վկայությամբ և ուխտերի կարևորության իր շեշտադրմամբ:

### Ե՞րբ և որտե՞ղ է այն գրվել:

Սկզբնական գրառումները, որոնք օգտագործվել են որպես աղբյուրներ3 Նեփի գրքի մասին, հավանաբար, մ.թ. 1 և 35-ի միջև: Մորմոնը կրճատեց այդ գրառումները մ.թ. 345 և մ.թ. 385 միջև: Մորմոնը չէր գրել, թե որտեղ էր, երբ գրում էր այս գիրքը:

### Որո՞նք են այս գրքին բնորոշ որոշ առանձնահատկությունները:

3 Նեփին փաստագրում է Հիսուս Քրիստոսի Ծննդյան, մահվան և Հարության վերաբերյալ մարգարեությունների իրականացումը (տես 3 Նեփի 1, 8, 11): Դրա արձանագրումը Նեփիացիներին Փրկչի հայտնվելու մասին ներկայացնում է, ինչպես Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն է կոչում, «Մորմոնի Գրքի ողջ պատմության մեջ կիզակետը, գերագույն պահը» (*Քրիստոսը և Նոր Ուխտը՝ Մորմոնի Գրքի Մեսիայական ուղերձը* [1997], 250): Երեսուն գլուխներից քսանը 3 Նեփիում պարունակում են ուսմունքներ, որոնք Փրկիչը ուղղակիորեն հաղորդեց ժողովրդին (տես 3 Նեփի 9–28):

### Համառոտ շարադրանք

**3 Նեփի 1–5** Նեփին ստանում է հիշատակարանները իր հորից: Տրվում են Քրիստոսի ծննդյան նշանները, հավատացյալներին ոչնչացնելու դավադրությունը խափանվում է և շատ մարդիկ դարձի են գալիս: Նեփիացիներն ու Լամանացիները միավորվում են՝ Գադիանթոնի ավազակների դեմ կռվելու համար: Նրանք ապաշխարում են իրենց մեղքերից և, ի վերջո, պարտության են մատնում ավազակներին Լաքոնիուսի և Գիդգիդոնիի ղեկավարության ներքո: Մորմոնը մեկնաբանում է իր դերը՝ որպես Քրիստոսի հետևորդ և որպես հիշատակարանը գրող:

**3 Նեփի 6–7** Բարգավաճումը Նեփիացիների մեջ տանում է հպարտության, ամբարշտության և գաղտնի խմբակցությունների: Կառավարությունը տապալվում է և ժողովուրդը բաժանվում է ցեղերի: Նեփին ծառայում է մեծ ուժով:

**3 Նեփի 8–10** Մրրիկները, ավերումներն ու խավարը ազդանշան են տալիս Փրկչի խաչելության և մահվան մասին: Մարդիկ սգում են նրանց մահը, ովքեր սպանվեցին ավերումների ժամանակ: Հիսուս Քրիստոսի ձայնը հրավիրում է փրկվածներին ապաշխարել և գալ դեպի Իրեն:

**3 Նեփի 11–18** Հիսուս Քրիստոսը հայտնվում է բազմությանը տաճարի մոտ և հրավիրում յուրաքանչյուր մարդու շոշափել գամերի հետքերը Իր ձեռքերում և ոտքերում: Նա նշանակում է տասներկու առաքյալների և նրանց իշխանություն է տալիս արարողություններ կատարելու և սպասավորելու Եկեղեցում: Փրկիչը ուսուցանում է Իր վարդապետությունը, սահմանում է արդարակեցության օրենքներ

և բացատրում, որ Նա կատարել է Մովսեսի օրենքը: Նա բժշկում է մարդկանց տկարությունները, աղոթում է նրանց համար և օրհնում նրանց երեխաներին: Հաղորդությունը հաստատելուց և լրացուցիչ ուսմունքներ տալուց հետո Նա հեռանում է:

**3 Նեփի 19–26** Տասներկու աշակերտները ծառայում են ժողովրդին և Սուրբ Հոգին դուրս է թափվում նրանց վրա: Հիսուս Քրիստոսը երկրորդ անգամ է հայտնվում և աղոթում է բոլոր նրանց համար, ովքեր կհավատան Իրեն: Նա սպասավորում է հաղորդությունը և ուսուցանում, թե ինչպես Հայրը կկատարի Իր ուխտը Իսրայելի հետ: Փրկիչը պատվիրում է ժողովրդին հետազոտել Եսայիայի և բոլոր մարգարեների խոսքերը, և Նա հրահանգում է Նեփիին արձանագրել մարգարեությունների իրականացումը, որոնք հայտարարվել էին Սամուել Լամանացու կողմից: Նա հայտնում է Հոր կողմից Մաղաքիային տրված խոսքերը և մեկնաբանում «բոլոր բաները . . . սկզբից, մինչև այն ժամանակը, երբ նա պիտի գա իր փառքով (3 Նեփի 26.3): ՀետոՆա հեռանում է:

**3 Նեփի 27–28** Հիսուս Քրիստոսը հայտնվում է և հրահանգում տասներկու աշակերտներին կոչել Եկեղեցին Իր անունով: Նա քարոզում է Իր ավետարանը և ուղղորդում Իր աշակերտներին լինել ինչպես Ինքը: Հիսուս Քրիստոսը շնորհում է տասներկու աշակերտներին համաձայն իրենց ցանկությունների:

**3 Նեփի 29–30** Մորմոնը բացատրում է, որ Մորմոնի Գրքի ի հայտ գալը նշան է, որ Աստված սկսել է հավաքել Իսրայելը վերջին օրերում: Տերը հորդորում է Հեթանոսներին ապաշխարել և դառնալ Իր ուխտի ժողովրդի մի մասը:

ԴԱՍ 116

# 3 Նեփի 1

## Նախաբան

Երբ Սամուել Լամանացու՝ Փրկչի ծննդյան վերաբերյալ մարգարեության իրականացման ժամանակը մոտեցավ, հավատացյալները հետևում էին նշաններին, որոնք Սամուելն ասել էր, որ գալու են: Անհավատները սպառնում էին սպանել հավատացյալներին, եթե մարգարեությունը որոշակի մի օր չիրականանար: Նեփին՝ Նեփիի որդին և Հելամանի թոռը, աղերսեց Տիրոջը հավատացյալների անունից: Ի պատասխան Նեփիի աղոթքին՝ Տիրոջ ձայնը եկավ դեպի նա, հայտարարելով, որ նշանը կտրվի այդ գիշեր: Երբ արևը մայր մտավ մութ չեղավ և մի նոր աստղ հայտնվեց: Չնայած մարդկանց հավատքը կործանելու սատանայի շարունակական փորձերին, մարդկանց մեծամասնությունը դարձի եկան դեպի Տերը: Բայց երկու տարի անց Գադիանթոնի ավազակները սկսեցին շատ Նեփիացիների և Լամանացիների տանել դեպի ամբարշտություն:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 1.1–26

*Հիսուս Քրիստոսի ծննդյան վերաբերյալ մարգարեությունները կատարվում են և շատ Նեփիացիներ դարձի են գալիս:*

Հրավիրեք ուսանողներին մտածել մարդկանց մասին, ովքեր զոհաբերել են իրենց կյանքը ավետարանի համար: (Որոշ օրինակներ կարող են լինել Հիսուս Քրիստոսը, Աբինադին, որոշ Անթի-Նեփի-Լեքիներ և Ջոզեֆն ու Հայրում Սմիթը): Խնդրեք ուսանողներին բացատրել, թե, իրենց կարծիքով, ինչու են մարդիկ հոժար կատարել այդպիսի զոհաբերություն: Ուսանողներին մի պահ տրամադրեք խորհելու համար, թե ինչպես կարձագանքեին, եթե լինեին մի իրավիճակում, որը նրանցից կպահանջեր տալ իրենց կյանքն ավետարանի համար: Բացատրեք, որ Զարահեմլայում Սամուել Լամանացու քարոզելուց հինգ տարի հետո մի խումբ Նեփիացիներ նման հնարավորություն ունեցան:

Ամփոփեք 3 Նեփի 1.1–3, պատմելով ուսանողներին, որ Հելամանի որդին՝ Նեփին, տվեց սրբազան հիշատակարաններն իր որդուն՝ Նեփիին, իսկ հետո հեռացավ երկրից: Ոչ ոք չիմացավ, թե նա ուր գնաց:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 3 Նեփի1.4–9: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, որոնելով այն մարտահրավերները, որոնց դիմակայեցին հավատարիմ Նեփիացիները:

- Ի՞նչ մարտահրավերի դիմակայեցին հավատացյալները:
- Ինչո՞ւ որոշ մարդիկ կարող են դժվարանալ հավատարիմ մնալ այդ իրավիճակում:
- Ո՞ւմ դուք գիտեք, ով ձեր կարծիքով հավատարիմ կմնար այս իրավիճակում: Ինչո՞ւ եք կարծում, որ այդ մարդիկ հավատարիմ կմնային:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 1.10–12, որոնելով այն կարևոր բանը, ինչը Նեփին արեց այդ խիստ կարևոր պահին:

- Ինչպե՞ս ձեզ վրա ազդեց Նեփիի պատասխանը այս իրավիճակում: Ինչո՞ւ:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 1.13–14 հատվածները, և խնդրեք դասարանին հատուկ ուշադրություն դարձնել Նեփիի աղոթքի Տիրոջ պատասխանին:

- Ի՞նչ ասաց Տերը, որ Նա «ցույց կտար աշխարհին»: (Ուսանողների պատասխանները պետք է արտացոլեն, որ **Տերը կկատարի բոլոր խոսքերը, որ Նա խոսել է տվել Իր մարգարեներին:** )
- Երբ Տերը խոսեց աշխարհ գալու մասին՝ «կատարելու ինչպես Հոր, այնպես էլ Որդու կամքը», Նա ի նկատի ուներ Իր Քավությունը: Ինչպե՞ս է այս ուղերձն օգնում մեզ «ուրախանալ»:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ3 Նեփի 1.4, 14–15, 19–21 հատվածները, որոնելով արտահայտություններ, որոնք շեշտում են, որ Տերը իրագործում է մարգարեների խոսքերը։

- Ի՞նչ եք կարծում, ինչ կզգայիք, եթե դուք հավատացյալների մեջ լինեիք, երբ նշանը տրվեց։
- Ինչպե՞ս կարող է իմանալը, որ Տերն իրագործում է մարգարեների խոսքերը, օգնել ձեզ, երբ ինչ որ մեկը ծաղրում է ձեր չափանիշները կամ հալածում ձեզ՝ ձեր հավատալիքների պատճառով։

Հրավիրեք երկու կամ երեք ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ3 Նեփի 1.16–18։ Խնդրեք դասարանին հետևել ընթացքում, որոնելով, թե ինչպես արձագանքեցին ամբարիշտները, երբ նրանք տեսան նշանները, որոնք մարգարեացվել էին ։

- Ի՞նչ իմացան ամբարիշտները նշանը տրվելուց հետո։
- Ինչո՞ւ են մեղքն ու անհավատությունը տանում դեպի վախ։

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 18.11 հատվածը։ Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, որոնելով, թե ինչ արեց սատանան՝ համոզելու մարդկանց չհավատալ Տիրոջ ծննդյան նշաններին։

- Ի՞նչ արեց սատանան։ (Նա ստեր ուղարկեց ժողովրդի մեջ)։ Որո՞նք են այն ստերը, որոնք սատանան ուղարկում է այժմ։
- Ի՞նչ ճշմարտություն կարող ենք մենք սովորել սատանայի ստերին մարդկանց արձագանքից։ (Օգնեք ուսանողներին նշել հետևյալ սկզբունքը. **Երբ հանդիպում ենք սատանայի ստերին, մենք կարող ենք ընտրել հավատալ Հիսուս Քրիստոսին և դարձի գալ:** Կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին։)

Որպեսզի օգնեք ուսանողներին զգալ այս սկզբունքի ճշմարտությունն ու կարևորությունը, կիսվեք Նախագահող Եպիսկոպոսությունից Եպիսկոպոս Ռիչարդ Ք. Էջլիի հետևյալ մտքով։ Մտածեք ուսանողներին տալ այս մեջբերման օրինակը, որը կարող է տեղավորվել նրանց սուրբ գրություններում։

«Այսօրվա աշխարհում տիրող հակասությունների և մարտահրավերների պատճառով ես ուզում եմ առաջարկել մի ընտրություն՝ խաղաղության և պաշտպանության ընտրություն, և ընտրություն, որը հարմար է բոլորի համար։ Այդ ընտրությունը հավատքն է։ . . . Ընտրեք հավատքը կասկածի փոխարեն, ընտրեք հավատքը վախի փոխարեն, ընտրեք հավատքը անիմանալիի և անտեսանելիի փոխարեն և ընտրեք հավատքը հոռետեսության փոխարեն։ . . .

Երբ տրամաբանությունը, դատողությունը կամ սեփական խելքը հակասում են սրբազան ուսմունքներին և վարդապետությանը, կամ հակասող ուղերձները գրոհում են ձեր համոզմունքների վրա . . . , *ընտրեք* ձեր սրտից դուրս չգցել սերմը անհավատությամբ [տես Ալմա 32.28]։ Հիշեք, մենք չենք ստանում վկայություն նախքան մեր հավատքի փորձությունը (տես Եթեր 12.6) (Հավատք՝Ընտրությունը ձերն է» *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2010, 31, 32–33)։

- Ի՞նչ կարող ենք անել ընտրելու հավատքը կասկածի, վախի և հոռետեսության փոխարեն։ (Պատասխանները կարող են ներառել, որ մենք կարող ենք ընտրել աղոթելը և Տիրոջ օգնությունը որոնելը, սուրբ գրություններն ուսումնասիրելը, պատվիրանները պահելը, Եկեղեցու ժողովներին հաճախելը և ուրիշներին ծառայելը։)

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 1.24–25 և նշել ևս մեկ մարտահրավեր, որին հավատացյալներից մի քանիսը հանդիպել են։

- Ի՞նչ փորձեցին ապացուցել որոշ մարդիկ Մովսեսի օրենքի վերաբերյալ։
- Ի՞նչն է տպավորում ձեզ այս մարդկանց պատասխաններում, երբ նրանք իմացան, որ սխալ էին։

Գրեք հետևյալ հարցը գրատախտակին. *Երբ հակառակորդը փորձում է իմ մեջ կասկած առաջացնել, ինչպե՞ս կպահպանեմ հավատքս Հիսուս Քրիստոսի և Նրա վերականգնված ավետարանի հանդեպ։* Խնդրեք ուսանողներին արտագրել այս հարցը տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում։ Նրանց մի քանի րոպե տվեք, որ գրեն իրենց պատասխանները։

## 3 Նեփի 1.27–30

### *Նեփիացի պառակտիչները և որոշ Լամանացի երիտասարդներ միացան Գադիանթոնի ավազակներին*

Հրավիրեք երկու ուսանողների գալ սենյակի առջև: Խնդրեք ուսանողներից մեկին փակել իր աչքերը և կանգնել մեկ ոտքի վրա:Բացատրեք, որ այս ուսանողը ներկայացնում է մեկին, ով գիտի ճշմարտությունը, բայց չի գործադրում հավատք Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ և ջանասեր չէ ավետարանով ապրելիս:

Բացատրեք, որ այս ցուցադրման մեջ երկրորդ ուսանողը ներկայացնում է ազդեցություններ, որոնք կարող են տանել ինչ որ մեկին ճշմարտությունից հեռու: Խնդրեք երկրորդ ուսանողին թեթևակի հրել առաջին ուսանողի բազկից, մինչև որ առաջին ուսանողը կորցնի իր հավասարակշռությունը կամ դառնա ոչ կայուն: Նշեք, որ երբ մարդը չի ձգտում ապրել ավետարանով, նա, ավելի հավանական է, որ խաբվի սատանայի ստերից և գայթակղություններից:

- Ի՞նչ պետք է անի առաջին ուսանողը, որպեսզի հաստատուն մնա: (Նա պետք է բացի իր աչքերն ու կանգնի երկու ոտքի վրա: )

Պատվիրեք առաջին ուսանողին բացել իր աչքերը և կանգնել երկու ոտքերը միմյանցից հեռու ուսերի լայնքով: Բացատրեք, որ այս ուսանողը այժմ ներկայացնում է մեկին, որն «ամուր է և հաստատուն հավատքում»(Հելաման 15.8): Ապա խնդրեք, որ երկրորդ ուսանողը նորից թեթևակի հրի առաջին ուսանողի բազկից: Նշեք, որ երբ մարդը ձգտում է ուսումնասիրել ավետարանը և պահել Աստծո պատվիրանները, նա կայուն է մնում, նույնիսկ, եթե գալիս է ընդդիմությունը:

Երկու ուսանողներին վերադարձրեք իրենց տեղերը: Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսի ծննդյան նշաններից մի քանի տարի հետո, սատանան շարունակեց փորձել մարդկանց ստիպել կասկածել ավետարանի ճշնարտացիության մեջ:

Հրավիրեք մի քանի ուսանողների բարձրաձայն կարդալ 3 Նեփի 1.27–29: Խնդրեք, որ դասարանը ընթացքում հետևի, փնտրելով այն ազդեցությունները, որոնք անարդարակյաց մարդիկ ունենում էին Լամանացի երիտասարդներից մի քանիսի վրա:

- Ի՞նչ պատահեց Լամանացի երիտասարդներից մի քանիսի հետ: (Նրանք «մոլորեցվել էին նրանց կողմից, ովքեր Զորամացիներ էին» և միացել էին Գադիանաթոնի ավազակներին:)
- Համաձայն 3 Նեփի 1.29 հատվածի, ինչո՞ւ էին որոշ Լամանացի երիտասարդներ հավատացել Զորամացիների «ստերին» և «շողոքորթ խոսքերին»: (Եթե ուսանողները չեն նշում Մորմոնի միտքը, որ երիտասարդները «դարձել էին ինքնուրույն», ընդգծեք դա նրանց համար:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «դարձել էին ինքնուրույն» արտահայտությունը:

Երբ ուսանողները քննարկեն այս հարցը, կարդացեք, թե ինչ է ասել քույր Քաթլին Հ. Հյուզը՝ Սփոփող Միության գերագույն նախագահության անդամներից մեկը, այդ արտահայտության մասին.

«Դա, կարծում եմ, նշանակում է, որ նրանք առաջինը իրենց կարծիքն էին հաշվի առնում և տրվել էին ցանկությունների, որոնցից մարգարեները նախազգուշացրել էին խուսափել: Նրանք ենթարկվել էին սատանայի գայթակղություններին և հրապուրանքներին» (“Grow Up unto the Lord,” *Ensign,* Feb. 2010, 18):

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 18.11 հատվածը: Խնդրեք, որ դասարանը հետևի ընթացքում, փնտրելով «աճող սերնդի» (երիտասարդների) ազդեցությունը մյուսների վրա:

- Ի՞նչ ազդեցություն ունեցավ աճող սերունդը նրանց հավատքի վրա, ովքեր իրենց շրջապատում էին:

Ուսանողներին օգնելու համար այս պատմությունը ժամանակակից իրավիճակի հետ կապել, տվեք հետևյալ հարցերը.

- Որո՞նք են այն «ստերն» ու «շողոքորթ խոսքերը», որոնք կարող են գայթակղել երիտասարդներին այսօր, ովքեր շփվում են անարդարակյաց խմբերի հետ:
- Ե՞րբ եք տեսել, որ երիտասարդները բացասական ազդեցություն ունենան ուրիշների հավատքի վրա:

Խնդրեք ուսանողներին նշել մի սկզբունք, որն ամփոփում է այն, ինչ մենք կարող ենք սովորել 3 Նեփի 1.29–30 հատվածներում: Նրանք կարող են օգտագործել

տարբեր խոսքեր իրենց պատասխաններն արտահայտելու համար, բայց հավաստիացեք, որ նրանք հասկանում են հետևյալ ճշմարտությունը. **Եթե մենք հանձնվում ենք գայթակղությանը, մեր օրինակը կարող է ունենալ բացասական ներգործություն ուրիշների հավատքի և արդարակեցության վրա:** Դուք կարող եք խրախուսել ուսանողներին գրել այս ճշմարտությունը իրենց սուրբ գրություններում:

Նշեք որ չնայած 3 Նեփի 1.30 հատվածում հիշատակվող երիտասարդությունը բացասական ազդեցություն ունեցավ ուրիշների հավատքի վրա, երիտասարդությունը կարող է նաև առաքինի ազդեցություն ունենալ իրենց շրջապատում գտնվողների վրա: Հրավիրեք որևէ ուսանողի գալ գրատախտակի մոտ և ծառայել որպես գրագիր դասարանի համար: Խնդրեք գրագրին գրել հետևյալ հարցին տրված ուսանողների պատասխանները.

- Որո՞նք են այն ուղիները, որոնցով դուք կարող եք ունենալ դրական ազդեցություն ձեր ընտանիքի, ծխի կամ ճյուղի ու համայնքի հավատքի վրա:

Խրախուսեք ուսանողներին գրատախտակից ընտրել մեկ կամ երկու գաղափարներ, որոնց վրա հիմնվելով նրանք անմիջապես գործի կանցնեն: Հավաստիացրեք նրանց, որ իրենք կարող են զորացնել ուրիշների հավատքը իրենց առաքինի օրինակների ուժի միջոցով:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 3 Նեփի 1.29–30: «Աճող սերնդի ամբարշտությունը»

Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգը բացատրել է մեկ մարդու ներգործությունը ընտանիքի վրա, երբ նա շեղվում է:

«Եկեղեցու երիտասարդները . . . ապագան բռնած են պահում իրենց ձեռքերում: Եկեղեցին միշտ եղել է բնաջնջումից մեկ սերունդ հեռավորության վրա: Եթե մի ողջ սերունդ կորչեր, որը տեղի չի ունենա, մենք կկորցնեինք Եկեղեցին: Բայց նույնիսկ մեկ անձնավորությունը, որը կորում է Հիսուս Քրիստոսի ավետարանի համար, փակում է հետնորդների սերունդների առջև դռները, եթե Տերը չհասնի օգնության՝ նրանցից ոմանց ետ բերելու համար [address to CES religious educators, Aug. 14, 2001], 1, si.lds.org):

ԴԱՍ 117

# 3 Նեփի 2–5

## Նախաբան

Հիսուս Քրիստոսի ծննդյան նշանները տեսնելուց հետո, մարդիկ սկսեցին ավելի քիչ ապշել նշաններից և նրանք կարծրացրեցին իրենց սրտերը: Մարդկանցից շատերը մերժեցին հետագա նշաններն ու հրաշքները և աճեցին ամբարշտության մեջ: Դրա հետևանքով Գադիանթոնի ավազակներն այնքան ուժեղացան, որ Նեփիացիները և Լամանացիները ստիպված էին զենք վերցնել նրանց դեմ: Դարձի եկած Լամանացիները միացան Նեփիացիների հետ և հայտնի դարձան որպես Նեփիացիներ:

Լաքոնիուսը՝ Նեփիացիների գլխավոր դատավորը, կոչ արեց մարդկանց ապաշխարել և նրանց նախապատրաստեց ճակատամարտի համար: Իրենց ապաշխարության, Տիրոջ հանդեպ հավատքի և իրենց ջանասեր նախապատրաստությունների շնորհիվ, Նեփիացիները հաղթանակ տարան Գադիանթոնի ավազակների դեմ: Իրենց ազատագրումից հետո, ժողովուրդը ճանաչեց Աստծո զորությունը իրենց պահպանման գործում:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 2

*Դարձի եկած Լամանացիները միանում են Նեփիացիների հետ՝ իրենց պաշտպանելու Գադիանթոնի ավազակների դեմ*

Հրավիրեք ուսանողներին տրամադրել մի քանի րոպե, գրի առնելու իրենց տետրերում կամ սուրբ գրություններում որոշ հոգևոր փորձառություններ, որոնք նրանք ունեցել են: Հիշեցրեք նրանց, որ հոգևոր փորձառությունները պարտադիր չէ, որ լինեն դրամատիկ կամ անսովոր՝ իմաստալի լինելու համար: Առաջարկեք, որ նրանք խորհեն դեպքերի մասին, երբ իրենք զգացել են իրենց Երկնային Հոր սերը կամ Սուրբ Հոգու ազդեցությունը: Օրինակ, նրանք կարող են գրել փորձառությունների մասին, երբ իրենք ստացել են աղոթքի պատասխաններ, երբ նրանք ստացել են քահանայության օրհնություններ կամ երբ նրանք ծառայել են ուրիշներին: Երբ նրանք վերջացնեն գրելը, հարցրեք նրանց, թե ինչու են կարծում, որ կարող է կարևոր լինել հիշել այս փորձառություններն այսօր և 10 կամ 20 տարի հետո ապագայում:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 2.1–3: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, փնտրելով, թե ինչ պատահեց, երբ ժողովուրդը սկսեց մոռանալ Փրկչի ծննդի հետ կապված նշանները:

- Ի՞նչ ճշմարտություններ է մեզ ուսուցանում այս պատմությունը՝ հոգևոր փորձառությունները մոռանալու վտանգի մասին:

Երբ ուսանողները կիսվեն ճշմարտություններով, որոնք իրենք գտել են, շեշտեք հետևյալ սկզբունքը: **Եթե մենք մոռանանք նախկին հոգևոր փորձառությունները, մենք կդառնանք ավելի խոցելի սատանայի գայթակղությունների և խաբկանքների հանդեպ:** Դուք կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին: Դուք կարող եք նաև խրախուսել ուսանողներին գրել այն իրենց հոգևոր փորձառությունների ցուցակի ներքո:

- Ինչո՞ւ եք կարծում, որ հոգևոր փորձառությունները մոռանալը կարող է մեզ խոցելի դարձնել սատանայի դեմ:
- Ի՞նչ կարող ենք անել հավաստիանալու համար, որ մենք չենք մոռանում մեր ունեցած հոգևոր փորձառությունները: (Պատասխանները կարող են ներառել ուրիշների հետ փորձառություններով կիսվելը, երբ պատշաճ է, գրելը անձնական օրագրում կամ փորձառությունները գրի առնելը Պարտականություն Աստծո հանդեպ կամ Անձնական Զարգացման միջոցառումների ժամանակ):

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ հետևյալ միտքը, որում Նախագահ Հենրի Բ. Այրինգը Առաջին Նախագահությունից բացատրում է, թե ինչպես հոգևոր փորձառությունների արձանագրումը օրագրում օգնել է իրեն: Խնդրեք դասարանին լսել օրհնությունները, որոնք կարող են գալ այդպիսի հիշատակարան պահելուց:

« Ես գրում էի մի քանի տող ամեն օր տարիներ շարունակ: Ես երբեք բաց չէի թողնում որևէ օր անկախ նրանից, թե որքան հոգնած կարող էի լինել կամ թե որքան վաղ պետք է վեր կենայի հաջորդ օրը: Նախքան գրելը, ես խորհում էի այս հարցի մասին. «Արդյո՞ք տեսել եմ Աստծո ձեռքը օգնության հասնելիս մեզ կամ մեր երեխաներին կամ մեր ընտանիքին այսօր»: Երբ սկսեցի դրա վրա կենտրոնանալ, սկսեց ինչ որ բան կատարվել: Երբ ետ էի նայում այդ օրվան, ես տեսնում էի ապացույց, թե ինչ էր արել Աստված [մեր ընտանիքի անդամներից մեկի համար], որը ես չէի գիտակցել օրվա զբաղված պահերին: Երբ դա պատահում էր, իսկ դա հաճախ էր պատահում, ես հասկանում էի, որ փորձելով հիշել, ես թույլ էի տալիս Աստծուն ցույց տալ ինձ, թե Նա ինչ էր արել:

«Երախտագիտությունից առավել մի բան սկսեց աճել իմ սրտում: Վկայություն աճեց: Ես ավելի քան երբևէ համոզվեցի, որ մեր Երկնային Հայրը լսում և պատասխանում է աղոթքներին: Ես ավելի շատ երախտագիտություն զգացի փափկեցման և զտման համար, որը գալիս է Փրկիչ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Եվ ես սկսեցի ավելի վստահ զգալ, որ Սուրբ Հոգին կարող է բերել բոլոր բաները մեր հիշողության մեջ,նույնիսկ այն բաները, որոնք մենք չէինք նկատել կամ ուշադրություն դարձրել, երբ դրանք տեղի էին ունեցել: («Օ, հիշեք, հիշեք», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2007, 67):

Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչպես հոգևոր փորձառությունները հիշելը օրագիր գրելով կամ որևէ այլ ձևով, օգնել է նրանց հավատարիմ մնալ, չնայած գայթակղելու կամ խաբելու սատանայի ջանքերին:

Ամփոփեք 3 Նեփի 2.4–19 հատվածները, բացատրելով, որ երբ ժողովուրդը շարունակում էր ամբարշտության մեջ մնալ, Գադիանթոնի ավազակները թվով և ուժով աճում էին: Գադիանթոնի ավազակներն ավելի կատաղիորեն էին հարձակողական դառնում և դարձի եկած Լամանացիները միացրեցին ուժերը Նեփիացիների հետ նրանց դեմ կռվելու համար: Չնայած նրանք որոշ հաջողություն ունեցան Գադիանթոնի ավազակներին դուրս քշելով իրենց հողերից, Նեփիացիները (դարձի եկած Լամանացիների հետ միասին, որոնք այժմ կոչվում էին Նեփիացիներ) դեռևս վտանգավոր հանգամանքներում էին Հիսուս Քրիստոսի ծննդյան նշաններից 15 տարի հետո:

## 3 Նեփի 3.1–10

### *Գադիանթոնի ավազակների առաջնորդը պահանջում է, որ Նեփիացիները հանձնվեն:*

Բացատրեք, որ 3 Նեփի 3.1–10 հատվածներում մենք տեսնում ենք օրինակ, թե ինչպես հակառակորդը կարող է երբեմն աշխատել ուրիշների միջոցով թուլացնել մեր հավատքը և մեզ մոլորեցնել: Գեդդիանին՝ Գադիանթոնի ավազակների առաջնորդը, մի նամակ գրեց Լաքոնիուսին՝ Նեփիացիների գլխավոր դատավորին, համոզելու նրան հանձնվել Գադիանթոնի ավազակներին:

Գրեք *Գեդդիանին գայթակղում է Լաքոնիուսին* գրատախտակի վրա: Դասարանի կեսին խնդրեք մտքում կարդալ 3 Նեփի 3.2–5 հատվածները, իսկ դասարանի մյուս կեսին մտքում կարդալ 3 Նեփի 3.6–10 հատվածները: Երբ ուսանողները կարդան, նրանց հանձնարարեք փնտրել խոսքեր կամ արտահայտություններ, որոնք նկարագրում են Գեդդիանիի ռազմավարությունը, որը նա օգտագործում էր՝ փորձելով թուլացնել Լաքոնիուսի հավատքը և մոլորեցնել նրան: Ուսանողների կարդալը վերջացնելուց հետո, խնդրեք նրանց հաղորդել, թե ինչ են գտել:Խնդրեք երեխաներից մեկին գրատախտակին գրել նրանց պատասխանները:

Ամփոփելու համար այն ռազմավարությունը, որն ուսանողները նշեցին 3 Նեփի 3.2–10 հատվածներում, գրեք հետևյալ ճշմարտությունը գրատախտակին ուսանողների ցուցակի ներքևում. ***Սատանան և նրա հետևորդները հաճախ օգտագործում են հաճոյախոսություններ, կեղծ խոստումներ և ապառնալիքներ մարդկանց մոլորեցնելու համար:*** Հրավիրեք ուսանողներին ընտրել գրատախտակի վրայի գրված Գեդդիանիի ռազմավարություններից մեկը և բացատրեք, թե ինչպես սատանան և նրա հետևորդները կարող են այսօր օգտագործել նմանատիպ մի ռազմավարություն երիտասարդների հանդեպ: Ուսանողներին օգնելու համար հետազոտել այս համեմատություններից մի քանիսը, դուք կարող եք ուղղել այնպիսի հարցեր, որոնք հետևյալ օրինակներում են.

- Որո՞նք են որոշ օրինակներ, թե ինչպես հակառակորդն այսօր կարող է օգտագործել հաճոյախոսությունը (կեղծ կամ չափազանցված գորվասանքը) երիտասարդների հանդեպ: Որո՞նք են որոշ կեղծ խոստումները կամ դատարկ սպառնալիքները, որոնք հակառակորդը կարող է օգտագործել: Ձեր կարծիքով, ինչպե՞ս երիտասարդությունը կարող է դիմադրել այս ռազմավարությանը:

## 3 Նեփի 3.11–5.7

*Լաքոնիուսի մարդիկ պատրաստվեցին պաշտպանվել և նրանք պարտության մատնեցին Գադիանթոնի ավազակներին:*

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 3.11–12: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, փնտրելով, թե ինչպես Լաքոնիուսը արձագանքեց Գեդդիանիի սպառնալի նամակին:

- Ի՞նչ ճշմարտություններ կարող ենք սովորել Գեդդիանիին տրված Լաքոնիուսի պատասխանի ձևից: (Ճշմարտություններից մեկը, որ ուսանողները կարող են նշել, այն է, որ **արդարակյաց տղամարդիկ և կանայք չպետք է վախենան ամբարիշտներից և չպետք է անձնատուր լինեն նրանց ահաբեկություններին:**)

Բաժանեք դասարանը չորս խմբի: Յուրաքանչյուր խմբին տվեք մի մեծ կտոր թուղթ:Հանձնարարեք խմբերին բաժանել իրենց թղթերը երկու սյունակների, մեկը կոչեք *Լաքոնիուսի նախապատրաստությունները*, իսկ մյուսը կոչեք *Ժամանակակից զուգահեռներ:* Գրեք հետևյալ սուրբ գրությունների հատվածները գրատախտակի վրա և հանձնարարեք յուրաքանչյուր խմբին մեկ հատ.*3 Նեփի 3.12–15, 3 Նեփի 3.16–21, 3 Նեփի 3.22–26, 3 Նեփի 4.1–4:* Հրավիրեք ուսանողներին կարդալ իրենց հանձնարարված հատվածները, փնտրելով ուղիներ, որոնցով Լաքոնիուսը պատրաստեց իր ժողովրդին՝ հոգեպես և ֆիզիկապես դիմադրելու Գադիանթոնի ավազակների հարձակումներին: *Լաքոնիուսի նախապատրաստությունները վերնագրի տակ,* հանձնարարեք յուրաքանչյուր խմբից որևէ ուսանողի գրել, թե ինչ արեցին մարդիկ նախապատրաստվելու համար: (*Հիշեցում.* Երբ ուսանողներն ուսումնասիրեն այս հատվածները, հավաստիացեք, որ նրանք տարբերակեն Գեդդիանիի՝ Գադիանթոնի ավազակների առաջնորդի և Գիդգիդոնիի՝ Նեփիացիների մեծ մարգարեի և գլխավոր հրամանատարի միջև տարբերությունը:)

Ուսանողներին բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, որ նրանք լրացնեն իրենց ցուցակները *Լաքոնիուսի նախապատրաստությունները վերնագրի ներքո,* հրավիրեք նրանց գրի առնել *Ժամանակակից զուգահեռների ներքո* այն հոգևոր և ֆիզիկական նախապատրաստությունները, որոնք մեզ խորհուրդ է տրվել կատարել վերջին օրերում: Երբ ուսանողները բավականաչափ ժամանակ ունենան այս հանձնարարությունը կատարելու համար, հրավիրեք յուրաքանչյուր խմբից մեկ ուսանողի կիսվել դասարանի հետ, թե ինչ սովորեց իր խումբը: Ուսանողներին օգնելու համար, թե ինչպես որոշեն կիրառել այն, ինչ սովորել են, նմանատիպ հարցեր առաջադրեք իրենց ներկայացման ընթացքում կամ հետո.

- Ինչպե՞ս կարող ենք ամրացնել մեր տները հակառակորդի հարձակումների դեմ:
- Ինչո՞ւ են ֆիզիկական նախապատրաստությունները, ինչպես օրինակ կրթություն ստանալը և տնային պահեստը, կարևոր վերջին օրերում:
- Ինչպե՞ս է ընտանիքներում և ճյուղերում հավաքվելը պաշտպանություն ապահովում մեզ համար:
- Ե՞րբ է աղոթքն օգնել ձեզ հոգևոր ուժ ստանալ:
- Ինչպե՞ս կարող է ապաշխարությունը նախապատրաստել մեզ ապագայի համար:
- Ի՞նչ օրհնություններ են գալիս, երբ մենք հետևում ենք ապրող մարգարեներին և առաքյալներին:
- Ինչպե՞ս կարող ենք հրավիրել հայտնության հոգին մեր կյանք:

Հրավիրեք մի քանի ուսանողների բարձրաձայն կարդալ 3 Նեփի 4.7–12: Խնդրեք դասարանին հետևել ընթացքում, փնտրելով ուղիներ, երբ մարդիկ օրհնվել են իրենց հոգևոր և ֆիզիկական նախապատրաստվածության շնորհիվ:

- Ի՞նչ ճշմարտություններ սովորեցիք այս պատմությունից: ( Երբ ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, շեշտեք հետևյալ սկզբունքը. **Երբ մենք**

**նախապատրաստում ենք մեզ հոգեպես և ֆիզիկապես, Տերը կզորացնի մեզ հաղթահարելու մարտահրավերները:** )

Ամփոփեք 3 Նեփի 4.13–29, բացատրելով, որ Լաքոնիուսը և նրա ժողովուրդը հաղթեցին Գադիանթոնի ավազակներին և մահապատժի ենթարկեցին նրանց ղեկավարներին: Բարձրաձայն կարդացեք 3 Նեփի 4.30–33 հատվածները: Հրավիրեք ուսանողներին հետևել ընթացքում, փնտրելով, թե ինչպես ժողովուրդն արձագանքեց այս հաղթանակին:

- Ինչպե՞ս արձագանքեցին մարդիկ, երբ Տերն ազատեց նրանց իրենց թշնամիներից:
- Ի՞նչն ընդունեցին ժողովուրդը որպես Գադիանթոնի ավազակներից իրենց ազատման պատճառներ: (Նրանց ապաշխարությունն ու համեստությունը և Աստծո բարությունը: Դուք կարող եք մատնանշել, որ **երբ մենք ապաշխարում ենք և մեզ խոնարհեցնում, Աստված կհաստատի մեզ մեր փորձությունների ընթացքում և կազատի մեզ դրանցից:**

Դուք կարող եք կիսվել մի փորձառությամբ, որի ընթացքում դուք ապավինել եք Աստծուն և Նա օգնել է ձեզ դիմանալ կամ հաղթահարել փորձությունը: Դուք կարող եք նաև հրավիրել մեկ կամ երկու ուսանողի կիսվելու իրենց փորձառությամբ:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 5.1–4 հատվածները: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, փնտրելով, թե ինչ արեցին Նեփիացիները որպես օգնության և օրհնությունների արդյունք, որ նրանք ստացել էին Գադիանթոնի ավազակների դեմ իրենց ճակատամարտում: Երբ ուսանողները կիսվեն իրենց գտածով, շեշտեք, որ ուղիներից մեկը, որով մարդիկ արձագանքեցին՝ ուրիշներին ավետարանը քարոզելն էր:

## 3 Նեփի 5.8–26

*Խաղաղությունը վերականգնվում է ժողովրդի մեջ, Մորմոնը բացատրում է հիշատակարանի իր կրճատման մասին:*

Ասեք ուսանողներին, որ 3 Նեփիի 5 գլուխը պարունակում է Մորմոնի բացատրությունն այն մասին, թե ինչու էր կրճատում այս հիշատակարանը: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 5.12–15, փնտրելով այն, ինչ Մորմոնն ասել էր Նեփիի հիշատակարանների կրճատման իր պարտականության մասին:

- Ի՞նչ ճշմարտություն սովորեցիք այս հատվածներից, որը նկարագրում է մեր պատասխանատվությունը որպես Հիսուս Քրիստոսի աշակերտներ: (Չնայած ուսանողները կարող է օգտագործեն տարբեր բառեր, նրանք պետք է արտահայտեն հետևյալ ճշմարտությունը. **Որպես Հիսուս Քրիստոսի աշակերտներ մենք պատասխանատվություն ունենք ուսուցանել ուրիշներին հավիտենական կյանքի ուղին:** Դուք կարող եք գրել այս ճշմարտությունը գրատախտակին: )

Մատնանշեք, որ ամենակարևոր ուղիներից մեկը, որով մենք կարող ենք ցույց տալ մեր երախտագիտությունը Տիրոջը, այն օրհնությունների համար, որ Նա մեզ տալիս է, ուրիշներին օգնելն է՝ գալ դեպի Իրեն և ստանալ նույն օրհնությունները: Խնդրեք ուսանողներին առաջարկել մի քանի ուղիներ, որոնցով նրանք, որպես Հիսուս Քրիստոսի աշակերտներ, կարող են ուսուցանել ուրիշներին հավիտենական կյանքի ճանապարհը: Խրախուսեք ուսանողներին ընդունել այս առաջարկներից մեկը կամ երկուսը ավետարանով կիսվելու համար և աղոթքով որոնել Տիրոջ օգնությունը՝ իրականացնելու այն, ինչ իրենք ընտրում են անել:

ԴԱՍ 118

# 3 Նեփի 6–7

## Նախաբան

Գադիանթոնի ավազակներից հրաշքով ազատվելուց հետո, Նեփիացիները խաղաղություն վայելեցին մոտ երեք տարի: Բայց հպարտություն, դասակարգային տարբերություններ և հալածանքներ բարձրացան ժողովրդի մեջ: Չնայած ոմանք հավատարիմ մնացին Տիրոջը, շատերը մտան գաղտնի խմբակցությունների մեջ: Գաղտնի խմբակցությունների պատճառով գլխավոր դատավորը սպանվեց և Նեփիացիների կառավարությունը տապալվեց: Ժողովուրդը բաժանվեց ցեղերի և նշանակեց իր ղեկավարներին: Նեփին ծառայեց ժողովրդին զորությամբ և մեծ իշխանությամբ:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 6.1–18

*Բարգավաճման ժամանակաշրջանից հետո Նեփիացիները դարձան հպարտ և եկեղեցին մասնատվեց*

Դասից առաջ գրեք հետևյալ հարցերը գրատախտակին: Խնդրեք ուսանողներին պատասխանել դրանց և բացատրել:

*Արդյո՞ք հնարավոր է, որ մեկը լինի . . .*

*Հարուստ և խոնարհ:*

*Աղքատ և հպարտ:*

*Կրթված և խոնարհ:*

*Չկրթված և հպարտ:*

Խրախուսեք ուսանողներին շարունակել մտածել այս հարցերի մասին, երբ նրանք ուսումնասիրեն 3 Նեփի 6 գլուխը: Ամփոփեք 3 Նեփի 6.1–9 հատվածները, բացատրելով, որՆեփիացիները և Լամանացիները պարտության մատնելով Գադիանթոնի ավազակներին, հաստատեցին խաղաղություն երկրում և սկսեցին բարգավաճել: Բայց կարճ ժամանակից հետո նրանց խաղաղությունն ու բարգավաճումը սպառնալիքի տակ դրվեց:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 6.5, 10–12, և խնդրեք դասարանին փնտրել, թե ինչն էր սպառնում ժողովրդի խաղաղությանը և բարգավաճմանը:

- Ի՞նչ սկսեց տեղի ունենալ, որը սպառնալիքի տակ դրեց ժողովրդի խաղաղությունն ու բարգավաճումը:
- Արդյոք նկատե՞լ եք, որ հարստությունների կուտակումը կամ գիտելիքները տանեն նմանատիպ խնդիրների ձեր դպրոցում, հասարակությունում կամ երկրում: Եթե այդպես է, ինչպիսի՞ ուղիներով:

Գծեք ուղղահայաց գիծ գրատախտակի կենտրոնից՝ ստեղծելու երկու սյունակ: Գրեք *Հպարտ* սյունակի վերևում և *Խոնարհ* մյուս սյունակի վերևում: Հրավիրեք ուսանողներին հետազոտել 3 Նեփի 6.13–14 հատվածները, փնտրելով բառեր և արտահայտություններ, որոնք նկարագրում են, թե ինչպես ժողովուրդն արձագանքեց, երբ հարստություններն ու գիտելիքները սկսեցին բաժանել նրանց: (Դուք կարող եք բացատրել, որ *հայհոյել* կամ *անարգել* նշանակում է բարկացած քննադատել կամ վիրավորական ձևով խոսել ինչ որ մեկի հետ:) Երբ ուսանողներն ավարտեն կարդալը, հրավիրեք նրանց համապատասխան սյունակում գրատախտակին գրել խոսքերը կամ արտահայտությունները, որ նրանք գտել են:

- Ի՞նչ ապացույց եք տեսնում 3 Նեփի 6.13 հատվածում, որ ոմանք, ովքեր հալածվում էին հպարտների կողմից, իրենք էլ էին հպարտությամբ արձագանքում:
- Ինչո՞ւ եք կարծում, որ «հայհոյանքին հայհոյանքով» պատասխանելը (կամ քննադատությանը քննադատությամբ) հպարտության դրսևորում է:

- Ի՞նչն է ձեզ տպավորում այդ ժամանակաընթացքում դարձի եկած Լամանացիների արձագանքում։
- Ի՞նչ սկզբունքներ կարող ենք մենք սովորել3 Նեփի 6.13–14 հատվածներում։ (Ուսանողների պատասխանները կարող են տարբեր լինել, բայց դրանք պետք է արտահայտեն հետևյալ սկզբունքը. **Մենք կարող ենք ընտրել խոնարհ և հավատարիմ լինելը՝ անկախ մեր հանգամանքներից:** )

Ուսանողներին ցույց տվեք գրատախտակի այն սյունակը, որում թվարկվում են խոնարհ պատասխանները։ Ուղղեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ գործողություններ կարող ենք կատարել՝ օգնելու մեզ խոնարհ և հավատարիմ մնալ ամեն հանգամանքներում։ (Գրեք ուսանողների պատասխանները գրատախտակի այն սյունակում, որը կոչվում է *Խոնարհ։*)
- Մտածեք որևէ մի անձնավորության մասին, որը դուք զգում եք լավ օրինակ է՝ ընտրելով լինել խոնարհ և հավատարիմ, անկախ իր հանգամանքներից։ Ինչպե՞ս է այդ անձնավորությունը համեստության օրինակ։

Բացատրեք, որ Նեփիացիների մեծ մասը քանի որ չապաշխարեցին իրենց հպարտությունից, նրանց վիճակը վատթարացավ։ Հրավիրեք մի քանի ուսանողների բարձրաձայն կարդալ 3 Նեփի 6.15–18 հատվածները։ Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, փնտրելով, թե ինչպես էր մարդկանց հպարտությունը թույլ տալիս սատանային ազդել նրանց վրա։

- Ի՞նչ են սովորեցնում այս հատվածները՝ մեզ գայթակղելու սատանայի ուժի և հպարտության միջև կապի մասին։ (Երբ ուսանողները պատասխանեն, օգնեք նրանց հասկանալ հետևյալ ճշմարտությունը. **Երբ մենք հպարտ ենք, մենք թույլ ենք տալիս, որ սատանան ավելի մեծ ուժով գայթակղի մեզ և տանի ավելի շատ մեղքեր գործելու:** Դուք կարող եք խրախուսել նրանց գրել այս սկզբունքը իրենց սուրբ գրություններում կամ տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում։)
- Համաձայն 3 Նեփի 6.15–18 հատվածների, ի՞նչ խոսքեր և արտահայտություններ են նկարագրում սրտի այն ամբարիշտ փոփոխությունը, որ այս մարդիկ տարան հպարտության պատճառով։ (Նրանք «թողնված [էին] տարվելու . . . ուր որ [սատանան] փափագում էր տանել նրանց, և անել ինչ անօրինություն, որ նա փափագում էր, որ նրանք անեին»։ Նրանք «ամբարշտության մի սոսկալի վիճակում էին» և «կանխամտածված ապստամբում էին Աստծո դեմ։»)
- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է հպարտությունն ազդում այն աստիճանի վրա, որքանով սատանան կարող է ազդել մեզ վրա։

Բացի ուսանողների տված պատասխաններից, մտածեք հրավիրել ուսանողներին կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ միտքը։ Խնդրեք ուսանողներին ուշադրություն դարձնել, որ այն, ինչ նախազգուշացրել է Նախագահ Այրինգը, հպարտության վտանգներից մեկն է։

«Հպարտությունը ստեղծում է աղմուկ մեր մեջ, որը Հոգու խաղաղ ձայնը դժվար լսելի է դարձնում։ Եվ շուտով մեր սնապարծության մեջ մենք այլևս նույնիսկ չենք էլ լսում այն։ Մենք սկսում ենք արագորեն մտածել, որ դրա կարիքը չունենք» (Prayer," *Ensign,* Nov. 2001, 16)։

- Ինչո՞ւ է վտանգավոր այլևս չլսել Հոգու ձայնը։ (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ երբ մենք անտեսում ենք Սուրբ Հոգու շշուկները, մենք ավելի զգայուն ենք լինում դևի գայթակղություններին։)

Ուսանողներին կրկին ցույց տվեք գրատախտակի վրայի խոնարհ պատասխանները։ Հրավիրեք նրանց ընտրել մեկ խոնարհ պատասխան, որը նրանք զգում են, որ անձնապես ամենաօգտակարը կլիներ իրենց համար։ Տվեք նրանց մի քանի րոպե, գրելու այն մասին, թե ինչպես իրենք կարող են անմիջապես սկսել կիրառել այդ առաջարկը դպրոցում կամ տանը։

## 3 Նեփի 6.19–7.14

*Գաղտնի խմբավորումները կործանում են Նեփիացիների կառավարությունը և ժողովրդին բաժանում ցեղերի:*

Գրատախտակից արտագրեք հետևյալ ժամանակագիծը:

| 3 Նեփի 6.19–24 | 3 Նեփի 6.25–30 | 3 Նեփի 7.1–8 | 3 Նեփի 7.9–14 |
|---|---|---|---|
| | | | |

Բաժանեք դասարանին չորս խմբերի և հանձնարարեք յուրաքանչյուր խմբին գրատախտակի վրայի սուրբ գրության հատվածներից մեկը: Խնդրեք ուսանողներին կարդալ իրենց հանձնարարված հատվածները մտքում, որոնելով հիմնական իրադարձությունները, որոնք տեղի էին ունեցել Նեփիացիների հետ: Կարդալու համար ուսանողներին բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, հրավիրեք որևէ ուսանողի ամեն խմբից գրել հիմնական իրադարձությունները ժամանակագծի համապատասխան հատվածում՝ իրեն հանձնարարված հատվածից (յուրաքանչյուր խմբում մյուս ուսանողները կարող են օգնել): Երբ նրանք վերջացնեն, բացատրեք, որ իրադարձությունների ցուցակը ցույց է տալիս, թե ինչպես գաղտնի խմբավորումները բերեցին Նեփիացիների կառավարության տապալմանը և ժողովրդի մասնատմանը ցեղերի:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 3 Նեփի 16.27–30: Խնդրեք դասարանին հետևել ընթացքում և գտնել գաղտնի խմբավորումների հիմնադրին և դրանց նպատակը: Երբ ուսանողները գտնեն գաղտնի խմբավորումների հիմնադրին (դևին), հարցրեք.

- Ի՞նչ խոսքեր և արտահայտություններ են նկարագրում գաղտնի խմբավորումների նպատակները: (Պատասխանները կարող են ներառել «միավորվել ամեն արդարության դեմ», «կործանել Տիրոջ ժողովրդին, « արհամարհել իրենց երկրի օրենքն ու իրավունքները» և «երկիրն այլևս չպիտի լինի ազատ»):
- Ինչպե՞ս նրանք, ովքեր սպանեցին մարգարեներին, խուսափեցին պատժից: (Նրանց ընկերները և ընտանիքը, ովքեր նույնպես գաղտնի խմբավորումների անդամներ էին, միավորվեցին՝ օգնելու նրանց գաղտնի պահել իրենց գործողությունները և խուսափելու իրենց գործողությունների հետևանքներից):
- Պատկերացրեք՝ դուք ունեք որոշ ընկերներ, ովքեր ցանկանում են խուսափել իրենց գործերի հետևանքներից: Ինչպե՞ս կարող եք օգնել նրանց՝ փոխարենը ապրել ավետարանով և դրա չափանիշներով:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 3 Նեփի 7.1–8 հատվածները: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, որոնելով այդ գաղտնի խմբավորումների ազդեցությունը Նեփիացիների մեջ: Բացատրեք, որ **դևը հրապուրում է մարդկանց մտնել գաղտնի խմբավորումների մեջ՝ ջանալով կործանել արդարությունը և մեծացնել անօրինությունը:** Օգնեք ուսանողներին հասկանալ, որ գաղտնի խմբավորումների մեթոդներն ու դրդապատճառները հաճախ նուրբ են և միշտ չէ հեշտ նկատել: Խրախուսեք նրանց խուսափել կապերից որևէ խմբերի և անձանց հետ, ովքեր ինչ որ ձևով հիշեցնում են գաղտնի խմբավորումներ:

## 3 Նեփի 7.15–26

*Մի ժամանակաընթացքում, երբ քչերն են հավատարիմ, Նեփին շարունակում է ծառայել և ոմանք դարձի են գալիս:*

- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կզգայիք, եթե դուք ապրեիք Նեփիացիների հետ նրանց կառավարությունը տապալվելուց հետո: Ինչո՞ւ:
- Ո՞ւր կդիմեիք առաջնորդվելու և ուղղություն ստանալու համար:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 3 Նեփի 7.15–20 : Խնդրեք, որ դասարանը ընթացքում հետևի, որոնելով պատճառներ, թե ինչու իրենք կկամենային հետևել Նեփիին այդ հանգամանքներում: Մտածեք հանձնարարել ուսանողներին կանգ առնել յուրաքանչյուր կամ երկու հատվածից հետո, որպեսզի կարողանաք խնդրել ուսանողներին բացատրել, թե ինչու նրանք կարող է ոգեշնչվեին հետևել Նեփիին:

- Ո՞րն էր Նեփիի ուղերձը ժողովրդին այդ ժամանակ: (Տես 3 Նեփի 7.16:)
- Ինչպե՞ս են այսօր Եկեղեցու առաջնորդները նման Նեփիին:
- Ե՞րբ եք տեսել Եկեղեցու որևէ առաջնորդի «զորությամբ և մեծ իշխանությամբ ծառայելիս» (3 Նեփի 7.17):

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 7.21–26 և գտնել, թե ինչպես էին նրանք, ովքեր դարձի էին գալիս, օրհնվում Նեփիին հետևելու և իրենց մեղքերից ապաշխարելու համար: Հրավիրեք մի քանի ուսանողների բացատրել, թե ինչ են նրանք գտել:

- Ի՞նչ սկզբունքներ կարող ենք սովորել նրանց օրինակներից, ովքեր ապաշխարեցին և հետևեցին Նեփիին:

Ուսանողները կարող են կիսվել տարբեր ճշմարտություններով, բայց նրանք պետք է նշեն հետևյալ սկզբունքը. **Եթե մենք ապաշխարենք և հետևենք Տիրոջ ծառաներին, մենք կստանանք Սուրբ Հոգու ազդեցությունը:**

- Ինչո՞ւ է ապաշխարությունը կարևոր, որպեսզի ունենանք Սուրբ Հոգին մեզ հետ:
- Ինչո՞ւ եք կարծում, որ Տիրոջ ծառաներին հետևելն օգնում է մեզ ավելի ընկալունակ լինել Սուրբ Հոգու առաջնորդության հանդեպ:

Կարդացեք Առաջին Նախագահությունից Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստի հետևյալ միտքը.

«Ես եզրակացության եմ եկել, որ մեծամասամբ հոգևոր առաջնորդությունը կախված է Եկեղեցու Նախագահի, Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի հետ ներդաշնակության մեջ լինելուց, ովքեր բոլորը հաստատվում են . . . որպես մարգարեներ, տեսանողներ, և հայտնողներ: Ես չգիտեմ, թե ինչպես մենք կարող ենք սպասել լիակատար ներդաշնակության մեջ լինել Տիրոջ Հոգու հետ, եթե մենք ներդաշնակության մեջ չենք Եկեղցու Նախագահի և մյուս մարգարեների, տեսանողների և հայտնողների հետ» (“Called and Chosen,” *Ensign* or *Liahona,* Nov. 2005, 53):

- Ե՞րբ եք զգացել Սուրբ Հոգու ազդեցությունը, որովհետև ընտրել եք հնազանդ լինել Տիրոջ ծառաներին:

Խրախուսեք ուսանողներին գրել տպավորություններ, որոնք նրանք ստացել են այն մասին, թե ինչ կարող ենք անել կիրառելու ճշմարտությունները, որոնք նրանք սովորել են այսօր: Շեշտեք, որ նույնիսկ այն ժամանակ, երբ ուրիշներն ընտրում են Տիրոջ պատվիրաններին հակառակ ապրել, ինչպես Նեփիացիների դեպքում էր, մենք կարող ենք ընտրել խոնարհաբար հետևել Աստծուն և Նրա ընտրյալ ծառաներին:

ԴԱՍ 119

# 3 Նեփի 8–10

## Նախաբան

Փրկչի ծննդյան նշանը տեսնելուց երեսուներեք տարի անց Նեփիացիները սկսեցին սպասել Սամուել Լամանացու մարգարեությամբ տրված Փրկչի մահվան նշանին: Չնայած շատ նշաններ էին տրվել, կասկածներ ու վիճաբանություններ բարձրացան ժողովրդի մեջ: Հաջորդ տարվա մեջ Սամուելի մարգարեությունն իրականացավ: Մեծ փոթորիկներից, երկրաշարժերից և այլ աղետներից առաջացած համատարած ավերումներից հետո, խավարը ծածկեց երկիրը երեք օրվա ընթացքում: Խավարի մեջ ժողովուրդը, որը փրկվել էր ավերումներից, լսեց Հիսուս Քրիստոսի ձայնը: Նա հրավիրեց նրանց ապաշխարել և վերադառնալ դեպի Իրեն: Երբ խավարը ցրվեց, ժողովրդի սուգը փոխվեց ուրախության և գովքի առ Հիսուս Քրիստոս:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 8.1–18

*Մեծ ավերումներն ազդանշաններ են Հիսուս Քրիստոսի մահվան մասին՝ իրականացնելով Սամուել Լամանացու մարգարեությունը:*

Սկսեք դասը՝ ուղղելով հետևյալ հարցը.

- Դուք տեղյա՞կ եք որևէ նշանների, որոնք արդեն տեղի են ունեցել, ցույց տալով, որ Փրկչի Երկրորդ Գալուստը մոտիկ է: (Դուք կարող եք մատնանշել, որ շատ մարգարեություններ, ինչպես օրինակ ավետարանի Վերականգնումը, Եղիա մարգարեի գալուստը և ավետարանի քարոզումը ողջ աշխարհում, իրականացել են կամ իրականացման ընթացքի մեջ են:)
- Ինչպե՞ս եք զգում, երբ ճանաչում եք ինչ որ բան, որպես հստակ նշան, որ Փրկչի Երկրորդ Գալուստը մոտենում է:

Բացատրեք, որ մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, որը նման էր այն ժամանակին, երբ հենց ճիշտ Հիսուս Քրիստոսի Նեփիացիներին այցելելուց առաջ էր: Ճիշտ ինչպես Նեփիացիներն էին հետևում Սամուել Լամանացու տված նշաններին, որոնք ազդանշաններ կլինեին Հիսուս Քրիստոսի մահվան և Հարության մասին, մենք էլ պետք է հետևենք Փրկչի Երկրորդ Գալստի նշաններին:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ3 Նեփի 8.3–4 հատվածները, գտնելով տարբերությունները, թե ինչ զգացողություններ ունեին Նեփիացիներից ոմանք նշանների հանդեպ: Խնդրեք ուսանողներին հաղորդել, թե ինչ են գտել: (Չնայած մարդիկ հետևում էին նշաններին «մեծ լրջությամբ», նրանց մեջ գոյություն ունեին «մեծ կասկածներ և վիճաբանություններ»:)

- Ի՞նչ ուղիներով է 3 Նեփի 8.3–4 հատվածներում նկարագրվող իրավիճակը նման այսօրվա աշխարհի իրավիճակին:
- Ինչպե՞ս կարող ենք զորացնել մեր հավատքը առ Հիսուս Քրիստոս, նույնիսկ, երբ մեր շրջապատում գտնվող շատ մարդիկ կասկած են արտահայտում:

Հարցրեք ուսանողներին, թե արդյոք երբևէ զգացել են կատաղի փոթորիկ, երկրաշարժ կամ այլ աղետ: Երբ ուսանողները պատասխանեն, հրավիրեք նրանց կիսվել, թե ինչպես են զգացել այդ փորձառության ընթացքում և հետո:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 8.5–7 հատվածները: Խնդրեք դասարանին հետևել ընթացքում, որոնելով, թե ինչ պատահեց Հիսուս Քրիստոսի ծննդից հետո 34-րդ տարում: Ապա հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 8.8–18, որոնելով, թե ի՞նչ պատահեց քաղաքների բնակիչներին: Հանձնարարեք ուսանողներին հաղորդել, թե ինչ են գտել: Հիշեցրեք ուսանողներին, որ Սամուել Լամանացին մարգարեացել էր այս բաների մասին (տես Հելաման 14.20–27 հատվածները): Շեշտեք, որ **մարգարեների բոլոր խոսքերը կիրականանան** և որ **Աստված ամբարիշտներին պատասխանատվության կենթարկի իրենց գործերի համար:**

## 3 Նեփի 8.19–25

### *Խավարը պատում է երկիրը երեք օր շարունակ*

Բացատրեք, որ փոթորիկների և երկրաշարժերի դադարելուց հետո, խավարը պատեց երկիրը երեք օր: Մի պահ անջատեք լույսը սենյակում: Ապա հարցրեք ուսանողներին, թե արդյոք նրանք երբևէ եղել են բացարձակապես մութ տեղում, ինչպես օրինակ քարայրում կամ առանց պատուհանների սենյակում:

- Ինչպե՞ս էիք զգում, երբ այդ տեղում էիք գտնվում:

Մատնանշեք, որ խավարը, որ պատել էր երկիրը երեք օր, տարբեր էր այն խավարից, որն առաջանում է, երբ անջատում ենք լույսերը կամ գնում մի տեղ, որտեղ պատուհաններ չկան: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 8.19–23 հատվածները, որոնելով արտահայտություններ, որոնք նկարագրում են խավարը, որ զգացին Նեփիացիները: (Պատասխանները կարող են ընդգրկել «թանձր խավար» «խավարի մեզ», «խավարի մշուշներ», «ոչ մի լույս»:)

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 8.23–25 հատվածները, որոնելով այն ազդեցությունները, որոնք զգացին Նեփիացիները, ովքեր փրկվել էին կործանումից: Հանձնարարեք ուսանողներին հաղորդել, թե ինչ են գտել:

## 3 Նեփի 9.1–14

### *Խավարում Հիսուս Քրիստոսը հրավիրում է նրանց, ովքեր փրկվել են կործանումից, ապաշխարել և գալ Իր մոտ:*

Գրատախտակի վրա գրեք հետևյալ հարցերը: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 9.1–12 հատվածները, որոնելով պատասխաններ այս հարցերին:

*Ինչո՞ւ տեղի ունեցավ այս կործանումը:*

*Ինչպե՞ս սատանան արձագանքեց այս կործանմանը:*

*Ի՞նչ է այս ուսուցանում սատանայի մասին և ինչպես է նա վերաբերվում նրանց, ովքեր հետևում են իրեն:*

Բարձրաձայն կարդացեք3 Նեփի 9.13–14 հատվածները դասարանի համար: Խնդրեք ուսանողներին ընթացքում հետևել, որոնելով Փրկչի հրավերը նրանց, ովքեր խնայվել էին կործանումից: Խնդրեք ուսանողներին պատկերացնել այն Նեփիացիներին, ովքեր լսում էին Փրկչի ձայնը լիակատար խավարում: Նրանք «խնայվեցին, որովհետև նրանք ավելի արդարակյաց էին, քան» նրանք, ովքեր կործանվեցին, բայց նրանք դեռ կարիք ունեին ապաշխարելու և փոխվելու (տես 3 Նեփի 9.13, 10.12):

- Ի՞նչ զգացին ձեր կարծիքով Նեփիացիները, երբ նրանք լսեցին Փրկչի այս հրավերը: Ինչո՞ւ:

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Յոթանասունից Երեց Կ. Սքոթ Գրոուի հետևյալ միտքը.

«Հիսուս Քրիստոսը Մեծ Բժիշկն է մեր հոգիների: . . .

«Երբ մեղանչում ենք, սատանան ասում է մեզ, որ մենք կորած ենք: Ի հակադրություն, մեր Քավիչն առաջարկում է փրկագնում բոլորին՝ անկախ նրանից, թե մենք ինչ ենք սխալ արել, նույնիսկ ձեզ և ինձ («Քավության հրաշքը», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2011, 109):

Հաստատեք, որ Փրկչի հրավերը 3 Նեփի 9.13-ում՝գալ Իր մոտ և բժշկվել,տարածվում է մեզանից յուրաքանչյուրի վրա: Որպեսզի Փրկիչը բժշկի մեզ, մենք պետք է ընդունենք Նրա հրավերը, ապաշխարենք մեր մեղքերից և դարձի գանք: Խնդրեք ուսանողներին մտածել իրենց կյանքի բնագավառների մասին, որտեղ նրանք Փրկչի բժշկության կարիքն ունեն: Ապա հրավիրեք նրանց պատասխանել հետևյալ հարցին տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:

- Ի՞նչ պետք է դուք անեք, որպեսզի կարողանաք ստանալ Փրկչի բժշկությունը ձեր կյանքում:

***Անձնական հարցեր***

Անձնական հարցերը կարող են օգնել ուսանողներին կիրառել ավետարանի ճշմարտությունները: Այնուամենայնիվ, դուք պետք է զգուշացնեք նրանց, որ չգրեն գաղտնի հարցերի մասին, ինչպես օրինակ՝ անցյալ մեղքեր կամ օրինազանցություններ:

## 3 Նեփի 9.15

### *Փրկիչը հայտարարում է, որ Իր զոհաբերության միջոցով Մովսեսի օրենքը կատարված է*

Կարդացեք բարձրաձայն3 Նեփի 9.19 հատվածը: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, որոնելով այն, ինչ Հիսուս Քրիստոսն ասաց, որ Նա այլևս չէր ընդունելու Նեփիացիներից: Կարող է անհրաժեշտ լինել հիշեցնել ուսանողներին, որ Նեփիացիներն այդ ժամանակ ապրում էին Մովսեսի օրենքով: Որպես Մովսեսի օրենքի մաս, Տերը պատվիրեց Իր ժողովրդին մատուցել կենդանու զոհաբերություններ, որպես օրինակ և շուք այն զոհաբերության, որ Փրկիչն էր մատուցելու Իր Քավության միջոցով:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 9.20 հատվածը, որոնելով այն, ինչը Փրկիչն ասաց, որ Նեփիացիներն այժմ պետք է մատուցեին որպես զոհաբերություն: Հանձնարարեք ուսանողներին հաղորդել, ինչ որ գտնեն:

- Ի՞նչ եք կարծում, ինչ է նշանակում մատուցել որպես զոհաբերություն. «կոտրված սիրտ և փշրված հոգի»:
- Ի՞նչ օրհնություններ է Փրկիչը խոստանում նրանց, ովքեր գալիս են դեպի Իրեն կոտրված սրտով և փշրված հոգով:

Բացատրեք, որ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը ուսուցանել է մտածելու մի ձև՝ «կոտրված սրտի» և «փշրված հոգու» մասին: Կարդացեք հետևյալ միտքը, խնդրելով ուսանողներին լսել Երեց Քրիսթոֆերսոնի խոսքերը, որոնք նա օգտագործել է՝ օգնելու մեզ հասկանալ այս արտահայտությունները:



«Դուք կարող եք մատուցել Տիրոջը ձեր կոտրված կամ ապաշխարող սրտի և փշրված կամ հնազանդ հուգու պարգևը: Իրականում դա ձեր ինքնության պարգևն է՝ այն, ինչ կաք և ինչ որ դառնում եք:

«Արդյոք կա՞ ձեր կյանքում որևէ բան, որն անմաքուր է և անարժան: Երբ դուք դրանից ազատվեք, դա ընծա է Փրկչին: Կա՞ արդյոք լավ սովորույթ կամ հատկանիշ, որը բացակայում է ձեր կյանքում: Երբ դուք որդեգրեք այն և դարձնեք այն ձեր բնավորության մի մասը, դուք ընծա եք տալիս Տիրոջը»(«Երբ դուք դարձի եք եկել», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2004, 12):

- Ի՞նչ խոսք է օգտագործում Երեց Քրիստոֆերսոնը՝ օգնելու մեզ հասկանալ «սրտով կոտրված» (Ապաշխարող) արտահայտությունը: Ի՞նչ եք կարծում, ինչ է նշանակում ունենալ ապաշխարող սիրտ:
- Ի՞նչ խոսք է օգտագործում Երեց Քրիստոֆերսոնը՝ օգնելու մեզ հասկանալ «փշրված հոգի» (հնազանդ) արտահայտությունը: Ինչպե՞ս կնկարագրեիք ինչ որ մեկին, ով հնազանդ հոգի ունի:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 9.21–22 հատվածները, որոնելով Փրկչի նկարագրությունը, թե ինչպես մենք պետք է գանք դեպի Նա: Հանձնարարեք նրանց հաղորդել, թե ինչ են գտել: Բարձր բռնեք մի փոքրիկ երեխայի նկար, գուցե հենց ձեր ընտանիքից ինչ որ մեկի նկարը:

- Ինչպե՞ս եք պատկերացնում որևէ փոքրիկ երեխայի գալը դեպի Փրկիչը: Ինչպե՞ս է այս օգնում ձեզ հասկանալ, թե ինչպես մենք պետք է գանք դեպի Փրկիչը:

Գրատախտակի վրա գրեք հետևյալ նախադասությունները.

*Եթե մենք գանք դեպի Քրիստոսը կոտրված սրտով և փշրված հոգով, Նա կ . . .*

Խնդրեք ուսանողներին վերանայել 3 Նեփի 9.13–15, 19–22 հատվածները՝ գտնելու ուղիներ լրացնելու գրատախտակի վրայի միտքը: Հրավիրեք նրանց հաղորդել իրենց գտածը: Պատասխանները կարող են ներառել, որ Նա կբժշկի մեզ (տես 3 Նեփի 9.14), և կընդունի մեզ (տես 3 Նեփի 9.22): Ուսանողների պատասխանելուց հետո, լրացրեք գրատախտակի վրայի միտքը. ***Եթե մենք գանք դեպի Քրիստոս կոտրված սրտով և փշրված հոգով, Նա կընդունի մեզ, կբժշկի և կտա մեզ հավերժական կյանք:***

## 3 Նեփի 10

### *Տերն առաջարկում է հավաքել Իր ժողովրդին, ինչպես հավն է հավաքում իր ճտերին*

Ամփոփեք 3 Նեփի 10.1–3 հատվածները բացատրելով, որ Փրկչի ձայնը լսելուց հետո, մարդիկ այնքան ապշահար էին, որ նրանք մի քանի ժամ շարունակ լուռ էին: Նա կրկին խոսեց ժողովրդի հետ:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 3 Նեփի 10.4–6: Մատնանշեք, որ այս հատվածներում Փրկիչը խոսում է Իսրայելի տան՝ Իր ուխտի ժողովրդի մասին:

- Ի՞նչպես է Փրկիչը նման հավի, որը պաշտպանում է իր ճտերին վտանգից: Ինչո՞ւ Փրկիչը չհավաքեց և չպաշտպանեց Իսրայելի ողջ տունը: (Նրանք չկամեցան գալ Նրա մոտ:)
- Ի՞նչ խոստացավ Փրկիչը նրանց, ովքեր կամեցան ապաշխարել և վերադառնալ դեպի Իրեն: (Նա կհավաքեր նրանց, ինչպես հավն է հավաքում իր ճտերին:)

Խնդրեք ուսանողներին պատասխանել հետևյալ հարցերին տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: (Դուք կարող եք գրել այս հարցը գրատախտակին կամ կարդալ այն դանդաղ, որպեսզի ուսանողները կարողանան գրել այն:)

- Ե՞րբ եք զգացել Փրկչի հրավերը՝ Իր սնուցումը և պաշտպանությունը ստանալու համար:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 10.9–11 հատվածները: Խնդրեք դասարանին հետևել ընթացքում, որոնելով, թե ինչ էր տեղի ունեցել ժողովրդի հետ Փրկչի խոսելուց հետո: Դուք կարող եք եզրակացնել, վկայելով, որ Փրկիչը ողորմած է բոլոր նրանց հանդեպ, ովքեր գալիս են դեպի Նա կոտրված սրտով և փշրված հոգով: Դուք կարող եք նաև բացատրել, որ հաջորդ դասում ուսանողները կքննարկեն Փրկչի այցելությունը ժողովրդին և ինչպես Նա անձնապես ծառայեց նրանցից յուրաքանչյուրին:

ԴԱՍ 120

# 3 Նեփի 11.1–17

## Նախաբան

Ավերումից և երեք օրվա խավարից հետո, որը Փրկչի մահվան ազդանշանն էր, մոտ 2500 Նեփիացի տղամարդիկ և կանայք ու երեխաներ հավաքվեցին Լիառատ երկրի տաճարի մոտ (տես 3 Նեփի 17.25)։ Երբ նրանք խոսում էին միմյանց հետ, նրանք լսեցին Երկնային Հոր ձայնը, որը ներկայացրեց Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, ով այդ ժամանակ հայտնվեց։ Հիսուս Քրիստոսը հրավիրեց ժողովրդին անձնապես ականատես լինել, որ Նա սպանվել էր աշխարհի մեղքերի համար։ Նրանք մեկ առ մեկ մոտեցան Նրան և շոշափեցին Նրա կողի վերքը և գամերի հետքերը Նրա ձեռքերի և ոտքերի վրա։

***Դասի ընթացքի արագացում***

Բարձրացրեք յուրաքանչյուր դասի ընթացքի արագությունը, որպեսզի դուք բավականաչափ ժամանակ ունենաք՝ անդրադառնալու ամենակարևոր էլեմենտներին։ Օրինակ, այս դասի վերջում ուսանողները կունենան հնարավորություն բերել իրենց վկայությունը Հիսուս Քրիստոսի մասին։ Չնայած դասի մնացած մասերը կարևոր են, հավաստիացեք, որ բավականաչափ ժամանակ մնա վկայություններ բերելու համար։

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 11.1–7

*Նեփիացիները լսում են Հոր ձայնը, որը հայտարարում է Իր Որդու հայտնվելը։*

Երբ ուսանողները դասարան մտնեն, միացրած ունեցեք սրբազան երաժշտության մի ձայնագրություն կամ գերագույն համաժողովի որևէ ելույթ ցածր ձայնով՝ ուղղակի այնքան բարձր, որ լսվի։ Անջատեք ձայնագրությունը, երբ գա բացիչ աղոթքի և դասի ժամանակը։ Աղոթքից հետո հարցրեք ուսանողներին, թե նրանք արդյոք լսեցին ձայնագրությունը։ (Եթե դուք ռեսուրսներ չունեք այս միջոցառումն իրականացնելու համար, մտածեք հանձնարարել որևէ ուսանողի կարդալ մեղմ ձայնով 3 Նեփի 11գլխից, երբ ուսանողները ներս մտնեն լսարան։ Եթե ընտրեք այս տարբերակը, այն լավագույն ձևով կստացվի, եթե դուք հանձնարարությունը տաք մեկ օր առաջ, գուցե մի ուսանողի, որը սովորաբար վաղ է տեղ հասնում։)

- Ի՞նչ պետք է անի անձնավորությունը՝ մեղմ ձայնը լսելու և հասկանալու համար։
- Ո՞րն է երգի (կամ գերագույն համաժողովի ելույթի կամ սուրբ գրության հատվածի) ուղերձը, որը միացված էր, երբ դուք այսօր ներս մտաք լսարան։
- Հե՞շտ էր, թե դժվար լսել և հասկանալ խոսքերը, երբ բոլորը դասարան էին մտնում։ Ինչո՞ւ։

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 11.1–3։ Խնդրեք, որ դասարանը ընթացքում հետևի, որոնելով, թե Նեփիացիներն ինչն էին դժվարանում հասկանալ։

- Ինչպե՞ս է նկարագրվում ձայնը3 Նեփի 11.3 հատվածում։ (Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն ձայնի նկարագրությունը իրենց սուրբ գրություններում։)
- Ի՞նչ ազդեցություն ունեցավ ձայնը նրանց վրա, ովքեր լսեցին այն։

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 11.4–7, որոնելով, թե Նեփիացիները ինչն էին անում տարբեր ձևով, որպեսզի հասկանային ձայնը՝ երրորդ անգամ այն լսելուց հետո։

- Ի՞նչ արեցին Նեփիացիները տարբեր ձևով երրորդ անգամ, երբ լսեցին ձայնը։
- Հիմնվելով այն բանի վրա, ինչ կարդում եք 3 Նեփի 11.7, ո՞ւմ ձայնը լսեց ժողովուրդը։ (Նրանք լսեցին Երկնային Հոր ձայնը, որը ներկայացրեց Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին։)

Մտածեք խնդրել ուսանողներին կարդալ Հելաման 5.30, որոնելով Տիրոջ ձայնի մեկ այլ նկարագրություն։

- Ինչպե՞ս էր Նեփիացիների լսած ձայնը նման այն հուշումներին, որոնք մենք ստանում ենք Սուրբ Հոգուց։ (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր խոսքեր, բայց նրանք պետք է հասկանան հետևյալ ճշմարտությունը. **Սուրբ Հոգին հաճախ խոսում է մեզ հետ մեր զգացումների միջոցով**)։

- Ինչո՞ւ է կարևոր ուշադրություն դարձնել ոգեշնչմանը, որ մենք ստանում ենք Տիրոջից Սուրբ Հոգու միջոցով:

Հրավիրեք ուսանողներին կիսվել փորձառություններով, որ նրանք ունեցել են, երբ նրանք զգացել են Սուրբ Հոգու ոգեշնչումը իրենց միտքը կամ սիրտը գալիս: Խնդրեք նրանց նկարագրել, թե ինչպես են զգացել: Դուք կարող եք նաև կիսվել ձեր իսկ փորձառությամբ:

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ միտքն այն մասին, թե ինչ մենք պետք է անենք՝ լսելու և հասկանալու Տիրոջ ձայնը Սուրբ Հոգու միջոցով:

«Հոգին չի գրավում մեր ուշադրությունը գոռալով: Այն երբեք չի ցնցում մեզ ծանր ձեռքով: Հոգին շշնջում է: Այն շոյում է այնպես մեղմորեն, որ եթե մենք զերզբաղված ենք լինում, չենք կարող ընդհանրապես զգալ այն:

Երբեմն Հոգին ուղղակի կպնդի բավականաչափ հաստատուն ձևով կամ բավականաչափ մեզ համար, որ ուշադրություն դարձնենք, բայց, իմ փորձառությունից ելնելով, մեծամասամբ, եթե մենք ուշադրություն չենք դարձնում մեղմ զգացումին, եթե մենք չենք ունկնդրում այդ զգացումներով, Հոգին ետ կքաշվի և կսպասի, մինչև մենք գանք՝ ձգտելով և լսելով մեր ձևով և մեր արտահայտությամբ» («Ինչպե՞ս է Հոգին խոսում մեզ հետ» *New Era,* փետր. 2010, 3):

- Ի՞նչ սկզբունք մենք կարող ենք սովորել 3 Նեփի 11.1–7 հատվածներից և Նախագահ Փաքերից: (Ուսանողները կարող է տարբեր պատասխաններ տան, բայց հավաստիացեք, որ նրանք հասկացել են հետևյալ ճշմարտությունը. **Երբ մենք սովորում ենք լսել Տիրոջ ձայնը Սուրբ Հոգու միջոցով, մենք կհասկանանք հաղորդակցությունը, որ Նա տալիս է մեզ:**)
- Ի՞նչն է օգնում ձեզ նախապատրաստել ձեր միտքը և սիրտը՝ լսելու և հասկանալու Սուրբ Հոգու հուշումները:

## 3 Նեփի 11.8–11

### *Հիսուս Քրիստոսը հայտնվում է Նեփիացիներին և հրավիրում նրանց մեկ առ մեկ շոշափել վերքերի տեղերը Իր ձեռքերին, ոտքերին և կողին*

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 11.8–10 հատվածները: Խնդրեք, որ դասարանը հետևի ընթացքում և պատկերացնի, թե ինչ կզգային այդ ժամանակ, եթե լինեին Նեփիացիների մեջ: Ցուցադրեք Հիսուսն ուսուցանում է արևմտյան կիսագնդում նկարը (62380; *Gospel Art Book* [2009], no. 82) և հարցրեք.

- Ի՞նչ մտքեր և զգացումներ ձեր կարծիքով կունենայիք, եթե եղած լինեիք Նեփիացիների մեջ, երբ Փրկիչն այցելեց նրանց:

Հիշեցրեք ուսանողներին խավարի և ավերման մասին, որ Նեփիացիները տարան հենց Փրկչի հայտնվելուց առաջ: Ապա որևէ ուսանողի հրավիրեք կարդալ բարձրաձայն Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ միտքը Նեփիացիներին Փրկչի հայտնվելու կարևորության մասին:

«Այդ հայտնվելը և այդ հայտարարությունը դրեց կիզակետը, գերագույն պահը, Մորմոնի Գրքի ողջ պատմության մեջ: Դա այն դրսևորումն էր և վճիռը, որը հաղորդել էր և ոգեշնչել յուրաքանչյուր Նեփիացի մարգարեի նախորդ վեց հարյուր տարիների ընթացքում, էլ չեմ ասում հազարավոր տարիներ դրանից առաջ նրանց Իսրայելացի և Հարեդացի նախնիների մասին :

Ամենքը խոսել են Նրա մասին, երգել են Նրա մասին, երազել են Նրա մասին և աղոթել Նրա հայտնվելու համար, բայց ահա նա իրականում այստեղ էր: Օրերի օրն էր: Աստված, ով դարձնում է մութ գիշերը առավոտյան լույս, եկել էր» (*Christ and the New Covenant: The Messianic Message of the Book of Mormon* [1997], 250–51):

Բացատրեք դասարանին, որ դասի հաջորդ մասը նախատեսված է թույլ տալու նրանց ինքնուրույն խորհել Փրկչի այցելության մասին: Դասից առաջ պատրաստեք հետևյալ հրահանգները և հարցերը յուրաքանչյուր ուսանողի համար թերթիկի վրա (կամ գրեք դրանք գրատախտակին կամ պաստառին): Ուսանողներին բավականաչափ ժամանակ տրամադրեք 3 Նեփի 11.11–17 հատվածները կարդալու և թերթիկի

հրահանգներին հետևելու համար: Խրախուսեք նրանց խորհել ուշադիր այս հատվածների իմաստի մասին, երբ նրանք ուսումնասիրեն դրանք:

1. Կարդացեք մտքում 3 Նեփի 11.11–12 հատվածները: Որոնեք, թե Հիսուս Քրիստոսն ինչ էր կամենում, որ ժողովուրդն իմանար Իր մասին և թե ինչ էր արել Իր մահկանացու կյանքի ծառայության ընթացքում: Խորհեք հետևյալ հարցերի մասին.
   - Փրկչի մտքերից ո՞րն է 3 Նեփի 11.11 հատվածում ամենաիմաստալին ձեզ համար: Ինչո՞ւ:
   - Ի՞նչ ի նկատի ուներ Փրկիչը, երբ ասաց. «ես խմեցի այն դառը բաժակից, որը Հայրը տվեց ինձ»: Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ Հիսուս Քրիստոսը միշտ ենթարկվել է Երկնային Հոր կամքին:
2. Կարդացեք 3 Նեփի 11.13–15, և խորհեք հետևյալ հարցերի շուրջ.
   - Ի՞նչ հրավիրեց անել Փրկիչը: Ի՞նչ էր Նա կամենում, որ նրանք իմանային որպես այդ փորձառության արդյունք:
   - Մարդիկ գնացին Փրկչի մոտ «մեկ առ մեկ, մինչև որ նրանք բոլորն առաջ եկան»(3 Նեփի 11.15): Մտածելով, որ մոտ 2500 մարդիկ կային բազմության մեջ (տես 3 Նեփի 17.25), ի՞նչ է այս ուսուցանում ձեզ այն մասին, թե ինչ է Փրկիչը զգում մեզանից յուրաքանչյուրի հանդեպ:
3. Պատասխանեք հետևյալ հարցերին մի տետրում կամ սուրբ գրության ուսումնասիրության օրագրում:
   - Ինչո՞ւ եք կարծում, որ Տերը կամենում էր, որ մարդիկ տեսնեն և շոշափեն Իրեն «մեկ առ մեկ»:
   - Ի՞նչ եք կարծում, ինչպես ձեզ վրա կազդեր այն, որ դուք կարողանայիք շոշափել վերքերը, որոնք Փրկիչը ստացել էր, երբ քավում էր ձեր մեղքերը:
4. Մտածեք գրել հետևյալ ճշմարտությունը ձեր սուրբ գրությունների լուսանցքում 3 Նեփի 11.11–15 հատվածների կողքին: **Հիսուս Քրիստոսը հրավիրում է ինձ ստանալ անձնական վկայություն, որ Նա իմ Փրկիչն է:** Պատասխանեք հետևյալ հարցերին տետրում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրում.
   - Ի՞նչ փորձառություններ են առաջնորդել ձեզ՝ ձեռք բերելու ձեր իսկ վկայությունը, որ Հիսուս Քրիստոսը ձեր Փրկիչն է:
   - Ի՞նչ եք կարծում, ինչ է կամենում Փրկիչը, որ դուք անեք՝ զորացնելու ձեր վկայությունը Իր մասին:
   - Ե՞րբ եք զգացել, որ Փրկիչը գիտի և օրհնել է ձեզ անհատապես:

Այս վարժությունը կատարելու համար ուսանողներին բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 11.16–17 հատվածները: Խնդրեք դասարանին հետևել ընթացքում, որոնելով, թե մարդիկ ինչ արեցին՝ Փրկչի հետ այս անձնական փորձառությունն ունենալուց հետո: Դուք կարող եք բացատրել, որ *Ովսաննան* եբրայերեն բառ է, որը նշանակում է «փրկիր այժմ» կամ «խնդրում ենք, փրկիր մեզ» և օգտագործվում է սուրբ գրությունների մեջ որպես փառաբանության և աղաչանքի բացականչություն (տես Աստվածաշնչի բառարան, «Ովսաննա», Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Ովսաննա», scriptures.lds.org):

- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էին մարդիկ գոչում «ովսաննա» Փրկչի հետ իրենց փորձառությունից հետո:

Հրավիրեք ուսանողներին ավելի մոտիկից ծանոթանալ3 Նեփի 11.15 հատվածին: Խնդրեք նրանց նշել, թե ինչ արեցին մարդիկ, Փրկչի վերքերը տեսնելուց և շոշափելուց հետո: (Մարդիկ արձանագրեցին կամ վկայեցին, որ նա Հիսուս Քրիստոսն էր):

- Արդյո՞ք կարիք ունենք տեսնելու և շոշափելու Փրկչին՝ իմանալու համար, որ Նա ապրում է (Տես Մորոնի 10.5): Ինչպե՞ս կարող ենք «վկայել» Հիսուս Քրիստոսի մասին:
- Ինչպե՞ս կարող ենք վերագրել 3 Նեփի 11.15 հատվածը մեզ: Ի՞նչ պետք է անի մեզանից յուրաքանչյուրը Հիսուս Քրիստոսի մասին վկայություն ստանալուց հետո: (**Երբ մենք ստանում ենք անձնական վկայություն Հիսուս Քրիստոսի մասին, մեր պարտականությունն է Նրա մասին վկայություն տալ:** )

Ավարտեք դասը, հրավիրելով ուսանողներին պատմել այն ժամանակի մասին, երբ նրանք կիսվել են իրենց վկայություններով Հիսուս Քրիստոսի մասին ուրիշների հետ: Եթե ժամանակը բավարարում է, հրավիրեք բոլոր նրանց, ովքեր կամենում են

դա անել, կիսվել համառոտ վկայությամբ Փրկչի մասին և գուցե պատմել, թե ինչ են արել՝ իրենց վկայությունները ձեռք բերելու համար: Եթե ժամանակը թույլ տա, դուք կարող եք նաև հրավիրել նրանց կիսվել նրանով, ինչ իրենք գրել են կամ զգացել 3 Նեփի 11 գլխի իրենց ուսումնասիրության ընթացքում այդ օրը:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 3 Նեփի 11.3: «Մեղմ ձայն»

Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերը բացատրել է, թե ինչպես է Սուրբ Հոգու ձայնը ներգործում մեր մտքերի և մեր սրտերի վրա:

«Հոգու ձայնը գալիս է ավելի շուտ որպես *զգացում*, քան ձայն: Դուք կսովորեք, ինչպես որ ես եմ սովորել, «լսել» այդ ձայնին, որն ավելի շուտ *զգացվում է*, քան *լսվում:* . . .

«Սուրբ Հոգու ձայնը, եթե դուք համաձայնվեք, կառաջնորդի և կպաշտպանի ձեզ և նույնիսկ կուղղի ձեր գործողությունները: Այն հոգևոր ձայն է, որը գալիս է հիշողության մեջ, որպես միտք կամ զգացում կամ որպես զգացում է դրվում ձեր սրտում: . . .

«Չի սպասվում, որ դուք ապրեք կյանքում առանց սխալներ անելու, բայց դուք չեք անի մեծ սխալ առանց նախապես Հոգու նախազգուշացնող հուշումների» («Խորհուրդ երիտասարդներին», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2011, 17–18):

# Տնային ուսումնասիրության դաս

## 3 Նեփի 1–11.17 (Մաս 24)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Վարդապետությունների և սկզբունքների հետևյալ համառոտ շարադրանքն ուսանողները սովորեցին, երբ նրանք ուսումնասիրեցին 3 Նեփի 1–11.17-ը (մաս 24 ը) չի նախատեսվում ուսուցանել որպես ձեր դասի մաս: Դասը, որ դուք եք ուսուցանում, կենտրոնացած է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, երբ դուք խորհեք ձեր ուսանողների կարիքների մասին:

#### Օր 1 (3 Նեփի 1)

Երբ ուսանողները ուսումնասիրեցին Հիսուս Քրիստոսի վերաբերյալ Սամուել Լամանացու մարգարեությունները, նրանք սովորեցին, որ Տերը կիրագործի բոլոր խոսքերը, որոնք Նա խոսել է տվել Իր մարգարեներին: Նրանց օրինակից ելնելով, ովքեր հավատարիմ էին նույնիսկ այն ժամանակ, երբ անհավատները ծրագրում էին կործանել նրանց, ուսանողները սովորեցին, որ երբ մենք հանդիպում ենք սատանայի ստերին, մենք կարող ենք ընտրել հավատալ Հիսուս Քրիստոսին և մնալ հավատարիմ: Լամանացի երիտասարդներից մի քանիսի ապստամբությունը ցույց տվեց ուսանողներին, որ երբ մենք անձնատուր ենք լինում գայթակղությանը, մեր օրինակը կարող է ունենալ բացասական ազդեցություն ուրիշների հավատքի և արդարակեցության վրա:

#### Օր 2 (3 Նեփի 2–5)

Երբ ուսումնասիրում ենք մարդկանց արդարակեցության նվազեցումը, ուսանողները նկատեցին, որ երբ մենք մոռանում ենք նախկին հոգևոր փորձառությունները, մենք ավելի խոցելի ենք դառնում սատանայի գայթակղություններին և խաբեություններին: Երբ նրանք վերլուծեցին Լաքոնիուսին ուղղված Գեդդիանիի ստահոդ նամակը, ուսանողները հայտնաբերեցին, թե ինչպես են սատանան և նրա հետևորդները հաճախ օգտագործում շողոքորթությունը, կեղծ խոստումները և սպառնալիքները՝ մարդկանց մոլորեցնելու համար: Ուսանողները սովորեցին Նեփիացիներից և Լամանացիներից, ովքեր հաջողությամբ պաշտպանվում էին Գադիանթոնի ավազակներից, որ երբ մենք պատրաստվում ենք հոգեպես և ֆիզիկապես, Տերը զորացնում է մեզ՝ մարտահրավերները հաղթահարելու համար: Երբ ուսանողները կարդում էին Նեփիացիների գոհաբանությունը Տիրոջը՝ իրենց ազատելու համար, նրանք սովորեցին, որ ճանաչելով մեզ դժվարություններից ազատելիս Աստծո բարությունը և ողորմածությունը՝ օգնում է մեզ մնալ խոնարհ: Նեփիացիների ջանքերը ավետարանը քարոզելիս և Մորմոնի հայտարարությունը իր պարտականության վերաբերյալ, ցույց են տալիս, որ որպես Հիսուս Քրիստոսի հետևորդներ, մենք պարտականություն ունենք ուրիշներին ուսուցանել հավիտենական կյանքի ուղին:

#### Օր 3 (3 Նեփի 6–10)

Երբ ուսանողները կարդացին այն մասին, թե ինչպես Նեփիացիները և Լամանացիները կրկին ընկան ամբարշտության մեջ, նրանք հասկացան, որ երբ մենք հպարտ ենք, մենք թույլ ենք տալիս սատանային ավելի մեծ ուժով գայթակղել մեզ և առաջնորդել մեզ ավելի շատ մեղքեր գործել: Բայց մարդկանցից մի քանիսի հավատարիմ օրինակը ցույց տվեց, որ մենք կարող ենք ընտրել խոնարհ և հավատարիմ լինել անկախ մեր հանգամանքներից: Երբ Նեփիացիների կառավարությունը տապալվեց, նրանք, ովքեր հետևեցին Նեփիին, ցույց տվեցին, որ եթե մենք կամենանք ապաշխարել և հետևել Տիրոջ ծառաներին, մենք կվայելենք Սուրբ Հոգու ազդեցությունը մեր կյանքում: Բոլոր մարդիկ ողջ երկրում լսեցին Հիսուս Քրիստոսի ձայնը խավարում, որ եթե մենք գանք Իրեն մոտ կոտրված սրտով և փշրված հոգով, Նա մեզ կբժշկի և կտա մեզ հավերժական կյանք:

#### Օր 4 (3 Նեփի 11.1–17)

Երբ ուսանողներն ուսումնասիրեցին Հոր հայտարարությունը Հիսուս Քրիստոսի մասին, նրանք հասկացան, որ Սուրբ Հոգին հաճախ խոսում է մեզ հետ մեր զգացումների միջոցով: Նրանք նաև իմացան, որ երբ մենք սովորում ենք, թե ինչպես լսել Տիրոջ ձայնին Սուրբ Հոգու միջոցով, մենք կկարողանանք հասկանալ այն հաղորդակցությունը, որ Նա տալիս է մեզ: Նեփիացիների մեջ Փրկչի ծառայությունը սկսելու վերաբերյալ պատմությունից, ուսանողներն իմացան, որ Հիսուս Քրիստոսը հրավիրում է մեզ բոլորիս ստանալ անձնական վկայություն, որ Նա մեր Փրկիչն է և երբ մենք ստանում ենք այդ վկայությունը, մենք պատասխանատվություն ունենք վկայել Նրա մասին:

### Նախաբան

Այս դասի 3 Նեփի 1–7 հատվածների համար վարժությունը շեշտում է որոշ վարդապետություններ և սկզբունքներ, որոնք կարող են օգնել ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե ինչ է նշանակում դարձի գալ դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը: 3 Նեփի 8–10 հատվածներում ուսուցողական վարժությունները կնախապատրաստեն ուսանողներին մտածել Փրկչի վերաբերյալ իրենց վկայությունների մասին, երբ նրանք սովորեն

3 Նեփի 11գլխումԼեքիի հետնորդներին Նրա հայտնվելու մասին:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 1–7

***Նշաններն ու զարմանալիքները հայտարարում են Հիսուս Քրիստոսի ծնունդը, մարդիկ պարբերաբար անցնում են արդարակեցության և ամբարշտության փուլերով, մինչև որ կառավարությունը փլուզվում է:***

Գրատախտակին հետևյալ գծի նման մի գիծ գծեք:



Հարցրեք. Այս անցած շաբաթվա ձեր ուսումնասիրությունների վրա հիմնվելով, ինչպե՞ս կարող է այս գիծը ներկայացնել Նեփիացիներին 3 Նեփի 1–7 գլուխներում: (Դուք կարող եք հրավիրել ուսանողներին վերանայել գլխի խորագրերը 3 Նեփի 1–7 գլուխներում, որպեսզի նրանք հիշեն, թե ինչպես էին Նեփիացիները տատանվում արդարակեցության և ամբարշտության միջև սկսած Ք. ծ. հ. 1-ից մինչև Ք.ծ.հ. 33թ.:)

Ուսանողներին օգնելու համար մտածել այն մասին, թե ինչ կարող են 3 Նեփի 1–7 հատվածներն ուսուցանել մեզ դեպի Հիսուս Քրիստոս և Նրա ավետարանն իսկապես դարձի գալու մասին, հրավիրեք որևէ ուսանողի կարդալ բարձրաձայն Առաջին Նախագահությունից Նախագահ Մարիոն Գ. Ռոմնիի հետևյալ միտքը: (Եթե հնարավոր է, տվեք յուրաքանչյուր ուսանողի մի օրինակ և խնդրեք նրանց ընդգծել արտահայտությունները կամ խոսքերը, որոնք նրանք զգում են, որ լավագույնս են նկարագրում դարձի եկած անձնավորությանը):

«Դարձը հոգևոր և բարոյական փոփոխություն է: *Դարձի եկած* լինելը նշանակում է ոչ միայն մտավոր ընդունումը Հիսուսի և Նրա ուսմունքների, այլ նաև խթանող հավատք Նրա և Իր ավետարանի հանդեպ: . . . Այն մարդը, որն իսկապես լիովին դարձի է եկել, Հիսուս Քրիստոսի ավետարանին հակառակ բաների հանդեպ ցանկությունը նրա մեջ փաստորեն մահանում է: Եվ ուստի, այն փոխարինվում է Աստծո սիրով, Նրա պատվիրանները պահելու ամուր և վերահսկող վճռականությամբ» (in Conference Report, Guatemala Area Conference 1977, 8):

Հարցրեք. Ո՞ր արտահայտությունները կամ խոսքերն են, որ դուք զգում եք լավագույնս նկարագրում են դարձի եկած անձնավորությանը:

Գծեք հետևյալ սխեման գրատախտակին կամ պատրաստեք դրանք թերթիկների վրա ուսանողների համար.

| | Համոզմունքներ և գործողություններ, որոնք տանում են դեպի դարձ | Համոզմունքներ և գործողություններ, որոնք թուլացնում են դարձը |
|---|---|---|
| 3 Նեփի 1.15–23, 27–30 | | |
| 3 Նեփի 2.1–3, 3.1–10 | | |
| 3 Նեփի 4.7–12, 30–33 | | |
| 3 Նեփի 6.13–18, 7.1–5 | | |
| 3 Նեփի 7.15–22 | | |

Այդ սխեմայից հանձնարարեք յուրաքանչյուր ուսանողի սուրբ գրության հատվածներից որևէ մեկը: Ժամանակ տվեք դասարանի անդամներին հետազոտել իրենց հանձնարարված հատվածները համոզմունքների և գործողությունների վերաբերյալ, որոնք կամ տանում են դեպի դարձ կամ թուլացնում դարձը: Սկզբունքներից շատերը, որոնք ուսանողները կարող են գտնել, գտնվում են ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի համառոտ շարադրանքում 1–3 օրերի համար այս դասի սկզբում: Երբ ուսանողները հաղորդեն այն, ինչ գտնեն, գրեք նրանց պատասխանները գրատախտակին կամ խրախուսեք նրանց գրել դրանք իրենց թերթիկների վրա: Օգնեք ուսանողներին կիրառել սկզբունքները, որոնք նրանք գտել են, ուղղելով հարցեր, ինչպես օրինակ հետևյալ հարցերն են՝ մեկ կամ երկու ճշմարտությունների վերաբերյալ, որոնք ուսանողները նշել են.

- Ինչպե՞ս եք դուք կամ ինչ որ մեկը, որին դուք գիտեք, ապրել համաձայն այդ ճշմարտության կամ գործադրել այդ սկզբունքը:
- Ձեր հայտնաբերած ճշմարտությունից ելնելով, ի՞նչ խորհուրդ կտայիք օգնելու ինչ որ մեկին՝ ավելի դարձի եկած լինելու և հոգեպես ավելի կայուն լինելու համար:

### 3 Նեփի 8–11.17

***Մեծ կործանումները և խավարը Հիսուս Քրիստոսի մահվան ազդանշաններն են: Իր Հարությունից հետո Նա այցելում է Լեքիի հետնորդներին:***

Հրավիրեք որևէ ուսանողի ամփոփել 3 Նեփի 8-րդ գլխի իրադարձությունները և կիսվել դասարանի հետ որևէ զգացումներով կամ տպավորություններով, որոնք նա ունեցել

է, մինչ ուսումնասիրում էր այս գլուխը անցած շաբաթվա ընթացքում: Խնդրեք ոսանողներին կարդալ 3 Նեփի 8.20–23 հատվածները: Հրավիրեք դասարանին բացատրել, թե ինչու է այս հատվածներում նկարագրվող նշանը ճիշտ նշան, որը ցույց է տալիս Հիսուս Քրիստոսի մահը: Նեփիացիների զգացած խավարը շեշտադրելու համար, դուք կարող եք օգտագործել հետևյալ վարժությունը.

Յուրաքանչյուր ուսանողի տվեք գրպանի մի էլեկտրական լապտեր և սենյակում անջատեք լույսերը: (Եթե դուք չունեք բավականաչափ լապտերներ, ուսանողները կարող են միասին օգտագործել): Հանձնարարեք ուսանողներին վառել իրենց լապտերները և նրանցից մի քանիսին հրավիրեք հերթով բարձրաձայն կարդալ 3 Նեփի 9.13–20 հատվածները: Խնդրեք դասարանին հետևել ընթացքում, որոնելով ճշմարտությունները, որոնք մարդիկ սովորեցին Հիսուս Քրիստոսի մասին Նրա մահվանից հետո խավարի ընթացքում: Լույսերը միացնելուց հետո, ամփոփեք գրատախտակի վրայի ճշմարտությունները, որոնք ուսանողները նշել են: Շեշտեք հետևյալ սկզբունքները.**Հիսուս Քրիստոսը լույսն է և կյանքն աշխարհի: Եթե մենք գալիս ենք դեպի Հիսուս Քրիստոս կոտրված սրտով և փշրված հոգով, Նա կընդունի մեզ, կբժշկի մեզ, և կտա մեզ հավերժական կյանք:**

Ամփոփեք 3 Նեփի 11.1–7 հատվածները, բացատրելով, որ մարդիկ, ովքեր խնայվել էին կործանումից, հավաքվեցին Լիառատում տաճարի մոտ:

Ցույց տվեք «Հիսուսն ուսուցանում է Արևմտյան Կիսագնդում» նկարը (62380, *Ավետարանական Արվեստի ժողովածու* [2009], 82) կամ «Հիսուսը բժշկում է Նեփիացիներին» (*Ավետարանական Արվեստի Ժողովածու,* 83 նկարը): Հրավիրեք ուսանողներին պատկերացնել 3 Նեփի 11.8–17 հատվածները, երբ կարդաք այն նրանց համար: Ժամանակ առ ժամանակ դադար տվեք ձեր ընթերցանության ժամանակ և հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչ են զգում, երբ իրենք պատկերացնում են այս փորձառությունը, հատկապես «մեկ առ մեկ» փորձառությունը, որը Նեփիացիներն ունեցան Փրկչի հետ, ինչպես նկարագրված է 3 Նեփի 11.15 հատվածում:

3 Նեփի 11.8–17 հատվածները կարդալուց հետո, տվեք ուսանողներին հետևյալ հարցերը: Հրավիրեք նրանց տրամադրել մի քանի րոպե այդ հարցերի շուրջ մտքում խորհելուն, նախքան պատասխանելը: (Հավաստիացեք, որ բավականաչափ ժամանակ եք թողել ուսանողների համար պատասխանելու այս հարցերին, որպեսզի նրանք չզգան շտապեցում, երբ խորհում են և կիսվեն իրենց զգացումներով և վկայություններով:)

- Եթե դուք եղած լինեիք Նեփիացիների մեջ և հնարավորություն ունենայիք շոշափել Փրկչի վերքերը, ի՞նչ կասեիք Նրան:
- Երբ Հիսուս Քրիստոսը ներկայացրեց Իրեն Նեփիացիներին, ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Նա կարևոր համարեց հրավիրել նրանց ուշադրությունը «դառը գավաթին» (3 Նեփի 11.–11:
- Ի՞նչ է «դառը գավաթը», որ Հիսուս Քրիստոսն ակնարկեց (☒ես ՎևՈւ 19.16–19):

Կիսվեք Փրկչի և այն լույսի մասին ձեր վկայությամբ, որը եկել է ձեր կյանք, երբ դուք հետևել եք Նրան: (Դուք կարող եք նաև խրախուսել ուսանողներին հիշել այն զգացումները, որոնք նրանք ունեցան այդ դասի ընթացքում և գրի առեք դրանք ձեր անձնական օրագրերում տանը):

## Հաջորդ մասը (3 Նեփի 11.18–16.20)

Հրավիրեք ուսանողներին հաշվի առնել հետևյալ հարցերը, երբ նրանք ուսումնասիրեն հաջորդ մասը. Արդյո՞ք ես որևէ մեկին համարում եմ ինձ թշնամի: Եթե դա այդպես է, ինչպե՞ս եմ վերաբերվում այդ մարդկանց: Ի՞նչ արժանիքներ է Աստված համարում կարևոր մեր կյանքում: Արդյո՞ք ընդունելի է դատել ուրիշ մարդկանց: Ուսանողները կարող են գտնել պատասխաններ այս հարցերին, երբ նրանք ուսումնասիրեն Փրկչի խոսքերը մաս 25:

ԴԱՍ 121

# 3 Նեփի 11.18–41

## Նախաբան

Երբ Նեփիացիները առաջ եկան և վերքերի տեղերը շոշափեցին Փրկչի ձեռքերի, ոտքերի և կողի մեջ, Տերը Նեփիին տվեց իշխանություն մկրտելու և կատարելու այլ քահանայության պաշտոնների պարտականություններ: Փրկիչը նաև նախազգուշացրեց ժողովրդին խուսափել հակառակությունից և խոստացավ, որ եթե նրանք ապրեն Իր վարդապետության համաձայն, կժառանգեն Աստծո արքայությունը:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 11.18–27

*Հիսուս Քրիստոսը Նեփիին և մյուսներին մկրտելու իշխանություն է տալիս*

Նախքան դասը գրեք հետևյալ հարցերը գրատախտակին.*Ո՞վ կարող է մկրտել ինձ: Ինչպե՞ս է կատարվում մկրտությունը:*

Եթե դուք ուսուցանում եք մեկ կամ ավելի ուսանողների, ովքեր վերջերս են միացել Եկեղեցուն, դուք կարող եք սկսել այս դասը, խնդրելով նրանց կիսվել որոշ փորձառություններով, որոնք նրանք ունեցել են, մինչ սովորում էին Եկեղեցու մասին: Հարցրեք նրանց, թե արդյոք նրանք հետաքրքրվում էին գրատախտակի վրայի երկու հարցերի պատասխաններով, երբ նրանք որոշեցին մկրտվել:

Դուք կարող եք նաև սկսել այս դասը, հրավիրելով ուսանողներին պատկերացնել, որ նրանց ընկերներից մեկը վերջերս որոշել է միանալ Եկեղեցուն և տվել է նրանց գրատախտակի վրայի երկու հարցերը: Խնդրեք ուսանողներին բացատրել, թե ինչպես նրանք կպատասխանեին այս հարցերին: Կամ դուք կարող եք հրավիրել երկու ուսանողներին դերակատարմամբ քննարկում անցկացնել որևէ Եկեղեցու անդամի և նրա ընկերոջ միջև՝ օգտագործելով այս հարցերը:

Հիշեցրեք ուսանողներին, որ նախորդ դասում նրանք իմացան մի խումբ Նեփիացիներին Հիսուս Քրիստոսի հայտնվելու մասին: Հիսուս Քրիստոսը հրավիրեց նրանց Իր Հարության և աստվածայնության ականատես լինել՝ շոշափելով վերքերի տեղերը Իր ձեռքերում, ոտքերում և կողում: Բացատրեք, որ այս փորձառությանն անմիջապես հաջորդեց Փրկչի ուսուցանումը ժողովրդին Իր վարդապետությունը, որն Իրեն հավատալն էր, մկրտվելը, և Սուրբ Հոգին ստանալը:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 11.18–22 հատվածները: Խնդրեք դասարանին հետևել ընթացքում՝ որոնելով պատասխաններ *«Ո՞վ կարող է մկրտել ինձ» հարցին:* Հանձնարարեք որևէ ուսանողի գրել պատասխանները գրատախտակին՝ հարցի ներքևում: Չնայած ուսանողները կարող են օգտագործել տարբեր խոսքեր, նրանք պետք է հասկանան հետևյալ ճշմարտությունը: **Մկրտությունը պետք է կատարվի մի անձնավորության կողմից, ով կրում է համապատասխան իշխանությունը:** (Եթե այդ միտքն արդեն գրված չէ գրատախտակին, դուք կարող եք ավելացնել այն պատասխանների ցուցակում:)

Որպեսզի ուսանողներին օգնեք ավելի լավ հասկանալ այս ճշմարտությունը, դուք կարող եք համառոտ բացատրել, որ մկրտությունը կարող է կատարվել միայն մի մարդու կողմից, ով կրում է Ահարոնյան Քահանայության քահանայի պաշտոնը (տես ՎԿՈՒ 20.46) կամ որևէ մեկի կողմից, ով իրեն շնորհված ունի Մելքիսեդեկյան Քահանայություն (տես ՎԿՈՒ 20.38–39, 107.10–11): Բացի այդ, այս անձնավորությունը պետք է գործի քահանայության ղեկավարի առաջնորդությամբ, ով կրում է քահանայության բանալիները, որոնք անհրաժեշտ են լիազորելու այդ արարողությունը (ինչպես օրինակ եպիսկոպոսը, ճյուղի նախագահը կամ միսիայի նախագահը):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է, Տերը պահանջում, որ մկրտության արարողությունը կատարվի լիազորված քահանայություն կրողի կողմից:

***Հարմարեցրեք դասը***

Այս ձեռնարկի շատ դասեր սկսվում են առաջարկելով մի վարժություն կամ հարց, որը նախատեսված է ուսանողներին պատրաստել սուրբ գրությունների ուսումնասիրության համար:Այս առաջարկները կարող են հարմարեցվել համաձայն ուսանողների կարիքների և հանգամանքների:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 18.11 հատվածը: Խնդրեք դասարանին հետևել ընթացքում, որոնելով պատասխաններ*«Ինչպե՞ս է կատարվում մկրտությունը» հարցին:* Հանձնարարեք որևէ ուսանողի գրել իրենց պատասխանները գրատախտակին՝ հարցի ներքևում:

- Ի՞նչ է կատարվում մկրտության ժամանակ, եթե արարողության խոսքերը ճիշտ չեն ասվում կամ եթե մկրտվող անձնավորությունը լիովին չի ընկղմվում ջրի տակ: (Արարողությունը կրկնվում է:) Ի՞նչ ճշմարտություն կարող ենք մենք սովորել սրանից: ( Չնայած ուսանողները կարող է օգտագործեն տարբեր խոսքեր, նրանք պետք է հասկանան հետևյալ ճշմարտությունը. **Մկրտությունը պետք է կատարվի Տիրոջ սահմանած ձևով:** Դուք կարող եք գրել այս միտքը գրատախտակին:)
- Ինչո՞ւ եք կարծում, որ կարևոր է, որ մկրտությունները կատարվեն ճշգրտորեն Տիրոջ սահամանած ձևով:

Որպեսզի ուսանողներին օգնեք զգալ ճշմարտությունների կարևորությունը, որոնք դուք քննարկեցիք 3 Նեփի 11.18–27 հատվածներում, դուք կարող եք տալ հետևյալ հարցերից մի քանիսը.

- Ի՞նչ զգացումներ ունեցաք , երբ մկրտվեցիք: Ի՞նչ է նշանակում ձեզ համար գիտենալը, որ դուք մկրտվել եք մի մարդու կողմից, ով պատշաճ իշխանություն էր կրում և Տիրոջ կողմից սահմանված ձևով է արվել:
- Արդյո՞ք դուք վերջերս ականատես եք եղել մկրտության: Ի՞նչ զգացումներ ունեիք:

Եթե ձեր ուսանողներից որևէ մեկը կրում է Ահարոնյան Քահանայության քահանայի պաշտոնը, հարցրեք.

- Ինչպե՞ս է մկրտելու իշխանություն ունենալու գիտակցությունը ազդում ձեր վրա: (Դուք կարող եք պարզել, թե արդյոք որևէ ուսանող ձեր դասարանում ունեցել է հնարավորություն մկրտելու որևէ մեկին: Եթե նրանք ունեցել են, հրավիրեք նրանց կիսվել, թե ինչ են զգացել և սովորել իրենց փորձառության ընթացքում:)

Դուք կարող եք կիսվել մկրտության սրբազան արարողության վերաբերյալ ձեր փորձառություններով և զգացումներով:

## 3 Նեփի 11.28–30

### *Հիսուս Քրիստոսը նախազգուշացնում է, որ հակառակությունը դևից է*

Գրատախտակին գրեք *հակառակություն* բառը:

- Ի՞նչ է հակառակությունը: (Վեճ, հակասություն կամ հակաճառություն:)

Հրավիրեք ուսանողներին համառոտ գրի առնել տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում որոշ իրավիճակներ կամ գործունեություն, որոնց ընթացքում կարող է առաջանալ հակառակություն: Ուսանողներին գրելու համար բավականաչափ ժամանակ տալուց հետո, խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 11.28–30 հատվածները: Հրավիրեք դասարանին հետևել ընթացքում և նշել, թե ինչի համար էին Նեփիացիներից ոմանք միմյանց հետ հակաճառում:

- Ինչի՞ մասին էին իրականում վիճաբանում Նեփիացիները: (Մկրտության արարողության [տես նաև 3 Նեփի 11.22] և Քրիստոսի վարդապետության մասին:)
- Համաձայն 3 Նեփի 11.29 հատվածի, որտեղի՞ց է գալիս հակառակության ոգին: (Գրեք հետևյալ ճշմարտությունը գրատախտակին. ***Հակառակության ոգին Աստծուց չէ, այլ դևից:*** Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այս ճշմարտությունը 3 Նեփի 11.29 հատվածում:)
- Ինչո՞ւ եք կարծում, որ կարևոր է խուսափել հակառակությունից, երբ քննարկում ենք ավետարանը ուրիշների հետ: Ինչո՞ւ է վիճաբանությունը սխալ ուղի ավետարանն ուսուցանելու համար: (Ուսանողները կարող են տալ տարբեր պատասխաններ, բայց հավաստիացեք, որ նրանք հասկանում են, որ երբ մենք հակառակվում ենք կամ վիճաբանում ուրիշների հետ ավետարանի վերաբերյալ, Սուրբ Հոգին ներկա չի լինում օգնելու մեզ ուսուցանել կամ վկայել ճշմարտության մասին՝ նրանց սրտերում, ում մենք ուսուցանում ենք:)

Շեշտելու համար հակառակության մի կարևոր հետևանք՝ գրատախտակին գրեք Առաջին Նախագահությունից Ջեյմս Ի. Ֆաուստի հետևյալ միտքը: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին գրել այն իրենց սուրբ գրություններում3 Նեփի 11.29 հատվածի կողքին: (Այդ միտքը գտնվում է “What I Want My Son to Know before He Leaves on His Mission,” *Ensign,* May 1996, 41):

*«Երբ հակառակություն կա, Տիրոջ Հոգին կհեռանա, անկախ նրանից, թե ով է մեղավոր» (Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստ):*

- Ե՞րբ եք զգացել, որ Տիրոջ Հոգին հեռացել է հակառակության պատճառով: Ինչպե՞ս եք իմացել, որ Հոգին հեռացել է:

Մատնանշեք հակառակության վերաբերյալ Փրկչի միտքը 3 Նեփի 11.30 հատվածում: «Մա է իմ վարդապետությունը, որ այսպիսի բաները պետք է վերացվեն»:

- Ինչպե՞ս կարող ենք «վերջ տալ» հակառակությանը և վիճաբանություններին: (Պատասխանները կարող են ներառել հետևյալը. Մենք կարող ենք ձգտել լինել խաղաղարարներ [տես 3 Նեփի 12.9]: Մենք կարող ենք աղոթել իմաստության և համբերության համար՝ հակառակությունը հաղթահարելու համար: Մենք կարող ենք փորձել խուսափել իրավիճակներից, որոնցում մենք հնարավոր է գայթակղվենք հակառակվել ուրիշների հետ: )
- Ե՞րբ եք օրհնված զգացել՝ հակառակությունից խուսափելու կամ հաղթահարելու ձեր ջանքերի համար:
- Ինչպե՞ս կարող է 3 Նեփի 11.29–30 հատվածների Փրկչի ուսմունքները հիշելն օգնել ձեզ, երբ դուք գտնեք ձեզ մի իրավիճակում, որը կարող է դառնալ հակառակություն:

Դուք կարող եք կիսվել մի փորձառությամբ, որը դուք ունեցել եք, երբ ձեզ օրհնված եք զգացել հակառակությունից խուսափելու կամ այն հաղթահարելու ձեր ջանքերի համար: Ուսանողներին խրախուսելու համար, որպեսզի կիրառեն այն, ինչ իրենք սովորել են3 Նեփի 11.28–30 հատվածներից, հրավիրեք նրանց ետ նայել իրավիճակների կամ իրադարձությունների իրենց ցուցակներին, որոնց ընթացքում նրանք հավանական է հակված լինեին հակառակություն զգալու:

## 3 Նեփի 11.31–41

### *Հիսուս Քրիստոսը հայտարարում է Իր վարդապետությունը*

Ուսանողներին նախապատրաստելու համար ուսումնասիրել 3 Նեփի 11.31–41 հատվածները, գրեք հետևյալը գրատախտակին.

Գործողություն ⟶ Հետևանք

Հրավիրեք ուսանողներին համառոտակի համադասարանցուն պատմել ինչ-որ բան, որը նրանք վերջերս արել են, որը դրական հետևանք է առաջացրել և բացատրել, թե ինչ հետևանք էր դա: Դուք կարող եք նաև խնդրել նրանց պատմել ինչ որ բանի մասին, որ նրանք արել են կամ տեսել, որը առաջացրել է բացասական հետևանք: (Զգուշացրեք ուսանողներին, որ չկիսվեն որևէ բանով, որը կարող է պատշաճ չլինել կամ խիստ անձնական լինել:)

Բարձրաձայն կարդացեք 3 Նեփի 11.31 հատվածը դասարանի համար: Բացատրեք, որ 3 Նեփի 11 գլխի մնացած մասը պարունակում է Հիսուս Քրիստոսի հայտարարությունը Իր վարդապետության վերաբերյալ՝ ուղղած Նեփիի ժողովրդին: Այս գլուխը նաև նշում է Նրա վարդապետությունը ընդունելու կամ մերժելու հետևանքների մասին:

Գրատախտակին գրեք հետևյալ սուրբ գրության հղումները. *3 Նեփի 11.32–34 , 3 Նեփի 11.35–36, 3 Նեփի 11.37–38, 3 Նեփի 11.39–40:* Ուսանողներին բաժանեք զույգերի և հանձնարարեք յուրաքանչյուր զույգին ուսումնասիրել սուրբ գրության հատվածներից մեկը: Խնդրեք նրանց նշել այն գործողություններն ու հետևանքները, որոնց մասին ուսուցանեց Հիսուս Քրիստոսը: (Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները համեմատեն այս ուսմունքները հավատքի չորրորդ հանգանակի հետ:)

Ուսանողներին ուսումնասիրության համար բավականաչափ ժամանակ տալուց հետո, խնդրեք նրանցից մի քանիսին հաղորդել այն գործողություններն ու հետևանքները, որոնք նրանք գտան իրենց հանձնարարված հատվածներում: Հրավիրեք նրանց գրել իրենց պատասխանները գրատախտակին *Գործողություն* կամ

*Հետևանք* բառերի ներքո։ Երբ ուսանողները հաղորդեն յուրաքանչյուր ուղերձի մասին, տվեք ստորև գտնվող համապատասխան հարցերը.

Զույգերին, ում հանձնարարված է3 Նեփի 11.32–34 հատվածները, հարցրեք.

- Ինչպե՞ս է Սուրբ Հոգին օգնում մեզ հավատալ Հիսուս Քրիստոսին և Երկնային Հորը։ (**Սուրբ Հոգին վկայում է Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին։** ) Ե՞րբ է Սուրբ Հոգին վկայություն բերել ձեզ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի սիրո իրական լինելու մասին։

Զույգերին, ում հանձնարարված է 3 Նեփի 11.35–36 հատվածները, հարցրեք.

- Համաձայն այս հատվածների, ինչպե՞ս է Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին հավատալն ընտրելը հրավիրում Սուրբ Հոգու ազդեցությունը մեր կյանք։

Զույգերին, ում հանձնարարված է3 Նեփի 11.37–38 հատվածները, հարցրեք.

- Ի՞նչ գտաք, որը նույնանման էր 3 Նեփի 11.37 հատվածում և 3 Նեփի 11.38 հատվածում։
- Որո՞նք են փոքրիկ երեխայի լավ հատկանիշները։ Ինչո՞ւ եք կարծում, որ կարևոր է «դառնալ ինչպես փոքրիկ երեխան»։

Զույգերին, ում հանձնարարված է 3 Նեփի 11.39–40 հատվածները, հարցրեք,

- Ինչպե՞ս են Փրկչի ուսմունքներն այս հատվածներում շեշտադրում Նրա վարդապետությանը հնազանդվելու կամ չհնազանդվելու մեր ընտրությունը։

Խնդրեք ուսանողներին ամփոփել կարևոր գործողությունները, որոնք Հիսուս Քրիստոսն ուսուցանեց, որ պետք է կատարենք՝ երկնքի արքայությունը մտնելու համար։ Ուսանողները կարող են օգտագործել տարբեր խոսքեր, բայց նրանք պետք է արտահայտեն հետևյալ ճշմարտությունը.**Երկնքի արքայությունը մտնելու համար, մենք պետք է ապաշխարենք, հավատանք Հիսուս Քրիստոսին, մկրտվենք և ստանանք Սուրբ Հոգին։** Դուք կարող եք եզրափակել՝ կիսվելով ձեր վկայությամբ այս ճշմարտության մասին։ Խրախուսեք ուսանողներին ապրել համաձայն Հիսուս Քրիստոսի վարդապետության, որպեսզի կարողանան ժառանգել Աստծո արքայությունը։ Դուք կարող եք նաև հիշեցնել նրանց, որ աշխատեն հակառակությունից խուսափելու և այն հաղթահարելու իրենց նպատակների վրա։

ԴԱՍ 122

# 3 Նեփի 12

## Նախաբան

Հիսուս Քրիստոսն ուսուցանեց Նեփիացիներին ինչպես ստանալ Իր ավետարանի օրհնությունները և հրահանգեց նրանց ազդել ուրիշների վրա բարու համար: Նա հայտարարեց, որ կատարել էր Մովսեսի օրենքը, և Նա տվեց մարդկանց ավելի բարձր օրենք՝ նրանց նախապատրաստելու Իր և մեր Երկնային Հոր նման դառնալու համար:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 12.1–12

*Հիսուս Քրիստոսն ուսուցանում է բազմությանը այն օրհնությունների մասին, որոնք մենք ստանում ենք, երբ մենք ապրում ենքՆրա ավետարանով*

Դասից առաջ գրեք հետևյալ հարցերը գրատախտակին.

*Արդյոք Երկնային Հայրը սպասո՞ւմ է մեզանից, որ կատարյալ լինենք:*

*Արդյոք մենք պե՞տք է կատարյալ դառնանք այս կյանքում՝ սելեստիալ արքայություն մտնելու համար:*

*Մենք երբևէ կարո՞ղ ենք կատարյալ լինել:*

Դասի սկզբում հրավիրեք ուսանողներին խորհել այս հարցերի շուրջ: Խնդրեք նրանց մտածել հարցերի մասին դասի ընթացքում:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 12.48 հատվածը: Նշեք, որ սա սուրբ գրության անգիր սերտման հատված է: Կարող եք առաջարկել, որ ուսանողներն այնպիսի արտահայտիչ ձևով նշեն այս հատվածը, որպեսզի կարողանան այն հեշտությամբ գտնել:

**3 Նեփի 12.48 հատվածը** սուրբ գրության սերտման հատված է: Նայեք ուսուցանման գաղափարը դասի վերջում՝ ուսանողներին օգնելու սերտել այս հատվածը:

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ միտքը՝ կատարյալ լինելու պատվիրանի վերաբերյալ.

«Մենք չպետք է վիատվենք, եթե կատարելագործման մեր անկեղծ ջանքերը այժմ թվան այդքան անմատչելի [դժվար] և անվերջ: Կատարելությունը ընթացքում է: Այն կարող է լիովին գալ միայն Հարությունից հետո և միայն Տիրոջ միջոցով: Այն սպասում է բոլորին, ովքեր սիրում են Նրան և պահում Նրա պատվիրանները» (“Perfection Pending,” *Ensign,* Nov. 1995, 88):

- Ինչո՞ւ եք կարծում կատարելություն կարող է գալ «միայն Տիրոջ միջոցով»:

Վերանայեք դասի սկզբի երեք հարցերը: Հարցրեք ուսանողներին, թե կարող են արդյոք փոխել այդ հարցերի իրենց պատասխանները՝ 3 Նեփի 12.48 հատվածը կարդալուց և Երեց Նելսոնի բացատրությունը լսելուց հետո: Օգնեք ուսանողներին հասկանալ, որ Երկնային Հայրը չի սպասում մեզանից, որ կատարյալ դառնանք մեր մահկանացու կյանքի ընթացքում, այլ երբ մենք ջանասիրաբար ձգտում ենք պահել պատվիրանները և երբ մենք ապավինում ենք Քավությանը, մենք կարող ենք ի վեջո կատարելագործվել:

Գրեք *օրհնվել* բառը գրատախտակին: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 12.1–12 հատվածները, որոնելով հատկանիշները, որոնք Փրկիչը հորդորում է մեզ զարգացնել և օրհնությունները, որոնք Նա խոստանում է արդյունքում:

- Ի՞նչ օրհնություններ են եկել ձեր կյանք 3 Նեփի 12.1–12 հատվածների Հիսուս Քրիստոսի ուսմունքներով ապրելու արդյունքում:

Նշեք, թե որքան հաճախ է *օրհնված* բառը հայտնվում այս հատվածներում: Կիսվեք ձեր վկայությամբ, թե ինչպես եք օրհնվել, երբ ապրել եք Փրկչի ուսմունքներով:

Ուսանողներին խնդրեք գրել տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում մի օրհնության մասին, որը նրանք ցանկանում են, որը

նկարագրված է 3 Նեփի 12.1–12 հատվածներում: Հանձնարարեք նրանց գրի առնել այն հատկանիշը, որը նրանք պետք է զարգացնեն՝ այդ օրհնությունը ստանալու համար: Ապա հրավիրեք նրանց գրել, թե ինչ կկամենային անել այդ հատկանիշը զարգացնելու համար: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչ են գրել և ինչու:

## 3 Նեփի 12.13–16

*Փրկիչը հորդորում է բազմությանը արդարակյաց օրինակներ լինել աշխարհին:*

Ցուցադրեք աղ պարունակող մի ման: Խնդրեք, որ դասարանը նշի աղի օգտակար հատկությունները: Երբ ուսանողները պատասխանեն, հավաստիացեք, որ պարզ է, որ աղը համ է տալիս ուտելիքին և այն պահպանիչ է, որն օգտագործվում է միսը փչանալուց պահպանելու համար: Դուք կարող եք նաև բացատրել, որ Մովսեսի օրենքի համաձայն քահանաներից պահանջվում էր աղ մատուցել իրենց զոհաբերության նվիրատվությունների հետ (տես Ղևտացոց Բ.13): Այսպիսով, աղը ուխտի խորհրդանիշ է Տիրոջ և Իր ժողովրդի միջև:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 12.13 հատվածը և նշեն, թե Փրկիչը ում հետ է աղը համեմատում: Երբ ուսանողները պատասխանեն, բացատրեք, որ Փրկիչն այդ օրը ի նկատի չուներ միայն տաճարի մոտի բազմությանը, այլ բոլոր նրանց, ովքեր մկրտվել են Իր Եկեղեցում և ապրում են Իր ավետարանով:

- Ինչպե՞ս կարող ենք որպես Հիսուս Քրիստոսի հետևորդներ նման լինել աղին: (Մենք պետք է օգնենք պահպանել կամ փրկել ժողովրդին և բարելավել աշխարհը՝ ազդելով ուրիշների վրա բարու համար:)
- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում աղի համար կորցնել իր համը:

Երբ ուսանողները քննարկեն այս հարցը, դուք կարող եք կարդալ Յոթանասունից Երեց Կառլոս Ի. Էսեյի հետևյալ միտքը.

«Աղը չի կորցնում իր համը տարիքի հետ: Համը կորում է խառնուրդից և աղտոտվելուց: . . .Համն ու որակը կորչում է մարդուց, երբ նա աղտոտում է իր միտքը անմաքուր մտքերով, սրբապղծում է բերանը՝ խոսելով այն, ինչ ճշմարտությունից չէ և սխալ է օգտագործում իր ուժը՝ կատարելով չար գործեր» (“Salt of the Earth: Savor of Men and Saviors of Men,” *Ensign,* May 1980, 42):

- Ինչո՞ւ մենք պետք է մաքուր լինենք, որպեսզի ազդենք ուրիշների վրա բարու համար:

Բացատրեք, որ Փրկիչն օգտագործել է մեկ այլ խորհրդանիշ, ուսուցանելու, թե ինչպես Իր Եկեղեցու ուխտյալ անդամները պետք է ազդեն մյուսների վրա բարու համար: Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 12.14–16 հատվածները: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, որոնելով, թե ինչպես էր Փրկիչն օգտագործում լույսը՝ ուսուցանելու Իր ուխտի ժողովրդի դերը աշխարհում: Նախքան ուսանողի կարդալը, կարող եք բացատրել, որ գրվանը զամբյուղ է:

- Ինչպե՞ս կարող են Եկեղեցու անդամները լույս լինել ուրիշներին: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում թույլ տալ, որ մեր լույսը շողա: (Երբ ուսանողները պատասխանեն այս հարցին, օգնեք նրանց տեսնել, թե ինչպես արդարակյաց ապրելու իրենց օրինակները կարող են օգնել մյուս մարդկանց:)
- Ինչպե՞ս կարող են որոշ Եկեղեցու անդամներ ծածկել իրենց լույսը:
- Համաձայն 3 Նեփի 12.16 հատվածի, ինչո՞ւ է Փրկիչը կամենում, որ մեր լույսը շողա: (**Երբ մենք արդար օրինակ ենք ցույց տալիս, մենք կարող ենք օգնել ուրիշներին փառավորել Երկնային Հորը:** Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները գրեն այս սկզբունքը իրենց սուրբ գրություններում՝ իրենց իսկ խոսքերով:)
- Ո՞ւմ արդար օրինակն է օգնել ձեզ մոտենալ Երկնային Հորը և ուժեղացրել ավետարանով ապրելու ձեր ցանկությունը:

Հրավիրեք ուսանողներին խորհել այն օրինակի մասին, որ հանդիսացել են իրենք՝ իրենց շրջապատի համար:

## 3 Նեփի 12.17–48

### *Հիսուս Քրիստոսն ուսուցանում է բազմությանը ավելի բարձր օրենք, որը կօգնի նրանց դառնալ Իր և Երկնային Հոր նման*

Բացատրեք, որ Փրկիչը շարունակեց ուսուցանել Նեփիացիներին, թե ինչպես գալ Իր մոտ և մտնել երկնքի արքայությունը: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 12.19–20 հատվածները: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, փնտրելով մի բառ, որը բազմաթիվ անգամներ հայտնվում է այս հատվածներում:

- Ի՞նչ կարևոր խոսք է Փրկիչն օգտագործում երեք անգամ որպես դեպի Իրեն գալու այս հրավերի մաս: (Պատվիրաններ)

Բացատրեք, որ 3 Նեփի 12.21–47 հատվածները պարունակում են որոշ առանձնահատուկ պատվիրաններ, որոնք Փրկիչը տվել է, որոնք կօգնեն մեզ գալ դեպի Իրեն և ավելի նման դառնալ Իրեն: Երբ Նա ուսուցանեց այդ պատվիրանները Նեփիացիներին, Նա անդրադարձավ Մովսեսի օրենքի դրույթներին, որոնք այդ օրենքի մասն էին կազմում և ապա ուսուցանեց ավելի բարձր օրենքը: Նա անդրադարձավ Մովսեսի օրենքի ավանդական ըմբռնմանը, երբ Նա օգտագործեց այնպիսի արտահայտություններ, ինչպիսին են. «դուք լսել եք, որ ասվել է նրանց կողմից, հին ժամանակ» և «գրված է»: Երբ Նա ասաց. «բայց ես ասում եմ ձեզ», Նա ներկայացրեց այն ձևը, որ Ինքն էր կամենում, որ մենք պահենք այդ պատվիրանն այսօր:

Ուսանողներին օգնելու համար ուսումնասիրել այս հատվածները՝ արտագրեք հետևյալ սխեման գրատախտակին: Բաժանեք դասարանը չորս խմբի: Հանձնարարեք յուրաքանչյուր խմբին սխեմայից մի շարք, և հրավիրեք նրանց կարդալ ուղեկցող հատվածները և պատասխանել հարցերին:

| Ո՞րն էր Մովսեսի օրենքի ավանդական ըմբռնումը: | Ինչպե՞ս Փրկիչը խորհուրդ տվեց մեզ ապրել : | Ի՞նչ կարող է անել որևէ երիտասարդ տղամարդ կամ կին՝ Փրկչի ուսմունքը կիրառելու համար: |
|---|---|---|
| 3 Նեփի 12.21 | 3 Նեփի 12.22–26 | |
| 3 Նեփի 12.27 | 3 Նեփի 12.28–30 | |
| 3 Նեփի 12.38 | 3 Նեփի 12.39–42 | |
| 3 Նեփի 12.43 | 3 Նեփի 12.44–46 | |

Ուսանողների՝ 3 Նեփի 12.22 հատվածիընթերցանության օգտակարության համար, դուք կարող եք բացատրել, որ *Հիմար* բառը ստորացնող կամ ծաղրական բառ է, որն արտահայտում է արհամարհանք կամ ծաղր (տես Մատթեոս Ե.22, տողատակի ծանոթություն *դ*): Դուք կարող եք նաև բացատրել, որ Յոթանասունից Երեց Դեյվիդ Ի. Մորենսենը սովորեցրել է, որ «հաշտվիր քո հակառակորդի հետ արագ» արտահայտությունը (3 Նեփի 12.25 հատվածում) նշանակում է. «վաղ լուծել մեր տարաձայնությունները, որպեսզի պահի տակ կրքերը չուժեղանան, դառնալով ֆիզիկական կամ էմոցիոնալ դաժանություն, և մենք գերի չդառնանք մեր բարկությանը» («Ներողամտությունը դառնությունը կփոխի սիրո», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2003, 11):

Երբ ուսանողները վերջացնեն իրենց հանձնարարված հատվածների ուսումնասիրությունը, հրավիրեք յուրաքանչյուր խմբի հաղորդել իրենց պատասխանները: Դուք կարող եք հանձնարարել նրանց գրել իրենց պատասխանները սխեմայում գրատախտակի վրա:

- Ի՞նչն էր, որ թվում էր փոխվեց Մովսեսի օրենքի և Հիսուս Քրիստոսի կողմից ուսուցանվող բարձրագույն օրենքի միջև:

Դուք կարող եք մատնանշել, որ բարձրագույն օրենքը կենտրոնանում է ավելի շատ մեր ցանկությունների, մտքերի և դրդապատճառների վրա, քան մեր արտաքուստ գործողությունների:

- Երբ մենք ձգտում ենք կատարելագործվել, ինչո՞ւ է այդքան կարևոր կենտրոնանալ մեր ցանկությունների, մտքերի և դրդապատճառների վրա:

Հրավիրեք ուսանողներին ընտրել Փրկչի ուսմունքներից մեկը 3 Նեփի 12 հատվածից և գրել մի պարբերություն այն մասին, թե ինչպես նրանք կարող են առաջընթաց ունենալ այդ բնագավառում:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 12.19–20 հատվածները: Օգնեք ուսանողներին հասկանալ, որ ապաշխարելով և ջանասիրաբար փորձելով պահել պատվիրանները, որոնք ուսուցանվել են Փրկչի կողմից, մենք կարող ենք կատարյալ դառնալ Քավության միջոցով և «մտնել երկնային արքայություն» (3 Նեփի 12.20):

Այս վարժությունները կատարելուց հետո, ուսանողներին հրավիրեք կիսվել, թե ինչն էր նրանց համար ամենահիմաստալին: Ամփոփեք այս գլուխը՝ գրատախտակին գրելով հետևյալ սկզբունքը. ***Երբ մենք գալիս ենք դեպի Քրիստոս և պահում Նրա պատվիրանները, մենք ավելի նման ենք դառնում Նրան և մեր Երկնային Հորը, ով կատարյալ է:*** Հիշեցրեք ուսանողներին, որ որևէ աստիճանի կատարելություն ձեռք բերելու համար, մենք պետք է ապավինենք Հիսուս Քրիստոսի Քավությանը: Հրավիրեք ուսանողներին գրել մեկ կամ երկու ուղիներ, որոնց միջոցով իրենք կկամենային կիրառել Փրկչի ուսմունքները, որոնք նրանք սովորեցին այսօր: Եզրափակեք, կիսվելով ձեր վկայությամբ այն սկզբունքի վերաբերյալ, որը գրել եք գրատախտակին:

## Սերտման սուրբ գրություն. 3 Նեփի12.48

Հրավիրեք ուսանողներին բացել իրենց սուրբ գրություններում 3 Նեփի 12.48 հատվածը: Խնդրեք նրանց միասին բարձրաձայն կարդալ հատվածը: Ուսանողներին ժամանակ տվեք ուսումնասիրել հատվածը, իսկ հետո խնդրեք նրանց փակել իրենց սուրբ գրությունները և կրկին արտասանել հատվածը, այնքան կատարյալ, որքան կարող են: Հանձնարարեք նրանց կրկնել գործընթացը՝ նայելով հատվածը, փակելով սուրբ գրությունները, իսկ հետո անգիր արտասանելով հատվածը:

- Ինչպե՞ս բարելավվեցիք ջանքեր գործադրելով:
- Ինչպե՞ս է այս վարժությունն օգնում ձեզ հասկանալ ձեր ճանապարհորդությունը դեպի կատարելություն:

Մատնանշեք, որ մեր ջանքերը կյանքում խիստ կարևոր են: Սակայն ուսանողներին հիշեցրեք, որ Տերը չի սպասում, որ մենք կատարյալ դառնանք բոլոր բաներում մեր մահկանացու կյանքի ընթացքում: Քավության և Փրկչին հետևելու մեր ջանասեր ջանքերի միջոցով մենք, ի վերջո, կկատարելագործվենք: Հրավիրեք ուսանողներին մտածել մի ուղու մասին, որով իրենք կկարողանան ձգտել հետևել Փրկչին:

*Հուշում.* Այս դասի երկարության պատճառով դուք կարող եք օգտագործել այս միջոցառումը մեկ այլ օր, երբ դուք ավելի շատ ժամանակ կունենաք:

ԴԱՍ 123

# 3 Նեփի 13

## Նախաբան

Փրկիչը շարունակեց Իր քարոզը տաճարի մոտ Լիառատ երկրում: Նա նախազգուշացրեց ժողովրդին կեղծավորության դեմ և ուսուցանեց նրանց կատարել արդար գործեր՝ Երկնային Հորը գոհացնելու համար: Նա նաև հրահանգեց բազմությանը գանձեր հավաքել երկնքում և Իր աշակերտներին ուղղորդեց՝ իրենց սեփական նյութական մտահոգություններից առաջ որոնել Աստծո արքայությունը:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 13.1–18

*Փրկիչը նախազգուշացնում է Նեփիացիներին կեղծավորության դեմ և ուսուցանում նրանց կատարել արդար գործեր՝ գոհացնելու Երկնային Հորը*

Նախքան դասը պատրաստեք մի ուսուցողական նյութ հետևյալ ինքնագնահատման վերաբերյալ և օրինակներ պատրաստեք յուրաքանչյուր ուսանողի համար: Եթե դա հնարավոր չէ, դուք կարող եք ներկայացնել գնահատումը բանավոր կամ գրել այն գրատախտակին:

1. Ես ողորմություններ եմ անում (կրոնական նվիրվածության կամ ծառայության գործեր ուրիշների համար,) որովհետև.
   ա. Ես պարտավոր եմ.
   բ. Ես սիրում եմ Տիրոջը և բավականություն եմ ստանում օգնելով այլ մարդկանց:
   գ. Ես ուզում եմ, որ ուրիշները լավ կարծիք ունենան իմ մասին:
2. Ես աղոթում եմ, որովհետև.
   ա. Ես ուզում եմ կարողանալ ասել իմ ծնողներին կամ իմ եպիսկոպոսին «այո», երբ նրանք ինձ հարցնում են, թե արդյոք աղոթո՞ւմ եմ:
   բ. Դա ուղղակի, իմ ամենօրյա գործերի մի մասն է:
   գ. Ես կամենում եմ հաղորդակցվել իմ Երկնայի Հոր հետ:
3. Ես ծոմ եմ պահում, որովհետև.
   ա. Ծոմապահությունն օգնում է ինձ ավելի մոտենալ Տիրոջը:
   բ. Ուրիշ մարդիկ կմտածեն ես թույլ եմ, եթե չանեմ:
   գ. Ծնողներս ասում են , որ պետք է անեմ:

Դասը սկսելու համար խնդրեք ուսանողներին լրացնել ինքնագնահատման թերթիկը (կամ ուսուցողական թերթիկի վրա կամ տետրում կամ էլ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում), նշելով, թե որ արտահայտություններն են լավագույնս նկարագրում իրենց շարժառիթները կամ ողորմություններ անելու, աղոթելու և ծոմ պահելու դրդապատճառները: Հավաստիացրեք ուսանողներին, որ դուք չեք խնդրի նրանց կիսվել իրենց պատասխաններով ուրիշների հետ: Երբ ուսանողներն իրենց ինքնագնահատումը վերջացնեն, նշեք, որ հնարավոր պատասխանները, որոնք թվարկված են ողորմություններ անելու, աղոթելու և ծոմ պահելու տակ, արտացոլում են տարբեր շարժառիթներ կամ դրդապատճառներ, որոնք մենք կարող է ունենանք՝ անելու այս կամ այն ավետարանի հետ կապված գործերը (մենք կարող է անենք դրանք, օրինակ՝ ելնելով պարտավորությունից կամ հարկադրանքից, ուրիշ մարդկանց վրա տպավորություն թողնելու համար, կամ գոհացնելու Երկնային Հորը):

- Արդյոք նշանակություն ունի՞, թե ինչու ենք անում արդար գործեր: Ինչու՞ և ինչո՞ւ ոչ:

Գրեք հետևյալ թեմաները և ուղեկցող սուրբ գրությունների հղումները գրատախտակին (դուք կարող եք անել այս նախքան դասը սկսելը):

*Ողորմություններ. 3 Նեփի 13.1–4*

*Աղոթք.3 Նեփի 13.5–6*

*Ծոմ. 3 Նեփի 13.16–18*

Բացատրեք, որ 3 Նեփի 13 գլխում պատմվում է, թե ինչպես Հիսուս Քրիստոսը շարունակեց հրահանգել Նեփիացիների բազմությանը տաճարի մոտ և նրանց ուսուցանեց ողորմություններ անելու, աղոթելու և ծոմ պահելու մարդու շարժառիթների կարևորության մասին:

Հրավիրեք ուսանողներին ընտրել գրատախտակի վրայի թվարկվող երեք թեմաներից մեկը: Խնդրեք նրանց մտքում կարդալ առնչվող սուրբ գրության հատվածը՝ որոնելով պատասխաններ հետևյալ հարցերին (դուք կարող եք գրել այս հարցերը գրատախտակին).

- Ի՞նչ շարժառիթի դեմ Տերը նախազգուշացրեց, երբ մենք անենք այս գործերը:
- Ինչպե՞ս Տերը պատվիրեց, որ մենք անենք այս գործերը:

Նախքան ուսանողների սկսելը, օգտակար կլինի բնորոշել *կեղծավորին* որպես մեկը, ով արդարակեցության կեղծ տեսք է ընդունում կամ ով ասում է մի բան, բայց անում մեկ այլ բան:

Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել պատասխաններով, որոնք նրանք գտել են՝ պատասխանելով այդ երկու հարցերին: (Իրենց հետազոտություններից ուսանողները պետք է հայտնաբերեն, որ Տերը նախազգուշացրել է՝ մարդկանց երևալու համար արդար գործեր անելու դեմ և ուսուցանել է, որ մենք արդար գործեր պետք է անենք Երկնային Հորը գոհացնելու համար:) Օգնելու ուսանողներին ավելի խորը մտածել և կիրառել Փրկչի ուսմունքները, ուղղեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս կարող են արդար գործեր անելու մեր շարժառիթներն ազդել այն ձևի վրա, որ մենք անում ենք դրանք:
- Որո՞նք են այն մի քանի արդար շարժառիթները, որոնք կարող են ոգեշնչել մարդուն ողորմություններ անել, աղոթել կամ գաղտնի ծոմ պահել:

Գրատախտակին գրեք հետևյալը. *Եթե մենք անում ենք արդար գործեր գոհացնելու Երկնային Հորը . . .*

- Համաձայն 3 Նեփի 13.4, 6, 18, ի՞նչ օրհնություն կգա նրանց, ովքեր արդար գործեր են անում՝ գոհացնելու Երկնային Հորը: (Երբ ուսանողները պատասխանեն, լրացրեք գրատախտակի վրայի միտքը.***Եթե մենք արդար գործեր ենք անում գոհացնելու Երկնային Հորը, Նա կվարձատրի մեզ հայտնապես:*** )

Հրավիրեք ուսանողներին համառոտակի վերանայել իրենց ինքնագնահատումը և ողորմություններ անելու, աղոթելու կամ ծոմ պահելու համար գնահատել իրենց շարժառիթները: Խրախուսեք նրանց մտածել, թե ինչպես կարող են կիրառել Փրկչի ուսմունքները, բարելավելու իրենց շարժառիթները այս և ուրիշ գործեր անելու համար, ինչպես օրինակ՝ սուրբ գրության ուսումնասիրությունը, տասանորդ վճարելը, Եկեղեցի հաճախելը և հաղորդությունը ճաշակելը:

***Բացատրել դժվար բառերը կամ արտահայտությունները***

Սուրբգրքյան լեզուն կարող է երբեմն դժվար հասկանալի լինել ուսանողների համար: Դժվար բառերն ու արտահայտությունները բացատրելը կարող է օգնել ուսանողներին ավելի լավ հասկանալ ոչ միայն տվյալ հատվածի բովանդակությունը, այլ նաև գրողի մարգարեական ուղերձն ամբողջապես: Բառարանները, տողատակի ծանոթագրությունները և սուրբ գրքերի ուսումնասիրության ուղեցույցները կարող են օգտակար միջոցներ լինել՝ օգնելու ուսանողներին հայտնաբերել որոշակի խոսքերի և արտահայտությունների իմաստը:

## 3 Նեփի 13.19–24

### *Հիսուս Քրիստոսն ուսուցանում է բազմությանը գանձեր դիզել երկնքում*

Գրատախտակին գրեք հետևյալ արտահայտությունները. *Գանձեր Երկրի վրա* և *Գանձեր Երկնքում:* Հրավիրեք ուսանողներին քննարկել հետևյալ հարցը որևէ ընկերակցի հետ:

- Որո՞նք են երկրի վրայի գանձերի և երկնքի գանձերի մի քանի օրինակները:

Այս հարցը զույգերով քննարկելու համար ուսանողներին ժամանակ տրամադրելուց հետո, դուք կարող եք խնդրել մի քանիսին կիսվել իրենց պատասխաններով դասարանի հետ: Մտածեք նշել մի օրինակ ձեր կյանքից երկրի վրա գանձերի վերաբերյալ (դուք կարող եք ցուցադրել թանկարժեք ունեցվածք, որին դուք տնօրինում եք) և երկնքում գանձի մի օրինակ (դուք կարող եք ցուցադրել ձեր ընտանիքի նկարը կամ նշել ձեր վկայության կարևորությունը): Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 13.19–23 հատվածները: Խնդրեք դասարանին հետևել ընթացքում և գտնել Փրիչի տված խորհուրդը՝ երկրի վրա գանձերի և երկնքում գանձեր որոնելու վերաբերյալ:

- Համաձայն 3 Նեփի 13.19–20 հատվածների, ինչպե՞ս են տարբերվում երկրի վրայի գանձերը երկնքի գանձերից:

- Ինչպե՞ս կարող է գանձեր որոնելը երկրի վրա շեղել մեզ երկնքում գանձեր որոնելուց: (Դուք կարող եք հստակեցնել, որ Փրկիչը չէր ուսուցանում, որ փողը կամ երկրային ունեցվածքները չարիք են, ավելի շուտ Նա շեշտում էր մեր սրտերը երկնային գանձերի վրա դնելու կանորության մասին, որոնք կհարատևեն:)
- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում «եթե . . .քո աչքը պարզ լինի» արտահայտությունը3 Նեփի 13.22 հատվածում (Ուսանողներին օգնելու համար, որ հասկանան այս արտահայտության իմաստը, նրանց ուղղորդեք դեպի Թեմատիկ Ուղեցույցի տողատակի ծանոթագրության 22 *գ. ի վրա:*) Ինչպե՞ս կարող եք նվիրվածություն ցույց տալ՝ դիզելով գանձեր երկնքում:

Հրավիրեք որևէ ուսանողի գրել *Աստված* բառը թղթի մի թերթիկի վրա և դնել այն դասասենյակի մի կողմում: Հրավիրեք մեկ այլ ուսանողի գրել *Աշխարհիկություն* բառը թղթի մի թերթիկի վրա և դնել այն դասասենյակի հակառակ կողմում: Խնդրեք մի երրորդ ուսանողի կանգնել դասարանի առջև և նայել թղթին, որի վրա գրված է *Աստված:* Ապա հանձնարարեք ուսանողին շրջվել և նայել թղթին, որ վրա գրված է *Աշխարհիկություն:* Հրավիրեք ուսանողին փորձել նայել երկու թերթիկներին միևնույն ժամանակ: Խնդրեք դասարանին մտքում կարդալ 3 Նեփի 13.24 հատվածը և մտածել, թե ինչպես է այս հատվածը կապված երկու թերթիկներին միաժամանակ նայելու ուսանողի փորձի հետ: Բացատրեք, որ *մամոնա* բառը ներկայացնում է աշխարհիկություն կամ հարստություններ:

- Ինչպե՞ս է Աստծուն և մամոնային ծառայել ձգտելը նման երկու պատերին միևնույն ժամանակ նայել փորձելուն:
- Աստծուն և մամոնային միևնույն ժամանակ ծառայել փորձելու ինչպիսի՞ օրինակներ կարող եք բերել:

Հրավիրեք դասարանին կանգնել և նայել թերթիկին, որի վրա գրված է*Աստված:*

- Ինչո՞ւ է ձեզ համար կարևոր, որ դուք որպես ձեզ տեր ունենաք Աստծուն:
- 3 Նեփի 13.24 հատվածիՓրկչի խոսքերից ելնելով, ինչպե՞ս կարող եք ասել, թե Աստված է ձեր տերը: (Չնայած ուսանողները կարող են տալ բազմաթիվ ճիշտ պատասխաններ, հավաստիացեք, որ նրանք հասկանան հետևյալ սկզբունքը. **Որպեսզի Աստծուն ունենանք որպես մեր տեր, մենք պետք է սիրենք և ծառայենք Նրան աշխարհի բաներից առավել:** )

Մինչ ուսանողները մնում են կանգնած, կարդացեք ներքևի օրինակները և խնդրեք նրանց նայել դասասենյակի այն կողմը, որը ներկայացնում է այն տիրոջը, որին նրանց կարծիքով այդ անձնավորությունը ծառայում է՝*Աստծուն* կամ *Աշխարհիկությանը* (մամոնային): Խնդրեք ուսանողներին բացատրել, թե ինչո՞ւ շրջվեցին այն ուղղությամբ, որ ուղղությամբ որ շրջվեցին: (Դուք կարող եք հարմարեցնել այս օրինակները ըստ այն ուսանողների հանգամանքների և հետաքրքրությունների, ում դուք ուսուցանում եք:)

1. Մի երիտասարդ մերժում է այն աշխատանքը, որը կպահանջեր իրենից բաց թողնել իր կիրակնօրյա ժողովները և փոխարենը ընտրում ավելի ցածր աշխատավարձով աշխատանք, որը նրանից չի պահանջում բացակայել իր ժողովներից:
2. Մի երիտասարդ կին հաճախ բողոքում է իր ծնողներին նոր հագուստների իր պահանջի վերաբերյալ: Հագուստները, որոնք նա ցանկանում է գնել, արժեն ավելի, քան նրա ընտանիքը կարող է թույլ տալ գնել:
3. Մի երիտասարդ կանոնավորապես վճարում է իր տասանորդը այն փողից, որ նա ստանում է իր աշխատանքից: Սակայն, նա ողջ իր մնացած եկամուտն օգտագործում է՝ գնելու զվարճության համար իրեր, ներառյալ մի քանի անպատշաճ տեսաֆիլմեր և երգեր, և նա չի խնայում փող միսիայի կամ կրթության համար:
4. Մի երիտասարդ կին հաճախ օգտագործում է իր եկամտի մի մասը, որ գնի փոքր նվերներ՝ իր սերը ուրիշների հանդեպ ցույց տալու համար:

Վարժությունից հետո հրավիրեք ուսանողներին նստել, իսկ հետո ուղղեք նրանց հետևյալ հարցերը.

- Ձեր փորձառությունից ելնելով, ինչո՞ւ դժվար կարող է լինել միշտ սիրել և ծառայել Աստծուն աշխարհի բաներից առավել: Ինչո՞ւ Աստծուն առաջինը դնելու համար արժե ջանք թափել:

## 3 Նեփի 13.25–34

*Փրկիչն ուղղորդում է տասներկու աշակերտներին որոնել Աստծո արքայությունը՝ նախքան իրենց իսկ նյութական մտահոգությունների մասին հոգալը*

Ամփոփեք 3 Նեփի 13.25–31, պատմելով ուսանողներին, որ Հիսուս Քրիստոսը հրահանգեց Իր տասներկու աշակերտներին չանհանգստանալ իրենց նյութական կարիքների՝ ուտելիքի և հագուստի մասին: Մատնանշեք, որ չնայած այս ուսմունքները հատուկ տրվել են տասներկու առաքյալներին, ներքևում գտնվող սկզբունքները կարող են կիրառվել համընդհանուր: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 13.32–33: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել և հասկանալ, թե ինչպես է Փրկիչը մխիթարել Իր աշակերտներին նրանց նյութական կարիքների առնչությամբ:

- Ինչպե՞ս կարող է հասկանալը, որ Աստված գիտի մեր կարիքները, օգնել մեզ:
- Համաձայն 3 Նեփի 13.33 հատվածի, ինչ խոստացավ Հիսուս Քրիստոսը նրանց, ովքեր առաջին տեղում դրեցին Աստծուն և Նրա արքայությունն իրենց կյանքում: (Չնայած ուսանողները կարող են տարբեր ձևերով պատասխանել, հավաստիացեք, որ նրանք հասկանում են հետևյալ սկզբունքը. **Եթե մենք առաջինը որոնենք Աստծո արքայությունը, Նա մեզ կօգնի ապահովել մեր կարիքները:** Դուք կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին:)
- Ի՞նչ եք զգում, երբ որևէ մտերիմ ընկեր կամ ընտանիքի անդամ ձեր հետաքրքրությունները և կարիքները վեր է դնում իր սեփականից: Ի՞նչ ենք հաղորդում Երկնային Հորն ու Փրկչին, երբ մենք Նրանց վեր ենք դնում մեր նյութական կարիքներից ու հետաքրքրություններից:

Հրավիրեք ուսանողներին գրել տետրերում և սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում նպատակ մի բանի վերաբերյալ, որ իրենք կարող են անել, որ ավելի լիովին առաջինը դնելն Աստծուն իրենց կյանքում: Դուք կարող եք եզրափակել դասը, բերելով վկայություն այն օրհնությունների մասին, որոնք դուք եք զգացել, երբ ձգտել եք առաջինը դնել Աստծուն և Նրա արքայությունը ձեր կյանքում:

ԴԱՍ 124

# 3 Նեփի 14

## Նախաբան

Երբ Հիսուս Քրիստոսը շարունակեց Իր քարոզը Լիառատում տաճարի մոտ, Նա նախազգուշացրեց ժողովրդին ուրիշներին դատելու մասին և նրանց սովորեցրեց ձգտել օրհնությունների Երկնային Հորից՝ աղոթելով և կատարելով Նրա կամքը: Փրկիչը նաև նախազգուշացրեց նրանց կեղծ մարգարեների մասին և շեշտեց Աստծո կամքը կատարելու կարևորության մասին:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 14.1–6

*Փրկիչն ուսուցանում է արդար դատողություններ անել*

Ուսանողներին Փրկչի ուսմունքներն ուսումնասիրելուն նախապատրաստելու համար, կարդացեք Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի կողմից պատմած հետևյալ պատմությունը.

Մի երիտասարդ զույգ՝ Լիզան և Ջոնը, տեղափոխվեցին նոր բնակավայր: Մի առավոտ, երբ նրանք նախաճաշում էին, Լիզան դուրս նայեց պատուհանից և տեսավ իր կողքի հարևանին, որը լվացք էր փռում:

«Այդ սպիտակեղենը մաքուր չէ», բացականչեց Լիզան: «Մեր հանանը մաքուր լվացք անել չգիտի»:

«Ջոնը շարունակեց նայել, բայց լուռ մնաց»:

«Ամեն անգամ, երբ նրա հարևանը լվացք էր փռում, որ չորանար, Լիզան անում էր նույն դիտողությունները»:

Մի քանի շաբաթ անց Լիզան զարմացավ՝ նայելով իրենց պատուհանից և տեսնելով իր հանանի բակում հիանալի մաքուր փռված լվացքը: Նա ասաց իր ամուսնուն. «Նայիր, Ջոն, նա վերջապես սովորեց, թե ինչպես ճիշտ լվանալ: Զարմանալի է, թե ինչպես նա արեց դա»:

«Ջոնը պատասխանեց. «Դեհ, սիրելիս, ես ունեմ պատասխան քեզ համար: Քեզ համար հետաքրքիր կլինի իմանալ, որ ես այս առավոտ վաղ վեր կացա և լվացա մեր պատուհանները» («Գթությունը երբեք չի խափանվում», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2010, 122):

- Ի՞նչ դասեր կարող ենք սովորել այս պատմությունից:

Բացատրեք, որ 3 Նեփի 14 գլուխը պարունակում է Նեփիացիներին ուղղված Փրկչի ուսմունքների շարունակությունը: Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ 3 Նեփի 14.1–2 հատվածները: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել և հասկանալ նախազգուշացումը, որը Հիսուս Քրիստոսն է տվել ուրիշներին դատելու մասին: Դուք կարող եք բացատրել, որ *չափել,*բառը, որը գտնվում է3 Նեփի 14.2 հատվածում, նշանակում է գնահատել: «Ինչ չափով որ չափեք» արտահայտությունը վերաբերվում է այն չափանիշին, որն անձնավորությունն օգտագործում է՝ գնահատելու կամ դատելու մյուս մարդկանց:

- Ինչպե՞ս կարտահայտեիք 3 Նեփի 14.2 հատվածի ճշմարտությունը ձեր իսկ բառերով: (Ուսանողների պատասխանները պետք է արտացոլեն հետևյալ ճշմարտությունը. **Մենք կդատվենք համաձայն նրա, թե ինչպես մենք կդատենք ուրիշներին:** )

Ուսանողներին օգնելու համար հասկանալ Փրկչի «մի դատիր» պատվիրանը 3 Նեփի 14.1 հատվածում՝ հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսի հետևյալ միտքը: Խնդրեք դասարանին լսել, թե ուրիշների մասին ինչպիսի դատողություններից մենք պետք է խուսափենք:

«Վերջին դատաստանը . . . այն ապագա իրադարձությունն է, որի ժամանակ մենք բոլորս կկանգնենք Քրիստոսի դատարանի առջև՝ դատվելու համաձայն մեր գործերի: . . . Ես հավատում եմ, որ «մի դատիր» սուրբգրքյան պատվիրանը ամենահստակորեն վերաբերվում է այս վերջին դատաստանին: . . .

. . . Ինչո՞ւ Փրկիչը պատվիրեց, որ մենք չդատենք վերջնական դատաստաններ: Ես հավատում եմ, այս պատվիրանը տրվեց, որովհետև մենք վերջնական դատաստան անելու իրավունք ենք վերապահում , երբ հայտարարում ենք, որ ինչ-որ անձնավորություն գնալու է դժոխք (կամ երկինք)՝ ինչ-որ առանձնահատուկ արարքի կամ որևէ հատուկ ժամանակի հետ կապված: Երբ մենք այդպես ենք անում, և մեծ գայթակղություն կա այդպես անելում, մենք վնասում ենք ինքներս մեզ և այն մարդուն, որին մենք երևակայում ենք, թե դատում ենք: . . .

. . . Ավետարանը հույսի ավետարան է, և ոչ ոք լիազորված չէ ժխտել Քավության ուժը, որը առաջ է բերում անձնական մեղքերի մաքրագործում և կյանքի բարեփոխում համապատասխան պայմանների դեպքում» (“‘Judge Not’ and Judging,” *Ensign,* Aug. 1999, 7, 9):

- Ինչպե՞ս է Երեց Օուքսի միտքն օգնում ձեզ հասկանալ Փրկչի «մի դատիր» պատվիրանը:

Ցուցադրեք փայտի մի փոքրիկ տաշեղ: Բացատրեք, որ տաշեղի համար մեկ այլ խոսք է*շյուղը:* Այնուհետև ցուցադրեք (կամ գրատախտակին գծեք) փայտի գերան կամ փայտի մի երկար կտոր: Հաղորդեք ուսանողներին, որ Փրկիչը դիմել է շյուղին ու գերանին, օգնելու մեզ հասկանալ այն խնդիրները, որոնք առաջանում են, երբ մենք անարդարացիորեն ենք դատում ուրիշներին: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 14.3–5 հատվածները, և խնդրեք դասարանին մտածել այն մասին, թե ինչ են իրենցից ներկայացնում շյուղը և գերանը:

- Ի՞նչ է ներկայացնում շյուղը: (Հանցանք, որը մենք տեսնում ենք մեկ ուրիշի մեջ:) Ի՞նչ է ներկայացնում գերանը: (Մեր սեփական հանցանքները:)

Մատնանշեք, որ Փրկչի համանմանությունը կենտրոնացած է առարկաների վրա, որոնք գտնվում են աչքում: Այդպիսի առարկաները կազդեն մարդու տեսողության վրա:

- Ինչպե՞ս կարող են մեր հանցանքներն ազդել այն բանի վրա, թե ինչպես ենք տեսնում ուրիշներին:

Հրավիրեք ուսանողներին մտածել, թե արդյոք պատշաճ է երբևէ դատողություններ անել ուրիշ մարդկանց մասին: Նրանց ժամանակ տվեք խորհելու այս հարցի շուրջ: Այնուհետև բացատրեք, որ Մատթեոս Է.1 հատվածիոգեշնչված թարգմանության մեջ Մարգարե Ջոզեֆ Սմիթը պարզեցրեց ուրիշներին դատելու վերբերյալ Փրկչի ուսմունքը: Համաձայն Ջոզեֆ Սմիթի՝ Փրկիչն ասել է. «Մի դատեք անարդար ձևով, որպեսզի չդատվեք. այլ արդար դատաստանով դատեք» (Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Մատթեոս Է.1 [ Մատթեոս Է.1, տողատակի ծանոթություն *ա*]): Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ հետևյալ բացատրությունը *«Հավատքին հավատարիմ» գրքույկից.*

«Երբեմն մարդիկ զգում են, որ սխալ է որևէ ձևով դատել ուրիշներին: Չնայած ճիշտ է, որ դուք չպետք է ուրիշներին դատապարտեք, ձեզ անհրաժեշտ կլինի դատողություններ անել գաղափարների, իրավիճակների և մարդկանց մասին ձեր ողջ կյանքի ընթացքում: Տերը բազմաթիվ պատվիրաններ է տվել, որոնք չեք կարող պահել առանց դատողություններ անելու» ( *Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում* [2005], 49):

Ուսանողներին օգնելու համար տեսնել, որ Փրկիչն ուսուցանել է արդար դատողություններ անելու կարևորության մասին, հրավիրեք նրանց մտքում կարդալ3 Նեփի 14.6 հատվածը: Խնդրեք նրանց գտնել մի քանի դատողություններ, որոնք Նա հրահանգել է մեզ կատարել: Խնդրեք նրանց հաղորդել իրենց գտածի վերաբերյալ:

- Ի՞նչ է նշանակում տալ այն, ինչ սուրբ է շներին կամ գցել մարգարիտները խոզերի առջև: ( Կիսվել ինչ-որ բանով, որը սրբազան է, նրանց հետ, ովքեր չեն գնահատի այն կամ հարգի դրանց սրբազանությունը:)
- Ինչպե՞ս է Փրկչի խորհուրդը 3 Նեփի 14.6 հատվածում մեզանից պահանջում ուրիշների վերաբերյալ դատողություններ անել:

Ուսանողների պատասխանելուց հետո, կարդացեք Երեց Դալլին Հ. Օուքսի հետևյալ միտքը այլ իրավիճակների մասին, երբ մենք պետք է արդար դատողություններ անենք.

«Մենք բոլորս դատողություններ ենք անում՝ մեր ընկերներին ընտրելիս, ընտրելիս, թե ինչպես ծախսենք մեր ժամանակը և մեր փողը և, իհարկե, հավերժական կողակից ընտրելիս։ . . .

. . . Արդար դատողությունը առաջնորդվում է Տիրոջ Հոգու կողմից, ոչ թե՝ բարկության, վրեժխնդրության, նախանձության, կամ շահախնդրության» (“‘Judge Not’ and Judging,” 9)։

- Ինչո՞ւ է կարևոր արդար դատողություններ անել այն բնագավառներում, ինչպես օրինակ՝ ընկերներ ընտրելիս, որոշելիս, թե ինչպես անցկացնել մեր ժամանակը և փողը ծախսելիս ու հավերժական կողակից ընտրելիս։
- Էլ ի՞նչ իրավիճակներ կարող են լինել, երբ մենք կարիք ենք ունենում դատողություններ անել ուրիշների մասին։ (Ուսանողները կարող են նշել ապագա գործատուներ ընտրելիս կամ որոշելիս, թե արդյոք ընդունեն հրավերն ու գնան ժամադրության։)

## 3 Նեփի 14.7–11

### *Փրկիչն ուսուցանում է Երկնային Հոր կողմից օրհնություններ փնտրելու մասին*

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 14.7–11 հատվածները, որոնելով Փրկչի ուսմունքները՝ մեր աղոթքներին պատասխանելիս Երկնային Հոր հոժարակամության մասին։ Բացատրեք, որ եթե երկրային հայրերը, ովքեր բարի են և սիրառատ, բայց անկատար, կամենում են տալ իրենց երեխաներին հաց և ձուկ քարերի և օձերի փոխարեն, մեր Երկնային Հայրը, ով կատարելապես բարի է և սիրառատ, իհարկե կպատասխանի Իր զավակների օգնության համար հղվող աղոթքներին։

- Ի՞նչ սկզբունքներ կարող ենք սովորել3 Նեփի 14.7–11 հատվածներում։ (Ուսանողները կարող են հասկանալ տարբեր սկզբունքներ։ Մի սկզբունք, որը մենք կարող ենք շեշտել, այն է, որ **Երկնային Հայրն օրհնում է մեզ, երբ մենք աղոթում ենք Նրա օգնության համար։**)
- Ինչո՞ւ է կարևոր ձեզ համար իմանալ, որ Երկնային Հայրը կպատասխանի ձեր աղոթքներին։
- Ե՞րբ եք զգացել Երկնային Հոր սերը ձեր հանդեպ՝ ձեր աղոթքներին Նրա պատասխանելու ձևից։ (Դուք կարող եք ուսանողներին մի պահ ժամանակ տալ, այս հարցի շուրջ խորհելու համար, նախքան իրենց պատասխանելը։ Մտածեք նաև ձեր սեփական փորձառությամբ կիսվելու մասին։)

## 3 Նեփի 14.12–27

### *Փրկիչն ուսուցանում է Երկնային Հոր կամքը կատարելու կարևորության մասին*

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ3 Նեփի 14.12 հատվածը, և խնդրեք նրանց մտածել, թե ինչպես Փրկչի այս հատվածի ուսմունքը կարող է օգնել նրանց ավելի նման դառնալ Երկնային Հորը։

- Ինչպե՞ս կարող է 3 Նեփի 14.12 հատվածի խորհուրդն օգնել մեզ ավելի նման դառնալ Երկնային Հորը։

Տեղեկացրեք ուսանողներին, որ երբ Փրկիչը շարունակեց ուսուցանել, Նա օգտագործեց հզոր համանմանություններ՝ օգնելու մեզ հասկանալ Երկնային Հոր կամքը կատարելու կարևորությունը։

Ուսանողներին նախապատրաստելու Փրկչի համանմանությունն ուսումնասիրելուն 3 Նեփի 14 գլխում, կատարեք հետևյալ վարժությունը.

Բաժանեք ուսանողներին 2–4 խմբերի։ Յուրաքանչյուր ուսանողի տվեք մի կտոր թուղթ։ Գրեք հետևյալ սուրբ գրությունների հղումները գրատախտակին և յուրաքանչյուր խմբին հանձնարարեք դրանցից մեկը.*3 Նեփի 14.13–14, 3 Նեփի 14.15–20, 3 Նեփի 14.24–27։* (Եթե դուք մեծ դասարան ունեք, ավելի քան մեկ խմբի հանձնարարեք սուրբ գրությունների հղումները։) Խնդրեք ուսանողներին կարդալ իրենց հանձնարարված սուրբ գրությունները և նկարեք Փրկչի օգտագործած

համանամնությունների օրինակները: Հանձնարարեք նրանց նաև գրել, թե ինչ սովորեցին այդ համանմանություններից:

Բավականաչափ ժամանակ անց, թող ուսանողները ցույց տան իրենց նկարները դասարանին և բացատրեն, թե ինչ սովորեցին: Երբ ուսանողները ներկայացնեն, թե ինչ սովորեցին, հղեք այնպիսի հարցեր, ինչպիսին հետևյալն են.

- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի ուսմունքներին հնազանդվելը նման նեղ արահետով քայլելուն: Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի ուսմունքները մերժելը նման լայն արահետով քայլելուն (Տես 3 Նեփի 14.13–14:) Որո՞նք են այն ուղիները, որոնցով Փրկչի ուսմունքները տարբերվում են աշխարհի ուսմունքներից:
- Ինչո՞ւ է գայլը հագնում ոչխարի հագուստ: (Տես 3 Նեփի 14.15 :) Ինչո՞ւ է գայլը հագնում ոչխարի հագուստ:
- Եթե ծառերը3 Նեփի 14.16–20 հատվածներում ներկայացնում են մարդկանց, ի՞նչ կարող են ներկայացնել պտուղները: (Պատասխանները կարող են ներառել մարդկանց մտքերը, խոսքերը, գործողությունները և ազդեցությունը ուրիշների վրա:)
- Երբ մենք լսում ենք Փրկչի խոսքերը և հետևում դրանց, ինչպե՞ս ենք մենք նման այն մարդուն, ով կառուցում է իր տունը ժայռի վրա: (Տես 3 Նեփի 14.24–25:) Եթե մենք չենք ընտրում հետևել Փրկչի խոսքերին, ինչպե՞ս ենք նմանվում այն մարդուն, ով կառուցում է իր տունը ավազի վրա: (Տես 3 Նեփի 14.26–27:)

Ուսանողների ելույթներից և քննարկումներից հետո, խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 14.21–23 հատվածները:

- Ի՞նչ կարող ենք սովորել 3 Նեփի 14.21 հատվածից: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, բայց նրանք պետք է հասկանան հետևյալ ճշմարտությունը [գրեք այդ ճշմարտությունը գրատախտակի վրա]. ***Մենք պետք է անենք Երկնային Հոր կամքը, որպեսզի մտնենք երկնքի արքայությունը:*** )
- Ինչպե՞ս կարող է այս ճշմարտությունը կապված լինել լայն և նեղ արահետների պատկերների հետ:

Ուսանողներին մի պահ տվեք խորհելու և կիրառելու համար այն, ինչ նրանք սովորեցին 3 Նեփի 14 գլխից: Հրավիրեք նրանց գրել տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում, թե ինչպես բարելավեն 3 Նեփի 14 գլխիՓրկչի ուսմունքներին հետևելու իրենց ջանքերը: Եթե ժամանակը թույլ տա, հրավիրեք մի քանի ուսանողների ամփոփել այն, ինչ սովորել են և կիսվել, թե ինչ են անելու իրենց սովորածի շնորհիվ: Դուք կարող եք եզարփակել, վկայելով այն օրհնությունների վերաբերյալ, որոնք դուք ստացել եք, երբ հետևել եք Երկնային Հոր կամքին:

ԴԱՍ125

# 3 Նեփի 15–16

## Նախաբան

Երբ Հիսուսը շարունակեց ժողովրդին ուսուցանելը Լիառատ երկրի տաճարի մոտ, Նա հայտարարեց, որ Մովսեսի օրենքը կատարվեց և որ Ինքն էր լույսը և օրենքը, որին պետք է հետևեն մարդիկ: Ապա Նա բացատրեց տասներկու աշակերտներին, որ Ամերիկաների ժողովուրդը «ուրիշ ոչխարներն էին», որոնց մասին Նա խոսել էր Երուսաղեմում (տես Հովհաննես Ժ.14–16): Նա նաև խոստացավ, որ նրանք, ովքեր ապաշխարում են և վերադառնում դեպի Իրեն, կհամարվեն Իր ուխտի ժողովրդի թվում:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 15.1–10

*Փրկիչը հայտարարում է, որ Նա կատարել է Մովսեսի օրենքը:*

Նախքան դասը սկսվելը գրեք հետևյալ հարցերը գրատախտակին.

*Ինչո՞ւ վճարել տասանորդ: Ինչո՞ւ սուրբ պահել Հանգստության օրը: Ինչո՞ւ պատվել ծնողներին:*

Դասը սկսելու համար մատնացույց արեք գրատախտակի վրայի հարցերը և հարցրեք.

- Որոշ մարդիկ կարող է զարմանան, թե ինչո՞ւ է Տերը պատվիրաններ տալիս: Ինչպե՞ս կարող եք բացատրել պատվիրանների նպատակը:

Պատմեք ուսանողներին, որ երբ Հիսուս Քրիստոսն ուսուցանում էր Նեփիացիներին, Նա սովորեցնում էր նրանց, որ Իր պատվիրանների նպատակներից մեկը մարդկանց ուշադրությունը դեպի Իրեն ուղղելն էր: Հրավիրեք ուսանողներին որոնել այդ նպատակը, երբ նրանք ուսումնասիրեն 3 Նեփի 15 գլուխը:

Բացատրեք, որ երբ Փրկիչը խոսեց բազմության հետ, Նա զգաց, որ նրանց միջից ոմանք հարց ունեին: Խնդրեք ուսանողներին աչքի անցկացնել 3 Նեփի 15.1–2 հատվածները, գտնելու համար, թե ինչ էին այդ մարդիկ ուզում իմանալ: (Նրանք հետաքրքրվում էին, թե ինչ էր Փրկիչն ուզում, որ իրենք անեին «Մովսեսի օրենքի կապակցությամբ»:Նեփիացիների պաշտամունքը, ծիսակատարությունները և Եկեղեցու կազմակերպությունը կառուցվել էր Մովսեսի օրենքի հիման վրա՝ նախապատրաստելու մարդկանց Հիսուս Քրիստոսի գալուստին և օգնելու նրանց ապավինել Նրա քավող զոհաբերությանը: Ակնհայտորեն, ոմանք շփոթված էին, թե ինչ պետք է անեին Մովսեսի օրենքը պահելու փոխարեն:)

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 15.3–5, 9 հատվածները: Հրավիրեք դասարանին ընթացքում հետևել, որոնելով արտահայտություններ Փրկչի բացատրության մեջ, որոնք կարող էին հավաստիացնել Նեփիացիներին, որ նրանց հավատքը կարիք չկար փոխելու: Հանձնարարեք մի քանի ուսանողների կիսվել իրենց գտած արտահայտություններով: Խնդրեք նրանց բացատրել, թե ինչու էին նրանք կարծում, որ այս արտահայտությունները կարող էին օգտակար լինել Նեփիացիների համար:

- Ձեր կարծիքով, ի՞նչ էր ուսուցանում Հիսուսը, երբ Նա հայտարարեց, որ Ինքն է «օրենքը» (3 Նեփի 15.9):

Ուսանողները կարող են տալ տարբեր պատասխաններ: Երբ նրանք պատասխանեն, օգնեք նրանց հասկանալ հետևյալ ճշմարտությունները. (գրեք այս ճշմարտությունները գրատախտակի վրա): ***Հիսուս Քրիստոսն է օրենքի սկզբնաղբյուրը: Ավետարանի բոլոր օրենքները մեր ուշադրությունը կենտրոնացնում են Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության վրա: Եթե մենք հետևենք Նրա պատվիրաններին, մենք կստանանք հավերժական կյանք:***

- Ինչո՞ւ էր Նեփիացիների համար այս ճշմարտությունները հասկանալը կարևոր այդ ժամանակ: (Դուք կարող եք մատնանշել, որ Մովսեսի օրենքի նման, նոր

օրենքը ուշադրությունը կենտրոնացնում էր Փրկչի և Նրա Քավության վրա: Չնայած մարդկանց երկրպագության որոշ մեթոդներ կփոխվեին, նրանք կշարունակեին հավատք գործադրել առ Հիսուս Քրիստոս և երկրպագել Հորը Նրա անունով:)

Ամփոփեք 3 Նեփի 15.6–8 հատվածները, բացատրելով, որ Փրկիչը վերահավաստիացրեց ժողովրդին, որ ճիշտ ինչպես մարգարեների խոսքերը Քավչի վերաբերյալ իրականացել էր Իրենում, նրանց մարգարեությունները ապագա իրադարձությունների վերաբերյալ նույնպես տեղի էին ունենալու: Նա նաև բացատրեց, որ ուխտը, որ նա կապել էր Իր ժողովրդի հետ դեռ ուժի մեջ էր և իրագործվելու էր:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ3 Նեփի 15.9–10 հատվածները: Խնդրեք, որ դասարանը ընթացքում հետևի, որոնելով, թե ինչ է ուզում Փրկիչը, որ Իր ժողովուրդն անի ճշմարտությունների իրենց գիտելիքի հետ, որոնք գրված են գրատախտակին:

- Ի՞նչ է նշանակում ձեզ համար «հետևել» Քրիստոսին:

Խնդրեք ուսանողներին վերանայել 3 Նեփի 15.9–10 հատվածները և ամփոփել, թե ինչպես է Տերը կամենում, որ մենք մոտենանք այն ուղուն, թե ինչպես ենք ապրում ավետարանով և օրհնությունը, որը գալիս է արդյունքում: (Ուսանողները կարող է ամփոփեն այս հատվածը տարբեր ձևերով, բայց նրանց պատասխանները պետք է արտահայտեն հետևյալ սկզբունքը.**Եթե մենք նայենք Հիսուս Քրիստոսին, պահելով Նրա պատվիրանները և համբերելով մինչև վերջ, Նա կտա մեզ հավերժական կյանք:**)

- Արդյոք հնարավո՞ր է հետևել Հիսուս Քրիստոսին՝ առանց պահելու Նրա պատվիրանները: Ինչո՞ւ ոչ:

Հրավիրեք ուսանողներին մտածել այն հարցերի շուրջ, որոնք դուք գրեցիք գրատախտակին նախքան դասը:

- Արդյոք հնարավո՞ր է մարդու համար պահել պատվիրանները արտաքնապես՝ առանց հետևելու Հիսուս Քրիստոսին:
- Որո՞նք են այն մի քանի պատճառները, հանուն որոնց մարդ կարող է հնազանդվել պատվիրաններին արտաքնապես՝ առանց հետևելու Հիսուս Քրիստոսին: (Պատասխանները կարող են ներառել պարտականություն, պատժվելու վախը, ցանկություն ցույց տալու կամ ձևը պահելու համար, կամ կանոնների հանդեպ սերը:)
- Որո՞նք պետք է լինեն այն պատճառները, հանուն որոնց մենք պարտավոր ենք հնազանդվել պատվիրաններին: (Մենք պետք է պահենք պատվիրանները, որովհետև մենք սիրում ենք Տիրոջը, մենք ցանկանում ենք գոհացնել Նրան, և մենք ուզում ենք գալ դեպի Նա: )
- Ինչպե՞ս եք օրհնվել, երբ պահել եք պատվիրաններն անկեղծ միտումով:

Հրավիրեք ուսանողներին մտածել մի պատվիրանի կամ ավետարանի չափանիշի մասին, որը նրանց համար դժվար է եղել հասկանալ և հետևել: Հրավիրեք նրանց մտածել, թե ինչպես նրանց զգացումները այս պատվիրանի կամ չափանիշի հանդեպ կարող է փոխվել, եթե նրանց սերը Տիրոջ հանդեպ դառնա հնազանդվելու իրենց պատճառը: Խրախուսեք նրանց հնազանդվել պատվիրաններին Տիրոջ հանդեպ սիրուց ելնելով: Կիսվեք, թե ինչպես են պատվիրաններն օգնել ձեզ ավելի մոտենալ Երկնային Հորը և Փրկչին:

## 3 Նեփի 15.11–16.5

### *Հիսուս Քրիստոսը խոսում է Իր աշակերտների հետ Իր մյուս ոչխարների մասին*

Խնդրեք ուսանողներին բարձրացնել իրենց ձեռքերը, եթե նրանք երբևէ իրենց ավելի քիչ կարևոր են զգացել, քան որևէ մեկ ուրիշը: Խնդրեք նրանց մտածել, թե արդյոք զգացել են մոռացված կամ միայնակ, կամ արդյոք երբևէ կասկածել են, թե Երկնային Հայրը գիտի, թե ով են իրենք:

Գրեք հետևյալ միտքը գրատախտակին. ***Ասուված հոգ է տանում բոլոր իր զավակների համար և Նա Իրեն ցույց է տալիս նրանց:*** Հավաստիացրեք ուսանողներին այս ճշմարտության մասին և հրավիրեք նրանց որոնել այս

ճշմարտության ապացույցը, երբ նրանք ուսումնասիրեն 3 Նեփի 15 գլխի մնացած մասը և 3 Նեփի 16 գլխի սկիզբը:

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ 3 Նեփի 15.11–17 հատվածները, և խնդրեք ուսանողներին գտնել, թե Տերն ինչ ասաց Երուսաղեմի մարդկանց՝ Ամերիկաներում գտնվող Իր ժողովրդի մասին: Դուք կարող եք նաև հանձնարարել ուսանողներին կարդալ Հովհաննես Ժ.14–16 հատվածները: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ «ուրիշ ոչխարները» ակնարկ է Հովվի՝ Հիսուս Քրիստոսի ուրիշ հետևորդների մասին: *Հոտ* բառը կարող է վերաբերվել ոչխարի փարախին, բայց այն նաև արտահայտում է ընդհանուր հավատքով մարդկանց խումբ:)

- Համաձայն 3 Նեփի 15.17 հատվածի, ինչպե՞ս խոստացավ Տերը ցույց տալ Իրեն Իր ուրիշ ոչխարներին կամ հետևորդներին: (Նրանք կլսեն Նրա ձայնը:)

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ3 Նեփի 15.18–19 հատվածները : Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, որոնելով պատճառը, թե ինչո՞ւ Երկնային Հայրը պատվիրեց Հիսուս Քրիստոսին ետ պահել Իր ուրիշ ոչխարների մասին գիտելիքը Երուսաղեմի ժողովրդից: Երբ ուսանողներն իրենց գտածի մասին հաղորդեն, հարցրեք.

- Ի՞նչ սկզբունք կարող ենք սովորել սրանից: (Ուսանողների պատասխանները պետք է արտացոլեն հետևյալ սկզբունքը. **Աստված մեզ գիտելիք և ճշմարտություն է տալիս մեր հավատքի և հնազանդության համաձայն:**)

Ամփոփեք 3 Նեփի 15.21–23 հատվածները բացատրելով, որ Տերը պատմեց Նեփիացիներին, որ նրանք ուրիշ ոչխարներն են, որոնց մասին Նա խոսել էր, սակայն Հրեաները Երուսաղեմում մտածեցին, թե Նա խոսում էր Հեթանոսների մասին, կամ ոչ Իսրայելացիների մասին: Նրանք չհասկացան, որ Հեթանոսները անձնապես չէին լսի Նրա ձայնը:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 15.24 հատվածը, և խնդրեք դասարանին լսել, թե ինչպես Տերը հավաստիացրեց Նեփիացիներին նրանց հանդեպ Իր հոգատարության մասին: Դուք կարող եք հարցնել ուսանողներին, թե ինչպես նրանք կզգային, եթե նրանք լսեին Տիրոջն այս խոսքերն իրենց ասելիս:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 16.1–3 հատվածները և գտնել, թե էլ ով կարող է լսել Փրկչի ձայնը: Բացատրեք, որ մենք արձանագրություններ չունենք այլ վայրերի և մարդկանց մասին, ուր այցելել է Փրկիչը, բայց պարզ է, որ Նա այցելել է այլ խմբերի կամ «հոտերի»:

Ներկայացնելու համար այն միտքը, որ Փրկիչը Իրեն ցույց է տալիս նաև նրանց, ովքեր չեն լսում Իր ձայնը, տվեք հետևյալ հարցերը՝ նախքան ուսանողներին հրավիրելը փնտրել սուրբ գրությունները պատասխանի համար.

- Իսկ ի՞նչ կասեք նրանց մասին, ովքեր չեն լսում Փրկչի ձայնը: Ինչպե՞ս է Նա ցույց տալիս նրանց, որ Նա հոգ է տանում նրանց մասին:

Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել 3 Նեփի 15.22–23 հատվածները և 3 Նեփի 16.4 հատվածը, որոնելով, թե ինչպես Տերը հայտարարեց, որ Նա ցույց կտա Իրեն Հեթանոսներին (Ուրիշների քարոզելու միջոցով, Սուրբ Հոգու վկայության միջոցով, և մարգարեների գրվածքների միջոցով):

- Ինչպե՞ս են այս դրսևորումները ցույց տալիս, որ Աստված հոգ է տանում բոլոր Իր զավակներին:
- Ինչպե՞ս է Տերը ցույց տվել Իրեն ձեզ և ձեր ընտանիքին:
- Ինչպե՞ս կարող եք դուք օգնել Տիրոջը՝ ողջ Իր ժողովրդին Իրեն ցույց տալու ջանքերում:

## 3 Նեփի 16.6–20

### *Հիսուս Քրիստոսը օրինություններ և նախազգուշացումներ է տալիս Հեթանոսներին, ովքեր կընդունեն ավետարանը վերջին օրերում*

Հարցրեք ուսանողներին, թե նրանք երբևէ կամեցել են լինել ինչ-որ խմբի, ակումբի կամ թիմի անդամ: Հարցրեք, թե ինչ որակավորումներ են պահանջվել, այդ խմբի անդամը դառնալու համար, որին նրանք ուզել են միանալ: Խորհուրդ տվեք, որ ամենահիանալի խումբը, որի անդամները մենք կարող ենք դառնալ, Տիրոջ ուխտյալ խողովրդի խումբն է:

***Փնտրելու համար նախատեսված հարցեր***

Փնտրող հարցերն օգնում են ուսանողներին կառուցել սուրբ գրությունների հատվածի իրենց հիմնական ըմբռնումը՝ հրավիրելով նրանց որոնել կարևոր մանրամասներ, երբ նրանք կարդում են: Օգտակար է ուղղել այսպիսի հարցեր, նախքան ուսանողները կկարդան այդ հատվածները, որտեղ գտնվում է պատասխանը: Դա կենտրոնացնում է ուսանողների ուշադրությունը և օգնում նրանց հայտնաբերել պատասխանները սուրբ գրության տեքստում, երբ նրանք կարդում են:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 16.6–7 հատվածները: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, որոնելով այն բաները, որոնք Տերն ասել է կպատահեն վերջին օրերին, որովհետև Հեթանոսները կհավատան Իրեն, իսկ Իսրայելի տունը չի հավատա Իրեն: (Դուք կարող եք բացատրել, որ Մորմոնի Գրքի մարգարեները օգտագործել են *Հեթանոսներ* տերմինը այն մարդկանց վերաբերյալ, ովքեր Սուրբ Երկրից չէին: Ուստի, այդ բառը կարող է վերաբերվել Եկեղեցու անդամներին, ինչպես նաև անհավատներին և այլ հավատքների անդամներին:) Ուսանողների պատասխանները լսելուց հետո ամփոփեք 3 Նեփի 16.8–9 հատվածները, բացատրելով, որ Հիսուս Քրիստոսը մարգարեացավ, որ կլինեն նաև անհավատ Հեթանոսներ վերջին օրերում, ովքեր կցրեն և վատ կվերաբերվեն Իսրայելի տան անդամներին: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 16.10 հատվածը: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, որոնելով, թե ինչ կպատահի այս անհավատ Հեթանոսների հետ:

- Ի՞նչ հայտարարեց Տերը, որ անհավատ Հեթանոսները կկորցնեն:
- Ինչպե՞ս կարող է սա վերաբերվել նրանց, ովքեր գիտեն ճշմարտությունը, բայց բարձրամտանում են հպարտությունից:

Բացատրեք, որ Տերը խոստացել է պահել Իր ուխտը Իսրայելի տան հետ՝ ավետարանը նրանց բերելով (տես 3 Նեփի 16.11–12): Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ 3 Նեփի 16.13 հատվածը: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, որոնելով այն բաները, որոնք պահանջվում են մարդուց Տիրոջ ուխտի ժողովրդի անդամ դառնալու համար: Գրեք հետևյալը գրատախտակին. «*Եթե մենք . . . , ապա մենք . . .*: Խնդրեք ուսանողներին օգտագործել 3 Նեփի 16.13 հատվածը՝ այս միտքը լրացնելու համար: Ուսանողները պետք է կարողանան հասկանալ հետևյալ ճշմարտությունը. ***Եթե մենք ապաշխարենք և վերադառնանք դեպի Հիսուս Քրիստոսը, ապա մենք կհամարվենք Իր ժողովրդի շարքում:***

- Ինչո՞ւ է օրհնություն համարվում լինել Տիրոջ ժողովրդի շարքում:

Եզրափակեք, կիսվելով ձեր վկայությամբ այն ճշմարտությունների վերաբերյալ, որոնք ուսուցանվել են այսօրվա դասում:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 3 Նեփի 15.5–8: Ուխտը ամբողջովին չի կատարվել

Ի՞նչ ի նկատի ուներ Հիսուսը, երբ Նա ասաց. «Ուխտը, որը ես արել եմ իմ ժողովրդի հետ, ամբողջը չի կատարվել» (3 Նեփի 15.8): Եհովան ուխտ կապեց Աբրահամի հետ հնում: Աբրահամին խոստացվեց (1) հավերժական սերունդ, (2) ժառանգության երկիր, և (3) Աստծո քահանայության իշխանությունը: Այս խոստումներն արվել են նաև Աբրահամի սերնդին (տես ՎևՈՒ 132.30–31) և կկատարվեն ապագայում:

# Տնային ուսումնասիրության դաս

## 3 Նեփի 11.18–16.20 (մաս 25)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Վարդապետությունների և սկզբունքների հետևյալ համառոտ շարադրանքը, որն ուսանողները սովորեցին, երբ նրանք ուսումնասիրեցին 3 Նեփի 11.18–16.20 հատվածները (մաս 25), նախատեսված չէ ուսուցանել որպես ձեր դասի մաս: Դասը, որ դուք ուսուցանում եք, կենտրոնացած է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, երբ դուք մտածեք ձեր ուսանողների կարիքների մասին:

#### Օր 1 (3 Նեփի 11.18–12.48)

Ուսանողները սովորեցին, որ մկրտությունը պետք է կատարվի մի մարդու կողմից, ով կրում է համապատասխան իշխանությունը և պետք է կատարվի այն ձևով, ինչպես Տիրոջ կողմից սահմանվել է: Նրանք նաև ուսումնասրել են Քրիստոսի վարդապետությունը և իմացել, որ Սուրբ Հոգին վկայում է Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին: Երանիների իրենց ուսումնասիրության և բարձրագույն օրենքի Փրկչի բացատրության ժամանակ նրանք սովորեցին, որ եթե մենք ապրենք Հիսուս Քրիստոսի ուսմունքների համաձայն, մենք կօրհնվենք և կպատրաստվենք մտնել Երկնքի արքայությունը: Նրանք նաև սովորեցին, որ երբ մենք գալիս ենք դեպի Քրիստոս և պահում Նրա պատվիրանները, մենք կարող ենք ավելի նման դառնալ Նրան և մեր Հորը, որ Երկնքում է, ովքեր կատարյալ են:

#### Օր 2 (3 Նեփի 13)

Ողորմություն տալու, աղոթելու և ծոմ պահելու դրդապատճառների մասին Փրկչի ուսմունքներից ուսանողները սովորեցին, որ եթե մենք անենք արդար գործեր գոհացնելու Երկնային Հորը, Նա մեզ կվարձատրի հայտնապես: Երբ նրանք ուսումանսիրեցին Փրկչի ուսմունքները երկու տերերի ծառայելու անհնարինության մասին, նրանք սովորեցին հետևյալ սկզբունքները. Որպեսզի ունենանք Աստծուն որպես մեր Տեր, մենք պետք է սիրենք և ծառայենք Նրան աշխարհի բաներից վեր: Եթե մենք ձգտում ենք առաջինը Աստծո արքայությանը, Նա կօգնի մեզ ապահովել մեր կարիքները:

#### Օր 3 (3 Նեփի 14)

Արդար դատելու վերաբերյալ Փրկչի ուսմունքներն օգնեցին ուսանողներին հասկանալ, որ մենք կդատվենք համաձայն այն ձևի, ինչպես մենք ենք դատում ուրիշներին: Նրանք նաև սովորեցին, որ Երկնային Հայրն օրհնում է մեզ, երբ մենք աղոթում ենք Նրա օգնության համար: Ուսանողները նկարներ նկարեցին, որոնք պատկերում էին Փրկչի ուսմունքները և սովորեցին, որ մենք պետք է կատարենք Երկնային Հոր կամքը, որպեսզի մտնենք երկնքի արքայությունը:

#### Օր 4 (3 Նեփի 15–16)

Ուսանողները սովորեցին, որ Հիսուս Քրիստոսն է ավետարանի բոլոր օրենքների և պատվիրանների աղբյուրը: Եթե մենք հետևում ենք Նրան, պահելով Նրա պատվիրանները և համբերելով մինչև վերջ, Նա կտա մեզ հավերժական կյանք: Երբ ուսանողները ուսումնասիրեցին Փրկչի խոսքերը «ուրիշ ոչխարների մասին» (3 Նեփի 15.21), նրանք սովորեցին, որ Աստված հոգ է տանում բոլոր Իր զավակների մասին և ցույց է տալիս Իրեն նրանց: Նրանք նաև սովորեցին, որ Աստված տալիս է մեզ գիտելիք և ճշմարտություն՝ համաձայն մեր հավատքի և հնազանդության:

## Նախաբան

Այս դասում ուսանողները կմտածեն, թե ինչպես է հակառակությունն ազդում Հոգին զգալու իրենց ունակության վրա: Նրանք նաև կկարողանան մտածել նրանց մասին, ովքեր դրական օրինակ են եղել իրենց համար և կմտածեն, թե ինչպես իրենք կարող են ավելի լավ օրինակներ ծառայել ուրիշների համար:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 11.18–41

***Հիսուս Քրիստոսը սահմանում է մկրտության ձևը, դատապարտում է հակառակությունը և հայտարարում Իր վարդապետությունը***

Գրեք *հակառակություն* բառը գրատախտակին և խնդրեք ուսանողներին սահմանել այս բառը (բանավեճ, ընդհարում, կամ վիճաբանություն):

Հրավիրեք ուսանողներին համառոտ գրի առնել գրատախտակին որոշ իրավիճակներ կամ գործողություններ, որոնցում նրանք հակված կլինեն հակառակություն զգալ: (Դուք կարող եք մեկ ուսանողի հանձնարարել գրել, մինչ դասարանը կտա պատասխանները:) Այս անելիս ակտիվորեն խուսափեք նրանից, ինչ Երեց Դալլին Հ. Օուքսն անվանել է «հակառակորդի տեխնիկա», որը կարող է խրախուսել «վիճաբանություն և հակաճառություն» (*The Lord's Way* [1991], 139):

Հիշեցրեք ուսանողներին, որ3 Նեփի 11գլխում նրանք կարդացել են, որ Հիսուս Քրիստոսը հայտնվեց Նեփիացիներին, ովքեր հավաքվել էին տաճարի մոտ: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 11.28 հատվածը, և խնդրեք դասարանին գտնել այն թեան, որի շուրջ որոշ Նեփիացիներ հակառակություն էին ունեցել: (Ուսանողներին օգնելու համար, որպեսզի ավելի լավ հասկանան այս հատվածը, դուք կարող եք բացատրել, որ *վիճաբանություններ* բառը նշանակում է բանավեճեր կամ անհամաձայնություններ:)

Հարցրեք. Ինչո՞ւ եք կարծում, որ կարևոր է խուսափել վիճաբանություններից կամ հակառակությունից, երբ ուրիշների հետ քննարկում եք ավետարանը:

Գրեք հետևյալը գրատախտակին. *Հակառակության ոգին Աստծուց չէ, այլ . . .* Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 11.29–30 հատվածները, և խնդրեք ուսանողներին գտնել, թե որտեղից է գալիս հակառակության ոգին: Նրանց գտած ճշմարտությունը կարող է արտահայտվել հետևյալ ձևով. **Հակառակության ոգին Աստծուց չէ, այլ դևից:** Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այս ճշմարտությունը իրենց սուրբ գրություններում:

Հարցրեք. Ինչպե՞ս կարող է 3 Նեփի 11.29–30 հատվածների Փրկչի ուսմունքները հիշելը օգնել ձեզ, երբ դուք հայտնվեք մի իրավիճակում, որը կարող է հակառակություն առաջացնող լինել: (Դուք կարող եք ընդգծել գրատախտակին գրված առանձնահատուկ իրավիճակները, երբ ինչ որ մեկը կամենում է վիճել ավետարանի կետերի վերաբերյալ:)

Ուսանողներին օգնելու համար հասկանալ հակառակության մի կարևոր հետևանք, կարդացեք կամ ցույց տվեք Առաջին նախագահությունից Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստի հետևյալ միտքը. «Եթե հակառակություն կա, Տիրոջ Հոգին կհեռանա, անկախ նրանից, թե ով է մեղավոր»: (“What I Want My Son to Know before He Leaves on His Mission,” *Ensign,* May 1996, 41):

Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները գրեն այս միտքը իրենց սուրբ գրություններում, կամ իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:

Հարցրեք. Երբևէ զգացե՞լ եք, թե ինչպես է Տիրոջ Հոգին հեռացել հակառակության պատճառով: Ինչպիսի՞ զգացում եք ունեցել:

Ընդգծեք Փրկչի խոսքերը հակառակության վերաբերյալ 3 Նեփի 11.30-ում. «Այս է իմ վարդապետությունը, որ այդպիսի բաները պիտի վերացվեն»: Ապա տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս կարող ենք վերացնել հակառակությունը և վիճաբանությունը:
- Ինչպե՞ս կարող ենք չհամաձայնվել ուրիշների հետ և խուսափել հակառակությունից:
- Ի՞նչ ուղիներով եք օրհնված զգացել ձեր ջանքերի համար՝ խուսափելով կամ հաղթահարելով հակառակությունը:

Դուք կարող եք կիսվել մի փորձառությամբ, որ ունեցել եք, երբ օրհնված եք զգացել ձեր ջանքերի համար՝ խուսափելով կամ հաղթահարելով հակառակությունը: Հրավիրեք ուսանողներին հղում անել գրատախտակի վրայի գրված ցուցակին և ընտրել մի իրավիճակ, երբ նրանք կարող է հաճախ հակառակություն զգան: Նրանց ժամանակ տվեք՝ գրելու մի նպատակ, թե ինչպես նրանք կձգտեն խուսափել կամ հաղթահարել հակառակությունը այդ իրավիճակում:

## 3 Նեփի 12–16

***Հիսուս Քրիստոսն ուսուցանում է սկզբունքներ, որոնք օգնում են Իր զավակներին շարժվել դեպի կատարելություն:***

Հրավիրեք ուսանողներին կանգնել և արտասանել 3 Նեփի 12.48 հատվածը: Դուք գուցե կարիք ունենաք մի քանի անգամ փորձել, որպեսզի նրանք կարողանան անթերի արտասանել սուրբ գրության սերտման այս հատվածը: Խնդրեք ուսանողներին օգտագործել իրենց սուրբ գրությունները՝ ընդգծելու կատարելության որոշ առանձնահատկություններ, որոնք նշված են 3 Նեփի 12.1–12 հատվածներում, որոնք նրանք հույս ունեն զարգացնել ավելի մեծ չափով:

Գդալին դրեք փոքր քանակությամբ աղ և խնդրեք ուսանողներին գուշակել, թե ինչ նյութ է: Հետո հրավիրեք որևէ ուսանողի առաջ գալ և որոշել նյութը՝ այն համտես անելով: Երբ ուսանողը որոշի, որ այն աղ է, խնդրեք դասարանին թվել աղի օգտակար հատկությունները: Երբ նրանք պատասխանեն, հավաստիացեք, որ պարզ է, որ բացի ուտելիքին համ տալուց, աղն օգտագործվում է որպես պահպանիչ՝ կանխարգելելով մսի փչանալը:

Խնդրեք ուսանողներին կարդալ 3 Նեփի 12.13 հատվածը, պարզելու, թե ում հետ է Փրկիչը համեմատում աղը: Երբ ուսանողները պատասխանեն, բացատրեք, որ Նա ի նկատի ուներ ոչ միայն տաճարի մոտի բազմությանը այդ օրը, այլ նաև բոլորին, ովքեր մկրտվել են Իր ուխտում:

Հարցրեք. Ի՞նչպես կարող ենք մենք, որպես Հիսուս Քրիստոսի հետևորդներ, նման լինել աղի: (Մենք պետք է օգնենք պահպանել կամ փրկել մարդկանց և բարելավենք աշխարհը՝ ազդելով ուրիշների վրա ի բարին:)

Բացատրեք, որ 3 Նեփի 12.13 հատվածում *համ* բառը ոչ միայն աղի համին է վերաբերվում, այլ նաև այն ունի պահպանիչ հատկություն:

Խնդրեք որևէ ուսանողի կարդալ Յոթանասունից Երեց Կառլոս Ի. Էսեյի հետևյալ միտքը, թե ինչպես աղը կարող է կորցնել իր համը.

«Աղը չի կորցնում իր համը տարիքի հետ: Համը կորչում է խառնուրդից և աղտոտվելուց: Նմանապես . . .համն ու որակը կորչում է մարդուց, երբ նա աղտոտում է իր միտքը անմաքուր մտքերով, սրբապղծում է բերանը, խոսելով այն, ինչը ճշմարիտ չէ և սխալ է օգտագործում իր ուժը՝ կատարելով չար գործեր» (“Salt of the Earth: Savor of Men and Saviors of Men,” *Ensign,* May 1980, 42):

Հարցրեք. Ինչո՞ւ մենք պետք է ձգտենք ավելի մաքուր լինել, որպեսզի ազդենք ուրիշների վրա:

Ուսանողներին ցույց տվեք մի գրպանի լապտեր: Միացրեք և հրավիրեք ուսանողներին կարդալ 3 Նեփի 12.14–16 հատվածները և որոնել, թե ինչպես Փրկիչն օգտագործեց լույսը՝ ավելի շատ բան ուսուցանելու Իր ուխտի ժողովրդի դերի մասին աշխարհում: Նախքան նրանց կարդալը, օգտակար կլինի բացատրել, որ *գրվանը* զամբյուղ է:

Հարցրեք. Ինչպե՞ս կարող են Եկեղեցու անդամները, ովքեր պահում են իրենց ուխտերը, լինեն լույս ուրիշների համար:

Ծածկեք լույսը զամբյուղով կամ սրբիչով և տվեք հետևյալ հարցը.

- Ի՞նչ ուղիներով որոշ դեպքերում մենք կարող է գայթակղվենք ծածկել մեր լույսը:
- Համաձայն 3 Նեփի 12.16 հատվածի, ինչո՞ւ Փրկիչը կամեցավ, որ մենք արդարակյաց օրինակ լինենք ուրիշների համար: (**Երբ մենք արդարակյաց օրինակ լինենք, մենք կարող ենք օգնել ուրիշներին փառավորել Երկնային Հորը:** Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները գրեն այս սկզբունքը իրենց սուրբ գրությունների լուսանցքում:)
- Ո՞ւմ արդար օրինակն է օգնել ձեզ ավելի մոտենալ Երկնային Հորը կամ ուժեղացրել ավելի լիովին ավետարանով ապրելու ձեր ցանկությունը:

Խրախուսեք ուսանողներին լինել աղի նման և լույս աշխարհին՝ ընտրելով լինել արդարակյաց օրինակներ:

Բացատրեք, որ Փրկիչը շարունակեց ուսուցանել Նեփիացիներին, որ իսկական վարձքը պատվիրանները արդարակյաց ձևով պահելու համար կգա, երբ նրանք երկրպագեն առանց կեղծավորության և առանց դնելու իրենց սրտերը երկրային գանձերի կամ պարգևների վրա: Գրեք հետևյալ սուրբ գրության հղումները գրատախտակին. 3 Նեփի 13.22, 13.31–33, 14.7–8, 15.9, 16.13: Հրավիրեք ուսանողներին հետազոտել այս հատվածները և գտնել այն պարգևները, որոնք Երկնային Հայրը խոստացել է մեզ, եթե մեր սրտերը կենտրոնացած լինեն արդար կյանքով ապրելու վրա: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, հրավիրեք նրանց հաղորդել, թե ինչ են գտել:

Կիսվեք ուսանողների հետ ձեր վկայությամբ, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը կօգնեն և կօրհնեն նրանց իրենց ջանքերում՝ վերացնելու հակառակությունը և լինելու արդարակյաց օրինակ աշխարհի համար:

## Հաջորդ Մաս (3 Նեփի 17–22)

Ասեք ուսանողներին, որ երբ նրանք ուսումնասիրեն 3 Նեփի 17–22 հատվածները, նրանք կկարդան, որ Հիսուս Քրիստոսն արտասվեց, երբ Նա Նեփիացի երեխաների հետ էր: Խրախուսեք նրանց որոնել պատասխաններ հետևյալ հարցերին. Ի՞նչ արեց Նա նրանց համար: Ի՞նչ այլ հրաշքներ Հիսուսն արեց, երբ ծառայում էր Նեփիացիներին:

ԴԱՍ 126

# 3 Նեփի 17

## Նախաբան

Երբ Փրկչի առաջին օրը Նեփիացիների հետ մոտեցավ ավարտին, Նա զգաց, որ շատերը լիովին չհասկացան Իր խոսքերը: Նա ուսուցանեց նրանց, թե ինչպես ստանային լրացուցիչ հասկացողություն, և Նա շեշտեց աղոթքի և խորհելու կարևորությունը: Ժողովուրդը արտասվեց, երբ Նա հայտարարեց, որ մեկնում էր: Կարեկցանքով լցված Փրկիչը մի քիչ էլ մնաց բժշկելու հիվանդներին, աղոթելու մարդկանց համար և օրհնելու նրանց երեխաներին: Նեփիացիները տոգորվեցին ուրախությամբ:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 17.1–3

*Հիսուսը հրահանգում է Նեփիացիներին խորհել Իր խոսքերի շուրջ և աղոթել հասկանալու համար:*

Հրավիրեք ուսանողներին պատկերացնել հետևյալ իրավիճակը. Դուք և մի ընկեր գերագույն համաժողովում կամ տարածքային համաժողովում ունեք առաջին շարքերում նստատեղեր, որտեղ մարգարեն է խոսելու: Այնտեղ դուք տեսնում եք նրան: Երբ համաժողովը վերջանում է դուք և ձեր ընկերը տուն եք գնում:

- Ի՞նչ եք կարծում, ինչի մասին կխոսեք դուք և ձեր ընկերը ժողովից հետո:

Հիշեցրեք ուսանողներին, որ Հիսուս Քրիստոսը ուսուցանել էր Նեփիացիներին ամենայն հավանականությամբ ողջ օրը: Երբ Նա պատրաստվում էր հեռանալ, նա զգաց, որ մարդիկ լիովին չէին հասկացել, թե ինչ էր Նա ուսուցանել: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 17.1–3 հատվածները, որոնելով, թե ինչ էր Փրկիչն ասել Նեփիացիներին, որ պետք է անեին, որպեսզի ձեռք բերեին ավելի շատ հասկացողություն: (Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այն, ինչ գտել են:) Երբ ուսանողները հայտնեն իրենց գտածի մասին, հարցրեք.

- Ի՞նչ է նշանակում խորհել:

1. Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ միտքը: Խնդրեք դասարանին լսել, թե ինչ նա ուսուցանեց խորհելու մասին:

«Կարդալը, ուսումնասիրելը և խորհելը նույնը չեն: Մենք կարդում ենք խոսքեր և կարող ենք գաղափարներ ստանալ: Մենք ուսումնասիրում ենք և կարող ենք հայտնաբերել օրինակներ և կապեր սուրբ գրություններում: Բայց, երբ մենք խորհում ենք, մենք հայտնություն ենք հրավիրում Հոգուց: Խորհելը, իմ կարծիքով, մտածելն է և աղոթելը, որ ես անում եմ սուրբ գրությունները ուշադրությամբ կարդալուց և ուսումնասիրելուց հետո» («Ծառայեք Հոգով», *Ensign* կամ *Լիահոնա,* Նոյ. 2010, 60):

- Ինչպե՞ս խորհելը և աղոթելը կարող են միասին գործել՝ օգնելով մեզ հասկանալ այն, ինչ մենք սովորում ենք եկեղեցում կամ սեմինարիայում:

Շեշտեք Փրկչի հրահանգը 3 Նեփի 17.3-ում այն մասին, որ Նեփիացիները պետք է «պատրաստեն [իրենց] մտքերը էգուցվա համար», երբ Նա կրկին վերադառնա նրանց ուսուցանելու:

- Ի՞նչ կարող է անել անձնավորությունը պատրաստելու իր միտքը եկեղեցի կամ սեմինարիա գնալուց առաջ:
- Ի՞նչ տարբերություն է առաջացնում, երբ մենք պատրաստում ենք մեր մտքերը՝ սովորելու այդպիսի հնարավորությունների համար:

Ուսանողներին օգնելու համար հասկանալ սկզբունքը, որն ուսուցանվում է 3 Նեփի 17.1–3-ում, գրեք հետևյալ անավարտ միտքը գրատախտակին և խնդրեք ուսանողներին ավարտել այն՝ հիմնվելով նրա վրա, ինչ սովորեցին:

*Խորհելով և աղոթելով Հորը, մենք կարող ենք . . .*

Չնայած ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, նրանք պետք է հասկանան հետևյալ սկզբունքը. **Խորհելով և աղոթելով Հորը, մենք կարող ենք ստանալ ավելի մեծ հասկացողություն:**

Գրատախտակի վրա գրեք հետևյալ նախադասությունները.

*Պատրաստել իմ միտքը մինչև եկեղեցի կամ սեմինարիա հաճախելը:*

*Խորհել այն բաների մասին, որոնք լսում եմ եկեղեցում և սեմինարիայում:*

*Աղոթել այն բաների մասին, որ լսում եմ եկեղեցում և սեմինարիայում:*

Հրավիրեք ուսանողներին ընտրել գրատախտակի վրա գրված գործողություններից մեկը: Նրանց ժամանակ տվեք մտածելու. (1) ինչպե՞ս են նրանք դա արել և (2) ինչպե՞ս է դա օգնել նրանց ավելի շատ բան սովորել եկեղեցու կամ սեմինարիայի իրենց փորձառությունից: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց մտքերով դասարանի հետ: Խրախուսեք ուսանողներին մտածել, թե ինչպես կարող են բարելավվել երեք բնագավառներից մեկում և ծրագրեր կազմել, թե ինչպես նրանք դա անեն: Դուք կարող եք առաջարկել, որ նրանք գրեն իրենց ծրագրերը տետրում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: Ասեք ուսանողներին, որ դասի հաջորդ մասը նրանց հնարավորություն կտա կիրառել խորհելու սկզբունքը:

## 3 Նեփի 17.4–25

*Փրկիչը բժշկում էՆեփիացիների մեջ գտնվող հիվանդներին, աղոթում է Հորը ժողովրդի համար և օրհնում նրանց երեխաներին:*

Ցույց տվեք Հիսուսի նկարը, որտեղ Նա ուսուցանում է արևմտյան կիսագնդում (62380; *Gospel Art Book* [2009], no. 82): Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ 3 Նեփի 17.4 : Շեշտեք «այժմ ես գնում եմ Հոր մոտ» արտահայտությունը: Խնդրեք ուսանողներին պատկերացնել, որ նրանք հենց նոր են անցկացրել մեկ օր Փրկչի հետ և Նա հայտարարել է, որ Իր հեռանալու ժամանակն է: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 17.5, և խնդրեք դասարանին գտնել, թե ինչպես Նեփիացիներն արձագանքեցին, երբ Փրկիչն արտահայտեց Իր հեռանալու մտադրությունը:

Բացատրեք, որ Նեփիացիները չունենային արդար ցանկություններ, 3 Նեփի 17 և 18 հատվածներում գրառված իրադարձությունները, գուցե, երբեք տեղի չունենային: Հետևյալ վարժությունը նախատեսված է օգնելու ուսանողներին ավելի լիովին հասկանալ այն սերը, որ Հիսուս Քրիստոսն ունի Իր ժողովրդի հանդեպ, և օգնելու նրանց ինքնուրույն գտնել ճշմարտությունները սուրբ գրություններում՝ Հիսուս Քրիստոսի բնավորության մասին: Գրեք հետևյալ սուրբ գրության հղումները գրատախտակին և խնդրեք ուսանողներին արտագրել դրանք տետրում կամ սուրբ գրքերի ուսումնասիրության օրագրերում:

*3 Նեփի 17.6–10*

*3 Նեփի 17.11–18*

*3 Նեփի 17.19–25*

Կարդացեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի հետևյալ մեջբերումը.

«Այն մարդն է մեծագույնն ու ամենաօրհնվածը և ուրախը, ում կյանքը ամենաշատն է մոտենում Քրիստոսի օրինակին: Սա ոչ մի կապ չունի երկրային հարստության, իշխանության կամ հեղինակության հետ: Մեծության, օրհնվածության, ուրախության միակ ճշմարիտ ստուգարքն այն է, թե որքան կյանքը կարող է նմանվել Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին: Նա է ճիշտ ճանապարհը, լիակատար ճշմարտությունը և առատ կյանքը» (“Jesus Christ—Gifts and Expectations,” *Ensign,* Dec. 1988, 2):

Ուսանողներին տվեք 5-10 րոպե ժամանակ՝ մտքում ուսումնասիրելու սուրբ գրությունների յուրաքանչյուր հատվածը, որոնք դուք գրել եք գրատախտակին: Հրավիրեք նրանց հասկանալ ճշմարտությունները Փրկչի բնավորության մասին: Երբ նրանք ուսումնասիրեն, նրանք պետք է գտնեն առնվազն մեկ ճշմարտություն սուրբ գրությունների յուրաքանչյուր հատվածի համար: Խնդրեք, որ նրանք գրեն իրենց գտած ճշմարտությունները:

Երբ ուսանողներն ավարտեն ուսումնասիրելը, հրավիրեք նրանցից մի քանիսին գրել գրատախտակին համապատասխան սուրբ գրության հղման տակ՝ իրենց

սովորած մեկ ճշմարտություն Փրկչի մասին: Երբ ուսանողներն ավարտեն այս վարժությունը, տվեք հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ է կարևոր մեզ համար իմանալն այս ճշմարտությունները Փրկչի մասին:
- Ի՞նչ ապացույց գտաք, որ Փրկիչը զգայուն է մեր կարիքների և ցանկությունների նկատմամբ:
- Այս պատմության ո՞ր մասերը ամենամեծ տպավորությունը թողեցին ձեզ վրա: Ինչո՞ւ:
- Ինչո՞ւ էր ժողովուրդը տոգորված ուրախությամբ: (Տես 3 Նեփի 17.18:)
- Ինչո՞ւ էր Փրկչի ուրախությունը լիակատար էր այդ օրը: (Տես 3 Նեփի 17.20:)

Խնդրեք ուսանողներին ամփոփել այն, ինչ սովորեցին 3 Նեփի 17.6–25 հատվածներից: Ուսանողները կարող են տալ տարբեր պատասխաններ: Մեկ ճշմարտություն, որ նրանք կարող են հասկանալ, այն է, որ ***Փրկիչը մեծ կարեկցանք է զգում մեր հանդեպ:*** Գրեք այս ճշմարտությունը գրատախտակին: Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները գրեն այս ճշմարտությունը կամ որևէ այլ ճշմարտություն, որը հասկացել են, իրենց սուրբ գրությունների լուսանցքում 3 Նեփի 17.6 հատվածի կողքին:

Օգնելու համար ուսանողներին գնահատել, թե ինչպես է Հիսուս Քրիստոսի բնավորությունը հասկանալը օգնում մեզ մեծացնել մեր հավատքը, կարդացեք հետևյալ միտքը.

«Դուք կարող եք հավատք գործադրել առ Քրիստոս, երբ համոզվածություն ունեք, որ Նա գոյություն ունի, ճիշտ գաղափար Նրա բնավորության մասին և գիտելիք, որ դուք ձգտում եք ապրել համաձայն Նրա կամքի» (*Հավատքին Հավատարիմ. ավետարանական վկայակոչում* [2004] ):

- Ինչպե՞ս է Փրկչի գթառատ էության հասկացողությունն օգնում ձեզ հավատք գործադրել Նրա հանդեպ:

Շեշտեք «չարչարված էին ինչ որ ձևով» արտահայտությունը 3 Նեփի 17.9-ում:

- Ինչպիսի՞ տկարություններ կարող են ներառվել «որևէ ձևով» չարչարվածների շարքում:(Բոլոր տեսակի ֆիզիկական, հուզական, մտավոր և հոգևոր տկարություններ:)

Խնդրեք ուսանողներին խորհել ուղիների մասին, որոնցով նրանք կարող են «չարչարվել», և թե ինչից կխնդրեին Փրկչին բժշկել իրենց, եթե Նա օրհներ նրանց անձնապես: Հիշեցրեք նրանց, որ չնայած Փրկիչն այստեղ չէ անձնապես ծառայելու մեզ, օրհնելու և բժշկելու Նրա զորությունը մատչելի են քահանայության միջոցով:

- Ո՞ւմ մոտ եք դուք գնում քահանյության օրհնությունների համար:
- Ե՞րբ եք վերջին անգամ զգացել Փրկչի բժշկող ազդեցությունը ձեր կյանքում:

Հիշեցրեք ուսանողներին խորհելու սկզբունքի մասին, որը նրանք քննարկեցին դասի սկզբում: Առաջարկեք, որ խորհելու ուղիներից մեկը ինքներդ ձեզ պատկերացնելն է այն իրավիճակներում, որոնք նկարագրվում են իրենց կարդացած սուրբ գրությունների պատմություններում: Հրավիրեք ուսանողներին պատկերացնել իրենց Նեփիացիների մեջ այն իրադարձությունների ժամանակ, որոնք նկարագրվում են 3 Նեփի 17-ում: Ժամանակ տվեք ուսանողներին գրել տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում այն մասին, ինչ իրենք կարող է լսեին, տեսնեին, զգային և սովորեին, եթե եղած լինեին Նեփիացիների մեջ և հաղորդակցվեին Փրկչի հետ այդ իրադարձության ժամանակ: Դուք կարող եք առաջարկել, որ նրանք գրեն մի տկարության մասին, որը նրանք կխնդրեին Փրկչին բժշկել: Երբ նրանք դադարեն գրելը, կարող եք մի քանի ուսանողների հրավիրել կարդալ այն, ինչ գրել են դասարանում: Հավաստիացեք, որ նրանք հասկանում են, որ իրենք չպետք է հարկադրված զգան կիսվելու որևէ բանով, որը խիստ անձնական է կամ գաղտնի:

Երբ մի քանի ուսանողներ կիսվեն իրենց գրածով, դուք կարող եք հրավիրել նրանցից մի երկուսին պատմել, թե ինչպես են նրանք սկսել հասկանալ, որ Հիսուս Քրիստոսը սիրում է իրենց և կարեկցանք ունի իրենց հանդեպ: Խրախուսեք ուսանողներին խորհել այս դասի մասին և վստահել Փրկչի կարեկցանքին, երբ նրանք ապավինեն Նրան՝ օգնության համար իրենց ցանկությունների, տկարությունների, վշտերի և փորձությունների ժամանակ:

***Պատկերացնելը***

Պատկերացնելը սուրբ գրությունների ուսումնասիրության հմտություն է, որը կարող է օգնել ուսանողներին վերլուծել, հասկանալ և կիրառել այն, ինչ իրենք կարդում են: Օգնեք ուսանողներին սովորել պատկերացնել սուրբ գրությունների իրադարձությունները՝ խրախուսելով նրանց փորձել իրենց մտքում պատկերացնել մարդկանց, վայրերը և իրադարձությունները, որոնց մասին իրենք կարդում են: Սա իրականացնելու ուղիներից մեկը պատկերացնելն է, որ իրենք մասնակցում են այն պատմությանը, որը կարդում են:

ԴԱՍ 127

# 3 Նեփի 18

## Նախաբան

Երբ Նեփիացիների մեջ Հիսուս Քրիստոսն ավարտեց Իր ծառայությունը, Նա սպասավորեց հաղորդությունը: Նա պատվիրեց նրանց ճաշակել հաղորդությունը, միշտ աղոթել Հորը և ցույց տալ ընկերակցություն բոլոր մարդկանց: Փրկիչը խոստացավ մեծ օրհնություններ նրանց, ովքեր հնազանդվեցին: Այնուհետև Նա տվեց տասներկու Նեփիացի աշակերտներին հրահանգներ Եկեղեցում նրանց ծառայության վերաբերյալ: Նախքան երկինք համբարձվելը, Նա իշխանություն տվեց նրանց՝ տալու Սուրբ Հոգու պարգևը:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 18.1–14

*Հիսուս Քրիստոսը սպասավորում է հաղորդությունը Նեփիացիներին*

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Յոթանասունից Երեց Ջերալդ Ն. Լանդի հետևյալ միտքը: (Ասեք ուսանողին, որ *Czenkusch* անունը արտասանվում է «Զեն-կուշ»:) Խրախուսեք դասարանին պատկերացնել, թե ինչ է նշանակում լինել այնպիսի լեռնագնաց, որի մասին հիշատակվում է Երեց Լանդի կողմից:

«Շատ վաղուց մի հետաքրքիր հոդված կար լեռնագնացության մասին մի բժշկական ամսագրում»: . . .

Հոդվածը մի մարդու մասին էր, որի անունը Զենկուշ էր, որը ղեկավարում էր լեռնագնացության դպրոցը: . . . Զենկուշը հարցազրույցը վարողին նկարագրում էր լեռնագնացության անվտանգությունը ապահովող համակարգը: Սա այն համակարգն է, որով լեռնագնացները իրենց ապահովում են անկումներից: Մի լեռնագնաց հասնում է մի ապահով դիրքի և ամրացնում պարանը, սովորաբար օղակելով իր սեփական մարմնի շուրջը մյուս լեռնագնացի համար: «Դու ապահովված ես» նշանակում է. «Ես բռնել եմ քեզ: Եթե ինչ որ բան պատահի ես կկանգնեցնեմ քո անկումը»: Դա լեռնագնացության կարևոր մասն է հանդիսանում: Այժմ ուշադրություն դարձրեք, թե ինչ է հաջորդը հետևում հոդվածում. «Ապահովումը Զենկուշին պարգևել է լավագույն և վատթարագույն պահերը լեռնագնացության մեջ: Մի անգամ Զենկուշն ընկավ անդունդի շատ բարձր տեղից՝ տեղահան անելով երեք մեխանիկական հենակետեր և իրեն ապահովող մարդուն քաշելով ժայռի վրայից: Նա կանգ առավ գլխիվայր, գետնից 10 ոտնաչափ բարձրության վրա, երբ նրա անվտանգությունը ապահովող անձնավորությունը [Դոնը] ձեռքերը և ոտքերը չռված վիճակում կանգնեցրեց անկումը իր մեկնած ձեռքերի ուժով: «Դոնը փրկեց իմ կյանքը», - ասաց Զենկուշը: «Ինչպե՞ս եք պատասխանում այդպիսի մարդուն: Որպես Սուրբ Ծննդյան նվեր օգտագործված մագլցելու պարան ե՞ք տալիս: Ոչ, *դուք հիշում եք նրան: Դուք միշտ հիշում եք նրան* » [Eric G. Anderson, “The Vertical Wilderness,” *Private Practice,* November 1979, 21; շեշտադրումն ավելացված է]» (“The Grace and Mercy of Jesus Christ,” in *Jesus Christ: Son of God, Savior,* ed. Paul H. Peterson, Gary L. Hatch, and Laura D. Card [2002], 48):

- Ինչո՞ւ լեռնագնացը զգաց, որ իր փրկչին նյութական նվերներ տալը կլիներ շնորհակալություն հայտնելու ոչ պատշաճ ձև:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 18.1–7 հատվածները՝ որոնելով, թե ինչ ասաց Փրկիչը Նեփիացիներին անել՝ Իրեն հիշելու համար: (Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն *հիշողություն* և *հիշել* բառերը 3 Նեփի 18.7 հատվածում:) Երբ ուսանողները հաղորդեն, թե ինչ են գտել, տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս է հաղորդություն ընդունելն օգնում մեզ հիշել Փրկչի զոհաբերությունը հանուն մեզ:
- Համաձայն 3 Նեփի 18.7-ի, ի՞նչ պետք է հիշեին Նեփիացիները, երբ նրանք ճաշակեին հացը:

Ժամանակ տվեք ուսանողներին ետ նայելու 3 Նեփի 11.14–15 հատվածներին։ Ապա տվեք հետևյալ հարցերը։

- Ինչո՞ւ կարող էր Փրկչի մարմինը հիշելը հատկապես կարևոր լինել Նեփիացիների համար։
- Չնայած դուք չեք տեսել Փրկչի մարմնի վերքերը ինչպես Նեփիացիները, ինչո՞ւ է ձեզ համար կարևոր ճաշակել հաղորդության հացը «ի հիշատակ [Փրկչի] մարմնի» (ՎևՈւ 20.77)։
- Ի՞նչ կարող եք անել միշտ Փրկչին հիշելու համար։

Գրատախտակին գրեք հետևյալ արտահայտությունը. *Երբ մենք ճաշակում ենք հաղորդությունը, մենք վկայում ենք Հորը, որ . . .*

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 18.8–11, որոնելով խոսքերն ու արտահայտությունները, որոնք լրացնում են գրատախտակի վրայի միտքը։ Խնդրեք մի քանի ուսանողի ասել, թե ինչ են իրենք գտել։ (Ուսանողները կարող են լրացնել միտքն այս ձևով. **Երբ ճաշակում ենք հաղորդությունը, մենք վկայում ենք Հորը, որ մենք միշտ հիշում ենք Հիսուս Քրիստոսին:** Մեկ այլ հնարավոր պատասխան կարող է լինել հետևյալը. **Երբ մենք ճաշակում ենք հաղորդությունը, մենք վկայում ենք Հորը, որ հոժար ենք անել բոլոր բաները, որ Փրկիչը պատվիրել է:**)

Օգտագործեք հետևյալ մի քանի կամ բոլոր հարցերը՝ օգնելու ուսանողներին խորացնել իրենց հասկացողությունը և երախտագիտությունը հաղորդության դերի համար, որն օգնում է հիշել Փրկչին։

- Որո՞նք են Փրկչի կյանքի և ծառայության որոշ առանձնահատկությունները, որ մենք կարող ենք հիշել հաղորդության արարողության ժամանակ։ (Պատասխանները կարող են ներառել Նրա մահը և քավող զոհաբերությունը, Նրա համեստ ծնունդը, Նրա հրաշքներն ու ուսմունքները, Նրա սիրառատ հոգատարությունը մյուսների հանդեպ և Նրա հնազանդությունը Երկնային Հոր հանդեպ։)
- Չնայած հաղորդությունը ճաշակելը քիչ ժամանակ է խլում, այս արարողությանը նախապատրաստվելու և մասնակցելու հետևանքները հավերժական են։ Ի՞նչ կարող ենք անել միշտ հիշելու Փրկչին հաղորդությունը ճաշակելուց հետո և շաբաթվա մնացած ժամանակ։
- Ինչպե՞ս կարող են անկեղծությունը և ուշադրությունը, որը մենք հատկացնում ենք հաղորդությունը ճաշակելուն, օգնել մեզ հիշել Փրկչին շաբաթվա ընթացքում։
- Ի՞նչ իմաստ ունի հաղորդությունը, եթե մենք չհիշենք Նրան։
- Համաձայն 3 Նեփի 18.7, 11-ի, ի՞նչ խոստացավ Փրկիչը նրանց, ովքեր ճաշակում են հաղորդությունը և միշտ հիշում են Նրան։ (**Երբ մենք ճաշակում ենք հաղորդությունը և միշտ հիշում Փրկչին, մենք Նրա Հոգին մեզ հետ ենք ունենում:**)

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 18.12–14 , և ապա խնդրեք մեկ այլ ուսանողի բարձրաձայն կարդալ Հելաման 5.12։ Հրավիրեք մնացած ուսանողներին հետևել ընթացքում, խորհելով կապի մասին երկու սուրբ գրությունների հատվածների միջև։

- Ինչպե՞ս կարող է կանոնավորապես հաղորդությունը ճաշակելն օգնել ձեզ դարձնել Հիսուս Քրիստոսին այն հիմքը, որի վրա դուք կառուցում եք ձեր կյանքը։

Օգնելու ուսանողներին ավելի շատ հիշել Հիսուս Քրիստոսին, հրավիրեք նրանց հաջորդ շաբաթ ամեն օր գրել տետրերում, սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում կամ իրենց անձնական օրագրերում այն մասին, թե ինչ են նրանք անում Փրկչին հիշելու համար։ Խրախուսեք նրանց գրել իրենց մտքերը, որոնք ունեցել են հաղորդության ընթացքում կամ ինչպես է Փրկչին հիշելը ազդել իրենց մտքերի, խոսքերի և գործերի վրա։

Հետևեք ուսանողներին հաջորդ մի քանի դասերի ընթացքում՝ խրախուսելով նրանց շարունակել ամեն օր գրելը։ Շաբաթվա ընթացքում դուք կարող եք նրանց մի քանի րոպե տալ դասի սկզբում՝ գրի առնելու, թե ինչ են նրանք անում հիշելու համար Փրկչին։

## 3 Նեփի 18.15 25

*Հիսուսն ուսուցանում է Նեփիացիներին միշտ աղոթել Հորը և միմյանց հաճախ հանդիպել:*

Բաժանեք ուսանողներին զույգերի: Հրավիրեք յուրաքանչյուր մասնակցի կարդալ 3 Նեփի 18.15–21 միասին, որոնելով այն, ինչ Փրկիչն ուսուցանել է մեզ անել գայթակղությանը դիմադրելու համար: Երբ վերջացնեն կարդալը, մասնակիցներին հանձնարարեք գրել մեկ նախադասություն, որով կարող են ամփոփել գայթակղությունը հաղթահարելու այս ուսմունքները: Խնդրեք մի քանի զույգերի պատմել, թե ինչ են գրել: (Թեև ուսանողները կարող են օգտագործել տարբեր խոսքեր իրենց ամփոփումներն արտահայտելու համար, նրանք պետք է հասկանան հետևյալ ճշմարտությունը.**Եթե մենք արթուն կենանք և միշտ աղոթենք Հորը, մենք կարող ենք դիմադրել սատանայի գայթակղություններին:**)

- Ի՞նչ է նշանակում *արթուն* բառը3 Նեփի 18.18 հատվածում: (Լինել հոգեպես զգաստ, աչալուրջ կամ զգոն:)
- Ինչո՞ւ եք կարծում, որ արթուն լինելն ու աղոթելը կարևոր են գայթակղությանը դիմադրելու համար:

Շեշտեք, որ 3 Նեփի 18.15, 20–21 հատվածները սուրբ գրությունների սերտման հատվածներ են: Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այս հատվածը տարբերակիչ ձևով, որպեսզի կարողանան հեշտությամբ գտնել այն:

- Ինչպե՞ս է աղոթքն օգնում մեզ մնալ արթուն և զգաստ մեզ գայթակղելու սատանայի ջանքերին դիմակայելիս:

Հրավիրեք ուսանողներին իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում պատասխանել հետևյալ հարցերից մեկին: (Դուք կարող եք գրել հարցերը գրատախտակին կամ դրանք դանդաղ կարդալ, որպեսզի ուսանողները կարողանան դրանք գրի առնել:)

- Ինչպե՞ս է աղոթելն օգնել ձեզ դիմադրել սատանայի գայթակղություններին:
- Ի՞նչ կարող եք անել ձեր անհատական աղոթքները բարելավելու համար:
- Ի՞նչ օրհնություններ եք տեսել ձեր ընտանիքի հետ աղոթելուց:
- Ի՞նչ կարող եք անել՝ օգնելու ձեր ընտանիքին ունենալ հետևողական և իմաստալի աղոթք:

Եթե ժամանակը ներում է, կարող եք խնդրել մի քանի ուսանողների դասարանին պատմել այն, ինչ իրենք գրել են:

Խնդրեք ուսանողներին մտածել ինչ որ մեկի մասին, ում իրենք կկամենային օգնել մոտենալ Փրկչին: Գրեք հետևյալ սկզբունքը գրատախտակին և խրախուսեք ուսանողներին այն գրի առնել. ***Երբ ծառայում ենք ուրիշներին, մենք կարող ենք օգնել նրանց գալ դեպի Քրիստոսը:*** Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 18.22–24 :

- Ի՞նչ է խնդրում Փրկիչը մեզանից անել՝ օգնելու համար ուրիշներին գալ դեպի Իրեն: (Մենք չպետք է ուրիշներին հեռացնենք մեր Եկեղեցու ժողովներից և մենք պետք է աղոթենք նրանց համար:)
- Փրկիչն ասաց, որ Նա է լույսը, որը մենք պետք է բարձր պահենք աշխարհի համար: Ինչպե՞ս կարող ենք յուրաքանչյուրս քայլել մեր կյանքում՝ վեր պահելով Փրկչի լույսը:

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ խոսքերը: Հրավիրեք ուսանողներին լսել, թե ինչ, ըստ Երեց Հեյլսի, տեղի կունենա, երբ մենք արդարակյաց կյանքով ապրենք:

«Մի՞թե Հիսուսի համար հաճելի չի լինի, եթե մենք կարողանանք թույլ տալ, որ մեր լույսն այնպես շողա, որ նրանք ովքեր հետևել են մեզ, հետևեն Փրկչին: Կան այնպիսիք, ովքեր որոնում են լույսը և ովքեր ուրախությամբ կանցնեն մկրտության դարպասով դեպի նեղ և անձուկ արահետը, որը տանում է դեպի հավերժական կյանք (տես 2 Նեփի 31): Արդյոք կլինե՞ք դուք այդ լույսը, որը կառաջնորդի նրանց դեպի ապահով նավահանգիստ» (“That Ye May Be the Children of Light” [Brigham Young University fireside address, Nov. 3, 1996], 8, speeches.byu.edu):

**3 Նեփի 18.15, 20–21**-ը սուրբ գրության սերտման հատված է: Դիմեք դասի վերջում ուսուցանման մտքին՝ օգնելու ուսանողներին իրենց սուրբ գրության սերտման հատվածը սովորելիս:

- Ի՞նչ մտքեր եք ունենում, երբ մտածում եք, «Մի՞թե Հիսուսի համար հաճելի չի լինի, եթե մենք կարողանանք թույլ տալ, որ մեր լույսն այնպես շողա, որ նրանք ովքեր հետևել են մեզ, հետևեն Փրկչին» հարցը:

Բացատրեք, որ ուրիշների համար աղոթելը, նրանց հրավիրելը հաճախել Եկեղեցու ժողովներին և Քրիստոսանման օրինակ ցույց տալը, ուղիներ են, որոնցով մենք կարող ենք ծառայել ուրիշներին: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել մի փոր-ձառությամբ, որի ժամանակ նրանք բարձր են պահել Փրկչի լույսը՝ օգնելու ինչ որ մեկին գալ դեպի Նա:

## 3 Նեփի 18.26–39

*Փրկիչն ուսուցանում է Իր աշակերտներին ընկերակցություն ցույց տալ բոլոր մարդկանց:*

Ամփոփեք 3 Նեփի 18.26–39 , բացատրելով, որ Փրկիչը բազմության հետ խոսելուց հետո դիմեց Իր ընտրած տասներկու աշակերտներին և հրահանգեց նրանց, թե ինչ-պես առաջնորդեին և ղեկավարեին Եկեղեցու գործերը: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 18.32, փնտրելով, թե ինչպես մենք պետք է պատասխա-նենք մարդկանց, ովքեր հեռացել են հավատքից:

- Ինչո՞ւ է կարևոր, որ մենք շարունակենք ծառայել մարդկանց, ովքեր հեռացել են հավատքից:

Կարող եք կիսվել մի փորձառությամբ, որի ժամանակ դուք օգնել եք ծառա-յել Աստծո զավակներից մեկին և օգնել եք այդ անձնավորությանը գալ դեպի Քրիստոսը:

## Սուրբ գրության սերտման հատված—3 Նեփի 18.15, 20–21

*Նշում.* Այս դասի երկարության պատճառով, դուք կարող եք սկսել հաջորդ դասը հետևյալ սուրբ գրության սերտման վարժությամբ: Կամ այս վարժությունը կարող է օգտագործվել հետագա դասերից մեկում, երբ դուք կունենաք ավելի շատ ժամանակ կրկնելու սուրբ գրության սերտման հատվածները:

Մի քանի րոպե հատկացրեք՝ օգնելով ուսանողներին անգիր սովորել 3 Նեփի 18.15, 20–21: Գրեք բոլոր երեք հատվածները գրատախտակին և հանձնարարեք ուսա-նողներին վարժվել՝ բարձրաձայն դրանք արտասանելով: Երբ ուսանողները բոլոր հատվածները մի քանի անգամ կարդան, սկսեք հատվածների տարբեր մասերը ջնջել, մինչ ուսանողները շարունակում են արտասանել ողջ հատվածը: Կրկնեք այս գործընթացը, մինչև բոլոր բառերը ջնջվեն գրատախտակից:

ԴԱՍ 128

# 3 Նեփի 19

## Նախաբան

Նեփիացիներին Փրկչի առաջին այցելելությունից հետո Նրա այցելության նորությունը տարածվեց ողջ ժողովրդի մեջ ամբողջ այդ գիշերվա ընթացքում: (Իրադարձությունները, որոնք արձանագրված են 3 Նեփի 11–18 հատվածներում, բոլորը տեղի ունեցան մեկ օրվա ընթացքում:) Գիշերվա ընթացքում մարդիկ տքնեցին «անչափ . . . ողջ այդ գիշեր, որպեսզի հաջորդ օրը նրանք կարողանային լինել այն տեղում», որտեղ Փրկիչը կրկին պետք է հայտնվեր (3 Նեփի 19.3): Առավոտյան տասներկու աշակերտները ուսուցանեցին ժողովրդին և նրանց հետ աղոթեցին: Հիսուս Քրիստոսը հայտնվեց և պատվիրեց ժողովրդին աղոթել, մինչ Նա աղոթում էր Հորը նրանց համար: Իրենց հավատքի շնորհիվ տասներկու աշակերտները մաքրագործվեցին: Հիսուսն աղոթեց, որ աշակերտները և բոլոր նրանք, ովքեր հավատացին Նրա խոսքերին, կարողանային դառնալ մեկ Նրա և Իր Հոր հետ:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 19.1–14

*Տասներկու աշակերտները ծառայում են ժողովրդին ինչպես պատվիրել էր Փրկիչը*

Հրավիրեք ուսանողներին պատկերացնել, թե ինչ կարող էին անել կամ ինչպես կարող էին զգալ, եթե իմանային, որ վաղը Հիսուսը գալու էր տաճար (կամ ցցի կենտրոն, կամ քաղաքի կենտրոն, կամ որևէ այլ վայր, որը կպահանջեր որոշակի ջանքեր ուսանողների կողմից, որպեսզի հասնեին այնտեղ):

- Ինչպե՞ս կհասնեիք այնտեղ:
- Ո՞վ կցանկանայիք, որ գար ձեզ հետ:
- Ի՞նչ կանեիք այդ փորձառությանը պատրաստվելու համար:

Հիշեցրեք ուսանողներին, որ առաջին օրը Նեփիացիներին Փրկչի այցելության ավարտին մոտ, Նա խրախուսեց մարդկանց գնալ իրենց տները և խորհել ու աղոթել Իր ուսմունքների մասին՝ նախապատրաստվելու հաջորդ օրվա Իր այցելությանը (տես 3 Նեփի 17.3): Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 19.1–3, որոնելով Փրկչի խոստման Նեփիացիների պատասխանը, որ Նա կվերադառնար հաջորդ օրը: Երբ ուսանողները կիսվեն իրենց գտածով, ամփոփեք 3 Նեփի 19.4–8, բացատրելով, որ երբ բազմությունը հաջորդ օրը հավաքվեց, տասներկու աշակերտները բաժանեցին ժողովրդին տասներկու խմբերի և սկսեցին ուսուցանել նրանց: Բազմությանը հրահանգելուց հետո ծնկի իջնել աղոթելու, տասներկու աշակերտները նույնպես աղոթեցին և հետո ուսուցանեցին ժողովրդին նույն ճշմարտությունները, որոնք Փրկիչը սովորեցրել էր նախորդ օրը: Այնուհետև աշակերտները ծնկի իջան կրկին աղոթելու:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 19.8–9: Խնդրեք, որ դասարանը ընթացքում հետևի, որոնելով, թե ինչի համար էին աղոթում աշակերտները:

- Ի՞նչ էին ամենաշատը ցանկանում աշակերտները:
- Տասներկու աշակերտները պատրաստվում էին Փրկչի մեկնելուց հետո շտկել Եկեղեցու գործերը Նեփիացիների մեջ: Ինչո՞ւ նրանք ունեին Սուրբ Հոգու կարիքը իրենց ծառայության ընթացքում:
- Ձեր հղած աղոթքներում որո՞նք են այն մի քանի բաները, որոնք դուք ամենաշատն եք ցանկանում:
- Արդյոք դուք աղոթո՞ւմ եք Սուրբ Հոգու համար: Ինչո՞ւ կամ ինչո՞ւ ոչ:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 19.10–12 հատվածները: Նրա կարդալուց հետո բացատրեք, որ այս երկրորդ մկրտությունը հատուկ դեպք էր: Չնայած Նեփիացիները մկրտվել էին նախկինում մեղքերի թողության համար

և արժանի էին Հիսուս Քրիստոսի ներկայության մեջ լինելուն, Փրկիչը պատվիրեց նրանց նորից մկրտվել, որովհետև Նա Եկեղեցին նորովի էր կազմակերպել:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 19.13–14: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, որոնելով այն օրհնությունները, որ աշակերտները ստացան ի պատասխան իրենց արդար ցանկությունների: Ուսանողներին օգնելու համար մեծացնել Սուրբ Հոգու ազդեցությունը իրենց կյանքում, կատարեք հետևյալ վարժությունը.

Բաժանեք ուսանողներին զույգերի: Խնդրեք յուրաքանչյուր զույգի մի ցուցակ կազմել իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: Ապա հրավիրեք ուսանողներին համեմատել իրենց ցուցակները Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ մտքի հետ: (Մինչև դասը պատրաստեք այդ այն թերթիկի վրա կամ գրեք գրատախտակին): Հանձնարարեք ուսանողներին ավելացնել իրենց ցուցակներին նոր մտքեր, որոնք նրանք կգտնեն, երբ կարդան այդ միտքը:

«Սուրբ Հոգին . . . Հոր և Որդու մասին մեր վկայության աղբյուրն է: . . .

Մենք Սուրբ Հոգու կարիքն ունենք՝ որպես մեր մշտական ուղեկցի՝ օգնելու մեզ կատարել ավելի լավ ընտրություններ այն որոշումներում, որոնք հանդիպում են մեզ ամեն օր:. . . Հոգու հետ ընկերակցությունը կտա նրանց [մեր երիտասարդությանը], ուժ դիմադրելու չարին և, երբ անհրաժեշտ է, ապաշխարելու և վերադառնալու նեղ և անձուկ արահետ:. . .Մենք բոլորս կարիք ունենք ամրացման, որը հնարավոր է միայն Սուրբ Հոգու միջոցով:. . . Սուրբ Հոգու պարգևն ունենալն օգնում է ընտանիքի անդամներին կատարել իմաստուն ընտրություններ՝ ընտրություններ, որոնք կօգնեն նրանց վերադառնալ իրենց ընտանիքների հետ իրենց Երկնային Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի մոտ՝ ապրելու նրանց հետ հավերժ» (“The Covenant of Baptism: To Be in the Kingdom and of the Kingdom,” *Ensign,* Nov. 2000, 8):

- Ձեր ցուցակի օրհնությունները ինչպե՞ս կարող են օգտակար լինել երիտասարդներին Եկեղեցում:

Հրավիրեք ուսանողներին վերանայել օրհնությունների ցուցակը, որ նրանք գրել են, և մտածել, թե ինչ մենք պետք է անենք այս օրհնություններին արժանանալու համար: Խնդրեք նրանց մտքում կարդալ 3 Նեփի 19.9, 13, որոնելով մի սկզբունք Սուրբ Հոգու ազդեցությունը ստանալու մասին: Հանձնարարեք ուսանողներին գրի առնել իրենց գտած այդ սկզբունքը: Խնդրեք նրանցից մի քանիսին կիսվել իրենց գրածով: (Ուսանողները, գուցե, կիսվեն այսպիսի մի բանով. **Մեր արդար ցանկություններն ու աղոթքները կարող են արժանի դարձնել մեզ լցվելու Սուրբ Հոգով:**)

- Ե՞րբ են ձեր արդար ցանկություններն ու աղոթքներն օգնել ձեզ զգալ Հոգու ազդեցությունը:

Գրատախտակին գրեք հետևյալ անավարտ նախադասությունը: Հրավիրեք ուսանողներին գրի առնել այս կիսատ միտքը և ապա լրացնել այն իրենց իսկ խոսքերով:

*Ես ցույց կտամ Երկնային Հորը իմ ցանկությունը Սուրբ Հոգու ընկերակցությունն ունենալու համար:*

## 3 Նոփի 19.15–36

### *Փրկիչը հայտնվում է և աղոթում ժողովրդի համար, որ նրանք մաքրագործվեն իրենց հավատքով:*

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի19:15–16: Շեշտեք, որ երբ ժողովուրդը ծնկի իջավ, ակամատես եղավ Իր աշակերտների և բազմության համար Հիսուս Քրիստոսի երեք տարբեր աղոթքների: (Բացատրեք, որ ավելի ուշ դասի ժամանակ դասարանը կուսումնասիրի Փրկչի երրորդ աղոթքը:)

Դասից առաջ գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները և հարցերը գրատախտակին (կամ պատրաստեք դրանք թերթիկների տեսքով յուրաքանչյուր ուսանողի համար).

*3 Նեփի 19.17–18, 24–26, 30*

*3 Նեփի 19.19–23*

*3 Նեփի 19.27–29*

*Ի՞նչ կարող եք սովորել աղոթքի մասին այս հատվածից:*

*Ինչպե՞ս կարող եք կիրառել այն, ինչ սովորել եք այս հատվածներում ձեր անձնական աղոթքներում:*

Բաժանեք դասարանը խմբերի՝ յուրաքանչյուրն երեք ուսանողից: (Եթե ձեր դասարանը փոքր է, դուք կարող եք այն բաժանել ավելի փոքր խմբերի:) Յուրաքանչյուր խմբում հանձնարարեք կարդալ գրատախտակի վրա գրված սուրբ գրության հատվածներից մեկը: Տեղեկացրեք ուսանողներին, որ նրանք բոլորը պատրաստվեն պատասխանել իրենց խմբերում գրատախտակի հարցերին:

Բավարար ժամանակ տալուց հետո, խնդրեք ուսանողներին կիսվել հարցերի իրենց պատասխաններով իրենց խմբի մյուս անդամների հետ: Պատրաստ եղեք պատասխանել, եթե ուսանողները հարցնեն, թե ինչու աշակերտներն աղոթեցին Փրկչին (տես 3 Նեփի 19.18): Շեշտեք, որ այս եզակի դեպքում աշակերտները աղոթեցին Հիսուս Քրիստոսին, որովհետև Նա նրանց հետ էր անձնապես՝ որպես Հոր ներկայացուցիչ (տես 3 Նեփի 19.22):

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 19:31–34 : Խնդրեք դասարանին ընթացքում հետևել և մտածել, թե ինչու Փրկչի աղոթքը այդքան խորապես ազդեց ժողովրդի վրա: Հրավիրեք մի քանի ուսանողների հաղորդել իրենց գտածի մասին: Չնայած ուսանողները կարող են սովորել շատ ճշմարտություններ միմյանցից, երբ կիսվեն իրար հետ, հետևյալ վարժությունը կշեշտի երկու սկզբունքներ, որոնք նրանք կարող են հայտնաբերել իրենց ուսումնասիրության ընթացքում:

Գրեք հետևյալը գրատախտակին. *Երբ մենք հավատք ենք գործադրում առ Հիսուս Քրիստոս, . . .*

Խնդրեք ուսանողներին մտքում վերանայել 3 Նեփի 19.28 , որոնելով ուղիներ գրատախտակի վրա գրված միտքը լրացնելու համար: (Հրավիրեք ուսանողներին գրի առնել իրենց պատասխանները: Հետևյալը՝ ուղիներից մեկն է, որով ուսանողները կարող են լրացնել միտքը. **Երբ մենք հավատք ենք գործադրում առ Հիսուս Քրիստոս, մենք մաքրագործվում ենք:**)

- Ի՞նչ է նշանակում մաքրագործված լինել: Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքն օգնում մեզ մաքուր լինել:
- Ի՞նչ ուղիներով էին աշակերտները հավատք գործադրում այն իրադարձությունների ընթացքում, որոնք արձանագրված են 3 Նեփի 19-ում:

Օգնելու ուսանողներին հասկանալ, որ մենք մաքրագործվում ենք Սուրբ Հոգով, հիշեցրեք նրանց, որ աշակերտները ստացել էին Սուրբ Հոգին և «լցվել էին . . .կրակով» (3 Նեփի 19.13): Բացատրեք, որ «լցվել էին . . .կրակով» արտահայտությունը» խորհրդանշական է և վերաբերում է Սուրբ Հոգու ազդեցության միջոցով սրբագործվելու օրհնությանը:

Խնդրեք ուսանողներին մտքում վերընթերցել 3 Նեփի 19.23, 29, որոնելով մեկ այլ օրհնություն, որը գալիս է նրանց, ովքեր ունեն Տիրոջ Հոգին իրենց հետ: (Երբ ուսանողները կարդան, կարող եք առաջարկել, որ նրանք նշեն երկու հատվածներում «որ մենք կարողանանք մեկ լինել» արտահայտությունը:)

- Ինչպե՞ս են Հիսուս Քրիստոսն ու Հայրը մեկ: (Նրանք առանձին, շոշափելի էակներ են, բայց նրանք մեկ են նպատակով և վարդապետությամբ: Կատարելապես միավորված, նրանք իրականացնում են Երկնային Հոր աստվածային փրկության ծրագիրը:)
- Ի՞նչ է նշանակում մեզ համար մեկ դառնալ Հայր Աստծո և Որդու հետ:
- Ի՞նչ ենք սովորում 3 Նեփի 19.23, 29-ից այն մասին, թե ինչպես կարող ենք մեկ դառնալ Նրանց հետ: ( **Հավատքի միջոցով մենք կարող ենք մաքրագործվել և դառնալ մեկ Հիսուս Քրիստոսի հետ, ինչպես Նա է մեկ Հոր հետ:**)

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռ. Զեֆրի Հոլլանդի հետևյալ խոսքերը.Խնդրեք դասարանին լսել, թե ինչպես մենք կարող ենք մեկ լինել Հոր և Որդու հետ:



«Հիսուսը հասավ կատարյալ միասնության Հոր հետ՝ ենթարկելով Իրեն ինչպես մարմնով, այնպես էլ հոգով Հոր կամքին: Նրա ծառայությունը միշտ հստակորեն կենտրոնացած էր, որովհետև Նրա մեջ չկար թուլացնող կամ շեղող երկմտություն: Ակնարկելով Իր Հորը, Հիսուսն ասել է. «Ես միշտ նորան հաճելի բաներն եմ անում» (Հովհ. Ը.29): . . .

Իհարկե մենք չենք կարող մեկ լինել Աստծո և Քրիստոսի հետ, մինչև Նրանց կամքը և շահը չդարձնենք մեր մեծագույն ցանկությունը: Այդպիսի ենթարկվածության չեն հասնում մեկ օրում. Սուրբ Հոգու միջոցով Տերը կուսուցանի մեզ, եթե մենք հոժար լինենք, մինչև ժամանակի ընթացքում, կարելի կլինի ճշտորեն ասել, որ Նա մեզանում է, ինչպես Հայրն է Նրանում» (“That They May Be One in Us,” *Ensign,* Nov. 2002, 72, 73):

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 19.35–36 և խորհել իրենց իսկ աղոթքների մասին: Խոստացեք ուսանողներին, որ մենք ևս կարող ենք ունենալ ավելի մեծ հոգևոր փորձառություններ և աճել՝ դառնալով մեկ Հոր և Որդու հետ , եթե մենք մեծացնենք մեր հավատքը և անկեղծորեն աղոթենք Հոգու ընկերակցության համար:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 3 Նեփի 19.18, 22: «Նրանք աղոթեցին առ Հիսուսը»:

Սուրբ գրություններից և վերջին օրերի մարգարեների ուսմունքներից մենք գիտենք, որ պետք է երկրպագենք Հայր Աստծուն և աղոթենք միայն Նրան: Մենք չպետք է աղոթենք Հիսուս Քրիստոսին: Օրինակ Փրկիչը սովորեցրեց Նեփիացիներին. «Դուք պետք է միշտ աղոթեք Հորը իմ անունով» (3 Նեփի 18.19): Սակայն, այդ մասին Փրկչի սովորեցնելուց ոչ շատ անց, Նրա Նեփիացի աշակերտները աղոթեցին ուղղակի Իրեն (տես 3 Նեփի 19.18): Նրանք այդպես արեցին, ասաց Նա, որովհետև Նա նրանց հետ էր (տես 3 Նեփի 19.22): Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրյուս Ռ.Մակքոնկին բացատրեց, որ դա բացառություն էր՝ եզակի իրավիճակ.

«Կար հատուկ պատճառ այս դեպքում՝ դա անելու համար և մեկանգամյա հիմնավորմամբ: Հիսուսն արդեն ուսուցանել էր նրանց աղոթել Իր անունով Հորը, որը նրանք առաջին անգամ արեցին: . . . Հիսուսը ներկա էր նրանց առջև որպես Հոր խորհրդանիշ: Նրան տեսնելը, այնպես էր, կարծես, նրանք տեսնում էին Հորը, աղոթելը Նրան, այնպես էր, կարծես, նրանք աղոթում էին Հորը: Դա հատուկ և եզակի իրավիճակ էր» (*The Promised Messiah* [1978], 560, 561):

ԴԱՍ 129

# 3 Նեփի 20

## Նախաբան

Նեփիացիների մեջ Իր ծառայության երկրորդ օրը, Հիսուս Քրիստոսը կրկին սպասավորեց հաղորդությունը ժողովրդին: Նա վկայեց, որ Հոր ուխտերն ու խոստումները կկատարվեն վերջին օրերին: Իսրայելը կհավաքվի և երկրագնդի բոլոր ազգերը կօրհնվեն:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 20.1–9

*Փրկիչը կրկին սպասավորում է հաղորդությունը ժողովրդին:*

Դասը սկսելու համար, բացատրեք, որ դուք կցանկանայիք, որ երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք դասարանում պատասխանեին առանձին հարցերի: Հրավիրեք մի քանի երիտասարդ տղամարդկանց, ովքեր կրում են Ահարոնյան Քահանայություն, պատմել դասարանին հաղորդությունը պատրաստելու, օրհնելու կամ բաժանելու իրենց պարտականությունների մասին: Օգնեք նրանց կիսվել իրենց զգացումներով այս պարտականությունները կատարելու վերաբերյալ՝ նրանց ուղղելով հետևյալ հարցերը.

- Ի՞նչ է նշանակում ձեզ համար օգնել սպասավորել հաղորդությունը:
- Ինչպե՞ս եք ցույց տալիս Տիրոջը, որ հասկանում եք այս արարողության սրբազան բնույթը:

Օգնեք մի քանի կանանց կիսվել իրենց զգացումներով հաղորդության սրբազան բնույթի մասին՝ ուղղելով հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս եք զգում, երբ տեսնում եք արժանավոր երիտասարդ տղամարդկանց հաղորդությունը բաժանելիս:
- Ի՞նչ եք անում հաղորդությունը սպասավորելու ընթացքում, որը ցույց է տալիս, որ դուք հասկանում եք դրա սրբազան բնույթը:

Բացատրեք, որ Նեփիացիների մեջ Նրա ծառայության երկրորդ օրվա ընթացքում, Փրկիչը և նրա աշակերտները սպասավորեցին հաղորդությունը ժողովրդին երկրորդ անգամ: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 20.1: Շեշտեք հետևյալ նախադասությունը. «Եվ նա պատվիրեց նրանց, որ չդադարեն աղոթել իրենց սրտերում:»

- Ի՞նչ է նշանակում ձեզ համար «չդադարել աղոթել» ձեր սրտում:

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 20.3–5:

- Ինչպե՞ս է ձեր սրտում աղոթելը կարող ազդել հաղորդությունը ճաշակելու ամենշաբաթյա ձեր փորձառության վրա:
- Ինչո՞ւ է կարևոր Փրկչի վրա կենտրոնացած լինելը հաղորդությունը ճաշակելիս:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 20.8 : Խնդրեք, դասարանին ընթացքում հետևել, որոնելով թե ինչ են ներկայացնում հացն ու գինին: (Կարող է օգտակար լինել բացատրել, որ ներկայումս Եկեղեցին պետք է օգտագործի ջուր գինու փոխարեն:) [Տես ՎևՈւ 121.43:]

- Ի՞նչ են ներկայացնում հաղորդության հացը և ջուրը: (Փրկչի մարմինը և արյունը:)

Դուք կարող եք կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեյմս Ի. Թալմիջի հետևյալ միտքը՝ օգնելու ուսանողներին հասկանալ Իր մարմինն ուտելու և Իր արյունը խմելու Փրկչի հրավերի փոխաբերական իմաստը.

*«Ուտել Քրիստոսի մարմինը և խմել արյունը նշանակում էր և նշանակում է հավատալ և ընդունել Նրան որպես Աստծո տառացի Որդի և աշխարհի Փրկիչ և հնազանդվել Նրա պատվիրաններին:* Միայն այս միջոցներով կարող է Աստծո Հոգին դառնալ մարդու անհատական էության մնայուն մի մասը, ճիշտ ինչպես իր կերած

ուտելիքի նյութը միաձուլվում է նրա մարմնի հյուսվածքների մեջ» (*Jesus the Christ,* 3rd ed. [1916], 342; շեղագիրն ավելացված է)։

- Ի՞նչ փոխաբերություն կա ջուրը և հացը ճաշակելու մեջ։
- Համաձայն 3 Նեփի 20.8-ի, ի՞նչ խոստացավ Հիսուս Քրիստոսը նրանց, ովքեր ճաշակում են հաղորդությունը։ (Նրանց հոգիները կլցվեն։)

Ուսանողներին օգնելու հասկանալ, թե ինչ է նշանակում իրենց հոգիները լցվելը, խնդրեք նրանց մտածել այն հացի և ջրի քանակության մասին, որը նրանք սովորաբար ուտում են և խմում, երբ ճաշակում են հաղորդությունը։ Ապա հարցրեք.

- Եթե դուք քաղցած եք և ծարավ, դուք կկշտանայի՞ք այդքանով։

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 20.9, և հարցրեք դասարանին.

- Ի՞նչ սկզբունք կարող ենք սովորել Փրկչի ուսմունքներից 3 Նեփի 20.8–9 հատվածներում։ (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, բայց նրանք պետք է հասկանան հետևյալ սկզբունքը. **Եթե մենք արժանիորեն ճաշակենք հաղորդությունը, մենք կարող ենք լցվել Սուրբ Հոգով։**)

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռ. Ջեֆրի Հոլլանդի հետևյալ խոսքերը։ Խնդրեք դասարանին լսել, թե ինչ ճանապարհներով մենք կարող ենք օրհնվել, երբ լցվում ենք Հոգով.

«Եկեք արժանի դառնանք մեր Փրկչի խոստումին, որ ճաշակելով հաղորդությունը «մենք կլցվենք» (3 Նեփի 20.8, տես նաև 3 Նեփի 18.9), որը նշանակում է, որ մենք «կլցվենք Հոգով» (3 Նեփի 20։9)։ Այդ Հոգին՝ Սուրբ Հոգին, մեր մխիթարիչն է, մեր ուղղությունը գտնողը, մեր հաղորդակցողը, մեր մեկնաբանողը, մեր վկան և մեր մաքրագործողը՝ դեպի հավերժական կյանք մեր մահկանացու ճանապարհորդության մեր անսխալ ուղեկիցը և սրբագործողը։

. . . Մեր մկրտության ուխտերը գիտակցաբար և ակնածալի նորոգելու փոքր թվացող գործողությունից գալիս է ջրով և Հոգով մկրտության օրհնությունների նորացումը, որպեսզի մենք միշտ կարողանանք Նրա Հոգին ունենալ մեզ հետ։ Այս ձևով մեզանից բոլորը կառաջնորդվեն և այս ձևով մեզանից բոլորը կարող են մաքրվել» (“Always Have His Spirit,” *Ensign,* Nov. 1996, 61)։

- Որո՞նք են այն ուղիները, որոնցով մենք կարող ենք օրհնվել, երբ լցվում ենք Հոգով։
- Ե՞րբ է հաղորդությունը ճաշակելն օգնել ձեզ լցվել Սուրբ Հոգով։

Վկայեք հաղորդությունը ճաշակելուց և Հոգով լցվելուց ձեր ստացած օրհնությունների մասին։ Հաստատեք, որ մեր սրտերում աղոթելը այն ուղիներից մեկն է, որով կարող ենք պատրաստվել ճաշակել հաղորդությունը և լցվել Սուրբ Հոգով։ Խրախուսեք ուսանողներին աղոթել հաղորդությունը ճաշակելուց առաջ։

## 3 Նեփի 20.10–46

### *Փրկիչն ուսուցանում է Նեփիացիներն այն ուխտերի մասին, որոնք կկատարվեն վերջին օրերին։*

Հրավիրեք ուսանողներին գրել տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում համառոտ նկարագրություն իրենց ամենակարևոր հատկանիշների վերաբերյալ։ Երբ վերջացնեն, հրավիրեք նրանց նայել այն հատկանիշներին, որոնց վրա կենտրոնացել են իրենք։ Արդյո՞ք դրանք ֆիզիկական հատկանիշներ էին։ Անձնական բնավորության գծե՞ր։ Հոգևոր հատկանիշնե՞ր։ (Եթե ժամանակ կա, կարող եք հրավիրել մի քանի ուսանողների կարդալ իրենց գրածը։) Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ա. Բեդնարի հետևյալ միտքը և խնդրեք դասարանին լսել, ինչ է նա ասում մարդու ինքնության բնորոշման վերաբերյալ։

«Դուք կարող եք վայելել երաժշտությունը, սպորտը կամ հակում ունենալ դեպի մեխանիկական աշխատանքները և մի օր կարող է աշխատեք որևէ արհեստում կամ որևէ մասնագիտությամբ կամ արվեստում։ Որքան էլ կարևոր լինեն այդպիսի գործերը և զբաղմունքները, դրանք չեն բնորոշում, թե ով ենք մենք։ Առաջինը և ամենակարևորը՝ մենք հոգևոր էակներ ենք։ Մենք Աստծո [զավակներն] ենք և Աբրահամի սերունդը» («Դառնալով միսիոներ», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2005, 47)։

- Ինչպե՞ս է Երեց Բեդնարը բնորոշում, թե ով ենք մենք: Ինչո՞ւ է կարևոր մեզ համար տեսնել մեզ «առաջինը և ամենակարևորը» որպես հոգևոր էակներ, ովքեր Աստծո զավակներն են:

Նշեք, որ բացի ասելուց, որ մենք Աստծո զավակներն ենք, Երեց Բեդնարն ասել է, որ մենք Աբրահամի սերունդն ենք: Բացատրեք, որ «Աբրահամի սերունդ» արտահայտությունը կարող է վերաբերվել մարդկանց, ովքեր Աբրահամի տառացի սերունդն են: Այն կարող է նաև վերաբերվել մարդկանց, ովքեր ընդունելով և հնազանդվելով Հիսուս Քրիստոսի ավետարանի օրենքներին և արարողություններին, ստանում են ավետարանի լրիվությունը, քահանայության օրհնությունները և նույն խոստումներն ու ուխտերը, որոնք Աստված արեց Աբրահամի հետ:

Ասեք ուսանողներին, որ 3 Նեփի 20-ի մնացած մասում նրանք կուսումնասիրեն Նեփիացիներին ուղղված Աբրահամի և նրա սերնդի (Իսրայելի տան) արած ուխտերի և խոստումների մասին Փրկչի ուսմունքները: Նա ասաց, որ նրանք կարող են սովորել այս ուխտերի մասին՝ ուսումնասիրելով Եսայիայի խոսքերը: Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ բարձրաձայն3 Նեփի 20.11–12: Խնդրեք դասարանին հետևել ընթացքում, որոնելով թե ինչ էր ասել Փրկիչն այն մասին, թե ինչ կպատահեր, երբ Եսայիայի խոսքերը կատարվեին: Երբ ուսանողները հաղորդեն, թե ինչ են գտել, կարող եք բացատրել, որ Եսայիայի խոսքերը կիրականանան վերջին օրերում:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 20.13 հատվածը, և խնդրեք ուսանողներին գտնել, թե ինչպես Երկնային Հայրը կկատարի Իր ուխտերը Իսրայելի տան հետ վերջին օրերին: Խնդրեք ուսանողներին ամփոփել ճշմարտությունները, որոնք նրանք սովորել են 3 Նեփի 20.11–13 հատվածներից: (Ուսանողների պատասխանները կարող են տարբերվել, բայց նրանք պետք է հասկանան հետևյալ ճշմարտությունը. **Տերը կկատարի Իսրայելի տունը հավաքելու Իր ուխտը վերջին օրերին:** Մտածեք այս ճշմարտությունը գրատախտակին գրելու մասին:)

- Համաձայն 3 Նեփի 20.13-ի, ի՞նչ գիտելիք ձեռք կբերի Իսրայելի տան ժողովուրդը որպես այս հավաքման կարևոր մաս: (Նրանք ձեռք կբերեն «Տիրոջ՝ իրենց Աստծո իմացությունը, որը փրկագնել է նրանց»:)

Ուսանողներին օգնելու համար տեսնել, թե ինչպես է Հիսուս Քրիստոսի իմացությունը կարևոր մաս Իսրայելի հավաքման համար, խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրյուս Ռ. Մակ-Քոնկիի հետևյալ միտքը: Հրավիրեք ուսանողներին լսել, թե ինչ է ներառում Իսրայելի հավաքումը:

«Իսրայելի հավաքումը բաղկացած է հավատալուց և ընդունելուց և ներդաշնակության մեջ ապրելուց այն բոլոր բաների հետ, որոնք Տերը մի ժամանակ առաջարկել է Իր հնադարյան ընտրյալ ժողովրդին: Այն բաղկացած է առ Տեր Հիսուս Քրիստոս հավատք ունենալուց, ապաշխարելուց, մկրտվելուց, Սուրբ Հոգու պարգևը ստանալուց և Աստծո պատվիրանները պահելուց: Այն բաղկացած է ավետարանին հավատալուց, Եկեղեցուն միանալուց և թագավորություն մտնելուց: Այն բաղկացած է սուրբ քահանայությունն ընդունելուց, վերին զորությամբ սուրբ վայրերում օժտում ստանալուց և սելեստիալ ամուսնության արարողության միջոցով Աբրահամի, Իսահակի և Հակոբի բոլոր օրհնությունները ստանալուց: Եվ այն կարող է նաև բաղկացած լինել մի նշանակված վայրում կամ երկրպագության երկրում հավաքվելուց» (*A New Witness for the Articles of Faith* [1985], 515):

- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսին հավատալն ու հետևելը կարևոր մաս հանդիսանում Իսրայելի հավաքման համար:

Ամփոփեք 3 Նեփի 20.14–22 հատվածները: Բացատրեք, որ Փրկիչն ուսուցանեց Նեփիացիներին, որ որպես Իսրայելի հավաքման մաս և ի կատարումն Աբրահամի հետ Տիրոջ ուխտի, Երկնային Հայրը տվեց Լեքիի հետնորդներին երկիրը, որի վրա նրանք ապրեցին որպես ժառանգություն: Նա բացատրեց նաև մեկ այլ ուղի, որով Նեփիացիներն օրհնվեցին որպես ուխտի զավակներ: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ3 Նեփի 20.23–24, որոնելով, թե ում համար Մովսեսը մարգարեացավ, որը պիտի օրհներ Իսրայելի տունը: Երբ ուսանողները հաղորդեն իրենց գտածի մասին, հրավիրեք նրանց մտքում կարդալ 3 Նեփի 20.25–26: Խնդրեք նրանց գտնել, թե ինչպես Լեքիի հետնորդներն օրհնվեցին այն ուխտի շնորհիվ, որ Տերն արել էր Աբրահամի հետ: Երբ ուսանողները հաղորդեն իրենց գտածի մասին, շեշտեք, որ Երկնային Հայրն ուղարկեց Հիսուս Քրիստոսին այցելելու Լեքիի հետնորդներին և փրկելու նրանց մեղքից, «որովհետև [նրանք էին] ուխտի զավակները»:

- Ինչպե՞ս ենք մենք օրհնվում ուխտերով, որոնք մենք կապում ենք Երկնային Հոր հետ:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 20.27 և խնդրեք դասարանին գտնել մի պարտականություն, որը գալիս է ուխտերից, որ մենք կապում ենք Տիրոջ հետ:

- Եթե Տիրոջ հետ ուխտեր ենք կապել, ո՞րն է մեր պարտականությունը ողջ երկրագնդի մյուս մարդկանց հանդեպ: (Ուսանողները պետք է հասկանան հետևյալ ճշմարտությունը. **Որպես Աբրահամի սերունդ մենք պետք է ունենանք ուխտի պատասխանատվություն՝ օրհնելու երկրի բոլոր մարդկանց:** Կարող եք գրել այս ճշմարտությունը գրատախտակին:)
- Ինչպե՞ս կարող ենք օրհնել երկրի վրա բոլոր մարդկանց: (Եթե դուք գրել եք վարդապետական միտքը գրատախտակին, դրան ավելացրեք **«կիսվելով ավետարանով նրանց հետ» խոսքերը:**)

Ամփոփեք 3 Նեփի 20.29–46 , համառոտակի բացատրելով, որ բացի Նեփիացիներին ուսուցանելուց որպես ուխտի զավակներ նրանց օրհնությունների և պարտականությունների մասին, Փրկիչը հաստատեց, որ հրեաների ժառանգության երկիրը կլինի Երուսաղեմը: Նա մեջբերեց Եսայիայի մարգարեությունները, որոնք կանխագուշակում են այն ժամանակի մասին, երբ հրեաները կվերականգվեն իրենց ժառանգության հողերում Հիսուս Քրիստոսին հավատալուց և Հորը Նրա անունով աղոթելուց հետո:

Եզրափակելով, խնդրեք ուսանողներին բարձրաձայն կարդալ 3 Նեփի 20.46: Հրավիրեք ուսանողներին ընթացքում հետևել և նշել մի ուղի, որով նրանք կկարողանան օրհնել մեկ ուրիշի կյանքն ավետարանով հաջորդ շաբաթվա ընթացքում: Ծրագրեք ստուգել ուսանողներին հետագա որևէ դասի ընթացքում՝ նրանց հնարավորություն տալով հաղորդել իրենց փորձառությունների մասին: Վկայեք Իսրայելը հավաքելու մեր պարտականությունը կատարելու կարևորության մասին:

ԴԱՍ 130

# 3 Նեփի 21–22

## Նախաբան

Երբ Հիսուս Քրիստոսը շարունակեց ուսուցանել Նեփիացիներին, Նա բացատրեց, որ Մորմոնի Գրքի ի հայտ գալը վերջին օրերին կլինի նշան, որ Նա սկսել էր Իսրայելի հավաքումը և Իր ուխտը իրականացնելը Իր ժողովրդի հետ: Շեշտելով Իր մեծ սերը Իր ուխտի ժողովրդի հանդեպ, Փրկիչը մեջբերեց Եսայիայի մարգարեությունները ուխտի ժողովրդի վերականգման մասին:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 21.1–11

*Հիսուս Քրիստոսն ուսուցանեց, որ Մորմոնի Գրքի ի հայտ գալը կլինի նշան Իսրայելի հավաքման մասին վերջին օրերին:*

Մինչև դասը սկսելը նկարեք հետևյալ նշանները գրատախտակին (Կամ օգտագործեք այլ նշաններ, որոնք ընդունված են այնտեղ, որտեղ դուք եք ապրում):



Խնդրեք ուսանողներին բացատրել, թե ինչ է նշանակում յուրաքանչյուր նշանը: Ապա ուղղեք հետևյալ հարցերը.

- Ինչի՞ համար են օգտագործվում նշանները: (Պատրաստելու, նախազգուշացնելու և հրահանգելու համար:)
- Ինչո՞ւ է կարևոր, որ նշանը ճիշտ փակցվի և որ նշանի վրա ուղերձը հեշտ լինի հասկանալ:

Հիշեցրեք ուսանողներին, որ սուրբ գրությունները հաճախ խոսում են նշանների մասին, որոնք պատրաստում են, նախազգուշացնում և հրահանգում մեզ Երկնային Հոր ծրագրի կատարման վերաբերյալ: Հրավիրեք ուսանողներին աչքի անցկացնել 3 Նեփի 21.1–2, 7, որոնելով *նշան* բառը: Դուք կարող եք առաջարկել, որ նրանք նշեն այդ բառը, որտեղ որ այն հայտնվի այդ հատվածներում: Ապա խնդրեք նրանց մտքում ուշադիր կարդալ հատված 1-ը:

- Ինչո՞ւ Տերն ասաց, որ Նա կտա այս որոշակի նշանը: (Որպեսզի մարդիկ իմանան, որ Նա հավաքում է Իսրայելի տունը:)

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 21.1–7 հատվածները, և խնդրեք նրանց նշել «այս բաները» և «այս գործերը» և մտածել, թե այդ արտահայտություններն ինչին են վերաբերվում :

- Խոսելով Նեփիացիների հետ, Փրկիչն ասաց «այս բաները, որոնք ես հայտարարում եմ ձեզ» (3 Նեփի 21.2): Որտե՞ղ էին Նեփիացիներին ուղղված Նրա խոսքերն արձանագրվելու: (Մորմոնի Գրքում:)
- Համաձայն այս հատվածների, ո՞րն է նշաններից մեկը, որ Աստված իրականացնում է Իր ուխտերը վերջին օրերում: (Օգնեք ուսանողներին հասկանալ հետևյալ ճշմարտությունը [գրեք այն գրատախտակին]. ***Մորմոնի Գրքի ի հայտ գալը նշան է, որ Աստված իրականացնում է վերջին օրերին Իսրայելը հավաքելու Իր ուխտը:***)

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը: Խնդրեք դասարանին լսել այն

***Ուսուցանեք Հոգով***

Աղոթեք Սուրբ Հոգու առաջնորդության համար, երբ դուք պատրաստվեք և երբ ուսուցանեք:

ուղիների մասին, որոնցով Մորմոնի Գիրքն օգնում է մարդկանց հավաքվել Տիրոջ աշխատանքի շուրջ:

«Մորմոնի Գիրքը կենտրոնական է այս աշխատանքում: Այն հայտարարում է հավաքման վարդապետությունը: Այն մղում է մարդկանց սովորել Հիսուս Քրիստոսի մասին, հավատալ Նրա ավետարանին և միանալ Նրա Եկեղեցուն: Փաստորեն եթե չլիներ Մորմոնի Գիրքը, Իսրայելի խոստացված հավաքումը տեղի չէր ունենա» («Ցրված Իսրայելի հավաքումը», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2006, 80):

- Ե՞րբ է Մորմոնի Գիրքն օգնել ձեզ այս ձևով: Ե՞րբ եք տեսել, որ Մորմոնի Գիրքն օգնել է ուրիշ մարդկանց այս ձևով:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 21.9, և խնդրեք դասարանին նշել «մեծ և զարմանալի գործ» արտահայտությունը: Նշեք, որ այս արտահայտությունը վերաբերում է Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգմանը, որը ներառում է Մորմոնի Գրքի ի հայտ գալը:

- Ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնումը մեծ և զարմանալի:

Շեշտեք, որ 3 Նեփի 21.9 հատվածը վերաբերում է «մի մարդու»: Հրավիրեք ուսանողներին մտածել, թե ո՞վ կարող է լինել այդ մարդը: Ապա ցույց տվեք Ջոզեֆ Սմիթի նկարը (գուցե Եղբայր Ջոզեֆի նկարը կամ Առաջին տեսիլքի նկարը [*Gospel Art Book* (2009), no. 87, no. 90]): Ասացեք ուսանողներին, որ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը հաստատել է այդ մարդու ինքնությունը որպես Ջոզեֆ Սմիթ (տես *Christ and the New Covenant: The Messianic Message of the Book of Mormon* [1997], 287–88): Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 21.10–11հատվածները, մտածեք, թե ինչպես է Մարգարե Ջոզեֆ Սմիթը համապատասխանում այս հատվածների նկարագրությանը:

- Ինչպե՞ս է Աստված ցույց տվել Ջոզեֆ Սմիթի միջոցով, որ Իր «իմաստությունն ավելի մեծ է, քան դևի խորամանկությունը»:
- Համաձայն 3 Նեփի 21.11-ի, ի՞նչ կպատահի նրանց, ովքեր չեն հավատում Քրիստոսի խոսքերին, որոնք ի հայտ են եկել Ջոզեֆ Սմիթի միջոցով: (Նրանք «կկտրվեն» այն օրհնություններից, որոնք գալիս են ուխտերի միջոցով:)

## 3 Նեփի 21.12–22.17

*Փրկիչը խոսում է չապաշխարողների կործանման և Իր ժողովրդի վերականգման մասին, ովքեր կապաշխարեն և կվերադառնան Նրա մոտ:*

Ամփոփեք 3 Նեփի 21.12–21, բացատրելով, որ Փրկիչը վերջին օրերին տվեց մի նախազգուշացում նրանց, ովքեր չեն հավատա Իրեն և չեն ապաշխարի: Նա ասաց, որ իրենց նյութական ունեցվածքները, քաղաքները, ամրոցները և չար գործերը կկործանվեն: Նա նաև ասաց, որ նրանք կկտրվեն Նրա ուխտի ժողովրդից:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 21.22, 25–28 հատվածները, որոնելով օրհնությունները և պարտականությունները, որոնք վերջին օրերին կտրվեն նրանց, ովքեր կապաշխարեն և ականջ կդնեն Փրկչի խոսքերին:

Հարցրեք ուսանողներին, թե ինչպես կամփոփեին3 Նեփի 21.12–22, 25–28 ուսմունքները: Հրավիրեք մի քանի ուսանողների գրատախտակին գրել իրենց պատասխանները: Ապա ամփոփեք բոլոր պատասխանները գրատախտակին, շեշտելով, որ**երբ մենք ապաշխարում ենք և ականջ դնում Փրկչի խոսքերին, մենք հավաքվում ենք որպես Նրա ուխտյալ ժողովրդի մաս:** (Դուք կարող եք գրել այս ճշմարտությունը գրատախտակին:)

Գրատախտակին կամ պաստառի վրա մի վրան նկարեք (դուք կարող եք անել դա դասից առաջ): Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը մեջբերեց մի մարգարեություն, որը ոգեշնչել էր Եսայիա մարգարեին գրել դարեր առաջ: Այս մարգարեության մեջ Եսայիան համեմատեց Եկեղեցին իր ուխտերով և օրհնություններով վրանի հետ:




- Որո՞նք են վրանի ծածկի տակ լինելու առավելությունները: (Պատասխանները կարող են ներառել՝ վրանը ապահովում է պաշտպանություն փոթորիկներից և ստվեր արևից:)
- Ինչո՞վ է Եկեղեցին նման վրանի:

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 22.2:

- Ինչո՞ւ կարող է այս «վրանը» անհրաժեշտ լինել ընդարձակել և ամրացնել վերջին օրերին: (Քանի որ շատ մարդիկ կմիանան Եկեղեցուն կամ կվերադառնան Տիրոջ հետ իրենց ուխտերին: ) Ի՞նչ կարող եք դուք անել՝ օգնելու ընդարձակել վրանը և ամրացնել ցցերը: (Խրախուսեք ուսանողներին գործել այս հարցին իրենց պատասխանների համաձայն:)

Բացատրեք, որ այս նույն մարգարեության մեջ Եսայիան օգտագործեց մեկ այլ համանմանություն: Նա Իսրայելի տունը նմանեցրեց մի կնոջ, ում ամուսինը Տերն է: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 22.4–5 հատվածները, և խնդրեք դասարանին որոնել մխիթարության բառեր կնոջ համար:

- Ի՞նչ մխիթարության խոսքեր եք տեսնում 3 Նեփի 22.4: (Պատասխանները կարող են ներառել «դու չպիտի ամաչես» և «դու պիտի մոռանաս քո երիտասարդության նախատինքը [խայտառակությունը]»:) Ինչո՞ւ է մխիթարող այն իմանալը, որ «ամուսինը» «Քավիչն է, Իսրայելի Սուրբը» (3 Նեփի 22.5):
- Ինչպե՞ս են այս հատվածները նման մեզ տրված Փրկչի պատասխանին, երբ մենք մեղանչում ենք:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 22.7–10 հատվածները՝որոնելով խոստումները, որոնք Փրկիչը տալիս է Իր ուխտի ժողովրդին, ովքեր վերադառնում են դեպի Իրեն:

- Ի՞նչ է խոստանում Փրկիչը նրանց, ովքեր վերադառնում են դեպի Նա:
- Որո՞նք են այն ճշմարտությունները, որոնք մենք սովորում ենք Տիրոջ մասին այս հատվածներում: (Ուսանողները կարող են կիսվել այս հարցի մի քանի տարբեր պատասխաններով: Հավաստիացեք, որ նրանք հասկանում են հետևյալ ճշմարտությունները. **Տերը ցույց է տալիս հավիտենական բարություն և ողորմածություն այն մարդկանց, ովքեր վերադառնում են դեպի Իրեն:** Դուք կարող եք գրել այս ճշմարտությունը գրատախտակին: Դուք կարող եք նաև առաջարկել, որ ուսանողները գրեն այն իրենց սուրբ գրություններում 3 Նեփի 22.7–10 հատվածների կողքին:)

Օգնելու համար ուսանողներին ավելի լավ հասկանալ 3 Նեփի 22.4–10 հատվածները, կարող եք կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը.

«Չնայած եղել է ամլություն, իսկ երբեմն՝ անհավատարմություն, այնուամենայնիվ, ամուսինը (Քրիստոսը) կվերընդունի և կփրկագնի իր հարսնացուին (Իսրայելին): Եհովայի պատկերումը, որպես փեսացու, և Իսրայելը՝ որպես հարսնացու, ամենաշատ օգտագործված համանմանությունն է սուրբ գրություններում, լինելով օգտագործված Տիրոջ և նրա մարգարեների կողմից նկարագրելու փոխհարաբերությունը Աստվածության և ուխտի զավակների միջև:

. . . Քրիստոսը երբեմն իրավացիորեն բարկացել է մեղսավոր Իսրայելի վրա, բայց դա միշտ եղել է կարճ և ժամանակավոր՝ «մի կարճ պահ»: Կարեկցանքն ու ողորմածությունը միշտ վերադառնում են և գերիշխում ամենահաստատուն ձևով: Լեռներն ու բլուրները կարող են անհետանալ: Մեծ ջրերի ծովերը կարող են ցամաքել: Ամենաանհավանական բաներն աշխարհում կարող են պատահել, բայց Տիրոջ բարությունն ու խաղաղությունը երբեք չի վերցվի իր ուխտի ժողովրդից: Նա երդվել է մի

երկնային երդումով, որ չի զայրանա նրանց վրա հավիտյան» (*Christ and the New Covenant,* 290):

- Փրկչի ողորմածության և բարության ի՞նչ ապացույցներ եք դուք տեսել ձեր կյանքում: (Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են, որ չպետք է կիսվեն որևէ բանով, որը խիստ անձնական է կամ գաղտնի:)
- Ինչպե՞ս կարող է Փրկչի ողորմածության և բարության իմացությունն ազդել ուխտերին հավատարիմ մնալու վրա:

Բացատրեք, որ Փրկիչը շարունակեց ուսուցանել Նեփիացիներին այն օրհնությունների մասին, որոնք սպասում են արդարներին: Հրավիրեք ուսանողներին մտքում հետազոտել 3 Նեփի 22.13–17 հատվածները, որոնելով մեկ խոստացված օրհնություն, որն իսկապես իմաստալի է նրանց համար: Շեշտեք, որ երբ մենք կարդում ենք այս խոստացված օրհնությունների մասին, մենք տեսնում ենք, որ **Տիրոջ ժողովուրդը կհաստատվի արդարությամբ և կհաղթի ամբարշտությանը:**

Եզրափակեք ձեր վկայությամբ այն ճշմարտությունների մասին, որոնք քննարկվեցին այս դասում: Հրավիրեք ուսանողներին գրել երեք կամ չորս նախադասություն տետրում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում մեկ բանի վերաբերյալ, որը նրանք կարող են անել, որպեսզի այսօր արժանանան օրհնություններին, որոնք Տերը կամենում է տալ նրանց:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 3 Նեփի 21.22–25: Նոր Երուսաղեմը

Դանիել Հ. Լադլոուն պարզաբանել է, թե ով կկառուցի Նոր Երուսաղեմ քաղաքը.

«Նոր Երուսաղեմը» վերջին օրերին կկառուցվի Ամերիկյան մայրցամաքում (1) «Հակոբի մնացորդի կողմից, (2) Հեթանոսների, ովքեր «կմտնեն ուխտի մեջ և կհամարվեն Հակոբի այս մնացորդի թվում» և (3) «Իսրայելի տնից բոլոր նրանց, ովքեր կգան» (3 Նեփի 21.22–25: Կարդացեք նաև 3 Նեփի 20.22, Եթեր 13.1–12:)» (*A Companion to Your Study of the Book of Mormon* [1976], 281):

# Տնային ուսումնասիրության դաս

## 3 Նեփի 17–22 (Մաս 26)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփագիրը, որոնք ուսանողները սովորեցին, երբ ուսումնասիրեցին 3 Նեփի 17–22 (մաս 26), նախատեսված չէ ուսուցանել որպես ձեր դասի մաս: Դասը, որ դուք եք ուսուցանում, կենտրոնացած է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, երբ հաշվի եք առնում ձեր ուսանողների կարիքները:

### Օր 1 (3 Նեփի 17)

Ուսումնասիրելով Հիսուս Քրիստոսի խոսքերը Նեփիացիների բազմությանը, ուսանողներն իմացան, որ խորհրդածելով և աղոթելով Հորը, մենք կարող ենք ստանալ ավելի մեծ հասկացողություն Փրկչի ուսմունքերի վերաբերյալ: Փրկիչն արձագանքեց Նեփիացիների ցանկությանը՝ մի քիչ ավելի երկար մնալ նրանց հետ՝ բժշկելով նրանց հիվանդներին և օրհնելով նրանց երեխաներին: Երբ ուսանողները կարդացին այս իրադարձությունների մասին, նրանք իմացան, որ Հիսուս Քրիստոսը մեծ կարեկցանք է զգում մեր հանդեպ:

### Օր 2 (3 Նեփի18)

Փրկիչը սպասավորեց հաղորդությունը բազմությանը: Ուսանողները սովորեցին, որ երբ մենք ճաշակում ենք հաղորդությունը, մենք վկայում ենք Հորը, որ հոժար ենք անել այն ամենը, ինչ Նա պատվիրել է և որ մենք միշտ կհիշենք Հիսուս Քրիստոսին: Նրանք նաև սովորեցին, որ երբ մենք ճաշակում ենք հաղորդությունը և միշտ հիշում Փրկչին, մենք կունենանք Նրա Հոգին մեզ հետ: Աղոթքի վերաբեյալ Փրկչի ուսմունքներն օգնեցին ուսանողներին հասկանալ, որ եթե մենք զգոն լինենք և միշտ աղոթենք Հորը, մենք կկարողանանք դիմադրել սատանայի գայթակղություններին: Նրանք նաև սովորեցին, որ երբ մենք ծառայում ենք ուրիշներին, մենք կարող ենք օգնել նրանց գալ դեպի Քրիստոսը:

### Օր 3 (3 Նեփի 19)

Երբ Նեփիացիների հետ անցկացրած Իր առաջին օրվա վերջում Փրկիչը հեռացավ, աշակերտներն ուսուցանեցին ժողովրդին: Նրանք աղոթեցին և ստացան Սուրբ Հոգին: Ուսանողները սովորեցին, որ մեր արդար ցանկություններն ու աղոթքները կարող են արժանի դարձնել մեզ լցվել Սուրբ Հոգով: Փրկիչը կրկին հայտնվեց և Նա շնորհակալություն հայտնեց Հորը՝ Իր աշակերտներին մաքրագործելու համար: Ուսանողները սովորեցին, որ երբ մենք հավատք ենք գործադրում առ Հիսուս Քրիստոս, մենք կարող ենք մաքրագործվել և դառնալ մեկ Հիսուս Քրիստոսի հետ, ինչպես Նա է մեկ Հոր հետ:

### Օր 4 (3 Նեփի 20–22)

Հիսուս Քրիստոսը նորից սպասավորեց հաղորդությունը: Ուսանողները սովորեցին, որ եթե մենք արժանիորեն ենք ճաշակում հաղորդությունը, մենք կարող ենք լցվել Սուրբ Հոգով: Ապա Փրկիչն ուսուցանեց Նեփիացիներին այն մասին, որ Հայրը կկատարի վերջին օրերի Իսրայելը հավաքելու Իր ուխտը: Ուսանողները նաև իմացան, որ որպես Աբրահամի սերունդ, մենք ունենք ուխտի պարտավորություն օրհնելու երկրի բոլոր մարդկանց՝ կիսվելով նրանց հետ ավետարանով:

## Նախաբան

Այս դասը կարող է օգնել ուսանողներին հասկանալ այն քնքշանքն ու ողորմածությունը, որ Փրկիչը զգում է Իր ժողովրդի հանդեպ: Բացի այդ, երբ ուսանողները կրկնում են Տիրոջ աղոթելու խորհուրդը, նրանք կարողանում են մտածել, թե ինչպես իրենց անձնական և ընտանեկան աղոթքներն ավելի իմաստալի դարձնել:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 17

***Փրկիչը բժշկում է հիվանդներին, աղոթում է Հորը ժողովրդի համար և օրհնում նրանց երեխաներին:***

Հրավիրեք ուսանողներին մտածել, թե ով է իրենց իմացած ամենահոգատար անձը: Ապա հարցրեք. Ո՞ւմ մասին մտածեցիք: Ինչպե՞ս է այդ անձնավորությունը սեր ցույց տալիս ուրիշների և ձեր հանդեպ:

Ցուցադրեք Հիսուսը բժշկում է Նեփիացիներին (*Gospel Art Book* [2009], no. 83) և Հիսուսն օրհնում է Նեփիացի երեխաներին (*Gospel Art Book,* no. 84) նկարները: Ապա հարցրեք. Ի՞նչ սովորեցիք մարդկանց հանդեպ Փրկչի սիրո մասին Մորմոնի Գրքի ձեր ուսումնասիրության ժամանակ այս անցած շաբաթվա ընթացքում:

Գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. ***Փրկիչը մեծ կարեկցանք է զգում մեր հանդեպ:*** Այս մտքի ներքևում, գրեք սուրբ գրության հետևյալ հղագրումը. *3 Նեփի 17.7, 9, 11, 15–17, 21, 24:* Հրավիրեք ուսանողներին վերանայել այս հատվածները և ընտրեք մեկը, որը հատկապես դրսևորում է գրատախտակին գրված ճշմարտությունը: Բավականաչափ ժամանակ անց կարող եք տալ հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս է ձեր ընտրած այս հատվածը ցույց տալիս, որ Փրկիչը մեծ կարեկցանք է զգում մեր հանդեպ:
- Ի՞նչ եք սովորում Փրկչի մասին այն փաստից, որ Նա ծառայեց ժողովրդին «մեկ առ մեկ» 3 Նեփի 17.21:
- Ինչպե՞ս է Փրկչի կարեկցանքի մասին իմանալն օգնում ձեզ ավելի մեծ հավատք գործադրել Նրա հանդեպ և ավելի մեծ սեր զգալ Նրա հանդեպ:

## 3 Նեփի 18–19

*Հիսուսն ուսուցանեց ժողովրդին միշտ աղոթել Հորը և հաճախ հանդիպել միմյանց:*

Բաժանեք ուսանողներին զույգերի և խնդրեք յուրաքանչյուր զույգին հինգ ամենադժվար գայթակղությունների ցուցակը կազմել, որոնց, նրանց կարծիքով, երիտասարդությունը դիմակայում է այսօր: Երբ նրանք ավարտեն, հրավիրեք յուրաքանչյուր զույգին կարդալ 3 Նեփի 18.15–20 հատվածները և որոնել այն խորհուրդը, որը Փրկիչը տվեց գալիք գայթակղությունների դեմ: Խնդրեք մի քանի ուսանողների կիսվել մի սկզբունքով, որը նրանք գտնում են այս հատվածներում: Սկզբունքներից մեկը, որը նրանք կարող են գտնել, այն է, որ **եթե մենք զգոն լինենք և միշտ աղոթենք Հորը, մենք կարող ենք դիմադրել սատանայի գայթակղություններին:**

Ուսանողներին ուղղեք հետևյալ հարցերը.

- Ինչի՞ց պետք է երիտասարդը զգուշանա, որպեսզի դիմադրի ձեր ցուցակի գայթակղություններից որևէ մեկին:
- Ինչի՞ համար երիտասարդը կարող է աղոթել, որը կօգնի նրան դիմադրել ձեր ցուցակի գայթակղություններից որևէ մեկին: Ինչպե՞ս է Երկնային Հորն աղոթելն օգնում ուժեղ մնալ:

Ուսանողներին օգնելու համար զորացնել իրենց վկայությունները ընտանեկան աղոթքի վերաբերյալ, հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 18.21 : Ապա հարցրեք. Ի՞նչ օրհնություններ եք դուք ստացել ձեր ընտանիքի հետ աղոթելուց:

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստի հետևյալ պատմությունը.

«Ընտանեկան աղոթքը հզոր և պահպանող ազդեցություն ունի: Երկրորդ համաշխարհային պատերազմի մութ օրերին 500 ֆունտանոց մի ռումբ ընկավ Եղբայր Փաթեյի՝ Լիվերպուլից մի երիտասարդ հոր փոքրիկ տան վրա Անգլիայում, բայց ռումբը չպայթեց: Նրա կինը մահացել էր, այսպիսով նա միայնակ էր հոգ տանում իր հինգ երեխաների համար: Նա հավաքեց նրանց միասին այս շատ դժվարին պահին՝ ընտանեկան աղոթքի համար: Նրանք «բոլորը աղոթեցին . . . անկեղծորեն և երբ ավարտեցին աղոթելը, երեխաներն ասացին. Հայրիկ ամեն ինչ լավ կլինի մեզ համար: Ամեն ինչ լավ կլինի մեզ համար այս երեկո մեր տանը»:

Եվ այսպիսով նրանք գնացին քնելու, պատկերացրեք այս սոսկալի ռումբը հենց դռան ետևում կիսով չափ խրված հողի մեջ: Եթե այն պայթեր, այն հավանաբար կավերեր քառասուն կամ հիսուն տուն և կսպաներ երկու կամ երեք հարյուր մարդ: . . .

Հաջորդ առավոտ . . . ողջ շրջակայքը դատարկվեց քառասունութ ժամով և, ի վերջո, ռումբը վնասազերծվեց:. . .

Ետդարձի ճանապարհին Եղբայր Փաթեյը հարցրեց ռազմական ջոկատի պետին. «Դեհ, ի՞նչ հայտնաբերեցիք»:

«Պր. Փաթեյ մենք գտանք ռումբը ձեր դռան առջև և տեսանք, որ այն պատրաստ էր պայթելու ամեն վայրկյան: Դրան ոչինչ չէր պատահել: Մենք ապշած ենք մնացել, թե ինչու այն չէր պայթել»: Զարմանահրաշ բաներ են պատահում, երբ ընտանիքները միասին են աղոթում» (“The Lifeline of Prayer,” *Ensign,* May 2002, 61):

Ուղղեք ուսանողներին հետևյալ հարցերը, զգայուն լինելով այն ուսանողների հանդեպ, ում ընտանիքները, գուցե, միասին չեն աղոթում.

- Ի՞նչ կարող եք անել՝ օգնելու համար ձեր ընտանիքին ավելի հետևողական և իմաստալի ընտանեկան աղոթքներ ունենալ:
- Ինչպե՞ս եք ծրագրում դարձնել ընտանեկան աղոթքը առաջնահերթություն ձեր ապագա ընտանիքում:

Բացատրեք, որ երբ Փրկիչը վերադարձավ երկրորդ օրը ուսուցանելու Նեփիացիներին, ինչպես արձանագրված է 3 Նեփի 19 գլխում, Նա կրկին հորդորեց Նեփիացի աշակերտներին աղոթել: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 19.9, 13 և հանձնարարեք ուսանողներին գտնել, թե ինչի համար էին աղոթում աշակերտները: Հարցրեք. Ի՞նչ սկզբունք մենք կարող ենք սովորել Նեփիացի աշակերտների փորձառությունից: (Ահա մի եղանակ, որով ուսանողները կարող են արտահայտել այս սկզբունքը. **Մեր արդար ցանկությունները և աղոթքները կարող են մեզ արժանի դարձնել լցվելու Սուրբ Հոգով:** )

Ապա հարցրեք ուսանողներին. Ե՞րբ եք անկեղծորեն ցանկացել և աղոթել Սուրբ Հոգու ընկերակցության համար: Ինչպե՞ս եք դուք օրհնվել այդ անելու համար:

## 3 Նեփի 20–22

*Վերջին օրերին Աստված կսկսի հավաքել Իսրայելի տունը:*

Բացատրեք, որ աղոթքի մասին Նեփիացիներին բացատրելուց հետո, Փրկիչը սկսեց ուսուցանել նրանց Իսրայելի տան հավաքման մասին վերջին օրերին: Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ 3 Նեփի 21.9: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, որոնելով բառերը, որոնք նկարագրում են Տիրոջ աշխատանքը: Ապա հարցրեք.

- Ձեր կարծիքով, ո՞րն է «մեծ և զարմանալի աշխատանքը»: (Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնումը, որը ներառում է Մորմոնի Գրքի ի հայտ գալը:)
- Ձեր կարծիքով, ի՞նչն է մեծ և զարմանալի Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգման մեջ:

Խնդրեք ուսանողներին վերանայել3 Նեփի 21.10–11 հատվածները և մտածել այն մասին, թե ում էր Տերը նկարագրում որպես «իր ծառա»: Հարցրեք. Ի՞նչ բառեր կամ արտահայտություններ են օգնում ձեզ իմանալ, որ Տերը նկարագրում

է Մարգարե Ջոզեֆ Սմիթին: Ապա ցուցադրեք Ջոզեֆ Սմիթի նկարը Լիբերթիի բանտում (*Gospel Art Book,* no. 97):

Հարցրեք. Ինչպե՞ս Աստված ցույց տվեց Ջոզեֆ Սմիթի միջոցով, որ Իր «իմաստությունն ավելի մեծ է, քան դևի խորամանկությունը»:

Եզրափակելով, հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց վկայություններով Մարգարե Ջոզեֆ Սմիթի և Վերականգման մասին: Կիսվեք ձեր վկայությամբ այս բաների վերաբերյալ ձեր ուսանողների հետ:

## Հաջորդ Մաս (3 Նեփի 23–30 )

Առաջարկեք ուսանողներին պատկերացնել, որ Փրկիչը պատմեց նրանց, որ Նա կշնորհեր ինչ որ նրանք ցանկանում էին: Բացատրեք, որ երբ նրանք ուսումնասիրեն 3 Նեփի 23–30 հատվածները եկող շաբաթ, նրանք կսովորեն տասներկու մարդկանց մասին, ովքեր ունեցան այս փորձառությունը և թե ինչ նրանք խնդրեցին:

ԴԱՍ 131

# 3 Նեփի 23

## Նախաբան

Եսայիայի խոսքերը մեջբերելուց հետո (տես 3 Նեփի 22) Հիսուս Քրիստոսը պատվիրեց Նեփիացիներին հետազոտել այս մարգարեի խոսքերը: Նա ասաց, որ Եսայիայի խոսքերը օրհնություն են, որովհետև Եսայիան «խոսել է բոլոր բաների առնչությամբ իմ ժողովրդի վերաբերյալ, որոնք Իսրայելի տնից են» (3 Նեփի 23.2): Նա նաև ասաց, որ Եսայիայի բոլոր խոսքերը իրականացել են կամ կիրականան: Ապա Փրկիչը պատվիրեց Նեփիացիներին քննել բոլոր մարգարեների խոսքերը և հրահանգեց նրանց իրենց հիշատակարաններին նյութեր ավելացնել:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 23.1–5

*Հիսուս Քրիստոսը պատվիրեց ժողովրդին քննել մարգարեների խոսքերը*

Հետևյալ արտահայտությունը գրեք գրատախտակին. *Օրհնությունները սուրբ գրությունների իմ ուսումնասիրությունից:* Խնդրեք ուսանողներին խորհել իրենց փորձառությունների մասին, երբ այս տարի ուսումնասիրեն Մորմոնի Գիրքը տանը և սեմինարիայում: Հրավիրեք նրանց գալ գրատախտակի մոտ և գրել մի խոսք կամ կարճ արտահայտություն, որը նկարագրում է օրհնություն, որը տրվել է իրենց որպես սուրբ գրությունների ուսումնասիրության արդյունք: Դուք կարող եք խնդրել մի քանի ուսանողների նկարագրել ավելի մանրամասնորեն, թե ինչ են իրենք գրել: Ապա մատնանշեք գրատախտակի վրա գրված օրհնությունները:

- Ինչո՞ւ եք կարծում, որ մենք օրհնված ենք այս ուղիներով, երբ մենք կարդում ենք սուրբ գրությունները:

Խնդրեք ուսանողներին վերհիշել նախորդ դասից, թե ում խոսքերը Հիսուս Քրիստոսը մեջբերեց, երբ Նա ուսուցանեց Նեփիացիներին: (Եսայիայի խոսքերը:) Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 23.1–3 : Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, տեսնելով, թե ինչ մենք մենք պետք է անենք Եսայիայի խոսքերի հետ, ըստ Փրկչի: Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն խոսքերը և արտահայտությունները, որոնք այս հատվածներում ընդգծված են իրենց համար: Հրավիրեք նրանց կիսվել իրենց հայտնաբերածով:

- Ինչո՞ւ է Տերը կամենում, որ ժողովուրդը քննի Եսայիայի խոսքերը (տես 3 Նեփի 23.2–3 ):
- Ինչո՞ւ է օրհնություն իմանալը, որ Եսայիայի բոլոր խոսքերը կկատարվեն:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 23.4–5 հատվածները : Մատնանշեք, որ նրանից հետո, երբ Փրկիչն ասաց, որ պետք է քննել Եսայիայի խոսքերը, Նա ասաց, որ պետք է «խորաքննեք մարգարեներին»: Գրեք հետևյալ ճշմարտությունը գրատախտակին. ***Փրկիչը պատվիրում է մեզ ջանասիրաբար հետազոտել Եսայիայի և մյուս մարգարեների խոսքերը:***

- Համաձայն 3 Նեփի 23.5, ի՞նչ պետք է մենք անենք փրկվելու համար: Ինչպե՞ս են մեզ օգնում մարգարեների խոսքերը հետևել այս պատվիրաններին:
- Ի՞նչպես է ջանասիրաբար մարգարեների խոսքերը քննելը տարբերվում մարգարեների խոսքերը միայն կարդալուց: Ինչո՞ւ եք կարծում, որ կարևոր է ջանասիրաբար ուսումնասիրել Եսայիայի և մյուս մարգարեների խոսքերը:
- Սուրբ գրությունների ուսումնասիրության ի՞նչ մեթոդներ են լավագույնս օգնում ձեզ քննել Եսայիայի և մյուս մարգարեների խոսքերը՝ դարձնելով դրանք ձեր կյանքի իմաստալի մասը:

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Յոթանասունից Երեց Մերիլ Ջ. Բեյթմանի հետևյալ միտքը.

Կան որոշակի օրինություններ, որոնք ձեռք են բերվում, երբ մարդ քննում է սուրբ գրությունները: Երբ որևէ մեկն ուսումնասիրում է Տիրոջ խոսքերը և դրանց հնազանդվում, նա մոտենում է Փրկչին և ձեռք բերում ավելի մեծ ցանկություն՝ ապրելու արդար կյանքով: Գայթակղությանը դիմադրելու ուժը մեծանում է և հոգևոր թուլությունները հաղթահարվում են: Հոգևոր վերքերը բժշկվում են» (“Coming unto Christ by Searching the Scriptures,” *Ensign,* Nov. 1992, 28):

- Բացի սուրբ գրություններից որտե՞ղ կարող ենք գտնել մարգարեների խոսքերը:

Խնդրեք ուսանողներին պատասխանել տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում հետևյալ հարցին:

- Ի՞նչ փոփոխություններ կարող եք անել մարգարեների խոսքերն ավելի ջանասիրաբար ուսումնասիրելու համար:

Հրավիրեք մի քանի ուսանողների վկայել այն օրինությունների մասին, որոնք գալիս են մարգարեների խոսքերը քննելու արդյունքում:

## 3 Նեփի 23.6–14

*Փրկիչը հրահանգում է Իր աշակերտներին ավելացնել մի կարևոր իրադարձություն իրենց սուրբ գրությունների հիշատակարանում:*

Խնդրեք մի քանի ուսանողների, որ անվանեն իրենց սիրելի պատմությունները Մորմոնի Գրքից: Գրի առեք նրանց պատասխանները գրատախտակին: Հետո ջնջեք պատասխանները: Խնդրեք ուսանողներին պատկերացնել, որ Մորմոնը կամ Նեփին կամ որևէ այլ գրառող անտեսել է ներառել այդ պատմությունը:

- Ի՞նչ կանոր դասեր կբացակայեին Մորմոնի Գրքից, եթե այդ պատմություններն ընդգրկված չլինեին:

Բացատրեք, որ երբ Փրկիչն ուսուցանեց Նեփիացիներին, Նա մատնանշեց, որ նրանց հիշատակարան գրողները անտեսել էին ներառել մի կարևոր իրադարձություն, որը տեղի էր ունեցել ի կատարումն մարգարեության: Խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 3 Նեփի 23.6–13 հատվածները: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, որոնելով այն, ինչ Նեփիացիները ձախողվել էին արձանագրել:

- Նեփիացիներն արդեն ունեին Սամուելի մարգարեության արձանագրությունը (տես Հելաման 14.25): Ինչո՞ւ եք կարծում, որ կարող էր կարևոր լինել նրանց համար ունենալ դրա իրականացման արձանագրությունը:

Շեշտեք, որ չնայած մենք չենք պատվիրվել գրել սուրբ գրքի հիշատակարան Եկեղեցու համար, մեզ խորհուրդ է տրվում վարել անձնական օրագիր:

- Ինչպե՞ս կարող է Փրկչի խորհուրդը 3 Նեփի 23.6–13 հատվածներում վերաբերվել անձնական օրագրեր պահելու մեր ջանքերին:

Ուսանողներին օգնելու համար տեսնել մի ուղի անձնական օրագիր պահելու համար, հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի կողմից պատմած հետևյալ փորձառությունը.

«Ես Եկեղեցու հանձնարարությունից ուշ տուն վերադարձա: Արդեն մութ էր: Աներս, որ մեր հարևանությամբ էր ապրում, զարմացրեց ինձ, երբ ես մեր տան դռանն էի մոտենում: Նա մի քանի խողովակ ուսին արագ քայլում էր, և աշխատանքային շորերով էր: Ես գիտեի, որ նա ջրհան համակարգ էր պատրաստում, որով պետք է ջուրը բարձրանար ներքևում հոսող գետից դեպի մեր տարածքը:

Նա ժպտաց, մեղմորեն խոսեց և արագ անցավ կողքովս՝ մթության մեջ՝ շարունակելու իր գործը: Ես մի քանի քայլ արեցի դեպի տուն, մտածելով, թե որքան բան էր անում մեզ համար, և հենց հասա դռանը, մտքում, ոչ իմ ձայնով, լսեցի այս խոսքերը. «Ես այս փորձառությունները չեմ տալիս միայն քեզ համար: Գրի առ դրանք»:

Ես ներս մտա: Ես չգնացի քնելու: Թեպետ հոգնած էի, ես վերցրեցի թուղթ և սկսեցի գրել: Եվ այդ ընթացքում ես հասկացա իմ մտքում հնչած խոսքերը: Ես պետք է գրառումներ անեի իմ երեխաների համար, որ նրանք հետագայում մի օր կարդային, թե ինչպես եմ տեսել Աստծո ձեռքը՝ մեր ընտանիքին օրհնելիս: Պապիկը պարտավոր չէր անել այն, ինչ անում էր մեզ համար: Նա կարող էր որևէ մեկ ուրիշին հանձնարարել անել դա, կամ ընդհանրապես չանել: Բայց նա ծառայում

էր մեզ, իր ընտանիքին, այն ձևով ինչպես Հիսուս Քրիստոսի ուխտի աշակերտներն են միշտ անում: Ես գիտեի, որ դա ճիշտ էր: Եվ այսպես ես դա գրի առա, որպեսզի իմ երեխաները կարողանային մի օր ունենալ այդ հիշողությունը, երբ դրա կարիքն ունենային:

Ես գրում էի օրը մի քանի տող, ամեն օր, տարիներ շարունակ: Ես երբեք չէի բաց թողնում որևէ օր անկախ նրանից, թե որքան հոգնած էի կամ որքան վաղ պետք է սկսեի հաջորդ օրը: Նախքան գրելս ես խորհում էի այս հարցը. «Արդյոք նկատե՞լ եմ, թե ինչպես է Աստծո ձեռքը օգնության հասել մեզ, կամ մեր երեխաներին կամ մեր ընտանիքին այսօր» (“O Remember, Remember,” *Ensign* կամ *Liahona,* Nov. 2007, 66–67):

- Ինչո՞ւ է մեզ համար կարևոր գրել փորձառությունների մասին, որոնք զորացնում են մեզ հոգեպես:
- Ինչպե՞ս կարող ենք մենք օգուտ քաղել, հետևելով Նախագահ Այրինգի օրինակին: Ինչպե՞ս կարող է մեր հիշատակարանն օգնել ուրիշներին:

Բացատրեք, որ Նախագահ Այրինգը պատմեց այն օրհնությունների մասին, որոնք ստացել էր, որովհետև վարում էր Աստծո կողմից իր ընտանիքին տրված օրհնությունների ամենօրյա հիշատակարան: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ հետևյալ միտքը:(Դուք կարող եք կիսվել այս մտքի մի մասով դաս 117-ում: Ուսանողները կարող են օգուտ քաղել այն կրկին լսելուց:)

«Երբ ես անում էի դա, սկսեց ինչ որ բան կատարվել: Երբ ես մտքով անդրադառնում էի այդ օրվանը, ես տեսնում էի ապացույցը նրա, ինչ Աստված արել էր մեզանից որևէ մեկի համար, որը ես չէի նկատել օրվա զբաղված պահերին: Երբ դա պատահեց, իսկ դա հաճախ էր պատահում, ես հասկացա, որ երբ աշխատում էի հիշել, Աստծված կարողանում էր ցույց տալ ինձ, թե ինչ էր Նա արել:

Ավելի քան երբևէ երախտագիտություն սկսեց աճել իմ սրտում: Վկայությունս աճեց: Ավելի քան երբևէ ես ավելի համոզվեցի, որ մեր Երկնային Հայրը լսում է և պատասխանում աղոթքներին: Ես զգացի ավելի մեծ երախտագիտություն այն փափկացման և զտման համար, որը գալիս է Փրկիչ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ: Եվ ես սկսեցի ավելի վստահ լինել, որ Սուրբ Հոգին կարող է բերել բոլոր բաները մեր հիշողությունը՝ նույնիսկ այն բաները, որոնք մենք չենք նկատում կամ որոնց ուշադրություն չենք դարձնում, երբ դրանք պատահում են (“O Remember, Remember,” 67):

- Ի՞նչ սկզբունք կարող ենք սովորել 3 Նեփի 23 գլխի պատմությունից և Նախագահ Այրինգի փորձառությունից: (Ուսանողները կարող են պատասխանել այս հարցին մի քանի տարբեր ձևերով: Նրանց պատասխանները կարող են արտացոլել հետևյալ ճշմարտությունը. **Երբ մենք գրի ենք առնում հոգևոր փորձառություններ, մենք օրհնվում ենք անհատապես և մեր ընտանիքներում:**)

Որոշ ուսանողներ գուցե զգան, որ նրանց հետ ոչ մի բան չի պատահել, որը բավականաչափ արժեքավոր է գրառվելու համար: Նրանց օգնելու համար դուք կարող եք հրավիրել որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Յոթանասունից Երեց Ջոն Հ. Գրոբերգի հետևյալ միտքը.

«Որոշ մարդիկ ասում են. «Ես ոչինչ չունեմ գրելու: Ոչ մի հոգևոր բան չի պատահում ինձ հետ: Ես ասում եմ. «Սկսեք գրել և տեղի կունենան հոգևոր բաներ: Դրանք ողջ ժամանակ առկա են, բայց մենք ավելի զգայուն ենք դառնում դրանց հանդեպ, երբ գրում ենք» (“Writing Your Personal and Family History,” *Ensign,* May 1980, 48):

Հրավիրեք ուսանողներին իրենց հարց տալ, թե արդյոք իրենք անտեսել են այն փորձառությունների մասին գրելը, որոնք զորացրել են իրեց հոգեպես: Խրախուսեք նրանց գրել այդ փորձառությունների մասին և շարունակել գրել իրենց կյանքում այլ փորձառությունների մասին: Դուք կարող եք առաջարկել, որ նրանք հետևեն Նախագահ Այրինգի օրինակին, գրելով ամեն օր մի ինչ որ բան:

***Հետապնդել նպատակներ և մարտահրավերներ***

Ուսանողներին որոշակի հանձնարարություն, ինչպես օրինակ՝ գրել օրագրում, տալուց հետո մտածեք, թե ինչպես կարող եք հետևել դրա կատարմանը, հիշեցնելով նրանց այն պարտավորության մասին, որ նրանք ստանձնել են: Տվեք նրանց հնարավորություններ կիսվելու իրենց փորձառություններով՝ կապված դասարանում սովորած ճշմարտությունները կիրառելու հետ: Իրենց փորձառություններով կիսվելու միջոցով նրանք կարող են ոգեշնչել միմյանց՝ ապրել ավետարանով: Դուք կարող եք այդպիսի հնարավորություններ ընձեռել դասի սկզբում: Պարտադիր չէ, որ յուրաքանչյուր ուսանող կիսվի:

## Սերտման սուրբ գրության կրկնություն

Խնդիրներ լուծել սովորելը՝ օգտագործելով սուրբ գրությունները, կարող է օգնել ուսանողներին իրենց կյանքի ընթացքում: Յուրաքանչյուր ուսանողի տվեք մի փոքրիկ թղթի կտոր: Հրավիրեք նրանց գրել մի հարցի մասին, որ իրենք ունեն, կամ մի մարտահրավերի մասին, որին նրանք դիմակայում են: Բացատրեք, որ դուք կհավաքեք թղթերը և կկարդաք մի քանիսը դասարանում: Հրահանգեք ուսանողներին չգրել իրենց անունները թղթերի վրա և հիշեցրեք նրանց չընդգրկել մանրամասներ, որոնք անձնական են կամ անպատշաճ դասարանում քննարկելու համար: (Թղթերը

հավաքելուց հետո, դուք կարող եք արագ աչքի անցկացնել գրածները հավաստիանալու համար, որ դրանք պատշաճ են և ոչ խիստ անձնական)։ Կարդացեք մի հարց կամ մարտահրավեր դասարանի համար և տեսեք, թե արդյոք ուսանողները կարողանում են օգտագործել սուրբ գրությունների սերտման հատվածները՝ օգնելու հարցին կամ մարտահրավերին պատասխանել ։

Բացատրեք, որ Փրկիչը պատվիրել է մեզ ուրիշներին ուսուցանել այն, ինչ Նա է սովորեցրել մեզ (տես 3 Նեփի 23.14)։ Ուսանողներին օգնելու համար պահել այս պատվիրանը, խրախուսեք նրանց կիրառել ուսուցողական հմտություններ, ինչպես օրինակ՝ բացատրել վարդապետությունները կամ սկզբունքները, կիսվել փորձառություններով, և վկայել, երբ օգտագործում են սուրբ գրության սերտման հատվածը՝ խնդիրները լուծելու համար։ Դուք կարող եք թողնել մյուս հարցերը և խնդիրները, որոնք ուսանողները գրել են, և քննարկել դրանք նույն ձևով, երբ ավելի շատ ազատ ժամանակ կունենաք։

*Հիշեցում.* Այս դասի տևողությունը կարող է թույլ տալ, որ ժամանակ տրամադրեք այդ սերտման սուրբ գրության հավածի կրկնողության համար։ Դուք կարող եք կատարել վարժությունը դասի սկզբում՝ որպես ընդմիջում դասի բաժինների միջև։ Վարժությունը համառոտ պահեք չվատնելու դասի համար նախատեսված ժամանակը։ Կրկնողության համար այլ վարժությունների համար՝ տես հավելվածը՝ այս ձեռնարկի վերջում։

ԴԱՍ 132

# 3 Նեփի 24–26

## Նախաբան

Հիսուս Քրիստոսը կատարեց Երկնային Հոր պատվիրանը՝ կիսվելով Նեփիացիների հետ Մաղաքիա մարգարեի որոշ մարգարեություններով (տես 3 Նեփի 26.2): Այս մարգարեություններն ուսուցանեցին, որ Իսրայելի տան անդամները պետք է ապաշխարեն և վերադառնան դեպի, Տերը նախապատրաստվելով Փրկչի Երկրորդ Գալստին:

Հիսուս Քրիստոսը ևս մեկնաբանեց «բոլոր բաները» Նեփիացիներին, նույնիսկ սկսած սկզբից մինչև այն ժամանակը, երբ նա «պիտի գա իր փառքով» (3 Նեփի 26.3): Մորմոնն ուսուցանեց, որ նրանք, ովքեր հավատում են Մորմոնի Գրքին, նրանց ավելի մեծ բաներ ցույց կտրվեն (տես 3 Նեփի 26.9):

***Որոշել ինչ ուսուցանել***

Այս դասը պարունակում է ավելի շատ նյութ, քան դուք հավանաբար ժամանակ կունենաք ուսուցանել: Աղոթքով մտածեք, թե որ վարդապետությունները, սկզբունքները և ուսուցանման գաղափարները կլինեն ամենաօգտակարը ուսանողների համար ձեր դասարանում:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 24.1–6

*Հիսուս Քրիստոսը մեջ է բերում Մաղաքիայի մարգարեությունը Երկրորդ Գալստի վերաբերյալ*

Դասը սկսեք, վեր պահելով մի տուփ լուցկի և մի կտոր օճառ (կամ գրատախտակին նկարեք կրակի նկար և մի կտոր օճառ): Հարցրեք ուսանողներին, թե ինչ ընդհանուր բան ունեն կրակը և օճառը: (Օճառը և կրակը կարող են երկուսն էլ օգտագործվել որպես սրբագործող և մաքրագործող միջոցներ:)

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը կատարեց Հոր պատվիրանը (տես 3 Նեփի 26.2)՝ Նեփիացիներին տալով Մաղաքիայի՝ Հին Կտակարանի մարգարեի մարգարեությունները , որն ապրել էր Սուրբ Երկրում՝ Լեքիի և նրա ընտանիքի կողմից Երուսաղեմը թողնելուց մոտ 170 տարի հետո: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 24.1–3, գտնելով նրան, ում Մաղաքիան համեմատել է «զտիչի կրակի» և «թափիչի օճառի» հետ:

- Ո՞վ է համեմատվում զտիչի կրակի և թափիչի օճառի հետ: (Հիսուս Քրիստոսը)
- Ի՞նչ իրադարձություն է նկարագրվում այս հատվածներում: («Նրա գալստյան օրը»: Այլ խոսքով, Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը: Ուսանողներին օգնելու համար պատասխանել այս հարցին, դուք կարող եք առաջարկել, որ նրանք պատճենահանեն գլխի ենթավերնագիրը կամ տողատակի ծանոթագրությունները:)
- Ի՞նչ է հուշում կրակի և օճառի հետ համեմատությունը Հիսուս Քրիստոսի հետ, որ տեղի կունենա Նրա Երկրորդ Գալստյան ժամանակ: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր խոսքեր, բայց նրանք պետք է հասկանան հետևյալ ճշմարտությունը. **Իր Երկրորդ Գալստյան ժամանակ Հիսուս Քրիստոսը կմաքրագործի աշխարհը:** Դուք կարող եք հրավիրել ուսանողներին գրել այս ճշմարտությունը իրենց սուրբ գրություններում՝ 3 Նեփի 24.2–3 կողքին:)

Բացատրեք, որ զտիչն օգտագործում է կրակը՝ տաքացնելու համար մետաղը, օրինակ՝ արծաթը կամ ոսկին, մինչև այն հասնի հեղուկ վիճակի: Տաքացման պրոցեսը բարձրացնում է խարամը, կամ անմաքրությունը, հեղուկ մետաղի մակերեսին, որտեղ զտիչը կարող է հեռացնել դրանք, այսպիսով զտելով մետաղը իր անմաքրությունից: Թափիչը մի արհեստավոր է, ով մաքրում է կամ սպիտակեցնում հյուսվածքը, օգտագործելով օճառ: Դուք կարող եք նաև բացատրել, որ «Ղևիի որդիները» քահանայության կրողներ էին հնադարյան Իսրայելում: Այսօր արտահայտությունը կարող է վերաբերվել ժամանակակից քահանայություն կրողներին (տես ՎևՈՒ 84.33–34):

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 24.5–6 :Խնդրեք դասարանին հետևել ընթացքում և նշել, թե ով կայրվի կամ կկործանվի Փրկչի Երկրորդ Գալստյան ժամանակ, և ով չի այրվի: (Դուք կարող եք բացատրել, որ «Հակոբի որդիներ» արտահայտությունը վերաբերվում է Տիրոջ ուխտի ժողովրդին Իսրայելի տանը:)

- Համաձայն 3 Նեփի 24.5, ի՞նչ կանի Հիսուս Քրիստոսը Իր Երկրորդ Գալստյան ժամանակ: (Չնայած ուսանողները կարող են օգտագործեն տարբեր խոսքեր, նրանք պետք է հասկանան հետևյալ ճշմարտությունը. **Հիսուս Քրիստոսը կկործանի ամբարիշտներին Երկրորդ Գալստյան ժամանակ:**)

## 3 Նեփի 24.7–18

*Հիսուս Քրիստոսը մեջբերում է Մաղաքիայի ուսմունքներն այն բանի վերաբերյալ, թե ինչպես Իսրայելի տունը կարող է վերադառնալ դեպի Տերը:*

Հրավիրեք ուսանողներին պատկերացնել, որ նրանք ունեն մի մոտիկ ընկեր կամ ընտանիքի անդամ, ով մաքառում է զգալու Տիրոջ սերն ու ազդեցությունը և պահպանելու ավետարանի վերաբերյալ վկայությունը:

- Ի՞նչ կանեիք դուք՝ փորձելով օգնել այդ մարդուն:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 24.7, և խնդրեք նրանց գտնել Տիրոջ խորհուրդը նրանց վերաբերյալ, ովքեր սկսել են հեռանալ Իրենից և իրենց ուխտերը Իր հետ պահելուց:

- Ի՞նչ է նշանակում, որ ժողովուրդը «հեռացել էր» Տիրոջ արարողություններից: (Նրանք այլևս չէին պահում ավետարանի ուխտերն ու արարողությունները:)
- Ի՞նչ խորհուրդ տվեց Տերը նրանց, ովքեր չէին պահում իրենց ուխտերը: («Ետ դարձեք դեպի ինձ, և ես կդառնամ դեպի ձեզ»:)
- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում «ետ դարձեք» դեպի Տերը: Ի՞նչ է նշանակում, որ Տերը «կդառնա» դեպի նրանց, ովքեր ետ են դառնում դեպի Իրեն:

Գրեք հետևյալ սկզբունքը գրատախտակին. ***Եթե մենք վերադառնանք դեպի Տերը, Նա կվերադառնա դեպի մեզ:***

- Ի՞նչ է այս սկզբունքն ուսուցանում ձեզ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին:

Գրատախտակին գրեք *Ետ դարձեք դեպի Տերը:* Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 24.8–12 հատվածները, որոնելով մի ուղի, որով մարդիկ կկարողանային վերադառնալ դեպի Նա: Երբ ուսանողները պատասխանեն, գրեք. *վճարել տասանորդներ և նվիրատվություններ՝ Ետ դարձեք դեպի Տերը* վերնագրի ներքո:

- Ինչպե՞ս է տասանորդ վճարելու հոժարակամությունը արտահայտում այն, որ մարդը դրել է իր սերն ու զորությունը Տիրոջ վրա:

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հետևյալ միտքը.

«Մենք*կարող ենք* վճարել մեր տասանորդը: Սա այնքան փողի հարց չէ, որքան հավատքի հարց» (“Let Us Move This Work Forward,” *Ensign,* Nov. 1985, 85):

- Ինչպե՞ս է տասանորդներ և նվիրատվություններ վճարելու մեր հոժարակամությունը մեր հավատքի դրսևորումն է հանդիսանում առ Տերը:

Ժամանակ տվեք ուսանողներին մտքում վերանայել 3 Նեփի 24.10–12 : Խնդրեք նրանց գտնել Տիրոջ խոստումները նրանց, ովքեր վճարում են լրիվ և ազնիվ տասանորդ:

- Ի՞նչ ուղիներով եք դուք օրհնվել ձեր տասանորդ վճարելու արդյունքում: Ինչպե՞ս են այս օրինակները «բացել երկնքի պատուհանները» ձեզ համար:

Ամփոփեք 3 Նեփի 24.13–18, բացատրելով, որ այս հատվածներում Տերը մատնանշում է, որ ոմանք հնադարյան Իսրայելում կասկածի տակ էին դնում ավետարանի արարողությունները պահելու անհրաժեշտությունը: Նրանք բողոքում էին, որ հպարտները ու ամբարիշտները, կարծես, բարգավաճ էին, չնայած իրենց անարդարակեցությանը: 3 Նեփի 24.16-ում Տերը պատասխանեց, որ «հիշատակի գիրք» կգրվի, որում հավատարիմների անունները կարձանագրվեն (տես ՎևՈՒ 85.7–9, 128.6–7, Մովսես 6.5–8): Տերն այնուհետև նշեց, որ երբ Նա կրկին գա, Նա կպահպանի հավատարիմներին և կպահի նրանց Իր համար որպես գանձ, կամ «կդարձնի [Իր] գոհարները»:

- Ինչո՞ւ է օրհնություն իմանալը, որ Տերը կպահպանի հավատարիմներին և կդարձնի նրանց Իր գանձը:
- 3 Նեփի 24.16-ում, ո՞ր արտահայտություններն են նկարագրում նրանց, ում Տերը կպահպանի որպես Իր գանձ: («Նրանց, ովքեր երկյուղում են Տիրոջից և «պատկառում են նրա անունից»:)

Գրեք *երկյուղում են Տիրոջից* և *պատկառում են Տիրոջ անունից՝ Եւ դարձեք դեպի Տէրը* վերնագրի ներքո։ (Դուք կարող եք բացատրել, որ այս ենթատեքստում *երկյուղել* բառը նշանակում է ակնածել կամ հարգել։) Հրավիրեք ուսանողներին պատասխանել հետևյալ հարցին տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում.

- Մտածեք, թե ինչպես եք դուք վարվում տասանորդներ և նվիրատվություններ վճարելու և Քրիստոսի մասին հաճախ մտածելու ոլորտում։ Ի՞նչ ուղիներով կարող եք դուք «վերադառնալ» դեպի Նա կամ բարելավվել այս բնագավառներում։

## 3 Նեփի 25

*Հիսուս Քրիստոսը մեջբերում է Մաղաքիայի մարգարեությունն այն մասին, որ Եղիան վերադառնալու է Երկրորդ Գալստից առաջ։*

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 25.1–3։ Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, որոնելով պատճառ, թե ինչո՞ւ Երկրորդ Գալուստը կլինի օրհնություն նրանց համար, ովքեր հավատարիմ են Հիսուս Քրիստոսին։ Հրավիրեք ուսանողներին հաղորդել, թե ինչ են գտել։ Դուք կարող եք բացատրել, որ 3 Նեփի 25.1-ում *արմատ* բառը հավանաբար վերաբերում է նախնիներին, իսկ *ճյուղեր* բառը վերաբերում է հետնորդներին։ Այսպիսով հաջորդ կյանքում ամբարիշտները չեն վայելի իրենց նախնիների և հետնորդների հետ կնքվելու օրհնությունները։ 3 Նեփի 25.2-ում «հորթերը գոմում» արտահայտությունը վերաբերում է հորթերին, որոնք ապահով են, լավ կերակրված և լավ խնամված։ Տերը խոստանում է, որ Նա նմանապես կպաշտպանի և հոգ կտանի նրանց համար, ովքեր «երկյուղում են [Նրա] անունից»։

Բացատրեք, որ Մաղաքիան մարգարեացավ մի իրադարձության վերաբերյալ, որը տեղի էր ունենալու մինչև Երկրորդ Գալուստը և որին կմասնակցեր Հին Կտակարանի մարգարե Եղիան։ Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 25.5–6 և խնդրեք դասարանին որոնել, թե ինչ պետք է աներ Եղիան՝ օգնելու համար պատրաստել աշխարհը Տիրոջ գալստին։

Հարցրեք ուսանողներին, թե ինչ գիտեն որպես ավետարանի Վերականգման մի մաս՝ Եղիայի երկիր վերադառնալու մասին։ Դուք կարող եք լրացնել նրանց պատասխանները, բացատրելով որ 1836թ. ապրիլի 3- ին Եղիան հայտնվեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին նոր նվիրագործված Կիրթլենդի Տաճարում (տես ՎևՈՒ 110.13–16)։ Այդ ժամանակ Եղիան վերականգնեց քահանայության բանալիները, որոնք անհրաժեշտ էին հավերժության համար Տիրոջ սուրբ տաճարներում ընտանիքները կնքելու համար։ Ընտանեկան պատմության հետազոտության միջոցով, մենք գտնում ենք ընտանիքի անդամներին, որոնց համար կարող են կատարվել տաճարային արարողություններ։

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում՝ Եղիան «պիտի հայրերի սիրտը դարձնի դեպի զավակները և զավակների սիրտը՝ դեպի իրենց հայրերը»։
- Ինչո՞ւ է օրհնություն ձեզ համար իմանալը, որ դուք կարող եք կնքվել ձեր ընտանիքի հետ հավերժության համար։

Վկայեք, որ **երբ մեր սրտերը դառնում են դեպի մեր հայրերը ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքի միջոցով, մենք օգնում ենք պատրաստել երկիրը Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստին։**

## 3 Նեփի 26.1–12

*Հիսուս Քրիստոսը մեկնաբանում է սուրբ գրությունները, և Մորմոնն ուսուցանում է, թե ինչ պետք է արվի Փրկչի կողմից հայտնած ավելի մեծ բաները ստանալու համար։*

Ամփոփեք 3 Նեփի 26.1–5, բացատրելով, որ Փրկիչը Մաղաքիայի մարգարեություններով կիսվելուց հետո, ուսուցանեց ժողովրդին «բոլոր բաները, որոնք պիտի գան երկրի երեսին», սկսած Արարումից մինչև Վերջին Դատաստանը (3 Նեփի 26.3–4)։

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 26.6–8, և խնդրեք դասարանին որոնել այն ամենը, ինչ Հիսուս Քրիստոսն ուսուցանեց, որն արձանագրվել էր Մորմոնի Գրքում։ Ապա հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 26.9–11, որոնելով այն պատճառը, թե ինչու Մորմոնը չներառեց իր կրճատման մեջ այն

ամենը, ինչ Փրկիչն ուսուցանեց Նեփիացիներին: Շեշտեք, որ *հավատալ* բառը այս հատվածներում նշանակում է, որ մենք պետք է գործենք վարդապետությունների և սկզբունքների հիման վրա, որոնք Աստված հայտնի է դարձրել, և ոչ միայն հույս ունենալ, որ դրանք ճշմարիտ են:

- Համաձայն 3 Նեփի 26.9-ի, ի՞նչ է Տերը խոստանում նրանց, ովքեր հավատում են և գործում այն բաների հիման վրա , ինչ Աստված հայտնել է: (Երբ ուսանողները պատասխանեն, շեշտեք, որ, **երբ մենք հավատում ենք և գործում նրա հիման վրա, ինչ Աստված է հայտնել, մենք պատրաստում ենք մեզ ստանալ ավելի մեծ հայտնություն:**)
- Ինչո՞ւ եք կարծում, որ անհրաժեշտ է, որ մենք հավատանք այն ճշմարտություններին, որոնք մենք արդեն ստացել ենք, մինչև որ կարող ենք ստանալ հավելյալ ճշմարտություն:
- Ինչպե՞ս կարող ենք ցույց տալ, որ հավատում ենք նրան, ինչ Տերը հայտնել է:

Խոստացեք ուսանողներին, որ եթե նրանք հավատարմորեն ուսումնասիրեն և կիրառեն Մորմոնի Գրքի սկզբունքները, նրանք կստանան ավետարանի ավելի մեծ հասկացողություն: Օգնեք ուսանողներին խորհել, թե որքան լավ են նրանք ստանում Մորմոնի Գրքի ճշմարտությունները՝ նրանց հրավիրելով պատասխանել հետևյալ հարցերին տետրերում կամ սուրբ գրության ուսումնասիրության օրագրերում (դուք կարող եք գրել այս հարցերը գրատախտակին):

- Ի՞նչ եք անում դուք ձեր կյանքում, որ ցույց տաք ձեր հավատքը Մորմոնի Գրքի հանդեպ:
- Ե՞րբ է անկեղծ միտումով Մորմոնի Գրքի ընթերցանությունը տարել ձեզ անձնական հայտնություն ստանալուն:

## 3 Նեփի 26.13–21

*Փրկիչն ավարտում է Իր երկրային ծառայությունը Նեփիացիների մեջ և Նրա աշակերտները հետևում են Նրա օրինակին իրենց ծառայության մեջ:*

Բացատրեք, որ 3 Նեփի 26-ում, Մորմոնն ամփոփեց Փրկչի ծառայության մնացած մասը Նեփիացիների մեջ: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 26.13–16 հատվածները: Դուք կարող եք առաջարկել, որ նրանք նշեն մի քանի բաներ, որոնք Փրկիչն արեց, որ Մորմոնը ընտրեց շեշտել:

Եթե ժամանակը ների, հրավիրեք ուսանողներին վերանայել 3 Նեփի 11–25 ուսումնասիրությունից իրենց գրառումները և սուրբ գրություններում իրենց նշումները և խորհել դրանց շուրջ: Խրախուսեք նրանց որոնել ուսմունքներ և իրադարձություններ Նեփիացիների մեջ Փրկչի ծառայությունից, որոնք նշանակալի են և հիշարժան իրենց համար: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց մտքերով և զգացումներով Նեփիացիների մեջ Փրկչի ծառայության վերաբերյալ:

ԴԱՍ 133

# 3 Նեփի 27

## Նախաբան

Նեփիացիների մեջ Փրկչի ծառայությունից անմիջապես հետո տասներկու նոր կանչված աշակերտները հանդիպեցին միասին հզոր աղոթքով և ծոմով: Հիսուս Քրիստոսը հայտնվեց նրանց և պատասխանեց նրանց հարցին այն անվան վերաբերյալ, որ նրանք պետք է տային Եկեղեցուն:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 27.1–12

*Հիսուս Քրիստոսն ուսուցանում է տասներկու աշակերտներին այն մասին, որ Իր Եկեղեցին պետք է կրի Իր անունը:*

Դասարանը բաժանեք երեք կամ չորս խմբի: Եթե ձեր դասարանը փոքր է յուրաքանչյուր ուսանողի հանձնարարեք անհատապես աշխատել: Խնդրեք յուրաքանչյուր խմբի (կամ անձնավորության) պատկերացնել, որ նրանք պատրաստվում են սկսել նոր ակումբ կամ սպորտային թիմ: Խնդրեք յուրաքանչյուր խմբի որոշել, թե ինչպիսի ակումբ կամ սպորտային թիմ են ստեղծելու, ինչպես օրինակ գիտական ակումբ կամ ֆուտբոլային թիմ, իսկ հետո հանձնարարեք նրանց ընտրել անուն իրենց կազմակերպության համար: Յուրաքանչյուր խմբի հանձնարարեք գրել իրենց անունը մի կտոր թղթի վրա: Ապա հավաքեք խմբերի թղթերը: (Այս վարժությունը պետք է կարճ տևի: Այն չպետք է խիստ շատ ժամանակ խլի կամ ուշադրությունը շեղի 3 Նեփի 27 գլխիվարդապետություններից և սկզբունքներից:)

Բարձրաձայն կարդացեք յուրաքանչյուր թղթի վրա գրված անունը: Յուրաքանչյուր անունը կարդալուց հետո խնդրեք դասարանին գուշակել ակումբի կամ թիմի տեսակը, ելնելով անունից:

- Ի՞նչ կարող է անունը հաղորդել կազմակերպության և դրա մեջ մտնող մարդկանց մասին:

Բացատրեք, որ Նեփիացիներին Հիսուս Քրիստոսի այցից հետո, Նրա տասներկու աշակերտները միավորվեցին ծոմով ու աղոթքով 3 Նեփի 27.1: Հրավիրեք մի քանի ուսանողների բարձրաձայն կարդալ 3 Նեփի 27.2–7 հատվածները: Խնդրեք դասարանին հետևել, գտնելով աշակերտների հարցը և Փրկչի պատասխանը:

- Փրկիչն ի՞նչ ասաց Իր Եկեղեցու անվան մասին:
- Ի՞նչ պատճառներ Նա բերեց Եկեղեցին Իր անունով կոչելու համար:

Հրավիրեք ուսանողներին լուռ ուսումնասիրել 3 Նեփի 27.8–12 հատվածները , որոնելով Իր ճշմարիտ Եկեղեցու Փրկչի նկարագրությունը: Մինչ նրանք ուսումնասիրում են, գրեք հետևյալ անավարտ միտքը գրատախտակին.

*Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցն պետք լինի . . .*

Ուսանողներն այս հատվածներն ուսումնասիրելու համար բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, հարցրեք թե ինչպես կլրացնեին նախադասությունը գրատախտակին՝ հիմնվելով նրա վրա ինչ կարդացին: (Ուսանողները պետք է կարողանան հասկանալ հետևյալ ճշմարտությունը. **Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին պետք է կոչվի Իր անունով և կառուցվի Իր ավետարանի վրա:** )

- Ինչո՞ւ է Փրկչի Եկեղեցու համար կարևոր է կրել Նրա անունը:
- Ի՞նչ է նշանակում Եկեղեցու համար «կառուցված լինել [Նրա] ավետարանի վրա3 Նեփի 27.10): Ինչո՞ւ է կարևոր է Եկեղեցու համար կառուցված լինել Նրա ավետարանի, ոչ թե մարդկանց գործերի վրա:

Հրավիրեք ուսանողներին լրացնել հետևյալ նախադասությունը տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում. «Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամ լինելը կարևոր է ինձ համար, որովհետև . . .»

## 3 Նեփի 27.13–22

*Հիսուս Քրիստոսը սահմանում է Իր ավետարանը և ուսուցանում, թե ինչ պետք է անենք, որպեսզի անմեղ կանգնենք Նրա և Հոր առջև:*

Խնդրեք ուսանողներին մտածել այն մասին, թե ինչպես են իրենք զգացել, երբ բռնվել են ինչ որ բան անելիս, որը սխալ է: (Մի խնդրեք նրանց կիսվել այս փորձառություններով:) Ապա խնդրեք նրանց պատկերացնել, թե ինչպես կզգային, եթե կանգնեին Տիրոջ առջև դատվելու: Խրախուսեք նրանց մտածել հետևյալ հարցի մասին.

- Ինչպե՞ս կզգաք Տիրոջ առջև, եթե դուք հանցավոր լինեք մեղքի մեջ:

Բացատրեք, որ *ավետարան* բառը նշանակում է «բարի լուր»: Հրավիրեք մի քանի ուսանողի հերթով բարձրաձայն կարդալ 3 Նեփի 27.13–16, և խնդրեք դասարանին որոնել բարի լուրեր այս հատվածներում: Խնդրեք նրանց նաև մտածել, թե ինչպե՞ս են այս բարի լուրերը կապված այն օրվա հետ, երբ նրանք կկանգնեն Աստծո առջև դատվելու:

- Փրկիչը վկայեց, որ եկավ աշխարհ կատարելու Իր Հոր կամքը: Համաձայն 3 Նեփի 27.14-ի, ի՞նչ ուղարկեց Երկնային Հայրը Հիսուս Քրիստոսին անելու աշխարհում:
- Ելնելով 3 Նեփի 27.13–14-ից, ո՞րն է ավետարանի հիմքը: (Չնայած ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, նրանք պետք է հասկանան հետևյալ ճշմարտությունը. **Ավետարանի հիմքն այն է, որ Հիսուս Քրիստոսը կատարեց Իր Հոր կամքը, իրագործելով Քավությունը:** Դուք կարող եք հրավիրել ուսանողներին գրել այս ճշմարտությունը իրենց սուրբ գրություններում3 Նեփի 27.13–14 հատվածների կողքին:)
- Քանի որ Փրկիչը կատարեց Իր Հոր կամքը, ինչ կպատահի ողջ մարդկության հետ: (Մենք կբարձրացվենք Նրա առջև՝ դատվելու մեր գործերի համար:)

Հրավիրեք ուսանողներին լուռ ուսումնասիրել 3 Նեփի 27.16, որոնելով գործերը, որոնք մենք պետք է անենք ստանալու համար Քավության բոլոր օրհնությունները և պատրաստվելու դատաստանի: Խնդրեք ուսանողներին հաղորդել, ինչ որ գտնեն: Հրավիրեք որևէ ուսանողի գրել նրանց պատասխանները գրատախտակին: Խնդրեք ուսանողներից մեկին գրատախտակին գրել նրանց պատասխանները:

- Ըստ այս հատվածի, ի՞նչ օրհնություններ կտրվեն նրանց, ովքեր ապաշխարում են, մկրտվում և համբերում մինչև վերջ: (Ուսանողների պատասխանները պետք է արտացոլեն հետևյալ ճշմարտությունը. **Եթե մենք ապաշխարենք, մկրտվենք և համբերենք մինչև վերջ, մենք անմեղ կլինենք, երբ որ կանգնենք Աստծո առջև դատվելու:**)

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 27.17–19: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, որոնելով թե ինչ կպատահի նրանց հետ, ովքեր չեն ապաշխարում կամ չեն դիմանում մինչև վերջ:

- Ելնելով ձեր կարդացածից, ինչո՞ւ Երկնային Հոր բոլոր զավակները Հիսուս Քրիստոսի Քավության կարիքն ունեն:
- Ի՞նչ բարի լուր կա մեզ համար այնտեղ, երբ մենք մտածում ենք Տիրոջ առջև կանգնելու՝ դատվելու մասին:

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռ. Զեֆրի Հոլլանդի հետևյալ խոսքերը.

«Բարի լուրն այն է, որ մահից ու դժոխքից [կարելի է] խուսափել, սխալներն ու մեղքերը [կարող են] հաղթահարվել, որ [կա] հույս, որ [կա] օգնություն, որ անլուծելին լուծվել է, որ թշնամին պարտված է: Բարի լուրն այն [է], որ *ամենքի* գերեզմանը մի օր դատարկ [կլինի, որ *բոլորի* հոգին [կարող է] կրկին մաքրվել, որ *յուրաքանչյուր* Աստծո զավակ [կարող է] նորից վերադառնալ Հոր մոտ, ով նրանց կյանք է տվել» (“Missionary Work and the Atonement,” *Ensign,* Mar. 2001, 8, 10):

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 27.20–21, և խնդրեք դասարանին որոնել Փրկչի հրավերը մեզ:

- Ո՞րն է Փրկչի հրավերն այս հատվածներում:

Ուսանողներին օգնելու համար մտածել այս հրավերն ընդունելու իրենց ջանքերի մասին, հրավիրեք նրանց պատասխանել հետևյալ հարցերին տետրերում կամ

սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: (Դուք կարող եք գրել այս հարցերը գրատախտակին դասից առաջ կամ կարդալ դրանք դանդաղ, որպեսզի ուսանողները կարողանան դրանք գրի առնել:)

- Ինչո՞ւ է Փրկիչը կամենում, որ դուք ապաշխարեք և գաք դեպի Նա:
- Ի՞նչ ուղիներով եք ընդունում 3 Նեփի 27.20–21-ում Փրկչի հրավերը :
- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի այսօր պատրաստվեք անբիծ կանգնել Տիրոջ առջև:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 6.40–42 հատվածները: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել՝ որոնելով լրացուցիչ ներըմբռնում այն մասին, թե ինչու է ավետարանը բարի լուր հանդիսանում: (Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները գրեն *ՎԱՈՒ 76.40–42* իրենց սուրբ գրություններում3 Նեփի 27.13 հատվածի կողքին:)

Դասի սկզբում դուք խնդրեցիք ուսանողներին խորհել այն մասին, թե ինչ իրենք կզգային Տիրոջ առջև, եթե հանցավոր լինեին մեղքի պատճառով: Դասի այս մասում հրավիրեք նրանց խորհել, թե ինչպես կզգային Փրկչի առջև, եթե իմանային, որ իրենք մաքրվել են Նրա Քավության և ավետարանի սկզբունքների, պատվիրանների ու արարողությունների միջոցով:

- Եթե դուք խոսեիք Փրկչի հետ այդ ժամանակ, ի՞նչ կասեիք:
- Հիմնվելով նրա վրա, ինչ սովորեցիք այսօր, ինչպես կբացատրեիք Հիսուս Քրիստոսի ավետարանի բարի լուրը ձեր ընկերոջը:

***Վկայեք Հիսուս Քրիստոսի մասին***

Հիսուս Քրիստոսի Քավությունը այն հիմնարար ճշմարտությունն է, որի վրա հաստատված են բոլոր ավետարանական վարդապետություններն ու սկզբունքները: Այն պետք է լինի ավետարանական ուսուցման և յուրացման կենտրոնում: Հնարավորություններ որոնեք հաճախ վկայելու Հիսուս Քրիստոսի մասին և օգնելու ուսանողներին մեծացնել Նրա հանդեպ իրենց սերը և Նրա ճշմարիտ աշակերտը լինելու նրանց ցանկությունը:

## 3 Նեփի 27.23–33

*Հիսուս Քրիստոսն ուսուցանում է Իր աշակերտներին դառնալ ճիշտ ինչպես Ինքն է:*

Ամփոփեք 3 Նեփի 27.23–26 հատվածները, բացատրելով, որ Փրկիչը հրահանգներ տվեց Իր տասներկու Նեփիացի աշակերտներին և ուսուցանեց նրանց իրենց պարտականությունների մասին: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 27.27, որոնելով այն պատվիրանը, որը Նա տվեց աշակերտներին՝ օգնելու համր նրանց կատարել իրենց դերը որպես ժողովրդի դատավորներ:

- Ինչո՞ւ է կարևոր ժողովրդի դատավորների համար Փրկչի նման լինելը:

Խնդրեք ուսանողներին վերանայել 3 Նեփի 27.21 հատվածը:

- Ի՞նչ պատվիրեց Փրկիչը աշակերտներին անել:
- Ո՞րն է Փրկչի գործերն անելու և Նրա նման դառնալու միջև կապը:

Երբ ուսանողները քննարկեն այս հարցը, գրեք հետևյալ սկզբունքը գրատախտակին. ***Տերն ակնկալում է, որ Իր աշակերտներն անեն Իր գործերը և դառնան Իր պես:***

- Որո՞նք են այն ուղիները, որոնցով մենք կարող ենք նմանվել Փրկչին: Որո՞նք են այն գործերը, որոնք կարող ենք անել, երբ հետևում ենք Նրա օրինակին:
- Ի՞նչ ուղիներով եք օրհնվել, երբ փորձել եք հետևել Փրկչի օրինակին:

Եզրափակեք դասը, վկայելով այն օրհնությունների մասին, որոնք գալիս են, երբ մենք ձգտում ենք նմանվել Հիսուս Քրիստոսին:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 3 Նեփի 27.13–21Հիսուս Քրիստոսի ավետարանը

Մարգարե Ջոզեֆ Սմիթը բացատրել է Հիսուս Քրիստոսի ավետարանի կենտրոնական ուղերձը.

«Մեր կրոնի հիմնական սկզբունքներն են Առաքյալների և Մարգարեների վկայությունը Հիսուս Քրիստոսի մասին, որ Նա մահացավ, թաղվեց և բարձրացավ երրորդ օրը և համբարձվեց երկինք, իսկ բոլոր մյուս բաները, որոնք կապված են մեր կրոնի հետ, միայն դրա հավելումներն են» (*Teachings of Presidents of the Church: Joseph Smith* 2007, 49):

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է.

«*Ավետարան* բառը նշանակում է «բարի լուր»: Բարի լուրը Տեր Հիսուս Քրիստոսն է ու Նրա փրկության ուղերձը: [Տես Bible Dictionary, “Gospels,” 682–683:] Հիսուսը հավասարեցրեց ավետարանը ինչպես Իր առաքելությանը, այնպես էլ մականացու կյանքում Իր ծառայությանը: Իր *առաքելության* հայտարարության մեջ Հիսուսն ասել է.

«Այս է ավետարանը, որ ես տվել եմ ձեզ, որ ես եկա աշխարհ՝ կատարելու իմ Հոր կամքը, որովհետև իմ Հայրն ուղարկեց ինձ:

Եվ իմ Հայրն ուղարկեց ինձ, որպեսզի ես խաչի վրա բարձրացվեմ» [3 Նեփի 27.13–14:]

«Փրկչի մահկանացու առաքելությունը մենք գիտենք որպես *Քավություն:* Փրկչի մահկանացու *ծառայությունը* ներառում է բացի այն ամենից, ինչ Նա արեց, Նրա ուսմունքները, սիրո արտահայտությունը, արարողությունների հանդեպ ուշադրությունը, աղոթելու ձևը, հետևողականությունը և ավելին: Նա ապրեց, լինելով մեր Օրինակը, որը Նա նաև հավասարեցրեց ավետարանին Իր ծառայողական ուղերձով. «Այս է իմ ավետարանը, ասաց Նա . . . քանզի այն գործերը, որոնք դուք տեսաք ինձ անելիս, դրանք պետք է նաև դուք անեք» [3 Նեփի 27.21]: Այսպիսով, հավատքը, ապաշխարությունը, ջրով, կրակով և Սուրբ Հոգով մկրտությունը, ընտրյալների հավաքումը և մինչև վերջ համբերելը՝ բոլորը, ավետարանի մասն են կազմում» (“Senior Missionaries and the Gospel,” *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2004):

### 3 Նեփի 27.27: Դառնալ Հիսուս Քրիստոսի նման

Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնն ուսուցանել է.

«Այն մարդն է մեծագույնն ու ամենաօրհնվածը և ամենաուրախը, ում կյանքն ամենաշատն է համապատասխանում Քրիստոսի օրինակին: Սա ոչ մի ընդհանուր բան չունի աշխարհիկ հարստության, իշխանության կամ հեղինակության հետ: Մեծության, օրհնվածության, ուրախության միակ ճշմարիտ ստուգարքն այն է, թե որքան կյանքը կարող է նմանվել Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին: Նա է ճշմարիտ ճանապարհը, լիակատար ճշմարտությունը և լիառատ կյանքը» (“Jesus Christ—Gifts and Expectations” [BYU devotional address, Dec. 10, 1974], 1, speeches.byu.edu):

ԴԱՍ 134

# 3 Նեփի 28

## Նախաբան

Երբ Հիսուս Քրիստոսը հարցրեց Իր տասներկու Նեփիացի աշակերտներից յուրաքանչյուրին, թե ի՞նչ էին նրանք կամենում Իրենից, ինն աշակերտները խնդրեցին արագ վերադառնալ Նրա մոտ, երբ իրենց ծառայությունն ավարտվեր: Երեքը խնդրեցին մնալ երկրի վրա՝ բերելու հոգիներ դեպի Նա, մինչև Նրա Երկրորդ Գալուստը: Տերը երկու խմբի արդարացանկություններն էլ հարգեց: Մորմոնը տվել է մի քանի մանրամասներ Երեք Նեփիացիների ծառայության վերաբերյալ և Նա նաև կիսվեց նրանով, թե ինչ Տերը հայտնեց իրեն Երեք Նեփիացիների զգացած ֆիզիկական փոփոխության մասին, որպեսզի նրանք կարողանային մնալ երկրի վրա:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 28.1 –11

*Հիսուս Քրիստոսը բավարարում է Իր Նեփիացի աշակերտների ցանկությունները*

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչ նրանք կպատասխանեին, եթե Հիսուս Քրիստոսը հայտնվեր նրանց և հարցներ. «Ի՞նչ կցանկանայիք ինձանից»: Խնդրեք նրանց, որ գրեն իրենց պատասխանները տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: Հնարավորություն տվեք նրանց կիսվել իրենց գրածով, եթե նրանք իրենց հարմար են զգում այդ անել:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 28.1–3 հատվածները, որոնելով ինչը Նեփիացի աշակերտների պատասխանը, երբ Տերը տվեց նրանց այդ հարցը: Հետո երբ ուսանողները հաղորդեն, թե ինչ իրենք սովորեցին, հարցրեք.

- Ի՞նչ զգաց Փրկիչն այդ ինչը աշակերտների ցանկության վերաբերյալ:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 28.4–9 , որոնելով, թե ինչ էին ցանկացել Փրկչի երեք մնացած աշակերտները: Հանձնարարեք ուսանողներին հաղորդել իրենց գտածի վերաբերյալ: (Օգտակար կլինի ուսանողների ուշադրությունը հրավիրել 3 Նեփի 28.9-ի հետևյալ խոսքերի վրա. «Դուք փափագեցիք, որպեսզի դուք կարողանաք մարդկանց հոգիներ բերել ինձ մոտ»:)

- Ի՞նչ զգաց Փրկիչը այդ երեք աշակերտների ցանկության վերաբերյալ:
- Համաձայն 3 Նեփի 28.8–9 հատվածների, ի՞նչ խոստացավ Փրկիչը Երեք Նեփիացիներին, որպեսզի նրանց արդար ցանկությունները կարողանային իրագործվել:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 28.10 հատվածը և խնդրեք դասարանին որոնել Երեք Նեփիացիներին խոստացված Տիրոջ օրհնությունները:

- Ի՞նչ խոստացավ Տերը Երեք Նեփիացիներին: Երբ եք տեսել, երբ ուրիշներին ծառայելը բերել է ուրախություն:
- Ի՞նչ կարող ենք սովորել Տիրոջ մասին 3 Նեփի 28.1–10 հատվածներից: (Ուսանողների պատասխանները այս հարցին կարող են ներառել, որ **Տերն օրհնում է մեզ մեր արդար ցանկությունների համաձայն** և որ **Տերը գոհ է լինում, երբ մենք ցանկանում ենք օգնել ուրիշներին գալ դեպի Նա:** )

Ուսանողներին օգնելու համար հասկանալ արդար ցանկությունների կարևորությունը, կարդացեք հետևյալ ուղերձները.

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելն ասել է.

«Այն, ինչ մենք համառորեն ցանկանում ենք ժամանակի ընթացքում, այն էլ ի վերջո մենք կդառնանք, և այն էլ մենք կստանանք հավերժության մեջ: . . .

Ուստի, արդար ցանկությունները պետք է համառ լինեն» (“According to the Desire of [Our] Hearts,” *Ensign,* Nov. 1996, 21–22):

Նախագահ Բրիգամ Յանգն ուսուցանել է.

***Խուսափեք Երեք Նեփիացիների մասին տեսություններից***

Շատերը պատմություններ են լսել Երեք Նեփիացիների ենթադրյալ այցելությունների մասին: Այդ պատմություններով կիսվելու փոխարեն ուսուցանեք այն, ինչ ուսուցանվում է սուրբ գրություններում: Հիշեք Մորմոնի խոսքերը, որ Երեք Նեփիացիները կլինեն Հեթանոսների և Հրեաների մեջ, ովքեր «չեն ճանաչի նրանց» (3 Նեփի 28.27–28): Ձեռնպահ մնացեք քննարկելուց պատմություններ կամ այլ տեղեկություններ, որոնք չեն գտնվում Եկեղեցու կողմից հավանության արժանացած աղբյուրներում:

«Տղամարդիկ և կանայք, ովքեր ցանկանում են տեղեր ձեռք բերել սելեստիալ արքայությունում, կպարզեն, որ նրանք պետք է ամեն օր ճակատամարտեն ամենայն արդարության թշնամու հետ» (“Remarks,” *Deseret News,* Dec. 28, 1864, 98)։

- Ինչո՞ւ եք կարծում, որ մենք պետք է ճակատամարտենք ամեն օր, որպեսզի մեր արդար ցանկությունները կատարվեն։
- Ե՞րբ եք զգացել, որ Տերն օրհնել է ձեզ՝ ձեր արդար ցանկությունների շնորհիվ։

Հիշեցրեք ուսանողներին այն ցանկությունների մասին, որոնք նրանք գրեցին դասի սկզբում։ Հրավիրեք նրանց գրել մի քանի նախադասություն այն մասին, թե նրանք ինչ պետք է սկսեն անել այսօր՝ ապահովելու համար, որ այդ արդար ցանկություններն իրագործվեն։

## 3 Նեփի 28.12–35

### *Մորմոնը նկարագրում է Երեք Նեփիացիների ծառայությունը*

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 28.12–16 հատվածները։ Խնդրեք դասարանին հետևել ընթացքում, գտնելով, թե ինչ պատահեց այդ Նեփիացի աշակերտներին, երբ Փրկիչը նրանց մոտից հեռացավ։ Բացատրեք, որ աշակերտները զգացին փոխակերպում՝ ժամանակավոր փոփոխություն իրենց մարմիններում։

- Համաձայն 3 Նեփի 28.15-ի, ո՞րն էր պատճառներից մեկը, որ աշակերտները փոխակերպվեցին։ (Որպեսզի «նրանք կարողանային տեսնել Աստծո բաները»։)

Բացատրեք, որ 3 Նեփի 28.17 հատվածից սկսած մենք կարդում ենք Երեք Նեփիացիների ծառայության Մորմոնի նկարագրությունը։ Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 28.17, փնտրելով այն, ինչ չգիտեր Մորոմոնը Երեք Նեփիացիների ֆիզիկական վիճակի մասին, երբ գրում էր այս պատմությունը։ (Դուք կարող եք պատմել ուսանողներին, որ դասի հետագա ընթացքում նրանք ավելի շատ կսովորեն այն փոփոխության մասին, որը Երեք Նեփիացիները զգացին։)

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 3 Նեփի 28.18–23։ Խնդրեք դասարանին հետևել ընթացքում, որոնելով թե ինչպես Տերն օրհնեց Երեք Նեփիացիներին, որպեսզի նրանք իրականացնեին իրենց արդար ցանկությունները։

- Ի՞նչ արեցին Երեք Նեփիացիները՝ ուրիշներին դեպի Փրկիչը բերելու իրենց ցանկությունն իրականացնելու համար։
- Ի՞նչ ուղիներով Տերն օրհնեց նրանց, որպեսզի նրանք իրականացնեին իրենց ցանկությունը։

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 28.25–32 հատվածները, գտնելով մարդկանց ովքեր օգուտ են քաղել և դեռ օգուտ են քաղում Երեք Նեփիացիների ծառայությունից։ Դուք կարող եք առաջարկել , որ ուսանողները նշեն այն, ինչ գտնեն։ (Նշեք, որ 3 Նեփի 28.27–28-ում տրվում է մեկ պատճառ, թե ինչու մենք պետք է զգույշ լինենք հավատալիս և պատմություններով կիսվելիս այն մարդկանց հետ, ովքեր պնդում են, որ հանդիպել են Երեք Նեփիացիներին։ Մորմոնն ասել է, որ մարդիկ, ում Երեք Նեփիացիները կծառայեն «չեն ճանաչի նրանց»։)

## 3 Նեփի 28.36–40

### *Մորմոնն իմանում է փոխակերպված էակների առանձնահատկության մասին*

Հարցրեք ուսանողներին, թե արդյոք նրանք երբևէ ունեցել են հարց ավետարանի մասին կամ կարդացել ինչ որ բան սուրբ գրություններում, որը չեն հասկացել։ Հիշեցրեք նրանց, որ երբ Մորմոնը առաջին անգամ գրեց Երեք Նեփիացիների փոխակերպման մասին, նա ասաց, որ լիովին չէր հասկանում փոփոխությունը նրանց ֆիզիկական վիճակի մեջ երկրի վրա նրանց ծառայության ընթացքում (տես 3 Նեփի 28.17)։

- Ո՞ւմ եք սովորաբար դիմում, երբ հարցեր եք ունենում ավետարանի կամ սուրբ գրությունների հատվածների մասին։ Ինչո՞ւ։

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 28.36–37՝ պարզելու համար, թե ինչպես Մորմոնը գտավ իր հարցի պատասխանը։

- Ի՞նչ սկզբունք կարող ենք սովորել Մորմոնից, թե ինչպես ստանալ լրացուցիչ հասկացողություն։ (Չնայած ուսանողները կարող են պատասխանել այս հարցին

տարբեր ձևերով, հավաստիացեք, որ նրանք հասկանում են հետևյալ սկզբունքը. **Երբ մեզ մոտ բացակայում է իմացությունը, մենք պետք է հարցնենք Երկնային Հորը և մենք կստանանք առաջնորդություն:**)

- Որո՞նք են այն օրինակները, որոնք բացատրում են այս սկզբունքը:
- Որո՞նք են այն իրավիճակները, որոնցում մենք գուցե կարիք ունենանք խնդրել Երկնային Հորից ավելի մեծ հասկացողություն:

Կարդացեք հետևյալ միտքը, որում Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը պարզաբանում է մի քանի հանգամանքներ, որոնցում մենք պետք է աղոթենք օգնության համար.

«Յուրաքանչյուրս Նրա օգնության մեծ կարիքն ունենք, երբ ձգտում ենք սովորել ավետարանի ճշմարտությունները և ապա դրանցով ապրել, երբ ձգտում ենք Նրա օգնությանը մեր կյանքի մեծ որոշումներում, որոշումներում՝ ներառյալ կրթությունը, ամուսնությունը, աշխատանքը, բնակության վայրը, մեր ընտանիքները, Տիրոջ գործում միմյանց հետ ծառայելը և Նրա ներումն ու անընդհատ առաջնորդությունն ու պաշտպանությունը փնտրելը բոլոր բաներում, որ անում ենք: . . .

Ողջ կյանքում միշտ աղոթք անելուց հետո, ես գիտեմ սիրո, զորության և ուժի մասին, որը գալիս է ազնիվ և սրտառուչ աղոթքից: Ես գիտեմ մեր մահկանացու փորձառության ընթացքում մեզ ուսուցանելու, մեզ առաջնորդելու, մեզ ուղեկցելու մեր Հոր պատրաստակամության մասին: Այսպիսով, մեծ սիրով մեր Փրկիչն ասել է. «Այն ինչ ասում եմ մեկին, ասում եմ բոլորին. Միշտ աղոթիր, չլինի թե այն չարագործը զորություն ունենա քո վրա, և հանի քեզ քո տեղից» (ՎևՈւ 93.49 :) (“Pray Always,” *Ensign,* Oct. 1981, 3, 6):

- Ինչպե՞ս կարող եք մեծացնել ձեր հավատքը աղոթքի ուժի միջոցով: Երբ եք դուք և ձեր ընտանիքը պատասխաններ ստացել ձեր աղոթքներին:

Խրախուսեք ուսանողներին դիմել Երկնային Հորն աղոթքով, երբ նրանք ձգտում են հասկանալ ավետարանը և դիմակայել կյանքի մարտահրավերներին: Վկայեք այն օրհնությունների մասին, որոնք եկել են ձեր կյանք, երբ դուք ձեր մարտահարավերն ու հարցերը ներկայացրել եք Երկնային Հորը:

Բացատրեք, որ փոփոխությունը, որը զգացին Երեք Նեփիացիները, կոչվում է փոխակերպում: **Տիրոջ հավատարիմ ծառաներից ոմանք փոխակերպվեցին, որպեսզի կարողանային շարունակել իրենց ծառայությունը երկրի վրա:** Երբ Մորմոնը շարունակեց հարցնել այս փոփոխության մասին, նա իմացավ փոխակերպված էակների առանձնահատկությունների մասին:

Գրատախտակին գրեք*Փոխակերպված Էակներ:* Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 28.37–38: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, որոնելով թե ինչ էր Մորմոնը իմացել այն փոփոխության մասին, որը տեղի էր ունեցել Երեք Նեփիացիների մարմիններում:

- Ի՞նչ իմացավ Մորմոնը փոխակերպված էակների մասին: (Խնդրեք որևէ ուսանողի ծառայել որպես գրագիր և գրել մյուս ուսանողների պատասխանները գրատախտակին: Պատասխանները պետք է ներառեն, որ փոխակերպված էակները «մահ չեն ճաշակում», որ նրանք ցավ չեն զգում, և որ նրանք վիշտ չեն զգում, բացի այն, որ վիշտ են զգում աշխարհի մեղքերի պատճառով:)
- Ինչո՞ւ էր այս փոփոխությունը նրանց մարմիններում անհրաժեշտ: (Դուք կարող եք հանձնարարել ուսանողներին վերանայել 3 Նեփի 28.6–7 հատվածները: Փոփոխությունն անհրաժեշտ էր, որպեսզի նրանք կարողանային կատարել երկրի վրա մնալու իրենց արդար ցանկությունը և շարունակեին հոգիներ բերել դեպի Քրիստոս, մինչև Փրկչի Երկրորդ Գալուստը:)

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 28.39–40 հատվածները, որոնելով լրացուցիչ տեղեկություններ փոխակերպված էակների մասին: Երբ ուսանողները կիսվեն իրենց գտածով, մեկ այլ գրագրի հանձնարարեք գրել նրանց գտածները գրատախտակին: (Պատասխանները պետք է ներառեն՝ չեն կարող գայթակղվել սատանայի կողմից, սրբագործված են և սուրբ և որ «երկրի զորությունները չէին կարող պահել նրանց»:) Գուցե կարիք լինի, որ բացատրեք, որ չնայած փոխակերպված էակները չեն տանում մահվան ցավերը, նրանք հարություն առած չեն: Նրանք չեն ստանա այդ «ավելի մեծ փոփոխությունը», մինչև Դատաստանի Օրը, երբ նրանք արագորեն «մի ակնթարթում» փոխվեն մահկանացությունից անմահության (տես 3 Նեփի 28.8, 40):

Եզրափակեք, վկայելով դասարանում քննարկվող սկզբունքների և վարդապետությունների մասին: Հրավիրեք ուսանողներին գործել Հոգուց ստացած հուշումների հիման վրա:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 3 Նեփիին 28: Կերպարանափոխություն և փոխակերպում

Երեք Նեփիացիները կերպարանափոխվեցին և փոխակերպվեցին:

Կերպարանափոխումը, որը նշվում է 3 Նեփի 28.13–17 -ում, այն մարդկանց վիճակն է, որոնք ժամանակաորապես վերափոխվում են արտաքինով և ներքինով, այսինքն՝ բարձրացվում են հոգևոր ավելի բարձր աստիճանի, որպեսզի կարողանան դիմանալ երկնային էակների ներկայությանն ու փառքին» (Սուրբ Գրությունների ուղեցույց, «Կերպարանափոխում», scriptures.lds.org, տես նաև ՎևՈՒ 67.11, Մովսես 1.11): Սուրբ գրությունները պատմում են մարդկանց մասին, ովքեր կերպարանափոխվել են, ներառյալ Մովսեսը (տես Մովսես 1.9–11), Հիսուս Քրիստոսը, Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը (տես Մատթեոս 17.1–8), և Ջոզեֆ Սմիթ (տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.14–20):

Փոխակերպված էակները «անձինք են, որոնք այնպիսի փոփոխության են ենթարկվում, որ չտանեն ցավ կամ մահ, մինչև որ հարություն առնեն դեպի անմահություն» (Սուրբ Գրությունների Ուղեցույց, «Փոխակերպված էակներ», scriptures.lds.org, տես նաև 3 Նեփի 28.7–9, 20–22, 37–40): Նրանց նպատակն է հոգիներ բերել դեպի Քրիստոսը (տես 3 Նեփի 28.9): Սուրբ գրությունները պարունակում են պատմություններ մարդկանց մասին, ովքեր փոխակերպվել են, ներառյալ՝ Ենովքի (տես Ծննդոց 5.24, Եբրայեցիս 11.5), Մովսեսի (տես Ալմա 45.19), Եղիայի (տես Դ Թագավորաց Բ.11), և Հովհաննես Սիրեցյալի մասին (տես Հովհաննես ԻԱ.22–23, ՎևՈՒ 7):

ԴԱՍ 135

# 3 Նեփի 29–30

## Նախաբան

Եզրափակելով Նեփիացիներին Փրկչի այցի մասին իր պատմությունը, Մորմոնը բացատրեց, որ Մորմոնի գրքի ի հայտ գալը նշան կլինի, որ Տերն իրագործում է Իր ուխտը Իսրայելի տան հետ: Նա նաև նախազգուշացրեց , որ նրանք, ովքեր ուրանում են Աստծո գործերը ենթակա կլինեն Աստծո դատաստաններին: Ի վերջո, նա արձանագրեց Փրկչի հրավերը բոլոր մարդկանց՝ ապաշխարել և համարվել Իսրայելի տան շարքում:

***Հետևեք նպատակների և հանձնարարությունների կատարմանը***

Որպես 131 դասի մաս դուք խրախուսեցիք ուսանողներին գրել իրենց փորձառությունների մասին, որոնք նրանց հոգեպես զորացրել են: Նախքան այսօրվա դասը սկսելը կարող եք հիշեցնել նրանց այս մարտակոչի մասին: Գուցե նրանց նաև հնարավորություն ընձեռեք խոսել այն մասին, թե ինչպես է դա օգնել ենք իրենք օգտվել իրենց փորձառությունները արձանագրելիս:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 29

*Մորմոնը վկայում է, որ Տերը կկատարի Իր ուխտը Իսրայելի տան հետ վերջին օրերին:*

Նախքան դասի սկսելը արտագրեք հետևյալ սխեման գրատախտակին (կամ պատրաստեք այն որպես լրացուցիչ ուսուցողական նյութ յուրաքանչյուր ուսանողի համար).

| | |
|---|---|
| _____ 1. Հեթանոսներ | ա.Երկու իմաստներ. (1) Հին Կտակարանի Հակոբի (Իսրայելի) հետնորդները, որի հետ Տերն ուխտեր կապեց և (2) Հիսուս Քրիստոսի հավատացյալները, ովքեր ուխտեր կապեցին Աստծո հետ: |
| _____ 2. Իսրայելի տուն | բ. Խոստում հավատարիմներին, որը ներառում էր ավետարանի օրհնությունները, քահանայության իշխանությունը, հավերժական ընտանիքները և ժառանգության երկիրը: |
| _____ 3. Արհամարհանքով մերժում | գ. Երկու իմաստներ.(1) ոչ Իսրայելացի մարդիկ կամ ոչ Հրեա տոհմագծով և (2) առանց ավետարանի մարդիկ |
| _____ 4. Տիրոջ ուխտը Իսրայելի հետ | դ. Խորը տխրություն և ափսոսանք |
| _____ 5. Վայ | ե. Անտեսել կամ մերժել քամիարանքով կամ գոռոզությամբ |

Դասը սկսեք ուսանողներին հրավիրելով աղյուսակի առաջին սյունակի բառերը համապատասխանեցնելով երկրորդ սյունակի իրենց ճիշտ սահմանումների հետ (պատասխաններ. 1-գ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-դ): Երբ ուսանողները հաղորդեն իրենց պատասխանները, հավաստիացեք, որ նրանք հասկանում են սահմանումներից յուրաքանչյուրը: Դուք կարող եք սա անել՝ հրավիրելով ուսանողներին բացատրել սահմանումներն իրենց իսկ խոսքերով կամ օգտագործելով յուրաքանչյուր խոսքը կամ արտահայտությունը նախադասության մեջ: Տեղեկացրեք, ուսանողներին, որ այս սահմանումները կօգնեն նրանց ավելի լավ հասկանալ 3 Նեփի 29–30 :

Բացատրեք, որ Նեփիացիներին Փրկչի այցի մասին գրելուց հետո, Մորմոնը մարգարեացավ Տիրոջ խոստումների իրականացման մասին վերջին օրերում: Հարցրեք ուսանողներին, թե արդյոք նրանք զգացել են երբևէ աստվածային խոստման իրականացումը, լինի դա տրված սուրբ գրություններում, որևէ մարգարեի կողմից, Սուրբ Հոգու միջոցով, թե քահանայության օրհնության միջոցով: Հրավիրեք մի քանի ուսանողների պատմել իրենց փորձառությունների մասին, բայց հավաստիացեք,

հիշեցնելով նրանց, որ նրանք չպետք է կիսվեն փորձառություններով, որոնք խիստ անձնական են կամ գաղտնի:

- Ինչո՞ւ եք կարծում, որ որոշ մարդիկ կարող է կասկածել, որ Աստված կպահի Իր խոստումները:
- Ինչպե՞ս գիտեք, որ Աստված պահում է Իր խոստումները:

Գրեք*Երբ* և *Այն ժամանակ* բառերը գրատախտակին: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ3 Նեփի 29.1–3, որոնելով այդ բառերը գրատախտակին: Բացատրեք, որ այս խոսքերը կօգնեն նրանց գտնել մի իրադարձություն, որը ցույց կտա, որ Տերը պահում է Իր խոստումները Իսրայելի տան հանդեպ վերջին օրերում: (Օգտակար կլինի բացատրել, որ «այս ասածները» արտահայտությունը 3 Նեփի 29.1 հատվածում վերաբերում է Մորմոնի Գրքի գրվածքներին:)

- Ինչպե՞ս կամփոփեիք մարգարեությունը, որը գրված է այս հատվածներում: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, բայց նրանք պետք է հասկանան հետևյալ ճշմարտությունը. **Մորմոնի Գրքի ի հայտ գալը նշան է որ Տերը կատարում է Իսրայելին հավաքելու Իր ուխտը վերջին օրերին:** Դուք կարող եք խրախուսել ուսանողներին նշել այս ճշմարտությունը3 Նեփի 29 գլխի ամփոփագրում:)

Հրավիրեք ուսանողներին բարձրացնել Մորմոնի Գրքի օրինակները: Բացատրեք, որ իրենց ձեռքերում նրանք ունեն Մորմոնի մարգարեության իրականացումը և որ նրանք կարող են համոզված լինել, որ Տերը պատրաստում է Իր ժողովրդին Իր գալստյանը: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը.

«Մորմոնի Գիրքը շոշափելի նշան է, որ Տերը սկսել է հավաքել Իսրայելի ուխտի Իր զավակներին: . . .

Տերն իսկապես չի մոռացել: Նա Մորմոնի Գրքով օրհնել է մեզ և մյուսներին ողջ աշխարհում:. . . Այն օգնում է մեզ ուխտեր կապել Աստծո հետ: Այն հրավիրում է մեզ հիշել Նրան և ճանաչել Նրա Սիրելի Որդուն: Սա ևս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին» («Ուխտեր» Ensign կամ *Լիահոնա,* նոյ. 2011, 88):

- Ինչպե՞ս է այն փաստը, որ մենք ունենք Մորմոնի Գիրքը վկայություն հանդիսանում այն մասին, որ Աստված կպահի Իր խոստումները:

Գրեք հետևյալ հարցը գրատախտակին. *Ինչո՞ւ են Վերջին Օրերի Սրբերը հեռաքրքրվում Իսրայելի տան հետ Տիրոջ ուխտով:* Խնդրեք ուսանողներին լսել այս հարցի պատասխանները մինչ կարդաք Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ միտքը, ով թվարկում է այն խոստումները, որոնք Իր ժողովրդի հետ Տիրոջ ուխտի մի մասն են կազմում: (Դուք կարող եք յուրաքանչյուր ուսանողի տալ այս մտքի մի տպած օրինակ:)

«Ուխտը, որն Աստված արեց Աբրահամի հետ, իսկ հետագայում վերահաստատեց Իսահակի և Հակոբի հետ, . . .պարունակում էր մի քանի խոստումներ,

ներառյալ. Հիսուս Քրիստոսը կծնվի Աբարահամի տոհմից

: Աբրահամի սերունդը բազմաթիվ կլինի, արժանի հավերժական աճի և քահանայություն կրելուն

: Աբրահամը կդառնա շատ ազգերի հայր

: Որոշակի երկրներ կժառանգվեն նրա հետնորդների կողմից

: Երկրի բոլոր ազգերը կօրհնվեն նրա սերնդով

: Եվ այդ ուխտը հավիտենական կլինի՝ նույնիսկ «հազար սերունդների» ընթացքում:

Այս խոստումներից մի քանիսը կատարվել են, մյուսները դեռ ընթացքում են: . . .

Մեզանից ոմանք տառացիորեն Աբրահամի սերնդից են, մյուսները հավաքվում են նրա ընտանիքի մեջ որդեգրմամբ: Տերը տարբերություն չի դնում: Միասին մենք ստանում ենք այս խոստացված օրհնությունները, եթե մենք որոնում ենք Տիրոջը և հնազանդվում Նրա պատվիրաններին: . . .

. . . Բրիգամ Յանգն ասել է. «Բոլոր Վերջին Օրերի Սրբերը մտնում են նոր և հավիտենական ուխտի մեջ, երբ նրանք ընդունվում են այս Եկեղեցի» (“Covenants,” 87–88; quoting *Teachings of Presidents of the Church: Brigham Young* [1997], 62):

- Օգտագործելով այն, ինչ որ սովորել եք Երեց Նելսոնի խոսքերից, ինչպես կբացատրեիք գրատախտակի վրա գրված հարցը։ (Ուսանողները կարող են տալ տարբեր պատասխաններ, բայց հավաստիացեք, որ նրանք հասկանում են հետևյալ ճշմարտությունը. **Վերջին Օրերի Սրբերը Տիրոջ ուխտի ժողովրդի մի մասն են կազմում, և մենք պատասխանատվություն ենք կրում օրհնելու բոլոր ազգերին։**)
- Ինչպե՞ս են Վերջին Օրերի Սրբերը ձգտում օրհնել երկրագնդի ազգերին։
- Ի՞նչ դեր է խաղում Մորմոնի Գիրքն այս ջանքերում։

Համընկումների վարժությունից անդրադարձեք *արհամարհանքով մերժել* և *վայ* բառերին։ Բացատրեք, որ Մորմոնը գիտեր, որ վերջին օրերին կլինեն այնպիսի մարդիկ, ովքեր արհամարհանքով կվերաբերվեն Մորմոնի Գրքին և Իր ժողովրդի հետ Տիրոջ ուխտի կատարման այլ ապացույցներին։ Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 29.4–9, որոնելով, թե ինչ պիտի պատահեր նրանց, ովքեր արհամարհանքով կմերժեին Փրկչին և Նրա գործերը։ Ուսանողները բացատրելուց հետո, ինչ իրենք գտել են, կարող եք առաջարկել, որ նրանք գրեն հետևյալ ճշմարտությունը իրենց սուրբ գրություններում. **Վիշտ կգա նրանց, ովքեր կմերժեն Հիսուս Քրիստոսին և Նրա գործերը։**

- Ինչո՞ւ է վիշտը հանդիսանում Փրկչին և նրա գործերը արհամարհանքով մերժելու բնական հետևանք։
- Ինչպե՞ս կպատասխանեիք որևէ մեկին, ով ասում է, որ Տերը չի խոսում մարդու հետ կամ հրաշքներ գործում։
- Ինչպե՞ս կարող ենք ավելի լավ ճանաչել և գնահատել Տիրոջը և Նրա գործերը մեր կյանքում։

## 3 Նեփի 30

*Տերը հորդորում է Հեթանոսներին ապաշխարել և գալ դեպի Իրեն։*

Անդրադարձեք համընկումների վարժությունից*Հեթանոսներ* բառին։ Տեղեկացրեք ուսանողներին, որ 3 Նեփի 30-ում Մորմոնն իրականացրեց Տիրոջ պատվիրանը գրի առնելու Հիսուս Քրիստոսի հրավերը, տրված հատուկ Հեթանոսներին կամ ավետարանը չունեցող մարդկանց։ Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 30.1–2, որոնելով որքան հնարավոր է շատ հրավերներ Հեթանոսներին։ Նրանից հետո, երբ նրանք պատմեն իրենց գտածի մասին, հարցրեք.

- Այս հրավերներից ո՞րը, ձեր կարծիքով, կարող է բոլոր մյուսների համար ամփոփագիր լինել։ (Դեպի Քրիստոսը գալու հրավերը ներառում է ապաշխարելը, մկրտվելը, Սուրբ Հոգին ընդունելը և Տիրոջ ժողովրդի թվում համարվելը։)
- Ի՞նչ օրհնություններ է Հիսուս Քրիստոսը խոստանում Հեթանոսներին, եթե նրանք գան դեպի Իրեն։ (Մեղքերի թողություն, Սուրբ Հոգով լցվելը և Նրա ժողովրդի թվում համարվելը։)
- Ինչո՞ւ է օրհնություն համարվում Տիրոջ ժողովրդի թվում լինելը։

Գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. ***Եթե մենք գանք դեպի Քրիստոսը, մենք կհամարվենք Նրա ժողովրդի թվում։*** Բացատրեք, որ չնայած 3 Նեփի 30.2 հատվածն ուղղված է նրանց, ովքեր Եկեղեցու անդամ չեն, մենք կարող ենք օգտագործել Հիսուս Քրիստոսի հրավերը՝ չափելու մեր ջանքերը Աստծո հետ մեր կապած ուխտերը պահելիս։ Վկայեք այն օրհնությունների մասին, որոնք գալիս են մեր ուխտերը և Տիրոջ պատվիրանները պահելուց։

## 3 Նեփիի կրկնություն

Որոշ ժամանակ տրամադրեք օգնելու ուսանողներին կրկնել 3 Նեփիի գիրքը։ Խնդրեք նրանց մտածել այն մասին, թե ինչ են սովորել այս գրքից, ինչպես սեմինարիայում, այնպես էլ իրենց սուրբ գրությունների անձնական ուսումնասիրության ժամանակ։Անհրաժեշտության դեպքում նրանց հրավիրեք հակիրճ կրկնել որոշ գլուխների համառոտ շարադրանքը 3 Նեփիում՝ օգնելու համար նրանց լավ հիշել։ Բավական ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել որոշ բաներով 3 Նեփիից, որը ոգեշնչող է եղել իրենց համար կամ որը նրանց օգնել է ավելի մեծ հավատք ունենալ Հիսուս Քրիստոսի հանդեպ։

## Սերտման սուրբ գրության կրկնություն

Յուրաքանչյուր ուսանողի տվեք մաքուր թուղթ: Հրավիրեք նրանց նամակ գրել մի անձնավորության (երևակայական անձի կամ մեկին, ում նրանք գիտեն), ով Եկեղեցու անդամ չէ: Առաջարկեք, որ նրանք գտնեն սուրբ գրության սերտման հատվածներում ճշմարտություններ, որոնք նրանք կարող են օգտագործել՝ հրավիրելու համար նամակը ստացողին գալ դեպի Քրիստոսը և համարվել Նրա ժողովրդի թվում: Խնդրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց գրածով:

*Հիշեցում.* Այս դասի տևողությունը կարող է թույլ տալ ժամանակ հատկացնել այս վարժությանը: Սուրբ գրության սերտման հատվածների կրկնության վարժությունները տես հավելվածում՝ այս ձեռնակի վերջում:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### 3 Նեփի 30.1–2: Իսրայելի հավաքումը

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ուսուցանել է.

«Իսրայելի հավաքումը բաղկացած է ճշմարիտ եկեղեցուն միանալուց և ճշմարիտ Աստծո իմացությանը գալուց:. . . Ուստի ամեն մարդ, ով ընդունել է վերականգված ավետարանը և ով ձգտում է երկրպագել Տիրոջը իր իսկ լեզվով և Սրբերի հետ ազգերի մեջ, որտեղ նա ապրում է, կատարել է Իսրայելի հավաքման օրենքը և այս վերջին օրերում Սրբերին խոստացված բոլոր օրհնությունների ժառանգ է» (*The Teachings of Spencer W. Kimball,* ed. Edward L. Kimball [1982], 439):

# Տնային ուսումնասիրության դաս

## 3 Նեփի 23–30 (Մաս 27)

### Նախապատրաստական նյութերի տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը, որն ուսանողները սովորեցին, երբ ուսումնասիրեցին 3 Նեփի 23–30 հատվածները (մաս 27), նախատեսված չէ ուսուցանելու որպես ձեր դասի մաս: Դասը, որ դուք ուսուցանում եք, կենտրոնացած է վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին՝ ձեր ուսանողների կարիքները հաշվի առնելու համար:

### Օր 1 (3 Նեփի 23)

Ուսանողները շարունակեցին ուսումնասիրել Նեփիացիներին ուղղված Հիսուս Քրիստոսի խոսքերը: Նրանք իմացան, որ Փրկիչը պատվիրեց ժողովրդին ջանասիրաբար քննել Եսայիայի և մյուս մարգարեների խոսքերը: Երբ Փրկիչը խրատեց ժողովրդին իրենց սեփական հոգևոր պատմությունը չգրելու համար, ուսանողները սովորեցին, որ երբ մենք գրանցում ենք հոգևոր փորձառությունները, մենք հրավիրում ենք Տիրոջը մեզ ավելի շատ հայտնություն տալ:

### Օր 2 (3 Նեփի 16)

Երբ ուսանողները խորհեցին Մաղաքիայի խոսքերի շուրջ, որոնցով Հիսուս Քրիստոսը կիսվեց Նեփիացիների հետ, նրանց հիշեցվեց, որ Փրկչի Երկրորդ Գալստյան ժամանակ Նա կսրբագործի Իր ժողովրդին և կդատի ամբարիշտներին: Տասանորդի սկզբունքի և վերջին օրերին Եղիայի վերադարձի մարգարեության շուրջ հետագա խորհրդածությունն ուսանողներին օգնեց հասկանալ, որ եթե մենք վերադառնանք դեպի Տերը, Նա կդառնա դեպի մեզ, և քանի որ մեր սրտերը դարձել են դեպի մեր հայրերը, մենք օգնում ենք պատրաստել մեր երկրագունդը Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստին: Մորմոնի բացատրությունը, թե ինչու նա չէր ներառել Նեփիացիներին տված Փրկչի բոլոր ուսմունքները, օգնեցին ուսանողներին հայտնաբերել, որ քանի դեռ մենք հավատում ենք նրան, ինչ Աստված հայտնել է, մենք պատրաստվում ենք ստանալ ավելի մեծ հայտնություն:

### Օր 3 (3 Նեփի 27)

Մինչ տասներկու Նեփիացի աշակերտները շարունակեցին աղոթքով ու ծոմով, Փրկիչն այցելեց նրանց և բացատրեց, որ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին կոչվել է Նրա անունով և կառուցվել Նրա ավետարանի վրա: Նրանից, ինչ Փրկիչն ուսուցանեց Իր աշակերտներին, ուսանողները նաև սովորեցին, որ Հիսուս Քրիստոսի ավետարանի հիմքն այն է, որ նա կատարեց Իր Հոր կամքը՝ Քավությունն իրականացնելով: Ավետարանի մասին այս հասկացողությամբ ուսանողները նաև սովորեցին, որ եթե մենք ապրում ենք ավետարանի սկզբունքներով, ապա մենք կարող ենք անբիծ կանգնել Աստծո առաջ վերջին օրը:

### Օր 4 (3 Նեփի 28–30 )

Երբ հարություն առած Հիսուս Քրիստոսը բավարարեց Իր Նեփիացի աշակերտների ցանկությունները, ուսանողներն իմացան, որ Տերն օրհնում է մեզ համաձայն մեր արդար ցանկությունների: Երեք Նեփիացիների մասին Տիրոջից լրացուցիչ գիտելիք խնդրելու Մորմոնի օրինակից ուսանողները սովորեցին, որ եթե մենք Տիրոջից իմացություն խնդրենք, մենք կստանանք հայտնություն: Մորմոնի գրառումների ավարտը Նեփիացիների մեջ Փրկչի ծառայության մասին ուսուցանեց ուսանողներին, որ Մորմոնի Գրքի ի հայտ գալը նշան է, որ Տերն իրականացնում է Իր ուխտը Իսրայելի տան հետ, և եթե մենք գանք դեպի Քրիստոսը, մենք կարող ենք համարվել Նրա ժողովրդի թվում:

## Նախաբան

Չնայած շատ արժեքավոր սկզբունքներ են գտնվում 3 Նեփի 23–30 -ում, այս դասի առաջին կեսը կենտրոնանում է նրա վրա, ինչ ուսանողները կարող են սովորել 3 Նեփի 24–25-ում՝ Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստին նախապատրաստվելու մասին: Դասի երկրորդ կեսը կենտրոնանում է սկզբունքների վրա 3 Նեփի 27-ում, որոնք կարող են օգնել ուսանողներին խորհրդածել այն մասին, թե ինչ է նշանակում լինել Հիսուս Քրիստոսի աշակերտը և թե ինչպես նրանք կարող են ավելի նմանվել Նրան:

## Ուսուցանման առաջարկներ

### 3 Նեփի 23–26

***Հարություն առած Հիսուս Քրիստոսը բացատրում է սուրբ գրությունները Նեփիացիներին:***

Հրավիրեք ուսանողներին օրինակներ բերել իրադարձությունների մասին, որոնք պահանջում են ուշադիր նախապատրաստություն որոշ ժամանակահատվածի ընթացքում: (Օրինակները կարող են ներառել երկար տարածության մրցավազք, երաժշտության համերգ, կամ դրամատիկ թատերական ներկայացում:) Խնդրեք ուսանողներին նկարագրել, թե ինչ կպատահեր որևէ մեկի հետ, ով փորձում է մասնակցել այս իրադարձություններին առանց անհրաժեշտ նախապատրաստության:

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ 3 Նեփի 24.2, իսկ հետո հարցրեք դասարանին, թե ինչ իրադարձություն էր, իրենց

կարծիքով, կանխագուշակել Մաղաքիա մարգարեն: Երբ ուսանողները հասկանան, որ «նրա գալստյան օրը» Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստի օրն է, խնդրեք նրանց նշել հարցը, որը տվեց Մաղաքիան. «Ո՞վ կարող է դիմանալ նրա գալստյան օրվան, և ո՞վ պիտի կանգնի, երբ նա հայտնվի»:

Հարցրեք. Ինչո՞ւ է սա կարևոր հարց հանդիսանում նրանց համար, ովքեր ապրում են վերջին օրերում:

Հրավիրեք ուսանողներին բարձրաձայն կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ բացատրությունը, թե ինչպես տասանորդ վճարելը կարող է օգնել մեզ նախապատրաստվել Փրկչի Երկրորդ Գալստին:

«Այժմ լրիվ տասանորդ վճարող լինելու մեր որոշմամբ և հնազանդվելու մեր հաստատուն ջանքերով մենք կզորացվենք մեր հավատքում և ժամանակի ընթացքում մեր սրտերը կփափկեն: Այդ փոփոխությունն է մեր սրտերում Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով, մեր փողից ու ապրանքներից վեր, որ հնարավոր է դարձնում Տիրոջ համար խոստանալ լրիվ տասանորդ վճարողներին պաշտպանություն վերջին օրերին: Մենք կարող ենք վստահություն ունենալ, որ մենք կարժանանանք պաշտպանության այդ օրհնության համար, եթե պարտավորվենք այժմ վճարել լրիվ տասանորդ և լինել հաստատուն այդ անելիս» *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2005, 40):

Հարցրեք. Ըստ Նախագահ Այրինգի, ինչպե՞ս կարող է տասանորդ վճարելն օգնել մեզ պատրաստվել հանդիպել Փրկչին:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մաղաքիայի մարգարեությունը Եղիայի գալստյան վերաբերյալ 3 Նեփի 25.5–6 հատվածներում: Օգնելու նրանց ավելի լավ հասկանալ, թե ինչպես այս մարգարեության իրականացումը կարող է ազդել նրանց վրա, հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ա. Բեդնարի կողմից հետևյալ հրավերը.

Ես հրավիրում եմ Եկեղեցու երիտասարդներին սովորել այդ մասին և զգալ Եղիայի Հոգին: . . .

Եթե դուք հավատքով արձագանքեք այս հրավերին, ձեր սրտերը կդառնան դեպի ձեր հայրերը: Աբրահամին, Իսահակին և Հակոբին տրված խոստումները կարմատավորվեն ձեր սրտերում: . . . Ձեր նախնիների հանդեպ ձեր սերն ու երախտագիտությունը կմեծանան: Ձեր վկայությունն ու դարձը դեպի Փրկիչը կդառնա խորը և մնայուն: Եվ ես խոստանում եմ, որ դուք պահպանված լինեք հակառակորդի ուժգնացող ազդեցությունից: Երբ մասնակցեք այս սուրբ աշխատանքին և սիրեք այն, դուք ապահով կլինեք ձեր երիտասարդության ժամանակ և ձեր ողջ կյանքի ընթացքում» («Զավակների սիրտը դեպի իրենց հայրերը», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2011, 26–27):

Հարցրեք. Ի՞նչ փորձառություններ եք ունեցել ընտանեկան պատմություն և տաճարային աշխատանք կատարելիս, որոնք հոգեպես ձեզ զորացրել են:

## 3 Նեփի 27–30

***Հիսուս Քրիստոսը հայտնում է Իր Եկեղեցու անունն ու կարևոր գծերը և հարգում Իր աշակերտների արդար ցանկությունները: Մորմոնն ավարտում է Նեփիացիների մեջ Փրկչի ծառայության իր հիշատակարանը:***

Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետևյալ միտքը գրեք գրատախտակին (դուք կարող եք անել այդ մինչև դասը և ծածկել այն մինչև դասի այդ պահը): Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այդ միտքը: (Այս միտքը գտնվում է *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* գրքում, [2007]:)

*«Մեր կրոնի հիմնարար սկզբունքերն են Առաքյալների և Մարգարեների վկայությունն այն մասին, որ Հիսուս Քրիստոսը մահացավ, թաղվեց և կրկին բարձրացավ երրորդ օրը և համբարձվեց երկինք» (Ջոզեֆ Սմիթ):*

Բացատրեք, որ ճիշտ ինչպես Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտարարեց, Փրկիչն ուսուցանեց Նեփիացիներին, որ Իր ավետարանի կենտրոնը Իր քավող զոհաբերությունն է: Գրեք հետևյալ ճշմարտությունը գրատախտակին. ***Ավետարանի հիմքն այն է, որ Հիսուս Քրիստոսը կատարեց Իր Հոր կամքը իրագործելով Քավությունը:***

Հրավիրեք ուսանողներին աչքի անցկացնել 3 Նեփի 27 գլուխը և գտնել արտահայտություններ, որոնցում Փրկիչն ուսուցանեց այս վարդապետությունը: Խնդրեք ուսանողներին կիսվել իրենց հայտնաբերած հատվածներով:

Բացատրեք, որ 3 Նեփի 27.16–20 հատվածները պարունակում են Փրկչի ուսմունքներն այն մասին, թե ինչպես մենք կարող ենք հրավիրել մեր կյանք Նրա Քավության զորությունը: Գրեք հետևյալ միտքը գրատախտակին. *Եթե մենք . . . , ապա . . .* Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 27.20, որոնելով բառեր կամ արտահայտություններ, որոնք նրանք կարող են օգտագործել լրացնելու համար բացթողնված մասերը: Հարցրեք. Ինչպե՞ս կարող է այս սկզբունքին հետևելն օգնել մեզ լինել Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտը:

Բացատրեք դասարանին, որ վերջնական մարտահրավերը և աշակերտ լինելու կարևորությունը մեզ համար գտնվում է 3 Նեփի 27.21, 27 հատվածներում: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ այս հատվածները: Մինչ նրանք կարդում են, գրեք հետևյալ միտքը գրատախտակին. *Տեր Հիսուս Քրիստոսն ակնկալում է, որ Իր աշակերտներն անեն Իր գործերը և դառնան . . .*

Հարցրեք ուսանողներին, թե ինչպես նրանք կլրացնեին այս միտքը, հիմնվելով նրա վրա, ինչ կարդացին 3 Նեփի 27.27-ում: (Երբ ուսանողները պատասխանեն, լրացրեք գրատախտակի վրա գրված միտքը, որպեսզի այն հնչի հետևյալ ձևով. ***Տեր Հիսուս Քրիստոսն ակնկալում է, որ Իր աշակերտներն անեն Իր գործերը և դառնան ճիշտ ինչպես Նա:*** ) Բարձրաձայն կարդացեք Առաջին Նախագահությունից Ջեյմս Ի. Ֆաուստի հետևյալ միտքը.

«Եկեք մտածենք մի քանի բաների մասին, որ Հիսուսն արեց, որոնք մենք բոլորս կարող ենք ընդօրինակել:

1. Հիսուսը «ման եկավ բարի անելով»[Գործք Ժ.38:] Մենք բոլորս կարող ենք ինչ որ բարի բան անել ամեն օր՝ ընտանիքի անդամի, ընկերոջ, կամ նույնիսկ անծանոթի համար, եթե որոնենք այդպիսի առիթներ:

2. Հիսուսը բարի Հովիվն էր, ով հսկում էր Իր ոչխարներին և մտահոգվում նրանց համար, ովքեր կորել էին: Մենք կարող ենք գտնել միայնակին կամ նրանց, ովքեր քիչ ակտիվ են, և ընկերանալ նրանց հետ:

3. Հիսուսը կարեկցանք ուներ շատերի, ներառյալ խեղճ բորոտի հանդեպ: Մենք ևս կարող ենք կարեկցանք ունենալ: Մորմոնի Գրքում մեզ հիշեցվում է, որ մենք պետք է «սգանք նրանց հետ, ովքեր սգում են» [Մոսիա 18.9]:

4. Հիսուսը վկայություն բերեց Իր աստվածային առաքելության և Իր Հոր մեծ գործի մասին: Մեր կողմից մենք բոլորս կարող ենք «կանգնել որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում» [Մոսիա 18.9](“Discipleship,” *Ensign* կամ *Liahona,* Nov. 2006, 21):

Ուսանողներին բաժանեք զույգերի կամ փոքրիկ խմբերի: Հրավիրեք յուրաքանչյուր զույգին կամ խմբին գրել երկու կամ երեք ուղիներ, որոնցով նրանք կարող են կիրառել Նախագահ Ֆաուստի չորս առաջարկներն իրենց կյանքում:

Նրանց ավարտելուց հետո, հրավիրեք յուրաքանչյուր զույգին կամ խմբին կիսվել իրենց ցուցակից ամեն անգամ մեկ գաղափարով: Գրատախտակին գրեք նրանց գաղափարները, թե ինչպես կարող ենք կատարել Փրկչի գործերը և ավելի նման դառնալ Նրան: Հրավիրեք ուսանողներին հաջորդ շաբաթ պարտավորվել գործել այս գաղափարներից մեկի կամ երկուսի համաձայն: Բերեք ձեր վկայությունն այն մասին, որ մենք բոլորս կարող ենք նման դառնալ Փրկչին, եթե հավատք գործադրենք Նրա հանդեպ:

## Հաջորդ Մաս (4 Նեփի 1–Մորմոն 8)

Խրախուսեք ուսանողներին որոնել պատասխաններ հետևյալ հարցերին, երբ նրանք ուսումնասիրեն հաջորդ մասը. Ինչպե՞ս կարող է ժողովուրդը խաղաղ և բարգավաճ լինելուց դառնալ լիովին ամբարիշտ: Ինչպե՞ս Նեփիացիները երկրի վրա ամենաբարգավաճ և երջանիկ ժողովրդից դարձան լիովին ամբարիշտ: Որո՞նք էին Մորմոնի վերջին խոսքերը:

# Նեփիի Չորրորդ

## ԳՐՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ

### Ինչո՞ւ ուսումնասիրել այս գիրքը:

4 Նեփի ուսումնասիրելիս ուսանողները կսովորեն օրհնությունների մասին, որոնք տրվում են մարդկանց, ովքեր միավորված են Հիսուս Քրիստոսի ավետարանով ապրելու մեջ: Լեքիի հետնորդների մեջ Փրկչի ծառայությունից հետո երկրի բոլոր մարդիկ դարձի եկան: Մինչ նրանք հնազանդվում էին պատվիրաններին, նրանք վայելում էին խաղաղություն, բարգավաճում և հոգևոր հրաշալի օրհնություններ: Մորմոնը հայտարարել է. «Անկասկած, ավելի երջանիկ ժողովուրդ չէր կարող լինել այն բոլոր ժողովուրդների մեջ, որոնք ստեղծվել էին Աստծո ձեռքով» (4 Նեփի 1.16): Ուսանողները նաև կսովորեն կարևոր դասեր ամբարշտության մեջ մարդկանց աստիճանաբար անկման մասին:

### Ո՞վ է գրել այս գիրքը:

Մորմոնը միացրել և կրճատել է չորս հեղինակների գրառումները, ստեղծելով 4 Նեփի գիրքը: Դրանցից առաջինը Նեփին էր, որի անունով կոչվեց գիրքը: Նեփին Նեփիի որդին էր, որը տասներկու աշակերտներից մեկն էր, որոնց Տերն ընտրեց Լեքիի հետնորդների մեջ Իր ծառայության ժամանակ (տես 3 Նեփի 11.18–22, 12.1): Մյուս երեք հեղինակներն էին՝ Նեփիի որդի Ամովսը և Ամովսի որդիներ Ամովսը և Ամմարոնը (տես 4 Նեփի 1.19, 21, 47):

### Ու՞մ համար է գրված այս գիրքը և ինչո՞ւ:

Մորմոնը չի հասցեագրել 4 Նեփի գիրքը որոշակի լսարանի, նաև չի հստակեցրել, թե ինչու է այն գրել: Ինչևէ, այս գիրքը ծառայում է Մորմոնի Գրքի հիմնական նպատակին, որն է՝ վկայել այն մասին, որ Հիսուսը Քրիստոսն է, և հայտնի դարձնել Տիրոջ ուխտերը (տես Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը): Եվ այն այդ նպատակին է ծառայում, նկարագրելով այն օրհնությունները, որոնք գալիս են, երբ մարդիկ ապաշխարում են, գալիս են դեպի Հիսուս Քրիստոսը և ուխտեր կապում Նրա հետ: Այն նաև ցույց է տալիս կործանարար այն հետևանքները, որոնք տեղի են ունենում, երբ մարդիկ մերժում են Փրկչին և Նրա ավետարանը և մոռանում իրենց ուխտերը:

### Ե՞րբ և որտե՞ղ է այն գրվել:

4 Նեփի գրքի սկզբնաղբյուրները, հավանաբար, գրվել են մ.թ. 34 և մ.թ. 321 թվականների ընթացքում: Մորմոնը կրճատեց այդ գրառումները մոտավորապես մ.թ. 345 և մ.թ. 385 թվականների ընթացքում: Մորմոնը չի նշել, թե որտեղ էր, երբ կազմում էր այդ գիրքը:

### Որո՞նք են այս գրքին բնորոշ որոշ առանձնահատկությունները:

Միայն 49 հատվածներում 4 Նեփի գիրքը պատմում է մոտ 300 տարիների պատմությունը՝ Մորմոնի Գրքում տրված Նեփիացիների պատմության գրեթե մեկ-երրորդ մասը: 4 Նեփիի հակիրճությունը ավելի զորեղ է դարձնում այդ գիրքը: Այն համառոտ առանձնացնում է հակասությունը, որն ի հայտ է գալիս Փրկչի ծառայությանն անմիջապես հետևող մարդկանց արդարակեցության և սերունդներ հետո նրանց ամբարշտության միջև: Գրքի առաջին 18 հատվածները նկարագրում են օրհնությունները, որոնք վայելում է այն հասարակությունը, որը կառուցված է Հիսուս Քրիստոսի ավետարանի վրա: Հետագա հատվածները վկայում են հպարտության կործանարար բնույթի մասին, ցույց տալով, թե ինչպես այդ հասարակությունը աստիճանաբար թուլանում է, մինչև որ ամբողջովին կլանվում է մեղքի կողմից:

### Համառոտ շարադրանք

**4 Նեփի 1.1–18** Հիսուս Քրիստոսի ծառայությունից հետո բոլոր մարդիկ ամբողջ երկրով մեկ դարձի եկան և մկրտվեցին: Նրանք այլևս չէին բաժանում իրենց նեփիացիների և լամանացիների: «Նրանց մեջ բոլոր բաներն ընդհանուր էին» (4 Նեփի 1.3), նրանք տեսան շատ հրաշքներ, բարգավաճեցին և միասնության և երջանկության մեջ ապրեցին 110 տարի:

**4 Նեփի 1.19–34** Նեփին մահանում է և նրա որդի Ամովսն է վարում հիշատակարանը: Հետագայում Ամովսը փոխանցում է իր գրառումներն իր որդի Ամովսին: Շատ մարդիկ թույլ էին տվել, որ Սատանան «ազդեցություն ձեռք բերեր նրանց սրտերի վրա» (4 Նեփի 1.28): Պառակտումները, հպարտությունը և կեղծ եկեղեցիները գլուխ բարձրացրեցին մարդկանց մեջ: Ամբարիշտները սկսեցին հալածել ճշմարիտ Եկեղեցու անդամներին և Հիսուսի աշակերտներին, որ մնացել էին նրանց հետ (4 Նեփի 1.30):

**4 Նեփի 1.35–49** Մարդիկ կրկին բաժանում են իրենց նեփիացիների և լամանացիների: Լամանացիները իրենց կամքով ապստամբում են ավետարանի դեմ և կազմում Գադիանթոնի գաղտնի խմբակցություններ: Ի վերջո, նեփիացիները նույնպես դարձան ամբարիշտ: Ամովսը մահանում է, և նրա եղբայր Ամմարոնը վարում է գրառումներն այնքան ժամանակ, մինչև որ Սուրբ Հոգին պատվիրում է նրան թաքցնել դրանք:

ԴԱՍ 136

# 4 Նեփի

## Նախաբան

Լեքիի հետնորդների մեջ Հիսուս Քրիստոսի ծառայությունից հետո մարդիկ կիրառում էին Նրա ուսմունքները և վայելում միասնության, բարգավաճման և երջանկության 100 տարի: Նրանք միավորվեցին որպես «Քրիստոսի զավակներ» և այլևս չէին կոչում իրենց նեփիացիներ կամ լամանացիներ (4 Նեփի 1.17): Սակայն, ի վերջո, նրանք դառնում են հպարտ և ավելի ու ավելի ամբարիշտ, և կրկին սկսում են բաժանել իրենց նեփիացիների և լամանացիների: Փրկչի այցից մոտ 300 տարի անց գրեթե բոլոր մարդիկ ամբարիշտ են դառնում:

## Ուսուցանման առաջարկներ

### 4 Նեփի 1.1–18

*Բոլոր մարդիկ դարձի են եկել և խաղաղության ու երջանկության մեջ են ապրում:*

Դասից առաջ, եթե հնարավոր է, պատրաստեք թղթի երկու մաքուր թերթիկ յուրաքանչյուր ուսանողի համար՝ մեկը սպիտակ, մյուսը այլ գույնի (բավական է երկու մասի բաժանել թերթիկները): Սպիտակ թերթիկները դրեք ուսանողների սեղաններին կամ աթոռներին՝ նրանց գալուց առաջ: Գունավոր թերթիկները պահեք դասի ժամանակ օգտագործելու համար: Գրեք գրատախտակին հետևյալ հարցը. *Ի՞նչն է ձեզ իսկապես երջանիկ դարձնում:* Երբ ուսանողները ժամանեն, հրավիրեք նրանց գրել գրատախտակին հարցի իրենց պատասխանները:

Սկսեք դասը, քննարկելով պատասխանները, որոնք նրանք գրել են գրատախտակին: Տվեք ուսանողներին հետևյալ հարցը.

- Ո՞րն է տարբերությունը այն բաների, որոնք մեզ ժամանակավորապես երջանիկ են դարձնում, և այն բաների միջև, որոնք տանում են դեպի մշտական երջանկություն: (Երբ ուսանողները պատասխանեն, կարող եք շեշտել, որ իսկական երջանկությունը չի կարող գտնվել աշխարհիկ բաների մեջ, ինչպիսին են՝ ժողովրդականությունը, հարստությունը և նյութական ունեցվածքը:)

Բացատրեք, որ 4 Նեփին Լեքիի մի քանի սերունդների հիշատակարանն է, ովքեր ապրել են Հիսուս Քրիստոսի այցից հետո: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 4 Նեփի 1.16, փնտրելով, թե ինչպես Մորմոնը նկարագրեց մարդկանց, ովքեր ապրում էին Փրկչի այցից 100 տարի անց: Կարող եք առաջարկել ուսանողներին նշել «անկասկած, ավելի երջանիկ ժողովուրդ չէր կարող լինել» արտահայտությունը: Խնդրեք ուսանողներին գրել *Ավելի երջանիկ ժողովուրդ չէր կարող լինել* արտահայտությունը ձեր բաժանած սպիտակ թերթիկների վերին մասում: Այնուհետև թող նրանք մեծ շրջան նկարեն իրենց թղթերի մեջտեղում:




Խնդրեք ուսանողներին կարդալ 4 Նեփի 1.1–2, և գտնել, թե ինչ արեցին մարդիկ, որն ապահովեց այդ երջանկությունը: Հրավիրեք նրանց գրել իրենց գտածը շրջանի

***Երբ ուսանողները ժամանեն, գրավեք նրանց ուշադրությունը***

Եղանակներ գտեք օգնելու ուսանողներին սկսել մտածել դասի մասին այն պահից, երբ նրանք մտնում են դասասենյակ: Կարող եք գրել հարցը գրատախտակին կամ ցուցադրել մի առարկա կամ նկար: Դա կօգնի ուսանողներին կենտրոնացնել ուշադրությունը և պատրաստել միտքն ու սիրտը սովորելու համար:

ներսում։ (Պատասխանները պետք է ընդգրկեն. Մարդիկ ապաշխարեցին, մկրտվեցին, ստացան Սուրբ Հոգին և «ամբողջ ժողովուրդը դարձի էր եկել դեպի Տերը»)։

- Ի՞նչ է նշանակում դարձի եկած լինել։

Օգնելու համար ուսանողներին հասկանալ, որ դարձի գալն ավելի խոր գաղափար է, քան պարզապես վկայություն ունենալը կամ Եկեղեցու անդամ լինելը, հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ խոսքերը։ Եթե հնարավոր է, բաժանեք ուսանողներին այս խոսքերի կրկնօրինակները և խրախուսեք նրանց գտնել բառեր և արտահայտություններ, որոնք սահմանում են դարձի ընթացքը։

«Ձեր երջանկությունը այժմ և հավիտյան պայմանավորված է ձեր դարձի և փոխակերպման աստիճանով, որ այն բերում է ձեր կյանք։ Ապա ինչպե՞ս դուք կարող եք դառնալ ճշմարիտ դարձի եկած։ Նախագահ [Մերիոն Գ.] Ռոմնին նկարագրում է այն քայլերը, որոնց դուք պետք է հետևեք.

««Եկեղեցու անդամությունը և դարձը, պարտադիր չէ, որ հոմանիշներ լինեն։ Դարձի գալը և վկայություն ունենալը նույնպես նույն բանը չէ։ Վկայությունը գալիս է, երբ Սուրբ Հոգին ջանասեր փնտրողին վկայություն է տալիս ճշմարտության մասին։ Հուզող վկայությունը սնուցում է հավատքը։ Այն առաջ է բերում ապաշխարություն և հնազանդություն պատվիրաններին։ Դարձը ապաշխարության և հնազանդության պտուղ է կամ վարձատրություն»։ [In Conference Report, Guatemala Area Conference 1977, 8–9.]

Պարզ ասած, ճշմարիտ դարձը *հավատքի, ապաշխարության* և *հետևողական հնազանդության պտուղ է։ . . .*

Իրական դարձը բերում է մշտական երջանկության պտուղ, որը կարելի է վայելել անգամ, երբ աշխարհը խառնաշփոթի մեջ է և շատերը երջանիկ չեն» (“Full Conversion Brings Happiness,” *Ensign,* May 2002, 25, 26)։

- Դարձը սահմանող ի՞նչ բառեր և արտահայտություններ դուք լսեցիք։
- Ձեր կարծիքով, ի՞նչ կլիներ, եթե ձեր շուրջը բոլորը դարձի գային դեպի Տերը։

Գրատախտակին գրեք սուրբ գրության հետևյալ հղումը. *4 Նեփի 1.2–3, 5, 7, 10–13, 15–18։* Հրավիրեք մի քանի ուսանողի հերթով բարձրաձայն կարդալ այդ հատվածները։ Խնդրեք դասարանին հետևել, փնտրելով խոսքեր և արտահայտություններ, որոնք նկարագրում են, թե ինչ փորձառություններ ունեցան մարդիկ նրա շնորհիվ, որ բոլորը դարձի էին եկել դեպի Տերը։ Խնդրեք ուսանողներին գրել այդ խոսքերը և արտահայտությունները իրենց թերթիկների վրա շրջանի շուրջ։ (Պատասխանները կարող են ընդգրկել հետևյալը. չկային հակասություններ կամ հակառակություններ, նրանք արդար էին վարվում միմյանց հետ, ամեն բան ընդհանուր էր նրանց համար, շատ հրաշքներ կատարվեցին Հիսուս Քրիստոսի անունով, Տերը բարգավաճեցրեց մարդկանց, նրանք վերականգնեցին քանդված քաղաքները, նրանք ամուսնացան և ընտանիքներ կազմեցին, նրանք բազմացան և ուժեղ դարձան, Աստծո սերը նրանց սրտերում էր, և նրանք երջանիկ և միասնական էին։)

Խնդրեք ուսանողներին գտնել երջանկության մասին մի սկզբունք, որոնք իրենք սովորել են 4 Նեփի 1-ի առաջին կեսից։ Թեև ուսանողները, հնարավոր է, գտնեն մի քանի սկզբունքներ, հետևեք, որ նրանք հնչեցնեն այս մեկը. **երբ մարդիկ միասին աշխատում են դարձի գալ դեպի Տերը, նրանք միավորված են դառնում և ավելի մեծ երջանկություն են զգում։** Կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին։

- Ձեր կարծիքով, ի՞նչ օրհնություններ կստանա մեր դասարանը, եթե մենք բոլորս ապրենք այնպես, ինչպես ապրում էին այդ մարդիկ։ Ձեր կարծիքով, ի՞նչ օրհնություններ կստանա ձեր ընտանիքը։ Ձեր կարծիքով, ի՞նչ օրհնություններ կստանա ձեր ծուխը կամ ճյուղը։

Հրավիրեք ուսանողներին պատմել այն ժամանակի մասին, երբ իրենք եղել են մի խմբում, որը միավորված է եղել արդարակեցությամբ, օրինակ՝ իրենց ընտանիքները, քվորումը կամ դասարանը, կամ ընկերների խումբը։ Կարող եք կիսվել ձեր փորձառությամբ։

- Ինչպե՞ս կարող են արդարակյաց լինելու ձեր ջանքերը ազդել ձեր շուրջը գտնվողների երջանկության և բարեկեցության վրա։ (Հետևեք, որ ուսանողները հասկանան, որ մեր դարձը և արդար արարքները նպաստում են ոչ միայն մեր անձնական երջանկությանը, այլ նաև մյուսների երջանկությանը և

բարեկեցությանը: Երբ ընտանիքի, քվորումի, դասարանի կամ որևէ այլ խմբի անդամները միավորվում են արդարակեցությամբ, նրանք կարողանում են ավելի մեծ երջանկություն վայելել, քան կարող էին անհատապես զգալ:)

- Ինչպե՞ս կարող են մեկ մարդու մեղքերն ազդել ամբողջ խմբի վրա, որն աշխատում է արդարակյաց լինել:

Խրախուսեք ուսանողներին ամրացնել իրենց դարձը դեպի Տերը և օգնել իրենց շուրջը գտնվողներին անել նույնը: Այս առաջադրանքում ուսանողներին օգնելու համար, նրանց խնդրեք կրկին կարդալ այն խոսքերը և արտահայտությունները, որոնք գրել են իրենց թերթիկների վրա: Հրավիրեք նրանց ընտրել մեկ կամ երկու արտահայտություն, որոնք նկարագրում են այն ապրելաձևը, որն իրենք կցանկանային վարել: Նրանց մի քանի րոպե տվեք, որ իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրման օրագրերում գրեն, թե ինչպես կփորձեն ապրել այդ եղանակով: Վկայեք այն երջանկության մասին, որը գալիս է իրական դարձի գալուց և արդարակեցությամբ միավորված լինելուց:

## 4 Նեփի 1.19–49

### *Նեփիացիները ավելի ու ավելի ամբարիշտ էին դառնում, մինչև որ մնացին մի քանի արդարակյաց մարդիկ*

- Ձեր կարծիքով, ի՞նչը կարող է կործանել հասարակությունը, ինչպես 4 Նեփի 1.1–18-ում:

Թող ուսանողները մտքում կարդան 4 Նեփի 1.20, 23–24, ուշադրություն դարձնելով այն ամենին, ինչը սպառնում էր մարդկանց միասնությանը և երջանկությանը: Կարող եք առաջարկել, որ նրանք ընդգծեն իրենց գտած տողերը: Նրանից հետո, երբ նրանք հաղորդեն իրենց գտած տեղեկությունը, գրատախտակին գրեք Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ խոսքերը: (Այս մեջբերումը կարելի է գտնել «Մեր սրտերը հյուսված են միմյանց» ելույթում, *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2008, 70:) Կարող եք առաջարկել, որ ուսանողներն արտագրեն այս մեջբերումն իրենց սուրբ գրությունների մեջ՝ 4 Նեփի 1.24-ի կողքին:

*«Հպարտությունը միասնության մեծ թշնամին է» (Նախագահ Հենրի Բ. Այրինգ):*

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է հպարտությունը միասնության թշնամին:

Մի ուսանողի հրավիրեք բարձրաձայն կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի հետևյալ խոսքերը: Խնդրեք դասարանին լսել, թե ինչպես կարող է հպարտությունը կործանել միասնությունը:

«Իր բուն էությամբ հպարտությունը համեմատության մեղք է, քանզի՝ թեև այն հաճախ սկիզբ է առնում «Տեսեք, թե որքան հրաշալի եմ ես և թե ինչ մեծ բաներ եմ արել» խոսքերով, միշտ ավարտվում է «Հետևաբար, ես ձեզանից ավելի լավն եմ» խոսքերով:

Երբ մեր սրտերը լցված են հպարտությամբ, մենք լուրջ մեղքի մեջ ենք ընկնում, քանզի խախտում ենք երկու մեծ պատվիրանները [տես Մատթեոս ԻԲ.36–40]: Աստծուն երկրպագելու և մեր մերձավորին սիրելու փոխարեն մենք բացահայտում ենք մեր երկրպագության և սիրո իրական առարկան՝ պատկերը, որը տեսնում ենք հայելու մեջ» («Հպարտությունը և Քահանայությունը», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2010, 56):

- Ելնելով Նախագահ Ուխդորֆի խոսքերից, ինչպե՞ս կարող է հպարտությունը կործանել միասնությունը:

Հրավիրեք մի քանի ուսանողների բարձրաձայն կարդալ 4 Նեփի 1.24–35, 38-45: Խնդրեք դասարանին հետևել, փնտրելով մարդկանց մեջ հպարտության հետևանքները: Կարող եք առաջարկել ուսանողներին ընդգծել իրենց գտած տեղեկությունը: (Պատասխանները կարող են ընդգրկել հետևյալը. թանկարժեք հագուստ կրելը, հասարակական դասակարգերի կամ ընկերների բացառիկ խմբերի բաժանվելը, շահադիտական նպատակով եկեղեցիներ կառուցելը, ճշմարիտ եկեղեցին մերժելը, հավատացյալներին հալածելը, գաղտնի խմբակցություններ կազմելը և ամբարշտությունը:)

Մեկ առ մեկ յուրաքանչյուր ուսանողի խնդրեք հաղորդել մի միտք, որը նա գտել է: (Ուսանողները կարող են կրկնել մեկը մյուսի պատասխանները:) Յուրաքանչյուր ուսանողի պատասխանից հետո գրեք նրա պատասխանը գունավոր թղթի վրա, որը

առանձին դրել եք դասարանի առաջ: Տվեք գունավոր թուղթը ուսանողին, փոխանակելով այն նրա սպիտակ թղթի հետ, որի վրա նկարագրվում են մարդկանց երջանկությունը և միասնությունը: Կրկնեք այդ գործընթացը, մինչև բոլոր ուսանողները դասարանում փոխանակեն իրենց սպիտակ թղթերը գունավոր թղթերով:

Խնդրեք ուսանողներին նայել իրենց շուրջը և տեսնել, որ բոլորը դասարանում ունեն գունավոր թղթեր, որոնք ներկայացնում են հպարտությունը: Հրավիրեք նրանց խորհել այն մասին, թե ինչպես պետք է իրենց զգային Քրիստոսի երեք աշակերտները, երբ տեսան հպարտությունը և ամբարշտությունը, որ տարածվել էր այն ժողովրդի մեջ, որը մի ժամանակ շատ երջանիկ և միասնական էր:

- Ի՞նչ ճշմարտություն կարող ենք մենք սովորել այս հատվածներից: (Թեև ուսանողները կարող են տարբեր բառեր օգտագործել, նրանք պետք է առանձնացնեն հետևյալ սկզբունքը. **Հպարտության մեղքը ստեղծում է պառակտում և տանում է դեպի ամբարշտություն:** Կարող եք գրել այս ճշմարտությունը գրատախտակին:)
- Ինչպե՞ս կարող է մի քանի մարդկանց հպարտությունն ազդել ամբողջ խմբի երջանկության վրա:

Ուսանողներին հրավիրեք մտածել, թե հետևյալ օրինակներում ինչպես կարող է մեկ անձի հպարտությունն ազդել մյուսների վրա.

1. Չնայած իր ընտանիքի քաջալերմանը, ավագ եղբայրը որոշում է հետապնդել իր եսասեր շահերը միսիա ծառայելու փոխարեն:
2. Երիտասարդ Կանանց դասարանի կամ Ահարոնյան Քահանայության քվորումի անդամը միտումնավոր խանգարում է, հրաժարվում է մասնակցել դասին և չի հետևում հրահանգներին:
3. Երիտասարդ տղամարդը կամ կինը համառորեն ծաղրում կամ նվաստացնում է իր ընկերների խմբի մեկ այլ անդամի:

Խնդրեք ուսանողներին մտածել այն ժամանակների մասին, երբ ականատես են եղել, թե ինչպես է հպարտությունը վնասել երջանկությանը և միասնությանը:

Հրավիրեք ուսանողներին մտածել իրենց դերերի մասին տարբեր խմբերում, որոնց իրենք պատկանում են, օրինակ՝ ընտանիքներում, քվորումներում կամ դասարաններում, ծխերում կամ ճյուղերում, և սեմինարիայի դասարանում: (Կարող եք նշել այլ խմբեր, որոնց պատկանում են ձեր ուսանողները:) Խնդրեք նրանց խորհել այն մասին, թե արդյոք արել կամ անում են որևէ բան, որն արտահայտում է հպարտություն այդ խմբերում այլ մարդկանց հետ իրենց հարաբերություններում: Խրախուսեք նրանց ապաշխարել և մտածել ճանապարհների մասին, որոնցով իրենք կարող են հաղթահարել հպարտությունը և խթանել միասնություն և արդարակեցություն այդ խմբերում: Նաև խրախուսեք նրանց մտածել, թե ինչ են գրել իրենց ծրագրերի մասին, ապրելու Լեքիի հետնորդների նման, ովքեր դարձի եկան դեպի Տերը:

Վկայեք, որ երբ մենք ձգտում ենք ավելի շատ դարձի գալ դեպի Հիսուս Քրիստոսը և ապրել մյուսների հետ միասնության մեջ, մենք կարող ենք զգալ այն երջանկությունը, որը նկարագրված է 4 Նեփի 1.1–18-ում:

# Մորմոնի Գրքի

## ՆԱԽԱԲԱՆԸ

### Ինչո՞ւ ուսումնասիրել այս գիրքը:

Ուսումնասիրելով այս գիրքը՝ ուսանողները կսովորեն արժեքավոր դասեր Մորմոնից՝ Հիսուս Քրիստոսի աշակերտից, որը հավատարիմ է ապրել, թեև իր կյանքը շրջապատված է եղել «ամբարշտության և պղծությունների մի անընդմեջ տեսարանով» (Մորմոն 2.18): Ուսանողները նաև օգուտ կքաղեն, ուսումնասիրելով Մորոնիի խոսքերը, որը վկայել է վերջին օրերի ընթերցողներին, որ «Հիսուս Քրիստոսը ձեզ ցույց է տվել ինձ, և ես գիտեմ ձեր արարքները» (Մորմոն 8.35): Երբ ուսանողները կարդան կործանման մասին, որը տեղի ունեցավ Նեփիացիների ամբարշտության հետևանքով, նրանք կսովորեն պատվիրաններով և Հիսուս Քրիստոսի ավետարանի ուխտերով ապրելու կարևորության մասին:

### Ո՞վ է գրել այս գիրքը:

Մորմոնը գրել է այս գրքի առաջին յոթ գլուխները որպես համառոտ պատմություն իր ժամանակներում Նեփիացիների և Լամանացիների ամբարշտության և նրանց պատերազմների մասին: Նա նաև տվել է իր կյանքի իրադարձությունների ամբողջական պատմությունը Նեփիի մեծ թիթեղների վրա (տես Մորմոն 2.18, 5.9): Երբ Մորմոնը մոտ 10 տարեկան էր, հիշատակարան վարող Ամմարոնը, տարիքն առնելով, հանձնարարեց նրան ստանձնել սուրբ գրառումների պատասխանատվությունը: Նա պետք է գրի առներ այն բաները, ինչ կտեսներ մարդկանց մասին (տես Մորմոն 1.4): 15 տարեկանում Տերն այցելեց Մորմոնին, և նա «ճաշակեց ու իմացավ Հիսուսի բարության մասին» (Մորմոն 1.15): Նույն տարում Նեփիացիները նշանակեցին Մորմոնին՝ ղեկավարելու իրենց բանակները (տես Մորմոն 2.1): Հնազանդվելով Ամմարոնի խորհրդին՝ նա հետագայում ձեռք է բերում Նեփիի մեծ թիթեղները և սկսում վարել իր հիշատակարանը: Նա նաև կրճատում է Նեփիի մեծ թիթեղները, որոնք ներառում էին մարգարեների և հիշատակարանը գրողների գրառումները Լեքիից մինչև Ամմարոնը, և ներառեց Նեփիի փոքր թիթեղները այդ կրճատման մեջ: Իր կյանքի ավարտին մոտ Մորմոնը թաղեց բոլոր գրառումները Կումորա Բլրի վրա, բացի մի քանի թիթեղները, որոնք նա տվեց իր որդի Մորոնիին (տես Մորմոն 6.6): Այնուհետև նա առաջնորդեց Նեփիացիներին իրենց վերջին մեծ ճակատամարտում Լամանացիների դեմ: Մահանալուց առաջ Մորմոնը պատվիրեց Մորոնիին ավարտել իր հիշատակարանը: Մորոնին ավելացրեց իր խոսքերը, որոնք կազմեցին այս գրքի 8-9 գլուխները:

### Ու՞մ համար է գրված այս գիրքը և ինչու՞:

Մորմոնը գրում էր վերջին օրերի հեթանոսներին և Իսրայելի տան անդամներին, ցանկանալով «համոզել աշխարհի բոլոր ծայրերին՝ ապաշխարել և պատրաստվել կանգնելու Քրիստոսի ատյանի առջև» (Մորմոն 3.22): Երբ Մորոնին ավարտեց իր հոր գիրքը, նա ուղղակիորեն դիմեց նրանց, ովքեր կկարդային իր խոսքերը: Նա նախազգուշացրեց նրանց իրենց մեղքերի հետևանքների մասին և հրավիրեց գալ «Տիրոջ մոտ [իրենց] ամբողջ սրտով» (Մորմոն 9.27):

### Ե՞րբ և որտե՞ղ է այն գրվել:

Մորմոնը, հավանաբար, գրել է այս գրքի 1–7 գլուխները մ.թ. 345 և մ.թ. 401 տարիների միջև (տես Մորմոն 2.15–17, 8.5–6): Նա ավարտեց իր գրառումները Կումորայում Նեփիացիների և Լամանացիների վերջին ճակատամարտից հետո՝ մ.թ. 385 թվականին (տես Մորմոն 6.10–15; 7.1): Մորոնին, հավանաբար, գրել է 8-9 գլուխների բովանդակությունը մ.թ. 401 և մ.թ. 421 տարիների միջև, երբ մտածում էր իր կյանքի անվտանգության մասին (տես Մորմոն 8.4–6, Մորոնի 1.1–3):

### Որո՞նք են այս գրքին բնորոշ որոշ առանձնահատկությունները:

Այս գիրքը նկարագրում է Նեփիի, Ալմայի, Սամուել Լամանացու և Հիսուս Քրիստոսի մարգարեությունները Նեփիացիների կործանման մասին (տես 1 Նեփի 12.19, Ալմա 45.9–14, Հելաման 13.8–10, 3 Նեփի 27.32): Մորմոնը իր գրառումների մի մասը կոչում է «հիշատակարանս իմ ժողովրդի կործանման մասին» (Մորմոն 6.1): Նա ցույց տվեց, որ Նեփիացիների անկումը իրենց ամբարշտության հետևանքն էր (տես Մորմոն 4.12, 6.15–18):

### Համառոտ շարադրանք

**Մորմոն 1** Ամմարոնը հանձնարարում է Մորմոնին վարել իր օրերի ժողովրդի հիշատակարանը: Նեփիացիները հաղթում են Լամանացիներին: Ամբարշտությունը գերակշռում է երկրում, երեք Նեփիացի աշակերտներ դադարում են իրենց ծառայությունը ժողովրդի մեջ և Հոգու պարգևները հիմնականում վերցվում են երկրի վրայից: Ինչևէ, «Տերն այցելեց» Մորմոնին:

**Մորմոն 2–3** Նեփիացիները նշանակում են Մորմոնին իրենց բանակների առաջնորդ: Ավելի քան 30 տարի նա ղեկավարում է նրանց Լամանացիների դեմ պատերազմներում: Չնայած մեծ կործանմանը և տառապանքներին, Նեփիացիները հրաժարվում են ապաշխարել: Մորմոնը հանում է Նեփիի թիթեղները Սիմ բլրից և սկսում իր հիշատակարանը: Մի քանի հաղթանակներից հետո մարդիկ սկսում են մեծամտանալ և պարծենալ իրենց ուժով և Լամանացիների դեմ վրեժխնդրության երդումներ են տալիս: Մորմոնը հրաժարվում է շարունակել առաջնորդել նրանց: Նա գրում է համոզելու համար վերջին օրերում բոլոր մարդկանց պատրաստվել կանգնելու Քրիստոսի դատաստանի առաջ:

**Մորմոն 4** Առանց Մորմոնի առաջնորդության Նեփիացիների զորքերը շարունակում են ճակատամարտել Լամանացիների դեմ: Երկու կողմերը հազարավոր զոհեր են տալիս: Լեքիի հետնորդները դառնում են իրենց պատմության մեջ առավել ամբարիշտ ժողովուրդը, և Լամանացիները սկսում են ոչնչացնել

Նեփիացիներին: Մորմոնը ստանձնում է Նեփիացիների բոլոր գրառումների պատասխանատվությունը և տեղափոխում դրանք Սիմ կոչված բլրից Կումորա բլուր:

**Մորմոն 5–7** Մորմոնը կրկին իր վրա է վերցնում Նեփիացի զորքերի հրամանատարությունը, թեև գիտի, որ նրանք կոչնչացվեն: Նա մարգարեանում է Մորմոնի Գրքի առաջ գալու մասին: Նա հավաքում է Նեփիացիներին Կումորայում՝ Լամանացիների դեմ վերջին ճակատամարտի: Ճակատամարտից հետո նա ողբում է իր ժողովրդի կործանման համար: Մորմոնը գրում է՝ համոզելու Լամանացիների հետնորդներին հավատալ Հիսուս Քրիստոսին և մկրտվել:

**Մորմոն 8–9** Մորմոնի մահից հետո Մորոնին շարունակում է իր հիշատակարանը: Նա մարգարեանում է այն մասին, որ Մորմոնի Գիրքը առաջ է գալու Աստծո զորությամբ անհավատության և ամբարշտության օրը: Նա վկայում է Հիսուս Քրիստոսի մասին և ուսուցանում, որ հրաշքները և նշանները ուղեկցում են Նրա հանդեպ հավատքին: Նա հորդորում է նրանց, ովքեր կկարդան իր խոսքերը, գալ դեպի Տերը և փրկվել:

ԴԱՍ 137

# Մորմոն 1–2

## Նախաբան

Թեև Մորմոնը մեծացել էր մեծ ամբարշտության ժամանակներում, նա ընտրել էր հավատքով ապրել: Իր հավատարմության շնորհիվ նրան ասվեց, որ ավելի ուշ իր կյանքի ընթացքում իրեն էր վստահվելու ժողովրդի սուրբ հիշատակարանը: 15 տարեկան հասակում «Տերն այցելեց» նրան (Մորմոն 1.15): Նա ցանկացավ օգնել Նեփիացիներին ապաշխարել, բայց նրանց կամավոր ապստամբության պատճառով Տերն արգելեց քարոզել նրանց: Այդ երիտասարդ տարիքում նա նշանակվեց առաջնորդելու Նեփիացիների բանակը: Քանի որ շատ Նեփիացիներ կորցրել էին Սուրբ Հոգին և Աստծո այլ պարգևներ, Լամանացիների դեմ պատերազմում նրանք մնացել էին միայն իրենց ուժերի հույսին:

## Ուսուցանման առաջարկներ

### Մորմոն 1.1–5

*Մորմոնն իմանում է, որ մի օր իրեն էր վստահվելու Նեփիացիների սուրբ հիշատակարանը*

Գրեք գրատախտակին հետևյալ հարցը մինչև դասը սկսելը, որպեսզի ուսանողները սկսեն մտածել այդ մասին, երբ մտնեն դասարան. *Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ մարդիկ ձեզ մորմոն են կոչում:*

Դասի սկզբում հրավիրեք աշակերտներին պատասխանել գրատախտակին գրված հարցերին: Հարցը քննարկելուց հետո խնդրեք մի ուսանողի կարդալ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հետևյալ խոսքերը.

«Թեև ես երբեմն ափսոսում եմ, որ մարդիկ չեն կոչում այս եկեղեցին իր պատշաճ անվամբ, ես ուրախ եմ, որ մականունը, որն օգտագործվում է, մեծապես պատվավոր անուն է դարձվել մի նշանավոր տղամարդու և գրքի շնորհիվ, որն անզուգական վկայություն է պարգևում աշխարհի Քավչի մասին:

Ցանկացած ոք, ով ծանոթանում է Մորմոն անունով տղամարդու հետ, նրա խոսքերը կարդալու և դրանց շուրջ մտորելու միջոցով, ցանկացած ոք, ով կարդում է պատմության այս արժեքավոր հավաքածուն, որը կազմվել և պահպանվել է հիմնականում նրա կողմից, իմանում է, որ *Մորմոնը* անարգանքի խոսք չէ, այլ ներկայացնում է մեծ բարիք, որը Աստծուց է» (“*Mormon* Should Mean ‘More Good,’” *Ensign,* Nov. 1990, 52–53):

Օգնելու համար ուսանողներին հասկանալ Մորմոն 1–2 համատեքստը, բացատրեք, որ Նեփիացիներին Փրկչի հայտնվելուց 320 տարի անց, գրեթե բոլորը երկրում ապրում էին ամբարշտության մեջ: Այդ ժամանակ Ամմարոնը՝ մի արդարակյաց տղամարդ, որը ծառայում էր որպես գրառող, «պարտադրվելով Սուրբ Հոգու կողմից, թաքցրեց հիշատակարանները, որոնք սրբազան էին» (տես 4 Նեփի 1.47–49): Մոտավորապես նույն ժամանակ Ամմարոնն այցելեց Մորմոն անունով 10 տարեկան տղայի և ուսուցանեց նրան հիշատակարանը վարելու իր ապագա պարտականությունները:

Ուսանողներին խնդրեք մտքում կարդալ Մորմոն 1.2, գտնելով խոսքերը և արտահայտությունները, որոնք Ամմարոնը օգտագործում էր Մորմոնին նկարագրելու համար: Խնդրեք նրանց հաղորդել իրենց գտածի մասին: Գրեք *Մորմոն* անունը գրատախտակին և նրանց պատասխանները դրա տակ: Կարող եք բացատրել, որ *լրջամիտ* բառը նշանակում է հանգիստ, լուրջ և մտախոհ:

- Ձեր կարծիքով, ինչի՞ վերաբերյալ մենք պետք է լրջամիտ լինենք: (Պատասխանները կարող են ներառել՝ հաղորդությունը սպասավորելը և ընդունելը, սուրբ գրություններն ուսումնասիրելը, մաքրաբարոյությունը և Փրկչի մասին խոսելը և վկայելը:) Ինչո՞ւ մենք պետք է լրջամիտ լինենք այս բաների վերաբերյալ:

Բացատրեք, որ կարելի է լրջամիտ լինել, և միևնույն ժամանակ զվարճանալ և ծիծաղել: Ինչևէ, լրջամիտ անձը հասկանում է, թե երբ պետք է թեթևասիրտ լինի, իսկ երբ՝ ավելի լուրջ:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «արագ ընկալելը»:

Որպես այդ քննարկման մաս հրավիրեք մի ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ բացատրությունը.

«Երբ մենք արագ ենք ընկալում, մենք անհապաղ տեսնում կամ նկատում ենք և հնազանդվում: Այս հիմնարար տարրերից երկուսն էլ՝ տեսնելը և հնազանդվելը, էական են արագ ընկալելու համար: Եվ Մորմոն մարգարեն այդ պարգևի գործնական կիրառման տպավորիչ օրինակ է հանդիսանում: . . .

. . . Արագ ընկալելու հոգևոր պարգևը այնքան կենսական է մեզ համար այն աշխարհում, որում մենք այժմ ապրում ենք և դեռ կապրենք» (“Quick to Observe,” *Ensign,* Dec. 2006, 34):

- Ինչպե՞ս կարող է Տիրոջ խորհուրդն արագ տեսնելու և դրան արագ հնազանդվելու ունակությունը օգնել մեզ:

Խնդրեք ուսանողներին գրել իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում մի բանի մասին, որին պետք է ավելի լուրջ վերաբերվեն. մի բան, որի հանդեպ պետք է ավելի լրջամիտ լինեն: Խնդրեք նաև թվարկել Տիրոջ ցուցումները, որոնց պետք է ավելի պատրաստակամ հնազանդվեն: Խրախուսեք նրանց ձգտել ավելի լրջամիտ և արագ ընկալող լինել:

Մի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ Մորմոն 1.3–5, իսկ դասարանին խնդրեք գտնել Մորմոնին տված Ամմարոնի հրահանգները:

- Ի՞նչ խնդրեց Ամմարոնը, որ Մորմոնն աներ:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ Մորմոնը պետք է լիներ լրջամիտ և արագ ընկալող՝ այդ պատասխանատվությունները կատարելու համար:

## Մորմոն 1.6–19

### *Մարդկանց ինքնակամ ապստամբության պատճառով Տերն արգելում է Մորմոնին քարոզել նրանց*

Հարցրեք ուսանողներին, թե արդյոք երբևէ կորցրել են կամ իրենցից վերցրել են մի բան, որը թանկ էր իրենց համար: Մի քանի ուսանողի խնդրեք կիսվել իրենց փորձառություններով:

Ամփոփեք Մորմոն 1.6–12, բացատրելով, որ թեև Մորմոնը դեռ պատանի էր, նա ականատես եղավ Նեփիացիների և Լամանացիների միջև մի շարք ճակատամարտերի: Նա նաև տեսավ, թե ինչպես տարածվեց ամբարշտությունը բոլոր մարդկանց մեջ ողջ երկրով մեկ:

Բացատրեք, որ ամբարիշտ դառնալու հետևանքով Նեփիացիները կորցրեցին Տիրոջ թանկարժեք պարգևները: Դասարանը բաժանեք երկու մասի: Մի մասին հանձնարարեք մտքում կարդալ Մորմոն 1.13–14, 18, փնտրելով պարգևները, որոնք Տերը սկսեց ետ վերցնել Նեփիացիներից: Մյուս կեսին խնդրեք կարդալ Մորմոն 1.14, 16–17, 19, փնտրելով Նեփիացիներից այդ պարգևները ետ վերցնելու Տիրոջ պատճառները: Հրավիրեք յուրաքանչյուր խմբի ուսանողներին կիսվել իրենց գտածով դասարանի հետ:

- Համաձայն Մորմոն 1.13–14-ի, ի՞նչ է պատահում, երբ մարդիկ ապստամբում են և շրջվում Տիրոջից: (Ուսանողները կարող են տալ տարբեր պատասխաններ: Կարող եք ամփոփել նրանց պատասխանները, գրելով հետևյալ ճշմարտությունը գրատախտակին. **Երբ մարդիկ ամբարիշտ են և անհավատ, նրանք կորցնում են հոգևոր պարգևները, որոնք ստացել են Տիրոջից և չեն կարողանում ստանալ Սուրբ Հոգու ազդեցությունը:**)

Շեշտեք, որ Նեփիացիների ապստամբությունը ծայրահեղություն էր: Ինչևէ, այս սկզբունքը վերաբերում է նաև մեզ անհատապես, երբ մենք չենք հնազանդվում Աստծո պատվիրաններին:

- Մորմոն 1.13–14, 18-ում նշված ո՞ր պարգևները առավել դժվար կլինի ձեզ կորցնել:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Մորմոն 1.15։ Խնդրեք դասարանին հետևել, փնտրելով Մորմոնի փորձառությունները, մինչ շատ Նեփիացիներ կորցնում էին Աստծո պարգևները և Սուրբ Հոգու ազդեցությունը։

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ Մորմոնը կարողացավ հոգևոր փորձառություններ ունենալ, թեև գտնվում էր մեծ ամբարշտության միջավայրում։

## Մորմոն 2.1–15

### *Մորմոնն առաջնորդում է Նեփիացիների զորքերը և վշտանում նրանց ամբարշտության համար*

Մի ուսանողի, ով 15 տարեկան է (կամ մոտ է 15-ի), խնդրեք բարձրաձայն կարդալ Մորմոն 2.1–2։ Հրավիրեք դասարանին գտնել, թե ինչ պատասխանատվություն տրվեց Մորմոնին, երբ նա 15 տարեկան էր (իր «տասնվեցերորդ տարում»)։ Խնդրեք ուսանողներին պատկերացնել, թե ինչ է նշանակում 15-ամյա տղայի համար առաջնորդել բանակ։

- Մորմոն 2.1-ում նշված հատկանիշները ինչպե՞ս օգնեցին Մորմոնին որպես բանակի հրամանատարի։

Ամփոփեք Մորմոն 2.3–9, պատմելով ուսանողներին, որ Լամանացիները գրոհեցին Նեփիացիների զորքերը այնպիսի ուժով, որ Նեփիացիները վախեցան և նահանջեցին։ Լամանացիները քշում էին նրանց տեղից տեղ, մինչև որ Նեփիացիները հավաքվեցին մի վայրում։ Ի վերջո, Մորմոնի զորքերը հակահարված տվեցին Լամանացիներին և ստիպեցին նրանց փախչել։

Ուսանողներին խնդրեք մտքում կարդալ Մորմոն 2.10–15՝գտնելով Նեփիացիների հոգևոր վիճակի նկարագրությունն այդ մարտերից հետո։

- Ինչո՞ւ էին Նեփիացիները վշտացած։ (Տես Մորմոն 2.10–13։ Նրանք վշտացած էին, որովհետև չէին կարողանում պահել իրենց ունեցվածքը։ Այլ խոսքով, նրանք վշտացած էին միայն իրենց մեղքերի հետևանքների համար, ոչ թե զղջում էին իրենց արածների համար։)
- Համաձայն Մորմոն 2.13–14-ի, ինչպե՞ս Մորմոնն իմացավ, որ ժողովրդի վիշտը նրանց անկեղծ ապաշխարության ցուցանիշը չէր։

Օգնելու համար ուսանողներին տեսնել «վշտանալ ի ապաշխարություն» և «վշտանալն էր նզովվածների» միջև տարբերությունները, գրատախտակին գրեք հետևյալը.

*Նրանք, ովքեր վշտանում են ի ապաշխարություն. . .*

*Նրանք, ովքեր վշտանում են մեղքի հետևանքների պատճառով. . .*

Խնդրեք ուսանողներին վերընթերցել Մորմոն 2.12–15՝ գտնելով մարդկանց այս երկու խմբերի հատկանիշները։ Խնդրեք նրանց հաղորդել իրենց գտածի մասին։ Նրանց պատասխանները պետք է արտահայտեն հետևյալ ճշմարտությունները.

**Նրանք, ովքեր վշտանում են ի ապաշխարություն, ճանաչում են Աստծո բարությունը և գալիս են դեպի Քրիստոսը խոնարհ սրտով։**

**Նրանք, ովքեր վշտանում են միայն մեղքի հետևանքների պատճառով, շարունակում են ապստամբել Աստծո դեմ։**

Բացատրեք, որ Մորմոնն օգտագործում է «վշտանալ նզովվածների» արտահայտությունը (Մորմոն 2.13), որպեսզի նկարագրի նրանց վիշտը, ովքեր տառապում են իրենց արարքների հետևանքների համար, սակայն պատրաստ չեն ապաշխարելու։ Այդ մոտեցումը չի տանի դեպի ներում և խաղաղություն։ Այն տանում է դեպի անեծք, ինչը նշանակում է, որ անձը դադարում է դեպի հավերժական կյանք իր առաջընթացը։

Հրավիրեք ուսանողներին խորհել այն մասին, թե ինչպես են իրենք արձագանքում, երբ հասկանում են, որ մեղք են գործել։ Խրախուսեք նրանց գալ դեպի Փրկիչը խոնարհ սրտով, որպեսզի կարողանան ներվել, խաղաղություն զգալ և հաշտվել Աստծո հետ։

## Մորմոն 2.16–29

*Մորմոնը ձեռք է բերում թիթեղները և գրում իր ժողովրդի ամբարշտության պատմությունը*

Ամփոփեք Մորմոն 2.16–18, բացատրելով, որ մինչ Լամանացիների հետ մարտերը շարունակվում էին, Մորմոնը հայտնվեց Սիմ անունով բլրի մոտ, որտեղ Ամմարոնը թաքցրել էր Նեփիացիների հիշատակարանը: Նա հանեց Նեփիի թիթեղները և սկսեց գրի առնել այն, ինչ տեսնում էր մարդկանց մեջ երեխա հասակից:

Մի ուսանողի հրավիրեք բարձրաձայն կարդալ Մորմոն 2.18–19: Խնդրեք դասարանին հետևել, փնտրելով իր օրերի մարդկանց հոգևոր վիճակի նկարագրությունը: Խնդրեք նրանց գտնել հույսի նրա անձնական արտահայտությունը:

- Ինչպե՞ս էր Մորմոնը նկարագրում իր օրերի հոգևոր պայմանները: («Ամբարշտության և պղծությունների մի անընդմեջ տեսարան»:)
- Մորմոնի մասին ձեր սովորածից ինչո՞ւ կարող եք ասել, որ նա վստահ էր, որ «կբարձրացվեր վերջին օրը»: (Կարող եք օգնել ուսանողներին հասկանալ, որ երբ Մորմոնը խոսում է «վերջին օրը բարձրացվելու մասին», նա խոսում է հարություն առնելու և Աստծո ներկայություն բերվելու և Նրա հետ հավերժ մնալու մասին:)
- Ինչպե՞ս է արդարակեցության Մորմոնի օրինակը օգնում ձեզ: (Ուսանողները կարող են տարբեր պատասխաններ տալ: Նրանց պատասխանները պետք է արտահայտեն հետևյալ սկզբունքները. **Մենք կարող ենք ընտրել ապրել արդարակյաց կյանքով, անգամ ամբարիշտ հասարակության մեջ:** Կարող եք հրավիրել մի ուսանողի գրել այդ ճշմարտությունը գրատախտակին:)
- Ե՞րբ եք դուք տեսել, որ ընկերները կամ ընտանիքի անդամները հաստատուն են եղել Աստծո կամքին հնազանդվելիս, անգամ երբ իրենց շուրջը գտնվողները այդպես չեն վարվել:

Խրախուսեք ուսանողներին մտածել իրենց կյանքի մի որոշակի բնագավառի մասին, որում կարող են ավելին անել, որպեսզի ներկայացնեն ճշմարտությունը: Խնդրեք նրանց իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրել, թե ինչպես կարձագանքեն հաջորդ անգամ, երբ խնդրի առաջ կանգնեն այդ բնագավառում: Վկայեք, որ Մորմոնի նման, մենք կարող ենք ընտրել արդարակյաց կյանքով ապրել և որ Տերը կօգնի մեզ հաստատուն կանգնել ճշմարտության համար, անգամ երբ մյուսները մեր շուրջը այդպես չեն վարվում:

ԴԱՍ 138

# Մորմոն 3-4

## Նախաբան

Լամանացիներից իրենց հողերը ետ վերցնելուց հետո Նեփիացիները կրկին պատրաստվեցին ճակատամարտի: Մորմոնը խնդրում էր Նեփիացիներին ապաշխարել: Փոխարենը, նրանք պարծեցան իրենց սեփական ուժերով և երդվեցին վրեժխնդիր լինել իրենց ընկած եղբայրներից: Որովհետև Տերն արգելել էր Իր ժողովրդին վրեժխնդրություն փնտրել, Մորմոնը հրաժարվեց առաջնորդել Նեփիացիների զորքերը, և նրանք պարտվեցին: Նեփիացիները շարունակում էին մնալ ամբարշտության մեջ, և Աստված թափեց իր դատաստանները նրանց վրա, և Լամանացիները սկսեցին բնաջնջել նրանց երկրի երեսից:

## Ուսուցանման առաջարկներ

### Մորմոն 3.1-8

*Տերը խնայում է Նեփիացիներին պատերազմում, որպեսզի նրանց ապաշխարելու հնարավորություն տա, սակայն նրանք կարծրացնում են իրենց սրտերը*

Դասից առաջ գրատախտակին գրեք հետևյալ հարցը. *Դուք երբևէ զգացե՞լ եք, որ Տերը փորձում է գրավել ձեր ուշադրությունը և խրախուսել ձեզ ինչ-որ բան փոխել ձեր կյանքում:*

Սկսեք, խնդրելով ուսանողներին կիսվել գրատախտակին գրված հարցի իրենց պատասխանով: (Հետևեք, որ նրանք իրենց պարտավորված չզգան կիսվելու անձնական կամ մասնավոր պատմություններով:) Դուք նույնպես կարող եք կիսվել ձեր փորձառությամբ:

Բացատրեք, որ Տերը ցանկանում էր գրավել Նեփիացիների ուշադրությունը, որպեսզի նրանք փոխեին իրենց ամբարիշտ ուղիները: Սակայն Նեփիացիները կարծրացրել էին իրենց սրտերը և չէին հասկանում, որ Տերն օրհնում էր իրենց Լամանացիների հետ ճակատամարտում: Այն բանից հետո, երբ Նեփիացիները դաշինք կնքեցին Լամանացիների և Գադիանթոնի ավազակների հետ (տես Մորմոն 2.28), Տերը պաշտպանեց նրանց, թույլ տալով ապրել 10 տարի առանց տարաձայնությունների: Այդ տարիների ընթացքում Մորմոնն օգնեց Նեփիացիներին պատրաստվել ապագա հարձակումների համար (տես Մորմոն 3.1):

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մորմոն 3.2–3 հատվածները: Խնդրեք դասարանին հետևել, փնտրելով, թե ինչ էր Տերը ցանկանում, որ Նեփիացիները անեին խաղաղության ժամանակ, որը Նա տվել էր նրանց:

- Ի՞նչ ուղերձ պատվիրեց Տերը, որ Մորմոնը տար Նեփիացիներին: Հասկացա՞ն Նեփիացիներն այդ ուղերձը: Ինչպե՞ս Նեփիացիներն արձագանքեցին:
- Համաձայն Մորմոն 3.3-ի, ինչո՞ւ Տերը փրկեց Նեփիացիներին վերջին ճակատամարտերի ժամանակ, չնայած նրանց ամբարշտությանը:
- Ի՞նչ ճշմարտություն դուք կարող եք առանձնացնել Նեփիացիների հետ Տիրոջ գործերի մասին, որը գրված է Մորմոն 3.2–3: (Ուսանողները կարող են տարբեր պատասխաններ տալ: Ամփոփեք նրանց պատասխանները, գրելով հետևյալ ճշմարտությունը գրատախտակին. ***Տերը մեզ բավարար քանակով հնարավորություններ է տալիս մեր մեղքերից ապաշխարելու համար:*** Կարող եք առաջարկել, որ ուսանողները գրեն այս ճշմարտությունը իրենց սուրբ գրքերում:)

Ամփոփեք Մորմոն 3.4–8, բացատրելով, որ Տերը կրկնակի անգամ ավել պաշտպանեց Նեփիացիներին պատերազմում, չնայած նրանց ամբարշտությանը և դեպի Իրեն շրջվել չկամենալուն:

- Նեփիացներին պաշտպանելու Տիրոջ ցանկությունը ի՞նչ է ձեզ ուսուցանում Նրա բնավորության մասին: (Պատասխանները կարող են ներառել Տիրոջ գթասիրտ և համբերատար լինելը:)

Շեշտեք, որ Տերը մեզ բոլորիս տվել է «ապաշխարության հնարավորություն» (Մորմոն 3.3)։ Այնուհետև խնդրեք ուսանողներին մտքում խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Դուք պատրա՞ստ եք եղել ապաշխարել և կատարել այն փոփոխությունները, որոնք Աստված ցանկացել է, որ կատարեք։ Կա՞ն արդյոք փոփոխություններ, որոնք դուք կարող եք կատարել այժմ, դառնալու համար այն անձը, որն Աստված ցանկանում է, որ դառնաք։

Վկայեք ապաշխարելու հնարավորություններ մեզ տալու հարցում Աստծո բարության և համբերատարության մասին։ Խնդրեք ուսանողներին փնտրել հնարավորություններ և հրավերներ՝ փոփոխություններ կատարելու իրենց կյանքում, և խրախուսեք նրանց արագ կատարել դրանք։

***Խորհելը***

Օգնելու համար ուսանողներին ավելի խորը հասկանալ իրենց սովորածը, կարող եք նրանց ժամանակ տալ դասարանում խորհելու համար։ Դուք կարող եք խնդրել ուսանողներին մտքում խորհել, թե ինչպես է տվյալ սկզբունքն ազդել իրենց կյանքի վրա կամ ինչպես իրենք կարող են կիրառել այն։ Երբ ուսանողները սովորեն խորհել սուրբ գրությունների շուրջ դասարանում կամ իրենց անձնական ուսումնասիրության ժամանակ, Սուրբ Հոգին հաճախ կհայտնի նրանց ճշմարտությունը։

## Մորմոն 3.9–22

### *Նեփիացիների ամբարշտությունն աճում է, և Մորմոնը հրաժարվում է առաջնորդել նրանց բանակը*

Բացատրեք, որ Նեփիացիները չարձագանքեցին ապաշխարելու Տիրոջ հրավերին, այլ կարծրացրեցին իրենց սրտերը։ Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մորմոն 3.9–10 հատվածները։ Խնդրեք դասարանին հետևել, փնտրելով, թե ինչպես Նեփիացիները վարվեցին Լամանացիների հանդեպ իրենց բազմակի հաղթանակներից հետո։ (Կարող եք ասել ուսանողներին, որ *վրեժխնդիր* բառը հատված 9-ում նշանակում է վրեժ փնտրել։)

- Ինչպե՞ս Նեփիացիները վարվեցին Լամանացիների հանդեպ իրենց բազմակի հաղթանակներից հետո։
- Ինչո՞ւ էր սխալ նեփիացիների համար պարծենալը իրենց սեփական ուժով։ Ի՞նչ է այդ պարծենկոտությունը ցույց տալիս Աստծո հետ նրանց հարաբերությունների մասին։

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մորմոն 3.11–13 հատվածները։ Խնդրեք դասարանին գտնել Մորմոնի պատասխանը, երբ նեփիացիները երդվեցին վրեժ լուծել։

- Ի՞նչ արեց Մորմոնը, երբ նեփիացիները ցանկություն հայտնեցին վրեժ լուծել լամանացիներից։
- Դուք երբևէ ցանկացե՞լ եք վրեժ լուծել որևէ մեկից։ Ձեր կարծիքով, ինչո՞ւ է վրեժխնդրությունը բնական արձագանք հանդիսանում շատ մարդկանց համար։
- Մորմոնն առաջնորդում էր նեփիացիների բանակները ավելի քան 30 տարի, չնայած նրանց ամբարշտությանը։ Բանակն առաջնորդելու Մորմոնի մերժումը ի՞նչ է ուսուցանում վրեժխնդրության լրջության մասին։

Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ Մորմոն 3.14–16, և խրախուսեք դասարանին գտնել, թե ինչ էր Տերն ուսուցանում Մորմոնին վրեժխնդրության մասին։

- Ի՞նչ է Տերը զգում վրեժխնդրության մասին։ (Ուսանողների պատասխանները կարող են տարբեր լինել։ Ամփոփեք նրանց պատասխանները, գրելով հետևյալ ճշմարտությունը գրատախտակին. ***Տերն արգելում է մեզ վրեժ լուծել։***)

Օգնելու համար ուսանողներին ավելի լավ հասկանալ Տիրոջ խորհուրդը հատվածներ 14–16-ում, խնդրեք ուսանողներին իրենց սեփական խոսքերով վերաձևակերպել Մորմոն 3.15-ի առաջին մասը («Վրեժն իմն է, և ես կհատուցեմ») ։

- Ինչո՞ւ է կարևոր չփնտրել վրեժ։ Ինչպե՞ս մենք կարող ենք հաղթահարել վրեժխնդրության մեր ցանկությունները։

Օգնելու համար ուսանողներին սովորել, թե ինչպես հաղթահարել վրեժխնդրության զգացումները, խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ հետևյալ խորհուրդը՝ Առաջին Նախագահությունից Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստից։ Հնարավորության դեպքում յուրաքանչյուր ուսանողի տվեք մեջբերման մեկական օրինակ։

«Մենք պետք է ճանաչենք և զանազանենք բարկության զգացումները։ Դա խոնարհություն է պահանջում, սակայն եթե մենք ծնկի իջնենք և խնդրենք Երկնային Հորը ներման զգացում ունենալու համար, Նա կօգնի մեզ։ Տերը պահանջում է մեզանից «ներել բոլոր մարդկանց» [ՎԵՈՒ 64.10] մեր իսկ օգտի համար, քանի որ «ատելությունը կասեցնում է հոգևոր աճը» [Orson F. Whitney, *Gospel Themes* (1914), 144]։ Երբ մենք

ազատվենք ատելության և նենգության զգացումից, միայն այդ ժամանակ Տերը կարող է հանգստություն տալ մեր սրտերին։ . . .

. . . Երբ դժբախտություն է պատահում, մենք պետք է ոչ թե արձագանքենք անձնական վրեժխնդրությամբ, այլ թույլ տանք, որ արդարությունը գործի, և մոռանանք դրա մասին։ Հեշտ չէ մոռանալ և դատարկել մեր սրտերը քայքայիչ ատելությունից։ Փրկիչը բոլորիս թանկարժեք խաղաղություն է առաջարկել Իր Քավության շնորհիվ, սակայն այն կարելի է ձեռք բերել միայն, եթե դուրս գցենք բարկության, ատելության և վրեժխնդրության բացասական զգացումները» («Ներման ապաքինող ուժը», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2007, 69)։

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մորմոն 3.17, 20–22, իսկ դասարանին խնդրեք գտնել, թե ինչ էր ցանկանում Մորմոնը, որ մենք իմանայինք։ Կարող եք խնդրել ուսանողներին նշել Մորմոնի խորհուրդը՝ «ապաշխարել և պատրաստվել՝ կանգնելու Քրիստոսի ատյանի առջև» (Մորմոն 3.22)։

## Մորմոն 4

### *Լամանացիները սկսում են բնաջնջել նեփիացիներին երկրի երեսից*

Խնդրեք ուսանողներին բարձրացնել իրենց ձեռքերը, եթե գիտեն որևէ մեկին, ով սխալ է կատարել, սակայն դա դեռ չի բացահայտվել կամ նա դեռ չի ստացել իր սխալի հետևանքները։ Հրավիրեք ուսանողներին լուռ խորհել հետևյալ հարցի շուրջ.

- Դուք երբևէ մտածե՞լ եք, թե երբ սխալ ընտրությունների հետևանքները բաժին կհասնեն մեկին, ով գիտակցաբար սխալ ընտրություն է կատարում։

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մորմոն 4.1–2, փնտրելով, թե ինչ պատահեց նեփիացի բանակի հետ, երբ նրանք ցանկացան վրեժխնդիր լինել լամանացիներից։ Այնուհետև խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մորմոն 4.4, փնտրելով, թե ինչու նեփիացիների բանակները հաջողության չհասան։ Խնդրեք ուսանողներին հաղորդել իրենց գտածի մասին։

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Մորմոն 4.5։ Խնդրեք դասարանին հետևել, փնտրելով ճշմարտություններ, որոնք ուսուցանում են ամբարշտության մեջ մնալու արդյունքների մասին։ Երբ ուսանողները կիսվեն իրենց գտածով, գրեք գրատախտակին հետևյալ ճշմարտությունը Մորմոն 4.5-ից. ***«Աստծո դատաստանները վրա կհասնեն ամբարիշտներին»։*** Կարող եք առաջարկել ուսանողներին նշել այդ ճշմարտությունն իրենց սուրբ գրություններում։

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մորմոն 4.10–12, փնտրելով նեփիացիների ամբարշտության նկարագրությունները։ Խնդրեք ուսանողներին զեկուցել իրենց գտածը։

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մորմոն 4.13-14, 18, 21-22։ Խնդրեք դասարանին հետևել, փնտրելով, թե ինչպես Աստծո դատաստանները թափվեցին Նեփիացիների վրա։

- Ձեզ համար ո՞րն է այս պատմության առավել տխուր մասը։

Խնդրեք ուսանողներին անդրադառնալ գրատախտակի վրա գրված սկզբունքներին։ Հրավիրեք նրանց խորհել այն մասին, թե ինչպես իրենք կարող են կիրառել այդ ճշմարտություններն իրենց կյանքում։ Խրախուսեք նրանց գործել Սուրբ Հոգու հուշումներին համաձայն։

Վկայեք Տիրոջ բարության և սիրո մասին, որը մեզ բավարար հնարավորություններ է տալիս ապաշխարելու համար։ Նաև վկայեք, որ հետևանքները միշտ կգան նրանց, ովքեր շարունակում են մեղք գործել։

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Մորմոն 3.9–10: Երդվելը

Մորմոնն ասաց, որ Նեփիացիները «երդվեցին երկնքով, և նաև Աստծո գահով», որ վրեժխնդիր կլինեին Լամանացիներից (տես Մորմոն 3.9–10): Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրյուս Ռ. Մաքկոնկիի հետևյալ խոսքերը բացատրում են Մորմոնի Գրքի ժամանակներում երդվելու կարևորությունը, դրանով տալով մեզ հասկացողություն Աստծուն իրենց վրեժխնդրության մեջ ներգրավվելու Նեփիացիների փորձի անհարգալից էության մասին:

«Հին օրերում այս տեսակի երդումն ավելի մեծ կարևորություն ուներ, քան մեզանից շատերը գիտակցում են:

Օրինակ, Նեփին և նրա եղբայրները փորձում էին ձեռք բերել արույրե թիթեղները Լաբանից: Նրանց կյանքը վտանգի տակ էր: Սակայն Նեփին երդվեց. «Ինչպես կենդանի է Տերը, և ինչպես կենդանի ենք մենք, մենք ետ չենք գնա անապատ մեր հոր մոտ, մինչև չիրագործենք այն, ինչ Տերը պատվիրել է մեզ» (1 Նեփի 3.15):

Այսպիսով Նեփին Աստծուն իր գործընկերը դարձրեց: Եթե նա չկարողանար բերել թիթեղները, կնշանակեր, որ Աստված էր անհաջողության մատնվել: Իսկ քանի որ Աստված անհաջողություն չի ունենում, Նեփին կամ պետք է բերեր թիթեղները, կամ այդ փորձի արդյունքում զրկվեր իր կյանքից» (“The Doctrine of the Priesthood,” *Ensign,* May 1982, 33):

ԴԱՍ 139

# Մորմոն 5-6

## Նախաբան

Մորմոնը մարգարեացավ, որ իր գրվածքները առաջ կգան վերջին օրերում, որպեսզի համոզեն նրանց, ովքեր կկարդան դրանք, որ Հիսուսը Քրիստոսն է: Նա խրախուսեց իր գրվածքներն ընթերցողներին ապաշխարել և պատրաստվել իրենց սեփական դատաստանին Աստծո առաջ: Իր սեփական ժողովրդի մեջ Մորմոնը վերանայեց Նեփիացիների զինվորական զորավարը չլինելու իր որոշումը, համաձայնելով կրկին առաջնորդել նրանց կռվի դաշտում: Ինչևէ, մարդիկ հրաժարվեցին ապաշխարել և հալածվեցին Լամանացիների կողմից մինչև Նեփիացիների ամբողջ ազգը կործանվեց: Երբ Մորմոնը նայեց մահվան և կործանման դաշտին, նա ողբաց իր ժողովրդի անկման և Հիսուս Քրիստոսի մոտ վերադառնալու նրանց ցանկության բացակայության համար:

## Ուսուցանման առաջարկներ

### Մորմոն 5.1-9

*Մորմոնը որոշում է կրկին առաջնորդել Նեփիացիների բանակը, սակայն Լամանացիները հաղթում են*

Նշեք բնական որևէ աղետ, որը կարող է սպառնալ ձեր տարածքին, օրինակ՝ երկրաշարժ, ցունամի, հրաբխային ժայթքում կամ պտտահողմ: Ուսանողներին խնդրեք պատկերացնել, որ իրենց նախազգուշացրել են, որ այդ բնական աղետը տեղի կունենա իրենց տարածքում մի քանի օր անց:

- Ո՞ւր դուք կդիմեք օգնության համար:

Հիշեցրեք ուսանողներին, որ Նեփիացիները կանգնած էին վտանգի նույն աստիճանի առաջ, սակայն նրանց սպառնող աղետը հոգևոր էր: Նաև հիշեցրեք ուսանողներին, որ Նեփիացիները պատերազմի մեջ էին և իրենց ամբարշտությունների պատճառով Մորմոնը հրաժարվեց առաջնորդել նրանց բանակը (տես Մորմոն 3.16):

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Մորմոն 5.1–2: Խնդրեք դասարանին հետևել, տեսնելով, թե ով պետք է ազատեր Նեփիացիներին իրենց տառապանքներից, ինչպես իրենք հավատացած էին:

- Թեև ճիշտ է, որ Մորմոնը կարող էր առաջնորդել Նեփիացիներին ճակատամարտում, ինչո՞ւ էր նա հավատացած, որ մարդիկ չէին ազատվի իրենց տառապանքներից:
- Ի՞նչ մենք կարող ենք սովորել Մորմոն 5.1–2-ից այն մասին, թե ուր պետք է դիմենք առաջին հերթին մեր դժվարությունների ժամանակ: (Առաջին հերթին մենք պետք է դիմենք Աստծուն, ով պատասխանում է նրանց, ովքեր ապաշխարում են և կանչում առ Նա իրենց դժվար պահին օգնություն ստանալու համար:)

Ամփոփեք Մորմոն 5.3–7, բացատրելով, որ Մորմոնի ղեկավարությամբ Նեփիացիները դիմակայեցին Լամանացիների մի քանի հարձակումների: Սակայն, ի վերջո, Լամանացիները «Նեփիացիներին ոտնակոխ արեցին» (Մորմոն 5.6): Այն Նեփիացիները, ովքեր արագ չէին փախչում, նահանջելիս կործանվեցին:

Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ Մորմոն 5.8–9: Խնդրեք դասարանին գտնել այն պատճառները, որոնցով Մորմոնը չի տվել իր տեսած բաների ամբողջական պատմությունը:

- Ինչո՞ւ Մորմոնը խուսափեց տալ այն պատկերի ամբողջական նկարագիրը, որի ականատեսը եղավ:

## Մորմոն 5.10-24

*Մորմոնը բացատրում է, որ Մորմոնի Գրքի նպատակն է՝ համոզել մարդկանց հավատալ Հիսուս Քրիստոսին:*

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Մորմոն 5.10-11: Խնդրեք դասարանին հետևել և գտնել այն բառը, որը Մորմոնն օգտագործեց երեք անգամ՝ նկարագրելու համար, թե ինչպես իրենց կզգան մարդիկ վերջին օրերում, երբ իմանան Նեփիացի ազգի անկման մասին: (Նա ասաց, որ մենք «կվշտանանք»:)

- Ըստ ձեզ այս պատմության մեջ ի՞նչն է մտահոգիչ:

Ուսանողների ուշադրությունը հրավիրեք Մորմոնի խոսքերին Մորմոն 5.11-ում, համաձայն որոնց, եթե մարդիկ ապաշխարեին, նրանք կկարողանային «գրկվել Հիսուսի բազուկներում»:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «գրկվել Հիսուսի բազուկներում»: (Կարող եք նշել, որ *գրկվել* բառը նշանակում է ամուր կամ ապահով բռնված կամ շրջապատված լինել:)
- Ի՞նչ է այս արտահայտությունը ուսուցանում մեզ մեր ապաշխարության արդյունքի մասին: (Օգնեք ուսանողներին գտնել հետևյալ սկզբունքը. **Ապաշխարության միջոցով մենք կարող ենք «գրկվել Հիսուսի բազուկներում»:** Գրեք այդ սկզբունքը գրատախտակին:)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այս սկզբունքը, հրավիրեք նրանցից մեկին կարդալ Յոթանասունից Երեց Քենթ Ֆ. Ռիչարդսի խոսքերը.

«Ամենը, ինչ կպատահի, կարող է «գրկվել Հիսուսի բազուկներում» [Մորմոն 5.11]: Բոլոր հոգիները կարող են բժշկվել Նրա զորությամբ: Բոլոր ցավերը կարող են թեթևանալ: Նրանում մենք կարող ենք գտնել հանգիստ մեր հոգիների համար [տես Մատթեոս 11.29]: Մեր մահկանացու հանգամանքները, միգուցե, անմիջապես չփոխվեն, բայց մեր ցավը, անհանգստությունը և վախը կարող է կլանվել Նրա խաղաղության և բժշկող ուժի մեջ» («Քավությունը ծածկում է բոլոր ցավերը», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2011, 16):

Հրավիրեք ուսանողներին գրել պատասխան հետևյալ հարցերից մեկի համար իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: (Կարող եք գրել այդ հարցերը գրատախտակին կամ կարդալ դանդաղ, որպեսզի ուսանողները գրի առնեն:)

- Ե՞րբ եք զգացել, որ «գրկվել [եք] Հիսուսի բազուկներում»:
- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի ավելի լիարժեք ստանաք Տիրոջ մխիթարությունը, պաշտպանությունը և ներումը:

Բացատրեք, որ Մորմոն 5.12–13 հատվածները պարունակում են Մորմոնի մարգարեությունն այն մասին, որ նրա գրվածքները կթաքցվեն, ապա առաջ կգան, որպեսզի բոլոր մարդիկ կարդան դրանք: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մորմոն 5.14–15, գտնելով, թե ինչ էր Տերը ցանկանում, որ Մորմոնի գրվածքներն անեին մարդկանց համար վերջին օրերում: Կարող եք առաջարկել ուսանողներին նշել այն արտահայտությունները, որոնք կարևոր են իրենց համար:

- Համաձայն Մորմոն 5.14–15-ի, որո՞նք են Մորմոնի Գրքի նպատակները: (Հետևեք, որ ուսանողներն արտահայտեն հետևյալ միտքը՝ **Մորմոնի Գիրքը գրվել է համոզելու բոլոր մարդկանց, որ Հիսուսը Քրիստոսն է, օգնելու Աստծուն իրականացնել Իսրայելի տան հետ կապած Իր ուխտը և օգնելու Լամանացիների սերունդներին ավելի լիարժեքորեն հավատալ ավետարանին:**)

Երբ ուսանողները պատասխանեն, որ Մորմոնի գրվածքները միտված են համոզելու մարդկանց, որ Հիսուսը Քրիստոսն է, կիսվեք ձեր վկայությամբ այն մասին, որ դա Մորմոնի Գրքի կենտրոնական նպատակն է:

- Ի՞նչպես է Մորմոնի Գրքի այս կենտրոնական նպատակը օգնում նրանց, ովքեր կարդում են այն:
- Մորմոնի Գրքի ձեր ուսումնասիրությունն ինչպե՞ս է օգնում ձեզ ավելի լիարժեք հավատալ և սիրել Հիսուս Քրիստոսին:

Նշեք, որ Մորմոնի Գիրքը ներկայումս օգնում է շատերին ապաշխարել և «գրկվել Հիսուսի բազուկներում», սակայն դեռ կան շատ մարդիկ, ովքեր հրաժարվում են հավատալ Քրիստոսին:

Այս դասի սկզբում գրված ապաշխարության սկզբունքի կողքին գրատախտակին գրեք. *Եթե մենք հրաժարվում ենք ապաշխարելուց, . . .* Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Մորմոն 5.16–19 և խնդրեք դասարանին գտնել ապաշխարելուց Նեփիացիների հրաժարվելու արդյունքները: Խնդրեք ուսանողներին օգտագործել այն, ինչ գտել են այդ հատվածներում, գրատախտակին գրված նախադասությունն ավարտելու համար: Երբ նրանք պատասխանեն, կարող եք տալ հետևյալ հարցերը, որպեսզի օգնեք նրանց հասկանալ այդ հատվածների խոսքերը և արտահայտությունները.

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում լինել «առանց Քրիստոսի և Աստծո աշխարհում» (Մորմոն 5.16): (Պատասխանները կարող են ներառել, որ դա նշանակում է ապրել առանց հավատքի առ Հիսուս Քրիստոս կամ առ Երկնային Հայրը, և առանց աստվածային ազդեցության և առաջնորդության:)
- Մղեղը ցորենի հատիկի արտաքին թեթև կեղևն է: Երբ ցորենը հավաքվում է, մղեղն առանձնացվում է: Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «քշվում են այս ու այն կողմ, ինչպես մղեղը քամու առաջ» արտահայտությունը (Մորմոն 5.16):
- Ինչպե՞ս կզգայիք, եթե լինեիք մի նավակի մեջ, որը չէիք կարող նավարկել կամ կանգնեցնել խարսխի օգնությամբ: (Տես Մորմոն 5.18:) Ինչո՞վ է այդ իրավիճակը նման Նեփիացիների իրավիճակին:
- Ի՞նչ են մեզ ուսուցանում Մորմոնի խոսքերը նրանց մասին, ովքեր հրաժարվում են ապաշխարել: (Ուսանողների պատասխանները պետք է արտահայտեն այն միտքը, որ ապաշխարելուց հրաժարվելու արդյունքը Տիրոջից առաջնորդություն ստանալու կորուստն է: Լրացրեք գրատախտակին գրված նախադասությունը հետևյալ ճշմարտությամբ. ***Եթե մենք հրաժարվում ենք ապաշխարել, Հոգին հեռանում է, և մենք կորցնում ենք Տիրոջ առաջնորդությունը:***)

Խնդրեք ուսանողներին մտքում խորհել այն մասին, թե ինչպես է այդ սկզբունքն աշխատել իրենց կամ մյուսների կյանքում:

Հրավիրեք ուսանողներին արագ վերանայել Մորմոն 5.11, 16–18 հատվածները և այն երկու սկզբունքները, որոնք գրել եք գրատախտակին:

- Ձեր խոսքերով ինչպե՞ս կարող եք արտահայտել տարբերությունը անկեղծ ապաշխարելու արդյունքի և ապաշխարելուց հրաժարվելու արդյունքի միջև:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մորմոն 5.22–24, փնտրելով, թե ինչ հորդորեց Մորմոնը, որ մարդիկ անեն վերջին օրերում: Կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այն, ինչ գտել են:

Վկայեք գրատախտակին գրված երկու հակասական սկզբունքների ճշմարտության մասին:

## Մորմոն 6

### *Մորմոնը պատմում է Նեփիացիների վերջին ճակատամարտի մասին և ողբում է իր ժողովրդի կործանման համար*

Տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս կզգայիք սիրելի մարդու մահվան առիթով, ով հավատարիմ է եղել Աստծուն իր ողջ կյանքի ընթացքում:
- Ինչպե՞ս կզգայիք սիրելի մարդու մահվան առիթով, ով անհնազանդ է եղել Աստծո պատվիրաններին իր ողջ կյանքի ընթացքում:

Բացատրեք, որ Մորմոնը մեծ վիշտ էր ապրում իր ամբողջ ժողովրդի մահվան կապակցությամբ, քանի որ գիտեր, որ նրանք պատրաստ չէին հանդիպելու Աստծուն: Ամփոփեք Մորմոն 6.1–6, բացատրելով, որ Լամանացիները թույլ տվեցին, որ Նեփիացիները հավաքվեին Կումորա երկրում՝ ճակատամարտելու համար: Մորմոնը ծերանում էր և գիտեր, որ դա պետք է լիներ «[իր] ժողովրդի վերջին պայքարը» (Մորմոն 6.6): Նա վստահեց իր սուրբ գրվածքներից մի քանիսը իր որդի Մորոնիին, իսկ մնացածը թաքցրեց Կումորա բլրի վրա: Նա իր ժողովրդի վերջնական կործանման ականատեսը դարձավ, ինչի մասին և գրի առավ: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մորմոն 6.7–15, մտածելով այն մասին, թե ինչ էր զգում Մորմոնը՝ այդ խոսքերը գրելիս:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էին Նեփիացիները սպասում մահվան «սոսկալի վախով» (Մորմոն 6.7):

Ուսանողների համար բարձրաձայն կարդացեք Մորմոն 6.16–22, և թող նրանք հետևեն իրենց սուրբ գրություններում: Այնուհետև խնդրեք նրանց գրել իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում իրենց մտքերի և տպավորությունների մասին, որոնք ունեցել են, երբ կարդացել են և լսել այդ հատվածները: Բավարար ժամանակ տրամադրելուց հետո կարող եք նրանց հնարավորություն տալ կիսվել իրենց գրած մտքերից մի քանիսով:

Վկայեք ուսանողներին այն սիրո մասին, որն իրենց հանդեպ ունեն Երկնային Հայրը, Հիսուս Քրիստոսը, մարգարեները, ղեկավարները և ծնողները: Խրախուսեք նրանց գործի դնել Հիսուս Քրիստոսի հանդեպ իրենց հավատքը և ապաշխարել իրենց մեղքերից, որպեսզի կարողանան «գրկվել Հիսուսի բազուկներում» (Մորմոն 5.11):

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Մորմոն 5.11: «Գրկվել Հիսուսի բազուկներում»

Երեց Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է *Քավություն* բառի և «գրկվել Հիսուսի բազուկներում» արտահայտության միջև կապը.

«Խոր իմաստ է գտնվում *քավություն* բառի ուսումնասիրության մեջ Հին Կտակարանի ժամանակների սեմական լեզուներում: Եբրայերենով քավության հիմնական բառը՝ *կաֆար,* բայն է, որը նշանակում է «փակել» կամ «ներել»: Սերտորեն կապակցված արամերեն և արաբերեն *կաֆաթ* բառը նշանակում է «ամուր գրկել» և անկասկած առնչվում է եգիպտական արարողական գրկախառնումին: Այդ գրկախառնումին տրված հղումները առկա են Մորմոնի Գրքում: Մեկն ասում է, որ «Տերը փրկագնել է իմ հոգին . . . , ես տեսել եմ նրա փառքը և ես հավերժորեն օղակված եմ նրա սիրո բազուկների մեջ»: [2 Նեփի 1.15]: Մյուսն առաջարկում է Հիսուսի բազուկներում գրկված լինելու փառավոր հույսը [Մորմոն 5.11]» (“The Atonement,” *Ensign,* Nov. 1996, 34):

ԴԱՍ 140

# Մորմոն 7-8.11

## Նախաբան

Նեփիացիների և Լամանացիների միջև վերջին ճակատամարտից հետո Մորմոնը գրեց Մորմոնի Գրքի ժողովուրդների ապագա սերունդներին, թե որքան կարևոր է իմանալը, թե ովքեր են իրենք և թե ինչ պետք է անեն, որպեսզի փրկվեն: Իր թշնամիների գալիք սերունդների հանդեպ մեծ սիրով լցված Մորմոնը ուսուցանեց Հիսուս Քրիստոսի ավետարանին հետևելու կարևորության մասին, որպեսզի «լավ լինի դատաստանի օրը» (Մորմոն 7.10): Մորմոնի մահից հետո նրա որդի Մորոնին, միայնակ մնալով, գրեց իր ժողովրդի կործանման մասին:

## Ուսուցանման առաջարկներ

### Մորմոն 7

*Իր վերջին վկայության մեջ Մորմոնը հորդորում է Լամանացիների հետնորդներին՝ հավատալ Հիսուս Քրիստոսին և հետևել Նրա ավետարանին:*

Գրատախտակին գրեք *230 000* թիվը: Հարցրեք ուսանողներին, թե արդյոք նրանք հիշում են, թե ինչպես է այդ թիվը կապված Նեփիացիների կործանման հետ: (Դա Նեփիացի զինվորների թիվն է, որոնք զոհվեցին վերջին ճակատամարտում, որը գրված է Մորմոն 6-ում: Կարող եք շեշտել, որ այդ թիվը Մորմոն 6.10–15-ում վերաբերում է միայն նրանց, ովքեր կռվում էին ճակատամարտում, ոչ թե բոլոր նրանց, ովքեր սպանվեցին արդյունքում:) Խնդրեք ուսանողներին պատկերացնել, թե իրենք ողջ են մնացել մեծ ճակատամարտից հետո, որում զոհվել են իրենց ընտանիքները և ընկերները, իսկ իրենց ազգը զավթվել է: Թույլ տվեք նրանց մի պահ մտածել, թե ինչ կասեին, եթե ուղերձ գրեին այն մարդկանց հետնորդներին, ովքեր սպանել էին իրենց հարազատներին և նվաճել իրենց ազգին:

Մի ուսանողի հրավիրեք մտքում կարդալ Մորմոն 7.1–4, փնտրելով Մորմոնի վերջին խոսքերը՝ ուղղված Լամանացիների հետնորդներին:

- Ի՞նչ էր Մորմոնը ցանկանում, որ իմանային Լամանացիների սերունդները:
- Փրկչի ո՞ր հատկանիշներն եք դուք տեսնում իր թշնամիներին ուղղված Մորմոնի խոսքերում:

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ Մորմոնը ուսուցանում էր Լամանացիների սերունդներին այն, ինչ նրանց հարկավոր էր փրկվելու համար: Նա գթասիրտ էր բոլոր մարդկանց՝ անգամ իր թշնամիների հանդեպ:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մորմոն 7.5, 8, 10, գտնելով, թե ինչ էր Մորմոնն ուսուցանում իր ընթերցողներին այն մասին, թե ինչ պետք է նրանք անեին: Խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով և թվարկեք նրանց պատասխանները գրատախտակին: Կարող եք նշել, որ Մորմոնի ուսմունքները ավետարանի նույն սկզբունքներն են, որոնք կարող էին փրկել Նեփիացիներին կործանումից (տես Մորմոն 3.2):

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Մորմոն 7.6–7: Խնդրեք դասարանին հետևել, փնտրելով, թե ինչ է առաջարկում Տերը բոլոր նրանց, ովքեր կհավատան Նրան և կընդունեն Նրա ավետարանը: Երբ ուսանողները հաղորդեն իրենց գտածի մասին, խրախուսեք նրանց գրել հետևյալ ճշմարտությունը Մորմոն 7.6-7-ի կողքին: **Տերն առաջարկում է փրկություն բոլորին, և Նա կփրկագնի նրանց, ովքեր կընդունեն Նրա ավետարանի սկզբունքները և արարողությունները:**

Գրատախտակի վրա գրեք հետևյալ նախադասությունները: Հրավիրեք ուսանողներին գրել իրենց պատասխանները տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:

*Ըստ Մորմոն 7.7-ի, որո՞նք են նրանց օրհնությունները, ովքեր «անմեղ» են Աստծո առաջ:*

Հրավիրեք մի քանի ուսանողի կիսվել իրենց գրածով։

## Մորմոն 8.1-11

### *Մորմոնի մահից հետո նրա որդի Մորոնին մնում է մենակ և գրում է իր ժողովրդի կործանման մասին*

Խնդրեք ուսանողներին մտածել այն ժամանակի մասին, երբ իրենք մենակ են եղել մի իրավիճակում, որը հարցականի տակ է դրել իրենց հավատքը և որում իրենք հեշտությամբ կարող էին սխալ կատարել, ընդ որում, ոչ ոք նրանց չէր տեսնի։ Հրավիրեք նրանց մտածել, թե արդյոք Փրկչին հետևելու և Նրա պատվիրանները պահելու նրանց վճռականությունը այդ ժամանակ մեծացել է, մնացել է նույնը, թե՝ նվազել։

- Ինչո՞ւ որոշ մարդիկ կարող են ընտրել հավատարիմ չմնալը, երբ միայնակ հայտնվել են մի իրավիճակում, որը հարցականի տակ է դնում իրենց հավատքը։
- Ինչո՞ւ որոշ մարդիկ կարող են ընտրել հավատարիմ մնալը, երբ հայտնվում են նույն իրավիճակում։

Բացատրեք, որ Մորմոնը սպանվեց Նեփիացիների և Լամանացիների միջև վերջին ճակատամարտի ժամանակ, իսկ նրա որդի Մորոնին մնաց մենակ, առանց ընտանիքի անդամների և որևէ մեկի իր ժողովրդից։ Մի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ Մորոնիի խոսքերը Մորմոն 8.1–9-ից և խնդրեք դասարանին գտնել Մորոնիի իրավիճակի նկարագրությունները։ Խնդրեք նրանց հաղորդել իրենց գտածը։

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս ձեզ կզգայիք, եթե լինեիք Մորոնիի իրավիճակում։

Օգտվելով էջերի ներքևում ամսաթվերից կամ գլուխների ամփոփագրերից, ուսանողները կարող են տեսնել, որ մոտ 16 տարի էր անցել Մորմոնի գրած վերջին խոսքերից մինչև այն ժամանակը, երբ Մորոնին սկսեց գրել թիթեղների վրա։ Այնուհետև խնդրեք ուսանողներին կրկին նայել Մորմոն 8.1–4 և տեսնել, թե ինչ որոշեց Մորոնին անել, թեև այդքան երկար ժամանակ մենակ էր մնացել։ Խնդրեք նրանց կիսվել իրենց գտածով։ (Նրանք պետք է տեսնեն, որ նա վճռական էր հնազանդվելու իր հորը և գրել թիթեղների վրա։)

- Ի՞նչ սկզբունքներ մենք կարող ենք սովորել Մորոնիի հնազանդությունից, անկախ նրա պայմաններից։ (Երբ ուսանողները կիսվեն իրենց մտքերով, շեշտեք հետևյալ ճշմարտությունը. **Անգամ եթե մենք մենակ ենք, մենք կարող ենք որոշել հավատարիմ մնալ։** Կարող եք հրավիրել ուսանողներին գրել այս ճշմարտությունը իրենց սուրբ գրության մեջ՝ Մորմոն 8.1–4-ի դիմաց։)

Շեշտեք, որ Մորոնին յուրահատուկ առաքելություն ուներ։ Նա «մնացել [էր] մենակ՝ գրելու [իր] ժողովրդի կործանման տխուր պատմությունը» (Մորմոն 8.3)։ Թեև ուսանողները չեն հայտնվի այդ նույն պայմաններում, նրանք, հնարավոր է, հայտնվեն այնպիսի իրավիճակներում, երբ միայնակ են և պետք է հավատարիմ մնան։ Նրանք նաև կարող են իրենց մենակ զգալ, երբ այլ մարդկանց շրջապատում են, օրինակ, երբ այդ մարդիկ չեն ապրում Տիրոջ և Նրա մարգարեների կողմից հաստատված չափանիշներով։

- Դուք ճանաչո՞ւմ եք որևէ մեկին, ով հավատարիմ է եղել, անգամ երբ մենակ է մնացել դժվար պայմաններում։

Երբ ուսանողները պատասխանեն այս հարցին, տվեք այս խորացված հարցերից մի քանիսը կամ բոլորը.

- Ինչպե՞ս այդ անձը գործեց այդ իրավիճակներում։
- Ինչպե՞ս է այդ անձն, ի վերջո, օրհնվել, անելով այն, ինչ Աստված է պատվիրել։
- Ինչպե՞ս են այդ օրինակներն օգնում ձեզ։

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մորմոն 8.10–11։ Խնդրեք նրանց գտնել մի ճանապարհ, որով Տերը սատարեց Մորոնիին և Մորմոնին դժվար իրավիճակներում։ (Տերն ուղարկեց Երեք Նեփիացիներին Մորմոնին և Մորոնիին ծառայելու. տես նաև3 Նեփի 28.25–26։) Շեշտեք, որ **եթե մենք հավատարիմ ենք Աստծուն միայնակության կամ դժվար իրավիճակում, Նա կօգնի մեզ մնալ հավատարիմ։** Օգտագործեք հետևյալ հարցերը այս ճշմարտությունը քննարկելու համար.

- Ե՞րբ եք դուք հնազանդ եղել Երկնային Հոր պատվիրաններից մեկին հատկապես դժվար իրավիճակում գտնվելիս։ Ձեր կարծիքով, ինչպե՞ս եք դուք օրհնվել դրա արդյունքում։

***Խորացված հարցեր***

Հարցեր տալը, որոնք անդրադառնում են ուսանողների սկզբնական պատասխաններին, կարող է օգնել նրանց ավելի խորը մտածել իրենց տված պատասխանի մասին և կիսվել իմաստալի մտքերով և զգացմունքներով։ Դուք կարող եք տալ խորացված հարցեր ուսանողին, ով տվել է իր սկզբնական պատասխանը, կամ կարող եք քննարկում զարգացնել, ուղղելով խորացված հարցեր մյուս ուսանողներին։

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր այժմ պատրաստվել հավատարիմ լինելու ապագայի դժվար իրավիճակներում:

Որպեսզի խրախուսեք ուսանողներին հավատարիմ մնալ անգամ այն իրավիճակներում, երբ իրենք միայնակ են, կիսվեք Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հետևյալ խոսքերով.



«Օրեցօր անցնող կյանքով քայլելիս մեր հավատքն անխուսափելիորեն կփորձվի: Երբեմն կլինենք մարդկանցով շրջապատված, բայց դեռևս փոքրամասնություն կկազմենք կամ անգամ միայնակ կլինենք այն հարցում, թե ինչն է ընդունելի և ինչը՝ ոչ: Արդյոք բարոյական խիզախություն ունե՞նք անվարան պաշտպանելու մեր համոզմունքները, անգամ եթե դա անելով մենք պետք է կանգնենք միայնակ: . . . Թող որ մենք միշտ լինենք խիզախ և պատրաստ պաշտպանելու մեր համոզմունքները, և եթե այդ ընթացքում մենք պետք է միայնակ մնանք, թող որ դա անենք քաջաբար, ամրացած գիտելիքով, որ իրականում մենք երբեք միայնակ չենք, երբ կանգնում ենք մեր Երկնային Հոր հետ» («Խիզախություն ունեցիր կանգնելու միայնակ», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2011, 60, 67):

Ավարտեք, կիսվելով ձեր փորձառությամբ, երբ Տերն օրհնել է ձեզ միայնակ կամ դժվար իրավիճակում հավատարիմ մնալու համար:

## Սերտման սուրբ գրության կրկնություն

Գրատախտակին գրեք *հորդորել*: Բացատրեք, որ *հորդորել* նշանակում է խստորեն կոչ անել գործել որոշակի ձևով: Բացատրեք, որ Մորմոնի վերջին խոսքերը Մորմոն 7-ում հորդորելու լավ օրինակ են: Ուսանողներին թղթեր բաժանեք և ասացեք, որ իրենք պետք է մի հորդորանք գրեն, հիմնվելով Մորմոնի Գրքի սուրբ գրությունների սերտման իրենց սիրված հատվածի վրա: Թղթի վերին մասում նրանց խնդրեք գրել. «Ես մի բան կասեմ վերջին օրերի երիտասարդներին»: Խնդրեք յուրաքանչյուր ուսանողի ընտրել սուրբ գրությունների սերտման սիրված հատվածը և հորդորանք գրել վերջին օրերի երիտասարդների համար, հիմնվելով իրենց ընտրած հատվածի վրա: Նրանց հորդորը կարող է ներառել հիմնական ճշմարտությունների ամփոփումը, որոնք գտնվում են այդ հատվածում, բացատրությունը, թե ինչու են այդ ճշմարտությունները կարևոր երիտասարդների համար այսօր, և ըստ այդ ճշմարտությունների գործելու հրավեր: Հորդորները պետք է ավարտվեն խոստումով, ինչպես օրինակ Մորմոն 7.7 կամ Մորմոն 7.10-ում: Կարող եք խնդրել մի քանի ուսանողի կիսվել իրենց ավարտված հորդորներով դասարանի հետ: Կարող եք նաև հավաքել այդ հորդորները և օգտագործել որպես հուշումներ սուրբ գրությունների սերտման ապագա վարժությունների համար կամ կարող եք ցուցադրել դրանք դասասենյակում:

*Նշում.* Դուք կարող եք օգտագործել այս վարժությունը դասի ընթացքում ցանկացած պահի: Օրինակ, կարող եք օգտագործել այն դասի վերջում, կամ Մորմոն 7-ը քննարկելուց հետո:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Մորոնի 7: Քրիստոսին հավատալու Մորմոնի վերջին խնդրանքը

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը բացատրել է Քրիստոսին հավատալու Մորմոնի վերջին խնդրանքը, որը նա ուղղել է մեր օրերի մարդկանց՝ իր ամբողջ ազգի կործանման ականատեսը լինելուց հետո.

«Մահվան մենախոսության մեջ Մորմոնը ժամանակի և տարածության միջով հասավ բոլորին, հատկապես «Իսրայելի տան մնացորդին», ովքեր մի օր պետք է կարդային նրա հրաշալի գրվածքները: Այլ ժամանակի մեջ և այլ վայրում գտնվողները պետք է իմանային, թե ինչ էին մոռացել նրանք, ովքեր պառկած էին նրա առաջ, որ բոլորը պետք է «հավատային Հիսուս Քրիստոսին, որ նա Աստծո Որդին է», որ խաչելությունից հետո Երուսաղեմում «Հոր զորությամբ նա կրկին հարություն է առել, որով նա հաղթանակ է ձեռք բերել գերեզմանի վրա. և նաև նրանում է մահվան խայթոցը կուլ գնացել:

Եվ նա իրականացնում է մեռելների հարությունը, . . . [և] աշխարհի փրկագնումը»: Իսկ փրկագնվածները կարող են Քրիստոսի շնորհիվ վայելել «երջանկության մի վիճակը, որը վերջ չունի»: [Մորմոն 7.2, 5–7:] . . .

«Հավատալ Քրիստոսին», հատկապես չափված նման ողբերգական, սակայն խուսափելի հետևանքներով, Մորմոնի վերջին աղերսան էր և նրա միակ հույսը: Դա ամբողջ գրքի գերագույն նպատակն էր, որը պետք է հայտնվեր վերջին օրերի աշխարհին, կրելով նրա անունը» (*Christ and the New Covenant: The Messianic Message of the Book of Mormon* [1997], 321–22):

## Ուսուցանման լրացուցիչ միտք

### Մորմոն 7.8–9: Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը

Ցուցադրեք Մորմոնի Գիրքը «այս» պիտակով: Այնուհետև ցուցադրեք «այդ» պիտակով Աստվածաշունչը: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մորմոն 7.8–9, փնտրելով, թե ինչ Մորմոնն ասաց «այս» (Մորմոնի Գիրքը) և «այդ» (Աստվածաշունչը) գրքերի միջև եղած կապի մասին:

- Մորմոնի Գրքի ձեր ուսումնասիրությունն ինչպե՞ս է ամրացրել Աստվածաշնչյան ճշմարտությունների մասին ձեր վկայությունը: Աստվածաշնչի ձեր ուսումնասիրությունն ինչպե՞ս է ամրացրել Մորմոնի Գրքի մասին ձեր վկայությունը:

# Տնային ուսումնասիրության դաս

## 4 Նեփի 1–Մորմոն 8.11 (Մաս 28)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը, որոնք ուսանողները սովորեցին, երբ ուսումնասիրեցին 4 Նեփի 1–Մորմոն 8.11 (մաս 28), նախատեսված չէ ուսուցանելու որպես ձեր դասի մաս: Դասը, որը դուք ուսուցանում եք կենտրոնանում է այդ վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, երբ մտածեք ուսանողների կարիքների մասին:

### Օր 1 (1 Նեփի 1)

Երբ ուսանողները ուսումնասիրեցին Նեփիացիների պայմանները Փրկչի այցից հետո 200 տարվա ընթացքում, նրանք սովորեցին, որ մարդիկ աշխատեցին միասին և դարձի եկան դեպի Տերը, դարձան միասնական և մեծ երջանկություն ապրեցին: Նրանք նաև հասկացան, որ հպարտությունը պառակտում է առաջացնում և տանում է դեպի մեծ ամբարշտություն:

### Օր 2 (Մորմոն 1–2)

Մորմոնի արդար կյանքի օրինակից ուսանողները սովորեցին սթափ լինելու և արագ նկատելու հատկանիշների մասին: Նեփիացի ժողովրդի ամբարշտության օրինակից ուսանողները հասկացան հետևյալ սկզբունքները. Ամբարշտությունը և անհավատությունը հեռացնում են Տիրոջ պարգևները և Սուրբ Հոգու ազդեցությունը: Եթե մենք զղջում ենք մեր մեղքերի համար ապաշխարության աստիճանի, մենք կկարողանանք գալ դեպի Քրիստոսը խոնարհ սրտով: Վիշտը, որը միայն մեղքի հետևանք է հանդիսանում, տանում է դեպի անկում (կամ դեպի հավերժական կյանք զարգացման դադարում):

### Օր 3 (Մորմոն 3–6)

Ուսումնասիրելով Տիրոջ համբերատարությունը Նեփիացիների հանդեպ, ուսանողները սովորեցին, որ Տերը մեզ տալիս է բավարար հնարավորություններ մեր մեղքերից ապաշխարելու համար: Ինչևէ, Նեփիացիները հրաժարվեցին ապաշխարելուց և ցանկացան վրեժխնդիր լինել Լամանացիներից: Քանի որ Տերն արգելում է վրեժխնդիր լինել, Մորմոնը հրաժարվեց առաջնորդել Նեփիացի զորքերին: Վրեժ փնտրելու Նեփիացիների ջանքերը թույլ տվեցին ուսանողներին հասկանալ, որ Աստծո դատաստանները բաժին կհասնեն ամբարիշտներին: Մորմոնը տեսավ իր ժողովրդի ամբողջական կործանումը և ողբաց նրանց անկման համար:

### Օր 4 (Մորմոն 7.1–8.11)

Մորմոնն ավարտեց իր գրառումները՝ դիմելով Լամանացիների հետնորդներին: Ուսանողները սովորեցին, որ Տերը փրկագնում է առաջարկում բոլոր մարդկանց, ովքեր ընդունում են Իր ավետարանի սկզբունքները և արարողությունները: Մորմոնը մահացավ, իսկ Մորոնին գրեց Նեփիացիների կործանումից հետո տիրող պայմանների մասին: Մորոնիի օրինակից ուսանողները սովորեցին, որ անգամ երբ մենակ են, կարող են ընտրել հավատարիմ մնալը:

## Նախաբան

Այս դասի մեջ ուսանողները կվերանայեն Նեփիացիների կործանումը և կսովորեն Մորմոնի ցանկության մասին, որ իր ժողովուրդը «գրկվի Հիսուսի բազուկներում» (Մորմոն 5.11): Ուսանողները կսովորեն, թե ինչպես հրավիրել Տիրոջ բազուկները իրենց կյանք: Նեփիացիների ապաշխարելիրաժարվելուց ուսանողները կհասկանան, թե ինչպիսի տխուր հետևանքներ են ունենում մարդիկ, երբ չեն ապաշխարում:

## Ուսուցանման առաջարկներ

### 4 Նեփի 1–Մորմոն 4

***Նեփիացի ժողովուրդը անկում ապրեց արդարակեցությունից և երջանկությունից դեպի ամբարշտություն***

Խնդրեք ուսանողներին պարզել, թե Նեփիացիների պատմության քանի տարիներ նրանք ուսումնասիրեցին այս շաբաթ: Օգնեք նրանց օգտվել գլուխների ամփոփագրերում կամ էջերի ստորին մասում տրված ամսաթվերից 4 Նեփի 1-ում և Մորմոն 8-ում: (Այս գլուխները տալիս են գրեթե 400 տարվա պատմություն՝ Նեփիացիների պատմության մեկ-երրորդ մասը:)

Խնդրեք դասարանի մի կեսին, օգտվելով իրենց սուրբ գրություններից և սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերից, կրկնել այն, ինչ իրենք սովորել են Նեփիացիների երջանկության մասին 4 Նեփի 1-ում: Դասարանի մյուս կեսին խնդրեք, օգտվելով Մորմոն 1–2-ից և սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերից, կրկնել, թե ով էր Մորմոնը և ինչու է կարելի հիանալ նրանով: Խնդրեք յուրաքանչյուր խմբին ամփոփել իրենց սովորածը: Այնուհետև հրավիրեք խմբերին ներկայացնել իրենց ամփոփումները:

Հարցրեք ուսանողներին. Ի՞նչ ճշմարտություն դուք սովորեցիք այս գլուխներն ուսումնասիրելիս, և ինչո՞ւ է դա կարևոր ձեզ համար:

Բացատրեք, որ չնայած Մորմոնի ջանքերին՝ ուղղված օգնելու Նեփիացիներին հոգևորապես պատրաստվել ճակատամարտի համար, նրանք հրաժարվեցին ապաշխարել և շրջվել դեպի Տերը: Իրենց ամբարշտության արդյունքում

նրանք թողնվեցին միայն իրենց ուժերին և Լամանացիները սկսեցին հաղթել նրանց (տես Մորմոն 3–4):

## Մորմոն 5.8-24

*Մորմոնը բացատրում է, որ Մորմոնի Գրքի գրվածքները գրվել են համոզելու համար մարդկանց հավատալ Հիսուս Քրիստոսին:*

Հարցրեք ուսանողներին, թե արդյոք իրենք երբևէ տխրել են ինչ-որ մեկի համար, ով ստիպված է եղել անցնել սխալ ընտրության հետևանքների միջով: Կարող եք կիսվել պատշաճ (և չդատապարտող) օրինակով, երբ վշտացել եք մեկի համար, ով տառապել է իր կատարած ընտրության բացասական հետևանքներից: Բացատրեք, որ Մորմոնը գրել է, որ վերջին օրերի մարդիկ կտխրեն, կարդալով Նեփիացիների կործանման մասին:

Հրավիրեք ուսանողներին կարդալ մտքում Մորմոն 5.10–11, գտնելով, թե ինչ ասաց Մորմոնը, որ դուր կգար Նեփիացիներին: Ուսանողների պատասխաններից հետո տվեք հետևյալ հարցերը.

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «գրկվել Հիսուսի բազուկներում»: (*Գրկվել* բառը նշանակում է ամուր կամ ապահով բռնված կամ շրջապատված լինել:)
- Ըստ Մորմոն 5.11-ի, ի՞նչ մենք կարող ենք անել, այդպիսի գրկախառնություն ստանալու համար: (**Ապաշխարության միջոցով մենք կարող ենք «գրկվել Հիսուսի բազուկներում»:** Գրեք այս սկզբունքը գրատախտակին:)

Կարդացեք կամ խնդրեք մի ուսանողի կարդալ Յոթանասունից Երեց Քենթ Ֆ. Ռիչարդսի հետևյալ խոսքերը: Խնդրեք դասարանին լսել, թե ինչ է նշանակում «գրկվել Հիսուսի բազուկներում»:

«Բոլորը, ովքեր կգան, կարող են «գրկվել Հիսուսի բազուկներում» [Մորմոն 5.11]: Բոլոր հոգիները կարող են բժշկվել Նրա զորությամբ: Բոլոր ցավերը կարող են թեթևանալ: Նրանում մենք կարող ենք հանգստություն գտնել մեր հոգիներին [Մատթեոս 11.29]: Մեր մահկանացու հանգամանքները, մի գուցե, անմիջապես չփոխվեն, բայց մեր ցավը, անհանգստությունը և վախը կարող է կլանվել Նրա խաղաղության և բժշկող ուժի մեջ» (“The Atonement Covers All Pain,” *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2011, 16):

Խնդրեք ուսանողներին մտածել այն ժամանակների մասին, երբ զգացել են, որ «գրկված են Հիսուսի բազուկներում»՝ ապաշխարության արդյունքում: Խնդրեք նրանց նաև խորհել այն մասին, թե ինչ պետք է անեն, որպեսզի գրկվեն Նրա բազուկներում այժմ: Վկայեք ապաշխարության մխիթարող և պաշտպանող արդյունքների մասին:

Մորմոն 5-ից մեկ այլ սկզբունք ցուցադրելու համար դրեք մի խցան կամ լողացող այլ առարկա ջրով տարայի մեջ: Երկու կամ երեք ուսանողների խնդրեք փչել այն տարբեր ուղղություններով: Հարցրեք, թե որքանով էր խցանը որոշում, թե ուր գնար: Խրախուսեք ուսանողներին, ուսումնասիրությունը շարունակելիս, համեմատել, թե որքանով է այդ խցանը նման Նեփիացիներին:

Գրատախտակին գրեք. *Երբ մենք հրաժարվում ենք ապաշխարել. . .* Այնուհետև հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Մորմոն 5.2, 16–19, մինչ մյուս ուսանողները գտնեն ապաշխարելուց Նեփիացիների հրաժարվելու արդյունքները: Խնդրեք ուսանողներին այդ տողերում իրենց սովորածի օգնությամբ լրացնել գրատախտակի նախադասությունը: Պատասխանելու ընթացքում կարող եք տալ հետևյալ հարցերից մի քանիսը, որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այդ հատվածների բառերը և արտահայտությունները.

- Հատված 16-ում, ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «առանց Քրիստոսի և Աստծո են աշխարհում»: (Ապրել առանց հավատքի Հիսուս Քրիստոսի կամ Երկնային Հոր հանդեպ և առանց Նրանց ազդեցության և առաջնորդության:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «քշվում են այս ու այն կողմ, ինչպես մղեղը քամու առաջ» (Մորմոն 5.16): (Կարող եք բացատրել, որ մղեղը ցորենի կեղևն է, որը քշվում է քամուց առանձնացման ժամանակ:)
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս ձեզ կզգայիք, եթե լինեիք օվկիանոսում առանց խարսխի մի նավակի վրա, որով հնարավոր չէ նավարկել: Ինչո՞վ է այդ իրավիճակը նման Նեփիացիների վիճակին:

Բացատրեք, որ Մորմոն 5-ը ուսուցանում է, որ **երբ մենք հրաժարվում ենք ապաշխարել, Հոգին հեռանում է և մենք կորցնում ենք Տիրոջ առաջնորդությունը:** Գրեք այս սկզբունքը գրատախտակին՝ ի հակադրություն նախորդ արտահայտությանը: Խնդրեք ուսանողներին խորհել այն ժամանակների մասին իրենց կյանքում, երբ զգացել են այդ սկզբունքը:

Կարող եք խնդրել ուսանողներին հակադրել գրատախտակին գրված երկու սկզբունքները, տալով հետևյալ հարցը. Գրատախտակին գրված երկու ճշմարտությունների վրա հիմնվելով, ինչպե՞ս է տարբերվում ապաշխարելու հետևանքը ապաշխարելուց հրաժարվելու հետևանքից:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մորմոն 5.22–24, գտնելով, թե ինչ հրավիրեց Մորմոնը մեզ անելու, որպեսզի մենք չդառնանք իր ժամանակի Նեփիացիների նման: Կարող եք խրախուսել ուսանողներին նշել իրենց գտածները:

Վկայեք գրատախտակին գրված երկու սկզբունքների ճշմարտության մասին:

## Մորմոն 6.1–8.11

*Տեսնելով իր ժողովրդի վերջնական ոչնչացումը, Մորմոնը գրում է Լամանացիների սերունդներին, այնուհետև մահանում է, թողնելով Մորոնիին մենակ:*

Հրավիրեք ուսանողներին ամփոփել Նեփիացիների վերջնական կործանման պատմությունը, օգտվելով Մորմոն 6–8 գլուխների ամփոփումներից, եթե անհրաժեշտ է:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մորմոն 7.10 և խորհել մահից առաջ Մորմոնի վերջին խոսքերի մասին:

## Հաջորդ Մաս (Մորմոն 8.12–Եթեր 3)

Մորոնին խոսեց Հիսուս Քրիստոսի հետ և նրան ցույց տրվեցին մեր օրերը: Ինչի՞ դեմ Մորոնին նախազգուշացրեց մեզ: Հարեդի եղբայրը նույնպես մեծ հավատք ուներ: Նա տեսավ Հիսուս Քրիստոսին և խոսեց Նրա հետ դեմ առ դեմ: Իմանալով, որ և Մորոնին և Հարեդի եղբայրը տեսել են Քրիստոսին և խոսել են Նրա հետ, ինչո՞ւ եք դուք ավելի հեշտությամբ վստահում նրանց խոսքերին:

ԴԱՍ 141

# Մորմոն 8.12-41

## Նախաբան

Իր ժողովրդի կործանման մասին գրելուց և իր հոր մահից հետո Մորոնին մարգարեացավ Մորմոնի Գրքի առաջ գալու մասին և նախազգուշացրեց այն մերժելու հետևանքների մասին: Մորոնին տեսավ, որ Նեփիացիների գրառումները առաջ էին գալու մեծ ամբարշտության օրերին, երբ շատերը սիրելու էին աշխարհիկ ունեցվածքներն Աստծուց ավելի: Նա վկայեց, որ Մորմոնի Գիրքը մեծ արժեք էր լինելու հոգևոր վտանգավոր պայմաններում, որոնք պետք է տիրեին վերջին օրերին:

## Ուսուցանման առաջարկներ

### Մորմոն 8.12–32

*Մորոնին մարգարեանում է Մորմոնի Գրքի առաջ գալու մասին*

Դասից առաջ պատրաստեք առարկաների կամ նկարների ցուցատախտակ, որոնք ներկայացնում են առաջադեմ տեխնոլոգիաներ: Դասի սկզբում հրավիրեք ուսանողների ուշադրությունը ցուցատախտակին: Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ խոսքերը.

«Ես կցանկանայի խոսել առավել կարևոր պարգևներից մեկի մասին, որը տրվել է աշխարհին արդի ժամանակներում: Պարգևը, որի մասին ես մտածում եմ, ավելի կարևոր է, քան որևէ հայտնագործություն, որն առաջ է եկել արդյունաբերական կամ տեխնիկական հեղափոխության արդյունքում: Այդ պարգևը ավելի մեծ արժեք ունի մարդկության համար, քան հրաշալի շատ առաջխաղացումներ ժամանակակից բժշկության մեջ: Այն ավելի մեծ արժեք ունի մարդկության համար, քան թռիչքի կամ տիեզերքի բնագավառներում զարգացումները: Ես խոսում եմ. . .» (“The Book of Mormon—Keystone of Our Religion,” *Ensign,* Nov. 1986, 4):

- Դուք կցանկանայի՞ք ունենալ պարգևը, որի մասին խոսում է Նախագահ Բենսոնը: Ինչո՞ւ:
- Ձեր կարծիքով, ո՞րն է այդ պարգևը:

Բացատրեք, որ Մորոնին ուսուցանել է այս պարգևի մասին: Ուսանողներին խնդրեք կարդալ Մորմոն 8.12 և գտնել, թե որն է այդ պարգևը: Օգնեք ուսանողներին հասկանալ, որ «այս հիշատակարանը» Մորմոնի Գիրքն է. Բացատրեք, որ Նախագահ Բենսոնը խոսում էր Մորմոնի Գրքի մասին:

Օգնելու համար ուսանողներին գնահատել Մորմոնի Գիրքը, խնդրեք նրանց մտքում կարդալ Մորմոն 8.13–16: Կարդալուց առաջ նրանց խնդրեք տեսնել, թե ինչ էր ուսուցանում Մորոնին Մորմոնի Գրքի մասին: Այնուհետև տվեք հետևյալ հարցերից մի քանիսը կամ բոլորը՝ օգնելու համար նրանց քննարկել և վերլուծել իրենց գտածը.

- Որոշ մարդիկ կարող են մտածել ոսկե թիթեղների դրամային արժեքի մասին: Համաձայն Մորմոն 8.14-ի, թիթեղները ո՞ր իմաստով էին «մեծ արժեքի»: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ քանի որ Տերը թույլ չէր տա, որ որևէ մեկը «շահ ստանար» ոսկե թիթեղներից, թիթեղներն իրենցով «ոչ մի արժեք չունեն»: Սակայն թիթեղների վրա գրվածը «մեծ արժեքի էր»:)
- Մորոնին ասաց, որ Մորմոնի Գիրքը կարող է ի լույս բերվել միայն մեկի կողմից, ով ունի Աստծո «փառքին ուղղված աչք» (Մորմոն 8.15): Ձեր կարծիքով, ի՞նչ է դա նշանակում: (Երբ ուսանողները քննարկեն այս հարցը, կարող եք հրավիրել նրանց կարդալ Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.46, որը պարունակում է ավելի ուշ Ջոզեֆ Սմիթին տված Մորոնիի հրահանգները՝ Մորմոնի Գիրքը ի լույս բերելուց առաջ:)
- Մորմոն 8.16-ում ինչպե՞ս է Մորմոնի Գրքի ի լույս բերելու Մորոնիի նկարագրությունն օգնում բացատրել գրքի մեծ արժեքը:

Ինչպես գրված է Մորմոն 8.17–21-ում, Մորոնին նախազգուշացնում էր նրանց, ովքեր կմեղադրեն կամ կընդդիմանան Մորմոնի Գրքին: Հրավիրեք ուսանողներին կարդալ այդ հատվածները և գտնել Մորոնիի նախազգուշացումները:

- Որո՞նք են Մորոնիի նախազգուշացումները նրանց, ովքեր մերժում են կամ մեղադրում Մորմոնի Գիրքը:
- Ի՞նչ ճշմարտություններ դուք սովորեցիք Մորմոն 8.22-ից: Ինչպե՞ս է վերջին օրերում Մորմոնի Գրքի ի լույս բերելը օգնել Տիրոջ հավերժական նպատակների իրականացմանը:

Բացատրեք, որ Մորմոն 8.23–25-ը պարունակում է Մորոնիի խոսքերը իրենից առաջ ապրող հավատարիմ Սրբերի աղոթքների մասին: Նա խոսում էր նրանց մասին, ասելով, որ նրանք աղաղակում էին Տիրոջը փոշու միջից: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ այդ հատվածը, գտնելով, թե ինչի համար էին աղոթում Սրբերը հին Ամերիկաներում՝ Մորմոնի Գրքի վերաբերյալ:

- Ո՞ւմ համար էին աղոթում հին օրերի Սրբերը: (Նրանք աղոթում էին իրենց եղբայրների, այսինքն՝ Լամանացիների և նրանց սերունդների համար, և այն մարդու համար, ով ի լույս էր բերելու Մորմոնի Գիրքը, այսինքն՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթի համար:)

Բացատրեք, որ Մորոնին նկարագրում էր պայմանները, որոնք տիրելու էին, երբ Մորմոնի Գիրքը ի լույս գար: Ապա խնդրեք նրանց պատկերացնել իրենց Մորոնիի տեղում, որն ապրում էր 1600 տարի առաջ և ստանում մեր օրերի մասին տեսիլք:

Հրավիրեք ուսանողներին մի պարբերություն գրել իրենց տետրերում կամ սուրբ գրությունների օրագրերում՝ նկարագրելով մեր օրերի հոգևոր պայմանները: Երբ ուսանողները բավարար ժամանակ ունենան գրելու համար, հրավիրեք նրանցից մի քանիսին կիսվել իրենց գրածով: Այնուհետև խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մորմոն 8.26–32 և համեմատել իրենց պարբերությունները մեր օրերի Մորոնիի մարգարեական նկարագրության հետ: Դասարանը բաժանեք զույգերի: Յուրաքանչյուր զույգին խնդրեք կիսվել մի քանի նմանություններով և տարբերություններով իրենց նկարագրությունների և Մորոնիի նկարագրության միջև:

- Ի՞նչ ճշգրիտ նկարագրություններ եք գտնում մեր օրերի մասին Մորոնիի նկարագրածից:

Գրեք գրատախտակին Մորոնիի մարգարեությունների հետևյալ ամփոփումը. ***Մորմոնի Գիրքը ի լույս կբերվի Աստծո զորությամբ մեծ ամբարշտության օրը:*** Եթե դուք ցուցադրել եք առարկաներ, որոնք ներկայացնում են տեխնիկական կամ բժշկական հայտնագործություններ, կարող եք դնել Մորմոնի Գիրքը դրանց կողքին: Օգնելու համար ուսանողներին խորհել և վկայել Մորմոնի Գրքի արժեքի մասին իրենց կյանքում, տվեք այսպիսի հարցեր.

- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքն օգնում մեզ դիմակայել մեր օրերի ամբարշտություններին:
- Ինչո՞ւ է Մորմոնի Գիրքն ավելի արժեքավոր, քան տեխնիկական կամ բժշկական հայտնագործությունները:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Մորմոնի Գիրքը «առավել կարևոր պարգևներից մեկը, որը տրվել է աշխարհին արդի ժամանակներում», ինչպես ասել է Նախագահ Բենսոնը:
- Եթե ձեր ընկերը հարցնի ձեզ, թե ինչու է Մորմոնի Գիրքը արժեքավոր ձեզ համար, դուք ի՞նչ կասեք:

***Խնդրեք ուսանողներին կիսվել գրված պատասխաններով***

Ժամանակ առ ժամանակ խրախուսեք ուսանողներին կիսվել նրանով, ինչ գրել են իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: Մի մոռացեք շնորհակալություն հայտնել ուսանողներին կիսվելու համար և անկեղծորեն գովեք նրանց: Երբ ժամանակ հատկացնեք դա դասարանում անելու համար, կօգնեք սերմանել սիրո և հարգանքի ուսման մթնոլորտ:

## Մորմոն 8.33–41

### *Մորոնին տեսնում է վերջին օրերը և մեղադրում մեր ժամանակների հոգևոր ամբարշտությունը*

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Մորմոն 8.35: Նրա կարդալուց առաջ շեշտեք, որ այդ հատվածում Մորոնին խոսում է անմիջապես մեզ հետ:

- Ինչպե՞ս կարող է այս հատվածն ազդել նրա վրա, թե ինչպես ենք մենք կարդում Մորմոնի Գիրքը:

Երբ ուսանողները քննարկեն այս հարցը, կարդացեք Նախագահ Էզրա Թավթ Բենսոնի հետևյալ խոսքերը Մորմոնի Գրքի մարգարեների մասին.

«Եթե նրանք տեսել են մեր օրը և ընտրել այն, ինչն առավել մեծ արժեք կունենար մեզ համար, ապա ինչպե՞ս մենք պետք է ուսումնասիրենք Մորմոնի Գիրքը: Մենք պետք է շարունակ հարցնենք ինքներս մեզ. «Ինչո՞ւ Տերը ոգեշնչեց Մորմոնին (կամ Մորոնիին, կամ Ալմային) ընդգրկել այս կամ այն հատվածը իր հիշատակարանում: Ի՞նչ դաս կարող եմ ես սովորել դրանից, որը կօգնի ինձ ապրել այս օրը և այս դարում» (“The Book of Mormon—Keystone of Our Religion,” 6):

Խրախուսեք ուսանողներին հետևել այդ խորհրդին, երբ ուսումնասիրեն Մորոնիի մնացած խոսքերը Մորմոն 8-ում:

Խնդրեք ուսանողներին մտածել այն ժամանակի մասին, երբ նկատել են որևէ մեկին կարիքի մեջ՝ ֆիզիկական, հոգեկան, հասարակական կամ հոգևոր: Հրավիրեք նրանց մտածել, թե ինչ կանեին այդ անձին օգնելու համար: Հրավիրեք նրանց նաև մտածել, թե ինչու որոշեցին օգնել կամ չօգնել:

Հրավիրեք մի քանի ուսանողների բարձրաձայն կարդալ Մորմոն 8.33-41:Խնդրեք դասարանին հետևել, գտնելով պատճառները, թե ինչու վերջին օրերում մարդիկ չեն օգնի նրանց, ովքեր կարիքի մեջ են:

- Ինչո՞ւ վերջին օրերում կլինեն մարդիկ, ովքեր չեն օգնի կարիքավորներին: (Հնարավոր պատասխաններ. հպարտություն, անբարոյականություն, փողի և գեղեցիկ հագուստի հանդեպ ավելի մեծ սեր, քան կարիքավորի հանդեպ, աշխարհի գովասանքի ցանկություն: )
- Մորմոն 8.38-ում Մորմոնն օգտագործում է *աղտոտված՝ներ* բառը: Ի՞նչ ազդեցություններ այսօր աշխարհում կարող են համարվել աղտոտված: (Պատասխանները կարող են ներառել հպարտությունը, պոռնոգրաֆիան և սերը դեպի փողը:)

Խնդրեք ուսանողներին գրել մի նախադասություն, որը կամփոփեր այն, ինչ նրանք սովորեցին Մորմոն 8.36–41-ում աղքատների և կարիքավորների մասին հոգալու մեր պարտականության մասին: Հրավիրեք երկու կամ երեք ուսանողների կարդալ իրենց նախադասությունները դասարանին: Թեև ուսանողների խոսքերը կարող են տարբերվել, նրանք պետք է կարողանան ընդգծել հետևյալ ճշմարտությունը. **Աստված մեզ հաշվետու է պահելու նրա համար, թե ինչպես ենք մենք վերաբերվել աղքատներին և կարիքավորներին:**

- Ձեր կարծիքով, որո՞նք են առավել ընդհանուր կարիքները ձեր դպրոցում կամ համայնքում: Ի՞նչ կարող են անել Եկեղեցու երիտասարդները, որպեսզի օգնեն հոգալ այդ կարիքներով մարդկանց համար: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ իրենցից չի ակնկալվում տալ իրենց փողերը և ժամանակը ամեն արժանի գործի համար կամ ամեն մարդու, ով օգնություն է խնդրում: Իրենց ընտանիքներում և Եկեղեցում երիտասարդները շատ հնարավորություններ են ունենում օգնելու նրանց, ովքեր կարիքի մեջ են: Բացի դա, նրանք կարող են հետևել Հոգու առաջնորդությանը՝ ինքնուրույն ծառայություն մատուցելով:
- Ձեր կարծիքով, ի՞նչ կարող են անել Եկեղեցու երիտասարդները աղքատների մասին հոգալու համար: (Եթե ուսանողները չնշեն ծոմի նվիրատվությունները, կարող եք շեշտել դրանց մասին, կարդալով «Ծոմի կիրակի» վերնագրով բաժնի պարբերությունները *Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում* [2004]գրքույկում, էջեր 67–69:)

Այս քննարկումից հետո հրավիրեք ուսանողներին գրել իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում մեկ կամ երկու բանի մասին, որ իրենք կարող են անել աղքատի կամ կարիքավորի մասին հոգ տանելու համար: Նրանք կարող են գրել դասի ժամանակ լսած առաջարկությունները կամ իրենց սեփական մտքերը: Հրավիրեք նրանց գրել մի նպատակ՝ այդ բաները հաջորդ շաբաթների ընթացքում անելու համար: Խրախուսեք նրանց իրականացնել իրենց նպատակները:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Մորմոն 8.14–18: «Օրհնված լինի նա, որ ի լույս կբերի այս բանը»

Մորոնին մարգարեացավ Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին, ով ընտրվել էր ի լույս բերելու Մորմոնի Գիրքը (տես Մորմոն 8.15–16): Շատ այլ հնադարյան մարգարեներ նույնպես տեղյակ էին Ջոզեֆ Սմիթից և աղոթում էին, որ նա հաջողությամբ թարգմաներ և հրատարակեր ոսկե թիթեղները, այդպիսով իրականացնելով Աստծո նպատակները (տես Մորմոն 8.23–25, ՎևՈւ 10.46): Նախագահ Բոյդ Ք. Փաքերը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, խոսել է Մորմոնի Գիրքը ի լույս բերելու Ջոզեֆ Սմիթի դերի մասին.

«Ճշմարտությունը, պարզապես, նրանում է, որ նա Աստծո մարգարեն է՝ ոչ ավել, ոչ պակաս:

Սուրբ գրությունները տրվում էին ոչ թե այդքան Ջոզեֆ Սմիթին, այլ նրա միջոցով: Նա փոխանցող էր, որի միջոցով տրվում էին հայտնությունները: . . .

Մարգարե Ջոզեֆ Սմիթը դպրոցը չավարտած գյուղացի տղա էր: Նրա առաջին բնագիր նամակները ցույց են տալիս, որ նրա ուղղագրությունը, քերականությունը և խոսքի արտահայտումը դեռ հղկված չէին:

Այն, որ հայտնությունները եկել են նրա միջոցով՝ գրական կատարելագործման ցանկացած ձևով, միայն կարող է հրաշք համարվել» (“We Believe All That God Has Revealed,” *Ensign,* May 1974, 94):

### Մորմոն 8.37–38: Ինչպե՞ս է աղքատի և կարիքավորի մասին հոգալը կապված հավերժական երջանկության հետ:

Եպիսկոպոս Հ. Դեյվիդ Բըրթընը՝ Նախագահող Եպիսկոպոսը, վկայել է աղքատի և կարիքավորի մասին հոգալու հավերժական հետևանքների մասին.

«Նպատակը, խոստումները և սկզբունքները, որոնք ամրացնում են աղքատի և կարիքավորի համար հոգալու մեր աշխատանքը, անցնում է մահկանացու կյանքի սահմաններից դուրս: Այս սրբազան աշխատանքը միայն նրանց օգտի և օրհնության համար չէ, ովքեր տառապում են կամ կարիքի մեջ են: Որպես Աստծո որդիներ և դուստրեր մենք չենք կարող ժառանգել հավերժական կյանքի ողջ բաժինը, եթե ամբողջովին չտրվենք իրար մասին հոգալուն, քանիդեռ այստեղ ենք՝ երկրի վրա: Զոհաբերության և մեզանից մյուսներին տալու գթության կիրառումն է, որով մենք սովորում ենք զոհաբերության և նվիրագործման սելեստիալ սկզբունքները» («Բարեգործության սրբագործող աշխատանքը», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2011, 81–82):

ԴԱՍ 142

# Մորմոն 9

## Նախաբան

Մորոնին ավարտեց իր հոր գրվածքները, կոչ անելով նրանց, ովքեր չէին հավատում Հիսուս Քրիստոսին, շրջվել դեպի Տերը ապաշխարության միջոցով: Նա ուսուցանեց, որ Աստված հրաշքների Աստված է, որը չի փոխվել, և հրաշքները դադարել են միայն անհավատության պատճառով: Նա խրախուսեց մարդկանց հավատալ Հիսուս Քրիստոսին և աղոթել Հորը իրենց ողջ սրտով՝ Հիսուս Քրիստոսի անունով, որպեսզի ստանան այն բաները, որոնց կարիքն ունեն:

## Ուսուցանման առաջարկներ

### Մորմոն 9.1–6

*Մորոնին ապաշխարության կոչ է անում նրանց, ովքեր չեն հավատում Հիսուս Քրիստոսին*

Խնդրեք ուսանողներին մտածել մի իրավիճակի մասին, որում իրենց անհարմար են զգում: Հրավիրեք մի քանի ուսանողի պատմել իրենց փորձառությունների մասին և բացատրել, թե ինչու են իրենց անհարմար զգում: Կարող եք հարցնել նրանց, թե ինչը կօգնի իրենց ավելի հարմար զգալ այդ իրավիճակներում:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մորմոն 9.1–5, ուշադրություն դարձնելով, թե ինչ անհարմար իրավիճակ է նկարագրում Մորոնին: (Կարող եք նաև խնդրել ուսանողներին կարդալ Ալմա 12.12–15 և գրել այս հղումը Մորմոն 9.1–5-ի կողքին:)

- Վերջին Դատաստանի ժամանակ ինչպե՞ս կզգան իրենց ամբարիշտները Հայր Աստծո և Հիսուս Քրիստոսի ներկայությամբ: Ինչո՞ւ նրանք իրենց այդպես կզգան:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի հետևյալ խոսքերը.

«Չի կարող լինել փրկություն առանց ապաշխարության: Մարդը չի կարող մտնել Աստծո արքայություն իր մեղքերի մեջ: Շատ անհամատեղելի կլիներ, եթե մարդ կարողանար մտնել Հոր ներկայությունը և բնակվել Աստծո ներկայության մեջ իր մեղքերով: . . .

Կարծում եմ, երկրի երեսին կան մեծ թվով մարդիկ, շատերը, կամ մի գուցե, ոմանք՝ Եկեղեցում, ովքեր կարծում են, որ կարող են անցնել այս կյանքով, անելով այն, ինչ իրենց հաճելի է, խախտելով Տիրոջ պատվիրանները, և դեռ մտածեն, որ կարող են հայտնվել Նրա ներկայության մեջ: Նրանք կարծում են, թե կարող են ապաշխարել, մի գուցե, հոգևոր աշխարհում:

Նրանք պետք է կարդան Մորոնիի խոսքերը [մեջբերում՝ Մորմոն 9.3–5]:

Մի՞թե դուք կարծում եք, որ մարդը, ում կյանքը լցված է եղել աղտոտությամբ, ով ըմբոստացել է Աստծո դեմ, ով չի ունեցել ապաշխարության ոգի, կլինի երջանիկ կամ իրեն լավ կզգա, եթե նրան թույլ տրվի մտնել Աստծո ներկայությունը» (*Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 2:195–96, շեղագիրը բնագրում հանված է):

- Ինչո՞ւ մենք պետք է ապաշխարենք մեր մեղքերից այսօր և չսպասենք մինչև Դատաստանի օրը: (Օգնելու համար ուսանողներին պատասխանել այս հարցին, կարող եք հրավիրել նրանց կարդալ Ալմա 34.33–38:)

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Մորմոն 9.6: Խնդրեք դասարանին հետևել, ուշադրություն դարձնելով նրան, թե ինչ պետք է անեն անհավատները, որպեսզի իրենց լավ զգան Աստծո ներկայության մեջ: Այն բանից հետո, երբ ուսանողները զեկուցեն իրենց գտածի մասին, խնդրեք նրանց գտնել Մորմոն 9.6-ում այն բառերը և արտահայտությունները, որոնք նկարագրում են նրանց, ովքեր շրջվել են դեպի Տերը և աղոթել ներման համար: Կարող եք առաջարկել ուսանողներին նշել իրենց գտած բառերն ու արտահայտությունները:

Ուսանողներին հրավիրեք գրել իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում այն սկզբունքը, որն ամփոփում է Մորմոն 9.6 հատվածը: Կանչեք երկու կամ երեք ուսանողի և խնդրեք նրանց կարդալ իրենց գրածը: Թեև ուսանողները կարող են տարբեր բառեր օգտագործել, նրանց պատասխանները պետք է արտահայտեն հետևյալ ճշմարտությունը. **Եթե մենք ապաշխարենք, մենք անբիծ կլինենք, երբ մտնենք Աստծո արքայությունը:**

Վկայեք, որ ապաշխարության և արդարակյաց կյանքի միջոցով մենք կարող ենք պատրաստվել, որպեսզի մեզ լավ զգանք Տիրոջ ներկայության մեջ: Խնդրեք ուսանողներին խորհել այն մասին, թե իրենք ինչ պետք է անեն այժմ՝ Տիրոջը հանդիպելուն պատրաստվելու համար:

***Կանչել առանձին ուսանողների***

Առանձին ուսանողների պատասխանելու կանչելը կարող է խրախուսել նրանց մասնակցությունը, ովքեր հաճախ չեն մասնակցում: Օգնեք ուսանողներին պատրաստվել մասնակցելուն, տալով նրանց մտածելու ժամանակ նախքան պատասխանելու կանչելը: Ուշադիր եղեք, որ անհարմար վիճակի մեջ չդնեք նրանց կամ ճնշում չգործադրեք, եթե նրանք անհարմար են իրենց զգում դա անել:

## Մորմոն 9.7–20

*Մորոնին հայտարարում է, որ Աստված հրաշքներ է կատարում և պատասխանում է հավատարիմների աղոթքներին:*

Գրատախտակին գրեք *հրաշքներ*: Հարցրեք ուսանողներին, թե ինչպես իրենք կսահմանեին այս բառը: Երբ մի քանի ուսանողներ պատասխանեն, հրավիրեք դասարանին գտնել *հրաշքներ* բառը Աստվածաշնչի Բառարանում: Խնդրեք նրանց կարդալ սահմանումը, ուշադրություն դարձնելով այն տեղեկությանը, որը կարող է պարզաբանել կամ լրացնել իրենց առաջարկած սահմանումները:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ որոշ մարդիկ չեն հավատում հրաշքների:

Ամփոփեք Մորմոն 9.7–8 հատվածները, բացատրելով, որ Մորոնին դիմում էր վերջին օրերի մարդկանց, ովքեր պետք է պնդեին, որ հայտնություն, մարգարեություն, հոգևոր պարգևներ և հրաշքներ այլևս տեղի չեն ունենում:

Բաժանեք ուսանողներին զույգերի: Զույգերից մեկին խնդրեք մտքում կարդալ Մորմոն 9.9–11, իսկ մյուսին խնդրեք մտքում կարդալ Մորմոն 9.15–19: Խնդրեք յուրաքանչյուր ուսանողի գրել Մորոնիի խոսքի հիմնական կետերը, որոնցով նա համոզում է մարդկանց հավատալ հրաշքների: Երբ ուսանողները բավարար ժամանակ ունենան ավարտելու համար, հրավիրեք նրանց զեկուցել իրենց զուգընկերոջը, թե ինչ են գրել:

Գրատախտակի ձախ կողմում գրեք՝ *Հրաշքները դադարում են, երբ մենք. . .*

Գրատախտակի աջ կողմում գրեք՝ *Հրաշքները կարող են տեղի ունենալ, եթե մենք. . .*

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Մորմոն 9.20 և խնդրեք դասարանին գտնել երեք պատճառ, թե ինչու Աստված կարող է դադարել հրաշքներ գործել Իր զավակների մեջ: Հրավիրեք մի ուսանողի գրել այդ պատճառները գրատախտակին, լրացնելով գրատախտակի ձախ կողմի նախադասությունը, ինչպես տրված է գծապատկերում:

Խնդրեք ուսանողներին վերաձևակերպել յուրաքանչյուր նախադասությունն այն մասին, թե ինչու են հրաշքները դադարում, այնպես, որ այն արտահայտի այն պայմանները, որոնցում հրաշքները հնարավոր են: Նրանց պատասխանները պետք է նման լինեն գրատախտակի աջ կողմում գրված նախադասությանը:

| Հրաշքները դադարում են, երբ մենք. . .{ | Հրաշքներ կարող են տեղի ունենալ, երբ մենք. . . |
|---|---|
| Ընկնում ենք անհավատության մեջ | Մեծացնում ենք մեր հավատքը |
| Հեռանում ենք ճիշտ ուղուց | Ապրում ենք ճիշտ ձևով, կամ պահում ենք Աստծո պատվիրանները |
| Չենք ճանաչում Աստծուն, որին պետք է ապավինենք | Սկսում ենք ճանաչել և ապավինել Աստծուն |

Խնդրեք ուսանողներին արագ վերանայել Մորմոն 9.9, 19, գտնելով Մորոնիի ուսմունքները Աստծո էության մասին: Երբ ուսանողները հաղորդեն իրենց գտածը, հարցրեք.

- Իմանալով, որ Աստված անփոփոխ է և որ Նա հրաշքներ է գործել Իր զավակների մեջ հին ժամանակներում, ի՞նչ կարող ենք մենք իմանալ այսօր մեր կյանքում

հրաշքներ գործելու Նրա պատրաստակամության մասին: (Թեև ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, նրանք պետք է արտահայտեն հետևյալ սկզբունքը. **Աստված միշտ հրաշքներ է գործել, և քանի որ Նա անփոփոխ է, Նա դեռ հրաշքներ է գործում համաձայն մեր հավատքի:** Կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին և առաջարկել ուսանողներին գրել այն իրենց սուրբ գրություններում Մորմոն 9.19–20-ի կողքին:)

Բացատրեք, որ մենք կարող ենք տեսնել Աստծո հրաշագործ զորությունը մեր կյանքում տարբեր ուղիներով: Օգնելու համար ուսանողներին մտածել այն ուղիների մասին, որոնցով Աստված դեռ հրաշքներ է գործում, խնդրեք մի ուսանողի կարդալ Երեխաների գերագույն նախագահությունից Քույր Սիդնեյ Ս. Ռեյնոլդսի հետևյալ խոսքերը.

«Ես սովորել եմ, որ . . . Տերը կօգնի մեզ մեր կյանքի ցանկացած ոլորտում, եթե մենք աշխատենք ծառայել Նրան և կատարել Նրա կամքը:

Ես համոզված եմ, որ մենք բոլորս կարող ենք վկայություն բերել այս փոքր հրաշքների մասին: Մենք գիտենք երեխաների, ովքեր աղոթում են օգնության համար, որ գտնեն կորած իրը, և գտնում են այն: Մենք գիտենք երիտասարդների, ովքեր քաջություն են դրսևորում կանգնելու որպես Աստծո վկա և զգում են Նրա սատարող ձեռքը: Մենք գիտենք ընկերների, ովքեր վճարում են իրենց տասանորդը իրենց ունեցած վերջին գումարով և, հրաշքի միջոցով, կարողանում են հետագայում վճարել իրենց ուսման վարձերը, տան վարձերը, կամ ուտելիք են ձեռքբերում ինչ-որ ձևով իրենց ընտանիքի համար: Մենք կարող ենք կիսվել պատասխանված աղոթքների և քահանայության օրհնությունների փորձառություններով, որոնք քաջություն են պարգևել, մխիթարություն բերել և վերականգնել առողջությունը: Այս ամենօրյա հրաշքները ծանոթացնում են մեզ մեր կյանքում Տիրոջ ձեռքի հետ» (“A God of Miracles,” *Ensign,* May 2001, 12):

- Ի՞նչ փորձառություններ դուք դեռ ունեք, որոնք ապացուցում են, որ Աստված դեռ հրաշքների Աստված է:

## Մորմոն 9.21–37

### *Մորոնին հորդորում է անհավատներին հավատալ Հիսուս Քրիստոսին և աղոթել Նրա անունով*

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Մորմոն 9.21: Խնդրեք դասարանին հետևել, գտնելով, թե ինչ է Մորոնին ուսուցանում Երկնային Հորն աղոթելու մասին:

- Ի՞նչ խոստումներ տվեց Մորոնին: (Ուսանողների պատասխանները պետք է արտահայտեն հետևյալ սկզբունքը. **Եթե մենք աղոթում ենք հավատքով և Քրիստոսի անունով, Երկնային Հայրը տալիս է մեզ այն, ինչ մենք խնդրում ենք:**)

Օգնելու համար ուսանողներին հասկանալ, թե ինչ է նշանակում աղոթել «Քրիստոսի անունով», մի ուսանողի խնդրեք կարդալ հետևյալ խոսքերը.

«Մենք աղոթում ենք Քրիստոսի անունով, երբ մեր միտքը Քրիստոսի միտքն է, իսկ մեր ցանկությունները Քրիստոսի ցանկություններն են, երբ Նրա խոսքերը բնակվում են մեր մեջ (տես Հովհաննես ԺԵ.7): Այնուհետև մենք խնդրում ենք այն, ինչ Աստծո համար հնարավոր է տալը: Շատ աղոթքներ մնում են անպատասխան, որովհետև դրանք բոլորովին էլ չեն ասվում Քրիստոսի անունով. դրանք ոչ մի ձևով չեն ներկայացնում Նրա միտքը, այլ դուրս են թափվում մարդու սրտի եսասիրության արդյունքում» (Bible Dictionary, “Prayer”):

Կարող եք տալ հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս մենք կարող ենք վստահ լինել, որ այն, ինչի համար մենք աղոթում ենք, արտահայտում է մեզ համար Տիրոջ կամքը:
- Ե՞րբ եք տեսել, որ Մորմոն 9.21-ի խոստումը կատարվել է: (Կարող եք ուսանողներին ժամանակ տալ մտածելու այդ հարցի շուրջ մինչև պատասխանելը:)

Ամփոփեք Մորմոն 9.22–25, բացատրելով, որ Փրկիչը խոստացավ Իր աշակերտներին օրհնություններ, երբ ուղարկեց նրանց ուսուցանելու ավետարանը: Խնդրեք ուսանողներին արագ աչքի անցկացնել Մորմոն 9.22–25 և գտնել այդ օրհնություններից մի քանիսը:

- Ի՞նչ է նշանակում ձեզ համար այն, որ Փրկիչը «կհաստատի բոլոր [Իր] խոսքերը» (Մորմոն 9.25)։

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մորմոն 9.27–29, գտնելով մոտեցումները և գործողությունները, որոնք կօգնեն նրանց արժանանալ և ստանալ Աստծո օգնությունը։ Կարող եք խնդրել ուսանողներին գրել այդ հատվածների ամփոփումը իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում։

Այս դասն ավարտելու համար ամփոփեք Մորմոն 9.30–34, ասելով ուսանողներին, որ Մորոնին մտահոգված էր նրանով, որ վերջին օրերում շատ մարդիկ կմերժեն Մորմոնի Գրքի ուղերձը նրանց անկատարությունների պատճառով, ովքեր գրել են այն, և այն լեզվի պատճառով, որով գրվել է այն։ Մի ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ Մորմոն 9.35–37։ Խնդրեք դասարանին հետևել և գտնել, թե ինչու են Մորոնին և ուրիշները աղոթել, որ Մորմոնի Գիրքը հայտնվի վերջին օրերում։ (Որպեսզի նրանց եղբայրների՝ Լամանացիների սերունդներին վերականգնվեն «Քրիստոսի մասին գիտելիքը» և այն ուխտերը, որոնք Աստված կապել է Իսրայելի տան հետ։)

Օգնելու համար ուսանողներին ամփոփել այն, ինչ այսօր սովորել են, տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը վկայում, որ Աստված հրաշքների Աստված է և որ Նա պատասխանում է աղոթքներին։
- Ի՞նչ ճշմարտություններ եք դուք սովորել այսօր, որոնք ազդեցություն կունենան ձեր անձնական աղոթքների վրա։

## Մորմոն - Կրկնողություն

Որոշ ժամանակ հատկացրեք օգնելու ուսանողներին վերանայել Մորմոնի Գիրքը։ Խնդրեք նրանց մտածել այն մասին, թե ինչ են սովորել այս գրքից՝ և սեմինարիայի, և իրենց անհատական ուսումնասիրության ընթացքում։ Խնդրեք նրանց համառոտ կրկնել Մորմոնի գլուխների ամփոփագրերը, որպեսզի հիշեն դրանք։ Խնդրեք մի քանի ուսանողի կիսվել Մորմոնից որևէ հատվածով, որը ոգեշնչել է իրենց կամ օգնել ավելի մեծ հավատք զարգացնել Հիսուս Քրիստոսի հանդեպ։

# ԵԹԵՐԻ
## ԳՐՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ

### Ինչո՞ւ ուսումնասիրել այս գիրքը:

Եթերի գիրքն ուսումնասիրելով, ուսանողները կսովորեն Հարեդացիների մասին՝ մի խումբ մարդկանց, ովքեր ճանապարհվեցին դեպի Արևմտյան կիսագունդ և ապրեցին այնտեղ շատ հարյուրամյակներ, նախքան Լեքիի ժողովրդի ժամանումը: Ուսանողները կսովորեն կարևորագույն սկզբունքներ աղոթքի և հայտնության և Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք գործածելով հոգևոր գիտելիքներ ստանալու հարաբերությունների մասին: Նրանք նաև կսովորեն մարգարեների մասին, ովքեր մարդկանց ապաշխարության են կանչում, և այն հետևանքների մասին, որոնք գալիս են այն մարդկանց, ովքեր մերժում են Հիսուս Քրիստոսին և Նրա մարգարեներին:

### Ո՞վ է գրել այս գիրքը:

Մորոնին կրճատել է այս գիրքը 24 ոսկյա թիթեղներից, որոնք կոչվում էին Եթերի թիթեղներ: Գիրքը կոչվում է մարգարե Եթերի անունով, ով Հարեդացիների վերջին մարգարեն էր և նրանց պատմության արձանագրողը (տես Եթեր 15.33–34): Շուրջ 500 տարի առաջ այն բանից հետո, երբ Մորոնին կրճատեց սուրբ հիշատակարանները, Լիմքիի մարդկանցից ոմանք հայտնաբերեցին Եթերի թիթեղները այն ժամանակ, երբ նրանք փնտրում էին Զարահեմլայի երկիրը (տես Մոսիա 8.7–11; Եթեր 1.2): Նեփիացի մարգարեները և հիշատակարան պահողները փոխանցել են թիթեղները իրար, մինչև այն հայտնվել է Մորոնիի ձեռքերում: Մորոնին նշում է, որ նա իր կրճատման մեջ չի ներառել հիշատակարանի նույնիսկ «հարյուրերորդ մասը» (Եթեր 15.33):

### Ու՞մ համար է գրված այս գիրքը և ինչու՞:

Քանի որ Մորոնին կրճատել է Եթերի թիթեղները Հարեդացիների և իր ժողովրդի կործանումից հետո, նա նպատակ էր ունեցել գրելու այս գիրքը մեր օրերի մարդկանց համար: Մորոնին հորդորել է վերջին օրերի հեթանոսներին ապաշխարել, ծառայել Աստծուն և հեռու մնալ գաղտնի խմբակցություններից (տես Եթեր 2.11–12; 8.23): Նա նաև գրել է Հիսուս Քրիստոսի հրավիրող խոսքերը. «Դո՛ւք, աշխարհի բոլո՛ր ծայրեր» ապաշխարեք, եկեք դեպի Նա, մկրտվեք և ստացեք այն գիտելիքը, որը անհավատության պատճառով գաղտնի է պահվել աշխարհից (տես Եթեր 4.13–18):

### Ե՞րբ և որտե՞ղ է այն գրվել:

Եթերն ավարտում է իր ժողովրդի հիշատակարանը վերջին մեծ ճակատամարտի ընթացքում և դրանից հետո, որում բոլորը սպանվում են, բացի երկու Հարեդացիներից՝ իրենից և Կորիանթումրից (տես Եթեր 13.13–14; 15.32–33): Այնուհետև նա գրել է իր պատմությունը «այնպես, որ Լիմքիի մարդիկ գտան դրանք» (Եթեր 15.33; տես նաև Մոսիա 8.7–9): Մորմոնը կրճատել է Եթերի հիշատակարանը մ.թ. 400 և մ.թ. 421 թվականների ընթացքում (տես Մորմոն 8.3–6; Մորոնի 10.1): Մորոնին գրել է, որ Հարեդացիները կործանվել են «այս հյուսիսային երկրի երեսին» (Եթեր 1.1), նկատի ունենալով, որ իր հիշատակարանը կրճատելու ժամանակ նա կարող էր գտնվել այն երկրում, որտեղ նրանք կործանվել են:

### Որո՞նք են այս գրքին բնորոշ որոշ առանձնահատկությունները:

Ի տարբերություն Մորմոնի Գրքի մյուս բաժինների, Եթերի գիրքը չի անդրադառնում Լեքիի ժառանգների պատմությանը: Գիրքը պատմում է, թե ինչպես Հարեդացիները եկան Բաբելոնյան աշտարակից և ճանապարհորդեցին դեպի խոստումի երկիրը, որտեղ, ի վերջո, նրանք կործանվեցին: Եթերի գիրքը երկրորդ վկայությունն է ի լրումն Նեփիացիների հիշատակարանի, որը ցույց է տալիս, որ «ինչ ազգ որ տիրի դրան [խոստումի երկրին], պիտի ծառայի Աստծուն, այլապես նրանք պիտի ոչնչացվեն. . . երբ նրանք հասունացած են անօրինության մեջ» (Եթեր 2.9):

Հիսուս Քրիստոսի նախաերկրային հայտնությունը Հարեդի եղբորը «դասվում է գրված պատմության ամենամեծ պահերի շարքում»: Այս իրադարձությունը «Հարեդի եղբորը ընդմիշտ դասել է Աստծո ամենամեծ մագարեների շարքում» (Jeffrey R. Holland, *Christ and the New Covenant: The Messianic Message of the Book of Mormon* [1997], 17): Տեսիլքի մասին Մորոնիի գրածը արտահայտում է զորեղ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին:

### Համառոտ շարադրանք

**Եթեր 1–3** Տերը Բաբելոնի աշտարակի մոտ պահպանում է Հարեդացիների լեզուն և խոստանում է նրանց առաջնորդել դեպի մի ընտիր երկիր և դարձնել նրանց մեծ ազգ: Նա առաջնորդում է նրանց դեպի ծովափ և հրահանգներ տալիս նրանց կառուցելու բեռնանավեր օվկիանոսում ճանապարհորդելու համար: Տերը ցույց է տվել Իրեն և «բոլոր բաները» (Եթեր 3.26) Հարեդի եղբորը:

**Եթեր 4–5** Մորոնին կնքում է Հարեդի եղբոր գրածները: Նա գրում է Հիսուս Քրիստոսի այն բացատրությունը, որ այս բաները հայտնի կդարձվեն նրանց, ովքեր կհավատան Իրեն: Մորոնին գրում է, որ վերջին օրերի երեք սրբեր կմիանան Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն կանգնելու և վկայելու Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին:

**Եթեր 6–11** Հարեդացիները ճամփորդում են դեպի խոստումի երկիր: Մարդիկ բազմանում են և լցվում երկրով մեկ: Իրավահաջորդ արդարակյաց ու ամբարիշտ թագավորները իշխում են բազմաթիվ սերունդների ընթացքում: Հարեդացիները կործանվել են գաղտնի խմբակցությունների պատճառով: Շատ մարգարեներ մարկանց կանչում են ապաշխարության, բայց մարդիկ մերժում են նրանց:

**Եթեր 12** Մորոնին ուսուցանում է, որ նախքան հոգևոր վկայություն ստանալը անհրաժեշտ է հավատք ունենալ: Նա Տիրոջն արտահայտում է իր մտահոգությունը, որ ապագայում

հեթանոսները կծիծաղեն գրելու իր թուլության վրա, և գրի է առնում Տիրոջ պատասխանը իր հարցին: Մորոնին հորդորում է վերջին օրերի ընթերցողներին փնտրել Հիսուս Քրիստոսին:

**Եթեր 13–15** Մորոնին քննարկում է Նոր Երուսաղեմի մասին Եթերի մարգարեությունը: Այն բանից հետո, երբ Հարեդացիները մերժում են Եթերին, նա տեսնում և գրի է առնում նրանց լիակատար կործանումը:

ԴԱՍ 143

# Եթեր 1

## Նախաբան

Մորոնին կրճատել է Եթերի գիրքը այն քսանչորս ոսկյա թիթեղներից, որոնք գտնվել էին Լիմքիի կողմից ուղարկված որոնման խմբի կողմից (տես Մոսիա 8.7–11): Այս թիթեղները պարունակում էին Հարեդացիների պատմությունը: Հարեդացիների հիշատակարանը սկսվում է Հարեդից և իր եղբորից, ովքեր փնտրում էին Տիրոջ գթությունն ու առաջնորդությունը իրենց ընտանիքների ու ընկերների համար, երբ Տերը խառնեց Բաբելոնյան աշտարակի մոտ գտնվող մարդկանց լեզուները (տես Ծննդոց 11): Քանի որ Հարեդի եղբայրը հավատարմորեն աղոթեց Տիրոջը, Տերը պահպանեց Հարեդի, նրա եղբոր և նրանց ընտանիքների ու ընկերների լեզուն: Տերն ասաց, որ Նա կառաջնորդի նրանց դեպի խոստումի երկիր, որտեղ նրանք կդառնան մեծ ազգ:

## Ուսուցանման առաջարկներ

### Եթեր 1.1–32

*Մորոնին գրանցում է Եթերի տոհմաբանությունը ընդհուպ մինչև Բաբելոնյան աշտարակի Հարեդը:*

Ուսանողներին հիշեցնելու համար, թե Եթերը որտեղից էր եկել, նրանց հետ վերանայեք այս ձեռնարկի հավելվածում տեղ գտած Մոսիա 7–24 –ի ճամփորդությունների ակնարկը: Հանձնարարեք նրանց անդրադառնալ Զարահեմլան գտնելու ճամփորդության փորձ 4-ին: Այնուհետև նրանց ուշադրությունը դարձրեք այն բանին, թե Լիմքիի մարդիկ ինչ գտան այդ ճամփորդության ժամանակ: Այնուհետև թող նրանք բացեն Եթերի գրքի առաջին էջը: Վերնագրի տակ տրված ամփոփումը մեկնաբանում է, որ Եթերի գիրքը վերցված է այն քսանչորս թիթեղներից, որոնք Լիմքիի ժողովուրդը գտել էր:

**Մոսիա 7–24 ճամփորդությունների ամփոփում**




Բացատրեք, որ այն բանից հետո, երբ Մորոնին ավարտեց իր հոր հիշատակարանը նա գրեց մի համառոտագիր կամ կրճատված մի տարբերակ գտնված 24 ոսկյա թիթեղների համար: Հիշատակարանը պարունակում է Հարեդացիների պատմությունը, ովքեր ապրել են Ամերիկյան մայրցամաքում նախքան Լամանացիներն ու Նեփիացիները: Հանձնարարեք ուսանողներին ցածրաձայն կարդալ Եթեր 1.1–5 փնտրելով այն, թե ինչ էր Մորոնին ներառել Հարեդացիների հիշատակարանի իր կրճատման մեջ: Խնդրեք ուսանողներին պատմել իրենց սովորածը:

Եթե դուք ունեք Բաբելոնյան աշտարակի նկարները, ցուցադրեք դրանք: Հանձնարարեք ուսանողներին ամփոփել Եթեր 1.5–ում պատմվող աշտարակի մասին, և թե ինչ պատահեց նրանց, ովքեր ցանկանում էին կառուցել այն: (Այն կոչվում էր Բաբելոնյան աշտարակ: Տերը խառնեց այն մարդկանց լեզուները, ովքեր ցանկանում էին կառուցել այն, և ցրեց նրանց աշխարհով մեկ իրենց ամբարշտությունների պատճառով; տես Ծննդոց 11.1–9):

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ Հարեդացիների պատմության և Նեփիացիների պատմության միջև կապը, հանձնարարեք նրանց նայել Մորմոնի Գրքի էջանիշի ժամանակագրությանը (հոդվածի համարը՝ 32336): Բացատրեք, որ Մորոնին Հարեդացիների հիշատակարանի պատմությունը սկսել է մարգարե Եթերի նախնիների գրառումներով, ովքեր գրել են այդ 24 ոսկյա թիթեղների վրա: Մորոնին գրանցել է Եթերի նախնիներին ընդհուպ մինչև Հարեդ անունով մարդուն, ով ապրել էր Բաբելոնյան աշտարակի ժամանակաշրջանում:

## Եթեր 1.33–43

### *Հարեդի եղբոր աղոթքների շնորհիվ, նրա ընտանիքը և ընկերները ստացան գթություն և առաջնորդություն*

Ուսանողներին հարցրեք, թե արդյոք նրանցից որևէ մեկը եղել է մի վայրում, որտեղ նա չի կարողացել հասկանալ իրեն շրջապատողների լեզուն: Հրավիրեք նրանց կիսվել այդ իրավիճակում ունեցած իրենց զգացմունքներով: Այնուհետև թող նրանք պատկերացնեն, թե ինչպես էին իրենց զգում Բաբելոնյան աշտարակի մոտ հավաքված մարդիկ, երբ նրանք հասկացան, որ բոլորի լեզուն փոխվել է: Թույլ տվեք նրանց լուռ մտածել այս հարցերի շուրջ.

- Եթե դուք լինեիք այդ իրավիճակում, ո՞ւմ հաղորդակցությունը առավել շատ կկարոտեիք: Ինչո՞ւ:

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Եթեր 1.33–34: Նախքան կարդալը նրանց ուշադրությունը հրավիրեք նրան, թե (1) ում հետ էր Հարեդը ցանկանում հաղորդակցվել և (2) ինչպես նա առաջարկեց լուծել այդ խնդիրը: (Նա ցանկանում էր հաղորդակցվել իր ընտանիքի հետ, և նա խնդրեց իր եղբորը աղոթել, որպեսզի իրենց լեզուն չխառնվեր:) Ուսանողների պատասխաններից հետո հարցրեք.

- Ի՞նչ է նշանակում ձեր համար «Աղաղակել առ Տերը» արտահայտությունը:
- Եթեր 1.33–34-ից ի՞նչ եք սովորել իր եղբոր և իր եղբոր աղոթքի հանդեպ ունեցած Հարեդի կարծիքի մասին:

Դասարանը բաժանեք զույգերի: Յուրաքանչյուր զույգ թող հերթով բարձրաձայն կարդա Եթեր 1.35–42: Նրանց ուշադրությունը դարձրեք Հարեդի եղբոր աղոթքին և այդ աղոթքի հանդեպ Տիրոջ պատասխանին: Կարդալուց հետո ուսանողներին հարցրեք.

- Հարեդի եղբոր աղոթքի մեջ ի՞նչը ձեզ վրա տպավորություն թողեց:
- Ինչպե՞ս Տերը պատասխանեց Հարեդի եղբոր աղոթքներին:
- Ի՞նչ սկզբունքներ մենք կարող ենք սովորել նրանից, թե ինչպես էր Հարեդի եղբայրը աղոթում, և թե ինչպես Տերը պատասխանեց նրան: (Ուսանողների մտքերը լսելուց հետո, հորդորեք նրանց խորհել իրենց հանդեպ Երկնային Հոր գթության և սիրո մասին: Գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. ***Եթե մենք շարունակաբար հավատքով աղաղակենք առ Տերը, Նա գթություն կունենա մեր հանդեպ:***)

Դասարանի առջև գրատախտակին գրեք հետևյալ հարցը: (Կամ կարող եք նրանց թռուցիկ բաժանել, կամ էլ դանդաղ ու բարձրաձայն կարդալ, որպեսզի ուսանողները հասցնեն գրի առնել:)

*Ի՞նչ ձևով է Երկնային Հորն աղաղակելը տարբերվում պարզապես «աղոթք ասելուց»:*

*Ե՞րբ եք զգացել Երկնային Հոր գթությունը ի պատասխան ձեր աղոթքների: Ե՞րբ են ընտանիքի անդամները կամ ընկերները պատմել Երկնային Հոր գթության մասին ի պատասխան աղոթքների:*

*Ի՞նչ է Աստծո պատասխանը մեր աղոթքներին ուսուցանում մեր հանդեպ Նրա զգացմունքների մասին:*

*Ի՞նչ կարող եք անել ձեր աղոթքներն ավելի իմաստալից դարձնելու համար:*

Ուսանողներին հանձնարարեք պատասխանել այս հարցերին իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: Կարող եք նրանց հնարավորություն տալ կիսվել իրենց գրածով: Վկայություն բերեք այն մասին, որ Երկնային Հայրը սիրում է մեզ և ցանկանում էօրհնել մեզ, եթե մենք կանոնավոր կերպով նրան ենք դիմում:

Բացատրեք, որ Եթեր 1-ի հիշատակարանը կարող է մեզ լրացուցիչ հասկացողություն տալ մեր հանդեպ Աստծո սիրո և այն օրհնությունների մասին, որոնք գալիս են աղոթքի միջոցով: Ուսանողներին հանձնարարեք ցածրաձայն վերանայել Եթեր 1.34, 36, 38, ուշադրություն դարձնելով այն բանին, թե ինչ պահանջեց Հարեդը, որպեսզի իր եղբայրը հարցներ իր աղոթքում: Խնդրեք ուսանողներից մեկին գրել ուսանողների պատասխանները գրատախտակին: Կարող եք առաջարկել, որ գրատախտակին գրող ուսանողը այդ բոլոր բառերը գրի «աղաղակել առ Տերը» սկզբունքի տակ, որը դուք գրել եք գրատախտակին:

Կարող եք ուսանողներին առաջարկել իրենց մոտ նշել Եթեր 1.38-ի վերջում գրված «եկեք հավատարիմ լինենք Տիրոջը» արտահայտությունը: Շեշտեք, որ Հարեդի և նրա եղբայրների արարքները ցույց են տալիս Տիրոջը հնազանդվելու նրանց հավատքն ու ցանկությունը:

Ուսանողներին հանձնարարեք ցածրաձայն վերանայել Եթեր 1.35, 37, 40–42, ուշադրություն դարձնելով նրան, թե ինչպես է Աստված օրհնել Հարեդին, նրա եղբայրներին, ընտանիքին և ընկերներին: Մեկ ուսանողի խնդրեք գրատախտակին գրել ուսանողների կարդացածը ձեր գրած սկզբունքի *գթություն* բառի տակ: Համոզվեք, որ ուսանողները տեսնում են կապը, որը կա Հարեդի եղբոր խնդրանքի և Տիրոջ տված օրհնությունների միջև:

Հանձնարարեք ուսանողի բարձրաձայն կարդալ Եթեր 1.43: Դասարանին խնդրեք հետևել նրան, ուշադրություն դարձնելով այն օրհնություններին, որոնք Աստված խոստացավ, չնայած Հարեդի եղբայրը հատուկ չեր խնդրել դրանք:

- Ի՞նչ լրացուցիչ օրհնություններ Տերը խոստացավ մարդկանց: (Հարեդը խնդրեց իր եղբորը, որպեսզի նա Տիրոջից հարցներ, թե ուր պետք է գնային նրանք: Հարեդը մտածում էր, թե Տերը կտանի նրանց մի երկիր, որն «ամենաընտիրն է աշխարհում» [Եթեր 1.38]: Տերը խոստացավ առաջնորդել նրանց խոստումի երկիր: Բացի այդ Նա տվեց հատուկ հրահանգներ, թե ինչպես նախապատրաստվել այդ ճամփորդությանը: Նա նաև խոստացավ, որ Նա կառաջացնի մի մեծ ազգ նրանց ընտանիքներից և որ երկրի երեսին չի լինի ավելի մեծ ազգ):

Ուսանողներին հանձնարարեք վերադառնալ 2 Նեփի 4.35-ին: (Կարող եք նրանց առաջարկել իրենց սուրբ գրություններում *2 Նեփի 4.35* գրել Եթեր 1.43 –ի կողքին): Այնուհետև առաջարկեք նրանց ցածրաձայն կարդալ 2 Նեփի 4.35 և Եթեր 1.43, ուշադրություն դարձնելով այն բանին, թե ինչ են ուսուցանում այդ հատվածները Աստծո այն օրհնությունների մասին, որոնք Նա տվել է ի պատասխան մեր աղոթքների:

- 2 Նեփի 4.35-ում, ի՞նչ է Նեփին ուսուցանում աղոթքի հանդեպ Աստծո պատասխանի մասին: (Աստված առատորեն կտա նրանց, ովքեր աղոթքով փնտրում են Իրեն: Դուք կարող եք բացատրել, որ *առատորեն* բառը նշանակում է շռայլորեն): Ինչպե՞ս է Եթեր 1.43 հաստատում այն, թե ինչ Նեփին ասաց 2 Նեփի 4.35 –ում:
- Ըստ Եթեր 1.43-ի, ո՞րն էր պատճառը, որը Տերը տվեց, օրհնությունների խոստումների համար, որոնք տրվեցին Հարեդացիներին ի լրում իրենց խնդրած օրհնություններին: (Տերը խոստացավ լրացուցիչ օրհնություններ, քանի որ նրանք հավատարիմ էին իրենց աղոթքներում: Ուսանողներին կարող եք առաջարկել, որպեսզի նշեն հետևյալ արտահայտությունը Եթեր 1.43. «որովհետև այս երկար ժամանակաընթացքում դու աղաղակել ես առ ինձ»):
- Ի՞նչ սկզբունք մենք կարող ենք սովորել Եթեր 1.43-ից: (Ուսանողները կօգտագործեն տարբեր բառեր, բայց նրանք պետք է նշեն հետևյալ սկզբունքը. **Եթե մենք կանոնավոր կերպով աղոթենք Աստծուն, մենք կստանանք օրհնություններ մեր խնդրածից առավել:** Կարող եք ուսանողներին առաջարկել, որպեսզի այս սկբունքը գրեն իրենց սուրբ գրություններում):
- Ե՞րբ եք դուք տեսել այս սկզբունքը ձեր կյանքում կամ մեկի կյանքում, ում դուք ճանաչում եք:

Ուսանողների պատասխանները լսելուց հետո դուք կարող եք կիսվել օրինակներով ձեր կամ ուրիշների կյանքից: Մարգարե Ջոզեֆ Սմիթը լավ օրինակ է այս սկզբունքի: Նա ստացավ օրհնություններ առավել նրանցից, որոնք նա խնդրել էր, երբ աղոթեց իմանալու համար, թե որ եկեղեցին է ճշմարիտ (տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.10–20), և երբ աղոթեց իմանալու համար Տիրոջ մոտ իր դերի մասին (տես Ջոզեֆ Սմիթ — Պատմություն 1.29–47):

Ավարտելով, ուսանողներին հորդորեք ջանքեր գործադրել ավելի անկեղծ աղոթելու համար: Նաև խրախուսեք նրանց, որ հիշեն, որ Երկնային Հայրը գթությամբ է լցված և որ նա կպատասխանի նրանց աղոթքներին համաձայն նրանց հավատարմության և այնպես, ինչպես, Նրա գիտելիքով, կբերի մեծագույն օրհնություններ նրանց կյանք:

## Սուրբ գրության սերտման կրկնություն

Դասարանը բաժանեք զույգերի: Ժամանակ տվեք նրանց վերանայելու հղումները և հիմնական արտահայտությունները Մորմոնի Գրքի սուրբ գրությունների սերտման բոլոր 25 հատվածներից: Կարող եք առաջարկել, որպեսզի նրանք օգտվելով սուրբ գրությունների սերտման քարտերից, ստուգեն միմյանց գիտելիքները (տես սուրբ գրությունների սերտման վերանայման մտքերը 45-րդ դասի վերջում): Այնուհետև, ստուգեք հատվածների մասին նրանց գիտելիքը, հավանաբար, օգտվելով սուրբ գրությունների սերտման քարտերի հուշումներից: Դասարանով ուղղեք միմյանց: Ուսանողներին հանձնարարեք գրի առնել այն հատվածները, որոնք նրանք պետք է վերանայեն, և նրանց խրախուսեք ինքնուրույն ուսումնասիրել: Երբ ուսումնական տարին ավարտին մոտենա, կարող եք ավարտական քննություն անցկացնել Մորմոնի Գրքի սուրբ գրությունների սերտման հատվածների վերաբերյալ:

*Նշում.* Կարող եք այս վարժությունը կատարել կամ դասի սկզբում կամ էլ վերջում: Եթե դուք անում եք վարժությունը դասի սկզբում, ապա այն կարճ անցկացրեք՝ դասը հասցնելու համար: Վերանայման այլ վարժությունների համար տես այս ձեռնարկի հավելվածը:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Եթեր 1.34–35. Ի՞նչ էր Հարեդի եղբոր անունը:

Յոթանասունականից Երեց Ջորջ Ռեյնոլդսը պատմել է հետևյալ պատմությունը, որտեղ ասվում է որ Հարեդի եղբոր անունը հայտնի է դարձվել Մարգարե Ջոզեֆ Սմիթին.

«Կիրթլենդում բնակվելու ժամանակ Երեց Ռեյնոլդս Կահունը տղա է ունենում: Մի օր, երբ Մարգարե Ջոզեֆ Սմիթը քայլում էր իր դռան առջևով, նա խնդրեց մարգարեին օրհնել և անվանակոչել երեխային: Ջոզեֆը այդպես էլ արեց և երեխային անվանակոչեց Մահոնրի Մորիանկումեր: Երբ նա ավարտեց օրհնելը, նա երեխային պառկեցրեց անկողնում և, շրջվելով դեպի Երեց Կահունը, ասաց. «Այն անունը, որը տվեցի քո որդուն դա Հարեդի եղբոր անունն է, որը Տերը հենց նոր բացահայտեց ինձ»: Երեց Վիլիամ Ֆ. Կահունը, ով մոտ էր կանգնած, լսեց, թե ինչպես էր մարգարեն ասում այդ մասին իր հորը, և դա առաջին անգամ էր, երբ Հարեդի եղբոր անունը հայտնի դարձվեց Եկեղեցում այս տնտեսության ժամանակ» (“The Jaredites,” *Juvenile Instructor,* May 1, 1892, 282):

ԴԱՍ 144

# Եթեր 2

## Նախաբան

Բաբելոնյան աշտարակից մեկնելուց հետո Հարեդը, նրա եղբայրը և նրանց ընտանիքներն ու ընկերները անապատում առաջնորդվեցին Տիրոջ կողմից: Տերը հրահանգներ տվեց Հարեդի եղբորը, որպեսզի կառուցի ութ բեռնանավ իրենց մարդկանց ծովի վրայով խոստումի երկիր հասցնելու համար: Քանի որ Հարեդի եղբայրը և նրա մարդիկ հավատքով հնազանդվեցին Տիրոջը, Տերը նրանց տվեց ապահով ճամփորդության համար անհրաժեշտ առաջնորդություն ու ուղղություն:

## Ուսուցանման առաջարկներ

### Եթեր 2.1–12

*Հարեդացիները սկսեցին իրենց ճամփորդությունը դեպի խոստումի երկիր*

Որպեսզի օգնենք ուսանողներին հասկանալ, թե Աստծուց ստացված հրահանգներին հետևելը ինչպես կարող է մեզ նախապատրաստել ստանալու հետագա առաջնորդություն և հրահանգներ Նրանից՝ վարեք հետևյալ վարժությունը.

Դասից առաջ միևնույն սենյակում թաքցրեք մի առարկա, որը ներկայացնում է գանձ: Նախապատրաստեք երեք կամ չորս հուշումներ, որոնք տանում են դեպի գանձը: Տվեք առաջին հուշումը: Այդ հուշումը կտանի հաջորդ հուշմանը և այդպես շարունակ, քանի դեռ ուսանողները չեն գտել գանձը: Այն բանից հետո, երբ նրանք գտնեն գանձը, հարցրեք՝

- Ի՞նչ կպատահեր, եթե անտեսեիք առաջին հուշումը: (Նրանք չեին գտնի հաջորդ հուշումը:)

Ուսանողներին հանձնարարեք մտքում վերընթերցել Եթեր 1.41–42 , ուշադրություն դարձնելով Տիրոջ առաջին հրահանգներին, որոնք առաջնորդում են Հարեդացիներին դեպի խոստումի երկիր:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչպես Հարեդացիները արձագանքեցին այս հրահանգներին, հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Եթեր 2.1–3:

- Ինչպե՞ս Հարեդացիները արձագանքեցին Տիրոջ առաջին հրահանգներին:

Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Եթեր 2.4–6: Դասարանին հանձնարարեք հետևել, ուշադրություն դարձնելով այն օրհնություններին, որոնք Հարեդացիները ստացան առաջին հրահանգներին հետևելուց հետո:

- Ի՞նչ պատահեց այն բանից հետո, երբ Հարեդացիները հետևեցին առաջին հրահանգներին: (Տերը Հարեդի եղբոր միջոցով նրանց տվեց լրացուցիչ հրահանգներ:)
- Ի՞նչ ենք սովորում այս պատմությունից այն մասին, թե ինչպես ստանալ առաջնորդություն Տիրոջից: (Հնարավոր է ուսանողները օգտագործեն տարբեր բառեր, բայց նրանց պատասխանները պետք է արտահայտեն հետևյալ սկզբունքը. **Եթե մենք հավատքով արձագանքենք Տիրոջ տված հրահանգներին, մենք կարող են ստանալ ապագա առաջնորդություն Նրանից:** Կարող եք առաջարկել, որպեսզի նրանք իրենց սուրբ գրություններում Եթեր 2.6–ի կողքին գրեն այդ ճշմարտությունը:)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ և կիրառել այս սկզբունքը, հանձնարարեք նրանց մտածել Տիրոջից վերջերս ստացված մի զգացողության կամ հուշման մասին: Այնուհետև կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ արտահայտությունը այն մասին, թե ինչպես ենք մենք հաճախ ստանում հայտնություն.

«Այն կտրվի ամեն անգամ մի կտորով, փոքրիկ փաթեթներով, որպեսզի դուք աճեք կարողությամբ: Երբ ամեն կտորին հավատքով հետևեք, ձեզ

***Ստեղծել հետաքրքրություն և կենտրոնացում***

Ծրագրեք այնպիսի վարժություններ, որոնք կստեղծեն հետաքրքրասիրություն և կօգնեն սովորողներին իրենց ուշադրությունը դարձնել դասին վերաբերող սուրբ գրություններին: Այդ վարժությունները առավել արդյունավետ են, երբ կարճ են և սովորողներին կենտրոնացնում են դասի հիմնական սկզբունքների վրա:

կտրվեն այլ կտորներ, մինչև որ կունենաք լրիվ պատասխանը: Այդ ձևը պահանջում է ձեզանից հավատալ մեր Հոր պատասխանելու կարողությանը: Չնայած երբեմն շատ դժվար է, դա բերում է անհատական նշանակալի աճի» («Օգտագործելով աղոթքի երկնային պարգևը», *Ensign* կամ *Լիահոնա,* Մայիս 2007, 9):

Հանձնարարեք ուսանողներին իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում պատասխանել հետևյալ հարցերին: Կարող եք դրանք գրել գրատախտակին կամ դանդաղ կարդալ, որպեսզի ուսանողները հասցնեն գրի առնել:

- Ե՞րբ եք հետևել հոգևոր հուշումներին, իսկ հետո ստացել հետագա հրահանգներ Աստծուց:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ հաճախ մենք պետք է արձագանքնեք հոգևոր հուշումներին նախքան լրացուցիչ հայտնություն ստանալը:

Ամփոփեք Եթեր 2.8–12, բացատրելով, որ Տերը Հարեդի եղբորն ասել է, որ երբ Հարեդացիները ժամանեն խոստումի երկիր, նրանք պետք է «ծառայեն իրեն՝ ճշմարիտ և միակ Աստծուն» (Եթեր 2.8), երբ Իր խոստումի համաձայն նրանք կդառնան մեծ ազգ: Եթե նրանք չծառայեն Իրեն, նրանք «կվոչնչացվեն» երկրի երեսից (Եթեր 2.8–10): Մորոնին ասել է, որ սա «հավիտենական հրամանագիրն» է (Եթեր 2.10), նկատի ունենալով այն, որ դա կկիրառվի բոլոր նրանց համար, ովքեր կապրեն երկրում:

## Եթեր 2.13–15

### *Տերը խրատեց Հարեդի եղբորը, որովհետև նա չէր կանչել Տիրոջ անունը իր աղոթքում*

Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Եթեր 2.13–15 ուշադրություն դարձնելով նրան, թե ինչ արեցին Հարեդացիները ծովափ հասնելուն պես:

- Ի՞նչ արեցին Հարեդացիները: (Նրանք խփեցին իրենց վրանները և չորս տարիների ընթացքում բնակվեցին ծովափին:)
- Ինչո՞ւ համար Տերը խրատեց Հարեդի եղբորը:
- Ի՞նչ դաս մենք կարող ենք քաղել Եթեր 2.14–ից: (Ուսանողները կմեկնաբանեն տարբեր ճշմարտություններ, այդ թվում և հետևյալը՝ **Տերը ցանկանում է, որ մեր աղոթքներում մենք անընդհատ կանչենք Նրա անունը, Տերը գոհ չէ, երբ մենք չենք կանչում Նրա անունը մեր աղոթքներում,** և **Հոգին չի լինի մեզ հետ, եթե մենք մեղավոր ենք:**))

Յոթանասունից Երեց Դոնալդ Լ. Ստահելիի հետևյալ արտահայտությունը կարդալիս, ուսանողներին խնդրեք մտածել իրենց անձնական աղոթքների մասին.

«Ներում, հատուկ օգնություն և առաջնորդություն պահանջող մեր ամենօրյա ջերմեռանդ աղոթքները շատ կարևոր են մեր կյանքում և սնուցում են մեր վկայությունները: Երբ մենք շտապում ենք, կրկնվում, դառնում անկանոն կամ մոռացկոտ մեր աղոթքներում, մենք հակվում ենք կորցնելու Հոգու մտերմությունը, որն այնքան կարևոր է շարունակական հրահանգներ ստանալու համար, որպեսզի մենք մեր ամենօրյա կյանքի դժվարությունները կառավարենք» (“Securing Our Testimonies,” *Ensign* or *Liahona,* Nov. 2004, 39):

Գրատախտակի վրա դասարանի առջև գրեք հետևյալ հարցը: (Կամ կարող եք նրանց համար թռուցիկ պատրաստել, կամ էլ դանդաղ կարդալ, որպեսզի ուսանողները հասցնեն գրի առնել:) Ուսանողներին տրամադրեք երկու, երեք րոպե, որպեսզի իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրեն կարճ պատասխաններ այդ հարցի վերաբերյալ:

*Ի՞նչ եք կարծում ձեր անձնական աղոթքների հաճախականության վերաբերյալ:*

*Ի՞նչ եք կարծում ձեր անձնական աղոթքների անկեղծության վերաբերյալ:*

*Ձեր անձնական աղոթքներում արդյո՞ք դուք զգում եք, որ իսկապես հաղորդակցվում եք Երկնային Հոր հետ: Ինչո՞ւ այո և ինչո՞ւ ոչ:*

*Եթե ձեր անձնական աղոթքներում մեկ փոփոխություն անեիք, ո՞րը կլիներ դա:*

## Եթեր 2.16–25 (նաև Եթեր 3.1–6; 6.4–9)

### *Հարեդացիները կառուցեցին բեռնանավեր դեպի խոստումի երկիր օվկիանոսը հատելու համար*

Ուսանողներին խնդրեք մտածել իրենց ունեցած մի դժվարության մասին կամ մի կարևոր որոշման մասին, որը նրանք պետք է կատարեն այժմ կամ ապագայում: Օրինակի համար նրանք կարող են մտածել ընտանեկան տարբեր իրավիճակների մասին, դպրոցում դժվարությունների մասին, ամուսնական զուգընկերոջ ընտրության որոշումների մասին, կամ էլ նախընտրելի մասնագիտության որոշման մասին: Հանձնարարեք նրանց խորհել, թե ինչպես Տերը կարող է նրանց հրահանգներ կամ օգնություն տրամադրել: Եթեր 2-ի մնացած մասը կարդալիս, նրանց ուշադրությունը հրավիրեք այն սկզբունքի վրա, որը կօգնի նրանց ստանալ Տիրոջ օգնությունը ճիշտ որոշումների կայացման հարցում:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Եթեր 2.16–17: Դասարանին հանձնարարեք հետևել նրան ուշադրություն դարձնելով, թե Տերն ինչ ասաց Հարեդացիներին, որ նրանք անեն, որպեսզի հասնեն խոստումի երկիր: Երբ ուսանողը ավարտի կարդալը, ըստ ցանկության որևէ մեկը թող մոտենա գրատախտակին և արագ կերպով նկարի, թե ինչ տեսք կունենային Հարեդացիների բեռնանավերը:

Արտագրեք գրատախտակի աղյուսակը առանց ներառելու ներքևի երեք տողերի պատասխանները: Թռուցիկի կերպով բաժանեք աղյուսակը կամ հանձնարարեք ուսանողներին արտագրել իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:

| Եթեր 2.18–19 | Եթեր 2.20–25; 3.1–6; 6.4–9 | | |
|---|---|---|---|
| Բեռնանավերի խնդիրը | Լուծումը | Ինչ արեց Տերը | Ինչ արեց Հարեդի եղբայրը |
| Օդ չկար | Անցք բացել բեռնանավերի վերին մասում, և նաև հատակին, որպեսզի այն հնարավոր լինի բացել և փակել | Տվեց Հարեդին հրահանգներ | Անցքեր բացեցին |
| Չկար ուղղություն | Քամին կքշի բեռնանավերը դեպի խոստումի երկիր | Քամի առաջացրեց | Վստահեցին Տիրոջը |
| Լույս չկար | Նախապատրաստել հատուկ քարեր և խնդրել Տիրոջը, որ դիպչի նրանց լույս տալու համար | Խորհուրդ տվեց Հարեդի եղբորը այն բաների մասին, որոնք չէին աշխատի, և ցուցում տվեց գտնելու լուծումն այն բաների որոնք կաշխատեին:<br>Հարեդի եղբոր պատրաստելուց հետո դիպավ քարերին | Պատրաստեց քարերը և խնդրեց Տիրոջը դիպչելու դրանց, որպեսզի նրանք լույս տային մթի խավարի մեջ |

Հանձնարարեք ուսանողներին ինքնուրույն ուսումնասիրել Եթեր 2.18–19 և գտնել այն երեք խնդիրները, որոնք Հարեդի եղբայրը տեսավ բեռնանավերի մեջ:

- Ի՞նչ խնդիրներ Հարեդի եղբայրը տեսավ: (Ուսանողների պատասխանները գրեք աղյուսակի առաջին սյունակում ինչպես ցուցադրված է: Խրախուսեք նրանց, որ արտագրեն այն իրենց աղյուսակներում:)

Խնդիրները բացահայտելուց հետո ուսանողներին խնդրեք ուսումնասիրել Եթեր 2.20–25; 3.1–6; 6.4–9: (*Նշում.* Եթեր 3 և 6-ի հատվածները ավելի մանրամասնորեն կներկայացվեն դաս 145 և 147-ում:) Նրանց ժամանակ տրամադրեք ինքնուրույն լրացնելու աղյուսակի մնացած մասը:

Աղյուսակը լրացնելու համար հատկացված ժամանակից հետո տվեք նրանց հետևյալ հարցերը, որպեսզի օգնեք նրանց բացահայտել այն սկզբունքները, որոնք Հարեղի եղբայրը ունեցավ իր փորձառության ժամանակ.

- Ըստ օդի խնդրի հետ կապված լուծման օրինակի, ինչպե՞ս է երբեմն Տերն օգնում մեզ լուծել մեր խնդիրները կամ պատասխանում մեր հարցերին: (Երբեմն Տերն ասում է, թե ինչպես լուծել խնդիրը և մեզանից ակնկալվում է հետևել Նրա հրահանգներին:)
- Ըստ ուղղության խնդրի հետ կապված լուծման օրինակի, ինչպե՞ս է երբեմն Տերն օգնում մեզ լուծել մեր խնդիրները կամ պատասխանում մեր հարցերին: (Երբեմն Տերն Ինքն է հոգում խնդրի մասին:)
- Ըստ լույսի խնդրի հետ կապված լուծման օրինակի, ինչպե՞ս է երբեմն Տերն օգնում մեզ լուծել մեր խնդիրները կամ պատասխանում մեր հարցերին: (Երբեմն Տերը պահանջում է, որ մենք խնդրի լուծման առաջարկ անենք և խնդրենք Նրա հաստատումը և օգնությունը այն իրագործելու համար:)

Հետևյալ սկզբունքը գրեք գրատախտակին. ***Եթե մենք կանչենք Տիրոջ անունը և անենք մեր բաժինը մեր խնդիրների լուծման համար, մենք կստանանք Տիրոջ օգնությունը:*** Օգնելու համար ուսանողներին կիրառել այս սկզբունքը, խնդրեք նրանց մտածել այն կարևոր որոշմամ մասին, որի մասին մտածում էին մի քանի րոպե առաջ: Այնուհետև խնդրեք նրանց խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Ձեր կարծիքով, ի՞նչ է Տերն ակնկալում ձեզանից, որ անեք կարևոր որոշումներ կայացնելիս:
- Ի՞նչ կարող է անել Տերը ձեզ օգնելու համար:
- Ինչպե՞ս կարող եք ցույց տալ ձեր վստահությունը Աստծո հանդեպ այդ որոշումը կայացնելիս:

Ուսանողներին մի քանի րոպե ժամանակ տվեք այսօրվա սովորածը գրելու համար: Կիսվեք ձեր վկայությամբ այն մասին, որ երբ մենք հավատարմորեն կանչում ենք Տիրոջ անունը և անում մեր բաժինը մեր խնդիրների լուծման համար, Նա կուղեկցի և կօգնի մեզ համաձայն Իր իմաստության և զորության:

ԴԱՍ 145

# Եթեր 3

## Նախաբան

Տիրոջ այն հարցին ի պատասխան, թե— «Ի՞նչ կկամենաս, որ ես անեմ, որ դուք լույս ունենաք ձեր նավերում», Հարեդի եղբայրը պատրաստում է տասնվեց քարեր և խոնարհաբար Տիրոջը խնդրում դիպչել դրանց «որ դրանք կարողանան փայլել խավարում» (Եթեր 2.23; 3.4): Քանի որ Հարեդի եղբայրն ուներ զորեղ հավատք, նա տեսավ Տիրոջ ձեռքը դիպչելիս քարերին: Այնուհետև Տերն Իրեն ցույց տվեց Հարեդի եղբորը և հայտնեց շատ բաներ: Տերը պատվիրեց Հարեդի եղբորը, որպեսզի նա գրեր այն, ինչ տեսել ու լսել էր և կնքել այդ բաները մինչ Տերը կցանկանար ի հայտ բերել դրանք:

## Ուսուցանման առաջարկներ

### Եթեր 3.1–20

*Տերը դիպչում է քարերին և լուսավորում հարեդացիների բեռնանավերը և ցույց տալիս Իրեն Հարեդի եղբորը*

Այնուհետև ուսանողներին տվեք հետևյալ հարցը և մի ուսանողի խնդրեք պատասխանները գրել գրատախտակին:

- Որո՞նք են այն մի քանի բաները, որոնց համար երիտասարդները անկեղծորեն աղոթում են:

Ուսանողներին խնդրեք պատկերացնել, թե իրենց ընկերներից մեկն աղոթում է գրատախտակին գրված որևէ բանի համար: Այդ ընկերը կցանկանար իմանալ, թե ինչպես բարելավեր իր աղոթքները և արարքները, որպեսզի կարողանար ստանալ Տիրոջ օգնությունն ու առաջնորդությունը: Հորդորեք ուսանողներին մտածել այդ խնդրանքի մասին, երբ նրանք կուսումնասիրեն Հարեդի եղբոր օրինակը Եթեր 3-ում, չմոռանալով իրենց մտքերով կիսվել ընկերների հետ:

Ուսանողներին հիշեցրեք, որ անցած դասերի ժամանակ նրանք քննարկել են այն պատմությունը, երբ Հարեդի եղբայրը Տիրոջը հարցրել էր, թե ինչպես ապահովեր լույս հարեդացիների բեռնանավերի համար:

- Ի՞նչ արեց Հարեդի եղբայրը, որպեսզի լույս ապահովեր բեռնանանվերի համար (տես Եթեր 3.1):
- Ի՞նչ խնդրեց Հարեդի եղբայրը Տիրոջից լույս ունենալու համար (տես Եթեր 3.1, 4):
- Հարեդի եղբոր գործողությունների մեջ հատկապես ի՞նչը ձեզ վրա տպավորություն գործեց:

Շեշտեք, որ Հարեդի եղբայրը շատ ջանքեր թափեց քարերը պատրաստելու համար: Այնուհետև թող ուսանողները մտածեն, թե որքա՞ն արդյունավետ կլիներ լուսավորությունը, եթե Տերը չդիպչեր քարերին: Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Եթեր 3.2–5, ուշադրություն դարձնելով այն արտահայտություններին, որոնք ցույց են տալիս Հարեդի այն ընկալումը, որ նա կախված է Տիրոջից:

Կարդալուց հետո ուսանողներին բաժանեք զույգերի: Խնդրեք նրանց միմյանց հետ կիսվել իրենց գտածով: Առաջարկեք նաև, որ նրանք կիսվեն նրանով, թե Հարեդի եղբոր աղոթքի մեջ ինչը նրանց դուր եկավ:

Եթեր 3.2 կարդալուց հետո ուսանողների մոտ կարող են հարցեր ծագել, թե ինչ է նշանակում «մենք քո առաջ անարժան ենք» և «մեր էությունները շարունակ չար են դարձել» արտահայտությունները: Օգնեք նրանց հասկանալ, որ երբ Հարեդի եղբայրն ասաց այս բառերը, նա նկատի ուներ այն կարգավիճակը, որը մենք ժառանգել ենք «անկման պատճառով»: Մենք ֆիզիկապես և հոգեպես առանձնացել ենք Աստծուց և շարունակում ենք առանձնանալ, երբ մենք մեղք ենք գործում: Նրա հետ համեմատած մենք թույլ ու անարժան ենք: Առանց Նրա օգնության, մենք երբեք չենք կարող վերադառնալ ապրելու Նրա ներկայության մեջ:

Որպեսզի օգնեք ուսանողներին հետագայում ավելի լավ իրենց կարդացած հատվածները հասկանալ, տվեք հետևյալ հարցերը.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր մեզ համար գիտակցելը մեր կախվածությունը Տիրոջից, երբ մենք Նրա օգնությանն ենք դիմում:
- Եթեր 3.1–5-ում ի՞նչ ապացույցներ, ըստ ձեզ, ուներ Հարեդի եղբայրն այն մասին, որ Տերը կարող է օգնել իրեն լուծել խնդիրը: (Եթե անհրաժեշտ է, ուսանողներին հուշեք, որ փնտրեն այնպիսի արտահայտություններ, որոնք նկարագրում են Հարեդի եղբոր ջանքերը, և արտահայտություններ, որոնք ցույց են տալիս նրա վստահությունը Տիրոջ հանդեպ:)

Ընդգծելու համար Հարեդի եղբոր հավատքի զորությունը, ուսանողներին խնդրեք կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ արտահայտությունը.

«Անշուշտ Աստված, ինչպես նաև ընթերցողը զգում է ինչ-որ վառ բան այս մարդու հավատքի մանկական անմեղության և ջանքերի մեջ: *«Ահա, ո՜վ Տեր, դու կարող ես անել այս»*: Թերևս, սուրբ գրություններում չկա ավելի զորեղ հավատքի միասնական արտահայտություն, արված մարդու կողմից: . . .Այնուամենայնիվ, վստահ չէ մարգարեն իր կարողության վրա, նա *չունի* ոչ մի անվստահություն Աստծո զորության հանդեպ» (“Rending the Veil of Unbelief,” in *Nurturing Faith through the Book of Mormon: The 24th Annual Sidney B. Sperry Symposium* [1995], 12):

Ցույց տվեք այն նկարը, որտեղ Հարեդի եղբայրը տեսնում է Տիրոջ մատը (62478; *Ավետարանի նկարների գիրք* [2009], հր. 85): Մի ուսանողի հանձնարարեք կարդալ Եթեր 3.6: Դասարանին հանձնարարեք հետևել նրան և պատկերացնել, թե այդ հատվածում նկարագրված փորձությունը ինչ էր նշանակում Հարեդի համար:

- Ի՞նչ կմտածեիք կամ կզգայիք դուք, եթե ունենայիք նմանատիպ փորձառություն, ինչպես Հարեդի եղբայրը:

Ամփոփեք Եթեր 3.6–8, մեկնաբանելով, որ երբ Հարեդի եղբայրը տեսավ Տիրոջ մատը, նա «վայր ընկավ Տիրոջ առջև» (Եթեր 3.6): Նա զարմացավ՝ տեսնելով, որ Տիրոջ մատը «մարդու մատի պես էր, նման մսից ու արյունից» (Եթեր 3.6): (Հետագայում Հարեդի եղբայրը իմացավ, որ նա տեսել էր Տիրոջ հոգու մարմինը [տես Եթեր 3.16]:)

Հանձնարարեք ուսանողներին ցածրաձայն կարդալ Եթեր 3.9՝ փնտրելով այն պատճառը, թե ինչու Հարեդի եղբայրը կարողացավ տեսնել Տիրոջ մատը:

Ուսանողների պատասխաններից հետո, հետևյալ անավարտ նախադասությունը գրեք գրատախտակին.

*Եթե մենք խոնարհաբար կանչենք Տիրոջ անունը, Նա կօրհնի մեզ՝ համաձայն մեր . . . և Իր կամքի:*

Թող ուսանողները առաջարկեն այնպիսի բառեր, որոնք կարող են օգտագործվել այս նախադասությունը լրացնելու համար: Ուսանողները պետք է առաջարկեն *հավատք* բառը այս նախադասությունը լրացնելու համար: Նրանք նաև կարող են առաջարկել *ջանքեր, հնազանդություն, կարիքներ,* և *անկեղծություն:* Օգնեք նրանց հասկանալ, որ այդ բոլոր բառերը ներկայացնում են մեր հավատքը: Այնուհետև լրացրեք գրատախտակին գրվածը՝ ***Եթե մենք խոնարհաբար կանչենք Տիրոջ անունը, Նա կօրհնի մեզ՝ համաձայն մեր հավատքի և Իր կամքի:***

Հետ գնացեք դասի սկզբում գրատախտակին գրված բառերի ցուցակին: Ցուցակից ընտրեք մեկ կամ երկու անուն: Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց մտքերով այն մասին, թե ինչպես կարող է որևէ մեկը ցույց տալ իր հավատքը Տիրոջ հանդեպ այս իրավիճակում: Ուսանողների պատասխաններից հետո, ցույց տվեք գրատախտակին հենց նոր գրված սկզբունքը:

- Ինչպիսի՞ փորձ եք ունեցել ձեր կյանքում, որն օգնել է ձեզ հասկանալ, որ այս սկզբունքը ճշմարիտ է:

Որպեսզի օգնեք ուսանողներին կիրառել այս սկզբունքը իրենց կյանքում, հանձնարարեք նրանց մտածել մի իրավիճակի մասին, որտեղ նրանք Տիրոջ օգնության կարիքն ունեն: Նրանց ժամանակ տրամադրեք իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրելու մի ձև, որով նրանք կարող են ավելի շատ հավատք ցուցաբերել, երբ նրանք խոնարհաբար փնտրում են Տիրոջ օգնությունը: Հորդորեք ուսանողներին հետևել իրենց գրածին: Կարող եք կիսվել մի փորձառությամբ այն մասին, երբ դուք օրհնվել եք Տիրոջ հանդեպ հավատք ցուցաբերելու արդյունքում:

***Կիսվել անձնական փորձառությամբ***

Երբ դուք կիսվեք այն փորձառությամբ, որն ունեցել եք ավետարանի սկզբունքներով ապրելու արդյունքում, դուք կարող եք օգնել ուսանողներին հասկանալ, թե ինչպես կիրառել այս սկզբունքները իրենց կյանքում: Ձեր պատմությունը կարճ պատմեք, և միշտ ձեր վկայությունը բերեք, որը հաստատում է այն ինչ դուք գիտեք, կամ ինչպես եք դուք օրհնվել ձեր փորձառության շնորհիվ: Դա կհրավիրի Սուրբ Հոգուն, որը կվկայի ձեր պատմության ճշմարտացիության մասին:

Մի ուսանողի հանձնարարեք կարդալ հետևյալ հայտարարությունը, որով Ջեֆրի Ռ. Հոլլանդը բացատրում է, որ մեր նախկին փորձառությունները կարող են զորացնել մեր հավատքը։

«Նախապատրաստական հավատքը կազմված է նախկինում ունեցած փորձառություններից, որն էլ ապահովում է հավատքի հիմքը» (*Christ and the New Covenant: The Messianic Message of the Book of Mormon* [1997], 18)։

- Բաբելոնյան աշտարակից սկսած, որո՞նք են Հարեդի եղբոր ունեցած այն մի քանի փորձառությունները, որոնք ամենայն հավանականությամբ զորացրել էին նրա հավատքը Տիրոջ հանդեպ։ Ձեր կարծիքով, ինչպե՞ս են այդ փորձառությունները նրան նախապատրաստել ունենալու այդպիսի ուժեղ հավատք, երբ նա քարերը տարավ Տիրոջ մոտ։

Ուսանողներին հանձնարարեք բաժանվել զույգերի և քննարկել հետևյալ հարցերը.

- Ի՞նչ փորձառություններ են զորացրել ձեր հավատքը Տիրոջ հանդեպ։ Ինչպե՞ս կարող են այդ փորձառությունները նախապատրաստել ձեզ ունենալու ձեր կյանքում ավելի մեծ հավատք։

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Եթեր 3.9–12։ Դասարանին հանձնարարեք հետևել նրանց։ Այնուհետև տվեք հետևյալ հարցը.

- Երբ Տերը հարցրեց «Հավատո՞ւմ ես դու այն խոսքերին, որոնք ես կխոսեմ», Հարեդի եղբայրն ասաց, «Այո՛, Տե՛ր» (Եթեր 3.11–12)։ Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր կարևոր, որ Հարեդի եղբայրը պարտավորվեց հավատալ Տիրոջ խոսքերին նախքան այն լսելը։

Բացատրեք, որ նախկին փորձառությունների վրա հիմնված հավատքի մասին Երեց Հոլլանդի խոսքերից հետո, նա ուսուցանել է մեզ ավելի լիարժեք հավատքի մասին, որը մենք պետք է զարգացնենք։ Մի ուսանողի հանձնարարեք բարձրաձայն կարդալ Երեց Հոլլանդի հետևյալ հայտարարությունը.

«Քավիչ հավատքը հաճախ պետք է կիրառվի ապագա փորձառությունների հանդեպ՝ դեպի անհայտը, որը հնարավորություն է ընձեռում հրաշքների համար։ Խստապահանջ հավատքը, սարեր շրջող հավատքը, հավատքը՝ որն ուներ Հարեդի եղբայրը, *գերազանցում է* հրաշքներին և գիտելիքին։ . . . Հավատքը՝ դա անվերապահորեն և —նախապես— համաձայնվելն է, անկախ նրանից, թե մոտ և հեռու ապագայում Աստված ինչ պահանջներ կդնի։

Հարեդի եղբոր հավատքը լիարժեք էր» (*Christ and the New Covenant,* 18–19)։

Խրախուսեք ուսանողներին մտածել այն մասին, թե արդյոք իրենք ունեն բավարար հավատք հավատալու Տիրոջը և հետևելու նրան, ինչը Նա կհայտնի իրենց, նույնիսկ մինչև Նա ցույց կտա դա։

Հանձնարարեք ուսանողներին ցածրաձայն կարդալ Եթեր 3.13–20՝ ուշադրություն դարձնելով, թե ինչ օրհնություն ստացավ Հարեդի եղբայրը իր հավատքի շնորհիվ։ Կարող եք ժամանակ տրամադրել, որպեսզի նրանք գրի առնեն նրա սովորած ճշմարտությունները և ունեցած փորձառությունները։ Երբ ուսանողները վերջացնեն գրելը, նրանցից մի քանիսին խնդրեք կիսվել իրենց գրածով։

Այս դասի սկզբում, երբ ուսանողները կարդացին Տիրոջ մատը Հարեդի եղբորը տեսանելի դարձնելու մասին, դուք հարցրեցիք նրանց, թե ինչպես նրանք կզգային նման իրավիճակում հայտնվելու դեպքում։ Այժմ, Հարեդի եղբոր փորձառությունների մասին ավելի շատ բան կարդալուց հետո, դուք կարող եք այդ հարցը կրկնել։

Վկայեք, որ **եթե մենք Հարեդի եղբոր նման հավատք ցուցաբերենք, մենք ավելի կմոտենանք Տիրոջը։**

## Եթեր 3.21–28

*Տերը պատվիրում է Հարեդի եղբորը գրի առնել այն բաները, որ նա տեսավ, և կնքել իր հիշատակարանը։*

Մի ուսանողի հանձնարարեք կարդալ Եթեր 3.25–26, և դասարանին հանձնարարեք բացահայտել, թե Տերը տեսիլքում ինչ ցույց տվեց Հարեդի եղբորը։ Թույլ տվեք ուսանողներին կիսվել իրենց սովորածով։

Ամփոփեք Եթեր 3.21–24, 27–28՝ մեկնաբանելով, որ Տերը պատվիրել է Հարեդի եղբորը գրի առնել իր տեսած և լսած բաները և կնքել իր գրածը։ Տերը նաև

մեկնաբանել է, որ Նա կպատրաստի ուղի Հարեդի եղբոր գրածների համար, որպեսզի ապագայում այն թարգմանվի՝— երկու քարերի շնորհիվ: Այդ քարերը կլինեն Ուրիմ և Թումիմ կոչվածի մասը (տես ՎևՈւ 17.1; տես նաև Սուրբ գրքերի ուղեցույց, «Ուրիմ և Թումիմ»):

Ավարտեք, ուսանողներին հորդորելով կիրառել այն, ինչ նրանք այսօր սովորեցին՝— փնտրել ուղիներ իրենց հավատքն ու վստահությունը Տիրոջը ցույց տալու համար: Կիսվեք ձեր համոզվածությամբ, որ եթե մենք կիրառենք հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ, Աստված կօրհնի մեզ այնպես, ինչպես Նա օրհնեց Հարեդի եղբորը:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Եթեր 3.15: «Եվ ես երբեք ինձ ցույց չեմ տվել մարդուն»

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը հնարավոր բացատրություն է ներկայացրել Հիսուսի այն հայտարարությանը, որ Նա երբեք նախկինում Իրեն ցույց չէր տվել մարդուն, մինչև Իրեն Հարեդի եղբորը ցույց տալը.

«Քրիստոսը Հարեդի եղբորն ասում էր, «Եվ ես երբեք ինձ ցույց չեմ տվել մարդուն *այս տեսքով առանց իմ ցանկության, պայմանավորված միայն կրողի հավատքով»:* Որպես կանոն, մարգարեները *հրավիրվում են* Տիրոջ ներկայություն, առաջարկվում են մտնել Նրա ներկայություն միայն Նրա թույտվությամբ: Մյուս կողմից, Հարեդի եղբայրը, կարծես, թե հրում է իրեն վարագույրից ներս, ոչ ինչպես անցանկալի հյուր, սակայն հավանաբար որպես չհրավիրված մեկը: . . .Ակնհայտ է, որ Տերն Ինքն է կապել աննախադեպ հավատքը աննախադեպ տեսիլքի հետ: Եթե տեսիլքը ինքնին եզակի չէր, ապա հավատքը և տեսիլքի ստացման եղանակը պետք էր լիներ այդպես անզուգական: Այդպիսի ուշագրավ հավատք ունենալու միակ եղանակը նրա ունակությունն էր չհրավիրված մարգարեին հասցնել այնտեղ, որտեղ ուրիշները կարող էին լինել միայն Աստծո հրավերով» (*Christ and the New Covenant: The Messianic Message of the Book of Mormon* [1997], 23):

# Տնային ուսումնասիրության դաս

## Մորմոն 8.12–Եթեր 3 (Դաս 29)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը ուսանողները սովորեցին, երբ ուսումնասիրեցին Մորմոն 8.12–Եթեր 3 (դաս 29), որը նախատեսված չէ ձեր դասի ընթացքում ուսուցանելու համար: Դասը, որը դուք ուսուցանում եք, կենտրոնանում է միայն այս վարդապետություններից և սկզբունքներից մի քանիսի վրա միայն: Ձեր ուսանողների կարիքները իմանալու համար հետևեք Սուրբ Հոգու հուշումներին:

### Օր 1 (Մորմոն 8.12–41)

Ուսանողները բացահայտեցին, որ Մորոնին տեսավ մեր օրերը և որ նա գրեց այն պայմանների մարգարեական նկարագրությունների մասին, որոնցում մենք ապրում ենք: Նրանք կարողացան տեսնել, թե ինչու է Մորմոնի Գիրքը արժեքավոր նվեր հանդիսանում Տիրոջից, որը կարող է առաջնորդել նրանց վերջին օրերի ընթացքում: Վերջին օրերի մասին Մորոնիի նկարագրությունից ելնելով, ուսանողները նաև սովորում են, որ Աստված մեզանից հաշիվ կպահանջի այն բանի համար, թե ինչպես ենք մենք վերաբերվում աղքատներին և կարիքավորներին:

### Օր 2 (Մորմոն 9)

Մորոնին ավարտեց իր հոր հիշատակարանը՝ հայտարարելով, որ եթե մենք ապաշխարենք և կանչենք առ Աստված, մենք կլինենք անբիծ, երբ մտնենք Նրա ներկայության մեջ: Մորոնիից ուսանողներն իմանում են, որ քանի որ Աստված անփոփոխ է, Նա հրաշքներ ի հայտ կբերի համաձայն Իր զավակների հավատքի, և եթե մենք հավատքով աղոթենք Երկնային Հորը Հիսուս Քրիստոսի անունով, Նա մեզ կշնորհի օրհնություններ, որոնք կօգնեն մեզ մեր փրկության ժամին:

### Օր 3 (Եթեր 1–2)

Ուսանողները սովորեցին, որ Եթերի գիրքը Մորոնիի 24 ոսկյա թիթեղների կրճատումն է, որը հայտնաբերվել էր Լիմքիի ժողովրդի կողմից, ինչպես գրված է Մոսիայի գրքում: Այդ թիթեղները տալիս են Հարեդացիների պատմությունը, ովքեր Տիրոջ կողմից առաջնորդվել են խոստումի երկիր: Հարեդացիների փորձառությունները կարդալով, ուսանողները սովորեցին, որ երբ մենք հավատքով ենք շարժվում Տիրոջ կողմից ցույց տրված ուղղությամբ, մենք կարող ենք հետագա առաջնորդությունը ստանալ Նրանից: Խոստումի երկիր ճամփորդության ժամանակ մի պահի Տերը խրատում է Հարեդի եղբորը Իրեն չդիմելու համար: Այդ փորձառությունը ուսումնասիրելիս, ուսանողները սովորեցին Երկնային Հորը պարբերաբար իրենց աղոթքներում կանչելու կարևորության մասին: Հարեդի եղբոր փորձառությունը Տիրոջ հետ բեռնանավերը կառուցելու ժամանակ օգնեց ուսանողներին հասկանալ, որ երբ մենք կանչում ենք առ Տերը և անում ամեն ինչ մեր խնդիրները լուծելու համար, ապա մենք կստանանք Տիրոջ օգնությունը:

### Օր 4 (Եթեր 3)

Երբ Հարեդի եղբայրը փորձեց լուծել խնդիրը՝ բեռնանավերին լույս տրամադրելով, նա ցույց տվեց, որ եթե մենք խոնարհաբար կանչենք առ Տերը, Նա կօրհնի մեզ համաձայն մեր հավատքի և Իր կամքի: Ուսանողները սովորեցին, որ եթե մենք հավատք գործադրենք Տիրոջ հանդեպ, մենք ավելի կմոտենանք Նրան: Հարեդի եղբայրն ապրեց այդ սկզբունքներով և նա տեսավ Փրկչի հոգևոր մարմինը և երկրի երեսին բոլոր բնակիչների մասին ամենահրաշալի տեսիլքը:

## Նախաբան

Եթերի գիրքը Հարեդացիների պատմության Մորոնիի կրճատումն է: Մարգարե Եթերը կազմել է այդ հիշատակարանը 24 ոսկյա թիթեղների վրա, որոնք հայտնաբերվել են Թագավոր Լիմքիի մի խումբ մարդկանց կողմից: Հետևյալ ուսումնական մտքերը կօգնեն ուսանողներին հասկանալ որոշ սկզբունքներ աղոթքի մասին, որոնք ուսուցանվում են Եթեր 1-ում:

# Ուսուցանման առաջարկներ

## Եթեր 1

***Իր աղոթքների շնորհիվ Հարեդի եղբայրը, նրա ընտանիքը և ընկերները ստացան գթություն և առաջնորդություն:***

Դասը սկսեք ուսանողներին հանձնանարելով մտածել մի իրավիճակի մասին, որտեղ իրենք հայտնվել էին և իսկապես զգում էին, որ աղոթքի կարիք ունեն: Մի քանի ուսանողի հրավիրեք կիսվել իրենց անձնական փորձառություններով:

Ուսանողներին հիշեցրեք, որ Եթերի գիրքը Հարեդացիների հիշատակարանի Մորոնիի կրճատումն է: Հարեդը և նրա եղբայրը, նրանց ընկերներն ու նրանց ընտանիքները ապրել են Բաբելոնյան Աշտարակի ժամանակներում (մոտավորապես 2200 Ք.ա), երբ Աստված խառնեց մարդկանց լեզուները: Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Եթեր 1.33–35, և դասարանի անդամներին հանձնարարեք ուշադրություն դարձնել այն պատճառներին, որոնց համար Հարեդը և իր եղբայրը զգացին աղոթելու կարիքը: Նախքան նա կկարդա, դուք կարող եք բացատրել, որ «աղաղակել առ Տերը» ևս մեկ ձև է «աղոթք» ասելու: Այնուհետև տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ օգնության կարիք ունեին Հարեդը և Նրա եղբայրը Տիրոջից:
- Ի՞նչ են ուսուցանում ձեզ այս հատվածները իր եղբոր հավատքի հանդեպ Հարեդի զգացումների մասին:

Ուսանողներին բաժանեք զույգերի: Հանձնարարեք յուրաքանչյուր զույգի հերթականությամբ բարձրաձայն կարդալ Եթեր 1.35–42: Նախքան նրանց կարդալը խնդրեք նրանց ուշադրություն դարձնել հետևյալ արտահայտություններին՝(1) ամեն անգամ Հարեդի եղբայրը աղաղակում է առ Տերը և (2) ամեն անգամ, երբ Տերը գութ է ունենում Հարեդի եղբոր հանդեպ՝ որպես նրա աղոթքների արդյունք: Բավարար ժամանակ անց, մի քանի զույգի հրավիրեք կիսվել օրինակներով, երբ Տերը շարունակական աղոթքների արդյունքում գութ է ցուցաբերում Հարեդի եղբորը և նրա ընտանիքին:

Հարցրեք. Ի՞նչ սկզբունքներ մենք կարող ենք սովորել աղոթքի մասին այս հատվածների միջոցով: (Երբ ուսանողները կիսվեն իրենց բացահայտած սկզբունքներով, նշեք հետևյալ սկզբունքը՝ ***Եթե մենք հավատքով անընդհատ աղաղակենք առ Աստված, Նա գութ կունենա մեր հանդեպ:*** Այս սկզբունքը գրեք գրատախտակին):

Ուսանողներին բացատրեք, որ կարևոր է հիշել, որ «աղոթքը մի գործողություն է, երբ Հոր և զավակի ցանկությունները համընկնում են: Աղոթքի նպատակը ոչ թե Աստծո կամքը փոխելն է, այլ ապահովելը մեր և ուրիշների օրհնությունները, որոնք Աստված կամենում է շնորհել, բայց որոնք մենք պետք է խնդրենք, որպեսզի ստանանք» (Սուրբ գրքերի ուղեցույց, «Աղոթք»):

Ուսանողներին հանձնարարեք վերանայել Եթեր 1.34, 36, 38 և ուշադրություն դարձնել այն բանին, թե Հարեդի եղբայրը ինչ խնդրեց իր աղոթքներում: Մի ուսանողի խնդրեք «աղաղակել առ Աստված» արտահայտությանը առնչվող բաները գրել այն սկզբունքի, որը դուք գրել եք գրատախտակին:

Ընդգծեք, որ Հարեդը և նրա եղբայրն ունեին հավատք և ցանկանում էին լինել հնազանդ Տիրոջը: Ուսանողներին առաջարկեք նշել Եթեր 1.38–ի վերջում գտնվող «Եկեք հավատարիմ լինենք Տիրոջը» արտահայտությունը:

Ուսանողներին հանձնարարեք վերանայել Եթեր 1.35, 37, 40–42 և ուշադրություն դարձնել այն հատուկ եղանակին, որով Աստված օրհնեց Հարեդի եղբորը և նրա ընտանիքին ու ընկերներին: Երբ ուսանողները բացահայտեն այդ օրհնությունները, հանձնարարեք մի ուսանողի գրատախտակին գրված *գթություն* բառի տակ թվել այդ օրհնությունները: Նշեք, որ Տերը Հարեդի եղբորը տվեց այն օրհնությունները, որոնք նա խնդրել էր իր աղոթքում:

Հետևյալ հարցերը գրեք գրատախտակին կամ նախապատրաստեք թերթիկի տեսքով: Ուսանողներին հանձնարարեք՝ վերագրելով գրատախտակին գրված սկզբունքները իրենց, զույգերով քննարկել հարցերը: Այս հարցերը կօգնեն նրանց հասկանալ և զգալ սկզբունքի կարևորությունը:

*Ձեր կարծիքով, «աղաղակել առ Աստված» ինչո՞վ է տարբերվում պարզապես «աղոթք ասելուց»:*

*Ե՞րբ եք դուք կամ ձեր ծանոթը զգացել Երկնային Հոր գթությունը՝ ի պատասխան ձեր աղոթքների:*

*Ի՞նչ կարող եք սովորել Տիրոջ մասին՝ ի պատասխան Հարեդի եղբոր աղոթքներին տրված Նրա պատասխաններից:*

Երբ ուսանողները ժամանակ ունենան քննարկելու այս հարցերը, կարող եք խնդրել նրանց կիսվել իրենց խմբում քննարկած փորձառություններով կամ իրենց քննարկած մտքերով:

Կիսվեք մեր հանդեպ Երկնային Հոր սիրո մասին վկայությամբ և մեզ օրհնելու Նրա ցանկությամբ, երբ մենք անընդհատ կանչում ենք Նրա անունը: Ուսանողներին խնդրել մտածել, թե ինչպես նրանք կարող են կիրառել գրատախտակին գրված սկզբունքը: Օրինակ, նրանք կարող են նպատակ դնել ավելի կանոնավոր կերպով աղոթելու կամ իրենց աղոթքները ավելի անկեղծ դարձնելու: Կարող եք նրանց ժամանակ տալ գրելու իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում այն, ինչ ցանկանում են անել:

Բացատրեք, որ Հարեդի եղբոր աղոթքների ուսումնասիրությունը կարող է մեզ տալ լրացուցիչ գաղափարներ մեր հանդեպ Տիրոջ սիրո մասին և այն օրհնությունների մասին, որոնք գալիս են աղոթքի շնորհիվ: Մի ուսանողի հանձնարարեք բարձրաձայն կարդալ Եթեր 1.43: Դասարանին խնդրեք հետևել նրան, ուշադրություն դարձնելով այն լրացուցիչ օրհնությունների վրա, որոնք Աստված խոստացավ Հարեդին և նրա եղբորը: Ուսանողների պատասխաններից հետո նշեք, որ Հարեդի եղբայրը հատուկ չէր աղոթել այն օրհնության համար, որ իր սերունդները դառնան մեծ ազգ: Կարող եք առաջարկել, որ ուսանողները իրենց սուրբ գրություններում նշեն Եթեր 1.43 –ի վերջին արտահայտությունը, որը պատասխանում է, թե ինչու Աստված Հարեդի եղբոր աղոթքին պատասխանում է այսպես՝ «Որովհետև այս երկար ժամանակաընթացքում դու աղաղակել ես առ ինձ»:

Հարցրեք. Ի՞նչ սկզբունքներ կարող ենք մենք սովորել Հարեդի և նրա եղբայրների հանդեպ Տիրոջ առատաձեռնությունից, ինչպես երևում է Եթեր 1.43–ում:

Կան մի քանի սկզբունքներ, որոնք կարող են ուսուցանվել այդ հատվածից: Մեկ կարևոր սկզբունքն այն է, որ **եթե մենք հավատքով կանոնավոր կերպով աղոթենք Աստծուն, մենք կստանանք օրհնություններ մեր խնդրածից առավել:**

Հարցրեք. Ե՞րբ եք ունեցել փորձառություն, որը ցույց է տալիս, որ այս սկզբունքը ճշմարիտ է: Գիտե՞ք որևէ մեկի, ով ունեցել է նման փորձառություն, կամ կարող եք հիշել որևէ մեկի սուրբ գրություններում: (Ասացեք ուսանողներին, որ մինչև հարցնելը ժամանակ կտաք մտածելու համար: Կարող եք նաև կիսվել ձեր կյանքի օրինակով:)

Այս դասը ավարտեք ձեր վկայությամբ, որ Աստված լսում և պատասխանում է մեր աղոթքներին: Նա իմաստությամբ և գթությամբ լի է և ուրախ է օրհնելու Իր զավակներին: Նա ուրախանում է, երբ մենք անկեղծորեն և շարունակաբար աղոթում ենք Իրեն: Հորդորեք ուսանողներին ավելի շատ ջանք թափել հավատքով աղոթելու համար: Հորդորեք նրանց հիշել, որ Երկնային Հայրը գթությամբ լի է և կպատասխանի նրանց աղոթքներին համաձայն նրա, ինչը, Նրա կարծիքով, կբերի ամենամեծ օրհնությունները իրենց կյանքում:

## Հաջորդ դասը (Եթեր 4–12)

Հաջորդ դասին ուսանողները կիմանան ավելին Հարեդացիների մասին: Չնայած մարգարեները զգուշացրել էին Հարեդացիներին թագավորներ չկարգել, մարդիկ չլսեցին և թագավորները բերեցին ժողովրդին գերության: Մարդիկ, ովքեր ցանկանում են աշխարհիկ զորություն, սովորաբար, օգտագործում են գաղտնի խմբակցություններ՝ առաջ տանելու համար իրենց եսասիրական ցանկությունները: Մորոնին գրում է շատ հրաշալի բաների մասին, որոնք արվեցին, որովհետև որոշ մարդիկ մեծ հավատք ունեին: Նա ուսուցանում է, որ ովքեր իրենց խոնարհեցնում են Ատծո առաջ և ունենում հավատք Նրա հանդեպ, կստանան Նրա փառքը, որը կօգնի հաղթահարել իրենց թուլությունները:

ԴԱՍ 146

# Եթեր 4–5

## Նախաբան

Տերը պատվիրում է Մորոնիին կնքել Հարեդի եղբոր գրված տեսիլքը և բացատրում է, որ այդ գրածները ի հայտ կբերվեն այն ժամանակ, երբ մարդիկ կունենան այնպիսի հավատք, որն ուներ Հարեդի եղբայրը: Մորոնին մարգարեանում է, որ երեք վկաները կբերեն իրենց վկայությունը Մորմոնի Գրքի ճշմարտացիության վերաբերյալ այս վերջին օրերում:

## Ուսուցանման առաջարկներ

### Եթեր 4.1–7

*Մորոնին գրում է և կնքում է Հարեդի եղբոր տեսիլքի ողջ պատմությունը:*

Ուսանողներին հանձնարարեք մտածել մի թանկարժեք իրի մասին, որն արժեքավոր է իրենց կամ իրենց ընտանիքի համար, որը նրանք կցանկանային հեռու պահել փոքր երեխաներից: Օրինակ, դուք կարող եք ցույց տալ կամ նկարագրել ինչ-որ բան, որն արժեքավոր է ձեզ համար:

- Ինչո՞ւ դուք չէիք թույլ տա, որ երեխան դիպչի այդ առարկային:
- Ի՞նչ պետք է անի կամ սովորի երեխան նախքան դուք նրան կվստահեք առարկան:

Բացատրեք, որ ավետարանի ճշմարտությունները արժեքավոր են Տիրոջ համար: Նա ցանկանում է կիսվել դրանցով մեզ հետ, սակայն Նա սպասում է, մինչև որ մենք պատրաստ լինենք դրան: Ուսանողներին հանձնարարեք այս դասի ընթացքում ուսումնասիրել Եթեր 4, հորդորելով նրանց ուշադրություն դարձնել այն սկզբունքներին, որոնք կօգնեն նրանց պատրաստվել ստանալու ճշմարտությունը Տիրոջից:

Մի ուսանողի հանձնարարեք կարդալ Եթեր 4.1–5, իսկ դասարանին հանձնարարեք ուշադրություն դարձնել այն բանին, թե ինչ Տերը պատվիրեց Մորոնիին, որ գրի առնի և կնքի:

- Ի՞նչ էր Մորոնիին պատվիրված «կնքել»:

Բացատրեք, որ Մորոնին ներառել է Հարեդի եղբոր հիշատակարանը, որը հաճախ կոչվում է Մորմոնի Գրքի կնքված մասը: (Կարող եք ցույց տալ աղյուսակը, որը վերնագրված է Մորմոնի Գրքի աղբյուրները, որը գտնվում է այս ձեռնարկի վերջում գտնվող հավելվածում:)

- Ինչպե՞ս է Մորոնին բացատրում այն, թե ինչ տեսավ Հարեդի եղբայրը: (Տես Եթեր 4.4:)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի շատ բան իմանալու այն մասին, թե Տերը ինչ ցույց տվեց Հարեդի եղբորը, հանձնարարեք նրանց ցածրաձայն կարդալ Եթեր 3.25–26 և 2 Նեփի 27.8–10: Այնուհետև տվեք հետևյալ հարցերը.

- Ըստ Եթեր 3.25–26 –ի, ի՞նչ Տերը ցույց տվեց Հարեդի եղբորը:
- Ըստ 2 Նեփի 27.10, ի՞նչ է պարունակում Մորմոնի Գրքի կնքված մասը:

Մի ուսանողի հանձնարարեք բարձրաձայն կարդալ Եթեր 4.6–7: Դասարանին հանձնարարեք հետևել և գտնել այն պայմանները, որոնք պետք է գոյություն ունենային նախքան Հարեդի եղբորը տրված հայտնությունները հայտնի կդարձվեին: Կարող եք ուսանողներին խորհուրդ տալ նշել իրենց սովորածը իրենց սուրբ գրություններում:

- Ի՞նչ պայմաններ գտաք:
- Ի՞նչ սկզբունքներ հայտնություն ստանալու մասին մենք կարող ենք սովորել այս հատվածից: (Օգնեք ուսանողներին հասկանալ, **որ եթե մենք ապաշխարում ենք և գործադրում հավատք առ Հիսուս Քրիստոսը, մենք կարող ենք ստանալ լրացուցիչ հայտնություններ:**)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ մենք կարիք ունենք ապաշխարելու և դառնալու մաքուր լրացուցիչ հայտնություններ ստանալու համար:

Օգնելու համար ուսանողներին հասկանալ, թե ինչ է նշանակում «հավատք կգործադրեն . . . ճիշտ ինչպես Հարեդի եղբայրն արեց» (Եթեր 4.7) արտահայտությունը, հանձնարարեք նրանց իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում թվել որքան հնարավոր է շատ տարբերակներ, թե Հարեդի եղբայրը քանի ձևով ցույց տվեց հավատքը Տիրոջ հանդեպ: Կարող եք նրանց առաջարկել իրենց ցուցակը կազմելիս վերանայել Եթեր 1–3: Մտածելուց և գրելուց հետո, մի քանի ուսանողների հանձնարարեք կարդալ իրենց թված որոշ օրինակներ և մեկնաբանել, թե ինչու են այդ օրինակները տպավորել իրենց:

Ուսանողներին հիշեցրեք դասի սկզբում սովորած արժեքավոր իրի մասին և այն պայմանները, որոնց դեպքում նրանք կվստահեին երեխային: Վկայեք, որ նմանապես Տերը պահանջում է, որ Իր զավակները բավարարեն որոշ պայմանների նախքան Նա կհայտնի նրանց Իր ողջ ճշմարտությունը: Նա մեզանից պահանջում է, որ ցույց տանք մեր հոգևոր պատրաստվածությունը և հավատքը:

## Եթեր 4.8–19

*Տերն ուսուցանում է, թե ինչ մենք պետք է անենք, որպեսզի ստանանք հետագա հայտնություններ:*

Մի կտոր շոր պահեք ձեռքում: Բացատրեք, որ Տերն ուսուցանել է սկզբունքներ, որոնք կօգնեն մեզ ստանալու հայտնություններ: Երբ Նա ուսուցանեց այդ սկզբունքները, Նա անդրադարձավ վարագույրին: Վարագույրը շոր է, որն օգտագործվում է ինչ-որ բան ծածկելու համար:

Ուսանողներին հանձնարարեք ցածրաձայն կարդալ Եթեր 4.15 և փնտրել արտահայտություն, որը պարունակում է *վարագույր:*

- Ի՞նչ տեսակի վարագույրի մասին էր Տերը խոսում: («Անհավատության վարագույրը»:) Ինչպե՞ս է անհավատությունը նման վարագույրի:
- *Պատռել* բառը նշանակում է ծվատել կամ բաժանել: Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «պատռել անհավատության վարագույրը»:

Մի ուսանողի հանձնարարեք բարձրաձայն կարդալ Եթեր 4.8, մեկ ուրիշի՝ Եթեր 4.11, ևս մեկի՝ Եթեր 4.15: Դասարանին հանձնարարեք հետևել և բացահայտել, թե ինչը կարող է մեզ հետ պահել հայտնությունները ստանալուց և ինչը կարող է օգնել մեզ «պատռել անհավատության վարագույրը» և ստանալ ավելի շատ հայտնություններ:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «կհակառակի Տիրոջ խոսքին» (Եթեր 4.8):
- Ըստ Եթեր 4.8–ի ի՞նչ հետևանքների ենք մենք հանդիպում, երբ մենք հակառակվում ենք Տիրոջ խոսքին:
- Ըստ Եթեր 4.11–ի որն է օրհնություններից մեկը, որը մենք ստանում ենք Տիրոջ խոսքին հավատալու արդյունքում:

Գրատախտակի վրա գրեք հետևյալ անավարտ նախադասությունը.

*Երբ մենք հավատում ենք Տիրոջ խոսքին, . . .*

Ուսանողներին հանձնարարեք ավարտել այս նախադասությունը համաձայն նրա, ինչ նրանք սովորել են այս հատվածներից: Չնայած ուսանողների պատասխանները կարող են տարբեր լինել, համոզվեք, որ նրանք բացահայտում են հետևյալ սկզբունքը. ***Երբ մենք հավատում ենք Տիրոջ խոսքին, Տերը կօրհնի մեզ հետագա հայտնություններում:*** Այս սկզբունքը գրեք գրատախտակին: Կարող եք նաև ուսանողներին հորդորել գրել դա իրենց սուրբ գրություններում Եթեր 4.11–ի կողքին:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այս սկզբունքը, հարցրեք.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ մենք պետք է հավատանք այն ճշմարտություններին, որոնք մենք արդեն ստացել ենք, նախքան Տերը կտա մեզ ավելին:

Մի ուսանողի հանձնարարեք գրատախտակին գրել հավատք Տիրոջ խոսքի հանդեպ գործադրելու հետևյալ օրինակները. *սուրբ գրությունների անհատական ուսումնասիրություն, հետևել Սուրբ Հոգու հուշումներին, հետևել Եկեղեցու տեղի ղեկավարներին, ուսումնասիրել սուրբ գրությունները եկեղեցում և սեմինարիայում, հետևել վերջին օրերի մարգարեների խոսքերին:*

Ուսանողներին առաջարկեք մտածել, թե հետևյալ ձևերով Տիրոջ խոսքի հանդեպ հավատք ցույց տալով ինչպես է բերել նրանց հետագա հայտնություններ: Մի քանի ուսանողի հրավիրեք կիսվել իրենց փորձառությամբ:

Կրկին անդրադարձեք գրատախտակին գրված օրինակներին: Ուսանողներին առաջարկեք լուռ մտածել, թե որքան լավ են իրենք ցույց տալիս իրենց հավատքը Աստծո խոսքի հանդեպ: Առաջարկեք, որպեսզի յուրաքանչյուր օրինակի համար իրենք իրենց գնահատական տան 1-10 սանդղակով, որտեղ 10 գնահատականը նշանակում է, որ նրանք լավ են դրանում: Ուսանողներին հանձնարարեք իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրել մի եղանակի մասին, որով կարող են ցույց տալ ավելի մեծ հավատք այն ուղղությամբ, որն արդեն ստացել են Տիրոջից: Ձեր վկայությամբ կիսվեք գրատախտակին գրված սկզբունքի մասին և հորդորեք ուսանողներին հետևել դրան, նկատի ունենալով իրենց գրած նպատակը:

Գրատախտակից ջնջեք «հավատալ Տիրոջ խոսքին» նախադասությունը: Նշեք, որ Տերն ուսուցանել է լրացուցիչ սկզբունքներ այն մասին, թե ինչպես ստանալ հայտնություն: Հանձնարարեք ուսանողներին ցածրաձայն կարդալ Եթեր 4.13–15, փնտրելով այլ բաներ, որ կարող են անել, որպեսզի ստանան հայտնություն Տիրոջից:

Կարդալուց հետո ուսանողներին հանձնարարեք առաջարկել տարբերակներ նախադասությունը լրացնելու համար: Պատասխանները կարող են ներառել հետևյալ սկզբունքները. **Երբ մենք գանք առ Տերը, Նա կօրհնի մեզ հետագա հայտնություններով: Երբ մենք խոնարհաբար աղոթենք, Տերը կօրհնի մեզ հետագա հայտնություններով:**

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ հետևյալ սկզբունքները, տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ է ձեզ համար նշանակում գալ դեպի Տերը: (Պատասխանները կարող են լինել՝ ուսումնասիրել Նրա խոսքը, մեր սրտերը դարձնել դեպի Նա, ապաշխարել, և հետևել ու հնազանդվել Նրան:)
- Ի՞նչ է նշանակում ունենալ կոտրված սիրտ և փշրված հոգի: (Լինել խոնարհ, ապաշխարող և ընկալունակ Տիրոջ կամքի հանդեպ:) Ինչո՞ւ են այս բնութագրերը կարևոր, երբ մենք աղոթում ենք Տիրոջից շարունակական հայտնություններ ստանալու համար:

Հրավիրեք ուսանողներին մտածել, թե ինչպես նրանք կարող են ներառել այս սկզբունքները հայտնություններ ստանալու իրենց ջանքերում:

Ամփոփեք Եթեր 4.17–19, բացատրելով, որ Տերը հայտարարել է, որ Մորմոնի Գրքի ի հայտ գալը կլինի նշանը այն բանի, որ Աստծո գործը վերջին օրերում սկսվել է: Նա նաև կոչ է արել բոլոր մարդկանց ապաշխարել և գալ դեպի Նա:

## Եթեր 5

*Մորոնին հայտարարում է, որ երեք վկաներ կտեսնեն և կբերեն վկայություն թիթեղների մասին:*

Ցուցադրեք Ջոզեֆ Սմիթը Մորմոնի Գիրքը թարգմանելիս նկարը (*Ավետարանի նկարների գիրք* [2009], հ. 92): Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Եթեր 5.1–3: Դասարանին հանձնարարեք հետևել և պատկերացնել, թե ինչ էր Ջոզեֆ Սմիթը զգում Մորմոնի Գիրքը թարգմանելիս, և գիտակցել, որ այդ խոսքերը գրված են անմիջապես իրեն Մորոնի կողմից շուրջ 1400 տարի առաջ:

- Ի՞նչ ասաց Մորոնին «կնքված» թիթեղների մասին:
- Ըստ Եթեր 5.2–3-ի, ի՞նչ էր Ջոզեֆ Սմիթին արտոնված անել թիթեղների հետ:

Ուսանողներին հարցրեք, թե արդյոք իրենք կարող են թվել Մորմոնի Գրքի երեք վկաներին և հիշել նրանց վերապրածը: (Եթե ուսանողները օգնության կարիք ունենան, հանձնարարեք նրանց կարդալ Մորմոնի Գրքի սկզբում գրված «Երեք վկաների վկայությունը»): Կարող եք նշել, որ ի հավելումն երեք վկաների, ուրիշները վկայել են ոսկյա թիթեղների իրականության մասին, այդ թվում նաև՝ Աստվածազլխի անդամները (տես Եթեր 5.4), Մորոնին (տես Եթեր 5.6), Ջոզեֆ Սմիթը և երեք վկաները:

- Ինչպե՞ս դուք կարող եք լինել Մորմոնի Գրքի վկան, նույնիսկ առանց թիթեղները տեսնելու: Ինչպե՞ս կարող է Մորմոնի Գրքի մասին վկայությունը ազդեցություն թողնել այլ մարդկանց վրա:

Այս դասը ավարտելու համար մի քանի ուսանողների խնդրեք կիսվել իրենց վկայությամբ Մորմոնի Գրքի մասին:

ԴԱՍ 147

# Եթեր 6

## Նախաբան

Տիրոջ պատվիրաններին համաձայն պատրաստություններ տեսնելով, Հարեդացիները բեռնեցին իրենց նավերը՝ հավատալով, որ Տերն իրենց դժվար ճամփորդության միջոցով կհասցնի խոստումի երկիր: Տերն ուղարկեց քամիներ, որոնք քշում էին բեռնանավերին ալիքների վրայով և շատ անգամներ նրանք թաղվեցին ծովի խորքերում, այդուհանդերձ քամիները տեղափոխում էին նրանց նավերը դեպի խոստումի երկիր: Նոր երկրում հարմարվելուց հետո մարդիկ ընտրեցին թագավոր, չնայած Հարեդի եղբոր նախազգուշացումներին:

## Ուսուցանման առաջարկներ

### Եթեր 6.1–12

*Տերը քամի է առաջացնում Հարեդացիների բեռնանավերը խոստումի երկիր քշելու համար*

Դասից առաջ գրեք հետևյալը գրատախտակին.

*Կիսվել ավետարանով ընկերոջ հետ*

*Բարոյապես մնալ մաքուր*

*Ընտրել բարձր չափանիշներ ունեցող ընկերներ*

*Կյանքում սահմանել ճիշտ առաջնահերթություններ*

Նշեք, որ սրանք օրինակներ են, թե ինչ էր Տերը ցանկանում, որ մենք անենք: Այնուամենայնիվ, որոշ մարդիկ մտածում են, որ այս բաները շատ դժվար են: Ուսանողներին հրավիրեք մտածել այլ օրինակների մասին, որոնք կարելի է ավելացնել ցուցակին: Բացատրեք, որ խոստումի երկիր Հարեդացիների ճամփորդության պատմությունը պարունակում է սկզբունքներ, որոնք կարող են առաջնորդել մեզ այն ժամանակ, երբ մենք գտնում ենք, որ դժվար է անել այն , ինչ Տերը պատվիրել է: Հորդորեք ուսանողներին Եթեր 6 ուսումնասիրելու ժամանակ ուշադրություն դարձնել այն սկզբունքների վրա, որոնք կօգնեն նրանց գրատախտակին թվարկված դժվարությունների ժամանակ:

Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Եթեր 2.24–25: Դասարանին հանձնարարեք հետևել, ուշադրություն դարձնելով Հարեդացիներին՝ խոստումի երկիր իրենց ճամփորդության Տիրոջ նախազգուշացման վրա:

- Ի՞նչ Տերը խոստացավ անել՝ օգնելու համար Հարեդացիներին ապահով հասնել խոստումի երկիր:

Հիշեցրեք ուսանողներին, որ ալիքներին ու քամիներին դիմակայելու նպատակով Հարեդացիները բեռնանավերը պատրաստել էին «ամանի պես անջրանցիկ» (Եթեր 2.17), ունենալով անցքեր վերևում և ներքևում, որոնք կարող էին բացվել օդի համար: Մի ուսանողի հանձնարարեք բարձրաձայն կարդալ Եթեր 6.1–4: Դասարանին հանձնարարեք հետևել և գտնել այլ եղանակները, որոնցով Հարեդացիները պատրաստվեցին այս դժվարություններին:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում նստել նավերը «իրենց հանձնելով Տիրոջը՝ իրենց Աստծուն»: (Նրանք վստահեցին իրենց Աստծո խնամքին ու պահպանմանը:)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր կարևոր Հարեդացիների համար հանձնել իրենց Տիրոջը, այն բանից հետո, ինչ նրանք կարողացել էին անել նախապատրաստվելու համար:
- Այս իրավիճակում ինչո՞ւ կարող էր Տիրոջը վստահելը դժվար լինել: (Եթե ուսանողները չնշեն հետևյալը, ապա դուք կարող եք նշել, որ Հարեդացիները պատրաստեցին իրենց անձնական բեռնանավերը, նրանք չէին կարող կառավարել իրենց նավերը և, հավանաբար, նրանք չգիտեին խոստումի երկրի ճանապարհը կամ թե քանի օր կտևեր ճամփորդությունը:)

Որպեսզի օգնեք ուսանողներին պատկերավոր դարձնել Եթեր 6-ում նկարագրված դեպքերը, հանձնարարեք նրանց պարզ գծագրել Հարեդացիների բեռնանավերը իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: Այնուհետև հանձնարարեք նրանց նկարել կամ թվարկել բեռնանավերի պարունակությունը ըստ Եթեր 6.1–4–ի:

Հանձնարարեք մի քանի ուսանողների հերթականությամբ և բարձրաձայն կարդալ Եթեր 6.5–11: Դասարանին հանձնարարեք հետևել և նայել իրենց նկարածին, մինչ լսում ու պատկերացնում են, թե ինչ է նշանակում ճանապարհորդել այդպիսի նավերով:

- Ձեր կարծիքով, ի՞նչը կարող էր դժվար լինել Հարեդացիների համար բեռնանավերով ճանապարհորդելիս:
- Ըստ Եթեր 6.11–ի, որքա՞ն ժամանակ Հարեդացիները այդպես ճամփորդեցին:
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «ալիքների լեռներ» արտահայտությունը (Եթեր 6.6): Ձեր կարծիքով, ինչպե՞ս դուք կզգայիք, եթե լինեիք Հարեդացիների բեռնանավերում, երբ այդ ալիքները պատճառ հանդիսանային «թաղվելու ծովի խորքերում»: (Կարող եք ուսանողներին հիշեցնել, որ Հարեդացիները պետք է սպասեին, որպեսզի բեռնանավերը դուրս գային ջրի երես, մինչև որ նրանք կկարողանային բացել անցքերը օդ ստանալու համար:)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ սկզբունքը, հարցրեք.

- Ծովն անցնելիս ինչպե՞ս Հարեդացիները ցույց տվեցին իրենց վստահությունը առ Տերը: (Տես Եթեր 6.7, 9:)
- Եթեր 6.5–11 –ում որո՞նք են այն մի քանի արտահայտությունները, որոնք նկարագրում են, թե ինչ արեց Տերը Հարեդացիների համար Իր հանդեպ ունեցած նրանց վստահության պատճառով:

Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Եթեր 6.12, բացահայտելով Հարեդացիների ճամփորդության արդյունքը:

- Ինչո՞ւ համար Հարեդացիները ուրախության արցունքներ թափեցին: Ինչպիսի՞ «գորովագութ ողորմություններ» Տերը տվեց նրանց:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ Հարեդացիների փորձառության մեջ ցուցադրված սկզբունքը, հարցրեք.

- Հարեդացիների ճամփորդության մասին ձեր սովորածից ելնելով, ի՞նչ կանի Տերը մեզ համար, եթե մենք վստահենք Նրան և կատարենք Նրա կամքը: (Սկզբունքներից մեկը, որն ուսանողները կնշեն, այն է, որ ***եթե մենք վստահենք Տիրոջը և կատարենք Նրա կամքը, Նա մեր կյանքում ուղղություն ցույց կտա:*** Այս սկզբունքը գրեք գրատախտակին: Ուսանողներին հանձնարարեք մտածել սկզբունքի մասին և կիսվել փորձառություններով, որոնք օգնել են նրանց իմանալ, որ այն ճշմարիտ է:)

Հանձնարարեք ուսանողներին անդրադառնալ նրան, թե ինչպես կարող են ավելի շատ վստահել Տիրոջը և հետևել Նրա ցուցումներին դժվարին իրավիճակներում, որոնք այժմ առկա են իրենց կյանքում: Բացատրեք, որ նրանք կարող են այլ սկզբունքներ գտնել Եթեր 6.1–12-ում: Գրատախտակից ջնջեք ամեն ինչ, բացի Տիրոջը վստահելու մասին արված արտահայտությունից: Գրատախտակի մի մասում նկարեք բեռնանավի պարզ նկար: Մյուս մասում գրեք *Խոստումի երկիր:*

- Փրկության ծրագրում ինչի՞ հետ կարող է համեմատվել խոստումի երկիրը: (Հավերժական կյանքի:)
- Երբ մենք բախվում ենք կյանքի դժվարություններին, ինչպե՞ս մենք կարող ենք հետևել Հարեդացիների այդ օրինակին: Ինչպե՞ս է Տերն օգնում մեզ, ինչպես Նա օգնեց Հարեդացիներին, մահկանացու կյանքի մեր ճամփորդության ժամանակ: (Ուսանողների պատասխանները պետք է արտահայտեն հետևյալ սկզբունքը. **Եթե մենք վստահենք Տիրոջը, Նա կաջակցի մեզ, մինչ մենք աճում ու նախապատրաստվում ենք հավերժական կյանքին:** Կարող եք առաջարկել, որ ուսանողները գրեն այս սկզբունքները իրենց սուրբ գրություններում՝ Եթեր 6.5–12–ի կողքին:)

Ուսանողներին հանձնարարեք մտածել իրենց կյանքում ունեցած կամ այժմ առկա դժվարությունների մասին: Խնդրեք իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրել, թե ինչպես են իրենց զգացել, երբ

***Պատկերավոր դարձնել***

Եթե ուսանողները պատկերավոր դարձնեն կամ իրենց մտքում ուրվագծեն սուրբ գրության պատմությունը, այդ դեպքերը կդառնան ավելի վառ ու իրական իրենց համար: Սա կարող է օգնել ուսանողներին կապ գտնել սուրբ գրությունների մարդկանց ու դեպքերի միջև և վերլուծել ու հասկանալ պատմությունը ավելի արդյունավետ կերպով:

***Հրավիրեք ուսանողներին կիսվել փորձառություններով***

Երբ ուսանողներին հրավիրեք մտածել սկզբունքի ճշմարտացիության իրենց համոզմունքների մասին, հնարավորություն տվեք Հոգուն ոգեշնչել նրանց, երբ նրանք փորձում են հիշել իրենց զգացումների և փորձառությունների մասին: Ուսանողները պատասխանների ժամանակ կարտահայտեն վկայություններ, նույնիսկ, եթե նրանց պատասխանները չեն պարունակում «Ես կցանկանայի բերել իմ վկայությունը» կամ «Ես գիտեմ» արտահայտությունները:

հավատարմորեն են արձագանքել այդ դժվարություններին, և թե ինչպես է Տերը աջակցել իրենց։

Մի քանի ուսանողի հորդորեք կիսվել իրենց գրածով։ Այնուհետև տվեք հետևյալ հարցը.

- Այսօրվա ձեր սովորածից ելնելով, ի՞նչ խորհուրդ կտաք ինչ-որ մեկին, ով հանդիպում է դժվարությունների։

## Եթեր 6.13–18

### *Հարեդացիներն ուսուցանում են իրենց երեխաներին խոնարհաբար քայլել Տիրոջ առաջ։*

Ամփոփեք Եթեր 6.13–18, բացատրելով, որ երբ Հարեդացիները ժամանեցին խոստումի երկիր, նրանք ընտանիքներով հաստատվեցին և սկսեցին մշակել հողը։ Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Եթեր 6.17, ուշադրություն դարձնելով, թե ինչ ուսուցանեցին Հարեդացիներն իրենց երեխաներին։ Այնուհետև տվեք հետևյալ հարցերը.

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «խոնարհաբար քայլել Տիրոջ առաջ»։ Որո՞նք են այն օրինակները, որ դուք տեսել եք մարդկանց մեջ այս սկզբունքներին հետևելիս։ Ինչպե՞ս են ձեր ծնողները և այլոք հորդորել ձեզ խոնարհաբար քայլել Տիրոջ առաջ։
- Ի՞նչ է նշանակում սովորեցվել «ի վերուստ»։
- Ձեր կարծիքով, ի՞նչ կապ կա խոնարհաբար Տիրոջ առաջ քայլելու և ի վերուստ սովորեցվելու միջև։ (Ուսանողների պատասխանները պետք է պարունակեն հետևյալ սկզբունքը. **Եթե մենք խոնարհաբար քայլենք Տիրոջ առաջ, մենք կարող ենք սովորեցվել ի վերուստ։**)

Ուսանողներին կարող եք հանձնարարել գրել այն պահի մասին, երբ, իրենց կարծիքով, իրենք «սովորեցվել են ի վերուստ»։ Կարող եք հորդորել, որպեսզի մի քանիսը կիսվեն իրենց գրածով։ Հրավիրեք ուսանողներին հետևել Եթեր 6.17–ում գրված սկզբունքին։

## Եթեր 6.19–30

### *Հարեդացիներն ընտրեցին թագավոր*

Ամփոփեք Եթեր 6.19–22, բացատրելով, որ երբ Հարեդը և նրա եղբայրը ծերացան, Հարեդացիները ցանկացան թագավոր ունենալ։ Ուսանողներին հանձնարարեք ուսումնասիրել Եթեր 6.23, որպեսզի իմանան, թե Հարեդի նախազգուշացմամբ ի՞նչ կպատահի, եթե նրանք թագավոր ընտրեն։

Ավարտեք այս դասը, բերելով ձեր վկայությունը դասի սկզբունքների մասին։

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Եթեր 6.1–12: Հարեդացիները ապահով հատում են օվկիանոսը

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը ուսուցանել է, թե ինչպես մենք պետք է դիմակայենք մեր դեմ կանգնած մարտահրավերներին.

«Մենք ապրում ենք այնպիսի մի ժամանակներում, որտեղ աշխարհում շատերը դուրս են մնացել պատվիրաններին համապատասխան անվտանգության հանգրվանից: Սա մի ժամանակ է՝ թույլատրելիության այնպիսի մի հասարակարգով, ով հիմնականում և պարբերաբար առհամարում է կամ խախտում է Աստծո օրենքները: Հաճախ մենք գտնում ենք ինքներս մեզ հոսանքին հակառակ լողալիս և երբեմն այն այնքան դժվար է թվում, որ հոսանքը կարող է մեզ մի կողմ քշել:

Ես հիշում եմ Տիրոջ խոսքերը Մորմոնի Գրքի Եթերի գրքից: Տերն ասել է. «Դուք չեք կարող անցնել այս մեծ ջրանդունդը, եթե ես չնախապատրաստեմ ձեզ ծովի ալիքների դեմ, և քամիների, որոնք առաջ գնացած կլինեն, և ջրհեղեղների, որոնք պիտի գան» [Եթեր 2.25]: Իմ եղբայրներ և քույրեր, Նա պատրաստել է մեզ: Եթե մենք ուշք դարձնենք Նրա խոսքերին և ապրենք պատվիրաններով, մենք հաջողությամբ դուրս կգանք թույլատրելիության և ամբարշտության այս ժամանակից՝ մի ժամանակի, որը կարելի է համեմատել ալիքների, քամիների և ջրհեղեղների հետ, որոնք կարող են ոչնչացնել մեզ: Նա միշտ մտածում է մեր մասին: Նա սիրում է մեզ և կօրհնի մեզ, եթե մենք անենք այն, ինչը ճիշտ է» (“Closing Remarks,” *Ensign* կամ *Liahona,* Nov. 2009, 109):

### Եթեր 6.22–24: Հարեդացիները ընտրում են թագավոր

Սուրբ գրություններում մարգարեները զգուշացրել են թագավորներ ունենալու վտանգի մասին: Դիտարկեք հետևյալ օրինակները.

1. Հարեդի եղբայրը զգուշացրեց իր մարդկանց, որ թագավոր ունենալը կտանի նրանց գերության (տես Եթեր 6.23):
2. Թագավոր Մոսիան զգուշացրեց իր ժողովրդին անարդար թագավորների կողմից ղեկավարվելու մասին: Դրա փոխարեն նա առաջարկեց դատավորների համակարգը: (Տես Մոսիա 29:)
3. Հին կտակարանի Սամուել մարգարեն զգուշացրեց թագավորի կողմից կառավարվելու հետ կապված խնդիրների մասին, երբ նրա ժողովուրդը ցանկացավ թագավոր ունենալ, որպեսզի լինեին «ինչպես որ ամեն ազգերը» (տես Ա Թագավորաց 8):

ԴԱՍ 148

# Եթեր 7–11

## Նախաբան

Հարեդի եղբայրը տխրեց իր ժողովրդի պահանջից՝ ղեկավարվելու թագավորի կողմից: Նա ասաց. «Այս բանը, անկասկած, տանում է գերության» (Եթեր 6.23: Նրա մարգարեությունը կատարվեց երկու սերունդներ անց: Շատ թագավորների թագավորման տարիների ընթացքում Հարեդացիները անցան մի քանի փուլերի միջով, լսելով մարգարեներին և ապրելով արդարակյաց, իսկ հետո մերժեցին մարգարեներին և ապրեցին ամբարշտորեն:

## Ուսուցանման առաջարկներ

### Եթեր 7

*Օրիան և Կիբը արդարությամբ են թագավորում, Կորիհորն ապստամբում է և գրավում թագավորությունը, իսկ նրա եղբայր Սուլեն հետ է գրավում այն, և մարգարեները դատապարտում են ժողովրդի ամբարշտությունը:*

Գրատախտակին նկարեք մի պարզ բանտային խցիկ:

Ուսանողներին հարցրեք, թե ինչպե՞ս կզգային մարդիկ գերության մեջ: Նշեք, որ մարդկանց մեղավոր պահվածքը կարող է նրանց տանել հոգևոր ու ֆիզիկական գերության:

- Ինչպե՞ս է մեղավոր պահվածքը տանում գերության:

Ուսանողները կարող են այսպիսի մտքեր առաջարկել. Իմաստության Խոսքի խախտումը կամ պոռնոգրաֆիայի դիտումը կարող է տանել հակման հանդեպ գերության: Բոլոր տեսակի մեղքերը նվազեցնում են Սուրբ Հոգու զորությունը մեր կյանքում: Բացատրեք, որ այս դասը կօգնի ուսանողներին հասկանալ, թե ինչպես հեռու մնալ գերությունից:

Բացատրեք, որ երբ Հարեդի եղբայրը իմացավ, որ ժողովուրդը թագավոր է ցանկանում, նա զգուշացրեց, որ նարնց որոշումը կտանի գերության (տես Եթեր 6.22–23): Չնայած դրան հարեդացիները ընտրեցին թագավոր: Նրանց առաջին թագավորը Օրիան էր՝ Հարեդի որդիներից մեկը: Նրանց երկրորդ թագավորը Օրիայի որդի Կիբն էր:

Ուսանողներին հանձնարարեք ցածրաձայն կարդալ Եթեր 7.1–2 , որպեսզի իմանան, թե արդյոք Հարեդի եղբոր մարգարեությունը կատարվեց Օրիայի օրոք: Հանձնարարեք նրանց կիսվել սովորածով:

- Ի՞նչ կասեիք մեկին, ով ապրել է Թագավոր Օրիայի օրոք և չէր հավատում, որ Հարեդի եղբոր մարգարեությունը կկատարվեր:

Հանձնարարեք ուսանողներին ցածրաձայն կարդալ Եթեր 7.3–7 , ուշադրություն դարձնելով նրան, թե ինչպես Հարեդի եղբոր մագարեությունը սկսեց ի կատար ածվել: Խնդրեք կիսվել իրենց կարդացածով: Համոզվեք, որ նրանք հասկանում են, որ Թագավոր Կիբը և նրա մարդիկ տարվել էին գերության «Կիբը և նրա ժողովուրդը բնակվեցին գերության մեջ» (Եթեր 7.7):

- Մինչ այս պահը ի՞նչ սկզբունք եք դուք տեսել Եթեր 7-ում: (Երբ ուսանողները կիսվեն իրենց սովորածով, համոզվեք, որ հետևյալ սկզբունքը պարզ է նրանց համար. **Մարգարեների խոսքերի հերքումը կարող է տանել գերության:** )

Ուսանողներին հանձնարարեք Եթեր 7.8–13–ում կարդալ Սուլեի մասին, ով ծնվեց Կիբից, մինչ Կիբը գերության մեջ էր: Նախքան կարդալը, թույլ տվեք նրանց պատկերացնել, որ նրանք նորությունների հաղորդավարներ են, որոնց հանձնարարված է խոսել Եթեր 7.8–13 –ի պատմության մասին: Այնուհետև, հանձնարարեք, որ ամեն մի ուսանող դասարանի մյուս անդամին զեկուցի, թե ինչն է առաջ քաշել պատմության մեջ:

Ամփոփեք Եթեր 7.14–22, բացատրելով, որ Սուլեն դարձավ թագավոր և Կորիհորը ապաշխարեց իր արածի համար, Կորիհորի որդի Նոյը ապստամբություն մղեց Սուլեի և Կորիհորի դեմ: Սուլեն տարվեց գերության: Սուլեի որդիները կարողացան սպանել Նոյին և ազատել Սուլեին և Սուլեն որպես թագավոր վերադարձավ իր թագավորություն: Այնուամենայնիվ, Նոյի որդի Կոհորը պահպանեց Նոյի ղեկավարած թագավորությունը: Երկիրը բաժանվեց երկու թագավորների և երկու ժողովուրդների միջև նախքան ճակատամարտը, որտեղ Սուլեն սպանեց Կոհորին: Կոհորի որդի Նիբրովթը Սուլեին հանձնեց Կոհորի թագավորությունը:

Բացատրեք, որ յն բանից հետո, երբ Սուլեն կրկին ստացավ թագավորությունը, մարգարեներ հայտնվեցին ժողովրդի մեջ: Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Եթեր 7.23–25, բացահայտելով այն, թե ինչ ասացին մարգարեները և ինչպես արձագանքեցին մարդիկ: Ուսանողների պատասխաններից հետո, հարցրեք.

- Ինչպե՞ս արձագանքեցին մարդիկ մարգարեներին: Ինչպե՞ս արձագանքեց Սուլեն:
- Ինչպե՞ս Սուլեի կողմից մարգարեների պաշտպանությունը օրհնեց նրա ժողովրդին:

Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Եթեր 7.26–27: Դասարանին հանձնարարեք հետևել նրան, ուշադրություն դարձնելով, թե ինչ պատահեց, երբ ժողովուրդը հնազանդվեց մարգարեների խոսքերին: Ուսանողների պատասխաններից հետո, համոզվեք, որ նրանք նշել են հետևյալ սկզբունքը. **Եթե մենք հետևենք մարգարեների խորհրդին և հիշենք Տիրոջը, մենք կբարգավաճենք:**

- Ինչպե՞ս եք դուք օրհնվել մարգարեների խորհուրդների հանդեպ ձեր հնազանդության շնորհիվ:

Ուսանողներին հորդորեք մտածել այն մասին, թե ինչ կարող են նրանք անել՝ ավելի լավ լսելու ու հնազանդվելու մարգարեների խոսքերին:

## Եթեր 8.1–9.13

### *Գաղտնի խմբակցությունների միջոցով Հարեդը իսկ հետո Աքիսը դառնում են Հարեդացիների թագավոր*

Ամփոփեք Եթեր 8.1–14 , բացատրելով, որ երբ Սուլեն մահացավ, Օմերը դարձավ թագավոր: Օմերի որդի Հարեդը ապստամբեց իր հոր դեմ և ցանկացավ դառնալ թագավոր: Նա կարողացավ գրավել թագավորության կեսը, սակայն հետագայում պարտվեց ու ստիպված եղավ հրաժարվել իր թագավորության կեսից: Այնուհետև Հարեդի դուստրը մտածեց մի ծրագիր Հարեդին թագավոր դարձնելու համար: Նա հիշեցրեց իր հորը հնում եղած գաղտնի խմբակցությունների մասին և ասաց, որ կպարի Աքիս անունով մարդու առաջ, ով, նրա կարծիքով, կցանկանար նրան կնության վերցնել: Երբ Աքիսը ցանկանավ նրան կնության վերցնել, Հարեդն ասաց Աքիսին, որ նա պետք է սպանի թագավոր Օմերին: Հարեդը և իր դուստրը մտածեցին այդ ծրագիրը: Աքիսը ցանկացավ կնության վերցնել Հարեդի դստերը և հետո իր ընկերոջ հետ միացավ գաղտնի խմբակցությանը թագավոր Օմերին սպանելու համար:

Նշեք, որ այդ ծրագրի պատճառով գաղտնի խմբակցություններ ստեղծվեցին Հարեդացիների մեջ, որն էլ վերջնականապես պատճառ հանդիսացավ նրանց կործանման: Բացատրեք, որ գաղտնի խմբակցությունը «մարդկանց կազմակերպություն է, որի անդամները միացած են խմբակցության չար նպատակներն առաջ տանելու երդումով» (Սուրբ Գրքերի ուղեցույց, «Գաղտնի Խմբակցություններ», scriptures.lds.org): Գադիանթոնի ավազակները Մորմոնի Գրքում օրինակն են այդ կազմակերպության, որոնք օգտվեցին գաղտնի խմբակցություններից, որպեսզի իրագործեն իրենց չար նպատակները:

Հանձնարարեք ուսանողներին ցածրաձայն կարդալ Եթեր 8.15–19, ուշադրություն դարձնելով այն բանին, թե ինչ արեց Աքիսը գաղտնի խմբակցություններ հիմնելու

համար։ Ուսանողների ուշադրությունը դարձրեք այն բանին, թե ինչ են ուսուցանում այս հատվածները գաղտնի խմբակցությունների վերաբերյալ։

- Որո՞նք են այն մարդկանց դրդապատճառները, ովքեր միանում են գաղտնի խմբակցություններին։ (Ստանալ իշխանություն, որպեսզի կարողանան կատարել չար արարքներ։)
- Ո՞ւմ իշխանությունն է թաքնված գաղտնի խմբակցությունների ետևում։ (Սատանայի։)
- Ո՞ր արտահայտությունն է Եթեր 8.18-ում ցույց տալիս, թե ի՞նչ է Տերը մտածում գաղտնի խմբակցությունների վերաբերյալ։ («Ամենապիղծն է և ամբարիշտը բոլորից առավել»։)

Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Եթեր 8.20–22, 25։ Դասարանին հանձնարարեք հետևել նրան, փնտրելով լրացուցիչ բաներ, որոնք նրանք կարող են սովորել գաղտնի խմբակցությունների մասին։ Ասացեք նրանց, որ հատուկ ուշադրություն դարձնեն այն բանին, թե ինչ ազդեցություն են ունենում գաղտնի խմբակցությունները հասարակության վրա։ (Նկատի ունեցեք, որ Եթեր 8.25 –ի սկզբում գրված «հիմնում է դա» արտահայտությունը վերաբերվում է հիմնել գաղտնի խմբակցությանը։)

- Ձեր կարդացածից ելնելով ի՞նչ ազդեցություն ունեն գաղտնի խմբակցությունները հասարակության վրա։ (Երբ ուսանողները իրենց կարծիքները արտահայտեն, համոզվեք, որ նրանք նշում են հետևյալ սկզբունքը. **Գաղտնի խմբակցություններին աջակցումը բերում է հասարակության կործանմանը։** )

Դասարանին հանձնարարեք մտքում կարդալ Եթեր 8.23–24, 26, ուշադրություն դարձնելով նրան, թե ինչ էր Մորոնին ցանկանում, որ մենք անենք որպես արդյունք գաղտնի խմբակցությունների մասին նրա զգուշացման։

- Ի՞նչ ասաց Մորոնին, որ մենք անենք։ (Զգուշացեք գաղտնի խմբակցություններից և համոզվեք, որ դրանք դուրս են գցվել մեր հասարակությունից։)
- Ըստ Եթեր 8.26-ում գրածի, ո՞րն էր Մորոնիի հույսը մեզ համար այս վերջին օրերում։

Ամփոփեք Եթեր 9.1–13, բացատրելով, որ գաղտնի խմբակցությունների պատճառով Աքիսը և նրա ընկերները խորտակեցին Օմերի թագավորությունը։ Սակայն Տերը զգուշացրեց Օմերին, որ նա պետք է հեռանա իր ընտանիքով, որպեսզի փրկի նրանց կյանքը։ Օմերի ամբարիշտ որդին՝ Հարեղը դարձավ թագավոր և իր դստերը տվեց կնության Աքիսին։ Աքիսը և իր ընկերները շարունակեցին իրենց չար ծրագրերը, սպանեցին Հարեղին և նույնիսկ Աքիսի որդուն։ Այդ արարքը հանգեցրեց պատերազմի, որը վերջնականապես կործանեց համարյա բոլոր Հարեղացիներին և վերահաստատեց Օմերին իր գահի վրա։ Շեշտեք, որ այս իրադարձությունները ցուց են տալիս, որ գաղտնի խմբակցությունները հասարակությունը տանում են դեպի կործանում։

## Եթեր 9.14–11.23

*Մի թագավորը հաջորդում է մյուսին, ոմանք կառավարում են արդարությամբ, ոմանք էլ՝ ամբարշտությամբ։*

Բացատրեք, որ Եթեր 9–11 գլուխները արձանագրում են, որ Հարեղից հետո 24 ավել թագավորներ կառավարեցին Հարեղացիներին, ոմանք՝ արդարությամբ, ոմանք էլ՝ ամբարշտությամբ։ Ուսանողներին հիշեցրեք հետևյալ սկզբունքը, որը նախկինում քննարկվել է. Մարգարեների խոսքերի մերժումը տանում է գերության։ Դասարանի մի կեսին հանձնարարեք ուսումնասիրել Եթեր 9.26–35 (Քետի թագավորության ժամանակ), իսկ մյուս կեսին հանձնարարեք ուսումնասիրել Եթեր 11.1–8 (Կոմի և Սիբլոմի թագավորության ժամանակ)։ Երկու խմբին էլ հանձնարարեք փնտրել այդ սկզբունքի ապացույց։ Թույլ տվեք ուսանողներին համառոտ կիսվել իրենց սովորածով։

Կիսվեք ձեր վկայությամբ մարգարեների խորհուրդներին հետևելու կարևորության մասին։ Դուք կարող եք կիսվել կյանքի ձեր փորձառությամբ, որը ձեզ սովորեցրել է մարգարեների խորհուրդներին հետևելու կարևորության մասին։

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Եթեր 7.23–27; 9.28–31: Մարգարեները և նրանց ուղերձները հաճախ են մերժվում:

Ինչո՞ւ են մարգարեները հայտարարում ուղերձներ, որոնք սիրով չեն ընդունվում աշխարհի շատ ժողովուրդների կողմից: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը բացատրել է.

«Մարգարեները հաճախ պետք է զգուշացնեն Աստծո օրենքների խախտման հետևանքների մասին: Նրանք չեն քարոզում այն, ինչը սիրով է ընդունվում աշխարհի կողմից: . . . Ինչո՞ւ են մարգարեները հայտարարում պատվիրաններ և կոչ անում հասարակությանը ապաշխարել պատվիրանների մերժման, փոփոխման և նույնիսկ անտեսման համար: Պատճառը շատ պարզ է: Հայտնությունը ստանալուն պես մարգարեները այլ տարբերակ չունեն, քան հայտարարել և վերահաստատել այն, ինչ Աստված պատվիրել է նրանց պատմել աշխարհին» (“If Thou Wilt Enter into Life, Keep the Commandments,” *Ensign,* May 1996, 37):

Յոթանասունի Նախագահությունից Երեց Լ. Ալդին Փորթերն ուսուցանել է.

«Ոմանք բողոքում են, որ երբ մարգարեները պարզ ու հստակ խոսում են, նրանք հեռացնում են մեր ազատ կամքը: Մենք դեռ ազատ ենք ընտրելու: Բայց մենք պետք է ընդունենք այդ որոշումների հետևանքները: Մարգարեները չեն հեռացնում մեր ազատ կամքը: Նրանք պարզապես զգուշացնում են մեզ, թե մեր որոշումների հետևանքները որոնք են լինելու: Անմիտ բան է մարգարեներին մեղադրել նրանց զգուշացումների մասին» (“Our Destiny,” *Ensign,* Nov. 1999, 66):

ԴԱՍ 149

# Եթեր 12.1–22

## Նախաբան

Հարեդացիների պատմությունը շարադրելուց հետո Մորոնին ներկայացնում է մարգարե Եթերի ծառայությունը: Այնուհետև Մորոնին ընդհատում է պատմությունը, որպեսզի գրի առնի որոշ օրհնություններ, որոնք տրվում են նրանց, ովքեր գործադրում են հավատք առ Հիսուս Քրիստոսը: Այս դասը ներառում է Եթեր 12.1–22, մինչդեռ 150-րդ դասը ներառում է Եթեր 12.23–41:

## Ուսուցանման առաջարկներ

### Եթեր 12.1–4

*Եթերն ապաշխարություն է քարոզում Հարեդացիներին*

Դասը սկսեք, հրավիրելով մի ուսանողի գալ գրատախտակի մոտ և նկարել ալիքներ ու խարսխի օգնությամբ կայանած մի նավ:

- Ինչո՞ւ է նավի համար կարևոր խարիսխ ունենալը:
- Ինչպիսի՞ վտանգների ու դժվարությունների կենթարկվի նավը, եթե խարիսխ չունենա:
- Ինչպիսի՞ ազդեցություն է ունենում ալիքը նավի վրա: (Պատասխանները կարող են լինել՝ ալիքները ստիպում են նավին շարժվել, թափառել կամ շպրտվել այս ու այն կողմ:)

Նավին անվանակոչեք *ձեր կյանքը*:

- Եթե նավը ներկայացնում է մեր կյանքը, ապա ինչի՞ն նման կլինեն ալիքները: (Պատասխանները կարող են լինել՝ սոցիալական ճնշումները, ձախորդությունները, սխալ ուսմունքները կամ ամբարշտությունները:)
- Ինչպե՞ս կարող է մարդու կյանքը նման լինել խարիսխ չունեցող նավի: (Ուսանողներին կարող եք առաջարկել կարդալ Մորմոն 5.17–18, որպեսզի օգնեք նրանց պատասխանել հետևյալ հարցին:)
- Որո՞նք են Տիրոջ տված այն մի քանի բաները, որ կարող են մեր կյանքում ծառայել որպես հոգևոր խարիսխներ: (Ուսանողների պատասխանները կարող են տարբեր լինել: Ավետարանի բազմաթիվ տեսակետեր կարելի է նմանեցնել խարսխի:)

Ուսանողներին հորդորեք Եթեր 12 ուսումնասիրելիս ուշադրություն դարձնել հոգևոր խարիսխների օրինակներին:

Բացատրեք, որ Եթեր 12-ը սկսվում է նրանով, որ Եթերին Մորոնին ներկայացնում է Հարեդացի մի մարգարեի, ով քարոզել է այն ժամանակաշրջանում, երբ մարդիկ մերժեցին մարգարեներին և ապրեցին ամբարշտության մեջ: Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Եթեր 12.1–3, բացահայտելով այն ամենը, ինչը նրանց վրա տպավորություն գործեց Եթերի պահվածքի մեջ: Թույլ տվեք նրանց կիսվել իրենց սովորածով:

Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Եթեր 12.4: Դասարանին հանձնարարեք հետևել նրան, բացահայտելով այն, թե Աստծուն հավատացողները ինչ կարող են «հուսալ», անկախ շուրջը տիրող դժվարություններին և ամբարշտություններին: Երբ ուսանողները պատասխանեն, դուք կարող եք նշել, որ «լավ աշխարհը», որի համար մենք հույս ունենք, դա «մի տեղ է՝ Աստծո աջ կողմում»:

- Ի՞նչ է նշանակում ունենալ մի տեղ Աստծո աջ կողմում: (Վերադառնալ Նրա ներկայության մեջ և ստանալ հավերժական կյանք:)
- Ձեր կարծիքով, ո՞րն է տարբերությունը «անկասկած» հույս ունենալու և պարզապես ինչ-որ բան ցանկանալու միջև: (Սուրբ գրություններում հույս ունենալը նշանակում է վստահություն ունենալ նրա հանդեպ, որ մենք կարող ենք ստանալ Աստծո խոստացած օրհնությունները, եթե պահենք մեր կապած ուխտերը Նրա հետ:)

- Ըստ Եթեր 12.4-ի, ինչպե՞ս ենք մենք ստանում հույս՝ Աստծո աջ կողմում տեղ ունենալու համար: (Երբ ուսանողները պատասխանեն, բացատրեք, որԵթեր 12.4-ում նշված հավատքը վերաբերվում է Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքին:) Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը թույլ տալիս մեզ «անկասկած» հուսալ Աստծո աջ կողմում մի տեղ ունենալու:

Գրատախտակին նկարված խարիխը անվանակոչեք *հավատք և հույս*:

- Ըստ Եթեր 12.4-ի, ի՞նչ է պատահում, երբ ինչ-որ մեկն ունենում է հույս և հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ: (Չնայած ուսանողները կարող է տարբեր բառերով ներկայացնել դա, նրանք պետք է արտահայտեն հետևյալ սկզբունքը. **Երբ մենք ունենք հույս և հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ, մենք կդառնանք հաստատուն և կհարստացնենք բարի գործերով:** )
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «հարստացնել» բարի գործերով: (Անել շատ բարի գործեր:)
- Որո՞նք են այն բարի գործերը, որոնք «փառաբանում են Աստծուն»: (Պատասխանները կարող են ներառել աղոթքը, սուրբ գրությունների ուսումնասիրությունը, ուրիշներին ծառայելը և տաղանդներ զարգացնելը:)
- Մտածեք ձեզ ծանոթ այն մարդկանց մասին, ովքեր, կարծես, հարստացնում են բարի գործերով և չեն ամաչում փառաբանել Աստծուն: Որո՞նք են այն առանձնահատուկ բաները, որ նրանք անում են, դառնալով այս սկզբունքների լավ օրինակներ:

Ուսանողներին հրավիրեք մտածել այն ժամանակների մասին, երբ նրանց համար դժվար էր հաստատուն լինել և հարստացնել բարի գործերով: Որպեսզի ուսանողներին օգնեք իրենց կյանքում ունենալու նման իրավիճակներ, հորդորեք նրանց ուշադրություն դարձնել այն եղանակներին, որոնցով նրանք կարող են մեծացնել իրենց հավատքը և հույսը, երբ ուսումնասիրեն Եթեր 12:

## Եթեր 12.5–22

### *Մորոնին մարգարեանում է հրաշքների ու մեծ բաների մասին, որոնք բխում են հավատքից:*

Հետևյալ արտահայտությունը գրեք գրատախտակին. *Ես կցանկանայի ձեռք բերել հոգևոր ապացույց, որ . . .*:

Հանձնարարեք ուսանողներին առաջարկել ավետարանի ճշմարտություններ, սկզբունքներ կամ վարդապետություններ, որոնց համար մարդիկ կփնտրեն հոգևոր ապացույց: Ուսանողների պատասխաններից հետո գրեք նրանց պատասխանները գրատախտակին: (Պատասխանները կարող են ներառել՝ վկայություն, որ*Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, որ մաքուր և առաքինի կյանք ապրելը կարևոր է, որ Իմաստության Խոսքը Աստծո օրենք է, որ ես պետք է պատրաստվեմ միսիա ծառայելու համար:* ) Հանձնարարեք ուսանողներին մտածել ավետարանի մի ճշմարտության մասին, որի համար նրանք կցանկանային ստանալ հոգևոր վկայություն կամ ավելի ուժեղ վկայություն:

Բացատրեք, որ որոշ մարդիկ հետևյալ կերպ են մտածում. «Ես չեմ հավատա կամ ապրի ավետարանի սկզբունքին համաձայն, մինչև որ չտեսնեմ ապացույցը, որ այն ճշմարիտ է»: Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Եթեր 12.5–6, ուշադրություն դարձնելով, թե ինչպես են այս հատվածները կապված այդ վերաբերմունքի հետ: Նշեք, որ Եթեր 12.6-ը սուրբ գրությունների սերտման հատված է: Կարող եք առաջարկել, որ ուսանողները տարբերակելի ձևով նշեն այդ հատվածը, որպեսզի հեշտությամբ գտնեն այն:

- Ըստ Եթեր 12.6-ի, ի՞նչ պետք է պատահի նախքան մենք կստանանք վկայություն:
- Ի՞նչ մտքեր եք ունենում, երբ մտածում եք «հավատքի փորձությունը» արտահայտության մասին:

Ուսանողների պատասխաններից հետո, կարող եք բացատրել, որ ոմանք սխալ են մեկնաբանում «հավատքի փորձությունը», մեկնաբանելով այն որպես դժվարություն: «Հավատքի փորձություն» արտահայտությունը նկարագրում է այն ամենը, ինչը մեզ հնարավորություն է տալիս ներկայացնելու կամ կիրառելու մեր հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ: Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այդ արտահայտությունը, հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ արտահայտությունը:

**Եթեր 12.6**-ը սուրբ գրությունների սերտման հատված է: Հղում կատարեք դասի վերջում գտնվող ուսուցանման մտքերին, որպեսզի օգնեք ուսանողներին սերտել այդ հատվածը:

Նախքան այն կարդալը դասարանին հորդորեք լսել «հավատքի փորձություն» արտահայտության Երեց Սքոթի մեկնաբանությունը:

««. . . Դուք վկայություն չեք ստանա, մինչև որ չստանաք *ձեր հավատքի փորձությունը*» Մորոնիի ուսուցանած սկզբունքը կիրառելով դուք սովորում եք ավելի արդյունավետ կերպով կիրառել հավատքը [Եթեր 12.6; շեղագրումն ավելացված է]: Այսպիսով, ամեն անգամ երբ դուք *փորձեք ձեր հավատքը,* այսինքն՝ գործեք արժանապատվորեն, դուք կստանաք հաստատող ապացույց Հոգու կողմից: Այդ զգացումները կամրացնեն ձեր հավատքը: Երբ հետևեք այդ ուղով, ձեր հավատքն ավելի կուժեղանա» (“The Sustaining Power of Faith in Times of Uncertainty and Testing,” *Ensign* կամ *Liahona,* May 2003, 76):

- Ինչո՞վ է տարբերվում Երեց Սքոթի նկարագրած գործընթացը այն մարդկանց վերաբերմունքից, ովքեր ցանկանում են ստանալ ապացույց նախքան հավատալը կամ գործելը:

Հետևյալ սուրբգրքյան հատվածները գրեք գրատախտակին. *Եթեր 12.7–12*; *Եթեր 12.13–18*; *Եթեր 12.19–22, 30–31:* Դասարանը բաժանեք երեք խմբի և ամեն խմբին տվեք մեկական հատված: Հանձնարարեք ուսանողներին ուշադրություն դարձնել այն օրինություններին, որոնք գալիս են յուրաքանչյուր հատվածում նկարագրված մարդկանց հավատքի արդյունքում: Նրանց ուշադրությունը հրավիրեք 7, 12, 17, 18, և 31 հատվածների «մինչև նրանք հավատք չունեցան» կամ «նախքան նրանց հավատքը» արտահայտություններին: (Կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այդ հատվածները՝ ամեն անգամ դրանց հանդիպելիս:)

Ուսանողների պատասխաններից հետո հանձնարարեք նրանց ամփոփել այն, թե ինչ է Տերը տալիս Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատքը ցուցադրելուց հետո: Չնայած ուսանողները կպատասխանեն տարբեր բառերով, նրանք պետք է արտահայտեն հետևյալ ճշմարտությունը. **Եթե մենք ցանկանում ենք հոգևոր ապացույց, ապա մենք սկզբում պետք է կիրառենք հավատք առ Հիսուս Քրիստոսը:** Բացատրեք, որ հոգևոր ապացույցների նման, հրաշքներ տեղի են ունենում միայն նրանից հետո, երբ մենք կիրառում ենք մեր հավատքը:

Հետևյալ իրավիճակը ներկայացրեք դասարանին: Հանձնարարեք ուսանողներին բացատրել, թե ինչպես պետք է յուրաքանչյուր իրադրության մեջ անձնավորությունը ցույց տա Տիրոջ հանդեպ իր հավատքը:

1. Երիտասարդ աղջիկը ցանկանում է ստանալ վկայություն Մորմոնի Գրքի ճշմարտացիության վերաբերյալ:
2. Երիտասարդ տղան ուժեղ ցանկանություն ունի օգնելու իր սիրելիներին ընդունել ավետարանը:

Հրավիրեք ուսանողներին մտածել այն ժամանակի մասին, երբ նրանք կամ իրենց ծանոթները ստացել են հոգևոր ապացույցներ կամ տեսել հրաշքներ այն բանից հետո, երբ ցույց են տվել Տիրոջ հանդեպ իրենց հավատքը: Մի քանի ուսանողների հանձնարարեք կիսվել իրենց սովորածով: (Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ նրանք պարտավոր չեն կիսվելու այն փորձառություններով, որոնք չափազանց գաղտնի ու անձնական են:) Դուք նույնպես կարող եք կիսվել փորձառությամբ:

Հանձնարարեք ուսանողներին վերհիշել ավետարանի մի ճշմարտություն, որի համար նրանք կցանկանային ստանալ հոգևոր ապացույց: Հանձնարարեք նրանց գրի առնել իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում ինչ-որ բան, որ նրանք կցանկանային անել՝ Տիրոջ հանդեպ ավելի շատ հավատք գործադրելու համար:

## Սուրբ գրության սերտման վարժություն —Եթեր 12.6

Որպեսզի օգնեք ուսանողներին հիշել Եթեր 12.6 հատվածը, յուրաքանչյուր ուսանողի հանձնարարեք հատվածը գրի առնել մի կտոր թղթի վրա՝ հիմնական բառերի ու արտահայտությունների տեղը բաց թողնելով: Ավարտելուց հետո նրանց տվեք մեկ րոպե հիշելու համար հատվածը, մտքով լրացնելով իրենց թղթերի դատարկ տեղերը:

Հանձնարարեք ուսանողներին փոխանակել թղթերը իրենց մոտ նստածի հետ: Ամեն մի ուսանող պետք է բարձրաձայն կարդա իր թղթին գրվածը և փորձի

հիշողությամբ լրացնել դատարկ տեղերը: Եթե ժամանակը ներում է, թույլ տվեք ուսանողներին կրկնել վարժությունը՝ կրկին անգամ փոխանակելով թղթերը:

Հանձնարարեք ուսանողներին իրենց թղթերը տանել տուն և օգտվելով դրանցից Եթեր 12.6 հատվածն անգիր արտասանել ծնողներին: Հորդորեք նրանց խնդրել իրենց ծնողներին պատմել այն ժամանակների մասին, երբ նրանք իրենց հավատքն են ցույց տվել Հիսուս Քրիստոսի հանդեպ և ստացել իրենց փնտրած ապացույցը կամ հրաշք տեսել:

Դասն ավարտեք ձեր վկայությունը բերելով այս սկզբունքների մասին:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Եթեր 12.4–6: Ի՞նչ է հույսը:

Եթեր 12-ում հույսի ու հավատքի սկզբունքների մասին Մորոնիի ուսմունքները ցույց են տալիս, որ այդ երկուսը սերտորեն փոխկապակցված են: Նա հավատքը սահմանում է որպես «բաներ են, որոնց համար հույս ունենք և չենք տեսնում» (Եթեր 12.6), և ուսուցանում է, որ փրկության մեր հույսը «գալիս է հավատքից» Հիսուս Քրիստոսի հանդեպ (Եթեր 12.4): *Հավատքին հավատարիմ* գրքույկը սովորեցնում է հույսի մասին.

«Երբ մենք ունենք հույս, մենք վստահում ենք Աստծո խոստումներին:Մենք ունենք խորին համոզվածություն, որ եթե մենք անենք «արդարության գործերը», մենք «[կստանանք մեր] վարձքը, այսինքն՝ խաղաղություն այս աշխարհում և հավերժական կյանք գալիք աշխարհում»(ՎևՈւ 59.23): . . . Հույսի սկզբունքը հավերժության համար է, սակայն այն կարող է պաշտպանել քեզ ամենօրյա կյանքի դժվարությունների ժամանակ» (*Հավատքին Հավատարիմ. ավետարանական վկայակոչում* [2004], 85–86):

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը հույսը սահմանել է հետևյալ կերպ.

«Հույսը Հոգու պարգև է: [Տես Մորոնի 8.26:] Կա հույս, որ Հիսուս Քրիստոսի Քավությամբ և Նրա Հարության զորությամբ մենք կբարձրանանք դեպի հավերժական կյանք, և դա առ Փրկիչ մեր հավատքիի շնորհիվ է: [Տես Մորոնի 7.41:] Այդպիսի հույսը և խոստացված սկզբունք է և պատվիրան, [տես Կողոսացիս 1.21–23] և ինչպես բոլոր պատվիրանները, մենք պարտավոր ենք այն դարձնել մեր կյանքի ակտիվ մասը և հաղթահարենք հույսը կորցնելու գայթակղությունը: Մեր Երկնային Հոր ողորմած երջանկության ծրագրի հանդեպ հույսը տանում է դեպի խաղաղություն [տես Հռովմայեցիս 15.13], ողորմության [տես Սաղմոս 33.22], ցնծություն [տես Հռովմայեցիս 12.12] և ուրախություն [տես Առակաց 10.28] : Փրկության հույսը նման է պաշտպանող սաղավարտի [տես Ա Թեսաղոնիկեցիս 5.8] և մեր հավատքի [տես Եբրայեցիս 11.1; Մորոնի 7.40] հիմքն ու մեր հոգիների [տես Եբրայեցիս 6.19; Եթեր 12.4] խարիսխն է» («Հույսի անսահման զորությունը» *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2008, 21–22):

ԴԱՍ 150

# Եթեր 12.23–41

## Նախաբան

Խոնարհ աղոթքում Մորոնին արտահայտել է մի մտահոգություն: Նա անհանգստանում էր իր և Մորմոնի Գրքի այլ մարգարեների գրելու թուլության համար: Տերը խոստումով պատասխանեց, որ կուժեղացնի նրանց, ովքեր խոնարհեցնում են իրենց և ունեն հավատք առ Նա:

## Ուսուցանման առաջարկներ

### Եթեր 12.23–41

*Մորոնին ուսուցանում է, որ հավատքը, հույսը և գթությունը պարտադիր են փրկության համար:*

Գրատախտակի մի կողմում գրեք *ուժեղ*, իսկ մյուս կողմում՝ *թույլ* բառերը: Ուսանողներին ժամանակ տվեք մտածելու իրենց ուժեղ կողմերի մասին: Այնուհետև հանձնարարեք նրանց մտածել իրենց մի քանի թուլությունների կամ անհամապատասխանությունների վերաբերյալ: Թող նրանք բարձրացնեն ձեռքերը, ովքեր կցանկանային իրենց թույլ կողմերը դարձնել ուժեղ: Բացատրեք, որ Մորոնին ուսուցանել է, թե ինչու մենք ունենք թուլություններ և ինչպես կարող ենք հաղթահարել դրանք:

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Եթեր 12.23–25: Դասարանին հանձնարարեք հետևել նրան, բացահայտելով այն թուլությունները, որոնք Մորոնին և Մորմոնի Գրքի այլ գրողները զգացել են: Նախքան ուսանողների կարդալը, կարող եք բացատրել, որ այս հատվածներում *Հեթանոսներ* բառը վերաբերվում է այն մարդկանց, ովքեր վերջին օրերում կապրեն Հեթանոս ազգերի մեջ:

- Ի՞նչն էր Մորոնիին մտահոգում Մորմոնի Գիրքը գրողների թուլությունների առումով:

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Տիրոջ պատասխանը Մորոնիի մտահոգությանը Եթեր 12.26–27-ում: Ասացեք նրանց, որ ուշադրություն դարձնեն այն հանգամանքին, թե ինչու համար է Աստված մեզ թուլություններ տալիս: Նշեք, որ Եթեր 12.27-ը սուրբ գրությունների սերտման հատված է: Կարող եք առաջարկել, որ ուսանողները տարբերակելի ձևով նշեն այդ հատվածը, որպեսզի հեշտությամբ գտնեն այն:

> **Եթեր 12.27**-ը սուրբ գրությունների սերտման հատված է: Հղում արեք դասի վերջում գտնվող ուսուցանման մտքերին, որպեսզի օգնեք ուսանողներին այդ վարժության սերտման հարցում:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ *թուլություն* բառը, ինչպես այն կիրառված է այս հատվածներում, խնդրեք ուսանողներից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելի հետևյալ արտահայտությունը: Նախքան այն կարդալը, դասարանին հանձնարարեք լսել Երեց Մաքսվելի բացահայտած երկու տեսակի թուլությունները:

«Երբ սուրբ գրություններում մենք կարդում ենք մարդու «թուլության» մասին, այդ բառը իր մեջ ներառում է . . . թուլություն, որը բնորոշ է մարդկային ընդհանուր վիճակին, որի դեպքում մարմինն ունի անընդհատ [կամ մշտական] ազդեցություն հոգու վրա (տես Եթեր 12.28–29): Թուլությունը նույնպես ներառում է մեր հատուկ, անհատական թուլությունները, որոնք մենք ցանկանում ենք հաղթահարել (տես ՎԿՈ 66.3; Հակոբ 4.7): Կյանքն ունի իր ձևը բացահայտելու այս թուլությունները» (*Lord, Increase Our Faith* [1994], 84):

- Ըստ Երեց Մաքսվելի, որո՞նք են այն երկու տեսակի մարդկային թուլությունները, որոնց մասին մենք կարդում ենք սուրբ գրություններում: (Կարող եք բացատրել, որ «մարդկային ընդհանուր վիճակը» վերաբերվում է այն թուլությանը, որն արդյունքն է Ադամի ու Եվայի անկման, կամ այլ խոսքերով ասած՝ թուլություններ, որոնք ըստ Մոսիա 3.19-ի, կապված են «բնական մարդու» հետ:)

Հիշեցրեք ուսանողներին, որ սուրբ գրությունները երբեմն սկզբունքը նկարագրում են *եթե* և *այն ժամանակ* բառերով: *Եթե* բառը ցույց է տալիս մի բան, որ մենք պետք

է անենք, իսկ *այն ժամանակ* բառը ցույց է տալիս բացատրությունը նրա, թե ինչ կպատահի մեր արարաքների արդյունքում: Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Եթեր 12.27, ուշադրություն դարձնելով «եթե-այն ժամանակ» սկզբունքին, որը գրված է այս հատվածում: Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալ սկզբունքները (գրեք դրանք գրատախտակին).

***Եթե մենք գանք դեպի Հիսուս Քրիստոսը, այն ժամանակ նա ցույց կտա մեզ մեր թուլությունները:***

***Եթե մենք խոնարհեցնենք մեզ և գործադրենք հավատք առ Տերը, այն ժամանակ Նա մեր թույլ կողմերը կդարձնի ուժեղ:***

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր մեզ համար ճանաչել մեր թուլությունները:
- Առաջին սկզբունքի մեջ նշեք «գալ դեպի Հիսուս Քրիստոսը» արտահայտությունը: Որո՞նք են այն մի քանի բաները, որ կարող ենք անել, որպեսզի «գանք դեպի Հիսուս Քրիստոսը»: (Պատասխանները կարող են պարունակել այն, որ մենք կարող ենք աղոթել, ծոմ պահել, ապաշխարել, ուսումնասիրել սուրբ գրությունները, մասնակցել տաճարային արարողություններին, ծառայել ուրիշներին և ձգտել զարգացնել Քրիստոսանման հատկանիշներ: Կարող եք նշել, որ շատ դեպքերում թուլություններ հաղթահարելը նշանակում է, որ բացի Տիրոջ օգնությունը փնտրելը, մենք պետք է անենք մեր մասը:)
- Ըստ երկրորդ սկզբունքի, ի՞նչ կպատահի, եթե մենք *չկամենանք* խոնարհեցնել ինքներս մեզ և գործադրել հավատք առ Հիսուս Քրիստոսը: (Մեր թուլությունները կմնան, քանի որ մենք մերժեցինք Տիրոջ շնորհը, որը կօգներ մեզ հաղթահարել դրանք:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ էր ուզում ասել «իմ շնորհը բավական է բոլորի համար, . . . ովքեր իրենց խոնարհեցնում են իմ առջև»: (Որպեսզի օգնեք ուսանողներին պատասխանել այդ հարցին, դուք կարող եք բացատրել, որ շնորհը՝ «աստվածային այդ օգնությունն ու ուժը, տրվում է Աստծո ողորմության և սիրո շնորհիվ» և հնարավոր է դառնում Քավության շնորհիվ [Սուրբ գրքերի ուղեցույց, «Շնորհ»]: Այս հնարավորության զորությունը կամ օգնությունը երբեք չի վերջանա՝ անկախ նրանից, թե քանի մարդ կստանա այն:)

Ուսանողներին հրավիրեք կիսվել փորձառություններով, որոնք նրանք ունեցել են, երբ Տերն օգնել է իրենց (կամ ինչ-որ մեկին, ում նրանք ճանաչում են) հաղթահարել իրենց թուլությունը: (Ուսանողներին հիշեցրեք, որ նրանք չպետք է կիսվեն անձնական կամ գաղտնի փորձառություններով:) Դուք կարող եք կիսվել նաև ձեր անձնական փորձառությամբ:

Որպեսզի խրախուսեք Եթեր 12.27-ում ուսուցանված սկզբունքների օգտագործումը, հետևյալ արտահայտությունները գրեք գրատախտակին.

*1. Ճանաչել իմ թուլությունը 2. Խոնարհեցնել ինձ 3. Գործադրել հավատք առ Հիսուս Քրիստոս*

Հանձնարարեք ուսանողներին գրել այդ արտահայտությունները իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: Համապատասխան արտահայտությունների տակ հանձնարարեք նրանց գրել (1) իրենց թուլությունները, (2) եղանակները, որոնցով նրանք կարող են խենարհեցնել իրենց, (3) եղանակները, որոնցով նրանք կարող են հավատք գործադրել առ Հիսուս Քրիստոսը, որպեսզի ստանան Նրա օգնությունը՝ կամ շնորհը, որը կօգնի հաղթահարել իրենց թված թուլությունները: Հավաստիացրեք ուսանողներին, որ եթե նրանք հետևեն նրան, ինչ գրել են, Տերը «նրանց թույլ կողմերը կդարձնի ուժեղ» ( Եթեր12.27):

Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Եթեր 12.26, 28, ուշադրություն դարձնելով նրան, թե ինչպես Տերը ապագայում պատասխանեց Մորոնիի մտահոգությանը՝ նրա թուլությունների վերաբերյալ:

Շեշտեք «Հիմարներն են ծիծաղում, բայց նրանք կսգան» նախադասությունը: (Եթեր 12.26):

- Հիմնվելով այսօրվա սովորածի վրա, ձեր կարծիքով, ինչո՞ւ են հիմարները ծիծաղում ուրիշների թուլությունների վրա:

Շեշտեք, որ Եթեր 12.26-ում նշվում է հեզության մասին: (Կարող եք բացատրել, որ հեզ լինելը նշանակում է լինել խոնարհ ու ունակ ուսուցանվելու և տառապանքի ժամերին ունակ լինելու համբերելու:)

***Հորդորեք ուսանողներին կիսվել հոգևոր փորձառություններով:***

Դուք կարող եք վստահ լինել, որ ձեր ուսանողները ունեն հոգևոր փորձառություններ, որոնցով կարող են կիսվել: Առաջին Նախագահությունից Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսերը նկատել է. «Կան շատ քիչ երիտասարդներ, ովքեր ձեր սեմինարիայի դռնով դուրս գալուց չեն կրում հոգևոր օրինություններ. . . չեն տեսնում աղոթքի արդյունավետությունը, . . . ականատես չեն լինում հիվանդներին բժշկելու հավատքի զորության ապացույցին, կամ . . . չեն տեսնում հոգևոր զեղումներ, որոնցից այսօր աշխարհի մեծ մասն անտեղյակ է» (*The Charted Course of the Church in Education,* rev. ed. [1994], 6; տես նաև si.lds.org):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ մենք պետք է լինենք հեզ, որպեսզի չնկատենք ուրիշների թուլությունները:

Նախքան շարունակելը ընդգծեք, որ **եթե մենք հեզ ենք, մենք կարող ենք ստանալ Տիրոջ շնորհը, որը կօգնի մեզ չնկատել ուրիշների թուլությունները:**

Ամփոփեք Եթեր 12.29–32-ը, բացատրելով, որ Մորոնին ուսուցանեց հավատք գործադրելու և հույս ու հավատք ունենալու կարևորությունը: Կարող եք բացատրել, որ «գթությունը Քրիստոսի մաքուր սերն է» (Մորոնի 7.47):

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Եթեր 12.33–35, ուշադրություն դարձնելով, թե ինչու է կարևոր գործադրել գթություն՝ ուրիշների թուլություններին հանդիպելիս:

- Ըստ Եթեր 12.34-ի, որո՞նք են այն հետևանքները, որոնց մենք կբախվենք, եթե մենք գթություն չունենանք:

Ավարտեք, ուսանողներին հանձնարարելով մտքում կարդալ Եթեր 12.38–41: Հանձնարարեք նրանց իրենց տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրի առնել այն, թե ինչ են նրանք անում, որպեսզի պատասխանեն Եթեր 12.41–ում գրված հրավերին՝— «փնտրել այս Հիսուսին, որի մասին գրել են մարգարեներն ու առաքյալները»:

Վկայեք, որ երբ մենք խոնարհեցնում ենք ինքներս մեզ և գործադրում հավատք առ Հիսուս Քրիստոս, Նա «թույլ կողմերը կդարձնի ուժեղ [մեզ համար]» (Եթեր 12.27): Հորդորեք ուսանողներին հետևել իրենց գրած ծրագրերին: Կարող եք նաև հորդորել նրանց փնտրել Տիրոջ օգնությունը՝ գործադրելու համար գթություն, երբ նրանք բախվում են ուրիշների թուլությունների հետ:

## Սուրբ գրությունների սերտման հատված —Եթեր 12.27

Որպեսզի օգնեք ուսանողներին հիշել Եթեր 12.27-ը, գրեք հետևյալ բառերը գրատախտակին և հանձնարարեք ուսանողներին արտագրել այն թղթի վրա.

*Եթե . . . զան . . . ցույց կտամ . . . թուլությունը . . . թուլություն եմ . . . տալիս . . . խոնարհ լինեն . . . շնորհը . . . բոլոր մարդկանց համար . . . խոնարհեցնում են . . . եթե . . . խոնարհեցնեն . . . հավատք . . . թույլ . . . ուժեղ:*

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Եթեր 12.27, հաշվի առնելով այս բառերը: Այնուհետև հրավիրեք նրանց անգիր արտասանել որքան հնարավոր է շատ տողեր, նայելով միայն իրենց թղթերի բառերին: Հորդորեք ուսանողներին դնել թուղթը այնպիսի մի տեղ, որ կարողանան այդ օրը կամ հաջորդ օրը հեշտությամբ գտնել այն (օրինակ՝ գրպանի կամ սուրբ գրությունների մեջ): Հանձնարարեք նրանց թուղթը տեսնելիս կրկնել Եթեր 12.27 այնքան անգամ, մինչև որ անգիր անեն հատվածը:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Եթեր 12.27): «Ես նրանց ցույց կտամ իրենց թուլությունը»

Յոթանասունից Երեց Բրյուս Ս. Հեյֆենը նշել է, որ թուլությունը հաղթահարելու մեր պայքարը առանցքային է այստեղ երկրի վրա մեր նպատակում.

«Մեր Հոր ծրագիրը ենթարկում է մեզ գայթակղությունների և թշվառության այս ընկած աշխարհում: . . .

Այնպես որ, եթե կյանքում հանդիպում եք խնդիրների, մի մտածեք, թե ձեզ հետ ինչ-որ բան կարգին չէ: Այդ խնդիրների դեմ պայքարը ընկած է կյանքի նպատակների ամենահիմքում: Երբ մենք մոտենում ենք Աստծուն, Նա ցույց է տալիս մեզ մեր թուլությունները և դրանց միջոցով մեզ դարձնում ավելի խելացի, ավելի ուժեղ: Եթե դուք ձեր մեջ ավելի շատ եք տեսնում ձեր թուլությունները, դա միայն նշանակում է, որ դուք ավելի եք մոտենում Աստծուն, քան՝ հեռանում նրանից» (“The Atonement: All for All,” *Ensign* or *Liahona,* May 2004, 97):

Հետևյալ պատմությունը մի երիտասարդի մասին է, ով զգաց Եթեր 12.27-ում Տիրոջ խոստումի կատարումը.

Եկեղեցու բոլոր երիտասարդ տղաներին խրախուսված է կատարել պարտականություն Աստծո առաջ ծրագրի, իսկ որոշ վայրերում՝ Սքաութական ծրագրի նպատակները: Ջոնաթան Պերեզի ծնողները զբաղված էին իրենց բազմանդամ ընտանիքի կարիքները հոգալով, իսկ նրա ընկերները ծաղրում էին Սքաութական ծրագրում Արծիվ կարգին հասնելու նրա ջանքերը: Չնայած այդ դժվարություններին, Ջոնաթանը նպատակ դրեց և սկսեց աշխատել: Ժամանակի ընթացքում իր Երիտասարդ տղաների ղեկավարների օգնությամբ նա հասավ իր նպատակին: Նա գրել է. «Այդ փորձությունը սովորեցրել է ինձ, որ անկախ նրանից, թե ինչ խոչընդոտներ կամ դժվարություններ են հանդիպում իմ ճանապարհին, Տերը կօգնի ինձ հաղթահարել իմ թերություններն ու թուլությունները (տես Եթեր 12.27): Նշանակություն չունի մեր անցյալը կամ այն, որ մենք աղքատ ենք, թե հարուստ: Մենք կարող ենք հասնել մեր նպատակներին, քանի որ Տերը կանգնած է մեր կողքին» (Jonathan Perez, “An Honor Earned,” *New Era,* Nov. 2007, 45):

## Ուսուցանման լրացուցիչ միտք

### Եթեր 12.26): Չնկատել ուրիշների թուլությունները

Նշեք, որ թուլություններից մեկը, որի հետ մարդիկ պայքարում են, դա խոնարհ լինելու ունակության բացակայությունն է և ուրիշների թուլություններին հանդիպելիս հավատք գործադրելու անկարողությունը: Բարձրաձայն կարդացեք այս իրավիճակներից երկուսը կամ երեքը: Ամեն մեկից հետո կանգ առեք և հանձնարարեք ուսանողներին բացատրել, թե Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք ունենալը, հավերժական օրհնությունների հանդեպ հույս ունենալը կամ գթությամբ վարվելը ինչպես կարող է օգնել ինչ-որ մեկին ճիշտ վարվել նման իրավիճակներում:

1. Մի ծանոթ կամ ընկեր ունի հատկանիշներ, որոնք ձեզ նյարդայնացնում են:
2. Ձեր ծխի անդամը ելույթ է ունենում, որը ,ձեր կարծիքով, ձանձրալի է:
3. Ինչ-որ մեկը քննադատորեն է խոսում ձեր մասին:
4. Ընտանիքի անդամներից մեկն ունի արատ, որն երբեմն կյանքը դժվար է դարձնում ձեզ համար:

# Տնային ուսումնասիրության դաս

## Եթեր 4–12 (Դաս 30)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Եթեր 4–12-ում (դաս 30) ուսանողների սովորած վարդապետությունների և ուխտերի հետևյալ ամփոփումը ուսումնասիրության ժամանակ նախատեսված չէ ուսուցանելու որպես ձեր դասի մի մաս: Ձեր ուսուցանած դասը կենտրոնանում է այս վարդապետություններից և ուխտերից միայն մի քանիսի վրա: Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին ձեր ուսանողների կարիքները հաշվի առնելիս:

### Օր 1 (Եթեր 4–5)

Մորոնին կնքեց Հարեդի եղբոր գրածները և ուսուցանեց այն պայմանների մասին, որոնցում մենք կհայտնվենք նախքան այդ հիշատակարանը ստանալը: Այս ուսմունքներից ուսանողները սովորեցին, որ եթե մենք գործադրենք մեծ հավատք Տիրոջ խոսքի հանդեպ, Նա կօրհնի մեզ հետագա հայտնություններով:

### Օր 2 (Եթեր 6)

Տիրոջ հանդեպ հավատք գործադրելու Հարեդացիների օրինակից, երբ իրենց բեռնանավերով անցնում էին «մեծ ջրերը» (Եթեր 6.3), ուսանողները իմացան, որ եթե մենք վստահենք Տիրոջը և կատարենք Նրա կամքը, Նա ցույց կտա մեր կյանքի ուղին: Քամիները քշեցին բեռնանավերը դեպի խոստումի երկիր և ուսանողները սովորեցին, որ եթե մենք վստահենք Տիրոջը, ձախորդություններն ու դժվարությունները կարող են օգնել մեզ զարգանալ և ձեռք բերել խոստացված օրհնությունները:

### Օր 3 (Եթեր 7–11)

Երբ Հարեդացիները մերժեցին Հարեդի եղբոր զգուշացումները և ընտրեցին թագավոր, ուսանողները բացահայտեցին, որ մարգարեների խոսքերի մերժումը տանում է գերության: Սուլեն թագավոր էր, ով ղեկավարեց արդարությամբ: Երբ նրա ժողովուրդը ապաշխարեց և սկսեց լսել մարգարեներին, նրանք սկսեցին բարգավաճել: Ուսանողները իմացան, որ երբ մենք ապաշխարում ենք մեր անօրինություններից, մենք սկսում ենք բարգավաճել: Հարեդացիները, ի վերջո, դարձան ամբարիշտ և ցույց տվեցին, որ գաղտնի խմբակցություններին աջակցելը տանում է հասարակության կործանմանը:

### Օր 4 (Եթեր 12)

Մարգարե Եթերից ուսանողները սովորեցին, որ եթե մենք ունենանք հույս ու հավատք առ Հիսուս Քրիստոսը, մենք ուժ կունենանք լինելու հաստատուն և լցված բարի գործերով: Մորոնին գրել է, որ եթե մենք ապացույց ենք ցանկանում, ապա սկզբում մենք պետք է գործադրենք հավատք առ Հիսուս Քրիստոսը: Իր և Մորմոնի Գրքի մյուս գրողների գրելու մեջ թուլություն ունենալու Մորոնիի մտավախության նկատմամբ Տիրոջ պատասխանից ուսանողները բացահայտեցին, որ եթե մենք խոնարհեցնում ենք մեզ և գործադրում հավատք Տիրոջ հանդեպ, ապա Նա մեր թույլ կողմերը կդարձնի ուժեղ:

## Նախաբան

Այս դասը ուղղված է Եթեր 12.23–41–ին: Մորոնին ուսուցանում է, թե ինչու մարդիկ ունեն թուլություններ և ինչ պետք է նրանք անեն, որպեսզի հաղթահարեն դրանք:

## Ուսուցանման առաջարկներ

### Եթեր 4–11; 12.6

*Հարեդացիները բարգավաճում են և օրհնվում, երբ արդար են*

Հանձնարարեք երեք ուսանողների կրկնել և ամփոփել հետևյալ գլուխները՝ օգտագործելով գլուխների ամփոփումները. Եթեր 4–5; Եթեր 6; և Եթեր 7–11: Մեկ այլ ուսանողի հանձնարարեք կրկնել Եթեր 12.6: Խնդրեք նրանց դասարանի հետ կիսվել իրենց սովորած մեկ կամ երկու սկզբունքով:

### Եթեր 12.23–41

*Մորոնին արտահայտում է մտահոգություն այն մասին, թե ինչպես հեթանոսները կարձագանքեն Մորմոնի Գրքին*

Գրատախտակի մի կողմում գրեք *ուժեղ*, իսկ մյուս կողմում *թույլ* բառերը: Ուսանողներին ժամանակ տվեք մտածելու, թե որոնք են իրենց ուժեղ կողմերը և որոնք են իրենց մի քանի թուլությունները կամ անհամապատասխանությունները: Բացատրեք, որ Եթեր 12-ում Մորոնին ուսուցանել է, թե ինչպես մեր թույլ կողմերը կարող են դառնալ ուժեղ:

Ուսանողներից մեկին հանձնարարեք բարձրաձայն կարդալ Եթեր 12.23–25 և դասարանին հանձնարարեք բացահայտել այն թույլ կողմերը, որոնք, Մորոնիի կարծիքով, ինքը և Մորմոնի Գրքի այլ գրողները ունեին: Այնուհետև ուսանողներին տվեք հետևյալ հարցերը.

- Այս հատվածներում Մորոնին ի՞նչ թույլ կողմերի մասին էր խոսում:
- Ինչի՞ մասին էր Մորոնին անհանգստանում, որ կպատահեր Մորմոնի Գիրքը գրողների թուլությունների պատճառով:

Ուսանողների պատասխաններից հետո թույլ տվեք նրանց մտքում կարդալ Տիրոջ պատասխանը Եթեր 12.26–27-ում Մորոնիի մտահոգությանը և ուշադրություն դարձնել, թե ինչու է Աստված տալիս մեզ թուլություններ: Երբ ուսանողները կարդան հատվածները, հիշեցրեք նրանց, որ Եթեր 12.27–ը սուրբ գրությունների սերտման հատված է:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այս հատվածում *թուլություն* բառը, հանձնարարեք մի ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Երեց Նիլ Ա. Մաքսվելի հետևյալ արտահայտությունը.

«Երբ սուրբ գրություններում մենք կարդում ենք մարդու «թուլության» մասին, այդ բառը իր մեջ ներառում է . . . թուլություն, որը բնորոշ է մարդկային ընդհանուր վիճակին, որի դեպքում մարմինն ունի անընդհատ [կամ մշտական] ազդեցություն հոգու վրա: Թուլությունը նույնպես ներառում է մեր հատուկ, անհատական թուլությունները, որոնք մենք ցանկանում ենք հաղթահարել» (*Lord, Increase Our Faith* [1994], 84):

Կարող եք բացատրել, որ Երեց Մաքսվելի նկարագրած մարդկային ընդհանուր վիճակը վերաբերում է այն թուլությանը, որը տղամարդը և կինը ձեռք են բերում Ադամի ու Եվայի անկման միջոցով: Անկման պատճառով բացի մեր անձնական թերությունները մենք բոլորս հակված ենք գայթակղությունների և մարդկային անկատարության:

Հանձնարարեք ուսանողներին բացահայտել Եթեր 12.27–ում ուսուցանած սկզբունքը: **(Եթե մենք խոնարհեցնենք մեզ և գործադրենք հավատք Տիրոջ հանդեպ, ապա Նա մեր թույլ կողմերը կդարձնի ուժեղ մեզ համար:)**

Եթեր 12.27-ում ուսուցանված սկզբունքի կիրառությունը խրախուսելու համար, գրեք հետևյալը գրատախտակին.

*1. Ճանաչել իմ թուլությունը 2. Խոնարհեցնել ինքս ինձ 3. Գործադրել հավատք առ Քրիստոսը*

Հանձնարարեք ուսանողներին այս արտահայտությունները գրել թղթի վրա: Վերնագրերի տակ ուսանողներին խնդրեք մտածել ու գրել այժմ կամ հետագայում՝(1) թուլությունը, որն իրենք ունեն, (2) ինչպես կարող են խոնարհեցնել իրենց այդ թուլության համար, և (3) ինչպես կարող են գործադրել հավատք առ Քրիստոսը, որպեսզի ստանան Նրա օգնությունը, կամ շնորհը, որպեսզի հաղթահարեն իրենց նշած թուլությունը:

Երբ ավարտեն, հորդորեք նրանց տեղադրել թուղթը իրենց անձնական օրագրերում կամ մի այլ տեղ, որպեսզի կարողանան հաճախակի տեսնել այն և հիշել իրենց ցանկացած ջանքի մասին: Վկայեք ուսանողներին, որ եթե նրանք խոնարհաբար ձգտեն հաղթահարել իրենց թուլությունները, Տերը «նրանց թույլ կողմերը կդարձնի ուժեղ» (Եթեր 12.27):

Ուսանողներին հանձնարարեք կարդալ Եթեր 12.26, 28, որպեսզի տեսնեն, թե հետագայում Տերն ինչպես պատասխանեց գրելու իր թուլության Մորոնիի մտավախությանը: Կարող եք տալ հետևյալ հարցերը.

- Եթեր 12.26-ում խոսվում է հեզության մասին, որը նշանակում է մեղմ, խոնարհ և հլու աստվածային կամքին: Ձեր կարծիքով, ինչո՞ւ է պահանջվում հեզություն, որպեսզի չնկատենք ուրիշների թուլությունները:
- Ինչպե՞ս կարող է Տիրոջ շնորհը (Նրա օգնությունը կամ աստվածային հնարավորության զորությունը) օգնել մեզ օգտվել ուրիշների թուլություններից:

Ընդգծեք, որ **երբ մենք զարգացնում ենք հավատք, հույս և գթություն, Տիրոջ շնորհն օգնում է մեզ, երբ մենք հանդիպում ենք ուրիշների թուլություններին:** Ամփոփեք Եթեր 12.29–32-ը, բացատրելով, որ Մորոնին վերանայեց հավատք գործադրելու կարևորությունը և դրանից բխող ապացույցներն ու հրաշքները: Ուսանողներին հանձնարարեք կարդալ Եթեր 12.33–35 և բացահայտել, թե ինչ գրեց Մորոնին գթություն գործադրելու կարևորության մասին:

Հարցրեք. Ինչո՞ւ է կարևոր գթություն ունենալ ուրիշների թուլությունների հետ առնչվելիս:

Հանձնարարեք ուսանողներին իրենց կողքի ուսանողի հետ կիսվել նրանով, թե ինչ են իրենք անում, որպեսզի ունենան Հիսուս Քրիստոսի շնորհը ավելի շատ իրենց կյանքում: Եթե ժամանակը թույլ է տալիս, կարող եք հրավիրել մի քանի ուսանողների դասարանի հետ կիսվել, թե ինչպես է Հիսուս Քրիստոսին մոտ գտնվելու ձգտումը ազդել իրենց կյանքի վրա:

## Հաջորդ Մաս (Եթեր 13–Մորոնի 7)

Երբ ուսանողները պատրաստվեն ուսումնասիրել հաջորդ մասը, հորդորեք նրանց հաշվի առնել հետևյալը. Ի՞նչ կլիներ, եթե ձեր բոլոր ընկերներն ու ընտանիքի անդամները սպանվեին և դուք լինեիք միակ փրկվածը, ով հավատարիմ էր Հիսուս Քրիստոսի ավետարանին: Թե՛ Եթերը, և թե՛ Մորոնին ունեցել են միայնակության այդպիսի փորձառություն: Ինչպե՞ս կարող եք դիմակայել որևէ փորձություն և ձեռք բերել հավերժական կյանք: Մորոնի 7-ը բացատրում է, թե ինչու են հավատքը, հույսը և գթությունը կարևոր այս ընծաների ձեռք բերման համար:

ԴԱՍ 151

# Եթեր 13–15

## Նախաբան

Մարգարե Եթերի հիշատակարանը Հարեդացիների քաղաքակրթության մասին ծառայում է որպես ապացույց այն բանի, որ նրանք, ովքեր մերժում են Տիրոջը և Նրա մարգարեներին, չեն բարգավաճում: Եթերը զգուշացնում է Կորիանթումրին, Հարեդացիների թագավորին, որ նա և նրա ժողովուրդը կկործանվեն, եթե նա և նրա ընտանիքը չապաշխարի: Երբ Կորիանթումրը և նրա ժողովուրդը չապաշխարեց, պատերազմը և ամբարշտությունը ահագնացան շատ տարիների ընթացքում մինչև որ Հարեդացիների ողջ ազգը կործանվեց: Միայն Եթերը և Կորիանթումրը փրկվեցին, որպեսզի վկայեին Եթերի մարգարեությունը: Այս հատվածները նույնպես Աստծո հրամանի կատարումն էր՝ «և ինչ ազգ որ տիրի [խոստումի երկիրը], պիտի ծառայի Աստծուն, այլապես նրանք պիտի ոչնչացվեն» (Եթեր 2.9):

***Նպաստեք սիրո և հարգանքի մթնոլորտի առաջացմանը***

Ուսանողները, ովքեր զգում են սիրված, վստահված և գնահատված ձեր և իրենց համադասարանցիների, կցանկանան հաճախել դասերին: Նրանք ավելի զգայուն կլինեն Սուրբ Հոգու ազդեցության նկատմամբ և մեծ ցանկություն կունենան մասնակցելու:

## Ուսուցանման առաջարկներ

### Եթեր 13.1–12

*Մորոնին գրի է առնում Եթերի մարգարեությունները Նոր Երուսաղեմի և Հին Երուսաղեմի մասին*

Բացատրեք, որ որոշ քաղաքներ հայտնի են անուններով, որոնք նկարագրում են իրենց նշանակալից հատկանիշները: Կարդացեք հետևյալ քաղաքների նկարագրող անունները և ուսանողներին հանձնարարեք կռահել, թե որ քաղաքն է համընկնում անվանը. Լույսերի քաղաք (Փարիզ, Ֆրանսիա); Հավերժական քաղաք (Հռոմ, Իտալիա); Քամոտ քաղաք (Չիկագո, Իլինոյս, Միացյալ Նահանգներ); Փայլուն մարգարիտ (Մանիլա, Ֆիլիպիններ); Ապարանքների քաղաք (Մեխիկո Սիթի, Մեքսիկա): Հանձնարարեք ուսանողներին բացատրել, թե այս նկարագրող անունները ինչ կարող են պատմել քաղաքների մասին:

Նշեք, որ Մորոնին գրել է Եթերի մարգարեությունը երեք քաղաքների մասին. Նոր Երուսաղեմ (տես Եթեր 13.6–8, 10); Ենովքի քաղաք, որը պետք է «վար գա երկնքից» (Եթեր 13.3; տես նաև Մովսես 7.62–64); և Երուսաղեմը Սուրբ Երկրում (տես Եթեր 13.11): Պատմեք դասարանին, որ Եթերն ուսուցանեց Հարեդացիներին, որ երկիրը որտեղ նրանք ապրում են, ապագայում կարևոր նշանակություն ունեցող քաղաքի վայր է (տես Եթեր 13.2–3): Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Եթեր 13.4–8, ուշադրություն դարձնելով այն քաղաքների անուններին, որոնք նշված են այս հատվածներում:

- Որո՞նք են այս քաղաքների անունները: (Երուսաղեմ և Նոր Երուսաղեմ:) Ինչպիսի՞ նկարագրող անուն Եթերն օգտագործեց Սուրբ Երկրի Երեուսաղեմի և Նոր Երուսաղեմի համար, որը մի օր պետք է կառուցվի ամերիկյան մայրցամաքում: («Սրբազան քաղաք»)
- Ձեր կարծիքով, ինչի՞ն նման կլինի «սուրբ քաղաքում» ապրելը:

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Եթեր 13.10–11, ուշադրություն դարձնելով, թե ինչպես մարդիկ կորակավորվեն ապրելու այս սուրբ քաղաքներում:

- Ինչպե՞ս մարդիկ կորակավորվեն ապրելու այս քաղաքներում: (Իրենց հանդերձները դարձնելով «ճերմակ Գառի արյան միջոցով»:)
- Ի՞նչ է նշանակում մարդկանց համար դարձնել հանդերձները «ճերմակ Գառի արյան միջոցով»: (Դա նշանակում է, որ մարդիկ մաքրվում են և սրբագործվում մեղքերից Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Գառի Քավության շնորհիվ; տես 1 Նեփի 12.11; Ալմա 5.21:)

Բացատրեք, որ Նոր Երուսաղեմի մյուս անունը *Միոն* է (տես Մովսես 7.62; Հավատո հանգանակ 1.10): Մինչ Նոր Երուսաղեմը և Երուսաղեմ քաղաքը կհաստատվեն ապագայում, Եկեղեցու բոլոր անդամները պետք է ձգտեն հաստատել Սիոնը այնտեղ, որտեղ ապրում են (տես ՎևՈւ 6.6; 14.6): Ամենապարզ ձևով ասած՝ Սիոնը

«սրտով մաքուրներն» են (ՎԼՈ 97.21)։ Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը.

«Սիոնը Սիոն է իր քաղաքացիների բնավորության, հատկանիշների և հավատարմության շնորհիվ [տես Մովսես 7.18]։ Հիշեք. «Տերն իր ժողովրդին կոչեց Սիոն, որովհետև նրանք մեկ սրտի և մեկ մտքի էին, և բնակվում էին արդարության մեջ. և ոչ մի աղքատ չկար նրանց մեջ» (Մովսես 7.18)։ Եթե մենք ցանկանում ենք հիմնել Սիոնը մեր տներում, ճյուղերում, ծխերում և ցցերում, ապա մենք պետք է բարձրացնենք այս չափանիշը։ Անհրաժեշտ կլինի (1) միասնական դառնալ մեկ սրտով և մեկ մտքով, (2) անհատապես և միասին դառնալ սուրբ ժողովուրդ, և (3) հոգ տանել աղքատների և կարիքավորների մասին։» («Եկեք Սիոն», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ.. 2008, 38)։

Ուսանողներին ժամանակ տվեք մտածելու, թե ինչ կարող են նրանք անել, որպեսզի հաստատեն բարձր չափանիշներ իրենց տներում և իրենց ճյուղերում ու ծխերում։ Կարող եք նրանց ժամանակ տրամադրել գրելու իրենց մտքերը տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում։

## Եթեր 13.13–15.34

*Հարեդացիները մերժեցին Եթերի մարգարեական զգուշացումները և շարունակեցին մնալ ամբարշտության և պատերազմի մեջ մինչև որ կործանվեցին։*

Ամփոփեք Եթեր 13.13–14, բացատրելով, որ Հարեդացիները մերժեցին Եթերին և դուրս գցեցին իրենց միջից։ Օրվա ընթացքում Եթերը թաքնվում էր «ժայռի խոռոչում», որտեղ նա ավարտեց Հարեդացիների մասին իր հիշատակարանը։ Գիշերը նա դուրս էր գալիս տեսնելու այն, ինչ կատարվում էր իր ժողովրդի՝ Հարեդացիների հետ։ Նա գրեց իր տեսած բաների մասին։

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Եթեր 13.15–19, ուշադրություն դարձնելով Հարեդացիների հասարակարգի նկարագրությանը։ Նրանց կարդալուց հետո, հանձնարարեք նրանց իրենց խոսքերով նկարագրել Հարեդացիների հասարակարգը։ Այնուհետև ուսանողներից մեկին հանձնարարեք բարձրաձայն կարդալ Եթեր 13.20–22։ Դասարանին հանձնարարեք հետևել, ուշադրություն դարձնելով այն պատգամին, որը Տերը պատվիրեց Եթերին հանձնել Կորիանթումրին։

- Ո՞րն էր Եթերի պատգամը Կորիանթումրին։ (Եթե Կորիանթումրը և նրա գերդաստանը ապաշխարեին, Տերը կխնայեր ժողովրդին և թույլ կտար Կորիանթումրին պահպանել թագավորությունը։ Եթե նրանք չապաշխարեին, թագավորության բոլոր մարդիկ, բացի Կորիանթումրից, պիտի կործանվեին։)
- Ինչպե՞ս Կորիանթումրը և նրա ժողովուրդը արձագանքեցին։

Ամփոփեք Եթեր 13.23–14.20, բացատրելով, որ պատերազմները երկրում շարունակվեցին։ Երեք մարդ, ըստ հերթականության՝ —Սարեդը, Գաղաադը և Լիբը—, փորձեցին խլել թագավորությունը Կորիանթումրի ձեռքից։ Ի վերջո, գաղտնի խմբակցությունները մեծ ուժ ստացան և ողջ ժողովուրդը ներգրավվեց պատերազմի մեջ։ «Բոլոր մարդիկ երկրի երեսին արյուն էին հեղում, և չկար մեկը, որ զսպեր նրանց» (Եթեր 13.31)։ Կորիանթումրի վերջին թշնամին մի մարդ էր, որի անունն էր Սիզ։

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Եթեր 14.21–25, 30–31 և 15.1–2, ուշադրություն դարձնելով այս պատերազմի հարուցած կործանման չափերին։ Այնուհետև ուսանողներից մեկին հանձնարարեք բարձրաձայն կարդալ Եթեր 15.3–5։ Դասարանին հանձնարարեք հետևել, ուշադրություն դարձնելով նրան, թե ինչ էր Կորիանթումրը փորձում անել, որպեսզի խնայեր մնացած ժողովրդին կործանումից։

- Ի՞նչ արեց Կորիանթումրը։ (Նա Սիզին առաջարկեց հրաժարվել թագավորությունից։)
- Ինչպե՞ս Սիզն արձագանքեց Կորիանթումրի առաջարկին։ (Նա ասաց, որ կխնայեր ժողովրդին, եթե նրան թույլ տրվեր սպանել Կորիանթումրին։ Տես նաև Եթեր 14.24։)

Ամփոփեք Եթեր 15.6–11, բացատրելով, որ Կորիանթումրի ժողովուրդը և Սիզի ժողովուրդը շարունակեցին ճակատամարտը միմյանց դեմ։ Կարող եք նաև բացատրել, որ այս ճակատամարտը, որի ժամանակ Հարեդացի ազգը կործանվեց, տեղի ունեցավ Ռամա բլրի մոտ։ Հարյուրավոր տարիներ անց Նեփացիների քաղաքակրթությունը կործանվեց այդ նույն բլրի մոտ տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ, որը հետագայում կոչվեց Կումորա։ (Տես Եթեր 15.11; Մորմոն 6.6։)

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Եթեր 15.12–17: Նախքան նրանք կկարդան, հանձնարարեք նրանց ուշադրություն դարձնել Հարեդացիների կարգավիճակի մանրամասներին և բացահայտել մի հատուկ տխուր բան այս պատմության մեջ: Երբ նրանք ավարտեն կարդալը, մի քանի ուսանողների հանձնարարեք կիսվել իրենց բացահայտածով:

Հիշեցրեք ուսանողներին, որ Եթերը շատ երկար տարիներ անցկացրեց՝ ապաշխարություն աղաղակելով մարդկանց (տես Եթեր 12.2–3; 13.20): Հետևյալ անավարտ նախադասությունը գրեք գրատախտակին. *Եթե մենք մերժենք ապաշխարելու Տիրոջ նախազգուշացումները, . . .:*

Ուսանողներից մեկին հանձնարարեք բարձրաձայն կարդալ Եթեր 15.18–19: Դասարանին հանձնարարեք հետևել նրան, գտնելով տարբերակներ լրացնելու համար գրատախտակին գրված անավարտ նախադասությունը: Երբ ուսանողները կիսվեն իրենց մտքերով, հետևյալ սկզբունքը գրելով, ավարտեք նախադասությունը. ***Եթե մենք մերժենք ապաշխարելու Տիրոջ նախազգուշացումները, Նրա Հոգին հետ կքաշվի և Սատանան զորություն կունենա մեր սրտերի վրա:***

- Ավելի վաղ ապաշխարելու Հարեդացիների մերժումը ինչպե՞ս ազդեց հետագայում փոխվելու նրանց հնարավորության վրա:

Ամփոփեք Եթեր 15.20–32, բացատրելով, որ Կորիանթումրի և Սիզի բանակները կռվեցին, մինչև որ մնացին Կորիանթումրը և Սիզը: Այնուհետև Կորիանթումրը սպանեց Սիզին: Ինչպես Եթերը մարգարեացել էր, թագավորության բոլոր մարդիկ սպանվեցին, բացի Կորիանթումրից, ով ապրեց տեսնելու, թե ինչպես մեկ այլ ժողովուրդ՝ —Զարահեմլայի ժողովուրդը— ժառանգեց երկիրը (տես Եթեր 13.21; Օմնի 1.20–22): Հանձնարարեք ուսանողներից մեկին կարդալ Եթեր 15.33, տեսնելու համար, որ Եթերին տրված Տիրոջ խոսքը կատարվեց:

Նշեք, որ Հարեդացիների պատմությունը ծայրահեղ օրինակն էր այն բանի, թե ինչ է պատահում մարդկանց հետ, երբ նրանք մերժում են ապաշխարելու Աստծո շարունակական հրավերները: Չնայած ծայրահեղ օրինակին, մենք պատմության մեջ կարող ենք բացահայտել սկզբունքներ, որոնք կարող են օգնել մեզ: Բացատրեք, որ Հարեդացիների նման շատ մարդիկ այսօր մերժում են ապաշխարելու Աստծո հրավերը, այդպիսով կորցնելով Տիրոջ Հոգին: Այդ մարդիկ հաճախ արդարացնում են ապաշխարելու իրենց մերժումը: Կարդացեք հետևյալ ինքնարդարացումները և հանձնարարեք ուսանողներին բացատրել, թե ինչ նրանք կասեին ի պատասխան մեկի, ով կասեր այդ: Երբ ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, հորդորեք նրանց հղում անել այն սկզբունքներին, որոնք նրանք սովորել են Եթեր 13–15–ում:

1. «Ես գիտեմ, որ այն ֆիլմերը, որոնք նայում եմ, չեն համապատասխանում Եկեղեցու չափանիշներին, բայց ինձ չի թվում, որ դրանք վատ ազդեցություն են թողնում ինձ վրա»:
2. «Իմ ընկերների հետ ալկոհոլային խմիչք խմելը այնքան էլ վատ բան չէ— մենք միայն զվարճանում ենք»:
3. «Ես արտագրում եմ միայն նրա համար, որ իմ դասարանում բոլորն էլ արտագրում են: Լավ գնահատական ստանալը անհնար է առանց արտագրության»:
4. «Դա միայն մի փոքր պոռնոգրաֆիա է: Ես չեմ գնում և անբարոյականությամբ զբաղվում: Բացի այդ ես կարող եմ ցանկացած ժամանակ կանգ առնել»:
5. «Այժմ ես կարիք չունեմ ապաշխարության: Ես կարող եմ սպասել, մինչև որ գնամ միսիա կամ ամուսնանամ տաճարում»:

Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ երբ մարդիկ մեղք են գործում ու չեն ապաշխարում, նրանք միշտ բախվում են այդ մեղքերի հետևանքներին: Հավաստիացրեք ուսանողներին, որ եթե նրանք մեղք են գործել, նրանք կարող են ապաշխարել իրենց մեղքերից և իրենց կյանքում կրկին վերագտնել Տիրոջ Հոգին: Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ խոսքերը.

«Ես վկայում եմ, որ Փրկիչը կարող է և ցանկանում է ներել մեր մեղքերը: Բացառությամբ այն մի քանիսից, ովքեր լրիվությունը իմանալուց հետո ընտրել են կործանում, չկա մեղք, որը չի կարող ներվել: Ինչպիսի հրաշալի առավելություն է մեզանից յուրաքանչյուրի համա շրջվելը մեր մեղքից և գալը դեպի Քրիստոսը: Աստվածային ներումը ավետարանի ամենաքաղցր պտուղներից մեկն է, որը հեռացնում է մեր սրտերի

մեղքն ու ցավը և փոխարինում դրանք ուրախությամբ ու խղճի խաղաղությամբ» (“Repent . . . That I May Heal You,” *Ensign* կամ *Liahona,* Nov. 2009, 40–41)։

Հրավիրեք ուսանողներին քննել իրենց կյանքը, տեսնելով այն մեղքերը, որոնք խոչընդոտում են Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունն ունենալուն։ Հորդորեք նրանց օգտվել Քավության զորությունից փոփոխություններ կատարելու համար, որոնք կօգնեն նրանց պահել Հոգու ընկերակցությունը և դիմադրել Սատանայի զորությունը։

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ Եթեր 13–15–ում ուսուցանված մեկ այլ սկզբունք, հանձնարարեք նրանց մտքում կարդալ հետևյալ հատվածները. Եթեր 13.27; 14.24; 15.6, 22, 28։ Նախքան կարդալը, հանձնարարեք նրանց փնտրել այն բառերն ու արտահայտությունները, որոնք ընդգծում են Հարեդացիների զայրույթի զգացմունքները և վրեժի ցանկությունը։ Կարող եք առաջարկել, որպեսզի ուսանողները նշեն այդ բառերն ու արտահայտությունները։

- Հիմնվելով Եթեր 13–15–ի ձեր ուսումնասիրության վրա, որո՞նք են Հարեդացիների զայրույթի ու վրեժի ցանկության հետևանքները։
- Զայրութի ու վրեժի մասին ի՞նչ սկզբունքներ կարող ենք սովորել Հարեդացիների պատմության վերջին դրվագներից։ (Ուսանողները կկիսվեն մի քանի տարբեր սկզբունքներով։ Համոզվեք, որ նրանց պատասխանները արտացոլում են այն , որ **զայրութը և վրեժը մարդկանց տանում են այնպիսի ընտրությունների, որոնք վնասում են իրենց և ուրիշներին։**)
- Ինչպիսի՞ հետևանք կարող է ունենալ զայրութը անհատի կամ ընտանիքի վրա։

Վկայեք, որ մենք կարող ենք հաղթահարել զայրութի զգացումը և վրեժի ցանկությունը, եթե մենք շրջվենք դեպի Հիսուս Քրիստոսը և Նրա Քավության միջոցով ստանանք ներում ու սփոփանք։ Ուսանողներին հորդորեք աղոթքով շրջվել դեպի Տերը այն օգնության համար, որի կարիքն ունեն, երբ նրանք զգում են զայրութ մեկ այլ անձի նկատմամբ։

## Եթերի կրկնություն

Ժամանակ տրամադրեք ուսանողների հետ վերանայելու համար Եթերի գիրքը։ Խնդրեք նրանց մտածել, թե ինչ իրենք սովորեցին այս գրքից սեմինարիայի և սուրբ գրությունների անհատական ուսումնասիրության ժամանակ։ Եթե կարիք լինի մտաբերելու, հանձնարարեք նրանց համառոտ վերանայել Եթերի որոշ գլուխների ամփոփումները։ Բավարար ժամանակ անց մի քանի ուսանողների հրավիրեք Եթերից կիսվել նրանով, ինչ ոգևշնչող ազդեցություն գործեց նրանց վրա կամ օգնեց նրանց մեծացնել հավատքը առ Հիսուս Քրիստոսը։

# ՄՈՐՈՆԻԻ
## ԳՐՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ

### Ինչո՞ւ ուսումնասիրել այս գիրքը:

Մորմոնի Գիրքն ուսումնասիրելով ուսանողները կստանան ուժ Մորոնիի և նրա հոր՝ Մորմոնի զորեղ օրինակներից և ուսմունքներից: Նրանք կսովորեն Հիսուս Քրիստոսի Եկեղեցու հիմնական արարողությունների և սահմանված կարգերի մասին, անկեղծ միտումով արդար գործեր անելու կարևորության մասին, բարու և չարի միջև դատողություններ անելու մասին, հավատքի, հույսի և գթության փոխկապվածության և փոքր երեխաների փրկության մասին: Ուսանողները կկարդան նաև Մորմոնի գրքի ճշմարտացիության մասին ինքնուրույն աղոթելու Մորոնիի հորդորի վերաբերյալ (տես Մորոնի 10.3–5) և գալու «Քրիստոսի մոտ և կատարելագործվելու նրանում» (Մորոնի 10.32):

### Ո՞վ է գրել այս գիրքը:

Մորոնին գրել է այս գիրքը, որը ներառում է իր խոսքերը, Իր տասներկու Նեփիացի աշակերտներին ուղղված Հիսուս Քրիստոսի խոսքերը (տես Մորոնի 2), և նրա հոր՝ Մորմոնի խոսքերը (տես Մորոնի 7–9): Նախքան Նեփիացիների կործանումը Մորոնին ծառայեց նրանց մեջ որպես ռազմական և Եկեղեցու առաջնորդ (տես Մորմոն 6.12, Մորոնի 8.1): Մորոնին Փրկչի վկան էր ինչպես Մորմոնի Գրքի մյուս հիմնական գրողները և կազմողները: Նա վկայում էր. «Ես տեսել եմ Հիսուսին . . . նա խոսել է ինձ հետ երես առ երես» (Եթեր 12.39): Մորոնին հավատարիմ էր իր վկայությանը, հրաժարվելով ուրանալ Քրիստոսին մի ժամանակաշրջանում, երբ Լամանացիները սպանում էին ամեն Նեփիացու, ով Նրան չէր ուրանում (տես Մորոնի 1.1–3): 1823թվականին, մոտ 1,400 տարի Մորմոնի Գրքի հիշատակարանն ավարտելուց հետո, Մորոնին հայտնվեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին որպես հարություն առած էակ և տեղեկացրեց Ջոզեֆին, որ հիշատակարանը պահված էր իր տան մոտի մի բլրում (տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.29–35): Այդ պահից սկսած և պարբերաբար հաջորդ չորս տարիների ընթացքում Մորոնին հրահանգեց Ջոզեֆ Սմիթին «այն մասին, թե ինչ էր պատրաստվում անել Տերը, և թե ինչպես ու ինչ ձևով էր նրա թագավորությունը կառավարվելու վերջին օրերին» (Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.54):

### Ու՞մ համար է գրված այս գիրքը և ինչու՞:

Մորոնին նշել է. «Ես գրում եմ մի քանի բան ևս, որպեսզի գուցե դրանք ինչ որ մի օր՝ ապագայում, արժեքավոր լինեն իմ եղբայրների՝ Լամանացիների համար» (Մորոնի 1.4, տես նաև Մորոնի 10.1): Նա նաև հայտարարեց, որ նա խոսել է «աշխարհի բոլոր ծայրերի համար» նախազգուշացնելով, որ Աստծո դատարանի առաջ բոլորը հաշվետու կլինեն այն խոսքերի համար, որ նա էր գրել (տես Մորոնի 10.24, 27): Ի նախապատրաստումն այս իրադարձության, Մորոնին հրավիրեց բոլորին «գալ Քրիստոսի մոտ» (Մորոնի 10.30, 32):

### Ե՞րբ և որտե՞ղ է այն գրվել:

Մորոնին հավանաբար գրել և կազմել է այս գիրքը մ.թ. 401թ. և մ.թ. 421 տարիների ընթացքում (տես Մորմոն 8.4–6, Մորոնի 10.1). Նա չի նշել, թե որտեղ էր նա, երբ գրեց այն—միայն այն, որ նա թափառում էր, որտեղ որ պատահեր իր կյանքի ապահովության համար: (տես Մորոնի 1.1–3)

### Որո՞նք են այս գրքին բնորոշ որոշ առանձնահատկությունները:

Այս գիրքը մանրամասներ է տրամադրում Իր տասներկու Նեփիացի աշակերտներին Հիսուս Քրիստոսի հրահանգների վերաբերյալ, երբ Նա իշխանություն տվեց նրանց շնորհելու Սուրբ Հոգու պարգևը (տես Մորոնի 2, տես նաև 3 Նեփի 18.36–37): Այն նաև ներառում է Մորմոնի Գրքում պարունակվող եզակի հրահանգներ՝ քահանայության արարողությունների և հաղորդության արարողության ժամանակ օգտագործվող աղոթքների վերաբերյալ (տես Մորոնի 3–5): Այս գրքին բնորոշ մյուս առանձնահատկությունն այն է, որ ներառում է Մորմոնի ուսմունքները բարին չարից տարբերելու մասին(տես Մորոնի 7.12–19), հրեշտակների սպասավորման (տես Մորոնի 7.29–39), գթության, որպես Քրիստոսի մաքուր սեր (տես Մորոնի 7.44–48), և փոքր երեխաների փրկության վերաբերյալ (տես Մորոնի 8): Այն նաև ներառում է Մորմոնի նկարագրությունը Նեփիացիների և Լամանացիների այլասերվածության մասին, մինչև նրանց վերջնական ճակատամարտը Կումորա բլրի մոտ (տես Մորոնի 9): Մորոնին ներառեց իր իսկ ուսմուքները Հոգու պարգևների վերաբերյալ: (տես Մորոնի 10.8–26): Նա նաև գրի առավ մի հրավեր, որը գտնվում է Մորոնի 10.3–5 հատվածներում, որը տալիս է մի կարևոր օժանդակություն Մորմոնի Գրքին: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին բացատրել է, որ Մորմոնի Գիրքը «միակ գիրքն է, որը պարունակում է իր կազմերի ներսում խոստում, որ աստվածային զորությամբ ընթերցողը կարող է իմանալ համոզվածությամբ դրա ճշմարտության մասին» (“A Testimony Vibrant and True,” *Ensign,* Aug. 2005, 4):

### Համառոտ շարադրանք

**Մորոնի 1–6** Մինչ թափառում է իր իսկ կյանքի անվտանգության համար, Մորոնին գրում էր Հիսուս Քրիստոսի Եկեղեցու արարողություններն ու սահմանված կարգերը: Սրանք ներառում են Սուրբ Հոգու պարգևի շնորհումը, քահանայության արարողությունների կատարումը, հաղորդության սպասավորումը և մկրտության համար որակավորումը: Մորոնին նաև քննարկում է Եկեղեցու անդամների հոգևոր սնուցման մասին, ինչպես նաև Եկեղեցու ժողովների նպատակների և դրանց վարման կարգի մասին :

**Մորոնի 7** Մորոնին արձանագրում է Մորմոնի կողմից տրված մի քարոզի մասին, ով ուսուցանել էր Քրիստոսի Լույսի մասին, անկեղծ միտումով արդար գործեր անելու կարևորության մասին, բարու և չարի միջև տարբերությունը զանազանելու, ամեն բարի բանի հարելու և հավատքի, հույսի և գթության միջև փոխկապվածության մասին:

**Մորոնի 8–9** Մորոնին շարադրում է Մորմոնից ստացած նամակները՝ բացատրելով, թե ինչու փոքրիկ երեխաները կարիք չունեն մկրտության և նկարագրում Նեփիացիների և Լամանացիների մեջ գոյություն ունեցող մեծ ամբարշտությունը:

**Մորոնի 10** Մորոնին հորդորում է բոլորին, ովքեր կկարդան Մորմոնի Գիրքը, աղոթեն իմանալու դրա ճշմարտացիության մասին, չմերժեն Աստծո զորությունն ու պարգևները և գան Քրիստոսի մոտ և կատարելագործվեն Նրանում:

ԴԱՍ 152

# Մորոնի 1–3

## Նախաբան

Եթերի թիթեղների կրճատումն անելուց հետո, Մորոնին կարծեց, որ էլ չէր գրելու: Սակայն նա ոգեշնչվեց «գրել մի քանի բան ևս, որպեսզի գուցե դրանք ինչ-որ մի օր՝ ապագայում, արժեքավոր լինեն [նրա] եղբայրների՝ Լամանացիների համար, Տիրոջ կամքի համաձայն» (Մորոնի 1.4): Նրա խոսքերը հաստատում են իր հավատարմությունը Հիսուս Քրիստոսին և դրանք նաև ընդգծում են ավետարանի կարևոր արարողությունները:

***Ուսուցանեք Հոգով***

Ձեր նախապատրաստման և ուսուցման ընթացքում, ձգտեք առաջնորդվել Սուրբ Հոգով: Երբ ուսուցիչը և ուսանողները առաջնորդվում են Հոգու կողմից «նա, ով քարոզում է, և նա, ով ստանում է, հասկանում են միմյանց, և երկուսն էլ շենանում են և միասին ցնծում» (ՎևՈՒ 50.22):

## Ուսուցանման առաջարկներ

### Մորոնի 1

*Մորոնին թափառում է իր կյանքի ապահովության համար և շարունակում իր գրառումները:*

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ հետևյալ պատմությունը, որը պատմել է մի երիտասարդ կին, ով պաշտպանեց իր հավատքը դպրոցում:

«Իմ ուսուցիչը դասարանի առջևում կանգնած խոսում էր այն կինոնկարի մի հատվածի մասին , որը պատրաստվում էինք դիտել: . . . Ուսուցիչս . . . անհոգորեն բացատրեց, որ . . . կինոնկարը երեխաների համար չէ: Ես ապշեցի: . . . Ես երբեք չէի պատկերացնի, որ դա կպատահեր:

Ես նստած էի իմ տեղում՝ մտածելով այն մասին թե ինչ պիտի անեմ: Գլխումս անընդհատ մի միտք էր պտտվում. «Մեզ խնդրվել է չնայել անպարկեշտ կինոնկարներ: Ես փորձեցի պատճառաբանել դա՝ որովհետև ես դպրոցում եմ կինոնկարի այդ մասը, որ մենք պատրաստվում ենք նայել կլինի պատշաճ: Բայց անպատշաճ կինոնկարներ չնայելու միտքը տապալեց իմ պատճառաբանությունները:

Ես հանգիստ ձեռք բարձրացրեցի և ողջ դասարանի առջև ես խնդրեցի նստել դասարանից դուրս, երբ կինոնկարը ցուցադրվեր: Ես զգացի բոլորի աչքերը ինձ վրա հառված, երբ հրեցի աթոռը և վերցրեցի գիրքս: Ես տեսա նրանց դեմքերի արտահայտությունները, նրանք պարզապես չհասկացան:

Երբ նստած էի միջանցքում, ես ինձ շատ երջանիկ էի զգում: Ես գիտեի, որ ճիշտ էի վարվել, անկախ նրանից, թե ինչ կասեին իմ հասակակիցները կամ ուսուցիչը: Ես գիտեի, որ ես պարտավոր չէի անպատշաճ կինոնկար դիտել, հենց միայն այն պատճառով, որ ուսուցիչն էր այն ներկայացնում մեզ:

. . . Ես հավատում եմ, որ երբ մենք ձախորդության պահերի ենք հանդիպում և մենք դիմակայում ենք դրանց, մենք զորացվում ենք ավելի, քան եթե նստենք և թույլ տանք, որ դա պատահի:

Սա մի ներքին ուժ է, որը գտնում ենք մեր Փրկչի միջոցով: Եթե մենք նայում ենք Նրան մեր դժվարությունների ժամանակ, մենք զորացվում ենք: Նրա հանդեպ մեր հավատքը կարող է օգնել մեզ դիմակայել ձախորդությանը» (Catherine Hall, “Standing Up, Standing Out,” *New Era,* Feb. 2012, 11):

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մորոնի 1.1–3, ուշադրություն դարձնելով, թե ինչպես Մորոնին մենակ մնաց իր հավատքի մեջ: Խնդրեք նրանց կիսվել իրենց մտքերով: Տվեք հետևյալ հարցերը:

- Ի՞նչ է նշանակում ձեզ համար «չուրանալ Քրիստոսին:
- Ե՞րբ եք դուք կամ որևէ մեկը, որին դուք ճանաչում եք, ցույց տվել վճռականություն հետևելու Հիսուս Քրիստոսին, երբ ձախորդության մեջ եք եղել:

Բացատրեք, որ չնայած Մորոնիի և այդ պատմության երիտասարդ կնոջ օրինակները Քրիստոսին չուրանալու մեծ օրինակներ են, մեզանից յուրաքանչյուրն ամեն օր կարող է կայացնել փոքրիկ որոշումներ , որոնք ցույց են տալիս նույն հավատքը, հնազանդությունը և «Քրիստոսին չուրանալու» ցանկությունը:

- Որո՞նք են այն ուղիները, որոնցով դուք կարող եք հետևել Մորոնիի օրինակին: (Ուսանողները կարող են առաջարկել, որ իրենք կարող են չամաչել ավետարանից և դրա չափանիշներից, հնազանդվել պատվիրաններին, արդար օրինակ լինել և մնալ հաստատուն Հիսուս Քրիստոսի վկայությանը, նույնիսկ երբ մյուսները դա չեն անում:)

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 1.4 հատվածը: Դասարանին հանձնարարեք հետևել, ուշադրություն դարձնելով գրելը շարունակելու Մորոնիի որոշում կայացնելու պատճառներին: Այն բանից հետո, երբ ուսանողները կիսվեն իրենց մտքերով, մատնանշեք, որ Մորոնին գրում էր նրանց հետնորդների օգտի համար, ովքեր ձգտում էին խլել նրա կյանքը:

- Ի՞նչ կարող ենք սովորել Լամանացիներին օգնելու Մորոնիի ցանկությունից: (Մենք կարող ենք ցույց տալ Հիսուս Քրիստոսին հետևելու մեր պարտավորությունը՝ ընտրելով ցույց տալ սեր մեր թշնամիների հանդեպ:)

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսի հանդեպ Մորոնիի պարտավորությունը ստիպեց նրան գրել Եկեղեցու մի քանի կարևոր կողմերի մասին, որոնք նա զգում էր, որ «արժեքավոր » էին (Մորոնի 1.4): Հանձնարարեք ուսանողներին մտածել, թե ինչպես Մորոնի 2–3 հատվածներն ուսումնասիրելիս դրանք կարող են արժեքավոր լինել նրանց համար:

## Մորոնի 2

### *Մորոնին գրում է Հիսուս Քրիստոսի հրահանգները՝ Սուրբ Հոգու պարգևը շնորհելու մասին:*

Հրավիրեք մի երիտասարդի գալ դասարանի առջև: Խնդրեք դասարանին պատկերացնել այս երիտասարդին որպես ապագա լիաժամկետ միսիոներ: Նա և նրա զուգընկերը ինչ որ մեկին ուսուցանել են ավետարանը և այդ անձնավորությունը որոշել է մկրտվել: Ձեր դասարանի երիտասարդին խնդրել են կատարելու հաստատման արարողությունը, որը ներառում է Սուրբ Հոգու պարգևը շնորհումը: Երիտասարդին տվեք հետևյալ հարցը.

- Ի՞նչ կանեիք դուք այս արարողության կատարելուն պատրաստվելու համար: (Երիտասարդի պատասխանից հետո, հրավիրեք դասարանի մնացած մասին նույնպես կիսվել իրենց մտքերով:)

Բացատրեք, որ երբ հարություն առած Փրկիչն այցելեց Նեփիացիներին «նա իր ձեռքով դիպավ աշակերտներին, ում նա ընտրել էր» և «տվեց նրանց զորություն՝ շնորհելու Սուրբ Հոգին»: (3 Նեփի 18.36–37 հատվածները): Մորոնին իր հիշատակարանում ներառեց Նեփիացի տասներկու աշակերտներին տրված Փրկչի մի քանի հրահանգներ այն մասին, թե ինչպես շնորհեն Սուրբ Հոգու պարգևը: Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 2.1–3 հատվածները, և դասարանին հանձնարարեք որոնել հետևյալ տեղեկությունը:

1. Ի՞նչ պետք է անի արարողությունը կատարող անձնավորությունը պատրաստվելու համար:
2. Ինչպե՞ս պետք է կատարվի արարողությունը:

Այն բանից հետո, երբ ուսանողները կարդան հատվածները, մի քանիսին կամ բոլորին տվեք հետևյալ հարցերը:

- Համաձայն՝ Մորոնի 2.2-ի տողատակի ծանոթության, ինչպիսի՞ քահանայություն է պահանջվում Սուրբ Հոգու պարգևը շնորհելու համար: (Մելքիսեդեկյան քահանայություն:)
- Ի՞նչ պետք է անի Մելքիսեդեկյան Քահանայությաւն կրողը, որպեսզի նախապատրաստվի շնորհելու Սուրբ Հոգու պարգևը :
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարող է աղոթքն օգնել մարդուն պատրաստվել կատարելու քահանայության արարողությունը:
- Ինչպե՞ս է հաստատման արարողությունը կատարվում: (Ձեռնադրմամբ և Հիսուս Քրիստոսի անունով): Բացատրեք, որ որպես այս արարողության մաս Մելքիսեդեկյան Քահանայություն կրողները պետք էօգտագործեն որոշակի խոսքեր: Լիաժամկետ միսիոներներին տրվում է փոքրիկ ձեռնարկներ հրահանգներով, թե ինչպես կատարեն քահանայության արարողություններն ու օրհնությունները:)

Դուք կարող եք ամփոփել այն, ինչ ուսանողները սովորել են մինչև այժմ՝ գրելով հետևյալ ճշմարտությունը գրատախտակին. ***Մելքիսեդեկյան Քահանայություն կրողները ձեռնադրմամբ շնորհում են Սուրբ Հոգին մկրտված Եկեղեցու անդամներին:*** )

## Մորոնի 3

*Մորոնին գրում է քահանաներ և ուսուցիչներ կարգելու վերաբերյալ Հիսուս Քրիստոսի հրահանգները:*

Այս դասն ուսուցանելուց մեկ կամ երկու օր առաջ, դուք կարող եք խնդրել որևէ երիտասարդի պատրաստվել՝ կարդալու իր քահանայության իշխանության տոհմագիծը դասարանի համար: (Կամ դուք կարող եք պատրաստվել կարդալու ձեր իշխանության տոհմագիծը կամ ընտանիքի որևէ անդամի կամ ձեր ծխում կամ ճյուղում քահանայության ղեկավարի իշխանության տոհմագիծը:) Բացատրեք, որ քահանայության իշխանության տոհմագիծը ուղեգծում է քահանայություն կրողի իշխանությունը դեպի Հիսուս Քրիստոսը: Մելքիսեդեկյան Քահանայություն կրողները կարող են պատվիրել իրենց տոհմագծի իշխանության գրառումը՝ կապվելով Եկեղեցու վարչության կամ իրենց տարածքի վարչական գրասենյակի հետ: Եկեղեցին չի տրամադրում Ահարոնյան Քահանայություն կրողների իշխանության տոհմագիծը: Այնուամենայնիվ, եթե Ահարոնյան Քահանայություն կրողը կարգվել է Մելքիսեդեկյան Քահանայություն կրողի կողմից, նա կարող է իմանալ իրեն ձեռնադրած մարդու իշխանության տոհմագծի մասին:)

Խնդրեք ուսանողին կարդալ իր իշխանության տոհմագիծը դասարանի համար (կամ կարդացեք իշխանության տոհմագիծը, որը բերել եք դասարան): Հրավիրեք նրան կիսվել, թե ինչ է նշանակում նրա համար այն, որ նա կարող է ուղեգծել իր քահանայության իշխանությունը ուղղակիորեն մինչև Հիսուս Քրիստոսը (կամ կիսվել ձեր անձնական զգացումներով քահանայություն կրողների մասին, ովքեր կարողացել են ուղեգծել իրենց իշխանությունը մինչև Փրկիչը:)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, որ բոլոր քահանայության պարտականությունների կատարման իշխանությունը գալիս է Հիսուս Քրիստոսից և Երկնային Հորից, հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ արտահայտությունը.

«Աստվածային իշխանությամբ գործելը պահանջում է ավելին, քան պարզապես հասարակական համաձայնագիր: Այն չի կարող առաջանալ աստվածաբանական ուսուցումից կամ համայնքի կողմից լիազորությամբ: Ոչ, Աստծո լիազորված աշխատանքում պետք է լինի ավելի մեծ զորություն, քան այն, ինչ ունեն մարդիկ նստելատեղերում կամ փողոցներում կամ սեմինարիաներում՝ մի փաստ, որը շատ ազնիվ կրոնական հետազոտողներ գիտեին և բացեիբաց ընդունում էին սերունդների ընթացքում, որը բերեց Վերականգնմանը: . . .

. . . Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցում մենք կարող ենք ուղեգծել քահանայության իշխանության գիծը, որը գործադրվում է ծխի նոր կարգված սարկավագի կողմից, եպիսկոպոսի կողմից, որը նախագահում է նրան և մարգարեի, ով նախագահում է մեզ բոլորիս վրա: Այդ գիծը ետ է գնում անխախտ շղթայով մինչև հրեշտակային սպասավորներ, ովքեր եկան անձնապես Աստծո Որդու մոտից, երկնքից բերելով այս անզուգական պարգևը» («Մեր ամենաառանձնահատուկ բնորոշ գիծը» *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս, 2005, 44):

- Ինչո՞ւ է ձեզ համար կարևոր իմանալ, որ յուրաքանչյուր քահանայություն կրող այս Եկեղեցում կարող է ուղեգծել իր իշխանությունը ետ՝ մինչև Հիսուս Քրիստոսը:

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Մորոնի 3.1–4 հատվածները: Դասարանին հանձնարարեք հետևել, ուշադրություն դարձնելով, թե ինչպես են անհատները կարգվում քահանայության պաշտոններում:

- Ինչպե՞ս են անհատները կարգվում քահանայության պաշտոններում: (**Անհատները կարգվում են քահանայության պաշտոններում ձեռնադրմամբ նրանց կողմից, ովքեր ունեն իշխանություն:**)

- Ինչո՞ւ է անհրաժեշտ որևէ մեկի համար կարգվել քահանայության պաշտոնում ինչ որ մեկի կողմից, ով ներկայումս կրում է այդ պաշտոնը կամ ավելի մեծ պաշտոն քահանայությունում:

Խնդրեք դասարանում քահանայություն կրողներին համառոտակի բացատրել իրենց քահանայության պարտականությունները: Հարցրեք դասարանին.

- Ե՞րբ եք օրհնվել քահանայություն կրողի կողմից իր պարտականությունների կատարման արդյունքում:

Մի քանի ուսանողների հանձնարարեք կիսվել իրենց զգացումներով այն մասին, թե ինչպես է քահանայությունն օրհնել իրենց կյանքը: Դուք ևս կարող եք կիսվել, թե ինչպես է ձեր կյանքն օրհնվել քահանայության շնորհիվ:

## Սուրբ գրության սերտման կրկնություն

Տվեք ուսանողներին Մորմոնի Գրքի բոլոր սուրբ գրությունների սերտման բոլոր 25 հատվածները և կես էջ թուղթ: Խնդրեք ուսանողներին գրել 1, 2, և 3 թվերը իրենց թղթերի վրա: Ապա կարդացեք ներքևի օրինակները (կամ ինքնուրույն պատրաստեք մի քանի օրինակներ, որոնք կարող են ավելի շատ վերաբերվել ձեր դասավանդած ուսանողների կարիքներին և հետաքրքրություններին:) Իրենց թղթերի յուրաքանչյուր համարի կողքին ուսանողներին հանձնարարեք գրել սուրբ գրության սերտման այն հատվածը, որը, նրանց կարծիքով, լավագույնն է համապատասխանում ձեր կարդացած օրինակին: Ապա խնդրեք նրանց կիսվել իրենց պատասխաններով: Քանի որ կարող է լինել մեկից ավելի հնարավոր համապատասխանություն, խնդրեք ուսանողներին բացատրել, թե ինչու են ընտրել հենց այդ հատվածները:

1. Դուք ուժ եք փնտրում՝ հաղթահարելու մի առանձնահատուկ դժվարին գայթակղություն: (Հնարավոր պատասխաններ. Հելաման 5.12 և 3 Նեփի 18.15, 20–21:)
2. Մինչ ուսումնասիրում եք սուրբ գրությունները և մտածում ձեր կյանքում մի մարտահրավերի մասին, դուք ստանում եք ցուցումներ այն մասին, թե ինչ անել: (Հնարավոր պատասխան. 2 Նեփի 32.3:)
3. Դուք ճնշում եք զգացել որոշ ընկերների կողմից՝ մասնակցելու միջոցառումների, որոնք հակառակ են Աստծո պատվիրաններին: Նրանք ասում են, որ այդ միջոցառումները երիտասարդ լինելու և զվարճանալու մասն են կազմում: (Հնարավոր պատասխաններ. Մոսիա 4.30, Ալմա 37.35, 41.10:)

ԴԱՍ 153

# Մորոնի 4–5

## Նախաբան

Մորոնին գրի է առել Նեփիացիներին ուղղված Փրկչի հրահանգները հաղորդության սպասավորման վերաբերյալ, ներառյալ աղոթքները, որոնք քահանայություն կրողները պետք է օգտագործեին հացն ու գինին օրհնելու համար:

***Հրավիրել Սուրբ Հոգին ճշմարտության մասին վկայելու համար***

Երբ օգնեք ուսանողներին բացահայտել և հասկանալ ավետարանի վարդապետություններն ու սկզբունքները, ուսուցանեք այնպիսի ձևով, որը կհրավիրի Սուրբ Հոգին վկայելու ճշմարտության մասին: Երբ ուսանողները ձեռք բերեն հոգևոր վկայություն ավետարանի վարդապետության մասին, նրանք հավանաբար ավելի շուտ գործի կանցնեն և ավետարանով ավելի լիարժեքորեն կապրեն :

## Ուսուցանման առաջարկներ

### Մորոնի 4–5

*Մորոնին բացատրում է, թե ինչպես պետք է սպասավորվի հաղորդությունը*

Հնարավորության դեպքում ցուցադրեք հաղորդության հացի մի սկուտեղ և հաղորդության ջրի սկուտեղ: (Չնայած այս իրերի ցուցադրումը կարող է պատշաճ լինել, դուք չպետք է փորձեք կրկնօրինակել որևէ ձևով հաղորդության արարողությունը:) Ուսանողներին տվեք թղթի մի կտոր և խնդրեք նրանց գրել հիշողությամբ, որքան կարող են լավագույն ձևով հաղորդության աղոթքներից մեկը: Ուսանողները բավական ժամանակ տալուց հետո, բացատրեք, որ որպես իր հիշատակարանի մի մաս, Մորոնին ներառել է այս աղոթքները այնպես, ինչպես տրվել է Տիրոջ կողմից հաղորդությունը սպասավորելու համար: Նրանց հանձնարարեք բացել Մորոնի 4.3 կամ Մորոնի 5.2 և ստուգեք նրանց պատասխանները: Ապա հարցրեք.

- Եթե մեկ ուրիշ հավատքից որևէ ընկեր որոշել է ձեզ հետ հաճախել հաղորդության ժողովի, ինչպես կարող եք բացատրել հաղորդության իմաստը և դրա կարևորությունը ձեզ համար:

Որպեսզի ուսանողներին օգնեք հասկանալ հաղորդության նպատակներից մեկը, հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 4.1–3 հատվածները, իսկ մեկ ուրիշ ուսանողի՝ կարդալՄորոնի 5.1–2 հատվածները: Հրավիրեք ուսանողներին Մորոնի 4.3 և Մորոնի 5.2 հատվածներում գտնել այն արտահայտությունները, որոնք բացատրում են, թե ինչ են ներկայացնում հաղորդության հացն ու ջուրը: Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այս արտահայտություններն իրենց սուրբ գրություններում: (Դուք կարող եք հիշեցնել դասարանին, որ այսօր Եկեղեցին օգտագործում է ջուրը գինու փոխարեն հաղորդության ժամանակ, ինչպես թույլատրվել է Ջոզեֆ Սմիթին հայտնության միջոցով: [տես ՎևՈՒ 27.2]:)

- Ի՞նչ է ներկայացնում հացը: (Հիսուս Քրիստոսի մարմինը: Տես Մատթեոս ԻԶ.26, 3 Նեփի 18.6–7:)
- Ի՞նչ է ներկայացնում ջուրը: (Հիսուս Քրիստոսի արյունը: Տես Մատթեոս ԻԶ.27–28, 3 Նեփի 18.8–11:)
- Ինչո՞ւ է Փրկչի մարմինն ու արյունը կարևոր մեզ համար: (Երբ ուսանողները պատասխանեն այս հարցին, նրանք պետք է նշեն Փրկչի ֆիզիկական տառապանքը և մահը խաչի վրա: Նրանք պետք է նշեն Նրա հարությունը, երբ Նրա մարմինը վերամիավորվեց Իր հոգու հետ, երեք օր հետո, երբ Նա Իր վրա վերցրեց մահը: Նրանք պետք է նշեն նաև ուժեղ հոգևոր տառապանքն ու չարչարանքը, երբ Նա վերցրեց մեր մեղքերն Իր վրա, որը ստիպեց Նրան արնահոսել յուրաքանչյուր ծակոտիից: Քանի որ Նա վերցրեց Իր վրա ֆիզիկական մահը, բոլոր մարդիկ հարություն կառնեն: Քանի որ Նա տառապեց մեր մեղքերի համար, մենք կարող ենք ներվել մեր մեղքերից, եթե ապաշխարենք:)

Գրեք հետևյալ անավարտ միտքը գրատախտակին. *Հաղորդության խորհրդանիշներն օգնում են մեզ հիշել . . .* Հարցրեք ուսանողներին, թե ինչպես նրանք կամփոփեին հաղորդության այս կարևոր նպատակը: Ապա լրացրեք ճշմարտությունը գրատախտակի վրա հետևյալ ձևով. ***Հաղորդության խորհրդանիշներն օգնում են մեզ հիշել Հիսուս Քրիստոսի Քավությունը:***

Հրավիրեք ուսանողներին խորհել Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Բ. Հեյթի հետևյալ հարցը.

«Ի՞նչ ենք անում մենք որպես Եկեղեցու անդամներ հիշելով մեր Տիրոջը և Փրկչին, Նրա զոհաբերությունը և մեր պարտավորությունը Նրա հանդեպ» (“Remembering the Savior’s Atonement,” *Ensign*, Apr. 1988, 7):

- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի հաղորդության ժամանակ կենտրոնանանք քավության վրա:
- Ի՞նչ եք զգացել, երբ դուք հաղորդության ժամանակ անկեղծորեն խորհել եք Փրկչի Քավության մասին:

Իրենց մտքերով կիսվելուց հետո ուսանողներին հանձնարարեք տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում գրել մի տարբերակի մասին, որով նրանք կարող են հաջորդ հաղորդությունը ճաշակելուց հետո իրենց մտքերը կենտրոնացնել Քավության վրա: (Դուք կարող եք հրավիրել մի քանի ուսանողների կիսվել, թե ինչ են գրել:

Օգնելու համար ուսանողներին հասկանալ հաղորդության լրացուցիչ նպատակները, մինչև դասի սկսվելը գրատախտակին նկարեք հետևյալ աղյուսակը, փակագծերում բաց թողնելով պատասխանները: Հանձնարարեք ուսանողներին արտագրել աղյուսակը տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:

| Ի՞նչ եմ ուխտ կապում անել: | Իմ կարծիքով, ի՞նչ է նշանակում պահել իմ ուխտի այս մասը: | Ի՞նչ կարող եմ անել պահելու իմ ուխտի այս մասը: |
|---|---|---|
| 1. (Հոժարակամ լինել իմ վրա վերցնել Տիրոջ անունը:) | | |
| 2. Միշտ հիշել Նրան | | |
| 3. (Պահել Նրա պատվիրանները) | | |

Հիշեցրեք ուսանողներին, որ երբ մենք ճաշակում ենք հաղորդությունը, մենք ուխտեր կամ սրբազան պայմանագրեր ենք կապում Աստծո հետ: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մորոնի 4.3 հատվածը: Աղյուսակի առաջին սյունակում հանձնարարեք նրանց գրել երեք խոստումները, որ նրանք տալիս են, երբ ճաշակում են հաղորդությունը: Հանձնարարեք նրանց ստուգել իրենց պատասխանները իրենց կողքին նստած ինչ որ մեկի հետ: Ապա հրավիրեք նրանց ինքնուրույն լրացնել երկրորդ սյունակը: Բավականաչափ ժամանակից հետո, հանձնարարեք մի քանի ուսանողների կիսվել իրենց գրածով: Երբ ուսանողները կիսվեն իրենց գրածով, օգտագործեք հետևյալ նյութի մի մասը կամ ամբողջը՝ օգնելու ամրապնդել իրենց հասկացողությունը ուխտի յուրաքանչյուր մասի վերաբերյալ:

Որպեսզի ուսանողներին օգնեք ամրապնդել իրենց հասկացողությունն այն մասին, թե ինչ է նշանակում իրենց վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը, հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ միտքը.

«Մենք խոստանում ենք վերցնել Նրա անունը մեզ վրա: Դա նշանակում է, որ մենք մեզ պետք է տեսնենք ինչպես Նա: Մեր կյանքում առաջնահերթությունը պետք է տանք Նրան: Մենք պետք է կամենանք այն, ինչ Նա է կամենում, քան այն, ինչ մենք ենք կամենում կամ աշխարհն է ուսուցանում մեզ կամենալ» (“That We May Be One,” *Ensign*, May 1998, 67):

Բացատրեք, որ երբ մենք ապացուցում ենք մեր հոժարակամությունը վերցնելու Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա, մենք պարտավորվում ենք ապրել ինչպես Նրա աշակերտները: Մենք խոստանում ենք, որ չենք խայտառակի Նրա անունը: Մենք պարտավորվում ենք ծառայել Նրան և մեր ընկերներին: Մենք նաև ցույց ենք տալիս, որ պատրաստ ենք միանալ Նրան և Նրա Եկեղեցուն:

- Ինչպե՞ս եք ցույց տվել ձեր հոժարությունը վերցնելու Տիրոջ անունը ձեզ վրա:Ի՞նչ ազդեցություն է ունեցել դա ձեր կյանքում:

Հանձնարարեք ուսանողներին համեմատել հացի աղոթքը Մորոնի 4.3գինու աղոթքի հետ Մորոնի 5.2: Հարցրեք նրանց, թե ինչ տարբերություններ և նմանություններ են տեսնում: Մատնանշեք, որ «միշտ հիշել նրան» խոստումը հայտնվում է երկու դեպքում էլ:

- Ի՞նչ եք կարծում, ինչ է նշանակում «միշտ հիշել նրան»:

Հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ արտահայտությունը: Դասարանին հանձնարարեք լսել և հասկանալ, թե ինչպես կարող ենք օգնել մեզ մշտապես հիշել Փրկչին:



Մենք միշտ պետք է առաջնահերթություն տանք այն բաներին, որոնք հնարավոր կդարձնեն մշտապես հիշել Նրան՝ հաճախակի աղոթք և սուրբ գրությունների ուսումնասիրություն, առաքյալների ուսմունքների աչալուրջ ուսումնասիրություն, հաղորդությունը արժանիորեն ճաշակելու ամենշաբաթյա պատրաստություն, կիրակնօրյա երկրպագություն և գրել ու հիշել այն, ինչ Հոգին և փորձառությունն են ուսուցանում մեզ աշակերտ լինելու վերաբերյալ:

Այլ բաներ կարող են ծագել ձեր մտքում, որոնք հատկապես համապատասխանում են ձեզ ձեր կյանքի այս փուլում . . .

. . . Ես կարող եմ հավաստել, որ ժամանակի ընթացքում Փրկչին միշտ հիշելու և հետևելու մեր ցանկությունն ու կարողությունը կաճի: Մենք պետք է համբերությամբ աշխատենք այդ ուղղությամբ և միշտ աղոթենք խորաթափանցության և մեզ համար անհրաժեշտ աստվածային օգնության համար: (“To Always Remember Him,” *Ensign,* Apr. 2011, 51):

- Ի՞նչ եք արել դուք « նրան միշտ հիշելու» համար:
- Ինչպե՞ս է Փրկչին մշտապես հիշելը օգնում մեզ պահել մեր ուխտի մյուս մասերը:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր մեզ համար հաղորդությունը ճաշակել ամեն շաբաթ:

Որպեսզի ընդգծենք պատվիրանները պահելու մեր խոստումը, հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ հետևյալ արտահայտությունը *«Երիտասարդներին զորացնելու համար» գրքույկից.*

«Երկնային Հայրը ձեզ տվել է ազատ կամք, ճիշտը սխալից տարբերելու և ինքնուրույն գործելու կարողություն: Կյանք շնորհելուց հետո, ձեզ տրված Աստծո մեծագույն պարգևներից մեկը՝ ձեր կյանքը ղեկավարելու իրավունքն է: Մինչ այստեղ երկրի վրա եք, դուք ստուգվում եք՝ տեսնելու, թե արդյոք դուք կօգտագործեք ձեր ազատ կամքը՝ ցույց տալու ձեր սերը Աստծո հանդեպ ՝ պահելով Նրա պատվիրանները» (*«Երիտասարդներին զորացնելու համար»* [2011], 2).

- Ի՞նչ եք անում ամեն օր, որպեսզի օգնեք ինքներդ ձեզ պահելու Աստծո պատվիրանները :

Ամեն շաբաթ հաղորդության միջոցով խոստումները նորոգելու վերաբերյալ ուսանողների քննարկումից հետո, հանձնարարեք նրանց գրել աղյուսակի երրորդ սյունակում մեկ բան, որը նրանք կանեն շաբաթվա ընթացքում՝ ուխտի յուրաքանչյուր մասն ավելի լավ պահելու համար: Հրավիրեք նրանց կիսվել իրենց մտքերից մի քանիսով (բայց համոզվեք, որ նրանք հասկանում են, որ իրենք չպետք է կիսվեն որևէ բանով, որը խիստ անձնական է կամ գաղտնի:)

Բացատրեք, որ երբ մենք պահում ենք ուխտերը, որ կապել ենք Տիրոջ հետ, Նա խոստանում է օրհնել մեզ (տես ՎԵՈՒ 82.10): Հրավիրեք ուսանողներին հետազոտել Մորոնի 4.3 և Մորոնի 5.2, որոնելով թե ինչ է Տերը խոստանում մեզ, եթե մենք պահում ենք այն խոստումները, որոնք մենք նորոգում ենք, երբ ճաշակում ենք հաղորդությունը: Գրեք հետևյալ անավարտ միտքը գրատախտակին աղյուսակի տակ. *Երբ մենք հավատարմորեն պահում ենք հաղորդության ուխտը . . .* Հանձնարարեք ուսանողներին լրացնել գրատախտակի միտքը հիմնվելով նրա վրա, ինչ նրանք սովորել են Մորոնի 4.3 և Մորոնի 5.2 հատվածներից: (Միտքն ավարտելու ուղիներից մեկը կլինի հետևյալը. **Երբ մենք հավատարմորեն պահում ենք հաղորդության ուխտը, մենք կարող ենք Տիրոջ Հոգին միշտ մեզ հետ ունենալ:** )

- Ինչպե՞ս է Հոգին միշտ մեզ հետ լինելու խոստումը, արդարացնում այս ուխտը պահելու մեր ջանքերը:

Հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը: Հանձնարարեք դասարանին լսել, թե ինչ կարող է Հոգին անել մեզ համար:

«Տիրոջ Հոգին կարող է լինել մեր ուղեկիցը և կօրհնի մեզ ուղղորդմամբ, հրահանգով և հոգևոր պաշտպանությամբ մեր մահկանացու ճանապարհորդության ընթացքում: («Որպեսզի մենք կարողանանք Նրա Հոգին միշտ մեզ հետ ունենալ» *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2006, 31):

- Ե՞րբ եք ստացել առաջնորդություն, ուղղություն, հրահանգավորում կամ պաշտպանություն Սուրբ Հոգու ընկերակցության շնորհիվ: (Բացի ուսանողներից դուք ինքներդ կարող եք կիսվել ձեր իսկ փարձառությամբ:)
- Ամեն շաբաթ հաղորդության ժամանակ մենք հնարավորություն ունենք մտածել, թե որքան լավ ենք մենք պահում ուխտերը, որոնք ասվում են հաղորդության աղոթքներում: Ինչպե՞ս է Հոգին միշտ մեզ հետ ունենալու խոստումը օգնում մեզ մեր ջանքերում:
- Երբ խորհում եք նրա մասին, ինչ դուք սովորել եք այսօր հաղորդությունը ճաշակելու վերաբերյալ, հաղորդության աղոթքների ո՞ր մասն է հատկապես իմաստալի ձեզ համար: Ինչո՞ւ:

Հաղորդությունը ճաշակելու ժամանակ ուսանողներին հորդորեք խորհել Փրկչի Քավության մասին: Հրավիրեք նրանց, որ վերանայեն իրենց աղյուսակները և շարունակեն հետևել հաղորդության ուխտը ավելի լիարժեք պահելու իրենց գաղափարներին: Ուսանողներին հիշեցրեք Տիրոջ խոստումը տրված մեզ, եթե մենք պահենք այդ ուխտը. Մենք միշտ կունենանք Նրա Հոգին մեզ հետ: Վկայեք այն օրհնությունների մասին, որոնք կգան մեր կյանք, երբ մենք հիշենք և պահենք ուխտը, որը մենք կապում ենք ամեն շաբաթ, երբ ճաշակում ենք հաղորդությունը:

## Սերտման սուրբ գրության կրկնություն

Դուք կարող եք նախատեսել մի վերջնական սուրբ գրության սերտման ստուգում կամ կրկնողության վարժություն՝ օգնելու համար ուսանողներին ամրացնել Մորմոնի Գրքի ընտրված հատվածների իրենց սերտումը: Որոշեք թե ինչպես կարող եք ստուգել նրանց գիտելիքը և ծրագրեք մի վարժություն, որը համապատասխանում է այդ նպատակին: Դուք կարող եք ստեղծել համապատասխանեցման կամ բաց թողնված տեղերը լրացնելու ստուգարք՝ հղումներով և կարևոր բառերով կամ սցենարով, կամ կարող եք ստուգել ուսանողներին, թե որքանով են լավ անգիր սովորել տվյալ հատվածը: Մեկ այլ մոտեցմամբ կարելի է հանձնարարել յուրաքանչյուր ուսանողի ուսուցանել մի կարճ դաս կամ տալ մի ելույթ՝ որպես հիմնական աղբյուր օգտագործելով սուրբ գրության սերտման հատվածները,: Այնուամենայնիվ, դուք եք որոշում կազմակերպել մի եզրափակիչ միջոցառում սուրբ գրության հատվածների սերտման համար, ուսանողներին ժամանակ ընձեռելով ուսումնասիրել և պատրաստվել: Այսօրվա դասի տեղեկությունը կարող է բավարարել այս նախապատրաստությունը սկսելու համար:

ԴԱՍ 154

# Մորոնի 6

## Նախաբան

Երբ Մորոնին մոտենում էր թիթեղների վրա իր գրառումներն ավարտելուն, նա բացատրեց Եկեղեցում մարդկանց մկրտելու համար անհրաժեշտ որոշ որակավորումների մասին: Ապա նա ընդգծեց միմյանց հոգ տանելու վերաբերյալ Եկեղեցու անդամների պարտականությունները: Նա նաև բացատրեց Եկեղեցու ժողովների նպատակները և շեշտեց Սուրբ Հոգու ազդեցությամբ Եկեղեցու ժողովներ վարելու անհրաժեշտությունը:

## Ուսուցանման առաջարկներ

### Մորոնի 6.1–3

*Մորոնին սահմանում է մկրտության համար պահանջները*

Թող ուսանողները պատկերացնեն, որ նրանք ունեն յոթ տարեկան քույր կամ եղբայր, որը մի քանի ամսից կդառնա ութ տարեկան: Թող նրանք նաև պատկերացնեն, որ իրենց ծնողները խնդրել են իրենց ուսուցանել ընտանեկան երեկոյի մի դաս, թե ինչպես պատրաստվեն մկրտության թեմայով: Հանձնարարեք մի քանի ուսանողների պատմել, թե ինչ կուսուցանեին իրենք, որպեսզի օգնեին իրենց փոքր եղբորը կամ քրոջը պատրաստվել մկրտությանը:

Բացատրեք, որ Մորոնի 6 գլուխը պարունակում է Մորոնիի նկարագրությունը մկրտության պահանջների վերաբերյալ: Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Մորոնի 6.1–3 հատվածները, ուշադրություն դարձնելով մկրտության համար անհրաժեշտ պահանջներին: Ապա հանձնարարեք ուսանողներին կիսվել իրենց մտքերով: Հետևյալ հարցերը տվեք նրանց.

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում, մկրտվել ցանկացողները պետք է «առաջ բերեին վայել պտուղ, որ նրանք արժանի էին դրան»: (Նրանք պետք է ապրեին Աստծո պատվիրանների համաձայն, ցույց տալով, որ իրենք պատրաստ են կապելու և պահելու մկրտության ուխտը):
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր մարդու համար ունենալ «կոտրված սիրտ և փշրված հոգի» նախքան մկրտվելը: (Դուք կարող եք բացատրել, որ «կոտրված սիրտ և փշրված հոգի» արտահայտությունը վերաբերում է մարդու համեստությանը և ապաշխարելու և Տիրոջ պատվիրաններին հնազանդվելու պատրաստակամությանը:)

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 6.3 հատվածը, և խնդրեք դասարանին բացահայտել, թե ինչ ենք ուխտում անել մկրտության ժամանակ: Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալ ճշմարտությունը. **Մկրտության միջոցով մենք ուխտ ենք կապում մեզ վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը և ծառայել Նրան մինչև վերջ:** (Դուք կարող եք խնդրել ուսանողներին վերհիշել, ինչ իրենք սովորել են նախորդ դասի ժամանակ այն մասին, թե ինչ է նշանակում մեր վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը:)

- Ձեր փորձառությունից ելնելով, ինչու որևէ մարդ, ով կամենում է մկրտվել պետք է վճռականություն ունենա ծառայելու Հիսուս Քրիստոսին մինչև վերջ:
- Ի՞նչ եք արել Տիրոջը ծառայելու ձեր վճռականությունը պահպանելու և ամրապնդելու համար:

### Մորոնի 6.4

*Մորոնին բացատրում է, թե ինչպես հոգ տանել և հոգեպես սնուցել Եկեղեցու անդամներին:*

Ասեք ուսանողներին, որ մկրտության համար անհարժեշտ պահանջները նկարագրելուց հետո, Մորոնին բացատրել է, թե ինչ էր արվել իր օրերում օգնելու

նոր մկրտված մարդկանց հավատարիմ մնալու իրենց ուխտերին: Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալՄորոնի 6.4, ուշադրություն դարձնելով թե Եկեղեցու անդամներն ինչ էին անում նորադարձներին օգնելու համար: Հանձնարարեք ուսանողներին կիսվել իրենց սովորածով: Նրանց պատասխանները թվարկեք գրատախտակին:

Հանձնարարեք ուսանողներին ամփոփել, թե ինչ է Մորոնին 6.4 հատվածը ուսուցանում Եկեղեցու մյուս անդամների, հատկապես՝ նոր անդամների հանդեպ մեր պարտականությունների մասին: (Օրինակ, ուսանողները կարող են պատասխանել հետևյալ կերպ. **Մենք պատասխանատվություն ունենք հիշել Եկեղեցու մյուս անդամներին և Աստծո խոսքով հոգեպես սնուցել նրանց :** Նրանք կարող են նաև ասել որ,**մենք պետք է օգնենք միմյանց անընդհատ աչալուրջ լինել աղոթքում** և որ **մենք պետք է օգնենք միմյանց ապավինելու Փրկչին և Նրա Քավությանը:** )

- Ինչպե՞ս կարող ենք մենք կատարել միմյանց հիշելու մեր պարտականությունը:
- Ինչպե՞ս ենք մենք սնուցում միմյանց «Աստծո բարի խոսքով»:
- Ի՞նչ օրինություններ են գալիս Աստծո խոսքով սնվելուց:

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ արտահայտությունը.

«Մարդկանց մեծամասնությունը եկեղեցի չի գալիս պարզապես փնտրելու մի քանի նոր ավետարանական փաստեր կամ տեսնելու հին ընկերներին, չնայած բոլոր այս բաները կարևոր են: Նրանք գալիս են հոգևոր փորձառություն ունենալու համար: Նրանք խաղաղություն են ուզում: Նրանք ուզում են իրենց հավատքն ամրացնել և իրենց հույսը նորոգել: Նրանք կարճ ասած ուզում են սնուցվել Աստծո բարի խոսքով, զորացվել երկնքի ուժերի կողմից: Մեզանից նրանք, ովքեր կանչված են խոսելու կամ ուսուցանելու կամ ղեկավարելու, պարտավորություն ունեն անելու դա, այնքան լավ որքան մեր հնարավորությունները կներեն» (“A Teacher Come from God,” *Ensign,* May 1998, 26):

Հանձնարարեք ուսանողներին մտածել այն մարդկանց մասին, ովքեր ջանք են թափում, կամ ովքեր ջանք են թափել հիշելու և սնուցելու իրենց հոգեպես: Հարցրեք նրանց, թե օրինակի համար երբևէ մտածել են բոլոր մարդկանց մասին, ովքեր իրենց համար աղոթել են, դասեր են պատրաստել իրենց համար, խրախուսել են Եկեղեցու իրենց գործերում և օգնել իրենց դիմակայելու դժվարությունները: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել ձեր հետ, թե ինչպես ենք նրանք օրհնվել, որովհետև ինչ որ մեկը հիշել է իրենց և սնուցել իրենց Աստծո խոսքով: Դուք կարող ուսանողներին ժամանակ տալ նամակներ գրելու համար, շնորհակալություն հայտնելու մարդկանց, որոնց ջանքերն օգնել են իրենց:

Թող ուսանողները մտածեն որոշակի մարդկանց մասին, ում Տերը կկամենար, որ նրանք հիշեին և սնուցեին: Հանձնարարեք ուսանողներին գրել տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում, թե ինչ կարող են անել ավելի լավ կատարելու պարտականությունները, որոնք իրենք ունեն Եկեղեցու մյուս անդամների հանդեպ: Խրախուսեք նրանց հատուկ ուշադրություն դարձնել նոր անդամների կարիքներին:

## Մորոնի 6.5–9

*Մորոնին նկարագրում է Եկեղեցու ժողովների նպատակները և, թե ինչպես պետք է վարել ժողովները:*

Հանձնարարեք ուսանողներին պատկերացնել, որ նրանցից յուրաքանչյուրը մի երիտասարդ աղջկա կամ տղայի ծնող է, ով անցած մի քանի շաբաթվա ընթացքում ասել է, որ չի կամենում գնալ եկեղեցի, որովհետև դա անիմաստ է և ձանձրալի: Հանձնարարեք ուսանողներին մտածել, թե ինչ կարող են ասել դեռահասին՝ խրախուսելու գնալ եկեղեցի, և թ ինչպես կարող են նրանք օգնել նրան հասկանալ կանոնավոր կերպով եկեղեցի հաճախելու արդարացված պատճառները:

Գրատախտակի վրա գրեք հետևյալ անավարտ միտքը.

*Որպես Եկեղեցու անդամներ, մենք պետք է հաճախ հանդիպենք . . .*

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մորոնի 6.5–6 հատվածները: Ուսանողներին հանձնարարեք հետևել նրան և փնտրել եղանակներ գրատախտակին գրված արտահայտությունը ավարտելու համար: Երբ ուսանողները կիսվեն իրենց սովորածով, գրեք նրանց պատասխանները գրատախտակին: Նրանց պատասխանները կարող են ներառել հետևյալ ճշմարտությունները:

***Որպես Եկեղեցու անդամներ մենք պետք է հաճախ հանդիպենք՝ ծոմ պահելու և աղոթելու համար:***

***Որպես Եկեղեցու անդամներ մենք պետք է հաճախ հանդիպենք՝ հոգեպես միմյանց զորացնելու համար:***

***Որպես Եկեղեցու անդամներ մենք պետք է հաճախ հանդիպենք՝ ճաշակելու հաղորդությունը ի հիշատակ Հիսուս Քրիստոսի:***

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսը կիսվել է մի հատվածով ընկերոջ մի նամակից, ով իմացել է, թե ինչպես ուրախություն գտնի եկեղեցի հաճախելիս:

«Տարիներ առաջ ես փոխեցի իմ վերաբերմունքը Եկեղեցի հաճախելու վերաբերյալ: Ես այլևս չեմ գնում եկեղեցի հանուն ինձ, այլ մտածելով ուրիշների մասին: Ես նպատակ եմ դնում բարևելու մարդկանց, ովքեր մենակ են նստում, ողջունելու այցելուներին, . . . կամավոր որևէ հանձնարարություն կատարելու: . . .

«Կարճ ասած, ես եկեղեցի եմ գնում ամեն շաբաթ ակտիվ լինելու մտադրությամբ, ոչ թե պասիվ, և դրական տրամադրություն հաղորդելու մարդկանց: Հետևաբար իմ Եկեղեցի հաճախելը ինձ համար ավելի քան հաճելի է և իմաստալի» (մեջբերում «Անեսասեր ծառայություն»-ից *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2009, 96):

Երբ մտածում եք ձեր դասարանի ուսանողների կարիքների մասին, նկատի ունեցեք հարցնել մի քանիսը կամ բոլորը հետևյալ հարցերից՝ օգնելու նրանց վերլուծել և կիրառել այն սկզբունքները, որոնք նրանք հասկացան Մորոնի 6.5–6 հատվածներից:

- Ի՞նչ փորձառություններ են ձեզ ուսուցանել ձեր ծխի կամ ճյուղի անդամների հետ աղոթելու և ծոմ պահելու կարևորության մասին:
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում, որ մենք պետք է «խոսենք մեկս մյուսի հետ, [մեր] հոգիների բարօրության վերաբերյալ» ((Մորոնի 6.5): Ինչպե՞ս ենք դա անում եկեղեցում:
- Ինչպե՞ս կարող է մեր փորձառությունը եկեղեցում ազդեցություն թողնել, եթե մենք հաճախում ենք ուրիշներին հոգեպես զորացնելու ցանկությամբ:
- Հաղորդությունը ճաշակելիս որո՞նք են այն մի քանի բաները, որոնցով մենք կարող ենք հիշել Փրկչին: Ինչպե՞ս կարող է հաղորդությունը ճաշակելն օգնել մեզ հիշել Նրան ողջ շաբաթվա ընթացքում:
- Ինչպե՞ս է մեր դիտարկած օրինակների պատճառներով եկեղեցի հաճախելը օգնում մեզ «պահել [մեզ] ճիշտ ճանապարհին:» (Մորոնի 6.4): Ինչպե՞ս կարող ենք խրախուսել մյուս երիտասարդներին հաճախել Եկեղեցու ժողովներին:

Բարձրաձայն կարդացեք Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի հետևյալ միտքը.

«Սիոնում տեղ չկա դիտավորյալ մեղանչողի համար: Տեղ կա ապաշխարող մեղավորի համար, մարդու համար, ով հեռու է շրջվում անօրենությունից և ձգտում հավերժական կյանքի և Ավետարանի լույսին» (in Conference Report, Apr. 1915, 120):

Ապա հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Մորոնի 6.7–8 հատվածները, ուշադրություն դարձնելով, թե Եկեղեցու առաջնորդները Մորոնիի օրերում ինչին էին «խիստ հետևում»: Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց սովորածով: Դուք կարող եք բացատրել, որ այս հատվածում, «ջնջվում էին» արտահայտությունը վերաբերվում է վտարմանը: Եթե Եկեղեցու անդամները լուրջ մեղք են գործում և չեն ապաշխարում, նրանք կարող են վտարվել, կամ կորցնել իրենց անդամակցությունը Եկեղեցում և իրենց ուխտերի օրհնությունները:

- Որո՞նք են այն բաները, որոնք Եկեղեցու ղեկավարներն անում են այսօր՝ օգնելու համար զերծ մնալ անօրինությունից:

- Համաձայն Մորոնի 6.8 հատվածի, ի՞նչ խոստում է տրվում մեզ, եթե մենք անկեղծորեն ապաշխարենք մեր մեղքերից: (**Որքան հաճախ մենք ապաշխարենք և անկեղծ միտումով ձգտենք ներման, մենք կներվենք:**)

Խնդրեք ուսանողներին մտածել կիրակի օրը Եկեղեցու կանոնավոր ժողովներին Սուրբ Հոգին զգալու հնարավորությունների մասին (օրինակ՝ աղոթքների ժամանակ, հաղորդության ընթացքում, երբ անդամները ելույթներ են ունենում կամ ուսուցանում, երբ երգում են հիմները, կամ երբ դասի ընթացքում խորհում են սուրբ գրության հատվածի շուրջ): Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 6.9: Խնդրեք դասարանին հետևել նրան և բացահայտել, թե ինչ դեր պետք է ունենա Սուրբ Հոգին մեր ժողովներում:

- Ի՞նչ ճշմարտություն ենք մենք սովորում Մորոնի 6.9 հատվածից այն մասին, թե ինչպես պետք է վարել Եկեղեցու ժողովները: (**Եկեղեցու ժողովները պետք է վարել Սուրբ Հոգու զորությամբ:** )
- Ե՞րբ եք զգացել, որ Եկեղեցու ժողովները ղեկավարվել են Սուրբ Հոգու զորությամբ:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչպես է այս ճշմարտությունը վերաբերվում մեր Եկեղեցու ժողովների բոլոր կողմերին, թող նրանք պատկերացնեն հետևյալ իրադրությունում գտնվող մարդկանց վիճակը: (Դուք կարող եք գրել դա գրատախտակին մինչև դասը սկսվելը կամ նախապատրաստել դրանք որպես լրացուցիչ նյութ:) Հանձնարարեք ուսանողներին բացատրել, թե ինչպես է Մորոնի 6.9 հատվածի սկզբունքը, կիրառելի այս իրադրություններից յուրաքանչյուրում:

1. Ձեզ խնդրվել է ելույթ ունենալ հաղորդության ժողովի ժամանակ Հիսուս Քրիստոսի Քավության մասին:
2. Ձեզ խնդրվել է առաջիկա հաղորդության ժողովի համար ծրագրել երաժշտական միջոցառում:
3. Դուք նստած եք վկայության ժողովին և զգում եք հուշում կիսվելու ձեր վկայությամբ, բայց դուք վստահ չեք, թե ինչ պետք է ասեք:

Հիշեցրեք ուսանողներին, որ դասի սկզբում դուք խնդրեցիք նրանց մտածել, թե ինչ կասեին ծնողները որևէ երտասարդ տղամարդու կամ երիտասարդ աղջկա՝ խրախուսելու համար գնալ եկեղեցի: Դասը եզրափակելու համար հարցրեք ուսանողներին, թե արդյոք ցանկանում են կիսվել: Ապա կիսվեք վկայությամբ եկեղեցի հաճախելու օրհնության մասին և որևէ այլ սկզբունքներով, որոնք քննարկել եք այդ օրը:

ԴԱՍ 155

# Մորոնի 7.1–19

## Նախաբան

Մորմոնը արձանագրեց մի քարոզ, որն իր հայրը՝ Մորմոնը խոսել էր շատ տարիներ առաջ: Այս դասն ընդգրկում է քարոզի առաջին մասը, որում Մորմոնն ուսուցանեց անկեղծ միտումով արդար գործեր անելու վերաբերյալ, և թե ինչպես մենք կարող ենք զանազանել բարին չարից: 156 դասը ընդգրկում է քարոզի մնացած մասը:

***Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին:***

Երբ որոշեք, թե որ սկզբունքները և վարդապետությունները ընդգծեք, շարունակաբար փնտրեք ղեկավարվել Սուրբ Հոգու կողմից:

## Ուսուցանման առաջարկներ

### Մորոնի 7.1–11

*Մորմոնն ուսուցանում է Հիսուս Քրիստոսի հետևորդներին անկեղծ միտումով բարի գործեր կատարելու վերաբերյալ:*

Ցուցադրեք մի միրգ, որը տեսքը դրսի կողմից բաղձալի է:

- Դուք երբևէ զգացե՞լ եք որ միրգն այնքան էլ լավը չէ ներսից, ինչպես երևում էր դրսի կողմից: (Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել օրինակներով: Դուք կարող եք պատմել ձեր իսկ փորձառություններից մեկը:)
- Ինչպե՞ս կարող է մարդը նման լինել մրգի, որը լավ է երևում արտաքինից, բայց փտած է ներսից:

Բացատրեք, որ Մորոնին արձանագրեց իր հոր՝ Մորմոնի խոսքերը մեր սրտում արդար լինելու կարևորության արդար գործեր անելու մասին: Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 7.2–3, և խնդրեք դասարանին բացահայտել այն մարդկանց խմբին, որի մասին Մորմոնը խոսում էր: (Նա խոսում էր Եկեղեցու անդամների մասին:)

Այն բանից հետո, երբ ուսանողները կկիսվեն իրենց սովորածով, հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 7.4–5 հատվածները: Հանձնարարեք դասարանին հետևել և բացահայտել, թե ինչպես Մորմոնն իմացավ, որ այդ մարդիկ «Քրիստոսի խաղաղ հետևորդներ էին» (Մորոնի 7.3):

Գրեք *անկեղծ միտում* արտահայտությունը գրատախտակին:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում այս արտահայտությունը:

Երբ ուսանողները քննարկեն այս հարցը, դուք կարող եք խնդրել նրանցից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսի հետևյալ բացատրությունը.

«Մենք չպետք է միայն *անենք* այն ինչ ճիշտ է: Մենք պետք է գործենք ճիշտ նկատառումներով: Ժամանակակից տերմինն է՝ *բարի դրդապատճառներով:* Սուրբ գրություններում հաճախ այդ հոգեբանական տրամադրվածությունը նշվում է՝ *սրտի ողջ նվիրվածություն* կամ *անկեղծ միտում խոսքերով:*

«Սուրբ գրությունները հստակեցնում են, որ Աստված հասկանում է մեր դրդապատճառները և համապատասխանաբար կդատի մեր արարքները» (*Pure in Heart* [1988], 15):

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մորոնի 7.6–10 հատվածները, ուշադրություն դարձնելով Տիրոջ նախազգուշացումներին այն ժողովրդին, ովքեր բարի գործեր են կատարում առանց անկեղծ միտումի:

- Ի՞նչ նախազգուշացումներ է Տերը տալիս նրանց, ովքեր բարի գործեր են անում առանց անկեղծ միտումի: (Նա նախազգուշացրել է, որ նրանց գործերը օգուտ չեն տա նրանց և նրանց գործերը կհամարվեն ավելի շուտ չար, քան արդար:)
- Ի՞նչ սկզբունքներ կարող ենք մենք սովորել այս հատվածներից:( Չնայած ուսանողները կարող է նշել մի շարք ճշմարտություններ, օգնեք նրանց հասկանալ

հետևյալ սկզբունքը. **Որպեսզի օրհնվենք մեր բարի գործերի համար, մենք պետք է գործենք անկեղծ միտումով:** )

- Տիրոջից օրհնություններ ցանկանալուց զատ, ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր բարի գործեր կատարել անկեղծ միտումով:
- Ի՞նչ տարբերություն եք նկատել, երբ դուք բարի գործեր եք արել անկեղծ միտումով:

Նշեք, որ Մորմոնը հորդորեց մեզ աղոթել անկեղծ միտումով (տես Մորոնի 7.9): Հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ Նախագահ Բրիգամ Յանգի հետևյալ խորհուրդը.

«Նշանակություն չունի թե դուք կամ ես ցանկանում ենք աղոթել, երբ աղոթելու ժամանակը գալիս է՝ աղոթեք: Եթե մենք չենք կամենում աղոթել, մենք պետք է աղոթենք մինչև կամենանք դա» (*Teachings of Presidents of the Church: Brigham Young* [1997], 45):

- Ինչպե՞ս կարող ենք աղոթել, նույնիսկ եթե մենք չենք զգում, որ այն ի վերջո մեզ կօգնի աղոթել անկեղծ միտումով:
- Ինչպե՞ս կարող է Նախագահ Բրիգամ Յանգի խորհուրդը, բացի աղոթքից վերաբերվել մյուս պատվիրաններին հնազանդվելուն: (Եթե ուսանողները դժվարություն ունենան պատասխանելու այս հարցին, կիսվեք հետևյալ օրինակով. Որոշ մարդիկ, գուցե, եկեղեցի չեն հաճախում անկեղծ միտումով: Սակայն, եթե նրանք շարունակում են եկեղեցի հաճախել և անել այն ամենը ինչ կարող են մասնակցելու և երկրպագելու համար, նրանք կունենան փորձառություններ, որոնք կօգնեն նրանց ուրախություն գտնել եկեղեցի հաճախելիս: Նրանց հաճախելու դրդապատճառները կփոխվեն: Նրանք կհաճախեն, որովհետև կկամենան լինել այնտեղ, նրանք կուզենան երկրպագել Աստծուն, նորոգել իրենց ուխտերը և ծառայել ուրիշներին:)

Որպեսզի օգնեք ուսանողներին կիրառել անկեղծ միտումով բարի գործեր կատարելու Մորմոնի ուսմունքները, պատրաստեք հետևյալ վարժությունը նախքան դասի սկիզբը. Պատրաստեք մի քանի փոքրիկ թղթի կտորներ: Յուրաքանչյուր թղթի կտորի վրա գրեք մեկ պատվիրան: Օրինակ՝ ծոմապահություն, տասանորդ վճարել, ուրիշներին ծառայել, սուրբ գրություններ ուսումնասիրել, ծնողներին հարգել և այլ պատվիրաններ, որ ձեր կարծիքով, կարող է օգտակար լինել ուսանողների քննարկման համար: Դրեք թղթի կտորները մի տուփի մեջ:

Դասի ընթացքում հրավիրեք որևէ ուսանողի գալ դասարանի առջև: Խնդրեք նրան վերցնել մեկ կտոր թուղթ տուփի միջից և կարդալ այն դասարանի համար: Ապա հանձնարարեք դասարանին կատարել հետևյալ բաներից մեկը կամ երկուսն էլ.

1. Կիսվեն, թե ինչպես են նրանք օրհնված զգացել, երբ նրանք անկեղծ միտումով հնազանդվել են այդ պատվիրանին:
2. Առաջարկեն ուղիներ՝ անկեղծ միտումով հնազանդվելու այդ պատվիրանին:

Դուք կարող եք կրկնել այդ վարժությունը մի քանի անգամ:

Այս վարժությունից հետո կիսվեք մի փորձառությամբ, որը դուք ունեցել եք, երբ անկեղծ միտումով հնազանդվել եք Աստծո պատվիրանին:

## Մորոնի 7.12–13

### *Մորմոնը սովորեցնում է, թե ինչպես դատել բարու և չարի միջև:*

Բացատրեք, որ Եսայիան մարգարեացել է, որ վերջին օրերին, որոշ մարդիկ չարը կկոչեն բարի և բարին՝ չար (տես Եսայիա Ե.20, 2 Նեփի 15.20):

- Մարդկանց ի՞նչ օրինակներ գիտեք, ովքեր չարը բարի են կոչում, իսկ բարին չար:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր չշփոթել բարին չարի հետ:

Հանձնարարեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մորոնի 7.12–17 հատվածներից: Խնդրեք դասարանին հետևել և բացահայտել սկզբունքներ, որոնք կարող են օգնել մեզ տարբերելու բարին չարից: Կարող եք նրանց հորդորել, որ նշեն այն արտահայտությունները, որոնք հատկապես նշանակալից են իրենց համար: Որպեսզի օգնեք ուսանողներին կիսվելու իրենց սովորածով, տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս կարող ենք իմանալ, որ ինչ որ բան գալիս է Աստծուց: (Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են հետևյալ ճշմարտությունը. **Այն ինչ Աստծուց է, հրավիրում է մեզ գործել բարին, հավատալ Հիսուս Քրիստոսին և սիրել ու ծառայել Աստծուն:** )
- Ինչպե՞ս ենք իմանում, որ ինչ որ բան գալիս է դևից: (Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են հետևյալ ճշմարտությունը. **Որևէ բան, որը համոզում է մեզ չարիք գործել, ուրանալ Հիսուս Քրիստոսին կամ պայքարել Աստծո դեմ, գալիս է դևից:** )
- Որո՞նք են այն մի քանի տարբերակները, որոնցով Աստված հրավիրում և դրդում է մեզ շարունակաբար անել բարի գործեր:
- Ինչպե՞ս է դևը հրավիրում և դրդում մեզ մեղք գործելու:

Որպեսզի նախապատրաստեք ուսանողներին կիրառելու բարու և չարի միջև դատելու վերաբերյալ Մորմոնի ուսմունքները, հանձնարարեք նրանց մի ցուցակ գրել իրենց սիրված՝ հեռուստաշոուներից, կինոֆիլմերից, երգերից, երաժշտական խմբերից, ինտերնետային կայքերից, կիրառական ծրագրերից, վիդիոխաղերից կամ անձնական ունեցվածքներից: (Դուք կարող եք հարմարեցնել այս ցուցակը ըստ ուսանողների կարիքների և հետաքրքրությունների): Ուսանողներին գրելու համար բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, ասեք նրանց, որ մի կողմ դնեն իրենց ցուցակները: Ասեք նրանց, որ մի քանի րոպեից հետո նրանք հնարավորություն կունենան ավելի շատ մտածելու իրենց ցուցակների մասին:

- Ըստ Մորոնի 7.16 հատվածի, ի՞նչ է տրվում յուրաքանչյուր մարդու զանազանելու համար բարին չարից:

Բացատրեք, որ Քրիստոսի Հոգին կոչվում է նաև Քրիստոսի Լույսը (տես Մորոնի 7.18): Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ Քրիստոսի Լույսը, կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ արտահայտությունը.

«Սուրբ Հոգին և Քրիստոսի Լույսը տարբեր են միմյանցից: . . .

«Անկախ նրանից թե այս նեքին լույսը, այս ճշտի և սխալի մասին գիտելիքը կոչվում է Քրիստոսի Լույս, բարոյական զգացում կամ խիղճ, այն կարող է առաջնորդել մեզ զղպելու մեր գործողությունները, — քանի դեռ մենք չենք ճնշել կամ լռեցրել այն: . . .

«Ամեն ազգից, հավատքից կամ գույնից յուրաքանչյուր տղամարդ, կին և երեխա՝ — ամենքը, անկախ նրանից, թե որտեղ են նրանք ապրում կամ ինչի են նրանք հավատում կամ ինչ են անում, — իրենց մեջ ունեն Քրիստոսի մշտնջենական Լույսը» (“The Light of Christ,” *Ensign,* Apr. 2005, 8–10):

- Ինչպե՞ս կարող է մարդ ճնշել կամ լռեցնել Քրիստոսի Լույսն իր ներսում:

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալՄորոնի 7.18–19 և գտնել Մորոնիի խորհուրդը, թե ինչպես վերաբերվել մեր ներսում գտնվող Քրիստոսի Լույսին: Հանձնարարեք ուսանողներին կիսվել իրենց սովորածով:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «ջանասիրաբար քննեք Քրիստոսի լույսով»:
- Ի՞նչ սկզբունք կարող ենք սովորելՄորոնի 7.19 հատվածից: (Ուսանողները պետք է հասկանան հետևյալ սկզբունքները.**Երբ մենք ջանասիրաբար քննում ենք Քրիստոսի Լույսով, մենք կարող ենք զանազանել բարին չարից: Եթե որդեգրենք այն ամենը , ինչ բարի է, մենք կլինենք Քրիստոսի զավակները:** Եթե ուսանողները կարիք ունեն «Քրիստոսի զավակ» արտահայտության մեկնաբանության, դուք կարող եք հղում անել այս ձեռնարկի դաս 55-ի վրա:)
- Ե՞րբ եք ձգտել իմանալ, թե ինչ որ բան բարի է կամ պատշաճ: Ի՞նչ եք արել «ջանասիրաբար քննելու» իմանալու համար, թե դա բարի էր կամ պատշաճ:

Հանձնարարեք ուսանողներին վերադառնալ այն ցուցակներին, որ նրանք կազմել էին ավելի վաղ: Ցուցադրեք կամ կարդացեք բարձրաձայն հետևյալ հարցերը և հանձնարարեք այս հարցերին պատասխանելիս «քննել ջանասիրաբար Քրիստոսի լույսով» (Մորոնի 7.19 ): Մի շտապեցրեք: Ուսանողներին բավականաչափ ժամանակ տվեք՝ խորհելու և գրելու համար: Տեղեկացրեք ուսանողներին, որ դուք չեք հարցնի նրանց կիսվելու իրենց գրածներով:

- Որքանո՞վ են այս բաները հրավիրում ձեզ գործել բարին, հավատալ Հիսուս Քրիստոսին և սիրել Աստծուն և ծառայել Նրան:

- Արդյո՞ք այս բաներից ինչ որ մեկը համոզում է ձեզ գործելու չարիք, կասկածել Հիսուս Քրիստոսին, կամ դադարել ծառայել Աստծուն:
- Արդյո՞ք զգում եք, որ պետք է դուրս թողնել այս բաներից որևէ մեկը ձեր կյանքից: Եթե այդպես է, ինչպե՞ս կանեիք դա:

Նշեք, որ երբեմն դժվար է անել այն, ինչը գիտենք որ ճիշտ է, երբ այն պահանջում է հրաժարվել մի բանից, որից մենք բավականություն էինք ստանում: Որպեսզի օգնեք ուսանողներին աջակցել միմյանց, հարցրեք.

- Ի՞նչ խորհուրդ կտայիք ինչ որ մեկին հրաժարվել բաներից, որոնք ճիշտ կամ պատշաճ չեն:

Եզրափակելու համար, հաստատեք, որ երբ մենք հետևում ենք Քրիստոսի Լույսին, մենք կարող ենք ճանաչել այն ինչ բարի է, խուսափենք սատանայի խաբկանքնե-րից և ապրել որպես Հիսուս Քրիստոսի հետևորդներ:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Մորոնի 7.17 Դևը ոչ ոքի չի համոզում բարիք անել:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ուսուցանել է.

«Սատանան,կամ Լյուցիֆերը, կամ ստերի հայրը՝ կոչեք նրան ինչպես կկամենաք, իրական է , չարիքի բուն անձնավորումը: Նրա դրդապատճառները ամեն դեպքում նենգ են: . . . Հավերժորեն նա հակառակ է Աստծո սիրուն, Հիսուս Քրիստոսի Քավությանը և խաղաղության և փրկության աշ-խատանքին: Երբ և որտեղ էլ որ լինի, նա կռվում է այս բաների դեմ: Վերջում նա գիտի, որ կպարտվի և դուրս կգցվի, բայց նա վճռել է իր հետ ներքև տանել որքան հնարավոր է շատերին» (“We Are All Enlisted,” *Ensign* or *Liahona,* Nov. 2011, 44):

# Տնային ուսումնասիրության դաս

## Եթեր 13–Մորոնի 7.19 (Մաս 31)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը, որն ուսանողները սովորեցին, երբ նրանք ուսումնասիրեցին Եթեր 13–Մորոնի 7.19 (մաս 31), նախատեսված չէ ուսուցանել որպես ձեր դասի մաս: Ձեր ուսուցանած դասը կենտրոնացած է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Ձեր ուսանողների պահանջները հաշվի առնելիս հետևեք Սուրբ Հոգու հուշումներին:

### Օր 1 (Եթեր 13–15)

Հարեդացիները մերժեցին Մարգարե Եթերին և համառորեն շարունակեցին մնալ ամբարշտության և պատերազմի մեջ մինչև վերջնականապես կործանեցին միմյանց: Այս պատմությունից ուսանողները սովորեցին, որ եթե մենք մերժում ենք Տիրոջ ապաշխարելու նախազգուշացումները, Նրա Հոգին ետ է քաշվում և Սատանան զորություն է ստանում մեր սրտերի վրա: Ուսանողները նաև կարողացան տեսնել, որ բարկությունն ու վրեժխնդրությունը տանում են մեզ այնպիսի ընտրությունների, որոնք վնասում են մեզ և ուրիշներին: Հարեդացիների կործանման իր պատմության մեջ Մորոնին հույս տվեց իր ընթերցողներին հայտարարելով, որ Նոր Երուսաղեմը կամ Սիոնը կկառուցվի վերջին օրերին:

### Օր 2 (Մորոնի 1–5)

Մինչ Մորոնին թափառում էր իր կյանքի ապահովության համար, նա գրի առավ լրացուցիչ տեղեկություններ քահանայության և ավետարանի արարողությունների վերաբերյալ: Նա գրեց, որ Սուրբ Հոգու պարգևը շնորհելը և քահանայության պաշտոնների կարգումը կատարվում են ձեռնադրմամբ նրանց կողմից, ովքեր ունեն իշխանություն: Հաղորդության հանդեպ Մորոնիի ուշադրությունը ուսանողներին հնարավորություն տվեց խորհելու, թե ինչպես հաղորդության խորհրդանիշները կարող են օգնել նրանց հիշել Հիսուս Քրիստոսի Քավությունը: Նրանց նաև հիշեցվեց, որ երբ նրանք հավատարմորեն պահեն հաղորդության հետ կապված ուխտերը, նրանք միշտ կարող են Տիրոջ Հոգին իրենց հետ ունենալ:

### Օր 3 (Մորոնի 6)

Մորոնին ընդգծեց մկրտության կարևորությունը, Եկեղեցում ընկերակցության և Եկեղեցու ժողովները Սուրբ Հոգու միջոցով ղեկավարելու կարևորության մասին: Ուսանողներն իմացան, որ մկրտության միջոցով մենք ուխտ ենք կապում մեզ վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը և ծառայել Նրան մինչև վերջ:Նրանք նաև իմացան Եկեղեցու մյուս անդամներին հոգեպես սնուցելու իրենց պատասխանատվության մասին՝ հաճախ հանդիպելով միասին ծոմ պահելու և աղոթելու և ճաշակելու հաղորդությունը ի հիշատակ Հիսուս Քրիստոսի: Բացի այդ ուսանողներն իմացան, որ որքան հաճախ մենք ապաշխարենք և ձգտենք ներում ստանալ անկեղծ միտումով, մենք կներվենք:

### Օր 4 (Մորոնի 7.1–19)

Մորոնին արձանագրեց իր հոր կողմից տրված մի քարոզ, որում նա ուսուցանում էր, որ որպեսզի օրհնվենք մեր բարի գործերի համար, մենք պետք է այդ գործերը անենք անկեղծ միտումով: Այս քարոզում Մորմոնն ուսուցանում է նաև, թե ինչպես ենք մենք կատարում արդար դատաստաններ: Ուսանողները բացահայտեցին, որ այն ինչ գալիս է Աստծուց հրավիրում է մեզ գործել բարին և սիրել ու ծառայել Աստծուն, և այն ինչ դրդում է մեզ չարիք գործել և պայքարել Աստծո դեմ, գալիս է դևից: Մորմոնն աղերսում է իր ունկնդիրներին ջանասիրաբար քննել Քրիստոսի լույսով, որը նրանց կտա ուժ զանազանելու բարին չարից:

## Նախաբան

Այսօրվա դասը կարևորում է Եկեղեցու ժողովներին հաճախելու անհրաժեշտության պատճառները: Այն նաև քաջալերում է ուսանողներին վճռականորեն զանազանել բարու և չարի միջև և ջանասիրաբար քննել Քրիստոսի լույսը, որպեսզի կատարեն ճիշտ դատողություններ:

## Ուսուցանման առաջարկներ

### Եթեր 14–15

***Մորոնին արձանագրում է Հարեդացիների քաղաքակրթության ավարտը:***

Գրեք *2,000,000* գրատախտակին: Հանձնարարեք ուսանողներին պատկերացնել, թե երկու միլիոն մարդը որքան է համեմատած այն մարդկանց թվի հետ, ովքեր ապրում են իրենց քաղաքում: Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Եթեր 15.1–2 հատվածները մինչ դասարանը կվերանայի, թե ինչ պատահեց երկու միլիոն Հարեդացիների հետ:

Հարցրեք, թե ուսանողներից որևէ մեկը կարո՞ղ է ամփոփել իրադարձությունները, որոնք Հարեդացիներին տարան կործանման, ինչպես արձանագրված է Եթեր 14–15 հատվածներում: Եթե ուսանողները դժվարություն ունենան պատասխանելիս, հանձնարարեք նրանց կրկնել սուրբ

գրությունների հետևյալ հատվածները. Եթեր 14.5–10, 24, 15.1–6, 19, 22:

Հարցրեք. Որո՞նք են այն դասերը, որոնք մենք կարող ենք սովորել Հարեդացիների կործանումից:

Այս երկու ճշմարտությունները շաբաթվա ընթացքում ուսանողների դասերի ուշադրության կենտրոնում էին. (1) **Եթե մենք մերժենք ապաշխարելու Տիրոջ նախազգուշացումները, Նրա Հոգին ետ կքաշվի և սատանան ձեռք կբերի զորություն մեր սրտերի վրա:** (2) **Բարկությունն ու վրեժխնդրությունը մարդկանց ստիպում են կատարել այնպիսի ընտրություններ, որոնք վնասում են իրենց և ուրիշներին:**

Հարցրեք. Որո՞նք են այն իրավիճակները, որոնց դեպքերում այս դասերը այսօր կարող են կիրառվել որևէ երիտասարդ տղամարդու կամ կնոջ կյանքում:

## Մորոնի 1–3

*Մորոնին վկայում է, որ նա չի ուրանա Քրիստոսին:*

Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 1.1–4 : Այնուհետև դասարանին ուղղեք հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ Լամանացիները սպանեցին Մորոնիին:
- Ի՞նչ է դա ցույց տալիս Մորոնիի հավատքի և քաջության մասին: Ինչպե՞ս կարող ենք զարգացնել այդպիսի ամուր վկայություն Հիսուս Քրիստոսի հանդեպ:

## Մորոնի 4–6

*Մորոնին արձանագրում է հաղորդության աղոթքները, մկրտության համար անհրաժեշտ պահանջները և Եկեղեցու ժողովների անցկացման պատճառները:*

Գրատախտակին գրեք հետևյալ արտահայտությունը. *Ինչո՞ւ ես պետք է գնամ եկեղեցի կիրակի օրը:* Հրավիրեք ուսանողներին քննել Մորոնի 4–6 և պատրաստել մեկ կամ երկու րոպեանոց պատասխան այդ արտահայտությանը՝ կատարելով մի քանի գրառումներ իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: Հորդորեք նրանց ներառել իրենց պատասխաններում հետևյալ էլեմենտներից առնվազն երկուսը (դուք կարող եք գրել դրանք գրատախտակին կամ պատրաստել դրանք որպես լրացուցիչ նյութ).

1. Սուրբ գրության մի հատված, Մորոնի 4–6, որը բացատրում է եկեղեցում միասին հավաքվելու պատճառը:
2. Վարդապետություն կամ սկզբունք, որը բացատրում է, թե ինչու մենք պետք է հաճախենք Եկեղեցու ժողովներին:
3. Անձնական մի փորձառություն, որը ցույց է տալիս, թե ինչու մենք պետք է հաճախենք Եկեղեցու ժողովներին:
4. Անձնական մի վկայություն Եկեղեցու ժողովներին հաճախելու կարևորության մասին:

Երբ ուսանողները բավականաչափ ժամանակ ունենան պատրաստելու իրենց մտքերը, նրանցից մի քանիսին հրավիրեք դասարանի հետ կիսվելու իրենց մտքերով:

Այն բանից հետո, երբ ուսանողները կիսվեն իրենց սովորածով, ավելացրեք ձեր վկայությունը այն ճշմարտությունների մասին, որոնք իրենք հասկացել են և կանոնավոր կերպով Եկեղեցու ժողովներին միասին հավաքվելու կարևորության մասին:

## Մորոնի 7.1–19

*Մորմոնը սովորեցնում է, թե ինչպես դատել բարու և չարի միջև:*

Նախքան դասը սկսելը, մի բաժակի մեջ ջուր լցրեք և մեկ ուրիշ բաժակի մեջ ջրի և սպիտակ քացախի (կամ աղի) խառնուրդ: Բաժակները պետք է ունենան նույնանման տեսք: Հաղորդեք դասարանին, որ դուք ունեք երկու բաժակ ջուր, որոնք տեսքով նույնատիպ են, բայց դրանցից մեկը թթու (կամ աղի) համ ունի: Կամավոր սկզբունքով խնդրեք որևէ մեկին որոշել, թե որ բաժակն ունի լավ ջուրը և որ բաժակն ունի թթու կամ (աղի) ջուր (նրանք կարող են անել դա համտեսելով կամ հոտոտելով):

Հարցրեք. Ինչպե՞ս կարող ենք ասել, թե ինչ որ բան չար է, առանց իրապես այն փորձելու:

Բացատրեք, որ իր հիշատակարանում Մորոնին ընդգրկել է իր հոր՝ Մորմոնի մի քարոզը, որը բացատրություն է տալիս այս հարցին: Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 7.11–13, 15–16 հատվածները: Խնդրեք դասարանին ընտրել առնվազն մեկ արտահայտություն, որը նրանց դուր է գալիս է, որը բացատրում է, թե ինչպես մենք կարող ենք զանազանել բարու և չարի միջև: Մի քանի ուսանողների հնարավորություն տվեք կիսվելու իրենց ընտրած որևէ արտահայտությամբ:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 7.19 հատվածը, և խնդրեք դասարանին ուշադրություն դարձնել, թե ինչ է Մորմոնն ասել, որ մենք պետք է անենք, որպեսզի իմանանք բարին և չարը:

Հարցրեք.Ի՞նչ է Մորմոնը խորհուրդ տվել մեզ անել, որպեսզի մենք կարողանանք զանազանել բարին չարից:

Ուսանողները պետք է կարողանան հասկանալ հետևյալ սկզբունքը. **Եթե մենք ջանասիրաբար քննենք Քրիստոսի Լույսը, մենք կարող ենք զանազանել բարու և չարի միջև:**

Ուսանողներին ուղղեք հետևյալ հարցերը.

- Այս շաբաթվա ձեր ուսումնասիրություններից ի՞նչ հասկացաք Քրիստոսի Լույսի մասին:
- Ե՞րբ է Քրիստոսի Լույսն օգնել ձեզ զանազանել բարու և չարի միջև:

Ուսանողներին մեկ կամ երկու րոպե հատկացրեք գրելու իրենց սիրելի հեռուստաշոուների, երգերի, երաժշտական խմբերի, ինտերնետային կայքերի, կիրառական ծրագրերի, վիդիոխաղերի կամ անձնական ունեցվածքների մասին: Հրավիրեք նրանց օգտագործել Մորոնի 7.16–19 հատվածները որոշելու համար, թե իրենց ցուցակի առարկաներն արդյոք օգնում են նրանց ավելի մոտենալ Աստծուն, թե իրենց հեռացնում են Նրանից:

Հիշեցրեք ուսանողներին այն հրավերի մասին, որ նրանք այս շաբաթ ստացան իրենց ուսումնասիրության ժամանակ՝ վերացնելու իրենց կյանքից այն բաները, որոնք բարի չեն և «որդեգրեք այն ամենը , ինչ բարի է» (Մորոնի 7.19): Դուք կարող եք կիսվել մի փորձառությամբ, որն ունեցել եք

Քրիստոսի Լույսին հետևելիս և կարողացել եք զանազանել բարու և չարի միջև:

## Հաջորդ մասը (Մորոնի 7.20–10.34)

Հանձնարարեք ուսանողներին մտածել հետևյալ հարցերի շուրջ, երբ ուսումնասիրեն հաջորդ դասը. Ի՞նչ է գթությունը: Ինչպե՞ս կարող է մարդ ձեռք բերել գթություն: Ինչո՞ւ փոքրիկ երեխաները կամ մանկիկները չպետք է մկրտվեն: Ինչպե՞ս Մորմոնը և Մորոնին հավատարիմ մնացին, նույնիսկ, երբ նրանք շրջապատված էին ամբարշտությամբ: Որո՞նք են Մորոնիի վերջին խոսքերը: Ինչո՞ւ են դրանք կարևոր:

ԴԱՍ 156

# Մորոնի 7.20–48

## Նախաբան

Մորոնին գրեց իր հոր՝ Մորմոնի քարոզի եզրակացությունը, որը նա խոսել էր ժողովատանը տարիներ առաջ: Քարոզում Մորմոնն ուսուցանեց իր ունկնդիրներին ինչպես «որդեգրել այն ամենը, ինչ բարի է» (Մորոնի 7.20, 25): Նա բացատրեց կապը հավատքի, հույսի և գթության միջև և եզրափակեց իր ժողովրդին ուղղված մի աղերսով՝ աղոթելու Հորը ողջ սրտի կորովով գթության պարգևը«Քրիստոսի մաքուր սիրո» (Մորոնի 7.47) ստանալու համար :

## Ուսուցանման առաջարկներ

### Մորոնի 7.20–39

*Մորմոնն ուսուցանում է, որ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի շնորհիվ մենք կարող ենք որդեգրել այն ամենը, ինչ բարի է*

Մինչև դասը սկսելը գրեք հետևյալ հարցը գրատախտակին.

*Որո՞նք են այն բարի բաները, որոնցով Երկնային Հայրն օրհնել է ձեզ:*

Դասի սկզբում ուսանողներին տրամադրեք մեկ կամ երկու րոպե՝ պատասխանելու այս հարցին տետրերում կամ Սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում: Ապա հրավիրեք նրանց կարդալ իրենց թվարկածներից մի քանիսը:

Բարձրաձայն կարդացեք Մորոնի 7.24: Խնդրեք դասարանին հետևել, փնտրելով բոլոր այն բարի բաների սկզբնաաղբյուրը, որ տրվել է իրենց:

- Ո՞վ է բոլոր բարի բաների սկզբնաղբյուրը, որոնք տրվել են ձեզ: (Ուսանողների պատասխանները կարող են տարբեր լինել, բայց դրանք պետք է արտահայտեն հետևյալ ճշմարտությունը. **Բոլոր բարի բաները գալիս են Հիսուս Քրիստոսի շնորհիվ:** )

Օգնելու համար ուսանողներին ավելի լավ հասկանալՄորոնի 7.24 հատվածում ուսուցանվող վարդապետությունը, բացատրեք, որ որպես Ադամի և Եվայի հետնորդներ, մենք «ընկած» ենք և անկարող ենք ինքնուրույն որևէ օրհնություններ ստանալ (տես նաև Ալմա 22.14, Եթեր 3.2, Հավատո Հանգանակներ 1.3):Առանց Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության «ոչ մի բարի բան չէր կարող գալ [մեզ]»: Ամեն բարի բան, որ երբևէ ստացել ենք մեր Երկնային Հորից, եկել է Փրկչի և Նրա Քավության միջոցով:

Բացատրեք, որ Երկնային Հայրը շատ օրհնություններ ունի պահած մեզ համար:Նա կամենում է, որ մենք «որդեգրենք այն ամենը, ինչ բարի է» (Մորոնի 7.19), և Նա կամենում է տալ մեզ այն ամենը, ինչ Նա ունի (տես ՎԵՈՒ 84.38):

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 7.20 -ի Մորմոնի տված հարցերը: Ապա հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Մորոնի 7.21–24 հատվածները, ուշադրություն դարձնելով նրան, թե ինչ են այդ հատվածներն ուսուցանում այն մասին, թե ինչպես մենք կարող ենք որդեգրել ամեն բարի բան:

- Հիմնվելով ձեր կարդացածի վրա Մորոնի 7.21–24 , ինչպե՞ս դուք կպատասխանեիք Մորոնի 7.20 -ի Մորմոնի հարցերին: (Երբ ուսանողները պատասխանեն, օգնեք նրանց հասկանալ հետևյալ սկզբունքը. **Երբ մենք հավատք ենք գործադրում առ Հիսուս Քրիստոս, մենք կարող ենք որդեգրել այն ամենը, ինչ բարի է:**)

Օգնելու համար ուսանողներին հասկանալ, թե ինչպես իրենք կարող են «որդեգրել ամեն բարի բան» նրանցից մի քանիսին հանձնարարեք հերթով բարձրաձայն կարդալ Մորոնի 7.25–26 32–38 հատվածները: Հանձնարարեք դասարանի մի կեսին տարբերակներ փնտրել, որպեսզի ցույց տանք մեր հավատքն առ Հիսուս Քրիստոս: Հրավիրեք մյուս կեսին որոնել բարի բաներ, որոնք գալիս են մեզ որպես դրա հետևանք: (Երբ որևէ ուսանող կարդա հատված 33 , դուք կարող եք բացատրել, որ

«նպատակահարմար է ինձ» արտահայտությունը վերաբերում է այն բաներին, որոնք ներդաշնակության մեջ են Տիրոջ կամքի հետ:)

Այն բանից հետո, երբ ուսանողները կիսվեն իրենց սովորածով, խնդրեք նրանց գրել մի նպատակ, որը կօգնի նրանց ավելի մեծ հավատք գործադրել առ Հիսուս Քրիստոս և որդեգրել ամեն բարի բան, որը Երկնային Հայրն ուզում է տալ նրանց: Կիսվեք ձեր վկայությամբ այն մասին, որ մեծ օրհնություններ են գալիս Փրկչի, Նրա ավետարանի և Նրա Քավության միջոցով: Հորդորեք ուսանողներին գործադրել ավելի մեծ հավատք առ Նա:

## Մորոնի 7.40–43

*Մորմոնն ուսուցանում է, որ հավատքն առ Հիսուս Քրիստոս առաջնորդում է մեզ հույս ունենալ հավերժական կյանքի համար:*

Նկարեք գրատախտակին մի երեքոտանի աթոռ (կամ ցուցադրեք մի երեքոտանի աթոռ):



Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ խոսքերը.

«Երեք աստվածային սկզբունքներ ստեղծում են հիմք, որի վրա մենք կարող ենք կառուցել մեր կյանքի կառույցները: . . . Դրանք միասին երքոտանի աթոռակի նման տալիս են նեցուկի հիմք» (“The Joy of Hope Fulfilled,” *Ensign,* Nov. 1992, 33):

Աթոռակի ոտքերից մեկը պիտակավորեք *Հավատք առ Հիսուս Քրիստոս* արտահայտությամբ: Խնդրեք ուսանողներին մտածել, թե ինչ կարող են ներկայացնել մյուս երկու ոտքերը: Ապա հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մորոնի 7.40 հատվածը՝ պարզելու համար, թե ինչ է ներկայացնում երկրորդ ոտքը:)

Բարձրաձայն կարդացեք հույսի հետևյալ արտահայտությունները: Հանձնարարեք ուսանողներին լսելու այս երկու արտահայտությունների միջև գոյություն ունեցող տարբերությունը:

1. Հույսով եմ այսօր անձրև կգա:
2. Ես հույս ունեմ Տիրոջ խոստման հանդեպ, որ կարող եմ խաղաղություն զգալ ապաշխարության միջոցով:

- Ո՞րն է այս երկու արտահայտությունների տարբերությունը: (Օգնեք ուսանողներին տեսնել, որ առաջին օրինակում *հույս* բառը վերաբերում է մի անվստահ ցանկության: Երկրորդ օրինակում *հույս* բառը վստահության արտահայտություն է: Այն դրդապատճառ է գործողության համար և այն կենտրոնացած է Հիսուս Քրիստոսի Քավության վրա:)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալու *հույս* բառը այնպես, ինչպես այն օգտագործվում է սուրբ գրություններում, հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի հետևյալ արտահայտությունը:

«Հույսը Հոգու պարգևն է»: . . .

«Հույսը գիտելիք չէ, այլ ավելի շուտ մնայուն վստահություն, որ Տերը կիրականացնի մեզ տված Իր խոստումը: Դա վստահություն է, որ եթե այժմ մենք ապրենք Աստծո օրենքների և Նրա մարգարեների խոսքերի համաձայն, մենք կստանանք փափագած օրհնություններն ապագայում: Դա հավատալն է ու սպասելը, որ մեր աղոթքները կպատասխանվեն: Այն դրսևորվում է վստահությամբ, լավատեսությամբ, խանդավառությամբ և համբերատար հետևողականությամբ» («Հույսի անսահման ուժը», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2008, 21–22):

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալՄորոնի 7.41 : Հանձնարարեք որպեսզի դասարանը հետևի, ուշադրություն դարձնելով նրան, թե ինչ է ուսուցանել Մորմոնը, որի համար մենք պետք է հույս ունենանք: Երբ ուսանողները կիսվեն իրենց մտքերով, պիտակավորեք աթոռակի երկրորդ ոտքը *Հույս հավերժական կյանքի հանդեպ:*

Մատնանշեք, որ Մորոնի 7.41-ը սուրբ գրության սերտման հատված է: Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այս հատվածը տարբերակիչ ձևով, որպեսզի կարողանան հեշտությամբ գտնել այն:

- Համաձայն Մորոնի 7.41 հատվածի, ինչպես կարող ենք մենք հույս ունենալ բարձրացվելու դեպի հավերժական կյանք: (Չնայած ուսանողները կարող են օգտագործել տարբեր խոսքեր, նրանք պետք է հասկանան հետևյալ սկզբունքը. **Եթե մենք գործադրենք հավատք առ Հիսուս Քրիստոս, մենք կարող ենք ձեռք բերել հույս Նրա Քավության միջոցով բարձրացվելու դեպի հավերժական կյանք:** )

Հանձնարարեք ուսանողներին ինքնուրույն կարդալՄորոնի 7.42–43 հատվածները, փնտրելով հատկանիշներ, որոնց կարիքը մենք ունենք հավատք և հույս ունենալու համար: Խնդրեք նրանց կիսվել իրենց սովորածով: (Կարող եք բացատրել, որ սրտով հեզ ու խոնարհ լինելը նշանակում է լինել հնազանդ, մեղմ և ենթարկվող Տիրոջ կամքին:)

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ հեզությունը և խոնարհությունը անհրաժեշտ են, որպեսզի հավատք և հույս ունենանք Հիսուս Քրիստոսի Քավության հանդեպ:

Հրավիրեք ուսանողներին պատասխանել հետևյալ հարցերին տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում:

- Ինչպե՞ս է ձեր հավատքը Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ ձեզ հույս տալիս, որ դուք կստանաք հավերժական կյանք:

**Մորոնի 7.41**-ը սուրբ գրությունների սերտման հատված է: Հղում արեք դասի վերջում գտնվող ուսուցանման մտքերին, որպեսզի օգնեք ուսանողներին այդ վարժության սերտման հարցում:

## Մորոնի 7.44–48

### *Մորմոնն ուսուցանում է գթության կարևորությունը*

Ետ դարձեք դեպի երքոտանի աթոռակը: Հանձնարարեք ուսանողներին ցախրաձայն կարդալՄորոնի 7.44 հատվածը և գտնել աթոռակի երրորդ ոտքի պիտակը: Երբ ուսանողները կիսվեն իրենց սովորածով, պիտակավորեք երրորդ ոտքը *Գթություն* բառով: Խնդրեք նրանց բնորոշել *գթությունը* իրենց իսկ խոսքերով:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 7.45–47 հատվածները: Խնդրեք դասարանին ընթացքում հետևել, որոնելով թե ինչպես է Մորմոնը նկարագրում և բնորոշում գթությունը:

- Ինչպե՞ս է Մորմոնը բնորոշում գթությունըՄորոնի 7.47հատվածում: («Քրիստոսի մաքուր սերը»)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում այն, որ գթությունը երբեք չի խափանվի:
- Ինչո՞ւ եք կարծում, որ մենք ոչինչ ենք, եթե մենք չունենք գթություն:

Հանձնարարեք ուսանողներին ընտրել գթության նկարագրություններ Մորոնի 7.45 հատվածում և բացատրեք, թե ինչ են նրանք մտածում այդ նկարագրությունների նշանակության մասին: Անհրաժեշտության դեպքում նրանց պարզաբանեք բացատրությունները: (Օրինակ. «երկայնամիտ է» նշանակում է, որ ինչ որ մեկը փորձություններին համբերությամբ է դիմանում: «Չի նախանձում» նշանակում է անձ, որը չի նախանձում ուրիշներին: «Փքված չէ» նշանակում է, որ անձը խոնարհ է: «Իրենը չի փնտրում» նկարագրում է Աստծուն և ուրիշներին իրենից առաջ դնելու առանձնահատկությունը: «Չի գրգռվում հեշտորեն» նշանակում է չի բարկանում հեշտորեն: «Հավատում է ամեն բանի» նկարագրում է անձնավորության, ով ընդունում է ողջ ճշմարտությունը:)

Հարցրեք ուսանողներին, թե ինչպես նրանք կվարվեին հետևյալ իրավիճակներից յուրաքանչյուրում, եթե նրանք զուրկ լինեին գթությունից: Ապա հարցրեք թե ինչպես նրանք կվարվեին, եթե նրանք լցված լինեին գթությամբ: (Դուք կարող եք հարմարեցնել այս իրավիճակները ձեր ուսանողների պահանջներին և հետաքրքրություններին)

1. Մարդիկ ծաղրում են ձեզ կամ որևէ մեկ ուրիշին դպրոցում:

**Մորոնի 7.45, 47–48**-ը սուրբ գրության սերտման հատված է: Հղում արեք դասի վերջում գտնվող ուսուցանման մտքերին, որպեսզի օգնեք ուսանողներին այդ վարժության սերտման հարցում:

2. Դուք ունեք եղբայր կամ քույր, ով հաճախ զայրացնում է ձեզ։
3. Դուք իմացել եք, որ ինչ որ մեկը լուրջ մեղք է գործել։
4. Դուք այնքան էլ չեք սիրում նոր քվորումի կամ դասարանի խորհրդատուին, որքան նախորդին էիք սիրում։

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 7.48 հատվածը ։ Խնդրեք, որ դասարանը հետևի նրան և բացահայտի, թե ինչ պետք է անենք որպեսզի օրհնվենք գթության պարգևով։ Երբ ուսանողները պատասխանեն, հավաստիացեք, որ հետևյալ սկզբունքը հասկանալի է. **Եթե մենք աղոթում ենք Հորը մեր սրտի ողջ կորովով և ապրում որպես Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներ, մենք կարող ենք լցվել գթությամբ։**

Մատնանշեք, որ Մորոնի 7.45, 47–48 հատվածները սուրբ գրությունների սերտման հատված է։ Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այս հատվածները տարբերակիչ ձևով, որպեսզի նրանք կարողանան այն հեշտորեն գտնել։

- Ինչո՞ւ եք կարծում, որ մենք պետք է աղոթենք գթության պարգևի համար մեր սրտի ողջ կորովով։
- Ե՞րբ եք գթության օրինակների ականատես եղել։ (Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել փորձառություններով։ Դուք կարող եք նաև կիսվել ձեր անձնական փորձառությամբ։)
- Երբ եք զգացել, որ Տերն օգնել է ձեզ ավելի գթառատ լինել ուրիշների հանդեպ։

Հանձնարարեք ուսանողներին վերանայել Մորոնի 7.45 հատվածը և ընտրել մեկ գթության մասնիկ, որը նրանք պետք է բարելավվեն։ Հորդորեք նրանց աղոթել գթության պարգևի համար, երբ նրանք ձգտում են բարելավվել այդ ոլորտում։ Վկայեք հավատքի, հույսի և գթության ազդեցության մասին, որ դուք ունեցել եք ձեր կյանքում։

## Սուրբ գրության սերտում—Մորոնի 7.41

Օգնեք ուսանողներին անգիր սովորել Մորոնի 7.41 հատվածը։ Օգտագործեք մեթոդներ ձեռնարկի վերջում գտնվող հավելվածից։

## Սուրբ գրության հատվածի սերտում—Մորոնի 7.45, 47–48

Հանձնարարեք ուսանողներին հետևյալ ցուցակից ընտրել մի անձնավորության, որի հանդեպ նրանք կկամենային ունենալ ավելի շատ գթություն. ընտանիքի անդամ, քվորումի կամ դասարանի անդամ, ընկեր կամ հարևան։ Խրախուսեք նրանց մտածել այն անձնավորության մասին, որին նրանք ընտրել են, երբ նրանք կարդան Մորոնի 7.45 հատվածը և մտածել տարբերակներ, երբ նրանք կարող են ցույց տալ ավելի շատ Քրիստոսանման սեր։ Հանձնարարեք նրանց գրել տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում մեկ կամ երկու տարբերակներ, որոնցով նրանք ցույց կտան գթություն այն անձնավորության հանդեպ, որին ընտրել են։ Հանձնարարեք նրանց հաջորդ շաբաթվա ընթացքում այդ գործողությունը դարձնել իրենց աղոթքների մասը։ Դուք կարող եք մտածել ուսանողներին հնարավորություն տալու մասին՝ գալիք օրերի ընթացքում կիսվելու իրենց փորձառություններով։

*Նշում.* Այս դասի երկարության պատճառով, դուք կարող եք օգտագործել այս վարժությունը մեկ այլ օր, երբ դուք ավելի շատ ժամանակ կունենաք։

ԴԱՍ 157

# Մորոնի 8

## Նախաբան

Շարունակելով սրբազան հիշատակարանի արձանագրությունը, Մորոնին ներառեց մի գիր կամ նամակ, որը նա ստացել էր իր հորից՝ Մորմոնից: Այդ նամակում Մորմոնը արձանագրել էր մի հայտնություն այն մասին, թե ինչու փոքր երեխաները կարիք չունեն մկրտության: Մորմոնը նաև ուսուցանել է այն մասին, թե ինչպես մենք կարող ենք պատրաստվել՝ ապրելու Աստծո հետ: Նա եզրափակել է իր նամակը մտահոգություն հայտնելով Նեփիացիների ամբարշտության և նրանց սպասվող կործանման վերաբերյալ:

## Ուսուցանման առաջարկներ

### Մորոնի 8.1–24

*Մորմոնն ուսուցանում է, որ փոքրիկ երեխաները կենդանի են Քրիստոսում:*

Նախքան դասը սկսվելը առաջ ցուցադրեք «Մկրտվող աղջիկը» նկարը (*Gospel Art Book* [2009], no. 104) կամ իր մկրտության արարողության ժամանակ ութ տարեկան երեխայի մեկ այլ նկար: Գրատախտակի վրա գրեք հետևյալ նախադասությունները.

*Ինչո՞ւ երեխաները չեն մկրտվում մինչև ութ տարեկանը:*

Երբ ուսանողները ժամանեն, հրավիրեք նրանց նայել նկարին և խորհել գրատախտակին գրված հարցի վերաբերյալ:

Երբ դասը սկսվի, պատմեք ուսանողներին, որ իր որդի՝ Մորոնիին ուղարկած նամակում, Մորմոնը ուսուցանել է Փոքրիկ երեխաների փրկության մասին: Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 8.4–6 հատվածները, և խնդրեք դասարանին ուշադրություն դարձնել, թե ինչի համար էր Մորմոնը մտահոգված: (Դուք կարող եք բացատրել, որ հատված 6 - ում, *կոպիտ* բառը նշանակում է լուրջ, ամոթալի կամ ցավալի:)

Ուսանողների արտահայտվելուց հետո հանձնարարեք նրանց մտքում կարդալ Մորոնի 8.7 և տեսնել թե ինչ արեց Մորմոնը, երբ լսեց այս խնդրի մասին:

- Ի՞նչ կարող ենք սովորել Մորմոնի օրինակից:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 8.8–9, և խնդրեք դասարանին փնտրել Մորմոնի աղոթքի պատասխանը: Այն բանից հետո, երբ ուսանողները կիսվեն իրենց սովորածով միգուցե կարիք լինի բացատրել, որ «Ադամի անեծք» արտահատությունը նշանակում է Անկման արդյունքում Աստծո ներկայությունից Ադամի առանձացմանը: Որոշ մարդիկ սխալմամբ հավատում են, որ ամեն երեխա ծնվում է մեղավոր վիճակում Անկման պատճառով: Այս ոչ ճիշտ գաղափարի պատճառով նրանք կարծում են, որ փոքրիկ երեխաները անարժան են լինել Աստծո ներկայության մեջ, եթե նրանք մահանում են առանց մկրտվելու: Երբ դուք դա բացատրեք, դուք կարող եք հանձնարարել ուսանողներին արտասանել հավատո երկրորդ հանգանակը: Դուք կարող եք նաև առաջարկել, որ նրանք խաչաձև հղում անեն Մորոնի 8.8–9 հատվածների և Հավատո հանգանակի 1.2 միջև:

Գրեք հետևյալ անավարտ միտքը գրատախտակին. *Ապաշխարությունը և մկրտությունն անհրաժեշտ են բոլորի համար, ովքեր . . .*

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Մորոնի 8.10, փնտրելով բառեր և արտահայտություններ, որոնք կավարտեն գրատախտակին գրված միտքը: Այն բանից հետո, երբ ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, ավարտեք միտքը հետևյալ ձևով. ***Ապաշխարությունն ու մկրտությունը անհրաժեշտ են բոլորի համար, ովքեր հաշվետու և ունակ են մեղք գործելու:*** Դուք կարող եք խրախուսել ուսանողներին նշել Մորոնի 8.10, որն ուսուցանում է այս ճշմարտությունը:

***Ուսուցանեք Հոգով***

Տերն ասել է. «Եվ Հոգին կտրվի ձեզ հավատքի աղոթքով և եթե դուք չստանաք Հոգին, դուք չպետք է ուսուցանեք» (ՎԱՈՒ 42.14): Աղոթեք Սուրբ Հոգով առաջնորդվելու ունակության համար, և հատուկ ուշադրություն դարձրեք Սուրբ Հոգու հուշումներին, երբ ուսուցանում եք:

Պարզաբանման համար օգտակար է իմանալ, որ մեղքը «Գիտակից անհնազանդությունն է Աստծո պատվիրաններին» (Սուրբ Գրությունների Ուղեցույց, «Մեղք», էջ155 scriptures.lds.org): Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսի հետևյալ խոսքերը.

«Մենք մեր վարդապետությունից հասկանում ենք, որ մինչև պատասխանատվության տարիքը լրանալը երեխան ընդունակ չէ մեղք գործելու (Մորոնի 8.8): Այդ ընթացքում, երեխաները կարող են սխալներ գործել, նույնիսկ շատ լուրջ և վնասակար սխալներ, որոնք պետք է ուղղվեն, բայց նրանց արարքները չպետք է մեղք համարվեն»: (“Sins and Mistakes,” *Ensign,* Oct. 1996, 65).

Բաժանեք դասարանը երկու մասի: Հանձնարարեք ուսանողների կեսին մտքում կարդալ Մորոնի 8.11–18 հատվածները, իսկ մյուս կեսին մտքում կարդալ Մորոնի 8.11, 19–24 հատվածները: (Դուք կարող եք գրել այս հղումները գրատախտակին:) Նախքան նրանց կարդալը, խնդրեք երկու խմբի ուսանողներին ուշադրություն դարձնել, թե ինչ է Մորմոնն ուսուցանել փոքր երեխաների մկրտության վերաբերյալ: Երբ ուսանողները բավականաչափ ժամանակ ունենան կարդալու համար, հանձնարարեք յուրաքանչյուր խմբից մի քանիսին կիսվել իրենց հասկացածով: Դուք կարող եք օգտագործել հետևյալ հարցերից մի քանիսը, որպեսզի օգնեք ուսանողներին մտածել Մորմոնի ուսմունքների մասին.

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում, որ փոքր երեխաները «կենդանի են Քրիստոսում» (Մորոնի 8.12, 22): (Նրանք փրկագնվում են Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Նրանք չեն կարող մեղք գործել, քանզի սատանային զորություն չի տրված գայթակղելու փոքր երեխաներին: Տես նաև Մորոնի 8.10, ՎԵՈՒ 29.46–47:)
- Ի՞նչ պետք է մենք անենք, որպեսզի կենդանի լինենք Քրիստոսում: (Տես 2 Նեփի 25.23–26, Մորոնի 8.10:)
- Այդ հատվածներից ի՞նչ ենք սովորում այն մասին, թե ինչպես են փրկվում փոքր երեխաները: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր խոսքեր, բայց նրանք պետք է հասկանան հետևյալ ճշմարտությունը.**Փոքր երեխաները փրկվում են Հիսուս Քրիստոսի Քավությամբ:** Ուսանողները նաև կարող են մատնանշել, որ**փոքր երեխաները կենդանի են Քրիստոսում,** որ **Աստված աչառ չէ,** և որ **Աստված անփոփոխ է:** )

Գրեք հետևյալ օրինակները գրատախտակին կամ բաժանեք նրանց թռուցիկի ձևով: Հանձնարարեք յուրաքանչյուր ուսանողի ընտրելու դրանցից մեկը: Ապա խնդրեք ուսանողներին ընտրել մեկ կամ երկու հատված Մորոնի 8.8–23-ից և բացատրեք թե ինչպես են այդ հատվածներում գտնվող ճշմարտությունները պարզաբանում մտահոգությունը, որն արտահայտված է իրենց ընտրած օրինակում

Օրինակ 1.Որպես միսիոներ, դուք հանդիպում եք մի ամուսնական զույգի, ովքեր չափազանց տխուր վիճակում են, որովհետև նրանց երկու ամսեկան դուստրը մահացել է: Նրանց եկեղեցու առաջնորդն ասել է, որ Ադամի օրինազանցության պատճառով փոքրիկ երեխաները ծնվում են մեղավոր: Նա ասել է, որ քանի որ նրանց դուստրը չէր մկրտվել նախքան մահանալը, ապա նա չի կարող փրկվել:

Օրինակ 2. Դուք մի ընկեր ունեք, որը հանդիպում է միսիոներների հետ և եկեղեցի հաճախում ձեզ հետ: Նա որոշում է, որ ցանկանում է միանալ Եկեղեցուն, բայց նա տատանվում է մկրտվել: «Ես մկրտվել եմ, երբ երեխա էի», բացատրում է նա:«Միթե՞ դա բավարար չէ»:

Երբ ուսանողները կիսվում են իրենց մտքերով երկրորդ օրինակի վերաբերյալ, դուք կարող եք հիշեցնել նրանց, որ ապաշխարությունն ու մկրտությունը նրանց համար են «ովքեր պատասխանատու են և ընդունակ մեղք գործելու» (Մորոնի 8.10): Տերն ասում է, որ երեխաները սկսում են պատասխանատու դառնալ Նրա առջև ութ տարեկան հասակում: Այս ճշմարտության վերաբերյալ հայտնությունները գտնվում են Ջոզեֆ Սմիթ Պատմության մեջ, Ծննդոց ԺԷ.11 (in the appendix of the Latter-day Saint edition of the King James Version of the Bible) և Վարդապետություն և Ուխտեր 68.25–27:

## Մորոնի 8.25–30

*Մորմոնն ուսուցանում է, թե Աստծո հետ բնակվելու համար, ինչ պետք է անեն նրանք, ովքեր հաշվետու են:*

Բացատրեք, որ այն բանից հետո, երբ Մորմոնն ուսուցանեց այն մասին, թե ինչու փոքր երեխաները կարիք չունեն մկրտվելու, նա ուսուցանեց այն մասին, թե ինչու մկրտությունն անհրաժեշտ է նրանց համար, ովքեր հաշվետու են: Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մորոնի 8:25–26 հատվածները: Խնդրեք դասարանին հետևել նրան, ուշադրություն դարձնելով այն օրհնություններին, որոնք գալիս են այն մարդկանց, ովքեր հավատք են գործադրում, ապաշխարում և մկրտվում:

- Ի՞նչ օրհնություններ տեսաք այս հատվածներում: (Երբ ուսանողները կիսվեն իրենց կարդացածով, դուք կարող եք գրել նրանց պատասխանները գրատախտակին: Պատասխանները կարող են ներառել այն, որ հավատքը, ապաշխարությունը և մկրտությունը տանում են մեղքերի թողության, հեզության և սրտի խոնարհության, Սուրբ Հոգու այցելության, հույսի, կատարյալ սիրո և ի վերջո Աստծո հետ ապրելու օրհնությանը:)

Երբ ուսանողները թվեն օրհնությունները, որ նրանք տեսնում ենՄորոնի 8.25–26 հատվածներում, դուք կարող եք հարցնել այս վերստուգիչ հարցերը.

- Ինչո՞ւ եք կարծում, որ մեր մեղքերի թողություն ստանալը տանում է դեպի հեզության և սրտի խոնարհության:
- Ինչպե՞ս կարող է հեզ և սրտով խոնարհ լինելը հրավիրել Սուրբ Հոգին մեր կյանք:
- Ինչո՞ւ է Սուրբ Հոգին օգնում մեզ պատրաստվել ապրելու Աստծո հետ:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ մենք պետք է ջանասեր լինենք և աղոթող, որպեսզի կատարյալ սիրո համար համբերենք մեր կյանքում:

Գրեք հետևյալ անավարտ միտքը գրատախտակին. *Պատվիրաններին հավատարիմ հնազանդության միջոցով, մենք կարող ենք ստանալ Սուրբ Հոգին, որը պատրաստում է մեզ*

Հանձնարարեք ուսանողներին գտնել մի արտահայտությունՄորոնի 8.25–26 , որը լրացնում է այս սկզբունքը. ***Պատվիրաններին հավատարիմ հնազանդության միջոցով մենք կարող ենք ստանալ Սուրբ Հոգին, որը պատրաստում է մեզ ապրելու Աստծո հետ:***

Հանձնարարեք որևէ ոսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 8.27 հատվածը, և խնդրեք դասարանին որոնել Նեփիացիների հպարտության արդյունքը: Ապա հանձնարարեք ուսանողներին մտքում կրկնել Մորոնի 8.26 և Մորոնի 8.27 հատվածները, հակադրելով հեզության և սրտի խոնարհության հետևանքները հպարտության հետևանքի հետ:

Հանձնարարեք մեկ այլ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 8.28: Մատնանշեք, որ այն բանից հետո, երբ Մորմոնն արտահայտեց մտահոգություն Նեփիացիների վերաբերյալ, նա ասաց, «Աղոթիր նրանց համար, որդիս, որպեսզի ապաշխարություն գա նրանց:» Հիշեցրեք ուսանողներին այն ուժի մասին, որ մարդիկ կարող են զգալ իրենց կյանքում, երբ ուրիշներն աղոթում են նրանց համար:

Դասը եզրափակելու համար, հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց զգացումներով՝ փոքր երեխաներին փրկելիս և մեզ բոլորիս փրկելիս Քավության ուժի վերաբերյալ, երբ մենք ձգտում ենք հավատարիմ լինել մեր ուխտերին:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Մորոնի 8.8: «Ադամի անեծքը նրանցից վերցված է ինձանով»:

Որոշ մարդիկ հավատում են, որ Ադամի ու Եվայի Անկման պատճառով նորածին երեխաներն աշխարհ են գալիս մեղքով ապականված: Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը բացատրել է, որ այս ուսմունքը կեղծ է.

«Բոլոր նրանք, ովքեր հավատում են, որ մարդը, այո նույնիսկ նորածին մանուկները, աղտոտված են «սկզբնական մեղքով» (այլ կերպ ասած Ադամի օրինազանցությամբ), հերքում են Հիսուս Քրիստոսի քավող արյան ողորմածությունները: Աստվածաշունչը (ինչպես նաև ժամանակակից սուրբ գրությունները) ուսուցանում են, որ Հիսուս Քրիստոսն իսկապես մարդկության Քավիչն է անկումից ի վեր: Նա վճարեց պարտքը, որը մարդկությունը ժառանգել էր Ադամի օրինազանցության միջոցով: Մեր հոգիների վրա դրված գրավը լիովին վճարվեց: Այն չթողեց անցյալի ժառանգության որևէ տույժ, որը կպահանջեր որևէ քայլ կամ որևէ արարածի կողմից՝ «սկզբնական մեղքից», իրեն ազատելու որևէ գործողություն: Վարդապետությունը, որ մանուկներն այս աշխարհ են գալիս «սկզբնական մեղքի» անեծքի տակ, նողկալի վարդապետություն է Աստծո աչքում և հերքում է քավության մեծությունն ու ողորմածությունը:(Տես Մորոնի գլուխ 8.)» (*Church History and Modern Revelation: A Course of Study for the Melchizedek Priesthood Quorums,* 4 vols. [1949], 4:99):

### Մորոնի 8.8–24: Մանուկների մկրտություն

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ մանուկները մկրտության կարիք չունեն:

«Արդյոք [մենք] հավատո՞ւմ ենք մանուկների մկրտությանը»: . . . Ոչ: . . . Որովհետև դա Աստվածաշնչում ոչ մի տեղ գրված չէ: . . . Մկրտությունը մեղքերի թողության համար է: Երեխաները մեղքեր չունեն: . . . Երեխաները բոլորը կենդանի են դարձվում Քրիստոսով, իսկ նրանք, ովքեր ավելի հասուն տարիքում են՝ հավատքի և ապաշխարության միջոցով» (*History of the Church,* 5:499)

Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ Բոյդ Ք. Փաքերը պատմել է լիաժամկետ միսիոներների մասին, ովքեր կարողացել էին մխիթարել մի մոր, ով սգում էր իր փոքրիկ որդու մահվան համար.

«Երկու միսիոներներ աշխատում էին Միացյալ Նահանգների հարավային մասի լեռներում: Մի օր մի բլրի գագաթից նրանք տեսան, որ մարդիկ էին հավաքվում մի հեռու ներքևում գտնվող բացատում: Միսիոներներն այնքան էլ հաճախ չէին ունենում շատ մարդ, ում կկարողանային քարոզել, այսպիսով նրանք ուղևորվեցին դեպի ներքևում գտնվող բացատը:

«Մի փոքրիկ տղա էր խեղդվել և պետք է թաղում լիներ: Նրա ծնողները մարդ էին ուղարկել քահանայի ետևից «խոսք ասելու» իրենց որդու համար: Միսիոներները կանգնած էին ետևում, երբ շրջիկ քահանան հանդիպեց սգացող հորն ու մորը և սկսեց իր քարոզը: Եթե ծնողներն ակնկալում էին սփոփանք ստանալ այդ համազգեստով կրոնականից, նրանք հիասթափություն ապրեցին:

«Նա խստորեն հանդիմանեց նրանց փոքրիկ տղային չմկրտելու համար: Նրանք դա հետաձգել էին այս կամ այն պատճառով, իսկ այժմ շատ ուշ էր: Նա շատ կոպտորեն ասաց նրանց, որ իրենց փոքրիկ որդին գնացել է դժոխք: Դա նրանց մեղքով էր: Նրանք էին մեղավոր նրա անվերջ տանջանքների համար:

«Քարոզի ավարտից և գերեզմանը ծածկելուց հետո, երեցները մոտեցան սգացող ծնողներին: «Մենք Տիրոջ ծառաներն ենք», - ասացին նրանք մորը, «և մենք եկել ենք ձեզ համար ուղերձով»: Երբ հեկեկացող ծնողները լսում էին, երկու երեցները կարդացին հայտնություններից և բերեցին իրենց վկայությունը՝ ինչպես ողջերի, այնպես էլ մահացածների փրկագնման համար բանալիների վերականգման մասին:

«Ես կարեկցանք եմ զգում այդ քարոզիչի հանդեպ: Նա գերազանց էր անում այն, ինչ կարող էր, այն լույսով և գիտելիքով ինչ նա ուներ: Բայց կա ավելի շատ բան, որը նա պետք է կարողանար առաջարկել: Կա ավետարանի լրիվությունը:

«Երեցները եկան որպես սփոփողներ, որպես ուսուցիչներ, որպես Տիրոջ ծառաներ, որպես Հիսուս Քրիստոսի լիազորված սպասավորներ» («Եվ մի փոքրիկ երեխա նրանց կառաջնորդի», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2012, 7):

ԴԱՍ 158

# Մորոնի 9

## Նախաբան

Իր որդուն՝ Մորոնիին ուղղված իր վերջին նամակում, Մորմոնը վշտացած է Նեփիացիների ամբարիշտ վիճակից: Նա հորդորում է Մորոնիին ջանասիրաբար աշխատել Նեփիացիներին ապաշխարության բերելու համար: Մորմոնը պատմել է նաև նրանց ամբարշտության պատճառով ժողովրդի տառապանքների մասին: Չնայած իր ժողովրդի այլասեռված վիճակին, նա խրախուսեց Մորոնիին հավատարիմ լինել Հիսուս Քրիստոսին և հույս ունենալ հավերժական կյանքի խոստման հանդեպ:

## Ուսուցանման առաջարկներ

### Մորոնի 9.1–20

*Մորմոնը ողբում է Նեփիացիների և Լամանացիների ամբարշտության համար:*

Խնդրեք ուսանողներին մտածել, թե արդյոք նրանք երբևէ փորձել են օգնել որևէ մեկին, ով մերժել է իրենց ջանքերը:

- Ինչպե՞ս են որոշ մարդիկ պատասխանում, երբ իրենց բարի մտադրություններն անընդհատ մերժվում են նրանց կողմից, ում իրենք փորձում են օգնել:

Բացատրեք դասարանին, որ Մորոնի 9 գլուխը մի նամակ է, որը գրվել է մարգարե Մորմոնի կողմից իր որդուն՝ Մորոնիին: Հրավիրեք նրանց փնտրել, թե ինչպես Մորմոնը խրախուսեց իր որդուն:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 9.1 : Հանձնարարեք դասարանին հետևել՝ փնտրելով Նեփիացիների իրավիճակը նկարագրող Մորմոնի օգտագործած խոսքերը: Ուսանողների պատասխանից հետո, դուք պետք է բացատրեք, որ *ցավալի* բառը նշանակում է մի բան, որը շատ ցավոտ է, տանջալից, կամ վշտալի:

Գրեք հետևյալ սուրբ գրության հղումները գրատախտակին*Մորոնի 9.2–5, Մորոնի 9.7–10, Մորոնի 9.16–19:* Բաժանեք ուսանողներին երեք խմբի: Հանձնարարեք յուրաքանչյուր խմբին կարդալ գրատախտակին գրված սուրբ գրության հատվածներից մեկը, որոնելով այն ցավալի բաները, որոնք Մորմոնն էր նկարագրել: Յուրաքանչյուր խմբից որևէ մեկին հանձնարարեք կիսվել իրենց կարդացածով: (Եթե հանձնարարված ուսանողները Մորոնի 9.2–5 չեն գտնում բարկություն բառը, ապա դուք նշեք, թե բարկությունը ինչ դեր խաղաց Մորմոնի նկարագրած սոսկալի իրադարձությունների ժամանակ:)

Հանձնարարեք մի քանի ուսանողների բարձրաձայն կարդալՄորոնի 9.11–15, 20 : Խնդրեք ուսանողներին գտնել այն պատճառները, թե ինչու Մորմոնը վշտացած էր իր մարդկանց վիճակի համար: Որպեսզի օգնեք ուսանողներին վերլուծելու հետևյալ հատվածները, տվեք հետևյալ հարցերը:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում լինել «առանց քաղաքակրթության»:(Մորոնի 9.11): (Գործել անքաղաքակիրթ ձևով՝ առանց հղկվածության կամ զսպվածության, չհարգել օրենքները, որոնք ղեկավարում են հասարակությունը:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում լինել «առանց սկզբունքի»: (Մորոնի 9.20): (Ապրել առանց չափանիշների և առանց հարգելու և պահելու Աստծո պատվիրանները:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում լինել «անզգա դարձած» (Մորոնի 9.20): (Լինել կարծրասիրտ Տիրոջ Հոգու և Քրիստոսի Լույսի հանդեպ և չզանազանել ճիշտը սխալից: )
- Ի՞նչ ապացույց եք դուք տեսնում այսօրվա աշխարհում, որ որոշ մարդիկ առանց քաղաքակրթության են, առանց սկզբունքի և զգացումներից զուրկ:

Դուք կարող եք նշել, որ Մորմոնն ասել է, որ նրա մարդիկ ընկան ամբարշտության այդ վիճակի մեջ ընդամենը մի քանի տարիների ընթացքում (տես Մորոնի 9.12):

***Դաստիարակող ուսուցում***

Երբ դուք որոշում եք, թե ինչ ուսուցանել սուրբ գրության որևէ մասից և ինչպես ուսուցանել այն, ընտրեք ուսուցանման ճշմարտություններ և մեթոդներ, որոնք կդաստիարակեն ուսանողներին և թույլ կտան նրանց վեհացվել Սուրբ Հոգու կողմից:

Բացատրեք, որ Հարեդացիների մարգարե Եթերի նման, Մորմոնն ականատես եղավ բարկության և ամբարշտության, որը հաղթեց իր ժողովրդին: Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 9.4 : Խնդրեք դասարանին հետևել և լսել, թե Մորոնին Նեփիացիների ինչից էր վախենում: (Նա վախենում էր, որ «Տիրոջ Հոգին դադարել էր նրանց հետ ճգնելուց»: )

- Մորմոնը նշել է, որ նա «շարունակ տքնում էր [իր ժողովրդի] հետ»: Ինչո՞ւ է այսօր Մորմոնը, կամ Եկեղեցու որևէ առաջնորդ, շարունակում տքնել ժողովրդի մեջ, ովքեր բարկանում են կամ կարծրացնում իրենց սրտերն Աստծո խոսքի դեմ:

Գրեք հետևյալ ճշմարտությունը գրատախտակին.***Մենք պետք է ջանասիրաբար տքնենք Աստծո ծառայության մեջ, եթե նույնիսկ նրանք, ում մենք ծառայում ենք դրականորեն չեն արձագանքում:*** Բացատրեք, որ դա ճիշտ է, նույնիսկ, երբ մարդիկ, ում ծառայում ենք մեղավոր են լուրջ մեղքերի մեջ: Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 9.6 հատվածը: Խնդրեք ուսանողներին հետևել, փնտրելով պատճառներ այն մասին, թե ինչու մենք պետք է ջանասիրաբար տքնենք Աստծո ծառայության մեջ, եթե նույնիսկ նրանք, ում մենք ծառայում ենք, դրականորեն չեն արձագանքում: Ուսանողների մտքերից հետ, ներկայացրեք նրանց հետևյալ իրադրությունները (կամ ինքնուրույն ստեղծեք մի քանիսը) օգնելու նրանց մտածել, թե ինչպես նրանք կարող են կիրառել գրատախտակի վրայի այդ ճշմարտությունը ձեր ներկայացրած յուրաքանչյուր իրավիճակում:

1. Որպես Երիտասարդ Կանանց դասարանի նախագահ դուք պատասխանատու եք ձեր ծխում հինգ ուրիշ երիտասարդ կանանց համար: Այդ երիտասարդ կանանցից մեկը չի եկել եկեղեցու ժողովներին կամ միջոցառումներին մեկ տարուց ավելի: Երբ դուք անձնապես երեք անցած ամիսների ընթացքում հրավիրել եք նրան գալ, նա այնուամենայնիվ չի եկել որևէ ժողովների կամ միջոցառումների:
2. Որպես տնային ուսուցիչ դուք ջանասիրաբար աշխատել եք ծառայել ձեզ նշանակված ընտանիքներից յուրաքանչյուրին: Սակայն անցած մի քանի ամիսների ընթացքում, ձեր ընտանիքներից մեկը չի պատասխանել ձեր հեռախոսազանգերին կամ բացել դուռը, երբ դուք այցելել եք նրանց:
3. Դուք ուժեղ զգացում եք ապրում հրավիրելու ձեր լավ ընկերներից մեկին՝ հանդիպելու միսիոներների հետ: Նա ուշադրություն չի դարձնում ձեր հրավերին, այնուամենայնիվ, դուք շարունակում եք ունենալ նրան կրկին անգամ հրավիրելու զգացում:

Կիսվեք Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ մտքով, ով խրախուսել է մեզ համառորեն շարունակել Աստծո զավակների մեջ մեր ջանքերը: Հանձնարարեք ուսանողներին լսել որևէ բան, որը դրդում է նրանց ուրիշներին օգնելու համար տքնել ջանասիրաբար:



«Դա այն ուխտն է, որը մենք կապում ենք Աստծո հետ՝ պահելու Նրա բոլոր պատվիրանները և ծառայելու այնպես, ինչպես Նա կծառայեր, եթե Նա անձնապես ներկա գտնվեր: Ապրելով ըստ այդ չափանիշի արժանավույն ձևով՝ մենք ձեռք կբերենք այն ուժը, որը անհրաժեշտ կլինի մինչև վերջ դիմանալու համար:

«Քահանայության մեծ ուսուցիչները ցույց են տվել ինձ, թե ինչպես ստեղծել այդ ուժը. դա մի սովորույթ ստեղծելն է՝ առաջ մղվելու հոգնածության և վախի միջով, որոնք կարող են ստիպել ձեզ հանձնվել: Տիրոջ մեծ դաստիարակները ցույց են տվել ինձ, որ հոգևոր մնայուն ուժը գալիս է տքնելով այն կետից անց, երբ ուրիշները հանգիստ կառնեին: . . .

«. . . Ես խոստանում եմ, որ եթե դուք անեք այն բոլորը ինչ կարող եք, Աստված կմեծացնի ձեր ուժն ու ձեր իմաստությունը»: *Ensign* or *Լիահոնա,* նոյ. 2011, 58–59).

- Ի՞նչ ուսուցանեց Նախագահ Այրինգը, որը կդրդի ձեզ տքնաջանորեն աշխատել Տիրոջ ձեր ծառայությունում անկախ նրանից, թե ինչպես են ձեր ջանքերն ընդունվում:

Կարդացեք Յոթանասունից Երեց Մերվին Բ. Առնոլդի հետևյալ պատմությունը մի քահանայություն կրողի մասին, ով տքնաջանորեն աշխատում էր մի երիտասարդի հետ, չնայած նա անընդհատ մերժվում էր: Հրավիրեք ուսանողներին լսել, թե ինչ երիտասարդն ի վերջո տեսավ քահանայության իր առաջնորդի մեջ:

«Ֆորտալեզայում, Բրազիլիա, որպես ճյուղի նախագահության անդամ Եղբայր Մարկուեսը քահանայության մյուս առաջնորդների հետ մշակեց մի ծրագիր

վերակտիվացնելու նրանց, ովքեր ավելի քիչ ակտիվ էին ճյուղում: Նրանցից մեկը, ով ավելի քիչ ակտիվ էր Ֆերնանդո Առաուջո անունով մի երիտասարդ էր, և նա պատմեց ինձ իր փորձառությունը.

«Ես ներգրավվեցի սերֆինգի մրցույթներում կիրակի առավոտները և դադարեցի հաճախել իմ Եկեղեցու ժողովներին: Մի կիրակի առավոտյան Եղբայր Մարկուեսը թակեց մեր դուռը և հարցրեց իմ ոչ ամդամ մայրիկին, թե կարող էր արդյոք խոսել ինձ հետ: Երբ նա ասաց, որ ես քնած եմ, նա ինձ արթնացնելու թույլտվություն խնդրեց: Նա ինձ ասաց. «Ֆերնանդո, դու ուշանում ես եկեղեցուց»: Ականջ չդնելով իմ արդարացումներին, նա ինձ տարավ եկեղեցի»:

«Հաջորդ կիրակի տեղի ունեցավ նույն բանը, այսպիսով երրորդ կիրակի ես որոշեցի շուտ գնալ՝ նրանից խուսափելու համար: Երբ ես բացեցի դարպասը, ես նրան գտա իր մեքենայում նստած, սուրբ գրությունները կարդալիս: Երբ նա ինձ տեսավ, ասաց, «Լավ է, դու շուտ ես արթնացել: Այսօր մենք կգնանք և կգտնենք մեկ ուրիշ երիտասարդի»: Ես բողոքեցի՝ մեջ բերելով իմ ազատ կամքը, բայց նա ասաց. «Մենք կարող ենք այդ մասին ավելի ուշ խոսել»:

«Ութ կիրակի հետո, ես չէի կարողանում նրանից ազատվել, այսպիսով որոշեցի քնել ընկերոջս տանը: Ես ծովափին էի հաջորդ առավոտյան, երբ տեսա մի մարդու կոստյումը հագած և փողկապը կապած դեպի ինձ մոտենալիս: Երբ տեսա, որ Եղբայր Մարկուեսն էր, ես վազեցի մտնելով ջուրը: Հանկարծ ուսիս վրա զգացի ինչ որ մեկի ձեռքը: Դա Եղբայր Մարկուեսն էր, մինչև իր կրծքավանդակը ջրի մեջ մտած: Նա բռնեց ձեռքս և ասաց. «Դու ուշանում ես: Արի գնանք:» Երբ ես առարկեցի, որ շորեր չունեի հագնելու, նա պատասխանեց. «Դրանք մեքենայում են:»

«Այդ օրը, երբ մենք դուրս էինք գալիս օվկիանոսից, ինձ հուզեց Եղբայր Մարկուեսի անկեղծ սերը և անհանգստությունն ինձ համար: . . . Եղբայր Մարկուեսը պարզապես ինձ մեքենայով չէր տանում եկեղեցի՝— քվորումը հոգ էր տանում, որ ես ակտիվ մնայի: Նրանք ծրագրում էին միջոցառումներ, որոնք ստիպում էին ինձ զգալ սիրված և կարևոր: Ես ընդունեցի կոչում և քվորումի անդամները դարձան իմ ընկերները: («Զորացրեք ձեր եղբայրներին», *Ensign* կամ *Լիահոնա* , մայիս 2004, 46–47):

Բացատրեք, որ որպես Եկեղեցու անդամներ մենք բոլորս ունենք կարևոր աշխատանքներ կատարելու այս կյանքում:Մորմոնի, Մորոնիի, և Եղբայր Մարկուեսի օրինակները կարող են քաջալերել մեզ այդ աշխատանքներում, երբ մենք հուսահատվում ենք կամ մերժվում նրանց կողմից, ում մենք պետք է ծառայենք:

## Մորոնի 9.21–26

### *Մորմոնը խրախուսում է Մորոնիին հավատարիմ լինել*

Հանձնարարեք ուսանողներին նշել իրենց համայնքում կամ ազգում կամ էլ աշխարհում վերջերս կատարված ցանկացած իրադարձություններ, որոնք ստիպում են մարդկանց հուսահատված զգալ:

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Մորոնի 9.21–22, 25–26 հատվածները: Հանձնարարեք նրանց փնտրել Մորմոնի խորհուրդը, որը նա տվեց Մորնիին, թե ինչ նա պետք է աներ իր հուսահատության ժամանակ: Որպեսզի օգնեք ուսանողներին վերլուծելու հետևյալ հատվածները, տվեք հետևյալ հարցերը.

- Այս հատվածներում, ո՞ր խոսքերն ու արտահայտություններն են ցույց տալիս, թե ինչ էր Մորմոնը զգում իր որդի Մորոնիի հանդեպ:
- Ի՞նչ առաջարկեց Մորմոնը, որ պետք է «մնա [Մորմոնի] մտքում հավիտյան»Մորոնի 9.25): Ինչպե՞ս կարող է Փրկչին հիշելը և Նրա Քավությունը օգնել մեզ, երբ մենք հուսահատվում ենք, կամ երբ շրջապատված ենք լինում ամբարշտությամբ:
- Ի՞նչ կարող ենք սովորել այս հատվածներից այն մասին, թե ինչպես արձագանքենք դժվարություններին և ամբարշտությանը, որոնք կարող են շրջապատել մեզ: (Չնայած ուսանողները կարող են օգտագործել տարբեր խոսքեր, նրանք պետք է արտահայտեն այն, որ **եթե մենք հավատարիմ ենք Հիսուս Քրիստոսին, Նա մեզ վեր կբարձրացնի, նույնիսկ, երբ դժվարություններն ու ամբարշտությունը շրջապատեն մեզ:** Դուք կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին և առաջարկել, որ ուսանողներն այն գրեն իրենց սուրբ գրություններում:)

- Ի՞նչ փորձառություններ ցույց տալիս ձեր կյանքում կամ նրանց կյանքում, ում ճանաչում եք, որ այս սկզբունքը ճշմարիտ է։

Խրախուսեք ուսանողներին խորհել այն ուղիների մասին, երբ կարող են լինել ավելի հավատարիմ և ավելի ուշադիր Հիսուս Քրիստոսի վերաբերյալ, նույնիսկ երբ նրանք հուսահատված են կամ շրջապատված ամբարշտությամբ։ Վկայեք այն ուժի մասին, որ դուք ստացել եք Հիսուս Քրիստոսին հավատարիմ լինելուց։

ԴԱՍ 159

# Մորոնի 10.1–7, 27–29

## Նախաբան

Մորոնին հորդորեց Լամանացիներին և բոլոր մյուսներին, ովքեր կկարդային իր վկայությունը խնդրել Աստծուն հաստատել ճշմարտությունը իր խոսքերի վերաբերյալ: Նա ուսուցանեց, որ Աստված ցույց կտար Մորմոնի Գրքի ճշմարտացիությունը և Հիսուս Քրիստոսի իրական լինելը Սուրբ Հոգու զորությամբ: Մորոնին հայտարարեց նաև, որ նա կհանդիպեր մեզ Աստծո դատաստանի առջև, որտեղ Տերն Ինքը կհաստատեր Մորոնիի խոսքերի ճշմարտացիությունը: (*Նշում.* Դուք կարող եք ուսանողների համար ժամանակ թողնել, դասի վերջում կիսվելու Մորմոն Գրքի վերաբերյալ իրենց վկայություններով: Որպեսզի համոզվեք, որ ունեք բավարար ժամանակ, աղոթքով ընտրեք այս դասի մասերը, որոնք ամենաօգտակարը կլինեն ձեր ուսանողների համար):

## Ուսուցանման առաջարկներ

### Մորոնի 10.1–7

*Մորոնին հորդորում է մեզ ձեռք բերել վկայություն Մորմոնի Գրքի և Հիսուս Քրիստոսի մասին:*

Նախքան դասի սկսելը գրատախտակի վրա պորտաքարով կամար նկարեք (դուք կարող եք հողում կատարել 4 -րդ դասի նկարի վրա): Սկսեք դասը ցուցադրելով նկարը:

- Ո՞րն է կամարի պորտաքարի նպատակը:
- Ինչպե՞ս է պորտաքարը կապված Մորմոնի Գրքի հետ: (Եթե ուսանողները կարիք ունեն օգնության այս հարցին պատասխանելու համար, դուք կարող եք առաջարկել, որ նրանք կարդան Մարգարե Ջոզեֆ Սմիթի հայտարարությունը Մորմոնի Գրքի նախաբանի վեցերորդ պարբերությունում:)

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Մորմոնի Գրքի նախաբանի վերջին պարբերությունը: Նախքան նրանց կարդալը, խնդրեք նրանց փնտրել այն երեք ճշմարտությունները, որոնք մարդ կարող է իմանալ՝ ձեռք բերելով վկայություն Մորմոնի Գրքի մասին:

- Ճիշտ ինչպես կամարը միասին է պահվում պորտաքարի միջոցով, մեր վկայությունների ո՞ր մասերն են ամրացվում Մորմոնի Գրքի մասին վկայություն ձեռք բերելիս:
- Ինչո՞ւ է կարևոր յուրաքանչյուր անձնավորության համար ձեռք բերել իր անձնական վկայությունը Մորմոնի Գրքի մասին:

Ամփոփեք Մորոնի 10.1–2 բացատրելով, որ մոտավորապես 1,400 տարի առաջ նախքան Մարգարե Ջոզեֆ Սմիթի ոսկե թիթեղների ստանալը, Մորոնին ավարտեց իր հոր հիշատակարանը՝ գրելով իր վերջին հորդորանքը նրանց, ովքեր կընդունեն Մորմոնի Գիրքը վերջին օրերին: (Կարող է օգտակար լինել բացատրել, որ *հորդորել* բառը նշանակում է սաստիկ խրախուսել կամ համոզել ինչ որ մեկին: Այս բառը հայտնվում է ութ անգամ Մորոնի 10 գլխում:)

Բացատրեք, որ Մորոնին հորդորեց բոլորին, ովքեր կստանան Մորմոնի Գիրքը, որոնել դրա ճշմարտացիության և աստվածայնության մասին վկայությունը: Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալՄորոնի 10.3–4 ուշադրություն դարձնելով այն արտահայտություններին, որոնք նկարագրում են Սուրբ Հոգու միջոցով Մորմոնի Գրքի վերաբերյալ վկայություն ձեռք բերելու պահանջները: Դուք կարող եք առաջարկել, որ նրանք նշեն այդ արտահայտությունները, երբ նրանք գտնեն դրանք: Երբ ուսանողները կիսվեն իրենց գտած արտահայտություններով, ապա այդ արտահայտությունները գրեք գրատախտակին: Նրանց պատասխանները պետք է ներառեն հետևյալը.

*«Կարդացեք այս բաները»:*

***Կիսվեք ձեր վկայությամբ:***

Հաճախակի փնտրեք հնարավորություններ վկայելու Հիսուս Քրիստոսի, Նրա ավետարանի և Մորմոնի Գրքի մասին: Խրախուսեք ուսանողներին, բերել նաև իրենց վկայությունները: Վկայությամբ կիսվելն օրհնում է մարդուն, ով բերում է այն և կարող է զորացնել ուրիշների վկայությունները և հավատքը:

*«Հիշեք թե որքան ողորմած է եղել Տերը»:*

*«Խորհեք այն ձեր սրտերում»:*

*«Հարցրեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս»:*

Որպեսզի ուսանողները ավելի լավ հասկանան, թե մարդիկ ինչ պետք է անեն Սուրբ Հոգուց վկայություն ստանալու համար այն մասին, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, օգտագործեք հետևյալ ուսուցման գաղափարները՝ քննարկելու Մորոնիի ուսուցանած պահանջներից յուրաքանչյուրը:

**1.«Կարդացեք այս բաները»:**

Մորոնին հրավիրել է մեզ «կարդալ այս բաները» կամ կարդալ Մորմոնի Գիրքը: Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Յոթանասունի Քվորումից Երեց Թադ Ռ. Կալիստերի հետևյալ պատմությունը, այն մասին թե ինչպես մի երիտասարդ կին օգուտ քաղեց Մորմոնի Գիրքը կարդալուց.

«Մի 14- ամյա աղջիկ . . . ասաց, որ նա կրոնի մասին զրուցում էր իր ընկերներից մեկի հետ դպրոցում: Նրա ընկերն ասաց նրան. «Ի՞նչ կրոնի ես պատկանում դու»:

«Նա պատասխանեց. «Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն, կամ Մորմոններին»:

«Նրա ընկերը պատասխանեց. «Ես գիտեմ այդ եկեղեցին, և ես գիտեմ, որ այն ճշմարիտ չէ»:

«Ինչպե՞ս ես իմացել», - եղավ պատասխանը:

«Որովհետև, - ասաց նրա ընկերը, - ես ուսումնասիրել եմ այն:

«Դու կարդացել ե՞ս Մորմոնի Գիրքը»:

«Ոչ, - եղավ պատասխանը,- Չեմ կարդացել»:

«Այդ ժամանակ այդ հիանալի աջիկը պատասխանեց. «Ուրեմն դու չես ուսումնասիրել իմ եկեղեցին, որովհետև ես կարդացել եմ Մորմոնի Գրքի յուրաքանչյուր էջը և ես գիտեմ, որ այն ճշմարիտ է» («Մորմոն Գիրքը, Գիրք Աստծուց» *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2011, 76):

- Ինչո՞ւ է Մորմոնի Գիրք կարդալը կարևոր դրա ճշմարտացիության վերաբերյալ վկայություն ձեռք բերելու համար:
- Ինչպե՞ս է այս տարի Մորմոնի Գրքի ընթերցումը զորացրել ձեր վկայությունը դրա մասին և այն ճշմարտությունների մասին, որն այն ուսուցանում է:

**2.«Հիշեք, թե որքան ողորմած է եղել Տերը»:**

Մորոնին ուսուցանել է, որ նրանք, ովքեր կարդացել են Մորմոնի Գիրքը և ցանկանում են իմանալ դրա ճշմարտացիության մասին, պետք է «հիշեն, թե որքան ողորմած է եղել Տերը» (Մորոնի 10.3): Բացատրեք, որ Տիրոջ ողորմածության դեպքերը ճանաչելն ու հիշելը կարող է փափկեցնել մեր սրտերը և մեզ պատրաստել զգալու Սուրբ Հոգու ազդեցությունը: *Ողորմած* բառի իմաստներից մեկը կարեկցանքն է: Հրավիրեք ուսանողներին խորհել այն պահի մասին, երբ նրանք զգացել են Տիրոջ ողորմածությունը կամ կարեկցանքն իրենց հանդեպ կամ զգացել են այն իրենց ծանոթի կյանքում:

Հրավիրեք ուսանողներին Մորմոնի Գրքից կիսվելու Տիրոջ ողորմածության այն օրինակներով, որոնք իմաստալի են իրենց համար:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարող է Տիրոջ ողորմածությանը մասին հիշողությունը օգնել ինչ որ մեկին ընկալունակ լինել Սուրբ Հոգու հանդեպ և ստանալ վկայություն Մորմոնի Գրքի մասին:
- Տիրոջ ողորմածության վերաբերյալ ի՞նչ ապացույց եք տեսել ձեր կյանքում:
- Ի՞նչ զգացումներ եք ունենում, երբ հիշում եք Տիրոջ ողորմածությունը ձեր կյանքում:

**3.«Խորհեք [Տիրոջ ողորմածության մասին] ձեր սրտերում»:**

Մորոնին ուսուցանել է, որ մենք պետք է խորհենք Տիրոջ ողորմածության մասին մեր սրտերում: Բացատրեք, որ խորհելով այն ուղիների մասին, երբ Տերը ողորմած է եղել ուրիշների և մեր հանդեպ, նախապատրաստում են մեզ ստանալ Սուրբ Հոգու ազդեցությունը: Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալու, թե ինչու է դա

այդպես հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մարվին Ջ. Աշթոնի հետևյալ բացատրությունը.

«Բառարաններում գրված է, որ *խորհել* նշանակում է մտովի ծանր ու թեթև անել, խորապես մտածել, կշռադատել, խորհրդածել: . . .

«Խորհելով, մենք հնարավորություն ենք տալիս Հոգուն ուղղորդելու և ազդեցություն թողնելու: Խորհելը հզոր օղակ է սրտի և մտքի միջև: Երբ մենք կարդում ենք սուրբ գրությունները, մեր սրտերն ու մտքերը հուզվում են: Եթե մենք օգտագործում ենք խորհելու պարգևը, մենք կարող ենք ստանալ այս հավերժական ճշմարտությունները և հասկանալ թե ինչպես կարող ենք օգտագործել դրանք մեր ամենօրյա գործերում: . . .

«Խորհելն առաջադեմ մտավոր զբաղմունք է: Այն մեծ պարգև է նրանց համար, ովքեր սովորել են այն կիրառել: Մենք գտնում ենք հասկացողություն, ներըմբռնում և գործնական կիրառում, եթե մենք օգտագործում ենք խորհելու պարգևը» (“There Are Many Gifts,” *Ensign,* Nov. 1987, 20):

- Մորմոնի Գիրքը ուսումնասիրելիս, ե՞րբ է խորհրդածելն օգնել ձեզ զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը:
- Ի՞նչ կարող ենք սուրբ գրությունները ուսումնասիրելիս ավելի հետևողականորեն խորհելու համար:

**4. «Հարցրեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ [Հիսուս] Քրիստոս»:**

Մորոնին ուսուցանել է, որ եթե մենք կամենում ենք ստանալ վկայություն Մորմոնի Գրքի ճշմարտացիության վերաբերյալ, մենք պետք է խնդրենք Աստծուն «մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ [Հիսուս]Քրիստոս»: Բացատրեք, որ մաքուր սրտով և անկեղծ միտումով աղոթելը նշանակում է, որ մենք մտադիր ենք «գործել ըստ այն պատասխանի, որ [մենք] կստանանք Աստծուց» (*Քարոզիր Իմ Ավետարանը. Միսիոներական Ծառայության Ուղեցույց»* [2004], 111): Կիսվեք հետևյալ պատմությամբ, որում մի մարդ աղոթեց անկեղծ միտումով՝ ձեռք բերելու վկայություն Մորմոնի Գրքի ճշմարտացիության վերաբերյալ.

«Երբեմն ճշմարտությունն իմանալու համար ես աղոթում էի, բայց դա ավելի շուտ անցողիկ միտք էր, քան անկեղծ հարց: Ապա մի գիշեր ես որոշեցի աղոթել «անկեղծ միտումով»:

«Ես ասացի Երկնային Հորը, որ ես ցանկանում եմ ճանաչել Նրան և անդամակցել Նրա ճշմարիտ Եկեղեցուն: Ես խոստացա. «Եթե Դու թույլ տաս ինձ, որ իմանամ, թե արդյոք Ջոզեֆ Սմիթը իսկական մարգարե է և Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, ես կանեմ այն ամենը, որ Դու կկամենաս որ անեմ: Եթե Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ճշմարիտ Եկեղեցին է, ես կհետևեմ դրան և երբեք չեմ հրաժարվի»:

«Ես չունեցա վառ տպավորիչ հայտնություն, սակայն խաղաղություն զգացի և գնացի քնելու: Մի քանի ժամ անց, ես արթնացա հստակ մի մտքով. «Ջոզեֆ Սմիթը ճշմարիտ մարգարե է, և Մորմոնի Գիրքը ճշմարիտ է»: Այդ միտքը ուղեկցվեց աննկարագրելի խաղաղությամբ: Ես քուն մտա, որպեսզի նորից արթնանայի՝ ճիշտ նույն մտքով և զգացումով:

«Այդ ժամանակից ի վեր ես երբեք չեմ կասկածել, որ Ջոզեֆ Սմիթը ճշմարիտ մարգարե է: Ես գիտեմ, որ սա Փրկչի աշխատանքն է և որ Երկնային Հայրը կպատասխանի մեր անկեղծ խնդրանքներին» (Rodolfo Armando Pérez Bonilla, “How I Know,” *Ensign,* Oct. 2011, 64):

Հանձնարարեք ուսանողներին կարդալ Մորոնի 10.4 և նշել թե Աստված ինչ կանի նրանց համար, ովքեր հետևում են Մորոնիի ուղենշած գործընթացին:

- Ի՞նչ խոստացավ Մորոնին նրանց, ովքեր վկայություն են փնտրում Մորմոնի Գրքի վերաբերյալ այն ուղով, որը նա է նշել է:
- Ի՞նչ ձևերով կարող է Սուրբ Հոգին վկայել մեզ Մորմոնի Գրքի ճշմարտացիության վերաբերյալ:(Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են, որ հայտնությունների մեծ մասը չեն գալիս վառ տպավորությունների ձևով:Չնայած որոշ անձնավորություններ կարող են ունենալ ցնցող հոգևոր փորձառություններ, մեծ մասը կզգան ինչ որ խաղաղ և նուրբ մի բան, ինչպես օրինակ ջերմ, խաղաղ զգացում կամ համոզվածություն: Դուք կարող էք նաև բացատրել, որ երբ մենք

ուսումասիրում ենք սուրբ գրությունները, Հոգին կարող է վկայել ճշմարտությունն այն մասին, ինչ մենք կարդում ենք: Ապա, երբ մենք հատուկ հարցնում ենք իմանալու ճշմարտությունը Մորմոնի Գրքի մասին, Հոգին կհաստատի այն վկայությունները, որոնք մենք ստացել ենք:)

**Մորոնի 10.4–5**
–ը սուրբ գրությունների սերտման վարժություն է: Հղում արեք դասի վերջում գտնվող ուսուցանման մտքերին, որպեսզի օգնեք ուսանողներին այդ վարժության սերտման հարցում:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 10.5–7 հատվածները: Խնդրեք դասարանին հետևել և բացահայտել, թե Մորոնիի խորհրդի համաձայն ինչ կարող ենք նաև իմանալ Սուրբ Հոգու միջոցով: Նշեք, որ Մորոնի 10.4–5 հատվածները սուրբ գրությունների սերտման հատվածներ են: Դուք կարող եք հորդորել ուսանողներին նշելու այս հատվածը տարբերակիչ ձևով, որպեսզի իրենք կարողանան հեշտությամբ այն գտնել:

- Ի՞նչ կարող ենք սովորել Մորոնի 10.3–7 հատվածներից: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր խոսքեր, բայց նրանք պետք է հասկանան հետևյալ սկզբունքը. **Եթե մենք խնդրենք Աստծուն հավատքով և անկեղծ միտումով, Սուրբ Հոգու միջոցով մենք կարող ենք ստանալ վկայություն Մորմոնի Գրքի և Հիսուս Քրիստոսի մասին:**)

Հանձնարարեք ուսանողներին գրել տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում մի նպատակ այն մասին, թե ինչ իրենք պետք է անեն՝ ձեռք բերելու կամ ամրացնելու իրենց վկայությունները Մորմոնի Գրքի վերաբերյալ: Հորդորեք նրանց կիրառել սկզբունքը, որն ուսուցանվել է Մորոնի 10.4 -ում:

## Մորոնի 10.27–29

*Մորոնին վկայում է, որ նա կհանդիպի մեզ Աստծո դատաստանի առջև:*

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 10.27–29 հատվածները: Հանձնարարեք դասարանին մտածելու այն մասին, թե ինչպես կպատասխանեին Մորոնի 10.27 հատվածում գտնվող հարցին: Վկայեք, որ **նրանք, ովքեր ստացել են Մորմոնի Գիրքը հաշվետու կլինեն Աստծուն, թե ինչպես են արձագանքել դրան:**

Դասի վերջում բավականաչափ ժամանակ տրամադրեք հրավիրելու համար ուսանողներին կիսվելու Մորմոնի Գրքի վերաբերյալ իրենց վկայություններով:Կիսվեք Մորմոնի Գրքի մասին ձեր անձնական վկայությամբ:Հավաստիացրեք ուսանողներին, որ երբ նրանք շարունակեն ուսումասիրել Մորմոնի Գիրքը իրենց ողջ կյանքի ընթացքում, նրանց հավատքը առ Հիսուս Քրիստոսը և Նրա ավետարանը կաճի:

## Սուրբ գրության սերտում—Մորոնի 10.4–5

Այն ուսանողները, ովքեր անգիր են սովորում Մորոնի 10.4–5 հատվածները ավելի լավ կպատրաստվեն կիսվելու Մորմոն Գրքի ուղերձով ուրիշների հետ: Գրեք նյութը գրատախտակին և խնդրեք ուսանողներին դասարանով բարձրաձայն կարդալ այն: Ջնջեք վեց բառ, և հետո դասարանին կրկին խնդրեք կարդալ, լրացնելով բացակայող բառերը կարդալու ընթացքում: Շարունակեք այս գործընթացը մինչև հատվածի մեծ մասը կամ ողջ հատվածը ջնջվի:

ԴԱՍ 160

# Մորոնի 10.8–26, 30–34

## Նախաբան

Ուսուցանելուց հետո, թե ինչպես Սուրբ Հոգու միջոցով ձեռք բերել վկայություն բոլոր բաների ճշմարտացիության մասին, Մորոնին հորդորեց նրանց, ովքեր կկարդան այս խոսքերը ստանալ և ճանաչել հոգևոր պարգևները: Մորոնին ավարտեց Մորմոնի Գրքի հիշատակարանը բոլոր մարդկանց հորդորելով գալ դեպի Հիսուս Քրիստոսը, կառչած մնալ ամեն բարի պարգևից, որ Նա առաջարկում է, և կատարելագործվել Նրա միջոցով:

## Ուսուցանման առաջարկներ

### Մորոնի 10.8–26

*Մորոնին ուսուցանում է Հոգու պարգևների մասին և դրանց նպատակը Տիրոջ աշխատանքում:*

Հանձնարարեք ուսանողներին մտածել մի ժամանակի մասին, երբ Երկնային Հայրն օգնել է նրանց անել մի բան, որը նրանք չէին կարող անել ինքնուրույն: Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Մորոնի 10.8 հատվածը, որոնելով այն արտահայտությունը, որը նկարագրում է հոգևոր կարողություններն ու օրհնությունները, որ Աստված տալիս է հավատարիմներին («Աստծո պարգևները»): Բացատրեք, որ մենք հաճախ համարում ենք այս պարգևները որպես Հոգու պարգևներ կամ հոգևոր պարգևներ:

- Համաձայն Մորոնի 10.8 , ինչո՞ւ է Աստված տալիս Հոգու պարգևները Իր զավակներին: (Ուսանողները պատասխանելուց հետո, գրեք հետևյալ ճշմարտությունը գրատախտակին. ***Աստված շնորհում է Հոգու պարգևները ի օգուտ Իր զավակների:*** Դուք կարող եք բացատրել, որ այս ենթատեքստում *օգուտ* բառը նշանակում է օրհնել կամ օգնել:)

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Մորոնի 10.9–16, ուշադրություն դարձնելով Աստծո այն պարգևներին, որոնք Մորոնին նկարագրել է այս հատվածներում: Ուսանողներին կարող եք առաջարկել, որպեսզի նրանք նշոն այդ հատվածները:

- Հոգու ի՞նչ պարգևներ գտաք այս հատվածներում: (Երբ ուսանողները պատասխանեն, գուցե գրեք նրանց պատասխանները գրատախտակին:)
- Այս պարգևների ի՞նչ օրինակներ եք դուք տեսել Եկեղեցում:
- Ե՞րբ եք տեսել մարդկանց օրհնություններ ստանալիս, որովհետև մյուսները գործադրել են իրենց հոգևոր պարգևները: (Կարող եք նախապատրաստվել կիսվելու համար մի օրինակով, որ դուք տեսել եք:)
- Ինչպե՞ս կարող է Հոգու պարգևները լինեն ի օգուտ այն անձի, ով ստանում է դրանք:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 10.19, 24 հատվածները: Խնդրեք դասարանին հետևել, ուշադրություն դարձնելով հոգևոր պարգևներ ստանալու և զգալու արգելքին:

- Ի՞նչ արգելք բացահայտեցիք հոգևոր պարգևներ ստանալու և զգալու համար:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ անհավատության մեջ գտնվող մարդիկ չեն կարող զգալ կամ ստանալ Աստծո զորությունն ու պարգևները:

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալՄորոնի 10.25–26, ուշադրություն դարձնելով նրան, թե ինչ կպատահի նրանց հետ, ովքեր մերժում են Աստծո պարգևներն ու զորությունը: Խնդրեք նրանց կիսվել իրենց մտքերով:

Հանձնարարեք մի քանի ուսանողների բարձրաձայն կարդալ Մորոնի 10.20–23 հատվածները: Խնդրեք, որ դասարանը հետևի նրանց, որոնելով հավատք, հույս և գթություն ունենալու օրհնությունները: (Նախքան ուսանողների կարդալը, դուք կարող եք բացատրել, որ «նպատակահարմար է ինձ» արտահայտությունըՄորոնի 10.23

***Սիրեք ձեր ուսանողներին***

Երբ դուք սեր և մտահոգություն եք արտահայտում ձեր ուսանողների հանդեպ, դուք արտացոլում եք սերը, որն Աստված ունի նրանց հանդեպ: Երբ դուք ավարտեք ուսուցման այս դասընթացը, ձգտեք որ ուսանողները զգան, որ նրանք Աստծո սիրելի որդիներն ու դուստրերն են:

հատվածում վերաբերվում է այն բաներին, որոնք ներդաշնակության մեջ են Աստծո կամքի հետ:)

- Ի՞նչ օրհնություններ Մորոնին ուսուցանեց, որ կստանան նրանք, ովքեր ունեն հավատք, հույս և գթություն:

Երբ ուսանողները պատասխանեն, գրեք հետևյալ սկզբունքը գրատախտակին. ***Եթե մենք ունենք հավատք, մենք կկարողանանք անել այն, ինչ Փրկիչն է կամենում, որ մենք անենք:*** Դուք կարող եք առաջարկել, որ նրանք նշեն այս սկզբունքը Մորոնի 10.23 հատվածում:

- Ի՞նչ եք կարծում, ինչպես կարող են գրատախտակին գրված երկու սկզբունքները կապված լինել միմյանց հետ: (Եթե մենք ունենք հավատք, Աստված կտա մեզ պարգևներ որոնց կարիքը մենք ունենք, որպեսզի կատարենք այն աշխատանքը, որ Նա պատրաստել է մեզ համար:)
- Ինչպե՞ս կարող է այս երկու սկզբունքներն իմանալը օգնել ձեզ ներկայումս և հետագայում:

Գրատախտակի վրա գրեք հետևյալ անավարտ մտքերը: Որպեսզի ուսանողներին օգնեք տեսնելու, թե ինչպես էՄորոնի 10.23 հատվածում գտնվող խոստումը կատարվել կամ կարող էր կատարվել իրենց կյանքում, նրանց մի քանի բոպե տվեք՝ լրացնելու մտքերից մեկը տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում.

*Ես զգացի Մորոնի 10.23 հատվածի խոստումը, երբ . . .*

*Մորոնի 10.23 հատվածում գտնվող խոստումը կարող է օգնել ինձ, երբ . . .*

Բավականաչափ ժամանակից տրամադրելուց հետո, հանձնարարեք ուսանողներին կիսվելու իրենց զուգընկերոջ հետ գրածով:

## Մորոնի 10.30–34

*Մորոնին հրավիրում է բոլորին գալ դեպի Քրիստոս և կատարելագործվել Նրանում:*

Գրեք *Կատարելություն* բառը գրատախտակին: Դրա ներքևում գրեք*Հնարավո՞ր է թե անհնարին:*

Հրավիրեք ուսանողներին կիսվել գրատախտակի վրայի հարցի վերաբերյալ իրենց մտքերով:Կարճ քննարկումից հետո, խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 12.48 հատվածը:

- Փրկչի խոսքերով ո՞րն է մեծագույն նպատակն մեզանից յուրաքանչյուրիս համար:( Դառնալ կատարյալ դառնալ:) Ինչպե՞ս է դա հնարավոր:

Ուսանողներն իրենց ներըմբռնումներով կիսվելուց հետո, հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստի հետևյալ բացատրությունը:

«Կատարելությունը հավերժական նպատակ է: Չնայած մենք չենք կարող կատարյալ լինել մահկանացու կյանքում, դրան ձգտելը պատվիրան է, որն ի վերջո Քավության միջոցով մենք կարող ենք պահել» (“This Is Our Day,” *Ensign,* May 1999, 19):

Բացատրեք, որ չնայած կատարելությունն անհասանելի է այս կյանքում, մենք ի վերջո կարող ենք կատարելագործված դառնալ: Մորոնին ուսուցանել է, թե ինչ կարող ենք անել Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով կատարելագործված դառնալու համար: Արտագրեք հետևյալ աղյուսակը գրատախտակին, բաց թողնելով փակագծերի մեջի պատասխանները:

| Ի՞նչ պետք է անեմ ես . . . | Ի՞նչ է խոստանում Աստված . . . |
|---|---|
| (Պատասխանները կարող են ներառել, որ մենք պետք է գանք դեպի Հիսուս Քրիստոսը, ձգտենք և ստանանք բարի պարգևներ, խուսափենք չար պարգևներից և անմաքուր բաներից, մեզ զերծ պահենք ամեն անաստվածությունից և սիրենք Աստծուն ողջ մեր զորությամբ, մտքով և ուժով:) | (Պատասխանները կարող են ներառել, որ Նա կկատարի Իր ուխտերը, Նրա շնորհը բավարար է մեզ համար, մենք կատարյալ կլինենք Հիսուս Քրիստոսում, մենք կստանանք Աստծո շնորհը, մենք կսրբագործվենք և կստանանք թողություն մեր մեղքերի համար, և մենք կդառնանք սուրբ, անբիծ:) |

Հանձնարարեք ուսանողներին կարդալ Մորոնի 10.30–33, փնտրելով այնպիսի արտահայտություններ, որոնք նկարագրում են, թե ինչ մենք պետք է անենք և ինչ է Աստված խոստանում անել՝ դարձնելու մաքուր և կատարյալ: Հրավիրեք որևէ ուսանողի գրի առնել ուսանողների պատասխանները համապատասխան սյունակներում: Մատնանշեք, որ *շնորհ* բառը վերաբերվում է աստվածային օգնությանը և ուժին, որ մենք ստանում ենք, Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ:

- Ի՞նչ արտահայտություն դուք կգրեիք այս սյունակի ներքևում ամփոփելու այն, ինչ Մորոնին ուսուցանեց մաքուր և կատարյալ դառնալու մասին: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, բայց նրանց պատասխանները պետք է արտացոլեն հետևյալ ճշմարտությունը. **Երբ մենք գալիս ենք դեպի Հիսուս Քրիստոս, մենք կարող ենք մաքրագործվել և կատարելագործվել Նրա Քավության միջոցով:**)

Հնարավորության դեպքում ուսանողներին տվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հայտարարության հետևյալ օրինակը: Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ հայտարարությունը, մինչ դասարանի մնացած անդամներն այդ ընթացքում հետևում են: Մինչ ուսանողի կարդալը դասարանին հորդորեք ուշադիր լսել, մտածելով, թե ինչ կարող են անել այս տարի՝ գալու դեպի Հիսուս Քրիստոս ի հետևանք Մորմոնի Գրքի ուսումնասիրության:

«Մեր կրոնի պորտաքարի և երբևէ գրված ամենաճիշտ գրքի ավարտական, վերջին միակ կոչն է՝ ձեռք չտալ անմաքուր բանին, այն պետք է սուրբ լինի և անբիծ, այն պետք է անարատ լինի: Եվ այդ մաքրությունը կարող է գալ միայն այն Գառան արյան միջոցով, ով կրեց մեր վշտերը և տարավ մեր ցավերը, Գառը, ով խոցվեց մեր օրինազանցությունների համար, և ծեծվեց մեր անօրինությունների համար, Գառը, ով արհամարհվեց և չարչարվեց, բայց, որին մենք չգնահատեցինք (տես Մոսիա 14): . . .

«Մաքրություն—Գառան արյան միջոցով: Սա այն է, ինչ աղերսում է այս գիրքը: (“A Standard unto My People” [address to CES religious educators, Aug. 9, 1994], 13–14, si.lds.org):

Հանձնարարեք ուսանողներին Մորոնի 10.32 –33-ում գտնել արտահայտություններ որոնք ընդգծում են, որ մենք կարող ենք կատարյալ լինել միայն «Քրիստոսում» կամ Նրա Քավության մաքրագործող զորությամբ և շնորհի միջոցով:

- Ինչո՞ւ մենք մաքուր և կատարյալ դառնալու համար կարիք ունենք Հիսուս Քրիստոսի Քավության :
- Մորոնի 10.32–33 հատվածներում ո՞ր արտահայտություններն եք համարում խրախուսական, երբ ձգտում եք մաքրության և կատարելության հավերժական նպատակին:

Հրավիրեք ուսանողներին ընտրել մեկ կամ երկու արտահայտություններ գրատախտակին գրված աղյուսակի առաջին սյունակից: Նրանց մի քանի րոպե տրամադրեք՝ գրելու տետրերում կամ սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրերում

Եզրափակեք այս դասը դասարանին կարդալով Մորոնի 10.34 հատվածը:Խնդրեք ուսանողներին հետևել, փնտրելով ապացույց, որ Մորոնին հավատք և հույս ուներ Հիսուս Քրիստոսի հանդեպ: Իրենց մտքերով կիսվելուց հետո, հրավիրեք ուսանողներին գրել որևէ մտքեր և տպավորություններ, որ նրանք ունեցել են, երբ ավարտեն Մորմոնի Գրքի ուսումնասիրության այս դասընթացը: Թող ուսանողները դասարանի հետ կիսվեն իրենց մտքերով: Վկայեք նրանց խոստացված Երկնային Հոր օրհնությունների մասին, եթե նրանք գան դեպի Հիսուս Քրիստոսը՝ հետևելով Նրա ուսմունքներին և գործադրելով հավատք Նրա Քավության հանդեպ: Հորդորեք ուսանողներին Մորմոնի Գրքի ուսումնասիրությունը դարձնել իրենց ողջ կյանքի զբաղմունքը:

## Մորոնիի կրկնություն

Ուսանողներին տրամադրեք ժամանակ Մորոնիի գիրքը կրկնելու համար: Թող նրանք մտածեն այն մասին, թե ինչ են սովորել այդ գրքից, ինչպես սեմինարիայում այնպես էլ իրենց անձնական սուրբ գրությունների ուսումնասիրության ընթացքում: Անհրաժեշտության դեպքում նրանց հիշողությունը թարմացնելու համար հրավիրեք նրանց համառոտակի կրկնել Մորոնիի որոշ գլուխների բովանդակությունը: Բավարար ժամանակ տրամադրելուց հետո, հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել ինչ որ բանով Մորոնիից, որը նրանց համար ոգեշնչող է կամ որն օգնել է նրանց ավելի մեծ հավատք ունենալ առ Հիսուս Քրիստոս:

## Բացատրական և պատմական տեղեկություն

### Մորոնի 10.8–19: Հոգու պարգևները

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին նկարագրել է հոգևոր պարգևներ ձեռք բերելու նպատակներն ու պատճառները.

«[Հոգևոր պարգևների նպատակն] է լուսավորել, քաջալերել և դաստիարակել հավատարիմներին, որպեսզի նրանք ժառանգեն խաղաղություն այս կյանքում և առաջնորդվեն դեպի հավերժական կյանք գալիք աշխարհում: Դրանց ներկայությունն ապացույց է Տիրոջ աշխատանքի աստվածայնության մասին, այնտեղ որտեղ նրանք չկան, այնտեղ չկա Եկեղեցին և Աստծո արքայությունը: Խոստումն այն է, որ դրանք երբեք չեն վերանա, քանի դեռ աշխարհը կանգուն կլինի ներկա վիճակով, բացի անհավատության պատճառով, (Մորոնի 10.19), բայց երբ կատարյալ օրը գա և սրբերը ստանան վեհացում, այլևս դրանց կարիքը չի լինի: Ինչպես Պողոսն է արտահայտել դա. «Բայց երբոր կատարեալը գայ. Այս փոքր ի շատէն կխափանուի» (Ա Կորնթ. ԺԳ.10):

«Հավատարիմ մարդկանցից ակնկալվում է, որ որոնեն Հոգու պարգևները ողջ իրենց սրտով: Նրանք պետք է «նախանձախնդիր լինեն լավագույն պարգեւներին» (Ա Կորնթ. ԺԲ.31, ՎևՈՒ 46.8), «հոգեւոր պարգեւներին նախանձախնդիր եղեք» (Ա Կորնթ. ԺԴ.1), «խնդրել Աստծուն, որը տալիս է առատորեն» (ՎևՈՒ 46.7, Մատթ. Է.7–8): Ոմանց կտրվի մի պարգև, մյուսներին մեկ ուրիշ և «ոմանց տրված լինի ունենալ բոլոր այդ պարգևները, որ լինի մեկ գլուխ, որպեսզի ամեն մի անդամ այդպիսով օգտվի» (ՎևՈՒ 46.29)» (*Mormon Doctrine,* 2nd ed. [1966], 314):

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մարվին Ջ. Աշթոնն ուսուցանել է.

«Իմ կարծիքով, կյանքի մեծագույն ողբերգություններից մեկն այն է, երբ մարդ իրեն դասակարգում է որպես մեկը, որը չունի տաղանդներ կամ պարգևներ: . . .

«Վարդապետություն և Ուխտեր 46.11–12 հատվածներում, մենք ունենք այս ճշմարտությունը. «Քանզի բոլորին տրված չէ ամեն պարգև. Քանզի կան շատ պարգևներ, և ամեն մարդու մի պարգև է տրված Աստծո Հոգուց:

«Ոմանց տրված է մի բան, ոմանց էլ տրված է մեկ ուրիշ բան, որպեսզի բոլորն այդպիսով օգտվեն»:

«Աստված տվել է մեզանից յուրաքանչյուրին մեկ կամ մեկից ավելի տաղանդներ: . . . Մեզանից յուրաքանչյուրի գործն է որոնել և կառուցել այն պարգևների վրա, որոնք Աստված է տվել: . . .

«Աստված իսկապես ապրում է: Նա իսկապես օրհնում է մեզ պարգևներով: Երբ մենք զարգացնում և կիսվում ենք Աստծո տված պարգևներով և օգտվում մեզ շրջապատողների պարգևներից, աշխարհը կարող է լինել մի ավելի լավ վայր և Աստծո աշխատանքն առաջ կշարժվի ավելի արագ քայլերով» (“There Are Many Gifts,” *Ensign,* Nov. 1987, 20, 23):

# Տնային ուսումնասիրության դաս

## Մորոնի 7.20–10.34 (Մաս 32)

### Նախապատրաստական նյութեր տնային ուսումնասիրության ուսուցչի համար

*Ամենօրյա տնային ուսումնասիրության դասերի ամփոփում*

Վարդապետությունների և սկզբունքների հետևյալ ամփոփումը ուսանողները սովորեցին, երբ նրանք ուսումնասիրեցինՄորոնի 7.20 –10.34 (մաս 32 -ը) նախատեսված չէ ուսուցանել որպես ձեր դասի մաս: Դասը, որ դուք եք ուսուցանում կենտրոնացած է այս վարդապետություններից և սկզբունքներից միայն մի քանիսի վրա: Ձեր ուսանողների պահանջները հաշվի առնելիս Հետևեք Սուրբ Հոգու հուշումներին:

### Օր 1 (Մորոնի 7.20–48)

Երբ ուսանողները շարունակեցին իրենց ուսումնասիրությունը ժողովատանը գտնվող մարդկանց Մորմոնի քարոզի վերաբերյալ, նրանք սովորեցին կարևոր սկզբունքներ հավատքի, հույսի և գթության վերաբերյալ: Երբ մենք գործադրում ենք հավատք առ Հիսուս Քրիստոս, մենք կարող ենք որդեգրել ամեն բարի բան: Եթե մենք գործադրենք հավատք առ Հիսուս Քրիստոս, մենք կարող ենք ձեռք բերել հույս՝ բարձրացվելու դեպի հավերժական կյանք Նրա Քավության միջոցով: Եթե մենք աղոթենք Հորը մեր սրտի ողջ կորովով և ապրենք որպես Հիսուս Քրիստոսի հետևորդներ, մենք կարող ենք լցվել գթությամբ:

### Դաս 2 (Մորոնի 8–9)

Ուսումնասիրելով Մորոնիին ուղղված Մորմոնի նամակը, որն արձանագրված է Մորոնի 8 գլխում, ուսանողները սովորեցին, որ ապաշխարությունը և մկրտությունն անհրաժեշտ են բոլորի համար, ովքեր հաշվետու են և ընդունակ մեղք գործելու: Նրանք նաև ուսումնասիրեցին վարդապետությունը, որ երեխաները փրկվում են Հիսուս Քրիստոսի Քավությամբ: Ուսումանսիրելով Մորոնի 9 գլուխը, ուսանողները սովորեցին, որ մենք պետք է ջանասիրաբար աշխատենք Աստծու ծառայության մեջ, եթե նույնիսկ նրանք, ում մենք ծառայում ենք դրականորեն չեն արձագանքում: Բացի այդ ուսանողները սովորեցին Մորմոնի և Մորոնիի օրինակներից, որ եթե մենք հավատարիմ լինենք Հիսուս Քրիստոսին, Նա մեզ վեր կբարձրացնի, նույնիսկ, եթե դժվարություններն ու ամբարշտությունը շրջապատեն մեզ:

### Օր 3 (Մորոնի 10.1–7, 27–29)

Երբ ուսանողներն ուսումնասիրեցին Մորոնիի եզրափակիչ վկայությունը, նրանց հիշեցվեց, որ եթե մենք հարցնենք Աստծուն հավատքով և անկեղծ միտումով, Սուրբ Հոգու միջոցով մենք կարող ենք ստանալ վկայություն Մորմոնի Գրքի և Հիսուս Քրիստոսի մասին: Նրանք նաև սովորեցին, որ նրանք, ովքեր ստացել են Մորմոնի Գիրքը, հաշվետու կլինեն Աստծուն՝ դրա հանդեպ իրենց վերաբերմունքի համար:

### Օր 4 (Մորոնի 10.8–26, 30–34)

Ուսանողները սովորեցին, որ Աստված շնորհում է Հոգու պարգևները Իր զավակների օգտի համար: Նրանք նաև սովորեցին, որ եթե մենք ունենք հավատք, մենք կկարողանանք անել այն, ինչ Փրկիչն է կամենում, որ մենք անենք: Նրանք նաև ուսումնասիրեցին Մորոնիի վերջին խոսքերը Մորմոնի Գրքում, որոնք ուսուցանում են, որ երբ, մենք գալիս ենք Հիսուս Քրիստոսի մոտ, մենք կարողանում ենք մաքրագործվել և կատարելագործվելՆրա Քավության միջոցով:

## Նախաբան

Այս դասը կարող է օգնել ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե ինչ է նշանակում որդեգրել ամեն բարի բան: Ուսանողներին հնարավորություն կտրվի բացատրել, թե ինչպես մարդ կարող է իմանալ ինքն իր համար, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Նրանք կկարողանան նաև կիսվել իրենց վկայություններով Մորմոնի Գրքի մասին և քննարկել, թե ինչպես են իրենց վկայությունները զորացվել այս տարի: Մորոնի 7–9 հատվածները պարունակում են գրեր կամ նամակներ Մորմոնից, որոնք Մորոնին ընդգրկեց այս գրքում:

## Ուսուցանման առաջարկներ

### Մորոնի 7.20–48

***Մորոնին գրի է առնում հավատք առ Հիսուս Քրիստոս, հույսի և գթության մասին Մորմոնի ուսմունքները:***

Գրեք *դիպչել* և *որդեգրել* բառերը գրատախտակին: Խնդրեք որևէ ուսանողի գալ դասարանի առջև և ցույց տալ դասարանին, թե ինչ է նշանակում դիպչել Մորմոնի Գրքին: Ապա խնդրեք ուսանողին ցույց տալ, թե ինչ է նշանակում որդեգրել Մորմոնի Գիրքը:

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Մորոնի 7.19 և փնտրել Մորմոնի խոսքերն այն մասին, թե մենք ինչ պետք է որդեգրենք.

- Ըստ Մորոմոնի մենք ի՞նչ պետք է որդեգրենք:
- Ի՞նչ եք կարծում ինչ է նշանակում «որդեգրել ամեն բարի բան»: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ «ամեն բարի բանը» կարող է ներառել արդար նպատակներ, գործեր, մտքեր, սկզբունքներ և դիտավորություններ:)

Բացատրեք, որ Մորմոնը շարունակում է ուսուցանել, թե ինչպես մենք կարող ենք «որդեգրել ամեն բարի բան»: Հանձնարարեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն

կարդալ Մորոնի 7.20–22, 25 : Խնդրեք դասարանին փնտրել Մորմոնի խորհուրդը նրա վերաբերյալ, թե ինչ պետք է անենք «որդեգրել ամեն բարի բան»:

Գրեք հետևյալ անավարտ միտքը գրատախտակին. *Երբ մենք . . . , մենք կարող ենք որդեգրել ամեն բարի բան:*

Հարցրեք. Այս հատվածները կարդալուց հետո, ինչպե՞ս կլրացնեիք այս միտքը: (Ուսանողների պատասխաններից մեկ կարող է լինել այն է, որ **երբ մենք հավատք ենք գործադրում առ Հիսուս Քրիստոս, մենք կարող ենք որդեգրել ամեն բարի բան:**)

Հիշեցրեք ուսանողներին, որ Մորմոնի այս գլուխը նաև վկայում է, որ առ Հիսուս Քրիստոս հավատքի միջոցով մենք կարող ենք լցվել գթության պարգևով (տես Մորոնի 7.48): Հանձնարարեք դասարանին անգիր արտասանել սուրբ գրության սերտման Մորոնի 7.45, 47–48 հատվածը: Դասարանի անդամները կարող են նաև հատվածները բարձրաձայն կարդալ:

Ուղղեք հետևյալ հարցերը.

- Ո՞րն է ձեր սիրելի արտահայտությունը Մորոնի 7.45, 47–48 հատվածներում: Ինչո՞ւ է այդ արտահայտությունը ձեզ համար կարևոր:
- Ե՞րբ եք տեսել, որ ինչ որ մեկը գթառատ է եղել, կամ զգացել, որ Տերն օգնում է ձեզ գթառատ լինել: (Դուք կարող եք տալ այս հարցերին ձեր անձնական պատասխանները:)

## Մորոնի 10

***Մորոնին հորդորում է մեզ ձեռք բերել վկայություն Մորմոնի Գրքի վերաբերյալ և գալ դեպի Հիսուս Քրիստոսը:***

Ուսանողների հետ Վերանայեք կամարի պորտաքարի նպատակը: Քննարկեք թե ինչպես է պորտաքարի գաղափարը կապված Մորմոնի Գրքի հետ: (Դուք կարող եք ուսանողներին հղել մաս 1-ի նկարը, օր 3 իրենց ուսումնասիրության ուղեցույցներում:) Հրավիրեք ուսանողներին կիսվելու այն բանով, թե ինչպես է Մորմոնի Գիրքը իրենց վկայությունների պորտաքարը:

Հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ Մորոնի 10.3–5: Թող ուսանողները մտածեն, թե ինչո՞ւ են այս հատվածները անհրաժեշտ կիսելու բոլոր մարդկանց հետ, անկախ նրանից, թե նրանք մեր Եկեղեցու անդամներ են, թե ոչ: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց մտքերով, իսկ հետո հարցրեք. Ըստ Մորոնիի, ինչ պետք է անենք, որպեսզի իմանանք ճշմարտությունը: (Երբ ուսանողները պատասխանեն, դուք կարող եք գրել նրանց պատասխանները գրատախտակին: Մատնանշեք, որ այդ պատասխանները ուղիներ են, որոնցով կարող ենք հավատքով փնտրել իմանալու համար «ճշմարտությունը բոլոր բաների մասին»:)

Հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ Մորոնի 10.6–7 , իսկ հետո հարցրեք. Բացի Մորմոնի Գրքի ճշմարտացիությունից, էլ ի՞նչ կարող ենք իմանալ Սուրբ Հոգու զորությամբ (Սուրբ Հոգին կհաստատի, որ Հիսուսը Քրիստոսն է:)

Գրեք հետևյալ սկզբունքը գրատախտակին.***Եթե մենք խնդրենք Աստծուն հավատքով և անկեղծ միտումով, Սուրբ Հոգու միջոցով մենք կարող ենք ստանալ վկայություն Մորմոնի Գրքի և Հիսուս Քրիստոսի մասին:***

Հիշեցրեք ուսանողներին, որ Մորոնին թողել է մի վերջնական հրավեր բոլոր մարդկանց համար, ովքեր կկարդան Մորմոնի Գիրքը: Հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ նրա հրավերը, որը գտնվում է Մորոնի 10.30, 32–33 հատվածներում: Խնդրեք դասարանի անդամներին փնտրել ուղիներ, որոնցով մենք կարող ենք «գալ Քրիստոսի մոտ»: (Դուք կարող եք առաջարկել, որ նրանք նշեն իրենց սովորածը:) Այնուհետև տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ հրավեր է Մորոնին հղում մեզ այս սրբազան հիշատակարանի վերջում:
- Այս հատվածներում ո՞ր արտահայտություններն են օգնում ձեզ իմանալ, թե ինչպես «գալ Քրիստոսի մոտ»:
- Ի՞նչ սկզբունքներ կարող եք սովորել այս հատվածներից: (Ուսանողների պատասխանները կարող են ներառել հետևյալ սկզբունքը. **Երբ մենք գանք դեպի Հիսուս Քրիստոսը, մենք կարող ենք մաքրագործվել և կատարելագործվել Նրա Քավության միջոցով:** Դուք կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին:)
- Ի՞նչ է նշանակում ձեզ համար այն, որ դուք կարող եք կատարյալ դառնալ միայն Հիսուս Քրիստոսի միջոցով:

Հանձնարարեք յուրաքանչյուր ուսանողի ընտրել հետևյալ հարցերից մեկը և մտածել դրանց պատասխանների մասին: (Դուք կարող եք գրել այս հարցերը գրատախտակին կամ պատրաստել դրանք որպես օժանդակ նյութ նախքան դասը:) Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո խնդրեք մի քանի ուսանողների դասարանի հետ կիսվելու իրենց պատասխաններով:

- Ինչպե՞ս եք իմացել, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է:
- Ինչպե՞ս է Փրկիչն օգնել ավելի կատարելագործվել, քան դուք երբևէ կարող էիք անել դա ինքնուրույն:
- Երբ դուք ետ եք նայում այս տարվա Մորմոնի Գրքի ձեր ուսումնասիրությանը, ի՞նչ կկամենայիք անել բարելավելու սուրբ գրությունների ձեր ուսումնասիրությունը:

Ուսանողներն իրենց պատասխաններով կիսվելուց հետո, դուք կարող եք կիսվել Մորմոնի Գրքի և Հիսուս Քրիստոսի Քավության վերաբերյալ ձեր վկայությամբ: Բացի այդ շնորհակալություն հայտնեք ուսանողներին այս տարի սեմինարիայում ուսումնասիրելու և սովորելու իրենց ջանքերի համար: Հորդորեք նրանց շարունակելու սուրբ գրությունների ամենօրյա ընթերցանությունը և ձգտել կիրառել այն, ինչ նրանք սովորում են իրենց կյանքի ընթացքում:

# Հավելված

## Սուրբ գրությունների ընթերցանության աղյուսակներ

Մենք օգնում ենք կատարել Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների նպատակը, երբ խրախուսում ենք ուսանողներին (1) ամեն օր կարդալ և ուսումնասիրել սուրբ գրությունները, (2) կարդալ ուսումնական դասընացի սուրբ գրությունները: Դուք կարող եք ուսանողներին տալ աղյուսակներ, որոնք նման են ստորև ցուցադրվածներին, որպեսզի օգնեք նրանց հետևել իրենց առջընթացին: Եթե ցանկանաք զեկուցել ուսանողների ամենօրյա սուրբ գրությունների ընթերցանության մասին, հետևեք Սուրբ գրությունների ընթերցանության զեկուցման ցուցումների հրահանգներին: Փնտրեք այս հրահանգները si.lds.org կայքում՝ օգտագործելով «սուրբ գրությունների ընթերցանության զեկուցման ցուցումներ» արտահայտությունը:

### Մորմոնի Գրքի ընթերցանության աղյուսակ

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 Նեփի | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| 2 Նեփի | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 |
| Հակոբ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | | | | |
| Ենովս | 1 | | | | | | | | | | |
| Հարոմ | 1 | | | | | | | | | | |
| Օմնի | 1 | | | | | | | | | | |
| Մորմոնի Խոսքերը | | | 1 | | | | | | | | |
| Մոսիա | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | | | | |
| Ալմա | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 |
| | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 |
| | 45 | 46 | 47 | 48 | 49 | 50 | 51 | 52 | 53 | 54 | 55 |
| | 56 | 57 | 58 | 59 | 60 | 61 | 62 | 63 | | | |
| Հելաման | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| | 12 | 13 | 14 | 15 | 16 | | | | | | |
| 3 Նեփի | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | | | |
| 4 Նեփի | 1 | | | | | | | | | | |
| Մորմոն | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | | |
| Եթեր | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| | 12 | 13 | 14 | 15 | | | | | | | |
| Մորոնի | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | |

### Սուրբ գրությունների ամենօրյա ընթերցանության աղյուսակ

| Հուն. | Փետ. | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոս. | Սեպ. | Հոկ. | Նոյ. | Դեկ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 |
| 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 |
| 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 |
| 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 |
| 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 |
| 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 |
| 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 |
| 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 |
| 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 |
| 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 |
| 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 |
| 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 |
| 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 |
| 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 |
| 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 |
| 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 |
| 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 |
| 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 |
| 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 |
| 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 |
| 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 |
| 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 |
| 29 | (29) | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 |
| 30 | | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 |
| 31 | | 31 | | 31 | | 31 | 31 | | 31 | | 31 |

# Ուղեցույց ամենօրյա ուսուցիչների համար

## Առաջարկվող ժամանակացույց 36-շաբաթական ուսումնական տարվա համար

| Շաբաթ | Սուրբ գրության մաս, որը պետք է ուսուցանվի | Ընթերցանության մաս |
|---|---|---|
| 1 | Օր 1. Դաս 1. Ուսանողի դերը<br>Օր 2. Դաս 2. Սուրբ գրությունների ուսումնասիրություն<br>Օր 3. Դաս 3.Փրկության ծրագիրը<br>Օր 4. Դաս 4. Տիտղոսաթերթ, Նախաբան և Վկաների Վկայությունները<br>Օր 5. Դաս 5. Մորմոնի Գրքի ակնարկ | Տիտղոսաթերթ, Մորմոնի Գրքի նախաբանը, Վկաների Վկայությունները, Մարգարե Ջոզեֆ Սմիթի վկայությունը և Մորմոնի Գրքի մասին համառոտ բացատրություն |
| 2 | Օր 1. Դաս 6. 1 Նեփի 1<br>Օր 2. Դաս 7. 1 Նեփի 2<br>Օր 3. Դաս 8. 1 Նեփի 3-4<br>Օր 4. հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրվա համար)<br>Օր 5. Դաս 9. 1 Նեփի 5 | 1 Նեփի 1-5 |
| 3 | Օր 1. Դաս 10. 1 Նեփի 6 և 9<br>Օր 2. Դաս 11. 1 Նեփի 7<br>Օր 3. Դաս 12. 1 Նեփի 8<br>Օր 4. Դաս 13. 1 Նեփի 10-11<br>Օր 5. Դաս 14. 1 Նեփի 12-13 | 1 Նեփի 6-13 |
| 4 | Օր 1. Դաս 15. 1 Նեփի 14<br>Օր 2. Հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրվա համար)<br>Օր 3. Դաս 16. Նեփի 15<br>Օր 4. Դաս 17. 1 Նեփի 16<br>Օր 5. Դաս 18. 1 Նեփի 17 | 1 Նեփի 14-17 |
| 5 | Օր 1. Դաս 19. 1 Նեփի 18<br>Օր 2. Դաս 20. 1 Նեփի 19<br>Օր 3. Դաս 21. 1 Նեփի 20-22<br>Օր 4. Հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրերի համար)<br>Օր 5. Դաս 22. 2 Նեփի 1 | 1 Նեփի 18-2 Նեփի 1 |
| 6 | Օր 1. Դաս 23. 2 Նեփի 2 (Մաս 1)<br>Օր 2. Դաս 24. 2 Նեփի 2 (Մաս 2)<br>Օր 3. Դաս 25. 2 Նեփի 3<br>Օր 4. Դաս 26. 2 Նեփի 4<br>Օր 5. Դաս 27. 2 Նեփի 5 | 2 Նեփի 2-5 |
| 7 | Օր 1. Դաս 28. 2 Նեփի 6-8<br>Օր 2. Դաս 29. 2 Նեփի 9.1-26<br>Օր 3. Դաս 30. 2 Նեփի 9.27-54 և 2 Նեփի 10<br>Օր 4. Հարմարվող օր (տես առաջարկություններ հարմարվող օրերի համար)<br>Օր 5. Դաս 31. 2 Նեփի 11 և 16 | 2 Նեփի 6-11, 16 |
| 8 | Օր 1. Դաս 32. 2 Նեփի 12-15<br>Օր 2. Դաս 33. 2 Նեփի 17-20<br>Օր 3. Դաս 34. 2 Նեփի 21-24<br>Օր 4. Դաս 35. 2 Նեփի 25<br>Օր 5. Հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրերի համար) | 2 Նեփի 12-15, 17-25 |
| 9 | Օր 1. Դաս 36. 2 Նեփի 26<br>Օր 2. Դաս 37. 2 Նեփի 27<br>Օր 3. Դաս 38. 2 Նեփի 28<br>Օր 4. Դաս 39. 2 Նեփի 29-30<br>Օր 5. Դաս 40. 2 Նեփի 31 | 2 Նեփի 26-31 |
| 10 | Օր 1. Դաս 41. 2 Նեփի 32<br>Օր 2. Դաս 42. 2 Նեփի 33<br>Օր 3. Հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրերի համար)<br>Օր 4. Դաս 43. Հակոբ 1-2.11<br>Օր 5. Դաս 44. Հակոբ 2.12-35 | 2 Նեփի 32-Հակոբ 2 |
| 11 | Օր 1. Դաս 45. Հակոբ 3-4<br>Օր 2. Դաս 46. Հակոբ 5.1-51<br>Օր 3. Դաս 47. Հակոբ 5.52-77, Հակոբ 6<br>Օր 4. Դաս 48. Հակոբ 7<br>Օր 5. Հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրերի համար) | Հակոբ 3-7 |
| 12 | Օր 1. Դաս 49.Ենովս<br>Օր 2. Դաս 50. Հարոմ և Օմնի<br>Օր 3. Դաս 51. Մորմոնի Խոսքերը-Մոսիա 1<br>Օր 4. Դաս 52. Մոսիա 2<br>Օր 5. Դաս 53. Մոսիա 3 | Ենովս-Մոսիա 3 |
| 13 | Օր 1. Դաս 54. Մոսիա 4<br>Օր 2. Դաս 55. Մոսիա 5-6<br>Օր 3. Հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրերի համար)<br>Օր 4. Դաս 56. Մոսիա 7-8<br>Օր 5. Դաս 57. Մոսիա 9-10 | Մոսիա 4-10 |
| 14 | Օր 1. Դաս 58. Մոսիա 11-12.17<br>Օր 2. Դաս 59. Մոսիա 12.18-14.12<br>Օր 3. Դաս 60. Մոսիա 15-17<br>Օր 4. Դաս 61. Մոսիա 18<br>Օր 5. Դաս 62. Մոսիա 19-20 | Մոսիա 11-20 |
| 15 | Օր 1. Դաս 63. Մոսիա 21-22<br>Օր 2. Դաս 64. Մոսիա 23-24<br>Օր 3. Դաս 65. Մոսիա 25<br>Օր 4. Դաս 66. Մոսիա 26<br>Օր 5. Դաս 67. Մոսիա 27 | Մոսիա 21-27 |
| 16 | Օր 1. Դաս 68. Մոսիա 28-29<br>Օր 2. Հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրերի համար)<br>Օր 3. Դաս 69. Ալմա 1-2<br>Օր 4. Դաս 70. Ալմա 3-4<br>Օր 5. Դաս 71. Ալմա 5.1-36 | Մոսիա 28-Ալմա 5.36 |
| 17 | Օր 1. Դաս 72. Ալմա 5.37-62<br>Օր 2. Դաս 73. Ալմա 6-7<br>Օր 3. Դաս 74. Ալմա 8<br>Օր 4. Դաս 75. Ալմա 9-10<br>Օր 5. Դաս 76. Ալմա 11 | Ալմա 5.37-11.46 |
| 18 | Օր 1. Դաս 77. Ալմա 12<br>Օր 2. Դաս 78. Ալմա 13<br>Օր 3. Դաս 79. Ալմա 14<br>Օր 4.Դաս 80. Ալմա 15-16<br>Օր 5. Հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրերի համար) | Ալմա 12-16 |

| Շաբաթ | Սուրբ գրության մաս, որը պետք է ուսուցանվի | Ընթերցանության մաս |
|---|---|---|
| 19 | Օր 1. Դաս 81. Ալմա 17<br>Օր 2. Դաս 82. Ալմա 18<br>Օր 3. Դաս 83. Ալմա 19-20<br>Օր 4. Դաս 84. Ալմա 21-22<br>Օր 5. Դաս 85. Ալմա 23-24 | Ալմա 17-24 |
| 20 | Օր 1. Դաս 86. Ալմա 25-26<br>Օր 2. Դաս 87. Ալմա 27-29<br>Օր 3. Հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրերի համար)<br>Օր 4. Դաս 88. Ալմա 30<br>Օր 5Դաս 89. Ալմա 31 | Ալմա 25-31 |
| 21 | Օր 1. Դաս 90. Ալմա 32<br>Օր 2. Դաս 91. Ալմա 33<br>Օր 3. Դաս 92. Ալմա 34-35<br>Օր 4. Դաս 93. Ալմա 36<br>Օր 5. Դաս 94. Ալմա 37 | Ալմա 32-37 |
| 22 | Օր 1. Դաս 95. Ալմա 38<br>Օր 2. Դաս 96. Ալմա 39<br>Օր 3. Դաս 97. Ալմա 40<br>Օր 4. Դաս 98. Ալմա 41<br>Օր 5. Դաս 99. Ալմա 42 | Ալմա 38-42 |
| 23 | Օր 1. Հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրերի համար)<br>Օր 2. Դաս 100. Ալմա 43-44<br>Օր 3. Դաս 101. Ալմա 45-48<br>Օր 4. Դաս 102. Ալմա 49-51<br>Օր 5. Դաս 103. Ալմա 52-55 | Ալմա 43-55 |
| 24 | Օր 1. Դաս 104. Ալմա 56-58<br>Օր 2. Դաս 105. Ալմա 59-63<br>Օր 3. Հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրերի համար)<br>Օր 4. Դաս 106. Հելաման 1-2<br>Օր 5. Դաս 107. Հելաման 3-4 | Ալմա 56-Հելաման 4 |
| 25 | Օր 1. Դաս 108. Հելաման 5<br>Օր 2. Դաս 109. Հելաման 6-7<br>Օր 3. Դաս 110. Հելաման 8-9<br>Օր 4. Դաս 111. Հելաման 10<br>Օր 5. Դաս 112. Հելաման 11-12 | Հելաման 5-12 |
| 26 | Օր 1. Դաս 113. Հելաման 13<br>Օր 2. Դաս 114. Հելաման 14<br>Օր 3. Դաս 115. Հելաման 15-16<br>Օր 4. Հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրերի համար)<br>Օր 5. Դաս 116. 3 Նեփի 1 | Հելաման 13-3 Նեփի 1 |
| 27 | Օր 1. Դաս 117. 3 Նեփի 2-5<br>Օր 2. Դաս 118. 3 Նեփի 6-7<br>Օր 3. Դաս 119. 3 Նեփի 8-10<br>Օր 4. Դաս 120. 3 Նեփի 11.1-17<br>Օր 5. Դաս 121. 3 Նեփի 11.18-41 | 3Նեփի 2-11 |
| 28 | Օր 1. Դաս 122. 3 Նեփի 12<br>Օր 2. Դաս 123. 3 Նեփի 13<br>Օր 3. Դաս 124. 3 Նեփի 14<br>Օր 4. Դաս 125. 3 Նեփի 15-16<br>Օր 5. Դաս 126. 3 Նեփի 17 | 3 Նեփի 12-17 |
| 29 | Օր 1. Դաս 127. 3 Նեփի 18<br>Օր 2. Հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրերի համար)<br>Օր 3. Դաս 128. 3 Նեփի 19<br>Օր 4. Դաս 129. 3 Նեփի 20<br>Օր 5. Դաս 130. 3 Նեփի 21-22 | 3 Նեփի 18-22 |
| 30 | Օր 1. Դաս 131. 3 Նեփի 23<br>Օր 2. Դաս 132. 3 Նեփի 24-26<br>Օր 3. Դաս 133. 3 Նեփի 27<br>Օր 4. Դաս 134. 3 Նեփի 28<br>Օր 5. Դաս 135. 3 Նեփի 29-30 | 3 Նեփի 23-30 |
| 31 | Օր 1. Հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրերի համար)<br>Օր 2. Դաս 136. 4 Նեփի<br>Օր 3. Դաս 137. Մորմոն 1-2<br>Օր 4. Դաս 138. Մորմոն 3-4<br>Օր 5. Դաս 139. Մորմոն 5-6 | 4 Նեփի-Մորմոն 6 |
| 32 | Օր 1. Դաս 140. Մորմոն 7-8.11<br>Օր 2. Դաս 141. Մորմոն 8.12-41<br>Օր 3. Դաս 142. Մորմոն 9<br>Օր 4. Հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրերի համար)<br>Օր 5. Դաս 143. Եթեր 1 | Մորմոն 7-Եթեր 1 |
| 33 | Օր 1. Դաս 144. Եթեր 2<br>Օր 2. Դաս 145. Եթեր 3<br>Օր 3. Դաս 146. Եթեր 4-5<br>Օր 4. Դաս 147. Եթեր 6<br>Օր 5. Դաս 148. Եթեր 7-11 | Եթեր 2-11 |
| 34 | Օր 1. Հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրերի համար)<br>Օր 2. Դաս 149. Եթեր 12.1-22<br>Օր 3. Դաս 150. Եթեր 12.23-41<br>Օր 4. Դաս 151. Եթեր 13-15<br>Օր 5. Դաս 152. Մորոնի 1-3 | Եթեր 12-Մորոնի 3 |
| 35 | Օր 1. Դաս 153.Մորոնի 4-5<br>Օր 2. Դաս 154. Մորոնի 6<br>Օր 3. Հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրերի համար)<br>Օր 4. Դաս 155. Մորոնի 7.1-19<br>Օր 5. Դաս 156. Մորոնի 7.20-48 | Մորոնի 4-7 |
| 36 | Օր 1. Դաս 157. Մորոնի 8<br>Օր 2. Դաս 158. Մորոնի 9<br>Օր 3. Դաս 159. Մորոնի 10.1-7, 27-29<br>Օր 4. Դաս 160. Մորոնի 10.8-26, 30-34<br>Օր 5. Հարմարվող օր (տես առաջարկներ հարմարվող օրերի համար) | Մորոնի 8-10 |

# Առաջարկներ հարմարվող օրերի համար

Ամենօրյա ուսուցիչների տեմպի ուղեցույցը հիմնված է ուսումնական տարվա 36 շաբաթների կամ 180 օրերի վրա: Այս ձեռնարկում կան 160 ամենօրյա դասեր, բաց թողնելով 20 օր, որոնց համար ուսուցանման նյութ տրված չէ: Այս 20 «հարմարվող օրերը» պետք է խելացիորեն օգտագործվեն արժանի նպատակների և վարժությունների համար՝ ներառյալ հետևյալը.

1. **Հարմարեցնեն ամենօրյա դասերը:** Դուք կարող եք լրացուցիչ ժամանակ տրամադրել այն դասին, որի արդյունավետ ուսուցումն ավելի երկար ժամանակ է պահանջում: Դուք կարող եք նաև օգտագործել ուսուցանման լրացուցիչ գաղափարները, որոնք տրված են որոշ դասերի վերջում, կամ ժամանակ տրամադրեք որոշակի սուրբ գրության հատվածի կամ ավետարանի թեմայի շուրջ ուսանողների հարցերին պատասխանելու համար: Հարմարվող օրերը ձեզ թույլ են տալիս օգտվել այդ հնարավորություններից, մինչդեռ հետևում եք ձեր տեմպի ժամանակացույցին և կատարում եք սուրբ գրությունները հաջորդականությամբ ուսուցանելու ձեր պարտականությունը:
2. **Սերտեն սուրբ գրությունների կարևոր հատվածները և հիմնական վարդապետությունները:** Դուք կարող եք օգտագործել կրկնողության վարժություններ սերտման սուրբ գրությունների հատվածների համար, որոնք գտնվում են ողջ ձեռնարկով մեկ և հավելվածում: Դուք կարող եք ստեղծել լրացուցիչ սերտման սուրբ գրությունների կրկնողության վարժություններ, որոնք կհամապատասխանեն ձեր դասարանի ուսանողների յուրահատուկ կարիքներին և հետաքրքրություններին: Դուք կարող եք նաև օգտագործել հարմարվող օրվա կեսը այնպիսի վարժությունների համար, որոնք օգնում են ուսանողներին կրկնել Հիմնական Վարդապետությունները և ավելի խորությամբ դրանք հասկանալ: Տարեսկզբին դուք կարող եք օգտագործել հարմարվող օրը, կատարելով Հիմնական Վարդապետությունների Գնահատում (ՀՎԳ), որը նախատեսված է ուսուցիչներին օգնելու համար, որ գնահատեն, թե որքանով են ուսանողները հասկանում, հավատում, գիտեն, թե ինչպես կիրառել և կարողանում են բացատրել Եկեղեցու որոշ հիմնական վարդապետությունները: Որպեսզի գտնեք Հիմնական Վարդապետությունների Գնահատումը և այլ գնահատումներ ՍԱԻ վեբ կայքում (si.lds.org), փնտրեք՝ օգտագործելով *գնահատում* կարևոր բառը: ՀՎԳ-ի հաշվետվություններն օգնում են ուսուցիչներին, ովքեր օգտագործել են գնահատումը, որպեսզի վերլուծեն իրենց ուսանողների կարիքները և ավելի լավ կարողանան հարմարեցնել ուսուցումն այդ կարիքներին:
3. **Կրկնեն նախորդ նյութը:** Ուսանողների համար օգտակար է պարբերաբար ետ նայել այն ամենին, ինչ նրանք սովորել են նախորդ դասերի ժամանակ կամ սուրբ գրության որոշակի գրքից: Դուք կարող եք ուսանողներին հնարավորություն տալ բացատրել մի ճշմարտություն նախորդ դասից և կիսվել, թե ինչպես է այդ ճշմարտությունն ազդել իրենց կյանքի վրա: Դուք կարող եք նաև ստեղծել և վարել վիկտորինա կամ ուսուցողական վարժություններ, որոնք կրկնում են նախորդ նյութը:
4. **Թույլ տան ժամանակացույցի ընդհատումներ:** Դպրոցական միջոցառումները կամ ժողովները, հասարակական իրադարձությունները, եղանակը և այլ խոչընդոտներ կարող են պահանջել, որ դուք պարբերաբար հետաձգեք կամ կրճատեք դասը: Հարմարվող օրերը կարող են օգտագործվել նման ընդհատումներ թույլ տալու համար:

# Ուղեցույց տնային ուսումնասիրության ուսուցիչների համար

Այս ձեռնարկը պարունակում է 32 տնային ուսումնասիրության դաս, որոնք համապատասխանում են *Մորմոնի Գրքի ուղեցույց տնային ուսումնասիրության ուսանողների համար* գրքի 32 մասերին: Դուք կարող եք հարմարեցնել դասերը և տեմպն ըստ շաբաթների քանակի, որի ընթացքում դուք պետք է ուսուցանեք ձեր դասընթացը:

| Մաս | Տնային ուսումնասիրության դաս |
|---|---|
| Մաս 1 | Օր 1. Սուրբ գրությունների ուսումնասիրություն<br>Օր 2. Փրկության ծրագիրը<br>Օր 3. Տիտղոսաթերթ, Նախաբան և Վկաների Վկայությունները<br>Օր 4. Ակնարկ Մորմոնի Գրքի մասին<br>*Ուսուցչի դաս. Սուրբ գրությունների ուսումնասիրություն-Ակնարկ Մորմոնի Գրքի մասին* |
| Մաս 2 | Օր 1. 1 Նեփի 1<br>Օր 2. 1 Նեփի 2<br>Օր 3. 1 Նեփի 3-4<br>Օր 4. 1 Նեփի 5-6,9<br>*Ուսուցչի դաս. 1 Նեփի 1-6, 9* |
| Մաս 3 | Օր 1. 1 Նեփի 7<br>Օր 2. 1 Նեփի 8<br>Օր 3. 1 Նեփի 10-11<br>Օր 4. 1 Նեփի 12-14<br>*Ուսուցչի դաս. 1 Նեփի 7-8, 10-14* |
| Մաս 4 | Օր 1. 1 Նեփի 15<br>Օր 2. 1 Նեփի 16<br>Օր 3. 1 Նեփի 17<br>Օր 4. 1 Նեփի 18-19<br>*Ուսուցչի դաս. 1 Նեփի 15-19* |
| Մաս 5 | Օր 1. 1 Նեփի 20-22<br>Օր 2. 2 Նեփի 1<br>Օր 3. 2 Նեփի 2<br>Օր 4. 2 Նեփի 3<br>*Ուսուցչի դաս. 1 Նեփի 20-2 Նեփի 3* |
| Մաս 6 | Օր 1. 2 Նեփի 4-5<br>Օր 2. 2 Նեփի 6-8<br>Օր 3. 2 Նեփի 9<br>Օր 4. 2 Նեփի 9-10<br>*Ուսուցչի դաս. 2 Նեփի 4-10* |
| Մաս 7 | Օր 1. 2 Նեփի 11-16<br>Օր 2. 2 Նեփի 17-20<br>Օր 3. 2 Նեփի 21-24<br>Օր 4. 2 Նեփի 25<br>*Ուսուցչի դաս. 2 Նեփի 11-25* |
| Մաս 8 | Օր 1. 2 Նեփի 26-27<br>Օր 2. 2 Նեփի 28<br>Օր 3. 2 Նեփի 29-30<br>Օր 4. 2 Նեփի 31<br>*Ուսուցչի Դաս. 2 Նեփի 26-31* |
| Մաս 9 | Օր 1. 2 Նեփի 32<br>Օր 2. 2 Նեփի 33<br>Օր 3. Հակոբ 1-2<br>Օր 4. Հակոբ 3-4<br>*Ուսուցչի դաս. 2 Նեփի 32-Հակոբ 4* |
| Մաս 10 | Օր 1. Հակոբ 5-6<br>Օր 2. Հակոբ 7<br>Օր 3. Ենոս<br>Օր 4. Հարոմ և Օմնի<br>*Ուսուցչի Դաս. Հակոբ 5-Օմնի* |

| Մաս | Տնային ուսումնասիրության դաս |
|---|---|
| Մաս 11 | Օր 1. Մորմոնի Խոսքերը-Մոսիա 2<br>Օր 2. Մոսիա 3<br>Օր 3. Մոսիա 4<br>Օր 4. Մոսիա 5-6<br>*Ուսուցչի դաս. Մորմոնի Խոսքերը-Մոսիա 6* |
| Մաս 12 | Օր 1. Մոսիա 7-8<br>Օր 2. Մոսիա 9-10<br>Օր 3. Մոսիա 11-14<br>Օր 4. Մոսիա 15-17<br>*Ուսուցչի դաս. Մոսիա 7-17* |
| Մաս 13 | Օր 1. Մոսիա 18<br>Օր 2. Մոսիա 19-20<br>Օր 3. Մոսիա 21-24<br>Օր 4. Մոսիա 25<br>*Ուսուցչի դաս. Մոսիա 18-25* |
| Մաս 14 | Օր 1. Մոսիա 26<br>Օր 2. Մոսիա 27<br>Օր 3. Մոսիա 28-29<br>Օր 4. Ալմա 1-4<br>*Ուսուցչի դաս. Մոսիա 26-Ալմա 4* |
| Մաս 15 | Օր 1. Ալմա 5.1-36<br>Օր 2. Ալմա 5.37-62<br>Օր 3. Ալմա 6-7<br>Օր 4. Ալմա 8-10<br>*Ուսուցչի դաս. Ալմա 5-10* |
| Մաս 16 | Օր 1. Ալմա 11<br>Օր 2. Ալմա 12<br>Օր 3. Ալմա 13<br>Օր 4. Ալմա 14-16<br>*Ուսուցչի դաս. Ալմա 11-16* |
| Մաս 17 | Օր 1. Ալմա 17-18<br>Օր 2. Ալմա 19-20<br>Օր 3. Ալմա 21-22<br>Օր 4. Ալմա 23-24<br>*Ուսուցչի դաս. Ալմա 17-24* |
| Մաս 18 | Օր 1. Ալմա 25-29<br>Օր 2. Ալմա 30<br>Օր 3. Ալմա 31<br>Օր 4. Ալմա 32<br>*Ուսուցչի դաս. Ալմա 25-32* |
| Մաս 19 | Օր 1. Ալմա 33-35<br>Օր 2. Ալմա 36<br>Օր 3. Ալմա 37<br>Օր 4. Ալմա 38<br>*Ուսուցչի դաս Ալմա 33-38* |
| Մաս 20 | Օր 1. Ալմա 39<br>Օր 2. Ալմա 40-41<br>Օր 3. Ալմա 42<br>Օր 4. Ալմա 43-44<br>*Ուսուցչի դաս. Ալմա 39-44* |
| Մաս 21 | Օր 1. Ալմա 45-49<br>Օր 2. Ալմա 50-52. 54-55<br>Օր 3. Ալմա 53, 56-58<br>Օր 4. Ալմա 59-63<br>*Ուսուցչի դաս. Ալմա 45-63* |

| Մաս | Տնային ուսումնասիրության դաս |
|---|---|
| Մաս 22 | Օր 1. Հելաման 1-2<br>Օր 2. Հելաման 3-4<br>Օր 3. Հելաման 5<br>Օր 4. Հելաման 6-9<br>*Ուսուցչի դաս. Հելաման 1-9* |
| Մաս 23 | Օր 1. Հելաման 10<br>Օր 2. Հելաման 11-12<br>Օր 3. Հելաման 13-14<br>Օր 4. Հելաման 15-16<br>*Ուսուցչի դաս. Հելաման 10-16* |
| Մաս 24 | Օր 1. 1 Նեփի 1<br>Օր 2. 1 Նեփի 2<br>Օր 3 .1 Նեփի 10-11<br>Օր 4. 3 Նեփի 11.1-17<br>*Ուսուցչի դաս. 3 Նեփի 1 11.17* |
| Մաս 25 | Օր 1. 3 Նեփի 11.18-12.48<br>Օր 2. 3 Նեփի 13<br>Օր 3. 3 Նեփի 14<br>Օր 4. 3 Նեփի 15-16<br>*Ուսուցչի դաս. 3 Նեփի 11.18-16.20* |
| Մաս 26 | Օր 1. 1 Նեփի 17<br>Օր 2. 3 Նեփի 18<br>Օր 3. 3 Նեփի 19<br>Օր 4. 3 Նեփի 20-22<br>*Ուսուցչի դաս. 3 Նեփի 17-22* |
| Մաս 27 | Օր 1. 3 Նեփի 23<br>Օր 2. 2 Նեփի 24-26<br>Օր 3. 3 Նեփի 27<br>Օր 4. 3 Նեփի 28-30<br>*Ուսուցչի դաս. 3 Նեփի 23-30* |
| Մաս 28 | Օր 1. 4 Նեփի 1<br>Օր 2. Մորմոն 1-2<br>Օր 3. Մորմոն 3-6<br>Օր 4. Մորմոն 7.1-8.11<br>*Ուսուցչի դաս. 4 Նեփի 1-Մորմոն 8.11* |
| Մաս 29 | Օր 1. Մորմոն 8.12-41<br>Օր 2. Մորմոն 9<br>Օր 3. Եթեր 1-2<br>Օր 4. Եթեր 3<br>*Ուսուցչի դաս. Մորմոն 8.12-Եթեր 3* |
| Մաս 30 | Օր 1. Եթեր 4-5<br>Օր 2. Եթեր 6<br>Օր 3. Եթեր 7-11<br>Օր 4. Եթեր 12<br>*Ուսուցչի դաս. Եթեր 4-12* |
| Մաս 31 | Օր 1. Եթեր 13-15<br>Օր 2. Մորոնի 1-5<br>Օր 3. Մորոնի 6<br>Օր 4. Մորոնի 7.1-19<br>*Ուսուցչի դաս. Եթեր 13-Մորոնի 7.19* |
| Մաս 32 | Օր 1. Մորոնի 7.20-48<br>Օր 2. Մորոնի 8-9<br>Օր 3. Մորոնի 10.1-7, 27-29<br>Օր 4. Մորոնի 10.8-26, 30-34<br>*Ուսուցչի դաս. Մորոնի 7.20-10.34* |

# Սերտման սուրբ գրությունների նախաբանը

Սեմինարիաները և Կրոնի Ինստիտուտները ընտրել են 25 սերտման սուրբ գրության հատվածներ սեմինարիայի չորս դասընթացներից յուրաքանչյուրի համար: Այս հատվածներն ապահովում են կարևոր սուրբգրքյան հիմք ավետարանը հասկանալու և դրանով կիսվելու համար և հավատքն ամրացնելու համար: Սերտման սուրբ գրության հատվածները Մորմոնի Գրքից հետևյալն են.

1 Նեփի 3.7
2 Նեփի 2.25
2 Նեփի 2.27
2 Նեփի 9.28-29
2 Նեփի 25.23, 26:
2 Նեփի 28.7-9
2 Նեփի 31.19-20
2 Նեփի 32.3
2 Նեփի 32.8-9
Մոսիա 2.17
Մոսիա 3.19
Մոսիա 4.30
Ալմա 7.11-13
Ալմա 32.21
Ալմա 37.35
Ալմա 39.9
Ալմա 41.10
Հելաման 5.12
3 Նեփի 12.48
3 Նեփի 18.15, 20-21
Եթեր 12.6
Եթեր 12.27
Մորոնի 7.41
Մորոնի 7.45, 47-48
Մորոնի 10.4-5

Սեմինարիայի ուսանողներին խրախուսվում է «սերտել» այս հատվածները: Դուք լավագույնս կարող եք օգնել ձեր ուսանողներին, եթե դուք նույնպես սերտեք այս հատվածները: Սուրբ գրությունների սերտումը ընդգրկում է հետևյալը.

- **Գտնել** հատվածները՝ իմանալով դրանց հետ կապված սուրբ գրությունների հղումները:
- **Հասկանալ** սուրբ գրությունների հատվածների ենթատեքստը և բովանդակությունը:
- **Կիրառել** սուրբ գրությունների հատվածներում ուսուցանվող ավետարանի սկզբունքները և վարդապետությունները:
- **Մտապահել** հատվածները:

## Հետևողականություն, ակնկալիքներ և մեթոդներ

Երբ դուք ծրագրում եք օգնել ուսանողներին սերտել սուրբ գրության հատվածներ, դուք ավելի մեծ հաջողություններ կունենաք, եթե դուք հետևողականորեն անդրադառնաք սերտման սուրբ գրություններին, պատշաճ ակնկալիքներ ունենաք և օգտագործեք մեթոդներ, որոնք հարմար են սովորելու տարբեր ձևերին:

Սերտման սուրբ գրություններ ուսուցանելիս հետևողականությունը և կրկնողությունը կօգնեն ուսանողներին ամրապնդել ճշմարտություններն իրենց հիշողության մեջ հետագայում օգտագործելու համար: Օգտակար կարող է լինել տարվա համար ուսուցման դասընթացը ծրագրելը և պլան կազմելը, որ հետևողականորեն ուսանողներին դասարանում հնարավորություն տաք սերտել սուրբ գրության հատվածներ: Իմաստուն կերպով որոշեք, թե որքան հաճախ և որքան ժամանակ պետք է ծախսեք ուսանողներին օգնելու համար, որ սովորեն սերտման սուրբ գրության հատվածները: Համոզվեք, որ սերտման սուրբ գրությունների վարժությունները ստվերում չեն թողնում սուրբ գրությունների ամենօրյա հերթական ուսումնասիրությունը: Դուք կարող եք որոշել ամեն օր մի քանի րոպե տրամադրել ձեր ուսանողների հետ սերտման սուրբ գրությունները կրկնելուն: Կամ դուք կարող եք որոշել կատարել սերտման կարճ վարժություն ամեն շաբաթ մեկ կամ երկու անգամ 10-15 րոպեով: Անկախ այն բանից, թե ինչպես եք դուք ծրագրում օգնել ուսանողներին սովորել սերտման սուրբ գրությունների հատվածները, եղեք հետևողական և գործադրեք համապատասխան ջանքեր:

Սուրբ գրությունների սերտման ձեր ակնկալիքները հիմնեք յուրաքանչյուր ուսանողի ունակությունների վրա: Սուրբ գրությունները սերտելը պահանջում է ուսանողի ջանքերը: Հաղորդեք ուսանողներին, որ սուրբ գրությունները սերտելիս նրանց հաջողությունները մեծապես կախված են նրանց վերաբերմունքից և աշխատելու ցանկությունից: Խրախուսեք նրանց այնպիսի նպատակներ ունենալ, որոնք նրանց ունակությունները կբարձրացնեն ավելի բարձր մակարդակի: Նրբազգաց եղեք այն ուսանողների հանդեպ, ովքեր դժվարանում են անգիր սովորելիս, և պատրաստ եղեք հարմարեցնել ձեր ակնկալիքները և ուսուցանման մեթոդները ըստ ձեր ուսանողների կարիքների:

Որպեսզի ավելի շատ անհատական մոտեցում ցուցաբերեք և օգտագործեք զանազան ուսուցանման ձևեր, փոփոխեք մեթոդները, որոնք դուք օգտագործում եք, որ օգնեք ուսանողներին սերտել սուրբ գրության հատվածները: Ինչպես ավետարանի ուսուցանման և ուսումնասիրության ժամանակ, իմաստուն եղեք վարժություններն ընտրելիս, որպեսզի Սուրբ Հոգին կարողանա աջակցել ուսանողներին սերտել սուրբ գրությունները և վարդապետությունները: Այս ձեռնարկի դասերում դուք կգտնեք սուրբ գրությունները սերտել ուսուցանելու բազմաթիվ համապատասխան մեթոդներ: Սուրբ գրությունները սերտել ուսուցանելու լրացուցիչ մեթոդների համար տես ստորև թվարկված սուրբ գրությունների սերտման վարժությունները:

## Սերտման սուրբ գրություններ ուսումնական ծրագրում

Սերտման սուրբ գրությունները գրված են ուսումնական ծրագրում բազմաթիվ ձևերով: Սերտման սուրբ գրությունը 📖 ներկայացնում է սերտման սուրբ գրությունների հատվածների դերը դասանյութում: Սերտման սուրբ գրությունները ներկայացվում և քննարկվում են այն գլխի ենթատեքստում, որտեղ դրանք գտնվում են: Ուսուցանման լրացուցիչ գաղափարներ սերտման սուրբ գրության հատվածների համար տրված են այն դասերի վերջում, որտեղ դրանք կան: Այս ուսուցանման լրացուցիչ գաղափարներն օգնում են համադրել սուրբ գրությունները սերտելու չորս տարրերը (գտնել, հասկանալ, կիրառել, անգիր սովորել) յուրաքանչյուր հատվածի համար: Օրինակ, եթե դասն օգնում է ուսանողներին հասկանալ և

կիրառել սերտման սուրբ գրությունների հատվածները, ապա ուսուցանման լրացուցիչ գաղափարը կօգնի նրանց գտնել կամ անգիր սովորել հատվածը:

Ուսումնական ծրագիրը նաև հաճախակի է տալիս սերտման սուրբ գրությունները կրկնելու վարժություններ, որոնք կարող են օգտագործվել, եթե ժամանակը թույլ տա և ձեր դասարանի սուրբ գրությունները սերտելու նպատակների հետ ներդաշնակ: Ի լրացում այս կրկնողությունների՝ կարող են օգտագործվել ստորև թվարկված սուրբ գրությունների սերտման վարժությունները: Դուք կարող եք լրացուցիչ ժամանակ օգտագործել ավելի կարճ դասի սկզբում կամ վերջում, որպեսզի կատարեք այս կրկնողության վարժություններից մեկը:

## Սուրբ գրությունները սերտելու առաջարկներ

Որպեսզի օգնեք ուսանողներին զարգացնել **գտնելու** հմտություններ, դուք կարող եք ծրագրել ներկայացնել 25 սերտման հատվածները դասընթացի սկզբնական շրջանում և հետո աշխատեք սերտման վրա դասընթացի ողջ ընթացքում: Կամ դուք կարող եք ներկայացնել մի քանի հատվածներ ամեն ամիս և կենտրոնանալ այդ հատվածները սերտելու վրա այդ ամսվա ընթացքում: Նման ձևերով ներկայացնելը կարող է ներառել առաջարկելը, որ ուսանողները նշեն սերտման սուրբ գրությունների հատվածները իրենց անձնական սուրբ գրությունների օրինակներում, օգնելով ուսանողներին մտածել, թե ինչպես կարող են հիշել կարևոր բառերը և հղումները, և բացատրելով վարդապետությունները և սկզբունքները, որոնք պարունակվում են յուրաքանչյուր հատվածում: Դուք կարող եք նաև ուսանողներին ներգրավվել սերտման սուրբ գրությունները ներկայացնելում, հանձնարարելով նրանց օգտագործել հատվածները իրենց հավաքներում կամ հրավիրելով նրանց սովորեցնել իրար, թե ինչպես հիշել և գտնել հատվածները: Սերտման սուրբ գրությունները հիշելու համար պատասխանատվություն զարգացնելու համար հաճախակի վիկտորինաներ անցկացրեք և գտնելու վարժություններ կատարեք (օրինակների համար տես ստորև տրված սուրբ գրությունները սերտելու վարժությունները): Այս դասընթացի 25 սերտման հատվածների ցանկը կարող եք գտնել ուսանողների էջանիշերի և սերտման սուրբ գրությունների քարտերի վրա:

Որպեսզի աջակցեք ուսանողներին **հասկանալ** սերտման սուրբ գրությունների հատվածները, շեշտեք այս հատվածները, երբ հանդիպեք դրանց ձեր ամենօրյա դասերում: Դուք կարող եք նաև օգտագործել ստորև տրված սուրբ գրությունները սերտելու վարժությունները, որպեսզի մեծացնեք հատվածներում պարունակվող ճշմրտությունների վերաբերյալ ուսանողների գիտելիքը և դրանք բացատրելու ունակությունը: Հավաքների կամ դասի ժամանակ ուսանողներին հնարավորություն տվեք բացատրել, թե ինչպես են սերտման սուրբ գրությունների ճշմարտություններն օգնում իրենց ավելի լավ հասկանալ Հիմնական վարդապետությունները:

Որպեսզի օգնեք ուսանողներին **կիրառել** սերտման սուրբ գրություններում գտնվող ճշմարտությունները, խրախուսեք նրանց հետևել Սուրբ Հոգու հուշումներին, որպեսզի հասկանան, թե ինչպես են հատվածների ճշմարտությունները կիրառվում իրենց կյանքում: Որպեսզի օգնեք ուսանողներին գործել համաձայն իրենց սովորած ճշմարտությունների, դուք կարող եք ժամանակ առ ժամանակ դասարանի նորությունների տախտակին ամրացնել մի կոչ, որը կապված է սերտման սուրբ գրության հետ: Կամ դուք կարող եք ուսանողներին հնարավորություն տալ դասարանում վարժվել ավետարանի վարդապետությունները և սկզբունքներն ուսուցանելում՝ օգտագործելով սերտման սուրբ գրությունները (տես ստորև տրված սերտման սուրբ գրությունների վարժությունների գաղափարները): Դուք կարող եք նաև հրավիրել ուսանողներին կիրառել սկզբունքները, որոնք սովորել են դասերի ընթացքում, որտեղ հայտնվում են սերտման սուրբ գրության հատվածները: Հավաքների ժամանակ կամ այլ առիթներով ուսանողներին հնարավորություն տվեք զեկուցել իրենց փորձառությունների մասին: Սա կօգնի նրանց մեծացնել ճշմարտությունների վերաբերյալ իրենց վկայությունը, որը սովորել են սերտման սուրբ գրությունների հատվածներից:

Որպեսզի օգնեք ուսանողներին **անգիր սովորել** 25 սերտման սուրբ գրությունների հատվածները, դուք կարող եք ծրագրել դասարանում անգիր սովորել երկու կամ երեք հատվածներ ամեն ամիս: Դուք կարող եք նաև հանձնարարել ուսանողներին տանը անգիր սովորել որոշակի հատվածներ (նրանք կարող են դա անել իրենց ընտանիքների հետ կամ անգիր ասել հատվածները ծնողին կամ ընտանիքի անդամին): Դուք կարող եք անգիր սովորելը դարձնել ամենօրյա հավաքների մի մասը, խնդրելով դասարանին անգիր ասել մի հատված կամ ուսանողներին ժամանակ տալով, որ անգիր սովորեն զույգերով: Ուսանողներին հնարավորություններ տալը, որ անգիր սովորեն սերտման սուրբ գրությունների հատվածները զույգերով կամ փոքր խմբերով կամ դասարանի առջև, կարող է օգնել նրանց պատասխանատու լինել իրենց ջանքերի համար: Ստորև տրված սուրբ գրությունները սերտելու վարժությունները ներառում են անգիր սովորելու զանազան մեթոդներ: Հոգացեք, որ հարմարեցնեք անգիր սովորելու ակնկալիքները յուրաքանչյուր ուսանողի ունակությունների և պայմանների հետ: Ուսանողները չպետք է անհարմար դրության մեջ հայտնվեն կամ ճնշված զգան, եթե չեն կարողանում անգիր սովորել:

# Սուրբ գրությունները սերտելու վարժություններ

## Նախաբան

Այս բաժինը տալիս է որոշ գաղափարներ, որոնք դուք կարող եք օգտագործել ուսանողներին աջակցելու համար, որպեսզի սերտեն սուրբ գրությունների կարևոր հատվածները: Երբ դուք աջակցում և խրախուսում եք ուսանողներին զարգացնել այս հմտությունները, դուք օգնում եք նրանց դառնալ ինքնուրույն, վստահել սեփական ուժերին սուրբ գրությունների իրենց ուսումնասիրության ժամանակ: Ուսանողները կարող են օգտագործել սերտման այս հմտություններն իրենց ողջ կյանքի ընթացքում, որպեսզի

ավելի լավ գտնեն, հասկանան, կիրառեն և անգիր սովորեն սուրբ գրությունների հատվածները: Ստորև տրված են սուրբ գրությունները սերտելու յուրաքանչյուր մասի վերաբերյալ ուսուցանմա գաղափարները: Այսպիսի վարժությունների բազմազանությունն օգտագործելը կարող է օգնել ուսանողներին ավելի հաջողությամբ սերտել սուրբ գրության հատվածները:

## Վարժություններ, որոնք օգնում են ուսանողներին *գտնել* սերտման սուրբ գրությունների հատվածները

### *Հատվածները նշելը*

Սերտման սուրբ գրությունների հատվածները նշելը կարող է օգնել ուսանողներին հիշել այս հատվածները և ավելի հեշտությամբ գտնել դրանք: Խորհեք ուսանողներին խրախուսելու մասին, որ նշեն այս կարևոր հատվածներն իրենց սուրբ գրություններում այնպես, որ առանձնացնեն դրանք մյուս հատվածներից, որոնք նշել են:

### *Գրքերն իմանալը*

Մորմոնի Գրքի գրքերի անունները և հերթականությունը անգիր սովորելը կարող է օգնել ուսանողներին ավելի արագ գտնել սերտման սուրբ գրությունների հատվածները: Ստորև տրված են վարժությունների օրինակներ, որոնք կարող են օգնել ուսանողներին ծանոթանալ Մորմոնի Գրքի գրքերի հետ.

- **Գտեք բովանդակության ցանկը**. Օգնեք ուսանողներին գտնել բովանդակության ցանկը Մորմոնի Գրքում, որը կոչվում է «Գրքերի անունները և հերթականությունը Մորմոնի Գրքում»:
- **Երգ երգեք**. Ուսանողներին սովորեցրեք «Մորմոնի Գրքի գրքերը» երգը (*Children's Songbook,* 119): Տարվա ընթացքում թող նրանք հաճախակի երգեն այն, որ դա օգնի նրանց հիշել գրքերի անունները և հերթականությունը Մորմոնի Գրքում:
- **Օգտագործեք առաջին տառերը**. Գրատախտակին գրեք Մորմոնի Գրքի գրքերի առաջին տառերը (1Ն, 2Ն, Հ, Ե և այլն): Ուսանողները թող վարժվեն, ասելով գրքերի անունները, որոնք համապատասխանում են յուրաքանչյուր տառին: Կրկնեք այս վարժությունն այնքան ժամանակ, մինչև նրանք կարողանան անգիր ասել գրքերի անունները:
- **Արագ բացել գիրքը**. Ասեք գրքերից մեկի անունը, որում գտնվում է սերտման սուրբ գրություն, և թող ուսանողները բացեն իրենց սուրբ գրություններում այդ գրքի ցանկացած էջ: Հետևեք, թե որքան ժամանակ է պահանջվում, որ ամբողջ դասարանը գտնի գրքերից յուրաքանչյուրը: Այս վարժությունը կարելի է կրկնել, որ ուսանողներին թույլ տրվի ավելի հմտանալ Մորմոնի Գրքի գրքերը հիշելում և գտնելում:

### *Հղումները և բովանդակությունը հիշելը*

Երբ ուսանողները սովորեն սերտման սուրբ գրությունների հատվածների տեղը և բովանդակությունը, Սուրբ Հոգին կարող է օգնել նրանց անհրաժեշտության դեպքում հիշել սուրբ գրությունների հղումները (տես Հովհաննես ԺԴ.26): Կարևոր բառերը կամ արտահայտությունները, ինչպիսին են «Ես կգնամ ու կանեմ» (1 Նեփի 3.7) և «ազատ են ընտրելու» (2 Նեփի 2.27), կարող են օգնել ուսանողներին հիշել յուրաքանչյուր հատվածի բովանդակությունը և վարդապետական ուսմունքները: Հետևյալ մեթոդները կարող են օգնել ուսանողներին զուգորդել սերտման սուրբ գրությունների հղումները դրանց բովանդակության կամ գլխավոր դառերի հետ: (Դուք կարող եք պահել այն վարժությունները, որոնք ներգրավում են պայքար, մրցակցություն կամ ժամանակը չափելը, տարեվերջի համար, երբ ուսանողները ցուցադրեն, որ իրենք գիտեն, թե որտեղ են գտնվում սերտման սուրբ գրությունների հատվածները: Նման վարժությունները հետո կօգնեն ամրապնդել իրենց սովորածը:)

- **Հղումներ և գլխավոր բառեր**. Խրախուսեք ուսանողներին անգիր սովորել սերտման սուրբ գրությունների քարտերում նշված յուրաքանչյուր սերտման սուրբ գրության հատվածի հղումները և գլխավոր բառերը: (Սերտման սուրբ գրությունների քարտեր կարող եք պատվիրել առցանց store.lds.org կայքում: Դուք կարող եք նաև խնդրել ուսանողներին պատրաստել իրենց սեփական սերտման սուրբ գրությունների քարտերի օրինակները:) Ուսանողներին ժամանակ տվեք զուգընկերոջ հետ միասին ուսումնասիրել քարտերը և հետո հարցեր տալ իրար: Խրախուսեք ուսանողներին ստեղծագործող լինել այն հարցերում, թե ինչպես են միասին սովորում և հարցեր տալիս իրար: Երբ նրանք ավելի հմտանան սերտման սուրբ գրություններում, դուք կարող եք հրավիրել նրանց օգտագործել գաղափարներ, որոնք ներգրավում են հատվածների ենթատեքստը կամ վարդապետությունների և սկզբունքների կիրառումը: Հարցադրման ենթարկվող անձը կարող է պատասխանել բանավոր կամ գրավոր ձևով:
- **Սերտման սուրբ գրությունների քարտեր**. Այս վարժությունը կարող է օգտագործվել, որ ներկայացվեն կամ կրկնեն մի քանի սերտման սուրբ գրությունների հատվածներ: Ընտրեք մի շարք սերտման սուրբ գրությունների քարտեր, և նախապատրաստվեք բաժանել դրանք ձեր ուսանողներին: (Համոզվեք, որ յուրաքանչյուր քարտից ունեք մի քանի օրինակներ, որպեսզի մեկից ավելի ուսանողներ ստանան նույն սերտման սուրբ գրության հատվածը: Դուք կարող եք ունենալ բավականաչափ քարտեր, որ յուրաքանչյուր ուսանող ունենա երկու կամ երեք տարբեր հատվածներ:) Բաժանեք դրանք դասարանին: Ուսանողներին ժամանակ տվեք յուրաքանչյուր քարտի սերտման սուրբ գրությունները, հղումները, գլխավոր բառերը, ենթատեքստը, վարդապետությունը կամ սկզբունքը և կիրառման գաղափարներն ուսումնասիրելու համար: Բարձրաձայն ասեք որոշ մտքեր քարտերից (օրինակ, բառեր սերտման սուրբ գրության հատվածից կամ գլխավոր բառերը, ենթատեքստը, վարդապետությունը կամ սկզբունքը կամ կիրառումը): Ուսանողները, ովքեր ունեն համապատասխան քարտը, պետք է ոտքի կանգնեն և բարձրաձայն ասեն սերտման սուրբ գրության հղումը:
- **Արագ գտնել սուրբ գրությունները**. Օգտագործեք նշաններ, որոնք կօգնեն ուսանողներին վարժվել արագ գտնել հատվածներն իրենց սուրբ գրություններում: Որպես նշան դեռք կարող եք օգտագործել գլխավոր բառերը, նախադասություններ ենթատեքստից, վարդապետություններ և սկզբունքներ և կիրառման գաղափարներ սերտման

սուրբ գրությունների քարտերից: Դուք կարող եք ինքներդ նշաններ առաջարկել: Սուրբ գրություններն արագ գտնելու վարժությունները, որոնցում ուսանողները մրցում են հատվածները գտնելում, կարող են օգնել նրանց ակտիվորեն ներգրավվել սերտման սուրբ գրությունների հատվածները սովորելում: Երբ օգտագործում եք սուրբ գրություններն արագ գտնելու վարժություններ, որ օգնեք սերտել սուրբ գրությունները, այնպես արեք, որ չվիրավորեք ոչ մեկ զգացմունքները կամ Սուրբ Հոգուն: Օգնեք ուսանողների խուսափել իրենց սուրբ գրություններին անհարգալից վերաբերվելուց կամ չափից դուրս մրցակցային լինելուց: Նաև խորհեք այնպես անել, որ ուսանողները մրցեն չափանիշի դեմ, այլ ոչ թե իրար դեմ: Օրինակ, ուսանողները կարող են մրցել ուսուցչի հետ, կամ դուք կարող եք այնպես անել, որ նրանք մրցեն տեսնելու համար, թե դասարանի որոշակի տոկոսը կարող է գտնել որոշակի հատված որոշված ժամանակահատվածում:

- **Արագ գտնել պատմության միջոցով**. Հուշեք, պատմելով հնարավոր դեպքեր, որոնք ներկայացնում են սերտման սուրբ գրության առնչությունը ամենօրյա կյանքի հետ: Օրինակ, որպես 1 Նեփի 3.7-ի հուշում դուք կարող եք ասել. «Հովհաննեսը գիտի, որ Տերը պատվիրում է բոլոր արժանի երիտասարդ տղամարդկանց միսիա ծառայել, սակայն նա անհանգստանում է, որ իր ամաչկոտությունը խոչընդոտ կհանդիսանա նրա արդյունավետ ծառայելու համար: Ապա նա հիշում է, թե ինչպես Նեփին արձագանքեց արույրե թիթեղները գնալ հետ բերելու դժվար հանձնարարությանը: Հովհաննեսը համարձակություն է ձեռք բերում, իմանալով, որ Տերը ճանապարհ կնախապատրաստեր իր համար, որ դառնար խելացի միսիոներ»: Երբ ուսանողները լսեն հնարավոր դեպքերը, թող նրանք իրենց սուրբ գրություններում գտնեն դրանց առնչվող սերտման սուրբ գրությունների հատվածները:
- **Հարցեր և փորձեր**. Ուսանողներին հնարավորություններ տվեք փորձելու, թե ինչպես են նրանք հիշում սերտման սուրբ գրությունների հատվածները: Հուշումները կարող են ներառել գլխավոր բառեր կամ սուրբ գրությունների հղումներ, հատվածներից մեջբերումներ կամ հնարավոր դեպքեր, որոնք ներկայացնում են հատվածներում ուսուցանված ճշմարտությունները: Հարցերը և փորձերը կարող են տրվել բանավոր, գրատախտակի վրա կամ թղթի վրա: Հարցերին պատասխանելուց կամ փորձերին մասնակցելուց հետո խորհեք բարձր միավորներ վաստակած ուսանողներից և ավելի ցածր միավորներ ունեցողներից կազմել զույգեր: Բարձր միավորներ վաստակած ուսանողը կարող է ուսուցչի դեր կատարել, որ օգնի ավելի ցածր միավորներ ունեցող ուսանողին սովորել և առաջադիմել: Որպես այս փորձերի մի մաս զույգը կարող է նաև նպատակ դնել հաջորդ փորձի ժամանակ միասին վաստակել ամենաբարձր միավորները: Խորհեք աղյուսակ կամ ազդատախտակ պատրաստելու մասին, որպեսզի ցուցադրեք ուսանողների նպատակները և նշեք նրանց առաջընթացը:

## Վարժություններ, որոնք օգնում են ուսանողներին *հասկանալ* սերտման սուրբ գրությունների հատվածները

### *Սահմանել բառերը և արտահայտությունները*

Սերտման սուրբ գրությունների հատվածների բառերը և արտահայտությունները սահմանելը (կամ ուսանողներին օգնելը, որ սահմանեն դրանք) կօգնի ուսանողներին հասկանալ ողջ հատվածի իմաստը: Երբ նման սահմանումները խիստ կարևոր են հատվածի վարդապետությունները և սկզբունքները հասկանալու համար, դուք կարող եք խրախուսել ուսանողներին գրել այս սահմանումներն իրենց սուրբ գրություններում: Կրկնեք բառերի և արտահայտությունների իմաստները, երբ դուք կրկնեք սերտման սուրբ գրությունների հատվածները:

### *Ներկայացնել ենթատեքստը*

Սուրբ գրության հատվածի ենթատեքստը ներկայացնելը կարող է օգնել ուսանողներին ավելի լավ հասկանալ հատվածի իմաստը: Ենթատեքստը ներառում է տեղեկություններ այն մասին, թե ով ում հետ է խոսում և ինչու, հատվածի միջավայրի մասին (պատմական, մշակութային և աշխարհագրական) և հարցը կամ իրավիճակը, որից առաջ է եկել սուրբ գրության հատվածի բովանդակությունը: Օրինակ, 1 Նեփի 3.7-ի ենթատեքստը ներառում է այն փաստը, որ Նեփիին խնդրել էր իր հայրը՝ Լեքին, ով մարգարե էր, վերադառնալ Երուսաղեմ և ձեռք բերել արույրե թիթեղները: Այս տեղեկությունն իմանալը կարող է օգնել ուսանողներին ավելի պարզ հասկանալ, թե ինչու է Նեփին ասում. «Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է»: Երբ դուք ուսուցանեք դասեր, որոնք ընդգրկում են սերտման սուրբ գրությունների հատվածներ, շեշտեք այդ հատվածների վերաբերյալ ենթատեքստը: Լրացուցիչ վարժությունները, ինչպիսին են ստորև տրվածները, նույնպես կարող են օգնել ուսանողներին հասկանալ այս կարևոր հատվածները:

- **Ներկայացնել ենթատեքստը**. Հետևյալ վերնագրերը գրեք գրատախտակի վերևի մասում. *Խոսողը, Լսարանը, Նպատակը, Այլ օգտակար մտքեր:* Ուսանողներին բաժանեք խմբերի , և յուրաքանչյուր խմբին հանձնարարեք սերտման սուրբ գրություն: Հրավիրեք նրանց բացահայտել իրենց հանձնարարված հատվածների ենթատեքստը, ներկայացնելով տեղեկություն, որը համապատասխանում է գրատախտակին գրված վերնագրերին: Թող նրանք իրենց գտածը գրեն գրատախտակին: Ապա խնդրեք յուրաքանչյուր խմբին բացատրել իրենց հանձնարարված հատվածների ենթատեքստը և ինչպես է այս տեղեկությունը ազդում յուրաքանչյուր հատվածի ճշմարտությունները հասկանալու վրա: Այս վարժությանը այլ կարևորություն տալու համար դուք կարող եք կոչ անել դասարանին գուշակել սերտման սուրբ գրուվյունների հղումները, հիմնվելով գրատախտակի նկարագրությունների վրա, նախքան յուրաքանչյուր խումբը կբացատրի, թե ինչ են իրենք գրել:

### *Վերլուծել*

Վերլուծելը ներառում է սուրբ գրությունների հատվածների վարդապետությունները և սկզբունքները ներկայացնելը: Այն նաև ներառում է ուսանողներին օգնելը, որ հասկանան, թե ինչպես են այս ճշմարտությունները վերաբերվում իրենց: Սա կարող է տանել իրենց կյանքում վարդապետությունները և սկզբունքները ավելի խորությամբ կիրառելուն: Հետևյալ

վարժությունները կարող են օգնել ուսանողներին վերլուծել սերտման սուրբ գրությունների հատվածները.

- **Գրել հուշումներ**. Երբ ուսանողները ավելի ծանոթ լինեն սերտման սուրբ գրություններին, հրավիրեք նրանց մտածել հարցեր, հնարավոր պատմություններ կամ այլ հուշումներ, որոնք լուսաբանում են հատվածներում ուսուցանված վարդապետությունները և սկզբունքները: Սա կարող է օգտագործվել դասարանում վիկտորինա անցկացնելու համար:

### *Բացատրել*

Երբ ուսանողները բացատրում են սուրբ գրությունների հատվածները, խորանում է նրանց հասկացողությունը և զարգանում է սուրբ գրություններից վարդապետություններ և սկզբունքներ ուսուցանելու նրանց ունակությունը: Ստորև տրված են երկու մեթոդներ, որոնք կարող են օգնել ուսանողներին սովորել բացատրել սերտման սուրբ գրությունների հատվածները.

- **Գլխավոր բառերը և արտահայտությունները**. Հրավիրեք ուսանողներին ինքնուրույն կարդալ սերտման սուրբ գրության հատված և ներկայացնել բառ կամ արտահայտություն, որն իրենց կարծիքով շատ կարևոր է հատվածի իմաստի համար: Ապա հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ հատվածը դասարանի համար և շեշտել բառը կամ արտահայտությունը, որը նա ընտրել է: Խնդրեք ուսանողին բացատրել, թե ինչու է այդ բառը կամ արտահայտությունը կարևոր հատվածը հասկանալու համար: Հրավիրեք մի քանի այլ ուսանողների անել նույնը: Ուսանողները կարող են ընտրել տարբեր բառեր կամ արտահայտություններ նույն հատվածի համար:Երբ դասարանի անդամները լսեն այս տարբեր կարծիքները, նրանք կարող են ավելի խորությամբ հասկանալ հատվածը:
- **Նախապատրաստել հոգևոր միտք**. Ուսանողներին հնարավորություններ տվեք օգտագործելու սերտման սուրբ գրությունների հատվածները, երբ նրանք նախապատրաստեն և ներկայացնեն հոգևոր մտքեր դասի սկզբում: Օգնեք նրանց նախապատրաստվել ամփոփել ենթատեքստը, բացատրել վարդապետությունները և սկզբունքները, կիսել իմաստալից փորձառություններ կամ օրինակներ և վկայել հատվածների վարդապետությունների և սկզբունքների մասին: Դուք կարող եք նաև առաջարկել, որ ուսանողները խորհեն առարկայական դաս օգտագործելու մասին, որ բացատրեն հատվածների իմաստները:

### *Զգալ վարդապետությունների և սկզբունքների կարևորությունը*

Օգնեք ուսանողներին հասկանալ սերտման սուրբ գրություններում ուսուցանված վարդապետությունները և սկզբունքները և հոգևոր վկայություն ձեռք բերել դրանց մասին: Երեց Ռոբերտ Դ. Հեյլը բացատրել է. «Իսկական ուսուցիչը [ավետարանի] փաստերն ուսուցանելուց հետո . . ., [ուսանողներին] մեկ քայլ առաջ է մղում, որ ձեռք բերեն հոգևոր վկայություն և հասկացողություն իրենց սրտերում, որն առաջ է բերում արարքներ և գործեր» (“Teaching by Faith” [address to CES religious educators, Feb.1, 2002], 5, si.lds.org): Երբ ուսանողները Սուրբ Հոգու ազդեցությամբ զգում են վարդապետության կամ սկզբունքի ճշմարտությունը, կարևորությունը և հրատապությունը, այդ ճշմարտությունն իրենց կյանքում կիրառելու նրաց ցանկությունը մեծանում է: Ուսուցիչները կարող են օգնել ուսանողներին հրավիրել և սնուցել Սուրբ Հոգու այս զգացմունքները, տալով նրանց հնարավորություններ կիսվելու փորձառություններով, որոնք նրանք ունեցել են, երբ ապրել են սերտման սուրբ գրությունների հատվածներում գտնվող ավետարանի սկզբունքներով: Սա կօգնի ուսանողներին ավելի լավ հասկանալ սերտման սուրբ գրությունների հատվածներում ուսուցանված ճշմարտությունները և համոզվել, որ այս ճշմարտությունները գրված են ուսանողների սրտերում: Հետևյալ վարժությունը կարող է օգնել ուսանողներին զգալ սերտման սուրբ գրությունների հատվածներում ուսուցանված վարդապետությունների և սկզբունքների կարևորությունը.

- **Լսել սուրբ գրությունների հատվածներ**. Հրավիրեք ուսանողներին եկեղեցում ելույթներ և դասեր, գերագույն համաժողովի ելույթներ լսելիս և ընտանիքի ու ընկերների հետ զրուցելիս ուշադրություն դարձնել սերտման սուրբ գրությունների հատվածներին: Հաճախակի հրավիրեք նրանց զեկուցել, թե որ հատվածներն են նրանք լսել, ինչպես են հատվածներն օգտագործվել, ինչ ճշմարտություններ են ուսուցանվել, և ինչ փորձառություններ են նրանք կամ ուրիշներն ունեցել այն ճշմարտությունների հետ կապված, որոնք ուսուցանվել են: Փնտրեք վկայելու հնարավորություններ (և հրավիրեք ուսանողներին վկայել) այն ճշմարտությունների մասին, որոնք ուսուցանվում են սերտման սուրբ գրությունների հատվածներում:

## Վարժություններ, որոնք օգնում են ուսանողներին *կիրառել* սերտման սուրբ գրությունների հատվածները

### *Ուսուցանել*

Սերտման սուրբ գրությունների հատվածները և Հիմնական վարդապետությունները միասին են մշակվել և նախատեսված են ուսանողներին օգնելու համար: (Սերտման սուրբ գրությունների հատվածները երևում են Հիմնական վարդապետությունների ողջ փաստաթղթում:) Երբ ուսանողները սովորեն և արտահայտեն սերտման սուրբ գրություններում պարունակվող վարդապետությունները և սկզբունքները, նրանք այդպիսով նաև կսովորեն և կարտահայտեն Հիմնական վարդապետությունները: Եվ երբ ուսանողները սովորեն արտահայտել Հիմնական վարդապետություններն իրենց իսկ խոսքերով, նրանք կարող են ապավինել սերտման սուրբ գրուվյունների հատվածները անգիր սովորելուն, որ դա օգնի նրանց: Ուսանողներին հնարավորություններ տալը, որ ուսուցանեն ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, օգտագործելով սերտման սուրբ գրությունների հատվածները, կարող է մեծացնել նրանց ինքնավստահությունը և սուրբ գրությունների իմացության հարցում համոզվածությունը: Երբ ուսանողները ուսուցանեն սերտման սուրբ գրությունների հատվածներում գտնվող վարդապետությունները և սկզբունքները և վկայեն դրանց մասին, նրանք կարող են նաև ամրացնել իրենց վկայությունները: Խրախուսեք ուսանողներին օգտագործել սերտման սուրբ գրությունների հատվածները, որ ուսուցանեն և բացատրեն ավետարանը դասարանում և ընկերների, ընտանիքի և ուրիշների հետ զրուցելիս:

- **Ներկայացնել ուղերձ**. Հանձնարարեք ուսանողներին նախապատրաստել սերտման սուրբ գրությունների հատվածների վրա հիմնված 3-5 րոպեանոց ելույթներ կամ դասեր: Թող նրանք նախապատրաստվեն դասարանում կամ տանը: Ի լրացում սերտման սուրբ գրությունների հատվածների, նրանք կարող են օգտագործել այլ նյութեր, որոնք կօգնեն նրանց նախապատրաստվել, ինչպես օրինակ սերտման սուրբ գրությունների քարտերը, Թեմատիկ ուղեցույցը, Սուրբ գրությունների ուղեցույցը կամ *Հավատքին Հավատարիմ. Ավետարանական վկայակոչում* գրքույկը: Յուրաքանչյուր ելույթը կամ դասը պետք է ներառի նախաբան, սերտման սուրբ գրության հատված, ուսուցանվող սկզբունքի մասին պատմություն կամ օրինակ և ուսանողի վկայությունը: Ուսանողները կարող են առաջարկել ներկայացնել իրենց ուղերձները դասարանում, ընտանեկան երեկոյի ժամանակ կամ իրենց քվորումներում կամ դասարաններում, որպես Պարտականություն Աստծո առաջ կամ Անձնական Զարգացում ծրագրերի մի մաս: Եթե ուսանողները ներկայացնում են իրենց ելույթները կամ դասերը դասարանից դուրս, հրավիրեք նրանց զեկուցել իրենց փորձառությունների մասին:
- **Միսիոներական դերակատարում**. Նախապատրաստեք մի շարք քարտեր, հարցերով, որոնք ունկնդիրը կարող է տալ, որոնց կարելի է պատասխանել սերտման սուրբ գրությունների հատվածների միջոցով (օրինակ, «Ըստ ձեր եկեղեցու անդամների, ով է Հիսուս Քրիստոսը»): Ուսանողներին զույգերով հրավիրեք առաջ գալ, որ պատասխանեն քարտերից ընտրված հարցին: Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչպես կարող են միսիոներները պատասխանել նմանատիպ հարցերին, դուք կարող եք առաջարկել մի քանի արդյունավետ ուսուցման մեթոդներ, ինչպիսին են (1) ասել սուրբ գրության հատվածի ենթատեքստը, (2) բացատրել վարդապետությունը կամ սկզբունքը, (3) տալ հարցեր, որ պարզեն, թե նրանք, ում իրենք ուսուցանում են, արդյոք հասկանում կամ հավատում են այն ամենին, ինչ ուսուցանվել է, (4) կիսվել փորձառություններով և վկայությամբ և (5) հրավիրել նրանց, ում իրենք ուսուցանում են, գործել համաձայն այն ճշմարտության, որն ուսուցանվել է: Խնդրեք դասարանին արձագանքել, թե ինչն իրենց դուր եկավ այն ամենից, թե ինչպես էր յուրաքանչյուր զույգը պատասխանում իրենց հարցին:
- **Վկայել**. Հրավիրեք ուսանողներին աչքի անցկացնել սերտման սուրբ գրությունների հատվածները և ընտրել մեկը, որը պարունակում է վարդապետություն կամ սկզբունք, որի մասին նրանք կարող են վկայել: Հրավիրեք նրանց վկայել իրենց ընտրած ճշմարտության մասին և կիսվել փորձառություններով, որոնք առաջնորդել են նրանց, որ կարողանան վկայել դրա մասին: Երբ ուսանողները կիսվեն իրենց վկայություններով, Սուրբ Հոգին կհաստատի այն վարդապետությունների կամ սկզբունքների ճշմարտացիությունը, որոնց մասին նրանք վկայում են: Նրանց վկայությունները կարող են նաև ոգեշնչել ուրիշներին, որ գործեն հավատքով:

  *Նշում.* Իրենց վկայություններով կիսվելու ուսանողների հնարավորությունները պետք է լինեն կամավոր կերպով: Ուսանողները երբեք չպետք է հարկադրվեն կիսվել իրենց վկայություններով կամ զգան, որ պետք է հրապարակայնորեն խոստովանեն, որ գիտեն մի բան, ինչն իրենք չեն զգում, որ գիտեն: Բացի դրանից, որոշ ուսանողներ դժկամությամբ են կիսվում իրենց վկայությամբ, քանի որ նրանք սխալմամբ կարծում են, որ նրանք պետք է սկսեն «Ես ուզում եմ բերել իմ վկայությունը» արտահայտությամբ կամ որ իրենց վկայությունը արտահայտելը պետք է զուգորդվի զգացմունքների ցուցադրմամբ: Օգնեք ուսանողներին հասկանալ, որ երբ նրանք վկայում են, նրանք կարող են պարզապես կիսել վարդապետություններ կամ սկզբունքներ, որոնք գիտեն, որ ճշմարիտ են: Վկայութ յամբ կիսվելը կարող է այնքան պարզ լինել, ինչպես ասելը՝«Ես հավատում եմ, որ սա ճիշտ է» կամ «Ես գիտեմ, որ սա ճիշտ է» կամ «Ես հավատում եմ սրան իմ ողջ սրտով»:

### *Ապրել*

Ուղիներ Առաջարկելը, որ ուսանողները կարողանան կիրառել սուրբ գրությունների հատվածներում պարունակվող վարդապետությունները և սկզբունքները (կամ ուսանողներին հրավիրելը, որ մտածեն ուղիների մասին), նրանց հնարավորություն է տալիս սովորել հավատք գործադրելու միջոցով: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ասել է.

«Սովորողը, գործադրելով ազատ կամքը՝ համաձայն ճիշտ սկզբունքների, բացում է իր սիրտը Սուրբ Հոգու հանդեպ և հրավիրում Նրա ուսուցումը, վկայող ուժը և հաստատող վկայությունը: Հավատքով սովորելը պահանջում է հոգևոր, մտավոր, և ֆիզիկական լարում և ոչ թե ուղղակի անտարբեր ընդունում»:«Մեր հավատքով ոգեշնչված գործերի անկեղծությամբ և հետևողականությամբ է, որ մենք ցույց ենք տալիս մեր Երկնային Հորն ու Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, որ մենք կամենում ենք սովորել և ցուցումներ ստանալ Սուրբ Հոգուց» (“Seek Learning by Faith,” *Ensign,* Sept. 2007, 64):

Ուսանողներին հնարավորություն տվեք կիսվել և վկայել փորձառությունների մասին, որոնք նրանք ունեցել են վարդապետությունները և սկզբունքները կիրառելիս: Հետևյալ ձևով կարող եք խրախուսել ուսանողներին կիրառել սերտման սուրբ գրությունների հատվածները իրենց կյանքում.

- **Նպատակներ դնել**. Հիմնվելով սերտման սուրբ գրությունների քարտերի կիրառման բաժնի վրա՝ հրավիրեք ուսանողներին հատուկ նպատակներ դնել, որ ավելի լավ ապրեն համաձայն այն սկզբունքների, որոնք գտնվում են սերտման սուրբ գրությունների հատվածներում: Թող նրանք գրեն իրենց տպատակները թերթիկի վրա, որ պահեն իրենց մոտ որպես հիշեցում: Պատշաճ պահի հրավիրեք ուսանողներին զեկուցել իրենց հաջողությունների մասին:

## Վարժություններ, որոնք օգնում են ուսանողներին ***անգիր սովորել*** սերտման սուրբ գրությունների հատվածները

### *Անգիր սովորել*

Սուրբ գրությունների հատվածներն անգիր սովորելը կարող է խորացնել հասկացողությունը և մեծացնել ավետարանն ուսուցանելու ուսանողների ունակությունները: Երբ ուսանողները անգիր սովորեն սուրբ գրություններ,

Սուրբ Հոգին կարող է անհրաժեշտության պահին հիշեցնել նրանց արտահայտություններ և մտքեր (տես Հովհաննես ԺԴ.26, ՎԱՈՒ 11.21)։ Հիշեք, որ հարմարեցնեք անգիր սովորելու վարժությունները ձեր ուսանողների ունակություններին։ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթը խրախուսել է սուրբ գրուվյուններն անգիր սովորելը, երբ նա ասել է.

«Մեծ զորություն է պարունակվում սուրբ գրությունները մտապահելու մեջ։ Մտապահել սուրբ գրությունը նման է նոր ընկերություն ստեղծելուն։ Այն նման է նոր անձի հայտնաբերելուն, որը կարող է օգնել կարիքի ժամանակ, ոգեշնչում և սփոփանք պարգևել և լինել անհրաժեշտ փոփոխության համար լիցքի աղբյուր» («Սուրբ գրության զորությունը», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2011, 6)։

Հետևյալ վարժություններից յուրաքանչյուրը կարող է մի քանի օր շարունակ կրկնվել դասի սկզբում կամ վերջում, որ օգնի ուսանողներին մտապահել.

- **Մրցում մեկական բառերով**. Հանձնարարեք դասարանին ասել սերտման սուրբ գրության հատվածը՝ մինչուսանողները հերթով կասեն մեկական բառ։ Օրինակ, երբ օգնեք ուսանողներին անգիր սովորել Ալմա 39.9, առաջին ուսանողը կասի *Այժմ* բառը, երկրորդ ուսանողը կասի *որդիս* բառը, երրորդ ուսանողը կասի *ես* բառը և այսպես շարունակ, մինչև ողջ հատվածը կավարտվի։ Պահեք ժամանակը և դասարանին տվեք փորձելու շատ հնարավորություններ, որ նշված ժամանակահատվածում կարողանան ավարտել այն։ Երբ դուք կրկնեք այս վարժությունը, խորհեք ուսանողների հերթականությունը փոխելու մասին, որպեսզի նրանք ասեն տարբեր բառեր։
- **Առաջին տառերը**. Գրատախտակին գրեք սերտման սուրբ գրության հատվածի յուրաքանչյուր բառի առաջին տառը։ Ցույց տվեք տառերը, մինչ դասարանը ձեր հետ միասին կրկնում է հատվածը՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով իրենց սուրբ գրություններից։ Կրկնեք այս վարժությունը, մինչև ուսանողները վստահ լինեն իրենց ուժերի վրա, որ կարող են անգիր ասել հատվածը միայն առաջին տառերի օգնությամբ։ Դուք կարող եք ջնջել մի քանի տառեր, երբ ուսանողները ամեն անգամ անգիր կասեն հատվածը։ Սա աստիճանաբար կդժվարացնի գոծը, մինչև ուսանողները կկարողանան կրկնել հատվածը՝ առանց առաջին տառերն օգտագործելու։
- **Բառաշերտերով գլուխկոտրուկներ**. Գրեք կամ թող ուսանողները գրեն սերտման սուրբ գրության հատվածի բառերը տողավոր թղթի վրա։ Թղթից կտրեք բառաշերտեր՝ չվնասելով սուրբ գրուվյան տողերը։ Որոշ շերտեր ավելի կարճ կտրեք, որ յուրաքանչյուրը ներառեն հատվածի ընդամենը մի քանի բառեր։ Խառնեք թերթիկների շերտերը և տվեք դրանք զույգերի կամ ուսանողների փոքր խմբերի։ Հանձնարարեք ուսանողներին ճիշտ դասավորել բառաշերտերը՝ օգտագործելով իրենց սուրբ գրությունները որպես ուղեցույց։ Թող նրանք այնքան փորձեն, մինչև այլևս կարիք չունենան օգտագործել իրենց սուրբ գրությունները։ Երբ նրանք ավարտեն, խնդրեք նրանց բարձրաձայն անգիր ասել հատվածը։ Դուք կարող եք նաև հսկել ժամանակը, որ տեսնեք, թե որ խումբն է ամենաարագը ճիշտ դասավորում բառաշերտերը։ Կամ դուք կարող եք ստուգել, թե որքան ժամանակ է պահանջվում յուրաքանչյուր խմբից գլուխկոտրուկն ավարտելու համար (երբ առաջին խմբերն ավարտեն, թույլ տվեք նրանց աջակցել ավելի դանդաղ աշխատող խմբերին)։

## 100 սերտման սուրբ գրությունների հատվածներ

| Հին Կտակարան | Նոր Կտակարան | Մորմոնի Գիրք | Վարդապետություն և Ուխտեր |
|---|---|---|---|
| Մովսես 1.39 | Մատթեոս Ե.14-16 | 1 Նեփի 3.7 | ՎևՈՒ 1.37-38 |
| Մովսես 7.18 | Մատթեոս ԺԱ.28-30 | 2 Նեփի 2.25 | ՎևՈՒ 6.36 |
| Աբրահամ 3.22-23 | Մատթեոս ԺԶ.15-19 | 2 Նեփի 2.27 | ՎևՈՒ 8.2-3 |
| Ծննդոց Ա.26-27 | Մատթեոս ԻԲ.36-39 | 2 Նեփի 9.28-29 | ՎևՈՒ 10.5 |
| Ծննդոց Բ.24 | Մատթեոս ԻԸ.19-20 | 2 Նեփի 25.23, 26 | ՎևՈՒ 13.1 |
| Ծննդոց ԼԹ.9 | Ղուկաս ԻԴ.36-39 | 2 Նեփի 28.7-9 | ՎևՈՒ 18.10-11 |
| Ելից 19.5-6 | Հովհաննես Գ.5 | 2 Նեփի 31.19-20 | ՎևՈՒ 18.15-16 |
| Ելից Ի.3-17 | Հովհաննես ԺԴ.6 | 2 Նեփի 32.3 | ՎևՈՒ 19.16-19 |
| Հեսու ԻԴ.15 | Հովհաննես ԺԴ.15 | 2 Նեփի 32.8-9 | ՎևՈՒ 19.23 |
| Ա Թագավորաց ԺԶ.7 | Հովհաննես ԺԷ.3 | Մոսիա 2.17 | ՎևՈՒ 25.13 |
| Սաղմոս ԻԴ.3-4 | Գործք Բ.36-38 | Մոսիա 3.19 | ՎևՈՒ 46.33 |
| Սաղմոս 119.105 | Գործք Գ.19-21 | Մոսիա 4.30 | ՎևՈՒ 58.27 |
| Սաղմոս 127.3 | Ա Կորնթացիս Զ.19-20 | Ալմա 7.11-13 | ՎևՈՒ 58.42-43 |
| Առակաց Գ.5-6 | Ա Կորնթացիս ԺԵ.20-22 | Ալմա 32.21 | ՎևՈՒ 64.9-10 |
| Եսայիա Ա.18 | Ա Կորնթացիս ԺԵ.40-42 | Ալմա 37.35 | ՎևՈՒ 76.22-24 |
| Եսայիա Ե.20 | Գաղատացիս Ե.22-23 | Ալմա 39.9 | ՎևՈՒ 76.40-41 |
| Եսայիա ԻԹ. 13-14 | Եփեսացիս Դ.11-14 | Ալմա 41.10 | ՎևՈՒ 78.19 |
| Եսայիա ԾԳ.3-5 | Փիլիպպեցիս Դ.13 | Հելաման 5.12 | ՎևՈՒ 82.10 |
| Եսայիա 58.6-7 | Բ Թեսաղոնիկեցիս Բ.1-3 | 3 Նեփի 12.48 | ՎևՈՒ 88.124 |
| Եսայիա ԾԸ.13-14 | Բ Տիմոթեոս Գ.15-17 | 3 Նեփի 18.15, 20-21 | ՎևՈՒ 89.18-21 |
| Երեմիա Ա.4-5 | Եբրայեցիս ԺԲ.9 | Եթեր 12.6 | ՎևՈՒ 107.8 |
| Եզեկիել ԼԷ.15-17 | Հակոբոս Ա.5-6 | Եթեր 12.27 | ՎևՈՒ 121.36, 41-42 |
| Ամոս Գ.7 | Հակոբոս Բ.17-18 | Մորոնի 7.41 | ՎևՈՒ 130. 22-23 |
| Մաղաքիա 3.8-10 | Ա Պետրոս Դ.6 | Մորոնի 7.45, 47-48 | ՎևՈՒ 131.1-4 |
| Մաղաքիա Դ.5-6 | Հայտնություն Ի.12 | Մորոնի 10.4-5 | ՋՍ-Պ 1.15-20 |

# Հիմնական վարդապետությունների նախաբանը

Հետևյալ Հիմնական վարդապետությունները պետք է ընդգծվեն սեմինարիայի ժամանակ.

- Աստվածագլուխ
- Փրկության ծրագիր
- Հիսուս Քրիստոսի Քավությունը
- Տնտեսություն, Ուրացություն և Վերականգնում
- Մարգարեներ և հայտնություն
- Քահանայություն և քահանայության բանալիներ
- Արարողություններ և ուխտեր
- Ամուսնություն և ընտանիք
- Պատվիրաններ

Ուսուցիչները պետք է օգնեն ուսանողներին ներկայացնել, հասկանալ, հավատալ, բացատրել և կիրառել ավետարանի այս հիմնական վարդապետությունները, երբ նրանք ուսումնասիրեն սուրբ գրությունները: Դա կօգնի ուսանողներին ամրացնել իրենց վկայությունները և մեծացնել նրանց երախտագիտությունը առ Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը: Հիմնական վարդապետությունները սովորելը նաև կօգնի ուսանողներին ավելի լավ պատրաստված լինել ավետարանով ապրելու և ուրիշներին այս կարևոր ճշմարտությունները սովորեցնելու համար: Այս ձեռնարկի դասերը կազմվել են Հիմնական վարդապետությունների հիման վրա: Կարևոր է իմանալը, որ ավետարանի այլ կարևոր վարդապետություններ նույնպես կշեշտվեն այս ձեռնարկում, չնայած որ դրանք չկան Հիմնական վարդապետությունների ցանկում:

Ավետարանի հիմնական վարդապետությունների ուսուցումն առաջ է գալիս, երբ դուք ամեն օր ուսանողների հետ սովորում եք սուրբ գրությունները և երբ դուք օգնում եք նրանց սերտել կարևոր սուրբ գրությունների հատվածները: Դուք չպետք է շեղվեք սուրբ գրությունների հաջորդական ուսումնասիրությունից՝ այս վարդապետությունների վրա կենտրոնանալու համար: Այլ դուք պետք է ուշադրություն դարձնեք դրանց վրա, երբ դրանք բնականաբար առաջ գան դասընթացի ժամանակ, և երբ դուք օգնեք ուսանողներին սերտել սուրբ գրությունների կարևոր հատվածները: Օրինակ, երբ դուք ուսուցանեք 1 Նեփի 1–ում գտնվող ճշմարտությունը, որ «մարգարեները զգուշացնում են մեղքի դեմ և ուսուցանում են փրկություն Հիսուս Քրիստոսի միջոցով», դուք կարող եք ցույց տալ ուսանողներին, որ այս ճշմարտությունը կարող է օգնել նրանց հասկանալ «մարգարեների և հայտնության» Հիմնական վարդապետությունը: Դուք կարող եք խնդրել ուսանողներին բացատրել, թե ուրիշ ինչ նրանք գիտեն մարգարեների և հայտնության մասին: Նաև, երբ ուսանողները սովորեն 2 Նեփի 25.23, 26 սերտման սուրբ գրության հատվածը, դուք կարող եք օգնել նրանց տեսնել, որ հատվածը լուսաբանում է մի ուղի, որով մարգարեները կատարում են իրենց պարտականությունը՝ ուսուցանելու փրկություն Հիսուս Քրիստոսի միջոցով: Հիմնական վարդապետությունները ավելի լավ հասկալը, դրանց հավատալը և դրանցով ապրելը մի գործընթաց է, որը տեղի է ունենում սեմինարիայի չորս տարիների ընթացքում և շարունակվում է ուսանողի կյանքի մնացած ընթացքում:

Դուք կարող եք ուսանողներին տալ Հիմնական վարդապետությունների ցանկը:

## Հիմնական վարդապետությունների գնահատումը

Հիմանկան Վարդապետությունների գնահատումը նախատեսված է ուսուցիչներին տեղեկություններ տալու համար, որը նրանք կարող են օգտագործել իրենց ուսանողների կյանքն ավելի օրհնված դարձնելու համար: Մենք խորհուրդ ենք տալիս, որ ուսուցիչները ներկայացնեն այս գնահատումները դասընթացի առաջին շաբաթվա ընթացքում և ևս մեկ անգամ տարեվերջի մոտ: Հիմնական վարդապետությունների գնահատումը և այլ գնահատումներ ՍևԻ վեբ կայքում գտնելու համար (si.lds.org) որոնում կատարեք՝ օգտագործելով *գնահատում կարևոր բառը:*

Այն ուսուցիչները, ովքեր ուղարկում են իրենց ուսանողների գնահատման արդյունքները ՍևԻ հետազոտությունների գրասենյակ, կստանան հաշվետվություն, որը կօգնի նրանց հարմարեցնել իրենց ուսուցումը, որ ավելի լավ արձագանքեն իրենց ուսանողների կարիքներին: Օրինակ, եթե արդյունքներում ասվում է, որ ուսանողները չեն ասկացել ապաշխարելու վարդապետությունը, տարվա ուսումնական ծրագրում կներկայացվեն մի շարք դասեր, որոնք կարող են օգնել ուսանողներին ավելի լավ հասկանալ այս վարդապետությունը: Երբ ուսուցիչները աղոթքով օգտագործեն այս տեղեկությունները սուրբ գրությունները հերթականությամբ ուսուցանելիս, մեր պատանիները և չափահաս երիտասարդները ավելի լավ նախապատրաստված կլինեն իրականացնելու Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների Նպատակը:

# Հիմնական վարդապետություններ

*Հիմնական վարդապետությունները պետք է ընդգծվեն և սեմինարիայի, և ինստիտուտի դասերին: Ուսուցիչները պետք է օգնեն ուսանողներին ներկայացնել, հասկանալ, հավատալ, բացատրել և կիրառել ավետարանի այս վարդապետությունները: Սա կօգնի ուսանողներին ամրացնել իրենց վկայությունները և մեծացնել իրենց երախտագիտությունը առ Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը: Այս վարդապետություններն ուսումնասիրելը նաև կօգնի ուսանողներին ավելի լավ նախապատրաստված լինել այս կարևոր ճշմարտություններն ուրիշներին ուսուցանելու համար:*

*Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների կողմից ընտրված 100 սերտման սուրբ գրությունների հատվածները ընտրվել են ուսանողներին օգնելու համար, որ հասկանան Հիմնական վարդապետությունները: Ստորև թվարկված սուրբ գրությունների հղումներից շատերը վերաբերվում են սերտման սուրբ գրությունների հատվածներին: Դրանք ներառվել են, որ ցույց տան, թե ինչպես են դրանք կապված Հիմնական վարդապետությունների հետ:*

## 1. Աստվածագլուխ

Աստվածագլուխն ընդգրկում է երեք առանձին անձնավորություններ. Աստված՝ Երկնային Հայրը, Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը և Սուրբ Հոգին (տես Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.15-20):Հայրը և Որդին ունեն շոշափելի մարմիններ մսից և ոսկորից, իսկ Սուրբ Հոգին հոգևոր էակ է (տես ՎևՈՒ 130.22-23): Նրանք մեկ են նպատակով և վարդապետությամբ:Նրանք կատարելապես միասնական են՝ Երկնային Հոր փրկության աստվածային ծրագիրն իրականացնելու գործում:

### *Հայր Աստված*

Հայր Աստվածը տիեզերքի Գերագույն Կառավարիչն է: Նա մեր հոգիների հայրն է (տես Եբրայեցիս ԺԲ.9): Նա կատարյալ է, ունի ողջ զորությունը և գիտի բոլոր բաները: Նա նաև կատարյալ ողորմության, բարության և գթության Աստված է:

### *Հիսուս Քրիստոս*

Հիսուս Քրիստոսը Հոր Առաջնեկն է հոգում և Հոր Միածինը՝ մարմնում: Նա Հին Կտակարանի Եհովան է և Նոր Կտակարանի Մեսիան:

Հիսուս Քրիստոսն ապրեց առանց մեղք գործելու և կատարյալ Քավություն կատարեց բոլոր մարդկանց մեղքերի համար (տես Ալմա 7.11-13): Նրա կյանքը ապրելաձևի կատարյալ օրինակ է, որով պետք է մարդիկ ապրեն (տես Հովհաննես ԺԴ.6, 3 Նեփի 12.48): Նա առաջին անձնավորությունն էր այս երկրի վրա, որ պիտի հարություն առներ (տես Ա Կորնթացիս ԺԵ.20-22): Հիսուս Քրիստոսը կրկին կգա զորությամբ և փառքով, և կթագավորի երկրի վրա Հազարամյակի ժամանակ:

Բոլոր աղոթքները, օրհնությունները և քահանայության արարողությունները պետք է կատարվեն Հիսուս Քրիստոսի անունով (տես 3 Նեփի 18.15, 20-21):

Առնչվող հղումներ. Հելաման 5.12, ՎևՈՒ 19.23, ՎևՈՒ 76.22-24

### *Սուրբ Հոգի*

Սուրբ Հոգին Աստվածագլխի երրորդ անդամն է: Նա հոգևոր անձնավորություն է՝ առանց մսից և ոսկորից մարմնի: Նրան հաճախ կոչում են Հոգի, Սուրբ Հոգի, Աստծո Հոգի, Տիրոջ Հոգի և Մխիթարիչ:

Սուրբ Հոգին վկայություն է տալիս Հոր և Որդու մասին, հայտնում բոլոր բաների ճշմարտությունը և սրբագործում նրանց, ովքեր ապաշխարում են և մկրտվում (տես Մորոնի 10.4-5):

Առնչվող հղումներ. Գաղատացիս Ե.22-23, ՎևՈՒ 8.2-3

## 2. Փրկության Ծրագիր

Նախաերկրային գոյության մեջ Երկնային Հայրը ներկայացրեց մի ծրագիր, որը մեզ հնարավորություն կտար դառնալ Նրա նման և ձեռք բերել անմահություն ու հավերժական կյանք (տես Մովսես 1.39): Սուրբ գրություններում այդ ծրագիրը կոչվում է փրկության ծրագիր, երջանկության մեծ ծրագիր, փրկագնման ծրագիր և ողորմածության ծրագիր:

Փրկության ծրագիրը ընդգրկում է Արարումը, Անկումը, Հիսուս Քրիստոսի Քավությունը և ավետարանի բոլոր օրենքները, ծեսերը և վարդապետությունները: Կամքի բարոյական ազատությունը, որը ինքնուրույն ընտրելու և գործելու ընդունակություն է, նույնպես կարևոր դեր ունի Երկնային Հոր ծրագրում (տես 2 Նեփի 2.27): Այդ ծրագրի շնորհիվ մենք կարող ենք կատարելագործվել Քավության միջոցով, ստանալ ուրախության լիություն և հավերժ ապրել Աստծո ներկայության մեջ (տես 3 Նեփի 12.48): Ընտանեկան մեր կապերը կարող են տևել հավերժ:

Առնչվող հղումներ. Հովհաննես ԺԷ.3, ՎևՈՒ 58.27

### *Նախաերկրային կյանք*

Երկրի վրա ծնվելուց առաջ մենք ապրում էինք մեր Երկնային Հոր ներկայության մեջ որպես Նրա հոգևոր զավակներ (տես Աբրահամ 3.22-23): Այդ նախաերկրային կյանքում Երկնային Հոր մյուս հոգևոր զավակների հետ միասին մենք մասնակցեցինք մի խորհրդի: Այդ խորհրդի ժամանակ Երկնային Հայրը ներկայացրեց Իր ծրագիրը, իսկ նախաերկրային Հիսուս Քրիստոսը Փրկիչը լինելու ուխտ կապեց:

Երկնային Հոր ծրագրին հետևելու համար մենք օգտագործեցինք մեր ազատ ընտրության իրավունքը: Մենք պատրաստվեցինք գալ երկիր, որտեղ կարող էինք շարունակել մեր զարգացումը:

Նրանք, ովքեր հետևեցին Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին, թույլտվություն ստացան գալու երկիր՝ մահկանացու կյանքով ապրելու և դեպի հավերժական կյանք առաջ ընթանալու համար: Լյուցիֆերը՝ Աստծո հոգևոր որդիներից մեկը, ապստամբեց այդ ծրագրի դեմ: Նա դարձավ Սատանա, և իր հետևորդների հետ միասին վտարվեց երկնքից և զրկվեց ֆիզիկական մարմին ստանալու և մահկանացու կյանքով ապրելու արտոնությունից:

Առնչվող հղում. Երեմիա Ա.4-5

### *Արարում*

Հիսուս Քրիստոսը ստեղծել է երկինքը և երկիրը Հոր ղեկավարության ներքո: Երկիրը չի ստեղծվել ոչնչից, այն կազմվել է գոյություն ունեցող նյութից: Հիսուս Քրիստոսը ստեղծել է

անթիվ անհամար երկրներ (տես ՎԱՈՒ 76.22-24):

Երկրի արարումը կարևոր էր Աստծո ծրագրում:Դա այն վայրն է, որտեղ մենք կարող ենք ստանալ ֆիզիկական մարմին, ստուգվել և փորձվել և զարգացնել աստվածային հատկանիշներ:

Մենք պետք է օգտագործենք աշխարհի ռեսուրսներն իմաստությամբ, խորաթափանցությամբ և գոհությամբ (տես ՎԱՈՒ 78.19):

Ադամը երկրի վրա ստեղծված առաջին մարդն է: Աստված ստեղծեց Ադամին և Եվային Իր իսկ պատկերով: Բոլոր մարդկային արարածները՝ տղամարդիկ և կանայք, ստեղծված են Աստծո պատկերով (տես Ծննդոց Ա.26-27):

### *Անկում*

Եդեմի Պարտեզում Աստված Ադամին և Եվային պատվիրեց չճաշակել բարու և չարի գիտելիքի ծառի պտղից. դրա հետևանքը կլիներ հոգևոր և ֆիզիկական մահը: Հոգևոր մահը բաժանումն է Աստծուց: Ֆիզիկական մահը հոգու բաժանումն է մահկանացու մարմնից: Քանի որ Ադամն ու Եվան չհնազանդվեցին Աստծո պատվիրանին, նրանք վտարվեցին Նրա ներկայությունից և դարձան մահկանացու: Ադամի և Եվայի մեղսագործությունը և դրան հետևող փոփոխությունները, ներառյալ հոգևոր և ֆիզիկական մահը, կոչվում են Անկում:

Անկման արդյունքում Ադամը և Եվան ու նրանց սերունդները կարող էին ունենալ ուրախություն և վիշտ, իմանալ բարին և չարը, և զավակներ ունենալ (տես 2 Նեփի 2.25): Որպես Ադամի ու Եվայի հետնորդներ, մահկանացու կյանքի ընթացքում մենք ժառանգում ենք անկման պայմանները: Մենք բաժանված ենք Տիրոջ ներկայութ յունից և ենթ ակա ենք ֆիզիկական մահվան: Մենք նաև փորձվում ենք կյանքի դժվարություններով և հակառակորդի գայթակղություններով: (☒ես Մոսիա 3.19:)

Անկումը Երկնային Հոր փրկության ծրագրի անբաժանելի մասն է: Այն երկակի ուղղություն ունի՝ դեպի ցած, այնուամենայնիվ, դեպի առաջ: Ֆիզիկական և հոգևոր մահը առաջ բերելուց բացի, այն մեզ հնարավորություն է տվել ծնվել երկրի վրա, սովորել և զարգանալ:

### *Մահկանացու կյանք*

Մահկանացու կյանքը սովորելու ժամանակ է, երբ մենք կարող ենք նախապատրաստվել հավերժական կյանքին և ապացուցենք, որ մենք կօգտագործենք մեր ազատ ընտրության իրավունքն՝ անելով ամեն բան, որ Տերն է պատվիրել: Այս մահկանացու կյանքի ընթացքում մենք պետք է սիրենք և ծառայենք ուրիշներին (տես Մոսիա 2.17, Մորոնի 7.45, 47-48):

Մահկանացիության ընթացքում մեր հոգիները միավորված են մեր ֆիզիկական մարմինների հետ, տալով մեզ հնարավորություններ աճելու և այնպիսի եղանակներով զարգանալու համար, որ հնարավոր չէր նախաերկրային կյանքում: Մեր մարմինները փրկության ծրագրում կարևոր մաս են կազմում և պիտի պատվեն որպես պարգև Երկնային Հոր կողմից (տես Ա Կորնթացիս Զ.19-20):

Առնչվող հղումներ. Հեսու ԻԴ.15, Մատթեոս ԻԲ.36-39, 2 Նեփի 28.7-9, Ալմա 41.10, ՎԱՈՒ 58.27

### *Կյանք մահից հետո*

Երբ մենք մահանում ենք, մեր հոգիները գնում են հոգևոր աշխարհ և սպասում Հարությանը: Արդարների հոգիները մտնում են երջանկության վիճակի մեջ, որը կոչվում է դրախտ: Հավատարիմներից շատերը շարունակում են քարոզել ավետարանը հոգևոր բանտում գտնվողներին:

Հոգևոր բանտը ժամանակավոր վայր է հետմահկանացու աշխարհում նրանց համար, ովքեր մահացել են առանց ճշմարտության գիտելիքը ստանալու կամ ովքեր անհնազանդ են եղել մահկանացու կյանքում: Այնտեղ հոգիներին ուսուցանվում է ավետարանը և հնարավորություն է տրվում ապաշխարել և ընդունել փրկության արարողությունները, որոնք կատարվում են նրանց համար տաճարներում (տես Ա Պետրոս Դ.6): Նրանք, ովքեր ընդունում են ավետարանը, մինչև Հարությունը կարող են բնակվել դրախտում:

Հարությունը մեր հոգևոր մարմնի և մսից ու ոսկորից կազմված մեր ֆիզիկական մարմնի վերամիավորումն է (տես Ղուկաս ԻԴ.36-39): Հարությունից հետո հոգին և մարմինը այլևս երբեք չեն բաժանվում և մենք կդառնանք անմահ: Երկրի վրա ծնված ցանկացած անձ հարություն կառնի, որովհետև Հիսուս Քրիստոսը հաղթահարել է մահը (տես Ա Կորնթացիս ԺԵ.20-22): Արդարները հարություն կառնեն ամբարիշտներից առաջ և առաջ կգան Առաջին Հարության ժամանակ:

Վերջին Դատաստանը տեղի կունենա Հարությունից հետո: Հիսուս Քրիստոսը կդատի յուրաքանչյուր անձի և կորոշի, թե ինչ հավերժական փառքի կարժանանա տվյալ անձը: Այդ դատաստանը հիմնված կլինի Աստծո պատվիրաններին յուրաքանչյուր անձի հնազանդության վրա (տես Հայտնություն Ի.12, Մոսիա 4.30):

Կան փառքի երեք արքայություններ (տես Ա Կորնթացիս ԺԵ.40-42): Դրանցից ամենաբարձրը սելեստիալ արքայությունն է: Նրանք, ովքեր անվեհեր են եղել Հիսուսի վկայության մեջ և հնազանդվել ավետարանի սկզբունքներին, կապրեն սելեստիալ արքայությունում Հայր Աստծո և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ներկայության մեջ (տես ՎԱՈՒ 131.1-4):

Երեք արքայություններից երկրորդը թերեստրիալ արքայությունն է: Այդ արքայությունում գտնվողները կլինեն երկրի պատվելի տղամարդիկ և կանայք, ովքեր անվեհեր չէին Հիսուսի վկայության մեջ:

Թելեստիալ արքայությունը փառքի երեք արքայություններից ամենացածրն է: Նրանք կժառանգեն այս արքայությունը, ովքեր իրենց մահկանացու կյանքի ընթացքում ընտրել են ամբարշտություն արդարության փոխարեն: Այդ մարդիկ կստանան իրենց փառքը հոգևոր բանտից փրկագնվելուց հետո:

Առնչվող հղում. Հովհաննես ԺԷ.3

## 3. Հիսուս Քրիստոսի Քավությունը

Քավել նշանակում է պատիժ կրել մեղքի համար, դրանով վերացնելով մեղքի ազդեցությունը ապաշխարող մեղսավորի վրայից և թույլ տալով նրան հաշտվել Աստծո հետ: Միայն Հիսուս Քրիստոսը կարող էր կատարյալ Քավություն կատարել ողջ մարդկության համար: Նրա Քավությունն ընդգրկում էր Նրա տանջանքները Գեթսեմանի պարտեզում մարդկության մեղքերի համար, Նրա արյունը թափելը, Նրա տանջանքները և մահը խաչի վրա, և Նրա Հարությունը գերեզմանից (տես Ղուկաս ԻԴ.36-39, ՎԱՈՒ 19.16-19): Փրկիչը կարողացավ

իրականացնել Քավությունը, որովհետև Նա Իրեն մաքուր էր պահել մեղքից և զորություն ուներ մահվան վրա: Իր մահկանացու մորից նա ժառանգել էր մահանալու ունակությունը: Իր անմահ Հորից Նա ժառանգել էր Իր կյանքը կրկին վեր առնելու զորությունը:

Փրկչի քավող զոհաբերությամբ հնարավոր դարձած շնորհի միջոցով բոլոր մարդիկ հարություն կառնեն և անմահություն կստանան: Հիսուս Քրիստոսի Քավությունը նաև հնարավոր է դարձնում մեզ համար ստանալ հավերժական կյանք (տես Մորոնի 7.41): Այս պարգևը ստանալու համար մենք պետք է ապրենք համաձայն Հիսուս Քրիստոսի ավետարանի, որը ներառում է հավատք ունենալ առ Նա, ապաշխարել մեր մեղքերից, մկրտվել, ստանալ Սուրբ Հոգու պարգևը և հավատարմորեն տոկալ մինչև վերջ (տես Հովհաննես Գ.5):

Որպես Իր Քավության մի մաս, Հիսուս Քրիստոսը ոչ միայն տառապեց մեր մեղքերի համար, այլ նաև Իր վրա վերցրեց ողջ մարդկության ցավերը, հիվանդությունները և թուլությունները (տես Ալմա 7.11-13): Նա հասկանում է մեր տառապանքները, որովհետև զգացել է դրանք: Նրա շնորհը կամ հնարավորություն տվող զորությունը ամրացնում է մեզ, որ տանենք բեռներ և լուծենք խնդիրներ, որոնք չէինք կարող անել ինքնուրույն (տես Մատթեոս ԺԱ.28-30, Փիլիպպեցիս Դ.13, Եթեր 12.27):

Առնչվող հղումներ. Հովհաննես Գ.5, Գոր. 3.19-21

### *Հավատք առ Հիսուս Քրիստոս*

Հավատքը «հույս [է] բաների համար, որոնք տեսանելի չեն, որոնք ճշմարիտ են»(Ալմա 32.21, տես նաև Եթեր 12.6): Այն պարգև է Աստծուց:

Հավատքը պետք է կենտրոնացած լինի Հիսուս Քրիստոսի շուրջ, որպեսզի մարդուն տանի դեպի փրկություն:Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք ունենալը նշանակում է ամբողջովին ապավինել Նրան և վստահել Նրա անսահման Քավությանը, զորությանը և սիրուն: Դա ներառում է Նրա ուսմունքներին հավատալը և հավատալը, որ չնայած մենք չենք հասկանում բոլոր բաները, Նա հասկանում է (տես Առակաց Գ.5-6, ՎևՈՒ 6.36):

Հավատքը արտահայտվում է ոչ թե պասիվ հավատալու, այլ մեր ապրելակերպի միջոցով (տես Հակոբոս Բ.17-18): Հավատքը կարող է մեծանալ, երբ մենք աղոթում ենք, ուսումնասիրում սուրբ գրքերը և հնազանդվում Աստծո պատվիրաններին:

Վերջին Օրերի Սրբերը նաև հավատք ունեն առ Հայր Աստված, Սուրբ Հոգի, քահանայության զորություն և վերականգնված ավետարանի այլ կարևոր ուղղությունները: Հավատքը մեզ օգնում է ստանալ հոգևոր և ֆիզիկական ապաքինում, և ուժ՝ առաջ գնալու, մեր դժվարություններին դիմակայելու և գայթակղությունը հաղթահարելու համար (տես 2 Նեփի 31.19-20): Տերը մեր կյանքում հզոր հրաշքներ կկատարի համաձայն մեր հավատքի:

Հիսուս Քրիստոսին հավատալու միջոցով անձնավորությունը կարող է ներում ստանալ իր մեղքերին և, ի վերջո, կարողանա ապրել Աստծո ներկայության մեջ:

Առնչվող հղում. Մատթեոս ԺԱ.28-30

### *Ապաշխարություն*

Ապաշխարությունը մտքի և սրտի փոփոխություն է, որը մեզ նոր պատկերացում է տալիս Աստծո, մեր և աշխարհի մասին: Այն ներառում է մեղքից շրջվելը և ներման համար Աստծուն դիմելը: Այն խթանվում է Աստծո հանդեպ սիրով և Նրա պատվիրաններին հնազանդվելու անկեղծ ցանկությամբ:

Մեր մեղքերը մեզ դարձնում են ոչ մաքուր՝ անարժան վերադառնալու և բնակվելու մեր Երկնային Հոր ներկայության մեջ: Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մեր Հայրը տվել է մեզ միակ ճանապարհը, որով կարող են ներվել մեր մեղքերը (տես Եսայիա Ա.18):

Ապաշխարությունը նշանակում է զղջալ մեղք գործելու համար, խոստովանել Երկնային Հորը և անհրաժեշտության դեպքում նաև մյուսներին, հրաժարվել մեղքերից, աշխատել վերականգնել որքանով որ հնարավոր է այն վնասը, որն առաջացել է մեղքի հետևանքով, և ապրել, հնազանդվելով Աստծո պատվիրաններին (տես ՎևՈՒ 58.42-43):

Առնչվող հղումներ. Եսայիա ԾԳ.3-5, Հովհաննես ԺԴ.6, 2 Նեփի 25.23, 26, ՎևՈՒ 18.10-11, ՎևՈՒ 19.23, ՎևՈՒ 76.40-41

## 4. Տնտեսություն, Ուրացություն և Վերականգնում

### *Տնտեսություն*

Տնտեսությունը ժամանակաշրջան է, որի ընթացքում Տերը հայտնում է Իր ավետարանի վարդապետությունները, արարողությունները և քահանայությունը: Դա ժամանակաշրջան է, որի ընթացքում Տերը երկրի վրա ունենում է առնվազն մեկ լիազորված ծառա, որը կրում է սուրբ քահանայությունը և աստվածային հանձնարարություն է կատարում, տարածելով ավետարանը և կատարելով ավետարանի արարողությունները երկրի բնակիչների մեջ: Այսօր մենք ապրում ենք վերջին տնտեսության ժամանակաշրջանում՝ ժամանակների լրության տնտեսությունում, որը սկսվեց Ջոզեֆ Սմիթին ավետարանը հայտնելուց:

Նախորդ տնտեսությունները ներկայացվում են Ադամի, Ենովքի, Նոյի, Աբրահամի, Մովսեսի և Հիսուս Քրիստոսի միջոցով: Բացի դրանք, եղել են այլ տնտեսություններ ևս, այդ թվում նաև Նեփիացիների և Հարեդացիների ժամանակ: Փրկության ծրագիրը և Հիսուս Քրիստոսի ավետարանը հայտնվել և ուսուցանվել են բոլոր տնտեսությունների ժամանակ:

### *Ուրացություն*

Երբ մարդիկ հեռանում են ավետարանի սկզբունքներից և այլևս չեն ունենում քահանայության բանալիները, նրանք գտնվում են ուրացության վիճակում:

Աշխարհի պատմության ընթացքում եղել են ընդհանուր ուրացության ժամանակաշրջաններ: Մեկ օրինակ է հանդիսանում Մեծ Ուրացությունը, որը տեղի է ունեցել նրանից հետո, երբ Փրկիչը հիմնեց Իր Եկեղեցին (տես Բ Թեսաղոնիկեցիս Բ.1-3): Փրկչի առաքյալների մահից հետո ավետարանի սկզբունքները խեղվեցին և Եկեղեցու կազմակերպության և քահանայության արարողություններում տեղի ունեցան անթույլատրելի փոփոխություններ: Այդ համատարած անարդարության պատճառով, Տերը երկրի վրայից վերցրեց քահանայության իշխանությունը և քահանայության բանալիները:

Մեծ Ուրացության ժամանակ մարդիկ մնացին առանց կենդանի մարգարեների կողմից տրվող աստվածային

առաջնորդության: Շատ եկեղեցիներ հիմնվեցին, սակայն դրանք չունեին Սուրբ Հոգու պարգևը շնորհելու կամ քահանայության այլ արարողություններ կատարելու իշխանությունը: Սուրբ գրությունների շատ մասեր փոփոխվեցին կամ կորան, և մարդիկ այլևս չունեին Աստծո մասին ճշմարիտ գիտելիք:

Ուրացությունը տևեց մինչև այն ժամանակը, երբ Երկնային Հայրը և Նրա Սիրելի Որդին հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին և մեկնարկեցին ավետարանի լրության Վերականգնումը:

### *Վերականգնում*

Վերականգնումը Աստծո կողմից երկրի վրա Իր ավետարանի ճշմարտությունների և սկզբունքների վերահաստատումն է Իր զավակների մեջ (տես Գոր. Գ.19-21):

Վերականգնումը պատրաստելիս Տերը բարձրացրեց ազնվաբարո տղամարդկանց Վերափոխում կոչվող ժամանակաշրջանում: Նրանք փորձեցին վերադարձնել կրոնական վարդապետությունը, սովորությունները և կազմակերպությունն այնպես, ինչպես Փրկիչն էր հիմնել դրանք: Սակայն նրանք չունեին քահանայություն, ոչ էլ ավետարանի լրիվությունը:

Վերականգնումը սկսվեց 1820 թվականին, երբ Հայր Աստվածը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին՝ ի պատասխան նրա աղոթքի (տես Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.15-0): Վերականգնման կարևոր իրադարձություններից էին Մորմոնի Գրքի թարգմանությունը, Ահարոնյան և Մելքիսեդեկյան Քահանայությունների վերականգնումը և Եկեղեցու կազմակերպումը 1830թ. ապրիլի 6-ին:

Ահարոնյան Քահանայությունը վերականգնվեց, շնորհվելով Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին Հովհաննես Մկրտչի կողմից 1829թ. մայիսի 15-ին: Մելքիսեդեկյան Քահանայությունը և արքայության բանալիները նույնպես վերականգնվեցին 1829թ., երբ Պետրոս, Հակոբոս և Հովհաննես Առաքյալները շնորհեցին դրանք Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին:

Ավետարանի լրիվությունը վերականգնվեց և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին «միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին է ողջ երկրի երեսի վրա» (ՎևՈւ 1.30): Եկեղեցին ի վերջո կլցնի ողջ երկիրը և հավերջ կգոյատևի:

Առնչվող հղումներ. Եսայիա ԻԹ.13-14, Եզեկիել ԼԷ.15-17, Եփեսացիս Դ.11-14, Հակոբոս Ա.5-6

## 5. Մարգարեներ և հայտնություն

Մարգարեն այն անձն է, որը կանչվում է Աստծո կողմից Նրա անունից խոսելու համար (տես Ամովս Գ.7): Մարգարեները վկայում են Հիսուս Քրիստոսի մասին և ուսուցանում են Նրա ավետարանը: Նրանք հայտնի են դարձնում Աստծո կամքը և իրական էությունը: Նրանք նախազգուշացնում են մեղքի մասին և դրա հետևանքների մասին: Ժամանակ առ ժամանակ նրանք մարգարեանում են ապագա իրադարձությունների մասին (տես ՎևՈՒ 1.37-38): Երբ մենք ուսումնասիրում ենք մարգարեների խոսքերը, մենք կարող ենք սովորել ճշմարտությունը և ստանալ առաջնորդություն (տես 2 Նեփի 32.3):

Մենք հաստատում ենք Եկեղեցու Նախագահին որպես մարգարե, տեսանող և հայտնող, և երկրի վրա միակ մարդը, որը հայտնություն է ստանում ողջ Եկեղեցին առաջնորդելու համար: Մենք նաև հաստատում ենք Առաջին Նախագահության խորհրդականներին և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներին որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Հայտնությունը Աստծո կողմից Իր զավակների հետ հաղորդակցություն է: Երբ Տերը հայտնում է իր կամքը Եկեղեցուն, Նա խոսում է Իր մարգարեի միջոցով: Սուրբ գրությունները՝ Աստվածաշունչը, Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը, Թանկագին Մարգարիտը, պարունակում են հայտնություններ՝ տրված հնադարյան և վերջին օրերի մարգարեների կողմից: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահը Աստծո մարգարեն է երկրի վրա այսօր:

Անհատները կարող են հայտնություն ստանալ, որը կօգնի իրենց յուրահատուկ կարիքների, պարտականությունների և հարցերի դեպքում և կօգնի ամրացնել իրենց վկայությունները: Եկեղեցու ղեկավարների և անդամների հայտնություններից շատերը գալիս են Սուրբ Հոգու կողմից տրված հուշումների և մտքերի միջոցով: Սուրբ Հոգին խոսում է մեր մտքերին և սրտերին մեղմ, ցածր ձայնով (տես ՎևՈՒ 8.2-3): Հայտնությունը կարող է նաև գալ տեսիլքների, երազների և հրեշտակների այցելությունների միջոցով:

Առնչվող հղումներ. Սաղմոս ՃԺԹ.105, Եփեսացիս Դ.11-14, Բ Տիմոթեոս Գ.15-17, Հակոբոս Ա.5-6, Մորոնի 10.4-5

## 6. Քահանայություն և քահանայության բանալիներ

Քահանայությունը Աստծո հավիտենական զորությունը և իշխանությունն է: Քահանայության միջոցով Աստված ստեղծել է երկինքը և երկիրը և ղեկավարում է դրանք: Այդ զորության միջոցով Նա փրկագնում և վեհացնում է Իր զավակներին՝ իրականացնելով «մարդու անմահությունը և հավերժական կյանքը» (Մովսես 1.39):

Աստված քահանայության իշխանություն է տալիս Եկեղեցու արժանի տղամարդկանց, որպեսզի նրանք կարողանան գործել Իր անունով՝ Իր զավակների փրկության համար: Քահանայության բանալիները ղեկավարելու իրավունքներն են կամ զորությունը, տրված մարդուն Աստծո կողմից, Աստծո թագավորությունը երկրի վրա ղեկավարելու և առաջնորդելու համար (տես Մատթեոս ԺԶ.15-19): Այս բանալիների միջոցով քահանայություն կրողները կարող են իշխանություն ունենալ քարոզելու ավետարանը և կատարելու փրկության արարողությունները: Բոլորը, ովքեր ծառայում են Եկեղեցուն, կանչված են մի մարդու առաջնորդությամբ, ով կրում է քահանայության բանալիներ: Այսպիսով, նրանք լիազորված են ունենալու զորություն, որն անհրաժեշտ է ծառայելու և իրենց կոչման պարտականությունները կատարելու համար:

Առնչվող հղում. ՎևՈՒ 121.36, 41-42

### *Ահարոնյան Քահանայություն*

Ահարոնյան Քահանայությունը հաճախ կոչվում է նախապատրաստական քահանայություն: Ահարոնյան Քահանայության պաշտոններն են՝ սարկավագ, ուսուցիչ, քահանա և եպիսկոպոս: Այսօր Եկեղեցում արժանի տղամարդիկ կարող են ստանալ Ահարոնյան Քահանայություն 12 տարեկանից սկսած:

Ահարոնյան Քահանայությունը «կրում է հրեշտակների սպասավորության, ապաշխարության ավետարանի և

մեղքերի թողության համար ընկղմամբ մկրտության բանալիները» (ՎԱՈՒ 13.1):

### *Մելքիսեդեկյան Քահանայություն*

Մելքիսեդեկյան Քահանայությունը բարձրագույն կամ մեծագույն քահանայությունն է և ծառայում է հոգևոր բաներում (տես ՎԱՈՒ 107.8):Այս մեծագույն քահանայությունը տրվեց Ադամին և եղել է երկրի վրա ցանկացած ժամանակ, երբ Տերը հայտնել է Իր ավետարանը:

Սկզբում այն կոչվում էր «Սուրբ Քահանայություն ըստ Աստծո Որդու Կարգի» (ՎԱՈՒ 107.3): Հետագայում այն հայտնի դարձավ որպես Մելքիսեդեկյան Քահանայություն, կոչվելով մեծ քահանայապետի անունով, որն ապրում էր մարգարե Աբրահամի ժամանակ:

Մելքիսեդեկյան Քահանայության մեջ են մտնում երեցի, քահանայապետի, հայրապետի, Յոթանասունականի և Առաքյալի պաշտոնները:Մելքիսեդեկյան Քահանայության Նախագահը Եկեղեցու Նախագահն է:

Առնչվող հղումներ. Եփեսացիս Դ.11-14

## 7. Արարողություններ և ուխտեր

### *Արարողություններ*

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում արարողությունը սուրբ, պաշտոնական գործողություն է , որն ունի հոգևոր նշանակություն: Յուրաքանչյուր արարողություն ստեղծվել է Աստծո կողմից՝ հոգևոր ճշմարտություններ ուսուցանելու համար: Փրկության արարողությունները կատարվում են քահանայության իշխանությամբ և նրանց ղեկավարության ներքո, ովքեր կրում են քահանայության բանալիները: Որոշ արարողություններ էական դեր ունեն վեհացման համար և կոչվում են փրկող արարողութուններ:

Ավետարանի առաջին փրկող արարողությունը ջրի մեջ ընկղմելով մկրտությունն է, որը կատարվում է մեկի կողմից, ով ունի իշխանություն: Անհատի համար մկրտությունը կարևոր է, որ դառնա Եկեղեցու անդամ և մտնի սելեստիալ արքայություն (տես Հովհաննես Գ.5):

*Մկրտություն բառը առաջացել է հունարեն բառից, որը նշանակում է սուզվել կամ ընկղմվել: Ընկղմվելը խորհրդանշում է մարդու մեղավոր կյանքի մահը և հոգևոր կյանքի վերածնունդը, որը նվիրվում է Աստծո և Նրա զավակների ծառայությանը: Այն նաև խորհրդանշում է մահը և հարությունը:*

Մկրտվելուց հետո, մեկ կամ ավել Մելքիսեդեկյան Քահանայության կրողներ իրենց ձեռքերը դնում են մարդու գլխին և հաստատում նրան որպես Եկեղեցու անդամ: Որպես այս արարողության մաս, որը կոչվում է հաստատում, անձը ստանում է Սուրբ Հոգու պարգևը:

Սուրբ Հոգու պարգևը տարբերվում է Սուրբ Հոգու ազդեցությունից: Մկրտությունից առաջ ժամանակ առ ժամանակ անձը կարող է զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը և այդ ազդեցության միջոցով ստանալ ճշմարտության մասին վկայություն (տես Մորոնի 10.4-5): Սուրբ Հոգու պարգևը ստանալուց հետո անձն իրավունք ունի ունենալ Նրա մշտական ընկերակցությունը, եթե պահում է պատվիրանները:

Մյուս փրկող արարողությունները ներառում են Մելքիսեդեկյան Քահանայության կարգումը (տղամարդկանց համար), տաճարային օժտումը և ամուսնության կնքումը (տես ՎԱՈՒ 131.1-4): Քահանայության բոլոր փրկող արարողությունները ուղեկցվում են ուխտերով: Տաճարում այս փրկող արարողությունները կարող են նաև կատարվել մահացածների համար: Մահացածների համար կատարվող արարողությունները հասնում են իրենց նպատակին միայն այն դեպքում, երբ մահացած անձնավորություններն ընդունում են դրանք հոգևոր աշխարհում և պատվում են դրանց հետ կապված ուխտերը:

Մյուս արարողությունները, ինչպես օրինակ հիվանդներին ծառայելը և երեխաներին անվանակոչելն ու օրհնելը, նույնպես կարևոր են մեր հոգևոր զարգացման համար:

Առնչվող հղում. Գոր. Բ.36-38

### *Ուխտեր*

Ուխտը սուրբ համաձայնություն է Աստծո և մարդկանց միջև: Աստված տալիս է ուխտի պայմանները, իսկ մենք համաձայնվում ենք անել այն, ինչ նա խնդրում է: Ապա մեր հնազանդության համար Աստված խոստանում է մեզ որոշակի օրհնություններ (տես ՎԱՈՒ 82.10):

Քահանայության բոլոր փրկող արարողությունները ուղեկցվում են ուխտերով: Մենք ուխտ ենք կապում Տիրոջ հետ մկրտության ժամանակ և նորոգում այդ ուխտը՝ ընդունելով հաղորդությունը: Մելքիսեդեկյան Քահանայություն ստացած եղբայրները մտնում են քահանայության երդման և ուխտի մեջ: Տաճարում մենք այլ ուխտեր ենք կապում:

Առնչվող հղումներ. Ելից ԺԹ.5-6, Սաղմոս ԻԴ.3-4, 2 Նեփի 31.19-20, ՎԱՈՒ 25.13

## 8. Ամուսնություն և ընտանիք

Տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից, և ընտանիքն ամենակարևոր դերն ունի Նրա փրկության ծրագրում և մեր երջանկության համար: Ընտանեկան կյանքում երջանկության հասնելու ամենամեծ հավանականությունն այն դեպքում է, երբ ընտանիքը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա:

Ծնունդ տալու սուրբ զորությունը պետք է օգտագործվի միայն այն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին: Ծնողները պետք է զավակներ ունենան և լցնեն երկիրը, դաստիարակեն իրենց երեխաներին սիրո և առաքինության մթնոլորտում, և ապահովեն իրենց երեխաների ֆիզիկական և հոգևոր կարիքները:

Ամուսինը և կինը սուրբ պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու միմյանց համար: Հայրերը պետք է ղեկավարեն իրենց ընտանիքները սիրով և առաքինությամբ և ապահովեն ընտանիքի կենսական կարիքները: Մայրերը, հատկապես, պատասխանատու են իրենց երեխաների դաստիարակման համար: Այս սուրբ պարտականություններն իրականացնելիս, հայրերն ու մայրերը պարտավոր են օգնել միմյանց որպես հավասար գործընկերներ:

Երջանկության աստվածային ծրագիրը հնարավորություն է տալիս, որ ընտանեկան կապերը շարունակվեն մահից հետո: Երկիրը ստեղծվել է և ավետարանը տրվել է, որպեսզի ընտանիքները կազմվեն, կնքվեն և հավերժ վեհացում ստանան: (Վերցված է «Ընտանիք՝ հայտարարություն

աշխարհին» նյութից, *Ensign, նոյեմբեր 2010, 129:)*

Առնչվող հղումներ. Ծննդոց Բ.24, Սաղմոս ճԻԷ.3, Մաղաքիա Դ.5-6, ՎԱՈՒ 131.1-4

## 9. Պատվիրաններ

Պատվիրանները օրենքներ և պահանջներ են, որոնք Աստված տալիս է մարդկանց: Մենք ցույց ենք տալիս Նրա հանդեպ մեր սերը՝ պահելով Նրա պատվիրանները (տես Հովհաննես ԺԴ.15): Պահելով պատվիրանները՝ մենք օրհնություններ ենք ստանում Տիրոջից (տես ՎԱՈՒ 82.10):

Երկու հիմնական պատվիրաններն են. «Սիրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտովը, քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը:. . . Եվ . . . սիրիր քո ընկերին քո անձի պես» (Մատթեոս ԻԲ.36-39):

Տաս Պատվիրանները ավետարանի կարևոր մասն են կազմում և հանդիսանում են հավիտենական այն սկզբունքները, որոնք անհրաժեշտ են մեր վեհացման համար (տես Ելից Ի.3-17): Տերը հայտնել է դրանք հին ժամանակներում Մովսեսին, իսկ վերջին օրերի հայտնություններում կրկին վերահաստատել է:

Մյուս պատվիրանները ներառում են ամեն օր աղոթելը (տես 2 Նեփի 32.8-9), ուրիշներին ավետարանն ուսուցանելը (տես Մատթեոս 28.19-20), մաքրաբարոյության օրենքը պահելը (տես ՎԱՈՒ 46.33), լրիվ տասանորդը վճարելը (տես Մաղաքիա Գ.8-10), ծոմապահությունը (տես Եսայիա ԾԸ.6-7), ուրիշներին ներելը (տես ՎԱՈՒ 64.9-11), երախտագետ հոգի ունենալը (տես ՎԱՈՒ 78.19), Իմաստության Խոսքը պահելը (տես ՎԱՈՒ 89.18-21):

Առնչվող հղումներ. Ծննդոց ԼԹ,9, Եսայիա ԾԸ.13-14, 1 Նեփի 3.7, Մոսիա 4.30, Ալմա 37.35, Ալմա 39.9, ՎԱՈՒ 18.15-16, ՎԱՈՒ 88.124

Այս թեմաների վերաբերյալ լրացուցիչ տեղեկության համար այցելեք lds.org, Gospel Library, Gospel Topics կամ տես *Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում (2004):*

## Թիթեղները և դրանց կապը հրատարակված Մորմոնի Գրքի հետ




* Ամսաթվերը ներկայացնում են մոտավոր ժամանակահատվածը թիթեղների յուրաքանչյուր հավաքածուի համար:

† Ճշգրիտ հայտնի չէ, թե երբ է Եթեր մարգարեն ավարտել իր գրառումը, սակայն, ամենայն հավանականությամբ, մ.թ.ա. 589-րդ և մ.թ.ա.131-րդ տարիների միջև ընկած ժամանակ:

## Մոսիա 7-24 ճամփորդությունների ամփոփում

1. **Որոշ նեփիացիներ փորձում են վերանվաճել Նեփիի երկիրը:** Նրանց մեջ կռիվներ են տեղի ունենում և կենդանի մնացածները վերադառնում են Զարահեմլա: Զենիֆը գտնվում էր այս խմբում: (Տես Օմնի 1.27-28, Մոսիա 9.1-2:)

2. **Զենիֆի առաջնորդած նեփիացիների խումբը** հաստատվում է լամանացիների մեջ Նեփիփիի երկրում (տես Օմնի 1.29-30, Մոսիա 9.3-5):

   *Զենիֆի մահից հետո նրա որդի Նոյը թագավորեց ամբարշտությամբ: Աբինադին նախազգուշացրեց ժողովրդին, որ ապաշխարեն: Ալման հնազանդվեց Աբինադիի ուղերձին և սովորեցրեց այն ուրիշներին Մորմոնի Ջրերի մոտ: (Տես Մոսիա 11-18:)*

3. **Ալման և իր մարդիկ հեռանում են** Նոյ թագավորից և ճամփորդում են դեպի Հելամի երկիրը (տես Մոսիա 18.4-5, 32-35, 23.1-5, 19-20):

   *Լամանացիները հարձակվում են Նոյի մարդկանց վրա Նեփիի երկրում: Նոյի որդի Լիմքին էր թագավորում, մինչ ժողովուրդն ապրում էին լամանացիների գերության մեջ: Տես Մոսիա 19-20:)*

4. **Զարահեմլան գտնելու փորձեր.** Լիմքին մի խումբ է ուղարկում Զարահեմլան գտնելու և օգնություն ստանալու համար: Խումբը գտնում է կործանված ժողովրդի ավերակներ և 24 ոսկյա թիթեղներ: (Տես Մոսիա 8.7-9, 21.25-27.)

5. **Ամմոնի առաջնորդ որոնողների խումբը** ճամփորդում է Զարահեմլայից, որպեսզի գտնի նրանց հետնորդներին, ովքեր գնացել էին Նեփիի երկիրը (տես Մոսիա 7.1-6, 21.22-24):

6. **Լիմքիի ժողովուրդը փախչում է** ճորտությունից և Ամմոնի կողմից առաջնորդվում է հետ Զարահեմլա (տես Մոսիա 22.10-13):

   *Լամանացիները զորք են ուղարկում Լիմքիի և նրա ժողովրդի ետևից: Անապատում մոլորվելուց հետո բանակը գտավ Ալմային և նրա ժողովրդին Հելամի երկրում: Լամանացիները նրանց գերության բերեցին: (Տես Մոսիա 22-24:)*

7. **Ալմայի ժողովուրդը փախչում է** ճորտությունից և ճամփորդում դեպի Զարահեմլա (տես Մոսիա 24.20-25):



## Մորմոնի Գրքի հնարավոր վայրեր (փոխկապակցված)*

* Մորմոնի Գրքի հնարավոր վայրերը՝ ելնելով ներքին փաստերից: Պետք չէ ջանալ գտնել կետեր այս քարտեզի վրա որևէ այլ գոյություն ունեցող աշխարհագրական վայրի համար:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02094 11201 8
09411 201